Բնաբանի փոխարեն

Ժայռի նման է այս հին բարբառը,
Ժայռի պես կոշտ է, չհղկված.
Ու ժայռի պես էլ կարծր է, համառ է,
Չի պոկի նրան ոչ մի հարված.
Շուրթերի վրա այնպես է բառը,
Ինչպես որ ժայռն է հողում խրված:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

50-ԱՄՅԱԿԻՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ

(Երկրորդ լրամշակված հրատարակություն)

ԵՐԵՎԱՆ
2019

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի եւ Արցախի պետական համալսարանի
գիտական խորհուրդների երաշխավորությամբ

Գրախոսներ - *ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի*
բարբառագիտության բաժին

Արցախի պետական համալսարանի ակադեմիկոս
Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

Խմբագիր՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր*
ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բառարանը հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունքն է: Այն ներկայացնում է Ղարաբաղի բարբառի խոսվածքներում գործածվող բառերը, ոճերն ու դարձվածները: Բառահոդվածներն օժտված են քերականական, իմաստաբանական, լեզվաոճական եւ ծագումնաբանական նշումներով ու բացատրություններով, տպագիր ու ձեռագիր աղբյուրներից եւ բանավոր խոսքից քաղված անհրաժեշտ վկայություններով:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԸ

ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ: Ղարաբաղի բարբառը հայերենի ամենատարածված եւ կենսունակ բարբառներից է, որով հաղորդակցվում են ԱՀ-ում, ՀՀ-ում եւ աշխարհի տարբեր երկրներում ապրող հարյուր հազարավոր հայեր: Երբ եւ հատկապես որ շրջանում է ստեղծվել այն՝ դժվար է ասել: Խոսելով այդ մասին՝ Հր.Աճառյանը բարբառի ծագումը հատկացնում է XII դարին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գրաբարյան ***բ, գ, դ, ձ, ջ*** ձայնեղների խլացումը Ղարաբաղի բարբառում ընդգրկում է բնիկ հայերեն բառերը եւ ասորերենից, պարսկերենից, հունարենից առնված հին փոխառությունները, բայց չի տարածվում թուրքական փոխառությունների վրա: Աճառյանը նկատի ունի, որ ձայնեղների խլացման օրենքը գործել է մինչեւ XII դարը՝ «թուրքերի՝ Հայաստան գալուց առաջ» եւ դադարել է գործելուց այդ դարից հետո *(48, հ.1, էջ 380)*:

Հակադրվելով դրան՝ Գ.Ջահուկյանը առաջ է քաշում իր տեսակետը, որի համաձայն՝ բարբառների հնչյունական, քերականական եւ բառապաշարային հատկանիշները ձեւավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում *(324, էջ 311)*, եւ ձայնեղների խլացման երեւույթը պայմանավորված է այլ հանգամանքներով *(320, էջ 58)*:

Բարբառի մասին առաջին վկայությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին՝ մի քանի բարբառների շարքում նշելով նաեւ *զԱրցախայինն. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զխութայինն եւ զՀորորդ Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄիջերկրեայսն եւ զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ եւ աւգտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն» (382, էջ 187):*

1869 թ. հրատարակած աշխատության մեջ Ք. Պատկանյանը հայ բարբառների դասակարգմանը զուգընթաց ներկայացնում է որոշ բարբառների, այդ թվում եւ Ղարաբաղի բարբառի նկարագրությունը *(400, էջ 55-73)*:

Բարբառի վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունը կատարել է Հր. Աճառյանը*(44)*՝ հիմնականում ներկայացնելով հնչյունական ու ձեւաբանական օրինաչափությունները: Թեմային մեծ լեզվաբանն անդրադարձել է նաեւ իր ձեւաբանական դասակարգման մեջ*(41)*, ինչպես նաեւ հետագայում *(48, հ.2, էջ 195)*՝ բարբառը դասելով *«**ում**»* ճյուղի բարբառների շարքին:

Հետեւելով բարբառների դասակարգման ձեւաբանական սկզբունքին՝ Ա. Ղարիբյանն իր «Համառոտություն հայ բարբառագիտության» *(230)* եւ «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» *(232)* աշխատությունների մեջ *«**ել**»* ճյուղից առանձնացրեց *«**ս**»* ճյուղը՝ *«**ում**»* ճյուղի մեջ ընդգրկելով բուն Ղարաբաղի բարբառը, իսկ Հադրութի եւ Շաղախի խոսվածքներն առանձնացնելով որպես *«**ս**»* ճյուղի առանձին բարբառներ: Հետագայում, տալով հայ բարբառների հնչյունական դասակարգումը, հեղինակը Ղարաբաղի, Հադրութի եւ Շաղախի բարբառները համարեց առաջին տեղաշարժի ենթարկված բարբառներ՝ ելնելով գրաբարյան ձայնեղ պայթականների եւ կիսաշփականների՝ նրանցում խուլերի վերածվելու հանգամանքից:

Նշված բարբառների հակիրճ նկարագրությունն է տրված նաեւ Ա. Գրիգորյանի՝ «Հայ բարբառագիտության դասընթաց» աշխատության մեջ *(113)*:

Սակայն այս բոլոր աշխատություններն ամբողջությամբ չեն արտացոլում Ղարաբաղի բարբառի բուն էությունը, առավել եւս՝ դրանցում գրեթե հաշվի չեն առնված բարբառի խոսվածքների յուրահատկությունները, մի հանգամանք, որ անչափ կարեւոր է հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման համար:

Հենց այս տեսակետից անգնահատելի է Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» մենագրությունը *(124)*: Ի տարբերություն նախորդների՝ այստեղ հանգամանորեն ներկայացվում են Ղարաբաղի բոլոր գյուղերի խոսվածքների հնչյունական ու ձեւաբանական օրինաչափությունները, ինչպես նաեւ բառակազմական եւ շարահյուսական որոշ առանձնահատկություններ, դիտողություններ բարբառային խմբավորումների եւ ազդեցությունների վերաբերյալ: Հեղինակը առանձնացնում է Ղարաբաղի տարածքի վեց բարբառ՝ բուն Ղարաբաղի, Հադրութի, Շաղախ-Խծաբերդի, Չայլուի, Մարաղայի, Մեհտիշենի, որոնցից վերջին չորսը 19-րդ դարի առաջին կեսին Պարսկաստանի տարբեր վայրերից՝ Ղարադաղից, Ուրմիայից, Մարաղայից եւ Խոյից, գաղթած ու Ղարաբաղում բնակություն հաստատած հայ բնակչության խոսվածքներն են: Աշխատությունն ունի հավելված, որտեղ ընդգրկված են նմուշներ բոլոր, ինչպես նաեւ Ղարաբաղին հարակից շրջանների որոշ գյուղերի խոսվածքներով: Առանձնակի ուշադրության արժանի են վերջում տեղադրված համադրական բառարանը, որտեղ տրվում են գրաբարյան շուրջ 2000 բառերի համար-

ժեքները վերոհիշյալ վեց բարբառներում, եւ բարբառագիտական քարտեզները:

Ուշագրավ մենագրություն է նաեւ Ա. Պողոսյանի «Հադրութի բարբառը» *(316)* աշխատությունը: Այստեղ հանգամանորեն լուսաբանվում են բարբառի խոսվածքների հնչյունական եւ ձեւաբանական, մասամբ նաեւ բառագիտական եւ շարահյուսական օրինաչափությունները: Հադրութի բուն գյուղերի խոսվածքներին զուգահեռ հաճախ քննվում են Պարսկաստանի Ղարադաղի գավառից 1828-30 թթ. գաղթած եւ Հադրութի շրջանում վերաբնակված Խծաբերդ, Դոլանլար, Շաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ գյուղերի խոսվածքները, որոնք պատկանում են Շաղախի ենթաբարբառին: Ուսումնասիրության վերջում տրվում են բարբառային նմուշներ եւ հնչյունաձեւաբանական մի քանի իրողությունների նվիրված քարտեզներ:

Ա.Պողոսյանը Ղարաբաղի բարբառի հակիրճ նկարագրությունն է ներկայացրել նաեւ «Հայ բարբառագիտություն» դասագրքում *(317)*:

1972 թ. հրատարակվեց Գ.Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» մեծարժեք ուսումնասիրությունը, որի առաջին մասում տալով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը՝ մեծ լեզվաբանը 120 բարբառախոս վայրերից մեկ տասնյակից ավելին ընտրել է Արցախի տարածքից: Որոշ խոսվածքներ ուսումնասիրության առարկա են դարձել նաեւ աշխատության երկրորդ մասում, որտեղ դրվում եւ լուծվում են բարբառագիտության մի շարք հարցեր: Ըստ հեղինակի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Ղարաբաղի բարբառը ընդգրկվում է բարբառների արեւելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիս-արեւելյան միջբարբառախմբի մեջ, իսկ Շաղախի, Հադրութի եւ Գորիսի խոսվածքները բարբառի կենտրոնից բարբառային սահմաններ գծող տարբերություններ չեն ներկայացնում:

1975թ. Ալ.Մարգարյանը հրատարակեց «Գորիսի բարբառը» մենագրությունը՝ հանգամանորեն ներկայացնելով ՀՀ Գորիսի եւ հարեւան՝ Ղափանի ու Սիսիանի շրջանների խոսվածքների հնչյունական, ձեւաբանական, բառագիտական օրինաչափությունները՝ փորձելով հիմնավորել այդ խոսվածքների ամբողջության՝ Ղարաբաղի բարբառից անկախ բարբառ լինելու հանգամանքը: Աշխատության վերջում հեղինակը տվել է նմուշներ տարբեր խոսվածքներով, ինչպես նաեւ գրաբարից ավանդված, բարբառային, արեւելյան լեզուներից եւ ռուսերենից փոխառյալ բառերի բառարան, որը առանձին բարբառների նվիրված բառարաններից ամենահարուստն է եւ ընդգրկում է շուրջ 10000 բառ:

Բարբառի դարձվածների համակողմանի քննությունն է ներկայացնում Շ.Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածները» աշխատությունը *(281)*, իսկ Ա.Սարգսյանի «Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում» աշխատությունը նվիրված է երկու ենթաբարբառների համեմատական ուսումնասիրությանը *(360)*:

Բարբառի տարբեր խոսվածքների եւ իրողությունների վերաբերյալ ուշագրավ հոդվածներ են տպագրել Գ.Ջահուկյանը, Հ.Պետրոսյանը, Ալ.Մարգարյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Աղաբեկյանը, Ժ.Միքայելյանը, Ա.Սարգսյանը, Շ.Մինասյանը, Օ.Բաբայանը եւ ուրիշներ *(տե՛ս օգտագործված գրականության ցանկը)*:

Հարուստ նյութ են պարունակում նաեւ բոլոր այն բառարանները, որտեղ այլ բարբառներին զուգընթաց ներկայացվում է Ղարաբաղի բարբառի բառապաշարը: Դրանցից առանձնապես հիշատակության արժանի են Հր.Աճառյանի «Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ», «Հայերէն գաւառական բառարան», «Եվրոպական փոխառեալ բառեր հայերենի մէջ», «Հայերեն արմատական բառարան», Ս.Ամատունու «Հայոց բառ ու բան», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարան» աշխատությունները:

Բացի դրանցից՝ Ղարաբաղի բարբառով հրատարակվել են գեղարվեստական գործեր եւ բանահյուսական ժողովածուներ, որոնց մի մասին կցված են բառարաններ:

Հիշատակության արժանի են նաեւ առ այսօր անտիպ մի շարք ուսումնասիրություններ, բառարաններ եւ բանահյուսական բազմաթիվ նյութեր *(տե՛ս ձեռագիր աղբյուրների ցանկը)*:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ: Ղարաբաղի բարբառի ձայնավոր հնչյուններն են՝ ***ա, ան, ու, ին, օ, է, ի, ը, ը^{է}, ը^{ի}: Ա, ու, օ, է, ի, ը*** ձայնավորները արտասանությամբ համընկնում են ժամանակակից հայերենի համապատասխան հնչյունների հետ:

Ան, ին, ծ-ն ա, ու, օ ձայնավորների քմային տարբերակներն են:

Ը^{է}-ն ներկայացնում է ***ը*** եւ ***է***, ***ը^{ի}***-ն՝ ***ը*** եւ ***ի*** ձայնավորների միջին աստիճանը:

Բաղաձայն հնչյուններն են. ձայնեղ պայթականներ եւ կիսաշփականներ՝ ***բ, գ, գ^{յ}, դ, ձ, ջ,*** խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ ***պ, կ, կ^{յ}, տ, ծ, ճ,*** շնչեղ խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ ***փ, ք, ք^{յ}, թ, գ, չ,*** ձայնեղ շփականներ՝ ***վ, զ, ժ, ղ,*** խուլ շփականներ՝ ***ս, շ, խ, հ,*** ձայնորդներ՝ ***մ, ն, ր, ռ, լ, լ^{յ}, յ***:

Գրական լեզվի համեմատությամբ նորություններ են ***գ^{յ}, կ^{յ}, ք^{յ}, լ^{յ}*** բաղաձայնները, որոնք ներկայացնում են համապատասխան ***գ, կ, ք, լ*** հնչյունների քմային արտասանությունը:

Հազվադեպ գործածություն ունեն նաեւ ***դ^{յ}, տ^{յ}, թ^{յ}, ձ^{յ}, ծ^{յ}, ց^{յ}, ճ^{յ}, չ^{յ}, ժ^{յ}*** բաղաձայնները, որոնք առանձին որակ չեն կազմում եւ հնչյութային արժեք չունեն:

Բարբառում բացակայում է ***Ֆ*** խուլ շփականը, որի փոխարեն գործածվում է ***փ*** բաղաձայնը:

Ինչպես ժամանակակից հայերենում, բարբառում եւս ***ա, օ, ու, է, ի, ը*** ձայնավորները հնչյութներ են, քանի որ հանդես են գալիս բառի բոլոր դիրքերում, բաց եւ փակ, շեշտակիր եւ շեշտազուրկ վանկերում, բնիկ ու փախառյալ բառերում եւ միմյանց հետ կարող են կազմել հակադրական զույգեր:

Ան, ին եւ ***ծ*** ձայնավորները նույնպես ունեն գործածության լայն ոլորտ: Դրանք հակադրության զույգեր են կազմում ինչպես միմյանց, այնպես էլ մյուս ձայնավորների հետ: Սակայն ***ան, ին, ծ***-ի հնչյութայնությունը ի վերջո հաստատվում է ամենամերձավոր հնչյութների՝ ***ա, ու,***

օ-ի հետ ունեցած հակադրություններով՝ ***վանք*** (1. պահ, ակնթարթ, 2. շարք)-***վար*** (հերկ), ***հանր*** (հայր)- ***հար*** (1. խոտհունձ, 2. խնոցի հարելը), ***տանլ*** (1. ամուսնու քույրը, 2. ծառի ճյուղ)- ***տալ*** (տալ բայը), ***հանո՞ր*** (ու՞մ)- ***հ՞ուր*** (ու՞ր), ***տանուշ*** (կարճ երաժշտական ողջույն)- ***տուշ*** (թանաք), ***շանր*** (շոր)- ***շար*** (կաթնաշոռ, լոռ), ***տանդ*** (դող)- ***տող*** (տող):

Ըᵉ ձայնավորը, հանդես գալով բառերի շեշտակիր փակ վանկում, կարող է հակադրվել ամենամերձավոր հնչույթներին՝ ***ը***-ին եւ ***է***-ին, ու կատարել իմաստազատիչ դեր, հետեւաբար անկախ հնչույթ է՝ ***տըᵉղէն*** (տեղին)-***տըղէն*** (տղային)-***տէղէն*** (դեղին), ***տըᵉռնը*** (տիրոջ)-***տէռնը*** (դառն), մինչդեռ ***ը***ʰ-ն հանդիպում է հիմնականում Մարտակերտի շրջանի մի շարք խոսվածքների որոշ բառերում՝ ***խըʰլլա, նըʰստա***, եւ, հակադրության զույգեր չկազմելով ամենամերձավոր ***ը*** եւ ***ի*** ձայնավորների հետ, համարվում է դրանց դիրքային տարբերակը:

Բաղաձայն հնչյունները հանդիպում են բառասկզբում, բառամիջում, բառավերջում, բնիկ եւ փոխառյալ բառերում:

Գրական հայերենին համապատասխանող բաղաձայնները հնչույթաբանական մակարդակում հակադրվում են ամենամերձավոր հնչույթներին՝ ներկայանալով որպես անկախ հնչույթներ:

Հնչույթային արժեք ունեն նաեւ քմային ***գ***ʲ, ***կ***ʲ, ***ք***ʲ, ***լ***ʲ հնչյունները, որոնք կարող են իմաստային հակադրության նվազագույն զույգեր կազմել ամենամերձավոր հնչույթների՝ ***գ, կ, ք, լ*** - ի հետ. ***գʲազ*** (***գʲազ անցկըցընէլ*** - կովի ստերջ մնալը) - ***գազ*** (գազ), ***կʲընալ*** (հագնել) - ***կընալ*** (մընալ), ***կʲընտ*** (գետ) - ***կընտ*** (ճանճի տեսակ), ***քʲօք*** (գեր)- ***քօք*** (արմատ), ***քʲար*** (օգուտ, շահ)-***քար*** (քար), ***լʲավ*** (լավ)- ***լավ*** (հորդ անձրեւ), ***լʲիւս*** (հյուսվածք)- ***լիւս*** (լույս), ***խուլʲ*** (ուռուցք, պալար) - ***խուլ*** (խուլ):

ՇԵՇՏ ԵՒ ՇԵՇՏԻՑ ԿԱԽՎԱԾ (ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ) ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: Բարբառում շեշտը սովորաբար դրվում է նախավերջին վանկի վրա եւ ունի կայուն-շարժական բնույթ *(124, էջ 84)*: Ակտիվ գործածություն ունի նաեւ վերջնավանկի շեշտը, որը հանդիպում է.

- ***նէ*** հոգնակերտ ունեցող բառերի ուղիղ ձեւերում՝ ***քաղաքնէ՛, սալդաթնէ՛, աշագʲէրդնէ՛***;

- նախորդ վանկում ***ը*** գաղտնավանկ ունեցող բառերում՝ ***մընալ, կըրակ***, ինչպես նաեւ այն բառերում, որոնց նախորդ վանկի ***ը***-ն փոխարինվել է այլ ձայնավորով՝ ***կուլօ՛խ, խումօ՛ր, տիպի՛լ***,

- պատճառական բայերում՝ ***խուսցունէ՛լ, կուրցնէ՛լ, մուտուցնէ՛լ***:

Մի շարք բարդություններ կրում են կրկնակի շեշտ՝ ***ղո՛ւրփուրա՛կէն, դի՛ւբի՛ւրի՛ւգʲի՛ւնա՛չախ, թօ՛ռնըսքʲը-նի՛ւմ*** եւ այլն:

Ձայնավորները շեշտազրկվելիս կրում են տարբեր փոփոխություններ:

Ա եւ ***ա*** ձայնավորները հիմնականում հերթափոխվում են ***ը, ի, ու*** ձայնավորներով՝ ***աշկ-ըշկացավ, դանդ-դըրդանկօխ/դիրդակօխ, շանքʲանր-շըքʲըրաման/շիքʲըրաման, թանգʲ-թընգʲանալ/թինգʲանալ, աշունք-ըշունքըᵉնէ/ուշունքըᵉնէ, աղութկ-ըղօթէլ/ուղօթէլ*** (նաեւ՝ ***ղօթէլ***):

Է ձայնավորը հիմնականում հնչյունափոխվում է ***ի*** - ի կամ ***ը*** - ի, կամ էլ սղվում է՝ ***էշ-իշանալ, շէն-շինամաչ, ծէխ-ծըխլըկանէ/ծիխլիկանէ,թէվք-թըվքըպը-տօկ/թիվքըպըտօկ,էտ-տի/ըտի/իտի, թըրէքʲ-թըրքէլ, մըթէն-մըթնըլիւս:***

Ի ձայնավորը ընդհանուր առմամբ մնում է անփոփոխ կամ հնչյունափոխվում է ***ը***-ի՝ ***իվիլ-իվիլանալ/ըվիլանալ, հիշտ-հիշտըցընէլ/հըշտըցընէլ, ինձ-ինձըᵉտէ/ընձըᵉտէ:***

Ու եւ ***ու*** ձայնավորները հիմնականում չեն հնչյունափոխվում՝ ***կʲումաշ-կʲումըշակավ, խութʲ-խութʲէրան, կʲուանն-կʲուանընէ, թուլ-թուլանալ***: Որոշ բառերում ***ու***-ն հնչյունափոխվել է ***ի*** - ի կամ ***ը*** -ի՝ ***պուրթ-պիրթիճըպատ/պըրթըճըպատ, ճուր-ճիրիկուտէմը:***

Օ եւ ***ծ*** ձայնավորները հերթափոխվում են ***ու, ու, ը*** ձայնավորներով կամ ***վ*** բաղաձայնով՝***օթ-ութըᵉքան, սծքʲ-սուքʲըվէր, տօռնը-տըռնըպէց, ծօռ-ծըռըմանգ(ը)լի, թըթօ-թըթվօթուն, կըծօ-կըծվօթուն***:

Ըᵉ ձայնավորը վեր է ածվում ***ը*** - ի կամ սղվում է՝ ***մըᵉծ-մըծանալ, նըᵉդ-նըդանալ, սըᵉրտ-սըրտացավ, վըᵉննը-վըննըպեց, կըռըᵉվ- կըռ(ը)վարար:***

ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ (ՊԱՏՄԱԿԱՆ) ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: Հին հայերենի ***ա*** ձայնավորը բարբառում սովորաբար մնում է անփոփոխ՝ ***աջ-աչ, թաթ-թաթ, աղալ-աղալ, աղքատ-ախկադ, բարեկամ-պարիկամ***:

Ա-ին համազոր գործածություն ունի քմային ***ա*** ձայնավորը, որը հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում: ***Ա***-ի քմայնացումը որեւէ ընդհանուր օրինաչափության չի ենթարկվում: Այնուամենայնիվ կարելի է նշել որոշ դեպքեր.

- երբ հաջորդում է խլացած ձայնեղներին (Աճառյանի օրենք)՝ ***գարի-կʲանրի, դաս-տանս, բաժին-պանժին,***

- երբ նախորդում կամ հաջորդում է ձայնորդ բաղաձայններին՝ ***արեւ-անրըᵉվ, լական-լանգʲանն, ժառանգ-ժանանգʲ***:

Քմայնացման պատճառ է նաեւ ձայնավորների ներդաշնակությունը. որոշ բազմավանկ բառերի մի քմային ձայնավորի ազդեցությամբ մյուս ձայնավորները հիմնականում եւս քմայնանում են՝ ***վարժապետ-վանրժանբէդ, խանդակ-խանդանկ***:

Այս երեւույթը տարածվում է նաեւ ***ու*** եւ ***օ*** ձայնավորների քմայնացման վրա՝ ***իրար-ի՛ւրի՛ւր, զարթուն-զանրթի՛ւն:***

Բացի քմայնացումից՝ ***ա***-ն կրել է նաեւ հետեւյալ փոփոխությունները.

ա-ը-շեշտանախորդ վանկերում (բառասկիզբ, առաջնավանկ)՝ ***ազատել-ըզադէլ, աշխատել-ըշխադէլ, ճախարակ-չըխարակ, կարկատան-կըրկատան***,

ա-ըᵉ - շեշտակիր փակ վանկում (միջնավանկ, վերջնավանկ)՝ ***ամառն-ամըᵉռնը, փայծաղն-փաճըᵉղնը, երախ-ըռըᵉխ, գաւաթ-կʲըᵉվաթ,***

ա-է - շեշտակիր փակ վանկում (առաջնավանկ)՝ ***գազար-կէզանր, բանջար-պէնջանր, շալակ-շէլանկ, բարձ-պէրց,***

ա-ի - շեշտանախորդ (մասամբ՝ շեշտակիր) վանկերում (բառասկզբի բաց եւ փակ վանկեր)՝ ***արեգակն-իրիքʲնակ/ըրիքʲնակ, բանալի-պինանլի(քʲ)/պընանլի(քʲ), աւել-իվիլ,***

ա-օ/ծ - շեշտակիր փակ վանկերում՝ ***դգալ-քըթծլ, բարձր-պծցՀուր, կաղին-տըկօղէն, զարթուն-զծրթՀուն***:

ա-ու/Հու-շեշտանախորդ (մասամբ՝ շեշտահաջորդ) բաց եւ փակ վանկերում՝ ***մատանի-մուտանա, ալեւոր-ՀուլՀուվուր, ականջ-անգուճ:***

Գրաբարի ***ե*** ձայնավորը շեշտակիր վանկում փոխարինվել է հետեւյալ ձայնավորներով.

ե-է (միավանկ եւ երկվանկ բառերի բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ ***ձեռն-ծէրք/ծը*ՐՔ, գերան-կ'էրան/կ'ը*ՐԱՆ, երկու-էրկու, երկայն-էրկան, բեռն-պէռնը/պը*ՌՆԸ***,

ե-ի (բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ ***երես-իրը*Ս, մենակ-մինակ, թել-թիլ, շերեփ-շիրը*Փ, չեչ-չիչ, եփել-իփիլ, երբ-հիբ,***

ե-/ը (փակ վանկում)՝ ***սեպ-սը*Պ, սերմն-սը*ՐՄ, խելք-խը*ԼՔ, համեղ-համը*Ղ, եռ-հը*Ռ:***

Մի շարք բառերում, որտեղ ***ե***-ն փոխարինվել է ***է*** եւ ***ը*** ձայնավորներով, այդ հնչյուններից առաջ լսվում է նախահունչ ***յ՝ երկիր-յէրգ'իր, երկինք-յէրգ'ինք', ես-յը*Ս, երգ- յը*ՐՔ:***

ե-ա/ան (առաջնավանկ)՝ ***երազ-արազ/անազ, երաշտ-արաշտ, երկանք-արկանք, երկաթ-արկաթ:***

ե-ու/Հու (առաջնավանկ, միջնավանկ)՝ ***երեւալ-ուրվալ/ըրվալ, դեղնուց-տՀուղնծց/ տըղնօց/տիղնօց, լեզու-լՀուզՀու,***

ե-օ/ծ (առաջնավանկ, միջնավանկ)՝ ***խելոք-խօլՀու(ն)ք/խէլու(ն)ք, ուղեղ-/հըղօղ/հուղօղ,***

Է երկբարբառակերպի դիմաց ընդհանուր առմամբ բարբառում առկա է ***է*** պարզ ձայնավորը՝ ***շէն-շէն, կէս-կէս, էշ-էշ, օրէնք-օրէնք', դէմ-տէմ, խէժ-խէժնը, ամէն-ամմէն:***

Շեշտակիր եւ շեշտահաջորդ վանկերում ***է***-ն երեւան է հանում նաեւ հետեւյալ փոփոխությունները. ***է-ա՝*** *տէր-տար, մէջ-մաչ, մէջք-մաշկ, գոմէշ-կ'ումաշ*, ***է***-ի՝ *թէժ-թիժ, շրէշ-շիրիշ, կիւրակէ-կ'իրՀակ'ի:*

Հին հայերենի գաղտնավանկի ***ը*** ձայնավորը շեշտազուրկ վանկերում հիմնականում մնում է անփոփոխ՝ ***ծանր-ծանդըր, խնոցի-խընը*ցէ, պսակ-փըսակ, կծիկ-կըծէգ'***:

Բառասկզբում ***ը***-ն պահպանվել է ***ընկեր-հընգէր, ընտրել-հընդըրէլ*** բառերում, որտեղ ստացել է ***հ***-ի հավելում:

Որոշ բառերում գաղտնավանկ ***ը***-ն փոխարինվել է ***ի, օ, ու*** ձայնավորներով՝ ***գրել-կ'իրիլ, բլիթ-պիլիթ, կրայ-կօրէ, ճիպռ-ճուպռ, կծու-կուծ:***

Ի ձայնավորը շեշտակիր եւ շեշտազուրկ վանկերում մնում է անփոփոխ կամ փոխարինվում է ***է, ը, ը*, ու, Հու, ծ*** ձայնավորներով՝ ***իլիկ-իլիգ', գին-կ'ին, չամիչ-չամէնչ, քիթ-քէթ/քը*Թ, դիմանալ-տըմանալ, կռիւ-կըռը*վ, յիշոցք-ուշունց, Յիսուս-ՅՀուսՀուս, սիրուն-սէրՀուն/սՀուրՀուն/սծրՀուն/սիրուն:***

Գրաբարի ***ո*** ձայնավորը բառասկզբի բաց վանկում դառնում է ***վը*/վը/վօ/վէ/վի՝ որձ-վը*ՐԾ, ոսկոր-վը*ՍԿՐ/ վըսկըռ/վէսկըռ, ոսկի-վը*ՍԿԷ/վըսկէ/վէսկէ, որս-վը*ՐՍ/ վէրս, ոչխար-վը*ԽՃԱՐ/վէխճար/վօխճար, ոջիլ-վիչիլ:***

Շեշտակիր վանկում ***վ*** բաղաձայնից առաջ ***ո***-ն հնչյունափոխվում է ***ա***-ի կամ ***օ***-ի՝ ***կով-կավ/կօվ, հով-հավ/հօվ, ծով-ծօվ, սով-սօվ:***

Որոշ բառերում ***ո***-ն դարձել է ***ը, ի*** կամ սղվել է՝ ***բոր-բոս-փիրփէշը/փըրփէշը, խորոված-խըրաված, ողորմ-ըղուրմ/ ղուրմ, ողողել-ըղօղէլ/ղօղէլ:***

Մյուս բոլոր դեպքերում ***ո***-ին համապատասխանում է պարզ ***օ/ծ*** կամ ***ու՝ խոտ-խօտ, փոս-փօս, չոր-չծր, ձոր-ծծր, խնձոր-խընձծր, թոռն-թօռնը, գոմ-կ'ում, քակոր-քաքուռ, լակոտ-լակուտ*** եւ այլն:

Ու ձայնավորը բառերի մեծ մասում կրել է ***ու-օ/ծ*** հնչյունափոխություն՝ ***ուղտ-օղտ, սուգ-սծք', կտուց-կըտօց, խունկ-խօնգ, թուղթ-թօխտ, ուրբաթ-ծրփՀթ, ընկերութիւն-հընգըրօթուն:***

Մի շարք բառերեում ***ու***-ն մնացել է անփոփոխ կամ քմայնացել է՝ ***աշուն-աշունք, կատու-կատու, ձու-ծու/ծՀու, լու-լՀու, թունդ-թՀունդ, յուշ-հՀուշ:***

Որոշ բառերում ***ու***-ն դարձել է ***ը***, իսկ որոշներում՝ ***է՝ անուն-անըմ/անում, թուք-թըք, մանուշակ-մընէշակ, հեռու-հը*ռէ:***

Էական փոփոխությունների են ենթարկվել նաեւ հին հայերենի երկբարբառները:

Այ երկբարբառը շեշտակիր ու շեշտահաջորդ վանկերում կրել է հետեւյալ փոփոխությունները.

այ-է (բառասկիզբ, բառամեջ, բառավերջի փակ վանկ)՝ ***այծ-էծ, այս-էս, այդ-էտ, այն-էն, լայն-լէն, ձայն-ծէն, եղբայր-ախպէր,***

այ-ա/ան (միջնավանկ, բառավերջի բաց վանկ)՝ ***մայր-մար, հայր-հԱր սատանայ-սադանա, տղայ-տըղա:***

Որոշ բառերում ***այ***-ը փոխարինվել է ***ի, Հի, ը, ը*, է*** ձայնավորներով՝ ***ցայտ-ցիթ, գայլ-կ'Հիլ, գայլագռավ-կըռակլԱվ, սայր-սը*ռ/սըռ/սէռ:***

Այսօր-սօր բառում բառասկզբի ***այ***-ը սղվել է:

Աւ երկբարբառը բարբառում, ինչպես հայերենի բոլոր դրսեւորումներում, հանդես է գալիս իբրեւ ***օ*** պարզ ձայնավոր՝ ***աւր-օր, աւձ-օխց, յաւնք-օնք, կարաւտ-կարօտ:***

Մի շարք բառերում (շեշտահաջորդ եւ շեշտանախորդ վանկեր) առկա է ***աւ-օ-ու*** հնչյունափոխություն՝ ***օրորոց-ուրուրու(ն)ց, մօտենալ-մուտանալ:***

Շեշտի տակ եւ շեշտահաջորդ վանկերում ***եա*** երկբարբառը սովորաբար հերթափոխվում է ***է*** պարզ ձայնավորով՝ ***կորեակ-կօրէկ, ցորեան-ցօրէն, սեամշէմք, ծովեար-ծօվէր:***

Որոշ բառերում ***եա*** երկբարբառը հնչյունափոխվել է ***ա/ան***-ի՝ ***կեանք-գ'անք, մեռեալ-մը*ռալ, ածեալ-ածալ, գրեալ-կ'իրԱլ:***

Ե խոնարհման բայերի եզակի հրամայականի ***եա*** վերջավորությունը բարբառում փոխվում է ***ի***-ի կամ ***է***-ի ***գրեա-կ'իրի՛, կազմեա-կա՛զմէ: Եա***-ի հնչյունափոխություն առկա է նաեւ անցյալ կատարյալում՝ ***գործեաց-կ'օրծից, սիրեաց-սիրից***:

Հին հայերենի ***իւ*** երկբարբառին բարբառում ընդհանուր առմամբ համապատասխանում են ***ու*** եւ ***Հու*** ձայնավորները՝ ***լաւութիւն-լ'ըվօթուն, իւրեանք-Հուրանք, արիւն-ԱրՀուն:***

Գրաբարի ***ոյ*** երկբարբառը սովորաբար փոխարինվել է ***ու*** եւ ***Հու*** ձայնավորներով՝ ***քոյր-քուր, լոյս-լՀուս, թոյլ-թՀուլ, կապոյտ-կ'ԱպՀուտ/կ'ԱպՀիտ, բոյն-պՀուն***, իսկ ***ոյժ-օժ*** բառում ***ոյ***-ը դարձել է ***օ:***

Ղարաբաղի բարբառում զգալի են գրաբարի բաղաձայնական համակարգի կրած փոփոխությունները:

Բառասկզբում (մասամբ բառամիջում եւ բառավերջում) հին հայերենի ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց բարբառը հանդես է բերում խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ ***բերան-պէրան, աղբիւր-ախպիւր, գլուխ-կըլէխ, գազար-կէզէր/կ՚էզէր, ազգ-ազկ, մգլահոտ-մըկլավը՝տ, դանակ-տէնակ, դատարկ-տէրտակ, ձեռն-ծէրք, ձմերուկ-ծըմէրուկ, ջուր-ճիւր, ջրաղաց-ճը՝ղաց:***

Բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնները ռնգայիններին հաջորդելիս մնում են անփոփոխ՝ ***բամբակ-պէմբակ, ամբարամբար, հինգ-հէնգ՚, հանգիստ-հանգ՚իստ, հանդարտ-հանդարդ, հիւանդ-հիվանդ, տանձ-տանձ, խնձոր-խընձոր, բանջար-պէնջար, տանջել-տանջիլ:***

Որոշ բառերում ***բ*** եւ ***գ*** բաղաձայնները ձայնեղության որակը պահպանել են բառասկզբում՝ ***գիրկ-գ՚իւրգ՚, գուլպայ-գ՚ուլբա, գիտել-գ՚իդալ, բաշխել-բախշիլ:***

Բառամիջում եւ բառավերջում ձայնավորներից եւ ***ր*** ձայնորդից հետո գրաբարի ձայնեղներին համապատասխանում են շնչեղ խուլեր. ***խաբել-խափիլ, սուրբ-սօրփ, թագաւոր-թաքավէր, օգուտ-օքութ, մարդ-մարթ, կարդալ-կարթիլ, օձ-օխց/օց, բարձ-պէրց, աջ-աչ, արջ-արչ, վերջ-վէրչ, մրջիմին-վըրչէմնը:***

Մի շարք բառերում ***բ*** եւ ***գ*** ձայնեղների դիմաց շնչեղ խուլ ***փ, ք*** բաղաձայններ առկա են բառասկզբում՝ ***բռնել-փըռնէլ, բորբոս-փըրփէշնը, գիշեր-քըշէր, գնալ-ք՚ինիլ:***

Հնչյունափոխության մասնակի դեպքեր են՝ ***գ-ղ՝ գերփել-ղըրփէլ, ձ-ս՝դազձն-տէսնը, ձ-զ՝սինձ-սը՝զնը, արձակ-հարզակ:***

Հին հայերենի խուլ պայթականներն ու կիսաշփականները բառի բոլոր դիրքերում հիմնականում մնում են անփոփոխ՝ ***պակաս-պակաս, ճիպոտ-ճըպատ, պարապ-հըպարապ, տընկել-տընգէլ,սատակել-ըստակէլ, տատ-տատ, կասկած-կասկած, ծակել-ծակէլ, կայծակ-կածակ, կորեակ-կօրէկ, ճուտ-ճօտ, կոճակ-կօճակ, կարճ-կարճ,ծաղիկ-ծաղէգ՚, արծաթ-արծաթ, առիւծ-առիւծ:***

Որոշ բառերում խուլերին համապատասխանում են շնչեղ խուլեր՝ ***պսակ-փըսակ, յուշապ-օշափ, օգուտ-օքութ, կթել-քըթէլ, ծիծառն-ցըցէռնակ, ճանկ-չանգ՚ ճախարակ-չըխարակ***, իսկ որոշներում՝ ձայնեղներ՝ ***աշխատանք-աշխադանք, պատարագ-բադարանք՚, երկինք-յէրգ՚ինք՚, պատինճան-բադընճան:***

Ցնկնել-ցընկնէլ, ճոճք-ճօճկ բառերում ***չ*** եւ ***ճ*** խուլերը կրել են մասնակի փոփոխություն:

Ընդհանուր առմամբ անփոփոխ են մնացել նաեւ հին հայերենի շնչեղ խուլ պայթականները եւ կիսաշփականները՝ ***փրփուր-փըրփօր, շամփուր-շամփուռ, շերեփ-շիրը՝փ, քամի-քամէ, կաքաւ-կաքավ, խելք-խը՝լք, թափել- թափէլ, մորթի-մորթէ, խորթ-խօրթ, ցուրտ-ցօրտ, կացին-կացէն, հաց-հաց, չափել-չափէլ, կաչաղակ-քըչէղակ, կանաչ-կանանչ:***

Հատուկենտ բառերում շնչեղ խուլերի դիմաց բարբառը երեւան է հանում խուլ բաղաձայններ՝ ***փաթաթել-պըտատէլ, խոսք-խօսկ, բոյթն-պիւտնը, քաղցր-քախծըր, ոչխար-վը՝խճար:***

Գրաբարի ձայնեղ եւ խուլ շփականները բառի բոլոր դիրքերում ընդհանուր առմամբ հնչյունափոխության չեն ենթարկվել՝ ***զկեռ-զըկըռ, խուզել-խօզիլ, մազ-մազ, ժամ-ժամ, դժուար-տիժէր, կուժ-կօժ, վարազ-վարազ, խորովել-խըրավէլ, հով-հավ, սուրբ-սօրփ, խոսել-խօսէլ, թուխս-թօխս, շուն-շօն, խարշել-խաշիլ, էշ-էշ, խմոր-խըմօր, մոխիր-մօխէր, ծուխ-ծօխ, հայելի-հիլի, մահակ-մըհակ, մահ-մահ, ողողել-ըղօղէլ, մեղր-մը՝ղըր, տեղ-տը՝ղ:***

Այդ ընդհանուր օրինաչափություններից կան շեղումներ՝ ***սալոր-շըլէր, սեամ-շէմբ, հող-վը՝ղ, հոտ-վը՝տ, թուղթ-թօխտ, աղջիկ-ախճիգ՚:***

Լ, մ, ն, ր, ռ ձայնորդները տարբեր դիրքերում հիմնականում ներկայանում են անփոփոխ վիճակով՝ ***լափ-լէփ, լայն-լէն, իլիկ-իլիգ՚, ծիլ-ծիլ, մենակ-մինակ, ամիս-ամէս, համ-համ, նկար-նըկար, հանել-հանէլ, բան-պէն կրակ-կըրակ, գիր-կ՚իր, քուռակ-քօռակ, աստառ-աստառ:***

Գրաբարի ***ն*** վերջնահանգ ունեցող բառերում Ղարաբաղի խոսվածքների մեծ մասում հիմնականում պահպանվել է ***ն***-ն, իսկ որոշներում այն ընկել է՝ ***թոռն-թօռնը/թօռ, ծոռն-ծօռնը/ծօռ, դուռն-տօռնը/տօռ:***

Մասնակի հնչյունափոխության դեպքեր են՝ ***ր-ռ՝ պորտ-պօռտ, ոսկոր-վը՝սկըռ, ռ-ր՝ ձեռն-ծը՝րք, փառք-փարք՚:***

Յ ձայնորդը բառամիջում սակավ է հանդիպում՝ ***մայիս-մայիս, ծառայել-ծըռայէլ:***

Բառասկզբում ***յ***-ն սովորաբար սղվում է կամ դառնում է ***հ՝ յանք-օնք, յիսուն-իցցուն, յստակ-իստակ:***

Որոշ բառերի բառասկզբում ***յ***-ն հնչյունափոխվել է ***հ***-ի՝ ***Յիսուս-Հիսուս, յաղթել-հախթէլ/յը՝խնէլ, յունիս-հունիս:***

Ի ձայնորդը հանդես է գալիս որպես ձայնեղ շփական ***վ՝ ծարաւ-ծարավ, ցաւ-ցավ, աւել-իվիլ, թեւ-թէվ, արեւ-ար՚ը՝վ:***

Ղարաբաղի բարբառում լայն տարածում ունեն նաեւ դիրքային եւ փոխազդեցական հնչյունափոխության մի շարք երեւույթներ, ինչպիսիք են. հնչյունների անկում՝ ***անալի-նալի, աքացի-քացէ, ուղղորդ-ղօրթ, ողորմեայ-ղօրմի, հայելի-հիլի, ջախջախել-ճիճը՝խէլ, եկեղեցի-յը՝խցէ, խոնարհ-խօնար, խաղող-խաղու, պաշտպան-պաշպան, արջառ-աչը՝ռ, քարշել-քաշիլ,*** հնչյունների հավելում՝ ***աներ-հանէր, համարել-հըմբարէլ, ծանր-ծանդը՝ր, ոգնի-կօզնի, ամաչել-հըմանչիլ,*** առնմանում՝ ***մատն-մաննը, ելանել-իլլալ, շաղախել-շըղաղէլ, անմեղ-ամմէղ,*** տարնմանում՝ ***բոբիկ-պէպէգ՚-տէպէգ՚, ծածկել-ծասկէլ, անուն-անըմ,*** դրափոխություն՝ ***արեգակն-իրիք՚նակ, ականջ-անջուկ/անգուճ, արմուկն-արմունգ, դատարկ-տէրտակ, փետուր-թէփուռ, սրահ-սըհար, պղտոր-պըրտծղ, բաշխել-բախշիլ, ոչխար-վը՝խչար, կապերտ-կարպետ, խստոր-սըխտօր, նման-մընան, համար-մըհար, հաւաքել-վըհաքէլ,*** հնչյունի կրկնություն՝ ***ամենամմէն, գոռալ-կ՚օռռալ, տաս-տասսը, հազար-հազզար, յիսուն-իցցուն,*** հնչյունի պարզեցում՝ ***կծկել-կըզկէլ, անէծք-անէսկ, երիցակին-իրիսկին,*** հնչյունի բարդացում՝ ***վաթսուն-վացցուն, քանզ-կանց, վարժվանջ, վարժապետ-վանջաբէդ, ինժեներ-ինջինէր:***

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ: Ինչպես հայերենի մյուս բարբառներում, Ղարաբաղի բարբառում եւս թվի կարգի արտահայտությունը պայմանավորված է եզակի եւ հոգնակի թվերի հակադրությամբ:

Հոգնակերտներն են ***էր/ը՝էր, նէ, ք՝, ա(ն)ք/ա՝(ն)ք, ու(ն)ք/ու՝(ն)ք, էք՝/էրք, օտէ(ն)ք՝, իք՝, անէք՝, վանք, վասկ, ըթկընէ, էն/ը՝ն, օտ/ծտ, լար/լա՝ր:*** Սրանցից յուրաքանչյուրը գործառում է որեւէ դիրքում՝ կապված տվյալ բառի ձեւի եւ իմաստի հետ:

Առավել հաճախակի գործառություն ունեն ***էր*** եւ ***նէ*** թեքույթները, որոնք հին հայերենում ***(եար, անի)*** ընդգրկում էին սահմանափակ թվով հիմքեր՝ արտահայտելով հավաքական իմաստ:

Էր հոգնակերտ ստանում են միավանկ բառերը՝ ***տօն-տընէր, շօն-շըներ, հավ-հավէր:*** Այդ թվին են դասվում նաեւ գրաբարյան ***ն*** վերջնահանգով բառերը, ինչպես նաեւ այն բարդությունները, որոնց վերջին բաղադրիչը անվանական միավանկ բառ է՝ ***կ՝առնը-կ՝առնէր, թօռնը-թօռնէր, տընատար-տընըտարէր, ծրծամար-ծրծըմարէր:*** Որոշ խոսվածքներում ***էր*** թեքույթին զուգահեռ գործածություն ունի ***ը՝ր***-ը՝ ***տընը՝ր, շընը՝ր, հավը՝ր:***

Նէ հոգնակերտ ստանում են բազմավանկ բառերը՝ ***արկաթ-ըրկըթնէ, ջանավար-ջանավարնէ, ք՝ա՝թա՝-ք՝ըթէնէ, ճըպատ-ճըպըտնէ, դասատու-դասատունէ:*** Այդ վերջավորությամբ հոգնակի են կազմում նաեւ բառասկզբում ***ռ*** ունեցող որոշ միավանկ բառեր՝ ***ռոք-ռուքնէ, ռուս-ռուսնէ***, որոնք ավելի շատ գործածվում են նախաձայն ***ը***-ով կամ ***ու***-ով՝ ***ըռուք/ուռուք-ըռուքնէ/ուռուքնէ, ըռուս/ուռուս-ըռուսնէ/ուռուսնէ:***

Ա(ն)ք/ա՝(ն)ք, ուք/ու՝ք, էք՝/էրք, օտէ(ն)ք՝ հոգնակերտները գործառում են ազգակցություն կամ գերդաստան ցույց տվող բառերի հետ՝ ***հանէր-հընէրա(ն)ք, Սա՝ղք՝իս-Սիրք՝իսա՝(ն)ք, Վանի-Վանու(ն)ք/Վանու՝(ն)ք, տըղա-տըղէք՝/տըղէրք, փը՝սա/ փըսօտէ(ն)ք՝:***

Ք/ք՝ հոգնակերտը, որ գրաբարում ամենակենսունակ թեքույթն էր, բարբառում գործածվում է որտեղացի լինելը մատնանշող բառերի հետ՝ ***դարաբաղցէ-դարաբաղցէք՝, պիլթընէցէ-պիլթընէցէք՝, շինըցէ-շինըցէք՝, տըղըցէ-տըղըցէք՝: Ք/ք՝***-ն իր հոգնանշության արժեքը պահել է նաեւ բաղադրյալ կազմություններում:

Օտ/ծտ թեքույթով հոգնակի են կազմում ծառանուններ արտահայտող բառերը՝ ***կաղնէ-կաղնօտ, զըկըռի-զըկըռօտ, շա՝վթա՝ղի-շա՝վթա՝ղծտ, թա՝ուզի-թա՝ուզօտ:*** Այս բառերը հոգնակիությունից բացի կարող են արտահայտել նաեւ որեւէ բույսի աճման տեղի, վայրի իմաստ: Տարբերությունը երեւում է միայն շարահյուսական մակարդակում, ինչպես՝ ***ք՝ը՝ցալ ըմ զըկըռօտը*** (գնացել եմ այն տեղը, որտեղ զկռենիներ են աճում), ***զըկըռօտ ըմ քանդա՝ղ, պէրալ*** (զկռենիներ եմ քանդել, բերել):

Թուրքերենից փախառյալ ***լար/լա՝ր*** հոգնակերտը հանդես է գալիս ինչպես փոխառյալ, այնպես էլ բնիկ բառերի հետ՝ ***բալա-բալալար, դայի-դայիլա՝ր, Ա՝ռա՝-թա՝ուն-Ա՝ռա՝ուլա՝ր, Թունի-Թունիլա՝ր:***

Մյուս հոգնակերտները կենսունակ չեն եւ գործածվում են սահմանափակ թվով բառերի հետ՝ ***մարթ-մարթիք՝, կընէգ՝-կընանէք՝, շէն-շինըթկընէ, թէ-թիյէն/թիյը՝ն, ծա՝ու-ծա՝ուվէն/ծա՝ուվը՝ն, փա՝դ-փա՝դվանք/փա՝դվասկ:***

Հարկ է նշել նաեւ, որ որոշ բառեր կարող են ստանալ թվանիշ տարբեր կամ կրկնակի թեքույթներ, ինչպես՝ ***ծի-ծիյը՝ն-ծիյանք-ծիյէր-ծիյէրք-ծիյանէր, շէն-շէնէր-շենէք՝-շէնէրք-շինըթկընէ:***

Հին հայերենի համեմատ՝ բարբառը հոլովման համակարգում երեւան է հանում զգալի տարբերություններ. գրաբարի վեց հոլովներից այստեղ առկա են չորսը՝ ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական, գործիական: Որոշ դեպքերում գործածական են ներգոյականի հատուկ ձեւերը, որ գրաբարը չուներ: Բարբառում չեն գործառում գրաբարյան հոլովման որոշ տիպեր (***ո*** վերջադրական հոլովում, ***ե*** ներքին հոլովում, տրականի ***ոջ*** վերջավորություն (Մարտակերտի շրջանի որոշ խոսվածքներում հազվադեպ գործածություն ունեն ***տիրուչ, քըրօչ*** եւ այլ ձեւերը), խառը հոլովում), առաջ է եկել ***վա*** արտաքին հոլովումը: Փոփոխություններ են կատարվել հոլովների կազմության մեջ. բարբառը չունի նախդիրներ, հայցականի ***ս***, գործիականի ***բ, ւ, ք*** վերջավորություններ: ***Ք***-ն պահպանվել է հատուկենտ բառերում՝ ***վը՝ննուք, ծէռուք, կօլ՝ուք,*** որտեղ արտահայտում է եզակի գործիականի իմաստ՝ ***ոտքով, ձեռքով, վզով***: Անգործածական է նաեւ տրականաձեւ գործիականը: Նորություն է բացառականի եւ գործիականի կազմության վերլուծական եղանակը: Փոխվել է հոգնակի հոլովման կազմությունը. ընդհանուր առմամբ նույնացել են հոգնակիի եւ եզակիի հոլովանիշ թեքույթները: Նույն բառերը գրաբարում եւ բարբառում ընդգրկվում են հոլովման տարբեր տիպերի մեջ:

Այսքանով հանդերձ՝ բարբառը հոլովման համակարգում գրաբարի հետ ունի մի շարք ընդհանրություններ:

Անվանական համակարգում հոլովները ունեն հետեւյալ կազմությունը.

Ուղղական-հայցական հոլովը եզակի եւ հոգնակի թվերում զուրկ է հոլովակերտներից եւ մյուս հոլովներին հակադրվում է զրո վերջավորությամբ: Եզակիի եւ հոգնակիի հակադրությունը արտահայտվում է հոգնակերտների բացակայություն-առկայություն հատկանիշով:

Տրականը բնութագրվում է հոլովանիշ թեքույթների բազմազանությամբ, որոնք արտահայտվում են վերջավորություններով եւ հնչյունական հերթագայություններով:

Վերջավորություններն են՝ ***էն/ին, ու(ն)/ու՝(ն), վա/վա՝, ա(ն)/ա՝(ն):***

Հերթագայություններն՝ ***ք/g, ա/օ, է/օ, է/ու, ի/ու՝, օ/ա, ու/ըվօ,*** որոնցից առաջինն ունի վերջադրական, մյուսները՝ ներդրական բնույթ:

Տրականի նշված թեքույթներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որոշակի սահմաններում:

Էն/ին հոլովակերտը, հանդիսանալով ամենակենսունակ թեքույթը, չունի միանշանակ բնորոշում եւ ընդգրկում է բոլոր այն բառերը, որոնք չեն բաշխվում այլ հոլովանիշ թեքույթների սահմաններում: Այս հոլովակերտով տրական են կազմում.

ա) գրաբարյան հոլովման տարբեր տիպերից բազմաթիվ բառեր, ինչպես՝ ***Վարդանայ-Վըրթանէն, սրտի-սըրտէն, գործոյ-կօրծէն, ծօվու-ծօվէն, աստեղասթըխէն, ընկէրութեան-հընգըրթունէն*** եւ այլն:

բ) գրեթե բոլոր փոխառյալ բառերը՝ ***ջանէն,գ՝օլէն, ըստօլէն, դանդին:***

գ) հատուկ անունների մեծ մասը՝ ***Ըրշակէն, Գագօյին, Կօվին, Ըրասխէն, Թըրթանին:***

Հարկ է նշել, որ բարբառում բառերը ***էն/ին*** հոլովանիշ ստանում են միայն որոշյալ առման դեպքում:

Ու(ն) հոլովակերտը կենսունակությամբ երկրորդն է, մանավանդ որ ***էն/ին*** հոլովման բառերը անորոշ իմաստով գործածվելիս թեքվում են ***ու(ն)*** թեքույթով, հմմտ.՝ ***մեր ծառէն - մին ծառու, ծը՝ր շէնին- մին շէնու:***

Ու(ն) հոլովանիշ են ստանում նաեւ.

ա) ***է/ի*** վերջավորություն ունեցող բառերը՝ ***քամէ-քամու(ն), շինըցէ-շինըցու(ն), կօզնի-կօզնու(ն), Բաղդի-Բաղդու(ն):***

բ) ***ա*** վերջավերություն ունեցող՝ ազգակցություն արտահայտող որոշ բառեր՝ ***այա-այուն, ապա-ապուն, նանա-նանուն, մամա-մամուն, պապա-պապուն:***

գ) ***ա*** վերջավերություն ունեցող անձնանունները, որոնք զուգահեռաբար թեքվում են նաեւ ***էն/ին*** թեքույթով՝ ***Լիդա-Լիդու(ն)/Լիդին, Յաշա-Յաշու(ն)/Յաշին:***

Մարտակերտի շրջանի խոսվածքների մեծ մասում ***ա*** վերջավորություն ունեցող բառերը թեքվում են ***ան*** թեքույթով՝ ***այան ախպէրը, ապան էշը, Յաշան տօնը:***

Վա/վա հոլովանիշով թեքվում են ժամանակի իմաստ արտահայտող բառերը՝ ***օր-օրվա, քըսօր-քըսօրվա, կ՝արունք-կ՝արունքվա, ծըմը՝ռնը- ծըմըռնըվա:***

Ա(ն)/ա(ն) հոլովանիշ ստանում են.

ա) ***կընէգ՝*** եւ ***ախճիգ՝*** բառերը՝ ***կընգա, ըխճըկա:***

բ) հատուկ տեղանունները՝ ***Ղարաբաղ-Ղարաբաղա, Իրէվան- Իրէվանա, Հանդրանթ-Հընդրանթա, Կ՝ծրէս-Կ՝ծրէսա:***

գ) գրաբարյան ***ն*** վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը՝ որոշյալ առման դեպքում՝ ***կ՝առնը-կ՝առնանը, թօռնը-թօռնանը, տոռնը-տըռնանը:*** Անորոշ առման դեպքում այս բառերը թեքվում են ***ու*** հոլովանիշով՝ ***կ՝առնու, թօռնու, տըռնու:***

Է/օ հերթագայությունը պատմականորեն հանգում է հին հայերենի ***այ/օ*** հերթագայությանը՝ ***ախպօր, դօրփօր*** (նաեւ ***դօրփուր***):

Գրաբարյան նույն հերթագայությանն են հանգում ***ա/օ, ան/օ-ն՝մար-մօր, հանր-հօր:***

Է/ու հերթագայությամբ հանդես է գալիս ***հանէր/հանուր*** (նաեւ ***հանօր***), իսկ ***ի/ու*** հերթագայությամբ՝ ***տանք՝իր- տանք՝ուր*** (նաեւ ***տանք՝ծր***) բառը:

Օ/ա հերթագայությունը համապատասխանում է գրաբարյան ***ու/ա*** հերթագայությանը եւ ընդգրկում է ***շօն*** եւ ***տօն*** բառերը՝ ***շօն/շան, տօն/տան:***

Ու/ըվ հերթագայությամբ է թեքվում ***քուր*** հիմքը՝ ***քուր-քըվօր, մըրաքուր-մըրաքըվօր:***

Հոգնակի թվում տրական հոլովը արտահայտվում է ***էն/ին, ու(ն)*** վերջավորություններով եւ ***ք/գ*** հերթագայությամբ:

Էն/ին հոլովանիշ են ստանում ***էր/ը՝ր, նէ, լար/լանր, էն/ը՝ն*** հոգնակերտներով բառերը՝ ***ծառէր-ծըռէրէն, սալդաթնէ-սալդաթնէրէն, աթալար-աթալարէն, անմիլանր-անմիլանրին, թիյը՝ն- թիյը՝նէն:***

Ու(ն) հոլովանիշ են ստանում՝ ***օտ/ծտ*** հոգնակերտ ունեցող բառերը՝ ***զկըռօտ-զըկըռօտուն, տանձօտ-տընձծտուն,*** ինչպես նաեւ ***նէ*** հոգնակերտով բառերը՝ Հադրութի եւ Շաղախի ենթաբարբառներում՝ ***ըմընէ-ըմընուն, սալդաթնէ-սալդաթնուն:***

Ք/գ հերթագայությամբ թեքվում են ***ք՝, ա(ն)ք/ան(ն)ք, ու(ն)ք/ու(ն)ք, էք՝/էրք,օտէն()ք՝, իք՝, անիք՝*** հոգնակերտներով բառերը, ***շինըցէք՝-շինըցուց, Ըրշակա(ն)ք-Ըրշակա(ն)ց, Սընրք՝իսան(ն)ք-Սընրք՝իսան(ն)ց, տատու(ն)ք-տատու(ն)ց, անգու(ն)ք-անգու(ն)ց, ըխճըկէք՝-ըխճըկօց, տըղէրք-տըղօրց, փըսօտէ(ն)ք՝-փըսօտա(ն)ց, մարթիք՝-մարթանց, կընանէք՝-կընանուց*** եւ այլն:

Այսքանով հանդերձ՝ տրականի թեքույթների գործառությունը որոշակի հիմքերի հետ օրինաչափ երեւույթ չէ, եւ երբեմն հոլովման տիպերի միջեւ կատարվում են փոխանցումներ, ինչպես՝ ***Ճըրտարա/Ճըրտարէն, օրվա/օրէն, տարվա/տարուն:***

Բացառական հոլովը ներկայանում է համադրական եւ վերլուծական կառուցվածքներով:

Համադրական բացառականի վերջավորությունն է ***ա(ն)***, որ դրվում է ուղղական-հայցականի անհնչյունափոխ կամ հնչյունափոխված հիմքի վրա՝ ***ծակ-ծակա(ն), թումբէր-թումբէրա(ն), տէնակ-տինակա(ն), տինըկնէ-տինըկնա(ն), հանանծտ-հանանծտան:***

Օ/ա հերթագայությամբ թեքվող բառերը եզակիում եւ վերջնահանգ ***ք*** ունեցող հոգնակերտով բառերը համադրական բացառականը կազմում են տրական հոլովաձեւից՝ ***շօն-շան-շանան, տօն-տան-տանան, ծիյանք-ծիյանց-ծիյանցան, շէնէրք- շէնէրց- շէնը՝րցան:***

Վերլուծական կառուցվածքով բացառականը հիմնականում հատուկ է անձ ցույց տվող գոյականներին եւ բաղադրվում է տրականից եւ ***անա*** կամ ***նը՝ստա/նըստա/նիստա/նը՝ստա*** բառ-մասնիկներից՝ ***տըղէն անա/նը՝ստա, մարթին անա/նը՝ստա, դօրփուրցը անա/նը՝ստա, հօրը անա/նը՝ստա, Ըրշակէն անա/նը՝ստա:*** Այդ գոյականները, բացառությամբ անձնանունների, բացառականը կարող են կազմել նաեւ համադրական եղանակով՝ ***մարթան, կընգանան, ըխճըկանան:*** Այս երեւույթը, սակայն, չունի լայն տարածում:

Տեղանունների բացառականը նույնանում է սեռական-տրականի կառուցվածքին՝ ***Իրէվանա, Մարտունա, Իրանա:*** Տարբերությունը նկատվում է միայն շարահյուսական մակարդակում:

Գործիական հոլովին եւս հատուկ են համադրական եւ վերլուծական կառուցվածքներ: Դրանց կազմության եղանակները նույնն են բացառականի հետ, այն տարբերությամբ, որ գործիականը ունի ***ավ*** ընդհանուր վերջավորությունը՝ ***ծառավ(ը), քըրէրավ(ը), տինըկնավ(ը), տանավ(ը), շանավ(ը), ծիյանցավ(ը), ըխճըկօցավ(ը)/ըխճըկօցը անավ/նը՝ստավ, տըղօրցավը/տըղօրցը անավ/նը՝ստավ, Ըրշակէն անավ/նը՝ստավ, քըվօրը անավ/նը՝ստավ, հընթէրքավ(ը), Ճըրտարավը:***

Ներգոյական հոլովը հատուկ է հիմնականում տեղի եւ ժամանակի գաղափար արտահայտող բառերին եւ ունի ***ուղղական-հայցական հոլովաձեւ+ըմ/ում վերջավորություն*** կառուցվածքը (ուղղական-հայցականը կարող է ներկայանալ անհնչյունափոխ եւ հնչյունափոխված հիմքերով)՝ ***շէն-շէնըմ(ը)/շէնում(ը), կ՝ումկ՝ումըմ(ը)/կ՝ումում(ը), ժամ-ժամըմ(ը)/ ժամում(ը), ամէս-ամսըմ(ը)/ամսում(ը):***

Հատուկ տեղանունների ներգոյականի իմաստը ընդհանուր առմամբ արտահայտվում է ուղղական-հայցականով՝ ***Շուշի լ՛ավ ճիւր կա*** (Շուշիում լավ ջուր կա), ***Տումէ բօլ զըկըռօտ կա*** (Տումիում շատ զկռենիներ կան):

Մյուս դեպքերում ներգոյականի իմաստն արտահայտվում է տրական հոլովի եւ ***մաչին/մէչին/միչին*** ետադրության բաղադրությամբ՝ ***խօսկէն մաչին*** (խոսքի մեջ), ***մարթին մաչին*** (մարդու մեջ) եւ այլն:

ՀՈԴԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ: Բարբառին հատուկ են որոշյալության, ստացականության, ցուցականության եւ դիմորոշության հոդային ենթակարգեր:

Որոշիչ հոդերն են ***ը***-ն եւ ***ն***-ն, որոնցից առաջինը գործառում է բաղաձայնահանգ, երկրորդը՝ ձայնավորահանգ բառերի հետ՝ ***կարքը, կ՛իրքը, կըլօխը, ըստօլը, ռանմուզը, կատուն, տըղան, մայան:***

Ը, ն որոշիչ հոդ են ստանում գոյականները եւ փոխանունները եզակի եւ հոգնակի թվերի թե՛ ուղիղ, թե՛ թեք հոլովաձեւերում՝ ***շէնը, շէնին, շէնանը, շէնավը, շէնըմը***:

Անորոշությունը որոշյալությանը հակադրվում է զրո վերջավորությամբ եւ ***մի/մին*** ցուցիչի առկայությամբ՝ ***քարը-քար/մի քար/մին քար, հայաթը-հայաթ/մի հայաթ/մին հայաթ: Մի/մին*** ցուցիչը ունի միայն նախադաս կիրառություն:

Առանց որոշյալ հոդի են գործածվում.

ա) ***իմ, քու, մէր, ծը՛ր*** անձնական դերանունների հետ գործածվող՝ ազգականություն ցույց տվող բառերը՝ ***իմ տատ, քու հանր, մէր մար, ծը՛ր քուր:***

բ) ազգակցություն ցույց տվող հավաքական գոյականները, որոնք տրականում թեքվում են ***ք/g*** հերթագայությամբ՝ ***պապուք, տատուք, անգանք, Ուրանթլանանք, Անվանք:***

Ուղղական հոլովի կիրառություններից անորոշ ձեւ ունեն գոյականաբար հանդես եկող որոշիչները եւ կոչականները՝ ***չամէնչ մէս, մը՛ղըր հաց, Սանք՛ի, յը՛ր կաց:***

Գործիականում սովորաբար որոշիչ հոդ չեն ստանում ***վա*** հոլովման բառերը՝ ***ժամավ, օրավ:***

Շաղախի ենթաբարբառի հին սերնդի խոսվածքում անձնանունները սովորաբար խոսքի մեջ հոդ չեն ստանում՝ ***Արշակ ք՛ը՛ցավ, Մանրդու տըղան եւ*** այլն:

Ստացականությունն արտահայտվում է ***ս*** եւ ***տ*** հոդերով՝ ***տօնըս, հընգէրուքըս, հացըտ, ծառըտ:*** Ստացական հոդ ստանում են գոյականները՝ ***հանրըս, մարըտ***, գոյականաբար գործածվող ածականները՝ ***մը՛ծըս, կուճինիտ,*** թվականները՝ ***հէնգ՛ըս, էրկունջինըտ,*** մի շարք դերանուններ՝ ***ինք՛ըս, ըշտը՛ղըտ,*** անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները՝ ***կարթիլըս, կէրածըտ, օտօղըտ:***

Ստացականության իմաստ են արտահայտում նաեւ ***ը*** եւ ***ն*** հոդեր ունեցող բառերը, որոնց ստացական իմաստը սակայն չի պայմանավորված հոդով: Դա բառի ներքին ստացական իմաստն է, որի՝ երրորդ դեմքի վրա կոնկրետանալը տրամաբանորեն բխում է տեքստից՝ պայմանավորված ***ս, տ*** հոդերի բացակայությամբ, ինչպես՝ ***վը՛ննը կօտրալ ա*** (նրա ոտը), ***տըղէն փըսակալ ա*** (իր տղային):

Ստացական հոդերը միաժամանակ որոշյալության իմաստ են արտահայտում եւ կարող են գործառել բոլոր հոլովների եզակի եւ հոգնակի ձեւերի հետ՝ ***քաղաքըս/քըղըքնէս, քըղաքէս/քըղըքնէրէս, քըղաքաս/քըղըքնէրաս, քըղաքավըս/ քըղըքնէրավըս, քըղաքըմըս/ քըղըքնըմըս:***

Ստացական հոդեր ունեցող բառերը կարող են գործածվել եւ՛ առանց դերանուն հատկացուցիչների, եւ՛ դերանուն-հատկացուցիչներով՝ ***ծը՛րքըս/իմ ծը՛րքըս, խօխատ/քու խօխատ:***

Գրաբարյան ***ս, դ, ն*** ցուցական հոդերից բարբառում, ինչպես արդի հայերենում, պահպանվել է միայն ***ս***-ն, որն ունի ***էս*** (այս) դերանվան իմաստը եւ գործածվում է տեղի ու ժամանակի մի շարք անունների հետ՝ արտահայտելով ժամանակի եւ առարկայի մոտիկության գաղափար, ինչպես՝ ***աշունքըս*** (այս աշնանը), ***վէրջէրքըս*** (այս վերջին ժամանակները), ***աշխարքըս*** (այս աշխարհը), ***յըրգ՛իրըմըս*** (այս երկրում): Այս բառերը կարող են գործածվել նաեւ ***էս*** դերանվան հետ՝ ***էս աշունքըս, էս ըմըռնուս, էս շէնըս:***

Դիմորոշության կարգը, որ հատուկ է եւ՛ հին, եւ՛ արդի հայերենին, պահպանվել է նաեւ բարբառում եւ արտահայտվում է ***ս, տ***, հոդերի միջոցով՝ ***յը՛ս ինք՛ըս, տու ինք՛ըտ, մինակըտ, սաղըս:***

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ: Ածականները բարբառում լինում են որակական եւ հարաբերական: Որակական ածականների բաղդատական աստիճանը ներկայանում է վերլուծական եւ շարահյուսական կառուցվածքներով: Վերլուծական կառուցվածքը արտահայտվում է գրաբարյան ***քան+ զ-քանց/կանց/ կանս*** նախդիրի միջոցով՝ ***իմ տըղաս կուճի յա, քանց քունը:***

Բաղդատականի իմաստ է արտահայտվում նաեւ ***պակաս, շատ*** բառերի, ինչպես նաեւ ***ավուն*** ածանցի միջոցով՝ ***պակաս խէլանք, շատ դաշանգ՛, կ՛ըպտանվուն:***

Շարահյուսական կառուցվածքը արտահայտվում է համեմատելի առարկայի բացառական հոլովաձեւով՝ ***էտ ծին էս ծիյան քավթառ ա:***

Գերադրական աստիճանին եւս հատուկ է վերլուծական կառուցվածք. կազմվում է ***ամմէն*** եւ ***լօխ*** դերանունների բացառական հոլովաձեւի հարադրությամբ՝ ***ամմէնաթանգ՛ը, ամմէնապը՛նդը, լուխճաց/լօխճաց պէրակը:***

Հարաբերական ածականները սովորաբար կազմվում են գոյականներից՝ ***է/ի*** ածանցով՝ ***արկաթ-ըրկաթէ, քար-քարէ, պանրթ-պըրթի, փանդ-փանդի:***

Փոխանվանական կիրառության դեպքում ածականը հոլովվում է ***էն/ին*** (որոշյալ առման դեպքում) եւ ***ու*** (անորոշ առման դեպքում) հոլովումներով՝ ***պառավը/պառավ, պըռավէն/պըռավու, պըռավէն անա/նը՛ստա/պըռավու անա/նը՛ստա, պըռավէն անավ/նը՛ստավ/պըռավու անավ/նը՛ստավ:***

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ: Բարբառում թվականները լինում են քանակական, դասական, բաշխական, չափական, անձներական, կոտորակային, բազմապատկական:

Քանակական թվականներն են. միավորներ՝ ***մի/մին, էրկու, իրը՛ք/իրէք, չօրս/չծրք՛, հէնգ՛, վէց(g), օխտը, օթ, հինը (օխտը*** եւ ***հինը*** թվականները հանդես են գալիս միայն հոդով), տասնավորներ՝ ***տաս(ս)ը, տըսնը-***

մին/տասնըմին, տըսնըէրկու, տըսնըիրը*ք, տըսնը-չօրս, տըսնըհէնգ*�smՍ, տըսնըվէց, տըսնըօխտը, տըսնը-օթ, տըսնըիննը, քըսան, յէրէս(ս)ուն/ըրէս(ս)ուն/ՀԻ-ՐԵՆ(ս)ՀԻՆ/ իրէս(ս)ուն, քըռաս(ս)ուն/քառաս(ս)ուն, ից-ցուն/ից̀ուն/ի̀ծ̀ուն/, վացցուն/վացուն/վա̀ծ̀ուն/, ուխտընաս(ս)ուն/ ուխտունաս(ս)ուն, ութաս(ս)ուն, ին-նա̀ս(ս)Հ̀ուն/իննաս(ս)ուն: Մյուս թվականներից են՝ ***հա̀-ՐԻՐ, հազ(զ)ար/ հըզ(զ)ար/հըզ(զ)էր/հիզ(զ)էր մի-լ̀ծ̀ն/միլյօն/մըլյօն, միլլա̀ՐԴ/մըլ*ՍՍարդ:***

Տաս(ս)ը թվականը միավորներին միանում է հնչ-յունափոխված եւ անհնչյունափոխ արմատներով՝ ***տըս-նը/տասնը,*** որտեղ վերականգնվում է գրաբարյան ***ն*** վերջնահանգը:

Երբեմն գործածվում է նաեւ ***քաց(ց)ուն/ քաճ-(ճ)ուն/քաթսուն*** տասնավորը, որ ***քառասուն*** թվակա-նի հնչյունափոխված ձեւն է՝ ***իցցուն*** եւ ***վացցուն*** թվա-կանների համաբանությամբ, սակայն ունի այլ իմաստ՝ ***շատ, ահագին***, ինչպես՝ ***քացցուն հը*ՍՍտէ ասալ ըմ*** (շատ եմ ասել):

Տասնավորները միավորներին միանում են նախա-դաս շարադասությամբ:

Դասական թվականները, բացառությամբ ***առա-ջին-ըռըչի/առաչի/ըռաչի*** թվականի, արտահայտվում են քանակական թվականների եւ թուրքերենից փո-խառյալ ***ինջի/ընջի/հինջի*** մասնիկի հարադրությամբ՝ ***վէց(ց)ինջի/վէց(ց)ընջի, իրը*ք(հ)ինջի:***

Այս թվականների իմաստը նախադասության մեջ կարող է ներկայացվել նաեւ քանակական թվաննե-րի տարբեր հոլովաձեւերով՝ ***փոխվալ ա հէնգ*ՍՍը*** (փո-խադրվել է հինգերորդ դասարան), ***վեցըմըն ա սըվը*ՍՍ-րում*** (վեցերորդ դասարանում է սովորում), ***օխտան տա̀ւս ա յը*ՍՍկալ*** (յոթերորդ դասարանից հեռացել է): Նոր սերնդի խոսվածքում երբեմն գործածվում են գրա-կան հայերենի ***օրթ/որթ/էրորթ*** ածանցներով կազմ-ված ձեւերը՝ ***չօրորթ, յէրգըրորթ, հինգ*ՍՍէրորթ:***

Թվականների մյուս տեսակներն արտահայտվում են.

- բաշխականները՝ քանակականների կրկնու-թյամբ՝ ***մին-մին, հէնգ*ՍՍ- հէնգ*ՍՍ, քըսան-քըսան:***

- չափականները՝ ***անուց/ա̀նուց*** ածանցով՝ ***տըսսա-նուց, իրըքանուց, վըցցա̀նուց:***

- բազմապատկականները՝ ***տակ, պատէգ*ՍՍ*** բառերի հետ քանակականների հարադրությամբ՝ ***հինգ*ՍՍընտակ, հինգ*ՍՍընպատէգ*ՍՍ, վից(ց)ընտակ, վից(ց)ընպատէգ*ՍՍ,***

- անձներականները ***ը*ՍՍքան/էքան*** ածանցով՝ ***հինգ*ՍՍը*ՍՍքան/հինգ*ՍՍէքան, վըց(ց)ը*ՍՍքան/վից(ց)էքան:***

- կոտորակայինները՝ քանակական թվականների բացառականով (հայտարար) եւ ուղղական-հայցական-նով (համարիչ)՝ ***չօրսան մինը*** (մեկ չորրորդ), ***քըսանան օթը*** (ութ քսաներորդ):

Թվականները փոխանուն կիրառությամբ հոլով-վում են՝ տրականում թեքվելով ***էն/ին*** (որոշյալ առում) եւ ***ու*** (անորոշ առում) հոլովանիշներով՝ ***օթը/օթ, օթէն/օթու, օթան/օթա, օթավը/օթավ:***

ԴԵՐԱՆՈՒՆ: Բարբառում դերանունները լինում են անձնական, ցուցական, հարցական-հարաբերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ, ժխտական:

Անձնական դերանուններն են՝ ***յը*ՍՍս/յըս/յէս, տու/տո̀ւ, ինքՍՍը/ինքը, մուք, տուք/տո̀ւք, ՀԻՐԱ̀(ն)ք:***

Ցուցական դերանուններն են՝ ***էս, էտ, էն, ըստի/հս-տի, (ը)տի/հտի, (ըն)դի/հնդի, էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, ըստը*ՍՍդ/ըստէդ/ըստըդ, (ը)տը*ՍՍդ/(ը)տէդ/(ը)տըդ, (ըն)դը*ՍՍդ/(ըն)դէդ/ընդըդ:***

Էն ցուցական դերանունը կիրառվում է նաեւ ***նա*** անձնական դերանվան փոխարեն:

Հարցական-հարաբերական դերանուններն են՝ ***հու(վ), հինչ, վէր/վը*ՍՍր, (հ)ըշտը*ՍՍդ/ը*ՍՍշտէդ/հիշը*ՍՍդ/վըր-դէդ/վըրդը*ՍՍդ, հիշկան/հինչքան/հինչանք/հիշչա(ն)ք/ հինչուք/հիշչուք, քանէ/ քանը*ՍՍ/քանի, հիբ(ը)/հիբի/հի-բու/հէբ/հէփ, հուր, հօր, խէ/խի, հունց(ը)/հունցու:***

Որոշյալ դերանուններն են՝ ***ամ(մ)էն/ամը*ՍՍն/ ամ(մ)ան, ամ(մ)էնքՍՍը/ ամը*ՍՍնքՍՍը/ամանքՍՍը, ա̀մ(է)գ*ՍՍա̀/ ամէգ*ՍՍա/ա̀միգ*ՍՍա̀/ամաքա/ամէքՍՍա/ ա̀մ(է)կ*ՍՍա̀ ամմէն մին, լօխ, սաղ:***

Անորոշ դերանուններն են՝ ***մի(ն), էրո̀ւշ/ծրո̀ւշ/ծրիշ, մը*ՍՍկալ/մէկալ, մի(ն) քանէ, փըլան, փըստան, փը-լանքՍՍա̀ն/փալանքՍՍա̀ն:***

Ժխտական դերանուններն են՝ ***վէչ մինը, վէչ միհ պէն:***

Փոխադարձ են ***հ̀ուրհ̀ուր, մինմինու/մ̀ունմ̀ունու*** դերա-նունները:

Անձնական դերանունների սեռական հոլովաձեւե-րը բարբառում գործածվում են որպես ստացական դե-րանուններ եւ փոխանվանաբար գործածվելիս կարող են հոլովվել, ինչպես՝ ***իմը, քունը, իմին, քունան, հ̀ուրա̀-նա̀վը*** եւ այլն:

Դերանունները ներկայանում են պարզ եւ բա-ղադրյալ կառուցվածքներով: Պարզ դերանուններ են՝ ***յը*ՍՍս, տու, էս, էտ, էն, հիբ, հուր, քանէ, մին, լօխ, սաղ*** եւ այլն: Բաղադրյալ դերանուններից համադրական բար-դություններ են՝ ***ըստը*ՍՍդ, ըտը*ՍՍդ, ընդը*ՍՍդ, էսչա(ն)ք, էտ-չա(ն)ք, էնչա(ն)ք, մը*ՍՍկալ (մէկ այլ),*** հարադիր բարդու-թյուններ են՝ ***վէչ մինը, վէչ մին պէն, ամմէն մի, մի(ն) քանէ,*** կրկնավոր բարդություններ են՝ ***հ̀ուրհ̀ուր, մինմինու:***

Դերանունների մի մասը չեզոք է դեմքի նկատ-մամբ, ինչպես՝ ***հիշկան, հուր, ը*ՍՍշտը*ՍՍդ, հիբ:***

Որոշ դերանուններ դեմքի գաղափար են հանդես բերում՝ հոդերին միանալով, օրինակ՝ ***ամմէն մինը*ՍՍս, վէշ մինը*ՍՍտ, սաղը*ՍՍս:***

Որոշ դերանուններ (հատկապես անձնական) ու-նեն դեմքի իմաստի լիակատար դրսեւորում, ինչպես՝ ***յը*ՍՍս, տու, ինքՍՍը, մուք, տուք, հ̀ուրա̀նք, էն:***

Ըստ թվի կարգի իմաստային արտահայտության՝ բարբառում դերանունները բաժանվում են մի քանի խմբերի.

ա) դերանուններ, որոնք ունեն թվի կարգի լիակա-տար դրսեւորում, դրանք են՝ անձնական՝ ***յը*ՍՍս, տու, ինքՍՍը,*** ցուցական՝ ***էս, էտ, էն, ըստը*ՍՍդ, ըտը*ՍՍդ, ընդը*ՍՍդ,*** հարցական-հարաբերական՝ ***հու(վ), հինչ, ը*ՍՍշտը*ՍՍդ,*** անո-րոշ՝ ***էրո̀ւշ, մը*ՍՍկալ, փըլան, փըստան, փըլանքՍՍա̀ն:***

բ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ եւ եզակի իմաստ՝ ***քանէ, մին, ամմէն մին, վէր, վէչ մինը, վէչ մին պէն,***

գ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ, հոգնակի իմաստ՝ ***ամմէն, լօխ, սաղ, հ̀ուրհ̀ուր, մինմինու, մին քանէ,***

դ) դերանուններ, որոնք ընդհանրապես չեզոք են թվի կարգի արտահայտության նկատմամբ՝ ***էսքան, էտ-***

քան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, հունց, հիշկան, հիբ, հուր, խէ:

Ձեւաբանական մակարդակում հոգնակի թիվը ներկայանում է ***ք, էր, նէ*** հոգնակերտներով:

Ք թվանիշ թեքույթով կազմություններ ունեն միայն անձնական եւ ցուցական դերանունները՝ ***յը՛ս-մուք, տու-տուք, ինք՛ը-ինքնք, էս-ըստըրանք/ըստահանք, էտ-ըտըրանք/ըտահանք, էն-ընդըրանք/ընդահանք*** (Շաղախի ենթաբարբառ՝ ***ինստինք՛/ինստինք՛էր, ինտինք՛/ինտինք՛էր, ինընդինք՛/ինընդինք՛էր***):

Մյուս դերանունների հոգնակին կազմվում է անվանական հիմունքներով. միավանկները ստանում են ***էր***, բազմավանկները՝ ***նէ*** հոգնակերտները, որոնց նախորդում է ուղղական-հայցականի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքը՝ ***հու(վ)-հուվէր, հինչ-հինչէր, էրինշ-էրինշնէ:***

Ցուցական ***ըստը՛ղ, ըտը՛ղ, ընդը՛ղ*** եւ հարցական-հարաբերական ***ըշտը՛ղ, հու(վ), հինչ*** դերանունները կարող են ստանալ կրկնակի հոգնակերտ ***(ուղղական-հայցականի հիմք + էր + ք)՝ըստը՛ղէրք, ըտը՛ղէրք, ընդը՛ղէրք, հուվէրք, ըշտը՛ղէրք, հինչէրք:***

Որոշ դերանուններ՝ ***հունց, հօր, խէ,*** բարբառում փոխանվանական կիրառություն չունեն եւ չեն հոլովվում:

Թեքվող դերանուններին հատուկ է հոլովման երկու տիպ՝ անվանական, երբ դերանուններն ստանում են գոյականներին հատուկ հոլովակերտներ ***(մինը-մինին)***, եւ դերանվանական, երբ դերանունների ուղիղ եւ թեք հոլովաձեւերը ներկայանում են տարարմատներով ***(յը՛ս-իմ-ինձ)***:

Անվանական հոլովում: Դերանունների մեծ մասին հատուկ են ուղիղ եւ թեք բոլոր հոլովաձեւերը (բացառությամբ ներգոյականի): Դրանք են՝ ***ինք՛ը, էս, էտ, էն, հու(վ)*** դերանունների հոգնակի ձեւերը ***(ինքնք, (ը)ստըրանք, (ը)տըրանք, (ըն)դըրանք, հուվէրք,*** եւ ***էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, ըստը՛ղ, ըտը՛ղ, ընդը՛ղ, ամմէն, ամմէն մի, լօխ, սաղ, մին, էրինշ, մը՛կալ, մին քանէ, փըլան, փըստան, փըլանք՛ինս, հինչ, վէր, ըշտը՛ղ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն*** դերանունները: Սրանք բոլորն էլ ունեն չորսական հոլովաձեւ, որոնք կազմվում են անվանական հոլովման սկզբունքներով. տրականը բաղադրվում է ուղղական-հայցականի հիմքից եւ հոլովական թեքույթներից, բացառականը եւ գործիականը հանդես են գալիս երկու կազմությամբ՝ պարզ ***(ուղղական-հայցականի հիմք+վերջավորություն)*** եւ վերլուծական ***(տրական+անա/նը՛ստա (գործ.՝ անավ/նը՛ստավ)*** բառ մասնիկներ: Եթե խոսքը իրի է վերաբերում, բացառականի եւ գործիականի կազմությունը պարզ է, իսկ եթե անձի մասին է, կազմությունը վերլուծական է:

Ըստըրանք, ըտըրանք, ընդըրանք, ինքնք, հուվէրք դերանունները տրականում թեքվում են ***ք/g*** հերթագայությամբ՝ ***ըստըրանք, ըստըրանց, ըստըրանց անա/ նը՛ստա, ըստըրանց անավ/նը՛ստավ:***

Էն/ին հոլովանիշով թեքվում են՝ ***էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, հիշկան, ըստը՛ղ, ըտը՛ղ, ընդը՛ղ, ամմէն, ամմէն մի, մին, լօխ, սաղ, մին քանէնը, էսհինչը, էտհինչը, էնհինչը, հինչ, վէր, ըշտը՛ղ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն, էրինշ, մը՛կալ, փըլան, փըստան, փըլանք՛ինս*** դերանունները՝ ***էսքան(ը), էսքանէն, էսքանան/էսքանէն անա/նը՛ստա, էսքանավ(ը)/էսքանէն անավ/նը՛ստավ:***

Մի շարք դերանուններ, որոնք թեքվում են ***էն/ին*** հոլովանիշով, անորոշ առման դեպքում թեքվում են ***ու*** հոլովանիշով, ինչպես՝ ***էրինշին տօնը-էրինշու տօն, ըստըղէն ճինրը - ըստըղու ճինր:***

Հարցական-հարաբերական ***հիբ*** եւ փոխադարձ ***ինրինր, մինմինու*** դերանունները ունեն թերի հոլովում:

Հիբ դերանունը չունի գործիական հոլով, տրականը կազմվում է ժամանակ ցույց տվող գոյականների նման՝ ***վա*** հոլովանիշ թեքույթով, բացառականը ստանում է ***անց*** վերջավորությունը՝ ***հիբ, հիբվա, հիբանց:***

Ինրինր եւ ***մինմինու*** դերանունները գրաբարի նման ***(իրերաց, միմեանց)*** չունեն ուղղական հոլով, բացառականը եւ գործիականը կազմվում են վերլուծական եղանակով՝ ***ինրինր, ինրինր անա/նը՛ստա, ինրինր անավ/նը՛ստավ, մինմինու, մինմինու անա/նը՛ստա, մինմինու անավ/նը՛ստավ:***

Որոշ հարադիր բայերում պահպանվել է գրաբարյան ***իրերաց*** ձեւը՝ ***ինրինրծ(ն)ցանվ ածէլ/անէլ/տալ/քըցիլ/ըղնէլ/ընցընէլ/ինիլ/կ՛անլ:***

Դերանվանական հոլովում: Դերանվանական հոլովման առանձնահատկությունները հանդես են գալիս ուղղական-հայցական, սեռական եւ տրական հոլովներում, իսկ բացառականը եւ գործիականը կազմվում են անվանական հոլովման ընդհանուր սկզբունքներով:

Դերանվանական հոլովմամբ թեքվում են անձնական ***յը՛ս, տու, մուք, տուք, ինք՛ը,*** ցուցական ***էս, էտ, էն,*** հարցական-հարաբերական ***հու(վ)*** դերանունները, որոնց հոլովման առանձնահատկությունները առնչվում են ընդհանուր հայերենի դերանվանական հոլովման համակարգի հետ:

Անձնական ***յը՛ս, տու, մուք, տուք*** դերանուններն, ի տարբերություն մյուս բոլոր դերանունների, ունեն հնգական հոլովաձեւ՝ ուղղական-հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական: Այս դերանունների սեռականը եւ տրականը համընկնում են գրաբարի հետ՝ ***իմ-ինձ, քու-ք՛ը՛զ, մէր-մը՛զ, ծէր-ծը՛զ:*** Եղած տարբերությունները պատմական հնչյունափոխության արդյունք են: Բացառականը եւ գործիականը ունեն համադրական կառուցվածք՝ ***ինձանա, ինձանավ, ծըզանա, ծըզանավ:***

Ինք՛ը անձնական դերանունը սեռական հոլովաձեւ չունի: Տրականը առնչվում է գրաբարյան ***իւրեան*** հոլովաձեւին՝ ***ինրանն:*** Բացառականը եւ գործիականն ունեն վերլուծական կառուցվածք՝ ***ինրան անա/նը՛ստա, ինրան անավ/նը՛ստավ:***

Որոշ դարձվածներում պահպանվել է գրաբարյան ***(զ)ինքն-զինք՛ը*** հայցական հոլովաձեւը՝ ***զինք՛ը ըսպանէլ/թափ տալ/հըվաքէլ/կուրցընէլ/շաղ տալ*** եւ այլն, որտեղ ***զինք՛ը*** կրել է իմաստափոխություն եւ պարզապես նշանակում է մարմին:

Ցուցական ***էս, էտ, էն*** դերանունները ունեն չորսական հոլովաձեւ, ինչպես անվանական հոլովումը: Դե-

ռանվանական հոլովման առանձնահատկությունները արտահայտվում են տրական հոլովում՝ ***ըստըրա, ըստըրա, ընդըրա*** (Շաղախի ենթաբարբառ - ***ինստինւր, ինտինւր, ինունդինւր***):

Բացառականը եւ գործիականը կարող են կազմվել եւ՛ համադրական, եւ՛ վերլուծական եղանակով՝ ***ըստըրանա/ըստըրա անա/նը^{ի}ստա, ըստըրանավ/ըստըրա անավ/նը^{ի}ստավ:***

Հարցական-հարաբերական ***հու(վ)*** դերանունը տրականում թեքվում է ***վ/ր*** հերթագայությամբ՝ ***հու(վ)-հինւր:*** Տրական հոլովաձեւը համապատասխանում է գրաբարյան սեռական հոլովաձեւին՝ ***ոյր***: Բացառականը եւ գործիականը ունեն վերլուծական կառուցվածք՝ ***հինւր անա/նը^{ի}ստա, հինւր անավ/նը^{ի}ստավ:***

ԲԱՅ: Ինչպես հայերենի մյուս դրսեւորումներում, Ղարաբաղի բարբառում եւս բայն ունի եղանակի, ժամանակի, դեմքի, թվի եւ սեռի քերականական կարգեր: Սրանցից յուրաքանչյուրը եւ՛ իմաստային, եւ՛ կառուցվածքային տեսակետից հիմնականում մնում է ընդհանուր հայերենի կաղապարներում:

Բայերն ըստ կազմության բաղադրություններ են, որոնք լինում են երկու բնույթի՝ համադրական եւ հարադրական: Համադրական կազմությունների կառուցվածքը բնութագրվում է ***հիմք+բայական վերջավորություն*** կաղապարով:

Բայերի հիմքը կարող է լինել անածանց եւ ածանցավոր, որոնց անորոշ ձեւում հաջորդում են ***ալ/ալ, էլ*** եւ ***իլ*** բայական վերջավորությունները:

Որպես անածանց հիմք կարող է հանդես գալ բայարմատ ***(մըն-ալ, խոս-էլ, կարթ-իլ)***, անվանական արմատ ***(կ'իպտ-իլ, քար-էլ),*** փոխառյալ արմատ ***(յըհանր-իլ, նաղդ-էլ)***, կրկնավոր արմատ ***(հըռհըռ-ալ, փըրփըր-էլ)***:

Ածանցավոր հիմքերի կառուցվածքն է՝ ***արմատ+բայածանց:*** Բայածանցները բաժանվում են երեք խմբի՝ հիմքակազմ, կերպանիշ եւ սեռանիշ: Բարբառի հիմքակազմ ածանցներն են՝ ***ան, էն, ըն, ն, չ,*** որոնցից առաջինները համապատասխանում են գրաբարի ***ան, են, ն,*** իսկ վերջինը՝ ***չ*** բայածանցներին: Հին հայերենի ***ն*** բայածանցը սովորաբար բարբառում մնացել է անփոփոխ՝ ***առնուլ-առնէլ, դնել-տինիլ,*** մինչդեռ ***ան*** եւ ***են*** բայածանցների ***ա*** եւ ***ե*** ձայնավորները մեծամասամբ ընկել են կամ հնչյունափոխվել՝ ***տեսանել-տը^{ի}սնալ, հասանել-հըսնէլ, անկանել-ըղնէլ/ընգընէլ, մօտենալ-մուտանալ, գտանել-քըթէնալ:*** Որոշ բայերում ***ան***-ը մնացել է անփոփոխ՝ ***հասկանալ-հըսկանալ, քարանալ-քըրանալ:*** Այս բայածանցը կարող է հանդես գալ նաեւ մի շարք արմատների հետ՝ կազմելով նոր բայահիմքեր, ինչպես՝ ***քաշ+ան+ալ-քըշանալ, ղամմազ+ան+ալ-ղըմմըզանալ:***

Շ բայածանցը ընդհանուր առմամբ մնացել է անփոփոխ՝ ***թըռչիլ, օռչիլ, փախչիլ:***

Հին հայերենի ***նչ, աչ, անչ,*** բայածանցները բարբառում սովորաբար չեն գործառում: Թերեւս կարելի է նշել ***ճանաչել-ճընա(ն)չիլ, մեղանչել-մըղանչիլ*** բայերը:

Գրաբարում հազվադեպ գործածություն ունեցող բազմապատկական-կերպանիշ ***ատ, օտ*** բայածանցները բարբառում խիստ կենսունակ են՝ ***կուտըր-ատ-էլ, շըղշուղ-ատ-էլ, ճըկճուկ-ատ-էլ, ծըն-օտ-էլ, պըտըռ-օտ-էլ, ըսպըն-օտ-էլ:*** Միաժամանակ երեւան են գալիս ***օր/ծր*** եւ ***կօտ*** կերպածանցները, որոնք չկային գրաբարում՝ ***պըչպըչ-օր-էլ, կ'ուղկ'ըղ-օր-էլ, տըշտըշ-ծր-էլ, կընընչ-կօտ-էլ, թըռչը-կօտ-էլ:***

Սեռանիշ ածանցներն են՝ ***-ըվ/վ*** եւ ***-ցըն/ըց(ը)ն:***

Կրավորական ***-ըվ/վ*** բայածանցը, որ ավանդված չէ գրաբարում, սովորաբար դրվում է ներգործական սեռի բայերի վրա: ***է*** եւ ***ի*** լծորդության բայերի դեպքում այն դրվում է անորոշի հիմքի, ***ա*** լծորդության բայերի դեպքում՝ երբեմն նաեւ անցյալի հիմքի վրա՝ ***օտէլ-օտվէլ, շինիլ-շինվիլ, աղալ-աղվէլ/ըղացվէլ:***

Պատճառական ***-ցըն/ըց(ը)ն*** բայածանցը համապատասխանում է գրաբարի ***ուցան*** ածանցին: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, որտեղ բոլոր բայերի պատճառականը կազմվում է անցյալի հիմքից, բարբառում ***ցըն/ըց(ը)ն*** ածանցը դրվում է անորոշի հիմքի վրա՝ ***ծիծաղել-ծիծաղեցուցանել-ծըծըղց(ը)նէլ:*** Բացառություն են կազմում ***ան, ըն, ն*** ածանցներով բայերը, որոնց դեպքում պատճառական բայածանցը դրվում է անցյալի հիմքի վրա՝ ***տըմանալ-տըմըց(ը)նէլ, ընցընէլ-ընցընց(ը)նէլ, հըսնէլ-հըսցընէլ:***

Հարադրական կազմությունները բարբառում ունեն լայն գործածություն: Հարադրության առաջին մասում գործառում են բնիկ եւ փոխառյալ բառեր, իսկ երկրորդ մասում՝ մի շարք բայեր, ինչպես՝ ***խաղ անէլ, ինջիմիշ հինիլ, հօփ կ'ալ, սը^{ի}ռտ տինիլ, յը^{ի}ռ ածէլ*** եւ այլն:

Տալ բայի եւ որեւէ այլ բայի անորոշ ձեւի հարադրությամբ արտահայտվում է պատճառականության իմաստ՝ ***ասէլ տալ, խօսէլ տալ, օտէլ տալ, ըսպանէլ տալ:***

Բարբառում բայի բոլոր ձեւերը կազմվում են երեք հիմքից՝ ***անորոշի հիմք, անցյալի հիմք, անորոշ դերբայ*** (դերբայական հիմք):

Սրանցից հիմնական են համարվում առաջինները, որոնք կազմությամբ լինում են պարզ կամ արմատական եւ բաղադրյալ: Անորոշի հիմքը պարզ է, երբ զուրկ է բայածանցներից՝ ***աղ-ալ, խըմ-էլ, կարթ-իլ:*** Անորոշի բաղադրյալ հիմքում բայարմատների հետ գործառում են բայածանցները՝ ***մուտ+ան-ալ, առ+ն-էլ, քըթ+էն-ալ, ընց+ըն-էլ, թըռ+չ-իլ, ըստըկ+օտ-էլ, կուտըր+ատ-էլ, կըրկըտ+օր-էլ, կընընչ+կօտ-էլ, ըսպան+վ-էլ, չուք+ըց(ը)ն-էլ:***

Անցյալի հիմքը պարզ է, երբ համընկնում է բայարմատին: Անցյալում այդպիսի հիմք ունեն ***էն, ըն, ն, չ*** ածանցներով բայերը, որոնցից ածանցները դուրս են ընկնում, ինչպես՝ ***քըթէնալ-քըթ, ընգընէլ-ընգ, տը^{ի}սնալ- տը^{ի}ս, օռչիլ-օռ:*** Անցյալի բաղադրյալ հիմքը լինում է բուն հիմքածանցավոր եւ հերթագայական: Հին հայերենի ***ի*** թույլ բաղադրիչով անցյալի հիմք բարբառին հատուկ չէ: Բուն հիմքածանցավոր հիմքի կառուցվածքն է՝ ***անորոշի հիմք+հիմքածանց:*** Որպես հիմքածանց՝ հանդես է գալիս ***ց***-ն, որին կարող են նախորդել՝ ***ա, ը^{ի}, է*** լծորդ ձայնավորները: Այդպիսի հիմք ունեն ***ա*** լծորդության բայերը եւ ***է, ի*** լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ ***աղալ-ըղաց, մընալ-մընաց, խըմէլ-խըմը^{ի}ց, ըսպընօտէլ-ըսպընուտը^{ի}ց, խաշվիլ-խըշվէց:*** Հերթագայական հիմքը կազմվում է բայածանցների եւ անցյալի հիմքա-

ծանցների հերթագայությունների միջոցով: Դրանք են.

ա) ***ն/g*** - անցյալի հիմքը այդպիսի հերթագայությամբ են կազմում ***ան*** ածանցով բայերը՝ ***մը-ծանալ-մը-ծաց, թիթըվանալ-թիթըվաց, հըստանալ-հըստաց:***

բ) ***ն/ր*** - այդպիսի հերթագայություն ունեն պատճառական ածանց ունեցող բայերը՝ ***մուտըցընէլ-մուտըցըր, հըսցընէլ-հըսցըր, շըշկըռցընէլ- շըշկըռցըր, խուսցընէլ-խուսցըր,*** ինչպես նաեւ որոշ անկանոն բայեր՝ ***տանէլ-տար, տինիլ-տիր:*** Մի քանի անկանոն բայերի անցյալին բնորոշ է տարահիմքությունը՝ ***օտէլ-կէր, տալ-տուվ, կ'ալ-յը^ակ:***

Անորոշ դերբայը իբրեւ հիմք (դերբայական հիմք) գրաբարում մասնակցում էր միայն ապառնի դերբայի կազմությանը՝ ***թռչելոց, թռչելի:*** Բարբառում այս հիմքից են կազմվում ապառնի դերբայը (բացառությամբ ***ն, ան, էն, ըն, ցըն/ըցըն*** ածանցներով բայերի)՝ ***խուսըլան, կըրթիլան, ըղըլան,*** պայմանական եղանակի ժխտականը՝ ***աղալ չըմ, ասէլ չըմ,*** արգելական հրամայականը՝ ***ք'ինիլ մէ՛լ, մընալ մէ՛ք'***, իսկ Շաղախի ենթաբարբառում՝ նաեւ ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակները՝ ***ասիլ ըմ լալ, բիդը/բէդը ասիլ ըմ լալ:***

Բարբառում բայերի սեռի իմաստաձեւային հատկանիշները արտահայտվում են ներգործական, կրավորական եւ չեզոք սեռերի միջոցով՝ հին հայերենի համեմատությամբ երեւան հանելով մեծ տարբերություններ:

Հայտնի է, որ գրաբարում բայական սեռի կարգը արտահայտվում էր լծորդ ձայավորների, ինչպես նաեւ ժամանակաթվադիմանիշ վերջավորությունների միջոցով, ինչպես՝ ***գրեմ*** (ներգործական սեռ)- ***գրիմ*** (կրավորական սեռ), ***աղաց*** (ներգործական սեռ) - ***աղացաւ*** (կրավորական սեռ): Հաճախ էլ նույն բայաձեւը արտահայտում էր եւ՛ ներգործական, եւ՛ կրավորական սեռերի իմաստներ. օրինակ, ***հեղու*** նշանակում էր եւ՛ ***թափում է,*** եւ՛ ***թափվում է***, ***աղայ***՝ եւ՛ ***աղում է***, եւ՛ ***աղացվում է:*** Տվյալ դեպքում սեռերի հակադրությունը իրացվում էր նախադասության մեջ: Հին հայերենում սեռերը չէին տարբերակվում նաեւ ***անցյալի անկատար*** ժամանակաձեւում, իսկ դերբայները ընդհանրապես չունեին սեռի ձեւաբանական արտահայտություն: Արեւմտյան խմբակցության որոշ բարբառներ մասամբ պահպանել են գրաբարյան առանձնահատկությունները, մինչդեռ արեւելյան խմբակցության բարբառներում, այդ թվում եւ Ղարաբաղի բարբառում, ինչպես ժամանակակից հայերենում, սեռերի հակադրությունն հիմնականում արտահայտվում է ***վ*** սեռածանցի առկայություն - բացակայություն հատկանիշով: Այս ձեւաբանական միջոցը, որ հանդես է եկել դեռեւս ետգրաբարյան շրջանում, հետագայում գործածվել է գրեթե բոլոր բարբառներում:

Վ սեռածանցի միջոցով կրավորական սեռը հակադրվում է ներգործականին: Ընդ որում, ***վ*** ածանց կարող են ստանալ նաեւ անդեմ բայերը՝ ***ըսպանվէլ, ըսպանվալ, ըսպանված, ըսպանվող, ըսպընվըլան*** եւ այլն:

Սակայն ***վ***-ն զուտ կրավորանիշ ածանց չէ, եւ բազմաթիվ բայեր ***վ*** ստանալիս արտահայտում են նաեւ չեզոք սեռի իմաստ: Այդպիսի բայերի մի մասը սովորաբար չեզոքության իմաստ ունի փոխաբերական նշանակության դեպքում, ինչպես՝ ***ըզադվէլ-*** 1) ***ազատվել*** (կրավ.), 2)***ծննդաբերել*** (չեզոք), ***քամվէլ -*** 1)***քամվել*** (կրավ), 2)***սնանկանալ*** (չեզոք), եւ այլն:

Չեզոք սեռի իմաստ են արտահայտում նաեւ անդրադարձություն եւ փոխադարձություն ցույց տվող որոշ բայեր՝ ***տըղըվարվէլ, պըտատվէլ, տը^ասնըվալ:***

Որոշ բայեր չունեն իրենց սկզբնատիպ՝ չեզոք թե ներգործական, ձեւերը եւ գործածվում են միայն ***վ*** ածանցով՝ ***կ'ընգ'ատվէլ, խըղաղվէլ, կ'իժվիլ, հըմբարցվիլ:***

Սեռածանց կարելի է համարել նաեւ պատճառական ***ցըն/ըցըն*** ածանցը, որի միջոցով հիմնականում չեզոք սեռի բայերից կազմվում են ներգործական սեռի, իսկ ներգործական սեռի բայերից՝ պատճառական սեռի բայեր՝ ***թիւլանալ-թիւլըցընէլ, մընալ-մընըցընէլ, փախչիլ-փըխչըցընէլ, օտէլ-ուտըցընէլ, խըմէլ-խըմըցընէլ:***

Բայի անդեմ ձեւերը բարբառում ներկայանում են հետեւյալ տեսակներով՝ անորոշ՝ ***խօսէլ, հարփիլ, աղալ,*** անկատար՝ ***խոսում, հարփում, աղում*** (Հադրութի եւ Շաղախի ենթաբարբառներ՝ ***խուսէս*** (Շաղախ՝ ***խուսիս***), ***հիրփիս, ըղաս***), վաղակատար՝ ***խօսալ, հարփալ, աղալ/ըղացալ,*** հարակատար՝ ***խօսած, հարփած, աղած/ըղացած,*** ենթակայական՝ ***խօսօղ, հարփօղ, աղօղ/ըղացօղ,*** ապառնի՝ ***խուսուլան/խուսուլական, հիրփիլան/հիրփիլակա՛ն, ըղըլան/ըղըլական,*** համակատար՝ ***խուսէլիս/խուսէյիս, հիրփիլիս/հիրփիյիս, ըղալիս/ըղայիս:***

Հին հայերենի անորոշ դերբայի հինգ՝ ***ա(լ), է(լ), ի(լ), ու(լ), ո(լ)*** լծորդություններից բարբառում կայունացել են միայն երեքը ***ա(լ)/ա՛(լ), է(լ), ի(լ):*** Շաղախի ենթաբարբառում ***է(լ)*** լծորդությամբ բայերը ենթարկվում են ***ի(լ)*** լծորդության՝ ***ասէլ-ասիլ, խըմէլ-խըմիլ:***

Գրաբարի բայերը շատ հաճախ լծորդություններով չեն համընկնում բարբառի համապատասխան բայերի հետ, ինչպես՝ ***տեսանել-տը^ասնալ, թօղուլ-թօղնէլ, զարթնուլ-զարթնանալ*** եւ այլն: Ընդհանուր առմամբ անփոփոխ է ***ա*** լծորդությունը՝ ***բանալ-պէնալ, աղալ-աղալ, բարձրանալ-պիցըրանալ, գողանալ-կ'ուղանալ, մնալ-մընալ:***

Անորոշ դերբայը ունի թե՛ բայական-դերբայական, թե՛ անվանական կիրառություններ: Բայական-դերբայական նշանակությամբ, ինչպես նշել ենք վերեւում, այն մասնակցում է ապառնի դերբայի եւ որոշ ժամանակաձեւերի կազմությանը:

Նախադասության մեջ հանդես գալով՝ անորոշ դերբայը հոլովվում է ***ի(ն)*** հոլովանիշ թեքույթով՝ ***օտէլ(ը)-ուտէլի(ն)-ուտէլա(ն)-ուտէլավ(ը)***: Շարահյուսական մակարդակում այն ներկայանում է տարբեր պաշտոններով. ինչպես՝ *Պատ **տինիլը** լալվ փէշակ ա* (ենթակա), ***Մըռնէլի** վախտը յը^ակալ ա, էլլա լիզարն ուրան չի քաշում* (հատկացուցիչ), *Էս ճարը **խըմէլի** ճարը ա* (որոշիչ), *Տու **խօսէլը** գարդում չըս* (ուղիղ խնդիր), *Պա էս **ապրէլ** ա՞* (վերադիր), *Էրկան **նըստէլան** վը^անները տըմբըրալ ա* (պատճառի պարագա), *Խը^աղը **տընջվիլավ** ապրալ ա, **տընջվիլավ** մը^առալ* (ձեւի պարագա), ***Ուտէլի** հը^ատէ*

գ՛անքը կըտա (նպատակի պարագա), *Մըղակը* ***պէնալը*** *բ՛ենստ, ըսկըսում ա ճըղճըղալը* (ժամանակի պարագա) եւ այլն:

Բայի անկատար ձեւը կազմվում է ***ըմ/ում/՝ում/ամ/՝ամ***, իսկ Հադրութի եւ Շաղախի ենթաբարբառներում՝ ***աս/՝աս, էս, իս*** վերջնամասնիկներով, որոնց բոլոր դեպքերում նախորդում է անորոշի հիմքը՝ ***կարթիլ-կարթ՝ում/կըրթիս, մընալ-մընում/մընաս, օռչիլ-օռչում/ուռչիս, մըծանալ-մըծանում/մըծընաս, հըսնէլ-հըսնըմ/հըսնէս/հըսնիս, ըստըկօտէլ-ըստըկօտում/ըստըկուտէս/ըստըկուտիս, ուտըցընէլ-ուտըցընըմ/ուտըցընէս/ուտըցընիս, տալ- տամ/տաս, կ՛՝ալ-կ՛՝ամ/կ՛՝աս:***

Անկատար դերբայը մասնակցում է սահմանական եղանակի ներկա՝ ***խըմում/խըմէս/խըմիս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղում/ըղաս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվատըմ/հըվըտաս ըմ/ըս/ա /ընք/ըք/ըն,*** եւ անցյալի անկատար՝ ***խըմում/խըմէս/խըմիս ի/իր/ար/ինք՛/իք՛/ին, աղում/ըղաս ի/իր/ար/ինք՛/իք՛/ին, հըվատըմ/հըվըտաս ի/իր/ար/ինք՛/իք՛/ին*** ժամանակաձեւերի կազմությանը:

Վաղակատար դերբայը ձեւավորվում է ***ալ/՝ալ*** վերջնամասնիկով, որը համապատասխանում է հին հայերենի անցյալ դերբայի ***եալ*** վերջավորությանը՝ ***ծնեալ-ծընալ, գտեալ-քըթ՝ալ, գողացեալ-կ՛ուղացալ:***

Ալ/՝ալ վերջավորությանը կարող են նախորդել անորոշի եւ անցյալի հիմքերը՝ ի տարբերություն գրաբարի, որտեղ անցյալ դերբայը ձեւավորվում էր գլխավորապես անցյալ կատարյալի հիմքից:

Վաղակատարը անորոշի հիմքով են կազմում ***է*** եւ ***ի*** լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ ***շարէլ-շարալ, իփիլ-իփ՝ալ, էրվիլ-էրվալ, պըչպըչօրէլ-պըչպըչօրալ, նըստօտէլ-նըստօտալ:*** Վաղակատարը անցյալի հիմքով են կազմում՝ 1) ***ա/՝ա*** լծորդության պարզ, ինչպես նաեւ ***ան, էն, ըն, ն*** ածանցներով բայերը՝ ***աղալ-ըղացալ*** (նաեւ ***աղալ***), ***մընալ-մընացալ, տըմանալ-տըմացալ, քըթէնալ-քըթ՝ալ, ընգընէլ-ընգալ, տը՛սնալ-տը՛սալ,*** 2) պատճառական բայերը՝ ***ուտըցընէլ-ուտըցըրալ, մըծըցընէլ-մըծըցըրալ, սըվըրցընէլ- սըվըրցըրալ:***

Հ ածանցով բայերի վաղակատարը կազմվում է եւ՛ անորոշի, եւ՛ անցյալի հիմքերով՝ ***սառչիլ-սառչ՝ալ/սառալ, օռչիլ-օռչ՝ալ/օռալ:***

Վաղակատար դերբայը անկախ կիրառություն չունի: Այն հանդես է գալիս օժանդակ բայի հետ՝կազմելով սահմանական եղանակի վաղակատար՝ ***խըմալ ըմ/ըս/ա/ընք/ ըք/ըն, աղալ/ըղացալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվըտացալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն*** եւ անցյալի վաղակատար՝ ***խըմալ ի/իր/ար/ ինք՛/իք՛/ին, աղալ/ըղացալ ի/իր/ար/ինք՛/իք՛/ին, հըվըտացալ ի/իր/ար/ինք՛/իք՛/ին*** ժամանակաձեւերը:

Հարակատար դերբայը, որի իմաստը գրաբարում արտահայտվում էր անցյալ դերբայով, բարբառում ձեւավորվում է ***ած/՝ած*** վերջավորության եւ ***անորոշի*** կամ ***անցյալի հիմքի*** հարադրությամբ: Հարակատարի հիմքակազմությունը նույնն է վաղակատարի հետ՝ ***շարէլ-շարած, իփիլ-իփ՝ած, էրվիլ-էրված, պըչպըչօրէլ-պըչպըչօրած, նըստօտէլ-նըստօտած, աղալ-ըղացած*** (նաեւ ***աղած), մընալ-մընացած, տը՛սնալ-տը՛սած, տըմանալ-տըմացած, քըթէնալ-քըթ՝ած, ընգընէլ-ընգած, ուտըցընէլ-ուտըցըրած, մըծըցընէլ-մըծըցըրած, սըվըրցընէլ-սըվըրցըրած, սառչիլ-սառչ՝ած/սառած, օռչիլ-օռչ՝ած/օռած:***

Հարակատար դերբայը ունի եւ՛ բայական, եւ՛ անվանական կիրառություններ: Այն մասնակցում է սահմանական եղանակի հարակատար եւ անցյալի հարակատար ժամանակաձեւերի կազմությանը՝ ***խըմած ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմած ի/իր/ ար/ինք՛/իք՛/ին, աղած/ըղացած ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղած/ ըղացած ի/իր/ար/ինք՛/իք՛/ին, հըվըտացած ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվըտացած ի/իր/ար/ինք՛/իք՛/ին:*** Փոխանվանական կիրառության դեպքում հարակատարը հոլովվում է ***էն*** (անորոշ առման դեպքում՝ ***ու***) հոլովանիշ թեքույթով՝ ***խըմածը/խըմած, խըմածէն/խըմածու, խըմածէն անա/նը՛ստա/խըմածու անա/ նը՛ստա, խըմածէն անավ/նը՛ստավ/խըմածու անավ/նը՛ստավ:***

Այս դերբայը շարահյուսական մակարդակում կարող է հանդես գալ որպես ենթակա ***(Քըշէրվա կէրածը կօրած ա)***, որոշիչ ***(Պըռռված մարթըն էլ ա խօխա),*** հատկացուցիչ ***(Թըղվածէտ կընեգ՛ը հանց ա մարալ ինի)***, վերաբերության խնդիր ***(Մըռածէն անա թ՝ՈՒրիփ կանին),*** պատճառի պարագա ***(Ըտըրա ըսածավը յը՛ս շատ ըմ ուրխանում),*** ուղիղ խնդիր ***(Յը՛ս ըրածըտ մընաս քըցիլ չըմ),*** միջոցի խնդիր ***(Ըրածավըտ պէն չի դ՝ՈՒզիլ),*** ձեւի պարագա ***(Աշկէրը չըռած յէշ՝ում ա):***

Ենթակայական դերբայի վերջավորությունն է ***օղ/՝օղ***, որով այն նույնանում է գրաբարի նույն դերբայի հետ: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, այդ վերջավորությունը հիմնականում դրվում է ոչ թե անցյալի, այլ անորոշի հիմքի վրա՝ ***կ՛իր-օղ, հըսն-օղ, ուրխան-օղ, սառչ-՝օղ, լըպըզտ-օղ*** եւ այլն:

Ա լծորդության մի շարք բայերի ենթակայականը կարող է ձեւավորվել նաեւ անցյալի հիմքից, ինչպես՝ ***աղալ-աղօղ-ըղացօղ, մընալ-մընօղ-մընացօղ, մըծանալ-մըծանօղ-մըծացօղ:***

Ենթակայականը բայի եղանակային ձեւերի կազմությանը չի մասնակցում: ***Խըմօղ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմօղ ի/իր/ար/ ինք՛/իք՛/ին, աղօղ//ըղացօղ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, աղօղ//ըղացօղ ի/իր/ար/ինք՛/իք՛/ին, հըվատօղ//հըվըտացօղ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, հըվատօղ/հըվըտացօղ ի/իր/ար/ինք՛/իք՛/ին,*** եւ այլ ձեւերը լայն տարածում չունեն:

Փոխանվանաբար կիրառվելիս ենթակայականը թեքվում է հարակատարի նման՝ որոշյալ առման դեպքում՝ ***էն***, անորոշ առման դեպքում՝ ***ու*** հոլովանիշներով՝ ***աստղը/աստղ, ըստղէն/ըստղու, ըստղէն անա/նը՛ստա/ըստղու անա/նը՛ստա, ըստղէն անավ/նը՛ստավ/ըստղու անավ/նը՛ստավ:***

Ենթակայական դերբայը նախադասության մեջ ներկայանում է իբրեւ ենթակա ***(Ծ՝ու կ՛ուղանօղը ծի էլ կըկ՛ուղանա)***, որոշիչ ***(Տու օտօղ-խըմօղ մարթ ըս, ինձ լ՛ավ կըսկանաս)***, հատկացուցիչ ***(Հիրփօղին տօնը տէրտակ կինի),*** խնդիր ***(Ըստղէն ըսկանօղ բիդի ինի):***

Ապառնի դերբայի հիմքակազմությամբ (անորոշ դերբայից) բարբառը ընդհանուր առմամբ նույնանում է հին հայերենի հետ: Սակայն վերջինիս ***օց*** եւ ***ի*** մասնիկները փոխարինված են ***-ան/՝ան, -ական/՝ական*** վերջավորություններով՝ ***ասէլ-ըսըլ՝ան/ըսըլ՝ական, թըռչիլ-***

թըռչիլն/թըռչիլնկն, զըռռալ-զըռռըլան/զըռռըլական, ուրվալ-ուրվըլան/ուրվըլական, մուրթօտէլ-մուրթուտըլան/մուրթուտըլական: Ստեփանակերտի եւ հարակից որոշ խոսվածքներում դրան զուգահեռ գործածվում են ***-էլու, -ալու, -իլու*** վերջավորությամբ ձեւերը՝ ***ըսէլու, թըռչիլու, զըռռալու, ուրվալու, մուրթուտէլու,*** որոնք գրական հայերենի ազդեցության արդյունք են:

Պատճառական եւ ***ան, էն, ըն, ն*** ածանցներով, ինչպես նաեւ որոշ պարզ բայերի ապառնին ձեւավորվում է անորոշի հիմքից՝ ***խըմըցընէլ-խըմըցընան/խըմըցընական, ուտըցընէլ-ուտըցընան/ուտըցընական, մուտանալ-մուտընան/մուտընական, քըթէնալ-քըթինան/քըթինանկն, ըղնէլ-ըղնան/ըղնական, հըսնէլ-հըսնան/հըսնական, շինիլ-շինան/շինանկն, մընալ-մընան/մընական:***

Ապառնի դերբայը ունի միայն բայական կիրառություն. նրանից կազմվում են սահմանական եղանակի ապառնի եւ անցյալի ապառնի ժամանակաձեւերը՝ ***խըմըլան/խըմըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմըլան/ խըմըլական ի/իր/ար/ինք՛/իք՛/ ին, ըղըլան/ըղըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, ըղըլան/ըղըլական ի/իր/ար/ ինք՛/իք՛/ին, հըվըտըլան/հըվըտըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, հըվըտըլան/հըվըտըլական ի/իր/ար/ինք՛/իք՛/ին:***

Համակատար դերբայը ունի ***իս*** վերջավորությունը, որը դրվում է անորոշ դերբայի վրա՝ ***խըմէլիս, ըղալիս հըվըտալիս:*** Անորոշի ***լ***-ն հաճախ փոխարինվում է ***յ***-ով՝ ***խըմէյիս, ըղայիս, հըվըտայիս:***

Այս դերբայը հիմնականում ունի փոխանվանական կիրառություն՝ ժամանակի պարագայի դերով ***(Ուտէյիս խօսէլ չըն)***:

Ղարաբաղի բարբառն ունի հինգ եղանակաձեւ՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական, որոնցից յուրաքանչյուրը մյուսներին հակադրվում է իր ուրույն հատկանիշներով:

Սահմանական եղանակը մյուսներին հակադրվում է օժանդակ բայի առկայությամբ (բացառությամբ անցյալ կատարյալի), ըղձական, պայմանական, հարկադրական եղանակները հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով. ըղձականը զուրկ է եղանակիչից, պայմանականին բնորոշ է ***կ/կը,*** հարկադրականին՝ ***բիդի/բըդի/բէդի/պէտի/պըտի/պիտի/բէդմա/պէտմա*** եղանակիչը: Հրամայական եղանակը ունի միայն երկրորդ դեմք, որ ընդգծվում է հատուկ վերջավորություններով եւ շեշտի ուժգին արտաբերմամբ:

Նշված եղանակաձեւերը տարբեր են նաեւ ժամանակաձեւերի քանակով. սահմանական եղանակն ունի ինը ժամանակաձեւ՝ներկա՝ ***ասում ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն,*** անցյալի անկատար՝ ***ասում ի/իր/ար/ինք՛/իք՛/ին***, հարակատար՝ ***ասած ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն***, անցյալի հարակատար՝ ***ասած ի/իր/ար/ինք՛/իք՛/ին***, վաղակատար՝ ***ասալ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն***, անցյալի վաղակատար՝ ***ասալ ի/իր/ար/ինք՛/իք՛/ին***, ապառնի՝ ***ըսըլան/ըսըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն***, անցյալի ապառնի՝ ***ըսըլան/ ըսըլական ի/իր/ար/ինք՛/իք՛/ին***, անցյալ կատարյալ՝ ***ըսը՛ցէ, ըսը՛ցէր, ասից, ըսը՛ցէ(ն)ք՛, ըսը՛ցէք՛, ըսը՛ցէն,*** որոնք բացի վերջինից, կազմվում են համապատասխան դերբայներից եւ օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ձեւերից: Անցյալ կատարյալն ունի ինքնուրույն ձեւաբանական արտահայտություն. կազմվում է անցյալի հիմքից՝ հատուկ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով:

Ըղձական, պայմանական, հարկադրական եղանակներին հատուկ է երկուական ժամանակաձեւ՝ ապառնի եւ անցյալ, որոնք կազմվում են անորոշի հիմքից՝ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով. ըղձական ապառնի՝ ***ասիմ, ասիս, ասէ, ասի(ն)ք՛, ասիք՛, ասին,*** պայմանական ապառնի՝ ***կասիմ, կասիս, կասէ, կասի(ն)ք՛, կասիք՛, կասին,*** հարկադրական ապառնի՝ ***բիդի ասիմ, բիդի ասիս, բիդի ասէ, բիդի ասի(ն)ք՛, բիդի ասիք՛, բիդի ասին,*** ըղձական անցյալ՝ ***ըսի, ըսիր, ասար, ըսի(ն)ք՛, ըսիք՛, ըսին,*** պայմանական անցյալ՝ ***կըսի, կըսիր, կասար, կըսի(ն)ք՛, կըսիք՛, կըսին,*** հարկադրական անցյալ՝ ***բիդի ըսի, բիդի ըսիր, բիդի ասար, բիդի ըսի(ն)ք՛, բիդի ըսիք՛, բիդի ըսին:***

Շաղախի ենթաբարբառում օժանդակ բայի անցյալի ձեւեր չկան. անցյալի անկատար, անցյալի հարակատար, անցյալի ապառնի ժամանակաձեւերի իմաստը արտահայտվում է ներկայի ձեւերի եւ ***լնալ*** բայի հարադրությամբ՝ ***խըմիս ըմ լնալ, խըմած ըմ լնալ, խըմըլան/խըմըլական ըմ լնալ,*** իսկ անցյալը՝ ***խըմալ ըմ,*** խոսքի մեջ արտահայտում է նաեւ անցյալի վաղակատարի եւ անցյալ կատարյալի իմաստներ: Նույն ձեւով ըղձական անցյալի եւ պայմանական անցյալի կառուցվածքը բնութագրվում է ***անորոշ դերբայ+օժանդակ բայի ներկայի ձեւեր+լնալ*** կաղապարով՝ ***խըմիլ ըմ լնալ,*** որից ***բիդը/բէդը*** եղանակիչով կազմվում է հարկադրական անցյալը՝ ***բիդը/բէդը խըմիլ ըմ լնալ:***

Հրամայական եղանակի հոգնակին բոլոր դեպքերում ձեւավորվում է անցյալի հիմքից՝ ***շինը՛ցէք՛, մընա՛ցէք՛, ըսը՛ցէք՛, փահէք՛/փըհէ՛ցէք՛:***

Եզակի հրամայականը անորոշի հիմքով են կազմում ***է, ի*** լծորդության պարզ եւ բազմապատկական, ***ջ*** եւ կրավորական ածանցներով բայերը՝ ***կա՛ղթի, խըմէ՛, ըսպանվէ, կուտըրա՛տէ, օ՛ռչի,*** ինչպես նաեւ ***ա/ա՛*** լծորդության պարզ բայերը՝ ***ա՛ղա, մընա՛, հըվա՛տա:***

Մյուս բայերի եզակի հրամայականը կազմվում է անցյալի հիմքից՝ ***մուտա՛ց, քըթի՛ր, ընցէ՛ր, հըսէ՛ր, պիցըրցըրո՛ւ:***

Բարբառում, ինչպես հայերենի մյուս դրսեւորումներում, բայի դեմքի եւ թվի իմաստները ներկայանում են միեւնույն դիմաթվանիշ վերջավորություններով, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են նաեւ ժամանակի իմաստ: Այդ վերջավորությունները բաժանվում են վեց խմբի՝ օժանդակ բայի ներկայի ձեւերի՝ ***ըմ/ում, ըս, ա, ը(ն)ք, ըք, ըն,*** օժանդակ բայի անցյալի ձեւերի ***ի, իր, ար, ի(ն)ք՛, իք՛, ին,*** ըղձական ապառնու՝ ***ամ/իմ, աս/իս, ա/է, ա(ն)ք/ի(ն)ք՛, աք/իք՛, ան/ին,*** ըղձական անցյալի՝ ***ի, իր, ար, ի(ն)ք՛, իք՛, ին,*** անցյալ կատարյալի՝ ***է, էր, -/ավ, է(ն)ք՛/ի(ն)ք՛, էք՛/իք՛, էն/ին,*** եւ հրամայական եղանակի՝ ***ա, է, ի, էր, իր, ու, ø*** (արմատ), ***էք՛/իք՛:*** Հրամայականի այս վերջավորություններին նախորդում են.

ա) ***ա***-ին՝ ***ա*** լծորդության պարզ բայերի անորոշի հիմքը՝ ***ա՛ղա, մընա՛, ըրվա՛,***

բ) *է*-ին՝ *է* լծորդության պարզ, կրավորական եւ բազմապատկական բայերի անորոշի հիմքը՝ ***խը՛մէ, ըսպանվէ, ծըռմըռա՛տէ,***

գ) *ի* -ին՝ *ի* լծորդության պարզ, կրավորական եւ *չ* ածանցով բայերի անորոշի հիմքը՝ ***կա՛րթի, շինվի, փա՛խչի,***

դ) *էր/իր* - ին՝ *էն, ըն, ն* ածանցներով բայերի, ինչպես նաեւ *չ* ածանցով որոշ բայերի անցյալի հիմքը՝ ***քըթի՛ր, ընգէ՛ր, հըսէ՛ր, փա՛խէր, կօ՛րէր,***

ե) *ու*-ին՝ պատճառական բայերի անցյալի հիմքը՝ ***մը՛ծըցըրո՛ւ, խըմըցըրո՛ւ,***

զ) *ø*-ին՝ *ան* ածանցով եւ անկանոն բայերի անցյալի հիմքը՝ ***մուտա՛ց, մը՛ծա՛ց, տի՛ր, պէ՛ր,***

է) *էք՛/իք՛* հոգնանիշ ընդհանուր վերջավորությանը նախորդում է բոլոր բայերի անցյալի հիմքը՝ ***ը՛ղա՛ցէք՛, հըսէ՛ք՛, կա՛լիք՛, մը՛նըցըրէ՛ք՛, տըմա՛ցէք՛*** եւ այլն:

Ու ձայնավորով վերջացող բառերին հաջորդող օժանդակ բայից առաջ լսվում է ***վ***՝ *ծախու վա, մարթու վա,* իսկ մյուս ձայնավորներով վերջացող բառերից հետո՝ ***յ*** ձայնավորը՝ *ը՛րկաթէ յա, կօզնի յա* եւ այլն:

Բարբառում ժխտական խոնարհումը արտահայտվում է ***չ(ը), վէչ, մէլ/միլ/մէր/միր, մէք՛/միք՛*** մասնիկների միջոցով, որոնք համապատասխանում են հին հայերենի ***չ, ոչ, մի*** մասնիկներին:

Օժանդակ բայով կազմվող բոլոր ժամանակների ժխտականը արտահայտվում է ***չ*** մասնիկով, որ դրվում է դերբայից հետո հանդես եկող օժանդակ բայի վրա՝ ***աղում չըմ, աղում չի, աղալ/ը՛ղացալ չըմ*** եւ այլն: Օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում լինում է ***չի***՝ սպասելիք ***չա***-ի փոխարեն՝ ***ասում ա-ասում չի, շինա՛լ ա-շինա՛լ չի:***

Պայմանական եղանակի ժխտականը կազմվում է անորոշ դերբայից եւ օժանդակ բայի ժխտական ձեւերից՝ ***կասիմ-ասէլ չըմ, կըսի-ասէլ չի:*** Ընդ որում, ապառնիի ժխտական ձեւերում օժանդակ բայը կարող է ունենալ նաեւ նախադաս գործածություն՝ ***շօնը զօռռավ վը՛ռս չըն տանէլ, անօղ-թօղօղ ախճիգ՛ը տանը չի մը՛նալ:***

Մյուս ժամանակների (բացառությամբ արգելական հրամայականի) ժխտականը արտահայտվում է ***վէչ*** մասնիկով, որ ընդհանուր առմամբ գործառում է խոնարհվող բայից հետո՝ ***հըսնիմ վէչ, հըսնի վէչ, բիդի հըսնիմ վէչ, հըսէ վէչ*** եւ այլն:

Ըղձական եղանակում երբեմն ***վէչ*** մասնիկը գործածվում է նախադաս (հատկապես անեծքներում)՝ ***վէ՛չ հըսնիս ումէդիտ, վէ՛չ տը՛սնաս խօնցըտ:***

Հարկադրական եղանակի ժխտականը կազմվում է նաեւ ***չը*** մասնիկով, որ գործառում է եղանակիչից անանջատ՝ ***չըբիդի ասիմ, չըբիդի ըսի:***

Արգելական հրամայականը բաղադրվում է անորոշ դերբայից եւ ***մէլ/միլ/մէր/միր*** (եզակի), ***մէք՛/միք՛*** (հոգնակի) մասնիկներից, որոնք հիմնականում ունեն ետադաս կիրառություն՝ ***խըմէլ մէ՛լ, խըմէլ մէ՛ք՛:*** Անորոշի ***լ***-ն հաճախ սղվում է՝ ***խըմէ մէ՛լ, խըմէ մէ՛ք՛:***

Արգելական մասնիկը հարադիր բայերում գործառում է անորոշ դերբայից առաջ՝ ***տի՛ւս մէ՛լ կ՛ա՛լ, տի՛ւս մէ՛ք՛ կ՛ա՛լ:*** Այս դեպքում անորոշի ***լ***-ն մնում է անփոփոխ, իսկ արգելական մասնիկը ձայնավորով սկսվող բային նախորդելիս կարող է պահպանել միայն ***մ***-ն՝ ***տի՛ւս մէ՛լ անէլ/տի՛ւս մանէլ:*** Հոգնակիում անորոշի վերջավորությունը փոխարինվում է արգելականի վերջավորությամբ՝ ***տի՛ւս մէ՛ք՛ անէլ/տի՛ւս մանէք՛:***

Բարբառում գործածական են նաեւ մի շարք անկանոն եւ պակասավոր բայեր:

Անկանոն են ***անէլ, առնէլ, պէնալ, պիրիլ, կ՛ա՛լ, քը՛թէնալ, տինիլ, կ՛ը՛նալ, ինիլ, կէնալ, օնէլ, օտէլ, տալ, տանէլ, տը՛սնալ*** բայերը, որոնք հիմքակազմության օրինաչափություններից եւ խոնարհման ընդհանուր համակարգից շեղվում են հիմնականում անցյալ կատարյալում, անցյալի հիմքից կազմված ձեւերում եւ բուն հրամայականում:

Պակասավոր են ***ըմ(էմ)*** էական բայը, ինչպես նաեւ ***կամ, ա՛ռժիմ*** բայերը: Սրանցից առաջինը ունի միայն սահմանական եղանակի ներկա եւ անցյալ ժամանակաձեւերը՝ ***ըմ, ըս, ա, ընք, ը՛ք, ըն, ի, իր, ար, ինք՛, իք՛, ին:***

Կամ եւ ***ա՛ռժիմ*** բայերը ունեն միայն սահմանական ներկա ժամանակաձեւը՝ ***կամ, կաս, կա, կանք, կաք, կան, ա՛ռժիմ, ա՛ռժիս, ա՛ռժի, ա՛ռժինք՛, ա՛ռժիք՛, ա՛ռժին,*** եւ սահմանական անցյալի եզակի թվի 3-րդ դեմքը՝ ***կար, ա՛ռժա՛ր:***

Օնէլ բայը ***փակել, ծածկել, վերցնել*** եւն նշանակություններով գործածվելիս անկանոն բայ է, իսկ ***ունենալ*** նշանակությամբ գործածվելիս պակասավոր է եւ ունի նույն ժամանակաձեւերը, ինչ ***ըմ*** էական բայը՝ ***օնիմ, օնիս, օնէ, օնինք՛, օնիք՛, օնին, ունի, ունիր, օնար, ունինք՛, ունիք՛, ունին:***

Լայն գործածություն ունեն նաեւ երկրորդական բաղադրյալ ժամանակները: Դրանք հիմնականում կազմվում են անկատար, համակատար, հարակատար դերբայների եւ ***ինիլ*** բայի խոնարհված ձեւերի հարադրությամբ, ինչպես՝ ***ք՛ը՛նիմ ըմ ինիմ/իլալ/ինա՛ն, ք՛ը՛նալիս ըմ ինիմ/ իլալ/ինա՛ն, ք՛ը՛ցած ըմ ինիմ/իլալ/ինա՛ն*** եւ այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձեւեր են կազմվում նաեւ հարակատար դերբայի եւ ***կամ*** պակասավոր բայի հարադրությամբ, ինչպես՝ ***ք՛ը՛ցած կամ, ք՛ը՛ցած կաս, ք՛ը՛ցած կա:***

ՄԱԿԲԱՅ: Բարբառում մակբայները ըստ իմաստային խմբավորման լինում են՝ ժամանակի՝ ***ը՛սօր(է)/ասօր/սօր(է)*** (այսօր), ***էք՛ի՛ւց/էք՛ի՛ւծ/ծք՛ի՛ւց*** (վաղը), ***ա՛լ(լ)ծ՛ր*** (մյուս օրը), ***մը՛հէնգ՛/միհէնգ՛*** (հիմա), ***յը՛րկէ/յէ՛րէգ՛ի*** (երեկ), ***կը՛նօխէ/կը՛նօխանց*** (վաղուց), ***քը՛շէ՛րավ/քիշէրավ*** (վաղ առավոտյան), ***ծ՛ք՛ին/ ծաք՛ին/ծէք՛ին*** (արեւածագին), ***ը՛ստարէ/ը՛ստըռնէ*** (այս տարի), ***հը՛ռ(ն)է/հը՛ռնու/հէրու/հը՛ռնէ*** (անցյալ տարի), ***էզզա՛ն(ա՛ն)/էզզան(ան)/էզզա՛ն՛ն/էզզադան/էյզա՛ն՛ն/էյզանան*** (միշտ), ***հա՛լա՛ն(մ)*** (դեռ), ***ահէտ/ա՛հա՛տ(ը՛մը՛ս)/անէտը*** (հետո), ***կանօխ/կանուխ*** (կանուխ), տեղի՝ ***դը՛բէտ/դիբէտ/դը՛բը՛ՀտԴիբը՛ՀտԴ*** (դեպի ետ), ***տիյը՛ր/տըյը՛ր*** (վերեւ), ***տիվէր/տը՛վէր/տուվէր*** (ներքեւ), ***տէս/տը՛ս*** (այս կողմ), ***տէն/տը՛ն*** (այն կողմ), ***տէմատէմ*** (դեմառդեմ), ***մ՛օտէ/մ՛օտի*** (մոտիկ), ձեւի՝ ***կամա(ն)ց*** (կամաց), ***ափալ-թափալ*** (արագորեն), ***զօռ(ռ)ավ*** (զոռով), ***գ՛ը՛նգ՛ը՛ղ՛ը՛խտան(ա)/գ՛ինգ՛ը՛ղ՛ը՛խտան(ա)*** (կամաց-կամաց), ***բ՛ի՛ւրդա՛ն/բ՛իրդան*** (իսկույն), ***գ՛իրթ*** (հանկարծ), ***ափաշկարա***

(բացահայտ կերպով), ***թաթարյախնի/թանթարնախնի*** (ձեռաց), ***դասիդ/դաստի*** (դիտմամբ), չափի՝ ***շատ-շատ*** (առավելագույն չափով), ***հերիք/հերիք՛*** (բավական), ***պատառ*** (մի քիչ), ***բոլ-բոլ*** (առատորեն) եւ այլն:

Որոշ մակբայներ ընդհանրական են, ինչպես՝ ***առաչ*** (տեղի եւ ժամանակի), ***ճէլլի*** (ձեւի եւ ժամանակի):

Որոշ մակբայներ առաջացել են քերականական ձեւերից՝ ***քըշէրավ, զօռռավ, վը՛ննուք:***

Տեղի եւ ժամանակի մակբայների մի մասը կարող է հոլովվել, ինչպես՝ ***տիյը՛ր-տիյը՛րէն-տիյը՛րան-տիյը՛-ռավը, ք՛ըսծր- ք՛ըսծրէն/ք՛ըսծրվա-ք՛ըսծրանց*** եւ այլն:

ԿԱՊ: Ինչպես հայերենի մյուս դրսեւորումներում, բարբառում եւս կապերը ըստ տեղի լինում են նախադրություններ եւ ետադրություններ, ըստ կազմավորվածության՝ իսկական, անիսկական եւ կապական բառեր:

Գրաբարի նախդիրները ընդհանուր առմամբ չեն պահպանվել, թերեւս որոշ կապակցություններում հանդես է գալիս ***ի***-ն՝ ***ծծրըն ի յը՛ր, ծծրըն ի վէր, սարըն ի յը՛ր, սարըն ի վէր:***

Նախադրությունները իսկական կապեր են՝ ***բիդի/բըդի/բըդա՛ն/դիբի/դըբա՛ն*** (դեպի), ***մինչը՛վ/մինչէվ*** (մինչեւ), ***առանց/ուռունց*** (առանց), ***չըք(էլ)ա՛նը/չըրու/չըքբօրանը*** (մինչեւ):

Ի տարբերություն գրաբարի՝ բարբառում գերակշռում են ետադրությունները: Դրանցից իսկական կապեր են՝ ***մըհար*** (համար), ***կըման(ցէ)/գ՛ուման*** (բացի), ***ք՛իմի*** (չափ, մեծությամբ), ***(ը)գ՛ծրա՛ն/(ը)գ՛օրա*** (համեմատ), ***(ը)բա՛ստ/(ը)բախտ/ ըբա՛թ*** (հենց որ), ***տը՛ղ/տըղ/տէղ*** (փոխարեն), անիսկական կապեր են՝ ***յըրա*** (վրա), ***նըման/մընան*** (նման), ***մաչին*** (մեջ), ***խաթրո՛ն/խանթրո՛ն/խաթէր/խանթէր*** (հանուն), ***քըշտէն*** (կողքին):

Կապական բառեր են՝ ***տո՛ւս*** (դուրս), ***յը՛րը*** (վերեւ), ***վախտը*** (ժամանակ), ***առաչ*** (առաջ), ***հը՛ռէ*** (հեռու), ***տիյը՛ր*** (վերեւ), ***տիվէր*** (ներքեւ):

Կապերը պահանջում են ուղղական, տրական եւ բացառական հոլովներով խնդիրներ:

Ուղղական հոլովով խնդիր են պահանջում ***առանց, մինչը՛վ, չըքէլանը, բիդի, ք՛իմի*** կապերը՝ ***առանց տօն, մինչը՛վ շէնը, չըքէլանը բաստանը, բիդի քաղաք, գ՛ոլ ք՛իմի:***

Տրական հոլովով խնդիր են պահանջում՝ ***կօշտ*** *(ընդըրա կօշտը)*, ***մըհար*** *(տատուն մըհար)*, ***նըհը՛տ*** *(շանը նըհը՛տ)*, ***հը՛տէ*** *(ըխճըկա հը՛տէ)*, ***մաչին*** *(տանը մաչին)*, ***յըրա*** *(ծառէն յըրա)*, ***տակէն*** *(սարէն տակէն)*, ***տը՛ղ*** *(ըսկընալին տը՛ղ)*, ***նըման*** *(ինձ նըման)*, ***դանդա՛ն*** *(կընգա դանդա՛ն)*, ***անվանգ*** *(փողէն անվանգ)*: Այս կապերի մի մասը պահանջում է սեռական հոլովով խնդիր, երբ գործածվում է անձնական 1-ին եւ 2-րդ դեմքերի դերանունների հետ, ինչպես՝ ***իմ անվանգ, քու տակէտ, ծէր մաչին, մէր քըշտէն:***

Բացառական հոլովով խնդիր են պահանջում՝ ***յը՛տը*** *(հըրսընքան յը՛տը)*, ***հը՛ռէ*** *(մըզանա-ծըզանա հը՛ռէ)*, ***կըման*** *(կընգանը անա կըման)*, ***տէս*** *(շէնան տէս)*, ***տէն*** *(ծառան տէն)*, ***առաչ*** *(ընդըրանա առաչ):*

Առաջ կապը ժամանակի իմաստով իբրեւ ետադրություն գործածվելիս կարող է ընդունել նաեւ ուղղական եւ գործիական հոլովներով խնդիրներ, ինչպես՝ ***էրկու օր առաչ, վէց տարէ առաչ, օրավ առաչ, շէփտավ առաչ:***

Անիսկական կապերը նյութական իմաստով գործածվելիս կարող են հոլովվել՝ ***մաչ-մաչին-մաչան-մաչավը:*** Այս կապերին հատուկ է նաեւ հոդառությունը՝ ***տակէս, տակէտ, տակէն, մաչիս, մաչիտ, մաչին*** եւ այլն:

ՇԱՂԿԱՊ: Բարբառում շաղկապները նույնպես բաժանվում են երկու խմբի՝ համադասական եւ ստորադասական:

Համադասական շաղկապներ են՝ ***ու, էլ*** *(եւ, ու)*, ***համ*** *(եւ)*, ***ամ(մ)ա/ամիա/համ(մ)ա*** *(բայց)*, ***նա*** *(ու, եւ)*, ***յա*** *(կամ):*

Ստորադասական շաղկապներ են՝ ***վէր/վար/վը՛ր/վօր*** *(որ, որպեսզի, եթե)*, ***թա վէր*** *(եթե)*, ***կանց/կա(ն)ս/քան(ց)*** *(քան)*, ***կօգ՛ի/կօզի/կծզի*** *(թեկուզ, թեեւ)*, ***անգ՛ա՛ր/ագ՛ա՛ր*** *(եթե):*

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ: Բարբառը հարուստ է ձայնարկություններով, որոնք բաժանվում են հետեւյալ խմբերի. *զգացական՝* ***ա՛խ, վա՛յ/վո՛ւյ, վա՛շշ/վի՛շշ, ո՛ւհ/օ՛հ, ամ(մ)ա՛ն, ջա՛ն, ուխա՛(յ) /օխա՛(յ), փանի-փանի՛հ, քը՛խ(ա), պօ՛/բօ՛/վօ՛, պա՛/բա՛,*** *կամային՝* ***փը՛խկ, փի՛շտ, ճո՛ւ-ճո՛ւ, բի՛ժի, (ա)չո՛ւ, տըտը՛ռռ,*** *բնաձայնական՝* ***թը՛ռ(ռ), ճը՛ռռ, վը՛զ(զ), տը՛զզ, փը՛շշ, միյա՛վու, բա՛:***

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ: Բարբառում գործածվող վերաբերականները ըստ արտահայտած իմաստի ներկայանում են հետեւյալ խմբերով. *հաստատական՝* ***հա*** *(այո)*, ***պա հինչ*** *(իհարկե)*, ***դանգ վէր*** *(իրոք որ)*, *երկբայական՝* ***հանլբանթ/հանրբանթ*** *(երեւի)*, ***բանլ(ք՛)ամ/բանլք՛անս/ բանլ(ք)ի/ բանլի*** *(թերեւս)*, ***սաբավ*** *(իբր, իբրեւ)*, ***հանցա*** *(կարծես)*, ***կաբուտը(բը)/բութտը(բը)/բուտտը(բը)*** *(իբրեւ, սաստկական՝* ***առռէ/առռի*** *(թեպետեւ, հենց)*, ***լափ*** *(հենց)*, *սահմանափակման՝* ***կօնյա/գօնյա*** *(գոնե, թեկուզ)*, ***մինակ/մէնակ/մինանկ*** *(միայն)*, *կամային՝* ***հանլա՛ն(մ)/հը՛ոլա՛ն(մ)*** *(հապա)*, ***թօղ(է)*** *(թող)*, *ժխտական՝* ***չէ*** *(ոչ)*, ***չըչէ-մին/չէչէմին/չիչէմին*** *(ոչ մի դեպքում)* եւ այլն:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ: Շարահյուսական կառուցվածքով բարբառը ընդհանուր առմամբ համընկնում է արդի հայերենին՝ հանդես բերելով արեւելահայերենին բնորոշ հատկանիշներ: Այնուամենայնիվ, կարելի է նշել մի շարք առանձնահատկություններ.

- Հարցական նախադասություններում հարցը հիմնականում դրվում է օժանդակ բայի վրա՝ ***Խէ յը՞ս ասալ, հինչ ը՞ն շինիս*** (ինչո՞ւ ես ասել, ի՞նչ են սարքում):

- Բարդ համադասական նախադասություններում համադաս նախադասությունները հաճախ կապակցվում են շարահարությամբ՝ ***Յը՛ս ասալ ըմ, տու ըսկացալ չըս*** (ես ասել եմ, բայց դու չես լսել):

- Բարդ ստորադասական նախադասություններում գերադաս եւ ստորադաս նախադասությունները հաճախ կապվում են կախյալ շարահարությամբ՝ ***Ք՛ը՛ցալ ա ծըմակը՝ փանդ պիրի*** (գնացել է անտառ, որ փայտ բերի):

- Ուրիշի ուղղակի խոսք ստորադաս նախադասությունը գերադասին երբեմն կապվում է ***թա*** շաղկապի միջոցով՝ ***Իմ տատ ասալ ա, թա. - Վէր մը՛ռնիմ, ինձ թօռնանըս քըշտէն կըթաղիք՛*** (Իմ տատը ասել է. «Որ մեռնեմ, ինձ իմ թոռան մոտ կթաղեք»):

- ***Ս, տ, ն, ը*** հոդերը, զուգորդվելով կապական բառերի հետ, արտահայտում են համապատասխան դեմքի իմաստ եւ զեղջում կապվող դերանունը՝ ***Մաչիտ հինչ***

կա՞ (քո մեջ), ***Տակըս նամ ա*** (իմ տակը), ***Յըրան պէն չի կա*** (նրա վրա), ***Առաչը տը՛սնում չի*** (իր առջեւը):

- Ուղղական հոլովով կարող է արտահայտվել գրական հայերենում տրական եւ ներգոյական հոլովներով դրսեւորվող տեղի պարագան՝ ***մաշկը ճար ա քըսալ*** (մեջքին դեղ է քսել), ***Խըրմանջուղ տիլիփոն չի կա*** (Խրմանջուղում հեռախոս չկա):

- Տրական հոլովով երբեմն արտահայտվում է գործիական հոլովի իմաստ՝ ***Տօնըտ քանէ մընէթու վը՞ս ծախալ*** (տունդ քանի՞ ռուբլով ես վաճառել):

- Ուղիղ խնդիրը անձի առման դեպքում կարող է արտահայտվել ուղղական հոլովով՝ ***Հիմբանցին տըղան փըսակալ ա*** (Համբարձումը տղային ամուսնացրել է):

- ***Լոխ, սաղ*** դերանուններով արտահայտված որոշիչը սովորաբար դրվում է որոշյալից հետո՝ ***Ըխճըկէք՛ը լօխ մարթու վըն ք՛ը՛ցալ*** (բոլոր աղջիկները), ***Տըղէք՛ը սաղ յը՛կալ ըն*** (բոլոր տղաները):

- ***Մուտանալ*** բայը պահանջում է բացառական հոլովով խնդիր՝ ***Հանը տըղէն անա մուտացալ ա*** (մոտեցել է տղային):

- Անորոշ դերբայի իմաստը կարող է արտահայտվել հարակատար դերբայով եւ հակառակը՝ ***Հարկավէր ա ըղացած*** (հարկավոր է աղալ), ***Հանան խօսկըս ըսէլու, կըզնըվում ըս*** (դեռ խոսքս չասած՝ բարկանում ես):

- Անորոշ դերբայի տրական հոլովի փոխարեն նախադասության մեջ երբեմն գործածվում է անկատարը՝ ***Խըմում վախտը շատ ա խօսում*** (խմելու ժամանակ շատ է խոսում):

- Անկատար դերբայը կարող է գործածվել ենթակայական դերբայի փոխարեն՝ ***Ըշտը՛ղ տանջվում մարթ ա տը՛սնում, ք՛ծմանգ՛ ա անում*** (որտեղ տանջվող մարդ է տեսնում, օգնում է):

- Պայմանական ապառնին կարող է արտահայտել սահմանական ներկայի իմաստ՝ ***Կասին՝ փըսակվալ ըս, դանուզ ա՞*** (ասում են՝ ամուսնացել ես, ճի՞շտ է):

- Ստորոգյալը հաճախ թվով չի համաձայնում ենթակայի հետ՝ ***Ծառերը ծաղկալ ա*** (ծառերը ծաղկել են), ***Աշկէրըտ քուռանա, վը՛ննէրըտ փըռվէ, ընգուճնէտ քըռանա*** (աչքերդ քոռանան, ոտքերդ բռնվեն, ականջներդ խլանան):

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: Բարբառի բառապաշարի հիմնական շերտերն են՝ գրաբարից ավանդված բառեր, բարբառային բառեր, փոխառյալ բառեր: Բառային կազմի գերակշռող մասը բարբառային բառերն են, որոնք ստեղծված են հին հայերենից ավանդված եւ փոխառյալ բառերից՝ բառակազմական տարբեր միջոցներով, ինչպես նաեւ՝ անկախ դրանցից:

Փոխառյալ բառերի շերտում հիմնականում արեւելյան լեզուներից (արաբերեն, պարսկերեն, թուրքական լեզուներ) եւ ռուսերենից կատարված անմիջական եւ միջնորդավորված փոխառություններն են:

Հատուկ տեղ են գրավում նաեւ այն բառերը, որոնք ունեն հնդեվրոպական ծագում, սակայն չկան գրաբարում՝ ***անց, լափու, լէմ, լօկ, կօրկ*** եւ այլն:

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Բարբառում բառերը լինում են մենիմաստ եւ բազմիմաստ:

Բազմիմաստությունը հիմնականում պայմանավորված է բառերի փոխաբերական իմաստով կիրառությամբ, ինչպես՝ ***կ՛առնը*** բառը բացի հիմնական իմաստից՝ ***գառ***, փոխաբերաբար նշանակում է նաեւ ***հեզաբարո, խոնարհ, քար*** բառը փոխաբերական կիրառությամբ ստացել է նաեւ ***կարծր, անգութ*** իմաստները եւ այլն:

Գրաբարի հետ ընդհանուր բառերը իմաստաբանական մակարդակում երեւան են հանում մի շարք փոփոխություններ.

ա) գրաբարյան բազմիմաստության դիմաց բարբառը հանդես է բերում մենիմաստություն, ինչպես՝ ***բարձպէրց*** բառը հին հայերենում ունի 5 իմաստ՝ ***1) գլխի բարձ, 2) նստարան, 3) պատիվ, 4) նավի նստարան, 5) եռանկյան հիմքը,*** որոնցից միայն առաջինն է բարբառում արմատացել որպես միակ եւ հիմնական իմաստ:

բ) գրաբարյան բազմիմաստության դիմաց բարբառը երեւան է հանում մի քանի իմաստներ, օրինակ՝ ***բաժանել- պիժէնէլ*** բառը եւ՛ գրաբարում, եւ՛ բարբառում ունի ***բաժանել,զատել, անջատել*** իմաստները:

գ) սակավաթիվ բառերում գրաբարի մենիմաստության դիմաց բարբառը երեւան է հանում բազմիմաստություն, ինչպես՝ ***ուզել/օգ՛իլ*** բայը նշանակում է ոչ միայն ***խնդրել, պահանջել,*** այլեւ՝ ***ամուսնանալ, մտադիր լինել, շող-շօխկ*** բառը ***ցոլք, ճառագայթ*** իմաստից բացի նշանակում է նաեւ ***ստվեր:***

դ) առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գրաբարից ավանդված այն բառերը, որոնք, բարբառում ինքնուրույն կիրառություն չունենալով, պահպանվել են բարդություններում եւ կապակցություններում, ինչպես՝ ***հուր*** բառը ***հըրը՛ղան*** բառի մեջ, ***երամակ-ըրամակ*** բառը ***ըրամակ ընդնէլ*** *(մարդամեջ ընկնել)* դարձվածում, ***ակ*** բառը՝ ***ակը տալ*** *(փնտրել, ստուգել)* դարձվածում:

ե) բառիմաստի ընդլայնում, երբ գրաբարի մասնավոր իմաստի դիմաց բարբառը հանդես է բերում ավելի ընդհանուր իմաստ, ինչպես՝ ***թեփ-թէփ*** գրաբարում ունի ***1) ցորենի թեփ, 2) ձկան թեփ*** մասնավոր իմաստները, մինչդեռ բարբառում նշանակում է ***թեփ*** ընդհանրապես:

զ) բառիմաստի նեղացում, երբ գրաբարի ընդհանուր իմաստին բարբառում համապատասխանում է մասնավոր իմաստ, այսպես՝ ***կուրծք-կօրծ*** բառը գրաբարում ունի ***կուրծք*** ընդհանուր իմաստը, իսկ բարբառում նշանակում է միայն ***անասունի ստինք, որձվը՛ղց*** գրաբարում նշանակում է ***արու,*** բարբառում՝ նաեւ ***3 տարեկան արու ոչխար*** եւ այլն:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ: Ինչպես ընդհանուր հայերենում, Ղարաբաղի բարբառում եւս բառակազմական միջոցներն են բառաբարդումը եւ ածանցումը, որոնց շնորհիվ ստեղծվում են նոր բառեր բնիկ եւ փոխառյալ բառերից:

Բարդությունները լինում են համադրական եւ վերլուծական:

Համադրական բարդությունները հիմնականում կազմված են երկու բաղադրիչներից, որոնք կապակցվում են հոդակապով՝ ***քըթածակ, չուրաթան, ըզըզանմը՛ռ,*** կամ առանց հոդակապի՝ ***սըխտուրթակէ, փօրքաշ, քը՛թկալ:***

Ինչպես ժամանակակից հայերենում, բարբառում

համադրական բարդությունների մի մասը առաջացել է կրկնավորներից՝ վերջիններիս բաղադրիչների միաձուլման հետեւանքով, ինչպես՝ ***հըսըվհաս, պէցապէց, զըռզըռալ, կըթկաթէլ:*** Այս շարքին են դասվում նաեւ ***օր/ծր*** բազմապատկական ածանց ունեցող բոլոր բայերը եւ ***ատ, օտ*** ածանցներով բայերի մեծ մասը՝ ***թըղթըղօրէլ, տըշտըշծրէլ, տըրըքտըրըքօտէլ, ճուկճուկատէլ:***

Երեք բաղադրիչներից կազմված համադրական բարդություններ են՝ ***դըբբրրնագիանատէմ*** (դեպի+երեկոյի+դեմ), ***դըբբրրնագիանաչախ*** (դեպի+երեկոյի+չախ), ***մաքրօղլի*** (մայր+քույր+օղուլ), ***հաքրօղլի*** (հայր+քույր+ օղուլ):

Վերլուծական բարդությունների մեջ մտնում են հարադրությունները եւ կրկնավորները:

Հարադրական բարդությունները լինում են անվանական եւ բայական:

Անվանական հարադրությունները կազմվում են տարբեր խոսքի մասերից, ինչպես՝ ***ամըռ(նը)-ծըմըռ(նը), տօն-տըդ, ծանդըր-ծընդըրմըծ, էրկու-իրըք, յըս-տու:***

Բայական հարադրությունները հիմնականում կազմվում են բայից եւ որեւէ այլ խոսքի մասից՝ ***կօլ տալ, պարան կանլ, զակազ տալ, կըլծխ պիրիլ, յըր ածէլ, յըրա հըսնէլ, դալիք տալ:*** Գործածական են նաեւ մի շարք զուգադրական բայեր՝ ***ասէլ-խօսէլ, քինիլ-կանլ, օտէլ-խըմէլ:***

Կրկնավոր բարդության բաղադրիչները սովորաբար նույն բառի կրկնությունն են: Կրկնավորներ են կազմվում տարբեր խոսքի մասերից՝ ***փօնջ-փօնջ, մըծ-մըծ, հէնգի-հէնգի, տու-տու, կամանց-կամանց, փահ-փահ*** եւ այլն: Որոշ կրկնավորների բաղադրիչներից մեկը ենթարկվում է հնչյունափոխության, ինչպես՝ ***ման-չման, ական-սական, խըրէգի-մըրէգի, ծակ-ծուկ:***

Բառակազմական կարեւոր միջոց է ածանցումը: Բարբառում գործառում են նախածանցներ եւ վերջածանցներ:

Նախածանցների թիվը խիստ սահմանափակ է: Հայերենի նախածանցներից գործածական են միայն ***ան, չը*** եւ ***տը*** ժխտական ածանցները՝ ***անդար, անդանրդ, անշընօրք, անլըվա, չըպէրք, չըհաս, չըխօսական, չըկամ, տըկօռ, տըհալ:*** Լայն գործածություն ունի նաեւ պարսկերեն ***bi-բէ/բէյ*** ածանցը, որ դրվում է եւ՛ փոխառյալ, եւ՛ բնիկ բառերի վրա՝ ***բէքըփ, բէյվախտ, բէյխաբար, բէյհանշ, բէյշընօրք:***

Վերջածանցներն, ի տարբերություն նախածանցների, մեծ թիվ են կազմում: Դրանց շարքում հանդես են գալիս ինչպես գրաբարյան, այնպես էլ մի շարք նորանոր ածանցներ, որոնց մի մասը հին հայերենի որոշ արմատների իմաստների մթագնման, հոլովական թեքույթների եւ հոգնակերտ ձեւույթների քարացման արդյունք է, մի մասը՝ փոխառություն: Առավել կենսունակ են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ եւ թվականակերտ ածանցները, որոնք բնիկ եւ փոխառյալ բառերից ու բայարմատներից կերտում են նոր բառեր. ***ագար/ագար՝*** *ցավագար/ցավագար,* ***ալ՝*** *մըռալ,* ***ալի՝*** *մըսալի, վըզգալի,* ***ած՝*** *նըշանած, խըրաված,* ***ակ/անկ՝*** *վըրցակ, մաշնակ, կանտանկ,* ***(ա)կան/(ան)կանն՝*** *պըրտական, վըրսական, սըզ(ըլ)անկանն,* ***ան՝*** *թացան, քըրըքաշան, կէսան,* ***անէ՝*** *էրկումըթկանէ, հէնգիքըրանէ,* ***անէգի՝*** *լանզվանէգի,* ***անց՝*** *յըրկանց, հըռնանց,* ***անուկ՝*** *շըրանուկ,* ***անուց/անուց՝*** *խուտանուց, վըցցանուց, հինգանուց, թընգանուց,* ***անք/անք՝*** *փըշըրանք, պըճըռանք, ըշկըլանսանքի,* ***աշ/աշ՝*** *թըթվաշ, կիրմիրաշ,* ***ասկ՝*** *արմասկ, թըռըմասկ,* ***ավ/անվ՝*** *թանավ, ջանավ, զանմանվ,* ***ավէր/ավըր/անվէր/ավուր/անվուր՝*** *պուզանվէր, բախտավըր, պինավուր/պընանվուր, ծիյավէր,* ***ավուն՝*** *սըվավուն, մըծավուն,* ***ատ՝*** *կէսատ, թէհրատ,* ***արան/արան՝*** *ըվիտարան/ըվըտարան, ճիրըքարան,* ***արար/արար՝*** *տընարար, կըռվարար, պինարար,* ***ացու/ ացու՝*** *մըսացու, թիլացու, կօրսինկացու,* ***է/ի՝*** *թուրէ, տանձի, քըշէրէ,* ***էգի՝*** *ածէգի, հատէգի,* ***ըդան՝*** *ըրծըթըդան, վըսկըդան, հըրըդան,* ***ընէ՝*** *պընդընէ, ըմըռնընէ,* ***ըցէ/ացէ/ացէ/ացի՝*** *քըղքըցէ, շինացէ/շինացէ/շինացի,* ***ըքան/էքան՝*** *չուրսըքան/չուրքէքան, իրըքան/իրէքան,* ***ային/ային՝*** *թուռայի, չուրայի,* ***ըռ(է)/ըռ՝*** *տակըռ(է), շըքըռ/շըքըռ,* ***իճ/էճ՝*** *կավիճ/կավէճ,* ***ին/էն՝*** *ծանքին, մըթէն,* ***իք՝*** *ըսելիքի, հըսնէլիքի,* ***լու/լու՝*** *ջանլու, անիլու,* ***կօտ/կուտ՝*** *վըխըլկօտ, հըմանչկուտ,* ***հան(ա)՝*** *տըկըռըհանա, իրըսրհան,* ***մունք՝*** *ըրարմունք, չըչարմունք,* ***պան՝*** *ճըղացպան, ծիյապան,* ***պատէգի՝*** *իրըքպատէգի, վըցցըպատէգի,* ***վաթ՝*** *խուրդանվաթ,* ***վանք՝*** *փանդվանք,* ***վաչի՝*** *ղըմմըզվաչի, իշըվաչի,* ***վասկ՝*** *փանդվասկ,* ***վարի՝*** *ղըմմըզվարի, իշըվարի,* ***վէ՝*** *հըրկըշվէ, ղըրըզվէ,* ***վուսկ՝*** *կուտօրվուսկ,* ***տան՝*** *սըմբէտան, ըռըշկէտան,* ***տակ՝*** *մըէտակ, հինգիտակ,* ***ու/օ՝*** *ծախու, թըթօ, կըծօ,* ***ութկ՝*** *սըվըրութկ,* ***ուկ/ուկ/օկ/օք՝*** *կաթուկ/կանթուկ, ըղօկ/հըղօք,* ***ում/ ում՝*** *կօլտում, ուրթում,* ***ուն՝*** *ցալքուն, թաքուն,* ***ունք/ունք՝*** *իրավունք, հանլունք,* ***ուշ՝*** *փըրթուշ,* ***ուռ/օռ՝*** *հափուռ, քըշկօռ,* ***ուստ/ուստ՝*** *ապըրուստ, կանլուստ,* ***ուտ/ուտ/օտ/ծտ՝*** *խընձորուտ, մօշօտ, ցանքուտ, հունծտ, քաշկուտ, փըսլընքօտ,* ***ուրթ/օրթ/ըրթ՝*** *ժուղովուրթ/ժողովըրթ, փոխնուրթ/փոխնօրթ,* ***ք/կ՝*** *թէվք, շալք, փօխկ, շօխկ,* ***օթուն/ ծթուն՝*** *հընգըրօթուն, փիսօթուն/փիսծթուն,* ***օսկ/ուսկ՝*** *պըտըռօսկ, մէրուսկ,* ***օվի/ծվի՝*** *թըկօվի, քըցծվի,* ***օց/ծց/ ուց/ուց՝*** *զըռռօց, թըրչծց, կուռկօռուց, տուղտծղուց* եւ այլն:

Որոշ վերջածանցներ փոխառյալ են, ինչպես՝ ***ինջի/ընջի/հինջի*** (թուրք. - *inji*)՝ *վէցցինջի/վէցցընջի, իրըք(հ)ինջի,* ***լար/լար*** (թուրք - *lar*)՝ *դայիլար, ամիլար, թունիլար, արգումանլար,* ***լու/լու*** (թուրք - *lu*)՝ *ջանլու, անզանլու-մանզանլու, անիլու,* ***չի*** (թուրք - *cI*)՝ *դամուրչի, զարափաթչի, նախըրչի,* ***սըզ/սուզ*** (թուրք - *sus*)՝ *սօնգսըզ/սօնգսուզ, թայսըզ,* ***իստ*** (ռուս. *ист*)՝ *կամունիստ, թէվանիստ:*

ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԲԱՌԱԿԱՋՄԸ: Բառարանի մեջ ընդգրկվել են բոլոր այն բառերը եւ դարձվածները, որոնք գործածական են Ղարաբաղի բարբառի խոսվածքներում: Շաղախի, Շահումյանի եւ Գորիսի ենթաբարբառների բառապաշարին անդրադարձել ենք մասնակիորեն՝ հաշվի առնելով դրանց՝ բուն Ղարաբաղի բարբառից ունեցած որոշ էական տարբերությունները, որոնք հիմնականում այլ բարբառների ազդեցության արդյունք են:

Բառարանում չեն մուծվել .

1. ***-Ամենա*** ածանցով գերադրական աստիճանները՝ ***ամէնամը*ծ, ամէնակուճի, ամէնաղաշշանգ:***

2. Բայի անդեմ ձեւերը, բացառությամբ անորոշի, որ բայի ելակետային բառաձեւն է, ենթակայականի, հարակատարի ու ***-ելիք, -ալիք*** ածանցով ապակատարի այն ձեւերի, որոնք վեր են ածվել գոյականների եւ ածականների՝ ***կ'իրող, տը*ռած, ըսէլիք':***

3. ***-Ան*** ժխտական ածանցով բառերը, բացի հետեւյալ դեպքերից.

ա) եթե միայն ժխտում չեն արտահայտում՝ ***անդար, անշառ, անպէն/ամպէն,***

բ) եթե ***-ան*** նախածանցը ստացած բառն առանձին գործածություն չունի՝ ***անկ'էգ, անսանց, ամփիշ/անփիշ:***

4. Հատուկ անունները, բացի նրանցից, որոնք ստացել են հասարակ անվան արժեք կամ փոխաբերական նշանակությամբ գործածվում են դարձվածներում՝ ***Ապէլ, Մանթաշով, Ակուռի, Սութում/Սոդոմ-Գոմոր:***

5. Տեղանուններից ***-ըցէ, -ը*գէ, -ցէ*** ածանցներով կազմված բառերը, բացառությամբ փոխաբերական իմաստ ունեցողների եւ դարձվածներում գործածվողների՝ ***նինգ'ըցէ, խընուշինըկը*գէ, ղարաբաղցէ, հըդրանթը*գէ:***

6. Գրական հայերենից ու ռուսերենից, ինչպես նաեւ դրանց միջոցով այլ լեզուներից կատարված նորագույն փոխառությունները, որոնք դեռեւս լայն տարածում չեն ստացել, կամ էլ, պայմանավորված լինելով պատերազմական իրավիճակով, կրում են ժամանակավոր բնույթ՝ ***վարկ, հիպոթէկ, կամպանտը, սստըվի, բէտէէռ, իստրիբիտէլ, կապիտան, զասադա, բատալյօն, դիվէրսյա*** եւ այլն:

7. Տպագիր եւ անտիպ աղբյուրներում հիշատակված մի շարք բառեր, որոնց՝ Ղարաբաղի բարբառում գործածվելը մեզ խիստ կասկածելի եւ անհավանական է թվում:

ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Ղարաբաղի բարբառը հարուստ է դարձվածներով: Հետեւելով դարձվածի լայն ըմբռնման տեսությանը՝ բառարանում, բացի բուն դարձվածներից, ընդգրկել ենք նաեւ ասացվածքները, կայուն բառակապակցությունները, հարադիր բայերը, ոճական արտահայտությունները:

Դարձվածները դրվում են բառահոդվածի վերջում՝ բառի բոլոր իմաստները բացատրելուց հետո: Յուրաքանչյուր դարձված ներկայացվում է միայն մեկ անգամ՝ դարձվածի առաջին բառի տակ՝ խիստ այբբենական կարգով՝ առանց հաշվի առնելու ուղիղ եւ թեք ձեւերը, որին հետեւում է բացատրությունը: Նույնիմաստ դարձվածները բացատրվում են մեկ անգամ, մյուս դեպքերում հղում է կատարվում: Եթե նույնիմաստ դարձվածները տարբերվում են միայն մեկ անդամի (ոչ առաջին) փոփոխությամբ, ապա դրանք հիմնականում ներկայացվում են նույն դարձվածի կազմում՝ իրարից անջատվելով ուղղահայաց գծիկներով, ինչպես՝ ***Տ'ուրմ'ն անէլ/կօխէլ/նըստըցընէլ /տինիլ/քըցիլ, Օրը փիս/տըժէր տը*ղ մըթնէլ:***

Բոլոր դարձվածների համար բերվում են օրինակներ, բացառությամբ հաղորդակցական արժեք ունեցող ***(Ասում ըմ՝ ասու մէ՛ր, թա էշը քած ա, ասում ա՝ քօռակըն էլ ա քած)*** եւ ***տե՛ս*** հղումն ունեցող ***(Ըսածան տ'ուս կ'ալ - տե՛ս Խուսկան տ'ուս կ'ալ)*** մի շարք դարձվածների***:***

Ղարաբաղում ընդհանուր տարածում ունեցող դարձվածներին զուգընթաց բերվում են նաեւ տեղական նշանակության՝ կոնկրետ որեւէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող դարձվածներ, ինչպես՝ ***Ըթ'ունին ծ'ունը, Մէջուն արտը, Սօնէն հավը տը*ռնալ:***

Եթե որեւէ գլխաբառ հղվում է մեկ այլ գլխաբառի, ապա առաջինի տակ նույնանիշ դարձվածները չեն բերվում:

ԲԱՌԱՀՈԴՎԱԾԸ: Բառահոդվածը բաղկացած է հետեւյալ մասերից՝ ա) ***գլխաբառ,*** բ) ***ծագումնաբանական նշումներ,*** գ) ***լեզվաոճական եւ քերականական նշումներ***, դ) ***իմաստաբանություն,*** ե) ***օրինակներ եւ դրանց աղբյուրների վկայություն***:

ա) ***Գլխաբառերը*** ներկայացվում են մեծատառերով: Գլխաբառից հետո բերվում են տարբեր խոսվածքներում գործածվող հնչյունափոխված տարբերակները, որոնցից յուրաքանչյուրը, այբբենական կարգով դրվելով համապատասխան տեղում, *տե՛ս*-ով հղվում է հիմնական համարվող բառին: Գլխաբառի ընտրության ժամանակ նախապատվությունը տվել ենք պատմական Վարանդայի գավառում գործածվող ձեւին, այնուհետեւ հերթականությամբ նշել մյուս շրջանների խոսվածքների ձեւերը, չնայած, ընդհանուր առմամբ, այդ ձեւերի գործածության սահմանները խիստ տարբերակված չեն, եւ հաճախ մի գյուղի խոսվածքի ձեւերը, տարբերվելով հարեւան գյուղերից, կարող են համընկնել հեռավոր գյուղերի խոսվածքներին: Թերեւս դա է հիմնական պատճառը, որ, նշելով հնարավոր բոլոր հնչյունական տարբերակները, խոսվածքների թվարկումներ չենք արել, ինչը կստեղծեր խառնաշփոթություն:

Գոյականները բերվում են եզակի թվի ուղղական հոլովով, բայերը՝ անորոշ դերբայով:

Որպես գլխաբառեր են բերվում դերանվանական հոլովմամբ թեքվող դերանունների սեռականի եւ տրականի ձեւերը, ***իմ, քու, ինձ, ք'ը*գ***, ինչպես նաեւ՝ անկանոն բայերի խոնարհված յուրահատուկ ձեւերը՝ ***կէր, յը*ք, տը*ս, կալ'*** եւ այլն:

բ) ***Ծագումնաբանական նշումներ*** մասում համառոտագրությամբ նշվում է այն լեզուն, որից բառը անցել է բարբառին, ինչպես՝ ***հ.ե.*** (հնդեվրոպական հիմք լեզու), ***գրբ.*** (գրաբար), ***արաբ.*** (արաբերեն), ***պրս.*** (պարսկերեն), ***թրք.***(թուրքական լեզուներ՝ թուրքերեն, թաթա-

ներեն, ադրբեջաներեն), ***ռուս***. (ռուսերեն): Այդ նշումներից հետո բերվում է փոխատու լեզվի ձեւը՝ գրաբարինը՝ հայկական, ռուսերենինը՝ սլավոնական, իսկ մյուսները՝ լատինական այբուբենով: Եթե նույն բառը գործածական է տարբեր լեզուներում եւ անհնար կամ մեր հնարավորություններից վեր էր կոնկրետ փոխատու լեզուն որոշելը, նշվել են բոլոր լեզուները: Եթե փոխատու լեզվի բառը բարբառում ներկայանում է իմաստափոխությամբ, ապա փոխատու լեզվի բառի մոտ փակագծերում տրվում է բուն իմաստը:

Եթե գլխաբառի մոտ ծագումնաբանական նշումներ չկան, նշանակում է բառը բարբառային է, կամ էլ՝ ծագումը մեզ անհայտ:

գ) ***Լեզվաոճական նշումները*** երկու կարգի են՝ սոցիալական - ***ծծկ.*** (ծածկաբանություն), ***մնկ***.(մանկական), եւ վերաբերմունքային - ***անրգ.*** (անարգական), ***արհմ.*** (արհամարհական), ***ծղր.*** (ծաղրական), ***հեգն***. (հեգնական) եւ այլն:

Գլխաբառերի քերականական բնութագրությունը տրվում է խոսքիմասային պատկանելության նշումով, ինչպես՝ ***գ.*** (գոյական), ***ած.*** (ածական), ***թ.*** (թվական), ***դ.*** (դերանուն), ***մ.*** (մակբայ), ***կ***. (կապ), ***շ.*** (շաղկապ), ***ձ***. (ձայնարկություն), ***վ***. (վերաբերական): Բայերի մոտ նշվում է նաեւ սեռը, ինչպես՝ ***նբ***. (ներգործական բայ), ***չբ***. (չեզոք բայ), ***կբ.*** (կրավորական բայ), ***պբ***. (պատճառական բայ):

դ) ***Իմաստաբանություն:*** Այս մասում հնարավորինս համառոտ եւ հստակ տրվում են բառերի բոլոր ուղղակի եւ փոխաբերական նշանակությունները: Առանձին դեպքերում, հատկապես երբ գլխաբառը ազգագրական բովանդակություն ունի, բացատրություններն ավելի ընդարձակ են: Բազմիմաստ բառերի բացատրությունները տրվում են առանձին՝ արաբական թվանշաններով անջատված: Փոխաբերական նշանակություններից առաջ դրվում է ***փխբ.*** համառոտագրությունը:

Բառերի բոլոր նշանակությունները սովորաբար բացատրվում են, մեծ թիվ չեն կազմում հոմանշային բացատրությունները: Նույնիմաստ բառերից ընդհանուր առմամբ բացատրվում է միայն մեկը՝ ամենից տարածվածը, իսկ մյուսները ***տե՛ս***- ով հղվում են վերջինիս:

Բայերի կրավորական ձեւերը, որոնք ինքնին նաեւ չեզոք են, բերվում են իբրեւ գլխաբառեր՝ որպես ընդհանուր կանոն բացատրվելով ***կբ.*** եւ ***չբ. (որեւէ) բայի*** բանաձեւումով: Իսկ եթե այդ ձեւը ունի չեզոք սեռի այնպիսի նշանակություն կամ նշանակություններ, որ չունի ներգործականը, ապա դրանք բացատրվում են առանձին- առանձին՝ ***չբ.*** նշումով, ինչպես՝ ***ՔԸՍՎԷԼ***- 1. ***կբ.*** եւ ***չբ. ՔԸՍԷԼ***-ի, ***չբ.*** 2. *Մի բանի դիպչել՝ կպչել, 3. Սնգուրվել, 4. Քծնել, 5. Չքվել:*

ե) ***Օրինակներ:*** Բառերի նշանակությունները պարզաբանելու եւ հիմնավորելու համար բառիմաստի բացատրությունից հետո բերվում են օրինակներ, որոնք առնված են երեք կարգի աղբյուրներից՝ տպագիր, ձեռագիր եւ բանավոր: Տպագիր աղբյուրներից բերված օրինակների վերջում համառոտագրությամբ եւ փակագծերում նշվում են համապատասխան ժողովածուի վերնագիրն ու էջը:

Ձեռագիր աղբյուրներից քաղած օրինակների թիվը մեծ է: Այս առումով հատկապես մեծ տեղ ենք հատկացրել մեր անձնական արխիվին, որտեղ ընդգրկված է 1998-2011թթ. մեր եւ մեր ղեկավարությամբ ԱրՊՀ ուսանողների, ինչպես նաեւ մեր խնդրանքով ԼՂՀ տարբեր գյուղերի տասնյակ ուսուցիչների կողմից հավաքագրված բանահյուսական, բարբառային եւ ազգագրական հարուստ նյութ՝ շուրջ 20000 էջ, որոնցից յուրաքանչյուրը ժամանակին ենթարկել ենք նուրբ տառադարձության՝ տվյալ խոսվածքը կրող առնվազն երկու բարբառախոսների օգնությամբ:

Ձեռագիր աղբյուրներից քաղված օրինակների վերջում դրվում է *(Ձ)* համառոտագրությունը:

Չնայած տպագիր եւ ձեռագիր աղբյուրների առատությանը՝ բարբառի բառապաշարի զգալի մասը արտացոլված չէ դրանցում եւ շարունակում է մնալ միայն բարբառախոսների սեփականությունը: Ահա թե ինչու բազմաթիվ բառերի օրինակներ բերվում են բանավոր խոսքից՝ վերջում դնելով ***(Բ)*** համառոտագրությունը: Այս աղբյուրի մեջ են մտնում նաեւ ԼՂՀ ազգային հեռուստատեսությամբ հնչած բարբառային հաղորդումները, ինչպես նաեւ մեր արխիվում պահվող բազմաթիվ ձայնագրություններ եւ տեսագրություններ՝ մեր կամ մեր խնդրանքով ուրիշների կողմից կատարված:

Վկայված օրինակները հիմնականում բերվում են նախադասություններով, երբեմն՝ բառակապակցություններով: Բառարանում օրինակներ են բերված բոլոր բառիմաստների համար: Մեջբերումներ չունեն միայն ***տե՛ս***-ով հղում ունեցող բառերի մի մասը, ինչպես նաեւ մի շարք գռեհկաբանություններ:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ: Բարբառագիտության մեջ ընդունված է ուղղագրության մեկ սկզբունք՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է, այսինքն՝ մեկ հնչյունին մեկ գիր սկզբունքով: Դժբախտաբար Ղարաբաղի բարբառով հավաքագրված նյութի զգալի մասը կամ տառադարձության չի ենթարկվել կամ էլ տպագրվել ու հավաքագրվել է տառադարձության խախտումներով: Ահա թե ինչու, քարտագրելով բոլոր աղբյուրները, մենք ստիպված էինք բառերի եւ դարձվածների բացատրությունների համար օրինակներ բերել ոչ բոլոր տպագիր եւ անտիպ գործերից:

Բառարանում հետեւել ենք հետեւյալ սկզբունքներին.

1.Գլխաբառերը տրվել են մեծատառով՝ նուրբ այբբենական կարգով: Բառարանից օգտվողներին դյուրություն պատճառելու համար արել ենք որոշ բացառություններ.

ա) ***ա՛ն, ո՛ւ, ծ*** քմային ձայնավորները, չնայած անկախ հնչույթներ են, սակայն այբբենական կարգով դասավորելիս հավասարեցվել են ***ա, ու, օ*** ոչ քմային հնչյուններին,

բ) ***ը***^{t} եւ ***ը***^{h} երկբարբառակերպերի ***է*** եւ ***ի*** հնչյունները դիտվել են որպես լիակատար հնչյուններ,

գ) ***գ***^{y}***, կ***^{y}***, ք***^{y}***, լ***^{y} եւ մյուս քմային բաղաձայնների կիսաձայն ***յ***-ն դիտվել է որպես լիարժեք բաղաձայն:

2. Խստիվ պահպանվել են բարբառային գիտական տառադարձության սկզբունքները: Հարկ է նշել, որ չնայած ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտու-

թյան բաժնի կողմից արդեն իսկ մշակված եւ հրատարակված է գիտական նոր տառադարձություն, որը հնարավորություն է տալիս ներկայացնելու հայերենի բարբառների հնչյունների բոլոր նրբությունները, սակայն մենք հետեւել ենք ավանդական տառադարձությանը՝ հաշվի առնելով, որ Ղարաբաղի բարբառի վերաբերյալ եւ բարբառով տպագրված նյութերի հիմքում դրված է այդ տառադարձությունը:

3. Տպագիր ու ձեռագիր աղբյուրներից վերցված օրինակներում ընդհանուր առմամբ պահպանվել է հեղինակների տառադարձությունը: Մեր միջամտությունը սահմանափակվում է հետեւյալ դեպքերով՝ 1) բառերի տառադարձման ակնհայտ սխալների ուղղում, 2) գաղտնավանկի ***ը***-ի ավելացում, 3) անհրաժեշտության դեպքում ծավալուն նախադասությունների կրճատում:

4. Եթե գլխաբառը հանդես է գալիս նաեւ հավելյալ տառերով, եւ այդ տարբերակները անմիջապես նախորդում կամ հաջորդում են գլխաբառին, ապա վերջիններս սովորաբար դրվում են կլոր փակագծերի մեջ, ինչպես՝ ***ԱՇԽԱՐ(Ք), ՏՕՌ(ՆԸ), ՏՕՊ(Ը)ՐԱԿ:***

ՎԿԱՅՎԱԾ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ - Ա. Սարգսյան, *Արցախյան ավանդություններ,* Ստեփանակերտ, 2007

ԱԱռ - Ա. Սարգսյան, *Արցախյան առակներ,* Ստեփանակերտ, 2011

ԱԲԲ - Ա. Սարգսյան, *Արցախի բանաձեւային բանահյուսությունը,* Ստեփանակերտ, 2009

ԱՀ - Ա. Սարգսյան, *Արցախյան հանելուկներ,* Ստեփանակերտ, 2002

Բ - Բանավոր խոսք

ԲՀԲ - *Բաքվի հայոց բանահյուսությունը* (կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը), Երեւան, 2004

ՋՏ, Ա - Տմբլաչի Խաչան (Կ.Կ. Մելիք Շահնազարեանց), *ՋՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ,* գիրք Ա, Վաղարշապատ, 1907

ՋՏ, Բ - Տմբլաչի Խաչան (Կ.Կ. Մելիք Շահնազարեանց), *ՋՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ,* գիրք Բ, Վաղարշապատ, 1908

ԼՂԲ - Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ.Մ.Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971

ԼՂԲՔ - Կ.Ս. Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը,* Երեւան, 1966

ՀԱԲ, 15 - Ալվարդ Ղազիյան, *Հայ ազգագրություն եւ բանահյուսություն,* հ. 15 (Արցախ), 1983

ՀԲ - Ա.Մ. Պողոսյան, *Հադրութի բարբառը,* Երեւան, 1965

ՀԺՀ, V - *Հայ ժողովրդական հեքիաթներ,* V (գրի է առել Մ.Մ.Գրիգորյան-Սպանդարյանը), Երեւան, 1966

ՀԺՀ, VI - *Հայ ժողովրդական հեքիաթներ,* VI (գրի են առել Ա. Բահաթրյանը, Կ. Մելիք Շահնազարյանը, Մ. Իսրայելյանը, Մ. Մխիթարյանը, Ա. Շահսուվարյանը), Երեւան, 1973

ՀԺՀ, VII - *Հայ ժողովրդական հեքիաթներ,* VII (գրի է առել Մ. Առաքելյանը), Երեւան, 1979

Ձ - Ձեռագիր աղբյուրներ

ՆԱԲ - *Նշխարներ Արցախի բանահյուսության* (ժողովեց, կազմեց եւ ծանոթագրեց Լ. Հարությունյանը), Երեւան, 1991

ՆԱԲ II - Լ. Հարությունյան, *Նշխարներ Արցախի բանահյուսության,* II, Ստեփանակերտ, 2004

ՆԱԲ III - Լ. Հարությունյան, *Նշխարներ Արցախի բանահյուսության,* III, Ստեփանակերտ, 2007

ՆԼՂԺԲ - *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից* (կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երեւան, 1978

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած. -	ածական
անգլ. -	անգլերեն
անծ. -	անեծք
անրգ. -	անարգական
ասաց. -	ասացվածք
ասոր. -	ասորերեն
արաբ. -	արաբերեն
արիմ. -	արիամարիական
բրմդ. -	բարեմաղթություն
գ. -	գոյական
գերմ. -	գերմաներեն
գռհկ. -	գռեհկաբանություն
գրբ. -	գրաբար
դ. -	դերանուն
եբր. -	եբրայերեն
եւն. -	եւ այլն
թ. -	թվական
թրք. -	թուրքական լեզուներ
ծղր. -	ծաղրական
իտ. -	իտալերեն
լատ. -	լատիներեն
ծծկ. -	ծածկաբանություն
իսպ. -	իսպաներեն
կ. -	կապ
կբ. -	կրավորական բայ
հ.ե. -	հնդեվրոպական
հեգն. -	հեգնական
հմմտ. -	համեմատություն
հոգն. -	հոգնակի
հոլ. -	հոլանդերեն
հպվ. -	հապավում
հվք. -	հավաքական
հուն. -	հունարեն
հունգ. -	հունգարերեն
ձ. -	ձայնարկություն
մ. -	մակբայ
մնկ. -	մանկական
նբ. -	ներգործական բայ
շ. -	շաղկապ
չբ. -	չեզոք բայ
պբ. -	պատճառական բայ
պրս. -	պարսկերեն
ռուս. -	ռուսերեն
վ. -	վերաբերական
վրաց. -	վրացերեն
փխբ. -	փոխաբերական
փղքշ. -	փաղաքշական
քրդ. -	քրդերեն
օրհ. -	օրհնանք
ֆր. -	ֆրանսերեն

Ա

Ա[1] *(գրբ. ա)* - Հայկական այբուբենի առաջին տառը:

Ա-ն ու Բ-ն - Ամենատարրական բաները: *Էս հանկա ա-ն ու բ-ն ա, մընացածը յը՛տնան ըմ սըվըրցընական* (Զ):

- Ա-ն ու Բ-ն ճօկէլ - Գրաճանաչ լինել, ամենատարրական բաներն իմանալ, մի քիչ հասկանալ: *Դէրը ա-ն ու բ-ն ճօկում չար* (Զ):

Ա[2]/ՅԱ[1] - Էական բայի սահմանական ներկայի եզակի երրորդ դեմքը: *Մին ամէս անց ա կէնում, Պուդին ղըզղանը պանրում չի* (ՆԱԲ, 135):

Ա[3] *(գրբ. ա)* - *ձ.* 1. Զարմանքի, ուրախության բացականչություն: *Մ՛, էս հանր ը՞մ տը՛սնում, էտ հիբ ը՞ս յը՛կալ* (Բ): 2. Վախի, ցավի բացականչություն: *Մ՛, էտ մէր կըլօխը մին օյին ա պիրկական* (Բ): 3. Կարեւորություն չտալու, արհամարհանքի, անտարբերություն արտահայտելու բացականչություն: *Մ՛, հինչ օգում ա, թօղէ անէ, յը՛ս կօրծ չօնիմ* (Զ): 4. Մի բան կռահելու, հասկանալու բացականչություն: *Մ՛, յը՛ս էլ ասիմ՝ խէ յա ըտի ճէլլի-ճէլլի կ'ասմէր տօն* (Բ): 5. Կոչական բացականչություն: *Կընէգը ասմա. -Մ՛ մարթ, յանի ըստըրանա նը՛ղ օր կինի՞* (Զ):

- Մ՛ կօժ, ք՛ը՛զ ասիմ, ա՛ կօլա, տու ըսկաց - Ասվում է, երբ մի բան ակնարկելով՝ փորձում են անուղղակի կերպով այլ բան հասկացնել:

Ա[4]/ԱՆ - *շ.* Եվ, ու: *Հանրը ա մարը ը-ռազի չըն կէնըմ, էտ տըղան կըլօխ ա յօր օնում, ք՛ինամ* (Զ):

ԱԲԱ *(թրք. aba)* - *գ.* Բրդյա հաստ եւ կոպիտ կտորից կարված տղամարդու վերնազգեստ: *Էս տըղան վը՛ր լըսըմ ա, յէր ա կէնըմ մին աբա կ՛էնըմ, մին դանթանր յօր օնըմ, ք՛ինըմ...* (ՀԺՀ, VI, 112):

ԱԲԱԴՈՒԼԼԱ - *տե՛ս* ԱՄՄԻՆՕՎԻՆ: *Յէս ծէզ աբադուլլա մուռանալ չըմ* (ՋՏ, Ա, 102):

ԱԲԱԼ - *տե՛ս* ԱԲԱԼ[1]:

ԱԲԱԼ[1]/ԱԲԱԼ - *ձ.* Զարմանքի, վախի բացականչություն: *Կընէգը մէհէտ յէշում ա, թա՝ վի՛յ, աբա՛լ, էս հու վը՞ն* (ՀԺՀ, VII, 302):

ԱԲԱՀՕ(Վ) *(գրբ. ապահով, յապահով)* - *ածական.* Ապահով, վտանգներից զերծ, անվտանգ: *Ճէլլի փախալ ըն մին աբահօ տէղ, վէր ապրանքան կօրուստ չըտան* (ՆԱԲ, II, 33):

ԱԲԱՇԽԱՐԱՆՔ/ԸԲԸՇԽԱՐԱՆՔ/ԲԸՇԽԱՐԱՆՔ *(գրբ. ապաշխարան (ապաշխարելու տեղ, միջոց)* - *գ.* Ապաշխարելը, ապաշխարություն: *Էտ մէխկան ընդրա վէչ մին աբաշխարանք ըզադէլ չի* (Բ):

ԱԲԱՇԽԱՐԷԼ/ԸԲԸՇԽԱՐԷԼ/ԲԸՇԽԱՐԷԼ *(գրբ. ապաշխարեմ)* - *չբ.* Գործած հանցանքի, մեղքի, սխալի համար զղջալ եւ ձգտել մեղքը քավել: *Դէրը ասմա.- Էտ մը՛ծ մէխկ ա, ք՛ինի՛, աբաշխարէ* (Զ):

ԱԲԱՍԻ - *տե՛ս* ԲԱՋԻ:

ԱԲԱՍԱՆՈՒՑ - *տե՛ս* ԲԸՋԱՆՈՒՑ:

ԱԲԱՐՕՆ *(ռուս. оборона)* - *գ.* Պաշտպանություն: *Կընէվէն վախտը մէր աբարօնը սըխ ա իլալ* (Բ):

- Աբարօն փընռնէլ - Պաշտպանողական դիրք գրավել: *Մրհէ էն ընք Դընէպրէն ղըրաղէն աբարօն փընռնած, էն լօկէր նէմէսնէն էլ էն ըն էն մին ղըրաղէն կօչ յէկած...*(ԼՂԲՔ, 263):

ԱԲԳՕՆ - *տե՛ս* ԱՎԳՕՆ:

ԱԲԷԴ *(ռուս. обед)* - *տե՛ս* Ք՛ԸՍՈՒՐԱՀԱՑ:

- Աբէդ անէլ - Ճաշել: *Վէր աբէդ ըն անըմ, էլ նըղանըմ ըն, թա կօրծ անին* (Զ):

ԱԲԷԹ *(գրբ. աբէթ)* - *գ.* Այրված կտավից, բամբակաթելից կամ այլ բաներից պատրաստած դյուրավառ նյութ, որը բռնկվում է կայծքարի կայծից: *Ըշփիշկան տանս յը՛կավ, ըբէթին դարը անց կացավ* (Բ):

ԱԲԷՇԻԳ՝ - *տե՛ս* ԱԲԷՇԻԳ՝:

ԱԲԷՇԻԳ՝/ԱԲԷՇԻԳ՝ *(ռուս. объездчик)* - *գ.* Անտառապահ: *Աբէշիգ՝ըն էլ ա օգում տըրան ծէռքը քըցի...* (ՆԼՂԺԲ, 30):

ԱԲԷՇԻԳ՝ՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱԲԷՇԻԳ՝ՕԹՈՒՆ:

ԱԲԷՇԻԳ՝ՕԹՈՒՆ/ԱԲԷՇԻԳ՝ՕԹՈՒՆ - *գ.* 1. Անտառը պահպանելը, անտառների պահպանություն: *Վէր աբէշիգ՝օթունը չինար, Տումա ծըմըկնէն սաղ կըկըտուրին* (Բ): 2. Անտառապահ լինելը, անտառապահի պաշտոնը: *Սավէտը ցըրը՛վ յը՛կավ, խաչի դային աբէշիգ՝օթունը թօղից* (Բ):

ԱԲԸԿՆԱՎԷՆՆԻ *(ռուս. обыкновенный)* - *ածական.* Ոչ արտակարգ, ոչ արտասովոր, սովորական: *Աբըկնավէննի կ՛ութան ա, շատ թարիփ մէր անէլ* (Զ):

ԱԲԸՐԱՏՆԻ - *տե՛ս* ԱԲՐԱՏՆԻ:

ԱԲԸՐԷԼ/ԱԲՐԷԼ/ԱՊԸՐԷԼ[2]/ԱՊՐԷԼ[2] *(գրբ. ապրիլ)* - *գ.* Տարվա չորրորդ ամիսը՝ ապրիլ: *Աբըրէլումը յը՛կած ծունը հիյվընատը՛ռնը տօնը կընքանդի* (Զ):

ԱԲԻ *(պրս. abi)* - *ածական.* Կապտագույն: *Ապի շօրը կ՛ը՛ցալ ա, Դանդէրըս պուլօրալ ա...* (Զ):

ԱԲԻԳԱՌԴԱՆ *(պրս. abgardan)* - *գ.* Երկար կոթով պղնձե խոր աման կարասներից, տակառներից հեղուկը հանելու համար: *Ապիգ՝ադանը քընցում ա, կըրասան կ՛ինի տանս օնում, մը՛կնում դունաղէն* (Բ):

ԱԲԻՎԼԷՆՆԻ - *տե՛ս* ԱԲՅԱՎԼԷՆՆԻ:

ԱԲԼԱՎԼԷՆՆԻ - *տե՛ս* ԱԲՅԱՎԼԷՆՆԻ:

ԱԲՅԱՎԼԷՆՆԻ/ԱԲԼԱՎԼԷՆՆԻ/ԱԲԻՎԼԷՆՆԻ *(ռուս. объявление)* - *գ.* Հայտարարություն: *Ըրրիգադիրը մին աբյավլէննի յա կախ տամ, վէր հու վէր բըրամա չի հազնէ, ըշտըրափ ըն ընան* (Զ):

ԱԲՈՒՇ *(թրք. abras (սպիտակ պուտերով)* - *ածական.* Կոպիտ, տգեղ, այլանդակ: *Էտ տըղան էլ սաղ աշխարքը շօռ ա կ՛ամ, վէրչը մին ապռաշ ախչիգ՝ ծգանմ* (Զ): 2. Չարքաշ, շատ աշխատող: *Ըտըրան մին ապռաշ մարթ ա ինանմ, սաղ օրը դարկում ա հանդը, ինք՛ը սիրըկանէն նըհը՛ստ ք՛ը՛ստի անում* (Զ): 3. *տե՛ս* ԽԸ՛Ռ:

- Ապռաշը ճանր տալ - *հեգն.* Կենակցել (տղամարդու մասին):

- Ըբռաշին քարը - Անգութ, անխիղճ, անտարբեր: *Իզէն հօ հա՞ր չի էտ խօնցը հը՛տէ, հաշը՛կ ըրա ըբռաշին քարըն ա* (Բ):

ԱԲՐԱ - *տե՛ս* ԱԲՐԱ:

ԱԲՐԱ/ԱԲՐԱ *(գրբ. ապրայ)* - *գ.* 1. Որեւէ ապրանքի դատարկ ամանի, փաթեթի քաշը: *Ապրանս տանս յը՛կավ, չօրք՛ կիլօվէն հախը յօր կալավ* (Բ): 2. Մանր քարեր կամ այլ առարկաներ, որոնցով որոշում են դատարկ ամանի քաշը: *Ապրանս տի՛ր, յը՛տնան քըշըռէ՛* (Բ):

- Ապրանս փընռնէլ - Որեւէ ապրանք կշռելիս դատարկ ամանի, փաթեթի քաշը որոշել: *Ապրանս փընռնում ա, տը՛սնում՝ դանուզ էրկու կիլօ* (Զ):

ԱԲՐԱՋԱՎԱՆՆԻ/ԸԲՐԱՋԱՎԱՆՆԻ *(ռուս. образование)* - *գ.* Կրթություն: *Հանրը քըշէր-ցիրը՛կ կօրծ ա անում, փուլ ըշխադում, վէր տըղան աբրազավաննի ըստանա* (Բ):

ԱԲՐԱՋՕՎ(ԸՆ)ՆԻ/ԸԲՐԱՋՕՎ(ԱՆ)ՆԻ *(ռուս. образованный)* - *ածական.* Կրթություն ստացած, կիրթ: *Տանըմ ա ճըղըցպանէն շօրէրը հանում, էն պիրանծ շօրէրը կ՛էց տամ, տը՛ռնըմ ա մին աբրազօվնի տըղա...* (ՀԺՀ, V, 627):

ԱԲՐԱՏՆԻ/ԱԲԸՐԱՏՆԻ *(ռուս. обратный)* - *մ.* Ետ, դեպի ետ, հետ: *Էտ վէր տը՛սավ, աբրատնի յը՛տ տը՛ռավ* (Բ):

ԱԲՐԷԼ - *տե՛ս* ԱԲԸՐԷԼ:

ԱԲՈՒՌ *(պրս. abru (երեսի ջուր)* - *գ.* Ամոթի, պատվի, պատկառանքի զգացում: *Լանչառ կընգանը աբուռ չինիլ* (Զ):

- Աբուռը իրը՛սէն - Ամոթի, պատկա-

ռանքի զգացում ունեցող, պատվազգաց: *Աբուռը իրը՝սէն կընգանը ախչիգ՝ը մօրը կընքաշի* (Ձ):

- Աբուռը հախավ կինի - Պետք չէ չափն անցնել: *Ասլանը ասմա.- Աբուռը հախավ կինի, խընրէգ՝ ա՛սէ* (Ձ):

- Աբուռը ղընրաղ տինիլ - Պատվախնդրությունը, ամոթի զգացումը հաշվի չառնել: *Էտ կընէգ՝ը աբուռը ղընրաղ ա տինո՛ւմ, ք՝ինամ նախագէն վը՝տքը, պարթկ օգ՝ում* (Բ):

- Աբուռը յընրան - *տե՛ս* Աբուռը իրը՝սէն:

- Աբուռը չՕլը քընցիլ - *տե՛ս* Աբուռը տափավը կ՝ալ:

- Աբուռը պահէլ - Ամոթի, պատվի զգացումը չարատավորել: *Աբուռը պահէլը ամմէն մարթու պէն չի* (Բ):

- Աբուռը վէր ածէլ - Խիստ նախատել, ամոթանք տալ: *Մին օր էլ էտ կ՝օղէն շինընմաչումը ջիհո՛ւմ ա, ժուղուվուրթէն մաչին աբուռը վէր ածում* (Ձ):

- Աբուռը վէր կ՝ալ/վէր տը՝ռնալ - Խիստ ամաչել, անհարմար զգալ: *Աբուռըս վէր յէկավ, ախճի մին սիրու հայասը-զէր նի ըն մընընմ ութընղնէն, տըղընմարթօց նըհէտ սիլի-բիլի անընմ* (ՋՏ, Ա, 222):

- Աբուռը վընննատակ տալ - *տե՛ս* Աբուռը տափավը կ՝ալ:

- Աբուռը տանա անէլ - Իր ունեցածով բավարարվել, ուրիշի օգնությանը չդիմել, փոխ չվերցնել: *Վէր մարթը մը՝ռնում ա, էտ կընէգ՝ը քընշէր-ցիրը՝կ կօրծ ա անում, աբուռը տանա անում* (Ձ):

- Աբուռը տափավը կ՝ալ/տափավը տալ - Ամոթի, պատվի զգացումը արատավորել: *Թանգա՛ն հարթնը ո՛ւրա՛ն աբուռընն էլ տափավը յը՝կավ, հօրը-մօրը աբուռընն էլ* (Բ):

- Աբուռըտ կընտրրվէ - Նախատական ձեւ կամ բարեկամական հանդիմանություն: *Մարը ասմա.- Աբուռըտ կընտրրվէ՛, էտ հինչ ա՞ շո՛ւրէրէտ հա՛լը, խէ լըվանում չը՞ս* (Ձ):

- Աբուռըտ շօն տը՝ռնա - *տե՛ս* Աբուռըտ կընտրրվէ:

- Ըբուռան տո՛ւս օնէլ - Մեկին պատվազրկել, անպատիվ անել: *Մին օր էլ էտ խը՝ղճ ըխճըկանը ծՕրո՛ւմը փըռնում ա, ըբուռան տո՛ւս օնում* (Ձ):

- Ըբուռէն տար ք՝ինիլ - *տե՛ս* Աբուռը պահէլ: *Դէրը էտ մարթին փըռնում ա, թա.-էլ յան տալի տը՝ղ չօնիս, ըբուռէտ տար ք՝ինի՛, կ՝ուղացածընտ յը՝տ տօ* (Ձ):

ԱԲՈՒՌ-ՀԱՅԱ(Թ) *(պրս. abru + թրք. hayā, abir-həya)* - *գ.* Ամոթ, պատկառանք, պատվախնդրություն: *Ընդընրա վէր աբուռ-հայա ինի, սարու մընան մարթին թաղէլ չի, ըստո՛ւր-ընդո՛ւր հը՝տը ընդնէ* (Բ):

ԱԲՕՐՏ *(ռուս. аборт, լատ. abortus)* - *գ.* Վիժելը, վիժվելը, վիժում: *Շէնին կընանուցը առաջ աբօրտան խաբար չի-լալ* (Բ):

- Աբօրտ անէլ - Արհեստական վիժում կատարել: *Էտ դօխտուրընն էլ փուլը յօր ա օնում, էտ ըխճըկանը աբօրտ անում* (Ձ):

- Աբօրտ ինիլ/տը՝ռնալ - Հղիությունը վաղաժամ ընդհատվել, վիժել: *Խը՝ղճ հարթնանը էնքան պինընցընում ըն, աբօրտ ա տը՝ռնում* (Ձ):

ԱԳԱՀ - *տե՛ս* ԱԿԱՀ(Ի):

ԱԳԱՑԻ - *տե՛ս* ԱԿԱՑԻ:

ԱԳԻՏԱՑԱ *(ռուս. агитация, լատ. agitatio)* - *գ.* Որեւէ նպատակով լայն զանգվածների մեջ տարվող քաջալերիչ, գովաբանական պաշտպանություն: *Վէր ագիտանցա՛ն չինանր, իզէն կարէլ չար գ՝ուղապէտ ընտընրվէ* (Բ):

- Ագիտանցա՛ անէլ/տանէլ - Ագիտացիոն գործունեություն ծավալել: *Կընէգ՝ը ագիտանցա՛ ընրավ, մարթին նախագա ընտրը՝ցէն* (Բ):

ԱԳԱՆՐ - *տե՛ս* ԱՆԳԱՆՐ:

ԱՆԳԱՆՐ/ԱԳԱՆՐ *(պրս. eger)* - 1. *շ.* Եթե, թե, թե որ: *Ա՛նգ՝ա՛նր ռազի կընկէնա, մին քընթէ կավ կընտամ* (Բ): 2. Արդյոք: *Մարթը քընէնք՝ ա անում, թա.- Արչը ա՛նգ՝ա՛նր կօ՞զի, վէր հընգէր տը՝ռնանք* (Ձ):

ԱԳՌԱՎ - *տե՛ս* ԱԿՌԱՎ:

ԱԳՐԱՆԸՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱԳՐԱՆՕՄՕԹՈՒՆ:

ԱԳՐԱՆՈՒՄ - *տե՛ս* ԱԳՐԱՆՕՄ:

ԱԳՐԱՆՈՒՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱԳՐԱՆՕՄՕԹՈՒՆ:

ԱԳՐԱՆՕՄ/ԱԳՐԱՆՈՒՄ *(ռուս. агроном)* - *գ.* Գյուղատնտեսության մասնագետ, գյուղատնտես: *Մէր Գընրիշա Առաքէլյանընն էլ էն ա լալ Իրէվան ագրանօմու ընշկալը...* (ՀԲ, 360):

ԱԳՐԱՆՕՄՕԹՈՒՆ/ԱԳՐԱՆՈՒՄՕԹՈՒՆ/ԱԳՐԱՆԸՄՕԹՈՒՆ - *գ.* Գյուղատնտեսի զբաղմունքը, պաշտոնը, մասնագիտությունը: *Սաբավ հէնգ՝ տարէ ագրանօմօթուն ա սընվը՝ռալ, մաննը կընտրրէլընն էլ չի գ՝ո՛ւդո՛ւմ* (Բ):

- Ագրանօմօթուն անէլ - Գյուղատնտեսի մասնագիտությամբ աշխատել: *...Յէկալ ա մէր կօլխօզընմը էն ա ագրանընմօթուն ընէս* (ՀԲ, 360):

ԱԴԱ՝ - *տե՛ս* ԱԴԱ՝:

ԱԴԱ՝/ԱԴԱ՝ - *ձ.* Տղամարդկանց դիմելու կոչական բառ՝ այ տղա, այ մարդ, էյ: *Կուճի ախճիգը կ՝ամ ա, մարթին ասում.- Ա՛դա՛, յէր է՛, յէկալ ըն կընռէվ* (ՀԺՀ, V, 482):

ԱԴԱ՝Թ - *տե՛ս* ԱԴԱ՝Թ:

ԱԴԱ՝Թ/ԱԴԱ՝Թ *(արաբ, պրս. adat, թրք. adad, adet)* - *գ.* Հնուց արմատավորված ընդհանուր սովորույթ, վաղեմի սովորություն, կարգ: *Ա՛դա՛թ ա՝ հարթնը պըտրօնէն նըհը՝տ խօսէլ չի, ամմա մըհէնգ՝վա հարթնէրը ջըլաման չընն տաս, թա մինը մին պէն ասէ* (Ձ):

- Ա՛դա՛թ ընընէլ - Սովորույթ դառնալ, երեւույթն ընդհանուր տարածում ստանալ, հիմնավորվել: *Կընէգ՝ տո՛ւս քընցիլը տընրանա յէտընն ա ա՛նդա՛թ ընգալ* (ՆԼՂԺԲ, 13):

- Ա՛նդա՛թը վընննատակ տալ - Ընդհանուր սովորույթը արհամարհել, խախտել, հակառակ նրա գործել: *Ա՛նդա՛թը վընննատակ տընվօղէն Աստուծ վընննատակ կընտա* (Ձ):

- Ընդա՛թ ընընէլ - Ընդհանուր սովորույթը մոռանալ, վերացնել, չկատարել: *Ընդա՛թ ընգած մարթ ա, կարէլ չի մը՝զ նըհը՝տ խընընմօթուն անէ* (Բ):

- Ընդա՛թին փէշկան կախ ինիլ - Սովորույթին կուրորեն հետեւել: *Էտ հարթնընտ, ընդա՛թին փէշկան կախ իլա՛ծ, տանը մընծէրան հու հինչը ասում ա, անում ա* (Բ):

ԱԴԱՄ/ԱԹԱՄ - *գ.* Ըստ Աստվածաշնչի՝ մարդկության նախահայրը, առաջին մարդը: *Աստուծ ընընչան Ընդամէն ա ըստը՝ղծալ* (Բ):

- Ընդամա վէրթի - Մարդ արարած, մահկանացու, ադամորդի: *Խէղճ Ընդամա վէրթին տէս ա հընլՕրվում, տէն ա հընլՕրվում, ծէրք մէկնօղ չընո՛ւմ* (ՆԱԲ, 72):

- Ընդամա տէսը - Մեծ քանակությամբ, շատ (մարդկանց մասին): *Ընդամա տէսը կընլիէն ա հընվաքալ, ըսքըսալ հարթնանը անա կ՝էնգ՝ատ անէլը* (Ձ):

- Ընդամէն շո՛ւրէրավը - Մերկ: *Խօխէնքը ընտի՝ Ընդամէն շո՛ւրէրավը, մին օր տո՛ւզնը, մին օր կօշտ, մընծանում ըն* (Ձ):

- Ընդամէն վընխտանց - Ի սկզբանե, Ադամից սկսած, շատ հնուց: *Ընդամէն վընխտանց ա էտ պէնը ա՛նդա՛թ ընգալ* (Բ):

ԱԴԱԾ *(թրք. adas)* - *գ.* Նույն անունն ունեցող, անվանակից: *Էրկու խընամէ օնէ, ճօխտը՝ ադաշ* (Բ):

ԱԴԱ՝ՓԽԱՆԱ - *տե՛ս* Ա՛ԴԱ՝ՓԽԱՆԱ:

Ա՛ԴԱ՝ՓԽԱՆԱ/ԱԴԱ՝ՓԽԱՆԱ - *գ.* Երեխայի օրորոցի միգաման: *Մընհէնգ՝ ընսկի ուրուրուցց չընն պինընցընում, հի՞նչ մընաց, թա ա՛նդա՛փխանա պինընցընին* (Բ):

ԱԴԱ՝ԲԻՆ - *տե՛ս* Ա՛ԴԱ՝ԲԻՆ:

Ա՛ԴԱ՝ԲԻՆ/ԱԴԱ՝ԲԻՆ/Ա՛ԴԱԸԲԻՆ - *տե՛ս* Ա՛ՄՄԻՆՕՎԻՆ: *...Մին հընրաման կ՝իրից, թա.- Հիշքան կընէգ՝ արմատ կա, լօխճու կընտրէլ, իմ յէրգ՝իրումընս էլ ա՛նդա՛բին կընէգ՝ արմատ չինի* (ՀԺՀ, VI, 235):

Ա՛ԴԱԸԲԻՆ - *տե՛ս* Ա՛ԴԱ՝ԲԻՆ:

ԱԴԱԸՄ *(թրք. adem)* - 1. *գ.* Մեծ քայլ: *Ծի, հինչ ծի՞. մին ադընմը էրկու մէտընը*

կա (Զ): 2. *տեմ* ՀԸՏԷ[1]: *Էրկու ադդըմ վէր կընծից, բուդան պէն չի մընաց* (Զ):

- Ադդըմ անել - Մեծ քայլերով արագ քայլել: *Դէվը ադդըմ ար անում, պիճ ախպէրը կարում չար հըտան հըսնէ* (Զ):

ԱԴԴԸՄ-ԲԱՍՏԸՄ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ադդըմ-բաստըմ անել - 1. Գործը արագ, շտապ ու անորակ կատարել: *Էտ պատ ա՞, վէր տիրանալ ըս, ադդըմ-բաստըմ ըս ըրալ, տիրանալ ընդըէդ* (Բ): 2. *տեմ* ՇԸՄԲԷԼ: *Շալվարը ադդըմ-բաստըմ ըրավ, մարթին տուվավ* (Բ):

ԱԴԷԿԱԼՕՆ/ԱԴԻԿԱԼՕՆ *(ռուս. одеколон, ֆր. eau de Cologne)* - *գ.* Տղամարդու օծանելիք՝ օդեկոլոն: *...Նի ա մընընում կուխնին, ադէկալօնին շուշան շուտ-շուտ քրթին օնըմ ու տուս կամ...* (Ջ�տ, Բ, 55):

ԱԴԷՍՏԱԴ *(ռուս. аттестат, լատ. attectari)* - *գ.* Պաշտոնական վկայական ուսումնական հաստատություն ավարտելու մասին: *Ըշկօլը պըրծավ, ադէստադ տուվէն* (Բ):

ԱԴԷՐ - 1. *տեմ* ԴԷՐ: 2. *գ.* Տերտերին դիմելու կոչական բառ: *Քանապանը ասըմ ա.- Ամդէր, յէս մընէնգ օգում ըմ իմ քէնէ Գանլիխասը պիրիմ՝ խօխէքը յօլա տանէ* (ՀԺՀ, VII, 385):

ԱԴԸՐԷՍ - *տեմ* ԱԴՐԷՍ:

ԱԴԻԲՈՒԴԻ - *տեմ* ՀԱԴԻԲՈՒԴԻ:

ԱԴԻԿԱԼՕՆ - *տեմ* ԱԴԷԿԱԼՕՆ:

ԱԴՅԱԼ *(ռուս. одеяло)* - *գ.* Ծածկոց, որ գործածվում է վերմակի փոխարեն, ինչպես նաեւ անկողինը ծածկելու համար: *Պարանց ա ըղնում, ադյալը շօռ օնում, յանի քի քօն իլանծ ա* (Զ):

ԱԴՎԱԿԱԴ/ԱԴՎԱԿԱՏ/ԱՏՎԱԿԱՏ *(ռուս. адвокат, լատ. aduocatus)* - *գ.* Փաստաբան: *Ադվակադ ը՞ս, խըրէգ հըրցակօխ ըրա լի՞* (Բ):

ԱԴՎԱԿԱՏ - *տեմ* ԱԴՎԱԿԱԴ:

ԱԴՐԷՍ - *տեմ* ԱՆԴՐԷՍ:

ԱՆԴՐԷՍ/ԱԴՐԷՍ/ԱԴԸՐԷՍ *(ռուս. адрес, ֆր. adresse)* - *գ.* 1. Նամակի, ծանրոցի եւ այլ բաների առաքման տեղը: *Նամակը էտ անդրէսավը ղարկում ա* (Բ): 2. Մեկի բնակության տեղը: *Տըղան ուրանն ադրէսը տամ ա, էրկու օրանը յէտը ախճիգը պիրում ըն* (ՀԺՀ, V, 643):

- Անդրէսը կուրցընէլ - Շփոթվել, մոլորվել, ինչ անելը չիմանալ: *Անդրէսըտ կուրցըրալ ը՞ս, էտ խէ կօրծ չը՞ս անում* (Բ):

ԱԴՈՒՔ - *տեմ* ԱՋԿԱՆԸՍ: *Պառավըն ասում ա.- Բա՛լա, ընդրրա վէ՛չ անումըն ըմ գանդում, վէ՛չ ադուքը* (Զ):

ԱՋԱԴ/ԱՋԱՏ *(գրբ. ազատ)* - *ած.* 1. Անկախ, ինքնիշխան, ուրիշից կախում չունեցող: *Ազադ մարթ ա, հինչը օգում ա, անում ա* (Բ): 2. Ընդարձակ, լայնարձակ: *Ազադ հանդէր ա, ազադ ծօրէր ա, լըհա տըղա յըս՝ լէն ու բօլ ապրէ* (Զ): 3. Առանց հսկողության թողնված: *Հէյվանը ազադ պէց թօղէ. վէ՛չ կանլ կա, վէ՛չ կօղ* (Բ): *Քընվանէն տարը տահանց պանց ա թօղում, վար ըտէղ ազատ ապրէն...* (ՆԼՂԺԲ, 83): 4. Օրենքով թույլատրված, չարգելված: *Միհէնգ սավէտ չի կա. ազադ առըտօր ընք անըմ* (Բ): 5. Պարտադիր զբաղմունքներից զերծ, աշխատանքով չզբաղված: *Մինչը՞վ քըսօր ըմ կօրծի, քըսօրա յը՞տ ազադ ըմ* (Բ): 6. Դատարկ: *Էնչանք արաղ ա քաշալ, ազադ աման չօնէ, թա ածէ* (Բ): 7. Չգրավված, չզբաղեցրած: *Մը՞ծը ասմա.- Մյա, ազադ կուրծատը՞ղ չօնիմ, թա չէ թօռնանըտ յօր կօնիմ* (Զ): 8. Սիրած կամ նշանած չունեցող: *Շէնին ըխճըկէքը լօխ էն ըն ազադ. ծգծղ չի կա* (Զ): 9. Անկաշկանդ, համարձակ: *Ազադ խօսում ա, վէ՛չ ախ օնէ, վէ՛չ վախ* (Բ): 10. *մ.* Անարգել, ազատորեն: *Էտ կանէտին հըրամմայըմ ա, վէր ցըմաքէ, վէր ինքը ազադ անց կէնա* (ՀԺՀ, V, 459):

- Ազադ անել *(գրբ. ազատ առնեմ)* - *տեմ* ԸՋԱԴԷԼ:

- Ազադ նանփանս քաշիլ - Հոգսերից, կաշկանդված վիճակից ազատվել, հանգստանալ: *Խօխէնքը փըսակալ ա, անջախ-անջախ ազադ նանփանս ա քաշանում* (Բ):

ԱՋԱԴԼԱՄԻՇ *(թրք. azadlama (ազատատագրյալ, արտոնագիր)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ազադլամիշ անել - *տեմ* ԸՋԱԴԷԼ:

- Ազադլամիշ ինիլ - *տեմ* ԸՋԱԴՎԷԼ:

ԱՆՋԱԼՈՒ - *տեմ* ԱՆՋԱԼՈՒ-ՄԱՆՋԱԼՈՒ:

ԱՆՋԱԼՈՒ-ՄԱՆՋԱԼՈՒ/ԱԴԱԼՈՒ-ՄԱՆՋԱԼՈՒ - *ած.* 1. Տեղը տեղին, համով-հոտով, հաճելի: *Էտ կընէգ՝ընտ խէ լ՝ավ անզանլու-մանզանլու խուրիգ՝նէ յար իփիս* (Բ): 2. Աշխույժ, հետաքրքիր, տարօրինակ: *Անզանլու-մանզանլու մարթ ա, սաղ օրը էն ա հընգէրուսցը նըհը՞տ ք՝ը՞փ ընէս* (Զ):

ԱՆՋԱՆ *(արաբ. ezan)* - *գ.* 1. Մահմեդականների մոտ մոլլայի՝ աղոթքի հրավիրելու կանչը: *Անզանը ըսքըսից, թօրքէրը վազ տուվէն մէչիդը* (Զ): 2. *փխբ.* Երկար ու ձանձրալի խոսք, զրույց: *Էլիա անզանը ըսքըսից, տընըցուց զանիլանքուշ ըրավ* (Բ):

ԱՋԱՌ(Լ)ԱՄԻՇ - *տեմ* ԱՋԱՌՄԻՇ:

ԱՋԱՌՄԻՇ/ԱՋԱՌ(Լ)ԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ազառմիշ ինիլ - *տեմ* ՀԻՎԸՆԴԱՆԱԼ: *Յէտնան մարը ազառամիշ ա ընանում, մը՞ռնում* (ՀԺՀ, V, 383):

ԱՋԱՌՈՒ *(թրք. azarli)* - *տեմ* ՀԻՎԱՆԴ: *... Ծէռքը տընանում ա ճըկատէն, վար գըվանքիս ազառու յա...* (ՀԺՀ, V, 442):

ԱՋԱՏ - *տեմ* ԱՋԱԴ:

ԱՋԱՐ *(պրս. azar (վիշտ, նեղություն), թրք. azar (վիրավորանք)* - *գ.* Համաճարակ: *Ազարը հավէրը փըրթից* (Բ):

- Ազար ըղնէլ - Համաճարակը տարածվել: *Շէնին հըվէրէն մաչը վէր ազար ընգավ, էլ պըրծումը չի կա* (Բ):

- Ազարը պըկան կէնալ - *տեմ* Ըզարան ըղնէլ:

- Ազարը տանէլ - Համաճարակից սատկել: *Սաղ օխտը հավ ա իլանլ, չօրքը հընդանուշկա, էն էլ ազարըն ա տարալ* (Զ):

- Ազարը փըռնել - *տեմ* Ըզարան ըղնէլ:

- Ըզարան ըղնէլ - Համաճարակով հիվանդանալ: *Ըզարան ընգած հավը ծու չածէլ* (Զ):

ԱՋԱՐ-ԲԷՋԱՆՐ *(պրս. azar (վիշտ, նեղություն) + bezari (անիծված, նզովված)* - *գ.* Համաճարակ, ցավ, փորձանք, աղետ: *...Իլանծ-չիլանծը պըլօկում ին, ազար-բէզանը սաղ-սալամաթ մարթօց անավ ըքցըմ...* (ՋՏ, Ա, 227):

ԱՋԱՐՏ *(ռուս. азарт, ֆր. hasazd)* - *գ.* Անզուսպ կիրք, մոլուցք, մոլեգնություն: *Կարտէ տալը ազարտ ա, ընգալ ա մէր ջըհիլնէրէն մաչը, էլ տուս չի կամ* (Բ):

- Ազարտ ըղնէլ - Կրքոտվել, մոլուցքի պահին ինքնամոռացության մեջ ընկնել: *Ազարտ ընգած սաղ քըշէրը կարտէ յա տամ, սաղ փուլէրը տանէլ տամ* (Զ):

ԱՋԱՓ - *տեմ* ԱՆՋԱՓ:

ԱՆՋԱՓ/ԱՋԱՓ *(արաբ., պրս. azab)* - 1. *ած.* Չամուսնացած, ամուրի: *Էս դանրվիշը ըսէս ա.- Կարմունջը վէր շինիս, մին անզանփ ախճիգ՝ կըտընիս պատըմը, հէմնիս, վէր պարան չի կամ* (ՀԺՀ, V, 588): 2. *գ.* Չամուսնացած չափահաս տղա կամ աղջիկ: *Կարունքը վէր կամ ա, ըզըփնէրէն էլ տանը պահվում չի* (Զ): 3. *տեմ* ՄԱԿԱՌ:

- Անզանփը ըզանփէն հախ ա, անզանփը ըրփըվէրուն նըհախ ա - Մարդիկ իրար համապատասխանելու համար պետք է ունենան նույն կարգավիճակը:

- Անզանփ հախկ - Չամուսնացած եղբայրների՝ տան բաժանքի դեպքում ստացած անկողնային սպիտակեղեն: *Ամմէն մինը ուրանն անզանփ հախկը յօր ա ունէս, ղըրաղ կընաս* (Զ):

- Անզանփ վը՞րցակ - Անփորձ, անմեղունակ, չհասունացած տղա: *Իզէն հանլանանզանփ վը՞րցակ ա, կարել չի հօրը կօրծը անէ* (Բ):

ԱՋԲԷՍՏ *(ռուս. асбест, հուն. asbestos)* - *գ.* Հրակայուն եւ թթվադիմացկուն հանքատեսակ: *Պօլէն տակավը ազբէստ ա մը՞կնում, վէր ցօրտ չինի* (Բ):

ԱՋԳ - *տեմ* ԱՋԿ:

ԱԶԳԱԿԱՆ - *տեմ* ԸԶԿԱԿԱՆ:

ԱԶԳԱՆԴԱՆ - *տեմ* ԱԶԿԱՆԴԱՆ:

ԱԶԳԱՆԸՄ - *տեմ* ԱԶԿԱՆԸՄ:

ԱԶԳԱՍԷՐ - *տեմ* ԸԶԿԱՍԷՐ:

ԱԶԳԻՀ *(ռուս. Азерб. гос. издат.)* - *հպվ., գ.* Գրախանութ: *Հանդրձութա ազգ՝ի-զը էն ա խօռըն ըխպիրին քըշտէն* (Բ):

ԱԶԳՈՒԹՈՒՆ - *տեմ* ԱԶԿՈՒԹՈՒՆ:

ԱԶՈՂՎԷԼ - *չբ.* Վշտանալ, տխրել, հուզվել: *Էս խօսկը վը՝ր ասում ա, նազի-րը մըխըրէ ազդըվում ա* (ՆԼՈԺԲ, 63):

ԱԶԸՐՅԷԼ - *տեմ* ԱԶՐԱՀԻԼ:

ԱԶԻ/ՀԱՍԻ - *գ.* 1. *տեմ* ՀԸՐԱՔՈՒՐ: 2. Մայրիկ, մայր: *Ազին ալլէր ա մաղալ, Տափը սիպտըկցըրալ* (ԱՀ, 25): 3. Տարեց կանանց դիմելու կոչական բառ: *Ազի, էս հըղէն ըշտը՝ղ ա՞ տընէս* (Զ):

- Ազուն քարը - Երդման բանաձեւ: *Ազուն քարը, թա սօտ ասիմ* (Բ):

ԱԶԻՋ *(պրս., արաբ., թրք. aziz)* - *ած.* 1. Սիրելի, թանկագին: *Ազիզ հընգէրը, մին ա, ախպօրը տը՝ղը տալ չի* (Զ): 2. Տոնական, նվիրական: *Ամմէն հինչին լ՝ավը կըպահին ազիզ օրվա հը՝տէ* (Զ):

- Ազիզ ալրը՝վը - Որեւէ բանի ճշտությունը հաստատող երդման բանաձեւ: *Պառավը թա.- Մըդարէս ազիզ ալրը՝վը, յը՝ս էտ պէնան սը՝տ չըմ* (Զ):

- Ազիզ պահէլ - Մեծ խնամքով պահել, փայփայել: *Էտ հարթնը ըսկէսվօրը ազիզ պահում ա, տանում վը՝ղէն թափ-շուր անում* (Բ):

ԱԶԻՋ-ԲԻՋԻՋ/ԱԶԻՋ-ՊԻՋԻՋ - 1. *ած.* Անչափ սիրելի, թանկագին: *Մարը ասմա.- Հինչու իլալ ա, իլալ ա, իմ ազիզ-բի-զիզ խօխօնցըս կըլխէն դուրբան* (Բ): 2. *մ.* Փառավոր, շուքով: *Հառհնէրը հունցը վէր կարքըն ա, ազիզ-պիզիզ յօր ըն օ-նում, տանում թաղում...* (ՀԺՀ, VII, 290):

ԱԶԻՋ-ՊԻՋԻՋ - *տեմ* ԱԶԻՋ-ԲԻՋԻՋ:

ԱԶԻՅԱԹ - *տեմ* ԱԶԻՅԱԹ:

ԱԶԻՅԱԹ/ԱԶԻՅԱԹ *(արաբ. eziyyet)* - Տանջանք, չարչարանք: *Սաղ գ՝անքըմը Ալիսանը ազիյաթա կըման պէն չի տը՝-սալ* (Բ):

- Ազիյաթ քաշիլ - Տանջվել, չարչարվել: *Քըշէր-ցիրը՝կ ազիյաթ քըշիլալ էտ յիթիմնուն պըհէս ա, մընցընէս* (Զ):

ԱԶԿ/ԱԶԳ *(գրբ. ազգ)* - *գ.* 1. Ազգ, ժողովուրդ: *Հայ ազկը դարդէր շատ ա տը՝-սալ, անջախ-անջախ մին լիս լիսասցավ* (Բ): 2. Տոհմ, ցեղ, գերդաստան: *Էս ազգէն աթալարը քօհնա վըխտէն օրհուշ տը՝ղա փախալ ըն, յը՝կալ Մէլիք՝ Սաջումէն կօշ-տը* (ԱԱ, 78):

ԱԶԿԱԿԱՆ - *տեմ* ԸԶԿԱԿԱՆ:

ԱԶԿԱՆԴԱՆ/ԱԶԳԱՆԴԱՆ - *տեմ* ԱԶԿ-ԾՈՒՊ:

ԱԶԿԱՆԸՄ/ԱԶԳԱՆԸՄ - *գ.* Ազգանուն՝ քաղաքացու ժառանգական, ընտանեկան անունը՝ ի տարբերություն անձնանվան: *Ազկանըմը կօգի Ավաքյան ա, ամմա ընդրրա լօխ ասում ըն՝ Դօրհունց Մանրդի* (Բ):

ԱԶԿԱՍԷՐ - *տեմ* ԸԶԿԱՍԷՐ:

ԱԶԿ-ԱՎԼԱԴ - *տեմ* ԱԶԿ-ԾՈՒՊ:

ԱԶԿ-ԾՈՒՊ - *գ.* Ամբողջ գերդաստանը, ազգատոհմը, ազգականները: *...Ք՝իս ա հուրան ազկը-ծուպը վըհրքէս, կ՝աս, ըստը՝ղ շէն քըցիս* (ԱԱ, 18):

ԱԶԿՈՒԹՈՒՆ/ԱԶԳՈՒԹՈՒՆ - *գ. տեմ* ԱԶԿ (2): *Էտ ըխճըկօրանցան Գ՝օզալը մարթու վա ք՝իս մին կիճի ազգութհուն, ը-տըրանց ազգըն էլ տըռաս ա Գ՝ուզալանց* (ԱԱ, 20):

ԱԶԿՈՒՏԱԿ - *տեմ* ԱԶԿ-ԾՈՒՊ:

ԱԶՂՈՒՆ *(թրք. azgin)* - *ած.* 1. Կատաղի, մոլի: *Ազղուն շանը անա կ՝հալ չի պըրծընէլ* (Զ): 2. *փխբ.* Քաջ, կտրիճ: *Էն-քան կուռնումը հինում ա, էնքան ազղուն ա հինում, վէր անումը տինում ըն Չալանբի* (ԱԱ, 39):

ԱԶՄԻԾ *(թրք. azmis (կատաղած)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ազմիշ անել - *տեմ* ՃԸՄՕՌԷԼ: *...Վէչ մաշինէ տէսի, վէչ տըրօյկէք, վէր դրխ-դրխկալի ք՝ինըմ ըն, անգուճնէտ քըռըց-նըմ, յա շօռ կ՝ալիս մինին ծէռքը, մինին վէնանը, մինին ք՝ալլան ազմիշ անըմ...* (ՋՏ, Բ, 5):

ԱԶՅԱԹՍԿԻ *(ռուս. азиатский)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ազյաթսկի դոխտուր - *տեմ* ՀԱՔ՝ԻՄ: *...Ք՝ընում ա ըստէղան-ընդէղան ազ-յաթսկի դոխտուրի շօրէր ճարում, կ՝է-նում, կ՝ամ...* (ՀԱԲ, 15, 17):

ԱԶՆԱՎՈՒՐ *(թրք. aznavur, պրս. azna-var, վրաց. aznauri (ազնվական)* - 1. *ած.* Հաղթանդամ, հսկա, քաջ: *Օխտը ազնա-վուր տըղամարթ յըրա յըն տը՝ռնում, կարում չըն ըտըրա ծք՝ուն կ՝ան* (Զ): 2. *գ.* Երեւակայական էակ, քաջք: *Ասում ըն՝ էտ կարանումը ազնավուրնէ յըն կէ-նըմ, ըտըրա հը՝տէ յէլ, վախըմ ըն քըշէ-րը ըտըղավ աս կէնան* (Զ):

ԱԶՆԷՎ - *տեմ* ԱԶՆԷՎ:

ԱԶՆԷՎ/ԱԶՆԷՎ *(գրբ. ազնիւ)* - Անկեղծ, շիտակ, ազնիվ, արդար: *Մըհէնգ՝ ազնէվ մարթիք՝ը շատ խըրէգ՝ ըն* (Բ):

ԱԶՐԱՀԻԼ/ԱԶԸՐՅԷԼ/ԱԶՐԱՅԷԼ *(արաբ., պրս., թրք. azzail, եբր. azazel (չար ոգի)* - 1. *գ.* Ըստ հին հավատալիքների՝ հոգեառ հրեշտակ: *Վէր ազրահիլը պը-կէտ չօքից, վէշ մին պէն օքութ չի, տը-նական ա* (Զ): 2. *ած. փխբ.* Կտրիճ, ճար-պիկ, արագաշարժ: *Ազրահիլ տըղըմար-թին ծը՝ռքան կօրծ չի պըրծընէլ* (Զ):

- Ազրահիլ կըտըրէլ - Առույգանալ, ա-րագաշարժ դառնալ: *Կ՝արունքը յը՝կավ, շէնին էշէրը ազրահիլ կըտըրը՝ցէն* (Բ):

ԱԶՐԱՅԷԼ - *տեմ* ԱԶՐԱՀԻԼ:

ԱԶՈՒ *(թրք. azi (հիմնական ատամ)* - *գ.* Սեղանատամ: *Պիրանումը կըռէք՝ չի կա. մին ազու վա մընացալ* (Զ):

- Ազուն տհուս կ՝ալ - Ծերանալ: *Ազուն տհուս ա յը՝կալ, էլ կարում չի առաչվա մը-նան կօրծ անէ* (Զ):

ԱԶՕՏ *(ռուս. азот, հուն. azoos)* - *գ.* 1. Քիմիական տարր, անգույն, անհոտ, անհամ գազ, բորակածին: *Կըտըրվէ քը-ղաքէն օթը, սաղ ազօտ ա* (Բ): 2. Պա-ռարտանյութի տեսակ: *Ազօտը շաղ տը-վավ, ճիրից, բոստանը մին շէփտումը խըրխըմնից* (Բ):

- Ազօտը պիցըրանալ - Օրգանիզ-մում ազոտի պարունակությունն ավելա-նալ, որ մահացու է: *Ազօտը պիցըրա-ցավ, մը՝ռավ* (Բ):

ԱԹԱ-ԱՆԱ *(թրք. ata-ana (ծնողներ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Աթամ-անամ սիք՝ալրանմ - *տեմ* Վէր Աստուծ էլ քըշանա: *Տըղան ասմա.- Ա-թամ-անամ սիք՝ալրանմ, յը՝ս բիդի էտ ըխ-ճըկանըտ ծգիմ* (Զ):

ԱԹԱԳ՝ - *տեմ* ԱԹԱԳ՝:

ԱԹԱԳ՝/ԱԹԱԳ՝ *(թրք. etek)* - *տեմ* ՓԷՇԿ:

ԱԹԱ(ԴԱՆ)-ԱՆԱ(ԴԱՆ) - *տեմ* ԱԹԱ-(ԴԱՆ)-ԲԱԲԱ(ԴԱՆ):

ԱԹԱ(ԴԱՆ)-ԲԱԲԱ(ԴԱՆ) *(թրք. ata-babadan)* - *մ.* Հնուց, պապական ժամա-նակներից: *Աթադան-բաբադան հըսալ ա մը՝գ, վէր յը՝խծէն շիհիլիս վախտը մին դէր ք՝ինամ ա ծըմակը, տը՝սնում մին մը՝ծ արչ՝ մին զը՝ռ փօշ վը՝ննումը...* (ԱԱ, 54):

ԱԹԱԼԱՐ *(թրք. atalar)*- *տեմ* ԱՊՈՒ-ՊԱՊ: *Աթալարը ասալ ա.- Էծը էծին հէտէ լանվ ա, քանց մին սհուրհու վէխճարը* (ՀԺՀ, V, 308):

- Աթալար բիր դէյիր - Տղամարդու խոսքը, ասածը պետք է հաստատ լինի: *Օշափը խընթրում ա, թա՝ մին էլ թըխի, թաքավէրին պուճուր տըղան ասում ա. - Աթալար բիր դէյիր* (ՀԺՀ, VI, 131):

ԱԹԱՄ - *տեմ* ԱԴԱՄ:

ԱԹԱԾ - *տեմ* ԹԱԹԱԾ:

ԱԹԱՋԱՆ - Գործածվում է կապակ-ցության մեջ:

- Աթաջան կըտըրէլ - Քնել: *Տըղա-մարթը էն ա, վէր փուլ ըշխադէ, վէչ թա սաղ օրը աթաջան կըտըրէ* (Զ):

ԱԹԱՐ - Գործածվում է *խաբար-աթար չի կա* կապակցության մեջ:

ԱԹԷԹ - *տեմ* ԱԹԷԹ:

ԱԹԷԹ/ԱԹԷԹ - 1. *գ.* Կատվին, շանը տրվող ծաղրական անուն: *Էրկու ալթէթ*

ա պահում, էն էլ քօռ (Բ): *ծ.* 2. Կատվին, շանը քշելու ձայն: *Ա՛թէ՛թ, կօրէր ըստը-ղան* (Բ): 3. Ասում են՝ որպես պատաս-խան փռշտացողին: *Հա՛բին սա՛բիր ա կ՚ամ, Իսակը ասմա՝ ա՛թէ՛թ* (Ձ):

- Ա՛թէթ ասէլ, ղըրաղ կէնալ - Մի կողմ քաշվել, որեւէ բանի չխառնվել: *Ըտըրա խասյաթըն ա. վէր մին պէն ա ինո՛ւմ, ին-ք՚ը ա՛թէթ ա ասում, ղըրաղ կէնում* (Ձ):

- Ա՛թէթը յըրան մօրթէլ - Խիստ ժլատ լինել: *Ընդըրանա կարէլ չըս պէն պուք տաս, իզէն հօրը բադարաք՚ավըն էլ ա՛թէթը յըրան կըմօրթէ* (Ձ):

ԱԹԸՐՄԱ/ԱՏՏՈՒՐՄԱ *(թրք. aturma (ցատկում)* - *գ.* Ժողովրդական խաղատե-սակ, երբ մասնակիցները հերթականու-թյամբ կռանում են եւ ցատկում միմյանց վրայով: *Ղարաբաղա շինըթկընումը ա-թուրման տական էլ ա՛նդա՛թ ա իլա՛լ* (Բ):

ԱԹԿԱԶ/ԱՏԿԱԶ *(ռուս. отказ)* - *գ.* Մերժում, հրաժարում: *Ք՚ընա՛մ ըն ճը-ղըցպանէն կօշտը, թաքավէրէն ատկա-զըն ասում* (ՀԺՀ, V, 355):

- Աթկազ անէլ - Մերժել: *Թաքավէրը օգըմ ար փըսակվէ էտ ըխճըկանը նը-հէտ, ամմա ախճիգ՚ը աթկազ ար անըմ* (ՀԺՀ, V, 104):

- Աթկազ ինիլ - Հրաժարվել: *Էտ օր-վանից Թարխանը ո՛ւրա՛ն փայ վը՛ղան աթկազ ա ինո՛ւմ* (Ձ):

- Աթկազ կաղնէլ/վը՛ղնը կէնալ - *տե՛ս* Աթկազ անէլ: 2. *տե՛ս* Աթկազ ինիլ:

- Աթկազ տը՛ռնալ - Մերժվել: *Տը-րանավ կօրծը աթկազ ա տը՛ռնում* (ՀԺՀ, V, 646):

ԱԹԿԸՐԻԹԿԱ/ԱՏԿԸՐԻՏԿԱ *(ռուս. открытка)* - 1. *գ.* Բացիկ: *Պըռազնիգ՚-նավը էզզա՛նա՛ն աթկըրիթկա յըք իլա՛լ ըստընաս* (Բ): 2. *ածական.* Գեղեցիկ: *Մին աթկըրիթկա ախճիգ՚ ա ծզա՛լ* (Բ):

ԱԹԿՕՍ/ԱՏԿՕՍ *(ռուս. откос)* - *ած.* Դեպի մի կողմ հակված, թեք, շեղ, ծռած: *Աթկօս տը՛ղ ա, սա՛յաղ կաց* (Բ):

- Աթկօս տալ - Մի կողմի վրա թեքել, շեղել, ծռել: *Կըտօրը մին թիթը՛վ աթկօս ա տըվալ, վէր թօռը, ծո՛ւնը կ՚ա, ճիրէրը գ՚օլ չի տա* (Բ):

Ա՛ԹՈՒՆ - *գ.* Տղամարդու անուն:

- Ըթո՛ւնին ծո՛ւնը - Մարտ ամսի վեր-ջին տեղացող ձյուն: Ըստ ավանդու-թյան՝ Մարտունու շրջանի Հերհեր գյու-ղի բնակիչ Ա՛թունը մարտի 31-ին՝ մի արեւոտ օր, Ստեփանակերտից ոտքով ճանապարհվել է գյուղ, սակայն ճանա-պարհին մնացել է հանկարծահաս տե-ղացող առատ ձյան տակ եւ մահացել: *Էտ վը՛խտանց մինչէվ ըսօր էլ հիրհըրէ-ցէք՚ մա՛ղդի վէրչին կ՚ըվօղ ծո՛ւնին ա-սում ըն՝Ըթո՛ւնին ծո՛ւնը* (ԱԱ, 83):

ԱԹՈՒՌ *(գրբ. աթոռ)* - *գ.* Աթոռ՝ մեկ հոգու նստելու համար թիկնակով նս-տարան: *Տանը աթուռ էլ չի կա, թա նըս-տին* (Բ):

ԱԺՈՒՀ - *տե՛ս* ԱԺԼՀՀ:

ԱԺԻԼ/ԱՐԺԻԼ/ՅԷԺԻԼ *(գրբ. արժեմ, աժեմ)* - *չբ.* Արժել, արժենալ: *Սուղումուն դային խըմում ա, թա.- Ա՛ժի, լ՚ավ արաղ ա, չըրչըրմունքէտ ա՛ժի* (Բ):

ԱԺԼՀՀ/ԱԺՈՒՀ/ԸԺՈՒՀ *(պրս. azdaha (վիշապ)* - 1. *գ.* Անճոռնի մեծու-թյամբ հսկա: *Էս հէնգ՚ ա՛ժդա՛հէք՚ը մը-նամ ըն մա՛թա՛լ, ցըմաքված* (ՀԺՀ, V, 419): 2. *ած. փխբ.* Ուժեղ, ճարպիկ: *Էտ պըռավէտ էլ մին ա՛ժլա՛հա՛ տըղա յա ի-նո՛ւմ, էտ ուշափէն կօխում ա տակը, թա-կում, ըսպանում* (Ձ):

ԱԺՄՈՒՆՔ - *տե՛ս* ԱԺՄՈՒՆՔ:

ԱԺՄՈՒՆՔ/ԱԺՄՈՒՆՔ *(պրս. azz (գին, արժեք)* - 1. *տե՛ս* Կ՚ԻՆ: *Ծիյին ա՛ժմո՛ւնքը հինչա ա՞* (Բ): 2. *գ.* Արժանիք: *Էն հինչ ա՛ժ-մո՛ւնք օնէ, վէր ըտի հը՛տըն ըս ընգալ* (Բ):

ԱԼ[1] - *տե՛ս* ԱԼԱ[1]: *Ալ յը՛զնը, չա՛լ յը՛զնը, հիշքան պէռնիմ՝ տա՛ր յը՛զնը* (ԱՀ, 25):

ԱԼ[2] - *տե՛ս* ԱԼԱ[2]:

ԱԼ[3] - *տե՛ս* ԷԼ:

ԱԼԱ[1]/ԱԼ[1] *(պրս., թրք. al (վառ կար-միր), թրք. ala (երփներանգ)* - 1. *ած.* Մուգ կարմիր: *Ուշափէն մարը ալա յէզ-նը կըմօրթէ, իփի, հըզըրէ, տըղէն յէշի* (ՆԱԲ, 25): 2. Երփներանգ, բազմագույն: *Ծաղէգ՚ ըմ քաղալ, ալ ա, Ղալան վար-թավ լըցվալ ա* (ԼՂԲ, 16):

ԱԼԱ[2]/ԱԼԼԷ/ԱԼ[2] - *տե՛ս* ՊԸԼԼՕՐ (1):

- Ալա յէ՛ - Հանդիմանական բացա-կանչություն, որ ուղեկցվում է չանչ անե-լով: *Մարը ասմա.- Ալա յէ՛, ք՚ը՛զ վէչ բիդի պէրած* (Ձ):

ԱԼԱ[3]/ԱԼԱՂ - *գ.* Մոլախոտի տեսակ: *Սաղ հայաթը ալա յա* (Բ):

- Ալա անէլ - Քաղհանել, բանջարա-նոցը, հողամասը մոլախոտերից մաք-րել: *Հիրըվանէրը հըվըքվէցէն, բօստա-նը ալա ըրէն, տըվէն ո՛ւրա՛ն* (Բ):

- Ալան տալ - *տե՛ս* Ալա անէլ:

ԱԼԱԲԱԼԸՂ/ԸԼԸԲԱԼԸՂ *(թրք. alaba-lik)* - *տե՛ս* ԿԻՐՄԻՐԱԽԷԾ:

ԱԼԱԲԱԾ *(թրք. alabaş)* - *գ.* 1. Շան տեսակ: *Կ՚ո՛ւլը ալաբաշին քը՛ըշտէն հինչ ա՞* (Բ): 2. *փխբ.* Անզուսպ, կռվարար կին: *Էտ ալաբաշին ծը՛ռքէն խը՛ղճ մարթը օր ու իշը՛ղ չի տը՛սավ* (Ձ):

ԱԼԱԲԱՍՏԸՐ - *տե՛ս* ԱԼԻԲԱՍՏԸՐ:

ԱԼԱԲՈՒԼԱ/ԸԼԸԲԸԼԱ *(թրք. ala-bula)* - *ած.* 1. Խայտաբղետ: *Ըտըրան էլ ինո՛ւմ ա մին էշ, էրկու էծ, մին էլ վէց ալաբուլա հավ* (Ձ): 2. *փխբ.* Կասկածելի, տարօրի-նակ: *Ալաբուլա մարթին անա ամմէն հինչ ըսպըսէլի յա* (Ձ):

- Ալաբուլա անէլ - Գործը անորակ կատարել: *Ալաբուլա ընէլավ կօրծ չի դո՛ւզիլ* (Բ):

Ա՛ԼԱ՚ԳՉԻ - *տե՛ս* Ա՛ԼԱ՚ՔՉԻ:

ԱԼԱԳՅՈՒԼ *(թրք. alagül)* - *ած.* Շատ գեղեցիկ, չքնաղ: *Նամուսը կըտըրվէ ըն-ղըրա. ո՛ւրա՛ն ալագ՚ո՛ւլ կընգանը թօղալ ա, էն սըվըտըռածակ ըխճըկանը հէտը ընգալ* (Բ):

ԱԼԱԳՕԶ *(թրք. alagöz)* - *ած.* Մեծ-մեծ, գեղեցիկ աչքեր ունեցող: *Շօռ ըն կ՚ամ, տը՛էսնըմ ըն ըտէղ մին ալագ՚օ՛զ ըխճըկա պատկէր* (ՀԺՀ, V, 153):

ԱԼԱԹ/Ա՛ԼԱ՛Թ *(արաբ., թրք. alat (գոր-ծիք)* - *գ.* Արոր: *Տըրախտըրը ա՛նդա՛թ ըն-գավ, կ՚ո՛ւթա՛նը ա ալաթը օնչ վէր կօ-խիգ* (Ձ):

Ա՛ԼԱ՛Թ - *տե՛ս* ԱԼԱԹ:

Ա՛ԼԱ՛Լ - Գործածվում է կապակցու-թյան մեջ:

- Ըլա՛լին տալ - Քաղցից, ծարավու-թյունից տանջվել: *Հա՛ղը տըղէն քըցո՛ւմ ա կ՚ումը, թա.- Դէ ք՚ինի, իրը՛ք օր ը-լա՛լին տօ՛* (Բ):

Ա՛ԼԱ՛ԼՈՒ - *ած.* Վտանգավոր: *Ըշտը՛ղ ա՛լա՛լո՛ւ պէն ա ինո՛ւմ, Մակիչը ղըրաղ ա շօռ տամ* (Ձ):

Ա՛ԼԱ՛ԼՈՒՄ - *գ.* Աղմուկ-աղաղակ, իրա-րանցում: *Մը՛ծ ախպէրը յէշում ա տէս-նում, վը՛ր կընանօցը մաչին ա՛լա՛լո՛ւմ ա ընգալ, ո՛ւրո՛ւր կօշտ-կօշտ ըն անում, պէնը վախտէն չի ինում...* (ՀԺՀ, VI, 237):

ԱԼԱԽԱԹՈՒՆ - *տե՛ս* ԱՆԱԽԱԹՈՒՆ:

ԱԼԱԿ՚ԻՋ - *տե՛ս* ԸԼԸԿ՚ԷՋ:

ԱԼԱԿՈՒՇԿՈՒՇ/ԱԼԱԿՕՇԿՕՇ/ԱԼԱ-ԿՕՇԿՕՇ/ԸԼԸԿՈՒՇԿՈՒՇ/ԸԼԸԿՕՇ-ԿՕՇ/ԸԼԸԿՕՇԿՕՇ - 1. *գ.* Չղջիկ: *Ճարը կըտըրած՝ էտ թէվէրըտ էտ ջիմդա՛ք՚ա՛ն ա տուվալ, ալակուշկուշէն ըստը՛ղծալ, վէր համ դուշու վա նըման, համ մուկնու* (ԱԱ, 69): 2. *ածական.* Նիհար եւ տգեղ: *Էրկու ալակուշկուշ ախճիգ՚ օնէ, սաղ օ-րը էն ա, փափաղը վէր կալա՛ծ, թարիփ ընէս* (Ձ):

ԱԼԱԿՕՇԿՕՇ - *տե՛ս* ԱԼԱԿՈՒՇԿՈՒՇ:

ԱԼԱԿՕՇԿՕՇ - *տե՛ս* ԱԼԱԿՈՒՇԿՈՒՇ:

ԱԼԱՂ *(թրք. alağ)* - *տե՛ս* ԱԼԱ[3]:

ԱԼԱՄ - *տե՛ս* Ա՛ԼԱ՛Մ:

Ա՛ԼԱ՛Մ/ԱԼԱՄ *(արաբ., պրս. alam, թրք. alem)* - *գ.* Աշխարհ: *Ա՛լա՛մը շօռ կ՚աս, ըն-ղըրա մընանը կարէլ չըս քըթէնաս* (Ձ):

- Ա՛լա՛մ աշխարք - Ամբողջ աշխար-հը, երկրի բոլոր բնակիչները: *Ա՛լա՛մ աշ-խարքը վը՛ղնը կաղնած, հարայ ա կ՚ամ, թա թաքավէրը կ՚ամ ա վէրչի խօսկըն ա-սէ* (ՀԺՀ, VI, 187):

ԱԼԱՄԱԹ - *տե՛ս* Ա՛ԼԱ՛Մ՚Ա՛Թ:

ԱԼԱՄԱԹ/ԱԼԱՄԱԹ *(թրք. alāmet)* - *ած.* Արտակարգ, արտասովոր, չքնաղ: *Թաքուհին վէր տը՛սնում ա էս վը՛սկէ ծո՛ւկնը, էնքան դա՛շանգ՝, էնքան սո՛ր՝ուն, մին ա՛լամա՛թ պը՛ն, յոր ա օնըմ, վէր միշտ յէշի...* (ՀԺՀ, V, 78):

ԱԼԱՄԱՆԺՈՒՆԻ - *տե՛ս* ԱԼԱՄԱՆԺՈՒՐԻ:

ԱԼԱՄԱՆԺՈՒՐԻ/ԱԼԱՄԱՆԺՈՒՆԻ/ԱԼԱՄԱՆՋՈՒՆԻ - *ած.* Այլանդակ, տգեղ, անճոռնի: *Ք՝ինամ ա, տը՛սնում մին ալամանժուրի մարթ էս դա՛շանգ՝ ըխճըկանը քըշտէն նըստած...* (Ջ):

ԱԼԱՄԱՆՋՈՒՆԻ - *տե՛ս* ԱԼԱՄԱՆԺՈՒՐԻ:

ԱԼԱՆԳԱ *(հ.ե. *aleu-, al- (թափառել, մոլորվել)* - *տե՛ս* ԹԱՄԲԱԼ: *Լ՝ավ ա տը՛ղամարթը քօռ ինի, կանց ա՛լանգ՝ա* (Ջ):

- Ա՛լանգ՝ա կըտըրէլ - *տե՛ս* ԹԸՄԲԻԼԱՆԱԼ: *Ք՝ինամ ա տը՛սնըմ ո՛ւրան կընէգ՝ը թաքավէրին քըշտէն թըմբիլացած, ա՛լանգ՝ա կըտըրած* (Ջ):

ԱԼԱՆ-ԹԱԼԱՆ *(թրք. alan (գնորդ, հաճախորդ, առնող, տանող), պրս. talan (կողոպուտ)* - *գ.* 1. Ավարառություն, կողոպուտ: *Ալան-թալանը վէր ըսքըսում ա, էլ շօնը տարը ճընանչում չի* (Բ): 2. *փխբ.* Անտերություն, անիշխանություն, անկարգություն, թողտվություն: *Մըհէնգ՝ ալան-թալան ա, հու հինչը օգ՝ում ա, անում ա* (Բ):

ԱԼԱՇԱ - 1. *ած.* Կատաղի, վայրագ: *Էտ թաքավէրին էլ մին ալաշա ծի յա հինում, վէր վէշ մինը կարում չի փըռնէ* (Ջ): 2. *գ. փխբ.* Անամոթ, անպատկառ կին: *Էտ ալաշան էտ տըղէն կըլօխը հա՛լա շատ օյիննէ յա պիրլանկան* (Բ):

ԱԼԱՇԿԵՐՏ - *ած.* Տգեղ, այլանդակ: *Տատը ասմա. - Բա՛լա, էտ ալաշկ՝էրտ ախճիգ՝ըտ ըշտըղա յը՞ս օգանլ, մին սէրունը իլանլ չի՞...* (Ջ):

ԱԼԱՉԱԼՓ - *գ.* Ձյունախառն անձրեւ: *Հինչ ծո՛ւն, մին խըրէգ՝ ալաչալփ ա յը՛կալ* (Բ):

- Ալաչալփ անէլ - Ձյունախառն անձրեւ տեղալ: *Էս վէր մըհէնգ՝անց ալաչալփ ա անում, ծըմըռնապէնդ ա ընական* (Բ):

ԱԼԱՉՈՒԽ/ԱԼԱՉՈՒԿ/ԸԼԱՉՈՒԽ/ԸԼԱՉՈՒԿ *(թրք. alacik)* - *գ.* Թաղիքե վրան: *Մին օր, չօբանին ալաչուխումը նըստած, լըսըմ ա, վէր էրկու շօն հա՛չըմ ըն...* (ՀԺՀ, V, 220):

ԱԼԱՉՈՒԿ - *տե՛ս* ԱԼԱՉՈՒԽ:

ԱԼԱՋԱՂՈՒԾ - *տե՛ս* ԱՋՐԱՀԻԼ(2):

ԱԼԱՍԱՐ - *ած.* Գիժ, խենթ, տարօրինակ: *Հա՛ռը վէր ա՛լասա՛ր ինի, խօխան ընդըրանա հինչ բի՞դի սըվը՛ռէ* (Ջ):

ԱԼԱՎ *(պրս., թրք. alav)* - *գ.* Բոց: *Ալավը լափ պըցըրանում ա, Սարումը կարում չի պապուն տը՛սնա...* (ՀԺՀ, V, 195):

- Ալավ անէ - Ինչ ուզում է լինի: *Ալավ անէ՝ մը՛ռնէ, դա՛ռդըս չի* (Բ):

- Ալավ անէլ - 1. Կրակ, խարույկ վառել: *Պիրում ա փա՛ղէրը տա՛ռսում, ալավ անում* (Բ): 2. Բոցավառվել, բոց արձակել: *Փիչը ալավ ըրավ, մագ՝էրը էրից* (Ջ):

- Ալավը փօրըն ըղնէլ/քըցիլ - *տե՛ս* Կըրակը ջանը ըղնէլ/քըցիլ:

- Ըլըվ-ալավ անէլ - 1. Բոցկլտալ, բոցեր արձակել: *Թութէ չօ՛ր փա՛ղը վէր նի տաս փիչը, ըլըվ-ալավ կանէ* (Բ): 2. *փխբ. տե՛ս* ՊԸՍՊԸՂԱԼ: *Ըտըրա հէտի էլ հէռու տը՛ղան ըլըվ-ալավ ա անըմ, յէշօղին աշկէրը ծըկծըկօտում* (ՀԺՀ, V, 42): 3. Թշերը կարմրել (գեղեցկությունից, ջերմությունից): *Էտ ախճիգ՝ը լ՝ըհա ըտի ըլըվ-ալավ ա անում* (Ջ):

ԱԼԱՎԷՐԴԻ *(թրք. allahverdi)* - *գ.* Խոսելուն, բաժակաճառ ասելուն կամ որեւէ այլ գործի մասնակից դարձնելու հրավեր, հերթ: *Մանաս, ալավէրդին քունըն ա, պըղըրաստըվէ, վէր կէնաց ասիս* (Բ):

ԱԼԱՎԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ալավլամիշ անէլ - *տե՛ս* Ալավ անէլ(1): *Պիրած խօտը կ՝ո՛ւտում ա, ալավլամիշ անում* (Ջ):

- Ալավլամիշ ինիլ - *տե՛ս* Ալավ անէլ(2): *Անդո՛ւնդ, հինչ անդո՛ւնդ, մին յէքքա ծօվ ա ալավլամիշ իլած, հինչ մէղավէր կա՝ մէչըն ածած, էրվըմ ըն...* (ՋՏ, Բ, 14):

ԱԼԱՓԸՌԱՆԳԻ *(թրք. alafranga (եվրոպականացած), իտալ. allafranca (ըստ ֆրանսիականի)* - *ած.* Ոչ սովորական՝ ֆրանսիացու, եվրոպացու ձեւով, տարօրինակ: *Էտ ք՝ա՛սիբըն ասըմ ա.- Պա հո՛, էտ հինչ ա՛լափըռանգ՝ի պէնէր ը՞ս անը՛մ* (ՀԺՀ, V, 233):

ԱԼԱՔ՝ԷՇ(Ի) *(թրք. alakeş)* - *տե՛ս* Ք՝ԱՐԹՄԱ: *Ալաք՝էշը յէր ա օնում, նի մընում բօստանը* (Բ):

ԱԼԱՔ՝ՉԻ/ԱԼԱԳ՝ՉԻ *(թրք. elekçi)* - *գ., ած.* 1. Մաղ կապող (սովորաբար գնչու): *Մին փոթ ցօրէն տըվավ ա՛լաք՝չուն, մին լ՝ավ մաղ կապէլ տըվավ* (Ջ): 2. *փխբ.* Թափառաշրջիկ, մուրացկան, աներես: *Ինձ նըման մարալ գ՝ա՛զալին մին ա՛լաք՝չու հօ՞ր տըվին* (ԼՂԲ, 220):

ԱԼԲԱՀԱԼ(ՄԸՍ) - *տե՛ս* ԻԼԲԻՀԱԼ(ՄԸՍ):

ԱԼԲՈՒԽԱՐ *(թրք. albuxara)* - *գ.* Սեւ, դեղնագույն, կարմրագույն եւ երկարավուն սալորի տեսակ: *Խըծըպէրթա ալբուխարը ճօկ պէն ա* (Բ):

ԱԼԲՈՒԽԱՐԻ - *գ.* Ալբուխար սալորի ծառը: *Ալբուխարին շըլօրո՛ւն յըրա լ՝ավ ջալաղ ա փըռնում* (Ջ):

ԱԼԷԳ՝ - *գ.* Թերություն, վատ արարք, արատ: *Հարթանը վէր ալէգ՝ չինի, ըսկէսուրը էլիա իրը՛սը նը ը՛ր կըխօսէ* (Ջ):

- Ալէգ՝ անէլ - Անկարգություն, վատ արարք թույլ տալ: *Խօխան ալէգ՝ ըրավ, մարը թակից* (Բ):

ԱԼԷԼՈՒ(ՅԱ) *(գրբ. ալէլու)* - *գ.* Փառաբանական օրհներգություն, որ սկսվում է «ալէլու» բառով: *Ալէլու, Ալէլու, էծը տանիմ, վը՛խսարը պիրիմ...* (Ջ):

ԱԼԷՐ - *տե՛ս* Ա՛ԼԼԷՐ:

ԱԼԸԾ-ՎԷՐԻԾ - *տե՛ս* ԱԼԻԾ-ՎԷՐԻԾ:

ԱԼԸՓՎԷՐԱՋԱ՛Ք՝ - *տե՛ս* Ք՝ԱՐ: *Ախըր մէգ հինչ ալըփվէրաջա՛ք՝ օնինք՝, վէր զուռնին փըչինք՝, չավ անինք՝...* (ՋՏ, Ա, 177):

ԱԼԻ - *տե՛ս* ԼԻ:

Ա՛ԼԻ - *գ.* Անձնանուն:

- Ա՛լո՛ւն թօրը/կ՝ը՛փը - Սուր, ընտիր, դիմացկուն (գործիք, առարկա): *Ա՛լո՛ւն թօրըն ա, կօտըրէլ չի* (Ջ):

ԱԼԻԲԱՍՏԸՐ/ԱԼԱԲԱՍՏԸՐ *(գրբ. ալապաստր)* - *գ.* Սպիտակ, թափանցիկ գաջաքար, որից անոթներ են պատրաստում: *Ալիբաստըրը ցը՛խ ըրավ, կըրասէն կօտըրած տը՛ղը կըրկատից* (Բ):

ԱԼԻԿՈՒՆԴԷ - *տե՛ս* ՉԸԼԸՆԳԻ: *Միհէնգ՝ վէ՛չ ալիկունդէ յըն խաղ անում, վէ՛չ քըսկըրէնք՝ի* (Բ):

ԱԼԻՄԷՆՏ *(ռուս. алименты, լատ. alimentum)* - *գ.* Ապրուստի միջոց, որ ըստ օրենքի տրվում է ընտանիքի՝ առանձին ապրող անաշխատունակ անդամներին խնամակալների կողմից: *Ըշխըդածէն կէսը ալիմէնտ ա տամ* (Ջ):

Ա՛ԼԻ-ՄՕՍԻ - *գ.* Ծանոթ-անծանոթ: *Ա՛լի-Մօսի լօխ հըվաքվում ըն, կ՝ամ ըտըրանց յըրան կըռէվ* (Ջ):

- Ա՛լի-Մօսի անէլ - Չարչարվել, ապրուստի միջոցներ հայթհայթելու համար ջանք չխնայել, այս ու այն կողմ ընկնել: *Ա՛լի-Մօսի յա անում, տօնը պահում* (Բ):

- Ա՛լի-Մօսի չինիլ - Համարձակ խոսել, գործել՝ առանց հանգամանքները հաշվի առնելու: *Պըլը-Պուդուն Ա՛լի-Մօսի չօնար, հինչը օգ՝ում ար, ասում ար* (Ջ):

ԱԼԻԾ-ՎԷՐԻԾ/ԱԼԸԾ-ՎԷՐԻԾ *(թրք. alişveriş)* - *գ.* Առեւտուր, առուծախ: *Էն արտ անօղ չի, ընդըրա փէշակը ալիշ-վէրիշը ա* (Բ):

- Ալիշ-վէրիշ անէլ - 1. Առնէլ-ծախել, առուծախով զբաղվել: *Հա՛լա՛ խօխա վըխտանց ա ալիշ-վէրիշ անում, վէր ընդըրա փուլ չինի, պա հո՛ւր բի՞դի ինի* (Ջ): 2. Ջերմ հարաբերությունների մեջ լինել: *Էտ կը-*

նէգ՛ը նախագէն նըհը՛տ դոստ ար, ընդ-ըրա նըհը՛տ ալիշ-վէրիշ ար անում (Բ):

ԱԼԻ-ՎԱԼԻ - *տե՛ս* ԱԼԻ-ՄՕՍԻ:

ԱԼԻՐ - *տե՛ս* ԱԼԼԷՐ:

ԱԼԻՓ - *տե՛ս* ԱԼԻՓ:

ԱԼԻՓ/ԱԼԻՓ *(ռուս. олифы, հուն. aleipha)* - *գ.* Քսուքների համար գործածվող եփված ձեթ՝ օլիֆ: *Պոլէրը ալիփ քը-սից, հանցու կըրասկան հէրիք՛ անէ* (Բ):

ԱԼԼԱ - *տե՛ս* ԷԼՅԱ:

ԱԼԼԱ - *տե՛ս* ԷԼՅԱ:

ԱԼԼԱԴ-ՍԱԼԼԱԴ - *տե՛ս* ԱԼԼԱԹ-ՍԱԼ-ԼԱԹ:

ԱԼԼԱԹ-ՍԱԼԼԱԹ/ԱԼԼԱԴ-ՍԱԼԼԱԴ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ալլաթ-սալլաթ ինիլ - Հրաժարվել, ձեռք քաշել: *Էրկունջի կընգանըն էլ ա տա՛ւս քըցո՛ւմ, նըստա ալլաթ-սալլաթ ի-նի՛ւմ* (Ձ):

ԱԼԼԱԽ-ՄԱԼԼԱԽ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ալլախ-մալլախ անէլ - Շարժել, օրորել: *Իստի աղվէսը ծէն ա տաս, հա՛ք՛ն ալլախ-մալլախ ընէլավ կըղնէս* (ԼՂԲ, 300):

ԱԼԼԱՀԱՆ(Ա) *(թրք. allahtan (բնածին, աստվածատուր)* - *ած.* 1. Աստծու տված, հեշտ ճարվող: *Ալլահան ժէնգ՛ալը էլ չի բաշիր ընէս, թա քաղէ, պիրի ժինգ՛ալավ հաց թըխէ, խոխէնք՛ը օտին* (Բ): 2. Թշվառ, խեղճ ու կրակ, աղքատ: *Ալլահան Ղազարին ախճիգ՛ը էլ մարթու ք՛ը՛ցավ, տու հալա տանը* (Բ):

ԱԼԼԱՀՅԷԹԱՐ - *ած.* Չքավոր, անկարող, անշնորհ: *Մին քաղաքըմ ապրըմ ար մին ք՛ասիբ մարթ, մին լոխճին աշ-կան ընգած, լոխճին քըշտին սըվիրէս տը՛ռած, ալլահյէթա՛ր, բէշ-բէթա՛ր մարթ* (ՀԺՀ, V, 232):

ԱԼԼԱՀՈՒՇ - *ած.* Մոռացկոտ: *Ալլա-հո՛ւշ մարթ ա, օրվա ըրածը էք՛սը մը-նան քըցո՛ւմ ա* (Բ):

ԱԼԼԱՂԱԴՕՆՈՒՄ - *տե՛ս* ԱԼԼԸՂԱ-ԴՕՆՈՒՄ:

ԱԼԼԱՄԱ - *տե՛ս* ԱԼԼԱՄԱ:

ԱԼԼԱՄԱ/ԱԼԼԱՄԱ/ԸԼԼԱՄԱ/ԸԼԼԱ-ՄԱ/ԻԼԼԱՄԱ *(թրք. allame (ամենագետ, մեծ գիտնական)* - *ած.* Հսկա, մեծ, վիթխարի: *Մին ալլամա՛ քար ա յոր ունէս, էտ օխծէն յըրա կ՛աս, ըսպընէս* (Բ):

ԱԼԼԱՄ-ՂԱԼԼԱՄՕԹՈՒՆ - *գ.* Խորամանկություն: *...Ղուլուղ անօղնէն, զինք՛ն նէն ալլամ-ղալլամօթունի տըված, հանց պէնէր ըն անըմ, վէր մարթ մընըմ ա շը-վարած* (ՋՏ, Բ, 119):

ԱԼԼԷ - *տե՛ս* ԱԼԱ[2]:

ԱԼԼԷՐ/ԱԼԷՐ/ԱԼԻՐ/ԱԼՅԷՐ/ԱՅԼԷՐ *(գրբ. ալիւր, ալեւր)* - *գ.* Ալյուր: *Մըհէնգ՛ ապրուստը բօլլուղ ա, էլ կ՛ա՛ռու ըլլէրա հաց թըխօղ չի կա* (Բ):

- Ալլէր անէլ - 1. Ալյուր աղալ: *Վար Օվ-չի Փիրումը կընգանը նըհէտ հընէրանց տանան կ՛ամ ա տօն, ք՛ընա՛մ ա ճաղացը, ալէր անըմ, մին յէզնը մօրթում, վար բա-դարաք՛ անէն* (ՆԼՂԺԲ, 13): 2. *փխբ.* Շատ մանրացնել, փոշիացնել: *Չօ՛ր հացը թա-կից, թակից, ալլէր ըրավ* (Ձ):

- Ալլէրը ճէղացըն ա աղում, ղըլմըղալը՝ չանչախը - Մեկը գործում է, մյուսը նրա փոխարեն խոսում: *Ալլէրը ճէղացըն ա աղում, ղըլմըղալը՝ չանչախը, ըտի յա, մունք տանչվըմ ընք, նախագան գ՛ըռա-նըմ ա, թա պըլանը վէց ամսըմը տուվալ ըմ* (Բ):

- Ալլէրը մաղէլ, մաղը կախ տալ/կը-ռէչանը քըցիլ - 1. Անելիք գործերը վեր-ջացնել, հանգստանալ: *Ք՛ը՛զ հինչ կա՞. ալլէրը մաղալ ըս, մաղը կախ տըվալ, վէ՛չ հօքս օնիս, վէ՛չ դա՛ռդ* (Բ): 2. Շատ ծերանալ, կյանքի հետ հաշիվները վերջացնել: *Աղաս ապէրը ալլէրը մաղալ ա, մա-ղը կախ տուվալ, վէշ մին կօրծու խառ-նըվում չի* (Ձ):

- Ալլէր տը՛ռնալ - Շատ մանրանալ, փոշիանալ: *Օշափը վէր քարը հափռու-մը հօփ ա տամ, ալլէր ա տը՛ռնում* (Ձ):

- Ըլլէրէն չըվալէն թայ անէլ/շինիլ - Աղջիկը երկար ժամանակ չամուսնացնելով՝ տանը թողնել, պառավեցնել: *Մարյանը հու յը՛կավ, ախճիգ՛ը տուվավ վէչ, պահից, պահից, ըլլէրէն չըվալէն թայ ըրավ* (Բ):

- Ըլլէրէն չըվալը հիշկան թափ տաս, փուշի տա՛ւս կըկ՛ա - Գործը, գաղտնիքը ինչքան փորփրես, նոր բաներ կբացվեն: *Հա՛ղը ասամ. - Մ՛ շան տըղա, ըլլէրէն չը-վալը հիշկան թափ տաս, փուշի տա՛ւս կը-կ՛ա, բօլ ա, էտ կօրծը վիրչըցըրու՛ն* (Բ):

ԱԼԼԸՂԱԴՕՆՈՒՄ/ԱԼԼԱՂԱԴՕՆՈՒՄ - *ձ.* Գոհունակություն, խրախուսանք, բարեմաղթություն արտահայտող բացականչություն՝ կեցցես: *Ալլըղադօնո՛ւմ թաքավէրին պուճուր տըղա, տա՛ւս կո-նիս մըհակը, հանց կըթըխիս, վը՛ր օ-շափըն էլ տէղան կարէլ չի յէր կէնա* (ՀԺՀ, VI, 132):

ԱԼԼՕՐ/ԱԼՕՐ - *մ., գ.* Վաղը չէ, մյուս օրը: *Էք՛ո՛ւց չէ, ալլօ՛ր կըկ՛աս տանիս* (Ձ):

ԱԼԿԱՇ *(ռուս. алкаш)* - *տե՛ս* ԱՐԿԱ-ԳՕԼԻԿ:

ԱԼՅԱ - *տե՛ս* ԷԼՅԱ:

ԱԼՅԱ - *տե՛ս* ԷԼՅԱ:

ԱԼՅԱՂԱ - *մ.* Հատկապես, առանձնապես: *Ալիանդա՛ ճէլ ըրավ, տանք՛ուրը պարթկը տըվավ, վէր տիք՛ըրակէնը ի-ը՛ռսավը չի կ՛ա* (Ձ):

ԱԼՄԱՋ/ԱԼՄԱՍՏ *(պրս. almas)* - *գ.* 1. *տե՛ս* ԲԸՌԼԱՆԴ: *Քու մըտանիտ թօփազ ա, իմըս թանմա՛ղ ալմազ ա...* (ԼՂԲ, 13): 2. Ապակի կտրելու գործիք: *Ալմազը յոր ա օնում, էտ մը՛ծ հիլին կըտորում, շո՛ւշէ-ք՛ը քըցո՛ւմ* (Բ):

ԱԼՄԱՍՏ - *տե՛ս* ԱԼՄԱՋ:

ԱԼՅԷՐ - *տե՛ս* ԱԼԼԷՐ:

ԱԼՉԱ/ԱԼՈՒՉԱ *(թրք. alic (վայրի սա-լոր)* - *գ.* Դեղնագույն՝ կանաչագույն՝ կարմրագույն եւ կլոր սալորի տեսակ: *Էնքան ալչա կէրավ, փուրըհըրէնք՛ան ընգավ* (Բ):

ԱԼՉՈՒ *(թրք. alce)* - *գ.* Վեգի՝ ճանի կեռմանաձեւ փոսորակով երեսը: *Վէք՛ին թօղ ըրէն, ալչուն Սիմօնէն ընգավ* (Ձ):

ԱԼՋԱԿ/ԱՐՋԱԿ - *գ.* Ձեռնոց: *Ալջա՛կը կ՛ը՛ցավ, ըսքըսից պատը տինիլը* (Բ):

ԱԼՎԱԼԱ *(արաբ. alvan (գույներ)* - *ած.* Երփներանգ: *Խընձո՛ր ծառը ծաղկալ ա, ռանգ՛-ռանգ ծաղիկ ալվալա...* (ԼՂԲ, 19):

ԱԼՎԷՐՇԻ *(թրք. alavereči)* - *գ.* Վաշխառու: *Էտ ալվէրչին խափանում ա, խը՛ղճ կընգանը իլանծ-չիլանծը ինք՛ օնում* (Ձ):

ԱԼՎԸՀԱԹ/ԱՀՎԱԼ(ԱԹ) *(թրք. ahval)* - *գ.* Դրություն, վիճակ, ողջ-առողջություն: *...Ասըմ ա.- էլ ճար չըկա, ք՛ինիմ, տը՛ս-նամ, մին ալվըհաթ հըրցընիմ տանան, խուխօցան* (ՀԺՀ, VI, 185):

ԱԼՈՒՄԻՆ *(ռուս. алюминий, լատ. alu-men)* - *գ.* Սպիտակ-արծաթափայլ կռելի մետաղ՝ ալյումին: *Մըհէնգ՛ էլ, ընգած շինըթկընէն, ալո՛ւմին ա վըհըքէս, տը-նէս Իրէվան ծըխէս* (Բ):

ԱԼՈՒՉԱ - *տե՛ս* ԱԼՉԱ:

ԱԼՈՒՍՏԻ - *տե՛ս* ԻԼԲԻՀԱԼ(ՄԸՍ): *Տը-ղան ալո՛ւստի կըլխու ընգավ, վէր օգ՛ում ըն ո՛ւրանն կըլօխը վարին* (Ձ):

ԱԼՈՒՐ - *տե՛ս* ԱԼԼԷՐ:

ԱԼՔ *(գրբ. ալք)* - *գ.* Առասպելական չար ոգի: *Ասում ըն՝ էտ ծօրո՛ւմը ալքէր ըն ապրում* (Ձ):

ԱԼՕ *(ռուս. алло)* - *ձ.* Գործածվում է որպես բացականչություն հեռախոսով խոսելիս՝ լսում եմ, լսեցե՛ք: *Ալո, էտ հո՛ւր տօն ա՞* (Բ):

ԱԼՕՐ - *տե՛ս* ԱԼԼՕՐ:

ԱԽ - *ձ.* Վշտի՝ ցավի՝ հանդիմանության՝ ասփոսանքի բացականչություն: *Մխ, Մստուծ, էս հինչ օյին պէ՞րէր մէր կըլօ՛խը* (Բ):

- Ախ անէլ/քաշիլ - Հառաչել, ափսոսալ: *Մարթը մընէլանը յը՛տը սաղ օրը ախ ա քաշո՛ւմ* (Բ):

ԱԽԱ-ԲԱԽԱ - *մ.* Ազատ, համարձակ (կանգնել, նայել): *Կաղնալ ըս ախա-բա-խա, վը՛ննիտ չըմօշկը լախ ա...* (ԼՂԲ, 25):

ԱԽԱՋ - *տե՛ս* ՂԱԽԱՋ:

ԱԽԱՐ[1] - *գ.* 1. Ջատկին կատարված եւ հասարակությանը բաժանված մա-

տաղ: *Ախարը փայ-փայ ըրէն, ժուղովուրթէն պիժընը՝ցէն* (Ձ): 2. Ձատկին նշանված տղայի տնից աղջկա տունը կամ հակառակը տարվող ընծաներ: *Գ՛ուլբան ախարէն մաչան անպակաս ար* (Ձ):

ԱԽԱՐ[2] - *տե՛ս* ԱԽԷՐ(ԱՄ):

ԱԽԷ - *տե՛ս* ՀԱԽԷ:

ԱԽԷՐ(ԱՄ)/ԱԽԱՐ[2]/ԱԽԸՐ *(թրք. achar)* - Չէ՞ որ, բայց: *Տըղան խըմըմ ա, տը՛սնում ախէր էտ ճ՛ուր չի՛* (ՀԺՀ, V, 21):

ԱԽԸՐ - *տե՛ս* ԱԽԷՐ:

ԱԽԸՐԸ - *տե՛ս* ԱԽՐԸ:

ԱԽԸՐԸՄԸՍ - *տե՛ս* ԱԽՐԸ(1):

ԱԽԼԱՄՕՆ - *տե՛ս* ԽԸԼԱՄ:

ԱԽԾ - *տե՛ս* ԱԽՑ:

ԱԽԾԱՆ - *գ.* 1. *տե՛ս* ՄԱԽԾ: 2. Եփած, ճմռած եւ վրան աղ ցանած կանաչեղեն: *Ինքը՛ն էլ ախծան շատ ար սիրում* (Ձ):

- Ախծան անէլ - *տե՛ս* Ծ՛ուծ՛ուն անէլ:

ԱԽԿ - *ձ.* Ձզվանքի բացականչություն: *Թաքավէրին ախճիգը թըքում ա, թա.- Մ՛ախկ, էս հինչ յը՛խտուտ տօն ա՞* (Ձ):

ԱԽԿԱԴ/ԱԽԿԱՏ/ԱԽՔԱԴ/ԱԽՔԱՏ *(գրբ. աղքատ)* - *տե՛ս* Քի՛ԱՍԻԲ: *Դէրը քը՛նում ա վարթաբէդին կ՛էնգատ անում, ախքադը էլ հէտան* (ՆԱԲ, 59):

ԱԽԿԱԴ-ԸԽԿՈՒԴ - *տե՛ս* Քի՛ԱՍԻԲ-Քի՛ՍՈՒԲ: *Միհէնգ ախկադ-ըխկուդու դար չի, հու կարում ա, բիդի կըլ՛օխը պահէ* (Բ):

ԱԽԿԱՏ - *տե՛ս* ԱԽԿԱԴ:

ԱԽՃԻ/ԱԽՉԻ/ԱՃԻ - *գ.* Աղջիկներին, կանանց դիմելու կոչական բառ: *Ախճի՛, Յէղի՛սաբէթ, դ՛ուզ ա՞, վէր հիրըվանէտ ըխճըկանը տարալ ըն, էրկու օրանը յը՛տը տ՛ուս քըցա՛ալ* (Ձ)

ԱԽՃԻԳ՛/ԱԽՉԻԳ՛/ԱՃԻԿ/Ա՛ՃՈՒԿ/ԱԽՃԻԿ/ԱԽՉԻԿ *(գրբ. աղջիկ)* - 1. Իգական սեռի երեխա՝ պարմանեկ: *Հըղէննի ջիհի՛ում ըն մին ըխճըկա* (Ձ): 2. *գ.* Իգական սեռի զավակ, դուստր: *Թաքավէրին ախճիգ՛ը խընձ՛ը վար օտըմ ա, մին լ՛ավ ծի յա տ՛ռնըմ. էտ տըղան յէր ա ի-նի՛ում, քըշ՛ում* (ՆԼՂԺԲ, 9): 3. Կույս, օրիորդ: *Վէզիրը ծէն ա տամ պալատէն լաւ մը՛ծ դուխտուրէն, հանցու տը՛սնա՝ ի՛ուրա՛ն ախճիգ՛ը՛ն ախճիգ՛ ա՞, թա չէ...* (ՆԼՂԺԲ, 41): 4. *ածական.* Իգական սեռին պատկանող: *Ախճիգ՛ խօխա յա* (Ձ):

- Ախճիգ՛ արմատ - *տե՛ս* ԱԽՃԻԳ՛:

- Ախճիգ՛ ը՞ս, թա տըղա՞ - Հաջողվե՞ց, թե՞ ոչ, բերած լուրդ դրակա՞ն է, թե՞ բացասական: *Սա՛մսօն, հինչ խաբար ը՞ս պէրալ. ախճիգ՛ ը՞ս, թա տըղա՞* (Բ):

- Ախճիգ՛ը տ՛ուսի պատ ա - Աղջիկը՝ դուստրը, իր հայրական տանը հիմնավոր չէ:

- Ախճիգ՛ը՝ ուրական, պէժինք՛ը՝ տըրէկան - Աղջիկ՝ դուստր ունեցողը ժամանակին պետք է հոգա օժիտի պատրաստությունը:

- Ախճիգ՛ը ի՛ուրի՛ուշ՛ու տան ճիրա՛նք՛ ա - Աղջիկը՝ դուստրը, ուրիշի տանն է օգուտ բերում:

- Ախճիգ՛ տը՛սնալ - Հարսնացու ընտրել: *Դ՛օրի՛ունց տանը միջի յա. շէնին ջիհիլնէն ք՛ը՛ցալ ըն ախճիգ՛ տը՛սնան* (Ձ):

- Ախճիգ՛ օգ՛իլ - 1. Հարսնախոսել: *Ք՛ը՛ցալ ա, թա Հ՛ա՛բ՛ուն ախճիգ՛ը՛ ՕՁի, ը՛ռազի ջը՛ն կացալ* (Բ): 2. Ամուսնանալ, տունը հարս բերել: *Մարը ասմա.- Պը՛ռավալ ըմ, մին ախճիգ՛ օգ՛ի, ինձ ք՛ՕՄ՛ՆԳ՛ անէ* (Ձ):

- Ըխճըկանը կ՛էշը ջըտը՛սէնք՛, հարթնանը՝ լ՛ավը - Աղջկան միշտ գովաբանում են, հարսին՝ փնովում:

- Ըխճըկօրցը թըսան վը՛տ օնէլ - Վավաշոտ լինել, ցոփ ու շվայտ կյանք վարել: *Վէ՛ջ հօրը՛ն ա ք՛ՕՄ՛ՆԳ՛ ընէս, վէ՛ջ ախպօրը՛, սաղ օրը էնա ըխճըկօրցը թըսան վը՛տ ունէս* (Բ):

ԱԽՃԻԿ - *տե՛ս* ԱԽՃԻԳ՛:

ԱԽՄԱԽ/ԱԽՄԱՂ *(արաբ. ahmak)* - *ած., գ.* Հիմար, տխմար: *Ախմախ մարթին անա ամմէն հինչ ըսպըսէլի յա* (Բ): *Էս ախմախը հըրփ՛ՆԾէն հէտան վագ ա տամ, համ կ՛ուռկ՛օռում...* (ՆԼՂԺԲ, 121):

ԱԽՄԱՂ - *տե՛ս* ԱԽՄԱԽ:

ԱԽՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ախմիշ ինիլ - Հոսել: *...էն խէղճ, ի՛ուրա՛ն մըհար ախմիշ ինըմ ճ՛ուրը չուգունի մէջ ըն քըցըմ, գինջիլավ էլ կըպօտըմ, վէր տ՛ուս չի կ՛ա...* (ՋՏ, Ա, 122):

ԱԽՇԱԴԱՆՔ - *տե՛ս* ԱՇԽԱԴԱՆՔ:

ԱԽՇԱՏԱՆՔ - *տե՛ս* ԱՇԽԱԴԱՆՔ:

ԱԽՇԱՐ(Ք) - *տե՛ս* ԱՇԽԱՐ(Ք):

ԱԽՉԻ - *տե՛ս* ԱԽՃԻ:

ԱԽՉԻԳ՛ - *տե՛ս* ԱԽՃԻԳ՛:

ԱԽՉԻԿ - *տե՛ս* ԱԽՃԻԳ՛:

ԱԽՊ - *(գրբ. աղբ)* - *տե՛ս* ՋԻԲԻԼ: *Տանըմ ա, թա ախպը տէն ածէ, տը՛սնըմ ըխպըհարումը մին պէն փըլըստըրատէ յա տամ* (Ձ):

ԱԽՊԷՐ *(գրբ. եղբայր)* - *գ.* 1. Միեւնույն ծնողների արու զավակներից յուրաքանչյուրը մյուսի (մյուսների) նկատմամբ: *Ըտըրան էլ ինի՛ում ա վէց ախպէր՝ մինը մինան ք՛ա՛նսիբ* (Ձ): 2. *փխբ.* Սիրով ու բարեկամությամբ իրար հետ կապված անձերից յուրաքանչյուրը, մտերիմ ընկեր: *Ըտի չուբանէն տըղան ու թաքավէրէն տըղան, հունցը ախպէր, ի՛ուրի՛ուր ք՛ՕՄ՛ՆԳ՛ ըն անում* (Ձ): 3. Տղամարդկանց դիմելու մտերմական կոչական բառ: *Մ՛ախպէր, էս շէնումը կավ կի՞նի, մինը ինք՛ օնիմ* (Բ):

- Ախպէրը ախպօրը տալ չի - Շատ թանկագին, ընտիր բան է: *Յակատ, հինչ ցա՞կատ. ախպէրը ախպօրը տալ չի* (Բ):

- Ախպէր տը՛ռնալ - *տե՛ս* ԸԽՊԸՐԱՆԱԼ: *Թաքավը՛ՐԷն մին մադար տըղա յա ինի՛ում, մին էլ մին նՕք՛ա՛ր՝ ախպէր տը՛ռած թաքավը՛ՐԷն տըղէն նըհէտ* (ՆԼՂԺԲ, 46):

- Ախպօր նըման - Մտերմաբար, եղբայրաբար: *Ախպօր նըման, էք՛ի՛ուց յը՛ք ք՛ՕՄ՛ՆԳ՛ ըրա՛, էս կօրծը պըրծընիմ* (Ձ):

- Ախպօր ումէդ ընգէր՝ ըխպըհարը ընգէր - Եղբոր վրա պետք չէ հույս դնել: *Ըսկէսուրը ասմա.- Մ՛ հարթնը, խըրէգ՛ քու ախպօր տօնը ք՛ինի. ախպօր ումէդ ընգէր, ըխպըհարը ընգէր* (Ձ):

ԱԽՊԻ՛ՈՐ/Ա՛ԽՊԻ՛ՈՐ *(գրբ. աղբիւր, աղբեւր)* - *գ.* 1. Ակունքից բխող ջուր՝ աղբյուր: *Արչին ախպի՛ուրը էն ա Տըզըփ՛ՆԴ՛ սարումը* (Ձ): 2. Բխող ակունքի վրա կառույց, շինություն: *Էտ ըխպիրին քարէրը Պիլթընուցա միդ՛ՆԱՆ ըն պէրալ* (Բ):

- Ախպի՛ուրը պըրտՕՆէլ - Սրբությունը արատավորել: *Իզէն ախպի՛ուրը պըրտՕՆալ ա, յը՛ս ընդրա նըհը՛տ էլ կօրծ չըմ փըռնէլ* (Բ):

- Ախպի՛ուրը տանէլ, ծարավ յը՛տ պիրիլ - Շատ ճարպիկ, հնարամիտ, խորամանկ լինել, մեկին գերազանցել այդ հատկություններով: *Էտ ա՞ խը՛ղճ, էտ վէր օգ՛ի, օխտը տըղամարթ կըտանէ ախպի՛ուրը, ծարավ յը՛տ պիրի* (Բ):

- Ախպի՛ուրը ցըմաքէլ - Եկամտի աղբյուրը կտրվել, վերանալ: *Սիրը՛կանը նախագա յար, տ՛ուս քըցէցէն, ախպի՛ուրը ցըմաքից* (Բ):

- Ախպի՛ուրը քար քըցիլ - Մեկին վնասել, վատություն անել: *Բօ՛լ ա, ա՛ ժուղովուրթ, բօ՛լ ա, հիշքան հընգէր-հիրըվանէն ախպի՛ուրը քար ըք քըցա՛ալ...* (Ձ):

- Ախպի՛ուրը ք՛ինի՝ ճ՛ուրը կըցըմաքէ - Ձախորդ մարդ է, ինչ ձեռնարկի՝ կձախողվի: *Էտ տընը՛շինին ըսկի բախտ չօնէ, վէր ախպի՛ուրըն էլ ք՛ինի, ճ՛ուրը կըցըմաքէ* (Ձ):

- Ըխպիրա՛ն ճ՛ուր խըմէլ - Մեկից օգտվել: *Ժողովումը բըրիգադիրը յը՛ր ա կէնում, թա.- Մ՛ ծէր տօնը շինվի, էտ վէր ինձ ըտի տըռըպըռտում ըք, տուք իմ ըխպիրա՛ս ճ՛ուր չը՞ք խըմալ* (Բ):

- Ըխպիրա՛ն ճ՛ուր խըմէլ, ակնումը թըքէլ - Երախտամոռ լինել, լավությունը վատությամբ փոխհատուցել: *Ըխպիրա՛ն ճ՛ուր ա խըմում, ակնումը թըքում. էն հինչ մարթ ա՞, վէր ք՛ՕՄ՛ՆԳ՛ անիմ* (Բ):

- Ըխպիրին ակնումը թըքէլ - *տե՛ս* Ախպի՛ուրը պըրտՕՆէլ:

- Ըխպիրի՛ու նըման քըլքըլալ - Առատորեն՝ հորդաբուխ հոսել: *Կավ, հինչ*

կա՞վ, կօրծը ըխպիրու նըման քըլքըլամ ա (Ձ):

ԱԽՊՈՒՐ - *տե՛ս* ԱԽՊՈՒՐ:

ԱԽՍԱԽԿԱԼ/ԱՍՍԱԽԿԱԼ/ԸԽՍԱԽԿԱԼ/ԸՍՍԱԽԿԱԼ *(պրս. agsaggal, թրք. aksakal)* - 1. *ած.* Ծեր, տարիքն առած: *Յօր ա օնում մին քանէ ախսախկալ մարթ, կ՚ամ հանման ղըչըղնէրին պըտահած տէղը* (ՀԱԲ, 15, 128): 2. *գ.* Ծերունի, տարիքն առած մարդ: *Շէնին ախսախկալնէն հըվաքվում ըն, մըսլըհաթ անում, վէր էտ ըրփըվէրուն մարթին յըրա քար քըցին* (Բ): 3. *ած., գ. փխբ.* Փորձառու, լրջախոհ, իմաստուն: *Հըվաքվըմ ըն էտ յէրգ՚իրին ախսախկալնէն, աշխարք տը՚սած մարթիք՚, կ՚ամ էտ թաքավէրէն կօշտը, վը՚ր ք՚ըմանգ՚ ինին՝ յէրգ՚իրը կառավարէ* (ՀԺՀ, VI, 95):

ԱԽ-ՎԱԽ - 1. *տե՛ս* ՎԱԽ: 2. *տե՛ս* ԱԽՈՒՎԱԽ:

ԱԽՏ *(ռուս. акт, լատ. actus)* - *գ.* Գրավոր պաշտոնական արձանագրություն: *Էշը ըստակից, դանստի ախտը կ՚իրը՚ցէն* (Բ):

- Ախտը կապէլ - 1. Մահվան շեմին լինել: *Սուղումուն դային հանլան ընգալ ա, ախտը կապած ա* (Ձ): 2. Ավարտին՝ պաշտոնանկ արվելուն մոտ լինել: *Գ՚ուխսավէտին նախագան շատ ա համը հանում, ախտը կըպէլի յա* (Բ):

- Ախտ կապէլ - Պաշտոնական արձանագրություն գրել: *Ախտ կըպը՚ցէն, էնքան քաշանծ արաղը տարէն ըծը՚ցէն ծօրը* (Բ):

ԱԽՏԱ *(թրք. axta)* - *գ.* Կորիզները հանած հոնի կամ սալորի չիր: *Առանց հունու ախտա հավ չընա մաչիլ* (Ձ):

- Ախտա անէլ - Հոնը կամ սալորը կորիզներից անջատել եւ չորացնել: *Էնքան ախտա յա ըրալ, տը՚ղ չօնէ, թա ածէ* (Բ):

- Ախտա խան - Ամորձատված տղամարդ, որ հիմնականում ծառայում էր կանանոցներում՝ ներքինի: *Մին օր էլ ախտա խանը նի յա մընում, տը՚սնում Շահէն կընանուցան մինը կա վէչ* (Ձ):

ԱԽՏԱԲՈՒՋ/ԱԽՏՕԲՈՒՋ/ԱՓՏԱԲՈՒՋ/ԱՓՏՕԲՈՒՋ *(ռուս. автобус, լատ. omnibus)* - *գ.* Բազմատեղ մարդատար մեքենա՝ ավտոբուս: *Ախտաբուզը անդանթ ընգավ, փայտոնը տը՚ռավ բէղա վէր ընգած պըրինձ* (Բ):

ԱԽՏԱՐՄԱ - *տե՛ս* ԱԽՏԸՐՄԱ:

ԱԽՏԸՐՄԱ/ԱԽՏԱՐՄԱ - *գ.* Հատուկ ձեւով պատրաստած եւ ուլի կամ գառան տիկի մեջ պահվող պանիր: *Ախտըրմէն տը՚ղը վէչ մին պէն տալ չի* (Բ):

ԱԽՏԻ-ԴԸՐԱԽՏԻ - *ած.* Շատ զարդարված, պճնված: *Ախտի-դըրախտի ըխճըկէրքը խը՚ղճ մակարնուն խը՚լքա տընէս ըն* (Ձ):

ԱԽՏՕԲՈՒՋ - *տե՛ս* ԱԽՏԱԲՈՒՋ:

ԱԽՐԱԹ/ԱԽՐԱՏ - *գ.* Կանանց սեռական անդամ (գործածվում է հայհոյանքների մեջ):

ԱԽՐԱՆԻԿ *(ռուս. охранник)* - *տե՛ս* ՊԱՀԱԿ: *Ախրանիկը հըչօցին յըրա զանրթանում ա...* (ՀԱԲ, 15, 73):

ԱԽՐԱՆԻԿՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸՀԸԿՕԹՈՒՆ: *Ախրանիկօթունա կըման ծէռուքը պէն չի կ՚աս* (Ձ):

ԱԽՐԱՏ - *տե՛ս* ԱԽՐԱԹ:

ԱԽՐԸ/ԱԽԸՐԸ/ԱԽՐԸՄԸՍ/ԱԽԸՐԸՄԸՍ *(արաբ. axar)* - *մ.* 1. Վերջիվերջո, ի վերջո, վերջապես: *Ախըրը էս ղօնաղը էլ հանվանլան չի անում, յէր ա կէնում, հըղէ ինում* (ԱԱ, 83): *գ.* 2. Վերջ, վախճան: *Մարթին ախրը վէր կ՚ամ ա, Ըստուծէն մը՚ննընն ա քըցում* (Ձ):

- Ախրէն նըստէլ/քար քըցիլ - Վերջը տալ, սպառել, թաղել: *Էնքան կըռկըռաց, մարթին ախրէն նըստից* (Ձ): *Կօրծը պըրծավ, փուլէրը ծախսից, ախրէն նըստավ* (Բ):

ԱԽՐԸՄԸՍ - *տե՛ս* ԱԽՐԸ(1):

ԱԽՑ/ԱԽԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ախցավ ընցընէլ - *անրգ.* Խիստ ծարավել, ծարավությունից տոչորվել, տանջվել: *Ախցավ ը՞ս ընցալ. խըրէգ՚ ճուր խըմէ լի՞* (Բ):

ԱԽՈՒՌ - *տե՛ս* ԱԽՕՌ:

ԱԽՈՒՍ/ԱԽՕՍ - *ած.* Սակավախոս, քիչ խոսող, խոսել չսիրող: *Թանզզան հարթնը ախուս կինի* (Բ):

- Ախուս անէլ - Լռեցնել: *Ղօնաղը տըրան ասում ա.- Ղըզղանէն պէնըն իփանծ կինի, տօ խուխօցը, ախուս ըրա՛, վը՚ր քօն ինին* (ՀԺՀ, VI, 203):

ԱԽՈՒՎԱԽ/ԱԽ-ՎԱԽ - *գ.* 1. Հառաչելը, հառաչանք: *Մարթին մըռնէլանը յը՚տը էտ կընէգ՚ը ախուվախավ ար օրը անց կըցընում* (Ձ): 2. Վիշտ, սուգ: *Յէթիմին գ՚անքը գ՚անք չի, ախուվախ ա* (Ձ):

- Ախուվախ անէլ - Վշտից, ցավից եւն հառաչել: *Տընղան շատ ա տըխըրվըմ, սաղ օրը մինանկ նըստած, ախուվախ ա անըմ* (ԼՂԲ, 364):

ԱԽՈՒՎԻԾ - *տե՛ս* ԱԽՈՒՎԱԽ: *Ծին վէր ա ընղնում, ըստակում, Պուղին ախուվիշ ա անում* (ՆԱԲ, 131):

ԱԽՔԱԴ - *տե՛ս* ԱԽԿԱԴ:

ԱԽՔԱՏ - *տե՛ս* ԱԽԿԱԴ:

ԱԽՕՌ/ԱԽՈՒՌ *(գրբ. ախոռ)* - *գ.* 1. Անասունների գոմ: *Թափէղը ք՚ընում ա ախուռը, մին նախշուն ք՚ըհլան ծի տանս օնում, քըղաքան փախճում* (ՆԱԲ, 39): 2. Գոմում երկայն արկղաձեւ կտրվածք, որտեղից անասուններն ուտում են խոտը՝ մսուր: *Խօտը ածից ախօռը, կըվէրը յըրա տը՚ռէն, մին մընուտումը կէրէն* (Բ):

- Ախօռը լիգ՚ը - Հարուստ, ունեւոր: *Էն էլ ա՞ մըտրծլական, էն ա ախօռը լիգ՚ը* (Բ):

- Ախօռը տէրտակ - Աղքատ, ընչազուրկ: *Ախօռը տէրտակ տըղա յա, էն հինչ կա՞ռէ անէ* (Ձ):

- Ըխօռում կապած - Հիմար, տխմար, անհասկացող: *Էտ ըխօռում կապածը կընգանը փըռնած կուրծէրան խաբար չօնէ* (Ձ):

ԱԽՕՍ - *տե՛ս* ԱԽՈՒՍ:

ԱԽՕՏ *(ռուս. охота)* - *տե՛ս* ՀԱՎԱՆ: *Ախօտ չօնիմ հաց ուտէլի, ըստիպու մէր* (Բ):

ԱԾԱԾ-ՔԸՑԱԾ - *տե՛ս* ԱՆՕՂ-ԹՕՂՕՂ:

ԱԾԱՆ - *ած.* Ձու ածող: *Ազարը ընգավ շէնը, ածան հավէրը ծուվա կըտըրը՚ցէն* (Բ):

- Ածան հավը կըչկըչան կինի - Շատ աշխատողը, արդյունք ստեղծողը պահանջկոտ կլինի:

ԱԾԷԳ՚ *(գրբ. ածիկ)* - *գ.* Թրջված եւ ծլած ցորենը սանդի մեջ ծեծելով ու մզված հեղուկը ալյուրի հետ եփելով ու գոլորշիացնելով՝ պատրաստած թանձր կերակրատեսակ: *Մըհէնգ՚վա հարթնէրը ածէգ՚ իփիլըն էլ չընա գ՚ուդանում* (Բ):

- Ածէգ՚ տը՚ռնալ, նը՚նստա կէնալ - *տե՛ս* Նը՚նստա կէնալ, պուք չընկ՚ալ:

ԱԾԷԼ *(գրբ. ածեմ)* - *նբ.* 1. Ձու դնել, ձվադրել: *Էտ հավըտ ամմէն օր ածում ա, ծուն օտում* (Բ): 2. Նվագել: *Համ թանռ ա ածում, համ տըմբըլա թըխում* (Ձ): 3. Լցնել, թափել, հոսեցնել մի բանի մեջ կամ վրա: *Էտ մարքարիդնին հըվաքըմ ըն, մին պուլիգ՚ ածըմ, պահըմ* (ՀԺՀ, V, 42): 4. *տե՛ս* ԱԾԾԷԼ:

ԱԾԾԷԼ - *նբ.* Խփել, հարվածել: *Վէր մուտանում ա, մըհակավ մէհէտ ճօրուն պէռնանը ածծում ա* (ՆԱԲ, 112):

ԱԿԱՀ(Ի)/ԱԳԱՀ *(գրբ. ագահ, վրաց. anga(a)ri)* - *տե՛ս* Աշկը ծակ: *Շատ ակահ մարթ ա* (Բ):

ԱԿԱՆ - *տե՛ս* ԱԿԱՆ-ՍԱԿԱՆ:

- Ական անէլ - *տե՛ս* Ակը տալ:

ԱԿԱՆ-ՍԱԿԱՆ/ԱԿԷՆ-ՍԱԿԷՆ-ՍԸՐԱԿԷՆ - *ած.* Անխաթար, անկորուստ, տեղը տեղին, կարգին: *Պահալ ա, մընընցընալ, ական-սական տը՚ռնը տընվալ* (Ձ):

ԱԿԱՍ-ՄԱԿԱՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ակաս-մակաս, տու վիր պակաս - Հեգնական արտահայտություն, որ գոր-

ծածվում է որեւէ մեկի կամ մի բանի ա-վելորդ լինելը ցույց տալու համար: *Վէր նախըրչուն կընէգ՝ը նի յա մընում, դը-ռակէնը ասմա.- Ակաս-մակաս, տու վիր պակաս* (Ձ):

ԱԿԱՐԴՅՈՆ *(ռուս. аккордеон, ֆր. accordeon)* - *գ.* Երաժշտական գործիք՝ ակորդեոն: *Մէր գ՝ՕՀզալ թՕՀռը թօղած՝ ա-կարդյօն ածէլընն ա սըվը՝ռըմ* (Բ):

ԱԿԱՑԻ/ԱԳԱՑԻ *(ռուս. акация, իտ., ֆր. acacia)* - *գ.* Թիթեռնածաղկավորնե-րի ընտանիքին պատկանող ծառ՝ ակա-ցիա: *Ակացին ծաղկից, մըղըրըճՕՀնջէրը զիրՕՀվ տը՝ռէն* (Բ):

ԱԿԷՆ - *տե՛ս* ԱԿԱՆ-ՍԱԿԱՆ:

ԱԿԷՆ-ՍԱԿԷՆ-ՍԸՐԱԿԷՆ - *տե՛ս* Ա-ԿԱՆ-ՍԱԿԱՆ:

ԱԿԷԾ/ԱԿԻԾ *(գրբ. ակիշ)* - *տե՛ս* ԾԸ-ՀԱՆ:

ԱԿԻԾ - *տե՛ս* ԱԿԷԾ:

ԱԿԼԱԿՕՁԱՆ/ԱԿՈԱԿՈՒՁԱՆ - 1. *գ.* Երեւակայական հրեշ, որով վախեցնում են երեխաներին: *Մարը ասմա. - Սո՛ւս ը-րա, քօն իլ, թա չէ ակլակօզանը կ՝ըլա-կան ա ք՝ը՝զ տանէ* (Բ): 2. *ածական.* Շատ նիհար ու տգեղ: *Էս ակլակօզան խօխան հՕՀուրընն ա՞* (Ձ): 3. *տե՛ս* ԱՆԱԽԱ-ԹՈՒՆ:

ԱԿՆԱՄՈՒՄ *(գրբ. ակնամում)* - *գ.* Ծաղկահյութից գոյացող խեժային նյութ, որ պատրաստում են մեղուները եւ ծեփում փեթակի անցքերը: *Ամմէն յի-շիգ՝ա մին պատառ ակնամում ա կույա-նում* (Բ):

ԱԿՆԸ[1] *(գրբ. ակն)* - *գ.* 1. *տե՛ս* ԱՇԿ(14): *Էտ ըխպիրին ակնը էն ա յը՝ռէ ք՝ը՝ծումը* (Ձ): 2. Աղբյուրի առջեւ սար-քած քարե գուռ: *Թաքավէրը ակնէն ճի-ռանն խուխէն ըրէսավընն ա տամ, յօր օ-նում, պՕՀռՕՀում պալատը* (ՆԱԲ, 38): 3. Փեթակի անցք: *ՄըղըրճՕՀնջէրը ծըմը՝ռ-նը ակնը կապում ըն, վէր ցօրտ չինի* (Բ): 4. Ջրաղացի այն անցքը, որտեղից ջու-րը թափվում եւ պտտեցնում է ջրաղաց-քարը: *Ճըղացէն ակնը մը՝ծ ա, ճՕՀուրը օժ չօնէ* (Բ):

- Ակէն ծակումը - *տե՛ս* Նալէն-մէխին դաթումը:

- Ակը տալ *(գրբ. (գ)ակն տամ)* - 1. Նայել: *Ակը տըվավ, տը՝սավ՝ էտ էծը ք՝ը՝-ցավ, մին քօլու տակէ վը՝ենը կացավ* (Ձ): 2. Փնտրել, տնտղել, ստուգել, մանրա-մասներն իմանալ: *Մին դՕՀստՕՀ ջՕՀհիլնէ ըտըրան խուսուցընում ըն, համ էլ ջուբը ակը տամ* (ՀԺՀ, V, 624): 3. Այցելել, հան-դիպել, տեսակցել: *Քինիմ ակը տամ, տը՝սնամ՝ Անդօնը հունց ա* (Ձ): 4. Բամ-բասանքներով կրքեր բորբոքել, իրար դեմ լարել: *Էս պառավը ք՝ինամ ա ակը տամ, թաքավէրին տըղէն ա էտ ըխճը-կանը ՀՕՀուր նըհը՝տ խըռըվցընում* (Ձ):

- Ակնան խըմել, ըխպիրին թըքել - *տե՛ս* ԸխպիրՕՀն ճՕՀուր խըմել, ակնումը թըքել:

- Ակնը մուրտառել - *տե՛ս* ԱխպՕՀուրը պըրտՕՀղել:

ԱԿՆԸ[2] - *գ.* 1. Թանկագին քար: *Էս քաչալը տը՝սալ ա, վը՝ր թաքավէրին խազնան հէն ա մէջին, շատ ակնէր էլ կա* (ՀԺՀ, VI, 266): 2. *տե՛ս* Աշկ(13): *ՏՕՀուս ա օնում մին քըսանըհէնգ՝ ընկնանէ մու-տանա տամ, ք՝ինՕՀմ* (ՀԺՀ, VII, 306):

ԱԿՆԸ[3] - *գ.* Անիվ: *Էտ վախտը էտ թօխպ տը՝ռած ախճիգ՝ը մին վարթ ա տը՝ռնըմ, ըստահանց փայտօնին ակ-նան կախ ընգնըմ* (ՀԺՀ, V, 159):

- Ակնը ցը՝խան տՕՀուս օնէլ - Մի կերպ ապրել, մեծ դժվարությամբ որեւէ գործ գլուխ բերել: *Կարում չընն ապրին, լ՝ըհա մին թՕՀհրՕՀվ ակնը ցը՝խան տՕՀուս ընն օ-նում* (Ձ):

ԱԿՆԸԸՐԻՔ՝ՆԱԿ/ԸԿՆԸԸՐԻՔ՝ՆԱԿ - *ածական.* Շատ գեղեցիկ: *Ակնըրրիք՝նակ ախ-ճիգ՝ ար, ք՝ը՝ցավ էտ տըղէն, էնքան կօրծ ըրավ, կ՝իշացավ* (Բ):

ԱԿՈԱԿՈՒՁԱՆ - *տե՛ս* ԱԿԼԱԿՕՁԱՆ:

ԱԿՈԱԿՈՒԿՈՒԾ - *տե՛ս* ՀԱԿԼԱԿՈՒ-ԿՈՒԾ:

ԱԿՈԱՆ - *տե՛ս* ՂԸՐԱԲԼԻ:

ԱԿՈԱՎ/ԱԿՈԷՎ/ԱԳՈԱՎ *(գրբ. ագ-ռաւ)* - *տե՛ս* ՔԱԾ[1]: *Ակռավը վէր կըռկը-ռաց, գ՝իդՕՀ վէր մին խաթա յա ինՕՀ-կՕՀն* (Ձ):

ԱԿՈԷՎ - *տե՛ս* ԱԿՈԱՎ:

ԱԿՈՒԾԿԱ *(ռուս. окошко)* - *գ.* Պատու-հան, լուսամուտ: *Մին մէծ օխծ նի յա մը-տալ ակուշկավը, էտ խօխին թա կօլ տա* (ՀԺՀ, V, 80):

ԱԿՈՒՌԻ - *գ.* Մասիսի լանջին գտնվող Ակուռի գյուղը, որ կործանվել է 1840 թ. երկրաշարժից:

- Ակուռի շինիլ - *տե՛ս* Քընդքաբ(ակ) անէլ (1): *Ախճիգ՝ը նաղլ ըրավ, վը՝ր օշափը յէկալ ա ՀՕՀուրՕՀնց յէրգ՝իրը Ա-կուռի շինալ* (ՀԺՀ, V, 88):

- Ակուռի տը՝ռնալ - *տե՛ս* Քընդը-քար(ակ) ինիլ: *Մէր շէնը շատ ա Ակուռի տը՝ռալ, ամմա էլիՕՀ ժուղովուրթը տՕՀուս չընն յը՝կալ* (Բ):

ԱԿՈՒՐԱՏՆԻ *(ռուս. аккуратный, գերմ. akkurat, լատ. accuratus)* - *ածական.* Կո-կիկ, մաքրասեր, կանոնավոր, կարգա-պահ: *Շատ ակուրատնի ախչիգ՝ ա Նանէն* (Բ):

ԱԿՕՊ - *տե՛ս* ԱԿՕՓ:

ԱԿՕՓ/ԱԿՕՊ *(ռուս. акопа)* - *գ.* Խրա-մատ: *Ռուսէն զօրքը վը՝ր տՕՀուս ա կ՝ամ Ղարաբաղ, Թըղըվարթէն քըշտէն ա-կօփնէ յընն կըտրում* (ՆԼՂԺԲ, 147):

ԱՀ *(գրբ. ահ)* - *տե՛ս* ՎԱԽ:

- Ահան էլ ընցընէլ, մահան էլ - Բոլոր փորձություններով անցնել: *Իզէն ախ-վախ չօնէ. ահան էլ ա ընցալ, մահան էլ* (Բ):

ԱՀԱԼՈՒ - *տե՛ս* ԱՀԼՈՒ:

ԱՀԱԿԻՆ *(գրբ. ահեակ)* - *տե՛ս* ՅԷ-ՔԱ(2): *Ախճիգ՝ը տ՝էշ ա, մին-չէվ մի ծի, մին կավ չըտաս, տըղէս հէ-տէ օգՕՀը չըմ* (ՆԱԲ, 137):

ԱՀԱՏ(ԸՄԸՍ) - *տե՛ս* ԱՀԷՏ:

ԱՀԷՏ/ԱՀԱՏ/ԱՆԷՏԸ/ԱՀԱՏ(ԸՄԸՍ) - *մ.* Ապա, հետո, այնուհետեւ: *Ահէտ տի-նիս ըն էշին յըրան, քըշիս, պիրիս ՀՕՀրանց տօն* (ՀԺՀ, V, 299):

ԱՀԻԼ *(թրք. ahil)* - *ածական.* Տարիքավոր, ծեր: *ՕՀհիլ մարթ ըս, հըմանչՕՀում չը՞ս* (Բ):

ԱՀԻԼ-ՋԱՀԻԼ - *գ.* Ծեր ու երիտա-սարդ (միասին): *ՕՀհիլ-ջՕՀհիլ հըվաքվում ըն, մին լՕՀվ ք՝ը՝փ անում* (Ձ):

ԱՀԼՈՒ/ԱՀԱԼՈՒ - *ածական.* Վախով, սարսա-փով լի, երկյուղալի, ահարկու, սարսա-փազդու: *Էտ շէնումը մին ՕՀհՕՀլՕՀ մարթ ա ինՕՀմ, լօխ նըստա վախում ըն* (Ձ):

ԱՀՄԱԴԻ - *գ.* Ուրախ պարեղանակ կամ պարատեսակ: *Բուննան ՕՀվՕՀլա շախշախի, ՕՀմմՕՀդի, միրզէյի պար կըկ՝ին, մըհէգ՝ վալս ըն պար կ՝ամ...* (ՋՏ, Ա, 26):

ԱՀՅԱԿ *(գրբ. ահեակ)* - *ածական., գ.* Ձախ, ձախ կողմ: *Ահյակ անգ՝ՕՀնան մին շէգ՝ մարթ ա տՕՀուս կ՝ամ...* (ՆԱԲ, 119):

ԱՀՆԱՄ - *տե՛ս* ԱՆՀԱՄ:

ԱՀՎԱԼ(ԱԹ) - *տե՛ս* ԱԼՎԱԶՀԱԹ:

ԱՀՈՒՏՕՂ - *գ.* Ահ եւ դող, սոսկալի եր-կյուղ: *ԱհուտՕՀղը մարթին կըսպանէ* (Ձ):

- ԱհուտՕՀղը ջանըն ըղնէլ - Խիստ վախենալ, երկյուղել: *Պիճ ախպէրը վէր կուռըտական ք՝ՕՀնդիրը տՕՀուս ա օնում, ահուտՕՀղը ըղնում ա ուշափէն ջանը* (Ձ):

- ԱհուտՕՀղու մաչ ըղնէլ - *տե՛ս* Ահու-տՕՀղը ջանըն ըղնէլ:

ԱՂ *(գրբ. աղ)* - *գ.* Կերակրի աղ: *Մարթ առանց աղ կարէլ չի յօլլա ք՝ի-նի* (Ձ):

- Աղավ անէլ - *նբ.* Աղ ցանել, աղ քսել մի բանի վրա, աղել: *Խըյարը աղավ ը-րավ, կըծօտից* (Բ):

- Աղավ ընէլու - Տաս, դեռահաս: *Կօ-զի մը՝ծ մարթ ա, ամմա հՕՀլՕՀ աղավ ը-նէլու վա* (Ձ):

- Աղավ հանած-պէրած - Աղ սիրող, շատ աղ օգտագործող: *ՕՀդՕՀ, խըրէգ՝ աղավ ըրա, լի՞, աղավ հանած-պէրած ը՞ս* (Բ):

- Աղավ պէռնած - 1. Ծանրաշարժ: *Հանց տՈՒրՈՒր ա կ՚ամ, հանց ա աղավ պէռնած* (Բ): 2. Ծանր կացության մեջ գտնվող: *Մուք էն ըք աղավ պէռնած, մէզ ըշտըղա յա՞ փուլ, վէր ք՚ըէզ պարթկ տանք* (Ձ):

- Աղէն ու կինձին ա - Հարմար առիթի է սպասում: *ՀՈՒբին էն ա աղէն ու կինձին, լ՚ըհա վէր մին թիթըէվ ասիս, դՈՒստի ըռազի յա կընական* (Ձ):

- Աղը լՈՒց ինիլ - Աղը խոնավանալ: *Աղը նամ տը՚ղ ըս պահալ. լՈՒց ա ինՈՒմ* (Բ):

- Աղընա՞ պակաս, թա մա՞ղը - Ի՞նչ խնդիրք, հոգս, կարիք ունի: *Յաղուզ էլհՈՒ յը՚կալ ա՞, աղընա՞ պակաս, թա մա՞ղը* (Բ):

- Աղը շատ - *տե՛ս* ԱՂԻ:

- Աղը չՈՒր - Ունեւոր, հարուստ: *Ք՚ըէզ հինչ կա՞. աղըտ չՈՒր ա* (Բ):

- Աղը պակաս - *տե՛ս* ՆԱԼԻ:

- Աղ տալ - 1. *տե՛ս* Խըրված օխծ ուտըցընել: 2. *տե՛ս* Աղավ անել:

- Աղ տինիլ - 1. Պանիրը, բանջարեղենը, միսը եւն աղաջրի մեջ դնել պահպանելու համար, թթու դնել: *Խըծըպըրթէցէն վէր պէք՚ի չի աղ տիրՈՒվ, էլ հինչ խըծըպըրթէ՞ցէ* (Բ): 2. Որեւէ բան երկար ժամանակ չօգտագործել, երեւան չհանել, հնացնել: *ՈՒրՈՒն օրաղը տանը աղ ա տիրՈՒլ, ՈՒրՈՒշՈՒ միննՈՒթու տակ ա ըղնում* (Բ): 3. *տե՛ս* Ըլլէրէն չըվալէն թայ անել (ԱԼԼԷՐ-ի տակ): *Խէ ախճիգ՚ըտ մարթու չը՞ս տամ. աղ ը՞ս տինՈՒկՈՒն* (Բ):

- Աղու մարթ - Մեծահոգի, առատաձեռն, բարի: *Աղու մարթ ա, լօխճին ք՚ՈՒմՈՒգ՚ ա անում* (Ձ):

- Աղու նըման լՈՒզ տալ - Մեկին անչափ սիրել: *Հարթնանը աղու նըման լՈՒզ ա տամ* (Բ):

- Աղու նըման հՈՒլվիլ - 1. Արագ սպառվել, վերջանալ: *Էրկու փութ ՈՒլլէրը մին շէփտումը աղու նըման հՈՒլվՈՒլ ա* (Բ): 2. Խիստ ամաչել, ամոթից կարմրել: *Մարթը վէր խօսում ա, ինք՚ը աղու նըման հՈՒլվում ա* (Ձ): 3. Խիստ նիհարել: *Էտ ախճիգ՚ը մին ամսումը աղու նըման հՈՒլվում ա, տը՚ռնում մին թիք՚ՈՒ* (Ձ):

- Աղու յըրա ք՚ինիլ - 1. Բնազդով գնալ, գործել: *Աղու յըրա չըս ք՚ՈՒնՈՒմ, կըլիէտ զօռ տօ, յը՚տնան ըրա* (Բ): 2. Արագ գնալ, ցանկալի բանի համար գնալ: *Էտ խէ թայդի յը՞ս. աղու յըրա յը՞ս ք՚ՈՒնՈՒմ* (Բ):

- Աղ օտէլ - Աղով հագեցնել, աղը ներս ծծել: *Աղ կէրած կաշին վը՚տէլ չի* (ԱԲԲ, 14):

ԱՂԱ *(պրս., թրք. aga)* - *գ.* 1. Բարձր դասի պատկանող, հարուստ անձ: *ԲՈՒրդՈՒն էտ ք՚ՈՒսիբ տըղան ծըծըղէս ա, համ էլ խընթըրէս, վէր ՈՒրՈՒն թՈՒլ անին, ք՚ինի ԹէմՈՒր աղէն կօխկը* (ՀԺՀ, V, 287): 2. *փխբ.* Վեհանձն, մեծահոգի, առատաձեռն անձ: *Կօզի ք՚ՈՒսիբ, ամմա աղա յա* (Բ): 3. Գործից, աշխատանքից խուսափող անձ: *Տու՝ աղա, յը՚ս՝ աղա, պա մէր աղունը հու կա՞դա* (ԱԲԲ, 94):

ԱՂԱԼ - *տե՛ս* ԱՂԷԼ[1]:

ԱՂԱԼՈՒ-ՄՈՒՋՈՒԼՈՒ - *տե՛ս* ՈՒՋՈՒԼՈՒ-ՄՈՒՋՈՒԼՈՒ:

ԱՂՈՒՆՁ/ԱՂԱՆՁ՚/ՂԱՆՁՈՒՏ/ՂԱՆՁԷՏ/ՂԱՆՁԻՏ *(գրբ. աղանձ)* - *գ.* Բոված ցորեն, սիսեռ եւ այլ ընդեղեն, որ խառնելով իրար՝ գործածում են իբրեւ աղանդեր: *ԱղՈՒնձը ածից ջուբը, տՈՒս յը՚կավ* (Բ):

- ԱղՈՒնձ անել - 1. Ցորեն, սիսեռ եւ այլ կարգի ընդեղեններ բովել, աղանձ պատրաստել: *Մարը աղՈՒնձ ըրավ, խօխէնք՚ը թուփ տը՚ռէն* (Ձ): 2. Ընդհանրապես բովել, խարկել, աղանձել: *Աղը աղՈՒնձ ըրավ, մին շՈՒրՈՒմ պըտատից, կապից մաշկէն* (Ձ): 3. Ցամաքեցնել, չորացնել, տոչորել: *ՈՒրէվը բուստընՈՒն էրալ ա, աղՈՒնձ ըրալ* (Բ): 4. Տանջել, չարչարել: *Էտ խօխէնք՚ը էնքան չար ըն ինՈՒմ, սաղ օրը մօրը աղՈՒնձ ըն անում* (Բ):

- ԱղՈՒնձ տը՚ռնալ - 1. Բովվել, խարկվել, աղանձվել: *Յօրէնը աղՈՒնձ ա տը՚ռալ, յէր կալ՚, էրի վէչ* (Ձ): 2. Ցամաքել, չորանալ, տոչորվել: *Թօռ չի յը՚կավ, հՈՒնդէրը սաղ աղՈՒնձ ա տը՚ռալ* (Բ): 3. Տանջվել, չարչարվել: *Էրկու օր տՈՒնջվից, աղՈՒնձ տը՚ռավ, էլհա կարից վէչ արխը տՈՒս քըցի* (Ձ):

ԱՂԱՆՁ՚ - *տե՛ս* ԱՂՈՒՆՁ:

ԱՂԱՋԱԽԱԹՈՒՆ - *տե՛ս* ԱՆԱԽԱԹՈՒՆ:

ԱՂԱՏ *(հ.ե. *olad- (լալ, ողբալ)* - *գ.* 1. Ադիոդորմ, սրտաճմլիկ ձայն: *Էտ խօխան վէր ըղատավ լՈՒց ա ինՈՒմ, խօրթ մարը էլ տէմ չի կէնում* (Բ): 2. Գութ, խղճմտանք, գթասրտություն: *Ընդըրա վէր աղատ ինի, խօխօնցը թօղէլ չի վէզը ծօռ* (Ձ):

- Աղատը կ՚ՈՒլ - Գութը շարժվել, խղճմտանքով լցվել: *Հինչ պէն ա՞, փըլանք՚ՈՒսին աղատը յը՚կալ ա* (Բ):

- Աղատը յը՚ր հըվաքվէլ/յը՚ր քաղվէլ - Գութը, խղճմտանքը կորցնել: *Աղատը յը՚ր ա հըվաքվալ, էլ ք՚ՈՒմագ՚ չի անում ախպօրը յիթիմնէրէն* (Ձ):

ԱՂԱՏ-ՊԱՂԱՏ - *տե՛ս* ԸՂԱՉԱ(Ն)Ք-ՊԸՂԱՏԱՆՔ:

- Աղատ-պըղատու կ՚ալ - *տե՛ս* Ըղաչանք-պըղատանք անել:

ԱՂԱՔ *(գրբ. աղագ (ճամփա)* - *տե՛ս* ԱՌԱՇԿ(1): *Քըմակին յէշալ ա, տէսալ շօխկը քըմակին, գիդացալ ա, թա շօն ա, մին հացը քիցՈՒլ ա աղաքը* (ՀԺՀ, VI, 698):

ԱՂԲԱԹ *(արաբ. akabet (վերջապես, ամենից վերջը)* - *տե՛ս* ԱԽՈԸ(2): *Բա քու աղբաթը խէր ինի, խալխընը օգըմ ա Բաքվա փախչի, սա նօր ա կամ...* (ՋՏ, Բ, 93):

ԱՂԴՈՒԾ - *գ.* Պղնձե թաս: *Աղդուշը աղՈՒնձավ լըցնում ա, տինում ըռաշկէն* (Ձ):

ԱՂԷ - *տե՛ս* ԱՂԻ:

ԱՂԷԼ[1]/ԱՂԱԼ/ԱՂԻԼ *(գրբ. աղամ)* - *նբ.* 1. Հացահատիկը ջրաղացում աղալ, այլուր դարձնել: *Մին օր էտ մարթը տանում ա, վը՚ր ՈՒրՈՒն դՈՒնը ճըղացումըն աղէ* (ՆԼՂԺԲ, 134): 2. Աղորիքով, երկանքով մանրել, փշրել: *Արկանքը վէր տիրՈՒվ, զՈՒրդՈՒ ցօրէնը աղից, վէր խաշիլ իփի* (Բ):

ԱՂԷԼ[2] *(գրբ. աղաղեմ (աղով կակղեցնել)* - *նբ.* Հետը աղ խառնել, աղել: *Մէսը աղում ա, վէր բաստուրմա շինի* (Ձ):

ԱՂԷՅՆՔ՚ - *տե՛ս* ԱՂԷՆՔ՚:

ԱՂԷՆՔ՚/ԱՂԻՆՔ՚/ԱՂԷՅՆՔ՚/ՃԸՂՄԱՂԷՆՔ՚/ՃԸՂՄԱՂԻՔ՚ *(գրբ. աղիք)* - *գ.* Մարդու եւ կենդանիների մարսողական գործարանների մասը կազմող թաղանթային խողովակ՝ աղիք: *Արչը հըվատում ա, ՈՒրՈՒն աղէնք՚ը ծիք՚ տամ, տՈՒս օնում, ըստակում* (Ձ):

- Աղէնք՚ը կարճ - Անհամբեր: *Էտքան էլ աղէնք՚ը կարճ մարթ կինի՞, տըմանում չի, թա մին պէն ասիս* (Բ):

- Աղէնք՚ը կըտօրէլ - 1. Խիստ վախենալ: *Էտ վէր տը՚սավ, կ՚ՈՒլին աղէնք՚ը կըտօրից* (Բ): 2. Ուժգին ծիծաղել: *Էտ պէնը հիբը պատմում ա, խօխօնցը աղէնք՚ը կըտօրում ա* (Ձ):

- Աղէնք՚ը պէրանը կ՚ՈՒլ - Շատ ուտելուց սրտխառնոց զգալ: *Էնքան կէրալ ըմ, աղէնք՚ըս պէրանըս ա յը՚կալ* (Բ):

- Աղէնք՚ը վէր ածել - *տե՛ս* Թըփընթրէք՚ը վէր ածել:

- Աղէնք՚ տը՚ռնալ - *տե՛ս* Աղու նըման հՈՒլվիլ(3): *Էնքան տՈՒզնը կացալ ա, աղէնք՚ ա տը՚ռալ* (Բ):

ԱՂԷՉՔ - *գ.* Աղակտորի հողային մաս: *Էտ աղէն կըռօճնէրէն մաչին աղէչքը շատ ա ինՈՒմ, կավը լՈՒզ չի տամ* (Ձ):

ԱՂԷՐՍ *(գրբ. աղերս)* - *տե՛ս* ԸՂԱՉԱ(Ն)Ք-ՊԸՂԱՏԱՆՔ:

ԱՂԸՐ-ԲԱՂԸՐ *(թրք. ağri (ցավ, դժբախտություն)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Աղըր-բաղըր յը՚ր օնէլ - Մեռելը պատվով-շուքով հուղարկավորել: *Պառավը մը՚ռավ, տըղէք՚ը աղըր-բաղըր յը՚ր կալին* (Բ):

ԱՂԻ/ԱՂԷ *(գրբ. աղի)* - *ած.* Հարկ եղածից շատ աղ պարունակող: *Աղի հաց*

օտօղ ախչիգ՝ը շատ ա ծըրավում, ամմա ճ՝ուր չի ճարում (ՀԺՀ, V, 615):

- Աղի ըրտասունք վէր ածէլ - Երկար եւ աղիողորմ լացել: *Ախպէրը ասմա.- Մ քուր, էլ պէնը պէնան ընցալ ա, խըրէգ՝ աղի ըրտասունք վէր ածէ* (Զ):

- Աղի ծը՝ծ ծըծած - Նիհար, վտիտ: *Էտ աղի ծը՝ծ ծըծած խօխան պէրալ ըս՝ հինչ ա՞նիմ* (Զ):

- Աղի կըրկէր/պըրպէր - Չափազանց աղի: *Մին աման աղի կըրկէր շօրվա յա տուվալ, էզզանանն իրը՝սավըն ա կ՝աս* (Բ):

- Աղի մուկուն - Խառնակիչ: *Իզէն կը-նէգ՝ չի է՛, մին աղի մուկուն ա՝ ընգած էս շէնը* (Բ):

- Աղի մուկուն/պէղարճ օտէլ - Ասում են շատ ջուր խմողին: *Խըրէգ՝ խըմէ, աղի մուկուն ը՞ս կէրալ* (Բ):

- Աղին ա նանլին ՝ուր՝ուր անա ճօկում չի - Անփորձ, միամիտ է: *Աղին ա նանլին ՝ուր՝ուր անա ճօկում չի, քըթէ կավը դընու կ՝ինավ ծախալ ա* (Զ):

- Աղին ու բօզին յէշիլ - Հանգամանքները հաշվի առնել: *Հարթնը էլ աղին ու բօզին յէշում չի, հինչ վը՝ր հըսնում ա, յըրա յա անում ըսկէսուրին անա տամ...* (ՀԺՀ, VI, 232):

- Աղի ք՝ինիլ - Գործի դժվարությունը, ծանրությունը չգիտակցել: *Մսլան տը-դա, հանլա աղի յըս ք՝ըն՝ում, յը՝տնան փուշմընական ըս* (Զ):

- Աղուն աղի ասէլ, նանլ՝ուն՝ նանլի - *տե՛ս* Սը՝վէն սը՝վ ասէլ, սիպտակէն՝ սիպտակ:

ԱՂԻԼ - *տե՛ս* ԱՂԷԼ[1]:

ԱՂԻ-ԼԸՂԷ - *ած.* 1. Շատ դառն եւ աղի: *Աղի-լըղէ խօրանգ՝ ա, էտ կօտվէ՞* (Բ): 2. *փխբ.* Դառնություն պատճառող, ցավալի: *Քու աղի-լըղէ խուակէրքատ սը՝ր-տըս տը՝ռալ ա մին Ղալա* (Զ):

- Աղի-լըղէ ուտըցընէլ - *տե՛ս* Խըրաված օխծ ուտըցընէլ:

ԱՂԻՆՔ՝ - *տե՛ս* ԱՂԷՆՔ՝:

ԱՂԼՈՒԽ *(թրք. yaglik)* - *գ.* 1. Թաշկինակ: *՝ուրանն ծը՝ռքավը մին աղլուխ կ՝օր-ծից, դարկից նը՝ը՝ընածէն* (Բ): 2. Գլխաշոր, լաչակ: *Աղլուխը կըլխէն քըցանվ, տ՝ուս յը՝կավ* (Զ):

ԱՂՄԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Աղման անէլ - *տե՛ս* ԿԸՌՃԻԼ:

ԱՂՆԱԲԱԹ - *գ.* Սպիտակ կտոր, գործվածք, որ տանում է սանամայրը՝ որպես նվեր նորածինին: *Աղնաբաթը վէր տարավ, ծըմըթկանը շատ ուրխա-ցավ* (Բ):

ԱՂՆԱՂԱՋ/ԸՂՆԱՂԱՋ - *գ.* 1. Քիչ քանակությամբ աղուն, որ սովորաբար աղում են առանց հերթի եւ վճարի: *Պա-տառ աղնաղազ տարավ, աղից, պէրավ, վէր խօխօնցը սուսավ անէ* (Բ): 2. Կալատեղից անմիջապես ջրաղաց տարվող նոր բերքի աղունը: *Կալ՝ը թըկը՝ցէն, աղ-նաղազը տարէն ճէղացը* (Զ): 3. Մինչեւ ճաշելը թեթեւակի ուտելը: *Էս աղնաղազ ար, հինչ հա՞ց օտէլ* (Բ):

- Աղնաղազ անէլ - 1. Նոր բերքից քիչ ալյուր աղալ փորձելու համար: *Աղնա-ղազ ըրէն, կալ՝ըմը ի՞ծըմօրէ թըխէցէն* (Բ): 2. Մինչեւ ճաշելը թեթեւակի ուտել: *Տընատարը դունըդունէրէն աստա.- Մին աղնաղազ ըրէք՝, մինչը՝վ հավը իփի* (Զ):

ԱՂՈՒՔ - *տե՛ս* ԾՈՒԼՈՒԽԱ:

ԱՂՎԱՆ - *ած.* Գեղեցիկ, շքեղ: *Մին օ-րումը էտ աղվան պալատը քընդ՝ըքար ըն անում* (Զ):

ԱՂՎԷԼ[1] - *կբ. եւ չբ.* ԱՂԷԼ[1]-ի:

ԱՂՎԷԼ[2] - *կբ. եւ չբ.* ԱՂԷԼ[2]-ի:

ԱՂՎԷՍ/ԱՂՎԸ՝Ս *(գրբ. աղուէս)* - 1. *գ.* Շնազգիների ընտանիքին պատկանող վայրի կենդանի աղվես: *Դարաբաղ աղվէս շատ կա* (Բ): 2. *ած., գ.* Խորամանկ, շողոքորթ, նենգադավ մարդ: *Թէ-մ՝ուրէն էն մէծ ծառան շատ աղվէս մարթ ա ինիս, կըլ՝ի՝խ ա ընգնէս, վէր էտ ք՝ա՝սիբը իմաստուն մարթ ա...* (ՀԺՀ, V, 285): 3. Հարսանիքի ժամանակ հարսի կամ փեսայի տունը շտապող եւ հարսանքավորների գալն ավետող անձ: *Աղվէսը խաբարը պէրավ, խընա-մունք ՝ուր՝ուր՝ՕՆցավ ընգէն* (Զ):

- Աղվէսը՝ դուշավ, ըլըբըստըրակավ, ասլանը՝ կ՝ըն՝խտարավ, ջիյրանավ - Ամեն ոք ապրում է ըստ իր հնարավորությունների եւ պահանջների:

- Աղվէսը ՝ուրանն հանք՝ին շըն՝ահդ կըպի-րի - Ամեն ոք իր ասածը, սուտը հաստատելու համար յուրայինին է վկա բերում:

- Աղվէս ը՞ք փըռնում - Շատ ծուխ է, ոչինչ չի երեւում: *Նի յա մընում, թա.- Էս հիշքան ը՞ք պապռօզ քաշանլ. աղվէս ը՞ք փըռնում* (Բ):

- Ըղվէսին անա օխտը օր ճէլլի ծընվէլ - Շատ խորամանկ լինել: *Խէ՞, ինք՝ը գ՝ՈՒդՈՒմ չի՞, հինչ անէ, իզէն ըղվէսին անա օխտը օր ճէլլի յա ծընվալ* (Զ):

- Ըղվէսին անըմընը ա յը՝ր իլանլ, ամ-մա ըշխարքէս տօնը քանՕՆՂը կ՝ՈՒլընը ա - Հաճախ մեղադրում են անմեղին, իսկ մեղավորը մնում է ստվերում:

- Ըղվէսին շըն՝ահդ ՝ուրանն հանք՝ին ա - *տե՛ս* Աղվէսը ՝ուրանն հանք՝ին շըն՝ահդ կը-պիրի:

- Ըղվէսու կածան - Նեղ արահետ, ճանապարհ: *Էս հըղէ չի, ըղվէսու կա-ծան ա* (Բ):

ԱՂՎԸ՝Ս - *տե՛ս* ԱՂՎԷՍ:

ԱՂՏԸՐԱՆԾ - *տե՛ս* ԱՂՏԻՐԱՆԾ:

ԱՂՏԻՐԱՆԾ/ԱՂՏԸՐԱՆԾ - *գ.* Թթու դրած բանջարեղեն, ձուկ եւն: *Ըստալի-նը ասալ ա.- Վէր մը՝ռնիք՝ էլ, բիդի թօ-դիք՝ վէչ նէմէցը Բընըզուրա կ՝ինան խը-մէ, Մուխրընէսա աղտիրանծանն զակուս-կի անէ* (Զ):

ԱՂՐԱԲ - *տե՛ս* ԿԸՌԸՀԱՆՔ՝Ի:

ԱՂՐԻ - *տե՛ս* ԱՋԸՂ:

ԱՂՈՒ/ԱՂՈՒԿ *(թրք. agu)* - 1. *գ.* Թույն: *Կըլխէն ա քաշում, խըմում էտ աղուն...* (ՀԱԲ, 15,130): 2. *ած.* Դառը, դառնահամ: *Աղու տանանն ա կէրալ* (Բ):

- Աղու արմունջ/զանփռանն - Խիստ դառը: *Էտ աղու արմունջ խընձՕրընտ ըշ-տըղան ը՞ս պէրալ* (Զ):

- Աղուն թափէլ/վէր ածէլ - Դառնությունը, զայրույթն արտահայտել: *Կըզ-նըված ք՝ՈՒնՈՒմ ա տօն, աղուն թափում, դինջանում* (Զ):

- Աղուն կաթէլ/շընՕշընռալ - Դառնացած լինել, շատ տխուր լինել: *Փախչօղ ղօչին տարընն էլ աղուն կընթէլավ, ուշունց տալավ տօն կընք՝ինի...* (ՋՏ,Բ, 231):

- Աղու նօթը կաթէլ - *տե՛ս* Աղուն կաթէլ:

- Աղու տալ - Թունավորել, թույն տալ՝ խմեցնել: *Օցը թա՝ չէ՛, վը՝ր չէ, քէզ պիտի կընծէմ, աղու տամ, ըսպանէմ* (ՀԺՀ, VII, 230):

- Աղու տանանն կընծած - Անտրամադիր, մռայլ: *Էտ խէ ըտի աղու տանանն կընծած ը՞ս* (Բ):

- Աղու ցօրտ - *տե՛ս* ԱՅԱՋ:

- Աղու ուտըցընէլ - *տե՛ս* Խըրավածի օխծ ուտըցընէլ:

- Ըղուվավ ըղնէլ - Թունավորվել: *Օ-ցը թա՝ չէ՛, վէր չէ՛, անմանլ չի կ՝ալ, վը՝ր ա-սալ ըմ, տու պիտի ըղուվավ ինգ՝իս, մը՝ռնէս* (ՀԺՀ, VII, 233):

ԱՂՈՒՋ *(թրք. ağiz)* - *գ.* Նոր ծնած կենդանիների առաջին օրվա դեղնագույն կաթը: *Դանան շատ աղուզ կէրավ, ըստակից* (Բ):

- Աղուզ կէրած դանա - 1. Ժիր, առույգ: *Աղուզ կէրած դընու նըման լօբ-լօբ ա անում* (Բ): 2. Փորլուծով տառապող մարդ: *Աղուզ կէրած դանա յը՞ս, խըրէգ չՕլ ք՝ինի լի՞* (Բ):

ԱՂՈՒ-ՋԱՐԴԱՎ - *տե՛ս* ԱՂՈՒ-ԼԸՂԷ:

ԱՂՈՒԹԿ - *տե՛ս* ԱՂՕԹԿ:

ԱՂՈՒԹՔ - *տե՛ս* ԱՂՕԹԿ:

ԱՂՈՒԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Աղուլամիշ անէլ - *տե՛ս* Աղու տալ:

- Աղուլամիշ ինիլ - *տե՛ս* Ըղուվավ ըղնէլ:

ԱՂՈՒ-ԼԸՂԷ - *ած.* Շատ դառը: *Աղու-լըղէ տանանն ա* (Բ):

ԱՂՈՒԿ - *տեմ* ԱՂՈՒ:

ԱՂՈՒՀԱՑ/ԸՂԸՀԱՑ *(գրբ. աղուհաց)* - *գ.* 1. Աղ եւ հաց (որպես համեստ կերակուր): *Քյանսիբ տօն ա, աղուհացավ ըն յօլլա քյունում* (Բ): 2. *փխբ.* Երախտիք, լավություն: *Քու ըրած աղուհացըտ ախպէրը ախպօրը հըտէ անէլ չի* (Բ):

- Աղուհացը ծոյնանը յըրա յա ինում - Բարեկամությունը նեղ օրերին է ստեղծվում:

- Աղուհացը կըտըրէլ - *տեմ* Մինտըղ հացը կըտըրէլ:

- Աղուհացը մընանա քըցիլ - Ապերախտ լինել, երախտիքը մոռանալ: *Մէր քըսան տարվա աղուհացը մընանա քըցանլ ա, էն հինչ տըղամարթ ա՞* (Զ):

- Աղուհացը վէր ածէլ/տափավը տալ/կանլ - *տեմ* Աղուհացը մընանա քըցիլ:

- Աղուհաց կըտըրէլ - *տեմ* Հաց կըտըրէլ:

- Աղուհաց՝ սըրտը պէց - Չունեւոր՝ աղքատ է, բայց սրտաբաց՝ հյուրասեր: *Ինտէմը լյավ մարթ ա. աղուհաց՝ սըրտը պէց* (Զ):

- Աղուհացու հընգէր - *տեմ* Հացու հընգէր:

ԱՂՈՒՀԱՑԱՎ/ԸՂԸՀԱՑԱՎ - *տեմ* ՀԱՑԱՎ:

ԱՂՈՒՄՆԸ - *տեմ* ԱՂՈՒՆ:

ԱՂՈՒՆ/ԱՂՈՒՄՆԸ *(գրբ. աղուն)* - *գ.* Աղալու համար պատրաստված հացահատիկ: *Քյինամ ա, տըսնում մին հըլիվուր մարթ աղումը մըկնած, խոխան էլ խըտտած, աղումը պահում ա* (ՀԺՀ, VII, 365):

- Աղուն անէլ - 1. Հացահատիկը մաքրել եւ պատրաստել աղալու համար: *Էրկու մէշուկ աղուն ա ըրալ* (Բ): 2. *տեմ* Հաշան անէլ:

- Աղունը աղալ - *տեմ* Վըսկըռ(ք)նէն անլէր անէլ (ՎԸՏՍԿԸՌ-ի տակ):

- Աղունը ճըղացումը չուրըցընէլ - Գործը ձգձգել, ժամանակին չանել, անուշադրության մատնել: *Լոդուռ զատէր ըն, աղունը ճըղացումըն ըն չուրըցընում* (Բ):

ԱՂՈՒՏ - *ածական.* Աղ պարունակող: *Ըստըղէս վըղէրը աղուտ ա, վէշ մին պէն չի տըռնում* (Բ):

ԱՂՈՒՐ - *գ.* Սայլի անիվի թողած հետքը՝ փոս գիծը, ճանապարհին: *Էնքան ծարավ ա ընում, կըռանում ա ըղուրան ճուր խըմում* (Զ):

ԱՂՕԹԿ/ԱՂՈՒԹԿ/ԱՂՕԹՔ/ԱՂՈՒԹՔ *(գրբ. աղօթք)* - Աղոթելու գործողությունը, աղոթելը: ...*Աղօթկին կըէսըմը չօքում ա...* (ՀԱԲ, 15,123):

- Աղօթկ անէլ - *տեմ* ԸՂՕԹԷԼ: *Էս խազայինը Ըստրծու առաչը չօքում ա, ըսկըսում աղօթք անէլը...* (ՀԱԲ, 15, 123):

- Աղօթկ տըռնալ - Աղոթքի վերածվել, սրբագործվել: *Մէր յըխծէնը կընոխանց ըն աղօթկ տըռած, ամիա աղօթկ անօղընա ա խըրէգ* (Զ):

ԱՂՕԹՔ - *տեմ* ԱՂՕԹԿ:

ԱՃ *(գրբ. աճ)* - *գ.* Աճելը, մեծանալը, աճման գործընթաց: *Արըվ չի անում, արտէն աճը վընն ա կացալ* (Բ):

- Աճ տալ - *չբ.* Աճել, մեծանալ: *Էտ ծառըտ մին տըրնումը էնքան աճ ա տամ, կօխկէ սաղ ծըռէրան պիցըրանում ա* (Զ):

ԱՃԱՆԻ - *ածական.* Աչագեղ, գեղեցիկ աչքերով: *Կամ ըն, տըսնում մին ածանի խոխա էտ քօլէն տակէն էծին ծէծը ծընում ա* (Զ):

ԱՃԷԼ *(գրբ. աճեմ)* - *տեմ* Աճ տալ:

ԱՃԻ - *տեմ* ԱԽՃԻ:

ԱՃԻԿ - *տեմ* ԱԽՃԻԳ:

ԱՃՈՒԿ - *տեմ* ԱԽՃԻԳ:

ԱՃՈՒՃ-ՄԱՃՈՒՃ/ՅԱՃՈՒՃ-ՄԱՃՈՒՃ *(արաբ., պրս. yajuj-majuj)* - 1. *գ.* Հեքիաթներում թզաչափ հասակով եւ երկար մորուքով մարդիկ: *Էտ ածուճ-մածուճնէն մուտանան կուղընաս ըն, փըխչիս* (Զ): 2. *գ., ածական.* Խիստ կարճահասակ, գաճաճ (մարդ): *Մին քանէ ղըլըցէ ածուճ-մածուճ կընանէք ըրամակ ըն ընգալ* (Բ): 3. *գ.* Փոքր երեխաներին դիմելու կոչական բառ: *Մ ածուճ-մածուճնէ, տըղընէտ խէլունք կա՛ցէք, թա չէ փիս ա ինական* (Բ):

ԱՃԾ - *գ.* 1. Փոքրիկ աղջիկ: *Էտ ածն ուրան հալուքը չի* (Բ): 2. Չամուսնացած աղջիկ: *Տանը չօրք ածծ օնէ, հինչ անէ՞* (Բ):

ԱՃՕՂ - *տեմ* ՀԱՃՕՂ:

ԱՃՕՂՎԷԼ - *տեմ* ՀԱՃՕՂՎԷԼ:

ԱՃՕՂՈՒԹՆԻՆ - *տեմ* ՀԱՃՕՂՈՒԹՆԻՆ:

ԱՄ - *գ. մնկ.* - Շուն: *Ամը կընում ա* (Բ):

- Ամ անէլ - 1. Կծել: *Ծօնը ամ ա ըրալ* (Բ): 2. Ուտել: *Մանէն փափան ամ ա ըրալ* (Բ):

ԱՄԱ - *տեմ* ԱՄՄԱ:

ԱՄԱԳ *(թրք. emek)* - *գ.* 1. Վաստակ, աշխատանք: *Մին շատ քյանսիբ մարթու մին օղտ ա ընում, տա ուրան խոխէքը օղտէն ըմանգանվըն ար պահում* (ՆԼՂԺԲ, 79): 2. Երախտիք, խնամք: *Էտ խուխէն յըրա հօրը ամանգը շատ ա* (Բ):

- Ամանգ անէլ - Աշխատել, ջանք թափել: *Ամանգ ըրա, վէր օտիս* (ԱԲԲ, 14):

- Ամանգը ծօրը ածէլ/ըղնէլ/տըռնալ - Մեկի ջանքերը, վաստակը, երախտիքը իզուր անցնել, երախտիքը կորցնել: *Քըսան տըրռնըվա ամանգըս ծօրը ընըցէ* (Բ):

- Ամանգը ճուրը տըռնալ/քըցիլ/քըշիլ-տանէլ - *տեմ* Ամանգը ծօրը ածէլ:

- Ամանգը շօն տանէլ - *տեմ* Ամանգը ծօրը ածէլ:

- Ամանգը տափավը կանլ/տալ - *տեմ* Ամանգը ծօրը ածէլ:

- Ամանգ տինիլ - Ջանք թափել, խնամել: *Թուռներեն յըրա ամանգ շատ ա տիրանլ* (Զ):

- Ըմանգին ղադիրը վէր գիդվանր, սըվ յըզնանը տէնակ չար մուտանալ - Վաստակը, երախտիքը հաճախ չի գնահատվում:

ԱՄԱԳԴԱՐ *(պրս., թրք. emektar)* - *ածական.* Վաստակավոր, վաստակ՝ երախտիք ունեցող: *Ամանգդար մարթ ա, խօսկը կօտրը մէր* (Բ):

ԱՄԱԼ *(արաբ. amal (գործ, նպատակ, մտադրություն), թրք. amal (հույսեր, ցանկություններ)* - *գ.* Հնար, միջոց: *Թաքավէրը տէսնում ա, վէր էս ամալը անց չի կացավ, մըհէնգ էլ օգում ա մին օրիշ պէն անէ* (ՀԺՀ, V, 509):

- Ամալ անէլ - Հնար, միջոց գործադրել: *Մին օր էլ ըսկէսուրը մին ամալ ա անում. ախըր հացը ճէլլի յա պըրծընում* (ՆԼՂԺԲ, 111):

- Ամալ կանլ - 1. Հաջողվել, ստացվել, իրականանալ: *Հիշքան օգըմ ա քօն չինի, էլիա ամալ չի կամ, տա քընավ ա ընցնըմ* (ՀԺՀ, V, 16): 2. Ի հայտ գալ, առաջ գալ, ծնվել: *Միհէնգ ջընիլնէ յըն ամալ յըկալ, վէր հօրանցը-մօրանցը մարթու տըղ չընն տինում* (Զ): *Էտ օխտը ախպօրը ընըման ա ամալ յըկալ շէնին ազկէրը...* (ԱԱ, 19):

- Ամալ պիրիլ - 1. Հաջողացնել, գլուխ բերել, իրականացնել: *Վէզիրընն ասըմ ա.- Յըս կընքինիմ ասիմ, ամալ կըպիրիմ* (ՀԺՀ, V, 346): 2. Ի հայտ բերել, ծնել, աճեցնել: *Ըսկէսուրը ասմա.- Քա մօր ծէծը չուրանա, վէր քէզ ամալ ա պէրալ* (Զ):

ԱՄԱԼԱՆՈՐ *(թրք. alemdar (առաջնորդ, դրոշակակիր)* - *ածական.* Հնարամիտ, ճարպիկ: *Ջիվանշիրի մէլիքին ամալդար տըղան էն ախճիկը տանըմ ա ուրան հէտի* (ԼՂԲ, 338):

ԱՄԱԼԼՈՒ - *ածական.* Ինչ-որ բանի նման, չնչին, ոչ լիարժեք: *Թաքավէրին տըղան էս թանջիր ամալլուվէն ասըմ ա.- Մըթէն ա, քյինանք մըր տօն, քըշէրը կըկէնաս...* (ՆԼՂԺԲ, 71):

ԱՄԱԼ-ՉԱՄԱԼ/ԱՄԱԼ-ՈՒՄՈՒԼ/ԱՄԱԼ-ՔԱՄԱԼ - *տեմ* ԱՄԱԼ:

- Ամալ-չամալ անէլ - *տեմ* Ամալ անէլ:

ԱՄԱԼ-ՈՒՄՈՒԼ - *տեմ* ԱՄԱԼ-ՉԱՄԱԼ:

ԱՄԱԼ-ՔԱՄԱԼ - *տեմ* ԱՄԱԼ-ՉԱՄԱԼ:

ԱՄԱՆ[1] *(գրբ. աման)* - *գ.* Որեւէ իր, պնակ ուտելեղեն, հեղուկ, կերակուր եւն լցնելու համար: *Կընէգը քյինամ ա մին ամանի էլ պիրում, տինում ըստօլէն յիրան* (ՆԼՂԺԲ, 71):

- Աման լըպըզտօղ - Շողոքորթ, ստորաքարշ, քծնող: *Վէր ըտի աման լըպըզտօղ ա, հինչու վա՞ հըսալ...* (Ձ):

- Աման կօտըրէլ - Սովորություն, երբ հարսանիքից հետո տղայի տուն մտնելիս հարսը ոտքի մի հարվածով ջարդում է տան շեմին դրված ափսեն՝ ապահովելով իր բարեհաջող մուտքը:

- Ըմանէն տակէն թըքէլ - Ամանը լրիվ դատարկել, մինչեւ վերջ ուտել: *Ըմանէն տակէն թըքալ ա, էլիա՛ տ՝ուզնը* (Բ):

ԱՄԱՆ[2]/ԱՄՄԱՆ[2] *(արաբ., թրք. aman)* - *ձ.* Տագնապի, վշտի, հուսահատության բացականչություն: *Ամա՛ն, էս հինչ զ՝ուլ՝ում ար, վէր յը՞կավ մեր կըլ՝օխը* (Ձ):

- Աման-ամանը կ՝ալ - Սգալ, վայնասուն բարձրացնել: *Կավ ա, ըստակալ ա, ըստակալ ա, բօ՛լ ա, խըրէգ՝ աման-ամանը յը՞ք* (Բ):

- Աման-Աստուծ - *տե՛ս* ԱՄԱՆ[2]: *Ամա՛ն Աստուծ, մունք հունց կա՞նինք՝* (Ձ):

- Ամանը գ՝ունո՛ւդ՝ու(ր) - Որեւէ մեկին դիմելու աղաչական ձեւ՝ վատ օրում եմ, խղճա, ի սեր Աստծու: *Ժուղովուրթը ք՝ինում ըն թաքավը՞րէն կօշտը, թա՝ ամման գ՝ունո՛ւդ՝ու, մը՞զ էս ցավան ըզադէ* (ՀԺՀ, VII, 87):

ԱՄԱՆ[3] - *տե՛ս* ԱՄԷՆ[1]:

ԱՄԱՆԱԹ - *տե՛ս* ԸՄԱՆԱԹ:

ԱՄԱՆ-ՉԱՄԱՆ - *տե՛ս* ԸՄԸՆ-ՉԱՄԱՆ:

ԱՄԱՆՔ՝Ը - *տե՛ս* ԱՄԷՆՔ՝Ը:

ԱՄԱՐԱԹ *(արաբ. imarat (շենք, շինություն), պրս. emarat)* - *գ.* Շենք, ապարանք, դղյակ: *Հըսավ մին մը՞ծ ամարաթի, վը՞ր վը՞չ տ՝ոռնը օնէր, վը՞չ էլ ակուշկա* (ՀԺՀ, V, 86):

ԱՄԱՔԱ - *տե՛ս* Ա՝ՄԷԳ՝Ա՝:

ԱՄԲ *(գրբ. ամպ)* - *տե՛ս* ԹՕԽՊ:

ԱՄԲԱԽ-ՋԱՄԲԱԽ - *տե՛ս* ՏԷՐՏԱԿ-ՄԷՐՏԱԿ: *Ամբախ-զամբախ խըրէգ՝ խօսէ, ըսկանօղ չի կա* (Բ):

ԱՄԲԱՐ/ԱՆԲԱՐ *(գրբ. ամբար, պրս. anbar)* - *գ.* 1. Փայտե մեծ պահարան, շտեմարան՝ ցորեն, այլուր եւն պահելու համար: *Ամբարը տիրտակվից, այուն սը՞ռտը ճաքից* (Ձ): 2. Ջանազան իրեր եւ ապրանքներ պահելու շենք, պահեստ: *Էշին յըրա մին քանի չըվալ, պէն ըն տինիս, հըղէ ինիս բիդի թաքավէրէն վը՞սկուն ամբարը* (ՀԺՀ, V, 299): 3. Ջրաղացում՝ ջրաղացքարի վերեւում, տեղավորված ձագարաձեւ մեծ արկղ, որի մեջ լցնում են աղունը: *Լ՝ըհա աղունը ածալ ա ամբարը, ճըղասպանը վը՞ննը տէմ ա ըրալ, թա ճէղացը ճիրա՛ստում ըմ* (Ձ):

- Ամբար անէլ - *տե՛ս* ԸՄԲԱՐԷԼ: *...Ցօրէն ա ինք՝ օնում էտ վէսկավը, ամբար անում* (ՀԱԲ, 15,57):

- Ամբարը պէն չըղնէլ - Տարին անբերրի լինել, հացահատիկը պակաս լինել: *Արաշտ ա, տըժէր թա ըստարէ ամբարը պէն ըղնէ* (Բ):

- Ամբար տալ - *տե՛ս* ԸՄԲԱՐԷԼ:

- Ըմբըրնէն պընդըցընէլ - Շատ հացահատիկ կուտակել: *Շարմաղը ասում ա.-Թաքավը՞րըն ապրած կէնա, աշխարքըս սօվ ա ընընլ՝ական, ըմբըրնէտ պընդըցըրու, վար ժողովըրթը կըտօրվէն հուչ* (ՆԼՂԺԲ, 31):

ԱՄԲԱՐԻՇ(Տ)/ԱՆԲԱՐԻՇ(Տ) *(գրբ. ամբարիշտ, անբարիշտ)* - *ած.* Անհաշտ, անբարեհամբույր, կռվասեր: *Ըտըրան էրկու ամբարիշ հարթ նա ինա՛ում, սաղ օրը էն ըն ինա՛ում ո՝ւրո՛ւր նըհէտ կըռվէյիս* (Ձ):

ԱՄԲԱՐԻՇ(Տ)ՕԹՈՒՆ/ԱՆԲԱՐԻՇ(Տ)ՕԹՈՒՆ *(գրբ. ամբարիշտութիւն)* - *գ.* Անհաշտություն, կռվասիրություն: *Ամբարիշտութունը տահանց տըված ա* (Բ):

ԱՄԲԷՇՔ *(գրբ. ամբիծ (անարատ)* - *տե՛ս* ՆԱՄՈՒՍ: *Պա ամբէշք օ՞նէ, վէր հօրը-մօրը տըրօթուն անէ* (Բ):

ԱՄԲՈՒԼ/ԱՄԲՕԼ *(գրբ. ամոլ)* - *գ.* 1. Գութանին կամ սայլին անմիջապես լծվող մի զույգ եզ կամ գոմեշ, առաջին լուծը: *Ամբուլը կ՝ումըշնէրէն ա լըծում* (Բ): 2. Միասին լծվող լծկաններից յուրաքանչյուրը, լծակից: *Ամբուլը ամբուլէն նըհը՞տ վը՞ննը կըփըռնէ* (Բ): 3. *փխբ.* Միմյանց գործակից, օգնական, հատկապես ամուսնական զույգ: *Ո՝ւրո՛ւր նը-հը՞տ ամբուլ ըն* (Ձ):

ԱՄԲՕԼ - *տե՛ս* ԱՄԲՈՒԼ:

Ա՝ՄԳ՝Ա՝ - *տե՛ս* Ա՝ՄԷԳ՝Ա՝:

Ա՝ՄՋՈՒԿ *(պրս. amus (գինու մեծ գավաթ), թրք. emzik (ծծակ)* - Ծայրին ծծակ ամրացրած հարմարանք՝ շիշ, ոչխարի եղջյուր, որի մեջ կաթ են լցնում եւ կերակրում երեխային կամ անասունի ձագին: *Կավը ըստակալ ա, դընէն ա՝մզուկավ ա ուտըցընում* (Բ):

ԱՄԷԳ՝Ա՝ - *տե՛ս* Ա՝ՄԷԳ՝Ա՝:

Ա՝ՄԷԳ՝Ա՝/ԱՄԷԳ՝Ա/Ա՝ՄԳ՝Ա՝/Ա՝ՄԻԳ՝Ա՝/Ա-ՄԱՔԱ/ԱՄԷՔ՝Ա/Ա՝ՄԿ՝Ա՝/Ա՝ՄԷԿ՝Ա՝ - *գ.* Ամեն մեկը, յուրաքանչյուրը: *Ժուղովուրթըն էլ ամէգ՝ա մին կօժ յէր կալած հըվաքվալ ըն, թա՝ ճ՝ուր տանին* (ՀԺՀ, V, 22):

Ա՝ՄԷԿ՝Ա՝ - *տե՛ս* Ա՝ՄԷԳ՝Ա՝:

ԱՄԷՆ[1]/ԱՄՄԷՆ[1]/ԱՄԸՆ/ԱՄԱՆ[3]/ԱՄՄԱՆ[1] *(գրբ. ամեն)* - *դ.* 1. Առանց բացառության բոլոր, համայն: *Տատը ամմէնը, հինչը օնէ, տամ ա թօռնանը* (Բ): 2. Ամբողջից ամեն մեկը առանձին-առանձին վերցրած, յուրաքանչյուր: *Ամմէն մարթու մին դ՝ուդ կինի* (ԱԲԲ, 16):

- Ամէն աշկու քախծըր ըրվալ - Բոլորին հաճելի լինել: *Էտ հարթնը ամէն աշկու քախծըր ա ըրվամ* (Բ):

- Ամէնաց իժժանը թ՝անգ՝ըն ա - *տե՛ս* Թանգ՝ան իժժանը կա վէջ:

- Ամէն դ՝օնո՛ւմ ապան ք՝ա՝թա չի օտէլ - *տե՛ս* Ամէն դ՝օնո՛ւմ կ՝ը՞տը կ՝ը՞րան չի պիրիլ:

- Ամէն գօդա մին կ՝ա՝րի յա վէր ըղնում - Յուրաքանչյուրն իր տեսակետն է հայտնում: *Շինըցէք՝ մարթա մին պէն ըն ասում, ամէն գօդ՝ա մին կ՝ա՝րի յա վէր ըղնում* (Բ):

- Ամէն դ՝օնո՛ւմ կ՝ը՞տը կ՝ը՞րան չի պիրիլ - Միշտ չէ հաջողություն լինում: *...Մ՝ի բալա, ամէն դ՝օնո՛ւմ կ՝ը՞տը կ՝ը՞րան չի պիրիլ, ք՝ինի արտըտ հընձի՛, թօռը նի կօնէ, խօխէնք՝ըտ կըմընան տ՝ուզնը* (Ձ):

- Ամէն ըռութանա ո՝ւրա՛ն ըրո՛ւգ՝ունը օնէ, ամէն ըրո՛ւգ՝ուն՝ ո՝ւրա՛ն ըռութանան - Յուրաքանչյուր սկիզբ ունի իր վերջը, որին հաջորդում է նոր սկիզբ: *Թայդի մէ՛ր ըղնէլ, ամէն ըռութանա ո՝ւրա՛ն ըրո՛ւգ՝ունը օնէ, ամէն ըրո՛ւգ՝ուն՝ ո՝ւրա՛ն ըռութանան* (Ձ):

- Ամէն թօխպ թօռ չի պիրիլ - *տե՛ս* Ամէն փ՝ա՝դ՝ա՝ մ՝ա՝սա՝ն չինիլ:

- Ամէն թօղ ըրած քարու հը՞տա վազ տալ - Յուրաքանչյուր պատահական բանի ուշադրություն դարձնել: *Կօզի մը՞ծ մարթ ա, ամմա հա՝լ՝ա՝ ամէն թօղ ըրած քարու հը՞տա վազ ա տամ* (Բ):

- Ամէն ըրիլիք՝ մ՝ օ՝լ չանէլ - *տե՛ս* Ամէն փ՝ա՝դ՝ա՝ մ՝ա՝սա՝ն չինիլ:

- Ամէն խըմօրա ք՝ա՝թա՝ չի թըխվէլ - *տե՛ս* Ամէն փ՝ա՝դ՝ա՝ մ՝ա՝սա՝ն չինիլ:

- Ամէն ծակըծուկ նի մընանէլ, տ՝ուս կ՝ալ - Ամեն ինչում փորձված, հմուտ լինել: *Հ՝ա՝բին ամէն ծակուծուկ նի յա մըտալ, տ՝ուս յը՞կալ, ընդըրա կարէլ չըս խ՝ա՝փիս* (Ձ):

- Ամէն ծըմակ նի մընանօղ փ՝ա՝դ՝ անէլը գ՝իդ՝ալ չի - *տե՛ս* Ամէն փ՝ա՝դ՝ա՝ մ՝ա՝սա՝ն չինիլ:

- Ամէն հ՝ա՝չօղ շան վէր քար թօղ անիս, տափէն քար չի մընալ - Ամեն մի վայրահաչի, զազրախոսի չպետք է ուշադրություն դարձնել:

- Ամէն հըլէվուր իմաստուն չինիլ - *տե՛ս* Ամէն փ՝ա՝դ՝ա՝ մ՝ա՝սա՝ն չինիլ:

- Ամէն հըվավ պար կ՝ալ - Անսկզբունքային լինել, ամեն ինչին հավանել: *Ամէն հըվավ պար ա կ՝ամ, էն հինչ տըղամարթ ա՞* (Բ):

- Ամէն հինչ - Ամէն բան, բոլորը: *Մարթին տանում ա ո՝ւրա՛ն կօխկէ ութաղումը տինա՛ում, վը՞ր ընդէղան ամէն հինչ տը՞սնա* (ՆԼՂԺԲ, 36):

- Ամէն հինչու յըրա թըքած ինիլ - Ոչինչ հաշվի չառնել: *Ամէն հինչու յըրա թըքած օնէ, վէչ կօրծ ա անում, վէչ խառնըվում* (Բ):

- Ամէն հինչու յըրա թըքէլ - Ամեն ինչից հրաժարվել: *Էտ վէր ըսկանում ա, ամէն հինչու յըրա թըքում ա, տՀուս կ՚ամ, ք՚ինամ* (Ձ):

- Ամէն մարթ ծը՝ռքը Հուրան պէրանը կըտանէ - Յուրաքանչյուրն իր մասին է մտահոգվում, հոգ տանում:

- Ամէն մարթ Հանան չի տը՝ռնալ - *տե՛ս* Ամէն փանդա մանան չինիլ:

- Ամէն մարթու դանդ Հուրան հը՝տէ դանվա յա - Վիշտ ունեցողը ինքն է զգում իր վշտի ծանրությունը:

- Ամէն մարթու հալավ Հուրան ջանան մօտէ յա - *տե՛ս* Ամէն մարթ ծը՝ռքը Հուրան պէրանը կըտանէ:

- Ամէն մի - Յուրաքանչյուր: *Ամէն մի անզիզ օրավ հիրըվընեէրէն ծէն ա տաս ղօնաղ* (Բ):

- Ամէն շէնա մի պը՝լ պէրէք՚, Հըթէրքա/Խանսկա/Խընուշինակա՝ վէրը պըտահէ - Ասում են Հաթերք, Խանսկ, Խնուշինակ գյուղերի բնակիչների հասցեին՝ ակնարկելով նրանց խենթությունը:

- Ամէն տը՝ղ փըսնէլ - Ամենուր լինել, ամեն տեղ հայտնվել: *Անիրը՝ս կընէգ՚ ա, ամէն տը՝ղ փըսնում ա* (Բ):

- Ամէն փանդա մանան չինիլ - Ամեն ինչ, ամեն ոք չէ, որից հնարավոր է ցանկալի արդյունք ստանալ: *Սարօ անմին ասմա.- Ի՛նակ, ամէն փանդա մանան չինիլ, էտ ծառը խըրէգ՚ ճիրի՛, մին ա, էտ տանած յօր օնօղը չի* (Ձ):

- Ամէն փըլըստըրատէ տըվօղ վը՝սկէ չի - Արտաքին փայլը, տեսքը հաճախ խաբուսիկ է: *Ամէն փըլըստըրատէ տըվօղ վը՝սկէ չի, ա՛ ջըհիլնէ, յիշը՝ցէք՝ խանփվիք՚ վէչ* (Բ):

- Ամէն քարու տակա տՀուս կ՚անլ - Փորձված, ճարպիկ լինել: *Իզէն ամէն քարու տակա տՀուս կըկ՚ա, յէ՛շի, կըլօ՝խըտ օյին չի պիրի* (Ձ):

- Ամէն ք՚իլիդ էլ աչառ օնէ - Յուրաքանչյուր հարց լուծում ունի: *Տիժէր պէն չի կա, վէր ըսքըսալ ըմ, բիդի պըրծընիմ. ամէն ք՚իլիդ էլ աչառ օնէ* (Բ):

- Ամէն օր Հուրհուր տըսնըլական չընք - Բոլորն էլ մահկանացու են, պետք չէ իրար վատություն անել: *Ամէն օր Հուրհուր տըսնըլական չընք, ա՛ հայէր, Հուրհուր վը՝տան տակ քանդիլ մէք՚* (Ձ):

ԱՄԷՆ²/ԱՄՄԷՆ² *(գրբ. ամէն)* - *ձ.* Եղիցի, թող լինի: *Թամադան կէնացը պըրծընում ա, մարթա մին տը՝ղան ասում ըն՝ ամէն* (Բ):

- Ամէն ասէլ - Համաձայն լինել, հաստատել: *Կընէգ՚ը հինչը ասում ա, ինք՚ը ամէն ա ասում* (Բ):

ԱՄԷՆՔ՚Ը/ԱՄՄԷՆՔ՚Ը/ԱՄԸ՝ՆՔ՚Ը/ԱՄԱՆՔ՚Ը - Բոլորը: *Ամէնք՚ը Հուրանց դանդը ըն քաշՀում* (Ձ):

ԱՄԷՍ/ԱՄԸ՝Ս/ԱՄԻՍ *(գրբ. ամիս)* - *գ.* 1. Տարվա տասներկու մասերից յուրաքանչյուրը: *Մանդ ամսումը կավը բիդի ծընէ* (Բ): 2. Երեսուն օրվա ժամանակամիջոց: *Անց ա կէնում վէց-օխտը ամէս, մարթը ք՚ընում ա օխծէն տը՝սնալի* (ՀԺՀ, V, 224):

ԱՄԷՔ՚Ա - *տե՛ս* ԱՆՄԷԳԱՆ:

ԱՄԸ՝Ն - *տե՛ս* ԱՄԷՆ[1]:

ԱՄԸ՝ՆՔ՚Ը - *տե՛ս* ԱՄԷՆՔ՚Ը:

ԱՄԸ՝Ռ(ՆԸ) *(գրբ. ամառն)* - 1. *գ.* Ամառ՝ տարվա ամենաշոգ եղանակը՝ գարնանից մինչեւ աշուն: *Ամը՝ռնը յը՝կավ, դաշնիկնէրավ շէնը լըցցավ* (Բ): 2. *մ.* Ամռանը, ամառվա ընթացքում: *Ամը՝ռնը բիդի անիս, վէր ծըմը՝ռնը օտիս* (Ձ):

- Ամը՝ռնը շուքան հանզ անէլ, ծըմը՝ռնը՝ ուջաղան - Դժվարությունից խուսափել, հեշտն ընտրել: *Էն կարէլ չի ք՚ըզ նըհը՝տ հըրակաշ տը՝ռնա, էն ամը՝ռնը շուքան ա հանզ անում, ծըմը՝ռնը՝ ուջաղան* (Բ):

- Ըմրռնըվա թօռէն, ծըմրռնըվա ըրիք՚նակէն հըվատալ մէ՛ր - Պետք չէ վստահել մի բանի, որն անժամանակ է լինում: *Ըմրռնըվա թօռէն, ծըմրռնըվա ըրիք՚նակէն հըվատալ մէ՛ր, կօրծըտ սափալու փըռնէ* (Բ):

- Ըմռնըվա քարըն էլ ա ծըմը՝ռնը կըկըղում - Ամռանն անարժեք թվացող ուտելիքը ձմռանը գնահատվում է: *Ծըլօ՝ր ա, լի՞, քա՛ղէ, չուրուցըրու՛, ըմռնըվա քարըն էլ ա ծըմը՝ռնը կըկըղում* (Բ):

ԱՄԸ՝Ռ(ՆԸ)-ԾԸՄԸ՝Ռ(ՆԸ) - *մ.* Ամբողջ տարվա ընթացքում: *Ամը՝ռնը-ծըմը՝ռնը հանան շօ՝րէրըն ա կ՚ը՝ցը, շատ ա ք՚անիբ* (Բ):

- Ամը՝ռնը-ծըմը՝ռնը մին խը՝լքը հինչ ա՞նէ - Ասում են այն ժամանակ, երբ մոռանում են որեւէ բան կամ դժվարանում են որեւէ հարց լուծելիս:

ԱՄԸ՝Ս - *տե՛ս* ԱՄԷՍ:

ԱՆԻ *(արաբ., թրք. amu)* - *գ.* 1. *տե՛ս* ՂՕՐՓԷՐ: *Ըտըրան հէնգ՚ անմի յա ինանում, օխտը դայի, թուփ ըն տը՝ռնըմ, ըտըրա հը՝տէ մին լ՚ավ տօն շինանում* (Բ): 2. Տարեց տղամարդկանց դիմելու կոչական բառ կամ նրանց տրվող հարգական կոչում, որ գործածվում է հատուկ անունից հետո: *Քանապար անմի, էտ ըշտը՝ղ ը՞ս ք՚ունանում* (Բ): *Արշակ անմին լ՚ավ մարթ ա* (Բ):

ԱՆԻԳԸՋԸ *(թրք. əmiqizi)* - *գ.* Հորեղբոր աղջիկ: *Ասում ըն, քու անմիգըզը մարթու վա ք՚ինամ, աշկըտ լանսի* (Բ):

ԱՆԻԳԱՆ - *տե՛ս* ԱՆՄԷԳԱՆ:

ԱՄԻՍ - *տե՛ս* ԱՄԷՍ:

ԱՆԼԻԳ՚ *(գրբ. ամ (տարի, տարիք, թվական)* - 1. *գ.* Նորածին գառ, մինչեւ մեկ տարեկան գառ: *Տըղան բընական վէր յը՝կավ, Հանդօն մին անլիգ՚ կ՚առ մօրթից* (Բ): 2. *գ., ածական. փխբ.* Փոքրիկ (երեխա): *Մին անլիգ՚ խօխա մին ծէտ ա փըռնում: (ՆԱԲ, 80):*

- Անլիգ՚ կ՚առնը - Անմեղ, անփորձ, միամիտ: *Անլիգ՚ կ՚առն ա, էն հինչ ա՞ գ՚ուդում՝ կ՚ուղօթունը հինչ ա* (Ձ):

ԱՆԿ՚ԱՆ - *տե՛ս* ԱՆՄԷԳԱՆ:

ԱՄՀԱ - *տե՛ս* ԱՄՄԱ:

ԱՄՄԱ/ԱՄԱ/ԱՄՀԱ/ՀԱՄՄԱ/ՀԱՄԱ *(արաբ. emma, պրս. amma)* - 1. *շ.* Բայց, սակայն: *Ախճիգ՚ը նի յա մընընը, թա հանրը էլ նի մընընէ, ամմա տանը նըհէտ ա հանում* (ՀԺՀ, V, 633): 2. *ձ.* Զարմանքի, գոհունակության, հեգնանքի, հանդիմանության բացականչություն: *Ամմա՛ ծանն յը՝կավ, հա՛* (Բ):

ԱՄՄԱՆ[1] - *տե՛ս* ԱՄԷՆ[1]:

ԱՄՄԱՆ[2] - *տե՛ս* ԱՄԱՆ[2]:

ԱՄՄԷՂ/ԱՆՄԷՂ *(գրբ. անմեղ)* - *ածական.* 1. Մեղք չունեցող, ոչ մեղավոր: *Ամմէղ մարթ ար, փըռնը՝ցէն, տարէն տՀուրմա* (Բ): 2. Մաքուր, կուսական: *Ամմէղ ըխճըկանը տուվավ էտ օղռաշ մարթին, տարավ կըլօ՝խը կէրավ* (Ձ):

- Ամմէղ կ՚առնը - 1. Հեզ, խոնարհ, միամիտ: *Ամմէղ կ՚առն ա էտ խօխան, խէ թըխում ը՞ս* (Բ): 2. *ծաղր.* Իրեն անմեղի տեղ դնող մարդ: *Պա՛խ, պա՛խ, պա՛խ, ամմէղ կ՚առն ա, է՞լ հինչ կասիս* (Ձ):

- Ամմէղ տը՝ղը - Առանց մեղքի, հանցանքի, իզուր, անտեղի: *Ամմէղ տը՝ղը խը՝ղճ կընգանը շառավ տըվէն* (Ձ):

ԱՄՄԷՆ[1] - *տե՛ս* ԱՄԷՆ[1]:

ԱՄՄԷՆ[2] - *տե՛ս* ԱՄԷՆ[2]:

ԱՄՄԷՆՔ՚Ը - *տե՛ս* ԱՄԷՆՔ՚Ը:

ԱՄՄԻՆՕՎԻՆ - *տե՛ս* ԱՆՄԻՆՕՎԻՆ:

ԱՆՄԻՆՕՎԻՆ/ԱՄՄԻՆՕՎԻՆ/ԱՄՄԻՆՕՎԻՆ *(գրբ. ամենեւին)* - *մ.* Ամենեւին, երբեք, բնավ: *Թօռնը ասում ա.- Պա՛պէ, ամմինօվին դանդ չանիս, տու տանը կա՛ց, յէս ք՚ինամ թաքավը՝ղէն ջօղօբը տամ* (ՆԼՂԺԲ, 41):

ԱՆՄԻՆՕՎԻՆ - *տե՛ս* ԱՆՄԻՆՕՎԻՆ:

ԱՄՆԻՍՏՅԱ *(ռուս. амнистия, հուն. amnestia)* - *գ.* 1. Ներում եւ ազատություն պատիժներից, համաներում: *Ամնիստյա ըրէն, կ՚ուղէրէն ըզըդը՝ցէն* (Բ): 2. Օրենսդրական ակտ, որով շնորհվում է ներումը: *Ասում ըն՝ ամսի վէրջին ամնիստյա յա տՀուս կ՚ըլական, տը՝սնանք* (Ձ):

- Ամնիստյու տակ ըղնէլ - Համաներման ենթարկվել: *Քընթալաց Սիմօնը ամնիստյու տակ ընգավ, տուրմանն ը-զադվից* (Զ):

ԱՄՊԱԹԿԸ - *տե՛ս* ԱՄՊԷԹԿԸ:

ԱՄՊԱՅՄԱՆ/ԱՆՊԱՅՄԱՆ *(գրբ. անպայման (անչափ, անչափությամբ) - մ.* Անշուշտ, անտարակույս: *Ամպայման կ'ըլական ըմ, արիայիին կա՛ց* (Բ):

ԱՄՊԷԹԿԸ/ԱՄՊԱԹԿԸ/ԱՆՊԷԹԿԸ/ԱՆՊԱԹԿԸ *(գրբ. անպետ) - ած.* 1. Ոչ պետքական, ոչ պիտանի: *Ամպէթկը շօրէր ա, տար տէն ածէ* (Զ): 2. Անարժան, անարգ, անպիտան: *Ամպաթկը մարթ ա, ընդրանա միշտ բիդի սայաղ կէնաս* (Զ):

ԱՄՊԷՆ/ԱՆՊԷՆ/ԱՆՊԱՆ *(գրբ. անբան (բանականություն չունեցող, անասուն, անխելք) - ած.* 1. Անգործ, պարապ: *Բաշիր չանում, թա մին կօրծ անէ, սաղ օրը էն ա ամպէն տանը նըստած* (Բ): 2. *տե՛ս* ԼՕԴՈՒՐ: *Ամպէն ախճիգ'ը տանը կըմընա* (Զ):

- Ամպէնը կ'իրակ'ի յա պէն անում - Անբանը՝ ծույլը, անպատեհ ժամանակ է գործ ձեռնարկում: *Ամպէնը կ'իրանկ'ի յա պէն անում. Սօնան կացալ ա, կացալ, հօնձին վախտը յօրդաննէն քանդալ, վէր լըվանա* (Զ):

- Ամպէն Հուռի - Շատ ծույլ (մարդ): *Էտ ամպէն Հուռի յա, ըտրրանավ տօն պահող չինիլ* (Զ):

ԱՄՊԷՆ-ԱՄՓԻՇ - *ած.* Անբան, ծույլ, անշնորհ, անհոգ: *Ամպէն-ամփիշ ախճիգ' ա, ընդրա հու բի՞դի օզի* (Բ):

ԱՄՊԻՆՕԹՈՒՆ/ԱՆՊԻՆՕԹՈՒՆ/ԱՆՊԱՆՕԹՈՒՆ *(գրբ. անբանություն (անբանի բնություն, անխելքություն, լռություն) - գ.* 1. Անգործություն, պարապություն: *Ամպինօթունը դարաբաղցուն հը-տէ չի Աստուծ ըստ'ղծալ* (Բ): 2. *տե՛ս* ԼՕԴՈՒՐՕԹՈՒՆ: *Ամպինօթունը ըտրրանց տօնը քանդից* (Բ):

ԱՄՍԱՆԸ - *մ.* Ամբողջ ամսվա ընթացքում: *Ամսանը մին թանիրանվ քըսան ուրական ա անում* (Զ):

ԱՄՓԻՇ/ԱՆՓԻՇ - *տե՛ս* ԱՄՊԷՆ:

ԱՄՓԻՇ-ԱՆՓԸԹԸՐՕԿ - *տե՛ս* ԱՄՊԷՆ-ԱՄՓԻՇ: *Էս հինչ ամփիշ-անփըթրրօկ զատէր տուս յէկին Խըչանին ըխճըկէրքը* (Ջ�տ, Ա, 99):

ԱՄՕՂԼԻ *(թրք. əmioğlu) - գ.* Հորեղբոր որդի: *Ախպէրը էնքան չի ընդրա հը'տէ ըրալ, հիշքան ամօղլին* (Զ):

ԱՅ *(գրբ. այ) - ձ.* 1. Կոչական բացականչություն: *Մյ ախպէր, խսխսնցըտ խէ տըրօթուն չը՞ս անըմ* (Բ): 2. Հիացմունքի, ուրախության բացականչություն: *Մյ, մին լ'ավ ք'ը'փ ըրէնք, հա՛* (Զ): 3. Ըղձական բացականչություն՝ երանի թե: *Մյ թա մին թօռ կ'ա, հա՛* (Բ): 4. Ցուցական բացականչություն՝ ահա: *Մյ, էս տըղան ա կ'օղը* (Զ): 5. Սպառնական բացականչություն: *Մյ, կըտը'սնաս՝ հինչ օրըմ քըցըլական ք'ը'զ* (Զ):

- Այ էր, ավ էր - Զարմացական արտահայտություն: *Թաքավէրը մընամ ա զարմացած. այ է՞ր, ավ է՞ր, էս հէնգ' մունուտումը հինչ ըրա՞վ...* (ՀԱԲ, 15,19):

- Այ թօբա - *տե՛ս* Թօբա թա:

- Այ ք'ը'զ պէն - *տե՛ս* Այ էր, ավ էր: *Մյ ք'ը'զ պէն, մին քըշէրումը էսքան ծունը հիբ յը'կավ* (Զ):

ԱՅԱ - *գ.* 1. Մեծ մայր, տատ: *Այան վէր խըլը'ղ չի կը'ցավ, էլ հինչ ա՞յա* (Զ): 2. Ծեր կանանց դիմելու կոչական բառ: *Մյա, մին ք'օհնա քաթ ասէ՛, ըսկանանք* (Բ):

- Այուն վը'ռէն դընգըլդըվան ար պակաս - Ասում են այն ժամանակ, երբ կարեւոր գործերով ծանրաբեռնված մեկին նոր՝ ոչ էական գործ են հանձնարարում: *Այուն վը'ռէն դընգըլդըվան ար պակաս, կօրծըս խըրէգ' ա՞, տու վէլ կըլխավընս ըս խընգարում* (Զ):

ԱՅԱԶ *(թրք. ayaz (ձմռան պարզկա եղանակ) - գ.* Սառնամանիք: *...Տը'սնըմ չը՞ս հուց ա ասթըխէրը փըլըստըրատէ տամ, այազ վախտը միշտ իտի յա ընը՛մ* (ՀԺՀ, V, 68):

- Այազ տանել - *տե՛ս* Ցօրտը տանել: *Ծառէրը սաղ այազ տարալ ա* (Բ):

ԱՅԱՄ *(թրք. eyyam) - գ.* Ժամանակաշրջան, դարաշրջան: *Էս այամը փիս այամ ա, բիդի ուրուր դըլըդալու անինք', կըլխընէս պահինք'* (Զ):

ԱՅԱՆ[1] - *ձ.* 1. Վշտի, ցավի, ափսոսանքի բացականչություն: *Այա՛ն, պա հուց կա՞նիք' տուք* (Բ): 2. Զարմանքի բացականչություն: *Այա՛ն, խէ տու վէլ ը՞ս Մաքաղաթէն թօռնը* (Բ):

ԱՅԱՆ[2] *(թրք. ayan (պարզ) -* Գործածվում է կապակցության մեջ:

- Այան անել - *տե՛ս* Ըշխարքավըս մին անել (ԱՇԽԱՐ(Ք)-ի տակ):

ԱՅԱՆԷ - *տե՛ս* ԱՅԱՆ(1): *Մարը ծույնէրը վէր ա թակում.- Այանէ՛, էս հինչ կըրակու մաչ ընգէ յը'ս* (Զ):

ԱՅԱՆՔ - *գ.* Կերակրի կամ թթվի մեջ դրվող համեմունքներ: *Խուրանգ'ին համը այանքըն ա պուրում* (Զ):

ԱՅԲ/ԱՅԻՓ *(գրբ. այբ) - տե՛ս* Ա[1]:

- Այբը բէնան ճօկէլ - *տե՛ս* Ա-ն ու Բ-ն ճօկէլ:

ԱՅԲԷՋԱՌ - *տե՛ս* ԱՅԲԷՋԱՐ:

ԱՅԲԷՋԱՐ/ԱՅԲԷՋԱՌ *(թրք. eybəcər) - ած.* Տգեղ, այլանդակ: *Կ'ամ ա, տը'սնում էրկու այբէջար մարթ ուրանց տանը* (Բ):

- Այբէջար անել - Տգեղացնել, այլանդակել: *Լըհա վար էտ մարթը ք'ինամ ա վը'ռսի, ուշըփնէն յըրա յըն տանռնում, այբէջառ անում տըրան* (ՆԼՂԺԲ, 25):

- Այբէջար ինիլ/տը'ռնալ - Տգեղանալ, այլանդակվել: *Ք'ինալանվ էտ կընէգ'ը այբէջար ա տը'ռնում, թաքավէրին տըղան անջախ-անջախ կըլխու վա ըղնում, վէր էտ հուրան նըշանածը չի* (Զ):

ԱՅԴԻՆ *(թրք. aydin (բացահայտ) -* Գործածվում է կապակցությունների մեջ:

- Այդին անէլ - Բացահայտել, հայտնել, տարածել: *Կընէգ'ը ասմա.- Մ մարթ, այդին մէ՛ր անէլ, մէր պադէվըն ըս վընատակ տամ* (Զ):

- Այդին ինիլ/տը'ռնալ - Բացահայտվել, հայտնի դառնալ, տարածվել: *Ըտի ըտրրա ըրածը այդին ա ինում* (Բ):

ԱՅԸՄԻՇ - *տե՛ս* ԱՅԻՄԻՇ:

ԱՅԻԲ/ԱՅԻԲ *(արաբ. ayb, aib, թրք. ayip) - գ.* 1. Ամոթ, պատկառանք: *Վէ՛չ համանչ օնէ, վէ՛չ այիբ* (Բ): 2. Արատ, թերություն: *Մարը կղզնըվում ա, թա.- էն գ'ըզանալ ըխճըկանը հինչ այիբ օ՞նէ, վէր օգ'ում չըս* (Զ):

- Այիբ անէլ - Ամաչել, պատկառել: *Մարթիք' նօրըմընանն ըն հըվաքվում, թա.- Մ տնաշին, պա այիբ չը՞ս անում, էտ կընգանը խէ թակում ը՞ս* (Զ):

- Այիբ չինի ասէլը/հըրցընէլը - Ասում են, երբ ցանկանում են մեկից մի գաղտնիք իմանալ կամ հանդիմանել որեւէ հարցում: *Մա՛թոս, այիբ չինի ասէլը, խէ տըղէտ փըսակում չը՞ս* (Զ):

ԱՅԻԲ - *տե՛ս* ԱՅԻԲ:

ԱՅԻՄԻՇ/ԱՅԸՄԻՇ/ԱՅՄԻՇ/ՈՒՅԸՂԼԱՄԻՇ/ՕՅԱՂԼԱՄԻՇ/ՕՅԱՄԻՇ *(թրք. ayilmak (զգաստանալ, սթափվել) -* Գործածվում է կապակցությունների մեջ:

- Այիմիշ անէլ - Զգաստացնել, սթափեցնել: *Կընէգ'ը մին կ'ը'վաթ ճուր ա ածում մարթին կըլխէն, այիմիշ անում* (Բ):

- Այիմիշ ինիլ/տը'ռնալ - Զգաստանալ, սթափվել: *Էս տըղան վը'ր օյամիշ ա իլալ, կըլօխ ա յէր կալալ, ք'ինացալ* (ՀԺՀ, V, 43):

ԱՅԻՆ-ՕՅԻՆ/ԱՅՆՕՅԻՆ *(թրք. ayen-oyen) -* 1. *գ.* Երկրորդական, մանր-մունր բաներ: *Մին էրկու ային-օյին ա տանում, վէր ծախէ, ամալ չի կ'ամ* (Բ): *ած.* 2. Չնչին, անարժեք: *Մին ային-օյին կօրծ ա փըռնալ, օխտը տը'ռ ասալ* (Զ): 3. Կիսավեր, խարխուլ: *Կ'ամ ըն, տը'սնում մին ային-օյին տօն, մաչին մին պառավ* (Զ): 4. *ած., մ.* Տակից-գլխից, անմիտ, անիմաստ: *Ային-օյին խսսիլ մի՛, Քու հանր ա իմ հանէրը...* (ԼՂԲ, 89):

ԱՅԻՇԻ - *տե՛ս* ԱՇՇԻ:

ԱՅԻՓ - *տե՛ս* ԱՅԲ:

ԱՅԻՓՊԷՆ *(գրբ. այբբեն)* - *գ.* Այբուբեն: *Էտ վարժաբէդը մին թանիրանվ շէնին խօխօնցը այիփպէնը սըվըրցընում ա* (Զ):

ԱՅԼԷՐ - *տե՛ս* ԱԼԼԷՐ:

ԱՅԼԻԿԷՐՊ/ԱՅՐԻԿԷՐՊ *(գրբ. այլակերպ (ուրիշ կերպ)* - *ած.* Այլակերպված, այլանդակված, տգեղ: *...Տէհնում ըն էտ ախճիգ՝ը ճանապարհին վը՛ստը կացած, իրէս-միրէսը ցըխօտ-մըխօտ, այլիկերպ, լի՞...* (ՀԱԲ, 15, 43):

ԱՅԼԻԿԷՐՊՎԷԼ/ԱՅՐԻԿԷՐՊՎԷԼ *(գրբ. այլակերպիմ (կերպարանքը փոխել)* - *չբ.* Այլակերպվել, այլանդակվել, տգեղանալ: *Դաշանգ՝ ախճիգ՝ ար, մարթու ք՝ը՛ցավ, այլիկերպվից, տը՛ռավ մին կ՝էշ սադանա* (Զ):

ԱՅՂԸՌ/ԱՅՂԸՐ *(թրք. aygir)* - *գ.* 1. Որձ ձի, հովատակ: *Էտ այղըռը վէր ըստակում ա, շէնումը էլ վը՛ռց ծի չի մընամ* (Բ): 2. *փխբ.* Կնամոլ տղամարդ: *Այղըռ զատ ա, կընգանը մըհալ չի քըցանում* (Բ): 3. *փխբ.* Տգեղ կին: *Էտ այղըռը հինչ ա՞, վէր օգ՝ալ ըս* (Բ):

ԱՅՂԸՐ - *տե՛ս* ԱՅՂԸՌ:

ԱՅՄԻԾ - *տե՛ս* ԱՅԻՄԻԾ:

ԱՅՆ - *տե՛ս* ԷՅՆ:

ԱՅՆԱ *(թրք. ayna)* - *գ.* 1. Ապակի: *Փինջիրին այնան կօտըրալ ա* (Բ): 2. Հայելի: *Ռէվը այնէն մաչին ուրանն վէր տըսնաս ա, կըտըղէս ա, գ՝իդանս ա, թա ծրանուշ դէվ ա* (Զ):

- Այնա շինիլ - Լավ մաքրել, փայլեցնել: *Պըռավէն ախճիգ՝ը էտ ըմընէն լըվանում ա, այնա շինում* (Զ):

ԱՅՆԱԼՈՒ - *գ.* Հնատիպ հրացան: *Ըտըրան մին լ՝ավ այնալու վա ինում, տամ ա էտ մարթին, վէց փութ կ՝անրի ինք՝ օնում* (Զ):

ԱՅՆՕՅԻՆ - *տե՛ս* ԱՅԻՆ-ՕՅԻՆ:

ԱՅՇԻ - *տե՛ս* ԱՇՇԻ:

ԱՅՍՕՐԻ *(գրբ. ասորիք)* - *գ.* 1. Ասորացի, ասորի: *Այսօրին ասից՝ թա օգում ըս թորքէն քըշտէն ապրիս, հայ պիտի հնիս* (ՆԱԲ, III, 114): 2. *փխբ.* Փնթի, թափթփված, թափառական մարդ: *Էտ այսօրին հինչ ա՞, վէր հընգըրոթուն ըս անում* (Բ):

ԱՅՐԱՊԸԼԱՆ/ԱՅՐՕՊԸԼԱՆ *(ռուս. аэроплан, ֆր. aeroplane)* - Ինքնաթիռ, օդանավ: *Էտ թաքավէրը ուրան մը՛ծամը՛ծնէրին նըհէտ խօրըրթ ա անըմ, վը՛ր էն մին օրը այրօպըլանավ թըռչի, ուրան սահմաննին տը՛սնա* (ԼՂԲ, 330):

ԱՅՐԱՊՕՐՏ/ԱՅՐՕՊՕՐՏ *(ռուս. аэропорт)* - *գ.* Օդանավակայան: *Ըստէփանակ՝ը՛ռտա այրապօրտը կօրծ չի անում* (Բ):

ԱՅՐԸՄ - 1. *գ.* Քրդական ցեղ: *Այրըմնէն, ասում ըն, շատ ըն իլալ վընաս տայիս* (Զ): 2. *ած. փխբ.* Կոպիտ, անտաշ, վայրագ: *Այրըմ ժուղօվուրթ ըն էտ շինըցէք՝* (Բ):

ԱՅՐԻԿԷՐՊ - *տե՛ս* ԱՅԼԻԿԷՐՊ:

ԱՅՐԻԿԷՐՊՎԷԼ - *տե՛ս* ԱՅԼԻԿԷՐՊՎԷԼ:

ԱՅՐՕՊԸԼԱՆ - *տե՛ս* ԱՅՐԱՊԸԼԱՆ:

ԱՅՐՕՊՕՐՏ - *տե՛ս* ԱՅՐԱՊՕՐՏ:

ԱՆ - *տե՛ս* Ա[4]:

ԱՆԱ[1] - Բառ-մասնիկ, որ, հարադրվելով տրական հոլովաձեւին, կազմում է բացառականի վերլուծական ձեւը: *Մարթին պըհէյիս ապրանքը ուրանն անա վախէլ չըբիդի* (ՆԱԲ, II, 70):

ԱՆԱ[2] *(թրք. ana (մայր)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Անադան դօղմա *(թրք. anadandoğma)* - Մորից ծնված՝ հարազատ: *...Մէր նանամ-սանամ խանըմնէն լայէդ չընա անըմ ուրանց անադան դօղմա խուխօնցը ծէծ տան...* (ՋՏ,Բ, 100):

ԱՆԱԲՈՒՌ - *ած.* Անամոթ, անպատկառ: *Անաբուռ կընգանը շառան պըրծումը չինիլ* (Զ):

ԱՆԱԽԱԹՈՒՆ/ԱԼԱԽԱԹՈՒՆ/ՄԱՄԱԽԱԹՈՒՆ/ԱՂԱՋԱԽԱԹՈՒՆ - *գ.* 1. Խխունջ՝ անատամների տիպին պատկանող պարուրաձեւ խեցիով փափկամորթ կենդանի: *Թօռը յը՛կավ, անախաթունավ բաստանը լըցցավ* (Բ): 2. *փխբ.* Նենգ, խարդախ մարդ: *Էտ անախաթունը հանալ շատ մարթու տօն ա քընդիլանն* (Բ):

ԱՆԱՆԻՄԿԱ *(ռուս. анонимка)* - *գ.* Անստորագիր նամակ՝ գրություն, զրպարտագիր: *Շինացէք՝ վանրին անանիմկա յընն իլալ կ՝իրիս նախագէն անա* (Զ):

ԱՆԱՇԱ *(թրք. anaša)* - *գ.* Մի տեսակ թմրադեղ, հաշիշ: *Անաշա ծընխէլի հը՛տէ փըռնը՛ցէն, հէնգ՝ տարէ տուվէն* (Բ):

ԱՆԱՇԱԽՕՐ - *ած.* Թմրամոլ, հաշիշ ծխող: *Խը՛ղճ մարթը հինչ ա՞նէ. էրկու տըղա օնէ, ճօխտը՝ անաշախօր* (Բ):

ԱՆԱՋ - *գ.* Մոխրագույն կրծքով, դարչնագույն մեջքով, սեւ պուտերով փոքրիկ թռչնատեսակ: *Մին դաշանգ՝ անաջ ա փըռնում, մէխկընն ա կ՝ամ, մին էլ պէց ա թօղնում* (Զ):

ԱՆԱՌԱԿ *(գրբ. անառակ (անամոթ, անկարգ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Անառակ ցավ - Անբուժելի հիվանդություն: *Անառակ ցավան ընգավ, մը՛ռավ* (Բ):

ԱՆԱՍՏՈՒԾ *(գրբ. անաստուած)* - *ած.* Անխիղճ, անգութ: *Անաստուծ մարթ ա, հօրընն էլ չի տըրօթուն անում* (Բ):

ԱՆԱՍՈՒՆ(Ք) *(գրբ. անասուն)* - *ած., հոգն.* Ընտանի կենդանիներ: *Անասունքը տանում ա հանդը, ինք՝ընն էլ ցակատը յօր օնում, նի մընում մօտէ քօլօտը, վէր ճէխ անէ* (Զ):

ԱՆԱՎ - Բառ-մասնիկ, որ, հարադրվելով տրական հոլովաձեւին, կազմում է գործիականի վերլուծական ձեւը: *Ըխճըկանը անավ փասպարք ա անում, թա՝ ճէլլի յը՛ք* (Զ):

ԱՆԱՐԹԱՐ *(գրբ. անարդար)* - *ած.* Ոչ արդար, անիրավ, անարդարացի: *Հանրը տըղէն ասմա.- Հինչ օգ՝ում ըս, ըրա՛, ամմա անարթանր կօրծա ղըրա՛ղ կաց* (Զ):

ԱՆԱՐԽԻ - *տե՛ս* ԱՆԱՐԽՅԱ:

ԱՆԱՐԽԻՍՏ *(ռուս. анархист)* - *գ.* Ընդհանուր կարգապահությանը չեն-թարկվող անձ: *Հանբանն տըղան անարխիստ ա, վէշ մին կօրծ անում չի* (Զ):

ԱՆԱՐԽՅԱ/ԱՆԱՐԽԻ *(ռուս. анархия, հուն. anarchia)* - 1. *գ.* Անիշխանություն, անկարգություն, խառնաշփոթություն: *Անարխյա յա, հինչը կարում ըս, ըրա՛, ծը՛ռքատ փըռնօղ չի կա* (Բ): 2. *ած.* Անիշխան, անկարգ, խառնաշփոթ: *Անաստուծ տը՛ղը կա՞ց, անարխյա տը՛ղը կէնալ մէ՛լ* (ԱԲԲ, 16):

ԱՆԲԱԽՏ *(գրբ. անբախտ)* - *տե՛ս* Ք՝ԱՄԲԱԽՏ:

ԱՆԲԱԽՏՕԹՈՒՆ *(գրբ. անբախտութիւն)* - *տե՛ս* Ք՝ԸՄԲԸԽՏՕԹՈՒՆ:

ԱՆԲԱՇԱՐ - *տե՛ս* ԱՆԲԱՇԻՐ:

ԱՆԲԱՇԻՐ/ԱՆԲԱՇԱՐ - *տե՛ս* ԲԷՅԲԸՇԸՐԸՂ:

ԱՆԲԱՐ - *տե՛ս* ԱՄԲԱՐ:

ԱՆԲԱՐԻՇ(Տ) - *տե՛ս* ԱՄԲԱՐԻՇ(Տ):

ԱՆԲԱՐԻՇ(Տ)ՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱՄԲԱՐԻՇ(Տ)ՕԹՈՒՆ:

ԱՆԲՈՒԹԱ - *ած.* Անհույս, անապավեն: *Անբութա գ՝անք ա, մին օր էլ վէր ընք ըղնական, մը՛ռնինք՝* (Զ):

ԱՆԳ *(գրբ. անգղ)* - *գ.* Գիշատիչ թռչուն՝ անգղ: *Մէհէտ անգը մին ըլբաստըրակ փըռնից, վէր տանէ ճուտէրէն հը՛տէ* (ԱԱռ, 64):

ԱՆԳԸԼԱՄԱՋ - *տե՛ս* ԱՆԳԼԱՄԱՋ:

ԱՆԳԸՐԱԳ՝ԷՏ - *տե՛ս* ԱՆԿ՝ԸՐԱԿ՝ԷՏ:

ԱՆԳԸՐԱԳ՝ԻՏ - *տե՛ս* ԱՆԿ՝ԸՐԱԿ՝ԷՏ:

ԱՆԳԻ *(հ.ե. *anguhi- (օձ, որդ)* - *ած.* Նիհար, վտիտ: *Մին անգի հավ ա մօրթում, փըսէն ղօնաղ անում* (Զ):

- Անգի տը՛ռնալ - Նիհարել, հյուծվել: *Էնքան կօրծ ա ըրալ, անգի յա տը՛ռալ* (Բ):

ԱՆԳԻՆԱ *(ռուս. ангина, լատ. angina)* - *տե՛ս* ՊԸԿՕՌՈՒՑ:

ԱՆԳԼԱՄԱՋ/ԱՆԳԸԼԱՄԱՋ *(թրք. anlamaz (անհասկացող)* - *ած.* 1. Մեծ, հսկա, անճոռնի: *Թաքավէրին տըղան նի յա մընում էտ օթաղը, տը՛սնում մին անգլամազ օշաի քօն իլանծ* (Զ): 2. Բթա-

միտ, ապուշ: *Մին անգլամազ մարթ օնէ, մին անգլամազ տըղա, խըէոճ ինի էն, հինչ ա՞նէ* (Բ):

ԱՆԳԱԼ *(թրք. engel)* - 1. *գ. տե՛ս* ԱԼԷԳ: *Ամէն մինին կ՚էտէն մաչ տը՛ղը վը՛ենն ա կըցնում, հըրցընում, թա՝ ա՛ կընէգ՚, ա՞հէ, տը՛սնամ հինչ անգ՚ալ օնիս* (ՆԼՂԺԲ, 67): 2. Ապիկար, անկարգ: *Անգ՚ալ մարթին խօխէնք՚ը տ՚ուզնը կըմընան* (Զ): 3. *գ.* Փորձանք: *Էտ մարդիմազարը մէր կըլ՚ոխը մին անգ՚ալ ա պիրլ՚ակ՚ան* (Զ):

- Անգ՚ալ անէլ - *տե՛ս* Ալէգ՚ անէլ: *Անգ՚ալ ա ըրալ, հէրիք՚ չի, հ՚ալ՚ ծըծաղում էլ ա* (Բ):

- Անգ՚ալ՚ ք՚օք անէլ - *տե՛ս* Ալէգ՚ անէլ: *Բօլ ա, հիշկան անգ՚ալ՚ յըս ք՚օք ըրալ* (Բ):

ԱՆԳ՚ԱԼ(Լ)Ի *(թրք. angalli)* - *ած.* 1. Թերություն, արատ ունեցող: *Անգ՚ալ՚ի ծի յար, ծըխը՛ցէ, պըրծէ* (Բ): 2. *փխբ.* Հղի: *Էտ անգ՚ալ՚ի հէյվանըտ էս ցուրտավը խէ կապում չը՞ս կ՚ումումը, կըվըրթ՚ատի* (Բ): 3. Փորձանք բերող: *Անգ՚ալ՚ի խուխէն յըրա միշտ բիդի հ՚ասա կէնաս* (Զ):

ԱՆԳ՚ԷՆԳ՚ԻԾ - *տե՛ս* ՉԸԳ՚ԻԴԱԼԱՎ:

ԱՆԳ՚ԷՏ/ԱՆԳԷՏ *(գրբ. անգէտ)* - *ած.* 1. Անտեղյակ: *Ամմէն հինչան անգ՚էտ մարթ ա* (Բ): 2. Տգետ: *Ըտըրան ինըմ ա մին անգ՚էտ մարթ* (Զ): 3. *տե՛ս* ՉԸԳ՚ԻԴԱԼԱՎ:

ԱՆԳ՚ԻԴԱԼՕՔ - *տե՛ս* ՉԸԳ՚ԻԴԱԼԱՎ:

ԱՆԳ՚ՈՒՄԱՆ - 1. *ած.* Անհույս, հույս չունեցող: *Անգ՚ուման մարթ ար, մը՛ռավ, ըզադվից* (Զ): *ած., մ.* 2. Անտեղյակ, անիրազեկ: *Տըղան ք՚ը՛ցավ սիզօն, մարը ըտի նը՛ստա անգ՚ուման մը՛ռավ* (Բ): 3. Անհետ, առանց հետք թողնելու: *Ա՛ղթ՚ար մարթ ար, փըռնը՛ցէն, տարէն, անգ՚ուման կուրցըրէն* (Զ):

ԱՆԳ՚ՈՒՆ - *տե՛ս* ԱՆԳ՚ՈՒՆ:

ԱՆԳ՚ՈՒՆ/ԱՆԳ՚ՈՒՆ *(գրբ. անկիւն, անգիւն)* - *գ.* 1. Առարկայի կողային մակերես, կողք, կող: *Յըշիգ՚ին մին անգ՚ունը դ՚ուզ ա, մինը՝ ծօռ* (Բ): 2. Որոշ ուղղությամբ ընկած բնակավայր, երկիր, գավառ: *Մէր ընգ՚ունին թօթը բօլ ա* (Բ): 3. Կողմ, ծայր: *Ութաղէն մին անգ՚ունը տիրտակից, հարթանը պէժինք՚ը կ՚ուտից* (Զ): 4. Ընդհանրապես տեղ, վայր, կողմ: *Պըլըպուդին տըսնաս ա՝ էն ընգ՚ունանն մին քանէ մարթիք՚ ըն կ՚ան...* (ԼՂԲ, 392):

- Անգ՚ունը անց կէնալ (մինին) - *տե՛ս* Անգ՚ունը պահէլ (մինին):

- Անգ՚ունը կօտըր - Աղքատ, անտեր, թշվառ: *Անգ՚ունը կօտըր կընէգ՚ ա, վէչ մարթ օնէ, վէչ պարիկամ* (Զ):

- Անգ՚ունը պահէլ/փըռնէլ (մինին) - Կողմնապահություն անել, մեկին կողմնակից դառնալ, պաշտպանել (հաճախ անիրավացիորեն): *Հըրթնըսկէսուր կըռվը՛ցէն, պատրօնը հարթանը անգ՚ունը պահից* (Զ):

- Անգ՚ուն ինիլ - Կողմնակից, պաշտպան, հովանավոր ունենալ: *Ք՚ասիբ մը՛ռնում ա, մին անգ՚ուն չօնէ, թա ք՚ օմանգ՚ անէ* (Բ):

ԱՆԳՈՒՃ/ԱՆՁՈՒԿ/ԱՆԿՈՒՃ/ԱՆԿՈՒՁ *(գրբ. ականջ)* - *գ.* 1. Մարդու եւ կենդանիների լսողության գործարան: *Անջուկը ցավում ա, հ՚ալբ՚ա՛թ մըրսալ ա* (Բ): 2. Լսողության գործարանի արտաքին կռճիկային մասը: *Հ՚ալ՚ միչէվ օրըս էտ էշը ընգուճան օրը իրէք մանէթ ա վէր քըցգ՚ում ըտըրանց հէտի* (ՀԺՀ, V, 339): 3. *փխբ.* Լսողություն, լսելու ընդունակություն: *Կօզի պըռավալ ա, ամմա լ՚ավ անգուճ օնէ* (Զ): 4. Օղակաձեւ հարմարանքներ ջվալի եզրերին՝ բռնելու համար, ունկ: *Չուվալը էնքան լըցցալ ա, վէր պիցըրցընէյիս ընգուճնէն պուք ա յը՛կալ* (Բ): 5. Ճախարակի իլիկի ծայրին ամրացվող կաշվի կտոր, որ իլիկը պահում է իր տեղում: *Չըխըրակէն անգուճը ծէթիլ բիդիս, վէր ճըռճըռա վէչ* (Զ): 6. Ձվով ու ալյուրով հունցած, բարակ բացած եւ յուղի մեջ տապակած ականջաձեւ մի տեսակ թխվածք: *Անգուճ թըխից, խօխօնցը ուտըցըրավ* (Բ): 7. Սայլի կամ արորի առեղի ծայրի սեպը, որից կապում են լուծը: *Ըրբէն անգուճը մաշ՚ալ ա* (Զ): 8. Փայտե հարմարանք, որ ջրաղացի չախչախը միացնում է կրիճակի հետ: *Ճըղացէն անգուճը կօտրալ ա* (Բ): 9. Պայտի գամի երկու կողմերը: *Նըլըմէխին ընգուճնէն կըտօրէ, յը՛տնան թըխէ* (Զ):

- Անգուճ անէլ - *տե՛ս* Անգուճ օնէլ:

- Անգուճը դինջ - Հանգիստ, անհոգ, խաղաղ: *Թուրքէրան պըրծէնք՚, ընգուճնէս դինջ ապրում ընք* (Զ):

- Անգուճը դինջանալ - 1. Հանգստանալ, անհոգ դառնալ, խաղաղվել: *Տըղէն փըսակից, անգուճը դինջացավ* (Բ): 2. Չարախոսությունից, շատախոսությունից, բամբասանքից ազատվել: *Էտ կընէգ՚ը քօչից, շինանցուց անգուճը դինջացավ* (Զ):

- Անգուճը ըռնօտել - *տե՛ս* Անգուճը կըտըրել:

- Անգուճը թիթը՛վ - Լավ լսողություն ունեցող: *Սիմօն դային ութասնուվէց տիրը՛կան ա, ամիա անգուճը թիթը՛վ ա հ՚ալ՚* (Զ):

- Անգուճը լըցնել - Մեկի մասին չարախոսելով, բամբասելով՝ մի անձի գրգռել նրա դեմ: *Հիրըվանէրը թ՚ազգ՚ան հարթանանը անգուճը լըսնում ըն, ըսկէսվօրը նըհէտ կըռըվցընում* (Զ):

- Անգուճը ծակ - 1. Շուտ լսող, ըմբռնող, հասկացող: *Անգուճը ծակ ախճիգ՚ ա, հու վէր օգ՚ի, փուշմընական չի* (Բ): 2. Չհասկացող, չանսացող, չենթարկվող: *Տըրա պէն ըսէլի չի, անգուճը ծակ ա, յա՛ ասած, յա՛ չասած* (Բ):

- Անգուճը ծանդըր - Լսողությունը թույլ, դժվարությամբ լսող, կիսախուլ: *Անգուճըս ծանդըր ա, պէցգ՚ուր խօսէ* (Բ):

- Անգուճը ծէթ ածած - *տե՛ս* Անգուճը ծանդըր: *Անգուճըտ ծէթ ածած ա՞, խէ ըսկանում չը՞ս* (Բ):

- Անգուճը ծէնու - Ինչ որ մեկի կանչին, որեւէ լուրի սպասելիս, լսելու պատրաստ, սպասողական, լարված վիճակում: *Էն ըմ անգուճըս ծէնու, լ՚ըհա վէր ծէն տաս, դ՚ստի տ՚ուս ըմ կ՚ըլական* (Զ):

- Անգուճը ծընէլ - 1. Ականջից թարախ հոսել: *Անգուճը ծընում ա, ցավ ա տամ* (Բ): 2. Անհանգիստ լինել: *Էտ խէ տը՛ղըտ նըստում չը՞ս, անգուճըտ ծընում ա՞* (Բ):

- Անգուճը ծուվվալ - Կանխազգալ, նախազգալ: *Անգուճըս ծուվվաս ա, հ՚ալբ՚ա՛թ խուխէս մին պէն ա պըտահալ* (Զ):

- Անգուճը կախ - 1. Հանգիստ, հլու, գործերին չխառնվող: *Անգուճը կախ հ՚ուրանն հը՛տէ կօրծ ա անում, վէշ մինին խընգարում չի* (Բ): 2. Ուշադիր, զգոն, սպասողական վիճակում: *Սաղ քըշէրը թաքավէրին ախչիգ՚ը անգուճը կախ ըսպասում ա, թա էտ տըղան հիբ ա ծէն տըլական* (Զ):

- Անգուճը կախ անէլ/տալ - 1. Ուշադիր լսել, ականջ դնել: *Անգուճը կախ ա ըրալ, լօխ գ՚իդ՚ացալ* (Բ): 2. Հնազանդվել, ենթարկվել: *Հ՚ասը հինչը ըսէս ա, էտ տըղան անգուճը կախ ա ընէս, կընդրէս* (Զ): 3. *տե՛ս* Օնքէրը բէշ անէլ:

- Անգուճը կանչի - Ասում են որեւէ առիթով մեկի բացակայության ժամանակ նրան հիշելիս: *Անգուճըտ կանչի, Ա՛ր-փէնիգ՚, ասում ար՝ Ջ՚ան՚ուն տըղան լ՚ավ տըղա յա, փը՛սա կընփըռնիս* (Զ):

- Անգուճը կանչիլ - Ականջի մեջ խշշյուն զգալ, որ համարվում է իր մասին խոսելու նշան: *Անգուճըս կանչում ա, տը՛սնաս հու վա ինձանա խօսում* (Բ):

- Անգուճը կընտրէլ - 1. Տղային նշանել: *Արշակ դային թօռնանը անգուճը կընտրալ ա, ըրխըյնացալ* (Բ): 2. Պատժել: *Մ՚ լակուտ, վէր մէհէտ էլ նի մըտէլ մէր բօստանը, անգուճըտ կընտրըլական ըմ* (Զ):

- Անգուճը հըլ՚ՕՐէլ - *տե՛ս* Ընգուճան ծիք՚ տալ:

- Անգուճը յըրան պահէլ - Մի բան լսելու համար լսողությունը լարել, ուշադիր ունկնդրել: *Էտ պառավըտ անգուճը յըրա յա պահում, տահանց գ'ուրձ'ուցը ըսկանում, ք'ինամ թանջիրին լօխ խաբար տամ* (Ձ):

- Անգուճը նըյը'ր/նըվէր ծէն տալ - Մեկին բարձրաձայն մի բան ասել, տեղեկացնել: *Անգուճը նըյը'ր ծէն ըմ տամ, էլիա ըսկանում չի* (Բ):

- Անգուճը նի մընել - 1. Հասկանալ, ըմբռնել: *Ասում ըմ, ասում, անգուճը չի նի մընում* (Բ): 2. Մեկին անընդհատ որեւէ բան ասելով՝ տրամադրել մի բանի դեմ կամ հօգուտ: *Էնքան նախագէն անգուճը նի մըտէն, բըրիգադիրին տ'ուս քըցից* (Ձ):

- Անգուճը պէնդ - *տե՛ս* Անգուճը ծանդը:

- Անգուճը սանս'ու - *տե՛ս* Անգուճը ծէնու:

- Անգուճըս ք'ըէզ ըմ տամ - Ուշադիր լսում եմ: *Անգուճըս ք'ը'էզ ըմ տամ, ա՛սէ* (Բ):

- Անգուճը սօր - *տե՛ս* Անգուճը թիթը'էվ:

- Անգուճը տանէլ - Շատախոսությամբ, մի բան անընդհատ կրկնելով՝ ձանձրացնել, հոգնեցնել: *Էնքան ասից, անգուճըս տարավ* (Ձ):

- Անգուճը տաք պահէլ - Մեկին մի բան անընդհատ հիշեցնել: *Մէր նախագէն անգուճը բիդի տաք պահիս, թա չէ խօսկ տուվածը մընանա քըցիլանն ա* (Բ):

- Անգուճը տըռնանը/տ'ուսմ'ուն - *տե՛ս* Անգուճը ծէնու:

- Անգուճը քառ պահէլ - Ինչ որ ձեռնտու չէ, չլսել՝ չլսելու տալ: *Ձ'ուրձ'ուր խօսկուզ'ուրձ'ուց ա ինձ'ում էտ կանտորումը, ինքը անգուճը միշտ քառ ա պահում* (Ձ):

- Անգուճը քըցիլ - Մեկին մի կերպ որեւէ բան հայտնել, տեղեկացնել: *Էտ կընգանը անգուճըն ըն քըցիս, թա մարթըտ էն ա փըլանք'անսին նըհէտ* (Ձ):

- Անգուճը քօրէլ - *տե՛ս* Խըզ'ատակը քօրէլ:

- Անգուճը օնէլ - *տե՛ս* Անգուճը քառ պահէլ:

- Անգուճ ծակէլ - Շատ սուր ձայն հանել: *Սանսըտ անգուճ ա ծակում, կամանց խօ՛սէ* (Բ):

- Անգուճ պահէլ/տինիլ - *տե՛ս* Անգուճ օնէլ:

- Անգուճ օնէլ - 1. Լսել, ունկնդրել: *Անգուճ ա օնում, տը'էսնում էտ ձ'ուրձ'ան տըղէն սանսըն ա...* (Ձ): 2. Ասվածը նկատի ունենալ, անսալ, հետեւել: *Ախմաղ զատ ա, վէ՛չ հօրըն ա անգուճ օնում, վէ՛չ մօրը* (Բ): 3. Գաղտնաբար լսել ուրիշների խոսածը: *Անգուճ ա օնում, հանցու խաբար տա* (Բ):

- Ընգուճա հը'էռէ պահէլ - Գաղտնի պահել, ուրիշներին չհայտնել: *Էտ կընէգ'ը ըխճըկանը ալէգ'ը ընգուճա հը'էռէ յա պահում* (Բ):

- Ընգուճ-անգուճ ըղնէլ - Լուրը, գաղտնիքը տարածվել: *Մարթին ասածը կընէգ'ը հիրըվընէրէն պատմում ա, ըտի էլ ընգուճ-անգուճ ա ըղնում* (Ձ):

- Ընգուճան ծիք' տալ - 1. Ակնջը քաշելով՝ ցավ պատճառել (որպես պատիժ): *Խօխան ալէգ' ըրավ, մարը ընգուճան ծիք' տուվավ* (Բ): 2. Խրատել, հանդիմանել, մի բան անելուց զգուշացնել: *Հանց ա ընգուճան ծիք' ըն տըվալ, էլ կ'ուղթուն չի անում* (Բ): 3. Շնորհավորելու, բարի լուր հաղորդելու համար ականջից քաշել: *Սի՛մոն, պէր ընգուճատ ծիք' տամ, կավըտ ծընալ ա* (Բ):

- Ընգուճան կախ - Ասվում է որեւէ ապրանք վաճառելիս՝ անկասկած այդ արժեքն ունի: *Կավ, հինչ կա՞վ, հազզար մանէթը էն ա ընգուճան կախ* (Ձ):

- Ընգուճան տ'ուս օնէլ - *տե՛ս* Մըթկան հանել (ՄԸ'ԹԿ-ի տակ):

- Ընգուճան փըռնէլ - 1. *տե՛ս* Ընգուճան ծիք' տալ: 2. Ձերբակալել: *Ընգուճան փըռնալ ըն, էն ա տ'ուրմ'ումը* (Բ):

- Ընգուճավընն ըղնէլ - Հարեւանցի կերպով լսել, տեղեկանալ: *...Էտ ճըղացէն կօխկավընն անց կընալիս թանբլին սանսը ընջուկավընն ա իյնում...* (ՆԼՂԺԲ, 112):

- Ընգուճէն ասէլ - Մեկին ցածրաձայն գաղտնի բան ասել, հայտնել: *Վէզիրը թաքավէրին ընգուճէն ասում ա, վէր թաքուհին սիրական ա պահում* (Ձ):

- Ընգուճէն ըղնէլ - 1. *տե՛ս* Ընգուճէն ասէլ: 2. *տե՛ս* Անգուճը լըսնէլ:

- Ընգուճէն ծակէն թըխէլ - Մեկի ասածը չլսել, չանսալ: *Հօրը ասածը տըղէն ընգուճէն ծակէն ա թըխում* (Ձ):

- Ընգուճէն ծէփէլ - *տե՛ս* Ընգուճավընն ըղնէլ:

- Ընգուճէն հըսնէլ - *տե՛ս* Ընգուճավընն ըղնէլ: *Ընգուճէն ա հըսնում, վէր Ավագ'ումը լ'ավ թըթու արաղ օնէ* (ՆԱԲ, 112):

- Ընգուճէն հըսցընէլ - *տե՛ս* Անգուճը քըցիլ:

- Ընգուճէն ղըրաղավը ըսկանալ - 1. Թեթեւակի, անուշադիր, իմիջիայլոց լսել, տեղեկանալ: *Ընգուճէն ղըրաղավը մին պէն ա ըսկացալ, սաղ շինացուց ասալ* (Բ): 2. Ոչ հավաստի բան լսել: *Ընգուճէս ղըրաղավընն ըմ ըսկացալ, հըվատում չըմ* (Ձ):

- Ընգուճէն մաչին զուռնա փըչիլ - Ականջին գոռալ, բարձրաձայն ասել: *Յը'էս քառ չըմ, ընգուճէս մաչին զուռնա մէ՛լ փըչիլ* (Բ):

- Ընգուճէն մըսէրընն օտէլ - Մի բան շատ խնդրելով, կրկնելով կամ շատախոսելով՝ մեկին ձանձրացնել: *Էնքան ասից, ընգուճէս մըսէրը կէրավ* (Բ):

- Ընգուճէն մինը մաղ շինիլ, մինը՝ խախալ' - 1. Ամեն ասած, տեղեկություն միատեսակ չընդունել, ճիշտն ու սխալը, գլխավորն ու երկրորդականը տարբերել: *Ընգուճէն մինը մաղ ա շինանլ, մինը՝ խախալ', ամմէն պէնու հըվատում չի* (Ձ): 2. *տե՛ս* Ընգուճէն մին ընգ'ունավը նի մընել, մինավը տ'ուս կ'անլ:

- Ընգուճէն մին ընգ'ունավը ըսկանալ - *տե՛ս* Ընգուճէն ղըրաղավը ըսկանալ:

- Ընգուճէն մին ընգ'ունավը նի մընել, մինավը տ'ուս կ'անլ - Չանսալ, չհասկանալ, լսածից ոչինչ չհիշել: *Դանգըլա խօխա յա, ընգուճէն մին ընգ'ունավը նի յա մընում, մինավը տ'ուս կ'ամ* (Ձ):

- Ընգուճէն մինը քառ պահէլ - Ամեն լսածի ուշադրություն չդարձնել: *Պառավը ասմա.- Մ' հարթնը, մէր տանը շատ պէն ընք ըսըլական, տու ընգուճէտ մինը քառ կը պահիս* (Ձ):

- Ընգուճէն նի կ'անլ - *տե՛ս* Ընգուճավընն ըղնէլ:

- Ընգուճէն տակավընն անց կէնալ - Հարեւանցի կերպով իմանալ մեկի կարծիքը մի բանի մասին: *Հիրըվանէն ընգուճէն տակավընն անց կացավ, ամմէն հինչ գ'իդանց* (Ձ):

- Ընգուճէն տակէն - *տե՛ս* Աշկէն ըռաշկէն (2):

- Ընգուճէն տակը քօրէլ - *տե՛ս* Խըզ'ատակը քօրէլ:

- Ընգուճէն տուր կ'անլ - Հաճելի լուր լսելով՝ ուրախանալ: *Ընգուճէն տուր ա կ'ամ, վէր էտ պէնը ըսկանում ա* (Ձ):

- Ընգուճէն փըչիլ - *տե՛ս* Անգուճը լըսնէլ:

- Ընգուճէն փըսփըսալ - *տե՛ս* Ընգուճէն ըղնէլ:

- Ընգուճէն քամակը տը'էսնալ/ըրվալ - Ասվում է՝ մի բանի անկարելիությունը ցույց տալու համար: *Չէչէմին լ'ըհա, ախչիգ'ըս տամ տըղէտ, տը'էս ընգուճէտ քամակը տը'էսնում ը՞ս* (Բ):

- Ընգուճէն քամակը քըցիլ - 1. Չլսելու տալ, ուշադրություն չդարձնել, մոռացության տալ: *Հու վէր հօրը-մօրը ասածը ընգուճէն քամակը քըցի, վը'էննը քարէն նի կըկ'ա* (Ձ): 2. Գործը, հանձնարարությունը ձգձգել, չկատարել: *Ընգուճէն քամակը քըցանվ, ծըմը'էռը յը'էկավ, էլ կարից վէչ անէ* (Բ):

- Ընգուճէն օղ անէլ - Մեկի պատվերը, խրատը միշտ հիշել, մտքում պահել: *Հանը ասմա. - Մ' տըղա, ընգուճէտ օղ ը-*

րա՛, օղռաշ մարթու նըհը՝տ հըրակաշ չի տը՝ռնաս (Ձ):

- Ընգուճնէն թակած (էշ) - Տխմար, ապուշ, անհասկացող: *Ընգուճնէն թակած էշ ա, իզէն հինչ բի՞դի անէ* (Բ):

- Ընգուճնէն թըփըհարէլ - Բան չհասկանալ, որեւէ բանից գլուխ չհանել: *Յը՝ս ասըմ ըմ, ասըմ, ինք՛ը ընգուճնէն թըփըհարըմ ա* (Ձ):

- Ընգուճնէն խըլըշիլ - Լսողությունը լարել, մեծ ուշադրությամբ լսել: *Վէր տը՝սնում ա՝ տահանք զ՝ուրա՛ց ըն ա-նում, ընգուճնէն խըլըշա՛ում ա* (Ձ):

- Ընգուճնէն ծասկէլ, պէրանը պէնալ - Առանց մտածելու, կշռադատելու, ուրիշներին ուշադրություն դարձնելու՝ խոսել: *Ախմադ զատ ա, ըշտը՝ղ ք՛իս ա, ընգուճնէն կըպէս ա, պէրանը պինա՛ս* (Բ):

- Ընգուճնէն ծընդրրանալ - Լսողությունը թուլանալ, դժվարությամբ լսել: *Հէյրան աքօրը ընգուճնէն ծընդրրացալ ա, կընանուցը զ՝ուրա՛ցը ըսկանում չի* (Ձ):

- Ընգուճնէն կապէլ - Լսել չցանկանալ, դիտմամբ չլսել, ուրիշների ասածին ուշադրություն չդարձնել: *Յը՝ս ընգուճնէս կապում ըմ, հինչը օգ՝ում ըք, ը-սը՝ցէք՛* (Ձ):

- Ընգուճնէն չօ՛րք՛ անէլ - *տե՛ս* Ընգուճնէն խըլըշիլ:

- Ընգուճնէն պէմբակ կօխէլ - *տե՛ս* Ընգուճնէն փըթէլա՛ կօխէլ:

- Ընգուճնէն պէնալ/պէց պահէլ - *տե՛ս* Ընգուճնէն խըլըշիլ:

- Ընգուճնէն վէր թօղէլ - 1. *տե՛ս* Անգուճը կախ անէլ: 2. Հիվանդանալ (ձին, էշը): *Էշը ընգուճնէն վէր ա թօղալ, պա հունց կա՞նինք՛* (Ձ):

- Ընգուճնէն տալ - *տե՛ս* Մըննա՛թու տակ ըղնէլ:

- Ընգուճնէն ցը՝ց կըցընէլ - *տե՛ս* Ընգուճնէն խըլըշիլ:

- Ընգուճնէն փըթէլա՛ կօխէլ - 1. *տե՛ս* Ընգուճնէն ծընդրրանալ: *Ընգուճնէտ փըթէլա՛ կօխած ա՞, խէ ըսկանում չը՞ս* (Բ): 2. Չլսելու դնել, անտեսել: *Ընգուճնէն փըթէլա՛ յա կօխալ, յա՛ ասած, յա՛ ըսէլու* (Բ):

- Ընգուճնէն փըռնըվէլ - *տե՛ս* ՔԸՌԱՆԱԼ:

- Ընգուճնէն փօխ տալ - *տե՛ս* Ընգուճնէն քընրէհավ տալ:

- Ընգուճնէն քընրէհավ տալ - Անուշադիր, ցրված լինել, չլսել: *Ընգուճնէտ քընրէհավ տուված ա՞, ինձ ըսկա՛ց* (Բ):

- Ընգուճնէն ք՛ինիլ - Աղմուկից, շատախոսությունից, մի բան անընդհատ լսելուց հոգնել, ձանձրանալ: *Էնքան խոսից, ընգուճնէս ք՛ը՝ցավ* (Բ):

- Ընգուճնէրան խը՝ղճ - *տե՛ս* Անգուճը ծանդրը:

- Ընգուճնէրէն չընիրվատալ - 1. Իր լսածին չհավատալ: *Էնքան օրո՛ւշ պէնէր ըն ասալ, ընգուճնէրէս հըվընտաս չըմ* (Ձ): 2. Անսպասելի լուրից ապշել: *Ընգուճնէրէս հըվատում չըմ, հունց կարող ա՞ Մաքսիմը ըտի պէն անէ* (Բ):

- Ընգուճնէրէն պէմբակը/փընթէլա՛ն տո՛ւս օնէլ - Ուշադիր լսել, լավ լսելով՝ ըմբռնել, հասկանալ: *Ընգուճնէրէտ պէմբակը տո՛ւս կալ՛, տը՝ս հինչ ըմ ասում* (Բ):

- Ընգուճնէրումը խուլ՛ փըսնէլ - Միեւնույն բանը շատ լսելուց կամ շարունակ լսելուց ձանձրանալ: *Բօլ ա, էնքան ասալ ըս, ընգուճնէրումըս խուլ՛ ա փըսալ* (Բ):

- Ընգուճնէրումը հա՛լիլ - *տե՛ս* Հա՛լիլ, ընգուճնէն ածէլ:

- Ընգուճումը խօսէլ - *տե՛ս* Ընգուճէն ասէլ:

ԱՆԴԱԼՈՒ - *ած. փխբ.* Թիկունք, պաշտպան, հովանավոր չունեցող: *Անդալու մարթը խէլո՛ւնք բիդի ինի, վէր կարէ ապրէ* (Ձ):

ԱՆԴԱՐ/ԱՆԴԷՐ/ԱՆՏԱՐ/ԱՆՏԷՐ *(գրբ. անտէր)* - *ած.* 1. Տեր չունեցող, առանց տիրոջ: *Անդար ծըմըկնէ յա, հու օգ՝ում ա, կըտօրում ա* (Ձ): 2. Թշվառ, անօգնական, հովանավոր՝ պաշտպան չունեցող: *Անդար մարթ ա, վէշ մինը մըհալ չի քըցո՛ւմ* (Ձ): *գ. փխբ.* 3. Անզգամ, անպիտան: *Էտ կըտաղած անդարը մի կըռը՝վ ա ըսքըսըմ խը՝ղճ մարթին նըհէտ...* (ԼՂԲՔ, 282): 4. Սեռական անդամ (ասվում է անունը տալու փոխարեն): *Շալվարէն փըլա՛նկը յէտ ա տամ, անդարը տ՛ուս օնում...* (ԲՀԲ, 90):

- Անդար անիմ - *տե՛ս* Անդար մընա:

- Անդար կ՛առնը կ՛ո՛ւլ կօտէ - Անտեր, բարձիթողի ինչքը անտեղի կկորուսվի: *Բուստանէտ յըրա հա՛մա՛ս կաց. անդար կ՛առնը կ՛ո՛ւլ կօտէ* (Ձ):

- Անդար մընա - 1. *անծ.* Տեր, խնամող չունենա, տերը մեռնի: *Անդար մընա նէ-մէցը, մարթիս կըլօ՛խը կէրավ* (Ձ): 2. Արհամարանքի, դժգոհության արտահայտություն: *Անդար մընա էս կարկուտը, բաստանըս սաղ սիրփից, տարավ* (Բ):

ԱՆԴԱ՛ՌԴ - *ած.* 1. Դարդ, վիշտ չունեցող: *Անդա՛ռդ մարթ ա, սաղ օրը ք՛ը՝փ ա անում:* 2. *փխբ.* Անհոգ: *Էտ մարթը էլ ո՛ւրա՛ն կընգանը նան խուխէն նըհէտ ապրում ա բախտավէր, անցավ, անդա՛ռդ* (ՀԺՀ, V, 564):

ԱՆԴԱՐ-ԸՆԴԷՐՈՒ - *ած.* Անտեր-անտիրական, խեղճ ու կրակ: *Անդար-ընդէրու պըռավէն օրը սը՝վ կինի* (Ձ):

ԱՆԴԷՄ(ՆԸ) - *տե՛ս* Ա՛ՆԴԷՄ(ՆԸ):

Ա՛ՆԴԷՄ(ՆԸ)/ԱՆԴԷՄ(ՆԸ) *(գրբ. անդամ (մարմնի մաս, որեւէ բանի մաս)* - Թռչունների եւ կենդանիների ամբողջական ազդր: *Հավէն անդէմնը ղըրկը՝ցէն հիրըվանէն հը՝տէ* (Ձ):

ԱՆԴԷՐ - *տե՛ս* ԱՆԴԱՐ:

ԱՆԴՈՒՆԴ *(գրբ. անդունդ)* - *գ.* Անդունդ, վիհ, անհատակ խորություն: *Մէչան պօզը ճըկատան կացած հա՛ճա՛ճ-մա՛ճա՛ճնէ տո՛ւս յէկին, վընընծէռքաս փըռնէցին՝ ք՛ա՛ղլա՛-մըղալախ թըխէցի անդունդքին մէչը* (ՋՏ, Բ,131):

ԱՆԴՈԽՏ - *տե՛ս* Ա՛ՆԴՈ՛Ղ:

Ա՛ՆԴՈ՛Ղ/ԱՆԴՈԽՏ *(գրբ. անդոհ)* - *գ.* Սրտնեղություն, մտատանջություն: *Ա՛նդո՛ղը մարթին կըսպանէ, մինը բիդի ինի, վէր սը՝ռտ տա* (Ձ):

- Ա՛նդո՛ղը ընդնէլ - Սրտնեղել, մտատանջվել: *Յէրգ՛ինք՛ը սըվանում ա, հո՛նձ ընուղնէն ա՛նդո՛ղը ըն ընդնում* (Ձ):

Ա՛ՆԴՈ՛Ր/ԸՆԴՈ՛ՒՐ՛/ԸՆԴՈ՛Ր - *շ.* Այդ պատճառով, դրա համար: *Տընդան ասում ա.- Հա՛լբա՛թ ինձ սիրում ա, ա՛նդո՛ր ա քարավ տամ* (ՀԺՀ, V, 60):

ԱՆԷԼ/ԱՆԻԼ/ԱՆԸ՝Լ *(գրբ. առնեմ)* - *նբ.* 1. Գործել, աշխատանք կատարել: *Անում ըմ, անում, կարում չըմ էս տօնը շինիմ, պըրծընիմ* (Բ): 2. Որեւէ բանով զբաղվել, պարապել: *Հինչ ը՞ս անում, հինչ պէնէ յը՞ս* (Բ): 3. Վարվել: *Ճարը կըտըրած ասում ա.- Ք՛ինամ թաքավը՝ռէն ասիմ, վը՝ռ մարթ չի քընթէնվում, հինչու անում ըս, ըրա՛* (ՆԼՂԺԲ, 40): 4. Հարմարեցնել, ամրացնել, հագցնել: *Մին ժինջիլ ա շանը պըկան անում, կապում* (Ձ): 5. *տե՛ս* Նի անէլ: *Տանում ա էն յէրէսունինը կընէգ՛ը անում լօթկան, քընշում, ք՛ինում* (ՀԺՀ, V, 546): 6. *տե՛ս* ԿՕՐԾԷԼ: *Մին փայկա յա անում, տամ էտ մարթին, մին փութ ցօրէն ինք՛ օնում* (Ձ): 7. Դարձնել, վերածել, շինել: *Մարթին ք՛ա՛սա յա ըրալ, շէնը քընցա՛լ, էն հինչ կընէգ՛ա՞* (Ձ): 8. Գումար, ամբողջություն կազմել: *Ընընրա սաղ տարվա ընշխադածը անընմ ա հէնգ՛ հա՛ռ՛ուր մանէթ* (Բ): 9. Մշակել, ցանել: *Հէնգ՛ հէքտար ցօրէն ա ընրալ, օթ տօննա յա հընձա՛լ* (Ձ): 10. *տե՛ս* ՔՕՆԷԼ: 11. Ջանազան բառերի հետ գործածվելով՝ կազմում է տարբեր իմաստներ արտահայտող հարադրություններ՝ *անընմ անէլ, աշկավ անէլ, պէց անէլ, ցուցակ անէլ* եւն:

- Անէ Հ՛ուրին, ծաղկէ Փ՛ուրին - Աշխատում, վաստակում է մեկը, արդյունքից օգտվում է ուրիշը:

- Անիս, անիս, կ՛ընէտէն նընստիս, ա՛ղլէր մաղիս - Շատ արածը, վաստակածը հաճախ իզուր կորսվում է:

- Անօղը պըրծավ, ասօղը՝ չէ - Ասում են անիմաստ եւ երկար խոսողին:

- Ըրածը առաշկը կ'ալ - Արածի համար արժանին հատուցել: *Մարթու շատ ա փիսօթուն ըրալ, մըհէնգ' ըրածը առաշկըն ա կ'ամ* (Ձ):

- Ըրածը վեր ածէլ - Մի վատ արարքով արած լավ գործը՝ լավությունները հողին հավասարեցնել: *Ախպօրը հը՛տէ ըրավ, ըրավ, վէրչումը կըռվից նըհը՛տը, ըրածը վէր ածից* (Բ):

- Ըրած ցը՛խ/խըմօր - Հիվանդոտ, թույլ, տկար: *Ըրած ցը՛խ ը՞ս, պատառ տըղամարթ կաց, լի՞* (Բ):

- Ըրած ցը՛խէն մին քըթօ՛ղ ճ՚ուրըն էլ ա բօլ - *տե՛ս* Վը՛ենն իլ՚ած տըվարէն մին կուճի հо-հաև էլ ա բօլ:

ԱՆԷԼ-ԹՕՂ(Ն)ԷԼ - *նբ.* Կենցաղային գործեր կատարել: *Թ՚ազգա՚ հարթնը անէլ-թուղէլում լ'ավ ա* (Ձ)

ԱՆԷԼ-ՏԻՆԻԼ - *տե՛ս* ԱՆԷԼ-ԹՕՂ-(Ն)ԷԼ:

ԱՆԷՂ(ՆԸ) - *տե՛ս* ՀԱՆԷՂ(ՆԸ):

ԱՆԷՍԿ/Ա՚ՆԷՍԿ/Ա՚ՆԻՍԿ/ԱՆԷՑՔ/Ա՚ՆԻՑՔ *(գրբ. անէ՛ծք, հ.ե. *neld-)* - *գ.* 1. Նզովք, չարամաղթություն: *Էտ կընէգ'ը հիշքան անէսկ ար գ'ա՚ուդ՚ում, լօխ ասում ա էտ տըղէն* (Ձ): 2. Չարիք, դժբախտություն: *Մարընն ասում ա.- Տու տըղա չըս ինձը՛տէ, տու անէսկ ըս, անէսկ* (Ձ):

- Անէսկը տափընն ըղնէլ - Անեծքը տեղ չհասնել, չարամաղթությունը չկատարվել: *Նըհախ տը՛ղան տուված անէսկը տափը կըղնէ* (Ձ):

- Անէսկը փըռնէլ - Անեծքը տեղ հասնել, չարամաղթությունը կատարվել: *Մօրը անէսկը փըռնէլ չի, ծըծէն կաթնէն տէրմ կըղնէ* (ԱԲԲ, 73):

- Անէսկ տալ - Անիծել: *Դէրվիշը անէսկ ա տամ, էտ հըրուստէն բաղը մին օրումը չուրանում ա* (Ձ)

- Անէսկ տը՛ռնալ - Մեկի համար դժբախտություն, փորձանք, չարիք դառնալ: *Էտ կօրծը մըզը՛տէ անէսկ տը՛ռավ* (Բ):

- Ընէսկու պ՚ուն - Շատ անեծքներ տվող մարդ: *Իզէն ընէսկու պ՚ուն ա, կօրծ չօնիս* (Ձ):

Ա՚ՆԷՍԿ - *տե՛ս* ԱՆԷՍԿ:

ԱՆԷՍԿ-ՊԸՂԷՍԿ - *տե՛ս* ԱՆԷՍԿ: *Մըչանք անէսկ-պըղէսկ ա տուվալ, խը՛ղճ տըղէն կընէգ'ը մը՛ռալ ա* (Բ):

ԱՆԷՏԸ - *տե՛ս* ԱՀԷՏ: *...Անէտը յէս քօն ըմ լ'ալ ինիս* (ԼՂԲՔ, 286):

ԱՆԷՑՔ - *տե՛ս* ԱՆԷՍԿ:

ԱՆԸՁԿԱՄ/ԱՆԸՍԿԱՄ/ԱՆԻԾԿԱՄ *(գրբ. անզգամ)* - *ած.* Անզգամ, անպատկառ, անպարկեշտ: *Անըզկամը Աստուծ չօնէ, անխը՛ղճը՝ խը՛ղճ* (ԱԲԲ, 17):

ԱՆԸ՛Լ - *տե՛ս* ԱՆԷԼ:

ԱՆԸՄ[1]/ԱՆՈՒՄ[1] *(գրբ. անուն)* - *գ.* 1. Մարդուն կամ կենդանիներին տրվող անձնական անվանում, անձնանուն: *Վէց օր անց կընալանը յէտը հ՚ուրը էտ տըղին անըմը Ավէտիս ա տընում* (ՀԺՀ,V, 122): 2. Հատուկ անվանում, որ տրվում է առանձին վայրերի, գետերի, սարերի եւն: *Ըտըղատ ա շէնին անումը տը՛ռալ Հիրհէր* (ԱԱ, 25): 3. *փխբ.* Համբավ, հռչակ, հեղինակություն: *Սումբաթ դայուն տըղան, ասում ըն, Մասկվա լ'ավ անըմ, պադէվ, հարգանք ա ծը՛ղք պէրալ* (Բ):

- Անըմ անէլ - 1. Ամուսանալու առաջարկություն անել, խնամախոսության գնալ, նշան դնել: *Քը՛ղցէն էտ ըխճըկանը անըմ ըրէն* (Բ): 2. Ձեւացնել, արտաքնապես ցույց տալ, գործ ձեռնարկել, բայց չկատարել: *Անըմ ա ըրալ, թա տօն ա շինում, էս ա չօրս տարէ յա, հ՚ալ՚ն բընծ՚ըրան էլ չի կըտըրալ* (Բ): 3. Հռչակվել, անունը տարածվել: *Էտ ըխճըկանը մարընն էլ փիս անըմ ըրած ա ինըմ...* (ԼՂԲ, 322):

- Անըմը աշխարքը յը՛ր օնէլ - *տե՛ս* Անըմը յը՛ր ինիլ: *Ք'ինա՚մ ա Լօղմանուն կօշտը, թա.- Լօղմանին ապրած կէնա, անումըտ աշխարքը յէր ա կ'ալ՚ալ, ամմա տու պէն չըս գ'ա՚ուդ՚ում* (ՆԼՂԺԲ, 81):

- Անըմը բախշիլ (մինին) - Անունը ասել (մեկին) - *Ամպէր, անըմըտ ինձ բա՚խշի* (Ձ):

- Անըմը ըղնէլ - Անվանարկվել, խայտառակվել: *Ախճիգ'ը հըղըցա տուս յը՛կավ, հօրը-մօրը անըմը ընգավ* (Բ):

- Անըմը ըշխարքավըս մին անէլ - *տե՛ս* Անըմը յը՛ր անէլ:

- Անըմը ըշխարքավըս մին տը՛ռնալ - *տե՛ս* Անըմը յը՛ր ինիլ:

- Անըմը թ՚ամուզ պահէլ - Պարկեշտ, բարոյական լինել, պատիվը բարձր պահել (իր եւ ուրիշների): *Էտ կընէգ'ը ա՚ուրա՚ն անըմընն էլ ա թ՚ամ՚ուզ պահում, մարթին անըմընն էլ* (Ձ):

- Անըմը կա, ըմանըմը կա վէչ - Համբավը կեղծ է, իրականությանը չի համապատասխանում: *Ըտըրա ըտի խուսէլին յէշը մէ՛լ. անըմը կա, ըմանըմը կա վէչ* (Բ):

- Անըմը կըտըրվէ - *անծ.* Անիծվի, անիծյալ լինի: *Անըմը կըտըրվէ ըտի ըխճըկանը, մարը մը՛ռալ ա, ըշկէրան մին ըրտասունք էլ չի վէր ընգալ* (Բ):

- Անըմը կօտըրէլ - *տե՛ս* Անըմը տափավը կ'ալ:

- Անըմը կօտըրվէլ - *տե՛ս* Անըմը ըղնէլ:

- Անըմը հինչ տինի՞լ - Ի՞նչ իրավունքով, հանուն ինչի՞, ինչի՞ հիման վրա: *Չօբանը ասմա.- Անըմը հինչ տինի՞մ, վէր խալ՚խէն էծը փըռնիմ, ք'ը՛զ տամ* (Ձ):

- Անըմը հօլ'օվէլ - Մեկի մասին շատ խոսել, բամբասել: *Խըրէգ' էտ ըխճըկանը անըմը հօլ'օվէ, մըհէնգ' էլ մարթու վա ք'ը՛ցալ, պըրծալ, հինչ ը՞ս օգ'ում ընդրանա* (Ձ):

- Անըմը հօլ'օվվէլ - Մեկի մասին շատ խոսվել, բամբասանքի առարկա դառնալ: *Ըտըրա անըմը շէնըմը կընօխանց ա հօլ'օվվում* (Բ):

- Անըմը յը՛ր անէլ - Մեկի անունը հռչակել, հայտնի դարձնել: *Մը՛ծը նան միշնա՚ակը անըմնին խէլ՚ունք ին յէր ըրալ, ամմա պուճուրին կ'իժ ին ասըմ* (ՀԺՀ, V, 85):

- Անըմը յը՛ր ինիլ - Մեկի անունը հռչակվել, հայտնի դառնալ: *Մէլիք'-Շահնազարէն վախտը Պըլըպուդուն անումը յէր ա ինա՚ում* (ՀԺՀ, VII, 348):

- Անըմը չավ անէլ - *տե՛ս* Անըմը յը՛ր անէլ:

- Անըմը չավ ըղնէլ/ինիլ - *տե՛ս* Անըմը յը՛ր ինիլ:

- Անըմը սաղունձ շինիլ - *տե՛ս* Անըմը հօլ'օվէլ:

- Անըմը սաղունձ տը՛ռնալ - *տե՛ս* Անըմը հօլ'օվվէլ:

- Անըմը սը՛կ քարէն կ'իրիլ - *անծ.* Մեկի մահը ցանկանալ: *Էտ կընէգ'ը անէսկ ա տամ.- Անըմըտ սը՛կ քարէն կ'իրիմ, ա՛ անըզկամ, վէր մէգ խայտառակ ըրէլ* (Ձ):

- Անըմը սըվըցընէլ - *տե՛ս* Անըմը տափավը կ'ալ:

- Անըմը տալ - Անունը հիշել, հիշատակել: *Լըհա վէր Հաջի Սայադէն անումը տամ ա, էս չօբանը սըրան քուր ա ասում* (ՀԱԲ, 15,110):

- Անըմը տափավը կ'ալ/տալ - Անվանարկել, վարկաբեկել: *Ա՚ուրա՚ն փըռնած կուրծէրավը սաղ ցէղին անըմը տափավըն ա կ'ամ* (Ձ):

- Անըմը տ՚ուս կ'ալ - *տե՛ս* Անըմը յը՛ր ինիլ:

- Անըմը տու վը՞ս տիրա՚ալ - Ասվում է, երբ մեկը իրենից տարիքով շատ մեծին դիմում է անունով: *Պառավ մարթ ա՝ քու հօր անա մը՛ծ, խէ դայի չը՞ս ասում, անըմը տու վը՞ս տիրա՚ալ* (Բ):

- Անըմը տօ, մըհակը յը՛ր կալ' - Ասվում է որեւէ վատահամբավ՝ չար մարդու մասին խոսելիս, երբ վերջինս հայտնվում է: *Էն ա, քու ասած մարդիմազարըտ կ'ամ ա. անըմը տօ, մըհակը յը՛ր կալ'* (Բ):

- Անըմը տօ, սուփրան քըցի - Ասվում է, երբ մեկի անունը հիշատակելիս անսպասելիորեն հայտնվում է: *Էս էլ Ա՚որ՚ուն՚ը. անըմը տօ, սուփրան քըցի* (Ձ):

- Անըմը ՚ուրա՚ն յըրա ինիլ - Մեկի անունը՝ հեղինակությունը իր էությանը հա-

մապատասխանել: *Իմ անըմըս էն ա ինձ յըրա, հինչը ուզիս ըն, թողէ ասին* (Բ):

- Անըմը քըցիլ - *տե՛ս* Անըմը տափավը կ՚ալ:

- Անըմ թողնէլ - Մեռնելուց կամ մի տեղից հեռանալուց հետո լավ հիշատակ՝ բարի անուն թողնել: *Ինք՚ը մը՝ռավ, ամմա անըմ ա թողալ, հու վէր խօսում ա, ղօրմի յա տամ* (Ձ):

- Անըմ ինիլ - Հեղինակություն վայելել, հանրաճանաչ լինել: *Էրկու տարէ յա, վէր ք՚ը՝ցալ ա Բաքու, ամմա ուժժէ անըմ օնէ, լօխ ճինանչում ըն* (Ձ):

- Անըմ տինիլ - 1. Անվանակոչել: *Ադաթ ա, վէր տըղան հօրը մըռնէլանը յը՝տըն ա ծընվում, անըմը հօրը անըմըն ըն տինում* (Ձ): 2. Մականուն՝ փոթ անուն հատկացնել: *Նըհախ տը՝ղան չըն անըմը Աղվէս տիրալ* (Բ): 3. Չհավանել, մեկին կամ մի բանի պակասություններ, թերություններ վերագրել: *Ամմէն հինչին անըմ ա տինըմ, էտքան էլ քէթը ցէց ախչիգ՚ կինի՞* (Բ):

- Ընըմավը ուրթումը օտէլ - 1. Մեկին շատ սիրել, հարգել, պաշտել: *Էտ նախագան էնքան ադաթ ա ինիս, վէր լօխ ընըմավը ուրթումն ըն ուտէս* (Ձ): 2. Մեկի անունով երդվելով՝ հավատացնել: *Տըղէն ընըմավը ուրթումը կէրավ, վէր էտ պէնը ինք՚ը չի ըրալ* (Բ):

- Ընըմէն մատաղ/մը՝ռնիմ - Արտահայտություն՝ ի նշան մեկին շատ սիրելու եւ նվիրվածության: *Ըրամէն ընըմէն մատաղ, ինձ շատ ա ք՚ըմնգ՚ անում* (Բ):

- Ընըմէն մօր/յը՝խտ քըսէլ - Մեկին բամբասելով, զրպարտելով անվանարկել: *Էտ ջադուն խը՝ղճ հարթնանը ընըմէն մօր քըսից, տանան տուս քըցնվ* (Ձ):

- Ընըմէն նըհը՝ետ խաղ անէլ - Մեկի անունից հանդես գալով, նրա անունը օգտագործելով՝ հեղինակագրկել: *Էնքան ամմէն խըտուրու պէնավ ք՚ը՝ցավ տըղէն հընգէրունցը կօշտը, տըղէն ընըմավը խաղ ըրավ, խը՝ղճ տըղան քօչից* (Ձ):

- Ընըմու տար - *տե՛ս* ԸՆԸՄՕՎՈՒՐ:

ԱՆԸՄ[2]/ԱՆՈՒՄ[2] - *կ.* Մեջ (տրականի հետ գործածվելով՝ արտահայտում է ներգոյականի իմաստ): *Հուր անըմ ջան կա, ծէռքըմը՝ ղըվաթ, պէդմա մէյդան տուս կա...* (ՋՏ, Բ, 214):

ԱՆԸՄ-ԱԴՈՒՔ - *գ.* 1. Անուն-ազգանուն: *Օրէնք՚ան մարթ ա կ՚ամ, լօխ շինացուց անըմ-ադուքը կ՚իրանում* (Ձ): 2. *տե՛ս* ԱՆԸՄ[1](3): *Ընդրա անըմ-ադուքը վէրըն ա՞, վէր թամադա յըն տիրալ* (Բ):

ԱՆԸՄԸ/ԱՆՈՒՄԸ - *տե՛ս* ԱՄՄԻՆՕՎԻՆ: *Անումը թայդի չըղնիս, հէրթավ հունցու պէրալ ըս, հէրթավ էլ կըտանիս* (ՆԱԲ, II, 52):

ԱՆԸՍԷԼԻ *(գրբ. անասելի)* - *ած.* 1. Աննկարագրելի, որ չի կարելի ասել, շատ ծանր, չափազանց: *Անըսէլի օրէր ընք տը՝սալ էս կըռվավը* (Բ): 2. Անպատշաճ, ասելու համար անվայել: *Շինըմաչումը փըռալ ա, անըսէլի խօսկէր ասալ* (Ձ):

- Անըսէլին ասէլ- Հայհոյել, կոպտել, խիստ նախատել: *Էտ էրկու կընէգ՚ը կըռվում ըն, ուրուր անըսէլին ասում* (Ձ):

ԱՆԸՍԿԱՄ - *տե՛ս* ԱՆԸՋԿԱՄ:

ԱՆԹԱԹԱԽ - *տե՛ս* ՆՕԹԷ: *Ուռթանան յը՝ր ա կէնըմ, ըտի անթաթախ հըդէ ինում* (Ձ):

ԱՆԹԱՂ *(գրբ. անթաղ)* - *ած., մ.* Չթաղված, առանց թաղելու: *Ըստակած հէյվանը անթաղ թօղէլ չըն* (Ձ):

- Անթաղ մը՝ռալ - Իր հարազատների կողմից գերեզմանում չթաղված, անշիրիմ: *Անթաղ մըռալէն յըրա լանց ինօղ չինիլ* (Ձ):

ԱՆԹԱՄ *(գրբ. անդամ (մարմնի մաս, որեւէ բանի մաս)* - *գ.* Որեւէ կազմակերպության, միության, մարմնի մեջ ընդգրկված անձ: *Մէր պարտիյան էտ շէնըմը քըսան անթամ օնէ* (Ձ):

ԱՆԹԱՌԱՄ/ԱՆԹԱՌԱՆ *(գրբ. անթառամ (միշտ դալար, անփոփոխ, մշտապես)* - *գ.* Բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող բույս՝ մանր գնդաձեւ ծաղիկների փնջերով, անմեռուկ: *Էտ բըխչըմը հինչ ծաղէգ՚ ասիս՝ կար՝ վարթ, անթառամ, նանրգ՚իգ, լալա...* (Ձ):

ԱՆԹԱՌԱՆ - *տե՛ս* ԱՆԹԱՌԱՄ:

ԱՆԹԱՓ *(գրբ. անթափ)* - *ած.* Պտուղը, բերքը դեռեւս չթափած: *Քամէ ըրավ, անթափ թութօտը թօթը սաղ վէր ածից* (Բ):

ԱՆԹԷՂ(ՆԸ) *(գրբ. անթեղ)* - *գ.* 1. Կրակախառն մոխրակույտ, մոխիր: *Մին ամամ անթեղնը ածից, տիրավ ղունաղէն վընընէրէն կօխկէն* (Ձ): 2. Մոխրով ծածկած կըրակ: *Անթէղնը պէցավ, ծըղանը տիրավ յըրան, նի կըցըրավ* (Բ):

- Անթեղ(նը) անէլ - *տե՛ս* ԸՆԹԷՂ(Ն)ԷԼ:

ԱՆԹԷՎ *(գրբ. անթեւ)* - *ած.* 1. Թեւ, կուռ չունեցող: *Անթէվ մարթ ա, ծէռուքը հինչ բի՞դի կ՚ա* (Բ): 2. Առանց թեւերի, թեւազուրկ: *Էրկու անթէվ հավ օնէ, մին քաչալ ղազ* (Բ): 3. Թեւք՝ թեզանիք չունեցող: *Էս ցուրտավը էտ անթէվ դարյան հօր ը՞ս կ՚ը՝ցալ* (Բ):

- Անթէվ-անվը՝ետ օրէր - Ծերության օրեր: *Ջըհիլօթունըս աս կացավ, անթէվ-անվը՝ետ օրէրը յը՝կավ* (Ձ):

ԱՆԹԷՓՈՒՌ - *ած.* Փետրաթափ, փետուրները թափած: *Էտ անթէփուռ ճօտը լօխճին յը՝խնում ա* (Ձ):

ԱՆԹԻՔԱ *(ռուս. антиквар, թրք. antik (հազվագյուտ, հնաոճ), իտալ. antika (հին, հնավանդ, հնություն)* - *ած.* Աննման, արտասովոր: *Անթիգա խօրանգ՚ ա իփանլ* (Բ):

ԱՆԺԱՌԱՆԳ՚ *(գրբ. անժառանգ)* - *ած.* 1. Ժառանգ չունեցող: *Խը՝ղճը անժառանգ՚ ա, պըռավալ ա, տըրօթուն անօղ չի կա* (Ձ): 2. Արու զավակ չունեցող: *Անժառանգ՚ մարթ ա, չօրք՚ խօխա օնէ, չուրք՚էքան՝ ախճիգ՚* (Բ):

ԱՆԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Անի յա՞, թա չա՞նի - Շեն է՞, թե՞ ավերակ: *Էտ մարթը ասմա.- Տուք լ՚ըհա էն ըք ծէր տընէրըմը, յը՝ս ըսկի գ՚ուդում չըմ՝ մէր շէնը անի յա՞, թա չա՞նի* (Ձ):

ԱՆԻԼ - *տե՛ս* ԱՆԷԼ:

ԱՆԻԾԱԾ - *ած., գ. փխբ.* Չար, ատելի, վատ: *Էտ անիծածը էլ տըմանում չի, թա մարթին քըռասունքը տուս կ՚ա, դանստի փըսակվում ա* (Ձ):

ԱՆԻԾԿԱՄ - *տե՛ս* ԱՆԸՋԿԱՄ:

ԱՆԻԿՈՏՕՏ *(ռուս. анекдот, ֆր. anecdote, հուն. anekdotos)* - *գ.* 1. Կարճ պատմություն սրամիտ եւ զվարճալի դեպքի մասին: *Ջիհիլնէն հըվաքվում ըն, անիկոտնէ պատմում, ծընծրոտում* (Ձ): 2. *փխբ.* Մտացածին, անհավանական բան: *Սանթուրը ասմա.- Համօ, ըտի պէն չինիլ, քու ասածըտ անիկոտ ա* (Ձ):

ԱՆԻՄԱՍԿ - *ած.* Տհաս, անհասկացող, անմիտ: *Անիմասկ խօխա յա, ըտըրանա պէն չի տուս կ՚ալ* (Բ):

ԱՆԻՆՍԱՓ/ՆԱՅԻՆՍԱՓ/ՆԱՅԻՆՓԱՍ - *տե՛ս* ԱՆԽԸ՝ՂՃ:

ԱՆԻՍԿ - *տե՛ս* ԱՆԷՍԿ:

ԱՆԻՐԸ՝Ս - *տե՛ս* ԱՆՀԱՄԱ(Ն)Չ:

- Անիրը՝ս շօն/ճանջ - Շատ անամոթ, շատ անպատկառ: *Անիրը՝ս շօն ա, վէր մըթկումը տիրալ ա, ընական ա* (Բ):

ԱՆԻՐԸՍՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱՆՀԱՄԱՆՉՕԹՈՒՆ:

ԱՆԻՑՔ - *տե՛ս* ԱՆԷՍԿ:

ԱՆԻՓ *(գրբ. անեփեալ)* - *ած.* Չեփած, առանց եփելու, հում, կիսահում: *Անիփ չայը խըմից, տուս յը՝կավ* (Ձ):

ԱՆԼԱՆՁԱԹ - *ած.* 1. Անհամ, համ չունեցող: *Անլանզաթ խօրանգ՚ ա* (Բ): 2. Տհաճ, ձանձրալի: *Ըտրա անլանզաթ խուսկէրան զանիլանս տանում ա* (Բ):

ԱՆԼԸՎԱ *(գրբ. անլուայ)* - 1. *ած.* Չլվացված, չլվացած, կեղտոտ: *Օշափը ըտըրան մին փութ անլըվա պուրթ ա տամ, հըդէ տինում* (Ձ): 2. *մ.* Առանց լվացվելու: *Ըտի անլըվա էլ ք՚ունում ա նը՝շընածէն կօշտը* (Ձ):

ԱՆԼՈՒՁՈՒ *(գրբ. անլեզու)* - *ած.* 1. Համր, խոսելու ունակությունից ի ծնե զուրկ: *Մին լալէգ՚ կընէգ՚ ա ծգում, էտ էլ էրկու անլուզու խօխա յա պիրում* (Ձ): 2.

փխբ. Խոսելու իրավունք չունեցող, խեղճ, հնազանդ: *Անլռնզռն հարթնան նըման հինչու ասում ըն, սուսուփուս անըմ ա* (Բ): 3. *փխբ.* Խոսելու շնորհք չունեցող, լավ չխոսող: *Անլռնզռն թամադէն անց կըցըրած հըրսանէք՝ը բադարաք՝ու նըման կինի* (Ձ): 4. Դեռեւս խոսելու կարողություն ձեռք չբերած: *Անլռնզռն խօխա յա հանլա* (Բ):

ԱՆԽԱՓԱՆ *(գրբ. անխափան)* - *ած., մ.* Առանց խափանումի, առանց արգելքի: *Ճէղացը անխափան կօրծ ա անում* (Բ):

ԱՆԽԷՆ - *ած.* Անյուղ, անհամ: *Անխէն կաթնան մօթալ չի տը՛ռնալ* (Ձ):

ԱՆԽԷՐ - *ած.* Օգուտ՝ շահ չբերող, անօգուտ, անպետք: *Էտ անխէր կավ ա, հարկավէր ա ծախած* (Բ):

ԱՆԽԷ՛ԼՔ - *ած.* 1. Խելք չունեցող, հիմար: *Կռնլը փըռնում ա, էտ անխը՛լք մարթին օտում* (Ձ): 2. Անմիտ, անիմաստ: *Անխը՛լք պէնէր ըս ասում, սուս ըրա* (Բ):

ԱՆԽԸ՛ՂՃ *(գրբ. անխիղճ, անխեղճ)* - *ած.* 1. Խիղճ չունեցող, անխիղճ, անգութ, դաժան: *Էս անխը՛ղճնէն էլ խը՛ղճ հըլէվուրէն տռնս ըն քըցում...* (ՆԼՂԺԲ, 39): 2. Խղճի դեմ, խղճի հակառակ: *Անխը՛ղճ կօրծ մէր փըռնէլ, տիյը՛ր Աստուծ կա* (Ձ):

ԱՆԽԸԼՔՕԹՈՒՆ *(գրբ. անխելութիւն)* - *գ.* Անխելք լինելը, հիմարություն: *Քանսիբը անխը՛լքութունան ա ք՝անսիբ* (Ձ):

ԱՆԽԸՂՃՄԸՏԱՆՔ - *տե՛ս* ԱՆԽԸ՛ՂՃ:

ԱՆԽԸՐԱՏ *(գրբ. անխրատ)* - *ած.* Չխրատված, անդաստիարակ, անկիրթ: *Անխըրատ խօխէնք՝ ըն, սա՛յաղ կաց* (Բ):

ԱՆԽՕՍ *(գրբ. անխօս)* - 1. *տե՛ս* ԱՆԼՌՒՋՌԻ: *ած., մ.* 2. Առանց խոսելու, լուռ, անձայն: *Անխօս յը՛կավ, անխօս ք՝ը՛ցավ* (Բ): 3. Առանց առարկելու, առանց հակաճառելու: *Ըսկէսուրը հինչու ասից, լօխ անխօս ըրավ* (Բ):

ԱՆԾԱՄ՝[1] *(գրբ. անծամ)* - *ած., մ.* Չծամած, չծամվող, առանց ծամելու: *Էտ մէսը էնքան պէնդ ա ինռում, վէր կարում չըն ծամին, լ՝ըհա անծամ կօլ ըն տամ* (Ձ):

- Անծամ կօլ տալ - Հեշտությամբ հաղթել՝ ընկճել, խեղճացնել, խոչընդոտները հաղթահարել: *Էտ ինձը՛տէ հինչ ա՞, անծամ կօլ կը տամ* (Բ):

ԱՆԾԱՄ՝[2] - *ած.* Ծամեր չունեցող, առանց ծամերի: *Հըրթնացուն ծըմավուր ա՞, թա ա՞նծամ* (Բ):

ԱՆԾԱՆՕԹ - *տե՛ս* ԱՆՃԱՆԱՆՉ:

ԱՆԾԷՂ(ՆԸ) *(գրբ. անծեղ)* - *տե՛ս* ՔԸՉԷՂԱԿ: *Անծէղնը պատէն յըրա, պը՛լօզ կանէ մատանը յըրա* (ԱՀ, 27):

ԱՆԾԸՊՈՒՏ - *ած. տե՛ս* ԱՆԽՕՍ (2, 3):

ԱՆԾՕԽ - *ած.* 1. Ծուխ չունեցող՝ չարձակող: *Անծօխ կըրակ ա* (Բ): 2. Կրոնական պահանջները եւ արարողությունները կատարելու համար ծխեր չունեցող (քահանաների մասին): *Անծօխ դէրին օրը հինչ բի՞դի ինի* (Ձ):

ԱՆԿԱԴԱՐ *(գրբ. անկատար)* - *ած.* Չկատարված, գլուխ չբերված, չավարտված: *Մարթ վէր լօդուռ ինի, կօրծերը սաղ անկադար կըմընա* (Ձ):

ԱՆԿԱՊ *(գրբ. անկապ)* - *ած.* Իրար հետ կապ չունեցող, կցկտուր: *Անկապ խօսկէրք ա ասում* (Բ):

ԱՆԿԱՊ-ԱՆԿՈՒՏՈՒՐ - *ած.* Անկարգ եւ կոպիտ: *Անկապ-անկուտուր մարթ ա* (Բ):

ԱՆԿԱՐԷԼԻ *(գրբ. անկարելի)* - *ած.* Ոչ հնարավոր, անհնարին: *Էտ տանը անկարելի յա ապրէլ* (Բ):

ԱՆԿԱՐՔ *(գրբ. անկարգ)* - *ած.* 1. Առանց կարգ ու կանոնի: *Անկարք յէրգ՝իր ա* (Բ): 2. Կարգ ու կանոնի չենթարկվող՝ անկարգապահ: *Անկարք խօխօնցը նը՛հը՛տ տիժէր ա* (Բ): 3. Թափթփված, կարգի չբերված, խառնիխուռն: *Նի յա մընում, տը՛սնում սաղ շօրէրը անկարք վէր ածած* (Ձ): 4. Անպատշաճ, անվայել: *Մօրը անկարք խօսկէր ասից* (Բ):

ԱՆԿԱՐՔՈՒԹՈՒՆ *(գրբ. անկարգութիւն)* - *գ.* Անկարգ գործ՝ արարք: *Էտ խօխան միշտ անկարքութռւն ա անում* (Ձ):

ԱՆԿԱՐՕՂ *(գրբ. անկարող)* - *ած.* 1. Կարողություն չունեցող, թույլ: *Անկարող կընէգ՝ ա, էտքանը էլ վէր հըսցընում ա, լ՝ավ ա* (Բ): 2. Նյութական կարողություն չունեցող, աղքատ: *Հանը թա.- Մ՝ բալա, յը՛ս անկարող մարթ ըմ, էտքան փուլը ըշտըդա տա՞մ* (Ձ):

ԱՆԿԷՐ *(գրբ. անկեր)* - *տե՛ս* ՆՕԹԷ:

ԱՆԿԷՐ-ԱՆԹԱԹԱԽ - *տե՛ս* ՆՕԹԷ:

ԱՆԿԸԼՕԽ *(գրբ. անգլուխ)* - *ած.* 1. Առանց գլխի, գլուխ չունեցող: *Էք՝սը թաքավէրէն մարթիք՝ը ք՝իս ըն, տըսնաս մին անկըլօխ մարթ կուպրումը խըրված* (ՀԺՀ, V, 300): *փխբ.* 2. Ղեկավար, առաջնորդ չունեցող: *Անկըլօխ շէն ա, լօխ մագաղ ըն անում նըստըրնավը* (Բ): 3.Ամուսին չունեցող: *Անկըլօխ կընգանը շառավ տըվող շատ կինի* (Ձ): 4. Անիմաստ, անմիտ: *Անկըլօխ կօրծու նըհը՛տ յը՛ս կօրծ չօնիմ* (Բ):

ԱՆԿԸՆԷԳ՝ *(գրբ. անկին)* - *ած.* 1. Կին չունեցող: *Անկընէգ՝ մարթին օրը սը՛վ կինի* (Բ): 2. Որտեղ կին չկա: *Անկընէգ՝ տօն ա* (Բ):

ԱՆԿԸՆՕՆՔ *(գրբ. անկնունք)* - *ած.* Չկնքված, չմկրտված: *Ըստի վէր ք՝ինի, Ղարաբաղ էլ անկընօնք մարթ չի մընական* (Բ):

ԱՆԿԸՇՏԸՄՆԸ - *տե՛ս* ԱՆԿՕՇՏ:

ԱՆԿԸՌԷՔ՝ - *ած.* Ատամներ չունեցող, ատամներից զուրկ: *Անկըռէք՝ պառավ ա, հացը թըրչռում ա, յը՛տնան օտում* (Բ):

- Անկըռէք՝ կ՝ռլ - 1. Վնասազերծված վտանգավոր անձ: *Ընդըրա մին վախտ ա իլա՝ շինացուց օր-իշը՛ղ չի իլալ տայիս, մըհէնգ՝ անկըռէք՝ կ՝ռլ ա, խըղճացալ ա, հինչա սուդի յըն տուվալ* (Ձ): 2. Շատակեր պառավ: *Էտ անկըռէք՝ կ՝ռլը լօխ օտում ա, խօխօնցը թօղում տռնզնը* (Ձ):

ԱՆԿԸՏ(Ը)ՐԷԼ *(գրբ. անկտրելի (չհատնող))* - *ած.* Առանց կտրելու, չկտրած: *Դէրվիշը մին անկըտըրէլ նօռն ա տինռում ըստօլէն, թա.- Հու գ՝իդա՝ մաչին հինչ կա, ախճիգ՝ը ընդըրանըն ա* (Ձ):

- Անկըտըրէլ ծըմէրուկ - Էությունը, հատկությունը անհայտ (անձ): *Ախչիգ՝ը անկըտըրէլ ծըմէրուկ ա* (ԱԲԲ, 13):

ԱՆԿԸՐԱԿ - *ած.* Առանց կրակի, կրակ չունեցող: *Սաղ քը՛շէրը անկըրակ մընացէն* (Բ):

- Անկըրակ խըրավէլ - *տե՛ս* Անտէնակ մօրթէլ:

- Անկըրակ պէղարճ - Մեղրահաց: *Փարք՝ըտ շատ ինի, Մստուծ, էս ճանջէրը հունց ը՞ն էս անկըրակ պէղարճը շինալ* (Բ):

ԱՆԿԸՐԹԷՎՈՒՐ - *ած.* Չկրթված, կրթություն՝ուսում չստացած: *Հըրցընում ա, թա.- Հու վա՞ ծըզանա անկըրթէվուր, վէր կ՝ըրիլ-կարթիլը գ՝ռւդռում չի* (ՆԱԲ, 24):

ԱՆԿ՝ԷՋ - *ած.* Չգզված, չմաքրված (բուրդ, բամբակ): *Էրկու խարար անկ՝էգ պռւրթ ա տամ, թա.- Տար կ՝իգի՛, մանէ, գ՝անբա կ՝օրծէ, էք՝ռւց կըպի՛ռիս...* (Ձ):

- Անկ՝էգ պռւրթ - Անտաշ, կոպիտ: *Էտ հարթնը չի մըզը՛տէ, անկ՝էգ պռւրթ ա* (Բ):

ԱՆԿ՝ԸՐԱԿ՝ԷՏ/ԱՆԿ՝ԸՐԱԿ՝ԻՏ/ԱՆԳԸՐԱԳ՝ԷՏ/ԱՆԳԸՐԱԳ՝ԻՏ *(գրբ. անգրագէտ)* - *ած.* 1. Ոչ գրագետ, գրել-կարդալ չիմացող: *Տասը տարէ կարթալ ա, էլիա անկ՝ըրակ՝էտ ա* (Բ): 2. Տգետ, տարրական գիտելիքներից զուրկ: *Անկ՝ըրակ՝էտ մարթ ա, հու կարում ա, խափռում ա* (Ձ): 3. Սխալաշատ, շատ սխալներ պարունակող: *Անկ՝ըրակ՝էտ նամակ ա, կարում չըմ կարթիմ* (Բ):

ԱՆԿ՝ԸՐԱԿ՝ԻՏ - *տե՛ս* ԱՆԿ՝ԸՐԱԿ՝ԷՏ:

ԱՆԿ՝ԻՆ - *տե՛ս* ԱՆԿ՝ԻՆ:

ԱՆԿ՝ԻՆ/ԱՆԿ՝ԻՆ *(գրբ. անգին)* - *ած.* Անգին, շատ թանկարժեք: *Թաքավէրը նան թաքուռիին տռնս յէկին ընդըրանց տարին պալատ, կըլխընէրին վը՛սկէ, անկ՝ին քարէր շաղ տըվին* (ՀԺՀ, V, 139):

ԱՆԿ՝ԻՐ - *տե՛ս* ԱՆԿ՝ԻՐ:

ԱՆԿԻՐ/ԱՆԿԻՐ *(գրբ. անգիր)* - *մ.* Առանց գրի կամ գրքի, բերանացի: *Հինչը կարթում ա, դաստի անկիր ասում ա* (Բ):

- Անկիր անել - 1. Բերանացի անել, առանց գրածին նայելու՝ իմանալ: *Խօխան տանը անկիր ա ըրալ* (Բ): 2. Մի բան ամենայն մանրամասնությամբ սովորել, իմանալ: *Հօրը փէշակը անկիր ա ըրալ* (Բ):

ԱՆԿՈՒՃ - *տե՛ս* ԱՆԳՈՒՃ:

ԱՆԿՈՒՇՏ - *տե՛ս* ԱՆԿՕՇՏ:

ԱՆԿՈՒՋ - *տե՛ս* ԱՆԳՈՒՃ:

ԱՆԿՈՒՏՈՒՐ - *ածական.* Համառ, իրասացի: *Անկուտուր մարթիք՝ ըն էտ շէնին ժուղովուրթը* (Բ):

ԱՆԿՕ *(գրբ. անգոյ (ոչինչ, փուչ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Անկօ տը՛ռնալ - Անէանալ, անհետանալ: *...էտքան լիվօթունը ըրավ, համ էլ անկօ տը՛ռավ, կօրավ* (ՆԱԲ, 37):

ԱՆԿՕԹ - *ածական.* 1. Կոթ, բռնակ չունեցող: *Ըտըրան մին անկօթ տէնակ ա ինում* (Զ): 2. Կոթուն չունեցող: *Անկօթ տանձ ա, հունց կախ տա՞մ* (Զ):

ԱՆԿՕՀ *(գրբ. անգոհ)* - *ածական.* Դժգոհ, անբավական, չգոհացող: *Անկօհ կընէգ՝ ա, հինչը անում ըս, էլլա ունքամաչը յը՛տ չի ք՝ինում* (Բ):

ԱՆԿՕՇՏ/ԱՆԿՈՒՇՏ/ԱՆԿԸՇՏԸՄՆԸ - *ածական. տե՛ս* Աշկը ծակ: *Անկօշտ մարթ ա Աբօն* (Բ):

ԱՆԿՕՐԷՋ - *ածական.* Առանց կորիզի, կորիզ չունեցող: *Չըմընչը՛նէն անկօրէզ խաղու վա* (Բ):

ԱՆԿՕՐԾ *(գրբ. անգործ)* - *ածական.* 1. Գործ չունեցող, պարապ, գործազուրկ: *Անկօրծ մարթին օրը տիժէր կընցընէ* (Զ): 2. Չգործող, չբանող: *Մէր շէնումը էրկու անկօրծ ճէղաց կա* (Զ): 3. *մ.* Առանց գործելու, պարապ-սարապ: *Սաղ օրը անկօրծ էն ա ք՝ուչէք՝ը չըփէս* (Բ):

ԱՆՀԱԽ - *ածական.* Առանց վարձատրության, ձրի: *Անհախ կօրծը կըլօխ չի կ՝ալ* (Զ):

ԱՆՀԱՃՕՂ - *ածական.* 1. Ոչ հաջող, հաջողությամբ չպսակված: *Անհաճօղ պէն փըռնից, պարտքու տակ ընգավ* (Բ): 2. Ոչ հաջողակ: *Անհաճօղ տըղա յա, բախտը պիրում չի* (Բ):

- Անհաճօղ ծընունդ - Վատ մարդ: *Էտ անհաճօղ ծընունդ ա, կօրծ չօնիս* (Բ):

ԱՆՀԱՃՕՂՈՒԹՈՒՆ - *գ.* Անհաջողություն, ձախորդություն: *Էտ անհաճօղութունը ըտըրա շատ ա վընաս տամ* (Զ):

ԱՆՀԱՄ/ԱՀՆԱՄ *(գրբ. անհամ)* - *ածական.* 1. Համ չունեցող, համից զուրկ: *Անհամ ճուր ա ըտըդէտ ճուրը* (Զ): 2. Ոչ համեղ, լավ համ չունեցող: *Անհամ խօրագ՝ը շօնը էլ չի օտէլ* (Զ): 3. *փխբ.* Ձանձրալի, տաղտկալի, տհաճ: *Անհամ խուսկէրքատ վը՛նն ըմ իլալ* (Զ):

- Անհամ բըրընի - *տե՛ս* Անհամ շիլանճաշ:

- Անհամ, ըռընխա վէր ընդնէլի - *տե՛ս* ԱՆՀԱՄ:

- Անհամ շիլանճաշ - Անհրապույր, ձանձրալի մարդ: *Էտ անհամ շիլանճաշընա՞ մընացալ, վէր ընխճկանը օգ՝ի* (Զ):

- Անհամ շօշան - Բարձրահասակ ձանձրալի մարդ: *Անհամ շօշան ա, թոդէ ըռադ ինի* (Բ):

ԱՆՀԱՄԱ(Ն)Չ *(գրբ. անամաչ)* - *ածական.* Ամոթ չունեցող, աներես, անպատկառ: *Անհամանչ կընգանը ախճիգ՝ը ուրանն անա բէթար կինի* (Զ):

ԱՆՀԱՄԱ(Ն)ՉՕԹՈՒՆ - *գ.* Աներեսություն, անպատկառություն, պնդերեսություն: *Անհամանչօթունը տահանց ցէդին տուված ա* (Բ):

ԱՆՀԱՄԲԱՐՔ *(գրբ. անհամար)* - *ածական.* 1. Անհամար, բազմաթիվ, շատ: *Հօրը բադարանք՝ավը անհամբարք մարթ ա յը՛կալ, տը՛ղ չի իլալ, թա նըստին* (Զ): 2. Չհամրված, չհաշված: *Փուլը յօր ա օնում, անհամբարք տինում ջուբումը* (Զ):

ԱՆՀԱՄՈՒԹ - *տե՛ս* ԱՆՀԱՄՕԹ:

ԱՆՀԱՄՕԹ/ԱՆՀԱՄՈՒԹ *(գրբ. անամօթ)* - *տե՛ս* ԱՆՀԱՄԱ(Ն)Չ:

ԱՆՀԱՆԸ՛Վ - *տե՛ս* ԱՆՀԱՄԲԱՐՔ:

ԱՆՀԱՇՏ *(գրբ. անհաշտ)* - 1. *ածական.* Չհաշտվող, կռվարար, խռովարար: *Անհաշտ հիրըվանէն նըհը՛տ տիժէր ա յօլլա ք՝ինիլը* (Բ): 2. *մ.* Առանց հաշտության, առանց հաշտվելու: *Ըտի անհաշտ էլ էտ էրկու ախպէրը մը՛ռնում ըն* (Զ):

ԱՆՀԱՎԱՏ *(գրբ. անհաւատ)* - *ածական.* Չհավատացող, հավատ չընծայող: *Անհավատ զատ ա, հինչու ասիս, մին ա, հըվըտլական չի* (Բ):

ԱՆՀԱՅՐ *(գրբ. անհայր)* - *ածական.* Հայր չունեցող, հորից զրկված: *Անհայր խուխէն վէգը ծօռ կինի* (Զ):

ԱՆՀԱՐԻ - *տե՛ս* ԱՆՀԸՆԱՐ:

ԱՆՀԱՐԿԱՎԸՐԱԿԱՆ - *ածական.* Ոչ հարկավոր, ոչ պիտանի: *Անհարկավըրական պէնէրը տանան տանուս կալանվ, ք՝ը-սիբնէրէն պիժէնից* (Բ):

ԱՆՀԱՐՄԱՐ *(գրբ. անյարմար)* - *ածական.* 1. Ոչ հարմար, ոչ համապատասխան: *Անհարմար վախտ ըս յը՛կալ* (Բ): 2. Ոչ հարմարավետ, հարմարություններից զուրկ: *Անհարմար տօն ա* (Բ): 3. Անպատշաճ, անվայել, ամոթալի: *Անհարմար խուսկէրք ըս ասում* (Բ):

- Անհարմար զըգալ - Ամաչել, քաշվել: *Կընէգ՝ը անհարմար ա զըգում, դունադէն քը՛շտէն պըտատածը պէց անէ...* (ՆԱԲ, 136):

ԱՆՀԸ՛Տ *(գրբ. անհետ)* - *ածական.* Անհետ, անդառնալի, անվերադարձ: *Ըտըրանք ասըմ ըն, պըրծընըմ, անհէտ կօրչըմ* (ՀԺՀ, V, 42):

ԱՆՀԸՆԱՐ/ԱՆՀԱՐԻ *(գրբ. անհնար)* - *տե՛ս* ԱՆԿԱՐԷԼԻ:

ԱՆՀԸՎԸՏԱԼԻ *(գրբ. անհաւատալի)* - *ածական.* 1. Որին չի կարելի հավատալ, անհավանական, հավատ չներշնչող: *Անհըվըտալի պէնէր ըս ասում* (Բ): 2. *փխբ.* Աննկարագրելի, արտասովոր: *Անհըվըտալի օժ օնէ* (Բ):

ԱՆՀՆՈՒՇ - *տե՛ս* ԲԷՅՀՆՈՒՇ:

ԱՆՀՈՒՍՈՒՄ - *տե՛ս* ԱՆՈՒՍՈՒՄ:

ԱՆՀՆՈՒՔ՝Ի *(գրբ. անհոգի)* - *տե՛ս* ԱՆԽԸ՛ՂՃ:

ԱՆՁ *(գրբ. անձն)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Անձանց մէրօց տը՛ռնալ - Մեռնել, մահանալ: *...Աղուն տըղին ջանավը ն ընցընում, մին սըհաթան յէտը անձանց մէրօց ա տէռնըմ* (ՋՏ, Բ, 142):

ԱՆՁՈՒՂ(ՆԸ) - *տե՛ս* ԱՆՁՕՂ(ՆԸ):

ԱՆՁՕՂ(ՆԸ)/ԱՆՁՈՒՂ(ՆԸ) *(գրբ. ածուխ, ածուղ)* - *տե՛ս* Ք՝ՕՄՆՈՒՐ:

ԱՆՂԱՐԱՐ - *տե՛ս* ԱՆՂԸՐԱՐ:

ԱՆՂԸՐԱՐ/ԱՆՂԱՐԱՐ - *ածական.* Անհանգիստ: *Անղարար մարթ ա* (Բ): *...Ուրանց հօրը փանիլան չընն, վէր քըշէրը անքօն, ցիրէկը անղըրար հասու, չըհասու, մըռալու, կէնթանու մըհար պէն դուզըցընին* (ՋՏ, Ա, 32):

ԱՆՂՈՒՐՄ - *տե՛ս* ԱՆԽԸ՛ՂՃ:

ԱՆՃԱՆԱ(Ն)Չ *(գրբ. անճանաչելի)* - *ածական.* Անծանոթ: *Անճանանչ մարթին հը՛տէ մէր յիրգիրըմը ապրէլը տիժէր չի* (Բ):

ԱՆՃԱՐ *(գրբ. անճար)* - *ածական.* 1. Խեղճ, հնարավորություններից զուրկ, թույլ: *Անճար մարթին հու վէր ք՝ՕՄՆագ՝ անէ, Ըստընու լ՝ավ կըթրվա* (Բ): 2. Ապաշնորհ, անճարակ: *Էտ անճար մարթը ռազի յա կէնում կընգանը խօսկին* (ՀԺՀ, V, 488): 3. Որի համար ճար, միջոց չկա, անդարմանելի: *Անճար հիվանդ ա* (Բ):

- Անճարը կէրավ պէնջանը -1. Անճար մարդուն բաժին է ընկնում անարժեք ինչքը: 2. Կարիքի դեպքում մարդ համաձայնում է ամեն ինչի:

ԱՆՃԻՐԻ - *տե՛ս* ԱՆՃՈՒՐ:

ԱՆՃՈՒՐ/ԱՆՃՈՒՐ *(գրբ. անջուր)* - *ածական.* 1. Ջուր չունեցող, ջրից զուրկ, ջուրը ցամաքած: *Անճուր կ՝ը՛տ ա, թօռ բիդի կ՝ա, վէր ճուր ինի* (Բ): 2. Անջրդի, չոռոգվող: *Անճուր վը՛ղըմը խամբար չի տը՛ռնալ* (Զ):

- Անճուր, անկըրակ էրվիլ - Անամոք տառապել: *Հինչ ա՞պըրէլ, անճուր, անկըրակ էրվում ընք* (Զ):

- Անճուր ճէղաց - Համից, հոտից,

կարեւորությունից զուրկ իր: *Հինչ խօ՞-ռնգ՝, անճռնր ճէղաց ա, վէջ աղ ա քըցնլ, վէջ տանխտը՝ղ* (Բ):

ԱՆՃՌՆԻՐ - *տեմ* ԱՆՃՌԻՐ:

ԱՆՃՕՌՆԻ *(գրբ. անճռռնի)* - *ած.* Այլանդակ, խիստ տգեղ, տձեւ: *Էտ անճռռնի դէվը ըխճըկանը կ՝ուղանում ա, փախճում* (Ձ):

ԱՆՄԱՀԱԿԱՆ *(գրբ. անմահական)* - *ած.* 1. Անմահություն պարգեւող: *Էտ ճռ՝ուրը անմահական ա, հու խըմէ, վէշ մին վախտ մը՝ռնէլ չի* (Ձ): 2. Մեռածին, հիվանդին կենդանացնող, առողջացնող: *Անմահական խընձրը ախճիկընի օտըմ ա, լիվանըմ* (ԼՂԲ, 326): 3. Ընտիր, սքանչելի, չնաշխարհիկ: *Անմահական ծի յա, ինք՝ օնօղը փուշմանէլ չի* (Բ):

ԱՆՄԱՍՆԸ *(գրբ. անմասն (զուրկ)* - *ած.* Չհաղորդված, առանց հաղորդության: *Ընտի անմասնը մը՝ռավ* (Բ):

ԱՆՄԱՐ *(գրբ. անմայր)* - *ած.* Մայր չունեցող, մորից զրկված: *Անհանր խօխան յէթիմ չի, անմար խօխան ա յէթիմ* (Ձ):

ԱՆՄԱՐ-ԱՆՀԱՆՐ - *ած.* Ծնողներից զրկված, որբ: *Անմար-անհանր տըղէն ախճիգ՝ չընը տամ քօռէն, քընչալէն ըն տամ* (Ձ):

ԱՆՄԱՐԹ *(գրբ. անմարդ)* - *ած.* 1. Անմարդաբնակ, անբնակ, ամայի: *Անմարթ տը՝ղէր ա, ընդը՝ղ ապրէլ չինիլ* (Բ): 2. Ամուսին չունեցող, այրի: *Անմարթ կընէգ՝ կա, ամմա օխտը տըղըմարթու անա դօչ-չաղ ա* (Ձ):

ԱՆՄԱՐԻՓԱԹ - *տեմ* ԱՆՇԸՆՕՐՔ:

ԱՆՄԷՂ - *տեմ* ԱՄՄԷՂ:

ԱՆՄԸՆԱՆ - *տեմ* ԱՆՆԸՄԱՆ:

ԱՆՄԸՆԱՆԱ - *ած.* Սոված, բոլորովին բան չկերած: *Յըրկանց տը՝սնա՝ յը՝ս անմընանա* (Բ):

ԱՆՄԸՐՕՔ *(գրբ. անմորու(ս)* - *ած.* Առանց միրուքի, միրուք չունեցող: *Մին օր էլ ըտըրանց տօնը էրկու մարթ ըն կ՝ամ՝ մինը՝ մըրրքավուր, մինը՝ անմըրօք* (Ձ):

- Անմըրօքը դէր - Ոչ հոգեւորական, բայց գիտուն՝ խելոք մարդ: *Կանանբէդը անմըրօք դէր ա, ամմէն հինչ գ՝ուդում ա* (Ձ):

- Անմըրօքը ք՝ը՝ցավ մըրքու հը՝տա, բէղէրընը էլ կուրցըրավ - *ած.* Ասում են այն ժամանակ, երբ մեկը մի բան ձեռք բերելու, կարգավորելու պատճառով եղածն էլ կորցնում է:

ԱՆՄՈՒՐԱՋ - *ած.* Մուրազին՝ նպատակին չհասած: *Խը՝ղճ տըղան անմուրազ մը՝ռավ* (Բ):

- Անմուրազ մընալ - Մուրազին՝ փափագին չհասնել: *Թօրքէն բալան թաղիմ, կըռը՝վը ըսքըսից, ջիհիլնէն անմուրազ մընացէն* (Ձ):

ԱՆՅԸ՝Ղ - *ած.* Անյուղ՝ յուղը հանած, զտած: *Անյը՝ղ պանէրը ճէլլի կըչուրանա* (Ձ):

ԱՆՅԸ՝Ք - *ած.* Չեկած, բավականաչափ չթթված (խմոր, հաց): *Անյը՝ք խըմօրան լ՝ավ հաց կարէլ չըս թըխիս* (Ձ):

- Անյը՝ք հացը կըփըքէ - Անկիրթ, տհաս մարդը գոռոզամիտ է լինում:

ԱՆՆԱՄՈՒՍ - *ած.* Պատվի՝ արժանապատվության զգացումից զուրկ, նամուս չունեցող: *Մարթին խօխան վէր աննամուս իլանվ, կօրած ա* (Ձ):

ԱՆՆԸՄԱՆ/ԱՆՄԸՆԱՆ *(գրբ. աննման)* - *ած.* Անզուգական, նմանը չունեցող: *Աննըման ախճիգ՝ ար, խըփէգէն, էտ կ՝իժին նըհէտ փըսըկէգէն* (Բ):

ԱՆՇԱՌ - *ած.* 1. Վնաս չբերող, ոչ վնասակար, ոչ վտանգավոր, վնաս չպատճառող: *Անշառ մարթ ա, հանր ա՞ խընգարում* (Բ): 2. *փխբ.* Անփորձանք, առանց փորձանքի հանդիպելու: *Անշառ տը՝ղ հըսէնք՝* (Բ):

ԱՆՇԸՆՈՒՐՀԱԿԱԼ *(գրբ. անշնորհակալ)* - *ած.* 1. Լավությունը մոռացող, չգնահատող, երախտամոռ, ապերախտ: *Անշընուրհակալ մարթ տանս յը՝կավ* (Բ): 2. *փխբ.* Ոչ գնահատելի, չգնահատվող, ապարդյուն: *Անշընուրհակալ կօրծէր մըհէնգ՝ շատ կա* (Ձ):

ԱՆՇԸՆԸՐՔՕԹՈՒՆ *(գրբ. անշնորհութիւն)* - *գ.* 1. Անշնորհք լինելը: *Ամմէն տը՝ղ ուրանն անշընուրքօթունը նըշաս ա տամ* (Բ): 2. Անշնորհք՝ անվայել արարք: *Տը՝սնաս էլհա հինչ անշընուրքօթուն ա ըրալ* (Ձ):

ԱՆՇԸՆՕՐՔ *(գրբ. անշնորհ)* - *ած.* 1. Անշնորհք, ապիկար, շնորհքից զուրկ: *Անշընօրք ընսան ա* (Բ): 2. Անկարգ, անվայել, անպատշաճ: *Անշընօրք պէնէր ասից մօրը* (Բ):

ԱՆՇՈՒՆՉ/ԱՆՍՈՒՆՉ *(գրբ. անշունչ)* - *ած.* 1. Անշնչացած, անկենդան, մեռած: *Յէշում ըն, տը՝սնում ըտը՝ղ մին անշունչ պառավ* (Ձ): 2. Ոչ շնչավոր, շնչավոր առարկաների դասին չպատկանող: *Ծառ ա, լի՞, խէ վէր ը՞ս թակում, հինչ ա՞նինք՝, թա անշունչ ա* (Բ):

ԱՆՇՕՆ - *ած.* 1. Շուն չունեցող, որտեղ շուն չկա: *Անշօն տանը հավէրը աղվէսը կըտանէ* (Բ): 2. *փխբ.* Անպահապան, անտեր: *Անշօն հէյվան ար, կ՝ուլը տարավ* (Ձ):

- Անշօն շէն նի մընէլ, առանց փանդ շօռ կ՝ալ - Հսկողություն չլինելու պատճառով առանց որեւէ արգելքի իր ցանկացածը կատարել: *Անարխյա յա, կ՝օղէն ծը՝ռքան փըռնօղ չի կա. անշօն շէն ա նի մըտալ, առանց փանդ շօռ ա կ՝ամ* (Ձ):

ԱՆՉՕԲԱՆ - *ած.* Հովիվ չունեցող, առանց հովիվի: *Անչօբան վը՝խճարը սանրու չի տը՝ռնալ* (Ձ):

ԱՆՊԱԴԷՎ *(գրբ. անպատիւ)* - *տեմ* ԱՆՆԱՄՈՒՍ:

ԱՆՊԱԹԿԸ - *տեմ* ԱՄՊԷԹԿԸ:

ԱՆՊԱԿԱՍ *(գրբ. անպակաս)* - *ած.* 1. Չպակասող, անսպառ, առանց պակասելու: *Դանրը մէր ժուղուվուրթան անպակաս ա:* 2. Առատ, առանց կարիքի, պակասություն չունեցող: *Ըտըրանք ը՝տը՝ղ անպակաս ապրում ըն* (Բ):

ԱՆՊԱՅՄԱՆ - *տեմ* ԱՄՊԱՅՄԱՆ:

ԱՆՊԱՆ - *տեմ* ԱՄՊԷՆ:

ԱՆՊԱՆՕԹՈՒՆ - *տեմ* ԱՄՊԻՆՕԹՈՒՆ:

ԱՆՊԱՏԱՆ - *ած.* Պատան չունեցող, առանց պատանի: *Անպատան մը՝ռալ ար, ըտի էլ թըրը՝ցէն* (Բ):

ԱՆՊԷԹԿԸ - *տեմ* ԱՄՊԷԹԿԸ:

ԱՆՊԷՆ - *տեմ* ԱՄՊԷՆ:

ԱՆՊԸՏՕՂ *(գրբ. անպտուղ)* - *տեմ* ՉԸՊԷՐՔ:

ԱՆՊԻՆՕԹՈՒՆ - *տեմ* ԱՄՊԻՆՕԹՈՒՆ:

ԱՆՊՈՒՆ - *ած.* Բույն չունեցող, բնից զուրկ: *Անպանն հավը ուրանշու պանանում ծու կածէ* (Ձ):

ԱՆՊՕՋ՝ - *ած.* Պոզ՝ եղջյուր չունեցող, անեղջյուր: *Ըտըրան ինում ա մին անպօզ՝ կավ* (Բ):

- Անպօզ՝ հէյվանը քացէ տըվօղ կինի - Յուրաքանչյուրն ունի պաշտպանվելու իր միջոցը:

- Անպօզ՝ կ՝ումաշ/տավար - Հիմար, տգետ, անհասկացող անձ: *Իզէն քու քըվօր հը՝տէ հինչ մարթ ա՞, անպօզ՝ կ՝ումաշ ա* (Ձ):

ԱՆՋԱԲ/ԱՆՋԱՄ - *տեմ* ՋԱՄԲԱՐ:

ԱՆՋԱԽ *(թրք. ancak)* - *մ.* Հազիվ, դժվարությամբ, շատ քիչ: *Հարընն էլ ղըրիբօթուն ա ք՝ընում, անջախ տարէն մէհէտ, էրկու հէտ ա կ՝ամ* (ՆԱԲ, 50):

ԱՆՋԱԽ-ԱՆՋԱԽ - *մ.* Վերջապես, մեծ դժվարությամբ, հազիվհազ: *Էտ քըշէրը ըրազի տըղան կ՝ամ ա, թա.- Մյա, անջախ-անջախ դինջացալ ըմ* (ԱԱ, 89):

ԱՆՋԱՄ - *տեմ* ԱՆՋԱԲ:

ԱՆՋԸՀԳԱՐ - *տեմ* ԱՆԽԸ՝ՂՃ:

ԱՆՋԻԼ/ԱՆՋԻՐ *(պրս. injir, թրք. incil, ռուս. инжир)* - *տեմ* ԹՕՋ՝:

ԱՆՋԻՐ - *տեմ* ԱՆՋԻԼ:

ԱՆՋՈՒԿ - *տեմ* ԱՆԳՈՒՃ:

ԱՆՋՕ - *տեմ* ԹՕՐՆԸՍՔ՝ԸՆԻՄ:

ԱՆՍԱՋ - *ած.* 1. Անհամապատասխան, ոչ պատշաճ: *Հու հինչ օգում ա ասէ, էն ախճիգը էս տըղէն անսաղ ա* (Բ): 2. Ոչ ամուր, խարխուլ: *Անսաղ տօն ա, վէր ծու-*

նը կ՚ա, պարան ա կ՚ըլական: 3. Չհամակերպվող, չզիջող: *Ըտի հիշքան կ՚օղ, մարթասպան, անսազ մարթ կա, քուչիս ա, կ՚աս Ըրասխէն էս թանփը* (ԱԱ, 23):

ԱՆՍԱՁՕԹՈՒՆ - *գ.* Չհամակերպվելը, չզիջելը: *...Յիրգ՚իրավը մին ա ընէս, թա.- Իմ յիրգ՚իրըմըս բիդի վէչ կ՚ուղօթուն ինի, վէչ ըսպանութուն, վէչ էլ անսազօթուն* (ԱԱ, 22):

ԱՆՍԱՆՑ/ԱՆՍԱՍ/ԱՆՍԱՆՑ - 1. *տե՛ս* ԱՆԽՕՍ (2, 3): 2. *մ.* Կամաց, զգույշ: *Ան-սանց փըռնէ՝ վէր չի քըցիս* (Բ):

ԱՆՍԱՆՍ - *տե՛ս* ԱՆՍԱՆՑ:

- Անսանս Մօսէս - Լռակյաց, քչախոս մարդ: *Էտ անսանս Մօսէսը ըռազի յա՞* (Բ):

ԱՆՍԱՆՍ-ԱՆՍԷՄՈՒՐ - *տե՛ս* ԱՆԽՕՍ (2, 3):

ԱՆՍԱՆՎՈՒՐ - *տե՛ս* ԱՆԽՕՍ (2, 3):

ԱՆՍԱՐՔ - *ած.* 1. Ոչ սարքին, բանեցնելու անպատրաստ: *Տըրախտըրը անսարք ա, արտէրը մընացալ ա վըրէ-լու* (Բ): 2. Թափթփված, անկարգ վիճակում գտնվող: *Անսարք տօն ա՝ ամմէն հինչ վէր ածած, հըվաքօղ չի կա* (Բ):

- Անսարք տանը սարքէն հարթնը - Շատվորի մեջ միայնակ տանջվող, չարչարվող: *Անսարք տանը սարքէն հարթ-նը, իցցուն հօքուն մաչին մինակ ինք՚ըն ա՞* (Բ):

ԱՆՍԸԷՐՏ *(գրբ. անսիրտ)* - *տե՛ս* ԱՆ-ԽԸԷՂՃ:

ԱՆՍՊԷՌ - *տե՛ս* ԱՆԸՁԿԱՄ:

ԱՆՍՈՒՆՉ - *տե՛ս* ԱՆՇՈՒՆՉ:

ԱՆՎԱՆԱ - *ած.* Անժամանակ, ոչ ժամանակին, անտեղի: *Վըդին չասած դանգ խօսկը անվանա վըրցակու կանչ ա* (ԱԲԲ, 83):

ԱՆՎԱՆԼ - *տե՛ս* ԱՆՎԱԼ՚:

ԱՆՎԱԼ՚/ԱՆՎԱՆԼ - *ած.* Տգեղ, այլանդակ: *Էրկու ածդահա յըն կ՚ամ. մինը՝ փիս անվալ՚...* (ՀԱԲ, 15,47):

ԱՆՎԸԷՌ - *ած.* Ոռ՝ տակ չունեցող: *Անվը՚ռ կօլա յա, տէն քըցի՛* (Բ):

ԱՆՎԸԷՍԿԸՌ - *ած.* 1. Ոսկոր չունեցող, ոսկորից զուրկ: *Վէրթնըն էլ ա հէյվան՝ կօզի անվը՚սկըռ* (Բ): 2. Ոսկոր չպարունակող, փափուկ: *Մուտանում ա ղըսաբէն. թա.- Էրկու կիլօ անվը՚սկըռ մէս տօ, տանիմ դօլմա իփիմ* (Ձ):

- Անվը՚սկըռ թիք՚ա կօլ տալ - Առանց աշխատելու հանգիստ ապրել, յուրացրածը վայելել: *Վէ՛չ կօրծ ա անում, վէ՛չ պէն, անվը՚սկըռ թիք՚ա յա կօլ տամ* (Ձ):

ԱՆՎԸԷՏ *(գրբ. անհոտ)* - *ած.* 1. Հոտ՝ բույր չունեցող: *Անվը՚տ վարթը հինչ կա՞նին* (Բ): 2. *փխբ.* Ձանձրալի, տաղտկալի, տհաճ: *Անվը՚տ մարթ ա, վէր զանրանց ա անում, զանիլանս տանում ա* (Ձ):

- Աշկը պէնալ/պէց անէլ - 1. Արթնանալ, զարթնել: *Աշկըս պէցէ, տը՝սէ ԱՅը՝ վը տիւս յը՝կած* (Բ): 2. Ուշքի գալ, սթափվել: *Էտ ճըպաղած մարթին յըրա ցօրտցօրտ ճիւր ըն ածում, աշկը պէնում ա* (Զ): 3. Կյանքը հասկանալ, գիտակցության գալ: *Ախմաղ զատ ար, փըսակվից, մըհէնգ՝ աշկը պէցալ ա* (Բ): 4. Զգաստանալ, աչալուրջ լինել: *Աշկըտ պէ՛ց, տը՝ս կընէգ՝ըտ հինչէր ա անում* (Զ): 5. Կյանք մտնել, ապրել սկսել, նախկին դժվարությունները չունենալ, հոգսերից թեթեւանալ: *Կըռը՝վը պըրծավ, անջախ-անջախ աշկ պէցէնք՝* (Բ): 6. Բացվել, ծաղկել: *Հիւնին աշկէրը պէցալ ա* (Բ): 7. Լույս աշխարհ գալ, ծնվել: *Յը՝ս աշկըս պէց ըմ ըրալ՝ Կիզօղանց Մըրքըրան ըստիւր-ընդիւր անա փայ ինզիլիս* (Զ):

- Աշկը պէց - 1. *տե՛ս* ԸՇԿԱՊԷՑ: 2. Արթուն, չքնած: *Սաղ քըշէրը աշկը պէց հիվանդ մօրը քըշտէն նըստում ա* (Զ): 3. Կենդանի, չմեռած: *Մարը ասմա.- Բա՛լա, հանլա էն ա աշկըս պէց, վէր ըտի յըք անըմ, պա վէր մը՝ռնիմ, հինչ ը՞ք ընական* (Զ): 4. Բացահայտ, բոլորի աչքի առջեւ: *Աշկը պէց նի մըտավ հիրըվանէն բաստանը, լօբին քաղից, ք՝ը՝ցավ* (Բ):

- Աշկը պէց լիւսըցընէլ - Ամբողջ գիշեր չքնել, արթուն մնալ: *Հանը ծանդըր ա, իրը՝ք օր ա՝աշկը պէց ա լուսըցընում խը՝ղճ ախճիգ՝ը* (Բ):

- Աշկը պըլթալ - *տե՛ս* Աշկը տըրաքէլ:

- Աշկը պըրտօ՝ղէլ - Տեսողությունը թուլանալ: *Հանլա քըռասուն տիրը՝կան կա վէչ, ամմա աշկը պըրտօ՝ղալ ա* (Բ):

- Աշկը սըվը՝ռէլ - Ընտելանալ, վարժվել: *Մին վէր կ՝ուղութունէն աշկը սըվը՝ռալ ա, էլ կարում չըն կըտըրցընին* (Բ):

- Աշկը սիրիլ - Դուր գալ, հավանել: *Ըխճըկանը աշկը վէր տըղէն սիրից, էլ կարէլ չըս նը՝ստա պուք տաս* (Զ):

- Աշկը սօր - Լավ տեսողություն ունեցող, սրատես: *Աշկըտ սօր ա, մին տը՝ս էս հինչ ա՞ կ՝իրանդ* (Բ):

- Աշկը վախէլ - 1. Փորձով մի բանից վախեցած լինել: *Հանց բըդի անիս, վէր էշին աշկը պէռնան վախէ վուչ, վէր վախից՝ քէզ ծառայէլ չի* (ՆԱԲ, II, 170): 2. Մի բան կատարելու՝ գլուխ բերելու անհնարինությունը կամ վտանգը կանխազգալ: *Աշկըս վախում ա, թա չէ յը՝ս էլ պարթկ կանիմ, տօն շինիմ* (Բ):

- Աշկը տը՝ղան տիւս կ՝անլ - Աչքը սաստիկ ցավել: *Աշկըս տը՝ղան տիւս ա կ՝ամ, դօխտուր, մին ճար ըրա՛* (Զ):

- Աշկը տը՝սածընն ա սիրում - Մարդ հավանում՝ ընտրում է իր համար սովորական դարձածը: *Աշկը տը՝սածընն ա սիրում, ա՛ ջիհիլնէ, ախճիգ՝ ըք օզիւմ, ծէր շէնան ինզը՝ցէք՝* (Զ):

- Աշկը տընագէլ - 1. *տե՛ս* Աշկը նի թօղնէլ: 2. Մի բանի վրա աչք ունենալ, ցանկանալ իրենը դարձնել, նախանձով նայել: *Էրկու հէքտար վը՝ղ օնէ, ամմա աշկը տընագալ ա հիրըվանէն բուստանէն* (Բ):

- Աշկը տըռնանը ինիլ/պահել - 1. Տան վրա հսկել, պահպանել: *Էն ա աշկը տըռնանը, արխա՛յին կաց* (Բ): 2. Ամուսնական կյանքին հավատարիմ լինել: *Նըմուսավ կընէգ՝ ա, աշկը էն ա տըռնանը* (Բ): 3. Առանց ուրիշից օգնություն ակնկալելու՝ իր միջոցներով ապրել: *Աշկը տըռնանընն ա, վէշ մինին անա պէն չի օգ՝ում* (Զ):

- Աշկը տըսածան վախէլ - Վախենալ մի բանից՝ նախորդ փորձը աչքի առաջ ունենալով: *Աշկը տըսածան ա վախում, հըռնէ արաշտ ըրավ, արտըս չուրըցըրավ, ըստարէ ընական չըմ* (Բ):

- Աշկը տըրաքէլ - 1. Կուրանալ՝ աչքերը փչանալ: *Հանրաբէդին աշկը տըրաքալ ա, վէշ մին պէն տը՝սնում չի* (Զ): 2. Անեծքի արտահայտություն՝ թող կուրանա, տեսողությունից զրկվի: *Աշկըտ տըրա՛քէ, էտ մարթին տօնը խէ քանդիւմ ըս* (Բ):

- Աշկըտ պըլլէս - Հանդիմանական կամ անեծքի բանաձեւ՝ ուղղված չար աչք ունեցողին: *Աշկըտ պըլլէս, Իսա՛կ, կըվէս աշկավ չի տաս* (Բ):

- Աշկը տիւզնը - *տե՛ս* Աշկը ծակ:

- Աշկը տիւս - *տե՛ս* Աշկը շօր: *Կընանուցան մինը կ՝օղ ա ինիւմ, մինըն՝ աշկը տիւս, էն մինըն էլ՝ լիւզվանէգ՝* (ՀԺՀ, VIII, 377):

- Աշկը տիւս կ՝անլ - *տե՛ս* Աշկը տըրաքէլ:

- Աշկը տիւս օնէլ - *տե՛ս* Աշկը հանէլ:

- Աշկը ցամաք - Անարտասուք, դժբախտություն չտեսած: *Նէրակ ընդիւր կինի՝ աշկը ցամաք նի կըմընէ վը՝ղէն տակը* (Զ):

- Աշկը իւրիւշիւ յըրա - 1. Ուրիշներից օգնություն ակնկալող, աղքատ: *Էտ մարթը ք՝ասիբ մարթ ա ինըմ, աշկը օրիշի յըրա* (ՀԺՀ, V, 575): 2. *տե՛ս* Աշկը շօր:

- Աշկը փըռնէլ - Հավանել՝ ձեռք բերելու ցանկություն ունենալ: *...էս յէկած հընգէրէն աշկը մին ըխճըկա փըռնում ա, հընգէրէն յախան փըռնում ա, թա էտ ախճիգ՝ը ինձ հէտէ բէդմա օգիս* (ՀԺՀ, VI, 219):

- Աշկը փըսօր ըղնէլ - Փոքր ձախորդության հանդիպել: *Սաղ-սըլմաթ կըռվան պըրծավ, աշկըն էլ չի փըսօր ընգալ* (Բ):

- Աշկը քախծըր - Բարի, բարեհամբույր: *Աշկը քախծըր կընէգ՝ ար, էտ յիթիմնէրէն լ՝ավ պահից* (Բ):

- Աշկը քախծըր ինիլ/պահէլ - *տե՛ս* Աշկը քըխծըրանալ:

- Աշկը քըխծըրանալ - Բարյացակամ դառնալ, մեկին բարի աչքով նայել: *Ըսկէսվօրը աշկը քըխծըրացալ ա, հարթանը անա էլ կ՝էնգ՝ատ չի անում* (Զ):

- Աշկը քըցիլ - *տե՛ս* Աշկը տընագէլ:

- Աշկը քուշտանալ - Մի բանից հագենալ, բավարարվել, լիանալ: *Ալման աշկը քըցում ա էտ ըխճըկանը աշկէն, յէշում, յէշում, էլիա աշկը քուշտանում չի* (Զ):

- Աշկը քուշտըցընէլ - Մեկին լիացնել, որեւէ բանի կարոտ չթողնել: *Պիրանում ըն էտ վը՝ղէրը սաղ տամ ըտըրան, աշկը քուշտըցընում* (Զ):

- Աշկը օնքան պիցըրանալ/ընցընէլ - Հանդգնել: *Հըրուստացալ ա, էլ վէշ մինին խուսուցունում չի, աշկը օնքան պիցըրացալ ա* (Բ):

- Աշկը օնքէն կըլխան ինիլ - *տե՛ս* Աշկը օնքան պիցըրանալ: *Պառավը կըզնըվում ա, ասըմ ա.- Մ՝ տըղա, էտ հիշքան ա՞ աշկըտ օնքէտ կըլխան ի-լանդ, վէր օզում ըս սաղ ջէյրան փըռնի՛ս* (ՀԺՀ, V, 485):

- Աշկը օտէլ - Իր ուժերին համապատասխան համարել, իր ուժերին վստահել: *Սը՝վ ծին ասմա.- Էրկու օրումը չէ, ամմա իրը՝ք օրումը, աշկըս օտում ա, ք՝ը՝զ կըհըսցընիմ ընդը՝ղ* (Զ):

- Աշկ թօղ անէլ - *տե՛ս* Աշկ կ՝ուղանալ:

- Աշկի ըղնէլ - 1. Նկատելի դառնալ, ուշադրություն գրավել: *Էտքանէն մաչին էտ կաղնէն ա աշկի ըղնում* (Բ): 2. Նշանավոր լինել, որեւէ հատկանիշով առանձնանալ: *Հանլա մին խըրէգ՝ վախտ անց կացած վէչ, աշկի յա ընգնըմ հունցու լանվ առուտուր անօղ* (ՀԺՀ, V, 184):

- Աշկ ինիլ - 1. *տե՛ս* Աշկը փըռնէլ: 2. Չար աչք ունենալ: *Դէրվիշին աշկ ա ինիւմ, աշկավ ա տամ, էտ բաղը իրը՝ք օրումը չուրանում ա* (Զ):

- Աշկ խանփիլ - 1. Տեսողական պատրանք ստեղծել: *Հըռանցէ էտ քարը աշկ ա խանփիւմ, գ՝ինդիւմ ըս, թա մարթ ա նըստած* (Զ): 2. Քիչ բանով գոհացնել:

Պատառ ցօրէն ա տամ էտ կընգանը, աշկ խանփում, ըխճըկանը տանում (Ձ):

- Աշկ ծակէլ - 1. Խիստ աչքի զարնել, ակնառու երեւալ: *Էտ ըխճըկանը թօշին խալը աշկ ա ծակում* (Բ): 2. Նախանձ շարժել: *Իլանծ-չիլանծը մին կավ ա, էն էլ ա աշկ ծակում* (Բ):

- Աշկ կ'ուղանալ - Հարմար պահ՝ առիթ որսալ: *Աղվէսըն ան կ'ուլը օգում ըն աշկ կ'ուղանան, օղտէն անա թաքուն էտ հացըն օտը՛ն* (ՆԼՂԺԲ, 82):

- Աշկ նըհաշ տալ - Խստություն արտահայտել, սաստել: *Արչը կ'ուլին աշկ ա նըհաշ տամ, կ'ուլը էլ ըլըբըստըրակէն ք'էփէն նի չի կ'ամ* (Ձ):

- Աշկ նի կանալ - Չար աչք դիպչել, չար աչք ունեցողի հայացքից վնասվել: *Շատ յէր կալած ծառէն տակէն ծուվ ըն տընում, վէր աշկ չի նի կ'ա* (ՆԱԲ, 161):

- Աշկ չըկըտըրէլ - *տե՛ս* Աշկը չըկըտըրէլ:

- Աշկ չըճըպէլ - 1. Անվախ, աներկյուղ լինել: *Օգում ըս լ'ըհա մորթէ, աշկ չի ճըպէլ* (Բ): 2. Անամոթ՝ պնդերես լինել: *Հիշկան ծզում ըս՝թըքըթծիմանթ տօ, աշկ չի ճըպէլ* (Ձ):

- Աշկ պէնալ/պէց անէլ - *տե՛ս* Աշկը պէնալ:

- Աշկ տալ, իշըէղ/պէրի չըտալ - *տե՛ս* Օր տալ, իշըէղ չըտալ:

- Աշկ տինիլ *(գրբ. ակն դնեմ)* - *տե՛ս* Աշկը տընգէլ(2):

- Աշկու գուլլան - 1. Աչքի բիբ: *Փանը նի յա կ'ամ, ըտըրա աշկէն գ'ուլլանն ցըրը՛վ տամ* (Բ): 2. *տե՛ս* Աշկու լուս:

- Աշկու լուս/իշըէղ *(գրբ. լոյս աչաց)* - 1. Տեսողություն, տեսողության կարողություն: *Աշկու լուս չօնէ, քուռացալ ա* (Բ): 2. Շատ սիրելի, թանկագին անձ կամ իր: *Էտ տըղան լօխճին աշկէն լուսըն ա* (Ձ):

- Աշկու լուս տը՛ռնալ - Մեծ սեր՝ հարգանք վայելել, սիրելի դառնալ: *Ըտի նախըրչուն ախճիգ'ը թաքավէրին աշկէն լուսըն ա տը՛ռնում* (Ձ):

- Աշկու լուսու նըման պահէլ - Մեծ խնամքով՝ հոգատարությամբ պահել՝ պահպանել, սիրել, փայփայել: *Ղարաբաղցէն ասում ա.- Մստուծ, թա տու կարում չըս մը՛զ պահիս, քըշա՛ց, մունք ք'ը՛զ աշկու լուսու նըման պահինք'* (Ձ):

- Աշկու լուսու նըհը՛ետ չըփօխէլ - Շատ թանկարժեք՝ անգնահատելի համարել: *Ղէրվիշը թա.- Էս քարը ճօկ քար ա, աշկու լուսու նըհը՛ետ փօխէլ չըմ* (Ձ):

- Աշկու կ'իրօղ - *տե՛ս* Աշկու փօշ: *Տըմբըլաչի խաչանը կասիս լըհա լօխչու աշկի կ'իրօղըն ա, վէչ հըրսընքու ըն կանչըմ, վէչ նըշանի, վէչ փըսըկանչի...* (ՋՏ, Ա, 38):

- Աշկու կուկում - *տե՛ս* Աշկու գուլլան:

- Աշկումը աղու մըզիլ - Շատ նեղել, տանջել, չարչարել: *Հարթնը, հինչ հա՞րթնը, ըսկէսվօրը աշկումը աղու վա մըզում* (Բ):

- Աշկումը իշը՛ղ ինիլ - 1. Գեղեցիկ՝ գրավիչ լինել, հաճելի արտաքին ունենալ: *Օխտը ախճիգ' տը՛սէ, վէշ մինին աշկումը իշը՛ղ չի կար* (Ձ): 2. Երիտասարդ լինել: *Հանլա պըռավալ չի, աշկումը էն ա իշը՛ղ կա* (Բ): 3. Լավ ընտրություն կատարել: *Լ'ավ ախճիգ' ըս օգ'ալ, աշկումըտ իշը՛ղ կա* (Բ):

- Աշկումը խուլ'/մազ' փըսնէլ/տուս կանալ - 1. Երկար սպասել, սպասելուց հոգնել: *Խէ կ'ամ չը՞ս, աշկումըս խուլ' փըսավ* (Բ): 2. Երկար ու դժվարին աշխատանք կատարել, նեղություն քաշել, չարչարվել: *Աշկումըս խուլ' ա փըսալ, մինչը՛վ էս տօնը շինանալ ըմ* (Ձ):

- Աշկումը յը՛ղ ինիլ - *տե՛ս* Աշկումը իշը՛ղ ինիլ:

- Աշկումը շօռ կանալ - *տե՛ս* Աշկու փօշ տը՛ռնալ:

- Աշկումը պէրի ինիլ - *տե՛ս* Աշկումը իշը՛ղ ինիլ:

- Աշկումը պիցըրանալ - Մեկի մոտ հեղինակությունը՝ վարկը բարձրանալ, հեղինակություն ձեռք բերել: *Վէր անմահական ճուրը պիրում ա, թաքավէրը ասմա.- Միհէնգ' աշկումըս պիցըրացէր* (Ձ):

- Աշկումը պիցըրցընէլ - Մեկի հեղինակությունը՝ վարկը ուրիշների մոտ բարձրացնել, հեղինակավոր դարձնել: *Տըղըմարթին ժուղուվուրթէն աշկումը պիցըրցընօղը կընէգ'ըն ա* (Ձ):

- Աշկումը քըցիլ - Մեկին ուրիշների մոտ վարկաբեկել՝ հեղինակազրկել՝ ատելի դարձնել: *Էտ ախճիգ'ը ախպօրը լօխճին աշկումը քըցանալ ա* (Բ):

- Աշկու չափավ - Մոտավոր չափով, որ որոշվում է նայելով: *Էտ տանը իրկընօթունը աշկու չափավ քըսան մէտըր կինի* (Բ):

- Աշկու պըլլօր - *տե՛ս* Աշկու փօշ:

- Աշկու պըլլօր տը՛ռնալ - *տե՛ս* Աշկու փօշ տը՛ռնալ:

- Աշկու պիրիլ - Գեղեցկացնել, հղկել: *Դանլգ'անը մըղակը շինից, ըսքըսից աշկու պիրիլը* (Ձ):

- Աշկու փօշ - Սաստիկ ատելի, անտանելի: *Մարը ասմա.- Մին վըխտու վա իլանալ իմ ախպէր, մըհէնգ' աշկու փօշ ա* (Ձ):

- Աշկու փօշ տը՛ռնալ - Սաստիկ ատելի լինել: *Կ'ուղօթուն ըրավ, շէնումը աշկու փօշ տը՛ռավ* (Բ):

- Աշկու փօշ տուս օնօղ - *տե՛ս* Սըրտու փօշ տուս օնօղ (ՍԸ՛ՐՏ[1]-ի տակ):

- Աշկու քըշէռք - *տե՛ս* ԸՇԿԱՉԱՓ:

- Ըշկէրան ըրտասունք քամէլ - 1. *տե՛ս* Աշկէրը ծօվ տը՛ռնալ: *Հինչա տըղան կօրալ ա, էտ կընէգ'ը սուս չի անում, սաղ օրը ըշկէրան ըրտասունք ա քամում* (Բ): 2. Լացացնել: *Էս կըռը՛վը մէր ըշկէրան շատ ըրտասունք քամից* (Բ):

- Ըշկէրան խը՛ղճ - Տեսողությունը թույլ, լավ չտեսնող: *Լ'ավըն էն ա քառ հինիս, հինչ ըշկէրատ խը՛ղճ* (Ձ):

- Ըշկէրան շընէր վէր տը՛ռնալ - Խորամանկ, վավաշոտ լինել: *Ըշկէրան շընէր ա վէր տը՛ռնում, նը՛ստա ղըրաղ շօ՛ռ տօ* (Բ):

- Ըշկէրավը օտէլ/կօլ տալ/լէփիլ - 1. Տենչանքով՝ կրքով նայել մեկին, մի բանի: *Առաչին տըսնալավը տըղան ու ախճիգ'ը ըշկէրավ ուրուր օտում ըն* (ՆԱԲ, II, 25): 2. Ատելությամբ՝ թշնամանքով նայել, սաստիկ հանդիմանական հայացքով նայել: *Աշկէն փօշըն ա, ըշկէրավը օտում ա* (Ձ): 3. Ագահությամբ՝ մեծ ախորժակով ուտել: *Խըրաված, հինչ խըրա՞ված, ղունուղնէն ըշկէրավը կէրէն* (Բ):

- Ըշկէրէն ճիրէրը հըղէ ինիլ - *տե՛ս* Լանց ինիլ: *Էլ կարում չի պըրանան վէր ածէ, ընդի էլ կօլ ա տամ, ըշկէրէն ճըրէրը հըղէ յա ընում* (ՆԱԲ, 126):

- Ըշկէրէն չըհըվատալ - Տեսածին չհավատալ, տեսածը անհիրական համարելով՝ ապշել: *Կ'ամ ա, տը՛սնում շօնը էտ ճօխտ կ'ուլին խը՛խտած, ըշկէրէն հըվատում չի* (Ձ):

- Ըշկէրէն տական տուպրընկնէ կախ ինիլ - *տե՛ս* Ըշկէրէն տակը փըչըգ'օտէլ:

- Ըշկէրէն տակը փըչըգ'օտէլ - 1. Աչքերի տակը ուռչել: *Էնքան լանց ա իլանալ, ըշկէրէն տակը փըչըգ'օտալ ա* (Բ): 2. Ծերանալ: *Ըշկէրէս տակը փըչըգ'օտալ ա, մըռնէլի վախտը ա* (Բ):

- Ըշկէրէն փուշի մաղ(վ)էլ - Ալեհեր դառնալ, ճերմակել: *Ըշկէրէն փուշի յա մաղալ, էլհա էն ա ըստըրա-ընդրա կընգանը հը՛տը ընգած* (Ձ):

- Ըշկէրումը կարթիլ - Մեկի աչքերի՝ դեմքի արտահայտությունից հասկանալ՝ գուշակել՝ կռահել տրամադրությունը, մտադրությունը: *Ասէ, ասէ վէչ, յը՛ս ընդրա ըշկէրումը կարթում ըմ. մը՛թկը խայնի ա* (Ձ):

- Ըշկէրումը շընըկուտըգ'նէ ինիլ - *տե՛ս* Ըշկէրան շընէր վէր տը՛ռնալ:

ԱՇԿԱՎ-ՕՆՔԱՎ - *տե՛ս* ԸՇԿԸՕՆՔԱՎ:

ԱՇԿԱՐ(Ա)/ԱՇԿ'ԱՐ(Ա) *(գրբ. աշկարայ)* - 1. *ած.* Ակներեւ, բացահայտ, ամենքին տեսանելի: *Աշկարա տը՛ղ ա, ընդը՛ղ կ'ուղօթուն չինիլ* (Բ): 2. *տե՛ս* ԱՓԱՇԿԱՐԱ:

- Աշկար անել - Բացահայտել, երեւան հանել, հայտնի դարձնել: *Սուդյին ըռուշվաթ տուվավ, վէր կ'ուղօթունը աշկար չանէ* (Բ):

- Աշկար ինիլ/տը'ռնալ/տուս կ'ալ - Բացահայտվել, երեւան հանվել, հայտնի դառնալ: *Հիշկան անում ըն, կարում չըն թաքուն պահին, էտ պէնը աշկար ա ինում* (Ձ):

- Աշկար տուս օնէլ - *տե՛ս* Աշկար անել:

ԱՇԿԻ - *տե՛ս* ԱՉԿԻ:

ԱՇԿ-ԻՇԸ'Ղ - *տե՛ս* ՕՐ-ԻՇԸ'Ղ:

ԱՇԿ'ԱՌ(Ա) - *տե՛ս* ԱՇԿԱՌ(Ա):

ԱՇԿ-ՕՆՔ - *տե՛ս* ԸՇԿԸՕՆՔ:

- Ըշկէրէն-ունքէրէն անել - *տե՛ս* Փուշէրէն անել (ՓՕՇ-ի տակ):

ԱՇՆԱ *(պրս., թրք. ašina)* - *տե՛ս* Ք'ԻՐՎԱ:

ԱՇՆԱ-ԴՕՍՏ - *գ.* Մտերիմներ, բարեկամներ: *Աշնա-դօստ հըվաքվում ըն, էտ մարթին էրված տօնը մին ամսումը շինում* (Բ):

ԱՇՇԻ/ԱՅՇԻ/ԱՅԻՇԻ - *վ.* Անհոգության բացականչություն՝ փույթ չէ, հոգ չէ: *Աշշի՛, հինչ տը'ռնում ա, տը'ռնա, դարդըս չի* (Բ):

ԱՇՊԱՋ/ԱՍՊԱԺ *(թրք. ašpaz)* - *գ.* Խոհարար: *...Թաքավէրը հըրամմայըմ ա՝ պալատին քաշի ըմբըրնէրըմը հինչ օտէլի պը'ն կա, ընդըրանա աշպազնին իփին...* (ՀԺՀ, V, 67):

ԱՇՊԱՋԽԱՆԱ/ԱՍՊԱԺԽԱՆԱ *(պրս. ašpazxane, ադրբ. aşpazxana)* - *գ.* Ճաշարան: *Նի յա մընընըմ մին աշպազխանա, ընդը'ղ ծառա տը'ռնըմ* (ՀԺՀ, V, 230):

ԱՇՊԱՋՕԹՈՒՆ/ԱՍՊԱԺՕԹՈՒՆ - *գ.* Խոհարարություն: *Կուճի ախպէրընը էլ ք'ունում ա աշպազօթուն սըվը'ռում* (Ձ):

ԱՇՐԱՓ *(թրք. eşraf (պատվավոր քաղաքացի)* - *հեգն. տե՛ս* ԱԽՄԱԽ:

ԱՇՈՒՆՔ *(գրբ. աշուն)* - *գ.* 1. Տարվա եղանակ՝ ամռան եւ ձմռան միջեւ, աշուն: *Աշունքը վէր կ'ամ ա, ժուղովուրթը բըղէրան տօն չընն կ'ամ* (Ձ): *մ.* 2. Աշնանը, աշնան ընթացքում: *Սըխտօրը բիդի աշունքը վարիս, թա չէ պէրք չի տալ* (Ձ):

- Ըշունքու ծէք' - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱԾԷՔ':

- Ըշունքու հավա - Անձրեւոտ եղանակ: *Ամը'ռն ա, ամմա ըշունքու հավա յա անում* (Բ):

- Ըշունքու ճօտ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՃՕՏ:

ԱՇՈՒՐՄԱ - *տե՛ս* ԱՇԸՐՄԱ:

ԱՇՕՆ - 1. *մկն. գ.* Շուն: *Խօխան լանց ինիլանվ կ'ամ ա, թա.- Աշօնը կընծալ ա* (Ձ): 2. *ձ.* Շանը քշելու ձայն: *Աշօն, կօ՛ռէր ըստըղաս* (Բ):

ԱՇՕՆ-ԱԿ'ՈՒԼ - Մեկին դիմելու հեգնական արտահայտություն: *Հու կարում ա, կըլխօգէն բօստանը թըլանում ա, մինը կավէչ՝ ասէ.- Աշօն-ակ'ո՛ւլ, էտ հինչ ը՞ս անում* (Ձ):

ԱՉ *(գրբ. աջ)* - *ած.* 1. Ձախին հակառակ կողմում գտնվող: *Աչի ծը'ղքը ծէխան օժժավ ա* (Ձ): 2. Աջ ուղղությամբ տարածվող, աջ կողմը: *Վէր պատառ ք'ունում ա բիդի աչի թանափը, տը'սնում ա ուրանց շէնը ըրվամ ա* (Ձ): 3. Կտորի, գուլպայի շիտակ կողմը՝ երեսը: *Մարթը ասմա. - Մ կընէգ', էս գ'ուլբին աչը վէրընս ա՞* (Ձ): 4. Հարմար, պատշաճ, դյուրին (տեղի՝ վայրի մասին): *Մէր շէնը լ'ավ տը'ղ ա, աչ ա* (Բ): 5. Հաջող, հաջողակ: *Կօրծէրընս հանան աչ ա, տը'սնանք՝ վէրչը հունց կինի* (Բ):

- Աչընա ա ծէխը չընգ'իդանալ/չընճօկէլ - Բոլորովին անտեղյակ՝ անփորձ լինել: *Հանան շատ ա ջանիլ, աչընա ա ծէխը ճօկում չի* (Ձ):

- Աչ(ի) թէվ - *տե՛ս* Աչ(ի) ծը'ղք:

- Աչ(ի) ծը'ղք - Գլխավոր՝ առաջնակարգ օգնական՝ պաշտպան՝ զինակից: *Ռուբէն դայուն աչի ծը'ղքը կուճի թօռնընն ա* (Բ):

- Աչի ծը'ղքէն ըրածը ծէխէնը կարէլ չի անէ - Մեկը մյուսին փոխարինել չի կարող: *Ամմէն մարթ էլ ուրան տը'ղը օնէ, աչի ծը'ղքէն ըրածը ծէխը կարէլ չի անէ* (Ձ):

- Աչ(ի) կօռնը - *տե՛ս* Աչ(ի) ծը'ղք:

- Աչ տըռէլ, ծէխ շըպըրտէլ - Ազատ ու անհոգ լինել: *Վէչ կօրծ ա անում, վէչ դարդ օնէ, աչ տըռում ա, ծէխ շըպըրտում* (Բ):

ԱՉԱՌ *(թրք. açar)* - *գ.* 1.Կողպեք՝ փականք բանալու եւ փակելու հարմարանք: *Ըչըռնէն յօր ա օնում, քարը տէն քըցում, նի մըտնում, ք'ընամ տօռնը պէնում* (ՀԱԲ, 15, 20): 2. Պտուտակները ամրացնելու եւ թուլացնելու գործիք, պտուտակիչ: *Աչառը պէ՛ր, գազէն բալօնը պինդըցընիք'* (Բ): 3. *փխբ.* Ելք, հնարք, միջոց: *Դէրվիշը ասմա.- Ըտըրանա ըզըդվէլի աչառը մինակ յը'ս կարիմ տամ* (Ձ):

ԱՉԱՌ(ՆԸ)/ԱՉԷՌ(ՆԸ)/ԱՉԸ'Ռ(ՆԸ) *(գրբ. արջառ (եզ ու կով, պախրա, տավար)* - *գ.* Երեք տարեկան արու հորթ: *Ասում ըն՝ տափէն տակէն մին մը'ծ անչառ կա, սաղ յէրգ'իրը էն ա էտ ըչառին մաշկէն տիրած* (ԱԱ, 15):

- Անչառնը պինըցընէլավ յը'զնը կը-տը'ռնա - Աշխատանքի արդյունքում է մարդ փորձառու դառնում:

- Անչառնը վէր ծըրան տուս ա կ'ամ, ուստա յը'զնանընն ըն թակում - Անփորձի՝ սկսնակի թերությունների համար նրա ղեկավարին՝ փորձառուին են մեղադրում՝ պատժում:

ԱՉԷՌ(ՆԸ) - *տե՛ս* ԱՉԱՌ(ՆԸ):

ԱՉԸ'Ռ(ՆԸ) - *տե՛ս* ԱՉԱՌՆԸ:

ԱՉԸԼՄԻՇ *(թրք. ačiliš (բացվել)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Աչըլմիշ ինիլ - 1. Բացվել, պարզվել: *Հավան աչըլմիշ ա իլալ* (Բ): 2. *տե՛ս* Ունքամաչը յը'տ կ'ալ: *...Գիդացին, թա փըսականչ ա... հըզըրվէցին, վէր ք'ինան, պատառ աչըլմիշ ինին* (ՋՏ, Ա, 23):

ԱՉԸԽ *(թրք. ašik)* - 1. Պարզ, անամպ: *Ըսօր աչըխ հավա յա* (Բ): 2. Աշխույժ, սրտաբաց, զրուցասեր: *Աչըխ մարթին նըհը'տ հըղէ ք'ինիլը լանզանթ ա* (Բ):

ԱՉԼԻԳ' - *ած.* 1. Աջ ձեռքով գործ անող: *Աչլիգ' ը՞ս, թա ծէ՞խլիգ'* (Բ): 2. Հաջողակ: *Աչլիգ' կօրծ ա* (Բ):

ԱՉԿԻ/ԱՇԿԻ *(ռուս. очки)* - *տե՛ս* ՉԷՇՄԱԿ:

ԱՉՄԱ - *ած.* Արձակ, կապանքներից՝ կապերից ազատ: *Մին ասօղ ինի, քանի հէտ ը՞ք տէսալ, վէր մին մըրթըվարի հայի կընէգ թառ ածի, յա մազէրը աչմա, ըռէխը ժընգըռնած խաղ ասի...* (ՋՏ, Ա, 190):

- Աչմա անել - Արձակել, կապանքները՝ կապերը քանդել: *Հինչ ը՞ս տօ՛ղըտ աչմա ըրալ* (Բ):

ԱՉՈՒ - *ձ.* Էշին՝ ջորուն քշելու ձայն: *Մին էլ ըսկանում ըն, վէր Ըդէն սանը կ'ամ ա.- Աչո՛ւ, աչո՛ւ* (Ձ):

- Աչու հալլա՛ - *տե՛ս* ԱՉՈՒ:

ԱՉՕՏ *(ռուս. отчет)* - *գ.* Հաշվետվություն: *Ք'ինամ ա կանտօրը, աչօտ տամ* (Բ):

ԱՊԱ *(հ.ե. *appa- (հայր (մանկ. բառ)* - 1. *տե՛ս* ՊԱՊ(1): *Իմ հանր իցցուն տիրը'կան ա, իմ ապա՝ ութասսուն* (Բ): 2. *տե՛ս* ՀԱՆՐ: *Տըղան հօրընն ասըմ ա.- Ապա, թո՛ւլ տօ, քու յէրգ'իրըտ շօռ կ'ամ* (ՀԺՀ, V, 484): 3. Տարեց տղամարդկանց՝ ծերունիներին տրվող հարգական անուն եւ կոչական բառ: *Սէյրան ապա, օգում ըմ թօռնանըտ օգիմ տըղէս հը'տէ, հինչ ը՞ս ասում* (Ձ):

- Ապան ամէն օր ք'անթ չի օտէլ - Միշտ հաջողություն չի լինի: *Հանը ասմա.- Մ տըղէրք, ապան ամէն օր ք'անթ չի օտէլ, պատառ հըթըյաթ ըրէք'* (Բ):

- Ապան ղօրա կէրավ, թօռնանը կըռքընէն առնից - *տե՛ս* Հանը շըլօր կէրավ, խուխէն կըռէք'ը առնից:

- Ապուն դանրվին - *տե՛ս* Ք'օնա դանրվին:

ԱՊԱՌԱԺ *(գրբ. ապառաժ)* - *գ.* Պինդ՝ քարացած հող: *Էտ ապառաժըմը ծառ չի փըսնէլ, նըհախ չընչարվու մէ՛ր* (Ձ):

ԱՊԱՍՆԻ *(ռուս. опасный)* - *ած.* Վտանգավոր: *Ապասնի կօրծ ա* (Բ):

ԱՊԱՐԱՏ *(ռուս. аппарат, գերմ. apparat, լատ. apparatus)* - *գ.* Գործիք, սարք: *Ապարատավը նըկարում ա, տանում տամ էտ կընգանը մարթին* (Զ):

ԱՊԷԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըպէլա/Ապէլա կ'առնը- Հեզ, հնազանդ, խեղճ: *Էս խէղճ Ապէլա կ'առնը ուռռա յա անում, շըվշըվցընում, ծիյէնը խըրտնում ըն...* (ՆԱԲ, 63):

ԱՊԷԼՍԻՆ *(ռուս. апельсин)* - *գ.* Նարինջ: *Մըղափ'ուն, վէր Ղարաբաղ ապէլսին չի տը'ռնում* (Բ):

ԱՊԷՐ - 1. *տե՛ս* ԱՊԱ: 2. *տե՛ս* ԱԽՊԷՐ:

- Ապօրը ծօցը ղարկել - Սպանել, մեռցնել: *Ըտի մարթին բիդի ապօրը ծօցը ղարկիս* (Զ):

- Ապօրը կ'ինը յըրա տինիլ - Շատ թանկ վաճառել: *Ապօրը կ'ինը տիրա՛ալ ա յըրա, մին կիլօ ցօրէնը հա՛ռ'ուր իցցուն դըրամավ ա ծախում* (Բ):

- Ապօրը հըրսանէք'ը մը'ննը ըղնէլ - Շատ վատ վիճակի մեջ ընկնել, սաստիկ ծեծ ուտել: *Էնքան թակալ ըն, ապօրը հըրսանէք'ը մը'ննը ա ընգալ* (Զ):

- Ապօրը հըրսանէք'ը մը'ննը քըցիլ - Խիստ պատժվել՝ ծեծել: *Վէր մէհէտ էլ նի մըտէր բաղը, քու ապօր հըրսանէք'ը մը'ննըտ ըմ քըցիլա՛ն* (Բ):

ԱՊԸՐԱԾԸ/ԱՊՐԱԾԸ - *գ.* Ասում են լավ մարդու հասցեին: *Էտ ապրածը խօսկըս տափավը չի տըվավ* (ՀԺՀ, V, 624):

ԱՊԸՐԱՆՔ/ԱՊՐԱՆՔ *(գրբ. ապրանք)* - *գ.* 1. Աշխատանքի արդյունք, որ արտադրված է փոխանակության՝ վաճառքի համար: *Կօրծը անում ըն, ապըրանքը տանում բազար* (Զ): 2. Ունեցվածք: *Տահանց ըտէղ փըռնում ըն, կըտօրում, ապրանքը թըլանում* (ՀԱԲ, 15, 75): 3. Ընտանի անասուններ: *Էս օխտը տօնըտ էնչաք ապրանք ըն լա՛ալ պըհէս, վէր խընըցէք'ան վէր տը'ռած թանը նի յա տը'ռալ կ'էտը...* (ՀԲ, 357):

ԱՊԸՐԷԼ[1]/ԱՊՐԷԼ[1] *(գրբ. ապրիմ, ապրեմ)* - *չբ.* 1. Գոյություն ունենալ, կյանք ունենալ: *Պիրում ա մարը օխտը օր, օխտը քը2էր հըրսանիք' անում, հէտօ տահանք ըսկըսում ըն ի՛ւրանց հէտէ ապրէ՛լը* (ՀԱԲ, 15, 14): 2. Բնակվել: *...Ղըլանց Պէտին քըռասնուհէնգ' տօն ա յօր կա՛ալ, յը'կալ, ըստը'ղ ապրալ* (ԱԱ, 21): 3. Կերակրվել, սնվել: *Պէն չօնէ ուտէլի, չՕր հացավ ա ապըրում* (Բ):

- Ապըրած կէնա - Բարեմաղթության արտահայտություն՝ երկար ապրի: *Ապըրած կէնա Սիմօնը, տըղէս ք'ՕմՈնգ' ա անում* (Բ):

ԱՊԸՐԷԼ[2] - *տե՛ս* ԱԲԸՐԷԼ:

ԱՊԸՐԻՍ/ԱՊՐԻՍ - *ծ.* Խրախուսական բացականչություն՝ կեցցե՛ս, ապրե՛ս: *Տըղան կօրծը պըրծընում ա, մարթա մին տը'ղան ասում ըն՝ ա՛պրիս* (Զ):

ԱՊԸՐՈՒՍ/ԱՊՐՈՒՍ/ԱՊՈՒՐՈՒՍ *(գրբ. ապրուստ)* - *գ.* 1. Ապրելու նյութական միջոց: *Էն օրանը տէսը նահանք տէռնըմ ըն թաքավէր-թաքուհի, աշխարքը ըպրուստավ լըցնըմ...* (ՀԺՀ, V, 449): 2. Ապրելակերպ, ապրելու եղանակ: *Տահանք վէչ մին ըպրուստու տար չըն իլալ* (ՀԺՀ, V, 559):

ԱՊԻԼԿԱ *(ռուս. апилка)* - *գ.* *տե՛ս* ԹԷՓ(3):

ԱՊԼԷՑԱ *(ռուս. операция, լատ. operatio)* - *գ.* Վիրահատություն: *Ապլէցա՛ն միհէնգ' ա ա՛դ'ալ ընգալ* (Զ):

- Ապլէցա՛ անէլ - Վիրահատել: *Ապլէցա՛ ըրէն, սըղըցըրէն* (Բ):

ԱՊՐԱԾԸ - *տե՛ս* ԱՊԸՐԱԾԸ:

ԱՊՐԱՆՔ - *տե՛ս* ԱՊԸՐԱՆՔ:

ԱՊՐԷԼ[1] - *տե՛ս* ԱՊԸՐԷԼ[1]:

ԱՊՐԷԼ[2] - *տե՛ս* ԱԲԸՐԷԼ:

ԱՊՐԻՍ - *տե՛ս* ԱՊԸՐԻՍ:

ԱՊՐՈՒՍ - *տե՛ս* ԱՊԸՐՈՒՍ:

ԱՊՈՒՊԱՊ *(գրբ. ապուպապ)* - *գ.* Պապի պապը, նախապապ: *Էս շէնին ապուպապէրը յը'կալ ըն Ըրասխէն կօխկէ շինէրան մինան* (ԱԱ, 19):

ԱՊՈՒՌ *(գրբ. ապուր (ապրելու կերակուր)* - *գ.* Անասնակեր՝ խոտ, դարման: *Ծո՛ւնը կ'ո՛ւտից, ապուռը պըրծավ, հիյվըննէն մընացէ՛ն տո՛ւզնը* (Բ):

ԱՊՈՒՐՈՒՍ - *տե՛ս* ԱՊԸՐՈՒՍ:

ԱՋ - *տե՛ս* ՍԷԿ(Ը)ՐԷՏ: *Էտ փըփաղէն ա՛ջը էն ա ինո՛ւմ, վէր հու տինում ա կըլխէն, էլ ըրվամ չի* (Զ):

ԱՋԱԲ - *տե՛ս* ԱՋԱ՛Բ:

ԱՋԱ՛Բ/ԱՋԱԲ *(արաբ. ajab)* - *տե՛ս* ԹԱՅԴԻ: *Ա՛ջա՛ք պէն ըն տէսնըմ* (ՋՏ, Ա, 220):

ԱՋԱ՛Բ-Ա՛ՋԱԲ - *տե՛ս* ԹԸՅԴԸ-ԹԱՅԴԻ: *...Բա էս ծո՛ւն-ծըմէռնը ա՛ջա՛ք-ա՛ջա՛ք հօր ը՞ս յէկալ, իշտէդ ը՞ս քինըմ* (ՋՏ, Բ, 3):

ԱՋԱԼ/Ա՛ՋԱ՛Լ *(թրք., արաբ. agel)* - *գ.* Օրհաս, վախճան, կյանքի վերջ, մահ: *Հա՛ղը տըրան մին սօր ա տամ, ասըմ.- Թա քը2էրը էտ սօրէն կէսը տո՛ւս կ'ա, ը2ը2կէտ ա՛ջա՛լ կա* (ՀԺՀ, V, 324):

- Աջալը ծըրավէլ - Պատահարից չխուսափել, իր արարքով իր օրհասը մոտեցնել: *Աջալը ծըրավալ ա, մին օր էլ ծառան վէր ա ընգընական, մը'ռնէ* (Զ):

- Աջալը հըսնէլ/կ'ալ - Մահը՝ վախճանը մոտենալ: *Թուրքէրէն աջալը հըսալ ա, էլ կարում չըն կըռվին* (Բ):

Ա՛ՋԱ՛Լ - *տե՛ս* ԱՋԱԼ:

ԱՋԱՆ(Է) - *ծ.* 1. Ուրախության բացականչություն: *Աջան, ա՛նը'վը տո՛ւս յը'կավ* (Բ): 2. Սիրելի էակին պատասխանելու կոչական ձայնարկություն: *Խօխան ասմա.- Մյա՛: - Այան ասմա.- Աջանէ* (Բ):

ԱՋԱՓՍԱՆԴԱԼ - *տե՛ս* Ա՛ՋԱ՛ՓՍԱ՛ՆԴԱ՛Լ:

Ա՛ՋԱ՛ՓՍԱ՛ՆԴԱ՛Լ/ԱՋԱՓՍԱՆԴԱԼ - *գ.* 1. Ջանազան բանջարեղեններով եւ մսով կամ առանց մսի պատրաստվող կերակուր: *Էլ հինչ ա՛ջա՛փսա՛՞նդա՛լ, վէր մաչին բաղըմջան չի կա* (Բ): 2. *փխբ.* Խառնիխուռն՝ խճողված բան: *Էս կօրծ չի, ա՛ջա՛փսա՛նդա՛լ ա* (Բ):

ԱՋԸՂ *(թրք. ajə)* - *գ.* 1. Ոխ, վրեժխնդրության զգացմունք: *Ըտըրա աջըղը կընօխանց ա ինձ յըրա* (Զ): 2. Բարկություն, զայրույթ: *Խօխան պըլօթուն ըրավ, մօրը աջըղը շընտացավ* (Զ):

- Աջըղը հանէլ/տո՛ւս ածէլ/տո՛ւս օնէլ - Վրեժխնդիր լինել, վրեժն առնել: *Ինք'ը կ'ա՛ս ա տօն, կընգանը փըռնէս, մին լա՛ավ թըկէս, ճըխճըխպէս, աջըղը կընգանան հընէս* (ԼՂԲ, 380):

- Աջըղը վէր ածէլ - Բարկությունը, զայրույթը թափել, հանգստանալ: *Աջըղը վէր ածից, դինջացավ* (Բ):

- Աջըղը փըռնէլ - *տե՛ս* ԸՋԸՂՎԷԼ:

Ա՛ՋԻ *(թրք. aci)* - 1. *ած.* Դառը, կծու: *Էս տա՛խտէղը ա՛ջի յա* (Բ): 2. *գ.* *տե՛ս* ԱՋԸՂ (2):

- Ա՛ջին քաշիլ - Գործած արարքի համար պատժվել, տույժը կրել: *Մէհէտ մին փիսօթուն ա ըրալ նախագէն, մինչը'վ միհէնգ' ա՛ջին քաշո՛ւմ ա* (Բ):

ԱՌԱԹՈՒՐ *(գրբ. առաթուր (կոխկռտելով)* - *ած.* Անպետք, անպիտանի: *Պուղուն մին քավթառ, առաթուր ծի յա ընո՛ւմ, հըյաթումը վէր ա ըղնում, ըստակում* (ՆԱԲ, 131):

ԱՌԱԿ *(գրբ. առակ)* - 1. *տե՛ս* ՄԱ՛ՍԱ՛Լ: 2. Հանդիմանություն, նախատինք, խայտառակություն: *Բիդասըլ տըղան հօրը հը'տէ առակ ա* (Զ):

- Առակ անէլ/շինիլ - Խայտառակել, ծաղրի առարկա դարձնել: *Փիս հարթնը ըսկէսվօրըն էլ առակ կըշինի, մարթին էլ* (Զ):

- Առակ տը'ռնալ - Խայտառակվել, ծաղրի առարկա դառնալ: *Թօրքէրը փախէն, սաղ ըշխարքումըս առակ տը'ռէն* (Զ):

ԱՌԱԿ-ՊԱՌԱԿ - *տե՛ս* ԲԸՅԱԲՈՒՌԲԷՅՍԸՐԱԹ:

ԱՌԱՆԻ - *գ.* Հացաբույս: *Լո՛ւսնըվը'ղըմը առանի չի փըսնէլ* (Զ):

ԱՌԱՆՑ/ՈՒՌՈՒՆՑ *(գրբ. առանց)* - *կ.* Ցույց է տալիս բացասում, բացակայություն, չգոյություն այն առարկայի՝ երեւույթի, որի անունը դրվում է նրանից

հետո՝ իբրեւ խնդիր: *Իտի յէլ էտ թանմբանլ կընէկը առանց կօրծ անէլի օտրմ ա, խրմրմ, նըստրմ...* (ԼՂԲ, 372):

- Առանց աշկ ճըպէլի - Անմիջապես, առանց տատանվելու՝ երկմտելու: *Խաբարը վէր ըսկանում ա, առանց աշկ ճըպէլի հըղէ յա ինում ծըմակը* (Բ):

- Առանց էն էլ - Նույնիսկ տվյալ բանի չլինելու դեպքում էլ: *Առանց էն էլ շատ ար քյանիբ, կավըն էլ ընդէղ վէր ընգավ, ըստակից* (Ձ):

- Առանց էշու կըլօխ հըրսանէքյ չինիլ - Ասվում է այն ժամանակ, երբ ուրախության կամ հավաքի ժամանակ մի անցանկալի անձ է հայտնվում: *Ըհը՛, Ծատօրը յըէկավ, ախէր ըսէս ըմ, թա առանց էշու կըլօխ հըրսանէքյ չինիլ* (Ձ):

- Առանց էրկան մըտընծէլի - *տե՛ս* Առանց աշկ ճըպէլի:

- Առանց ծըմէլի կօլ տալ - *տե՛ս* Անծամ կօլ տալ:

- Առանց կըրակ էրիլ/խըրավէլ - 1. *տե՛ս* Առանց տէնակ մօրթէլ: 2. Խոսքով խիստ վիրավորել: *Տըղան ըխճըկանը ասմա.- Լյավը էն չի՞, ինձ ըսպանիս, քանց էտ խօսկը ասիս, ինձ առանց կըրակ էրիս* (Ձ):

- Առանց կըրակ էրվիլ/խըրավվէլ - *տե՛ս* Առանց տէնակ մօրթըվէլ:

- Առանց կըրակ ծօխ չինիլ - Առանց պատճառի հետեւանք չի լինի: *Առանց կըրակ ծօխ չինիլ, Մա՛ցակ, հանլբանթ մին պէն ըրալ ըս, վէր կընէգ՛ըտ փախալ ա* (Ձ):

- Առանց շունչ քըշիլի - Շատ կամաց՝ անձայն: *Առանց շունչ քըշիլի նի յա մընանում, էտ աչառը յօր օնում, տանս կյամ* (Ձ):

- Առանց շօն շէն չինիլ - Ամեն տեղ էլ վատ մարդ կլինի: *Կարօղ չի պըտահէ՝ ծէր շէնին մարթիքյը լօխ լյավ ինին. առանց շօն շէն չի ինում* (Բ):

- Առանց սապուն վըէռ նի մընէլ - Բացահայտ շողոքորթել: *Վէր ըտի առանց սապուն վըէռ ըս նի մընանում, հինչու վը՞ս հըսալ* (Բ):

- Առանց վընընկըլօխ քյըլըփաչա չինիլ - Առանց անհրաժեշտ միջոցների գործը չի հաջողվի: *Առանց վընընկըլօխ քյըլըփաչա չինիլ. առանց թըվանգյ հինչ վը՞ս բիդի անիս* (Բ):

- Առանց տէնակ մօրթէլ - Տանջել, չարչարել: *Էտ մարթը ամէն օր կընգանը առանց տէնակ մօրթում ա* (Բ):

- Առանց տէնակ մօրթըվէլ - Տանջվել, չարչարվել: *Ախճիգ՛ը փախճում ա հանանց տօն, թա.- Էլ կարում չըմ էն տանը կէնամ, առանց տէնակ մօրթըվում ըմ* (Ձ):

- Առանց տօռնը պէրան - Անգաղտնապահ, վայրախոս: *Առանց տօռնը պէրան ա, ըտըրա քըշտէն պէն ըսէլի չի* (Բ):

- Առանց ուրանուր պատառ չընն տինում պիրընէրումը - Շատ մտերիմ՝ համերաշխ են: *Ըտըրանք մին էրկու տարէ առաջ դանուշմանն ըն իլանլ, միհէնգյ էլ առանց ուրանուր պատառ չընն տինանում պիրընէրումը* (Բ):

- Առանց փըչիլ վէր կընդնէ - *տե՛ս* Փըչիս՝ վէր կընդնէ:

ԱՌԱՇԿ/ԱՌԱՉ[1] *(գրբ. յառաջ, առաջ(ք))* - *գ.* 1. Երեսի դիմացը գտնվող՝ տարածվող կողմը, առջեւի կողմը: *Փիս թօխպ ա, առաշկըս տըէսնում չըմ:* 2. Կնոջ սեռական օրգան: *Հինչ ը՞ս առաշկըտ պէց ըրալ, համօթ ա* (Բ): 3. Գորգի, կարպետի ծայրերը՝ չգործված մասը: *Կարպետը կյօրծում ըն, կըտրում, մին խիլա տէղ մընամ ա անկյօրծէլ, Ղարաբաղում նըրան առաչ ըն ասում* (ՀԱԲ, 15, 136): 4. Օղու առաջին թորվածքը: *Յամանն թօթ ա, առաշկը հէնգ՛ լիտըր յըէկալ ա* (Բ): *կ.* 5. Առջեւը, առջեւում, դեմուդեմ: *Կամ ա թաքավէրին ըռաշկէն վըէնընը կէնըմ, թա.- Յըէս ըմ ըրալ* (Ձ): 6. Նկատմամբ, վերաբերմամբ: *Հիրըվանէն ըռաշկէն ուրանն մէղավէր ա հանըէվ անըմ* (Ձ): 7. Ներկայությամբ: *Շինացուց ըռաշկէն փըռնում ա, կընգանը թակում* (Բ): 8. Համեմատությամբ: *Լօխճին ըռաշկէն Սարօն ա ուրանն ցօրէնը ճէլլի աղում, պըրծընում* (Ձ):

- Առաշկը կապէլ - *տե՛ս* Առաշկը կըտըրէլ(1):

- Առաշկը կըտըրէլ - 1. Մեկի կամ մի բանի առաջը փակել, արգելք ստեղծել, ճանապարհը փակել: *Հըղէցըն էտ տըղէն առաշկը կըտըրէս ա վէգիրին տըղան, վէր ուրանն հընգէր ա ընիս* (ՆԼՂԺԲ, 60): 2. Մեկից առաջ անցնել, առաջադիմելով գերազանցել: *Էտ շանգ՛էրդը էրկու ամսումը հանց սըվը՞րում ա փէշակը, վէր ուստէն առաշկը կըտըրում ա* (Ձ):

- Առաշկը կանլ - 1. Երեւալ, պատկերանալ, ներկայանալ: *Թափէղը վէր պատառ քյընում ա, առաչընն ա կյամ իրէք հըղէ...* (ՆԱԲ, 39): 2. Որեւէ արարքի դիմաց փոխհատուցել: *Հինչու անիս, յըէտ-ճէլլի քու առաշկըտ կըկյա* (Ձ):

- Առաշկ ըղնէլ - *տե՛ս* Առաշկ ընցընէլ:

- Առաշկըն անէլ - Առջեւը գցել տանել: *Վըխճըրնէն առաշկըն ըրավ, քըշից սարը* (Բ):

- Առաշկ ընցընէլ *(գրբ. յառաջ անցանեմ)* - 1. Առաջ շարժվել: *Առաշկ ա ընցընում, քանանում հըսնում սըէվ դէվին պալատը* (Ձ): 2. *տե՛ս* Առաշկը կըտըրէլ (2):

- Առաշկըն օնէլ - *տե՛ս* Առաշկը կըտըրէլ(1):

- Առաշկը պէց - 1. Անամոթ, լպիրշ, անբարոյական: *Առաշկը պէց կընէգ՛ ա. վէ՛չ համօթ օնէ, վէ՛չ աբուռ* (Բ): 2. *տե՛ս* Վըէռը պէց:

- Առաշկ ըս քանանում՝ քըթէտ ըն թըխում, քամակ ըս քանանում՝ դընբանէտ ըն թըխում - Անելանելի վիճակ է: *Մարթը ասմա.- Մ կընէգ՛, վէշ մին պէն կարում չըմ անիմ. առաշկ ըմ քանանում՝ քըթէտ ըն թխում, քամակ ըմ քանանում՝ դընբանէս ըն թըխում* (Ձ):

- Առաշկը քար քընցիլ - *տե՛ս* Առաշկը կըտըրէլ(1):

- Առաշկ կէնալ - *տե՛ս* Առաշկ ընցընէլ:

- Առաշկ կանլ - 1. Ծագել, սկիզբ առնել, առաջանալ: *Ըշտըղա վէրէ յա, մին դանրդ ա մընզը՞տէ առաշկ կյամ* (Բ): 2. *տե՛ս* Առաշկ ընցընէլ(1):

- Առաշկ պիրիլ - 1. Առաջացնել, ստեղծել: *Էտ կօրծը շատ տըժընրօթուն ա առաշկ պիրում* (Բ): 2. *տե՛ս* Մաչտը՞ղ պիրիլ:

- Առաշկ տալ/տանէլ - 1. Դեպի առաջ մղել: *Քարը առաշկ տըվէ, տը՞սնամ մին գանրզա տակէն* (Բ): 2. Զարգացնել, կատարելագործել: *Անփանրիմ ըտի տըղա, հօրը փէշակը առաչ ա տուվալ* (Բ):

- Առաշկ քաշիլ - 1. *տե՛ս* Առաշկ տալ 2. Առաջադրել, առաջարկել, արծարծել (խնդիրը, հարցը եւն): *Ամմէն դօնանում կըլխօգէն ժողովումը էտ բընրիգադիրին տանս քընցիլի հարցը առաշկ ըն քաշանում* (Ձ): 3. Պաշտոնը բարձրացնել: *Ասում ըն, Քընթալաց Սիրը՞վէն թօռնանը առաշկ ըն քաշանլ* (Բ):

- Առաշկ քընցիլ - 1. *տե՛ս* Առաշկ տալ 2. Շահել: *Վէր ըտի յըս ըրալ, հինչ ը՞ս առաշկ քընցանլ* (Բ):

- Առաշկ քանիլ - 1. *տե՛ս* Առաշկ ընցընէլ: 2. Առաջադիմել, դիրքով բարձրանալ: *Հէնգ՛ տըռնըմը էնքան առաշկ քյը՞ցավ, վէր տիրէցէն նախագա* (Բ): 3. Զարգանալ: *Ղարաբաղը օրկանցօր առաշկ ա քանանում* (Բ):

- Ըռաշկան խը՞ղճ - Թեթեւաբարո (կանանց մասին): *Ըռաշկան խը՞ղճ կընէգ՛ ա, հու կարում ա՝ ճանգընն ա քընցանում* (Բ):

- Ըռաշկան՝ հիլի, քմական՝ ծիլի - Արտաքուստ՝ բարի, անկեղծ, լավ, ներքուստ՝ խարդախ մարդ: *Ըռաշկան հիլի յա, քըմական ծիլի, ընդրա նըհը՞ս հու կըլօխ տինի, տօնը կընքանդվի* (Բ):

- Ըռաշկէն փըրսօղ տալ - Մեկին քծնել՝ շողոքորթել: *Լօխ ըռաչիս փօրսօղ*

ըն տամ, վէնեէրըս լ՚ուզ՚ում, ինձ թարիփ անում (ՆԱԲ, II, 19):

ԱՌԱՋ[1] - *տե՛ս* ԱՌԱՇԿ:

ԱՌԱՋ[2] *(գրբ. յառաջ)* - 1. *կ.* Ժամանակի անունների եւ այլ բառերի հետ դրվելով՝ ցույց է տալիս դրանց արտահայտած ժամանակին նախորդող ժամանակը: *Էրկու տարէ առաջ մունք էլ ընք ըտը՚ղ իլ՚ալ* (Բ): *մ.* 2. Նախ, նախապես: *Առաջ հանըմ ըն էն առաչի օթախին կ՚էղէցիկ ըխճըկանը...* (ՀԺՀ, V, 20): 3. Հնում, անցյալում, նախկինում: *Առաչ ըտը՚ղ շէն չի իլ՚ալ, ծըմըկնէ յա իլ՚ալ* (Ձ):

- Առաչ Աստուծ - Աստծու առաջնորդությամբ՝ հովանավորությամբ (ասվում է որեւէ գործ սկսելիս): - *Առաչ Աստուծ,- ասում ա Սիմօնը, ահէտ ըսկըսում տանը փընթամէնտը քանդիլը* (Ձ):

ԱՌԱՋԱՎՈՒՐ *(գրբ. առաջաւոր, յառաջաւոր)* - *գ., ած.* Աշխատանքային ցուցանիշներով ուրիշներից բարձր կանգնած: *Առաջավուր կալխօզնիկնուն տանում ըն Բաքու, շօռ ածում* (Ձ):

ԱՌԱՋԻ - *տե՛ս* ԸՌԸՋԻ:

ԱՌԱՏԱՄ - *գ.* Գութանի կամ արորի ներքին հաստ ձողը, որի ծայրին ամրացվում է խոփը: *Առատամը կօտըրից, Բէգլար դային մընաց մ՚ալ՚ալ* (Ձ):

ԱՌՁ(Ա) - *տե՛ս* ԱՌՋ(Ա):

ԱՌԷՆ/ԱՌԻՆ *(գրբ. առ (առնուլ-ի արմատը)* - *մ.* Ձեռքին, մոտը, նրա մոտ: *Առէն հէնգ՚ մանէթ կար, էն էլ փըռնէցէն ինք՚ կալին* (Բ):

- Առէն պէն չինիլ - Կարող չլինել, հնարավորություններից զուրկ լինել: *Վէր առէն պէն ինի, ք՚օմ՚ալ՚ կանէ* (Բ):

ԱՌԷՍ/ԱՌԻՍ *(գրբ. առ)* - *մ.* Ձեռքիս, մոտս, ինձ մոտ:

ԱՌԷՏ/ԱՌԻՏ *(գրբ. առ)* - *մ.* Ձեռքիդ, մոտդ, քո մոտ:

ԱՌԸՏՈՒՐ - *տե՛ս* ԱՌՈՒՏՕՐ:

ԱՌԸՏՈՒՐԱԿԱՆ - *տե՛ս* ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ:

ԱՌԸՏՕՐ - *տե՛ս* ԱՌՈՒՏՕՐ:

ԱՌԻՆ - *տե՛ս* ԱՌԷՆ:

ԱՌԻՍ - *տե՛ս* ԱՌԷՍ:

ԱՌԻՏ - *տե՛ս* ԱՌԷՏ:

ԱՌԾԻՎ - *տե՛ս* ԱՐԾԷՎ:

ԱՌՆԱՎՈՒԴ *(թրք. arnavut (ալբանացի)* - *ած.* 1. Հաղթանդամ, վիթխարի: *Պառավը ասում.- Էն առնավուդ տըղէք՚ը կըրը՚ցալ չըն յը՚խնին, տու հինչ բի՞դի անիս* (Ձ): 2. Շատակեր, որկրամոլ: *Էտ առնավուդը վէր կ՚ամ ա մէր տօն, հինչու տինըմ ընք ըստօլէն, լօխ օտում ա* (Բ):

ԱՌՆԷԼ[1] *(գրբ. առնում, հ.ե. *ar-)* - *նբ. տե՛ս* Ինք՚ օնէլ:

ԱՌՆԷԼ[2] - *չբ.* Տունկը՝ պատվաստը կպչել, աճել: *Էրկու ծառ ըմ տընգալ, չօրս ջալաղ ըրալ, լօխ առնալ ա* (Բ):

ԱՌՆԸ - *գ.* Թոռան թոռան՝ կոռան, թոռ: *Հ՚ալ՚ա վէշ մինը ո՚ւրա՚ն առնը տը՚սալ չի* (Բ):

ԱՌՆԸՂ - *տե՛ս* ԱՐՆԸՂ:

ԱՌՋ - *տե՛ս* ԱՐՋ:

ԱՌՌԱ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Առռա հա - 1. Բացականչական արտահայտություն, որ նշանակում է՝ խփեցի, խփեց: *Տանում ա, պիրո՚ւմ, առռա հա, դէվին կըրկաժին...* (Ձ): 2. Արհամարհության՝ անարգական բացականչություն՝ մերժման, բացասման նշանակությամբ: *Առռա հա, յը՚ս ք՚ը՚զ վը՚ղ տըվօղը չըմ* (Բ):

- Առռա յէ - *տե՛ս* Կա յէ՛: - *Առռա յէ՛,- Պուղուն յըրան չ՚անգ՚ ա անըմ կընէգ՚ը...* (ԼՂՀ, 390):

ԱՌՌԷ/ԱՌՌԻ *(հ.ե. *ari- (շատ, հույժ)* - *մ.* 1. Բոլորովին, լրիվ: *Կ՚ը՚տը առռէ ցըմաքալ ա* (Բ): 2. Ամենա..., ամենից...: *Կ՚ը՚տը առռէ ցըմաքալ ա* (Բ): 3. Ավելի, էլ ավելի: *Հ՚ուլ՚ուվէրը առռէ յա կըզնըվէս, ամա դէ ջօղաբը տաս չի* (ՀԲ, 342): 4. *վ.* Հենց՝ ճիշտ ու ճիշտ, ուղղակի: *Առռէ էն փիս վախտը դէրվիշը նի յա մընում* (Ձ): 5. *շ., վ.* Թեպետեւ, չնայած այն բանին: *Առռէ ամէն օրը ճիրո՚ւմ ըմ, մին ա, էտ ծառը ա՚ր՚շ՚ա՚ չի կ՚ամ* (Բ): 6. *մ.* Հակառակ, ջգրու: *Առռէ տամ չըմ, հինչ կա՞րիս անիս* (Բ):

ԱՌՌԻ - *տե՛ս* ԱՌՌԷ:

ԱՌՍԸՋ - *տե՛ս* ԱՐՍԸՋ:

ԱՌՍԸՋՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՐՍԸՋՕԹՈՒՆ:

ԱՌՎԱԽ/ԱՐՎԱԽ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Առվախ անէլ - Վախեցնել, սարսափեցնել: *Քօլէն քըմական մին աղվէս ա տ՚ուս կ՚ամ, ըլըբըստըրակէն առվախ անում* (Ձ):

- Առվախ ինիլ/տը՚ռնալ - Վախենալ, սարսափել: *Թաքավէրին մը՚ծ տըղան, վէր դէվին տը՚սնում ա, առվախ ա ինո՚ւմ* (Ձ):

ԱՌՏ - *տե՛ս* ԱՐՏ:

ԱՌՏՈՒՏ - *տե՛ս* ԱՐՏՈՒՏ:

ԱՌՈՒԾ - *տե՛ս* Ա՚ՌՈ՚ՒԾ:

Ա՚ՌՈ՚ՒԾ/ԱՌՈՒԾ/ԱՌՈՒՅՍ *(գրբ. առիւծ)* - *տե՛ս* ԱՍԼԱՆ: *Մին օր էտ ջահիլ տըղան անց ար կը՚նըմ Մելիքին պալատին քըշտավը, բ՚ուրդա՚ն ընդըրա յըրան ա պըրծընըմ մին կըտաղած ա՚ռ՚ուծ* (ՀԺՀ, V, 237):

ԱՌՈՒԾԱԽ(Ս) - *տե՛ս* ԱՌՈՒՏՕՐ:

ԱՌՈՒՅՍ - *տե՛ս* Ա՚ՌՈ՚ՒԾ:

ԱՌՈՒՏՈՒՐ - *տե՛ս* ԱՌՈՒՏՕՐ:

ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ/ԱՌԸՏՈՒՐԱԿԱՆ - *գ.* Առեւտրով զբաղվող մարդ՝ առեւտրական, վաճառական: *Առուտուրականը մին օր ք՚ընում ա առուտուրի* (ՀԺՀ, V, 60):

ԱՌՈՒՏՕՐ/ԱՌՈՒՏՈՒՐ/ԱՌԸՏՕՐ/ԱՌԸՏՈՒՐ *(գրբ. տուրեւառ)* - *գ.* Ապրանքներ գնելու, վաճառելու եւ շրջանառության մեջ դնելու գործունեություն: *Ծը՚մը՚ռնը յը՚կավ, առուտօրը լ՚ավ չի ք՚ո՚ւնո՚ւմ* (Բ):

- Առուտօր անէլ - 1. Առուծախով՝ առեւտրով զբաղվել: *Անց ա կէնում մին տարէ, էտ մարթը էլիա կ՚ամ ա հ՚ամին քաղաքը, վէր առուտօր անէ* (Ձ): 2. Սակարկել, որեւէ գործի մեջ զիջումների ձգտել: *Էծ ծախօղը ասմա.- Առըտօր մէ՞ր անէլ, կ՚ինը էտ ա, տօ՛, էծը յօ՞ր կալ՚, ք՚ինի՛* (Ձ):

- Առուտօրը հ՚ար-մար չօնէ - Առեւտրով զբաղվողը կարող է խաբել անգամ իր հարազատներին:

ԱՌՕԽՃ/ԱՌՕԽՉ/ԱՌՕՂՃ/ԱՌՕՂՉ *(գրբ. առողջ)* - *ած.* 1. Առողջություն ունեցող, ոչ հիվանդ: *Առօխճ մարթ ար, ա՚ալ՚էցա՚ ըրէն, ըսպընը՚ցէն* (Բ): 2. *տե՛ս* Ք՚ՕՔ[1]:

ԱՌՕԽՃԱՆԱԼ/ԱՌՕԽՉԱՆԱԼ/ԱՌՕՂՃԱՆԱԼ/ԱՌՕՂՉԱՆԱԼ *(գրբ. առողջանամ)* - *չբ.* 1. Հիվանդությունից ազատվել, առողջությունը վերստանալ: *Ք՚ը՚ցավ բալնիցա, առօխճացավ, յը՚կավ* (Բ): 2. *տե՛ս* Ք՚ՈՒՔԱՆԱԼ:

ԱՌՕԽՃԱՑ(Ը)ՆԷԼ/ԱՌՕԽՉԱՑ(Ը)ՆԷԼ/ԱՌՕՂՃԱՑ(Ը)ՆԷԼ/ԱՌՕՂՉԱՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. առողջացուցանեմ)* - *նբ.* ԱՌՕԽՃԱՆԱԼ-ի:

ԱՌՕԽՃՈՒԹՅՈՒՆ/ԱՌՕԽՉՈՒԹՅՈՒՆ/ԱՌՕՂՃՈՒԹՅՈՒՆ/ԱՌՕՂՉՈՒԹՅՈՒՆ *(գրբ. առողջութիւն)* - *գ.* 1.Առողջ լինելը, առողջ վիճակ: *Ըստրանք յէր ըն կը՚նըմ ո՚ւրո՚ւր խըստրմ, ո՚ւրո՚ւր հ՚ալ՚ա՚, առօղճութունա, կընգանա հըրցըփօրց անըմ...* (ԼՂԲ, 375): 2. *տե՛ս* Ք՚ՈՒՔՕԹՈՒՆ:

ԱՌՕՔ-ՓԱՌՕՔ *(գրբ. փառօք)* - *մ.* 1. Մեծ փառքով՝ շուքով, փառավորապես, հանդիսավորությամբ: *Մը՚ռալը առօք-փառօք տարէն թըղը՚ցէն* (Բ): 2. Առանց նեղության, առանց նյութական դժվարությունների: *Ինք՚ն ան ո՚ւրա՚ն տըղան առօք-փառօք ըսկըսում ըն ապրէլ, մինչէվ վը՚ր մարթը կ՚ա՚ա՚* (ՆԼՂԺԲ, 35):

Ա՚ՍԱ՚ՆՑ - *տե՛ս* Ա՚ՆՍԱ՚ՆՑ:

ԱՍԷԼ/ԱՍԻԼ *(գրբ. ասեմ)* - *նբ.* 1. Միտքը խոսքով արտահայտել: *Էս վէր ասում ա, ծ՚ուկնէրը ծիծա՚ղում ըն* (ՆԼՂԺԲ, 39): 2. Հաղորդել, հայտնել: *Էտ խօխան, հինչը ինում ա, ք՚ունո՚ւմ ա թա-*

քավէրին ասում (Զ): 3. Հիշատակել: *Քու ասած մարթըտ միհէնգ մէր շէնումը չի կէնում* (Բ): 4. Անվանել, կոչել: *Ըտըրան լօխ Պըէլ Հուռի յին ասում* (Զ): 5. Հրամայել, պատվեր տալ, հանձնարարել: *Թաքավէրը նօքայնրնուն ըսէս ա, վէր էտ վէզիրին հըէտը պահին* (Զ): 6. Պատմել: *Էտ մարթը ըսէս ա ուրանն կըլխավը ընցածը* (Բ): 7. Պատասխանել: *Հու հըրցընէ, կասիս.- Քու կօրծըտ չի* (Բ): 8. Մեկի՝ մի բանի մասին կարծիք արտահայտել: *Հինչ ը՞ս ասում, լավ ը՞մ ըրալ, վէր քըէցալ չըմ* (Զ): 9. Մտքով անցկացնել, մտածել, մտահոգվել: *Էրկու տարէ յա՝ քըէցալ ա սիզօն, էլ ասում չի, թա կընէգըս հունց ա տօնը պահում* (Զ): 10. Կրկնել: *Քու ասածըտ ըմ ասում* (Բ): 11. Արտասանել, երգել: *Մշըղ ախպէր, մին պէն ասէ, ըսկանանք* (Զ): 12. Պնդել: *Ասում ըմ՝ ըստի բիդի ինի* (Բ): 13. Մի բանի արտահայտության նշանը լինել, վկայել մի բանի մասին: *Էս վընանահէտքը ասում ա, վէր կըխտարը կամ ա ըստըդաս ճուր խըմում* (Բ): *վ.* 14. Երանի թե, միայն թե: *Ասէ թօռ չի կա, մընացածը հիշտ ա* (Բ): 15. Ենթադրենք, ընդունենք: *Ասինք էս դօնումըս էլ բըխշըէցէ, պա յըէտնան* (Զ): 16. Ուրեմն, պարզվում է որ: *Դէ, էն ա ասէ, մէզ խանփալ ըն, լի՞* (Բ): *շ.* 17. Կարծես թե: *Հանց խօսում ա, ասիս մինակ ինքըն ա ըշխադում:* 18. Չնայած, թեեւ: *Ասինք պատառ կէշ ա, հինչ ա՞ ինանկան* (Բ):

- Ասածը ասած ա - 1. Իր խոսքի տերն է, իր ասածից չի հրաժարվի: *Մէր նախագէն ասածը ասած ա, վէր ասալ ա, ընական ա* (Զ): 2. Շատ համառ է: *Էտ հարթնանը ասածը ասած ա, կարէլ չըս փօխիս* (Զ):

- Ասած տըէղան կըտըրէլ - Ասածն անել՝ իրագործել: *Թաքավէրը ասում ա, ասած տըէղան կըտըրում, էքսը հիշքան պառավ մարթ կա, լօխճին կըտօրում ըն* (Զ):

- Ասէլը հինչ ա՞ - Ի՞նչ է ուզում ասել, ի՞նչ մտադրություն ունի: *Ասէլը հինչ ա՞, վէր յըէկալ ա* (Բ):

- Ասէլըն ա անէլը մին ինիլ/տըէռնալ - Ասածն իսկույն՝ անմիջապես կատարվել: *Ասէլըն ա անէլը մին ա տըէռալ. կընէգըն ա օխտը խօխան յօր ա կալանալ, յըկալ էս սարէն կըլխէն վըէր յըէկալ* (ԱԱ, 18):

- Ասէլըն ա անէլը ուրուր ախպէր ըն - Ասելն ու իրագործելը՝ կատարելը պետք է իրար համապատասխանեն: *Ասէլըն ա անէլը ուրուր ախպէր ըն, վէր ասալ ըս, բիդի անիս* (Զ):

- Ասէլը քըցիլ - Առանց ասելու չանել՝ չհասկանալ, շնորհապակաս լինել: *Խըէլքը կըտըրէլ չի՝ մին պէն անէ, էզգանան ասէլըն ա քըցում* (Բ):

- Ասէլ չինիլ - *տե՛ս* Ասէլի պէն չի(1): *Սիմօնը արազավը թա հիշքան ա ուրխանըմ, էլ ասիլ չինիլ* (ԼՂԲ, 306):

- Ասինք թա - Ենթադրենք, դիցուք: *Ասինք թա մինը յըէս տուվէ, պա էն իրըէքը ըշտըդա յը՞ս քըթինան* (Բ):

- Ասիս թա/լըհա - Կարծես թե, այնպես է թվում թե: *Ընըէվ, հինչ ա՞ըրըէվ, ասիս լըհա ամըէռն ա* (Զ):

- Ասում ա, լի՞ - Անտեղի է ասում, ճիշտ չի ասում, հենց այնպես է ասում: *Ասում ա, լի՞, էս շէփտումը կարէլ չի էտ պատը շարէ՛* (Բ):

- Ասում ըմ՝ ասու մէր, թա էշը քած ա, ասում ա՝ քօռակը էլ ա քած - Ասում են այն ժամանակ, երբ մեկը՝ հակառակ մյուսի ջանքերի, շարունակում է բացահայտել գաղտնիքները:

- Ըսածան տուս կալ - *տե՛ս* Խուսկան տուս կալ:

- Ըսածավը քինիլ - *տե՛ս* Խուսկավը քինիլ:

- Ըսածէն պէնդ վըէնը կէնալ/խըզ անէլ - Իր ասածը պնդել, համառել, չզիջել: *Օվչի Փիրումէն կընէգը ըսածէն պէնդ ա վըէնը կէնըմ, թա՝ չէ, վէր չէ, բիդի ասիս* (Զ):

- Ըսէլին ա ընէլին մաչին սար ու ծօրէր կա - Ասելն իրագործելը՝ կատարելը շատ դժվար է: *Ընիախ տըէղան ասէլ մէր, ըսէլին ա ընէլին մաչին սար ու ծօրէր կա*

- Ըսէլի պէն չի - 1. Աննկարագրելի՝ արտակարգ է, չափազանց է: *Էտ ախճիգը թա հիշկան ա հինում դաշանգ, ըսէլի պէն չի* (Զ): 2. Ասելն ամոթ է: *Մօրը հանց խուսկէր ասից, վէր ըսէլի պէն չի* (Բ):

ԱՍԷԼ-ԽՕՍԷԼ - *չբ.* Զրուցել, իրար հետ աշխուժորեն խոսել: *Նըստում ըն, ասում-խօսում, քըէփ անում* (Բ):

ԱՍԷՏ(ԷԼ) - *տե՛ս* ԱՍՏԷԼ(ԱՍ):

ԱՍԷՏ(ԷԼ) - *տե՛ս* ԱՍՏԷԼ(ԱՍ):

ԱՍԸԷՂ(ԼԸ) *(գրբ. ասեղն)* - *գ.* 1. Մետաղից բարակ, ողորկ, սրածայր թելանցքով գործիք՝ կարելու համար, ասեղ: *Մարը մին փօնջ ասըէղ ա տուվալ, հանցու հու վէր օգի՝ աշկավ տա, աշկէրը ծակէ* (ԱԱ, 15): 2. Տարբեր ձեւեր ունեցող եւ տարբեր նպատակներով օգտագործվող մետաղյա սրածայր ձողիկ: *Թըվանգին ասըէղը կօտըրալ ա* (Բ): 3. Փուշ (ոզնու, բույսի եւն): *Կօզնուն ըսըղնէն ծըկօտից, շօնը փախավ* (Զ): 4. Մի տեսակ բույս, որի տերեւները ասեղների նման են: *Մէր հընդէրըմը ասըէղ էլ ա փըսնէս* (Բ):

- Ասըէղ ածել - Թեթեւակի կարել: *Կընէգը էտ թօրբան ասըէղ ա ածում, տամ մարթին, հըդէ տինում* (Բ):

- Ասըէղ կօլ տըված (շօն) - Սաստիկ նիհար, հյուծված (անձ): *Էտ հինչ ա՞ հանըտ, հանցը ասըէղ կօլ տըված շօն* (Բ):

- Ասըէղ կօլ տըված շօն տըէռնալ - Սաստիկ նիհարել, հյուծվել: *Էնքան հաց չի կէրալ, տըէռալ ա ասըէղ կօլ տըված շօն* (Զ):

- Ասըէղ մաշկօղ - Խիստ ժլատ, գծուծ: *Իզէն ասըէղ մաշկօղ ա, կարէլ չըս նըէստա պէն յօր օնիս* (Բ):

- Ասըէղ տալ - Շանը վնասելու՝ սպանելու նպատակով ուտելիքի մեջ ասեղ դնել: *Կայօղը չուբանէն շընէրէն ասըէղ տուվավ, ըսպանից, վըէխճարը քըշից, տարավ* (Զ):

- Ասըէղ տաս, էն մին ղօլավը տուս կըկա - Շատ նիհար է, հյուծված է: *Էնքան տուզնը կացալ ա, վէր ասըէղ տաս, էն մին ղօլավը տուս կըկա* (Բ):

- Ասըէղ տըէռնալ - 1. *տե՛ս* Ասըէղ կօլ տըված շօն տըէռնալ: 2. Հեշտությամբ անհետանալ, կորչել: *Ասըէղ տըէռավ, կորավ, էլ կըրըէցէնք վէչ քըթէնանք* (Բ):

- Ասըէղ փըռնէլ գիդալ - Կար անել իմանալ, կարելու շնորհք ունենալ: *Տու հինչ կընէգ ը՞ս, ասըէղ փըռնէլըն էլ չըս գանդում* (Զ):

- Ասըէղ քաշիլ - *տե՛ս* Ասըէղ ածել:

- Ասըէղ քըցիլի տըէղ չինիլ - Շատ բազմություն հավաքված լինելով՝ ամենեւին ազատ տեղ չլինել: *Էնքան էլ մարթ ա ինում, վըէր ասըէղ քըցիլի տըէղ չի ինում* (ՀԺՀ, VII, 129):

- Ասըէղ քըցիս՝ տափը չի ըղնել - *տե՛ս* Ասըէղ քըցիլի տըէղ չինիլ:

- Ըսըէղէն ծակավը անց կէնալ - 1. *տե՛ս* Ասըէղ կօլ տըված շօն տըէռնալ: 2. Շատ ճարպիկ լինել: *Ըսըէղէն ծակավը անց կըկէնա, տու ընդըրա կարէլ չըս խանփիս* (Զ): 3. Շատ տանջվել, չարչարվել, նեղություններ կրել: *Հինչ կօրծ ա՞նէլ, հաշըէվ ըրա՝ ըսըէղէն ծակավը անց ըմ կացալ* (Բ): 4. Շատ բարակ՝ նուրբ լինել: *Էտ ախճիգը մին հանց շալ ա կօրծում, վէր ըսըէղէն ծակավը անց կըկէնա* (Զ):

- Ըսըէղէն ծակավը անց կըցընէլ - Շատ տանջել, չարչարել, նեղել: *Էտ աղան նօքայնրնէրէն ըսըէղէն ծակավը անց ա կըցընում, մինչըէվ էտ կօրծը պըրծընըմ ըն* (Զ):

- Ըսըէղէն ծակէն հանալ ածել - *տե՛ս* Ըսըէղէն ծակավը անց կըցընէլ:

- Ըսըէղէն ծակէն հանալ քինիլ - *տե՛ս* Ըսըէղէն ծակավը անց կենալ (3):

- Ըսըէղէն ծակումը - *տե՛ս* Նալէն-մէխին դաթումը:

- Ըսըէղու յըրա նըստէլ - Խիստ անհանգիստ լինել, անհարմար վիճակում գտնվել, նյարդայնանալ: *Ըսըէղու յըրա յըս նըստած, էտ հինչ ա՞ պըտահալ* (Բ):

- Ըսըէղու շօք - Չնչին՝ աննշան բան:

էտ ըսը՝ղէն շօքը հինչ ա՞, վէր վախտ ըս կուրցընում (Ձ):

ԱՍԸԼ *(թրք. asli)* - *ած.* Առողջ, պիտանի, գործունյա: *Ընում ա, չընում, իրէք ախպէր ըն ընում, ախպուրցը մինը՝ ասըլ, էրկուսը՝ բըդասըլ* (ՆԱԲ, 24):

ԱՍԹԸԽ *(գրբ. աստղ)* - *գ.* 1. Սեփական լույս ունեցող երկնային մարմին, որ երեւում է գիշերը՝ լուսավոր կետի նման, աստղ: *Ծըմըռվա քըշէրը վէր ասթըխէրը տեռս յը՝կէն, գ՝իդա՛ վէր ցօրտ ա ինա՛կան* (Ձ): 2. Աստղի ձեւով՝ մի քանի ճառագայթներով կամ սուր անկյունների զարդանկար՝ նշան՝ շքանշան եւն: *Ասթըխը տօ՛շան ա տամ, ք՝ինեռ՝ում* (Բ): 3. *փխբ.* Նշանավոր, հռչակավոր գործիչ: *Էտ մարթը սաղ կանտօրէն ասթըխըն ա* (Բ): 4. *փխբ.* Բախտ: *Կօգի դաշանգ՝, ամմա ասթըխ չօնէ* (Բ):

- Ասթըխէրը հըղէ ըղնել - Գիշերն անցնել, լույսը կամաց-կամաց բացվել: *Ասթըխէրը հըղէ յըն ընգալ, պատառ վըխտանը յը՝տը հիյվըննէն տեռս ընէլի վախտըն ա* (Բ):

- Ասթըխէրը հըմբարէլ - 1. Անհնարին՝ անմիտ գործ ձեռնարկել: *Էտ պէնը կարէլ չըս անիս, հա՛շը՝վ ըրա, թա օգում ըս ասթըխէրը հըմբարիս* (Բ): 2. Պարապ լինել, անգործության մատնվել: *Կօրծ, զատ չի անում, ասթըխէրըն ա հըմբարում* (Բ):

- Ասթըխէրը հըմբարվել - Երկինքը պարզ լինել: *Կ՝ուղէրէն մը՝ծը ասմա.- Ասթըխէրը հըմբարվում ա, էս քըշէր կարէլ չընք կ՝ուղօթուն անինք՝* (Ձ):

- Ասթըխէր խօսկ տալ - Անհնարին՝ մեծ բաներ խոստանալ: *Էտ տըղան մինչը՝վ փըսակվէլը ըխճըկանը ասթըխէր ա խօսկ տամ* (Բ):

- Ասթըխը խըվարէլ - 1. *տե՛ս* Ասթըխը ծըռվէլ: 2. *տե՛ս* Ասթըխը ծըլլալ:

- Ասթըխը ծըլլալ - Մեռնել, վախճանվել: *Մին ո՛ւրո՛ւգ՝ո՛ւն ախպէրը ըրա՛զ՝ումը տէսնում ա, վէր ախպօրը ասթըխը ծըլլաց...* (ՀԺՀ, V, 557):

- Ասթըխը ծըռվէլ - Հաջողությունը դադարել, անհաջողության մեջ ընկնել, դժբախտանալ: *Էտ օրանց էլ ըտըրա ասթըխը ծըռվում ա* (Բ):

- Ասթըխը ծուվվալ/կօրծ անէլ - Բարի բախտի արժանանալ, հաջողության մեջ ընկնել: *Ըտըրա ասթըխը ծուվվամ ա. էտ վը՝սկէն յօր ա օնում, փըսակվում, լ՝ավ ապրում* (Ձ):

- Ասթըխը կօրչիլ - *տե՛ս* Ասթըխը ծըռվէլ:

- Ասթըխը հանգ՝իլ - *տե՛ս* Ասթըխը ծըլլալ:

- Ասթըխը ճըլկավէրը ըղնել - *տե՛ս* Ասթըխը ծըռվէլ:

- Ասթըխը մար մընէլ - *տե՛ս* Ասթըխը ծըռվէլ:

- Ասթըխը պէնվալ - *տե՛ս* Ասթըխը ծուվվալ:

- Ասթըխը վէր ըղնէլ - *տե՛ս* Ասթըխը ծըլլալ:

- Ասթըխը տը՝ղը - *տե՛ս* Նախշը տը՝ղը:

- Ասթըխը տեռս կ՝ալ - *տե՛ս* Ասթըխը ծուվվալ:

- Ասթըխը փըռնէլ - 1. Դուր գալ, հավանել: *Վէր ըտըրա տը՝սավ, ասթըխը փըռնից, կօրծի յէր կալա՛վ* (Բ): 2. *տե՛ս* Ասթըխը ծուվվալ:

- Ասթըխը օրախ - Բախտավոր, գործը հաջողակ: *Ասթըխը օրախ մարթ ա, կավըն էլ ա ճօխտակ ծընալ, էշըն էլ* (Բ):

- Ասթըխու թիք՝ա՛/կուտուր/պատառ - *տե՛ս* Լեռսու թիք՝ա՛:

- Ըսթըխէրէն հըսնէլ - Շատ բարձրանալ: *Հէնգ՝ տըռնումը էտ ծառը հըսնըմ ա ըսթըխէրէն* (Ձ):

- Ըսթըխէրէն նըհը՝ետ խաղ անէլ - Արագավազ՝ թռչկան լինել (ձիու մասին): *Ծի, հինչ ծի՞, ըսթըխէրէն նըհը՝ետ խաղ ա անում* (Բ):

ԱՍԹԸԽԱԳԷՏ *(գրբ. աստեղագէտ)* - *գ.* Աստղագուշակ՝ աստղերով գուշակություն անող: *Էս տըղան ասըմ ա, վէր ինք՝ը ասթըխագէտ ա, վէր ասթըխը ծըլլամ ա, գ՝ուդում ա հեռ՝ ասթըխ ա, հու վա մէռալ* (ՀԺՀ, V, 555):

ԱՍԹԸԽԱՎ - *ած.* 1. Ոչ շատ գեղեցիկ, բայց դուրեկան, գրավիչ, հաճելի: *Ասթըխավ ախճիգ՝ ար, էտ տըղան տը՝սավ, ծզից, տարավ* (Բ): 2. *տե՛ս* Ասթըխը օրախ:

ԱՍԹԸԽՀԱ՛ՇԸ՝Վ - *ած.* Աստղերի թվով, անհամար, բազմաքանակ: *Շահը ասթըխհա՛շը՝վ զօրքավ նի յա մընում Ղարաբաղ* (Ձ):

ԱՍԹԸԽՕՏ - *ած.* Աստղերով պատված, աստղալից: *Էս ասթըխօտ յէրգ՝ինքան իրէք ասթըխ վէր ընգավ...* (ՀԺՀ, V, 288):

ԱՍԻԼ - *տե՛ս* ԱՍԷԼ:

ԱՍԼԱՆ *(թրք. aslan)* - *գ.* 1. Առյուծ: *Ասլանը ասմա.- Վէր ճօխտակ ծընիմ, ք՝ը՝զ ուտըլական ըմ, վէր կընդակ ծընիմ, մին ճօտ ըմ ք՝ը՝զ տըլական* (Ձ): 2. *փխբ.* Քաջ՝ կտրիճ՝ սրտոտ մարդ: *Ըտըրան էրկու ասլան տըղա յա ինում* (Բ):

- Ասլան բալասի - *տե՛ս* ԱՍԼԱՆ(2):

- Ասլանը ճանջ չի փըռնէլ - Ուժեղը իր կարողություններին համապատասխան է գործ ձեռնարկում: *Տըղան դէվին ասմա.- Ասլանը ճանջ չի փըռնէլ, էտ հուվ ա՞, վէր յը՝ս ըտըրա նըհը՝ետ կըռվիմ* (Ձ):

- Ասլան կըտըրէլ/տը՝ռնալ - Քաջ՝ անվախ՝ համարձակ դառնալ, արիանալ: *Էտ վէր տը՝սավ, ասլան կըտըրից* (Բ):

- Ասլանու ծը՝ծ ծըծած - *տե՛ս* ԱՍԼԱՆ(2):

- Ասլանու կաթնը - 1. *փխբ.* Ոգելից խմիչք, հատկապես թթի օղի: *Միրգօն ապան խըմում ա, թա.- Էս ասլանէն կաթնան հիշքան ը՞ք քաշա՛լ* (Ձ): 2. *փխբ.* Հազվագյուտ բան: *Լ՝ավ մարթը ասլանու կաթն ա, տիժէր ա քըթէնալը* (Ձ):

- Ասլանու ըռը՝խ ճօթըռօղ - *տե՛ս* ԱՍԼԱՆ(2):

- Ասլանու սը՝րտ ինիլ - Քաջ՝ անվախ՝ համարձակ լինել: *Մէր Միրգան ասլանու սը՝րտ օնէ* (Ձ):

ԱՍԼԸ/ԱՍԼԻ *(արաբ., պրս. asl (բուն, ծագում, արմատ, հիմնական), թրք. asil (ծագում, տեսակ, ցեղ)* - *գ.* Արմատ՝ հիմք, ծագում, ցեղ, տոհմ: *Ասլը ճինանչի, յը՝տնան ախճիգ՝ ծզի* (Ձ):

- Ասլը հօ - Ցեղի՝ գերդաստանի ժառանգական հատկանիշները չեն կորչում, շարունակվում են սերնդեսերունդ: *Էս խօսկէրքը ըսէլավ, դէրվիշը յէտ ա տը՝ռնում, թա.- Ասլի հո՛* (ՀԺՀ, V, 603):

- Ասլին քաշիլ - Իր նախնիներին նմանվել: *...Էն էլ ո՛ւրա՛ն ասլին ա քաշալ, հինչու տէսալ ա, էն ա աշկէն առաչը կալա՛լ* (ՀԺՀ, V, 604):

ԱՍԼԸԶԱԴԱ *(թրք. asilzade)* - *ած.* Ազնվազարմ, ազնվատոհմիկ: *Էս ասլըզադա հավքէրան ըրէնակ յէր կալած՝ էս ա մին քանի տարի կա, վէր Կըվկազին նանամ-սանամ խանըմնէն էլ ըն յայլաղ քինըմ...* (ՋՏ, Բ, 74):

ԱՍԼԻ - *տե՛ս* ԱՍԼԸ:

Ա՛ՍԿ՝Ա՛Ր *(թրք. asker)* - *գ.* 1. Թուրքական զինվոր: *Ա՛սկ՝ա՛ռնէն էտ վէր տը՝սէն, փախէն* (Բ): 2. Զորք: *Խանը ա՛սկ՝ա՛ռը հըվաքում ա, նի մընում էտ թաքավէրին յէրգ՝իրը* (Ձ):

Ա՛ՍԿ՝Ա՛ՐԱ՛Ն - *գ.* Քաղաք ԼՂՀ-ում՝ համանուն շրջանի կենտրոնը:

- Ա՛սկ՝ա՛ռանա՛ պէրթումը պըլօկված - Շատ թշվառ, չքավոր: *Էտ հինչ ա՞ հա՛լըտ, հանց ըս Ա՛սկ՝ա՛ռանա՛ պէրթումը պըլօկված* (Բ):

ԱՍԿՕԼԿԱ *(ռուս. осколок)* - *գ.* Պայթած արկի, ռումբի, նռնակի եւն բեկոր: *Մինչը՝վ միհէնգ՝ ասկօլկան էն ա ջանըմը* (Ձ):

ԱՍՄԱ - *գ.* Խաղողի մի շարք տեսակներ՝ կախան խաղող, որ պահում են ձմռան համար: *Ասման կախ-կախ ըրավ, հանցու ծըմը՝ռնը խօխէնք՝ը օտին* (Ձ):

ԱՍՄԱԼԸՂ - *գ.* Թելերից գործած գդալաման: *Ա՛դա՛թ ա իլա՛լ՝ պէժինք՝ին մաչին ասմալը՝ղ էլ ըն իլա՛լ տալիս* (Ձ):

ԱՍՄԱՆ *(պրս., թրք. asman)* - *տե՛ս* ՅԷՐԳ՝ԻՆՔ՝:

- Ասմանը յը՝ր ինիլ - *տե՛ս* Յէրգ՝ինք՝(ը) յը՝ր ինիլ:

- Ասմանը յըէր հ(անել) - *տե՛ս* Յէրգինք՛(ը) յըէր հ(անել):

ԱՍՄՈՒՆՔ - *գ.* 1. Ասված խոսք, ասույթ, ասելիք: *Վէր քու ասմունք անիմ, մին շէփտըմը պըրծընէլ չըմ* (Բ): 2. Ժամասացություն, ժամերգություն: *Ադէրը ասմունքը պըրծավ, լօխ տ՚ուս յը՛կէն* (Ձ):

ԱՍՄՕՇԿԱ *(ռուս. осьмушка)* - *տե՛ս* ՊԱՏԱՌ:

ԱՍՊԱԺ - *տե՛ս* ԱՇՊԱՋ:

ԱՍՊԱԺԽԱՆԱ - *տե՛ս* ԱՇՊԱՋԽԱՆԱ:

ԱՍՊԱԺՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱՇՊԱՋՕԹՈՒՆ:

ԱՍՊԷԼ - *նբ.* Ասպերը ձգել՝ գործելու համար: *Թիլը ասպից, վէր կ՚օրծէ* (Ձ):

ԱՍՊ(Ը) - *գ.* 1. Ջուլհակի հաստոցի շարժուն շրջանակը՝ սանրաձեւ թելերով, որոնց արանքով անցնում են հենքի թելերը: *Ասպը մըճիճվա՛ծ ա, խը՛ղճէն թօղալ մա՛թա՛ղ* (Ձ): 2. Կտավի գլխի հենքի թելերը, ծոպ: *Ասպը կըտօրից* (Ձ):

ԱՍՍԱԽԿԱԼ - *տե՛ս* ԱԽՍԱԽԿԱԼ:

ԱՍՎԷԼ/ԱՍՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԱՍԷԼ-ի:

ԱՍՎԻԼ - *տե՛ս* ԱՍՎԷԼ:

ԱՍՏԱՌ *(պրս., թրք. astar)* - *գ.* 1. Հագուստի՝ վերմակի եւն ներսի կողմը կարված կտորը: *Յուրդանէն աստառը կարում ա* (Բ): 2. *փխբ.* Որեւէ գործի ներքին՝ գաղտնի հանգամանքը, ներքին պատճառը, հիմքը: *Տու կօրծէն իրը՛սըն ըս տը՛սնում, աստառը տը՛սնում չըս* (Բ):

- Աստառ անէլ - *տե՛ս* ԸՍՏԱՌԷԼ:

- Աստառը ծըկծըկօտ ինիլ - Ընդունված օրենքին՝ կարգերին դեմ լինել: *Էն կարէլ չի մէր կօխկէն կօրծ անէ, ընդըրա աստառը ծըկծըկօտ ա* (Բ):

- Աստառը շօռ տուված - Դավանանքը՝ համոզմունքը փոխած: *Աստառը շօռ տուված մարթին անա ամմէն հինչ ըսպըսէլի յա* (Ձ):

ԱՍՏԱՐՕԺՆԻ *(ռուս. осторожный)* - 1. *ած.* Զգույշ, ուշադիր, զգոն: *Աստարօժնի մարթ ա, կարէլ չըս չա՛՛շմիշ քըցիս* (Բ): 2. *մ.* Զգուշաբար, զգուշորեն: *Էտ գըրանատնէն աստարօժնի յօր ա օնում, յըշիգ՚ումը տա՛՛ռսում* (Ձ):

ԱՍՏԷԼ(ԱՄ)/Ա՛՛ՍՏԷԼ(Ա՛՛Մ)/ԱՍԷՏ(ԷԼ)/Ա՛՛ՍԷՏ(ԷԼ) - *մ.* Ապա, հետո, այսուհետեւ: *Աստէլ վէր հըղէ յա ինում, թա ք՚ինի, օգում ա, վէր հ՚ուրան ըզըտօղէն էլ նըհէտը տանէ...* (ՀԱԲ, 15,68):

Ա՛՛ՍՏԷԼ(Ա՛՛Մ) - *տե՛ս* ԱՍՏԷԼ(ԱՄ):

ԱՍՏԸՎԱԾ - *տե՛ս* ԱՍՏՈՒԾ:

ԱՍՏԸՎԱԾԱՋԻՆ - *տե՛ս* ԱՍՏԸՎԱԾԱՋԻՆ:

ԱՍՏԸՎԱԾԱԾԻՆ - *տե՛ս* ԱՍՏԸՎԱԾԱՋԻՆ:

ԱՍՏԸՎԱԾԱՋԻՆ/ԱՍՏԸՎԱԾԱՋԻՆ/ԱՍՏԸՎԱԾԱԾԻՆ *(գրբ. Աստուածածին)* - *գ.* Քրիստոսի մոր՝ Մարիամի մակդիրը: *Մարյամ Աստվածածնին մին խօրթ մար ա իլա՛՛լ, տա փիս կընէգ՚ ա իլա՛՛լ...* (ԱԱ, 51):

ԱՍՏՈՒԾ/ԱՍՏՈՒՋ/ԱՍՏՕԾ/ԱՍՏԸՎԱԾ *(գրբ. Աստուած)* - *գ.* 1. Կրոնական պատկերացումներով՝ աշխարհն ստեղծող ու կառավարող գերագույն էակ: *Աստուծ ըտըրա խընթիրքը ըսկանում ա, դուշ շինում, թըռչըցընում* (ԱԱ, 64): 2. *փխբ.* Պաշտամունքի արժանի անձ, կուռք: *Էտ մարթը մէր Աստուծընա ա* (Բ):

- Աստուծ ա գ՚ի՛՛ուդ՚ի՛՛ում - 1. Ոչ ոք չգիտե, հայտնի չէ, ո՞վ գիտե: *Ք՚ինըմ ա, ք՚ինըմ, շատ ա ք՚ինըմ, թա խըրէգ՚, Աստուծ ա գ՚ի՛՛ուդ՚ի՛՛ում...* (ՀԺՀ, V, 128): 2. Ինչ-որ վատ բան, վարմունք եւն դատապարտելու, որեւէ մեկի կամ որեւէ բանի նկատմամբ պարսավանքի եւ ընդհանրապես բացասական վերաբերմունքի արտահայտություն: *Աստուծ ա գ՚ի՛՛ուդ՚ի՛՛ում, թա քանէ մարթու տօնըս քանդա՛՛լ տու* (Բ):

- Աստուծ ախրը պարի անէ - Թող հաջողվի՝ վերջը բարի լինի: *Լ՚ավ կօրծ ըս փըռնալ, Մնդրի, Աստուծ ախրը պարի անէ* (Բ):

- Աստուծ անէ - 1. Երանի թե: *Աստուծ անէ՝ էլ կըռը՛վ չինի, մէխկ ըն էս ջիհիլնեն* (Բ): 2. Եթե, եթե հաջողվի, եթե հաջողություն լինի: *Աստուծ անէ՝ արաշտ չինի, ըստարէ լ՚ավ ցօրէն ընք հընձիլա՛՛ն* (Բ):

- Աստուծ աշկան քըցիլ - Այլեւս բախտը չժպտալ՝ օգնություն չլինել: *Աստուծ մը՛զ աշկան քըցա՛՛լ ա, կարում չընք ապրինք՚* (Ձ):

- Աստուծ բ՚ա՛՛ռք՚ա՛՛թ տա - *բրմդ.* Թող առատություն լինի: *Ժուղօվուրթը էք՚ի՛՛ց հօ՛՛նձը ըսքըսում ըն, Աստուծ բ՚ա՛՛ռք՚ա՛՛թ տա* (Բ):

- Աստուծ դ՚ա՛՛ռդը տուվալ ա, դ՚ա՛՛ռմանը էլ նըհը՛տը - Ամեն մի նեղություն՝ դժվար իրավիճակ իր փրկության ելքը՝ միջոցն ունի: *Աստուծ դ՚ա՛՛ռդը տուվալ ա, դ՚ա՛՛ռմանը էլ նըհը՛տը, կօզի կօրծ չի անում, ամմա ախպէրը միշտ քըղաքան փուլ ա դարկում* (Բ):

- Աստուծ էրկու ծը՛ռքավ ա տամ - Աստված շռայլ է (մեկի հանդեպ): *Ըտըրանց Աստուծ էրկու ծը՛ռքավ ա տամ, էրկու տըռնումը հըրուստացալ ըն* (Ձ):

- Աստուծ ըղորմած ա - *տե՛ս* Աստուծ մը՛ծ ա:

- Աստուծ ըստը՛ղծալ ա, վէր յը՛կալ/քըշացալ - Անթերի է, կատարյալ է, արտասովոր է: *Տօն, հինչ տօ՞ն, ասիս լ՚ըհա Աստուծ ըստը՛ղծալ ա, վէր յը՛կալ* (Բ):

- Աստուծ ինիլ - Խիղճ՝ գութ՝ խղճմտանք ունենալ: *Ընդըրա Աստուծ օնէ, նըհը՛տը հընգըրթուն ըրա՛՛* (Բ):

- Աստուծ լ՚ավէն նըհը՛տ ա առուտոր անում - Միշտ լավը՝ բարին է կործանվում՝ մեռնում: *Աստուծ լ՚ավէն նըհը՛տ ա առուտոր անում, էնքան փիս պըռըվնէն թօղալ ա, էտ ջա՛՛հիլ, խէլ՚ի՛՛նք, ըղուրմավ մարթին տարալ* (Ձ):

- Աստուծ ծէն տալ - Աստծու անունը տալով՝ նրանից օգնություն խնդրել, Աստծուն ապավինել: *Տարէն փիս արաշտ ա, կընանէք՚ը Աստուծ ըն ծէն տամ, վէր թօռ կ՚ա* (Բ):

- Աստուծ ծը՛ռք հըսցընէլ - Բախտը ժպտալ, օգնություն լինել: *Աստուծ ծը՛ռք հըսցըրավ, թօռ չի յը՛կավ, ժուղօվուրթը հօ՛՛նձը ըրէն, պըրծէն* (Բ):

- Աստուծ կըլխան փախած - Անբախտ, անհաջողակ: *Աստուծ կըլխան փախած ա, վէշ մին պէն կարում չի անէ* (Ձ):

- Աստուծ հազզար ու մին տօռնը օնէ, հազզարը վէր կապէ, մինը կըպէնա - Դժվար իրավիճակից դուրս գալու ելք կգտնվի: *Դ՚ա՛՛ռդ մէ՛ր անէլ, Հանէս, Աստուծ հազզար ու մին տօռնը օնէ, հազզարը վէր կապէ, մինը կըպէնա, կավ ա լի՞, ըստակալ ա, ըստակալ ա, էս ա հէրէնջըտ ծընական ա* (Ձ):

- Աստուծ հա՛մ տամ ա, հա՛մ տանում - *տե՛ս* Աստուծ մին տը՛ղա կըտըրում ա, մին տը՛ղա՝ տամ:

- Աստուծ հաց տըվօղէն հացը բօլ-բօլ ա անում - Բարի՝ առատաձեռն մարդը միշտ շահում է: *Աստուծ հաց տըվօղէն հացը բօլ-բօլ ա անում, սաղ գ՚անքումը լ՚իվօթուն ա ըրալ, միհէնգ՚ էլ լօխ հ՚ուրա՛՛ն ըն ք՚օ՛՛մ՚՛՛նգ՚ անում* (Բ):

- Աստուծ հըզզարէն փուլ ա տամ, մինին՝ խը՛ղք - Ասում են ոչ ունեւոր, բայց լավ՝ պարկեշտ՝ խելոք մարդկանց հասցեին:

- Աստուծ հը՛ռէ պահէ/տանէ - Թող այդպիսի բան երբեք չպատահի, Աստված ազատի (փորձանքից, չարից եւն): *Աստուծ հը՛ռէ պահէ, ասում ըն հիրը՛վան շէնումը ազար կա* (Ձ):

- Արուն ցըրըէվ տալ - 1. *տե՛ս* Արուն անէլ: 2. Մեծ ողբերգություն ապրել՝ երբ սգվորը, եղունգներով ծվատելով իր մարմինը, արյունը ցողում է մյուս սգվորների եւ հանգուցյալի դագաղի վրա: *ԱվանՒուց կընանէքՒը մարթկանցը թըղէլիս արուն ըն իլՒալ ցըրըէվ տալիս, միհէնգՒվա կընանէքՒը ըսկի լաց էլ չըն ինում* (Զ):

- Արուն քընցիլ - *տե՛ս* Արուն անէլ:

- Ըռնավ ընգած տավար - Ծայրաստիճան հուզված՝ հոգնած՝ վրդովված: *Ըռնավ ընգած տավար ը՞ս, նըստէ՛, տըէսնամ՝ հի՞նչ ա իլՒալ* (Զ):

- Ըռնէն հաց փընրթիլ - 1. Անտեղի վայրախոսել՝ զրպարտել: *Ըռնէն հաց մէր փընրթիլ, էն կընէգՒը նըմուսավ կընէգՒ ա* (Բ): 2. Թշվառության կամ փորձանքի մատնել: *Ըռնէն հաց փընրթից, էտ մարթին տօնը քանդից* (Զ):

- Ըռնէն մաչը մընէլ - Բնավորության գիծ՝ սովորություն դառնալ: *Էտ վընխտանց էլ կՒուղթունը ըտընրանց ըռնէն մաչընա մընում* (Զ):

- Ըռնէն մաչին ինիլ - Հատկանիշը ժառանգական լինել: *Հանը ասմա.- Ըտընրանց ըռնէն մաչին կՒիժթուն կա, յըէս ըտընրանց ախճիգՒ չօնիմ տալի* (Զ):

- Ըռնէն մաչին խէխտիլ - Մեծ արյունահեղություն կատարել, անգթորեն կոտորել: *Թաքավէրին զօրքը նի յա մընում, էտ շէնը ըռնէն մաչին խէխտում* (Զ):

- Ըռնէն ջանմանն տուս օնէլ - Սպանության վրեժը լուծել: *Վանէսը քՒունում ա էտ յէրգՒիրը, հընգէրունցը ըռնէն ջանմանն տուս օնում, դինջանում* (Զ):

- Ըռնու բընրբար - *տե՛ս* Ըռնու կՒին(1):

- Ըռնու կՒին - 1. Շատ թանկ, արժեքը բարձր: *Պամիդօրէն կՒինը բընգարումը ըռնու կՒին ա* (Բ): 2. Սպանության դիմաց նյութական հատուցում՝ կյանքի գին՝ մեծ զոհողություն: *Ասսախկալնէն քՒունում ըն էտ ըսպանվածէն ըռնէն կՒինը տամ, շինացուց ըզադում* (Զ):

- Ըռնու հալավ - Կռվի առիթ հանդիսացող՝ կռվարար մարթ: *Սուրէնը ըռնու հալավ ա, ըշտըէղ քՒունում ա, կընռըէվ ա քընցում* (Զ):

- Ըռնու մաչի կօրչիլ - *տե՛ս* Ըռնըթաթախ ինիլ:

- Ըռնու մաչի մը՝ռնէլ - Արյունաքամ լինելով՝ մեռնել: *Կըցէնավ վը՝ննը կըտըրից, ըռնու մաչի մը՝ռավ* (Բ):

- Ըռնու մաչ ըղնէլ - Սպանության՝ արյունահեղության մասնակից դառնալ: *Խօլի՛ունք տըղա յար, էտ հա՛ռամզադօցը հընգէր տը՝ռավ, ըռնու մաչ ընգավ* (Ձ):

- Ըռնու մաչ քըցիլ - Մեկին դրդել՝ գրգռել, որ սպանություն կատարի, սպանության՝ արյունահեղության մասնակից դարձնել: *Մադար տըղա յար, դային տարավ քաղաք, ըռնու մաչ քըցից* (Բ):

- Ըռնու վը՝տ կ՝ալ - Սպանության վտանգ լինել: *Էտ պէնան ըռնու վը՝տ ա կ՝ամ, կօրծ չօնիս* (Բ):

- Ըռնու տակ ըղնէլ - *տե՛ս* Ըռնու մաչ ըղնէլ:

- Ըռնու տակ քըցիլ - *տե՛ս* Ըռնու մաչ քըցիլ:

ԱՌՆԻՆ-ԸՌՏԱՍՈՒՆՔ - *գ.* 1. Աղիողորմ լաց: *Ըտըրա ա՛ռնն-ըրտասունքը թաքավէրին սը՝րտը կըկըղցընում ա* (Ձ): 2. Մեծ վիշտ, դժբախտություն: *Էս հինչ ա՛ռնն-ըրտասունք ա, վէր մէզ պըտահից* (Ձ):

- Ա՛ռնն-ըրտասունք թափէլ/վէր ածէլ - Աղիողորմ լացել, մղկտալ: *Հինչ ա տըղան մը՝ռալ ա, էտ կընէգ՝ը ամմէն օր ա՛ռնն-ըրտասունք ա թափում* (Ձ):

ԱՌՆԻՆ-ՀԷՂԷՂ - *տե՛ս* ԱՌՆԻՆ(2):

- Ա՛ռնն-հէղէղ անէլ - *տե՛ս* Ա՛ռնն անէլ:

- Ա՛ռնն հէղէղ ըղնէլ/ինիլ/տը՝ռնալ - *տե՛ս* Ա՛ռնն ինիլ:

- Ա՛ռնն-հէղէղ քըցիլ - *տե՛ս* Ա՛ռնն անէլ:

ԱՌՆԻՆՀԷՂՕԹՈՒՆ/ԱՌԻՆՀԷՂՕԹՈՒՆ - *գ.* Արյունահեղություն, կոտորած: *Օցըն ասըմ ա.- Ք՝ինի ա՛սի, վէր էտ ա՛ռազը ա՛ռնունհէղօթուն ա, կըռէվ ա, կըտօրած ա...* (ՀԺՀ, V, 341):

ԱՌՆԻՆ-ՔԸՐԹՆՕՆՔ - *գ.* Ծանր՝ տանջալից՝ դառն աշխատանք: *Չօ՛րք՝ տըռնըվա ա՛ռնն-քըրթնօնքըս նըհախ տը՝ղան ար* (Ձ):

- Ա՛ռնն-քըրթնօնք թափէլ/մընէլ/վէր ածել - Ծանր՝ տանջալից՝ դառն աշխատանք կատարել, քրտնաթոր աշխատել: *Խը՝ղճ մարթը էտքան ա՛ռնն-քըրթնօնք թափից, բօստան ըրավ, սէլը յը՝կավ քըշից տարավ* (Բ):

ԱՐՈՒՏ - *տե՛ս* ԱՐՕՏ:

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ - *տե՛ս* ԸՐՔԸՎՕԹՈՒՆ:

ԱՐՔԱՆԴ/ԱՐԳԱՆԴ *(գրբ. արգանդ)* - *գ.* Կնոջ այն օրգանը, որի մեջ ձեւավորվում եւ զարգանում է պտուղը: *Ա՛ղլէցա ըրէն, էտ կընգանը արքանդը տա՛ուս կա՛լին* (Ձ):

- Արքանդը չուրանալ - Չծննդաբերել, զավակ չծնել, չսերել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Արքանդը չուրանա ընդըրա* (Բ):

ԱՐՔ՝ - *տե՛ս* ԱՌՔ՝:

ԱՌՔ՝/ԱՐՔ՝ *(թրք. erk, պրս. ark)* - *գ.* 1. Հարգանք, որ մեկը վայելում է ուրիշներից: *Դէրվիշին ա՛ռք՝ը թաքավէրին պալատումը շատ ա ինում, հինչու ասում ա, աթկազ չընն անում* (Ձ): 2. Բարոյական իրավունք, իշխանություն: *Տու հինչ ա՛ռք՝ օ՞նիս, վէր էտ պէնը ասում ըս* (Բ):

- Արք՝ անէլ/պինըցընէլ - Իրեն բարոյական իրավունք վերապահել: *Ա՛ռք՝ ա անում, թաքավէրին անա հըրցընում* (Ձ):

ԱՐՔ՝ԱՎ - *տե՛ս* ԱՌՔ՝ԱՎ:

ԱՌՔ՝ԱՎ/ԱՐՔ՝ԱՎ - *ած., մ.* - Բարոյական իրավունքով, համարձակությամբ: *Ա՛ռք՝ա՛վ նի յա մընընում, ք՝ինամ վէզիրին քըշտէն նըստում* (Ձ):

ԱՌՔ՝ԱՎ-ԸՌԸԽՏԷՎԷՐ - *ած., մ.* Հպարտ, հպարտորեն: *Յէշըմ ըն, տը՝սնըմ թաքավէրը առօք-փառօք, արք՝ավ-ըռըխտէվէր կ՝ամ ա* (ՀԺՀ, VI, 189):

ԱՐՕՃ/ԱՐՈՒՃ *(գրբ. որոճ)* - *գ.* Որոճելը, որոճալը: *Արօճը վէր ինի վէջ, կըվէրը ուռթանան կաթնը չընն տալ* (Ձ):

- Արօճ անէլ - 1. Որոճել, որոճալ: *Հիվընէն նըստած արօճ ըն անում* (Բ): 2. Առանց ախորժակի դանդաղ ուտել: *Պառավը կըրպէտին նըստում ա, ըսքըսում լօբին արօճ անէլը* (Ձ): 3. Ուտելու բան չունենալ, քաղցած մնալ: *Տանը ուտէլի պէն չօնին, արուճ ըն անում* (Ձ):

ԱՐՕՏ/ԱՐՈՒՏ *(գրբ. արօտ)* - *գ.* Արոտավայր, արոտատեղի: *Թօռ յը՝կավ, արօտը կընանչից* (Բ):

- Արօտ անէլ - Արածել: *Օրէրը իրկընացալ ա, կըվէրը մինչը՝վ ժամի հինը արօտ ըն անում* (Բ):

- Արօտ տանէլ - Արածացնելու տանել: *Չօբանը ծաք՝ին տա՛ուս յը՝կավ, նախրը արօտ տարավ* (Բ):

ԱՑԱ՛ԼԻԳ-ՄԱ՛ՑԱ՛ԼԻԳ - *ած., մ.* Խենթ ու խելառ, վայրիվերո, հիմար-հիմար: *Ա՛ցա՛լիգ՝-մա՛ցա՛լիգ՝ խօսում ա* (Ձ):

ԱՓԱԹ *(թրք. afet (գեղեցկուհի)* - *ած.* Արտասովոր, զարմանալի, գեղեցիկ, շնորհալի: *Ք՝ընըմ ա, նի մընընըմ, տը՝սնըմ էտ ջահիլնէն ուրանց ափաթ պէնէրան ըն նաղլ անըմ...* (ՀԺՀ, V, 126):

- Ափաթը կըտըրէլ - 1. Ստիպել, պարտադրել: *Էս մարթին կընէգ՝ը ափաթը կըտրում ա, թա պիտի ք՝ընա՛ս, մին պէն էլ տա՛ուս ասէս...*(ԼՂԲՔ, 265): 2. Ստիպված լինել: *Ափաթըս կըտըրած՝ տա՛ուս յը՝կէ, ք՝ը՝ցէ* (Ձ):

- Ափաթը հըվաքէլ/օնէլ - *տե՛ս* Ափաթը կըտըրէլ(1):

- Ափաթ(ը) տանէլ - 1. Զարմանալ: *Մարթը մընըմ ա ափաթ տարած, մաթ մընացած* (ԼՂԲ, 372): 2. Զարմացնել: *Էտ խօխան ուրանն յը՝րքավը լօխճին ափաթը տանում ա* (Ձ):

ԱՓԱԹ-ԳԻ՛ՒՐՍԱ՛Ն - *տե՛ս* ԱՓԱԹ:

ԱՓԱԼ-ԹԱՓԱԼ *(թրք. apal tapal)* - *մ.* Շտապ կերպով, արագորեն, հապճեպորեն: *Վէզիրը ափալ-թափալ տա՛ուս ա կ՝ամ, տը՝սնում թաքավէրին ըսպանած* (Ձ):

ԱՓԱՇԿԱՐԱ/ԱՓԱՇԿ՝ԱՌԱ՛ *(թրք. apaši-kar)* - *մ.* Ակնհայտ՝ պարզորոշ՝ բացահայտ կերպով: *Ղօրթ ա՞, վէր փալանդուզանց տըղան էրկու կընէգ ա պահում ու ափաշկարա կըռնընփըռնօկ ման կ՝ամ* (ՋՏ, Բ, 79):

ԱՓԱՇԿ՝ԱՌԱ՛ - *տե՛ս* ԱՓԱՇԿԱՐԱ:

ԱՓԱ՛ՌԻՄ *(պրս. aferim)* - *տե՛ս* ԱԼԼԸՂԱՂՕ՛ՆԻՄ: *Հա՛ռընն ասըմ ա.- Ա՛փա՛ռիմ իմ տըղա, հատէ էտ վէր փէշակ ա՛* (ԱԱռ, 65):

ԱՓԷՂ-ՑԸՓԷՂ *(գրբ. աղցիփեղց (անշնորհք, անպիտան)* - *ած., մ.* Վայրիվերո, անիմաստ, խենթ ու խելառ: *Ափէղ-ցըփէղ խօսում ա* (Բ):

ԱՓԷՐԻՍՏ *(ռուս. аферист, ֆր. affairiest)* - *ած.* Խարդախ, խորամանկ, թաքուն գործող: *Էրկու ափէրիստ տըսնաս ըն, վէր կ՝ըվօղը շինըցէ յա, խամ ա...* (ՀԲ, 333):

ԱՓԷՐԻՍՏՕԹՈՒՆ - *գ.* Խարդախություն, խորամանկություն: *Ափէրիստօթունը վէր ա՛դա՛թ չինա՛ր, լօխ լ՝ավ կըպըրին* (Ձ):

ԱՓԻՑԱ՛ԼՆԻ *(ռուս. официальный, լատ. officialis)* - *մ.* Պաշտոնական կերպով, պաշտոնապես: *Էտ մարթին ա՛փիցիա՛լնի տանում ըն, տինում նախագա* (Ձ):

ԱՓԻՑԱ՛ՆՏ(ԿԱ) *(ռուս. официант(ка), լատ. officions)* - *գ., ած.* Հասարակական սննդի վայրերում հաճախորդներին սպասարկող՝ մատուցող(ուհի): *...Տասնըհէնգ՝ մանէթ ըն տամ, ա՛փիցանտկան էլ ա կօհ մընամ, ուրանք էլ* (ԼՂԲ, 332):

ԱՓԻՑԷՐ - *տե՛ս* ԱՓԻՑԷՐ:

ԱՓԼԱ՛ԹԻՒՆ *(արաբ. aflatyn, թրք. eflatun)* - *գ., ած.* Ճարտասան, հռետոր, հնարամիտ: *Դօ՛ռուց Սուրէնը ա՛փլա՛թուն ա, ա՛փլա՛թուն, հանց խօսից, լօխ մընացէն ըրմացած* (Ձ):

- Ա՛փլա՛թուն կարթիլ/կըտըրէլ - Ճառաբանել, ճառախոսել: *Դէ ա՛փլա՛թուն չի՞ կըրթըլան, վը՝ր ըսկանաս...* (ԼՂԲՔ, 271):

ԱՓԽԱՐ - *ած.* Շատ քնող, քնից չկըշտացող: *Էտ ափխար մարթը կօրծ չի անում, սաղ օրը էն ա քօն իլանծ* (Զ):

ԱՆՓՈՌՈՒՄ-ԱՆՓՈՌՈՒՄ - *տե՛ս* ՊԸՏԸՌՊԱՏԱՌ:

ԱՆՓՍԱՆ - *տե՛ս* ԱՓԷՐԻՍՏ:

ԱՆՓՍԱՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱՓԷՐԻՍՏՕԹՈՒՆ:

ԱՓՍՈՒՍ - *տե՛ս* ԱՓՍՕՋ:

ԱՓՍՕՋ/ԱՓՍՕՍ/ԱՓՍՈՒՍ *(պրս. afsos)* - *տե՛ս* ՄԸՂԱՓՈՒՆ: *...Էտ վէգիրը տը՛սնըմ ա էն ըխճըկանը, ասըմ.- Ափսօզ էս տօն, վէր հո՛ւրթը ծօռ ա* (ՀԺՀ, V, 570):

ԱՓՍՕՋԷԼ - *տե՛ս* ԸՓՍՕՋԱԼ:

ԱՓՍՕՍ - *տե՛ս* ԱՓՍՕՋ:

ԱՓՍՕՍԷԼ - *տե՛ս* ԸՓՍՕՋԱԼ:

ԱՓՏԱԲՈՒՋ - *տե՛ս* ԱԽՏԱԲՈՒՋ:

ԱՓՏԱՄԱՏ - *տե՛ս* ԱՓՏՕՄԱՏ:

ԱՓՏՕԲՈՒՋ - *տե՛ս* ԱԽՏԱԲՈՒՋ:

ԱՓՏԷԳ՝ *(ռուս. аптека, հուն. *apotheke-)* - *գ.* Դեղատուն: *Շէնըմը ափտէգ՝ ըն պէցալ* (Բ):

ԱՓՏՕՄԱՏ/ԱՓՏԱՄԱՏ *(ռուս. автомат, հուն. automatos-)* - *գ.* Ինքնաձիգ: *Յէր կացէնք՝, ափտօմատնէն քըցէցէնք՝ ճըտըրնէս, արխային ըսքըսէցէնք՝ թանգա՛ կարմունջավը անց կէնալը...* (ԼՂԲՔ, 263):

ԱՓՏՕՍՏԱՆՑԻ *(ռուս. автостанция)* - *տե՛ս* ԱՓՏՕՎԱՂԶԱԼ:

ԱՓՏՕՎԱԳԶԱԼ - *տե՛ս* ԱՓՏՕՎԱՂԶԱԼ:

ԱՓՏՕՎԱՂԶԱԼ/ԱՓՏՕՎԱԳԶԱԼ *(ռուս. автовокзал)* - *գ.* Ավտոկայարան: *Ափտօվաղզալը քըղաքան շատ ա հը՛ռէ* (Բ):

ԱՆՓՑԷՐ/ԱՆՓԻՑԷՐ *(ռուս. офицер, գերմ. offirieri, լատ. officiarius)* - *գ.* Հրամանատարական կազմին պատկանող զինվորական, սպա: *Մէր շէնան ա՛նփցէր շատ կա բընակումը* (Բ):

ԱՓՕՐՄԻՏ *(ռուս. оформить)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ափօրմիտ անէլ - Հրամանով՝ որոշումով վավերացնել՝ ձեւակերպել: *Տօնը ափօրմիտ ըրավ տը՛ղէն յըրա* (Բ):

ԱԲԱ - *գ.* 1. Հորաքույր, մեծ քույր: *Իմ աբա ութասուն տիրը՛կան ա* (Բ): 2. Տարեց կանանց տրվող հարգական անուն եւ կոչական բառ: *Սի՛րը՛վ աբէր, հունց ը՞ս* (Զ):

ԱԲԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Աբան անէլ - Ուրիշի փողերը յուրացնել: *Խա՛փում ըն, ըտըրա փուլերը աբան անում* (Զ):

ԱԲԷՐ - *տե՛ս* ԱԲԱ:

ԱԲԻՍՍ - *տե՛ս* ՊՈՒՌՈ:

ԱՆ՝Ա-ԲԱՆ՝Ա *(թրք. akə-bikə)* - *ած.* Ծանրակշիռ, լրջախոհ, տնարար: *Էտ ախճիգ՝ը հանց տօնը պահում ար, ասիս ա՛նք՝ա՛-բա՛նք՝ա՛ կընէգ՝ ա* (Զ):

ԱՆ՝ԱՆՉԻ - *տե՛ս* ԱՆ՝ԻՆՉԻ:

ԱՆ՝ԱՆՉՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱՆ՝ԻՆՉՕԹՈՒՆ:

ԱՆ՝ԻՆՉԻ/ԱՆ՝ԱՆՉԻ *(թրք. ekinci)* - *գ., ած.* Հողագործությամբ զբաղվող, հողագործ, երկրագործ, գյուղացի: *Ա՛նք՝ինչին ա աշխարքըս պահում* (Զ):

ԱՆ՝ԻՆՉՕԹՈՒՆ/ԱՆ՝ԱՆՉՕԹՈՒՆ - *գ.* Հողագործություն, երկրագործություն: *Ա՛նք՝ինչօթունը ամէնալ՝ավ փէշակընն ա* (Զ):

ԱՆ՝ՏՈՒ - *տե՛ս* ԱՎԱԴ:

ԱՔՎԷ - *գ.* Անասունների ետեւի երկու ոտքերը: *Մըհակը հանց յըրա յա անում, էծին աքվէն կուտրատում ա* (Զ):

ԱՔՏԸՐԻՑԱ *(ռուս. актриса)* - *գ.* Դերասանուհի: *Ընդէղան էլ մին քանի աքտըրիցէք տո՛ւս ըն կ՝ամ՝ ծըվվըմ, ծըկըլթըմ, մընընըմ փարդին քամակը* (ՋՏ, Ա, 154):

Բ

ԲԱ - *տե՛ս* ՊԱ:

ԲԱ՝ - 1. *ձ.* Ոչխարի՝ գառան մայելու՝ բառաչելու ձայն: *Վը՛ղչխարը կ՝առանը կուրցընէս ա, ըսկըսէս բըղբըղալը.- Բա՛՛՛... (Զ):* 2. *գ. մնկ.* Ոչխար, գառ: *Բա՛ն կօրա՛ալ ա* (Բ):

- Բա՛ անէլ - Մայել, բառաչել (ոչխարը, գառը): *Կ՝առնէրը վէր բա՛ ընէլավ կ՝ամ ըն, Սօնա աքէրը թէվ չի անում, թա թըռչի* (Զ):

ԲԱԲ *(թրք. bab)* - *ած.* Դիրքով՝ արտաքին տեսքով՝ շնորհքով իրար հարմար՝ համապատասխան: *Հիշքան հա՛՛՛ը, մարը դաչանք ըն անըմ, թա՛ փըսակվի, փըսակվըմ չի, ասըմ ա.- Բաբ ախճիգ՝ չի կա* (ՀԺՀ, V, 572):

- Բաբ անէլ - Իրար հետ համեմատել: *Տու մը՛զ ընդըրանց նըհը՛տ բաբ մէ՛ր անէլ* (Զ):

- Բաբը բաբէն թուշ ինիլ/փըռնէլ/քըթէնալ - Իրար համապատասխանել: *Վէր բաբը բաբէն չի թուշ իլանվ, օրը ախուվիշավ կընցընէ* (ԱԲԲ, 88):

ԲԱԲԱ[1] *(պրս. bābā (հայր, մեծ հայր)* - *գ.* Տարեց տղամարդկանց տրվող հարգական անուն եւ կոչական բառ: *Դէ՛րվիշ բաբա, ըշտը՛ղ ը՞ս ք՝ունում* (Զ):

ԲԱԲԱ[2] *(թրք. baba)* - *տե՛ս* ԲԱԲԱՎԱՐԹ:

ԲԱ՝ԲԱ՝Գ՝ *(գրբ. բիբ)* - *գ.* Աչքի ծիածանաթաղանթի միջի անցքը, որով լույսը թափանցում է աչքի ներսը, բիբ: *Կ՝օղը ջուբան բիզը տո՛ւս ա օնում, կօխում տընատը՛ռնը բա՛՛բա՛՛գ՝ը, քուռըցընում* (Զ):

ԲԱԲԱԴՈՒԾԻ *(պրս. dūs (ուս)* - *գ.* Մանկական խաղ, երբ մեկը դեմքով դեպի ներքեւ կկզում է, ուրիշները վրայից ցատկում են՝ վրան գդակ կամ այլ իր դնելով: Ով չի կարողանում ցատկել կամ որեւէ իր դնել, պարտվում է եւ զբաղեցնում նրա տեղը: Խաղի մեկ այլ տեսակն է, երբ ցատկողները հաջորդաբար կկզում եւ ցատկում են իրար վրայով: *Էտ խօխէնք՝ը սաղ օրը բաբադուշի յընն խաղ անում* (Բ):

ԲԱԲԱԹ *(արաբ. bābat)* - ած. 1. Լավի եւ վատի միջին տեղը բռնող՝ ներկայացնող: *Արտէրը ըստարէ բաբաթ ա* (Բ): 2. Կարգին, բավականաչափ, լավ: *Առռէ բաբաթ կօրծ ըրէն ուստէք՝ը* (Զ):

- Բաբաթ անէլ - *տե՛ս* ԲԸԲԸԹՑ(Ը)ՆԷԼ:

ԲԱԲԱԿՈՒՌԻ - *տե՛ս* ԲԱԲԱՋՈՒՐԻ:

ԲԱԲԱՂՈՒԼԻ - *տե՛ս* ԲՈՒԲՈՒՂՈՒԼԻ:

ԲԱԲԱՅ/ԲԱՅ-ԲԱՅ - *գ.* 1. *մնկ.* Քնելը, քուն: *Խօխան վէր ասից բաբայ, բիդի քունավ անիս* (Բ): 2. Օրոր՝ մանկանը քնեցնելու օրորոցային երգ: *Մարը բաբայ ա ասում, ամիա խուխէն քօնը տանում չի* (Զ):

- Բաբայ անէլ - *մնկ.* Քնել: *Խօխան բաբայ ա ըրալ* (Բ):

ԲԱԲԱՅՈՒՐԴԻ - *տե՛ս* ՔԸՆԴՔԱՐ:

ԲԱԲԱՋՈՒՐԻ/ԲԱԲԱԿՈՒՌԻ - *գ.* Կիսախարխուլ տնակ՝ հյուղակ: *Էտ հինչ տօն ա՞, բաբաջուրի յա* (Բ):

- Բաբաջուրի անէլ - Ոչ կարգին՝ անորակ կառուցել՝ սարքել: *Վէր տօնը էրվից, էլ կարից վէչ սօրո՛ւն շինի, բաբաջուրի ըրավ, նի մըտավ մաչը* (Զ):

ԲԱԲԱՍԻԼ *(թրք. babasil)* - *գ.* Ուղիղ աղիքի ստորին հատվածի հանգուցավոր լայնացում՝ թութք: *Խը՛ղճը բաբասիլ օնէ, տանջվում ա* (Բ):

ԲԱԲԱՎԱՐԹ - *գ.* Դեղին ծաղիկներով շրեշանման բույս, որ աճում է հին գերեզմանոցներում: *Ք՝օհնա հինգ՝իստին բաբավարթէրը պէցվալ ա* (Բ):

ԲԱԲՈՒԼ - *գ.* Մանկական կոշիկ: *Խօ-*

խան ընգավ ցը՛խը, բաբուկնէն յըխտոտից (Բ):

ԲԱԲՈՒՇԿԱ - *տե՛ս* ԼԱԼԱ:

ԲԱԲՈՒՌ[1] *(պրս. babr (վագր), թրք. böbür (ընձառյուծ)* -1. *տե՛ս* ԱՍԼԱՆ: *Քը՛նանմ ա, տէսնըմ ա ճօրէ չի կա. մին բա՛բուռ քըռասուն ճօրէն կէրած, ընդէղ վը՛ենը* (ՀԺՀ, V, 493): 2. *փխբ.* Փարթամ, մարմնեղ, գիրուկ: *Տըղա, հինչ տըղա՞, հանց ա մին բա՛բուռ ինի* (Բ):

ԲԱԲՈՒՌ[2] - *ած.* Շատ սպիտակ՝ ճերմակ: *Մին վը՛ենէրը բա՛բուռ ախճիգ՝ ա կ՝ամ, թա.- Մ՛ տըղա, փախէր, քանէ օշափը քօն իլա՛ծ ա* (Ձ):

ԲԱԲՕ *(ռուս. баба)* - *գ.* 1. *տե՛ս* ՏԱՏ: 2. Տարեց կանանց տրվող հարգական անուն եւ կոչական բառ: *Մարուսա բաբօն լ՝ավ կընէգ՝ ա* (Բ):

ԲԱԳԸԼԱՇԿԱ/ԲԱԳԼԱՇԿԱ *(ռուս. баклажка)* - *գ.* Մետաղյա տափաշիշ: *Սալդաթը բագըլաշկան տա՛ուս ա օնում, տամ էտ մարթին, խըմում ա* (Ձ):

ԲԱԳԻՐՕՎ-ԿԻՐՕՎ - *գ.* Երգեցիկ թռչնատեսակ, որ իբր կանչում է՝ բագիրով-կիրով, բագիրով-կիրով: *Կարունքը յը՛կավ, բագիրօվ-կիրօվը յը՛րք ա ասում* (Բ):

ԲԱԳԼԱՇԿԱ - *տե՛ս* ԲԱԳԸԼԱՇԿԱ:

ԲԱ՛Գ/ԲԷԳ *(գրբ. բէկ)* - *գ.* 1. Մանր ֆեոդալ-կալվածատերերի եւ պաշտոնյաների տիտղոսը Մերձավոր Արեւելքում, կալվածատեր, բեկ: *Բա՛գը տը՛սնըմ ա, վը՛էր առանց էտ ծառայի կարիլ չի, օգըմ ա էլիա ըտրրան պահի...* (ԼՂԲ, 375): 2. *փխբ.* Իշխանավոր: *Փըլանք՝անսին տըղան բա՛գ՝ ա տը՛ռալ, տէ՛ն կացէք՝* (Բ):

ԲԱ՛ԳԱՄ - *տե՛ս* ԲԱ՛ԼՔ՝ԱՄ:

ԲԱ՛ԳՋԱ՛Ղ/ԲԷԳՋԱ՛Ղ *(թրք. beyzade)* - *գ.* Բեկի որդի: *Ընդըրանք լօխ քը՛գ նըման ջահիլ տըղէրք ըն իլա՛լ, լօխ բա՛գ՝զա՛ղ, լօխ թաքավէրի տըղէրք* (ՀԺՀ, V, 147):

ԲԱ՛Գ(Ը)ՌԱՍՏ/ԲԱ՛ԳՌԱՍՏ - *ած.* Մեծամիտ, ուրիշներին արհամարհող: *Բա՛գ՝ըռաստ կընէգ՝ ա, վէչ մինին նըհը՛տ հըրըվընօթուն չի անում* (Ձ):

ԲԱԴ *(գրբ. բադ, պրս. bat)* - *գ.* Բադազգիների ընտանիքին պատկանող լայնակտուց ու կարճավիզ ջրային թռչուն: *Մին օր էլ էրկու բադ ա վէր քըցո՛ւմ* (Ձ):

ԲԱԴԱ *(թրք. fəda (զոհ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Բադա անէլ/տալ - Ջոհաբերել, կորցնել: *Իտի թաքավէրին տըղէրքը ք՝ընըմ ըն էտ ըխճըկանը դա՛ռդանն կըլիխընին բադա տամ* (ՀԺՀ, 37):

- Բադա ք՝ինիլ - Ջոհաբերվել, կորչել: *Ջա՛հիլ տըղէրքը բադա ք՝ը՛ցէն էտ վը՛սկուն դա՛ռդանն* (Ձ):

ԲԱԴԱԼԸՂ - *տե՛ս* ԴԱԲԱԼԸՂ:

ԲԱԴԱՄ *(թրք. badem)* - *գ.* 1. Նուշ: *Պիրում ա մին խըլլա՛ն չամէնչ, բադամ, տըկօղէն պըտատըմ, տամ էտ տըղէն* (Ձ): 2. Նշենի: *Բադամը ամմէն տը՛ղ չի ա՛ռշա՛ն կ՝ամ* (Բ):

ԲԱԴԱՄԲՈՒՐԻ *(թրք. badambura)* - *գ.* Նուշով թխվածք: *Հարուստը խուրջինան մին բադամբուրի յա տա՛ուս օնում, ք՝ա՛սիբընն էլ՝մին կուտուր չօ՛ր հաց...* (Ձ):

ԲԱԴԱՆ - *տե՛ս* ԲԱ՛ԴԱ՛Ն:

ԲԱ՛ԴԱ՛Ն/ԲԱԴԱՆ *(արաբ., պրս. bädän, թրք. beden)* - *գ.* 1. Մարմին, իրան: *Էտ դէվին կըլօխը բա՛դանան մը՛ծ ա ինի՛ւմ* (Ձ): 2. Գոտկատեղ, մեջք: *Մին ըրծաթէ ք՝ամար ա տա՛ուս օնում, էտ ըխճկանը բա՛դանէն կապում* (Ձ):

- Բա՛դանը կօտըրէլ - *տե՛ս* Մաշկէն հոռը կօտըրէլ:

- Բա՛դանը պէրակ - Նրբակազմ, նրբիրան: *Ք՝ինամ ա կօխկէ շէնան մին բա՛դանը պէրակ, դաշանգ՝ ախճիգ՝ օգ՝ում* (Ձ):

ԲԱԴԱՆԻ - *տե՛ս* ԲԷՂԱ՛ՆԱ՛:

ԲԱԴԱՍԽԱՆ - *տե՛ս* ՊԱԴԱՍԽԱՆ:

ԲԱԴԱՍԽԱՆԱՏՈՒ - *տե՛ս* ՊԱԴԱՍԽԱՆԱՏՈՒ:

ԲԱԴԱՍԽԱՆԷԼ - *տե՛ս* ՊԱԴԱՍԽԱՆԷԼ:

ԲԱԴԱՐԱՔ՝ - *տե՛ս* ԲԱԴԱՐԱ՛Ք՝:

ԲԱԴԱՐԱ՛Ք՝/ԲԱԴԱՐԱՔ՝/ՊԱԴԱՐԱ՛Ք՝ *(գրբ. պատարագ (զոհ, սուրբ պատարագ)* - *գ.* Ննջեցյալի հիշատակին թաղումից անմիջապես հետո հարազատների կողմից տրվող ծիսային ճաշկերույթ՝ հոգեհաց: *Մէլիք՝ին հօրը բադարաք՝ավը Պուղին նի յա մընէս, թա.- Մէլիք՝ըն ապրած կէնա, յը՛կալ ըմ ցօրէնըս տանիմ* (Ձ):

- Բադարա՛ք՝ անէլ/տալ - Ննջեցյալի հիշատակին հոգեհաց կազմակերպել: *Էս դա՛նըմ թաքավէրը մին լա՛վ բադարաք՝ ա անըմ, ըղվէսէն թաղըմ* (ՀԺՀ, V, 628):

- Բադարա՛ք՝ը օտէլ - Մեկի թաղման հոգեհացին ներկա լինել: *Ջա՛հիլը ասմա.- Մ՛ պառավ, ըստի վէր ք՝ինի, տու իմ բադարաք՝ըս էլ ըս ուտըլական* (Ձ):

- Բադարա՛ք՝ու ջըհա՛ծ օգ՝ՕՂ - Ուրախությամբ լցված՝ համակված անձ: *Բադարա՛ք՝ու ջըհա՛ծ օգ՝ՕՂու նըման լօք-լօք ա անում* (Ձ):

ԲԱԴԱՐԿԱ - *տե՛ս* ՊԱԴԱՐԿԱ:

ԲԱԴԸՄՋԱՆ/ԲԱԴԸՐՋԱՆ/ԲԱԴՈՒՄՃԱՆ/ՊԱՏԸՄՋԱՆ/ՊԱՏԸՐՋԱՆ/ՊԱՏՈՒՄՃԱՆ *(գրբ. պատինճան, արաբ. bädinjän, պրս. bademjan, թրք. patlican)* - *գ.* 1. Մորմազգիների ընտանիքին պատկանող բանջարանոցային բույս, որ տալիս է մուգ մանուշակագույն վարունգաձեւ բազմասերմ պտուղներ: *Կարկուտ յը՛կավ, բադըմջանէն տիրըվնէն կուտըրատից* (Բ): 2. Այդ բույսի պտուղը՝ սմբուկ: *Էնքան բադըմջան ա քաղալ, տը՛ղ չօնէ, թա ածե* (Բ):

ԲԱԴ(Ը)ՐԱՍՏ - *տե՛ս* ՊԱԴԸՐԱՍՏ:

ԲԱԴԸՐՋԱՆ - *տե՛ս* ԲԱԴԸՄՋԱՆ:

ԲԱԴԻ - *գ.* 1. Անձնանուն: 2. *փխբ.* Հիմար, միամիտ մարդ: *Էտ բադին ա՞ մընացալ, վէր Հէրիք՝նազէն օգ՝ի* (Ձ):

ԲԱԴՈՒՄՃԱՆ - *տե՛ս* ԲԱԴԸՄՋԱՆ:

ԲԱ՛Ջ - *գ.* Բամբակե կտորի տեսակ: *Խըյարը տանում ա ծախում, մին թօփ բա՛ջ ինք՝ օնում* (Բ):

ԲԱՋԱՋ *(արաբ. bazzaz)* - *գ.* Կտորեղենի վաճառական: *Բազազը խափի՛ւմ ա, ըտըրա փուլէրը յօր օնում* (Ձ):

ԲԱՋԱՋԽԱՆԱ - *գ.* Կտորեղենի խանութների շարքը եւ նրանց գտնված վայրը: *Նի յա մընանում բազազխանան, տը՛սնում հա՛մա՛ն մարթը ըտը՛ղ* (Ձ):

ԲԱՋԱՋՕԹՈՒՆ - *գ.* Կտորեղենի առեւտրով զբաղվելը, բազազ լինելը: *Խօսնդի՛ց Մանվէլը բազազօթունը ի՛ւրա՛ն դօրփօրը անա յա սըվը՛ռալ* (Ձ):

ԲԱ՛ՋԱ՛ՄԻԾ - *տե՛ս* ԲԱ՛ՋՋԱ՛ՄԻԾ:

ԲԱՋԱՐ *(պրս. bazar, թրք. pazar)* - *գ.* 1. Շուկա: *Վէր տանում ա բազար, ըտէղ էտ թաջիրը պըտահում ա, օգում ա, թա ինք օնէ* (ՀԱԲ, 15, 24): 2. *տե՛ս* ԱՌՈՒՏՕՐ: 3. Սակարկություն: *Թա՛ջիրը ասմա.- Բազարըս վէրըն ա՞, կ՝ինը էսքան ա, ինք՝ ըս օնում, ինք՝ կալ՝* (Ձ): 4. Աղմուկ-աղաղակ, ժխոր, խառնաշփոթություն: *Ժողովէն վախտը նախագան ծը՛էրքը ըստօլէն ա կ՝ամ, թա.- Էս հինչ բազար ա՞, սուս ըրէք՝* (Ձ):

- Բազար անէլ - 1. *տե՛ս* Առուտօր անէլ: 2. *տե՛ս* Բազար շինիլ:

- Բազար շինիլ/պէնալ - Աղմուկ-աղաղակ բարձրացնել, ժխոր ստեղծել: *Ծինըրնէտ կըտըրը՛ցէք՝, հինչ ը՞ք բազար շինա՛լ* (Ձ):

- Բազար տա՛ուս պիրիլ - 1. Վաճառքի հանել: *Մին օր էլ յըղէ կավըն ա բազար տա՛ուս պիրում* (Ձ): 2. *տե՛ս* Մէյդան տա՛ուս պիրիլ:

- Բըզարու կ՝ին - Շուկայական՝ վաճառքի գին, էժան գին: *Իլա՛ծ-չիլա՛ծը բըզարու կ՝ինավ ծախից, քօչից* (Բ):

ԲԱՋԱՐԼԸՂ *(պրս. bazarlək, թրք. pazarlik (սակարկություն)* - *գ.* Շուկայական գնումներ: *Բազարլըղը տանում ա քըվօրը տօնը* (Բ):

- Բազարլըղ անէլ - Շուկայից գնումներ կատարել: *Ք՝ունի՛ւմ ա մին խըլլա՛ն բազարլըղ անըմ, տանում մը՛ռած հընգէրէն տօնը* (Բ):

ԲԱ՛ՋՋԱ՛Թ *(թրք. bəzzat)* - *տե՛ս* ԺՈ՛ՒԼԻԳ՝[1]: *Վը՛էր նի յա մընանըմ շը՛էնին բազարը, մին բա՛ջջա՛թ մարթի յա պըտահըմ* (ԼՂԲ, 361):

ԲԱ՛ՋՋԱ՛ԹՕԹՈՒՆ - *տե՛ս* ԺՈ՛ՒԼԻԳ՝ՕԹՈՒՆ:

ԲԱՋՋԱՄԻՇ/ԲԱՋԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Բաջզամիշ անել - 1. Ջուգել, զարդարել: *Ոչը բաջզամիշ ըրէն, տարէն հըրթնըցուվէն տօնը* (Բ): 2. *տե՛ս* Թարիփ ընել: 3. *տե՛ս* Ըրամակ քըցիլ:

- Բաջզամիշ ինիլ - 1. Ջուգվել, զարդարվել: *Էտ կընէգ՝ը բաջզամիշ ա ինում, տանան տուս կ՝ամ* (Ձ): 2. *տե՛ս* Ըրամակ ըղնէլ:

ԲԱՋԸՐԳԱՆ *(պրս. bāzargān)* - *տե՛ս* ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ:

ԲԱՋԻ/ԱԲԱՍԻ/ԸԲԱՍԻ - *գ.* 1. Քսան կոպեկ: *Էտ տըղան կօրծը պըրծընում ա, աղան էտքանը մին բազի յա կ՝ընհատում* (Ձ): 2. Տե՛ս ԲԸՋԱՆՈՒՑ:

- Բազին շահի տը՛ռնալ - Գաղտնիքը բացահայտվել: *Կ՝ուղութունանը յը՛տը անց ա կէնում վէց ամէս, բազին շահի յա տը՛ռնում* (Ձ):

ԲԱՋԻ *(արաբ. baz, պրս. bāzi (մի քանի, մի քանիսը), թրք. bazi)* - *ած.* Որոշ կարգի՝ տեսակի, որոշ: *Բաջի մարթ էլ բաշիր չի անում, թա փիրփէտ քաղէ, ի-փի, օտէ* (Ձ):

ԲԱՋԻԲԸՐՈՒԴ *(թրք. bazburud)* - *տե՛ս* ԸՐԱՆԳԸՌՈՒԾ(Տ):

ԲԱՋԻՎԱԽՏ - *տե՛ս* ԲԱՋՎԱԽՏ:

ԲԱՋՎԱԽՏ/ԲԱՋԻՎԱԽՏ - *մ.* Երբեմն, մերթընդմերթ, մեկ-մեկ: *Բաջիվախտ էլ ընդը՛ղէրքան տըկօղին ար քաղըմ, պ՝ուրում խօխա-ըրախի պըժէնըմ...* (ԼՂԲ, 297):

ԲԱՋՈՒ *(թրք. bazi)* - *տե՛ս* ԲԱՐՈՒ:

ԲԱԹՄԱ(Ն) *(թրք. batman)* - *գ.* Ծանրության հին չափ: *Մին բաթմա յը՛ղ ա տամ, կօրծը դ՝ուզըցընում* (Ձ):

- Բըթմը-բաթմա խօսել - Մեծ-մեծ խոսել, պոռոտախոսել: *Ծը՛ռուքը պէն չի կ՝ամ, ամմա բըթմը-բաթմա խօսում ա* (Բ):

ԲԱԹՄԻՇ *(թրք. batmak (խորտակվել, ընկղմվել, կործանվել)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Բաթմիշ անել - Կորցնել, անհետացնել, վերացնել: *Էտ խըսյաթը վէրչանք ասում ա բաթմիշ անէ, ամմա կարում չի* (ՀԺՀ, V, 403):

- Բաթմիշ ինիլ/տը՛ռնալ - Կորչել, անհետանալ, վերանալ: *...Էտ տըղան մին էլ ա տը՛սնում ախճիգը աշկին առաչան կօրավ, բաթմիշ իլնվ* (ՀԺՀ, V, 150):

ԲԱԹՏԷՂ - *տե՛ս* ԲԱԹՏԸ՛Ղ:

ԲԱԹՏԸ՛Ղ/ԲԱԹՏԸՂ/ԲԱԹՏԷՂ - *գ., ած.* Սաստիկ ցեխ, ցեխոտ (տեղ): *Ք՝ինամ ա ընգընում էտ բաթտը՛ղը, շօրէրը սաղ ցը՛խուտ անում* (Ձ):

ԲԱԹՏԸՂ - *տե՛ս* ԲԱԹՏԸ՛Ղ:

ԲԱԼԱ[1] *(թրք. bala)* - *գ.* 1. Ձավակ, որդյակ: *Իսակ դային ասմա.- Բալաս վէր սաղ-սըլմաթ տօն կ՝ա, մին ա՛չա՛ռ ըմ մուրթըլական, ք՝ը՛ֆ անիմ* (Ձ): 2. Ձավակներին՝ երեխաներին դիմելու կոչական բառ: *Բա՛լա, էտ գ՝ուլանսը խակ ա, խըրէգ՝ կէր* (Բ):

- Բալան կըծիմ/օտիմ - Գգվանքի՝ փաղաքշանքի արտահայտություն՝ ուղղված զավակներին՝ երեխաներին: *Բալան կըծիմ, ք՝ինի ըխպիրան ճուր պէր, ամին խըմէ* (Ձ):

- Բալատ տօն կ՝ա - *տե՛ս* Քա մօր բալան տօն կ՝ա (ՔՈՒ-ի տակ):

ԲԱԼԱ[2] *(պրս. balā, թրք. belā)* - *գ.* Փորձանք, աղետ, դժբախտություն: *Էտ բալան, վէր ըտըրանց ա պըտահալ, լօխճին էլ պըտըհլական ա, սա՛յաղ կացէք՝* (Ձ):

ԲԱԼԱ-ԲԱԼԱ - *տե՛ս* ԲԸԼԸ-ԲԱԼԱ:

ԲԱԼԱԲԱՆ/ԲԱՐԱԲԱՆ/ԲԸԼԸԲԱՆ *(թրք. balaban, (խոշոր, մեծ), ռուս. барабан)* - *տե՛ս* ՏԷՓ (1):

ԲԱԼԱՄ *(թրք. bala (երեխա)* - *գ.* 1. Արական սեռի անձ: *Էտ բալամը լօխճին անա պարթկ ա անում, թա հունց ա տըլական, Աստուծ ա գ՝ուդ՝ում* (Ձ): 2. Որեւէ մեկին դիմելու կոչական բառ: *Թաքավէրը օղտապանէն ըսես ա.- Բա՛լամ, ք՝ինի՛ օղտըտ քըթի՛ր, սահանք կ՝օղ չը՛ն* (ՀԺՀ, 317):

ԲԱԼԱՆՄ - *տե՛ս* ԲԱԼՔ՝ԱՆՄ:

ԲԱԼԱՆԿ - *տե՛ս* ԲԻԼԱՆԿ:

ԲԱԼԲԱՔ *(ռուս. балбес)* - *գ.* 1. Մեծ ու դանդաղաշարժ ոչխար: *Չօբանը մին բալբաք ա պիրում, թաքավէրին տըղէն վը՛էնանը տակէն մօրթում* (Ձ): 2. *փխբ.* Ծույլ, դանդաղաշարժ, ձեռքից բան չեկող մարդ: *Էտ բալբաքը սաղ օրը տանը նըստած, կընգանը աշխադանքըն ա օտում* (Բ):

ԲԱԼԳԱՐԸՍԿԻ *(ռուս. болгарский)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Բալգարըսկի տանխտը՛ղ - Պղպեղի պատիճավոր թարմ, քաղցր պտուղը: *Բալգարըսկի տանխտը՛ղը Ղարաբաղ լ՝ավ ա տը՛ռնում* (Բ):

ԲԱԼԴՈՒՐ *(թրք. baldir)* - *գ.* Ազդր, զիստ: *Էտ վէր ծէրքը տինում ա կընգանը բըլդուրէն, թա սըղալի, քաչալը նի յա մընում* (Ձ):

- Բալդուրը դըռի - Աշխատասեր, արագաշարժ: *Բալդուրը դըռի կընէգ՝ ա, քըշէր-ցիրէկ կօրծ ա անում* (Բ):

ԲԱԼԸՂ[1] *(թրք. balik (ձուկ)* - *գ.* Ապխտած ձուկ: *Ամմէն ծ՝ուկուն բալըղ չի տը՛ռնալ* (Ձ):

ԲԱԼԸՂ[2]/ԲԱԼՈՒՂ - *գ.* Համետի երկարությամբ ներսի երկու կողմից կարվող գլանաձեւ թաղիք, որ ծառայում է գրաստի ողնաշարը բեռան ծանրությունից, տրորվելուց պահպանելուն: *Փըլանէն բալըղը վէր ինի վէչ, էշին մաշկը յարա կըտը՛ռնա* (Բ):

ԲԱԼԻ - *տե՛ս* ԲԱԼՔ՝ԱՆՄ:

ԲԱ՛ԼԻ - *տե՛ս* ԲԱԼՔ՝ԱՆՄ:

ԲԱԼԻՆՑԱ/ԲԱԼՆԻՑԱ *(ռուս. больница)* - *գ.* Հիվանդանոց: *Ըստէփանակ՝ը՛ղտ թաջզա բալինցա յըն շինում* (Բ):

- Բալինցա ըղնէլ - Հիվանդանալ, հիվանդանոցում պառկել: *Մին օր ըտըրա խօխան ազառմիշ ա լա՛լ, ընգալ բալինցա* (ԱԱ, 36):

ԲԱԼԻԾՆԻ/ԲԱԼՆԻԾՆԻ *(ռուս. больничный)* - *գ.* Քաղաքացիների ժամանակավոր անաշխատության փաստաթուղթ, որ տրվում է բժշկի կամ բժշկական հիմնարկի կողմից: *Բալիշնի յա տանում կուրծատը՛ղը, վէր էրկու շէբաթ հիվանդ ա իլնվ* (Ձ):

ԲԱԼԿՈՆ *(ռուս. балкон, ֆր. balcon)* - *գ.* Շենքին կից սարքված ամառային հարթակ՝ սյուների վրա գցած ծածկով, պատշգամբ: *Բ՝ուրդանը բըլկօնումը խօխան խաղ ընէլիս, վը՛ր էն մարթուցը տը՛սնում ա, վազ ա տամ, մօրընն ասում* (ՆԼՂԺԲ, 49):

ԲԱԼՆԻԾՆԻ - *տե՛ս* ԲԱԼԻԾՆԻ:

ԲԱԼՆԻՑԱ - *տե՛ս* ԲԱԼԻՆՑԱ:

ԲԱԼՇԷՎԻԿ *(ռուս. большевик)* - *գ.* Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հեղափոխական մեծամասնության անդամ: *Մին օր ալ բալշէվիկնէն նի տը՛ռէն շէնը* (ՀԲ, 335):

ԲԱԼՈՒՂ - *տե՛ս* ԲԱԼԸՂ[2]:

ԲԱ՛ԼՔ՝ԱՆՄ/ԲԱ՛ԼԱՆՄ/ԲԱ՛ԼՔ՝ԱՆՍ/ԲԱ՛ԼԻ/ԲԱ՛ԼԻ/ԲԱ՛ԼՔ՝Ի/ԲԱ՛ԳԱՆՄ *(պրս. bälke, թրք. belki)* - *վ.* 1. Թերեւս, հավանական է, միգուցե: *Էտ կընէգ՝ը յէր ա կընաս, թա.- Բա՛լա, յէք ք՝ինինք՝ տօն, բա՛լի մին թանրանվ ապրինք՝* (ՀԺՀ, V, 299): 2. Չլինի՞ թե, այնպես չլինի՞ որ: *Թաքավէրը քընէնք՝ ա անըմ, թա բա՛լք՝ա՛նս ըխճըկօրցանը մինը կապ օնի ընդըրա նըհէտ* (ՀԺՀ, V, 173):

ԲԱ՛ԼՔ՝ԱՆՍ - *տե՛ս* ԲԱ՛ԼՔ՝ԱՆՄ:

ԲԱ՛ԼՔ՝Ի - *տե՛ս* ԲԱ՛ԼՔ՝ԱՆՄ:

ԲԱԼՕՆ *(ռուս. баллон, ֆր. ballon, իտ. pallone)* - *գ.* Ապակյա, մետաղյա կամ ռետինե նեղբերան անոթ՝ հեղուկների կամ գազի համար: *Լօք տալիս վէննը սըլկըհում ա, բալօնը վը՛ր ընգ՝ում, կօտրում...* (ՆԼՂԺԲ, 118):

ԲԱԽԱՋԻ *(թրք. bağici (կախարդ, հմայող խաբեբա)* - *տե՛ս* ԲԸԽՏԸՅԷԾԻ:

ԲԱԽԿԱԼ *(արաբ., թրք. bakkal, պրս. bāğğal)* - *գ.* Նպարավաճառ: *Բակխալը ընտրան խափ՝ում ա, պըտիզանա՛ չամէնչը յըրան ծախում* (Ձ): 2. *տե՛ս* ՉԱ՛ՐՉԻ:

- Բըխկալու դ՝ուք՝ան - Աղմկոտ տեղ: *Էս բըխկալէն դ՝ուք՝անումը հունց ը՞ս կօրծ անում* (Ձ):

ԲԱԽՃԱ/ԲԱԽՉԱ/ԲԱՂՃԱ/ԲԱՂՉԱ *(պրս. bagče)* - *գ.* Պարտեզ, այգի, ծաղկանոց: *Թաքավէրըն էտ կօրէգըն ուրան ծէռքավը տանում ա բըխճումը մին լանվ տըէղ տընգում* (ՆԼՂԺԲ, 42):

- Բախճան քաղէլ - Դատարկաձեռն մնալ: *Բախճան քաղած մարթ ա* (Բ):

ԲԱԽԾ/ՊԱԽԾ *(պրս. baxš (բաժին, մաս)* - *տե՛ս* ԿԻՆ:

ԲԱԽՇԱՅԻԾ/ԲԱԽՇԷՅԻԾ/ՊԱԽՇԱՅԻԾ/ՊԱԽՇԷՅԻԾ *(գրբ. բաշխիշ, պրս. baxšiš, թրք. bahšayiš)* - *գ.* Առատաձեռն նվեր, պարգեւ: *Թաքավէրը չուբանէն տըղէն մին բախշայիշ ա տամ, հըղէ տինում* (Ձ):

- Բախշայիշ անէլ - Առատորեն նվիրել, պարգեւել, ձրի բաժանել: *...Շատ ուրխացի, վէր իմ բախշէյիշ ըրած զուռնատըմբըլաս ըռէխըդ ըրած մէյդան ըս տանս յէկալ ու օգում ըս փըչիս...* (ՋՏ, Բ, 221):

ԲԱԽՇԷԼ - *տե՛ս* ԲԱԽՇԻԼ:

ԲԱԽՇԷՅԻԾ - *տե՛ս* ԲԱԽՇԱՅԻԾ:

ԲԱԽՇԻԼ/ԲԱԽՇԷԼ/ՊԱԽՇԻԼ/ՊԱԽՇԷԼ *(գրբ. բաշխեմ)* - *նբ.* 1. Նվիրել, ընծայել, պարգեւել: *Մին օր շահէն լ՛ավ ծի ըն բախշում* (ՀԱԲ, 15, 80): 2. Ներել, մոռանալ (մեղքը, հանցանքը): *Դէ՛, իմ աշկի լանս Ղալըցէ՛ք, անվիլ-պակասը կըբախշիք* (ՋՏ, Ա, 102):

ԲԱԽՉԱ - *տե՛ս* ԲԱԽՃԱ:

ԲԱԽՏ[1]/ԲԱԽՏ[1] *(պրս. baxt, թրք. baht)* - *գ.* 1. Կյանքի հանգամանքներով պայմանավորված վիճակ: *Մստուծ, էս հինչ բա՞խտու հըսցըրէլ մեզ* (Ձ): 2. Ճակատագիր: *Մարթին բախտը Աստուծ ա վորոշում* (Ձ): 3. Հաջողություն, բարեպատեհ հանգամանք, դիպված: *Շէն ա, լի՞, հունցու Ղարաբաղա մընացած շէնէրը՝ բախտը՝ պակաս, դանշմանը՝ շատ...* (ԱԱ, 32):

- Բախտան փախչիլ - Հաջողությունից՝ բարեպատեհ հանգամանքից հրաժարվել: *Վէզիրը ասմա.- Մ տըղա, բախտատ փախչը մէ՛լ, յը՛ք ըխճըկանըս օգ՛ի, լ՛ավ ա՛պրէ* (Ձ):

- Բախտէն աշկը փըսօր քըցիլ/քօռ անէլ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտէն առաշկը քար քըցիլ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտէն թօղնէլ - *տե՛ս* Ըստուծէն ումէդին թօղնէլ (ԱՍՏՈՒԾ-ի տակ):

- Բախտէն կըլխէն քար քըցիլ - Իր կամ մեկ ուրիշի հաջողությունը խափանել, հաջողությունից զրկել, գործերի ձախողման պատճառ դառնալ, անբախտացնել: *Մարը ըխճըկանը բախտէն կըլխէն քար քըցանվ, թօղից վէչ՝ էտ տըղէն նըհէտ փըսակվէ* (Բ):

- Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ - Նախկին բախտավորությունը՝ հաջողությունը հետզհետե կորցնել, դժբախտությունները՝ անհաջողություններն իրար հաջորդել: *Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ ա տուվալ, էլ կարում չի փուլ ըշխադէ* (Ձ):

- Բախտէն յէշիլ - Հմայությամբ՝ բախտագուշակությամբ մեկի ապագան գուշակել: *Բախաջին թաքավէրին տըղէն բախտէն յէշալ ա, լանվ չի տանս յէկալ, ասալ ա՝ քու տըղատ օխծ կընծըլական ա* (ՀԲ, 336):

- Բախտէն նըստէլ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտէն չարխը ծըռվէլ/շօռ կ՛անվ/տալ - *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ:

- Բախտէն տարը տը՛ռնալ - Կյանքը՝ ապագան՝ իրավունքը տնօրինել: *Հանը ասմա.- էլ ընցալ ա, բախտէտ տարը բիդի տը՛ռնաս, յօլլա ք՛ինիս* (Ձ):

- Բախտէն տօռնը կապվէլ - *տե՛ս* Բախտը կապվէլ:

- Բախտէն տօռնը պէնվալ - *տե՛ս* Բախտը պէնվալ:

- Բախտէն քարավ տալ - Ճակատագրի տված հնարավորությունները չօգտագործել: *Բախտէն քարավ ա տամ, կարում չի ապըրէ* (Ձ):

- Բախտէն քար քըցիլ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտէն քացէ տալ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտը խըռավէլ - *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ:

- Բախտը ծընծաղէլ - *տե՛ս* Բախտը պիրիլ:

- Բախտը ծըռվէլ - *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ:

- Բախտը կապէլ - Հմայությամբ մեկի բախտավորությունը՝ երջանկությունը խափանել: *Տը՛սնաս էտ ըխճըկանը բախտը հու վա կապալ, վէր օգօն չի կա* (Ձ):

- Բախտը կապվէլ - 1. *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ: 2. Երկար ժամանակ չկարողանալ ամուսնանալ (աղջիկների մասին): *Մըհէգ վէր իմ մարալ ըխճըկօրանց բախտը իստի կապվալ ա, լ՛ավ պէժինք էլ չօնիմ, վէր թամահ անօղ, տանօղ ինի...* (ՋՏ, Ա, 71):

- Բախտը կըտըրվէլ - 1. *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ: 2. Դժգոհության արտահայտություն: *Բախտըս կըտըրվէ, հինչ օգում ըմ անիմ, անանվ չի կ՛ամ* (Ձ):

- Բախտը ճանրը/ճըլկավէրը ըղնէլ - Գործը չհաջողվել, իղձը չկատարվել, անբախտանալ: *Բախտըս ճանրը ա ընգալ, վէչ մին պէն անանվ չի կ՛ամ* (Ձ):

- Բախտը ճանրը/ճըլկավէրը քըցիլ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտը յը՛ետ կ՛անվ - Անհաջողությունից հետո նորից հաջողության մեջ ընկնել: *Բախտը յը՛ետ ա յը՛կալ, հըրուստացալ ա* (Ձ):

- Բախտը յը՛ետ տալ - *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ:

- Բախտը յը՛ր օնէլ, ք՛ինիլ - Իր ճակատագրին համակերպվել: *Էտ մարթը, բախտը յէր կալանվ, ք՛ընում ա, համ փըշանում-փըշանում անում* (ՆԱԲ, 63):

- Բախտը շօռ կ՛անվ/տալ - *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ:

- Բախտը պէնալ/պէց անէլ - Հմայությամբ մեկին երջանկացնել՝ բախտավոր դարձնել: *Բախաջին ասմա.- Վէր իրը՛ք մանէթ տաս, բախտըտ պէց կանիմ* (Ձ):

- Բախտը պէնվալ/պէց ինիլ - 1. *տե՛ս* Բախտը յը՛ետ կ՛անվ: 2. Ամուսնանալ (աղջիկների մասին): *Ըտըրա բախտը պէցվավ, մին տըղու ջիհից, փըսակվից նըհը՛տը* (Ձ):

- Բախտը պիրիլ - Մեկի գործերը իրենից անկախ հաջողվել, հաջողության հանդիպել: *Բախտը պէրավ, թօռ յը՛կավ, բօստանը ճիրից* (Բ):

- Բախտը ուրան (ք՛ը՛էզ) նըհը՛ետ - *տե՛ս* Աստուծ ուրան նըհը՛ետ (2):

- Բախտը փօրցիլ - Հաջողության ակնկալիքով որեւէ բան նախաձեռնել: *Էտ տըղան էլ ա բախտը փօրցում՝ տը՛սնա՝ կարում մ՞ էտ ծիլին փըռնէ* (Ձ):

- Բախտը քարէլ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտը քարէն ու կապէն տէմ ըղնէլ - *տե՛ս* Բախտէն կընծէգ՛ը յը՛ետ տալ:

- Բախտը Ք՛ուռը ըղնէլ - *տե՛ս* Բախտը ճանրը ըղնէլ:

- Բախտը քուռըցընէլ - *տե՛ս* Բախտէն կըլխէն քար քըցիլ:

- Բախտ ինիլ - Հաջողակ լինել, հաջողություն ունենալ: *Բախտ օնէ, հիբը ք՛ունում ա վը՛ըս, տէրտակ չի կ՛ամ* (Բ):

- Բախտու յէշօղ - *տե՛ս* ԲԸԽՏԸՅԷՇԻ:

- Բախտու շօռ կ՛անվ - Երջանկություն որոնել: *Ջիհիլնէն ք՛ինամ ըն քաղաք, բախտու շօռ կ՛ամ* (Բ):

- Բախտու պէն - Ճակատագրից՝ պատահականությունից կախված: *Արտը բախտու պէն ա. տարէն թուռույին ինի՝ կըտը՛ռնա, արաշտ ինի՝ տը՛ռնալ չի* (Ձ):

- Բախտ քըթէնալ - Երջանկություն ձեռք բերել, երջանկանալ: *Ըտի էտ տըղան բախտ ա քըթէնում* (Ձ):

ԲԱԽՏ[2] - *տե՛ս* ԸԲԱՍ:

ԲԱԽՏ[1] - *տե՛ս* ԲԱԽՏ[1]:

ԲԱԽՏ[2] - *տե՛ս* ԸԲԱՍ:

ԲԱԽՏԱՎԱՐ/ԲԱԽՏԱՎԱՐ *(պրս. baxtāvar)* - 1. *ած. հեգն.* Երանի: *Բախտավար ինձ, վէր տու բիդի ք՛ըմանգ՛ անիս* (Ձ): 2.

վ. Իբրեւ, իբրեւ թե: *Բախտավար յը՛կալ ա, թա հօրը տանէ, յը՛կալ ա, տը՛սալ հա՛ղը մը՛ռած* (Զ):

- Բախտավար կըլլէս (տուված) - *տե՛ս* ԲԱԽՏԱՎԱՐ (1):

ԲԱ՛ԽՏԱՎԱ՛Ր - *տե՛ս* ԲԱԽՏԱՎԱՐ:

ԲԱԽՏԱՎԷՐ/ԲԱ՛ԽՏԱՎԷՐ/ԲԱԽՏԱՎԸ՛Ր/ԲԱ՛ԽՏԱ՛ՎԸՐ *(գրբ. բախտաւոր)* - *ած.* 1. Բախտ՝ հաջողություն ունեցող, հաջողակ: *Բախտավէր մարթ ա, հիբը արտ ա անում, լ՚ավ տը՛ռնում ա* (Զ): 2. *մ.* Երջանիկ: *Էս առուտուրականըն էլ հուրա՛ն հէտի մին լա՛վ, հավադարիմ կընէգ՚ ա ճարըմ, նըհէտը փըսակվըմ, բախտավէր ապրում* (ՀԺՀ, V, 71):

- Բախտավէր ասթըխու տակ ծընվէլ - Բախտավոր՝ երջանիկ՝ հաջողակ լինել: *Բախտավէր ասթըխու տակ ա ծընվալ, էրկու տըղա օնէ, ճօխտը՝ համփա* (Բ):

ԲԱ՛ԽՏԱ՛ՎԷՐ - *տե՛ս* ԲԱԽՏԱՎԷՐ:

ԲԱԽՏԱՎԸ՛Ր - *տե՛ս* ԲԱԽՏԱՎԷՐ:

ԲԱ՛ԽՏԱ՛ՎԸՐ - *տե՛ս* ԲԱԽՏԱՎԷՐ:

ԲԱԽՏԻ-ԲԸՐԱԽՏԻ - *տե՛ս* ԲՈՒԽՏԸ-ԲԸՐԱԽՏԻ:

ԲԱԽՐԱ *(գրբ. պախրէ (նախիր, արջառ, եզ, կով), արաբ. bag(a)ra(t) (եզ, կով)* - *գ.* Եղնիկ, եղջերու: *Էտ ծըմակնէրըմը ըտըրանք մին շատ դա՛ջանգ՚ բախրա յըն տը՛սնըմ...* (ԼՂԲ, 333):

ԲԱԿ[1] *(ռուս. бак)* - *գ.* Բաք՝ հեղուկ պահելու համար մետաղյա տարրա: *Մին օր էլ բէնզինին բակը տըրաքում ա, ըտըրան ըսպանում* (Զ):

ԲԱԿ[2] *(ռուս. баки)* - *գ.* Քունքի մազերը: *Ուստան ըտըրա մազ՚էրը կըտըրում ա, բակէրը էրկան թօղում* (Բ):

ԲԱՀԱՐ *(թրք. bahar (գարուն)* - *տե՛ս* Կ՚ԱՐՈՒՆՔ:

ԲԱ՛ՀՄԱՆ - *տե՛ս* ԲԱ՛ՔՄԱՆ:

ԲԱՀՐԱ - *տե՛ս* ԲԱ՛ՀՐԱ՛:

ԲԱ՛ՀՐԱ՛/ԲԱՀՐԱ - *գ.* Բնավճարային հարկ, բերքով տուրք: *Հիշկան էս վըղէրան դախօտ ըք լա՛լ ըստընաս, տըրա բա՛հրա՛ն տաս ըք լա՛լ խանէն* (ՀԲ, 358):

ԲԱՂ *(պրս. bag, թրք. bač (խաղողի այգի)* - *տե՛ս* ԲԱԽՃԱ: *Թաքավէրին տըղան յէտ ա տը՛ռնըմ հուրա՛նց բաղը, վը՛սկէ խընձո՛րնին հըվաքըմ, պէրըմ հուրա՛նց պալատը* (ՀԺՀ, V, 17):

ԲԱՂԱԹ - *տե՛ս* ԲԱՂ-ԲԱԽՃԱ:

ԲԱՂԱԺ *(ռուս. багаж, ֆր. bagage)* - *գ.* 1. Ուղեբեռ: *Բաղաժը պօյէգդավ դարկում ա ախպօրը յըրա* (Զ): 2. *փխբ.* Գիտելիքների պաշար: *Էտ մարթը ամմէն հինչ գ՚ուդա՛ում ա, լ՚ավ բաղաժ օնէ* (Բ):

- Բաղաժ տալ - Բեռնավորել, փոխադրելի ծանրությունները փոխադրական միջոցների վրա կամ մեջ դնել: *Մաշինը բաղաժ ըն տամ, ք՚ինամ* (Զ):

ԲԱՂ-ԲԱՂԱԹ - *տե՛ս* ԲԱՂ-ԲԱԽՃԱ:

ԲԱՂ-ԲԱԽՃԱ - *գ.* Այգիներ, այգեստան: *Էտ մարթը ասից.- Վը՛ր օզըմ ըս բաղը-բախճատ կընանչի, բիդի վըսկըշափաղ, զա՛ռ բա՛ւլբա՛ւլը պը՛ռիս...* (ՀԺՀ, V, 84):

ԲԱՂ-ԲՕՍՏԱՆ - *տե՛ս* ԲԱՂ-ԲԱԽՃԱ:

ԲԱՂԱՂԱԴԻ[1] - *գ.* Գլխին կամ վզին գցելու մետաքսե թաշկինակ: *Մօրը հէտէ մին բաղդադի յա դարկալ* (Զ):

ԲԱՂԱՂԱԴԻ[2] *(թրք. bačdadi (ծեփածո միջնորմ)* - *գ.* Միջնորմին կամ առաստաղին խփվող բարակ ձողեր՝ վրան սվաղելու համար: *Մըհէնգ՚ բաղդադի պատալօկ սըվաղօղ չի կա* (Բ):

ԲԱՂԱՂԱԴԻ[3] - Շատ թեք տանիք: *Կըրիշը բաղդադի յա, ծո՛ւնը նըստում չի* (Բ):

ԲԱՂԱՂԱԴԻ[4] - Ուրախ եւ արագ պարեղանակ: *Նի յա մընում, մին լ՚ավ բաղդադի պար կ՚ամ, մակարնէն մընամ ըն ըրխընէն պէց* (Զ):

ԲԱՂՃԱ - *տե՛ս* ԲԱԽՃԱ:

ԲԱՂՉԱ - *տե՛ս* ԲԱԽՃԱ:

ԲԱՂՎԱՆՉԻ *(պրս. bağbanči, թրք. bačci)* - *գ.* Այգեպան, այգի մշակող, այգեգործ: *Մին օր բաղվանչին յէշում ա, տը՛սնում էս ծառէն խընձո՛րէն մինը յըրա՛, մինը վը՛ր ընգա՛ծ տակէն* (ՆԼՂԺԲ, 42):

ԲԱՂՎԱՆՉՕԹՈՒՆ - *գ.* Այգեպանի զբաղմունքը: *Բաղվանչօթունը Կ՚իզոդանց փէշակըն ա* (Զ):

ԲԱՄԲԱՎՕՋ *(ռուս. бомбовоз)* - *ած.* Շատ գեր, չաղ, հսկայամարմին: *Էտ կընէգ՚ը բամբավօզ տըղէք՚ օնէ* (Բ):

ԲԱՄԲԻՏ *(ռուս. бомбить)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Բամբիտ անէլ - Օդային հարձակումով ռումբեր նետել՝ ռմբակոծել: *Սամալո՛ծը բամբիտ ըրավ, շէնը քըրքանդ ըրավ* (Բ):

ԲԱՄՓ - *տե՛ս* ԲՕՄՓ:

ԲԱՄՓԷԼ - *տե՛ս* ԲՕՄՓԷԼ:

ԲԱՅԱԲԱՆ - *տե՛ս* ԲԸՅԱԲԱՆ:

ԲԱՅԱԹԻ *(պրս., արաբ. beyt, թրք. bayati)* - *գ.* Արեւելյան երաժշտության տխուր եղանակ: *Թաքավէրին տըղան բո՛ւրդա՛ն մին բայաթի յա ըսկանըմ* (Զ):

- Բայաթի ասէլ - Ողբալ, սգալ: *Կ՚ամ ա տը՛սնըմ հա՛ղը մը՛ռած, մարընը էլ, քըշտէն նըստած, բայաթի յա ասում* (Զ):

ԲԱՅԱԹԻ-ՇԻՐԱԶ - *տե՛ս* ԲԱՅԱԹԻ:

ԲԱՅԱՆ - *գ.* Սեղանի խաղողի տեսակ: *Բայանը Մարտունա ռայօնումըն ա լ՚ավ տը՛ռնում* (Բ):

ԲԱՅԱՆԱ - *տե՛ս* ԲԸՅԱՆԱ:

ԲԱՅ-ԲԱՅ - *տե՛ս* ԲԱԲԱՅ:

ԲԱՅՂԱՂ *(թրք. bayrak)* - *տե՛ս* ԴԸՐՕՇԱԿ: *Ք՚իս ա տըսնաս էրկու զօրք. մինին բայդաղը սէվ ա, էն մինին բայդաղըն էլ՝ կ՚ա՛րմո՛ւր* (ՀԺՀ, V, 474):

ԲԱՅԹԱԼ/ՊԱՅԹԱԼ *(արաբ., թրք. baytar, պրս. beytar)* - *գ.* 1. Ձիաբույժ: *Ասում ըն, Հաթէրք մին լ՚ավ բայթալ ա իլա՛լ...* (Զ): 2. Անշնորհք՝ տգետ բժիշկ: *... Ըստէդի դօխտուրնէն լօխ բայթալնէ ըն...* (ՋՏ, Բ, 81):

ԲԱՅԿԸՎԻ *(ռուս. байковый)* - *տե՛ս* ՊԱՄԲԱՋԻՆ (2):

ԲԱՅՂՈՒՇ *(թրք. baykuš)* - *գ.* 1. *տե՛ս* ՅԸՓԸԼԱՂ: 2. *փխբ.* Չարագուշակ՝ չար բան գուշակող՝ ասող մարդ: *Էտ բայղուշը ըսկի մէհէտ մին լ՚ավ պէն չի ասում* (Զ): 3. *փխբ.* Շատ եւ անախորժորեն լացող, շատ լացելով չարիք բերող մարդ: *Բայղուշ ը՞ս, ծէնըտ կըտըրէ՛:* (Բ): 4. *փխբ.* Միայնության մեջ ապրող, ուրիշների հետ չշփվող մարդ: *Բայղուշ զատ ա, վէչ մինին նըհէտ վէչ հընգըրօթուն ա անում, վէչ պարիկըմօթուն* (Բ):

- Բայղուշ կըտըրէլ/տը՛ռնալ - Անընդհատ սուգ ու շիվան անել, լացել: *Հինչ ը՞ս բայղուշ կըտըրալ, մէխկ չը՞ս* (Զ):

ԲԱՅՐԱՄ *(թրք. bayram)* - *գ.* 1. Մահմեդականների կրոնական տոն: *Թուրքէրէն բայրամը վէր հնո՛ւմ ա, սըրտըպէց ըն տը՛ռնում* (Զ): 2. Ընդհանրապես տոն՝ ուրախություն: *Թըմբա՛լին հը՛տէ հա՛միշա՛ բայրամ ա* (Զ):

ԲԱՅՑ - *տե՛ս* ՊԱՅՑ:

ԲԱՆԱԿ/ՊԱՆԱԿ *(գրբ. բանակ)* - *գ.* Ռրեւէ պետության զինված ուժերի ամբողջությունը: *Ղարաբաղա բընակէն նըմանը կա վէչ* (Բ):

ԲԱՆԱՆ *(ռուս. банан, իսպ. banano)* - *գ.* Ադամաթզենու պտուղը՝ ադամաթուզ: *Առաչ հու վա՞ գ՚իդա՛ցա՛լ՝ բանանը հինչ ա, մըհէնգ՚ էն ա բազարը լըցցած* (Բ):

ԲԱՆԳ *(ռուս. банк, ֆր. banque)* - *գ.* Բանկ, դրամատուն: *Էնքան փուլէրը լօխ բանգումը փուչացավ* (Զ):

ԲԱՆԳԱ *(ռուս. банка)* - *գ.* 1. Երկայնաձեւ՝ լայն բերանով ապակյա անոթ: *Այան կաթնը ածում ա բընգէք՚ը, մէրո՛ւմ* (Բ): 2. Գնդաձեւ անոթ, որ գործածվում է բուժական նպատակներով: *Ք՚ունում ա հիրըվանէն անա մին քանի բանգա պիրում, վէր մարթին մաշկը բանգա քըցի* (Զ):

- Բանգա քըցիլ - Գնդաձեւ անոթների մեջ որեւէ բան վառելով եւ օդը նոսրացնելով՝ դնել հիվանդի մեջքին՝ մաշկը ներս քաշելու համար: *Բանգա քըցիլը միհէնգ՚ ա՛ղա՛թ չի* (Զ):

ԲԱՆԳԻ - *տե՛ս* ԲԱ՛ՆԳԻ:

ԲԱ՛ՆԳԻ/ԲԱՆԳԻ *(գրբ. բանգ (խոտի տեսակ եւ նրա սերմը)* - *գ.* Մորմազգինե-

րի ընտանիքին պատկանող թավոտ ցողունով ու տերեւներով թունավոր բույս: *Բանգ՛ին կավը էլ չի օտում* (Ձ):

- Բանգի կէրած - Գիժ, խենթ: *Բանգի կէրած ը՞ս, խըրէգ կ՛իժօթուն ըրա՛* (Բ):

ԲԱՆՆ[1] - *տե՛ս* ԲԱՆԹ:

ԲԱՆՆ[2] *(գրբ. բանտ, բանդ)* - *տե՛ս* ՏՈՒՐՄԱ: *Բանդից ազատէլ ա տամ, դարկում համամ...* (ՀԱԲ, 15, 21):

ԲԱՆՆ[1] - *գ.* Բակ՝ տան կից բաց տեղ: *Ք՛ինիլիս տէղը մին կընէգ՛ շէնին տակէն ուրանց բանդումը պըտահում ա...* (ՆԼՊԺԲ, 95):

ԲԱՆՆ[2] *(պրս, band (կապ, կապանք, շղթա), թրք. bend (կապված)* - *գ.* Առվագլխի ջրի հոսանքը պահող թումբը: *Ճիրին բանդը քանդվալ ա* (Ձ): 2. Արգելք, պատնեշ: *Ախճիգ՛ը ասմա.- Սայաղ ք՛ինի, ը-ռըշկիտ էն ա բանդ կա* (Ձ): 3. Կապ, հանգույց: *Բանդէրը կըտորում ա, էտ մարթին ըգադում, տանում տօն* (Ձ):

- Բանդ անէլ - 1. Կապել, ագուցել: *Պիրում ա ըտըրա ծէրքէրըն ա վը՛ննէրը բանդ անում, ըտը՛ղ վէր քըցում* (Ձ): 2. Մեկին զբաղեցնելով՝ ուշացնել, սպասեցնել: *Էտ կընէգ՛ը ըտըրանց ըտը՛ղ բանդ ա անում ուրան զըրուցավը, մինչէվ մարթը կ՛ամ ա* (Ձ): 3. Փակել՝ արգելափակել որեւէ տեղում: *Հիյվընէն դալումը բանդ ա ըրալ* (Բ): 4. *տե՛ս* Կը՛վաթ անէլ:

- Բանդ ինիլ - Մի տեղ մնալ՝ հանգրվանել՝ կապվել մնալ: *Փալանդուզ Կուքանը սարքէրը յօր օնում, Սըգնէքա ք՛ընում Նընգիջան, մին տան բանդ ընում* (ՆԱԲ, 140):

ԲԱՆՆ[3] - *գ. Բանդի* ծառի կեղեւից հանած կեղեւակապ, որով զարդարում են երաժշտական գործիքները, գավազանը եւն: *Էտ աշըղէն մին լ՛ավ թառ ա ինում՝ բանդավ զըրթարած* (Ձ):

ԲԱՆԴԱ *(ռուս. банда, իսպ. banda)* - *գ.* Հրոսակ, հրոսակախումբ: *Էտ բանդան մէր կըլօխը հալա շատ օյիննէ յա պիրիլանկան* (Բ):

ԲԱՆԴԱ - *գ. տե՛ս* Հըցակէր բանդա:

ԲԱՆԴԱՂ *(թրք. bandağ)* - *գ.* Կախան, մառանում կախած խաղող՝ միրգ: *Բանդաղը կախ-կախ ա անում, հանցու ծըմը՛ռնը խօխէնք՛ը օտին* (Բ):

ԲԱՆԴԱՐԿԷԼ *(գրբ. բանտեմ, բանդեմ)* - *նբ. տե՛ս* Տուրմա քըցիլ: *Վէր ըստի յըն ասում, հարը կըզնըված սահանց բանդարկում ա* (ՀԱԲ, 15, 16):

ԲԱՆԴԱՆՈՒՌԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Բանդանուռի տը՛ռնալ - Օտարանալ, օտար դառնալ: *Ըստի էտ տըղան ռուս ա օգ՛ում, բանդանուռի տը՛ռնում* (Ձ):

ԲԱՆԴԻ - *գ.* Կարմրադեղնավուն կեղեւով ծառ, որից կեղեւակապեր են հանում: *Մին բանդի յա կըտըրում, քըչէվան բանդէր շինում...* (Ձ):

ԲԱՆԴԻԼ *(գրբ. բանտեմ, բանդեմ (բանտ դնել)* - *նբ. տե՛ս* Բանդ անէլ:

ԲԱՆԴԻԿ - *տե՛ս* ԲԱՆԹԻԿ:

ԲԱՆԴԻՏ *(ռուս. бандит, գերմ. bandit, իտալ. bandito)* - *տե՛ս* ԸՎԱՁԱԿ: *Բանդիտէքը կ՛ամ ըն, տըրան փըռնում, վէր ըսպանէն...* (ՀԱԲ, 15, 152):

ԲԱՆԴ ՈՒ ԲԱՐԱ - *գ.* Դուռ եւ ցանկապատ: *Բուստանէն բանդ ու բարան քանդըվալ ա* (Բ):

- Բանդ ու բարա գ՛իդօղ - Բանիմաց, ելումուտն իմացող: *Բանդ ու բարա գ՛իդօղ ա, հունց էլ ինի, մին պէն ընական ա* (Բ):

- Բանդ ու բարան կապէլ - 1. Ցանկապատն ամրացնել: *Բուստանէն բանդ ու բարան կապից, վէր խօզ՛էրը նի չի տը՛ռնան* (Ձ): 2. Մեկին արգելել, արգելք հանդիսանալ, խոչընդոտել: *Բանդ ու բարաս կապալ ա, թօղում չի, թա կօրծ անիմ* (Ձ):

ԲԱՆԹ/ԲԱՆՆ[1] *(ռուս. бант, լեհ. bant, գերմ. band, թրք. bant)* - *գ.* Ժապավեն, նեղ ու երկար երիզ՝ որպես կապ: *Մարը բանթը յօր ա օնում, ըխճըկանը մազ՛էրը կապում* (Բ):

- Բանթ անէլ - Մազերը կամ որեւէ այլ բան երիզով՝ ժապավենով փնջաձեւ կապել: *Խուխէն մազ՛էրը բանթ ա անում, թաթան փըռնում, ք՛ինամ հըրանէք՛* (Ձ):

ԲԱՆԹԻԿ/ԲԱՆՆԻԿ - *տե՛ս* ԲԱՆԹ:

ԲԱՆՅԱ *(ռուս. баня, իտ. bagno)* - *տե՛ս* ՀԱՄԱՄ:

ԲԱՆՆԱՀ *(արաբ. bānna)* - *գ.* Պատ շարող վարպետ, որմնադիր: *Էս բանանանիը տը՛սնում ա, վէր պատը յը՛տէ-ճէլի պարան ա կ՛ըլական, թօղում ա, փախճում* (Ձ):

ԲԱՆՔ՛ԱՇ - *գ.* Սվաղի ձեւ: *Սըվաղէին յէշում ա, թա.- Էս սըվաղը բանք՛աշ ա, ամիա լ՛ավ չի սըվաղած* (Ձ):

ԲԱԾ *(գրբ. բաշ (ձիու եւ այլ կենդանիների մազ), պրս. baš, paš, թրք. baš (գլուխ)* - *գ.* 1. Ձիու եւ այլ կենդանիների վզի երկար մազերը: *Ծիյին բաշը խօզ՛ում ա* (Բ): 2. *փխբ.* Գլուխ, կատար, գագաթ: *Վը՛խճարը քըշում ա սարէն բաշը* (Ձ):

- Բաշ ուստա - *տե՛ս* Աշկէս յըրա:

ԲԱԾԱԲԱԾ/ԲԱՍԱԲԱՍ *(թրք. bašabaš (գլուխ գլխի, հավասարը հավասարի)* - *մ.* 1. Հավասար կերպով, միմյանց չգիջելով: *Ըսէս ա.- Թան կարիք՛ ինձ նըհէտ բաշաբաշ օտիք՛, ծը՛զ թօղ ըմ ընական, թան օտիք՛ վէջ, ծը՛զ բիդի օտիմ* (ՀԺՀ, V, 591): 2. Առանց խտրության: *Խէ աշխարքըս անդար ա՞, աշխարքըս բասաբաս ա՞, վէր իշխանին ախճիկը փըսակվի գ՛ադին նըհէտ...* (ԼՂԲ, 329):

ԲԱԾԱՅԷԹՄԻԾ/ԲԱՐԱՅԷԹՄԻԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Բաշայէթմիշ անէլ - Հասցնել, գլուխ բերել, աճեցնել: *Էտ պառավը յիթիմնուն պըհէս ա, բաշայէթմիշ ընէս* (Ձ):

- Բաշայէթմիշ ինիլ/տը՛ռնալ - Հասնել, գլուխ գալ, աճել: *...Ասըմ ա.- Էտ հօր ը՞ս էտքան խարջ անըմ, էտքան չըրչարվըմ, մըհէ տու էնքան կընական ըս, վը՛ր էտ թազա շինած տանը բաշայէթմիշ ինի՞ս...* (ՀԺՀ, VI, 184):

ԲԱԾԱՐ - *տե՛ս* ԲԱԾԻՐ:

ԲԱԾԱՐԷԼ - *տե՛ս* ԲԸՇԱՐԷԼ:

ԲԱԾԱՐԼԸՂ - *տե՛ս* ԲԱԾԻՐԼԸՂ:

ԲԱԾԲՕՐԴ - *տե՛ս* ԲԱԾՊՕՐՏ:

ԲԱԾԻՆԱ *(թրք. bašlibasina (անկախ, առանձին, ինքնուրույն)* - *ած.* Անուշադրության մատնված, բարձիթողի: *Բաշինա բաստան ա, հու կարում ա, նի յա մընում, քաղում* (Բ):

ԲԱԾԻՐ/ԲԱԾԱՐ *(թրք. bešir (կարողանալ, ի վիճակի լինել)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Բաշիր անէլ - Կարողանալ, գլուխ հանել: *Հատէ տի յա, վէր մարթ մուհալ ա ինիս, ալլահան քարընն էլ չի բաշիր ընէս, թա հըվաքէ* (ԱԱռ, 7):

- Բաշիր չանում, թա շալվարը մար տա - Անճարակ՝ ապիկար է, որեւէ բան կատարելու ընդունակ չէ: *Ըստի տըղէն հու բի՞դի ախճիգ՛ տա. բաշիր չանում, թա շալվարը մար տա* (Ձ):

ԲԱԾԻՐԼԸՂ/ԲԱԾԱՐԼԸՂ - *գ.* Սեփական ուժերով վաստակածը՝ ձեռք բերածը: *Ուրան բաշիրլըղավը տօնը պահում ա* (Բ):

ԲԱԾԻՐՄԱՋ - *տե՛ս* ԲԷՅԲԸՇԸՐԸՂ:

ԲԱԾԼԸՂ/ԲԱԾԼՈՒՂ *(թրք. bašlik)* - *գ.* Հաստ կտորից գլխի ծածկոց՝ սուր գագաթով եւ երկար ծայրաշերտերով: *Մին բաշլըղ ա ինք՛ օնում, տամ փըսէն հորը* (Ձ):

ԲԱԾԼԸՂԱՎԷՐ/ԲԱԾԼՈՒՂԱՎԷՐ - *ած.* Գլխին բաշլուղ կրող: *Մին օր էլ ըտըրանց տօնը էրկու բաշլըղավէր մարթ ըն կ՛ամ* (Ձ):

ԲԱԾԼՈՒՂ - *տե՛ս* ԲԱԾԼԸՂ:

ԲԱԾԼՈՒՂԱՎԷՐ - *տե՛ս* ԲԱԾԼԸՂԱՎԷՐ:

ԲԱԾՄԱԽ - *տե՛ս* ԲԱԾՄԱԿ:

ԲԱԾՄԱԽՉԻ - *տե՛ս* ԲԱԾՄԱԿՉԻ:

ԲԱԾՄԱԿ/ԲԱԾՄԱԽ *(թրք. bašmak)* - *գ.* Ցածրակրունկ կոշիկ: *Միհէնգ՛վա կընանէք՛ը բաշմակ չընն կ՛ը՛նըմ* (Ձ):

ԲԱԾՄԱԿՉԻ/ԲԱԾՄԱԽՉԻ *(թրք. bašmakči)* - *տե՛ս* ՍԱՊՕԺՆԻԳ՛: *Մին էլ պան-*

ցանլ ա, տը՝սալ մին բաշմախչի՝ չըմօշկ կարէլիս (ՀԺՀ, VI, 63):

ԲԱՇՇԸՂԱԴՕՆՆԻՄ - *տե՛ս* ԱԼԼԸՂԱԴՕՆՆԻՄ:

ԲԱՇՊՕՐՏ/ԲԱՇԲՕՐԴ/ՊԱՇՊՕՐՏ/ՊԱՍՊՕՐՏ *(ռուս. паспорт, իտ. passaporto)* - *գ.* 1. Քաղաքացու ինքնությունը եւ քաղաքացիությունը վավերացնող փաստաթուղթ: *Սավէտը ցը՝ը՝վ յը՝կավ, բաշպօրտնէն փուխը՝ցեն* (Բ): 2. Որեւէ սարքավորման՝ մեքենայի՝ առարկայի եւ այլնի մասին հիմնական տեղեկություններ պարունակող փաստաթուղթ: *Տիլիվիզըրէն բաշպօրտը կորալ ա* (Բ):

ԲԱՇՏԱՆ/ԲԱՆՏԱՆ - *տե՛ս* ԸԲԱՆՏ:

ԲԱՋԱԽԼՈՒ - *գ.* Բարձր հարգի ոսկի: *...Յէս էլ Հընդըստան մին բաջախլու տը՝վի, փիլու կաշվա մին տընգըլբազ առի* (ՋՏ, Ա, 119):

ԲԱՋԱՆԱՂ *(թրք. bacanak)* - *գ.* Կնոջ քրոջ ամուսինը, քենակալ: *Մին ժամանակ ուրան բաջանաղնէն տուս ըն կ՚ամ, տը՝սնում կ՚ըխտարնէն հըվաքած մին տը՝ղ...* (ՀԺՀ, VI, 122):

ԲԱՋԲԸՌՈՒԹԷՆ - *մ.* Մանրազնին կերպով, մանրամասնորեն: *Չօբանը շանը բաջբըռութէն վըրըվուրդ ըրավ, գիդանց, վէր կ՚ուլու նըհը՝տ քուլուլ ա կացալ* (Ձ):

ԲԱՋԻ *(թրք. baci)* - *գ.* 1. *հեգն.* Քույր, մորաքույր, հորաքույր: *Քու բաջի յա մէր տօնը քանդալ* (Ձ): 2. Կանանց տրվող հարգական կոչում, որ գործածվում է հատուկ անունից հետո: *Խէղճ Թամամ բաջուն խօխան թօղում չըն կանթի* (ՀԺՀ, V, 416):

ԲԱՋՕՂԼԻ *(թրք. bačioğlu)* - *գ.* Քրոջ որդի: *Իմ բաջօղլի մաշին ա ինք՚ կալալ* (Բ):

ԲԱՍ[1] - *տե՛ս* ԲԱՆ[1]:

ԲԱՍ[2] - *տե՛ս* ԲԱՆ[2]:

ԲԱՆ[1]/ԲԱՍ[1] - Գործածվում է կապակցության մեջ:

- Բանս մընել - 1. Հակառակվել, վիճել: *Մընթընկընէգ՚ սաղ օրը էն ըն ուրուր նը՝հը՝տ բանս մընած* (Բ): 2. Մրցել, կռվել, մրցակցել: *Մէլիքընն ասըմ ա.- Դէ վը՝ր իտի օժալ ըս, էն մին անուծին նըհէտ էլ բանս կըմընիս, կըռը՝վ կանիս...* (ՀԺՀ, V, 237):

ԲԱՆ[2]/ԲԱՍ[2] - *վ.* Ուրեմն, այդ դեպքում: *Չօբանը ասալ ա.- Վը՝ր տու էս օտէս, բանս տու օգէլու վրս, թա վը՝ր չէ, բանս կըրալու չըս օգէս* (ՀԺՀ, VI, 75):

ԲԱՍԱԲԱՍ - *տե՛ս* ԲԱՇԱԲԱՇ:

ԲԱՍԷՅԻՆ *(ռուս. бассейн, ֆր. bassin)* - *գ.* Ջրավազան: *Էտ հրայթըմը մին մը՝ծ բասէյին ա ինըմ* (Ձ):

ԲԱՍԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Բասլամիշ անէլ - Գրգռել, կռվի մղել: *...Կընգանը բասլամիշ ա անըմ, ինքը պը՝տընծական թըմաշա անըմ* (ՋՏ, Բ, 77):

ԲԱՍԽՈՒՆ - *տե՛ս* ԲՈՒՍԽՈՒՆ:

ԲԱՍՄԱ *(թրք. basma (կոխածո, ծանր ճնշում)* - *տե՛ս* ՂՕԹՄԱ:

ԲԱՍՅԱԿ *(ռուս. босяк)* - *գ.* Ցոփ ու շվայտ կյանք վարող մարդ: *Էտ բասյակը հօրը տօնը կընքանդի* (Ձ):

ԲԱՍՅԱԿՕԹՈՒՆ - *գ.* Ցոփ ու շվայտ կյանք վարելը: *Բասյակօթունը մին ազար ա՝ ընգած միհէնգ՚վա ջիհիլնուն մաչը* (Ձ):

- Բասյակօթուն անէլ - Ցոփ ու շվայտ կյանք վարել: *Հանը ասմա.- Մ՚բալա, մին կօրծ ըրա՛, թա չէ բասյակօթուն ընէլավ կարէլ չըս տօնըտ պահիս* (Ձ):

ԲԱՆՏ - *տե՛ս* ԸԲԱՆՏ:

ԲԱՆՏԱՆՄԻՇ *(թրք. bastirilmiš (սեղմված, սմքած, ամփոփված)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Բանտանմիշ անէլ - *տե՛ս* Պադէվ տալ: *Ընտրանք էտ ղօնաղին պադէվ ըն տամ, բանտանմիշ անում, թանմուզ յընդունդօշանկըմ քընընցնում* (ՀԺՀ, V, 453):

ԲԱՆՏԱՆ - *տե՛ս* ԲԱՇՏԱՆ:

ԲԱՍՏԸՐՄԱ - *տե՛ս* ԲԱՍՏՈՒՐՄԱ:

ԲԱՍՏՈՒՐՄԱ/ԲԱՍՏԸՐՄԱ *(թրք. pastirma, ռուս. бастурма)* - *գ.* 1. Հատուկ եղանակով պատրաստված ու չորացրած միս՝ ապուխտ: *Տըվարէն բաստըրմէն տը՝ղը վէջ մին պէն տալ չի* (Ձ): 2. Կտրտած եւ աղով, սոխով, պղպեղով համեմված ու որոշ ժամանակ պահված միս՝ խորովածի համար: *Խօզ՚ին բաստըրման քաշում ա շըմփուրնէն, տինում պօղէն* (Բ):

- Բաստուրմա անէլ - 1. Միսը ապըխտել՝ ապուխտ դարձնել: *Փափուկ մէսըն ըն բաստըրմա անըմ* (Բ): 2. Միսը կտրտել, աղով, սոխով, պղպեղով համեմել՝ խորովելու համար: *Խօզին չալաղաջնէն բաստուրմա ըրավ, վէր խըրավէ* (Բ):

- Բաստուրմա կէրած կատու - Գոհ, բարձր տրամադրությամբ անձ: *Հանց ա բաստուրմա կէրած կատու ինի, հանլբանթ կօրծէրը լ՚ավ ա* (Ձ):

- Բաստուրմա օտէլ - Միսը, աղով, սոխով, պղպեղով համեմված լինելով, փափկել, պատրաստ լինել խորովածի համար: *Մէսը լ՚ավ բաստուրմա կէրալ ա, խըրա՛վէ* (Բ):

ԲԱՎԹԱ *(թրք. bafta)* - *գ.* Ոսկեթել հյուսվածքով երիզ՝ ծոպ: *Բավթէքավ արխալուղըս հէնց ա քու ծէռքավըտ կարած...* (ԼՂԲ, 154):

ԲԱՏԻՆԿԱ *(ռուս. ботинки)* - *գ.* Կոշիկի տեսակ՝ սովորականից ավելի երկարաճիտ: *Բատինկէք՚ը հանըմ ա, վը՝ննէրը կըրակէն տէմ անում* (Ձ):

ԲԱՏՐԱԿ *(ռուս. батрак)* - *գ.* Վարձու մշակ մասնավոր գյուղական տնտեսության մեջ: *Կուլակը սաղ տարէն էտ բատրակնուն պինըցընէս ա, վէրչումը մարթա մին էծ տաս, հըղէ տինիս* (Ձ):

ԲԱՏՐԱԿՕԹՈՒՆ - Բատրակ լինելը, բատրակի զբաղմունքը: *Բատրակօթունը էլիա անանթ ա ընգալ* (Ձ):

- Բատրակօթուն անէլ - Որպես բատրակ աշխատել: *Խը՝ղճ ք՚անսիբը հինչ ա՞նէ, ք՚ունում ա կօխկէ շէնը, բատրակօթուն անում* (Ձ):

ԲԱՐ *(պրս. bar)* - *գ.* 1. Պտուղ, ծառապտուղ: *Ընդէրումը բար կինի, Ամէն ըխճըկա յար կինի...* (Ձ): 2. Բերք: *Կարկուտը սաղ քըշից տարավ, ըստարէ բար չընք յօր ընական* (Բ):

- Բար նըստէլ - Ծաղիկ, կարմրուկ եւ այլ հիվանդությունների ժամանակ ուռած բշտիկները նստել՝ լավանալ: *Խը՝ղճ խօխան տանջվից պըրծավ, անջախ-անջախ ծաղէգ՚ը էն ա բար ա նըստում* (Ձ):

- Բար տալ - Պտուղ տալ, բերք տալ: *Գ՚ուդում ա, թա վէր ճէլլի յա ծաղկալ, ճէլլի էլ բար ա տըլական* (ՆԱԲ, 87):

ԲԱՆՐ *(թրք. baraj (պատնեշ)* - *գ.* 1. Այգու՝ բանջարանոցի ներս մտնելու եւ դուրս գալու տեղը: *Բանրան կապալ չի, քըշէրը հիյվընէն նի յըն տը՝ռալ, բաստանը կօխ տուվալ* (Ձ): 2. Սպասվող մարդու՝ կենդանու անցնելու տեղը: *Վը՝րսէն բանրան բիդի գ՚ուդաս, վէր կարիս վէր քըցիս* (Ձ):

- Բանրա անէլ - Ելումուտի համար անցք՝ տեղ թողնել: *Մացակը բաստանը չըփարում ա, մընանա ընդում ա բանրա անէ* (Ձ):

- Բանրա պահէլ - Որսատեղում դարանակալելով՝ որսին սպասել: *Մին սաղ օր բանրա յա պահում, մինչը՝վ կարում ա մին կ՚ըխտար վէր քըցի* (Ձ):

ԲԱՐԱԲԱՆ - *տե՛ս* ԲԱԼԱԲԱՆ:

ԲԱՐԱԹ *(թրք. barat)* - *գ.* Պարտագիր, մուրհակ: *Բարաթը կ՚իրում ա, տամ ը՝տըրան, փուլը յօր օնում, ք՚ինամ* (Ձ):

ԲԱՐԱՅԷԹՄԻԾ - *տե՛ս* ԲԱՇԱՅԷԹՄԻԾ:

ԲԱՆԱՍ *(արաբ. baras, պրս. bāras)* - *ած.* Ներիակ, ոչ համերաշխ, հակառակ: *Յիրգ՚ինք՚ըմը էրկու ղօչ կա՝ ուրուր նիհէտ բանրաս* (ԱԱ, 16):

- Բանրաս կէնալ - Հակառակվել, մեկի հետ վատ հարաբերությունների մեջ լինել: *Մ՚յ հայէր, բօ՚լ ա, հէ՚րիք՚ ա, խըրէ՚գ՚ ուրուր նըհը՝տ բանրաս կա՛ցէք՚* (Ձ):

ԲԱՐԱՔ՚ԱԹ - *տե՛ս* ԲԱՆՔ՚ԱԹ:

ԲԱՆՔ՚ԱԹ/ԲԱՐԱՔ՚ԱԹ *(արաբ. beraket, թրք. bereket)* - *գ.* 1. Առատություն, լիություն: *Կըռը՝վը վէր պըրծընէ, էլիա բանքա՚ան ա իննանան* (Բ): 2. Արդյու-

նավետություն, արգասավորություն: *Էս կօրծումը բարանքՒանթ չի կա* (Զ):

ԲԱՐԱՔԱՆԹՏՈՒ - *տեմ* ԲԱՐՈՆՔԱՆԹՏՈՒ:

ԲԱՐՈՆՔԱՆԹՏՈՒ/ԲԱՐԱՔԱՆԹՏՈՒ - *ած.* Եկամտաբեր, օգտակար, շահեկան: *Էտ կավը բարանքՒանթտու կավ ա, լՒավ պահէ* (Զ):

ԲԱՐԱՔԱԼԼԱ *(թրք. barekallah (փառք Աստծո) - ձ. հեգն.* Խրախուսական բացականչություն՝ կեցցե՛ս: *ԲարաքՒալլա Միրզա, տարավ հէյվանը կուրցըրավ, յըէկավ* (Զ):

- ԲարաքՒալլան տօն կըքանդի - Ավելորդ խրախուսանքը՝ գովասանքը վնասակար է: *ԽըրէգՒ թանրիփ ըրա՛, բարաքՒալլան տօն կըքանդի* (Զ):

- ԲարաքՒալլա տալ - *հեգն.* Խրախուսել՝ գովել: *Խալխէրըն էլ բարաքՒալլա յըն տամ, էլ գՒանդում չըն, թա էտ կընէգՒը մարթին կըլխէն հինչ ա տինում* (Զ):

ԲԱՐԲԱԴ *(պրս. berbed, թրք. berbat (վատթար, կեղտոտ)* - 1. Ավերված, քանդված, ավերակ դարձած: *Նի յըն մընում մին բարբադ շէն, քըշէրը ըտըէդ կէնըմ* (Զ): 2. Փչացած, ապականված, անպետքացած, այլանդակված: *Բարբադ ժէնգՒալ ա, ըտըրանավ ժինգՒալավ հաց չի տըէռնալ* (Բ):

- Բարբադ անէլ - 1. Ավերել, քանդել, ավերակ դարձնել: *Հըրամանք ա տամ, նի յըն տըէռնըմ, էտ շէնը բարբադ անըմ* (Զ): 2. Փչացնել, ապականել, անպետքացնել, այլանդակել: *...Խազայինը յէշում ա, տէսնում ծառային ճակատը ճըղած, բարբադ ըրած* (ՀԱԲ, 15, 134):

- Բարբադ ինիլ/տըէռնալ - 1. Ավերվել, քանդվել, ավերակ դառնալ: *Էս տօնը կըռվէն վախտըն ա ըստի բարբադ տըէռալ* (Բ): 2. Փչանալ, ապականվել, անպետքանալ, այլանդակվել: *Քամէ ըրավ, թօթը սաղ վէր տըէռավ, բարբադ իլանվ* (Բ):

ԲԱՐԲԱՐԻՍ *(ռուս. барбарис)* - *տեմ* ԿԸԾՕԽՈՒՐ:

ԲԱՐ-ԲԱՐԽԱՆԱ - *գ.* Տարբեր ապրանքներ, ունեցվածք: *Թաքավէրին էտ տըղան ՒուրանՒ յէրգՒիրըն ա մընընմ, բարբարխանավ հօրը շըհանը մընընմ, թուշ հօրը պալատը քՒինըմ* (ՀԺՀ, VI, 94):

ԲԱՆՐԳՍԱՀ - *գ.* Խնամախոսության գնացած մարդ: *ԲանրգՒանհէն վէր նի մըտէն, խըէդճ ախճիգՒը չանշմիշ իլանվ* (Զ):

- ԲանրգՒանի տալ - Աղջկան նշանել: *Սանասարէն ըխճըկանը բանրգՒանի ըն տուվալ, Աստուծ շընըրհավէր անէ* (Զ):

ԲԱՐԴ[1] *(գրբ. բարդ)* - *գ.* 30-40 խրձից բաղկացած չոր խոտի դեզ: *Ծըմըէռնը ծՒուն չի յըէկավ, էրկու բարդ խոտ մընաց էն մին ծըմըռնըվա հըէտէ* (Զ):

- Բարդ տինիլ - Խրձերը կույտ անել՝ դիզել: *Խոտը հըվաքում ա, կըպոտում, բարդ տինում* (Զ):

ԲԱՐԴ[2] *(ռուս. барда)* - *գ.* 1. Օդի թորելու գործողության մեկ ցիկլը, երբ եփած եւ օդին հանած հումքը թափում են՝ նորը լցնելու համար: *Ջավօդչին ասմա.- Բարդէն վախտըն ա* (Զ): 2. Օդի թորելիս եփած, օդին հանած եւ թափած հումքը: *ԽօզՒէրը բարդը կէրէն, կուտուրվըէցէն* (Բ):

- Բարդ անէլ - Օդի թորելիս եփած եւ օդին հանած հումքը թափել եւ նորը լցնել: *Հանը բարդ ա անում, խօխան էլ ճՒուրը պիրՒում ա, վէր ղըզղանը ածէ* (Զ):

ԲԱՐԴԱԿ *(ռուս. бардак)* - *ած.* Խառնաշփոթ (տեղ): *Բարդակ տօն ա* (Բ):

ԲԱՐԴԱՆ *(պրս. bārdān (քուրձ, մեծ պայուսակ)* - *գ.* 1. Մեծ ջվալ՝ պարկ, որի մեջ բուրդ, բամբակ, ծղոտ են լցնում: *Էրկու բարդան պՒուրթ ա տամ, մին ծընած էծ ինՒ օնում* (Բ): 2. *փխբ.* Մեծ, շատ մեծ: *Էտ հինչ ա՞, վէր օգՒալ ըս. ըռըէխը՝ բարդան, վըէնէնէրը՝ծօռ, իրըէսը՝չօփուռ* (Զ):

- Բարդան կըտրրէլ - Ուռչել, փքվել, տռզել: *Էս սըտանին թաքավէրին տըդան նաչաղ ար, պօկըն էլ օռած, բարդան կըտրած* (ՀԺՀ, VI, 170):

ԲԱՐԻԾ *(պրս. parašt (պաշտող), թրք. bariš (համերաշխություն, հաշտություն)* -*տեմ* ՀԱՆՇՏ[1]:

- Բարիշ անէլ - *տեմ* ԲԸՐԸՇՏ(Ը)ՆԵԼ:

ԲԱՐԽԱՆԱ *(թրք. barhana)* - *գ.* Կահկարասի, տնային իրեր: *Բարխանան հըվաքում ա, հըդէ ինՒում* (Զ):

ԲԱՐԽԸԴ *(արաբ., պրս. barrakan, ռուս. бархат)* - *գ.* Խիտ, նուրբ ու փափուկ խավով պատված երեսով կտոր՝ թավիշ: *Իրըէք մէտըր բարխըդ ա ինՒ օնում, տըդէն հէտէ կաստՒում կարէլ տամ* (Զ):

ԲԱՐԽԸԴՆԻ *(ռուս. бархатный)* - *ած.* Թավշից կարված՝ պատրաստված: *Բարխըդնի շօր ա կՒըէցալ* (Բ):

ԲԱՐ-ՆՈՒԲԱՐ - *գ.* Տեսակ-տեսակ պտուղներ՝ բերք: *Էս թաքավէրին մին մըէծ, բարը-նուբարավ լիգՒը բաղ ա ինըմ* (ՀԺՀ, V, 83):

ԲԱՐՍՈՒԴ/ՊԱՐՍՈՒԴ *(գրբ. պարսէտ)* - 1. *տեմ* ԸՌԸԳԱԹԿԱ: 2. Թթենու դալար շիվի կեղեւը: *ԽոխէնքՒը բարսուդան շուվվան ըն շինՒում* (Զ):

ԲԱՐՈՒ *(թրք. baru (ամրոցի պատ)* - *գ.* Մարգի կամ առվի կողքի հողե թմբիկ: *Բարուն պէրակ ա, ճՒուրը պահում չի* (Բ):

- Բարու անէլ - Մարգի կամ առվի եզրերը հողով ամրացնել, որ ջուրը պատռվածք չտա: *Արխը բարու ըրավ, ճՒուրը պէց թօղից* (Զ):

ԲԱՐՈՒԹ *(թրք. barut)* - *գ.* 1. Փամփուշտների ու արկերի լիցքավորման համար օգտագործվող պայթուցիկ նյութ, վառոդ: *...Հըրամայում ա՝ բարութավ տըրըքցընին յէխծէն* (ՆԼՂԺԲ, 144): *ած.* 2. *փխբ.* Շատ կծու, թունդ, բարկ: *Էս տանխտէղը բարութ ա, բարութ* (Բ): 3. *փխբ.* Դյուրաբորբոք, դյուրագրգիռ, զայրացկոտ: *Մէր Իշխանը բարութ ա, վէր մին պէն ըս ասում, դանստի կըտաղում ա* (Բ):

- Բարութը կըլխէլ - Սնանկանալ: *Բարութը կըլխալ ա, կարում չըն ապըրին* (Բ):

- Գ'ըլէջա անէլ - *տեմ* Ջըրուց անէլ(1): *Ախպէր-ախպէր գ'ըլէջա յըն անում, ուրուր անա հըրցընում, թա էտ օրը հունց ըն անց կըցրալ* (ՀԺՀ, VI, 214):

ԳԸԼԸՄԱՍԸՐ/ՅԱԼԱՄԱՍԸՐ *(թրք. yerelmasə)* - *տեմ* ՏԸՓԸԽԸՆՁՕՐ:

ԳԸԼԸՄԱՍԸՐԻ[1]/ՅԱԼԱՄԱՍԸՐԻ - *տեմ* ՏԸՓԸԽԸՆՁՕՐԷ:

ԳԸԼԸՄԱՍԸՐԻ[2] - *գ.* Թուփ, որի դալար շիվերը շատ ճկուն են եւ գործածվում են կողովներ ու քթոցներ հյուսելու համար: *Գ'ըլըմասըրուն շէվէրը հոռ ըրավ, ճէխէրը կըպօտից* (Ձ):

ԳԸԼԸՋԱՂ - *տեմ* ԳՆԼՆՋԱՂ:

ԳԸՄԸ-ԳՆՄԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գըմը-գ'ամի անէլ - *տեմ* Ճիրճէմնը տալ:

ԳԸՄՓՈՒԼ - *տեմ* ԳՈՒՄՓՈՒԼ:

ԳԸՆԳԸԼԸԽՏԱՆ(Ա)/ԳԻՆԳԸԼԸԽՏԱՆ(Ա) - *մ.* Առանց շտապելու, կամաց-կամաց, հանգիստ: *Գ'ընգ'ըլըխտանա հաց ա օտում, նըստում էշը, ք'ինըմ, տը'սնըմ արտը էրանծ* (Ձ):

ԳԸՌԱՆԱԼ - *չբ.* Դպարտանալ, գոռոզամտել, պարծենալ: *Ախպէրը գ'ըռանում ա քուվէրը քըշտէն, ասում ա.- Մին տէս կընէգ'ըս հի՞նչ լանվ խըրաված ա ըրալ...* (ՀԺՀ, V, 543):

ԳԸՌԸՎԱՉԻ - *տեմ* ԳԸՌԸՎԱՐԻ:

ԳԸՌԸՎԱՐԻ - *տեմ* ԳԱՌ-ԳԱՌ: *Էտ տըղան էլ կօզի յէթիմ ա ինում, ամմա ուրանն գ'ըռըվարի յա պահում հընգէրունցը քըշտէն* (Ձ):

ԳԸՌՕԹՈՒՆ - *գ.* Դպարտություն, գոռոզամտություն, պարծենկոտություն: *Գ'ըռօթունէն մըհար վէշ մին տըղա ըռիսկ չի անում, թա էտ ըխճըկանը մին պէն ասէ* (Ձ):

- Գ'ըռօթուն անէլ - *տեմ* ԳԸՌԱՆԱԼ:

ԳԸՎՆ(Ն)Ք'Ի(Ս) - *տեմ* ՄԸԹԱՄ: *Մարթը հըղէ յա ինըմ, գ'ըվանք'ի թան ք'ինըմ ա Հընդըստանի ճուղուպուր պէրի...* (ԼՂԲ, 312):

ԳԸՎԸԼԹԸԹՕ - *գ.* Չորացրած սալորից եփած ջրալի կերակրատեսակ: *Մըրսածը բիդի հունըթըթօ յա գ'ըվըլթըթօ օտէ, վէր լ'ըվանա* (Ձ):

ԳԸՐՆՎ/ԳԻՐԱՎ/ԿԻՐՆՎ *(գրբ. գրաւ)* - *գ.* Շարժական կամ անշարժ գույք, իր կամ գումար, որ որպես պարտքի վերադարձման երաշխիք պարտապանը հանձնում է պարտատիրոջը, գրավ: *Սումարանին ու մին էրկու վըրժըպէտու իլանծ-չիլածընն ա յէր կալալ գ'իրավ* (ՋՏ, Ա, 71):

- Գ'ըրանվ տինիլ - Որեւէ բան թողնել պարտատիրոջ մոտ՝ որպես գրավ: *Վըսկը'դանը գ'ըրանվ ա տիրանալ, պարթկ յէր կալանալ* (Բ):

ԳԸՐԱՎԱ/ԳԻՐԱՎԱ *(թրք. girəvə)* - *գ.* Հարմար պահ՝ առիթ: *Կատուն մուկուն փըռնէլի հէտէ մարաղ բիդի կէնա էնքան, մինչէվ գ'ըրավան կ'ա* (ՆԱԲ, II, 51):

- Գ'ըրավան ա խօսում - Որոշիչը դիպվածն է: *Գ'ըրավան ա խօսում, թա գ'ըրավա իլանվ, կօրծըտ անանալ կըկ'ա* (Ձ):

- Գ'ըրավան պահէլ - Հարմար պահի՝ առիթի սպասել: *Էս վանրումը մին վէրսկան, քօլէն տակէն պարանց ընգած, վէրսին գ'ըրավան պըհէյիս ա ինում...* (ՆԱԲ, 63):

- Գ'ըրավան պէց թօղնէլ - Հարմար պահից՝ առիթից չօգտվել: *Գ'ըրավան պէց թօղից, թօռ յը'կավ, արտը կարից վէչ հընձի* (Բ):

- Գ'ըրավա տալ - Հարմար պահ՝ առիթ ստեղծել: *Հավան գ'ըրավա չի տամ, թա բուստընէն պիհինք'* (Բ):

- Գ'ըրավան քըցիլ - Հարմար պահից՝ առիթից օգտվել: *...էտ դուլլուղչին գ'ըրավա յա քըցըմ, էտ ըխճըկանը փըսակին շօրէրը հանըմ, ուրանն ըխճըկանը կ'էց տամ...* (ՀԺՀ, V, 44):

- Գ'ըրվանա խօսօղ - Խոսքի առիթը բաց չթողնող: *Գ'ըրվանա խօսօղ մարթ ա, տա՛րէք', թօ խօսէ* (Ձ):

ԳԸՐԱՎԱՉԻ/ԳԻՐԱՎԱՉԻ - *ածական.* Հարմար պահը իրեն ծառայեցնող, հաջող դիպվածից օգտվող: *Գ'իրավաչի կընէգ'ա, վըխտէն պ'ուրթը թակից, պըրծավ* (Բ):

ԳԸՐԱՎՔԱՇ/ԳԻՐԱՎՔԱՇ - *գ.* Պարտքի դիմաց որեւէ բան բռնի վերցնելը՝ առգրավելը: *Էտ գ'ըրավքաշանը յը'տը տահանք էլ կըրը'ցէն վէչ ապըրին* (Ձ):

ԳԸՐԳԱՄՕՏ - *տեմ* ԿԸՐԿԱՄՕՏ:

ԳԸՐԳԸՎԻԼ/ԳԻՐԳԸՎԻԼ - 1. *նբ.* Ուժգնորեն ձգել՝ լարել՝ պրկել: *Ուստան ք'էչան գ'ըրգ'ըվում ա, ըսքըսում չափէլը* (Ձ): 2. *չբ., կբ.* Ուժգնորեն ձգվել՝ լարվել՝ պրկվել: *Հիշկան ծիք' ա տամ, էլիա էտ կաշին գ'ըրգ'ըվում չի* (Բ):

- Գ'ըրգ'ըված կաշի - Չոր՝ արեւահար իր: *Էտ շօրէրը իրը'վէն տական հըվա՛քէ, տը'ռալ ա գ'ըրգ'ըված կաշի* (Ձ):

ԳԸՐԳԻ/ԳԻՐԳԻ - *ածական.* Ուժգնորեն ձգված, ձիգ, պիրկ: *Էզգանան գ'ըրգ'ի շօր ար կ'ը'նում* (Ձ):

ԳԸՐԴՆՔԻՐ/ԳԻՐԴՆՔԻՐ - *գ.* Մեծ սղոց՝ խզար, որ բանեցվում է երկու հոգով: *Գ'ըրդանքիրը յօր ըն օնում, մին սըհաթումը էտ ծառը կըտորում* (Ձ):

- Գ'ըրդանքիր քաշիլ - *տեմ* ԳԸՐԴԸԲԻՐԻԼ:

ԳԸՐԴԸԲԻՐԻԼ/ԳԻՐԴԸԲԻՐԻԼ - *նբ.* Մեծ սղոցով՝ խզարով, կտրել՝ սղոցել: *Էտ կ'էրանը գ'ըրդըբիրում ըն, էրում* (Բ):

ԳԸՐԴՈՒՆԱՏԷԼ/ԳՈՒՐԴՈՒՆԱՏԷԼ - *տեմ* ԳԸՐԴՕՆԷԼ:

ԳԸՐԴՕՆ/ԳՈՒՐԴՕՆ - *գ.* Փայտի սղոցված կամ ճեղքված մեծ կտոր: *Էտ փանդը կըտորում ըն, տը'ռնում ա քըսան գ'ըրդօն* (Ձ):

ԳԸՐԴՕՆ-ԳԸՐԴՕՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ'ըրդօն-գ'ըրդօն անէլ - *տեմ* ԳԸՐԴՕՆԷԼ:

ԳԸՐԴՕՆԷԼ/ԳՈՒՐԴՕՆԷԼ - *նբ.* Փայտը սղոցելով կամ ճեղքելով մեծ կտորների բաժանել: *Էտ կաղնէ կ'էրանը գ'ըրդօնում ա, պէռնում էշին, քըշանում սիրըկանէն տօնը* (Ձ):

ԳԸՐԷԳԻ - *տեմ* ԿԻՐՆԿԻ:

ԳԸՐԸՆ-ԳԱՐԱՆ - *տեմ* ԳՆՀ-ԳՆՀ:

ԳԸՐՎԱՆՔԱ/ԳԻՐՎԱՆՔԱ - 1. *գ.* Ծանրության չափ, որ հավասար է 409 գրամի: *Էս Պըլը-Մէլին մին շատ լանվ էծ ա ինըմ, վէր օրէկան վէց գ'ըրվանքա կաթն ա տամ* (ՀԺՀ, VI, 190): 2. *տեմ* ԳԸՐՎԸՆՔԱՆՈՒՑ:

ԳԸՐՎԸՆՔԱՆՈՒՑ/ԳԻՐՎԸՆՔԱՆՈՒՑ - *գ.* Մեկ գրվանքա՝ 409 գրամ, ծանրություն ունեցող կշռաքար: *Գ'ըրվընքանուցը տինում ա քըշըռքէն, քըշըռում, տը'սնում էտ ծէտը մին գ'ըրվանքա էլ չի կա* (Ձ):

ԳԸՐՎԻՆ/ԳԻՐՎԻՆ - *մ.* Հարմար պահին՝ ժամանակին: *Գ'ըրվին յը'կավ, թօթը թափից, ք'ը'ցավ* (Բ):

ԳԸՓԱՏԸ'Ղ - *գ.* Ջվարճախոսության՝ կատակի՝ հանաքի տեղ՝ առիթ: *Ինրուգ'ուններն ընտրանց խաղ անէլը գ'ըփատը'ղ ա* (Ձ):

ԳԸՓԸՎԱՉԻ - *տեմ* ԳԸՓԸՎԱՐԻ:

ԳԸՓԸՎԱՐԻ - *ածական. մ.* Որպես կատակ, կատակի նման: *Գ'ըփըվարի էլ վէր մին պէն ըս ասում, ք'ը'փէն նի յա կ'ամ* (Բ):

ԳԻԴՆԼ/ԳԸՆԼ/ԳԻԴՆԼ *(գրբ. գիտեմ)* - *նբ.* 1. Որեւէ մեկի կամ մի բանի մասին տեղեկանալ, տեղեկություն իմանալ: *Մին օր էլ շէնին ջիհիլնէն գ'իդանցալ ըն, քըշէրը Մամէդին ա Մարյամէն ըսպանալ* (ԱԱ, 21): 2. Որեւէ բանի մասին անհրաժեշտ գիտելիքներ ունենալ, տիրապետել, հմտություն ունենալ: *Իզէն բաստան բի-*

ջՆրիլը լ՚ավ ա գ՚ուդում (Բ): 3. Գիտակցել, գլխի ընկնել, կռահել: *Յը՞ս լ՚ավ ըմ գ՚ուդում, թա հինչու հը՞տէ յըս յը՞կալ* (Բ): 4. Համարել, ընդունել, կարծել: *Շատէրը գ՚ուդում ըն, թա ըտը՞ղ սըխտօրը շատ ա, ըտըրա հէտէ յա անումը ըտի...* (ԱԱ, 23): 5. Մտքով ըմբռնել, հասկանալ: *Կըռը՞վ ա, վէչ մինը գ՚ուդում չի, թա հինչ ա անում* (Բ): 6. Ճանաչել, ծանոթ լինել: *Քըդաքըմը լօխ գ՚ուդում ըն ընդրրա* (Բ): 7. Կողմնորոշվել: *Գ՚իդանալ չըն, թա հինչ անըմ տինին* (ԱԱ, 21): 8. Զգայել, ընկալել: *Ըտըրանա յը՞տը էտ մարթը վէչ համ ա գ՚ուդում, վէչ վը՞տ* (Զ): 9. Նկատի ունենալ, հաշվի առնել: *Գ՚իդա, վէր ըռըչիտ տիժըրօթուն շատ ա ինանկան* (Զ): 10. Երեւան հանել, բացահայտել: *Հը՞տը պահից, վը՞ռսէն յաթաղը գ՚իդանց* (Բ): 11. Գործածվում է որպես սպառնական, զգուշացման արտահայտություն (հրամայականը): *Մարդի տըղա, գ՚իդա, վէր մէհէտ էլ ըստը՞ղէք՚ ըրվացէլ, վէրչըտ տըլական ըմ* (Զ): 12. Գործածվում է որպես վերաբերական՝ խոսակցի ուշադրությունը գրավելու նպատակով: *Ը-սօր, գ՚ուդում ը՞ս, ըշտը՞ղ ըմ իլալ* (Զ):

- Գ՚իդա վէր - Ուրեմն: *Ղարաբաղցէն վէր մին պէնը ասում ա, գ՚իդա վէր ընական ա, օգ՚ում ա լ՚ըհա Աստուծ էլ քըշանա* (Զ):

- Գ՚իդանցալ ըս, թա... - *տե՛ս* Պա հինչ ը՞ս գ՚իդանցալ: *Գ՚իդանցալ ըս, թա սուս ը՞մ ընական, չէ, սուս չըմ ընական* (Զ):

- Գ՚իդանցած ինիս - *տե՛ս* Լ՚ավ գ՚իդա: *Գ՚իդանցած ինիս, վէր էտ խօխան մին օր կըլօխըտ օյն ա պիրլանկան* (Զ):

- Գ՚ուդում ա, թա ճ՚ուրը ըշտըղավ ա ք՚ունում - Գործի էությանը տեղյակ է: *Էտ պըրակուրօրը գ՚ուդում ա, թա ճ՚ուրը ըշտըղավ ա ք՚ունում, մարթ ա դարկում, Սիմօնէն փըռնում ըն, տանում կօշտը* (Զ):

- Գ՚ուդում չի, թա հու վա մը՞ռալ, ինքը «վա՛յ Սանք՚ի» յա ծէն տամ - Ասում են նրանց մասին, ովքեր խոսում՝ գործում են՝ առանց բանի էությունը իմանալու:

- Չըգ՚իդալը տինիլ - 1. Անտեղյակ ձեւանալ: *Հարը չըգ՚իդալըն ա տինում, վէր խօխան նըդրսըրտէ վէչ* (Զ): 2. Անուշադրության մատնել: *Տըղան հօրը ասածը չըգ՚իդալը տիրանվ* (Բ):

ԳԻԴԼԱՎ/ԳԸԴԼԱՎ/ԳԻԴԼԱՎ - *տե՛ս* ԴԱՍԻԴ: *Իրէքինջի դ՚ենումը հաղ ըն անըմ էտ ըմճըկանավը, էտ ախճիգ՚ը գ՚իդալանվ տանիլ ա տամ* (ՀԺՀ, V, 571):

ԳԻԴԼՈՒՔ/ԳԸԴԼՈՒՔ/ԳԻԴԼՈՒՔ - *տե՛ս* ԳԻԴԼԱՎ:

ԳԻԴՑԱԾ/ԳԸԴՑԱԾ/ԳԻԴՑԱԾ - *տե՛ս* ՇԱՏԳԻԴ: *Կուճուր ախպէրը շատ գ՚իդացած ա ինում, միշտ մը՞ծէն կըլօխը վարում ա, դարկում հանդը* (ՆԼԴԺԲ, 93):

ԳԻԴՑԿԱՆՑ/ԳԸԴՑԿԱՆՑ/ԳԻԴՑԿԱՆՑ - *տե՛ս* ԴԱՍԻԴ: *Թաքավէրին տըղան մաննը կըծում ա, կիլօխ ա ընգնըմ, վը՞ր գ՚իդացկանց ա իտի ըրալ* (ՀԺՀ, V, 155):

ԳԻԴՆԱԿԱՆ/ԳԻԴՆԱԿԱՆ *(գրբ. գիտնական)* - 1. *գ.* Գիտության որեւէ բնագավառի մասնագետ, գիտությամբ զբաղվող անձ, գիտնական: *...Ինրան կօշտըն ա կանչըմ մէծամէծնէրին, գիդնականներէն, վը՞ր մին ճար անին, մին հընար անին, վը՞ր բաղը-բաղչան կընանչի* (ՀԺՀ, V, 84): 2. *ած.* Գիտելիքներով հարուստ, գիտուն: *Գ՚իդնական խօխա յա, շատ առաչ կըք՚ինի* (Զ):

ԳԻԴՈՒԹԻՒՆ/ԳԻԴՈՒԹԻՒՆ *(գրբ. գիտութիւն)* - *գ.* Գիտություն՝ բնության եւ հասարակության զարգացման օրինաչափությունները եւ արտաքին աշխարհի վրա ազդելու միջոցներն արտահայտող գիտելիքների ամբողջությունը, գիտությունը: *Գ՚իդութիւնը հիշկան առաշկ ք՚ը՞ցավ, մին ա, էլիա կըրը՞ցէն վէչ վիչիլին առաշկը օնին* (Բ):

ԳԻԹԿԱՆ/ԳԻԹԿԱՆ - *տե՛ս* ԳԻԴՆԱԿԱՆ(2):

ԳԻԼ/ԳԻԼ *(պրս. gil (կավ, հող)* - *գ.* Դեղնավուն փոքր քար, որ գործածվում է իբրեւ օճառ: *Միհէնգ՚ սապունը բօլ ա, էլ գ՚իլավ լըվաց անօղ չի կա* (Զ):

ԳԻԼԱՆԻ/ԳԻԼԱՆԻ - *գ.* Կանացի գոտի, որ փեսացուի տնից այլ բաների հետ ուղարկվում է հարսնացուին: *Խօնչա յըն շինում, գ՚իլանին էլ տինում մաչին, դարկում հըրթնըցուվէն* (Զ):

ԳԻԼՁ/ԳԻԼՁ/ԳԻՐՁ/ԳԻՐՁ *(ռուս. гильза)* - *գ.* Փամփուշտի կամ արկի խողովակաձեւ մասը, որի մեջ լցվում է վառոդը եւ ծայրին ագուցվում գնդակը, պարկուճ: *Դարաբաղ ըտի հանդ չի կա, վէր գիլզ չինի վէր ընգած* (Բ):

ԳԻԼԷ/ԳԻԼԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՚իլէ անէլ - *չբ.* Բողոքել, դժգոհություն արտահայտել: *Սաղ օրը պատէն տակէն նըստում ըն ըստըրանա-ընդրրանա գ՚իլէ անըմ* (Զ):

ԳԻԼԷՁԱ - *տե՛ս* ԳԸԼԷՁԱ:

ԳԻՆԳԸԼԸԽՏԱՆ(Ա) - *տե՛ս* ԳԸՆԳԸԼԸԽՏԱՆ(Ա):

ԳԻՐ - *տե՛ս* ՔԸՇԸՌԱՔԱՐ:

ԳԻՐԱՎ - *տե՛ս* ԳԸՐԱՎ:

ԳԻՐԱՎԱ - *տե՛ս* ԳԸՐԱՎԱ:

ԳԻՐԱՎԱՉԻ - *տե՛ս* ԳԸՐԱՎԱՉԻ:

ԳԻՐԱՎՔԱՇ - *տե՛ս* ԳԸՐԱՎՔԱՇ:

ԳԻՐԳԱՄՕՏ - *տե՛ս* ԿԸՐԿԱՄՕՏ:

ԳԻՐԳԱՆԻ/ԳԻՐԳԱՆԻ - *գ.* Հացաբույսի տեսակ: *Էտ հանդումը լ՚ավ գ՚իրգ՚անի յա ինում* (Զ):

ԳԻՐԳԸՎԻԼ - *տե՛ս* ԳԸՐԳԸՎԻԼ:

ԳԻՐԳԻ - *տե՛ս* ԳԸՐԳԻ:

ԳԻՐԴՆԲԻՐ - *տե՛ս* ԳԸՐԴՆԲԻՐ:

ԳԻՐԴԸԲԻՐԻԼ - *տե՛ս* ԳԸՐԴԸԲԻՐԻԼ:

ԳԻՐՁ - *տե՛ս* ԳԻԼՁ:

ԳԻՐԹ - *մ.* Միանգամից, կտրուկ, շեշտակի: *Թաքավը՞ր վը՞ր պըրանում ա, թա պատառ դինջանա, գ՚իրթ քընավ ա ընցնում...* (ՆԼԴԺԲ, 44):

- Գ՚իրթ-գ՚իրթ խօսէլ - Կոպտորեն խոսել: *Էտ հարթնը ըսկըսվօրը նըհը՞տ գ՚իրթ-գ՚իրթ ա խօսում* (Զ):

ԳԻՐՎԱՆՔԱ - *տե՛ս* ԳԸՐՎԱՆՔԱ:

ԳԻՐՎԸՆՔԱՆՈՒՑ - *տե՛ս* ԳԸՐՎԱՆՔԱՆՈՒՑ:

ԳԻՐՎԻՆ - *տե՛ս* ԳԸՐՎԻՆ:

ԳՆԻԳՆԻՄ - *գ.* Նեղ բերանով պղնձե սափոր: *Արչը ասմա.- Էն ա փըլան ծառէն տակին մին գ՚ուգ՚ում փօղ կա, ք՚ինա յէր կալ...* (ՀԺՀ, VI, 245):

ԳՆԻՌԱՐ - *տե՛ս* ՄԱՌԱՐ-ԳՆԻՌԱՐ:

ԳՈՒՁԱԿ - *գ.* Հաստ թել՝ կապ: *Միշուկնէն լըցնում ա, ըռխընէն գ՚ուզակավ կապում, տանրսում* (Զ):

ԳՈՒՁԱԿԷԼ - *նբ.* Հաստ թելով՝ կապով կապել, փաթաթել՝ չբացվելու՝ ցրիվ չգալու համար: *...Շալվարին էրկու թայը տըզզանավ յա զըկռավ լըցած, հանա խունջանավը էլ պէրանը գ՚ուզակած, օսուքը քըցած՝ տօն կըկար...* (ՋՏ, Ա, 30):

ԳՆԻՁԱՄ - *տե՛ս* ՊԷՐԱՆ(1):

ԳՆԻՁԱՄ - *գ.* Գառան ամբողջական կտրած բուրդ: *Չօբանը էրկու կ՚առան գ՚ուզամ ա տաս, մին ցակատ կապէլ տաս* (Զ):

ԳՆԻՁԼԱԳ՚ - *տե՛ս* ԸՂՎԸՍՀԱՔ՚Ի(2):

ԳՆԻՁԼԱԿ *(թրք. güzlek (աշնան անձրեւ)* - 1. Բողբոջ: *Խընձօրանում գ՚ուզլակնէն վէր ա յը՞կալ ցուրտան* (Բ): 2. Աշնանը բուսած կանաչ խոտ: *Հիյվընէն բօլբօլ գ՚ուզլակ ըն օտում* (Զ):

- Գ՚ուզլակը տանս քըցիլ - Բողբոջել: *Էրկու օր էլ վէր հավա անէ, ծըռէրէն գ՚ուզլակը տանս ա քըցըլանկան* (Բ):

ԳՆԻԼ *(պրս. gul, թրք. gül)* - *գ.* 1. Վարդենու ծաղիկը, վարդ: *Մին գ՚ուլ ա պուք տամ, վը՞տ ընէլավ ք՚ունում* (Զ): 2. *տե՛ս* ԳՆԻԼԻ: 3. Վարդի պատկերը որեւէ բանի վրա: *Գաբին գ՚ուլէրը ըտըրա շատ ա տուր կ՚ամ* (Զ): 4. *փխբ.* Որեւէ բանի ընտիր՝ լավագույն կողմը: *Էս բաղէն գ՚ուլը էտ տանձին ա ինում* (Զ): 5. Վարդանման կանացի զարդ: *Էտ ըմճըկանը տօշին գ՚ուլը պըսպըղէ յա տամ* (Բ): 6. *ած. փխբ.* Վարդի նման, շատ գեղեցիկ: *Գ՚ուլ ախճիգ՚ ա* (Բ):

- Գ՚ուլը աչըլմիշ ինիլ/պէնվալ - *տե՛ս* Ունքամաչը յը՞տ կանալ: *...Յարը յարին տըսնալավ գ՚ուլը աչըլմիշ կինի* (ԼՂԲ, 113):

- Գ՛ուլը քաշիլ - *տե՛ս* Աշկէն գ՛ուլը քաշիլ:

- Գ՛ուլու նըման պահէլ - Լավ խնամել, բոլոր կարիքները հոգալ: *Խօրթ մարը ը-տըրանց գ՛ուլու նըման ա պահում* (Զ):

- Գ՛ուլու նըման պէնվալ - Գեղեցկանալ: *Էտ ախճիգ՛ը օրկանցօր գ՛ուլու նըման պէնվում ա* (Զ):

- Գ՛ուլու նըման պըրծընէլ - Փորձանքից անվնաս ազատվել: *Պատը պարան յը՛կավ, խօխէնք՛ը փախէն, գ՛ուլու նըման պըրծէն* (Բ):

- Գ՛ուլու պատառ - Շատ գեղեցիկ: *Գ՛ուլու պատառ ըխճըկանը ըտի էլ էտ ախմաղ մարթին նըհէտ զօռռավ փըսակում ըն* (Զ):

- Գ՛ուլ քըղէլիս ծը՛ռքըտ փօշ կըծակէ - Որեւէ արդյունքի հասնելիս կրում են նաեւ դրա հետ կապված դժվարություններն ու անախորժությունները: *Հ՛ոը ասմա.- Գ՛ուլ քըղէլիս ծը՛ռքըտ փօշ կըծակէ, օգում ըս՝ տօն շինիս, բիդի չըրչարվիս* (Զ):

Գ՛ուլ ք՛իմի - *տե՛ս* ԳՆԻԼ(6):

ԳՆԻԼՆԸԲԱԹՈՒՆ - *տե՛ս* ԳՆԻԼԲՆԹՈՒՆ:

ԳՆԻԼՆԸԲԱՂ - *գ.* Վարդանոց, ծաղկանոց: *Մէժլում մէլիք՛ին մին հանց գ՛ուլնբաղ ա ինում, վէր ըշխարքէս տակէն հինչ ծաղէգ՛ ասիս, մաչին ինում ա* (Զ):

ԳՆԻԼՆԸ[1] *(թրք. güreş)* - *գ.* Կոխ, ըմբշամարտել: *Առաչ հըրսընքը՛ցան գ՛ուլնշը անպակաս ար* (Զ):

- Գ՛ուլնշ փըռնէլ - Կոխ բռնել, ըմբշամարտ: *Գ՛ուլնշ ըն փըռնում, էտ տըղան դէվին յը՛խնում ա* (Զ):

ԳՆԻԼՆԸ[2] - *գ.* Հավի մսով, սոխով, լոլիկով պատրաստվող կերակրատեսակ: *Մին լ՛ավ գ՛ուլնշ ա իփնում, տամ դունըդնէրէն* (Բ):

ԳՆԻԼՆՌՆԷ - *գ.* Բալենի: *Գ՛ուլնռնէն չուրացալ ա* (Բ):

ԳՆԻԼՆՌՆԸ - *գ.* Բալ: *Յէր ա ինում ծառը, վէր գ՛ուլնռնը օտէ, վէր ա ըղնում, վը՛ննը կօտրում* (Զ):

ԳՆԻԼՆՌՆՕՏ - *գ.* Բալենիներով առատ տեղ, բալենու ծառաստան: *Խօգ՛էրը նի յըն տը՛ռնըմ գ՛ուլնռնօտը* (Զ):

ԳՆԻԼՆՍ/ԳԷԼՆՍ *(գրբ. կեռաս, թրք. kiraz, հուն. kerasos)* - *գ.* Կեռաս: *Գ՛ուլնսը ծառէն յըրա չուրընաս ա լնալ, վէր տըռաս ըխպիրին ճիրին մաչը* (ԱԱ, 56):

ԳՆԻԼՆՍԻ/ԳԷԼՆՍԻ - *գ.* Կեռասենի: *Մարթը արչին ծէրքան փըռնում ա, տանում գ՛ուլնսուն տակէն նըստըցընում* (ՆԱԲ, 87):

ԳՆԻԼՆՍՕՏ/ԳԷԼՆՍՕՏ - *գ.* Կեռասենիներով առատ տեղ, կեռասենու ծառաստան: *Ամմէն օր տահանք ք՛իս ըն գ՛ուլնսստը, փուրընէն տըռըզած կաս* (Զ):

ԳՆԻԼԲ/ԿՆԻԼԲ/Ք՛ՆԻԼԲԱ *(գրբ. գուլպայ)* - *գ.* Գուլպա: *Մին հանց գ՛ուլբա յա կ՛օրծում, վէր լօխ մընամ ըն ըրմացած* (Զ):

ԳՆԻԼԲԱԹԻԼ/ԿՆԻԼԲԱԹԻԼ/Ք՛ՆԻԼԲԱԹԻԼ - *գ.* Գուլպա գործելու թել: *Մին կըծէգ՛ գ՛ուլբաթիլ ա տամ, վէր ուրանը հը՛տէ գ՛ուլբա կ՛օրծէ* (Բ):

ԳՆԻԼԲԸԹՈՒՆ/ԳՆԻԼԸԲԱԹՈՒՆ - *ածական.* Ոսկեհյուս, ոսկեթելերով հյուսած: *Խէլքըս կըլխաս տանում ա գ՛ուլբաթուն քու ծամը* (ԼՂԲ, 78):

ԳՆԻԼԲԱԾ/ԿՆԻԼԲԱԾ/Ք՛ՆԻԼԲԱԾ - *ածական., մ.* Միայն գուլպա հագած՝ առանց կոշիկի: *Կ՛ամ ա, տը՛սնում մին գ՛ուլբաած ախճիգ՛ ըտը՛ղ վը՛ննը կացած* (Զ):

ԳՆԻԼԲԱԿԱՊ/ԿՆԻԼԲԱԿԱՊ/Ք՛ՆԻԼԲԱԿԱՊ - *գ.* Գուլպան ոտքին ամրացնելու կապ՝ ժապավեն: *Գ՛ուլբակապը ծիք՛ ա տամ, պէնդ կապում* (Զ):

ԳՆԻԼԲԱՀԱՐ - *գ.* Գարնանային վարդ: *Կարունքը վէր կ՛ամ ա, մէր բաղէրը գ՛ուլբահարավ լըցնում ա* (Զ):

ԳՆԻԼԲԱՃԱՂ/ԿՆԻԼԲԱՃԱՂ/Ք՛ՆԻԼԲԱՃԱՂ - *գ.* Մետաղյա կամ փայտե բարակ ու կլոր ձողիկ՝ գուլպա գործելու համար: *Գ՛ուլբաճաղը հէնգ՛ը բիդի, վէր կարիս գ՛ուլբա կ՛օրծիս* (Բ):

ԳՆԻԼԲԱՆԱԽՇ/ԿՆԻԼԲԱՆԱԽՇ/Ք՛ՆԻԼԲԱՆԱԽՇ - *գ.* Գուլպայի նախշ, զանազան պատկերներ գուլպայի վրա: *Էտ գ՛ուլբանախշը հըրթնըցուվէն շատ ա տուր կ՛ամ* (Զ):

ԳՆԻԼԲԱՎԷՐ/ԿՆԻԼԲԱՎԷՐ/Ք՛ՆԻԼԲԱՎԷՐ - *ածական.* Գուլպաներ հագած: *Գ՛ուլբավէր մարթը մըրսէլ չի* (Զ):

ԳՆԻԼԲԱՑՈՒ/ԿՆԻԼԲԱՑՈՒ/Ք՛ՆԻԼԲԱՑՈՒ - *գ.* Գուլպա գործելու հումք՝ թել, բուրդ եւն: *Ք՛ասիբ կընէգ՛ ա, տանը մին գ՛ուլբացու էլ չի կա* (Բ):

ԳՆԻԼԲՕԽՃԱ/ԳՆԻԼԲՕԽՃԱ - *գ.* Վարդերով զարդարված կապոց: *Հըրթնըցուվէն հը՛տէ գ՛ուլբօխճա ղըրկը՛ցէն* (Զ):

ԳՆԻԼԲՕԽՉԱ - *տե՛ս* ԳՆԻԼԲՕԽՃԱ:

ԳՆԻԼԳՆՁ - *ածական.* 1. Վարդանման կարմիր: *Գ՛ուլգ՛անզ շՅր ա կ՛ը՛ցալ* (Բ): 2. *փխբ.* Գեղեցիկ, սիրուն: *Կը՛ցինըտ ա ալ խասը, խըստինըտ ա գ՛ուլգ՛անզը* (ԼՂԲ, 92):

ԳՆԻԼԴՆԻՐ-ԳՆԻԼԴՆԻՐ - *մ.* Մղկտալով, աղիողորմ, հոնգուր-հոնգուր: *Կ՛ամ ա, տը՛սնում, գ՛ուլդ՛ուր-գ՛ուլդ՛ուր լանց ինում* (Զ):

ԳՆԻԼԲՄԱԽՄՈՒՐ - *ածական.* Վարդագույն թավիշից կարված: *...Գ՛ուլբմախմուր ըրխալուղը կ՛էնում ա, պէլունց տօն ք՛ինըմ* (ՋՏ, Ա, 215):

ԳՆԻԼԲՍՏԱՆ *(պրս. golestan, թրք. gülistan)* - *տե՛ս* ԳՆԻԼՆԲԱՂ:

ԳՆԻԼԻ - 1. *գ.* Վարդի թուփ, վարդենի: *Գ՛ուլին էնքան գ՛ուլ ա յէր կալնալ, վէր հիշքան քաղում ըն, պըրծընում չի* (Զ): 2. *ածական.* Վարդագույն: *Գ՛ուլի թուշէրավ ախճիգ՛ ա* (Բ): 3. *ածական.* Վրան ծաղիկներ նկարված՝ հյուսված՝ քանդակված: *Գ՛ուլի շալը քըցնալ ա* (Բ):

ԳՆԻԼԻԳՆՍՏՆՆ - *տե՛ս* ԹՕՐՆԸՍՔԸՆՆԻՄ:

ԳՆԻԼԼՆ *(պրս. gulle (գնդակ, փամփուշտ)* - *գ.* 1. Հրազենի գնդակ: *Էտ տըղան մին էլ ա գ՛ուլլան յըրա անըմ, վագըրը յէր ա ընգնում, ըստակըմ* (ՀԺՀ, V, 29): 2. Խաղողի հատիկ: *Կօզնին թանվիլ ա տամ, խաղվէն գ՛ուլլէք՛ը փուշէրավը յօր օնում, տանում ճուտէրէն հը՛տէ* (Զ): 3. Լուցկու հատիկ: *Գ՛ուլլանն թափ ա տամ, տինում խստէն տակէն, տիզը նի կընցընում* (Զ):

- Գ՛ուլլանն նի կ՛անալ - Հրազենի գնդակով վիրավորվել: *Կընռվէն վախտը գ՛ուլլանն յա նի յը՛կալ, մինչը՛վ մընէնգ՛ կընալը գ՛ի յա տամ* (Բ):

- Գ՛ուլլանն հը՛տան հըսնէլ չի - Շատ արագ է փախչում՝ հեռանում: *Արչին վէր տը՛սնում ա, փախչում ա, հունց ա՞ փախչում, գ՛ուլլանն հը՛տան հըսնէլ չի* (Զ):

- Գ՛ուլլանն տափը չընէլ - 1. Անվրեպ կրակել, դիպուկահար լինել, ճիշտ նշանակետին խփել: *Խօնդ՛ուց Արշակը լ՛ավ վը՛ռսկան ա, գ՛ուլլանն տափը չի ընում* (Զ): 2. Միշտ հաջողության մեջ լինել: *Ապան կընլօխը պընցընցընում ա, թոռնանը ճըկատան պաչում, թա.- Աստուծ ք՛ը՛զ ք՛ՕմՆգ՛ անէ, գ՛ուլլանտ տափը չընէ* (Զ):

- Գ՛ուլլանն տաք պահէլ - Միշտ զգաստ՝ պատրաստ լինել: *Վը՛ռս ք՛ինօը գ՛ուլլանն տաք բիդի պահէ* (Զ):

- Գ՛ուլլու բաղ - Պտղաբեր այգի: *Ը-տըրանց ինում ա մին գ՛ուլլու բաղ* (ՀԺՀ, V, 15):

- Գ՛ուլլու ըռը՛խ ընէլ - Պատերազմ գնալ, կյանքը վտանգի ենթարկել: *Կընռը՛վը թունդից, ջիհիլնէն սաղ գ՛ուլլու ըռը՛խ ընգէն* (Զ):

- Գ՛ուլլու նըման - Շատ արագ, սրարշավ (գնալ, փախչել, թռչել, հասնել եւն): *Գ՛ուլլու նըման խըբարը հըսավ շէնը, թա ուրուգ՛ու կընուբումը մանալլու լէկցյա յա ինական* (ՀԲ, 349):

- Գ՛ուլլու փայ տը՛ռնալ - Սպանվել, գնդակահարվել: *Ընդինու նըման տըղան ք՛ը՛ցավ, գ՛ուլլու փայ տը՛ռավ* (Բ):

ԳՆԻԼԼՆԹԱԿ - *ածական.* Գնդակոծված, գնդակաձեռ: *Գ՛ուլլանթակ շէն ա, ժուղովուրթը մին թանիրանվ ըն ապրում* (Բ):

- Գ՛ուլլանթակ անէլ - Գնդակոծել: *Գ՛ուլլանթակ ընէն, տանը մընընկնէն կուտընրտը՛ցէն, նի տը՛ռէն* (Զ):

- Գ՛ուլլանթակ ինիլ/տը՛ռնալ - Գնդակոծվել: *Էս շէնը կընռվէն վախտը շատ ա գ՛ուլլանթակ իլնալ* (Զ):

ԳՆԻԼԼԼ-ԳՆԻԼԼԼ - *մ.* Մեկ-մեկ, առանձին-առանձին, հատ-հատ: *Պիրում ա էտ ծուվէնը գ՛ՀԼԼ-գ՛ՀԼԼ պըտատում, տինում յիշիգ՛ումը* (Ձ):

ԳՆԻԼԼՆՎԸՐՍ - *տե՛ս* ՔԸՆԹԸՌՆԱՎԸՐՍ:

ԳՆԻԼԼՆՏՕՐ - *տե՛ս* ԳՆԻԼԼԸԽԱՐԱՎ:

ԳՆԻԼԼԸԲԱՂԻ - *գ. տե՛ս* Գ՛ՀԼԼՀ բաղ: *Իմ մ՚ար ինձ նըհէտ յաղի յա, Ծամէրըս գ՛ՀԼԼ ընբաղի յա* (ԼՂԲ, 18):

ԳՆԻԼԼԸԲԱՐՈՒԹ - *գ.* Գնդակի վառոդ: *Գ՛ՀԼԼԸԲարութը պըրծընում ա, գ՛ՀԼդում չընը, թա հինչ անին* (Ձ):

ԳՆԻԼԼԸԲՕՐԱՆ - *գ.* Գնդակների տարափ: *Գ՛ՀԼԼԸբօրան ար, վէր շէնին յըրա վէր ար տը՚ռնըմ* (Ձ):

- Գ՛ՀԼԼԸբօրան անէլ - Գնդակների տարափ տեղալ: *Գ՛ՀԼԼԸբօրան ըրէն, լօխճին կուտուրը՚ցէն* (Բ):

ԳՆԻԼԼԸԽԱՐԱՎ - *ած.* Գնդակով խոցոված՝ խոցված՝ սպանված: *Գ՛ՀԼԼԸխարավ ջիհիլնէ ին, վէր ակօփնէրան տՀուս ին տամ* (Ձ):

- Գ՛ՀԼԼԸխարավ անէլ - Գնդակով սպանել: *Թա քանէնին ա գ՛ՀԼԼԸխարավ անում, Աստուծ կըգ՛իդա* (ԱԱ, 39):

- Գ՛ՀԼԼԸխարավ ինիլ/տը՚ռնալ - Գնդակով սպանվել: *Հիշկան ջՀիհլ տըղէք՚ գ՛ՀԼԼԸխարավ իլին* (Ձ):

ԳՆԻԼԼԸՀԱՆ - *ած.* Հատիկները պոկած՝ հանած (խաղողի ողկույզ): *Կ՛ամ ա, տը՚սնում ճիթէրը լօխ գ՛ՀԼԼԸհան* (Ձ):

- Գ՛ՀԼԼԸհան անէլ - Խաղողի ողկույզի հատիկները մեկ առ մեկ պոկել: *Գ՛ՀԼԼԸհան ըրավ, վարէննի իփից* (Ձ):

- Գ՛ՀԼԼԸհան ինիլ/տը՚ռնալ - Խաղողի ողկույզի հատիկները մեկ առ մեկ պոկվել: *Խընդօղնուն ճիթը տիժէր ա գ՛ՀԼԼԸհան ինում* (Բ):

ԳՆԻԼԼԸՔԱՇԻ - *գ.* Կեռ ծայրով երկաթե ձող, որի միջոցով հրացանի փողից քաշում եւ հանում են գնդակը կամ լաթը: *Գ՛ՀԼԼԸքաշին քըցՀվ, գ՛ՀԼԼՀն տՀուս կալՀվ* (Ձ):

ԳՆԻԼՉԻՉՀԳ *(թրք. gülčičăk)* - *գ.* Վարդածաղիկ, վարդի նմանություն ունեցող ծաղիկ: *Մին փօնջ գ՛ՀԼչիչՀգ ա քաղում, տանում տամ հըրթնըցուվէն* (Բ):

ԳՆԻԼՆԻԼ *(պրս. gulül (ոլոռ)* - *գ.* 1. Լոբու նման պատենավոր բույս՝ գնդաձեւ հատիկներով: *Գ՛ՀԼՀԼ ա քաղում, գ՛ՀԼդում ա, թա հՀԼէռն ա* (Ձ): 2. Սեւ, կլոր սերմերով մոլախոտի տեսակ: *Արտը գ՛ՀԼՀԼ կալՀվ ա* (Բ): 3. *տե՛ս* ԳՆԻԼԼԼ:

ԳՆԻԼՆԻՄ *(թրք. gülüm (իմ ծաղիկ)* - *գ.* Փունջ՝ ծաղկեփունջ: *Իմ գ՛ՀԼՀումը քաղած ա, Պը՚ցուր սարին կը՚էղած ա* (ԼՂԲ, 26):

ԳՆԻԼՆԻՐ - *տե՛ս* ԳՆԻԼԼԼ(2, 3):

ԳՆԻԼՕՏ - *տե՛ս* ԳՆԻԼԼԸԲԱՂ:

ԳՈՒԽԽՕՐՈՒՐԹ - *տե՛ս* ԳՈՒԽՍԱՎԷՏ:

ԳՈՒԽՍԱՎԷՏ - *հպվ. գ.* 1. Գյուղական խորհուրդ՝ խորհրդային իշխանության սկզբնական օրգան գյուղական վայրերում: *Շէն ա իլՀլ՝ գ՛ուխսավէտ չիլՀլ* (Ձ): 2. Գյուղական խորհրդի նախագահ: *Շէնին գ՛ուխսավէտը Փըրըմազանց Շահէնն ա իլՀլ կըռվէն վախտը* (Բ):

ԳՈՒՂ - *տե՛ս* ԿՈՒՂ:

ԳՈՒՂԱՊԷՏ - *գ.* Գյուղի վարչական գործերի կառավարիչ՝ գյուղապետ: *Ըտի էտ օյինբազը տը՚ռնըմ ա գ՛ուղապէտ* (Ձ):

ԳՈՒՂԱՐԱՆՔ - *տե՛ս* ԿՈՒՂԱՐԱՆՔ:

ԳՈՒՂԱՑԻ - *տե՛ս* ԿՈՒՂԱՑԻ:

ԳՈՒՄ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Գ՛ում անէլ - Կորցնել, անհետացնել: *Հիյվընէն տարավ ծըմակը, գ՛ում ը՚րավ* (Ձ):

- Գ՛ում ինիլ/տը՚ռնալ - Կորչել, անհետանալ: *Օշափը վէր կընգանը անըմը ըսկանում ա, ըտըղէրքատ գ՛ում ա ինում* (Ձ):

ԳՈՒՄԱՆ[1] *(պրս. gumān)* - 1. *գ.* Կասկած, տարակույս: *Ախճիգ՛ը գ՛ուման չօնար, վէր նը՚շանածը կարօղ ա ըտի պէն անէ* (Ձ): 2. *տե՛ս* ՈՒՄԷՌ (1): *Մարը հՀԼՀ գ՛ուման օնէ, վէր տըղան կ՛ըլական ա* (Ձ): 3. *տե՛ս* ՍԸ՚ՏՏ: *...Սըվաք՚ի՞ր, էս խէղճ կընէգ՛ը պէնա գ՛ուման չի* (ՀԱԲ, 15, 94):

- Գ՛ուման անէլ - Կասկածել, տարակուսել, կասկածի տակ առնել: *Թաքավէրը ըսկըսէս ա պըռավէն յըրա գ՛ուման անէլը* (ՀԺՀ, V, 576):

ԳՈՒՄԱՆ[2] - *տե՛ս* ԿԸՄԱՆ(ՑԷ):

ԳՈՒՄԱՆԻ - *մ.* Բախտի քմահաճույքին: *Հէյվանը լ՚ըհա ընդի գ՛ումանի թօղում ա ծըմակումը, ինքը կ՛ամ տօն* (Ձ):

ԳՈՒՄԲՈՒԹԱՆ *(թրք. günbatan (արեւմուտք)* - *գ.* Հորիզոնի այն կողմը, որտեղ մայր է մտնում արեւը, արեւմուտք: *Բիդի գ՛ունդուղանը յէշՀում ա, թա.- Ճէլ ըրէք՚, Ա՚ըրէ՚վը մար մընէլի վախտը ա* (Ձ):

ԳՈՒՄԸՆԱՏԸ՚Ղ - *գ.* 1. Կասկածի տեղ՝ առիթ: *Ըտըրա ըսըծնէն սաղ գ՛ումընատը՚ղ ա* (Բ): 2. *տե՛ս* ՈՒՄԸՂԱՏԸ՚Ղ:

ԳՈՒՄՓԱԼ/ԳԸՄՓԱԼ - *չբ.* Բարձր տեղից թնդյուն հանելով վայր ընկնել, դղրդալ: *Տանը կըլխան շիփըռը գըմփաց, ընգավ տափը* (Ձ):

ԳՈՒՄՓԱԼԻ/ԳԸՄՓԱԼԻ - *մ.* Թնդյուն հանելով, դղրդալով: *Քը՚րծան մին մը՚ծ քար ա պուք կ՛ամ, գ՛ումփալավ թուլուլ ընղնում* (Ձ):

ԳՈՒՄՓԳՈՒՄՓԱԼ/ԳԸՄՓԳԸՄՓԱԼ - *չբ.* Տեւական աղմուկ հանել, դղրդալ: *Յէրգ՛ինք՚ը գ՛ումփգ՛ումփամ ա* (Բ):

ԳՈՒՄՓԳՈՒՄՓԱԼԻ/ԳԸՄՓԳԸՄՓԱԼԻ - *մ.* Տեւական թնդյուն հանելով, դղրդալով: *Գ՛ումփգ՛ումփալի քը՚շանում ա* (Բ):

ԳՈՒՄՓԳՈՒՄՓՑ(Ը)ՆԷԼ/ԳԸՄՓԳԸՄՓՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* Տեւական թնդյուն՝ դղրդյուն առաջացնել: *Էտ քարէն թը՚խում ա, գ՛ումփգ՛ումփցընում* (Բ):

ԳՈՒՄՓԳՈՒՄՓՕՆ/ԳԸՄՓԳԸՄՓՕՆ - *գ.* Տեւական աղմուկ, դղրդյուն: *Էտ գ՛ումփգ՛ումփօնը հը՚ռանցէ ըսկանվում ա* (Ձ):

ԳՈՒՄՓԳՈՒՄՓՕՑ/ԳԸՄՓԳԸՄՓՕՑ - *տե՛ս* ԳՈՒՄՓԳՈՒՄՓՕՆ:

ԳՈՒՄՓԸՑ(Ը)ՆԷԼ/ԳԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* Թնդյուն՝ դղրդյուն առաջացնել: *Տը՚ռօղէն քը՚շտէն գ՛ումփըցընէլ բիդիս, հանցու գ՛իդա, վէր ք՚էգ էլ վը՚ռ օնիս* (ՆԱԲ, II, 54):

ԳՈՒՄՓՈՒԼ/ԳԸՄՓՈՒԼ/ԳՕՄՓՈՒԼ[1]/ԳՈՒՓՈՒՆ - *գ.* Մեծ մուրճ: *Էտ տըղան ք՚իս ա տօն, գ՛ումփուլը յօր ունէս, կ՛աս էտ սալ քարը կուտըրտէս* (Ձ):

ԳՈՒՄՓՕՆ/ԳԸՄՓՕՆ - *գ.* Աղմուկ, դղրդյուն: *Թաքավէրը էտ գ՛ումփօնը վէր ըսկանում ա, փախչՀում ա* (Ձ):

ԳՈՒՄՓՕՑ/ԳԸՄՓՕՑ - *տե՛ս* ԳՈՒՄՓՕՆ:

ԳՆԻՆՀՀ *(պրս. günah)* - *տե՛ս* ՄԷԽԿ:

ԳՆԻՆՀԾ *(թրք. güneš (արեգակ, արեւ)* - *տե՛ս* ԳՆԻՆԷ:

ԳՆԻՆԱՔԱՐ *(պրս. gonāhkar, gunāh-gār (մեղավոր, հանցավոր), թրք. günahkär (մեղավոր, մեղսագործ)* - *ած.* Սաստիկ ապշած, ապշահար, շշմած: *Էտ պառավը մընըմ ա մաթ մընացած, գ՛ՀնԱքար* (ՀԺՀ, V, 160):

Գ՛ՀնԱքար անէլ/թօղնէլ - Սաստիկ զարմացնել, ապշեցնել, շշմեցնել: *Էտ տըղէք՚ը Մարյանէն գ՛ՀնԱքար ընէլավ տՀուս ըն կ՛ամ, թա ք՚ինան* (ՆԼՂԺԲ, 50):

Գ՛ՀնԱքար ինիլ/մընալ - Սաստիկ զարմանալ, ապշել, շշմել: *Անուշ աքէրը մընաս ա գ՛ՀնԱքար...* (ՀԲ, 350):

ԳՆԻՆԱՔԱՐ-ՇԷՇՄԱ *(թրք. günahkär + šašma* - *տե՛ս* ԳՆԻՆԱՔԱՐ:

ԳՆԻՆԱՔԱՐ-ՓԷՇՄԱՆ - *տե՛ս* ԳՆԻՆԱՔԱՐ:

ԳՈՒՆԴՈՒՂԱՆ *(թրք. günčixan (արեւելք)* - *գ.* Հորիզոնի այն կողմը, որտեղից ծագում է արեւը, արեւելք: *Ա՚ըրէվը գ՛ումբութանան վէր տՀուս ա կ՛ամ, չօբանը էն ա ինում սարումը* (Ձ):

ԳՆԻՆԷ *(թրք. gün (արեւ), guney (հարավ)* - *ած.* Արեգակի դիմաց գտնվող, արեւահայաց, արեւկող: *Էս կ՛ումէրէն կօշտը գ՛ՀնԷ տը՚ղ ա, արէվը միշտ յիրան ընգՀծ...* (ՆԼՂԺԲ, 148):

Գ՛ՀնՀու աղվէս - Շատ խորամանկ անձ: *Ըտըրա էլ մին ժՀլիգ՛ հընգէր ա ինում՝ մին գ՛ՀնՀու աղվէս* (Ձ):

ԳՈՒՌ/ԳՕՌ[2] *(գրբ. գոռ (խրոխտ, զորավոր)* - *ած.* 1. Հորդ, հորդառատ: *Պիլթինուցա ախպ՚ուրը գ՛ուռ ախպ՚ուր ա* (Բ): 2. Թեժ, բորբոքված: *Ա՚հՀտ էտ քը-*

շէրէտ տը՛ղ մը շկէս ըք, մի գ՛ուռ կըրակ ընէս, խըրըվէս... (ՀԲ, 363): 3. Շեն, բարգաված, մարդաշատ: *Ճարտարը գ՛ուռ շէն ա* (Բ):

ԳՈՒՌԱՆԱԼ - *չբ.* 1. Հորդանալ, հորդառատ դառնալ: *Տարէն թուռուին ա իլլալ, ըխպ՚ուրնէն գ՛ուռացալ ըն* (Ձ): 2. Թեժանալ, բորբոքվել: *Փանդան յըրա յա տամ, կըրակը գ՛ուռանում ա* (Բ): 3. Շենանալ, բարգավաճել, մարդաշատ դառնալ: *Կըռվանը յը՛տը Հաթէրքը էլիա գ՛ուռացալ ա* (Բ):

ԳՈՒՌԱԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՛ուռաշ տալ - 1. *տե՛ս* ՀԸՎԱՔՎԷԼ: 2. *տե՛ս* Ղըլմըղալ անէլ:

ԳՈՒՌԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* 1. Հորդ՝ հորդառատ դարձնել: *Մին լ՛ավ ծ՚ուն յը՛կավ, ըխպ՚ուրնէն գ՛ուռըցըրավ* (Բ): 2. Թեժացնել, բորբոքել: *Կըրակը գ՛ուռըցընում ըն, կօխկէն պարանց ըղնում* (Ձ): 3. Շենացնել, բարգավաճ դարձնել: *Շէնէրքը ջըհիլնէն ըն գ՛ուռըցընում* (Բ):

ԳՈՒՎԱՄԻԾ *(թրք. güvenmek)* - *տե՛ս* ԳԱՌ:

-Գ՛ուվամիշ ինիլ - *տե՛ս* ԳԸՌԱՆԱԼ: *Կըզնըված ասըմ ա.- Դէ վէր ծէր օժէն յըրա էտքան գ՛ուվամիշ ըլած ըք, յէր կացէք՛...* (ՀԺՀ, V, 311):

ԳՈՒՎԳՈՒՎԱԼ - *չբ.* Տեւական դղրդալ՝ պայթել: *Թիվանգ՛նէն գ՛ուվգ՛ուվամ ըն* (Բ):

ԳՈՒՎԳՈՒՎՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* Տեւական դղրդյուն՝ պայթյուն առաջացնել: *Բօմբը տըրաքում ա, սաղ ծօրը գ՛ուվգ՛ուվցընում* (Ձ):

ԳՈՒՎԳՈՒՎՕՆ - *գ.* Տեւական դղրդյուն՝ պայթյուն: *Սաղ քըշէրը հըռանցէ գ՛ուվգ՛ուվօն ա ըսկանում* (Ձ):

ԳՈՒՎԳՈՒՎՕՑ - *տե՛ս* ԳՈՒՎԳՈՒՎՕՆ:

ԳՈՒՎՎԱԼ - *չբ.* Դղրդալ, պայթել: *Գըրանատը վէր գ՛ուվվաց, թօրքէրը փախէն* (Ձ):

ԳՈՒՎՎԸՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* Դղրդյուն, պայթյուն առաջացնել: *Յէրգ՛ինք՛ը գ՛ուվգ՛ուվցըրավ, հիյվընէն փախէն* (Բ):

ԳՈՒՎՎՕՆ - *գ.* Դղրդյուն՝ պայթյուն: *Մինան տըրաքում ա, գ՛ուվվօնը շէնան ըսկանվում ա* (Ձ):

ԳՈՒՎՎՕՑ - *տե՛ս* ԳՈՒՎՎՕՆ:

ԳՈ՚ՒՐԳ/ԿՕՔ՚/ԿՕՔ՚ - *գ.* 1. Կրծքի եւ բացված ձեռքերի միջի տարածությունը՝ գիրկ: *Խօխան լօք ա տամ, մօրը գ՛ուրգ՛ան կէնում* (Ձ): 2. Մարդու նստած ժամանակ փորի եւ ազդրերի միջեւ առաջացած փոս տեղը, գոգ: *Էտ տըղան վէր քօն ա ինում, ախճիգ՛ը կըլօխը գ՛ուրգ՛ան տ՚ուս ա օնում, տինում տափէն, ինք՛ը ք՛ինամ...* (ՆԼՊԺԲ, 70): 3. Շորի այն մասը, որ ծածկում է փորը եւ ազդրերը: *Էտ կընէգ՛ը գ՛ուրգ՛ը պահում ա, բաղվանչին ծէրան ա ածում* (Ձ): 4. Այնքան, ինչքան կարող է տեղավորվել գոգում: *Տա կըլխավը թըխում ա, քարան մին գ՛ուրգ՛ վը՛սկէ յա յէր տը՛ռնում* (ՀԺՀ, V, 223):

- Գ՚ուրգ՚ըտ լիգ՚ը ինի - *բրմդ.* Շատ զավակներ ունենաս:

- Գ՚ուրգ՚ին քարէրը վէր ածէլ - *տե՛ս* Քարը գ՚ուրգ՚ան վէր ածէլ:

- Գ՚ուրգ՚ում պահէլ/մընծընցընէլ - *տե՛ս* Հափըռէն մաչին պահէլ:

ԳՈՒՐԳԱՀ - *տե՛ս* Աշկը ծակ: *...Մին փիրփէտը ար մըզանըմ իժան մընացալ, էն էլ հըրուստնէն գ՚ուրգ՚ահու նըման յըրա յըն պըրծնըմ, առնըմ...* (ՋՏ, Ա, 113):

ԳՈՒՐԴՈՒՆԱՏԷԼ - *տե՛ս* ԳԸՐԴՈՒՆԱՏԷԼ:

ԳՈՒՐԴՕՆ - *տե՛ս* ԳԸՐԴՕՆ:

ԳՈՒՐԴՕՆԷԼ - *տե՛ս* ԳԸՐԴՕՆԷԼ:

ԳՈՒՐՋ *(պրս. gurz, թրք. gürz)* - *գ.* Իբրեւ զենք գործածվող ծանր ու կարճ գավազան՝ երկաթագամ մեծ գլխով: *Թափէղը զըրգ՛ան՚ին հըրաման ա տամ՝ ն՚ուրանն հէտէ մին հանց գ՛ուրգ շինին, վէր իրէք կ՛ումաշու քաշավ ինի* (ՆԱԲ, 39):

ԳՈՒՐՋԱ/ԳՈՒՐՋԱ *(ռուս. гюрза)* - *գ.* 1. Թունավոր իժերի մի տեսակը, գյուրզա: *Ջ՚ուրթնըմ ա, տը՛սնըմ մին գ՛ուրզա օց պիցըրանըմ ա, վը՛ր ընդըրանց փըռնի, օտի...* (ՀԺՀ, VI, 93): 2. *փխբ.* Խարդախ, անգութ (մարդ): *Էտ գ՚ուրզան ախպօրը տօնը քանդից* (Ձ):

ԳՈՒՐՋԱ - *տե՛ս* ԳՈՒՐՋԱ:

ԳՈՒՐՋԻ - *գ.* Վրաստանի հիմնական բնակչությունը, վրացի: *Ղարաբաղ խըրէգ՛ գ՚ուրջի կա* (Բ):

ԳՈՒՓՈՒՆ - *տե՛ս* ԳՈՒՄՓՈՒԼ:

ԳՕԲԱՋ - *ածական.* Թմբլիկ, գիրուկ (երեխաների մասին): *Գ՛ օբաջ խօխա յա* (Բ):

ԳՕԳՈՒԾ - *տե՛ս* ԳՕՐՈՒԾ:

ԳՕԳԻ - *ածական.* Մոխրագույն: *Գ՛ օգ՛ի յը՛զնը փախավ, Կ՛ ամ՚ուրը մընաց նըստած* (ԱԱ, 29):

ԳՕԴԱԿ *(թրք. gödek)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՚ուդ՚ակումը պըլօկված - Ծայրաստիճան աղքատ: *Գ՛ ուդ՚ակումը պըլօկված ա՞, կարում չի՞ մին շօր ինք՛ օնէ, հարթնանը կ՛ը՛ց տա* (Ձ):

ԳՕՋԱԼ - *տե՛ս* ԳՕՋԱԼ:

ԳՕՋԱԼ/ԳՕՋԱԼ *(թրք. gözəl)* - *ածական.* 1. Գեղեցիկ, չնաշխարհիկ: *Թաքավէրին տըղան ըտի էտ գ՛ օզալ ըխճըկանը յօր ա ունէս, ք՛իս* (Ձ): 2. Թանկագին, պատվական, գովելի: *Թաքավէրը գ՛ օզալ կինի յա տ՚ուս օնում, տահանց տամ* (Ձ): 3. *գ.* Գեղեցկուհի: *Ամմէն քըշէր էտ գ՛ օզալին տը՛սնում ա ըրազի* (Ձ):

ԳՕՋԱԿ[1] - *գ.* 1. Ջվալի կամ խուրջինի եզրերին կարած օղակներից յուրաքանչյուրը, որոնց միջով թել են անցկացնում եւ բերանը կապում: *Չըվալէն գ՛ օզալնէն կարում ա, տամ ըտըրան* (Ձ): 2. Դեմքը ծածկող ծոպավոր շղարշ, երեսակապ: *Գ՛ օզակը յը՛ստ ա քաշ՚ում, տը՛սնում ն՚ուրանը նըշանածը չի* (Ձ):

ԳՕՋԱԿ[2] *(պրս. gōza)* - *գ.* Բամբակի կնգուղ: *Պիմբակէն գ՛ օզըկնէն պէցվալ ա* (Ձ):

ԳՕՋԱՄԱ - *գ.* 1. Մեծ ջվալ: *Էրկու մէշուկ ցօրէն ա ածում, էլիա էտ գ՛ օզամ՚ան լըցնում չի* (Ձ): 2. *փխբ.* Որկրամոլ: *Գ՛ օզամ՚ամ մարթ ա* (Բ):

ԳՕՋԱՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՛ օզամիշ անէլ - Ջվալը՝ պարկը բերնեբերան լցնել: *Չըվալնէն գ՛ օզամիշ ա անում, ըրխընէն կըպօտում, պատէն տակէն շարում* (Ձ):

ԳՕՋԴՈՒՆԱԴՕՆԻՄ/ԳՕՋՈՒԱԴՕՆԻՄ - *տե՛ս* ԱԼԼԸՂԱԴՕՆԻՄ:

ԳՕՋՌԱԿ - *տե՛ս* ԳՕՋՌԱԿ:

ԳՕՋՌԱԿ/ԳՕՋՌԱԿ *(գրբ. կոզռն)* - *գ.* Ուղտի ձագ: *Գ՛ օզռակը ըստակում ա, էտ օղտը նըստած տը՛ղան յը՛ր չի կէնում* (Ձ):

ԳՕՋՎԱՌԱԴԻ - *մ.* *տե՛ս* Աշկու չափավ:

ԳՕՋՈՒՂԱԴՕՆԻՄ - *տե՛ս* ԳՕՋԴՈՒՆԱԴՕՆԻՄ:

ԳՕՋՈՒՄ *(թրք. göz (աչք))* - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՛ օզ՚ուն ն՚ուստա՚ - *տե՛ս* Աշկէս յըրա:

ԳՕԹ *(թրք. göt)* - *տե՛ս* ԳՕԹՎԷՐԱՆ:

ԳՕԹՎԷՐԱՆ - *ածական.* *գ.* 1. *անրգ.* Իգացվող, կենակցվող (տղա): 2. *փխբ.* Անարգ, ստոր, խարդախ, անզգամ (մարդ): *Գ՛ օթվէրան մարթ ա, խափ՚ալ ա, էտ յէթիմին ծին ինք՛ կալ՚ալ* (Ձ):

ԳՕԹՎԷՐԱՆՕԹՈՒՆ - *գ.* Անարգություն, ստորություն, խարդախություն, անզգամություն: *Ըտըրա գ՛ օթվէրանօթունէն դ՚ ուրդ՚ան վէշ մինը էտ ըխճըկանը օգ՛ում չի* (Բ):

ԳՕԹՕԹՈՒՆ - *տե՛ս* ԳՕԹՎԷՐԱՆՕԹՈՒՆ:

ԳՕL *(թրք. göl)* - *գ.* 1. Փոքրիկ լիճ, լճակ: *Մին էլ ա տը՛սնըմ, վէր էտ յըղանէգ՛նին տը՛ռին տասնըէրկու ախճիգ՛, ըսկըսէցին գ՛ օլին մաչին լըղանալը* (ՀԺՀ, V, 17): 2. Փոսի մեջ հավաքված՝ կուտակված ջուր: *Գ՛ օլը պէց ա թուղէս, բօստանը ճիրիս* (Բ):

- Գ՛ օլ կապէլ/տալ - Լճանալ: *Թօռը վէր կ՛ամ ա, ճ՚ուրը տանը քըմակէն գ՛ օլ ա տամ* (Բ):

- Գ՛ օլում դարդու վէր տըվօղ - Խար-

դախ, ստոր: *Իզէն հինչ մա՞ոթ, գ՝օլում ղարդու վէր տըվօղ ա* (Բ):

ԳՕՄՄԷԼ - *տե՛ս* Գ՝ՕՄՓԷԼ:

ԳՕՄՐՈՒԴ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՝օմրուդ անէլ - *նբ.* Մաքսազերծել: *Պէ՛լի, թա վէր կաշի ղըրկէլի հինիս, գ՝օմրուդ ըրա, յէտնան ղարկի, առանց տամօժնու փէչատի հինչ ապրանք վէր կ՝ամ ա Ղալան, փըռնօտըմ ըն, ըշտըրափու տակ քըցըմ* (Ջ�տ, Ա, 34):

ԳՕՄՓԱԼ/ԳՕՄՓՈՒԼ[2]/Ք՝ՕՄՓԱԼ - *ած., գ.* Շատ գեր՝ չաղ՝ մարմնեղ (մարդ, կենդանի): *Մըթէն տօն, Գ՝օմփալը մաչին քօն* (ԱՋ, 56):

ԳՕՄՓԷԼ - *նբ.* Ուժեղ հարվածել: *Էտ տըղան վէր գ՝օմփում ա, քը՞ոծը պուք ա կ՝ամ* (Ձ):

ԳՕՄՓԷԼ-ԴՕՄՓԷԼ - *նբ.* Շատ ծեծել: *Ըտըրան էնքան գ՝օմփում-դ՝օմփում ըն, վէր կարում չի, թա տը՞ղան յը՞ր կէնա* (Ձ):

ԳՕՄՓՈՒԼ[1] - ԳՈՒՄՓՈՒԼ:

ԳՕՄՓՈՒԼ[2] - ԳՕՄՓԱԼ:

ԳՕՄՓՈՒԾ/Ք՝ՕՄՓՈՒԾ - ԳՕՄՓԱԼ:

ԳՕՅՂԱԾ - ԳՕՐԴԱԾ:

ԳՕՌ[1] *(պրս. gör, gür (գերեզման)* - *գ.* 1. Մահմեդականի գերեզման: *Խըրամօրթա տակէն Ըղդամա թուրքէրէն գ՝օռէրընա* (Բ): 2. *անրգ.* Գերեզման, շիրիմ: *Էնքան փիս մարթ ա իլա՛լ, վէր գ՝օռէն քըշտավը անց կընալիս լօխ թըքում ըն* (Ձ):

- Գ՝օռան փախած - Շատ նիհար, կմախքացած: *Հանց ա գ՝օռան փախած հինի* (Բ):

- Գ՝օռավ ասէլ - Մեկի հանգուցյալներին հայհոյել: *Կընէգ՝ը ճըղճըղամ ա, մարթին ուշունց ա տամ, մարթին հօրը գ՝օռավ ասում, բըղբըղամ...* (ՀԺՀ, V, 63):

- Գ՝օռէն քաքէլ - Գերեզմանը ապականելով՝ անպատվել հանգուցյալին եւ նրա հարազատներին: *Ըտի մարթին գ՝օռէն քաքող շատ կինի* (Ձ):

- Գ՝օռընն չաթտասընն - *տե՛ս* ԱԼԼԸՂԱՂՕՆԻՒՄ:

- Գ՝օռընս ը՞մ տընական - Պետք չէ, պետքական չէ: *Մարթը ասմա.- Տանում ըս, տա՛ր, գ՝օռընս ը՞մ տընական* (Ձ):

- Գ՝օռը քաշիլ - *տե՛ս* Գ՝օռավ ասէլ:

- Գ՝օռու թ՝ոխուր - Յուրայիններին միշտ վնաս՝ չարիք բերող: *Էտ տըղան գ՝օռու թ՝ոխուր ա, հօրը կըլ՝օխը հա՛լա՛ շատ օյին ա պիրլա՛կա՛ն* (Ձ):

- Գ՝օռում տըղվըրցընէլի չի - Խիստ անարգական խոսք՝ արարք եւն է: *Ըտըրա ըրածնէն գ՝օռում տըղվըրցընէլի չի* (Ձ):

- Գ՝օռու քար - Երկարահասակ մարդ: *Հանց ա գ՝օռու քար հինի, բոյը էրկու մէտըր կա* (Բ):

ԳՕՌ[2] - *տե՛ս* ԳՈՒՌ:

ԳՕՌԲԱԳ՝ՕՌ *(թրք. görbagor)* - *գ. անրգ.* Մահացած, շանսատակ եղած մարդ: *...Չըրու մըհէնգ՝ էլ վէր էտ գ՝օռբագ՝օռը մէտրս ա ընգնըմ, սէրտրս թըմփթըմփըմ ա* (ՋՏ, Ա, 222):

- Գ՝օռբագ՝օռ անէլ - *անրգ.* Սպանել, շանսատակ անէլ: *Չօբանը յօր ա ունէս պըռավէն ալ, ի՛ւրան ըխչըկանըն ալ մին մը՞ծ քը՞ոծա քըցիս տակը, գ՝օռբագ՝օռ ընէս* (ՀԺՀ, V, 616):

- Գ՝օռբագ՝օռ իլա՛ծ/տը՞ռած - Անզգամ, ստոր, շանսատակ լինելու արժանի: *Վէգիր գ՝օռբագ՝օռ տէռածը ք՝իս ա թաքավը՞ռին ըսէս, թա էտ տըղան ասալ ա, վը՞ր թաքավը՞ռէն պիրանան վը՞տ ա կ՝աս* (ՆԼՂԺԲ, 60):

- Գ՝օռբագ՝օռ հինի/տը՞ռնալ - *անրգ.* Մեռնել, շանսատակ լինել, մեռնելուց հետո էլ հանգստություն չգտնել, գերեզմանից գերեզման փոխադրվել: *Ա՛հա՛ղ ընումավ մին թ՝օրք ըն պէրալ, իրը՞ք օրանը յը՞տը գ՝օռբագ՝օռ ա տը՞ռալ* (ԱԱ, 82):

ԳՕՌԷԼ - *անրգ., նբ.* Մեռելի դիակը գերեզմանի մեջ դնել եւ ծածկել՝ թաղել: *Ըտըրա մէյդը քաշ ըն անում, տանում գ՝օռում* (Ձ):

ԳՕՌԷՑ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՝օռէց անէլ - *տե՛ս* ԳՕՌԷԼ:

ԳՕՌՔԸՇԸԼԱՏԸ՞Ղ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՝օռքըշըլատը՞ղ ինիլ/տը՞ռնալ - *տե՛ս* Գ՝օռբագ՝օռ հինիլ: *Շատ մարթկանց ըմ վատութի՛ւն ըրալ, վախում ըմ գ՝օռքըշըլատը՞ղ տը՞ռնամ* (ՆԱԲ, II, 64):

ԳՕՌՕՏ - *գ.* Մահմեդականների գերեզմանոց: *Էտ գ՝ուռօտէն նէրքէ ընգ՝ի՛ւնին էլ մին մը՞ծ կաղնէ յա հինի՛ւմ* (Ձ):

ԳՕՍԸՌԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՝օսըռլամիշ անէլ - 1. *տե՛ս* ԿՕՍՌԷԼ: 2. *տե՛ս* ՔՕՆԷԼ:

ԳՕՎԴԱ՛Ն - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՝օվդա՛ն՛ը ընգած մուկուն - Խեղճացած, անելանելի վիճակ ընկած անձ: *Քըռակէնը տը՞ռնում ա գ՝օվդա՛ն՛ը ընգած մուկուն, տըղտօղում ա...* (ՀԱԲ, 15, 94):

ԳՕՎԴԱ՛Ծ - *տե՛ս* ԳՕՐԴԱ՛Ծ:

ԳՕՐԱ - *տե՛ս* ԸԳՕՐԱ՛:

ԳՕՐԱ՛ - *տե՛ս* ԸԳՕՐԱ՛:

ԳՕՐԴԱ - *տե՛ս* ԳՕՐԴԱ՛:

ԳՕՐԴԱ՛/ԳՕՐԴԱ - *գ.* Երկաթե հաստ գավազան, դագանակ: *Աժդահակը յօր ա օնում ի՛ւրա՛ն գ՝օրդա՛ն, ք՝ինա՛մ* (ՀԺՀ, V, 421):

ԳՕՐԴԱՄԻԾ - *տե՛ս* ԳՕՐԴԱ՛ՄԻԾ:

ԳՕՐԴԱ՛ՄԻԾ/ԳՕՐԴԱՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Գ՝օրդա՛միշ անէլ - Երկաթե հաստ գավազանով՝ դագանակով խփել՝ ծեծել: *Էտ տատմարը էնքան գ՝օրդա՛միշ ա անում, վէր էտ տըղան տա՛ւս կ՝ա* (ՀԱԲ, 15, 37):

ԳՕՐԴԱ՛Ծ/ԳՕՎԴԱ՛Ծ/ԳՕՅՂԱ՛Ծ/ԳՕԳՂԱ՛Ծ - *գ.* Պղնձարջասպ: *Վըխտէն վէր գ՝օրդա՛ջ չի փիչիս, խաղվէն բաղը ազար կօնէ* (Ձ):

ԳՕՐՄԱ՛ՄԻԾ *(թրք. görmemiš)* - *տե՛ս* ՉԸՏԷՍ:

- Գ՝օրմա՛միշ ինիլ - *տե՛ս* Չտեսություն անել: *Գ՝օրմա՛միշ մի՛նիլ, համօթ ա* (Բ):

ԳՕՐՍԱԹՄԱ - *ած.* 1. Գեղեցիկ, չքնաղ: *Գ՝օրսաթմա ախճիգ՝ ա* (ՆԱԲ, II, 293): 2. Արտասովոր, բացառիկ, արտակարգ: *...Մին գ՝օրսաթմա խըբար ա կ՝ամ, թա զատէգ՝ օրը Շօշվա Ղալան ընդէղ մին պասիլկա ըն ըստացալ, մէչը նը՞շխարքավ լիգը...* (ՋՏ, Ա, 189):

ԳՕՐՔ՝ - *գ.* Գեղեցիկ կերպարանք, շնորհք: *Ընդըրա հինչը ա՞ պակաս. տօն էլ օնէ, փուլ էլ, գ՝օրք՝ էլ* (Ձ):

ԳՕՐՔ՝Ա՛ՎԼԻ - *ած.* Գեղեցիկ տեսքով՝ կերպարանքով՝ շնորհքով: *Գ՝օրք՝ա՛վլի տըղա յար, խըփէցէն, էտ կ՝էշ ըխճըկանը նը՞հը՞տ փըսըկը՞ցէն* (Ձ):

ԳՈՒԲԷՌՆԱՏԸՐ/ԿԸՄԲԸՌՆԱՏ *(ռուս. губернатор)* - *գ.* Նահանգապետ: *Յարէն վըխտէն ըստըղէրքէս յըրա մին գուբէռնատը՞ր ա իլա՛լ* (ԱԱ, 59):

ԳՈՒԲԷՌՆԻ *(ռուս. губерния)* - *գ.* Նահանգ: *Կիրօվաբաթա տէսը մին գուբէռնի յա իլա՛լ* (Բ):

ԳՈՒԼԻ՛Ի - 1. *ձ.* Հնդկահավին կանչելու ձայն: *Յօրէնը վէր ա ածում, հընդի՛ուշկօցը ծէն տամ՝ գո՛ւլի՛ւ, գո՛ւլի՛ւ* (Ձ): 2. *հեգն. տե՛ս* ՀՈ՛ՒՆԴՈ՛ՒԾԿԱ:

ԳՈՒԼՕՓԿԱ - *տե՛ս* ԳԸՆՕՓԿԱ:

ԳՈՒՐՈՒՋ - *տե՛ս* ԳԸՐՈՒՋ:

ԳՈՒՐՈՒՋԱՎԻԿ - *տե՛ս* ԳԸՐՈՒՋԱՎԻԿ:

ԳՈՒՐՈՒՋԱՎՕՅ - *տե՛ս* ԳԸՐՈՒՋԱՎՕՅ:

ԳՈՒՐՈՒԾԿԱ - *տե՛ս* ԳԸՐՈՒԾԿԱ:

ԳՈՒՐՈՒՊԱ - *տե՛ս* ԳԸՐՈՒՊԱ:

ԳՕԳԼԻ - *տե՛ս* ԳՕԳՕԼ՝:

ԳՕԳՕԼ՝ - *գ. անրգ.* Գլուխ: *Ըտըրա գ՝օգ՝օլ՝ումը վէր խը՞լք ինա՛ր, էտ կապը կըտըրածէն նը՞հէտ չար փըսակվէլ* (Բ):

- Գ՝օգ՝օլ՝ը թափ տալ - *տե՛ս* Կըլ՝օխը թափ տալ:

- Գ՝օգ՝օլ՝ը տէրտակ - *տե՛ս* Կըլ՝օխը տէրտակ:

ԳՕԴ/ԳՕԴ/ԿՕՏ[2] - *գ.* Փայտե աման, որ իբրեւ չափ էր ծառայում հացահատիկի համար՝ կոտ: *Սէրմ պըդրաստած ա հինում, էն ա մին գ՝օդ կա* (ՀԱԲ, 15, 52):

ԳՕԴԱԼ - *տե՛ս* ԳԸԴԸԼ:

ԳՕՋԱՆԱՂ *(վրաց. gozinagi (ընկույզ)* - *գ.* Ընկույզով՝ նուշով՝ պնդուկով պատրաստվող քաղցրավենիք: *Գօզանաղը խօխէնք՛ը շատ ըն սիրում* (Զ):

ԳՕԼՈՒԲ - *տե՛ս* ԳՕԼՕԲ:

ԳՕԼՕԲ/ԳՕԼՈՒԲ *(ռուս. голубь)* - *տե՛ս* ԸՂՕՆԷՑ՝:

ԳՕՀ - *տե՛ս* ԿՕՀ:

ԳՕՃԻ/ԿՕՃԻ - *գ.* 1. Խոզի ձագ, խոճկոր: *Մին օր էլ խօզ՛ին մարունը ծընում ա, քըսան գօճի պիրում* (Զ): 2 *փխբ.* Թմբլիկ՝ գիրուկ երեխա: *Հարութիկը գօճի յա* (Բ):

ԳՕՆՅԱ - *տե՛ս* ԿՕՆՅԱ:

ԳՕՇԱՆԱՂԱՐԱ - *տե՛ս* ՂՕՇԱՆԱՂԱՐԱ:

ԳՕՋԱ *(թրք. koča)* - *տե՛ս* ՔԱՎԹԱՌ:

ԳՕՍՊԻՏԱԼ *(ռուս. госпиталь, անգլ. hospital, գերմ. Hospital)* - *գ.* Ջինվորական հիվանդանոց: *Կըռվէն վախտը գօսպիտալը տարալ ըն Յը՛խ ծ՛ոը* (Բ):

ԳՕՐԴԻ *(ռուս. гордый)* - 1. *ած.* Հպարտ, պատվազգաց: *Գօրդի տըղա յա* (Բ): 2. *մ.* Հպարտ կերպով, հպարտաբար: *Գօրդի յա շօռ կ՛ամ շէնումը* (Զ):

ԳՕՐՍԱՎԷՏ/ԳԱՐՍԱՎԷՏ *(ռուս. горсовет)* - *գ.* 1. Քաղաքային խորհուրդ: *Գարսավէտին շէնք՛ը քանդ՛ալ ըն, տը՛ղը ըշկօլ շինալ* (Զ): 2. Քաղաքային խորհրդի նախագահ: *Ըտի էլ ըտըրան տինըմ ըն գօրսավէտ* (Բ):

Դ

ԴԱ[1] *(ռուս. да)* - *վ.* Այո՛, որ այդպես է: *Դա՜, դէ էլ հինչ ա՞նինք՛, բիդի քօչինք՛* (Զ):

ԴԱ[2] - *տե՛ս* ԸՆԴԸՐԱ:

ԴԱ՛/ԴԱ՛Հ - 1. *գ. մնկ.* Ձի: *Խօխան լ՛ա՛ց ա ինո՛ւմ, թա.- Դա՛ն, դա՛ն* (Զ): 2. *վ.* Ձին քշելու ձայնը: *Շըլլաղավը թըխում ա, թա.- Դա՛՛, տը՛ղատ տո՛ւրո՛ւր յը՛՛ք* (Զ):

ԴԱԲԱ[1] - *տե՛ս* ԴԱԲԲԱ[1]:

ԴԱԲԱ[2] - *տե՛ս* ԴԱԲԲԱ[2]:

ԴԱԲԱԼԸՂ/ԴԸԲԸԼԱՂ/ԲԱԴԱԼԸՂ *(թրք. badalaq (ոտք գցելը)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Դաբալըղ թըխէլ/տալ - 1. Ծաղրել: *Ըտըրան շինըմաչումը էզգանան դաբալըղ ըն թըխում* (Զ): 2. Ակնարկել: *Մարթը վէր մին թիթը՛վ դաբալըղ ա թըխում, կընէգ՛ը ամմէն հինչ կըլխու վա ընգում* (Զ): 3. *տե՛ս* Կըռ տալ:

ԴԱԲԱՂ[1] *(արաբ. debbāg)* - *գ.* 1. Որոշ բույսերի մեջ պարունակվող նյութ, որով մշակում են կաշին, դաբաղանյութ: *Կ՛ա՛՛ռ՛ուն մաչին էլ դաբաղ կա* (Բ): 2. Կաշի մշակող, կաշեգործ: *Բիջանաց Մաքսիմը լ՛ավ դաբաղ ա իլ՛ալ* (Բ):

ԴԱԲԱՂ[2] *(արաբ. tābix, թրք. dabag)* - *գ.* Խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հիվանդություն, որի դեպքում բերանում եւ կճղակների շուրջը բշտիկներ են առաջանում, եւ անասունը չի կարողանում ուտել եւ քայլել: *Շէնին հիվընէն դըբաղան ընգալ ըն* (Բ):

ԴԱԲԱՂԽԱՆԱ/ԴԸԲԸՂԽԱՆԱ *(պրս. dabbagxane)* - *գ.* Կաշի մշակելու՝ դաբաղելու արհեստանոց: *Սաղ Դարաբաղ մին դաբաղխանա էլ չի կա* (Բ):

ԴԱԲԱՆ *(թրք. taban)* - *գ.* 1. Ոտքի կրունկ, ներբան: *Էնքան վընընտէպէգ՛ շօռ ա յը՛կալ, դըբընէն չընքչընքօտալ ա* (Զ): 2. Կոշիկի կրունկ: *Վընընմանէն դաբանը պուք ա յը՛կալ* (Բ): 3. Տանիքի գերանների տակ դրվող կոճղ: *Սալլամէն տակէ դաբանը փըթալ ա, փուխէլի յա* (Բ):

- Դաբան անէլ/հըլ՛ՀՀրէլ/նըհաշ տալ - Նահանջել, զիջել, փախչել, հեռանալ: *Ղէվը վէր տը՛սնում ա՝ պըրծումը չի կա, դաբան ա անում* (Զ):

- Դաբանը նի կէնալ - Սաստիկ զայրանալ: *Հ՛՛ոը էտքանը ո՛ւրա՛՛ն աշկավը տը՛սնում ա, դաբանը նի յա կէնում* (Զ):

- Դըբանան տո՛ւս կ՛՛ալ - Պարկեշտության սահմանն անցնել: *Դըբանան տո՛ւս յը՛կած կընէգ՛ ա* (Բ):

- Դըբանէն յը՛ղ քըսէլ - *տե՛ս* Դըբանէն փի կապէլ:

Դըբանէն յըրա յը՛տ տը՛ռնալ - Իսկույն՝ անմիջապես՝ շատ շուտ վերադառնալ: *Լ՛ըհա տը՛ղ ա հըսնում, խաբարը գ՛ո՛ւդ՛ում, դըբանէն յըրա յը՛տ տը՛ռնում* (Զ):

Դըբանէն փի կապէլ - Շատ շտապելով՝ գնալու՝ հեռանալու համար միջոցներ ձեռնարկել: *Աղվէսը դըբանէն փի յա կապըմ, մին բաշ ծըլկըմ* (ՀԺՀ, VI, 254):

Դըբընէն աղալ - Ֆիզիկական մեծ ցավ պատճառել, տանջել (հիմնականում գործածվում է որպես սպառնալիք): *Հ՛՛ոը ասմա.- Վէր կ՛աս տօն, դըբընէտ ըղըլան ըմ* (Զ):

ԴԱԲԱՎԻՏ *(ռուս. добавить)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Դաբավիտ անէլ - Ավելացնել, լրացնել: *Կ՛ինին հիշկան պըկասում ա, էնքան դաբավիտ ըն անում* (Զ):

ԴԱԲԲԱ[1]/ԴԱԲԱ[1] *(թրք. dəbbə (պատրվակ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Դաբբա անէլ - 1. Խոսքից՝ խոստացածից հրաժարվել: *Էտ մարթը սուդումը դաբբա յա անում, թա.- Յը՛ս ըտի պէն չըմ ասալ* (Զ): 2. Նեղը լծելով՝ կպչել, պոկ չգալ: *Դաբբա յա անում, էտ մարթին տ՛՛անջ՛՛ում* (Բ): 3. Հակաճառել: *Մարթը հինչու ասում ա, կընէգ՛ը դաբբա յա անում* (Բ):

- Դաբբա տալ - Վատություն՝ թշնամություն անել: *Հիրը՛վանըտ վէր ք՛ը՛զ դաբբա ըրավ, բիդի տօնըտ փօխիս* (Զ):

ԴԱԲԲԱ[2]/ԴԱԲԱ[2] - *գ.* Վառոդ պահելու կաշվե տոպրակ: *Դաբբան բարութավ լիգ՛ը քըմական կախ կինար...* (ՋՏ, Բ, 217):

ԴԱ՛ԲԸՐԷԹԿԱ - *տե՛ս* ԴԱ՛ԲԸՐԷՏԿԱ:

ԴԱ՛ԲԸՐԷՏԿԱ/ԴԱ՛ԲԸՐԷԹԿԱ/ՏԱԲԸՐԷՏԿԱ/ՏԱԲԸՐԷԹԿԱ *(ռուս. табуретка, ֆր. tabouret)* - *գ.* Առանց թիկնակի աթոռ: *...Ըխճըկանը կընընցընըմ ըն դ՛՛ըբրէտկին, ք՛՛անդիրը անց կըցընըմ կըլ՛՛ՀՀխը* (ՀԺՀ, V, 231):

ԴԱԳԱՎՕՐ - *տե՛ս* ԴՕՂՎՕՐ:

ԴԱ՛՛ԳԱ՛՛ *(թրք. dägä)* - *գ.* 1. Թաղիքե վրան: *Թափէղը թաքավէրէն յօր ա օնում, տանում մին լ՛ավ լըղըցընում, թա՛՛զա՛՛ շ՛՛ՀՀրէր կ՛էց տամ, ո՛՛ւրա՛՛ն նըհէտ տանում դ՛՛ա՛՛գ՛՛ան* (ՆԱԲ, 49): 2. Դալար ճյուղերից կամ եղեգից հյուսած հյուղակ՝ քոլիկ: *Մին օր էլ Հուռին փախխալ ա, յէկալ մինհէնգ՛վա շէնին տը՛ղը, մին դ՛՛ա՛՛գ՛՛ա՛՛ շինալ, մէջին կացալ* (ԱԱ, 29):

ԴԱ՛՛ԳԱ՛՛Ր - *գ.* Եկամուտ, օգուտ: *Ա՛՛ռաշտ տարէն հիշքան օգում ըս բաստան ըրա, դ՛՛ա՛՛գ՛՛ա՛՛ր չինիլ* (Զ):

ԴԱ՛՛ԳԱ՛՛ՐԼԻ՛՛ - *ած.* Եկամտաբեր, արդյունավետ: *Սէյրակ արտը դ՛՛ա՛՛գ՛՛ա՛՛ր՛՛լ՛՛ու կինի* (Զ):

ԴԱԴ *(գրբ. դատ (դատաստան, իրավունք)* - *գ.* 1. Գանգատ, բողոք: *Թաքավէրը ասմա.- Մ՛ պառավ, հինչ ա՞՛ իլ՛՛ալ, հինչ դադ օ՞՛նիս* (Զ): 2. *տե՛ս* ՍՈՒԴ(1): *Ասում ըն՝ էտ դըդըվէրը հինչ դադ էլ ըրալ ա, ըստէղ ա ըրալ* (ԱԱ, 5):

- Դադ անէլ *(գրբ. դատ առնեմ (դատել, դատապարտել)* - 1. Բողոքել, գանգատվել: *Թ՛՛ազգ՛՛ հարթը ք՛՛ունո՛՛ւմ ա մ՛՛օրը կօշտը, ըսկէսվօրը անա դադ անում* (Զ): 2. *տե՛ս* Սուդիտ անէլ:

ԴԱ՛՛ՂԱ՛՛ *(հ.ե. *dhē-, dh(ē)- (մանկական բառ ընտանիքի ավագ անդամներին նշանակելու համար), թրք. dede (պապ, նախահայր)* - *տե՛ս* ՀԱ՛՛Ր:

ԴԱԴԱՅ (*ռուս. дядя*) - *տե՛ս* ԴԱՅԻ:

ԴԱԴԱՍՏԱՆ (*գրբ. դատաստան)* - *տե՛ս* ՍՈՒԴ:

- Դադաստան անէլ/տը՛սնալ - *տե՛ս* Դադաստանը կըտըրէլ:

Դադաստանը կըտըրէլ - *տե՛ս* Սուդիտ անէլ: *Ախճիգ՛ը՛ն ասում ա.- Թ՛՛ուլ տօ, էս դադաստանը ախճիգ՛ը՛ն կըտրէ* (ՆԱԲ, 54):

ԴԱ՛՛ՂԱ՛՛ՎԱՅ - Գործածվում է կապակցության մեջ:

- Դանդաղայ անել - Ողբալ, լացուկոծ անել: *Փըռնում ա ըտըրա մին լ՛ավ թակում, թա.- Դէ ք՛ինի՛, դանդաղայ ըրա՛* (Զ):

ԴԱԴԱՎԷՐ - *տե՛ս* ԴԸԴ(Ը)ՎԷՐ:

ԴԱԴԱՐԳՈՒՆ - *տե՛ս* ԴԱՆԱՐԳՈՒՆ:

ԴԱՆԱՐԳՈՒՆ/ԴԱԴԱՐԳՈՒՆ *(թրք. dedirgin (անհանգիստ, վրդովված, հուզված)* - *ած.* Տնից-տեղից քշված, թափառական, հալածական: *Թոռնը յէշում ըս, դանդարգ՛ուն հայէր ըն* (Զ):

- Դանդարգ՛ուն անել - Տնից-տեղից քշել, հալածել, թափառական դարձնել: *...Յէշալ ա, թա.- Ընիծէվուր ինի՛ն, Մստուծ, ք՛ըզ հինչ ը՞նք ըրալ, վէր մէզ դանդարգ՛ուն ըս ըրալ, քըցալ հանդէրը* (ԱԱ, 45):

- Դանդարգ՛ուն ըղնէլ/ինիլ/տը՛ռնալ - Տնից-տեղից քշվել, հալածվել, թափառական դառնալ: *...Իսկի ըսէցիր վէջ՝ էս դանդարգ՛ուն ընգած խաչանը էսքան վախտ թօրը կօրավ, հիշտէդ մընաց...* (ՋՏ, Ա, 113):

- Դանդարգ՛ուն քըցիլ - *տե՛ս* Դանդարգ՛ուն անել:

ԴԱԴԷԼ[1] *(գրբ. դատեմ)* - *տե՛ս* Դադ անել(2):

ԴԱԴԷԼ[2] *(գրբ. դատիմ)* - 1. *չբ.* Աշխատել, բանել, գործ անել: *Քըշէր-ցիրը՛կ դադում ա, էլիա կարում չի ապըրէ* (Զ): 2. *նբ.* Վաստակել, ձեռք բերել: *Ամէսը էնքան ա դադում, վէր մին թանրանվ յօլլա յըն ք՛ունանում* (Զ):

ԴԱԴՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Դադմիշ ինէլ - Որեւէ հանցանք կատարելուց հետո անպատիժ մնալով՝ կրկին կատարել, սովորություն դարձնել: *Ըտի էտ խօխան դադմիշ ա ինում, վանրին կ՛ուղօթուն անում* (Զ):

ԴԱԴՈՒՄ - *գ.* 1. Վաստակ, օգուտ, շահ: *Ըշխադած դադումը տամ ա ըխճըկանը* (Բ): 2. Խնայողությամբ՝ տնտեսելով հավաքած դրամ: *Մին պատառ դադում ա ինում թուփ ըրած, մին կավ ա ինք՛ օնում* (Զ):

ԴԱՋ - *տե՛ս* ՏԱՋ[1]:

ԴԱՋԳԱՀ *(պրս. destgyah, թրք. tezgāh)* - *գ.* Հաստոց: *Ամէք՛ա ուրանց սարքավը, ուրանց դանգ՛ահավը տահանք տը՛ղ տըղվարվում ըն* (ՀԺՀ, VII, 51):

ԴԱԺԷ *(ռուս. даже)* - *վ.* Նույնիսկ: *Ըխճըկանը մարթու տըվավ, դաժէ մին դօշակ էլ չի տիրավ նըհէտը, թա լ՛ըհա յըրա քօն ինի* (Զ):

ԴԱԼ *(գրբ. դալ (մոր առաջին կաթը)* - *տե՛ս* ԱՂՈՒՋ:

ԴԱԼԱ *(թրք. dələ)* - *գ.* Կզաքիս: *Դալին մօրթէն թընգ՛անուց ա* (Բ):

ԴԱԼԱԲ - 1. *գ.* Բեղմնավորում (ձիերի, էշերի եւն): *Ծիյը՛նցը դալաբը ըսքըսալ ա* (Բ): 2. *ած.* Կրքոտված, կրքերից հարբած: *Հինչ ա՞, դալաբ ը՞ս, հինչ ը՞ս էտ կընանուցը հը՛տը կըտըրալ* (Զ):

- Դալաբ կ՛ալ - *տե՛ս* Պէր կ՛ալ:

ԴԱԼԱԴՈՒԶ *(թրք. dələdüz (խարդախ)* - *տե՛ս* ԴԱԼԻ(1):

ԴԱԼԱԼ (*արաբ, պրս. dāllal, թրք. tellal*) - *գ. ած.* Երկու կողմերի միջեւ որեւէ նպատակով միջնորդություն կատարող (անձ), միջնորդ: *Ալիսանը ք՛ընում ա դալալ Սըվադէն խընթրում, վէր ք՛ըմանգ՛ անէ, ծին ծախէլ տա* (ՆԱԲ, 108):

- Դալալ վը՛ենը կէնալ - Միջնորդել: *Գ՛ուզալանց Մսսին ըտի դալալ ա վը՛ենը կէնում, Ըրշակէն տօնը ծախէլ տամ* (Զ):

ԴԱԼԱԼՕԹԻՒՆ - *գ.* Միջնորդ լինելը, միջնորդի գործը՝ զբաղմունքը: *Միհէնգ՛վա դարըմը դալալօթունը ամմէնալ՛ավ փէշակըն ա* (Բ):

- Դալալօթուն անել - Միջնորդությամբ զբաղվել: *Դալալօթուն ա անում, կըլօխը պահում* (Բ):

ԴԱԼԱՄԱ/ԴԻԼԱՄԱ *(թրք. dələma)* - *գ.* 1. *տե՛ս* ԽԷԺՆԸ: 2. Թարմ պանիր: *Մին կիլօ դալամա յա պիրում, էտ տըղան լօխ օտում ա* (Զ):

ԴԱԼԲԱԴԱԼ *(թրք. dalbadal)* - *ած., մ. տե՛ս* Ուրուր հը՛տա: *Հաբին դալբադալ իրը՛ք կ՛ը՛վաթ կինի յա խըմում, տանս կ՛ամ* (Զ):

ԴԱԼԴԱ *(թրք. dalda)* - 1. *ած.* Ուրիշների կողմից աննկատելի՝ անտեսանելի: *...Ծիյան վը՛ր ա կ՛ամ, ծին մին դալդա տը՛ղա կապում, ինք՛ը թաքուն ք՛ինամ...* (ՀԺՀ, VII, 34): 2. *գ.* Ուրիշների կողմից աննկատելի՝ անտեսանելի տեղ: *Փանրին ք՛ինամ ա դալդան հընցնում թա չէ, վը՛ենան ք՛էնդիրը յէտ ա անում, ըլթըվէն օյնան կապում* (ՀԺՀ, VII, 44):

- Դալդա անել - *տե՛ս* Դալդան քըցիլ:

- Դալդա կէնալ - *տե՛ս* Դալդալամիշ ինիլ:

- Դալդան քըցիլ - 1. *տե՛ս* Կ՛ԸԴԷԼ: 2. Հարմար պահը որսալով՝ որեւէ բան գաղտնի կատարել: *Կ՛օղը դալդան ա քըցանում, կ՛առը տանում* (Բ):

ԴԱԼԴԱԼԱՄԻԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Դալդալամիշ անել - *տե՛ս* Դալդան քըցիլ (1):

- Դալդալամիշ ինիլ - *տե՛ս* Կ՛օղը կէնալ:

ԴԱԼԴԱԼԸՂ - *տե՛ս* ԴԱԼԴԱԼ(2):

ԴԱԼԸՂ - *գ.* Փայծաղի հիվանդություն, փայծաղի մեծացում: *Խը՛ղճը դալըղ օնէ, տանջվում ա* (Բ):

ԴԱԼԻ *(թրք. deli)* - *ած.* 1. Խենթուկ, խելառ, խենթավուն: *Թօրքը ասմա.- Ք՛ի՛րվա, յը՛ս դալի յըմ, հօ ախմաղ չը՞մ* (ԱԱռ, 8): 2. Քաջ, համարձակ, հանդուգն: *Էտ Վաղօն էնքան ազդուն, էնքան ըռիսկօվնի յա ինում, վէր անումը տինում ըն Դալի Վաղօ* (Զ):

ԴԱԼԻ-ԴՕԼԻ/ԴԱԼԻ-ԴՕԼՈՒ *(թրք. delidolu)* - *տե՛ս* ԴԱԼԻ(1):

ԴԱԼԻ-ԴՕԼՈՒ - *տե՛ս* ԴԱԼԻ-ԴՕԼԻ:

ԴԱԼԻՋԱ *(թրք. delice)* - *տե՛ս* ԴԱԼԻ:

ԴԱԼԼԱՔ՛ *(արաբ. dellak, պրս. dallāk)* - *գ.* Վարսավիր, սափրիչ: *Մին դալլաք՛ մին մարթու իրէս վը՛ր ընէլիս ծիլին շատ չընգըռօտում ա...* (ՆԼՂԺԲ, 116):

- Դալլաք՛ը մարթին իրը՛սէն ա յէշում, սապաժնիգ՛ը՝ վընէրէն - *տե՛ս* Դըլլաք՛էն հը՛տէ քաչալը յա՛ սաղ, յա՛ մը՛ռած:

- Դըլլաք՛էն հը՛տէ քաչալը յա՛ սաղ, յա՛ մը՛ռած - Ամեն ոք ուշադիր է միայն նրանց նկատմամբ, ումից շահ ունի:

ԴԱԼԼԱՔ՛ԽԱՆԱ/ԴԻԼԼԻՔ՛ԽԱՆԱ *(արաբ. dellak+պրս. xane)* - *գ.* Վարսավիրանոց: *Ք՛ինամ ա դալլաք՛խանան, տը՛սնըմ՝ կընէգ՛ը դալլաք՛էն նըհը՛տ սիլիբիլի յա անում* (Զ):

ԴԱԼԼԱՔ՛ՓՕՍԷ/ԴԻԼԼԻՔ՛ՓՕՍԷ - *գ.* Խաղատեսակ: *Միհէնգ՛վա խօխէնք՛ը վէ՛չ բաբադուշի յըն խաղ անում, վէ՛չ քըսկըրէնք՛ի, վէ՛չ էլ դալլաք՛փօսէ* (Զ):

ԴԱԼԼԱՔ՛ՕԹՈՒՆ/ԴԻԼԼԻՔ՛ՕԹՈՒՆ - *գ.* Վարսավիրություն: *Դիլլիք՛օթունը հացա մօտէ փէշակ ա* (Զ):

- Դալլաք՛օթունը յէթիմ խուխէն կըլխէն յըրան ըն սըվը՛րում - Որբը՝ անտերը համարվում է ոչ լիարժեք մարդ, որի համար էլ տուժում է:

ԴԱԼԽԱՂ - *ած.* Վշտից բեկված, վշտաբեկ: *Դալխաղ մարթին վէշ մին պէն ուրխըցընէլ չի* (Զ):

- Դալխաղ անել - Մեծ վիշտ պատճառել, վշտաբեկ դարձնել: *Էս կըռը՛վը շատ կընանուց ա դալխաղ ըրալ* (Բ):

- Դալխաղ ինիլ/տը՛ռնալ - Մեծ վիշտ ունենալ, վշտաբեկ դառնալ: *Անդար անիմ կըռը՛վը, թօռնը յէշում ըս՝ դալխաղ տը՛ռած հարթնէր ըն* (Զ):

ԴԱԼՈՒ *(թրք. dal)* - *տե՛ս* ՄԱՇԿ:

- Դալու անել - *տե՛ս* Դըլվումը վը՛ենը կէնալ:

- Դալու ինիլ - 1. *տե՛ս* Դալու անել: 2. Պաշտպան՝ հովանավոր ունենալ: *Լ՛ավ դալու օնէ, ըտըրա հը՛տէ յա ըտի գ՛առգ՛առ խօսում* (Բ):

- Դալուն բօշ - *տե՛ս* Մաշկը բօշ:

- Դալուն դըրբըզա յա - *տե՛ս* Դըլվէն յուրդունդօշակ վէր կըքըցվի:

- Դալու նըհաշ տալ - 1. Փախչել, նահանջել: *Վէր յըրա պըրծէնք՝, թօրքէրը դալու նըհաշ տուվէն* (Ջ): 2. Դժգոհությունը, մեկի հետ չշփվելու՝ հարաբերություն չունենալու ցանկությունն արտահայտել, արհամարհել, երեսը շրջել: *Թանզզան հարթնը տընըցուց դալու վա նըհաշ տամ* (Բ):

- Դալուն կէզանր քըչըվէլ - Խիստ չքավոր լինել: *Ախպէրը ասմա.- Ինձ ըշտըդա յա՞ վը՛սկէ, դալուս կէզանր ա քըչըվում* (Ջ):

- Դալուն կօտըրէլ - *տե՛ս* Մաշկը կօտըրէլ:

- Դալուն հարուստ - Շատ եւ մեծ հովանավորներ ունեցող: *Իվանըն էլ դըլվըրնէն հարուստ մարթկանցան ա...* (ՀԲ, 362):

- Դալուն հը՛ռ կ՝անլ/հը՛ռ ըղնէլ - Մեծ վիշտ՝ դարդ՝ ցավ ունենալ: *Խը՛ղճէն իլանծը մին կավ ար, էն էլ ըստակից, դալուն հը՛ռ ա կ՝ամ* (Ջ):

- Դալուն շօն ա - *տե՛ս* Դըլվէն յուրդունդանշակ վէր կընքըցվի:

- Դալուն պահէլ - *տե՛ս* Մաշկը պահէլ:

- Դալուն պէնդ - *տե՛ս* Մաշկը պէնդ:

- Դալուն պուք կ՝անլ - *տե՛ս* Մաշկը կօտըր(վ)էլ:

- Դալուն տափավը կ՝անլ/տալ - *տե՛ս* Մաշկը տափավը կ՝անլ/տալ:

- Դալուն տափը չընտալ - *տե՛ս* Մաշկը տափը չընտալ:

- Դալուն տէմ անէլ - *տե՛ս* Մաշկը տէմ անէլ:

- Դալուն քօրէլ - *տե՛ս* Մաշկը քօրէլ:

- Դըլը-դալու անէլ - *տե՛ս* Մաշկ մաշկու տալ:

- Դըլվէն յուրդունդանշակ վէր կընքըցվի - Թիկնեղ՝ լայնաթիկունք է: *Տընդա, հինչ տընդա՞, դըլվէն յուրդունդանշակ վէր կընքըցվի* (Ջ):

- Դըլվէն վը՛ննը կէնալ - *տե՛ս* Դըլվումը վը՛ննը կէնալ:

- Դըլվումը մարթ կ՝ողլը կըկէնա - *տե՛ս* Դըլվէն յուրդունդանշակ վէր կընքըցվի:

- Դըլվումը սար ինիլ - Մեծ պաշտպան՝ հովանավոր ունենալ: *Հանր դըլվումը սար ինի, քէթը ցէց կինի* (Ջ):

- Դըլվումը վը՛ննը կէնալ - Մեկին պաշտպանել՝ հովանավորել: *Վէր Հայաստանը Ղարաբաղա դըլվումը վը՛ննը չի կէնար, տիժէր կիննար* (Բ):

ԴԱԽԱԲԸՌ/ԴԸԽԱԲԸՌ *(ռուս. духобор)* - *գ.* 1. Սուրբ հոգու աստվածությունը չընդունող անձ՝ հոգեմարտության հետեւորդ: *Մին վըխտու Ռուսաստանա դախաբըռնէ յըն յը՛կալ Ղարաբաղ* (Ջ): 2. *փխբ.* Հաղթանդամ, առույգ անձ: *Հանց ա դախաբըռ ինի* (Բ):

ԴԱԽԸԼ[1] *(թրք. daxil)* - *գ.* 1. Դրամարկղ, գանձարկղ: *...Շատ զօրբա կըրիզիստ ա պանն տիրալ մէր սօվդաքարնէրին դախըլըմը...* (ՋՏ, Բ, 94): 2. Վաճառասեղան: *Ամմէն մինը, մին դախալ տիրանծ ըռըչնէրէն, առըտոր ըն անում* (Ջ): 3. Պատին կամ պահարանի մեջ ամրացված հարմարանք՝ մեջը որեւէ բան դնելու համար: *Կիրքէրը դախըլըմը շըրէս ա* (Ջ):

ԴԱԽԸԼ[2] - *ած.* 1. Կարծր, պինդ (միս, բանջարեղեն եւն): *Քավթառ կըվէն մէսը դախալ կինի* (Բ): 2. Տարիքն առած (աղջիկ): *Դախալ ախճիգ՝ ա, մին օգ՝օղ չի կա, թա ք՝ինի* (Ջ):

ԴԱԽԼԱ - *տե՛ս* ԴԱԽԸԼ[1]:

ԴԱԽԼԸԴԱՐ - *տե՛ս* ԽԱՋՆԱԴԱՐ(1): *...Ինջինէրնէն, դախլըդարնէն հանց պէնէր ըն անում, վէր մարթ մընում ա շըվարած* (ՋՏ, Բ, 119):

ԴԱԽԿԱԴԱԽԿ - *տե՛ս* ԴԸԽԿԱԴԸԽԿ:

ԴԱԽՕԴ/ԴԱԽՕՏ *(ռուս. доход)* - *գ.* Եկամուտ, հասույթ: *Էն ընդրրա մըհար ա, վէր ժամին դախօտը իվիլցընին* (ՋՏ, Ա, 94):

ԴԱԽՕԴՆԻ/ԴԱԽՕՏՆԻ *(ռուս. доходный)* - *ած.* Եկամտաբեր, հասութաբեր: *Ծըմակա մօտէ շէնումը խօզ՝ պահէլը դախօդնի կօրծ ա* (Բ):

ԴԱԽՕՏ - *տե՛ս* ԴԱԽՕԴ:

ԴԱԽՕՏՆԻ - *տե՛ս* ԴԱԽՕԴՆԻ:

ԴԱԿԱՋԱՏ *(ռուս. доказать)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Դակազատ անէլ - Ապացուցել: *Էտ կընէգ՝ը մարթին դակազատ ա անում, վէր ինրանն ախպէրը չի ըրալ* (Ջ):

ԴԱԿՈՒՄԷՆՏ *(ռուս. документ, լատ. documentum)* - *գ.* Որեւէ բան հաստատող՝ վավերացնող կամ որեւէ իրավունք արտոնող պաշտոնական գրություն, փաստաթուղթ: *Էտ մարթը դակումէնտ ա պիրանում, վէր ինք՝ը էտ տանը տարընն ա* (Ջ):

ԴԱԿՈՒՄԷՆՏԱԼՆԻ *(ռուս. документальный, ֆր. documental)* - *ած.* Փաստաթղթերով հաստատված՝ վավերացված՝ հիմնավորված: *Հանը դակումէնտալնի տօնը տամ ա կուճուր տըղէն* (Ջ):

ԴԱՀ - *տե՛ս* ԴԱ՝:

ԴԱՀԻ - *տե՛ս* ԴԱ՝ՀԻ:

ԴԱ՝ՀԻ/ԴԱՀԻ - *մ.* Անհրաժեշտ կամ նշված չափից շատ՝ ավելի: *Փօրին ցավը էլ հանլա կըտըրալ չի, դահի բէթար թանդվալ ա* (ՋՏ, Ա, 35):

ԴԱ՝ՀՆԱ - *տե՛ս* ԴԱ՝ՀՆԱ՝:

ԴԱ՝ՀՆԱ՝/ԴԱ՝ՀՆԱ *(թրք. dəhnə)* - *գ.* Հատուկ կառույց գետի ափին, որտեղ ջուրը գետից մտնում է առուն: *Սէլը յը՛կավ, կ՝ը՛տը վըրարից, դանինան քըշից, տարավ* (Ջ):

- Դանինան ի յը՛ր ք՝ինիլ - Ճիշտ ճանապարհով գնալ, կարգ ու կանոնից չշեղվել: *Ջանիլը վէր դանինան ի յը՛ր չի ք՝ը՛ցավ, ախրը փիս կինի* (Ջ):

- Դանինավը ք՝ինիլ *տե՛ս* Դանինան ի յը՛ր ք՝ինիլ:

- Դանինան կապէլ - 1. Ջուրը հունից կտրել: *Ըստրանք դանինան կապում ըն, բուստընէն թողում չօր* (Ջ): 2. Եկամտի աղբյուրից զրկել: *Թանզզան թաքավէրը թանջիրնէրէն դանինան կապում ա* (Ջ):

ԴԱ՝ՀՆԱԿ - *տե՛ս* ԴԱ՝ՀՆԱ՝Կ:

ԴԱ՝ՀՆԱ՝Կ/ԴԱ՝ՀՆԱԿ - *գ.* Ջրի ակունք: *Տէղ քանդըմ ըն, տէսնում՝ դանինակը ա* (ՀԱԲ, 15, 152):

ԴԱՂ *(պրս. dağ (խարան), թրք. dağ (վիշտ)* - *գ.* 1. *տե՛ս* ԴԱՂՄԱ: 2. Այրած՝ եռացրած յուղ: *Սօղանը կըտօրից, ածից դաղէն մաչը* (Բ): 3. *փխբ.* Կսկիծ, մորմոք: *Ըստրրա սըրտէն դաղը կընօխանց ա* (Ջ):

- Դաղ անէլ - 1. Այրել, եռացնել (յուղի մեջ): *Սօղանը դաղ ըրավ* (Բ): 2. Կսկծացնել՝ վիշտ պատճառել: *Քու խօսկէրքըտ ինձ դաղ ա անում* (Ջ):

- Դաղ-դաղ անէլ - *տե՛ս* ԴԸՂԴԸՂՕՐԷԼ:

- Դաղ-դաղ ինիլ/կ՝անլ - *տե՛ս* ԴԸՂԴԸՂՕՐՎԷԼ:

- Դաղը սըրտումը պահէլ - *տե՛ս* Սըրտումը դաղ մընալ (ՍԸ՝ՐՏ-ի տակ):

- Դաղ ինիլ/կ՝անլ - *տե՛ս* ԴԱՂՎԷԼ:

ԴԱՂԱԼ *(պրս. dagal (կեղծ), թրք. dağal (խորամանկություն)* - *ած.* 1. Անբան, աշխատել չսիրող: *Էրկու տըղա օնէ, ճօխտը՝ դաղալ. սաղ օրը էն ըն հըպարապ շօռ կ՝աս* (Ջ): 2. *տե՛ս* ԽԸՆՋԻ:

ԴԱՂԱՂ - *գ.* Շատ կարճ ժամանակ՝ ակնթարթ: *Սէրօպը ինձ մին դաղաղըմը տարավ լանանընգին կընօխը...* (ՋՏ, Բ, 25):

ԴԱՂԱՎՕՐ - *տե՛ս* ԴՕՂՎՕՐ:

ԴԱՂԷԼ *(գրբ. տաղեմ (այրել), թրք. daglamak)* - *նբ.* 1. *տե՛ս* Դաղ անէլ: 2. *տե՛ս* ԴԸՂՄԷԼ: 3. Դեմքը, ձեռքերը ծակծկել: *Ցօրտը դաղում ա* (Բ):

ԴԱՂԸՆԸՂ *(թրք. dagənək)* - *ած.* Բթամիտ, տկարամիտ: *Դաղընընդ մարթ ա Սունէն մարթը* (Բ):

ԴԱՂՄԱ/ԴԱՄՂԱ *(պրս. dāmğa (կնիք, կնքված գիր), թրք. damga (դրոշմ, խարան)* - *գ.* 1. Անասունների մարմնի որեւէ մասը խարանելու գործիք, խարան: *Դաղման յօր ա ունէս, ինրանց կըվէրէն անջուկը դընդմէս, վէր յը՛տնան կարէ ճօկէ* (Ջ): 2. Անասունի մարմնի խարանված տեղը՝ իբրեւ տարբերակիչ նշան: *Կըվէն դաղման մինչէվ միհէնգ՝ ըրվամ ա* (Բ):

- Դաղմա թըխէլ/կօխէլ/տինիլ - *տե՛ս* ԴԸՂՄԷԼ:

ԴԱՂՄԷԼ - *տեմ* ԴԸՂՄԷԼ:

ԴԱՂՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ջուլալ քըրթնօնք - *տե՛ս* Հալալ քըրթնօնք:

ՋՈՒԼԱՎԷՐ/ՋՕԼԱՎԷՐ - *ած.* Շերտավոր, վրան զոլեր ունեցող: *Դա՛րզին ըտը-րա հը՝տէ մին զուլավէր շօր ա կարում, էտ մուտանան ինք՛ օնում* (Ջ):

ՋՈՒԼՈՒՄ *(արաբ. zulum (անիրավություն, կեղեքում), թրք. zulüm (կեղեքում, բռնություն, չարչարանք)* - 1. *գ.* Մեծ դժբախտություն, աղետ, արհավիրք: *Ճօղուպուրը թա.- Պա՛տ ախպէր, մէխկ ու կըրակ ըմ, ինձ ղաթումըտ պա՛հէ, էս զ՛ուլ՛ուման պըրծընիմ...* (ԱԱռ, 8): 2. *ած.* Դաժան, վայրագ: *Մին թաքավը՝ր շատ զ՛ուլ՛ում ա ինի՛մ* (ՀԺՀ, VII, 330): 3. *ած.* Վատ, աղետալի, աղետաբեր: *Քըշէրը շատ ա ընցընէս, խըրէգ՛ ա ընցընէս, Խաչին ըսկըսէս ա մին զ՛ուլ՛ում ա՛րա՛զ տը՝սնալը* (ՀԺՀ, V, 470):

ՋՈՒԼՈՒՄԱԹ *(թրք. zulmet (մթություն)* - 1. *տե՛ս* ՋՈՒԼՈՒՄ: 2. *տե՛ս* ՂԸՅԱՄԱԹ:

ՋՈՒԽԸԿԱԼԻԼ - *չբ.* Ջոխ արծակել, զոխ բռնել: *Փիփէրտը զ՛ուխըկա՛լ՛ալ ա* (Ջ):

ՋՈՒԽՏԱՆ - *ած.* Շատ բարձրահասակ: *Ջուխտան մարթ ա իլ՛ալ Արիվհատ աքօրը մարթը* (Բ):

ՋՈՒՄ(ԲՈՒ)ՐՈՒՏ *(գրբ. զմրուխտ, զմրուպ)* - 1. *գ.* Կանաչ գույնի թանկագին քար, զմրուխտ: *Ղուշը պէրանը պէնում ա, մին զ՛ումբ՛ուր՛ուտ վէր քըց՛իմ* (Ջ): 2. *ած.* Զմրուխտի գույն ունեցող, կանաչ: *Զ՛ումբ՛ուրուտ շօրէր ա կ՛ը՝ցալ* (Բ):

- Զ՛ումբ՛ուր՛ուտ հավք/ղուշ - Հեքիաթներում հանդիպող առասպելական՝ դրական հատկանիշներով թռչուն: *Զ՛ումբ՛ու-րուտ ղուշը ըտի թաքավէրին կուճուր տը-ղէն սը՝վ ըշխարքան տ՛իս ա օնում* (Ջ):

ՋՈՒՌՆԱ/ՋՈՒՌՌԱ *(պրս. surna, zorna, թրք. zurna)* - *գ.* Արեւելյան փողային՝ սրնգի նմանվող երաժշտական գործիք: *Ջուռնաչին զուռնան փիչ՛իմ ա, հարթնը տ՛իս ըն օնում* (Ջ): 2. *փխբ.* Հաստ, մեծ, անճոռնի: *Ջուռնա քէթ օնէ* (Բ): 3. *փխբ.* *տե՛ս* ՋԸՌԸԹԻ: 4. *տե՛ս* ՋԸՀԸՐ(4):

- Ջուռնաս փըչ՛ի՛ա՛ն չըմ, թա քու է-շըտ խըրթնում ա՞ - Գործելու եմ՝ առանց ուրիշի շահերը հաշվի առնելու:

ՋՈՒՌՆԱ-ԴԱՎԱԼ/ՋՈՒՌՆԸԴԱ-ՎԱԼ/ՋՈՒՌՌԸԴԱՎԱԼ - *գ.* 1. Արեւելյան երաժշտություն՝ զուռնայով եւ դհոլով: *Էտ թաքավէրըն էլ զուռնա-դավալ շատ ա ի-նի՛մ սիրիլիս* (Ջ): 2. *փխբ.* Ջուռնա եւ դհոլ նվագողներ, երաժիշտներ: *Փա՛հ-լ՛ուվանըն ՛ուրա՛ն զուռնըդըվալավը վը՝ր տ՛իս ա կ՛ամ, ժուղօվուրթը թուփ ըն տը՝ռնում...* (ՀԺՀ, VII, 66):

ՋՈՒՌՆԱ-ՆԸՂԱՐԱ - *տե՛ս* ՋՈՒՌՆԱ-ԴԱՎԱԼ:

ՋՈՒՌՆԱՉԻ/ՋՈՒՌՌԱՉԻ *(թրք. zurnači)* - *գ.* Ջուռնա փչող՝ նվագող երաժիշտ: *Միհէնգ՛ զուռնաչուն մըրթատը՝ղ տիհնօդ չի կա* (Ջ):

ՋՈՒՌՆԱ-ՏԸՄԲԸԼԱ - *տեմ* ՋՈՒՌՆԱ-ՂԱՎԱԼ:

ՋՈՒՌՆԸՂԱՎԱԼ - *տեմ* ՋՈՒՌՆԱ-ՂԱՎԱԼ:

ՋՈՒՌՆԸՊԸԼԻԹ/ՋՈՒՌՌԸՊԸԼԻԹ - *գ.* Ջուռնայից կախված զարդ: *Ջուռնաչին մին վախտ յէշ՝ում ա, տը՛սնում զուռնըպըլիթը կա վէչ* (Ջ):

ՋՈՒՌՌԱ - *տեմ* ՋՈՒՌՆԱ:

ՋՈՒՌՌԱՉԻ - *տեմ* ՋՈՒՌՆԱՉԻ:

ՋՈՒՌՌԸՂԱՎԱԼ - *տեմ* ՋՈՒՌՆԱ-ՂԱՎԱԼ:

ՋՈՒՌՌԸՊԸԼԻԹ - *տեմ* ՋՈՒՌՆԸՊԸԼԻԹ:

ՋՈՒՏ - *տեմ* ՋՈՒԹ:

ՋՈՒՐ/ԻՋՈՒՐ *(գրբ. զուր, իզուր, պրս. zur (կեղծ, խաբեություն)* - *տեմ* ՆԸՅԱԽ: *Ջուր չըն ասում, վէր կընանէք՝ը մին լ՝ուն օղտը շինօղ ըն* (ՀԺՀ, V, 600):

ՋՈՒՐԱՆԱԼ *(գրբ. զօրանամ (սաստկանալ, ավելանալ)* - *չբ.* Աճել, զարգանալ, ծլել-ծաղկել: *Պառավը ասում ա.- Յէս կարօղ ըմ օրհնէլ, վը՛ր ծիլիք՝, ծաղկիք՝, զուրանաք* (ՀԺՀ, VII, 129):

ՋՈՒՐԱՎԷՐ - *տեմ* ՋԸՐԱՎՈՒՐ:

ՋՈՒՐԱՐ - *տեմ* ՋԱՐԱՐ:

ՋՈՒՐԱՐԼՈՒ - *տեմ* ՋԱՐԱՐԼԻ՝:

ՋՈՒՐԸՅԱՐԻԼ - *տեմ* ՋԸՐՈՒՅԱՐԻԼ:

ՋՈՒՐԹՆԱՆԱԼ/ՋԸՐԹՆԱՆԱԼ *(գրբ. արթնանամ, զարթնանամ)* - *չբ.* Քնած վիճակից դուրս գալ, արթնանալ: *Մին էլ վէր զ՝ուրթնանում ա, էլ քօն չի ինում* (ՀԱԲ, 15, 107):

ՋՈՒՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ/ՋԸՐԹՆԸՑ(Ը)-ՆԷԼ *(գրբ. զարթուցանեմ)* - *նբ.* ՋՈՒՐԹՆԱՆԱԼ-ի: *Տըղան թաքավը՛րէն զ՝ուրթնըցընում ա, յէտնան ինք՝ը վազ տամ, ճըպատը, թիլիսիմը խըլ՝ում ըխճըկօրանցըն անա...* (ՆԼՂԺԲ, 52):

ՋՈՒՐՈՒՑ - *տեմ* ՋԸՐՈՒՑ:

ՋՈՒՐՈՒՑՅԸՆԳԷՐ - *տեմ* ՋԸՐՈՒՑՅԸՆԳԷՐ:

ՋՈՒՔՍ - *տեմ* ՋԸՐԹԱՐԱՆՔ:

ՋՈՒՔՍ-ՋԸՐԹԱՐԱՆՔ - *գ.* Ջարդեր եւ զգեստավորում: *Ըտըրա զուքս-զըրթըրանքէն վէր յէշում ա, էլ հիմանչում ա, թա մուտանա* (Ջ):

ՋՈՒՔՎԷԼ - *տեմ* ՋԸՐԹԱՐՎԷԼ:

ՋՈՒՔՎԷԼ-ՋԸՐԷՅՎԷԼ - *տեմ* ՋՈՒՔՎԷԼ-ՋԸՐԹԱՐՎԷԼ:

ՋՈՒՔՎԷԼ-ՋԸՐԹԱՐՎԷԼ - *չբ.* Ամբողջությամբ զարդարվել, պճնվել, զգեստավորվել: *Ջուքված-զըրթ՝արված նի յա մընանում պալատը, ք՝ընում թուշին թաքավէրէն ախճիգ՝ Շուշանիգին կօշտը* (ՆԱԲ, 43):

ՋՕՋԱԿ - *տեմ* ՋՕՋԱԿ:

ՋՕՋԱԿ/ՋՕՋԱԿ - *գ.* Փայտի, որոշ բույսերի, սոխի, ձմերուկի եւն միջուկ: *Սօղանը տինո՝ւմ ա ըստօլէն, յըմբուրուղավը թըխում, զ՝օզ՝ակը տ՝ուս օնում* (Բ):

ՋՕՋԱԿԱՎԷՐ - *տեմ* ՋՕ՝ՋԸԿԱՎԷՐ:

ՋՕՋԱԿԱՎԷՐ - *տեմ* ՋՕ՝ՋԸԿԱՎԷՐ:

ՋՕԹԷԼ *(գրբ. զօդեմ (կցել, փակցնել)* - *նբ.* Մետաղյա գործիքները եռակցել, զոդել: *Ցակատը զօթում ա, տամ ո՝ւրա՝ն* (Ջ):

ՋՕԼ *(թրք. zol)* - *գ.* 1. Կաշվի, կտորեղենի եւն նեղ եւ երկար շերտ: *Տըրա մաշկան էլ ա մին զօլ տ՝ուս օնում, պէց թօղնում* (ՀԱԲ, 15, 98): 2. Ընդհանուր ֆոնից տարբերվող մաս՝ շերտ որեւէ մակերեսի՝ առարկայի վրա: *Էտ կըվէն սիպտակ զօլէրը հըռանցէ տը՛սնում ա, ճընա՝նչ՝ում* (Ջ): 3. *մ.* Ամբողջ հասակով մեկ, երկարությամբ: *Կ՝ամ ա չ՝ա՝րչ՝ուվէն յըրա զօլ պառկում* (ՀԱԲ, 15, 104):

ՋՕԼԱ *(թրք. zola)* - *գ.* 1. Երկար ձող: *Զօլան յօր ա ունես, ճըղպօրէն թըփէս* (Բ): 2. *փխբ.* Բարձրահասակ ու նիհար մարդ: *Էտ զօլան կըռանում ա, ամմա էլհա կըլ՝օխը ըրվամ ա* (Ջ): 3. *փխբ.* Մեծ առնանդամ:

ՋՕԼԱՂ - *գ.* Տախտակները կոպիտ տաշելու մեծ ռանդա: *Դ՝ուլգ՝ա՝ը զօլաղը յօր ա օնում, էտ տըխտըկնէն տա՝՝շ՝ում* (Ջ):

ՋՕԼԱՎԷՐ - *տեմ* ՋՈՒԼԱՎԷՐ:

ՋՕԼ-ՋՕԼ - 1. *տեմ* ՋՈՒԼԱՎԷՐ: 2. *մ.* Շերտերով, շերտ-շերտ: *Կաշին զօլ-զօլ կըտըրում ա, տըրը՛խ անում, ծախում* (Ջ):

ՋՕԼԼԱՄԱ - *ած.* Մեծ, երկար: *Խաչանը դ՝ա՝ստի էն դունյան թըլը՝ղըրամ ա ը՝րալ, մին զօլլամա պարօվակ՝իր էլ թըլը՝ղըրամին մէջին տիրալ...* (ՋՏ, Բ, 2):

ՋՕԽ *(թրք. zoğ)* - *գ.* Բույսերի՝ հատկապես բանջարաբույսերի դալար ցողուն: *Փիրփէտին զ՝օխէրը աղ տիրա՝՝ծ լ՝ավ ա ինո՝ւմ* (Բ):

- Ջ՝օխ տալ/փըռնէլ/քըցիլ - *տեմ* ՋՈՒԽԸԿԱ՝՝ԼԻԼ:

ՋՕԿ - 1. Գողթան գավառի հայերի մականուն: *Շուշի զօկէր էլ ըն իլ՝՝ալ ըպրէլիս* (Ջ): 2. *փխբ.* Բարձրահասակ մարդ: *Էտ զօկը ծը՛ղքը մը՛կնում ա, սաղ խընձ՝ՕրնէՆ քաղում, մընացած մարթիք՝ը մընամ ըն յիշիլիս* (Ջ): 3. *փխբ.* Ժլատ՝ կծծի մարդ: *Էտ զօկը ո՝ւրա՝ն խօխօնցըն էլ չի վէշ մին պէն տամ* (Ջ)

- Ջ՝օկէրէն խօսէլ - Ջ՝ոկերի նման՝ զոկերենով առատ խոսք գտնել: *Հինչ ը՞ս զ՝օկէրէն խ՝օսում, կարքէն խ՝օ՛սէ* (Ջ):

ՋՕՀ *(գրբ. զոհ)* - *գ.* Պատերազմում սպանված մարդ: *Ղարաբաղը զօհ շատ ա տուվալ էս կըռվավը* (Բ):

ՋՕՀՎԷԼ *(գրբ. զոհեմ (զոհել)* - *կբ., չբ.* Պատերազմում սպանվել: *Էտ վախտը էլ մին ռուս սալդաթ ա ըտը՛ղ զօհվալ* (ԱԱ, 38):

ՋՕՂ - *գ.* Խրախճանք, ուրախություն: *...Հինչ սըրտա՞վ յէս քօչարի ա՝՝ծիմ, մակարնէրին քէփավ, զօղավ ժամ տանիմ...* (ՋՏ, Բ, 45):

ՋՕՄ - *տեմ* ՋԸՀՄԸՆԱՔԱՐ:

ՋՕՄՓ - *տեմ* ՋԸՄՓ:

ՋՕՄՓԻ - *տեմ* ՋՕՓԻ:

ՋՕՆԹԻԿ/ՋՕՆՏԻԿ *(ռուս. зонтик, հոլ. zonne-dek)* - *գ.* Փայտե կոթին ամրացրած վրանաձեւ բացվող ու փակվող ճաղերի վրա քաշած կտորով հարմարանք՝ արեւից, ձյունից, անձրեւից պաշտպանվելու համար, անձրեւանոց: *Միհէնգ՝վա հարթէրը հ՝ա՝՝նդը ք՝ինա՝՝լիս էլ ըն զօնթիկ յօր օնում* (Բ):

ՋՕՆՆԻ - *մ.* Առանց կանգ առնելու եւ կողքերին ուշադրություն դարձնելու: *...Ըտըրան մին փօսըմ կ՝էղըմ ա, ինքը զօննի ք՝ընըմ օշափնէրին ամարաթը* (ՀԺՀ, V, 203):

ՋՕՆՏԻԿ - *տեմ* ՋՕՆԹԻԿ:

ՋՕՌ/ՋՕՐ *(գրբ. զօր)* - *գ.* Ուժ, զորություն: *Կընէկը վազ տալավ, հիշկան զօռըմը կա, կ՝ա՝՝մ ա, թա՝՝ մարթին կուփի տա, քըցի ճ՝ուրը...* (ԼՂԲ, 358):

- Զօռ անէլ - 1. Ստիպել, ուժ՝ ճնշում գործադրել, հարկադրել: *Էս մարթը շատ վէր զօռ ա անում, էս տըղան ք՝ընում ա* (ՀԱԲ, 15, 83): 2. Ջանք թափել, ճիգ գործադրել: *Հիշկան զօռ ըրավ, կարից վէչ էտ կօրծը էրկու օրումը պըրծընէ* (Բ):

- Զօռէն տը՛ղը չի - Ուժով, ճնշմամբ, բռնությամբ հնարավոր չէ անել: *Լէնգ՝ Թէմուրը տը՛սնում ա, վէր զօռէն տը՛ղը չի, յը՛տ ա տը՛ռնում* (Ջ):

- Զօռ ըղնէլ/հըսնէլ - Ծանր աշխատանքից՝ մեծ ուժ գործադրելուց վնասվել: *Էնքան կօրծ ա ըրալ, ծը՛ղքը զօռ ա ընգալ* (Բ):

- Զօռ պինըցընէլ - *տեմ* Զօռ անէլ(1):

- Զօռ տալ - *տեմ* Զօռ անէլ(2):

ՋՕՌԱՄԱ - *տեմ* ՋՕՌՌԱՄԱ:

ՋՕՌԱՎ - *տեմ* ՋՕՌՌԱՎ:

ՋՕՌԱՔ՝Ի - *տեմ* ՋՕՌՌԱՔ՝Ի:

ՋՕՌԲԱ/ՋՕՐԲԱ *(թրք. zorba)* - *ած.* 1. Ուժ ունեցող ու գործադրող, բռնավոր ու հարուստ: *Մին շատ զօռբա մարթ ա ինո՝ւմ. տա հիշտէղ ք՝ինա՝՝մ ա, լօխ պիտի ո՝ւրա՝՝ն հըղէ տան...* (ՆԼՂԺԲ, 134): 2. Ուժեղ, զորավոր: *Մին խիլլա՝՝ վար կէնում ա, մին զօրբա ըրօտուց ա լըսում* (ՀԺՀ, V, 389):

ՋՕՌԲԱՅՕԹՈՒՆ/ՋՕՐԲԱՅՕԹՈՒՆ - *գ.* Ֆիզիկական ուժ գործադրելը, բռնություն: *Տը՛ղ կա՝ զօռբայօթունը անց չի կէնում, բիդի քախցըր լ՝ուզ՝ու պինըցընիս* (Ջ):

ՋՕՌԷԼ - *տե՛ս* ՋՕՌՌԷԼ:

ՋՕՌԻ - *տե՛ս* ՋՕՌՌԻ:

ՋՕՌԼՈՒ *(թրք. zorlu (ուժեղ, ազդեցիկ)* - *տե՛ս* ՋՕՌՌԻ:

ՋՕՌՌԱՄԱ/ՋՕՌԱՄԱ *(թրք. zorlama)* - *տե՛ս* ՋՕՌՌԱՎ(1):

- Ջոռռամա անէլ - *տե՛ս* Ջոռ անէլ(1):

ՋՕՌՌԱՎ/ՋՕՌԱՎ - *մ.* 1. Բռնությամբ, հարկադրաբար: *Թաքավէրը հրաման ա տամ, էտ տըղէն զօռռավ փըռնում ըն, քըցում տուրմանն* (Ձ): 2. Մեծ դժվարությամբ, մի կերպ, հազիվհազ: *Վէց օր վըէղը քանդըմ ա, զօռավ մին խըրէգ՝ վըէղ ա ինում քանդածը* (ՀԺՀ, V, 75):

ՋՕՌՌԱՎ-ԳՈՒՋԱՎ - *տե՛ս* ՋՕՌՌԱՎ-Կ՝ԻԺ(Ժ)ԱՎ:

ՋՕՌՌԱՎ-Կ՝ԻԺ(Ժ)ԱՎ/ՋՕՌՌԱՎ-ԳՈՒՋԱՎ - *տե՛ս* ՋՕՌՌԱՎ (2): *Էտ ծին զօռավ-կ՝իժավ, մին թանիրանվ կըլօխը պիցըրցընըմ ա, թա.- Կընծէ՛, օխնծ ախպէր, կընծէ՛, էրկուվընանուն լիվօթուն ընէլի չի* (ՀԺՀ, VI, 251):

ՋՕՌՌԱՔ՝Ի/ՋՕՌԱՔ՝Ի *(թրք. zoraki)* - *տե՛ս* ՋՕՌՌԱՎ(1):

ՋՕՌՌԷԼ/ՋՕՌԷԼ/ՋՕՐԷԼ *(գրբ. զօրեմ (կարողանալ, ձեռնհաս լինել, ճար անել)* - 1. *տե՛ս* Ջոռ անէլ: 2. Իր ասածը պնդել, համառել: *Հինչքան էս ախճիգ՝ը զօռալ ա, թա յէր չօնէ, էս տըղան մըտէգ՝ չըրալ...* (ՀԺՀ, VI, 27):

ՋՕՌՌԻ/ՋՕՌԻ - *ած.* 1. Դժվար, ծանր: *Ջոռի կօրծը ամմէն տըղըմարթու պէն չի* (Ձ): 2. Ուժեղ: *Ուշուփնէն տը՛սնըմ ըն, վէր տա զոռի, ջանավար տըղա յա, խուստանում ըն, վէր տան...* (ՀԺՀ, V, 311): 3. *մ.* Ուժեղ՝ սաստիկ կերպով: *Ջոռի կըգնըվում ա* (Բ):

ՋՕՌՌՈՒՍԻՔ՝Ի/ՋՕՌՈՒՍԻՔ՝Ի - *տե՛ս* ՋՕՌՌԱՎ(1):

ՋՕՌՈՒՍԻՔ՝Ի - *տե՛ս* ՋՕՌՌՈՒՍԻՔ՝Ի:

ՋՕՎՕՏԷԽՆԻԿ *(ռուս. зоотехник, հուն. zoon+technike)* - *գ.* Անասնաբույծ: *Ճարտար առաչ լ՝ավ զօվօտէխնիկնէ յըն իլալ* (Բ):

ՋՕՐ - *տե՛ս* ՋՕՌ:

ՋՕՐԱՎԱՐ *(գրբ. զօրավար)* - *գ.* Զորքի գլխավոր հրամանատար: *Մին պառավ կընէգ՝ ուրան արտումը հօնձ ընէլիս մին զօրավար զօրքավը անց ար կէնում արտէն ղըրաղավը* (ԱԱ, 25):

ՋՕՐԲԱ - *տե՛ս* ՋՕՌԲԱ:

ՋՕՐԲԱՅՕԹՈՒՆ - *տե՛ս* ՋՕՌԲԱՅՕԹՈՒՆ:

ՋՕՐԷԼ - *տե՛ս* ՋՕՌՌԷԼ:

ՋՕՐԹՈՒՆ - *տե՛ս* ՋԷՐԹՈՒՆ:

ՋՕՐՈՒԹՈՒՆ *(գրբ. զօրութիւն)* - *գ.* 1. Հզորություն, ուժ, կարողություն: *Ըտըրա զօրութունավը էտ քըղաքան տուս ըն կ՝ամ, ք՝ընում մին օրիշ քաղաք* (ՀԺՀ, V, 176): 2. Կախարդական ուժ՝ կարողություն: *Էտ ախճիգ՝ը շուտանց լըսած ա ինում էտ ճըպատին մասին, գ՝ուդում ա ինում ըտըրա զօրութունը* (ՀԺՀ, V, 34):

ՋՕՐՔ *(գրբ. զօրք)* - *գ.* Պետության զինված ուժերի ամբողջությունը կամ նրա մի մասը: *Մին օր հարայըն ընգ՝նում ա, թա դուշմանն զօրքէրը հըվաքվալ ըն, կըռը՛վ ըն օգում անին թաքավը՛ռէն նըհը՛տ* (ՆԼՂԺԲ, 75):

- Զօրք կապէլ - Զորք հավաքել՝ կազմել: *Թաքավէրը էտ վէր ըսկանում ա, դանստի զօրք ա կապում, տուս կ՝ամ տահանց առաշկը* (Ձ):

ՋՕՓԻ/ՋՕՍՓԻ - *գ.* 1. Հայկական շուրջպար, որի ժամանակ ոտքերով դոփում են գետինը: *Միհէնգ՝վա ջիհիլնէն գ՝ուդում էլ չըն, թա զօփին հունց ըն պար կ՝ամ* (Բ): 2. Կոխի տեսակ, որի ժամանակ հակառակորդները իրար հրում են ձեռքերով, կրծքով, ուսերով, մինչեւ մեկն ու մեկի տեղահանվելը, պարտվելը: *Զօփին լ՝ավ խաղ ա* (Ձ):

- Զօփի տալ - 1. Գետինը դոփելով՝ պարել: *Ջըհիլնէն ուրուր ը՛ռքա փըռնում ըն, զօփի տամ* (Ձ): 2. *Զօփի* խաղը խաղալ: *Զօփի յըն տամ, Ըրշակէն տըղան յը՛խնում ա* (Ձ): 3. Իրար հետ կռվել, իրար խփել: *Ղօչէրը զօփի յըն տամ* (Բ): 4. Զվարճանալ, պարապ ժամանակ անցկացնել: *Կօրծ անօղ չի կա, լօխ զօփի յըն տամ* (Բ): 5. Սիրային կապերի մեջ լինել, կենակցել: *Նախագան ա էտ կընէգ՝ը զօփի յըն տամ* (Բ):

Է

Է - *ձ.* 1. Զարմանքի բացականչություն՝ միթե՞, ի՞նչ ես ասում: *Է՛, դուզ ը՞ս ասում, Կարօն յը՛կալ ա՞* (Բ): 2. Հիացական բացականչություն՝ ապա, բաս: *Մին տը՛սէք՝ է՛, Հուռուն հարթնը ճօխտակ տըղա յա պէրալ* (Բ): 3. Անբավականության, դժգոհության, վշտի բացականչություն: *Է՛, բա՛լամ, ըտի յա ըլալ ք՝օնա վըխտէն...* (ԼՂԲՔ, 275): 4. Ափսոսանքի բացականչություն՝ ափսո՛ս, ավա՛ղ: *Է՛, գ՝անքըս էս չօրք՝ սարէն դաթըմը մըշէցէ* (Ձ): 5. Անհամբերության, սրտնեղության արտահայտություն: *Է՛, էս հավան խէ պէնվում չի՞, պատառ կօրծ անինք՝* (Բ):

ԷԳՕՅԻՍՏ *(ռուս. эгоист, ֆր. e'goiste, լատ. ego)* - *գ., ած.* Անձնասեր, եսասեր (մարդ): *Էտ հարթնը շատ էգօյիստ ա* (Ձ):

ԷՋՋԱՂԱՆ - *տե՛ս* ԷՋՋԱՆ(ԱՆ):

ԷՋՋԱՂԱՆ - *տե՛ս* ԷՋՋԱՆ(ԱՆ):

ԷՋՋԱՆ(ԱՆ) - *տե՛ս* ԷՋՋԱՆ(ԱՆ):

ԷՋՋԱՆ(ԱՆ)/ԷՋՋԱՆ(ԱՆ)/ԷՋՋԱՂԱՆ/ԷՋՋԱՂԱՆ/ԷՅՋԱՆ(ԱՆ)/ԷՅՋԱՆ(ԱՆ) - *մ.* Միշտ, շարունակ: *Էտ էՀՐտ էզգանն կ՝ամ ար, էտ խուխէն ծէծ տամ, էլիա ք՝ինամ* (Ձ):

ԷՋՆԱ - *գ.* Քրոջ ամուսին: *Հու վա՞ տը՛սալ՝ էզնան քէնուն նըհը՛տ սիլի-բիլի անէ. անդար անիմ ըստի թիվը* (Բ):

ԷԼ/ԱԼ[3] *(գրբ. այլ (այլեւս, ուրիշ, մնացածը)* - *մ.* 1. Այլեւս: *Արչը էլ խօսում չի, թըքում ա մարթին յըրա, ք՝ինամ* (Ձ): 2. Ավելի եւս: *Ախճիգ՝ը էտ խընձօրը օտում ա, էլ ղըշշինգանում* (Ձ): 3. Դարձյալ, եւս, էլի: *Էտ քաչալ ճօտը ամմէն օր էլ էտ տանը մին վընաս ա տամ* (ՀԺՀ, V, 458): 4. Նույնպես: *Էտ օխծէրըտ էլ կընկ՝ան, տը՛սնան էն մարթը ուրան ախպօրը տանը* (ՀԲ, 346): *շ.* 5. Եվ, ու: *Էտ մարթը քըվօրը տըղէն դարկում ա տօն, վար համ հաց պէրի, համ էլ գ՝ուփուն...* (ՀԺՀ, V, 406): 6. Եթե: *Մը՛ռնէ էլ՝ դանրդը չի* (Բ): 7. Այսքանից հետո ինչի՞ համար, այլեւս ինչո՞ւ: *Էլ հօր ը՞ս լանց ինում, կըտըրալ ըս պըրծալ* (Ձ): 8. Թեկուզ, չնայած: *Էտ կընէգ՝ը գ՝ուդում ար, թա վէր ք՝ինի էլ վէչ, ուրան փայը ղըրկըլան ըն* (Ձ): 9. Որ (թարմատար): *Հանլա լ՝ավ ա՝ էտքան էլ կըրը՛ցալ ա ք՝ինի* (Ձ): *վ.* 10. Արտահայտում է զիջականություն՝ գոնե: *Մին տուս պըրծած մաշին էլ չի կ՝ամ, թա նըստէ, ք՝ինի* (Բ): 11. Արտահայտում է անսպասելիություն՝ հանկարծակիություն՝ հանկարծ: *Մին էլ, ըհը՛, մարթը տօռնը թակից* (Ձ): 12. Արտահայտում է դժգոհություն, զայրույթ: *Պա մարթ էլ ուրան հօրը տըրօթուն չանէ՞լ* (Ձ): 13. Մեկից բարձր թվականների հետ ցույց է տալիս հավաքականություն՝ բոլորն անխտիր: *Հէնգ՝ ախճիգ՝ օնէ, հէնգ՝ն էլ անպէն* (Բ): 14. Արտահայտում է հարցման սաստկացում: *Հունց էլ վըխտէն կըլխու չըմ ընգալ* (Բ):

- Էլ ա - Գոնե, թեկուզ: *Ալլահան վը՛ղըն էլ ա, կարում չի բըջանի* (Բ):

- Էլ ասու մէլ - Գործածվում է պատասխան խոսքի մեջ՝ արտահայտելով չափազանցություն՝ անսովորություն՝ շատ, չափազանց, սոսկալի եւն: - *Համբօվէն տըղան կ՝օղ ա: - Էլ ասում էլ* (Ձ):

- Էլ ընցալ ա - Կատարվածի համար պետք չէ ափսոսալ՝ տրտնջալ, անհրաժեշտ է մտածել հետագա անելիքների

մասին: *Մարթը ասմա.- Մ կընէգ՝, էլ ընցալ ա, յը՞ր կաց, ք՝ինինք՝ մէր բուստանավը ինինք՝* (Ձ):

- Է՞լ հինչ կօգ՝իս - *հեգն.* Ասածդ՝ պահանջածդ անհավանական է՝ անտեղի է:

- Էլ չէրիք՝/չի հէրիք՝ - Քիչ է, բավ է: *Էտ մարդիմազարը հօրը փուլէրը կ՝ուղացալ ա, էլ չէրիք՝, միհէնգ՝ էլ կավըն ա տարալ ծախալ* (Բ):

ԷԼԷՔՏԸՐԻԿ *(ռուս. электрик, ֆր. e'lectrique)* - *գ.* Էլեկտրատեխնիկայի մասնագետ: *Լ՝ավ էլէքտրիկը տՀուգնը չի մընալ* (Բ):

ԷԼԼԱ - *տե՛ս* ԷԼՀԶ:

ԷԼԼԶ - *տե՛ս* ԷԼՀԶ:

ԷԼԼԸՀԶ - *տե՛ս* ԷԼՀԶ:

ԷԼՀԱ - *տե՛ս* ԷԼՀԶ:

ԷԼՀԶ/ԷԼՀԱ/ԷԼԼԸՀԶ/ԷԼԼԶ/ԷԼԼԱ/ԱԼՀԶ/ԶԼՀԶ/ԶԼԼԶ/ԶԼԼԶ *(թրք. ala)* - *մ.* Կրկին, դարձյալ վերստին, էլի: *Մին տէղ էլ-հա մին կընէգ՝ ա ջըհում* (ՀԱԲ, 15, 123):

- Էլհա՝ էն ճՀուրը, էն ճէղացը - Ամեն ինչ նույնն է, ոչինչ չի փոխվել: *Հէնգ՝ տըռնանը յը՞տը կ՝ամ ա հՀման շէնը, տը՞սնում՝ էլհա՝ էն ճՀուրը, էն ճէղացը* (Ձ):

ԷԼՉԻ *(թրք. elči)* - *գ. 1.* Խճուղի: *ՏՀուս ա կ՝ամ էլչին, տը՞սնում մին դէրվիշ ը-տը՞ղ նըստած* (Ձ): 2. Ճանապարհորդ: *Էլչին նըստում ա էտ ծառէն տակէն, մըթկէն դօնը ըղնում* (Ձ):

ԷԽԾ - *տե՛ս* ԻՇԽ:

ԷԽԾԸՆԱՁ - *տե՛ս* ԻՇԽԸՆԱՁ

ԷԾ *(գրբ. այծ)* - *գ.* 1. Կաթնասուն ո-րոճող ընտանի կենդանի՝ այծ: *ՀՀաբին օ-զում ա էծը ծախէ, ԿՀաբին էլ օգում ա էծ ինք օնէ* (ՆԱԲ, 119): 2. *փխբ.* Երեխային կրծքից շուտ կտրած մայր: *Էտ էծը խուխէն մըհալ չի քըցՀում* (Բ): 3. *փխբ.* Սիսեռի թխագույն հատիկ: *Սիսէռը մը՞կնում ա, էծէրը ճօկում* (Ձ): 4. *հոգն., փխբ.* Բարկություն, խենթություն, կամակորություն: *Ի՞ծէրավ մարթին նըհը՞տ կօրծ փըռնէլը տիժէր ա* (Ձ):

- Էծ-էծ ինիլ - *տե՛ս* ԽԸՐԹՆԷԼ:

- Էծ-էծ խօսէլ - Առանց կշռադատելու՝ մտածելու խոսել: *Էտ վէր ըսկըսում ա էծ-էծ խօսէլը, մարթը կըտաղում ա* (Ձ):

- Էծէրը ծըմակավըն անէլ - Որեւէ բան փռել, ցիրուցան անել, ցրել: *Ախճի հինչ ը՞ս էծէրըտ ծըմակավը ըրալ, էտ պՀուրթըտ խէ հըվաքում չը՞ս* (Բ):

- Էծէրը կ՝ալ/յը՞ր կէնալ/փըռնէլ - Բարկությունը՝ խենթությունը՝ կամակորությունը բռնել: *ՄաշտՀուն էծէրը վէր կ՝ամ ա, կընէգ՝ը տանան փախչՀում ա* (Ձ):

- Էծէրը տՀուս տը՞ռնալ/ք՝ինիլ - Բարկությունը՝ խենթությունը՝ կամակորությունն անցնել, հանդարտվել: *Ըտի մին խիլլա՝ վախտ կէնում ըն, մինչը՞վ թաքավէրին էծէրը ք՝ինամ ա, դինջանըմ ա* (Ձ):

- Էծը էծին հը՞տէ լ՝ավ ա, կանց մին սՀուրՀ վը՞խճարը - Յուրաքանչյուրը իրեն համախատասխան մարդու հետ ավելի լավ է զգում:

- Էծը մըկըկալավ կ՝ըրունքըհան իլա՝վ, վը՞խճարը սուսըփուս ըստակից - Տրտնջացողը՝ բողոքողը շահում է:

- Էծ ընք, վը՞խճար չընք, վէր քըմըկնէս ծասկինք՝ - Հարուստի դիրքը իր թերությունները ծածկում է, աղքատինը՝ ոչ:

- Էծը Հուրա՝ն վը՞նանա կախ կըտան, վը՞խճարը՝ Հուրա՝ն - Յուրաքանչյուրին պետք է իր հանցանքին համապատասխան պատիժ սահմանել, յուրաքանչյուրի հետ պետք է վարվել նրան արժանի ձեւով:

- Էծու մըրօք - *տե՛ս* ԻԾԸՄԸՐՕՔ:

ԷԿԱՆԱՄԻՍՏ *(ռուս. экономист)* - *գ.* Տնտեսագիտության մասնագետ, տնտեսագետ: *Լ՝ավ էկանամիստին հը՞տան գ՝ՀուլլՀ կընքըցին* (Ձ):

ԷԿԱՆՕՄՅԱ *(ռուս. экономия, իտ. economia)* - *գ.* Տնտեսելը, տնտեսում, խնայողություն: *ՍարուշինՀցէք՝ վէր ճՀուրը էկանօմյա չանին, կարէլ չընն ապրին* (Բ):

ԷՀԷՅ - *ձ.* 1. Մեկին կանչելու՝ մեկի ուշադրությունը հրավիրելու կոչական բացականչություն: ... *Մինը հէտան ծէն ա տամ.- Էհէ՛յ, դՀվրիշին տըղա* (ՀԺՀ, VI, 117): 2. Սպառնալիքի բացականչություն: *Ղօրօխչին մաննը թափ ա տամ, թա.- Էհէ՛յ, խէլՀնք կացէք՝, հու նի մընէ բաղը, փըռլական ըմ, պըռընչօնը յը՞ր անիմ* (Ձ):

ԷՀՏ - *տե՛ս* ՕԽՏ:

ԷՀՏԻԲԱՐ - *տե՛ս* ԻՀՏԻԲԱՐ:

ԷՅ *(գրբ. է)* - 1. *տե՛ս* ԷՀԷՅ: *ձ.* 2. Ուղղվում է մեկին, որի անունը չի տրվում չիմանալու, արհամարհելու կամ այլ պատճառով: *Է՛յ, տու հուվ ը՞ս, մին յը՞ք ըստը՞ղ* (Ձ):

- Էյ գիդի - Ափսոսանքի արտահայտություն: *Էյ գիդի Սավէտ, վէ՛չ հարուստ ա իլա՝լ, վէ՛չ ք՝ա՝սիբ* (Ձ):

ԷՅՁԱՆ(ԱՆ) - *տե՛ս* ԷՁՁԱՆ(ԱՆ):

ԷՅՁԱՆ(ԱՆ) - *տե՛ս* ԷՁՁԱՆ(ԱՆ):

ԷՅԼԸՄ - *տե՛ս* ԻՆՔ՝ՆԱՐՕՏ:

ԷՅՆ/ԱՅՆ *(արաբ., թրք. ayn (աչք)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Էյնը կ՝ալ/քըցիլ - 1. Ուշադրություն դարձնել, մտահոգվել: *Դանգըլա մարթ ա. սաղ տօնը վէր կըրին տանին, էյնը չի կ՝ալ՝* (Բ): 2. Հիշել, մտաբերել: *Մին էյնը չընքըցօղ հարս ամման դՀնըմ, վէր խորագ՝ ա իփիս, մըտան քըցիս ա, շիրէփը թուղէս տՀուսՀմը* (ԼՂԲ, 376):

ԷՅՍԸ - *տե՛ս* ԷՔ՝ՍԸ:

ԷՆ/ՀԷՆ *(գրբ. այն)* - *դ.* 1. Ցույց է տալիս խոսողից ու խոսակցից հեռու գտնվող առարկա՝ երեւույթ եւն: *Ծին էլ փըսէն թօղըմ ա, ք՝ինամ էն տըղէն կօխկէն վը՞ննը կէնում* (ՆԼՂԺԲ, 104): 2. Ցույց է տալիս հեռավոր ժամանակ կամ տեղ: *Էն վըխտէն էլ ՀդՀթ չի իլա՝լ կընէգ՝ տՀուս քըցիլը* (Ձ): 3. Ցույց է տալիս ոչ խոսողի կամ խոսակցի կողմից հաղորդված իրողություն՝ հանգամանք եւն: *Էն ըսըծնէն վէր կարէ անէ, լ՝ավ ա* (Ձ): 4. Ցույց է տալիս անձնական դերանվան երրորդ դեմք՝ նա: *Էն էլ յը՞կալ ա, մօրը իլա՝ծ-չիլա՝ծը հըվաքալ, տարալ* (Բ):

- Էն ա *(գրբ. այն է)* - 1. Այսինքն, ուրեմն, հետեւաբար: *Վէր յը՞կալ չի, էն ա գ՝իդա՝, վէր կօրծէրը լ՝ավ չի* (Բ): 2. Հենց, ահա: *Էն ա օգ՝ում ին, թա հաց օտին, թօռը նի կալ՝ավ* (Բ): 3. Հրեն հա, հրեն է: *Տըսնաս ըն՝ հէն ա մին հը՞ռէ տէղ մին պէն իշէդ-իշէդ ընէս* (ՀԺՀ, V, 59): 4. Էլ դրանից հետո ի՞նչ է մնում: *Վէր կավըն էլ ինք՝ կալ՝ին ծը՞ռքան, էն ա բիդի կախ ինի, էլ ապրում ա հինչ ա՞նէ* (Ձ):

- Էն ա խը՞ռէս/տՀանձիս/ք՝Հրթիս պըթկէն - *անրգ.* Ես ի՞նչ իմանամ՝ որտեղ է: - *Հէնդօ՛, ՀՀբէշիգ՝ը ըշտը՞ղ ա՞:* - *Էն ա խը՞ռէս պըթկէն* (Բ):

- Էն աշխարքը - Հանդերձյալ կյանք: *Մօլլան ասմա.- Էն ըմ իլա՝լ էն ըշխարքումը, մը՞ռած ըմ իլա՝լ, էս դէրը ինձ սըղըցըրալ ա* (Ձ):

- Էն աշխարքը դարկէլ - Մեռնել, սպանել: *Ղաչչաղը ասմա.- Յա՛ ծիտ իգ տօ, յա՛ թա չէ ք՝ը՞զ էն աշխարքըն ըմ ղըրկըլան* (Ձ):

- Էն աշխարքը ք՝ինիլ - Մեռնել, սպանվել: *Շէնըմը ասսախկալ մարթ չի մընաց, լօխ էն աշխարքը ք՝ը՞ցէն* (Բ):

- Էն առաչ - Վերջերս՝ վերջին ժամանակներս: *Էն առաչ մին էրկու մարթ ըն յը՞կալ, օգ՝ում ըն շէնումը զավօդ շինին* (Բ):

- Էն Աստուծը - 1. Երդման բանաձեւ՝ Աստված վկա: *Կընէգ՝ը ՀուրթՀումն ա օտում, թա.- Մ մարթ, էն Աստուծը, յը՞ս էս մարթին ըռըչի դՀնՀումըն ըմ տը՞սնում* (Ձ): 2. *տե՛ս* Ամանը գՀունՀդՀ(ը):

- Էն ա վէր - 1. Բայց, սակայն: *Էն ա վէր ըտըրանց խօխա չինՀում* (Ձ): 2. *տե՛ս* ԽԷՇԼ՝ԸՀԱ(Մ): 3. *տե՛ս* Էն ա:

- Էն ա, վէր ասալ ա/ըրալ ա/ք՝ը՞ցալ ա - *տե՛ս* Էն ա(ր) ու էն:

- Էն ա, վէր կա - Միայն նա է, միակն է, այն է, ուրիշը չկա՝ պետք չէ: *Տըղան ասմա.- Էն ա, վէր կա, յը՞ս մինակ ընդրան ըմ օգ՝ում* (Ձ):

- Էն ա(ր) ու էն - Վերջին անգամն էր, դրանից հետո այլեւս չի կրկնվել: *Էն ար ու էն, էտ տղան էլ մորը տըէսավ վէչ* (Բ):

- Էն բաշտան - *տե՛ս* Էն կըլխան:

- Էն դունյան - *տե՛ս* Էն աշխարքը:

- Էն էլ կա - Պետք է հաշվի առնել նաեւ: *Էն էլ կա, վէր հըղէննի ախպո՛ւր չի ջիհլանկանն* (Ձ):

- Էն էլ հիշկա՛ն - Արտահայտում է քանակական չափազանցություն՝ չափազանց, շատ: - *Ըստարէ խոտ ը՞ս հարալ: - Էն էլ հիշկա՛ն* (Բ):

- Էն էլ հո՛ւնց - Արտահայտում է որեւէ վիճակի, դրության, հատկանիշի սաստկություն, չափազանցություն՝ ուժեղ, սաստիկ: *Ըսօրէ կարկուտ ա յը՞կալ, էն էլ հո՛ւնց* (Բ):

- Էն էլ մին պէն ար - Բարեբախտության կամ պատահականության արդյունք էր, այլեւս չի կրկնվի: *Էն էլ մին պէն ար. Սիմօնէն կավը ճօխտակ ծընից* (Բ):

- Էն ըշխարքան յը՞կած - Գունատ, վտիտ, մեռելի տեսք ունեցող: *Էն ըշխարքան յը՞կած ը՞ս, էտ հինչ ա՞ հանլըտ* (Բ):

- Էն խաչը՝ կանպանտը՝ մեռունը՝ յը՞խնէն՝ նըհատակը՝ սօրփը - Երդման բանաձեւ. խաչը՝ երկինքը՝ մեռունը՝ եկեղեցին՝ նահատակը՝ սուրբը վկա: *Յը՞ս մինակ ք՛ը՞զ ըմ սիրում, սօտ չըմ ասում, էն խաչը* (ԼՂԲ, 89):

- Էն կըլխան - Ի սկզբանե, նախապես, կանխավ, վաղուց: *Էն կըլխան էլ գ՛ուդում ար, վը՞ր տա ուրանն նը՞շանածը չի* (ՀԺՀ, V, 47):

- Էն ղօլը տէս անէլ - *հեգն.* Կարեւոր՝ օգտակար բան անել: *Հինչ ա՞, իզէն էն ղօլը տէս ա՞ ընական, հանմանն ախմաղընն ա, լի՞* (Ձ):

- Էն յը՞տը-հը՞տը - *տե՛ս* Էն առաչ:

- Էն վաղ ար, վէր էշը կաղ ար - Ժամանակները փոխվել են, նախկին միամիտը չեմ (չես, չէ): *Մարթը ասմա.- Էն վաղ ար, վէր էշը կաղ ար, էլ կարէլ չըս խանփիս* (Ձ):

- Էն վէր ա - *տե՛ս* Էն ա վէր:

- Էն տը՞ղընն ա ընգալ - Ճարահատյալ, ստիպված: *Էն տը՞ղընն ա ընգալ, վէր իլանծ-չիլանծ մին կավը ծախալ ա* (Բ):

- Էն օրը ըղնէլ - Վատ՝ նեղ վիճակի մեջ ընկնել: *Էն օրընն ըմ ընգալ. կարում չըմ թա կըլանխըս պահիմ* (Ձ):

- Էն օրը քըցիլ - Վատ՝ նեղ վիճակի մեջ գցել, ծեծել, հանդիմանել եւն: *Խը՞ղճէն էն օրընն ըն քըցանլ, վէր տանան էլ չի տանս կ՛ամ* (Բ):

ԷՆԷՐԳՅԱ *(ռուս. энергия, հուն. energeia)* - *գ.* Եռանդ, ջանք, ուժ: *Թա էտ կուճի մարթին մաչին էտքան էնէրգյա ըշտըղան ա, կարում չըս գ՛իդանս* (Բ):

ԷՆՉԱ(Ն)Ք/ԷՆՉՈՒ(Ն)Ք *(գրբ. այնչափ)* - *տե՛ս* ԷՆՔԱՆ:

ԷՆՉՈՒՆՔ - *տե՛ս* ԷՆՉԱՆՔ:

ԷՆՔԱՆ *(գրբ. այնքան)* - *դ.* 1. Այն չափով՝ քանակով: *Ամմէն մարթ բիդի էնքան խըմէ, հիշկան վը՞ռավը կ՛ամ ա* (Բ): 2. Շատ ավելի, առավել եւս: *Էտ տըղան քանէ ք՛ընում ա, էնքան մանչվում ա* (Ձ): 3. Շատ, մեծ քանակությամբ: *Էնքան հէյվան օնէ, մինը մօրթում չի, թա խօխէնք՛ը օտին* (Բ):

- Էնքան էլ - Գործածվում է ժխտական նախադասության մեջ՝ ոչ բոլորովին, սպասածի չափ: *Էրկու կընէգ՛ պահէլը էնքան էլ հիշտ չի* (Բ):

ԷԾ *(գրբ. էշ)* - *գ.* 1. Սմբակավորների կարգին պատկանող կենդանի՝ ավանակ: *Հունց ա պըտահում, էտ դաթումը էշը մին դանում էլ ա զըռռամ* (ՆԼՂԺԲ, 119): 2. *փխբ.* Գութանի մաս՝ հաստ, ծուռ ու երկար գերանը, որի տակ՝ առջեւի կողմից դրված է ակը, իսկ ետեւի կողմից ամրացված է խոփը: *Կ՛ութանին էշը կաղնէ չար, կօտրից* (Ձ): 3. *փխբ.* Լարավոր նվագարանի լարերի հենարան: *Աշըղը հանրփանում ա, սազը տափավը կ՛ամ, էշը կօտըրում* (Ձ): 4. *փխբ.* Խաղի վեգի հարթ ու լայն կողմը: *Վէք՛ին թօղ ըն անում, ըտըրանը էշ ա ըղնում* (Ձ): 5. *փխբ.* Ապուշ՝ հիմար՝ անհասկացող մարդ: *Էտ էշը ըտի էլ կըլխու չի ըղնում, վէր կընէգ՛ը սիրը՞կան ա պահում* (Բ): 6. *փխբ.* Անտաշ՝ կոպիտ՝ գռեհիկ մարդ: *Էտ էշը փըռնում ա ըխճըկանը թակում* (Բ):

- Էշը անէ, ծին օտէ - Խեղճը՝ թույլը աշխատում է, ուժեղը՝ հզորը վայելում: *Մունք տանջվում ընք, ուրանք հըրուստանում ըն, նըհախ չըն ասալ՝ էշը անէ, ծին օտէ* (Բ):

- Էշան կանրի օգ՛իլ - Մեկից նրա սիրելի բանը խնդրել: *Ասմա.- Պա էշան կ՛անրի կօգ՛ի՞ն, էտ իմ ամմէնալ՛ավ շօնըս ա, հունց ք՛ը՞զ տա՞մ* (Ձ):

- Էշան կ՛արունք հըրցընէլ - Անիմաստ հարցում անել, հիմարից լուրջ բան հարցնել: *Մինակ ախմաղը կարող ա էշան կ՛արունք հըրցընէ* (Բ):

- Էշան վէր ըղնէլ - Խայտառակ դառնալ: *Էշան վէր ընգած տօն ըն, ըտըրանց անա հու բի՞դի ախճիգ՛ օգ՛ի* (Բ):

- Էշ-էշ խօսէլ/տանս տալ - Հիմար-հիմար խոսել, դատարկաբանել: *Վէր ըտի էշ-էշ խօսում ա, փըռնում ըն, մին լ՛ավ թակում* (Ձ):

- Էշը էլանն էն էշընն ա, փալանընն ա փօխվալ - Էությամբ նույնն է, միայն արտաքնապես է փոխվել: - *Սո՛ւմբաթ, տըղատ ինիստուտը պըրծալ ա, աշկըտ լո՛ւսի: - Էշը էլանն էն էշընն ա, փալանընն ա փօխվալ* (Բ):

- Էշը էշին քըշտէն կապիս՝ յա՛ խուլը/քացէ տալը կըսըվը՞րէ, յա՛ խասյաթը/զըռռալը - Իրար հետ ընկերություն անող՝ շփվող մարդիկ բնավորությամբ նմանվում են իրար:

- Էշը ըխպըհարումը թանվիլ ա տըվալ, մօխէրը գիրավ ա տըվալ - Ասում են շատ հեռու ազգականի մասին: - *Սօնա, Մարգօն քու հինչըտ ա՞: - Իմ ախպօր հանօրը մըրաքվէրը տըղէն կընէգ՛ը: - Դէ էն ա, ասէ՝ էշը ըխպըհարումը թանվիլ ա տըվալ, մօխէրը գիրավ ա տըվալ, լի՞* (Բ):

- Էշը թըկէլավ ճօրէ չի տը՞ռնալ - Բնությունից ժառանգածը արհեստական միջոցներով հնարավոր չէ փոխել:

- Էշը խը՞լքէն/կըլխէն քացէ տալ - Հիմարություն անել: *Էշը խը՞լքէն քացէ յա տուվալ, կացէնը յէր ա կանլալ սաղ խընձօրծտը կըտօրալ* (Բ):

- Էշը կապէլ, յը՞տ անէլ - Ոչինչ չանել, բայց աշխատել ձեւացնել: *Հինչ ը՞ս էշը կապում, յը՞տ անում, խէ կօրծ չը՞ս անում* (Ձ):

- Էշը կըկըտըրէ/կըմաշի, տանգ՛ը վէչ/չէ - Հիմնականը՝ կարեւորը երկրորդականից շուտ է փչանում:

- Էշը կուրցընէլ - Շփոթվել, իրար խառնվել, մտորումների մեջ ընկնել: *Բօլա՛, ա՛յ իմ էշը կուրցըրած հայէր, բօլ ա՛ հինչքան մէր ծէռքավը մէր տօնը քընդէցինք...* (ՋՏ, Բ, 239):

- Էշը կուրցընէլ, փըլանէն հը՞տան շօռ կ՛անլ - Կարեւորից՝ հիմնականից զրկվելուց հետո չնչին բաների մասին հոգալ՝ մտածել: *Է՛, ա՛ ժուղօվուրթ, էշը կուրցըրալ ըք, փըլանէն հը՞տան ը՞ք շօռ կ՛ամ...* (Ձ):

- Էշը կօրած - Շփոթված, իրար խառնված, մտորումների մեջ ընկած: *Էշը կօրած մարթ ա Քանսպանը* (Բ):

- Էշը հանքվան մօրթէլ - *տե՛ս* Էշը վը՞ռան մօրթէլ:

- Էշը հինչ ա՞ գ՛ուդում, մօշը հինչ ա՞ - Հիմարը՝ անհասկացողը լավի՝ գեղեցիկի արժեքը չի իմանա: *Ախէր էն վըլլամաղ-շարմաղ ախճիգ՛ը հօր ը՞ք տըվալ էտ ըխմաղէն. էշը հինչ ա՞ գ՛ուդում, մօշը հինչ ա՞* (Բ):

- Էշը հիշկան տանում ա՝ պէռնում ըն - Չտրտնջացողին՝ չբողոքողին շահագործում են: *Ըտի յա. էշը հիշկան տանում ա՝ պէռնում ըն, սուս ըս անում, ըտըրա հը՞տէ էլ սաղ օրը ք՛ը՞զ ըն պինըցընում* (Ձ):

- Էշ ըռանգ տըվօղ - *տե՛ս* Կատու կըրասկա տըվօղ:

- Էշը վէր էշ ա, մը՝հը՝տ ա ցը՝խումը մընամ - Մարդ պետք է իր գործած սխալից խրատվի՝ դաս առնի եւ այն չկրկնի: *Մարթը էլիա՛ յա, կ՚ուղթուն անում, կընէգ՚ը ասմա.- Մ՚ մարթ, էշը վէր էշ ա, մը՝հը՝տ ա ցը՝խումը մընամ* (Բ):

- Էշը վէր ըղնէ, կըռէք՚ը կըկօտըրէ - Ասվում է շատ քարքարոտ տեղի մասին: *Էտ հինչ տը՝ղ ա՞, վէր տօն ըս շինում. էշը վէր ըղնէ, կըռէք՚ը կըկօտըրէ* (Բ):

- Էշը վէր կա՝ վը՝սկէ յա թըրքում - Ասվում է՝ շեշտելու համար էշի օգտակար լինելը: *Հա՛ը ասմա.- Մ՚ շան տըղա, էշը վէր կա՝ վը՝սկէ յա թըրքում, էշին լ՚ավ պա՛հէ* (Բ):

- Էշը վը՝ռան մօրթէլ - Հակառակ գործել, ներհակ գործ ձեռնարկել: *Կընէգ՚ը թա.- Մ՚ մարթ, բօլ ա՛, հիշքան էշը վը՝ռան մօրթալ ըս, մին սափալու կօրծ փըռնէ՛* (Ձ):

- Էշըտ էշաս հը՝ռէ կապէ - Մի խառնվիր իմ գործերին: *Ա՛ւրա՛ւր նըհը՝տ կըռվում ըն, Կօլին ասմա.- Էլ ինձ նըհը՝տ կօրծ չօնիս, էշըտ էշաս հը՝ռէ կապէ* (Ձ):

- Էշ ըրըծըցընօղ - *տե՛ս* ԻԾԱՐԱԾ:

- Էշը ցը՝խան տա՛ւս օնէլ - Ստեղծված դժվար կացությունից դուրս գալ, մի կերպ գլուխ հանել: *Կյա՛ւթանը կօտրում ա, վար անօղը ասմա.- Դէ յը՝ք էշը ցը՝խան տա՛ւս կանալ* (Ձ):

- Էշը ցը՝խումը մընալ - Գործը խափանվել, առաջ չգնալ: *Հինչա փըռնում ա, էշը ցը՝խումըն ա մընամ* (Բ):

- Էշը ա՛ւրանա ըխօռէն կըզըռռա - Յուրաքանչյուր մարդ իր շահն է փնտրում: *Ըտի յա, էշը ա՛ւրանա ըխօռէն կըզըռռա, վէշ մինը ա՛ւրա՛ւշին հը՝տէ դանդ չի անում* (Բ):

- Էշը ա՛ւրանա իշօթունավը էտ պէնը անէլ չի - Ասվում է, երբ մեկը չափազանց անխոհեմ՝ հիմար արարք է թույլ տալիս: *Հա՛մօ, էս բըրատու ծառը խէ կըտըրում ը՞ս, էշը ա՛ւրանա իշօթունավը էտ պէնը անէլ չի* (Բ):

- Էշը փըլանավը կօլ տալ - 1. Ազահ, շատակեր լինել: *Էշը փըլանավըն ա կօլ տամ, ընդրրա ըռը՝խը կարէլ չըս հըվաքիս* (Ձ): 2. Որեւէ բան անհետ յուրացնել: *Նախագան էտքան ապըրանքը թաքուն ծախից, էշը փըլանավը կօլ տըվավ, վէշ մինը գ՚իդանց վէչ* (Ձ):

- Էշը օտէլ, հանք՚վումը խըռավէլ/տէմ ըղնէլ - Գործի մեծ մասն արած լինելուց հետո մի աննշան պատճառով կիսատ թողնել՝ անելուց հրաժարվել՝ չշարունակել: *Ժուղօվուրթը թըքըթօ՛հմանթ ա տաս, թա.- Գո՛ւգի, էտ տօնըտ խէ կէսատ ը՞ս թօղալ. էշը կէրալ ըս, հանք՚վումը խըռավալ* (Ձ):

- Էշը օտէլ, փալանը յը՝ր հինի - Անչափ լկտիանալ: *Ընդրրա ճար չինի՛լ. էշը կէրալ ա, փալանը յը՝ր իլանալ* (Բ):

- Էշը օտվէլ չի, կ՚ինը հօ կօ՞տվէ - Եթե որեւէ բան ուղղակի նպատակին չի կարող ծառայել, անուղղակի կարող է (ծառայել): *Հայրօն ասմա.- Բանք՚մանզը թութվալ ա, յը՝ս էլ արաղ կընքաշիմ, խըմիմ. էշը օտվէլ չի, կ՚ինը հօ կօ՞տվէ* (Ձ):

- Էշ իմաստուն - Թերուս՝ տգետ, բայց իրեն իբրեւ գիտուն ներկայացնող մարդ: *Էտ էշ իմաստունը ըշտը՝ղ ք՚ինանամ ա, հանմին պէնէրընն ա ասում* (Ձ):

- Էշին դայի ասէլ - 1. Խիստ հարբած լինել: *Հընրսընքա յը՝տ մընկընէն էշին դայի յընն ասում* (Բ): 2. Խեղճանալ, հնազանդ դառնալ: *Էնքան թակում ըն, էշին դայի յա ասում* (Ձ):

- Էշին զէտկէն/զընտէգ՚ին - Երբեք: - *Վա՛զի, հիբ ը՞ս փըսընկվընալ: - Էշին զէտկէն* (Բ):

- Էշին ընգուճումը քօն իլանծ - 1. Շրջապատի իրադարձություններից՝ առօրյա անցուդարձից կտրված՝ անտեղյակ: *Էշին ընգուճումը քօն իլանծ մարթ ա, էն հինչ ա՞ գ՚ուդանում, թա կընէգ՚ը ղընխպանն ա անում* (Բ): 2. Ապուշ, տխմար: *Էշին ընգուճումը քօն իլանծ մարթին խանփիլը շատ ա հիշտ* (Բ):

- Էշին ընգուճումը քօն ինիլ - Շրջապատի իրադարձություններից՝ առօրյա անցուդարձից կտրվել՝ անտեղյակ լինել: *Էշին ընգուճումը քօն ա իլանալ, վը՝ղէրը պիժէնալ ըն, ա՛ւրանն տըվալ չընն, հու վա՞ մաղավէր* (Ձ):

- Էշին ըսը՝ցէն՝ աշկընտ լանս, քօռակ ա իլանալ, ասից՝ ընտրանավ պէռնըս թիթըվանում չի - Ասում են այն ժամանակ, երբ, չնայած կատարված փոփոխություններին, մեկի հոգսը չի թեթեւանում:

- Էշին ըսը՝ցէն՝ հըրսընքա ծէն ըն տամ, ասից՝ յա՛ ճանրընն ա պակաս, յա՛ փանդը - Մեկին հիշում են նրա կարիքը զգալու ժամանակ:

- Էշին ընրած, ծիյին կէրած - Ասում են ուրիշի հաշվին ապրողի հասցեին:

- Էշին խընրատը թակընն ա - Անհասկացողին՝ հիմարին միայն ծեծելով կարելի է բան հասկացնել: *Էշին խընրատը թակընն ա, ընտրրա էրանշ փօրմի կարէլ չըս մարթ շինիս* (Բ):

- Էշին կ՚ինան խօսէլ - *տե՛ս* Իշընկ՚ինան խօսէլ (ԻՇԱԿ՚ԻՆ-ի տակ):

- Էշին հանք՚ին կընծէլ - Համառել, իր ասածը պնդել: *Էտ կընէգ՚ը էշին հանք՚ին կընծում ա, թա.- Չէ՛, վէր չէ՛, յը՝ս կ՚ում չընմ նի մընանէլ* (Ձ):

- Էշին մընէշակ տըվէն, թա վը՝տ օնէ, հախընռից, կէրավ - *տե՛ս* Խօզ՚ին կընլանխը խալիչին կէնալ չի:

- Էշին մինը - *տե՛ս* Էշու կընլանխ:

- Էշին յէշանում ըն, լօխտան/կ՚անրին քընցանում - *տե՛ս* Աստուծ սարէն յէշանում ա, ծանունը տինանում:

- Էշին յընրա թանրս նընստընցընէլ - Մեկին հրապարակորեն խայտառակել: *Ընտրրա նընմանէն բիդի էշին յընրա թանրս նընստընցընիս, վէր հանշը՝վը յը՝ր օնէ* (Ձ):

- Էշին յընրա կընզնընվէլ, փալանը թակէլ - Մեղավոր ուժեղից վախենալով՝ զայրույթը թափել անմեղ թույլի վրա: *Նախագան էշին յընրա կընզնընվալ ա, փալանընն ա թակում* (Ձ):

- Էշին նընհը՝տ ապընրօղը իշօթուն կընսընվը՝ռէ, շանը նընհը՝տ ապընրօղը՝ շընօթուն - *տե՛ս* Էշը էշին քընշտէն կապիս՝ յա՛ խույը կընսընվը՝ռէ, յա՛ խասյաթը:

- Էշին նընստէլ, էշին շօռ կ՚անալ - Անփույթ՝ մոռացկոտ՝ հիմար լինել: *Իզէն էշին նընստում ա, էշին շօռ կ՚անմ, հունց բի՞դի կօլխօզ ղէկավարէ* (Ձ):

- Էշին չու ասած - Անտրամադիր: *Էշին չու ասած մարթ ա* (Բ):

- Էշին չու ասէլ - Թեթեւակի հանդիմանել՝ դիտողություն անել՝ վիրավորել: *Վախում ըս, թա էշին չու ասիս, դանստի խընռավում ա* (Բ):

- Էշին պէռնը հիշկան ծանընդը ինի, էնքան ճէլլի կընք՚ինի - Մարդ ինչքան շատ աշխատանք ունենա, այնքան կնգտի արագ կատարել: *Մէլիք՚ը ասմա.- Ընտրրան շատ կօրծ տընվէ՛ք՚. էշին պէռնը հիշկան ծանընդը ինի, էնքան ճէլլի կընք՚ինի* (Ձ):

- Էշին պէռնը վէր ծընռէ վէչ, քարը ղընրիբօթուն չի քաշիլ - Ոչինչ առանց պատճառի՝ անհիմն տեղի չի ունենում: *Էշին պէռնը վէր ծընռէ վէչ, քարը ղընրիբօթուն չի քաշիլ. ամմէն պէն էլ ա՛ւրանն մանին օնէ* (Ձ):

- Էշին վէր քընցիլ, ծիյին նալէլ - *տե՛ս* Էշին յընրա կընզնընվէլ, փալանը թակէլ:

- Էշին վը՝ռէն ածիս՝ կընզըռռա - Սաստիկ թթու է (գինու մասին): *Մին կօլա կինի յա տինում ընտօլէն, վէր էշին վը՝ռէն ածիս՝ կընզըռռա* (Բ):

- Էշին վը՝ռէն լանս տալ - Արժեք չունենալ: *Հանբին ասմա.- Կանբի, էս հինչ կացէն ա՞. էշին վը՝ռէն լանս կընտա* (Ձ):

- Էշին վը՝ռէն մախաթ տալը գ՚ուդանում չի - Անչափ ապաշնորհ է: *Էշին վը՝ռէն մախաթ տալը գ՚ուդանում չի, ամմա պաշտօն ա օգ՚ում* (Բ):

- Էշին վը՝ռէն մախաթ տըվօղ - Անխիղճ՝ անտաշ՝ վայրենի՝ տգետ մարդ: *Էտ էշին վը՝ռէն մախաթ տըվօղը կօխ ա տամ, էտ ծղրըգ՛նէն փուչըցընում* (Ձ):

- Էշին տուն դըվին տինիլ - *տե՛ս* Էշին յըրա թանս նըստըցընէլ:

- Էշին քէռի ասէլ - *տե՛ս* Էշին դայի ասէլ:

- Էշ խըրթնըցընօղ - Անարգ՝ ստոր՝ չարամիտ մարդ: *Էտ էշ խըրթնըցընօղը սաղ շինանցուց ուրուր նըհը՝տ կըռվըցընում ա* (Բ):

- Էշ խօզ՛օղ - *տե՛ս* Ասը՝ղ մաշկօղ:

- Էշ կըռտէլ - *տե՛ս* Պարապ-սարապ թրեւ գալ: *Ախպէրը կօրծ ա անում, ինք՛ըն էլ սաղ օրը, էշ ա կըռտում* (Ձ):

- Էշ կըռտօղ - Տգետ՝ բռի՝ կոպիտ՝ անկիրթ մարդ: *Մարը լանց ա ինում, թա.- Բա՛լա, իզէն էշ կըռտօղ ա, էն հինչացու վա՞, վէր ք՛ը՝զ օզ՛ի* (Ձ):

- Էշ կըտըրէլ - Շվարէլ, ապշել, շվարած՝ ապշած մնալ: *Չօբանը մընում ա էշ կըտըրած...* (ՀԱԲ, 15, 115):

- Էշ մատաղ անէլ - *հեգն.* Ոչինչ չզոհաբերել: - *Մփօ, վէր սաղ-սըլմաթ ք՛ինիմ-կ՛ամ, հինչ ը՞ս ընական: - Էշ ըմ մատաղ ընական* (Ձ):

- Էշ նա բի՞լիր, մօշ նանդը՞ - *տե՛ս* Էշը հինչ ա՞ գ՛ուդում, մօշը հինչ ա՞:

- Էշ նըհատակ - Ջուր տեղը տուժած՝ զոհված: *Կամանդիրը ասմա.- Մը՝զ կըռվօղ ա հարկավէր, էշ նըհատակ հարկավէր չի* (Ձ):

- Էշ նըստէլը մին այիբ, քըշանալը՝ էրկու - Սկսած՝ ձեռնարկած գործը չպետք է կիսատ թողնել: *Մ ջիհիլնէ, էշ նըստէլը մին այիբ, քըշանալը՝ էրկու. վէր նըշանվալ ըք, փըսըկվը՝ցէք՛* (Ձ):

- Էշ տը՝ռնալ - *տե՛ս* Էշ կըտըրէլ:

- Էշու դոխտըր - Անասնաբույժ: *Էշին դոխտուրը կըվէն յէշում ա, թա.- Դաբաղ ա* (Ձ):

- Էշու լակուտ - *տե՛ս* Էշու հանք:

- Էշու կըլօխ - 1. Հիմար՝ տխմար մարդ: *Էտ էշին կըլօխըն էլ փըռնում ա յըղէ կավը մորթում, ծախում* (Բ): 2. Մեծ, խոշոր (միրգ, բանջարեղեն եւն): *Խըյար, հինչ խըյա՞ր, ամմէն մինը մին էշու կըլօխ* (Բ):

- Էշու կ՛ին - *տե՛ս* ԻՇԱԿ՛ԻՆ:

- Էշու կուխկըհըստութուն - Անկոտրում համառություն, մեծ համառություն: *Թանզզան հարթնը էշու կուխկըհըստութուն օնէ, խը՝ղճ ընդրրա ըսկէսուր* (Ձ):

- Էշու հանք - Հիմարի՝ տխմարի ծնունդ: *Էշու հանք ա, ընդրրանա մարթ չի տուս կ՛ալ* (Բ):

- Էշու հանքի էլ չի կըտըրէլ - Բութ է (կտրող գործիքի մասին): *Դասաբը տէնակը յօր ա ունէս, թա.- Էս էշու հանք՛ի էլ չի կըտըրէլ, յը՝ս ըստըրանավ հունց խօզ՛ մա՞շկիմ* (Ձ):

- Էշու հանքի յա. վէ՛չ ըրկընանում ա, վէ՛չ կըրճանում - Ասում են այն ժամանակ, երբ երկար ժամանակ վիճակը՝ դրությունը՝ դիրքը եւն չի փոխվում: *Այան ասմա.- Մէր հանը էշու հանք՛ի յա. վէ՛չ ըրկընանում ա, վէ՛չ կըրճանում* (Բ):

- Էշու հըրսանէք՛ - 1. Աղմկալից՝ խառնաշփոթ հավաքույթ: *Աշօտը ճըղճըղամ ա, թա.- Էս ժողով չի, էշու հըրսանէք՛ ա* (Բ): 2. Ձգձգված գործ: *Ընդրա տօն շինիլը էլ էշու հըրսանէք՛ տը՝ռավ* (Ձ):

- Էշու հըրիշտ(ը)րակ - Շատ տգեղ, այլանդակ (հիմնականում կանանց մասին): *Շէնին դաշանգ՛ ըխճըկէրքը թողալ ա, ք՛ը՝ցալ մին էշու հըրիշտըրակ օգ՛ալ* (Բ):

- Էշու մազ՛ էլ չի կըտըրէլ - *տե՛ս* Էշու հանքի էլ չի կըտըրէլ:

- Էշու յէրգ՛իր - Անտիրություն, բարձիթողի վիճակ: *Էշու յէրգ՛իր ա, հու հինչ օգ՛ում ա, անում ա* (Բ):

- Էշու նալ - 1. *հեգն.* Մեկ ռուբլանոց մետաղադրամ (խորհրդային կարգերի ժամանակ): *Էրկու էշու նալ ա տամ, մին կիլօ մէս ինք՛ օնում* (Ձ): 2. *հեգն. տե՛ս* ՄԷՌԱԼ: *Կ՛անփին էշին նալէրը էլիա տօշանն կախ-կախ ա անում, տուս կ՛ամ շինամաչը* (Ձ):

- Էշու նըման կօրծ անէլ - Շատ աշխատել, չարչարվել: *Էշու նըման կօրծ ըն անում, էլիա կարում չըն ապրին* (Բ):

- Էշու նըման պինըցընէլ - Շատ աշխատեցնել, շահագործել, չարչարել: *Բանգ՛ը ըտրրանց էշու նըման պինըցընում ա, վէրչումըն էլ տէրտակ պէց թողում* (Ձ):

- Էշու պէրք - *տե՛ս* Էշու հանք:

- Էշու վը՝ննէր - 1. Երկար ոտքեր: *Հէնդօն էշու վը՝ննէր օնէ* (Բ): 2. *անրգ.* Ժխտողական պատասխան որեւէ պահանջ ներկայացնողին՝ պոռոտախոսողին եւն: - *Սո՛ւրէն, էշըտ ծախէ, ինք՛ օնինք՛:* - *Էշու վը՝ննէր* (Ձ):

- Էշու տը՝ղ տինիլ - Արհամարհել, հետը հաշվի չնստել, հիմար՝ անհասկացող համարել: *Կընանէք՛ կան, վէր ուրանց մարթկանցը էշու տը՝ղ տիրանծ, օխտը սիրական ըն պահում* (Ձ):

- Էշու տըղա - *տե՛ս* Էշու հանք:

- Էշու քօռակ - 1. *տե՛ս* Էշու հանք: 2. Մտերմական հանդիմանություն՝ ուղղված երեխաներին: *Հանը խուխէն խըստում ա, թա.- Էշու քօ՛ռակ, էտ խակ խընձօրը հօր ը՞ս քաղալ* (Ձ):

- Էշու օրում - 1. Հիմար, տխմար: *Էշու օրում մարթ ա* (Բ): 2. Վատ՝ ծանր վիճակի մեջ ընկած: *Էն ընք էշու օրում, մինը կա վէչ, թա ք՛ըմանգ՛ անէ* (Բ):

- Էշ քօնօղ - *տե՛ս* Էշ կըռտօղ:

- Էշ օտէլ, էշ մընանալ - Ի ծնե հիմար, կոպիտ, անկիրթ լինելով՝ այդպես էլ շարունակել: *Էշ կէրալ ա, էշ մընացալ, ընդրրանա էրուշ հինչ ը՞ս ըսպասում* (Բ):

ԷՇԽ - *տե՛ս* ԻՇԽ:

ԷՇԽԸՆԱՁ - *տե՛ս* ԻՇԽԸՆԱՁ:

ԷՇՇԱԿ՛ *(թրք. ešek)* - *տե՛ս* ԷՇ(5):

ԷՇՇԱԿՉԻ *(թրք. ešekči)* - *տե՛ս* ԻՇԱՌԱՇ:

ԷՇՇԱԿՍԻՔԱՆ - *ած. տե՛ս* Էշ քօնօղ:

ԷՋԻՋ - 1. *տե՛ս* ԲԷՅԲԸՇԸՐԸՂ: 2. *տե՛ս* ՆԸՎԱԺ:

ԷՍ/ՀԷՍ *(գրբ. այս)* - *դ.* 1. Ցույց է տալիս խոսողին մոտ գտնվող առարկա՝ երեւույթ եւն: *Տըղան լըցնըմ ա, թա տուս կ՛ա, օշափը յէր ա կէնում, ասում.- Էս հինչ մըրթավը՝տ ա՞* (ՀԺՀ, V, 564): 2. Ցույց է տալիս խոսողի նշած ժամանակը՝ տեղը: *Մարթը ասմա.- Էս տարէ, ա՞ր ախպէր, հալալ կէս ընք ընական* (Ձ): 3. Ցույց է տալիս խոսողի կողմից արդեն հաղորդված իրողություն՝ հանգամանք: *Պառավը լօխ նաղլ ա անում, թա.- Մ՛ յ տըղա, էս սաղ կըք՛ինիս թաքավէրին ասիս* (Ձ):

- Էս ա - 1. Հրես հա, հրեն է: *Մին էլ ա տը՝սնում, վը՝ր մինը թըմփթըմփալավ էս ա կ՛ամ ա* (ՀԺՀ, V, 17): 2. Հիմա, շուտով: *Տընատարը դունաղէն ասմա.- Պատառ նըստէ, էս ա հարթնը կըկ՛ա* (Բ):

- Էս աշխարքը - Իրական, երկրային կյանքը՝ ի հակադրություն հանդերձյալ կյանքի: *Էս ըշխարքումը հինչ ը՞նք տը՝սալ, վէր էն ըշխարքումը հինչ տը՝սնանք* (Բ):

- Էս աշկը էն աշկէն տը՝ղ լուս չի տալ - *տե՛ս* Աչի կուռնանը կօրծը ծէխէնը կարէլ չի անէ:

- Էս ա, վէր ասում ա - Ասելուց անմիջապես հետո: *Էս ա, վէր ասում ա, Թէվանը յըրա յա պըրծընում, ընդրրան վէր քըց՛ում, կօխ տամ* (Ձ):

- Էս ա, վէր կա - Միայն սա է, միակն է, այս է, ուրիշը չկա՝ պետք չէ: *Ուստան ասմա.- Էս ա, վէր կա, էրուշ պէն հանջաթ չի* (Ձ):

- Էս գըմէ տըղան - Պարծենկոտության արտահայտություն, որ ասում է խոսողը՝ մատնացույց անելով իրեն: - *Կա՛ռօ, էս կ՛ուլը հու վա՞ ըսպանալ: - Էս գըմէ տըղան* (Բ):

- Էս էլ կա - *տե՛ս* Էն էլ կա:

- Էս էլ մին պէն ար - *տե՛ս* Էն էլ մին պէն ար:

- Էս ըրէվէն ծՀուն չի տըմանալ - Ասվում է որեւէ երեւույթի ուժգնությունը՝ սաստկությունը ընդգծելու համար: *Ըստի ցօրտ հՀլՀ իլՀծ չի. էս ըրէվէն ծՀուն չի տըմանալ* (Ձ):

- Էս լ'ըհա զՀնգ', կախ տըվօղը հու վա՞ - Կարեւորը ոչ թե միջոցն է, այլ այն գործադրողը:

- Էս խըմօրը հՀլՀ շատ ճՀուր ա տընական - Խճճված՝ բարդ հարց է, դեռ շատ բաներ կբացահայտվեն, այս հարցը դեռ շատ կքննարկվի:

- Էս ծօխը լօխճին հՀուրթավըն էլ տՀուս ա կ'ըլական - *տե՛ս* Էս օղտը լօխճին տըրռնանըն էլ չուքըլական ա:

- Էս կըլխան - Հենց այս պահից, առանց ուշացնելու: *ՀՀրը ասմա.- Էս կըլխան փուլը տո՛, վէր յը՛տնան փուշմանէ վէչ* (Ձ):

- Էս յաշը քաշՀլ ըմ - Իմ ողջ կյանքում: *Էտ պառավ մարթը յէշՀում ա, թա.- Բա՛լամ, էս յաշը քաշՀլ ըմ, հՀլՀ ըստի պէն տը՛սած չըմ* (Ձ):

- Էս յը՛տը-հը՛տը - *տե՛ս* Էն առաչ:

- Էս յը՛տնան - *տե՛ս* Էն առաչ:

- Էս սըհաթէս - Հենց հիմա, իսկույն, անմիջապես: *Էս սըհաթէս էլ վէր ընդրանց տօն ք'ինիս, էն ըն ինՀկՀն ք'ը՛փ ընէլիս* (Ձ):

- Էս տարած - Ամբողջ (օր, գիշեր): *Մէզ մինըն օնիք' իրը՛քվընանէ, Էս տարած օրը կըչըրչարվէ* (Ձ):

- Էս տըռնըվա ծը՛տը ընցած տըռնըվա ծըտէն ճիվ-ճիվ ա անում - *տե՛ս* ԹՀզ(զ)Հ ճօտէր ըն տՀուս յը՛կալ՝ ըրկաթէ ծուվէն ըն ածում:

- Էս ու էն - Տարբեր մարդիկ: *Էս ու էն կ'ամ ըն ըտըրա բօստանը թըլանում, ինք'ըն էլ խաբար չօնէ* (Բ):

- Էս օղտը լօխճին տըրռնանըն էլ չուքըլական ա - Այս պատուհասից՝ փորձանքից՝ դժբախտությունից ոչ ոք չի կարող խուսափել: *ՇինՀցուց հըվաքում ա, թա.- Էս օղտը լօխճին տըրռնանըն էլ չուքըլական ա, յը՛կէք' թուփ տը՛ռնանք, խը՛ք-խը՛քու տանք, մին ճար անինք'* (Ձ):

- Էս օրը ըղնէլ - *տե՛ս* Էն օրը ըղնէլ:

- Էս օրը քըցիլ - *տե՛ս* Էն օրը քըցիլ:

ԷՍԷՆՑՅԱ *(ռուս. эссенция, լատ. essentia)* - *գ.* Քացախահյութ, քացախաթթու: *Խաբարը յը՛ր ա ինՀմ, թա Սիրօյին կընէգը էսէնցյա յա խըմալ, մը՛ռալ* (Ձ):

ԷՍՉԱ(Ն)Ք/ԷՍՉՈՒ(Ն)Ք *(գրբ. այսչափ)* - *տե՛ս* ԷՍՔԱՆ:

ԷՍՉՈՒ(Ն)Ք - *տե՛ս* ԷՍՉԱ(Ն)Ք:

ԷՍՔԱՆ *(գրբ. այսքան)* - *դ.* Այս չափով՝ քանակով: *Էսքան տիժըրօթունը վէր մին շօն ինՀր տարած, միհէնգ' ըստակալ ար* (Ձ):

ԷՎԻԼ[1] - *տե՛ս* ԷՎՈՒԼ:

ԷՎԻԼ[2] - *տե՛ս* ԻՎԻԼ:

ԷՎԼԻԼ/ՀՎԼԻԼ/ԾՎԼԻԼ *(գրբ. աւելեմ)* - *նբ.* 1. Ավելով սրբել՝ մաքրել: *ԷվՀլը յօր ա օնում, հայաթը էվլՀում* (Ձ): 2. Առհասարակ՝ սրբել, մաքրել: *Մարը ըխճըկանը յըրա կըզնըվում ա, թա.- Էս հինչ ա՞ ըստըղը՛ղէս հՀլը, խէ էվլՀում չըս* (Ձ):

ԷՎՈՒԼ/ՀՎՈՒԼ/ԾՎՈՒԼ/ԷՎԻԼ[1]/ՀՎԻԼ[2] *(գրբ. աւել)* - *գ.* 1. Հատակը՝ գետինը մաքրելու հարմարանք, ավել: *ՇինՀցէն վէր բըզարան էվՀլ ինք' կալՀվ, կարէլ չի տօն տը՛ռնա* (Ձ): 2. Թելուկազգիների ընտանիքին պատկանող խոտաբույս, որից ավել են կապում: *Նըստում ա էշը, ք'ՀնՀում էվՀլ քանդՀում, պիրում կապում, տանում ծախում* (Բ):

- ԷվՀլ ածէլ *(գրբ. աւել ածեմ)* - *տե՛ս* ԷՎԼԻԼ(1):

- ԷվՀլիին տակը տալ - *տե՛ս* ԷՎԼԻԼ(1):

- ԷվՀլըըտ կըծիմ - *հեգն.* Սիրում եմ քեզ: *Աղա ապան հՀրփՀծ պըտահում ա Մաքաղաթէն, թա.- ԷվՀլըըտ կըծիմ, յը՛ք մինտը՛ղ ապրինք'* (Ձ):

- ԷվՀլ կըծած էշ - Գլուխը տմբտմբացնող մարդ: *Ախճիգ'ը ասմա.- Չէչէմին, էտ էվՀլ կըծած էշըն ա՞ մընացալ, վէր ինձ օգ'ի* (Ձ):

ԷՏ/ՀԷՏ[3] *(գրբ. այդ)* - *դ.* 1. Ցույց է տալիս խոսակցին մոտ գտնվող առարկա՝ երեւույթ եւն: *Տըղան վազ տալավ նի յա մընընում, թա.- Թաքավէրըն ապրած կէնա, էտ ճՀուրը ճարած ա, խըմիս վէչ* (Ձ): 2. Ցույց է տալիս խոսակցի նշած ժամանակը՝ տեղը: *Էտ վախտէրքըն էլ չուման աշխարքըս կալՀծ ա ինՀմ* (Ձ): 3. Ցույց է տալիս խոսակցի կողմից արդեն հաղորդված իրողություն՝ հանգամանք: *Ասում ա.- Էտ հինչ վէր պատմալ ըս, լօխ սօտ ա* (Ձ): 4. Կարող է գործածվել նաեւ խոսողի նշած առարկան, երեւույթը, ժամանակը եւն ցույց տալու համար: *Մին տըղա յա ինՀմ, էտ տըղէն էլ էրկու շօն ա ինՀմ* (Ձ):

- Էտ ա - Այդ է, ահա, ահավադիկ: *Ղէրվիշը ասմա.- Էտ ա քըթէտ տակէն, տը՛սնում չը՞ս* (Ձ)

- Էտ ա, վէր ասում ա - *տե՛ս* Էս ա, վէր ասում ա: *Էտ ա, վէր ասում ա, մին էրկու օրըմը խօխան սըղացալ ա...* (ԱԱ, 36):

- Էտ ա, վէր կա - Միայն դա է, միակն է, այդ է, ուրիշը չկա՝ պետք չէ: *Վը՛ննէրը տափըն ա թակում, թա.- Էտ ա, վէր կա, էրՀշ տօն օգում չըմ* (Ձ):

- Էտ ար պակաս - Այդ չի կարող լինել, այդ ավելորդ է: *Էտ ար պակաս, վէր մէր վը՛ղէրը յը՛տ տանք թուրքէրէն* (Բ):

- Էտ էլ խօսկ ա՞ - 1. Ինչպե՞ս կարելի է այդպես, անհարմա՞ր չէ: *Էտ էլ խօսկ ա՞, վէր ասում ըս, համօթ չի՞* (Ձ): 2. Ի՞հարկե, դրա մասին մի կասկածիր: - *Ամ-ՀՀ-ՀՀ, ք'ՀՀմՀՀգ կանի՞ս, արտըս հընՀիմ:* - *Էտ էլ խօսկ ա՞, Հէնդօ, միշտ պադրաստ ըմ* (Ձ):

- Էտ էլ կա - *տե՛ս* Էն էլ կա:

- Էտ էլ մին պէն ար - *տե՛ս* Էն էլ մին պէն ար:

- Էտ վէր խաչա յա՞ - Ասում են, երբ անսպասելիորեն մեկը մի լավ բան է կատարում՝ այդ ինչպե՞ս եղավ: *Էտ վէր խաչա յա՞, վէր յը՛կալ ըս ք'ՀՀմՀՀգ անիս* (Բ):

- Էտ վէր խաչ ը՞ս ք'ը՛ցալ - *տե՛ս* Էտ վէր խաչա յա՞:

- Էտ օրը ըղնէլ - *տե՛ս* Էն օրը ըղնէլ:

- Էտ օրը քըցիլ - *տե՛ս* Էն օրը քըցիլ:

ԷՏԱԺ - *տե՛ս* ԱՏԱԺ:

ԷՏՉԱ(Ն)Ք/ԷՏՉՈՒ(Ն)Ք *(գրբ. այդչափ)* - *տե՛ս* ԷՏՔԱՆ:

ԷՏՉՈՒ(Ն)Ք - *տե՛ս* ԷՏՉԱՆՔ:

ԷՏՔԱՆ *(գրբ. այդքան)* - *դ.* Այդ չափով՝ քանակով: *Էտքան պէնէրը մինակ Օվչի Փիրումըն ա ըսկանում, պէցՀուր ծըծաղում* (Ձ):

ԷՐԳ'ԱՆ - *տե՛ս* ԷՐԿԱՆ:

ԷՐԳ'ԱՆՔ - *տե՛ս* ԷՐԳ'ԱՆՔ':

ԷՐԳ'ԱՆՔ'/ԷՐԳԱՆՔ - *տե՛ս* ԸՐԿԸՆՕԹՈՒՆ:

- Էրգ'ՀՀնք'ըն ա լէնք'սը մին անէլ - *տե՛ս* Լէնք'սըն ա էրգ'ՀՀնք'ը մին անէլ:

- Էրգ'ՀՀնք'ըն ա լէնք'սը մին տը՛ռնալ - *տե՛ս* Լէնք'սըն ա էրգ'ՀՀնք'ը մին տը՛ռնալ:

ԷՐԷԼ - *տե՛ս* ԷՐԻԼ:

ԷՐԷՍ(Ս)ՈՒՆ - *տե՛ս* ՅԷՐԷՍ(Ս)ՈՒՆ:

ԷՐԻԼ/ԷՐԷԼ/ԻՐԻԼ *(գրբ. այրեմ)* - *նբ.* 1. Հրդեհել, կրակի տալ: *Նօթը ածում ըն յըրա, էրՀում* (Բ): 2. Դաղել, այրուցքներ առաջացնել: *Փիչին դուրբան նի յա կ'ամ ճըկատէն, էրՀում* (Բ): 3. Արեւահարել: *Խօխէնք'ը տըկըլօր ըրը՛վէն տակէն էնքան խաղ ըն ըրալ, ՀՀրը՛վը սաղ ջանը էրալ ա* (Բ): 4. Թեժ կրակով խանձել (կերակուրը): *Կըրակը թիժ ար, կուրկուտը էրից* (Բ): 5. Կիզել, ուժեղ ջերմությամբ չորացնել՝ փչացնել: *ՀՀրը՛վը սաղ բուստընընէն էրալ ա* (Ձ): 6. Բարկ, կծու լինելով՝ ցավ, կսկիծ առաջացնել, մրմռացնել: *ՏՀխտը՛ղը կըծօ յար, պէրանը էրից* (Ձ): 7. Խոսքով՝ պատասխանով վիրավորել, հոգեպես հուզել՝ ցավ պատճառել: *Մարը ասմա.- Քու խուսկէրքըտ մինչը՛վ միհէնգ' ինձ էրՀում ա* (Ձ): 8. Կարծրություն տալու համար բարձր ջերմության ներգործության ենթարկել, թրծել: *ՀՀրփՀՀճը էրՀում ըն, վէր պէնդ ինի* (Բ): 9. *չբ.* Այրվել, վառվել: *ՓՀՀդը նամ ա, լ'ավ չի էրում* (Բ):

- Էրալ չի, մըրկալ ա - Տարբերությունը մեծ չէ, համարյա նույնն է (ասում են վատ՝ բացասական երեւույթի՝ իրողության եւն առթիվ): - *Յէղի՛սաբէթ, հո՛ւքվո՛ւտ մէ՛կ մէ՛ր անէլ. Մարյանը օխտը սիրական չի պահում, վէցցըն ա պահում: - Էրալ չի, մըրկալ ա* (Ձ):

- Էրած կաշի ինիլ - Հին ոխ ունենալ: *Ասում ա.- Էրած կաշի օնիմ, յը՛ս ըտըրա տօնը բիդի քանդիմ* (Ձ):

Էրիլ մօխէր շինիլ - Կրակով ոչնչացնել, վերացնել, սպառել: *Սաղ շէնը մին ժամումը էրում ըն, մօխէր շինում* (Ձ):

ԷՐԻԼ-ԽԸՐԱՎԷԼ - *նբ.* Տոչորել, տառապանք՝ կսկիծ պատճառել, տանջել, չարչարել: *Էտ խօխէնքվ՛ը սաղ օրը հօրըն ա մօրը էրո՛ւմ ըն, խըրավում* (Ձ):

ԷՐԻԼ-ՓԸԹԸԹՕՐԷԼ - *տե՛ս* ԷՐԻԼ-ԽԸՐԱՎԷԼ:

ԷՐԿԱՆ/ԷՐԳԱ՛Ն *(գրբ. երկայն) - ած.* 1. Մեծ երկարություն ունեցող: *Մին էրկան մըհակ ա յը՛ր օնում, էտ խընձօրնէն սաղ թակում, վէր ածում* (Ձ): 2. Հարկ եղածից մեծ երկարություն ունեցող: *Շալվարը կը՛ընում ա, տը՛սնում՝ էրկան* (Բ): 3. Ոչ կարճ, մինչեւ թաթերը՝ ծնկները հասնող: *Միհէնգվ՛ էրկան կը՛ընօղ չի կա, ջահիլ ըխճըկէրքը կարճ ըն կը՛ընըմ, վըռընէն, պուրտըրնէն պէց՝ շօռ կ՛ամ* (Բ): 4. Ընդարձակ, ծավալուն: *Մին էրկան նամակ ա կ՛իրում, դարկում ախպօրը* (Ձ): 5. Երկարատեւ, մեծ ժամանակ ընդգրկող: *Էրկան քըշէր ա, նըստում ըն, զըրո՛ւց անում* (Բ): 6. *մ.* Շատ ժամանակ, բավական ժամանակ: *Ի՛տի էլ ապրում ըն նահանք ըտէղ շատ էրկան, սարէն անումըն էլ մընում ա Կըրխկըզ* (ՆԼՂԺԲ, 146): 7. *ած., մ.* Նարդախաղի տեսակ, որի ժամանակ քարերը շարում են իրար ետեւից: *Նա՛ռդին պիրո՛ւմ ըն, Սիմօնը ասում ա.- Խօ՛րէն, թըկօվի խաղ ա՞նինքվ՛, թա է՞րկան* (Ձ):

- Էրկան ընայի, պը՛էլ դուդայի - Ասում են բարձրահասակ եւ տխմար մարդու հասցեին:

- Էրկան լօլի - *տե՛ս* LOLԻ:

ԷՐԿԱՆ-ՊԷՐԱԿ - *մ.* Մանրամասն, մանրակրկիտ: *Էտ դէրվիշը հինչ վէր իլա՛ւ ա, կ՛ամ ա թաքավէրին էրկան-պէրակ նաղլ անում* (Ձ):

ԷՐԿՈՒ *(գրբ. երկու) - թ.* 1. Մեկին հաջորդող թիվը՝ երկու: *Ամմա էտ մարթօնցը մաչին էրկու հայ ըն ինո՛ւմ, մինը մինան փախալ...* (ԼՂԲՔ, 270): 2. Եվ այս, եւ այն, թե՛ մեկ, թե՛ մյուս: *Էրկու թա՛ռափը էլ կըլխու վըն ըղնում, վէր նըհախ տը՛ղան ըն կըռվում* (Ձ): 3. *ած.* Մի քանի: *Թօղում չի, թա էրկու խօսկ էլ յը՛ս ասիմ* (Բ): 4. *գ.* Անբավարար գնահատական: *Դասատուն ըտըրան վա՛ռին էրկու վա տինո՛ւմ* (Ձ):

- Էրկու անքամ էրկուսը չօ՛րքվ՛ ա - Բացարձակ ճշմարտություն է, ապացուցելու կարիչ չկա: *Մարթը ասմա.- Էրկու անքամ էրկուսը չօ՛րքվ՛ ա, յը՛ս տանը չըմ իլա՛ւ, էս մածունը հուվ ա՞ կէրալ* (Ձ):

- Էրկու աշկավ յէշիլ - *տե՛ս* Աշկէրը չօ՛րքվ՛ անէլ(1):

- Էրկու աշկատ մինին հըվատալ մէ՛լ - Զգույշ եղի՛ր, ոչ մեկին մի վստահիր: *Հա՛ռը տըղէն հըղէ յա քըցո՛ւմ, թա.- Սա՛յաղ կա՛ց, վէշ մինին դավէրյա չանիս, էրկու աշկատ մինին հըվատալ մէ՛լ* (Ձ):

- Էրկու աշկ ինիլ, էրկունընն/էրկուսընն էլ փոխ անէլ - *տե՛ս* Աշկէրը չօ՛րքվ՛ անէլ:

- Էրկու աշկու մաչտը՛ղ - Հսկողության տակ, ուշադրության կենտրոնում: *Կօզի էտ ծին քըշէր-ցիրը՛կ էն ա ինո՛ւմ էրկու աշկու մաչտը՛ղ, ամմա Ծիլկանը էլիա կարում ա կ՛ուղանա* (Ձ):

- Էրկու էշին կ՛ա՛ռին ճօ՛թ անէլը չըգիդա՛ալ - Անճարակ՝ ապաշնորհ՝ տխմար լինել: *Էրկու էշին կ՛ա՛ռին ճօ՛թ անէլը գ՛ո՛ւդո՛ւմ չի, ամմա օգ՛ում ա հարուստ ապըրէ* (Բ):

- Էրկու ըխօռա օտօղ - *տե՛ս* Էրկու մօր ծը՛ծ ծըծած:

- Էրկու ըխօռու զըռռօղ - Շողոքորթ՝ երկերեսանի մարդ: *Էտ էրկու ըխօռու զըռռօղը ըտի հըրուստանում ա, լ՛ավ տընէր շինո՛ւմ* (Ձ):

- Էրկու ընգո՛ւնանէ - Բազմազբաղ, գործերով ծանրաբեռնված: *Խը՛ղճը հինչ ա՞նէ, էրկու ընգ՛ո՛ւնանէ յա* (Բ):

- Էրկու ժո՛ւլիգ՛ին անա շընըկօտէգ՛ կինի - Բացասական հատկանիշներով ամուսինների զավակը կգերազանցի ծնողներին: *Հա՛ռը՝ կ՛օղ, մարը՝ տո՛ւս պըրծած, ինքը հինչ բի՞դի տը՛ռնա. էրկու ժո՛ւլիգ՛ին անա շընըկօտէգ՛ կինի* (Ձ):

- Էրկու խօսկ - Կարճ՝ համառոտ ասելիք: *Ինքվ՛ըն էլ կ՛ամ ա էրկու խօսկ ասում, ղըրաղ կէնում* (Ձ):

- Էրկու ծը՛ռքը անէլ, մին բօղազ - Ագահաբար ուտել, խժռել: *Էրկու ծը՛ռքը ա ըրալ, մին բօղազ, ջըլաման չի տամ, թա մինը մին պէն օտէ* (Բ):

- Էրկու ծը՛ռքը անէլ, մին կըլՕխ թակէլ - *տե՛ս* ԿըլՕխը թակէլ:

- Էրկու ծը՛ռքը իրը՛ս կըլըվանա, մին ծը՛ռքը հինչ ա՞նէ - Մարդ միայնակ չի կարող անել այն, ինչ կարող է անել ընկերովի: *Հիրըվանէրը թըքըթօհմա՛թ ըն տամ.- Մո՛ւքի, էրկու ծը՛ռքը իրը՛ս կըլըվանա, մին ծը՛ռքը հինչ ա՞նէ. յը՛ք մը՛զ նըհը՛տ հընգըրա՛ց, մին տը՛ղ արտ անինքվ՛* (Ձ):

- Էրկու կէսը մին տը՛ռնալ - Ամուսնանալ: *Էրկու կէսը մին ա տը՛ռալ, էլ հընգէր-հըրըվանու մըհալ չի քըցո՛ւմ* (Բ):

- Էրկու կըրակու դաթում/մաչի թօղնէլ - Անելանելի դրության մեջ գցել: *Էս կըռը՛վը մը՛զ էրկու կըրակու դաթում թօղից* (Բ):

- Էրկու կըրակու դաթում/մաչի էրվիլ/մընալ - Անելանելի դրության մեջ ընկնել, անելիքը չիմանալ: *Խը՛ղճը մընամ ա էրկու կըրակու դաթում, գ՛ո՛ւդո՛ւմ չի, թա հունց անէ, վէր հա՛մ մօրը սըրտավը ինի, հա՛մ կընգանը* (Ձ):

- Էրկու կիլօ կ՛ա՛ռնու նըհը՛տ փոխէլ չըմ - Ասում են անարժեք մարդու՝ իրի հասցեին: *Կընէգ՛ը ասմա.- Տու հինչ տըղամարթ ը՞ս, էրկու կիլօ կ՛ա՛ռնու նըհը՛տ փոխէլ չըմ* (Ձ):

- Էրկու կ՛իժին մին խէլո՛ւնք ա հարկավէր - Համաձայնության չեկողներին՝ վիճողներին խորհրդատու պետք է լինի: *Էրկու կ՛իժին մին խէլո՛ւնք ա հարկավէր, առանց ըսկէսուր էտ հարթնէրը կարէլ չըն յօլլա քվ՛ինին* (Ձ):

- Էրկու հարուստ կըռվը՛ցէն, մին քը՛սիբու տօն քընդէցէն - Հարուստները՝ զորեղները իրենց վեճերը հարթեցնում են՝ աղքատներին՝ թույլերին տուժելով:

- Էրկու հօ-հա ընօղէն մինը բիդի ինի, վէր ասէ՝ հօ-հա ըրէքվ՛ - Նույնիսկ փոքրաթիվ աշխատողներին ղեկավար է անհրաժեշտ:

- Էրկու ճօխտ, մին կընդ - Քիչ, սակավաթիվ: *Խը՛ղճանը գ՛ուռ շէն ա իլա՛ւ, միհէնգ՛ մընացալ ա էրկու ճօխտ, մին կընդ մարթ* (Բ):

- Էրկու մաննան տը՛ղ - Շատ փոքր (տարածություն): *Էրկու մաննան տը՛ղ բօստան օնէ, էն էլ չի բաշիր անում, թա բիջա՛ռի* (Բ):

- Էրկու մօր ծը՛ծ ծըծած - Ճարպիկ, խորամանկ: *Էրկու մօր ծը՛ծ ծըծած ա, հունց էլ ինի, մին ճար ընական ա* (Ձ):

- Էրկու նէրակ մինտը՛ղ ինիլ չի - Երկու լավ բան միասին չի լինում: *Էրկու նէրակ մին տը՛ղ ինիլ չի, մարթը բիդի տօն ա, կընէգ՛ը՝ վը՛ռը կէրած* (Ձ):

- Էրկունը/էրկուսը իրը՛ք տը՛ռնա - *բրմդ.* Ասում են նորապսակներին՝ ակնարկելով ծնվելիք երեխան: *Այան էլ ճըկըտըրնէրան պաչո՛ւմ ա, թա.- Էրկունը իրը՛ք տը՛ռնա* (Ձ):

- Էրկու պատու դաթում/մաչի թօղնէլ - *տե՛ս* Էրկու կըրակու դաթում/մաչի թօղնէլ:

- Էրկու պատու դաթում/մաչի էրվիլ/մընալ - *տե՛ս* Էրկու կըրակու դաթում/մաչի էրվիլ/մընալ:

- Էրկու պէրան - Քիչ, մի քիչ (խոսելու՝ ուտելու մասին): *Էրկու պէրան խօսում ա, մարթը մին տը՛դան ըսքըսում ըն ճըղճըղալը* (Ձ):

- Էրկու ջան մին հըլավում - Համերաշխ, հաշտ: *Ըսէս ըն հա՛լա՛ միչէվ ըսօր ո՛ւրո՛ւր նըհէտ ըպրէս ըն հա՛շտ, մին խօսկում, էրկու ջան մին հըլավում...* (ՀԺՀ, V, 530):

- Էրկուսէն ճո՛ւրը մին արխավ ք՛ինիլ - Հաշտ՝ համերաշխ՝ միաբան լինել: *Մըրթկընէգ՛ շատ սէրավ ըն ինիս. էրկուսէն ճո՛ւրը մին արխավ ա ք՛իս* (Ձ):

- Էրկուսը մին ջան, մին հո՛ւք՛ի - *տե՛ս* Էրկու ջան մին հըլավում:

- Էրկու վը՛ննավ թա՛լա՛կ ըղնէլ - Հանցանքի մեջ հանկարծակի բռնվել, անելանելի վիճակի մեջ ընկնել: *Սաղ գ՛անքը կ՛ուղթուն անօղը վէրչումը էրկու վը՛ննավ թա՛լա՛կ կըղնէ* (Ձ):

- Էրկու վը՛ննը մին չըմըշկում տինիլ - Համառել, կամակորությամբ իր կամքը թելադրել: *Ամմա էտ իշխանը էրկու վը՛ննը տինըմ ա մին չըմըշկում, թա՛.- Չէ՛, վէր չէ՛* (ԼՂԲ, 329):

- Էրկու վը՛ննը ինիլ, էրկունը/էրկուսը էլ փոխ անէլ, փախճիլ - Շատ արագ փախչել, ճողոպրել: *Թօրքէրը էլ կըրը՛ցէն վէչ տէմ կէնան, էրկու վը՛ննը ունին, էրկունը էլ փոխ ըրէն, փըխճը՛ցէն* (Բ):

- Էրկու վըխճարավ սո՛ւրո՛ւ չինիլ - Փոքր հնարավորություններով՝ միջոցներով հնարավոր չէ մեծ գործ ձեռնարկել: *Հա՛ռը ասմա.- Շան տըղա՛, էրկու վըխճարավ սո՛ւրո՛ւ չինիլ, էտքան մատարյալավ կարէլ չըս տօն շինիս* (Ձ):

- Էրկու տըռնան շօն - *տե՛ս* Էրկու ըխօռու զըռռօղ:

- Էրկու տըվարէն կըլո՛խը մին ղըզղանում իփվիլ չի - Անտեղի է փորձել համատեղել անհամատեղելիները: *Արչը ասմա.- Մա՛ռթ ախպէր, մունք կարէլ չընք մին տը՛ղ ապրինք՛. էրկու տըվարէն կըլո՛խը մին ղըզղանում իփվիլ չի* (Ձ):

- Էրկու ցավու դաթում/մաչի թօղնէլ - *տե՛ս* Էրկու կըրակու դաթում/մաչի թօղնէլ:

- Էրկու ցավու դաթում/մաչի էրվիլ/մընալ - *տե՛ս* Էրկու կըրակու դաթում/մաչի էրվիլ/մընալ:

- Էրկու ուխայ - Մեծ ուրախություն, ցնծություն: *Կըռը՛վը պըրծընէլը լօխճիս հը՛տէ էրկու ուխայ ար* (Բ):

- Էրկու փա՛ՀիլԻվան կարէլ չըն մին ք՛ընդիրու յըրա խաղ անին - *տե՛ս* Էրկու տըվարէն կըլո՛խը մին ղըզղանում իփվիլ չի:

- Էրկու քարու դաթում/մաչի թօղնէլ - *տե՛ս* Էրկու կըրակու դաթում/մաչի թօղնել:

- Էրկու քարու դաթում/մաչի էրվիլ/մընալ - *տե՛ս* Էրկու կըրակու դաթում/մաչի էրվիլ/մընալ:

ԷՐԿՈՒԸՌ(Ը)ԽԱՆԷ - *ած.* Շեղբի երկու կողմն էլ սուր, երկսայրի: *Թաքավէրին տըղան էրկուըռըխանէ թօրը տո՛ւս ա օնում, թըխում, էտ քարը էրկու կէս անում* (Ձ):

ԷՐԿՈՒԹԸՎԱՆԷ - 1. *ած.* Երկու թեւ ունեցող: *Էրկութըվանէ սամալո՛ւտ ա տը՛սնում, մընամ մաթ մընացած* (Ձ): 2. *փխբ. գ.* Թռչուն: *Ինք՛ըն էլ չո՛ռք՛վընանէ պահում չար, մինակ էրկութըվանէ յար պահում՝ հընդո՛ւշկա, դագ, հավ, ո՛ռդա՛կ* (Ձ):

- Էրկութըվանէ վարէլ - 1. Հողը երկկողմ վարել: *Վը՛ղը վէր էրկութըվանէ չի վըրէցէր, պէրք չի տալ* (Ձ): 2. Աշխատանքն անկորուստ կատարել: *Փա՛ռք՛ Ըստուծու, կօրծը էրկութըվանէ վըրը՛ցէնք՛* (Ձ):

ԷՐԿՈՒԻՐԸՍԱՆԷ - *ած.* 1. Երկու երես ունեցող: *Էրկուիրըսանէ նըկար ա* (Բ): 2. *փխբ.* Կեղծավոր, շողոքորթ: *Էրկուիրըսանէ կընգանը ճար չինիլ* (Ձ):

ԷՐԿՈՒԻՐԸՍՕԹՈՒՆ - *գ.* Երկերեսանի մարդու արարք՝ գործողություն: *Էրկուիրըսօթունավ էտ խօխէնք՛ը պահում ա, մը՛ծընցընում* (Ձ):

ԷՐԿՈՒՀԻՆՁԻ - *տե՛ս* ԷՐԿՈՒՆՁԻ:

ԷՐԿՈՒՄԸԹԿԱՆԷ - *ած.* Կասկածավոր, տարակուսող, երկու մտքի: *Սիմօնը էն ա էրկումըթկանէ. գ՛ի՛ուդում չի՝ կավը ծա՞խէ, թա չէ՞* (Բ):

ԷՐԿՈՒՆՁԻ/ԷՐԿՈՒՀԻՆՁԻ - *թ.* Առաջինին հաջորդող դասական թվականը, երկրորդ: *Էրկունջի դ՛ո՛նումը տըղան վէր թըխում ա, դէվը մաչան կէս ա տը՛ռնում* (Ձ):

ԷՐԿՈՒՇԷԲԱԹ - *տե՛ս* ԸՐԿՈՒՇԷԲԱԹ:

ԷՐԿՈՒՇԷԲԷԹ - *տե՛ս* ԸՐԿՈՒՇԷԲԱԹ:

ԷՐԿՈՒՇԷՊԷԹ - *տե՛ս* ԸՐԿՈՒՇԷԲԱԹ:

ԷՐԿՈՒՇԷՊՏԻ - *տե՛ս* ԸՐԿՈՒՇԷԲԱԹ:

ԷՐԿՈՒՎԷԼ - *նբ.* Ասածը երկրորդ անգամ ասել՝ կրկնել: *Էս ծէխ մարթը վէրչին ասածընն էրկուվէլավ ք՛ընում ա* (ՆԱԲ, 63):

ԷՐԿՈՒՎԸՆՆԱՆԷ *(գրբ. երկոտանի)* - 1. *ած.* Երկու ոտք ունեցող: *Մինգէլ ք՛ինա՛մ ա ծիյին էն մին վը՛ննը պուկում օտում, կ՛ամ, թա՝ այ ախպէր, ծիտ էրկուվընանէ յա՞...* (ՆԼՂԺԲ, 16): 2. *փխբ. գ.* Մարդ: *Ըստէղ աղվէսը մէտընն ա քըցո՛ւմ օցէն ասածը, թա հինչու հէտէ էրկուվընանուն լիվօթուն ընէլի չի...* (ՀԺՀ, VII, 236):

- Էրկուվընանէ էշ - Հիմար՝ տխմար մարդ: *Ասում ա.- Տու մարթ չըս է՛, էրկուվընանէ էշ ըս* (Ձ):

- Էրկուվընանէ կ՛ո՛ւլ - Ագահ՝ գռփող մարդ: *Էտ էրկուվընանէ կ՛ո՛ւլը սաղ կալխօզը կէրալ ա* (Բ):

ԷՐԿՈՒՏԸՐԸՔԱՆԷ - *ած.* Երկհարվածանի՝ որով միաժամանակ երկու կրակոց կարելի է կատարել: *Ըտըրան էլ ի-նո՛ւմ ա էրկուտըրըքանէ մին լ՛ավ թըվա՛նգ՛* (Ձ):

ԷՐՎԷԼ - *տե՛ս* ԷՐՎԻԼ:

ԷՐՎԻԼ/ԷՐՎԷԼ/ԻՐՎԻԼ - 1. *կբ. եւ չբ.* ԷՐԻԼ-ի: *չբ.* 2. Բարձր ջերմություն ունենալ: *Խը՛ղճ հիվանդը էրվում ա* (Ձ): 3. Խիստ փոշմանել՝ զղջալ: *Ընդինու նը-ման կավը ծախալ ա, միհէնգ՛ մընացալ իրվիլիս* (Բ): 4. Կսկծալ, վշտանալ, հոգեպես տառապել: *Մարթը ասմա.- Մ՛ կընէգ՛, խըրէգ՛ էրվի, վը՛խճար ա, լի՞, ըստակալ ա, ըստակալ ա* (Ձ):

- Էրվիլ մօխէր տը՛ռնալ - Վառվել, վերանալ: *Էս կըռվավը շատ շէնէրք ըն էրվալ-մօխէր տը՛ռալ* (Բ):

ԷՐՎԻԼ-ԽԸՐԱՎՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԷՐԻԼ-ԽԸՐԱՎԷԼ-ի: *Սաղ օրը էրվում ընխըրավվում, էլիա պէն չի ա՛մա՛լ կ՛ամ* (Բ):

ԷՐՎԻԼ-ՓԸԹԸԹՕՐՎԷԼ - *տե՛ս* ԷՐՎԻԼ-ԽԸՐԱՎՎԷԼ:

ԷՐՆԻԾ/ՕՐՆԻԾ/ՕՐԻԾ *(գրբ. ուրիշ)* - *դ.* 1. Այլ, ոչ նույն: *Էտ ախճիգ՛ը կ՛ամ ա տօն, էրո՛ւշ շօ՛ռէր կ՛ը՛ննում, ք՛ինամ հըրսանէք՛* (Ձ): 2. Կողմնակի՝ օտար մարդիկ: *Ո՛ւրո՛ւշնէրէն հը՛տը կօրծ ա անում, ո՛ւրա՛նց տանը հը՛տէ անում չի* (Բ):

- Էրո՛ւշ աշկավ յէշիլ - Ոչ բարյացակամ վերաբերվել, ետին միտք ունենալ: *Թաքավէրը էտ կընգանը էրո՛ւշ աշկավ ար յէշում* (Ձ):

- Էրո՛ւշ պէն ա - 1. Շատ լավն է, արտակարգ է, հիասքանչ է: *Ղարաբաղա թօթէն արաղը էրո՛ւշ պէն ա, հու խըմում ա, համը մընամ ա պիրանումը* (Բ): 2. Խնդիրը տարբեր է, այլ բնույթ կստանա: *Մարթը ասմա.- Էրո՛ւշ պէն ա, վէր փուլը միհէնգ՛ տաս* (Ձ):

- Էրո՛ւշ հա՛նգ՛ի - Ուրիշ տեսակ, ոչ սովորական: *Խուրջինան մին էրո՛ւշ հա՛նգ՛ի հաց ա տո՛ւս օնում, լօխ մընամ ըն ըրմացած* (Ձ):

- Էրո՛ւշ քամէ փըչիլ - Իրադրությունը՝ պայմանները՝ հանգամանքները փոխվել: *Թաքավէրը տը՛սնում ա, վէր էրո՛ւշ քամէ յա փըչո՛ւմ, հըրամանք ա տամ՝ զօրքը հըվաքին* (Ձ):

- Ո՛ւրո՛ւշին հացը օտէլ - Ուրիշի հաշ-

վին ապրել: *Սամա.- Պա տու հըմանչում չը՞ս, վէր էրկու տարէ յա՝ ուրուշին հացըն ըս օտում* (Ձ):

- Ուրուշին պըտառէն յը՞ղ քըսէլ - Ուրիշի օգտին գործել, ուրիշին ծառայել: *Բօլ ա՛, ա՛յ իմ էշը կուրցըրած հայէր, հիշքան օրիշին պըտառէն յէղ քըսէցինք* (Ջ�տ, Բ, 239):

- Ուրուշին փուլավը ինք՝ կանած շալվարը կարճ կինի - Ուրիշի միջոցներով հնարավոր չէ կարիքները լիարժեք բավարարել: *Մ՛ ջիհիլնէ, կօ՛ծ ըրէք՝, ծէր տօնը պըհը՞ցէք՝, ուրուշին փուլավը ինք՝ կանած շալվարը կարճ կինի* (Ձ):

- Ուրուշու աման աղավ անէլ - Ուրիշի գործերին խառնվել: *Ուրան կօրծերը թողած՝ ուրուշու աման ա աղավ անում* (Ձ):

- Ուրուշու աշկավ յէշիլ - 1. Օտարի նման՝ անտարբեր վերաբերվել: *Էտ տընաշինը ուրան խօնցըն էլ ա ուրուշու աշկավ յէշում* (Ձ): 2. Քննադատական՝ անաչառ վերաբերմունք ունենալ: *Վէր օգ՝ում ըս կօրծըտ լ՝ավ ինի, ըրածէտ ուրուշու աշկավ յէշի* (Ձ):

- Ուրուշու խուսկավ ինիլ - Ուրիշի թելադրանքով՝ խորհրդով վարվել՝ գործել: *...Ախպէրը ուրուշու խուսկավ ընօղ ար...* (ՀԺՀ, V, 40):

- Ուրուշու ծը՞րքու յէշիլ - Ուրիշից օգնություն ակնկալել, հույսը ուրիշի վրա դնել: *Կօրծ չի անում, սաղ օրը էն ա ուրուշու ծը՞րքու յիշիլիս* (Բ):

- Ուրուշու կըտօր թակէլ - *տե՛ս* Ուրուշին պըտառէն յը՞ղ քըսէլ:

- Ուրուշու յըրա շօն ա հանչում, ինձ յըրա էլ կատու վա մըլավում - Ասում են այն ժամանակ, երբ անարժան մեկը վատաբանում է:

- Ուրուշու պինըկալու յըրա ծու ածէլ - *տե՛ս* Ուրուշին պըտառէն յը՞ղ քըսէլ:

- Ուրուշու պիրանավ հաց օտէլ - *տե՛ս* Ուրուշու խուսկավ ինիլ:

- Ուրուշու տըռնան շօն - Ուրիշի օգտին գործող, ուրիշին ծառայող մարդ: *Իզէն հինչ տըղամարթ ա՞, ուրուշու տըռնան շօն ա* (Ձ):

- Ուրուշու փարչավ ճուր խըմէլ - Անհերես՝ համարձակ լինել: *Հըլիվուրը ասմա.- Տու ուրուշու փարչավ ըս ճուր խըմում, հունց էլ ինի, կըրըլական ըս կըլօ՞խըտ պահիս* (Ձ):

ԷՐՔ՝ԱՆՁ *(թրք. erkeč (նոխազ, քոշ, քաղ)* - *գ.* Էգ այծ՝ ուլ: *Էրք՝անջին մը՞սը դըբըռէն մըսան քախծըր ա ինում* (Բ):

ԷՔ՝ *(գրբ. էգ)* - *ած., գ.*, 1. Իգական սեռին պատկանող (կենդանի): *Էք՝ շօնը հանանս կինի* (Ձ): 2. *անրգ.* Կին, աղջիկ: *Խօխէնք՝ը սաղ էք՝ ըն, մին տըղա չօնէ, թա ք՝ՕՄանգ՝ անէ* (Բ): 3. *փխբ.* Կնոջ բարք ունեցող (տղամարդ): *Հինչ տըղա՞մարթ, էք՝ ա, տանան տուս չի կ՝ամ* (Բ): 4. Փոշոտման ենթակա՝ պտղաբեր (բույս): *Հանը կըզնըվում ա, թա.- Էտ խընձՕրէն էք՝ ա, խէ կըտրում ը՞ս* (Ձ): 5. Այն գործիքը, գործիքի մասը կամ սարածը, որի փոս ընկած մասի՝ անցքի մեջ ագուցվում է մյուս սարածի ցցված մասը՝ ելուստը՝ ատամը: *Պիրում ա, թա մըղակը յըրա անէ, տը՞սնում ա պէտլին էք՝ը կա վէչ* (Բ):

ԷՔ՝ՍԸ/ԷՅՍԸ - *մ.* 1. Հաջորդ օրը: *Էս պառավը ք՝ինանամ ա, էք՝սը ուրան տըղան յօր օնում, տանըմ շահէն կօխկը...* (ՆԼՂԺԲ, 19): 2. Հետագայում, ապագայում: *Հանը կըզնըվում ա, թա.- Բա՛լա, էտ փուլէրը վէր ցըրը՞վ ըս տաս, էք՝սը հունց ը՞նք ըպըրլական* (Ձ):

- Էք՝սըվա կօրծէն յըրա ծուն կըկ՝ա - Օրվա գործը չպետք է հետաձգել, այլապես խոչընդոտներ կառաջանան: *Ասպան ասում ար.- Կօրծըտ վըխտէն ըրա՛, էք՝սըվա կօրծէն յըրա ծուն կըկ՝ա* (Ձ):

- Էք՝սըվա փայը պահէլ - Կռվելիս՝ վիճելիս խոսքերը չափավորել, այնպիսի վիրավորական խոսքեր չասել, որոնց համար հաշտվելու դեպքում պետք է զղջաս: *Սիմօն, խըրէգ՝ ուշունց տօ՛, էք՝սըվա փայը պահէ, համօթ ա* (Ձ):

ԷՔ՝ՈՒԾ - *տե՛ս* ԷՔ՝ՈՒՑ:

ԷՔ՝ՈՒՑ/ԷՔ՝ՈՒԾ/ՕՔ՝ՈՒՑ/ՕՔ՝ՈՒԾ *(գրբ. այգուց, եգուց)* - *մ., գ.* Այսօրվան հաջորդող օրը՝ վաղը: *Էտ կընգանը ըրխըյնըցընում ըն, թա.- Էն ա տըղատ սաղ, էք՝ուց պէց ընք թուղլական* (Ձ):

- Էք՝ցան օրը - *տե՛ս* ԷՔ՝ՍԸ(2): *Էտ լօխ օգըմ ար գ՝իդան, վը՞ր էք՝ցան օրը ուրան խազնան վէր կ՝ան կըտրին, գ՝իդան* (ՀԺՀ, V, 245):

ԷՔ՝ՈՒՑ-ԱԼԼՕՐ - *տե՛ս* ԸՍՕՐ-ԷՔ՝ՈՒՑ:

Ը

Ը - *ձ.* 1. Արտահայտում է կմկմոց: *Ախճիգը դէվին վէր տը՞սնում ա, մընում ա ը՛ ընէլիս* (Ձ): 2. Արտահայտում է տնքոց: *Հիվանդը տը՞ղէն տակէն տընքտընքաս ա՝ ը՛, ը՛* (Բ): 3. Ձարմանքի բացականչություն՝ մի՞թե: *Կընէգը ասմա.- Ը՛, ա՛ մարթ, խէ տու ք՝ը՞ցալ չը՞ս ծըմակը* (Ձ): 4. Դժգոհության ու ձանձրույթի բացականչություն: *Մարթը ծը՞րքը թափ ա տամ, թա.- Ը՛, տու կընէգ՝ չըս տը՞ռնալ* (Ձ):

ԸԲԱԹ - *տե՛ս* ԸԲԱՍՏ:

ԸԲԱԽՏ - *տե՛ս* ԸԲԱՍՏ:

ԸԲԱԽՏ - *տե՛ս* ԸԲԱՍՏ:

ԸԲԱՍԻ - *տե՛ս* ԲԱՋԻ:

ԸԲԱՍՏ/ԲԱՍՏ/ԻԲԱՍՏ/ԸԲԱԽՏ/ԸԲԱԽՏ/ԲԱԽՏ[2]/ԸԲԱԽՏ[2]/ԸԲԱԹ/ԻԲԱԹ - *կ.* Անորոշ դերբայի հետ գործածվելով՝ ցույց է տալիս դիմավոր բայով արտահայտված գործողությանն անմիջականորեն նախորդած գործողություն, հենց որ: *Էտ տըղան էնքան կ՝էղէցիկ ա ընում, վը՞ր տը՞սնալը ըբաստ սիրահարվըմ ա* (ՀԺՀ, V, 39):

ԸԲԸՇԽԱՐԱՆՔ - *տե՛ս* ԱԲԱՇԽԱՐԱՆՔ:

ԸԲԸՇԽԱՐԷԼ - *տե՛ս* ԱԲԱՇԽԱՐԷԼ:

ԸԲԸՍԱՆՈՒՑ - *տե՛ս* ԲԸՋԱՆՈՒՑ:

ԸԲՐԱՋԱՎԱՆՆԻ - *տե՛ս* ԱԲՐԱՋԱՎԱՆՆԻ:

ԸԲՐԱՋՕՎ(ԱՆ)ՆԻ - *տե՛ս* ԱԲՐԱՋՕՎ(ԸՆ)ՆԻ:

ԸԲՈՒՌԷՆ/ՈՒԲՈՒՌԷՆ - *ած.* Պատվի՝ ամոթի զգացում ունեցող, բարոյական, առաքինի: *...Տը՞սնում ըն, վը՞ր ըբուռէն, հալալ, խըղճմըտանքավ մարթ ա, յօր ըն օնում, հաջի շինում...* (ՀԺՀ, VII, 204):

ԸԲՈՒՌԷՆ-ՀԸՅԻՆ - *տե՛ս* ԸԲՈՒՌԷՆ:

ԸԲՈՒՌՈՒ/ՈՒԲՈՒՌՈՒ - *տե՛ս* ԸԲՈՒՌԷՆ:

ԸԲՈՒՌՈՒ-ՀԸՅԸԼՈՒ - *տե՛ս* ԸԲՈՒՌԷՆ:

ԸԲՕՌՆԻ/ՈՒԲՕՌՆԻ *(ռուս. уборная)* - *գ.* Արտաքնոց, պետքարան, զուգարան: *Տանում ըն քըցում ուբօռնին, էն ա հըլա մինչէվ մըհէնգ՝ ընդէղ* (ՀԱԲ, 15, 127):

ԸԳ՝ՕՐԱ - *տե՛ս* ԸԳՕՐԱ:

ԸԳ՝ՕՐԱ/ԸԳ՝ՕՐԱ/Գ՝ՕՐԱ/Գ՝ՕՐԱ *(թրք. göre)* - 1. *ած.* Տվյալ դեպքին՝ պայմաններին եւն համապատասխան՝ հարմար՝ պատշաճ: *...Օխտ ըն քինըմ ու ամէն մինը ուրան մէխկին գ՝օրա մին էրկու վէխճար ա մօրթում* (ՋՏ, Ա, 230): 2. *կ.* Ըստ, համաձայն, համեմատ: *Պառավ մարթկանցը ասէլըն ըգ՝ՕՐա ըստարէ թուռույին ա ինանկան* (Բ):

ԸՂԱԹԷՆ - *տե՛ս* ԸՂԱԹԻՆ:

ԸՂԱԹԻՆ/ԸՂԱԹԷՆ - *մ.* Սովորության համեմատ, օրինավոր կերպով: *Պըղըրըստօթուն ըն տը՞սնում, էտ տըղէն ըղանթին փըսակում* (Բ):

ԸՂԸՍԸ՞ՆԷ - *տե՛ս* ԽԸԼԸ՞ՆԷ:

ԸՋԱՂԷԼ/ԸՋԱՏԷԼ *(գրբ. ազատեմ)* - *նբ.* 1. Որեւէ երկրի՝ ժողովրդի քաղաքական ազատություն տալ: *Ռուսը հըյէրէն ըզադից թուրքէրէն անա* (Ձ): 2. Ազատագրել: *Անջախ-անջախ մէր վը՞ղէրը ըզըղը՞ցէնք՝* (Բ): 3. Արձակել (բանտից, գերությունից եւն): *Թաքավէրը հըրաման ա տամ, վէր տանրմանը հիշկան մարթ կա փըռնըված, ըզադին* (Ձ): 4. Վտանգից, փորձանքից եւն փրկել՝ պրծացնել: *Ըտի*

աղվէսը էտ մարթին ըզադում ա էտ պը-տրհասան (Զ): 5. Որեւէ պարտականությունից՝ աշխատանքից՝ պաշտոնից եւն հանել՝ հեռացնել: *Ժողով ըրէն, նախագէն ըզըդը՛ցէն* (Բ): 6. Դատարկել, զբաղված լինելը դադարեցնել: *Տօնը ը-զըդը՛ցէն, հըզնը՛ցէն տընատը՛ռնը* (Բ): 7. Ծնունդաբերելիս ծնունդականին օգնել, ծնունդն ընդունել: *Տատմարը մին թանրաւ էտ հարթնանը ըզադից* (Զ):

ԸՁԱԴՄՈՒՆՔ/ԸՁԱՏՄՈՒՆՔ - *գ.* Ազատելը, ազատվելը, փրկություն: *Ամը՛ռնը մընծըկնէրէն անա ըզադմունք չի կա* (Բ):

ԸՁԱԴՎԷԼ/ԸՁԱՏՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* Ը-ՁԱԴԷԼ-ի: 2. *չբ.* Ծնունդաբերել: *...Թաքուհին ըզադվում ա, մին դաշանգ՝ տըղա յա պանրում, անումը տինում ըն Սումբաթ* (ՆԱԲ, 38):

ԸՁԱՆՁԻԼ - *տեմ* Կ՚ԸՁԱՆՁԻԼ:

ԸՁԱՏԷԼ - *տեմ* ԸՁԱԴԷԼ:

ԸՁԱՏՄՈՒՆՔ - *տեմ* ԸՁԱԴՄՈՒՆՔ:

ԸՁԱՏՎԷԼ - *տեմ* ԸՁԱԴՎԷԼ:

ԸՁԳԱԿԱՆ - *տեմ* ԸՁԿԱԿԱՆ:

ԸՁԳԱՄԸ՛Ռ - *տեմ* ԸՁԿԱՄԸ՛Ռ:

ԸՁԳԱՍԷՐ - *տեմ* ԸՁԿԱՍԷՐ:

ԸՁԳԸԹԸՔԱՆՔ - *տեմ* ԸՁԿԸԹԸ-ՔԱՆՔ:

ԸՁԳՈՒԾՕՆՆԻ/ՁՈՒԳՈՒԾՕՆՆԻ - *գ.* Խտացրած կաթ: *Ազին ասմա.- Մըհէնգ՚ հալալ կըթնակէր չի կա, լօխ ըզգուշօնի կէրած ըն* (Զ):

ԸՁԴԱՉԻ/ՁԸԴԱՉԻ *(ռուս. сдача)* - *գ.* Վճարված գումարի ավելցուկը, որ վաճառողը վերադարձնում է գնորդին: *Մաղազինչին ըզդաչին տամ ա* (Զ):

ԸՁԴԱՎԱՏ *(ռուս. здавать)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըզդավատ անէլ - *տեմ* ՀԱՁՆԷԼ:

ԸՁԴԸՐԱՍՏԻ *(ռուս. здравствуй)* - *տեմ* Պարավ ըս յը՛կալ:

ԸՁԷՆ/ԻՁԷՆ - *տեմ* ԷՆ(4): *Յէտ տը-ռէնք՚, յը՛շէցէնք՚ քըվէրըս, ըզէն լանվ ա լանլ* (ԼՂԲՔ, 273):

- Ըզէն ինձ յըրա ծաղէգ՚ ա տինանկան - Ինձնից հետո է մեռնելու (ասում են երիտասարդները առույգ ծերունիների մասին): - *Սուղումուն ապան հունց ա՞: - Իզէն ինձ յըրա ծաղէգ՚ ա տինանկան* (Զ):

ԸՁԷՍ/ԻՁԷՍ - *դ.* Առաջին դեմքի գոյականական ցուցական դերանուն, որ գործ է ածվում խոսողի մոտ գտնվող՝ եղող անձի փոխարեն: *Ըզէս կօրծ չի անում, հանը անում ա, ինք՚ը օտում ա* (Զ):

ԸՁԷՏ/ԻՁԷՏ - *դ.* Երկրորդ դեմքի գոյականական ցուցական դերանուն, որ գործ է ածվում խոսակցի մոտ գտնվող՝ եղող անձի փոխարեն: *Ըզէտ շատ տիժանր ա ինիս ըպրէս* (ՀԺՀ, V, 590):

ԸՁԸՂՕԹՈՒՆ/ԸՁԸՏՕԹՈՒՆ *(գրբ. ազատութիւն)* - 1. Քաղաքական անկախություն, ժողովրդի իրավունքը՝ տնօրինելու իր կյանքը: *Տըհէնց էլ նահանք հաշտ ապրում ըն ընդէդ, ժողովուրթէն պահում, ըզըդօթուն ըն տամ...* (ՀԺՀ, V, 364): 2. Ազատ լինելը, ազատի վիճակը: *Ըզըդօթունէն անա յը՛րը լ՚ավ պէն չի կա:* 3. *գ. տեմ* ԸՁԱԴՄՈՒՆՔ:

ԸՁԸՁԱՆՄԸ՛Ռ/ԻՁԸՁԱՄԸ՛Ռ - *ած.* 1. Սիրելին՝ ազիզը մեռած (սովորաբար գործածվում է անեծքի մեջ): *Ըզըզանմը՛ռ մընան թօրքէրը, սաղ շէնը քըրըքանդ ը-րէն* (Զ): 2. *փխբ.* Անառակ, անպատկառ: *...էտ կուճի ըզըզանմը՛ռը յօր ա օնըմ թանզանանլիծ յէղը ածըմ էտ կընգանը սիրականէն պը՛ռանը* (ՀԺՀ, V, 577):

ԸՁԸՁԱՆԱԼ/ԻՁԸՁԱՆԱԼ - *չբ.* Սիրելի՝ ազիզ դառնալ: *Վէր հըրուստացալ ա, մի-հէնգ՚ ախպօրցը հը՛տէ ըզըզանցալ ա* (Բ):

ԸՁԸՁՑ(Ը)ՆԷԼ/ԻՁԸՁՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Սիրելի՝ ազիզ դարձնել: *Էտ պառավը շատ չըրչարվից, մինչը՛վ կարից էտ խօրթ մորը ըզըզցընէ յիթիմնէրէն* (Զ):

ԸՁԸՏՕԹՈՒՆ - *տեմ* ԸՁԸՂՕԹՈՒՆ:

ԸՁԸՓԱՊԱՉ - *գ.* Հնում սովորություն, որի համաձայն հարսնառ գնացող երիտասարդները բռնի համբուրում էին աղջիկներին: *Մըհէնգ՚վա մըկընէն խաբար էլ չօնին, թա ըզըփապաչը հինչ ա* (Բ):

ԸՁԸՓՓԱՅԻ - *գ.* Հարսնառ գնացող երիտասարդների հետ դրվող ուտեստներ: *Այան ըզըփփային ածում ա խուրջինը, տամ մակառբաշուն* (Զ):

ԸՁԸՓՕԹՈՒՆ *(գրբ. ազապութիւն)* - *գ.* Ազաբ լինելը, ազաբի վիճակը: *Ըզըփօթունը հիբը մը՛ննընն ա քըցանում, լանցը կ՚ամ ա* (Զ):

ԸՁԿԱԿԱՆ/ԸՁԳԱԿԱՆ/ԱՁԿԱ-ԿԱՆ/ԱՁԳԱԿԱՆ *(գրբ. ազգական)* - *ած., գ.* Ազգակից, արյունակից: *Սաղ շէնումը մին ըզգական չօնէ, թա նըհը՛տը պարիկամօթուն անէ* (Զ):

ԸՁԿԱՄԸ՛Ռ/ԸՁԳԱՄԸ՛Ռ - *ած.* Ազգը՝ տոհմը մեռած (սովորաբար գործածվում է անեծքի մեջ): *Ըզկամը՛ռ մընա խօնդանց Ալրանփը* (Զ):

ԸՁԿԱՍԷՐ/ԸՁԳԱՍԷՐ/ԱՁԿԱՍԷՐ/ԱՁ-ԳԱՍԷՐ *(գրբ. ազգասէր)* - *ած.* Իր ազգը սիրող, հայրենասեր: *Տէսնում ը՞ս, պարոնն կազէթ կիրօղ, հունց մըզանըմ թանգ ա ըզգասէր տէռնալը...* (ՁՏ, Ա, 73):

ԸՁԿԸԹԸՔԱՆՔ/ԸՁԳԸԹԸՔԱՆՔ - *ած.* Ազգի՝ տոհմի համար ոչ պատվաբեր՝ ամոթալի: *Իզէն ըզկըթըքանք պէ-նէր շատ ա ըրալ* (Զ):

ԸՁ՚ԸՄ-ԱՁ՚ԸՄ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըզ՚ըմ-անզ՚ըմ անէլ - *տեմ* Պըտրռ-պատառ անէլ:

- Ըզ՚ըմ-անզ՚ըմ ինիլ/տը՛ռնալ - *տեմ* Պըտրռ-պատառ ինիլ:

ԸԹՏԸԲԱԹՏԻ - *տեմ* ԻԹՏԸԲԱԹՏԻ:

ԸԺԴԱՀԱ - *տեմ* ԱԺԼԱՀԱ:

ԸԺԸՄԱԺԱՆՔ՚ - *տեմ* ԸԺԸՄԱԺԷՆՔ՚:

ԸԺԸՄԱԺԷՆՔ՚/ԸԺԸՄԱԺԱՆՔ՚/ԻԺԻ-ՄԱԺԷՆՔ՚/ԺԸՄԱԺԷՆՔ՚/ԺԻՐԺԻՆՔ՚ - *գ.* Աղջամուղջ, մթնշաղ: *Միհէնգ՚ էտ օ-րատ տէսը իժիմիժէնք՚անը յէտը խը՛ղճ Բալաս դային էլ տանս չի կ՚աս վէջ մին տը՛ղ* (ՀԲ, 351):

- Ըժըմըժէնք՚ան ճանր օգ՚իլ - Մահամերձ լինել: - *Հիվանդը հունց ա՞: - Ըժ-ըմըժէնք՚ան ճանր ա օգ՚ում* (Զ):

ԸԺԸՄԸԺԱՆՔ՚ԻԼ - *տեմ* ԸԺԸՄԸԺԷՆ-Ք՚ԻԼ:

ԸԺԸՄԸԺԷՆՔ՚ԻԼ/ԸԺԸՄԸԺԱՆՔ՚ԻԼ/Ի-ԺԻՄԻԺԷՆՔ՚ԻԼ/ԺԸՄԸԺԷՆՔ՚ԻԼ/ԺԻՐ-ԺԻՆՔ՚ԻԼ - *չբ.* Աղջամուղջը՝ մթնշաղը վրա հասնել: *Ըզրանցավ ըն իլալ, յէկալ ա օրը ժըմըժէնք՚ալ* (ՆԱԲ, II, 38):

ԸԼԱԾ - *տեմ* ԻԼԱԾ:

ԸԼԱԾ-ՉԸԼԱԾ - *տեմ* ԻԼԱԾ-ՉԻԼԱԾ:

ԸԼԱՉՈՒԿ - *տեմ* ԱԼԱՉՈՒԽ:

ԸԼԱՉՈՒԽ - *տեմ* ԱԼԱՉՈՒԽ:

ԸԼԱՌԻԼ/ԻԼԱՌԻԼ - *տեմ* ՆԻԼԱՆԱԼ:

ԸԼԲԱՍՏԸՐԱԿ - *տեմ* ԸԼԸԲԱՍՏԸ-ՐԱԿ:

ԸԼԲԸՀԱԼ(ՄԸՍ) - *տեմ* ԻԼԲԻՀԱԼ-(ՄԸՍ):

ԸԼԲԱՍՏԸՐԸԿԱԽՕՏ - *տեմ* ԸԼԸ-ԲԱՍՏԸՐԸԿԱԽՕՏ:

ԸԼԴԸՐԸՄ(ՉԱ) *(թրք. yildirim (կայծակ)* - *տեմ* ԿԸԾ՚ԸԿԸՐԱԿ:

ԸԼԲԱԲԱԹ *(թրք. ala-babat)* - *տեմ* ԲԱԲԱԹ:

ԸԼԲԱԼԸՂ - *տեմ* ԱԼԱԲԱԼԸՂ:

ԸԼԲԱՍՏԸՐԱԿ/ԸԼԲԱՍՏԸՐԱԿ *(գրբ. նապաստակ)* - *գ.* 1. Կրծողների կարգին պատկանող փոքրիկ կենդանի, նապաստակ: *Ըլբաստըրակը միշտ էն ա ընում էտ խստէն մաչին նըստած* (ՆԱԲ, 88): 2. Արորի թուրը առատամին միացնող երկաթը: *Ըլաթէն ըլբաստըրակը տէմ ա ինում քարէն, ծըռվում* (Զ):

- Ըլբաստըրակը քըռասուն յը՛ռք ա գ՚ինդում, լօխ էլ կըզանրին յըրա - *տեմ* Արչը օխտը յը՛ռք ա գ՚ինդում, լօխ էլ տանանին յըրա:

- Ըլբաստըրակէն նըհը՛տ ապրողը աշկէրը պէց քօն կինի - *տեմ* Էշը էշին քըշտէն կապիս՝ յա՛ խույը կըսըվը՛ռէ, յա՛ խասյաթը:

- Ըլբաստըրակու սը՛ռտ ինիլ - Թուլասիրտ՝ վախկոտ լինել: *Մ՚խէղճ ու կը-ռակ թօրքէր, վէր ըլբաստըրակու սը՛ռտ օնիք՚, խէ ծինըրնէտ կըտրրում չը՞ք, ծէր հէյվանը պահիք՚* (Զ):

- Ըլբաստըրակու քացէ - Թույլ՝ անզգա հարված: *Ըտրրա թրխածը հինչ*

բի՞դի ինի, ըլըբըստըրակու քացէ յա, լի՞ (Բ):

ԸԼԸԲԸԼԱ - *տե՛ս* ԱԼԱԲՈՒԼԱ:

ԸԼԸԲԸՍՏԸՐԸԿԱԽՕՏ/ԸԼԸԲԸՍՏԸ-ՐԸԿԱԽՕՏ - *գ.* Ձարխոտազգիների ընտանիքին պատկանող միամյա բույս: *Ըլըբաստըրակը էտ խօտը սիրո՛ւմ ա, ըտըրա հը՛տէ յա անումը ըլըբըստըրըկախօտ* (Ձ):

ԸԼԸԳԸ՝ՆԷ/ԻԼԳՈ՛ՒՆ - *գ.* Վերձիգ ամուր շիվերով թփաբույս, որ աճում է Քուռ եւ Արաքս գետերի ափերին: *Ըլըգ՝ը՛նուն ճրպըտնէրավը ճուվարան ըն կ՝օրծում* (Ձ):

ԸԼԸԴՈՒ - *տե՛ս* ՈՒԼՈՒԴՈՒ:

ԸԼԸԹԱԹԱՐ - *տե՛ս* ԿԸԼԼԱՄԱՂ:

ԸԼԸԿԱՃԷՎ - *տե՛ս* ԱՆԱԽԱԹՈՒՆ:

ԸԼԸԿԱՐԿՈՒՏ - *տե՛ս* ԼԸՎԸԿԱՐԿՈՒՏ:

ԸԼԸԿ՝ԷՋ/ԱԼԱԿ՝ԻՋ - *գ.* 1. Վայրի խոտաբույս: *Ըտը՛ղ էլ շատ ըլըկ՝էգ ա փըսնէս* (Բ): 2. Մի գլուխ սոխ, որի մեջ մեծ պասի յոթ շաբաթների հաշվով փետուրներ են խրում եւ կախում դռան վերեւից: Ամեն կիրակի մի փետուր հանելով՝ որոշում են զատկի օրը: Դրանով նաեւ վախեցնում են երեխաներին, որպեսզի պասը չխախտեն: *Ղըրակէնը թաքուն ըլըկ՝էգին անա մին թէփուռ էլ ա պուք տամ, դէրը կըլխու չի ըղնում* (Ձ):

- Ըլըկ՝էգ տը՛ռնալ - Խիստ նիհարել: *Էտ խէ ըտի ըլըկ՝էգ ը՞ս տը՛ռալ* (Ձ):

ԸԼԸԿ՝ՕՃԻ - *տե՛ս* ԸՐԸԿ՝ՕՃԻ:

ԸԼԸԿՈՒՇԿՈՒՇ - *տե՛ս* ԱԼԱԿՈՒՇԿՈՒՇ:

ԸԼԸԿՕԾԸՆ/ԸԼԸՐԿՕԾՈՒՄ/ԸԼԸՐԿՕԾՈՒՆ *(գրբ. ալեկոծումն (ալիքների զարնվելը)* - *գ.* 1. Ուժեղ քամի, փոթորիկ: *Մին տըռնէ փիս ըլըկօծընն ա ինո՛ւմ, ըտահանց տընէրը սաղ քանդո՛ւմ ա* (Ձ): 2. *փխբ.* Իրարանցում: *Յէր ա կէնում՝ տէսնա հինչ ըլըկօրծում ա, խէ՞ յընն ո՛ւրո՛ւր անավ ընգալ* (ՀԱԲ, 15, 139):

- Ըլըկօծընն ըղնէլ - *տե՛ս* Ո՛ւրո՛ւր ըռըխա կէնալ:

ԸԿԼԸԿՕՇԿՕՃ - *տե՛ս* ԱԼԱԿՈՒՇԿՈՒՇ:

ԸԼԸԿՕՇԿՕՇ - *տե՛ս* ԱԼԱԿՈՒՇԿՈՒՇ:

ԸԼԸԿՕՐԾՈՒՄ - *տե՛ս* ԸԼԸԿՕԾԸՆ:

ԸԼԸԿՕՐԾՈՒՆ - *տե՛ս* ԸԼԸԿՕԾԸՆ:

ԸԼԸՄԱՆՉԻ - *տե՛ս* ԱՆԸՋԿԱՄ:

- Ըլըմանչի տալ - 1. Ուտելիք կամ այլ բան գտնելու համար դես ու դեն ընկնել: *Սաղ օրը ըլըմանչի յա տամ, վէր մին պէն քըթէնա, կօխէ բօղազը* (Բ): 2. Անընդհատ շարժվել: *Խօխան ըլըմանչի յա տամ* (Բ):

ԸԼԸՄԻԼՈ՛ՒՄ/ԻԼԸՄԻԼՈ՛ՒՄ - *տե՛ս* ՀԸ՝ՏԸ-ԹԷՓՈՒՌԸ:

ԸԼԸՉԱ(Լ)ՓԱ - *գ.* Ձյունախառն՝ կարկտախառն անձրեւ, որ ուղեկցվում է քամով: *Մին ըլըչալփա յա նի օնում, քամին կ՝ամ ա, կարկուտընն էլ նըհէտը* (ՆԱԲ, II, 33):

ԸԼԸՊՈՒՏ(Ր)ԻԳ՝ - *տե՛ս* ՏԸՊՏԸՊՈՒՐԻԳ՝:

- Ըլըպուտ(ր)իգ՝ անէլ/տալ - *տե՛ս* Ըլըմանչի տալ:

ԸԼԸՋԱ՛ՀՐԻ *(արաբ. alǧahri (տորոն)* - *գ.* Տորոնազգիների կարգին պատկանող թուփ, որի պտուղներից ներկ էին ստանում: *Առաչ ըլըջա՛հրան ըռանգ՝ ըն իլա՛լ շինիս, թիլը ըռանգ՝ տաս* (Բ):

ԸԼԸՓԱՉԱ - *գ.* 1. Անձրեւոտ ու խոնավ եղանակ: *Էս ըլըփըչավը ըշտը՛ղ ը՞ս քո՛ւնո՛ւմ* (Բ): 2. Թարախակալած ու բացված վերք: *Դէրվիշը պիրո՛ւմ ա ըտըրա ըլըփաչան թըմիզցընում, կապում* (Ձ):

ԸԼԹԱՎԱ - *գ.* Նեղ ու երկար ծոծրակով մետաղյա ջրաման: *Յէր ա կէնում ք՝ընում յէտ-յէտ անում, տը՛սնում՝ մին ըլթավա յա՝ վը՛սկավ լիգ՝ը* (ԲՀԲ, 45):

ԸԼԻ - *տե՛ս* ԼԻ:

ԸԼԼԱ՛ՄԱ - *տե՛ս* Ա՛ԼԼԱՄԱ՛:

ԸԼԼԱ՛ՄԱ՛ - *տե՛ս* Ա՛ԼԼԱՄԱ՛:

ԸԼԼԷՐՈՒՏ/ԻԼԼԷՐՈՒՏ - *ածական.* Այլուրով թաթախված՝ կեղտոտված: *Կընէգ՝ը մարթին ըլլէրուտ շալվարը համ թափ ա տամ, համ քըթէն տակէն մըրթմըրթամ* (Ձ):

ԸԼԼԻԹ-ՄԻԼԼԱ՛Թ - *տե՛ս* ԻԼԼԱ՛Թ-ՄԻԼԼԱ՛Թ:

ԸԼԼԻԹ-ՎԻԼԼԱ՛Թ - *տե՛ս* ԻԼԼԱ՛Թ-ՎԻԼԼԱ՛Թ:

ԸԼԼԻՐԱՏՕՆ/ԻԼԼԸՐԱՏՕՆ - *գ.* Ջրաղացքարերի առջեւի մասում տեղադրված փայտե արկղ, որի մեջ լցվում է այլուրը: *Ճըղասպանը ըլլիրատօնը օգ՝ում ա սիրփի, տը՛սնում ա մին մուկուն մաչիգ՝* (Ձ):

ԸԼԼԻՐԹԱԹԱԽ/ԻԼԼԸՐԹԱԹԱԽ - 1. *ածական.* Այլուրի մեջ թաթախված՝ կեղտոտված: *Էտ մարթը ամմէն օր ըլլիրթաթախ կ՝ամ ա տօն, տը՛սնում կընէգ՝ը տանը չի* (Ձ): 2. *փխբ.* Դալուկ, գունատ: *Թա՛զզա՛ հարթնըն էլ տըղնըված, ըլլիրթաթախ ախճիգ՝ ար* (Ձ):

- Ըլլիրթաթախ չըվալ - Կեղտոտ՝ փոշեթաթախ շոր: *Էտ ըլլիրթաթախ չըվալը հինչ ա՞, վէր կ՝ը՛ցալ ըս* (Ձ):

ԸԼԼԻՐՀԱՏ/ԻԼԼԸՐՀԱՏ - *ածական.* Այլուրը հատած՝ վերջացած: *Ըլլիրհատ տօնը կըչօքէ* (Ձ):

ԸԼԼԻՐՄԱՂ/ԻԼԼԸՐՄԱՂ - *գ.* Այլուրը մաղելու մաղ: *Ղարաչէք՝ը ըլլիրմաղէրը տամ ըն, տը՛ղը շինա՛ցուց անա յը՛ղ, պանէր ինք՝ օնում* (Ձ):

ԸԼԼԻՐՄԱՂԷ/ԻԼԼԸՐՄԱՂԷ - *գ.* Թիթեռի տեսակ՝ որի վրա կարծես սպիտակ փոշի է ցանած: *Մին էլ մին ըլլիրմաղէ յա կ՝ամ, ըղնում ըտըրա խուրագ՝ին ամանը* (Ձ):

ԸԼԼԻՐՍԸՐՓԷ/ԻԼԼԸՐՍԸՐՓԷ - *գ.* Լաթի կտոր, որով ջրաղացպանը սրբում է ջրաղացի մեջ նստած այլուրի փոշին: *Ըլլիրսըրփէն յօր ա ընէս, ըլլիրատօնը սիրփիս* (Ձ):

ԸԼԼԻՐՔԱՇԻ/ԻԼԼԸՐՔԱՇԻ - *գ.* Երկար կոթով փայտե ամաս՝ տարաներից այլուրը հանելու համար: *Ըլլիրքաշին քը-ցո՛ւմ ա, ըմբարան ա՛ղլէր տո՛ւս օնում* (Ձ):

ԸԼԼԻՐՕՏԷԼ/ԻԼԼԸՐՕՏԷԼ - *նբ.* Այլուրոտ դարձնել, այլուրի մեջ թաթախել՝ կեղտոտել: *Ք՝ինամ ա ճէղաց, շօ՛րէրը սաղ ըլլիրօտում* (Բ):

ԸԼԼԻՐՕՏՎԷԼ/ԻԼԼԸՐՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸԼԼԻՐՕՏԷԼ-ի:

ԸԼՄԱՋԷ/ԸԼՄԱՍՏԷ - *տե՛ս* ԲԸՌԼԱ՛ՆԴԻ: *Տըղան նօրը մինան ա հըղէ ինո՛ւմ, ք՝ինա՛մ մին ըլմաստէ սարու տէմ ինգ՝ո՛ւմ* (ՀԺՀ, VII, 80):

ԸԼՄԱՍՏԷ - *տե՛ս* ԸԼՄԱՋԷ:

ԸԼՄԸՋԸ՝ՊԱՆ/ԸԼՄԸՍՏԸ՝ՊԱՆ - *գ.* Ալմաստից պատրաստած թանկարժեք իրեր՝ զարդեր: *Սարը ճըղում ա, էտ ըլմըստը՛ղանըտ էլ սաղ պէռնում, պո՛ւրո՛ւմ տամ թաքավը՛ռէն* (ՀԺՀ, VII, 80):

ԸԼՄԸՍՏԸ՝ՊԱՆ - *տե՛ս* ԸԼՄԸՋԸ՝ՊԱՆ:

ԸԼՈ՛ՒՌՆԷ - *տե՛ս* Ո՛ՒԼՈ՛ՒՌՆԷ:

ԸԼՕ՛ՌՆԷԳ՝ - *տե՛ս* ՀԸԼՕ՛ՌՆԷԳ՝:

ԸԼՕ՛Ր - *տե՛ս* ԼՕ՛Ր:

ԸԽԸՐԱՑՈՒ - *ածական., գ.* Ջատկի օրվան մատաղի համար նախատեսված մսացու: *Ըխըրացուն տանում ըն, մօրթում, պիժէնում* (Ձ):

ԸԽԿԸՂԱՆԱԼ/ԸԽԿԸՏԱՆԱԼ *(գրբ. աղքատանամ)* - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲԱՆԱԼ:

ԸԽԿԸՂԱՑՈՒ/ԸԽԿԸՏԱՑՈՒ - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲԱՑՈՒ:

ԸԽԿԸՂԱՓԱՅ/ԸԽԿԸՏԱՓԱՅ - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲԱՓԱՅ:

ԸԽԿԸՂՎԱՉԻ/ԸԽԿԸՏՎԱՉԻ - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲՎԱՐԻ:

ԸԽԿԸՂՎԱՐԻ/ԸԽԿԸՏՎԱՐԻ - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲՎԱՐԻ:

ԸԽԿԸՂՑ(Ը)ՆԷԼ/ԸԽԿԸՏՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. աղքատացուցանեմ)* - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲՑ(Ը)ՆԷԼ:

ԸԽԿԸՂՓԱ՛ՆԴԻ/ԸԽԿԸՏՓԱ՛ՆԴԻ - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲՓԱ՛ՆԴԻ:

ԸԽԿԸՂՕԹՈՒՆ/ԸԽԿԸՏՕԹՈՒՆ *(գրբ. աղքատութիւն)* - *տե՛ս* Ք՝ԸՍԸԲՕԹՈՒՆ:

ԸԽԿԸԹԷԽԿՈՒ(Տ)/ՀԸԽԿԸԹԷԽԿՈՒ(Տ) - *ածական.* 1. Կիսաեփ, կիսախորով: *Էլ տըմանում չընՙիփի, ըտի ըխկըթէխկուտ*

տիւս ըն օնում, օտում (Զ): 2. *փխբ.* Դեռահաս, մատաղ: *Ըխկըթէխկու ախճիգ՝ ար, վէր փըսըկը՝ցէն* (Բ): 3. *փխբ.* Քիչ հարբած: *Մացակը ասմա.- ՀաՀրփաՀծ չըմ, ըխկըթէխկու յըմ* (Զ):

ԸԽԿԸՏԱՆԱԼ - *տե՛ս* ԸԽԿԸԴԱՆԱԼ:

ԸԽԿԸՏԱՑՈՒ - *տե՛ս* ԸԽԿԸԴԱՑՈՒ:

ԸԽԿԸՏԱՓԱՑ - *տե՛ս* ԸԽԿԸԴԱՓԱՑ:

ԸԽԿԸՏՎԱՉԻ - *տե՛ս* ԸԽԿԸԴՎԱՉԻ:

ԸԽԿԸՏՎԱՐԻ - *տե՛ս* ԸԽԿԸԴՎԱՐԻ:

ԸԽԿԸՏՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸԽԿԸԴՑ(Ը)ՆԷԼ:

ԸԽԿԸՏՓԱՆԴԻ - *տե՛ս* ԸԽԿԸԴՓԱՆԴԻ:

ԸԽԿԸՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸԽԿԸԴՕԹՈՒՆ:

ԸԽՃԸԳ՝ԱԹՕՌ(ՆԸ)/ԸԽՉԸԿԱԹՕՌ(ՆԸ) - *գ.* Թոռ՝ աղջկա կողմից: *Սանթուրը մին տըղաթօռ օնէ, օթ ըխճըգ՝աթօռ* (Բ):

ԸԽՃԸԳ՝ԱԿՕԽ/ԸԽՉԸԿԱԿՕԽ - *ած.* Շատ աղջիկ զավակներ ունեցող: *Ըխճըկակօխ տօն ա, ղըրաղան մարթու չըն ք՝ինամ, թա խը՝ղճէրը պատառ թըթիվանան* (Բ):

- Ըխճըգ՝ակօխ ինիլ/տը՝ռնալ - Շատ աղջիկ զավակներ ունենալ: *Խը՝ղճը ըխճըգ՝ակօխ ա իլալ, կարում չի, թա թաթը կօթէն հըսցընէ* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՀԱՆՐ/ԸԽՉԸԿԱՀԱՆՐ - *գ.* Հարսնացուի հայրը: *Ըխչըկահանրը կըգնըվում ա, կըռը՝վ քըցՀում* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՄՄԱՐ/ԸԽՉԸԿԱՄՄԱՐ - *գ.* 1. Հարսնացուի մայրը: *Անդաթ ա, ախճիգ՝ը վէր տանան տՀիւս օնին, ըխճըգ՝ամարը լանց կինի, մըհէնգ՝վա ըխճըգ՝մարէրը ծըծաղում ըն* (Բ): 2. Նորածին աղջկա մայր: *Էտ ըխճըգ՝ամարը պանՀուրը թողում ա, փախչՀում* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՊԷՆ/ԸԽՉԸԿԱՊԷՆ - *գ.* Աղջկա գործ: *Ըխպիրանն ճՀուր պիրիլը ըխճըգ՝ապէն ա* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՍԷՐ/ԸԽՉԸԿԱՍԷՐ - *ած.* Աղջիկ զավակների նկատմամբ մեծ սեր ունեցող: *Հինչ ա թա Սիրօժը ըխչըկասէր ա, կընէգ՝ըն էլՀուրՀուր հը՝տա տըղա յա պիրՀում* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՏԱՐ/ԸԽՉԸԿԱՏԱՐ - *գ.* 1. Աղջիկ ունեցող ծնող: *Ըխճըգ՝ատարը մին պատառ լՀուզՀունՀուրանն կըպահէ* (Զ): 2. Հարսնացուի ծնողը: *Հըրսընքէն վախտը ըխճըգ՝ատը՝ռնը լՀուզՀուն կարճ կինի* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՏԸ՝Ս/ԸԽՉԸԿԱՏԸ՝Ս - *գ.* 1. Հարսնախոսելու նպատակով աղջիկ տեսնելը: *Էտ տըղան մօրը յօր ա ունէս, ք՝իս կօխկէ շէնը՝ ըխճըգ՝ատը՝ս* (Զ): 2. Հարսանիքի հաջորդ օրը աղջկա հարազատների այցելությունը փեսայի տուն: *Էք՝սը մին էրկու հօքի հըվաքվում ըն, ք՝ինամ ըխճըգ՝ատը՝ս, փըսէն հանը ղօչը մօրթում ա ըտըրանց վընէրէն տակէն* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՏՕՆ/ԸԽՉԸԿԱՏՕՆ - *գ.* 1. Հարսնացուի հոր տունը: *Ըխճըգ՝ատօնըն էլ շէնին կըլիէն ա ինՀում, մըկըռնէն մին թանՀրանվ պիցըրանում ըն* (Զ): 2. Լռությամբ՝ տխուր անցնող խնջույք: *Թամադան ասմա.- Մ ժըղօվուրթ, ըխճըգ՝ատօն ա՞, խէ ք՝ը՝փ չը՞ք անում* (Զ):

ԸԽՃԸԳ՝ԱՑԸ՝Ղ/ԸԽՉԸԿԱՑԸ՝Ղ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՑՈՒ:

ԸԽՃԸԳ՝ԱՑՈՒ/ԸԽՉԸԿԱՑՈՒ - *գ.* Խորթ աղջիկ: *Սունէն խօխա չի լալ, Հուրանն տանք՝ըրու ըխչըկանը յէր ա կալալ Հուրանն ըխչըկացու...* (ՀԲ, 337):

ԸԽՃԸԳ՝ՎԱՉԻ/ԸԽՉԸԿՎԱՉԻ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ՎԱՐԻ:

ԸԽՃԸԳ՝ՎԱՐԻ/ԸԽՉԸԿ՝ՎԱՐԻ - *մ.* Աղջկա պես, աղջկավայել: *Էտ տըղան ըխճըգ՝վարի յա շօռ կ՝ամ* (Բ):

ԸԽՃԸԳ՝ՕԹՈՒՆ/ԸԽՉԸԿՕԹՈՒՆ - *գ.* 1. Աղջիկ լինելը: *Ըխճըգ՝օթունը ըսկի մին պէն չի, մըղափՀուն չի՞ տըղօթունը* (Բ): 2. Աղջիկ եղած ժամանակաշրջանը: *Մարյանգ՝Հուլը ըխճըգ՝օթունը սըրէրըմըն ա աս կըցըրալ* (Բ): 3. Աղջկա վարքագիծ, աղջկավայել արարք: *Հանը ասմա.- Մ կընէգ՝, ըտըրանա մին ըխչըկօթուն չի տը՝սէնք՝* (Զ): 4. Կուսություն: *Հըրթնըցուվէն ըխճըգ՝օթունը հօրը հը՝տէ մը՝ծ պադէվ ա* (Զ):

ԸԽՄԸԽ-ԱԽՄԱԽ/ԸԽՄԸՂ-ԱԽՄԱՂ - *տե՛ս* ԸԽՄԸԽՎԱՐԻ:

ԸԽՄԸԽԱՆԱԼ/ԸԽՄԸՂԱՆԱԼ - *չբ.* Հիմարանալ, տխմար դառնալ: *Բուղդին առաչ մին պէն չի իլալ, մըհէնգ՝ էլ խալիս ըխմըխացալ ա* (Բ):

ԸԽՄԸԽՎԱՉԻ/ԸԽՄԸՂՎԱՉԻ - *տե՛ս* ԸԽՄԸԽՎԱՐԻ:

ԸԽՄԸԽՎԱՐԻ/ԸԽՄԸՂՎԱՐԻ - *մ.* Հիմարաբար, տխմարաբար: *Ախմախը ըխմըխվարի կօրծ կըփըռնէ* (Զ):

ԸԽՄԸԽՑ(Ը)ՆԷԼ/ԸԽՄԸՂՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Հիմար՝ տխմար դարձնել: *Էնքան թակում ըն, լափ ըխմըխցընում ըն* (Զ):

ԸԽՄԸԽՕԹՈՒՆ/ԸԽՄԸՂՕԹՈՒՆ *(գրբ. ախմարութիւն)* - *գ.* 1. Հիմար՝ տխմար լինելը: *Ըխմըխօթունը Ղընգըլաց ցը՝ղէն տըված ա* (Բ): 2. Հիմար՝ տխմար արարք՝ գործ՝ միտք՝ խոսք: *Ըխմըղօթուն ըրավ, փըռնէցէն, մին լ՝ավ թըկը՝ցէն* (Զ):

ԸԽՄԸՂ-ԱԽՄԱՂ - *տե՛ս* ԸԽՄԸԽ-ԱԽՄԱԽ:

ԸԽՄԸՂԱՆԱԼ - *տե՛ս* ԸԽՄԸԽԱՆԱԼ:

ԸԽՄԸՂՎԱՉԻ - *տե՛ս* ԸԽՄԸԽՎԱՉԻ:

ԸԽՄԸՂՎԱՐԻ - *տե՛ս* ԸԽՄԸԽՎԱՐԻ:

ԸԽՄԸՂՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸԽՄԸԽՑ(Ը)ՆԷԼ:

ԸԽՄԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸԽՄԸԽՕԹՈՒՆ:

ԸԽՆԱՎԷՐ - *տե՛ս* ՈՒԽՏԱՎԷՐ:

ԸԽՇԱՂԷԼ - *տե՛ս* ԸՇԽԱՂԷԼ:

ԸԽՇԱՐՔՈՒ *տե՛ս* ԸՇԽԱՐՔՈՒ:

ԸԽՇԸՂԱՆՔ - *տե՛ս* ԱՇԽԸՂԱՆՔ:

ԸԽՇԸՂԱՍԷՐ - *տե՛ս* ԸՇԽԸՂԱՍԷՐ:

ԸԽՇԸՂԸ՝ՎՈՒՐ - *տե՛ս* ԸՇԽԸՂՕՎՈՒՐ:

ԸԽՇԸՂՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՇԽԸՂՑ(Ը)ՆԷԼ:

ԸԽՇԸՂՕՎՈՒՐ - *տե՛ս* ԸՇԽԸՂՕՎՈՒՐ:

ԸԽՇԸՐԱՓԱՐ - *տե՛ս* ԸՇԽԸՐԱՓԱՐ:

ԸԽՉԸԿԱԹՕՌ(ՆԸ) - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱԹՕՌ(ՆԸ):

ԸԽՉԸԿԱԿՕԽ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱԿՕԽ:

ԸԽՉԸԿԱՀԱՆՐ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՀԱՆՐ:

ԸԽՉԸԿԱՄՄԱՐ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՄՄԱՐ:

ԸԽՉԸԿԱՊԷՆ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՊԷՆ:

ԸԽՉԸԿԱՍԷՐ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՍԷՐ:

ԸԽՉԸԿԱՏԱՐ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՏԱՐ:

ԸԽՉԸԿԱՏԸ՝Ս - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՏԸ՝Ս:

ԸԽՉԸԿԱՏՕՆ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՏՕՆ:

ԸԽՉԸԿԱՑԸ՝Ղ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՑԸ՝Ղ:

ԸԽՉԸԿԱՑՈՒ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ԱՑՈՒ:

ԸԽՉԸԿՎԱՉԻ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ՎԱՉԻ:

ԸԽՉԸԿՎԱՐԻ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ՎԱՐԻ:

ԸԽՉԸԿՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸԽՃԸԳ՝ՕԹՈՒՆ:

ԸԽՊԱԽՕՏ - *գ.* Մի տեսակ խոտ: *Ը՝տը՝ղ էլ մինակ ըխպախօտ ար փըսնում* (Զ):

ԸԽՊԱՇԱԿ - *տե՛ս* ԸԽՊԸՇԱԿՈՒՌ:

ԸԽՊԱՀԱՐ - *տե՛ս* ԸԽՊԸՀԱՐ:

ԸԽՊԱՆՕՑ *(գրբ. աղբանոց)* - *տե՛ս* ԸԽՊԸՀԱՐ:

ԸԽՊԱՎԷՐ - *գ.* Աղբը լցնելու հորը: *ՊիրՀում ա ըտըրա իլանծ-չիլանծը նի տամ միշուկնէն, տանում քըցՀում ըխպավէրը* (Զ):

ԸԽՊԱՎԸ՝Տ - *գ.* Աղբի հոտ՝ տհաճ հոտ: *Ըխպավը՝տը սաղ շէնը կալալ ա* (Բ):

ԸԽՊԱՏԸ՝Ղ *(գրբ. աղբատեղի)* - *տե՛ս* ԸԽՊԸՀԱՐ:

ԸԽՊԷՐԱԿ - *գ.* Նորածին մանկան գանգի փափուկ, դեռեւս չոսկրացած մասը, գաղտուն: *Խուխէն ըխպէրակը կապվալ ա* (Բ):

ԸԽՊԸԽԱՌՆԸ *(գրբ. աղբախառն)* - *տե՛ս* ՁԻԲԻԼԽԱՌՆԸ:

ԸԽՊԸԾԱԿՈՒՌ - *գ.* Անասնագոմի պատի մեջ բացված մեծ անցք, որով աղբը դուրս են նետում: *Տըղան մին կ՚ուշ թէ յա յօր ընէս, էտ կ՚ումը թըմըգցընէս, ախպը ըխպըծըկուռավը տէն ըծէս* (Զ):

ԸԽՊԸԿԼԻԼ - *տե՛ս* ՋԻԲԻԼԿԼԻԼ:

ԸԽՊԸԿՈՒՏԷՄ(ՆԸ) - *գ.* Վայրի կոտեմի տեսակ: *Ըխպըկուտէմնը էշընն էլ չի օտում* (Բ):

ԸԽՊԸՀԱՐ/ԸԽՊԱՀԱՐ - *գ.* 1. Աղբը թափելու տեղը՝ աղբանոց: *...Մին չօփ ըն յօր օնում, սըկսում ըխպըհարը քանդիլը* (ՀԺՀ, V, 489): 2. *փխբ.* Կեղտոտ, ապականված տեղ՝ բնակարան եւն: *Ըտըրանց տօնը տօն չի, ըխպըհար ա* (Բ):

ԸԽՊԸՐ-ԱԽՊԷՐ/ԸԽՊԸՐՔ-ԱԽՊԷՐՔ - *մ.* Եղբայրներով՝ միասին: *Ըտը՛ղ լ՚ավ հըրսանէք՚ ըն ընէս, ըխպըրախպէր ու՛ռանց կընանուցավը մին տը՛ղ ըպըրէս* (Զ):

ԸԽՊԸՐԱԿԷՆ/ԸԽՊԸՐԱԿԻՆ - *գ.* Եղբոր կին: *...Մին էլ մըտածում ա, վէր ըխպըրակէնը պէն չի տըլական՝ օտէ* (ՀԱԲ, 15, 79):

ԸԽՊԸՐԱԿԻՆ - *տե՛ս* ԸԽՊԸՐԱԿԷՆ:

ԸԽՊԸՐԱԿՆԸ - *տե՛ս* ԸԽՊԻՐԱԿՆԸ:

ԸԽՊԸՐԸՃՈՒՐ - *տե՛ս* ԸԽՊԻՐԸՃՈՒՐ:

ԸԽՊԸՐԱՄԸ՛Ռ - *ած.* Եղբայրը մեռած (սովորաբար գործածվում է անեծքի մեջ): *Ըխպըրամը՛ռ մընաս տու, Սօ՛նա, վէր իմ ախպօր կըլօ՛խը կէրէր* (Զ):

ԸԽՊԸՐԱՆԱԼ *(գրբ. եղբայրանամ)* - *չբ.* Եղբայր՝ ընկեր դառնալ, մտերմանալ: *Մին վէրցակ, մին շօն ըխպըրանում ըն, մըսլըհաթ անում, վէր ք՚ընին ծըմակը* (ՆԱԲ, 69):

ԸԽՊԸՐԱՑԸ՛Ղ - *տե՛ս* ԸԽՊԸՐԱՑՈՒ:

ԸԽՊԸՐԱՑՈՒ - *գ.* 1. Խորթ եղբայր: *Յէտնան մարթ ըն ղարկում, հօրը, մօրը մինգ՚էլ հօրը ըխպըրացուվը՛ն պիրիլ տամ* (ՀԺՀ, VII, 40): 2. Բարեկամ՝ մտերիմ անձ: *Ղասաբընն ասըմ ա.- Մյ ըխպըրացու, վը՛խճարին կըլօ՛խը քըսան կապէկ ա* (ՀԺՀ, V, 585):

ԸԽՊԸՐԱՓԱՅ - *գ.* Ժառանգական ունեցվածքից եղբայրներից յուրաքանչյուրին հասնող բաժինը: *Հա՛ը մըռնէլանը յը՛տը իլա՛ծ-չիլա՛ծը կէս-կէս ըն անում, կուճուր տըղէն ըխպըրափայը էշըն ա ըղնում* (Զ):

- Ըխպըրափայ անել - 1. Եղբայրների միջեւ ժառանգական ունեցվածքը հավասարապես բաժանել: *Թաքավէրը մը՛ռավ, հըրըստութունը տըղէրքը կըրը՛ցէն վէչ ըխպըրափայ անին, կըռը՛վը ընգավ պալատը* (Զ): 2. Եղբայրաբար՝ հավասար բաժանել: *Ըտըրանք հընգըրանըմ ըն, մին տը՛ղ փուլ ըշխադում, ըխպըրափայ անում* (Զ):

ԸԽՊԸՐՊԷԺԻՆ - *տե՛ս* ԸԽՊԸՐԱՓԱՅ:

ԸԽՊԸՐՎԱՉԻ - *տե՛ս* ԸԽՊԸՐՎԱՐԻ:

ԸԽՊԸՐՎԱՐԻ - *մ.* Եղբայրաբար, եղբոր նման, հարազատի պես: *Ըտըրանք ըտը՛ղ տընէր ըն շինիս, ըխպըրվարի ըպըրէս* (Բ):

ԸԽՊԸՐՏԸ՛ՌՆԱԼ - *տե՛ս* ԸԽՊԸՐԱՆԱԼ:

ԸԽՊԸՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Եղբայր՝ ընկեր դարձնել, մտերմացնել: *Ք՚ըսըբութունը մարթկանց ու՛ռու՛ր նըհը՛տ կըխպըրցընէ* (Զ):

ԸԽՊԸՐՔ-ԱԽՊԷՐՔ - *տե՛ս* ԸԽՊԸՐԱԽՊԷՐ:

ԸԽՊԸՐՕԹՈՒՆ *(գրբ. եղբայրութիւն)* - *գ.* 1. Եղբայր լինելը: *Ըխպըրօթունը ամմէն հինչա պէցո՛ւր ա* (Զ): 2. Բարեկամություն, ընկերություն, մտերմություն: *Ընդըրանք ասըմ ըն.- Յէք ըխպըրօթո՛ւնա տո՛ւս կ՚անք, բօ՛լ ա, հինչքան ըխպըրօթուն ընք ըրալ* (ՀԺՀ, V, 517):

ԸԽՊԸՑԻ - *տե՛ս* ԽԱԹԱ՛ՆԳԱ՛Ջ:

ԸԽՊԻՐԱԿՆԸ/ԸԽՊԸՐԱԿՆԸ *(գրբ. աղբերակն, աղբիւրակն)* - *գ.* Աղբյուրի ակ՝ ակունք: *Ճօ՛ղէն վընէրավը քանդո՛ւմ ա, ըխպըրակնը քըթէնում* (Զ):

ԸԽՊԻՐԱ՛ՃՈՒՐ/ԸԽՊԸՐԱ՛ՃՈՒՐ - *գ.* Աղբյուրի ջուր: *Վըստակած կ՚ամ ա, կըռանըմ, ցօրտ-ցօրտ ըխպիրճիրա՛ն խըմում, քարէն նըստում* (Զ):

ԸԽՍԱԽԿԱԼ - *տե՛ս* ԱԽՍԱԽԿԱԼ:

ԸԽՏԱՎԷՐ - *տե՛ս* ՈՒԽՏԱՎԷՐ:

- Ըխտըվէրու էշ - *տե՛ս* Ըղօթած էշ:

ԸԽՏԸԼԱ՛Թ - *տե՛ս* ՋԸՐՈ՛ՒՑ:

ԸԽՏԸԼԱ՛ՀԱ՛Ջ - *գ.* Խեղդող հագ, կապույտ հագ: *Ըխտըլա՛հա՛զը շատ խօխա ըսպանից էտ յիրգ՚իրումը* (Զ):

ԸԽՏԻՅԱՐ/ԻԽՏԻՅԱՐ *(արաբ. ektiār ixtiyar (կամք, ընտրություն), թրք. ihtiyar (կամք, զորություն)* - *գ.* 1. Արտոնված իրավունք՝ իշխանություն: *...Շըհարին ըխտիյարը ծըռքընէրին, տընընկնէն սըրած՝ տըմակ ար, վէր կըտօրըմ ին...* (ՋՏ, Ա, 225): 2. *փխբ.* Հույս, նեցուկ, սատար, հովանավոր: *Խը՛ղճը ք՚ա՛սիբ մը՛ռնում ա, մին ըխտիյար էլ չօնէ, թա ք՚ըմա՛գ՚ անէ* (Զ):

ԸԽՏԻՅԱՐՉԻ/ԻԽՏԻՅԱՐՉԻ - *գ.* Իշխանավոր, պաշտոնյա: *...Մէր շընհարներին ըխտիյարչէքը էտ ազար-բէզար ծախօղներին ջընռըմը քաշըմ չին...* (ՋՏ, Ա, 227):

ԸԽՈՒ - *տե՛ս* ՈՒԽԱՅ:

ԸԽՈՒՌԱՏԸ՛Ղ/ՈՒԽՈՒՌԱՏԸ՛Ղ - *գ.* Ախոռի տեղ: *Ըխուռատը՛ղը թըմիզցընում ըն, փընթամէնտը կըտըրում, ք՚ինամ ուստէն հը՛տան* (Զ):

ԸԽՈՒՌԱՓԱ՛Ղ/ՈՒԽՈՒՌԱՓԱ՛Ղ - *գ.* Գոմում ամրացրած փայտ, որից կապում են անասուններին: *Էշը ըխուռփա՛ղա՛ն կապում ա, տո՛ւս կ՚ամ, տը՛սնում կավը կա վէջ* (Զ):

ԸԾ(ԸԿ)Ը՛ՆԷ - *գ.* Վարդագույն ձվաձեւ հատիկներով կախանի խաղողի տեսակ: *Ըծը՛նէն լ՚ավ խաղու վա, մըղափա՛ւն, վէր միհէնգ՚ բիջա՛ռօ՛ղ չի կա* (Զ):

ԸԾԸՄՕՐԷ[1] - *տե՛ս* ԻԾԸՄՕՐԷ[1]:

ԸԾԸՄՕՐԷ[2] - *տե՛ս* ԻԾԸՄՕՐԷ[2]:

ԸԾԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Նվագել տալ: *Էտ զուռնաչուն էնքան ըծըցընում ըն, լափ հա՛լա՛ ըղնում ա* (Զ):

ԸԾՕՎԻ - *ած.* Ածովի, լցնովի: *Ըծօվի վը՛ղէն յըրա պատ չըն շարէլ* (Բ):

ԸԿԱՆԱԹ/ԿԱՆԱԹ *(գրբ. ականատ)* - *տե՛ս* ԹԱ՛ԼԱ՛Կ:

ԸԿԱՆԷԼ *(գրբ. ականեմ)* - *նբ. տե՛ս* Ակը տալ (ԱԿՆԸ[1]-ի տակ):

ԸԿՆԱԿՕՐ - *ած.* Շատ մութ, խավարչտին, ականակիր: *Մին ընկակօր քըշէր նի յըն մընում ըտահանց կ՚ումը, կավը կ՚ուղանում* (Զ):

ԸԿՆԸԸՐԻՔ՚ՆԱԿ - *տե՛ս* ԱԿՆԸԸՐԻՔ՚ՆԱԿ:

ԸԿՆԸՀԱՆ - *ած.* Անիվը՝ ակը հանած, առանց անիվ: *Ըտըրա իլա՛ծընն էլ մին էշ ա ինում, մին էլ մին ընկընհան ըրբա* (Զ):

- Ընկընհան անել - Անիվը՝ ակը հանել, գործածությունից հանել, փչացնել: *Մաշինը ընկընհան ա ըրալ, ընդը՛ղ վէր քըցա՛լ* (Բ):

- Ընկընհան ինիլ/տը՛ռնալ - Անիվը՝ ակը հանվել, գործածությունից դուրս գալ, փչանալ: *Մին ընկընհան իլա՛ծ ըրբա յա քըթէնըմ, պէռնըմ, թօղում ըտը՛ղ* (Զ):

ԸԿՆԱՆԷ - *ած.* Գործածվում է թվականի համադրությամբ՝ թվականի ցույց տված քանակով ակ՝ անիվ ունեցող: *Չօ՛ղք՚ընկանէ ըրբան ամմէն հըղավ ք՚ինիլ չի* (Զ):

ԸԿՆԸՀԱՎԱՔ - *գ.* Հիվանդ թռչունների մի տեղ հավաքվելը, որ կոտորվելու նշան է: *Ա՛զին, ընկընհավաքը վէր տը՛սնում ա, մընամ ա ծույնէրը թըկէյիս* (Զ):

- Ընկընհավաք ինիլ/կ՚ա՛լ - Իրար գլխի հավաքվել եւ կոտորվել (թռչունների մասին): *Հավէրը ըզարան ընգէն, ընկընհավաք իլին* (Բ):

ԸԿՆԸՀԱՐԷԼ *(գրբ. ականահարիմ)* - *նբ. տե՛ս* Ակը տալ (ԱԿՆԸ[1]-ի տակ):

ԸԿՆԸՎԱՌԷՉ - *գ.* Դյուրավառ չորուկ բուսակտորներ՝ տաշեղներ, որ դնում են

փայտերի տակ եւ վառում: *Ապան ամմէն ուռթանա ըկնըվառէչը տինում ար փիչում, փանդը տանում, նի կըցընում* (Ձ):

ԸԿՕԼ/ՈՒԿՕԼ/ԿՕԼ[2] *(ռուս. укол)* - *գ.* 1. Հեղուկ դեղ, որ սրսկում են: *Էրկու ըկօլ ա իք՝ ունէս, ամմէն դօնում իրը՝սավը կ՝աս* (Ձ): 2. Սրսկելը, սրսկվելը, ներարկում: *Իզէն ըկօլան փիս վըխէս ա* (Բ):

- Ըկօլ անէլ - Սրսկել, մարմնի մեջ հեղուկ դեղ ներարկել: *Ըկօլ ըն անում, մին ա, օքութ չի տամ, կավը ըստակում ա* (Ձ):

ԸՀԸ - *ձ.* 1. Արտահայտում է հանկարծակիություն՝ անսպասելիություն՝ ահա եւ, հանկարծ: *Մին էլ, ըհը՛, տը՝սնում ըն, մին ծառ ջընաղէն տըրած, օշափը յը՝կու* (ՀԺՀ, V, 555): 2. Արտահայտում է չսպասված հետեւանք՝ վերջապես հաջողվեց: *Տըղան ուրխանըմ ա, թա.- Ըհը՛, անջախ-անջախ փըռնը՝ցէ* (Ձ): 3. Արտահայտում է հարցման դրական պատասխան, որ սովորաբար ուղեկցվում է գլխի շարժումով՝ այո՛, հա՛: - *Մ խօխա, էս մածունը տու վը՞ս կէրալ:* - *Ըհը՛* (Բ): 4. Թույլ հազալու աղմուկը: *Մին էլ յէշում ըն, տը՝սնում վէգիրը՝ ըհը՛, ըհը՛, հըզիլանվ կ՝ամ ա* (Ձ):

ԸՀԻԼՕՑ/ԻՀԻԼՕՑ - *մ.* Ծեր տարիքում: *Մըրքըրէն խը՝լքը ըհիլօց յը՝կալ ա* (Ձ):

ԸՀՆԱՄԷԼ - *տե՛ս* ԸՆՀԱՄԷԼ:

ԸՀՆԸՄՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՆՀԸՄՑ(Ը)ՆԷԼ:

ԸՀՆԸՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՆՀԸՄՕԹՈՒՆ:

ԸՂԱՀԱՄ *(գրբ. աղեհամ)* - *ած.* Աղի համ ունեցող: *Ըղահամ խօրանգ՝ ա* (Բ):

ԸՂԱՃՈՒՐ *(գրբ. աղաջուր)* - *գ.* Աղային լուծույթով պատրաստված՝ աղ խառնած ջուր՝ թթու դնելու, որոշ մթերքներ պահելու եւն համար: *Պընէրին ըղաճուրը վէր էրկան վախտ փոխիս վէջ, պանէրը կըլըպըռտէ* (Բ):

- Ըղաճուր տալ/խըմըցընել - Խիստ տանջել՝ չարչարել: *Հինչ ա փըսակվալ ըն, կընգանը ըղաճուր ա տամ* (Բ):

- Ըղաճուր փըռնէլ - Աղաջուր պատրաստել: *Այան ք՝ալանմը ածում ա կարասը, ըղաճուր փըռնում, վէր ածէ կըլխէն* (Ձ):

ԸՂԱՄԱՆ - *գ.* 1. Աղի աման՝ աղաթաս, որի մեջ աղ լցնելով՝ դնում են ճաշասեղանին: *Ըղամանը յօր ա ընէս, թա խըյարը աղավ անէ, ծը՝ռքան վէր ա ըղնէս, կուտըրէս* (Ձ): 2. Մեծ աման, որի մեջ աղ եւն պահում: *Ըղամանը պէնում ա, վէր ըղաճուր փըռնէ, տը՝սնում ա՝աղ չի կա* (Ձ):

ԸՂԱՆՁԻԼ/ՂԱՆՁԻԼ[1] *(գրբ. աղանձեմ)* - *նբ. տե՛ս* Աղանձ անէլ:

ԸՂԱՆՁՎԻԼ/ՂԱՆՁՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԸՂԱՆՁԻԼ-ի:

ԸՂԱՉԱ(Ն)Ք/ՂԱՉԱՆՔ/ՂԱՆՉԱ(Ն)Ք *(գրբ. աղաչանք)* - *գ.* Աղերսանք, թախանձագին խնդրանք: *Տը՝սնըմ ա, վէր ըղաչանքը օքութ չի տամ, ըսկըսում ա թէթա տալը* (Ձ):

- Ըղաչանք անէլ - Թախանձագին խնդրել: *Հիշքան ըղաչանք ըրէն, պէն չի դանգից. թաքավէրը էտ տըղէն ըզադից վէջ* (Ձ):

ԸՂԱՉԱ(Ն)Ք-ՊԸՂԱՏԱՆՔ - *գ.* Սաստիկ աղաչանք: *Էն, հինչ կըռվավ անմալ չի կ՝ալ, ըղաչանք-պըղըտանքավ անմալ կըկ՝ա* (Ձ):

- Ըղաչանք-պըղատանք անէլ - Սաստիկ աղաչել, աղաչալից խնդրել: *...Չօբանը Ըստուծէն ըղաչանք-պըղատանք ա ըրալ, չուբընխանփի տը՝ռալ, ընգալ վըխճարէն սանրանն* (ԱԱ, 67):

ԸՂԱՉԷԼ/ԸՂԱՉԻԼ *(գրբ. աղաչեմ)* - *նբ. եւ չբ. տե՛ս* Ըղաչանք անէլ:

ԸՂԱՉԻԼ - *տե՛ս* ԸՂԱՉԷԼ:

ԸՂԱՉԷԼ-ՊԸՂԱՏԷԼ - նբ. եւ չբ. *տե՛ս* Ըղաչանք-պըղատանք անէլ: *Էտ կընէգ՝ը շատ ա լանց ինիս, ըղըչէս-պըղըտէս* (ԼՂԲ, 384):

ԸՂԱՊԱՐԿ - *տե՛ս* ԸՂԸՔԸՍԱԿ:

ԸՂԱՏԱՎ - 1. *ած.* Գթասիրտ, խղճմտանք ունեցող: *Սանամը ըղատավ կընէգ՝ ա* (Բ): 2. *մ. Աղիողորմ՝ սրտաճմլիկ կերպով: Կավը դընէն ըտի վէր տը՝սնում ա, ըղատավ պըռանչում ա* (Ձ):

ԸՂԱՐԿԷԼ - *տե՛ս* ՂԱՐԿԷԼ:

ԸՂԱՐԿ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՂԱՐԿ(Ը)ՎԷԼ:

ԸՂԱՑՎԷԼ - *տե՛ս* ԱՂՎԱԼ:

ԸՂԱՔԱՐ - *գ.* 1. Քարացած աղ, քարաղ: *Ըղաքարը տինում ա կըվէն ըռըչին, վէր լանգ տա* (Բ): 2. Հարթ մակերեսով մեծ քար, որի վրա աղ են ցանում անասունների լիզելու համար: *Աղը ըղըքարէն շաղ ըն տամ, վըխճըրնէն դանտի զիրանվ ըն տը՝ռնում* (Ձ):

ԸՂԷՆԱԿ *(գրբ. եղանակ)* - *տե՛ս* ՀԱՎԱ:

ԸՂԸԹԸԹՕ - *գ.* Խաշած եւ աղաջրի մեջ պահած բանջարեղեն: *Բաղըմջանը խաշ ըն տամ, ըղըթըթօ շինըմ* (Բ):

ԸՂԸԿԱԼԻԼ - *չբ.* Աղային բաղադրություն ստանալ: *Վը՝ղը ըղըկալալ ա, վէշ մին պէն չի փըսնում* (Բ):

ԸՂԸԿԸԾՕ - *գ.* Թթու դրած կծու բանջարեղեն: *Ղունաղէն ըռըչին մին կ՝ը՝վաթ կինի յա տինում, մին աման ըղըկըծօ, մին էլ մին կուտուր հաց* (Ձ):

ԸՂԸՀԱՑ - *տե՛ս* ԱՂՈՒՀԱՑ:

ԸՂԸՀԱՑԱՎ - *տե՛ս* ԱՂՈՒՀԱՑԱՎ:

ԸՂԸՄ-ԱՂԱՄ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըղըմ-աղամ անէլ - Պտտեցնելով շարժել, տարուբերել: *...Օղտը կըտաղած բաշը ըղըմ-աղամ ընէլավ յէտ յէկու...* (ԼՂԲՔ, 268):

- Ըղըմ-աղամ ինիլ - Պտտվելով շարժվել, տարուբերվել: *Վէր քամէ յար ինում, էտ չարխըտ ըղըմ-աղամ ար ինում, շօռ տամ* (Ձ):

ԸՂԸՅԱՆԱ *(ադրբ. ağayana)* - *ած., մ.* Աղայի նման ծանրաբարո՝ շռայլ՝ վայելուչ: *Աշօտ դային ախսախկալ, ըղըյանա մարթ ա իլալ* (Բ):

ԸՂԸՆԱԼԻ - *գ.* Աղի պարունակություն՝ աղի կամ անալի լինելը: *Խուրանգ՝ին ըղընալին փօրցում ա* (Բ):

ԸՂԸՆՁԱՎԸ՝Տ/ՂԸՆՁԻՏԱՎԸ՝Տ - *գ.* Բոված՝ աղանձած ընդեղենի հոտ: *Ըղընձըվը՝տէն յըրա խօխէնք՝ը հըվաքվում ըն սաքին կօշտը* (Ձ):

ԸՂԸՆՁԱՑՈՒ/ՂԸՆՁԻՏԱՑՈՒ - *գ., ած.* Աղանձի համար պիտանի՝ նախատեսված (ընդեղեն): *Ձանրդանգ ցօրէնը լ՝ավ ըղընձացու վա* (Բ):

ԸՂԸՊԸԼԻԹ - *գ.* Աղի բլիթ՝ բաղարջ: *Խօրթ մարը ըղըպըլիթ ա թըխում, ածում թօրբան, էտ խօնցը մարթին նըհը՝տ դարկում ծըմակը* (Ձ):

ԸՂԸՎԱՉԻ - *տե՛ս* ԸՂԸՅԱՆԱ:

ԸՂԸՎԱՐԻ - *տե՛ս* ԸՂԸՅԱՆԱ:

ԸՂԸՎԷՐՃՎԻԼ - *չբ.* 1. Խանձվել, չորանալ: *Փիս արաշտ իլանվ, էտ բաղը լափ ըղըվէրճվից* (Ձ): 2. *փխբ.* Խիստ հյուծվել: *Խը՝ղճը էնքան տըղըպէրցում կացալ ա, լափ ըղըվէրճվանվ ա* (Բ):

ԸՂԸՎՕՆՁ - *գ.* Շատ դառը բան, լեղի: *Կընծըմ ա, թա.- էս տանանձ չի, ըղըվօնջ ա, կարէլ չըմ օտիմ* (Ձ):

ԸՂԸՏԸՐԻ - *տե՛ս* ԸՂՏԸՐԻ:

ԸՂԸՓՕԽ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըղըփօխ անէլ - Աղուհացին՝ բարեկամությանը հավատարիմ չմնալ: *Ըղըփօխ ա անում, հընգէրունքը նը՝ստա հըռանում ըն* (Ձ):

ԸՂԸՔԸՍԱԿ - *գ.* Աղ պահելու քսակ՝ տոպրակ: *Ըղըքըսակը տամ ա էտ կընգանը, թա.- էտ ա իլանծը, կէսը յը՝ր կալ՝* (Ձ):

ԸՂՆԱՂԱՋ - *տե՛ս* ԱՂՆԱՂԱՋ:

ԸՂՆԷԼ/ԸՆԳԸՆԷԼ/ԸՆԳՆԷԼ/ԸՆԳԷԼ/ԸՆՆԷԼ/ԸՅՆԷԼ/ԸՆԳԻԼ *(գրբ. անկանիմ, հ.ե. *sengu)* - *չբ.* 1. Դեպի ցած շարժվել՝ ընկնել: *Ծառէն ճէղնը կօտրում ա, ըղնում տափը* (Բ): 2. Որեւէ բանի վրա հենվել՝ տարածվել՝ փռվել: *Մին ախճիգ՝, ակուշկէն ընգած, յէշում ա տըղէն, թա տէսնա՝ տա հինչ ա օգում* (ՆԼՂԺԲ, 126): 3. Չոքել, գետնին փռվել

(աղոթելու, աղերսելու եւն համար): *Աքէ-ոը ըղնում ա Թիվանէն վընէրէն տակը, ըղաչանք անում* (Զ): 4. Իջնել, նվազել, թուլանալ: *Էշին կ'ինը բըզարումը ընգալ ա* (Զ): 5. Կորցնել, զրկվել: *Ըտի էտ թա՛ջիրը ո՞ւրա՛ն հըրուստութունան ընգ'ում ա* (Զ): 6. Իր վրա կրել, ծանրաբեռնվել: *Հըրսընքէն սաղ ծախսը ախպօրը յըրա յա ընգնէս* (Զ): 7. Որեւէ բանի ենթարկվել: *Մին օր էլ այան ըղնում ա թոռու տակ, հիվընդանում* (Զ): 8. Հարձակվել, արշավել: *Տըղան ծին նըստում ա, ըղնում ըտըրանց յըրա, լօխծին կըտօրում* (Զ): 9. Վատ արարքը բացահայտվել, վատ արարքի մեջ բռնվել: *Նախագան կալխօզը կէրավ, վէրչումը ընգավ, փիս ընգավ* (Բ): 10. Լինել, տարածվել, սփռվել: *Էտ դ՞ըրմըտ վէր կըռըվնէն վիրչինաս ա, յէրգ'իրը հըղըղօթուն ա ընգնէս...* (ՀԲ, 337): 11. Որեւէ տեղ հայտնվել՝ գնալ՝ հասնել եւն: *Մին օր ըղնում ա տահանց շէնը, հըրցըփօրց անում, լօխ գ'ո՞ւդում* (Զ): 12. Առաջանալ, ծագել, տարածվել: *Չուման ընգավ, սաղ շէնը փիրթից* (Զ): 13. Թափանցել, անցնել, մի բանի դիպչել: *Ա՞ըէ՛վը ընգալ ա տանը մաչը* (Բ): 14. Որեւէ բանի մեջ գրվել, հաշվառվել, տպագրվել: *Ուրխացած կ'ամ ա, թա.- Մ կընէգ'ի, անջախ-անջախ յը՛ս էլ ցուցակ ընգէ* (Զ): 15. Որեւէ հիվանդությամբ վարակվել: *Իլա՛ծ-չիլա՛ծը մին խօխա յա ինիս, էն էլ ծաղկան ընգընէս ա, մըռէս* (Զ): 16. Ոեգերել, թափառել: *Էտ տըղան ըղնըմ ա ծըմըկնէն, ո՞ւրանց կ'ումաշը քըթէնում չի* (Բ): 17. Մի բանի տակ՝ արանքում մնալ: *Ընգալ ա մըշինու տակ, մը՛ռալ* (Բ): 18. Թակարդով՝ ծուղակով բռնվել: *Կ'ուլը մուտանում ա, վէր մէսը օտէ, ըղնում ա թալակը* (Զ): 19. Մեկին ապավինել, մեկի՝ մի բանի օգնությունը ակնկալել: *Ապան մը՛ռավ, ա-յան ընգավ տըղօրանցը ումէդին* (Բ): 20. Զբաղվել, մի բանով տարվել: *Խօխան խաղավ ընգավ, հ՞ալէրը մըննան քըցից* (Բ): 21. Գժտվել, թշնամանալ: *Էտ վը՛ղէն դ՞ըրդա՛ն էրկու ախպէր կըռվէս ըն, ո՞ւրո՞ւր նըհը՛տ ըղնէս* (Զ): 22. Սկսվել, վրա հասնել: *Վէր մըթէնը ըղնում ա, հ՞ա՛բին տանան վախում ա տ՞ուս կ'ա* (Բ): 23. Բաժին ընկնել, վիճակվել: *Վը՛ղէրը պիժը՛նում ըն, մարթա էրկու հէքտար ըղնում ա* (Բ):

- Ըղնել բիդիս՝ գ'իդա՛ս - Նման վիճակներում պետք է հայտնվել՝պատկերացում կազմելու համար: *Դէրվիշը ասմա.- Ըսէ-լավ պէն չինիլ, ըղնէլ բիդիս՝ գ'իդա՛ս* (Զ):

- Ընգած-տ՞ուս յը՛կած - Փորձառու, կյանքի փորձություններով անցած: *...Ընգած-տ՞ուս յը՛կած մարթ ա Վանէ-սը...* (ԼՂԲՔ, 282):

ԸՂՎԷՍԻԳ' - *տե՛ս* ԸՂՎԷՍԻՆՔ':

ԸՂՎԷՍԻՆՔ'/ԸՂՎԷՍԻԳ' - *գ.* Վարտիքի՝ շալվարի ցայլքամասը: *Շըլվարէն ըղվէսինք'ը ճէլլի յա մաշ՞ում* (Բ):

- Ըղվէսինք'ը տալ - *տե՛ս* Ճախկա տալ:

ԸՂՎԸՍԱՔՕԼ - *գ.* Լեռնային փշոտ թուփ: *Ըղվըսաքօլը կըտըրում ա, տը՛սնում տակէն մին օխծու ճօտ* (Զ):

ԸՂՎԸՍԱՔՕՆ *(գրբ. աղուեսաքուն)* - *գ.* 1. Թեթեւ՝ կիսարթուն քուն: *Կ'ամ ա, մին ժամ ըղվըսաքօն տամ, էլիա յը՛ր կէնում, ք'ինամ* (Զ): 2. Կեղծ քուն, քնած ձեւացնելը: *Տու մէլ ասէլ, դէվը սօտ տը՛դան ար խըռըմփըցընում, ըղվըսաքօն ա իլա՛լ տըված* (Զ):

ԸՂՎԸՍԸ՞ՆԷ - *տե՛ս* ԼԸԿԸ՞ՆԷ:

ԸՂՎԸՍՅԱ՛Ք'Ի - *գ.* 1. Աղվեսի պոչ: *Ըղվըսիա՛ք'ին կըտրում ա, յօր օնում, ք'ինամ* (Զ): 2. *փխբ.* Հացազգիների ընտանիքին պատկանող խոտաբույս: *Մէր հընդէրումը ըղվըսիա՛ք'ի էլ կա* (Բ):

ԸՂՎԸՍՎԱՉԻ - *տե՛ս* ԸՂՎԸՍՎԱՐԻ:

ԸՂՎԸՍՎԱՐԻ - *տե՛ս* ԺԱ՞ՒԼԻԳ'ՎԱՐԻ: *Ըղվըսվարի փըռնած կօրծէն վէրչը փիս կինի* (Զ):

ԸՂՎԸՍՕԹՈՒՆ - *տե՛ս* ԺԱ՞ՒԼԻԳ'ՕԹՈՒՆ: *Ըղվըսօթունը հօրը անա յա սը-վը՛ռալ* (Բ):

ԸՂՏԸՐԻ/ԸՂԸՏԸՐԻ - *տե՛ս* ԸՂԱՄԱՆ(1):

ԸՂՈՒԹԱՍԷՐ/ՈՒՂՈՒԹԱՍԷՐ *(գրբ. աղօթասէր)* - *ած.* Աղոթել սիրող: *Ըստի վէր ք'ինի ըղութասէր մարթ չի մընական ըշխարքումը* (Բ):

ԸՂՈՒԹԱՎԷՐ/ՈՒՂՈՒԹԱՎԷՐ *(գրբ. աղօթաւոր)* - *ած.* Աղոթք անող: *Էտ ըղութավէր մարթը աղօթկը պըրծընում ա, թա ք'ինի, դէրը թօղում չի* (Զ):

ԸՂՈՒԹԱՏԱՐ/ՈՒՂՈՒԹԱՏԱՐ - *գ.* Կանաչ գույնի երկար ոտքերով միջատ: *Քըսակը պէնում ըն, տը՛սնում մին ըղութատար մաչին* (Զ):

ԸՂՈՒԹԱՏԸ՞Ղ/ՈՒՂՈՒԹԱՏԸ՞Ղ - *գ.* Աղոթատեղի՝ աղոթելու տեղ: *Վէր կ'ամ ա ըղութատը՛ղը, լօխ ք'ը՛ցած ըն ինո՞ւմ* (Զ):

ԸՂՈՒԹԱՐԱՆ[1]/ՈՒՂՈՒԹԱՐԱՆ[1] *(գրբ. աղօթարան)* - *գ.* Աղոթք անելու շինություն, աղոթատուն, եկեղեցի: *Հունց ա պըտահում՝ մին օր էլ ըղութարանը կըրակ ա ընգընում...* (ԱԱ, 64):

ԸՂՈՒԹԱՐԱՆ[2]/ՈՒՂՈՒԹԱՐԱՆ[2] *(գրբ. աղօթարան)* - *գ.* Հորիզոնի արեւելյան կողմը: *Օշը բիդի ըղութարանը ա օնում, տը՛սնում ա՞ըէ՛վը գ'ընգ'ըլըխտան տ՞ուս ա կ'ամ* (Զ):

ԸՂՈՒԹԱՐԱՐ/ՈՒՂՈՒԹԱՐԱՐ *(գրբ. աղօթարար)* - *տե՛ս* ԸՂՈՒԹԱՎԷՐ:

ԸՂՈՒՆԷԼ - *նբ. տե՛ս* Աղուն անել:

ԸՂՈՒՎԱՆԱԼ/ՈՒՂՈՒՎԱՆԱԼ - *տե՛ս* ԸՂՈՒՎԷԼ:

ԸՂՈՒՎԱՉԻ - *տե՛ս* ԸՂՈՒՎԱՐԻ:

ԸՂՈՒՎԱՐԻ - *ած.* Մի քիչ դառն, դառնավուն: *Ըղուվարի խընձօր ա* (Բ):

ԸՂՈՒՎԷԼ/ՈՒՂՈՒՎԷԼ - *չբ.* 1. Դառն համ ստանալ: *Խօրա՛գ'ը էրկան կացավ, ըղուվից* (Բ): 2. *փխբ.* Տխրել, վշտանալ, մռայլվել: *Էտ խէ ըտի ըղուվալ ը՞ս* (Բ):

ԸՂՈՒՎԸ՞ՆԷ/ՈՒՂՈՒՎԸ՞ՆԷ - *գ.* Դառնահամ մրգի տեսակ: *Ըղուվը՞նէ սըրկէվի՞լ ա* (Բ):

ԸՂՈՒՎՑ(Ը)ՆԷԼ/ՈՒՂՈՒՎՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԸՂՈՒՎԷԼ-ի:

ԸՂՈՒՎՕԹՈՒՆ/ՈՒՂՈՒՎՕԹՈՒՆ *(գրբ. աղուութիւն (քաղցրաբանություն, կեղծավորություն)* - *գ.* 1. Դառն լինելը: *Հու էտ տանձա՛ն կըծում ա, ըղուվութունան սը՛ռտը խառնում ա* (Զ): 2. Դառը համ: *Հիշքան անում ա, պիրանէն ըղուվօթունը ընցընում չի* (Բ): 3. *փխբ.* Տխրություն, վիշտ, մռայլություն: *Հինչ ա վը՛ղը ծը՛ռքան խըլա՛լ ըն, ըղուվօթունը ընցընում չի* (Զ):

ԸՂՊԻՐԹԸՂՕՐԹ/ՈՒՂՊԻՐԹԸՂՕՐԹ/ՂՊԻՐԹԸՂՕՐԹ/ՂՊԻՐԹԸՂՕՐԹ - *մ.* Ճիշտ, ճշմարիտ, ստույգ կերպով: *Տէսէն վէր Բախշուն մաչին հա՞լ չըմընաց, ղուրթըղօրթ լա՛նց ա ինո՞ւմ* (ՆԼՂԺԲ, 97):

ԸՂՊԻՐԹԸՑ(Ը)ՆԷԼ/ՈՒՂՊԻՐԹԸՑ(Ը)ՆԷԼ/ՂՊԻՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Ճիշտ՝ ճշմարիտ՝ ստույգ դարձնել: *Պուղին ասում ա.- Մէ՛լիք, յէս կարէլ չըմ քու պուգ'ավուր սուտէրըտ մին շահավ ղուրթըցընիմ* (ՆԱԲ, III, 144):

ԸՂՊԻՐԹԻԼ/ՈՒՂՊԻՐԹԻԼ/ՂՊԻՐԹԻԼ/ՂՊԻՐԹԻԼ - *չբ.* Ճիշտ՝ ճշմարիտ՝ ստույգ դառնալ: *...Կամ ա կընգանընա-սում.- Մ կընէգ'ի, վէր հէտան ք'ընում ըս, դէրին սօտ խօսքընի էլ ա ղուրթում...* (ՆԱԲ, 60):

ԸՂՊԻՐԹՕԹՈՒՆ/ՈՒՂՊԻՐԹՕԹՈՒՆ/ՂՊԻՐԹՕԹՈՒՆ/ՂՊԻՐԹՕԹՈՒՆ - *գ.* Ճիշտ՝ ճշմարիտ՝ ստույգ լինելը: *Ղուրթութուն չի կա* (Բ):

ԸՂՈՒՐՄ/ՈՒՂՈՒՐՄ/ՂՈՒՐՄ *(գրբ. ոդորմ)* - *տե՛ս* ԱՂԱՏ:

ԸՂՈՒՐՄԱԹԱՍ/ՈՒՂՈՒՐՄԱԹԱՍ/ՂՈՒՐՄԱԹԱՍ - *գ.* Հանգուցյալի հիշատակի առթիվ խմվող օղու՝ գինու բաժակ: *Մը՛ռալը թաղում ըն, ըղուրմաթասը խըմում, ըղօրմի տամ* (Զ):

ԸՂՈՒՐՄԱԾԱԿ/ՈՒՂՈՒՐՄԱԾԱԿ/ՂՈՒՐՄԱԾԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըղուրմածակը պէնվալ - Գթառատ դառնալ: *Խօրթ մօրը ըղուրմածակը պէցվալ ա, էլ խօնցը թակում չի* (Զ):

ԸՂՈՒՐՄԱԾԻԳ' - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԸՑԻՔ'(Ի):

ԸՂՈՒՐՄԱՎ/ՈՒՂՈՒՐՄԱՎ/ՂՈՒՐՄԱՎ - *տե՛ս* ԸՂԱՏԱՎ (1): *Շուշանիգը ըղուրմավ ախճիգ ա ընում...* (ՆԱԲ, 43):

ԸՂՈՒՐՄԸՏԱԼ/ՈՒՂՈՒՐՄՈՒՏԱԼ/ՂՈՒՐՄՈՒՏԱԼ - *չբ.* Ողորմություն խնդրել: *Հիշկան ըղուրմուտաս ա, պէն չի ա՛մ՚ալ կ՚աս* (Զ):

ԸՂՈՒՐՄԸՑԻՔ՚(Ի)/ՈՒՂՈՒՐՄՈՒՑԻՔ՚(Ի)/ՂՈՒՐՄՈՒՑԻՔ՚(Ի)/ԸՂՈՒՐՄԱԾԻԳ՚/ՈՒՂՈՒՐՄԱԾԻԳ՚/ՂՈՒՐՄԱԾԻԳ՚ *(գրբ. ողորմած)* - *ած.* Ողորմած հոգի, լուսահոգի (ասվում է մեռած մարդու մասին): *Ըղուրմըցիք՚ Աղալարը լ՚ավ մարթ ար* (Բ):

- Ըղուրմըցիք՚ տը՛ռնալ - Վախճանվել: *Շէնին լ՚ավ մարթիք՚ը լօխ ըղուրմըցիք՚ ըն տը՛ռալ* (Բ):

ԸՂՈՒՐՄՕԹՈՒՆ/ՈՒՂՈՒՐՄՕԹՈՒՆ/ՂՈՒՐՄՕԹՈՒՆ/ՂՕՐՄՕԹՈՒՆ *(գրբ. ողորմութիւն)* - գ. Գթություն, կարեկցություն: *Էտ թաքավէրը շատ պարի յա ինի՛ւմ, ըղուրմօթունը՝ շատ* (Զ):

- Ըղուրմօթուն անէլ/տալ - Ողորմություն՝ գթասրտություն ցուցաբերել: *Էտ խանը մէհէտ ըղուրմօթուն ա անում, ք՚իսիբնէրէն ցօրէն պիժէնում* (Զ):

- Ըղուրմօթուն օգ՚իլ - Ողորմություն՝ օգնություն խնդրել: *Մին քը՚շըրհանա քօռը մուտանըմ ա մին առուտուրականի, ղօրմօթուն օգում* (ՀԺՀ, V, 371):

ԸՂՕԹԷԼ/ՈՒՂՕԹԷԼ/ՂՕԹԷԼ *(գրբ. աղօթեմ)* - *չբ.* Աղոթք անել, աղոթել: *Ի՛ւրա՛ն վէգիրը շատ ա ըղօթըմ, Ըստուծէն դաչանք անըմ, վէր Աստուծ թաքավէրէն մին ժա՛ռանգ՚ տա* (ՀԺՀ, V, 639):

- Ըղօթած էշ - Թմրած՝ ապուշ մարդ: *Իզէն տը՚ղամարթ չի, ըղօթած էշ ա* (Բ):

ԸՂՕՂ/ՈՒՂՕՂ/ՕՂՕՂ/ՂՕՂ *(գրբ. ողող)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըղօղ տալ - Ջուրը՝ հեղուկը մեջը լցնելով եւ թափահարելով՝ մաքրել՝ լվանալ: *Ամանը լը՚վանում ա, ճիրա՛վ լը՚ցնում, օղօղ տամ, նօրը լը՚ցնում, տամ էն մարթին* (ՆԱԲ, 74):

ԸՂՕՂԷԼ/ՈՒՂՕՂԷԼ/ՂՕՂԷԼ *(գրբ. ողողեմ)* - *նբ.* 1. *տե՛ս* Ըղօղ տալ: 2. Որեւէ բանով կեղտոտել: *Շալվարը քըսում ա պատէն, ղօղում* (Զ):

ԸՂՕՂՎԷԼ/ՈՒՂՕՂՎԷԼ/ՂՕՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՂՕՂԷԼ-ի:

ԸՂՕՆԷԳ՚/ՈՒՂՕՆԷԳ՚/ՂՕՆԷԳ՚/ ՅԸՂՕՆԷԳ՚ *(գրբ. աղաւնեակ)* - գ. Հավերի ընտանիքին պատկանող վայրի կամ ընտանի փոքրիկ թռչուն, աղավնի: *Ըղօնէգ՚ մօրթէլը մեխկ ա* (Զ):

ԸՂՕՐԹ/ՈՒՂՕՐԹ/ՂՕՐԹ/ՂՕՐԹ *(գրբ. ուղղորդ, ղորդ)* - *ած.* Ճիշտ՝ ճշմարիտ՝ ստույգ: *Ըշխարքէս կէսը սօտ ա, կէսը՝ղօրթ* (ՆԱԲ, III, 74):

ԸՂՕՐՄԻ/ՈՒՂՕՐՄԻ/ՂՕՐՄԻ *(գրբ. ողորմեայ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըղօրմի ասէլ - Մեռածի համար Աստծուց գթություն խնդրել: *Ըստը՚ըն-նէն յօր ըն ընէս, ըղօրմի ըսէս, խըմէս* (Զ):

- Ըղօրմի տալ - Մեռածին բարի հիշել ու գթություն հայցել Աստծուց: *Էտ ժը՚ղօվուրթը ըղօրմի յը՚ն տամ մը՚ռած թաքավէրէն, քանի վէր պարի մարթ ա ի՚լա՚լ* (Զ):

- Ըղօրմի ի՚ւրա՚ն/ք՚ը՚զ - Լավ գործի՝ հիշատակի համար մեռածի նկատմամբ գթություն հայցելու բանաձեւ: *Ղօ՚րմի ք՚ը՚զ, Պը՚ը՚ը-Պո՚ւղի, քարավը՚ը՚ստ, վը՚ղավը՚ը՚ստ լ՚ուս տը՚ռնաս* (ԼՂԲ, 377):

ԸՄ/ՈՒՄ *(գրբ. եմ)* - 1. Էական բայի ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքը՝ գտնվում եմ, գոյություն ունեմ: *Կը՚ընէգ՚ը ծէն ա տամ, թա.- էն ըմ կ՚ումումը* (Զ): 2. Անվանական ստորոգյալի հանգույց: *Էտ սա՚նը ասմա.- Յը՚ս մարթ ըմ* (Զ): 3. Բայի եղանակային ձեւերի բաղադրիչ: *Մարթը Ըստուծէն ասում ա.- Հինչը օգ՚ում ըմ, ա՚մ՚ալ չի կ՚ամ* (Զ):

ԸՄԱՆԱԹ/ԱՄԱՆԱԹ *(արաբ. amānat, թրք. emanet)* - գ. 1. Ավանդ, պահպանված բան: *Էտ կը՚ընէգ՚ը խօխօնցը հը՚վաքում ա, թա.- Էս յիշիգ՚ին նի՚ չի կ՚ա՚ք, ըմանաթ ա* (Զ): 2. Խորհուրդ, ցուցում, խրատ: *Փիս տը՚ղին ախճիկ չը՚ն տալ, ինձանա ծը՚ը՚զ ամանաթ* (ԼՂԲ, 58): 3. *փխբ. տե՛ս* ՄԱԴԱՐ: *Թաքավէրը էտ ըխճըկանը օգում ա ի՚ւրա՚ն ըմանաթ տը՚ղէն հը՚ը՚տէ* (Զ):

ԸՄԱ՚ՆԱ՚Լ - *տե՛ս* ԻՄԱՆԱԼ:

ԸՄԱՍԿԱՎ - *տե՛ս* ԻՄԱՍԿԱՎ:

ԸՄԱՍՏՈՒՆ - *տե՛ս* ԻՄԱՍՏՈՒՆ:

ԸՄԱՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ԻՄԱՍՏՕԹՈՒՆ:

ԸՄԲԱԼԻ՚ՈՒԾ - *տե՛ս* ԸՄԲԸԼԱԼԻ՚ՈՒԾ:

ԸՄԲԱՐԷԼ *(գրբ. ամբարեմ)* - *նբ.* Հավաքել, կուտակել, պաշարել: *Ըստարէ լ՚ավ պէրք ընք ըմբարալ* (Բ):

ԸՄԲԸԼԱԼԻ՚ՈՒԾ/ԸՄԲԱԼԻ՚ՈՒԾ - գ. Այն լուծը, որով լծում են գութանի կամ սայլի առաջին զույգ լծկանին: *Կ՚ումաշը դարթու վա տամ, ըմբըլալի՚ուծը կօտրում, փախչի՚ում* (Զ):

ԸՄԲԸՐԿ՚Ի՚ՏԱ՚Կ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըմբըրկ՚ի՚ուտա՚կ անէլ - Ամբարի մեջ լցնել՝ կուտակել: *Յօրէնը ըմբըրկ՚ի՚ուտա՚կ ըրավ, ըրխըյնացավ* (Բ):

- Ըմբըրկ՚ի՚ուտա՚կ ինիլ/տը՚ռնալ - 1. Ամբարի մեջ լցվել՝ կուտակվել: *Ըմբըրկ՚ի՚ուտա՚կ իլա՚ծ ցօրէնը վէր չօ՚ր չիլա՚վ, կը՚յէշնի* (Բ): 2. *փխբ.* Մեռնել, դագաղ մտնել: *Ասում ըն՝ էն օղռաշը ըմբըրկ՚ի՚ուտա՚կ ա իլա՚ալ, դ՚ի՚ուզ ա՞* (Բ):

ԸՄԸՆԸ՚ՂԱՆ - գ. 1. Բոլոր կարգի ամանները միասին: *Ըմընը՚ղանը լօխ ա՚ծում ա միշուկնէն, դարկում քը՚վօրը տօնը* (Զ): 2. *տե՛ս* ԸՄԸՆ-ՉԱՄԱՆ:

ԸՄԸՆԼԸՎԱ(ՍԿ) - գ. 1. Լվացած ամանների կեղտաջուրը: *Ըմընլը՚վան տանում ա ա՚ծում ծառէն տակը* (Զ): 2. *փխբ.* Ջրալի՝ անորակ կերակուր: *Էտ ըմընլը՚վան հինչ ա՞, վէր իփա՚ալ ը՚՞ս* (Բ):

ԸՄԸՆ-ՉԱՄԱՆ/ԱՄԱՆ-ՉԱՄԱՆ - գ. Ամաններ եւ նրանց նման իրեր (գդալ, պատառաքաղ, դանակ եւն): *Սաբավ կը՚ընէգ՚ ա, տանը ըմընչաման էլ չի կա* (Բ):

ԸՄԸՌ(Ն)ԱԾ - *ած.* Տարիքն առած, երիտասարությունը՝ հրապույրը կորցրած: *Ըմըռնած կընգանը մըհալ քը՚գօղ չի ինիլ* (Զ):

ԸՄԸՌ(Ն)ԱՀԱՍ - *տե՛ս* ԸՄԸՌ()ՆԸ՚ՆԷ:

ԸՄԸՌ(Ն)ԱՆԱԼ - *չբ.* Ամառը վրա հասնել: *Ըմըռնացավ, ժուղուվուրթէն կօրծը շը՚տացավ* (Բ):

ԸՄԸՌ(Ն)ԱՏԱ՚ՆՁ - գ. Վաղահաս՝ ամառանը հասնող տանձի տեսակ: *Ըմըռնատա՚ա՚նձը էրկան կարէլ չը՚ս պահիս* (Զ):

ԸՄԸՌ(Ն)ԱՏԷՄ - գ. Ամառվա սկիզբը, ամառնամուտ: *Ըմըռնատէմը վէր կ՚ամ ա, շինա՚ցէք՚ չը՚ռը վը՚ռի յը՚ն ըղնում* (Զ):

ԸՄԸՌ()ՆԱՑԻԼ - գ. Հնձից անմիջապես հետո կատարվող ցել: *Արտը հընձի՚ում ըն, էք՚սը ըմըռնացիլը ըսքը՚սում* (Զ):

ԸՄԸՌ(Ն)Ը՚ՆԷ - *ած.* Ամառանն հասնող (խնձոր, տանձ եւն): *Ըմըռնը՚ՆԷ խընձօ՚ը ճէլլի յա վը՚ը՚րթնում* (Զ):

- Ըմըռնը՚ՆԷ տա՚նձ - գ. Տարիքն առած՝ տարեց մարդ: *Ինք՚ը՚ն էլ ըմըռնը՚ՆԷ տա՚նձ ա, լի՞, էլ կարում չի առաչվա նըման կօրծ անէ* (Զ):

ԸՄԸՌ(ՆԸ)ՌԸ՚Խ - *տե՛ս* ԸՄԸՌ(Ն)ԱՏԷՄ:

ԸՄԸՌ(Ն)ՕԹԱՆ - *տե՛ս* ԸՄԸՌՆՕՐԱՆ:

ԸՄԸՌ(Ն)ՕՐ - գ. 1. Ամռան օր: *Մին ը՚ըմըռնօր փիս թօռ ա կ՚ամ* (Զ): 2. *փխբ.* Ամռան պես տաք օր: *Սաբավ աշունք ա, ըմըռնօր ա անում* (Բ):

ԸՄԸՌ(Ն)ՕՐԱՆ/ԸՄԸՌ(Ն)ՕԹԱՆ - *ած.* Ամառային, ամառվան հատուկ՝ վերաբերող: *Խէ հինչ ա՞, տը՚ղան քը՚զէտէ ը՚ըմըռնօրան փարթուկ ա՞, ժէմը մին փոխիս* (ՆԱԲ, III, 175):

ԸՄՍԱԿԱՆ - *տե՛ս* ԸՄՍԸ՚ԿԱՆ:

ԸՄՍԱՀԱԽ(Կ) - գ. Ամսական վարձ, մեկ ամսվա համար վճարվող վարձ: *Ը՚տը՚րա ըմսահախկը էրկու փութ ցօրէն ա ինի՚ւմ* (Զ):

ԸՄՍԱՊԷԽԿ - *տե՛ս* ԸՌԸՌԻՍԿԱ:

ԸՄՍԱՎԱՐ - *ած.* Մեկ ամսում վարելու չափ: *Ը՚տը՚րա իլա՚ծը մին ըմսավար վը՚ը՚ղ ար* (Զ):

ԸՄՍԱՎԷՐՉ - *գ.* Ամսվա վերջը: *Ըմսավէրչը վէր կ՚ամ ա, փուլը պըրծած ա ինում* (Բ):

ԸՄՍԸԷԿԱՆ/ԸՄՍԱԿԱՆ *(գրբ. ամսական)* - *ած.* 1. Ամսվա, ամսվան հատուկ, ամեն ամսվա: *Ըմսը՝կան կ՚ինը հէնգ՚ մընէթավ բըրիշում ըն* (Զ): 2. Մեկ ամսվա ժամանակամիջոց ընդգրկող: *Իրը՝ք ըմսը՝կան խօխա՝ ք՚ը՝ցը բազար* (ԱԱ, 38): 3. *մ.* Մեկ ամսվա ընթացքում, յուրաքանչյուր ամիս: *Ըմսը՝կան հանրուր մանէթ ար ըշխադում* (Զ): 4. *գ.* Կանանց ամենամսյա արգանդային արյունահոսություն, դաշտան: *Ամմէն ըմսըկանու վախտ կըլ՝ոխը փիս ցավում ար* (Զ):

ԸՄՍԸԿԷՍ - *գ.* Մեկ ու կես ամիս: *Ըմսըկէս անց ա կէնում, էտ կընէգ՚ը պարթկը տամ չի* (Զ):

ԸՄՍԸԿԸԼՕԽ *(գրբ. ամսագլուխ)* - *գ.* Ամսվա սկիզբը, ամսամուտ: *Ըմսըկըլ՝խէն թա ըմսըվէրչին հիբը ք՚ինիս տահանց տօն, էն ըն ինում խըրաված ընէլիս* (Զ):

ԸՅԼԱԾՕՆ *(գրբ. այլաշուն (խորթ, անհարազատ)* - *գ.* 1. Կամովին մեկի դուռը եկած ուրիշի շուն: *Տ՚ուս ա կ՚ամ, տը՝սնում մին ըյլաշօն տըռնանը* (Զ): 2. *փխբ.* Սեփականի՝ հարազատ ընտանիքի հանդեպ անտարբեր մարդ: *Էտ ըյլաշօնը վէ՛չ կընգանըն ա մըհալ քըցում, վէ՛չ խօխօնցը* (Բ):

ԸՅՆԷԼ - *տե՛ս* ԸՂՆԷԼ:

ԸՆԱԼԻ - *տե՛ս* ՆԱԼԻ:

ԸՆԱՆՈՒԽ - *տե՛ս* ՆԱՆՕԽ:

ԸՆԱՍՈՒՆՔ *(գրբ. անասուն)* - *գ. հոգն.* Անասուններ: *Ուռթանան ընասունքը տանում ա հանդը, ըրուգ՚ունը պիրում* (Զ):

ԸՆԳԸՆԷԼ - *տե՛ս* ԸՂՆԷԼ:

ԸՆԳ՚ԷԼ - *տե՛ս* ԸՂՆԷԼ:

ԸՆԳ՚ԻԼ - *տե՛ս* ԸՂՆԷԼ:

ԸՆԳՆԷԼ - *տե՛ս* ԸՂՆԷԼ:

ԸՆԳՈՒՃԱՄԱՉ/ԸՆՃՈՒԿԱՄԱՉ - *գ.* Ականջի մեջը՝ ցնցուղը: *Ընգուճամաչը ցավում ա* (Բ):

ԸՆԳՈՒՃԱՉՕՓ/ԸՆՃՈՒԿԱՉՕՓ - *գ.* Ականջի կեղտը մաքրելու փոքրիկ ձողիկ: *Ընգուճաչօփը կօխում ա, վէր անգուճը թըմըզցընէ* (Բ):

ԸՆԳՈՒՃԱՎԷՐ/ԸՆՃՈՒԿԱՎԷՐ - *ած.* 1. Ականջներ ունեցող: *Ընգուճավէր չը՞ս, խէ ըսկանում չը՞ս* (Բ): 2. Ականջակալ՝ ականջապնակ ունեցող: *Ընգուճավէր փափաղը վէր ինար վէչ, ընգուճնէն ցօրտ կըտանար* (Զ): 3. Մեծ ականջներով (ոչխարի տեսակ): *Ընգուճավէր վը՝խճարը Ղարաբաղ լ՚ավ ա ուրդամ անում* (Զ):

ԸՆԳՈՒՃԱՏԱԿ/ԸՆՃՈՒԿԱՏԱԿ - *գ.* Ականջի ետեւի կողմը՝ ականջակոթ: *Տէնակը ըտըրա ընգուճտակէն ա տաս, ըտըրան էլ ըսպընէս* (ՀԺՀ, V, 281):

ԸՆԳՈՒՃԱՏԸ՝Ղ/ԸՆՃՈՒԿԱՏԸ՝Ղ - *գ.* Ականջի տեղը, ականջը իր շրջակայքով: *Ընգուճատը՝ղը օռալ ա* (Բ):

ԸՆԳՈՒՃԱՑԱՎ/ԸՆՃՈՒԿԱՑԱՎ *(գրբ. ականջացաւ)* - *գ.* Ականջի ցավ: *Ընգուճացավը մարթին հ՚ուք՚ին կըհանէ* (Զ):

ԸՆԳՈՒՃԸՅԸ՝Ր/ԸՆՃՈՒԿԸՅԸ՝Ր - Գործածվում է կապակցության մեջ:

- Ընգուճըյը՝ր անէլ - *տե՛ս* Ընգուճէն քամակը քըցիլ (ԱՆԳՈՒՃ-ի տակ):

ԸՆԳՈՒՃԸՎԷՐ/ԸՆՃՈՒԿԸՎԷՐ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԸՅԸ՝Ր:

ԸՆԳՈՒՃԹԻԹԸ՝Վ/ԸՆՃՈՒԿԹԻԹԸ՝Վ - *ած.* Շուտ լսող՝ հասկացող, հանձնարարությունը շուտ կատարող, չառարկող: *Ընգուճթիթը՝վ խօխա չի մընացալ, լօխ տուլը՝շացալ ըն* (Զ):

ԸՆԳՈՒՃԽԱՌ(Ն)Ը/ԸՆՃՈՒԿԽԱՌ(Ն)Ը - *մ.* Ականջն էլ հետը, ականջով միասին: *Տըղան թօրավը թըխում ա ըտըրա թօշին, ընգուճխառնը վէր քըցում* (Զ):

ԸՆԳՈՒՃՄԸՏԷ/ԸՆՃՈՒԿՄԸՏԷ *(գրբ. ականջամուտ)* - *տե՛ս* ԸՆԳՈՒՃՄՈՒՆԻ:

ԸՆԳՈՒՃՄՈՒՆԻ/ԸՆՃՈՒԿՄՈՒՆԻ - *գ.* Փոքրիկ, երկայնաձեւ ուղղաթեւ միջատ, որ իբր մտնում է մարդու ականջը եւ խլացնում: *Ընգուճմունէն մարթ կըսպանէ* (Զ):

ԸՆԳՈՒՃՊԸՏ(Ը)ՌԷ/ԸՆՃՈՒԿՊԸՏ(Ը)ՌԷ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱՉՕՓ:

ԸՆԳՈՒՃՓԸՌՆՕԿ/ԸՆՃՈՒԿՓԸՌՆՕԿ - 1. *տե՛ս* ՄԸՇՏԸԼԸ՝Ղ: 2. *գ.* Մանկական խաղ, երբ գետնին որեւէ իր են գցում եւ այն վերցնողի ականջից բռնելով՝ քաշում են այնքան ժամանակ, մինչեւ իրը բաց է թողնում: *Ընգուճփըռնօկը խօխէնք՚ը՝ն ըն խաղ անում* (Բ):

ԸՆԳԱՂԱՆԸՍ - *տե՛ս* ԸՆԴԸ՝ՏԱՆԸՍ:

ԸՆԳԱՆԻ - *տե՛ս* ԸՆՏԱՆԻ:

ԸՆԳԱՆԻՔ՚ - *տե՛ս* ԸՆՏԱՆԻՔ՚:

ԸՆԳԷՂ - *տե՛ս* ԸՆԴԸ՝Ղ:

ԸՆԳԷՏԱՆԸ(Ս) - *տե՛ս* ԸՆԴԸ՝ՏԱՆԸ(Ս):

ԸՆԴԸ՝Ղ/ԸՆԴԷՂ/ԸՆԴԸՂ/ԴԸ՝Ղ/ԴԷՂ/ԴԸՂ - *դ.* 1. Այն տեղը, այն տեղում: *Վար մըթնէց, թաքուհին նի մըտավ ծառնէն փըչակը, քըշէրը ընդէղ մընաց* (ՀԺՀ, V, 373): 2. Այնպիսի հանգամանքներում՝ պայմաններում՝ ժամանակ: *Ընդը՝ղ վէշ մինը կարէլ չի կըլխու ըղնէ, քաքը կ՚ուզին նըհը՝տ խառված ա* (Զ): 3. Այն գործում: *Ընդը՝ղ էլ սըխալվում ա, էլ վէշ մին պէն ամալ չի կ՚ամ* (Զ):

- Ընդը՝ղան նըհը՝տ - 1. Այնտեղից սկսած: *Ընդը՝ղան նըհը՝տ սաղ ծըմըկնէ յա* (Զ): 2. Նրանից հետո: *Ընդը՝ղան նըհը՝տ էտ վը՝րսկանը էլ վը՝րս չի ք՚ունում* (Զ):

- Ընդը՝ղ մըթկավ ք՚ինիլը էլ ա համօթ - Ասում են անբարոյական միջավայրի մասին:

ԸՆԴԸ՝ՂԱՆԸ(Ս) - *տե՛ս* ԸՆԴԸ՝ՏԱՆԸ(Ս):

ԸՆԴԸ՝ՏԱՆԸ(Ս)/ԸՆԴԷՏԱՆԸ(Ս)/ԴԷՏԱՆԸՄԸ(Ս)/ԸՆԴԸ՝ՂԱՆԸ(Ս)/ԸՆԴԸՅԸ՝ՏԸ/ԸՆՏԷՅՏԸ - *մ.* Այնուհետեւ, ապա, հետո: *Ընդէտանը մը՝ծ ախպէրը ուրան ղօշունավը ուրան ըխճըկանը դարկում ա կուճուր ախպօրը կօշտը* (ՀԺՀ, V, 368):

ԸՆԴԸՅԸ՝ՏԸ - *տե՛ս* ԸՆԴԸ՝ՏԱՆԸ(Ս):

ԸՆԴԸՂ - *տե՛ս* ԸՆԴԸ՝Ղ:

ԸՆԴԸՐԱ/ԴԱ[2]/ԸՆԴՈՒՐ[2]/ՆԱ[2]/ԴԸՐԱ/ՆԸՐԱ - *գ.* **Նա** դերանվան սեռական հոլովաձեւը՝ նրա: *Ընդըրա տօնը էլ էն ա ինում շէնին կըլխէն* (Զ):

- Ընդըրա (ըստըրա, ըտըրա) մըտէք՚ է՛ - Հիացմունքի արտահայտություն՝ ապա նայի՛ր, շատ գեղեցիկ է: *...Յէշալ ա, յէշալ, թա.- Դա մըտէք՚ է, տըրախտ ա յէ՛, տըրա՞խտ* (ԱԱ, 22):

- Ընդըրանա ծու՞ ինք՚ օնօղը մաչին տըղնօց չի քըթէնալ - Ասում են խիստ խորամանկ ու խաբեբա մարդկանց մասին:

- Ընդըրան (ինձ, ք՚ը՝զ) էլ ա մար պէրալ - Նա էլ է մարդ, մեղք է: *Խէ չըչարում ը՞ս, ընդըրա էլ ա մար պէրալ* (Զ):

- Ընդըրա վը՝ռը քու ըռըխատ թանուզ ա - Ասում են գեղեցիկ՝ պարկեշտ՝ մաքրակենցաղ աղջկան զրպարտողին:

ԸՆԴԸՐԱՆՔ - *դ.* Անձնական դերանվան երրորդ դեմքի հոգնակին՝ նրանք: *Ընդըրանք էտքանը կըլ՝ոխ չը՞ն ըղնում* (Զ):

ԸՆԴԸՐՕԹՈՒՆ - *գ.* Անտեր լինելը՝ անտերություն: *Ամմէն տը՝ղ ընդըրօթուն ա, մինը կա վէչ, թա էտ շէնին տըրօթուն անէ* (Բ):

ԸՆԴԻ/ԻՆԴԻ/ԴԻ - *դ.* 1. Այն կերպով, եղանակով, ձեւով, այնպես: *Ընդի յըս խօսում, ասիս՝ յը՝ս ըմ մէղավէր* (Զ): 2. Աննպատակ, հենց, այնպես: *Կընէգ՚ը թա.- Մ՚ մարթ, ընդի յըմ ասում, մըհալ մէլ քըցիլ* (Զ): 3. Այն տեսակի, այնպիսի: *Էտ կընէգ՚ը ընդի տօն ա շինում, վէր լօխ մընամ ըն ըռխընէն պէց* (Զ):

- Ընդի էլ - Առանց այն էլ: *Ընդի էլ մին պէն չար, մըհէնգ՚ էլ աշկըն ա քուռացալ* (Բ):

- Ընդինու նըման - Լավ, ընտիր, գեղեցիկ: *Ընդինու նըման ախճիգ՚ը տուվը՝գէն էն կ՚էշ մարթին* (Բ):

ԸՆԴՈՒՐ[1] - *տե՛ս* ԱՆԴՕՐ:

ԸՆԴՈՒՐ[2] - *տե՛ս* ԸՆԴԸՐԱ:

ԸՆԴՕՐ - *տե՛ս* ԱՆԴՕՐ:

ԸՆԷԾԻԼ *(գրբ. անիծ(ան)եմ)* - *նբ.* 1. Մեկին չարիք մաղթել, անեծք տալ: *Էք՛սը ք՛իս ըն հըսնէս ընդէդ, պըռավէն ընիծիլա՛վ մին փօս քընդիս, մաչին տըդվըրէս, կ՛աս* (ՀԺՀ, V, 576): 2. Ձայրույթ արտահայտել, նզովել: *Նըստում ա, ո՛ւրա՛ն բախտը ընէծո՛ւմ* (Ձ):

ԸՆԷԾՎԱԾ - *ած., գ.* Անզգամ, չար (մարդ): *Էտ ընէծվածը Շըրմաղէն միյամիդըն ա քըցո՛ւմ...* (ՆԼՂԺԲ, 30):

ԸՆԷԾՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԸՆԷԾԻԼ-ի:

ԸՆԷՐԱԿ - *տե՛ս* ՆԷՐԱԿ:

ԸՆԸՀԷՆՑ/ՆԸՀԷՆՑ - *տե՛ս* ԸՆԴԻ:

ԸՆԸՄԱՆԻ - 1. *տե՛ս* ԸՆԸՄՕՎՈՒՐ: 2. *ած.* Որեւէ մեկի անունով կոչված՝ վավերացված եւն: *Խօխան կըռվումը ըսպանված հօրը ընըմանի յա:*

ԸՆԸՄԱՎ - *տե՛ս* ԸՆԸՄԱՆԻ:

ԸՆԸՄԱՎԷՐ - *տե՛ս* ԸՆԸՄՕՎՈՒՐ:

ԸՆԸՄԱՏԱՐ - *տե՛ս* ԸՆԸՄՕՎՈՒՐ:

ԸՆԸՄԱՏԻՐ *(գրբ. անուանադիր (անուն դնող)* - *մ.* Մանրամասնորեն, անուն առ անուն, հատ-հատ: *Ընըմատիր լօխճին ասածը կ՛ո՛ւրո՛ւմ ա, տանում տամ ք՛ուխէն* (Ձ):

ԸՆԸՄԸ[Է]ՎՈՒՐ - *տե՛ս* ԸՆԸՄՕՎՈՒՐ:

ԸՆԸՄՕՎՈՒՐ/ԸՆԸՄԸ[Է]ՎՈՒՐ/ԸՆԸՄԱՎԷՐ - *ած.* 1. Նշանավոր, անուն հանած, համբավավոր: *Մին ընըմօվուր դօխտուր ա ինո՛ւմ, ըտըրան էլ մին շա՛գ՛էրդ ա ինո՛ւմ՝ անումը Լօղմանի* (ԱԱ, 77): 2. Դիրք ունեցող, պատվավոր: *Շէնին ընըմօվուր մարթիք՛ը հըվաքվում ըն, ք՛ինամ ըտըրա կօշտը* (Ձ): 3. *փխբ.* Անբարոյական: *Ընըմօվուր կընէգ՛ ա, օրը իրը[է]ք սիրական ա փօխում* (Բ):

ԸՆԹԷԹԷԼ - *նբ.* Երկար պահելով՝ հետքը կորցնել: *Ըտի էտ կ՛ուղացած ապըրանքը պիրում ա տօն, ընթէթում* (Ձ):

ԸՆԹԷՂ(Ն)ԷԼ - *նբ.* 1. Կրակը, մոխրով ծածկելով, պահել: *Այան ամմէն օր կըրակը ընթէղնում ա, վէր էք՛սը նի կըցընէ* (Բ): 2. *փխբ.* Պահել, ամփոփել, թաքցնել: *Էտ մարթին կօխում ըն դո՛ւշընկէրէն տակը, ընթէղնում* (Ձ):

ԸՆԹՈՒՆԷԼ/ՈՒՆԹՈՒՆԷԼ *(գրբ. ընդունիմ)* - *նբ.* 1. Իր վրա վերցնել, ստանձնել: *Պաշտօնը ընթունալ ա* (Բ): 2. Որեւէ կազմակերպության՝ կուսակցության՝ հաստատության եւն կազմի մեջ մտցնել: *Ըտըրան ըտի էլ պարտիյական չընը ընթունում* (Ձ): 3. Թույլ տալ մեկին իր մոտ գալ՝ իրեն դիմել որեւէ հարցով՝ գործով: *Էշին հավատ չիլա՛լ, վէր Ըստընծու կօշտ ք՛ը[է]ցալ ա, ընթունալ չի* (ՆԱԲ, 79): 4. Հյուրընկալել, պատվել, որեւէ վերաբերմունքի արժանացնել: *Խանը ըտըրանց լ՛ավ ընթունում ա* (Ձ): 5. Պայմանականորեն համարել, ենթադրել: *Ասմա.- Ընթունինք՛, թա ինք՛ը ասալ ա, տու խէ յը՞ս ըրալ* (Ձ):

ԸՆԹՈՒՆՎԷԼ/ՈՒՆԹՈՒՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՆԹՈՒՆԷԼ-ի:

ԸՆԻԼ - *տե՛ս* ԻՆԻԼ:

ԸՆԻԾԸ[Է]ՎՈՒՐ - *ած.* Անիծված՝ անիծյալ: *Ընիծը[է]վուր մարթին սիրիլ չընը* (Ձ):

ԸՆԻՍԿԱԿՕԽ - *ած.* Շատ անեծքների ենթարկված: *Ընիսկակօխ կընէգ՛ ա* (Բ):

- Ընիսկակօխ անէլ - Մեկին շատ անիծել: *Էնքան ընիսկակօխ ըրավ, էտ մարթը սուս-փուս հըռացավ* (Ձ):

- Ընիսկակօխ ինիլ/տը[է]ռնալ - Շատ անեծքների ենթարկվել: *Սանամը ընիսկակօխ տը[է]ռավ, մը[է]ռավ* (Ձ):

ԸՆԻՍԿԱՉՕՐ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ընիսկաչօ՛ր անէլ - Անիծելով վնասել: *Էտ ըրփըվէրին ըտըրան ընիսկաչօ՛ր ըրավ* (Ձ):

- Ընիսկաչօ՛ր ինիլ/տը[է]ռնալ - Անիծվելուց վնասվել: *Մարը ասմա.- Յը[է]ս օգ՛ում չըմ ընիսկաչօ՛ր տը[է]ռնամ, էն կընգանը ապըրանքը տար տօ՛ ո՛ւրա՛ն* (Ձ):

ԸՆԻՍԿԱՏԸ[Է]Ղ - *գ.* Անեծքի առարկա: *Ք՛ըսիբին ընիսկատը[է]ղը հարուստը կինի* (Ձ):

ԸՆԻՍԿԱՏՈՒ - *ած.* Շատ անիծող, անեծք տվող: *Ըրփիվէրի կընէգ՛ը ընիսկատու կինի* (Ձ):

ԸՆՀԱՄԷԼ/ԸՀՆԱՄԷԼ *(գրբ. անհամիմ)* - *չբ.* 1. Համից զրկվել, անհամանալ: *Խօրա՛գ՛ը վէր շատ կէնա, կընհամէ* (Ձ): 2. *փխբ.* Ձանձրալի՝ տաղտկալի դառնալ: *Կօրծը ընհըմացալ ա* (Բ):

ԸՆՀԸՄՑ(Ը)ՆԷԼ/ԸՀՆԸՄՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԸՆՀԱՄԷԼ-ի:

ԸՆՀԸՄՕԹՈՒՆ/ԸՀՆԸՄՕԹՈՒՆ *(գրբ. անհամութիւն)* - *գ.* 1. Անհամ լինելը: *Ընհըմօթունէն դա՛ղդա՛ն էտ բըրընին վէշ մինը օտում չի* (Ձ): 2. Անհամ՝ անտեղի արարք՝ խոսք՝ վերաբերմունք: *Ըշտը[է]ղ ք՛ինամ ա, մին ընհըմօթուն անում ա* (Բ):

ԸՆՁԸ[Է]ՏԷ - *տե՛ս* ԻՆՁԸ[Է]ՏԷ:

ԸՆՁՈՒՂԱՀԱՄ - *տե՛ս* ՔՈ՛ՒՄՈ՛ՒՐԱՀԱՄ:

ԸՆՁՈՒՂԱՀԱՆՔ - *տե՛ս* ՔՈ՛ՒՄՈ՛ՒՐԱՀԱՆՔ:

ԸՆՁՈՒՂԱՎԸ[Է]Տ - *տե՛ս* ՔՈ՛ՒՄՈ՛ՒՐԱՎԸ[Է]Տ:

ԸՆՁՈՒՂ(Ն)ԷԼ - *նբ.* Կովը մինչեւ վերջ կթել, կրծքում կաթ չթողնել: *Կավը ընձուղում ա, դանան թօղնում տո՛ւզնը* (Բ):

ԸՆՁԱՏԱՐ - *ած.* Ինչքի՝ ունեցվածքի տեր, ունեւոր: *Մին ընչատար մարթ յօր ա ունէս էտ յըթիմին, պըհէս, մընցընէս* (Ձ):

ԸՆՁԱՀԱՄ - *տե՛ս* ՈՒՆՁԱՀԱՄ:

ԸՆՁԱՃՈ՛ՒՐ - *տե՛ս* ՈՒՆՁԱՃՈ՛ՒՐ:

ԸՆՁԸ(Թ)ՄԻԾ - *տե՛ս* ԻՆՁԸ(Թ)ՄԻԾ:

ԸՆՁՈՒԹԱԹԱԽ - *տե՛ս* ՈՒՆՁՈՒԹԱԹԱԽ:

ԸՆՁՈՒԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ՈՒՆՁՈՒԿԱ՛ԼԻԼ:

ԸՆՁՈՒԿԱՄԱՉ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱՄԱՉ:

ԸՆՁՈՒԿԱՉՕՓ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱՉՕՓ:

ԸՆՁՈՒԿԱՎԷՐ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱՎԷՐ:

ԸՆՁՈՒԿԱՏԱԿ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱՏԱԿ:

ԸՆՁՈՒԿԱՏԸ[Է]Ղ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱՏԸ[Է]Ղ:

ԸՆՁՈՒԿԱՑԱՎ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱՑԱՎ:

ԸՆՁՈՒԿԸՅԸ[Է]Ր - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԸՅԸ[Է]Ր:

ԸՆՁՈՒԿԸՎԷՐ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԸՎԷՐ:

ԸՆՁՈՒԿԹԻԹԸ[Է]Վ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԹԻԹԸ[Է]Վ:

ԸՆՁՈՒԿԽԱՌ(Ն)Ը - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԽԱՌ(Ն)Ը:

ԸՆՁՈՒԿՄԸՏԷ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃՄԸՏԷ:

ԸՆՁՈՒԿՄՈՒՆԻ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃՄՈՒՆԻ:

ԸՆՁՈՒԿՊԸՏ(Ը)ՌԷ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃՊԸՏ(Ը)ՌԷ:

ԸՆՁՈՒԿՓԸՌՆՕԿ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃՓԸՌՆՕԿ:

ԸՆՁՈՒՎԱՐ - *տե՛ս* ՁԸՎԱՐ:

ԸՆՁՈՒՏՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՈՒՆՁՈՒՏՑ(Ը)ՆԷԼ:

ԸՆՁՕՏ - *տե՛ս* ՕՆՁՈՒՏ:

ԸՆՁՕՏԷԼ - *տե՛ս* ՈՒՆՁՕՏԷԼ:

ԸՆՍԱՆ/ԻՆՍԱՆ *(արաբ., թրք. insan)* - *տե՛ս* ՄԱՐԹ (1): *Տահանք օտում ըն, պըրծընում, կարավաթէն տական մին ինսանու կընլօխ տ՛ուս օնում, թակում...* (ՀԱԲ, 15, 124):

ԸՆՍԸՆԱՎԸ[Է]Տ/ԻՆՍԸՆԱՎԸ[Է]Տ - *տե՛ս* ՄԸՐԹԱՎԸ[Է]Տ:

ԸՆՍԸՆՕԹՈՒՆ/ԻՆՍԸՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ՄԸՐԹՕԹՈՒՆ:

ԸՆՏԱՆԻ/ԸՆԴԱՆԻ *(գրբ. ընտանի, ընդանի)* - *ած.* Ընտելացրած, մարդկանց կողմից խնամվող՝ բուժվող (անասուն, թռչուն): *Ընտանի աղվէս ինիլ չի* (Ձ):

ԸՆՏԱՆԻՔ՛/ԸՆԴԱՆԻՔ՛ *(գրբ. ընտանի, ընդանի)* - *գ.* 1. Միասին բնակվող մարդկանց խումբ, որ կազմված է արյունակցությամբ կամ ամուսնությամբ իրար հետ կապված անդամներից (ամու-

սիններ, ծնողներ, զավակներ եւն): *Էտ ընտանիքը ըտի ըտրրանց շէնումը մին տարէ ապրում ա* (Զ):

ԸՆՏԷՀՏԸ - *տեմ* ԸՆԴԸՏԱՆԸ(Ս):

ԸՆՏԸՐԷԼ/ԸՆՏՐԷԼ *(գրբ. ընտրեմ)* - *նբ.* Քվեարկության միջոցով առանձնացնել՝ հաստատել (պարտականությունների՝ պաշտոնի եւն համար): *Հաբուն գուդապէտ ընտրրըցէն* (Բ):

ԸՆՏԸՐՎԷԼ/ԸՆՏՐԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՆՏՐԷԼ-ի:

ԸՆՏԸՐՈՒԹՒՆ/ԸՆՏՐՈՒԹՒՆ *(գրբ. ընտրութիւն)* - *գ.* Քվեարկության միջոցով ընտրելը: *Ընտրրութունվը կրռըվը ընգավ շէնը:*

ԸՆՏԸՐՕՂ/ԸՆՏՐՕՂ - *գ.* Քվեարկելու իրավունք ունեցող եւ ընտրությանը մասնակցող անձ: *Ընտրրօղնէն վէր շըտացէն, ղրռի-բրռին ընգավ* (Բ):

ԸՆՏԸՐՕՎԻ - *ած.* Ընտրությամբ կյանքի կոչված, ոչ նշանակովի: *Միհէնգ գուդապէտին պաշտօնը ընդրրօվի յա* (Բ):

ԸՆՏԻՄԱՆԱԼ *(գրբ. ընդդիմանալ)* - *չբ.* Դեմ կանգնել, հակառակել: *Մըզանա մինը շատ տուզն ար, կըրէյիս չի ըլալ ըշխադէ, մին էլ ընտիմանից, վըր ըշխադում չում* (ԼՂԲՔ, 27):

ԸՆՏՐԷԼ - *տեմ* ԸՆՏԸՐԷԼ:

ԸՆՏՐՎԷԼ - *տեմ* ԸՆՏԸՐՎԷԼ:

ԸՆՏՐՈՒԹՒՆ - *տեմ* ԸՆՏԸՐՈՒԹՒՆ:

ԸՆՏՐՕՂ - *տեմ* ԸՆՏԸՐՕՂ:

ԸՆՏՐՕՎԻ - *տեմ* ԸՆՏԸՐՕՎԻ:

ԸՆՑԱԾ/ՀԸՆՑԱԾ - *ած.* Անցյալ, հին: *Ընցած պէնէր ա, մըհալ մէկ քըցիկ* (Զ):

ԸՆՑԱԾ-ՔՍԷՑԱԾ - *ած.* Վաղեմի, վաղուց անցած ու մոռացված: *Ընցած-քսէցած դուշմունութունը նորիցան ըն ըսկըսալ* (Զ):

ԸՆՑԸՆԷԼ/ԸՆՑՆԷԼ/ՀԸՆՑԸՆԷԼ/ՀԸՆՑՆԷԼ/ԸՍՆԷԼ *(գրբ. անցանեմ)* - *չբ.* 1. Շարժվել, մի տեղից մի այլ տեղ գնալ, որոշ ուղղությամբ գնալ: *Էն մարթըն ասըմ ա.- Յէկ, մաչաս ճըղէ, տիր կուէտըմը, քարվազ շինի, ընցէր* (ՀԺՀ, V, 193): 2. Մեկին՝ մի բանի գերազանցել: *Թա հանը կուօղ ա իլալ, տըղան էլ հորը անա լափ ընցալ ա* (Բ): 3. Խոսակցության՝ քննության նյութը փոխել: *Ասում ա՝ ընտրանա ընցէր, էրուշ պէնա խօսէ* (Զ): 4. Կատարվել, տեղի ունենալ, պատահել: *Ընտրանա յըտը շատ պէն ա ընցալ* (Զ): 5. Ընկած լինել, ձգվել, տարածվել: *Էտ հրդէն էլ հանորը շէնին մաչավըն ար ընցընում* (Զ): 6. Հրաժարվել, ձեռք քաշել, թողնել-հեռանալ: *Զանիլա չօնիմ քըզ նրհըտ զըրուց ընէլի, ընցէր* (Զ): 7. Մի բանի միջով գնալ՝ դուրս գալ: *Թիլը հաստ ա, ըսըդէն ծակավը ընցընում չի* (Բ): 8. Արժեք՝ հարգ ունենալ, ընդունվել: *Ըտրրա ասածը հընգէրուցը քըշտէն ընցընում ար* (Զ): 9. *տեմ* ԸՆՏԸՐՎԷԼ: *Ընտրրութուն ըրէն, վէր գուդապէտ ընտրրին, խօրասանաց Արշակը ընցավ* (Զ): 10. Հանգչել, մարել: *Լուսը ընցավ, մընացէն քըռըքօռէ տաս* (Բ): 11. Ավելանալ, շատանալ: *Մըկըռնէն վէր քըսանան շըտացէն, ըխճըկահանը ըսքըսից կրզնըվէլը* (Զ): 12. Ձանց առնել, անտեսել: *Անարխյա յէրգիր ար, հու կարում ար օրէնքը ընցնում ար* (Զ): 13. Ընթանալ: *Ընտրրանց գանքը էտ ծըմակումը փիս չար ընցընում* (Զ): 14. Վերանալ: *Վէր ծօխը ընցընում ա, յէշում ըն, տըսնում մին մէյդ էտ քօլէն տակէն* (Զ): 15. Լցվել, մի տեղ հավաքվել՝ սփռվել: *...Խօխա, կընէգ, ախճիկ մըրչէմնու նըման քուչէքավըն ըն ընցալ, ու տար ու տիրական չի կա* (ՋՏ, Բ, 97): 16. *նբ.* Ուսումնասիրել, սովորել: *Հինչը ընցընում ըն ըշկօլումը, էտ խօխան մըտը պահում ար* (Զ):

- Ընցած ինի - Մխիթարանքի արտահայտություն՝ վիշտը՝ նեղությունը եւն դրանով վերջանա, այլեւս չկրկնվի, չհիշվի: *Մուտանում ա էտ մարթին, թա.- Ընցած ինի, էլ դարդ մէր անէլ* (Զ):

ԸՆՑԸՑ(Ը)ՆԷԼ/ՀԸՆՑԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. անցուցանեմ)* - *նբ.* 1. Մի տեղից մի այլ տեղ տանել, տեղափոխել: *Ջօրքը ընցընցընում ըն սարէն քամակը, քըշէրը ըտը՝դ կէնում* (Զ): 2. Ընդունել տալ: *Ուրան ըսընէն ա ընցընցընում* (Զ): 3. Գցել, կառուցել, ստեղծել: *Հրրամանք ա տամ, վէր էտ հրդէն շէնին կօխկավը ընցընցընին* (Զ): 4. Անել, կատարել, կազմակերպել: *Ընտրրութուն ըն ընցընցընում, քօնան գուդապէտը անց չի կէնում* (Բ): 5. Ժամանակը որեւէ բանի տրամադրել: *Թաքավէրը էտ դուշին էնքան ար սիրում, վէր սաղ օրը ընտրրա նրհըտ ար ընցընցընում* (Զ): 6. Դնել, հագցնել, ագուցել: *Ջիլավը ընցընցընում ա ծիյին պէրանը, նըստում, հրդէ հնում* (Զ): 7. Մի բանի միջով մտցնելով՝ մյուս կողմից դուրս բերել: *Թիլը ըսըդէն ծակավը ընցընցընում ա, տամ պըռավէն* (Զ): 8. Մի տեղ՝ վիճակում մնալ՝ գտնվել՝ լինել: *Էտ քըշէրը դէրվիշը ընտրրանց տանըն ա ընցընցընում* (Բ): 9. Ժամանակը սպառել: *Էտ իրէք քըշէրը էտ տըղան մին թանիրավ ընցընցընում ա* (Զ): 10. Հանգցնել, մարել տալ: *Լուսը հընցընցընում ըն, քօն հնում* (Զ):

ԸՆՑՆԷԼ - *տեմ* ԸՆՑԸՆԷԼ:

ԸՆՕԹԷ - *տեմ* ՆՕԹԷ:

ԸՆՕՎԻ - *տեմ* ԾԸՐՔՈՒ:

ԸՇԱՆԷԼ - *տեմ* ՀԸՇԱՆԷԼ:

ԸՇԸՆԷ - *գ.* Խաղողի տեսակ: *Առաչ ըշընէ Ղարաբաղ շատ ա իլալ* (Զ):

ԸՇԸՂԱՇԿ - *գ.* Լոբու տեսակ: *Ըշըղաշկը լավ լօբի յա* (Բ):

ԸՇԸՂՎԱՉԻ - *տեմ* ԸՇԸՂՎԱՐԻ:

ԸՇԸՂՎԱՐԻ - 1. *մ.* Աշուղի պես, աշուղի նման: *Էտ խօխան ըշըղվարի յըրք ա ասում:* 2. *ած.* Աշուղական, աշուղին հատուկ: *Ըշըղվարի յըրքէրը էլ ըսկանօղ չի կա* (Բ):

ԸՇԸՂՕԹՈՒՆ - *գ.* Աշուղ լինելը: *Ըշըղօթունը առաչ լավ փէշակ ար* (Բ):

ԸՇԽԱԴԷԼ/ԸԽՇԱԴԷԼ *(գրբ. աշխատիմ)* - *չբ.* 1. Աշխատանք կատարել, բանել, գործել: *Իրէք օրանը յէտը Միրզան ծէն ա տամ Թըմամէն նան Թըմամէն մարթին, վէր քինան ըշխադին* (ՀԺՀ, V, 416): 2. Սարքին լինել, փչացած չլինել: *Սըհաթը վէր ընգավ, կօտրից, էլ ըշխադում չի* (Բ): 3. Ձանալ, ձգտել, ճիգ գործադրել: *Հիշքան ըշխադում ա, թա քօն չինի, ամալ չի կամ* (Զ): 4. Որոշ ժամանակ անցնել: *Հէնգան քըսան ա ըշխադալ* (Բ): 5. *նբ.* Վաստակել, աշխատանքով ձեռք բերել: *...Ըշխադած իրէք մանէթը յօր ա օնըմ, կամ ըսպասըմ մըծ ախպօր կալալին* (ՀԺՀ, VI, 102):

ԸՇԽԱՐՔՈՒ/ԸԽՇԱՐՔՈՒ - *ած.* Մեծ քանակությամբ, շատ: *...Մին հէնգ մընուտանը յէտը ըշխարքու վըրս ըրած կամ ա* (Զ):

ԸՇԽԸՂԱՆՔ - *տեմ* ԱՇԽԱՂԱՆՔ:

ԸՇԽԸՂԱՍԷՐ/ԸԽՇԸՂԱՍԷՐ *(գրբ. աշխատասէր)* - *ած.* Աշխատել սիրող, փութաջան: *Ջանքի ապան կօզի շատ պառավ, ամմա ըշխըղասէր մարթ ա, սաղ օրը բաղան տօն չի կամ* (Զ):

ԸՇԽԸՂԷՎՈՒՐ - *տեմ* ԸՇԽԸՂՕՎՈՒՐ:

ԸՇԽԸՂՑ(Ը)ՆԷԼ/ԸԽՇԸՂՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. աշխատեցուցանեմ)* - *նբ., պբ.* 1. Աշխատել տալ, բանեցնել: *Էտ հարուստը ուրան բաղումը օթ մարթ ա ըշխըղցընում* (Զ): 2. Գործի գցել, գործածել: *Մանվէլը էտ տըրախտըրը յօր ա օնում, ըշխըղցընում* (Բ):

ԸՇԽԸՂՕՎՈՒՐ/ԸՇԽԸՂԸՎՈՒՐ/ԸԽՇԸՂՕՎՈՒՐ/ԸԽՇԸՂԸՎՈՒՐ *(գրբ. աշխատաւոր)* - *ած.* 1. Աշխատող, աշխատանք կատարող: *Էտ տանան հէնգ ըշխըղօվուր կա կըլխօզումը* (Զ): 2. *տեմ* ԸՇԽԸՂԱՍԷՐ:

ԸՇԽԸՐԱՓԱՐ/ԸԽՇԸՐԱՓԱՐ *(գրբ. աշխարհաբար* - *գ.* Աշխարհաբար լեզուն: *Պառավը ասմա.- Բալա, յըս կըրափար գուդում չըմ, ըշխըրափար խօսէ* (Զ):

ԸՇԿԱԹՕՂ - *ած.* Անտեսված: *Ըշկաթօղ շէն ա, հու հինչը օգում ա, անում ա* (Զ):

- Ըշկաթօղ անէլ - Անուշադրության մատնել, անտեսել: *Հանը մը՛ռավ, տը՛ղէրք՛ը մօրը ըշկաթօղ ըրէն* (Բ):

- Ըշկաթօղ ինիլ/տը՛ռնալ - Անուշադրության մատնվել, անտեսվել: *Սաղ գ՛անքը կօրծ ա ըրալ, միհէնգ՛ էն ա պը՛ռաված, ըշկաթօղ իլանծ* (Բ):

ԸՇԿԱԾԱԿ - *ած. տե՛ս* Աշկը ծակ:

ԸՇԿԱՀԸ՛Ռ - *տե՛ս* ԸՇԿԱՑԱՎ:

ԸՇԿԱՄԱՉ *(գրբ. աչամէջ)* - *գ.* 1. Երկու աչքերի միջեւ եղած տարածությունը: *Գ՛ունլլան կէնում ա ըտրրա ըշկըմաչան, ըսպանում* (Ձ): 2. Աչքի մեջը՝ բիբը: *Ըշկամաչը ցըրը՛վ ա յը՛կալ* (Բ): 3. *փխբ.* Դեմք, երես: *Ըշկամաչը կ՛էշ մին ախճիգ՛ ա օգ՛ալ* (Բ):

- Ըշկամաչը յը՛տ կ՛ալ/յը՛տ քի՛նիլ/պէնվալ - *տե՛ս* Ունքամաչը յը՛տ կ՛ալ:

- Ըշկամաչը փօթ քըցիլ - *տե՛ս* Ունքամաչը փօթ քըցիլ:

- Ըշկըմաչան աղու կաթէլ - *տե՛ս* Ունքըմաչան աղու կաթէլ:

- Ըշկըմաչան ամրուն կաթէլ - *տե՛ս* Ունքըմաչան ամրուն կաթէլ:

- Ըշկըմաչին յէշիլ - *տե՛ս* Ունքըմաչին յէշիլ:

ԸՇԿԱՆԷ - *ած.* Թվականի ցույց տված քանակով աչք (տեսողության գործարան, դարակ, փեղկ եւն) ունեցող: *Էտ տըղան կ՛ամ ա, տը՛սնում մին հէնգ՛ըշկանէ դէվ ըտը՛ղ նըստած* (Ձ):

ԸՇԿԱՉԱՓ - *գ.* 1. Որեւէ բանի մոտավոր չափումը անզեն աչքով: *Ըշկըչափավ էտ օխծը կինանր իրը՛ք մէտըր* (Ձ): 2. Աչքով չափելու կարողություն: *Տընաշինըտ ըսկի ըշկաչափ չօնէ* (Բ):

ԸՇԿԱՉՕՐ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- ԸշկաչՕր անէլ - Չար աչքով վնասել՝ սպանել: *Իսակը հանր աշկավ ա տամ, ըշկաչՕր ա անում* (Բ):

- ԸշկաչՕր ինիլ/տը՛ռնալ - Չար աչքից վնասվել՝ մեռնել: *Էնքան աշկավ տըվէն, խը՛ղճը լափ ըշկաչՕր իլանվ* (Բ):

ԸՇԿԱՊԷՑ/ԸՇԿԸՊԷՑ *(գրբ. աչաբաց (աչքը բաց, բաց աչքով)* - *ած.* Շրջահայաց, ճարպիկ, ձեռներեց: *Տը՛սնում ըն, վէր ըշկապէց խօխա յա, հանանց նըհը՛տ տանում ըն* (Ձ):

ԸՇԿԱՎԷՐ - *ած.* 1. Աչք՝ դարակ՝ փեղկ եւն ունեցող: *Մին ըշկավէր ըշկափ ա ինք՛ օնում, տամ էտ մարթին* (Ձ): 2. Չար աչք ունեցող, չար աչքով վնասող: *...Մաք՛ի ապուն յըրա ճըղղամ ա, ասըմ.- Ա հինչ ըշկավէր ը՞ս, աշկ օնիս է՞ ք՛ը՛զ, դայ՛ի* (ՀԺՀ, V, 612):

ԸՇԿԱՏԱԿ - *գ.* Աչքի ներքեւի փոս տեղը, աչքի տակը: *Ըշկըտակէն թըխում ա, վէր քըցում* (Ձ):

ԸՇԿԱՏԷՄ - *մ.* 1. Դեմ դիմաց, դեմ հանդիման: *Չօբանը կ՛ամ ա, ըտըրա ըշկատէմ վը՛ենը կէնում* (Ձ): 2. Սպասողական դրության մեջ: *Ըտըրանք էլ էն ըն ինում ըշկատէմ, թա տըղան հիբ կը՛կ՛ա* (Ձ):

ԸՇԿԱՏՈՒ/ԸՇԿԸՏԸՎԷ - *տե՛ս* ԸՇԿԱՎԷՐ (2):

ԸՇԿԱՑԱՎ *(գրբ. աչացաւ)* - *գ.* Աչքի ցավ՝ հիվանդություն: *Ըշկացավը մարթին կըսպանէ* (Բ):

- Ըշկըցավան ըղնէլ - 1. Աչքացավով հիվանդանալ: *Ըշկըցավան ընգած բաղվանչուն բաղը կըթըլանին* (Բ): 2. Հանդիմանական արտահայտություն՝ ինչո՞ւ չես տեսել: *Ըշկըցավան ընգած ը՞ս, ըշտը՛ղ ը՞ս իլանվ, վէր խօզ՛էրը նի յըն տը՛ռալ բօստանը* (Ձ):

ԸՇԿԱՓ *(ռուս. шкаф, գերմ. Schap)* - *գ.* Փայտե պահարան՝ մեջը տարբեր բաներ դնելու եւ պահելու համար: *Էտ կընէկը առաչին սիրականին կ՛օղալ ա կըցընըմ ըշկափին կըլխին* (ԼՂԲ, 359):

ԸՇԿԱՓՕՍ - *գ.* Աչքի խոռոչ՝ ակնակապիճ: *Հանց թըխում ա, ըտըրա աշկը ըշկըփօսան տանս ա կ՛ամ* (Ձ):

ԸՇԿԸԼԱՆՍԱՆՔ՛ - *գ.* Բարի՝ ուրախ լուր հայտնելու բարեմաղթություն՝ շնորհավորանք: *Խաբարը հըսնէս ա շէնը, լօխ կ՛աս ըն ըշկըլանսանք* (ՀԺՀ, V, 283):

- Ըշկըլանսանք տալ - Բարի՝ ուրախ լուր հայտնել՝ շնորհավորել: *Ք՛էցալ ա նանգիր-վանգիրնէրէն ըշկըլանսանք տըվալ, թա.- Թաքավէրէն կընէգ՛ը տըղա յա պէրալ* (ՀԺՀ, VI, 21):

ԸՇԿԸԽԱՐԱՎ - *տե՛ս* ԸՇԿԱՉՕՐ:

ԸՇԿԸԾԸԿՕԹՈՒՆ - *գ.* Աչքաճակություն, ագահություն: *Ըշկըծըկօթունէն մըհար վէշ մինը նըհը՛տը հընգըրօթուն չի անում* (Բ):

ԸՇԿԸԿԱՊԷ - 1. *տե՛ս* ԸՇԿԸԿԱՊՈՒԿ: *գ., ած.* 2. Աճպարար, ձեռնածու: *Ըշկըկապէն ծը՛ղքը քըցում ա փափաղը, մին ըլբաստըրակ տանս օնում* (Ձ): 3. *փխբ.* Ճարպիկ խաբեբա: *Էտ ըշկըկապէն սաղ շինանցուց խանփից* (Բ): 4. *գ.* Աչք կապելու շոր՝ լաթ: *Ըշկըկապէն յը՛տ ա անում, փախչում* (Ձ):

ԸՇԿԸԿԱՊՈՒԿ - *գ.* Մանկական խաղ, որի ժամանակ խաղացողներից մեկի աչքերը կապում են, եւ վերջինս պետք է խարխափելով բռնի ընկերներից մեկին: *Ըշկըկապուկը խօխէնք՛ը ըն խաղ անում* (Բ):

- Ըշկըկապուկ խաղ անէլ - Իրար խաբել: *Մըրթըկընէգ՛ վէր ըշկըկապուկ խաղ ըրէն, տօն չըն տը՛ռնալ* (Ձ):

ԸՇԿԸԿԸՊՕԹՈՒՆ - *գ.* 1. Ձեռնածություն, աճպարարություն: *Ըշկըկըպօթունը ամմէն մարթու փէշակ չի* (Բ): 2. *փխբ.* Խաբեբայություն: *Ըշկըկըպօթուն ըրավ, քօռ ըխճըկանը էտ դաշանգ՛ տըղէն նըհը՛տ փըսակից* (Բ):

ԸՇԿԸԿ՛ԻՐՕՂ - *ած. տե՛ս* Աշկու կ՛իրօղ:

ԸՇԿԸԿՈՒԿՈՒՄ - *գ. տե՛ս* Աշկու կուկում:

ԸՇԿԸՀԱՆԻՉ - 1. *գ.* Թեւավոր կանաչավուն փոքր միջատ, որ իբր հարվածում է մարդու աչքին եւ վնասում: *Ասում ըն՝ Դըրդանց Գուրգէնին աշկը ըշկըհանիչ ա ընգալ, քուռըցըրալ* (Ձ): 2. *ած.* Նախանձ շարժող, ատելի: *Դաշանգ՛ հարթնը կ՛էշ տանլին հը՛տէ ըշկըհանիչ կինի* (Ձ): 3. Հմայիչ, ուշագրավ: *Ախճիգ՛, հինչ ա՞խճիգ՛, մին մարալ, մին ըշկըհանիչ* (Ձ): 4. Չար աչքն անվնաս դարձնող: *Պըռըշնի փանը ըշկըհանիչ փանդ ա* (Ձ):

ԸՇԿԸՀԱՐ - *ած.* Աչքով տված, չար աչքից վնասված: *Ըշկըհար կավը կաթնը չի տալ* (Ձ):

ԸՇԿԸՀԱՐԷԼ *(գրբ. ակնհարիմ)* - *նբ. տե՛ս* Աշկ ածել:

ԸՇԿԸՀՈՒԼՈՒՆՔ - *գ.* Տարբեր քարերից կամ սուրբ ծառերի փայտից պատրաստված ուլունք՝ որեւէ մեկին կամ որեւէ բան չար աչքից պահպանելու համար: *...Պառավ մարթիք՛ը ըշկըհանլանք ըն ջինիս, կըպէս ք՛ՕրփՕ խօսնցը ծէրքը, հանցու աշկավ տըվօղ չինի* (ԱԱ, 48):

ԸՇԿԸՀՕՓԷ - 1. *տե՛ս* ԸՇԿԸՃԸՊԷ: 2. *տե՛ս* ԸՇԿԸՃԸՊՕՎԱՆ:

- Ըշկըհօփէ անէլ/տալ - Մի քիչ քնել՝ ննջել: *Լ՛ըհա օգում ա, թա ըշկըհօփէ տա, մին տըրաքուց ա ըսկանում* (Ձ):

ԸՇԿԸՃԸՊԷ - *գ.* Աչքի մի անգամ թարթելը: *Ըշկըճըպէն վէր ինի վէշ, մարթին աշկէրը կընքուռանա* (Բ):

ԸՇԿԸՃԸՊԷԼ - *չբ. տե՛ս* Աշկը ճըպէլ:

ԸՇԿԸՃԸՊՕՌ - *տե՛ս* ՃԸՊՕՌ-(ՆԸ)(1):

ԸՇԿԸՃԸՊՕՎԱՆ - *գ.* Մանկական խաղ: *Խօխէնք՛ը ըշկըճըպօվան ըն խաղ անում* (Բ):

ԸՇԿԸՊԷՑ - *տե՛ս* ԸՇԿԱՊԷՑ:

ԸՇԿԸՊԸՏՕՂ - *գ.* 1. *տե՛ս* Աշկու կուկում: 2. *տե՛ս* Աշկու լանս:

ԸՇԿԸՏԸՎԷ - *տե՛ս* ԸՇԿԱՏՈՒ:

ԸՇԿԸՏԻՆԻԼ - *նբ. տե՛ս* Աշկը տընգէլ (2):

- Ըշկըտիրանծ տը՛ղ ինիլ - Նշանած՝ սիրած ունենալ: *Տըղան ասմա.- Թաքավէրընը ապրած կէնա, ինձ ըշկըտիրանծ տը՛ղ օնիմ, կարէլ չըմ քու ախճիգ՛ըտ օգ՛իմ* (Ձ):

ԸՇԿԸՕՆՔ/ԱՇԿ-ՕՆՔ - *գ.* 1. Աչքեր եւ

հոնքեր: *Ըշկըօնքը սը՝վ ախճիգ՝ ա* (Բ): 2. Դեմք, երես: *Ըշկըօնքը սիպտակ, դաշանգ՝ հարթն ա* (Բ):

- Ըշկըօնքան աղու կաթէլ - *տե՛ս* Աշկան աղու կաթէլ:

- Ըշկըօնքան ընցընէլ - *տե՛ս* Աշկը օնքան պիցըրանալ:

- Ըշկըօնքավ անէլ - Աչքունքի շարժումով մի բան ակնարկել՝ հասկացնել: *Էտ ախճիգ՝ը հիշքան ըշկըօնքավ ա անում, տըղան կըլՀխ չի ըղնում* (Ձ):

- Ըշկըօնքը կախ - Անտրամադիր, տխուր: *Էտ մարթըն էլ կ՝ամ ա, ըշկըօնքը կախ ըտը՝ղ նըստում* (Ձ):

- Ըշկըօնքը կօչ ածէլ - Ամաչել, իրեն կաշկանդված զգալ: *Էտ ղօնաղը ըշկըօնքը կօչ ա ածում, գ՝ունդում չի, թա հինչ անէ* (Ձ):

- Ըշկըօնքը յըրա պիրիլ - Վատ տրամադրությունը՝ տխրությունը դեմքի արտահայտությամբ ցույց տալ: *Ըշկըօնքը յըրա յա պիրում, ըտըրանց ք՝ը՝փը հըրըմցընում* (Ձ):

- Ըշկըօնքը պէնվալ - *տե՛ս* Ունքամաչը յը՝ետ կ՝ալ:

- Ըշկըօնքը տը՝ղը - *տե՛ս* ԸՇԿԸՕՆՔԱՎ:

ԸՇԿԸՕՆՔԱՎ - *ած.* Գեղեցկադեմ, սիրունատես: *Էտ օյինբազնէն նի յըն տը՝ռնում շէնը, հիշկան ըշկըօնքավ ախճիգ՝ ա ինում, յօր օնում, տանում* (Ձ):

ԸՇԿ՝ՈՒՆԱ - *տե՛ս* ՈՒՇԿ՝ՈՒՆԱ:

ԸՇԿՕԼ *(ռուս. школа, լեհ. szkola, լատ. schola, հուն. skolē)* - *գ.* 1. Ուսումնական հաստատություն՝ դպրոց: *Տա մին օր ըշկօլան կ՝ալիս տը՝սնում ա մին օրիշ պառավ կընէգ՝, կաթնավ լիգ՝ը կ՝էվաթը ծը՝ռքէն, ք՝ընըմ ա* (ՀԺՀ, V, 157): 2. Դպրոցի շենք: *Ղարաբաղա շինէրքըմը լ՝ավ ըշկօլնէ յըն շինալ* (Բ): 3. Կրթության համակարգ, ուսումնառություն: *Էտ խօխան ըշկօլան տուս ա կ՝ամ, չուբընօթուն անում* (Ձ):

ԸՇԿՕԼՆԻԿ *(ռուս. школьник)* - *տե՛ս* ԱՇԱԳԷՐՏ:

ԸՇՆԱՆԷ *(գրբ. աշնանի (աշնան եղանակը)* - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԸ՝ՆԷ:

ԸՇՇԱ(Հ)/ԻՇՇԱ(Հ) - *ձ.* Հաճույքի՝ բավականության բացականչություն: *Թաքավէրը՝ն էլ կէրալ ա, պըրծալ, ասալ.- Ըշշա՝հ, ամմա հինչ համը՝ղ ա* (ՀԺՀ, VI, 23):

ԸՇՊԸՐԻՑ/ՇԸՊԸՐԻՑ *(ռուս. шприц, գերմ. Spritze)* - *գ.* Ներարկելու գործիք, ներարկիչ, սրսկիչ: *Ըշպըրիցավը վէր ծակում ա, վահարը տուս ա տը՝ռնում* (Ձ):

ԸՇՊԻԼԿԱ/ՇԸՊԻԼԿԱ *(ռուս. шпилька, լեհ. szpilka, գերմ. Spille)* - *գ.* 1. Մազերի սանրվածքն ամրացնելու երկճյուղ մետաղյա քորոց՝ հերակալ: *Ըշպիլկան քաղում ա մագ՝էրը, տուս կ՝ամ* (Ձ): 2. Լվացած շորերը չորացնելու համար պարանին՝ լարին ամրացնելու հարմարանք: *Ըշպիլկէք՝ը յօր ա ունէս, լըվացը կախ տաս* (Բ):

ԸՇՊԻՅՕՆ/ՇԸՊԻՅՕՆ *(ռուս. шпион, գերմ. Spion)* - *գ.* Լրտես: *Անջախ-անջախ կըլխու վըն ըղնում, վէր ուրանց մաչին ըշպիյօն կա* (Ձ):

ԸՇՊԻՅՕՆՕԹՈՒՆ/ՇԸՊԻՅՕՆՕԹՈՒՆ - *գ.* Լրտես լինելը, լրտեսություն: *Ըշպիյօնօթունը շատ յըրգ՝իրու տօն ա քանդալ* (Ձ):

- Ըշպիյօնօթուն անել - Լրտեսությամբ զբաղվել, լրտեսել: *Ըտի էտ կընէգ՝ը թաքուն ըշպիյօնօթուն ա անում* (Ձ):

ԸՇՊԻՇԿԱ - *տե՛ս* ԸՇՓԻՇԿԱ:

ԸՇՏԱԲ *(ռուս. штаб, գերմ. Stab)* - *գ.* Զորքերի ղեկավարման մարմին, ինչպես նաեւ դրա գտնվելու վայրը: *Վէր կըռը՝վը թունդում ա, ըշտաբը տանում ըն Մարտակէրտ* (Ձ):

ԸՇՏԱՀ/ԻՇՏԱՀ *(արաբ. ištiha, թրք. ištah)* - *գ.* 1. Ուտելու ցանկություն՝ տրամադրվածություն, ախորժակ: *Ըշտահ չօնիմ, թա հաց օտիմ* (Բ): 2. *փխբ.* Ընդհանրապես որեւէ բանի ցանկություն՝ տրամադրվածություն: *Տընըշինիտ տըղան ըսկի կօրծ ընէլի ըշտահ չօնէ* (Բ): 3. *փխբ.* Հաճույք, հաճելի զգացում: *Ըշտահավ էտ դօլման օտում ա, քօն ինում* (Ձ):

- Ըշտահը կապվէլ - Ուտելու կամ այլ բանի տրամադրություն չունենալ, ցանկությունը վերանալ: *Էտ վէր տը՝սնում ա, ըշտահը կապվում ա, էլ կարում չի հաց օտէ* (Ձ):

- Ըշտահը պէց անէլ/պէնալ - Ուտելու կամ այլ բանի ցանկություն առաջացնել, ախորժակը գրգռել: *Լ՝ավ կինին մարթին ըշտահը կըպէնա* (Ձ):

- Ըշտահը պէց ինիլ/պէնվալ - Ուտելու կամ այլ բանի ցանկություն առաջանալ, ախորժակը գրգռվել: *Հու վէր Իսաբուլաղա ճիրան խըմում ա, ըշտահը պէնվում ա* (Բ):

- Ըշտահը տալ - Ուտելու կամ այլ բանի ցանկություն ունենալ՝ տրամադիր լինել: *Հըղէննի ըշտահը տաս ա, նըստէս ա, ծըմէրուկը կըտըրէս, մաչի զօզանկը ուտէս...* (ԱԱռ, 20):

- Ըշտահը քըլըքօլա անէլ - Ուտելու կամ այլ բանի խիստ ցանկություն՝ փափագ առաջանալ: *...Հու վէր ըտըրանա ճուր ա խըմում, լ՝ըհա ըշտահը քըլըքօլա յա անում* (ԱԱ, 57):

- Ըշտահը քօռ անէլ - Տրամադրվածությունը՝ ցանկությունը՝ ախորժակը փչացնել: *Լ՝ըհա նըստում ըն, թա հաց օտին, մին մօրէխ լօք ա տամ ըղնում խուրանգ՝ին մաչը, ըտըրանց ըշտահը քօռ անում* (Ձ):

- Ըշտահին աշկը փըսօր քըցիլ - *տե՛ս* Ըշտահը քօռ անէլ:

- Ըշտահի ինիլ - *տե՛ս* Ըշտահը տալ:

- Ըշտահին քացախ անել - *տե՛ս* Ըշտահը քօռ անէլ:

- Ըշտահիտ քացախ - *հեգն.* Ասում են որեւէ լավ բան ակնկալողին՝ զուր ես ակնկալում, ցանկությունդ չի իրականանա: *- Մնդօն, մէհէտ մին կ՝առ մօրթէ, ք՝ը՝փի անինք՝: - Ըշտահիտ քացախ Գուրգէն* (Բ):

- Ըշտահ պահէլ - Մի լավ բան ուտելու՝ վայելելու նպատակով նախօրոք չսնվել: *Ըշտահ ա պահում, վէր խըրաված օտէ* (Բ):

ԸՇՏԱՄ/ԻՇՏԱՄ - *տե՛ս* ՅԱՆԻ:

ԸՇՏԱՊԷԼ *(ռուս. штапель, գերմ. Stapel)* - *գ.* Արհեստական կամ սինթետիկ մի տեսակ մանրաթելից պատրաստված գործվածք: *Ըշտապէլը մին վըխտու թինգ՝անուց կըտօր ա իլալ* (Բ):

ԸՇՏԱՏ *(ռուս. штат, գերմ. Status)* - *գ.* 1. Որեւէ հիմնարկությունում՝ աշխատավայրում պաշտոնների հաստատված քանակ: *Էտ կընէգ՝ը կօրծա տուս ա կ՝ամ, ըշտատը մընամ ա թափուր* (Ձ): 2. Հաստիքային աշխատողի աշխատանքային չափը, որի դիմաց ստանում է սահմանված աշխատավարձ: *Մարթ կա՝ կօրծ չի քըթէնում, մարթ էլ կա՝ իրը՝ք ըշտատ կօրծ ա անում* (Բ):

ԸՇՏԱՐԱԿ *(գրբ. աշտարակ)* - *գ.* Աշտարակաձեւ բարձր կառույց: *Չօբանը ք՝ընում ա, նըստում թաքավէրէն շինիլ տըված ըշտարակէն կըլխէն, սըկսում շըվէն ածէլը* (ՀԺՀ, V, 491):

ԸՇՏԱՓԷԼ - *չբ.* 1. Ուշագնաց լինել, գիտակցությունը կորցնել, շշմել: *Ախպէրքը կ՝աս ըն տօռնը պինաս, նի մընէս, տըսնաս ուրանց քուրը ըշտափած* (ՀԺՀ, V, 255): 2. *փխբ.* Խոր քնել: *Վըստակած կ՝ամ ա տուս, հաց օտում, նի մընում տը՝ղը, ըշտափում* (Ձ): 3. *փխբ.* Մի բանի համար խելքը գնալ, մոլի սիրահարվել, ծայրահեղորեն տարվել: *Թաքավէրին տըղան ըշտափում ա էտ ըխճըկանը յըրա* (Ձ):

ԸՇՏԷՂ - *տե՛ս* ԸՇՏԸ՝Ղ:

ԸՇՏԸ՝Ղ/ԸՇՏԷՂ/ՀԸՇՏԸ՝Ղ/ՀԻՇՏԷՂ/ՎԸՐԴԷՂ/ՎԸՐԴԸ՝Ղ - *դ.* 1. Արտահայտում է հարցում՝ գործողության, առարկայի եւն տեղի մասին՝ ի՞նչ տեղ, ո՞ւր: *Մարը աամա.- Ըշտը՝ղ ք՝ինի՞մ, վէր խօխէնք՝ը՝ս ըզադիմ ըտըրանա* (Ձ): 2. Որպես հարաբերական՝ ցույց է տալիս հա-

ռաբերյալի տեղը՝ որ տեղում որ, տվյալ տեղում որ... *Ըշտը՝ղ էտ տըղան ըսպանվալ ա, ըտը՝ղ մին ախպե՛ր ըն շինում* (Ձ): *վ.* 3. Տարակուսանքի՝ թերահավատության արտահայտություն՝ չի կարող պատահել, նման չէ, հեռու է: *Ընդըրանավ տօն շինօղ չինիլ, հա՛լա՛ ըշտը՝ղ ա՞, բընՕվրա՛ն թա՛զզա՛ յա քանդո՛ւմ* (Ձ): 4. Արտահայտում է հակադրություն համեմատվող առարկաների՝ անձերի եւն միջեւ՝ ցույց տալով նրանց անհավասարությունը՝ մեծ տարբերությունը. տարբերությունը մեծ է, անհամեմատելի է, մեկը մյուսին չի հասնի: *Ծըվատը՝ղը ըշտը՝ղ, Ճարտարը ըշտը՝ղ* (Բ):

- Ըշտը՝ղ ա՛ըը՝վ, ընդը՝ղ չուրաթանը մը՝կնում ա - Ասում են նրանց մասին, ովքեր առիթը բաց չեն թողնում՝ նպաստավոր պայմաններից՝ հանգամանքներից օգտվելու:

- Ըշտը՝ղ մընաց - 1. Ի՞նչ եղավ, ինչո՞ւ չկատարվեց: *Հա՛մբօ, ասալ ըս՝ մին վը՝խճար ըմ տըլան, ըշտը՝ղ մընա՞ց* (Բ): 2. Առանց հարցման արտահայտում է որեւէ բանի անհնարինությունը՝ հնարավոր չէ, չի լինի: *Իզէն ա՛ւրա՛ն ախպօրը չի ք՛Օմա՛զ՝ անում, ըշտը՝ղ մընաց՝ ք՛ը՝զ ք՛օմազ՝ անէ* (Բ):

- Ըշտը՝ղ վէրէ յա - Հիմա, շուտով, մոտ ապագայում: *Տընատարը ասմա.- Պատառ կա՛ց, ըշտը՝ղ վէրէ յա կընէգ՝ըս կ՝ըլան ա* (Ձ):

- Ըշտը՝ղ ք՛ինո՛ւմ ա, ա՛ւրա՛ն չուրաթանը պըլիթում ա - Ասում են նրանց մասին, ովքեր գործում են սեփական շահի համար՝ անկախ պայմաններից՝ հանգամանքներից:

- Ըշտըղա յա՞ - Որեւէ խնդրանք՝ առաջարկություն եւն մերժելու արտահայտություն՝ չկա, չեմ կարող: - *Կ՝ո՛ւք՝ի, փոխավ մին էրկու լիտըր արաղ տօ: - Ըշտըղա յա՞* (Ձ):

- Ըշտըղա վէրէ յա - Անհայտ տեղից, հայտնի չէ՝ որտեղից: *Ըշտըղա վէրէ յա, մին դա՛ռդ կ՝ամ ա, մըզանա կէնում* (Բ):

ԸՇՏԸՀԱ՛ԼԻ/ԻՇՏԸՀԱ՛ԼԻ - *մ.* Մեծ ցանկությամբ՝ ախորժակով, հաճույքով: *Տո՛ւզնը մարթը ըշտըհա՛լի հաց կօտէ* (Ձ):

ԸՇՏԸՐԱՓ *(ռուս. штраф, գերմ. Strafe)* - *գ.* Մեկից իբրեւ պատիժ գանձվող վճար՝ տուգանք: *Ճարը կըտըրած՝ տանում ա ըշտըրափը տամ, կըլՕխը ըզադում* (Ձ):

- Ըշտըրափ անէլ - Տուգանքի ենթարկել, տուգանել: *Սուդը վօրօշում ա, վէր ըտըրան քըսան մանէթ ըշտըրափ անին* (Ձ):

- Ըշտըրափու տակ ըղնէլ - Տուգանքի ենթարկվել, տուգանվել: *Ըշտըրափու տակ ընգած մարթ ա* (Բ):

- Ըշտըրափու տակ քըցիլ - *տե՛ս* Ըշտըրափ անէլ: *...Հու վէր փըռնըվում ա, ըշտըրափու տակ ըն քըցում* (ՁՏ, Ա, 142):

ԸՇՏԸՓ(Ը)ՑԸՆԷԼ - *նբ.* ԸՇՏԱՓԷԼ-ի:

ԸՇՏՕՊ *(ռուս. штоф, գերմ. Stauf)* - *գ.* 1. Օղու եւ գինու հին ռուսական չափ՝ հավասար դույլի մեկ տասներորդին: *Ի՞ը՝ք ըշտօպ արաղ ա տամ, էտ հՕլը ինք՝ օնում* (Ձ): 2. Այդպիսի տարողությամբ շիշ: *Կինուն ըշտօպը վէր ընգավ, կօտրից* (Բ):

ԸՇՈՒՆՑ - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑ:

ԸՇՈՒՆՑԱԿՕԽ - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑԱԿՕԽ:

ԸՇՈՒՆՑԱՏԸ՝Ղ - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑԱՏԸ՝Ղ:

ԸՇՈՒՆՑԱՏՈՒ - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑԱՏՈՒ:

ԸՇՈՒՆՑ(Ը)ՌԸ՝Խ - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑ(Ը)ՌԸ՝Խ:

ԸՇՈՒՆՔԱՇԷՔ՝/ՈՒՇՈՒՆՔԱՇԷՔ՝ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՃՕՏ:

ԸՇՈՒՆՔԱՀԱՍ/ՈՒՇՈՒՆՔԱՀԱՍ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԸ՝ՆԷ:

ԸՇՈՒՆՔԱՃՕՏ/ՈՒՇՈՒՆՔԱՃՕՏ - *գ.* 1. Աշնանը ծնված ձագ՝ ճուտ: *Մին ըշունքաճօտ ա մօրթում, դունաղէն պադէվ տամ* (Ձ): 2. *փխբ.* Նիհար՝ վտիտ՝ տկար մարդ: *Էտ ըշունքաճօտը հինչ ա՞, վէր օգա՛լ ըս* (Բ):

ԸՇՈՒՆՔԱՄՕԾ/ՈՒՇՈՒՆՔԱՄՕԾ - *գ.* 1. Աշնանը հասնող մոշ: *Ըշունքամօշը լա՛զա՛թ ա ինո՛ւմ* (Բ): 2. *փխբ.* Հաճելի, դուրեկան: *Ախճիգ՝, հինչ ա՞խճիգ՝, մին ըշունքամօշ* (Բ):

ԸՇՈՒՆՔԱՆԱԼ/ՈՒՇՈՒՆՔԱՆԱԼ - *չբ.* Աշունը վրա հասնել: *Ըշունքացալ ա, խաղուն քըդէլի վախտը ա* (Բ):

ԸՇՈՒՆՔԱՎԱՐ/ՈՒՇՈՒՆՔԱՎԱՐ - *գ.* 1. Աշնանը կատարվող վար, աշնանահերկ: *Թօռը յը՝տ չի անում, թա ժըղովուրթը ըշունքավարը սըքսին* (Բ): 2. Աշնանը կատարվող ցանք, աշնանացան: *Ղարաբաղ ըշունքավարըն ա լ՝ավ պէրք տամ* (Ձ):

ԸՇՈՒՆՔԱՏԱ՛ՆՁ/ՈՒՇՈՒՆՔԱՏԱ՛ՆՁ - *գ.* Աշնանը հասնող տանձի տեսակ: *Ըշունքատանձը էրկան կըկէնա* (Ձ):

ԸՇՈՒՆՔԱՏԷՄ/ՈՒՇՈՒՆՔԱՏԷՄ - *գ.* Աշնան սկիզբը, աշնանամուտ: *Ըշունքատէմը վէր կ՝ամ ա, շինըցէք՝ խաղվէն բաղան տօն չըն կ՝ամ* (Բ):

ԸՇՈՒՆՔԸ՝ՆԷ/ՈՒՇՈՒՆՔԸ՝ՆԷ - *ածական.* Աշնանը հասնող (խնձոր, տանձ եւն): *Ըշունքը՝նէ խընձՕրին նըմանը կա վէչ* (Բ):

ԸՇՈՒՆՔ(Ը)ՌԸ՝Խ/ՈՒՇՈՒՆՔ(Ը)ՌԸ՝Խ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՏԷՄ:

ԸՇՈՒՆՔԿ՝Ա՛ՌԻ/ՈՒՇՈՒՆՔԿ՝Ա՛ՌԻ - *գ.* Աշնանը հասնող գարի: *Ըշունքկ՝ա՛ռին Ղարաբաղ լ՝ավ չի տը՝ռնում* (Ձ):

ԸՇՓԻՇԿԱ/ՇԸՓԻՇԿԱ/ԸՇՊԻՇԿԱ/ՇԸՊԻՇԿԱ *(ռուս. спички)* - *գ.* Լուցկու հատիկ, ինչպես նաեւ հատիկները՝ տուփով հանդերձ: *Էտ մարթը հընգէրունցը թուղէս ա, վէր դինջանանա, ինք՝ը ք՝իս, վը՝ր շըփիշկա քըթէնա՛* (ՆԼՂԺԲ, 37):

ԸՁԸՀԱ՛ՄՓՈՒՐ - *գ.* Տարբեր ծիսակատարությունների ժամանակ հավատացյալների կողմից հոգեւորականին տված դրամ՝ նրա ձեռքը համբուրելու համար: *Միհէնգ՝ վէ՛չ դէրին ծը՝ռքան պաչՕղ կա, վէ՛չ ըչըհա՛մփո՛ւր տըվօղ* (Բ):

ԸՁՎԸԾԷԽ - *մ.* 1. Հակառակ դասավորությամբ, թարս ու շիտակ: *ԾՕրէրը ըչվըծէխ կ՝ը՝նում ա, տո՛ւս կ՝ամ* (Բ): 2. Անխնա, առանց խտրություն դնելու: *Էլ յէշում չի, թա կօխկէնը հու վա, ըչվըծէխ ուշունց ա տամ* (Ձ):

- Ըչվըծէխ անէլ - 1. Այս ու այն կողմ գնալ, աննպատակ թափառել՝ գործել: *Տա ըչվըծէխ ա անում ք՝ուչՕցավը, տը՝սնում ո՛ւրա՛ն անա մուտանօղ չի կա...* (ՀԺՀ, V, 624): 2. Մի կերպ ապրել՝ յոլա գնալ: *Ըտըրանք շատ ք՝ա՛սիբ ըն ինո՛ւմ, մին թա՛հրավ ըչվըծէխ ըն անում* (Ձ):

- Ըչվըծէխ խօսէլ - Տակից-գլխից՝ վայրիվերո խոսել: *Յավա կընէգ՝ ա, ըշտը՝ղ ք՝ո՛ւնո՛ւմ ա, ըչվըծէխ խօսում ա* (Բ):

- Ըչվըծէխ յէշիլ - 1. Շուրջը նայել: *Ըչվըծէխ յէշո՛ւմ ա, տը՝սնում՝ մարթ չի կա, նի յա մընում սիրըկանէն տօնը* (Ձ): 2. Կշռադատել, շրջահայաց՝ զգույշ լինել: *Հա՛ղը ասմա.- Բա՛լա, վէր մին կօրծը օգում ըս անիս, ըչվըծէխ յէ՛շի* (Ձ):

- Ըչվըծէխ վէր թակէլ - Խիստ անբարոյական լինել: *Մարթին մըռնէլանը յը՝տը էտ կընէգ՝ը ըչվըծէխ վէր ա թակում* (Ձ):

ԸՊՐԸԿԸԼՕԽ - *ած.* Ապրելու՝ գոյատեւելու ունակ, կենսունակ: *Տը՝սէն, վէր ըպրըկըլՕխ չի, բալնիցան տո՛ւս կ՝իրը՝ցէն* (Բ):

ԸՊՐԸՆՔԱՏԱՐ - *գ.* 1. Ապրանքի տեր: *Էք՝սը ըպրընքատարը կ՝ամ ա, տը՝սնում թօռ յը՝կած, ապըրանքը սաղ փուչըցըրած* (Ձ): 2. Ընտանի անասունների սեփականատեր: *Ծըմըռնապէնդ ըրավ, ըպրընքըտարէրը մընացէն չա՛ՀՀ ընգած* (Բ):

ԸՁԸԼԱՄԱՆ/ՁԸԼԱՄԱՆ - *գ.* Հարմար պահ՝ ժամանակ՝ միջոց: *Էնքան կօրծը շատ ա, ըՁըլաման չի կա, թա հաց օտինք՝* (Բ):

- ԸՁըլաման տալ - Հարմար պահ՝ ժամանակ՝ միջոց ընձեռել: *Վէրչը էտ շօնը ըՁըլաման չի տաս էտ հարթնանը* (ՀԺՀ, V, 280):

ԸՁԸԼԼԱՄԱ/ՁԸԼԼԱՄԱ - *գ.* Որեւէ գործողության ժամանակավոր դադար՝ ընդ-

միջում: *Սաբավ կօրծ ա անում, էրկու ժամանը մին ըջըլլամա յա անում* (Ձ):

ԸՋԸՂԱՏԸՂ - *գ.* Բարկության առիթ՝ պատճառ: *Ըտըրա ըջըղատըՂընը էլ էն ա ինում, վէր կընէգ'ը հիրըվանէն հէնգ' ծու յա տամ* (Ձ):

ԸՋԸՂՎԷԼ - *չբ.* Ջայրանալ, բարկանալ, հակառակվել: *Թաքավէրը շատ ա ըջըղվըմ, կըզնըվըմ, օզըմ ա, թա ըտըրանց կըլօխնին կըտրիլ տա...* (ՀԺՀ, V, 50):

ԸՋԸՂՈՒ - *մ.* Ի հեճուկս, ջգրու, հակառակ: *ՀիրըՂվանը վէր հիրըվանէն ըջըղու կօրծ փըռնից, կօրծէրը թանս կըք'ինի* (Ձ):

ԸՋԸՂՕԹՈՒՆ - *գ.* Ջայրույթ, բարկություն, հակառակություն: *Հենգ' տարէ յա ընցալ, ամմա ըտըրա ըջըղօթունը հանլա անց չի կացալ* (Բ):

ԸՌԱԲՕՉԻ/ՌԱԲՕՉԻ *(ռուս. рабочий)* - *գ.* Բանող՝ աշխատող անձ, բանվոր, աշխատավոր: *Էտ ըռաբօչին սաղ օրը ըտըրանց հըՂտէ կօրծ ա անում* (Բ):

ԸՌԱԳԱԹԿԱ - *տե՛ս* ԸՌԸԳԱԹԿԱ:

ԸՌԱԴ - *տե՛ս* ԸՌԱԴ[1]:

ԸՌԱԴ[1]/ԸՌԱԴ/ՌԱԴ[1]/ՌԱԴ *(արաբ. red')* - *գ.* Ոտքի թողած դրոշմը գետնի՝ ձյան եւն վրա, ոտնատեղ, ոտնահետք: *ԿըՂրսկանը ըռանվը ք'ընում ա, ծըմակէն ըռխումը կ'ուլին ըսպանում* (Ձ):

- Ըռանդ անել - *արիմ.* 1. Հեռացնել, կորցնել, քշել, վռնդել: *Մարթը կըզնըվում ա կընգանը յըրա, թա.- Էտ խուխէն ըռանդ ըրա՛, հացըս օտիմ* (Ձ): 2. Սպանել, ոչնչացնել, վերացնել: *...Տի թիք'ա-թիք'ա կըտըրէլավ ռադ ա անում* (ՀԱԲ, 15, 114):

- Ըռանդը քաշիլ - *տե՛ս* Ըռանդ ինիլ:

- Ըռանդ ինիլ - *արիմ.* Հեռանալ, կորչել: *Տըղէն մարը թըկէս ա, տանան տուս քըցիս, թա.- Ք'ինի՛ ռա՛դ իլ, մէզ պիճ չի հարկավէր* (ԱԱ, 73):

ԸՌԱԴ[2]/ՌԱԴ[2] *(ռուս. ряд)* - *տե՛ս* ՇԱՐՔ:

ԸՌԱԴ(Յ)Օ/ՌԱԴ(Յ)Օ *(ռուս. радио, անգլ. radio, լատ. radiare)* - *գ.* Ռադիո: *Միհէնգ'վա դարըմը ըռանդօն էլ ա ըդանթ ընգալ* (Բ):

- Ըռանդ(յ)օ կօլ տըված - Շատախոս, չաչանակ: *Խըրէգ' խօսէ, լի՞, ըռանդյօ կօլ տըված ը՞ս* (Բ):

ԸՌԱՋ/ՌԱՋ *(ռուս. раз)* - *շ.* Կապակցում է հիմունքի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ՝ քանի որ, որովհետեւ, ըստ այնմ որ: *Ասում ա.- Չէ, վէր չէ, ըռազ իմ քուր ասալ ա, բէդմա ք'ինիմ* (Ձ):

ԸՌԱՋԲՕՅՆԻԿ/ՌԱՋԲՕՅՆԻԿ *(ռուս. разбойник)* - *տե՛ս* ԸՎԱՋԱԿ:

ԸՌԱՋԻ/ՌԱՋԻ *(արաբ. rāzy, թրք. razi)* - *ած., մ.* Գոհ, բավական, բավարարված, համաձայն: *Առուտուրականը փօղ ա տամ, դանրվիշը ռազի յա ք'ընըմ* (ՀԺՀ, V, 179):

- Ըռազի կէնալ/ինիլ - Համաձայնել, հավանություն տալ, բավարարված լինել: *Էտ գ'անդան նան ախճիկը սիրահարվըմ ըն ուրանուր, ամմա ըխճըկանը հանը ռազի չի կէնըմ...* (ԼՂԲ, 329):

- Ըռազի կըց(ը)նէլ - Համաձայն դարձնել, հավանել տալ: *Թաքավէրին պուճուր տըղան օզըմ չի, ամմա էն ախճիգ'ը ռազի յա կըցընում* (ՀԺՀ, V, 76):

ԸՌԱՋՄԷՐ/ՌԱՋՄԷՐ *(ռուս. размер)* - *գ.* Չափս, չափ: *Ըտըրա շօրին ըռազմէրը մըԷծ ա* (Ձ):

ԸՌԱՋՆԱԲԸՐԱՋՆԻ/ՌԱՋՆԱԲԸՐԱՋՆԻ *(ռուս. разнообразный)* - *ած.* Ջանազան, տեսակ-տեսակ: *Ըտըրա հըյաթումը ըռազնաբըրազնի ծառէր կա* (Բ):

ԸՌԱՋՆԻՑԱ/ՌԱՋՆԻՑԱ *(ռուս. разница)* - *գ.* Տարբեր լինելը, զանազանություն: *Ըտըրանց ըռազնիցան շատ ա մըԷծ* (Բ):

ԸՌԱՋՐԷՇԷՆ(Ն)Ի/ՌԱՋՐԷՇԷՆ(Ն)Ի *(ռուս. разрешение)* - *գ.* Թույլտվություն, թույլատրում: *Էտ ախճիգ'ը մընչըԷվ վէր հօրը անա ըռազրէշէննի չի յօր օնում, տանան տուս չի կ'ամ* (Ձ):

ԸՌԱԺՌԷՆ(Ն)Ի/ՌԱԺՌԷՆ(Ն)Ի *(ռուս. рождение)* - *գ.* Ծննդյան տարեդարձ, ինչպես նաեւ այդ առթիվ կազմակերպված խնջույք: *Ըտըրա ըռաժդէննավը քուվէրքը էնքան պար ըն կ'ամ, լափ հանլա ըդնում ըն* (Ձ):

ԸՌԱԺՕԿ/ՌԱԺՕԿ *(ռուս. рожок)* - *գ.* Կոշիկը հագնելու հարմարանք: *Նը՞ղ վընանամանը առանց ռաժօկ կ'ը՞նալը տիժէր ա* (Բ):

ԸՌԱԿ/ՌԱԿ *(ռուս. рак)* - *գ.* Չարորակ ուռուցք, քաղցկեղ: *Անդար ըռակը աշխարքըս կանլալ ա, մինը կա վէչ՝ ճար անէ* (Բ):

ԸՌԱԿԱՑԸՏԷԼԻ/ՌԱԿԱՑԸՏԷԼԻ *(վրաց. rkaciteli)* - *գ.* Մանր հատիկներով սպիտակ խաղողի տեսակ: *Ըռակացըտէլին տըմասկան խաղու վա* (Բ):

ԸՌԱԿԷՏ/ՌԱԿԷՏ *(ռուս. ракета, գերմ. Rakete, իտ. roccheta)* - *գ.* Մարտական արկ՝ հրթիռ: *Ասում ըն՝ միհէնգ հանց ըռակէտնէ կա, վէր կարին ըստըդաս պէց թօղին, Ամէրիկան փուչըցընին* (Բ):

ԸՌԱՆՀՄ/ՌԱՆՀՄ *(արաբ. rahm, թրք. rahmet)* - *գ.* 1. Գութ, կարեկցանք: *Էտ կընգանը ռանհմը շատ ա ինում, էտ խօխօնցը պահում ա, մընծըցընում* (Ձ): 2. Վախ, սարսափ, սարսուռ: *Էտ ըռանհմը ըտըրան ըսպանից* (Բ):

- Ըռանհիմ անել - Գթալ, կարեկցել: *Աստված ռանհմ ա ըրալ, մին ղօչ վէրթի տըվալ...* (ՋՏ, Ա, 143):

- Ըռանհիմը վէր կօխէլ - Վախենալ, սարսափել, սարսռալ: *Էտ կընէգ'ը արչին վէր տըԷսնում ա, ըռանհիմը վէր ա կօխում* (Ձ):

ԸՌԱՆՀՄԱՎ/ՌԱՆՀՄԱՎ - *ած.* 1. Գթառատ, գթասիրտ: *Ըռանհմավ մարթին Աստուծ լ'ավ կընէշի* (Բ): 2. Սարսափազդու: *Էտ շէնըմընը էլ մին ռանհմավ մարթ ա ինում, լօխ նըստա վախում ըն* (Ձ):

ԸՌԱՆՄԱՆՐ/ՌԱՆՄԱՆՐ - *ած.* Գաղտնիք իմացող: *Ըռանմանր մարթին լանզուն էրկան կինի* (Ձ):

ԸՌԱՆՄ-ԸՌԱՆՄ/ՌԱՆՄ-ՌԱՆՄ *(արաբ. rami (ավազով հմայություն), պրս. ram (գռեհիկ ժողովուրդ), թրք. remil (գուշակություն)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըռանմ-ըռանմ(ը) ածէլ - *տե՛ս* Ղըժի տալ:

- Ըռանմ-ըռանմ(ը) ըղնէլ/կ'անլ - Մի բան շատ ցանկանալով, բայց չկարողանալով ձեռք բերել՝ իրագործել՝ տանջվել, մտատանջվել: *Հինչ ա էտ ըխճըկանը տըԷսալ ա, էն օրվանից էն ա ըռանմ-ըռանմ կ'անլիս* (Ձ):

ԸՌԱՄԿԱ/ՌԱՄԿԱ *(ռուս. рамка, լեհ. rama, գերմ. Rahmen)* - *գ.* Մետաղյա՝ փայտյա եւն շրջանակ՝ մեջը որեւէ բան հագցնելու՝ ամրացնելու եւն համար: *Մին դաշանգ' ըռամկա յա շինում, հօրը նըկարը տինում մաչին, պատան կախ տամ* (Ձ):

- Ըռամկան տուս կ'անլ - *տե՛ս* Չափը ընցընել:

- Ըռամկում պահէլ - Հսկել, զսպել, չթողնել, որ չափն անցնի: *Էտ կընէգ'ը հըրթնէրէն ըռամկում ա պահում* (Բ):

ԸՌԱՄՈՒՋ/ՌԱՄՈՒՋ *(թրք. remiz (նշան, խորհրդանիշ)* - *գ.* Դեմքի արտահայտությունը՝ գույնը: *Ըտըրա ըռանմուզը հու տըԷսնում ա, իրըՂք օր հացա կընտրում ա* (Ձ):

ԸՌԱՅ/ՌԱՅ *(արաբ. rayat (ժողովուրդ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըռայ կ'անլ - Համախմբվել, միասնական դառնալ: *Թա խըՂլք օնիք, ռայ յէ՛կէք, թա չէ նէռը վէր ծընվալ ա, ըստըրանա լ'ավ վէտ չի կ'ամ...* (ՋՏ, Ա, 58):

ԸՌԱՅԿՕՄ/ՌԱՅԿՕՄ *(ռուս. райком)* - *հպվ. գ.* 1. Խորհրդային կարգերի օրոք շրջանային կուսակցության կոմիտե: *Մին օր էլ ըտըրան ըռայկոման ծէն ըն տամ* (Ձ): 2. Նույն կոմիտեի քարտուղարը: *Հըդրանթա ըռայկոմը կամ ա Տօղ, ժողով անում, էտ մարթին մէդալ տամ* (Ձ):

ԸՌԱՅՍԱՎԷՏ/ՌԱՅՍԱՎԷՏ *(ռուս. райсовет)* - *հպվ.* 1. Խորհրդային կարգերի օրոք շրջանային՝ ավանային սովետ: *Ըռայսավէտին շէնք'ը քանանալ ըն* (Բ): 2. Նույն սովետի նախագահը: *Ըռայ-*

սավէտը փոխում ըն, մին ջանիլ տըղա տինում տըէղը (Ձ):

ԸՌԱՅՕՆ/ՌԱՅՕՆ *(ռուս. район, ֆր. rayon)* - *գ.* Վարչատարածքային ստորաբաժանում՝ շրջան: *Հինչքան էլ մըր ռայօնէն անըմը փոխում ըն, էլիա անիլ մարթիքը ճըրըպէրթա յըն խօսում* (ԼՂԲՔ, 28):

ԸՌԱՆԱՀԱՎ/ՌԱՆԱՀԱՎ - *գ.* Մի տեսակ կաքավ, որ տարածված էր Առանի դաշտում: *Ըռանահավ չի մընաց, լօխ կուտուրը՝ցէն* (Ձ):

ԸՌԸՆԳ/ՌԸՆԳ *(պրս. rang, թրք. renk)* - *գ.* 1. Երանգ, գույն: *Էտ շօրին ըռանգը կընգանը սըրտավը չինում* (Ձ): 2. *տե՛ս* ԿԸՐԱՍԿԱ: *...Մընացած փուլըն էլ տաս ա, ռանգ ինք օնէս, տընէս* (ՀԺՀ, V, 259): 3. *փխբ.* Տարատեսակ, կարգ: *Մրհէնգ Մելիք Շահնազարը սահանց անա հըրցընում ա, թա հի՞նչ ռանգի, հինչ փօրմի պատիժ տա դէրվիշին* (ՀԺՀ, V, 603): 4. *տե՛ս* ՁԱՎԱՐԿԱ(2): *Ըռանգին կըլխավը վէր ճուր ընը՝ցէր, չայը կընհամէ* (Բ):

- Ըռանգ անել - *տե՛ս* Ըռանգ տալ:

- Ըռանգան ընդնել - 1. Գունաթափվել, խամրել: *Շօրը ըռանգ՝ան ընգալ ա* (Բ): 2. *տե՛ս* Ըռանգը մըռալու ըռանգ տը՝ռնալ:

- Ըռանգը մըռալու ըռանգ տը՝ռնալ/շինիլ - Խիստ գունատվել՝ դժգունել: *Էտ վէր տը՝սնում ա, վախան նըհը՝տ ըռանգը մըռալու ըռանգ ա տը՝ռնում:*

- Ըռանգը յըրան - *տե՛ս* Ըռանգը տը՝ղը:

- Ըռանգը վը՝ղ/պատէն ծէփը տը՝ռնալ/շինիլ - *տե՛ս* Ըռանգը մըռալու ըռանգ տը՝ռնալ:

- Ըռանգը տը՝ղը - 1. Նախկին՝ բնական գույնը պահպանած, չխամրած: *Հէնգ տարէ յա՝ կը՝նում ա էտ դարյան, ամմա ըռանգը էն ա հանգ տը՝ղը:* 2. *տե՛ս* Ըռանգ՝ըռուշ(տ)ը տը՝ղը:

- Ըռանգը տը՝ղը կանգ - 1. Նախկին գույնը վերականգնվել: *Գանքան քըցըխճիրանվ լըվացավ, ըռանգը տը՝ղը յը՝կավ* (Բ): 2. *տե՛ս* Ըռանգ՝ըռուշ(տ)ը տը՝ղը կանգ:

- Ըռանգը տանուս տալ/տանուս քըցիլ - Թրջվելուց գույնը՝ ներկը տարածվել: *Շալվարը լըվացավ, ըռանգը տանուս տըվավ* (Բ):

- Ըռանգը փախչիլ/փոխէլ/քըցիլ/քանիլ - *տե՛ս* Ըռանգ՝ան ընդնել:

- Ըռանգը փըխըփոխ անել - Խիստ վախենալ՝ հուզվել: *...Մին դուլլուղչի էտ լօխ տէսնում ա, ռանգը փըխըփոխ անում* (ՀԱԲ, 15, 154):

- Ըռանգ նըհաշ տալ - 1. Վախեցնել, սպառնալ: *Թանգգան նախագան ընտրանց ըռանգ ա նըհաշ տամ, զինքընէն հըվաքում ըն* (Ձ): 2. Ընդդիմանալ, համառել: *Էտ տըղան ընտրանց ըռանգ ա նըհաշ տամ, կարում չըն կօխկէն քըցին* (Ձ):

- Ըռանգ տալ - *տե՛ս* Կըրասկա տալ: *...Քինամ ա ծու առնըմ, պիրըմ իփըմ, ռանգ տամ, տանըմ Գանջան ծախըմ* (ԼՂԲ, 387):

ԸՌԸՆԳ-ԸՌԸՆԳ/ՌԸՆԳ-ՌԸՆԳ *(թրք. rengāreng* - *ած.* Բազմագույն, երփներանգ, խայտաբղետ: *Պըլը-Պուղին տըսնաս ա՝ մին խօխու վընէրէն տըրխընէրէն խէ ղանգանգ տըրխընտանէր կա, էն էլ պըրթի ռանգ-ռանգ թիլա կ՝ըրծած* (ԼՂԲ, 396):

- Ըռանգ-ըռանգ ինիլ/փըխըփոխ անել/փոխ տալ - *տե՛ս* Ըռանգը փըխըփոխ անել:

ԸՌԸՆԳ-ԸՌԷՎՈՒՇ/ՌԸՆԳ-ՌԷՎՈՒՇ - *տե՛ս* ԸՌԸՆԳԸՌՈՒՇ(Տ):

ԸՌԸՆԳԸՌՈՒՇ(Տ)/ՌԸՆԳԸՌՈՒՇ(Տ) *(պրս. rang+rašt (փխրուն), արաբ. rošd (աճում), թրք. rüšt (հասուն, չափահաս)* - *գ.* Դեմքի գույնը, արտաքին տեսքը՝ կերպարանքը: *Ըտըրա ըռանգ՝ըռուշտըն էլ էնքան կ՝էշ ա հինում, վէր վէշ մինը իրը՝սէն յէշում չի* (Ձ):

- Ըռանգ՝ըռուշ(տ)ը տը՝ղը - Գեղեցիկ արտաքինով, սիրունատես: *Թաքավը՝ռէն տըղան սաղ յէրգ՝իրը շօռ ա կ՝ամ, մին ըռանգ՝ըռուշը տը՝ղը ախճիգ՝ չի ճարում* (Ձ):

- Ըռանգ՝ըռուշ(տ)ը տը՝ղը կանգ - Զվարճանալ, կազդուրվել, աշխուժանալ: *...Էլիա աշխարքըս հուրանը տէռավ, ռանգ՝ըռուշը տը՝ղը յէկավ...* (ԶՏ, Ա, 14):

- Ըռանգ՝ըռուշ(տ)ը փոխէլ - *տե՛ս* Ըռանգ՝ը մըռալու ըռանգ տը՝ռնալ: *...Վէրչը կ՝ամ ըն էտ պատին տակէն տըրան քըթանում, տէսնում վը՝նանը փըշըրած, ռանգ՝ըռուշը փոխած...* (ՀԺՀ, V, 403):

ԸՌԸՆԳ՝ԸՌՈՒՇ(Տ)ԱՎ/ՌԸՆԳ՝ԸՌՈՒՇ(Տ)ԱՎ - *ած. տե՛ս* Ըռանգ՝ըռուշ(տ)ը տը՝ղը:

ԸՌԸՆԴԱՆ/ՌԸՆԴԱՆ *(պրս. rande, թրք. rende)* - *գ.* Հյուսնի՝ պողպատե լեզվակով հղկող գործիք, ռանդա: *Դանլգ՝անը վէր ռանդան չի պինըցըրավ, էլ հինչ ո՞ւստա յա՞* (Բ):

- Ըռանդան տալ - *տե՛ս* ԸՌԸՆԴԻԼ:

- Ըռընդանվ ընցըցընէն - *տե՛ս* ԸՌԸՆԴԻԼ:

ԸՌԸՆԴԻԼ - *տե՛ս* ԸՌԸՆԴԻԼ:

ԸՌԱՆՇՊԱՐ/ՌԱՆՇՊԱՐ/ԸՌԱՆՉՊԱՐ/ՌԱՆՉՊԱՐ *(պրս. rangbar, թրք. renčper)* - *տե՛ս* ԱՔԻՆՉԻ: *Էտ մարթը ռանշպար ար, քըշէրավ քինում ար ընտատը՝ղը, քըշէրը կ՝ամ* (Ձ):

ԸՌԱՆՇՊԱՐՕԹՈՒՆ/ՌԱՆՇՊԱՐՕԹՈՒՆ/ԸՌԱՆՉՊԱՐՕԹՈՒՆ/ՌԱՆՉՊԱՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԱՔԻՆՉՕԹՈՒՆ:

ԸՌԱՆՉՊԱՐ - *տե՛ս* ԸՌԱՆՇՊԱՐ:

ԸՌԱՆՉՊԱՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՌԱՆՇՊԱՐՕԹՈՒՆ:

ԸՌԱՇԻԴ/ՌԱՇԻԴ *(արաբ. rāšid (ուղղափառ, մակդիր առաջին չորս խալիֆների)* - *գ.* Աշխատասեր, եռանդագին աշխատող, գործունյա: *Մխճի, յէկէք, խընճըլօգանց ախճիկընը օգինք, ասըմ ըն՝ շատ ռաշիդ ախճիկ ա* (ԶՏ, Ա, 63):

ԸՌԱՇՊԻԼ/ՌԱՇՊԻԼ *(ռուս. рашпиль, իտ. raspa)* - *գ.* Հյուսնի կամ կոշկակարի՝ ատամնավոր հղկելու գործիք: *Դանլգ՝անը ըռաշպիլանվը կացնէն կօթը դանզընում ա* (Բ):

ԸՌԱՇՕՏ - *տե՛ս* ԸՐԱՇՕՏ:

ԸՌԱՍԽՕՂ - *տե՛ս* ԸՐԱՍԽՕՂ:

ԸՌԱՍԿԸԼԱԴՈՒՇԿԱ/ՌԱՍԿԸԼԱԴՈՒՇԿԱ *(ռուս. раскладушка)* - *գ.* Ծալովի մահճակալ: *Տանը տը՝ղ չի կա, թա կընրավաթ տինին, ըռասկըլադուշկու յընրա յընը քօն հինում* (Բ):

ԸՌԱՍՊԱԼԿՕՄ/ՌԱՍՊԱԼԿՕՄ *(ռուս. райисполком)* - *հպվ. գ.* 1. Խորհրդային կարգերի օրոք շրջանային գործադիր կոմիտե: *Հարցը հընսնում ա ըռասպալկօմ* (Ձ): 2. Այդ կոմիտեի նախագահը: *Էտ ըռասպալկօմը շատ փիս մարթ ա հիլանլ* (Բ):

ԸՌԱՍՏ/ՌԱՍՏ *(պրս. rāst (հանդիպումն, պատահմունք), թրք. rast)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըռաստ հինիլ/կանգ - Հանդիպել, պատահել: *Քինամ ա, քինամ, ըռաստ կ՝ամ մին պառավ մարդու* (Ձ):

ԸՌԱՎԱԼ/ՌԱՎԱԼ *(գրբ. առաւել (ավելի, շատ, առավելությամբ)* - *գ.* 1. Վարելահողի երկու ծայրերը, որոնք մնում են առանց վարելու: *Քընօրէն յը՝ետ ըն տը՝ռնում, ըռավալ՝ումը նըստում, քընօր անում* (Ձ): 2. *փխբ.* Վերջ, ծայր, ավարտ: *Մինչը՝էվ կօրծէն ըռավալ՝ը հանլան շատ կա* (Բ): 3. *տե՛ս* ՀՕՐՕՎԷԼ:

- Ըռավալ անել - Վարի ժամանակ վարելահողի ծայրերը խոպան թողնել: *Տըրախտըրը էտ տափը մին օրումը վարում ա, ղըրղընէքընը էլ ըռավալ անում* (Ձ):

- Ըռավալը հընսնել - 1. Գործը վերջնակետին հասնել՝ ավարտվել: *Անջախանջախ կօրծէն ըռավալ՝ը հընսավ* (Բ): 2. Վերջը գալ, մեռնել: *Հընմբանցանն ըռավալ՝ընը էլ հընսավ* (Բ):

ԸՌԱՎԷՏ/ԸՌԱՎՕՏ *(գրբ. առաւօտ)* - *տե՛ս* ԸՌՈՒԹԱՆԱ:

ԸՌԱՎՕՏ - *տե՛ս* ԸՌԱՎԷՏ:

ԸՌԷ/ՌԷ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըռէ կ'ալ - *տե՛ս* Հըղէ կ'ալ:

- Ըռէ պիրիլ - *տե՛ս* Հըղէ պիրիլ:

ԸՌԷԳ'ԱՆ/ՌԷԳ'ԱՆ - *մ.* Առանց վճարի, ձրի: *Ամմէն հինչ էն ա ըռէգ'ան վէր ածած, հիշկան օգում ըս, կարիս տանիս* (Ձ):

ԸՌԷԺԻՄ/ՌԷԺԻՄ *(ռուս. режим, ֆր. régime, լատ. regimen)* - *գ.* Որեւէ բանի համար սահմանված կարգ: *Էտ մարթը ըռէժիմավ հաց ա օտում, ըռէժիմավ կօրծ անում, ըռէժիմավ քօն ինում* (Բ):

ԸՌԷԼՍ/ՌԷԼՍ *(ռուս. рельс, անգլ. rails, լատ. regula)* - *գ.* Երթուղային գիծ՝ ռելս: *Էտ ռէլսէրը հըսնըմ ա մինչըᵊվ Ըստեփանակ'ըᵊրտա տակը* (Բ):

ԸՌԷԽ - *տե՛ս* ԸՌԸᵊԽ:

ԸՌԷԿՕՐԴ/ՌԷԿՕՐԴ *(ռուս. рекорд, անգլ. record)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըռէկօրդ թըխէլ - Նվաճված հաջողությամբ՝ բարձր ցուցանիշով մյուսներին գերազանցել: *Սօնան պառավ հա'լա'վ կուլիսզումը ռէկօրդ ա թըխէս* (ՀԲ, 337):

ԸՌԷՀԱՆ/ՌԷՀԱՆ *(գրբ. ռահան)* - *գ.* Շրթնածաղիկների ընտանիքին պատկանող հոտավետ բանջարաբույս: *Առանց ռէհան կարէլ չըս ա'զա'լու-մա'զա'լու սալաթ շինիս* (Բ):

ԸՌԷՄՕՆՏ/ՌԷՄՕՆՏ *(ռուս. ремонт, ֆր. remonte)* - *գ.* Նորոգում, վերանորոգում: *Տանը ըռէմօնտը սըկսում ա* (Բ):

- Ըռէմօնտ անէլ - *նբ.* Նորոգել, վերանորոգել: *Վընընըմանէրը ռէմօնտ ա ըրալ* (Բ):

ԸՌԷՅԿԱ/ՌԷՅԿԱ *(ռուս. рейка)* - *գ.* Տախտակի նեղ ու բարակ շէրտ: *Մըղակը կապում ա, մին ռէյկա էլ թըխում, վէր պէնվա վէչ* (Ձ):

ԸՌԷՆ/ՌԷՆ - *տե՛ս* ՎԱՀԸՐ:

ԸՌԷՆԳԷՆ/ՌԷՆԳԷՆ *(ռուս. рентген, գերմ. Röntgen)* - *գ.* Ռենտգենային ճառագայթներով լուսավորելու սարք, որ գործածում են բժշկության մեջ: *Առաչ հու վա՞ գ'իդա'ցա'լ՝ ռէնգէնը հինչ ա* (Բ):

- Ըռէնգէն ըղնէլ/քըցիլ - Այդ սարքով հիվանդությունը ախտորոշել: *Ըռէնգէն ա ըղնում, տըᵊսնում փածըᵊղնը օռած* (Բ):

ԸՌԷՍՏԱՐԱՆ/ՌԷՍՏԱՐԱՆ *(ռուս. ресторан, ֆր. restaurant, լատ. restaurare)* - *գ.* Բարձր կարգի ճաշարան, ռեստորան: *Ըստի վէր ք'ինի, շինէրքըմը էլ ըն ռէստարանէ պինա'ն* (Բ):

ԸՌԷՎԻՋԱ'/ՌԷՎԻՋԱ' *(ռուս. ревизия, ֆր. revision, լատ. revisio)* - *գ.* Ստուգում, վերստուգում: *Ըռէվիզա'ն վէր ինի վէչ, լօխ հօք'ի՞ումա'թին կըխա'փին* (Ձ):

- Ըռէվիզա' անէլ - Ստուգել, վերստուգել: *Ըռէվիզա' յըն անում մաղազինը, տըᵊսնում ապըրանքը պակաս* (Ձ):

ԸՌԷՎԻՋՕՐ/ՌԷՎԻՋՕՐ *(ռուս. ревизор, ֆր. reviseur, լատ. revisere)* - *գ.* Ստուգում՝ վերստուգում կատարող անձ: *Պիրո՞ւմ ա ըռէվիզօրին ըռուշվաթ տամ, վէր փօչէրը պէց չի անէ* (Ձ):

ԸՌԷՎՈՒԾ/ՌԷՎՈՒԾ - *տե՛ս* ԸՌԱ'ՆԳԸՌՈՒԾ(Տ):

ԸՌԸԲԱ'ԹԻՆ - *տե՛ս* ԸՌԸՂԲԱ'ԹԻՆ:

ԸՌԸԳԱԹԿԱ/ՌԸԳԱԹԿԱ/ԸՌԱԳԱԹԿԱ/ՌԱԳԱԹԿԱ *(ռուս. рогатка)* - *գ.* Փոքրիկ քար արձակելու հարմարանք, պարսատիկ: *Մէհէտ մին տըղա պիցըրացալ ա էտ պըռըշնին, վէր ռագաթկու հաչա կըտըրէ, վէր ա ընգալ, մըᵊռալ* (ԱԱ, 48):

- Ըռըգաթկու քար էլ չի տըᵊռնալ - Շատ փոքր՝ նիհար է: *Օսէփը ծըծըդէս ա, թա.- Մ' կըծ'ա'հա'ր, էտ հինչ կ'առ ա՞, էտ ըռըգաթկու քար էլ չի տըᵊռնալ* (Ձ):

ԸՌԸԴԻՍԿԱ/ՌԸԴԻՍԿԱ - *գ.* Ամսաբողկ: *Խըᵊղճը ըռըդիսկա յա ծախում, յօլլա ք'ինինում* (Բ):

ԸՌԸᵊԽ/ՌԸᵊԽ/ԸՌԷԽ/ՌԷԽ *(գրբ. երախ)* - *գ.* 1. Կենդանիների բերան, երախ: *Ասլանը ըռըᵊխը պէնում ա, թա ըտըրա կօլ տա* (Ձ): 2. *անրգ.* Մարդու բերան: *Ըռըᵊխը մըᵊծ ախճիգ' ա* (Բ): 3. Կտրող գործիքի սայր՝ շեղբ: *Տինակէն ռըᵊխը քուռացալ ա* (Բ): 4. *տե՛ս* ԸՌԸԽԿԱԼԻ: 5. Ամանի՝ անոթի վերին մասը՝ ելքը: *Էտ ղըզղանէն տակը լէն ա ինում, ըռըᵊխը՝ նըᵊղ* (Ձ): 6. Սկիզբ, մուտք, ելք եւն: *Ծըմակէն ըռխումը մին ըլբաստըրակ ա ջիհա՞ում* (Ձ):

- Ըռըᵊխ բըհամ անէլ - *տե՛ս* Յըխբըոզազ անէլ (1):

- Ըռըᵊխը բիդի յէրգ'ինքը - Գինը շատ բարձր: *Բըզարէն ապըրանքը ըռըᵊխը բիդի յէրգ'ինքըն ա, ինք' օնօղ չի կա* (Բ):

- Ըռըᵊխը ըղնէլ - 1. Մեկի խոսակցության՝ բամբասանքի առարկան դառնալ: *Էտ պէնը ըղնում ա շինա'ցուց ըռըᵊխը, լօխ ըտըրանա յըն խօսում* (Ձ): 2. Պատահել, հանդիպել: *Ըտի էտ տըղան ըղնում ա կըրակէն ըռըᵊխը* (Ձ):

- Ըռըᵊխը թա'մա՞ւզ պահէլ/պէնալ - *տե՛ս* Պէրանը թա'մա՞ւզ պահէլ:

- Ըռըᵊխը՝ լակ-լակ, կըլօխը՝ թակթակ - Ասում են դատարկախոս մարդկանց մասին. դատարկախոսը միշտ ծեծ կուտի:

- Ըռըᵊխը՝ լէն/զըᵊռ, փօխկը՝ ճօթըռած - Մեծախոս աղքատ: *Ամմէն տըᵊղ էլ ըռըᵊխը՝ լեն, փօխկը՝ ճօթըռած մարթիք' կան* (Ձ):

- Ըռըᵊխը ծակ - *տե՛ս* Ըռըᵊխը չանթա (Ձ):

- Ըռըᵊխը ծէփէլ - *տե՛ս* Պէրանը կապէլ:

- Ըռըᵊխը ծըռէլ - *տե՛ս* Պէրան ծըռէլ:

- Ըռըᵊխը կախ անէլ/տալ - Ոչինչ չանել: *Հինչ ը՞ս ըռըᵊխըտ կախ տուվալ, հու վա՞ պըրտական անէ՝ տու օտիս* (Ձ):

- Ըռըᵊխը կապ - *տե՛ս* Պէրանը կապ:

- Ըռըᵊխը կապէլ/կուպ(ըր) անէլ - *տե՛ս* Պէրանը կապէլ:

- Ըռըᵊխը կապիս՝ վըᵊռավը կըխօսէ - *տե՛ս* Պէրանը կապիս՝ վըᵊռավը կըխօսէ:

- Ըռըᵊխը կըրակ ըղնէլ - *տե՛ս* Պէրանը կըրակ ըղնէլ:

- Ըռըᵊխը հավաք պահէլ - *տե՛ս* Պէրանը հավաք պահէլ:

- Ըռըᵊխը հըղաղէլ/հը(ղ)ըղօրէլ - *տե՛ս* Պէրանը հըղաղէլ:

- Ըռըᵊխը հըվաքէլ - Դեմն առնել, պահանջները բավարարել: *Էտ ղօնաղը շատ օտօղ ա ինում, տընատարը կարում չի՝ ըռըᵊխը հըվաքէ* (Ձ):

- Ըռըᵊխը հինչ ա՞ - Այլընտրանք չունի, ստիպված է: *Կընէգ'ը ասմա.- Քու ըռըᵊխըտ հինչ ա՞, ասում ըմ, բիդի անիս* (Ձ):

- Ըռըᵊխը հօփ օնէլ - *տե՛ս* Պէրանը կապէլ:

- Ըռըᵊխը ճըղած/ճօթըռած - *տե՛ս* Պէրանը ճըղած:

- Ըռըᵊխը ճըղէլ/ճօթըռէլ - *տե՛ս* Պէրանը ճըղէլ:

- Ըռըᵊխը յըᵊղէլ/յըղօտէլ - *տե՛ս* Պէրանը յըᵊղէլ:

- Ըռըᵊխը յըղօտվէլ - *տե՛ս* Պէրանը յըղօտվէլ:

- Ըռըᵊխը շաղ տալ - *տե՛ս* Պէրանը շաղ տալ:

- Ըռըᵊխը շօռ ածէլ - *տե՛ս* Պէրանը շօռ ածէլ:

- Ըռըᵊխը չանթա - 1. Մեծ բերան ունեցող: *Ըռըᵊխը չանթա մարթ ա* (Ձ): 2. Շատակեր, անկշտում: *Ըտըրան էլ ըռըᵊխը չանթա էրկու խօխա յա ինում* (Ձ):

- Ըռըᵊխը պաժառ ըղնէլ - *տե՛ս* Պէրանը կըրակ ըղնէլ:

- Ըռըᵊխը պէն քըցիլ - *տե՛ս* Պէրանը պէն քըցիլ:

- Ըռըᵊխը պէց - *տե՛ս* Պէրանը պէց:

- Ըռըᵊխը պէց անէլ - *տե՛ս* Պէրանը պէց անէլ:

- Ըռըᵊխը պէց թօղնէլ - *տե՛ս* Պէրանը պէց թօղնէլ:

- Ըռըᵊխը պէց մընալ/ինիլ - *տե՛ս* Պէրանը պէց մընալ:

- Ըռըᵊխ ըռխու տալ/տինիլ - *տե՛ս* Քըᵊթ քըթու տալ:

- Ըռըᵊխըս կըլօխըս ա՞ թակալ - Ինչո՞ւ պետք է անգաղտնապահության կամ որկրամոլության պատճառով նախատվեմ: *Ըռըᵊխըս կըլօխըս ա՞ թակալ, խէ բի՞դի ասիմ* (Ձ):

- Ըռը՝խը վը՝սկըռ կօխէլ/քըցիլ - *տե՛ս* Պէրանը վը՝սկըռ կօխէլ:

- Ըռը՝խը վը՝տէլ - *տե՛ս* Պէրանը վը՝տէլ:

- Ըռը՝խը տալ - 1. Բտել, սնել: *Կօրման ըռը՝խըն ա տամ, էտ խօգ՛էրը ք՛ուքանում ըն* (Բ): 2. Հանձնել, մատնել: *Հըրըվանէն միլիցին ըռը՝խը տըվավ* (Ձ): 3. Որեւէ բանով կտրտել՝ տրորել՝ հնձել եւն: *Մահմադը ճըղացէն քարը շաշկէն ռէխըն ա տամ, քարէրը փըշրում* (ՀԱԲ, 15, 16):

- Ըռը՝խըտ կըցա՞վէ - *տե՛ս* Պէրանըտ կըցա՞վէ:

- Ըռը՝խը ցա՛ք՛իլ/ցա՛ք՛ կօխէլ/ցը՝խէլ - *տե՛ս* Պէրանը ցա՛ք՛իլ: *Յէս կըրթէցած չըմ, վէր խօսած վախտը հանց լ՛ուզվաթակ անիմ, լօխճու ռէխ ցա՛քիմ, վէր մընան ցըմաքված...* (ՋՏ, Բ, 117):

- Ըռը՝խը ցըրը՝վ տալ - *տե՛ս* Պէրանը ցըրը՝վ տալ:

- Ըռը՝խը ո՛ւրա՛ն պահէլ - *տե՛ս* Պէրանը ո՛ւրա՛ն պահէլ:

- Ըռը՝խը փըրփըրէլ - *տե՛ս* Պէրանը փըրփըրէլ:

- Ըռը՝խ տալ - *տե՛ս* Պէրան տալ:

- Ըռը՝խան բօշ/գիդի/թո՛ւլ/խը՝ղճ - *տե՛ս* Պիրանան բօշ:

- Ըռը՝խան զը՝ռ կօրծ փըռնէլ - Ձգտել անել անկարելին: *Ըռը՝խան զը՝ռ կօրծ փըռնօղը կըտա՛ւժվի* (Բ):

- Ըռը՝խան կէնալ - Սազել: *Շօ՛ղը կ՛ը՝նըմ ա, ըռը՝խան ա կէնում* (Բ):

- Ըռը՝խան յավա - *տե՛ս* Պիրանան յավա:

- Ըռը՝խան շընավը՝տ կ՛ա՛լ/շընըթուլա վէտ տը՝ռնալ - *տե՛ս* Պիրանան շընավը՝տ կ՛ա՛լ:

- Ըռը՝խան չօ՛ր/պէնդ - *տե՛ս* Պիրանան չօ՛ր:

- Ըռը՝խան տա՛ւս կ՛ա՛լ/տա՛ւս քըցիլ - *տե՛ս* Պիրանան տա՛ւս կ՛ա՛լ:

- Ըռը՝խան տա՛ւս կ՛ա՛լ, ծօցը ըղնէլ - *տե՛ս* Պիրանան տա՛ւս կ՛ա՛լ, ծօցը ըղնէլ:

- Ըռը՝խան քըրէհ օգ՛իլ - *տե՛ս* Պիրանան քըրէհ օգ՛իլ:

- Ըռը՝խավը կ՛ա՛լ - *տե՛ս* Վը՝ռավը կ՛ա՛լ: *... Ծը՝տը ասմա.- Վէր ըռը՝խավըտ կ՛ամ չի փըսակվիս, հօր ը՞ս ռազի կացալ* (ԱԱռ, 70):

- Ըռը՝խավը յը՝տ ասէլ - *տե՛ս* Պիրանավը յը՝տ ասէլ:

- Ըռը՝խէն զօռ տալ - *տե՛ս* Պիրանէն զօռ տալ:

- Ըռը՝խէն թէթ ասէլ - Խիստ հանդիմանել, սաստել, լռեցնել: *...Մըհէնգ հինչ ա ռըխիտ թէթ ըն ասալ, կըռքընէտ էլ ք՛արփաթունավ հանալ, կատունէն էլ ըն յըրատ ասլան կըտրալ* (ՋՏ, Բ, 130):

- Ըռը՝խէն ծուլուլը ք՛ինիլ - *տե՛ս* Պիրանէն ծուլուլը ք՛ինիլ:

- Ըռը՝խէն կապը կըտըրէլ - *տե՛ս* Պիրանէն կապը կըտըրէլ:

- Ըռը՝խէն համը գ՛իդա՛լ - *տե՛ս* Պիրանէն համը գ՛իդա՛լ:

- Ըռը՝խէն համը կուրցընէլ - *տե՛ս* Պիրանէն համը կուրցընէլ:

- Ըռը՝խէն հօփ տալ - *տե՛ս* Պիրանէն հօփ տալ:

- Ըռը՝խէն ղափաղ շինիլ - *տե՛ս* Պիրանէն ղափաղ չինիլ:

- Ըռը՝խէն ճիրէրը ք՛ինիլ - *տե՛ս* Պիրանէն ճիրէրը ք՛ինիլ:

- Ըռը՝խէն ճո՛ւրը վը՝ննը կէնալ - *տե՛ս* Պիրանէն ճո՛ւրը վը՝ննը կէնալ:

- Ըռը՝խէն մըդդարը գ՛իդա՛լ - *տե՛ս* Պիրանէն մըդդարը գ՛իդա՛լ:

- Ըռը՝խէն մըհալ տինիլ/քըցիլ - Ասաին ուշադրություն դարձնել՝ հաշվի առնել: *Խը՝ղճ ախճիգ՛ը օգ՛ում չի ք՛ինի, ամմա դէ էն վախտէրքը ըխճըկանը ըռը՝խէն հու վա՞ մըհալ քըցա՛լ, հօր խօսկը զակօն ա իլա՛լ* (ԱԱ, 68):

- Ըռը՝խէն մին ընգ՛ի՛ունա՛վը/ղըրաղավը - *տե՛ս* Պիրանէն մին ընգ՛ի՛ունա՛վը:

- Ըռը՝խէն յէշիլ - *տե՛ս* Պիրանէն յէշիլ:

- Ըռը՝խէն յը՝խտէրը/քաքէրը վէր ածէլ/ցըրը՝վ տալ - *տե՛ս* Պիրանէն յը՝խտէրը վէր ածէլ:

- Ըռը՝խէն չափար տինիլ - *տե՛ս* Պիրանէն չափար տինիլ:

- Ըռը՝խէն ջըլա՛վ չինիլ - *տե՛ս* Պիրանէն ջըլա՛վ չինիլ:

- Ըռը՝խէն ջըլա՛վ/տօռնը տինիլ - *տե՛ս* Պիրանէն ջըլա՛վ տինիլ:

- Ըռը՝խէն տալ - *տե՛ս* Պէրանը շաղ տալ:

ԸՌԸ՝Խ-ՄԸՌԸ՝Խ - *տե՛ս* ԸՌԸԽԸՄԸՌԸ՝Խ:

ԸՌԸԺԻ/ՌԸԺԻ - *տե՛ս* ՇԷԳ՛:

ԸՌԸԽԱԼԻ/ՌԸԽԱԼԻ - *մ.* Լի բերանով, ամբողջ ուժով, ինչքան որ կարող է: *Էշը ըտըրան վէր տը՝սնում ա, ըռը՝խալի զըռռամ ա* (Ձ):

ԸՌԸԽԱԿ՛Ո՛ՒԼ/ՌԸԽԱԿ՛Ո՛ՒԼ - *գ.* Երախակալ, դնչակալ: *Ըռը՝խակ՛ո՛ւլը քըցո՛ւմ ա շանը ըռը՝խը, կապան փըռնում, ք՛ինամ* (Ձ):

ԸՌԸԽԱՀՆՉ/ՌԸԽԱՀՆՉ/ԸՌԸԽԸԼԱՀՆՉ/ՌԸԽԸԼԱՀՆՉ/ԼԸԽԸՌԱՀՆՉ - *գ.* Վայրահաչելը, վայրահաչություն: *Ըռը՝խահա՛ՆՉը էտ շէնան անպակաս ար* (Ձ):

- Ըռը՝խահա՛ՆՉ տալ - Վայրահաչել, դատարկախոսել, չարախոսել: *Տըղամարթը վէր ըռը՝խահա՛ՆՉ տըվավ, տըղամարթ չի* (Ձ):

ԸՌԸԽԱՄԱՉ/ՌԸԽԱՄԱՉ - *գ.* Երախի՝ բերանի ներսի կողմը: *Ըռը՝խամաչը օռալ ա, կարում չի, թա հաց օտէ* (Բ):

- Ըռը՝խըմաչին թըխէլ/տալ/տըրըքցընէլ - Ուժեղ հարվածել: *Տըղան ըտըրա ըռը՝խըմաչին թըխում ա, ըսպանում* (Ձ):

ԸՌԸԽԱՍՕՐ/ՌԸԽԱՍՕՐ - *ած.* 1. Սուր շեղբ՝ սայր ունեցող, հատու: *Ըռը՝խասօր տէնակ ա* (Բ): 2. Սուր լեզու ունեցող, լեզվանի: *Ըռը՝խասօր կընէգ՛ ա* (Բ):

ԸՌԸԽԱՎԷՐ/ՌԸԽԱՎԷՐ/ԸՌԸԽԷՎԱ՛Ր/ՌԸԽԷՎԱ՛Ր - *ած.* Ագահ, անկուշտ: *Մին ըռը՝խավէր կընէգ՛ ա ինա՛ւմ, տանը հինչը ինա՛ւմ ա, օտում ա, խօխէնք՛ը թօղում տա՛ւզնը* (Ձ):

ԸՌԸԽԱՏԷԼ/ՌԸԽԱՏԷԼ - *նբ.* Գործիքի՝ ամանի բերանը կոտրել: *Յակատը թըխում ա քարէն, ըռը՝խատում* (Բ):

ԸՌԸԽԷԼ/ՌԸԽԷԼ - *նբ.* Բերանով բռնել, լիաբերան կծել: *...Շընէրը ք՛ուչէքը չափում ըն, հա՛ւր տօն ասիս՝մընընըմ ըն ու մին պէն ռըխած տա՛ւս կ՛ամ...* (ՋՏ, Ա, 75):

ԸՌԸԽԷՎԱ՛Ր - *տե՛ս* ԸՌԸԽԱՎԷՐ:

ԸՌԸԽԸԼԱՀՆՉ - *տե՛ս* ԸՌԸԽԱՀՆՉ:

ԸՌԸԽԸՀԱՐՈՒՍ/ՌԸԽԸՀԱՐՈՒՍ - 1. *տե՛ս* ԸՌԸԽԱՎԷՐ: 2. *ած.* Շատախոս, շաղակրատ: *Կընէգ՛ը լ՛ավ ա կ՛էշ ինի, քանց ըռը՝խըհարուստ* (Ձ):

ԸՌԸԽԸՄԸՌԸ՝Խ/ՌԸԽԸՄԸՌԸ՝Խ/ԸՌԸ՝Խ-ՄԸՌԸ՝Խ/ՌԸ՝Խ-ՄԸՌԸ՝Խ - *գ. անրգ.* Բերանը՝ իր շրջակայքով, ամբողջ դեմքը՝ երեսը: *Խօխան բա՛ք՛մա՛ղ կէրավ, ըռը՝խըմըռը՝խը սաղ դօղից* (Բ):

- Ըռը՝խըմըռը՝խը ա՛ռնա՛ւ անէլ/հըղլըդօրէլ/ճա՛ւր անէլ - Խիստ ծեծել: *Փըռնում ըն ըտըրա ըռը՝խըմըռը՝խը ա՛ռնա՛ւ ա՛նում, ըտը՝ղ վէր քըցա՛ւմ* (Ձ):

ԸՌԸԽԸՌԸ՝Խ/ՌԸԽԸՌԸ՝Խ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըռը՝խըռը՝խ ըղնէլ - Բերնեբերան անցնել՝ տարածվել: *Ըտըրա ասածը ըռը՝խըռը՝խ ա ըղնում, էք՛սը լօխ գ՛ուդա՛ւմ ըն* (Ձ):

ԸՌԸԽԸՎԷՐ/ՌԸԽԸՎԷՐ - *մ.* Բերանը՝ երեսը դեպի ներքեւ դարձած: *Խըմած կ՛ամ ա, ըռը՝խըվէր ըղնում թախտէն յըրա* (Ձ):

ԸՌԸԽԿԱԼԻ/ՌԸԽԿԱԼԻ - *գ.* Ամանի՝ անոթի բերանը փակելու կափարիչ՝ խցան: *Ը՛րիա ըռը՝խկալին տա՛ւս ա ունէս, թա ճա՛ւր խըմէ, էն մարդիմազարը թըխէս ա, կօլան կուտըրէս, թուղէս ծարավ* (Ձ):

ԸՌԸԽԿԱ՛ԼԻԼ/ՌԸԽԿԱ՛ԼԻԼ - *նբ.* Ամանի՝ անոթի բերանը կափարիչով՝ խցանով փակել: *Կ՛ինին ածում ա չէթվէռը, ըռը՝խկալնում, վը՝ղումը թաղում* (Ձ):

ԸՌԸՀԱԹ՛/ՌԸՀԱԹ՛ *(արաբ. rāhat, թրք. rahat)* - *ած., մ.* Հեշտ, դյուրին, հան-

գիստ: *Ճըրտարա հըդէն ըռըհաթ հըդէ յա* (Բ):

ԸՌԸՀԱԹ²/ՌԸՀԱԹ² (արաբ. *rayat*) - *գ.* Ժողովուրդ, աշխատավորություն: *...էս տըղան Շահ-Աբբասէն յըրան նամակ ա կ'իրըմ, վըէր յէս կ'ըլլական ըմ, հինչ վըէր ի-լլալ ա, ռըհաթին պատմիմ...* (ՀԺՀ, VI, 115):

ԸՌԸՀԱԹԻ/ՌԸՀԱԹԻ - *գ.* 1. Խողովակավոր անոթ՝ մի կողմը լայն, մյուսը՝ նեղ, որով նեղբերան ամանների մեջ հեղուկ են լցնում, ձագար: *Ըռըհաթին տինում ա, արաղը ածում բութուլնէն, ըշկափումը շարում* (Զ): 2. *փխբ.* Կոնծելը, կոնծում: *Մակիչը պըտահում ա Մըցակէն, թա.- Ըռըհաթիտ հունց ա՞, հալա արաղ օնի՞ս, թա պըրծալ ա՞* (Զ):

- Ըռըհաթի անէլ - Կոնծել, հարբեցողությամբ զբաղվել: *Էտ շէնին տըղըմարթիք'ը ամմէն օր հըվաքվում ըն մինին տանը, ըռըհաթի անում* (Զ):

ԸՌԸՀԷԼ/ՌԸՀԷԼ *(գրբ. ռահ (ճամփա), ռահեմ, (ճամփա գցել), պրս. rāh, reh (ճանապարհ, ուղի), թրք. rah (ճանապարհ, ուղի)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըռըհէլը քաշիլ - *տե՛ս* Ըռանդը քաշիլ: *...Վէր տէսի էտ հայասըգէրը օրիշ պէնէր էլ ըն ընէլու, ըռըհէլըս քըշէցի...* (Ջ�տ, Բ, 127):

ԸՌԸՊԲԱԹԻՆ/ԸՌԸԲԱԹԻՆ/ՌԸՊԲԱԹԻՆ/ՌԸԲԱԹԻՆ *(արաբ. rabāt (շրջապարիսպ), թրք. rabitali (կանոնավոր, կարգավորված, խոհեմ)* - *ած., մ.* Օրինավոր, ինչպես հարկն է, կարգին: *Ըռըղբաթին մարթ ա Սամսօնը* (Բ): *Ըռըղբաթին ա կօրծ անում* (Զ):

ԸՌԸՆԳԱՃՈՒՐ/ՌԸՆԳԱՃՈՒՐ - *գ.* Մեջը ներկ լցրած ջուր, որի մեջ զանազան առարկաներ դնելով՝ ներկում են: *Ծուվէնը ածում ա ըռընգ'աճուրը, ըռանգ' տամ* (Զ):

ԸՌԸՆԳԱՄԱՆ/ՌԸՆԳԱՄԱՆ - *գ.* 1. Մեջը ներկ լցրած աման: *Ըռընգ'ամանը վէր ա ըղնում, պօլը լըպատում* (Բ): 2. *տե՛ս* ՉԱՆԻԳ':

ԸՌԸՆԳԸԷՆԷ/ՌԸՆԳԸԷՆԷ - *գ.* Խաղողի տեսակ: *Ըռընգ'ըէնէն քախծըր խաղու վա* (Բ):

ԸՌԸՆԳԸԹԱԹԱԽ/ՌԸՆԳԸԹԱԹԱԽ - *ած.* Ներկով թաթախված, ներկոտված: *Մին ըռընգ'ըթաթախ շօր ա յօր ունէս, ըմընէք'ը սիրփիս* (Զ):

ԸՌԸՆԴԻԼ/ՌԸՆԴԻԼ/ԸՌԱՆԴԻԼ/ՌԱՆԴԻԼ - *նբ.* 1. Ռանդայով տաշել՝ ոդորկել՝ հարթեցնել: *Ռանդանն յօր ա ունէս, էտ սուրանը ռընդիս* (Զ): 2. *փխբ.* Կրթել, դաստիարակել, բարեկիրթ դարձնել: *Ըտի էտ կընէգ'ը էտ մարթին ըռընդում ա* (Բ): 3. *փխբ.* Ամբողջը ուտել, խժռել: *Տընատարը հինչը տինում ա ըստօլէն, ղօնաղը իլբիհանալ ռընդում ա* (Զ):

ԸՌԸՇԻԴԱՆԱԼ/ՌԸՇԻԴԱՆԱԼ - *նբ.* Աշխատասեր դառնալ, եռանդագին աշխատել: *Լօդուռ մարթ ար, փըսակվից, ըռըշիդացավ* (Բ):

ԸՌԸՇԻԴՑ(Ը)ՆԷԼ/ՌԸՇԻԴՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԸՌԸՇԻԴԱՆԱԼ-ի:

ԸՌԸՇԻԴՕԹՈՒՆ/ՌԸՇԻԴՕԹՈՒՆ - *գ.* Աշխատասիրություն, եռանդագին աշխատելը: *Ըռըշիդօթունը մարթին տանգնը թօղէլ չի* (Բ):

ԸՌԸՇԿԱԼՈՒԾ/ԸՌԸՉԱԼՈՒԾ - *տե՛ս* ԸՄԲԸԼԱԼՈՒԾ:

ԸՌԸՇԿԱՊԷ/ԸՌԸՉԿԱՊԷ - *տե՛ս* ԸՌԸՇԿԷՏԱՆ:

ԸՌԸՇԿԷՏԱՆ/ԸՌԸՉԿԷՏԱՆ - *գ.* Աշխատանքի ժամանակ զգեստի վրայից կապելու շոր, գոգնոց: *Կընէգ'ը ըտըրա վըէնէնէրը լըվանըմ ա, ըռըշկէտանավը սըրփըմ, յէտնան նըստըմ ըն, թա հաց օտին* (ՀԺՀ, V, 107):

ԸՌԸՇԿԸՏՐՈՒԿԷ - *տե՛ս* ԸՌԸՇԿԸՏՐՕԿ:

ԸՌԸՇԿԸՏՐՕԿ/ԸՌԸՉԿԸՏՐՕԿ/ԸՌԸՇԿԸՏՐՈՒԿԷ/ԸՌԸՉԿԸՏՐՈՒԿԷ - *գ.* 1. Մեկը մյուսից առաջ անցնելը, գերազանցելը: *Ըռըշկըտրօկը վէր ինի վէջ, կօրծը առաջ չի ք'ինիլ* (Զ): 2. Մանկական խաղ, երբ վազելիս յուրաքանչյուրը ձգտում է մյուսներից առաջ անցնել: *Խօխէնք'ը ըռըշկըտրօկ ըն խաղ անում* (Զ):

- Ըռըշկըտրօկ անէլ - Ուրիշներից առաջ անցնել, գերազանցել: *Կ'ինք'ին ըռըշկըտրօկ ա անում, արտը մին օրումը հընձում* (Զ):

ԸՌԸՇԿԸՏՐՕՂԱՆ/ԸՌԸՉԿԸՏՐՕՂԱՆ/ԸՌԸՇԿԸՏՐՕՎԱՆ/ԸՌԸՉԿԸՏՐՕՎԱՆ - *մ.* Առաջ ընկնելով՝ անցնելով: *Մէհէտ էլ էն մին ընգ'ունին ա մըհակավ ծըէփում, դանը ծըէրքան ինք' օնում, ըռըշկըտրօղան հըսնում տօն* (ՀԺՀ, VII, 341):

ԸՌԸՇԿԸՏՐՕՎԱՆ - *տե՛ս* ԸՌԸՇԿԸՏՐՕՂԱՆ:

ԸՌԸՇԿՔԱՄԱԿ/ԸՌԸՉՔԱՄԱԿ - *տե՛ս* ԸՉՎԸՇԷԽ:

ԸՌԸՇԿՔԱՇԻ/ԸՌԸՉՔԱՇԻ - *ած.* 1. Առջեւից գնացող՝ քաշող: *Ըռըշկքաշի յըէզնանը թըխէլ չը* (Զ): 2. Ղեկավար, պարագլուխ: *Ժուղուվուրթէն վէր ըռըչքաշի չինի, ծըմակումը շիլ կըղնէ* (ՆԱԲ, III, 68):

ԸՌԸՇԿՔԸՇՕԹՈՒՆ/ԸՌԸՉՔԸՇՕԹՈՒՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըռըշկքըշօթուն անէլ - Առաջնորդել, ղեկավարել, ուղղություն ցույց տալ: *Թաքավէրը մըէռնում ա, ժըղովուրթը մընամ ըն անդար, մինը ինըմ չի՝ ըռըշկքըշօթուն անէ* (Զ):

ԸՌԸՇԿՕՏԱԼ - *տե՛ս* ՊԸՐԿԸՇՏՕՏԱԼ:

ԸՌԸՇՏԱ/ՌԸՇՏԱ *(պրս. erišta, թրք. erište)* - *գ.* Խմորից պատրաստած մակարոնի նման ուտելիք՝ արիշտա: *Կըռվէն վախտը ժըղովուրթը ըռըշտա շատ ըն իլալ շինիս* (Բ):

ԸՌԸՇՏՕՏԷԼ - *տե՛ս* ՊԸՐԿԸՇՏՕՏԱԼ:

ԸՌԸՇՕԹԿԱ - *տե՛ս* ԸՐԸՇՕԹԿԱ:

ԸՌԸՉԱԼՈՒԾ - *տե՛ս* ԸՌԸՇԿԱԼՈՒԾ:

ԸՌԸՉԻ/ԱՌԱՉԻ *(գրբ. առաջին)* - *թ., ած.* 1. Մեկ քանակական թվականի դասականը: *Խօխան ըռըչի դասարանըմըն ա սըվըրէս* (Բ): 2. Ըստ կարգի՝ բոլորին նախորդողը, սկզբինը: *Ըռըչի մարթը շիլ ա ըղնում* (Զ): 3. Ըստ ժամանակի՝ ամենահինը, նախնական: *Ըռըչինը ըտը'ղ խօսնդանք ըն ապրրալ* (Զ): 4. *փխբ.* Ամենալավը, գովելին, առաջնակարգ: *Ամմէն կօրծում ըռըչինը էտ կընէգ'ըն ա ինանում* (Զ):

ԸՌԸՉԿԱՊԷ - *տե՛ս* ԸՌԸՇԿԱՊԷ:

ԸՌԸՉԿԷՏԱՆ - *տե՛ս* ԸՌԸՇԿԷՏԱՆ:

ԸՌԸՉԿԸՏՐՈՒԿԷ - *տե՛ս* ԸՌԸՇԿԸՏՐՕԿ:

ԸՌԸՉԿԸՏՐՕԿ - *տե՛ս* ԸՌԸՇԿԸՏՐՕԿ:

ԸՌԸՉԿԸՏՐՕՂԱՆ - *տե՛ս* ԸՌԸՇԿԸՏՐՕՂԱՆ:

ԸՌԸՉԿԸՏՐՕՎԱՆ - *տե՛ս* ԸՌԸՇԿԸՏՐՕՂԱՆ:

ԸՌԸՉՆԱԿ - *տե՛ս* ԸՌՉԻՆԱԿ:

ԸՌԸՉՔԱՄԱԿ - *տե՛ս* ԸՌԸՇԿՔԱՄԱԿ:

ԸՌԸՉՔԱՇԻ - *տե՛ս* ԸՌԸՇԿՔԱՇԻ:

ԸՌԸՉՔԸՇՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՌԸՇԿՔԸՇՕԹՈՒՆ:

ԸՌԸՎԸՀԱԹ/ՌԸՎԸՀԱԹ - *տե՛ս* ՊԱԴԷՎ:

ԸՌԸՎԸՏՀԱՆԱ - *տե՛ս* ԸՌՈՒԹԱՆԱՔԸՇԷՐԱՎ:

ԸՌԸՓԱԿ - *տե՛ս* ՁԱՆԴ(Ը)ՐՈՒԿ: *...խէղճ խուփիս ըռըփակը կըլխավը քըցած՝ յէտ հարանց դարկից...* (ՋՏ, Ա, 71):

ԸՌԻՋԻՆ/ՌԻՋԻՆ *(ռուս. резина, ֆր. resina, լատ. resina, հուն. rētinē)* - *գ.* 1. Կաուչուկից ստացվող փափուկ առաձգական նյութ, ռետին: *Ըռիզինը յօր ա օնում, ըռագաթկա շինում* (Զ): 2. *փխբ.* Ռետինի պես առաձգական՝ ոչ փխրուն իր: *Էս մէս չի, ռիզին ա, հիշկան օգում ըս կըծիս, պուք չի կ'ամ* (Բ):

ԸՌԻՍԿ/ՌԻՍԿ *(ռուս. риск, ֆր. risque, իտ. risco, հուն. rixikon)* - *գ.* Հնարավոր վտանգն արհամարհելու խիզախություն, հանգստություն, համարձակու-

թյուն: *Իրէքինջի դօնումը ռիսկավ մուտանում ա...* (ՀԱԲ, 15, 133):

- Ռիսկ անել - Հանդգնել, համարձակվել: *Թաքավը՛ր մըտածում ա, ասում ա.- Հանլբաթ տըրանում մին հինար կա, վը՛ր ըռիսկ ա ըրալ, յէկալ* (ՀԺՀ, VII, 31):

- Ռիսկու ք՛ինիլ - *տե՛ս* Ռիսկ անել:

ԸՌԻՍԿԱՎ/ՌԻՍԿԱՎ - *տե՛ս* ԸՌԻՍԿՕՎԸՆԻ:

ԸՌԻՍԿԸՀԱՆՎԷԼ/ՌԻՍԿԸՀԱՆՎԷԼ - *չբ.* Հանդգնություն՝ համարձակություն ձեռք բերել: *Տըղան վէր ախպօրը տը՛սնում ա, ըռիսկըհանվում ա* (Ձ):

ԸՌԻՍԿՕՎԸՆԻ/ՌԻՍԿՕՎԸՆԻ *(ռուս. рискованный)* - *ած.* 1. Հանդուգն, համարձակ: *Ըռիսկօվընի մարթը ամէն հինչու կըհըսնէ* (Բ): 2. Հանդգնություն՝ համարձակություն պահանջող: *Արչ ըսպանէլը ըռիսկօվընի կօրծ ա, ամմէն վը՛րսկան կարէլ չի* (Բ):

ԸՌԻՏԻՆ/ՌԻՏԻՆ *(գրբ. ռետին (խեժ), հուն. rētinē)* - *գ.* Գրածը ջնջելու ռետինի կտոր՝ ջնջիչ: *Խօխան ըռիտինը յօր ա օնում, կ՛իրածը ճինջում* (Ձ):

ԸՌՆԱԴ - *տե՛ս* ԸՌՆԱՏ:

ԸՌՆԱԽՈՒՄ/ԸՌՆԸԽԸՄԷ - *ած.* Արյունռուշտ, արյունարբու: *Էտ էլ շատ ըռնախում մարթ ա ինում, տըղէն յիրա կ՛իրում ա, թա քըվօրըտ կըսպանէս...* (ՀԺՀ, VII, 115):

ԸՌՆԱԿԷՐ *(գրբ. արիւնակեր)* - *տե՛ս* ԸՌՆԱԽՈՒՄ:

ԸՌՆԱԿ՛ԻՆ - *գ. տե՛ս* Ա՛ռին կ՛ին:

ԸՌՆԱՃՈՒՐ - *գ.* Միսը լվանալիս կամ աղ դնելիս առաջացած արյունախառն ջուրը: *Մէսը լըվանում ա, ըռնաճուրը ածում ծառէն տակը* (Ձ):

ԸՌՆԱՎԸ՛Տ - *գ.* Արյան հոտ: *Ըռնը-վը՛տէն յըրա շընէրը հըվաքվում ըն* (Ձ):

ԸՌՆԱՏ/ԸՌՆԱԴ *(գրբ. առնետ, ասոր. arnā'a)* - *գ.* Աքիսների ընտանիքին պատկանող՝ շիկավուն մորթով, երկարավուն մարմնով, փորի տակը սպիտակ փոքրիկ գիշատիչ, առնետ: *Մին օր էլ ըռնատը նի յա մընում կ՛ումը, հավէն ճօտէրը կըտօրում* (Ձ):

ԸՌՆԱՏԱՐ - *ած., գ.* 1. Արյուն թափող, մարդասպան: *Ըռնատար մարթին անա հիշկան կարում ըս, բիդի ղըրաղ շօռ տաս* (Բ): 2. *տե՛ս* ԴԱ՛ՒՇՄԱՆ: *...Կօզի բըրը՝շվիս ըք, համա ա՛լլա՛ ա՛ւրա՛ւր նիհէտ մընաս ըք ըռնատար* (ՀԲ, 362):

ԸՌՆԱՔԱՄ - *ած.* 1. Արյունը քամված, ուժասպառ եղած: *Կ՛ամ ա, տը՛սնում մին ըռնաքամ սալդաթ ըտը՛ղ վէր ընգած* (Ձ): 2. *փխբ.* Սնանկացած, ունեցվածքից՝ կարողությունից զրկված: *Ըռնաքամ մարթ ա, իլածը մին կավ ար, էն էլ ըստակից* (Ձ):

- Ըռնաքամ անէլ - 1. Արյունը քամել, ուժասպառ անել: *Դուխտուրնէն ըտըրանա էնքան ա՛ռա՛ւն ըն տա՛ւս օնում, լափ ըռնաքամ ըն անում* (Ձ): 2. Սնանկացնել, ունեցվածքից՝ կարողությունից զրկել: *Էս կըռը՛վը մէր շինացուց լափ ըռնաքամ ըրավ* (Ձ):

- Ըռնաքամ ինիլ/տը՛ռնալ *(արիւնաքամ լինիմ)* - 1. Արյունը քամվել, ուժասպառ լինել: *Գ՛ա՛ւլլան նի յա կ՛ամ վը՛նէնէն, ըռնաքամ ա տը՛ռնում, մը՛ռնում* (Ձ): 2. Սնանկանալ, ունեցվածքից՝ կարողությունից զրկվել: *Բիդասըլ տըղէն հա՛ռը ըռնաքամ կինի* (Բ):

ԸՌՆԷԼ *(գրբ. արիւնեմ)* - *չբ.* Արյուն դուրս գալ՝ հոսել: *Յարան պուք ա տամ, ծը՛ռքը ըռնում ա* (Ձ):

ԸՌՆԷԼԻՔ՛ - *գ.* 1. Ինչ որ պետք է գնել: *Ք՛ա՛ւնա՛ւմ ա մաղազինը, ըռնէլիք՛ը առնում, կ՛ամ* (Բ): 2. Ինչ որ պետք է մեկից վերցնել: *Ըտըրան հիրըվանէն անա ըռնէլիք՛ փուլ ա ինըմ* (Ձ):

ԸՌՆԷԼԻՔ՛-ՏԱԼԻՔ՛ - *գ.* 1. Փոխադարձ դրամական հաշիվ՝ պարտք եւ պահանջ: *Ըտըրանք ա՛ւրա՛ւր նըհը՛տ ըռնէլիք՛-տալիք՛ը վիրչըցընում ըն, ք՛ինամ տօն* (Բ): 2. *փխբ.* Մեկի հետ ունեցած հարաբերություն՝ առնչություն: *Էտ տըղէն հօրը-մօրը նըհէտ ըռնէլիք՛-տալիք՛ չի ինում* (Ձ):

ԸՌՆԸԹԱԹԱԽ *(գրբ. արիւնաթաթախ)* - *ած.* Արյան մեջ թաթախված, արնակոլոլ: *Պը՛ռըմ ըն ըռնըթաթախ բախրան տընըմ Փանանի խանին առաչին* (ԼՂԲ, 334):

- Ըռնըթաթախ անէլ - Արյան մեջ թաթախել: *Իմաստունը մաննը կըտրէս ա, էրկու հըլըվնէն ըռնըթաթախ ընէս, տաս հա՛ւլլա՛ւվուրէն...* (ՀԺՀ, V, 473):

- Ըռնըթաթախ ինիլ/տը՛ռնալ - Արյան մեջ թաթախվել: *Ըտի ըռնըթաթախ իլածի նի յա մընէս թաքավէրին պալատը* (Ձ):

ԸՌՆԸԼԱՑՈՒԿ - *տե՛ս* ԸՌՆԷԼԻՔ՛:

ԸՌՆԸԼԸՎԱ - *տե՛ս* ԸՌՆԸԹԱԹԱԽ:

ԸՌՆԸԽԱՌ(Ն)Ը *(գրբ. արիւնախառն)* - *ած.* Արյան հետ խառնված, արյունախառն: *Ա՛ռա՛ւնը ածում ա կաթնէն մաչը, ըտի ըռնըխառնը տամ տըղէն* (Ձ):

ԸՌՆԸԽԸՄԷ - *տե՛ս* ԸՌՆԱԽՈՒՄ:

ԸՌՆԸԿԱ՛ԼԻԼ - *չբ.* Արյունով լցվել: *Կըտըրած տը՛ղը օռչում ա, ըռնըկա՛ւլում* (Ձ):

ԸՌՆԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ԸՌՆԸԹԱԹԱԽ:

ԸՌՆԸՃԸՄՕՌ - *տե՛ս* ԸՌՆԸՃԻՃԸ՛Խ:

ԸՌՆԸՃԻՃԸ՛Խ - 1. *տե՛ս* ԸՌՆԸԹԱԹԱԽ: *ած.* 2. Սաստիկ ծեծված: *Ըռնըճիճը՛խ մարթին աշկը կըվախէ* (Ձ):

- Ըռնըճիճը՛խ անէլ - 1. *տե՛ս* Ըռնըթաթախ անէլ: 2. Սաստիկ ծեծել: *Ըռնըճիճը՛խ ըն անում, ա՛ւրա՛նք ք՛ինամ* (Ձ):

- Ըռնըճիճը՛խ ինիլ/տը՛ռնալ - 1. *տե՛ս* Ըռնըթաթախ ինիլ: 2. Սաստիկ ծեծ ուտել: *Ըռնըճիճը՛խ իլածի կընէգ՛ը մարթին դադիրը կըգ՛իդա՛ն* (Ձ):

ԸՌՆԸՇԱՂԱԽ *(գրբ. արիւնաշաղախ)* - *տե՛ս* ԸՌՆԸԹԱԹԱԽ:

ԸՌՆԸՊԷՐԱՆ - *տե՛ս* ԸՌՆԱՏԱՐ(1):

ԸՌՆԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԱՌՆԷԼ[2]-ի:

ԸՌՆԸՓԱԼԱԼ - *տե՛ս* ԸՌՆԸԹԱԹԱԽ:

ԸՌՆԸՓԸՐԹԻ՛Ր - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըռնըփըրթի՛ւշ անէլ - Դաժանորեն սպանոտել, կտոր-կտոր անել: *Էտ ըռնախումը ըտըրանց ըռնըփըրթի՛ւշ ա անում* (Ձ):

ԸՌՆԸՔԱՄԷԼ - *նբ. տե՛ս* Ըռնաքամ անէլ:

ԸՌՆԸՔԱՄՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՌՆԸՔԱՄԷԼ-ի:

ԸՌՆՕՎԻ - *ած. տե՛ս* Ինք՛ ընօվի:

ԸՌՆՕՏ *(գրբ. արիւնոտ)* - *ած.* Արյունոտած, վրան արյուն քսված, արյամբ թաթախված: *Դէրվիշը ըռնօտ շօ՛ռէրը տանում ա, թաքավէրին նը՛հաշ տամ* (Ձ):

- Ըռնօտ անէլ - Արյուն քսել, արյամբ թաթախել: *Մա՛ռդը՝ը՝ա՛ւսէն հընգէրը Շը՝ը՝մաղէն շօ՛ռէրը հանըմ ա, ըռնօտ անըմ, յօր օնըմ, ք՛ինամ* (ՆԼՂԺԲ, 30):

- Ըռնօտ ինիլ/տը՛ռնալ - Արյուն քսվել, արյամբ թաթախվել: *Ըռնօտ իլածի շօ՛ռէրը ածում ա կ՛ը՛տը* (Ձ):

- Ըռնօտ ծը՛ռք - *տե՛ս* ԸՌՆԱՏԱՐ(1):

ԸՌՆՕՏԷԼ - *նբ. տե՛ս* Ըռնօտ անէլ:

ԸՌՆՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՌՆՕՏԷԼ-ի:

ԸՌՉԱԿ՛ՕՌ - *տե՛ս* ԸՐՉԱԿ՛ՕՌ:

ԸՌՉԱՄՕՇ - *տե՛ս* ԸՐՉԱՄՕՇ:

ԸՌՉԱՆԳՈՒՃ - *տե՛ս* ԸՐՉԱՆՉՈՒՃ:

ԸՌՉԱՊԱՐ - *տե՛ս* ԸՐՉԱՊԱՐ:

ԸՌՉԱՎԸ՛ՐՍ - *տե՛ս* ԸՐՉԱՎԸ՛ՐՍ:

ԸՌՉԱՏԱ՛ՆՁ - *տե՛ս* ԸՐՉԱՏԱ՛ՆՁ:

ԸՌՉԱՔՕՆ - *տե՛ս* ԸՐՉԱՔՕՆ:

ԸՌՉԸԹԱ՛ՆԹԻԼ - *տե՛ս* ԸՐՉԸԹԱ՛ՆԹԻԼ:

ԸՌՉԸԽԸՆԴԷՂՆԸ - *տե՛ս* ԸՐՉԸԽԸՆԴԷՂՆԸ:

ԸՌՉԸԽԻՆԱԿ - *տե՛ս* ԸՐՉԸԽԻՆԱԿ:

ԸՌՉԸԿԱՏՈՒ - *տե՛ս* ԸՐՉԸԿԱՏՈՒ:

ԸՌՉԸՅԱ՛ՆԳԻ - *տե՛ս* ԸՐՉԸՅԱ՛ՆԳԻ:

ԸՌՉԸՄԸՀԱՍՈՒՐ - *տե՛ս* ԸՐՉԸՄԸՀԱՍՈՒՐ:

ԸՌՉԸՎԱՉԻ - *տե՛ս* ԸՐՉԸՎԱՉԻ:

ԸՌՉԸՎԱՐԻ - *տե՛ս* ԸՐՉԸՎԱՐԻ:

ԸՌՉԸՏԱ՛ՆՁԻ - *տե՛ս* ԸՐՉԸՏԱ՛ՆՁԻ:

ԸՌՉԸՔՕԹԷԹ - *տե՛ս* ԸՐՉԸՔՕԹԷԹ:

ԸՌՉՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՐՉՕԹՈՒՆ:

ԸՌՉԻՆԱԿ/ԸՌԸՉՆԱԿ/ԸՐՉԻՆԱԿ *(գրբ. առաջնակ)* - *գ.* Անդրանիկ՝ առաջնային զավակ: *Ըռչինակը վէր ընում ա, անումը տընում ընՀամադ...* (ՆԱԲ, 53):

ԸՌՌՈՒ/ՌՈՒ/ԸՌՈՒ/ԸՌՌՕ/ՌՕ/ԸՌՕ - *ած.* Բոլորի համար ազատ օգտագործելի, չխնամվող, չհսկվող, անտերունչ (այգի, հողամաս եւն): *Ըտը՝դէրք սաղ ըռռու յա, հու հինչը օգում ա, անում ա* (Ձ):

- Ըռռու անէլ - Անխնա օգտագործել՝ օգտվել: *Ըռռու յընՀանում, էտ ծառէրը լօխ քաղում* (Ձ):

ԸՌՌՕ - *տե՛ս* ԸՌՌՈՒ:

ԸՌՍԸՋՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՐՍԸՋՕԹՈՒՆ:

ԸՌՏԱԲՕՅ - *տե՛ս* ԸՐՏԱԲՕՅ:

ԸՌՏԱՏԱՐ - *տե՛ս* ԸՐՏԱՏԱՐ:

ԸՌՏԱՏԸ՞Ղ - *տե՛ս* ԸՐՏԱՏԸ՞Ղ:

ԸՌՌՈՒ - *տե՛ս* ԸՌՌՈՒ:

ԸՌՌՈՒՋԻ/ՌՈՒՋԻ/ԸՌՕՋԻ/ՌՕՋԻ *(պրս. rüzi)* - *գ.* Բարիք, բերք, ապրուստի միջոց: *Մարթը դանը կըրում, տօն ա ըՀցում, խըխօնցը ռուզին բուլըցընում* (ՀԺՀ, VI, 146):

- Ըռուզավ ըղնէլ/ինիլ - Բարիքի՝ հարստության հանդիպել: *Էտ կընէգը տաղատ ը՝ընում ա, մին չուբանու ռուզավ ինում* (ՀԱԲ, 15, 57):

ԸՌՌՈՒԹԱՆԱ/ՈՒՌՌՈՒԹԱՆԱ/ՈՒՌԹԱՆԱ - 1. *գ.* Արեւը ծագելու ժամանակը՝ առավոտ: *Ըռռութանան վէր կ՚ամ ա, Աբրամը Թէվօսէն ծէն ա տամ* (Ձ): 2. *մ.* Առավոտ ժամանակ՝ առավոտյան: *Ըռռութանան էտ մարթը յէր ա կէնում, կընգանը յօր օնում, ը՝ինամ թաքավը՝ռէն պալատը* (ՆԼՂԺԲ, 66):

- Ըռռութանա անէլ - Առավոտյան տնային գործերը կատարել: *Էտ կընէգ՚ը յը՝ր ա կէնում, վէր ըռռութանա անէ, ծըկըլթօնը ըղնում ա շէնը* (Ձ):

ԸՌՌՈՒԹԱՆԱ-ՔԸՇԷՐԱՎ - *մ.* Վաղ առավոտյան: *Ուռթանա քըշէրավ Աթանը յիշիս ա տըսնաս՝ խիլլա՝ հը՝ռէ տը՝ղ մին պէն փըլըստրատէ յա տաս* (ՀԲ, 339):

ԸՌՌՈՒԹԸՆԱՀԱՑ/ՈՒՌՌՈՒԹՈՒՆԱՀԱՑ/ՈՒՌԹԸՆԱՀԱՑ - *գ.* 1. Առավոտյան թեթեւ ուտելը՝ նախաճաշ: *Էտ մարթը վէր ըռռութընահացը սըքսում ա, էրկու սըհաթ քաշՀում ա* (Ձ): 2. Նախաճաշելու համար նախատեսված ուտելեղենը: *Ըռռութընահացը տինում ըն խուրջինումը, ը՝ինամ* (Ձ):

ԸՌՌՈՒԹԸՆԱ(Ն)Ց/ՈՒՌՌՈՒԹՈՒՆԱ(Ն)Ց/ՈՒՌԹԸՆԱ(Ն)Ց - *մ.* Առավոտվանից: *Ըռռութընանց վէր սըքսում ըն հօնձ անէլը, չընքէրանը ը՝ըսօր դինջանում չընը* (Ձ):

ԸՌՌՈՒԼ՚/ՌՈՒԼ՚ *(ռուս. руль, հոլ. roer)* - *գ.* Տրանսպորտային միջոցի ընթացքի ուղղությունը կարգավորելու հարմարանք, ղեկ: *Ըռուլ՚ը ծը՝ռքան պէց ա ըղնում, մաշինը ըղնում ա ծօրը* (Բ):

- Ըռուլ՚ը միշտ աչ ինիլ - Բարեմաղթանք՝ ուղղված վարորդներին, հատկապես նոր մեքենա գնելու առթիվ:

- Ըռուլ՚ին նըստէլ - Տրանսպորտային միջոցը վարել: *Ըռուլ՚ին վէր խամ շօփէր նըստէ, էն մաշինը տը՝ղ չի հըսնէլ* (Ձ):

ԸՌՌՈՒՇՎԱԹ/ՌՈՒՇՎԱԹ/ՈՒՌՌՈՒՇՎԱԹ *(արաբ. rešvat, rašvat)* - *գ.* Կաշառք: *Ըռուշվաթավ ամմէն կօրծ չի, վէր դՀուզՀում ա* (Բ):

- Ըռուշվաթ յը՝ր օնէլ/օտէլ - Կաշառք վերցնել, կաշառվել: *Ըռուշվաթ ըն յը՝ր օնում, ըտըրան տՀուրմանը ըզադում* (Ձ):

- Ըռուշվաթ տալ - Կաշառել, կաշառք տալ: *...Թաքավէրէն ախճիգ՚ը տըրան վը՝սկէ յա ինիս ռուշվաթ տըված* (ՀԺՀ, V, 290):

ԸՌՌՈՒՋԱՀ/ՌՈՒՋԱՀ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըռուջահ ինիլ/կ՚ալ - *տե՛ս* Ըռաստ ինիլ: *Մին դօնըմ էն իրէք ըլըբաստըրակը կ՚ամ ըն ըտըրան ըռուջահ ինըմ...* (ՀԺՀ, V, 124):

ԸՌՌՈՒՍ/ՌՈՒՍ/ՈՒՌՌՈՒՍ *(ռուս. рус)* - 1. *գ.* Ռուսաստանի բնիկ ազգը, ինչպես նաեւ այդ ազգի ներկայացուցիչը՝ ռուս: *Ըռուսը մէգ նըհը՝տ միշտ էլ պարիկըմօթուն ա ըրալ* (Բ): 2. *փխբ.* *տե՛ս* ՇԷԳ՚ (2):

- Ըռուսու բաբուշկու քամակ - Շատ կարմրած: *Արկաթը կ՚իրմիրում ա, տը՝ռնում ըռուսու բաբուշկու քամակ* (Ձ):

- Ըռուսու հացգէ - *տե՛ս* ԸՌՌՈՒՍԸՀԱՑՑԵ:

ԸՌՌՈՒՍԱՆԱԼ/ՌՈՒՍԱՆԱԼ/ՈՒՌՌՈՒՍԱՆԱԼ - *չբ.* Ռուսական վարքուբարք՝ սովորություններ եւն ընդունել: *Ըտի էտ ախճիգ՚ը էնքան ռուսնէրէն մաչին կէնում ա, ռուսանում ա* (Ձ):

ԸՌՌՈՒՍԸՀԱՑ(Ց)Է/ՌՈՒՍԸՀԱՑ(Ց)Է/ՈՒՌՌՈՒՍՈՒՀԱՑ(Ց)Է - *տե՛ս* ՔԸՐԸՀԱ(Ց)ՑԷ:

ԸՌՌՈՒՍԸՎԱՉԻ/ՌՈՒՍԸՎԱՉԻ/ՈՒՌՌՈՒՍՈՒՎԱՉԻ - *տե՛ս* ԸՌՌՈՒՍԸՎԱՐԻ:

ԸՌՌՈՒՍԸՎԱՐԻ/ՌՈՒՍԸՎԱՐԻ/ՈՒՌՌՈՒՍՈՒՎԱՐԻ - *մ.* Ռուսի նման, ռուսական ձեւով՝ վարվելակերպով եւն: *Հայը վէր ըռուսը՝վարի ապըրից, կարէլ չի յօլլա ը՝ինի* (Ձ):

ԸՌՌՈՒՍԻ/ՌՈՒՍԻ/ՈՒՌՌՈՒՍԻ - *տե՛ս* ԸՌՌՈՒՍԸՎԱՐԻ:

ԸՌՌՈՒՍՕԹԻ/ՌՈՒՍՕԹԻ/ՈՒՌՌՈՒՍՕԹԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըռուսօթի շըլՀր - *գ.* 1. Քարբեկազգիների ընտանիքին պատկանող մացառոտ թուփ, կոկռոշենի: Հրյաթումը ըռուսօթի շըլՀր էլ ա տընգալ (Բ): 2. Այդ բույսը պտուղը, կոկռոշ: *Ըռուսօթի շըլՀրը Ղարաբաղ լ՚ավ տը՝ռնում ա* (Բ):

ԸՌՌՈՒՍՕՎՈՒՐ/ՌՈՒՍՕՎՈՒՐ/ՈՒՌՌՈՒՍՕՎՈՒՐ - *մ.* Ռուսների լեզվով՝ ռուսերեն: *Էտ մարթը ռուսօվուր խօսում ա, Հէնդօն կըլՀխ չի ըղնում* (Ձ):

ԸՌՌՈՒՔ/ՌՌՈՒՔ/ՈՒՌՌՈՒՔ/ԸՌՕՔ/ՌՕՔ/ՈՒՌՕՔ *(գրբ. ռոքուն)* - *գ.* Մեծ քար, անկյունաքար: *Էտ ըռուքը մին թանՀրանավ պիցըրցընում ըն, տինում պատէն յըրա* (Ձ):

ԸՌՌՈՒՔԱՔԱՐ/ՈՒՌՌՈՒՔԱՔԱՐ/ՌՈՒՔԱՔԱՐ - *տե՛ս* ԸՌՌՈՒՔ:

ԸՌՕ - *տե՛ս* ԸՌՌՈՒ:

ԸՌՕՋԳԻ/ՌՕՋԳԻ/ԸՌՕՋԴԻ/ՌՕՋԴԻ - *տե՛ս* ԹԱԿ (4):

ԸՌՕՋԴԻ - *տե՛ս* ԸՌՕՋԳԻ:

ԸՌՕՋԻ - *տե՛ս* ԸՌՌՈՒՋԻ:

ԸՌՕԼԷՍ/ՌՕԼԷՍ - Անձնանուն:

- Ըռօլէսին կանտօրը - Խառնաշփոթ՝ աղմկալից տեղ: *Թամադան ասմա.- Սո՛ւս ըրէք՚, էս հօ Ըռօլէսին կանտօրը չի՞* (Ձ):

ԸՌՕՃԻԳ՚/ՌՕՃԻԳ՚/ԸՌՕՃԻԿ/ՌՕՃԻԿ *(գրբ. ռոճիկ)* - *գ.* Աշխատանքի դիմաց կատարվող դրամական վարձատրություն, աշխատավարձ, ամսավարձ: *Միհէնգ՚վա ըռօճիգ՚ը շատ ա խըրէգ՚. տասսը օր ա հէրիք՚ անում* (Բ):

ԸՌՕՃԻԿ - *տե՛ս* ԸՌՕՃԻԳ՚:

ԸՌՕՄԲ/ՌՕՄԲ *(վրաց. umbi)* - *գ.* Տավարի ամբողջական կաշվից պատրաստած մեծ տիկ: *Տընատարը մին ըռօմբի կինի յա պիրում, ըտը՝ղ ը՝ը՝փ ըն անում* (Ձ):

ԸՌՕՆՕ/ՌՕՆՕ - *հպվ.* *գ.* 1. Շրջանային ժողովրդական կրթության բաժին: *Ըռօնօյան մարթ ըն դարկում, վէր էտ ըշկօլը ըստուգէ* (Ձ): 2. Այդ բաժնի վարիչը: *Էտ մարթը հէնգ տարէ ռօնօ յա իլլալ* (Բ):

ԸՌՕՔ - *տե՛ս* ԸՌՌՈՒՔ:

ԸՍ *(գրբ. ես)* - Էական բայի սահմանական ներկայի եզակի երկրորդ դեմքը: *Հանը կըզնըվում ա, թա.- Յը՝կալ ըս հինչ ա՞նիս* (Ձ):

ԸՍԷԼԻՔ՚ - *գ.* Ասելու՝ խոսելու՝ հաղորդելու բան: *Ժըղօվուրթը ՀուրՀուր ըն խառնըվում, էտ մարթը կարում չի ըսէլիք՚ը ասէ* (Ձ):

ԸՍԸԼԱՏԸ՞Ղ - *տե՛ս* ԸՍԷԼԻՔ՚:

ԸՍԸՀԷՆՑ/ՍԸՀԷՆՑ - *տե՛ս* ԸՍՏԻ:

ԸՍԸՂԱՄԱՆ - *գ.* Ասեղներ պահելու տուփ: *Ըսըղամանը պէնում ա, տը՝սնում ասը՝ղ չի կա* (Ձ):

ԸՍԸՂՆԱԿԱՐ - *ած.* Ասեղով՝ ձեռքով կարած: *Ըտըրա կ՚ը՝ցը մին ըսըղնակար*

դարյա յա ինում, ըղնում ա մօշին քօլը, ճըղում (Ձ):

ԸՍԸՂՆԱՎԸ՝Ռ - *գ.* Կարի ձեւ, երբ հատը անմիջապես կցվում է նախորդ հատին, մեքենայի կարածի նման կար: *Ըսըղնավը՝ռը ամէն կընէգ՝ կարէլ չի անէ* (Բ):

ԸՍԹԽԱԼԻ *(գրբ. աստեղալիր)* - *ած.* Աստղեր սփռված, աստղերով, աստղավառ: *Ըսթըխալի քըշէրը կ՝օղէն աշկէն պըլօր ա* (Ձ):

ԸՍԹԸԽԱԼԻՆՈՒՍ *(գրբ. աստղալույս)* - 1. *գ.* Աստղի լույս: *Ըսթըխալի՛ւսը վէր ինի վէչ, ք՝արվանը առաչ չի ք՝ինիլ* (Ձ): 2. *ած.* Աստղերի լույսով լուսավորված: *Մին ըսթըխալի՛ւս ըրի՛ւգ՝ի՛ն մարթ ու կընէգ՝ տի՛ւս ըն կ՝ամ...* (ՆԱԲ, 28):

ԸՍԹԸԽԱՅԼՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըսթըխահա՛չ տալ - 1. Դունչը դեպի երկինք դարձրած՝ առանց պատճառի հաչել (շների մասին): *Սաղ քըշէրը ըտըրանց շօնը ըսթըխահա՛չ ա տամ, թօղնում չի, թա դօնաղը քօն ինի* (Ձ): 2. *փխբ.* Անտեղի՝ ավելորդ խոսել, դատարկաբանել: *Խըրէգ՝ ըսթըխահաչ տօ, ըջըլաման տօ՞ մունք էլ մին պէն ասինք՝* (Ձ):

ԸՍԹԸԽԱՔՕՌ - *տե՛ս* Ք՝ԱՄԲԱԽՏ:

ԸՍԹԸԽԸՇԸՌԱՎԱՆՔ - *գ.* 1. Աստղի ճառագայթ: *Ըսթըխը՝շըռավանքը ըղնում ա տահանց յըրա* (Ձ): 2. *փխբ.* Գեղեցիկ, սիրուն (երեխա, աղջիկ եւն): *Ծառան ասում ա.- Էս նախշուն ըսթըխը՝շըռավանք ախճիգ՝ը յէս ծէր տանը հարթն ըմ պէրալ... (ՆԱԲ, 36):*

ԸՍԿԱՄԷՅԿԱ *(ռուս. скамейка)* - *գ.* Նստելու հարմարանք՝ նստարան: *Ըսկամէյկին նըստօտում ըն, զըրո՛ւց անում* (Բ):

ԸՍԿԱՆԱԼ - *նբ.* 1. Լսողությամբ որեւէ ձայն ընկալել: *Բո՛ւրդա՛ն մին սա՛ա ա ըսկանում* (Բ): 2. *տե՛ս* Անգուճ օնէլ: 3. Լսելու ունակություն ունենալ: *Կօզի պառավ ա, ամմա լ՝ավ ա ըսկանում* (Բ): 4. Լուր ստանալ: *Էտ թաքավէրը ըսկանում ա, վէր փըլան յիրգ՝իրումը մին դէրվիշ կա՝ մը՝ռած մարթին սըղըցընում ա* (Ձ): 5. *տե՛ս* ՀԸՍԿԱՆԱԼ: 6. Ուշադրություն դարձնել, կարեւորություն տալ: *Վէր ամմէն ասած ըսկանաս, կօրծըտ առաչ չի ք՝ինիլ* (Ձ):

- Չըսկանալը տինիլ - Արհամարհել, մեկի ասածին ուշադրություն չդարձնել: *Ծին չըսկանալըն ա տինի՛ւմ, էշին լաչունա էլ գ՝առ-գ՝առ ք՝ինում* (ԱԱռ, 24):

ԸՍԿԱՆԴԱԼ *(ռուս. скандал, լատ. scandalum)* - *տե՛ս* ԿԸՌԸ՝Վ-ԴԱՎԻ:

ԸՍԿԷՍՈՒՐ/ԸՍԿՈՒՍՈՒՐ/ԸՍԿՕՍՈՒՐ/ՈՒՍԿՈՒՍՈՒՐ *(գրբ. սկեսուր)* - *գ.* Տղամարդու մայրը իր կնոջ համար, կեսուր: *Խը՝ղճ հարթնը ըսկէսվօրը հիշքան լ՝ավ ա պահում, էլիա նը՝ստա կ՝էնգ՝ատ ըն անըմ* (Բ):

ԸՍԿԸԼԱԴ *(ռուս. склад)* - *տե՛ս* ՊԱՀԷՍՏ:

ԸՍԿԸԼԱԴՉԻ - *տե՛ս* ՊԱՀԷՍՏԱՊԷՏ:

ԸՍԿԸՄԷ - *ած.* Այս կողմի: *Ըսկըմէ թա՛ր՝ա՛փը հա՛լա՛ չուրացալ չի* (Բ):

- Ըսկըմէ տըղան - *տե՛ս* Էս գըմէ տըղան:

ԸՍԿԸՊՕՅ/ԸՍԿՈՒՊՕՅ *(ռուս. скупой)* - *ած.* Ժլատ, կծծի, ագահաբար խնայող: *Մին շատ ըսկուպօյ մարթ ա հինի՛ւմ, էնքան ըսկուպօյ, վը՝ր հաց չի օտում, թա քուշտանա* (ՆԼՂԺԲ, 85):

ԸՍԿԸՊՕՅԹՈՒՆ/ԸՍԿՈՒՊՕՅԹՈՒՆ - *գ.* Ժլատ՝ կծծի լինելը, ժլատություն: *Էտ ղօնաղը մա՛թ ա մընըմ ըտըրա ըսկուպօյութունին յըրա՛ն...* (ԼՂԲ, 355):

ԸՍԿԸՍԷԼ/ՍԸԿԸՍԷԼ/ԸՍՔԸՍԷԼ/ՍԸՔԸՍԷԼ *(գրբ. սկսանիմ)* - *նբ.* 1. Որեւէ գործողության ձեռնամուխ լինել, որեւէ բան ձեռնարկել, սկիզբ դնել: *Էտ մարթիք՝ը նի յըն մընընում ցէխէն մաչը, ըսկըսում շօռ կ՝ա՛լը* (ՆԼՂԺԲ, 125): 2. Որեւէ գործողության կամ վիճակի առաջին նշանները ցույց տալ: *Հավան ըսքըսալ ա պարգ՝իլը* (Բ): 3. *չբ.* Սկիզբ առնել, սկսվել, ծագել: *Ըտըրանց ընըման էլ ըսքըսէս ա շէնին միհէնգ՝վա մը՝ծ ազգութի՛ւննէն* (ԱԱ, 20):

ԸՍԿԸՍՎԷԼ/ՍԸԿԸՍՎԷԼ/ԸՍՔԸՍՎԷԼ/ՍԸՔԸՍՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԸՍԿԸՍԷԼ(1, 2)-ի: 2. *տե՛ս* ԸՍԿԸՍԷԼ (3): *Հըրսանէք՝ը ըսկըսվըմ ա...* (ՀԺՀ, V, 156):

ԸՍԿԸՑ(Ը)ՆԷԼ - *պբ.* ԸՍԿԱՆԱԼ-ի՝ լսել տալ: *Էտ մարթը քառ ա ինի՛ւմ, հիշքան ճըղճըղամ ըն, կարըմ չըն պէն ըսկըցընին* (Ձ): 2. *տե՛ս* ՀԸՍԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ԸՍԿԻ/ԻՍԿԻ - *մ.* 1. Բոլորովին, բնավ: *Նա վըխէլան ըսկի գ՝իդըմ չի՝ հինչ ա, փըռնըմ ա, տինըմ ծօցըմը* (ՀԺՀ, V, 515): 2. Երբեւիցե, որեւէ ժամանակ: *Հօրը հը՝տէ ըսկի մըտածում չի, թա հունց ա ապրում, հինչ ա օտում* (Ձ): 3. Գոնե, մի քիչ: *Ըխճըկանը հա՛ր էտ տըղէն ասմա.- Տու ըսկի ճինանչում ը՞ս իմ ըխճըկանըս* (Ձ):

- Ըսկի թա/հինչ - *տե՛ս* Վէչ մին պէն (1): *Հա՛մօ, հինչ ը՞ս անում: - Ըսկի թա* (Ձ):

- Ըսկի մարթու անա պէն օգ՝ա՛ծ չը՞ս - Ասում են շատ՝ մեծ բան խնդրողին: - *Խօ՛ղէն, հա՛ր՝ուր մանէթ տօ՛. - Ըսկի մարթու անա պէն օգ՝ա՛ծ չը՞ս* (Բ):

ԸՍԿՈՒՊՕՅ - *տե՛ս* ԸՍԿԸՊՕՅ:

ԸՍԿՈՒՊՕՅԹՈՒՆ - *տե՛ս* ԸՍԿԸՊՕՅԹՈՒՆ:

ԸՍԿՈՒՍՈՒՐ - *տե՛ս* ԸՍԿԷՍՈՒՐ:

ԸՍԿՕՍՈՒՐ - *տե՛ս* ԸՍԿԷՍՈՒՐ:

ԸՍՆԷԼ - *տե՛ս* ԸՆՑ(Ը)ՆԷԼ:

ԸՍՊԱԹԻԼ - *գ.* Ջուլհակի հաստոցի շարժուն շրջանակի՝ ասպի սանրաձեւ թելերը: *Ըսպաթիլը կըտըրից, կօրծը վը՝ենը կացավ* (Ձ):

ԸՍՊԱՀԸ՝Տ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըսպահը՝տը կըցնահը՝տ տը՝ռնալ - Ասում են կոպիտ վարվողին՝ գործը ոչ նուրբ կատարողին:

ԸՍՊԱՆԱԽ/ԸՍՊԱՆԱՂ *(գրբ. սպանախ, պրս. ispanāx)* - *գ.* Թելուկազգիների ընտանիքին պատկանող միամյա ուտելի բանջար, սպանախ: *Ըսպանախը ժարիտ ըրած լ՝ավ պէն ա* (Բ):

ԸՍՊԱՆԱՂ - *տե՛ս* ԸՍՊԱՆԱԽ:

ԸՍՊԱՆԷԼ *(գրբ. սպանանեմ, սպանեմ)* - *նբ.* 1. Մեկին կյանքից զրկել, մեռցնել: *Խաբարը հըսնում ա նա՛գիրին, վը՝ր ի՛ւրա՛ն տըղէն ըսպանալ ըն* (ՆԼՂԺԲ, 63): 2. *փխբ.* Տանջել, չարչարել, ձանձրացնել, գարշանք պատճառել: *Ի՛ւրա՛ն ճըղճըղօցավը լափ մէզ ըսպանից* (Բ): 3. *փխբ.* Ծանր ազդել, հոգեպես ցնցել: *Փիս խաբարը մարթին կըսպանէ* (Ձ): 4. *փխբ.* Որս անել, որսալ: *Էտ մարթը ամմէն օր էրկու դուշ ար ըսպանում, ըտըրանավ յօլլա յին ք՝ինամ* (Ձ):

- Ըսպընէլա քըցիլ - *տե՛ս* Թան ծըմէլա՛ քըցիլ: *...Մին փա՛դ ա յօր օնում, էնքան վը՝ր թակում, վը՝ր լափ ըսպընէլա քըցո՛ւմ ա...* (ՀԺՀ, VII, 325):

ԸՍՊԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՍՊԱՆԷԼ-ի:

ԸՍՊԱՆՈՒԹԻ՛Ն *(գրբ. սպանութիւն)* - *գ.* Սպանելը, սպանվելը: *Էտ տըղէն ըսպանութի՛ւնը լօխճին հը՝տէ դա՛ռդ ա տը՝ռնում* (Ձ):

ԸՍՊԱՍԷԼ *(գրբ. սպասեմ)* - *չբ.* 1. Որեւէ տեղում որոշ ժամանակ մնալ՝ գտնվել՝ իջեւանել՝ ակնկալելով մեկի գալը, մի բանի տեղի ունենալը: *Մէլիք-Շահնազարը ըսպըսէս ա, ըսպըսէս, տըսնաս ա՝ պէն չի կա, տի՛ւս ա կ՝աս...* (ԼՂԲ, 379): 2. Մի բանի պատրաստ լինել: *Էտ հըրսընքէն կընօխանց ինք՝ ըսպասում* (Բ): 3. Որեւէ բանի հույս ունենալ, ակնկալել: *Ըսպասում ա, վէր օրէրը թընքանա* (Ձ): 4. Առաջիկայում սպասվել: *Մէզ հա՛լա՛ հինչէր ա՞ ըսպասում* (Բ): 5. Համբերել: *Տընատարը ասմա.- Պատառ ըսպասէ, էս ա հաց ընք օտում* (Ձ):

ԸՍՊԱՐ *(գրբ. շպար (երեսի ներկ, ծեփ)* - *գ.* Հողի վերին պինդ՝ չփխրեցվող շերտ: *Ըսպարը ըլաթավ վարվէլ չի* (Ձ):

ԸՍՊԱՐԷԼ *(գրբ. շպարիմ (երեսը ներկել)* - *նբ.* Քսել, սնգուրել, ծածկույթ

առաջացնել: *Կըրասկան յօր ա օնում, էտ տօռնը ըսպարում* (Ձ):

ԸՍՊԱՓԸՆԴ - *գ.* Ջուլիակի ոստայնի վրա հաստատված հորիզոնական փայտը, որի վրա ընկած է ազբը: *Թա հունց ա վը՛ննավը թըխում, ըսպափնդը կօտրում ա* (Ձ):

ԸՍՊԷԿՈՒԼԱՆՏ *(ռուս. спекулянт, գերմ. Spekulant, լատ. speculatio)* - *տե՛ս* ԱԼՎԷՐՉԻ:

ԸՍՊԷՑԻԱԼԻՍՏ *(ռուս. специалист, լատ. specialus)* - *ած., գ.* Մասնագետ: *Խօնդ՚ից Իսակը արտ ընէլի լ՚ավ ըսպէցիալիստ ա* (Բ):

ԸՍՊԷՑԻԱԼՆԻ *(ռուս. специальный)* - *մ.* Որոշակի դիտավորությամբ, դիտմամբ: *Ըսպէցիալնի չի ք՚ը՛ցալ հըրսանէք՚, հանցու շաբաշ չի տա* (Բ):

ԸՍՊԸԼԱՇՆՕՅ *(ռուս. сплошной)* - *մ.* Ամբողջովին, լրիվ: *Էտ վը՛դէրըտ ըսպըլաշնօյ վարում ըն* (Ձ):

ԸՍՊԸՆՕՏԷԼ - *նբ.* Շատերին սպանել, կոտորել: *Կ՚ամ ա, տէսնում բ՚ամբ՚ուռը ըստակած, ինք՚ը՛ն էլ թաքավէրէն, ընդրրա ըխճըկանը, կընգանը ըսպընօտում ա* (ՀԺՀ, V, 494):

ԸՍՊԸՆՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՍՊԸՆՕՏԷԼ-ի:

ԸՍՊԸՍԱՆԴԸՐ - *գ.* Ջուլիակի ոստայնի ազբի սանրը՝ այն մասը, որով գործած կտավը մղվում է առաջ: *Ըսպըսանդրը ծըռած ա ինո՛ւմ, կըլխու չըն ըղնում* (Ձ):

ԸՍՊԸՐԱՓԿԱ *(ռուս. справка)* - *գ.* Որեւէ բան հաստատող՝ վավերացնող՝ հավաստող փաստաթուղթ, տեղեկանք: *Դօխտուրը մին ըսպըրափկա յա տամ, վէր էտ մարթը մին շէբաթ էն ա իլ՚ալ բալինցումը* (Ձ):

ԸՍՊԻՍԱՏ *(ռուս. списать)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըսպիսատ անէլ - Անպիտանի համարելով՝ հաշվից դուրս գրել: *Էտ մաշինը ըսպիսատ ըն անում, ծախում* (Բ):

ԸՍՊԻՍՕԿ *(ռուս. список)* - *տե՛ս* ՑՈՒՑԱԿ:

ԸՍՊԻՐՏ *(ռուս. спирт, իտալ. spirito)* - *գ.* Մթերքների թորումով ստացած ալկոհոլ, սպիրտ: *Թօթէն արաղը վէր կա, ըսպիրտը հինչ ա՞ ընդրրա քը՛շտէն* (Բ):

ԸՍՊՕԼԻՇԽԱՆԱ - *տե՛ս* ԴԱ՚ԼԼԱ՚ՓՕՍԷ:

ԸՍՊՕՐ *(ռուս. спор)* - *գ.* Հակաճառություն, վիճաբանություն: *Էրկու տարէ յա՝ ընդրանց ըսպօրը հա՚ալ ք՚ինամ ա* (Բ):

- Ըսպօր(իտ) անէլ *(ռուս. спорить)* - Հակաճառել, վիճաբանել: *Ընտահանք ո՛ւրո՛ւր նըհը՛տ ըսպօր ըն անում, թա հու կըկարէ քը՛շէրը մինակ ք՚ինի հանգ՚իստը կ՚ա* (Ձ):

ԸՍՊՕՐՏ *(ռուս. спорт, անգլ. sport)* - *գ.* Մարմնի ամրապնդման եւ զարգացման համար ֆիզիկական վարժությունների ձեւերի ընդհանուր անունը, սպորտ: *Ըսպօրտը մարթին ջանը պինդ՚ըցընում ա* (Բ):

ԸՍՍԱԽԿԱԼ - *տե՛ս* ԱԽՍԱԽԿԱԼ:

ԸՍՏԱԺ *(ռուս. стаж, ֆր. stage)* - *գ.* Գործողության որեւէ բնագավառում աշխատելու տեւողությունը: *Ըտրրա ըստաժը շատ ա* (Բ):

ԸՍՏԱԺԱՎԷՐ - *ած.* Տվյալ բնագավառում մեծ ստաժ ունեցող: *Էտ նա՚ջա՚լնիգ՚ը էլ յէշում չի՝ հու վա ըստաժավէր, հու՝ չէ, լօխճին կօրծա տո՛ւս ա քըցո՛ւմ* (Ձ):

ԸՍՏԱԼԱՎՕՅ (ռուս. *столовая*) - *տե՛ս* ԱՇՊԱՋԽԱՆԱ: *Թաքավէրը էտ ըստալավօյին տըռնավը ընցնէլիս լըսում ա, վէր ըտէղ ըստի մին մարթ կա...* (ՀԺՀ, V, 643):

ԸՍՏԱԿԵԼ/ՍԱԹԿԵԼ/ՍԱՏԿԵԼ *(գրբ. սատակեմ (սատկացնել)* - *չբ.* 1. Մեռնել (կենդանիների եւ թռչունների մասին): *Կավը ըստակում ա, ըտըրանց թօղնում տո՛ւզնը* (Ձ): 2. *անրգ.* Մեռնել (մարդկանց մասին): *...Վէր թըխում ա, սէվ ծիյավէրը ըղնում ա ծիյին փօրէն տակը, ըստակում* (ՀԱԲ, 15, 55): 3. *փխբ.* Ճիգ չթափել, չչարչարվել, նեղություն չկրել: *Սաբավ քուր ա, ըստակում ա, թա ախպօրը յիթիմնէրէն ք՚ըմա՚գ՚ անէ* (Ձ): 4. *փխբ.* Մի բան շատ տենչալ, ձգտել, մի բանի համար հոգի տալ: *Ուտելու հը՛տէ ըստակում ա* (Ձ):

- Ըստակած էշու վա շօռ կ՚ամ, վէր նալէրը տո՛ւս օնէ - Ասում են նրա մասին, ով ձրի բանի է ման գալիս:

- Ըստըկածէն ա թակում - Ասում են թույլ՝ անզոր՝ անկարող մարդու մասին:

ԸՍՏԱՆԱԼ *(գրբ. ստանամ)* - *նբ.* 1. Որեւէ բան վերցնել՝ ընդունել: *Սաղ ամէսը կօրծ ա ըրալ, իգցուն մանէթ ըստացալ* (Ձ): 2. Որեւէ բանով պարգեւատրվել: *Հէղուշը տասսը խօխա պէրռավ, վը՛սկէ մէդալ ըստացավ* (Ձ): 3. Կատարելու համար ընդունել, իր վրա վերցնել: *Սապօժնիգ՚ը զակազ ա ըստանում* (Բ): 4. Որեւէ բան կրել՝ զգալ, որեւէ բանի ենթարկվել: *Կըռվէն վախտը կանտուզի յա ըստացալ* (Ձ): 5. Վաստակել: *Հայրօն լ՚ավ փուլ ա ըստանում* (Բ): 6. Աշխատանքով՝ մշակելով արդյունք ձեռք բերել: *Էտ վը՛դան ըտըրանք լ՚ավ պէրք ըն ըստանում* (Ձ): 7. Որեւէ բան քաղել՝ վայելել: *Հըրսընքան լ՚ազա՚թ ըստացէնք՚* (Բ):

ԸՍՏԱՆՑԻ *(ռուս. станция, լատ. statio)* - *տե՛ս* ՎԱՂՋԱԼ:

ԸՍՏԱՆՕԿ *(ռուս. станок)* - *տե՛ս* ԴԱ՚ՋԳԱ՚Հ:

ԸՍՏԱՌԷԼ - *նբ.* Ջգեստին՝ շորին աստառ դնել՝ գցել: *Կընէգ՚ը շալվարը ըստառում ա, տամ ըտըրան* (Ձ):

ԸՍՏԱՐԷ/ԸՍՏԸՌՆԷ - *մ.* Այս տարի: *Ըստարէ ըտի էլ ծո՛ւն չի յը՛կավ* (Բ):

ԸՍՏԱՔԱՆ *(ռուս. стакан)* - *գ.* 1. Ապակյա գլանաձեւ անոթ՝ հեղուկ խմելու համար, բաժակ: *Ըստաքանը տէմ ա անըմ, մին խիլլա՚ կաղնըմ, միչէվ էտ ըստաքանին կէսը էտ ճիրա՚վը լըցնըմ ա* (ՀԺՀ, V, 80): 2. Բաժակի պարունակությունը, բաժակի մեջ լցված հեղուկը: *Էրկունջի ըստաքանը վը՛ր խըմըմ ա, տը՛սնըմ ա՝ սաղ պալատը էն ա ծը՛րքին մը՛չին...* (ՀԺՀ, V, 239):

- Ըստաքան ըստըքանու թըխէլ - Իբրեւ բարեկամության նշան՝ բաժակներն իրար խփել եւ միասին խմել: *Տընատարրն ա ղօնաղը ըստաքան ըստըքանու վընն թըխում, խըմում* (Ձ):

- Ըստաքան պիցըրցընէլ - Կէնաց առաջարկել: *Թամադան ըստաքան ա պիցըրցընում խընամուց մըհար* (Բ):

- Ըստըքանու հընգէր - Մեկի հետ կերուխումի մշտական ընկեր, բաժակակից: *Մակիչընն ա Հէնդօն ըստըքանու հընգէրունք ըն* (Բ):

ԸՍՏԷՂ - *տե՛ս* ԸՍՏԸ՚Ղ:

ԸՍՏԷՂԾԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸ՚ՂԾԷԼ:

ԸՍՏԷՂԾ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸ՚ՂԾ(Ը)ՎԷԼ:

ԸՍՏԸ՚Ղ/ԸՍՏԷՂ/ԸՍՏԸՂ - *դ.* 1. Այս տեղը, այստեղ: *Ըստը՛ղ լ՚ավ խընձօր ա ինո՛ւմ* (Ձ): 2. Այսպիսի հանգամանքներում՝ պայմաններում՝ ժամանակ: *Կընէգ՚ը ըստէղ շատ կըգնըվում ա մարթին յըրա՚, շօրէրը հանէլ տամ, ինք՚ը կ՚էնո՛ւմ, հըղէ ինո՛ւմ* (ՆԼՂԺԲ, 90): 3. Այս գործում: *Էտ տըղան ըստը՛ղ կարում չի կըլօխ հանէ, էրո՛ւշ կօրծ ըն տամ* (Ձ):

- Ըստը՛ղ մին «յէվ» կա - Ասում են այն ժամանակ, երբ կասկածում են որեւէ բանում: *Կարապէտը ք՚ըմա՚գ՚ ընէլի հը՛տէ կ՚ա՚լ չի մէր տօն, վէր յը՛կալ ա, ըստը՛ղ մին «յէվ» կա* (Ձ):

- Ըստըղէս հըսնէլ - *տե՛ս* Բուղազէն հըսնէլ (ասում են՝ ցուցամատով ցույց տալով կոկորդը) (ԲՕՂԱՋ-ի տակ):

- Ըստըղէս հըսցընէլ - *տե՛ս* Բուղազէն հըսցընէլ (ԲՕՂԱՋ-ի տակ):

ԸՍՏԸ՚Ղ-ԸՆԴԸ՚Ղ - *մ.* 1. Ջանազան՝ տարբեր տեղերում: *Նախըրչի ախպէրը ըստէղ-ընդէղ շօռ ա կ՚ամ, ճո՛ւր քըթա՚նում* (ՀԺՀ, V, 371): 2. Տեղ-տեղ, որոշ տեղերում: *Ծո՛ւնը ըստը՛ղ-ընդը՛ղ հա՚ալ ա* (Բ):

- Ըստը՞ղ-ընդը՞ղ ըղնէլ - 1. Տարբեր տեղեր գնալ որեւէ նպատակով, որեւէ բան գլուխ բերելու համար տարբեր մարդկանց դիմել: *Ըստը՞ղ-ընդը՞ղ ընգավ, կարից վէչ կօրծի նի մընէ* (Ձ): 2. Տարբեր տեղերում որոնել՝ փնտրել: *Համօն ըստը՞ղ-ընդը՞ղ ա ընգալ, կըրը՞ցալ չի հէյվանը քըթէնա* (Բ): 3. *տե՛ս* Ըստըղան-ընդըղան թօխրէլ:

- Ըստըղան-ընդըղան թօխրէլ - Անկապ՝ կցկտուր խոսել, բուն նյութից շեղվել: *Կարում չի, թա կարքէն խօսէ, լ՚ըհա ըստըղան-ընդըղան թօխրում ա* (Ձ):

ԸՍՏԸ՞ՂԾԷԼ/ԸՍՏԷՂԾԷԼ/ԸՍՏԸՂԾԷԼ *(գրբ. ստեղծանեմ)* - *նբ.* 1. Հիմնել, հիմնադրել, սկզբնավորել: *Աստուծ աշխարքըս վէր ըստը՞ղծալ ա, ամմէն հինչ ունն տը՞ղըն ա տիրում* (Ձ): 2. Ձեռք բերել, ունենալ: *Էտ մարթը ըստը՞ղ ունն հը՞տէ լ՚ավ ապըրուստ ա ըստը՞ղծում* (Ձ): 3. Հնարել, հորինել: *Էտ լօխ ըստը՞ղծած պէնէր ա, ըտի պէն ինիլ չի* (Բ):

ԸՍՏԸ՞ՂԾ(Ը)ՎԷԼ/ԸՍՏԷՂԾ(Ը)ՎԷԼ/ԸՍՏԸՂԾ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՍՏԸ՞ՂԾԷԼ-ի:

ԸՍՏԸԿՑ(Ը)ՆԷԼ/ՍԸԹԿԸՑ(Ը)ՆԷԼ/ՍԸՏԿԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԸՍՏԱԿԷԼ (1, 2)-ի:

ԸՍՏԸԿՕՏԷԼ/ՍԸԹԿՕՏԷԼ/ՍԸՏԿՕՏԷԼ - *չբ.* Շատերը՝ բոլորը սատկել: *Շընէրը կ՚ամ ըն օտում, դանստի ըստըկօտում* (ԱԱ, 67):

ԸՍՏԸՂ - *տե՛ս* ԸՍՏԸ՞Ղ:

ԸՍՏԸՂԾԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸ՞ՂԾԷԼ:

ԸՍՏԸՂԾ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸ՞ՂԾ(Ը)ՎԷԼ:

ԸՍՏԸՌԱՑՈՒ - *գ., ած.* Աստառի համար նախատեսված (կտոր): *Էրկու մէտըր շըլվարու ըստըռացու վա ինք՚ օնում* (Բ):

ԸՍՏԸՌՆԷ - *տե՛ս* ԸՍՏԱՐԷ:

ԸՍՏԸՐԱ/ՍԱ[2]/ԸՍՏՈ՞ՒՐ/ՍԸՐԱ - Սա դերանվան սեռական հոլովաձեւը՝ սրա: *Մին օր էլ օխծը կընծում ա, ըստըրա ըսպանում* (Ձ):

- Ըստըրան/ըտըրան/ընդըրան յէշի/տը՞ս - Ասում են ուժից վեր գործ ձեռնարկողին կամ մեծ-մեծ խոսողին: *Ըստըրան յէ՛շի, մին կ՚ը՞ղ կա վէչ, ամմա օգ՚ում ա տօն շինի* (Ձ):

ԸՍՏԸՐԱ-ԸՆԴԸՐԱ/ԸՍՏՈ՞ՒՐ-ԸՆԴՈ՞ՒՐ - *դ.* Սրա-նրա, ուրիշների: *Սաղ օրը ըստըրա-ընդըրա հը՞տէ կօրծ ա անում* (Ձ):

ԸՍՏԸՐԱԺՆԻԳ՚/ԸՍՏԸՐԱԺՆԻԿ (ռուս. *страж*ник) - *գ.* Պահնորդ, պահակ, պահապան: *Մին ըստըրաժնիկ էլ ընհը՞տըն ըն տինում, կ՚ամ ա տօռնը պէնամ...* (ՀԱԲ, 15, 60):

ԸՍՏԸՐԱԺՆԻԿ - *տե՛ս* ԸՍՏԸՐԱԺՆԻԳ՚:

ԸՍՏԸՐԱԽԱՎԱՆՆԻ *(ռուս. страхование)* - *գ.* Ապահովագրվելը, ապահովագրում: *Սավէտին վախտը ըստըրախաւանին ադամ ա իլալ* (Բ):

ԸՍՏԸՐԱՆՔ - *դ. ՍԱ* դերանվան հոգնակին: *Ըստըրանք էտ վէր տը՞սէն, սըրտաճանք իլին* (Ձ):

ԸՍՏԸՐՕԳԻ *(ռուս. строгий)* - *ած.* Խստաբարո, պահանջկոտ: *Էտ շէնին քՕխան էլ շատ ըստըրօգի մարթ ա ինում* (Ձ):

ԸՍՏԸՐՕՅՄԱՏԱՐՅԱԼ *(ռուս. стройматериалы)* - *գ.* Շինանյութ: *Միհէնգ՚ ըստըրօյմատարյալը էնքան թինգ՚ալ ա, մինակ հըրուստնէն ըն կարում տօն շինին* (Ձ):

ԸՍՏԻ/ԻՍՏԻ[2] - *դ.* 1. Այս կերպով՝ եղանակով՝ ձեւով, այսպես: *Էս ախճիգ՚ը վը՞ր իստի յա ասում, տըղան քօռ ու փէշման յէտ ա տէռնում, կ՚ամ ունց տօն* (ՆԼՂԺԲ, 126): 2. Այս տեսակի, այսպիսի: *Ըստի արաղ վէչ մին յիրգ՚իրում կա վէչ* (Բ):

- Ըստի թա ընդի - Ինչպես էլ որ լինի, բոլոր դեպքերում էլ: *Ըստի թա ընդի ք՚ինանկան ըս, նըհախ յըտանալ մէ՛լ* (Ձ):

ԸՍՏԻԲԻԼ/ԸՍՏԻՊԻԼ *(գրբ. ստիպեմ, հ.ե. *steib(h)-, *steip-)* - *նբ.* Հարկադրել, դրդել, մղել: *...Խօրթ մանը ըստիբըմ ա, վը՞ր ախճիկըն էլ օտի էտ մըսան* (ԼՂԲ, 357):

ԸՍՏԻԲՎԱԾ/ԸՍՏԻՊՎԱԾ - *մ.* Ճարահատյալ, այլ ելք՝ միջոց չունենալով: *...Ըստիբված ծախէց վանծուն մընէթու, տըղան փըսակէց* (ԼՂԲՔ, 261):

ԸՍՏԻՊԻԼ - *տե՛ս* ԸՍՏԻԲԻԼ:

ԸՍՏԻՊՎԱԾ - *տե՛ս* ԸՍՏԻԲՎԱԾ:

ԸՍՏՈՒԳԷԼ/ՈՒՍՏՈՒԳԷԼ *(գրբ. ստուգեմ)* - *նբ.* 1. Որեւէ գործողությամբ (համեմատելով, քննելով եւն) ճշտությունը պարզել: *Կամ ըն ըտըրա մաղազինը ըստուգում, տը՞սնում ապըրանքը խըրէգ՚* (Ձ): 2. Փորձարկման ենթարկել: *Ըստուգում ա, տը՞սնում մաշինը խարաբ* (Բ):

ԸՍՏՈՒԾԱՆԱ/ՈՒՍՏՈՒԾԱՆԱ - *ած.* Աստծուց տրված՝ պարգեւած: *Էտ հինանը ըտըրա մաչին ըստուծանա յա* (Ձ):

ԸՍՏՈՒԾԱՇԷՆ/ՈՒՍՏՈՒԾԱՇԷՆ *(գրբ. աստուածաշէն)* - *ած.* Աստծու շինած: *Ասում ըն՝ էտ յը՞խծէն ըստուծաշէն ա* (Բ):

ԸՍՏՈՒԾԱՊԱՇՏ/ՈՒՍՏՈՒԾԱՊԱՇՏ *(գրբ. աստուածապաշտ)* - *ած.* Աստծուն պաշտող, քրիստոնյա: *...Ախպէրը ըստուծապաշտ ար, համ էլ քըշկէրէն հըվատում ար...* (ՀԺՀ, V, 401):

ԸՍՏՈՒԾԱՍԷՐ/ՈՒՍՏՈՒԾԱՍԷՐ *(գրբ. աստուածասէր)* - *ած.* Աստծուն սիրող, բարեպաշտ: *Մին ըստուծասէրը տանս չի կ՚ամ, ընդըրանց պանը քանդըմ, վէր մարթէք կարին ընդէղէք կօխին* (ՋՏ, Բ, 37):

ԸՍՏՈՒԾԱՎԱԽ/ՈՒՍՏՈՒԾԱՎԱԽ *(գրբ. աստուածավախ)* - *ած.* Աստծուց վախեցող, երկյուղած, բարեպաշտ, աստվածավախ: *Նօյ ընումավ մին ըստուծավախ մարթ ա իլալ...* (Ձ):

ԸՍՏՈՒԾԱՏՈՒՐ/ՈՒՍՏՈՒԾԱՏՈՒՐ *(գրբ. աստուածատուր)* - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԱՆԱ:

ԸՍՏՈՒԾԸ՞ՎՈՒՐ/ՈՒՍՏՈՒԾԸ՞ՎՈՒՐ - *ած.* Աստծու նման, աստծու նմանվող: *Ըստուծը՞վուր մարթ ա, լօխ սիրում ըն* (Բ):

ԸՍՏՈ՞ՒՐ - *տե՛ս* ԸՍՏԸՐԱ:

ԸՍՏՈ՞ՒՐ-ԸՆԴՈ՞ՒՐ - *տե՛ս* ԸՍՏԸՐԱ-ԸՆԴԸՐԱ:

ԸՍՏՕԼ *(ռուս. стол)* - *գ.* 1. Ոտքերի վրա ամրացված տախտակից բաղկացած կահույքի տեսակ տարբեր պետքերի՝ ճաշելու, գրելու եւ այլ նպատակների համար, սեղան: *...Համբալը յալլէխը պանրում ա, տինում ըստօլէն* (ԲՀԲ, 44): 2. *տե՛ս* ԱԹՈՌ: *Ըստօլը քաշում ա տակը, նըստում* (Բ): 3. *փխբ.* Կերակուրներ՝ ուտելիքներ, որ արդեն դրված են ուտելու համար: *Ըստօլը վէր հազըր ա ինում, լօխ հըվաքվում ըն, հաց օտում* (Ձ): 4. *փխբ.* Հացկերույթ, ճաշկերույթ: *Թօրգամը ըստօլէն կ՚ամ չի, էն ա ինում հանդին* (Ձ):

- Ըստօլէն (յը՞ոէ) կըլխէն նըստըցընէլ - Հարգել, պատվել, մեծարել: *Շէնին մարթուցը հըվաքում ա, մին պառավ մարթու տանում ըստօլէն կըլխէն նըստըցընում* (ՆԼՂԺԲ, 127):

- Ըստօլէն յըրա մընալ - Վիրահատության ժամանակ մեռնել: *Հիվանդը ըստօլէն յըրա մընաց* (Բ):

- Ըստօլը թըքանալ - Խնջույքն աշխուժանալ: *Վէր մին էրկու ըստաքան խըմում ըն, ըստօլը թըքանում ա, էլ թամադէն ըսկանօղ չի ինում* (Ձ):

- Ըստօլը հըվաքէլ - Հացկերույթը՝ խնջույքը ավարտվել, ուտելուց հետո սեղանի վրա մնացած ուտելիքներն ու պարագաները հավաքել ու վերցնել: *Ըստօլը հըվաքում ըն, ամհա էտ հանրփանծ մարթը տը՞ղան յը՞ր չի կէնում* (Ձ):

- Ըստօլ հըզըրէլ/պէնալ/պէց անէլ/սարքէլ/քընցիլ - 1. Հացկերույթ՝ հրավերք կազմակերպել: *Թամար բաջին, տըղան վէր քընաքան կ՚ամ ա, լ՚ավ ըստօլ ա քընցում, լօխճին ծէն տամ ղօնաղ* (Ձ): 2. Ճաշի ուտելեղենները եւ պարագաները սեղանի վրա դնել՝ դասավորել: *Մին խընրէգ՚ յէտը էտ հարսը ըստօլ ա պէց անըմ, էրկուսավ նըստում ըն, օտըմ, խըմըմ* (ՀԺՀ, V, 226):

ԸՍՏՕԼԲԱ *(ռուս. столба, իտ. stroppa)* - *գ.* Գետնին հաստատված սյուն, որի վրա ամրացնում են հեռագրական,

էլեկտրական եւն հաղորդալարերը: *Քամէ ըրավ, ըստօլբէք՛ը վէր ածից* (Բ):

ԸՍՏՕՊԸՐԱՑԷՆՏՆԻ *(ռուս. стопроцентный)* - *մ.* Լրիվ, լիովին, ամբողջովին: *Կօրծէրը ըստօպըրացէնտնի պըրծընում ա* (Բ):

ԸՍՏՕՐԷԼ - *չբ.* Ցած իջնել, դեպի մայրամուտ թեքվել (արեգակի մասին): *Ընդէվը ըստօրալ ա* (Բ):

ԸՍՏՕՐՕԺ *(ռուս. сторож)* - *տե՛ս* ՊԱՀԱԿ:

ԸՍՔԸՍԷԼ - *տե՛ս* ԸՍԿԸՍԷԼ:

ԸՍՔԸՍՎԷԼ - *տե՛ս* ԸՍԿԸՍՎԷԼ:

ԸՍՕՐ(Է)/ԱՍՕՐ/ՍՕՐ[3]/ՍՕՐԷ *(գրբ. այսօր)* - *մ.* Ընթացիկ օրը, ներկա օրը, այսօր: *Ըսօր խասա աքօրը քըռասունքըն ա* (Զ):

- Ըսօր ը՞ս մը՛ռալ, թա է՞ք՛ուց - Ասում են այն ժամանակ, երբ մեկին անսպասելի որեւէ դժբախտություն է պատահում:

- Ըսօր կանք, էք՛ուց՝ վէչ - Մարդու կյանքը ժամանակավոր է, պետք չէ վատություն՝ չարություն՝ ժլատություն անել: *Մանրդիրօս, ըսօր կանք, էք՛ուց՝ վէչ, համօթ ա, էտ մարթին խըրէգ՛ տանջի* (Զ):

- Ըսօրանց յը՛տը/տէնը - *տե՛ս* Մըհէնգ՛ան(ց) յը՛տը:

- Ըսօրվա յըրա/օրը - Այսօրվա՝ այս պահի դրությամբ: *Ըսօրվա յըրա հանա մունք շատ վը՛ղէր օնինք՛ թուրքէրէն ծը՛րքէն* (Զ):

- Ըսօր օխտը օր բիդանվ - Մեկի մահը ցանկանալու, մեկին մեռած տեսնելու արտահայտություն, որ գործածվում է հեգնաբար կամ որպես անեծք: *Մխճի, մը՛ռնում ըմ: - Ըսօր օխտը օր բիդանվ* (Զ):

ԸՍՕՐ-ԷՔ՛ՈՒՑ - *մ.* Շուտով, մոտ ժամանակներս: *Ժըռընգ՛նէն մըտածում ըն, վէր ըսօր-էք՛ուց հանը մըռնըլական ա...* (ՆԱԲ, 66):

- Ըսօր-էք՛ուց անէլ - *տե՛ս* Ըսօր-էք՛ուցը քըցիլ:

- Ըսօր-էք՛ուցը ըղնէլ - 1. Ձգձգվել, զանազան պատճառներով հետաձգվել: *Կօրծը վէր ըսօր-էք՛ուցը ընգավ, նը՛ստա ծը՛րք քաշի* (Բ): 2. Օրհասական վիճակում՝ մահամերձ լինել: *Կանաբէդ դային էն ա ըսօր-էք՛ուցը ընգած* (Զ): 3. Ասում են հղի կնոջը, որը շուտով պետք է ծննդաբերի: *...Տը՛սալ ա, վէր հարթնը էն ա ըսօր-էք՛ուցը ընգած, յօր ա կալանվ, տարալ տատմօրը կօշտը* (Զ):

- Ըսօր-էք՛ուցը քըցիլ - Ձգձգել, զանազան պատճառներով հետաձգել: *Էտ թանջիրը ըտի խըփիլանվ, ըսօր-էք՛ուցը քըցիլանվ, ըտրրա պարթկը տամ չի* (Զ):

ԸՎԱՋԱԿ/ԱՎԱՋԱԿ *(գրբ. աւազակ)* - *գ.* 1. Ջինված կողոպուտ անող մարդ: *Ծըմակավը ընցընէլիս ըվըզակնէն յըրա յըն տը՛ռնըմ, ըտրրան թըլանում* (Զ): 2. Սրիկա, խաբեբա: *Էտ ըվազակը լօխճին կարում ա խանփի* (Բ):

ԸՎԱՋԱՆ/ԱՎԱՋԱՆ *(գրբ. աւազան)* - *գ.* 1. *տե՛ս* ՅՕՎՈՒՋ: 2. Եկեղեցու պատի մեջ պատրաստված փոքրիկ գուռ՝ մկրտության համար: *Դէրը ըտրրան կըռընցընում ա ըվըզանէն յըրա, իրը՛սը լըվանում* (Զ):

- Ըվըզանումը պըպըզ՛ած - *ած.* Խելոք, ուշիմ, կարգապահ: *Նէրակ ընդանր կինի, մին ըվըզանումը պըպըզ՛ած հարթնը կինի* (Զ):

ԸՎԱՆԱԿ/ԱՎԱՆԱԿ *(գրբ. յաւանակ (էշի, ձիու ձագ)* - *տե՛ս* ԷՇ (1, 5, 6):

ԸՎԱՐԱ/ԱՎԱՐԱ/ՅԸՎԱՐԱ *(պրս. āvāra)* - *ած., գ.* 1. Դատարկապորտ, անբան, պարապ-սարապ թափառող: *Թօռնը յէշանում ըս՝ ըվարա մարթիք՛ ըն* (Զ): 2. Անիմաստ, ոչ արդյունավետ: *Ըվարա կօրծան բիդի ղըրաղ կէնաս* (Բ):

- Ըվարա անէլ - Մեկի ժամանակը անտեղի խլել, գործից գցել: *...Ըխպըհարըմ քըթօթ անօղ հավէրըն ու ղազէրըն էլ ըն կըռէվ տամ ու սաղ խալխը ավարա անըմ* (ՋՏ, Բ, 232):

- Ըվարա ինիլ/տը՛ռնալ - Ժամանակը զուր վատնել, գործից հետ ընկնել: *Թօռը յը՛կավ, էտ օրը սաղ կալխօզնիկնէն ըվարա իլին* (Զ):

ԸՎԷՐԱԿ/ԱՎԷՐԱԿ/ԻՎԻՐԱԿ/ՎԷՐԱԿ *(գրբ. աւերակ)* - 1. Ավերված՝ հիմնահատակ եղած շինություն, փլատակ: *Կամ ըն, քըշէրը էտ ըվէրակումը կէնում, ըռութանան էլիա հըղէ ինանում* (Զ): 2. *ած.* Կործանված, քանդված, ավերված: *Ջըրաբերթում մին ըվէրակ յէխծէ կա* (ՆԼՂԺԲ, 144):

- Ըվէրակ անէլ - *տե՛ս* ԸՎԷՐԻԼ:

- Ըվէրակ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ԸՎԷՐՎԻԼ:

ԸՎԷՐԻԼ/ԱՎԷՐԻԼ *(գրբ. աւերեմ)* - *նբ.* Կործանել, քանդել, քարուքանդ անել: *Լէնգ՛-Թէմուրը Թիրթանռա էս դօլը ըվէրալ ա* (Զ):

ԸՎԷՐՎԻԼ/ԱՎԷՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԸՎԷՐԻԼ-ի:

ԸՎԸԴԱՆԱԼ - *չբ.* 1. Լավ աճել, փարթամանալ, մեծանալ: *Թօռը յը՛կավ, հանը ըվըդացավ* (Բ): 2. *տե՛ս* Ավադ ինիլ:

ԸՎԸԴՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԸՎԸԴԱՆԱԼ-ի:

ԸՎԸՏԱՆԱՆ - *տե՛ս* ԸՎԻՏԱՐԱՆ:

ԸՎԸՐՕԹՈՒՆ - *գ.* Դատարկապորտություն, անբանություն, պարապ-սարապ թափառելը: *Ըվըրօթունը աշխարքըս կանանվ ա* (Բ):

- Ըվըրօթուն անէլ - Դատարկապորտությամբ զբաղվել, պարապ-սարապ թափառել: *Հանը սաղ օրը տանջվում ա, էտ տըղան էլ ըվըրօթուն ա անում* (Զ):

ԸՎԻԼԱՄԷՍ/ԻՎԻԼԱՄԷՍ - *գ.* Մարմնի որեւէ մասում առաջացած ավելորդ միս: *Վըխճարէն բուդումը ըվիլամէս նաղդը ինանում ա* (Բ):

ԸՎԻԼԱՆԱԼ/ԻՎԻԼԱՆԱԼ - *չբ.* 1. Ավելի լինել, օգտագործելուց՝ բաժանելուց եւն հետո ավելորդ մնալ: *Ցօրէնը հուրհուր մաչի պիժը՛նում ըն, մին մէշուկ ըվիլանում ա* (Զ): 2. Շատանալ, բազմանալ: *Խը՛ղճը հինչ ա՞նէ, դանրդէրը ըվիլացալ ա* (Բ):

ԸՎԻԼՆՕՐԹ/ԻՎԻԼՆՕՐԹ *(գրբ. աւելորդ)* - *գ.* Ավելցուկ, մնացորդ: *Նըստում ըն էտ կուրկուտը օտում, ըվիլնօրթը տամ շընէրէն* (Զ):

ԸՎԻԼՑ(Ը)ՆԷԼ/ԻՎԻԼՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԸՎԻԼԱՆԱԼ-ի:

ԸՎԻԼՈՒԿ/ԻՎԻԼՈՒԿ/ՈՒՎՈՒԼՈՒԿ/ՅԸՎԷԼՈՒԿ/ՎԻԼՈՒԿ *(գրբ. աւելուկ)* - *գ.* Մատիտեղազգիների ընտանիքին պատկանող ուտելի բանջարաբույս, ավելուկ: *Ըվիլուկը ծըմը՛ռնը լանջթ ա ինանում* (Բ):

ԸՎԻՏԱՐԱՆ/ԸՎԸՏԱՐԱՆ *(գրբ. աւետարան)* - *գ.* Աստվածաշնչի այն մասը, որը պարունակում է պատմություններ Քրիստոսի կյանքի ու ուսմունքի մասին, ավետարան: *Դէրը ըվիտարանը մուտըցընում ա, ամմա էլիա կարում չի կարթի* (Զ):

- Ըվիտըրանան թօխտ ճըղէլ - Մեծ մեղք՝ հանցանք գործել: *Էտ ըվիտըրանան թօխտ ճըղածէն կըպօտում ըն, քըցանում զընդանը* (Զ):

- Ըվիտըրանումը կ՛իրանծ - Օրինական, լավ, ճշմարիտ (արարք, խոսք եւն): *Տընըշինիտ մարթը ըսկի մին պէն չի անում, վէր ըվիտըրանումը կ՛իրանծ ինի* (Զ):

ԸՎԻՐԻ - *տե՛ս* ՎԻՐԻ(ՆԻ):

ԸՎԻՐԻԼ/ԻՎԻՐԻԼ *(գրբ. վայրենիմ)* - *չբ.* 1. Վայրենի դառնալ, վայրենանալ: *Էտ խօզ՛ը էնքան ծըմակումը կէնում ա, ըվիրում ա* (Բ): 2. *փխբ.* Չափն անցնել, շատ հանդգնել, անկառավարելի դառնալ: *Էնքան իրը՛ս ըն տըվալ, իվիրալ ա* (Բ):

ԸՎԼԸՂԸՂ - *տե՛ս* ԱՎԼԱՂ:

- Ըվլըդըղում պըհէլի չի - Ասում են անիրավ՝ անզգամ մարդկանց մասին: *Տընըշինիտ խօխան ըվլըդըղըմ ըսկի պըհէլի չի* (Բ):

ԸՎՈՒԼԱԹԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըվուլաթակ անէլ/տալ - Ավելով ծեծել: *Ազին փըռնում ա, էտ խօնցը մին լ՛ավ ըվուլաթակ անում* (Զ):

ԸՏԱԿՎԷԼ - *չբ. տե՛ս* Ատակը ընցընէլ:

ԸՏԷՊ - *տե՛ս* ԸՏԸՊ:

ԸՏԸՊ/ԸՏԷՊ/ԸՏԸՊ/ՏԸՊ²/ՏԷՊ³/ՏԸՊ² - *դ.* 1. Այդ տեղը, այդ տեղում: *Ը-տը՛ղ էլ շատ գ՛ուլանաստ ա ինում* (Ձ): 2. Այդպիսի հանգամանքներում՝ պայմաններում՝ ժամանակ: *Ըտը՛ղ թաքավէրին տըղան մանանը կըծում ա* (Ձ): 3. Այդ գործում: *Դէրվիշը ասմա.- Ըտը՛ղ վէր շիլ ընգէր, էլ կըրըլան չըս թաքավէրին աշկէն ըրվաս* (Ձ):

ԸՏԸՊ-ԸՏԸՊ - *տե՛ս* ԸՍՏԸՊ-ԸՆԴԸՊ(2):

ԸՏԸԿ-ԱՏԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըտըկ-ատակ անէլ - Մանրամասն հարցուփորձի ենթարկելով՝ գաղտնիքներն իմանալ: *Մին պառավ կ՛աս ա ը-տըրանց տօն, ըտըկ-ատակ ընէս, լօխ գ՛իդաս* (Ձ):

ԸՏԸՀԷՆՑ/ՏԸՀԷՆՑ - *տե՛ս* ԸՏԻ: *Ասում ըն՝ ըտըհէնց ա անդաթ ինգ՛ալ թութուն քաշիլը* (ԱԱ, 62):

ԸՏԸՊ - *տե՛ս* ԸՏԸՊ:

ԸՏԸՐԱ/ՏԱ²/ԸՏԻՈՐ/ՏԸՐԱ - **Դա** դերանվան սեռական հոլովաձեւը՝ դրա: *Ը-տըրա մարը մը՛ռնում ա, հանը ք՛ինամ ա մին խօրթ մար պիրում* (Ձ):

ԸՏԸՐԱՆՔ - *դ.* *ՏԱ* դերանվան հոգնակին: *Ըտըրանք հինչ բի՞դի անին* (Բ):

ԸՏԻ/ԻՏԻ/ՏԻ - *դ.* 1. Այդ կերպով՝ եղանակով՝ ձեւով, այդպես: *Ըտի էտ տըղան էտ բէրթըմը մընծընաս ա* (ԱԱ, 17): 2. Այդ տեսակի, այդպիսի: *Ըտի ծի վէշ մինին ինիս չի* (Բ):

- Ըտի խօսկը մըթկումը ասէլըն էլ ա համօթ - Խիստ անպարկեշտ խոսք է: *Ը-տի խօսկը մըթկումը ասէլըն էլ ա համօթ, տու հունց ը՞ս քու մօր ասում* (Բ):

- Ըտի պէնէր - Խոսակցության՝ ասածի վերջում ավելացվող արտահայտություն, որ մատնացույց է անում ասածը: *Թունի դային ըսկանում ա, ըսկանում, թա.- Ըտի պէնէ՛ր* (Ձ):

ԸՏԻՅՕԹՈՒՆ/ԻՏԻՅՕԹՈՒՆ - *գ.* Այդպիսի դեպք՝ վիճակ՝ երեւույթ եւն: *Իտիյութունավ կընգանը ըրարմունքը մարթին քըշտին պը՛ց ա ինըմ...* (ԼՂԲ, 312):

ԸՐԱՋԻ - *մ.* Երազում՝ քնած ժամանակ: *Ըրազի տը՛սնում ա՝ կընէգ՛ը է-ր՛ուշ տըղըմարթու նըհը՛տ սիլի-բիլի ընէլիս* (Ձ):

ԸՐԱՋԻԼ - *նբ.* Բուռն կերպով ցանկանալ, տենչալ: *...Պըռըշնէրիտ հըսած գ՛ի-լանսնին իմ սը՛ռտըս ըրազալ ա* (ԼՂԲ, 18):

ԸՐԱԺԱՆ/ԱՐԱԺԱՆ/ՐԱԺԱՆ - *գ.* 1. Հում կաթի սեր: *Ըրաժանը քաշանում ա, ածում ղազանը* (Ձ): 2. Սերը եփելով պատրաստած ուտելիք: *Մարտակերտցուց ըստօլան ըրաժանը անպակաս ա* (Բ):

ԸՐԱԽԱ - *տե՛ս* ԽՕԽԱ: *Էտ քօչը ք՛ինանալիս վախտը մին ըրախա յա քօչան վէր ընգնում* (ՀԺՀ, V, 393):

ԸՐԱԾԷԼ *(գրբ. արածիմ, հ.ե. * trəg')* - *չբ. եւ նբ.* Խոտը պոկելով ուտել, ճարակել, արածել: *Յը՛տ տը՛ռնալիս տէսին մին կանանչ լէնջի մին շատ կ՛էղէցիկ բախրա յա ըրածըմ* (ՀԺՀ, V, 144):

ԸՐԱԿԿԱՎ - *ածական.* Տարօրինակ, ըստ տրամադրության գործող: *Ըրակավ մարթ ա մէր նախագան* (Ձ):

ԸՐԱԿԷՆ - *մ.* Տրամադրված, ոչ իմիջիայլոց: *Կօրծը վէր անիս, ըրակէն բիդի անիս* (Ձ:

ԸՐԱՀՈՒՆՑ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըրահունց անէլ - Խմորը առանց թթխմորի հունցել: *Ըրահունց ա անում, ինծըմօրէ թըխում* (Ձ):

ԸՐԱՄԱԿ/ԸՐԱՄԱՔ/ՀԸՐԱՄԱՆՔ²/ՀԸ-ՐԱՄԱՔ *(գրբ. երամակ (կենդանիների խումբ, հոտ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրամակ ըղնէլ - Մարդամեջ ընկնել, մարդկանց շարքին դասվել, հեղինակություն ձեռք բերել: *Էշու օրում մարթ ա ի-լանլ, միհէնգ՛ ա ըրամակ ընգալ* (Ձ):

- Ըրամակ քըցիլ - Մարդամեջ գցել, մարդկանց շարքին դասել, հեղինակությունը բարձրացնել: *Մարթին ըրամակ քըցանը կընէգ՛ըն ա* (Ձ):

ԸՐԱՄԱՔ - *տե՛ս* ԸՐԱՄԱԿ:

ԸՐԱՇՏԷԼ - *չբ.* 1. Երաշտից ցամաքել՝ չորանալ: *Էրկու ամէս ա՝ թօռ չի յը՛-կալ, բուստընանէն ըրաշտալ ա* (Բ): 2. *փխբ.* Խիստ ծարավել: *Ըրաշտալ ըմ, մին կաթ ճանր չի կա, թա խըմիմ* (Բ): 3. *փխբ.* Սաստիկ կարոտ զգալ: *Անգին տը-ղէն նամակ ա կ՛ուրանում, թա.- Ըրաշտալ ըմ, խէ կ՛ամ չը՞ս* (Ձ):

ԸՐԱՇՕՏ/ՐԱՇՕՏ/ԸՌԱՇՕՏ/ՌԱՇՕՏ *(ռուս. расчет)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրաշօտ անէլ/ինիլ/տը՛ռնալ - Որեւէ բանի կամ որեւէ մեկի հետ հաշիվները վերջացնել: *Ք՛ինամ ա կուրծատը՛ղը, ըրաշօտ անում, կօրծա տանս կ՛ամ* (Բ):

ԸՐԱՍԽՕԴ/ՐԱՍԽՕԴ/ԸՌԱՍԽՕԴ/ՌԱՍԽՕԴ *(ռուս. расход)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրասխօդ անէլ - Գործածել, սպառել: *Էնքան մատարյալը ըրասխօդ ը-րավ, միհէնգ՛ մին տախտակ չօնէ, թա մին պէն շինի* (Բ):

- Ըրասխօդ ինիլ/տը՛ռնալ - Գործածվել, սպառվել: *Ղումը ըրասխօդ իլանվ, ուստան մընաց մանանլ* (Ձ):

ԸՐԱՎՈՒՆՔ - *տե՛ս* ԻՐԱՎՈՒՆՔ:

ԸՐԱՐԻ/ԱՐԱՐԻ *(գրբ. արար, հ.ե. *ar-ar-)* - *ած.* Որեւէ մեկի արած՝ ստեղծած՝ նախաձեռնած՝ հեղինակած: *Կը-նէգ՛ըն ասում ա.- Մ մարթ, ինձ խառնիս ուչ, լօխ քու ըրարի յա* (ՆԱԲ, 58):

ԸՐԱՐՄՈՒՆՔ *(գրբ. արարումն)* - *գ.* Արարք, գործ, վարմունք: *Ըտըրա ըրարմունքը վէչ մինին սըրտավը չի ինում* (Ձ):

ԸՐԲԱ/ԸՐԸԲԱ/ԱՐԱԲԱ *(պրս. ārabe, թրք. araba)* - 1. *գ.* Քառանիվ կամ երկանիվ փայտաշեն բեռնատար (նաեւ մարդատար) փոխադրամիջոց, որին լծում են եզ՝ ձի՝ էշ: *...Վէր վէրչին ըրբան տը՛ղ ա հըսալ, պէրալ ըն մին կ՛ամրմուր բայդաղ տընգալ ցօրնէն մաչին* (ԱԱ, 34): 2. *ած.* Մեկ սայլի տարողությամբ: *Մին ըրբա ցօրէն ա տամ, էտ էշին քօռակը ինք՛ օնում* (Ձ):

- Ըրբա վէր ընգած ծըմէրուկ - *տե՛ս* Բէդա վէր ընգած պըրինձ:

- Ըրբէն ճաղը կօտըրէլ - *տե՛ս* Վը՛էնը քարու նի կ՛ալ:

- Ըրբէն չարխը յը՛տ շօռ տալ - Գործը հակառակ ընթացք ստանալ՝ ձախողվել: *Հանին վախտը սէլ յը՛կավ, խը՛դճէն տօնը քանդից, ըրբէն չարխը յը՛տ ա շօռ տամ* (Ձ):

ԸՐԲԱՇԿԱ *(ռուս. рубашка)* - *գ.* Վերնաշապիկ: *Ըրբաշկան հանում ա, տինանում փըչակումը, էտ կացէնը յօր օնում, ք՛էթանկը ճըրդօտում* (Ձ):

ԸՐԲԱՉԻ/ԸՐԸԲԱՉԻ/ԱՐԱԲԱՉԻ *(թրք. arabaci)* - *գ.* Սայլը վարող անձ, սայլապան: *Ըրբաչին ըրբան վը՛էնն ա անում, էտ մարթին ք՛ամանգ՛ անում* (Ձ):

ԸՐԲԱՏԱՐ - *գ., ած.* Սայլի տեր, սայլ ունեցող (անձ): *Ըրբըտարէրը հըվաքվում ըն, մին օրումը էտ հըղէն շինիլ տամ* (Ձ):

ԸՐԲԸՀԸՂԷ - *գ.* Սայլի ուղի՝ ճանապարհ: *Էտ ըրբըհըղէն էլ շատ լէն չի ինում* (Ձ):

ԸՐԳԻՆԷՆՇ - *տե՛ս* ԸՐԸՎԳԻՆԷՆՇ:

ԸՐԳՕՆԷ/ՈՒՐԳՕՆԷ/ՈՒՐՈՒԳԻՆԻ - 1. *մ.* Երեկո ժամանակ, երեկոյան: *Մին օր ուրանգ՛ունի պանա պըրծած տանը նըստատած ինք՛...* (ԼՂԲՔ, 365): 2. *տե՛ս* ՅԸՐԿԷ:

ԸՐՁԱ *(արաբ. rassa, պրս. rāze (օղ, օղակ)* - *գ.* Դուռը փակելու համար մետաղյա շարժական ձողիկ, սողնակ: *Մըղակէն ըրզան պուք ա յը՛կալ* (Բ):

- Ըրզան տալ/քըցիլ - Դուռը սողնակով փակել: *Ք՛ընում ա, տըռնանը ըրզան տամ, տ՛ուս կ՛ամ...* (ՀԱԲ, 15, 146):

ԸՐԷՄԸ(Ս) - *տե՛ս* ՈՒՐԷՄԸ(Ս):

ԸՐԷՄԻ - *տե՛ս* ՈՒՐԷՄԸ(Ս):

ԸՐԷՄՈՒԿ - *գ.* Մեկ տարեկան հղի գոմեշ: *Ճրրընէն կըտրրած էտ ըրէմուկը մօրթում ըն, բադարանք՝ անում* (Ձ):

ԸՐԷՆԱԿ/ԻՐԷՆԱԿ/ՕՐԻՆԱԿ/ՕՐԻՆԱԿ/ՀԸՆԷՐԱԿ[1] *(գրբ. օրինակ)* - *գ.* 1. Որեւէ բանի նախնական՝ սկզբնական օրինակը, նախանմուշ: *Ըրէնակը ուստան տամ ա շանգ՝իրդին, թա.- Ըստրրանա հանրուրը շինի* (Ձ): 2. Համեմատության համար օրինակ ծառայող որեւէ բան: *...Շատ դայիմըն ա, Բըլդարու կաշին քէզ ըրէնակ* (Ջ�տ, Ա, 133):

- Ըրէնակ յըէր օնէլ - Մեկին ընդօրինակել, նրան հետեւել: *Տընտրրի ախճիգ՝ ա, մօրը անա յա ըրէնակ յըէր կալանել* (Բ):

ԸՐԷՍ(Ս)ՈՒՆ - *տե՛ս* ՅԷՐԷՍ(Ս)ՈՒՆ:

ԸՐԷՎԱԼ - *տե՛ս* ԸՐՎԱԼ:

ԸՐԷՎԱՎ/ԻՐԸՎԱՎ - *մ.* 1. Արեւ եղած ժամանակ: *Ըրէվավ տանան տանուս ա կ՝ամ, ք՝ինամ ծրմակը, սէլը նի յա օնում* (Ձ): 2. *տե՛ս* ՑԻՐԸՎԱՎ:

ԸՐԷՓԷԼ/ԻՐԷՓԷԼ - *նբ.* 1. Եփել-վերջացնել: *Խաշը ըրէփում ըն, արաղը տինում, ք՝ըփ անում:* 2. Որոշ ճաշեր եռալիս խառնել՝ փչել, որպեսզի չթափվի: *Թանավը իրէփէ, վէր իլլա վէչ* (Ձ): 3. *փխբ.* Գործը ավարտին հասցնել: *Շինըցէք՝ բուստանէն կօրծէրը ըրէփում ըն, կ՝ամ տընէրը* (Բ):

ԸՐԷՓ-ԻՐԷՓ/ԻՐԷՓ-ԻՐԷՓ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըրէփ-իրէփ անէլ - *տե՛ս* Ըլըվ-ալավ անէլ (ԱԼԱՎ-ի տակ):

ԸՐԸԲԱ - *տե՛ս* ԸՐԲԱ:

ԸՐԸԲԱՉԻ - *տե՛ս* ԸՐԲԱՉԻ:

ԸՐԸՋԱԽԱՓ/ԻՐԸՋԱԽԱՓ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրզամխանփ ինիլ/տը՛ռնալ *(գրբ. երազամխաբ լինիմ (երազափորձություն ունենալ)* - Երազի մեջ սերմնահոսություն ունենալ: *Հունց ա պըտահում, էտ մարթը քըշէրը ըրզամխանփ ա ինում, հըմընչիլան նըհը՝ստ թաքուն տանս կ՝ամ, ք՝ինամ* (Ձ):

ԸՐԸՋԱԿ՝ԻՐ(Ք)/ԻՐԸՋԱԿ՝ԻՐ(Ք) - *գ.* Երազներ մեկնաբանող գիրք: *Ըրզակ՝իրը պէնում ա, ըսկըսում ըտրրա ամանզը պէնալը* (Ձ):

ԸՐԸՋԱԿՕԽ/ԻՐԸՋԱԿՕԽ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրզակօխ ինիլ/տը՛ռնալ - Երազում մղձավանջի ենթարկվել: *Վաղօն ըրզակօխ ա ինիս, յը՝էր կընաս, ըսքըսէս ճըղճըղալը* (Ձ):

ԸՐԸԼԸՂ - *տե՛ս* ԱՐԱԼԸՂ:

ԸՐԸԽ-ՕՐԱԽ/ՕՐԱԽ-ՕՐԱԽ - *մ.* Ուրախ կերպով, ուրախությամբ: *Խօխէքը ըրրխ-օրախ ամէգ՝ը մին թէ, մին թօխուր ըն յօր օնում, ք՝ընում...* (ՆԱԲ, 66):

ԸՐԸԾ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ԸՐԱԾԷԼ-ի: *Մին օր էլ տարալ ա, թա ըրրծցընէ, էս էծրս, ք՝ինացալ ա տը՝սալ, վը՝ր մին խօխա վէր տիրած* (ՀԺՀ, VI, 71):

ԸՐԸԿ-ԱՐԱԿ/ԱՐԱԿ-ԱՐԱԿ - *տե՛ս* ԸՐԱԿԱՎ:

ԸՐԸԿ՝ԾՃԻ/ՈՒՐԸԿ՝ԾՃԻ - *մ.* Արթուն վիճակում, արթուն ժամանակ: *Ըրազըմըս ինձ պըչէցէր, ըրրկ՝ծճի խըչէցէր* (Ձ):

ԸՐԸՂԱԾԷՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրըղածէն ածէլ/տալ - Օղի խմելու մեծ ցանկություն ունենալ: *Հընէսին սէրտը արաղ ուզիյիս ընում, ըրրղածէն ա ածում, տանըն էլ ընում չի* (ՆԱԲ, 112):

ԸՐԸՂԱՀԱՄ - *գ.* Օղու համ: *Սաբավ արաղ ա, ըսկի ըրրղահամ չօնէ* (Բ):

ԸՐԸՂԱՎԸ՝Տ - *գ.* Օղու հոտ: *Հրրանդիկը մըղակավը վէր նի յա մընում, ըրրղավը՝տը տօնը օնում ա* (Ձ):

ԸՐԸՄԱԿԷԼ/ԸՐԸՄԱՔԷԼ/ՀԸՐԸՄԱՆՔԷԼ/ՀԸՐԸՄԱՔԷԼ - *նբ.* Կալի մեջ փռած հացահատիկը՝ աշանը լավ խառնել: *Աշանը ըրրմակում ա, վէր լ՝ավ չուրանա* (Ձ):

ԸՐԸՄԱԿԷՆ/ԸՐԸՄԱՔԷՆ/ՀԸՐԸՄԱՆՔԷՆ/ՀԸՐԸՄԱՔԷՆ - *տե՛ս* ԿԱՐՔԷՆ:

ԸՐԸՇՏԱՎԸ՝Տ - *գ.* Երաշտից հետո անձրեւը սկսվելուց հողի արձակած հոտը: *Թօռը նի յա օնում, ըրրշտավը՝տ ա կ՝ամ* (Բ):

ԸՐԸՇՕԹԿԱ/ՐԸՇՕԹԿԱ/ԸՌԸՇՕԹԿԱ/ՌԸՇՕԹԿԱ *(ռուս. решетка)* - *գ.* Երկաթյա ճաղաշար՝ որեւէ տարածություն ցանկապատելու համար: *Հընգ՝իստին ըրրշօթկան պուք ըն տամ, մը՝ռալը թաղում, էլիա տինում տը՝ղը* (Բ):

ԸՐԸՎԱՋՈՒԿ - *տե՛ս* ԸՐԸՎԱՆՑՈՒԿ:

ԸՐԸՎԱՋՈՒՆՔ - *տե՛ս* ԸՐԸՎԱՆՑՈՒԿ:

ԸՐԸՎԱԹՕՌ - *գ.* Արեւ ժամանակին տեղացող բարակ անձրեւ: *Ըրրվաթօռ ա կ՝ամ* (Բ):

ԸՐԸՎԱԻՓ/ԻՐԸՎԱԻՓ - *ած.* Արեւի տակ եփված: *Ըրրվաիփ ճանուր ա* (Բ):

ԸՐԸՎԱԼԱՆՈՒՍ/ԻՐԸՎԱԼԱՆՈՒՍ - 1. *գ.* Արեւի լույս՝ ճառագայթ՝ ցոլք: *Մին շըհանրըմ վէր ըրրվլանուսանու հասրաթ մընան, էն շըհանրըմը ք՝ասիբը էլ կըկա՞ռէ ապրի...* (ՋՏ, Ա, 113): 2. *ած.* Արեւոտ՝ արեւով լուսավորված: *Կ՝ամ ա հըսնում մին ըրրվալանուս շէն* (Ձ):

ԸՐԸՎԱՀԱՄ/ԻՐԸՎԱՀԱՄ - *գ.* Արեւի ջերմությամբ առաջացած համ: *Գ՝ունէ տը՝ղէն կընանչին էլ ըրրվահամ օնէ* (Բ):

ԸՐԸՎԱՀԱՍ/ԻՐԸՎԱՀԱՍ - *ած.* Արեւի ջերմությամբ հասած՝ հասունացած: *Ըրրվահաս խուրման քախծըր կինի* (Բ):

ԸՐԸՎԱՆՑՈՒԿ/ԻՐԸՎԱՆՑՈՒԿ/ԸՐԸՎԱՋՈՒԿ/ԻՐԸՎԱՋՈՒԿ/ԸՐԸՎԱՋՈՒՆՔ/ԻՐԸՎԱՋՈՒՆՔ - 1. *գ.* Արեգակի մայր մտնելու ժամանակը, մայրամուտ: *Ըրրվանցուկէն վախտը Պուդին, էշէրը պէռնած, նի յա մընում շէնը* (Ձ): 2. *ած. փխբ.* Ջով, հովասուն: *Ըրրվանցուկ տը՝ղ ա* (Բ):

ԸՐԸՎԱՔՕՌ/ԻՐԸՎԱՔՕՌ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրրվաքօռ ինիլ/տը՛ռնալ - Արեւին երկար նայելուց տեսողությունը խաթարվել: *Էտ խօխան ըրէվէն էնքան յէշում ա, ըրրվաքօռ ա տը՝ռնում* (Ձ):

ԸՐԸՎԳ՝ԻՒՆԱՆՇ/ԻՐԸՎԳ՝ԻՒՆԱՆՇ/ԸՐԳ՝ԻՒՆԱՆՇ/ԻՐԳ՝ԻՒՆԱՆՇ/ԻՒՐԳ՝ԻՒՆԱՆՇ - *ած.* Արեւկող, արեւահայաց, արեգունի: *Կ՝ամ ըն, էտ ըրրվգ՝ունանուշ տը՝ղը վէր կ՝ամ, ըտը՝ղ էլ շէն շինում* (Ձ):

- Ըրրվգ՝ունանշի անէլ/տալ - Արեւի տակ պառկել՝ նստել՝ ընկողմանել: *Շօբանը վըխճըրնէն անում ա հանդը, ինք՝ըն էլ ըրրվգ՝ունանշի տամ* (Ձ):

ԸՐԸՎԳ՝ԻՒՆ/ԻՐԸՎԳ՝ԻՒՆ *(գրբ. արեգունի)* - *տե՛ս* ԸՐԸՎԳ՝ԻՒՆԱՆՇ:

ԸՐԸՎՀԱՏ/ԻՐԸՎՀԱՏ - Գործածվում է *Իրրսկըհատը ըրրվհատ ա* դարձվածում:

ԸՐԸՐՄՈՒՆՔԱՎ - *տե՛ս* ՓԱՀՄԱՎ:

ԸՐԸՑՕՐ - *տե՛ս* ՕՐԿԱՆՑՕՐ:

ԸՐԹԻՐԱՆԱԼ/ԻՐԹԻՐԱՆԱԼ *(գրբ. արդարանամ)* - *չբ.* 1. Դատարանի վճռով անմեղ ճանաչվել: *Էտ մարթը սուդի յա տամ, ըրթիրանում* (Ձ): 2. Չքմեղանալ, արդար ձեւանալ: *Նըհախ տը՝ղան ա ըրթիրանում, լօխ էլ գ՝ունդում ըն, վէր կ՝օղը ինք՝ըն ա* (Բ):

ԸՐԹԻՐՑ(Ը)ՆԷԼ/ԻՐԹԻՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. արդարացուցանեմ)* - *նբ.* ԸՐԹԻՐԱՆԱԼ-ի:

ԸՐԹԻՐՕԹՈՒՆ/ԻՐԹԻՐՕԹՈՒՆ *(գրբ. արդարություն)* - *գ.* 1. Արդար լինելը, անմեղություն: *Ըտի էտ մարթին ըրթիրօթունը պարգ՝վում ա* (Ձ): 2. Ճշմարտություն, իրավացիություն: *Ըշխարքումըս ըրթիրօթուն չի մընաց* (Բ):

ԸՐԺԸՆԱՆԱԼ *(գրբ. արժանանամ)* - *չբ. տե՛ս* Արժան ինիլ: *Տընվըրածէն տըղան էլ ըրժընանըմ ա թաքավէրէն տըղէն քըվօրը...* (ՀԺՀ, V, 315):

ԸՐԺԸՆՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. արժանացուցանեմ)* - *նբ. տե՛ս* Արժան անէլ: *Էտ չուբանէն թաքավէրը ըրժընցընում ա մը՝ծ հըրրստութունու* (Ձ):

ԸՐԻԼԻՔ՝/ԻՐԻԼԻՔ՝ *(գրբ. այրելի)* - *գ.* Այրելու՝ վառելու պիտանի նյութ: *Հրյաթըմը մին ըրիլիք՝ չի կա, ուրանն էլ ըսկի վէջը չի* (Բ):

ԸՐԻՀՆԱԿ - *տե՛ս* ԸՐԻՔ՝ՆԱԿ:

ԸՐԻՔ՚ՆԱԿ/ԻՐԻՔ՚ՆԱԿ/ԸՐԻՀՆԱԿ/ԻՐԻՀՆԱԿ *(գրբ. արեգակն)* - 1. *տե՛ս* Ա՛ՐԸ՝Վ(1): 2. *ած. փխբ.* Շատ գեղեցիկ: *Մին չուբանու ախճիգ՚ ա ինիս, մին հո՛ւրի-փէրի, մին իրիք՚նակ, սը՝վ-սը՝վ, մը՝ծ-մը՝ծ ըշկէրավ* (ԱԱ, 73):

ԸՐԽԱԼՈՒՂ - *տե՛ս* ԸՐԽԸԼԸՂ:

ԸՐԽԸԼԸ՝Ղ - *տե՛ս* ԸՐԽԸԼԸՂ:

ԸՐԽԸԼԸՂ/ԸՐԽԸԼԸ՝Ղ/ԸՐԽԱԼՈՒՂ/ԱՐԽԱԼՈՒՂ *(թրք. arkalək)* - *գ.* Կարճ՝ մինչեւ ծնկները հասնող հագուստ, արխալուղ: *Խօսրովը ըրխըլըղը քըցիս ա ջընըղնէրէն, տանան տո՛ւս կ՚աս* (Ձ):

ԸՐԽԸԼԸՂԱՎԷՐ - *ած.* Արխալուղ հագած: *Մուտանում ա, տը՝սնում մին ըրխըլըղավէր մարթ էտ ըխպիրին քըշտէն նըստած* (Ձ):

ԸՐԽԸԼԸՂԱՑՈՒ - *գ.* Արխալուղի համար նախատեսած կտոր: *Ըրխըլըղացուն տանում ա դա՛ղզուն տամ, վէր ո՛ւրա՛ն հը՝տէ մին լ՚ավ արխալուղ կարէ* (Ձ):

ԸՐԽԸՅԻՆ/ԱՐԽԱՅԻՆ *(թրք. arxayin)* - *մ.* Համոզված, հանգիստ, վստահ, անհոգ, ապահով: *Էտ մարթը ռազի յա կը՝նըմ, պառավը ըրխըյին ք՚ինիս ա տօն* (ՀԺՀ, V, 265):

- Ըրխըյին անէլ/կըցընէլ/պահէլ - *տե՛ս* ԸՐԽԸՅՆԸՑ(Ը)ՆԷԼ:

- Ըրխըյինը ըղնէլ - *տե՛ս* ԸՐԽԸՅՆԱՆԱԼ:

- Ըրխըյինը քըցիլ - *տե՛ս* ԸՐԽԸՅՆԸՑ(Ը)ՆԷԼ:

- Ըրխըյին ինիլ/կէնալ - *տե՛ս* ԸՐԽԸՅՆԱՆԱԼ:

ԸՐԽԸՅՆԱՆԱԼ - *չբ.* Համոզված՝ վստահ լինել, անհոգ՝ ապահով դառնալ, երկմտությունը փարատվել: *...Պիրում ա, մի մը՝ծ նավ շինում, ո՛ւրա՛ն կընէգ՚ը, խօխէրքը, հիյվընէն պա՛նը նի ածում միչը, ըրխըյնանում* (ԱԱ, 16):

ԸՐԽԸՅՆԱՏԸ՝Ղ - *գ.* Վստահություն, ապահովություն: *Ըտըրա ըրխըյնատը՝ղըն էլ էն ա ինի՛ւմ, վէր թօռ ա կ՚ըլական, բօստանը ճիրի* (Ձ):

ԸՐԽԸՅՆԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Հանգստացնել, վստահեցնել: *Նա՛զիրը տահանց ըրխըյնըցընում ա, թաքավէրէն կօշտը տանըմ* (ՀԺՀ, V, 490):

ԸՐԽԸՅՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՐԽԸՅՆԱՏԸ՝Ղ:

ԸՐԽՕԹՈՒՆ - *տե՛ս* ՈՒՐԽՕԹՈՒՆ:

ԸՐԾԱԹԷ/ՅԸՐԾԱԹԷ *(գրբ. արծաթեան)* - *ած.* Արծաթից պատրաստված, արծաթյա: *Ախճիգ՚ը էտ ըրծաթէ ջամը տամ ա տըղէն, վէր տանէ տա թաքավէրին* (Ձ):

ԸՐԾԱԹԷԼ/ՅԸՐԾԱԹԷԼ *(գրբ. արծաթեմ)* - *տե՛ս* ԸՐԾԸԹՃԻՐԻԼ: *Խընձո՛ր օնիմ՝ կընծած ա, չօրս ղօլը ըրծաթած ա...* (ԼՂԲ, 26):

ԸՐԾԸԹԸ՝ՂԱՆ/ՅԸՐԾԸԹԸ՝ՂԱՆ *(գրբ. արծաթեղեն (արծաթից շինած)* - *գ.* Արծաթից պատրաստված իրեր: *Մին տօռնը պէց ա անում, տը՝սնում ըրծըթըղանավ լըցցած* (Ձ):

ԸՐԾԸԹՃԻՐԻԼ/ՅԸՐԾԸԹՃԻՐԻԼ - *նբ.* Արծաթով զօծել, արծաթաջրել: *Ծո՛րէն ղըրաղէն մին յէխծէ յա ըլալ՝ մաչկ՚ո՛ւսի պատէրը էլ ըրծըթճիրած* (ՆԱԲ, 94):

ԸՐԿԱԹԷ *(գրբ. երկաթի)* - 1. *ած.* Երկաթից պատրաստած, երկաթյա: *Թաքավէրին կուճուր տըղան թօրավը վէր թըխում ա, էտ ըրկաթէ մըղակը պուք ա կ՚ամ* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* ԱՐԿԱԹ(2, 3):

ԸՐԿԷ - *տե՛ս* ՅԸՐԿԷ:

ԸՐԿԸԹԱՃՈ՛ՒՐ - *գ.* Երկաթի պարունակություն ունեցող հանքային ջուր: *Ըստէփանակ՚ը՝ռտա տակէ ըխպիրին ճո՛ւրը ըրկըթաճո՛ւր ա* (Բ):

ԸՐԿԸԹԸ՝ՂԱՆ *(գրբ. երկաթեղեն (երկաթից շինած)* - *գ.* Երկաթից պատրաստված իրեր, երկաթի կտորներ եւն: *Օրո՛ւշ պէն կըրէս չի անէ, լ՚ըհա ըրկըթը՝ղան ա հըվըքէս, ծըխէս* (Բ):

ԸՐԿԸԹԸ՝ՆԷ - *գ.* Ամուր բնափայտով ծառատեսակ՝ երկաթածառ: *Լաչինա ծըմըկնումը ըրկըթը՝նէ էլ կա* (Բ):

ԸՐԿԸՃԸՊՕՎԱՆ/ԻՐԿԸՃԸՊՕՎԱՆ - *գ.* Խաղատեսակ: *Ըրկըճըպօվան խաղ ընէլիս էտ խօնցան մինը օշը տանում ա, վէր ըղնում* (Ձ):

ԸՐԿԸՆԱԲՕՅ/ԻՐԿԸՆԱԲՕՅ - 1. *ած.* Երկար հասակ ունեցող, բարձրահասակ: *Ըրկընաբօյ տըղա յա* (Բ): 2. *տե՛ս* ԸՐԿԸՆՕԹՈՒՆ:

ԸՐԿԸՆԱԼՈ՛ՒԾ/ԻՐԿԸՆԱԼՈ՛ՒԾ - *տե՛ս* ԸՄԲԸԼԱԼՈ՛ՒԾ:

ԸՐԿԸՆԱՄՕՇ/ԻՐԿԸՆԱՄՕՇ - *գ.* Երկարավուն մոշի տեսակ, որ սովորաբար աճում է անտառներում: *Մէր ծըմըկնէրըմը լ՚ավ ըրկընամօշ ա ինի՛ւմ* (Բ):

ԸՐԿԸՆԱՆԱԼ/ԻՐԿԸՆԱՆԱԼ *(գրբ. երկայնանամ)* - *չբ.* 1. Երկարությունն ավելանալ, երկար դառնալ: *Ըռիզինը հիշքան ծիք՚ տաս՝ կըրկընանա* (Ձ): 2. Հասակը բարձրանալ: *Մին տըռնըմը էտ խօխան իրկընանաս ա, տըռնաս բօյավբուսաթավ տըղա* (Ձ): 3. Երկարատեւել, տեւական դառնալ: *Կ՚արունքը վէր կ՚ամ ա, օրէրը ըրկընանում ա:* 4. Ձգձգվել, հետաձգվել: *Պարթկը ըրկընանում ա, էտ մարթը սուդի յա տամ* (Ձ):

ԸՐԿԸՆԱՆԳՈՒՃ/ԻՐԿԸՆԱՆԳՈՒՃ - 1. *ած.* Երկար ականջներ ունեցող: *Մին ըրկընանգուճ տավար էլ ա մուտանում, խէղճ-խէղճ յէշում մարթին ըշկէրէն...* (ՆԱԲ, 72): 2. *փխբ. տե՛ս* ԷՇ (1): *Ըրկընանգուճը քացէ յա տամ, ըտըրա քըցո՛ւմ ծո՛ը* (Ձ):

ԸՐԿԸՆԱՎՈՒՆ/ԻՐԿԸՆԱՎՈՒՆ - *ած.* 1. Ոչ շատ երկար, մի քիչ երկար: *Մին իրկընավուն փա՛ռդ ա յօր ունէս, ըտըրա թըկէս* (Ձ): 2. Երկար ձեւ ունեցող, երկարությունը լայնությունից մեծ: *Ըրկընավուն պըրինձան լ՚ավ փըլավ ա տը՝ռնում* (Բ):

ԸՐԿԸՆԱՏՕՐ/ԻՐԿԸՆԱՏՕՐ - 1. *գ.* Վայրի խոտաբույս, որ նման է ավելուկի: *Գ՚ո՛ւդում ա, թա ըվիլո՛ւկ ա, քաղում ա, ըրկընատօր ա պիրո՛ւմ տօն* (Ձ): 2. *տե՛ս* ԸՐԿԸՆԱՎՈՒՆ:

ԸՐԿԸՆԴԱՇԻ/ԻՐԿԸՆԴԱՇԻ - *տե՛ս* ԲԱԲԱԴՈՒՇԻ:

ԸՐԿԸՆԷՇԻ/ԻՐԿԸՆԷՇԻ - *տե՛ս* ԲԱԲԱԴՈՒՇԻ:

ԸՐԿԸՆԽԱՁ՚Ի/ԻՐԿԸՆԽԱՁ՚Ի - *գ.* Խաղատեսակ: *Ըրկընխազ՚ին էլ ա թավա ընգալ* (Բ):

ԸՐԿԸՆՑ(Ը)ՆԷԼ/ԻՐԿԸՆՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. երկայնացուցանեմ)* - *նբ.* ԸՐԿԸՆԱՆԱԼ-ի:

ԸՐԿԸՆՑՈՒՓԷ/ԻՐԿԸՆՑՈՒՓԷ - *տե՛ս* ԸՐԿԸՆԽԱՁ՚Ի:

ԸՐԿԸՆՔԱՔԱՐ - *գ.* Երկանքի՝ աղորիքի քար: *Մին օր էլ ըրկընքաքարը ըղնում ա ըտըրա վը՝ննէն, կօտըրում* (Ձ):

ԸՐԿԸՆՕԹՈՒՆ/ԻՐԿԸՆՕԹՈՒՆ *(գրբ. երկայնութիւն)* - *գ.* 1. Գծի՝ մակերեսի՝ որեւէ իրի ձգվածությունը՝ երկու ծայրերի միջեւ եղած հեռավորությունը՝ երկարություն: *Էտ գ՚ըբին ըրկընօթունը հէնգ՚մէտըր ա ինո՛ւմ* (Ձ): 2. Հասակի բարձրություն: *Էտ մարթին իրկընօթունը կինա՛ր էրկու մէտըր* (Ձ):

ԸՐԿԸՆՕՏԷԳ՚/ԻՐԿԸՆՕՏԷԳ՚ - *տե՛ս* ԸՐԿԸՆԱՎՈՒՆ:

ԸՐԿԸՆՕՏԷՍ/ԻՐԿԸՆՕՏԷՍ - *գ.* Ձատիկից մինչեւ Համբարձման տոնն ընկած ժամանակաընթացքը, երբ պաս չեն պահում: *Ըրկընօտէսը ըսկըսում ա, խօխէնք՚ը ուրխանում ըն* (Ձ):

ԸՐԿՈՒՀՈ՛ՒՔ՚ԻԼ/ՈՒՐԿՈՒՀՈ՛ՒՔ՚ԻԼ - *չբ.* Հղիանալ, հղի դառնալ: *Թաքավէրին կընէգ՚ը էտ խընձո՛ը օտում ա, մին ամսանը յը՝տը խաբարը յէր ա ինո՛ւմ, վէր ըրկուհո՛ւք՚ա՛ն ա* (Ձ):

ԸՐԿՈՒՀՈ՛ՒՔ՚ԻՍ/ՈՒՐԿՈՒՀՈ՛ՒՔ՚ԻՍ - *տե՛ս* ՊԱՃ(Ճ)ԱՌԱՎԷՐ: *Ըրկուհո՛ւք՚իս հարթնէր ըն հըվաքալ, ղըմա՛վ ճըղալ, խիզանը տ՚ուս կալալ* (ՀԱԲ, 15, 154):

ԸՐԿՈՒՄԱՐԻ/ՈՒՐԿՈՒՄԱՐԻ - *ած.* Երկու մոր կաթ ծծող: *Ըրկումարի կ՚առնը ավադ կինի* (Բ):

ԸՐԿՈՒՇԷԲԱԹ/ՈՒՐԿՈՒՇԷԲԱԹ/ԷՐԿՈՒՇԷԲԱԹ/ԷՐԿՈՒՇԷԲԷԹ/ԷՐԿՈՒՇԷՊԷԹ/ԷՐԿՈՒՇԷՊՏԻ *(գրբ. երկշաբաթի, երկուշաբաթ)* - 1. *գ.* Շաբաթվա առաջին

օրը՝ երկուշաբթի: *Ըրկուշէբաթը շառ օր ա* (Բ): 2. *մ.* Երկուշաբթի օրը: *Ըրկուշէբաթ ք՛ինան ըմ շէնը* (Բ):

ԸՐԿՈՒՎԸՏՆԷ/ՈՒՐԿՈՒՎԸՏՆԷ - *գ.* Աշնանը հասնող թզենու տեսակ: *Ըտըրանց հոյաթումըն էլ մին ըրկուվը՝նէ թ՝ուզի յա ինում* (Ձ):

ԸՐԿՈՒՏԱԿ/ՈՒՐԿՈՒՏԱԿ - *ած.* 1. Երկու տակ ծալած, երկու տակ արած: *Ըրկուտակ թիլանվ ա կարում, վէր պուք չի կ՛ա* (Ձ): 2. Երկու անգամ ավելի, կրկնապատիկ: *Թաքավէրին ախճիզը կարքաղըրում ա, վէր ուրան հէտէ ըրկուտակ խօրանգ՛ պիրին...* (ՆԱԲ, II, 21):

ԸՐԿՈՒՏԱԿԷԼ/ՈՒՐԿՈՒՏԱԿԷԼ - *նբ.* 1. Երկու տակ ծալել, երկու տակ անել: *Ծօրը ըրկուտակում ա, տինում սընդօղումը* (Ձ): 2. Երկու անգամ ավելացնել՝ կրկնապատկել: *Ասում ըն՝ էտ վըխտանց էլ Աստուծ կընանուցը ցավը ուրկուտակում ա...* (ԱԱ, 87):

ԸՐԿՈՒՏԱԿՎԷԼ/ՈՒՐԿՈՒՏԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԸՐԿՈՒՏԱԿԷԼ-ի:

ԸՐԿՕՔԱՆ/ՈՒՐԿՕՔԱՆ *(գրբ. երկոքեան)* - *թ.* Երկուսն էլ: *Ուրկօքան մին տը՝ղ ըսկըսում ըն մարթին լանվ յէշիլը* (ՆԼՂԺԲ, 67):

ԸՐՄԱՆԱԼ/ՋԸՐՄԱՆԱԼ *(գրբ. արմանամ, զարմանամ, հ.ե. *or-mo-)* - *չբ. տե՛ս* Մաթ մընալ:

ԸՐՄԸՆԱԼԻ/ՋԸՐՄԸՆԱԼԻ *(գրբ. արմանալի, զարմանալի)* - *ած.* Զարմանք պատճառող, զարմանալի: *Ախէր ըտըրանց տէղէրը շանվթալի ծառէր չի փըսնէս, ըտըրա դարդան էլ ըրմընալի յա ուրանց հէտէ* (ՀԺՀ, V, 266):

ԸՐՄԸՑ(Ը)ՆԷԼ/ՋԸՐՄԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. զարմացուցանեմ)* - *նբ.* ԸՐՄԱՆԱԼ-ի:

ԸՐՇԻՆԱԲՕՅ/ԱՐՇԻՆԱԲՕՅ - *տե՛ս* ԸՐՇԻՆԱՆՈՒՑ(1): *Ք՛ինըմ ա, ք՛ինըմ, մին արշինաբօյ մարթ ա տը՝սնըմ, մըրօքը՝ էրգ՛ան, ինքը՝ կարճ* (ՀԺՀ, V, 207):

ԸՐՇԻՆԱՆՈՒՑ/ԱՐՇԻՆԱՆՈՒՑ - 1. *ած.* Թվականի ցույց տված քանակով արշին պարունակող: *Հինչ օ՞թաղ, իրը՝ք ըրշինանուց տը՝ղ ա* (Ձ): 2. *գ.* Մեկ արշինանոց ձող՝ որպես չափ: *Ըրշինանուցը դարգին յօր ա ունէս, էտ կըտօրը չըփէս* (Ձ):

ԸՐՇԱԿ՛ՕՌ/ԸՌՉԱԿ՛ՕՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըրչակ՛օռ տալ - Արչի նման գոռալ, ուժեղ վայնասուն բարձրացնել: *Մուտանում ըն, տը՝սնում մին մարթ ա, ըստակած յը՝զնանը քըշտէն վը՝ննը կացած, ըրչակ՛օռ ա տամ* (Ձ):

ԸՐՇԱՄՕԾ/ԸՌՉԱՄՕԾ - 1. *գ.* Մոշի մեծ տեսակ: *Էտ ըրչամօշը էնքան մը՝ծ-մը՝ծ ա ինում, վէր դաստի ամանը լըսնում ա* (Ձ): 2. *տե՛ս* ԸՐԿԸՆԱՄՕԾ:

ԸՐՉԱՆԳՈՒՃ/ԸՌՉԱՆԳՈՒՃ - *գ.* Խուլաճաղիկազգիների ընտանիքին պատկանող բույս՝ խռնդատ: *Մին ըրչանգուճ ա պուք տամ, վը՝տ օնում* (Ձ):

ԸՐՇԱՊԱՐ/ԸՌՉԱՊԱՐ - *գ.* Արջի պար: *Վը՝րսկանը յէշում ա, յէշում, ըրմանում էտ ըրչըպարավը* (Ձ):

- Ըրչապար տալ - 1. Արջի նման պարել: *Տըղա, ախճիգ՛ խըռնըխառնը ըրչապար ըն տամ* (Բ): 2. Իրար քաշքշել, քաշկռտվելով կռվել: *Ըտըրանք խըմում ըն, հարփանում, յըխըբօղազ անում, ըրչապար տամ* (Ձ):

ԸՐՇԱՎԸ՝ՐՍ/ԸՌՉԱՎԸ՝ՐՍ - *գ.* Արջ որսալը, արջի որս: *Մին օր էլ ըտըրանք մըսլըհաթ ըն անում, ք՛ինամ ըրչավը՝րս* (Ձ):

ԸՐՇԱՏԱՆՁ/ԸՌՉԱՏԱՆՁ - *գ.* Վայրի տանձի տեսակ: *Ծըմըկնէն ըրչըտանձավ լիգ՛ը, ուրանք էն ըն մին տանձու հասըրաթ* (Բ):

ԸՐՇԱՔՕՆ/ԸՌՉԱՔՕՆ - *գ.* Արջի ձմեռային քուն: *Ըրչաքօնը վէր ըսքըսում ա, Մուխանը արխային ք՛ինամ ա ծըմակը* (Բ):

- Ըրչաքօն տալ/նի մըն(ն)էլ - Խոր ու երկար քնել: *Տընաշինըտ հանց ըրչաքօն ա տըվալ, ասիս լ՛ըհա մին ամէս քօն չի իլալ* (Ձ):

ԸՐՇԸԹԱՆԹՈՒԼ/ԸՌՉԸԹԱՆԹՈՒԼ - *գ.* 1. Արջի թաթ: *Ըրչըթանթալը կըտըրում ա, պիրում շինացուց նըհաշ տամ* (Ձ): 2. *փխբ.* Արջի թաթի նման մեծ եւ անճոռնի ձեռք: *Էտ մարթը ըրչըթանթալվը վէր թըխում ա, կընէգ՛ը վէր ա ըղնում* (Ձ): 3. Հովանոցավորների կարգին պատկանող բույս՝ արջամագիլ: *Ըտը՝ղ ըրչըթանթալ էլ ա փըսնէս* (Բ):

ԸՐՇԸԽԸՆԴԷՂՆԸ/ԸՌՉԸԽԸՆԴԷՂՆԸ - *գ.* Փնջավոր սեւ ու մանր գնդիկաձեւ պտուղներով թփաբույս: *Ըրչըխընդէղնը օտում չընը* (Բ):

ԸՐՇԸԽԻՆԱԿ/ԸՌՉԸԽԻՆԱԿ - *գ.* Շնաճանճի տեսակ: *Ըրչըխինակը խուխէն վը՝ննան կընծալ ա* (Բ):

ԸՐՇԸԿԱՏՈՒ/ԸՌՉԸԿԱՏՈՒ - *գ.* Վայրի կատու, որը սովորականից ավելի խոշոր է: *Մին օր էլ ք՛ինամ ա վը՝րս, մին ըռչըկատու ըսպանում* (Ձ):

ԸՐՇԸՅԱՆԳԻ/ԸՌՉԸՅԱՆԳԻ - *տե՛ս* ԸՐՇԸՎԱՐԻ:

ԸՐՇԸՄԸՅԱՍՈՒՐ/ԸՌՉԸՄԸՅԱՍՈՒՐ - *գ.* Մասուրի խոշոր տեսակ: *Ըրչըմըհասուր ա քաղում, ծախում* (Բ):

ԸՐՇԸՎԱՉԻ/ԸՌՉԸՎԱՉԻ - *տե՛ս* ԸՐՉԸՎԱՐԻ:

ԸՐՇԸՎԱՐԻ/ԸՌՉԸՎԱՐԻ - *մ.* Արջի նման՝ կոպտաբար: *Ըրչըվարի յա կօրծ անում* (Բ):

ԸՐՇԸՏԱՆՁԻ/ԸՌՉԸՏԱՆՁԻ - *գ.* Վայրի տանձենու տեսակ՝ մանր եւ քաղցր պտուղներով: *Էտ մարդիմազարը կացէնը յօր ա ունէս, էտ ըռչըտանձին կըտըրէս* (Բ):

ԸՐՇԸՔՕԹԷԹ/ԸՌՉԸՔՕԹԷԹ - *գ.* 1. Արջի քոթոթ: *Վը՝րսկանը էտ ըրչըքօթէթը քըցում ա թօրբան, պիրում տօն* (Ձ): 2. *փխբ.* Գիրուկ՝ թմբլիկ երեխա: *Խօխա, հինչ խօ՞խա, մին ըրչըքօթէթ, հու տը՝սնում ա, ք՛ը՝փը կ՛ամ ա* (Ձ):

ԸՐՉԻՆԱԿ - *տե՛ս* ԸՌՉԻՆԱԿ:

ԸՐՉՕԹՈՒՆ/ԸՌՉՕԹՈՒՆ - *գ.* Արջի հատկություն՝ կոպտություն: *Ըրչութունէն դարդան ըտըրան սիրում չընը* (Բ):

ԸՐՍԸՋՕԹՈՒՆ/ԸՌՍԸՋՕԹՈՒՆ/ԱՐՍԸՋՕԹՈՒՆ/ԱՌՍԸՋՕԹՈՒՆ - *գ.* Անամոթություն, անպատկառություն: *Ըրսըզութունավ էտ կընէգ՛ը ամմէն կօրծ դարգընում ա* (Բ):

ԸՐՎԱԼ/ԸՐԷՎԱԼ/ՈՒՐՎԱԼ *(գրբ. երեւիմ, երեւնամ)* - *չբ.* 1. Տեսանելի դառնալ, նկատվել: *Ավէտիսը փափաղը կըլխէն ա տընըմ, էլ ըրվամ չի* (ՀԺՀ, V, 127): 2 Հայտնվել, երեւան գալ: *Մին օր էլ ըտըրանց շէնումը ըռուսնէ յընը ըրվամ* (Ձ): 3. Ներկայանալ: *Էտ օրվանից էտ կընէգ՛ը էլ մէր կօխկէն ըրվամ չի* (Ձ): 4. Գտնվել: *Հիշկան շօռ ա կ՛ամ, էշը ըրվամ չի* (Բ): 5. Թվալ, պատկերանալ: *Հըռանցէ վէր յէշում ըս, էտ յը՝խծէն շատ կուճի յա ըրվամ* (Բ):

- Ըրվամ ա - Թվում է թե: *Ըրվամ ա էտ մարթը ըսկի մէխկ չօնէ* (Ձ):

ԸՐՎԱԼՈՒՔ/ՈՒՐՎԱԼՈՒՔ - *ած.* 1. Տեսանելի, տեսնվող, երեւացող: *Քընչըղըկապէրթը ըրվալուք տը՝ղ ա* (Բ): 2. Ակնառու, ակներեւ, ակնհայտ: *Ըրվալուք կօրծ ա* (Բ):

ԸՐՎԸՑ(Ը)ՆԷԼ/ՈՒՐՎՈՒՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ԸՐՎԱԼ-ի:

ԸՐՏԱԲՕՅ/ԸՌՏԱԲՕՅ - *ած., գ.* Հասկի բարձրություն ունեցող (խոտաբույս): *Պըռանթաթուղը ըրտաբօյ ա տը՝ռալ* (Բ):

ԸՐՏԱՍՈՒՆՔ/ԸՐՏԱՍՕՆՔ *(գրբ. արտասուք)* - *գ.* Արտասվագեղձերից արտադրվող հեղուկ, արտասուք: *Էտ վէր տի յէրքում ա, Փարուն մարը, լըհա ըրտուսունքէրընն ա վէր տէռնում, սասը տ՛ուս չի կ՛ամ* (ՀԱԲ, 15, 112):

- Ըրտասունքը աշկէն չուրանալ - Շատ լաց լինել, շարունակ սգալ: *Խը՝ղճը հինչ ա՞նէ, իրը՝ք տըղա յա թաղալ, ըրտասունքը աշկէն չուրացալ ա* (Բ):

- Ըրտասունքը ըշկէրէն - Տխուր, վշտացած, լացի՝ սգի մեջ: *...էտ ըխչըկանը հանրըն ա մարը մըռէս ըն, խը՝ղճէն թուղէս ըրտասունքը ըշկէրէն* (ԱԱ, 73):

- Ըրտասունքը կօլ տալ - Լացը զսպել, վիշտը չարտահայտել: *Էտ կընէ-*

գ՛ը մարթին անա վըխէլան նըհը՛տ ըրտասունքը կօլ ա տամ (Ձ):

- Ըրտասունքը հափըռումը ինիլ - Միշտ պատրաստ լինել լացելու, անգամ թեթեւ հուզմունքից լացել: *Ըտըրա ըրտասունքը հափըռումըն ա, մին կուճի պէնան էլ լանց ա ինում* (Բ):

- Ըրտասունքը ցըմաքէլ - *տե՛ս* Ըրտասունքը աշկէն չուրանալ:

- Ըրտասունք թափէլ - Արտասվել, լաց լինել: *Պառավը ուրխընալան նը-հէտ սըկսից ըրտասունք թափէլը* (ՀԺՀ, V, 308):

- Ըրտասունք չափէլ - Դառնորեն, ա-դիողորմ լացել: *Էնքան ըրտասունք ա չափալ, էն ա մըռնէլիս* (Բ):

- Ըրտասունք վէր ածէլ - *տե՛ս* Ըրտասունք թափէլ:

- Ըրտասունք օնէլ - *տե՛ս* ԼԻՑԸԿՈՒ-ՄԷԼ:

- Ըրտըսունքէն մինը կ՛ամ ա, հազ-զարը քը՛շում - Արտասվելը՝ լացը թե-թեւացնում է վիշտը:

- Ըրտըսունքէրը սըրփիլ - 1. Այլեւս չլացել՝ չարտասվել: *Լ՛ըհա մարթը տա-նան վէր տում ա կ՛ամ, կընէգ՛ը ըրտը-սունքէրը սըրփում ա* (Ձ): 2. Մեկին մխի-թարել, վիշտը սփոփել: *Սաղ օրը մինակ սօ՛ք՛ ա ասում, մինը կա վէջ, թա ըրտը-սունքէրը սըրփի* (Բ):

ԸՐՏԱՍՕՆՔ - *տե՛ս* ԸՐՏԱՍՈՒՆՔ:

ԸՐՏԱՏԱՐ/ԸՌՏԱՏԱՐ - *գ.* Արտ ունե-ցող անձ, արտի տեր: *Ուրում՛ունը ար-տէրը նի յա կէնում էրում, ըրտըտարէրը մընամ ըն ծուկընրնէն վէր թըկէյիս* (Ձ):

ԸՐՏԱՏԸ՛Ղ/ԸՌՏԱՏԸ՛Ղ - *գ.* Արտի տեղ, արտ վարելու հողամաս: *Շատ ըն ք՛ինում, թա խըրէգ՛, հըսնում ըն ըրտա-տը՛ղ* (ՆԼՂԺԲ, 95):

ԸՐՈՒԳՈՒ(Ն)/ՈՒՐՈՒԳՈՒ(Ն) *(գրբ. երե-կոյ)* - 1. *գ.* Մութն ընկնելու ժամանակը, երեկո: *...Նի յա մընում ճուրը, մինչէվ ուր-ուգ՛ուն չըրչարվում, մին կ՛էրթնուկ փըռնում* (ԲՀԲ, 211): 2. *տե՛ս* ԸՐԳՕ-ՆԷ(1):

- Ըրուգ՛ունը կ՛ութանն ա անում, ըռու-թանան ալաթ էլ չի տը՛ռնում - Ասում են շատ աշխատող, սակայն արդյունք չստացող մարդկանց մասին:

ԸՐՈՒԳՈՒՆԱՀԱՑ/ՈՒՐՈՒԳՈՒՆԱՀԱՑ - *գ.* 1. Երեկոյան ուտելը, ընթրիք: *Ըրու-գ՛ունահացը վէր սըքսում ըն, էտ մարթը նի յա մընում* (Ձ): 2. Երեկոյան ճաշկե-րույթ՝ հրավերք: *Ուրուգ՛ունըհացէն սաղ շինանցուց ծէն ա տամ, ըտըրանա կը-ման* (Ձ):

ԸՐՈՒԳՈՒՆԱՆԱԼ/ՈՒՐՈՒԳՈՒՆԱՆԱԼ - *չբ.* Մութն ընկնել, երեկո դառնալ: *Վէր ը-րուգ՛ունանում ա, չըղըլնէն ըսկըսում ըն հանչիլը* (Բ):

ԸՐՈՒԳՈՒՆԱՉԱԽ/ՈՒՐՈՒԳՈՒՆԱՉԱԽ - *տե՛ս* ԸՐՈՒԳՈՒՆԱՏԷՄ:

ԸՐՈՒԳՈՒՆԱՏԷՄ/ ՈՒՐՈՒԳՈՒՆԱՏԷՄ - *գ.* Մինչեւ մութն ընկնելը, երեկոյից քիչ առաջ: *Ըրուգ՛ունատէմ ա ինում, վէր չօ-բանը, վը՛խճարը շըլական, կ՛ամ ա տը-ռանց տօն* (Ձ):

ԸՐՈՒՏՈՒՀԱՐԱՏ/ՈՒՐՈՒՏՈՒՀԱՐԱՏ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ըրուտուհարատ անէլ - 1. *տե՛ս* Քու-նըհարամ անէլ: *Վը՛ռցակը կանչում ա, ըտըրան ըրուտուհարատ անում* (Ձ): 2. Մեկին նյարդայնացնել, վրդովել: *Խո-խէնք՛ը հօրը ըրուտուհարատ ըրէն* (Բ):

- Ըրուտուհարատ ինիլ/տը՛ռնալ - 1. *տե՛ս* Քունըհարամ ինիլ: *Ըրուտուհա-րատ իլած մարթը կարէլ չի կօրծ անէ* (Ձ): 2. Նյարդայնանալ, վրդովվել: *Ըրու-տուհարատ իլած տում ա կ՛ամ, տը՛ս-նում ծին կա վէջ* (Ձ):

ԸՐՈՒՐՈՒ(Ն)Ց/ՈՒՐՈՒՐՈՒ(Ն)Ց *(գրբ. օրորոց)* - *գ.* Երեխայի՝ հատուկ ձեւով սարքած ճոճվող փայտե մահճակալ, օ-րորոց: *Տահանց մին խօխա յա ինիս, կը-նէգ՛ը ըստիբիս ա, վը՛ր մարթը էտ ծառը կըտրէ, ուրուրուց շինի* (ՀԺՀ, V, 594):

- Ըրուրու(ն)ցը խազ՛իլ - Տղա եւ աղ-ջիկ երեխաների օրորոցներ վրա խազ քաշել՝ որպես նշան նրանց՝ իրար հետ ապագայում ամուսնացնելու: *Կ՛ամ ըն ուրուրունցը խազ՛ում, էտ օրվանից էլ պարիկըմօթուն անում* (Ձ):

- Ըրուրու(ն)ցը կըրակ ընգած/կ՛ունլ կէրած - Անզգամ (երեխաների մասին): *... էտ կընէգ՛ը ասում ա.- Էս ըրուրունցը կըրակ ընգածը ինձ տանջից, հօքիս հանից* (Ձ):

ԸՐՈՒՐՈՒ(Ն)ՑԱԽԱՉ՛/ՈՒՐՈՒ-ՐՈՒ(Ն)ՑԱԽԱՉ՛ - *գ.* Տղա եւ աղջիկ երե-խաների օրորոցների վրա ծնողների կողմից քաշվող խազ՝ որպես նշան նրանց իրար հետ ապագայում ամուս-նացնելու: *Առաչ ըրուրունցախազ՛ը ա-դանթ ա իլանլ* (Բ):

- Ըրուրու(ն)ցախազ՛ անէլ - *տե՛ս* Ը-րուրու(ն)ցը խազ՛իլ:

ԸՐՈՒՐՈՒ(Ն)ՑԱԿ՛ՕՂ/ՈՒՐՈՒ-ՐՈՒ(Ն)ՑԱԿ՛ՕՂ - *գ.* Չար ոգի, որ իբր գի-շերները գալիս խեղդում է օրորոցի երե-խաներին կամ գողանում՝ տեղը դեւ դնելով: *Այան թօռնանը ասմա.- Վէր քօն չինիս, ուրուրուցակ՛օղը կ՛ըլան ա, ք՛ը՛զ տանէ* (Ձ):

ԸՐՓԸԹԱԽՕՍ - *տե՛ս* ՈՒՐՓԸԹԱԽՕՍ:

ԸՐՓԸԹԱՎԷՐ - *տե՛ս* ՈՒՐՓԸԹԱՎԷՐ:

ԸՐՓԸՎԷՐԻ/ԻՐՓԻՎԷՐԻ *(գրբ. որբ + այրի)* - *ած., գ.* Ամուսինը մահացած՝ ա-մուսնուց զրկված (կին) կամ կնոջից զրկ-վածը (տղամարդ): *Ըրփըվէրի մընալանը յէտը էրկան վախտ օրիշ կընգա նըհէտ վախտ ա անց կըցնում* (ՀԺՀ, V, 59):

- Ըրփըվէրի կընգանը փէշկը նի կա-ցած կինի - Որբեւայրի կինը միշտ ան-հանգիստ՝ մտահոգ է:

- Ըրփըվէրուն տըռնանը պըպըլ՛-պապալ՛ անէլ - Որբեւայրու վիճակից վատթար վիճակի մեջ ընկնել: *Խընըմէն սիրականը մը՛ռալ ա, էն ա ըրփըվէրուն տըռնանը պըպըլ՛-պապալ՛ ընէլիս* (Ձ):

ԸՐՔԸՎՕԹՈՒՆ/ԱՐՔԱՅՈՒԹՈՒՆ/ ՀԱՐՔԱՅՈՒԹՈՒՆ *(գրբ. արքայութիւն)* - *գ.* 1. Դրախտ, անդրշիրիմյան երանավետ կյանք: *Պարի մարթիք՛ ըրքըվօթուն ըն ըղնում* (Ձ): 2. *փխբ.* Երջանիկ կյանք, ե-րանելի վիճակ: *Թանք՛ի հըղըղօթուն ինի, թա չէ մէր գանքը արքայութուն ա* (Ձ):

ԸՐՕՊԷ/ՐՕՊԷ *(գրբ. րոպէ (ակն-թարթ, վայրկյան), հուն. hropē)* - *տե՛ս* ՄԸՆՈՒՏ: *Կընէգ՛ը մարթին ըսէս ա.- Ա-մէնալանվ ճուրը պէր, վէր խըմիմ, մին ро-պէյումը կըսըղանամ: (ՀԺՀ, V, 596):*

ԸՐՕՏԱԼ/ՈՒՐՕՏԱԼ/ԸՐՕՏԷԼ/ՈՒՐՕ-ՏԷԼ *(գրբ. որոտամ)* - *չբ.* Թնդալ, դղրդալ, որոտալ: *...Մին էլ ա տը՛սնըմ յէրգ՛ինք՛ը ըրօտաց, էն մըթէն թըխպէրէն մէչան թէվավէր ծի նըստած մին ախճիգ՛ վը՛ր յէկավ...* (ՀԺՀ, V, 149):

ԸՐՕՏԷԼ - *տե՛ս* ԸՐՕՏԱԼ:

ԸՐՕՏՈՒՑ/ՈՒՐՕՏՈՒՑ *(գրբ. որոտ)* - *գ.* Կայծակին զուգորդող դղրդյուն, թն-դյուն, որոտ: *Էտ ըրօտուցը ըտահանց սըրտաճաք ա անում* (Բ):

ԸՐՕՐԷԼ/ՈՒՐՕՐԷԼ *(գրբ. երերամ)* - *նբ.* 1. Երերել, տատանել, այս ու այն կողմ տանել-բերել: *Խընը՛ցէն կախ ա տամ, ըրօրում* (Ձ): 2. Մանկան օրորոցը ճոճելով՝ մանկանը քնեցնել: *Էնքան ը-րօրից, մինչը՛վ խօխան քօն իլանվ* (Բ):

ԸՐՕՐՎԷԼ/ՈՒՐՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* Ը-ՐՕՐԷԼ-ի:

ԸՓՌԸՄ-ԱՓՌԸՄ - *ած.* Պատառոտ-ված: *Ըփռըմ-ափռըմ շօ՛րէր ա կ՛ը՛նում, տանան տում կ՛ամ* (Ձ):

ԸՓՍՕՋԱԼ/ԸՓՍՕՍԱԼ/ԱՓՍՕՋԷԼ/ ԱՓՍՕՍԷԼ *(գրբ. ափսոսամ, ափսոսեմ)* - *չբ.* 1. Ափսոսալ, ցավ զգալ, ցավել: *Կ՛ամ ըն հըսկըցընըմ, վէր ինք՛ը պիտի թա-ռիփ անէ, ափսոզէ, վէր իտի մարթը մը՛-ռալ ա* (ՀԺՀ, VI, 186): 2. *տե՛ս* ՓՈՒՇՄԱ-ՆԷԼ: *Միհէնգ՛ ա, վէր Քըչալանց Սիմօնը ըփսոզում ա ըրընծնէրէն հը՛տէ* (Ձ):

ԸՓՍՕՍԱԼ - *տե՛ս* ԸՓՍՕՋԱԼ:

Թ

ԹԱ/ԹԱՆ *(գրբ. եթե, թէ)* - *շ.* Կապակցում է՝ 1. Ստորադաս նախադասությունը գլխավորի հետ՝ որ: *Էտ տըղան ասում չի, թա ինք՝ըն էլ ա թաքավէրու տըղա* (Ձ): 2. Ստորադաս պայմանի նախադասությունը գլխավորի հետ՝ եթե: *Մարթը ասմա.- Մ կընէգ՝, թա թօռ յը՞կավ, լ՝ավ ցօրէն ընք հընձիլանն* (Ձ): 3. Նպատակի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ՝ որպեսզի: *Էտ կընէգ՝ը ծը՞րքը քըցհում ա, թա ալլէր տհուս օնէ, օխծը ծը՞րքան կըծում ա* (Ձ): 4. Ստորադաս հարցական նախադասությունը գլխավորի հետ՝ արդյոք: *Թա հինչու հը՞տէ յա էտ մարթը էտքան քար պէրալ հայաթը, վէշ մինը գ՝ուդհում չի* (Բ): 5. Ուրիշի ուղղակի եւ անուղղակի խոսքը հեղինակային խոսքի հետ՝ որ: *Խաբարը հըսնում ա Ափուն, թա՝ կընգանըտ Վըրարակը տարալ ա* (ՆԱԲ, 106): 6. Համադաս նախադասություններ կամ նախադասության բազմակի անդամներ՝ կամ: *Շատ ըն ք՝ընըմ, թա խըրէգ՝, վը՞րչը հըսնըմ ըն էտ տօնը* (ՀԺՀ, V, 42): 7. Կրկնությամբ արտահայտում է *եւ...եւ, թե այս...թե այն, այս էլ...այն էլ* իմաստը: *Սէլը նի յա օնում, լօխ նի յըն տը՞ռնըմ կ՝ումը՝ թա՛ հէյվան, թա՛ մարթ, թա՛ հավ ու ճիվ* (Ձ):

- Թա էս պատը/քարը խօսալ ա, ընդի էլ ինք՝ը - Ասում են նրա մասին, ով որեւէ զրույցի՝ վիճաբանության եւն դեպքում ոչինչ չի ասում:

- Թա լ՝ավ դանլանք՝ ըս, խէ քու մըրօքըտ վէր չը՞ս անում - Հեգնաբար ասում են նրան, ով, իր կարիքները հոգալու հնարավորություն չունենալով, փորձում է ուրիշներին օգնել:

- Թա հինչ - Լավ, հիանալի, գեղեցիկ: *Ախճիգ՝ ըմ ասալ է՛, հանց ա թա հինչ հինի* (Ձ):

- Թա հինչ ա - 1. Որպեսզի: *Սաղ օրը էշու նըման կօրծ ա անում, թա հինչ ա էրկու կապէկ ըստանա, խօխէնք՝ը պահէ* (Բ): 2. Այն պատճառով, քանի որ: *Թա հինչ ա ուրան անա խօխա չի ինում, վէշ մին խուխու սիրում չի* (Բ):

- Թա չէ *(գրբ. եթե ոչ, թէ ոչ)* - 1. Ապա թե ոչ, հակառակ դեպքում: *Թաքավէրը ասմա.- Բիդի էտ վը՞սկէ ջամը պիրիս, թա չէ կըլ՝օխըտ կըտըրէլ կըտամ* (Ձ): 2. Հենց որ: *Յը՞կավ թա չէ, ըսկըսից կ՝ուղօթուն անէլը* (Բ):

- Թա վէր - Եթե: *Ախճիգ՝ը ասում ա.- Թա վէր կարիս էտ ըսլանէն քըթիս, կաթնը պիրիս, ք՝ը՞զ նըհը՞տ կըփըսակվիմ* (Ձ):

- Թա տու աղվէս ըս, յը՞ս քու հանք՝իտ ըմ - Մի՛ փորձիր խաբել ինձ, ես քեզնից խորամանկ եմ: *Կընէգ՝ը թա.- Մ մարթ, տու ինձ կարէլ չը՞ս խանփիս, թա տու աղվէս ըս, յը՞ս քու հանք՝իտ ըմ* (Ձ):

- Թա տու տը՞սալ ըս, յը՞ս էլ ընդի - Երդման բանաձեւ՝ չեմ տեսել: *Էտ մարթը թաքավէրին ըռընչին հ՝ուրթհումն ա օտում, թա.- Թաքավէրը ապըրած կէնա, յը՞ս էտ պէնան սը՞տ չըմ, թա տու տը՞սալ ըս, յը՞ս էլ ընդի* (Ձ):

- Թա Ք՝իրսը տը՞ղան տհ՝ուրհ՝ուր կըկ՝ա, ինք՝ը՞ն էլ ընդի - Ասում են աներեր՝ անդրդվելի մարդու մասին:

- Թա օգ՝ում ըս դհ՝ուզը գ՝իդանս - *տե՛ս* Դհ՝ուզը ասած:

ԹԱՆ - *տե՛ս* ԹԱ:

ԹԱՆԲ *(պրս. tāb (տապ)* - *գ.* Բնավորություն, բնույթ, վարվեցողություն: *Ըտըրա թանբը շատ փիս ա ինհ՝ում, վէշ մինը կարում չի նըհը՞տը յօլլա ք՝ինի* (Ձ):

- Թանբը ծանդըր - Անտանելի բնավորություն, վատ վարվեցողություն ունեցող: *Ըսկէսվօրը թանբը ծանդըր ա ինհ՝ում* (Ձ):

- Թանբը յը՞ր չօնէլ - Չհանդուրժել: *Էտ կընգանը թանբը յը՞ր չօնում, վէր հարթնը ճէլլի-ճէլլի ք՝ընհ՝ում ա հանանց տօն* (Բ):

- Թանբը տաք - Կրակոտ բնավորություն ունեցող, աշխույժ: *Թանբը տաք հարթնը պըտրունէն աշկէն լ՝ուսըն ա* (Ձ):

ԹԱԲԱՂ/ԹԱՓԱՂ *(արաբ., թրք. tabak)* - *գ.* 1. Փայտե կլոր ու ոչ խոր ափսե: *Ի՞ը՞սըտ շօղ, շափաղ ա, մէյվավ լիգ՝ը թաբաղ ա...* (Ձ): 2. Մետաղյա մատուցարան, որ եկեղեցում պտտեցնում էին ողորմություն՝ հանգանակություն հավաքելու համար: *Սը՞վ շհ՝ուրէրավ մին կընէգ՝, թափաղը ծը՞րքէն, յը՞խծումը պըտրպատ ար անում* (Ձ):

ԹԱԲԱՂԱ *(արաբ. tabaka, պրս. tābāğe)* - 1. *գ.* Թղթի մեծ կտոր, որի վրա ինչ-որ բան է գրված կամ փորագրված: *Էտ թաբաղան յօր ա ունէս, կըրթիս, լօխ գ՝իդանս* (Ձ): 2. *մ.* Քանակական թվականների հետ ցույց է տալիս բազմապատիկություն՝ անգամ: *...Յը՞տ ք՝ունհ՝ում ըն Ըստուծէն վը՞տքը, թա.- Մստուծ, դալանթ ընք ըրալ, լօխ ցավը մէգ տօ՛, հանլան մին թաբաղա յէլ իվիլ...* (ԱԱ, 87):

ԹԱԲԼԱ - *տե՛ս* ՏԸՄԲԸԼԱ:

ԹԱԲԼԻ - *տե՛ս* ՏԸՄԲԸԼԱ:

ԹԱԲՈՒԹ *(արաբ., պրս. tābūt, թրք. tabut)* - *գ.* 1. *տե՛ս* ԲԱՆԱՆ: 2. *տե՛ս* ԴՈՒԹԻ:

ԹԱԲՈՒՐԴԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թաբուրդա ընգած - Անճարակ, խեղճ ու կրակ: *Թաբուրդա ընգած մարթ ա, կարում չի թա խօխէնք՝ը պահէ* (Բ):

ԹԱՆԳ՝ - *տե՛ս* ԹԱՆՔ՝[1]:

ԹԱՆԳ՝ԱԺԱՆԱՆԳ՝ - *տե՛ս* ԹԱՆՔ՝ԱԺԱՆԱՆԳ՝:

ԹԱԴԱՐԱՆՔ՝ - *տե՛ս* ԹԱԴԱՐԷՔ՝:

ԹԱԴԱՐԷՔ՝/ԹԱԴԱՐԻՔ՝/ԹԱԴԱՐԱՆՔ՝ *(արաբ. tadarük, թրք. tedarik)* - *գ.* Որեւէ բանի համար կատարվող նախապատրաստական աշխատանքների՝ միջոցառումների ամբողջությունը, պատրաստություն: *Հընրսընքէն թադարէք՝ը էրկու ամէս առաչ ըն ըսքըսալ* (Ձ):

- Թադարէք՝ տը՞սնալ/քաշիլ - Որեւէ բանի համար նախապատրաստվել, անհրաժեշտ միջոցները հայթայթել: *Ընդըրանա յէտը, քանի վէր Մէլիք՝ Շահնազարը հ՝ուրան թադարէքը քաշալ ար, ժողովուրթըն ազադվից սօվան* (ՀԺՀ, V, 604):

ԹԱԴԱՐԻՔ՝ - *տե՛ս* ԹԱԴԱՐԷՔ՝:

ԹԱՆՁ(Ձ)Ա *(պրս. taza, թրք. taze)* - *ած.* 1. Դեռեւս չգործածված՝ չօգտագործված, նոր: *Թանզզան շօրէր ա կ՝ը՞նում, տհ՝ուս կ՝ամ շինամաչը* (Ձ): 2. Անցյալում գոյություն չունեցած, նորաստեղծ, նորակառույց, նորահայտ եւն: *Ըտըրանք քօչհ՝ում ըն թանզզան տօնը* (Բ): 3. Նախկինին՝ նախորդին փոխարինած: *Էտ թանզզան թաքավէրը հըրամանք ա տաս, վէր հիշքան կ՝օղ կա, փըռնին, տհ՝ուրմանն քըցին* (Ձ): 4. Այս տարվա բերք հանդիսացող: *Թանզզան կըրտօփլին վէր տհ՝ուս ա կ՝ամ, էլ ք՝օհնին մըհալ քըցօղ չի ինհ՝ում* (Բ): 5. Նորատունկ, նորածիլ, նորաբույս: *Թանզզան բաղը հանլան էրկու տարէ պէրք չի տըլան* (Ձ): 6. Չմաշված, չփչացած, պիտանիությունը պահպանած: *Էտ պէնչաքը, կօզի իրը՞ք տարէ յա՝ կ՝ը՞նում ա, ամմա հանլան թանզզան յա* (Բ): 7. *մ.* Հիմա միայն, որից հետո միայն: *Օխտը տարէ յա կընէգ՝ը սիրական ա պահում, էտ ախմաղը հանլան թանզզան յա կըլ՝օխ ընգալ* (Բ):

- Թանզ(զ)ան գ՝անլան բէյխաբար - *հեգն.* Անտեղյակ, անփորձ, միամիտ: *Մին դ՝օնհ՝ում մին թանզան գ՝անլան բէյխաբար մարթ դօնաղ ա ընգնըմ մին տան* (ՀԺՀ, V, 453):

- Թանզ(զ)ան ծընված կ՝առնը - Աշխույժ, զվարթ, կենսուրախ: *Տըղա, հինչ տըղա՞, թանզզան ծընված կ՝առնը, սաղ օրը էն ա ք՝ը՞փ ընէս* (Ձ):

- Թանզ(զ)ան հարթնը - Ամոթխած, ամաչկոտ անձ: *Հինչ տըղամարթ ա՞ էն, հանշը՞վ ըրա՝ մին թանզզան հարթնը* (Ձ):

- Թանզ(զ)ան ճօտէր ըն տհ՝ուս յը՞կալ՝ ըրկաթէ ծուվէն ըն ածում - Ասում են մեծամիտ՝ պոռոտախոս երիտասարդների մասին:

- Թանզ(զ)ան մինան - *տե՛ս* ԹԱՆՋ(Ջ)ԱՆԱՆ:

ԹԱՆՋ(Ջ)ԱՆԱՆ/ԹԱՆՋ(Ջ)ԱՆԱՆ *(թրք. təzədən)* - *մ.* Նորից, կրկին, դարձյալ, վերստին: *Հանը կըզնըվըմ ա տըղին յըրան, թանզանան տըղին օգըմ ա տանի Գ՛անջա՝ կանթիլի հէտի* (ԼՂԲ, 355):

ԹԱՆՋ(Ջ)Ա-ԹԱՆՋ(Ջ)Ա - *տե՛ս* ԹԸՋ(Ջ)Ը-ԹԱՆՋ(Ջ)Ա:

ԹԱՆՋ(Ջ)ԱԼԱՄԻԾ *(թրք. tazelemek)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թանզ(զ)ալամիշ անել - 1. Նորոգել, նորացնել, թարմացնել: *Տանը պատէրը կըրասկա յա տամ, թանզալամիշ անում* (Ջ): 2. Վերսկսել, նորից սկսել որեւէ դադարեցված բան: *...Ք՛ինըմ ա օգին կօշտը, թա՝ յը՞ք բըրըշինք, էլհա մէր ք՛օհնա պարիկըմօթունը թանզզալամիշ անինք՛* (Ջ):

- Թանզ(զ)ալամիշ ինիլ/տը՞ռնալ - Նորոգվել, նորացվել, թարմացվել: *...Կարոունքը վէր կ՛ամ ա, յէրգ՛իր, աշխարք թանզալամիշ ա ինըմ, սարէրընու ջօլէրը կընանչըմ ըն, ծառէրը ծաղկըմ...* (ՋՏ, Բ, 33):

ԹԱՆՋ(Ջ)ԱՄՕԴԻ - 1. *ած.* Նորաձեւ, նոր ձեւ ունեցող: *Թանզզամօդի շօրէր ա տանս յը՞կալ, էլ կըլխու չըս ըղնում՝ տըղու վա՞, թա ըխչըկա՞* (Բ): 2. *մ.* Նոր ձեւով, նորաձեւության համապատասխան: *Միհէնգ՛վա հըրուստնէն էլ ըն թանզամօդի ապրում, ք՛ըսիբնէն էլ* (Ջ):

ԹԱՆՋ(Ջ)ԱՆԱՆ - *տե՛ս* ԹԱՆՋ(Ջ)ԱԴԱՆ:

ԹԱՋԻ - *տե՛ս* ԹԱՆՋԻ:

ԹԱՆՋԻ/ԹԱՋԻ *(պրս., թրք. tazi)* - *գ.* 1. Բարձրասրուն արագավազ որսի շուն: *Մարթը միկա ք՛ընում ա, տէսնըմ մին օվչի, թուվանգ՛ը ծէրքէն, թազին հէտան, կ՛ամ ա* (ՀԺՀ, VII, 243): 2. *փխբ.* Փոքր ու նիհար շուն: *Կ՛ուլը վէր ուռնամ ա, էտ թազին պունումը կօչ ա կ՛ամ* (Ջ): 3. *փխբ.* Շատ նիհար մարդ: *Էտ թազին հինչ բի՞դի փուլ ըշխադէ, վէր կարէ տօնը պահէ* (Բ):

- Թազի կըտըրէլ/տը՞ռնալ - 1. Հնազանդ դառնալ, խեղճանալ: *Ըտըրան էնքան թակում ըն, վէր թազի յա կըտըրում* (Ջ): 2. Նիհարել: *Մին ամսումը էտ կավը թազի յա տը՞ռնում* (Ջ):

- Թազի շինիլ - 1. Հնազանդեցնել, խեղճացնել: *Էտ կընէգ՛ը մարթին թազի յա շինալ* (Բ): 2. Նիհարեցնել: *Էնքան տուզնը պահում ա, էտ խօզ՛ին թազի յա շինում* (Բ):

- Թազին քըս տալավ ըլըբաստըրակ չի փըռնէլ - Անիմաստ է մեկից իր ուժերին անհամապատասխան բան պահանջելը: *Թազին քըս տալավ ըլըբաստըրակ չի փըռնէլ, էտ տըղան դօխտուր տը՞ռնօղը չի, նըհախ չըրչարվը մէ՛լ* (Ջ):

ԹԱՆՋՆԻԼ - *չբ.* 1. Պառկել՝ առջեւի ոտքերը մեկնած եւ դունչը նրանց վրա դրած (շան, գայլի, արջի եւն մասին): *Կ՛ամ ըն, տը՞սնում՝ մին մը՞ծ շօն ըտը՞ղ թանզնած* (Ջ): 2. *անրգ.* Նստել: *Հինչ ը՞ս թանզնալ, խէ յը՞ր չը՞ս կէնում քու մօր ք՛ամնա՛ անիս* (Բ): 3. Պառկել, թեքվել (խոտաբույսերի մասին): *Արտը թանզնալ ա, կարում չընք հընձինք՛* (Բ):

ԹԱԹ *(գրբ. թաթ)* - *գ.* 1. Ձեռքի դաստակից մինչեւ մատների ծայրն ընկած մասը: *Խը՞ղճը անլջանկ չի քըցալ, թաթէրը ցօրտ տարալ ա* (Բ): 2. Ոտքի՝ կոճից մինչեւ մատների ծայրն ընկած մասը: *Էտ կ՛ուլէրը ուրանց թաթէրը տանըմ ըն տինըմ փէտին դաթըմը* (ՀԺՀ, V, 55): 3. Ոտքի այդ մասին հագնող գուլպայի մասը: *Գ՛ուլբին թաթը ծակվալ ա* (Բ): 4. Կշեռքի նժարներից յուրաքանչյուրը: *Մէսը տինըմ ա քըշըռքէն թաթէն, տը՞սնըմ՝ դուզ էրկու կիլօ* (Ջ): 5. Ճախարակի այն մասը, որի վրա զետեղված է իլիկը: *Շըխըրակէն թաթը կօտըրալ ա* (Ջ): 6. Ակիշի թաթաձեւ՝ տափակ մասը: *Ծըհանէն թաթավը տաշտը ք՛իրում ա* (Բ): 7. *անրգ.* Շատ մեծ ձեռք կամ ոտք: *Ըտըրա թաթէրը էրկու մէտըր կա* (Բ):

- Թաթ անէլ, վը՞ննը կէնալ - Իր ասածը պնդել, համառել: *Էտ ախճիգ՛ը թաթ ա անում, վը՞ննը կէնում, թա.- Յը՞ս էտ տըղէն ք՛ինիլ չըմ* (Ջ):

- Թաթէն տինիլ - Մեկի պահանջածը՝ ուզածը տալ: *Ըտի էտ հըրէղան ծին տինում ըն էտ օղռաշ մարթին թաթէն* (Ջ):

- Թաթէն ք՛ինիլ, դըբանէն յը՞ետ տը՞ռնալ - *տե՛ս* Դըբանէն յըրա յը՞ետ տը՞ռնալ (ԴԱԲԱՆ-ի տակ):

- Թաթէրը թաթման քըցած կատուն կարէլ չի մուկուն փըռնէ - Յուրաքանչյուր գործ որոշակի պատրաստություն է պահանջում: *Հանը ասմա.- Մ՛շան տըղա, թանզզա՝ շուրէրավ տու հինչ բի՞դի հօնձ անիս. թաթէրը թաթման քըցած կատուն կարէլ չի մուկուն փըռնէ* (Ջ):

- Թաթը կօթան կօտըրէլ - Անելանելի դրության մեջ ընկնել: *Խը՞ղճէն թաթը կօթան կօտըրալ ա, գ՛ուդում չի, թա հինչ անէ* (Բ):

- Թաթը կօթէն հըսցընէլ - Մի կերպ ապրուստի միջոցներ հայթայթել, ծայրը ծայրին հասցնել: *Մացակը օթ խօխա օնէ, մին թանհրավ ա թաթը կօթէն հըսցընում* (Բ):

- Թաթը յըրա տինիլ - Բռնությամբ՝ ապօրինաբար մի բանի տեր դառնալ, տիրանալ, ուրիշներին թույլ չտալ օգտվելու: *Էտ օյինբազը թաթը տիրալ ա սաղ շէնին վըղէրէն յըրա, թողում չի վէշ մինը վարին* (Բ):

ԹԱԹԱԼԱԲԱՋ - *ած.* Ստախոս, խաբեբա, վայրիվերո խոսող: *Թաթալաբազ մարթին վէշ մինը սիրիլ չի* (Ջ):

ԹԱԹԱԼԱԲԱՋՕԹՈՒՆ - *գ.* Թաթալաբազ լինելը: *Ազին ասմա.- Թաթալաբազօթունը աշկըս տը՞սնա վէջ* (Ջ):

ԹԱԹԱԽ *(գրբ. թաթախ)* - *ած.* 1. Մի բանով թաթախված: *Շօրը քըցանում ա ցը՞խէն մաչը, ըտի թաթախ տանում տամ տը՞ռնը* (Ջ): 2. Քիչ հարբած, գինով: *Մամիկօնը ըտի թաթախ տանս ա կ՛ամ, ք՛ինամ մըռըլատօն* (Ջ):

- Թաթախ անէլ - *տե՛ս* ԹԸԹԱԽԷԼ:

- Թաթախ ինիլ/տը՞ռնալ - *տե՛ս* ԹԸԹԱԽՎԷԼ:

ԹԱԹԱՆ - *ած.* Թեւը թուլացած՝ կախ ընկած՝ չորացած: *Էտ ք՛ասիբ տըղան, ճարը կըտըրած, փըսակվում ա էտ թաթան կընգանը նըհը՞տ* (Ջ):

ԹԱԹԱՇ/ԱԹԱՇ *(պրս. ātaš (հուր)* - *ձ.* Բացականչություն՝ պաշտպանվի՛ր: *Տըղան թօրը պիցըրցընում ա, թա.- Թաթա՛շ, ղէվ ախպէր* (Ջ):

ԹԱԹԱՇ-ԹԱԹԱՇ - *տե՛ս* ԹԸԹԸՇ-ԹԱԹԱՇ:

ԹԱԹԱՋԱՂ - *գ.* Տաք կերակրամանը կամ թեյնիկը բռնելու շոր: *Թաթաջաղը յօր ա օնում, խաշլամէն ղըզանը փըռնում, կըրական վէր օնում* (Ջ):

ԹԱՆԹԱՌ *(գրբ. թաթառ (մրրկած ամպ)* - *գ.* Պտտահողմ: *Մին թանթառ ա ըսքըսըմ, ք՛արվանը մընամ ա ղումէն տակէն* (Ջ):

ԹԱԹԱՐ - *գ.* Միջնադարում միավորված մոնղոլական, թրքական եւ որոշ այլ ցեղերի ընդհանուր անվանումը՝ թաթարներ: *...Վար պարսիկնէն, թաթարնէն հարձակվալ ըն, ժուղովուրթը տը՞սալ ա հուռուցանա, ուրանն կըլխէն ճարը տը՞սալ* (ԱԱ, 44):

ԹԱՆԹԱՐ *(գրբ. դադար)* - *գ.* Դադար, հանգիստ, հանգստություն: *Տընաշինըտ ըսկի թանթար չօնէ, սաղ օրը էն ա կօրծ ընէլիս* (Բ):

- Թանթար անէլ - *տե՛ս* ԹԸՐԹԷՐԻԼ:

ԹԱԹԱՐԱԽՆԻ - *տե՛ս* ԹԱԹԱՐՅԱԽՆԻ:

ԹԱԹԱՐԻ - *տե՛ս* ԹԱԹԱՐՅԱԽՆԻ:

ԹԱԹԱՐՅԱԽՆԻ/ԹԱԹԱՐԱԽՆԻ - *մ.* Արագորեն, շտապ, իսկույն, հապճեպ: *Թաթարյախնի յուղուծու վա անում, օտում, ք՛ինամ* (Ջ):

ԹԱԹԸՌԱՎ/ԹԱԹՌԱՎ *(հ.ե. *ter- (թպրտալ, դողալ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թաթըռավ անէլ - Բեղմնավորել, թեթկել (թռչունների, հեգնաբար նաեւ մարդկանց մասին): *Վը՞ղցակը հավէն թաթըռավ ա անում* (Բ):

- Թաթրռավ ինիլ/կ՚ալ - Բեղմնավորվել, թեթկվել (թռչունների, հեգնաբար նաեւ մարդկանց մասին): *Թաթռավ չիլած հավրն էլ ա ծու ածում* (Բ):

ԹԱԹԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թաթիւն բօստանը - Անտեր՝ բարձիթողի ինչք, որն օգտագործվում է յուրաքանչյուրի կողմից՝ ըստ ցանկության: *Կալխօզը տը՚ռալ ա թաթիւն բօստանը, հու հինչը օգում ա, անում ա* (Ձ):

ԹԱԹԼՈՒԿ - *տե՛ս* ԹԱՆԹԻԼ:

ԹԱԹՄԱՆ *(գրբ. թաթպան)* - *տե՛ս* ԱԼՋԱԿ:

ԹԱԹՌԱՎ - *տե՛ս* ԹԱԹԸՌԱՎ:

ԹԱԹՈՒԿ - *գ.* Ձեռքի բութ եւ ճկույթ մատների վրա ուռածեւ փաթաթած թել, որ հետո, թաթից հանելով եւ վրան թել փաթաթելով, կծիկ են շինում: *Այան իրը՚ք թաթուկ թիլ ա յօր օնում, թօռնանը հը՚տէ մին ճօխտ գ՚ուլբա կ՚օրծում* (Ձ):

- Թաթուկ անել - Թելը ձեռքի բութ եւ ճկույթ մատների վրա ուռածեւ փաթաթել: *Թիլը թաթուկ ա անում, կապում, ղըրաղ տինում* (Բ):

ԹԱԹՈՒԿ-ԹԱԹՈՒԿ - *տե՛ս* ԹԸԹԸԿ-ԹԱԹՈՒԿ:

ԹԱԺ(Ժ)Ա/ԹԱԺ(Ժ)Ա *(պրս. taza, թրք. taze)* - *ած.* 1. Թարմ, նոր թխված (հացի մասին): *Ադաթ ա՝ հաց թըխէլիս թուրնէն քըշտավը անց կընօղէն թաժժա հաց կըտան* (Բ): 2. Մատղաշ, նորաբույս, նորածիլ: *Փիրփէտին թաժժա զօխէրը աղ ըն տինում* (Բ):

ԹԱԺ(Ժ)Ա - *տե՛ս* ԹԱԺ(Ժ)Ա:

ԹԱԺ(Ժ)Ա-ԹԱԺ(Ժ)Ա - *տե՛ս* ԹԸԺ(Ժ)Ը-ԹԱԺ(Ժ)Ա:

ԹԱԼ *(հ.ե. *tāl- (աճել, բույս, ընձյուղ)* - *գ.* Թելուկազգիների ընտանիքին պատկանող վայրի բանջար, որ խաշում կամ տապակում են: *Թալը, ծուվավ ժարիտ ըրած, լազաթ ա հինում* (Բ):

ԹԱԼԱ *(թրք. tala)* - *գ.* Անտառում ծառերից ազատ տարածություն՝ բացատ: *Կ՚ումըշնէրէն ըսլընէն կէրալ ըն, ծըմակումը մին թալա տէղ նըստօտալ* (ՀԺՀ, V, 417):

ԹԱԼԱԲ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թալաբ անել - 1. *արհմ.* Սպանել, մեռցնել: *Ասում ըն՝ կընէգ՚ը էտ ըխմաղէն թալաբ ա ըրալ* (Ձ): 2. *տե՛ս* Աբօրտ անել:

- Թալաբ ինիլ/տը՚ռնալ - 1. *արհմ.* Սպանվել, մեռնել: *Թալաբ չի հինում, թա նըստա պըրծընիք՚* (Բ): 2. *տե՛ս* Աբօրտ ինիլ:

ԹԱԼԱԳ՚ - *տե՛ս* ՇՈՒԼՈՒՂ:

ԹԱԼԱԹԻՆ *(ռուս. телятин (հորթի կաշի)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Թալաթինու կաշի - Որակյալ կաշի: *Թալաթինու կաշի յա ինք՚ օնում, վընանման կարում* (Ձ):

ԹԱԼԱ-ԹՈՒԼԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թալա-թուլակ քըցիլ - *տե՛ս* Չօփ քըցիլ: *Վէր ինդի թալա-թուլակ ըն քըցում, թա հու կըմըտնէ ճիւրը, հու չի մըտնէ, էս թամբալը թա.- Յէս նի կը մընիմ* (ՀԱԲ, 15, 47):

ԹԱԼԱԿ/ԹԱԼԱԿ *(գրբ. թակարդ, թակարթ)* - *գ.* Թակարդ, վարմ, որոգայթ: *Տա էլ յըրա յա պըրծնըմ մըսին, ամմա ընգնըմ ա թալակին մէջը* (ԼՂԲ, 362):

- Թալակ ըղնէլ - 1. Հանցագործության մեջ բռնվել: *Անջախ-անջախ էտ կ՚օղը թալակ ընգավ* (Ձ): 2. Փորձանքի մեջ ընկնել: *Խը՚ղճ կընէգ՚ը թալակ ա ընգալ, հինչ ա՞նէ* (Ձ):

- Թալակ ընգած աղվէս - Խեղճացած՝ անելանելի վիճակի մեջ ընկած խորամանկ մարդ: *Կ՚ափին միհէնգ՚ թալակ ընգած աղվէս ա* (Բ):

- Թալակ սարէլ - Դավ նյութել, որոգայթ լարել: *Անդար անիմ ընդի կընէգ՚ը, վէր ուրան մարթին հը՚տէ էլ ա թալակ սարում* (Բ):

- Թալակ քըցիլ - 1. Հանցագործության մեջ բռնել: *Մին օր էլ թալակ ըն քըցում, էտ կ՚օղէն փըռնում* (Ձ): 2. Փորձանքի մեջ գցել: *Էտ տըղան հօրըն ա մօրը թալակ ա քըցալ* (Բ):

- Թըլակա հաց կ՚ուղանօղ - Ճարպիկ, հնարամիտ: *Թըլակա հաց կ՚ուղանօղ մարթը տուզնը չի մընալ* (Ձ):

- Թըլակա պըրծած - *տե՛ս* Օխտը թըլակա պըրծած:

ԹԱԼԱՆ *(պրս. tālān, թրք. talan)* - *գ.* 1. Կողոպուտ, ավարառություն: *Թալանը վէր ըսքըսում ա, էտ մարթը մին սանդօղ ա պիրում* (Ձ): 2. Կողոպտված իր, ավար: *Էնքան թալան ա պէրալ՝ տը՚ղ չի կա, թա տինի* (Բ):

- Թալան անել - *տե՛ս* ԹԸԼԱՆԷԼ:

ԹԱԼԱՆԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թալանլամիշ անել - *տե՛ս* ԹԸԼԱՆԷԼ: *Մին էլ ըն լըսէս, վը՚ր ղուրդուղուգնէն նի տը՚ռէն ուրանց տօնը, թալանլամիշ ըրէն* (ԼՂԲ, 314):

ԹԱԼԱՆՉԻ - *ած., գ.* 1. Ավարաչու, թալանող, կողոպտող: *Թօրքէրը տականան էլ թալանչի յըն իլալ* (Ձ): 2. *փխբ.* Գռփող, հարստահարող, հափշտակիչ, յուրացնող: *Թալանչի մարթ ա. հօրը իլած-չիլածը յօր ա կալալ, ախպօրցը վէշ մին պէն տուվալ չի* (Բ):

ԹԱԼԱՇԱ/ԹԸԼԱՇԱ *(թրք. talaš (տաշեղ)* - *գ.* Փայտից՝ քարից եւն պոկված բարակ շերտ՝ կտոր: *Մին փանդու թալաշա յա քըցում փիչը, ղըզդանը տինում յըրա* (Ձ):

ԹԱԼԱՇԱ-ԹԱԼԱՇԱ/ԹԸԼԸՇԱ-ԹԸԼԸՇԱ - *մ.* Շերտ-շերտ, շերտերով: *Պանէրը թալաշա-թալաշա կըտօրում ա, տամ խօնցը* (Բ):

- Թալաշա-թալաշա անել - *նբ.* Շերտահատել, շերտ-շերտ կտրել՝ տաշել: *Չօբանը էտ տախտակը թալաշա-թալաշա յա անում, սըմավարը նի կընցընում* (Ձ):

ԹԱԼԸԽ/ԹԱԼԽ *(թրք. təlx (դառն)* - *ած.* 1. Մուգ գույն ունեցող: *Էտ կընէգ՚ը էզգանան թալըխ շօր ա կ՚ը՚նըմ* (Ձ): 2. Գունատ, դալուկ, դժգույն: *Թալըխ ախճիգ՚ ա* (Բ):

- Թալըխ ըղնէլ - Գունատվել, գունաթափվել: *Շօրը լըվացավ, թալըխ ընգավ* (Ձ):

ԹԱԼԸՂ *(թրք. talik)* - *տե՛ս* ԲԱԽՏ: 2. *գ.* Խնդիրք, խնդրանք: *Թաքավէրըն ասմա.- Հինչ թալըղ օ՞նիս, վէր յը՚կալ ըս* (Ձ):

- Թալըղը կըտըրէլ - *տե՛ս* Բախտը պիրիլ:

ԹԱԼԻՄ - *գ.* Դաստիարակություն, բարեկրթություն, ուսում: *...Մէր խանըմնէրան շատէրը ուրանց խուխօց լ՚ավ թալիմ ըն տըվալ...* (ՋՏ, Բ, 108):

ԹԱԼԽ - *տե՛ս* ԹԱԼԸԽ:

ԹԱԼԽԱ *(պրս. talk, արաբ. talq)* - *գ.* 1. Բարակ թել: *Էտ շօրը թալխավ հանց կարում ա, ասիս լ՚ըհա ծը՚ռք չի նի յը՚կալ* (Ձ): 2. Թունավոր օձի տեսակ: *Թալխան կ՚ումաշին կըծում ա, ըսպանում* (Բ): 3. *ած.* Շերտավոր, բծավոր: *Ըտըրան էլ հինում ա մին ք՚օհլան թալխա ծի* (Ձ):

ԹԱԼՎԱ - *տե՛ս* ԹՕՎԼԱ:

ԹԱԼՎԱՄԻՇ *տե՛ս* ԹՕՎԼԱՄԻՇ:

ԹԱԼՎԱՐ - *տե՛ս* ԹԱՌՅՆԸ[1]:

ԹԱԼՈՒԽՈՒԼ՚/ԹԸԼԸԽՈՒԼ՚ - *գ.* Ոչխարի փորոտիքի մի մասը, որ բաղկացած է ճարպի կտորներից եւ փափուկ մսից: *Խըրաված թալուխուլ՚ը ըրաղու լ՚ավ մանգան յա* (Բ):

ԹԱԽ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թախ կէնալ - *տե՛ս* Կ՚օղլը կէնալ:

- Թախ կըցընէլ - *տե՛ս* Կ՚օղլը կըցընէլ:

ԹԱԽԱԽ - *մ.* Առանց ուշանալու, նշանակված ժամին: *Տըղան ըխճըկանը խօսկ ա տամ, վէր թախախ կ՚ըլան ա* (Ձ):

ԹԱԽԿԱԹՈՒԽԿ - *տե՛ս* ԴԸԽԿԱԴԸԽԿ:

ԹԱԽԿԷԼ *(գրբ. թաղկիմ)* - *չբ. տե՛ս* Թախկուճ ըղնել:

ԹԱԽԿԷՆ - *տե՛ս* ԹԱԽԿՈՒՃ:

ԹԱԽԿԻՉ - *գ.* Խճճված մազերը սանրելու՝ մազերի թնջուկը հանող հաստ եւ իրարից հեռու ատամներով սանր: *Ըտըրա մազ՝էրը էնքան յը՞խտուտ ար, վէր սընդրրէլիս թախկիչը կօտրրից* (Ձ):

ԹԱԽԿՈՒՃ - *գ.* 1. Մազերի թնջուկ, սանրելիս սանրի վրա հավաքված մազերը: *Թախկուճը սընդրրան տ՚ուս ա օնում, թող անում, վէր մարը տը՞սնա վէչ* (Ձ): 2. Առհասարակ թնջուկ, խճճված թել՝ լար եւն: *Էտ տըղան հիշքան փօրցո՚ւմ ա, կարում չի էտ թախկուճը յը՞տ տա* (Ձ):

- Թախկուճ ըղնել/ինիլ/տը՞ռնալ - 1. Մազերը երկար չսանրելուց խճճվել՝ թնջուկ դառնալ: *Հընընըմ ա տօն, տը՞սնըմ քուրը, շօ՚րէրը ճըրրոցտած, մազէրը թախկուճ տը՞ռած, հէն ա տանը նըստած* (ՀԺՀ, V, 56): 2. Առհասարակ խճճվել, թնջուկ դառնալ (թելը, լարը եւն): *Թիլը թախկուճ ա ընգալ* (Բ):

- Թախկուճ տալ - *տե՛ս* ԹԸԽԿԸՀԱՆԷԼ:

ԹԱԽՉԱ - *գ.* 1. *տե՛ս* ԹԱԽՏ(6): 2. Վաճառասեղան: *Մին թախչա յա տինում հը-ղըցէն ղըրաղէն, առըտօր անում* (Ձ):

ԹԱԽՍԻՐ *(արաբ. taxsir)* - *գ.* Մեղք, հանցանք: *Էտ թախսիրին դ՚ուրդ՚ան ըտը-րան շէնան տ՚ուս ըն քըցիս* (Ձ):

ԹԱԽՍԻՐՔ՚ԱՐ - *ած.* Մեղավոր, հանցավոր, մեղք՝ հանցանք գործած: *Ըտի շէն չի կա, ըշտը՞ղ թախսիրք՚ար մարթ չինի* (Բ):

ԹԱԽՏ/ՏԱԽՏ *(գրբ. տախտ (աթոռ, նստարան))* - *գ.* 1. Հասարակ փայտաշեն մահճակալ: *Ըտըրա տանը իլ՚ածը մին ըստօլ ար, մին թախտ, էրկու դ՚ուբըրէթկա* (Ձ): 2. Գահավորակ, բազմոց: *Էտ տօռնը պէնըմ ա, տը՞սնըմ վը՞սկէ թախտին մին կ՚էղէցիկ ախճիգ՚ նըստած...* (ՀԺՀ, V, 18): 3. Թագավորական գահ: *Էտ կ՚օղը քըշէ-ը նի յա մընում, թաքավէրին թախտէն քըմակէն կ՚օղը կէնըմ* (Ձ): 4. Տան անկյունում կամ պատի մեջ սարքած փայտե երկար հարմարանք, որի վրա դարսում են անկողինները: *Պառավը թախ-տան մին յօրղան ա տ՚ուս ունէս, տաս էտ ըխճըկանը* (Ձ): 5. *փխբ.* Թագավորական իշխանություն: *Ըտի էլ թաքավէրին անա թախտը ինք՚ ըն օնում, ի՚ուրա՚ն ըսպանում* (Ձ): 6. *փխբ.* Լեռան, բլրի եւն վրա հարթ տարածություն: *Չօբանը յափընջին մը՞կ-նում ա, էտ սարէն թախտըմը պըրան-վըմ, քօն ինըմ* (Ձ):

- Թախտան (վէր) ըղնել - Գահընկեց լինել, իշխանությունից զրկվել: *Լօխ էլ ուրխացէն, վէր էտ թաքավէրը թախ-տան վէր ընգավ* (Ձ):

- Թախտան (վէր) քըցիլ/վէր պիրիլ - Գահընկեց անել, իշխանությունից զրկել: *Ժողովուրթը յէր ըն կէնըմ, էտ թաքավէրէն թախտան վէր քըցըմ, էտ տըղէն տինըմ թաքավէր* (ՀԺՀ, VI, 97):

- Թախտէն (յը՞րէ) կըլխէն նըստըցը-նել - *տե՛ս* Ըստօլէն (յը՞րէ) կըլխէն նըս-տըցընել: *Ի՚ուրա՚ն կընէգ՚ըն էլ վէր հըրսա-նէք ար ք՚ընամ, փըռնում, տանում ին թախտէն յէրէ կըլխէն նըստըցնում* (ՀԱԲ, 15, 129):

- Թախտէն (յըրա) նըստէլ - Գահա-կալել, թագավոր դառնալ՝ հռչակվել: *Թաքավէրին մըռնէլանը յը՞տը կուճուր տըղան մը՞ծ ախպօրը ըսպանում ա, ին-ք՚ը թախտէն նըստում* (Ձ):

- Թախտէն (յըրա) նըստըցընել - Գա-հակալ՝ թագավոր դարձնել՝ հռչակել: *Ժը-ղովուրթը էտ ըռնըխըմէ թաքավէրին ըս-պանում ըն, ի՚ուրա՚նց անա մին ա՚ուրթա՚ր մարթու թախտէն յըրա նըստըցընում* (Ձ):

- Թախտը շօռ կ՚ա՚լ - Թագավորու-թյունը կործանվել: *Կըռը՞վը ըղնում ա յէրգ՚իրը, թախտը շօռ ա կ՚ամ* (Ձ):

- Թախտը շօռ տալ - Թագավորու-թյունը կործանել: *Թաքավէրին կընէգ՚ը էտ դ՚ուշմա՚նին նըհը՞տ խօսկը մին ա ա-նում, թախտը շօռ տամ* (Ձ):

ԹԱԽՏԱԲԱ՚ՆԴ *(թրք. taxtabənd)* - *տե՛ս* ՇՈՒՇԱԲԱ՚ՆԴ (1): *...Էք՚սը թաքավէրը թախտաբա՚նդին յըրան բօլթա տամ ա ի-լ՚ալ...* (ՀԺՀ, VI, 21):

ԹԱԽՏԱԲԻԹԻ *(պրս., թրք. taxta (տախտակ) + թրք. bit (ոջիլ))* - *գ.* Առավե-լապես փայտե իրերի՝ կահույքի մեջ ապրող անթեւ միջատ: *Տօնը էն ա թախ-տաբիթավ լըցցած, կարում չի թա մին ճար անէ* (Բ):

ԹԱԽՏԱՓՈՒՇ - *գ.* 1. Եռանկյունաձեւ տանիքով կտուր, ձեղուն: *...Ծին էն ա լ՚ալ կապած հըյաթումը, թախտափու-շան լօք ա տըվալ, նըստալ ծին ու փա-խալ* (ԲՀԲ, 263): 2. Ձեղունի եւ առաստա-ղի միջի հարկը, ձեղնահարկ: *Խաղուն թախտափուշումըն ըն մը՞կնում* (Բ):

ԹԱԿ *(գրբ. թակ)* - *գ.* 1. Փայտե հաստ ձող թութ թափելու համար: *Թափչին թակավը վէր ճէղնանը թըխէս ա, չիդ-րան թօթավ լըցընէս ա* (Բ): 2. Փայտե տոփան, որով տանիքի հողը թակելով տափակացնում եւ պնդացնում են, որ-պեսզի ջուրը չանցնի: *Թակավը կըտօրը էնքան թակում ա, վէր լափ պինդի* (Բ): 3. Միս, կորկոտ եւն ծեծելու փայտե, քարե կամ երկաթե գլանաձեւ՝ գնդաձեւ հար-մարանք՝ մուրճ: *Թակը յօր ա ունէս, մէ-սը թըկէս* (Բ): 4. Ծեծ, գան: *Թակը խու-խէն օքութ ա* (Բ):

- Թակավը քըցիլ - *տե՛ս* ԹԱԿԷԼ:

- Թակ կէրած շօն - Խեղճացած՝ հնազանդ անձ: *Առաչ ա իլ՚ալ գ՚ար, մի-հէնգ՚ տը՞ռալ ա թակ կէրած շօն* (Բ):

- Թակ տալ - *տե՛ս* ԹԱԿԷԼ:

- Թակ օտէլ - Ծեծ ուտել, ծեծվել: *...Ամմա ամը՞ն դ՚ունա՚ում էլ թակ ըմ ուտէ-լիս իլ՚ալ* (ԼՂԲՔ, 271):

ԹԱԿԷԼ/ԹԱԿԻԼ *(հ.ե. *steg-)* - *նբ.* 1. Թակով խփել, հարվածներ տեղալ: *Էն-քան թակում ա, մէսը փըրթա՚ն-փըրթա՚ն ա ինա՚ում* (Ձ): 2. Ծեծել, ծեծ տալ: *Մարթը փըռնում ա կընգանը թակում, տանան տ՚ուս քըցա՚ում* (ՆԼԺԲ, 73): 3. Ջարկել, հարվածելով նվագել: *Տըմբըլաչին վէր տըմբըլան թակում ա, արչը փախչ՚ում ա* (Ձ): 4. Բախել: *Էտ տանը տ՚ունը թակում ա, տ՚ունը պէց ա անըմ մին պառավ կը-նէգ՚...* (ՀԺՀ, V, 581): 5. Ծեծելով ման-րացնել: *Կուրկուտ ա թակում* (Բ): 6. Ծե-ծելով բարակացնել, սայրը սուր դարձ-նել: *Դարյազը վէր թակիս վէչ, կարէլ չըս խօտ հարիս* (Բ):

- Թակած դօլմա - Թույլ, թուլակազմ: *Թակած դօլմա յը՞ս, խէ կարում չը՞ս էտ փա՚ղը ճըրրոցտիս* (Բ):

ԹԱԿԻԼ - *տե՛ս* ԹԱԿԷԼ:

ԹԱԿԼԱԿ - Շատ՝ բոլորի կողմից թակվող՝ ծեծվող: *Թակլակ խօխան ա-նիրը՞ս կինի* (Բ):

ԹԱԿԼԱՆ - *տե՛ս* ԹԱԿԼԱԿ:

ԹԱԿՎԷԼ/ԹԱԿՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԹԱ-ԿԷԼ-ի:

ԹԱԿՎԵԼ-ԿՈՒՏԸՐՀԱՏՎԷԼ - Շատ աշխատելուց կամ երկար ճանապարհ գնալուց խիստ հոգնել, մարմինը ջարդ-վել: *Էնքան կօրծ ա անում, լափ թակ-վում-կուտրրհատվում ա* (Բ):

ԹԱԿՎԻԼ - *տե՛ս* ԹԱԿՎԷԼ:

ԹԱԿՈՒԹՈՒԿ - *գ.* 1. Անընհատ թակե-լը՝ ծեծելը: *Էտ թակութուկան ըտրրա ի-ը՞սը յը՞խնըվում չի:* 2. *տե՛ս* ՏԸՐԸՐԴԸՄ-ՓՕՑ:

ԹԱ՚ՀԸՐ - *տե՛ս* ԹԱ՚ՀՐԸ:

ԹԱ՚ՀԸՐՍԸՋ - *տե՛ս* ԹԱ՚ՀՐԸՍԸՋ:

ԹԱ՚ՀԻՐ - *տե՛ս* ԹԱ՚ՀՐԸ:

ԹԱ՚ՀԻՐՍԸՋ - *տե՛ս* ԹԱ՚ՀՐԸՍԸՋ:

ԹԱ՚ՀՆԱ՚ՓԱՍ - *տե՛ս* ԹԱՆՉՈՒՑ:

ԹԱ՚ՀՐԸ/ԹԱ՚ՀԸՐ/ԹԱ՚ՀԻՐ/ԹԸՀԱ՚Ր *(թրք. tahar)* - *գ.* Կերպ, ձեւ, եղանակ, մի-ջոց: *Էտ էրկու փեշականի աղվէսը ա-սըմ ա թա՚հիրը* (ԼՂԲ, 362):

- Թա՚հիրը անէլ - Միջոց՝ ելք ճարել: *Մըտածըմ ա, մըտածըմ, վէր մին թըհի՚ար անէ, էծը պահէ* (ՀԺՀ, VI, 190):

- Թահրը, յօն չինիլ - Փրկության միջոց՝ ելք չլինել, անելանելի վիճակում լինել: *Էն ա ախպէրը մըռնէլիս, թահրը, յօն չօնէ, թա գ՚անքը ըզադէ* (Զ):

- Թահրին յէշած - Հանգամանքներից՝ միջոցներից կախված, ըստ հնարավորության: *Մարթը ասմա.- Մըչ ախպէր, թահրին յէշած՝ ք՚ըմանգ՚ կանիմ:*

ԹԱՀՐԸՍԸՋ/ԹԱՀՐԸՍԸՋ/ԹԱՀԻՐՍԸՋ/ԹԸՀԱՐՍԸՋ - *ած.* 1. Ելք՝ միջոց՝ հնարավորություն չունեցող, ապիկար, անկարող: *Վէր ք՚ըմանգ՚ անօղ չինի, էտ թահրըսըզ մարթը կարէլ չի խօխէնք՚ը պահէ:* 2. *փխբ.* Տգեղ, այլանդակ: *Մին թահրըսըզ կընէգ՚ ա ըզալ, իրը՝սէն յէշվում չի, էնքան կ՚էշ ա* (Զ):

ԹԱՀՐԻՆ/ԹԸՀԱՐԻՆ - *մ.* Ստեղծված իրավիճակին համապատասխան: *Կօրծը բիդի թահրին անիս* (Բ):

ԹԱՂ[1] *(գրբ. թաղ)* - *գ.* 1. Որեւէ քաղաքի՝ գյուղի առանձին մասերից յուրաքանչյուրը, թաղամաս: *Յը՝տնան էտ թաղէրը մըծըցըրալ ըն, տը՝ռալ ա մը՝ծ շէն, անըմըն էլ՝ Մը՝ծ Թաղլար* (ԱԱ, 22): 2. Քաղաքի կամ գյուղի այն մասը, որտեղ ապրում է մեկը: *Էտ մարթը քըդաքըմը ջիհում ա ուրանց թաղան մին տըղու* (Զ):

ԹԱՂ[2] *(թրք. tağ)* - *գ.* Գետնատարած բույսերի (դդումի, ձմերուկի, սեխի, վարունգի եւն) թուփը: *Խըյարին թաղէրը թըռմօշկալ ա* (Բ):

- Թաղ տալ/փըռնէլ/քըցիլ - Գետնատարած բույսերի թուփը աճել՝ ճյուղավորվել՝ տարածվել: *Բըրընին թաղ ա տուվալ, սաղ բօստանը կալալ* (Բ):

ԹԱՂ[3] *(թրք. tak)* - 1. Պատի կամարաձեւ շարված մաս, կամար: *Յը՝խծուն պատէն թաղը քանդվալ ա* (Բ): 2. *տե՛ս* ԹԱՂԲԱՆԴ:

- Թաղ տալ - 1. *տե՛ս* Թաղբանդ անէլ: 2. Գետինը թաղաձեւ փորել, շենքի հիմքի փորվածքը աջ ու ձախ ծավալել: *Բընծվրան թաղ ըն տամ, հանցու պէնդ ինի* (Բ):

ԹԱՂԱ - *տե՛ս* ՔԸՍԿԱՐԷՆՔ՚:

ԹԱՂԱՐ *(գրբ. թաղար (կավե անոթ), պրս. taqar (սափոր, կուժ)* - *գ.* Ընդեղենների չափ: *Մէլիք՚ըն ա Պուղին մին թաղար ցօրնավ մանջ ըն կ՚ամ* (Զ):

ԹԱՂԱՓ - *տե՛ս* ԹԱՓ(1):

ԹԱՂԲԱՆԴ *(պրս. tagbend)* - *գ.* Կամարաձեւ կառուցված՝ ծածկված շինություն: *Ք՚ՕՀնա շինէրըմը թաղբանդնէ շատ կա* (Բ):

- Թաղբանդ անէլ - Կամարաձեւ կառուցել՝ ծածկել: *Պատը թաղբանդ ըն անում, հանցու տըմասկան ինի* (Բ):

ԹԱՂԷԼ *(գրբ. թաղեմ)* - *նբ.* 1. Մեռելի դիակը փոսի մեջ դնելով՝ հողով ծածկել: *Էն կ՚օղլը կացած տըղան մէյդը թաղում ա, ք՚ինանամ թաքավը՝ռէն կօշտը...* (ՆԼՂԺԲ, 52): 2. Որեւէ բան հողի մեջ դնել եւ հողով ծածկել: *Վը՝սկէն ածում ա պօլիգ՚ը, թաղում* (Զ): 3. Ընկղմել, խորասուզել որեւէ բանի մեջ: *Փըռնըմ ըն ըտըրա թակում, ցը՝խումը թաղում, ցըխըփալալ անում* (Զ): 4. Մի բան կիսով չափ մտցնել հողի մեջ: *Ըստօլէք՚ը թաղում ըն, լ՚ուսին լինէք՚ը քաշում* (Բ):

- Թաղած մը՝ռալ տուս օնօղ - 1. Ճարպիկ, հնարամիտ: *Իզէն թաղած մը՝ռալ տուս օնօղ ա, կարէլ չը՝ս խանփիս* (Բ): 2. Ստահակ, ստոր մարդ: *Էտ թաղած մը՝ռալ տուս ընօղէն նըհը՝տ հունց ը՞ս հընգըրօթուն անում* (Զ):

ԹԱՂ-ԹՕՌԱԿ - *գ.* Ամբողջ հարեւանները, բարեկամները, ծանոթները, ընկերները: *Թաղ-թօռակ հըվաքվում ըն, ք՚ըմանգ՚ անում, Հանշիմը տօնը շինում ա* (Զ):

- Թաղում-թուռակում պըհէլի չի - *տե՛ս* Ըվլըդըղում պըհէլի չի:

ԹԱՂԼԷԹ - *տե՛ս* ՏԸՆԱՋ:

ԹԱՂԿԱՊ - *տե՛ս* ԹԱՂԲԱՆԴ:

ԹԱՂՎԱԾ - *ած., գ. փխբ.* Անօրեն, անզգամ (մարդ): *Էտ պիծի թաղվածը յէր ա կէնում, տըրանց հէտան ք՚ունում* (ՀԺՀ, V, 324):

ԹԱՂՎԱՍԿ - 1. *տե՛ս* ԹԸՂԱՂՈՒՍԿ: 2. *տե՛ս* ԹԱՂՎԱԾ:

ԹԱՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԱՂԷԼ-ի:

ԹԱՂՈՒՂՏԷՔ՚ - *գ.* Մեռելին թաղելու համար քահանային տրվող վարձ: *Ղէրըն էլ ճօկ դէր ար, մինչը՝վ վէր թաղուղչէք՚ը տամ չին, թօղում չար մը՝ռալը տուս օնին* (Զ):

ԹԱՄԱԴԱ *(վրաց. tamada)* - *գ.* Ուրախության կամ տխրության սեղանը ղեկավարող անձ, սեղանապետ: *Սափարյան Սուրիկը լ՚ավ թամադա յա իլալ* (Բ):

ԹԱՄԱԴՕԹՈՒՆ - *գ.* Սեղանապետ լինելը, սեղանապետություն: *Թամադօթունը ամմէն մարթու պէն չի* (Զ):

ԹԱՄԱՀ *(արաբ. tama, պրս. tāma, թրք. tamah)* - 1. *տե՛ս* ԸՇԿԸԾԸԿՕԹՈՒՆ: 2. *տե՛ս* ՀԱՍՐԱԹ:

- Թամահ անէլ/ըղնէլ - Զգտել ունենալ, փափագել: *Թամահ ըրէն փուլէն, ախճիգ՚ը տըվէն քըչալէն* (Զ):

- Թամահը զօռ անէլ - Ագահությունից՝ աչքածակությունից դրդվել: *Թամահը զօռ ա անում, էտ տըղան վը՝սկէ թանմքըն ա յօր օնըմ...* (ՀԺՀ, V, 74):

- Թամահը քըցիլ - Մեկին շահագրգռել, ագահության մղել: *Թամահը քըցէցէն, էտ տըղան թաքավէրին ծին կ՚ուղացավ* (Զ):

ԹԱՄԱՀՔ՚ԱՆ - *տե՛ս* ԹԱՄԱՔ՚ԱՆ:

ԹԱՄԱՀՔ՚ԸՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԱՄԱՔ՚ԸՐՕԹՈՒՆ:

ԹԱՄԱՄ *(արաբ. tamām, թրք. tamam)* - 1. *ած.* Ողջ, ամբողջ: *Թամամ աշխարքը սօվ ա ընում* (Զ): 2. Իսկական, կատարյալ: *Ըտըրան էլ ինըմ ա մին կընէգ՚, մին տըղա, ճօխտըն էլ՝թամամ կ՚իժ* (Զ): 3. *մ.* Լրիվությամբ, ամբողջովին: *Էտ մարթը նՕք՚ԱրնՈՒն հախկընը էլ չի թամամ տաս...* (ՀԺՀ, V, 296):

- Թամամ խօսկը էշին կասին - Ասում են նրանց, ովքեր չեն կռահում իրենց ուղղված ակնարկի՝ անուղղակի խոսքի բուն իմաստը:

ԹԱՄԱՇԱ - *տե՛ս* ԹԸՄԱՇԱ:

ԹԱՄԱՇՉԻ - *տե՛ս* ԹԸՄԱՇՉԻ:

ԹԱՄԱՐՋՈՒ - *տե՛ս* ՀԱՍՐԱԹ:

ԹԱՄԱՔԱՐ - *տե՛ս* ԹԱՄԱՔ՚ԱՐ:

ԹԱՄԱՔԸՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԱՄԱՔ՚ԸՐՕԹՈՒՆ:

ԹԱՄԱՔ՚ԱՐ/ԹԱՄԱՀՔ՚ԱՐ/ԹԱՄԱՔԱՐ *(պրս. tamakyar, թրք. tamahkār)* - *ած. տե՛ս* Աշկը ծակ:

ԹԱՄԱՔ՚ԸՐՕԹՈՒՆ/ԹԱՄԱՀՔ՚ԸՐՕԹՈՒՆ/ԹԱՄԱՔԸՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՇԿԸԾԸԿՕԹՈՒՆ:

ԹԱՄԲԱԼ - *տե՛ս* ԹԱՄԲԱԼ:

ԹԱՄԲԱԼ/ԹԱՄԲԱԼ *(թրք. tenbel)* - *ած.* 1. Գործից խուսափող, ծույլ, անբան: *Տահանք մինը մինան թանմբալ ըն ընում...* (ՆԼՂԺԲ, 89): 2. Դանդաղաշարժ, դանդաղընթաց: *Մուխանէն էլ ինում ա մին կաղլէգ՚ յը՝զնը, մին էլ մին թանմբալ էշ* (Զ):

- Թըմբալին հը՝տէ ամմէն օր կ՚իրանկ՚ի յա - Ծույլ՝ անբան մարդը շաբաթվա բոլոր օրերին էլ հանգստանում է:

ԹԱՄԲԱՀ *(արաբ. tenbih)* - *գ.* Պատվեր, հանձնարարություն: *Ըտըրա թանմբահը դանրգին կարում չի վըխտէն կըդարէ* (Զ):

- Թանմբահ անէլ - Պատվիրել, հանձնարարել: *Մին օր էլ կընգանը թանմբահ ա անում, վէր էտ տըղէն քըշէրը ըսպանէլ տա* (Զ):

ԹԱՄԲԱՔ՚Ի *(պրս. tenbakyu, թրք. tömbeki)* - *տե՛ս* ԹՈՒԹՈՒՆ:

ԹԱՄԲԻ - *գ.* Խաղատեսակ, որի ժամանակ մի ոտքը բարձրացրած՝ վազում են՝ մյուսներին խփելու համար. ում կարողանում են խփել, նա է ստանձնում խփողի դերը: *Թանմբին լանգաթ խաղ ա* (Բ):

- Թանմբի տալ - 1. Այդ խաղը խաղալ: *Խօխէնք՚ը թանմբի յընն տամ* (Բ): 2. *փխբ.* Չարաճճիություն անել: *Էտ խօխան սաղ օրը թանմբի յա տամ, մօրը չըրչարում* (Զ): 3. *փխբ.* Փախչել, ծլկել: *Թօրքէրը էտ վէր տը՝սէն, թանմբի տըվէն* (Բ):

ԹԱՄ-ԹԱՆ(Ջ)Ա/ԹԱՓ-ԹԱՆ(Ջ)Ա - *ած.* Բոլորովին չօգտագործած՝ նոր: *Մը^հէտ Պըլըպուղին, թամ-թանգա չըմըշկնէն կ'է-ցած, մին թաղավ ք'ինալիս ա ինիս* (ԼՂԲ, 394):

ԹԱՄԹԱՄԱ - *տե՛ս* ՀՈՒՔ'ԸՊԱՀՈՒՍ:

ԹԱՄ-ԹԱՄՈՒՋ/ԹԱՓ-ԹԱՄՈՒՋ - *տե՛ս* ԹԱՄՈՒՋ-ԹԱՔ'ՈՒՋ (1):

ԹԱՄԻՋ - *տե՛ս* ԹԱՄՈՒՋ:

ԹԱՄՈՒՋ - *տե՛ս* ԹԱՄՈՒՋ:

ԹԱՄՈՒՋ/ԹԱՄՈՒՋ/ԹԱՄԻՋ *(արաբ., թրք. temiz, պրս. tāmiz)* - *ած., մ.* 1. Կեղտից զերծ, ոչ կեղտոտ: *Յը^խտուտ շօրէ-րը հանում ա, լըղանում, թամ'ուզ շօրէրը կ'ը^նում, տը^ռնըմ մին դաշանգ' ախ-ճիգ'* (Ջ): 2. Ջուտ, անխառն, մեջը այլ նյութեր չխառնած: *Իմ մուտանաս թա-մ'ուզ վը^սկէ յա* (Ջ): 3. Օրինավոր, արդար, ազնիվ, պարկեշտ: *Թամ'ուզ մարթը թամ'ուզ կօրծ կանէ* (Բ): 4. Անբիծ, անարատ: *Սը^րտըտ թամ'ուզ ք'ինի Ըստըծու վը^ննը, հանցու վը^ղէն տակէն թիթէվ ը-նիս* (ՆԱԲ, 127): 5. Վճիտ, ջինջ, հստակ: *Հանդրանթ թամ'ուզ ախպ'ուրնէ շատ կա* (Բ): 6. *մ.* Ամբողջովին, կատարելապես: *Շատ մէծ դօխտուր ա. ի'ուրան փէշակը թամ'ուզ գիդըմ ա* (ՋՏ, Բ, 8):

- Թամ'ուզ ծըրքատար - Ազնիվ, արդար (մարդ): *Թամ'ուզ ծըրքատար հարթ-նը լօխճին տուր կըկ'ա* (Բ):

- Թամ'ուզ սըրտավ - Անկեղծորեն, առանց հետին մտքի: *Էտ մարթը հ'ուր հը^-տէ հինչը անում ար, թամ'ուզ սըրտավ ար անում* (Ջ):

- Թամ'ուզ տ'ուս կ'ալ - Արդար ճանաչ-վել: *Սուդ ըն անում, էտ կընէգ'ը թամ'ուզ ա տ'ուս կ'ամ* (Ջ):

- Թամ'ուզ քաշ - Որեւէ բանի զուտ քաշը՝ առանց տարայի եւ փա-թեթավորման: *Ա'բրանն տ'ուս ըն կ'ամ, թամ'ուզ քաշը տը^ռնըմ ա հէնգ' կիլօ* (Ջ):

ԹԱՄՈՒՋ-ԹԱՔ'ՈՒՋ - *ած.* 1. Բոլորովին կեղտ չպարունակող, շատ մաքուր: *Ք'ը-նում ա թամ'ուզ-թաք'ուզ յըրդընդ'ոշակ պիրում, էտ դունաղէն հը^տէ տը^ղ քըցում* (Ջ): 2. Շատ մաքրասեր, մաքրակենցաղ: *Ըտըրանք շատ թամ'ուզ-թաք'ուզ ժըդո-վուրթ ըն, տօնը թամ'ուզ, լ'ըհա վէր յը^ղ վէր ածիս, կըհըվաքվէ* (ԱԱ, 79):

ԹԱՄՔ - *տե՛ս* ԹԱՄՔ':

ԹԱՄՔԻԼ - *տե՛ս* ԹԱՄՔ'ԻԼ:

ԹԱՄՔ'/ԹԱՄՔ *(գրբ. թամբ)* - *գ.* Ձիու, մասամբ նաեւ ջորու եւ էշի մեջքին դրվող նստելու հարմարանք՝ հեծյալի համար, թամբ: *Թէվանը խաբարը վէր ըս-կանում ա, իլբըհա'ալ թամք'ը տինում ա ծիյին յըրա, նըստում, հըղէ ինում* (Ջ):

- Թամք'ը տինիլ յըրան, քըշիլ - Մեկին լիովին իրեն ենթարկել: *Կընէգ' կա՝ թամ-ք'ը տիրած մարթին յըրա, քըշում ա* (Բ):

ԹԱՄՔ'ԻԼ/ԹԱՄՔԻԼ *(գրբ. թամբեմ)* - *նբ.* 1. Թամբը դնել ձիու՝ ջորու՝ էշի վրա եւ ամրացնել: *Տըղան պիրում ա էրկու ծի թամքում, ճանապար ըն ըղնում* (ՀԱԲ, 15, 115): 2. *փխբ.* Իր կամակատարը դարձնել: *Մին ամսումը էտ հարթնը տընընցուց լօխճին թամք'ում ա* (Ջ):

ԹԱՅ *(պրս. tāy, թրք. tay)* - *գ.* 1. Հասակակից, միեւնույն տարիքի: *Սուղումուն դայուն թայ շէնումը մարթ չի կա, ինք'ըն ա ամմէնապառավը* (Ջ): 2. Ջույգից յուրաքանչյուրը: *Մարյանէն չըմօշկըն էլ վը^սկի յա իլա'ալ, մին թայըն ընգալ ա կ'է-տը, յէր կալալ, ք'ինացալ...* (ՀԺՀ, VI, 78): 3. Կշեռքի նժարներից յուրաքանչյուրը: *Օսէփը կատուն տընում ա քըշըռքէն մին թային, էն մին թային էլ էրկու կիլ-վանուց քարըն ա տընում* (ՆԱԲ, 125): 4. Չափ, հավասար, համապատասխան: *Մարը ասմա.- Մունք ընդրանց թայ չընք, ընդահանք շատ ըն հարուստ* (Ջ): 5. Բեռան երկու մասերից յուրաքանչյուրը: *Էշին պէռնանը թայը ծըռում ա* (Բ):

- Թայ անէլ/շինիլ - Մեկի կամ մի բանի հետ համեմատել՝ հավասար համարել: *Խէ յը՞ս ինձ ք'ը^գ նըհը^տ թայ ա-նըմ...* (Ջ):

- Թայ ինիլ/տը^ռնալ - Մեկի կամ մի բանի հետ համեմատվել՝ հավասարվել: *Իգէն մըհէնգ' հըրուստացալ ա, շէնին համփոցը թայ տը^ռալ* (Ջ):

ԹԱՅԱ *(թրք. taya)* - *գ.* 1. Խոտի մեծ կույտ՝ դեզ: *Կուղանում ըն, մին թրյու մաչ պէնում, տինում ըտէղ* (ՀԱԲ, 15, 48): 2. Ընդհանրապես մեծ կույտ՝ դեզ: *Պիրում ա էտ փանդին թայան նի կըցընում, փախ-չ'ում* (Ջ):

- Թայա տալ - 1. Խոտը իրար վրա ածելով՝ դեզ կազմել: *Խօտը հարում ըն, է-շավ կըրում, տանը քըշտէն թայա տամ* (Բ): 2. Մեծ քանակությամբ հավաքել՝ կուտակել՝ դարսել: *Ղըմիշ չի անում, թա էն թայա տուված փօղան խարջի* (Բ):

ԹԱՅԱՐ - *տե՛ս* ԿԱՐՔԷՆ:

ԹԱՅԴԱԾ *(թրք. taydaš)* - *տե՛ս* ԹԱՅ (1, 4):

ԹԱՅԴԱԾՇԱՂ - *ած.* Մեկ ամորձի ունեցող, մեկ ձվանի: *Թայդաշշաղ վը^րոց էլ ա ինում* (Բ):

ԹԱՅԴԻ - 1. *ած.* Շտապ, անհետաձգելի: *Թայդի կօրծը մարթին ամմէն հինչա կըքըցի* (Բ): 2. *մ.* Շտապով, արագորեն, փութով: *Պիրում ա թայդի կըպօ-տում իլածի-չիլածը, նի տամ ըրբան, ք'ի-նամ* (Ջ):

- Թայդի ըղնէլ/կ'ալ - Շտապել, աճապարել, փութալ: *Թայդի յըն ընգնըմ գ'ա'բին նըստըմ, վը^ր շ'ուտ հըսնին* (ԼՂԲ, 326):

- Թայդի կօխած մօթալ - Անորակ կատարած գործ: *Հինչ կօ՞րծ, թայդի կօ-խած մօթալ ա, լ'ըհա ընդի կըլխըրնան ռադ ըն ըրալ* (Ջ):

- Թայդի տալ - Շտապեցնել, արագացնել, շուտափույթ անելու դրդել՝ մղել: *Էտ Մէլիք'-Շահնազարը թայդի ա տամ, Պըլը-Պուղին թա՝ ըսպասէ, իփ'ած չի...* (ՀԱԲ, 15, 140):

ԹԱՅԴԻ-ԹԱՅԴԻ - *տե՛ս* ԹԸՅԴԸ-ԹԱՅԴԻ:

ԹԱՅԸԹՈՒԾ/ԹԱՅ-ԹՈՒԾ *(թրք. tay-tuš)* - *տե՛ս* ԹԱՅ (1, 4):

ԹԱՅԹՈՒԹԱՆ - *գ.* Գրաստը բարձելիս բեռան հակառակ կողմին հենած փայտե ձող: *Թայթութանը տէմ ա տամ, էտ փանդը լօխ պէռնում ծիյին* (Ջ):

ԹԱՅ-ԹՈՒԾ - *տե՛ս* ԹԱՅԸԹՈՒԾ:

ԹԱՅԻՆ[1] - *տե՛ս* ԸՌՕՃԻԳ':

ԹԱՅԻՆ[2] - *տե՛ս* ԿԱՐՔԷՆ: *...Կըմը^ռ-նիմ ջանիլ-ջիվան, մին թային վանթան չօնիմ* (ԼՂԲ, 19):

ԹԱՅԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թայիշ իլածի - *տե՛ս* ԱՆԻԾԱԾ: *Էտ թայիշ իլածը մօրը վըսկը^ղանը կ'ուղա-նում ա, ծախում* (Ջ):

ԹԱՅՉԱ - *գ.* 1. Մազից՝ բրդից պատրաստած պարկ՝ ջվալ: *Թայչօցավ տը-կօղէն ար պիրում, ըտը^ղ ծախում* (Ջ): 2. Ուռենու ճյուղերից հյուսած մեծ կողով: *Խաղուն քաղում ըն, ածում թայչան* (Բ):

ԹԱՅՍԸՋ *(թրք. taysiz)* - *ած.* Ընկերակցին՝ լծակցին կորցրած: *Թայսըզ մարթին օրը սը^վ կինի* (Ջ):

- Թայսըզ ըրբան տը^ղ չի հըսնէլ - Ընկերակից՝ լծակից չունեցողը արդյունքի չի հասնի:

ԹԱՅՓԱ *(արաբ. tayfe, թրք. tayfa)* - *գ.* 1. Ոչ արդար՝ ոչ ազնիվ նպատակի համար իրար հետ համախմբված մարդկանց խումբ: *Էտ կ'օղը ի'ուրան թայփան հըվաքում ա, քըշէրը ք'ինամ էտ շէնը* (Ջ): 2. *անրգ.* Տոհմ, գերդաստան: *Ըտը-րանց թըյփան ախճիգ' ի'ուզիլի չի* (Բ):

ԹԱՅՓԱԲԱՋ - *ած.* Թայֆաներ ստեղծող եւ միմյանց հակադրող: *Ըշ-խարքէս տօնը քանդ'ողը թայփաբազ մարթիք'ըն ըն* (Բ):

ԹԱՆ[1] *(գրբ. թան)* - *գ.* 1. Մածունի հարածը, ջրով հարված եւ կարագը հանված մածունի՝ սերի մնացորդը: *Թանը տըվէն շընէրէն, սը^վ չամէնչը խընէ-ռէն...* (Ջ): 2. *փխբ.* Հալած կարագի՝ յուղի

մնացորդը՝ նստվածքը: *Յը՛ղը հա՛լըմ ըն, քամըմ, թանը տէն ածում* (Բ):

- Թանէն թըթо ասէլ - *տե՛ս* Էշին չու ասէլ:

- Թանը անծամ կօլ տալ - *հեգն.* Առողջ՝ առույգ լինել: *Կօլին սագ տըղամարթ ա. թանը անծամ կօլ ա տամ* (Բ):

- Թան ընգած մուկուն - 1. Ամբողջությամբ թրջված: *Թօռը նի յա ունէս, տը՛ղ հանց թիրչըվիս ըմ, տըռաս ըմ թան ընգած մուկուն* (ՀԲ, 358): 2. Ամոթահարությունից կուչ եկած, խայտառակված, ընկճված: *Ա՛հա՛ն ըտըրան էնքան թըքըթօ՛հմա՛թ ըն տաս, վէր տըռաս ա թան ընգած մուկուն* (Ձ):

- Թան ծըմէլա ըղնէլ - Թուլանալ, ուժասպառ լինել: *...Տիյէրան վէր ըն քաշում, էնքան թակում, վը՛ր թան ծըմէլա ըյնո՛ւմ ա* (ՆԼՂԺԲ, 90):

- Թան ծըմէլա քըցիլ - Թուլացնել, ուժասպառ անել: *Հարթնը, հինչ վը՛ր հըսնում ա, յըրա յա անում ըսկէսուրին անա տամ, թակում, թան ծըմէլա քըցո՛ւմ* (ՀԺՀ, VI, 232):

- Թան չըս տը՛սալ, թընըթաթախ աման էլ չը՞ս տը՛սալ - Ասում են տվյալ գործին՝ իրավիճակին բոլորովին անտեղյակ մարդուն:

- Թան տը՛ռնալ - 1. Ճերմակել, սպիտակել: *...Մազէրը սիպտակալ ա, թան տը՛ռալ...* (ՀԺՀ, V, 156): 2. Գունատվել, սփրթնել: *Կախան նը՛հը՛տ սըփըրթնա՛լ ա, թան տը՛ռալ* (Բ): 3. Ոչ պարզ՝ պղտոր դառնալ (հեղուկների մասին): *Խը՛ղճը մըրսալ ա, կ՚ո՛ւզը թան ա տը՛ռալ* (Բ):

ԹԱՆ[2] - *տե՛ս* ԹԱՅ(2):

ԹԱ՛ՆԱԳ *(գրբ. թին (խաղողի կորիզ եւ կեղեւ), պրս. tane (ծառի բուն)* - *գ.* Խաղողի որթ՝ վազ: *Էտ վըխտանց էլ խաղվէն թա՛ննագ՚նէն մընացալ ըն ըտի ծըռմըծօռ* (ԱԱ, 62):

ԹԱՆԱԿ/ԹԱՆԱՔ *(գրբ. թանաք)* - *գ.* Գրելու համար գործածվող որեւէ ներկանյութի ջրային լուծույթ: *Միհէնգ՚ էլ թընակավ կ՚իրօղ չի կա* (Բ):

ԹԱՆԱՎ/ԹԱՆՕՎ - *գ.* Թանով սպաս, թանապուր: *...Կընէգ՚ըն էլ թանավ ա իփում, տամ ո՛ւրա՛ն* (ՀԺՀ, VII, 322):

ԹԱՆԱՔ - *տե՛ս* ԹԱՆԱԿ:

ԹԱ՛ՆԲԱ՛ԹՈ՛ՒՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թանբա՛թո՛ւն ինիլ - Չքվել, կորչել, անհետանալ: *Սադանան էտ կընգանը անըմը վէր ըսկանում ա, էտ ծըմական թանբա՛թո՛ւն ա ինո՛ւմ* (Ձ):

ԹԱ՛ՆԲԱ՛ԼԷԹ - *գ.* Վաճառականի բեռներ: *Թա՛ջիրը թանբա՛լէթը էտ մարթին պահ ա տամ, ինք՚ը յը՛տ տը՛ռնում* (Ձ):

ԹԱՆԳ - *տե՛ս* ԹԱ՛ՆԳ:

ԹԱ՛ՆԳ/ԹԱՆԳ *(գրբ. թանկ, թանգ)* - *ած.* 1. Բարձր գին ունեցող, շատ արժեցող: *Բըզարըմը մըհէնգ՚ ամմէն հինչը թա՛ննգ՚ ա* (Բ): 2. Շատ ծախս պահանջող: *Տօն շինիլը թա՛ննգ՚ պէն ա, լօխ չըն կարում* (Բ): 3. *տե՛ս* ԹԸՆԳԱՆՈՒՑ: 4. Բարձր (գնի՝ արժեքի մասին): *Խընձո՛ր տանում ա քաղաքը, թա՛ննգ՚ կ՚ինավ ծախում* (Բ): 5. *փխբ.* Սիրելի, հոգեհարազատ: *Ամմէն մարթու խօխա ո՛ւրա՛ն հէտէ թանգ՚ ա* (Ձ):

- Թա՛ննգ՚ան իժժանը կա վէչ - Թանկ ապրանքը ավելի որակյալ է, հետեւաբար եւ ավելի ձեռնտու, քան էժանը: *Ծախողը ասմա.- Թա՛ննգ՚ա՛ն իժժանը կա վէչ, ինք՚ կալ՚, փուշմընական չըս* (Ձ):

- Թա՛ննգ՚ կըրակէն կ՚ինը - *տե՛ս* ԹԱՆԳ՚ ՈՒ ԿԸՐԱԿ:

- Թա՛ննգ՚ նըստէլ - 1. Շատ ծախս պահանջել: *Էտ հըրսանէք՚ը ըտըրա յըրա թա՛ննգ՚ նըստից* (Բ): 2. Որեւէ բանի համար մեծ փոխհատուցում տալ: *Էտ վը՛խճարը կ՚ուղանալը ջըհիլնուն յըրա շատ թա՛ննգ՚ ա նըստէս* (Ձ): 3. Անախորժ հետեւանքներ ունենալ: *Խըմած կ՚ամ ա շէնը, կըռը՛կ քըցո՛ւմ, թա՛ննգ՚ ա նըստում ո՛ւրա՛ն յըրա* (Ձ):

ԹԱ՛ՆԳ՚-ԹԱ՛ՆԳ՚ - *մ.* Բարձր գնով: *Էտ ապըրանքը թա՛ննգ՚-թա՛ննգ՚ ծախում ա, մին տօն ինք՚ օնում* (Ձ):

- Թա՛ննգ՚-թա՛ննգ՚ ըրվալ - Ուշ-ուշ՝ հազվադեպ երեւալ՝ հանդիպել: *Թէ՛մուր, թա՛ննգ՚-թա՛ննգ՚ ըս ըրվամ, հինչ ա՞ պըտահալ* (Բ):

ԹԱՆԳ՚ ՈՒ ԿԸՐԱԿ - *ած. տե՛ս* Կըրակու կ՚ին: *Թա՛ննգ՚ ու կըրակ բազար ա, վէշ մինը կարում չի առըտօր անէ* (Բ):

ԹԱՆԷՉԿ - *տե՛ս* ԹԱՆ[1](2):

ԹԱՆԹԱԼՕՇ - *տե՛ս* ԹԸՆԹԸԼՕՇԻ:

ԹԱ՛ՆԹԱ՛ՆԱ *(արաբ. tantane (մեծ շքեղություն, հանդիսավորություն), թրք. tantana)* - *գ.* Մեկին ընդունելու՝ մի բան անելու համար մեծ պատրաստություն: *Թաքավէրը մը՛ծ թա՛ննթա՛ննավ ընդըրա առաշկընն ա տո՛ւս կ՚ամ* (Ձ):

ԹԱՆ-ԹԱՑԱՆ - *տե՛ս* ԹԱՑԱՆ:

- Թան-թացան չինիլ - Աղքատ՝ ընչազուրկ լինել: *Խը՛ղճը հինչ ա՞նէ, թան-թացան չօնէ, խօխէնք՚ը կարում չի պահէ* (Բ):

ԹԱ՛ՆԹՈ՛ՒԼ *(գրբ. թաթուլ)* - *գ.* 1. Կենդանիների (շան, կատվի, արջի եւն) առջեւի ոտքերի թաթը: *Արչը վէր թընթո՛ւլա՛վը տըրըքցընէս ա, կ՚ո՛ւլին աշկէրը տո՛ւս ա տըռնաս* (ԱԱռ, 15): 2. *անրգ.* Մարդու թաթ: *Թա՛ննթո՛ւլըտ կօտըրած ա՞, խէ կօրծ չը՞ս անում* (Բ):

ԹԱՆԹՈՒԿ - *ած.* Անճարակ, անշնորհք, ձեռքից բան չեկող: *Թանթուկ հարթնը ըսկէսվօրը աշկէն պը՛լօր կինի* (Ձ):

ԹԱՆԽԱ *(պրս. tānkhāh)* - *գ.* 1. Որեւէ գործ ձեռնարկելու համար անհրաժեշտ գումար՝ դրամագլուխ: *Էտ թանխան տամ ա, տօնը մին ամսումը շինիլ տամ* (Ձ): 2. Համարժեք, հավասար: *Ջավէնը ասմա.- Խա՛չօ, իմ էծըս քու էրկու կըվէտ թանխա յա* (Ձ):

ԹԱՆՁԸՐ - *տե՛ս* ԹԱ՛ՆՁԸՐ:

ԹԱ՛ՆՁԸՐ/ԹԱՆՁԸՐ/ԹԱ՛ՆՁԻՐ *(գրբ. թանձր)* - *ած.* 1. Ոչ ջրիկ, ջրալիությունը պակաս: *Թա՛ննձըր խօրա՛գը ածում ա ամանը, տինո՛ւմ մարթին ըռըչին* (Բ): 2. Խիտ բուսած, թավ: *Մարտակէրտա ծըմըկնէն թա՛ննձըր ծըմըկնէ յա* (Բ): 3. *փխբ.* Կարեւոր, լարված: *Բադարաքի՛ն թանձըր վախտը Պուդին մին թա՛զի յա փըռնում, ք՚ընում Մէլիք՚ին տօնը* (ՆԱԲ, 132):

ԹԱ՛ՆՁԻՐ - *տե՛ս* ԹԱ՛ՆՁԸՐ:

ԹԱՆՁԻՓ - *տե՛ս* ԹԱ՛ՆՁԻՓ:

ԹԱ՛ՆՁԻՓ/ԹԱՆՁԻՓ *(թրք. tənzif)* - *գ.* 1. Թույլ ու նոսր գործվածքով ցանցկեն բամբակյա կտոր, որ հատկապես գործածում են որպես վիրակապ: *Դօխտուրը ըտըրա ծը՛ռքը թա՛ննձիփավ պըտըտօրում ա, հըղէ տինո՛ւմ* (Ձ): 2. *արհմ.* Բարակ ու ցանցառ կտոր՝ շոր: *Էտ թա՛ննձիփը հինչ ա՞, վէր կ՚ը՛ցալ ըս* (Բ):

ԹԱՆՁԻԳ՚ - *տե՛ս* ԹԱՆՁԻՆ:

ԹԱՆՁԻԼ/ԹԸՆՁԱԼ *(գրբ. թանչեմ)* - *չբ. տե՛ս* Թանչին տալ:

ԹԱՆՁԻՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թանչին տալ - Շնչասպառ հեւալ: *Տըղան թանչին տալավ հըսնում ա պալատը, թաքավէրին լօխ նաղլ անում* (Ձ):

ԹԱՆՁՈՒՑ/ԹԱՆՁՕՑ/ԹԸՆՁՕՑ - *գ.* Հեւք, հեւալը, թանչելը: *Ախճիգ՚ը ծիյին թանչուցը վէր տը՛սնում ա, մէխկընն ա կ՚ամ* (Ձ):

- Թանչուցը ըղնէլ/յը՛ր ինիլ - *տե՛ս* Թանչին տալ:

- Թանչուց տալ - *տե՛ս* Թանչին տալ:

ԹԱՆՁՕՑ - *տե՛ս* ԹԱՆՁՈՒՑ:

ԹԱՆՈՒՏ *(գրբ. թանոտ)* - *ած.* Թան քսված, թանով կեղտոտված: *Կատուն կ՚ամ ա, էտ թանուտ ըմընէք՚ը լո՛ւզ տամ* (Ձ):

ԹԱՆՕՎ - *տե՛ս* ԹԱՆԱՎ:

ԹԱՇԱԽՈՒՍ - *տե՛ս* ՇԷՆՔ՚-ՇԸՆՕՐՔ: *Ըտըրա թաշախուստը վէրը ա՞, վէր օգ՚ալ ըս* (Ձ):

ԹԱՇԱԽՈՒՍԻՆ - 1. *ած.* Գեղեցիկ, ամեն ինչ տեղը տեղին, անթերի: *Դո՛ռ՚ո՛ւց Ա՛րիվիատը թաշախուստին կընէգ՚ար* (Բ): 2. *մ.* Փառավոր կերպով: *Կ՚ամ ըն*

տը՝սնըմ վէգիրը թաքավէրին թախտէն թաշախուստին նըստած (Զ):

ԹԱՇՆԱ - *տե՛ս* ԹԱՉԻՆԱ:

ԹԱՉԻՆԱ/ԹԱՇՆԱ/ԹԱՇՆԱ - *մ. տե՛ս* Թա չէ (2):

ԹԱՇՆԱ - *տե՛ս* ԹԱՉԻՆԱ:

ԹԱՋԻՐ - *տե՛ս* ԹԱՋԻՐ:

ԹԱՋԻՐ/ԹԱՋԻՐ *(թրք. tačir)* - *գ.* Խոշոր վաճառական՝ առեւտրական: *Քը՛նում ա, շօռ կ՚ամ, տէսնում՝ մին իրէքչօրս թաջիր օղտէրը պէռնում ըն...* (ՀԱԲ, 15, 46):

ԹԱՋԻՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԸՋԸՐՕԹՈՒՆ:

ԹԱՌ[1] - *տե՛ս* ԹԱՌ[1]:

ԹԱՌ[2] - *տե՛ս* ԹԱՌ[2]:

ԹԱՌ[3] - *տե՛ս* ԹԱՌ[3]:

ԹԱՌ[4] - *տե՛ս* ԹԱՌ[4]:

ԹԱՌ[1]/ԹԱՌ[1] *(պրս. tar (նվագարանի լար))* - *գ.* Արեւելյան լարավոր երաժշտական գործիք՝ թառ: *Աշըղը թառը յօր ա ունէս, ըսքըսէս ածէլը* (Զ):

- Թառը սիմին փըռնել - Համերաշխ լինել: *Ըտըրա թառը կընգանը սիմին փըռնում ա* (Բ):

- Թառը տՕշին օնէլ - 1. Թառ նվագել: *Աշըղը վէր թառը տՕշին ա օնում, լօխ լանց ըն ինում* (Զ): 2. Շատախոսել: *Հինչ ը՞ս թառը տՕշիտ կալանլ, սուս ըրա* (Զ):

ԹԱՌ[2]/ԹԱՌ[2] *(գրբ. թառ, հ.ե. *tṛsi̯ā-)* - *գ.* 1. Հորիզոնական դրված փայտե ձողեր, որոնց վրա հավերը թառում են: *Հըվէրէն թառը պէցուր ա ինում, աղվէսը կարում չի պիցըրանա* (Զ): 2. Սայլի առջեւի եռանկյունաձեւ մասը: *Ըրբաչին թառին նըստում ա, շուվշուվալավ քՕինամ* (Զ): 3. Սայլի թափքի վերին երկու հորիզոնական ձողերից յուրաքանչյուրը: *Ցըկատավ թըխում ա, ըրբէն աչի թառը կօտըրում* (Զ): 4. *փխբ.* Ջառիվայր, վերելք: *Էտ թառավը ծիյը՝նը տիժէր ըն պիցըրանում* (Բ): 5. *փխբ.* Նստելու բարձրադիր տեղ: *Հինչ ը՞ս թառին յըրա ցէց կացալ, խէ քըշանում չըս* (Զ):

- Թառ անէլ - 1. Թառել տալ: *Հավէրը թառ ա ըրալ* (Բ): 2. Բարձր տեղ նստեցնել: *Խուխէն թառ ա անում* (Զ):

- Թառ ինիլ - 1. Թառի վրա նստել՝ թառել: *Հավէրը թառ ըն իլալ* (Բ): 2. Բարձրադիր տեղում նստել: *Շօնը քօլէն տակէն պըրանվում ա, վէրցակըն էլ ծառէն թառ ա ընում* (ՆԱԲ, 69):

- Թառ պահէլ - Լավ պահել՝ խնամել: *Խօրթ մարը էտ խօնցը թառ ա պահում* (Զ):

- Թառ տալ - 1. Բարձր տեղից կախել: *Լըվացը թառ ա տամ քուդան* (Բ): 2. Գործը վերջացնել: *...ԷքՕուց միջի յըք ընական, հանցու վէր արտէրը մի էրկու օրըմը թառ տաք, վէր վըղրհանէ վէչ* (ՀԲ, 363):

ԹԱՌ[3]/ԹԱՌ[3] *(պրս. tur (մթագույն))* - *ած.* Բաց երկնագույն, կապույտ, կապուտակ: *Թառ շՕրէր ա կ՚ը՝ցալ* (Բ):

ԹԱՌ[4]/ԹԱՌ[4] - *գ.* Ձյան կույտ: *Ամ՚ենը մընամ ա թառին տակէն, մը՝ռնում* (Զ):

ԹԱՌԱՆՉ/ԹԱՌԱՉ *(գրբ. թառանչ, թառաչ)* - *գ.* Հոգոց, խոր հառաչանք: *Ը՝տըրա թառանչը թաքավէրին սը՝րտը կըկըղցընում ա* (Զ):

- Թառանչ քաշիլ - Հոգոց հանել, հառաչել: *Ըստը՝ղ էտ թաքավէրը սուս ա անըմ, թառանչ քաշըմ, էլհա՛ն նաղլ անըմ...* (ՀԺՀ, V, 33):

ԹԱՌԱԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թառաշ անէլ - Առեւանգել, հափշտակել: *Ռէվը էտ ըխճըկանը թառաշ ա անում, փախչում* (Զ):

- Թառաշ տալ - *տե՛ս* Թըռ տալ:

ԹԱՌԱՉ - *տե՛ս* ԹԱՌԱՆՉ:

ԹԱՌԺԱԺ - *տե՛ս* ԹԱՌԺԱԺ:

ԹԱՌԺԱԺ/ԹԱՌԺԱԺ - *ած.* Անհանգիստ եղած, հանգիստը՝ քունը խանգարված (հավերի մասին): *Աղվէսը նի մըտավ հավէն պՕունը, թառժաժ հավէրը ՕուրՕուրօնցավ ընգէն* (Բ):

- Թառժաժ անէլ - 1. Թառած հավերին անհանգստացնել, տեղից շարժել: *Շօնը հանչից, հըվէրէն թառժաժ ըրավ* (Բ): 2. *տե՛ս* Քունըհարամ անէլ:

- Թառժաժ ինիլ/տը՝ռնալ - 1. Անհանգիստ դառնալ, տեղահանվել (հավերի մասին): *Հավը թառժաժ իլանվ, էլ կըրը՝ցէն վէչ փըռնին* (Զ): 2. *տե՛ս* Քունըհարամ ինիլ:

ԹԱՌԻԼ - *տե՛ս* ԹԱՌԻԼ:

ԹԱՌԻԼ/ԹԱՌԻԼ - *չբ. տե՛ս* Թառ ինիլ:

ԹԱՌԼԱՆ *(պրս. tarlan)* - 1. Գեղեցիկ, չքնաղ: *Էտ չուբանէն էլ ինիս ա մին թառլան ախճիգ՚* (Զ): 2. Կտրիճ, ճարպիկ: *Թառլան տըղէք՚ շատ կան Ղարաբաղ* (Բ): 3. Արագավազ, թռչկան: *Էտ թառլան ծին մին մընուտումը էտ տըղէն հըսցընում ա ըխճըկանը հօրը պալատը* (Զ):

- Թառլան դուշ - 1. Բազե: *Թաքավէրին էլ էրկու թառլան դուշ ա ինում, էգգանան Ուրանն նըհը՝տ տանում ա վը՝րս* (Զ): 2. *տե՛ս* ԹԱՌԼԱՆ (2, 3):

ԹԱՌԼԻԳ՚ - *գ.* Ձիու վրա՝ թամբի տակ, գցվող թաղիքե ծածկոց: *Թանմք՚ը վէր ա օնում, թառլիգ՚ը տափէն մը՝կնում, յըրան պարանց ըղնում* (Զ):

ԹԱՌՆԸ[1] - *տե՛ս* ԹԱՆԱԳ՚:

ԹԱՌՆԸ[2] - Գործածվում է կապակցության մեջ:

- Թառհնը տալ - Ուշադրություն չդարձնել, չլսելու տալ: *Էտ հարթնը, պատրօնը հինչու ասում ա, թառհն ա տամ* (Զ):

ԹԱՌՉԸԽ/ԹԱՌՉԸԽ[1] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թառչըխ տալ - Փետուրները, մազերը, բուրդը թափվել: *Ղազէրը թառչըխ ըն տըվալ* (Բ):

- Թառչըխ տըված բէղէր - Կախ ընկած՝ չկոկված բեղեր: *Մին օր էլ Անուշ աքէրըն ա ջիհում, թա.- ՍՕմբաթ, էտ թառչըխ տըված բէղէրըտ խէ խօզՕում չըս* (Զ):

ԹԱՌՉԻ - *տե՛ս* ԹԱՌՉԻ:

ԹԱՌՉԻ/ԹԱՌՉԻ *(թրք. tarči)* - *գ., ած.* Թառ նվագող, թառահար: *Թառչին թառը ածում ա, արչըն ա կ՚Օուլը ղըրաղ ըն կէնում* (Զ):

ԹԱՌՔ՚ - *տե՛ս* ԹԱՐՔ՚:

ԹԱՌՔ՚ - *տե՛ս* ԹԱՐՔ՚:

ԹԱՍ *(արաբ., պրս. tās)* - *գ.* 1. Գավաթ, ըմպանակ: *Էտ ըռըչքաշին թասը տանում ա տամ թաքավը՝ռէն ըռուշվաթ, վը՝ր Ուրանց թօղէ՝ կ՚ան քըղաքումըն ապրին* (ՆԼՂԺԲ, 51): 2. *փխբ.* Թասաձեւ գոգավորություն: *Վըխճըրնէն էտ թասումը ըրըծըցընում ա* (Զ):

ԹԱՍԱԿ - *տե՛ս* ԹԱՍԱԿ:

ԹԱՍԱԿ/ԹԱՍԱԿ - *գ.* Բոլորակ թասաձեւ գլխարկ, որ ծածկում է միայն գլխի վերեւի մասը: *...Սուփրան ջուբումըն ա տինում, թասակը տինում կըլխէն, էլ Ուրան տէսնում չըն* (ՀԱԲ, 15, 28):

ԹԱՍԻԲ - *տե՛ս* ԹԱՍԻԲ:

ԹԱՍԻԲ/ԹԱՍԻԲ - *գ.* Հարգ, պատիվ, ինքնասիրություն, պատվախնդրություն: *Ընդրա վէր թանսիբ ինանր, Ուրանն հօրը յըրա քար կընքցանր* (Բ):

- Թանսիբ ըղնէլ - Պատվի խնդիր դարձնել, իր պատիվը պաշտպանած լինելու համար ձգտել մի բան անպայման անել: *Տըղան թանսիբ ա ըղնում, էտ ըխճըկանը քըշէրը փըխչըցընում* (Զ):

- Թանսիբը յը՝ր օնէլ - Պատվախնդրությունը՝ ինքնասիրությունը ներել: *Թանսիբը յը՝ր չօնում, վէր էտ թօրքը Ուրանց շէնին վը՝ղէրը բիջանում ա* (Զ):

- Թանսիբը պահէլ/քաշիլ - Մեկի պատիվը պաշտպանել: *Ախպէրը ախպօրը թանսիբը վէր պահէ վէչ, էլ հինչ ա՞խպէր* (Բ):

- Թանսիբին վը՝ննը կէնալ - *տե՛ս* Թանսիբը պահէլ:

- Թանսիբու ըղնէլ - *տե՛ս* Թանսիբ ըղնէլ:

- Թանսիբու քըցիլ - Մեկին պատ-

վախնդրության՝ ինքնասիրության դրդել՝ մղել: *Թաւսիբու քըցէցէն, Գուգին էշը ծախից, ծի ինք՝ կալաւ* (Բ):

ԹԱՍԻԲԱՎ - *ած.* Պատվախնդիր, արժանապատվություն ունեցող: *Քարէնտը-կէցէք՝ թաւսիբաւ ժըղովուրթ ըն* (Բ):

ԹԱՍԻԲՔԻԷԾ - *տե՛ս* ԹԱՍԻԲԱՎ:

ԹԱՍՍԱ - *գ.* Դեռեւս չհասունացած, մանր, կանաչ լոբի: *Իփաւծ թասմանը յըէրը լաւ պէն չի կա* (Բ):

ԹԱՎ[1] *(պրս. tav (բարձր ջերմաստիճան)* - *գ.* 1. Որեւէ բան անելու հարմար ժամանակը՝ վիճակը: *Կօրծը թավումը կանին* (Բ): 2. Վեգի հարթ՝ տափակ մասը: *Վէք՝ին թօղ ա անում, թավը ն ա ըղնում* (Ձ):

- Թավա ըղնել - Հարմար պահը անցնելով՝ անհետաքրքիր՝ ձանձրալի դառնալ: *Ծըմը՝ռնը յը՝կավ, ծըմակը ք՝ինիլը թավա ընգավ* (Ձ):

- Թավ անել - Մասնակից դարձնել, հաշվի առնել: *Ըտըրան վէշ մին կօրծում թավ չընն անում* (Բ):

- Թավը ընցընել - *տե՛ս* Թավա ըղնել:

- Թավը կուրցընել - Գործը ժամանակին չանել, հարմար ժամանակը՝ պահը կորցնել: *Թավը կուրցըրալ ա, միհէնգ՝ ծունը կ՝ուտալ ա, կարում չի, թա փաղ պիրի* (Բ):

- Թավը փըռնել/քըթէնալ - Մեկի լավ տրամադրության պահը, հարմար ժամանակը որսալ: *Էտ մարթը թավը փըռնում ա, էտ հըրուստէն անա պարթկ յօր օնում* (Ձ):

- Թավ ինիլ/տը՝ռնալ - Հաշվի առնվել, մասնակից դառնալ: *Էտ խաղումը ինք՝ը թավ չի* (Բ):

- Թավ տալ - Կաշվի, հեսանի կամ այլ իրի վրա շփելով՝ թեթեւակի սրել: *Տէնակը թավ ա տամ, հավը մօրթում* (Բ):

- Թավումը ինիլ - Տրամադրված լինել, որեւէ բան անելու տրամադրություն ունենալ: *Թավումըս կա վէջ, թա կօրծ անիմ* (Բ):

ԹԱՎ[2] *(գրբ. թաւ)* - *տե՛ս* ՂԱԼԻՆ:

ԹԱՎ[3] - *գ.* Հովիտ: *Կ՝ը՝տէն թավումը կըվէրը ըրածում ըն* (Ձ):

ԹԱՎԱ *(պրս. tāve, թրք. tava)* - *տե՛ս* ՔԸԹԱՎԷՐ(3):

ԹԱՎԱՋԱ - *տե՛ս* ԹԱՎԱՆՋԱ:

ԹԱՎԱՆՋԱ/ԹԱՎԱՋԱ *(թրք. tavaza (քաղաքավարություն)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թավանզա անել/տալ - Մատուցել, հրամցնել, հյուրասիրել: *Պուճուր ախպէրը էտ ուրուգ՝ուն էլիա մին ջէյրան տօն պիրավ, հօրը թավազա ըրավ* (ՀԺՀ, VI, 92):

ԹԱՎԱԽԿԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թավախկա անել - Ընկերություն՝ բարեկամություն անել՝ հաստատել: *Սահանց ք՝ինիլ-կ՝ալը, թավախկա անէլը շըտացավ* (Ձ):

ԹԱՎԱՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թավար ղուշ - Մեծ գիշատիչ թռչուն: *...Մին թավար ղուշ կ՝ամ ա, տը՝սնըմ մին մարթ ծառին տակին թէք՝ ընգած...* (ՀԺՀ, VI, 93):

ԹԱՎԱՐՁԱ - Բարակ կեղեւով խաղողի տեսակ: *Ղարաբաղ էլ թավարզա բիջ՝ուրծ՝ղ չի կա* (Բ):

ԹԱՎԱՔ՝ԱԲԱԲ - *գ.* Ծեծած կամ աղացած եւ կլոր ու երկարավուն ձեւով թավայի մեջ տապակած միս: *Թավաք՝աբաբը լ՝ուլանք՝ըբաբէն տը՝ղը տալ չի* (Բ):

ԹԱՎԱՔ՝ԱԼԻ *(թրք. tevekkelli (իզուր, աննպատակ)* - *ած., գ.* Անկազմակերպ, անփույթ, թափթփված, ցրված (մարդ): *Թավաք՝ալի մարթին մինը էրկու չի տը՝ռնալ* (Ձ):

ԹԱՎԴԱՆ - *գ.* Գոտու կամ կաշվի կտոր, որի վրա շփելով՝ վարսավիրները սրում են սափրելու գործիքը: *Դանլանք՝ը թավդանը յօր ա ունէս, տինըկնէն թավ տաս* (Ձ):

ԹԱՎԴԻՐ - *տե՛ս* ԽԷՉԱԿ:

ԹԱՎԹԱՎԻ/ԹԱՎԹԱՎԻ - *տե՛ս* ԹԱՎԱՔ՝ԱԼԻ:

ԹԱՎԹԱՎԻ - *տե՛ս* ԹԱՎԹԱՎԻ:

ԹԱՎԻԴ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թավիդ անել - Ուշադիր նայել՝ դիտել: *Թավիդ ա անում, տը՝սնում էտ մարթը ջուբան մին պէն տուս կալաւ, վը՝ղըմը թաղից* (Ձ):

ԹԱՎԻԼ - *տե՛ս* ԹԱՎԻԼ:

ԹԱՎԻԼ/ԹԱՎԻԼ/ԹԱՎՈՒԼ/ԹՕՎՈՒԼ *(գրբ. թաւալ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Թավիլ տալ - Թավալվել, գետնի վրա գլորվել, թպրտալ: *Կատուն վէր տուզն ա ընում, էշու քուռակու նըման ը՝ռաչիտ թավիլ ա տամ...* (ՆԱԲ, 75):

ԹԱՎՐԻՋԸ՝ՆԷ - *գ.* Ձվաձեւ խոշոր հատիկներով սպիտակ խաղողի տեսակ: *Թավրիզը՝նէն քախծը՝ը խաղու վա* (Բ):

ԹԱՎՈՒԼ - *տե՛ս* ԹԱՎԻԼ:

ԹԱՎՈՒՐ - *տե՛ս* ԹԱՎՈՒՐ:

ԹԱՎՈՒՐ/ԹԷՎՈՒՐ/ԹԱՎՈՒՐ/ԹԷՎՈՒՐ *(արաբ. tavr (ընթացք, վարք)* - *ած., մ.* Տեսակ, կարգի (գործածվում է *էս, էտ, էն, հինչ, մին* դերանունների հետ): *Ապրըհամ աղան բէղէրը հըլ՝ՕրՈ՝ում ա, Պուղուն մին թաւ՝ուր յէշում...* (ՆԼՂԺԲ, 91):

ԹԱՎՔ՝ԸՎԱ - *տե՛ս* ԹԱՐՔ՝ԸՎԱ:

ԹԱՎՔ՝ԻՎԱ - *տե՛ս* ԹԱՐՔ՝ԸՎԱ:

ԹԱՏՐՕՆ - *տե՛ս* ԹԱՏՐՕՆ:

ԹԱՏՐՕՆ/ԹԱՏՐՈՒՆ *(գրբ. թատր)* - *գ.* Թատերական ներկայացում: *Թատրոնէն էն թ՝ունդ վախտը Արտաշը յը՝ր ա կէնում, ճըղճըղամ, թա.- Մ՝ շան տըղա, հինչ ըս ա՞նում, էտ կընգանը խէ ըսպանում ը՞ս* (Ձ):

- Թատրօն տալ - 1. Թատերական ներկայացում բեմադրել: *Մին օր էլ արտիստնէն կ՝ամ ըն ըտըրանց շէնումը թատրօն տամ* (Ձ): 2. Կեղծ՝ շինծու արարքներ ցույց տալ: *Հինչ ը՞ս թատրօն տամ* (Բ):

ԹԱՐԱԶԻ *(արաբ. terazu, պրս. tārazu, թրք. terazi)* - 1. *գ.* Հարթ մակերեսների հավասարությունը՝ հարթությունը՝ զուգահեռությունը եւն չափելու գործիք, հարթաչափ: *Դ՝ուլգ՝ալը թ՝ուրազ՝ուն տինիս ա, տըսնաս, վէր սուրթ՝ունը ծօռ ա* (Ձ): 2. *փխբ. ած.* Հարթ, ուղիղ: *Տընատարը աստա.- Ուստա, էտ պատը հանց ա թ՝ուրազ՝ու չինի* (Ձ):

- Թ՝ուրազ՝ու անէլ/տալ - 1. Հարթ լինելը՝ հարթությունը՝ հավասարությունը եւն հարթաչափով որոշել: *Թ՝ուրազ՝ու վըն ընէս, տըսնաս ծօռ* (Բ): 2. Հարթեցնել, հավասարեցնել: *Ըռանդ՝ավը տաշ՝ում ա, թ՝ուրազ՝ու անում* (Բ):

ԹԱՐԱՓ - *տե՛ս* ԹԱՐԱՓ:

ԹԱՐԱՓ - *տե՛ս* ԹԱՐԱՓ:

ԹԱՐԱՓ/ԹԱՐԱՓ/ԹԱՐԱՓ *(արաբ., թրք. taraf)* - *տե՛ս* ԱՆԿՅՈՒՆ:

- Թ՝ուրաֆ անել - Դեպի տվյալ կողմը պարզել՝ մեկնել՝ դեմ անել: *Էտ մարթը վախան նըհէտ պօլկէն ածէգ՝ը վը՝ր ա ածում, դէրը մանը թ՝ուրաֆ ա անըմ, տէսնում անուշ* (ՆԼՂԺԲ, 90):

ԹԱՐԱՆՔ՝ԱՄԱ/ԹԸՐԸՔ՝ԱՄԱ *(թրք. tərəkəmə)* - *գ.* 1. Թաթարական վաչկատուն ցեղի տեսակ, ինչպես նաեւ այդ ցեղին պատկանող անձ: *Էս չօլէն ու Ը՝ռասխէն դաթումը հիշքան թըրը՝ք՝ամա ար ինում, լօխ տըրանա վախում ին* (ՀԱԲ, 15, 151): 2. Ասիական պարի եւ պարեղանակի տեսակ: *Թ՝ուրանք՝ման էլ ը՝ղ՝ուրթա ընգավ* (Բ): 3. *ած. փխբ.* Վայրենի, բռի, կոպիտ, գռեհիկ: *Թ՝ուրանք՝ամա մարթին կընգանը օրը սը՝վ կինի* (Ձ):

- Թ՝ուրանք՝ամա յը՝տ մընացած - Տկար, հիվանդ: *Էտ թ՝ուրանք՝ամա յը՝տ մընացածը բի՞դի մը՝զ ք՝ՕՄանգ՝ անէ* (Ձ):

ԹԱՐԳ՝ *(արաբ. tark, պրս. tārk)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թ՝ուրգ՝ անէլ - Վերջ տալ, թողնել, ձեռք քաշել մի բանից՝ սովորությունից: *Իմ սիրածըն ինձ տըվէք՝՝ կ՝իժօթունը թ՝ուրգ՝ անիմ* (ԼՂԲ, 171):

- Թ՝ուրգ՝ը տալ - *տե՛ս* Թ՝ուրգ՝ անէլ:

ԹԱՐԳԻԼ - *նբ. տե՛ս* Թ՝ուրգ՝ անէլ:

ԹԱՐԷՔ՝ *(պրս. tārak (գագաթ, ծայր)* - *գ.* Պատին ամրացրած հորիզոնական տախտակ, որի վրա ամանեղեն եւ այլ ի-

րեր են դնում: *Ըմընէք՛ը լըվանում ա, թարէք՛ին յըրա շարում* (Զ):

ԹԱՌԹԱՓ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թառթափըն ըղնէլ - 1. Վախից՝ երկյուղից ցնցվել՝ թպրտալ: *Դէվը թաքավէրին տըղէն վէր տը՛սնում ա, թառթափըն ա ըղնում* (Զ): 2. Ձախորդության հանդիպել, փորձանքի մեջ ընկնել: *Խը՛ղճը թառթափըն ա ընգալ, գ՛ոնդում չի, թա հինչ անէ* (Բ): 3. *տե՛ս* Թայդի ըղնէլ:

ԹԱՌԹԱՓ - *տե՛ս* ԹԻՐԹԷՓ(ՆԸ):

ԹԱՌԻՓ *(արաբ. tarif)* - *գ.* Գովք, գովասանք: *Թառիփան կօչ բիդի կ՛աս...* (ԱԲԲ, 31):

- Թառիփ անէլ - Գովել, գովաբանել: *Էս Գօշը վար յէկալ ա Հաթէրք, էս ըխպիրին ճիրան խըմալ ա, թառիփ ըրալ* (ԱԱ, 58):

- Թառիփ ըրէն խանումը, քաքից փուխանումը - Ասում են այն դեպքում, երբ մեկին գովում են, սակայն հույսերը չի արդարացնում:

ԹԱՌԻՓԼԱՆՍ - *տե՛ս* ԹԱՌԻՓ:

ԹԱՌԻՓԼԱՆՄԻԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թառիփլանմիշ անէլ - *տե՛ս* Թառիփ անէլ:

- Թառիփլանմիշ ինիլ - Ուրիշների կողմից գովասանքի արժանանալ, գովվել, փառաբանվել: *Կօգի թառիփլանմիշ իլանծ վը՛ռսկան ար, ամմա ք՛անսիբ ար ապըրըմ* (ՀԺՀ, V, 218):

ԹԱՌԻՓԼԻ՝ *(թրք. tərifli)* - *ած.* Գովելու արժանի, գովելի: *Թառիփլի՝ ախճիգ՛ ա* (Բ):

ԹԱՌԽԱՆԱ *(պրս. tarxāna)* - *տե՛ս* ՉՈՒՐԱԹԱՆ:

ԹԱՌԽՈՒՆ *(արաբ., պրս. tarxān)* - *գ.* Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող քիչ կծվահամ բազմամյա կանաչի, թարխուն: *Թարխունը ա ծուն լըվաշին մաչին պըտատում ա, կըծոտում* (Զ):

ԹԱՌՉԸԽ[1] - *տե՛ս* ԹԱՌՉԸԽ:

ԹԱՌՉԸԽ[2] - *տե՛ս* ԼԱՔԱԹ:

ԹԱՌՍ - *տե՛ս* ԹԱՌՍ:

ԹԱՌՍ/ԹԱՌՍ *(թրք. ters)* - *ած., մ.* 1. Հակառակ, ներհակ: *Էտ սադանան հինչու անում ա, թառս ա անում* (Զ): 2. Հակառակ կողմից, հակառակ ծայրից: *Դէրը կ՛իրքը յօր ա ունէս, թառս կըրթիս* (Զ): 3. Կամակոր, համառ, քմահաճ: *Մին մարթու կընէգ՛ շատ թառս ջուվար ա ինում* (ՆԼՂԺԲ, 116): 4. Ձախողակ: *Թառս կօրծ ա* (Բ): 5. Շուռ տված, շրջած: *Էտ խօխան շ՛ոէրը միշտ թառս ա կը՛նըմ* (Բ):

- Թառս ըղնէլ - Հակառակել: *Համան թառս ա ընգալ, ա՛ռը՛վ չի անում, թա ժըդօվուրթը արտէրը հընձին* (Բ):

- Թառս թօխուր - Հակառակ գործող (մարդ): *Թառս թօխուր ը՞ս, խէ խէլ՛ունք չըս կէնում* (Բ):

- Թառսին ծին նըստէլ/յը՛ր ինիլ - Իր ասածը պնդել, չզիջել: *Էտ տըղան թառսին ծին նըստում ա, թա.- Յը՛ս էտ ըխճըկանը օգ՛ում չըմ* (Զ):

- Թառս յէշիլ - *տե՛ս* Ծօռ աշկավ յէշիլ:

- Թառսու նըման - Հակառակի պես, դժբախտաբար: *Թառսու նըման էս կ՛էտը էլ վըրարած ա ինում* (ՀԺՀ, V, 499):

- Թառս քօն ինիլ - Ասվում է, երբ մեկը տարօրինակ՝ ոչ սովորական վարքագիծ է դրսեւորում կամ անտեղի ջղայնանում՝ բարկանում է: *Թառս ը՞ս քօն ի՝ալ, էտ հինչ ը՞ս ասում* (Բ):

ԹԱՌՍ-ԹԱՌՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թառս-թառս յէշիլ - *տե՛ս* Ծօռ աշկավ յէշիլ:

ԹԱՌՍԻԼ - *նբ.* Հակառակ կողմի՝ երեսի վրա շրջել: *Խօտը վէր թառսիս վէջ, լ՛ավ չի չուրանալ* (Բ):

ԹԱՌՍԻՆԱ *(թրք. tersine (հակառակի պես)* - *մ.* Հակառակ կերպով, հակառակաբար: *Էտ կընէգ՛ը, հինչը մարթը ասում ար, ինք՛ը թառսինա յար անում* (Զ):

ԹԱՌՍՎԻԼ - 1. *կբ. եւ չբ.* ԹԱՌՍԻԼ-ի: *չբ.* 2. *տե՛ս* Թառս ըղնէլ: 3. Ձախողվել: *Էտ վըխտանց էլ ըտըրա կօրծէրը թառսվում ա* (Զ):

ԹԱՌՓԱՆՉԱ - *տե՛ս* ԹԱՓԱՆՉԱ:

ԹԱՌՓԱՆՉԱՎԷՐ - *տե՛ս* ԹԱՓԱՆՉԱՎԷՐ:

ԹԱՌՔ՛ - *տե՛ս* ԹԱՌՔ՛:

ԹԱՌՔ՛/ԹԱՌՔ՛/ԹԱՌՔ՛/ԹԱՌՔ՛ *(թրք. terki)* - *գ.* Ձիու՝ էշի՝ ջորու եւն գավակ: *Քաչալը նըստում ա թաքավէրէն ծին, վէսկէն քըցում թարք՛ավը...* (ՀԺՀ, VII, 390):

- Թառք՛ան ըղնէլ - 1. Անասունի, ինչպես նաեւ մարդու ողնաշարի հետեւի մասի ոսկրերը խախտվել, հաշմվել: *Էտ ծին ըղնում ա քը՛ռծէն տակը, թառք՛ան ըղնում:* 2. Դիրքից՝ պաշտոնից զրկվել: *Էտ մարթը թառք՛ան ընգալ ա, էլ վէշ մինը մըրթատը՛ղ չի տինում* (Զ):

- Թառք՛ան քըցիլ - 1. Ողնաշարի հետեւի մասի ոսկրերը խախտել, հաշմանդամ դարձնել: *Փանդավ թըխում ըն, թառք՛ան քըցում* (Բ): 2. Դիրքից՝ պաշտոնից զրկել: *Նախագէն թառք՛ան քըցում ըն, բըրիգադիրը ուրխանում ա* (Զ):

- Թառք՛ին կապէլ, յը՛տ դարկել - Հարսին ու նրա բերած օժիտը ետ՝ հերանց տուն ուղարկել: *Հըրսընքէն էք՛սը տը՛սնըմ ըն, վէր էտ հարթնը ախճիգ՛ չի, թառք՛ին կապում ըն, յը՛տ դարկում* (Զ):

ԹԱՌՔ՛ԸՎԱ/ԹԱՌՔ՛ԻՎԱ/ԹԱՎՔ՛ԸՎԱ/ԹԱՎՔ՛ԻՎԱ/ԹԱՔ՛ԻՅԱ - *գ.* Սանդուղքի կամ պատշգամբի փայտե ճաղերը կամ դրանց վրայով ձգված ձողը, բազրիք: *Ինք՛ը էլ բալկօնէն թարք՛ըվին կըռթնում ա, թըմանշա անում* (Զ):

ԹԱՌՔ՛ԻՎԱ - *տե՛ս* ԹԱՌՔ՛ԸՎԱ:

ԹԱՑ *(գրբ. թաց)* - *տե՛ս* ՆԱՄ:

ԹԱՑԱՆ *(գրբ. թացան)* - *գ.* Կաթնեղեն (կաթ, մածուն, թան, թարմ պանիր եւն): *Շինանցէն առանց թացան կարէլ չի ապըրէ* (Բ):

ԹԱՑՎԷԼ - *տե՛ս* ՆԸՄԱՆԱԼ: *Կարթ, մանիշակ պը՛ցվալ ա, շաղ ա տիրալ, թացվալ ա...* (ԼՂԲ, 17):

ԹԱՓ *(գրբ. թափ)* - *գ.* 1. Ուժ, զորություն, կարողություն: *Ըտըրա թափը մը՛ծ ա ինում* (Բ): 2. Ուժերի լարում, եռանդ: *Սաղ օրը էտ թափավը կօրծ ա անում, ըրնգ՛ունը վըստակած կ՛ամ տօն* (Զ): 3. Ծառից պտուղը թափելը՝ թափահարելը: *Էք՛ուց չէ ալլօր կալխօզը ըսքըսլական ա թուլթէն թափը...* (ՀԲ, 359): 4. Թափած՝ թափահարված պտուղը, հատկապես՝ թութը: *Թօթէն առաչի թափը քախծըր չի ինում, ըտըրա հը՛տէ էլ բանք՛մանզ չըն իփինում* (Բ):

- Թափը կօտըրէլ - 1. Ուժգնությունը, եռանդը, սաստկությունը, ընթացքը թուլացնել: *Թօռը նի կալանվ, խօտ հըրուղնէրէն թափը կօտըրից* (Բ): 2. *տե՛ս* Թափը կօտըրվէլ:

- Թափը կօտըրվէլ - Ուժգնությունը, եռանդը, սաստկությունը, ընթացքը թուլանալ: *Կօրծէն թափը կօտըրվալ ա* (Բ):

- Թափ տալ - 1. Թափահարել, այս ու այն կողմ՝ վերեւ-ներքեւ շարժել, տարուբերել: *Էտ սանթունը վէր թափ ըն տամ, դուշին ճօտէրը վէր ըն տը՛ռնըմ* (Զ): 2. Ծառը շարժելով կամ ճյուղերին խփելով՝ պտուղները թափել: *Թափչին մին ճը՛ղնը թափ ա տամ, կընանէք՛ը նըստում ըն մին լ՛ավ թօթ օտում* (Բ): 3. Ոռեւէ բան թափահարելով՝ վրայից կամ միջից մի բան թափել: *Թաքավէրէն տանը չափը թափ ըն տամ, արծաթը մաչան վէր ա ընգնում* (ՀԺՀ, V, 627): 4. Սաստել, հանդիմանել, պարսավել: *Ըտըրան շինըմաչումը վը՛ռնն ա կըցընում, մին լ՛ավ թափ տամ, թընքրթծիմանթ անում* (Զ): 5. Աճել, հասակ առնել: *Մին օր վէր կէնում ա, խօխան թափ ա տամ, թաքուհին յէշում ա, տէսնում ուրէկանը տըրէկան տէռած* (ՆԱԲ, 38): 6. Վառել (լուցկին, ինքնավառիչը): *Ըշփիշկան թափ ա տամ, էտ խօտէն թայան նի կընցընում* (Զ): 7. Կողոպտել, սնանկացնել: *Էտ*

մարդիմազարը հօրըն ա մօրը լափ թափ ա տուվալ (Բ):

ԹԱՓԱ[2] *(թրք. tepe (կատար)* - *գ.* 1. *հեգն.* Գլուխ, ճակատ: *Թաւփանն պէց տէուս ա կ՚ամ, տը՛սնում՝ ծէուն ա կ՚ամ* (Զ): 2. *տե՛ս* ՃԸԿԸՏԱՆՈՒՑ: 3. Բարձունք, բլուր: *Էտ օրվանից էլ ըտըղէտ անումը տինէում ըն Չախմա թաւփա* (Զ): 4. Գագաթ, կատար: *Պիցըրանում ըն սարէն թաւփանն, տը՛սնում չօբանը ընդը՛ղ վէր ընգած* (Զ):

ԹԱՓԱ[2] - *տե՛ս* ՀԻԾԸԼԱՏԸ՛ՂՈ:

ԹԱՓԱԼ *(թրք. təpəl (ողորկ)* - *տե՛ս* ՔԱՉԱԼ:

ԹԱՓԱԾ - *ած.* 1. Թափածո, ձուլածո, ձուլած: *Էլ դամ՚ուրչէուն չինանդ պէն չըն ծախում, ամմէն հինչ թափած ըն ինք՚ օնում* (Բ): 2. *փխբ.* Շատ, առատ: *Չօր լոբին Չանախչի թափած ա* (Բ):

ԹԱՓԱՂ - *տե՛ս* ԹԱԲԱՂ:

ԹԱՓԱՂՈՒԹ/ԹԱՓԱՂՈՒՏ/ԹԱՓԱՎՈՒԹ/ԹԱՓԱՎՈՒՏ *(թրք. tebaut)* - *գ.* Տարբերություն, զանազանություն: *Տա թա.- Հինչ թափավուտ կա՞ կըլխըրնէրէն մաչին, կըլօխը կըլօխ ա, իլի՞* (ՀԺՀ, VII, 144):

ԹԱՓԱՂՈՒՏ - *տե՛ս* ԹԱՓԱՂՈՒԹ:

ԹԱՓԱՆ *(գրբ. թափան)* - *գ.* 1. Կենդանու ստամոքս: *Կըվէն թափանը ճըղում ըն, տը՛սնում մին քանէ ասը՛ղ մաչին* (Զ): 2. *անրգ.* Մարդու ստամոքս: *Էտ մարթը հինչու տը՛սնում ա, ածում ա թափանը* (Բ): 3. Փորոտիքի պարկը, որովայնի թաղանթը: *Մին վէխճար ա մօրթում, թըփանավը կըլօխը ծասկըմ* (ՀԺՀ, V, 538):

- Թափանը զը՛ռ/կախ - *անրգ.* Գեր, չաղ: *Էտ թափանը զը՛ռ մարթը ըտըրանց նըհը՛տ ա տամ ըտըղան* (Զ):

- Թափանը զըռըցընէլ/կախ քըցիլ - *անրգ.* Գիրանալ, չաղանալ: *Էրկու շէբաթ ըտըրանց տանը կէնում ա, թափանը զըռըցընում* (Զ):

- Թափանը նի կէնալ/կըրակ ըղնէլ - 1. *անրգ.* Սաստիկ ծարավել՝ քաղցել: *Թափանըտ նի յա՞ կացալ, պատառ տըմաց, լի՞* (Բ): 2. *տե՛ս* Թուրթունը թուրթմիշ ինիլ:

- Թափանը տափէն տալ - *անրգ.* Բերանքսիվայր գետնին ընկնել: *Տըղան վէր տըրըքցընէս ա, դէվը թափանը տափէն ա տաս* (Զ):

- Թափանը ցէց կըցընէլ - 1. Անճոռնի կերպով կանգնել: *Հինչ ը՞ս թափանըտ ցէց կըցըրալ, խէ նըստում չը՞ս* (Բ): 2. *տե՛ս* Թափանը զըռըցընէլ:

- Թափան տալ - Խորամանկ՝ խաբուսիկ՝ հակառակորդին թյուրիմացության մեջ գցող գործողությունների դիմել: *Թաքավէրին տըղան թափան ա տամ, դուշմանին զօրքը քաշում ծըմակը, կըտօրում* (Զ):

- Թափան օտօղ - Աղքատ, ընչազուրկ: *Էտ թափան օտօղը միհէնգ՚ համփա յա տը՛ռալ* (Բ):

- Թըփանէն կ՚օռռալ - Շահավետ մի բանից ուշանալ՝ չհասնել: *Խօսրօվը վըխճարէն մըսան օտում չի, թըփանէն ա կ՚օռռում* (Զ):

ԹԱՓԱՆՉԱ/ԹԱՐՓԱՆՉԱ *(թրք. tabanča)* - *գ.* Ատրճանակ: *Թաքավէրին տըղան թափանչան հանըմ ա, շօնը ըսպանըմ դանստի* (ՀԺՀ, V, 81):

- Թափանչա տուս օնէլ - Ձեռքով սպառնալ մեկին: *Էտ մարթը թափանչա յա տուս օնում, թօրքը լուզվա կըտըրում ա* (Զ):

ԹԱՓԱՆՉԱՎԷՐ/ԹԱՐՓԱՆՉԱՎԷՐ - *ած.* Ատրճանակ ունեցող, ատրճանակով զինված: *Էտ թափանչավէրը վէր թափանչան տուս ա օնում, կ՚օղէրը փախճում ըն* (Զ):

ԹԱՓԱՎ - 1. *մ.* Արագորեն, ուժգնորեն: *Վէր ըտի թափավ կ՚ամ ա, լօխ սըրտաճաք ըն ինում* (Զ): 2. *ած.* Մարմնեղ, պարթեւակազմ: *Դէրը տէսնում ա, վէր շատ թափավ ա, խուխէն անումը տընում ա Թափէդ* (ՆԱԲ, 38):

- Թափավ տընջըրի - Հսկայամարմին: *Տըղէք՚, հինչ տըղէ՞ք՚, ամէն մինը մին թափավ տընջըրի* (ՆԱԲ, 38):

ԹԱՓԱՎՈՒԹ - *տե՛ս* ԹԱՓԱՂՈՒԹ:

ԹԱՓԱՎՈՒՏ - *տե՛ս* ԹԱՓԱՂՈՒԹ:

ԹԱՓԷԼ *(գրբ. թափեմ)* - *նբ.* 1. Որեւէ բան վէրեւից դեպի ցած ածել: *Պիրում ա էտ չըվալը ճըղում, ալլէրը թափում տափէն* (Զ): 2. Որեւէ ամանի՝ տարայի պարունակությունը դատարկել: *Ըմընէք՚ը թափում ա, կինին ածում մաչը* (Բ): 3. Դեն ածել, շպրտել, նետել: *Տանը իլանջիլանը ածում ըն մէշուկնէն, տանում թափում* (Զ): 4. Բեռնաթափել, մի բանի վրայից ցած առնել: *Ըրբէն ցօրէնը թափում ըն* (Զ): 5. *տե՛ս* Թափ տալ (2): 6. Կաղապարով ձուլել: *Ասում ըն՝ ըտը՛ղ առաչ արկաթը հալալ ըն, թօփ թափալ* (Զ): 7. Ջբաղված լինելը դադարեցնել: *Տօնը թափում ա, ծախում* (Բ):

ԹԱՓԸՐՂԱ/ԹԱՓՈՒՐՂԱ - *ած.* Աստանդական, թափառական: *Թափըրղա մարթին օրը սը՛վ կինի* (Զ):

- Թափըրղա անէլ - Թալանելով՝ սննկացնելով թափառական դարձնել: *Դուշմաննէն ըտըրանց իլանջ-չիլանջը թըլանում ըն, տընէրը էրում, խը՛ղճ ժըղըվուրթէն թափըրղա անում* (Զ):

- Թափըրղա ինիլ/ըղնէլ/տը՛ռնալ - Թալանվելով՝ սնանկանալով թափառական դառնալ: *Թափուրղա ընգած մարթա, ընդըրա ըշտըղան ա՞ վը՛սկէ* (Զ):

ԹԱՓ-ԹԱՆՋ(Ջ)Ա - *տե՛ս* ԹԱՄ-ԹԱՆՋ-(Ջ)Ա:

ԹԱՓ-ԹԱՄՈՒՋ - *տե՛ս* ԹԱՄ-ԹԱՄՈՒՋ:

ԹԱՓԻԳ՚ - *տե՛ս* ԹԱՓԻԳ՚:

ԹԱՓԻԳ՚/ԹԱՓԻԳ՚ - *տե՛ս* ՋԱՆԳՈՒ:

- Թաւփիգ՚ տալ - 1. Ձին խթանել: *Տըղան ըրըխ-օրախ յէր ա ինում ծին, թաւփիգ՚ տամ* (ՆԱԲ, II, 25): 2. *փխբ. տե՛ս* Քացէ տալ: 3. *փխբ.* Մեկին նեղել՝ չարչարել: *Սաղ օրը խը՛ղճ կընգանը էն ա թաւփիգ՚ տալիս* (Բ):

ԹԱՓԿ՚Ա - *տե՛ս* ԹԱՓԿ՚Ա:

ԹԱՓԿ՚Ա/ԹԱՓԿ՚Ա - *գ.* Մեջը բուրդ՝ մազ լցրած կլոր եւ երկարավուն բարձ: *Ապան թաւփկ՚ան տինում ա կըլխըտակէն, քօն ինում* (Զ):

ԹԱՓՃԱԳ՚ - *տե՛ս* ԹԱՓՉԱԿ:

ԹԱՓՃԱԿ - *տե՛ս* ԹԱՓՉԱԿ:

ԹԱՓՃԱՆ - *տե՛ս* ԹԱՓՉԱՆ:

ԹԱՓՇՈՒՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թափշուր անէլ - 1. Մեկի՝ մի բանի պատասխանատվությունը վստահորեն դնել մեկի վրա՝ մեկին հանձնել՝ հանձնարարել: *...Թաքավէրը շօրէրը փոխում ա, թաքավըրօթունը հուրան վէզիրին թափշուր անըմ, ինք՚ը ք՚ընըմ...* (ՀԺՀ, V, 179): 2. Պատգամել, ավանդել: *Ասում ըն՝ հաւրը մինչէվ մը՛ռնէլը տի յա ըլալ թափշուր ըրած* (ՆԱԲ, 94):

ԹԱՓՉԱԿ՚ - *տե՛ս* ԹԱՓՉԱԿ:

ԹԱՓՉԱԿ/ԹԱՓՉԱԳ՚/ԹԱՓՃԱԿ/ԹԱՓՃԱԳ՚ *(թրք. təpčək)* - *գ.* 1. Բահի կոթին անցկացրած փայտե ձող՝ հողի մեջ խրելուց ոտքով սեղմելու համար: *Թիյին թաւփչակը կօտըրում ա, Մամիկօնը մընամ ա մանալ* (Զ): 2. Բահի բերանով մեկ կտրված հողակտոր: *Էրկու թաւփճագ՚ վը՛ղ ա ածում, ծասկում, ինք՚ը ք՚ինամ* (Բ):

- Թաւփչակ տալ - Բահի բերանով մեկ հող կտրել՝ փորել: *Լ՚ըհա վէր մէհէտ թաւփչակ ա տամ, թիյին կօթը կօտըրում ա* (Զ):

ԹԱՓՉԱՆ/ԹԱՓՃԱՆ - *գ.* Փայտե երկար ձողեր, որ որպես հենարան ուղղահայաց հենելով գետնին՝ կապում են համետի կողքերին՝ գրաստը բարձելիս: *Ապան վէր ք՚ինամ ար ծըմակը, էշը թաւփչանավ ար պէռնում* (Զ):

ԹԱՓՉԻ - *ած., գ.* 1. Ծառից պտուղներ, հատկապես թութ թափող: *Թափչին համ թօթը թափում ա, համ էլ էտ կընանուցը յըրա ճըղճըղամ* (Զ): 2. Որեւէ բան որեւէ տեղից մեկ այլ տեղ լցնող՝ բեռ թափող: *Թափչին վիղըրօցը խաղուն ածում ա մաշինին չանը* (Բ):

ԹԱՓՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԹԱՓԷԼ-ի: 2.

չբ. Խուռն բազմության ներխուժել՝ գրոհել, հարձակվել: *Ըտըրանք թափվում ըն էտ շէնը, մին սըհաթումը սաղ տընէրը թըլանում* (Ձ):

ԹԱՓՈՒՌ - *տե՛ս* ԹԱՓՈՒՐ[1]:

ԹԱՓՈՒՐ[1]/ԹԱՓՈՒՌ *(գրբ. թափուր)* - *ած.* 1. Դատարկ, որեւէ բան չպարունակող: *Էնքան արաղ ա քաշվել, թափուր աման չօնէ, թա ածէ մաչը* (Բ): 2. Չզբաղեցրած, ազատ (պաշտոն, հաստիք եւն): *Էտ տըղան տըէռնըմ ա թաքավէր, ոնրվան հօրը թափուր թախտին նըստըմ...* (ՀԺՀ, V, 156):

ԹԱՓՈՒՐ[2] - *գ.* Մարդկանց մեծ խումբ, բազմություն, թափոր: *Մըէծ թափուրավ քյինըմ ըն հարսին պըէրին* (ՀԺՀ, V, 204):

ԹԱՓՈՒՐՂԱ - *տե՛ս* ԹԱՓԸՐՂԱ:

ԹԱՓՕՎԻ - *տե՛ս* ԹԸՓՕՎԻ:

ԹՎՔ - *տե՛ս* ԹՎՔ[1]:

ԹՎՔՎԺՎՌՎՍԳ - *տե՛ս* ԹՎՔՎԺՎՌՎՆԳ:

ԹԱՔԱՎԷՐ/ԹԱՔԱՎԸՐ/ԹԱՔԱՎՕՐ *(գրբ. թագաւոր)* - *գ.* 1. Միապետ, արքա, թագավոր: *Մին թաքավըէր շօրէրը փոխում ա, տոնուս կյամ ոնրվան յէրգյիրը, վըէր շօռ կյա՛ն...* (ՀԺՀ, VII, 346): 2. Նորափեսան պսակի եւ հարսանիքի ժամանակ: *Մըկըռնէն թաքավէրին ա թաքուհուն պար ըն ածում* (Ձ): 3. Կենդանիների՝ թռչունների ցեղի կամ տեսակի մեջ ամենազորեղը: *Ղուշէրէն թաքավէրը արծիվըն ա* (Բ): 4. *փխբ.* Բացարձակ իրավունքի տեր, ինքնիշխան, ինքնակալ: *Էտ շէնին թաքավէրը ինքյըն ա, վէշ մինը կարում չի քըշտէն ծըպուտ հանէ* (Ձ): 5. *տե՛ս* ԿԱՐՕԼ[1]:

- Թաքավէրըն ապըրած կէնա - *բրմդ.* Թագավորին դիմելու ժողովրդական արտահայտություն՝ թագավորին երկար կյանք թող լինի (սովորաբար ասվում էր թագավորին դիմելիս, նրա հետ խոսելիս): *Չօբանը ասմա.- Թաքավէրըն ապըրած կէնա, վէր կյառնը ասալ ըս, էն ըմ մօրթալ* (Ձ):

- Թաքավէր ճօկէլ - *տե՛ս* Թաքավէր տինիլ:

- Թաքավէր նըստէլ - Թագավոր դառնալ, թագավորել: *Ըտըրանա յըէտը էտ տըղան ա թաքավէր նըստում, ժըղովուրթէն լյավ յէշում* (Ձ):

- Թաքավէր տինիլ - Թագադրելով մեկին թագավոր դարձնել: *Ժուղովուրթը էտ մարթին տինում ըն թաքավէր* (Ձ):

- Թաքավէրու ախճիգ/տըղա - 1. Ինքնահավան, հպարտ, մեծամիտ անձ: *Էտ չուբանէն ախճիգը ոնրվան թաքավէրու ըխճըկա նըման ա պահում, սարփ չի անում, թա մինին խուսցընէ* (Ձ): 2. Արտոնյալ, արտոնություններ ունեցող անձ: *Խէ տու թաքավէրու տըղա յը՞ս, վէր օգում ըս լօխ վըէղէրը տու վարիս* (Բ):

ԹԱՔԱՎԷՐԷԼ/ԹԱՔԱՎԸՐԷԼ/ԹԱՔԱՎՕՐԷԼ *(գրբ. թագաւորեմ)* - *չբ.* եւ *նբ.* Իբրեւ թագավոր՝ իշխել՝ կառավարել՝ թագավորություն անել: *Ամանտ թաքավէրին մըռնէլանը յըէտը կուճի տըղան ա տըռաս թաքավէր, յէրգյիրը լյավ թաքավէրէս* (Ձ):

ԹԱՔԱՎԸՐ - *տե՛ս* ԹԱՔԱՎԷՐ:

ԹԱՔԱՎԸՐԷԼ - *տե՛ս* ԹԱՔԱՎԷՐԷԼ:

ԹԱՔԱՎԸՐԱԿԱՆ *(գրբ. թագաւորական)* - *ած.* 1. Թագավորին պատկանող: *Սահանք մըտածում ըն, վէր ըսպանին, թաքավըրական շօրէրըն էլ յօր օնին, վէսկէն էլ* (ՆԱԲ, 42): 2. Թագավորին հատուկ՝ վերաբերող: *Ոնտուշը թաքավըրական հըրամաննէ յա տամ, լօխ ծըծըդօտում ըն* (Ձ): 3. *փխբ.* Լավ, ընտիր: *Կընէգյը մարթին հըէտէ թաքավըրական խօրոնգյ ա իփում* (Բ):

ԹԱՔԱՎԸՐԱՑՈՒ - *գ.* 1. Թագավոր լինելու հարմար՝ արժանավոր անձ: *Ժուղովուրթը մըտածում ըն, վէր էտ մարթը լյավ թաքավըրացու վա* (Ձ): 2. Թագավորի թեկնածու: *Ոնդոնթ ա՝ թաքավըրացուն թաքավէրին մըէծ տըղան կինի* (Բ):

ԹԱՔԱՎԸՐԱՔՈՒՐ - *գ.* Այն աղջիկը կամ կինը, որ պսակի ժամանակ ընկերակցում է փեսային: *Թաքավըրաքուրը աշկը հարթնանը անա հըռընցընում չար* (Ձ):

ԹԱՔԱՎԸՐՕԹՈՒՆ *(գրբ. թագաւորութիւն)* - *գ.* 1. Թագավորի իշխանությամբ կառավարվող պետությունը՝ երկիրը: *Ըտի էլ էտ թաքավըրօթունը քանդում ըն* (Ձ): 2. Թագավորի իշխելը՝ թագավորելը: *Ըտըրա թաքավըրօթունէն վախտը, վէշ մին տըէղ կյուղթունը ոնդոնթ չի իլվել* (Ձ): 3. Թագավորական իշխանություն: *Թաքավըէրը պիրում ա տահանց փըսակում, թաքավըրօթունը տամ էտ տըղէն...* (ՀԺՀ, VII, 59):

- Թաքավըրօթուն անել - *տե՛ս* ԹԱՔԱՎԷՐԷԼ: *Տահանք ճօկ-ճօկ յէրգյիրնէրում ըն ըլվել թաքավըրօթուն ընէլիս* (ՀԺՀ, V, 368):

ԹԱՔԱՎՕՐ - *տե՛ս* ԹԱՔԱՎԷՐ:

ԹԱՔԱՎՕՐԷԼ *տե՛ս* ԹԱՔԱՎԷՐԷԼ:

ԹՎՔ[1]/ԹՎՔ/ԹՎԳ *(գրբ. թագ)* - *գ.* 1. Գլխի զարդարուն խորանաձեւ ծածկոց, որ կրում էին թագավորները՝ թագուհիները՝ ի նշան իրենց իշխանության, թագ: *Յէտնան էտ տըվըրածին կընէգը, պըռվանդի թաքը տըրած, ման ա կյամ...* (ԼՂԲ, 296): 2. Բարձրագույն հոգեւորականների գլխի զարդարուն ծածկոց, խույր: *Խըրիմյան հայրիկը թաքը տիրոնծ վէր կյամ ա Աշան, ժըղովուրթը մինչըէկ Նօր շէն հըղէն գյանբօցավ փարշ ա անում* (Ձ):

ԹՎՔ[2] *(թրք. tek, täk)* - 1. *ած.* Զույգ չունեցող, միակ, եզակի, կենտ: *Թաքյ մարթը քյամբախտ կինի* (Ձ): 2. *մ.* Ընդամենը, միայն: *...Օրը մին բաղ ման ա յէկալ, մընացալ ա թաքյ մին բաղ* (ՀԺՀ, VI, 82):

ԹՎՔ[3] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թաքյ կէնալ - *տե՛ս* Կյօղլը կէնալ:

- Թաքյ կըցընէլ - *տե՛ս* Կյօղլը կըցընէլ:

ԹՎՔՎ *(թրք. teke)* - *տե՛ս* ԴԸԲԸՌ:

- Թըքյանվ կյալ - Զուգավորվել, բեղմնավորվել (այծերի մասին): *Սաղ շէնումը մին թաքյան չի կա, թա էծէրը թըքյանվ կյան* (Բ):

ԹՎՔՎԺՎՌՎՆԳ/ԹՎՔՎԺՎՌՎՆԳ/ ԹՎԳՎԺՎՌՎՆԳ *(գրբ. թագաժառանգ)* - *գ.* Թագի ժառանգորդը, թագավորի այն որդին, որ հոր մահից հետո պետք է թագավոր դառնա: *Վէր թաքյանժանանգը ըստըրան տըէսավ, օշը տարավ* (ՀԺՀ, V, 202):

ԹՎՔՎՌ - *տե՛ս* ԹՎՔՎՐ:

ԹՎՔՎՌՉԻ - *տե՛ս* ԹՎՔՎՐՉԻ:

ԹՎՔՎՐ/ԹՎՔՎՌ *(թրք. teker)* - *տե՛ս* ԱԿՆԸ[3]: *Մըշինին թաքյանը տոնուս ա կյամ, մընամ ըն էտ իրըէվէն տակէն տընջվիլիս* (Ձ):

ԹՎՔՎՐՉԻ/ԹՎՔՎՌՉԻ - *գ.* Անիվ պատրաստող եւ վերանորոգող արհեստավոր: *Դօրոնց Սումբաթէն տըղան լյավ թաքյանրչի յա* (Բ):

ԹՎՔԸԹՎՔ[1] - *տե՛ս* ԹՎՔ-ԹՎՔ[1]:

ԹՎՔ-ԹՎՔ[1]/ԹՎՔԸԹՎՔ[1] *(թրք. tertük)* - *տե՛ս* ՄԻՆ-ՄԻՆ:

ԹՎՔԻ *(թրք. tāki (որպեսզի)* - *շ.* Միայն թե, պայմանով որ: *Մարը ասմա.- Ամմէն հինչ կըտամ, թաքյի տըղէս ըզադիքյ* (Ձ):

ԹՎՔԻՅՎ - *տե՛ս* ԹԱՐՔԸՎՎ:

ԹՎՔԼՈՒԼՎ *(թրք. təklülə)* - *ած.*, *գ.* Միփողանի (հրացան): *Ախպօրը հըէտի մին լյավ թաքյլուլվ յա ինքյ օնում, դարկում* (Ձ):

ԹՎՔՄՎՋ - *տե՛ս* ՔԱՌ(1):

ԹՎՔՆԱ *(թրք. tekne)* - *գ.* 1. Փայտե խոր աման՝ սննդամթերք պահելու համար: *Թաքնան պէնում ա, մին աման պըրինձ տոնուս օնում, տամ էտ դէրվիշին* (Ձ): 2. Մեծ թաս: *Մին թաքյնա փըրթոնշ ա անում, օտում* (Բ):

ԹՎՔՉԱ *(թրք. təpčə)* - *տե՛ս* ԹՎՔԻ:

ԹԱՔՈՒՀԻ *(գրբ. թագուհի)* - *գ.* 1. Թագավորի կին՝ թագուհի: *Իտի էլ թաքավէրին պուճուր տըղան թաքավէր ա տըէռնըմ, էն ախճիգյըն էլ՝ թաքուհի* (ՀԺՀ, V,

27): 2. Նորահարսը պսակի եւ հարսանիքի ժամանակ: *Թամադան խըմում ա թաքավէրին ա թաքուհուն կէնացը, մըկըռնէն ուռռա յըն անում* (Ձ):

ԹԱՔՈՒՆ *(գրբ. թաքուն)* - *ած., մ.* 1. Ուրիշներից թաքցրած, ծածուկ, գաղտնի: *Մին օր էլ մարը տէսնում ա, վէր Ավէտիսը թաքուն օգըմ ա պըցրանա, հօրը թըվանգ'ը պատան յօր օնի* (ՀԺՀ, V, 124): *ած.* 2. Ծածկված, քողարկված: *Ըտահանք կ'ամ ըն էտ բաղը, մին թաքուն տը'ղ կ'օղըլ կէնում* (Ձ): 3. Գաղտնիքներ պարունակող: *Թաքուն խօսկ ա, կարէլ չըմ ասիմ* (Բ):

- Թաքուն պահէլ - Ուրիշին չասել, որպես գաղտնիք պահել: *Վէզիրը էտ ամէնը թաքավէրին անա թաքուն ա պահում* (Ձ):

ԹԱՔՈՒՆ-ԱՇԿԱՐ - *ած.* Ինչ որ կա՝ եւ գաղտնիք, եւ բացահայտ: *Ըտըրանք ուրուր նաղլ ըն անում ուրանց թաքուն-աշկար պէնէրը* (Ձ):

ԹԱՔՈՒՆ-ԹԱՔՈՒՆ - *տե՛ս* ԹԸՔԸՆ-ԹԱՔՈՒՆ:

ԹԷ *(գրբ. թի)* - *գ.* 1. Հող փորելու՝ թափելու եւն գործիք՝ փայտե երկար կոթով եւ մետաղյա թիակով, բահ: *Թէն պիրում ա, քանդում, պատէր ըն տ'ուս կ'ամ՝ վը'ղէն տակը մընացած* (ՀԱԲ, 15, 148): 2. Փայտյա լայն ու տափակ բերանով եւ երկար կոթով գործիք՝ ձյուն մաքրելու, ցորենը դիզելու եւ այլ գործածություններ համար: *Մարթը մին թէ յըն յը'ր օնում, մին սըհաթումը էտ ծունը տէն տամ* (Ձ):

ԹԷԳՈՒՆՔ - *տե՛ս* ԹԷԳՈՒՆՔ:

ԹԷԳՈՒՆՔ/ԹԷԳՈՒՆՔ *(գրբ. թիկունք)* - *գ.* 1. Մարմնի հետեւի մասը՝ ուսերից մինչեւ գոտկատեղը, մեջք, կռնակ: *Թէգ'ունքը տէմ ա տամ պատէն, վէր վէր ջըղնէ* (Ձ): 2. *փխբ.* Պաշտպան, հովանավոր: *Ք'ըսիբին վէր թէգ'ունք չինի, կարէլ չի հըրուստանա* (Բ):

- Թէգունքը տափումը տինիլ - *անձ.* Մեկի մահը ցանկանալ, թաղել: *Մարյանը անէսկ ա տաս.- Թէգ'ունքըտ տափումը տինիմ, Մրշակ, վէր խուխէս վէզը թուղէցէր ծօռ* (Ձ):

- Թէգունքը տափը չըտը'սնալ - Ամբըշամարտում՝ կոխի ժամանակ երբեք չպարտվել, գետնին չընկնել: *Ըտըրա թէգ'ունքը հանա տափը տը'սալ չի* (Բ):

- Թէգունք ինիլ - Մեկին հովանավորել, պաշտպանել, սատարել: *Էտ մարթը ըտըրանց թէգ'ունք ա ինում, մին թանրավ ապըրում ըն* (Ձ):

- Թէգունք նըհաշ տալ - 1. Փախուստի դիմել, փախչել: *Վէր մին էրկու հէտ տըրրքցըրէնք'*, *թօրքէրը թէգ'ունք նըհաշ տըվէն* (Բ): 2. Մեկից երես դարձնել, արհամարհել: *Քըվօրցը թէգ'ունք ա նըհաշ տըվալ, մըհէնգ' էլ ախպօրը նը-հը'տ չի խօսում* (Բ):

- Թէգունք պահօղ - Որեւէ մեկին, հատկապես բարձրաստիճան անձի պաշտպանությունն ապահովող եւ մշտապես նրան ուղեկցող մարդ, թիկնապահ: *Մին դանում էլ թաքավէրը ուրան թէգ'ունքը պահօղնէրէն նըհէտ ք'ունում ա վը'ռսի* (ՀԺՀ, V, 170):

ԹԷԳՆԸ - *տե՛ս* ԹԷՅՆԸ:

ԹԷՋ-ԹԷՋ *(պրս. tiz (արագ), թրք. tez (շուտ)* - *տե՛ս* ՃԻԼԼԸ-ՃԷԼԼԻ:

ԹԷԹ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թէթ անէլ - *անրգ.* Լռել, ձայնը կտրել: *Թէ'թ ըրա, ք'ը'զ խօսկ չի հըսնում:*

ԹԷԹԱ - *տե՛ս* ԹԷԹԱ:

ԹԷԹԱ/ԹԷԹԱ/ՀԸԹԷԹԱ/ՀԻԹԷԹԱ/ՀԸՂԷՂԱ/ՀԻՂԷՂԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թէթա տալ - Սպառնալ, սպառնալիքով նախազգուշացնել՝ երկյուղ ներշնչել: *Թաջիրը ըտըրան թէթա յա տամ, ամմա էտ տըղան վէջավը չի օնում* (Ձ):

ԹԷԼ *(թրք. tel)* - *գ.* Գլխի առջեւի մասի մազափունջ: *Թէլը սանդրում ա, տանս կ'ամ* (Բ):

ԹԷԼՈՒԿ - *տե՛ս* ԹԱԼ:

ԹԷԽԱ - *տե՛ս* ԽԱԼԻՍ:

ԹԷԿՆԱԾՈՒ - *տե՛ս* ԹԷՔՆԱԾՈՒ:

ԹԷՀՐԱՏ/ԹԷՐՀԱՏ/ԹԷՐԱՏ/ԹԸՀՐԱՏ *(գրբ. թերի)* - *ած.* 1. Կիսատ, անավարտ: *Թէհրատ կօրծը յը'տնան անէլը շատ ա տիժէր* (Ձ): 2. Ոչ լի, կիսալից, լրիվ չլցրած: *Մին թէհրատ ըստաքան կինի յա խըմում, դաստի հանփանում* (Բ): 3. *փխբ.* Խելապակաս: *Էտ կընէգ'ը էլ պատառ թէհրատ ա ինում* (Ձ):

ԹԷՂ[1] - *գ.* Գործիքի, հատկապես ռանդայի կտրող մասը: *Ռանդին թէղը նի յա կ'ամ մէխէն, ճաքում* (Բ):

ԹԷՂ[2] *(գրբ. թեղ)* - *գ.* 1. Հարդախառն հացահատիկի դեզ: *Հավէրը նի յըն տը'ռնըմ թէղին մաչը* (Բ): 2. Ընդհանրապես դեզ՝ կույտ: *Փանդին թէղը կըրում ըն, տանրսում պատէն տակէն* (Ձ):

- Թէղ տալ - 1. Հարդախառն հացահատիկը կալում դիզել՝ կույտ անել՝ մաղելու կամ քամհարելու համար: *Ցօրէնը թէղ ըն տամ, ըսքըսում մաղէլը* (Ձ): 2. Ընդհանրապես դիզել՝ կույտ անել: *Պէնում ա տըռնէրը, տէսնում մին տան վէսկէ յա վէր ածած, մին տէղ արծաթ ա թէղ տըված...* (ՀԺՀ, V, 436):

ԹԷՂԷ *(գրբ. թեղի)* - *գ.* Թեղազգիների ընտանիքին պատկանող մեծ տերեւախիտ ծառատեսակ: *Ըստը'ղէրք էլ շատ թէղէ ծառէր ա լալ, ըտըրա հէտէ էլ շէնին անըմը տիրալ ըն Թէղուտ...* (ԱԱ, 21):

ԹԷՂԷԼ - *նբ. տե՛ս* Թէղ տալ:

ԹԷՂՍԸՇԻ - *տե՛ս* ԹԸՂՈՒՇԻ:

ԹԷՂՕՏ - *գ.* Թեղիներով առատ տեղ: *Մին օր էլ ք'ինամ ա թէղօտը, տը'սնում մին արչու քօթէթ թըլակէն մաչին* (Ձ):

ԹԷՅՆԸ/ԹԷԳՆԸ/ԹԷՆԳԸ *(գրբ. թեկն (թեւ, կռնակ), հ.ե. *steïgu-)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Թէյնը տալ - *տե՛ս* ԿԸՌԹՆԷԼ:

ԹԷՆԳԸ - *տե՛ս* ԹԷՅՆԸ:

ԹԷՇ - *գ.* Բանջարանոցային բույսերի ցողունը: *Խըյարէն թէշէրը չուրացալ ա* (Բ):

ԹԷՇՏ *(պրս. tašt)* - *գ.* Մետաղե կոնք՝ լագան, որ օգտագործում են լողանալու, լվացք անելու կամ դոշաբ, մուրաբա եփելու համար: *...Պիրիս ա մին ղըզդան ճուր իփիս, այուն թէշտումը տինիս, ըծէս յըրա, սաբավ լըղըցընէս ա* (ՀԺՀ, V, 548):

ԹԷՌ *(գրբ. թեռ (բրդե թել)* - *գ.* 1. Մազից կամ բրդից գործած խուրջինի նման մեծ պարկ: *Սիսը'ռը ածում ա թէռին մաչը, ղըրաղ տինում* (Ձ): 2. Բրդե ոլորած հաստ թել: *Չըվըլնէն թէռավ կըպստում ըն* (Բ):

ԹԷՎ / ԹԸ'Վ *(գրբ. թեւ)* - *գ.* 1. Թռչունների եւ միջատների թռչելու գործարանը, թեւ: *Աստուծ վէր սաղ հիյվընանուն ա ղուշէրէն ըստը'ղծալ ա պըրծալ, տակէն էրկու թէվ ա մընացալ, մին էլ մի կիճի ջանմդանք'* (ԱԱ, 69): 2. Մարդու ձեռք, բազուկ, կուռ: *Պիրում ըն էտ ըխճըկանը թէվէրը կըտօրում, խօխան մաշկէն կապում, տանան տանս քըցում* (Ձ): 3. *փխբ. տե՛ս* ԹԷՎՔ: 4. Գութանի մետաղյա թիակաձեւ մասը, որ խոփի պատռած հողը մի կողմ է շուռ տալիս: *Կ'ուրանէն թէվը վէր ըրկաթէ չիլանվ, էրկան տէմ չի կէնալ* (Բ): 5. Ինքնաթիռի թափքի կողքերի երկու ելուստներից յուրաքանչյուրը: *Սամալօտը տըրաքում ա, թէվին մինը ըդնում ա Ղուլգ'ասանց բօստանը* (Ձ): 6. Կողմ: *Աչի թէվին յըրա ք'ինամ ըն, տը'սնըմ մին մէյդ վէր ընգած* (Ձ): 7. Ելուստներ ունեցող գործիքների ելուստներից յուրաքանչյուրը: *Յըբին թէվը կօտըրալ ա* (Բ): 8. *փխբ.* Բացօթյա հոտի պահապան շան հսկելու տեղը: *Չօբանը կ'ամ ա, տը'սնում շօնը ուրան թէվումը չի* (Ձ): 9. *տե՛ս* ԹԷՌ(2): *Էյդիշինանցէ Մուլքունց Վանին քըշէրըն ըրանզումը տը'սնում ա, վէր բէղէն տէղը մին թէվ կընանչի յա փըսած* (ՀԺՀ, V, 600):

- Թէվ անէլ - 1. Թեւավոր դառնալ, թեւերը աճել: *Էտ դուշին ճօտէրը վէր թէվ ըն անում, թըռչում ըն, ըտըղատ քՒնամ:* 2. Քաջալերվել, ոգեւորվել: *Էտ տըղան վէր ըտի յա ասում, պառավը թէվ ա անում* (Զ):

- Թէվ անէլ-թըռչիլ - 1. Շատ ուրախանալ, ցնծալ, ուրախությունից թռչկոտել: *Մարյանը խաբարը ըսկանում ա, թէվ ա անում, թա թըռչի* (Զ): 2. Մեկի պաշտպանությունը՝ հովանավորությունը զգալ, դրանով խրախուսվել՝ հպարտանալ: *Հօրը անավ խօխան թէվ ա անում, թա թըռչի* (Բ):

- Թէվէրը խաչ անէլ/խաչիլ - *տե՛ս* Ծը՛րքէրը խաչ անէլ:

- Թէվը նի մընանէլ - Մեկին թեւանցուկ անել: *Մարթին թէվը նի մըտած՝ կՒամ ա* (Բ):

- Թէվը քաշ ըրած կՒալ - Ասվում է, երբ անցանկալի մեկը առանց հրավերի հյուր է գալիս: *Հինչ ա, թա ինքՒը ըտըրա սիրում չար, էտ էլ էզգանան թէվը քաշ ըրած կՒամ ար տահանց տօն* (Զ):

- Թէվ տալ - Մեկին խրախուսել, քաջալերել: ...*ԿընէգՒըն ա, վը՛ր տըրան թէվ ա տամ...* (ՀԺՀ, VII, 346):

- Թէվ տինիլ - Բացօթյա հոտի պահապան շների համար հսկելու տեղ նշանակել: *Չօբանը շընէրէն թէվ ա տինում, ինքՒը նի մընանում ծըմակը* (Զ):

- Թըվէրէն անէլ - Թոնթորալ, մրթմրթալ: *Հիբը էտ տօնը մին ղօնաղ ար կՒամ, էտ հարթանը թըվէրէն ար անում* (Զ):

- Թըվէրէն տակը անէլ - Ուշադրությամբ՝ հոգատարությամբ խնամել, հովանավորել, պաշտպանել: *Ղօրփէրը ախպօրը յէթիմնուն թըվէրէն տակըն ա ընէս, մընծըցընէս* (Բ):

ԹԷՎԱՆ/ԹԸ՛ՎԱՆ - *տե՛ս* ԹԸՎԱՎՈՒՐ:

ԹԷՎԱՆԻՍ/ԹԸ՛ՎԱՆԻՍ - *գ.* Տումեցի հայտնի խմբապետ Թեւան Ստեփանյանի համախոհ: *ՀենգՒ օրանը յը՛տը թէվանիստնէն կՒաս ըն, կամունիստնէն վախան նը՛հը՛տ փըխչիս ըն* (Զ):

ԹԷՎ-ԹԷԳԻՆՔ - *տե՛ս* ԹԷԳԻՆՔ(2):

- Թէվ-թէգՒնք ինիլ - *տե՛ս* ԹէգՒնք ինիլ:

ԹԷՎ-ԹԷՎ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թէվ-թէվ անել - *տե՛ս* Թէվ անէլ-թըռչիլ:

ԹԷՎՈՒՐ - *տե՛ս* ԹԱՎԻՒՐ:

ԹԷՎԻՒՐ - *տե՛ս* ԹԱՎԻՒՐ:

ԹԷՎՔ/ԹԸ՛ՎՔ - *գ.* Հագուստի թեւ՝ այն մասը, որի մեջ հագցվում է մարդու թեւը: *Պէնջակը կՒը՛նում ա, տը՛սնում թէվքէրը կարճ* (Բ):

- Թէվքան կըտըրէլ, փէշկին քըցիլ - Աղքատ լինել, տնտեսելով մի կերպ ապրել: *Ընդրրա ըշտըղան ա՞ փուլ. թէվքան կըտըրում ա, փէշկին քըցՒում* (Զ):

- Թէվքէրը յը՛ր քաշիլ/յը՛ր քըշտիլ - Թեւքերը վեր բարձրացնել եւ ջանադրաբար որեւէ բան անել: *Էտ ախճիգՒը թէվքէրը յը՛ր ա քաշՒում, պըռավէն տօնը մին լՒավ թըմիզցընում* (Զ):

ԹԷՎՔԱՇ/ԹԸ՛ՎՔԱՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թէվքաշ անէլ/տալ - 1. Թեւից քաշելով՝ տանել: *Ուլջաղանց Սուրէնը մին օր Առըստամէն թէվքաշ ա անում ՒՒրանց տօն* (Զ): 2. Մի կերպ որեւէ տեղից դուրս պրծնել, աննկատ հեռանալ: *Մացակը մին թանՒրանվ թէվքաշ ա տամ, ըտըղատ քՒինամ* (Զ):

ԹԷՐ *(գրբ. թերթ (տերեւ)* - *գ.* 1. Ծաղկի թերթ: *ԳՒՒլին թէրէրը պէցվալ ա* (Բ): 2. Կանաչեղենի կանաչ մասը՝ ցողունը եւ տերեւները: *Մին թէր կընանչի չի կա, թա օտինքՒ* (Բ): 3. Ընդհանրապես տերեւ: *Արաշտ ըրավ, ծըռէրէն թէրէրը չուրըցըրավ* (Բ):

- Թէրը թէրին հըսցընէլ - *տե՛ս* Թաթը կօթէն հըսցընէլ:

- Թէր տալ - Շերամորդին թթենու տերեւներով կերակրել: *Վէրթանը էն ա տՒուզնը, տիրը՛վը պըրծալ ա, կա վէջ, թա թէր տան* (Զ):

- Թէր քըցիլ - 1. Նոր տերեւ ծլել: *Կընանչին թէր ա քըցՒլ* (Բ): 2. Թթենու հասուն տերեւները իրարից հեռու շարել, որպեսզի շերամորդը սնվի: *Թէր ըն քըցՒում, վէրթնէրը զիրՒվ ըն տը՛ռնում* (Զ):

ԹԷՐԱՏ - *տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

ԹԷՐԹ - *գ.* Շան լեզու: *Շօնը թէրթը տՒուս ա օնում, ըղաչանք անում* (Զ):

ԹԷՐԹԷԼ - *նբ.* Լիզել (շան մասին): *Մին զը՛ռ շօն կՒամ ա, էտ տաշտը թէրթում* (Զ):

ԹԷՐԽԱՇ *(գրբ. թերխաշ)* - *ած.* 1. Կիսաեփ, թերախորով: *Մին ըստաքան արաղ ա խըմում, մին թէրխաշ ծու օտում, տՒուս կՒամ* (Բ): 2. *փխբ.* Անկատար, կիսատ, թերի: *Կօրծը թօղնում ա թէրխաշ, ինքՒը քՒինամ* (Զ): 3. *փխբ.* Shաս, անփորձ, խամ: *Էտ ջՒահիլը հՒլՒ թէրխաշ ա* (Բ): 4. *փխբ.* Կիսագժտված, կիսախռով, հարաբերությունները մասնակիորեն խզած: *ՄըրթըկընէգՒ ՒուրՒուր նը՛հը՛տ թէրխաշ ըն* (Բ):

ԹԷՐՀԱՎԱՔ - *ած.* Թերի, կիսատ, լրիվությամբ չհավաքված՝ չարված՝ չեփած եւն: *Էտ թէրհավաք կօրծը վէշ մինը վըզՒվ չօնում, վէր պըրծընընէ* (Զ):

ԹԷՐՀԱՏ - *տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

ԹԷՓ/ԹԸ՛Փ *(գրբ. թեփ (ցորենի եւ ձկան թեփ)* - *գ.* 1. Ցորենի եւ այլ հատիկների արտաքին նուրբ կեղեւը: *Ցօրէնը թակում ըն, թէփը տՒուս օնում, մին լՒավ կուրկուտ քըցՒում* (Զ): 2. Հացահատիկի աղալուց այլուրից զատված մանրուքը, որ օգտագործում են որպես անասնակեր: *Ըստի վէր քՒինի, թէփը ըլլէրան թինգՒըլՒն ա* (Բ): 3. Փայտի սղոցելուց առաջացած մանրուք: *ԴՒլգՒՒրը թէփը ածում ա փիչը, նի կընցընում* (Բ): 4. Գլխի՝ մարմնի մեռած բջիջներից առաջացած կեղեւանք: *Կընլխէն թէփը կարըմ չի կընտըրցընէ* (Բ): 5. Ձկան՝ օձի եւն մաշկը պատող եղջերային թեփուկը: *Չօբանը ծՒուկնէն մաշկան մին թէփ ա պուք տամ, կօխում ջուբը* (Զ): 6. Ծաղկաբողբոջը պատող պատիճը, որ ծաղիկը բացվելուց հետո թափվում է: *Ծառը վէր ծաղկում ա, թէփը վէր ա տը՛ռնում* (Բ): 7. Թիթեռի թեւերի փոշենման ծածկույթը: *Թիթը՛ռը փըռնում ա, թէփը քըսվում ա ծը՛ռքէրը* (Բ): 8. *փխբ.* Ձյան մանր փաթիլ: *ՅէրգՒինքը թէփ ա վէր ածում:*

- Թէփու նըման վէր տալ - Ծառերը՝ թփերը առատ պտուղ բռնել: *ԽընձՒրէն թէփու նըման վէր ա տըվալ* (Բ):

ԹԷՓԸՌ - *տե՛ս* ԹԷՓՈՒՌ:

ԹԷՓԸՌԷԼ/ԹԷՓՌԷԼ/ԹԸ՛ՓԸՌԷԼ/ԹԸ՛ՓՈՒԷԼ *(գրբ. փետեմ)* - *նբ.* 1. Փետուրները հանել, փետրահան անել: *ԻՒՒնքՒը դուշը մօրթում ա, թը՛փռըմ, տընըմ ըստօլին...* (ՀԺՀ, 214): 2. *փխբ.* Կողոպտել, թալանել, մեկի ունեցվածքը խլել: *Ղաչաղնէն ըտըրան ծըմակումը փըռնում ըն, թէփըռում, յը՛տնան էլ թակում, հըղէ տինՒում* (Զ): 3. *փխբ.* Տարբեր խաղերում, հատկապես թղթախաղում մեկին հաղթելով՝ փողերը կրել: *Կարտէ յըն տամ, Ծիլկանը ըտահանց թէփըռում ա* (Զ):

- Թէփըռած հավ - *հեգն.* Սնանկացած՝ խեղճացած մարդ: *Էտ թէփըռած հավը օգՒում ա էտ դաշՒանգՒ ըմճըկանը նը՛հը՛տ փըսակվէ* (Զ):

ԹԷՓԸՌՎԷԼ/ԹԸ՛ՓԸՌՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԷՓԸՌԷԼ-ի:

ԹԷՓՇԻ - *տե՛ս* ԹԱԲԱՂ:

ԹԷՓՈՒԷԼ - *տե՛ս* ԹԷՓԸՌԷԼ:

ԹԷՓՈՒԿ/ԹԸ՛ՓՈՒԿ *(գրբ. թեփուկ (մարմնի քոս)* - *տե՛ս* ԹԷՓ:

ԹԷՓՈՒՂ - *տե՛ս* ԹՕՓՈՒՂ:

ԹԷՓՈՒՌ/ԹԷՓԸՌ/ԹԸ՛ՓՈՒՌ/ԹԸ՛ՓԸՌ *(գրբ. փետուր)* - 1. *գ.* Թռչունների մաշկը ծածկող եղջրանյութե սնամեջ ձողիկ, որ երկու կողմից ծածկված է խիտ աճած

մազիկներով՝ փետուր: *Հազարան բըլ-բՀլը մին թէփուռ ա տամ էտ տըղէն, վէր տանէ քըսէ հօրը աշկէրը, հանցու սըղա-նա* (Ձ): 2. *ած. փխբ.* Շատ թեթեւ: *Էնքան թիթը՝կ ա, հանց ա թէփուռ ինի* (Բ):

- Թէփըռէն տալ - *տե՛ս* Թըփըռ-թէ-փուռ անէլ:

- Թէփուռը կուրցընէլ - Անհետացնել, անհետ կորցնել: *Ըտի ըտըրա թէփուռը կուրցընում ըն* (Բ):

- Թէփուռը մըլլըցընէլ/քամուն տալ - Ջախջախել, ոչնչացնել: *Ըտը՝ղ մէրունք թուրքէրէն թէփուռը մըլլըցընում ըն* (Ձ):

- Թէփուռնէն ծՀու շինիլ - Շատ ձու ա-ծել (հավերի մասին): *Էտ հավէրը թէ-փուռնէն ծՀու յըն շինում, ամմա պառավը էլիա մըրթմըրթամ ա, թա.-* Հավէրըս ծՀու *չըն ածում* (Ձ):

ԹԷՓՈՒՏ/ԹԸ՝ՓՈՒՏ *(գրբ. թեփոտ)* - *ած.* Թեփ ունեցող, թեփավոր: *Կ՚իրմի-ռախէ՚ծը թէփուտ ծՀուկուն չի* (Բ): 2. Թե-փով կեղտոտված, վրան թեփ նստած՝ քսված: *Թէփուտ ծըրքէրավ խըմօր ա հունցէս* (Բ):

ԹԷՔ՚/ԹԸ՝Քյ - Գործածվում է կա-պակցությունների մեջ:

- Թէք՚ ըղնէլ - 1. Թեքվել, մի կողմի վրա հակվել: *Էշին պէռնը թէք՚ ա ընգալ* (Բ): 2. Մի կողմի վրա հենված՝ պառկել, կիսապառկել: *Ըտըրանք էնքան ԱնպէՀ ին, վը՝ր սաղ վախտը թէք՚ ընգած ին, տէղընէրան տՀուրՀուր չին կ՚ԱմԱ* (ԼՂԲ, 352): 3. Հիվանդանալ: *Սօջին մըրսալ ա, թէք՚ ընգալ* (Բ):

- Թէք՚ տալ - Թեքվել: *Թաքավէրին տըղան թէք՚ տըվավ բիդի Հէլահէլ թա-քավէրին պալատը* (ՀԺՀ, V, 209):

- Թէք՚ քըցիլ - 1. Կողքի վրա թեքել, ծռել: *Էտ ըստօլբան թէք՚ ա քըցՀում, թօ-ղում ըտի* (Ձ): 2. Կողքի վրա պառկեց-նել: *Թաքավէրին ըտը՝ղ թէք՚ ըն քը-ցՀում, մարթ ղարկում դօխտըրէն հը՝-տան* (Ձ):

ԹԷՔՆԱԾՈՒ/ԹԷԿՆԱԾՈՒ - *գ.* Այն ան-ձը, որ նկատի է առնվում ընտրվելու կամ որեւէ պաշտոնում նշանակվելու համար: *Գ՚ուղապէտին թէքնածուն Քընթալաց Մաքսիմըն ա, բախտավար մը՝զ* (Բ):

ԹԸԲԸԼՂԷ - *տե՛ս* ԹԸԲԸՂԼԷ:

ԹԸԲԸԼՂՕՏ - *տե՛ս* ԹԸԲԸՂԼՕՏ:

ԹԸԲԸՂԼԷ/ԹԸԲԸԼՂԷ - *գ.* Կարմրա-նագգիների ընտանիքին պատկանող բույս՝ կարմրան, մոշամայրի: *Թըբըղ-լուն ճըղնէրան ծըխէվՀլ ըն շինում* (Բ):

ԹԸԲԸՂԼՕՏ/ԹԸԲԸԼՂՕՏ - *գ.* Շատ թբղլիներ աճած տեղ: *Էծէրը նի յըն տը՝ռնում թըբըղլօտը, նախըրչին կա-րում չի տՀուս անէ* (Ձ):

ԹԸՁ(Ձ)ԱՆԱԼ - *չբ.* 1. Նոր դառնալ, նորոգվել, թարմանալ: *Տօնը կըրասկա յըն տամ, թըզգԱնում ա* (Ձ): 2. Վերստին կրկնվել՝ դրսեւորվել: *Ըտըրա հիվընդո-թունը էլիա թըզգԱցալ ա* (Բ):

ԹԸՁ(Ձ)Ը-ԹԱՁ(Ձ)Ա/ԹԱՁ(Ձ)Ա-ԹԱՁ(Ձ)Ա - *տե՛ս* ԹԱՄ-ԹԱՁ(Ձ)Ա:

ԹԸՁ(Ձ)ԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՁ(Ձ)Ա-ՆԱԼ-ի:

ԹԸՁ(Ձ)ՕԹՈՒՆ - *գ.* Նոր լինելը, նոր վիճակը, թարմություն: *Ըտըրա շՀուրէրէն թըզգՕթունը լօխճին աշկը ծակում ա* (Ձ):

ԹԸՁԿԱԻՓ/ԹԸՁԿԷՓ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըզկաիփ տալ - Մարմանդ կրակի վրա կամաց-կամաց եփել: *Թանավը թըզկաիփ ըն տամ, վէր իլլԱ վէչ* (Բ):

ԹԸՁԿԷԼ - *տե՛ս* ՃԸԼՕՐԷԼ:

- Թըզկած պէխկ - *տե՛ս* ՃըլՕրած պէնՁԱր:

ԹԸՁԿԷՓ - *տե՛ս* ԹԸՁԿԱԻՓ:

ԹԸՁՆԱՆՈՒՑ - *տե՛ս* ԹԸՁՆ(ԸԼ)Ա-ՏԸ՝Ղ:

ԹԸՁՆ(ԸԼ)ԱՏԸ՝Ղ - Շան՝գայլի՝արջի եւն նստելու՝ պառկելու տեղ: *Շօնը վը՝ր շօն ա, ՀուրԱն թըզնըլատը՝ղը թԱմՀուզ ա պահում* (ԱԲԲ, 81):

ԹԸՁՆՕՏ - *տե՛ս* ԹՀՈՒՁՕՏ[1]:

ԹԸՁՆՕՏԷԼ - *չբ.* Շատերը եւ տար-բեր տեղերում պառկել՝ նստել (շների, գայլերի, արջերի, անարգաբար նաեւ մարդկանց մասին): *ՎըրսկընՆէն կ՚ամ ըն, տը՝սնում կ՚ՀՆէրը էտ գ՚օլէն քըշտէն թըզնօտած* (Ձ):

ԹԸՁՕՏ[1] - *տե՛ս* ԹՀՈՒՁՕՏ[1]:

ԹԸՁՕՏ[2] - *տե՛ս* ԹՀՈՒՁՕՏ[2]:

ԹԸՁՕՏԷԼ - *տե՛ս* ԹՀՈՒՁՕՏԷԼ:

ԹԸՁՕՏՎԷԼ - *տե՛ս* ԹՀՈՒՁՕՏՎԷԼ:

ԹԸ՝ՀՐԱՏ - *տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

ԹԸ՝Վ - *տե՛ս* ԹԷՎ:

ԹԸ՝ՎԱՆ - *տե՛ս* ԹԷՎԱՆ:

ԹԸ՝ՎԱՆԻՍ - *տե՛ս* ԹԷՎԱՆԻՍ:

ԹԸ՝ՎՔ - *տե՛ս* ԹԷՎՔ:

ԹԸ՝ՎՔԱԾ - *տե՛ս* ԹԷՎՔԱԾ:

ԹԸ՝Ր - *գ.* Գրաստի մեջքին դնելու մեծ խուրջին: *Թը՝ը քըցՀում ա ճՕրՀուն մաշկավը, հըղէ ինՀում* (Ձ):

ԹԸ՝Փ - *տե՛ս* ԹԷՓ:

ԹԸ՝ՓԸՌ - *տե՛ս* ԹԷՓՈՒՌ:

ԹԸ՝ՓԸՌԷԼ - *տե՛ս* ԹԷՓԸՌԷԼ:

ԹԸ՝ՓԸՌՎԷԼ - *տե՛ս* ԹԷՓԸՌՎԷԼ:

ԹԸ՝ՓՈՒԷԼ - *տե՛ս* ԹԷՓԸՌԷԼ:

ԹԸ՝ՓՈՒԿ - *տե՛ս* ԹԷՓՈՒԿ:

ԹԸ՝ՓՈՒՌ - *տե՛ս* ԹԷՓՈՒՌ:

ԹԸ՝ՓՈՒՏ - *տե՛ս* ԹԷՓՈՒՏ:

ԹԸ՝Ք - *տե՛ս* ԹԸՔ:

ԹԸ՝Քյ - *տե՛ս* ԹԷՔյ:

ԹԸԹԱԽԷԼ *(գրբ. թաթախեմ)* - *նբ.* 1. Հեղուկ՝ կիսահեղուկ՝ փոշենման նյութի մեջ մի բան մխրճել: *Յալլը՝խը թըթա-խում ա ըրաղէն մաչին, տինում քըթէն* (Ձ): 2. Վրան մի բան քսել, քսելով կեղ-տոտել: *Նի յա մընում կ՚ումը, շՕրէրը թը-րէք՚ավ թըթախում* (Բ): 3. *փխբ.* Մեկին որեւէ տհաճ՝ վնասակար գործի մեջ ներքաշել՝ խառնել: *Կ՚օղէրը էտ տըղէն էլ ըն թըթախում* (Ձ):

- Թըթախման քըշէր - Այն գիշերը, երբ պասը լուծու են: *Թըթախման քըշէրը ք՚ինամ ըն, տը՝սնում դէրը, մին իփԱծ հավ տիրԱծ ըռըշկին, օտում ա* (Ձ):

ԹԸԹԱԽՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԹԸԹԱ-ԽԷԼ-ի: *չբ.* 2. Ջատկի կամ ծննդյան պա-սը լուծել: *Ըտըրանք ուրխանում ըն, վէր թըթախվալ ըն* (Ձ): 3. Որեւէ ուտելիքից կամ խմիչքից քիչ ճաշակել, քիչ ուտել կամ կոնծել: *...Դէրէրան մին քանէնը օխտ ըն ըրալ, վէր ըռըվօտանց չըրու Հու-ռՀուգ՚Հունը կինավ թըթախվին* (ՁՏ, Ա, 76):

ԹԸԹԱՇՕՐ - *գ.* Նորածնի թեւերը կա-պելու՝ փաթաթելու շոր: *ԹըթաշՕրը յը՝տ ըն անում, խօխան ուրխանում ա* (Բ):

ԹԸԹԱՐԷԼ - *տե՛ս* ԹԸՐԹԷՐԻԼ:

ԹԸԹԱՐԻԼ - *տե՛ս* ԹԸՐԹԷՐԻԼ:

ԹԸԹԸՁԱՆԱԼ - *տե՛ս* ԹԻԹԸՁԱՆԱԼ:

ԹԸԹԸՁՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԻԹԸՁՑ(Ը)-ՆԷԼ:

ԹԸԹԸՁՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԻԹԸՁՕ-ԹՈՒՆ:

ԹԸԹԸԿ-ԹԱԹՈՒԿ/ԹԱԹՈՒԿ-ԹԱ-ԹՈՒԿ - *մ.* Փաթույթներով, փնջերով: *Թի-լէրը թըթըկ-թաթուկ տԱրսՀում ա սանդօ-ղումը* (Բ):

ԹԸԹԸՇ-ԹԱԹԱՇ/ԹԱԹԱՇ-ԹԱԹԱՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըթըշ-թաթաշ կ՚Ալ - Արագ-արագ՝ հապճեպ որեւէ բան անել: *Թըթըշ-թա-թաշ ա կ՚ամ, վէր մինչը՝վ մարթին կ՚ալը էտ գ՚ԱբԱն կ՚օրծէ* (Ձ):

ԹԸԹԸՎԱՆԱԼ - *տե՛ս* ԹԻԹԸՎԱՆԱԼ:

ԹԸԹԸՎՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԻԹԸՎ-Ց(Ը)ՆԷԼ:

ԹԸԹԸՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԻԹԸՎՕ-ԹՈՒՆ:

ԹԸԹԸՐՄԱՂԷ/ԹԻԹԸՐՄԱՂԷ - *գ.* Թե-փաթեւավոր միջատների ընդհանուր անվանումը՝ թիթեռ: *Թըթըրմաղէն ըղ-նում ա կինուն ամանը, մուրտառում* (Բ):

- Թըթըրմաղու ումբուր - Կարճատեւ կյանք: *Ախճիգ՚ը ասմա.- Մ՚ տըղա, յը՝ս թըթըրմաղու ումբուր օնիմ, ք՚ինի Հուրի-շին օգ՚ի* (Ձ):

ԹԸԹԸՓԷՉԱՆ - *տե՛ս* ԹԸԹԱՇՕՐ:

ԹԸԹՎԱՀԱՄ/ԹՈՒԹՎԱՀԱՄ *(գրբ. թթուահամ)* - 1. *գ.* Թթվի համ, թթու համ: *ԽուրԱգ՚ան թըթվահամ ա կ՚ամ* (Բ): 2. *տե՛ս* ԹԸԹՎԱԾ:

ԹԸԹՎԱԾ/ԹՈՒԹՎԱԾ - *ած.* Թեթեւ թթվություն ունեցող, քիչ թթու: *Թթվաշ*

խընձոր ա ըրցում աղտիրածէն մաչը, վէր համը տա (Ձ):

ԹԸԹՎԱՎԸՏ/ԹՈՒԹՎԱՎԸՏ - *գ.* Թթու նյութերի հոտ, թթվածության հոտ: *Խուրագ՝ան թըթավվը՝տ ա կ՝ամ, ածում ա շանը առաչը* (Ձ):

ԹԸԹՎԷԳ/ԹՈՒԹՎԷԳ *(գրբ. թթուիկ)* - *տե՛ս* ԹԸԹՎԱԾ:

ԹԸԹՎԷԼ/ԹՈՒԹՎԷԼ - *չբ.* 1. Խմորվել, թթու համ ստանալ: *Թթթը մինչը՝վ վէր թըթվէ վէչ, արաղ չը՝ն քաշիլ* (Բ): 2. Թթվահամ ստանալով՝ փչանալ: *Կաթնը վէր թըթվից, բիդի տէն ածիս* (Բ): 3. *փխբ.* Մռայլվել, խոժոռվել, տրամադրությունն ընկնել: *Էտ խէ ըտի թըթվալ ը՞ս, հինչ ա՞ պըտահալ* (Բ):

ԹԸԹՎԸ՝ՂԱՆ/ԹՈՒԹՎԸ՝ՂԱՆ - *գ.* Թթու դրած մթերքներ: *Տանը թըթվը՝ղանըն ա մինակ բոլ, էրո՞ւշ ուտէլի պէն չօնին* (Բ):

ԹԸԹՎԸԼԸՎԱ - *տե՛ս* ԿԸՏՎԸԼԸՎԱ:

ԹԸԹՎԸՑ(Ը)ՆԷԼ/ԹՈՒԹՎԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թթուեցուցանեմ)* - *նբ.* ԹԸԹՎԷԼ-ի:

ԹԸԹՎՕԹՈՒՆ/ԹՈՒԹՎՕԹՈՒՆ *(գրբ. թթուութիւն)* - *գ.* 1. Թթու լինելը, թթու համը: *ՇըլՕրէն թըթվօթունը գ՝ըվա՞լին անա շատ ա* (Բ): 2. Թթվայնություն, որեւէ նյութի մեջ եղած թթվի աստիճանը՝ քանակը: *Մածուն ա օտում, վէր ժուլութկէն թըթվօթունը անց կէնա* (Բ):

ԹԸԹՕ/ԹՈՒԹՕ *(գրբ. թթու)* - *ած.* 1. Քացախի՝ կիտրոնի եւն համի նման համ ունեցող: *Խընձորը օտում ա, տը՝սնըմ թըթօ յա* (Բ): 2. *փխբ.* Դառնացնող, վշտացնող, վիրավորական: *Ըսկէսուրը ըտըրան սաղ գ՝անքումը մին թըթօ խօսկ էլ չի ասալ* (Բ): 3. *գ.* Թթու դրած ուտելեղեն: *Թըթօն ըրաղու լ՝ավ մնգա՞ յա* (Բ): 4. Թթու պտուղներից պատրաստած ջրալի ճաշ: *Այան թըթօ յա իփո՞ւմ, տամ թուռնէրէն* (Ձ):

- Թըթօն խըմէլ - Մեկից կամ մի բանից տուժած լինել, նրա վատ արարքներին, բացասական կողմերին իրազեկ լինել: *Յը՝ս ըտըրա թըթօն խըմալ ըմ* (Բ):

- Թըթօ ճո՞ւր - Ածխաթթու պարունակող հանքային ջուր: *Ղարաբաղ Տումէ էլ կա թըթօ ճո՞ւր, Քուլատակ էլ, Լիսագօր էլ, Ըստէփանակ՝ը՝ռտ էլ, Ք՝ա՞լբաջա՞ր էլ, Լաչին էլ* (Բ):

- Թըթօ յա, թան չի, ամէն մարթու պէն չի - Բոլորին հասանելի չէ, բարդ բան է, ամեն ոք չի կարող կատարել՝ գլուխ հանել: *Ճը՝ղաց շինիլը տիժէր կօրծ ա, թըթօ յա, թան չի, ամէն մարթու պէն չի* (Ձ):

- Թըթօ շիլըպըլիթ - Շատ թթու: *Մէհէտ կըծում ա, թա.- Էս թըթօ շիլըպիլիթը հունց ը՞ք օտում* (Ձ):

- Թըթօ տալ - Տհաճություն պատճառել, տանջել, չարչարել: *Էտ հարթնը տը՝նըցուց թըթօ յա տամ սաղ օրը, վէշ մինըն էլ կարում չի ծըպուտ անէ* (Ձ):

ԹԸԹՕ-ԿԸԾՕ/ԿԸԾՕ-ԹԸԹՕ/ԹՈՒԹՕ-ԿՈՒԾՕ/ԿՈՒԾՕ-ԹՈՒԹՕ - 1. *ած.* Եվ թթու, եւ կծու համ ունեցող: *Թըթօ-կըծօ խօրա՞գ՝ը ամմէն մարթ չի սիրո՞ւմ* (Բ): 2. *գ.* Թթու եւ կծու ուտելեղեն: *Թըթօ-կըծօն ըտըրանց ըստօլէն միշտ ինո՞ւմ ար* (Ձ):

ԹԸԹՕՏ[1] - *տե՛ս* ԹՈՒԹՕՏ:

ԹԸԹՕՏ[2] - *տե՛ս* ԹՕԹՈՒՏ:

ԹԸԺ(Ժ)Ը-ԹԱԺ(Ժ)Ա/ԹԱԺ(Ժ)Ա-ԹԱԺ(Ժ)Ա - *ած.* 1. Բոլորովին թարմ, թոնրից նոր հանած (հացի մասին): *Թըժժը-թաժժա հացէրը նի յա տամ խուրջինը, ք՝ինամ* (Ձ): 2. Շատ մատղաշ, նոր ծլած: *Թըրթընջուկէն թըժժը-թաժժա զօխէրը ծընէփակէն նըհը՝տ խըրավում ըն* (Բ):

ԹԸԺ(Ժ)ԸՀԱՑԷԼ - *չբ.* Թարմանալ, թարմությունը վերականգնել: *Բարիշկան ք՝ը՝ցալ ա կըրօրտ, թըժժըհացալ* (Բ):

ԹԸԼԱՆԷԼ - *նբ.* 1. Կողոպտել, ավարի ենթարկել: *Նի յըն մընէս շէնը, ժուդուվուրթէն կուտուրէս, իլա՞ծ-չիլա՞ծը թըլընէս* (Ձ): 2. *փխբ.* Գռփել, յուրացնել: *Էտ նախագան կալխօզը թըլանալ ա* (Բ):

ԹԸԼԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԸԼԱՆԷԼ-ի:

ԹԸԼԱՇԱ - *տե՛ս* ԹԱԼԱՇԱ:

ԹԸԼԱՇԱ-ԹԸԼԱՇԱ - *տե՛ս* ԹԱԼԱՇԱ-ԹԱԼԱՇԱ:

ԹԸԼԱՇԷԼ - *տե՛ս* Թալաշա-թալաշա անել:

ԹԸԼԸԽՈՒԼ[1] - *տե՛ս* ԹԱԼՈՒԽՈՒԼ[1]:

ԹԸԼԸՂՐԱՄ/ՏԷԼԷՂՐԱՄ *(ռուս. телеграмма, հուն. tēle+gramma)* - *գ.* Հեռագրային հաղորդում, հեռագիր: *Մին օր էլ թըլըղըրամ ա ըստանում, վէր հա՞ը մը՝ռալ ա* (Ձ):

- Թըլըղրամ անէլ/տալ - Հեռագրով որեւէ բան հաղորդել, հեռագրել: *Սօր Մուսկօվա թըլըղրամ ա ըրալ, թա հալա քինըմ ըմ Պէտըրպօլկ, ընդէղան քինալու ըմ Վէննա...* (ՋՏ, Ա, 149):

ԹԸԼԸՆԱՏԸ՝Ղ - *գ.* Թալանելու՝ թալանված տեղ՝ վայր: *Ըտըրանց թըլընատը՝ղը էլ էտ կուճի շէնը ա իլալ* (Ձ):

ԹԸԼԸՆ-ԹԱԼԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըլընն-թալան անէլ - *նբ.* Շատ թալանել, շատ բան թալանել: *Թըլընն-թալան ըն անում, պէռնում ծիյէրէն, ք՝ինամ* (Ձ):

ԹԸԼԸՍԻՄ/ԹԻԼԻՍԻՄ *(արաբ. tilism, թրք. tilisim)* - 1. *գ.* Թալիսման, հուռութք, կախարդություն: *Էտ մարթը ըսկանում ա, թա մին հէռու տը՝ղ մին պառավ կա, թիլիսմներավ ամմէն հինչ կարող ա անէ, վէր խօխա ինի* (ՀԺՀ, VII, 11): 2. *ած. փխբ.* Զարմանահրաշ, կախարդական: *...Քըշէրվա կէսին իրէք ախճիգ՝ կ՝ամ ըն մին թիլիսիմ ճըպատավ թըխում հանգ՝իստին քարէն վը՝ղէն, մէյդը տո՞ւս օնում...* (ՆԼՂԺԲ, 52):

- Թըլըսիմ անէլ - Կախարդություն անել, կախարդական զորությամբ որեւէ բան անել՝ դյութել, հմայել եւն: *Իմաստունը պըլանը քաշում ա, թիլիսիմչին էլ թիլիսիմ ա անում* (ՀԱԲ, 15, 22):

ԹԸԼԸՍԻՄԷԼ/ԹԻԼԻՍԻՄԷԼ - *նբ. տե՛ս* Թըլըսիմ անէլ:

ԹԸԼԸՍԻՄՉԻ/ԹԻԼԻՍԻՄՉԻ *(թրք. tilisimči)* - *ած.* Կախարդություն անող, կախարդ: *Մահմադը օգում ա, թա տէղան յէր կէնա, էն թիլիսիմչին թիլիսիմ անում, կարում չի...* (ՀԱԲ, 15, 21):

ԹԸԼԸՍ(Մ)ՕՐԷԼ/ԹԻԼԻՍ(Մ)ՕՐԷԼ - *նբ.* Կեղծ խոսքերով խաբել՝ համոզել: *Էտ էրկու ժ՝ուլիգ՝ տըղան խասա աքօրը թըլըսմօրում ըն, էծը իժժան կ՝ինավ ինք՝ օնում* (Ձ):

ԹԸԼՈՒԲԱ՞ՆԴԻ - *տե՛ս* ԹՈՒԼՈՒԲԱ՞ՆԴԻ:

ԹԸԼՈՒԼԲԱ՞ՆԴԻ - *տե՛ս* ԹՈՒԼՈՒԼԲԱ՞ՆԴԻ:

ԹԸԼՈՒԿԱՆԷ - *տե՛ս* ԹՈՒԼՈՒԿԱՆԷ:

ԹԸԼՈՒԿԱՆԷ - *տե՛ս* ԹՈՒԼՈՒԿԱՆԷ:

ԹԸԽ - *գ.* Հարված, զարկ: *Ըռաչի թըխը Ք՝ա՞փա՞գին ա ինգ՝ա՞լ* (ԱԱ, 41):

ԹԸԽԷԼ *(գրբ. թխեմ)* - *նբ.* 1. Խմորից որեւէ բան՝ հաց, գաթա, լավաշ եւն եփել: *Ամո՞ւն կընէգ՝ը հիբը օգըմ ա սիրականը պը՝էրի ո՞ւրա՞ն կօշտը, հավ ա իփըմ, լա՞վ-լա՞վ պէնէր ա թըխըմ...* (ՀԺՀ, V, 577): 2. Հարվածել, զարկել, խփել: *Հ՞ուլ՞ուվէրը՞ն էտ էշին մին դ՞օնո՞ւմ թըխէս ա, տըռնաս ա հա՞մա՞ն մարթը* (ՆԼՂԺԲ, 38): 3. Ամրացնել, փակցնել: *Տախտակը թըխում ա, էտ ծակը ծասկում* (Բ): 4. Կրակել, գնդակ արձակել: *Թըվանգ՝ավ թըխում ըն, էտ դուշին ըսպանում* (Ձ): *չբ.* 5. Բաբախել: *Սը՝րտը ճէլի-ճէլի յա թըխում* (Բ): 6. *փխբ.* Արագ մի տեղ գնալ՝ նետվել: *...Կընգանը ասում ա.- Էշին պէռը յէր կալ՝, յէս թըխիմ Շուշվա՝ կամ* (ԲՀԲ, 210):

- Թըխէ՛ կ՝ա - Ձեռքդ տո՛ւր՝ համաձայն եմ, համամիտ ենք: *Ա՞լիշանը ասմա.- Կա՞ր՞աբեդ, յը՝ս էլ ըմ էտ մըթկէն, թըխէ՛ կ՝ա* (Ձ):

- Թըխից դըբանէս - Ասում են այն ժամանակ, երբ որեւէ բան վայելելուց՝ ճաշակելուց գերագույն հաճույք են ստանում: *Նինէլ աքէրը ասմա.- Նո՛ւրա, յաման ժինգ՝ալավ հաց ար, կէրէ, թըխից դըբանէս* (Բ):

ԹԸԽԷԼ-ԸՆՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* 1. Որեւէ

տարածություն, առանց կանգ առնելու, արագ թափով կտրել-անցնել: *Էտ ծիյավէրը մին մընուտումը էտ սարը թըխում ա-ընցնում* (Ձ): 2. Մեկին որեւէ բանում գերազանցել: *Թա հա՛րը կ՚օղ ա, խօխան էլ հօրը թըխալ ա-ընցալ* (Բ):

ԹԸԽԾ(Ը)ՆԷԼ/ԹԸԽՑ(Ը)ՆԷԼ/ԹԸԴՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* 1. Իր ջերմությունը հաղորդել, ջերմացնել: *Ա՛ղը՞վը՛ն ա, վէր կարում ա լօխճին թըխծընէ* (Բ): 2. Կրակի կամ այլ բանի ազդեցությամբ տաք դարձնել, տաքության՝ ջերմության աստիճանը բարձրացնել: *Կընէգ՚ը ճ՚ուր ա տընում, թըխցընում, մարթին լըողցընում...* (ՀԱԲ, 15, 122): 3. *փխբ.* Հրապուրել, սիրահարեցնել: *Էտ ախճիգ՚ը էս տըղէն ու՛ր՚ն յըրա շատ ա թըխծընում* (Ձ): 4. *փխբ.* Մի տեղին հարվածել՝ այնպես, որ կարմրի՝ տաքանա: *Էտ խօնցան հու պըլօթուն ար անում, մարը մըհակավ վը՞ռը թըխծընում ար* (Ձ):

ԹԸԽԾԸՆՎԷԼ/ԹԸԽՑԸՆՎԷԼ/ԹԸԴՑԸՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԸԽԾԸՆԷԼ-ի:

ԹԸԽԿ - *տե՛ս* ԴԸԽԿ:

ԹԸԽԿԱԹԸԽԿ - *տե՛ս* ԴԸԽԿԱԴԸԽԿ:

ԹԸԽԿԱԼ - *տե՛ս* ԴԸԽԿԱԼ:

ԹԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ԴԸԽԿԱԼԻ:

ԹԸԽԿԷ - *գ.* Թխկազգիների ընտանիքին պատկանող ծառ՝ թխկի: *Թըխկէ ծառէն փա՛ղը պէնդ փա՛ղ ա* (Բ):

ԹԸԽԿԸԼՕԼԷ - *տե՛ս* Կ՚ՈՒՂԼԸԿԱՆԷ:

ԹԸԽԿԸՀԱՆԷԼ - *նբ.* Սանրով մազերի թնջուկը հանել, խճճված մազերը սանրելով՝ հարդարել: *Պիրո՛ւմ ա էտ ըխճըկանը լըողցընում, մազ՚էրը թըխկըհանում* (Ձ):

ԹԸԽԿԸՏԷՆԱԿ - *տե՛ս* ՏԸԽԿԸՏԷՆԱԿ:

ԹԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸԽԿԹԸԽԿԱԼ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿԱԼ:

ԹԸԽԿԹԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿԱԼԻ:

ԹԸԽԿԹԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸԽԿԹԸԽԿՕՆ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿՕՆ:

ԹԸԽԿԹԸԽԿՕՑ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿՕՑ:

ԹԸԽԿՕՆ - *տե՛ս* ԴԸԽԿՕՆ:

ԹԸԽԿՕՑ - *տե՛ս* ԴԸԽԿՕՑ:

ԹԸԽԿՕՉԻ - *տե՛ս* ԴՕՉԻ:

ԹԸԽԿՕՏ - *գ.* Շատ թխկիներ աճած տեղ: *Էտ կ՚ումաշը մօրթում ըն, տանում թըխկօտումը կ՚ը՞ղում* (Ձ):

ԹԸԽՄԱ *(արաբ. tuxma, պրս. toxme (ստամոքսի խցանում, դժվարամարսություն)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըխմա ըղնէլ - *տե՛ս* ԲԸՔ՚ՆԸՎԷԼ: *...Հանց յըրա ըն պըրծընըմ, հըխռօտում, վէր թըխմա ըն ընգնըմ, խըռխըռօցը քըցըմ* (ՋՏ, Բ, 141):

ԹԸԽՄԸԽԱԼ - *գ.* Մրսելուց հիվանդության նշաններ ցույց տալ, թեթեւակի հիվանդանալ: *Թըխմըխամ ա, հա՛լբա՛թ մըրսալ ա* (Բ):

ԹԸԽՄԸԽՕՆ - *գ.* Մրսելուց հիվանդության նշաններ ցույց տալը, թեթեւակի հիվանդանալը: *Թըխմըխօնը ըտըրանա անպակաս ա* (Բ):

- Թըխմըխօնը յը՞ր ինիլ - *տե՛ս* ԹԸԽՄԸԽԱԼ:

ԹԸԽՄԸՉԱՐ/ԹՕԽՄԱՉԱՐ - *գ.* 1. Թթենու տեսակ, որի տերեւներով կերակրում են շերամորդին: *Թըխմըչարէն տիրըվնէն կակօղ ա ինո՛ւմ* (Բ): 2. Նման թթենիների այգի: *Թըխմըչարը սաղ կըտօրում ըն, էլիա հէրիք՚ չի անում, ճըրընէն կըտըրած շահ թըթօտըն էլ ըն կըտօրում, տամ վէրթնանը, վէր բըրամա անէ* (Ձ):

ԹԸԽՄԻԾ *(թրք. təkanmak (խցվել, ծակը փակվել)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թըխմիշ ըղնէլ/ինիլ - *տե՛ս* ԲԸՔ՚ՆԸՎԷԼ: *Տահանք բիրո՛ղի օտում ըն, խըմում, թըխմիշ ինո՛ւմ...* (ՀԺՀ, VII, 315):

ԹԸԽՆԸՎԷԼ - *տե՛ս* ԲԸՔ՚ՆԸՎԷԼ:

ԹԸԽՊԷԼ - *տե՛ս* ԹՈՒԽՊԷԼ:

ԹԸԽՊԸԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ԹՈՒԽՊԸԿԱ՛ԼԻԼ:

ԹԸԽՊՕՏ - *տե՛ս* ԹՈՒԽՊՕՏ:

ԹԸԽՊՕՏԷԼ - *տե՛ս* ԹՈՒԽՊՕՏԷԼ:

ԹԸԽՎԱՍԿ - *գ.* Խմորով ու յուղով՝ շաքարով՝ ձվով եւ այլ համեմունքներով պատրաստված ամեն տեսակ ուտելեղենների ընդհանուր անվանումը՝ թխվածք: *Թաքավէրէն տըղան մօրը թըխվասկ ա թըխէլ տամ* (ՀԺՀ, V, 384):

ԹԸԽՎԷԼ[1] - *կբ. եւ չբ.* ԹԸԽԷԼ-ի:

ԹԸԽՎԷԼ[2]/ԹԸԽՈՒՎԷԼ - *չբ.* 1. Շոգից կամ հիվանդությունից բերանը չորանալ՝ ցամաքել: *Էնքան տաք ա, պէրանըս թըխվալ ա* (Բ): 2. *փխբ.* Մի բան շատ կարոտելուց՝ փափագելուց նեղվել, խիստ կարոտ զգալ: *Հիշկան վախտ ա՝ տանձ չըմ կէրալ, թըխվալ ըմ* (Ձ):

ԹԸԽՎԸՍԿԸ՞ՂԱՆ - *գ.* Ձանազան տեսակի թխվածքներ: *Յա՛շիգը պէնում ըն, տը՞սնում թըխվըսկըղանավ լըցած* (Ձ):

ԹԸԽՏԱՃԱ՛Ճ/ՏԸԽՏԱՃԱ՛Ճ - *գ.* Հարսի ծնողների կողմից եկեղեցական պատարագից հետո հարսնախմբին մատուցվող ճաշ: *Յը՞խծան կ՚ամ ըն, թըխտաճա՛ճը օտում* (Ձ):

ԹԸԽՏԱՏԸ՞Ղ/ՏԸԽՏԱՏԸ՞Ղ - *գ.* Այն տեղը, որտեղ դրված է թախտը: *Լըհա՛ վէր տըռնէն չըխչըխկօցը լըսըմ ըն, էտ տըղան նի յա մընում տըխտատը՞ղը* (ՀԺՀ, V, 62):

ԹԸԽՏԸՄՈՒՐԱՄԱՆ/ԹՈՒԽՏՈՒՄՈՒՐԱՄԱՆ/ՏԸԽՏԸՄՈՒՐԱՄԱՆ - *գ.* Թթխմորի աման, թթխմորը պահելու աման: *Կատուն թըխտըմուրամանը վէր ա քըցո՛ւմ, կօտըրում* (Ձ):

ԹԸԽՏԸՄՕՐ/ԹՈՒԽՏՈՒՄՕՐ/ՏԸԽՏԸՄՕՐ - *գ.* Թթվեցրած խմոր, որ շաղախված ալյուրի մեջ են դնում՝ թթվեցնելու համար: *Հինչ ա ը՞ղրօժը բուլացալ ա, էլ թըխտըմօրավ խըմօր հունցօղ չի կա* (Բ):

ԹԸԽՏԸՏԷՆԱԿ - *տե՛ս* ՏԸԽԿԸՏԷՆԱԿ:

ԹԸԽՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԸԽԾ(Ը)ՆԷԼ:

ԹԸԽՑԸՆՎԷԼ - *տե՛ս* ԹԸԽԾԸՆՎԷԼ:

ԹԸԽՈՒՎԷԼ - *տե՛ս* ԹԸԽՎԷԼ[2]:

ԹԸԽՕՑ/ԹՈՒԽՕՑ - *գ.* Ընկույզի կանաչ կեղեւով, ժանգով եւ այլ նյութերով պատրաստվող մուգ գույնի ներկ: *Թըխօց ըն շինում, թիլէրը ըռա՛նգ՚ տամ* (Ձ):

ԹԸԿԸՂԸՄՓՕՑ - *տե՛ս* ԹԸԿԸ(Լ)ՄԸՀԱԿ:

ԹԸԿԸԹԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըկըթակ ինիլ - Ծեծվելու՝ ծեծ ուտելու վիճակում լինել: *Էտ տըղան թըկըթակ ար, վէր հընգէրունքը յը՞կէն* (Բ):

ԹԸԿԸԼԿՕՐԷԼ - *տե՛ս* ԹԸԿԼԸԿՕՐԷԼ:

ԹԸԿԸԼԿՕՐՎԷԼ - *տե՛ս* ԹԸԿԼԸԿՕՐՎԷԼ:

ԹԸԿԸ(Լ)ՄԸՀԱԿ - *գ.* Ծեծկռտուք, տուրուդմփոց: *...Մարթին թըկըմըհակավ ղըրկէլիս ա իլա՛լ ծըմակ, փա՛ղա-մա՛ղա պիրիլ տալիս, ծըխէլիս, յօլա ք՚ընա՛լիս* (ՀԺՀ, V, 502):

- Թըկը(լ)մըհակ անէլ - Իրար ծեծել, վիճել, տուրուդմփոց բարձրացնել: *Մըրթըկընէգ՚ սաղ օրը թըկըմըհակ ըն անում* (Բ):

ԹԸԿԼԸԿՕՐԷԼ/ԹԸԿԸԼԿՕՐԷԼ - *նբ.* Շատ ծեծել, սրան-նրան՝ այս ու այն բաները ծեծել՝ թակել: *Թօխպէն ծէրքան ջանա յէկած շինա՛ցիք՚, լի՛, ըսքըսում ըն թըկըլկօրէլ...* (ԼՂԲՔ, 259):

ԹԸԿԼԸԿՕՐՎԷԼ/ԹԸԿԸԼԿՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԸԿԼԸԿՕՐԷԼ-ի:

ԹԸԿՕՎԻ - *ածական, մ.* Նարդախաղի տեսակ, որի ժամանակ կարելի է հակառակորդի կենտ քարը զարկել՝ խփել: *Նըստում ըն, չըքէրանը քըշէրը թըկօվի նա՛ղդի խաղ անում* (Ձ):

ԹԸԿՕՏԷԼ - *տե՛ս* ԹԸԿԼԸԿՕՐԷԼ:

ԹԸԿՕՏՎԷԼ - *տե՛ս* ԹԸԿԼԸԿՕՐՎԷԼ:

ԹԸՀԼՈ - *տե՛ս* ԹԼՀՈԸ:

ԹԸՀԼՈՒՆ - *տե՛ս* ԹԼՀՈՒՆ:

ԹԸՀԼՈՍԸՋ - *տե՛ս* ԹԼՀՈԸՍԸՋ:

ԹԸՂԱՂՎՈՒՍԿ - *տե՛ս* ԹԸՂԱՂՈՒՍԿ:

ԹԸՂԱՂՎՈՒՑ - *տե՛ս* ԹԸՂԱՂՈՒՍԿ:

ԹԸՂԱՂՈՒՍԿ/ԹԸՂԱՂՎՈՒՍԿ/ԹԸՂԱՂՈՒՑ/ԹԸՂԱՂՎՈՒՑ - *գ.* Թաղած՝ թաքցրած որեւէ բան՝ պահուստ, գանձ եւն: *Արչը ասմա.- Մա՛ռթ ախպէր, ծըմակումը մին թըղաղուսկ օնիմ, յը՞ք՝ ք՛ինինք՛ տո՛ւս օնինք՛* (Ձ):

- Թըղաղուսկ անէլ - Որեւէ բան թաղել՝ թաքցնել: *Էտ պօլիգ՛ը ծառէն տակէն թըղաղուսկ ըն անում, փախչո՛ւմ* (Ձ):

ԹԸՂԱՂՈՒՑ - *տե՛ս* ԹԸՂԱՂՈՒՍԿ:

ԹԸՂԱՄԱՉ - *գ.* Թաղի միջին մասը՝ կենտրոնը: *Ըտըրանք թըղըմաչումը վըհաքվում ըն, յըխըբօղազ անում* (Ձ):

ԹԸՂԱՎՈՒՐ[1] - *ած.* Թաղածածկ, կամարաձեւ առաստաղ ունեցող: *Շինըթկընէրումը թըղավուր տընէր շատ կա* (Բ):

ԹԸՂԱՎՈՒՐ[2] - *տե՛ս* ԹԸՂԱՑԷ:

ԹԸՂԱՑԷ - *ած., գ.* Միեւնույն թաղի բնակիչ: *Բափկէնին թըղացէք՛ կ՛ամ ըն ք՛ըմա՛գ՛ անում, տօնը շինո՛ւմ ա* (Բ):

ԹԸՂԸ՞ՆԷ - *գ.* Մանր եւ կանաչ պտուղներով խնձորենու տեսակ: *Թըղը՞նէն պէրքատու խընձո՛ր է յա* (Բ):

ԹԸՂԸԹԱՂԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըղըթաղէ անէլ - *տե՛ս* ԹԸՂԹԸՂՕՐԷԼ:

ԹԸՂԸԿԸՌԸ՞Վ - *գ.* Տարբեր թաղերի բնակչության միջեւ ծագած կռիվ: *Ա-րաշտ տարէն ճո՛ւրը վէր պըկասում ա, շէնըմը թըղըկըռը՞վը ըսքըսում ա* (Բ):

ԹԸՂԹԸՂՕՏԷԼ - *տե՛ս* ԹԸՂԹԸՂՕՐԷԼ:

ԹԸՂԹԸՂՕՏՎԷԼ - *տե՛ս* ԹԸՂԹԸՂՕՐՎԷԼ:

ԹԸՂԹԸՂՕՐԷԼ - *նբ.* Շատ բան՝ շատերին թաղել, այստեղ-այնտեղ թաղել՝ թաքցնել: *Պիրո՛ւմ ըն իլա՛ծ-չիլա՛ծը ծը-ռէրէն տըկէրքէն թըղթըղօրում, ք՛ինա՛մ* (Ձ):

ԹԸՂԹԸՂՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԸՂԹԸՂՕՐԷԼ-ի:

ԹԸՂԼԸՂՕՐԷԼ - *տե՛ս* ԹԸՂԹԸՂՕՐԷԼ:

ԹԸՂԼԸՂՕՐՎԷԼ - *տե՛ս* ԹԸՂԹԸՂՕՐՎԷԼ:

ԹԸՂՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԸԽԾ(Ը)ՆԷԼ:

ԹԸՂՑԸՆՎԷԼ - *տե՛ս* ԹԸԽԾԸՆՎԷԼ:

ԹԸՂՈՒԾԻ/ԹԷՂՄԸՇԻ *(գրբ. թեղօշ)* - *գ.* Կաղնու նման մեծ ծառատեսակ՝ մուգ կանաչ տերեւներով: *Մարտակէրտա ծը-մըկնումը կընդըմընդ թըղուշի էլ կա* (Բ):

ԹԸՄԱՄԷԼ - *չբ.* Լրիվ դառնալ, լրանալ, ամբողջանալ, ավարտին հասնել: *Վէց ամէսը վէր թըմամում ա, էտ առուտուրականը մը՞ծ փոդէր ա տամ, էտ ըխճըկանը յօր օնում...* (ՀԺՀ, V, 60):

ԹԸՄԱ՞ՇԱ՞/ԹԻՄԱ՞ՇԱ՞/ԹԱՄԱՇԱ *(արաբ., պրս. tāmaša, արաբ., թրք. temaša)* - 1. *գ.* Ներկայացում, դիտելու տեսարան: *Թաքավէրը տո՛ւս ա կ՛ամ, էտ ղօչը պը՞ռիլ տամ ո՛ւրա՛ն հայաթը թըմաշի հը՞տի* (ՀԺՀ, V, 38): 2. Հրաշք, չտեսնված բան: *Ըտըրան էլ մին դաշանգ՛ ծի յա ինո՛ւմ՝ մին հըրը՞դան, մին թըմա՛շա՛* (Ձ):

- Թըմա՛շա՛ անէլ - Նայել, դիտել: *Ուռթանա քը՞շէրավ թըմա՛շա՛ ընէլիս վախտը մին թաշիր բէրթին ըռաչավը ընցնէլիս ա ինո՛ւմ* (ՆԼՂԺԲ, 68):

ԹԸՄԱ՞ՇՉԻ/ԹԱՄԱՇՉԻ *(թրք. tamašači)* - *տե՛ս* ԹԸՄԸՇԱՎԷՐ: *Թամաշչի խալխը՞ն էլ էտ դա՛ռրը՞մը մաշալլա կընչէլավ, ղօչչաղ ղօչին յօր կօնին, տօն տանին...* (ՋՏ, Բ, 231):

ԹԸՄԲԻԼԱ՞ՆԱԼ/ԹԻՄԲԻԼԱ՞ՆԱԼ - *չբ.* Ծույլ դառնալ, ծույլի հատկություն ձեռք բերել: *Ըտի էտ ռաշիդ հարթը ըտըրանց տանը էնքան կէնում ա, ինք՛ըն էլ ա թըմբըլանում* (Ձ):

ԹԸՄԲԻԼԽԱՆԱ/ԹԻՄԲԻԼԽԱՆԱ *(թրք. tənbəlxana)* - *գ.* Ծույլերի կացարան՝ տուն՝ հավաքատեղի: *Ջա՛հիլ տըղէրք ըն, ամմա սաղ օրը, էտ թըմբըլխանումը հըվաքված, կարտէ յըն տամ* (Բ):

ԹԸՄԲԻԼՑ(Ը)ՆԷԼ/ԹԻՄԲԻԼՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՄԲԻԼԱ՞ՆԱԼ-ի:

ԹԸՄԲԻԼՕ՞ԹՈՒՆ/ԹԻՄԲԻԼՕ՞ԹՈՒՆ - *գ.* Ծուլություն, ծույլ լինելը: *Ըշխարքէս տօնը թըմբիլօ՞թունընը ա քանդո՛ւմ* (Բ):

- Թըմբիլօ՞թուն անէլ - Ծուլանալ, ծուլորեն աշխատել: *Թըմբիլօ՞թուն ըրավ, արտը մընաց հընձիլո՛ւ* (Բ):

ԹԸՄԸՀՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՇԿԸԾԸԿՕԹՈՒՆ:

ԹԸՄԸՄՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՄԱՄԷԼ-ի:

ԹԸՄԸՇԱ՞ՎԷՐ/ԹԻՄԻՇԱՎԷՐ - *ած., գ.* Հանդիսատես, դիտող: *Թըմը՞շա՛վէրնէն հըվաքվում ըն, ամմա հըրսանէք՛ը ըտի էլ ըսքըսում չի* (Ձ):

ԹԸՄԸՇԱ՞ՏԸ՞Ղ/ԹԻՄԻՇԱ՞ՏԸ՞Ղ - *տե՛ս* ԹԸՄԱ՞ՇԱ՞(1):

ԹԸՄԹԱՄՆԷԼ - *տե՛ս* ԹԸՐԹԱՄՆԵԼ:

ԹԸՄԻՋԻԼ/ԹԻՄԻՋԻԼ - *տե՛ս* ԹԸՄԻՋՎԻԼ:

ԹԸՄԻՋՄԸՋԻ/ԹԻՄԻՋՄԻՋԻ - *ած.* Շատ մաքրասեր: *Լ՛ավը էն ա՝ կընէգ՛ը կ՛էշ ինի, ամմա թըմիզմըզի, քանց դաշանգ՛, ամմա յը՞խտուտ* (Բ):

ԹԸՄԻՋՎԻԼ/ԹԻՄԻՋՎԻԼ - *չբ.* 1. Մաքուր դառնալ, մաքրվել: *Ճո՛ւրը վը՞ր թըմիզվըմ ա, լօխ ժօղովուրթը ո՛ւրա՛նց կօժէրը լըցնըմ ըն, օրախ-օրախ ճո՛ւր տանըմ* (ՀԺՀ, V, 22): 2. Ավելորդ՝ անպետք մասերը՝ տարրերը հեռացվել: *Խըխալո՛ւմ ըն, ցօրէնը թիմիզվում ա* (Ձ): 3. Որեւէ խանգարող՝ կուտակված բան, արգելակող հանգամանք վերանալ: *Հա՛զո՛ւմ ա, պօկը թըմիզվում ա, ըսքըսում ա խաղ ասէլը* (Ձ): 4. Ամբողջությամբ սպառվել, վերջանալ: *Իզէն հո՛ւր տօն ղօնաղ ա ք՛ինամ, էտ տանը կինին, արաղը թըմիզվում ա* (Ձ):

ԹԸՄԻՋՑ(Ը)ՆԷԼ/ԹԻՄԻՋՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՄԻՋՎԻԼ-ի:

ԹԸՄԻՋՕԹՈՒՆ/ԹԻՄԻՋՕԹՈՒՆ - *գ.* 1. Մաքուր լինելը, մաքրություն: *Ըտըրանց տանը թըմիզօթունը լօխճին աշկէն փօշընն ա տը՞ռալ* (Բ): 2. Դատարկություն, ոչինչ կամ ոչ ոք չլինելը: *Կըլխոզէն պահէստըմը թըմիզօթուն ա, վէշ մին պէն կա վէչ* (Ձ):

ԹԸՄՓ - *տե՛ս* ԴԸՄՓ:

ԹԸՄՓԱԼ - *տե՛ս* ԴԸՄՓԱԼ:

ԹԸՄՓԱԼԻ - *տե՛ս* ԴԸՄՓԱԼԻ:

ԹԸՄՓԸԿԸԼՕԼԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըմփըկըլօլէ տալ - Գործը ի միջի այլոց՝ անորակ կատարել: *Ուստան տը՞սնում ա, վէր տընատարը ախմաղ ա, թըմփըկըլօլէ յա տամ, տանը պօլէրը մին օրումը թըխում* (Ձ):

ԹԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸՄՓԹԸՄՓԱԼ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓԱԼ:

ԹԸՄՓԹԸՄՓԱԼԻ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓԱԼԻ:

ԹԸՄՓԹԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸՄՓԹԸՄՓՕՆ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓՕՆ:

ԹԸՄՓԹԸՄՓՕՑ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓՕՑ:

ԹԸՄՓՕՆ - *տե՛ս* ԴԸՄՓՕՆ:

ԹԸՄՓՕՑ - *տե՛ս* ԴԸՄՓՕՑ:

ԹԸՅԱԿՕԹ/ԹԻՅԱԿՕԹ - *գ.* Բահի փայտե կոթը: *Հացցէ ծառան լ՛ավ թիյակօթ ա տը՞ռնում* (Բ):

ԹԸՅԱՊԷՆ/ԹԻՅԱՊԷՆ - *գ.* 1. Բահով կատարվող աշխատանք, հող փորելու՝ փխրեցնելու աշխատանք: *Կ՛արունքը վէր կ՛ամ ա, թըյապէնը ըսքըսում ա* (Բ): 2. *փխբ.* Ծանր՝ դժվարին աշխատանք: *Բօստան ճիրիլը էլ հօ թըյապէն չի՞, վէր վըստակիմ* (Բ):

ԹԸՅԱՎԷՐ/ԹԻՅԱՎԷՐ *(գրբ. թիաւոր)* - *ած., գ.* Բահով աշխատող (մարդ): *Հէնգ՛ թըյավէր ըն ըտըրանց բաղը պիհի՛ւմ, էլիա մին շէփտըմը կարում չըն պըրծընին* (Ձ):

ԹԸՅԱՔԱՄ/ԹԻՅԱՔԱՄ - *գ.* Թիով՝ հոսելիով թեղը քամուն տալը, էրանելը: *Լօխ պըրծընում ըն, մընամ ա թիյաքամը, մին էլ բ՚ուրդան թօռ ա նի օնում* (Ձ):

- Թըյաքամ անէլ/տալ - *նբ.* Թեղը թիով՝ հոսելիով քամուն տալ՝ հացահատիկը հարդից բաժանելու համար, էրանել: *Թըյաքամ անէլըն էլ ա փէշակ, ամմէն մարթ կարէլ չի անէ* (Ձ):

ԹԸՅՂԸ-ԹԱՅՂԻ/ԹԱՅՂԻ-ԹԱՅՂԻ - *մ.* Շտապ-շտապ, հապշտապ: *Էտ կընէգ՚ը թըյդը-թայդի բօխչան ք՚ինդիրան կապից, ինք՚ը կախ իլ՚ավ, վէր սիրականըն էլ պըցըրցընի* (ՀԺՀ, V, 522):

ԹԸՅՂԸՄԱՋԱԼ - *տե՛ս* ԹԸՅՂԸ-ԹԱՅՂԻ:

ԹԸՅՂԸՅԷՐԻՇ - *ած.* Արագաշարժ, արագաքայլ, արագոտն: *Մին թըյդըյէրիշ մարթ ըն ծէն տամ, էտ թօխտը դարկում վէզիրին* (Ձ):

ԹԸՅԸ-ԹԱՅԱ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թըյը-թայա անէլ/տալ - Խոտի եւ այլ բաների մեծ կույտեր՝ դեզեր կազմել, շատ բան դիզել, կուտակել: *Յըրա յըն տը՚ռնում էտ խօտը թըյը-թայա անում, մին օրումը պըրծընում* (Ձ):

ԹԸՅԸՌԸ՚Խ/ԹԻՅԸՌԸ՚Խ - *գ.* 1. Բահի բերանը՝ բահաձեւ մասը: *Թիյըռը՚խը վէր կօտըրից, Հէնդօն մընաց մ՚ա՚ալ* (Բ): 2. *փխբ.* Բահի բերանի տարողությամբ (հող, աղբ եւն): *Մին թըյըռը՚խ վը՚ղ ա ա՚ծում էտ ծըղէգ՚ին յըրա, վէր ցօրտ տանէ վէջ* (Բ):

ԹԸՆԱԿ՚ՕՂ - *գ., ած.* Մանր բաներ գողացող, մանրախնդիր գող: *Էտ թընակ՚օղը լօխճին աշկէն պըլօր ա* (Բ):

ԹԸՆԱԿՈՒՏ/ԹԸՆԱՔՈՒՏ - *ած.* Թանաքով կեղտոտված, վրան թանաք քսված: *Թընաքուտ շ՚ուրէրավ կ՚ամ ա տօն, մարը փըռնում ա թակում* (Բ):

ԹԸՆԱՄԱՆ - *գ.* Թանի աման, թան պահելու երկարավուն կճուճ: *Ճարը կըտըրած՝ վը՚սկէն ածում ա թընամանը* (Ձ):

ԹԸՆԱՔՈՒՏ - *տե՛ս* ԹԸՆԱԿՈՒՏ:

ԹԸՆԳԱԿԱՆ/ԹԻՆԳԱԿԱՆ - *ած.* 1. Թանկ գին ունեցող, թանկարժեք: *Մարթը տըրա հէտէ միշտ թինգ՚ական շ՚ըրէր ա ինք՚ օնում...* (ՀԺՀ, VII, 284): *փխբ.* Պատվավոր, պատվարժան: *Էտ արաղը Մարյանը պահում ար թընգ՚ական դունաղու հը՚տէ* (Ձ):

ԹԸՆԳԱՆԱԼ/ԹԻՆԳԱՆԱԼ - *տե՛ս* ԹԸՆԳԻԼ:

ԹԸՆԳԱՆՈՒՑ/ԹԻՆԳԱՆՈՒՑ - *տե՛ս* ԹԸՆԳԱԿԱՆ:

ԹԸՆԳԱՎՈՒՆ/ԹԻՆԳԱՎՈՒՆ - *ած.* Մի քիչ՝ որոշ չափով թանկ: *Թընգ՚ավուն շալվար ա իք՚ կալ՚ալ* (Բ):

ԹԸՆԳԸԲԱՋԱՐ/ԹԻՆԳԸԲԱՋԱՐ - *տե՛ս* ԹԸՆԳԸՄԱԼ(Ա):

ԹԸՆԳԸՄԱԼ(Ա)/ԹԻՆԳԸՄԱԼ(Ա) - *ած.* 1. Իր ապրանքը թանկ վաճառող, գնի մեջ զիջումներ չանող (մասնավոր առեւտուր անողների մասին): *Մէս ծըխուղնէրէն մաչին ամէնաթընգ՚ըմալան Վաղօն ար* (Ձ): 2. Իր աշխատանքի դիմաց բարձր վարձատրություն պահանջող (արհեստավորների, բանվորների եւն մասին): *Միհէնգ՚վա դ՚ուլգ՚ա՚նէն լօխ թընգ՚ըմալա յըն* (Բ):

ԹԸՆԳԸՑ(Ը)ՆԷԼ/ԹԻՆԳԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՆԳԻԼ-ի:

ԹԸՆԳԻԼ/ԹԻՆԳԻԼ - *չբ.* Թանկանալ, գինը բարձրանալ, թանկ դառնալ: *Խը՚ղճ ժըղօվուրթը հունց ա՚պըրին, ամէն հինչը թընգ՚ա՚լ ա* (Բ):

ԹԸՆԳ՚ՕԹՈՒՆ/ԹԻՆԳ՚ՕԹՈՒՆ *(գրբ. թանկութիւն)* - *գ.* Գների բարձր աստիճանը՝ թանկություն: *Թընգ՚օթունը շատ տօն կը՚ընքանդի* (Բ):

- Թընգ՚օթուն ըղնէլ - Ապրանքների գները բարձրանալ, ամեն ինչ թանկ դառնալ: *Կը՚ռը՚վը ըսքըսից, յէրգ՚իրը թընգ՚օթուն ընգավ* (Բ):

- Թընգ՚օթուն քըցիլ - Ապրանքների գները բարձրացնել: *Աշխարքըս թընգ՚օթուն քըցօ՚ղը առուտուրականնէն ըն* (Բ):

ԹԸՆԴԱԼ *(գրբ. թնդամ)* - *տե՛ս* ԴԸՂԸՐԴԱԼ:

ԹԸՆԸԹԱԹԱԽ - *ած.* 1. Թանի մեջ թաթախված, թանոտված: *Թընըթաթախ սիրը՚կը մըզ՚ում ա, թ՚ա՚ռ տամ* (Բ): 2. *փխբ.* Բոլորովին թարմ՝ խնոցուց նոր հանած (կարագի մասին): *Թընըթաթախ յը՚ղը քըսում ըն հացը, ուտէլավ ք՚ինամ* (Ձ):

ԹԸՆԸԹԸԹՕ - *տե՛ս* ՄԸԾՆԱՃ՚ԻՐ:

ԹԸՆԸԽԱՇՈՒ - *գ.* 1. *տե՛ս* ԹԱՆԱՎ: 2. *տե՛ս* ԽԸՆԸԽԱՇՈՒ: 3. *գ. փխբ.* Չնչին օգուտ, շահ: *Էտ կօրծումը ըսկի թընըխաշու չի կա* (Բ): 4. Կիսատ-պռատ արված գործ: *Սաբավ տօն ա շինա՚լ, թընըխաշու վա ըրալ, նի մըտալ մաչը* (Բ):

ԹԸՆԸԽԱՌ(Ն)Ը - *ած.* Թանի հետ խառնված: *Ա՚զին էտ թընըխառնը ճիրին մաչը մին կից պըրինձ ա քըցիս, իփիս, տաս խօնցը, սուսավ ընէս* (Ձ):

ԹԸՆԸԽԱՐԱՎ *(գրբ. թերխորով (թերխաշ)* - *գ.* Լրիվ չխաշված՝ թերխաշ ձու: *Հ՚ար ու վէրթի էն ըն ընում թընըխարավ ուտէյիս* (ՆԱԲ, 101):

- Թընըխարավ անէլ - Ձուն լրիվ չխաշել, կիսաեփ անել: *Պիրո՚ում ա թըյդը-թայդի թընըխարավ անում, տամ դունըղնէրէն* (Բ):

- Թընըխըրավու չօփ - Շատ նիհար, վտիտ: *Էրկու խօխա օնէ, ճօխտըն էլ թընըխըրավու չօփ* (Բ):

ԹԸՆԸԿԱՄԱՆ/ԹԸՆԸՔԱՄԱՆ - *գ.* Փոքրիկ անոթ, որի մեջ լցնում են թանաքը: *Մըհէնգ՚վա ըշկօլնէրումը էլ թընըկաման պինըցընօղ չի կա* (Բ):

ԹԸՆԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ԹԸՆԸԹԱԹԱԽ:

ԹԸՆԸՊԷՆՁ՚ԱՐ - *տե՛ս* ԹԱՆԱՎ:

ԹԸՆԸՓԸՐԹ՚ԻՇ - *գ.* Թանի մեջ հաց, ինչպես նաեւ վարունգ, կանաչեղեն բրդելով՝ պատրաստվող ուտելիք: *Ամը՚ռնը թընըփըրթ՚ուշը դարաբաղցուն հը՚տէ լ՚ազ՚ա՚թ ա ին՚ում* (Բ):

ԹԸՆԸՔԱՄԱՆ - *տե՛ս* ԹԸՆԸԿԱՄԱՆ:

ԹԸՆԸՔԸՍԱԿ - *գ.* 1. Թանը քամելու տոպրակ՝ քսակ: *Թանը ածում ըն թընըքըսակը, քամում, չուրաթան շինա՚ում* (Բ): 2. *փխբ.* Փոքրիկ տոպրակ՝ քսակ: *Ծատօրը ցօրէնը ածում ա էրկու թընըքըսակ, պէռնում էշին, ք՚ինամ ճէղաց* (Ձ):

ԹԸՆԹԸԼՕՇ(Ի)/ԹԱՆԹԱԼՕՇ/ԹԸՆԹՕԼԱՇ - *տե՛ս* ՍԻԼԼԱ՚:

- Թընթըլօշ(ի) տալ/ուտըցընէլ - *տե՛ս* Սիլլա՚ տալ: *Տա էտ դ՚ըվին վը՚ր մէհէտ թընթըլօշի յա տամ, օխտը հէտ կըլըկօնձի յա տամ* (ՀԺՀ, VII, 86):

ԹԸՆԹԸԼՕՇԷԼ - *նբ. տե՛ս* Թընթըլօշ(ի) տալ:

ԹԸՆԹԸՌՆԷԼ - *չբ.* 1. Կնճռապատվել, խորշոմապատվել: *Հ՚ալ՚ա՚ իցցուն տըրը՚կան կա վէջ, ամմա իրը՚սը թընթըռնալ ա* (Բ): 2. Մռայլվել, խոժոռվել: *Մին թընթըռնած կընէգ՚ ա կ՚ամ, տահանց տանում* (Ձ):

ԹԸՆԹՕԼԱՇ - *տե՛ս* ԹԸՆԹԸԼՕՇ:

ԹԸՆԹՕՐԱԼ/ԹԸՆԹՕՐԷԼ/ԹԸՐԹՕՐԱԼ/ԹԸՐԹՕՐԷԼ - *չբ.* Տրտնջալ, փնթփնթալ, նվնվալ: *Շէնին ամմէնահարուստը ինք՚ըն ա, էլիա սաղ օրը թընթօրում ա* (Բ):

ԹԸՆԹՕՐԱՆՔ/ԹԸՐԹՕՐԱՆՔ - *գ.* Տրտունջ, փնթփնթոց, նվնվոց: *Ըտըրա թընթօրանքը լօխճին զահլ՚ան տարալ ա* (Բ):

- Թընթօրանք տալ - Մեկի վրա հանդիմանությամբ՝ դժգոհությամբ մրթմրթալ: *Կընդըմընդ ըսկէսուր ա, վէր ի՚ուրա՚ն հըրթէրէն թընթօրանք չի տամ* (Բ):

ԹԸՆԹՕՐԷԼ - *տե՛ս* ԹԸՆԹՕՐԱԼ:

ԹԸՆԿԹԸՆԿԱԼ *(հ.ե. *(s)ten-)* - *չբ.* Տեւականորեն կամ հաճախակի լաց ձեւացնել, առանց արտասուքի ընդհատ-ընդհատ լացի ձայն հանել: *Էտ խօխան սաղ օրը թընկթընկամ ար* (Ձ):

ԹԸՆՁԸՐԱՆԱԼ - *տե՛ս* ԹԸՆՁԸՐԷԼ:

ԹԸՆՁԸՐԷԼ/ԹԸՆՁԸՐԱՆԱԼ *(գրբ. թանձրանամ)* - *չբ.* Խտանալ, թանձր

դառնալ: *Բանքմանզը բիդի էնքան իփիս, վէր թընձրրէ* (Բ):

ԹԸՆՁԸՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թանձրացուցանեմ)* - *նբ.* ԹԸՆՁԸՐԷԼ-ի:

ԹԸՆՉԱԼ *(գրբ. թանչեմ)* - *չբ. տե՛ս* Թանչին տալ: *Սա ամէն պէն մուռանում ա, լըհա ինդի թընչալավ վազ ա տամ, կամ...* (ՀԱԲ, 15, 107):

ԹԸՆՉԸՆՆՓԱՆ - *տե՛ս* ԹԱՆՉՈՒՑ:

ԹԸՆՉԿԸՀԱՆ - *տե՛ս* ԹԱԽԿԻՉ:

ԹԸՆՉՕՑ - *տե՛ս* ԹԱՆՉՈՒՑ:

ԹԸՆՔԱ - *տե՛ս* ԹԻՆՔԱ:

ԹԸՇԱՆԱԿ - *գ.* Չար աչքից տուժածին՝ հիվանդին բուժելու սնոտիապաշտական միջոց. կրակից հատ-հատ ունելիով հանում են պողերը, վրան թքում, հիվանդի գլխավերեւով պտտում եւ գցում ջրով լի թասի մեջ՝ յուրաքանչյուրի հետ տալով հավանական աչքով տվածներից մեկի անունը: Երբ լսվում է թշշոցը, իբր դրա հետ էլ թշշում ու վերանում է չար աչքը: Վերջում այդ ջրից քսում են տուժածի երեսին, որից իբր նա առողջանում է: *Թըշանակը պառավ կընանէքըն ըն անում* (Բ):

ԹԸՇԸՆԱԿԷԼ/ԹԸՇՆԱԿԷԼ - *չբ.* 1. Գունատվել, սփրթնել: *Մին օր ըխճըկանը մարը կամ ա պալատը, տըսնում ախճիգը թըշընակած* (ՀԺՀ, VII, 47): 2. Ուռչել, այտուցվել: *Ծըրքը թըշընակում ա, վահար քընցում* (Բ):

ԹԸՇԹԸՇԱԼ - *չբ.* Թշթշոց հանել՝ արձակել: *Չայդանը թըշթըշամ ա* (Բ):

ԹԸՇԹԸՇԱԼԻ - *ած.* Թշթշալով, թշթշոց հանելով: *Էտ ղազանին մէչին էլ օխտը կօվ ա իփում պըլթպըլթալի, հանա թըշթըշալի էլ ղըրղնէրան վէր տըռնըմ* (ՀԺՀ, V, 203):

ԹԸՇԹԸՇՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՇԹԸՇԱԼ-ի:

ԹԸՇԹԸՇՕՆ - *գ.* 1. Ջուրը՝ այրվող փայտը՝ շիկացած մետաղը եւն ջրի մեջ սուզելուց լսվող ձայնը: *Ճուրը ածում ըն կըրակէն յըրա, թըշթըշօնը պիցըրանում ա* (Բ): 2. Ջրի եռալուց կամ թաց փայտի այրվելուց լսվող ձայնը: *Ճիրին թըշթըշօնը վէր ըսքըսըմ ա, ղօնաղը ուրխանում ա* (Ձ):

ԹԸՇԹԸՇՕՑ - *տե՛ս* ԹԸՇԹԸՇՕՆ:

ԹԸՇՆԱԾԱԿ - *գ.* 1. Շվիհի՝ սրինգի եւն վերին անցքը: *Թուրթանգին թըշնածակը մըծ ա* (Բ): 2. Հրացանի այն մասը, որի վրա հագցվում է հրապատիճը, եւ որի անցքով կայծը հաղորդվում է լիցքին: *Թըվանգին թըշնածակը ճէլլի-ճէլլի բիդի թըմըզցընիս* (Բ):

ԹԸՇՆԱԿԷԼ - *տե՛ս* ԹԸՇԸՆԱԿԷԼ:

ԹԸՇՆԱՄԻ *(գրբ. թշնամի)* - *տե՛ս* ԴՈՒՇՄԱՆ: *Վէր կամ ա տըսնըմ ընդէ-ղէրք լօխ արուն, գուդում ա, թա էտ տըղան ա ուրան թըշնամին...* (ՀԺՀ, V, 23):

ԹԸՇՆԷԼ - 1. *տե՛ս* ԹԸՇԸՆԱԿԷԼ: 2. *տե՛ս* ԹԸՌԸՄՕՇԿԷԼ:

ԹԸՇՇ - *ձ.* Թշշալու ձայնը: *Չայդանը իփում ա՝ թը՛շշ, թը՛շշ* (Բ):

ԹԸՇՇԱԼ - *տե՛ս* ԹԸՇԹԸՇԱԼ:

ԹԸՇՇԱԼԻ - *տե՛ս* ԹԸՇԹԸՇԱԼԻ:

ԹԸՇՇԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԸՇԹԸՇՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸՇՇՕՆ - *տե՛ս* ԹԸՇԹԸՇՕՆ:

ԹԸՇՇՕՑ - *տե՛ս* ԹԸՇԹԸՇՕՆ:

ԹԸՇՏԱՎԷՐ/ԹԻՇՏԱՎԷՐ - *ած.* Մետաղե կոնք՝ լագան ունեցող: *Կամ ըն, տըսնում՝ չօրքը թըշտավուր կընէգը ըտըղ բանքմանզ ըն իփում* (Ձ):

ԹԸՋԻՐՕԹՈՒՆ/ԹԱՋԻՐՕԹՈՒՆ/ԹԻՋԻՐՕԹՈՒՆ - *գ.* Խոշոր վաճառականի՝ առեւտրականի զբաղմունքը: *Թըջիրօթունը ըտըրանց ցըղէն տուված ա* (Բ):

ԹԸՌ/ԹԸՌՌ *(գրբ. թիռ (թռիչք)* - *ձ.* 1. Թռչելու ձայնը: *Մին էլ, թը՛ռռ, մին դուշ ա թընչում* (Բ): 2. Թռչուններին թռցնելու կանչ: *Թը՛ռ, ա՛ ծէտ, քինա՛ ըտըղան* (Ձ):

- Թըռ տալ - Որեւէ բան իրար ձեռքից խլելով՝ արագ գնել՝ վերցնել՝ սպառել: *Ճըղուպուրը տանում ա բազար, մին սըհաթումը թըռ ըն տամ* (Բ):

ԹԸՌԱՄԷԼ *(գրբ. թառամիմ)* - *տե՛ս* ԹԸՌԸՄՕՇԿԷԼ:

ԹԸՌԱՆՉԷԼ - *տե՛ս* ԹԸՌԱՆՉԻԼ:

ԹԸՌԱՆՉԻԼ/ԹԸՌԱՆՉԷԼ *(գրբ. թառանչեմ)* - *չբ. տե՛ս* Թառանչ քաշիլ:

ԹԸՌԸՀԱՆ - *տե՛ս* ԹԱՌԱՀԱԺ:

ԹԸՌԸՄԱՌ(Ի) - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թըռըմառ(ի) անել - Արագ սպառել՝ վերջացնել՝ վատնել: *Էնքան ապըրանքը մին օրըմը թըռըմառ ըրավ, տէրտակ նըստից* (Բ):

- Թըռըմառ(ի) ինիլ/տըռնալ - Արագ սպառվել՝ վերջանալ՝ վատնվել: *Ըտի էլ էտ բըդասըլ տըղէն դարդան էտ մարթին փուլէրը թըռըմառ իլավ* (Ձ):

ԹԸՌԸՄԱՍԿ/ԹԸՌՄԱՍԿ - *գ.* Կերվածի կամ խմվածի մնացորդ՝ ավելցուկ: *Ղունաղէն թըռըմասկը տամ ըն էտ ուզօղէն* (Ձ):

- Թըռըմասկ անել - Լրիվությամբ որեւէ բան չուտել՝ չխմել, մնացորդ՝ ավելցուկ թողնել: *Էտ մարթը հինչը օտում ար, թըռըմասկ ար անում* (Ձ):

ԹԸՌԸՄՕՇԿԷԼ/ԹԸՌՄՕՇԿԷԼ *(գրբ. թարշամիմ)* - *չբ.* 1. Թառամել, թոշնել: *...Ծօնը ասըմ ա.- Քըշէրավ շուտ յէր կըկէնաս, թըռմօշկած վարթէրը տէն կաճիս, թանգա վարթէր քաղիս...* (ՀԺՀ, V, 581): 2. *փխբ.* Կնճռոտվել, խորշոմել: *Ջահիլ կընէգ ա, ամմա իրըսը թըռըմօշկալ ա* (Բ): 3. *փխբ.* Աշխուժությունը կորցնել, եռանդից զրկվել, թուլանալ, խեղճանալ: *Ապան մըհէնգ ա թըռըմօշկալ, առաչ ազրահիլ ա իլալ* (Բ):

ԹԸՌԸՆՉ-ԹԱՌԱՆՉ/ԹԸՌԸՉ-ԹԱՌԱՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըռընչ-թառանչ կալ - Անընդհատ հոգոց հանել՝ հառաչել: *Էտ կընէգը վէր ըտի թըռընչ-թառանչ ա կամ, թաջիրը մին վըսկէ յա տամ* (Ձ):

ԹԸՌԸԾ-ՄԱՌԱԾ - *տե՛ս* ԹԸՌԸՄԱՌ(Ի):

ԹԸՌԸՇՆԷԼ/ԹԸՐԹԸՇՆԻԼ/ԹԸՌԹԸՇՆԻԼ - *չբ.* 1. Բարկությունից՝ հարբելուց՝ անքնությունից եւն դեմքը կարմրատակել: *Պըլին կըզնընվէլան նըհէտ թըռըշնից...* (ՀԺՀ, VI, 181): 2. Խմորը թթվել՝ ուռչել: *Թընխվասկէն խըմորը թըռըշնալ ա* (Բ): 3. *տե՛ս* ԹԸՌԸՄՕՇԿԷԼ(1, 2):

ԹԸՌԸՍԽԷԼ - *չբ.* 1. Հեղուկի մեջ երկար մնալուց կամ շատ խոնավանալուց փափկանալ եւ ուռչել: *Լօբին թըրչօց տիրին, թըռըսխից* (Բ): 2. Խմորը շատ թթվելուց՝ ուռչելուց հետո վար իջնել՝ սմքել: *Էտ խըմորը թըռըսխալ ա, խէ հացը թընխում չը՞ս* (Բ): 3. *փխբ.* Դառնանալ, տխուր լինել: *Էտ ախճիգը թըռըսխում ա, ըտըղ նըստում* (Ձ): 4. *փխբ.* Լաց լինելու տրամադիր լինել: *Էն ա թըռըսխած, լըհա վէր տըզ անիս, լանգ ա ինանգան* (Բ): 5. *փխբ.* Հնանալուց փափկել ու թառամել: *Մին թըռըսխած պէխկ ըն կըտըրում, մին բօթուլ արաղ խըմում* (Ձ):

ԹԸՌԸՍԽԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՌԸՍԽԷԼԻ:

ԹԸՌԸՍԽՕՏԷԼ - *չբ.* Շատերը կամ շատ բան թռսխել:

ԹԸՌԸ-ՎԸՌԻ/ԹԸՌԻ-ՎԸՌԻ - *ած.* 1. Անընդհատ եւ աննպատակ թռչկոտող: *Թըռը-վըռի հանէրը նի յըն տըռնում բաստանը, բարբաղ անում* (Ձ): 2. *փխբ.* Թեթեւսոլիկ, ոչ լրջմիտ, թեթեւամիտ: *Թըռը-վըռի հարթնէն վէշ մին ըսկէսուր էլ սիրիլ չի* (Բ):

- Թըռը-վըռի(ն) ըղնել - Աննպատակ շարժվել, ինչ անելը չիմանալ: *Մարթը վէր կամ ար տօն, էտ կընէգը վախան նըհէտ թըռը-վըռի յար ըղնում* (Ձ):

ԹԸՌԸՎՀԱԿ - *տե՛ս* ԹԸՌՎԸՀԱԿ:

ԹԸՌԸՎՀԱԿԷԼ - *տե՛ս* ԹԸՌՎԸՀԱԿԷԼ:

ԹԸՌԹԸՇՆԻԼ - *տե՛ս* ԹԸՌԸՇՆԷԼ:

ԹԸՌԹԸՌԱԼ/ԹԸՐԹԸՌԱԼ *(գրբ. թրթռեմ, թռթռեմ)* - *չբ.* 1. Արագ-արագ այս ու այն կողմ շարժվել՝ տատանվել: *Ծառէն տիրըվնէն քամուն անա թըռթը-*

ռամ ըն (Բ): 2. *փխբ.* Բաբախել, տրոփել, դողալ (սիրտը): *Վախան նըհը՝տ սը՝րտը թըրթըռամ ա* (Բ):

ԹԸՌԹԸՌԱԼԻ/ԹԸՐԹԸՌԱԼԻ - *մ.* 1. Արագ-արագ շարժվելով՝ տատանվելով: *Իսկի գ՝ուդում էլ չի, թա հունց ա թըռթըռալի կօրծ անըմ* (ՀԺՀ, V, 226): 2. Բաբախելով, տրոփելով, դողալով: *Սը՝րտը թըռթըռալի թըխում ա* (Ձ):

ԹԸՌԹԸՌԱՆ/ԹԸՐԹԸՌԱՆ - *տե՛ս* ԹԸՌԹԸՌԻԳ՝:

ԹԸՌԹԸՌԻԳ՝/ԹԸՐԹԸՌԻԳ՝ - *ած.* 1. Թրթռացող, թրթռուն: *Թըռթըռիգ՝ սա՛ս օնար Մուխանը* (Ձ): 2. *փխբ.* Ժիր, աշխույժ, կայտառ: *Թըռթըռիգ՝ ախճիգ՝ ա, լօխճին ք՝ը՝փը կ՝ամ ա նը՝ստա* (Բ):

ԹԸՌԹՕՌ - *տե՛ս* ԹԸՐԹՕՐ:

ԹԸՌԻ-ՎԸՌԻ - *տե՛ս* ԹԸՌԸ-ՎԸՌԻ:

ԹԸՌՀԱԹԸՌ/ԹԸՐՀԱԹԸՌ - 1. *տե՛ս* ԹԸՌԹԸՌԱԼԻ: 2. *մ.* Իրար հրմշտելով, իրար ձեռքից խլելով, արագ-արագ: *Էնքան մէսը թըռհաթըռ ինք՝ ըն օնում* (Ձ):

ԹԸՌՄԱՍԿ - *տե՛ս* ԹԸՌԸՄԱՍԿ:

ԹԸՌՄՕՇԿԷԼ - *տե՛ս* ԹԸՌԸՄՕՇԿԷԼ:

ԹԸՌՉԷԼ - *տե՛ս* ԹԸՌՉԻԼ[1]:

ԹԸՌՉԸԿԱՆ/ԹԸՌՉԿԱՆ - *ած.* 1. Թռչող, թռչել կարողացող: *Կախարթը ծը՝րքէն փա՛ղա՛վը թըխում ա, էտ թըռչըկան ղուշը էլ կարում չի թըռչի* (Ձ): 2. *փխբ.* Արագավազ: *Էլիա էտ տըղան սիմին ծիք՝ ա տամ, թըռչկան ծին կ՝ամ ա, յէր ա ինա՛ւմ, ք՝ինա՛ւմ...* (ՀԺՀ, V, 482): 3. *փխբ.* Ճարպիկ, արագաշարժ, արագ-արագ աշխատող: *Թըռչըկան մարթ ա, մին օրումը օխտը տըղըմարթու կօրծ ա անում* (Բ):

ԹԸՌՉԸԿՕՏԷԼ/ԹԸՌՉԿՕՏԷԼ - *չբ.* Ոստոստել, ցատկոտել: *Էտ չըխանց էլ հավը կարում չի թըռչի, լ՝ըհա ա՛ւրա՛ն տը՝ղը թըռչըկօտում ա* (Ձ):

ԹԸՌՉ(Ը)ՎԻԼ - *տե՛ս* ԹԸՐՉ(Ը)ՎԻԼ:

ԹԸՌՉԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թռուցանեմ)* - 1. *պբ.* ԹԸՌՉԻԼ[1]-ի: *նբ.* 2. Թեւերի վրա կրելով տանել: *Ջա՛ւմրո՛ւտ ղուշը էտ տըղէն թըռչըցընում ա, հըսցընում լա՛ւս աշխարքը* (Ձ): 3. Արագորեն՝ սրարշավ ընթացքով տանել: *Ծին թաքավէրին տըղէն թըռչըցընում ա, ըտըղատ հըռըցընում* (Ձ): 4. Կտրելով դեն գցել: *Տըղան մէհէտ թօրավը թըխում ա, դէվին իրը՝ք կըլօ՛խը թըռչըցընում* (Ձ): 5. Վերուվեր գցելով՝ խաղացնել: *Ապան թօռնանը թըռչըցընում ա* (Բ):

ԹԸՌՉԻԼ[1]/ԹԸՌՉԷԼ *(գրբ. թռչիմ)* - *չբ.* 1. Օդի միջով սլանալ՝ ընթանալ (թռչունը, ինքնաթիռը եւն): *Ղուշէր ըն տը՝ռնում տահանք, լօխ թըռչում, տ՝ուս տէռնում տաղատ* (ՀԱԲ, 15, 28): 2. *փխբ.* Արագորեն ընթանալ՝ սուրալ՝ վազել՝ սլանալ: *Էտ ծին մին մընուտումը թըռչո՛ւմ ա տըղէն կօշտը* (Ձ): 3. *փխբ.* Արագ եւ աննկատելիորեն անցնել (ժամանակի մասին): *Օրէրը թըռչո՛ւմ ըն, Ջարմէնը մըծանում ա, տը՝ռնում մին դաշանգ՝ տըղա* (Ձ): 4. Ցատկել, ցատկելով մի տեղից մի տեղ տեղափոխվել: *Տըղան պատէն կըլխավը թըռչո՛ւմ ա, ըղնում թաքավէրին բախճան* (Ձ): 5. Մի բանից պոկվելով՝ այս ու այն կողմ նետվել, ցայտել: *Էտ ծիյին նըլէրէն տական կածո՛էր ըն թըռչո՛ւմ* (Ձ):

ԹԸՌՉԻԼ[2] - *տե՛ս* ԹԸՐՉԻԼ:

ԹԸՌՉԿԱՆ - *տե՛ս* ԹԸՌՉԸԿԱՆ:

ԹԸՌՉԿՕՏԷԼ - *տե՛ս* ԹԸՌՉԸԿՕՏԷԼ:

ԹԸՌՉՕՑ - *տե՛ս* ԹԸՐՉՕՑ:

ԹԸՌՌ - *տե՛ս* ԹԸՌ:

ԹԸՌՌԱԼ - *չբ.* **Թը՛ռռ** ձայն հանելով՝ արագ թռչել-անցնել: *Էտ կըլօխնէրը իրէքան թըռռամ ա* (ՀԱԲ, 15, 3):

ԹԸՌՌԱԼԻ - *մ.* Արագորեն (թռչել, անցնել եւն): *Թըռռալի ք՝ինամ ա հօրը տօնը, տը՝սնում հա՛ւրը մը՝ռած* (Ձ):

ԹԸՌՌԸՀԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըռռըհէ անել - Երեխայի ձեռքերից բռնելով եւ բարձրացնելով՝ օդում պտտեցնել: *Թըռռըհէ յըն անում, էտ խօխան էլ լաց չի ինա՛ւմ* (Բ):

ԹԸՌՌԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ԹԸՌՌԱԼ-ի: 2. *նբ. տե՛ս* Թըռ տալ:

ԹԸՌՎԸՀԱԿ/ԹԸՌԸՎՀԱԿ - *ած.* Արհամարհված, հեղինակազրկված, անարժեք: *Թըռվըհակ մարթ ա, վէշ մինը մըհալ չի քըցո՛ւմ* (Բ):

ԹԸՌՎԸՀԱԿԷԼ/ԹԸՌԸՎՀԱԿԷԼ - *չբ.* 1. Արհամարհվել, հեղինակազրկվել, արժեզրկվել: *Այան մըհէնգ՝ ա թըռվըհակալ, վէր ջա՛հիլ ա իլա՛լ, հարթնէրը շօխկը պիմբակավ ըն իլա՛լ հըվըքէլիս* (Ձ): 2. *տե՛ս* ԹԸՌԸՄՕՇԿԷԼ:

ԹԸՌՎԸՌԱԼ/ԹԸՐՎԸՌԱԼ - *չբ.* Ուրախությունից թռչկոտել՝ ցատկոտել: *Ախճիգ՝ը շատ ուրխանում ա, ըսկըսում թըռվըռալը* (ՀԺՀ, VII, 116):

ԹԸՌՎԸՌԱՆ/ԹԸՐՎԸՌԱՆ - *ած.* Թռվռացող, աշխույժ, ժիր: *Թըռվըռան խօխէնք՝ ըն* (Բ):

ԹԸՌՎԸՌՕՆԻ/ԹԸՐՎԸՌՕՆԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըռվըռօնի տալ - *տե՛ս* ԹԸՌՎԸՌԱԼ:

ԹԸՌՕՍԽ - *գ.* Խիստ խոնավացած՝ խոնավություն ներծծած եւ ուռած հող՝ պատ եւն: *Թօխուրը յօր ա ունէս, էտ թըռօսխը քընդիս, թա՛զգա՛դա՛ն շըրէս* (Ձ):

ԹԸՍ - *գ.* Հետույքից արձակված գարշահոտ՝ թիս: *Թա՛՛ւ, Թա՛մարա, թըսըտ թա՛ւնդ ա* (Ձ):

- Թըս անէլ - Հաշվի չառնել, հեռացնել: *Ախպօրը թըս ա ըրալ, հօրը իլա՛ծ-չիլա՛ծը լօխ ինք՝ը յը՝ր կա՛լա՛լ* (Բ):

- Թըսը խօր թաղէլ - *տե՛ս* Հա՛ք՝ին խօր թաղէլ:

ԹԸՍԱՎԸ՝Տ - *գ.* 1. Թըսի հոտ, հետույքից արձակված գազի հոտ: *Խօխան թըսում ա, այան թըսըվը՝տան քը՝թը ծասկում ա* (Բ): 2. *փխբ.* Ընդհանրապես տհաճ հոտ, ծանր հոտ: *Ըտըրանց տանան էզգա՛նան թըսավը՝տ ա կ՝ամ* (Ձ):

ԹԸՍԷԼ - *չբ.* Հետույքից գարշահոտ արձակել: *Վէր թըսում ա, փըռնում ըն թակում* (Բ):

ԹԸՍԸԿԱՎԷՌ/ԹԻՍԻԿԱՎԷՌ - *ած.* Գլխին թասակ դրած: *Էտ թըսըկավէր մարթը թըսա՛կին տական մին թօխտ ա տա՛ւս օնում, տամ թա՛ջիրին* (Ձ):

ԹԸՍԸՄՕԼԻ/ԹԻՍԻՄՕԼԻ - *տե՛ս* ԹԸՍԸՎԱՎԱ:

ԹԸՍԸՎԱՎԱ/ԹԻՍԻՎԱՎԱ - *ած.* 1. Վախկոտ, թուլամորթ, ցավի չդիմացող: *Էտքան թըսըվավա մարթ վէշ մին տը՝ղ կա վէչ* (Բ): 2. Լացկան, փոքր առիթից լաց եղող: *Թըսըվավա խօխա յա, մին կուճի թըխում ըս՝ լա՛ց ա ինա՛ւմ* (Բ):

ԹԸՍԸՎԱՐԱՐ - *տե՛ս* ԽԸՆՁԸՂԱ:

ԹԸՍ-ԹԸՍ - *տե՛ս* ԹԸՍԹԸՍԱՆ:

ԹԸՍԹԸՍԱԼ - *չբ.* 1. Ցածր ձայնով լացել, թնձկալ, նվնվալ: *Մարթը կըզկընվում ա, կընէգ՝ը տա՛ւս ա կ՝ամ չծ՝ը, թըսթըսամ* (Ձ): 2. Շատ դանդաղ աշխատել: *Ըտի թըսթըսալավ Մարքարը կօրծը մին ամսումըն էլ չի պըրծընական* (Բ): 3. Լավ չվառվել, թսսոցով այրվել: *Կէճ փա՛ղը հինչ բի՞դի էրի, լ՝ըհա թըսթըսամ ա* (Բ): 4. Ցրտից դողդողալ: *Կ՝ամ ա տը՝սնըմ մին ախճիգ՝, ծա՛ւնին տակէն վը՝ննը կացած, թըսթըսամ ա* (Ձ):

ԹԸՍԹԸՍԱՆ - *ած.* Թսթսացող, նվնվացող: *Թըսթըսան մարթին անա զա՛ղիլա՛ս տանում ա* (Բ):

ԹԸՍԹԸՍՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՍԹԸՍԱԼ-ի:

ԹԸՍԹԸՍՕՆ - *գ.* Թսթսալու ձայնը, թսթսալը: *Ըտըրա թըսթըսօնը վէշ մինը ըսկանում չի* (Ձ):

ԹԸՍԹԸՍՕՑ - *տե՛ս* ԹԸՍԹԸՍՕՆ:

ԹԸՍԻ[1]/ԹԻՍԻ[1] - *տե՛ս* ԹԸՍԸՎԱՎԱ:

ԹԸՍԻ[2] - *տե՛ս* ԹԻՍԻ[2]:

ԹԸՍԼԱՆ - *ած.* Թսող, թիս արձակող: *Թըսլան խօխա յա* (Բ):

ԹԸՍՍ - *ձ.* Նեղ անցքով օդը ուժեղ հոսանքով դուրս գալու ձայնը: *Մին էլ մին սա՛ս ա ըսկանում՝ թը՛սս* (Ձ):

ԹԸՍՍԱԼ - *չբ.* Որեւէ բանից օդը դուրս գալ: *Թօփը ըղնում ա ցա՛ք՝ին քօլը, ծակվըմ, թըսսամ* (Բ):

ԹԸՍՍԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԸՍՍԱԼ-ի:

ԹԸՍՍՕՆ - *գ.* 1. *տե՛ս* ԹԸՍԹԸՍՕՆ: 2. Որեւէ բանից օդը դուրս գալը եւ դրա ձայնը: *Թըսսօնը շօփէրը վէր ըսկանում ա, կըլօխ ա ըղնում, վէր մըշինին թա՛ք՝անը ծակվալ ա* (Ձ):

ԹԸՍՍՕՑ - *տե՛ս* ԹԸՍՍՕՆ:

ԹԸՎԱԹԱՓ/ԹԻՎԱԹԱՓ - *ած.* 1. Թեւերը թափված, թեւազուրկ, թեւակոտոր: *Վը՛րսկանը յէշում ա էտ թըվաթափ դուշին, մին էլ թըվանգը յը՛տ քաշո՛ւմ* (Ձ): 2. *փխբ.* Հուսաբեկ, վհատված: *Էս կըռվանը յը՛տը թըվաթափ կընէգ՝ շատ կա* (Բ):

- Թըվաթափ անէլ - Հուսալքել, վհատեցնել: *Էտ տըղան ըսպանվից, մօրը թըվաթափ ըրավ* (Բ):

- Թըվաթափ ինիլ/տը՛ռնալ - Հուսալքվել, վհատվել: *Տօնը նի կացավ, Օհան ապէրը թըվաթափ իլա՛վ* (Ձ):

ԹԸՎԱԼ *(գրբ. թուիմ (կարծել)* - *չբ.* Երեւալ, կարծվել, երեւակայությանը պատկերանալ: *Էտ տըղէն թըվամ ա, թա քօլէրը կ՝ո՛ւլէր ըն* (Ձ):

ԹԸՎԱԿԱՆ *(գրբ. թուական)* - 1. *տե՛ս* ԹԻՎ (4): 2. *ած.* Հասակակից, միեւնույն թվականի ծնված: *Ո՛ւրա՛ն թըվական մարթիք՝ը կընօխէ յըն մը՛ռալ* (Ձ):

ԹԸՎԱ՛ՆԳ՝/ԹԻՎԱ՛ՆԳ՝/ԹՈ՛ՒՎԱ՛ՆԳ՝/ԹԸՐՓԱ՛ՆԳ՝/ԹԻՐՓԱ՛ՆԳ՝/ԹՈ՛ՒՐՓԱ՛ՆԳ՝ *(պրս. tofāng, թրք. tufank)* - *գ.* Երկար փողով ձեռքի հրազեն, հրացան: *Ըտահանք յէր ըն ինո՛ւմ ծիյէրը, թըվանգ՝նէն յօր օնում, ք՝ինա՛մ* (ՆԼՂԺԲ, 49):

- Թըվանգ՝ին լո՛ւլա՛ն բիդի տէս տը՛ռնալ - Իրավիճակը բարդանալ, վտանգավոր դառնալ: *Հա՛նը ասմա.- Բա՛լա, թըվանգ՝ին լո՛ւլա՛ն բիդի տէս ա տը՛ռալ, կըռը՛վ ա ինա՛կան, սա՛յաղ կացէք՝* (Ձ):

- Թըվանգ՝ քաշիլ - Հրացանով սպառնալ: *Յա՛ ո՛ւրո՛ւր յըրա թըվանգ՝ ըն քաշո՛ւմ, յա՛ ո՛ւրո՛ւր ռըխա կէնում, հինչ ասիս՝ անում ըն* (ՆԱԲ, III, 174):

ԹԸՎԱ՛ՆԳՉԻ - *տե՛ս* ԹԸՎԸՆԳ՝ԱՎԷՐ:

ԹԸՎԱՎՈՒՐ/ԹԻՎԱՎՈՒՐ *(գրբ. թեւաւոր)* - *ած.* 1. Թեւեր ունեցող: *Վէշ մին թըվավուր ղուշ կարում չար էտ ծիյին հը՛տան հըսնէ* (Ձ): 2. Թեւքեր ունեցող (զգեստի մասին): *Մին թըվավուր ըրբաշկա յա ինք՝ օնում, տամ էտ մարթին* (Ձ): 3. *գ.* Թռչուն: *Էրկու թըվավուր կ՝ամ ըն, էտ ծառէն նըստում* (Ձ):

ԹԸՎԱՏԱԿ/ԹԻՎԱՏԱԿ - *գ.* 1. *տե՛ս* ԿՈՒՌ(Ն)ԱՏԱԿ: *Թըվըտակէրը քըրթնընքալ ա* (Բ): 2. Հագուստի այն մասը, ուր փակցվում են թեւքերը: *Պինջակէն թըվըտակէրը մաշա՛լ ա* (Բ):

ԹԸՎԸԹԱՓԷԼ/ԹԻՎԸԹԱՓԷԼ *(գրբ. թեւաթափիմ (թեւերը թափվել)* - 1. *նբ. տե՛ս* Թըվաթափ անէլ: 2. *չբ. տե՛ս* Թըվաթափ ինիլ:

ԹԸՎԸՆԳ՝ԱՎԷՐ - *ած.* Հրացան ունեցող, հրացանով զինված: *Օխտը թըվընգ՝ավէր ք՝ինամ ըն, էլիա կարում չըն էտ կ՝ո՛ւլին ըսպանին* (Ձ):

ԹԸՎԹԻԾ - *տե՛ս* ՔԸՆԷՆՔ՝:

ԹԸՎԻԼ-ԹՎԱ՛ՎԻԼ/ԹԻՎԻԼ-ԹՎԱ՛ՎԻԼ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թըվըլ-թվա՛վիլ անէլ/տալ - Շատ թավալվել՝ գլորվել՝ թպրտալ: *Էշը թըվըլ-թվա՛վիլ ա անում* (Բ):

ԹԸՎՔԱՎԷՐ/ԹԻՎՔԱՎԷՐ - *տե՛ս* ԹԸՎԱՎՈՒՐ(2):

ԹԸՎՔԱՏԱԿ/ԹԻՎԱՏԱԿ - *տե՛ս* ԹԸՎԱՏԱԿ (2):

ԹԸՎՔԸՊԸՏՕԿ/ԹԻՎՔԸՊԸՏՕԿ - *գ.* Հագուստի թեւքի ծայրը: *Թըմամէն շո՛ՐԻՆ թըվքըպըտօկը յը՛ղուտ ա տը՛ռնում, ըսկէսուրը քըթէն տակէն մըրթմըրթամ ա* (Ձ):

ԹԸՐԱ՛Ն - *տե՛ս* ԹԻՐԱ՛Ն:

ԹԸՐԱՎԷՐ - *ած.* Թուր ունեցող, թրով զինված: *Մին թըրավէր մարթ ա նի մընում, թօրավը թըխում, ըտըրա կըլօխը կըտըրում* (Ձ):

ԹԸՐԷՔ՝ *(գրբ. թրիք)* - *գ.* 1. Խոշոր եղջերավոր անասունների եւ սմբակավորների աղբ: *Տինում ա հիյվընն էրէն թըրքէն մաչին...* (ՀԱԲ, 15, 59): 2. *փխբ.* Անպետք՝ կեղտոտ բան: *Կընէգ՝ը ասմա.- Էտ թըրէք՝ը հինչ ա՞, վէր ինք՝ ըս կա՛լալ* (Ձ):

ԹԸՐԸԹԷՐ - *մ.* Մի կերպ, ծայրը ծայրին հասցնելով: *Ըտըրանք շատ ք՝ա՛սիբ ըն ինո՛ւմ, լ՝ըհա թըրըթէր ապրում ըն* (Ձ):

ԹԸՐԸԽԿ - *տե՛ս* ԴԸԽԿ:

ԹԸՐԸԽԿԱԹԸՐԸԽԿ - *տե՛ս* ԴԸԽԿԱԴԸԽԿ:

ԹԸՐԸԽԿԱԼ - *տե՛ս* ԴԸԽԿԱԼ:

ԹԸՐԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ԴԸԽԿԱԼԻ:

ԹԸՐԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸՐԸԽԿԹԸՐԸԽԿԱԼ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿԱԼ:

ԹԸՐԸԽԿԹԸՐԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿԱԼԻ:

ԹԸՐԸԽԿԹԸՐԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸՐԸԽԿԹԸՐԸԽԿՕՆ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿՕՆ:

ԹԸՐԸԽԿԹԸՐԸԽԿՕՑ - *տե՛ս* ԴԸԽԿԴԸԽԿՕՑ:

ԹԸՐԸԽԿՕՆ - *տե՛ս* ԴԸԽԿՕՆ:

ԹԸՐԸԽԿՕՑ - *տե՛ս* ԴԸԽԿՕՑ:

ԹԸՐԸՄՓ - *տե՛ս* ԴԸՄՓ:

ԹԸՐԸՄՓԱԼ - *տե՛ս* ԴԸՄՓԱԼ:

ԹԸՐԸՄՓԱԼԻ - *տե՛ս* ԴԸՄՓԱԼԻ:

ԹԸՐԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸՐԸՄՓԹԸՐԸՄՓԱԼ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓԱԼ:

ԹԸՐԸՄՓԹԸՐԸՄՓԱԼԻ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓԱԼԻ:

ԹԸՐԸՄՓԹԸՐԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹԸՐԸՄՓԹԸՐԸՄՓՕՆ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓՕՆ:

ԹԸՐԸՄՓԹԸՐԸՄՓՕՑ - *տե՛ս* ԴԸՄՓԴԸՄՓՕՑ:

ԹԸՐԸՄՓՕՆ - *տե՛ս* ԴԸՄՓՕՆ:

ԹԸՐԸՄՓՕՑ - *տե՛ս* ԴԸՄՓՕՑ:

ԹԸՐԸԸՇՕՂՈՒՄ - *գ.* 1. Թրերով մարտ՝ կռիվ: *Էտ թըրըշօղումէն վախտը, թաքավէրին տըղան ծիյան վէր ա ըղնում* (Ձ): 2. Իրարանցում, տուրուդմփոց: *Ըտըրանք հօ՛ջա՛թ ըն տամ, շէնը թըրըշօղում քըցո՛ւմ* (Ձ):

ԹԸՐԸՔ՝ԱՄԱ - *տե՛ս* ԹԱ՛ՐԱ՛ՔԱ՛ՄԱ:

ԹԸՐԹԱՄՆԷԼ/ԹԸՄԹԱՄՆԷԼ - *չբ.* Շատ հոգնել, շնչասպառ լինել: *Աղվէսը թըրթամնած ք՝ունում ա թաքավէրէն տօնը, թա՛.- Չանչախ թաքավէրը կ՝ալիս թըլանալ ըն...* (ՀԺՀ, V, 627):

ԹԸՐԹԱՓԱՆՔ/ԹԸՐԹԸՓԱՆՔ *(գրբ. թարթափանք (անտեղի անցնելը)* - *տե՛ս* ԿԸՈՏԸՊԸՈՏԱՆՔ:

ԹԸՐԹԷՄՈՒՆՔ - *տե՛ս* ԹԸՐԹԷՎՈՒՆՔ:

ԹԸՐԹԷՎՈՒՆՔ/ԹԸՐԹԷՄՈՒՆՔ/ԹԸՐԹԷՐՈՒՆՔ/ԹԻԹԷՎՈՒՆՔ *(գրբ. թարթեւանք)* - *գ.* Աչքի թարթիչի մազը՝ արտեւանունք: *Ախճիգ՝ը մին թըրթէվունք ա պուք տամ, տամ էտ տըղէն* (Ձ):

ԹԸՐԹԷՐԻԼ/ԹԻՐԹԷՐԻԼ/ԹԸԹԱՐԷԼ/ԹԸԹԱՐԻԼ *(գրբ. դադարեմ)* - *չբ.* Հանգիստ առնել, հանգստանալ, մի տեղ հանգիստ մնալ: *Տընը՛շինիտ տըղան ըսկի թըրթէրում չի, սաղ օրը էն ա կօրծ ընէլիս* (Բ):

ԹԸՐԹԷՐՈՒԿ/ԹԻՐԹԷՐՈ՛ՒԿ - *գ.* Ալյուրով, ձեթով եւ շաքարավազով թխված խմորեղեն: *Ա՛ղա՛թ ա. վէր ժինգ՝ալավ հաց թըխին, նըհը՛տը թըրթէրուկ էլ կըթըխին* (Բ):

ԹԸՐԹԷՐՈՒՆՔ - *տե՛ս* ԹԸՐԹԷՎՈՒՆՔ:

ԹԸՐԹԸՆՋՈՒԿ/ԹՈՒՐԹՈՒՆՋՈՒԿ *(գրբ. թրթնջուկ)* - 1. *գ.* Մատիտեղազգիների ընտանիքին պատկանող թթվաշ տերեւներով եւ ցողունով խոտաբույս, թրթնջուկ: *Ղարաբաղ թըրթընջուկը շատ ըն սիրում* (Բ): 2. *ած. փխբ.* Թարմ, չչորացած: *Հաց, հինչ հա՞ց, հանցա թըրթընջուկ* (Բ):

ԹԸՐԹԸՇՆԻԼ - *տեմ* ԹԸՌԸՇՆԷԼ:

ԹԸՐԹԸՌԱԼ - *տեմ* ԹԸՌԹԸՌԱԼ:

ԹԸՐԹԸՌԱԼԻ - *տեմ* ԹԸՌԹԸՌԱԼԻ:

ԹԸՐԹԸՌԱՆ - *տեմ* ԹԸՌԹԸՌԱՆ:

ԹԸՐԹԸՌԻԳ՝ - *տեմ* ԹԸՌԹԸՌԻԳ՝:

ԹԸՐԹԸՓԱՆՔ - *տեմ* ԹԸՐԹԱՓԱՆՔ:

ԹԸՐԹՕՐ/ԹԸՌԹՕՌ *(գրբ. թրթուր)* - *գ.* Միջատների՝ ձվից դուրս եկած որդը մինչեւ առաջին փոխակերպությունը, թրթուր: *Հավէրը, հընդհուշկէք՛ը զիրավ ըն տը՛ռնում, էտ թըրթօրնէն օտում* (Ձ):

ԹԸՐԹՕՐԱԼ - *տեմ* ԹԸՆԹՕՐԱԼ:

ԹԸՐԹՕՐԱՆՔ - *տեմ* ԹԸՆԹՕՐԱՆՔ:

ԹԸՐԹՕՐԷԼ - *տեմ* ԹԸՆԹՕՐԱԼ:

ԹԸՐՀԱԹԸՌ - *տեմ* ԹԸՌՀԱԹԸՌ:

ԹԸՐՈՂԷ - *գ.* Գետ Մարտակերտի շրջանում:

- Թըրոդէ տը՛ռնալ - 1. Շատ վարարել: *Էնքան թօռ ա յը՛կալ, կ՛ը՛տէրը Թըրոդէ յըն տը՛ռալ* (Ձ): 2. Վտանգավոր դառնալ: *Հաշիմը վէր հարփում ա, Թըրոդէ յա տը՛ռնում* (Բ):

ԹԸՐՉԸԽԱԼԻ - *տեմ* ԼԱՋԱԹՏՈՒ:

ԹԸՐՉ(Ը)ՎԻԼ/ԹԸՌՉ(Ը)ՎԻԼ/ԹԻՐՉ(Ը)ՎԻԼ *(գրբ. թրջիմ)* - 1. *կբ. եւ չբ.* ԹԸՐՉԻԼ-ի: 2. *չբ.* Կոնծել, հարբել: *Էտ ղօչչաղը սըրմացուն տամ ա, կ՛ինի ինք՛ օնում, մին լավ թըրչըվում* (ՆԼՂԺԲ, 93):

- Թըրչըված հավ - 1. Ամբողջապես թրջված՝ ջուր դարձած (մարդ, կենդանի, իր): *Ըղնում ըն սէլին տակը, տը՛ռնում թըրչըված հավ* (Բ): 2. Խեղճ, անճարակ (մարդ): *Էտ դաշանգ՛ ըխճըկանը փըսակում ըն էտ թըրչըված հավէն՝ էտ ք՛ասիք կ՛էշ տըղէն նըհը՛տ* (Ձ):

- Թըրչըված շօն կըրակ տալ - Ամեն վատ արարքի ընդունակ լինել: *Իզէն թըրչըված շօն էլ կըրակ կըտա* (Բ):

ԹԸՐՉԻԼ/ԹԸՌՉԻԼ[2]/ԹԻՐՉԻԼ *(գրբ. թրջեմ)* - *նբ.* 1. Թացացնել, հեղուկի մեջ դնելով կամ վրան հեղուկ շաղ տալով՝ թաց դարձնել: *Ընգալ ա գ՛օլը, շօրէրը սաղ թըրչալ* (Բ): 2. *տեմ* Թըրչօց տինիլ(1):

ԹԸՐՉՕՑ/ԹԸՌՉՕՑ/ԹԻՐՉՕՑ - *գ.* 1. Որեւէ հեղուկի՝ ջրի՝ քացախի՝ օղու եւն մեջ դրած լաթ, որ դրվում է մարմնի որեւէ մասում՝ ջերմությունը՝ ուռուցքը եւն իջեցնելու համար: *Թըրչօցնէն ճէլլի-ճէլլի փոխում ըն, ամմա օռուցը քաշում չի* (Ձ): 2. Որեւէ բան հեղուկի մեջ դնելը՝ պահելը՝ թրջվելու՝ կակղելու եւն համար: *Թըրչօցը ա կաշին կըկըղցընում* (Բ):

- Թըրչօց տինիլ - 1. Ընդեղենը՝ կաշին՝ լվանալիք շորերը եւն դնել հեղուկի մեջ, որպեսզի փափկի՝ կակղի: *Սիսը՛ռը ա լօբին թըրչօց ա տինում, վէր ուռթանան կըճէխաշ իփի* (Ձ): 2. Հիվանդ կամ ցավոտ տեղի վրա որեւէ լուծույթով թրջած լաթ դնել: *Շօնը կըծած տը՛ղը ըրաղավ թըմիզցընէս ըն, յըրան թըրչօց տինիս* (Ձ): 3. *տեմ* Աղ տինիլ(2, 3):

ԹԸՐՋԱ - *տեմ* ԹԸՐՋԱ:

ԹԸՐՋԱ/ԹԸՐՋԱ - *գ.* Շիվէրից հյուսած ցանց, որ փռում են հնձանի վրա եւ հետո լցնում խաղողը: *Թըրջան տըկօղնուն անա յըն կ՛օրծում* (Բ):

ԹԸՐՍԸՀԸԼՕՐ/ԹԻՐՍԸՀԻԼՕՐ - *տեմ* ԹԸՐՍԸՊԸԼՕՐ:

ԹԸՐՍԸՊԱՐԱՆ/ԹԻՐՍԸՊԱՐԱՆ - *տեմ* ԹԸՐՍԸՊԸԼՕՐ: *...Մըզանըմ ամէն պէն թըրսըպարան ա տէռալ...* (ՋՏ, Բ, 35):

ԹԸՐՍԸՊԸԼՕՐ/ԹԻՐՍԸՊԻԼՕՐ - 1. *մ.* Թարսուշիտակ, ուղիղ եւ հակառակ (գործելու՝ հյուսելու՝ որեւէ բան անելու մասին): *Էտ մարթը հինչու անում ա, թըրսըպըլօր ա անում* (Ձ): 2. *ած.* Փոփոխամիտ, անսկզբունք: *Թըրսըպըլօր մարթին փըռնած կօրծը էրկան ծիք՛ չի տալ* (Բ):

ԹԸՐՍՕԹՈՒՆ/ԹԻՐՍՕԹՈՒՆ - *գ.* 1. Հակառակություն, կամակորություն, համառություն: *Ըտըրա թըրսօթունէն դանդան վէշ մինը նըհը՛տը հըրակաշ չի տը՛ռնում* (Ձ): 2. Անհաջողություն, ձախորդություն: *Հինչու օգում ա անէ, թըրսօթունու վա ջիհանում* (Բ):

- Թըրսօթուն անէլ - *տեմ* Թըրսօթունը փըռնէլ:

- Թըրսօթունը փըռնէլ - Կամակորությունը սկսվել, համառել: *Հայրօվէն թըրսօթունը վէր փըռնում ար, վէշ մինը կարում չար խօսէ* (Ձ):

ԹԸՐՎԸՌԱԼ - *տեմ* ԹԸՌՎԸՌԱԼ:

ԹԸՐՎԸՌԱՆ - *տեմ* ԹԸՌՎԸՌԱՆ:

ԹԸՐՎԸՌՕՆԻ - *տեմ* ԹԸՌՎԸՌՕՆԻ:

ԹԸՐՈՒՄՓԱՆԷ - 1. *գ.* Հին հրացանի տեսակ: *Վը՛րսկանը թըրումփանէն ծառան կախ ա տամ, ինք՛ը ծառէն տակէն քօն ինում* (Ձ): 2. *ած. փխբ.* Ծանր ու մեծ: *Մին թըրումփանէ փանդ ա յօր ունէս, էտ արչին կըրկաժէն թըխէս* (Ձ):

ԹԸՐՓԱՆԳ՝ - *տեմ* ԹԸՎԱՆԳ՝:

ԹԸՐՔԱԿԱԼ - *գ.* Հատուկ աման, որով վերցնում էին կամին լծված եզների թրիքը: *Էտ խօխան էլ, թըրքակալը ծը՛ըքէն, յըզնէրէն հը՛տան ք՛ունում ար* (Ձ):

ԹԸՐՔԱՇԻ - *գ.* Հատուկ տաշտաձեւ աման, որի մեջ լցնում են թրիքը եւ տեղափոխում աղբանոց: *Թըրէք՛ը ածում ա թըրքաշին* (Բ):

ԹԸՐՔԱՎԸ՛Տ - *գ.* 1. Թրիքի հոտ: *Վէր նի յըս մընում կ՛ումը, թըրքավը՛տը թըխում ա քըթէտ* (Բ): 2. *փխբ.* Տհաճ հոտ, գարշահոտ: *Խըլխէրէն տընէրան մուխը-գ՛ավը՛տ ա կ՛ամ, տահանց տանան էլ՝ թըրքավը՛տ, սաբավ քըղրքը՛ցէ յըն* (Բ):

ԹԸՐՔԱՑԸ՛Խ - *գ.* Թրիքով խառնված ցեխ, որով ծեփում են պատը՝ կողովը եւն: *Թըրքըցը՛խավ սըվաղ ըն անում, վէր կ՛ումը տաք ինի* (Բ):

ԹԸՐՔԷԼ - *չբ.* 1. Արտաթորել, աղբել (խոշոր եղջերավոր եւ սմբակավոր կենդանիների մասին): *Էշը կ՛ամ ա, ըտըրանց մը՛ղակումը թըրքում* (Ձ): 2. *անրգ.* Արտաթորել (մարդկանց մասին): 3. *նբ.* Թրիքով ծածկել՝ պատել՝ ծեփել: *Իրէք կարաս, իրէսը թըրքած, ցօրէն օնիմ* (ՆԱԲ, II, 101):

- Թըրքած ճուվարան - Որկրամոլ: *Էտ թըրքած ճուվարանը ջըլաման չի տամ, թա մինը մին պէն օտէ* (Բ):

ԹԸՐՔԸԹԱԹԱԽ - *ած.* Թրիքի մեջ թաթախված, թրքոտված: *Թըրքըթաթախ խուրջինը քըցանում ա էշավը, ք՛ինամ* (Ձ):

- Թըրքըթաթախ անէլ - Թրիքի մեջ թաթախել, թրքոտել: *Նի յա մընում կ՛ումը, շօրէրը սաղ թըրքըթաթախ անում* (Բ):

- Թըրքըթաթախ ինիլ/տը՛ռնալ - Թրիքի մեջ թաթախվել, թրքոտվել: *Թազզա հարթնը վէր ա ըղնում, դարյան թըրքըթաթախ ա տը՛ռնում* (Ձ):

ԹԸՐՔԸԿԸԼՕԼԷ - *գ.* Միջատի տեսակ: *Թըրքըկըլօլէն թըրէք՛ան կըլօնդրակնէ յա շինում* (Բ):

ԹԸՐՔԸՃՈՒՎԱՐԱՆ - *գ.* 1. Թրիքը տեղափոխելու կողով: *Յաշան թըրքըճուվարանը յօր ա ունէս, էտ թըրէք՛ը կ՛ուման կըրէս ըխալիարը* (Բ): 2. Դրսի կողմից թրիքով պատած մեծ կողով՝ հացահատիկ պահելու համար: *Թըրքըճուվարան կա՝ քըսան փութ ցօրէն ա տըղվարում* (Բ): 3. *տեմ* Թրքած ճուվարան (ԹԸՐՔԷԼ-ի տակ):

ԹԸՐՔԸԲԸԹՕՑ - *գ.* Թրիքով պատած կողով, որ գործածում են որպես մեղվափեթակ: *Միհէնգ՛ էլ թըրքըքըթօցում ճանջ պահող չի կա* (Բ):

ԹԸՐՔՈՒՏ - *տեմ* ԹԸՐՔՕՏ:

ԹԸՐՔՕՏ/ԹԸՐՔՈՒՏ - *ած.* Վրան թրիք քսված, թրիքով կեղտոտված: *Թըրքուտ շանուրէրավ կ՛ամ ա հըրսանէք՛* (Բ):

- Թըրքօտ անէլ - *տեմ* ԹԸՐՔՕՏԷԼ:

- Թըրքօտ ինիլ/տը՛ռնալ - *տեմ* ԹԸՐՔՕՏՎԷԼ:

ԹԸՐՔՕՏԷԼ - *նբ.* 1. Թրիք քսելով՝ կեղտոտել: *Խօխան կըվէն հանքվան փըռնում ա, ծը՛ըքէրը թըրքօտում* (Բ): 2. Շատ անասուններ եւ շատ տեղերում թրքել: *Կըվէրը հըյաթումը թըրքօտալ ըն* (Բ):

ԹԸՐՔՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԸՐՔՕՏԷԼ-ի:

ԹԸՐՕՄՓ - *տե՛ս* ԴԸՄՓ:

ԹԸՓԱՆՔ - *գ.* 1. *տե՛ս* ԹԷՓ: 2. *փխբ.* Անպետք՝ թափելու բան: *Թըփանքը ա-ծում ըն ըխպըհարը* (Բ):

ԹԸՓԸԹԱԹԱԽ/ԹԻՓԸԹԱԹԱԽ - *ած.* Թեփի մեջ թաթախված, թեփոտված: *Ճըղացպանը ըլլիրթաթախ, թըփըթաթախ, տ՚ուս ա կ՚ամ* (Ձ):

ԹԸՓԸԽԱՌ(Ն)Ը/ԹԻՓԸԽԱՌ(Ն)Ը - *ած.* Թեփի հետ խառն, հետը թեփ խառնած: *Էտ ալլէրը ըտի թըփըխառնը ծախում ըն էտ ախմաղ մարթին յըրա* (Բ):

ԹԸՓԸԿԼԻԼԻ/ԹԻՓԸԿԼԻԼԻ - *չբ.* 1. Թեփոտ դառնալ, թեփով կեղտոտվել, վրան թեփ քսվել: *Աղվէսը նի յա մընում թէփին մաչը, թըփըկալած տ՚ուս կ՚ամ* (Ձ): 2. Գլխի՝ մաշկի վրա թեփ գոյանալ: *Խը՚ղճէն կըլ՚ըխը թըփըկալալ ա, կարում չի մին ճար անէ, ըզադվէ էտ թէփան* (Բ):

ԹԸՓԸՀԱՆ/ԹԻՓԸՀԱՆ - *ած.* Թեփը հանած, թեփազերծ: *Կուրկուտը թըփըհան ցօրնավ ըն իփ՚ում* (Բ):

- Թըփըհան անէլ - Թեփը հանել, թեփազերծել: *Այան ցօրէնը սանդին մաչին թակում ա, թըփըհան անում* (Ձ):

- Թըփըհան ինիլ/տը՚ռնալ - Թեփը հանվել, թեփազերծվել: *Էնքան թակում ըն, վէր ցօրէնը թըփըհան ա տը՚ռնում* (Բ):

ԹԸՓԸՀԱՐԷԼ - *նբ.* 1. Թափ տալ, ցնցել: *Կօլան թըփըհարից, դ՚ուրդը կինուն նը՚հը՚տ խառնըվից* (Բ): 2. Տարուբերել, շարժել: *Ջանռ բ՚ուլբ՚ուլը թըփըհարից թէվէրը, օրախ-օրախ ըսկըսից յէրք ասիլը* (ՀԺՀ, V, 98): 3. Ցնցումներով վեր ու վար նետել (սայլը, մեքենան եւն): *Ըրբան էնքան թըփըհարից, տահանք լափ տ՚ուզնացէն* (Ձ): 4. *փխբ.* Հանդիմանել, պարսավել, քննադատել: *Ժողովումը բըրիգադիրին մին լ՚ավ թըփըհիրը՚ցէն* (Ձ):

ԹԸՓԸՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԸՓԸՀԱՐԷԼ-ի:

ԹԸՓԸՆԹԸՐԷՔ՚ - *գ.* Փորոտիքն իր պարունակությամբ: *Կ՚ուլը վը՚խճարը օտում ա, թըփընթըրէք՚ը թօղում* (Բ):

- Թըփընթըրէք՚ը վէր ածէլ/ցըրը՚վ տալ - *անրգ.* Փորոտիքը դուրս թափել, սպանել: *Տը՚ղը խէլ՚ունք չի կացավ, թըփընթըրէք՚ը վէր ը՚ծը՚ցէն* (Բ):

ԹԸՓԸՆՓԸՍՕՐ - *տե՛ս* ԹԸՓԸՆԹԸՐԷՔ՚:

ԹԸՓԸՌ-ԹԷՓՈՒՌ/ԹԻՓԸՌ-ԹԷՓՈՒՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թըփըռ-թէփուռ անէլ - 1. Թպրտալ՝ ցնցումներ գործել (թռչունը՝ մորթելու ժամանակ): *Վէր մօրթում ըն, հավը թըփըռ-թէփուռ ա անում* (Բ): 2. Անտեղի ճիգ գործադրել, վերջին ուժերը լարել: *Հիշքան թըփըռ-թէփուռ ըրավ, կարից վէչ հըսկըցընէ, վէր էտ կ՚ուղօթունը ինք՚ը չի ըրալ* (Ձ):

ԹԸՓԸՌՀԱՆ/ԹԻՓԸՌՀԱՆ - *ած.* Փետուրները թափած՝ հանած՝ պոկած: *Էտ թըփըռհան հավը հընդ՚ուշկօցը օր-իշը՚ղ չար տամ* (Ձ):

- Թըփըռհան անէլ - *տե՛ս* ԹԷՓԸՌԷԼ:

- Թըփըռհան ինիլ/տը՚ռնալ - *տե՛ս* ԹԷՓԸՌՎԷԼ:

ԹԸՓԸՌՀԱՆԷԼ/ԹԻՓԸՌՀԱՆԷԼ - *տե՛ս* ԹԷՓԸՌԷԼ:

ԹԸՓԸՌՀԱՆՎԷԼ/ԹԻՓԸՌՀԱՆՎԷԼ - *տե՛ս* ԹԷՓԸՌՎԷԼ:

ԹԸՓԸՌՊԸՏԷՐԷՆ/ԹԻՓԸՌՊԸՏԷՐԷՆ - *տե՛ս* ԹԸՓԸՌ-ԹԷՓՈՒՌ:

ԹԸՓԹԸՓՕՏԷԼ - *նբ.* Հաճախակի՝ շատ թափթփել, այստեղ-այնտեղ անկարգ կերպով թափթփել: *Ըմընէք՚ը տանը թըփթըփօտում ա, ինք՚ը ք՚ինամ հըրսանէք՚* (Բ):

ԹԸՓՉԸԿԱՎԷՐ/ԹԻՓՉԸԿԱՎԷՐ - Կոթին ամրացրած փայտե ձող՝ թափչակ ունեցող (բահի մասին): Թըփչըկավէր թիյավը պիհավ տալը հիշտ ա (Բ):

ԹԸՓՌԱՎԷՐ/ԹԻՓՌԱՎԷՐ - 1. *ած.* Փետուրներ ունեցող, փետրապատ: *Թըփռավէր հավը մըրսէլ չի* (Բ): 2. *գ.* Թռչուն, հավք: *Էտ ախճիգ՚ը յալը՚խը թափ ա տամ, հիշքան թըփռավէր կա՝ հըվաքվում ըն* (Ձ):

ԹԸՓՌՕՏԷԼ/ԹԻՓՌՕՏԷԼ - *նբ.* Շատերին եւ շատ փետրել, փետրատել: *Հավէրը մըրթօտում ըն, թըփռօտում* (Բ):

ԹԸՓՌՕՏՎԷԼ/ԹԻՓՌՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԸՓՌՕՏԷԼ-ի:

ԹԸՓՕՎԻ/ԹԱՓՕՎԻ - *տե՛ս* ԹԱՓԱԾ (1):

ԹԸՓՕՏ(Վ)ԷԼ/ԹԻՓՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ԹԸՓԸԿԼԻԼԻ:

ԹԸՓՕՐԱ - *տե՛ս* ՏԵՓՈՒՐ:

ԹԸՔ/ԹԸ՚Ք *(գրբ. թուք)* - *գ.* 1. Բերանի խոռոչում հատուկ գեղձերից արտազատվող հեղուկ նյութ՝ թուք: *Վէր թըքէն նը՚հը՚տ ա՚ռ՚ուն ա կ՚ամ, կըլ՚ըխ ա ըղնում, վէր պէնը պ՚ուրթ ա* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* ԹԸՔԸԹԸ՚ՇՄԱԹ:

- Թըքը կօլ տալ - 1. Ուտելու մեծ ցանկություն ունենալ: *Աղվէսը հավէն յէշում ա, թըքը կօլ տամ* (Ձ): 2. Անարգանքը՝ անպատվությունը անպատասխան թողնել՝ հանդուրժել: *Էտ մարթը խըղճանում ա, թըքը կօլ տամ, ք՚ինամ* (Ձ): 3. Մեկով կամ մի բանով շատ հիանալ, ունենալու փափագ ունենալ: *Վը՚սկէն վէր տը՚սնում ա, թըքը կօլ ա տամ* (Ձ):

- Թըքը (պիրանումը) չուրանալ/ցըմաքէլ - 1. Սաստիկ ծարավել: *Թըքըս չուրացալ ա, մին կաթ ճ՚ուր չի կա, թա խըմիմ* (Բ): 2. Սաստիկ վախենալ, ահաբեկվել: *Դէվը էտ տըղէն վէր տը՚սնում ա, թըքը չուրանում ա* (Ձ):

ԹԸՔԱԾ - *ձ.* Մի բանից հրաժարվելու արհամարհական արտահայտություն՝ թող կորչի, կորցրո՛ւ: *Թըքա՚ծ, հինչը օգում ա՝ անէ, յը՚ս կօրծ չօնիմ* (Ձ):

ԹԸՔԱՆԱԼ/ՏԸՔԱՆԱԼ *(գրբ. տաքիմ)* - *չբ.* 1. Այլեւս չմրսել, ցրտություն չզգալ: *Էտ օխծը թըքանում ար քարէն ճէխքումը* (ՀԺՀ, V, 223): 2. Ջերմության աստիճանը բարձրանալ, տաք դառնալ: *Ճ՚ուրը թըքանում ա, ա՚զին թուռնէրէն լըղըցընում ա* (Ձ): 3. Ցրտերն անցնել, եղանակը տաք դառնալ: *Օրէրը թըքանում ա, խընջըլօզը տ՚ուս ա կ՚ամ* (Բ): 4. *փխբ.* Գրգռվել, հուզվել, բարկանալ: *Կընգանը ջուղըբնէրան Կարօն էլ իվիլ ա թըքանում* (Բ): 5. *փխբ.* Սաստկանալ, բորբոքվել, թեժանալ: *Ք՚ը՚ղ՚ը՚փը ք՚ինալ՚ավ թըքանում ա* (Բ): 6. *փխբ.* Սիրտը մեկին՝ մի բանի կպչել, ջերմ զգացումներ տածել: *Թաքավէրին ախճիգ՚ը էլ իվիլ ա էտ տըղին յըրան թըքանըմ* (ՀԺՀ, V, 229): 7. *փխբ.* Մարմնի որեւէ մասում տաքություն զգալ (հարվածից, բորբոքումից): *Վէր ախճիգ՚ը սիլլա՚ յա տամ, էտ տըղէն թօշը թըքանում ա* (Ձ): 8. *փխբ.* Ոգեւորվել, բորբոքվել: *Հիշկան թ՚ուրիփ ըն անում, էնքան էտ տըղան թըքանում ա* (Ձ):

ԹԸՔԷԼ *(գրբ. թքեմ)* - *նբ.* 1. Թուքը բերանից դուրս նետել, թքել: *Տափէն թըքում ա* (Բ): 2. *փխբ.* Բերանում եղած այլ նյութերը դուրս նետել՝ թափել: *Թըքում ա, էտ մածունը վէր ածում* (Բ): 3. *փխբ.* Անարգել, անպատվել, հանդիմանել: *Շինըցէք՚ լօխ թըքում ըն ըտըրան յըրա, վէր կ՚ուղօթուն ա անում* (Ձ): 4. *փխբ.* Անարգանքով մերժել, հրաժարվել, արհամարհել, ձեռք քաշել: *Թըքում ա ամմէն հինչին յըրա, քօչ՚ում* (Բ):

- Թըքածը (յը՚ս) լ՚ուզիլ - Ասածից ետ կանգնել, խոստումը չկատարել, խոսքի տերը չլինել: *Տըղամարթը ն՚ուրանը թըքածը վէր յը՚ս լ՚ուզից, էլ հինչ տըղա՚մարթ, քած ա* (Բ):

- Թըքած ինիլ - Արհամարհանքով մի բանից հրաժարվել, արհամարհել: *Յը՚ս թըքած օնիմ, ըտըրանց ըրած լ՚իվօթունը օգ՚ում չըմ* (Ձ):

- Թըքած, նը՚ստա տըված - Ոչ ամուր, խախուտ: *Թըքած, նը՚ստա տըված մըղակ ար, մին կուճի վէր թըխից, դ՚ա՚ստի պուք յը՚կավ* (Ձ):

- Թըքէլ, նը՚ստա տալ - Ոչ ամուր, անորակ կառուցել՝ կպցնել: *Սաբավ պատ ա տին՚ում, թըքում ա, նը՚ստա տամ* (Բ):

- Թըքիս՝ տափը չի ըղնէլ - 1. Սաստիկ շոգ է: *Հավան էնքան տաք ա, վէր*

թըքիս, տափը չի ըղնէլ (Բ): 2. Սաստիկ ցուրտ է: *Ըստի ծըմը*ᵉ*ռ հա՛լա՛ ի՛լա՛ծ չի. թըքիս, տափը չի ըղնէլ* (Ձ):

ԹԸՔԷՆՔ՝ - *տե՛ս* ԹԸՔ:

ԹԸՔԸԹՕՀՄԱ՛Թ/ԹՈՒՔՈՒԹՕՀՄԱ՛Թ - *գ.* Ամոթանք, նախատինք, անպատվություն: *Էտքան թըքըթօ՛հմա՛թանը յը*ᵉ*տը էլիա կ՚ըղօթուն ա անում* (Ձ):

- Թըքըթօ՛հմա՛թ անէլ - *տե՛ս* Թըքըթօ՛հմա՛թ տալ:

- Թըքըթօ՛հմա՛թ կօլ տալ/յը՛ր օնէլ - *տե՛ս* Թըքըթօ՛հմա՛թ օտէլ:

- Թըքըթօ՛հմա՛թ տալ - Խիստ նախատել, ամոթանք տալ, խայտառակել: *Նօրից ըն հըվաքվում, մին լ՚ավ թըքըթօ՛հմա՛թ տամ* (ԱԱռ, 68):

- Թըքըթօ՛հմա՛թ օտէլ - 1. Անարգվել, նախատվել, խայտառակվել: *Տուլաշ մարթ ա, էտքան թըքըթօ՛հմա՛թ ա օտում, էլիա յը*ᵉ*խնըվում չի* (Բ): 2. Աղաչանք-պաղատանք անել, երեսը սեւացնել: *Շատ թըքըթօ՛հմա՛թ ա օտում, մինչը*ᵉ*վ կարում ա տըղէն հը*ᵉ*տէ կօրծ քըթէնա* (Բ):

ԹԸՔԸՄՕՐ/ԹՈՒՔՈՒՄՕՐ/ԹՕՔ ՈՒ ՄՕՐ - *տե՛ս* ԹԸՔԸԹՕՀՄԱ՛Թ:

ԹԸՔԸՆ-ԹԱՔՈՒՆ/ԹԱՔՈՒՆ-ԹԱՔՈՒՆ - *ած., մ.* Գաղտագողի, ծածուկ, գաղտնաբար: *...Օգո՛ւմ ա թըքըն-թաքուն հէնց ք՚ընա՛, վը*ᵉ*ր օցը տէհնա վուչ* (ԼՂԲՔ, 266):

ԹԸՔ՚Ա - *տե՛ս* ԹԻՔ՚Ա՛:

ԹԸՔ՚Ա՛ - *տե՛ս* ԹԻՔ՚Ա՛:

ԹԸՔ՚Ը՛Ռ(Ն)Է - *տե՛ս* ԹԻՔ՚Ը՛Ռ(Ն)Է:

ԹԸՔՆԱՍ - *ած.* 1. Կատաղած, գազազած: *Մին թըքնաս արչ ա տա՛ւս կ՚ամ, ըտըրան ցըրը*ᵉ*վ տամ* (Ձ): 2. Ամբարտավան, ինքնահավան: *Թըքնաս մարթին անա զա՛հլա՛ս տարած ա* (Բ):

ԹԸՔՈՒՆԱՌ/ԹՈՒՔՈՒՆԱՌ - *ած.* Թաքուն փախցնող՝ գողացող: *Թըքունառ կ՚ա՛ւլին անա վը*ᵉ*խճար չի պըրծընէլ* (Ձ):

ԹԸՔՈՒՉԻ/ԹՈՒՔՈՒՉԻ - *ած.* Ոչ շատ տաք, գոլ: *Թըքուչի ճիրա՛վ ա իրը*ᵉ*սը լը-վանում* (Բ):

ԹԸՔՈՒՏ/ԹՈՒՔՈՒՏ - *ած.* Թուք քսված, թքով կեղտոտված: *Թըքուտ ծիրքէրավ ա հաց օտում* (Բ):

- Թըքուտ անէլ - Թուք քսել, թքով կեղտոտել: *Թըքօտում ա, էտ թօխտը սաղ թըքուտ անում* (Ձ):

- Թըքուտ ինիլ/տը՛ռնալ - Թուք քսվել վրան, թքով կեղտոտվել: *Էտ վէր խօսում ա, ըռըչին տիրա՛ծ ամանը թըքուտ ա տը՛ռնում* (Բ):

ԹԸՔՕՏԷԼ/ԹՈՒՔՕՏԷԼ - *նբ.* Հաճախակի կամ զանազան տեղեր թքել: *Արչը թըքօտում ա, մարթին թօղում, ինք՚ը ք՚ինամ* (Ձ):

ԹԻԳՆԱՊԱՀ *(գրբ. թիկնապահ)* - *գ. տե՛ս* Թէգի՛ունք պահօղ: *...Մէծ ախպէրը ի՛ւրա՛ն թիգ՚նապահէրավը կուճուր ախպօրը տանում ա, թօղնում ի՛ւրա՛նց տանը* (ՀԺՀ, V, 443):

ԹԻԹԱ՛ - 1. *գ.* Մանր փոշի: *Մին հափուռ թիթա՛ յա յօր օնում, յըլլը*ᵉ*խումը պըտատում, տանում* (Ձ): 2. *ած. փխբ.* Թեթեւ եւ չոր: *Թիթա՛ փա՛ռ ա* (Բ):

ԹԻԹԷՎ - *տե՛ս* ԹԻԹԸ՛Վ:

ԹԻԹԷՎՈՒՆՔ - *տե՛ս* ԹԸՐԹԷՎՈՒՆՔ:

ԹԻԹԸՋԱՆԱԼ/ԹԸԹԸՋԱՆԱԼ - *չբ.* Թեթեւամիտ՝ թեթեւսոլիկ դառնալ: *Առաչ ծանդըր-ծըրդըրմէ կընէգ՚ ա հլա՛լ, միհէնգ՚ ա թիթըզացալ* (Բ):

ԹԻԹԸՋՑ(Ը)ՆԷԼ/ԹԸԹԸՋՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԻԹԸՋԱՆԱԼ-ի:

ԹԻԹԸՋՕԹՈՒՆ/ԹԸԹԸՋՕԹՈՒՆ - *գ.* Թեթեւամիտ՝ թեթեւսոլիկ լինելը, թեթեւամտություն, թեթեւսոլիկություն: *Թիթըզօթունը ջա՛հիլ հարթնանը սըզական չի* (Բ):

ԹԻԹԸ՛Ռ *(գրբ. թիթեռն, հ.ե. *pter-)* - *տե՛ս* ԹԸԹԸՐՄԱՂԷ:

- Թիթը՛ռ անէլ - *տե՛ս* ԴԻՆՋԱՆԱԼ (1):

ԹԻԹԸ՛ՌԲՈՒՋԻ - *գ.* Մի տեսակ թռչող միջատ: *Լո՛ւսը նի յըն կըցընում, թիթը՛ռբուջէք՚ը վըհաքվում ըն* (Բ):

ԹԻԹԸ՛ՌՄՈՒԿՈՒՆ - *տե՛ս* ԹԻԹԸ՛ՌԲՈՒՋԻ:

ԹԻԹԸ՛Վ/ԹԻԹԷՎ *(գրբ. թեթեւ)* - *ած.* 1. Փոքր կշիռ ունեցող, ոչ ծանր: *Մին թիթը՛վ քար ա թօղ անում, էտ դուշը թըռչո՛ւմ ա* (Ձ): 2. Տեսակարար կշռով փոքր: *Պէխէ փա՛ռը կաղնէ փա՛ռա՛ն թիթը՛վ ա* (Բ): 3. Մեղմ՝ թույլ կերպով արտահայտվող: *Մին թիթը՛վ քամէ յա պըցըրանում* (Բ): 4. Հեշտ կատարվող, դյուրին: *Ապան պըռավալ ա, բուստանէն թիթը՛վ կօրծէրըն էլ չի կարում անէ* (Բ): 5. Դյուրամարս, հեշտ մարսվող: *Իփա՛ծ փիփէրտը թիթը՛վ խօրա՛գ՚ ա* (Բ): 6. Քիչ ծախս պահանջող: *Մին թիթը՛վ առուտօր ա անում, ք՚ինամ տօն* (Ձ): 7. Բարակ, ոչ հաստ, ոչ խիտ գործած, ոչ տաք պահող (հագուստ): *Բափկէնը ծըմըռնըվա կէսին մին թիթը՛վ պէնջակ ա քըցո՛ւմ ջընընդղէրէն, տա՛ւս կ՚ամ շինամաչը* (Ձ): 8. Ոչ խիստ, մեղմ: *Մին թիթը՛վ թըքըթօ՛հմա՛թ ըն տամ, պէց թօղում* (Բ): 9. Մակերեսային, հարեւանցի: *Գուգին մին թիթը՛վ յէշում ա, էտ ախճիգ՚ը կ՚իրմիրա՛ւմ ա* (Ձ): 10. *տե՛ս* ԹԻԹԻՋ: 11. Ոչ խոր, մակերեսային, ոչ երկարատեւ: *Մին թիթը՛վ վէր քօն ա հնա՛ւմ, կըլխացավը ընցընում ա* (Բ): 12. Ներելի, հանդուրժելի, ոչ ծանր պատժի ենթակա: *Խօխան թիթը՛վ ալէգ՚ ըրավ, մարը կըզնըվից* (Բ): 13. Ոչ մեծ, ոչ շքեղ (կառույց, տուն): *Խալխէրը պըլըտնէ յըն շինում, պէն չըն ասում, Յէղիշըն էլ մին թիթը՛վ տօն ա շինա՛լ, լօխ ըտըրանա յըն խօսում* (Բ): 14. Ոչ ծանր, ոչ խոր (հիվանդություն, վերք եւն): *Ջավէնին հիվընդօթունը էնքան էլ թիթը՛վ չի, հիշքան ինք՚ըն ա գ՚ի՛ւդի՛ւմ* (Բ):

- Թիթը՛վ աշկավ յէշիլ - Անտարբեր լինել, լուրջ չվերաբերվել: *Էտ կընէգ՚ը ամէն հինչին թիթը՛վ աշկավ ար յէշի՛ւմ* (Ձ):

- Թիթը՛վ պըրծընէլ - Որեւէ բանից՝ դժվարությունից, աղետից, վտանգից, ծախսերից եւն, փոքրիկ տուժով՝ պատժով ազատվել՝ դուրս գալ: *Թէմուրը ճըդպօրան վէր ա ընգալ, ամմա, փարք՚ Ըստուծու, թիթը՛վ ա պըրծալ:*

ԹԻԹԸ-ԹԻԹԻ/ԹԻԹԻ-ԹԻԹԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թիթը-թիթի անէլ/կ՚ա՛լ - *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹԱԼ:

ԹԻԹԸՌՆԸՀԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թիթըռնըհան ինիլ/տը՛ռնալ - Թիթեռը բոժոժից դուրս գալ: *Բըրաման վըխտէն բիջըրը*ᵉ*ցէն վէջ, թիթըռնըհան ի՛լա՛վ* (Ձ):

ԹԻԹԸՎԱՆԱԼ/ԹԸԹԸՎԱՆԱԼ *(գրբ. թեթեւանամ)* - *չբ.* 1. Թեթեւ դառնալ, կշռով պակասել, ավելի քիչ կշռել: *Ճուղուպուրը չուրացավ, թիթըվացավ* (Բ): 2. Բեռը՝ ծանրությունը պակասել: *Տը՛սնում ա, վէր էշը տիժէր ա ք՚ի՛ւնի՛ւմ, մին մէշուկ ցօրէնը յօր ա օնում, թիթըվանում ա ըրբան* (Ձ): 3. Թուլանալ, մեղմանալ: *Ճար ա խըմում, ցավէրը թիթըվանում ա* (Բ): 4. Հեշտանալ, դյուրին դառնալ: *Պատէրը վէր տինի՛ւմ ըն պըրծընում, կօրծը թիթըվանում ա* (Բ): 5. *տե՛ս* ԹԻԹԸՋԱՆԱԼ: 6. Հարգանքը կորցնել, հեղինակազրկվել: *Էտ կ՚ուղութունանը յը՛տը Մարօն շատ թիթըվացավ շէնումը* (Ձ): 7. Հանգստանալ, հոգսերից՝ մտահոգությունից ազատվել, ծանրաբեռնվածությունը պակասել: *Պարթկէրը տըվավ, թըթըվացավ* (Բ): 8. Բարվոքվել, բարելավվել: *Կըռը՛վը պըրծավ, մէր ժըղուվուրթէն ապրուստը թիթըվացավ* (Բ): 9. Բնական կարիքը հոգալ, զուգարան գնալ: *Ք՚ի՛ւնի՛ւմ ա զախօտ, թըթըվանում, կ՚ամ* (Ձ):

ԹԻԹԸՎՍՕԼԻԳ՚/ԹԸԹԸՎՍՕԼԻԳ՚ - *տե՛ս* ԹԻԹԻՋ:

ԹԻԹԸՎՑ(Ը)ՆԷԼ/ԹԸԹԸՎՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թեթեւացուցանեմ)* - *նբ.* ԹԻԹԸՎԱՆԱԼ-ի:

ԹԻԹԸՎՕԹՈՒՆ/ԹԸԹԸՎՕԹՈՒՆ *(գրբ. թեթեւութիւն)* - *գ.* 1. Թեթեւ լինելը, տեսակարար կշռով եւ քաշով թեթեւ ա-

ռարկաների հատկանիշը: *Առուտուրականը ճըղպօրէն մէշուկը պիցըրցընում ա, թա.- Թըթըվօթունը շատ ա* (Ձ): 2. Հեշտություն, դյուրինություն: *Էտ կօրծէն թիթըվօթունը Արամայիսին շատ ա ուրխըցընում* (Ձ): 3. *տե՛ս* ԹԻԹԸՁՕԹՈՒՆ: 4. Որեւէ հոգսից՝ մտատանջությունից զերծ վիճակ: *Էտ թիթըվօթունը էրկան չի ինում, խաբարը կ՚ամ ա, վէր արտէրը նի յա կացալ, էրալ* (Բ):

ԹԻԹԸՐՄԱՂԷ - *տե՛ս* ԹԸԹԸՐՄԱՂԷ:

ԹԻԹԻ - *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹՕՆ:

ԹԻԹԻ-ԹԻԹԻ - *տե՛ս* ԹԻԹԸ-ԹԻԹԻ:

ԹԻԹԻՁ *(թրք. titiz)* - *ած.* Թեթեւամիտ, թեթեւսոլիկ: *Թիթիզ ախճիգ՚ը թիթիզ կընէգ՚ կըտը՛ռնա* (Ձ):

ԹԻԹՐԻԳ՚ *(թրք. titrik (դողացող)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Թիթրիգ՚ը ցըմաքած մընալ - *տե՛ս* Մաթ մընալ: *Մարթը էտ վէր տը՛սնում ա, թիթրիգ՚ը ցըմաքած ա մընում* (Ձ):

ԹԻԺ - *ած.* 1. Բորբ, բարկ (կրակի կամ կրակարանի մասին): *Թուրունը թիժ ար, հացը էրից* (Բ): 2. Կատաղի, բուռն, եռուն: *...Կըռվէն էտ թիժ վախտը հայէրը մին յը՛խցէ յէլ ըն շինիս, անըմըն էլ տինիս Թիժ յը՛խցէ* (ԱԱ, 49): 3. Շատ ուլորած: *Թիլը հիշկան թիժ ինի, էնքան պէնդ կինի* (Բ): 4. *փխբ.* Հուզումնալից, հույզերով բորբոքված: *Մաքաղաթ հա՛սին թիժ սը՛րտ օնէ* (Բ):

- Թիժ կըրակը ճէլլի յա էրո՛ւմ, վէր ընցընում - Ուժեղ կիրքը՝ եռանդը տեւական չի լինում:

ԹԻԺԱԹՕԽ - *ած.* Բորբ՝ թեժ թոնրի մեջ թխված: *Թիժաթօխ լըվաշան քուշտանալ չինիլ* (Բ):

- Թիժաթօխ հաց - 1. Կարմրերես: *Ախճիգ՚, հինչ ա՞խճիգ՚, մին թիժաթօխ հաց:* 2. Սրտացավ՝ հոգեկցող մարդ: *Մարուսա բիբին մըզը՛տէ մին թիժաթօխ հաց ա* (Բ):

ԹԻԺԱՆԱԼ - *չբ.* 1. Բորբոքվել, արծարծվել (կրակի կամ կրակարանի մասին): *Կըրակը վէր թիժանում ա, ըտըրանք շ՚ուրընէն հանում ըն* (Ձ): 2. Բուռն ու կատաղի դառնալ: *Կըռը՛վը թիժանում ա, էլ կարում չըն արտէրը վարին* (Բ): 3. *փխբ.* Բարկանալ, մոլեգնել: *Ըտը՛ղ թաքավէրին տըղան թիժանում ա, ըտըրանց լօխչին կըտօրում* (Ձ):

ԹԻԺԱՍԸ՛ՐՏ - *ած.* 1. Սրտացավ, հոգեկցող: *Թիժասը՛րտ կընէգ՚ ա Մանիշ աքէրը* (Բ): 2. Դյուրաբորբոք, դյուրագրգիռ: *Միհէնգ՚վա ջիհիլնէն շատ ըն թիժասը՛րտ* (Բ):

ԹԻԺԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹԻԺԱՆԱԼ-ի:

ԹԻԺՕԹՈՒՆ - *գ.* Թեժ լինելը: *Թուրնէն թիժօթունը վէր պըկասում ա, հացը թըխում ըն* (Բ):

ԹԻԼ *(գրբ. թել)* - *գ.* Բրդից՝ բամբակից՝ մագից՝ մետաքսից եւ այլ նյութերից հյուսած դերձան, որ գործածում են կարելու՝ հյուսելու՝ կապելու եւ այլ նպատակներով, թել: *Թիլը ա ասը՛ղը յօր ա ունէս, մարթին շ՚օրէրը կըրկըտէս* (Ձ):

- Թիլա՛ն ծիք՚ տաս՝ հազզար կըրկատան վէր կըղնէ - Ասում են աղքատ՝ հնամաշ շորերով մարդկանց մասին:

- Թիլը կըտըրէլ - Խիստ սոված՝ ուժասպառ լինել՝ թուլանալ՝ հյուծվել: *Էնքան տ՚ուզնը կացալ ա, թիլը կըտըրալ ա* (Բ):

- Թիլը կըտըրցընէլ - Մեկին ուժասպառ անել՝ թուլացնել: *Խանը ըտըրանց էնքան պինըցընում ա, թիլը կըտըրցընում ա* (Ձ):

- Թիլ տը՛ռնալ - Խիստ նիհարել՝ տկարանալ՝ հյուծվել: *Թալանին հիվընդանում ա, մաշվում, թիլ տէռնում...* (ՆԱԲ, 122):

- Թիլ քաշիլ - Շերամի բոժոժը ջրի մեջ գցելով՝ թելի ծայրը գտնել եւ կծկել: *Բըրաման վէր ճ՚ուրը չի ածիս, կարէլ չըս թիլ քաշիս* (Բ):

ԹԻԼԱ՛ԽԱՎ - *գ.* Թելի նուրբ խավ՝ շերտ գործվածքի վրա: *Էտ գ՚ա՛ԝան ըսկի թիլա՛խավ չօնէ* (Բ):

ԹԻԼԱ՛ՇԱՐ - 1. *գ.* Կտավի հենքի թելերի շարքը, հիմնաթելերի շարվածքը: *Փա՛ղանվ թըխում ա, թիլա՛շարը կըտորում, էտ կընգանը թօղում մ՚ա՛թալ* (Ձ): 2. *ած.* Թելի վրա շարված: *Թիլա՛շար չիր ա տ՚ուս օնում, տամ էտ խուխէն* (Ձ):

- Թիլա՛շար անէլ - Թելի վրա շարել: *Շարմաղ բիբին լօբուն տիրըվնէն թիլա՛շար ա անում, չուրըցընում, հանցու ծըմը՛ռնը դօլման փըթաթէ* (Բ):

ԹԻԼԱ՛ՎՈՒՐ - 1. *ած.* Թելեր ունեցող: *Նը՛ըշնածէն մին թիլա՛վուր յալը՛խ ա տամ* (Ձ): 2. *տե՛ս* ԾԻԼԱ՛ՎՈՒՐ (1):

ԹԻԼԱ՛ՏՈՒ[1] - *ած.* Թել տվող, այնպիսի, որից թել է ստացվում (բույսերի մասին): *Վիշը թիլա՛տու վա* (Բ):

ԹԻԼԱ՛ՏՈՒ[2] - *տե՛ս* ԿՈՒՓԷՉ:

ԹԻԼԱ՛ՑՈՒ - *ած., գ.* Թել պատրաստելու համար առանձնացված (բուրդ, բամբակ եւն): *Թիլա՛ցու պ՚ուրթը ղըրաղ ա տինում, մընացածը ծախում* (Ձ):

ԹԻԼԸԹԱՓԷԼ - *չբ. տե՛ս* Թիլը կըտըրէլ:

ԹԻԼԸԸԸՇԿՕՌ - *գ.* Թելի հանգույց: *Բախաջին թիլըքը՛ըշկօռը յը՛տ ա անում, թա.- Արխային ք՚ինի՛* (Ձ):

ԹԻԼ-ԹԻԼ - *մ.* 1. Թել առ թել, թել թելի ետեւից: *Ախճիգ՚ը նըստում ա, էտ կարպէտը թիլ-թիլ քանդ՚ում* (Ձ): 2. Մանրամասնորեն, հանգամանորեն: *Ասում ա, ն՚ուրան դ՚ա՛ղդը թիլ-թիլ հըլըվուրէն պատմում...* (ՆԱԲ, 53):

- Թիլ-թիլ անէլ - Թելերի վերածել, ծվեն-ծվեն անել: *Մէսը թիլ-թիլ ա անում, խուխէն ուտըցընում* (Ձ):

ԹԻԼԹԸԼԱ՛Լ - *չբ.* Սիրտը թուլանալ՝ նվաղել: *Թաքավէրը էտ բախճան վէր ը՛ստի չուրացած տը՛սնում ա, թիլթըլա՛մ ա* (Ձ):

ԹԻԼԻԼ - *նբ.* 1. Թելն ասեղի անցքն անցկացնել: *Այան պըռավալ ա, էլ կարում չի ասը՛ղը թիլի* (Բ): 2. *փխբ.* Խաբել, մոլորեցնել: *Առուտուրականը էտ մարթին թիլ՚ում ա, կավը էծու կ՚ինավ ինք՚ օնում* (Ձ):

ԹԻԼԻՍԻՄ - *տե՛ս* ԹԸԼԸՍԻՄ:

ԹԻԼԻՍԻՄԷԼ - *տե՛ս* ԹԸԼԸՍԻՄԷԼ:

ԹԻԼԻՍԻՄՉԻ - *տե՛ս* ԹԸԼԸՍԻՄՉԻ:

ԹԻԼԻՍ(Մ)ՕՐԷԼ - *տե՛ս* ԹԸԼԸՍ(Մ)ՕՐԷԼ:

ԹԻԼԿԸՏԱԼ - *տե՛ս* ԹԻԼԹԸԼԱ՛Լ:

ԹԻԼՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԹԻԼԻԼ-ի:

ԹԻՀՐԱՏԷԼ/ԹԻՐՀԱՏԷԼ - 1. *նբ.* Կիսատել, թերատ դարձնել, ամանը մասամբ դատարկել: *Էտ ամանը թիհրատում ըն, կըլլխէն ճ՚ուր ածում: չբ.* 2. Կիսատվել, թերատ դառնալ, ամանը մասամբ դատարկվել: *Ճիրին վէդրան տինում ըն իրը՛վէն տակէն, թիհրատում ա:* 3. *փխբ.* Խելքը պակասել, խելապակաս դառնալ: *Անդօնը ասմա.- Ռո՛ւբէն, հանցա յէ՛ թիհրատալ ըս* (Բ):

ԹԻՀՐԱՏՎԷԼ/ԹԻՐՀԱՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԻՀՐԱՏԷԼ(1)-ի:

ԹԻՀՐԸՏՑ(Ը)ՆԷԼ/ԹԻՐՀԸՏՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԻՀՐԱՏԷԼ(1):

ԹԻՄԱ՛ՇԱ՛ - *տե՛ս* ԹԸՄԱ՛ՇԱ՛:

ԹԻՄԱ՛Ր *(պրս. timā (խնամք, դարման), թրք. timar)* - *գ.* Անասունների, հատկապես՝ ձիու, էշի, ջորու մարմինը ձեռքով՝ քերիչով՝ խոզանակով շփելը՝ մաքրելը: *...Տարէրընն էլ ն՚ուրանց աշկին լ՚ուսին նըման պահըմ ըն, կ՚ա՛ռին, տէրմանը, թիմա՛ռը անպակաս անըմ...* (ՋՏ, Բ, 149):

- Թիմա՛ր անէլ - *տե՛ս* ԹԻՄԱ՛ՌԻԼ:

ԹԻՄԱ՛ՌԷԼ - *տե՛ս* ԹԻՄԱ՛ՌԻԼ:

ԹԻՄԱ՛ՌԻԼ/ԹԻՄԱ՛ՌԷԼ - *նբ.* 1. Ձեռքով՝ քերիչով՝ խոզանակով անասունների մարմինը շփել՝ մաքրել: *Քաչալը պիրում ա էշին փալանը յօր օնում, մաշկը թիմա՛ռ՚ում...* (ՀԱԲ, 15, 96): 2. *փխբ.* Մեկին շոյելով, փաքաքշելով, շողոքորթելով՝ համոզել՝ խաբել: *Կընէգ՚ը մարթին թիմա՛ռ՚ում ա, դարկում ծըմակը, ինքը սիրըկանէն նը՛հը՛ստ ք՚ը՛փ անում* (Ձ):

ԹԻՄԱ՛ՌՎԷԼ - *տե՛ս* ԹԻՄԱ՛ՌՎԻԼ:

ԹԻՄԱ՛ՌՎԻԼ/ԹԻՄԱ՛ՌՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹԻՄԱ՛ՌԻԼ-ի:

ԹԻՄԲԻԼԱ՛ՆԱԼ - *տե՛ս* ԹԸՄԲԻԼԱ՛ՆԱԼ:

ԹԻՄԲԻԼԽԱՆԱ - *տե՛ս* ԹԸՄԲԻԼԽԱՆԱ:

ԹԻՄԲԻԼՑ(Ը)ՆԵԼ - *տե՛ս* ԹԸՄԲԻԼՑ(Ը)ՆԵԼ:

ԹԻՄԲԻԼՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԸՄԲԻԼՕԹՈՒՆ:

ԹԻՄԻՋԻԼ - *տե՛ս* ԹԸՄԻՋԻԼ:

ԹԻՄԻՋՄԻՋԻ - *տե՛ս* ԹԸՄԻՋՄԻՋԻ:

ԹԻՄԻՋՎԻԼ - *տե՛ս* ԹԸՄԻՋՎԻԼ:

ԹԻՄԻՋՑ(Ը)ՆԵԼ - *տե՛ս* ԹԸՄԻՋՑ(Ը)ՆԵԼ:

ԹԻՄԻՋՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԸՄԻՋՕԹՈՒՆ:

ԹԻՄԻԾԱՎԵՐ - *տե՛ս* ԹԸՄԸԾԱՎԵՐ:

ԹԻՄԻԾԱՏԸՊ - *տե՛ս* ԹԸՄԸԾԱՏԸՊ:

ԹԻՅԱԿՕԹ - *տե՛ս* ԹԸՅԱԿՕԹ:

ԹԻՅԱՊԷՆ - *տե՛ս* ԹԸՅԱՊԷՆ:

ԹԻՅԱՎԵՐ - *տե՛ս* ԹԸՅԱՎԵՐ:

ԹԻՅԱՔԱՄ - *տե՛ս* ԹԸՅԱՔԱՄ:

ԹԻՅԸՌԸԽ - *տե՛ս* ԹԸՅԸՌԸԽ:

ԹԻՆԳԱԿԱՆ - *տե՛ս* ԹԸՆԳԱԿԱՆ:

ԹԻՆԳԱՆԱԼ - *տե՛ս* ԹԸՆԳԱՆԱԼ:

ԹԻՆԳԱՆՈՒՑ - *տե՛ս* ԹԸՆԳԱՆՈՒՑ:

ԹԻՆԳԱՎՈՒՆ - *տե՛ս* ԹԸՆԳԱՎՈՒՆ:

ԹԻՆԳԸԲԱՋԱՐ - *տե՛ս* ԹԸՆԳԸԲԱՋԱՐ:

ԹԻՆԳԸՄԱԼ(Ա) - *տե՛ս* ԹԸՆԳԸՄԱԼ(Ա):

ԹԻՆԳԸՑ(Ը)ՆԵԼ - *տե՛ս* ԹԸՆԳԸՑ(Ը)ՆԵԼ:

ԹԻՆԳԻԼ - *տե՛ս* ԹԸՆԳԻԼ:

ԹԻՆԳՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԸՆԳՕԹՈՒՆ:

ԹԻՆՔԻ/ԹԸՆՔԻԱ - *գ.* 1. Եղեգնից կամ դալար շիվերից հյուսած ուղղանկյունաձեւ ցանց, որի վրա պահում են շերամի որդը կամ օգտագործում են վրան մրգեր, բանջարեղեն եւն փռելու համար: *Վէրթնը թինքի՛ն յըրա յըն պահում* (Բ): 2. Մի բաժին շերամի սերմ կամ որդ, որ պահում են մի սեղանի վրա: *Ղօրուց Թամարան ամմէն տարէ տասը թինքի՛ն վէրթն ա իլալ պըհէս* (Բ):

ԹԻՇԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թիշի վը՛ռցակ - Կնամոլ տղամարդ: *Էտ թիշի վը՛ռցակը շէնըմը կընէգ՝ չի թողից, լօխճին բիյաբուռ ըրավ* (Բ):

ԹԻՇՏԱՎԵՐ - *տե՛ս* ԹԸՇՏԱՎԵՐ:

ԹԻՋԻՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԸՋԻՐՕԹՈՒՆ:

ԹԻՍԻ[1] - *տե՛ս* ԹԸՍԻ[1]:

ԹԻՍԻ[2]/ԹԸՍԻ[2] - *գ.* 1. Աղանձած սիսեռ, որ նախքան աղանձելը մի քանի ժամ պահում են ջրի մեջ: *Խօխէնքը թիսին շատ ըն սիրում* (Բ): 2. *փխբ.* Կիսատ-պռատ խորոված միս՝ կարտոֆիլ եւն: *Հինչ խըրա՞ված, թիսի յա, լի՞* (Բ):

- Թիսի անէլ - 1. Սիսեռը աղանձել: *Թիսի յա անում, ածում խօնցը ջուբէրը, հըդէ տինում* (Ձ): 2. Կիսատ-պռատ խորովել: *Մէսը քաշում ա շամփուրը, թիսի անում, թըյդը-թայդի օտում, քի՛նամ* (Ձ):

ԹԻՍԻԿԱՎԵՐ - *տե՛ս* ԹԸՍԸԿԱՎԵՐ:

ԹԻՍԻՄՕԼԻ - *տե՛ս* ԹԸՍԸՄՕԼԻ:

ԹԻՍԻՎԱՎԱ - *տե՛ս* ԹԸՍԸՎԱՎԱ:

ԹԻՎ *(գրբ. թիւ)* - *գ.* 1. Քանակը արտահայտելու հասկացություն: *Հէնգ՝ը խէր թիվ ա* (Բ): 2. Գումար, ամբողջ քանակը: *Ըտըրա վըխճըրնէրէն թիվը վէշ մինը գ՝ունդում չի* (Բ): 3. Հաշիվ, համբարք: *Ամմէն դօնում հըմբարում ա, թիվը մընանա քըցում* (Ձ): 4. Տարեթիվ, թվական: *Հազգար ինը հարուր տասնըինը թիվը նուրըկ՝ըդը՛ցուց հը՛տէ գունլում տարէ յա իլալ...* (ԱԱ, 85): 5. Ժամանակաշրջան: *Միհէնգ՝վա թըվումը ապըրէլը հիշտ չի* (Բ):

- Թիվը փոխվել - Ժամանակները՝ պայմանները՝ իրավիճակը փոխվել, այլեւս նախկինի պես չլինել: *Թիվը փոխվալ ա, միհէնգ՝վա հարթնէրը պըտրոնէն, ըսկէսվորը մըհալ չըն քըցում* (Բ):

- Թիվ չինիլ - Անչափ շատ լինել: *Սըմսօնէն կըվէրէն թիվ չի կա* (Բ):

ԹԻՎԱԹԱՓ - *տե՛ս* ԹԸՎԱԹԱՓ:

ԹԻՎԱՆԳ՝ - *տե՛ս* ԹԸՎԱՆԳ՝:

ԹԻՎԱՎՈՒՐ - *տե՛ս* ԹԸՎԱՎՈՒՐ:

ԹԻՎԱՏԱԿ - *տե՛ս* ԹԸՎԱՏԱԿ:

ԹԻՎԸԹԱՓԷԼ - *տե՛ս* ԹԸՎԸԹԱՓԷԼ:

ԹԻՎԻԼ-ԹԱՎԻԼ - *տե՛ս* ԹԸՎԻԼ-ԹԱՎԻԼ:

ԹԻՎՔԱՎԵՐ - *տե՛ս* ԹԸՎՔԱՎԵՐ:

ԹԻՎՔԱՏԱԿ - *տե՛ս* ԹԸՎՔԱՏԱԿ:

ԹԻՎՔԸՊԸՏՕԿ - *տե՛ս* ԹԸՎՔԸՊԸՏՕԿ:

ԹԻՐԱ/ԹԸՐԱ - *գ.* Որեւէ ցանքսով զբաղեցրած հողակտորի առանձին հատված: *Մին թիրա լօբի յա վարում, էրկու թիրա՝ կարտօշկա* (Ձ):

ԹԻՐԱ-ԹԻՐԱ - *մ.* Մասերի բաժանված, ըստ մասերի, առանձին մասերով (հողակտորի մասին): *Բօստանը թիրա-թիրա ճիրում ա* (Բ):

- Թիրա-թիրա անէլ - Հողակտորը մասերի բաժանել՝ բաժինների վերածել: *Էտ վը՛ղը թիրա-թիրա յըն անում, բիջարում* (Ձ):

ԹԻՐԹԷՐԻԼ - *տե՛ս* ԹԸՐԹԷՐԻԼ:

ԹԻՐԹԷՐՈՒԿ - *տե՛ս* ԹԸՐԹԷՐՈՒԿ:

ԹԻՐԹԷՓ(ՆԸ)/ԹԱՐԹԱՓ - *գ.* Նոսր տեղացող ու բարակ շերտով նստող ձյուն: *Էս հինչ ծուն ա, թիրթէփ ա* (Բ):

- Թիրթէփ(նը) տինիլ - Նոսր ձյուն տեղալ եւ բարակ շերտով նստել: *Վէր մին թիթը՛էվ թիրթէփ ա տինում, Ջինավուրը էլ տանան տուս չի կ՝ամ* (Բ):

ԹԻՐԻՄ - *գ.* Մի տեսակ բույս, որի տերեւները չորացնելով եւ փոշիացնելով օգտագործում են կաշին դաբաղելու համար: *Թիրիմը չուրըցընում ըն, աղում, կաշին նը՛ստավ դըբաղում* (Ձ):

ԹԻՐՀԱՏԷԼ - *տե՛ս* ԹԻՀՌԱՏԷԼ:

ԹԻՐՀԱՏՎԷԼ - *տե՛ս* ԹԻՀՌԱՏՎԷԼ:

ԹԻՐՀԸՏՑ(Ը)ՆԵԼ - *տե՛ս* ԹԻՀՌԸՏՑ(Ը)ՆԵԼ:

ԹԻՐՄԱ - *ած.* Ասեղնագործ, ասեղով գործված (կտոր, շոր եւն): *Էէս ախճիգ՝ըմ, ալ կօզիմ, մը՛շկիս թիրմա շալ կօզիմ...* (ԼՂԲ, 194):

ԹԻՐՄԱ *(գրբ. թուրմ (թաց), հ.ե. *tū-r-)* - *գ.* Նոր՝ եփը դեռ չավարտված գինի՝ մաճար: *Թիրմանն խըմում ըն, հարփում* (Բ):

ԹԻՐՉ(Ը)ՎԻԼ - *տե՛ս* ԹԸՐՉ(Ը)ՎԻԼ:

ԹԻՐՉԻԼ - *տե՛ս* ԹԸՐՉԻԼ:

ԹԻՐՉՕՑ - *տե՛ս* ԹԸՐՉՕՑ:

ԹԻՐՍԸՀԻԼՕՐ - *տե՛ս* ԹԸՐՍԸՀԸԼՕՐ:

ԹԻՐՍԸՊԱՐԱՆ - *տե՛ս* ԹԸՐՍԸՊԱՐԱՆ:

ԹԻՐՍԸՊԻԼՕՐ - *տե՛ս* ԹԸՐՍԸՊԸԼՕՐ:

ԹԻՐՍՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԸՐՍՕԹՈՒՆ:

ԹԻՐՓԱՆԳ՝ - *տե՛ս* ԹԸՎԱՆԳ՝:

ԹԻՓԱՆՔ - *տե՛ս* ԹԸՓԱՆՔ:

ԹԻՓԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ԹԸՓԸԹԱԹԱԽ:

ԹԻՓԸԽԱՌ(Ն)Ը - *տե՛ս* ԹԸՓԸԽԱՌ(Ն)Ը:

ԹԻՓԸԿԱԼԻԼ - *տե՛ս* ԹԸՓԸԿԱԼԻԼ:

ԹԻՓԸՀԱՆ - *տե՛ս* ԹԸՓԸՀԱՆ:

ԹԻՓԸՌ-ԹԷՓՈՒՌ - *տե՛ս* ԹԸՓԸՌ-ԹԷՓՈՒՌ:

ԹԻՓԸՌՀԱՆ - *տե՛ս* ԹԸՓԸՌՀԱՆ:

ԹԻՓԸՌՀԱՆԷԼ - *տե՛ս* ԹԸՓԸՌՀԱՆԷԼ:

ԹԻՓԸՌՀԱՆՎԷԼ - *տե՛ս* ԹԸՓԸՌՀԱՆՎԷԼ:

ԹԻՓԸՌՊԸՏԷՐԷՆ - *տե՛ս* ԹԸՓԸՌՊԸՏԷՐԷՆ:

ԹԻՓԻ *(թրք. tipi)* - *գ.* 1. *տե՛ս* ԹԻՐԹԷՓ(ՆԸ): 2. Ձյունախառն մրրիկ: *Մին թիփի յա ըսքըսվում, չօբանը գ՝ունդում չի, թա հինչ անէ* (Ձ): 3. *փխբ.* Սուտ, փչոց: *Ըտըրա ըսըծնէն սաղ թիփի յա* (Բ):

- Թիփի անէլ - 1. Բուք անել: *Թիփի յա անում, ըտըրանք կօրծը թողում ըն կէսատ* (Ձ): 2. Սուտ ասել, փչել: *Ջիհիլնէն հըվաքվում ըն, ըսկըսում թիփի անէլը* (Ձ):

ԹԻՓՉԸԿԱՎԵՐ - *տե՛ս* ԹԸՓՉԸԿԱՎԵՐ:

ԹԻՓՈՒԱՎԵՐ - *տե՛ս* ԹԸՓՈՒԱՎԵՐ:

ԹԻՓՈՕՏԷԼ - *տե՛ս* ԹԸՓՈՕՏԷԼ:

ԹԻՓՈՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ԹԸՓՈՕՏ(Վ)ԷԼ:

ԹԻՓՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ԹԸՓՕՏ(Վ)ԷԼ:

ԹԻՔ՝Ա - *տե՛ս* ԹԻՔ՝Ա:

ԹԻՔ՝Ա/ԹԸՔ՝Ա/ԹԻՔ՝Ա/ԹԸՔ՝Ա *(պրս., թրք. tike)* - *գ., ած.* 1. Ուտելու պատառ: *Լըհա վէր լ՚ուսը ծաք՝ում ա, մարը յըրան ա պըրծընում, մին թըք՝ա հաց տընում ծէրքէն, դարկում հանդը* (ՆԱԲ, 50): 2. *փխբ.* Պատառ, կտոր: *Քըրքարուտ տը՚ղ ա, վը՚դու թիք՝ան չի կա* (Զ):

- Թիք՝ան անէլ - Քիչ ուտել, թեթեւակի սնվել: *Նըստում ա, թա թիք՝ան անէ, շօնը հանչում ա* (Զ):

- Թիք՝էք՝ը հըմբարէլ - Մեկին ուտելու ժամանակ ակնդետ նայել, նայելով կաշկանդել: *Էտ պառավը դունաղէն թիք՝է-ք՝ը հըմբարում ա, թօղում չի, թա հաց օտէ* (Զ):

ԹԻՔ՝Ա-ԹԻՔ՝Ա - *մ.* Մաս-մաս, ըստ մասերի: *Էտ ք՝օթանկը թիք՝ա-թիք՝ա ճըրոցտում ա* (Զ):

- Թիք՝ա-թիք՝ա անէլ - 1. Մաս-մաս՝ կտոր-կտոր անել, մասերի բաժանել: *Ասլանը մէսը թիք՝ա-թիք՝ա յա անում, տամ ճուտէրէն* (Զ): 2. Պատառոտել, հոշոտել, բզկտել: *Էս ըխճըկէրքը ասում ըն.- Շուտ ըրա տանս յէք, թա չէ օշափը վէր յէր կացավ, ք՝ը՚զ թիք՝ա-թիք՝ա յա ըննական* (ՀԺՀ, V, 564):

- Թիք՝ա-թիք՝ա ինիլ/տը՚ռնալ - 1. Մասերի՝ կտորների վերածվել: *Տըղան վէր տըրըքցընում ա, էտ հիլին թիք՝ա-թիք՝ա յա ինում, վէր տը՚ռնում* (Զ): 2. Պատառոտվել, հոշոտվել, բզկտվել: *Կ՚ամ ըն տը՚սնում էտ կավը ըտը՚ղ թիք՝ա-թիք՝ա տը՚ռած* (Զ):

ԹԻՔ՝Ը՚Ռ(Ն)Է/ԹԸՔ՝Ը՚Ռ(Ն)Է - *գ.* Ամուր բնափայտով ծառատեսակ: *Մէհէտ կածանկը թըխէս ա, էտ թըք՝ը՚ռնուն ճէղնը վէր քըցիս* (ԱԱ, 49):

ԹԻՒ/ԹԻՒՀ *(հ.ե. *theū-)* - *ձ.* 1. Թքելու գործողության ձայնանմանությունը: 2. Զզվանքի՝ գարշանքի՝ տհաճության բացականչություն: *Թի՛ւ, էս հինչ փիս վը՚տ ա՞ կ՚ամ* (Բ): 3. Ցայրույթի՝ դժգոհության՝ անարգանքի բացականչություն: *Թի՛ւ քու նըմուսէտ, պա կընէգ՚ըն էլ էտքան քաքուտ կինի՛* (Զ): 4. Ափսոսանքի բացականչություն: *Ք՝ասպանը դային ցակատը կուրցընում ա, թա.- Թի՛ւ, պա ըստի պէն կինի՛* (Զ):

- Թիւ անէլ - 1. Թքել: *Թիւ յա անում, հըռանում* (Զ): 2. Զզվանք, արհամարհանք արտահայտել: *Մարթ կա՝ դանխպան կընգանա հանզ ա անում, մարթ էլ կա՝ թիւ յա անում* (Զ):

- Թիւ ծիւծիւկ - Ասվում է սխալվելուց հետո:

- Թիւ քու իրը՚սէտ - Անարգանքի՝ նախատինքի արտահայտություն՝ ուղղված մեկին:

ԹՈՒԲՈՒՆ/ԹՕԲՈՒՆ *(թրք. tabun)* - *գ.* 1. Մարդկանց մեծ խումբ՝ բազմություն: *Նա տը՚սնում ա, վը՚ր մին մը՚ծ, դանշանգ՚ տան առաչի մին թուբուն ջանիլ տըդէրք կաղնած...* (ՀԺՀ, V, 125): 2. Մեղուների՝ թռչունների՝ կենդանիների խումբ: *Տա վը՚ր թօբունը՚ն էրկու ծիյանցը մուտանում ա, տըրանցա էրկու քօռակ ըն ծընվում* (ՀԺՀ, VII, 189):

- Թուբուն կապէլ - Խմբվել, խումբ կազմել: *Թուբուն ըն կապում, ք՝ինամ նախագին կօշտը՝ կ՚էնգ՚ատ* (Զ):

ԹՈՒՋԱՇՕՐ - *գ.* Փոշի մաքրելու շոր, փոշելաթ: *Թուզանշօրը յօր ա օնում, ըշկափը թըմիզցընում* (Բ):

ԹՈՒՋԸԹԱԹԱԽ - *ած.* Փոշու մեջ թաթախված, փոշեթաթախ: *Թուզըթաթախ շուրէրավ ք՝ինամ ա թաքավէրին պալատը* (Զ):

ԹՈՒՋԸԽԱՌ(Ն)Ը - *ած.* Փոշու հետ խառն, փոշի պարունակող: *Ցօրէնը թուզըխառնը ածում ա չըվըլնէն* (Բ):

ԹՈՒՋԸԿԱԼԻԼ - *չբ.* Փոշով պատվել, վրան փոշի նստել: *Կացէնը էնքան պինըցըրալ չի, թուզըկալալ ա* (Բ):

ԹՈՒՋԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ԹՈՒՋԸԹԱԹԱԽ:

ԹՈՒՋԸՀԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թուզըհան անէլ - Փոշին մաքրել, փոշուց ազատել: *Էվանը յօր ա ունէս, էտ պըռավէն տօնը թուզըհան ընէս* (Զ):

- Թուզըհան ինիլ/տը՚ռնալ - Փոշին մաքրվել, փոշուց ազատվել: *Նի յա մընում համամը, թուզըհան ինում* (Զ):

ԹՈՒՋԻ - *տե՛ս* ԹՈՒՋԻ:

ԹՈՒՋԻ/ԹՈՒՋԻ/ԹՈՒՋՆԻ *(գրբ. թզենի)* - *գ.* Թթազգիների ընտանիքին պատկանող ծառ՝ թզենի: *Չայլու թուզի շատ ա իլալ* (Բ):

- Թուզունն լաշը կըկըդից, թուզին պըթկըվից - Ասում են՝ նկատի ունենալով գարնան բացվելը:

ԹՈՒՋՆԻ - *տե՛ս* ԹՈՒՋԻ:

ԹՈՒՋՆՕՏ - *տե՛ս* ԹՈՒՋՕՏ[1]:

ԹՈՒՋՕՏ - *տե՛ս* ԹՈՒՋՕՏ[1]:

ԹՈՒՋՕՏ[1]/ԹՈՒՋՕՏ/ԹՈՒՋՆՕՏ/ԹԸՋՕՏ[1]/ԹԸՋՆՕՏ - *գ.* Շատ թզենիներ աճած տեղ, թզենիների պարտեզ: *Էտ թուզօտումը կընդակ մին թութէ ծառ ա ինում* (Զ):

ԹՈՒՋՕՏ[2]/ԹԸՋՕՏ[2]/ԹՕՋՈՒՏ - *ած.* Վրան փոշի նստած, փոշոտված: *Թուզօտ շալվարը կ՚ը՚նում ա, ք՝ինամ* (Բ):

- Թուզօտ անէլ - *տե՛ս* ԹՈՒՋՕՏԷԼ(1):

- Թուզօտ ինիլ/տը՚ռնալ - *տե՛ս* ԹՈՒՋՕՏԷԼ (2):

ԹՈՒՋՕՏԷԼ/ԹԸՋՕՏԷԼ - 1. *նբ.* Փոշով կեղտոտել, փոշոտ դարձնել: *Վէր ա ըդնում, շօրէրը թուզօտում* (Բ): 2. *չբ.* Փոշով կեղտոտվել, կեղտոտ դառնալ: *Շօրէրըս թուզօտալ ա* (Բ):

ԹՈՒՋՕՏՎԷԼ/ԹԸՋՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹՈՒՋՕՏԷԼ(1)-ի:

ԹՈՒԹԱԲԱՂ - *գ.* Թթենիների ծառաստան՝ այգի: *Ամարասա թութըբաղան պէն չի մընացալ, լօխ կընտօրալ ըն* (Բ):

ԹՈՒԹԱՆԳ/ԴՈՒԴԱԳ/ԴՈՒԴՈՒԳ *(թրք. düdük)* - *գ.* Փոքրիկ սրինգ՝ դուդուկ: *Էտ խօխան շատ ա լանց ինում, ծօվէն ղըրաղան մին դարդու յըն կընտրում, թութանգ շինում* (ՀԺՀ, V, 560):

- Թութանգ՝ին տակէն պար կ՚անալ (մինին) - *Մեկի կամակատարը լինել: Ազօն կընգանը թութանգ՝ին տակէն պար ա կ՚ամ* (Բ):

ԹՈՒԹԱԿ *(գրբ. թութակ, պրս. tōtak, արաբ. tūtaq)* - *գ.* 1. Արեւադարձային անտառային թռչուն՝ թութակ: *Մըդանփունն, վէր Դարաբաղա ծըմըկնէրումը թութակ չի կա* (Բ): 2. *փխբ.* Անիմաստ խոսող՝ ուրիշի ասածը կրկնող անձ: *Թութակ ը՞ս, հու հինչ ասում ա, հը՚տան ասում ըս* (Բ):

ԹՈՒԹԱՀԱՄ - *գ.* Թթի համ: *Էնքան թօռ ա յը՚կալ, թօթը ըսկի թութահամ չօնէ* (Բ):

ԹՈՒԹԱԾԱԽ/ԹՈՒԹԱՁԱԽ *(թրք. tutağac)* - *գ.* Կաթսա բռնելու շոր: *Թութաճախը յօր ա ունէս, կուրկուտէն ղըզդանը քըսկըրէնք՝ան քըշըցընէս* (Զ):

ԹՈՒԹԱՁԱԽ - *տե՛ս* ԹՈՒԹԱԾԱԽ:

ԹՈՒԹԱՎԸ՚Տ - *գ.* Թթի հոտ՝ բույր: *Թօթը հըսնում ա, թութավը՚տը ըդնում ա բաղը* (Բ):

ԹՈՒԹԱՓԱՆԴ - *գ.* Թթենու բնափայտ: *Թութըփանդան պօժկա յըն շինում* (Բ):

ԹՈՒԹԷ/ԹՈՒԹՆԷ *(գրբ. թթենի)* - *գ.* Թթազգիների ընտանիքին պատկանող ծառ՝ թթենի: *Վէր թութէն ինի վէջ, դարաբաղցէն կարէլ չի յօլլա ք՝ինի* (Զ):

- Թութու դուշ - Փոքրիկ թռչնատեսակ, որ հայտնվում է թութը հասնելու ժամանակ: *Մին թութու դուշ ա կ՚ամ, էտ խօխան ուրխանում ա* (Զ):

ԹՈՒԹԸԹԱՓԷ - *գ.* Թութ թափելու փայտ՝ թակ: *Թափչին թութըթափավը վէր թըխէս ա ճըդնանը, թօթը շըռռաս ա* (Բ):

ԹՈՒԹԽԱԼ *(թրք. tutkal)* - *տե՛ս* ԿԸԼԷՅ:

ԹՈՒԹԽԱԼԻԼ - *նբ. տե՛ս* Կըլէյիտ անէլ:

ԹՈՒԹԽԱԼՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԹՈՒԹԽԱԼԻԼ-ի:

ԹՈՒԹՄԻՇ *(թրք. tütmek (ծխալ))* - Գործածվում է կապակցության մեջ:

- Թութմիշ ինիլ - *տե՛ս* Թուրթունը թութմիշ ինիլ:

ԹՈՒԹՆԷ - *տե՛ս* ԹՈՒԹԷ:

ԹՈՒԹՎԱՀԱՄ - *տե՛ս* ԹԸԹՎԱՀԱՄ:

ԹՈՒԹՎԱԾ - *տե՛ս* ԹԸԹՎԱԾ:

ԹՈՒԹՎԱՎԸՏ - *տե՛ս* ԹԸԹՎԱՎԸՏ:

ԹՈՒԹՎԷԳ - *տե՛ս* ԹԸԹՎԷԳ:

ԹՈՒԹՎԷԼ - *տե՛ս* ԹԸԹՎԷԼ:

ԹՈՒԹՎԸՂԱՆ - *տե՛ս* ԹԸԹՎԸՂԱՆ:

ԹՈՒԹՎԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԸԹՎԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹՈՒԹՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԸԹՎՕԹՈՒՆ:

ԹՈՒԹՈՒՆ *(թրք. tütün)* - *գ.* 1. Մորմազգիների ընտանիքին պատկանող բույս: *Ղարաբաղ միհէնգ՝ վէշ մինը թուրթունն չի վարում* (Բ): 2. Այդ բույսի չորացրած եւ մանրացրած տերեւները, որ գործածում են ծխելու համար: *Շընքանց միհէնգ՝ էլ թուրթունը հէնա միշտ ծուխ ընէլիս* (ԱԱ, 62):

- Թուրթունը թութմիշ ինիլ - Խիստ ջղայնանալ, կատաղել: *Էտ վէր տըսնաս ա՝ յը՛զնըն ա դընու կ՝ինավ տըվալ, թուրթունը թութմիշ ա ինիս* (ՀԺՀ, V, 258):

- Թուրթուն օնիս՝ պէր կըլօլինք՝ - Ասում են ոչ ըստ էության խոսողին՝ կարեւոր բան ասա՛, լուրջ առաջարկություն արա՛:

ԹՈՒԹՈՒՆՉԻ *(թրք. tütünčü)* - *գ., ած.* Ծխախոտ վաճառող, ծխախոտավաճառ: *Թուրթունչին ըտըրան խանփում ա, նամ թուրթունը ծախում* (Ձ):

ԹՈՒԹՕ - *տե՛ս* ԹԸԹՕ:

ԹՈՒԹՕ-ԿՈՒԾՕ - *տե՛ս* ԹԸԹՕ-ԿԸԾՕ:

ԹՈՒԹՕՏ/ԹԸԹՕՏ[1] - *գ.* Շատ թթենիներ աճած տեղ, թթենիների պարտեզ: *Ք՝ինամ ըն թութոտը, տը՛սնում քամէն թոթը սաղ վէր ըրած* (Ձ):

ԹՈՒԼ *(գրբ. թոյլ)* - *ած.* 1. Ֆիզիկապես նվազ, անհրաժեշտ չափով ուժից զուրկ, թուլակազմ (մարդկանց՝ կենդանիների եւ նրանց մարմնի առանձին անդամների մասին): *Էտ էշը թուլ էշ ա, վէր պատառ շատ ըն պէռնում, վէր ա ըղնում* (Բ): 2. Ոչ բավարար առողջ, հիվանդոտ: *Ըտըրա սը՛ռտը թուլ ա ինում, տըրա հը՛տէ էլ կարում չի ծանդըր կօրծ անէ* (Ձ): 3. Անվճռական, թուլակազմ, մեծ իշխանություն՝ ազդեցություն չունեցող: *Թուլ մարթին կընէգ՝ը ղըխաշթուն էլ կանէ, կ՝ուղութուն էլ* (Ձ): 4. Պաշտպանական եւ հարձակողական մեծ կարողություններ չունեցող, ոչ հզոր: *Վէր մէր բանակը թուլ ինա՛ր, թորքէրը սաղ Ղարաբաղը յոր կունին* (Բ): 5. Ոչ ներգործուն, ուժեղ ազդեցություն չգործող, ոչ բարկ: *Թուլ կինի յա* (Բ): 6. Աղոտ, ոչ պայծառ: *Ծիլկանը էտ թուլ լուսին տակէն ախպորը կ՝իրանցը մին թանիրանվ կարթում ա, հըղէ ինում* (Ձ): 7. Բարձր լարվածություն՝ արագություն՝ հաճախականություն չունեցող: *Մին թուլ քամէ յա պիցըրանում* (Բ): 8. Բարձր ունակություն՝ գիտելիքներ չունեցող, իր մասնագիտությանը լավ չտիրապետող: *Սիմօնյանը թուլ դասատու վա* (Բ): 9. Ոչ պիրկ, չձգված: *Թոխկան թուլ ա կապում, շալվարը վէր ա ըղնում* (Բ): 10. Ոչ պինդ, կակուղ, լույծ: *Ցը՛խը վէր շատ թուլ ինավ, ուստան կարէլ չի պատ տինի* (Բ):

- Թուլ անէլ - 1. Արձակել, բաց թողնել: *Ծիք՝ ա տամ, պուկում, մըհէնգ՝ էլ թուլ անը՛մ, քըցըմ քէրծէն տակը* (ՀԺՀ, V, 309): 2. *տե՛ս* Թուլ տալ: 3. *տե՛ս* ԹԸՍԷԼ:

- Թուլ դամարը փըռնել/քընթէնալ - Մեկի թույլ կողմը՝ թուլությունն իմանալ եւ դրանից օգտվել: *Ըտի չուբանէն կընէգ՝ը մարթին թուլ դամարը փըռնում ա* (Ձ):

- Թուլ պէրան - 1. Շատախոս: *Էտ թուլ պէրանը էնքան խօսից, լօխճին զանիլանն տարավ* (Բ): 2. Անգաղտնապահ: *Ըտըրա կընէգ՝ը էլ թուլ պէրան ա ինում, ք՝ինամ ա էտ լօխ վէզիրին ասում* (Ձ):

- Թուլ տալ *(գրբ. թոյլ տամ)* - Թույլատրել: *Թաքավէրը էտ օրվանից թուլ ա տամ, վէր արաղ քաշին* (Ձ):

- Թուլ տը՛ղ - Մեկի՝ մի բանի խոցելի տեղը՝ թուլությունը՝ թերությունը: *Էտ մարթին թուլ տը՛ղը էն ա ինում, վէր կընգանը շատ ար անգուճ օնում* (Ձ):

ԹՈՒԼԱ *(արաբ., թրք. tula)* - *գ.* 1. Շան՝ առյուծի՝ գայլի եւն ձագ: *Էտ ամառնին հանա թուլա վախտը Իրանին շահը ար բաղարկա տըվալ Մէլիքին* (ՀԺՀ, V, 237): 2. *անգ.* Երեխա, զավակ: *Ըտըրա թուլան էլ ուրանն նըման կ՝ուղութուն ա անում* (Բ):

ԹՈՒԼԱԳ՝ - *տե՛ս* ԸՈԸԽԱՎԷՐ: ...*Հիշտէղ ուրանց թանին թրթաս ասող կա, խըրտըհարըմ ըն, հըռըցընըմ, մէյդանը թողըմ բօշ բօղազնէրին, թուլագ՝նէրին...* (ՁՏ, Բ, 137):

ԹՈՒԼԱԹԱՓ - *ած.* 1. Թուլացած, նվաղած: *Թուլաթափ մարթ ա, հինչ ը՞ս օգում նը՛ստա* (Բ): 2. Հուսալքված, հուսալիք: *Հըրը՛վանը հիշկան փօրցանում ա էտ թուլաթափ կընգանը ումէդ տա, ամալ չի կ՝ամ* (Ձ):

- Թուլաթափ անէլ - Հուսալքել: *Էտ տըղան մօրը լափ թուլաթափ ըրավ* (Ձ):

- Թուլաթափ ինիլ/տը՛ռնալ - Հուսալքվել: *Խը՛ղճէն արտը նի յա կացալ, ինք՝ը էլ լափ թուլաթափ ա իլալ* (Ձ):

ԹՈՒԼԱՆԱԼ/ԹՈՒԼԱՆԱԼ *(գրբ. թուլանամ)* - *չբ.* 1. Ուժը՝ զորությունը պակասել: *Թուլացած, ճինջըպօմբի ընէլավ ք՝ինում ա մին չուբանու ջիհանում՝ վըխճըրնէն պըհէյիս* (ՀԺՀ, V, 348): 2. Ուշագնաց լինել, ուշքը կորցնել: *Էտ վէր ըսկանում ա, թուլանում ա, վէր ըղնում* (Ձ): 3. Անառողջ, հիվանդոտ դառնալ, տկարանալ: *Ապէրը թուլանում ա, էլ կարում չի առաչվա նըման ք՝ը՛փ անէ* (Ձ): 4. Անվճռական՝ թուլակազմ դառնալ, չկարողանալ իշխել՝ ազդել: *Նախագան թուլացալ ա, հու հինչ օգում ա, անում ա* (Ձ): 5. Բարկությունը՝ թնդությունը կորցնել: *Ճուր խըռնը՛գէն, կինին թուլացավ* (Բ): 6. Աղոտանալ, պայծառությունը կորցնել: *Քըշէրը վէր կ՝ամ ա, լուսը թուլանում ա* (Ձ): 7. Լարվածությունը՝ արագությունը, հաճախականությունը իջնել: *Քամէն թուլանում ա, ք՝արվանը էլիա հըղէ յա ըղնում* (Ձ): 8. Բնական շարժունությունը խախտվել: *Էն ըխճըկանը պատկէրը մը՛տըն ա ընգնում, ծը՛ռքէրը թուլանում ա, էլ կարըմ չի, թա վը՛ռս անէ* (ՀԺՀ, V, 152):

ԹՈՒԼԱՓԱՅ(Ի)/ԹՈՒԼԸՓԱՅ(Ի)/ԹՈՒԼՈՒՓԱՅ(Ի) *(թրք. tulapayi)* - *գ.* 1. Թուլայի՝ շան, առյուծի՝ գայլի եւն ձագի բաժին: *Թուլափայը ղըրաղ ա տինում, մընացածը տամ շընէրէն* (Ձ): 2. *անգ.* Չնչին՝ աննշան բաժին: *Մին թուլափայի տամ ըն էտ կընգանը մարթին, մընացածը ուրանք յօր օնում* (Ձ):

ԹՈՒԼԲԱՆԴ - *տե՛ս* ԴՈՒԼԲԱՆԴ:

ԹՈՒԼԸԲՕԾ/ԹՈՒԼՈՒԲՕԾ - *ած.* 1. Թուլակազմ, վատուժ, վտիտ: *Մարթը խը՛ղճ մարթ ա ինըմ, մին թուլըբօշ, մին Ասծու ընէծածը* (ՀԺՀ, V, 521): 2. Ծույլ: *Թուլըբօշ մարթին կընէգ՝ը վէր ռաշիդ չի իլալ, տօնը կըչօքէ* (Ձ):

- Թուլըբօշ անէլ - 1. *տե՛ս* ԹՈՒԼԸԹԱՓԷԼ(1): *Մին թանիրանվ, թուլըբօշ ըրած, վը՛ննէրնէն քաշ տալավ, պըտրիէս ըն մին վըխճարու* (ԼՂԲ, 323): 2. Ծուլություն ցուցաբերել, ծուլանալ: *Հանձ ընէլիս վէր թուլըբօշ ըրէլ, արտըտ կըմընա հինձիլու* (Բ):

ԹՈՒԼԸԹԱՓԷԼ - *չբ.* 1. Թուլանալ, նվաղել: *Էնքան հաց չի կէրալ, լափ թուլըթափալ ա* (Բ): 2. *տե՛ս* Թուլաթափ ինիլ:

ԹՈՒԼԸՍՈՒԼ/ԹՈՒԼՈՒՄՈՒԼ - *տե՛ս* ԹՈՒԼԸԲՕԾ:

ԹՈՒԼԸՊԷՆՋԱՐ/ԹՈՒԼՈՒՊԷՆՋԱՐ - *տե՛ս* ԹՈՒԼԸԲՕԾ:

ԹՈՒԼԸՑ(Ը)ՆԷԼ/ԹՈՒԼՈՒՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թուլացուցանեմ)* - *նբ.* ԹՈՒԼԱՆԱԼ-ի:

ԹՈՒԼԸՓԱՅ(Ի) - *տե՛ս* ԹՈՒԼԱՓԱՅ(Ի):

ԹՈՒԼ-ԹՈՒԼ - 1. *ած.* Խիստ թույլ: *Թուլ-թուլ ծը՛ռքէրը մը՛կնում ա, կարում չի փըռնէ* (Ձ): 2. *մ.* Թույլ կերպով: *Թուլ-*

թիւլ փըռնում ա, կարում չի պահէ, ծը՛ր-քան վէր ա ըղնում, կօտըրում (Զ):

ԹՈՒԼՈՒ - *տե՛ս* ԹՈՒԼՈՒԼ:

ԹՈՒԼՈՒԲԱՆԴԻ - *տե՛ս* ԹՈՒԼՈՒԼԲԱՆԴԻ:

ԹՈՒԼՈՒԲԱՋԻ - *գ.* Մանկական խաղատեսակ, երբ նստելով իրար դիմաց՝ որոշակի հեռավորության վրա գլորում են գնդակը կամ կլոր այլ բան: *Թուլուբաջին կուճուր խօխէնք՝ը շատ ըն սիրում* (Բ):

- Թուլուբաջի անէլ/տալ - 1. Այդ խաղը խաղալ: *Էտ էրկու խօխան նըստում ըն այուն քըշտէն, թուլուբաջի անում* (Զ): 2. Գլորվել: *Քարը թուլուբաջի յա անում, ըղնում ա ծՕրը* (Բ):

ԹԻՒԼԻՒԲՕԾ - *տե՛ս* ԹԻՒԼԸԲՕԾ:

ԹԻՒԼԻՒԹԱՓԷԼ - *տե՛ս* ԹԻՒԼԸԹԱՓԷԼ:

ԹՈՒԼՈՒԼ/ԹՈՒԼՈՒ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թուլուլ անէլ - *տե՛ս* Թուլուլ տալ:

- Թուլուլ ըղնէլ/ինիլ/կա՛նալ - 1. Գլորվել: *Ծառը պուք ա կ՛ամ, ուրանք էլ նըհէտը թուլուլ ըն ինգ՛ում* (ՆԼՂԺԲ, 117): 2. *անրգ.* Մեռնել: *Հիբ կի՞նի էտ օղռաշը թուլուլ ըղնէ, շէնը հըլալվէ* (Բ):

- Թուլուլ ըղնօղ քարը մամուռ օնէլ չի - Գործածվող իրը՝ գործիքը չի փչանա:

- Թուլուլ տալ - 1. Գլորել: *Դէ խօխէնք՝ըն էլ շատ սօված ըն ինում, ք՛ինամ ըն թուլուլ տըված հացէն հէտան* (ՀԺՀ, V, 488): 2. *անրգ.* Սպանել, մեռցնել: *Չանբին յըրա յա անում, ըտըրանց ճուխտը-քանուց թուլուլ տամ* (Զ):

ԹՈՒԼՈՒԼԲԱՆԴԻ/ԹՈՒԼՈՒԲԱՆԴԻ/ԹԸԼՈՒԼԲԱՆԴԻ/ԹԸԼՈՒԲԱՆԴԻ - *գ.* Խաղատեսակ, որի ժամանակ ընկույզները շարում են գետնին եւ որոշ հեռավորությունից գլորում ձեռքում պահած ընկույզը. եթե այն կպչում է շարված ընկույզներից մեկին, խփողը վերցնում է այդ ընկույզը: *Թուլուլբանդի յըն խաղ անում, Զավէնը տահանց ճուղուպուրնէն սաղ տանում ա* (Զ):

ԹՈՒԼՈՒԼԿԱՆԷ/ԹՈՒԼՈՒԿԱՆԷ/ԹԸԼՈՒԼԿԱՆԷ/ԹԸԼՈՒԿԱՆԷ - *գ.* 1. *տե՛ս* ԹՈՒԼՈՒԼԲԱՆԴԻ: 2. Ինքն իրեն գլորվող խաղալիք: *Մին թուլուլկանէ յա ինք՛ օնում, տամ էտ խուխէն* (Բ):

ԹՈՒԼՈՒԽ *(թրք. tulum)* - *գ.* Կաշվե ջրաման՝ տիկ: *Թուլուխէն ճուրը պըրծընում ա, չօբանը մընամ ա ծարավ* (Բ):

ԹՈՒԼՈՒԿԱՆԷ - *տե՛ս* ԹՈՒԼՈՒԼԿԱՆԷ:

ԹՈՒԼՈՒԿ-ԹԸԼԱՆԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թուլուկ-թՕլանկ քըցիլ - Ձեռքից ձեռք գցել: *Թուլուկ-թՕլանկ ըն քըցում, էտ թէշտը բարբաղ անում* (Բ):

ԹԻՒԼԻՒՄԻՒԼ - *տե՛ս* ԹԻՒԼԸՄԻՒԼ:

ԹԻՒԼԻՒՊԷՆՋԱՌ - *տե՛ս* ԹԻՒԼԸՊԷՆՋԱՌ:

ԹԻՒԼԻՒՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԻՒԼԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹՈՒԼՈՒՓԱՅԻ - *տե՛ս* ԹՈՒԼԱՓԱՅ(Ի):

ԹԻՒԼՕԹՈՒՆ *(գրբ. թուլութիւն)* - *գ.* Թույլ լինելը, թույլի վիճակը: *Թուլութունէն մըհար վէշ մինը ըտըրան կօրծի չի յը՛ր օնում* (Բ):

ԹՈՒԽԱՄԱՋ՛ - *ած.* Թուխ մազեր ունեցող՝ թխահեր: *Թուխամագ՛ ախճիգ՛ ա* (Բ):

ԹՈՒԽԱՆԱԼ *(գրբ. թխանամ)* - *չբ.* Թուխ դառնալ, թուխ գույն ստանալ: *Ի-ր՝ը՛վրէն տակէն էնքան կացալ ա, թուխացալ ա* (Բ):

ԹՈՒԽԸ՛ՆԷ - *տե՛ս* ԹՈՒԽԹՈՒԽԸ՛ՆԷ:

ԹՈՒԽԸՌԱՆԳ՛ - *ած.* Թուխ գույն ունեցող, թխագույն: *Թուխըռանգ՛ շՕր ա կ՛ը՛ցալ* (Բ):

ԹՈՒԽԸՌԱԾ - *տե՛ս* ԹՈՒԽԹՈՒԽԸ՛ՆԷ:

ԹՈՒԽԸՍԷՐՈՒՆ - *ած.* Թխագույն եւ գեղեցիկ: *Թուխըսէրուն ախճիգ՛ ա* (Բ):

ԹՈՒԽԸՎԷԼ/ԹՈՒԽՈՒՎԷԼ/ԹՈՒԽՎԷԼ - 1. *տե՛ս* ԹՈՒԽԱՆԱԼ: 2. *չբ.* Հասունանալ (մրգերի մասին): *Խաղուն թուխըվալ ա* (Բ):

ԹՈՒԽԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թխացուցանեմ)* - *նբ.* ԹՈՒԽԱՆԱԼ-ի:

ԹՈՒԽԹՈՒԽԸ՛ՆԷ - *ած.* Թեթեւակի թխություն՝ թուխ գույն ունեցող: *Տա վը՛ր կ՛ամ ա Շուշի, փըսակվըմ ա մին թուխթուխը՛նէ, ամմա շատ ասթըխավ ըխճըկա նըհէտ* (ԼՂԲ, 336):

ԹՈՒԽԿԱԹԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թուխկաթակ անէլ/տալ - Գոտիով ծեծել: *Ծիլկան, տու Ծիլկան, էտ էրկու դէվին կըպօտում ա, թուխկաթակ անում, վը՛սկէ ջամը յօր օնում, ք՛ինամ* (Զ):

ԹՈՒԽԿԱԿՕԽ - *տե՛ս* ԹՈՒԽԿԸԿՕԸՎ:

ԹՈՒԽԿԱՎԷՐ - *տե՛ս* Կ՛ՈՒՏԿԱՎԷՐ:

ԹՈՒԽԿԱՏԸ՛Ղ - *տե՛ս* Կ՛ՈՒՏԿԱՏԸ՛Ղ:

ԹՈՒԽԿԷ - *տե՛ս* ԼԱԽՏԷ:

ԹՈՒԽԿԷ-ԹՈՒԽԿԷ - *տե՛ս* ԼԱԽՏԷ:

ԹՈՒԽԿԸԼԱՇԻ - *տե՛ս* ԼԱԽՏԷ:

ԹՈՒԽԿԸԿՕԸՎ - *գ.* Գոտեմարտի՝ կոխի ձեւ, երբ հակառակորդները բռնում են իրար գոտուց՝ ջանալով գետնին գլորել: Գոտին կտրվելու կամ պոկվելու դեպքում խաղը դադարեցվում է, եւ գոտին փոխարինվում նորով: *Թուխկըկըռը՛վը առաչ անթ ա իլալ* (Բ):

ԹՈՒԽԿԸՔԱՇԻ - *տե՛ս* ԼԱԽՏԷ:

ԹՈՒԽՊԷԼ/ԹԸԽՊԷԼ - *նբ.* 1. Երկնքում ամպեր գոյանալ, երկինքը ամպերով ծածկվել, ամպել, մառախլապատվել: *Վէր թուխպում ա, չօբանը վըխճարէն սուրուն սարան քըշըցնում ա* (Զ): 2. *փխբ.* Մռայլվել, խոժոռվել: *Բարսէղ դայիկ էտ վէր ըսկանում ա, թուխպում ա* (Բ): 3. *փխբ.* Մթին դառնալ: *Նի յըն մընում մին թուխպած ծըմակ* (Զ):

ԹՈՒԽՊԸԿԱԼԻԼ/ԹԸԽՊԸԿԱԼԻԼ- *տե՛ս* ԹՈՒԽՊԷԼ(1): *Սարը թըխպըկալալ ա, Նալբանդը ալ ծին նալալ ա...* (ԼՂԲ, 18):

ԹՈՒԽՊՕՏ/ԹԸԽՊՕՏ - *ած.* Ամպոտ, ամպամած, մառախլապատ: *Մին թուխպօտ օր Օհանը ք՛ինամ ա ծըմակը* (Զ):

ԹՈՒԽՊՕՏԷԼ/ԹԸԽՊՕՏԷԼ - *տե՛ս* ԹՈՒԽՊԷԼ(1):

ԹՈՒԽՍԱԹԱՓ - *ած.* 1. Թուխս նստելու ցանկությունը վերացած, թխսաթափված (թռչունների մասին): *Մարօն մին թուխսաթափ հավ ա մորթում, խընըմլարէն ղօնաղ անում* (Բ): 2. *փխբ.* Սիրելու ընդունակությունը՝ ցանկությունը կորցրած (մարդկանց մասին): *Թուխսաթափ կընէգ՛ ա* (Բ):

- Թուխսաթափ անէլ - *տե՛ս* ԹՈՒԽՍԸԹԱՓԷԼ (1, 2):

- Թուխսաթափ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ԹՈՒԽՍԸԹԱՓԷԼ (3, 4):

ԹՈՒԽՍԸԹԱՓԷԼ/ԹՈՒԽՍՈՒԹԱՓԷԼ - *նբ.* 1. Թուխս եկած թռչունին սառեցնել, թուխս նստելու ներքին մղումը վերացնել: *Ցօրտ-ցօրտ ճուր ըն ածում թուխսուկանէն կըլիխէն, թուխսըթափում* (Բ): 2. *փխբ.* Սիրելու ընդունակությունը՝ ցանկությունը սառեցնել, մարել տալ: *Բախաջին կ՛իր ա անում, էտ ըխճըկանը թուխսըթափում* (Զ): *չբ.* 3. Թուխս նստելու ներքին մղումը վերանալ: *Էտ հավը ամմէն տարէ թօխս ար նըստում, մին էլ թուխսըթափում* (Զ): 4. *փխբ.* Սիրելու ընդունակությունը՝ ցանկությունը մարել: *Բարիշկա աքէրը թուխսըթափալ ա, հըրթնէրէն էլ սիրում չի* (Բ):

ԹՈՒԽՍԸԹԱՓՎԷԼ/ԹՈՒԽՍՈՒԹԱՓՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԹՈՒԽՍԸԹԱՓԷԼ (1, 2)-ի:

ԹՈՒԽՍԸԿԱՆ/ԹՈՒԽՍՈՒԿԱՆ - *գ.* Թխսի նստած եւ ճտեր հանած թռչուն, թխսամայր: *Մին օր էլ քաչալ ճօտը կըտկօտըմ ա ուրան մար թուխսըկանին, ըսպանըմ* (ՀԺՀ, V, 458):

ԹՈՒԽՍՈՒԹԱՓԷԼ - *տե՛ս* ԹՈՒԽՍԸԹԱՓԷԼ:

ԹՈՒԽՍՈՒԹԱՓՎԷԼ - *տե՛ս* ԹՈՒԽՍԸԹԱՓՎԷԼ:

ԹՈՒԽՍՈՒԿԱՆ - *տե՛ս* ԹՈՒԽՍԸԿԱՆ:

ԹՈՒԽՎԷԼ - *տե՛ս* ԹՈՒԽԸՎԷԼ:

ԹՈՒԽՏԷ - *ած.* 1. Թղթից սարքած, թղթե: *Չամէնչը ածում ա մին թուխտէ տօպրակ, տամ էտ տըղէն* (Զ): 2. *փխբ.* Խախուտ, հեշտությամբ քանդվող: *Վաղարշակէն տօնը թուխտէ տօն ար, ծունը վէր յը՛կավ, պարան յը՛կավ* (Բ):

ԹՈՒԽՏՈՒՄՈՒՐԱՄԱՆ - *տե՛ս* ԹԸԽՏԸՄՈՒՐԱՄԱՆ:

ԹՈՒԽՏՈՒՄՕՐ - *տե՛ս* ԹԸԽՏԸՄՕՐ:

ԹՈՒԽՈՒՎԷԼ - *տե՛ս* ԹՈՒԽԸՎԷԼ:

ԹՈՒԽՕԹՈՒՆ *(գրբ. թխութիւն)* - *գ.* Թուխ՝ թխագույն լինելը: *Թուխօթունը ը-տըրան շատ ա սա՛զում* (Բ):

ԹՈՒԽՕՑ - *տե՛ս* ԹԸԽՕՑ:

ԹՈ՛ՒՀ - *տե՛ս* ԹՈ՛Ի:

ԹՈ՛ՒՀԱՉԱ - *տե՛ս* ԹԸՔԸԹՕՀՄԱ՛Թ:

ԹՈՒՄԱՆ *(պրս. tūmān, թրք. tuman)* - *գ.* 1. Պարսկական ոսկեդրամ: *Շահը տո՛ւս ա օնում, ըտըրան մին թուման տամ* (Ձ): 2. Տասը ռուբլու գումար: *Հըրաչիկը էծը էրկու թումանավ ծախում ա* (Ձ):

ԹՈՒՄԱՋ - *տե՛ս* ՏՈՒԼԱԾ:

ԹՈՒՄԲ *(գրբ. թումբ)* - *գ.* 1. Բնական կամ արհեստական բլուր, հողաբլուր: *Ք՛ընըմ ըն, ք՛ընըմ, վէրչը հըսնըմ ըն Շուշի-Ղալին քըմակի ղոլին մին պէցուր թումբի* (ՀԺՀ, V, 124): 2. *փխբ.* Հողի՝ քարի եւն մեծ կույտ: *Էտ քարէ թումբը ցը-ը՛ղ ըն տամ, տական մէյդը տո՛ւս օնում* (Ձ): 3. Հողապատնեշ, ջրապատնեշ, որ սարքում են ջրի դեմ: *Արխը վըրարից, թումբէրը քըշից* (Բ):

ԹՈՒՄԲԸԼԱԿ - 1. *գ.* Փոքր թումբ, բլրակ: *Անց ըն կէնում թումբըլակէն քամակը, կ՛օղուլ կէնում* (Ձ): 2. *տե՛ս* ԹՈՒՄԲՈՒՋ:

ԹՈՒՄԲՈՒՋ - 1. *ած.* Թմբի ձեւ ունեցող, ուռուցիկ: *Կամ ըն, էտ թումբուզ տը՛ղը նըստտում* (Ձ): *գ.* 2. Ուռուցք: *Կըլխէն մին թումբուզ ա տո՛ւս յը՛կալ* (Բ): 3. Գագաթ, կատար: *Քիրսա սարէն թումբուզան սաղ Ղարաբաղը ըրվամ ա* (Բ):

ԹՈՒՆԲԱԹՈՒՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թունբաթուն անէլ - Կորցնել, անեացնել: *Մին շէփտումը էտ վըխճարէն սո՛ւրո՛ւն թունբաթուն ըն անում, վէշ մինը գ՛ո՛ւդո՛ւմ չի* (Ձ):

- Թունբաթուն ինիլ/տը՛ռնալ - Կորչել, անէանալ, չքվել: *Դէրվիշը խընձո՛ը տամ ա թաքուհուն, ինք՛ը թունբաթուն ինո՛ւմ* (Ձ):

ԹՈ՛ՒՆԳԻ *(պրս. tunk (կարճ պարանոցով եւ նեղ բերանով կուժ), վրաց. tunki (գինու չափ)* - *գ.* 1. Չորս լիտր տարողությամբ՝ երկար վզով եւ նեղ բերանով կավե աման: *Մին թո՛ւնգի կինի յա տամ, էտ ցակատը յը՛ր օնում* (Ձ): 2. Կավե կարճ փողրակ, որ մեկը մյուսին կցելով՝ օգտագործում են ջուր անցկացնելու համար: *...էտ ճո՛ւրը վը՛ղէ թո՛ւնգէրավ ք՛իս ա լա՛ալ, հըսնէս Ղըլէն քարէն պէրթը* (ԱԱ, 57):

ԹՈ՛ՒՆՈ *(գրբ. թունդ, հ.ե. *tu-n-d-)* - *ած.* 1. Բարկ, խիստ ազդու: *Թոթէն արաղը թո՛ւնդ արաղ ա* (Բ): 2. Մուգ (թեյի մասին): *Թո՛ւնդ չայ ա* (Բ): 3. *փխբ.* Խիստ բարկացկոտ, չզիջող: *Բարխուդարը թո՛ւնդ տը՛ղամարթ ա* (Բ): 4. *փխբ.* Ուժգին, սաստիկ: *Մին օր էլ ըտըրա փօրը թո՛ւնդ ցըվէյիս ա ինո՛ւմ, տանըն էլ ջուվար չի ինո՛ւմ...* (ՆԼՂԺԲ, 40): 5. *փխբ.* Բուռն, թեժ: *Թո՛ւնդ կըռը՛վ ա ըսքըսում* (Ձ): 6. *փխբ.* Շատ կոպիտ, գռեհիկ, վիրավորական: *Մօրը թո՛ւնդ ուշունցնէ յա տամ* (Բ): 7. *փխբ.* Երբ կամ որտեղ որեւէ բան բուռն կերպով տեղի է ունենում, եռուն: *Հըրսընքէն թո՛ւնդ վախտը Պըլը-պուղին, էրկու շան թուլա յէր կալա՛ծ, նի յա մընում* (Ձ):

- Թո՛ւնդ քացախը ո՛ւրա՛ն ամանը կը-ճըքըցընէ - Շատ զայրացկոտ մարդն ինքն իրեն կվնասի:

ԹՈ՛ՒՆԴԷԼ - *տե՛ս* ԹՈ՛ՒՆԴԻԼ:

ԹՈ՛ՒՆԴԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թնդեցուցանեմ)* - *նբ.* ԹՈ՛ՒՆԴԻԼ-ի:

ԹՈ՛ՒՆԴԻԼ/ԹՈ՛ՒՆԴԷԼ *(գրբ. թնդեմ, թնդիմ)* - *չբ.* 1. Թունդ՝ բարկ՝ խիստ ազդու դառնալ: *Թոթէն արաղը հիշքան պահիս, էնքան կը՛թունդի* (Բ): 2. Մուգ դառնալ (թեյի մասին): *Չանիգ՛ը մահարմըմը փը՛թաթըմ ըն, պահըմ, չայը թո՛ւնդըմ ա* (Բ): 3. *փխբ.* Բարկանալ, գրգռվել: *Կընէգ՛ը վէր ջօղաբը տամ ա, մարթը էլ իվիլ ա թո՛ւնդո՛ւմ* (Ձ): 4. *փխբ.* Ուժեղանալ, սաստկանալ: *Թաքավը՛ռէն ցավընա ավիլի յա թո՛ւնդըմ* (ՀԺՀ, VI, 101): 5. *փխբ.* Բորբոքվել, թեժանալ: *Ք՛ը՛փը ք՛ինա՛ալա՛վ թո՛ւնդո՛ւմ ար* (Ձ):

ԹՈ՛ՒՆԴՈ՛ՒՄ(Ն)Ը *(գրբ. թնդումն (թունդ, դդրդյուն)* - *մ.* Ուժեղ կերպով, սաստիկ կերպով: *Ըտըրանք թո՛ւնդո՛ւմը վըխէս ըն, գ՛ի՛դա՛ս ըն, թա՛ կ՛ո՛ւլը կը՛ռալ ա* (ԼՂԲ, 317):

ԹՈ՛ՒՆՈՕԹՈՒՆ - *գ.* Թունդ՝ բարկ՝ խիստ ազդու եւն լինելը, թնդություն: *Ը-րաղէն թո՛ւնդօթունը շատ ա* (Բ):

ԹՈՒՆԷԼ *(ռուս. туннель, անգլ., ֆր. tunnel)* - *գ.* Գետնի տակ կամ լեռների մեջ փորված անցք, գետնուղի, թունել: *Թաքավը՛ռընը ասում ա.- Քու ասած վը՛սկի թասը թունէլըմընը ապրօղ ըխճըկօրանցը քըշտէն կինի...* (ՆԼՂԺԲ, 52):

ԹՈՒՆԹԸՌԻԳԱՆԱԼ - *չբ.* Քիչ չաղանալ եւ գեղեցկանալ: *Մա՛շվա՛ծ ախճիգ՛ ա իլա՛ալ, միհէնգ՛ ա ըտի թունթըռիգ՛ացալ* (Բ):

ԹՈՒՆԻ - *տե՛ս* ԹՈ՛ՒՆԻ:

ԹՈ՛ՒՆԻ/ԹՈՒՆԻ *(պրս. tūni (տխմար)* - *ած., գ.* Խեղճ ու կրակ, անճարակ: *Թո՛ւնի մարթ ա, բաշիր չի անում, թա ապը-րէ* (Բ):

- Թո՛ւնի հարայ - Ծաղրական արտահայտություն՝ ուղղված խեղճ ու կրակ, անճարակ մարդուն: *Հա՛ղը կըզնընվըմ ա, ասըմ.- Տու նան քու մը՛ծ ախպէրըտ ճօխտըտ էլ թո՛ւնի հարայ ըք, համօթ ծը՛զ* (ՀԺՀ, V, 17):

ԹՈՒՆՋԻ - *գ.* Մատղաշ անասուն: *Նի յա մընում նախէրը, մին թունջի փըռնում, տամ էտ տըղէն* (Ձ):

ԹՈՒԾ/ԹՈ՛ՒԾ *(թրք. tüs (առաջը, դեմը, կողմը)* - *մ.* Առանց շեղվելու՝ թեքվելու՝ այլ տեղ դիմելու, ուղիղ, ուղղակի: *Յէր ա կալալ ըխճըկանը, թուշ տարակ Ջանփօլադէն պալատը* (ՀԱԲ, 15, 19):

- Թուշ անէլ - 1. Դեմը հանել, հանդիպեցնել, պատահեցնել: *Պառավը էտ տըղէն տանում ա, ըսլանէն թուշ անում* (Ձ): 2. Արժանացնել, արժանի դարձնել: *Բախտը ըտահանց ո՛ւրո՛ւր թուշ ա անում, փըսակվում ըն, լ՛ավ ապրում* (Ձ): 3. *տե՛ս* Թուշ օնէլ:

- Թուշ ինիլ - 1. Դիմացը դուրս գալ, հանդիպել, պատահել: *Ք՛ինըմ ա, ք՛ինըմ, մին սարի լէնջի թո՛ւշ ինըմ, ըտէղ մընըմ, վէր մին քանի օր դինջանա* (ՀԺՀ, V, 220): 2. Արժանանալ, արժանի դառնալ: *...Նէրակ էն ըխճըկանը՝ սիրած յարին թուշ կինի* (ԼՂԲ, 113):

- Թուշ օնէլ - Նշան բռնել: *Տա թը-վանգ՛ը թո՛ւշ ա օնըմ, գ՛ո՛ւլլան յըրա անում, թուշ ճակատան տամ* (ՀԺՀ, V, 28):

ԹՈ՛ՒԾ - *տե՛ս* ԹՈՒԾ:

ԹՈՒԾԻՆ/ԹՈ՛ՒԾԻՆ - 1. *տե՛ս* ԹՈՒԾ: *Տը-ղատ յէր ըն կէնում, ք՛ընում թուշին թաքավէրէն կօշտը* (ՆԱԲ, 25): 2. *գ.* Դեմը գտնվող, դիմացի անձ կամ իր: *Էտ կընանէք՛ը յէր ըն կէնում, մարթը ո՛ւրա՛ն թուշինին ըսպանում* (ՀԺՀ, V, 546):

ԹՈ՛ՒԾԻՆ - *տե՛ս* ԹՈՒԾԻՆ:

ԹՈՒՌԱՏԱԿ - *ած.* Անձրեւի տակ ընկած, անձրեւից ծեծված: *Թուռատակ բարը անհամ կինի* (Բ):

ԹՈՒՌԱՃՈ՛ՒՐ - *գ.* Անձրեւի ջուրը: *Թուռաճո՛ւրը թըխծընում ըն, լըղանում* (Ձ):

ԹՈՒՌԱՆԱԼ - *չբ.* Ուրախանալ, սիրտը փառավորվել: *Քընարիկը թուռացալ ա. թօռնը մարթու վա ք՛ինամ* (Բ):

ԹՈՒՌԱՏԱՐ - *տե՛ս* ԹՈՒՌՆԱՏԱՐ[1]:

ԹՈՒՌԱ՛ՐԸԷՎ - *տե՛ս* ԹՈՒՌԸԱ՛ՐԸԷՎ:

ԹՈՒՌԸԱ՛ՐԸԷՎ/ԹՈՒՌԱ՛ՐԸԷՎ - *գ., ած.* 1. Փոփոխական եղանակ, երբ մեկ անձրեւում է, մեկ արեւ անում: *Թուռը՛ա՛ր՛ը՛վ հավա յա, վէ՛չ կարքէն թօռ ա կ՛ամ, վէ՛չ կարքէն ա՛ր՛ը՛վ անում* (Բ): 2. *փխբ.* Անկայուն՝ հեղհեղուկ՝ փոփոխամիտ բնավորությամբ (մարդ): *Թուռա՛ր՛ը՛վ մարթին նըհը՛տ հըրակաշ տը՛ռնօղը կըտուժվի* (Բ):

ԹՈՒՌԸԹԱԹԱԽ - *ած.* Անձրեւաջրով թաթախված՝ թրջված: *Թուռըթաթախ*

շՕրէրը հանում ա, փիչին կօխկէն մը՛կ-նում (Ձ):

ԹՈՒՌԸԹԱՑ/ԹՕՌ ՈՒ ԹԱՑ - *գ., ած.* Անձրեւային՝ աշնանային եղանակ: *...Օ-զըմ չի, վէր շինի, չՀուն թուռըթաց տարի յա. վախըմ ա ծընդըրօթուն անէ, պա-րան կ՚ա...* (ՋՏ, Ա, 87):

- Թուռըթաց անէլ - Շատ անձրեւ տե-ղալ, անձրեւային եղանակ լինել: *Մին տարէ հավան շատ թօռ ու թաց ա ա-նում...* (ԼՂԲՔ, 259):

ԹՈՒՌԸԹԱՑԷԼ - *չբ. տե՛ս* Թուռըթաց անէլ:

ԹՈՒՌԸԽԱՌ(Ն)Ը - *ած.* Անձրեւի հետ խառն: *Թուռըխառնը ծՀուն ա կ՚ամ* (Բ):

ԹՈՒՌԸԽԱՓԱՆ - *գ.* 1. Անձրեւ չլինե-լը՝ չտեղալը: *Թուռըխափանը ժուղու-վուրթէն լափ դիրխօր ա ըրալ, մին թօռ չի կ՚ամ, թա արտէրը ծիլի* (Բ): 2. *ած.* Անձրեւը խափանող՝ դադարեցնող: *Թու-ռըխափան հավա յա* (Բ):

ԹՈՒՌԸԿԼԻԼԻԼ - *չբ.* 1. Երկինքը անձ-րեւաբեր ամպերով պատվել: *Վէր թուռը-կՀլՀում ա, կընանէք՚ը ճիլը-ճէլի լըվացը վըհաքում ըն* (Բ): 2. *փխբ.* Լացակումել, լացելու վրա լինել: *Մարը վէր կըզնըվում ա, խօխան թուռըկՀլՀում ա* (Բ):

ԹՈՒՌԸԿԱԽԷԼ - *տե՛ս* ԹՈՒՌԸԿԼԻԼ:

ԹՈՒՌԸՅԻՆ - *ած.* Անձրեւային, անձ-րեւոտ: *Էս ախպՀուրը թուռըյին տարէն տՀուս ա կ՚աս՝ ինք՚ըն էլ շատ վարար* (ԱԱ, 56):

ԹՈՒՌԸՊԷՐԱՆ - *գ.* Անձրեւը սկսվելու պահը, անձրեւի սկիզբը: *Թուռըպիրա-նէն վախտը ամը՛ռնը ըրըշտավը՛տ ա կ՚ամ* (Բ):

ԹՈՒՌԸՊԸՐԱՆԷԼ - *չբ. տե՛ս* Թօռու պըրանէլ:

ԹՈՒՌԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹՈՒՌԱՆԱԼ-ի:

ԹՈՒՌԹՈՒՌԱՆԱԼ - *չբ.* 1. Թառամա-ծությունը՝ թոշնածությունը անցնել: *Թօռը յը՛կավ, կընանչին թուռթուռացավ* (Բ): 2. Կայտառանալ, կազդուրվել: *Սում-բաթ դային ք՚ինում ա կուրօրտ, թուռ-թուռանում, կ՚ամ* (Ձ):

ԹՈՒՌԹՈՒՌՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹՈՒՌԹՈՒ-ՌԱՆԱԼ-ի:

ԹՈՒՌՆԱԹՕԽ - *տե՛ս* ԹՈՒՐՆԱԹՕԽ:

ԹՈՒՌՆԱՏԱՐ[1]/ԹՈՒՌԱՏԱՐ - *ած., գ.* Թռռնատեր, թոռ ունեցող (անձ): *Թուռ-նատար մարթ ա, ամմա սաղ օրը էն ա ջՀիհլ ըխճըկօրցը հը՛տը ընգած* (Բ):

ԹՈՒՌՆԱՏԱՐ[2] - *տե՛ս* ԹՈՒՐՆԱՏԱՐ:

ԹՈՒՌՆԱՏՕՆ - *տե՛ս* ԹՈՒՐՆԱՏՕՆ:

ԹՈՒՌՆԱՐԿԱԹ - *տե՛ս* ԹՈՒՐՆԱՐ-ԿԱԹ:

ԹՈՒՌՆԸԽԱՌ(Ն)Է - *տե՛ս* ԹՈՒՐՆԸ-ԽԱՌ(Ն)Է:

ԹՈՒՌՈՒՆ - *տե՛ս* ԹՈՒՐՈՒՆ:

ԹՈՒՍՏՈՒՓՈՒԼԻ - *տե՛ս* ԾԸԽԸՓՈՒԼԻ:

ԹՈՒՎԱՆԳ՚ - *տե՛ս* ԹԸՎԱՆԳ՚:

ԹՈՒՐԱՋ *(թրք. turač)* - *գ.* Կաքավի նման թռչուն: *Մէլիք՚ըն ա Պուղին ք՚ի-նամ ըն վը՛րս, մին ըլըբաստըրակ ըն վէր քըցՀում, էրկու թուրաջ* (Ձ):

ԹՈՒՐԱՋԻ - *տե՛ս* ԿԸՔԸՎԱՊԱՐ:

ԹՈՒՐԹՈՒՆՋՈՒԿ - *տե՛ս* ԹԸՐԹԸՆ-ՋՈՒԿ:

ԹՈՒՐԾԱԿԱՊ - *գ.* Բարակ դալար շի-վերից ոլորած կապ, որ անց են կացնում գերանի ծայրին բացված անցքի՝ թործի միջով եւ քաշում: *Թուրծակապը կըտը-րում ա, կ՚էրանը ըղնում ա Հըրանտիկին վը՛ննէն* (Ձ):

ԹՈՒՐԾԱՄԱՐ - *տե՛ս* ԹՈՒՐԾԱԿԱՊ:

ԹՈՒՐՆԱԹՕԽ/ԹՈՒՌՆԱԹՕԽ - *ած.* Թոնրում թխած: *Թուրնաթօխ հացը քախծըր ա ինՀում* (Բ):

ԹՈՒՐՆԱՏԱՐ/ԹՈՒՌՆԱՏԱՐ[2] - *ած., գ.* Թոնիր ունեցող, թոնրի տեր: *Շէնըմը տօն շատ կա, ամմա լօխ չըն թուրնա-տար* (Բ):

ԹՈՒՐՆԱՏՕՆ/ԹՈՒՌՆԱՏՕՆ - *գ.* 1. Տան այն մասը, որտեղ տեղադրված է թոնիրը եւ որտեղ հաց եւն թխում ու կե-րակուրներ եփում: *Պառավը թուրնա-տանը կըրակ ա անում, ճՀուր թըխծը-նում, դունաղէն վը՛ննէրը լըվանում* (Ձ): 2. *փխբ.* Կեղտոտ՝ թափթփված սենյակ: *Հինչ օ՞թաղ, թուրնատօն ա, վէր նի յըս մընէս, զՀիլՀտ ք՚իս ա* (Բ):

ԹՈՒՐՆԱՐԿԱԹ/ԹՈՒՌՆԱՐԿԱԹ - *գ.* Թոնրից մոխիրը հանելու երկար կոթով բահաձեւ հարմարանք: *Թուրնարկաթը քըցՀում ըն, մօխէրը տՀուս օնում* (Բ):

ԹՈՒՐՆԸԽԱՌ(Ն)Է/ԹՈՒՌՆԸԽԱՌ(Ն)Է - *գ.* 1. Սովորաբար ծայրը երկաթ հագց-րած փայտե երկար ձող՝ թոնրի կրակը խառնելու համար: *Թուրնըխառնէն թուրնումը շատ պահում ա, նի յա կէ-նում* (Ձ): 2. *փխբ.* Շատ երկարահասակ մարդ: *Էտ թուրնըխառնէն մին քաշ բօ-յավ կընէգ՚ ա օգ՚ում, լօխ նը՛ստավ մա-գաղ ըն անում* (Բ):

ԹՈՒՐՈՒՆ/ԹՈՒՌՈՒՆ/ԹՕՐՈՒՆ/ԹՕ-ՐԷՆ *(գրբ. թոնիր)* - *գ.* Գետնի մեջ կամ գետնի վրա կավից պատրաստված գլա-նաձեւ կրակարան, որի մեջ հաց են թխում, ինչպես նաեւ որոշ ճաշեր ե-փում, թոնիր: *Կուրկուտը թուրնումը բիդի քըցիս, թուրնէն մաչին քըցՀծ կուրկուտէն համը ճօկ ա ինՀում* (Բ):

- Թուրնա տՀուս յը՛կած - Կեղտոտ, կեղտաթաթախ: *Թուրնա տՀուս յը՛կած ը՞ս, էտ հինչ ա՞ շՀուրէրէտ հՀալը* (Բ):

- Թուրնու մօխէր վէր անօղ - Ան-կարգ, չարաճճի: *Էտ թուրնու մօխէր վէր անօղը մօրը շատ ա տՀանջՀում* (Ձ):

- Թուրնու պառավ - Ասում են շատա-խոս եւ հետաքրքրասեր աղջիկների մասին:

- Թուրունը ածիս/քըցիս՝ մըկլա-վը՛տ/շՀուրավը՛տ չի կ՚Հալ - Ասում են ծայ-րահեղ աղքատների մասին:

- Թուրունը յը՛տ հըվաքէլ - Թոնրի ցրված պողերը կենտրոնում հավաքել՝ կույտ անել, որպեսզի թեժությունը մեղ-մանա: *Թուրունը յը՛տ ըն հըվաքում, հա-ցը թըխում* (Բ):

- Թուրունը յը՛տ ճըղէլ - Թոնրի պողե-րը տարածել՝ փռել՝ պատերը նորից տաքացնելու համար: *Թուրնէն թիժ-թունը վէր նըստում ա, թուրունը յը՛տ ճը-ղում ըն, պատառ կէնում, էլիա հացը թը-խում* (Բ):

- Թուրունը նըստէլ - Թոնրի կրակը՝ բոցը անցնել, մնալ վառված ածուխը: *Թուրունը մինչը՛վ վէր նըստէ վէչ, կարէլ չըս հաց թըխիս* (Բ):

- Թուրունը պՀուլՕրէլ - Թոնրի կրակը լրիվությամբ բոցավառվելով՝ պատերը կարմրել եւ պատրաստ լինել հացը թխելու համար: *Թուրունը վէր պՀուլՕրում ա, Մարգուշա աքէրը ըսքըսում ա պՀուլը յը՛տ անէլը* (Ձ):

ԹՈՒՐՓԱՆԳ՚ - *տե՛ս* ԹԸՎԱՆԳ՚:

ԹՈՒՐՔԱՄՕՐԹ - *ած.* 1. Թուրքի՝ ադրբեջանցու մորթած (մսի մասին): *Հօր ա՞ էն վախտէրքը, վէր Դալըմը հայը վէչ թուրքամօրթ մէսը կօտար, վէչ թօրքին անա յէղ ու պանէր կառնար...* (ՋՏ, Բ, 216): 2. *փխբ.* Թուրքի՝ ադրբեջանցու ձեռ-քով պատրաստած, պիղծ (կերակուրնե-րի՝ ուտելիքի մասին): *Այան ասմա.- Թուր-քամօրթ փըլավ ա, օտում չըմ* (Ձ):

ԹՈՒՐՔԱՆԱԼ - *չբ.* 1. Մահմեդական-ություն ընդունելով՝ թուրք՝ ադրբե-ջանցի դառնալ: *ՓիզՀուլվա ռայօնէն Չի-մՀն շէնումը մին քանէ թուրքացած հայ ա իլՀլ* (Բ): 2. *փխբ.* Անողորմ՝ դաժան դառնալ, վայրագանալ: *Առաչ պարի մարթ ա իլՀլ, միհէնգ՚ ա ըտի թուրքա-ցալ* (Բ): 3. *փխբ.* Կատաղել, գազազել: *Թուրքանում ա, էտ վըխճըրնէն լօխ կը-տորում* (Ձ):

ԹՈՒՐՔԱՎԸ՚Տ - *գ.* Թուրքին՝ ադրբե-ջանցուն բնորոշ հոտ: *Թօրքը հիշքան էլ հային մաչին կէնա, մին ա, թուրքա-վը՛տը անց չի կընական* (Ձ):

ԹՈՒՐՔԷՎՈՒՐ/ԹՈՒՐՔՕՎՈՒՐ - *ած., մ.* 1. Թուրքերի՝ ադրբեջանցիների լեզ-վով: *Տուղըցէք՚ թուրքէվուր լ՚ավ խուսէ-լիս ըն իլՀլ* (Բ): 2. *փխբ.* Անհասկանալի լեզվով: *Խէ կըլՕխ չը՞ս ըղնում, թուրքէ-վուր ը՞մ ասում* (Բ):

ԹՈՒՐՔԸՋԻԳԱՆՐ - *ած.* Անգութ, դաժան, անխիղճ: *Թուրքըջիգ՛ան մարթ ա* (Բ):

ԹՈՒՐՔԸՎԱՉԻ - *տե՛ս* ԹՈՒՐՔԸՎԱՐԻ:

ԹՈՒՐՔԸՎԱՐԻ - *մ.* 1. Թուրքի՝ ադրբեջանցու նման՝ ձեւով: *Էնքան թուրքէրէն մաչին կացալ ա, թուրքըվարի յա հաց օտում* (Զ): 2. *տե՛ս* ԹՈՒՐՔԷՎՈՒՐ: 3. *փխբ.* Դաժանաբար, վայրենաբար: *Էտ ջանիլ ըխճըկանը մորը աշկէն ըռաշկէն թուրքըվարի ըսպանում ըն* (Զ):

ԹՈՒՐՔԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԹՈՒՐՔԱՆԱԼ-ի:

ԹՈՒՐՔՕԹՈՒՆ - *գ.* 1. Թուրք՝ ադրբեջանցի լինելը, թուրքի՝ ադրբեջանցու հատկությունը: *Թուրքօթունան հիշքան հը՛ռէ մընաս, էնքան քու օքութըտ ա* (Զ): 2. *փխբ.* Վայրենաբարո արարք, գազանություն, դաժանություն: *Խօխա թակէլընն էլ ա թուրքօթուն* (Զ):

ԹՈՒՐՔՕՎՈՒՐ - *տե՛ս* ԹՈՒՐՔԷՎՈՒՐ:

ԹՈՒՐՓԱՆԳ՝ - *տե՛ս* ԹԸՎԱՆԳ՝:

ԹՈՒՓ - *գ.* Ընտանիք, գերդաստան, ցեղ, ազգ: *Ըստրանց թուփումը մին խը՛էլքը կըլխէն մարթ չի կա* (Բ):

- Թուփ անէլ - 1. Կուտակել, դիզել: *Իտի մին քանի հետ ք՛ընըմ ա քաղաք, կ՛ամ, խիլլա՛ փօղ թուփ անըմ* (ՀԺՀ, V, 42): 2. Մի տեղ հավաքել, ամբոխել: *Ժուղուվուրթէն թուփ ըն անում, թաքավէրին հըրամանը կարթում* (Զ): 3. Իրար վրա շարել, դարսել: *Փանդը թուփ ա անում պատէն տակէն* (Բ):

- Թուփ կ՛ալ/տը՛ռնալ - 1. Կուտակվել, դիզվել: *Ծունը կ՛ամ ա, թուփ տը՛ռնում* (Բ): 2. Մի տեղ հավաքվել, ամբոխվել: *Թուփ տը՛ռած մարթիք՛ վը՛ղը տըրա կըլխէն ըն ածում, թաղում, ք՛ինամ ու-ռանց տընէրը* (ՀԺՀ, VII, 327):

ԹՈՒՓԱԿ - *գ.* 1. Որեւէ բանի կույտ՝ շեղջ: *Էտ փանդին թուփակը էրկու օրումը էրում ըն* (Բ): 2. Մարդկանց խուռն բազմություն, ամբոխ: *Էտ մարթկանց թուփակը ք՛ինամ ըն թաքավէրին կօշտը՝ կ՛էնգ՛ատ* (Զ):

- Թուփակ անէլ/տալ - *տե՛ս* Թուփ անէլ:

- Թուփակ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* Թուփ կ՛ալ:

ԹՈՒՓԸԼԱՆԱԼ[1] - *չբ.* 1. Հաստլիկ դառնալ, քիչ չաղանալ: *Մին տըրնումը էտ տըղան թուփըլանում ա* (Բ): 2. Գնդաձեւ՝ կլորավուն դառնալ: *Վօզնին ըղվէսին վէր տը՛սնըմ ա, կը՛ծէգ՛ ա տը՛ռնում, թուփըլանում, թուլուկ ըղնում* (Զ):

ԹՈՒՓԸԼԱՆԱԼ[2] - *տե՛ս* ՉՈՒԼԽԱՆԱԼ:

ԹՈՒՓԸԼԸ՛ՆԷ - *գ.* Կլորավուն պտուղներով տանձի՝ խնձորի՝ ընկույզի՝ խաղողի՝ հոնի եւն տեսակ եւ դրանց ծառը: *Թուփըլը՛նէն էնքան յօր ա ունէս էտ տարէն, ճըղնէրը կուտըրտէս ա* (Զ):

ԹՈՒՓԸԼՑ(Ը)ՆԷԼ[1] - *նբ.* ԹՈՒՓԸԼԱՆԱԼ-ի:

ԹՈՒՓԸԼՑ(Ը)ՆԷԼ[2] - *տե՛ս* ՉՈՒԼԽԸՑ(Ը)ՆԷԼ:

ԹՈՒՓԸԼՕԹՈՒՆ[1] - *գ.* 1. Կարճ ու հաստլիկ լինելը: *Լօխ ըստրա թուփըլթունավը շուլուղ ըն անում* (Զ): 2. Գնդաձեւ՝ կլորավուն լինելը: *Թուփըլօթունը վէր ինի վէչ, կարէլ չի թուլուլ ըղնէ* (Զ):

ԹՈՒՓԸԼՕԹՈՒՆ[2] - *տե՛ս* ՉՈՒԼԽՕԹՈՒՆ:

ԹՈՒՓ-ԹՈՒՓ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թուփ-թուփ անէլ - Կույտերի՝ խմբերի բաժանել, կույտեր սարքել: *...էտ կընէգ՛ը թիլէրը կ՛ուտում ա, թուփ-թուփ անում, վէր սօվդաք՛ան կ՛ա, տանէ բըզարումը ծախէ...* (ՀԺՀ, VII, 255):

- Թուփ-թուփ ինիլ/տը՛ռնալ - Կույտերի՝ խմբերի բաժանվել, տարբեր տեղերում կուտակվել՝ հավաքվել: *Թուփ-թուփ ըն ինում, հը՛ռթավ ք՛ինամ մըռատօն* (Զ):

ԹՈՒՓ-ԾՈՒՊ - *տե՛ս* ԱՋԿ-ԾՈՒՊ:

ԹՈՒՔԸՋԸԳԱՆՐ/ԹՈՒՔՈՒՋԸԳԱՆՐ - *գ.* Անասունի՝ կենդանու ուտելի փորոտիքը՝ թոք, փայծաղ, սիրտ, երիկամ, լյարդ եւն: *Վը՛խճարը մօրթում ըն, թուքըջըգ՛ան խըրավում* (Զ):

ԹՈՒՔԹՈՒՔՕՏԷԼ - *տե՛ս* ԹԸՔԹԸՔՕՏԷԼ:

ԹՈՒՔՄԱՆ - *գ.* Թուրքմեն ժողովուրդը կամ այդ ժողովրդին պատկանող անձ: *Մին թուքման ա ինում ըտը՛ղ, ի-լանծ-չիլանծը ըստրան պահ ա տամ, ինք՛ը յը՛տ տը՛ռնըմ* (Զ):

ԹՈՒՔ՝ *(թրք. tüy)* - *գ.* 1. Կենդանու մազ: *Էծը խօզ՛ում ա, թուք՛ը քըցում մին թօրբու մաչ, տանում թուշին թաքավէրին պալատը* (Զ): 2. *անրգ.* Մարդու մարմնի մազ: *Ջանը սաղ թուք՛ ա* (Բ):

- Թուք՛ը վէր անէլ - *տե՛ս* Մէսը վէր անէլ:

- Թուք՛ը վէր կ՛ալ - *տե՛ս* Մէսը վէր կ՛ալ:

- Թուք՛ը քախծըր - *տե՛ս* Ա՛րուն քախծըր:

ԹՈՒՔ՝ԸՀԱՆ - *ած.* Մազերը թափած, մազաթափ եղած (կենդանիների մասին): *Ծօնը յըրա յա պըրծնում, էտ թուք՛ըհան ըղվէսին խէխտում* (Զ):

- Թուք՛ըհան անէլ - 1. Կենդանու մազերը պոկել: *Ծընէրը կ՛ուլին անավ ըն տը՛ռնում, թուք՛ըհան անում* (Զ): 2. *տե՛ս* Մէսը վէր անէլ:

- Թուք՛ըհան ինիլ/տը՛ռնալ - 1. Կենդանու մազերը թափվել: *Ամը՛ռնը վիրի շատ հէյվան ա թուք՛ըհան ինում* (Բ): 2. *տե՛ս* Մէսը վէր կ՛ալ:

ԹՈՒՔՈՒԹՕՀՄԱ՛Թ - *տե՛ս* ԹԸՔԸԹՕՀՄԱ՛Թ:

ԹՈՒՔՈՒՄՕՐ - *տե՛ս* ԹԸՔԸՄՕՐ:

ԹՈՒՔՈՒՆԱՌ - *տե՛ս* ԹԸՔՈՒՆԱՌ:

ԹՈՒՔՈՒՉԻ - *տե՛ս* ԹԸՔՈՒՉԻ:

ԹՈՒՔՈՒՋԸԳԱՆՐ - *տե՛ս* ԹՈՒՔԸՋԻԳԱՆՐ:

ԹՈՒՔՈՒՏ - *տե՛ս* ԹԸՔՈՒՏ:

ԹՈՒՔՕՏԷԼ - *տե՛ս* ԹԸՔՕՏԷԼ:

ԹՕ - *տե՛ս* ԹՕՂ(Է):

ԹՕԲԱ *(արաբ. tevbe, թրք. tövbe (զղջում)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թօբա անէլ - *տե՛ս* Թանգ՛ անէլ: *Էտ օրվանից էլ թօբա յա անում ջէյրան ըսպանէլը* (ԱԱ, 60):

- Թօբա թա - Դժվար թե, հազիվ թե: *Թօբա թա օխտը տըղամարթ կարին էտքան խօտ հարին, հիշքան էտ կընէգ՛ըն ա հարալ* (Բ):

ԹՕԲԱՋ - *տե՛ս* ԹՕՓԱՋ:

ԹՕԲՐԱ - *տե՛ս* ԹՕՐԲԱ:

ԹՕԲՈՒՆ - *տե՛ս* ԹՈՒԲՈՒՆ:

ԹՕՋ[1] - *տե՛ս* ԹՕ՛Ջ[1]:

ԹՕՋ[2] - *տե՛ս* ԹՕ՛Ջ[2]:

ԹՕ՛Ջ[1]/ԹՕՋ[1]/ԹՕ՛ՋՆԸ/ԹՕՋՆԸ *(գրբ. թուզ)* - *գ.* Թզենու պտուղը՝ թուզ: *Ղարաբաղցէք՛ թ՛օզանն էլ ըն արաղ քաշում, ամմա մին ա՝ թօթէն ըրաղէն տը՛ղը տամ չի* (Բ):

- Թ՛օզը պըլիթիլ - 1. Թուզը հասունանալ եւ կախվել: *Թ՛օզը պըլիթանլ ա, խօխէնք՛ը բըղէրան տօն չընը կ՛ամ* (Զ): 2. *տե՛ս* Ծընծէրը պըլիթիլ (ԾԸԾ-ի տակ):

ԹՕ՛Ջ[2]/ԹՕՋ[2] *(թրք. toz)* - *գ.* Պինդ մարմինների փշրվելուց առաջացած մանրագույն մասնիկների ամբողջությունը, փոշի: *Տընան յէր ա կէնում, ք՛ընում, տէսնում էլիա թօզ ա պըցընում* (ՀԺՀ, V, 325):

- Թ՛ուզէրը օնէլ - Սրբիչով՝ լաթով որեւէ բանի վրա նստած փոշին սրբել, թեթեւակի մաքրել: *Ախճիգ՛ը մին թընչանծ շօր ա յօր ունէս, պըռավէն ութաղէն թ՛ուզէրը ունէս* (Զ):

- Թ՛օզ անէլ - 1. Փոշի բարձրացնել: *Մաշինը թ՛օզ ընէլավ ք՛ինամ ա* (Բ): 2. *փխբ.* Չքվել, փախչել: *Թօրքէրը վէր մէր տանգը տը՛սէն, թ՛օզ ընէն* (Զ): 3. *փխբ.* Ագահաբար ուտել, խժռել, ոչինչ չթողնել: *Նըստում ա, էտ խուրջինին մաչին հինչը ինում ա, թ՛օզ անում, ք՛ինամ* (Զ):

- Թ՛օզը յը՛ր անէլ/մըլլըցընէլ - 1. Սաստիկ փոշի բարձրացնել: *Էշը շինըմաչը-մը թ՛ավիլ տըվավ, թ՛օզը մըլլըցընավ* (Բ): 2. *տե՛ս* Թ՛օզը քամուն տալ:

- Թ՛օզը յը՛ր ինիլ/մըլլանլ - 1. Սաստիկ փոշի բարձրանալ: *Վը՛խճարէն սուրուն*

ամը՛ռնը վէր հանդան կ՚ամ ա, թօզը յը՛ր ա ինում (Բ): 2. Խիստ երաշտ լինել, ամեն ինչ չորանալ: *Էրկու ամէս ա՝ թոռ չի կ՚ամ, բուստանէն թօզը յը՛ր ա ինում* (Բ): 3. Ոչնչանալ, վերանալ: *Ծըմըկնէն լօխ կըտօրում ըն, ըստի վէր ք՚ինի թօզը յը՛ր ա ինան* (Բ):

- Թօզը յըրա - *տե՛ս* Յը՛ղը յըրա:

- Թօզը քամուն տալ - Ոչնչացնել, վերացնել: *Թօրքէրը վէր մին էլ լօք-լօք անին, թօզը քամուն ընք տըլական* (Ձ):

- Թօզում կուրցընէլ - Խիստ փոշոտել, փոշով ծածկել: *Քամէն ծառէրը թօզում կուրցըրալ ա* (Բ):

- Թօզում կօրչիլ - Խիստ փոշոտվել, փոշով ծածկվել: *Էշը թըվիլ-թանվիլ ա անում, թօզում կօրչում* (Բ):

ԹՕՋՆԸ - *տե՛ս* ԹՕՋ[1]:

ԹՕՋՆԸ - *տե՛ս* ԹՕՋ[1]:

ԹՕՋՈՒՏ - *տե՛ս* ԹՈՒՋՕՏ[2]:

ԹՕԹ/ԹՕԹՆԸ *(գրբ. թութ)* - *գ.* 1. Թթենու պտուղը՝ թութ: *Ասված խօսկ ա՝ դարաբաղցուն օթը, թօթը, թիյին կօթը* (Բ): 2. *փխբ.* Երեխայի փոքր առնանդամ:

- Թօթ նըստէլ - Ոտքերը դնել թթով լցված խոր ամանի մեջ եւ որոշակի ժամանակ պահել՝ հոդացավը բուժելու համար: *Դօխտուրը ասմա.- Ք՚ը՛զ վէջ մին ճար օքութ չի, լ՚ըհա հիշկան կարում ըս, թո՛թ նըստէ* (Ձ):

ԹՕԹԽԱՐ - *տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

- Թօթխար անէլ - Ամանը կիսով չափ լցնել: *Մին թանգ՚ի կինավ թօթխար ա անում, յը՛ր օնում, ք՚ինամ հանօրը տօնը* (Ձ):

ԹՕԹՆԸ - *տե՛ս* ԹՕԹ:

ԹՕԹՈՒՏ/ԹԸԹՕՏ[2] - *ած.* Թութ քսված, թթով կեղտոտված: *Ջանիլ ըխճըկէրքը թօթը թըփէլանը յը՛տը թօթուտ չը՚ղրէք՚ը տանում ըն կ՚ը՛տը, լըվանում* (Բ):

ԹՕԹՕԾ[1] - *մակ. տե՛ս* ԷՇ (1):

ԹՕԹՕԾ[2] - *ած.* Թմբլիկ, փափլիկ: *Թօթօշ խօխա յա* (Բ):

ԹՕԼԱՄԱՋ - *գ.* 1. Մահակ, գավազան: *Չօբանը թօլամազը յը՛ր ա օնում, տահանց հը՛տան ըղնում* (Ձ): 2. *փխբ.* Անճոռնի կերպով մեծ, խոշոր: *Թօլամազ ցակատ ա* (Բ):

ԹՕԼԱՆ - 1. *տե՛ս* ԹՈՒԼԱ: 2. *ձ.* Շան ձագին կանչելու ձայն: *Թօլանն, թօլանն, յը՛ք ըստը՛ղ* (Բ):

ԹՕԼՄԱՌ - *տե՛ս* ԼՕԴՈՒՐ:

ԹՕԼՄԱՌՕԹՈՒՆ - *տե՛ս* ԼՕԴՈՒՐՕԹՈՒՆ:

ԹՕԽ *(գրբ. թուխ)* - *ած.* Սեւին տվող, մուգ, թուխ: *Հըրէվան խընէրէն մինին էլ մին ախճիկ ա ինըմ, սէվ ըշկէրավ, սէվ ունքէրավ, թօխ կ՚էղէցկուհի* (ԼՂԲ, 337):

ԹՕԽԸՄ - *տե՛ս* ԹՕԽՈՒՄ:

ԹՕԽԸՐ - *տե՛ս* ԹՕԽՈՒՐ:

ԹՕԽԸՐԷԼ - *տե՛ս* ԹՕԽՐԷԼ:

ԹՕԽԹ - *տե՛ս* ԹՕԽՏ:

ԹՕԽԾԱՄ - *ած.* Թուխ ծամեր ունեցող, թխաձամ: *Թօխծամ ախճիգ՚ ա իլանլ Սօնիշկա աքէրը* (Բ):

ԹՕԽԿԱ *(թրք. toka)* - *տե՛ս* Կ՚ՕՏԷ(1): *Սար անմին թօխկան յը՛տ ա անում, էտ թօրքէն էնքան թակում, վէր թան ծըմէլա քըցանում ա* (Ձ):

ԹՕԽՄԱԽ *(թրք. tokmak)* - *գ.* 1. *տե՛ս* ԹԱԿ(1): *...Թօթը հըսնըմ ա, բաղէրը թօխմախավ թափըմ ըն...* (ՀԺՀ, V, 239): 2. Հաստ ձեռնափայտ: *Սուղումուն դայուն թօխմախը մին փութ կա* (Բ):

ԹՕԽՄԱՉԱՌ - *տե՛ս* ԹԸԽՄԸՉԱՌ:

ԹՕԽՊ *(գրբ. թուղբ, թուխպ)* - *գ.* 1. Ամպ: *Յէրգ՚ինք՚ը թուխպէրավ ծասկըվալ ա* (Բ): 2. Մառախուղ, մեգ: *Թօխպը սաղ շէնը ծասկալ ա* (Բ): 3. *ած.* Մառախլապատ, ամպամած: *Մին թօխպ օր Մանդին կընգանը նըհը՛տ ք՚ինամ ա ճը՛ղաց* (Ձ):

- Թօխպ(ը) կօխէլ - Ամպերով՝ մառախուղով պատվել: *Հանդէրը թօխպ կօխալ ա* (Բ):

- Թօխպ օրը տօն կըկ՚ա - Իրեն բավականաչափ առողջ՝ առույգ է զգում (ծերերի, հիվանդների մասին): *Ախպէրը ասում ա.- Ապուն հը՛տէ դանդ մէր անէլ, իզէն թօխպ օրը տօն կըկ՚ա* (Ձ):

ԹՕԽՍ - *գ.* Թռչունների՝ ձվերի վրա նստելու եւ ձագ հանելու վիճակը: *Թօխսէն վախտը հավ կա, վէր պէն չի օտում, ըստակում ա* (Բ):

- Թօխս ածէլ - *տե՛ս* Թօխս տինիլ:

- Իծըշըրանուկ ըղնել - Տողան կազմել, իրար հետեւից միաշարք շարվել: *Ժուղովուրթը իծըշըրանուկ ըն ըղնում, էտ տըղէն հը՛տան ք՛ինում* (Ձ):

ԻԾԸՊԸՏՕԿ - *տե՛ս* Ք՛ԷՉՆՄՋՆՅԻ:

ԻԾ(Ծ)ՈՒՆ - *տե՛ս* ԻՑ(Ց)ՈՒՆ:

ԻԿՈՒԱ *(ռուս. икра)* *գ.* - 1. Ձկնկիթ, խավիար: *Այան ասմա. - Բա՛լա, յը՛ս վէր իկրա չըմ կէրալ, մըծացալ չը՞մ* (Բ): 2. Բադրիջանի աղացած զանգվածից պատրաստված պահածո: *Բադրմջանէն իկրան քըսում ա հացը, կըծօտում* (Բ):

ԻՀ - *տե՛ս* Ի[1]:

ԻՀԻԼՕՑ - *տե՛ս* ԸՀԻԼՕՑ:

ԻՀՏԻԲԱՐ/ԻՔ՛ՏԻԲԱՐ *(արաբ. ixtibar (փորձառություն, հմտություն), թրք. iktibar (ուժ, զորություն, արժեք))* - 1. *տե՛ս* ԴԱՎԷՐՅԱ, *Մէլիք՛ին ըտըրա յըրա իհտիբար չինում, ամմա ըտըրան էլ ա դարկում* (Ձ): 2. *գ.* Հարգ, պատիվ: *Էտ պէնան յը՛տը թաքավէրին իհտիբարը յիրգ՛իրումը պիցըրանում ա* (Ձ):

ԻՀՏԻԲԱՐԼՈՒ/ԻՔ՛ՏԻԲԱՐԼՈՒ *(թրք. iktibarlə)* - 1. *տե՛ս* ԴԱՎԷՐԷՆՆԻ: *Իհտիբարլու մարթ ա Ալրտուշը, լօխ դավէրյա յըն անում:* 2. *ած.* Հարգանք՝ պատիվ ունեցող: *Ըտի Սօնան էտ իհտիբարլու մարթին ըխճըկանը օգում ա տըղէն հը՛տէ* (Ձ):

ԻՄ *(գրբ. իմ)* - Անձնական դերանվան եզակի թվի առաջին դեմքի՝ ՅԸ՛Ս-ի սեռական հոլովաձեւը: *Վը՛ր ուրանց հըվաքում ըն, ղօնաղը ասում ա. - Յէս ծը՛ր տըղան ըմ, էս էլ իմ կընէգ՛ըս ա...* (ՆԼՂԺԲ, 76):

- Իմ աչառըս ընդըրա յըրա կ՛ամ ա - Հետը կարողանում եմ լեզու գտնել: *Ախճիգ՛ը ասում ա. - Իմ աչառըս ընդըրա յըրա կ՛ամ ա, թօղէ յը՛ս ք՛ինամ, պիրիմ* (Ձ):

- Իմ աչառըս ընդըրա նըհը՛տ փըռնում ա - *տե՛ս Իմ աչառըս ընդըրա յըրա կ՛ամ ա:*

- Իմ ապօր/հօր էշին թայը/թան - 1. Հասակ առած, ծեր: *Այդինը իմ ապօր էշին թան ա, ամմա հանլա նօր ա փըսակվում* (Բ): 2. Շատ հին: *Էտ գ՛անան իմ ապօր էշին թան ա* (Բ):

- Իմ անը՛վ - Երդման բանաձեւ՝ երդվում եմ իմ արեւով: *Բախշին ուրթումն ա օտում. - Իմ անը՛վ, էտ պէնը յը՛ս չըմ ըրալ* (Ձ):

- Իմը ինձ ա հըսալ/տուվալ - Համբերությունս հատել՝ վերջացել է: *Էտ էլ վէր ասալ ա, իմը ինձ ա տուվալ* (Զ):

- Իմ խըմօրըս էլ ա խաշ ըրած - Իմ բաժինն էլ վերջացած է: *Այսն ըսէս ա. - Իմ խըմօրըս էլ ա խաշ ըրած, ըսօրէքյիւց քյինյայն ըմ էն դունյան* (Զ):

- Իմ կարճ խըᵉլքավըս - Ասում է խոսողը, երբ համեստորեն ցանկանում է իր կարծիքը հայտնել մի բանի վերաբերյալ՝ կարծում եմ, իմ կարծիքով: *Իմ կարճ խըᵉլքավըս ըսօր ծիւն ա կյըլական* (Զ):

- Իմ հայշվավ - *տե՛ս* Իմ կարճ խըᵉլքավըս:

- Իմ հօր տըղան չինիմ, թա... - Սպառնալիքի՝ հավաստիացման արտահայտություն մի բան անպայման կատարելու մասին: *Պուղին կըզնըվում ա, թա.- Մէլիքյ, յըᵉս իմ հօր տըղան չինիմ, թա քյալլայզ չի կյամ քըᵉզ* (Զ):

- Ի(մ) մար ինձ չօլէն դիւզիւմըն ա՞ պէրալ - Ես էլ եմ արժանի հոգատար՝ ուշադիր վերաբերմունքի: *Կուճի ախպէրը լայց ա ինում, թա. - Իմ մար ինձ չօլէն դիւզիւմըն ա՞ պէրալ, խէ ինձ փայ չը՞ք տամ* (Զ):

- Իմ մօր սիրականը - Ատելի անձնավորություն: *Իզէն ինձըᵉտէ ախպէր չի, իմ մօր սիրականըն ա, վէր տըᵉսնում ըմ, զահլայս տանում ա* (Զ):

- Իմ ու քու անէլ - Խտրություն դնել, իրար հետ համերաշխ չլինել: *Սաբավ ախպէրք ըն, սաղ օրը էն ըն իմ ու քու ընէլիս* (Զ):

- Իմ ու քու չինիլ - Իրենց ունեցածից հավասար օգտվել, իրար մեջ խտրություն չդնել, համերաշխ լինել: *Խօսքը մին ըրած՝ սէրավ ապրում ըն, իմ ու քու չի կա* (ՀԺՀ,VI, 237):

- Իմ փայ նէմէցըս/թօրքըս - Հանաքով ասում է տղամարդն իր կնոջ հասցեին՝ իմ բաժին թշնամին: *Սէդրակը ասմա. - Մ կընէզյ, իմ փայ նէմէցըս տու վըս, էլ հօր ը՞մ քյինամ կըռըᵉվ* (Զ):

ԻՄԱՆ *(արաբ,. թրք. iman)* - *գ.*- Հավատ, կրոն, դավանանք: *Ըտի էտ թօրքը իմանը փօխում ա, ըտըրանց մաչին ապըրում (Զ)*:

ԻՄԱՆԱԼ/ԸՄԱՆԱԼ- *(գրբ. իմանամ, հ.ե. *em-)* - *տե՛ս* ԳԻԴԱԼ:

ԻՄԱՆՍԸԶ *(թրք. imansiz)* - *ած.* 1. Հավատը՝ կրոնը՝ դավանանքը փոխած: *Էտ շէնումը իմանսըզ մալականնէ յըն ապրում* (Զ): 2. *փխբ.* Անզգամ, անպատկառ: *Ասալ ա.- Մ քավթառ, ա՛ իմանսըզ, հիւչիւլ ը՞ս օտում* (ՀԺՀ,VI, 47):

ԻՄԱՍ - *տե՛ս* ԻՄԱՑ:

ԻՄԱՍԿ - *գ.* Իմացողություն, հասկացողություն: *Ընդըրա իմասկը վէրըն ա՞, վէր կօրծի յըս յօր կալայ* (Բ):

ԻՄԱՍԿԱՎ/ԸՄԱՍԿԱՎ - *ած.* Խելոք, բանիմաց, ըմբռնող, հասկացող: *...Յէր ա կընաս, թա. - Քյէցէքյ էս հինչ թաքավէրէն կօշտը. էն միկա իմասկավ ա ինձանա* (ՀԺՀ, V, 318):

ԻՄԱՍՏՈՒՆ/ԸՄԱՍՏՈՒՆ/ՄԱՍՏՈՒՆ *(գրբ. իմաստուն)* - *գ. ած.* 1. Մեծ իմաստությամբ օժտված, հանճարեղ, շատ խելոք: *Էտ ախճիզը իմաստուն ա ինիւմ, գյուղիւմ ա, վէր տա լըհի թաքավէրըն ա, վըᵉրսի յա յըᵉկալ* (ՀԺՀ,V, 546): 2. Իմաստասեր, փիլիսոփա, գիտնական: *Թաքավէրը ծեն ա տաս իւրայն յիրգյիրին իմաստունննուն, վէր ըտըրա մանին քըթէնան* (Զ): 3. Բանիմաց, փորձված: *Պառավ մարթը իմաստուն կինի* (Բ): 4. *ած.* Իմաստություն պարունակող, իմաստալից: *Էտ կյիրքումը իմաստուն խօսկէրք ա ինիւմ կյիրած* (Զ):

ԻՄԱՍՏՕԹՈՒՆ/ԸՄԱՍՏՕԹՈՒՆ/ՄԱՍՏՕԹՈՒՆ *(գրբ. իմաստնութիւն)* - *գ.* Իմաստուն լինելը, իմաստունի հատկությունը *...Ինքըն էլ իւրայն իմաստօթունըն ա պինըցընըմ, էս անսունչ ըխճկանը սունչ ա տամ* (ՀԺՀ,V, 335):

ԻՄԱՑ/ԻՄԱՍ *(գրբ. իմաց.)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Իմաց անէլ/տալ *(գրբ. իմաց առնեմ)* - Հայտնել, տեղեկացնել: *Էտ տըղան ծին նըստում ա, քյընում ժօղօվուրթին իմաց անում* (ՀԱԲ,15. 118):

ԻՄԵՆՅԱ *(ռուս. имения)* - *գ.* Կարողություն, հարստություն, ունեցվածք: *Մէլիքյ Սաջումէն իմէնյան փըսէն ա մընում* (Զ):

ԻՄՊԸՌՏՆԻ - *տե՛ս* ԻՄՊԸՌՏՆԻ:

ԻՄՊԸՐՏՆԻ/ԻՄՊԸՌՏՆԻ *(ռուս. импортный)* - *ած.* Ոչ տեղական, ուրիշ երկրից ներմուծած: *Առաչ կընդըմընդ մարթու վա հիլայ ծի, միհէնզյ թօրնը յէշիւմ ըս, իմպըրտնի մաշին ըն քըշիւմ* (Բ):

ԻՅԱ - *ձ.* Էշի զռալու ձայնը: *Էշը զըռռամ ա՝ իյա՛, իյա՛...* (Զ):

ԻՆ - *տե՛ս* ՍԱԴԱՆԱ: *Ասում ըն, էտ ծօրիւմը ինէր կան* (Զ):

ԻՆԱԲԻ - *գ.* Պարեղանակ: *Ջուռնաչին մին լյավ ինաբի յա ածում, էտ արչէրը ըսքըսում ըն պար կյալը* (Զ):

ԻՆԱԴ *(արաբ. inad)* - *գ.* Համառություն, կամակորություն: *Սամսօնէն ինադը լօխ գյիւղիւմ ըն, ըտըրա հըᵉտէ էլ նըհըᵉտը կօրծ չըն փըռնում* (Բ):

- Ինադ անէլ/ըղնէլ - Համառել, կամակորություն անել, հակառակվել: *Էտ կընէզյը ինադ ա ըղնում, կավը ծախում չի* (Զ):

ԻՆԱԴՈՒ *(թրք. inadina)* - *մ.* 1. Ի հեճուկս, զզվու, մեկին հակառակ: *Տիքյըրկընզանը ինադու մըᵉծ հըրսանէքյ ա անում* (Զ): 2. Միտումնավոր կերպով, դիտմամբ: *Ինադու ծէրքը կըտըրում ա, վէր կօրծ չանէ* (Բ):

ԻՆԳԼԻԶ *(թրք. ingliz, իտ. inglese)* - *գ.* 1. Անգլիացի: *Կյիւքյիւց Սըմվէլին կընէզյը ինգլիզ ա, կըռվէն վախտըն ա պէրալ* (Զ): *ած.* 2. Անգլիական: *Ըտըրան էլ մին ինգլիզ թըվայնզյ ա ինիւմ* (Զ): 3. *փխբ.* Շատ սուր՝ հատու (կտրող գործիքների մասին): *Ինգլիզ դարյազ ա* (Բ): 4. *փխբ.* Ճարպիկ, ձեռներեց: *Խօսրօվը ինգլիզ մարթ ա* (Բ):

ԻՆԳԻԼ - *տե՛ս* ԸՂՆԷԼ:

ԻՆԴԻ - *տե՛ս* ԸՆԴԻ:

ԻՆԷԼ - *տե՛ս* ԻՆԻԼ:

ԻՆԺԻՆԷՐ - *տե՛ս* ԻՆՋԻՆԷՐ:

ԻՆԻԼ/ԻՆԷԼ/ԸՆԻԼ *(գրբ. լինիմ)* - *չբ.* 1. Գոյություն ունենալ: *...Մին խէլիւնք տըղա յա ինըմ, ինքըն էլ ծիւկնը փըռնօղ* (ՀԺՀ, V, 78): 2. Գտնվել մի տեղում: *Էտ յըᵉխծէն էլ ծըմակէն մաչին ա ինիւմ* (Զ): 3. Տեղի ունենալ, կատարվել, պատահել: *Ըտըրանա յըᵉտը էտ յիրգյիրումը շատ պէնէր ա ինիւմ՝ շէնան հըᵉռէ* (Զ): 4. Դառնալ մի բան, վերածվել մի բանի: *Մունք վէշ մին վախտ թօղէլ չընք, վէր Շուշին թուրքէրէն հըᵉտէ դըչատըᵉղ ինի* (Բ): 5. Մի տեղում ներկա գտնվել: *Հու վէր Սուխտուրաշէն հիլյծ ա, տըᵉսած կինի, թա էտ հինչ տըրախտ տըᵉղ ա...* (ԱԱ,23): 6. Պատկանել: *Էտ տօնը քյուխէնըն ա ինիւմ* (Զ): 7. Ունենալ, ունեցվել: *Մէլիքյ-Շահնազարէն մին շօն ա ինիւմ, վըխճարու մըսավ ա ինիւմ պըհէլիս* (ՆԼՂԺԲ, 99): 8. Հանդիսանալ: *Ըտըրանց կըռվէն մանին էն ա ինիւմ, վէր Խօրէնին էշը քացէ յա տամ Հէնդօվէն խօզյին* (Բ): 9. Հավասարվել, կազմել: *Հէնզյ տարէ կինի, վէր իմ ախպօր տըᵉսալ չըմ* (Բ): 10. Առաջանալ, ծագել: *Յըᵉղը մածնան ա ինիւմ* (Զ): 11. Ծնվել, ստեղծվել: *Տահանք իւրիւր նըհըᵉտ վէր ապրում ըն, էրկու տըղա յա ինիւմ* (ՆԼՂԺԲ, 2): 12. Որևէ բանով տարվել՝ զբաղվել: *Մարթը տըᵉսնում ա, վըᵉր արչըն էն ա շաղված, իւրայն անավ հիլած, թօղըմ ա փախճում* (ՀԺՀ, VII, 208): 13. Վէր բարձրանալ: *Մինչըᵉվ միհէնզյ էլ ըտահանց թուրնան ծօխ ա ինիւմ յէրգյինքյը* (Զ): 14. Որևէ վիճակում՝ դրության մեջ գտնվել: *Էտ կընէզյըն էլ վընըրծանդըր ա ինիւմ* (Զ): 15. Կազմում է հարադրական բայեր լինելության՝ վերածման նշանակությամբ: *Թաքավէրին*

*տըղան էտ չուբանէն նըհը*ᵉ*տ հընգէր ա ինՀում, ք*ᵘ*ինամ* (Զ): 16. Կազմում է հարադրական բայեր՝ մի բանի ենթարկվել նշանակությամբ: *Էտ խոխանցը ծը*ᵉ*րքէն մարը խըրըվ-խարավ ա ինՀում* (Զ): 17. Կազմում է բայի երկրորդական բաղադրյալ ձեւեր: *Մին օր հաց թըխէյիս դՀՀշմանի զօրքը անց կընայիս ա ինՀում* (ԱԱ, 25):

- Ինիլի պէն - Հնարավոր՝ իրականանալի բան: *Ասում ա. - Էտ ինիլի պէն չի, նըհախ տը*ᵉ*դան չըրչարվէլ մէլ* (Զ):

- ԻնՀում ա, չինՀում - Հեքիաթներն սկսելու բանաձեւ՝ հայտնի չէ՝ եղել է, թե ոչ: *ԻնՀում ա, չինՀում մին թաքավէր* (ՀԺՀ, V,188):

- Չինի թա - 1. Մտադիր չե՞ս, կարո՞ղ է պատահել: *Կօլին ասմա. - Սի՛ղօն, չինի՞ թա փուշմանալ ըս, օգում չըս հըրկըշվէ արտ անինք*ᵘ (Զ): 2. Գուցե, թերեւս: *Չինի՞ թա թօռ կ*ᵘ*ա* (Բ):

- Չինիմ-չըգ*ի*դՀամ - Երբեք, ոչ մի դեպքում, արգելում եմ: *ՀՀրը ասմա. - Չինիմ-չըգ*ᵘ*իդՀամ մինին բուստանան կ*ᵘ*ուղութուն ըք ըրալ* (Զ):

ԻՆԻՍՏՈՒՏ *(ռուս. институт, լատ. institutum)* - *գ.* Բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ինիստուտ: *Էտ ախճիգ*ᵘ*ը ինիստուտը պըրծընում ա, փըսակվում* (Զ):

- Ինստիտուտ ավարտ - Ինստիտուտ ավարտած, բարձրագույն կրթություն ստացած: *Ըտըրան էլ էրկու ինստիտուտ ավարտ ախճիգ*ᵘ *ա ինՀում* (Զ):

ԻՆԿՈՒԲԱՏՈՐ - *(ռուս. инкубатор, լատ. incubare)* - *գ.* Արհեստական եղանակով ճտեր հանելու ապարատ: *Ինկուբատորը ՀդՀթ ընգավ, շէնին կընանէք*ᵘ*ը հավ թախս տինիլը թՀրգ*ᵘ *ըրէն* (Բ):

ԻՆՁ/ԻՁ[2] *(գրբ. ինձ)* - Անձնական դերանվան եզակի թվի առաջին դեմքի՝ ՅԸ՝ Ս-ի տրական եւ հայցական հոլովաձեւը: *Ըտըրանք խաղավ ըն ինիս, ինձ էլ մըհալ չըն քըցիս* (Զ):

- Ինձանա հըրցըրու - Այդ մասին ես լավ գիտեմ: *Տու ինձանա հըրցըրու, թա էտ կընէգ*ᵘ*ը հինչ ջուվար ա* (Բ):

- Ինձանա յը՞ս հըրցընում - Դու ինձնից լավ գիտես, այդ մասին ավելորդ է ինձ հարցնելը: *Ինձանա յը՞ս հըրցընում, տու սաղ գ*ᵘ*անքըտ ընդ*ᵉ*ղ ըս ապըրալ* (Բ):

- Ինձ ըստի չի տը*ᵉ*սնաս - Ինձ ապաշնորհ՝ թույլ՝ խեղճ չկարծես, մի՛ թերագնահատիր իմ ուժը: *Աղվէսը ասմա. - Կ*ᵘ*Հլ ախպէր, ինձ ըստի չի տը*ᵉ*սնաս, յը*ᵉ*ս կարող ըմ էտ կ*ᵘ*ումաշին էլ յը*ᵉ*խնիմ* (Զ):

- Ինձ թաղիս - Երդման բանաձեւ՝ թող մեռնեմ, եթե տեղյակ եմ՝ արել եմ եւս: *Հիրը*ᵉ*վանը ասմա. - Ինձ թաղիս, թա յը*ᵉ*ս քու հավըտ մօրթած ինիմ* (Զ):

- Ի՞նձ հինչ - Դա ինձ չի վերաբերում, դա իմ գործը չէ, չեմ ուզում խառնվել: *Ի՞նձ հինչ, թա Պուղուսէն տըղէն թակալ ըն* (Զ):

- Ինձ յէշՀում ա, ք*ᵘ*ը*ᵉ*զ տը*ᵉ*սնում - Ասում են շիլ՝ շեղ աչքերով մարդկանց մասին:

- Ինձ տը*ᵉ*ս, ք*ᵘ*ը*ᵉ*զ խըղճա՛ - Իմ սխալները մի՛ կրկնիր, որ ինձ պես չդժբախտանաս՝ չձախողվես: *Նանօվը ասմա. - Ծա՛ղէգ*ᵘ*, ինձ տը*ᵉ*ս, ք*ᵘ*ը*ᵉ*՛զ խըղճա՛, հիշկան կարում ըս, հարթանանըտ նըհը*ᵉ*տ լ*ᵘ*ավ կա՛ց* (Զ):

- Ինձ տՀուս յը*ᵉ*ք - Որեւէ պարտականություն հանձն առնելու արտահայտություն. ես դա կանեմ: *ՀՀրտՀուշը ասմա.- Արաղը ինձ տՀուս յը*ᵉ*՛ք, յը*ᵉ*ս կըպիրիմ* (Զ):

- Ինձ տօ, ք*ᵘ*ը*ᵉ*զ տամ - Չկա, չունեմ, որտեղի՞ց տամ: *Մըհէգ հօր ա՞, ինձ տօ, քէզ տամ, իտի էշէրը մաննավ կըհըմբարվին...* (ՁՏ,Բ, 150):

ԻՆՁԸ*ᵉ*ՏԷ/ԸՆՁԸ*ᵉ*ՏԷ - *մ.* Ինձ համար: *Ինձը*ᵉ*տէ մին փափաղ ըմ ինք*ᵘ *կալՀալ* (Բ):

ԻՆՁ ՈՒ ԻՆՁ - *մ.* Ինքս ինձ, ինքս ինձ հետ, ինքս իմ մեջ: *Ինձ ու ինձ խօսում ըմ, հՀւր ը՞մ խընգարում* (Բ)

ԻՆՆԱՆՈՒՑ - 1. *ած.* Ինը մաս՝ չափ՝ քանակ՝ ծավալ պարունակող: *Մին ինանուց տախտակ ա տՀշՀում, էտ պատէն թըխում*: (Զ): 2. *գ.* Թղթախաղի մեջ ինը նիշ պարունակող թուղթը: *Կարտ ըն խաղ անում, Անդօնեն իրը*ᵉ*ք իննանուց ա ըղնում* (Զ):

ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ - *տե՛ս* ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ:

ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ/ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ *(գրբ. իննսուն)* - *թ.* Ինսուն: *Ապան իննասուն տիրը*ᵉ*կան ա:* (Բ)

ԻՆՆԷՔԱՆ - *տե՛ս* ԻՆՆԸ*ᵉ*ՔԱՆ:

ԻՆՆԸ *(գրբ. ինն)* - *թ.* Ութին հաջորդող թիվը՝ ինը: *Իննը ամէս անց ա կենում, թաքավէրին հարթը մին վըսկըք*ᵘ*ՀՀ*ᵘ*լ տըղա յա պՀւրՀում* (Զ):

- Ինը ամէս քու մօր փօրումը հունց ը՞ս կացալ - Ասում են շատ անհամբեր մարդկանց:

ԻՆՆԸ*ᵉ*ՔԱՆ/ԻՆՆԷՔԱՆ *(գրբ. իննեքեան)* - *թ.* Ինն էլ, բոլոր ինը միասին: *Իննը տըղա օնէ, իննը*ᵉ*քան էլ մին տան մաչի յըն ապըրում* (Բ)

ԻՆՆԸՊԱՏԷԳ[ᵘ] *(գրբ. իննպատիկ)* - *ած., մ.* Ինն անգամ ավելի, ինանով բազմապատկված: *ՀՀրը տըղէն անա իննըպատեգ*ᵘ *մը*ᵉ*ծ ա* (Բ):

ԻՆՆԸՏԱԿ - *տե՛ս* ԻՆՆԸՊԱՏԷԳ[ᵘ]:

ԻՆՆԻՆՁԻ - *թ.* Իններորդ: *Մը*ᵉ*ծ տըղան հՀՀլՀ իննինՁի դասարանըմըն ա կըրթիս* (Բ):

ԻՆՁԸ(Թ)ՄԻՇ/ԻՆՁԻ(Թ)ՄԻՇ/ԸՆՁԸ(Թ)ՄԻՇ *(թրք. inčinmek (վիրավորվել, սիրտը կոտրվել)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- ԻնՁը(թ)միշ անէլ/տալ - Նեղացնել, տխրեցնել, վիրավորել: *Կընէգ*ᵘ*ը էզգՀն մարթին նըհէտ կըռէվ ա անըմ, մարթին ինՁիմիշ անըմ...* (ՀԺՀ, V, 15):

- ԻնՁը(թ)միշ ինիլ/տը*ᵉ*ռնալ - Նեղանալ, տխրել, վիրավորվել, նեղսրտել: *ՀՀրՀզին մին կընէգ*ᵘ *ա կ*ᵘ*ամ, ասում ա - Մ բալա, յէր կաց, շատ մէլ ընՁըմիշ ինիլ, կա շՀրէր տամ, կ*ᵘ*՛ց, ք*ᵘ*՛ինի՛ զօնախըղ ...* (ՀԺՀ, Ս.495):

ԻՆՁԻ(Թ)ՄԻՇ - *տե՛ս* ԻՆՁԸ(Թ)ՄԻՇ

ԻՆՁԻՆԷՐ/ԻՆԺԻՆԵՐ *(ռուս. инженер, ֆր. ingeniur, լատ. ingenium)* - *գ.* Ճարտարագետ, ինժեներ: *Թաքավէրը մին ինժինէր ա պիրիլ ըամ, վէր էտ պալատը շինի* (Զ):

ԻՆՍԱՆ - *տե՛ս* ԸՆՍԱՆ:

ԻՆՍԱՓ (*արաբ., թրք. insaf)* - *տե՛ս* ԽԸ*ᵉ*ՂՃ (3): *Լէնգ*ᵘ *Թէմուրէն ըսկի ինսափ չի իլՀալ* (Զ):

ԻՆՍԸՆԱՎԸ*ᵉ*Տ - *տե՛ս* ԸՆՍԸՆԱՎԸ*ᵉ*Տ:

ԻՆՍԸՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՆՍԸՆՕԹՈՒՆ:

ԻՆՍ-ՁԻՆՍ - *գ.* 1. Կենդանի շունչ, շնչավոր էակ: *Մուղանին չօլին նըման մին չօլ ա կ*ᵘ*ամ առաչը, վէչ ճօնդ օնի, վէչ պօճախ, մարթ, ինս-ջինս չի ըրէվըմ...* (ՁՏ, Բ, 13): 2. *տե՛ս* ԻԼԼԱԹ-ՄԻԼԼԱԹ 3. Ազգուտակ, ցեղ: *Ըտըրանք փիս ինս-ջինս ըն ինՀում* (Զ):

ԻՆՍՏԸՐՈՒՄԷՆՏ *(ռուս. инструмент, լատ. instrumentum)* - *տե՛ս* ՀԱՁԱԹ (2):

ԻՆՎԱԼԻԴ *(ռուս. инвалид, ֆր. invalide, լատ. invalidus)* - *ած.* Խեղանդամ, հաշմանդամ: *Թաքավէրին էլ մին ինվալիդ ախճիգ*ᵘ *ա ինՀում՝ ճօխտ վը*ᵉ*ննան չօլախ* (Զ):

ԻՆՎԱԼԻԴՈԹՈՒՆ - *գ.* Հաշմանդամ լինելը: *Ինվալիդօթունընը ա էտ մարթին ըտի անխը*ᵉ*ղճ շինալ* (Բ):

ԻՆՎԷՆՏԱՐ *(ռուս. инвентарь, լատ. inventarium)*- *գ.* Հիմնարկության՝ ձեռնարկության ունեցվածքի մեջ մտնող առարկաների՝ իրերի ամբողջությունը, գույք: *Ըշկօլէն հը*ᵉ*տէ թՀզՀ ինվէնտար ըն ինք*ᵘ *կալՀալ* (Զ):

ԻՆՏԷԼԻԳԷՆՏ - *տե՛ս* ԻՆՏԻԼԻԳԷՆՏ:

ԻՆՏԷՐՆԱՏ (*ռուս. интернат, ֆր. internat, լատ. internus)* *գ.* 1. Գիշերօթիկ դպրոց: *Ք*ᵘ*ինամ ա Բաքու, ցիրը*ᵉ*կը կօրծ անում, ՀՀրՀգ*ᵘ*ՀնընՀ էլ ինտէրնատումը կարթՀում* (Զ): 2. Դպրոցին կից կացարան սովորողների համար: *ԷրՀՀշ շէնա*

հու վէր Հրդրեհութա ըշկօլումըն ար կարթում, ինտէռնատումըն ար կէնում (Ձ):

ԻՆՏԷՐԷՍ *(ռուս. интерес, լատ. interest)* - *գ.* Հետաքրքրություն, հետաքրքրասիրություն, որեւէ բան իմանալու ձգտում: *Ինտէրէսու հըմար յէր ըն կէնում, կ'ամ* (ՀԱԲ, 15, 49):

ԻՆՏԷՐԷՍԱՎԱՑ *(ռուս. интересоваться (հետաքրքրվել)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ինտէրէսավաց ինիլ - Հետաքրքրվել, հետաքրքրություն ցուցաբերել: *Էտ պառավը ինտէրէսավաց ա ինոնմ, թա էտ տըղան ըշտէղ ա ք'ունում* (Ձ):

ԻՆՏԷՐԷՍՆԻ (*ռուս. интересный)* - *ած.* 1. Հետաքրքրական, հետաքրքրություն շարժող: *Ըտէղ էլ մին ինտէրէսնի ծառ ա ինում* (2): 2. Արտասովոր, տարօրինակ: *Բէբին ասմա.- Ինտէրէսնի մարթ ըս, Մթանէս, քու էշըտ կ'ումումը կապալ ըս, իմավըն ըս փանդրտ կըրում* (Բ):

ԻՆՏԻԼԻԳԷՆՏ/ԻՆՏԷԼԻԳԷՆՏ *(ռուս. интеллигент, լատ. intelligentis)* - *ած. գ.* Մտավորական: *Սաբավ ինտիլիգէնտ ա Կըրիքօրը, յէխտուտ շ'ուրէրավ ա շօռ կ'ամ* (Ձ):

ԻՆՓԱՔՏ *(ռուս. инфаркт, լատ. infarctus)* - *գ.* Ինֆարկտ: *Ըտրրանց ազկէն տըղըմարթիք'ը լօխ ինփաքտան ըն մը'ռալ* (Ձ):

ԻՆՔ - *տե՛ս* ԻՆՔ'ՆԷ:

ԻՆՔԸ- *տե՛ս* ԻՆՔ'ՆԸ:

ԻՆՔ'/ԻՔ'/ԻՆՔ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ինք' ընօվի - *ած.* Փողով առնված, գնված: *Շինանցէն վէր ինք' ընօվի լօբի կէրավ, էլ շէնըմը ապրում ա հինչ ա՞նէ* (Բ):

- Ինք' օնէլ - *նբ.* 1. Գնել, գինը վճարելով՝ վերցնել, առնել: *Կալօղը մին ծի յա ինք' օնում, նըստում, կ'ամ շէնը* (Ձ): 2. Խլել, ուժով վերցնել, հափշտակել: *Թաքավէրը մըտածում ա, թա հինչ փանդ սարքէ, վար էս մարթին կընէգ'ը ինք' օնէ* (ՀԺՀ, V, 387): 3. Մեկից մի բան վերցնել: *Պուղին իրէք մանէթը ինք' ա օնում, խօսք տամ, վէր խօսէ վուչ* (ՀԱԲ, 134): 4. *փխբ.* Կաշառել, մեկին կաշառելով՝ իր կողմը քաշել: *Ըտրրանք սուդյին ինք' ըն օնում, ուրանց ախպօրը ըզադում* (Ձ):

ԻՆՔ'Ը/ԻՆՔԸ *(գրբ. ինքն)* - *դ.* 1. Գոյականների կամ անձնական դերանունների հետ գործածվելով՝ ցույց է տալիս այնպիսի անձ կամ իր, որը անմիջականորեն կատարում կամ մասնակցում է գործողությանը եւ կամ դառնում է գործողության խնդիրը: *Հանը ասմա - Տու ինք'ըտ ըս քանդանալ, ինք'ըտ էլ շինի* (Ձ): 2. Առանձին գործածվելով՝ փոխարինում է գոյականին եւ անձնական դերանուններին: *Ինք'ը կընգանը սիրականէն կըլօխըն ա կըտրում, էն դօնաղըն էլ՝ ուրանն նը'շընածէն սիրականէն...* (ՆԼՂԺԲ, 72):

- Ինք'ըն ա գ'ուդում - Իր գործն է, ինչպես ցանկանում է, թող այնպես էլ վարվի: *Ասում ըն, Մարյանը ախճիգ'ը տամ ա էն քօռ առուտուրականէն, ինք'ըն ա գ'ուդում, յը'ս կօրծ չօնիմ* (Ձ):

- Ինք'ըն ըգ'ՕՐԱ - *տե՛ս* Ուրանն ըգ'ՕՐԱ: *Սէտրակը ինք'ըն ըգ'ՕՐԱ հըրսանէք' ըրավ* (Բ):

- Ինք'ը՝ մին, շէլանկը՝ հազզար - Ասում են հոգսերով ծանրաբեռնված մարդկանց մասին:

- Ինք'ը ուրանն - 1. Առանց կողմնակի միջամտության, դյուրությամբ: *Էտ տօնը ինք'ը ուրանն պարան ա կ'ամ* (Ձ): 2. *տե՛ս* ԻՆՔ'ՆԱԿԸԼՕԽ(2): 3. Ինքն իր հետ, իրեն-իրեն: *Ինք'ը ուրանն խօսում ա* (Բ):

- Ինք'ը ուրանն հանշը'էվ տալ - Կշռադատել, ծանրութեթեւ անել: *Մարթ հինչու անում ա, բիդի ինք'ը ուրանն հաշը'էվ տա* (Ձ):

ԻՆՔ'Ը - ԻՆՔ'Ը - *մ. տե՛ս* Ինք'ը ուրանն:

ԻՆՔ'ՆԱԿԸԼՕԽ/ԻՆՔՆԱԿԸԼՕԽ *(գրբ. ինքնագլուխ) 1. ած.* Ուրիշներին հաշվի չառնող, իր կամքի՝ քմահաճույքի համաձայն վարվող, ինքնագլուխ: *Ինք'նակըլօխ ախճիգ' ա* (Բ): 2. *մ.* Ինքնագլխաբար, ինքնագլուխ կերպով: *Էտ կընէգ'ը հինչու անում ար, ինք'նակըլօխ ար անում* (Ձ):

ԻՆՔ'ՆԱՎԸ'Ղ/ԻՔ'ՆԱՎԸ'Ղ/ԻՆՔՆԱՎԸ'Ղ *(գրբ. այգողք)* - *գ.* Թաղման հաջորդ օրը ննջեցյալի գերզմանին այցի գնալը եւ նրա հետ կապված արարողությունները: *Ինք'նըվը'ղեն վախտը էտ կընէգ'ը էլհա հանշան ք'ինամ ա* (Ձ):

ԻՆՔ'ՆԱՐՕՏ/ԻՔ'ՆԱՐՕՏ/ԻՆՔՆԱՐՕՏ - *գ.* Վաղ առավոտյան անասուններին կարճ ժամանակով արոտավայր տանել-բերելը՝ կթելու համար: *Հիվընէն տանում ա ինք'նարօտ, տը'սնում մին աղվես վեր ընգած* (Ձ):

ԻՆՔՆԱԿԸԼՕԽ - *տե՛ս՝* ԻՆՔ'ՆԱԿԸԼՕԽ:

ԻՆՔՆԱՎԸ'Ղ - *տե՛ս* ԻՆՔ'ՆԱՎԸ'Ղ:

ԻՆՔՆԱՐՕՏ - *տե՛ս* ԻՆՔ'ՆԱՐՕՏ:

ԻՇԱԹԱՓ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Իշաթափ ինիլ/տը'ռնալ - Էշից վայր ընկնել (հիմնականում գործածվում է որպես անեծք): *Իշաթափ ինիս տու, էտ էշին խէ ճուր չը'ս տամ* (Ձ):

ԻՇԱԼԼԱՀ *(արաբ. inša Allah)* - *ած.* Փառք Աստծու: *Իշալլա՜հ, էն ա ապըրում ընք, թանք'ի կընը'էվ չինի* (Ձ):

ԻՇԱԿ'ԻՆ - 1. *գ.* Էշի գին, մեկ էշ գնելու գումար: *Վախտ ա իլալ՝ իշանկ'ինը շատ պէցանր ա իլալ* (Բ): 2. *փխբ.* Էժան գին, չնչին գումար: *Էտ կավը իշըկ'ինավ ծախում ա, կ'ամ տօն* (Ձ):

- Իշըկ'ինան խօսէլ - Խոսել ըստ էության (գործածվում է այն ժամանակ, երբ մեկն ուզում է հիշեցնել, որ խոսեն իր համար կարեւոր հարցի մասին): *Տըղան ասմա - Մպա, յը'ք մեր իշըկ'ինան խօսինք', ինձ հիբ ը՞ս փըսակում* (Ձ):

ԻՇԱՆԱԼ - *չբ. տե՛ս* Էշ կըտրել:

ԻՇԱՊԷՌՆԸ - *գ.* 1. Էշի վրա բարձած բեռ: *Աղվը'սընը ըտը'ղ յէր ա կէնում, չանչուն իշապէռնը տըկըտիյը'ր անում...* (ՀԺՀ, VII, 224): 2. Մի էշի բեռան չափ քանակություն: *Էրկու իշապէռնը մին ծիյապէռն ա* (Ձ):

ԻՇԱՍԱԲ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իշըսաբու տալ - *տե՛ս* Էշու տը'ղ տինիլ:

ԻՇԱՍՈՒԼ - *ած.* Տխմար, պատվախնդրություն չունեցող: *Իշասուլ մարթ ա* (Բ):

ԻՇԱՎԷՐ - *ած. գ.* 1. Էշ հեծած՝ նստած (մարդ): *Իշավէրը էշան քըշանում ա, էտ կընգանը ք'ՕՄԱՆԳ' անում* (Ձ): 2. Էշով բեռ փոխադրող, էշ քշելով ճանապարհ գնացող (մարդ): *Մին օր էլ մին իշավէր մարթ, էշը պիրթավ պէռնած, կ'ամ ա ըտրրանց շէնը* (Ձ): 3. *տե՛ս* ԻՇԱՏԱՐ:

ԻՇԱՏԱՐ - *գ.* Էշի տեր, էշ ունեցող: *Ըտրրանա յէտը ամմեն իշատար սըկըսում ա ուրանն էշը պահէլը...* (ԼՂԲ, 346):

ԻՇԱՏԸ'Ղ- Գործածվում է կապակցության մեջ:

- Իշատը'ղ տինիլ - *տե՛ս* Էշու տը'ղ տինիլ:

ԻՇԱՐԱԾ - *ած գ.* 1. Էշէր արածեցնող: *Իշարած Փամիլը էշէրը քըշում ա ծօրը, տը'սնում մին դաշանգ' հարթնը մօշ ա քաղում* (Ձ): 2. *փխբ.* Ապիկար, անճարակ: *Էտ իշարածը բաշիր չանում, թա փըսակվէ* (Բ):

ԻՇԷՂ - տե՛ս ԻՇԸ'Ղ:

ԻՇԸՂՈՒՂԱ - 1. գ. Էշի դունչ: *Էշը ալլէրը օտում ա, Մացակը ցըկատավ թըխում ա իշըդուդան կըտրում* (Ձ): 2. ած *փխբ.* Քիթուռուքը էշի դնչի նման տգեղ, այլանդակ: *Իշըդուդա կընէգ' ա* (Բ):

ԻՇԸ'Ղ/ԻՇԷՂ *(թրք. išik)* - *տե՛ս* ԼՈՒՍ[1]:

- Իշը'ղ անէլ/տալ - *տե՛ս* Լուս անէլ: *Պիրում ա տօն, վէր տանըն ա տինում, հանց իշէղ ա տամ, վէր լօխ մաթ ըն մընըմ* (ՀԺՀ, V, 617):

ԻՇԸ'Ղ - ԻՇԸ'Ղ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իշը՝ղ-իշը՝ղ անել - Մերթ ընդ մերթ փայլել՝առկայծել՝փայլփլել: *Տըսնաս ըն՝ հէն ա մին հը՝ռէ տէղ մին պէն իշէղ-իշէղ ա ընէս* (ՀԺՀ, V, 591):

ԻՇԸ՝ՆԷ - *գ.* Երկարավուն տանձի տեսակ: *Իշը՝նէն ահնամ տանձ ա* (Բ):

ԻՇԸԹԱՎԻԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իշըթավիլ տալ - Էշի նման թավալվել: *Տըղան վէր տըրըքցընէս ա, օշափը վէր ա ըղնէս, իշըթավիլ տաս* (Ջ):

ԻՇԸ(Լ)ԹԻ՝ *(թրք. išilti (փայլ)* - *տե՛ս* ՇԻՆԸ(Լ)ԹԻ՝: *...Մարթու պարի մըտքէրան, պարի պընէրան իսկի իշըլթի՝ չըկա մէչնէրին, ամմա ասլանին ու շանը մէչը շատ կա* (Ջ�տ, Ա. 90):

ԻՇԸԼՕԲԻ - *գ.* Խոշոր հատիկներով լոբու տեսակ: *Գ՛ուլիստան լ՛ավ իշըլօբի յա իլալ տըռնաս* (Բ):

ԻՇԸԽԱՌԱՆՉ/ԻՇԸԽԱՌԱՆՋ - *գ.* 1. Կարճ ու նուրբ մազիկներով մարմին ունեցող միջատ, որ ապրում է հողի մեջ եւ մեծ վնաս է հասցնում սածիլներին: *Ուռութանա ք՛ինամ ըն բօստանը, տը՝սնում իշըխառանչը խըյարին շիթիլնէն կըտօրած* (Ջ): 2. Մի տեսակ թունավոր սեւ բզեզ: *Իշըխառանչը էտ խուխէն ծէրքան կըծում ա, ըսքըսում ա լ՛ց ինիլը* (Ջ): 3. *տե՛ս* ՊՈՒՌ(ՆԸ): 4. *ած. փխբ.* Սեւ մաշկ ունեցող, տգեղ: *Մարուսան մին իշըխառանչ ախճիգ՛ օնէ, սաղ օրը թա՛ռիփ ա անում* (Բ):

ԻՇԸԽԱՌԱՆՋ - *տե՛ս* ԻՇԸԽԱՌԱՆՉ:

ԻՇԸԽԸՌԱՎ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իշըխըռավ տալ - Առանց լուրջ պատճառի մեկից խռովել: *Էտ հարթնը վա՛ռին իշըխըռավ ար տամ* (Ջ):

ԻՇԸԽՈՒՋԻՆ - *գ.* Էշի վրա գցելու խուրջին: *Ղուլգ՛անը իշըխուրջինը քը՝ցում ա էշին փըլանավը, ք՛ինըմ ծըմակը, վէր զըկըռ քաղէ* (Ջ):

ԻՇԸԿԱԹՆՈՒԿ - *գ.* Իշակաթնուկագգիների ընտանիքին պատկանող խոտաբույս, որ պարունակում է կաթնանման դառը հեղուկ: *Իշըկաթնուկը էշըն ա օտում* (Բ):

ԻՇԸԿԱԾՈ՝ՒԿ - *գ.* Մի տեսակ վայրի փշոտ խոտաբույս: *Իշըկածո՝ւկը տանը պատան կախ ըն տամ, վէր աշկավ տըվօղ չինի* (Ջ):

ԻՇԸԿԸԼՕԽ - *գ. տե՛ս* Էշու կըլօ՝խ:

ԻՇԸՀԱ՝ՇԸ՝Վ - *տե՛ս* ԻՇԱՍՈ՝Լ:

- Իշըհա՝շը՝վ տալ - *տե՛ս* Էշու տը՝ղ տինիլ:

ԻՇԸՅԱՋ - *տե՛ս* ԻՇԻՅԱՋ:

ԻՇԸՊԸԼԱՆՈՒԿ - *գ.* Մի տեսակ թունավոր խոտաբույս: *Էշէրը իշըպըլանուկ ըն* օտում, ըսքըսում լօք-լօք անէլը (Ջ):

ԻՇԸՎԱՉԻ - *տե՛ս* ԻՇԸՎԱՐԻ:

ԻՇԸՎԱՐԻ - *ած. մ.* Էշի նման, էշի վարվեցողությամբ: *Իշըվարի մարթ ա, իշըվարի օտում ա, իշըվարի ապըրում* (Բ):

ԻՇԸՎԸ՝ՆՆԸ- *գ.* 1. Հաստ երկճյուղ փայտ, որի վրա ամրացնում են ցանկապատը: *Իշըվը՝ննը կօտրում ըն, չափարը ճըմօռում, նի տը՝ռնում բօստանը* (Ջ): 2. Երկար եւ առանց թիկունքի նստարան, իշոտնուկ: *Իշըվը՝ննը տինո՛ւմ ըն, նըստօտում* (Բ):

ԻՇԸՏԱ՝ՄԲՈ՝ՒԼ - *գ.* Խոշոր եւ քիչ դառը սալորի տեսակ: *Իշըտա՛մբո՝ւլը քաղում ըն, ածում պօժկան, արաղ քաշո՛ւմ* (Ջ):

ԻՇԸՏԸՌՏԸՌ - *գ.* Մի տեսակ վայրի բանջար, որ թթու են դնում: *Էտ կընէգ՛ը ըստօլէն մին կօլա կինի յա տինո՛ւմ, մին էլ մին աման աղ տիրա՛ծ իշըտըռտըռ* (Ջ):

ԻՇԸՑ(Ը)ՆԵԼ - *նբ.* ԻՇԱ՝ՆԱԼ-ի:

ԻՇԸՓԸԼԱՎ - *գ.* Շուշանազգիների ընտանիքին պատկանող մոխրագույն տերեւներով եւ տհաճ հոտով խոտաբույս: *Խօտը հարում ըն, իշըփըլավը ճօկում, տէն ածում* (Ջ):

ԻՇԸՔՈՒՆԷ - *գ. տե՛ս* Էշ կըռտօղ:

ԻՇԸՔՕՌԱԿ - *գ.* 1. Էշի ձագ՝ քուռակ: *Մօսին մին իշըքօռակ ա տամ, մին կ՛առնը ինք՛ օնում* (Ջ): 2. *տե՛ս* Էշու քօռակ:

ԻՇԻ(Լ)ԹԻ՝ - *տե՛ս* ՇԻՆԸ(Լ)ԹԻ՝:

ԻՇԻՅԱՋ/ԻՇԸՅԱՋ - *(ռուս. ишиас, հուն. ischias-)* - *գ.* Նստանյարդի բորբոքում՝ իշիաս: *Էտ մարթին էլ իշիյազավ հիվանդ մին կընէգ՛ ա ինո՛ւմ* (Ջ):

ԻՇԽ/ԻԽՇ/ԷՇԽ/ԷԽՇ *(արաբ. ašk (սիրահարություն, սեր), թրք. ešk)* - *գ.* 1. Եռանդ, ավյուն, ոգեւորություն: *... Քարը կուտրատում ա էն էխշավը, վար վը՝սկէն քարէն տակէն ա ինանկան* (ՀԺՀ, V, 406): 2. Սեր: *Սարէն ծաղէգ՛ը պէցվալ ա, էշխըտ խը՝լքըս տարալ ա ...* (Ջ):

- ԻՇԽ ըղնէլ - *տե՛ս* Իշխու կ՛ալ:

- Իշխու կ՛ալ - Ոգեւորվել, խանդավառվել: *Հանդ ընուղնէն թաքավէրին վէր տը՝սնում ըն, իշխու վըն կ՛ամ* (Ջ):

ԻՇԽԱՆ/ԻԽՇԱՆ *(գրբ. իշխան)* -*գ.* Ժառանգական պատվավոր տիտղոս,որ կրում էին նախկին ժառանգական կալվածատերերի սերունդները կամ երկրի պետերի կողմից դրան արժանացածները: *Հանդրո՛ւթին Բայանդուր իշխանը մին շատ դաշանգ՛ բախչա օնէր* (ԼՂԲ, 338):

ԻՇԽԱՆՈՒԹԻ՝Ն/ԻԽՇԱՆՈՒԹԻ՝Ն - *գ.* Պետական կառավարման մարմին, կառավարություն: *Իշխանութի՛ւնը ցըրը՝վ ա կ՛ամ, կ՛ուղօթունը շըտանում ա* (Ջ): 2. Որեւէ իշխանի՝ կառավարչի կողմից կառավարվող երկիր՝ նահանգ՝ տարածք: *Առաչ ըստը՝ղ Վաղվան իխշանութի՛ւնըն ա իլալ* (ԱԱ, 46): 3. Կառավարելու՝ կարգադրելու՝ հրամայելու իրավունք՝ հնարավորություն: *Վէր իշխանութի՛ւնը ծը՝ռքան յէր կալին, էտ նախագան քօչից* (Ջ):

ԻՇԽԸՀԱ՝ՎԱ՝Ս/ԻԽՇԸՀԱ՝ՎԱ՝Ս - *տե՛ս* ԻՇԽ (1):

ԻՇԽԸՆԱՋ/ԻԽՇԸՆԱՋ/ԷՇԽԸՆԱՋ/ԷԽՇԸՆԱՋ - *ած.* Փառահեղ, գեղեցիկ, հաճելի: *Մազէրըտ զառ նան խաս ա, ման կ՛ալըտ էխշընազ ա ...* (ԼՂՀ, 55):

ԻՇԿ՝ԱՐ - 1. *Յ.* Ցանկության՝ ըղձանքի բացականչություն՝ *երանի թե*: *Մըտուծ, իշկ՛ար մէր ջիհիլնէն սաղսըլմաթ կ՛ան կըռվան* (Բ): 2. *վ.* Գործածվում է հարցմանը կասկածանք հաղորդելու համար՝ արդյոք: Իշկ՛ար ըսօր թօռ կըկ՛ա՞ (Բ):

ԻՇՄԱՐ - *տե՛ս* ՆԸՇՄԱՐ:

ԻՇՇԱ՝(Հ) - *տե՛ս* ԸՇՇԱ՝(Հ):

ԻՇՏԱ՝Հ - *տե՛ս* ԸՇՏԱ՝Հ:

ԻՇՏԱՄ - *տե՛ս* ԸՇՏԱՄ:

ԻՇՏԸՀԱ՝ԼԻ - *տե՛ս* ԸՇՏԸՀԱ՝ԼԻ:

ԻՇՕԹՈՒՆ/ԻՇՕ՝ԹՈՒՆ- *գ.* 1. Էշ լինելը, էշի արարք: *Էտ մարթըն ասում ա . - Կօզի մարթ ըս տէռալ, համա իշօթունը էլլա մընացալ ա մաչիտ* (ԲՀԲ, 230): 2. *փխբ.* Հիմարություն, անհասկացողություն, անխելքություն, անտաշություն: *Ո՛ւրա՛ն իշութունէն դա՛ռդա՛ն շինըցէք՛ միշտ կըրակըն ին ըղնում* (Ջ):

- Իշօթուն անել - Հիմար՝ կոպիտ արարք թույլ տալ: *Էտ տըղան իշօթուն ա անում, հա՛ռը փիս կըզնըվում ա, տանան տո՛ւս քըցո՛ւմ* (Բ):

ԻՍ - *տե՛ս* ՅԸՍ:

ԻՍԿԱԿԱՆ *(գրբ. իսկական)* - *ած.* Իրական, բնական, ոչ կեղծ, ոչ շինծու, ճշմարիտ, անկեղծ: *...Էտ էրկու շէնին մաչին իսկական բըրիշօթուն ա ըստը՝ղծըվալ* (ՀԲ, 362):

ԻՍԿԱՊԷՍ *(գրբ. իսկապես)*- *մ.* Ստուգապես, իրոք: *Ք՛ընում ա, ք՛ընում, տէսնում՝ իսկապես, մին ղուշու պո՛ւն, մաչը ճօտեր,մարը կա վուչ* (ՀԱԲ,15, 26):

ԻՍԿԻ - *տե՛ս* ԸՍԿԻ:

ԻՍՊԱԹԼՈՒ - *ած.* Վստահելի, վստահություն ներշնչող: *Կ՛իզօղանց Լէվօնը իսպաթլու մարթ ա* (Բ):

ԻՍ/ԻՍՏԻ[1]- Գործածվում է կապակցությունների մեջ:

- Իստը նի կէնալ- Ջղայնանալ, զայրանալ: *Ղօրթ ա, Ղալին մին փարա մարթօց իստին նի ա կացալ, վէր քու կազէթըմը ո՛ւրանց թանին թըթօ ըմ ասալ...* (ՋՏ, Ա, 68):

- Իստը նի կըցընել - Ջղայնացնել, զայրացնել: *Էտ էրկունչի թըխէլավը օշափը տըղէն իստէրը լափ նի յա կըցընում* (Ձ):

ԻՍՏԱԿ *(գրբ. յստակ)* - 1. *ած.* Հստակ, մաքուր: *Իստակ ճուր ա* (Բ): 2. *տե՛ս* ԻՍԿԱՊԷՍ:

- Իստակ անել - *տե՛ս* ԻՍՏԱԿԷԼ:

ԻՍՏԱԿԷԼ *(գրբ. յստակեմ)* - *նբ.* Մաքրել: *Էվ՚ուլը յօր ա ունէս, էտ տօնը իստըկէս* (Ձ):

ԻՍՏԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԻՍՏԱԿԷԼ-ի

ԻՍՏԸԿՃԻՐԻԼ - *տե՛ս* ՊԸՐՋ՚ԸՃԻՐԻԼ:

ԻՍՏԸԿՃԻՐՎԻԼ - *տե՛ս* ՊԸՐՋ՚ԸՃԻՐՎԻԼ :

ԻՍՏԸՔԸԹՕԼ - *տե՛ս* ԻՍ:

ԻՍՏԻ[1] - *տե՛ս* ԻՍ:

ԻՍՏԻ[2] - *տե՛ս* ԸՍՏԻ:

ԻՍՏԻԲՈՒՋԱՂ - *տե՛ս* ՏԸԺՕԽԿ: *Կընէգ՚ը ըջըղվըմ ա, ասըմ. - Չօռ ըմ ք՚ինըմ, ցավ ըմ ք՚ինըմ, իստիբուջաղըն ըմ ք՚ինըմ...* (ՀԺՀ, V, 522):

- Իստիբուջաղը նի կէնալ -*տե՛ս* Իստը նի կէնալ:

- Իստիբուջաղը նի կըցընել - *տե՛ս* Իստը նի կըցընէլ:

ԻՍՏԻՔԸԹՕԼ - *տե՛ս* ԻՍ:

ԻՎԻԼ/ԼՎԻԼ[1]/ԷՎԻԼ[2]/ԱՎԻԼԻ/ԻՎԻԼԻ *(գրբ. աւելի)*- *ած.* Ավել, առավել: *...Ք՚ինում ա էրկունչի օթախը, տը՛սնում ա ըտէղ էլ մին էլ իվիլ դ՚ՆՆՆգ՚ ախճիգ՚ նըստած* (ՀԺՀ, V, 270):

ԻՎԻԼԼՄԷՍ - *տե՛ս* ԸՎԻԼԼՄԷՍ:

ԻՎԻԼԼՆԱԼ - *տե՛ս* ԸՎԻԼԼՆԱԼ:

ԻՎԻԼԻ - *տե՛ս* ԻՎԻԼ:

ԻՎԻԼՆՕՐԹ - *տե՛ս* ԸՎԻԼՆՕՐԹ:

ԻՎԻԼ - ՊԱԿԱՍ - *գ.* Թերություն, պակասություն: *Պիրում ա տանը իվիլ-պակասը դ՚ուզըցընում, տըղէն փըսակում, տինում մաչին* (Ձ):

- Իվիլ-պակասը նէրէլ- Ավելորդ ասածը՝ արածը ներել, ներողամիտ լինել: *Պարսէղը դունաղէն հըղէ յա տինում, համ էլ թա.- Իվիլ-պակասը կընէ՚ռիս* (Ձ):

- Իվիլ-պակաս խօսէլ/տ՚ուս տալ - Տեղի-անտեղի՝ ափեղցիեղ խոսել: *Էտ մարթին տանըմ չըն հըրսանէք՚, ընդրա հը՛տէ, վէր էզգանան հ՚ՆՆՆրփ՚ում ա, իվիլ-պակաս խօսում* (Ձ):

ԻՎԻԼՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՎԻԼՑ(Ը)ՆԷԼ:

ԻՎԻԼՈՒԿ - *տե՛ս* ԸՎԻԼՈՒԿ:

ԻՎԻՐԱԿ - *տե՛ս* ԸՎԷՐԱԿ:

ԻՎԻՐԻ - *տե՛ս* ՎԻՐԻ(ՆԻ):

ԻՎԻՐԻԼ - *տե՛ս* ԸՎԻՐԻԼ:

ԻՏԻ - *տե՛ս* ԸՏԻ:

ԻՏԻՅՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՏԻՅՕԹՈՒՆ:

ԻՐ - Էական բայի սահմանական եղանակի անցյալի անկատարի եզակի երկրորդ դեմքի ձեւը: *Կընէգ՚ը թա.- էն օրը, վէր տու ք՚ՆՆՆում իր ծըմակը, էտ խուրջինը տարալ ըս* (Ձ):

ԻՐԱՆ - *գ.* Իրանի Իսլամական Հանրապետությունը:

- Իրանա շահը - 1. Շատ հարուստ՝ ունեւոր: *Փուլը ըշտըղա տա՞մ, Իրանա շահըն ը՞մ* (Բ): 2. Արտոնյան, ինքնիշխան: *Խէ տու Իրանա շահըն ը՞ս, վէր առանց հըրցընէլի բաղը քաղում ըս* (Ձ):

ԻՐԱՎՈՒՆՔ/ԸՐԱՎՈՒՆՔ *(գրբ. իրաւունք)*- *գ.* Պաշտոնական թույլտվություն՝ արտոնություն: *Էն վախտը մէզ իրավունք չի իլալ, վէր ծըմական փ՚ՆՆՆդ պիրինք՚* (Ձ):

- Իրավունք տալ - Թույլ տալ, արտոնել, թույլատրել: *Թաքավէրը իրավունք ա տամ էտ պուճուր տըղին, վը՛էր հինչ օգըմ ա, անի...* (ՀԺՀ, V, 26):

ԻՐԱՆ - *տե՛ս* ՆԻՐՆԻՐ:

ԻՐԳ՚Ի - *տե՛ս* ՅԸՐԿԷ:

ԻՐԳ՚ԻԾ (Տ) -*տե՛ս* ԻԼԳ՚ԻԾ(Տ):

ԻՐԳ՚ՆԻՆԱԾ - *տե՛ս* ԸՐԸՎԳ՚ՆԻՆԱԾ:

ԻՐՋԷՅԻ - *գ.* Ուրախ պարեղանակ: *Ախըր հինչ սըրտա՞վ նըստիմ իրզէյի ածիմ, նանամ-սանամ խանըմնէրին պար ածիմ...* (ՋՏ,Բ,45):

ԻՐԷՆԱԿ - *տե՛ս* ԸՐԷՆԱԿ:

ԻՐԷՍ - *տե՛ս* ԻՐԸ՚Ս:

ԻՐԷՍԱՆ - *տե՛ս* ԻՐԸ՚ՍԱՆ:

ԻՐԷՍԱՆՑ -*տե՛ս* ԻՐԸ՚ՍԱՆՑ:

ԻՐԷՍ(Ս)ՈՒՆ - *տե՛ս* ՅԷՐԷՍ(Ս)ՈՒՆ:

ԻՐԷՍՔԱԾ(Ի)- *տե՛ս* ԻՐԸՍՔԱԾ(Ի):

ԻՐԷՐԱԼ - *տե՛ս* Ըլըվ-ալավ անել (ԱԼԱՎ-ի տակ):

ԻՐԷՓԷԼ - *տե՛ս* ԸՐԷՓԷԼ:

ԻՐԷՓ-ԻՐԷՓ - *տե՛ս* ԸՐԷՓ-ԻՐԷՓ:

ԻՐԷՔ - *տե՛ս* ԻՐԸ՚Ք:

ԻՐԷՔԱՆ - *տե՛ս* ԻՐԸ՚ՔԱՆ:

ԻՐԷՔԸՏԸԺԱՆԷ - *տե՛ս* ԻՐԸ՚ՔԸՏԸԺԱՆԷ:

ԻՐԷՔԻՆՋԻ - *տե՛ս* ԻՐԸ՚ՔԻՆՋԻ:

ԻՐԷՔՏԸՐԸՔԱՆԷ- *տե՛ս* ԻՐԸ՚ՔՏԸՐԸՔԱՆԷ:

ԻՐԷՔՓԻԾԿԱՆԷ - *տե՛ս* ԻՐԸ՚ՔՓԸԾԿԱՆԷ:

ԻՐԷՔՔԸԹԱՆԷ - *տե՛ս* ԻՐԸ՚ՔՔԸԹԱՆԷ:

ԻՐԸՋԱԽՆԱՓ - *տե՛ս* ԸՐԸՋԱԽՆԱՓ:

ԻՐԸՋԱԿԻՐ(Ք) - *տե՛ս* ԸՐԸՋԱԿԻՐ(Ք):

ԻՐԸՋԱԿՕԽ - *տե՛ս* ԸՐԸՋԱԿՕԽ:

ԻՐԸ՚Ս/ԻՐԷՍ *(գրբ. երես)* - *գ.* 1. Մարդու գլխի առջեւի կողմը, դեմք, կերպարանք: *Էտ կընէգ՚ը շալավը իրը՛սը ծասկում ա, շ՚ՆՆՆուտ ք՚ինամ, վէր դէրվիշը ճընՆՆՆչի վէջ ՆՆՆրան* (Ձ): 2. *տե՛ս* ԹՕԾ[1] (1): *Թաքավէրը էտ վէր ըսկանում ա, տըղէն իրը՛սէն սիլլա՛ յա տամ* (Ձ): 3. Ձգեստի՝ վերմակի՝ ծածկոցի եւն արտաքին կողմը: *Յուրդանէն իրը՛սը յըխտօտալ ա* (Բ): 4. Որոշ առարկաների դեպի դուրս ուղղված մակերեսը: *Մուտընէն իրէսը վըսկըճիրՆՆՆում ա, տամ Ն՚ՆՆՆրան* (Ձ): 5. Կտորի՝ գործվածքի նուրբ եւ ընտիր կողմը, որ կարելիս դարձվում է արտաքին մաս: *Էտ կըտօրէն իրը՛սը կ՚ՆՆՆրմՆՆՆուր ա* (Բ): 6. Մակերես, մակերեւույթ: *Էտ ծին վէր յըտանում ա, ծօվէն իրէսը սաղ սըվանում ա* (Ձ): 7. Թղթի էջ: *Մին քանի օրանը յէտը էտ ախճիգ՚ըն Ն՚ՆՆՆուրան կ՚իրքը կըրթիլիս մին քանի իրէս վը՛էր անց ա կէնում, «մարթ» պառը պըտահում ա* (ՀԺՀ, VII, 46): 8.Կաթի՝ մածունի եւն մակերեսին շերտ կազմած ճարպային նյութ, սեր, սերուցք: *Կաթնէն իրը՛սը քըսում ա հացը, տամ խուխէն* (Բ): 9. Որոշ իրերի վրա քաշած կտորը, երեսքաշ, շապիկ: *Պէրցին իրը՛սը վէր ա քաշՆՆՆում, լըվանում* (Բ): 10. *փխբ.* Իրավունք, վստահություն, համարձակություն: *Էտքանանըտ յը՛տը էտ կ՚օղը հինչ իրը՞սավ բիդի տՆՆՆուս կ՚ա մըրթամաչ* (Ձ): 11. Երաժշտական որոշ գործիքների վրա քաշվող բարակ կաշի կամ թաղանթ: *Տըմբըլէն իրը՛սը խօզ՚ու կաշի յա* (Բ): 12. *ած.* Ծանծաղ, ոչ խոր: *Կ՚ը՛տը ըտը՛ղ իրը՛ս ա ինՆՆՆում, մարթը էտ ըխճըկանը շըլՆՆՆկում ա, անց կէնում* (Ձ): 13. Գործածվում է իր հետ դրված հատկացուցիչի նշանակությամբ: *ՀՆՆՆը կըզնըվում ա տըղէն յըրա, թա.- էլ միհէնգ՚անց տէնը տու փուլու իրը՛ս չըս տըսնական* (Ձ):

- Իրը՛սա անց կէնալ - Մերժել: *Էտ տըղան կարում չի իրէսա անց կէնա, մըտկումըն ասում ա.- Փըսըկվըլական ըմ, տը՛սնամ վէրչը հինչ ա տը՛ռնում:* (ՀԺՀ, VII, 150):

- Իրը՛սա ըղնէլ - 1. Անուշադրության մատնվել, աչքաթող արվել: *Իրը՛սա ընգած բաղ ա, հու կարում ա, քաղում ա* (Բ): 2. Արհամարհվել, ատելի դառնալ: *Էտ կընէգ՚ը կ՚ուղօթուն ըրավ, մարթին իրը՛սան ընգավ* (Ձ): 3. Գեղեցկությունը կորցնել: *ՀՆՆՆուրի-մՆՆՆգ՚ ախճիգ՚ ար, միհէնգ՚ ա ըտի իրը՛սա ընգալ* (Բ):

- Իրը՛սան ՆՆՆրՆՆՆուն կաթէլ - Դեմքով առողջ՝ գեղեցիկ՝ կարմրերես լինել: *ԹՆՆՆզգՆՆՆ հարթնանը իրը՛սան ՆՆՆրՆՆՆուն ա կաթում* (Բ):

- Իրը՛սա անէլ - Համարձակվել, հանդգնել, իրեն բարոյական իրավունք վերապահել, ջամաչել, անհարմար չզգալ: *Արչը մըրթմըրթամ ա, յանի ք՚ի՝ էս հինչ անիրէս ընսան ա՞, վէր էնքանանը յէտը իրէս ա անում, կ՚ամ ծըմակը* (ԱԱ, 73):

- Իրըէսան ըշփիշկա թափ տաս, նի կըկէնա - Ասում են կարմրերես՝ առույգ մարդկանց մասին:

- Իրըէսան լՀուն վէր ըղնէ, հազզար թիքՀն կըտըէռնա - Ասում են շատ գոռոզ՝ ինքնահավան մարդկանց մասին:

- Իրըէսան լՀուս կաթէլ - Շատ գեղեցիկ ու սպիտակամորթ լինել: *Ախճիգ, հինչ ա՞խճիգ, իրըէսան լՀուս ա կաթում* (Ձ):

- Իրըէսան կախ ինիլ - Մեկին մի բան շատ խնդրելով՝ պահանջելով՝ հոգնեցնել, ձանձրացնել: *Նախագան ասում ա.- Բօլ ա, հիշքան իրըէսաս կախ ըս իլՀլ, քըէզ փուլ չօնիմ տալի* (Ձ):

- Իրըէսան կակօղ - Մեղմ բնավորություն ունեցող, մերժել չկարողացող: *Իրըէսան կակօղ կընէգ ա, հու հինչ օգում ա, տամ ա* (Բ):

- Իրըէսան կէնալ - 1. Վիճել, դիմադարձություն անել, կոպիտ պատասխաններ տալ, բողոքել: *Վայ ա, վէր մինը էտ ըխճըկանը մին պէն ա ասում, դՀստի իրըէսան ա կէնում* (Բ): 2. Ասվում է որպես մեղադրանք անդաստիարակ՝ աներես՝ անամոթ անձի ծնողի՝ դաստիարակողի հասցեին: *Խըրըտօղէտ իրըէսան կէնաս, էտ քՀօրփին խէ թակում ը՞ս* (Ձ):

- Իրըէսան պէնդ - Համառ, աներես, պնդաճակատ: *Իրըէսան պէնդ կընէգ ա, յա՛ ասած, յա՛ ըսէլու. Հուրան հըէտէ մին ա* (Բ):

- Իրըէսան վէր ըղնօղը քըռասսուն թիքՀն կըտըէռնա - Իրըէսան լՀուն վէր ըղնէ, հազզար թիքՀն կըտըէռնա:

- Իրըէսան տալ - 1. Մի բան մեկի երեսին զարկել՝ շպրտել: *Տըղան կըզնըվում ա, վըէսկէ ջամը հօրը իրըէսան տամ, քՀինում* (Ձ): 2. *անրգ.* Հետ վերադարձնել: *Տուված պարթկէն հըէտէ էնքան միննաթ ըրավ, տարէ իրըէսան տուվէ* (Բ):

- Իրըէսան օնջ վէր տըէռնալ - Խոժոռ՝ մռայլ տեսք ունենալ: *Ընդրրա քըշտէն հարթանը կըկէնա՞, իրըէսան օնջ ա վէր տըէռնում* (Բ):

- Իրըէս առնել - Շփանալ, լկստվել: *Իրըէս առած խօխա յա* (Բ):

- Իրըէսավը կՀալ/տալ - 1. Հանդիմանելու նպատակով շարունակ ակնարկել՝ հիշեցնել (մեկին արած լավությունը, մեկի կատարած վատ արարքը եւն: *Օխտը տարէ առաջ հիրըվանէն մին էծ ա տըվալ, ամմեն օր իրըէսավըն ա կՀամ* (Ձ): 2. Երեսին շփել (հեղուկը): *ԿՀինին ախպօրը իրըէսավըն ա տամ, տՀուս կՀամ* (Ձ):

- Իրըէսավը ճՀուր տալ - Թեթեւակի լվացվել: *Մէխակը իրըէսավը ճՀուր ա տամ, տՀուս կՀամ* (Բ):

- Իրըէսէն աբուռը վէր կՀալ - *տե՛ս* Աբուռը վէր կՀալ: 2. *տե՛ս* Իրըէսէն մէռունը վէր կՀալ:

- Իրըէսէն աբուռ ինիլ - Արժանապատվություն՝ ամոթի զգացում ունենալ: *Ընդրրա իրըէսէն վէր աբուռ ինի, մարթին թաղէլ չի, քըմակէն փըսակվէ* (Բ):

- Իրըէսէն ասէլ - Առանց քաշվելու՝ համարձակորեն՝ դեմ առ դեմ մեկին ուղղակի նրան վերաբերող քննադատական՝ նախատական խոսքեր ասել: *ՔՀինամ ա նախագէն կօշտը, լօխ իրըէսէն ասում* (Ձ):

- Իրըէսէն ըղնէլ - Աղաչել, խնդրել: *Էտ մարթը հիշկան իրըէսէն ա ըղնում, ամՀլ չի կՀամ, Մէլիքը աթկազ ա անում* (Ձ):

- Իրըէսէն թըքէլ - 1. Խիստ անպատվել, հանդիմանել, խայտառակել: *ՀՀրը տըղեն իրըէսէն թըքում ա, տանան տՀուս քըցՀում* (Ձ): 2. Խիստ արհամարհել: *Էտ պէնանը յըէտը լօխ իրըէսէն թըքում ըն* (Բ):

- Իրըէսէն թըքում ըս, ասում ա՝ հինչ լՀավ թօռ ա՞ կՀամ - Ասում են ինքնասիրություն՝ արժանապատվություն չունեցող մարդկանց մասին:

- Իրըէսէն խանչալ խըղըցընիս, աշկը ճըպէլ չի - Ասում են անվախ՝ աներկյուղ մարդկանց մասին:

- Իրէսէն խաչ անէլ/քաշիլ - *տե՛ս* Իրըէսէն խըչըհանէլ:

- Իրըէսէն խըչըհանել/խըչըկընքել - Երեսը խաչակնքել, խաչի նշան անել: *Ղօնաղը ղըզղանէն մուտանում ա, իրէսին խըչըհանում* (ՀԺՀ, VII, 169):

- Իրըէսէն ծըծաղել - 1. Կեղծավորել, շողոքորթել: *ՀՀուր տըէսնում ա, իրըէսէն ծըծաղում ա* (Բ): 2. Գեղեցիկ՝ ընտիր լինել, փայլել, փայլատակել: *Ղէրվիշը մին խընձօր ա տամ թաքավէրին, հինչ խընձՀ՞ր, լՀրհա իրըէսէտ ծըծաղում ա* (Ձ): 3. *տե՛ս* Իրըէս տալ: *Էնքան իրըէսէն ծըծաղալ ըն, լաի իրըէս ա առալ* (Բ): 4. Չարախնդալ, ծաղրել: *Էտ ախճիգը դունաղէն իրըէսէն ծըծաղում ա, ղօնաղը տՀուս ա կՀամ, քՀինամ* (Ձ):

- Իրըէսէն կակօղ յէշիլ - *տե՛ս* Իրըէս տալ:

- Իրըէսէն կաշին հաստ - *տե՛ս* Իրըէսը կՀումաշու կաշի:

- Իրըէսէն կաշին տըրըէխ շինիս, չըքէլանը Բաղդադ քՀինիս, մաշիլ չի - Ասում են շատ անամոթ՝ անպատկառ մարդկանց մասին:

- Իրըէսէն կՀարմՀուրը վէր կՀալ - Ջահելությունը՝ առույգությունը տեղի տալ: *Իրըէսէն կՀարմՀուրը վէր ա յըէկալ, էլ առաչվա Նախշունը չի* (Բ):

- Իրըէսեն կՀիրիլ - Ապտակել: *Վէր իրըէսէն մին էրկու հըէտ կՀիրըցէն, վիզավ կալՀավ, վէր ինքՀը ա ըրալ* (Բ):

- Իրըէսէն համօթը վէր կՀալ/քՀինիլ - *տե՛ս* Իրըէսէն մէռունը վէր կՀալ:

- Իրըէսէն ճըխէվլՀավ թըխէլ - *տե՛ս* Իրըէսէն թըքէլ:

- Իրըէսէն ճիրՀավը - Առանց ձեռք տալու, այնպես, ինչպես եղել է: *Փուլըն էլ խըրջիս չի, իրէսէն ճիրՀավը ծիլիս ա, տինիս ջըբումը, շէնը կՀաս* (ՀԺՀ, V, 258):

- Իրըէսէն ճՀուրը վէր կՀալ/քՀինիլ -1. *տե՛ս* Աբուռը վէր կՀալ: 2. *տե՛ս* Իրըէսէն մէռունը վէր կՀալ:

- Իրըէսէն մաղ օնէլ - Ամաչել, քաշվել: *Էտ հարթանը իրըէսէն մաղ կՀլՀած ա ըսկէսվօրը քըշտէն կօրծ անում* (Բ):

- Իրըէսէն մէռունը վէր կՀալ/քՀինիլ - Ամոթը կորցնել, աներես՝ անամոթ դառնալ, չպատկառել: *Ընդրրա իրըէսէն մէռունը կընօխէ յա վէր յըէկալ, աբուռ-հայա չօնէ* (Բ):

- Իրըէսէն մէռուն չինիլ - Անամոթ՝ աներես՝ լպիրշ լինել: *Կընգանը իրըէսէն վէր մէռուն չիլՀավ, մարթին տօնը կըքՀնդրվի* (Բ):

- Իրըէսէն մին ՀանգՀունը զընդան շինիլ, մինը՝ կըրակ - Բոլորովին չամաչել, աներեսաբար մի բան խնդրել՝ պահանջել: *ԼՀչՀառ կընէգ ա, իրըէսէն մին ՀանգՀունը զընդան ա շինՀլ, մինը՝ կըրակ, սաղ օրը ըստՀուր-ընդՀուր անա պէն ա օգում* (Բ):

- Իրըէսէն մին հափուռ կօրէկ կըտըղըվարվէ - Ասում են անհարթ՝ չեչոտ դեմքով մարդկանց մասին:

- Իրըէսէն մին հափուռ վըէդ քըցՀող ինիլ - Ջավակ՝ հարազատ ունենալ, մեռնելուց հետո իրեն հուղարկավորող ունենալ (հաճախ գործածվում է ժխտական ձեւով): *Խըէդեը մըէռավ, իրըէսէն մին հափուռ վըէդ քըցՀող չիլՀավ* (Բ):

- Իրըէսէն յէշիլ - 1. Ապրուստը մեկից ակնկալել, մեկից ակնկալիք ունենալ: *Վազգէնը կօրծ չի անում, սաղ օրը էն ա ախպօրը իրըէսէն յիշիյիս* (Բ): 2. Ուշադրության արժանացնել, բանի տեղ դնել (հաճախ գործածվում է հարցական եւ ժխտական ձեւերով): *Շէնըմը վէշ մինը Իսակէն իրըէսէն յէշում չի* (Բ): 3. Մեկի առաջ պարզերես լինել, պարտավորությունը՝ պարտքը՝ հանձնարարությունը կատարած լինել (հաճախ գործածվում է հարցական եւ ժխտական ձեւերով): *Տա մըտածըմ ա, թա հունց քՀինի Հուրան հօրը իրէսէն յէշի, համութ ա...* (ՀԺՀ, V, 17):

- Իրըէսէն յէշվում չի - Շատ տգեղ է: *...Պէրած ըխճըկէքը կՀէշ ըն ընում, իրըսնէրէն յէշվում չի* (ՀԺՀ, V, 495):

- Իրըէսէն յղղըծու անիս, օտվէլ չի- *տեմ* Իրըէսէն յէշվում չի:

- Իրըէսէն յըրա վէր ընգած - Բարձիթողի վիճակում գտնվող, անուշադրության մատնված: *Իրըէսէն յըրա վէր ընգած տափ ա, մինը կա վէջ, թա բիջուրի* (Բ):

- Իրըէսէն ցանքավ թըխէլ - *տեմ* Իրըէսէն թըքել:

- Իրըէսէն փանդանն ճըղվէլ - 1. *տեմ* Իրըէսէն մեռունը վէր կանալ: 2. Բուն էությունը բացահայտվել: *Անց ա կէնում մին տարէ, կընգանը իրըէսէն փանդանն ճըղվում ա, մարթը կըլօխ ա ըղնում, թա տա հինչ տիպ ա* (2):

- Իրըէսէն փանդան շինիլ - 1. Մեկին միջնորդ՝ բարեխոս դարձնել որեւէ գործ գլուխ բերելու համար: *Հանրաբէդը ախպօրը տըղէն իրըէսէն փանդան շինից, քըցավ սուդին կոշտը* (Ձ): 2. Առիթ՝ պատրվակ բռնել: *Մուքին կացէնը սըրէլը իրըէսէն փանդան յա շինում, քինամ Միխայիլին տօնը, արաղ խըմում* (Ձ):

- Իրըէսէն փանդան չինիլ- *տեմ* Իրըէսէն մէռուն չինիլ:

- Իրըէսէն փըլավ ը՞նք ուտըլական - *տեմ* Իրըէսէն փըլավ չընք ուտըլական:

- Իրըէսէն փըլավ կօտվէ - Շատ գեղեցիկ է: *Ախճիգ ըմ ասալ է՛, իրըէսէն փըլավ կօտվէ* (Բ):

- Իրըէսէն փըլավ չընք ուտըլական- Արտաքին գեղեցկությունը կարեւոր չէ: *Թանզգան հարթնը շատ ա դաշանգ, ամհա իրըէսէն փըլավ չընք ուտըլական, տու ասէ նըմուսավ ինի* (Ձ):

- Իրըէսէն փըրթուշ կօտվէ - *տեմ* Իրըէսէն փըլավ կօտվէ:

Իրըէսէն օնէլ - 1. Երեսին՝ դեմքին մոտեցնել: *Իմ հօր ծէռքէն մին փէտ կար, իրէսին կալավ, նըշան տիրանվ...* (ԼՂԲՔ, 26): 2. Մեկին այցելության՝ տեսության գնալիս որեւէ նվեր վերցնել՝ տանել: *Ասում ըն, Հէղուշը էն ա ազառու, մին պէն չի կա, թա իրըէսէս օնիմ, քինիմ զիրանվ ընցընիմ* (Բ):

- Իրըէսը բիզվիլ - Խիստ նիհարել, հյուծվել, տկարանալ: *Էնքան կօրծ ա ըրալ, իրըէսը բիզվանլ ա* (Բ):

- Իրըէսը բիզվիլ, ղէյնու մընչանք տըէռնալ - *տեմ* Իրըէսը բիզվիլ:

- Իրըէսը դընղլարու կաշի - *տեմ* Իրըէսը կումաշու կաշի:

- Իրըէսը ըստառան կըտ(ը)ռած - Անամոթ, լպիրշ, անպատկառ, լկտի: *Իրըէսը ըստառան կըտրրած կընգանը ճար չինիլ* (Ձ):

- Իրըէսը թալաթինու կաշի - *տեմ* Իրըէսը կումաշու կաշի:

- Իրըէսը թըթված - Խոժոռադեմ, մռայլ, անտրամադիր: *Իրըէսը թըթված մարթ ա* (Բ):

- Իրըէսը թըթվըցընէլ- Խոժոռվել, մռայլվել, անտրամադիր դառնալ: *Թաքավէրը էտ վէր ըսկանում ա, իրըէսը թըթվըցընում ա* (Ձ):

- Իրըէսը թըքըմօր կանալ - Նախատվել, հանդիմանվել: *Էնքան իրըէսը թըքըմօր ա յըէկալ, էլիա յըէխնըվալ չի* (Բ):

- Իրըէսը իրըէսան կըհըմա(ն)չի - Երես առ երես՝ դեմ առ դեմ դժվար է մեկի խնդրանքը մերժել կամ մեկին վատ բան ասել: *Իրըէսը իրըէսան կըհըմանչի, էնքանէն մաչին մուտացավ փուլ օգից, էտ մարթը ճարը կըտըրած տըվավ* (Բ):

- Իրըէսը լըպըզտած - 1. *տեմ* Իրըէսը ըստառան կըտրրած: 2. Ողորկ՝ հարթ դեմք ունեցող: *Իրըէսը լըպըզտած ախճիգ ա* (Բ):

- Իրըէսը խըչըհանէլ/խըչըկընքէլ - *տեմ* Իրըէսէն խըչըհանէլ:

- Իրըէսը խօսկ կանալ - *տեմ* Իրըէսը թըքըմօր կանալ:

- Իրըէսը ծաղկէլ - Վրան բորբոսի փառ կապել, բորբոսնել (հացի, գաթայի եւն մասին): *Հացէն իրըէսը ծաղկում ա, տամ ըն շանը* (Ձ):

- Իրըէս(ը) ծըռէլ - 1. *տեմ* Իրըէսէն ըղնէլ: 2. *տեմ* Իրըէսէն ծըծաղէլ (1):

- Իրըէսը կակօղ- *տեմ* Իրըէսան կակօղ:

- Իրըէսը կըտըրէլ - *տեմ* Իրըէս անէլ:

- Իրըէսը կըրկատած - *տեմ* Իրըէսը կումաշու կաշի:

- Իրըէսը կիրմիրիլ - Անհարմար զգալ, ամաչել: *Ադանթ ա, պատրօնը վէր խօսէ, հարթնը իրըէսը կըկիրմիրի, միհէնգվա հարթնէրը ըսկի ջըլաման չընը տամ, թա պատրօնը մին պէն խօսէ* (Ձ):

- Իրըէսը կիրմիրցընէլ - Անհարմար վիճակի մեջ գցել, ամաչել տալ: *Ուրանը ըրած կուղթունավը սաղ տընընցուց իրըէսը կիրմիրցըրավ* (Բ):

- Իրըէսը կումաշու կաշի - Շատ անամոթ՝ աներես՝ անպատկառ: *Ըտըրա իրըէսը կումաշու կաշի յա, էնքան թըքըթօհմանթ ըն ըրալ, էլիա օքութ չի* (Բ):

- Իրըէսը կումաշու կաշի շինիլ - Անամոթություն՝ աներեսություն անել: *Իրըէսը կումաշու կաշի յա շինանլ, հըրըվընէրան փուլ հըվաքալ, տըղէն հըտէ հըրսանէք ըրալ* (Բ):

- Իրըէսը կումաշու օս - Կեղտոտ, կեղտոտված: *Իրըէսը կումաշու օս մարթ ա* (Ձ):

- Իրըէսը ճըպըռէլ/ճըպըռօտէլ/վէր ճըպըռէլ - *տեմ* Իրըէսը պուք տալ:

- Իրըէսը մաշկան կարած - *տեմ* Իրըէսը ըստառան կըտրրած:

- Իրըէսը մօր շինիլ - Խայտառակել, անպատվել: *Էտ ախճիգը մօրը իրըէսը մօր շինից* (Ձ):

- Իրըէսը յըէխնըվել - Որեւէ բանի՝ վատ արարքի համար տուժելով՝ դաս առնել, խրատվել, այլեւս չկրկնել (հատկապես գործածվում է ժխտական ձեւով): *Կուղթունէն հըէտէ հէնգ տարէ տանրմանն յա նըստալ, էլլա իրըէսը յըէխնըվալ չի, նօրիցան ա կուղթուն ըրալ, փըռնալ ըն* (Բ):

- Իրըէսը յըէր օնէլ- *տեմ* Իրըէս անէլ:

- Իրըէսը յղղըծու - Գեղեցիկ: *Իրըէսը յղղըծու ախճիգ ա Ծօվիկը* (Ձ):

- Իրըէսը յըրա - Անխառն, անարատ: *Իրըէսը յըրա արաղ միհէնգ տիժէր կըքըթէնաս* (Բ):

-Իրըէսը յըրա օնէլ - Մեկին ապավինել: *Հէղան աքէրը պըռավալ ա, մին պարիկամ էլ չօնէ, թա իրըէսը յըրա օնէ* (Բ):

- Իրըէսընն ի յըէր ինիլ - *տեմ* Իրըէսը տանուս կալ: *Նօքանը թա - Պա հունց չի՞ լանց ինիմ, վէր էտ անվանլ սըփաթըտ օրը հանրանը հըէտ իրըէսըս ի յըէր ա ինում* (ԱԱ, 77):

- Իրըէսընն ի յըէր խաղ անէլ - 1. *տեմ* Իրըէսէն ծըծաղէլ (2): 2. Արգանդում գտնվող մանկան շարժվելը մեկի ներկայությամբ (հավատում էին, որ այդ դեպքում մանուկը նմանվելու է այդ անձին): *Դէրվիշը վէր նի յա մընէս, էտ հարթնանը խօխան փօրումը իրըէսընն ի յըէր խաղ ա ընէս, պառավը ասմա. - Քուռանամ յըէս, թօռնըս դէրվիշ ա տըռլական* (2):

- Իրըէսընն ի յըէր խօսէլ - *տեմ* Իրըէսէն խօսէլ: ...*Մարը սաղ օրը իրըէսընն ի յըէր խօսում ա, թա. - Խէ չը՞ս փըսակվում* (ՀԺՀ, VII, 77):

- Իրըէսը շան կաշի - *տեմ* Իրըէսը կումաշու կաշի:

- Իրըէսը շան կաշի- *տեմ* Իրըէսը կումաշու կաշի:

- Իրըէսը շինիլ թուրնում կիրմիրանծ վըէռու թօշէր - 1. Առույգանալ, կարմրերես դառնալ: *Սումբաթը հանրփից, իրըէսը շինից թուրնում կիրմիրանծ վըէռու թօշէր:* 2. *տեմ* Իրըէսը կիրմիրիլ:

- Իրըէսը շօռ տալ - 1. Երես դարձնել՝ հարաբերությունները խզել, լքել: *Ախճիգը քինանմ ա էտ տըղէն կօշտը, հանը, մարը, քուվերքը լօխ իրըէս ըն շօռ տամ...* (ՀԺՀ, VII, 90): 2. Խռովել: *Բախտը ինձանա իրըէս ա շօռ տըվալ* (Ձ):

- Իրըէսը չըտըէսնալ - Աչքին չերեւալ, այլեւս չհանդիպել, մի բան կամ մեկին բոլորովին չտեսնել: *Էտ մարթը հինչ ա՞նէ հէնգ տարէ յա՝ տըղէն իրըէսը տըէսալ չի* (Ձ):

- Իրըէսը պառօշ - *տեմ* Իրըէսը կ'ումաշու կաշի:

- Իրըէսը պարզ' - Գործը պատվով կատարած՝ ազնիվ, պարզերես: *Իրըէսը պարզ' մարթ ա* (Ձ):

- Իրըէսը պարզ' անէլ - Մեկի հույսերը արդարացնել, ամոթով չթողնել, իրեն լավ դրսեւորել: *Թանգա հարթնը հօրը-մօրը իրըէսը պարզ' ըրավ* (Ձ):

- Իրըէսը պարզ'վիլ - 1. Հեղուկ նյութի երեսի շերտը մաքրվել, նստվածքը ցած իջնել: *Կինուն իրըէսը վէր պարզ'վում ա, բիդի քամիս, հանցու թըթվէ վէչ* (Բ): 2. Ջվարթանալ, տրամադրությունը բարձրանալ: *Կանփին վէր արաղը տըէսավ, իրըէսը պարզ'վից* (Ձ):

- Իրըէսը պէնդ - *տեմ* Իրըէսան պէնդ:

- Իրըէսը պէց - 1. *տեմ* Իրըէսը պարզ': 2. Համարձակ, հպարտ: *Իրըէսը պէց շօռ ա կ'ամ, ընդըրա հըէտէ, վէր տըղան հէրօս ա* (Ձ):

- Իրըէսը պընդըցընէլ - Առանց ամաչելու՝ աներեսաբար՝ համառորեն որեւէ բան խնդրել՝ պահանջել: *Իրըէսը պինդըցըրավ, կօրծի նի մըտավ* (Ձ):

- Իրըէսը պըռօզու տեփ - Լիքը՝ հպարտ՝ չաղ երես ունեցող: *Իրըէսը պըռօզու տեփ ա, էն հինչ ա՞, վէր օգ'իմ* (Ձ):

- Իրըէսը պըտատած օգ'իլ - Ամաչելով՝ քաշվելով որեւէ բան խնդրել: *Ինրանն կըռքէն յըէխտավը յօլլա ք'ինօղ մարթ ա Հայասէրը, վէր մինին անա էլ մին պէն ա օգ'ում, իրըէսը պըտատած ա օգ'ում* (Ձ):

- Իրըէսը պիրանան հըմանչիլ - Ագահաբար՝ աներեսաբար ուտել, շատ ուտել: *Էտ ղօնաղը հանց օտում ար, իրըէսը պիրանան հըմանչում ար* (Ձ):

- Իրըէսը պըրթըճիրանվ լըվացած - Լիրբ, լկտի, անպատկառ, անամոթ: *Իրըէսը պըրթըճիրանվ լըվացած կընէգ' ա, ըտրանա պըրծումը չինիլ* (Բ):

- Իրըէսը պանլօր(վ)էլ - Երեսը լիքը դառնալ, չաղանալ: *Մանշվանծ ախճիգ' ա իլանլ, միհէնգ' ա իրըէսը պանլօրվալ* (Բ):

- Իրըէսը պուք տալ - 1. Խիստ հանդիմանել, նախատել, անպատվել: *Հարթնըն էլ, վէր քըշէրավ յըէտէ ար յըէր կէնում, էտ կընէգ'ը իրըէսը պուք ար տամ* (Ձ): 2. Մեկին անամոթաբար, համառորեն ինչ-որ բան խնդրելով, պահանջելով՝ ձանձրացնել: *Էնքան տանք'ուրը իրըէսը պուք տըվավ, մինչըէվ վէր էտ բօստանը յըէր կանլանվ* (Բ):

- Իրըէսը սըէվ - *տեմ* ՍԸՎԻՐԸԷՍ:

- Իրըէսը սըվանալ - *տեմ* Սըվիրըէս մընալ:

- Իրըէսը սըվըցընէլ - 1. *տեմ* Սըվիրըէս անէլ: 2. *տեմ* Իրըէսը պընդըցընէլ:

- Իրըէսըս վըէնանընտ տակը - Մեկին (հատկապես սրբերին) մի բան թախանձագին խնդրելու՝ աղերսելու բանաձեւ: ...*Ասում ա.- Մ սօրփ, իրըէսըս վըէտանընտ տակը, հանց ըրա՛, տըղաս կըռվան սաղսըլմաթ կ'ան* (Ձ):

- Իրըէս ըս տամ, աստառ ա օգ'ում - Ասում են նրա մասին, ով, լավ վերաբերմունքից երես առնելով, ավելին է պահանջում:

- Իրըէսը վըէռան կարած - *տեմ* Իրըէսը ըստառան կըտըրած:

- Իրըէսը տափէն թօղնէլ - Մենակ՝ անտեր թողնել: *Մարը հիշքան դաչանքպըղատանք ա անում, վըէր տըղան ինրանն մէնակ, իրըէսը տափէն չըթօղնէ, անջուկ չի օնում*... (ՀԺՀ, VII, 3):

- Իրըէսը տափերը քըսէլ - Ստորանալ, ամեն միջոցի դիմել որեւէ գործ գլուխ բերելու՝ ապրուստի միջոցներ հայթայթելու համար: *Իրըէսը տափերը քըսէլավ էտ կընէգ'ը խօխէնք'ը պահում ա, մընծըցընում* (Ձ):

- Իրըէսը տէմ անէլ/տալ - *տեմ* Իրըէսը պընդըցընէլ:

- Իրըէսը(տ) կարիմ/կընրկընրօտիմ/ մընթընսընէղիմ/ շընմբիմ - Անեծքի՝ խիստ հանդիմանության արտահայտություն: *Իրըէսըտ կարիմ, խուխէս խէ թակալ ը՞ս* (Բ):

- Իրըէսը տանուս կ'անլ - Մեկի՝ մի բանիդեմը ելնել, դեմ առ դեմ հանդիպել: *Ախպէրընն ասում ա.- Յէս հըմանչում ըմ մընէլ Մեծ Նըհըտակէն իրէսը տանուս կ'ամ, մըհէնգ էլ տանու ք'ընի* (ՆԱԲ, 83):

- Իրըէսը ցընմաքէլ - *տեմ* Իրըէսը բիգվիլ:

- Իրըէսը ցօրտ - Ոչ բարյացակամ, կոպիտ, խստաբարո: *Նախագան, վէր իրըէսը ցօրտ չիլանվ, կալխօզը կընքանդվի* (Բ):

- Իրըէսը փափուկ - *տեմ* Իրըէսան կակօղ:

- Իրըէսը փընռնէլ - *տեմ* Իրըէս անէլ

- Իրըէսը քաշ կընտկօտած - Անհարթ՝ չեչոտ դեմք ունեցող: *Հընմբալաց Սանք'իսը աշխարքըս շօռ ա յըէկալ, մին իրըէսը քաշ կընտկօտած ախճիգ' օգ'ալ* (Բ):

- Իրըէսը քաշիլ - 1. Կաթի՝ մածունի եւն երեսի մասի յուղային նյութը՝ սերը վերցնել: *Կաթնեն իրըէսը ամմէն օր քաշանում ըն, թուփ անում, խընը'ցէ հարըմ* (Ձ): 2. Որեւէ բանի ընտիր մասը հավաքել: *Նի յընն մընանում բօստանը, իրըէսը քաշանում, տանում* (Ձ):

- Իրըէս ինիլ - *տեմ* Իրըսատէդ ինիլ:

- Իրըէս-իրըէս անէլ/ինիլ - Խոսքով հակառակվել, վիճել: *Մընծ ախպէրը օգըմ չար, վէր թաքավէրին տըղան օշափնէրին տընսնա, իրըէս-իրըէս ինի*... (ՀԺՀ, V, 202):

- Իրըէս իրըէսու - *տեմ* ՏԷՄԱՏԷՄ:

- Իրըէս իրըէսու ասէլ - *տեմ* Իրըէսէն ասէլ:

- Իրըէս հանէլ - *տեմ* Ճիրին իրըէսը տանուս օնէլ (ՃԻՐ-ի տակ):

- Իրըէս յըէր օնէլ - *տեմ* Իրըէս առնէլ:

- Իրըէս պահէլ - Չթրաշվել, միրուք թողնել: *Առաչ վէր մարթ ար մընռնում, մինչըէվ քընռասունքը տալը շէնին տըղըմարթիք'ը իրըէս ին պահում* (Ձ):

- Իրըէս տալ - Մեկին շատ սիրելով՝ հովանավորելով՝ քմահաճույքները կատարելով՝ հանդուգն դարձնել, շփացնել, կամակոր դարձնել: *Էտ ըխճըկանը հանը էնքան իրըէս ա տըվալ, էլ վէշ մինին անգուճ չօնում* (Բ):

- Իրըէս տինիլ - *տեմ* Իրըէսը պընդըցընէլ:

- Իրըէսու ճանւր/մէռուն - *տեմ* ԱԲՈՒՌ:

- Իրըէս փընռնէլ - Կաթի՝ մածունի ւն երեսին ճարպային շերտ՝ սերուցք առաջանալ: *Կաթնը իփանում ըն, պատառ պահում, իրըէս ա փընռնում* (Ձ):

- Իրըէս քընցիլ - 1. Բարեկամաբար մեկին խնդրել՝ պարտադրել մի բան անելու: *Իրըէս քընցանվ, հընրաքվէրը մարթին անա էրկու չուվալ ցօրէն ինք' կալանվ* (Բ): 2. Ակնարկելով խնդիրքը հիշեցնել: *Գեղամը ամմէն դօնանում իրըէս ար քընցանում, ամմա ախպէրը մընհալ չար տինանում* (Ձ):

ԻՐԸԷՍԱՆ/ԻՐԷՍԱՆ - *ած.* Համարյա լիքը, մի քիչ պակաս լցրած: *Մին իրըէսան վէդրա ճանւր ա ինանում ընտէդ, էտ տըղան կընլխէն ա քաշանում, լօխ խընմում* (Ձ): 2. *տեմ* ԻՐԸՍԸՀԱՆ: 3. *կ.* Պատճառով: *Մարթին իրըէսան էտ կընէգ'ը տանան տանուս չի կ'աս* (Բ):

- Իրըէսան անէլ - Լրիվ՝ լիքը չլցնել, մի քիչ տեղ թողնել: *Գանլանը ածում ա ճուվարանը, իրըէսան անում, շընլակում, ք'ինամ* (Ձ):

ԻՐԸԷՍԱՆՑ/ԻՐԷՍԱՆՑ - *տեմ* ԻՐԸՍԸՀԱՆ:

ԻՐԸԷՎԱՎ - *տեմ* ԸՐԷՎԱՎ:

ԻՐԸԷՔ/ԻՐԷՔ *(գրբ. երեք)* - *1. բ.* Երկուսին հաջորդող թիվը՝ երեք: *Յընգ' ինք'ան իրէք խնձօր ա վէր ընդնում, մինը պընտմօղէն, էրկուսընն էլ լընսօղնէրէն* (ՆԱԲ, II, 27): 2. *գ.* Բավարար գնահատական: *Խօխան տանը իրըէք ա ըստանում, մարը իրըէսէն խօսում ա* (Բ):

- Իրըէք քընսան - *տեմ* ՎԱՑ(Ց)ՈՒՆ:

ԻՐԸԷՔԱՆ/ԻՐԷՔԱՆ *(գրբ. երեքեան)*- *բ.* Երեքն էլ, բոլոր երեքը միասին: *Իրըէքան փընսակվում ըն, էտ տանը ապրում* (Ձ):

ԻՐԸԷՔԸՏԸԺԱՆԷ/ԻՐԷՔԸՏԸԺԱՆԷ - *ած.* Երեք հարկ ունեցող, եռահարկ: *Միհէնգ' իրըէքընտրժանէ տընէր շատ ըն շինում* (Ձ):

- Իրը՝քըտրժանէ ուշունց - *տե՛ս* Օխտըըտրժանէ ուշունց: *Սառան մին լա՛վ իրը՝քըտրժանէ ուշունց ա տամ, ինքը՛ նի մընում օթաղը, տոռնը կապում* (Ձ):

ԻՐԸ՝ՔԻՆՋԻ/ԻՐԸ՝ՔՅԻՆՋԻ/ԻՐԷՔԻՆՋԻ - *դ.* Երկրորդին հաջորդող դասական թվականը՝ երրորդ: *Թաքավէրին տըղան պիցըրանում ա իրը՝քինջի ծառը, ճըղնէրէն դաթումը կ՚օղլու կէնում* (Ձ):

ԻՐԸ՝ՔՅԻՆՋԻ - *տե՛ս* ԻՐԸ՝ՔԻՆՋԻ:

ԻՐԸ՝ՔՏԸՐԸՔԱՆԷ/ԻՐԷՔՏԸՐԸՔԱՆԷ - *ած.* Երեքհարվածանի՝ որով միաժամանակ կարելի է երեք կրակոց կատարել: *Էտ բէյնամուս տըղան հօրը իրը՝քտըրըքանէն էլ ա ծախալ* (Բ):

ԻՐԸ՝ՔՓԸՇԿԱՆԷ/ԻՐԷՔՓԻՇԿԱՆԷ - *ած.* Երեք փեշ՝ քղանցք ունեցող: *Այան էզգա՛նա՛ն իրը՝քփըշկանէ շո՛ռընը ար կ՚ը՝նում:* 2. *գ.* Երեք փեշ՝ քղանցք ունեցող երկար հագուստ, որ դարաբաղցի կանայք համատարած կրում էին մինչեւ 20-րդ դարի կեսերը: *Էլ իրը՝քփըշկանէ կ՚ը՝նօղ չի կա, անդար անիմ ըստի թիվը, միհէնգ՚վա պըռըվնեն էլ ըն շալվար կ՚ը՝նում* (Բ):

ԻՐԸ՝ՔԲԸԹԱՆԷ/ԻՐԷՔԲԸԹԱՆԷ- *գ., ած.* Տրեխի տեսակ, որը առջեւի մասում ունի երեք ծայր: *Բէգլար ա՛մին միշտ իրը՝քբըթանէ յար կ՚ը՝նում* (Ձ):

ԻՐԸՇԱՅԱՄ - *տե՛ս* ԽԸՆՁԸՐ(Ն)ԱՅԱՄ:

ԻՐԸՇԱՎԸ՝Տ- *տե՛ս* ԽԸՆՁԸՐ(Ն)ԱՎԸ՝Տ:

ԻՐԸՇԸՅԱՄԷԼ- *տե՛ս* ԽԸՆՁԸՐ(Ն)ԸՅԱՄԷԼ:

ԻՐԸՍԱԹԱՓ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իրըսաթափ տալ - Կրակի թեժ լինելու պատճառով թոնրի կողին կըպցրած հացի երեսը թափվել՝ ընկնել: *Թուրունը վէր շատ ա ինի՛մ թիժ, հացը իրըսաթափ ա տամ* (Բ):

ԻՐԸՍԱՃՈ՛ՒՐ - *տե՛ս* ԱԲՈՒՌ:

ԻՐԸՍԱՆՈՒՑ - *գ.* Ոսկիներով զարդարված շորի կտոր, որ կանայք կապում էին գլխներին՝ ճակատին՝ վզին: *Ոէ էն վախտը Շուշվա Ղալին նանամսանամ հարթները իրըսանուց էլ ըն իլա՛լ կըպէլիս* (Ձ):

ԻՐԸՍԱՊԷՆԴ - *ած.* 1. Վերեւի՝ մակերեսային մասը՝ պինդ, իսկ տակը՝ փխրուն (հողի՝ գետնի մասին): *Իրըսապէնդ ա, վախէլ մէ՛ր, քանդի* (Բ): 2. *տե՛ս* Իրը՝սան պէնդ:

ԻՐԸՍԱՊԷՑ - *ած., մ.* 1. Երեսը՝ դեմքը՝ արտաքին մակերեսը չծածկած: *Իրըսապէց կընէգ՚ չըն տը՝սնըմ Բըդդադա ք՚ուչէք՚ումը* (Ձ): 2. *տե՛ս* Իրը՝սը պէց:

ԻՐԸՍԱՍՏԱՌ - *գ.* Ձգեստի՝ վերմակի արտաքին՝ նուրբ ու ընտիր կողմը եւ տակի կողմից կարված կտորը՝ աստառը, միասին: *Էնքան կ՚ը՝ցալ ա, պինջակէն իրըսաստառը ճըրդոտվալ ա* (Բ):

- Իրըսաստառ անէլ - *տե՛ս* ՊԸՐՏԸՏՈ՛ՒՍԻԼ:

ԻՐԸՍԱՏԱՆ - *գ.* Տրեխի կապի այն մասը, որ ծածկում է ոտքի թաթի երեսը: *Իրըսատանը թո՛ւլ ա ինի՛մ, Ղա՛ւլգ՚ա՛նսին վը՝ենանա տըրը՝խը տո՛ւս ա կ՚ամ, մընում ցը՝խումը* (Ձ):

ԻՐԸՍԱՏԱ՛Ն - *ած.* Երեսի կողմը թեթեւակի տաշած: *Իրըսատա՛ն քարէրը շարում ըն, մընացածը ածում քամակը* (Բ):

- Իրըսատա՛ն տալ - Երեսի կողմը թեթեւակի տաշել: *Մին փա՛ռ ա յօր ունէս, իրըսատա՛ն տաս, ըստօլ շինիս* (Ձ):

ԻՐԸՍԱՏԸ՝Ղ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իրըսատը՝ղ ինիլ - Բարոյական իրավունք՝ համարձակություն ունենալ, դիմելու՝ խնդրելու տեղ ունենալ (հատկապես գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Վէրչը, էտ մարթիք՚ը հըսնըմ ըն տօն, էլ իրըսատէղ չի ընում, վար տանը խօսէն* (ՀԺՀ, V, 406):

ԻՐԸՍԱՐԱՆՔ - *տե՛ս* ԹԸՔԸԹՕՀՄԱ՛Թ: *Էտ մարթիք՚ըն էլ կըզնըվում ըն տըրա յիրա՛ն, իրըսարանք տամ...* (ՀԺՀ, VII, 304):

ԻՐԸՍԱՑՈՒ - *գ.* Կարվող առարկաների արտաքին կողմի՝ երեսի համար պիտանի՝ նախատեսված՝ գործածվող կտոր՝ կաշի: *Յուրղանէն հը՝տէ թա՛զգա՛ն իրըսացու վա ինք՚ կա՛լալ* (Բ):

ԻՐԸՍԱՔԱՇ - *տե՛ս* ԻՐԸՍՔԱՇ(Ի):

ԻՐԸՍԸՀԱՆ - *մ.* Ոչ խոր, մակերեսորեն: *Էտ վը՝ողը իրըսըհան քանդի՛մ ըն, էտ պէնէրը թաղում:* 2. Արտաքուստ, առերեւույթ, առերես: *Թաքավէրը կընգանը քըշտէն իրըսըհան նը՝շաս ա տաս, վէր վէշ մին պէնա խաբար չի* (Ձ):

- Իրըսըհան՝ հիլի, տըկըհան՝ ծիլի - Արտաքուստ բարի՝ անվնաս, ներքուստ չար՝ նենգ՝ վնասող: *Էչմիյածնա իրըսըհան՝ հիլի, տըկըհան՝ ծիլի վըրթըբէդնէն հըռնէ պէնը ընդէղ հըսցըրին, վը՝ր կըռը՝վ սարքէլ տըվին...* (ՋՏ, Բ, 37):

ԻՐԸՍԸՀԱՐ - *գ.* Խոնցին վերջում թեթեւակի հարելը՝ յուղի պատառները իրար միացնելու համար: *Խընը՝ցէն վէրչումը իրըսըհար բիդի անիս, վէր յը՝ողը հըվաքվէ մին տը՝ղ* (Բ):

ԻՐԸՍԼԸՎԱ - *ած.* Երեսը չլվացած, անլվա: *Իրըսլըվա խօխենք՚ ըն* (Բ):

- Իրըսլըվա հաց օտօղ - Ասում են երեխաների մասին:

- Լուզուն բանլբանլ տըռնալ- Ոգեւորվելուց՝ հարբելուց եւն սկսել ազատ՝ համարձակ՝ ճարտար խոսել: *Փըսացուն վէր հանրփում ա, լուզուն բանլբանլ ա տըռնում* (Զ):

- Լուզուն գընրանվ տինիլ - Որեւէ բան խոստանալ, բայց չկարողանալ անել: *Հանրը ասում ա.- Մ՛ շան տընդա, վէր կընրըլան չըս անիս, նըհախ տըղան լուզուտ հօր ը՞ս գընրանվ տիրանլ* (Զ):

- Լուզուն գիդանլ - *տեմ* Լուզուն կընլխու ընդնէլ:

- Լուզուն դընմաղան կէնալ - *տեմ* Լուզվա կըտըր(վ)էլ:

- Լուզուն զօռռէլ - *տեմ* Լուզվին զօռ անէլ:

- Լուզուն էլ վէր ինի վէչ, քաշքըչէղակ յըրա կըտան, տանին - Ասում են շաղակրատ ու ինքնահավան, բայց ձեռքից բան չեկող մարդկանց մասին:

- Լուզուն էրկան - 1. Ըմբոստ՝ համարձակ խոսող: *Լուզուն էրկան կընգանը ճար չի ինիլ* (Բ): 2. Մեկին նախատելու, մեկի մոտ մեծախոսելու՝ պարծենալու իրավունք ունեցող, խոսելու տեղ ունեցող: *Հարթնը համ դաշանգ ար, համ հարուստ, ըտրրա հըտէ յար ըսկէսվորը քըշտեն լուզուն էրկան* (Զ):

- Լուզուն էրկու անէլ - Պատասխան տալ, հակաճառել: *Սիմօնը թա.- Հայկօ, վէր իծծուն մանէթ տաս, էլ լուզուս էրկու չըմ անէլ, ծիս քըէգ կըտամ*:

- Լուզու նըհաշ տալ - *տեմ* Լուզուն տուս օնէլ:

- Լուզուն ընկուտակէլ - *տեմ* Լուզուն կընդ անէլ:

- Լուզուն իրկընանալ - Հանդուգն՝ համարձակ խոսել, այդպես խոսելու պատճառ՝ իրավունք ունենալ: *Թամարէն լուզուն իրկընացալ ա, հինչ ա տըղէն տիրանլ ըն գուղապէտ* (Բ):

- Լուզուն իրկընցընէլ - *տե՛ս* Լուզուն իրկընանալ: *Մարյանը լուզուն իրկընցըրալ ա, էլ առաչվա խըՀոնը չի* (Բ): 2. Խոսելու առիթ՝ իրավունք տալ: *Սուդյան ախպօրը լուզուն շէնումը իրկընցըրավ* (Զ):

- Լուզուն խըզ՚ըտակավը տուս օնէլ - Տանջել, չարչարել (հատկապես գործածվում է որպես սպառնալիք): *Մարթը ասմա.- Հանլա ըշտը՚ղ ը՞ս, վէր ք՚ինինք՚ տօն, լուզուտ խըզ՚ըտակավըտ տուս ըմ ունական* (Զ):

- Լուզուն խօդ տալ - Սկսել շաղակրատել՝ ճարտար խոսել: *Ախճիգ՚ը վէր լուզուն խօդ ա տամ, պատրօնը մընամ ա գ՚ունաքար* (Զ):

- Լուզուն ծակը կօխէլ - *տե՛ս* Լակը ծակը կօխէլ:

- Լուզուն՝ լակ-լակ, կըլօխը՝ թակ-թակ - *տե՛ս* Ըռը՚խը՝ լակ-լակ, կըլօխը՝ թակ-թակ:

- Լուզուն ծըմծամէլ/ծըմծըմօրէլ - 1. Ասելիքը պարզ՝ հստակ չարտահայտել, կցկտուր խոսել: *Չօբանը լուզուն ծըմծամում ա, ըտըրանք վէչ մին պէն կըլխու չըն ըղնում* (Զ): 2. Ճշմարտությունը՝ իսկությունը չհամարձակվել ասել՝ ասելուց շեղվել: *Նախագան ասում ա.- Լուզուտ ծըմծամէլ մէ՛լ, ամսէ, տը՚սնամ՝ հու վա բաղը քաղալ* (Զ):

- Լուզուն ծըրավը տանէլ - Շիտակ խոսել: *Դանգը՚խա մարթը լուզուն ծըրավը կըտանէ* (Բ):

- Լուզուն կապ ըղնէլ/կապվէլ - Հուզմունքից, հարբելուց եւն լեզուն բռնվել, չկարողանալ կարգին խոսել՝ պատասխանել, կակազել, պապանձվել: *Վը՚չ մին պէն կըրէյիս չի լալ կարքէն ասէ, լուզուն կապ ար ընգալ* (ԼՂԲՔ, 273):

- Լուզուն կապ քընցիլ - Մեկին լռեցնել՝ պապանձեցնել՝ խոսելու՝ պատասխանելու հնարավորությունից զրկել: *Վէգիրը ճըղճըղամ ա, ըտըրանց լուզուն կապ քընցում* (Զ):

- Լուզուն կարճ - 1. Խոսելու իրավունքից զրկված, անհամարձակ խոսող: *Լուզուն կարճ մարթ ա Հանրաբէդը, հու խօսում ա, ինք՚ը սուս ա անում* (Բ): 2. Իրեն մեղավոր զգալով կամ մեկից կախված լինելով՝ խոսելու համարձակություն չունեցող: *Շէնումը կ՚ուղօթուն ընօղէն հօրը-մօրը լուզուն շինանցուց քընշտէն կարճ կինի* (Բ):

- Լուզուն կարճ կապէլ - *տե՛ս* Լուզվին գ՚ամ տինիլ:

- Լուզուն կըլխու ըղնէլ - 1. *տե՛ս* Լուզու՝ քընթէնալ: 2. Որեւէ բանի էությունը՝ հատկությունը իմանալ՝ հասկանալ, գործածելու ձեւն իմանալ: *Արշակ դայի քարէն լուզուն լ՚ավ ար կըլխու ըղնում* (Զ):

- Լուզուն կընձէլ - 1. Հանկարծակի գլխի ընկնել, հանկարծ մի բան հիշել: *Թաքավէրը էտ պէնը վէր ըսկանում ա, լուզուն կընձում ա, գ՚ունդում ա, թա թաքուհին հինչու հը՚տէ յա ք՚ը՚ցալ* (Զ): 2. Խոսելու միջոցին հանկարծ լռել: *Ճըղճըղամ ա, ճըղճըղամ, մին էլ բ՚ուրդանի լուզուն կընձում, էլ պէն չի խօսում* (Զ):

- Լուզուն կընռ/կընռըպատ(լ)ի անէլ - 1. Մի բան ձեռք բերելու համար շողոքորթել՝ քծնել՝ խոնարհաբար խնդրել: *Ա՚ստէմը էնքան լուզուն կընռ ընրավ, մինչը՚վ վէր նախագան բուստընատը՚ղ տուվավ* (Զ): 2. Ասելիքը դիտմամբ ձգձգել: *Արչը ասմա.- Մարթ ախպէր, լուզուտ կընռ մէ՛լ անէլ, ամսէ, տը՚սնամ հինչ ըս օգ՚ում* (Զ):

- Լուզուն կընռքընէրէն տակէն պահել - 1. Իրեն զսպել եւ չխոսել, լուռ մնալ: *Էտ կընէգ՚ը հիշկան անում ա, կարում չի լուզուն կընռքընէրէն տակեն պահէ, խօսում ա* (Զ): 2. Գաղտնիքը պահել, գաղտնապահ լինել: *Ա՚րիսակ աքէրը մարթին ասածը շէնավը մին ընրավ, կարից վէչ լուզուն կընռքընէրէն տակէն պահէ* (Բ):

- Լուզուն կընրճանալ - Մեղավոր լինելու՝ իրեն մեղավոր զգալու պատճառով ազատ՝ համարձակ չկարողանալ խոսել: *Էտ կ՚ուղութունանը յը՚տը Մանմանը բաջուն լուզուն կընրճացավ* (Զ):

- Լուզուն կընրճըցընէլ - 1. *տե՛ս* Լուզուն կընրճանալ: *Հինչ ը՞ս լուզուտ կընրճըցընրալ, հարթն ա, լի՞, փախալ ա, փախալ ա* (Զ): 2. Մեկին կաշկանդել, այնպիսի վիճակի հասցնել, որ չկարողանա ազատ՝ համարձակ խոսել: *Տընէն տանումն ընէլը Բալաբէգ՚ին լուզուն կընրճըցընրավ* (Բ):

- Լուզուն կօլ տալ/կօլ ք՚ինիլ - 1. Համրանալ, պապանձվել: *Օշափը վէր ճըղղամ ա, ըխճըկանը լուզուն կօլ ա ք՚ինամ* (Զ): 2. Ընկնավորության նոպա ունենալ, երբ լեզուն հետ գնալով փակում է շնչափողը, եւ հիվանդը սկսում է խեղդվել: *Խօխան լուզուն կօլ ա տամ, կ՚իպտանում, մարը քընթօլը քընցում ա պէրանը, վէր լուզուն տուս օնէ* (Զ):

- Լուզուն շաղվել - *տե՛ս* Լուզուն կապ ընէլ:

- Լուզուն շան վը՚ռ ա ծակում - Ասում են սուր լեզու ունեցողների մասին: *Հարթանը, հինչ հա՞րթանը, լուզուն շան վը՚ռ ա ծակում* (Բ):

- Լուզուն շընփօթ տանէլ - *տե՛ս* Լուզուն կօլ ք՚ինիլ (1):

- Լուզուն չընչարէլ - *տե՛ս* Լուզվին տալ:

- Լուզուն չուրանալ - *տե՛ս* Լուզուն ցըմաքէլ:

- Լուզուն պատ կ՚անալ - Մի բան ասել կարողանալ՝ հանդգնել՝ համարձակվել (հատկապես գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Էտ տընղան վազ ա տամ պալատը, ամմա լուզուն պատ չի կ՚ամ ասէ, վէր թաքավէրին տընղէն ըսպանալ ըն* (Զ):

- Լուզուն պէնվալ/պէն ընղնէլ - *տե՛ս* ԼՈՒՋՎԸՎԷՐՎԷԼ:

- Լուզուն պընտրպատ անէլ/քընցիլ - *տե՛ս* Լուզուն կընռ անէլ:

- Լուզուն պընրանէլ - Խոսքը՝ խոսակցության նյութը փոխել: *Տը՚սնում ա, վէր պէն չի ամանալ կ՚ամ, լուզուն պընրանում ա* (Զ):

- Լուզուն պիրանումը ղանդ անէլ - Երկար համբուրել: *Յը՚ս ախճիգ՚ ըմ, նազ կանիմ, լուզուս պիրանումըտ ղանդ կանիմ* (Զ):

- Լուզուն պիրանումը չուրանալ/ցըմաքէլ - *տե՛ս* Լուզուն ցըմաքէլ:

- Լուզուն պանը կօխէլ - *տե՛ս* Լակը ծակը կօխէլ:

- Լուզուն սօր - Սրամիտ, սուր՝ խայթող՝ ծաղրող լեզու ունեցող: *...Մին շատ լուզուն սօր, խէլունք տընղա յա ինըմ, ինքընն էլ ծունկնը փընռնող* (ՀԺՀ, V, 78):

- Լուզուն տէմ ընղնէլ - *տե՛ս* Լուզուն կապ ընղնէլ:

- Լուզուն տը՚տ ա ծակում - *տե՛ս* Լուզուն շան վը՚ռ ա ծակում:

- Լուզուն տընկընռնհան պուք տալ - Սպառնալիքի արտահայտություն՝ եթե խոսես՝ գաղտնիքն հայտնես, լեզուդ արմատից կպոկեմ: *Կ՚ուղէրէն մը՚ծը ասում ա.- Հու էս պէնը մինին ասից, լուզուն տընկընռնհան պուք կըտամ* (Զ):

- Լուզուն տուս օնէլ - 1. Լեզուն հանելով՝ ցույց տալով՝ մեկին ծաղրել: *Հանլա էրկու օրվա հարթն ա, ուժժէ լուզուն տուս ա օնում ըսկէսվօրը յընրա* (Բ): 2. *տե՛ս* Լուզու՝ ածել:

- Լուզուն ցըմաքէլ - *տե՛ս* Թընքը (պիրանումը) չուրանալ:

- Լուզուն ուրանալ/քաշիլ- 1. *տե՛ս* Լուզվին տարը ինիլ: 2. Լռել, չխոսել, չպատասխանել: *Մարթը հիշկան ուշունց ա տամ, կընէգ՚ը լուզուն ուրան ա պահում* (Զ):

- Լուզուն փաթ ընղնէլ/փընռնըվէլ - *տե՛ս* Լուզուն կապ ընղնէլ:

- Լուզուն փընսնէլ - *տե՛ս* ԼՈՒՋՎԸՎԷՐՎԷԼ:

- Լուզուն փուչիգ՚ան մօտէ - Անգաղտնապահ: *Կընանուցը լուզուն փուչիգ՚ան մօտէ յա, ամմէն պէն բիդի ասիս վէչ* (Զ):

- Լուզուն փընռնէլ - *տե՛ս* Լուզուն պատ կ՚անալ:

- Լուզուն փօրը ըղնէլ/քըցիլ - *տե՛ս* Լուզվա կըտըր(վ)էլ:

- Լուզուն քախծըր - Քաղցրախոս, շողոքորթ: *Լուզուն քախծըր կընգանը կօրծէրը առաչ կըք՛ինի* (Զ):

- Լուզուն քըթէնալ - *տե՛ս* Լուզուն կըլխու ըղնէլ:

- Լուզուն քըխծըրցընէլ - Առակներով՝ ասացվածքներով՝ գեղեցիկ արտահայտություններով խոսել: *Ղէրվիշը լուզուն քըխծըրցընում ա, լօխ ըսկըսում ըն ըսկանալը* (Զ):

- Լուզուն քօր կ՛ալ - Խոսելու, որեւէ գաղտնիք՝ ոչ պատշաճ խոսք ասելու ցանկություն զգալ: *Վէր պատառ էլ կէնում ըն, Մուրադը, լուզուն քօր ա կ՛ամ, էլ կարում չի սուս անէ* (Զ):

- Լուզու պինըցընէլ - *տե՛ս* Լուզու թափէլ:

- Լուզուս լալէգ՛ մընա/լալկըվէ - Ասում են որեւէ վատ բան հայտնելուց՝ արտահայտելուց առաջ կամ հետո: *Լուզուս լալէգ՛ մընա, ասում ըն՝ Սումբաթը քէնուն սիրականը ա* (Բ):

- Լուզու տը՛ռնալ- Մեկի փոխարէն խոսել՝ ներկայանալ: *Խէլունք ախպէրը վէր ըտի լուզվա կըտըրում ա, պը՛լ ախպէրը լուզու վա տը՛ռնում, թաքավէրին լօխ քաթ անում* (Զ):

- Լուզու քըթէնալ - Մեկի հետ մտերմանալ՝ համաձայնության գալ: *Ըտի հըրթնըսկէսուր ուրուր նըհը՛տ լուզու յըն քըթէնում, մին տը՛ղ ապըրում* (Զ):

ԼՆԻԹ *(թրք. lüt)* - *ած.* 1. Աղքատ, նյութական միջոցներից զուրկ, տկլոր: *...Խանէրը մէգ թըլանալ ըն, ամուտ մընացալ ընք լութ* (Զ): 2. Դատարկ ձեռքով, դատարկաձեռն: *Էտ մարթը հըմանչում ա լութ ք՛ինի ուրանց տօն* (Զ):

ԼՆԻԹԸԿՕՄ/ԼՆԻԹԿՕՄ/ԼԻԹԸԿՕՄ/ԼԻԹԿՕՄ - *տե՛ս* ԼՆԻԹ:

ԼՈՒԹԸՎԱՉԻ/ԼՕԹԻՎԱՉԻ - *տե՛ս* ԼՈՒԹԸՎԱՐԻ:

ԼՈՒԹԸՎԱՐԻ/ԼՕԹԻՎԱՐԻ - *մ.* Լոթու նման, լոթու պես: *Թաքավէրին տըղան ուրան լութըվարի յար պահում* (Զ):

ԼՈՒԹԻՅԱՆԱ/ԼՕԹԻՅԱՆԱ - *տե՛ս* ԼՈՒԹԸՎԱՐԻ:

ԼՈՒԹԻՅՕԹՈՒՆ - *տե՛ս* ԼՈՒԹՕԹՈՒՆ:

ԼՆԻԹ-ԼՆԻԹԸԿՕՄ - *տե՛ս* ԼՆԻԹ(1):

ԼՆԻԹ-ԿԱՆԲԱՐՕՂԼԻ - *տե՛ս* ԼՆԻԹ(1):

ԼՆԻԹԿՕՄ - *տե՛ս* ԼՆԻԹԸԿՕՄ:

ԼՆԻԹ-ՄԱՄԱՅԻ(Ն) - *տե՛ս* ԼՆԻԹ(1): *...Հէյվանը, պէնը լօխ փուչընաս ա, տափէրը ծէռքան ինք՛ ըն ունէս, թուղէս լութ-մամայի* (ՀԺՀ, V, 296):

ԼՈՒԹՕԹՈՒՆ/ԼՕԹՕԹՈՒՆ/ԼՈՒԹԻՅՕԹՈՒՆ/ԼՕԹԻՅՕԹՈՒՆ - *գ.* Լոթի լինելը, լոթիի հատկությունը: *Կօղը ուրան կ՛ուղօթունընը ա անըմ, լօթին ուրան լօթօթունը՝ մարթին ասած թանիրանվը...* (ԼՂԲ, 374):

ԼՆԻԼ *(հ.ե. *lol- (օրորել)* - *ած.* Սաստիկ գինով՝ հարբած: *Մարդիրոսը խըմած, լուլ տը՛ռած, կ՛ամ ա մըռատօնը* (ՆԱԲ, 102):

- Լուլ կըտըրէլ - Սաստիկ գինովանալ՝ հարբել: *Հինչ դէ՞ր դալաթ կանար կէրած-խըմած, լուլ կըտըրած, ժամին մըղակավը նի մընանար* (ՋՏ, Բ, 154):

ԼՆԻԼԱ *(պրս. lāla)* - *գ.* 1. Փոքրիկ խողովակաձեւ իր:*...Էտ հընգէրըտ տընէս ա ուրան կընգանը ըսպընէս, լուլանվը փըչիս, կընէգ՛ը յէտ չի կ՛աս* (ՀԺՀ, V, 260): 2. Հրազենի փող: *Մին օր էս Բաբան ուստէն անա թաքուն մին թուվանգ՛ու լուլա յա շինալ* (ԱԱ, 31): 3. *փխբ. տե՛ս* ԼՆԻԼԱՔ՛ԱԲԱԲ 4. *փխբ.* Սառույցի գլանաձեւ կտոր, որ կախվում է կտուրից՝ ծառերի ճյուղերից եւն:*Ըրշէրը փիս ցօրտ ա անում, ժօլօբան մին մը՛ծ լուլա յա կախ ինում* (Զ): 5. *տե՛ս* LOLԱԿ (1): 6. *ած. փխբ.* բարակ եւ երկար: *Մին լուլա ծառ ըն կըտըրում, սուրուն շինում* (Զ):

ԼՆԻԼԱՆԷ - ած. Համապատասխան քանակով փող ունեցող (հրազենի մասին): *Ըտըրան էլ ինում ա էրկու լուլանէ մին լ՛ավ թըվանգ՛* (Զ):

ԼՆԻԼԱՆՈՒՑ - *տե՛ս* ԼՆԻԼԱՆԷ:

ԼՆԻԼԱՍԱՔ - *գ.* Հրացաններ պատրաստող արհեստավոր, հրացանագործ: *Ասում ըն, ըտը՛ղ մին լ՛ավ լուլասագ ա իլալ ըպըրէլիս, ըտըղան ա շէնին անումը մընացալ Լուլասագ* (Զ):

ԼՆԻԼԱՔ՛ԱԲԱԲ - *գ.* Ծեծած կամ աղացած եւ կլոր ու երկարավուն ձեւով խորոված միս: *Լուլաք՛աբաբը վըխճարէն մըսան ա լ՛ավ տը՛ռնում* (Բ):

ԼՆԻԼԿԱ - *տե՛ս* ԼՆԻԼ:

ԼՆԻԾ[1] *(գրբ. լուծ)* - *գ.* 1. Ամուր փայտից սարքած փայտյա հաստ ձող՝ երկու ծայրերը սամիներ հագցրած, որով լծում են լծկան անասուններին եւ որից կապում են գութանը՝ արորը՝ սայլը եւն: *Մարթը անգուծ ա օնում, կաղնէն փօխում, պէխէ լուծ տընում ըչէռէն վըզին* (ՆԱԲ, 7): 2. Ձիթահանքի գերան, որին լծում են քարը պտտեցնող անասունը: *Սըրունուցէն լուծը կաղնէ բիդի, վէր տէմ կէնա* (Բ): 3. Միասին լծվող անասունների զույգ: *Էրկու լուծ ա լըծում, մին օրումը վարում պըրծընում* (Զ): *4.* Օրորոցի վերեւից երկարությամբ ձգվող գլանաձեւ փայտե ձողը, որով միանում են օրորոցի ծայրերի կամարաձեւ մասերը: *Ըրուրուցէն լուծը կօտըրալ ա* (Զ): 5. Կշեռքի թաթ, նժար: *Օսէփը կատուն տինում ա քըշէռքին լուծին, քըշըռում* (Զ): 6. *փխբ.* Ծանր պարտականություն՝ գործ՝ հոգս: *Շինանցուց լուծը շատ ա ծանդը* (Բ):

- Լուծ անէլ - Արտը վարել, վար անել: *Մարթը ք՛ինամ ա լուծ անում, կ՛ամ, տը՛սնում կընէգ՛ը փախած* (Զ):

- Լուծա փախած անչառ(նը) - Անկարգ՝ չարաճճի անձ: *Էտ լուծա փախած անչառը կընգանընն ա խօխօնցը հօքսը քաշում չի* (Բ):

- Լուծը խըզ՛ըտակէն տինիլ - *տե՛ս* Լուծը վըզին տինիլ:

- Լուծը ծանդը ա, օգ՛ում ա կաղնէ ինի, օգ՛ում ա՝ տընկօղնէ - Հանգամանքները՝ միջոցները աշխատանքի ծանրությունը չեն մեղմացնում:

- Լուծը պօգ՛էրը քըցիլ - Ըմբոստանալ, չենթարկվել: *Տըղան լուծը պօգ՛էրըն ա քըցանում, թա՝ յը՛ս ընդը՛ղ ք՛ինանալ չըմ* (Զ):

- Լուծը վըզին տինիլ - 1. Լծել: *Լուծը տինում ա ըչէռէն վըզին, ըսկըսում վարէլը* (Զ): 2. Մեկի վրա ծանր պարտականություն դնել: *Հըրսընքէն լուծը Ըրշակէն վըզին ըն տինում* (Զ): *3.* Ամուսնացնել: *Ազանի վախտը Հանրաբէդը լօթի յա իլալ, վէր լուծը վըզին ըն տիրալ, խըղճացալ ա (Զ):*

- Լուծը տափան կըտըրէլ - Կռիվ՝ արհավիրք լինել: *Լուծը տափան կըտըրալ ա, կըտըրվէ ըստի տարէն* (Բ):

- Լուծը տափէն մընալ - 1. Լծկան անասուն չունենալու պատճառով արտը անվար մնալ: *Խը՛ղճ Գանասիմ, յը՛զնը ըստակից, լուծը տափէն մընաց* (Զ): *2.* Տան տղամարդը՝ աշխատողը մեռնել: *Քընարիկը սօք՛ ա ասում,- Մստուծ, լուծընս տափէն ա մընացալ, յը՛ս հունց կա՞նիմ* (Զ):

- Լուծ քաշիլ - *տե՛ս* Մաշկավը լուծ քաշիլ: *Հանը ասմա.- Յը՛ս կարէլ չըմ սաղ օրը լուծ քաշիմ, տուք օտիք՛* (Զ):

- Լուծու տակ (նի) մընէլ - 1. Լծվել: *Կումաշը լուծու տակ ա նի մըտալ* (Զ): 2. Ծանր պարտականություն՝ գործ հանձն առնել: *Հանբին օգ՛ում ա տըղէն հը՛տէ հըրսանէք՛ անէ, լուծու տակ ա նի մըտալ* (Բ): *3.* Ամուսնանալ: *Պը՛լ ջանիլ ար Սիմօնը, լուծու տակ նի մըտավ, խըլունքացավ* (Բ):

ԼՆԻԾ[2] *(գրբ. լոյծ (թույլ, կակուղ)* - *տե՛ս* ՓՈՒՐԸՀԱՐԷՆՔ՛:

ԼՆԻԾԱԹԱԿ - *տե՛ս* ԼԸԾԱԹԱԿ:

ԼՆԻԾԱՉԱՓ - *տե՛ս* ԼԸԾԱՉԱՓ:

ԼՆԻԾԱՌԱԾ - *տե՛ս* ԼԸԾԱՌԱԾ:

ԼՆԻԾԱՓԱԴ - *տե՛ս* ԼԸԾԱՓԱԴ:

ԼՆԻԾԱՓԱԽ - *տե՛ս* ԼԸԾԱՓԱԽ:

ԼՆԻԾԸՀԸՆԳԷՐ - *տե՛ս* ԼԸԾԸՀԸՆԳԷՐ:

ԼՈՒԿՈՒ - *տե՛ս* ԼԱՆԳՈՒ:

ԼՈՒՂԱՆԱԼ - *տե՛ս* ԼԸՂԱՆԱԼ:

ԼՈՒՂԸԳԱՆԱԼ - *չբ.* Երկար ու բարակ դառնալ: *Խըմօրէն պո՛ւլը տըփ-տըփում ըն, մինչը՛վ վէր լ՛ավ լուղտը-գ՛անում ա* (Զ):

ԼՈՒՂԸԳՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԼՈՒՂԸ-ԳԱՆԱԼ-ի:

ԼՈՒՂՈՒՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԼԸՂԸՑ(Ը)-ՆԷԼ:

ԼՈՒՄԿԷ - *գ.* Խաղատեսակ: Խո-խէնքը միշտ յը՛խծուն քը՛շտէն ըն իլ՛ալ լումկէ խաղ ընէյիս (Զ):

ԼՈՒՊՈՒՏԻԳ - *տե՛ս* ԼԸՊՈՒՏԻԳ:

ԼՈՒՍ[1] *(գրբ. լոյս)* - *գ.* 1. Ճառագայթային էներգիա, որ ընկալվում է աչքով եւ տեսանելի դարձնում շրջապատը: *Ըրիք՛նակէն լ՛ուսը ըղնում ա տանը յըրա, Կոստի դային գ՛ուրթանում ա* (Զ): 2. Լուսավորման աղբյուր՝ հարմարանք: *Քըշէրը վէր կ՛ամ ա, շինըցէք՛ լ՛ուսէրը նի յըն կըցընում* (Զ): 3. Ցերեկ: *Ըտըրանք ծ՛ուքին ըն հըդէ ինում, վէր լ՛ուսավ տը՛ղ հըսնին* (Զ): 4. Լուսավորված տեղը, լուսավոր վայրը: *Ք՛ինամ ա լ՛ուսը, նամակը կարթում* (Զ): 5. Լուսային էներգիա: *Լ՛ուսին փուլը հու տամ չի, լ՛ուսը կըտըրում ըն* (Բ): 6. Լուսանալու ժամանակը, լուսաբաց, արեւածագ: *Քունավ ըն ընցընում, մին վախտ յէր ըն կէնում, տէսնում՝ լ՛ուս* (ՀԱԲ, 15, 18): *7.* Տեսողության կարողություն: *Ա՛զին անէսկ ա տամ մարթին.- Լ՛ուսըտ խըվարէ, Մէ՛լիք՛* (Զ): *ած. 8.* Լուսավոր: *Լ՛ուս օրը տըղամարթը վէր տանան տ՛ուս չի յը՛կավ, տըղամարթ չի* (Զ): 9. Ճերմակ, սպիտակափայլ: *Լ՛ուս իրը՛սավ ախճիգ՛ ա Մարյանգ՛ուլը* (Բ):

- Լ՛ուսա մօտէ - *տե՛ս* ԼՈ՛ՒՍԱՏԷՄ:

- Լ՛ուս անէլ *(գրբ. լոյս առնում)* - 1. Լուսավորել: *Հու վէր ծընվում ա, ընդրա նըհը՛տ մին ասթըխ ա լ՛ուս աշխարք կ՛ամ, մինչէվ գ՛անքէն վէրչը լ՛ուս անում* (ԱԱ, 15): 2. Լույսի դիմացից հեռանալ: *Պատառ տէն կաց ակուշկէն ղըրաղան, լ՛ուս ըրա* (Բ):

- Լ՛ուս աշխարք - Հեքիաթներում այն աշխարհը, որտեղ ապրում՝ բնակվում են՝ ի հակադրություն խավարի թագավորության: *Ղուշը թաքավէրին տը-ղէն տանում ա հըսցընում լ՛ուս աշ-խարքը* (Զ):

- Լ՛ուս աշխարք կ՛ալ - 1. Ծնվել, ստեղծվել, առաջանալ: *Մարթ մին հը՛տ ա լ՛ուս աշխարք կ՛ամ* (Զ): 2. Որեւէ թաքուն բան երեւան գալ՝ բացահայտվել: *Էտ կ՛ուղթունը վէրչը լ՛ուս աշխարք ա կ՛ամ* (Բ):

- Լ՛ուս աշխարք պիրիլ/քըցիլ/հանէլ - 1. Ծնել, ստեղծել, առաջացնել: *Ամմէն մարթ ո՛ւրա՛ն մօրը՝ ո՛ւրա՛ն լ՛ուս աշխարք պիրօղէն հը՛տէ հիշկան անէ, էլիա խըրէգ՛ ա* (Զ): 2. Որեւէ թաքուն բան երեւան հանել՝ բացահայտել: *Անց ա կէնում մին տարէ, կընէգ՛ը ըտըրա ալէգ՛ը լ՛ուս աշխարք ա պիրո՛ում* (Զ):

- Լ՛ուսը բիդի տէս անէլ - *տե՛ս* Էն ղօլը տէս անէլ:

- Լ՛ուսը իրը՛սան ծըլլալ/կաթէլ - Շատ գեղեցիկ լինել: *Էտ չուբանէն էլ մին ախ-ճիգ՛ ա ինում, վէր լ՛ըհա լ՛ուսը իրը՛սան ծըլլամ ա* (Զ):

- Լ՛ուսը ծ՛ուքիլ - Լուսանալ, արշալույսը բացվել: *Քըշէրավը, վէր լ՛ուսը ծ՛ուքըմ ա, պալատան էտ ծառային կանչըմ ըն...* (ԼՂԲ, 359):

- Լ՛ուսը հ՛ուրթին ծակավը տը՛սնալ - *տե՛ս* Ա՛ըը՛վը հ՛ուրթավը տը՛սնալ:

- Լ՛ուս ըղնէլ - Անսպասելիորեն՝ հանկարծակի հայտնվել՝ երեւալ: *Պա-տառ էլ վէր ք՛ինամ ըն, ա՛ըը՛վը թօխպէն տական լ՛ուս ա ըղնում* (Զ):

- Լ՛ուսը՝ ճըկատէն, նըխշընընգ՛ա՛ը՝ վը՛ննանը տակէն - Ասում են ճոխության մեջ ապրող գեղեցկուհիների մասին:

- Լ՛ուսըն էլ օնէ շօխկ - Ամեն ոք՝ ամեն ինչ էլ թերություն ունի:

- Լ՛ուսը պէնվալ - *տե՛ս* Լ՛ոնսը ծ՛ուքիլ:

- Լ՛ուսը պէնվա, պարին՝ նըհը՛տը - Բարեմաղթություն ծանր հիվանդներին՝ անելանելի վիճակում գտնվողներին՝ ձախորդության հանդիպածներին եւն, թող ցերեկը բարիք բերի:

- Լ՛ուսը պըտէրավը տալ - 1. Չորս կողմը լուսավորել: *Ըրիք՛նակը լ՛ուսը պըտէրավըն ա տուվալ* (Զ): 2. *տե՛ս* Լ՛ուսը իրը՛սան ծըլլալ:

- Լ՛ուսը պըտընծրկէրան ա տ՛ուս կ՛ամ - *հեգն.* Բարեկիրթ վարմունքը՝ առաջադիմությունը հետամնաց մարդկանցից է առաջ գալիս:

- Լ՛ուս լ՛ուսանալ/ծ՛ուքիլ - Հույսի՝ ուրախության՝ երջանկության դուռ բացվել: *...Վէրչը, մին լ՛ուս ա ծիք՛իս, նի յա մընէս բ՛ա՛գ՛ին տօնը՝ նոնք՛ա՛ր* (ԱԱ, 73):

- Լ՛ուս պահէլ - Մինչեւ առավոտ արթուն մնալ: *Սաղ քըշէրը լ՛ուս ըն պահում, կ՛օղէն փըռնում* (Զ):

- Լ՛ուս տալ - *տե՛ս* Լ՛ուս անէլ:

- Լ՛ուս տը՛ռնալ - 1. Բարեմաղթություն ննջեցյալի համար՝ իբր դրախտը գնալ: *Լ՛ուս տը՛ռնա Մամիկօնը, լ՛ավ մարթ ա իլ՛ալ* (Բ): 2. Ասում են երկար ժամանակ անկողնային հիվանդների՝ շատ ծերերի մահվան լուրը լսելիս՝ լավ է, որ մահացել է՝ ազատվել է տանջանքներից: *Ասում ըն Հայկուշը մը՛ռալ ա, լ՛ուս ա տը՛ռալ, խը՛ղճ ա, էս ա էրկու տարէ յա տըղըպէրցում* (Բ):

- Լ՛ուսու թիք՛ա՛ն/կուտուր/պատառ - Շատ գեղեցիկ, հմայիչ: *Էտ լ՛ուսու պա-տառ ախճիգ՛ը ո՛ւրա՛ն մաննան մըտա-նին հանըմ ա, տամ էս տըղին...* (ՀԺՀ, V, 20):

- Լ՛ուսում կէնալ - *տե՛ս* Աշկը լ՛ուսում կէնալ:

- Լ՛ուս ք՛ը՛զ տըսնօղէն - Ասվում է նրան, ով երկար ժամանակ չէր երեւում. լուսավորվի քեզ տեսնողը: *Լ՛ուս ք՛ը՛զ տըսնօղէն, ըստը՛ղ ը՞ս, էրկու ամէս ա՝ ըրվամ չըս* (Զ):

- Լ՛ուս օրը ցիրը՛կավ - *տե՛ս* Օրը ցիրը՛կավ:

ԼՈ՛ՒՍ[2] - *տե՛ս* Լ՛ՈՒՍ:

ԼՈ՛ՒՍ[3] - *գ.* Հարսնառի ժամանակ աղջկա հարազատների կողմից փեսային եւ մակարներին հրամցվող քաղցրավենիքներով՝ մրգերով՝ եփած հավով՝ խմիչքով սկուտեղ, որի եզրերին շարված խնձորներին ամրացնում էին մոմեր եւ վառում: *Լ՛ուսը վէր պիրո՛ում ըն, մակառ-բաշին մին տըսսանուց ա տամ* (Զ):

ԼՈ՛ՒՍԱԾԱԿ - Պատի վրա բացված անցք, որտեղով ներս է թափանցում լույսը: *Տանը պատէն տակէն վէնն ա կէ-նում, տէսնում էն ա լ՛ուսածակը կըսը-հար...*(ՆԱԲ, 100):

ԼՈ՛ՒՍԱԿԱՆՉ - *տե՛ս* ՎԸՐՑԸԿԱ-ԿԱՆՉ:

ԼՈ՛ՒՍԱԿ՛ԻՆ - *գ.* Եկեղեցուն տրվող նվեր՝ իբրեւ մոմի գին: *Ղէրը լ՛ուսակ՛ինը յօր ա ունէս, ք՛իս տօն* (Զ):

ԼՈ՛ՒՍԱՄ(ՆԸ) - *տե՛ս* ԼՈ՛ՒՍԷՄ(ՆԸ):

ԼՈ՛ՒՍԱՄՕՏ - *տե՛ս* ԼՈ՛ՒՍԱՏԷՄ:

ԼՈ՛ՒՍԱՆԱԼ - *չբ.* գիշերը վերջանալ, լույսը բացվել: *Լ՛ուսանըմ ա, կ՛ամ ըն տը՛սնըմ փանանը ծը՛ռքին սաղ-սա-լամաթ կաղնած* (ՀԺՀ, V, 30): 2. Մութը փարատվել, լուսավորվել: *Էտ տըղան պօգ՛էն պըտատանը յէտ ա տամ, կ՛ումը լ՛ուսանում ա* (ՀԺՀ, V, 54):

ԼՈ՛ՒՍԱՊԷՑ - *գ.* Լուսաբաց, արշալույս: *Մարթը չըրու լ՛ուսապէց էծին հէտան շօռ ա կ՛աս, լ՛ուսըպէցին բի-զ՛ուրած տօն կ՛աս...*(ԼՂԲ, 318):

ԼՈ՛ՒՍԱՍԹԸԽ - *գ.* Արուսյակ մոլորակը, այգաստղ, լուսաստղ: *Լ՛ու-սասթըխը վէր տ՛ուս ա կ՛ամ, ք՛արվանը հըդէ յա ինում* (Զ):

ԼՈ՛ՒՍԱՏԷՄ - *գ.* Լուսանալուն մոտ ժամանակը, լուսադեմ: *Հինչ դէ՞ր դալաթ կանար սաղ քըշէրը քէփ անար, լ՛ուսըտէմին քինար պադարա՛ք՛ անար* (ՋՏ, Բ, 154):

ԼՈ՛ՒՍԱՐԱՐ - *գ.* Եկեղեցու՝ վանքի ներքին բարեկարգությանը եւ հատկա-

պես լուսավորմանը հսկող եկեղեցական պաշտոնյա, ճրագները վառող, լույս անող անձ: *Դէրը կը զնը վում ա լուսարարէն յըրա, թա.- Լավ չը ս լուս անում, կարքէն լուս ըրա՛* (Ձ):

ԼՈՒՍԷԼ - *տե՛ս* ԼՈՒՍԻԼ:

ԼՈՒՍԷՄ(ՆԸ)/ԼՈՒՍԱՄ(ՆԸ)/ԼԻՍԷՄ-(ՆԸ) - *գ.* Կատվազգիների ընտանիքին պատկանող գիշատիչ գազան, լուսան: *Մարտակերտա ծըմըկնէրումը լուսէմ էլ կա* (Բ):

ԼՈՒՍԸԹԱԹԱԽ - *ած.* 1. Լույսով ողողված՝ լուսավորված: *Լուսըթաթախ օթաղ ա* (Բ): 2. *փխբ.* Չքնաղագեղ, լույսի նմանվող: *Էտ թաքավէրին էլ ինըմ ա էրկու լուսըթաթախ ախչիգ* (Ձ): 3. *մ.* Առավոտ կանուխ, լուսադեմին: *Ըտի լուսըթաթախ ըշտը՛ղ ը՞ս քունում* (Ձ):

ԼՈՒՍԸԾԸԼԼՕՑ - *տե՛ս* ԼՈՒՍԱՏԷՄ: *Կանփին ա Ալփին լուսըծըլլօցէն քընում ըն հանձ* (ՆԱԲ, 106):

ԼՈՒՍԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ԼՈՒՍԸԹԱԹԱԽ:

ԼՈՒՍԸՀՈՒՔԻ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԸՑԻՔ(Ի):

ԼՈՒՍԸՃԻՐՈՒՔ - 1. *գ.* Լույսի աղբյուր՝ լամպ, ճրագ եւն: *Լուսըճիրուքին լուսին տակէն էտ ախճիգը դաշանգ ար ըրվամ* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* ԼՈՒՍԸԹԱԹԱԽ (2):

ԼՈՒՍԸՄԸԹԷՆ - *տե՛ս* ԼՈՒՍԱՏԷՄ:

ԼՈՒՍԸՆԳԱ - *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱ:

ԼՈՒՍԸՆԳԱԼՈՒՍ- *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱԼՈՒՍ:

ԼՈՒՍԸՇԱՂԱԽ - *տե՛ս* ԼՈՒՍԸԹԱԹԱԽ:

ԼՈՒՍԸՊԸՌՕԿ - *տե՛ս* ԼՈՒՍԸԹԱԹԱԽ:

ԼՈՒՍԸՎԷՐ (*գրբ. լուսաւոր*) - *ած.* 1. Լուսավորված, լույսով լցված: *Լուսըվէր տօն ա* (Բ): 2. *փխբ.* Զարգացած, կիրթ, ուսյալ, գիտուն: *Հանան Ջալալյանը լուսըվէր մարթ ա իլալ* (Ձ):

ԼՈՒՍԸՎԷՐԷԼ (*գրբ. լուսաւորեմ*) - *նբ.* 1. Լուսավորել, լուսավոր դարձնել: *Արը՛վը տուս ա կամ, աշխարքըս լուսըվէրում* (Ձ): 2. *փխբ.* Գիտելիքներ տալ, մտավորապես ու քաղաքակրթորեն զարգացնել, կրթություն տարածել: *Էտ դասատուն սաղ շէնը լուսըվէրալ ա* (Բ):

ԼՈՒՍԸՎԷՐԻՆՉ (*գրբ. լուսաւորիչ*) - *գ.* Հայաստանում քրիստոնեությունը տարածող Գրիգոր Պարթեւի մականունը: *Ամարասա յը՛խծէն Լուսըվէրինչին թոռնըն ա շինալ՝ Կըրիքօրիսը* (Ձ):

- Լուսըվէրինչին ասթըխ - *տե՛ս* ԼՈՒՍԱՍԹԸԽ:

ԼՈՒՍԸՎԷՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԼՈՒՍԸՎԷՐԷԼ - ի:

ԼՈՒՍԸՎԸ՛ՆՆԸ- *տե՛ս* ԼՈՒՍԸԹԱԹԱԽ (2): *Դանստի մին տօռն ա պէնվում, մին լուսըվը՛ննը ախճիգ ա տուս կամ...* (ՆԱԲ, 36):

ԼՈՒՍԸՑ(Ը)ՆԷԼ (*գրբ. լուսացուցանեմ*) - *նբ.* 1. Գիշերն անցկացնել, մինչեւ լույս հասնել: *Վէրչը էտ քըշէրը էլ ըն լուսըցընում, էքսը քինըմ ծըմակը...* (ՀԺՀ, V, 56): 2. Գիշերը՝ մինչեւ լույս անքուն անցկացնել: *Խը՛ղճ կընէգը էրկու քըշէր ա լուսըցընում հիվանդէն քըշտէն* (Ձ):

ԼՈՒՍԻԼ - *տե՛ս* ԼՈՒՍԻԼ:

ԼՈՒՍԻՆ (*գրբ. լուսին (ամիս)- տե՛ս* ԸՄՍԸԿԱՆ (4):

ԼՈՒՍԻՆԳԱ/ԼՈՒՍԸՆԳԱ/ԼՈՒՍՆԻՆԳԱ/ԼՈՒՍՆԸՆԳԱ (*գրբ. լուանակայ*) - 1.*գ.* Երկրագնդին ամենից մոտ գտնվող երկնային մարմին՝ լուսին: *Լուսնինգանն ա իրիքնակը ախպէր-քուր ըն իլալ* (ԱԱ, 15): *ած.* 2. Լուանի լույսով լուսավորված, լուսնկա: *Մին լուսնընգան քըշէր տուս ա կամ՝ մըտքէրէն դօնըն ընգած* (ՀԱԲ, 15, 44): 3. *փխբ.* Լուսնի նման կլոր ու սպիտակ դեմք ունեցող (աղջիկների, կանանց մասին): *Կաչագանը յէշում ա, տը՛սնում մին լուսինգան ախճիգ ըխպիրան ճուր ա յը՛ր օնում* (Ձ):

- Լուսինգանն նօրէլ - Լուսնային ամիսը սկսվել: *Լուսինգանն վէր նօրում ա, հավան փօխվում ա* (Ձ):

- Լուսինգին պօգին նըստած - Շատ թանկ: *Մըսէն կինը էն ա լուսինգին պօգին նըստած* (Բ):

ԼՈՒՍԻՆԳԱԼՈՒՍ/ԼՈՒՍԸՆԳԱԼՈՒՍ/ԼՈՒՍՆԻՆԳԱԼՈՒՍ/ԼՈՒՍՆԸՆԳԱԼՈՒՍ - *գ.*. Լուանի լույս: *Լուսնինգանլուսը ըղնում ա էտ քարէն յըրա, վը՛սկուն պօլիգը պըսպըղէ յա տամ* (Ձ):

ԼՈՒՍԻՆ-ԼՈՒՍԻՆ (*գրբ. լուսին (ամիս)* - *մ.* Հազվադեպ: *Լուսին-լուսին ըս ըրվամ, հինչ ա՞ պըտահալ* (Ձ):

ԼՈՒՍԻՐԸ՛Ս/ԼՈՒՍՆԻՐԸ՛Ս - *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱ(3):

ԼՈՒՍ-ԼՈՒՍ - *գ.* Կիսամութ, ոչ շատ մութ: *Հանա լուս-լուս ա ինում, վէր Ավկարը քօն ա ինում* (Ձ):

ԼՈՒՍՆԱԼՈՒՍ - *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱԼՈՒՍ:

ԼՈՒՍՆԱՀԱՉ - *տե՛ս* ԸՍԹԸԽԱՀԱՉ:

ԼՈՒՍՆԱՎԸ՛Ղ[1] - *գ.* Կպչուն սպիտակաշիկավուն հող, կավահող: *Էտ վըխճընէն քըթալ ըն, կաթը լուսնըվը՛ղէն նիհէտ խառնալ, ցը՛խ ըրալ, պատէրը տիրալ* (ԱԱ, 48):

- Լուսնըվը՛ղա տուս յը՛կած - *տե՛ս* ԸԼԻՐԹԱԹԱԽ (2):

ԼՈՒՍՆԱՎԸ՛Ղ[2] - *տե՛ս* ԻՆՔՆԱՎԸ՛Ղ:

ԼՈՒՍՆԸՆԳԱ - *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱ:

ԼՈՒՍՆԸՆԳԱԼՈՒՍ - *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱԼՈՒՍ:

ԼՈՒՍՆԻՆԳԱ - *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱ:

ԼՈՒՍՆԻՆԳԱԼՈՒՍ - *տե՛ս* ԼՈՒՍԻՆԳԱԼՈՒՍ:

ԼՈՒՍՎԸԼՈՒՍ - *տե՛ս* ԼՈՒՍԱՏԷՄ:

ԼՈՒՍՏԸՐ(Ա) - *տե՛ս* ԼՈՒՍՏՈՒՐ(Ա):

ԼՈՒՍՏՈՒՐ(Ա)/ԼՈՒՍՏԸՐ(Ա) (*ռուս. люстра, ֆր. lustre, լատ. lustro*) - *գ.* Մի քանի էլէկտրական լամպերով կամ մոմերով կախովի սարք՝ ջահ: *Ըստրանց պատալօկան էլ մին մը՛ծ լուստուր ա ինիս կախ տուված* (Ձ):

ԼՈՒՎԱՔԱՔ - *գ.* Լուի ծիրտը՝ արտաթորանքը: *Շօրէրը սաղ լուվաքաք ա* (Ձ):

ԼՈՒՎԸՀԱՆ - Գործածվում՝ կապակցությունների մեջ:

- Լուվըհան անէլ - Շորերը՝ սպիտակեղենը լվերից մաքրել: *Միպտը-կը՛ղանը տինըմ ըն իրը՛վէն տակէն, լուվըհան անում* (Բ):

- Լուվըհան ինիլ/տը՛ռնալ - Շորերը՝ սպիտակեղենը լվերից մաքրվել: *Շօրէրը վէր լուվըհան ա ինում, կը՛ց ըն տամ էտ մարթին, դարկում* (Ձ):

ԼՈՒՑՈՒԿՈՒՄԷԼ - *տե՛ս* ԼԻՑԸԿՈՒՄԷԼ:

ԼՈՒՓԱԲԷՂ - 1. *գ.* Լայն՝ հաստ բեղ: *Էտ լուփըբէղէրըտ խէ կըտօրում չը՞ս* (Բ): 2. *ած.* Այդպիսի բեղեր ունեցող: *Լուփաբէղ մարթ ար Սուղումուն դային* (Ձ):

ԼՈՒՔՏԱՆԷ - գ. 1. Խաղատեսակ, որի ժամանակ վազելով կամ ոտքերն իրար միացրած՝ ցատկում են երկարությամբ եւ բարձրությամբ: *Խօխէնքը լուքտանէ յըն տամ* (Բ): 2. Հարսանեկան ուրախ պար, որ պարում են աղջիկները՝ հարսին շրջանակի մեջ առնելով եւ ցատկոտելով: *Լուքտանէն էլ ա ըդանան ընգալ* (Բ):

ԼՕԲԻ (*արաբ., պրս. lubiya*) - *գ.* Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող՝ պատիճի մեջ ամփոփված սերմերով բույս, լոբի: *Չանախչի լավ լօբի յա տը՛ռնում* (Բ): 2. Այդ բույսի սերմնահատիկը: *...Ամէգը մին թէ յէր կալած տափէրը բըշտի-բըշտի ըն անում, լօբի վարում* (ՀԺՀ, VII, 391): 3. Այդ բույսի մատղաշ ու դալար պատիճը՝ չհասունացած սերմնահատիկներով: *Ա-քէրը մին չանգ լօբի յա քաղում, մին բըրնու ճօտ պուք տամ, իփանում, սըխտօրում, տանում հանդը՝ մարթին հը՛տէ* (Ձ):

- Լօբի կէրած - Ասում են փորից հաճախակի գազեր արձակող մարթկանց մասին:

- Լօբին օտէլ - *հեգն. տե՛ս* Բադրանքը օտել:

- Լօբի օտող - Աղքատ, անճարակ, ձեռքից բան չեկող: *Լոբի օտող Միրզան էլ ա հըրուստացալ* (Բ):

- Լօբու արխէր անէլ/շինիլ - Գլուխը մկրատով անկանոն խուզել՝ անհարթություններ առաջացնել: *Էտ կըլօխըտ հուվ ա՞ լօբու արխէր ըրալ* (Բ):

ԼՕԴԱ *(թրք. լօդա (դեզ, բարդոց)* - *գ.* Ոչ խրձերով օրանի՝ խոտի փոքր դեզ դաշտում՝ անմիջապես տեղափոխելու համար: *Արշակը մին լօդան պէռնում ա էշին, հըդէ ինում* (Ձ):

- Լօդա տալ - Օրանը՝ խոտը դաշտում դիզել՝ անմիջապես տեղափոխելու համար: *Մուք քիս ըք խօտ հըվաքիք, լօդա տաք* (ԼՂԲՔ, 285):

ԼՕԴ(Ը)ՐԱ *(ռուս. лодыжка)* - *գ.* Թել փաթաթելու գլանիկ՝ կոճ, ինչպես եւ ամբողջ փաթաթվածքը: *Դանրգին ասը՝ ղընա լօդըրան յօր ա ունէս, քիս* (Ձ):

ԼՕԴՈՒՌ - *տե՛ս* ԼՕԴՈՒՐ:

ԼՕԴՈՒՌԱՆԱԼ - *տե՛ս* ԼՕԴՈՒՐԱՆԱԼ:

ԼՕԴՈՒՌՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԼՕԴՈՒՐՑ(Ը)ՆԷԼ:

ԼՕԴՈՒՌՕԹՈՒՆ- *տե՛ս* ԼՕԴՈՒՐՕԹՈՒՆ:

ԼՕԴՈՒՐ/ԼՕԴՈՒՌ/ԼՈՒԴՈՒՐ *(ռուս. лодырь)* - *ած. գ.* Անբան, գործից փախչող, ծույլ: *Մին հըրուստու մին լօդուռ տըղա յա ինում, հինչ փիշակու տամ ըն, էրկան կէնում չի, փախչում ա տօն* (ԱԱ, 64):

ԼՕԴՈՒՐԱՆԱԼ/ԼՕԴՈՒՌԱՆԱԼ/ԼՈՒԴՈՒՐԱՆԱԼ - *չբ.* Անբան՝ ծույլ դառնալ: *Կանփին հինչ ա փըսակվալ ա, լօդուրացալ ա* (Բ):

ԼՕԴՈՒՐՑ(Ը)ՆԷԼ/ԼՕԴՈՒՌՑ(Ը)ՆԷԼ/ԼՈՒԴՈՒՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԼՕԴՈՒՐԱՆԱԼ-ի:

ԼՕԴՈՒՐՕԹՈՒՆ/ԼՕԴՈՒՌՕԹՈՒՆ/ԼՈՒԴՈՒՐՕԹՈՒՆ - *գ.* Անբանություն, ծուլություն: *Լօդուրօթունը ա շինանցուն ախկադ ըալըրէլի մանին* (Ձ):

- Լօդուրօթուն անէլ - Աշխատանքից խուսափել, գլուխ պահել: *Լօդուրօթուն ընէլավ մարթ վէչ մին պէնու հըսնէլ չի* (Ձ):

ԼՕԹ(ԸՌ) - *գ. անրգ.* Բերան: ... *Քարանը կակօղ հինչ վէր տէսնըմ ար, լօթը՝ն ար քըցըմ* (ՋՏ, Ա, 169):

ԼՕԹԸՌԱՆ - *տե՛ս* ԼՕԹՌԱՆ:

ԼՕԹԻ *(պրս. luti (սրիկա, ստահակ), վրաց. loti (հարբեցող)* - *ած. գ.*, Կերուխում սիրող, զվարթ, սրտաբաց (երիտասարդ): *Էս թաքավէրին իլանալ ա մին տըղա, էս տըղին էլ շատ լօթի հընգէրնէր ա իլանալ* (ՀԺՀ, VI, 172):

ԼՕԹԻՅԱՆԱ - *տե՛ս* ԼՈՒԹԻՅԱՆԱ:

ԼՕԹԻՅՕԹՈՒՆ - *տե՛ս* ԼՈՒԹՕԹՈՒՆ:

ԼՕԹԻՎԱՉԻ - *տե՛ս* ԼՈՒԹԸՎԱՉԻ:

ԼՕԹԻՎԱՐԻ - *տե՛ս* ԼՈՒԹԻՎԱՐԻ:

ԼՕԹԻ - ՓՕԹԻ - *տե՛ս* ԼՕԹԻ:

ԼՕԹԿԱ *(ռուս. лодка)* - *գ.* Նավակ, մակույկ: *Էս ախճիգը քանդիրը վը՝ննան յէտ ա անում, ինքը՝ լօթկան յէր ինում, քինանմ...* (ՀԺՀ, V, 545):

ԼՕԹԿԱՉԻ - *գ. ած.* Նավակը վարող, մակույկավար: *Էտ ախճիգը քընում ա լօթկումը նըստում, լօթկաչին լօթկան քըշում ա ուրանց տօռնը* (ՀԺՀ, V, 545):

ԼՕԹՌԱՆ/ԼՕԹԸՌԱՆ - *ած.* 1. Ագահ, շատակեր, որկրամոլ: *Էտ լօթռանը նըստում ա, ղըզանէն կուրկուտը լօխ օտում* (Ձ): 2. Դատարկաբան, շաղակրատ: *Լօթռան մարթ ար Սէյինը, ըշտը՝ղ նըստում ար, լօխճին կըլօխը դանգ ար անում* (2):

ԼՕԹՕԹՈՒՆ - *տե՛ս* ԼՈՒԹՕԹՈՒՆ:

ԼՕԼԱԿ *(պրս. lūla)* - *գ.* 1. Երկարավուն եւ սնամեջ ոսկոր: ...*Կանուլէրը մըսէրը թիքա՛ն-թիքա՛ն յըն անում, թօղում կարկաժըն ա լուլուկնէն* (Ձ): 2. Օրորոցի մեջ դրվող հատուկ ձեւով պատրաստած խողովակ, որով երեխայի մեզը թափվում է դուրս՝ միզամանի մեջ: *Մին լօլակ ա շինում, տինում ըրուրուցումը* (Ձ): 3. *տե՛ս* ԼՈՒԼԱ (6):

- Լուլակում տըռէլ/տըռօտէլ - Դեռ շատ փոքր լինել, խելքը բան չկտրել: *Սանթուրը թա.- Մըրքըրա՛, յը՝ս վէր էն ըմ իլալ հօնձ ընէլիս, տու հալա էն ըս իլալ լուլակումըտ տըռէլիս* (Բ):

- Լուլըկնէն ցէց կէնալ - Խիստ հյուծվել՝ նիհարել: *Կավը իրը՝ք ամէս ա՝ կանումը, լուլըկնէն ցէց ա կացալ* (Բ):

ԼՕԼԱՃ - *տե՛ս* ԼՕԼՕՃ:

ԼՕԼԻ - *ած. գ.* Երկարահասակ ու նիհար, լողլող (մարդ): *Էտ լօլին վէր հըղըցավը քինում ար, լօխ ծըծաղում ին* (Ձ):

ԼՕԼԿԱ/ԼՕՐԿԱ - *տե՛ս* ԸՐՈՒՐՈՒՆՑ:

ԼՕԼՕ[1] - *մնկ.* Խնձոր: *Խօխան լօլօ յա օգանում* (Բ):

ԼՕ-ԼՕ[2] 1. Խաղատեսակ: Մի խմբի երեխաներից մեկի աչքերը ձեռքերով ծածկում են եւ արտաբերում **լո՛-լո՛** կամ **ո՛ւվ-ո՛ւվ** ձայները: Եթե չճանաչեց, նրա խումբը պետք է փնտրի ու գտնի մյուս խմբի անդամներին, որոնք իրենց թաքստոցներից անընդհատ հանում են այդ ձայները: Եթե ճանաչեց, կամ գտան հակառակ թիմի բոլոր անդամներին, խմբերը տեղերով փոխվում են: *Լօ-լօն ուրանգանունէն ըն իլալ խաղ ընէս* (Բ): *ձ.* Որոշ խաղերի ժամանակ իրար կանչելու ձեւ: *Լո՛-լո՛, էտ ըշտը՝ղ ըս* (Ձ):

- Լо - լо անէլ - Կանչել, ձայն տալ: *Լօ-լօ յըն անում, խօխօնցը հըվաքում* (Ձ):

ԼՕԼՕՃ/ԼՕԼԱՃ - *գ.* Խողովակաձեւ փաթաթած լավաշ հաց՝ մեջը պանիր, միս, սօխ եւն լցրած: *Լօլաճը տինում ըն խուխէն ծը՝ղքէն, դարկում հայաթը, ուրանք սիլի-բիլի անում* (Ձ):

ԼՕԼՕՇ - *տե՛ս* ԼՕԼԻ:

ԼՕԽ *(գրբ. ողջ)* - 1. *ած. գ.* Բոլորը, ամենքը, ամբողջը: *Թաքավը՝ղը հըրաման ա տամ, վար օցէրը լօխ կ՚ան ուրանց ըռաշկավընը անց կէնան* (ՆԼՂԺԲ, 11):

- Լօխ պըրծալ ընք, մընացալ ա ապօրը գ՚օռը - Ասում են այն ժամանակ, երբ դեռ կարեւոր բաները չարած՝ առաջարկում են անել ոչ կարեւորը:

- Լօխ ք՚ը՝զ, լօխ ք՚ը՝զ - Ասում են ուտելու ժամանակ զկռտացող երեխային՝ խփելով մեջքին. մի՛ շտապիր, բոլորը քոնն է:

ԼՕԽԷԼ - *տե՛ս* ՓԸԼԱՆԷԼ:

ԼՕԽՏԱ - *տե՛ս* ՆՕԽՏԱ:

ԼՕԿ *(հ.ե. *(s)led- (թույլ լինել)* - *գ.* 1. Օձանման թունազուրկ սողուն, լորտու: *Լօկը օխծէն ըսպանում ա* (Բ): 2. *փխբ. տե՛ս* ԽԸ՝Ռ:

- Լօկէն նաղլը յըրա/վէր պիրիլ - Մանրամասն ու ձանձրալի կերպով որեւէ բանի շուրջ երկար խոսել, որեւէ բան ձգձգված պատմել: *Հընրվանանին կ՚աս ըն էրգ՚ան խուսէս, լօկէն նաղլը յըրա պիրիս...* (ԼՂԲ, 318):

- Լօկը թօղ - թօղ ընէլավ - Դատարկ ձեռքով, դատարկաձեռն: *Հըմանչում էլ չի Ափկարը, լօկը թօղ-թօղ ընէլավ յը՝ր ա կացալ, քըղաքան յը՝կալ քըվօրը տօնը* (Բ):

ԼՕՂ - *տե՛ս* ԼԸՂ:

ԼՕՂԼՕՂ(Ի) - *տե՛ս* ԼՕԼԻ:

ԼՕՂՄԱՆԻ - *գ.* Հմուտ, իմաստուն բժիշկ կամ այլ մասնագետ (առասպելական բժիշկ Լոխմանու անունից): *Մին օր հանրը ըսկանում ա, վը՝ր էսհինչ քըղաքումը մին ամմէն հինչ գ՚ուդծ՚ղ լօղմանի կա* (ՀԺՀ, VII, 48):

ԼՕՂՄԱՆՕԹՈՒՆ - *գ.* Մասնագիտական հմտություն՝ իմաստնություն: ...*Էտ լօղմանին վը՝չ մինին ուրանն փէշակը սուվուրցըրալ չի, հանցու ուրանն լօղմանօթունը ուրանն անում մընա* (ՀԺՀ, VII, 48):

ԼՕՂՎԱ *(թրք. lovğa)* - *ած.* Գոռոզամիտ, պարծենկոտ: *Լօղվա մարթ ա Շաբօն* (Բ):

ԼՕՂՎԱ-ԼՕՂՎԱ - *տե՛ս* ԼԸՂՎԸ-ԼՕՂՎԱ:

ԼՕՂՎԱՄԻԾ - *տե՛ս* ԼԸՂՎԱՄԻԾ:

ԼՕՂՎԱՎԱՉԻ - *տե՛ս* ԼԸՂՎԸՎԱՉԻ:

ԼՕՂՎԱՎԱՐԻ - *տե՛ս* ԼԸՂՎԸՎԱՐԻ:

ԼՕՂՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ԼԸՂՎՕԹՈՒՆ:

ԼՕՂՏԷԳ՚ - *տե՛ս* ԼՕԼԻ:

ԼՕՄ(Բ) *(ռուս. лом)*- *տե՛ս* ԼԻՆԳ՚:

ԼՕՇՏԱԿ[1] - *տե՛ս* ԼՕՇՏԸՐԱԿ[2]:

ԼՕՇՏԱԿ[2] - *տե՛ս* ԼՕՇՏԸՐԱԿ[2]:

ԼՕՇՏԸՐԱԿ[2]/ԼՕՇՏԱԿ[1]/ԼԱՇՏԸՐԱԿ[1] *(գրբ. լօշտակ)*- *գ.* Դդմազգիների ընտանիքին պատկանող բույս, որի արմատները օգտագործում են բժշկության մեջ:

Շօնը քանդում ա, լօշտըրակէն տակըռը տեսս օնում (Ձ):

ԼՕՇՏԸՐԱԿ²/ԼՕՇՏԱԿ²/ԼԱՇՏԸՐԱԿ² - *ած.* Լայն ու երկար (ականջների մասին): *Լօշտըրակ ընգուճնէ օնէ* (Բ):

ԼՕՊ *(ռուս. лоб (ճակատ)* Գործածվում է կապակցության մեջ

- Լօպէն տալ - Խփել, հարվածել: *Լօպէն վէր տամ ըն, էտ կ'օղը լօխ վըզանվ ա օնում* (Ձ):

ԼՕՊ(Պ)ԱՋ - *ած.* Սնապարծ, մեծամիտ: *Լօպպազ մարթին անա զանիլաս տարած ա* (Բ):

ԼՕՊ(Պ)ԱՋԱՆԱԼ - *չբ.* 1. Մեծամտություն անել, մեծամտել: *Խըրէգ' լօպպազաց, էտ պէնը տու կարէլ չըս անիս* (Բ): 2. Մեծամիտ դառնալ, մեծամտանալ: *Սուա ու փուա տըղա յա իլալ Աբասը, մըհէնգ' ա ըտի լօպպազացալ* (Բ):

ԼՕՊ(Պ)ԱՋՕԹՈՒՆ - *գ.* Սնապարծություն, մեծամտություն, պարծենկոտություն: *Ըտըրա լօպպազօթունը վէշ մինին տուր չի կ'ամ* (Բ):

ԼՕՌ - *տե՛ս* ԾԸՄԱԹ:

ԼՕՍՎԷԼ *(գրբ. լեսում)* - *չբ.* 1. Շատ շփվելուց՝ մի բանի քսվելուց մաշվել՝ ողորկ դառնալ: *Ճըղացէն քարը լօսվալ ա* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* Իրը՛ս առնէլ:

ԼՕՍՎԷԼ-ԿՕԿՎԷԼ - *տե՛ս* ՋՈՒՔՎԷԼ - ՋԸՐԹԱՆՎԷԼ:

ԼՕՏԱՆՔ - *տե՛ս* ԼԸՊԱՆՔ:

ԼՕՏՉԻԿ *(ռուս. лётчик)* - *գ.* Սավառնորդ, օդաչու: *Սամալօտը տըրաքում ա, լօտչիկը պարաշուտավ լօք ա տամ* (Ձ):

ԼՕՏՕ *(ռուս. лото, ֆր. loto, իտ. lotto)* - *գ.* Խաղատեսակ՝ լոտո: *Ջանիլ տըղէք' ըն, ք'ինամ չըն, թա ուրանց բաղը պիհին, անջախ սաղ օրը լօտօ յըն խաղ անում* (Ձ):

ԼՕՐ/ԸԼՕՐ *(գրբ. լոր)* - *տե՛ս* ՉԸԲՈՒԽԽԱՆՓԻ:

ԼՕՐԽ - *գ.* Կաշվե թոկ, որով լուծը կապում են սայլին: *Լօրխը կըտըրվում ա, ըրբան ըղնում ա ծօրը* (Ձ):

ԼՕՐԽԷԼ - *նբ.* Լորխով լուծը սայլին կապել: *Ըրբան լօրխում ըն, հըդէ ինում* (Ձ):

ԼՕՐԿԱ - *տե՛ս* ԼՕԼԿԱ

ԼՕՓԱ - *տե՛ս* ԼԱՄՓԱ

ԼՕՓԱ-ԼՕՓԱ - *ած.* Մեծ-մեծ, լայն: *Լօփա-լօփա տըխտըկնէ յա թըխում* (Ձ):

- Լօփա-լօփա անել - Մեծ կտորների բաժանել: *Փանդը լօփա-լօփա յա անում, վէր ածում* (Բ):

- Լօփա-լօփա խօսել/տանս տալ - Պոռոտախոսել, մեծախոսել: *Խըրէգ' լօփա-լօփա խօսէ* (Ձ):

ԼՕՓԷԼ - *տե՛ս* ԼԸՄՓԷԼ:

ԼՕՔ *(հ.ե. *lok- (ցատկ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Լօք տալ - 1. Մեկի կամ մի բանի վրայով լայն քայլով անցնել: *Քարէն կըլխավը լօք ա տամ, ընցընում* (Ձ): 2. Ցատկել: *Պիծի տըղան լօք ա տամ, յէր կէնում, տանան տանս կ'ամ, իսկի կընգանըն էլ ասում չի* (ՆԱԲ, 29): 3. *փխբ.* Անբարոյական կյանք վարել (կանանց մասին): *Լօք տըվող կընգանը ճար չինիլ* (Ձ):

ԼՕՔ-ԼՕՔ - Գործածվում է կապակցության մեջ:

- Լօք-լօք անել - 1. Ցատկոտել: *Լօք-լօք ըն անում, թըքանում* (Ձ): 2. *փխբ.* Ուրախությունից թռչկոտել: *Խօխէնք'ը աղանձ'ը վէր տը՛սնում ըն, լօք-լօք ըն անում* (Բ): 3. *փխբ.* Հոխորտալ, սպառնագին խոսել, մեծախոսել: *Վէր ծը՛ռքավըտ պէն չի կ'աս, հօր ը՞ս լօք-լօք ընէս* (Բ):

ԼՕՔԷ - *տե՛ս* ԼՈՒՔՏԱՆԷ:

ԼՕՔ' *(թրք. lök (ծանրաշարժ, ծանր, դանդաղկոտ)* - *1. գ.* Ձկան տեսակ՝ լոքո, որ տարածված է Քուռ եւ Արաքս գետերում: *Մին լօք' ըն փըռնում, քըշըռում, տը՛սնում դանգ օխտը փութ* (Ձ): 2. *ած. գ. փխբ.* Գեր եւ դանդաղաշարժ (մարդ, անասուն): *Ըտըրան էլ ինում ա մին լօք' կընէգ'* (Ձ):

ԼՕՔՏԱ - *տե՛ս* ՆՕԽՏԱ:

Խ

ԽԱԲԱՐ/ԽԱԲԱՐ/ԽԱԲԱՐ *(արաբ. xaber, թրք. haber)* - *գ.* Լուր, տեղեկություն: *Մէհէտ Թիվանէն խաբար ըն հըսցընէս, թա. ...Թօրքէրը նի յըն տը՛ռալ Հանդրանթա յը՛ռէ չէնէրը...* (ԱԱ, 76):

- Խաբար անել - *տե՛ս* Խաբար տալ:

- Խաբար ինիլ - Տեղեկություն ունենալ, տեղյակ լինել: *Կընէգ'ը օխտը սիրական ա պահում, ինք'ը խաբար չօնէ* (Բ):

- Խաբար շօռ ածէլ/պըճըղէլ - Լուրեր տարածել: *Տըղամարթը վէր խաբար շօռ ածից, տըղամարթ չի* (Ձ):

- Խաբար տալ - 1. Հայտնել, տեղեկացնել, իրազեկել: *Կ'ամ ըն կընգանը խաբար տամ, վար էն ա մարթըտ փըլան տը՛ղը ըսպանված* (ՆԼՂԺԲ, 25): 2. Խոսել, պատմել: *Տահանց էլ թօղինք' հըղղցումը, քաչալ ախպօրը անա խաբար տանք* (ՀԺՀ, V, 630):

- Խաբար տանէլ - Լուր՝ տեղեկություն հասցնել: *Խաբար ըն տանում թաքավէրին, վէր տըղան մը՛ռալ ա* (Ձ):

ԽԱԲԱՐ - *տե՛ս* ԽԱԲԱՐ:

ԽԱԲԱՐ- *տե՛ս* ԽԱԲԱՐ:

ԽԱԲԱՐ-ԱԹԱՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խաբար-աթար չի կա- Ոչ մի լուր՝ տեղեկություն չկա: *Վաղօն էրկու տարէ յա՝ ք'ը՛ցալ ա սիգօն, խաբար-աթար չի կա* (Բ):

ԽԱԲԱՐԴԱ(Ր)/ԽԱԲԱՐԴԱ(Ր)/ԽԱԲԱՐԴԱ(Ր) *(պրս. xaberdar (լսի՛ր)* - *ձ.* Բացականչություն, որով զգուշացնում են մարդկանց մի բանից: - *Էյ խաբարդար,- մին ծիյավէր ճըղըրթալավ յէկավ ըտըրանց քըշտավը անց կացավ* (ՋՏ, Ա, 9):

- Խաբարդար ինիլ - Մի բանից հեռու մնալ, անհաղորդ՝ անտեղյակ լինել: *Մը՛ծ քուրը ախպօրը դըրդէրան խաբարդար ար* (Ձ):

ԽԱԲԱՐԴԱ(Ր) - *տե՛ս* ԽԱԲԱՐԴԱ(Ր):

ԽԱԲԱՐԴԱ(Ր) - *տե՛ս* ԽԱԲԱՐԴԱ(Ր):

ԽԱԲԱՐՉԻ - *գ.* Լրաբեր, բանբեր, սուրհանդակ: *Խաբարչին խաբարը դանստի հըսցընում ա թաքավէրին* (Ձ):

- ԽԱԳ'/ԽԱԳ' - *ած.* Խելապակաս, հիմարավուն: *Մարթին կընէգ'ը վէր խագ' իլանվ, տօնը կընքանդվի* (Բ):

ԽԱԳ' - *տե՛ս* ԽԱԳ':

ԽԱԳ'-ԽԱՅՏԱՌԱԿ - *տե՛ս* ԽԱԳՔ-ԽԱՅՏԱՌԱԿ:

ԽԱՋ - *տե՛ս* ԽԱՋ':

ԽԱՆ - *տե՛ս* ԽԱՋ':

ԽԱՋԱՆ/ԽԱՋԱՆ - *գ.* Վայրի սոխանման բույս, որ օգտագործում են թարմ եւ թթու դրած վիճակում: *Ղարաբաղա ծըմըկնումը հինչը ա բոլ՝ խազանը* (Բ):

ԽԱՆԱՋ - *տե՛ս* ԽԱՋԱՆ:

ԽԱՋԱԼ *(թրք. kazel)* - Աշնանը թափված եւ ծառերի տակ հավաքված տերեւներ: *Էս ծըմակըմը տիրէվ, խազալ, ճըղնէր, տէս-տէն ըն հըվաքըմ, մին պուճուր տօն շինըմ, ապրըմ* (ՀԺՀ, V, 41):

- Խազալը վէր տալ - Ուրախությունն անցնել, անտրամադիր դառնալ: *Էրկու օր էլ անց չի կէնում, թանզզան հարթնանը խազալը վէր ա տամ* (Ձ):

- Խազալ տալ - Աշնանային տերեւաթափը սկսվել: *Ծառերը վէր խազալ տան, սըրկէվնէլը էն վախտը կընքաղին* (Ձ):

- Խազալ տը՛ռնալ - *տե՛ս* Խըզնուզնուն տը՛ռնալ:

ԽԱՋԱՅԻՆ - *տե՛ս* ԽԱՋԷՅԻՆ:

ԽԱՋԱՅԻՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԱՋԷՅԻՆՕԹՈՒՆ:

ԽԱՋԱՆԴԱՐ - *տե՛ս* ԽԱՋՆԱԴԱՐ:

ԽԱՋԱՐ - *տե՛ս* ԽԷՋԱՐ:

ԽԱՋԷՅԻՆ/ԽԱՋԷՅԻՆ *(ռուս. хозяин)* - *գ.* Տեր, տնօրեն:*Էտ չօբանը սանսին յըրա ճընանչըմ ա, վէր ուրան խազայինին ախճիգըն ա* (ՀԺՀ, V, 538):

ԽԱՋԷՅԻՆՕԹՈՒՆ/ԽԱՋԷՅԻՆՕԹՈՒՆ - *գ.* Տեր՝ տնօրեն լինելը: *Խազէյինօթունա կըման էրուշ պէն կարում չար անէ Ափկարը* (Բ):

ԽԱՋԻԼ - *տե՛ս* ԽԱՋԻԼ:

ԽԱՋԻԼ - *տե՛ս* ԽԱՋԻԼ:

ԽԱՋ/ԽԱՋ/ԽԱՋ *(գրբ. խազ)* - *գ.* 1. Գիծ, գծիկ: *Տըղան էտ խազին յըրա կըլօխ ա ընգընէս, թա ախճիգը հինչ ա օգալ ասէ* (Զ): 2. Ձեռքի ափի մեջ եղած գծավորումները: *Բախաջին ըտըրա ծը-ռքը փըռնում ա, խըզէրէն յէշում, թա՝ պէնըտ պուրթ ա* (Զ):

- Խազը ընցընել - *տե՛ս* Չափը ընցընել:

- Խազումը վէր ըղնել - Պատրաստ լինել: - *Կուլքի, էքուց կըրըլական ը՞ս հօնը ըսքսիս: - Էն ըմ խազումը վէր ընգած* (Զ):

- Խազ քաշիլ - 1. *տե՛ս* ԽԱՋԻԼ: 2. *տե՛ս* Խաչ քաշիլ(1):

ԽԱՋԻԼ/ԽԱՋԻԼ/ԽԱՋԻԼ *(գրբ. խազեմ)* - *նբ.* 1. Խազ՝ գիծ քաշել, գծել: *Դուլգաները փանը խազում ա, կըտրըմ* (Բ): 2. Մի փոքր կտրել, քերծել: *Տինակավը ծէրքը խազում ա* (Զ): 3. Ջնջել: *Մատիտը յօր ա* ունէս, էտ կիրանծնէն սաղ խըզիս (Բ):

ԽԱՋՎԻԼ/ԽԱՋՎԻԼ/ԽԱՋՎԻԼ - *չբ. եւ կբ.* ԽԱՋԻԼ- ի:

ԽԱՋՆԱ/ԽԱՋՆԱ *(արաբ. xazina, պրս. xazine, թրք. hazine)* - *գ.* 1. Գանձ, հարստություն: *Յօրը խազնան շատ օնէր, էտ խազնիցը յէր կալավ շատ վէսկէ* (ՀԺՀ, V, 135): 2. *տե՛ս* ԽԸՋՆԱՏՕՆ(2): *Խըզնեն պինալիքը տամ ա, պիրում ա կէս խուրջին վէսկավ լըցնում, տուս կամ* (ՀԱԲ, 15, 120:) 3. Ձկնորսական կողովի մեջ տեղադրված այլ կողով, որը արգելակում է ձկների՝ կողովից դուրս գալը: *Խազնան թողում չի՝ ծուկունը ճուվըրանան տուս կա* (Զ):

ԽԱՋՆԱ - *տե՛ս* ԽԱՋՆԱ:

ԽԱՋՆԱԴԱՐ/ԽԱՋՆԱԴԱՐ/ԽԱՋԱՆԴԱՐ *(արաբ., պրս. xazine-dar, թրք. hazinedar)* - *գ.* 1. Գանձապահ, գանձապետ: *Խազնադարը, էս կընգանը տըսնալավ, խըլքը օգում ա, թա կուրցընէ* (ՀԺՀ, VI 198): 2. *փխբ. տե՛ս* ԽԸՋՆԱՏԱՐ (2):

ԽԱՋՆԱԴԱՐ - *տե՛ս* ԽԱՋՆԱԴԱՐ:

ԽԱՋՆԱՉԻ/ԽԱՋՆԱՉԻ - *տե՛ս* ԽԱՋՆԱԴԱՐ:

ԽԱՋՆԱՉԻ - *տե՛ս* ԽԱՋՆԱՉԻ:

ԽԱՋՎԻԼ - *տե՛ս* ԽԱՋՎԻԼ:

ԽԱՋՎԻԼ - *տե՛ս* ԽԱՋՎԻԼ:

ԽԱԹԱ *(արաբ. xata (սխալ, հանցանք), թրք. hata)* - *գ.* Փորձանք, պատուհաս: *Տի էլ խըթան պըրծընում ըն* (ԲՀԲ, 150):

- Խաթա անէլ - Փորձանք՝ պատուհաս բերել՝ առաջացնել: *Խօխան թըվանգավը վէր խաղ ըրավ, գիդա վէր մին խաթա յա ընական* (Բ):

- Խաթան նը՛ստա կախ ինիլ/շըռշըռալ - Անընդհատ փորձանք՝ պատուհաս բերել՝ առաջացնել: *Էն ա խաթան նը՛ստա կախ, ըտըրա հը՛տէ յէլ վէշ մինը նը-հը՛տը հընգըրօթուն չի անում* (Բ):

- Խաթան նըհախ տը՛ղան կինի - Ասում են այն ժամանակ, երբ մեկը փորձում է որեւէ բան անելիս համարձակ քայլ կատարել: *Մարը ասմա. - Էս թուխպավը հօր ը՞ս քինում վը՛ռս, խաթան նըհախ տը՛ղան կինի* (Զ):

- Խաթան քաշիլ - Հեռանալ, գնալ, որպեսզի փորձանք չգա: *Էտ թըվանգը յը՛ր կալ, խաթատ քա՛շի* (Բ):

Խաթա տը՛ռնալ - Փորձանք՝ պատուհաս լինել, նեղություն պատճառել: *Էտ ծին Հաբուն հը՛տէ խաթա յա տը՛ռալ, գունդում չի, թա հունց անէ՝ ծախէ, պըրծընէ* (Բ):

- Խըթու մաչ ըղնէլ - Փորձանքի՝ պատուհասի ենթարկվել: *Մըհէնգ ընգալ ա խըթու մաչ, էլ կարում չի տուս կա* (2):

- Խըթու մաչ քըցիլ - Փորձանքի՝ պատուհասի ենթարկել: *Էտ տըղան ուրան ըխմըղթունավը հօրը խըթու մաչ ա քըցում* (Զ):

- Խըթու շօռ կալ - Կամովին փորձանքի՝ պատուհասի ենթարկվել, վտանգավոր բան ձեռնարկել: *Տընաշինըտ լըհա էն ա խըթու վա շօռ կամ* (Բ):

ԽԱԹԱԲԱԼԱ *(արաբ. xata+bela (փորձանք)* - *տե՛ս* ԽԱԹԱ: ...*Համ ուրանք սաղ-սալամաթ էտ խաթաբալան ըզըտվեցին, համ ժողովուրթը* (ՋՏ, Բ, 229):

ԽԱԹԱԼՈՒ *(թրք. hatali (սխալ, թերի, ձախորդ)* - *ած.* Փորձանք՝ պատուհաս բերող, վտանգավոր: *Շենումը լօխ գունում ին, վէր Վաղօն խաթալու մարթ ա* (Զ):

ԽԱԹԱՅԻՆ - *ած.* 1. Իշխանական ծագում ունեցող, իշխանական: *Ըտըրանք խաթային դանստա յըն ինում* (Զ): 2. *փխբ.* Ընտիր, թանկարժեք: *Խաթային շօրէր ա կը՛ստնում* (Բ):

ԽԱԹԱՆԳ - *տե՛ս* ԸՌԸԽԿԱԼԻ:

ԽԱԹԱՆԳԱՆՋ/ԽԱՔԱՆՂԱՆՋ *(պրս. xatengaz)* - *գ.* Կարճ կոթով եւ դեպի վէր ձգված եզրերով գոգավորված թիակ՝ աղբը վերցնելու համար: ...*Ծէրքէն խաթանգանգ ա ինում, տամ ա, տըղէն ճակատը ճըղում* (ՀԱԲ, 15, 134):

ԽԱԹԱՐ - *գ.* Տասը - տասներկու ձիերից կազմված խումբ՝ քարավան: *Ղըչչըղնէն յըրա յըն պըրծընում էտ խաթարէն, թըլանում* (Զ):

ԽԱԹԵՐ - *տե՛ս* ԽԱԹՐՈՒ:

ԽԱԹԷՐ - *տե՛ս* ԽԱԹՐՈՒ:

ԽԱԹԻՐ/ԽԱԹԻՐ *(արաբ. xatər, թրք. hatir)* - *գ.* Հարգանք, պատիվ:*Հաբուն թըղէլանը յը՛տը միշտ ք'ընիյիս ըմ ըլալ ք'ամագ ընէյիս Հաբուն խաթրուն հէտէ* (ԼՂԲՔ, 272):

- Խաթիր անէլ - *տե՛ս* Խաթիրը պահէլ:

- Խաթիրը կօտըրէլ - Մեկի հարգը՝ պատիվը չպահել, խնդիրքը մերժել: *Պը՛ղին օգից վէչ Թունի դայուն խաթիրը կօտըրէ* (ՀԺՀ, VI, 181):

- Խաթիրը պահէլ - Մեկի հարգը՝ պատիվը պահել, ի պատիվ մեկի՝ մի բան անել՝ կատարել՝ զիջել: *Հիրըվանէն շանը քարավ չըն տալ, տը՛ռնը խաթիրը կըպահին* (ԱԲԲ, 57):

- Խաթիրը քըթէնալ - Մեկին իր լավ վերաբերմունքով՝ խոսքով սիրաշահել, մեկի վերաբերմունքը իր օգտին փոխել տալ: *Էտ խուխօցը մուտանում ա, խաթիրնին քըթէնում, ծը՛ռքին հացը տամ ուրանց, շանը թուլան յօր օնում, պիրում տօն* (ՀԺՀ, VII, 93):

- Խաթիր ինիլ - Հարգանք՝ պատիվ վայելել: *Էտ հարթանը տանքուրցը քըշտէն մը՛ծ խաթիր ա ինում* (Զ):

- Խաթրան ընցընէլ/տուս կալ - *տե՛ս* Խաթիրը կօտըրէլ:

- Խաթրանը քինիլ - Մեկի տրամադրության՝ ցանկության համապատասխան գործել, նրա ցանկությունները կատարել: *Հարթանը վէր ըսկէսվօրը խաթրանը չի քինի, տօնը կըռը՛վ կըղնէ* (Բ):

- Խաթրին նի կալ - Մեկին անհանգստացնել՝ նեղություն տալ՝ վիրավորել՝ անպատվել: *Մարթը ասում ա.- Յը՛ս ք'ունում ըմ, ամմա հու վէր քըմըկիս այուն խաթրին նի յը՛կավ, ինձանա պըրծընական չի* (Զ):

ԽԱԹԻՐ - *տե՛ս* ԽԱԹԻՐ:

ԽԱԹԻՐՋԸՄՕԹՈՒՆ/ԽԱԹԻՐՋԸՄՕԹՈՒՆ - *գ.* Վստահ՝ ապահով լինելը, չտարակուսելը: *Խաթիրջըմօթունը ամմէն մարթու տուված չի* (Զ):

ԽԱԹԻՐԻՋԸՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԱԹԻՐՋԸՄՕԹՈՒՆ:

ԽԱԹՐԱՎ/ԽԱԹՐԱՎ - 1. *ած.* Ուրիշի խնդիրքը չմերժող, ուրիշին ընդառաջող: *Խաթրավ խան հալա իլած չի* (Զ): 2.

մ. Կամավոր կերպով, առանց բռնի ուժ գործադրելու, ոչ զոռով: *Խաթրանվ ըրած կօրծէն տը՛ղը վէշ մին պէն տալ չի* (Զ):

ԽԱԹՐԱՎ - *տե՛ս* ԽԱԹՐԱՎ:

ԽԱԹՐՈՒ/ԽԱԹՐՈՒ/ԽԱԹԷՐ/ԽԱԹԷՐ - *կ.* Հանուն, ի սեր, համար: *Թաքավէրը էտ հըլիվուրէն ասում ա.- Սիպտակ մըգ՛էրէտ խաթրու վըմ ըրալ* (Զ):

ԽԱԹՐՈՒ - *տե՛ս* ԽԱԹՐՈՒ:

ԽԱԹՈՒՆ *(թրք. xatun)* - *տե՛ս* ԽԱՆՈՒՄ:

ԽԱԼ *(պրս. xāl)* - *գ.* 1. Մարդու դեմքի՝ մարմնի կամ կենդանու մորթու վրա ընդհանուր գունավորումից տարբերվող ի ծնե գոյացած բիծ, բնաբիծ, պուտ: *Էտ ըխճըկանը աչի թօշէն էլ մին մը՛ծ խալ ա ինում* (Զ): 2. Ընդհանրապես՝ բիծ, խալանման նշան: *Շարմաղը կ՛անմուր խըլէրավ դարյան կ՛ը՛նում ա, ք՛ինամ հըրսանէք՛* (Զ):

- Խալ ըղնէլ - *տե՛ս* Լանք՛ան ըղնէլ:

- Խալ քըցիլ - *տե՛ս* Լանք՛ան քըցիլ:

ԽԱԼԱ *(արաբ. xale (մորաքույր), թրք. xala (հորաքույր)*- 1. *գ.* Թուրք՝ ադրբեջանցի տիկին: *Խալան ըտըրան տանում ա, նէրքէ տանը կ՛ը՛ղում* (Զ): 2. *ած.* Ծանրաբարո, ծանրակշիռ, լրջախոհ: *Խալա մարթ ա Սանթուր դային* (Բ):

ԽԱԼԱԴԷԼՆԻԿ *(ռուս. холодельник)* - *գ.* 1. Մթերքները սառը վիճակում պահպանելու հարմարանք, սառնարան: *Միէնգ՛ ամմեն տան էլ խալադէլնիկ կա* (Բ): 2. Օդեթորման սարքի օդակաձեւ խողովակը, որը տեղադրվում է ջրով լի տակառի մեջ, որպեսզի օդու գոլորշին սառի եւ հոսի: *Ըրաղէն զավօդէն խալադէլնիկը ծակվալ ա* (Զ):

ԽԱԼԱԹ *(արաբ. xəlát, պրս. xālāt)* - *գ.* 1. Թանկարժէք զգեստ, որով արեւելքում իշխողները պարգեւատրում էին որեւէ մեկին՝ ի նշան իրենց գոհունակության: *Շահ-Աբբասը էս մարթին լանվ վը՛սկավ, խըզնավ, խըլըթնը՛ղավ ղարկում ա ու՛րանց տօն ...* (ՀԺՀ, VII, 53): 2. Նորահարսին՝ նորափեսային տրվող նվեր: *Անդանթ ա՝թանզգան հարթնը հանւ տօն ք՛ինի, խալաթ կըտան* (Զ): 3. Տանը կամ աշխատանքի վայրում հագնելու երկար վերնազգեստ: *Նախշունը խալաթը կ՛ը՛նում ա, ըսքըսում ըմընէք՛ը լըվանալը* (Բ):

- Խալաթ անէլ/տալ - Նվիրել, ընծայել: *Լօմանին ասում ա.- Վը՛ր քու ասածըն ինի, յէս ք՛էզ իրէք հազգար մանէթ տամ, հանլան մին պէն էլ խալաթ կանէմ* (ՀԺՀ, VII, 168):

ԽԱԼԱԹ-ԲԱՐԱԹ - *գ.* Նվերներ, ընծաներ: *Թաքավէրը մէծ խալաթ-բարաթ ա տամ, յօր օնում, կ՛ամ* (ՀԱԲ, 15, 81):

ԽԱԼԱԹԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խալաթլամիշ անէլ - Նվերներ տալ: *Մին քանէ տարէ վէր անց ա կէնում, թաքավը՛ղըն էտ մարթին նօրից ծէն ա տամ, վը՛ր էլլա խալաթլամիշ անէ, դարկէ* (ՆԼՂԺԲ, 63):

ԽԱԼԱՍՏՕՅ *(ռուս. холостой)* - *ած.* 1. Չլիցքավորված: *Խալաստոյ պատրօնանավ վէր յըրա յըն տամ, թօրքէրը փախչում ըն* (Զ): 2. *փխբ.* Չամուսնացած, ամուրի: *Էտ նըկարիչին տանը վէչ մին մարթ չի կար, ինքըն էլ սուբէհ ար, խալաստոյ...* (ՀԺՀ, 177):

ԽԱԼՂԱՐ - *տե՛ս* ՋՈՒԼԱՎԷՐ

ԽԱԼԻ[1] *(պրս. xāli, թրք. hali)* - *տե՛ս* Գ՛ԱԲԱ: *Մահմադը փափաղը տինում ա կըլիխէն, խալին յըրա նըստում* (ՀԱԲ, 15, 18):

ԽԱԼԻ[2] *(արաբ., թրք. xalā (դատարկ տեղ)- ած.* 1. Անմարդաբնակ, ամայի: *Խալի տը՛ղէր ա, վէշ մինը ք՛ինում չի, թա ապըրէ* (Զ): 2. Անմշակ: *Խալի վը՛ղը վէր բիջանրիս, լ՛ավ պէրք յօր կօնիս* (Բ):

ԽԱԼԻՉԱ *(պրս. xaliče)* - *գ.* Փոքր գորգ: *Մին հատ կօրէկ խալիչին տակէն կ՛օղըլ ա կէնում* (ՀԱԲ, 15, 24):

- Խալիչան տական տանւս քաշիլ - Պատվից՝ իշխանությունից՝ պաշտոնից զրկել, սնանկացնել: *Ըստի ժըղովուրթը էտ ախմաղ թաքավէրին տական խալիչան տանւս ըն քաշանում, յիրգ՛իրան նըհը՛ղտ տամ* (Զ):

ԽԱԼԻՍ *(արաբ. xālis, թրք. halis)* - *ած.* Մաքուր, անխառն, զուտ, իսկական: *Թանջիրը մին կիլօ խալիս վը՛սկէ յա տամ, էտ դուշը ինք՛ օնում* (Զ):

ԽԱԼԻՓ - *տե՛ս* ԽԱԼՓԱ:

ԽԱԼԼՈՒ - *գ.* Որսի շուն: *Վը՛րսկանը յըրա յա անում, խալլուն դանստի յըրա յա պըրծընում, ըղվէսին պըկան փըռնում* (Զ):

ԽԱԼԽ *(արաբ. xalk, թրք. halk)* - *գ.* 1. Ժողովուրդ, բազմություն: *Թաքուհին յէշանում ա տը՛սնում՝ մին մը՛ծ խալխ ա կ՛ամ բիդի պալատը* (Զ): 2. Գերդաստան, տոհմ: *Դօրանք ըշխըդօվուր խալխ ըն* (Բ): 3. Ուրիշներ, օտարներ: *Խալխէն խօխէք՛ը վէր տարավ ըն մըծանում, Թափէղը օրավ ա մըծանում* (ՆԱԲ, 38):

- Խալխէն աշկէն շէրանը/փօշը տը՛սնում ա, ու՛րանն աշկէն կ՛ը՛ղանը տը՛սնում չի - Ասում են նրա մասին, ով, իր մեծ պակասությունները անտեսելով, ուրիշների չնչին թերություններն է մատնացույց անում:

- Խալխէն յըրա շօն ա հանչում, ինձ յըրա յէլ կատու վա մըլավում - Ուրիշների վրա արժանավորներն են խոսում, ինձ վրա՝ անարժանները:

ԽԱԼ-ԽԱԼ - *ած.* Խալեր ունեցող, բծավոր: *Խալ-խալ մօրթէ յա* (Բ):

ԽԱԼՅԱՐ - *տե՛ս* ԿԸՋՏՕՊ (2):

ԽԱԼՎԱԹ/ԽՕԼՎԱԹ/ԽՕՎԼԱԹ *(արաբ. xalv(at), պրս. xālvāt, թրք. halvet)* - *ած.* 1. Ազատ, դատարկ: *Խալվաթ տընէր շէնումը շատ կա* (Բ): 2. Առանձին, մեկուսացած, մարդկանցից հեռու: *Ըստրանք հըսնում ըն մին խալվաթ տը՛ղ, ըսքըսում ըտը՛ղ ապրէլը* (Զ): 3. *ած., մ.* Թաքուն, ծածուկ: ...*Քըշէրըս ծօցըտ կըկ՛անմ, խօլվաթ չինի, մին հանզի* (ԼՂՀ, 102):

- Խալվաթ անէլ - Փակ պահել, մարդու ներս չթողնել: *Էտ ախճիգ՛ը ու՛րանն օթաղը խալվաթ ա անում* (Զ):

- Խալվաթ օր - Հանգիստ օր: *Սաղ գ՛անքումը Նուբար աքերը մին խալվաթ օր չի տը՛սավ* (Բ):

ԽԱԼՎԱՐ *(պրս. xālvār (իշաբեռ))* - *գ.* Ծանրության հին չափ, որ հավասար է երեսուն փթի: *Արաշտ տարէն վէր մին հէքտար արտան մին խալվար ցօրէն տը՛ռնա, էլհա լ՛ավ ա* (Բ):

ԽԱԼՏՈՒՐԱ *(ռուս. халтура)* - գ. Անբարեխղճորեն որեւէ բան անելը, անբարեխղճորեն կատարած գործ: *Ըստրա ըրածնէն սաղ խալտուրա յա* (Բ):

- Խալտուրա անէլ - Անբարեխղճորեն՝ իմիջիայլոց անել՝ կատարել: *Հինչ կօր՞ծ, լօխ խալտուրա յըն անում* (Բ):

ԽԱԼՏՈՒՐՇԻԿ *(ռուս. халтурщик)* - *գ.* Անբարեխղճորեն աշխատող: *Իզէն խալտուրշիկ ա, հինչ հանձ բիդի ա՞նէ* (Զ):

ԽԱԼՈՒՏ - *տե՛ս* ԽԱԼ-ԽԱԼ:

ԽԱԼՓԱ/ԽԱԼԻՓ *(գրբ. խալիփայ)* - *գ.* Հին կարգի՝ տերթոդիկյան դպրոցի ուսուցիչ: *Խօխէնք՛ը ծըլըպատակ նստում ըն, լ՛ըհա մինը վէր տանւրանւր ա կ՛ամ, խալիփը ճապկէ ճըպատավը տըրրքցընում ա* (Զ): 2. Հին կարգի դպրոցներում փոքրերին դասավանդող ավագ աշակերտ: *Էլ դասատու, էլ խալիփա, լօխ ըվիրանլ ըն, չափը ընցալ, ըշկըրնէն ունքըրնան պիցըրացալ ա* (Զ):

ԽԱԽԱԼ/ԽԱԽԱԼ[1] *(գրբ. խախալ)* - *գ.* Խոշոր անցքերով մաղ՝ ցորենը, գարին եւ այլ ընդեղենները մաղելու համար: *Այան խանխանլը յօր ա ունէս, նըստէս, էտ ցօրէնը լօխ խըխըլիս* (Զ):

- Խանխանլը ծակ - Անխելք, հիմար: *Խանխանլը ծակ մարթը էրկան կապըրէ* (Զ):

- Խանխանլ տալ - Կուտակվել, հավաքվել: *Վըխճըրնէն ծառէն շուքումը խանխանլ ըն տըվալ* (Բ):

- Խըխանլանվ ճանւր կըրէլ - *տե՛ս* Մաղավ

ճուր կըրէլ: *Էրկու տարէ յա՝ խըխանլանվ ճուր ըմ կըրում* (Բ):

- Խըխանլին կըլօխը պէն ըղնէլ/քըցիլ - Ձեռնարկած գործից օգուտ գալ, ունեցածի վրա մի բան ավելանալ: *Սաղ տարէն կօրծ ըմ անում, ամիա ըսկի խըխանլին կըլօխը պէն չի ըղնում* (Բ):

ԽԱԽԱԼ - *տե՛ս* ԽԱԽԱԼ:

ԽԱԽԱՆԴ/ԽԱԽԱՆԴ - *ած. տե՛ս* Հանգիստ, խաղաղ: *Միհենգ Ղարաբաղա խանխանդ տըէղ չի կա* (Բ):

ԽԱԽԱՆԴ - *տե՛ս* ԽԱԽԱՆԴ:

ԽԱԽՈՒՏ/ԽԱՐԽՈՒԹ *(գրբ. խախուտ) - ած.* Խարխլված, խարխուլ, փլվելու ենթակա: *Խախուտ տօն ար Պուղուն տօնը* (Ձ):

ԽԱԿ *(գրբ. խակ) - ած.* 1. Դեռեւս չհասած, ոչ հասուն: *Խօխան խակ հունը կէրավ, փօրը ցավից* (Բ): 2. *փխբ.* Դեռատի, անչափահաս: *Սիմօնը հանլա խակ խօխա յա իլալ, վէր հանը մըէռալ ա* (Ձ): 3. *փխբ.* Մտավորապես չզարգացած, թերուս, անհմուտ: Խակ մարթ ա Կանփին (Բ): 4. *փխբ.* Չմտածված, չկշռադատված: *Խակ կօրծը կըլօխ չի կանլ* (Ձ):

- Խակը վէր անէլ - *տե՛ս* Համը հանէլ:

- Խակը վէր կանլ - *տե՛ս* Համը տանուս կալ:

- Խակ կօրծ/պէն փըռնէլ - Չմտածված գործել, սխալ գործել: *Ջըհիլնէն խակ կօրծ շատ ըն փըռնում* (Ձ):

ԽԱԿԻ *(պրս. hāki (հողային), թրք. haki (կանաչամոխրագույն, հողագույն) - ած.* Կանաչավուն-հողագույն, կանաչադեղնավուն: *Խակի շօր ա կըէցալ* (Բ):

ԽԱՂ/ՀԱՂ *(գրբ. խաղ) - գ.* 1. Ուրախանալու՝ զվարճանալու զբաղմունք: *Քօհնան խաղէրը լօխ ըղանթան ընգալ ըն* (Բ): 2. Երեխաների արարքները՝ զբաղմունքը, խաղալը: *Թըվանգին սանը վէր ըսկանում ըն, խօխէնքը խաղը թօղում ըն, փախճում տօն* (Ձ): 3. *տե՛ս* ՅԸՐՔ: 4. *փխբ.* Խորամանկություն, մեկին վնասելու՝ վարկաբեկելու համար գործադրված արարք: *Ըտըրա խաղերը վէշ մինը կըլխու չի ըղնում* (Ձ): 5. Անասունների ցատկոտելը՝ վազվզելը: *Ծիյօտանցը խաղը ըտըրանց կօրծա քըցում ա* (Ձ): 6. Մարմնի մասերի՝ ոսկորների միացման տեղերը, հոդ: *Վըէննէս խաղը ցավում ա* (Բ):

- Խաղ անէլ - 1. Որեւէ կարգի խաղով զբաղվել, զվարճանալ: *Խօխէնքը խաղ ըն անում* (Բ): 2. Որեւէ առարկայի հետ զբաղվել, շարժել, պտտեցնել: *Մըհակը յօր ա ունէս, խաղ ընէս* (Բ): 3. *փխբ.* Թռչկոտել, վազվզել, շարժվել: *Կարունքը վէր կամ ա, հիյվընէն խաղ ըն անում* (Ձ): 4. *փխբ.* Որեւէ գործի անլուրջ վերաբերվել: *Հինչ ը՞ս խաղ անում, խէ կօրծըտ կարքէն չը՞ս անում* (Բ): 5. Բեմական որեւէ դեր կատարել: *Արտիստը լավ ա խաղ անում* (Ձ): 6. *փխբ.* Որեւէ մեկին խաբել՝ մոլորեցնել, ձեռ առնել: *Հարթնը ըսկէսվօրը անավ խաղ ա անում* (Բ): 7. Որեւէ խաղի տիրապետել: *Իզէն հինչ տըղամարթ ա՞, կարում չի, թա նարդի էլ խաղ անէ* (Բ): 8. *փխբ.* Տարուբերվել, տատանվել: *Ըստօլը վընէրէն տակէն խաղ ա անում* (Բ):

- Խաղ ասէլ - *տե՛ս* Յըէրք ասէլ: *Պուղին, մին սիպտակ ծի նըստած, խաղ ըսէլավ տօն ա կամ* (ՆԱԲ, 134):

- Խաղը բայաթի տըէռնալ - Ուրախությունը տխրության վերածվել, դժբախտանալ: *...Մըէզ հուրհուր անա հանօղ, խաղըտ տըէռնա բայաթի* (ԼՂԲ, 111):

- Խաղ կապէլ - Երգ հորինել: *Էս աշըղը սազը յէր կալավ, ըտէղ մին խաղ կապից...* (ՀԺՀ, V, 660):

- Խաղը պըռավէլ - Որեւէ գործ՝ երեւույթ ձանձրալի դառնալ, կարեւորությունը՝ պատասխանատվությունն այլեւս չգիտակցվել: *Խաղը պըռավալ ա, հօնձ ընուղնէն էլ առաչվա նըման չըն հօնձ անում* (Ձ):

- Խաղըտ ասէ - *տե՛ս* Յըէրքըտ ասէ:

- Խաղ խաղ անէլ - Վտանգի ենթարկել, փորձանք բերել: *Էտ տըղան տուրմանն տուս ա կամ, էլիա խաղ խաղ անում, հօրը քըցում կըրակու մաչ* (Ձ):

- Խաղու պըրանէլ - Գործը կատակի՝ ծաղրի վերածել: *Էտ օյինբազնէն հարփում ըն, կօրծը խաղու պըրանում* (Ձ):

ԽԱՂԱԼ/ՀԱՂԱԼ *(գրբ. խաղամ) - չբ. տե՛ս* Խաղ անէլ:

ԽԱՂԱԼԻՔ/ԽԸՂԱԼԻՔ/ՀԱՂԱԼԻՔ/ՀԸՂԱԼԻՔ *(գրբ. խաղալիկ, խաղալիք)- գ.* 1. Երեխաների համար խաղալու իր՝ առարկա: *Թաքավէրէն տըղան կաս ա, վէր հանց խօխէն հէտէ խաղալիք չինիլ տա* (ՀԺՀ, V, 595): 2. *փխբ.* Որեւէ մեկի կամակատար՝ քմահաճույքի առարկա: *Աբրամը հինչ տըղամարթ ա՞, կընգանը ըտէրքէն մին խաղալիք ա* (Ձ): 3. *փխբ.* Շատ փոքր կամ մեկի գործածությանը անհամապատասխան առարկա: *Ապան կացէնը յօր ա օնում, թա. - Էս հինչ կացէն ա՞, էս խաղալիք ա ինձէտէ* (Ձ):

ԽԱՂԱՂ/ՀԱՂԱՂ *(գրբ. խաղաղ)* - 1. *ած.* Անկռիվ, անպատերազմ, երբ կամ որտեղ պատերազմ չկա: *Ասում ըն՝ խաղաղ վախտէրքըն էլ էտ պէրթըտ տուրմա յա իլալ...* (ԱԱ, 44): 2. *մ.* Խաղաղ կերպով, խաղաղորեն: *Միհէնգ թօրք չի կա Ղարաբաղ, մըզըէտէ խաղաղ ապրում ընք* (Բ):

ԽԱՂԱՂՈՒԹՈՒՆ - *տե՛ս* ԽԸՂԸՂՕԹՈՒՆ:

ԽԱՂ-ԽԱՂ/ՀԱՂ-ՀԱՂ - *մ.* Մաս առ մաս, անդամ առ անդամ, ըստ ոսկորներն միացնող հոդերի (մարմնի մասին): *Վըէխճարը մօրթում ըն, խաղ-խաղ կըտօրում, իփուում* (Ձ):

ԽԱՂՍ/ՀԱՂՍ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խաղս ըղնէլ/հնիլ/կանալ/տալ - 1. Ուրախությունից թռվռալ՝ ցատկոտել: *Խօխէնքը վէր ըլբաստըրակը տըէսնում ըն, խաղս ըն ըղնում* (Ձ): 2. Այս ու այն կողմ վազվզել, վխտալ (առատությունից): *Մուկնէրը ըրտէրումը խաղս ըն ընգալ* (Բ): 3. Հորդել, եռալ (արյան՝ ուժի՝ եռանդի մասին): *Կարունքը վէր կամ ա, ջանիլ տըղօրցըն ա ըխճըկօրցը ուրունը խաղս ա կամ* (Ձ):

ԽԱՂՈՒ(Ղ)/ԽԱՂՕՂ/ՀԱՂՈՒՂ/ՀԱՂՕՂ/ՀԱՎՕՂ *(գրբ. խաղող)- գ.* 1. Խաղողազգիների ընտանիքին պատկանող թփաբույս, որթատունկ: *Խաղուն տաք տըէղէրը ըն տըէռնում* (Ձ): 2. Այդ բույսի պտուղը, խաղող: *Թունին քընում ա, տէսնում՝ մին մարթ էրկու ճըվարան խաղու վա ծախում* (ՆԱԲ, 103):

- Խաղուն ծըծաղէլ - Խաղողը հասունանալ, հասունանալուց փայլել: *Խաղուն ծըծաղում ա, քըղէլի վախտը ա* (Բ):

ԽԱՂ ՈՒ ՊԱՐ - *գ.* 1. Երգ ու պար, երգելն ու պարելը: *Ջիհիլնէն ամմէն օր հըվաքվում ին, խաղ ու պարավ ունց օրը անց կըցընում* (Ձ): 2. *փխբ.* Շատ հեշտ՝ դյուրին բան՝ գործ: *Հօնձ անէլը խաղ ու պար չի, ամմեն մարթ կարէլ չի անէ* (Բ):

ԽԱՂՔ - ԽԱՅՏԱՌԱԿ/ԽԱԳ-ԽԱՅՏԱՌԱԿ - *տե՛ս* ԲԸՅԱԲՈՒՌ-ԲԷՅՍԸՐԱԹ:

ԽԱՂՕՂ - *տե՛ս* ԽԱՂՈՒ(Ղ):

ԽԱՄ *(պրս. xam, թրք. ham) - ած.* 1. Չմշակված, չվարած, խոպան (հողի մասին): *Լուծը տընում ըն մին դաշանգ ըչէռու վըզի, ճապկէ ճըպատավ էլ մաշկէն թըխում, վէր խամը վարէ* (ՆԱԲ, 71): 2. Անվարժ, անփորձ: *Խամ հօնձ անօղը ճէլլի կընըղանա* (Ձ): 3. Չվարժեցրած, դեռ չլծած՝ չհեծած: *Տըղան լօք ա տամ յէր հնում էտ խամ ծին, հըղէ հնում* (Ձ): 4. Անծանոթ, օտար: *Շինըցէք էտ խամ մարթին լավ հուրհումանթ ըն անում* (Բ): 5. Չտաշված, չհղկված: *Պատը խամ քարավ ա տիրած* (Բ): 6. Չմտածված, չկշռադատված, անփորձությամբ կատարված: *Խամ կօրծը տիժէր ուրուր կըղնէ* (Բ):

- Խամավ ըղնէլ - Մարմնի որեւէ անդամ՝ մաս բռնվել՝ ընդարմանալ (շատ

աշխատելուց կամ երկար ընդմիջումից հետո ֆիզիկական աշխատանք կատարելուց): *Էնքան քար տանշից, ծը՛ռքը խամ ընգավ* (Բ):

- Խամավ քըցիլ - Անվարժ անասուններին շատ բանեցնելով՝ խիստ հոգնեցնել: *Հէնդոն էտ խամ էշին էնքան տարավ ծըմակը, լափ խամավ քըցանվ* (Բ):

- Խամա տանուս կանալ - Երկար ժամանակ չաշխատելուց հետո մի բանի դարձյալ վարժվել: *Էրկու ամէս ա՝ հըպարապ, միհէնգ ա հանլան խամա տանուս կամ Սամսոնը* (Ձ):

- Խամա տանուս պիրիլ - 1. Ձմեռվա հանգստից հետո անասուններին վարժեցնել դաշտային աշխատանքներին: *Կարունքը բիդի յըզնէրէն խամա տանուս օնիս, վէր խամավ չի ըղնին* (Ձ): 2. Ապօրինի կենակցությամբ աղջկան կուսությունից զրկել: *Ըտի էլ վէշ մինը գիդանց վէչ, թա հու վա էտ ըխճըկանը խանփանլ, խամա տանուս պէրալ* (Ձ): 3. Ընդհանրապես՝ սովորեցնել, մի բանի վարժեցնել: *Ղանլգանը մին ամսումը շանգէրդին խամա տանուս պէրավ* (Բ):

- Խամ ինիլ - Մեկին՝ մի բանի ծանոթ չլինել, նրա լավ ու վատ կողմերը չիմանալ (սովորաբար գործածվում է հարցական կամ ժխտական ձեւերով): *Խամ ը՞ս ընդըրանա, գանդում չը՞ս, վէր իզէն կօրծ անօղ չի* (Ձ):

- Խամ կօրծ/պէն փըռնել - Չմտածված բան անել, առանց փորձառության մի բան ձեռնարկել: *Վալօղը խամ կօրծ փըռավ, կըլօխը խաթա պէրավ* (Բ):

- Խամ յը՛զնանը սամուն տալ - Անփորձ մարդուն դժվար գործ հանձնարարել: *Ասում ա.- Էտ ջըհիլին նըհախ չըչարէլ մէր, խամ յէզնանը սամուն չըն տալ* (Ձ):

ԽԱՄԲԱՐ - *գ.* 1. Հացազգիների ընտանիքի պատկանող միամյա կողրավոր բույս, եգիպտացորեն: *Խամբարը վէր ճիրէցել վէչ, պէրք չի տալ* (Բ): 2. Այդ բույսի հատիկը: *Կըճէխաշը լօբան, սիսը՛ռան, ցօրէնան, խըմբարան ըն իփանում* (Բ):

- Խըմբարու մըրօք - *տե՛ս* ԽԸՄԲԸՐԱՇԻԼ:

ԽԱՄ-ԽԱՄ - 1. *ած.* Բոլորովին անվարժ՝ չվարժեցրած: *Խամ - խամ յը՛զնէրը լըծում ըն, կարում չըն, թա վարին* (Ձ): 2. *մ.* Առանց տեղեկություն ունենալու: *Խամ - խամ խօսում ա* (Բ):

ԽԱՄԽԱՐԱ - *գ.* Չմշակված՝ խոպան ու քարքարոտ տեղ: *Յը՛զնէրը լըծում ա, էտ խամխարան վարում* (Ձ):

ԽԱՄ-ԽԸՌՈՒՇ - 1. *տե՛ս* ԽԱՄԽԱՐԱ: 2. *տե՛ս* ԿԸՈՏԸՊԸՈՏԱՆՔ (2):

ԽԱՄՈՒԹ/ԽԱՄՈՒՏ *(թրք. qamut, xamut (կառքին լծվող ձիու վզին հագցվող կիսաշրջանաձեւ փայտ, ձիու լուծ)* - *գ.* Ձիերը կառքին լծելու կաշի: *Խամութու նըման պալին տըփըկօցին տիրած կըլ-խին՝ տօն ա քանըմ* (ՋՏ, Ա, 4):

ԽԱՅԱ *(պրս. xaye (ամորձիք)* - *գ.* 1. Էշի՝ ջորու՝ ձիու առնանդամ: *Էշը խայան տանուս ա կալանլ* (Բ): 2. *փխբ.* Մեծ առնանդամ:

ԽԱՅԱՆ - Կամով ծեծած օրանը, որ պատրաստ է հավաքելու եւ մաղելու համար: *Կալը՛ը հանլան խայան ա, մեր ումէդը այան ա...* (Ձ):

- Խայան անէլ - Հավաքած հասկերը՝ օրանը ծեծել եւ պատրաստել մաղելու համար: *Յօրնէն խօրթնէրը մը՛կնում ըն, խայան անում* (Ձ):

- Խայան ինիլ/կապէլ/տը՛ռնալ - Հավաքված հասկերը՝ օրանը ծեծվել եւ պատրաստվել մաղելու համար: *Յօրէնը, խայան իլանծ, մինը կար վէչ, թա խըխալ՛ի* (Ձ):

ԽԱՅԻՆ *(արաբ., թրք. hayin)* - *ած.* Նախանձ, չար, նենգամիտ, խարդախ: *Շուշքանը՛ղը՛էցէք՛ էլ համ խային, շընը-մուռտառ ըն իլանլ, համ էլ վը՛էղում քանսիբ* (ԱԱ, 34):

ԽԱՅԻՆԱՆԱԼ/ԽԸՅԸՆԱՆԱԼ - *չբ.* Խային դառնալ, խայինի հատկություն ձեռք բերել: *Լավ կընէգ ա իլանլ Սիրէվը, մըհէնգ ա ըտի խայինացալ* (Բ):

ԽԱՅԻՆԼԱՆՄԻՇ/ԽԸՅԸՆԼԱՆՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խայինլանմիշ անէլ - Մէկին կասկածել տալ, միտքը փոխել: *Թաքավէրին տըղան էտ ըխճըկանը շատ ար սիրում, ամիա պառավը կարից ըտըրան խայինլանմիշ անէ* (Ձ):

- Խայինլանմիշ ինիլ/տը՛ռնալ - Կասկածել, միտքը փոխել: *Աստուծ ըտըրա հըսնէլին ա յէշում, մին էլ սըփաթէն, խայինլանմիշ ինում...* (ԱԱ, 66):

ԽԱՅԻՆՎԱՉԻ/ԽԸՅԸՆՎԱՉԻ - *տե՛ս* ԽԱՅԻՆՎԱՐԻ:

ԽԱՅԻՆՎԱՐԻ/ԽԸՅԸՆՎԱՐԻ - *մ.* Նախանձորեն, չարաբար, նենգորեն, խարդախորեն: *Էտ վէգիրը հինչու անում ար, խայինվարի յար անում* (Ձ):

ԽԱՅԻՆՕԹՈՒՆ/ԽԸՅԸՆՕԹՈՒՆ - 1. Խային լինելը, խայինի հատկությունը, նախանձություն, նենգամտություն: *Խայինօթունը Բանդունց ցը՛ղէն Ըստուծանա տըված ա* (Բ):

ԽԱՅՏԱՌԱԿ/ԽԸՅՏԱՌԱԿ *(գրբ. խայտառակ)* - *տե՛ս* ԲԸՅԱԲՈՒՌ:

ԽԱՅՏԱՌԱԿԵԼ/ԽԸՅՏԸՌԱԿԵԼ *(գրբ. խայտառակեմ)* - *նբ. տե՛ս* Բըյաբուռ անել:

ԽԱՅՏԱՌԱԿՉԻ/ԽԸՅՏԸՌԱԿՉԻ *(գրբ. խայտառակիչ)* - *տե՛ս* ԲԸՅԱԲՈՒՌՉԻ:

ԽԱՅՏԱՌԱԿՉՕԹՈՒՆ/ԽԸՅՏԸՌԸԿՉՕԹՈՒՆ *(գրբ. խայտառակութիւն)* - *տե՛ս* ԲԸՅԱԲՈՒՌՉՕԹՈՒՆ:

ԽԱՅՏԱՌԱԿՎԵԼ/ԽԸՅՏԸՌԱԿՎԵԼ - *կբ. եւ չբ.* ԽԱՅՏԱՌԱԿԵԼ - ի:

ԽԱՆ[1] *(պրս. xān, թրք. han)* - գ. Միջնադարյան Արեւելքում իշխանների, ինքնակալի տիտղոս եւ այդ տիտղոսը կրող անձը: *Խանէն զօրքը կամ ա հըսնում տահանց, ըսպանում, տը՛ղ էլ թաղում ըն* (ՆԼՂԺԲ, 147):

- Խանէն առաշկը խօզ՛ տանէլ - Մեծ համարձակություն՝ հանդգնություն ունենալ՝ գործել: *Մարթը ասում ա. - Տու վը՞ս խը՛ղճ, քը՛ը՛զ վէր թօղին, խանէն առաշկը խօզ՛ կըտանիս* (Ձ):

ԽԱՆ[2]/ԽԱՆԱ[2] *(պրս. xān)* - *տե՛ս* ՔԱՐՎԱՆՍԱՐԱ:

ԽԱՆԱ[1] - *տե՛ս* ԽՕՆ:

ԽԱՆԱ[2] - *տե՛ս* ԽԱՆ[2]:

ԽԱՆԱՆԴԱ *(պրս. xanende (լավ երգիչ, երաժշտագետ)* - 1. Ինքնուս՝ ժողովրդական երգիչ: *Մուշըհավէն ըսը՛ցէն՝ խէ սը՛վ ը՞ս կը՛ը՛ցալ, ասից՝ մինակ էտ չի, դանդանն խանանդա յէլ ըմ տը՛ռալ* (Ձ):

ԽԱՆԳԸՌԷԼ - *չբ.* 1. *տե՛ս* ՄԸՌԿ(ԸՎ)ԷԼ(1): 2. Գունաթափվել, խունանալ: *Ծօրը իրը՛վէն տակէն թառ տըված վէր շատ պահիս, կըխանգըռէ* (Բ):

ԽԱՆԳԱԼ - *գ.* Խմորի բարակ շերտը կտրտելով եւ եփելով պատրաստած կերակրատեսակ, որ ուտում են յուղ, մածուն եւ սխտոր խառնելով: *Խանգանլը քը՛ըսիբու խօրանգ ա* (Բ):

ԽԱՆԴԱԿ - *տե՛ս* ԽԱՆԴԱԿ:

ԽԱՆԴԱԿ/ԽԱՆԴԱԿ *(գրբ. խանդակ)* - *գ.* Բնական կամ արհեստական երկար ու խոր փոս: *Յօր ա օնում էտ վը՛սկէն էլ պիրում, մէռալը թաղում մին խընդակում, ինքը՛ը կամ...* (ՀԺՀ, V, 305):

ԽԱՆՋԱԴԱ *(պրս. xan + zade (ծնունդ)* - *գ.* Խանի որդի: *Խաբարը կամ ա, վէր խանզադէն փըռնալ ըն, տարալ կօխալ տանուրմանն* (Ձ):

ԽԱՆԸՄ - *տե՛ս* ԽԱՆՈՒՄ:

ԽԱՆԸՄՎԱՉԻ - *տե՛ս* ԽԸՆԸՄՎԱՉԻ[2]:

ԽԱՆԸՄՎԱՐԻ - *տե՛ս* ԽԸՆԸՄՎԱՐԻ[2]:

ԽԱՆԸՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԸՆԸՄՕԹՈՒՆ[2]:

ԽԱՆԼԸՂ - *գ.* Խաների հավաքատեղի: *Մը՛ծ կ՛օղէրը յա՛ խանլըղնէրումը կինին, յա՛ մէլիք՛արաննէրումը* (Ձ):

ԽԱՆՁ - *տե՛ս* ԽԱՆՁ:

ԽԱՆՁ/ԽԱՆՁ *(գրբ. խանձ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Խանձ տալ - *տե՛ս* ԽԱՆՁԻԼ (1,2,3):

ԽԱՆՁԻԼ - *տե՛ս* ԽԱՆՁԻԼ:

ԽԱՆՁԻԼ/ԽԱՆՁԻԼ *(գրբ. խանձեմ)* - 1. *նբ.* Մաշկի վրայի մազը՝ բուրդը՝ փետուրը, ինչպես նաեւ շորի խավը, չորացած խոտը եւն այրել: *Կըրական մօտէ նըստում ա, մազէրը խանձում* (Բ): 2. Մորթած անասունի ոտքերը եւ գլուխը կրակի վրա երկար պահելով՝ արտաքին մակերեւույթը այրել եւ քերելով մաքրել՝ խաշ պատրաստելու համար: *Տըվարէն վըՀնէրը խանձում ըն, խաշ քըցում* (Բ): 3. Խիստ չորացնել (արեւի մասին) *ԱրըՀվը բուստընէն խանձաղ ա:* 4. *գ.* Խանձած շորի կտոր, որ դնում են կտրվածքի վրա՝ արյունահոսությունը դադարեցնելու համար: *Դաստի մին խանձիլ ըն շինում, տինում կըտըրած տըՀղէն յըրա* (Ձ):

- Խանձած յաբա - Նիհար եւ սեւադեմ մարդ: *Ախճիգը թա.- Էս խանձած յաբան հինչ ա՞ , վէր նըհըՀտը փըսակվիմ* (Ձ):

ԽԱՆՁՎԻԼ - *տե՛ս* ԽԱՆՁՎԻԼ:

ԽԱՆՁՎԻԼ/ԽԱՆՁՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԽԱՆՁԻԼ-ի:

ԽԱՆՁՈՒՂ(ՆԸ)/ԽԱՆՁՕՂ(ՆԸ) *(գրբ. խանձող)- գ.* Կիսով չափ այրված փայտի կտոր: *Էս մարթը բուրդան մին իրիլիս խանձուղ ա յօր օնում, բիդի ուրան ջանը տանում* (ՀԺՀ, VII, 208):

- Խանձուղ շինիլ - Այրել, վառել: *Ըտըրա տօնը մին ժամումը խանձուղ ըն շինում, ուրան էլ փըռնում, տանում* (Ձ):

- Խանձուղ տըՀռնալ - Այրվել, վառվել - *Թօրքէրը սաղ շէնը նի յըն կըցընում, ժըղուվուրթէն իլած-ջիլածը լօխ խանձուղ ա տըՀռնում* (Ձ):

- Խընձուղնէրէն ղաթումը թօղնել - Դժվար կացության մէջ թողնել: *Մին քանէ վախտ անց կընալանը յէտը տըղան կընգանը յօր ա օնում, տուս կամ, տահանց թօղում խընձուղնէրէն ղաթումը* (ՆԼՂԺԲ, 132):

- Խընձուղնէրէն ղաթումը մընալ - Դժվար կացության մեջ ընկնել: *Մարթը մըռնէլանը յըՀտը Շարմաղ բիբին խընձուղնէրէն ղաթումը մընաց* (Ձ):

- Խընձօղու ճուր ածող - *տե՛ս* ԽԱՅԻՆ:

ԽԱՆՁՕՂ(ՆԸ) - *տե՛ս* ԽԱՆՁՈՒՂ(ՆԸ):

ԽԱՆՁԱԼ *(արաբ. xanjar, պրս. xānčār, թրք. hançer)* - *գ.* Դաշույն՝ երկսայրի սրածայր փոքր թուր: *Էտ մունուտին էլ խանչալը հանըմ ա, թըխում, Ալմին կըլօխը կէս անում* (ՀԺՀ, V, 140):

- Խանչալ քաշիլ - *տե՛ս* Խընչալավ խօսէլ:

- Խընչալավ խօսէլ - Խանչալով սպառնալ: *Խանը կընգանը նըհըՀտ խընչալավ ար խօսում* (Ձ):

- Խընչալէն քարը վէր ընդել - Արժանապատվությունը վիրավորվել, անպատվությունը կրել (սովորաբար գործածվում է հարցական կամ ժխտական ձեւերով): *Հաքը ասմա - Հինչ ա՞, վէր տըրըՀխ կըՀնաս, խընչալէտ քարը վէր ա՞ ընդնական* (Ձ):

ԽԱՆՉԻԼ - *նբ.* 1. Ուտելիքի՝ հացի երեսն այրել՝ մեջը հում թողնելով: *Իզէն կարում չի հաց թընխէ, էզգանան խանչում ա* (Բ): 2. Խիստ կերպով այրել՝ խանձել: *Էտ ծըՀրքըտ ըշտըՀղ ը՞ս խանչալ* (Բ): 3. *փխբ.* Տանջել, կսկծացնել, չարչարել: *Էտ ախճիգը մօրը խանչում ա* (Բ):

ԽԱՆՉ-ԽԱՆՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խանչ - խանչ(ը) կաղ - *տե՛ս* ԽԸՆՉ-ԽԱՆՉԷԼ:

ԽԱՆՈՒՄ/ԽԱՆԸՄ *(թրք. xanəm)- գ.* 1. Տիկին, տիրուհի: *Ծառան սանսին յըրա կամ ա, տըՀսնում՝ խանումը մըՀռած* (Ձ): 2. *ծող.* Մակդիր, որ դնում են կանանց վրա: *Պուղին կընգանը ասմա.- Խանում, Մէլիքին կընէգը ըսկի քու մըշտըլըՀղըտ էլ չանժի* (Ձ):

ԽԱՆՈՒՄ-ԽԱԹՈՒՆ - 1. *տե՛ս* ԽԱՆՈՒՄ: 2. *ածական.* Ծանրաբարո (կանանց մասին): *Խանում-խաթուն կընէգ ա Մարյանը* (Բ): 3. *մ.* Խանումի՝ տիրուհու նման, խանումավարի: *Չուբանէն կընէգըն էլ կամ ա հըրսանէք, խանում - խաթուն նըստում* (Ձ):

ԽԱՆՈՒՄՎԱՉԻ - *տե՛ս* ԽԸՆԸՄՎԱՉԻ[2]:

ԽԱՆՈՒՄՎԱՐԻ - *տե՛ս* ԽԸՆԸՄՎԱՐԻ[2]:

ԽԱՆՈՒՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԸՆԸՄՕԹՈՒՆ[2]:

ԽԱԾ[1] - *գ.* 1. Խաշված՝ եփված լինելը, խաշվելու աստիճանը՝ չափը: *Մըսան մին թիքան կըտըրում ա, օտում, թա. - Խաշը պակաս ա* (Ձ): 2. Խոշոր եւ մանր եղջյուրավոր անասունների ոտքերից, գլխից, մասամբ եւ թափանից երկար եփելով պատրաստած ջրալի ճաշ, որ ուտում են սխտոր, քացախ խառնելով, խաշ: *Խաշը տըղըմարթու պէն ա, կընէգը հի՞նչ ա, խաշ օ՞տէլը հինչ* (Բ):

- Խաշը իփիլ (մինին)- Մեկին շատ ծեծել, խիստ պատժել:*Մարթը էտ վէր ըսկանում ա, քինում ա տօն, կընգանը խաշը իփում* (Ձ):

- Խաշ ընդել/կանգ - *տե՛ս* ԽԱԾՎԻԼ:

- Խաշին ճիրին ճուրը - 1. Անհամ՝ անորակ ջրալի կերակուր: *Էս խաշին ճիրին ճուրը հինչ ա՞, վէր իփանգ ըս* (Բ): 2. Հեռու ազգական: - *Էս տըղան քու հինչըտ ա՞: - Խաշիս ճիրին ճուրըն ա* (Բ):

- Խաշ տալ - 1. *տե՛ս* ԽԱԾԻԼ[1]: 2. Մրգերը՝ բանջարեղենը չորացնելուց՝ թթու դնելուց՝ տապակելուց առաջ եռացրած ջրի մեջ քիչ պահել եւ հանել: *Գանվանը խաշ ըն տամ, յըՀտնան մըՀկնում, վէր հիշտ չուրանա* (Բ):

- Խաշ տինիլ/քըցիլ - *Խաշ* կերակրատեսակը եփել: *Մին օր էլ խաշ ա տինում, հըրըվանէն ծէն տամ ղօնաղ* (Ձ):

ԽԱԾ[2] - *տե՛ս* ԹԸԽՏԸՄՕՐ:

- Խաշ անել - Թթխմորը խառնել խմորին եւ հունցել: *Խմօրը խաշ ա անում, ինքը քինամ բօստանը* (Ձ):

- Խաշը կանգ - Թթխմորը թթվել եւ պատրաստ լինել օգտագործելու: *Թըխտըմուրամանը վէր տաք տըՀղ տինիս, խաշը ճէլլի կըկա* (Բ):

- Խաշը պակաս - Անհրաժեշտ չափով չթթված (թթխմորի մասին): *Խաշը պակաս թըխտըմօրավ հունցած խըմօրան լավ հաց չի թըխվէլ* (Ձ):

ԽԱԾԱՐ *(գրբ. խաշար (խոշոր, կոշտ, հաստ, կոշտ կերպով) - ած.* Ոչ խիտ՝ լայն անցքերով հյուսված: *Խաշար չըվալավ անլէր չըն պիրիլ* (ԱԲԲ, 37):

- Խաշար չըվալավ անլէր կըրէլ - *տե՛ս* Մաղավ ճուր կըրէլ:

- Խաշար տըՀռնալ - Ծակծկվել: *Գանլբան էնքան կըՀցալ ա, խաշար ա տըՀռալ* (Բ):

ԽԱԾԷԼ - *տե՛ս* ԽԱԾԻԼ[1]:

ԽԱԾԷՄՆԸ/ԽԱԾԷՎՆԸ/ԽԻԾԷՄՆԸ - *տե՛ս* ԽԱՁԱԼ: ...*Մին փօս կար քանհան, տըՀսնամ՝ թանզան քանդած խաշէմնը կանտանծ...* (ԼՂԲՔ, 272):

ԽԱԾԷՎՆԸ - *տե՛ս* ԽԱԾԷՄՆԸ:

ԽԱԾԻԼ[1]/ԽԱԾԷԼ *(գրբ. խարշեմ) - նբ.* 1. Որեւէ ուտելի բան ջրի մեջ եռացնելով եփել: *Մէսը խաշում ըն, աղավ անում, օտում* (Ձ): 2.*տե՛ս* Խաշ տալ (Ձ): 3. Եռացրած ջրով այրել: *Իփանծ ճուրը վէր ածից, վըՀնէրը խաշից* (Բ): 4. *փխբ.* Այրել, խանձել: *ԱնրըՀվը բաղէրը խաշանլ ա* (Բ): 5. *փխբ.* Տանջել, մեծ վիշտ պատճառել: *Տըղան ուրան փըռնած կուրծէրավը հօրը խաշում ա*(Բ):

ԽԱԾԻԼ[2] - *գ.* Փոխինձից եռացրած ջրով խաշելով պատրաստած կերակրատեսակ, որ ուտում են՝ յուղ կամ սոխառած եւ թան ավելացնելով: *Դարաբաղցէն վէր խաշիլ չօտէ, էլ հինչ դարաբաղցէ* (Ձ):

- Խաշիլը իփիլ (մինին) - *տե՛ս* Խաշը իփիլ (մինին):

ԽԱԾԻՐ - ՂԸՅԱՄԱԹ - *տե՛ս* ՀԱԾԻՐ - ՂԸՅԱՄԱԹ:

ԽԱԾԼԱՄԱ *(թրք. hašlama)* - *գ.* Կերակրատեսակ, որ պատրաստում են ոչխարի, տավարի եւն միսը ջրի մեջ երկար եփելով՝ հաճախ հետը խառնելով կտրատած սոխ, լոլիկ, գազար, տաքդեղ: *Խաշլաման կառանը մըսավըն ա ինում լանգաթ* (Բ):

ԽԱԾԼԸՂ *(թրք. harčlik)*- *գ.* Ամենօրյա ծախսելու դրամ, գրպանի փող: *Ապան ամմէն դօնում թոռնանը խաշլըղ ար տամ* (Ձ):

ԽԱԾԽԱԾ *(գրբ. խաշխաշ)* - *գ.* Կակաչազգիների ընտանիքին պատկանող միամյա բույս, որ տալիս է գլանաձեւ պտուղներ՝ մանր սերմերով, որոնք ուտելի են եւ քնեցնող հատկություն ունեն: *Խըշխաշավ թըխած հացը շատ քախծըր ա ինում* (Բ)

- Խաշխաշ տը^եռնալ - 1. Մասերի վերածվել, պատառոտվել: *Հիլին վէր ա ըղնում, խաշխաշ տը^եռնում* (Բ): 2. Մարմինը պատառոտվել, մեռնել: *Գիրիշ դայուն տըղան մին օր յէր ա իլալ էտ պըռըշնին, վէր ընգալ, խաշխաշ տը^եռալ* (Ձ):

ԽԱԾՎԷԼ - *տե՛ս* ԽԱԾՎԻԼ:

ԽԱԾՎԻԼ/ԽԱԾՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԱՇԻԼ[1]-ի:

ԽԱԾՈՒ *(գրբ. խաշու, խաշոյ (արգանակ, մսաջուր)* - *գ.* Խաշած՝ եփած մսի՝ բանջարեղենի ջուր, արգանակ: *Տանգնը կամ ա տօն, մըսէն խաշուն կըլխէն քաշում* (Ձ):

ԽԱԾՓԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խաշփիշ անել - Հապճեպ եփել՝ թխել՝ խորովել: *Ծէրքը յէղ ու քախցըր ա ըղնում, դանստի խաշփիշ ա անում, օտում* (ՆԱԲ, II, 320):

ԽԱԾՓՈՒԾ/ԽԱՉՓՈՒՉ/ԽԱՍՓՈՒԾ *(թրք. xəspus)* - *ած. գ.* Անբարոյական, անզգամ (մարդ): *Ըտըրան էլ էրկու խաշփուշ նօք^իար ա ինում* (Ձ):

ԽԱՉ *(գրբ. խաչ)* - *գ.* Իրար հատող եւ ուղղանկյուն կազմող ձողերի ձեւով առարկա, որ ծառայում է իբրեւ քրիստոնեական պաշտամունքի խորհրդանիշ, խաչ: *Էտ վախտը տըղան մը^ետըն ա քըցում մօրը տըված խաչը* (ՀԺՀ, V, 176): 2. Խաչաձեւ շքանշան, որով պարգեւատրում են հատկապես պատերազմում քաջություն՝ խիզախություն ցուցաբերածներին: *Էս կըռվանը յը^ետը շատ ջիհիլնէ յըն խաչ ըստացալ* (Բ): 3. *տե՛ս* ԽԱՉՔԱՐ: 4. Խաղաթուղթ, որի վրա նկարված է խաչաձեւ նշան: *Խաչի տուզը ինձ ա ընգալ* (Բ): 5. *փխբ.* Քրիստոնեական կրոն: *Հայը վէշ մին վախտ խաչը մընանա քըցիլ չի* (Ձ): 6. *փխբ.* Ծանր տառապանք՝ փորձություն, որ վիճակվում է մեկին: *Էտ խաչին ամմէն մարթ կարէլ չի տէմ կէնա* (Ձ):

- Խաչ անել - *տե՛ս* Իրը^եսէն խըչըհանել:

- Խաչավ-խըչըմանավ յը^եր օնել - Մեկին շատ հարգել՝ պատվել՝ մեծարել: *Էտ հըլիվուրէն հառինը^եր խաչավ-խըչըմանավ ըն յօր օնում, ուրանց պիրընէրէն պատառըն էլ նըրան տէմ օնում* (ՀԺՀ, VII, 290):

- Խաչավ-մըտաղավ ինք^ի կալած - Մեծ դժվարությամբ ձեռք բերած: *Խաչավ-մըտաղավ ինք^ի կալած ըպըրանքէն յըրա հասանա կըկէնան* (Բ):

- Խաչավ օրթնած - Սուրբ: *Խաչավ օրթնած ծառ ա պըռըշնին* (Ձ):

- Խաչը առանց դէր ճուրը ըղնել - Անօրեն՝ անբարոյական բան կատարվել: *Մարթը մըռնէլիս ասում ա.- Մ կընէգ^ի, դուզըն ա՛սէ. փըսըկվէլանը յը^ետը քանէ հը^ետէ յա՞ խաչը առանց դէր ճուրը ընգալ* (Ձ):

- Խաչը իմըն ա, զօրութունը յը^ես ըմ գուդում - Ես լավ գիտեմ իմ ունեցածի կամ հարազատի՝ ծանոթի ինչ լինելը՝ կարողությունները: *Հանը ասմա.- Խաչը իմըն ա, զօրութունը յը^ես ըմ գուդում. իմ տըղաս կարող չի ըտի պէն ըրած ինի* (Ձ):

- Խաչը կըլխան խըռավէլ - Հավատքը չօգնել, փորձանքի՝ ձախորդության հանդիպել: *Խաչը մէր կըլխան էլ ա խըռավալ* (Բ):

- Խաչը կօթավը կօլ տալ - Մեծ-մեծ երդումներ տալ: *Նախագան ժողովէն վախտը խաչը կօթավը կօլ ա տամ, ամհա յը^ետնան վէշ մին պէն չի անում* (Ձ):

- Խաչը ճուրը քըցիլ - Խաչը մեջն ընկղմելով՝ ջուրն օրինել, ջրօրհնեքի տոնը կատարել: *Լ^իըհա խաչը ճուրը քըցիլիս վախտը էտ կընէգ^իը դէրին աշկավըն ա ըղնում* (Ձ):

- Խաչը էլ ա ուրանը, զօրութունը էլ - Եվ իշխանությունը, եւ միջոցները իր ձեռքում են: *Խաչը էլ ա ուրանը, զօրութունը էլ, հինչը օգում ա, անում ա* (Ձ):

- Խաչը քաշիլ - Տանջվել, տառապանք՝ վիշտ կրել՝ տանել: *Ամմէն մարթ ուրան խաչը ա քաշում* (Ձ):

- Խաչին փըռնըվէլ - Դիվահարվել: *Ասում ըն՝ մը^եհը^ետ մին մարթ էտ սօրփէն քըշտէն կ^իազալ ա, մինչը^եվ տօն հըսնէլը՝ խաչին փըռնըվալ* (Ձ):

- Խաչին տակէն մատաղ մօ՛րթէ, ժուղովուրթէն ըզըդօղէն՝ վընընըտակէն - Ժողովրդի ազատարարը արժանի է ավելի մեծ երկրպագության, քան սուրբը:

- Խաչին քարան պա՛չի, ք^իՕՄանգ^ի ընօղէն՝ ծը^եռքան - Ուրիշներին օգնողը՝ օժանդակողը արժանի է երկրպագության:

- Խաչ հանէլ - *տե՛ս* Իրը^եսէն խըչըհանել:

- Խաչ տինիլ - *տե՛ս* Խաչ քաշիլ (1):

- Խաչ քաշիլ - 1. Մեկից՝ մի բանից հրաժարվել՝ հույսը կտրել, չեղած՝ չունեցած համարել: *Էտ օրվանից հանը տըղէն յըրա խաչ ա քաշում* (Ձ): 2. *տե՛ս* Իրը^եսէն խըչըհանել:

ԽԱՉԱՊՈՒՐԻ *(վրաց. khachapuri)* - *գ.* Կծու, թթու համեմունքներով եւ պանիրով պատրաստված թխվածք: *Ամմէն մարթ չի սիրում խաչապուրին* (Ձ):

ԽԱՉԲՈՒՌ - *գ.* Ցորենի հասկերից կազմված խաչաձեւ փունջ: *Ծը^եռքէնը խաչբուռ ա, յարը տը^եղավը մին աբուռ ա...* (Ձ):

- Խաչբուռ անել - Ցորենի հասկերից խաչաձեւ փունջ կազմել: *Տըղան հասկէրը կըտօրում ա, խաչբուռ անում, տամ ըխճըկանը* (Ձ):

ԽԱՉԷԼ - *տե՛ս* ԽԱՉԻԼ:

ԽԱՉԻԼ/ԽԱՉԷԼ *(գրբ. խաչեմ)* - *նբ.* 1. Մեկին խաչաձեւ փայտի վրա մեխելով՝ սպանել՝ մահապատժի ենթարկել: *Թաքավէրը հըրամանք ա տամ, վէր վէզիրին խաչին* (Ձ): 2. *փխբ.* Տանջել, կեղեքել: *Էտ օյինբազը ժուղուվուրթէն շատ ա խաչում* (Ձ):

- Խաչանդ Քըրիստոսա ըռանգ^իը - Դեղին, դեղնագույն: *Ղազ, հինչ դա՞գ, մին տըրէկանը թըմըմէլու, ռանգ^իը էլ խաչանդ Քըրիստոսա ռանգ^իը* (ՆԱԲ, 37):

ԽԱՉԻԿ - *տե՛ս* ԽԱՉ (4):

ԽԱՉԻԿ-ՄԱՉԻԿ - *տե՛ս* ԽԸՉԸՄԱՉ-ի:

ԽԱՉԿԱԼ[1] *(գրբ. խաչական)* - *գ.* Եկեղեցու բեմում փայտե հարմարանք, որի վրա դրվում է խաչը: *Դէրը խաչը պաչում ա, տինում խաչկալ^իին յըրա* (Ձ):

ԽԱՉԿԱՊ - *գ.* Խաչաձեւ կապ՝ հանգույց: *Վէշ մինը կարում չի էտ խաչկապը յը^ետ անէ* (Ձ):

- Խաչկապ անել - Խաչաձեւ կապել՝ հանգուցել: *Բախաջին մին թիլ ա խաչկապ անում, տինում ըտըրա պէրցին մաչին* (Ձ):

ԽԱՉՄԱՐ/ԽԸՉՄԱՐ/ԽԸՉԸՄԱՐ - *տե՛ս* ԽԷՉԱԿ: 2. *տե՛ս* ԽԱՉԿԱՊ:

ԽԱՉՎԷԼ - *տե՛ս* ԽԱՉՎԻԼ:

ԽԱՉՎԻԼ/ԽԱՉՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԱՇԻԼ-ի:

ԽԱՉ ՈՒ ՄԱՉ - *տե՛ս* ԽԸՉԸՄԱՉ(Ի):

ԽԱՉՓՈՒՉ - *տե՛ս* ԽԱԾՓՈՒԾ:

ԽԱՉՓՕՆՁ - *տե՛ս* ԽԱՉԲՈՒՌ:

ԽԱՉՔԱՐ - *գ.* Վրան խաչ քանդա-

կած սալաքար կամ խաչի ձեւով արձան, որ դնում են ուխտատեղիներում՝ սրբավայրերում՝ գերեզմանոցներում եւն: *Ըստ*ᵉ*ղ առաչ մին մ*ը*ծ կաղնէ յա իլալ՝տակէն մին խաչքար* (Զ):

ԽԱՋԱԼԱԹ *(թրք. hačalet)* - 1. *տե՛ս* ՀԱՄԱ(Ն)Չ: 2. *տե՛ս* ՀԱՒՐԸՄԱԹ:

ԽԱՌ *(պրս. xār (փուշ, փշոտ թուփ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Խառ կանանչ - Մուգ կանաչ: *Վառ կանանչ ըմ կ՚օք՚ըմըտ, խառ կանանչ ըմ կ՚օք՚ըմըտ ...* (ԼՂԲ, 263):

ԽԱՌԱԽՈՒՌԱ - *ած., գ.* 1. Լավ ու վատ, պիտանի ու անպետք (անձեր, իրեր եւն): *Հ՚ըրսընքավը խառախուռա մարթիք՚ ըն հըվաքվալ* (Զ): 2. Անպետք, անգործածելի (ապրանքներ): *Լ՚ավէրը յօր ա օնում, խառախուռան պիժէնում ք՚ըսիբնէրէն* (Զ):

ԽԱՌԷԼ - *տե՛ս* ԽԱՌՆԷԼ:

ԽԱՌԸ - *տե՛ս* ԽԱՌՆԸ:

ԽԱՌԹՈՒԹԷ - *տե՛ս* ԽԱՐԹՈՒԹԷ:

ԽԱՌԹՕԹ - *տե՛ս* ԽԱՐԹՕԹ:

ԽԱՌՆԷԼ/ԽԱՌԷԼ *(գրբ. խառնեմ)* - *նբ.* 1. Տարբեր նյութեր իրար հետ մեկտեղել, այնպես անել, որ միմյանց հետ խառնուրդ կազմեն: *Օշափը իրը*ᵉ*ք չըվալ ցօրէն, իրը*ᵉ*ք չըվալ կ՚ա՛նրի յա խառնում, տըղէն թա.- Բիդի մին քըշէրումը ո՛ւրո՛ւր անա ճօկիս* (Զ): 2. Միեւնույն նյութը այս ու այն կողմ շրջել, խառնել, իրար տալ, հարել: *Կուրկուտը իփիլիս վէր խըռնէցէլ, համը կըկօրչի* (Բ): 3. Մի նյութի մեջ այլ նյութ ավելացնել: *Շըփոթէն նըհը*ᵉ*տ վէր բա՚ք՚մա՛զ չի խառնիս, օտվէլ չի* (Բ): 4. Միավորել, միացնել: *Էրկու արխէն ճո՛ւրը խառնում ըն, վէր կարին բուստըննէն ճիրին* (Զ): 5. Մասնակից դարձնել: *Էտ անըզկամը քըվօրը տըղէն էլ ա խառնըմ ո՛ւրա՛ն կուրծէրէն* (Զ): 6. Շարվածքը՝ կարգը՝ դասավորությունը խախտել: *Բաղվանչին հա՛րփո՛ւմ ա, ջա՛րգ՚էրը խառնում* (Բ): 7. Հարդարանքը փչացնել, խառնշտորել, խճճել: *Քամէն ըխճըկանը մազ՚էրը խառնում ա* (Բ): 8. Շփոթել, հուզել: *Էտ կընգանը ծրկըլթօցը շինա՛ցուց խառնում ա* (Զ): 9. Իրար դեմ լարել՝ գրգռել: *Պառավը ըտըրանց մաչը խառնում ա, ո՛ւրո՛ւր նըհը*ᵉ*տ կըռվըցընում* (Զ):

ԽԱՌՆԸ/ԽԱՌԸ *(գրբ. խառն)*- *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ (2, 3):

ԽԱՌՆԸՎԱՍԿ/ԽԱՌՎԱՍԿ - *տե՛ս* ԽԱՌՆՈՒՐԹ:

ԽԱՌՆԸՎԷԼ/ԽԱՌՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԽԱՌՆԷԼ-ի: *չբ.* 2 Շփոթվելուց՝ հուզվելուց իրեն կորցնել, շշկլվել: *Էտ տըղան ըխճըկանը վէր տը*ᵉ*սնում ա, խառնըվում ա, էլ կարում չի, թա խօսէ* (Զ): 3. Միջամտել: *Թաքավէրը պայման տիրած ա ինում, վէր էս ախճիգ՚ը ո՛ւրա՛ն կուրծէրէն խառնըվէ վուչ* (ՀԱԲ, 15, 69): 4. Խառնաշփոթ վիճակ ստեղծվել: *Ամմէն հինչ խառնըվալ ա, վէշ մին պէն կարում չընք անինք՚* (Բ): 5. Կենակցել, զուգավորվել: *Հասանըն էլ էտ ծիյանցը տը*ᵉ*սած ա իլալ խանէն ծիյանցը նըհը*ᵉ*տ խըռնըվէլիս* (ՀԺՀ, VII, 189):

ԽԱՌՆՈՒՐԹ/ԽԱՌՆՕՐԹ/ԽԱՌՈՒԹ *(գրբ. խառնուրդ)* - *գ.* 1. Տարբեր նյութերի խառնումով ստացված արդյունքը՝ նյութը: *Ճո՛ւրը խառնում ա կ՚ինուն նըհը*ᵉ*տ, խառնուրթը ծախում* (Զ): 2. Իրար խառնված նյութերից յուրաքանչյուրը: *Էտ իլլէրին չըվալումը համ ցօրնու խառնուրթ ա ինո՛ւմ, համ կ՚ա՛նրո՛ւ* (Զ): 3. Տարբեր տեսակների՝ ցեղերի՝ առանձնյակների զուգավորումով՝ խաչասերումով ստացված տեսակ՝ ցեղ, առանձնյակ: *Ճո՛րէն էշու, մին էլ ծիյու խառնուրթ ա* (Բ):

- Խառնուրթ անել - Մի նյութ այլ նյութի հետ խառնել, հատկապես տաք ու սառը ջրերը խառնել: *Ճո՛ւրը խառնուրթ ա անում, լըղանում* (Բ):

ԽԱՌՆՕՐԹ - *տե՛ս* ԽԱՌՆՈՒՐԹ:

ԽԱՌՎԱՍԿ - *տե՛ս* ԽԱՌՆԸՎԱՍԿ:

ԽԱՌՎԷԼ - *տե՛ս* ԽԱՌՆԸՎԷԼ:

ԽԱՌՈՒԹ - *տե՛ս* ԽԱՌՆՈՒՐԹ:

ԽԱՌՈՒ(Ն)Ք - *ած.* Իրար միացած (հոնքերի մասին): *Խառունք օնքէր օնէ Աշխէնը* (Բ):

ԽԱՍ *(արաբ. xass, թրք. xasa)* - *ած.* 1. Ընտիր, լավորակ: *Խաս պո՛ւրթ ա ինք՚ օնում, դօշա՛կ կարում* (Զ): 2. Մետաքս: *Խաս շօր ա կ՚ը*ᵉ*ցալ* (Բ): 3. *տե՛ս* ԽԱԼԻՍ: 4. Սպիտակ (կտորի՝ շորի մասին): *Խաս կըտօր ա, հանց ա լ՚ըհա պիմբըկքօլա ինի* (Բ): 5. *գ.* Մետաքսյա կտոր՝ գործվածք, մետաքս: *Ըսօր ո՛րփա՛թ ա, պաս ա, կըլխիտ Բաղդադի խաս ա...* (ԼՂԲ, 55):

ԽԱՍԻԼ/ԽԸՍԻԼ *(գրբ. խսիր)* - *գ.* Եղեգից՝ ծղոտից՝ դալար բույսերի կեղեւից գործած կարպետ: *Մին խասիլ ըն էտ ծառէն տակէն մը*ᵉ*կնում, յըրա քօն ինո՛ւմ* (Զ):

ԽԱՍԼ՚ԸՅԱ(Մ) - *տե՛ս* ԽԷՇԼ՚ԸՅԱ(Մ):

ԽԱՍՅԱԹ/ ԽԸՍՅԱԹ *(արաբ. xassəyet)* - *գ.* 1. Մարդու հոգեկան բոլոր հատկությունների ամբողջությունը՝ խառնվածք, բնավորություն: *Ղէրին խասյաթը շատ փիս ա ինո՛ւմ, ծըռէն շատ ա ինո՛ւմ չըրչըրէլիս* (ԼՂԲ, 349): 2. Գործելու՝ վարվելու՝ աշխատելու եւն սովորական դարձած եղանակ՝ ձեւ՝ հակում եւն: *Էշ ա, լի՞, խըսյաթ օնէ՝ կըլօ՛խը թափ տալ...* (ԲՅԲ, 196):

ԽԱՍՏԱ *(թրք. hasta)* - *ած. ծղր.* Հիվանդ, վատառողջ: *Խէ կօրծ չը՞ս անում, խաստա յը՞ս* (Բ):

- Խաստա խըմօր - *ծղր.* Հիվանդ՝ վատառողջ մարդ: *Էտ խաստա խըմօրը մէր կըլօ՛խը հա՛լա՛ն շատ օյինէ յա պիրլա՛կա՛ն* (Զ):

ԽԱՍՏԱԼԱՄԻՇ/ԽԸՍՏԸԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խաստալամիշ ինիլ - *ծղր.* Հիվանդանալ: *Ասում ըն՝ էն կըլխըպահէն էլիա խաստալամիշ ա իլալ* (Բ):

ԽԱՍՏԱԽԱՆԱ/ԽԸՍՏԸԽԱՆԱ *(թրք. xəstəxana)* - *ծղր. տե՛ս* ԲԱԼԻՆՑԱ:

ԽԱՍՓՈՒՇ - *տե՛ս* ԽԱՇՓՈՒՇ:

Խավ *(գրբ. խավ)* - *գ.* 1. Աղվամազի բարակ շերտ գործվածքի երեսին: *Պիրթի շօ՛րին խավը շատ կինի* (Բ): 2. Պտուղների եւն վրայի նուրբ մազաշերտ կամ փոշեման շերտ: *Շօ՛րը յօր ա ունէս, սըրկօ՛վլին խավը վէր ընէս, կը՚ծուտէս* (Զ):

ԽԱՎԱՐ *(գրբ. խաւար)* - 1. *գ.* Լույսի բացակայություն, բացարձակ մթություն, խավար: *Տ՚ուս ա կ՚ամ, տը*ᵉ*սնում՝ ամէն տեղ խավար ա, լ՚ուս չըկա ...*(ՀԺՀ, VI, 234): 2 *ած.* Շատ մութ, խավարչտին: *Տըղան ըտի ըղնում ա էտ խավար յէրգ՚իրը* (Զ): 3. Խավարամիտ, հետամնաց: *Էտ շէնին ժօղովուրթը էնքան խավար ըն ինիս, վէր ո՛ւրա՛նց շէնին ըլա՛ծ-չըլա՛ծ իրէք դէրին նըհախ տէղան կուտուրէս ըն* (ՀԺՀ, V, 413):

ԽԱՎԱՐ-ԹԸՐԹԻՇ - *տե՛ս* ԽԱՎԱՐ:

ԽԱՎԱՐԹ(ՆԸ)/ԽԱՎԱՐՍ(ՆԸ) - *գ.* Մաշկային հիվանդություն, որ արտահայտվում է հետզհետե տարածվող մանր բշտիկներով, որոնք լցվում են հեղուկով՝ թարախով, ջրջրուկ: *Խավարթը էտ խուխէն լափ տա՛նջո՛ւմ ա* (Զ):

ԽԱՎԱՐ- ԽԱՍԻՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խավար-խասիս մընալ - Խավարի մեջ խարխափել, լույսի երես չտեսնել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Սօտ ասօղը խավար-խասիս մընա, խըրըվ-խարավ կ՚ա, աշկը պըլթա...* (ՀԺՀ, V, 587):

ԽԱՎԱՐՍ(ՆԸ) - *տե՛ս* ԽԱՎԱՐԹ(ՆԸ):

ԽԱՎԷԾ *(արաբ. xabiš (արմավով եւ յուղով պատրաստված հրուշակեղեն), ասոր. xawisā)* - *գ.* Ուտելիք, որ պատրաստում են ալյուրը յուղի մեջ բովելով եւ մեջը շաքարի օշարակ խառնելով, խավիծ: *Ա՚դա՛թ ա, ծըմըթկանէն հը*ᵉ*տէ խավէծ կըտանին* (Զ):

ԽԱՏՏ *(վրաց. xati (պատկեր, նկար)* - *գ.* Ձեռքով գրելու յուրաքանչյուրին հատուկ ձեւը, ձեռագիր: *Խուջէն խատտավը կ՚ըրում ա, թօխտը տամ...* (ՀԱԲ, 15, 66):

ԽԱՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խար անել - Անարգել, ստորացնել:

էտ կընէգ՛ը մարթին էզգանան խար ար անում (Ձ):

ԽԱՐԱԲ *(արաբ. xarab (ավեր), harap (ավերակ, հիվանդ) - ած.* 1. Ոչ սարքին, փչացած: *Մաշինը խարաբ ա* (Բ): 2. Անհաջող, աննպաստ: *Մը՛զ օնինք՛ վէչ արաբա, մը՛ր պը՛նէրը խարաբ ա...* (ԼՂԲ, 11): 3. Ավերված, քանդված: *Խարաբ տօն ա* (Բ):

- Խարաբ անել - 1. Փչացնել, անպետքացնել: *Սըհաթը քըցո՛ւմ ա ճ՛ուրը, խարաբ անում* (Բ): 2. Անհաջող՝ աննպաստ դարձնել: *Մարթին կօրծը կընէգ՛ըն ա խարաբ անում* (Ձ): 3. Ավերել, քանդել: *Գ՛ուռ շէն ա իլա՛լ Հայլուն, թորքէրընը ըն խարաբ ըրալ* (Բ):

- Խարաբ ինիլ/տը՛ռնալ - 1. Փչանալ, անպետքանալ: *Տըրախտըրը խարաբ ա ինո՛ւմ, վար ընօղնէն մնում ըն մա՛թալ* (Բ):2. Անհաջող՝ աննպաստ դառնալ, վատթարանալ: *Քանի ք՛ընըմ, քանի ժողովուրթէն տո՛ւրո՛ւթի՛ւնը խարաբ ա ինըմ...* (ՀԺՀ, VI, 95): 3. Ավերվել, քանդվել: *Տանը էրկան վախտ վէր ապըրօղ չինի, խարաբ կինի* (Ձ): 4. Հիվանդանալ: *Էնքան էտ նամ ութաղումը ապըրում ա, վէր խարաբ ա ինո՛ւմ* (Ձ):

ԽԱՐԱԲԱ *(թրք. xaraba)* - *տե՛ս* ՊԸՐԻՇԱԿ:

ԽԱՐԱԲԱԽԱՆԱ/ԽԸՐԸԲԸԽԱՆԱ *(թրք. xarabaxana)* - *գ.* Ավերակներով պատված տեղ: *Կարըմ չի, թա տը՛ժօխկըմը տէսածնէս յա լըսածնէս քէզ կ՛իրիմ, վէր տու էլ չի էս խարաբախանին մը՛ղակավը նի մը՛ննիս* (ՋՏ, Բ, 13):

ԽԱՐԱԿ[1] *(գրբ. խարակ (ապառաժ քար), պրս. xārā (խիստ պինդ քար)* - գ. 1. Հերկված արտի մեջ չհերկված հողակտոր: *Արտը վարում ըն, մին խըրէգ՛ խարակ ա մընում* (Բ): 2. Ընդհանրապես՝ որեւէ կատարված բանի անկատար մնացած մաս, բացթողում, վրիպակ: *Իմաստունը կըլխու յա ըղնում, վէր թիլիսիմչին վէր թիլիսիմ ա ըրալ, քըրըցըրալ, մին խըրէգ՛ խարակ տէղ ա մընացալ* (ՀԱԲ, 15, 2):

- Խարակ անել/քըցիլ - 1. Հողը լավ չհերկել, անվար հողաշերտ թողնել: *Հէնդօն կարում չի արտը վարէ, խարակ ա անում* (Ձ): 2. Որեւէ բան անորակ անել, բացթողումներով՝ թերություններով անել: *Դ՛ուլգ՛ա՛նը մը՛ղակը լ՛ավ չի շինա՛լ, խարակ ա ըրալ* (Ձ):

- Խարակը օնէլ - Բացթողումը՝ վրիպակը՝ թերությունը վերացնել: *Տըղան անում ա, հա՛րն էլ հը՛տան խարակը օնում ա* (Ձ):

ԽԱՐԱԿ[2] - *գ.* Փայտի դեզ: *Էրկու խարակ փա՛ղը տահանք մին ամսումը էրո՛ւմ ըն* (Բ):

ԽԱՐԱՉՈՒ - *գ.* 1. Փայտե խաչաձեւ հարմարանք, որի վրա դնում են գերանը եւ սղոցում: *Կ՛էրանը տինո՛ւմ ըն խարաչուվէն յըրա, գ՛իրդա՛ւբիրա՛վ կէս անում* (Ձ): 2. *տե՛ս* ՔԸՐԸՔԱՇԱՆ:

ԽԱՐԱՐ *(արաբ. ğarar (քուրձ), թրք. xarar (քուրձ, մեծ տոպրակ)* - *գ.* 1. Մեծ պարկ՝ հացահատիկ, բամբակ, բուրդ, ծղոտ եւվ լցնելու համար: *Ք՛ո՛ւլա՛ն՛ը ածում ա խարարը, շըլակում, տանում կըվէն տամ* (Բ): 2. *փխբ.* Խիստ անբարոյական՝ շատերի հետ կենակցած կին: *Էտ խարարը օրը օխտը սիրական ա փոխում* (Ձ):

ԽԱՐԹՈՒԹԷ/ԽԱՌԹՈՒԹԷ - *գ.* Թթենու տեսակ, որի պտուղն է խարթոթը: *Հա՛ղրո՛ւթ խարթութէ շատ կա* (Բ):

ԽԱՐԹՕԹ/ԽԱՌԹՕԹ *(գրբ. խառ (փշոտ թուփ), պրս. xar-tut (կոկռոշենի)* - *գ.* Սեւ ու կարմրավուն, թթվաշ մեծահատ թուփ՝ պինդ կոթով: *Խառթօթան լ՛ավ վարէնին յա տը՛ռնում* (Բ):

ԽԱՐԽՈՒԹ - *տե՛ս* ԽԱԽՈՒՏ:

ԽԱՐՁ *(արաբ. xārğ, թրք. harč)* - *գ.* 1. Հարկ, տուրք: *Հ՝ոք՛ո՛ւմա՛թին խարջէրը տալանը յը՛տը տակէն պէն չի մընամ* (Ձ): *2.* Ծախսվող միջոցների ամբողջությունը: *Տօն շինիլին խարջը շատ ա* (Բ): 3. Տան բաժանքի դեպքում աղջիկների՝ քույրերի ստացած բաժինը՝ սպիտակեղեն, անկողին եւն: *Հա՛ռընը էլ վէր մը՛ռնում ա, Անդօնէն քուվէրքը ո՛ւրա՛նց խարջը յօր ըն օնում, ղըրաղ կէնում* (Ձ):

- Խարջ անէլ/տը՛սնալ - Ծախս կատարել, գնումներ անել: *Խարջ ա անում, ք՛ուխէն ծէն տամ դօնաղ* (Ձ):

- Խարջը տո՛ւս օնէլ - Որեւէ բանի վրա ծախսված գումարը ետ շահել: *Խաղուն ինք՛ ա օնում, կ՛ինի շինում, ծախում, մին թա՛հրա՛վ կարում ա խարջը տո՛ւս օնէ* (Ձ):

- Խարջու տակ ըղնէլ - 1. Որեւէ բանի համար ծախս կատարել: *Խարջու տակ ա ըղնում, տը՛ղէն հը՛տէ հըրսանէք՛ անում* (Բ): 2. Տուրքադրվել, հարկադրվել: *Կ՛ըխճ՛ըրնէն կօրչ՛ո՛ւմ ըն, չօբանը խարջու տակ ա ըղնում* (Ձ):

- Խարջու տակ տինիլ/քըցիլ/թօղնէլ: *Էտ ըխճ՛ըկէրքը խը՛ղճ տը՛ղէն խարջու տակ ըն քըցո՛ւմ* (Ձ): 2. Տուրքադրել: *Սուդի յըն տամ, էտ թա՛ջիրնէրէն խարջու տակ քըցո՛ւմ* (Ձ):

ԽԱՐՁ - ԲՕՐՁ - *տե՛ս* ԽԱՐՁ (1, 2):

ԽԱՐՁԻԼ - *նբ.* 1. Ծախսել, որեւէ գործ՝ աշխատանք եւն իրագործելու համար դրամ վճարել՝ տրամադրել: *...Ամ-մէն օր տո՛ւս ա յը՛կալ, պիրանան մի վը՛սկէ վէր քըցա՛լ, էտ մարթըտ խարջա՛լ ա, խօխէնք՛ը պահալ* (ԱԱ, 70): 2. Վաճառել: *Ուստան տանում ա էտ ջամը բըզարումը խարջում ...* (ՀԺՀ, Վ, 393): 3. Սպառել, գործածելով վերջացնել: *Մին շէփտումը մին կարաս կինին խարջո՛ւմ ա, պըրծընում* (Ձ):

ԽԱՐՁՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԽԱՐՁԻԼ-ի:

ԽԱՐՏ *(գրբ. խայթ (խայթոց), խարտ (խարտուք), հ.ե. *khaĭ-t-)* - *գ.* 1. Մեղվի, կարիճի եւն խայթոցը: *Հայը մը՛ղըրաճ՛ա՛նջ ա՝ խարտը կուրցըրած* (ԱԲԲ, 52): 2. Մեղվի՝ խայթելու ժամանակ մարմնի վրա թողած բարակ ծեղը՝ փուշը: *Մը՛ղըրաճ՛ա՛նջը վէր կը՛ծում ա, բիդի դ՛ա՛ստի կը՛ծած տը՛դան խարտը տո՛ւս օնիս, վէր օռչի վէչ* (Բ): 3. *տե՛ս* ԽԱՐՏՕՑ:

ԽԱՐՏԷԼ *(գրբ. խայթեմ (խայթել) խարտեմ (խարտոցել)* - *նբ.* 1. Խայթել (մեղվի, կարիճի եւն մասին): *Շընաճ՛ա՛նջը թօշան խարտալ ա* (Բ): 2. Խարտոցով քերել՝ սրել՝ կտրել: *Խարտօցը յը՛ր ա օնում, կացէնը խարտում* (Բ): 3. *փխբ.* Զգայարանների վրա տհաճորեն ազդել, նյարդերը գրգռել: *Էնքան ընգուճնէս խարտից, յը՛ր կացէ, փախէ* (Ձ):

ԽԱՐՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԱՐՏԷԼ - ի:

ԽԱՐՏՕՑ *(գրբ. խարտոց)* - *գ.* Քերթատամնավոր պողպատյա գործիք, որով սրում են կտրող գործիքները կամ կտրում են բարակ մետաղները: *Սաբավ դ՛ամ՛ուրչի յա Սէտրակը, խարտօց էլ չօնէ* (Ձ):

ԽԱՐՓՈՒԽ - *տե՛ս* ԽԸՐԸՓՕԽ:

ԽԱՓ - *տե՛ս* ԽԱ՛Փ:

ԽԱ՛Փ/ԽԱՓ *(գրբ. խաբ, արաբ. habb (խաբեբա), պրս. xab (խարդախություն)* - *գ.* Խաբելը, խաբկանք: *Էտ խա՛փը Սիմօնէն քըցո՛ւմ ա քընէնք՛ու մաչ* (Ձ):

- Խա՛փա՛վ անէլ/տալ - *տե՛ս* Խա՛փ տալ:

- Խա՛փ յը՛ր օնէլ - *տե՛ս* ԽԱ՛ՓՎԻԼ: *Տը՛ղամարթը վէր խա՛փ յը՛ր կա՛լա՛վ, նը՛ստավ մազաղ կանին* (Ձ):

- Խա՛փ տալ - 1. *տե՛ս* ԽԱ՛ՓԻԼ: 2. *տե՛ս* Խա՛փս տալ:

ԽԱՓԱՆ*(գրբ. խափան)* - *ած.* 1. Ընթացքը խանգարված՝ արգելված՝ խափանված: *Ղըրաղավը՛ն ընցնում ա, յէտ տը՛ռնում, պէնը՛ն էլ մընամ ա խափան* (Ձ): 2. *տե՛ս* ԽԱՐԱԲ (3):

- Խափան անէլ - 1. Ընթացքը խանգարել՝ արգելել՝ խափանել: *Հայրօն հինչ կօրծ փը՛ռնում ար, կընէգ՛ը խափան ար անում* (Ձ): 2. *տե՛ս* Խարաբ անէլ (3):

- Խափան ինիլ/մընալ/տը՛ռնալ - 1. Ընթացքը խանգարվել՝ արգելվել՝ խափանվել: *Մէր շինացուց պէնէրը ծըմը՛ռնը՛ն ա խափան ինո՛ւմ* (Բ): 2. *տե՛ս* Խարաբ ինիլ:

ԽԱՓԸՆԳ/ԽԸՓԸՆԳ - *գ.* 1. Վարագուրաձեւ եղեգնաձածկոց՝ լուսամուտները փակելու համար: *Խանփանգը քաշում ա, տը՛սնում ծունը նի կանչած* (Զ): 2. Դեպի ներքնահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակ: *Խափանգը մընոնան ընդում ա տինի, խոխան խաղ ընէլավ կամ ա, ընդում նէրքէ տոնը* (Զ):

- Խափանգ անէլ - 1. Ծածկել, փակել: *Տոռնը խափանգ ընա* (Բ): 2. Արձակել, իջեցնել, թողնել: *Մազէրընտ խափանգ ըս ընալ, սը՛ռտընս դաղ ըս ընալ* (Զ):

ԽԸՓԸՆԳ - *տե՛ս* ԽԱՓԸՆԳ:

ԽԱՓԷԼ - *տե՛ս* ԽԸՓԻԼ:

ԽԸՓԷԼ - *տե՛ս* ԽԸՓԻԼ:

ԽԱՓԷՓԱՅՈՒԹԻՆ - *տե՛ս* ԽԸՓԷՓԱՅՈՒԹԻՆ:

ԽԸՓԷՓԱՅՈՒԹԻՆ/ԽԱՓԷՓԱՅՈՒԹԻՆ - *գ.* 1. Խաբեբայի արարքը, խաբեբա լինելը: *Խանփեփայութինը փիս պէն ա* (Բ)*:* Խաբելը, խաբեություն: *Օցը ասըմ ա.- Էտ անրազը խափեփայութին ա, Սուղումուն իմաստունին յէրգիրը լիգըն ա* (ՀԺՀ, V, 340):

ԽԱՓԻԼ - *տե՛ս* ԽԱՓԻԼ:

ԽԸՓԻԼ/ԽԱՓԻԼ/ԽԸՓԷԼ/ԽԱՓԷԼ *(գրբ. խաբեմ)* - *նբ.* 1. Սուտ ասել: *Լոխ գինդում ին, վէր չօբանը խանփում ա, ինքը կինալ չի տը՛սալ* (Զ): 2. Խոստումը չկատարել, խոստացածը չիրագործել: *Դինլգանը ասմա.- Հըռնէ էլ ըս մին չըվալ սիսը՛ռ խօսկ տըվալ, ամմա խանփանլ ըս* (Զ): 3. Թյուրիմացության՝ մոլորության մեջ գցել: *Էտ դէվը օգում ա, թա ըստի խըփիլավ էս տըղէն կըլխէն մին քանլագ պիրի, տըղան կըլօխ ա ընդում* (ՀԱԲ, 15, 45): 4. Անբարեխիղճ՝ անազնիվ վարվել (հատկապես առեւտրի մեջ): *Էտ խը՛ղճ մարթին խանփում ըն, կավը իժժան կինավ ինք օնում* (Զ): 5. Գայթակղել, հրապուրելով սեռական կապի մեջ մտնել հետը: *Թանջիրը էտ ըխճըկանը խանփում ա, քըշէրը նըհը՛տը քօն ինում* (Զ): 6. Դավաճանել, հավատարմությունը խախտել: *Կընէգը վէր մարթին խանփից, ընդրանք տօն չըն տը՛ռնալ* (Բ): 7. Հույսերը չարդարացնել: *Կավը խօսրօվէն խանփից, կարունքը ծընից վէչ* (Զ): 8. Մի բանի տպավորություն առաջացնել, պատրանք ստեղծել: *Կընէգը ասում ա.- Ինդա, աշկէրընտ քը՛զ խանփում ըն, էն մէր էշը չի* (Զ):

ԽԱՓԻՍ - *տե՛ս* ԽԸՓՍ:

ԽԸՓԻՍ - *տե՛ս* ԽԸՓՍ:

ԽԸՓԻՍԻ - *տե՛ս* ՏԸՒՐՍԸ:

ԽԱՓԼԱՆ - *տե՛ս* ԽԸՓԼԸՆ:

ԽԸՓԼԸՆ/ԽԱՓԼԱՆ - *տե՛ս* ՍՈՒՏԱՍԻ(Գ):

ԽԸՓՊՈՒԿ - *տե՛ս* ԲԸՆԳԻ:

ԽԱՓՍ - *տե՛ս* ԽԸՓՍ:

ԽԸՓՍ/ԽԱՓՍ/ԽԸՓԻՍ/ԽԱՓԻՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խանփս տալ - 1. Ճարպիկ շարժումով հարվածից՝ բռնվելուց խուսափել: *Էտ խոխան խանփս ա տամ, կարում չընը փըռնին* (Զ): 2. Որեւէ ձեւով (կեղծ փախչելով, կաղ ձեւանալով եւն) մոլորության մեջ գցել: *Էտ օրվանից էլ էս դուշը հըդէ քինոնդնէրէն ըռաչին փախչում ա, խափիս տամ, էլիա մուտանում...* (ԱԱ, 66): *3.* Գործը ձգձգելով՝ անկատար թողնել: *Էրկու տարէ յա՝ բանանիը Ռուբէն դայուն խանփս ա տամ* (Բ):

ԽԱՓՎԷԼ - *տե՛ս* ԽԸՓՎԻԼ:

ԽԸՓՎԷԼ - *տե՛ս* ԽԸՓՎԻԼ:

ԽԱՓՎԻԼ - *տե՛ս* ԽԸՓՎԻԼ:

ԽԸՓՎԻԼ/ԽԱՓՎԻԼ/ԽԸՓՎԷԼ/ԽԱՓՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԽԸՓԻԼ-ի: 2. *չբ.* Սխալվել: *Հէնգ տարէ յա՝ խանփվում ընք, ցօրէնը վըխտէն վարում չընք, ծունը նի յա օնում, մը՛զ թօղում մանթալ* (Բ):

ԽԱՔԱ - *գ.* Փոքր պատառ, փշրանք: *Ծը՛ռքը քընցում ա թօրբան, տը՛սնում հաց չի կա, մընացալ ա մին էրկու խաքա* (Զ):

- Խաքա անէլ - Մանրացնել, փշրանքների վերածել: *Հացը խաքա յա անում, տամ հըվէրէն* (Բ):

ԽԱՔԱՆՈՆԶ - *տե՛ս* ԽԱԹԱՆԳԱՆԶ:

ԽԷ[1]/ԽԻ[1]- *դ.* Ինչու, ինչ պատճառով, ինչի համար: *Թաքավէրը կընզնըվում ա տընդէն յընրա, թա.- Խէ քը՛ցալ ը՞ս* (Զ):

- Խէ՞, զընկընռ ա՞, հօփ տաս, կօլ տաս - *տե՛ս* Խէ՞, հավու ճօտ ա՞, կընլօ՞խը պուք տաս, տէն քընցիս:

- Խէ կախ ը՞ս ինում - Ասում են նրանց, ովքեր, չնայած ունեցած հնարավորությանը, տրտնջում, բողոքում են, իրենց աղքատ՝ անկարող ձեւացնում, ժլատություն անում: *Մինը ինի, ասէ՝ Թէմուր, խէ կախ ը՞ս ինում, էն ա կումընտ հիյվանավ լիգը, մինը մորթէ, տընդէտ հը՛տէ հընրսանէքը ընրա* (Զ):

- Խէ՞, հավու ճօտ ա՞, կընլօ՞խը պուք տաս, տէն քընցիս - Հեշտ բան մի կարծիր: *Մարը ասմա.- Խէ՞, հավու ճօտ ա՞, կընլօ՞խը պուք տաս, տէն քընցիս, տու իմ ըխճըկանըս մազին էլ չընս կարէլ նի կանս* (Զ):

- Խէ՞, յը՛ս Բադին ը՞մ - Ես հիմար չեմ, ինձ չես կարող խաբել: *Դէրվիշը օգում ա ընտրան խանփի, վը՛սկէն յօր օնէ, էտ մարթը ասմա՝ խէ՞, յը՛ս Բադին ը՞մ* (Զ):

- Խէ՞, յը՛ս մը՛ռալ ը՞մ - Ես թույլ չեմ տա, որ այդպես լինի: *Սամսոն դային ասմա.- Խէ՞, յը՛ս մը՛ռալ ը՞մ, վէր թօրքը մէր շէնումը տօն շինի* (Զ):

- Խէ՞, փափուկ հաց ա՞, հօփ տաս, կօլ տաս - *տե՛ս* Խէ՞, հավու ճօտ ա՞, կընլօ՞խը պուք տաս, տէն քընցիս:

Խէ[2]/ԽԻ[2] - *մ.* Չափից դուրս, շատ: *Քընընմ ա թուշ մին քօլի տակի խէ լանվ կանանչ խօտ կար, ընդէղ պընրանվըմ* (ՀԺՀ, V, 17):

ԽԷՋԱՆ/ԽԻՋԱՆ *(վրաց. xizani)* - *գ.* 1. Ընտանիք (կին եւ երեխաներ): *Կավընն ա արտը վէր ինի վէչ, շինանցուն խէզանը տունզնը կըմընա* (Զ): 2. Երեխա, զավակ: *Էս թաքավէրիս էլ իսկի խէզան ինում չիլանլ* (ՀԺՀ, VI, 77): 3. Կին, ամուսին: *Մարը ասմա.- Խէ՞ փըսակվում չը՞ս, մին խէզան պիրիս, ինձ քիմանգ անէ* (Բ):

ԽԷՋԸՐ/ԽԱՋԱՐ *(գրբ. խիզար, թրք. xazar)* - *տե՛ս* ԳԸՐԴԸԲԻՐ:

ԽԷԹ-ԽԷԹ/ԽԸԹԸԽԷԹ *(գրբ. խէթ (խոժոռ նայվածք)* - *մ.* Խոժոռ հայացքով, խոժոռ կերպով, խստորեն: *Բըզարին մարթիքը խէթ-խէթ ընըրան ըն յէշընմ, ամմա վը՛շ մինը մուտանըմ չի* (ՀԺՀ, V, 233):

- Խէթ-խէթ անէլ - Խեթ-խեթ՝ խոժոռ հայացքով նայել: *Հինչ ը՞ս խէթ-խէթ անում* (Բ):

ԽԷԺՆԸ *(գրբ. խեժ, խիժ (խեժ, ձյութ)* - *գ.* 1. Որոշ ծառատեսակների կեղեւից հոսող թանձր մածուցիկ հյութ: *Գանվանլուն ա ծիրանուն յընրա յա շատ խէժնը ինում* (Բ): 2. Նորածին կովի՝ ոչխարի՝ այծի եւն կաթից եփված թանձր ուտելիք: *Անդաթ ա, վէր մինին Ն՞ը՛տէ խէժնը դարկին, ամանը կընտիրտակէ, մաչը աղ ածէ, յը՛տ տա* (Բ): 3. *ածական. փխբ.* Փափուկ, մեջը ծակոտկեն: *Խէժնը հաց ա* (Բ):

ԽԷԼԱԳԱՐ *(գրբ. խելագար)* - *գ., ածական.* Հոգեկան հիվանդությամբ տառապող (անձ), խելագար: *Ընընրան էլ մին խէլագար քուր ա ինիս* (Զ):

ԽԷԼԱԳԱՐՎԷԼ *(գրբ. խելագարիմ)* - *չբ.* Խելագար դառնալ, խելագարվել: *Ասում ըն՝ Քընռանց Բափկէնը խէլագարվալ ա* (Բ):

ԽԷԼԱԳԱՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. խելագարեցուցանեմ)* - *նբ.* ԽԷԼԱԳԱՐՎԷԼ-ի:

ԽԷԼԱԳԱՐՈԹՈՒՆ *(գրբ. խելագարութիւն)* - *գ.* Հոգեկան խանգարում, խելագարություն: *Խէլագարօթունը մը՛ծ դանդ ա* (Զ):

ԽԷԼ(Լ)Ա - *տե՛ս* ԽԻԼ(Լ)Ա:

ԽԷԼԻՆՔ/ԽԸ՞ԼԻՆՔ/ԽՕԼԻ(Ն)Ք *(գրբ. խելօք)* - *ածական. գ.* 1. Խելամիտ, խոհուն, խելացի, գրագետ: *Հանլուվէրէն մին շատ խէլինք ախճիգ ա ինիս* (ՀԲ, 343): 2. Ողջամիտ, խելքը տեղը: *Էտ մը՛ծ ախպէրը խէլինք ա ինում, կուճինը՝*

ախմաղ (Զ): 3. *ած.* Խելք ու խելացիություն արտահայտող: *Խէլունք աշկէր օնէ* (Բ): 4. Բովանդակալից, խորիմաստ: *Թաքավէրը տըսնաս ա, վէր էտ ախճիգ-ը խօլունք պէնէր ա ընէս* (Զ): 5. Բնավորությամբ հանգիստ, խաղաղ: *Խէլունք խօխան էլ ա լաւ, պըէլըն էլ* (Բ): 6. Կշռադատված, մտածված: *Խէլունք կօրծ ըս փըռնալ* (Զ): *մ.* 7. Հանգիստ կերպով, առանց աղմուկի՝ չարության: *Կամ ա, խէլունք նըստում, ըսքըսում լօխ նաղլ անէլը* (Զ): 8. Կշռադատորեն, մտածված կերպով: *Էտ մարթը ուրան կօրծը խէլունք ա անում* (Զ):

- Խէլունքը մինչըէվ քընէնք անէ, պըէլը կ'ըէտը կընցընէ - Արդյունքի հասնելու համար պետք է ժամանակ չկորցնել:

- Խէլունք կէնալ/մընալ - Չարություն չանել, հանգիստ մնալ: *Մարը խուխէն ասմա.- Տըէղըտ խէլունք կա՛ց, թա չէ թակ ըս ուտըլան* (Բ):

- Խէլունք մարթին նըհըէտ քար կըրէ՛, կ'իժին նըհըէտ փըլավ մէ՛լ օտէլ - Խելոքի հետ տանջվելը գերադասելի է գիժի հետ ուրախանալուց:

ԽԷԼՔ - *տե՛ս* ԽԸԷԼՔ:

ԽԷԼՔԱՎ - *տե՛ս* ԽԸԷԼՔԱՎ:

ԽԷԼՔԸԽԸՐԱՏ - *տե՛ս* ԽԸԷԼՔԸԽԸՐԱՏ:

ԽԷԽԾ - *տե՛ս* ԽԸԷՂԾ:

ԽԷԽՉ - *տե՛ս* ԽԸԷՂԾ:

ԽԷԽՏ(Ը)ՎԻԼ/ԽԸԷԽՏ(Ը)ՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԽԷԽՏԻԼ-ի:

- Խէխտըվածէն տանը չըվանէն/ք'ընդիրին անումը տալ չըն - Դժբախտության ենթարկվածի՝ նրա հարազատների ներկայությամբ պետք է խուսափել այդ դժբախտության հանգամանքները վերլուծելուց:

ԽԷԽՏԻԼ/ԽԸԷԽՏԻԼ *(գրբ. խեղդեմ)* - *նբ.* 1. Ձեռքի՝ պարանի՝ ջրի եւ այլ միջոցներով շնչառությունը կասեցնելով՝ մեռցնել՝ սպանել: *Ք'անդիրը քըցում ըն պօկը, ծիք' տամ, խէխտում, ըտըէղ էլ թաղում* (Զ): 2. Ազատ շնչելու արգելքներ ստեղծել, շնչառությունը դժվարացնել: *Ըսօր շատ ա տաք, ան՚ըէվը խըէխտում ա* (Բ): 3. Սեղմել, ճնշել, նեղել: *Շալվարը նըէղ ա, խէխտում ա* (Բ): 4. *փխբ.* Աճը կանգնեցնել, թույլ չտալ աճել: *Քըղանը բօստանը օնում ա, շիթիլնէն խէխտում* (Բ): 5. *փխբ.* Մի բան պահանջելով՝ անելանելի դրության մեջ դնել: *Պարթկ ա, լի՚, հիբը ինի, կըտա, հինչ ը՚ս էտ մարթին խէխտում* (Զ):

- Խէխտած աղվէս - Պինդ հագնված՝ զգեստավորված, հատկապես օձիքը ամուր կապած (մարդկանց մասին): *Էտ խէխտած աղվէսը հինչ կօրծ բիդի ա՚նէ* (Զ):

ԽԷՂԱՓՈՒԼ - *մ.* Հանկարծ, անսպասելի: *Էս տըղան էլխէղափուլ կ'ամ ա* (ՀԺՀ, VII, 218):

ԽԷՂԷՓ - *տե՛ս* ԼԱՓՈՒԾ (1):

ԽԷՂԾ - *տե՛ս* ԽԸԷՂԾ:

ԽԷԾ - *տե՛ս* ԽԸՈԷԾ:

ԽԷԾԻԼ - *տե՛ս* ԽԸԾԷԼ:

ԽԷՄ(Ք) *(գրբ. խէմ)* - *գ.* Մաղի՝ թմբուկի եւն փայտե շրջանակ: *Մաղէն-խէմքը կօտըրալ ա* (Զ):

ԽԷՅԼԱԿ' - *տե՛ս* ԽԻԼ(Լ)Ա՚:

ԽԷՆ/ԽԻՆ - 1. *տե՛ս* ԽԸՆԸԽԱԾՈՒ: 2. *գ.* Կաթի յուղը: *Կ'ումաշին խէնը շատ ա ինում* (Բ):

ԽԷՇԼ'ԸՅԱ(Մ)/ԽԷՉԼ'ԸՅԱ(Մ)/ԽԱՍԼ'ԸՅԱ(Մ) - *վ.* 1. *տե՛ս* ՄԱՂՕԼ: 2. Ճիշտն այն է, որ: *Խէշլ'ըհամ օգ'ալ չըս փիսամարթ տը՚ռնաս* (Զ):

ԽԷՇԿԷԼ - *տե՛ս* ՍԸՄԿԷԼ:

ԽԷՉԱԿ/ԽԷՉԱ՚Կ *(գրբ. խէչ, հ.ե. *khaiṭio-)* - *գ.* Փայտյա երկճյուղ ձող, որ գործածում են իբրեւ նեցուկ՝ հենարան: *Ք'ընում ա ծըմական խէչակ կըտրում, պ'ուրում* (ՀԺՀ, V, 189):

- Խէչակ տալ - Որեւէ բանի տակ խեչակ դնել՝ կոտրվելուց՝ ծռվելուց՝ ընկնելուց պաշտպանելու համար: *Խընձօրը էնքան շատ ա ինում, վէր ամմէն ճէղնը խէչակ ըն տամ, հանցու կօտըրէ վէչ* (Բ):

ԽԷՉԱ՚Կ - *տե՛ս* ԽԷՉԱԿ:

ԽԷՉԼ'ԸՅԱ(Մ) - *տե՛ս* ԽԷՇԼ'ԸՅԱ(Մ):

ԽԷՌ - *տե՛ս* ԽԸԷՌ:

ԽԷՎ - *ած.* Խէնթ, գիժ: *Խէվին հիշկան օգ'ում ըս, խըրատ տօ, օքութ չի* (Զ):

ԽԷՐ *(արաբ. xayr (բարիք), պրս. xeyr)* - *գ.* 1. Շահ, օգուտ: *Բաննանը ասմա.- Էտ վէր ըտի ասում ըս, պա իմ խէ՚րըս վէրըն ա* (Զ): 2. Բարեգործություն, բարերարություն: *Էրուշ յիրգ'իրնէրում ապըրող հրյէրէն խէրը Ղարաբաղա հը՚տէ մը՚ծ ա* (Բ): 3. *ած.* Բարի, լավ, ուրախ: *Տընաշինըտ հանլա մէհէտ մին խէր պէն ասած չի* (Բ):

- Խէր անել - 1. Օգուտ քաղել, շահել: *Ժըղօվուրթը ըստարէ բըղէրան շատ ըն խէր ըրալ* (Բ): Բարեգործություն՝ բարերարություն անել: *Էտ մարթը ուրանց շէնին հը՚տէ շատ խէր ա ըրալ* (Զ):

- Խէրը ըրալ ըս, սուվաբըն էլ ըրա - Լավությունը՝ բարեգործությունը կիսատ մի՛ թող, մինչեւ վերջ հասցրու՛: *Մա՛ցակ, խէրը ըրալ ըս, սուվաբըն էլ ըրա՛, յըրկէ ք'ըմանգ' ըս ըրալ՝ արտըս հընձալ ըմ, ըսօր էլ ք'ըմանգ' ըրա՝ կալ'ը թակիմ* (Զ):

- Խէրը կըտրցընել - Օգուտից՝ բարիքից զրկել: *Պահէստապէտին տուս ըն քըցում, խէրը կըտրցընում* (Զ):

- Խէրը մաչան վէր ածէլ - Որեւէ շահավետ գործ փչացնել, անօգուտ դարձնել: *Տարէն թուռըյին ըրավ, պ'ուրուտին կօրծէն խէրը մաչան վէր ածից* (Զ):

- Խէր(ը) տը՚ռնալ - Մեկից՝ մի բանից օգտվել, շահ ունենալ: *Ծառը բիդի բիջարիս, վէր խէրը տը՚ռնաս* (Բ):

- Խէրը տը՚ռնա Հարաբէդը, ջարմանը քաշի Կարաբէդը - Ասում են այն դեպքում, երբ որեւէ բանից շահում է մեկը, իսկ դրա վնասը քաշում է մյուսը:

- Խէր ինիլ - Օգուտ՝ շահ ունենալ: *Արչը ասմա.- Մարթ ախպէր, յը՚ս հինչ խէր օ՚նիմ էտ կօրծումը* (Զ):

- Խէր ինի - 1. Ի՚նչ բարի լուր՝ գործ կա, ի՚նչ լուր ես բերել, ինչի՚ համար ես եկել՝ գնում եւն: *Վանի դայի, խէր ինի՚, էտ քըշէրավ ըշտը՚ղ ը՚ս ք'ունում* (Բ): 2. Բարեմաղթություն փոշտացողին: *Սաբիր ա կ'ամ, մարթը թա՝խէր ինի* (Զ):

ԽԷՐ-ԲԱՐԱՔ'ԱԹ - *գ.* Շահ՝ օգուտ եւ հաջողություն՝ լիություն: *Ղարաբաղցուց խէր-բարաք'ութը Աստուծ ա տամ* (Բ):

ԽԷՐ-ՇԱՌ - *գ. ած.* Լավ ու վատ, բարի ու չար, շահավետ ու անօգուտ (դրություն, վիճակ եւն): *Հային խէրը-շառը հայըն ա գ'ուդում* (Զ): 2. Տերողորմայով՝ համրիչով որեւէ մեկի՝ բանի վիճակը՝ վախճանը որոշելու ձեւ, երբ ամեն մի հատիկը քաշելիս հերթականությամբ ասում են՝ **խէ՚ր, շա՚ռ,** եւ որի վրա վերջանում է, ուրեմն վախճանը այդպես պետք է լինի: *Հաբին տիրըդօրման քըցում ա՝խէ՚ր, շա՚ռ....* (Զ):

- Խէրը-շառը գ'իդալ - Լավն ու վատը, բարին ու չարը ճանաչել՝ հասկանալ: *Ախմաղ մարթ ա Իսակը, ուրան խէրը-շառը գ'ուդում չի* (Բ):

- Խէրը-շառը խառնըվէլ - Իրավիճակը բարդանալ, խառնաշփոթություն ստեղծվել: *Կըռը՚վը ըսքըսում ա, խէրը - շառը խառնըվում ա* (Զ):

ԽԷՐՎԷԼ - տե՛ս ԽԷՐՎԻԼ:

ԽԷՐՎԻԼ/ԽԷՐՎԷԼ - *չբ.* Օգտվել, շահվել: *Անդար անիմ ըստի դարը. մինը ամմէն օր խէրվում ա, մինըն էլ հաց չի քըթէնում, թա ապրէ* (Բ):

ԽԷՑԿ - *տե՛ս* ՉԱՆԱՂ:

ԽԸԲԸՐԱԲՕՎ - *գ.* Երկար ոտքերով սարդի տեսակ: *Մին խըբըրաբօվ ա փըռնում, տինում ծօցումը, ք'ինամ* (Զ):

ԽԸԲԸՐԱՏՈՒ - 1. *գ. ած.* Լուր հայտնող (մարդ): *Էտ խըբըրատուն դաստի խաբարը տանում ա, հըսցընում թաքավէրին ըխճըկանը* (Զ): 2. *տե՛ս* ԽԸՄԲԸՐԿԱՏՈՒ:

ԽԸԲԸՐԷՋԱ՚Ն/ԽԸԲԻՐԷՋԱՆ - 1. *գ. ած.* Մեկի մասին ասվածը նրան հայտնող՝ խաբարբզան: *Մինէշակը մին*

դաշանգ՝ ախչիգ՝ ա լալ, ամմա խրբիրբէ-զան ա լալ... (ԱԱ, 62):

ԽԲԲԸՐԲԸՁԸՆՕԹՈՒՆ/ԽԲԲԻՐԲԻ-ՁԻՆՕԹՈՒՆ - *գ.* Խաբարբզան լինելը, խաբարբզանի արարքը: *Խրբրրբզը-նօթունը տրղրմարթին լայաղ պէն չի* (Բ):

ԽԲԲԸՐՕԹՈՒՆ/ԽԲԲԻՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԱԲԱՐ:

ԽԲԲԻՐԲԷՁԱՆ - *տե՛ս* ԽԲԲԸՐԲԷ-ՁԱՆ:

ԽԲԲԻՐԲԻՁԻՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԲ-ԲԸՐԲԸՁԸՆՕԹՈՒՆ:

ԽԲԲԻՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԲԲԸՐՕ-ԹՈՒՆ:

ԽԸԳԱՆԱԼ - *չբ.* Խելապակաս դառնալ: *Խը՛լքը կըլխէն մարթը, վէր խըգէ-րէն նըհը՛տ ապրրէ, կըխըգանա* (Բ):

ԽԸԳԱՎՈՒՆ - *ած.* Մի քիչ խելա-պակաս: *Խըգավուն կընէգ՝ ա Շար-մաղը* (Բ):

ԽԸԳԸՎԱՉԻ - *տե՛ս* ԽԸԳԸՎԱՐԻ:

ԽԸԳԸՎԱՐԻ - *մ.* Խելապակասի նման, հիմարաբար: *Խըգըվարի փըռ-նած կօրծէն ախրը խէր չինիլ:*

ԽԸԳԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԽԸԳԱՆԱԼ-ի:

ԽԸԳՕԹՈՒՆ - *գ.* Խելապակաս լինե-լը, խելապակասի արարքը: *Խըգօթունը Հէրսիլին անա անպակաս ա* (Բ):

ԽԸՁ - Գործածվում է կապակցու-թյան մեջ:

- Խըզ անէլ - *տե՛ս* ԽԸՌԱՎԷԼ:

ԽԸՁԱՐԷԼ - *տե՛ս* ԽԸՁԱՐԷԼ:

ԽԸՁԱՐԷԼ/ԽԸՁԱՐԷԼ - *տե՛ս* Գ՝ԸՐ-ԴԸԲԻՐԻԼ:

ԽԸՁՁԱԼ - *չբ.* Մրսած լինելով կամ այլ պատճառով կոկորդից խռպոտ հնչյուններ արձակել: *Էտ խէ խըզզամ ը՞ս, մըրսալ ը՞ս* (Բ):

ԽԸՁՁԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՁՁԱԼ:

ԽԸՁՁՕՆ - *գ.* Կոկորդից խռպոտ հնչյուններ հանելը, խզզալու ձայնը: *Ըտրրա խըզզօնը լօխճին քունըհարամ ա անում* (Ձ):

ԽԸՁՁՕՑ - *տե՛ս* ԽԸՁՁՕՆ:

ԽԸՁԸԼԱԹԱՓ - *գ.* 1. Աշնանը ծառե-րի տերեւները թափվելը, աշնանային տերեւաթափ: *Ջըկըռը խըզըլթափանը յը՛տըն ա հըսնում* (Ձ): 2. Փետուրները թափվելը (թռչունների մասին): *Ամը՛ռնը վէր կ՝ամ ա, հըվէրէն խըզըլաթափը ըսքըսում ա* (Բ):

ԽԸՁԸԼԱԼԱ[1]/ԽԸՁԼԱԼԱ[1] - *գ.* Ձկնկիթ, խավիար: *Կընանչի էլ չի տիրալ, խըզըլալա էլ, ախըր մին ղօլավ ղըլըցէ ըն է՛...* (ՁՏ, Ա, 4):

- Խըզըլալան էլ ա սը՛վ, ամմա լ՝ավ պէն ա - Արտաքինը նշանակություն չունի, կարեւորը էությունն է:

ԽԸՁԸԼԱԼԱ[2]/ԽԸՁԼԱԼԱ[2] - *գ.* Վայրի կակաչի տեսակ: *Բաղէրը լիգ՝ը խըզըլա-լա, սը՛ռտըս շինալ ըս սը՛վ լալա...* (Ձ):

ԽԸՁԸԼԹԱՓԷԼ - *չբ.* 1. Աշնանը ծա-ռերի տերեւները թափվել: *Ծառերը խըզըլթափալ ըն* (Բ): 2. *տե՛ս* Թառչըխ տալ: *Հավէրը խըզըլթափալ ըն* (Բ):

ԽԸՁԸԼԹԱՓՈՒՑ/ԽԸՁԸԼԹԱՓՕՑ - *տե՛ս* ԽԸՁԸԼԱԹԱՓ:

ԽԸՁԸԼԹԱՓՕՑ - *տե՛ս* ԽԸՁԸԼԹԱ-ՓՈՒՑ:

ԽԸՁԸՌՕԿ/ԽԸՁՌՕԿ/ԽՕՁՐՈՒԿ - *գ.* Հիվանդություն, երբ շնչառական օր-գանները փակվում են, եւ տեղի է ունենում շնչարգելություն: *Խըզըռօկը փիս հիվընդութուն ա* (Բ):

- Խըզըռօկ օնէլ - Շնչառական օր-գանները փակվել, շունչը կտրվել (հա-ճախ գործածվում է որպես անեծք): *Խըզըռօկ օ՞նէ ը՛նէգ* (Բ):

ԽԸՁԼԱԼԱ[1] - *տե՛ս* ԽԸՁԸԼԱԼԱ[1]:

ԽԸՁԼԱԼԱ[2] - *տե՛ս* ԽԸՁԸԼԱԼԱ[2]:

ԽԸՁԽԸՁ - *ած.* Խզխզացող, կոկոր-դից խռպոտ ձայներ հանող: *Միշան խըզխըզ մարթ ա* (Բ):

ԽԸՁԽԸՁԱԼ - *տե՛ս* ԽԸՁՁԱԼ:

ԽԸՁԽԸՁՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՁՁԸ-Ց(Ը)ՆԷԼ:

ԽԸՁԽԸՁՕՆ - *տե՛ս* ԽԸՁՁՕՆ:

ԽԸՁԽԸՁՕՑ - *տե՛ս* ԽԸՁՁՕՆ:

ԽԸՁԿԱՆ/ԽԸԾԿԱՆ/ԽԸՑԿԱՆ - *գ.* Որեւէ բանի, հատկապես անոթների՝ շշերի եւն բերանը փակելու հարմա-րանք՝ խցան: *Խըզկանը տ՝ուս ա օնում, կօլան կըլխէն քաշ՝ում, էտ կ՝ինին լօխ խըմում* (Ձ):

ԽԸՁԿԷԼ/ԽԸԾԿԷԼ/ԽԸՑԿԷԼ *(գրբ. խցկեմ (փակել, գոցել)* - *նբ.* 1. Դժվա-ությամբ մտցնել, խցկել: *Շօրէրը խըզ-կում ա դ՝ուշըկնէրէն դաթը, ինքը՛ փախ-չում* (Ձ): 2. Որեւէ բան մտցնելով՝ անցքը փակել: *Տը՛սնում ա, վէր էր՝ուշ թահրը չի կա, պէնջակը հանում ա, կըլօլում, խըզկում հ՝ուրթին ծակը* (Ձ):

ԽԸՁԿԸՎԷԼ/ԽԸԾԿԸՎԷԼ/ԽԸՑԿԸ-ՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԽԸՁԿԷԼ-ի 2. *չբ.* Դժվարությամբ ներս մտնել՝ սողոսկել՝ շարժվել մի բանի արանքով: *Կ՝օղը փախչ՝ում ա, խըզկըվում ժուղուվուրթէն մաչը* (Ձ):

ԽԸՁ՝ԱԿՕԹ - *տե՛ս* ԽԸՁ՝ԱՏԱԿ:

ԽԸՁ՝ԱՏԱԿ - *գ.* 1. Պարանոցի եւ գլխի միացման տեղի ետեւի մասը՝ ծոծ-րակ: *Պիճ ախպէրը ծուցան բիզը տ՝ուս ա օնում, կօխում ուշափէն խըզ՝ատակը* (ՆԱԲ, 33): 2. Ծառերի բնի ներքեւի մասը: *Կացնավը վէր գ՝ուլանսուն խըզ՝ը-տակէն մին քանէ հը՛տ թըխում ա, վէր ա ըղնում* (Ձ):

- Խըզ՝ատակը խօզ՝ած/հընէծուտ - *արհամ.* Կին՝ տղամարդու ամուսին: *Մէծ ախպէրը թա.- Ամէն մինը մըզանա պէտ-մա մին խըզ՝ատակը հընէծուտ պիրի, խօսք տանք, վը՛ր մունք մէր խէլքը կը-նանուցը չըբիդի տանք...* (ՀԺՀ, VI, 237):

- Խըզ՝ատակը քօրէլ - Շվարել, ինչ անելը չիմանալ: *Պարսէղը ըտրրան վէր վէր ա քըցո՞ւմ, էտ փ՝ալիվանը մընում ա քըզ՝ատակը քուրէլիս* (Ձ):

- Խըզ՝ըտակէն կ՝ալ/տալ - 1. Ծեծել: *Հու պըլօթուն ար անում, հ՝ալը խըզ՝ը-տակէն ար կ՝ամ* (Ձ): 2. Վռնդել, պաշ-տոնանկ անել: *Բըրիգադիրը կ՝ըղօթուն ըրավ, խըզ՝ըտակէն յը՛կէն* (Ձ):

ԽԸՁ՝ԲԸՁ՝ԻԼ/ԽԸՁ՝ՄԸՁ՝ԻԼ/ԽԸՁ՝ԽԱ-Ձ՝ԻԼ - *նբ.* 1. Ծուռումուռ գրել՝ գծեր քաշել: *Խօխան թօխտը յօր ա ունէս, խըզ՝բըզ՝իս* (Բ): 2. *փխբ.* Անմիտ՝ անկապ բան գրել: *Նամակ կ՝իրիլըն էլ չի գ՝ուդ՝ում, խըզ՝բըզ՝ում ա, ղարկում ըխճըկանը* (Ձ):

ԽԸՁ՝ԲԸՁ՝ՕՐԷԼ/ԽԸՁ՝ՄԸՁ՝ՕՐԷԼ/ԽԸՁ՝ԽԸՁ՝ՕՐԷԼ - *տե՛ս* ԽԸՁ՝ԲԸՁ՝ԻԼ:

ԽԸՁ՝ԸՑՈՒՓԷ - *տե՛ս* ՑՈՒՓԷ:

ԽԸՁ՝ԽԱՁ՝ԻԼ - *տե՛ս* ԽԸՁ՝ԲԸՁ՝ԻԼ:

ԽԸՁ՝ԽԸՁ՝ՕՐԷԼ - *տե՛ս* ԽԸՁ՝ԲԸՁ՝Օ-ՐԷԼ:

ԽԸՁ՝ՄԸՁ՝ԻԼ - *տե՛ս* ԽԸՁ՝ԲԸՁ՝ԻԼ:

ԽԸՁ՝ՄԸՁ՝ՕՐԷԼ - *տե՛ս* ԽԸՁ՝ԲԸՁ՝Օ-ՐԷԼ:

ԽԸՁ՝ՕՏԷԼ - *նբ.* 1. *տե՛ս* ԽԸՁ՝ԲԸ-Ձ՝ԻԼ: 2. Խազեր քաշելով՝ ջնջել: *Կ՝իրո՞ւմ ա, պըրծընում, մին էլ կ՝իրա՞ծը խը-զ՝օտում* (Բ):

ԽԸՁՆԱԽԷԽՏ - *ած.* Արգանդի մեջ խեղդված՝ մեռած: *Ա՞պլէցա՞ յըն անում, տը՛սնում խօխան խըզնախէխտ տը՛-ռած* (Ձ):

ԽԸՁՆԱԿՕՇՏ - *ած.* Լիուլի բավա-րարված, որեւէ բանի կարիք չունեցող: *Խըզնակօշտ մարթ ա, համ տօն օնէ, համ հըրըստութուն* (Բ):

ԽԸՁՆԱՄԱՐ - *գ.* 1. *տե՛ս* ԽՈՒԽԱ-ՄԱՐ: 2. Ուղղահայաց ճիպոտները, որոնց վրա հյուսում են կողովը՝ զամբյու-ղը: *Ճուվըրանէն խըզնամարը ճըպըտ-նէրան հաստ բիդի ինի* (Բ): 3. *փխբ.* Շատ հարուստ մարդ: *Իզէն միհէնգ՝ խըզնամար ա տը՛ռալ, էլ հընգէր-հիրըվանու մըհալ չի քըցո՞ւմ* (Բ):

ԽԸՁՆԱՎԷՐ - *գ.* 1. *տե՛ս* ԽԸՁՆԱՏԱՐ (2): 2. Ջուլհակի ոստայնի այն շրջա-նակը, որի մեջ դրվում է սանդերքը: *Սանդէրքը տինո՞ւմ ա խըզնըվէրումը, կօրծը ըսքըսում* (Ձ): 3. *տե՛ս* ԽԱՁՆԱ (3):

- Խըզնըվէրու նըստէլ - Շատ հարստանալ: *Էս կըռվանը յըՀտը շատ մարթ ա խըզնըվէրու նըստալ* (Բ):

ԽԸՋՆԱՏԱՐ - *գ.* 1. *տեմ* ԽՈՒԽԱՄԱՐ: 2. Շատ գանձեր՝ հարստություն ունեցող մարդ: *Դօրունք տականան էլ խըզնատար ըն իլալ* (Բ):

ԽԸՋՆԱՏՕՆ - *գ.* 1. *տեմ* ԱՐՔԱՆԴ: *Էտ կընգանը խըզնատօնը հիվանդ ա ինում, խօխա չինում նըստա* (Ձ): 2. Գանձարան, գանձատուն: *Էտ մարթին տանում ըն խըզնատօնը, վըՀսկէն պիրում, վըՀր քըշըռին* (ՀԺՀ, VII, 176):

ԽԸՋՈՕԿ - *տեմ* ԽԸՋԸՌՕԿ:

ԽԸՋՈՒՋՆԸ - *տեմ* ԽԸՋՈՒՋՆՈՒՆ:

ԽԸՋՈՒՋՆՈՒՆ/ԽԸՋՈՒՋՆԸ/ԽՈՒՋՈՒՋՆՈՒՆ/ԽՈՒՋՈՒՋՆԸ *(գրբ. ազազուն)* - 1. *գ. ած.* Շատ՝ լրիվ չորացած՝ չոր (խոտ, տերեւ, փայտ եւն): *Էտ խըզունը տուրում ըն, նի կըցընում* (Ձ): 2. *տեմ* ԿԸՏՕՐԷ(Ն)Ջ:

- Խըզունը տըՀռնալ - Շատ՝ լրիվությամբ չորանալ: *Խօտը հարում ըն, իրըՀվէն տակէն էրկու օր պահում, խըզունը ա տըՀռնում* (Ձ):

ԽԸՋՈՒԽՈՒՌ/ԽՈՒՋՈՒԽՈՒՌ/ԽԸՋՈՒԽՈՒՐ/ԽՈՒՋՈՒԽՈՒՐ - *ած.* 1. Խակ՝ չհասունացած վիճակում քաղած: *Խըզունխուռ ծըմէրուկը անհամ կինի* (Բ): 2. *փխբ.* Վաղամեռիկ, մատաղ հասակում մեռած, մահացած: *Իլած-չիլածը մին խըզունխուռ տըղա յա իլալ* (Ձ):

- Խըզունխուռ մընալ/տըՀռնալ - Մատաղ հասակում մեռնել (սովորաբար գործածվում է որպես անեծք): *Խըզունխուռ մընաս, բաղըս խէ քաղալ ը՞ս* (Բ):

ԽԸՋՈՒԽՈՒՐ - *տեմ* ԽԸՋՈՒԽՈՒՌ:

ԽԸՋՈՒԿ/ԽՈՒՋՈՒԿ - *գ.* Շատ մատաղաշ վարունգ՝ դդում՝ սեխ եւն: *Մին խըյարու խըզուկ ա պուք տամ, օտում* (Բ):

- Խըզուկ քըցիլ - *տեմ* ԽԸՋՈՒԿՕՏԷԼ:

ԽԸՋՈՒԿԸՀԱՆ/ԽՈՒՋՈՒԿԸՀԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խըզուկըհան անէլ - Մատաղաշ վարունգները՝ դդումները՝ սեխերը եւն լրիվությամբ քաղել: *Էտ անըզկամը քըշէրը նի յա մընում հըրըվանէն բոստանը, խըյարէն թաղէրը լօխ խըզուկըհան անում* (Ձ):

ԽԸՋՈՒԿՕՏԷԼ/ԽՈՒՋՈՒԿՕՏԷԼ - *չբ.* Ծաղկելուց հետո թփերի վրա մատաղաշ վարունգներ՝ սեխեր եւն երեւալ: *Խըյարին թաղէրը խըզուկօտալ ա* (Բ):

ԽԸՋՈՒՌ/ԽՈՒՋՈՒՌ/ԽԸՋՈՒՐ/ԽՈՒՋՈՒՐ - *գ.* 1. Կալսելուց հետո առանց կալսելու մնացած հասկեր, որ, մի տեղ հավաքելով, նորից են կալսում: *Կալը հիշկան լավ թակիս, մին ա, էլիա խըզուռ կըմընա* (Ձ): 2. *տեմ* ԿԸԾՈՒՋ(ՆԸ):

ԽԸՋՈՒՐ - *տեմ* ԽԸՋՈՒՌ:

ԽԸՀԼՈՒՆՔ - *տեմ* ԽԷԼՈՒՆՔ:

ԽԸՀԼՔ/ԽԷԼՔ *(գրբ. խելք)* - *գ.* 1. Մարդու մտածելու՝ դատելու՝ հասկանալու կարողությունը՝ ունակությունը: *Ծառան ասում ա.- Վէզիրըն ապըրած կէնա, ամմէն մարթ ուրան խըՀլքըն ըգօրա յա կօրծ փըռնում, իմ խըՀլքըս էլ էտքան ա* (Ձ): 2. Հասարակական որեւէ շերտի՝ խավի՝ դասի ընդհանուր մտածողություն՝ գիտակցություն: *Հային խըՀլքը վէր մին էրուշ ազկու ինար, միհէնգ աշխարքըս ծէրքըն ար հըվաքալ* (Ձ): 3. *տեմ* ՀԸՂՕՂ(1):

- ԽըՀլքա ըղնէլ - Խելքը՝ դատողությունը մթագնել, ցնորվել: *Իբան դային պըռավալ ա, խըՀլքա ընգալ* (Բ):

- ԽըՀլքա հանէլ - *տեմ* ԽըՀլքա տանէլ:

- ԽըՀլքա հըՀռէ - Անտրամաբանական, անհավանական, անիրագործելի: *ԽըՀլքա հըՀռէ կօրծ ըս փըռնալ* (Բ):

- ԽըՀլքա մօտէ - Տրամաբանական, հավանական, իրագործելի: *Ըտըրա ասածըն էլ ա խըՀլքա մօտէ, ըրածըն էլ* (Բ):

- ԽըՀլք անէլ - Խելացիորեն՝ կշռադատելով որեւէ բան անել՝ որոշել: *Ժուդօվուրթը խըՀլք ըրէն, վէր արտէրը վըխտէն վըրըՀցէն, էրկու ամէս ա՝ հավա չի անում* (Բ):

- ԽըՀլքան թիթըՀվ/խըՀղճ/հափըռած - *տեմ* ԽըՀլքան պակաս:

- ԽըՀլքան ճուր խըմէլ - *հեգն.* Ասվում է չկշռադատված՝ հիմար խոսքի՝ արարքի տիրոջ հասցեին: *ԽըՀլքատ ճուր խըմիմ, Բաղդա՛սար, էտ հինչէր ը՞ս ասում* (Ձ):

- ԽըՀլքան յօրղա/նասազ - *տեմ* ԽըՀլքան պակաս:

- ԽըՀլքան նըհըՀտ կըրակը ըղնէլ - Անտրամաբանորեն՝ չկշռադատված գործելու պատճառով փորձանքի ենթարկվել՝ դժվար կացության մեջ ընկնել: *Մարթ ուրան խըՀլքան նըհըՀտ ա կըրակը ըղնում* (Ձ):

- ԽըՀլքան պակաս - Խելապակաս, հիմարավուն, խենթավուն: *ԽըՀլքան պակաս մարթին կընէգը խէլունք բիդի ինի, վէր կարին յօլլա քինին* (Ձ):

- ԽըՀլքան տէպէգ - Բոլորովին խելք չունեցող, անխելք: *Ըտըրան էլ ինում ա մին խըՀլքան տէպէգ նօքուր* (Ձ):

- ԽըՀլքավ էրկան - *տեմ* ԽըՀլքը էրկան:

- ԽըՀլքավը ըղնէլ (մինին) - Առանց խորհելու մեկին հետեւել՝ նրա ասածով առաջնորդվել: *Պուճուր ախպէրը կընգանը խէլքավըն ա ընգնում, մէծ ախպօրը նըհէտ կըռէվ քըցում...*(ՀԺՀ, VI, 213):

- ԽըՀլքավ կարճ - *տեմ* ԽըՀլքը կարճ:

- ԽըՀլքա տանէլ - 1. Հմայել, դյութել, գրավել, կախարդել: *Էտ հարթնը տըղէն խէլքա տընէս ա ...* (ՀԺՀ, V, 279): 2. Համոզել, մի վատ արարքի մղել, հիմարացնել: *Պառավը ըտըրա խըՀլքա տանում ա, կըղօթուն անէլ տամ* (Ձ):

- ԽըՀլքէն զօռ անէլ/զօռ տալ - Շատ՝ խօրը մտածել (հաճախ ասվում է հեգնաբար): *Էրկու օր խըՀլքէն զօռ ա անում, թա հունց անէ, էտ ծըտէն ըսպանէ* (Ձ):

- ԽըՀլքէն թօզ անէլ/թօզ փըչիլ - *տեմ* ԽըՀլքէն փուշի անէլ:

- ԽըՀլքէն ծըՀրքան կըրակը ըղնէլ - *տեմ* ԽըՀլքան նըհըՀտ կըրակը ըղնէլ:

- ԽըՀլքէն հըսնէլ - Ըմբըռնել, հասկանալ: *Անջախ-անջախ հօրը ասածը Սըհակէն խըՀլքէն հըսավ* (Բ):

- ԽըՀլքէն նըստէլ - *տեմ* ԽըՀլքումը նըստէլ:

- ԽըՀլքէն պէնը ինիլ - Մեկի համար հասկանալի՝ ըմբըռնելի լինել (հաճախ գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Կուճուր քուրը յէտ ա տըՀռնում, թա՝ տա քու խըՀլքէտ պէնը չի* (ՆԼՂԺԲ, 73):

- ԽըՀլքէն փըչիլ - Մտքով հանկարծ մի բան անցնել, անսպասելիորեն անհեթեթ միտք հղանալ: *Էտ մարթին խըՀլքին փըչում ա, մին խիլլի փօղ ա տամ, էտ կարկաժը առնըմ, հըղէ ինըմ տօն* (ԼՂԲ, 348):

- ԽըՀլքէն փուշի անէլ/փուշի փըչիլ - Մեկին հիմարացնել՝ խաբել: *Ղօչչաղ ըն ուրանց մարթօց խէլքին փուշի անօղ՝ գօզալ խանըմէն* (ՋՏ, Բ, 122):

- ԽըՀլքէն քամէ նի կալ/քամէ փըչիլ - Խենթանալ: *Կընէգը թա.- Ա՛դա, էլիա խըՀլքէտ քամէ յա՞ նի յըՀկալ, էտ հինչ ը՞ս անում* (Ձ):

- ԽըՀլքը աղավ անէլ - *տեմ* ԽըՀլքան ճուր խըմէլ:

- ԽըՀլքը դըբանումը/դըբանէն կապած - Տհաս, մանկամիտ, պարզամիտ: *Կօզի մըՀծ տըղա յա Քալանպարը, ամմա հանալ խըՀլքը էն ա դըբանումը* (Բ):

- ԽըՀլքը էրկան - Խելացի, հասկացող: *Նէրակ ընդուր կինի, ժառանգը խըՀլքը էրկան կինի* (Բ):

- ԽըՀլքը թամամ - *տեմ* ԽըՀլքը կըլխէն (1):

ԽԸՇԱՐԷԼ - 1. *նբ.* Ոչ խիտ՝ լայն անցքերով հյուսել: *Մին գուլբանա յա խընշարում, տամ ըտըրան, մին մաղ ինք օնում* (Ձ): *չբ.* 2. *տե՛ս* Խաշար տը՝ռնալ: 3. *փխբ.* Տկարանալ, նիհարել: *Հիվընէն սաղ ծըմը՝ռնը էնքան կումումը կացալ ըն, լաւ խընշարալ ըն* (Բ):

ԽԸՇԸՊԱՏԻ - *ած.* Քիչ խենթ, խենթավուն: *Խընշընպատի մարթ ա Ակկարը* (Բ):

ԽԸՇԸՊԸՏԱՏՈՒԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խընշընպընտատուկ ածէլ/անէլ/կանալ - Շտապել, աճապարել: *Խընշընպընտատուկ ըն ածում, կօրծը բարբադ անում* (Ձ):

ԽԸՇԸՓՈՒՇ - *մ.* Հիմնահատակ, ամբողջովին: *Տօնը կընրակ ընգավ, խընշընփուշ էրվից* (Բ):

- Խընշընփուշ ինիլ/տը՝ռնալ - Անհետ կորչել: *Էտ օրվանից օշափը խընշընփուշ ա ինում* (Ձ):

ԽԸՇԼԸՄԱՑՈՒ - *գ., ած.* Խաշլամա եփելու համար նախատեսված (միս): *Սաղ բազարը շօռ յը՝կէ, խընշլընմացու չի կար, թա ինք օնիմ* (Բ):

ԽԸՇԽԱՇԻԼ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇՕՐԷԼ:

ԽԸՇԽԸՇԱԼ - *չբ.* 1. Խշխշոց հանել, խշշալ: *Ծառէրը խընշխընշում ըն* (Բ): 2. Խշխշոցով հոսել: *Կը՝տը խընշխընշում ա* (Բ):

ԽԸՇԽԸՇԱԼԻ - *մ.* Խշխշալով, խշշոց հանելով: *Քամէ յա անում, ծառէրը խընշխընշալի տուրուր ըն կամ* (Բ):

ԽԸՇԽԸՇԱՆ - *ած.* Խշխշացող, խշշոց հանող: *Խընշխընշան շօրէր ա կը՝ցալ* (Բ):

ԽԸՇԽԸՇԱՔԱՐ - *գ.* Չեչոտ քար, որով տրորում են խաշխաշը: *Խաշխաշը խընշխընշքարավ ըն ճըմօռում* (Բ):

ԽԸՇԽԸՇՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԽԸՇԽԸՇԱԼ-ի:

ԽԸՇԽԸՇՕՆ - *գ.* 1. Տերեւների՝ խոտերի՝ նոր հագուստի՝ հոսող ջրի եւն շփումից առաջացած ձայնը, խշշյուն: *Տիրըվնէրէն խընշխընշօնը վըրսկանէն խընգարում ար* (Ձ): 2. Ականջների մեջ խշշալու ձայնի զգացում: *Ընգուճնէրումըս խընշխընշօն կա* (Բ):

ԽԸՇԽԸՇՕՐԷԼ - *նբ.* Շատ բան կամ շատ անգամ խաշել, խաշխշել: *Վընխճարէն մէսը կընտօրում ըն, խընշխընշօրում, օտում* (Ձ):

ԽԸՇԽԸՇՕՑ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇՕՆ:

ԽԸՇԿ(ԸՎ)ԷԼ - *չբ.* 1. *տե՛ս* ԹԸՌՄՕՇԿԷԼ: 2. Այրվելով նստել, հանդարտվել: *Կընրակը խընշկալ ա* (Բ): 3. Բարկությունը՝ հուզմունքը եւն անցնել: *Սիմօնը ճընճընգաց, ճընճընգաց, խընշկից* (Բ):

ԽԸՇՇԱԼ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇԱԼ:

ԽԸՇՇԱԼԻ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇԱԼԻ:

ԽԸՇՇԱՆ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇԱՆ:

ԽԸՇՇԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇՑ(Ը)ՆԷԼ:

ԽԸՇՇՕՆ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇՕՆ:

ԽԸՇՇՕՑ - *տե՛ս* ԽԸՇԽԸՇՕՆ:

ԽԸՇՏԱՎԷՐ *(գրբ. խշտաւոր)* - *ած., գ.* Նիզակով՝ գեղարդով զինված (մարդ): *Քօլէն քըմական մին խընշտավէր ա տուս կամ, Չանլանբուն ըսպանում* (Ձ):

ԽԸՇՏԷԼ - *տե՛ս* ԽԸՇՏԻԼ:

ԽԸՇՏԷԼ-ԲԸՇՏԷԼ - *տե՛ս* ԽԸՇՏԻԼ-ԲԸՇՏԻԼ:

ԽԸՇՏԸՀԱՐԷԼ - *տե՛ս* ԽԸՇՏԽԸՇՏՕՐԷԼ:

ԽԸՇՏԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խընշտի անէլ/տալ - *տե՛ս* ԽԸՇՏԻԼ:

ԽԸՇՏԻ-ԲԸՇՏԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խընշտի-բընշտի անէլ - *տե՛ս* ԽԸՇՏԽԸՇՏՕՐԷԼ:

ԽԸՇՏԻԳ - *տե՛ս* ԽԸՇՏԻԿ:

ԽԸՇՏԻԼ/ԽԸՇՏԷԼ - *նբ.* Խթել, բոթել, մշտել: *Մընհակէն քընթավը էշին խընշտում ա, էշը վազ ա տամ* (Ձ):

ԽԸՇՏԻԼ-ԲԸՇՏԻԼ/ԽԸՇՏԷԼ-ԲԸՇՏԷԼ - *տե՛ս* ԽԸՇՏԽԸՇՏՕՐԷԼ:

ԽԸՇՏԻԿ/ԽԸՇՏԻԳ *(պրս. xišt)* - *գ.* Նիզակ, գեղարդ: *Խընշտիկը քաղում ա խանէն փօրը, ըսպանում* (Ձ):

ԽԸՇՏԽԸՇՏՕՐԷԼ - *նբ.* 1. Անընդհատ խթել՝ բոթել՝ մշտել: *Հանը կընգնըվում ա, թա.- Խընրէգ էտ հիվընէրէն խընշտխընշտօրէ:* 2. *փխբ.* Չարչարել, նեղել: *Խօխէնքը՝ մօրը շատ ըն խընշտխընշտօրում* (Բ):

ԽԸՇՏԽԸՇՏՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՇՏԽԸՇՏՕՐԷԼ-ի:

ԽԸԾՈՒՐ/ԽԸԾՕՐ/ԽՈՒԾՈՒՐ - *տե՛ս* ԽԸԾՈՒՐՏԱՆՔ:

ԽԸԾՈՒՐ-ՄԸԾՈՒՐ/ԽԸԾՕՐ-ՄԸԾՕՐ/ԽՈՒԾՈՒՐ-ՄՈՒԾՈՒՐ - *տե՛ս* ԽԸԾՈՒՐՏԱՆՔ:

ԽԸԾՈՒՐՏԱՆՔ/ԽԸԾՕՐՏԱՆՔ/ԽՈՒԾՈՒՐՏԱՆՔ - *գ.* Փայտի՝ հացի եւ ջարդած՝ մանրացրած կտորներ, փշրտանք, կտորտանք: *Էտ խըշուրտանքը ածում ըն փիչը, նի կըցընում* (Ձ):

ԽԸԾՓԸՇԻԼ - *տե՛ս* ԽԸԾՓԸԾՕՐԷԼ:

ԽԸԾՓԸՇՎԻԼ - *տե՛ս* ԽԸԾՓԸԾՕՐՎԷԼ:

ԽԸԾՓԸԾՕՐԷԼ - *նբ.* Շատ բան կամ շատ անգամ լավ չեփել՝ կիսախորով անել: *Մէսը խըշփըշօրում ըն, տինում ընդը՛ղ* (Ձ):

ԽԸԾՓԸԾՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸԾՓԸԾՕՐԷԼ-ի:

ԽԸԾՕՐ - *տե՛ս* ԽԸԾՈՒՐ:

ԽԸԾՕՐ-ՄԸԾՕՐ - *տե՛ս* ԽԸԾՈՒՐ-ՄԸԾՈՒՐ:

ԽԸԾՕՐՏԱՆՔ - *տե՛ս* ԽԸԾՈՒՐՏԱՆՔ:

ԽԸՉԱԽՊԷՐ - *գ.* Պասակադրության ժամանակ փեսայի եւ հարսի գլխին խաչը բռնող եւ հարսանիքի ընթացքում նրանց ընկերակցող անձնավորություն, խաչեղբայր: *Խըչանէն խըչախպէրը մը՛ռալ ա* (Ձ):

ԽԸՉԱՄԱՆ - *գ.* Այն տուփը, որի մեջ դնում են խաչը: *Դէրը խըչամանը պէնում ա, տը՛սնում խաչը կա վէչ* (Ձ):

ԽԸՉԱՆԷԼ - *տե՛ս* ԽԸՉԸՀԱՆԷԼ:

ԽԸՉԱՊԱՇՏ *(գրբ. խաչապաշտ)* - *գ., ած.* Քրիստոնեություն դավանող՝ խաչ պաշտող՝ քրիստոնյա (անձ): *Հայէրը խըչապաշտ ժուղովուրթ ըն* (Բ):

ԽԸՉԱՎԷՐ - *տե՛ս* ՈՒԽՏԱՎԷՐ:

ԽԸՉԱՓԸՆԴ *(գրբ. խաչափայտ (խաչի փայտ))* - *գ.* Խաչաձեւ փայտ: *Մին խըչափընդ ա շինում, տինում էտ յը՛խծուն կըլխէն* (Ձ):

ԽԸՉԸԳՄԸՉԻԳ - *տե՛ս* ԽԸՉԸՄՕԼՈՒԳ (2, 3):

ԽԸՉԸԿԱՐՊԷՏ - *գ.* Խաչաձեւ նախշեր ունեցող կարպետ: *Հէյրանը թօռնանը մին խըչըկարպէտ ա պէժինքի տամ* (Ձ):

ԽԸՉԸԿԸՆՔԷԼ *(գրբ. խաչակնքեմ)* - *նբ.* 1. *տե՛ս* Իրը՛սէն խըչըհանէլ: 2. Խաչը խաչաձեւ շարժել որեւէ բանի վրա, խաչով կնքել, խաչակնքել: *Դէրին պիրիլ ըն տամ, վէր հանգիստը խըչըկընքէ* (Ձ):

ԽԸՉԸԿԸՆՔՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԽԸՉԸԿԸՆՔԷԼ-ի: 2. *չբ. տե՛ս* Իրը՛սը խըչըհանէլ:

ԽԸՉԸԿՈՒՆԴԷ - *տե՛ս* ՉԸԼԸՆԳԻ:

ԽԸՉԸՀԱՆՄՓՈՒՐ - *գ.* Խաչը համբուրելու վարձ, որ տալիս են քահանային կամ թողնում են սրբատեղիներում: *... Ուխտավէրնէն մում ին վառըմ, խըչըհանմփուր քըցըմ, յէտ տէռնըմ* (ՋՏ, Ա, 110):

ԽԸՉԸՀԱՆԷԼ/ԽԸՉԱՆԷԼ - *չբ. տե՛ս* Իրը՛սը խըչըհանէլ:

ԽԸՉԸՄԱՉ(Ի)/ԽԱՉ ՈՒ ՄԱՉ - *տե՛ս* ԽԸՉԸՄՕԼՈՒԳ (2, 3):

ԽԸՉԸՄԱՐ - *տե՛ս* ԽԱՉՄԱՐ:

ԽԸՉԸՄԱՐԷԼ/ԽԸՉՄԱՐԷԼ - *նբ.* 1. *տե՛ս* Խէչակ տալ: 2. *տե՛ս* Խաչկապ անէլ:

ԽԸՉԸՄԱՐՎԷԼ/ԽԸՉՄԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՉԸՄԱՐԷԼ-ի:

ԽԸՉԸՄԷԼԻՔ - *տե՛ս* ԽԸՉԸՄՕԼՈՒԳ:

ԽԸՉԸՄՕԼՈՒԳ/ԽԸՉԸՄԷԼԻՔ - 1. *գ.* Փողոցների՝ ճանապարհների խաչաձեւման՝ իրար հատելու տեղը, խաչմերուկ: *... Կաս ըն, ուստա-փանիլա փըռէս, էս խըչըմօլուգըմը էս յը՛խցէն շինիս* (ԱԱ, 49): 2. *ած.* Խաչաձեւ դրված, իրար հատող: *Առաչըն ա տուս կամ մին խըչըմէլիք հըղէ՝ հըղըցէն քըշտէն մին սիպտակ մըրքավուր մարթ նըստած* (ՆԱԲ, 51): 3. *ած., մ. փխբ.* Ծուռումուռ, ոչ ուղիղ: *Մին թօխտ ա յօր ունէս, խըչըմօլուգ կիրիս, տաս ըտըրան* (Ձ):

ԽԸՉԸՓԱՐՔ - *տե՛ս* ԽԸՉԸՄՕԼՈՒԳ (2, 3):

ԽԸՉԿԱՊԷԼ - *նբ. տե՛ս* Խաչկապ անէլ:

ԽԸՉԿԱՊՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՉԿԱՊԷԼ-ի:

ԽԸՉՄԱՐ - *տե՛ս* ԽԱՉՄԱՐ:

ԽԸՉՄԱՐԷԼ - *տե՛ս* ԽԸՉԸՄԱՐԷԼ:

ԽԸՉՄԱՐՎԷԼ - *տե՛ս* ԽԸՉԸՄԱՐՎԷԼ:

ԽԸՊԷՊ/ԽՕՊՕՊ *(գրբ. խոպոպ (ոլորած մազ, մազերի հյուսվածք))* - *գ.* Հողը վարելու ձեւ, երբ հողը վարում են ամբողջությամբ՝ առանց գութանը ակոսից հանելու: *Դանգ տափերը խըպէպավ ըն վարում* (Ձ):

ԽԸՌԱՆՉԻԼ - *տե՛ս* ՁԸՌՌԱԼ (1, 2):

ԽԸՌԱՆՎԷԼ - *տե՛ս* ԽԸԼԸՓԱԼՎԻԼ:

ԽԸՌԱՎ *(գրբ. խռով (խռովություն, խռոված, խռոռվահույզ))* - *ած., մ.* Մեկի հետ հարաբերությունները խզած, մեկի հետ խոսելուց՝ շփվելուց դադարած, գժտված, խռոված: *Էրկու տարէ յա՝ Հըմբանցին մօրը անա խըռավ ա* (Ձ):

- Խըռավ կէնալ/մընալ - Հարաբերությունները խզած վիճակում գտնվել, խռոված լինելը շարունակել: *Ախրը, մին խիլլի վախտ խըռավ կընալանը յէտը օշը տէսըն ա ըրալ, ասալ, վէր ընգալ ա տըժոխկը...* (ՀԺՀ, V, 264):

ԽԸՌԱՎԷԼ *(գրբ. խռովիմ (ալեկոծվել, շփոթվել))* - *չբ.* Հարաբերությունները խզել, վիրավորված լինելով՝ չուզենալ հաղորդակցվել, նեղանալ: *Տըղան խըռավում ա, օշը տէն անում, ախճիգըն էլ խըռավում ա, օշը տէսըն անում* (ՀԺՀ, V, 513):

ԽԸՌԱՎԿԱՆ *(գրբ. խռովական (խռոված, անհանգիստ))* - *տե՛ս* ԽԸՌԱՎԿՈՒՏ:

ԽԸՌԱՎԿՈՒՏ/ԽԸՌԱՎԿՕՏ *(գրբ. խռովկոտ (այլայլված, խռովահույզ))* - *ած.* Հեշտությամբ խռովող, ամեն մի չնչին բանից նեղացող: *Թանգան հարթնը խըռավկուտ ա* (Բ):

ԽԸՌԱՎԿՕՏ - *տե՛ս* ԽԸՌԱՎԿՈՒՏ:

ԽԸՌԷԳ/ԽԸՌԷԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խըռէգ տալ - Հալածել, վտարել, վանել, հեռացնել: *Մին օր էլ վար պարգ ա ինում, հըվաքվում ըն, վար թօխպը խըռէկ տան* (ԼՂԲՔ, 259):

ԽԸՌԷԳ-ԽԸՌԷԳ - Գործածվում է կապակցության մեջ:

Խըռէգ-խըռէգ անէլ - Շատերին հալածել՝ վտարել՝ վանել՝ հեռացնել: *Շօնը հըյաթան խուզէրէն խըռէգ-խըռէգ ա անում* (Բ):

ԽԸՌԷԿ - *տե՛ս* ԽԸՌԷԳ:

ԽԸՌԷՃ/ՂԸՌԷՃ/ՔԸՌԷՃ/ԽԷՃ *(գրբ. խիճ)* - *գ.* Քարի մանր բեկորներ, որոնցով խճապատում են ճանապարհները, լցնում են շարվածքի մեջ եւն, խիճ: *Շէնին ժըղօվուրթը հըվաքվում ըն, խըռէճ կըրում, հըղէն խըճում* (Ձ):

ԽԸՌԸՁՆԸՀԱՏ - *ած., գ.* 1. Տերեւները թափված, չորացած ծառ, թուփ: *Խըռըզնըհատ ծառ ա* (Բ): 2. Ձայնը կտրված՝ խզված (մարդ): *Էտ խէ խըռըզնըհատ ը՞ս* (Բ): 3. *անգ.* Երիտասարդ հասակում մեռած, սատկած (մարդ, կենդանի): *Խըռըզնըհատ Կանփրիյէլը մը՛զ վընաս շատ ա տուվալ* (Ձ):

- Խըռըզնըհատ անէլ - 1. Կտրել, չորացնել (բույսերի մասին): *Ծըմակը սաղ խըռըզնըհատ ըրէն* (Բ): 2. Ձայնը կտրել՝ խզել: *Էտ ճուրը խըմուղնէրէն խըռըզնըհատ ար անում* (Ձ): 3. *անգ.* Երիտասարդ հասակում սպանել՝ սատկացնել: *Արչը յըրա յա պըրծընում, ըտըրանց խըռըզնըհատ անում* (Ձ):

- Խըռըզնըհատ ինիլ/տը՛ռնալ - 1. Տերեւները թափվել, չորանալ: *Արաշտ ըրավ, ծառէրը խըռըզնըհատ իլին* (Բ): 2. Ձայնը կտրվել՝ խզվել: *Էնքան ճըղճըղացալ ա, սանը խըռըզնըհատ ա իլալ* (Բ): 3. *անգ.* Երիտասարդ հասակում մեռնել՝ սատկել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Խըռըզնըհատ ինի՛ս տու* (Բ):

ԽԸՌԸԽԱԹԻՇ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱԹԻՇ:

ԽԸՌԸԽԱՌԷ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ:

ԽԸՌԸԽԱ(Ռ)ՆԸ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ:

ԽԸՌԸՄԱՌԷ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ:

ԽԸՌԸՄԱՌԸ -*տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ:

ԽԸՌԸՄՓԱԼ - *տե՛ս* ԽԸՌԸՄՓ(Ը)-Ց(Ը)ՆԷԼ:

ԽԸՌԸՄՓԱԼԻ - *մ.* Խռմփացնելով, խռմփոցներ արձակելով: *Վաստակ կ'ամ ա, թախտէն պարանց ըղնում, խըռըմփալի քօն ինում* (Բ):

ԽԸՌԸՄՓ(Ը)ՑԸՆԷԼ - *չբ.* 1. Խռմփոց հանել, կոկորդից կամ քթից աղմուկ հանել: *Նոքա՛ռը պատառ կընալանը յէտը խըռըմփցընում ա* (ՀԺՀ, VI, 280): 2. *փխբ.* Խոր քնած լինել: *Կամ ա, տը՛սնում՝ օշափը խըռըմփըցընում ա, հիշկան անում ա, կարում չի ըտըրան քունը տը՛ղա յը՛ր կըցընէ* (Ձ):

ԽԸՌԸՄՓՕՆ - *գ.* Քնած ժամանակ կոկորդից կամ քթից հանած աղմուկ: *Ղունաղէն խըռըմփօնը լօխճին քունը-հարամ ըրավ* (Բ):

ԽԸՌԸՄՓՕՑ - *տե՛ս* ԽԸՌԸՄՓՕՆ:

ԽԸՌԸՆՉԽԱՌԱՆՉ - *տե՛ս* ԻՇԸԽԱՌԱՆՉ:

ԽԸՌԸՆՋԻՒԼԻԼ - *տե՛ս* ՋԸՐԹԼՐԷԼ:

ԽԸՌԸՆՋԻՒԼՎԻԼ - *տե՛ս* ՋԸՐԹԼՐՎԷԼ:

ԽԸՌԸՊԸԼՕԿ - *տե՛ս* ԽԸՌԸՊՈՒԿԷ:

ԽԸՌԸՊՈՒԿԷ/ԽԸՌԸՊՕԿԷ - *ած., գ.* Խիստ ցանկասեր՝ վավաշոտ՝ շնացող (կին): *Խըռըպուկէ կընէգ՝ ա, էլ տըղամարթ չի թօղալ, ճանգ՝ըն ա քըցալ* (Բ):

ԽԸՌԸՊՕԿԷ - *տե՛ս* ԽԸՌԸՊՈՒԿԷ:

ԽԸՌԸՎԽԷԹ/ԽԸՌԸՎՀԱԹ - *տե՛ս* ԽԸՌԱՎ:

ԽԸՌԸՎՀԱԹ - *տե՛ս* ԽԸՌԱՎ:

ԽԸՌԸՎՀԱՆԳԻ - *մ.* Խռոված՝ նեղացածի պես: *Հարթնը տըրանց տանը ուրանն խըռըվհանգ՝ի յա պահում* (Ձ):

ԽԸՌԸՎՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. խռովեցուցանեմ (ալեկոծել) - նբ.* ԽԸՌԱՎԷԼ-ի:

ԽԸՌԸՓԸՇ - *տե՛ս* ԽԸՌԸՓՈՒՇ:

ԽԸՌԸՓԸՇ(Տ)ԱԼԻ - *տե՛ս* ԽԸՌԸՄՓԱԼԻ:

ԽԸՌԸՓԸՇ(Տ)ՕՆ - *տե՛ս* ԽԸՌԸՄՓՕՆ:

ԽԸՌԸՓԸՇ(Տ)ՕՑ - *տե՛ս* ԽԸՌԸՄՓՕՆ:

ԽԸՌԸՓՈՒՇ/ԽԸՌԸՓԸՇ - *տե՛ս* ԽԸՌԸՄՓԱԼԻ: *... Մին փըսընգ՝ու քըշէր՝ խըռըփըշ տանը քօն իլած վախտըս, մինը բըշտի-բըշտի ա տամ՝ Խա՛չան, յէր կաց...* (ՋՏ, Բ, 3):

ԽԸՌԹԷԼ - *տե՛ս* ԽԸՐԹԷԼ:

ԽԸՌԹԸԼԸՂ - *տե՛ս* ԽԸՐԹԸԼԸՂ:

ԽԸՌԻՂ/ԽԸՐԻՂ *(պրս. xeriden (գնել) - գ.* Շահավետ գործ՝ առեւտուր: *Մին խիլլա՛ վախտանը յէտը էտ վաճառականը ք՝ինում ա խըռիղի...* (ՀԺՀ, V, 59):

ԽԸՌԻՂԱՏԸ՞Ղ/ԽԸՐԻՂԱՏԸ՞Ղ - *գ.* Շահավետ գործի՝ առեւտրի վայր: *Յէս ճօթ ծախօղ ըմ, խըռիղտը՞ղա յըմ կ'ամ, էս հինչ շըհանրըն ըմ ք՝ընում...* (ՀԺՀ, VI, 178):

ԽԸՌԼԸՆԳԱԼ - *չբ.* Հոգեվարքի ժամանակ խռխռալ: *Հիվանդը վէր ըսքըսում ա խըռլընգալը, դօխտուրը ղըրաղ ա կէնում* (Ձ):

ԽԸՌ-ԽԸՌ - *ած.* Խռխռացող, կոկորդից խռպոտ ձայներ հանող: *Խըռ-խըռ Միշան էլ ա փըսակվալ* (Բ):

ԽԸՌԽԸՌԱԼ - *չբ.* 1. Կոկորդից խռպոտ ձայներ հանել (հատկապես շնչահեղձ լինելուց): *Վէր խըգ՝ըտակէն թըխում ըն, վէր ա ըղնում, ըսքըսում խըռխըռալը* (Ձ): 2. Խռնչալ, խանչել (խոզի մասին): *Խօգ՝ը խըռխըռամ ա* (Բ):

ԽԸՌԽԸՌԱԼԻ - *մ.* Խռխռալով, կոկորդից խռպոտ ձայներ հանելով: *Գ՝ուլլանն վէր նի յա կ'ամ, խըռխըռալի վէր ա ըղնում* (Ձ):

ԽԸՌԽԸՌԱՆ - *տե՛ս* ԽԸՌ-ԽԸՌ:

ԽԸՌԽԸՌՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ԽԸՌԽԸՌԱԼ: 2. *նբ. եւ պբ.* ԽԸՌԽԸՌԱԼ-ի:

ԽԸՌԽԸՌՕՆ - *գ.* 1. Կոկորդից հանած խռպոտ ձայները, խռխռալը: *Ըտըրա խըռխըռօնէն յըրա հիրը՞վանը նի յա մընում* (Ձ): 2. Խոզի խնչյուն: *Խօգ՝ին խըռխըռօնը լօխճին գ՝ահլանն տարավ* (Բ):

ԽԸՌԽԸՌՕՑ - *տե՛ս* ԽԸՌԽԸՌՕՆ:

ԽԸՌԿԷԼ *(գրբ. խռկեմ (խառնիխուռն դիզել) - նբ.* Դժվարությամբ մտցնել, խցկել: *Քանդիրը խըռկում ա խուրջինը, ք՝ինամ* (Ձ):

ԽԸՌԿԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՌԿԷԼ-ի:

ԽԸՌՆԱԿ - *տե՛ս* ԽԸՐԹՆԱԿ:

ԽԸՌՆԷԳ՝ - *տե՛ս* ԽԸՐԹՆԷԳ՝:

ԽԸՌՆԷԼ - *տե՛ս* ԽԸՐԹՆԷԼ:

ԽԸՌՆԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ:

ԽԸՌՆՕՏԷԼ - *տե՛ս* ԽԸՐԹՆՕՏԷԼ:

ԽԸՌՆԸԽԱԹԻՇ/ԽԸՌԸԽԱԹԻՇ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ (2, 3):

ԽԸՌՆԸԽԱՌՆԷ/ԽԸՌՆԸԽԱՌ(Ն)Ը/ԽԸՌԸԽԱՌԷ/ԽԸՌԸԽԱՌ(Ն)Ը/ԽԸՌԸՄԱՌԷ/ԽԸՌԸՄԱՌԸ *(գրբ. խառնիխուռն, խառնամառն) - ած.* 1. Այստեղ-այնտեղ անկարգ թափված, չդասավորված: *Տօնը վէր նի յըս մընում, գ՝ահլանտ տանում ա, խըռնըխառնէ աման-չաման ա ամմէն տը՞ղ* (Ձ): 2. Խառնաշփոթ, խճճված: *Խըռնըխառնէ կօրծէր ա, վէշ մինը կարում չի ուրուր քըցի* (Բ): 3. Միմյանց խառնված, խառն: *Խըռնըխառնէ վը՞ղէր ա, վէշ մին պէն ճօկվում չի* (Բ):

- Խըռնըխառնէ անէլ - Անկարգ կերպով իրար խառնել: *Ապրանքը խըռնըխառնէ յըն անում, կէս-կէս անում* (Ձ): 2. Խճճել, բարդացնել: *Թօռը հօնձ ընօղնէրէն կօրծէրը խըռնըխառնէ ըրավ* (Բ):

- Խըռնըխառնէ ինիլ/տը՞ռնալ - 1. Անկարգ կերպով իրար խառնվել: *Իլածչիլածը նի յըն տամ վէրը, ամմէն հինչ խըռնընխառնէ յա ինում* (Ձ): 2. Խճճվել, բարդանալ, խառնակ վիճակ ստեղծվել: *... Վէր տարէն խըռնըխառնէ ա ինում, տահանք վախում ըն, քօչում...* (ՀԱԲ, 15, 151):

ԽԸՌՆԸԽԱՌ(Ն)Ը - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ:

ԽԸՌՆԸԽԸՇՏԻԳ՝ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԸՇՏԻԿ:

ԽԸՌՆԸԽԸՇՏԻԿ/ԽԸՌՆԸԽԸՇՏԻԳ՝ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ (2, 3):

ԽԸՌՆԸՄԸՃԷՃ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ (2):

ԽԸՌՆԸՇԸՓՕԹ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ (2):

ԽԸՌՆԸՇՏՕՐԷԼ - *նբ. տե՛ս* Խըռնըխառնէ անէլ:

ԽԸՌՆԸՇՏՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՌՆԸՇՏՕՐԷԼ-ի:

ԽԸՌՆԸՓԸՇՏՕՐ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ (2):

ԽԸՌՌԱԼ - *տե՛ս* ԽԸՌԽԸՌԱԼ:

ԽԸՌՌԱԼԻ - *տե՛ս* ԽԸՌԽԸՌԱԼԻ:

ԽԸՌՌԱՆ - *տե՛ս* ԽԸՌ-ԽԸՌ:

ԽԸՌՌԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ԽԸՌԽԸՌՑ(Ը)ՆԷԼ: 2. *տե՛ս* ԽԸՌԸՄՓ(Ը)-ՑԸՆԷԼ (2):

ԽԸՌՌՕՆ - *տե՛ս* ԽԸՌԽԸՌՕՆ:

ԽԸՌՌՕՑ - *տե՛ս* ԽԸՌԽԸՌՕՆ:

ԽԸՌՌՎԱԹ - *տե՛ս* ԽԸՌԸՎՀԱՆԳԻ:

ԽԸՌՕԿ - *գ.* Անասունների մահացու հիվանդություն, որից կոկորդը ուռչում եւ փակվում է: *Խըռօկը շէնին հիյվընուն ըսպանից* (Բ):

- Խըռօկը պըկան կէնալ - *տե՛ս* Խըռօկ օնէլ:

- Խըռօկ օնէլ - Այդ հիվանդությամբ վարակվել (հաճախ գործածվում է որպես անեծք): *... Էս շաղված վախտը խըռօկ կալած խօզը նի յա մընում տօնը, ըսկըսում տաշտին խըմօրը թանմ՝ուզ օտիլ* (ՀԺՀ, VII, 383):

ԽԸՍԱՐԱԹ/ՂԸՍԱՐԱԹ/ՂԸՍԸՐԱԹ/ՂԸՍՐԱԹ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խըսարաթ անէլ - Մեկին վնաս պատճառել՝ խեղել, սպանել, վիրավորել եւն: *... Ուրանց մօրանցը հըթէթա ըն տամ, թա վէր փօղ չըտաք, մէգ խըսարաթ կանինք...* (ՋՏ, Բ, 108):

ԽԸՍԻԼ - *տե՛ս* ԽԱՍԻԼ:

ԽԸՍՅԱԹ - *տե՛ս* ԽԱՍՅԱԹ:

ԽԸՍՅԱԹԱՎ - *ած.* Հատուկ՝ բարդ բնավորություն ունեցող: *Մացակ ամին խրսյաթավ մարթ ա* (Բ):

ԽԸՍՅԸԹԱՎԷՐ - *տե՛ս* ԽԸՍՅԱԹԱՎ:

ԽԸՍՏԸԼԱՄԻԾ - *տե՛ս* ԽԱՍՏԱԼԱՄԻԾ:

ԽԸՍՏԸԽԱՆԱ - *տե՛ս* ԽԱՍՏԱԽԱՆԱ:

ԽԸՍՏՈՒՎԱՆԷԼ - *տե՛ս* ԽՈՒՍՏՈՒՎԱՆԷԼ:

ԽԸՍՏՈՒՎԱՆՔ - *տե՛ս* ԽՈՒՍՏՈՒՎԱՆՔ:

ԽԸՍՏՈՒՐԱԹԷՎ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱԹԷՎ:

ԽԸՍՏՈՒՐԱԹԷՐ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱԹԷՐ:

ԽԸՍՏՈՒՐԱԼԻ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱԼԻ:

ԽԸՍՏՈՒՐԱՀԱՄ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱՀԱՄ:

ԽԸՍՏՈՒՐԱՃՈՒՐ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱՃՈՒՐ:

ԽԸՍՏՈՒՐԱՄԱՆ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱՄԱՆ:

ԽԸՍՏՈՒՐԱՎԸՏ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱՎԸՏ:

ԽԸՍՏՈՒՐԹԱԿԷ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԹԱԿԷ:

ԽԸՍՏՈՒՐՃԸՄՕՌԷ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐՃԸՄՕՌԷ:

ԽԸՍՏՕՐ - *տե՛ս* ՍԸԽՏՕՐ:

ԽԸՍՏՕՐԷԼ - *տե՛ս* ՍԸԽՏՕՐԷԼ:

ԽԸՍՏՕՓ(Ի) - *տե՛ս* ԿԸՋՏՕՊ:

ԽԸՍՐՈՒՎԷՆԷ - *տե՛ս* ԽՈՒՍՐՈՒՎԸՆԷ:

ԽԸՎԱ(Յ) - *տե՛ս* ԽՈՒՎԱ(Յ):

ԽԸՎԱՐ(Վ)ԷԼ *(գրբ. խաւարիմ)* - *չբ.* 1. Մթնել, խավար դառնալ: *Ծըմը՛ռնը ժամի վէցցը վէր կ՚ամ ա, օրը խըվարում ա* (Բ): 2. Խավարման ենթարկվել, լույս չտալ (լույսի՝ երկնային լուսատուների մասին): *Իրիք՚նակը տըխըրվէս ա, խըվըրէս...* (ԱԱ, 15): 3. Փայլը՝ թափանցիկությունը թուլանալ: *Էն սըհաթը մորը մաննէն մուտընէն ակնը խըվարվալ ա...* (ՀԺՀ, VI, 53): 4. *փխբ.* Մռայլվել, տխրություն՝ վիշտ արտահայտել: *Խանը էտ վէր ըսկանում ա, խըվարվում ա* (Ձ):

ԽԸՎԸՐԿԱԼԻԼ - *տե՛ս* ԽԸՎԱՐ(Վ)ԷԼ:

ԽԸՎԸՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. խաւարեցուցանեմ)* - *նբ.* ԽԸՎԱՐ(Վ)ԷԼ-ի:

ԽԸՎԻ - *ձ.* Ասում են, երբ մեկը, խորհուրդներին՝ հորդորներին չհետեւելով, որեւէ սխալ բան է անում եւ տուժում՝ վնասը կրում: *Խօխան ցըկատավը վը՛ննը կըտըրում ա, հա՛րը ասմա.- Խըվի՛, լ՚ավ ա տը՛ռալ, ք՚ը՛զ քանէ հը՛տ ը՞մ ասալ, վէր էտ ցակատը յօր չօնիս* (Ձ):

ԽԸՏԷՏ - 1. *գ.* Կրծքի եւ բացված ձեռքերի միջի տարածությունը, գիրկ: *Խօխան մորը խըտէտան վէր ա կ՚ամ, ք՚ինամ դէրվիշին կօշտը* (Ձ): 2. *գ., ած.* Միանգամից երկու ձեռքերով գրկելու քանակություն, գրկաչափ: *Պառավը մին խըտէտ փանդ ա յը՛ր օնում, սըլկըհում, ըղնում ծՕրը* (Ձ):

- Խըտէտ անէլ - *տե՛ս* ԽԸՏՏԷԼ:

- Խըտէտը ըղնէլ - 1. Մեկի գիրկը նետվել, ողջագուրվել: *Էտ ախճիք՚ը կ՚ամ ա խըտէտը ընգընըմ, պըչպըչօրվըմ ըն* (ՀԺՀ, V, 127): 2. Անակնկալ հանդիպել: *Աղվէսը քօլէն տական տանուս ա պըրծընում, վըրսկանէն խըտէտը ըղնում* (Ձ):

- Խըտէտը քըցիլ/օնէլ - *տե՛ս* ԽԸՏՏԷԼ (Ձ): *Թաքավէրը վար ըսկանում ա, կ՚ամ ա տըրան խըտէտը քըցանում, ըսկըսում ըն ուրանուր լանզ տալը* (ՆԼՂԺԲ, 9):

- Խըտէտ կապէլ - Շատ բան հավաքել գրկում: *ԾՕրէրը խըտէտ ա կապում, ք՚ինամ* (Ձ):

ԽԸՏԷՏ-ԽԸՏԷՏ - *մ.* 1. Իրար գրկած, գիրկընդխառն: *Ըտըրանք վէր ըտի խըտէտ-խըտէտ պար ըն կ՚ամ, թաքավէրը խայինլանմիշ ա ինում* (Ձ): 2. Գրկաչափերով, խտիտներով: *Էնքան փանդը լօխ խըտէտ-խըտէտ կըրալ ա մարանք՚ը* (Բ):

- Խըտէտ-խըտէտ անէլ/ինիլ - 1. Իրար գրկել, գրկախառնվել: *Քուրըախպէր ըտը՛ղ ուրանուր տը՛սնում ըն, խըտէտ-խըտէտ անում* (Ձ): 2. Գրկաչափերով՝ խտիտներով վերցնել՝ տալ: *Փանդը խըտէտ-խըտէտ ա անում, տանսանում* (Ձ):

ԽԸՏԸՊԸՏՕԿ - *գ.* Հացահատիկի հետ խառնված մոլախոտի սերմեր: *Ըստարէ ցօրնէն մաչին խըտըպըտօկ շատ կա* (Բ):

ԽԸՏԸՏԱԿՕԽ/ԽԸՏՏԸԿՕԽԷ - Ըմբշամարտի՝ կոխի ձեւ, երբ մրցակիցները, իրար գրկելով, ձգտում են միմյանց գետին տապալել: *Խըտըտըկօխէն վախտը Ասատուրը սըլկըհում ա, վէր ըղնում* (Ձ):

- Խըտըտակօխ ըղնէլ/ինիլ - *տե՛ս* Կօխ(ըլ) կէնալ:

ԽԸՏԸՏՊԱՉԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խըտըտպաչի անէլ/տալ - Իրար գրկելով՝ համբուրել: *Մին օր էլ թաքավէրին տըղան յէշանում ա, տը՛սնում՝ անուրանմարընը ա վէզիրը խըտըտպաչի յընանում* (Ձ):

ԽԸՏԸՐ(ՈՒ) - *տե՛ս* ԽԸՏՈՒՐ(ՈՒ):

ԽԸՏԸՐՈՒ-ՄԸՏԸՐՈՒ - *տե՛ս* ԽԸՏՈՒՐ(ՈՒ)-ՄԸՏՈՒՐ(ՈՒ):

ԽԸՏՏԷԼ - *նբ.* 1. Թեւերով փաթաթվելով՝ գրկի մեջ առնել: *Արչը մարթին խըտտալ ա, քօն իլալ, հանցու մարթը մըրսէ վէչ* (ԱԱ, 72): 2. Մեկին փարվել, ողջագուրվել՝ իբրեւ սիրո՝ կարոտի եւն արտահայտություն: *Էս վախտըն էլ տըղան մընէլ թաքուհին ուրանուր խըտտում ըն, պըչպըչօրում* (ՆԼՂԺԲ, 45): 3. Վրան սեղմ նստել (զգեստի մասին): *Դարյան ըխճըկանը մաշկը խըտտալ ա* (Բ): 4. Գիրկն առնելով՝ գետնից բարձրացնել: *Մին կապուկ խօտ ա խըտտում, տանում տամ կըվէն* (Ձ):

ԽԸՏՏԸԿՕԽԷ - *տե՛ս* ԽԸՏԸՏԱԿՕԽ:

ԽԸՏՈՒՐ(ՈՒ)/ԽԸՏԸՐ(ՈՒ)/ԽՈՒՏՈՒՐ(ՈՒ) *(գրբ. խոտոր (թյուր, ծուռ, ոչ ուղիղ)* - *ած.* 1. Ոչ ուղիղ, ծուռ, խոտոր: *Կըլօխ յէր կալած՝ փախճում ա, զինքը քըթէնում մին խուտուր հըղըցու յըրա...* (ՆԱԲ, 52): 2. Անպետք, փուչ: *Էտ ճըղպօրուն ճըղուպուրը խըտուրու ճըղուպուր ա* (Բ): 3. *փխբ.* Ոչ լուրջ, ոչ վստահելի, դատարկամիտ: *Ուրանց մաչումը տա շատ խուտուրու տըղա յա...* (ՆԼՂԺԲ, 51): 4. *փխբ.* Անտեղի, ավելորդ: *... Լըհա մին խուտուրու խօսկ ըսիր, պէրթը կըղըրկին* (ԼՂԲՔ, 271):

ԽԸՏՈՒՐ(ՈՒ)-ՄԸՏՈՒՐ(ՈՒ)/ԽԸՏԸՐՈՒ-ՄԸՏԸՐՈՒ/ԽՈՒՏՈՒՐ(ՈՒ)-ՄՈՒՏՈՒՐ(ՈՒ) - *տե՛ս* ԽԸՏՈՒՐ(ՈՒ) (շատերի մասին):

ԽԸՐԱԿԷԼ *(գրբ. խարակեմ)* - *նբ.* 1. *տե՛ս* Խարակ անէլ: 2. Կավե ամանները ուժեղ տաքացնելու եւ ներսից ձեթով՝ յուղով օծելու միջոցով ջնարակել: *Ուստան կօլան խըրակում ա, դարկում վէզիրին* (Ձ): 3. Կալսելու ժամանակ հասկերը հավաքել կամի տակ: *Հասկէրը խըրակում ըն, կալ՚ը թակում* (Ձ):

ԽԸՐԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՐԱԿԷԼ-ի:

ԽԸՐԱՄԱՏ *(գրբ. խրամատ (բացվածք, ճեղք)* - *տե՛ս* ԱԿՕՓ:

ԽԸՐԱՎԱԾ *(գրբ. խորոված)* - 1. Խորովել բայի հարակատար դերբայը: 2. *գ., ած.* Անբոց կրակի վրա շամփուրով եփած (միս): *Աղվէսը խըրըվածէն շըմփուրնէն յօր ա օնում, փախճում* (ՀԱԲ, 15, 133):

- Խըրված անէլ/շինիլ/քըցիլ - Անբոց կրակի վրա միսը շամփուրներով եփել: *Կուճի ախպէրը էտ ղօչը մորթում ա, խըրված անում, ախպօրցը նըհը՛տ օտում* (Ձ):

- Խըրված օխծ ուտըցընէլ - Տանջել, չարչարել, հոգին հանել: *Էտ հարթանը տընըցուց խըրված օխծ ար ուտըցընում* (Բ):

- Խըրըվածան կէրէնք՚ վէչ, ամմա ծուխան ըշկըրնէս քուռացավ - Ասում են այն ժամանակ, երբ որեւէ բանի արդյունքից չեն օգտվում, բայց կրում են դրա հետ կապված վնասը:

- Խրրըվածու վըՀտ ըղնէլ քըթավը - Որեւէ մեկին այցելել՝ նրանից սպասելիք ունենալով: *Մակիչը յըՀկալ ա, հանլբանթ էլիա խրրըվածու վըՀտ ա ընգալ քըթավը* (Բ):

ԽԸՐԱՎԷԼ *(գրբ. խորովեմ)* - *նբ.* 1. Անբոց կրակի վրա կամ մեջը առանց ջրի եւ ամանի որեւէ բան եփել: *Հընսնում ա տէսնում՝ օխտը աժդահա օշափ կըրակէն ղըրաղէն մէս ըն խըրավում* (ՆԱԲ, 29): 2. *փխբ.* Այրել, կիզել: *ԸնըՀվը աշխարքըս խըրավից* (Բ): 3. *փխբ. տե՛ս* Խըրաված օխծ ուտըցընել:

ԽԸՐԱՎՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՐԱՎԷԼ-ի:

ԽԸՐԱՏ *(գրբ. խրատ)* - *գ.* 1. Դաստիարակիչ՝ բարոյախոսական խորհուրդ՝ հորդոր: *Էտ տըղան հօրը խըրատնէն մընանա քըցհում ա* (Ձ): 2. Դառն փորձով ձեռք բերված հմտություն՝ զգուշավորություն, որ օգտակար է հետագայի համար: *Հանը ասմա.- Էտ քըՀզ խըրատ, էլ միհէնգաց տէնը ըտի պէն չանիս* (Ձ):

- Խըրատ առնէլ/յըՀր օնէլ - *տե՛ս* ԽԸՐԱՏՎԷԼ:

- Խըրատ տալ/կարթիլ - *տե՛ս* ԽԸՐԱՏԷԼ:

ԽԸՐԱՏԷԼ *(գրբ. խրատեմ)* - *նբ.* 1. Դաստիարակիչ՝ բարոյախոսական խորհուրդներ տալ, դաստիարակել: *Էտ մարթը տըՀսնում ա, վըՀր էտ կընգանը կարէլ չի խըրատէ, քըցհում ա կըՀտը, քըշհում ա, տանում* (ՆԼՂԺԲ, 67): 2. Մեկին խրատ տալու՝ դաստիարակելու նպատակով պատժել՝ ծեծել:

ԽԸՐԱՏՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԽԸՐԱՏԷԼ-ի: 2. *չբ.* Դառն փորձով հմտություն՝ զգուշավորություն ձեռք բերել, անխոհեմ քայլերից ետ կանգնել: *Ծէրքը հրիլանը յըՀտը խօխան խըրատվալ ա, էլ փիչան մուտանում չի* (Բ):

ԽԸՐԱՐՈՒ - *տե՛ս* ԽՕՐԱ:

ԽԸՐԴԸԽԱԾ - *տե՛ս* ԽՈՒՐԴՆԻԽԱԾ:

ԽԸՐԴԸԽԸՇՈՒՐ - *տե՛ս* ԽՈՒՐԴՆԻԽԸՇՈՒՐ:

ԽԸՐԴԸԽՈՒՐԴԱ - *տե՛ս* ԽՈՒՐԴՆԻՄՈՒՐԴԱ:

ԽԸՐԴԸՊԱՏԱՌ - *տե՛ս* ԽՈՒՐԴՆԻՊԱՏԱՌ:

ԽԸՐԴԸՊԷՆԻ - *տե՛ս* ԽՈՒՐԴՆԻՊԷՆԻ:

ԽԸՐԴԸՓԱՐԱ - *տե՛ս* ԽՈՒՐԴՆԻՓԱՐԱ:

ԽԸՐԴԸՓԸՇՈՒՐ - *տե՛ս* ԽՈՒՐԴՆԻՓԸՇՈՒՐ:

ԽԸՐԷԳ/ԽԸՐԷԿ - *ած., մ.* Քիչ, սակավ: *Քըշըրհանա յէր ա կէնըմ, թա քինա, մըհէնգ էլ տըՀսնըմ ա, վէր հացը խըրէգ ա...* (ՀԺՀ, V, 502):

- Խըրէգ ա մընամ - Գրեթե, համարյա թե, հենց այն է: *Խըրէգ ա մընամ, թա քըՀրծան վէր ըղնէ, տըղան մաշկան փըռնում ա* (Ձ):

ԽԸՐԷԳ-ԽԸՐԷԳ/ԽԸՐԷԳ-ՄԸՐԷԳ - *մ.* 1. Փոքր առ փոքր, քիչ-քիչ, մաս առ մաս: *Էտ ջիգանը խըրէգ-խըրէգ կըտորում ա, ամէն օր տամ էտ կատվին* (ՀԺՀ, V, 166): 2. Հետզհետե, աստիճանաբար: *Հիվանդը խըրէգ-խըրէգ լըվանում ա* (Բ):

ԽԸՐԷԳ-ՄԸՐԷԳ - *տե՛ս* ԽԸՐԷԳ-ԽԸՐԷԳ:

ԽԸՐԷԼ *(գրբ. խրեմ)* - *նբ.* Մտցնել, խոթել: *Մէլիքը ղանմանն խըրում ա խանէն փօրը, ըսպանում* (Ձ):

ԽԸՐԷԿ - *տե՛ս* ԽԸՐԷԳ:

ԽԸՐԸԲԱՆԱԼ - *չբ. տե՛ս* Խարաբ ինիլ:

ԽԸՐԸԲԸԽԱՆԱ - *տե՛ս* ԽԱՐԱԲԱԽԱՆԱ:

ԽԸՐԸԲՑ(Ը)ՆԷԼ - *նբ. տե՛ս* Խարաբ անէլ:

ԽԸՐԸԳԱՆԱԼ/ԽԸՐԸԿԱՆԱԼ - *նբ.* Նվազել, պակասել, քչանալ: *Արաշտ ըրավ, կըՀտէն ճանրը խըրըգացավ* (Բ):

ԽԸՐԸԳՑ(Ը)ՆԷԼ/ԽԸՐԸԿՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԽԸՐԸԳԱՆԱԼ-ի:

ԽԸՐԸԳՕԹՈՒՆ/ԽԸՐԸԿՕԹՈՒՆ - *գ.* Նվազ՝ պակաս՝ քիչ լինելը, քչություն: *Ցօրնէն խըրըգթունէն դանդան շինըցէք՝ հանրանը նըհըՀտ կըռվում ըն* (Բ):

- Խըրըգօթուն անէլ - Պակասել, չեռիքել: *Ճանրը խըրըգօթուն ըրավ, կըրէցէ վէչ սաղ բօստանը ճիրիմ* (Բ):

ԽԸՐԸՋԱՆ *(գրբ. խարազան (մտրակ))* - *գ.* Գութանը լծին միացնող երկար փայտը: *Խըրըզանը կօտըրում ա, վար անօղը մընամ ա հըպարապ* (Ձ):

ԽԸՐԸԿԱՆԱԼ - *տե՛ս* ԽԸՐԸԳԱՆԱԼ:

ԽԸՐԸԿՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՐԸԳՑ(Ը)ՆԷԼ:

ԽԸՐԸԿՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԸՐԸԳՕԹՈՒՆ:

ԽԸՐԸԿՕՏԷԼ - *նբ. տե՛ս* ԽԸՐԱԿԷԼ (շատերի կամ շատ անգամվա մասին):

ԽԸՐԸԿՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՐԸԿՕՏԷԼ-ի:

ԽԸՐԸՄ-ԽՕՐՈՒՄ - *տե՛ս* ԽՕՐՈՒՄ-ԽՕՐՈՒՄ:

ԽԸՐԸՎԱՍՈՒՆՔ - *գ.* Ուտելի սունկ: *Մէհէտ մի քանէ խօխա քիս ըն ծըմակը՝ խըրըվասունք քըղէլի* (ՀԲ, 351):

ԽԸՐԸՎԸԾԱՎԸՏ - *գ.* Խորոված հոտ: *Շըմփուրնէն շարում ըն, տինում պողէն, խըրըվըծավըՀտը ըղնում ա շէնը* (Ձ):

ԽԸՐԸՎԸԾԱՑՈՒ - *ած., գ.* Խորոված համար նախատեսված (միս, կարտոֆիլ եւն): *Մէհէտ քինամ ա բազարը, վէր խըրըվըծացու ինք օնէ, հանմանն կընգանը էլիա ջիհում ա* (Ձ):

ԽԸՐԸՎ-ԽԱՐԱՎ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խըրըվ-խարավ ածէլ/անէլ - Խիստ մորմոքել, կսկիծ՝ վիշտ՝ ցավ պատճառել, տանջել: *Էտ հիվանդը տընընցուց խըրըվ-խարավ ա ածում* (Բ):

- Խըրըվ-խարավ ինիլ/կանալ - Խիստ մորմոքվել, կսկիծ՝ վիշտ՝ ցավ զգալ, տանջվել: *...Կօզի խըրըվ-խարավընն ա կամ, ամմա հանանն մարթին թօրը հանըմ ա, տամ էտ տըղին...* (ՀԺՀ, V, 150):

ԽԸՐԸԲԱԽՕՏ - *գ.* Կայրի խոտաբույս, վայրի գարի: *Մէր հանդէրը լիգը խըրըրախօտ ա* (Բ):

ԽԸՐԸՓՕԽ/ԽԱՐՓՈՒԽ *(գրբ. հարբուխ)* - *գ.* Հիվանդություն, որի ժամանակ քթի լորձաթաղանթը բորբոքվում է՝ առաջացնելով լորձի արտազատություն եւ փռշտոց, հարբուխ: *Տընընհավան խըրըփօխան ընգալ ըն* (Բ):

ԽԸՐԹԷԼ/ԽԸՌԹԷԼ - *նբ.* Գդալով ագահորեն ուտել: *Ղըզղանը տինում ա ըռաչէն, խօրանգը մին մունուտումը սաղ խըրթում* (Ձ):

ԽԸՐԹԸԲՕՐԹ/ԽՈՒՐԹՈՒԲՕՐԹ - *ած.* Անհարթ, խորդուբորդ: *Ծէնին հըղէն խըրթըբօրթ հըղէ յա* (Բ):

ԽԸՐԹԸԼԸՂ/ԽԸՌԹԸԼԸՂ - *տե՛ս* ԽԸՐԹԸԼՕԿ:

ԽԸՐԹԸԼՕԿ/ԽԸՐԹԻԼՕԿ/ԽԸԽՏԸԼՕԿ/ԽԸԽՏԻԼՕԿ *(թրք. xərtlak)* - *գ.* 1. Շնչափողի վերին մասը, խռչակ: *Պէլին ծըՀրքը մըՀկնից, ըտըրա խըրթըլօկան փըռնից, խէխտից* (Ձ): 2. Կոկորդի դուրս ցցված մասը՝ ադամախնձոր: *Էտ մարթըն էլ հիվանդ ա ինում, խըրթըլօկը տանս յըՀկած* (Ձ):

- Խըրթըլօկ չինիլ - Անգաղտնապահ լինել (կանանց մասին): *Կընանուցը քըշտէն պէն ըսէլի չի. ըտըրանք խըրթըլօկ չօնին* (Բ):

ԽԸՐԹՆԱԿ/ԽԸՌՆԱԿ/ԽԸՐՏՆԱԿ - *գ. ծնկ.* Նապաստակի մեծ ձագ: *Խըրթնակը քօլէն տական տանս ա պըրծընում, վըՀրսկանը չանշմիշ ա ըղնում* (Ձ):

ԽԸՐԹՆԷԳ/ԽԸՌՆԷԳ/ԽԸՐՏՆԷԳ - *ած.* Խրտնող: *Կըխտարը խըրթնէգ հէյվան ա* (Բ):

ԽԸՐԹՆԷԼ/ԽԸՌՆԷԼ/ԽԸՐՏՆԷԼ *(գրբ. խրտնում)* - *չբ.* 1. Մի բանից վախենալով՝ հանկարծ մի կողմ ցատկել կամ փախչել: *Ցէտնան էս թաքավէրին ծիյանքը պէրում ըն իլալ, թա ճանր տան, խըմում չըն իլալ, խըրթնում ըն իլալ* (ՀԺՀ, VI, 61): 2. *փխբ.* Խուսափել, մի բանից խույս տալ: *Էտ օրվանից էտ ուստան կօրծա խըրթնում ա* (Ձ):

- Խըրթնած ըլըբաստըրակ - Խիստ

զարմացած, ապշահար (մարդ): *Խըրթնած ըլըբաստըրակ ը՞ս, հինչ ը՞ս աշկէրըտ չըռալ* (Բ):

ԽԸՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ/ԽԸՌՆԸՑ(Ը)ՆԷԼ/ԽԸՐՏՆԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. խրտուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ԽԸՐԹՆԷԼ-ի:

ԽԸՐԹՆՕՏԷԼ/ԽԸՌՆՕՏԷԼ/ԽԸՐՏՆՕՏԷԼ - *չբ. տե՛ս* ԽԸՐԹՆԷԼ (շատերի մասին):

ԽԸՐԻԴ - *տե՛ս* ԽԸՌԻԴ:

ԽԸՐԻԴԱՏԸ[ր]Դ - *տե՛ս* ԽԸՌԻԴԱՏԸ[ր]Դ:

ԽԸՐԽԱՄՆԷԼ - *տե՛ս* ԽԸՐԽԸՄՆԷԼ:

ԽԸՐԽԻՆՋ *(գրբ. խրխինջք)* - *տե՛ս* ԽԸՐԽԸՆՋՕՆ:

ԽԸՐԽԸՄՆԷԼ/ԽԸՐԽԱՄՆԷԼ - *չբ.* Փարթամորեն աճել, փթթել: *Աստուծ ըսկանում ա, թուռըթաց անում, շինացուն արտը ծիլո՛ւմ ա, խըրխըրմնում* (ԱԱռ, 35):

ԽԸՐԽԸՆՋԱԼ *(գրբ. խրխնջեմ, խրխնճամ)* - *չբ.* 1. Խրխինջ արձակել, վրնջալ: *Էտ ծառէ՛ք տը՛սնըմ ըն, վէր Ալմին ծին խըրխընջալավ ընգալ ա էն դի՛ւզէրը* (ՀԺՀ, V, 140): 2. *փխբ. անրգ.* Բարձրաձայն եւ անախորժ ծիծաղել: *Էտ հարթնը, հու հինչ ասում ա, ինքը՛ խըրխընջամ ա* (Ձ): 3. *փխբ.* Առնականություն՝ քաջություն ցուցաբերել: *Էտ ջիհիլնէրան շատէրըն ըն խըրխընջամ, ամհա վէշ մինը կարում չի օշափէն յը՛խնէ* (Ձ):

ԽԸՐԽԸՆՋԱՆՈՒԿ - *գ.* Որդի տեսակ, որ մտնում է խոշոր եղջյուրավոր անասունների մորթի տակ: *Խըրխընջանուկը կըվէրէն շատ ա չըրչարում* (Բ):

ԽԸՐԽԸՆՋԸ[ր]ՆԷ - *գ.* Կլոր, կանաչավուն, քաղցր տանձի տեսակ: *Խըրխընջը[ր]նէն քախծըր տանձ ա* (Բ):

ԽԸՐԽԸՆՋ(Ը)ՑԸՆԷԼ - *նբ. եւ պբ.* ԽԸՐԽԸՆՋԱԼ-ի:

ԽԸՐԽԸՆՋՕՆ - *գ.* 1. Ձիու արձակած ձայնը, վրնջյուն: *Ծիյին խըրխընջօնը կի՛ւլը ըսկանում ա, մընամ պըռըշնէն լի՛ւգ տալիս* (Ձ): 2. *փխբ. անրգ.* Բարձր եւ անախորժ ծիծաղ: *Կընգանը խըրխընջօնը հա՛ն կըտրողցընէս ա* (Ձ):

ԽԸՐԽԸՆՋՕՑ - *տե՛ս* ԽԸՐԽԸՆՋՕՆ:

ԽԸՐՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԽԸՐԷԼ-ի: *չբ.* 2. Ոտքերով հողի՝ցեխի եւն մեջ թաղվել: *Մուխանը ճարը կըտրած դա՛մ տի՛ւս ա ունէս, դայուն կըլօ՛խը կըտրէս, ջանը թօղէս կուպրըմը խըրված* (ՀԺՀ, V, 300): 3. Ծակելով խոր գնալ: *Գի՛ւլլա՛ն խըրվալ ա սըրտէն մաչին, ըսպանալ* (Բ): 4. *փխբ.* Մի բան ձեռնարկել եւ չկարողանալ գլուխ բերել: *Խամ մարթ ա Մէխակը, խըրվալ ա առըտօրէն մաչին, գի՛ւդում չի, թա հինչ անէ* (Բ):

ԽԸՐՏԸՀԱՐԷԼ *(գրբ. խայթահարեմ (խայթոցով զարկել)* - *տե՛ս* ԽԱՐՏԷԼ (շատերի կամ շատ անգամվա մասին):

ԽԸՐՏԸՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՐՏԸՀԱՐԷԼ-ի:

ԽԸՐՏԽԸՐՏՕՐԷԼ - *տե՛ս* ԽԸՐՏԸՀԱՐԷԼ:

ԽԸՐՏԽԸՐՏՕՐՎԷԼ - *տե՛ս* ԽԸՐՏԸՀԱՐՎԷԼ:

ԽԸՐՏՆԱԿ - *տե՛ս* ԽԸՐԹՆԱԿ:

ԽԸՐՏՆԷԳ[յ] - *տե՛ս* ԽԸՐԹՆԷԳ[յ]:

ԽԸՐՏՆԷԼ - *տե՛ս* ԽԸՐԹՆԷԼ:

ԽԸՐՏՆԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ:

ԽԸՐՏՆՕՏԷԼ - *տե՛ս* ԽԸՐԹՆՕՏԷԼ:

ԽԸՐՏՕՏԷԼ - *տե՛ս* ԽԸՐՏԸՀԱՐԷԼ:

ԽԸՐՏՕՏՎԷԼ - *տե՛ս* ԽԸՐՏԸՀԱՐՎԷԼ:

ԽԸՐԻ՞ՍՏԱ՛Լ/ԽՈՒՐՈՒՍՏԱ՛Լ *(ռուս. хрусталь, հուն. krystallos)* - *գ.* Բյուրեղապակի, ինչպես նաեւ այդ ապակուց պատրաստված իրեր: *Դարաբա՛գա՛նց Սիրանը ըխճըկանը էրկու յա՛ջիգ[ի] խըրուստա՛լ ա պէժինք[ի] տըվալ* (Բ):

ԽԸՐՕՄԸՎԻ *(ռուս. хромовый)* - *ած.* Նուրբ կաշուց կարած: *Խըրօմըվի սապօկնէն կը՛ը[ր]նում ա, տի՛ւս կ[ի]ամ* (Ձ):

ԽԸՑԿԱՆ - *տե՛ս* ԽԸՋԿԱՆ:

ԽԸՑԿԷԼ - *տե՛ս* ԽԸՋԿԷԼ:

ԽԸՑԿԸՎԷԼ - *տե՛ս* ԽԸՋԿԸՎԷԼ:

ԽԸՓԱՆԷԼ *(գրբ. խափանեմ (խաբելով արգելել)* - *նբ. տե՛ս* Խափան անէլ:

ԽԸՓԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽԸՓԱՆԷԼ-ի:

ԽԸՓԷ - *տե՛ս* ԽՈՒՓ[2]:

ԽԸՓԸ-ԽԱՓ(Ի) - *տե՛ս* ԽԸՓԸ-ԽԱ՛Փ(Ի):

ԽԸՓԸ-ԽԱ՛Փ(Ի)/ԽԸՓԻ-ԽԱՓ(Ի) - Գործածվում է կապակցության մեջ:

- Խըփը-խա՛փ(ի) անէլ - 1. Շատերին կամ շատ անգամ խաբել: *Օգըն ասըմ ա.- Խըփը-խա՛փի անիլը փիս պէն ա...* (ՀԺՀ, V, 342): 2. Սուտումուտ խոսքերով մեկին մոլորեցնել: *Դէրվիշը էտ ըխճըկանը խըփը-խա՛փի յա անում, քըշէրը ի՛ւրա՛ն տանը պահում* (Ձ):

ԽԸՓԽԱՓԻԼ - *տե՛ս* ԽԸՓԽԱ՛ՓԻԼ:

ԽԸՓԽԱ՛ՓԻԼ/ԽԸՓԽԱՓԻԼ - *նբ. տե՛ս* Խըփը-խա՛փ(ի) անէլ:

ԽԸՓԽԸՓՕՐԷԼ - *տե՛ս* ԽԸՓԽԸՓՕ՛ՐԷԼ:

ԽԸՓԽԸՓՕ՛ՐԷԼ/ԽԸՓԽԸՓՕՐԷԼ - *նբ. տե՛ս* Խըփը-խա՛փ(ի) անէլ:

ԽԻ[1] - *տե՛ս* ԽԷ[1]:

ԽԻ[2] - *տե՛ս* ԽԷ[2]:

ԽԻԲԻՋ - *տե՛ս* ՏՈՒՄԱՐ[2]:

ԽԻՋԱՆ - *տե՛ս* ԽԷՋԱՆ:

ԽԻՋԸՆԱՏԱՐ - *գ.* Ընտանիք՝ կին՝ երեխաներ ունեցող մարդ: *Տարէն արաշտ ըրավ, խը՛ղճ խիզընատարը մընաց կըրակու մաչի* (Ձ):

ԽԻԼ(Լ)Ա՛/ԽԷԼ(Լ)Ա՛/ԽԻԼ(Լ)Ի/ԽԸ[հ]Լ-(Լ)Ա՛/ԽԸԼԼԱ՛/ԽԸԼԱ՛ - *ած.* Ջգալի, շատ, բավականաչափ: *Բա՛գը լօխ գի՛ւդում ա, ըխճըկանը լ[ա]վ պէժինք[ի] տամ, մինգէլ խը[հ]լլա՛ նի՛ւք[ը]ընէ* (ԱԱ, 31):

ԽԻԼ(Լ)Ի - *տե՛ս* ԽԻԼ(Լ)Ա՛:

ԽԻԼ(Լ)ԻՋԱ - *տե՛ս* ԽԻԼ(Լ)Ա՛:

ԽԻԽՏՕՏԷԼ - *տե՛ս* ԽԸԽՏՕ՛ՏԷԼ:

ԽԻԽՏՕՏՎԷԼ - *տե՛ս* ԽԸԽՏՕ՛ՏՎԷԼ:

ԽԻԾԻ *(գրբ. խեցի)* - *գ.* Կավից պատրաստված փոքր անոթ: *Մին խիծի յա շինում, տամ էտ տըղէն* (Ձ):

ԽԻՃԻՃ - *տե՛ս* ԽԸՃԻՃ:

ԽԻՃԻՃԷՆԷ - *տե՛ս* ԽԸՃԸՃԸ[ր]ՆԷ:

ԽԻՅԱՐ - *տե՛ս* ԽԸՅԱՐ:

ԽԻՆ - *տե՛ս* ԽԷՆ:

ԽԻՆԱ - *տե՛ս* ԽԸՆԱ:

ԽԻՆԱԼԻ - *տե՛ս* ԽԸՆԱԼԻ:

ԽԻՆԴԷՂ(ՆԸ) - *տե՛ս* ԽԸՆԴԷՂ(ՆԸ):

ԽԻՆԴԷՂՆՕՏ - *տե՛ս* ԽԸՆԴԷՂՆՕՏ:

ԽԻՆԴԻՂՆԱԾԱՌ - *տե՛ս* ԽԸՆԴԸՂՆԱԾԱՌ:

ԽԻՆՆԻ - *գ.* Խինայածառի կեղեւից պատրաստած դառն դեղափոշի, որ օգտագործվում է ջերմախտի դեմ: *Դօխտուրը հիվանդէն խինի յա տամ* (Ձ):

ԽԻՆՋԻ - *տե՛ս* ԽԸՆՋԻ:

ԽԻՆՋՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԸՆՋՕԹՈ՛ՒՆ:

ԽԻՇԷՄՆԸ - *տե՛ս* ԽԱՇԷՄՆԸ:

ԽԻՍՏԱԿ - *տե՛ս* ԸՍՏԸՐՕԳԻ:

ԽԻՏ(Ը)ՐԻ *(ռուս. хитрый)* - *տե՛ս* ԺՈ՛ՒԼԻԳ[յ]:

ԽԻՏ(Ը)ՐԻՎԱՉԻ - *տե՛ս* ԺՈ՛ՒԼԻԳ[յ]-ՎԱՐԻ:

ԽԻՏ(Ը)ՐԻՎԱՐԻ - *տե՛ս* ԺՈ՛ՒԼԻԳ[յ]-ՎԱՐԻ:

ԽԻՏ(Ը)ՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ԺՈ՛ՒԼԻԳ[յ]ՕԹՈՒՆ:

ԽԻՐՈՒՐԳ - *տե՛ս* ԽԻՐՈ՛ՒՐԳ:

ԽԻՐՈ՛ՒՐԳ/ԽԻՐՈՒՐԳ *(ռուս. хирург)* - *գ.* Վիրաբույժ: *Դուկասյան էդիկը լ[ա]վ խիրուրգ ա* (Բ):

ԽՈՒՋ[ի]ԱՆՈՒՑ - *գ.* 1. Խոզաբույն, խոզերի գոմ: *Ուռութանա ք[ի]նամ ա խուզ[ի]անուցը, տը՛սնում՝ խօզ[ի]էրը կան վէջ* (Ձ): 2. *փխբ.* Կեղտոտ տեղ: *Հինչ տօ՞ն, խուզ[ի]անուց ա, մըղակավը վէր նի յըս մընում, շընավը՛տ ա կ[ի]ամ* (Բ):

ԽՈՒՋ[ի]Ա՛ՊԱՀ - *տե՛ս* ԽՈՒՋ[ի]ԸՊԱՀԷ:

ԽՈՒՋ[ի]Ա՛ՏԱՐ - *գ., ած.* Խոզի տեր, խոզ ունեցող: *Խօզ[ի]էրը նի տը՛ռէն բուստընէն, քընդէցէն, Մանիշը խուզ[ի]ըտարէն անէսկ տըվավ* (Բ):

ԽՈՒՋ[ի]Ա՛ՐԱ՛Ծ *(գրբ. խոզարած)* - *գ., ած.* 1. Խոզեր արածեցնող (հովիվ): *Խուզ[ի]ա՛ր ա՛ծ Աբըրիկը էլ ա մաշին ինք[ի] կա՛լալ* (Բ): 2. *փխբ.* Անարժան, կեղտոտ (մարդ): *Ախճիգ[ի]ը ասմա.- Էտ խուզ[ի]ա՛ր ա՛-*

ծը հինչ ա՞, վէր յը՛ս տըրա նըհը՛տ փը-սակվիմ (Ձ):

ԽՈՒՋ՝ԱՔԱՆԴ/ԽՈՒՋ՝ԱՔԱՆԴ - *ած.* 1. Խոզի քանդած՝ փորած: *Խուզ՝աքանդ բաստան ա* (Բ): 2. *փխբ.* Անկանոն փորած: *Խուզ՝ա՛քանդ վէր ա* (Բ):

- Խուզ՝աքանդ անէլ - Խոզի նման անկանոն փորել: *Շինըցէք՝ թիյը՛նը յոր ըն ունէս, էտ բուստընատը՛ղը մին շէփ-տումը խուզ՝ա՛քանդ ընէս* (Ձ):

ԽՈՒՋ՝ԱՔԱՆԴ - *տե՛ս* ԽՈՒՋ՝ԱՔԱՆԴ:

ԽՈՒՋ՝ԸՂՈՒՂՈՒ/ԽՈՒՋ՝ՈՒՂՈՒՂՈՒ - 1. *գ.* Խոզի դունչ: *Ցըկատավը թըխում ա, խոզ՝ին, խուզ՝ըդուդուն կըտըրում* (Բ): 2. *ած.* Խոզի դնչի նման սուր եւ երկարա-վուն դեմք ունեցող: *Խուզ՝ըդուդու ախ-ճիգ՝ ա Թամարէն հըրթնացուն* (Բ):

ԽՈՒՋ՝ԸԽՕՋ՝Ի/ԽՈՒՋ՝ՈՒԽՕՋ՝Ի - *գ.* Թղթախաղի տեսակ: *Խօխէնք՝ը խուզ՝ը-խոզ՝ի յըն խաղ անում* (Բ):

ԽՈՒՋ՝ԸՊԱՀԷ/ԽՈՒՋ՝ՈՒՊԱՀԷ - *գ., ած. տե՛ս* ԽՈՒՋ՝ԱՐԱԾ: 2. Խոզերը խնամող՝ կերակրող (անձ): *Խուզ՝ըպահէն խուզ՝է-րէն լակ ա տամ* (Բ):

ԽՈՒՋ՝ԸՊԸԼՕՃԻԳ՝/ԽՈՒՋ՝ՈՒՊՈՒԼՕ-ՃԻԳ՝ - *գ.* Վայրի արմատապտուղ, որ հաճույքով ուտում են խոզերը: *Խոզ՝էրը վը՛ղը քանդում ըն, խուզ՝ըպըլօճիգ՝ օտում* (Բ):

ԽՈՒՋ՝ԸՎԱՉԻ/ԽՈՒՋ՝ՈՒՎԱՉԻ - *տե՛ս* ԽՈՒՋ՝ԸՎԱՐԻ:

ԽՈՒՋ՝ԸՎԱՐԻ/ԽՈՒՋ՝ՈՒՎԱՐԻ - *մ.* Փնթիաբար, կեղտոտ՝ փնթի կերպով: *Խուզ՝ըվարի յա ապըրում* (Բ):

ԽՈՒՋ՝ՈՒԴՈՒԴՈՒ - *տե՛ս* ԽՈՒՋ՝ԸԴՈՒ-ԴՈՒ:

ԽՈՒՋ՝ՈՒԽՕՋ՝Ի - *տե՛ս* ԽՈՒՋ՝ԸԽՕ-Ջ՝Ի:

ԽՈՒՋ՝ՈՒՊԱՀԷ - *տե՛ս* ԽՈՒՋ՝ԸՊԱՀԷ:

ԽՈՒՋ՝ՈՒՊՈՒԼՕՃԻԳ՝ - *տե՛ս* ԽՈՒՋ՝Ը-ՊԸԼՕՃԻԳ՝:

ԽՈՒՋ՝ՈՒՎԱՉԻ - *տե՛ս* ԽՈՒՋ՝ԸՎԱՉԻ:

ԽՈՒՋ՝ՈՒՎԱՐԻ - *տե՛ս* ԽՈՒՋ՝ԸՎԱՐԻ:

ԽՈՒՋՆԱՎԱՐ - *գ.* Հնձից հետո ան-միջապես կատարվող վար՝ հերկ: *Արտը հընձո՛ւմ ըն, մին շէփտանը յը՛տը խուզ-նավարը ըսքըսում* (Ձ):

ԽՈՒՋՈՒՋՆԸ - *տե՛ս* ԽԸՋՈՒՋՈՒՆ:

ԽՈՒՋՈՒՋՈՒՆ - *տե՛ս* ԽԸՋՈՒՋՈՒՆ:

ԽՈՒՋՈՒԽՈՒՌ - *տե՛ս* ԽԸՋՈՒԽՈՒՌ:

ԽՈՒՋՈՒԽՈՒՐ - *տե՛ս* ԽԸՋՈՒԽՈՒՌ:

ԽՈՒՋՈՒԿ - *տե՛ս* ԽԸՋՈՒԿ:

ԽՈՒՋՈՒԿԸՀԱՆ - *տե՛ս* ԽԸՋՈՒԿԸ-ՀԱՆ:

ԽՈՒՋՈՒԿՕՏԷԼ - *տե՛ս* ԽԸՋՈՒԿՕՏԷԼ:

ԽՈՒՋՈՒՌ - *տե՛ս* ԽԸՋՈՒՌ:

ԽՈՒՋՈՒՐ - *տե՛ս* ԽԸՋՈՒՌ:

ԽՈՒԹ - *տե՛ս* ԽՈՒԹ՝:

ԽՈՒԹ՝/ԽՈՒԹ/ԽՈՒԹ *(գրբ. խութ)* - *գ.* 1. Տեղանքում հողից դուրս ցցված քար, վեր բարձրացած արգելք, բլրակ եւն: *Թօխուրը յը՛ր ա օնում, հըղըցէն խու-թ՝էրը դո՛ւզըցընում* (Ձ): 2. Բլուր, բար-ձունք: *Վար մը՛ռալ ա, վըսյաթ ա ըրալ, վար ո՛ւրանն շէնին խութին յըրա թաղէն* (ԱԱ, 30):

ԽՈՒԹ՝ԸՓՕՍ - *տե՛ս* ԽԸԼԹԸՓՕՍ:

ԽՈՒԹ՝ՈՒՓՕՍ - *տե՛ս* ԽԸԼԹԸՓՕՍ:

ԽՈՒԺՈՒՌ(ՆԸ) - *տե՛ս* ԽՈՒԺՈՒՐ(ՆԸ):

ԽՈՒԺՈՒՐ(ՆԸ)/ԽՈՒԺՈՒՌ(ՆԸ) *(գրբ. խոժոռ (խոշոր))* - *ած.* 1. Ծավալով՝ չափ-սերով սովորականից մեծ: *Քու էտ խու-ժուրնը աշկէրըտ ինձ խը՛լքա տարալ ա* (Ձ): 2. Խոշոր աղացված: *Խուժուր խաշիլ ա* (Բ): 2. Հարելուց՝ թթվելուց՝ քրտնելուց վրան գնդիկներ առաջացած: *Խուժուրնը թանը ամմէնալ՝ա՛զ՝ա՛թ պէնըն ա* (Բ):

ԽՈՒԼ - *տե՛ս* ՔԱՌ:

ԽՈ՝ԻԼ - *տե՛ս* ԽՈՒԼ՝:

ԽՈՒԼԻԳԱՆ *(ռուս. хулиган, անգլ. hooligan)* - *գ.* Անկարգ՝ անվայել վարքա-գիծ ունեցող մարդ: *Էտ խուլիգանը մօրը լօխճին աշկէն պըլօր ա շինա՛լ* (Բ):

ԽՈ՝ԻԼԽՈ՝ԻԼՈ՝ԻՏ - *տե՛ս* ԽՈՒԼ՝ԽՈՒԼ՝ՕՏ:

ԽՈ՝ԻԼԽՈ՝ԻԼՈ՝ԻՏԷԼ - *տե՛ս* ԽՈՒԼ՝ԽՈՒ-Լ՝ՕՏԷԼ:

ԽՈՒԼ՝/ԽՈ՝ԻԼ *(գրբ. խոյլ)* - *գ.* 1. Անցավ ուռուցք՝ պալար: *Վիզին մին խուլ՝ ա տո՛ւս յը՛կալ* (Բ): 2. Փայտի վրայի հան-գույց՝ ոստ: *Էտ ծառըմըտ խո՛ւլէր կար, տըժար ար ճըղվում* (ՀԺՀ, V, 637):

- Խուլ՝ կապէլ - *տե՛ս* ԽՈՒԼ՝ԽՈՒ-Լ՝ՕՏԷԼ:

ԽՈՒԼ՝ԽՈՒԼ՝ՕՏ/ԽԸԼ՝ԽԸԼ՝ՕՏ/ԽՈ՝ԻԼ-ԽՈ՝ԻԼՈ՝ԻՏ - *ած.* Խուլերով՝ ուռուցքներով՝ ոստերով պատված: *Ղօնաղը թա՝ էտ խո՛ւլխո՛ւլո՛ւտ կուրկուքարէրը ղըզղանըն ըս նի տամ, հինչ ա՞նը՛ս* (ՀԺՀ, VII, 309): 2. Անհարթ՝ մազմզուկներ ունեցող (թել): *Խուլ՝խուլ՝ուտ թիլ ա* (Բ):

ԽՈՒԼ՝ԽՈՒԼ՝ՕՏԷԼ/ԽԸԼ՝ԽԸԼ՝ՕՏԷԼ/ԽՈ՝ԻԼԽՈ՝ԻԼՈ՝ԻՏԷԼ - *չբ.* Վրան խուլեր՝ ու-ռուցքներ առաջանալ: *Մին էրկու օրանը յը՛տը Հա՛ջիմին պըկէն տակը խուլ՝-խուլ՝օտում ա, կարում չի տանան տո՛ւս կ՝ա* (Ձ):

ԽՈՒԼ՝ՈՒՊՈ՝ԻՏՈ՝ԻՏՆԸ/ԽԸ՝ԸՊԸՏՈ՝ԻՏ-ՆԸ/ԽԸԼԸՊՈ՝ԻՏՆԸ - 1. *տե՛ս* ԽՈՒԼ՝ԽՈՒԼ՝ՕՏ: 2. *տե՛ս* ԽԸՐԹԸԲՕՐԹ:

ԽՈՒԼՈ՝ՆՔԱՆԱԼ - *տե՛ս* ԽԸԼՈ՝Ն-ՔԱՆԱԼ:

ԽՈՒԼՈ՝ՆՔԱՎՈՒՆ - *տե՛ս* ԽԸԼՈ՝Ն-ՔԱՎՈՒՆ:

ԽՈՒԼՈ՝ՆՔ-ԽՕԼՈ՝ՆՔ - *տե՛ս* ԽԸ-ԼԸՆՔ-ԽԷԼՈ՝ՆՔ:

ԽՈՒԼՈ՝ՆՔՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸ-ԼՈ՝ՆՔՑ(Ը)ՆԷԼ:

ԽՈՒԼՈ՝ՆՔՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԸԼՈ՝Ն-ՔՕԹՈՒՆ:

ԽՈՒԽ - *տե՛ս* ԽՕԽ:

ԽՈՒԽԱԼԻ - *ած.* Շատ երեխաներ ունեցող: *Մ՝ուք՝ո՛ւց տօնը խուխալի տօն ա* (Բ):

ԽՈՒԽԱՀԱ՝Ո - *գ.* Փոքր երեխաների հայր: *Խուխէն ծը՛ղքէն խուխամարը՝ ա տանջվում, խուխահա՛ղը ըսկի պէնան խաբար էլ չի* (Ձ):

ԽՈՒԽԱՄԱՐ - *գ.* Փոքր երեխաների մայր: *Խուխամարը վէր զըրո՛ւցա՛վ ի՛լա՛վ, խօխան տո՛ւզնը կըմընա* (Ձ):

ԽՈՒԽԱՄԸ՝Ռ - *ած.* Երեխան մա-հացած: *Խուխամը՛ռ կընէգ՝ ա, ունքա-մաչը յը՛տ չի ք՝ինո՛ւմ* (Բ):

- Խուխամը՛ռ ինիլ/մընալ - Երեխան մեռնել (սովորաբար գործածվում է որ-պես անեծք): *Խուխամը՛ռ ինի՛ս տու, էտ կ՝առնանը խէ թակում ը՞ս* (Բ):

ԽՈՒԽԱՊԷՆ - *գ.* 1. Երեխայի զբաղ-մունք՝ գործ: *Մընընքարէն խուխապէն ա* (Բ): 2. *փխբ.* Ոչ լուրջ զբաղմունք՝ գործ: *Ջա՛հիլ տը՛ղէք՝ ըն, սաբավ կօրծ ըն անում, մին խուխապէն ըն քը՛թա՛լ, սաղ օրը էն ըն զիրա՛վ ի՛լա՛ծ* (Ձ):

ԽՈՒԽԱՍԷՐ - *ած.* Երեխա սիրող: *Էտ թա՛ջիրը շատ խուխասէր մարթ ա ինո՛ւմ, կօզի ո՛ւրա՛ն խօխա չի ինո՛ւմ* (Ձ):

ԽՈՒԽԱՎ - *տե՛ս* ՊԱՃՃԱՌԱՎԷՐ: *Խու-խավ կընգանը ք՝ը՛փէն նի չըն կ՝ա՛լ* (Ձ):

- Խուխավ ինիլ/մընալ - Հղիանալ: *Թաքուհին դէրվիշին տուված խընձո՛ղը օտում ա, խուխավ մընամ* (Ձ):

ԽՈՒԽԱՏԱՐ - *ած., գ.* Երեխաների տեր, երեխաներ ունեցող: *Էրկու ախպէր ըն ինո՛ւմ, մինը փըսակված ա ինո՛ւմ, խուխատար...* (ՀԱԲ, 15, 77):

- Խուխատար տը՛ռնալ - Երեխաներ ունենալ: *Ըտըրանա յը՛տը խուխատար ըն տը՛ռնըմ, օրախ, բախտավէր ապրըմ* (ՀԺՀ, V, 156):

ԽՈՒԽԱՏՕՆ - *գ.* 1. Երեխաներ ունե-ցող տուն՝ ընտանիք: *Խուխատօն ա, մին թա՛հրա՛վ յօլլա յըն ք՝ինո՛ւմ* (Բ): 2. *տե՛ս* ԱՐՔԱՆԴ:

ԽՈՒԽԸ՝ՆԷ - *տե՛ս* ԽՈՒԽԸՎԱՐԻ:

ԽՈՒԽԸԽԱ՝ՓԻ - *գ.* 1. Չնչին՝ անար-ժեք բան, որ տալիս են երեխային՝ լացը կտրելու կամ այլ նպատակով: *Մին խուխըխա՛փի յըն տամ, խօխան սուս ա անում* (Բ): 2. *փխբ.* Ընդհանրապես չնչին՝ անարժեք բան՝ բաժին: *Տան ի՛լա՛ծ-չի՛լա՛ծը կէս-կէս ըն անում, մին խուխըխա՛փի յէլ կուճուր ախպօրըն ըն տամ* (Ձ):

ԽՈՒԽԸՀԸՆԳԷՐ - *գ.* 1. Երեխայի ընկեր: *Կուրկուտ ա քըցՀում, խուխէն խուխրհընգէրունցը ծէն տամ ղօնաղ* (Զ): 2. Պարկաձեւ հյուսվածք, որ գոյանում է հղի կնոջ եւ կաթնասունների արգանդում, եւ որի մեջ աճում ու զարգանում է սաղմը, ընկերք: *Վը՛խճարը ծընում ա, աղվէսը կ'ամ ա խուխրհընգէրը օտում* (Զ):

ԽՈՒԽԸՊԱՀԷ - *գ., ած.* Երեխային կերակրող՝ խնամող (անձ): *ՂՀրՀուց Սօնան քըղաքումը մին հըրուստու տան խուխըպահէ յա կօրծ անում* (Զ):

ԽՈՒԽԸՎԱՉԻ - *տե՛ս* ԽՈՒԽԸՎԱՐԻ:

ԽՈՒԽԸՎԱՐԻ - *մ.* Երեխայի նման, երեխայաբար: *Մը՛ծ տըղա յա Սէյրանը, ամմա Հուրանն խուխըվարի յա պահում* (Բ):

ԽՈՒԽՕԹՈՒՆ/ԽԸԽՕԹՈՒՆ - *գ.* 1. Երեխայական հասակը, մանկություն: *Վէր մըծանում ըս, էն վախտըն ըս խուխօթունէն փարք՝ տամ* (Զ): 2. *փխբ.* Միամտություն, անխոհեմություն, երեխայամտություն: *Հէրսիլանն մը՛ծ կընէգ՝ ա տը՛ռալ, ամմա հանան խուխօթունան ծը՛րք չի քաշանալ* (Բ):

- Խուխօթուն անել - Միամիտ՝ անխոհեմ արարք թույլ տալ: *Մարթը ասում ա.- Մ կընէգ՝, խուխօթուն մէ՛լ անէլ, յը՛ր կաց, ք՝ինինք՝* (Զ):

- Խուխօթունը մը՛ննը քըցիլ - 1. *տե՛ս* Խուխօթուն անել: 2. Մանկությունը հիշելով՝ այդ տարիքի որեւ բան անել՝ խաղալ՝ վիճել եւն: *Հէրիք՝նազը խուխօթունը մը՛ննըն ա քըցՀում, ըսքըսում խօխօնցը նըհը՛տ մըննըքարէ խաղ անէլը* (Զ):

ԽՈՒԿԱԼ - *տե՛ս* ԽՕԿԱԼ:

ԽՈՒՃՈՒՃ - *ած.* Օղակաձեւ ոլորքներ կազմող, գանգուր (մազերի մասին): *Սուսանը խուճուճ մանգէր օնէ* (Բ):

ԽՈՒՄ - *տե՛ս* ԽԸՄ:

ԽՈՒՄԱՐ *(արաբ. xomar (հարբեցությանը հաջորդող թմրություն, զարթխում) - ած.* 1. Հարբածությունից նոր սթափվող, հարբածությունը լիովին չանցած: *Հանաբէդը խումար յը՛ր ա կէ՛նում, տը՛սնում՝ կընէգ՝ը սիրըկանէն նը՛հը՛տ սիլի-բիլի յա անում* (Զ): 2. Հարբած, գինով: *Խումար մարթին սը՛րտը պէց կինի* (Բ): 3. Փոքր ինչ շիլ եւ հաճելի նայվածքով, քաղցրահայաց (աչքերի մասին): *Ըստրան մին մարալ ախճիգ՝ ա ինՀում՝ աշկէրը խումար, բօյավ-բուսաթավ, ղաշանգ՝* (Զ):

- Խումար յը՛զնը - Անհասկացող, բթամիտ: *Էտ խումար յը՛զնը փըռնում ա, շինըմաչումը կընգանը թակում* (Զ):

ԽՈՒՄՈՒՐԱԿԷՐ - *տե՛ս* ԽԸՄՈՒՐԱԿԷՐ:

ԽՈՒՄՈՒՐԹԱԹԱԽ - *տե՛ս* ԽԸՄՈՒՐԹԱԹԱԽ:

ԽՈՒՄՈՒՐԿԱԼԻԼ - *տե՛ս* ԽԸՄՈՒՐԿԱԼԻԼ:

ԽՈՒՄՈՒՐՀՈՒՆՑԷ - *տե՛ս* ԽԸՄՈՒՐՀՈՒՆՑԷ:

ԽՈՒՄՕՐ - *տե՛ս* ԽԸՄՕՐ:

ԽՈՒՄՕՐՈՒՏ - *տե՛ս* ԽԸՄՕՐՈՒՏ:

ԽՈՒՅ[1]/ԽՕՅ/ՔՈՒՅ/ՔՕՅ *(պրս. xuy (ունակություն), թրք. huy)* - *գ.* 1. *տե՛ս* ԽԱՍՅԱԹ: 2. Հոգեկան ջղաձգություն, նյարդային խանգարում: *Ըստրա խույը կընօխանց ա* (Բ):

ԽՈՒՅ[2] *(ռուս. xyй)* - *տե՛ս* ԽԸ՛Ռ:

ԽՈՒՅՍԸՋ/ԽՕՅՍԸՋ/ՔՈՒՅՍԸՋ/ՔՕՅՍԸՋ *(թրք. huysuz)* - *ած.* Անտաշ՝ կոպիտ՝ բռի՝ դաժան բնավորություն ունեցող: *Խույսըզ մարթ ար Ռուբէն անմին* (Բ):

ԽՈՒՆԱՐ - *տե՛ս* ԽՕՆԱՐ:

ԽՈՒՆԳԱԾՕԽ - *գ.* Վառված խունկի բուրումնալից ծուխը: *Խունգածօխը հընգ՝իստավը մին ա տը՛ռալ* (Բ):

ԽՈՒՆԳԱՄՕԼ - *տե՛ս* ԽՈՒՆԳԱԾՕԽ:

ԽՈՒՆԳԱՎԸ՛Տ *(գրբ. խնկահոտ)* - *գ.* 1. Խունկի բույր: *Էտ խունգըվը՛տէն յըրա կըլօխ ըն ըղնում, վէր էտ կընէգ՝ը էն ա մարթին հընգ՝իստումը* (Զ): 2. *փխբ.* Անուշահոտություն, բուրմունք: *Մըլընչը՛նէ տանձան խունգավը՛տ ա կ'ամ* (Բ):

ԽՈՒՆԳԸ՛ՆԷ - *գ.* Անուշաբույր խաղողի տեսակ: *Մին ճուվարան խունգը՛նէ յա քաղում, պիրՀում նէրքէ տանը մը՛կնում* (Զ):

ԽՈՒՆԴՈՒՐՈՒՋԻ - *տե՛ս* ԽԸՆԴՐՈՒՋԻ:

ԽՈՒՆԴՈՒՐՈՒՋ-ԽՈՒՆԴՈՒՐՈՒՋ - *տե՛ս* ԽԸՆԴԸՐՈՒՋ-ԽԸՆԴԸՐՈՒՋ:

ԽՈՒՆՁՈՒՂԱԿՕԹ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՂԱԿՕԹ:

ԽՈՒՆՁՈՒՂԱՄԱՐ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՂԱՄԱՐ:

ԽՈՒՆՁՈՒՂԱՎԸ՛Տ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՂԱՎԸ՛Տ:

ԽՈՒՆՁՈՒՐԱԲԱՂ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՐԱԲԱՂ:

ԽՈՒՆՁՈՒՐԱԽՕՏ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՐԱԽՕՏ:

ԽՈՒՆՁՈՒՐԱԿԱՊ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՐԱԿԱՊ:

ԽՈՒՆՁՈՒՐԹՈՒԹՕ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՐԹԸԹՕ:

ԽՈՒՆՁՈՒՐԻՐԸ՛Ս - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՐԻՐԸ՛Ս:

ԽՈՒՆՁՈՒՐԾԱՂԷԳ՝ - *տե՛ս* ԽԸՆՁՈՒՐԾԱՂԷԳ՝:

ԽՈՒՆՁՕՐ - *տե՛ս* ԽԸՆՁՕՐ:

ԽՈՒՆՁՕՐԷ - *տե՛ս* ԽԸՆՁՕՐԷ:

ԽՈՒՆՁՕՐԻ - *տե՛ս* ԽԸՆՁՕՐԷ:

ԽՈՒՆՁՕՐՈՒՏ - *տե՛ս* ԽԸՆՁՕՐՕՏ:

ԽՈՒՆՁՕՐՕՏ - *տե՛ս* ԽԸՆՁՕՐՕՏ:

ԽՈՒՆՁԸՆԱՓԱ՛Ղ - *գ.* Բարակ ձող, որով խոնջանը անց են կացնում վարտիքի փողով: *Խունջընափանդը յօր ա ունէս, խօնջանը անց կըցընէս, կըպէս* (Զ):

ԽՈՒՆՁԻԳ՝ - *տե՛ս* ԽՈՒՆՁԻԿ:

ԽՈՒՆՁԻԳ՝-ՄՈՒՆՁԻԳ՝ - *տե՛ս* ԽՈՒՆՁԻԿ-ՄՈՒՆՁԻԿ:

ԽՈՒՆՁԻԿ/ԽՈՒՆՁԻԳ՝ *(արաբ. qunj)* - *գ.* Նազանք, պչրանք, սեթեւեթանք: *Ըղվէսին խունջիկը արչին շատ ա տօր կ'աս* (Զ):

- Խունջիկ անէլ/կ'անալ - Նազել, պչրել, սեթեւեթել: *Միհէնգ՝վա ըխճըկէրքը հանան խօխա վըխտանց ըն խունջիկ անում* (Բ):

ԽՈՒՆՁԻԿ-ՄՈՒՆՁԻԿ/ԽՈՒՆՁԻԳ՝-ՄՈՒՆՁԻԳ՝ - *ած.* Գեղեցիկ ու քնքուշ շարժումներով, նազելի: *Խունջիկ-մունջիկ ախճիգ՝ ա Սընթուրաց Խօնարը* (Բ):

- Խունջիկ-մունջիկ անէլ/կ'անալ - *տե՛ս* Խունջիկ անէլ:

ԽՈՒՆՁՈՒԼՈՒՋՀԱՆԷ - *տե՛ս* ԽԸՆՁԸԼՈՒՋՀԱՆԷ:

ԽՈՒՆՁՈՒԼՕՋ - *տե՛ս* ԽԸՆՁԸԼՕՋ:

ԽՈՒՇՈՒՐ - *տե՛ս* ԽԸՇՈՒՐ:

ԽՈՒՇՈՒՐ-ՄՈՒՇՈՒՐ - *տե՛ս* ԽԸՇՈՒՐ-ՄԸՇՈՒՐ:

ԽՈՒՇՈՒՐՏԱՆՔ - *տե՛ս* ԽԸՇՈՒՐՏԱՆՔ:

ԽՈՒՌԹԱՆԱԼ - *տե՛ս* ԽՈՒՐԹԱՆԱԼ:

ԽՈՒՌԹԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽՈՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ԽՈՒՌԹՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽՈՒՐԹՕԹՈՒՆ:

ԽՈՒՌՆԻԳ՝Ը՛ՆԷ - *գ.* Խուրմայի ծառի մի տեսակը, որի բնափայտից երաժշտական գործիքներ եւ կահույք էին պատրաստում: *Մարտակէրտ կա շատ խուռնիգ՝ը՛նէ* (Բ):

ԽՈՒՍԷԼԻՔ՝ - *գ.* Այն, ինչ պետք է խոսվի, խոսելու նյութը: *Ըստրանք հուրանց խուսէլիք՝ը վէշ մինին ասում չը՛ն* (Զ)

ԽՈՒՍԸԼԱՏԸ՛Ղ - *գ.* Խոսք ու զրույցի առարկա: *Կընանուցը խուսըլատը՛ղը ճիրին պըկըսօթունը՛ն ա* (Բ):

ԽՈՒՍԸԼԱՑԱՎ - *գ.* Խոսելու՝ շատախոսելու՝ ելույթ ունենալու մոլություն՝ մարմաջ: *Խուսըլըցավավ հիվանդ ը՛ս, խըրէգ՝ խօսէ, լի՞* (Բ):

- Խուսըլըցավան ըղնէլ - Անընդհատ խոսել, շատախոսել: *Հէղուշը խուսըլըցավան ընգալ ա, սուս չի անում* (Բ):

ԽՈՒՍԸՑ(Ը)ՆԷԼ/ԽՈՒՍՑ(Ը)ՆԷԼ/ ԽՈՒՍ(ՈՒ)Ց(ՈՒ)ՆԷԼ *(գրբ. խօսեցուցանեմ)* - 1. *պբ.* ԽՕՍԷԼ-ի: 2. *նբ.* Գրգռել, բարկացնել: *Մարթը ասմա.- Ինձ խըրէգ՝ խուսցըրու, յը՛ր ըմ կընական, փիս ա ինանան* (Զ): 3. Առաջարկություն անել (հատկապես ամուսնության): *Տըղան*

խուսցընէս ա, ամմա ախճիգը ըռազի չի կընաս (Զ): 4. *պբ.* Մեկին խոսել տալ՝ խոսք քաշելու, գաղտնիք կորզելու համար: *Անահիտը ըտըրանց խըմըցընում ա, խուսըցընում, սէկըրէտը գ'ուդում* (Զ):

ԽՈՒՍԿԱԿՕԽ - *տե՛ս* ԼՈՒՋՎԱԿՕԽ:

ԽՈՒՍԿԱՀԸԷՐԹ - *գ.* Խոսելու հերթը: *Վէզիրը ասում ա. Մյ տըղա, խուսկահը՛էրթը քունընն ա, խո՛սէ, տը՛էսնանք՝հինչ ըս ասում* (Զ):

- Խուսկահը՛էրթ անց կըցընել - Անիմաստ՝ աննպատակ խոսել: *Խուսկահը՛էրթ անց կըցընէլավ կօրծ չի դ'ուզվում* (Զ):

ԽՈՒՍԿԱՄԱՉ - *գ.* Խոսքի ընթացքը: *Յէղիշ ամ'ուն խուսկամաչը սաղ ուշունց ա* (Բ):

ԽՈՒՍԿԱՇԷՆ - *ած.* Գեղեցիկ եւ ճարտար խոսող, համով-հոտով զրուցող: *Թամադան խուսկաշէն բիդի ինի, վէր ժըղօվուրթը ըշտա'ինավ հաց օտին* (Զ):

ԽՈՒՍԿԱՍԷՐ - *ած.* Խոսել՝ զրուցել սիրող: *Նուբար աքէրը խուսկասէր պառավ ա* (Բ):

ԽՈՒՍԿԸՋԸՐՈ'ՒՑ/ԽՕՍԿԸՋԸՐՈ'ՒՑ/ԽՈՒՍԿՈՒՋՈ'ՒՐՈ'ՒՑ - *գ.* 1. Ջրույց, խոսակցություն: *Ծառան թաքուն ըտըրանց խուսկուզըրո'ւցը ըսկանում ա* (Զ): 2. Վիճաբանություն: *Տը՛էսնում ըն էտ շէնը ո'ւրո'ւրօցավ ընգած, ղըլմըղալ, խօսկըզըրո'ւց* (ՀԺՀ, V, 207): 3. Չարախոսություն, բամբասանք: *Խուսկըզըրո'ւցը էտ հըրթնէրէն անա անպակաս ար* (Զ):

- Խուսկըզըրո'ւց շինիլ - Բամբասանքի առարկա՝ նյութ դարձնել: *Կընանէք'ը հէրսիլին մարթին խուսկըզըրո'ւց ըն շինում* (Զ):

- Խուսկըզըրո'ւց տը՛ռնալ - Բամբասանքի առարկա՝ նյութ դառնալ: *Էրկու ամէս ա՝ Նըխշունէն սիրական պահէլը շէնումը խուսկըզըրո'ւց ա տը՛ռալ* (Բ):

ԽՈՒՍԿԸԿԸՌԸ՛Վ - *տե՛ս* ԼՈՒՋՎԸԿԸՌԸ՛Վ:

ԽՈՒՍԿԸՀՆՇԸ՛Վ - *տե՛ս* ԼՈՒՋՎԸՀՆՇԸ՛Վ:

ԽՈՒՍԿԸՀԸՆԳԷՐ - *տե՛ս* ՋԸՐՈ'ՒՑՀԸՆԳԷՐ:

ԽՈՒՍԿԸՄԱՉԻ - *մ.* Իմիջիայլոց, հենց այնպես: *Նախագան խուսկըմաչի յա բըրիգադիրին թ'ուրիփ անում* (Զ):

ԽՈՒՍԿՈՒՋՈ'ՒՐՈ'ՒՑ - *տե՛ս* ԽՈՒՍԿԸՋԸՐՈ'ՒՑ:

ԽՈՒՍՏԱՆԱԼ *(գրբ. խոստանամ)* - *նբ.* 1. Խոսք տալ՝ մի բան անելու՝ տալու՝ նվիրելու՝ հայտնելու եւն: *Ուշուփնէն խուստանըմ ըն, վէր տան, ամմա բէդմա ո'ւրանց տըված հարցէրէն կարին ջօղաբ տան* (ՀԺՀ, V, 311): 2. Ուխտել, ուխտ անել: *Մարթը վէր սըղանում ա, Նանօվը մատաղ ա խուստանում, ամմա անում չի* (Զ):

ԽՈՒՍՏՈՒՄ(ՆԸ)/ԽՕՍՏՈՒՄ(ՆԸ) *(գրբ. խոստումն)* - *գ.* Խոստում, հանձնառություն: *Տըղան խուստումը կըդարում չի* (Զ):

- Խուստումը տալ - *տե՛ս* ԽՈՒՍՏԱՆԱԼ:

ԽՈՒՍՏՈՒՎԱՆԷԼ/ԽԸՍՏՈՒՎԱՆԷԼ *(գրբ. խոստովանեմ)* - *նբ.* Իր հետ կապված որեւէ բան՝ իր արարքը՝ արածը՝ մեղքը հայտնել՝ հանձն առնել: *Թաքուին թաքավէրին խուստուվանում ա, վէր էտ պէնէրը ինք'ը ա ըրալ* (Զ):

ԽՈՒՍՏՈՒՎԱՆՔ/ԽԸՍՏՈՒՎԱՆՔ - *գ.* Խոստովանելը, խոստովանություն: *Էտ խուստուվանքը վէր ըսկանում ա, թաքավէրը հըրամանք ա տամ, վէր ծ'ուկուն փըռնօղ տըղէն կախ չի տան* (Զ):

- Խուստուվանք անել - *տե՛ս* ԽՈՒՍՏՈՒՎԱՆԷԼ:

ԽՈՒՍՐՈՒՎԸ՛ՆԷ/ԽԸՍՐՈՒՎԷՆԷ - *գ.* Խնձորի տեսակ: *Ասում ըն՝ խուսրըվը՛էնէն խօսրօվ թաքավէրին վըխտանց ա Ղարաբաղումը* (Զ):

ԽՈՒՍՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽՈՒՍԸՑ(Ը)ՆԷԼ:

ԽՈՒՍ(ՈՒ)Ց(ՈՒ)ՆԷԼ - *տե՛ս* ԽՈՒՍԸՑ(Ը)ՆԷԼ:

ԽՈՒՎԱ(Յ)/ԽԸՎԱ(Յ) - *տե՛ս* ՈՒԽԱ(Յ): *... Ք'ինա՛մ ա, համ էլ ասում.- Խուվա՛մ, հինչ լա՛վ վըխճըրնի յըն, է՛* (ՀԺՀ, V, 399):

ԽՈՒՎԽՈՒՎԱՏԷԼ - *չբ.* Խեթ-խեթ նայել, կշտամբել: *Հա՛ղը խօնցը միշտ խուվխուվատում ար* (Զ):

ԽՈՒՏԱԼԻ *(գրբ. խոտալից)* - *գ.* Խոտով հարուստ, խոտառատ: *Ք'ինացալ ըն, ք'ինացալ, հըսալ մին շատ խուտալի տէղ, ըստէղ կէրալ ըն, ք'ուքացալ...* (ՀԺՀ, VI, 247):

ԽՈՒՏԱԾԱՌ - 1. Այն ծառը, որի շուրջը դրվում է խոտի դեզը: *Սինդ'ա՛ն տափումը մին մը՛էծ խուտածառ ա իլալ, խոտէն թայան ըտըրա յըրա յըն իլալ թուփ ընէլիս* (Զ): 2. *տե՛ս* ԹԱՅԱ (1): *Մին հայ մարթ մին դ'ուզ տէղ խուտածառ ա կ'ուտալ* (ԲՀԲ, 164):

ԽՈՒՏԱԿԷՐ *(գրբ. խոտակեր)* - *ած., գ.* 1. Խոտով սնվող, խոտակեր (կենդանի): *Հէյվան կա, համ մըսակէր ա, համ խուտակէր* (Բ): 2. *փխբ.* Տխմար, ապուշ (մարդ): *Խուտակէր մարթ ա Մարգուշին մարթը* (Բ):

ԽՈՒՏԱՀԱՐ(Ք)/ԽՈՒՏԸՀԱՐ(Ք) - *գ.* 1. Խոտ հնձելը, խոտհունձ: *Խուտահարքը ըսկըսվում ա, չօբանը վը՛էչ մին պէնու հօքսը չի քաշում* (ՀԺՀ, VII, 172): 2. *տե՛ս* ԽՈՒՏԱՏԸ՛Ղ:

ԽՈՒՏԱՆԱԼ - *տե՛ս* ԽՈՒՏԸԿԱ՛ԼԻԼ:

ԽՈՒՏԱՆՈՒՑ - *գ.* Չոր խոտը ամբարելու՝ պահելու շենք: *Մին օր էլ ըտըրանց խուտանուցընն ա կըրակ ընում* (Զ):

ԽՈՒՏԱՏԸ՛Ղ - *գ.* Խոտ հնձելու դաշտ՝ արտ՝ մարգագետին: *Պիլթընուցա խուտըտը՛ղէրը խըրէգ' ա* (Բ):

ԽՈՒՏԱՏԻՋ - *տե՛ս* ԹԱՅԱ (1):

ԽՈՒՏԸԿԱ՛ԼԻԼ - *չբ. Շատ* խոտ բուսնել, խոտով պատվել: *Արտէրը խուտըկա՛լալ ա* (Բ):

ԽՈՒՏԸՀԱՐԷ - *տե՛ս* ՕՐԱՂ:

ԽՈՒՏԸՀԱՐ(Ք) - *տե՛ս* ԽՈՒՏԱՀԱՐ(Ք):

ԽՈՒՏՈՒՏ - *տե՛ս* ՂԸԼՂԻ:

ԽՈՒՏՈՒՐ(ՈՒ) - *տե՛ս* ԽԸՏՈՒՐ(ՈՒ):

ԽՈՒՏՈՒՐ(ՈՒ)-ՄՈՒՏՈՒՐ(ՈՒ) - *տե՛ս* ԽԸՏՈՒՐ(ՈՒ)-ՄԸՏՈՒՐ(ՈՒ):

ԽՈՒՐԱՄԱՆ - *գ.* Ճաշի խոր աման՝ ափսե: *Մին խուրաման կուրկուտ ա քըցո՛ւմ, տինո՛ւմ դունաղէն ըռըշկին* (Զ):

ԽՈՒՐԱՆԱԼ *(գրբ. խորանամ)* - *չբ.* 1. Խորությունը մեծանալ, խոր դառնալ: *Վէրը ք'ինալավ խուրանում ա, ամհա ճ'ուր չի տո'ւս կ'ամ* (Զ): 2. Դեպի մի բանի խորքը շարժվել: *Քուրըախպէր խուրանում ըն ծըմակէն մաչը* (Զ): 3. *փխբ.* Որեւէ հարցի՝ գործի էության մեջ թափանցել, խորամուխ լինել: *Իսակը խուրացալ ա առըտօրէն մաչին* (Բ): 4. *փխբ.* Լուրջ բնույթ ստանալ, ուժգնանալ: *Հիրըվընէրէն դ'ուշմընօթունը խուրանում ա* (Զ):

ԽՈՒՐԴԱ՛Ն/ԽՈ՛ՒՐԴԱ՛Ն *(պրս. xurde, թրք. hurda)* - 1. *ած.* Փոքր ծավալ ունեցող, մանր: *Խուրդա՛ն սիսը՛էռ ա, կարում չի ծախէ* (Բ): *գ.* 2. *տե՛ս* ԽՈՒՐԴԱ՛ՎԱԹ: 3. Մանր դրամ: *Մը՛էծ փուլէրը յօր ա ունէս, խուրդա՛ն տաս կընգանը* (Զ):

- Խուրդա՛ն անել - *տե՛ս* ԽՈՒՐԴԻԼ:

- Խուրդա՛ն ապըրանք - Մանր եղջերավոր անասուններ: *Ո՛ւրանց էլ կօգի կավ չի ինո՛ւմ, ամմա խուրդա՛ն ապըրանք շատ ին պահում* (Զ):

ԽՈ՛ՒՐԴԱ՛Ն - *տե՛ս* ԽՈՒՐԴԱ՛Ն:

ԽՈՒՐԴԱ՛Ն-ԽՈՒՐԴԱ՛Ն - *տե՛ս* ԽՈՒՐԴԱ՛Ն-ՄՈՒՐԴԱ՛Ն:

ԽՈՒՐԴԱ՛Ն-ՄՈՒՐԴԱ՛Ն/ԽՈ՛ՒՐԴԱ՛Ն-ՄՈ՛ՒՐԴԱ՛Ն/ԽՈՒՐԴԱ՛Ն-ԽՈՒՐԴԱ՛Ն/ԽԸՐԴԱԸԽՈՒՐԴԱ՛Ն/ԽՈՒՐԴՈՒԽՈՒՐԴԱ՛Ն - *ած.* Մանր-մունր եւ անկարեւոր՝ երկրորդական: *Խուրդա՛ն-մուրդա՛ն պէնէր ա, տէն ածէ* (Բ):

ԽՈ՛ՒՐԴԱ՛Ն-ՄՈ՛ՒՐԴԱ՛Ն - *տե՛ս* ԽՈՒՐԴԱ՛Ն-ՄՈՒՐԴԱ՛Ն:

ԽՈՒՐԴԱ՛ՊԷՆ - *տե՛ս* ԽՈՒՐԴՈ՛ՒՊԷՆԻ:

ԽՈՒՐԴԱ՛ՎԱԹ *(պրս. xurdevat)* - *գ. հվք.* Մանր-մունր իրեր՝ ապրանքներ: *Հիլիսէցէ չա՛ղչի հա՛ղաբէդը օգէցալ ա, թա ք'ինա՛ Աղդամ, խուրդա՛վաթ պիրի, ծախէ* (ՀԺՀ, V, 647):

ԽՈՒՐԴԱ՛ՎԱՆՔ - *տե՛ս* ԽՈՒՐԴԱ՛ՎԱԹ:

ԽՈՒՐԴԷԼ - *տե՛ս* ԽՈՒՐԴԻԼ:

ԽՈՒՐԴԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽՈՒՐԴԻՑ(Ը)ՆԷԼ:

ԽՈՒՐԴԸՑԸՆՎԷԼ - *տե՛ս* ԽՈՒՐԴԻՑԸՆՎԷԼ:

ԽՈՒՐԴԻԼ/ԽՈՒՐԴԷԼ - *նբ.* 1. Խոշոր դրամը մանրել, փոքր արժողությամբ դրամների վերածել: *Կ'էվին մին տըսսանուց ա խուրդիւմ, թուռնէրէն հը՛տէ տէս-տէն ինք՛ օնում* (Ձ): 2. Միտքը՝ ասելիքը պարզեցնել, վերլուծել: *Տըղան ըսկըսում ա ըխճըկանը խօսկէրքը մին-մին խուրդիլը* (Ձ):

ԽՈՒՐԴՎԷԼ - *տե՛ս* ԽՈՒՐԴՎԻԼ:

ԽՈՒՐԴՎԻԼ/ԽՈՒՐԴՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽՈՒՐԴԻԼ-ի:

ԽՈՒՐԴԻՒԽԱԾ/ԽԸՐԴԸԽԱԾ *(թրք. hurduhaš)* - *ածական.* 1. Կոտրատված, ջարդոտված, մանրացված: *Խուրդիւխաշ փանդէր ա հըվաքում, կըրակ անում* (Ձ): 2. *փխբ.* Հոգնաբեկ, ուժասպառ եղած: *Խուրդիւխաշ մարթ ա, պարանց ա ըղնում, թա դինջանա, թօղում չըն* (Ձ):

- Խուրդիւխաշ անէլ - 1. Կոտրատել, ջարդոտել, մանրացնել: *Ըստօլը տափավըն ա կ'ամ, խուրդիւխաշ անում* (Բ): 2. Խիստ հոգնեցնել, ուժասպառ անել: *Հանը ժուղուվուրթէն խուրդիւխաշ ը-րավ* (Բ):

- Խուրդիւխաշ ինիլ/տը՛ռնալ - 1. Կոտրատվել, ջարդուփշուր լինել, մանրացվել: *Կօլան վէր ընգավ քարէն յըրա, խուրդիւխաշ իլանվ* (Բ): 2. Խիստ հոգնել, ուժասպառ լինել: *Էնքան կօրծ ըրէնք՛, լափ խուրդիւխաշ իլինք՛* (Բ):

ԽՈՒՐԴԻՒԽԸՇՈՒՐ/ԽԸՐԴԸԽԸՇՈՒՐ - 1. *տե՛ս* ԽՈՒՐԴԻՒԽԱԾ: 2. *տե՛ս* ԽԸՇՈՒՐՏԱՆՔ:

ԽՈՒՐԴՈՒԽՈՒՐԴԱ - *տե՛ս* ԽՈՒՐԴԱ-ՄՈՒՐԴԱ:

ԽՈՒՐԴԻՒՊԱՏԱՌ/ԽԸՐԴԸՊԱՏԱՌ - *գ.* Որեւէ բանի փոքրիկ կտոր՝ պատառ: *Սաղ հացը օտում ա, մին խուրդիւ-պատառ էլ չի տամ խուխէն* (Բ):

ԽՈՒՐԴԻՒՊԷՆԻ/ԽԸՐԴԸՊԷՆԻ - *գ.* Անէական՝ աննշան գործ՝ զբաղմունք: *Ախճիգ՛ը էտ խուրդիւպէնին անավ ա ինիւմ, թանավը մընանա քընցիւմ* (Ձ):

ԽՈՒՐԴԻՒՑ(Ը)ՆԷԼ/ԽՈՒՐԴԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Կոտրատելով՝ ջարդելով՝ աղալով եւն մանր մասերի վերածել, մանր դարձնել: *Էտ քարէն ռուքը խուրդըցընէս ըն, ըծէս պատէն դաթէրը* (Ձ):

ԽՈՒՐԴԻՒՑԸՆՎԷԼ/ԽՈՒՐԴԸՑԸՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽՈՒՐԴԻՒՑ(Ը)ՆԷԼ-ի:

ԽՈՒՐԴԻՒՓԱՐԱ/ԽԸՐԴԸՓԱՐԱ - *տե՛ս* ԽՈՒՐԴԱՎԱԹ:

ԽՈՒՐԴԻՒՓԸՇՈՒՐ/ԽԸՐԴԸՓԸՇՈՒՐ - *տե՛ս* ԽՈՒՐԴԻՒԽԸՇՈՒՐ:

ԽՈՒՐԸԽԱՆԴԱԿ - *տե՛ս* ԽՈՒՐՈՒԽԱՆԴԱԿ:

ԽՈՒՐԸՅԻՆ - *տե՛ս* ԽՈՒՐՈՒՅԻՆ:

ԽՈՒՐԸՆ-ԽՕՐԱՆ - *տե՛ս* ԽՈՒՐՈՒՆ-ԽՕՐԱՆ:

ԽՈՒՐԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽՈՒՐՈՒՑ(Ը)ՆԷԼ:

ԽՈՒՐԹԱՆԱԼ/ԽՈՒՌԹԱՆԱԼ *(գրբ. խորթանամ)* - *չբ.* Հարազատության՝ մտերմության զգացումը կորցնել, օտարանալ: *Քուրըախպէր էնքան ուրիւր անա հը՛ռէ կացալ ըն, խուրթացալ ըն* (Բ):

ԽՈՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ/ԽՈՒՌԹԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԽՈՒՐԹԱՆԱԼ-ի:

ԽՈՒՐԹՈՒԲՕՐԹ - *տե՛ս* ԽԸՐԹԸ-ԲՕՐԹ:

ԽՈՒՐԹՕԹՈՒՆ/ԽՈՒՌԹՕԹՈՒՆ *(գրբ. խորթութիւն)* - *գ.* Ոչ հարազատ՝ խորթ կապերով իրար հետ կապվածների միջեւ եղած հարաբերությունը: *Ըստրանց մաչին խուրթօթուն ա ինիւմ, հանվ հալալ ըն ինիւմ, մարավ՝ խօրթ* (Ձ):

ԽՈՒՐԽ - *տե՛ս* ԽՕՐԽ:

ԽՈՒՐԽԱՎԷՐ *(գրբ. խորխաւոր)* - *ածական.* Խորխ՝ շապիկ ունեցող (մաշկափոխ կենդանիների մասին): *Մին խուրխավէր օխծ ըն ըսպանում, խօրխը խուխէն ուտըցընում, վէր ծէրքէն կ'ը՛ռթունկը անց կէնա* (Ձ):

ԽՈՒՐԽԷԼ - *տե՛ս* ԽՕՐԽԷԼ:

ԽՈՒՐԽԸՀԱՆ - *ածական.* Խորխը՝ շապիկը հանված (մաշկափոխ կենդանիների մասին): *Խուրխըհան օխծ ա* (Բ):

- Խուրխըհան անէլ - 1. Սպանված օձի՝ լորտուի եւն մաշկը քերթել՝ խորխը հանել: *Օխծը խուրխըհան ըն անում, նը՛ստա թօխկա շինիւմ* (Ձ): 2. Կեղեքել, տանջել, չարչարել: *Էտ մէլիք՛ը ուրան նօք՛անրնուն խուրխըհան ար ընէս* (Ձ):

- Խուրխըհան ինիլ/տը՛ռնալ - 1. Մաշկը փոխել, խորխը հանել: *Օխծէրը տարէն մէհէտ խուրխըհան ըն ինում* (Բ): 2. Կեղեքվել, տանջվել, չարչարվել: *Շինանցէք՛ խուրխըհան իլին, մինչը՛վ էտ արխը պէրէն հըսցըրէն բաղէրը* (Բ):

ԽՈՒՐԽՈՒՓ - *ածական., գ.* Խավար՝ չլուսավորված (տեղ): *Էս խուրխուփ ութաղումը հունց ը՞ք ըպըրէս* (Բ):

ԽՈՒՐՄԱ *(պրս., վրաց. xurma, թրք. hurma)* - *գ.* 1. Արեւադարձային քաղցր պտուղ, արմավ: *Տահանք մըտնում ըն չամէնչին պահէստը ամէն օր, փըշկը-նէն չամէնչավ, խուրմավ լըցնում, տ'ուա կ'ամ* (ՀԱԲ, 15, 35): 2. Արքայանարիկի այն տեսակը, որը նախքան հասնելը տտիպ է: *Խուրման հըսած վախտըն ա լանգաթ, խակ վախտը շատ ա աղու, օտվում չի* (Բ):

ԽՈՒՐՄԷՋԻ - *տե՛ս* ԽՈՒՐՄԸՋԻ:

ԽՈՒՐՄԸՋԻ/ԽՈՒՐՄԷՋԻ - *ածական.* Շիկագույն երանգ ունեցող, շիկավուն: *Էտ ըխճըկանը խուրմըզի մազ՛էրը թաքավէրին տըղէն խըլքըհան ա անում* (Ձ):

ԽՈՒՐՋԻՆ *(պրս. xurjin)* - *գ.* Ուսին կամ գրաստի վրա գցելու երկաչքանի պարկ, որ սովորաբար գործում են բրդից: *Էտ տըղան յօր ա օնում օշափին կըլօխը կըտրում, քընցում խուրջինին մաչը, յէտ ք'ընում ախպօրցը կօշտը* (ՀԺՀ, V, 325):

ԽՈՒՐՏԱԿԷԼ/ԽՕՐՏԱԿԷԼ *(գրբ. խորտակեմ (կոտրտել, ջարդել, մանրել)* - *նբ.* Ջրի մեջ խորասուզելով՝ սպանել՝ խեղդել, ջրասույզ անել: *Թաքավէրը հըրամանք ա տամ, վէր էտ կընգանը տանին խուրտակին* (Ձ):

ԽՈՒՐՏԱԿՎԷԼ/ԽՕՐՏԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԽՈՒՐՏԱԿԷԼ-ի: *Խը՛ղճ տըղան նի յա մընում, վէր նըշընածէն տանիւս օնէ, ինք՛ը էլ ա խուրտակվում* (ԱԱ, 61):

ԽՈՒՐՈՒԽԱՆԴԱԿ/ԽՈՒՐԸԽԱՆԴԱԿ - *գ.* Շատ խոր խանդակ՝ փոս: *Մին խուրըխանդակ ըն քանդիւմ, նի տը՛ռնում մաչը* (Ձ):

ԽՈՒՐՈՒՄ-ԽՕՐՈՒՄ - *տե՛ս* ԽՕՐՈՒՄ-ԽՕՐՈՒՄ:

ԽՈՒՐՈՒՅԻՆ/ԽՈՒՐԸՅԻՆ - *ածական.* 1. Շատ խոր, մեծ խորություն ունեցող: *Սանսանգ՛ը խուրույին գ'օլ ա* (Բ): 2. *փխբ.* Խոր իմաստ՝ բովանդակություն ունեցող: *Թաքավէրը կըլօխ ա ըղնում, վէր էտ դէրվիշին ասածը խուրույին խօսկէրք ա* (Ձ):

ԽՈՒՐՈՒՆ-ԽՕՐԱՆ/ԽՈՒՐԸՆ-ԽՕՐԱՆ - *տե՛ս* ԲՕԼ-ԲՕԼ:

ԽՈՒՐՈՒՍՏԱԼ - *տե՛ս* ԽԸՐԻՒՍՏԱԼ:

ԽՈՒՐՈՒՑ(Ը)ՆԷԼ/ԽՈՒՐԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. խորացուցանեմ)* - *նբ.* ԽՈՒՐԱ-ՆԱԼ-ի:

ԽՈՒՐՕԹՈՒՆ *(գրբ. խորութիւն)* - *գ.* Խոր լինելը, խոր լինելու չափը: *Կը՛տէն խուրօթունը շատ ա ինիւմ, կարում չընընընին էն մին թանփը* (Ձ):

ԽՈՒՓ[1]/ԽՕՓ[1] *(գրբ. խոփ)* - *գ.* Գութանի կամ արորի մետաղյա այն մասը, որ խրվում է հողի մեջ: *Խուփը քընցիւմ ըն, վարում* (Ձ):

- Խուփան մինչը՛վ ծըհանը - Ամբողջությամբ, լրիվությամբ: *Կ'օղէրը քընշէրէս նի յընն մընտալ Ասատուրաց տօնը, իլանծ-չիլանծը խուփան մինչը՛վ ծըհանը տարալ* (Բ):

- Խուփը ծըրան տանիւս կ'անալ - Կարգը խախտվել, ճիշտ ընթացքից շեղվել: *Խուփը ծըրան տանիւս ա յը՛կալ, կարում չընք կօրծ անինք՛* (Բ):

- Խուփը սօր - Ջորեղ: *Խուփը սօր մարթ ա Ղանգարը* (Բ):

- Խուփը քարէն նի կ'ալ/տէմ ըղնէլ/տէմ ինիլ - Անակնկալ արգելքի հանդիպել, գործը ձախողվել: *Խուփը քարէն նի յա յը՝կալ, սըրմացու չընք քըթէնում, թա արտ անինք'* (Բ):

- Խուփը քարէն տական տանուս օնէլ - Արգելքը՝ դժվարությունը հաղթահարել, դժվար կացությունից դուրս գալ: *Անջախ-անջախ խուփը քարէն տական տանուս կալինք', միհէնգ' կարում ընք յօլլա ք'ինինք'* (Բ):

- Խուփ նի յը՝կած - Վարած, հերկած (հաճախ գործածվում է ժխտական ձեւով): *Էս վը՝ղէրը խամ վը՝ղէր ա, խուփ նի յը՝կած չի* (Ձ):

ԽՈՒՓ[2]/ԽՕՓ[2]/ԽԸՓԷ *(գրբ. խուփ)* - 1. *տե՛ս* ՂԸՓԸԼ: 2. *ած.* Խփած, փակած: *Էտ խուփ տօռնը պէնում ա, տը՝սնում՝ մին դաշանգ' ախճիգ' ըտը՝ղ նըստած* (Ձ):

- Խուփ անէլ - *տե՛ս* ՂԸՓԸԼԷԼ:

- Խուփ ասէլ - Դասն անգիր ասել: *Խօխան տանը խուփ ա ասում* (Ձ):

ԽՈՒՓ[3] - *տե՛ս* Ք'ՈՒՓ:

ԽՈՒՓԱՏՕՆ - *գ.* Գութանի այն մասը, որի վրա հագցնում են մետաղե խոփը: *Խուփը քըցում ըն խուփատօնը, վարը ըսքըսում* (Ձ):

ԽՈՒՓԷԼ - *տե՛ս* ՂԸՓԸԼԷԼ:

ԽՈՒՓԸԿԱՊԷ - *գ., ած.* Գութանի՝ արորի խոփ պատրաստող (վարպետ): *Ակօփ ապէրը էլ լ'ավ խուփըկապէ յար* (Ձ):

ԽՈՒՓՎԷԼ - *տե՛ս* ՂԸՓԸԼՎԷԼ:

ԽՕՂ *(ռուս. ход)* - *գ.* 1. Այն տեղը, որտեղից մտնում են, մուտք: *Պըդվալէն խօղը տանը մաչավընն ա ինում* (Ձ): 2. Ընթանալու՝ շարժվելու՝ հորդելու աստիճանը: *Գազէն խօղը պէցուր ա ինում, խօրանգ'ը էրում ա* (Բ):

- Խօղ ըղնէլ/ինիլ - 1. Գործի ընկնել, գործարկվել: *Վագօնը վէր խօղ ա ինում, ք'ինում, էշը կարում չի հընսնէ...* (ՀԺՀ, V, 647): 2. Թափ առնել, թափ ստանալ: *Ջիհիլնէն խօղ ըն ըղնում, մին օրումը էտ արտը հընձում* (Ձ):

- Խօղ տալ/քըցիլ - 1. Գործի գցել, գործարկել: *Մաշինը խօղ ա տամ, ք'ինամ* (Բ): 2. Թափ հաղորդել: *Նախագան կընանուցը խօղ ա տամ, մինչը՝վ քըսօր բուստընէն քըղանում ըն* (Բ):

ԽՕՂ[1] - *տե՛ս* ԽՕՂ[1]:

ԽՕՂ[2] - *տե՛ս* ԽՕՂ[2]:

ԽՕՂ[1] - *տե՛ս* ԽՕՂ[1]:

ԽՕՂ[2] - *տե՛ս* ԽՕՂ[2]:

ԽՕՂԱՆ/ԽՕՂԱՆ *(գրբ. խոզան)* - *գ.* 1. Արտը հնձելուց հետո հացահատիկային բույսերի ցողունի արմատամերձ մասը, որ մնում է գետնի երեսին: *Արտը հընձում ըն, խօզանը կըրակ տամ* (Բ): 2. *տե՛ս* Ք'ՈՒԼԱՆՇ:

- Խօզան տը՝ռնալ - Շատ նիհարել: *Էնքան տանջվանալ ա, խօզան ա տը՝ռալ* (Բ):

ԽՕՂԱՆ - *տե՛ս* ԽՕՂԱՆ:

ԽՕՂՂ - *տե՛ս* ԽՕՂ[1]:

ԽՕՂԻԼ - *տե՛ս* ԽՕՂ'ԻԼ:

ԽՕՂ[1]/ԽՕՂ[1]/ԽՕՂ[1]/ԽՕՂՂ - *գ.* Խոշորամարմին, երկար դնչով կճղակավոր կաթնասուն՝ խոզ: *Խօզ'էրը նի յըն տը՝ռալ, Սըմսօնէն բօստանը քանդալ* (Բ): 2. *փխբ.* Փնթի՝ կեղտոտ մարդ: *Էտ խօզ'ը հանալ մէհէտ թանմուզ ծըրքէրավ հաց կէրած չի* (Բ): 3. *փխբ.* Ոչ մարդամոտ՝ անբարեհամբույր մարդ: *Էտ խօզ'ը վէշ մինին նըհը՝տ վէչ պարիկըմօթուն ա անում, վէչ հընգըրօթուն* (Բ): 4. *փխբ.* Նույն կենդանու միսը: *Խօզ'ը խըրավում ըն, վը՝խճարը՝ ի-փիում* (Բ):

- Խօզ'ը միշտ ցը՝խ կըքըթէնա - Ամեն մեկը միշտ գտնում է իրեն համապատասխան միջավայրը՝ զբաղմունքի առարկան (բացասական իմաստով):

- Խօզ'ին կըլօխը խալիչին կէնալ չի - Ասում են լավ բանի հարգը չիմացողի մասին:

- Խօզ'ին կըլօխը տիրին խալիչին յըրա, թուլուլ ընգավ, ընգավ ցը՝խը - *տե՛ս* Խօզ'ին կըլօխը խալիչին կէնալ չի:

- Խօզ' տը՝ռնալ - Խիստ գիրանալ: *Ապրըհամէն պաշտուն ըն տուվալ, էրկու ամսումը խօզ' ա տը՝ռալ* (Բ):

- Խօզ'ու ճօտ - *տե՛ս* ԳՕՃԻ:

- Խօզ'ու պանուն - *տե՛ս* ԽՈՒՋ'ԱՆՈՒՑ:

ԽՕՂ[2]/ԽՕՂ[2]/ԽՕՂ - *գ.* Խուզելը, խուզվելը: *Ամը՝ռնը վէր կ'ամ ա, վըխճարէն խօզ'ը ըսքըսում ա* (Բ):

ԽՕՂ'ԻԼ/ԽՕՂԻԼ *(գրբ. խուզեմ)* - *նբ.* 1. Մկրատով՝ խուզիչ գործիքով մազերը՝ բուրդը կտրել: *Մըկըրատը յօր ա ունէս, ըտըրա մազ'էրը խուզ'իս* (Ձ): 2. Ճյուղերը՝ ոստերը՝ թփերը կտրատել: *Ցակատը տամ ա էտ մարթին, էս մարդիմազարընն էլ ք'ինամ ա ծառէրը լօխ խօզ'ում* (Ձ): 3. *փխբ.* Խաբել, խաբելով ունեցվածքը խլել, կորզել: *Էտ կընէգ'ը ըտըրան խօզ'ում ա, վը՝սկէն յը՝ր օնում, փախչում* (Ձ):

- Խօզ'ած վը՝խճար - Ասում են մազերը անկանոն կտրած մարդկանց:

ԽՕՂ'ՎԻԼ/ԽՕՂ'ՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԽՕՂ'ԻԼ-ի:

ԽՕՂՎԻԼ - *տե՛ս* ԽՕՂ'ՎԻԼ:

ԽՕՂՐՈՒԿ - *տե՛ս* ԽԸՂԸՌՕԿ:

ԽՕՂՈՒԿ - *տե՛ս* ԿԸԾՈՒՇ(ՆԸ):

ԽՕԼՎԱԹ - *տե՛ս* ԽԱԼՎԱԹ:

ԽՕԼՈՒ(Ն)Ք - *տե՛ս* ԽԷԼՈՒՆՔ:

ԽՕԼՈՒ(Ն)Ք-ԽՕԼՈՒ(Ն)Ք - *տե՛ս* ԽԸԼԸ(Ն)Ք-ԽԷԼՈՒ(Ն)Ք:

ԽՕԽ/ԽՈՒԽ *(գրբ. խուխ)* - *տե՛ս* ԲԸՂԼԱՄ:

ԽՕԽԱ/ԸՐԱԽԱ/ՐԱԽԱ/ՅԷՐԷԽԱ *(գրբ. երախայ)* - *գ.* 1. Նորածին կամ փոքրահասակ աղջիկ՝ տղա երեխա: *Ուռութանա յէր ըն կէնում, հաց օտում, չայ խըմում, ամմա խօխան յէր չի կէնում* (ՆԼՂԺԲ, 48): 2. Որեւէ հասակի աղջիկ կամ տղա՝ իր ծնողների համար: *Վէր վանդան թըմամում ա, դէրը կ'ամ ա, թա խօխէն մինը տանէ* (ՀԺՀ, V, 348): 3. *փխբ.* Անփորձ՝ միամիտ՝ մանկամիտ մարդ: *Կօզի մը՝ծ տըղա յա Ալրսէմը, ամմա հանալ խօխա յա, սաղ օրը էն ա խաղ ընէս* (Բ):

- Խուխէն ըսը՝ցէն՝ խէ լանց ը՞ս ինանում, ասից՝ ըստի խօսկըս անց ա կէնում - Դժգոհողը՝ տրտնջացողը արդյունքի հասնում է:

- Խուխէն կօրծու տի՛ր, հը՝տան ք'ինի՛ - Երեխային հանձնարարած գործը վերջում ստիպված ես լինելու ինքդ կատարել:

- Խուխէն փուրացավը խօխան կըգ'իդա - Նմանը նմանին կհասկանա:

- Խուխու տաս՝ կըխըռավէ - Քիչ է, փոքր է (ուտեստի մասին): *Կընէգ'ը մին կուտուր հաց ա տամ մարթին, մարթը ասմա.- Մ' կընէգ', էտ հինչ ա՞. խուխու տաս՝ կըխըռավէ* (Ձ):

- Խուխու տը՝ղ տինիլ - Կարծիքը հաշվի չառնել, անտեսել: *Օղտը թա.- Պա էս բօյին, տանք ինձ խուխու տը՝ղ ը՞ք տիրալ* (ՆԼՂԺԲ, 82):

- Խօխան ասած չըբիդար, թա՝ կ'անզրս կ'ամ ա, վէր ասալ ա, կ'անզրլան ա - Եթե մեկը մտադրվել է ինչ-որ բան անել, անելու է:

- Խօխան լանց իլավ, թա՝ փայրս խըրէգ' ա, քաշը յըրա տըվավ, իլածը էլ տարավ - Շատ դժգոհողը՝ տրտնջացողը ավելի է տուժում:

- Խօխան խօխա յա - Որպես մխիթարական արտահայտություն ասում են նրանց, ում աղջիկ է ծնվել: *Խօխան խօխա յա, Հանմբանց, խըրէգ' դանդ ըրա՛* (Բ):

- Խօխա չի կէնաս - Միամիտ մի՛ եղիր, մի՛ հավատա: *Դէ Թէվանը ըտի պէն ըսկանա, սուս ա՞նէ, խօխա չի կէնաս...* (ԱԱ, 75):

- Խօխօնցըս խէրը տը՝սնամ վէչ, թա... - Երդման բանաձեւ՝ երեխաներս մեռնեն,

եթե սուտ եմ ասում՝ եթե այդ բանը արել եմ եւն: *Չօբանը ուրթումն ա օտում, թա.- Խօխօնցըս խէրը տը՛սնամ վէջ, թա քու վը՛խճարըտ մօրթած ինիմ* (Ձ):

ԽՕԽԱ-(Ը)ՐԱԽԱ - *գ. հոգն.* Երեխաներ, մանուկներ: *Շէնումը մընացալ ին մին քանը՛ հըլուվուր, մըն էլ խօխարախա* (ԼՂԲՔ, 267):

ԽՕԽԱ-ԽՕԽԱ - *ած.* Միամտությամբ՝ պարզամտությամբ կատարված: *Խօխա-խօխա պէնէր ա ըրալ* (Բ):

- Խօխա-խօխա խոսել - Միամիտ բաներ ասել, պարզամիտ դատողություններ անել: *Մարթը վէր խօխա-խօխա խօսում ա, կընէգը տուս ա կամ* (Ձ):

ԽՕԽՄԱ *(ռուս. хохма)* - *ած.* Ծիծաղ առաջացնող, ծիծաղելի: *Խօխմա պէնէր ըս խօսում* (Բ):

ԽՕԿԱԼ/ԽՈՒԿԱԼ - *չբ.* Ջզվել, նողկալ, գարշել: *Աստուծ կըզնըվալ ա, մարթին անէսկ տուվալ.- Դէ վէր տու քը՛զանա իլածան խուկաս ըս, քու ծէքը՛ըտ թօղէ մին տարէ տծշիտ կէնա, իրը՛ք տարէ՝ ծույնանըտ* (ԱԱ, 89):

ԽՕՅ - *տե՛ս* ԽՈՒՅ:

ԽՕՅՍԸՋ - *տե՛ս* ԽՈՒՅՍԸՋ:

ԽՕՆ/ԽԱՆԱ[1] *(պրս. xān)* - *գ.* 1. Կլոր տաշտ: *Խօնը ըլլէրավ լըցնում ա, խըմօր հունցում* (Ձ): 2. *տե՛ս* ԼԱՔ[2]:

ԽՕՆԱԽԱ(Ն) - *տե՛ս* Ք՚ԻՐՎԱ:

ԽՕՆԱՐ/ԽՈՒՆԱՐ *(գրբ. խոնարհ)* - 1. *ած.* Համեստ, հեզ, խոնարհ: *Խօնար ախճիգ՚ ա Մըկարէն ախճիգը, ամմա մին տըղա չի կա, թա փըսակվէ* (Բ): 2. *մ.* Խոնարհ կերպով, խոնարհաբար: *Հարսը խօնար կադարում ա ըսկէսվօրը պահանջը* (ԼՂԲ, 302):

- Խօնար ծառա - Մեկի թելադրանքին հլու՝ հնազանդ մարդ, հպատակ: *Կըլօխը քաշ քըցից, հունցու խօնար ծառա՝ հօրը աչ ծը՛ռքը պաչից, տուս յէկավ* (ՀԺՀ, V, 135):

ԽՕՆԳ *(գրբ. խունկ, խունգ)* - *գ.* Արեւադարձային որոշ ծառերի կեղեւից ստացված բուրավետ խեժ, խունկ: *Աղվէսը նըստում ա յուղուծուն լօխ օտում, խօնգը էրում, թա.- Մստըված, էս էլ քու մատաղըտ* (ՀԺՀ, VII, 225):

ԽՕՆԴԻ - *գ.* Լուսամուտի վերեւը պատի լայնությամբ երկու կողմից դրվող հաստ փայտերը, որոնց վրա դնում են մարդակները եւ պատը շարում: *Վէր կացնէն քուփավը թըխում ա, ակուշկէն խօնդին տուս ա պըրծընում* (Ձ):

- Խօնդուն օշնակը - Շատ մութ տեղ: *Խօխէնքը էնքան էտ խօնդուն ուշնակումը կէնում ըն, հիվընդանում ըն* (Ձ):

- Խօնդուն օշնակը կօխէլ - Նեղել, տանջել: *Ըսկէսուրը էտ հարթնանը լափ խօնդուն օշնակըն ար կօխում* (Ձ):

ԽՕՆՉԱ *(պրս. xonče)* - *գ.* 1. Կարճ ոտքերով փայտե կլոր կամ երկար սեղան ճաշելու կամ խմորագնդերը՝ հացը եւն տեղափոխելու համար: *Պուլէրը տինում ա խունչէն յըրա, տանում թուրունը* (Բ): 2. Մրգերով՝ քաղցրավենիքներով՝ նվերներով լցված սկուտեղ, որ նվեր են ուղարկում փեսայի տնից հարսնացուի տունը կամ հակառակը: *Հընթնընցուվէն հը՛տէ մին լ՚ավ խօնչա յընն դարկում* (Ձ):

- Խօնչան փըրսըվէր տինօղ - Երախտամոռ: *Իզէն խօնչան փըրսըվէր տինօղ ա, ընդըրա լ՚ըվօթուն ընէլի չի* (Բ):

ԽՕՆՋԱՆ *(գրբ. խոնջան)* - *գ.* 1. Վարտիքը՝ անդրավարտիքը մեջքին ամրացնելու կապ: *Էտ տըղէն խօնջանը կըտըրվում ա, շըլվարան փըռնած՝ ք՚ինամ ա տօն* (Ձ): 2. Լայն գոտի: *Կընէգ՚ը տօռնը պուկում ա, խօնջանավը կապում, շիլակում, ք՚ինամ մարթին կօշտը* (ՀԺՀ, VII, 369):

ԽՕՇԱԿ *(պրս. xošk (չոր, անպտուղ)* - *գ., ած.* Մեջը դատարկ՝ փուչ (հասկ, ընկույզ եւն): *Ըստարէ հասկէրը լօխ խօշակ ա* (Բ):

- Խօշակ ըղնէլ - Փչանալ, միջուկը չաճել՝ դատարկ մնալ: *Արաշտ ըրավ, ցօրէնը խօշակ ընգավ* (Բ):

ԽՕՇԸԲԷՇ/ԽՕՇՈՒԲԷՇ *(պրս. xošk (լավ, հաճելի), թրք. xošbeš (սիրալիր խոսակցություն)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Խօշընբէշ անէլ - 1. Մտերիմ՝ սիրալիր զրուցել: *... Քանի վախտ ա՝ տը՛սալ չըմ, յէ՛ք, մին խօշընբէշ անինք՚* (ԼՂԲ, 286): 2. *տե՛ս* Սիլի-բիլի անէլ:

ԽՕՇԿ՚ԱԲԱՆՈ/ԽՕՇԿ՚ԱԲԱՆՈ *(պրս. xoškabar (չոր մրգեղեն)* - *գ.* Չոր միրգ, խաղցրավենիք: *Աշկէրը շաղվըմ ա, վը՛ր տը՛սնըմ ա դանք՚անէրըմը խօշկ՚աբանավ լիգ՚ը մէշօկնին...* (ԼՂԲ, 347):

ԽՕՇԿ՚ԱԲԱՆՈ - *տե՛ս* ԽՕՇԿ՚ԱԲԱՆՈ:

ԽՕՇՆԸ - *տե՛ս* ԽՕՐԹՆԸ[2]:

ԽՕՇՈՒԲԷՇ - *տե՛ս* ԽՕՇԸԲԷՇ:

ԽՕՇՕՐ *(գրբ. խոշոր (կոշտ)* - *գ.* Խոշոր եղջերավոր անասուն: *Համօն էրկու խօշօր ա պահում, մին էլ հէնգ՚ վը՛խճար* (Բ):

ԽՕՊԱՆ *(գրբ. խոպան)* - *տե՛ս* ԽԱՄ (1):

ԽՕՊՕՊ - *տե՛ս* ԽԸՊԷՊ:

ԽՕՋԱ *(պրս. xoğa, թրք. koğa (մեծ, ուսուցիչ)* - *գ.* 1. Հայ վաճառական 16-18-րդ դարերում: *Խօջան ապըրանքը տանում ար էրանուշ յիրգ՚իրնէ, ծախում* (Ձ): 2. Մահմեդական պալատական պաշտոնյա: *Փաշան էլ սիրիլիս ա ինանում ուրանն խուջէն ըխճըկանը* (Ձ): 3. Թուրք կամ պարսիկ ուսուցիչ: *Շատ ա ընցընում, խըրէգ՚ ա ընցընում, էտ շէնին խուջէն տըղան մը՛ռնում ա* (ՀԺՀ, Ց, 45):

ԽՕՌԹ - *տե՛ս* ԽՕՐԹ:

ԽՕՌԹԻ-ՓՕՌԹԻ - *տե՛ս* ԽՕՐԹԻ-ՓՕՐԹԻ:

ԽՕՌՀՆԸ[1] - *տե՛ս* ԽՕՐԹՆԸ[1]:

ԽՕՌՀՆԸ[2] - *տե՛ս* ԽՕՐԹՆԸ[2]:

ԽՕՌՆԻԳ՚ - *տե՛ս* ԿԱՐԱԼՕԿ:

ԽՕՍԱԼ - *տե՛ս* ԽՕՍԷԼ:

ԽՕՍԷԼ/ԽՕՍԻԼ/ԽՕՍԱԼ *(գրբ. խոսեմ, խոսիմ)* - *նբ., չբ.* 1. Բանավոր խոսք գործադրել սովորել: *Էտ խօխան մին տըրըկանըմը խօսում ար* (Ձ): 2. Որեւէ լեզվի տիրապետել: *Ինք՚ըն էլ թուրքէրէն լ՚ավ խօսում ար* (Ձ): 3. Բանավոր խոսքով կարծիքներ՝ մտքեր արտահայտել՝ հաղորդել: *Նախագան խօսում ա, խօսում, ամմա վէշ մինը մըհալ չի քըցանում* (Ձ): 4. Զրուցել, զրույց անել: *Սաղ քըշէրը ըտըրանք ուրանուր նըհը՛տ խօսում ըն, մըննըրնէն քըցանում ուրանց ջըհիլօթունը* (Ձ): 5. Պայմանավորվել, բանակցել, համաձայնեցնել: *Խօսալ ին, վը՛ր տավարը տանէր ըրըծընցընէր, ուրանգ՚ունը պը՛ր էր* (ԼՂԲ, 356): 6. Հաշտվել, խռով լինելուն վերջ տալ: *Ափկարը միհէնգ՚ ախպօրը նըհը՛տ խօսում ա, էրկու տարէ յա՝ խըռավ ըն իլալ* (Բ): 7. *փխբ.* Հանդիմանել, նախատել: *Էնքան խօսում ըն, ճարը կընտըրած՝ քօջանում ա* (Բ): 8. Ընկերություն անել (սիրող զույգերի մասին): *Ասթըղէգ՚ը ըսկանում ա, վէր ուրանն տըղան ք՚ուխէն ըխճըկանը նըհը՛տ խօսում ա* (Ձ): 9. Նշաններով՝ շարժումներով միտքն արտահայտել: *Էտ տըղան էլ լալէգ՚ ա ինանում, ծըրքէրավընն ար խօսում* (Ձ): 10. Համապատասխանել, պատշաճել, համընկնել: *Էտ պէնջակը էտ շըլվարէն նըհը՛տ խօսում չի* (Բ): 11. Դժգոհություն հայտնել, բողոքել: *Կընէգ՚ը էնքան խօսից, մարթը թանգգան տօն շինից* (Բ): 12. Բամբասել, չարախոսել: *Պըռընվնէն հըվաքվում ըն պատէն տակէն, համ գ՚ուլբան կ՚օրծում, համ ուրանց հըրթնէրէն անա խօսում* (Բ): 13. Վկայակոչել, մի բան՝ իբրեւ հաստատող հանգամանք, հիշել: *Ապան սաղ օրը ուրանն մէդալնէրան ա խօսում* (Բ): 14. Հակաճառել, առարկել: *Յու կըկա՞ռէ Ալիսանէն տէմ խօսէ* (Բ): 15. *փխբ.* Երգել, դայլայլել, գեղգեղալ: *Կարունքը վէր կ՚ամ ա, ծըտէրը խօսում ըն* (Բ):

- Խօսած տը՛ղը - Խոսելու՝ արտահայտելու ժամանակ, խոսելիս: *Փա՛ւնգը յէր ա կէնըմ, թա.- Պա խօսած տը՛ղը կասիս՝ ծլքա՛ս տըկըտիյը՛ր կանիմ, էտ խէ կըրէցէր վո՞ւչ, թա մին մըսխալ մէս քըթէնաս...* (ՀԺՀ, V, 519):

- Խուսէլի հը՛տէ քըրէհ օգ՛իլ - Չխոսկան՝ սակավախոս լինել: *Տընաշինըտ խուսէլի հը՛տէ քըրէհ ա օգ՛ում, մին պէն չի խօսում, թա ըսկանանք* (Բ):

ԽՕՍԻԼ - *տե՛ս* ԽՕՍԷԼ:

ԽՕՍ-ԽՕՍ - *գ.* Վեճ, կռիվ, անհաշտություն: *Հինչ ա էտ հարթնը յը՛կալ ա, Կօլ՚ուց տանը ամմէն օր խօս-խօս կա* (Բ):

ԽՕՍԿ/ԽՕՍՔ *(գրբ. խօսք)* - *գ.* 1. Այն, ինչ որ խոսվել՝ խոսվում՝ խոսվելու է, ասածը, ասելիքը: *Ժուղովուրթը ըտըրա խօսկը ըսկանում ըն, ըսքըսում կըռվէլը* (Ձ): 2. Նախադասություն, արտահայտություն: *Ղէրը ո՛ւրո՛ւր հը՛տա մին էրկու խօսկ ա ասում, սուս անում* (Ձ): 2. Առած, ասացվածք: *Քօ՛հնա խօսկ ա, ասում ա.- Հու հինչու անէ, ո՛ւրա՛ն կանէ* (Բ): 4. Բառ: *Մին դէր ա ինո՛ւմ, օրթնիլի խօսկէրքը գ՚իդա՛լիս չի ինո՛ւմ* (ՆԼՂԺԲ, 114): 5. Պատվեր, պատգամ, խրատ: *Տըղէքը՛ հօրը խօսկէրքը մուռանում չըն* (Ձ): 6. Խոսելու հերթը՝ իրավունքը: *Թամադան խօսկը տամ ա Կ՚ա՛փո՛ւնց Մըրքըրէն* (Ձ): 7. Հարցը, խնդիրը: *Բըրիգադիրը ասմա.- Խօսկը էն ա, վէր մինչը՛վ մին շէբաթը բիդի խաղուն քաղինք՛, պըրծընիք՛* (Ձ): 8. Լուր, տեղեկություն: *Էտ խօսկը թաքավէրին շատ ա տանջում* (ՀԺՀ, V, 72): 9. Խոստում, հանձնառություն: *Թաքավէրը ո՛ւրա՛ն խօսկը կըդարում ա* (Ձ):

- Խուսական յը՛տ տը՛ռնալ/յը՛տ վը՛ենը կէնալ - Խոսքը դրժել, իր ասածից՝ տված խոստումից հրաժարվել: *Տըղամարթը, վէր ո՛ւրա՛ն խուսական յը՛տ տը՛ռավ, տըղամարթ չի* (Բ):

- Խուսկա(ն) տո՛ւս կ՚ա՛լ - 1. *տե՛ս* Խուսական յը՛տ տը՛ռնալ: 2. *տե՛ս* Խօսկը կոտրէլ:

- Խուսկավ անէլ - Մեկին զրույցով զբաղեցնել, մեկին խոսեցնել: *Կընէգ՚ը ըտըրան խուսկավ ա անում, կօրծա քըցո՛ւմ* (Ձ):

- Խուսկավ առաշկ ըղնէլ - Շատախոսելով՝ ճարտարախոսությամբ բոլորին գերազանցել՝ լռեցնել: *Հարթնը խուսկավ առաշկ ա ըղնում, թօղում չի թա տընըցէք՛ մին պէն ասին* (Ձ):

- Խուսկավ ասվէլ չի - Չափազանց է, արտասովոր է, շատ է: ... *Ինքըն էլ էնքան նախշուն ա ինըմ, վը՛ր էլ խուսկավ ասվէլ չի* (ՀԺՀ, V, 42):

- Խուսկավ ըղնէլ/ինիլ - Խոսակցությամբ տարվել: *Կընանէք՛ը խուսկավ ընգը՛ցէն, հօնձ ընուղնէրէն հացը յը՛տըցըրէն* (Բ):

- Խուսկավը ք՚ինիլ - Մեկի ասածով՝ պատվերով առաջնորդվել, մեկին լսել, ասածը հարգել: ... *Իրէքըն էլ խէլո՛ւնք ըն ինո՛ւմ, հօրը խուսքավըն ըն ք՚ընո՛ւմ* (ՀԺՀ, V, 188):

- Խուսկավ՝ շինաշէն, կօրծավ՝ տընաքանդ - Ասում են նրանց մասին, ովքեր էությամբ խարդախ են, բայց իրենց լավ մարդ են ձեւացնում:

- Խուսկէն աղը - Խոսքի բուն էությունը՝ իմաստը: *Մարթին խուսկէն աղը բիդի հավայի չինի* (Բ):

- Խուսկէն առաշկըն ա քամակը գ՚իդա՛ալ - *տե՛ս* Խուսկէն տակըն ա կըլօ՛խը գ՚իդա՛ալ:

- Խուսկէն էք՚ըն ա վը՛ոցը գ՚իդա՛ալ - *տե՛ս* Խուսկէն տակըն ա կըլօ՛խը գ՚իդա՛ալ:

- Խուսկէն խօսկ կ՚ա՛լ - Մեկի խոսքին իբրեւ շարունակություն խոսք ավելացնել: *Խուսկէն խօսկ ա կ՚ամ, սաղ քըշէրը զըրո՛ւց ըն անում* (Ձ):

- Խուսկէն խօսկ պիրիլ - Մեկի ասածին պատասխանել՝ հակաճառել, փոխադարձաբար իրար պատասխանել: *Հըրթնըսկէսուր խուսկէն խօսկ ըն պիրո՛ւմ, կըռվում* (Բ):

- Խուսկէն կընծէգ՚ը յը՛տ տալ/պէց թօղնէլ - Երկար խոսակցություն՝ զրույց սկսել: *Ըխպիրին ղըրաղէն նըստում ըն, խուսկէն կընծէգ՚ը յը՛տ տամ, համ էլ հաց օտում* (Ձ):

- Խուսկէն մաչին խընըխաշու չինիլ - Խոսքը՝ ասածը լուրջ չլինել, դատարկաբանություն լինել: *Խա՚լափ, խուսկէտ մաչին խընըխաշու չի կա, նըհախ տը՛ղան զա՛ենլա՛ մէ՚լ տանէլ* (Ձ):

- Խուսկէն յէշիլ - *տե՛ս* Խուսկավը ք՚ինիլ:

- Խուսկէն չըվան տինիլ - Մեկի ասածին ուշադրություն դարձնել: *Կընէգ՚ը վէր մարթին խուսկէն չըվան չի տիրա՛ալ, տօնը կըռը՛վ կըղնէ* (Ձ):

- Խուսկէն (պէնդ) վը՛ենը կէնալ - Իր ասածը պնդել, համառել: *Չօբանը խուսկէն պէնդ վը՛ենն ա կէնում, վը՛խճարը տամ չի* (Ձ):

- Խուսկէն տական տո՛ւս կ՚ա՛լ - 1. *տե՛ս* Խուսկա(ն) տո՛ւս կ՚ա՛լ: 2. Չխեղճանալ, կարողանալ մեկի ասածներին դիպուկ պատասխանել: *Կընէգ՚ը սուս չի անում, կարում ա մարթին խուսկէն տական տո՛ւս կ՚ա* (Ձ):

- Խուսկէն տակէն-կըլխէն - Միշտ, շարունակ, խոսելու ողջ ընթացքում: *Բուղդան դային խուսկէն տակէն-կըլխէն ուշունց ա տամ* (Բ):

- Խուսկէն տակէն մընալ - Խեղճանալ, չկարողանալ մեկի ասածներին դիպուկ պատասխանել: *Բաղվանչին ճըղճըղամ ա, ինք՚ըն էլ խուսկէն տակէն ա մընամ, կարում չի ջօղաբը տա* (Ձ):

- Խուսկէն տակըն ա կըլօ՛խը գ՚իդա՛ալ - Խոսելիս կշռադատել, ավել-պակաս չխոսել: *Մարօն խուսկէն տակըն ա կըլօ՛խը գ՚ի՛ւդ՚ում ա, իզէն ըտի պէն ասէլ չի* (Բ):

- Խուսկէն տարը ինիլ - Իր ասածի վրա հաստատուն մնալ, իր ասածը՝ խոստումը կատարել: *Էտ տըղան ասում ա.- Յը՛ս իմ խուսկէս տարը ըմ, հինչու խօսկ ըմ տուվալ, ընական ըմ* (Ձ):

- Խուսկէն տար վը՛ենը կէնալ/տար ք՚ինիլ - *տե՛ս* Խուսկէն տարը ինիլ:

- Խուսկէրքը հազզար փութ մը՛ղըրավ օտվէլ չի - Ասում են ծանր դիտողություն՝նկատողություն անողի մասին:

- Խուսկէրքը տինիս սըրընուցէն քարէն տակէն՝ մին կաթ ծէթ չի տո՛ւս կ՚ա՛լ - Ասում են դատարկախոս՝ վայրախոս մարդկանց մասին:

- Խուսկու հը՛տա շօռ չըկ՚ա՛լ/չըղնէլ - Սահուն՝ ճարտար խոսել, հանպատրաստից կարողանալ անմիջապես պատասխան խոսք ասել: *Նախագան խուսկու հը՛տա շօռ չար կ՚ամ, հինչու ասում հին, դա՛ստի պադասխանում ար* (Ձ):

- Խուսկու հը՛տէ - *տե՛ս* Խօսկի օրինակ:

- Խուսկու հը՛տէ ծը՛ոքը ջուբը չընտանէլ - *տե՛ս* Խուսկու հը՛տա շօռ չըկ՚ա՛լ:

- Խուսկու մըհար - *տե՛ս* Խօսկի օրինակ:

- Խօսկը անց կէնալ - *տե՛ս* Խօսկը ընցընէլ:

- Խօսկը առաշկ տանէլ - 1. Շարունակել տվյալ նյութի շուրջ խոսել: *Այան հիշկան խօսկը առաշկ ա տանում, մին ա, քաթը պըրծընում չի* (Ձ): 2. Ասածը պնդելով անցկացնել, ասածն անել տալ: *Շինըցէք՛ խօսկը առաշկ տըվէն, շէնըմը բալնիցա շինիլ տըվէն* (Բ):

- Խօսկը բազար տո՛ւս օնէլ - Խոսքը՝ ասածը քննարկման դնել: *Կընանուցը քըշտէն վէր խօսկըտ բազար տո՛ւս կա՛ալիլ, էլ պըրծումը չի կա* (Բ):

- Խօսկը էրկու չանէլ - Պատվերը՝ հանձնարարությունը՝ առաջարկությունը եւն անմիջապես կատարել՝ կրկնել չտալ՝ չսակարկել՝ չհակաճառել: *Էլ խօսկը էրկու չըն ըրալ, ք՚ը՛ցալ ըն, մըսլըհաթ ըրալ, քօչա՛ալ, յը՛կալ* (ԱԱ, 35):

- Խօսկը ընցընէլ - Հեղինակություն ունենալ, ասածը նշանակություն՝ ազդե-

գություն ունենալ՝ հարգվել: *Վէզիրին խօսկը ընցընում ար պալատումը* (Զ):

- Խօսկը իրը՝սէն ասէլ/փըռնըցընէլ - *տե՛ս* Իրը՝սէն ասէլ:

- Խօսկը իրկընցընէլ - Մի բանի մասին երկար խոսել, մանրամասնությունների մեջ մտնել: *Էնքան խօսկը իրկընցընում ա, լօխճին զանիլանն տանում ա* (Բ):

- Խօսկը խօսկ ինիլ - *տե՛ս* Խուսկէն տարը ինիլ:

- Խօսկը խօսկ ա պէնում/պիրում - Ասվածից՝ փոքր զրույցից երկար պատմություն է ստեղծվում՝ նոր մտքեր են արտահայտվում: *Խօսկը խօսկ ա պէնում, վէր մին պէն ըսը՝ցէր, հանում պէն կըվիլցընին* (Զ):

- Խօսկը կարճ կապէլ - Խոսելիս մանրամասնությունների մեջ չմտնել, խոսքը՝ զրույցը շուտ վերջացնել: *Ղէրվիշը խօսկը կարճ ա կապում* (Զ):

- Խօսկը կէմնը անէլ, կապէլ - Բարի խորհուրդներով համոզել՝ դարձի բերել: *Կ'օղ կընգանը կարէլ չը՝ս խօսկը կէմնը անիս, կապիս* (Զ):

- Խօսկը կէսատ - *տե՛ս* Խօսկը պիրանումը:

- Խօսկը կէսատ թօղնէլ - *տե՛ս* Խօսկը պիրանումը թօղնէլ:

- Խօսկը կէսատ մընալ - *տե՛ս* Խօսկը պիրանումը մընալ:

- Խօսկը կըտրէլ - *տե՛ս* Խօսկը պիրանումը թօղնէլ:

- Խօսկը կըտօրը քըցիլ - Բուն նյութից խուսափելով՝ խոսակցության նյութը փոխել: *Լ'ըհա վէր ըսքըսում ին կօրծ ընէլա խօսէլը, Մուխին խօսկը կըտօրընը ար քըցանում* (Զ):

- Խօսկը կ'ին ք'ինիլ - *տե՛ս* Խօսկը ընցընէլ:

- Խօսկը կօլ տալ - Վիրավորական խոսքին չպատասխանել, իրեն զսպել: *Մարթը հիշկան ուշունց ա տամ, կընէգը խօսկը կօլ ա տամ, պէն չի խօսում* (Զ):

- Խօսկը կօտրէլ - Մեկի ասածը՝ խնդրանքը չկատարել՝ մերժել: *Պիծի Նըհատակը ըխճըկանը խօսկը կօտրում չի, մին պիծի ամը՝ռն ա տամ* (ՆԱԲ, 83):

- Խօսկը հըլօրէլ - *տե՛ս* Խօսկը փոխէլ:

- Խօսկ ըղնէլ - *տե՛ս* Խօսկ վէր կ'ալ:

- Խօսկը ճըկատէն ասէլ/փըռնըցընէլ - *տե՛ս* Իրը՝սէն ասէլ:

- Խօսկը մէր մաչին (մընա) - Ասում են խոսակցին՝ ասածս գաղտնիք է, ուրիշի չասես: *Բաղվանչին ասում ա.- Խօսկը մէր մաչին, բըրիգադիրը հիրըվանէտ կընգանը սիրականը ա* (Զ):

- Խօսկը մը՝ղըր ա, կօրծը՝ տանխտը՝ղ - Ասելն հեշտ է, կատարելն է դժվար:

- Խօսկը մը՝ղըրավ կըտրէլ - *տե՛ս* Խօսկը շընքանավ կըտրէլ:

- Խօսկը մին անէլ/մին ըմանում տինիլ - Համաձայնության գալ, միաբանվել: *Տահանք խուսկուրնէն մին ընըրալ, փախալ, յէկալ, ըստէղ կացալ* (ԱԱ, 29):

- Խօսկը յը՝տ յը՝ր օնէլ/յը՝տ օտէլ - *տե՛ս* Խուսկան յը՝տ տը՝ռնալ: ... *Հանալ խօխէքը՝ իրէք տըրէկան ըն իլալ, վար հուրանց թաքավէրը խօսկ ա տըվալ, տըված խօսկընն էլ յէտ օտիլը անմալ չի կ'ալ* (ՀԺՀ, V, 369):

- Խօսկը շընքանավ կըտրէլ - Քաղաքավարական արտահայտություն, որ ասվում է մեկի խոսքը ընդմիջելիս՝ ներողություն ընդմիջելուս համար: *Ջավէնը թա.- Պօղոս, խօսկըտ շընքանավ ըմ կըտրում, մին պապռօզ տօ՛* (Զ):

- Խօսկը շօռ տալ - *տե՛ս* Խօսկը փոխէլ:

- Խօսկը պահէլ - *տե՛ս* Խուսկէն տարը ինիլ:

- Խօսկը պէնու տը՝ղ չըտինիլ - *տե՛ս* Խօսկը տափը քըցիլ:

- Խօսկը պըրանէլ - *տե՛ս* Խօսկը փոխէլ:

- Խօսկը պիրանան քանրփանթունանվ տանուս քաշիլ/տանուս օնէլ - Մեկին դժվարությամբ խոսեցնել: *Էտ հարթնը էլ վէշ մին պէն չար խօսում, խօսկը պիրանան քանրփանթունանվ ին տանուս քաշանում* (Զ):

- Խօսկը պիրանումը - Ասելիքը դեռ չվերջացրած: *Լըհա խօսքը պիրանումը, կըլօխը թըռչում ա* (ՀԱԲ, 15, 25):

- Խօսկը պիրանումը թօղնէլ - Խոսքը ընդհատել՝ ընդմիջել, չթողնել, որ մինչեւ վերջ արտահայտվի: *Վէզիրը օգում ա խօսէ, թաքավէրը խօսկը պիրանումը ա թօղնում* (Զ):

- Խօսկը պիրանումը մընալ - Խոսքն ընդհատվել՝ ընդմիջվել, չկարողանալ մինչեւ վերջ արտահայտվել: *Մարթը վէր ճըղղամ ա, կընգանը խօսկը պիրանումը ա մընամ* (Բ):

- Խօսկը սարավ-քօլավ քըցիլ - *տե՛ս* Խօսկը կըտօրը քըցիլ:

- Խօսկըս մընա էս չօրք' պատէն դաթումը - *տե՛ս* Խօսկը մէր մաչին:

- Խօսկը տափավը կ'ալ - *տե՛ս* Խօսկը տափը քըցիլ:

- Խօսկը տափէն մընալ - Ասվածը՝ պատվերը՝ խնդրանքը չկատարվել՝ անուշադրության մատնվել՝ արհամարհվել: *Մօրը խօսկը տափէն մընաց, վէչ տըղան ըրավ, վէչ ախճիգը* (Բ):

- Խօսկը տափը քըցիլ - Խոսքը՝ ասածը բանի տեղ չդնել, պատվերը՝ խնդիրքը չկատարել՝ արհամարհել: *Բիդասըլ տըղա յա Համօն, հօրը խօսկը տափընա ա քըցանում* (Բ):

- Խօսկը տը՝ղ ընցընէլ - *տե՛ս* Խօսկը ընցընէլ:

- Խօսկը տը՝ղ հըսնէլ - Մեկի հասցեին ասված գաղտնի խոսքը նրա կողմից իմացվել: *Ըսկը՝սուրը հարթնանը անա կ'էնգատ ա անում, խօսկը տը՝ղ ա հըսնում* (Բ):

- Խօսկը փըռնէլ - Ասածը համապատասխանել իրականությանը՝ մեկ ուրիշի ասածին եւն: *Ըտըրա խօսկը փըռնում չի կընգանը ըսածէն* (Զ):

- Խօսկը փոխէլ - 1. Խոսքի նյութը փոխել: *Վէր տը՝սնում ա՝ խանը կ'ամ ա, դանստի խօսկը փոխում ա* (Զ): 2. Նախապես տրված ցուցմունքից՝ վկայությունից՝ ասածից հրաժարվել, ուրիշ բան ասել: *Սուդումը Հէղանը խօսկը փոխում ա* (Բ):

- Խօսկը քամուն տալ - Իզուր՝ ապարդյուն խոսել: *Հինչ ը՞ս խօսկըտ քամուն տամ, ք'ը՝զ ըսկանօղ չի կա* (Բ):

- Խօսկը քանդիլ - Պայմանը չեղյալ համարել: *Էտ մարթը հուրանց խօսկը քընդիս ա, էլ ըտըրանց նիհէտ կօրծ չի ընէս* (Զ):

- Խօսկը ք'անդիր ա, վէր փըռնիս, կըրկընանա - Առիթի դեպքում զրույցը ծավալվում՝ երկարում է:

- Խօսկ ինիլ - Խոսք բացվել, խոսվել, խոսակցություն տեղի ունենալ: *Խօսկ ա իլալ, վէր յը՝կօղ տարէն Ղարաբաղա լօխ շինէրումը բիդի գազ ինի* (Բ):

- Խօսկի օրինակ - Որեւէ բան բացատրելու՝ հաստատելու եւն համար որպես օրինակ ծառայող, օրինակի համար: *Մարը ասմա.- Խօսկի օրինակ, ասինք' թա էտ ըխճըկանը նըհը՝տ փըսակվալ ըս, ըշտը՝ղ ը՞ք ըպըրլական* (Զ):

- Խօսկ խառնէլ - Երկու հոգու իրար հետ գժտեցնելու նպատակով գրգռել՝ բամբասել: *Թանզզան հիրը՝վանը խօսկ ա խառնում, ք'օհնան հիրըվընէրէն կըռվըցընում* (Զ):

- Խօսկ խընթըրիլ - Խոսելու թույլտվություն՝ իրավունք խնդրել: *Ժողովէն վախտը Մարյանգ'ուլը էլ ա խօսկ խընթըրում* (Զ):

- Խօսկ խօսկու կ'ալ - Իրար հակաճառել: *Խօսք խօսքու վա կ'ամ, մին մարթ մընին վէխճար ա ասում* (ՆԱԲ, 107):

- Խօսկ կա՞ - Ասելիք՝ առարկություն ունե՞ք, եթե ունեք, խնդրեմ: *Հանը աս-*

մա.- Էք՛ռւծ ծաք՛ին ք՛ինական ընք հօնձ անինք՛, խօսկ կա՞ (Ձ):

- Խօսկ կապէլ - Պայմանավորվել: *...Ռ՝ւրռ՝ւր նըհէտ խօսկ ըն կապըմ, վը՛ր պուճուր ախպօրը վը՛րըմը թօղին...* (ՀԺՀ, V, 21):

- Խօսկ կըռըվցընէլ/կօխըլ կըցընէլ - Վիճաբանել, լեզվակռիվ տալ: *Ախճիգըն ռ՝ւրանն ասածըն ա ասում, թաքավը՛ր՝ ռ՝ւրանը, վէրչը խօսկը կօխըլ ըն կըցընում* (ՀԺՀ, VII, 134):

- Խօսկ հըսնէլ - Խոսելու իրավունք ունենալ (հաճախ գործածվում է ժխտական ձեւով): *Ախճիգ՛ը ասում ա.- Թաքավէրը՝ ապըրած կէնա, ինձ խօսկ չի հըսնում, ամմա դռ՝ւզ չըս անում, վէր էտ տըղէն կախ ըս տամ* (Ձ):

- Խօսկ յըրա անէլ/պիրիլ - Մեկի ասածը շարունակել կամ հակաճառել: *Վէր մինը ասմա՝ կ՛արունքը յէկավ, մինը էլ խօսկ ա յըրա պ՝ռ՝ռում, թա.- գ՛իդվանլ չի, հանլամ Պըռավէն էծէրը պըրծալ չի* (ԱԱ, 83):

- Խօսկ յը՛ր օնէլ - 1. Խնամախոսության ժամանակ աղջկա համաձայնությունը ստանալ: *Ք՝ռ՝ունում ըն խընըմախօս, վէր չուբանէն ըխճըկանը անա խօսկ յը՛ր օնին* (Ձ): 2. Խոստում առնել՝ ստանալ: *Ժուղովուրթը ըստրանա խօսկ ըն յօր ունէս, վէր էլ ռ՝ւրանց չէնին ծըմակը կ՛ըլական չի* (Ձ): 3. Խոսելու թույլտվություն՝ իրավունք ստանալ: *Չօբանը թաքավէրին անա խօսկ ա յը՛ր օնում, լօխ պատմում* (Ձ):

- Խօսկ շինիլ - Կատարվածի մասին ամենուր հայտարարել՝ բերնեբերան գցել: *Խը՛ղճը գ՛անքըմը մը՛հէտ կ՛ուղօթուն ըրավ, խօսկ շինը՛գէն* (Բ):

- Խօսկ շօռ ածէլ - *տե՛ս* Խօսկ տանէլ-պիրիլ:

- Խօսկ շօռ ածօղ - *տե՛ս* Խօսկ տանօղ-պիրօղ:

- Խօսկ չի կա - 1. Առարկություն չկա, համաձայն եմ: - *Էք՛ռ՝ւց յը՛ք, ք՛ինինք՛ բազար. - Խօսկ չի կա* (Բ): 2. Ասթերի է, կատարյալ է: - *Ո՛ւբէլ, հիրըվանէտ էշը օգ՛ում ըմ ինք՛ օնիմ, հունց էշ ա՞: - Խօսկ չի կա, Յէ՛գօր, փուշմընական չըս, ինք՛ կանլ* (Ձ):

- Խօսկ վէր կ՛անլ/պէնվալ/պէց ինիլ - Խոսակցության նյութ դառնալ, որեւէ բանի մասին խոսակցություն սկսվել: *Մին օր էլ շինըմաչումը խօսկ ա վէր կ՛ամ, վէր ծըմակը կըտորին, տը՛ղը բաղ քըցին* (Ձ):

- Խօսկ վէր պիրիլ/պէնալ/պէց անէլ - Խոսակցության նյութ դարձնել, որեւէ բանի մասին խոսակցություն սկսել: *Ասսախկալնէրան մինը խօսկ ա վէր պիրռ՝ում, վէր էտ յիթիմին տօնը շինին* (Ձ):

- Խօսկ տալ - Խոստանալ, խոսքով որեւ հանձնառություն ստանձնել, համաձայնել: *Թաքավէրին պուճուր տըղան խօսկ ա տամ, վը՛ր էտ լօխ կըճարի, պը՛էրի* (ՀԺՀ, V, 24):

- Խօսկ տանէլ-պիրիլ - Մեկի ասածները մյուսին հայտնելով՝ գժտություն առաջ բերել: *Պառավը շէնումը էնքան խօսկ ա տանում-պիրռ՝ում, լօխ ռ՝ւրռ՝ւր անա խըռավում ըն* (Բ):

- Խօսկ տանօղ-պիրօղ - Մեկի ասածները գժտեցնելու նպատակով մյուսին հայտնող, խառնակիչ, խաբարբզիկ: *Ա՛ր-փէնիգ՛ը խօսկ տանօղ-պիրօղ ա, սա՛յաղ կացէք՛* (Բ):

- Խօսկ տռ՝ւս քաշիլ/տռ՝ւս օնէլ - Ձանազան միջոցներով մեկից որեւէ բան իմանալ՝ գաղտնիք դուրս կորզել: *Կընէգ՛ը հիշկան անում ա, կարում չի մարթին անա խօսկ տռ՝ւս քաշի* (Ձ):

- Խօսկ քըցիլ - 1. *տե՛ս* Խօսկ վէր պիրիլ: 2. Ակնարկել, որեւէ նպատակով խոսակցության նյութին անուղղակիորեն առնչվող մի բանի մասին ակնարկ անել: *Սամսօնը խօսկ ա քըցռ՝ում, հիրըվանէն անա ցօրէն պարթկ անում* (Ձ):

ԽՕՍԿԸՁԸՐՈՒՑ - *տե՛ս* ԽՈՒՍԿԸՁԸՐՈՒՑ:

ԽՕՍԿԻ/ԽՕՍՔԻ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ԽՕՍՎԱԼ - *տե՛ս* ԽՕՍՎԷԼ:

ԽՕՍՎԱՍԿ - *գ.* 1. Որեւէ բարբառի առանձին ենթատեսակը՝ ենթաբարբառ, խոսվածք: *Հ՝ռ՝ադրռ՝ութ՝ն խօսվասկը ճօկ ա* (Բ): 2. Խոսելը, խոսելու ձեւը՝ եղանակը: *Էտ մարթին խօսվասկը վէշ մինին տուր չի կամ* (Բ): 3. Խոսք, ասացվածք, առած: *Սը՛հէնց մին խօսվասկ կա, վար ասում ա.- Ամը՛ն շէնա մին պը՛էլ պիրաք, Հըթէրքա վը՛ր պըտահէ* (Ձ):

ԽՕՍՎԱՍԿՈՒԹՈՒՆ - *տե՛ս* ԽՕՍՎԱՍԿ:

ԽՕՍՎԷԼ/ԽՕՍՎԻԼ/ԽՕՍՎԱԼ - *կբ. եւ չբ.* ԽՕՍԷԼ-ի:

ԽՕՍՎԻԼ - *տե՛ս* ԽՕՍՎԷԼ:

ԽՕՍՏՈՒՄ(ՆԸ) - *տե՛ս* ԽՈՒՍՏՈՒՄ(ՆԸ):

ԽՕՍՐՕՎԻ - *տե՛ս* ԽՈՒՍՐՈՒՎԸ՝ՆԷ:

ԽՕՍՔ - *տե՛ս* ԽՕՍԿ:

ԽՕՍՔԻ - *տե՛ս* ԽՕՍԿԻ:

ԽՕՍՕՂ *(գրբ. խոսող)* - *ած.* 1. Խոսել կարողացող, խոսելու ունակություն ունեցող: *Էտ ծին խօսօղ ծի յա ինռ՝ում* (Ձ): 2. *տե՛ս* ԱՍՕՂ-ԽՕՍՕՂ:

ԽՕՎԼԱԹ - *տե՛ս* ԽԱԼՎԱԹ:

ԽՕՏ *(գրբ. խոտ)* - *գ.* 1. Նուրբ եւ չփայտացող ցողունով միամյա եւ բազմամյա բույսերի ընդհանուր անվանումը, խոտ: *Էնքան արաշտ իլանվ, խօտ էլ չի փըսավ* (Բ): 2. Երկրի՝ այդպիսի բույսերի ծածկույթը: *Կանանչ խուտէրումը պարանց ըն ըղնում, քունավ ընցընում* (Ձ): 3. Այդ բույսերի հնձած ու չորացրած զանգվածը, որ օգտագործվում է իբրեւ անասնակեր: *Խօտէն թայան նի յա կէնում, էրում, հիյվընէն մընամ ըն տռ՝ւզնը* (Ձ): 4. Խոտը հնձելու ժամանակը: *Էտ խօտէն Հ՝ռբռ՝ւն ծին ըստակում ա, խը՛ղճէն թօղնում կըրակու մաչի* (Ձ): 5. Անհամ՝ ոչ կծու տաքդեղ: *Էս հինչ տանխտէղ ա, խօտ ա* (Բ):

- Խօտան կընէլ - Արբունքի հասնելով՝ առաջին անգամ սեռական՝ սիրային հարաբերության մեջ մտնել: *Տըղան վէր խօտան կընէից, էլ տիժէր ա տանը պահէլը* (Ձ):

- Խօտը կ՛ռ՝ւլին առաշկը քըցիլ, մէսը՝ վըխճարէն - *տե՛ս* Էշը վը՛ռան մօրթէլ:

- Խօտ ըրածէլ/օտէլ - Անասունի նման հիմար՝ ապուշ լինել (հաճախ գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Վաղօն ասմա.- Խէ՞, յը՛ս խօտ ը՞մ ըրածում, էտքանըտ կըլօխ չը՞մ ըղնում* (Ձ):

- Խօտ ըրընծցընէլ/ուտըցընէլ - Մեկին հիմարի տեղ դնել՝ խաբել: *Սումբաթէն անումըն ա դանգըլա, ամմա վէր թօղիս, օխտը ժ՝ռ՝ւլիգ՛ու խօտ կըրընծցընէ* (Բ):

- Խօտ ըրածօղ/օտօղ - Հիմար՝ ապուշ մարդ: *Էտ խօտ ըրածօղըն էլ ա հըրուստացալ* (Բ):

- Խօտու թայա - Դյուրագրգիռ, բարկացկոտ: *Բաղվանչին էլ խօտու թայա յար, վէր մինին տը՛սավ բաղումը, ճըղճըղօցը տինռ՝ար* (Ձ):

ԽՕՏԷԼ - *տե՛ս* ԽՈՒՏԸԿԱ՝ԼԻԼ: *Ղալին հըղէն խօտալ ա...* (ԼՂԲ, 22):

ԽՕՐ *(գրբ. խոր)* - *ած.* 1. Մեծ խորություն ունեցող: *Շատ ա ք՛ինըմ, թա խըրէգ՛, վէրչը հըսնըմ ա մին խօր ծ՝որ՝ի* (ՀԺՀ, V, 101): 2. Մակերեսից դեպի ցած ձգվող զգալի փոս կազմող, խորունկ: *Մին խօր աման թանավ ա օտում, քօն ինռ՝ում* (Ձ): 3. Մեծ տարածություն գրավող, տեսանելի սահման չունեցող: *Ճարը կըտրած՝ մարթին նըհը՛ռ նի յըն մընում խօր ծըմակը* (ԱԱ, 80): 4. Մեծ խորության վրա գտնվող՝ տարածված: *Կաղնուն խօր տակըռօտ շատ օնէ* (Բ): 5. Հաստ շերտ կազմող: *Ըստարէ էրկու հը՛տէ խօր ծռ՝ւն ա յը՛կալ* (Բ):

- Խօր խուրանալ - Մեռնել, գետինը մտնել (սովորաբար գործածվում է որպես անեծք): *Խօր խուրանա Ա՝ռմիկը, էծըս կ՛ուղացալ ա* (Բ):

ԽՕՐԱ - Նախորդ տարվանից հողում մնացած սերմերից՝ պալարներից՝ արմատներից աճած (հացահատիկ, կարտոֆիլ, սոխ եւն): *Խօրա կըրտօպլին էլ ա ինում լաւզաթտու* (Բ):

- Խօրա մարթ - Անարժեք՝ ստոր մարդ: *Խօրա մարթիք ամմէն տըէղ էլ կան* (Բ):

ԽՕՐԱԳ - *տե՛ս* ԽՕՐԱՂԳ:

ԽՕՐԱՂԳ/ԽՕՐԱՂԳ/ԽՕՐԱԳ *(պրս. xōrak)* - *գ.* Կերակուր, ճաշ: *Ուրուգունը կամ ա, տէսնում էլիա տօնը սըրփած, կըրակ ըրած, խօրաղը իփած* (ՀԺՀ, V, 189):

- Խօրաղը ինիլ (մինին) - Մեկին համապատասխան, նրա ուժերի՝ հնարավորությունների սահմաններում լինել, մեկի բանը լինել (հիմնականում գործածվում է ժխտական ձեւով): *Ղորփէրը ասմա.- Մյ բալա, հօնձ անէլը քու խօրաղըտ չի, ղըրաղ կաց* (Ձ):

- Խօրաղ իփօղնէն վէր շատ ինին, խօրաղը յա՛ նանլի կինի, յա՛ աղի - Տարբեր մարդկանց կողմից կատարված գործը արդյունքում տուժում է:

ԽՕՐԱՂԳ - *տե՛ս* ԽՕՐԱՂԳ:

ԽՕՐԱՄԱՆԳ *(գրբ. խորամանկ)* - *տե՛ս* ԺՈՒԼԻԳ[1]:

ԽՕՐԱՄԱՆԳՕԹՈՒՆ *(գրբ. խորամանկութիւն)* - *տե՛ս* ԺՈՒԼԻԳՕԹՈՒՆ:

ԽՕՐԱՆ *(գրբ. խորան)* - *գ.* Փոքրիկ սենյակ եկեղեցու բեմի երկու կողմերում: *Մին օր էլ ջըքօրանը դէրին՝ յէխծէն քինիլը ծառան քինում ա նի մըննըմ խօրանը...* (ԼՂԲ, 349):

ԽՕՐԱՆՔ - *գ.* 1. Խորություն ունեցող բան: *Էս ամանը խօրանք չի* (Բ): 2. *փխբ.* Ձոր, կիրճ: *Պըռըվնէն ասում ին, վէր էտ խօրանքումը սադանէք կան* (Ձ): 3. Խոր եւ մութ գործեր, խորամանկություն, խարդախություն: *Ըտըրա փըռնած կօրծէրը լօխ խօրանք ա, կարէլ չըս պէն կըլօխ ըղնիս* (Բ):

ԽՕՐԱՍԱՆ - *գ.* Բույսի տեսակ, որի սերմերը օգտագործում էին որպես դեղ՝ փորի ճիճուները թափելու համար: *Առաչ, վէր խօխօնցը ճըճօ յա իլալ, խօրասանու սը՛ռմէր ըն իլալ ուտըցընէլիս* (Ձ):

ԽՕՐԹ/ԽՕՌԹ *(գրբ. խորթ)* - *ած.* Ոչ գոյությունակից, ոչ հարազատ, օտար (ծնողների, քույրերի, եղբայրների եւն մասին): *Խօրթ մարը մին կուտուր չօր հաց ա տամ ըտըրանց, ղարկում հանդը* (Ձ):

- Խօրթ աշկավ յէշիլ - Մեկին վատ վերաբերվել, նրա հետ վատ վարվել: *Քանսպարը ախպօրցը խօնցը խօրթ աշկավ ա յէշում* (Բ):

ԽՕՐԹԻ-ՓՕՐԹԻ/ԽՕՌԹԻ-ՓՕՌԹԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խօրթի-փօրթի քըցիլ - Խորթություն՝ անհամերաշխություն առաջացնել: *Էտ հարթնը ըտըրանց տօնը խօրթի-փօրթի յա քըցում, ինքը քինամ հանունց տօն* (Ձ):

ԽՕՐԹԼԱԽ - *գ.* Չար ոգի, ուրվական: *Այան ասմա.- Վէր քօն չինիք, խօրթլախը կըլական ա, ծը՛զ տանէ* (Ձ):

ԽՕՐԹՆԸ[1]/ԽՕՌՀՆԸ[1] - *գ.* Շրթնաձաղիկների ընտանիքին պատկանող համեմաբույս՝ ուրց, որից թեյ են պատրաստում: *Ղարաբաղ ըտի շէն չի կա, վէր խօրթնը չինի* (Բ):

ԽՕՐԹՆԸ[2]/ԽՕՌՀՆԸ[2]/ԽՕՐՁ/ԽՕՇՆԸ *(գրբ. խուրձ)* - *գ.* Հնձած հացաբույսի՝ խոտի եւն կապուկ, խուրձ: *Առաչ արտէրը չինավ հինձիս ըն իլալ, խօրթնը կըպէս, տընէս կալը* (Բ):

ԽՕՐԻ(ՆՔ)- *ած.* Իմաստուն, խորահմուտ, գիտուն: *Խօրի մարթ ա իլալ Շափաղաթ ապան* (Բ):

ԽՕՐԽ/ԽՈՒՐԽ *(գրբ. խորխ)* - *գ.* Մաշկափոխ կենդանիների դուրս նետած մաշկը՝ շապիկը: *Օխծը վէր օգում ա խուրխրհան ինի, մին նը՛ղ ծակավ նի յա մընում, խօրխը մընամ ա տանումը* (Ձ):

ԽՕՐԽԷԼ/ԽՈՒՐԽԷԼ - *նբ. տե՛ս* Խուրխրհան անէլ:

ԽՕՐՁ - *տե՛ս* ԽՕՐԹՆԸ[2]:

ԽՕՐՏԱԿԷԷ - *տե՛ս* ԽՈՒՐՏԱԿԷԷ:

ԽՕՐՏԱԿՎԷԼ - *տե՛ս* ԽՈՒՐՏԱԿՎԷԼ:

ԽՕՐՈՒՄ *(թրք. xorum)* - *գ.* Հնձած ու չորացրած խոտի փաթաթված՝ կլորացված փոքր կույտ, առանց կապելու փոքր խուրձ: *Մին խօրում խօտ տընդվարըմ չի, հըզգար կըլօխ հէյվան տընդվարըմ ա* (ԱՀ, 60):

ԽՕՐՈՒՄ-ԽՕՐՈՒՄ/ԽՈՒՐՈՒՄ-ԽՕՐՈՒՄ/ԽԸՐԸՄ-ԽՕՐՈՒՄ - *մ.* 1. Կույտերի ձեւով, ըստ կույտերի: *Սարէն կըլխէն խօտ ըմ հարըմ, խօրում-խօրում թուլուլ տամ, վէշ մին հէյվան մուտանըմ չի* (ԱՀ, 75): 2. *փխբ.* Առատորեն, շատ-շատ: *Ըստարէ ծառէրը խօրում-խօրում ծաղկալ ըն* (Բ):

- Խօրում-խօրում անէլ - 1. Հնձած եւ չորացրած խոտից փոքր կույտեր սարքել, խորոմել: *Մարթը խօտը խօրում-խօրում ա անում, կընէգ՛ըն էլ խօրթնէր ա կապում* (Ձ): 2. *տե՛ս* ԿԸԼԸՎԷԼ:

ԽՕՐՈՒՐԹ *(գրբ. խորհուրդ)* - *գ.* Մի բան անելու՝ չանելու համար տրվող ցուցում՝ խրատ՝ առաջարկ, խորհուրդ: *Էտ պըռավէն խօրուրթը կընդարէլավ քաղաքը դօվան ըզաղըմ ա, մարթիք ըսկըսում ըն ազատ ապրէլ* (ՆԼՂԺԲ, 20):

- Խօրուրթ անէլ/նըստէլ/տը՛սնալ - Միմյանց հետ կամ որեւէ մեկի հետ մի բան քննարկել, խորհրդակցել: *Ըտէղ էտ ախպէրքը կամ ըն փըսէն նըհէտ խօրուրթ անում, վէր հիյվընէն տանին սարը* (Ձ):

- Խօրուրթ տալ - Մեկին իր կարծիքը՝ ցուցումը՝ խրատը առաջարկել՝ կատարելու համար: *Մին թօրք մուտացալ ա, թա.- Խօրուրթ կըտամ՝ նի չըկ՛աս, տիժըրօթուն ըս քըշիլան* (ԱԱ, 35):

ԽՕՐՔ - *գ.* Որեւէ տարածության ամենախոր տեղը, հատակ, հուն: *Տըղան շօրէրը հանում ա, նի մընում ծօվը, խօրքան էտ մուտանան տանուս օնում, տամ թաքավէրին ըխճըկանը* (Ձ):

ԽՕՓ[1] - *տե՛ս* ԽՈՒՓ[1]:

ԽՕՓ[2] - *տե՛ս* ԽՈՒՓ[2]:

ԽՕՓ[3] - *տե՛ս* ՔՈՒՓ:

Ծ

ԾԱԴԻՐ - *գ.* Խաղատեսակ. մրցողները նստում են դեմ առ դեմ՝ ձեռքերով իրար բազկից բռնած, արմունկներով սեղանին հենված: Հաղթող է ճանաչվում նա, ով մրցակցի ձեռքը կորացնում, կպցնում է սեղանին: *Հիշկան ծադիր ըն խաղ անում, վէշ մինը կարում չի Համօվէն յը՛խնէ* (Ձ):

ԾԱԼ[1] - *տե՛ս* ԾԱԼ[1]:

ԾԱԼ[2] - *տե՛ս* ԾԱԼ[2]:

ԾԱԼ[1]/ԾԱԼ[1] *(գրբ. ծալ)* - *գ.* 1. Կտորի՝ հագուստի՝ թղթի եւն՝ իրար վրա բերելուց առաջացած կոտրվածքը, երկտակած՝ ծալած տեղի գիծը: *Ախճիգը ծալած շօրէրը տանուս ա տամ, ուրթու տամ, ծալէրը դանգացընում* (Ձ): 2. Ծալվածքի ամեն մի դարսը, ծալված մասերից յուրաքանչյուրը կամ նրանց արանքը: *Պառավը սընդոզէն կըտօրէն ծալան մին վը՛սկէ յա տանուս օնում, տամ ըտըրան* (Ձ):

- Ծալէրը յը՛ստ տանէլ - Ծալված տեղերից բացվել, ընդարձակվել: *Ժողովուրթը հիշքան նըստում ա, գանբան թազանդան ա ծալէրը յէտ տանում, տէղ անում* (ՀԺՀ, V, 192):

- Ծալը կոտրվէլ - Ծալագիծը վերանալ: *Հիշկան լըվանում ըն, ուրթու վըն տամ, էտ շօրին ծալը կոտրվում չի* (Ձ):

- Ծալը պակաս - *տե՛ս* Խը՛ղքան պակաս: *Մին ծալը պակաս մարթ քինըմ ա Շուշի-Ղալին բազարը...* (ԼՂԲ, 347):

- Ծալը օտէլ - Ծալված տեղը մաշվել: *Շօրը էնքան սընդոզումը ծալած պահալ ա, ծալը կէրալ ա* (Ձ):

ԾԱԼ[2]/ԾԱԼ[2] - Պատանիների դեռեւս չհասունացած, ոչ թանձր՝ ջրիկ սերմնահեղուկը:

ԾԱԼԱՆ - *տեմ* ԾԱԼԱՆ:

ԾԱԼԱՆ/ԾԱԼԱՆ - *ած.* 1. *տեմ* ԾԸԼՔԱՎԷՈ: 2. *փխբ.* Բարձրահասակ եւ քայլելիս սեթեւեթող՝ կոտրատվող: *Ծալան ախճիգ ա Ալիսանկէն թոռնը* (Բ):

ԾԱԼԷԼ - *տեմ* ԾԱԼԻԼ:

ԾԱԼԻԼ/ԾԱԼԷԼ *(գրբ. ծալեմ)* - *նբ.* Ծայրերը՝ եզրերը իրար վրա բերելով՝ ծավալը փոքրացնել կամ որոշ ձեւ տալ (կտորի՝ հագուստի՝ թղթի եւն մասին): *Շորերը ծալում ա, տանում* (Բ): 2. Կրծքի վրա խաչաձեւ դնել, կրծքին խաչել (ձեռքերի մասին): *Ըմբոքերը ծալում ա, վըմնը կէնում* (Բ): 3. Կորացնել, կեռել, ճկել: *Դամուրչին լինգը կիրմիրցընէս ա, քէթը ծիլիս* (Ձ): 4. Վեր քշտել: *Փոխկէրքըտ ծալի* (Բ): 5. Իրար վրա բերելով՝ որոշ դիրք տալ: *Վըմնէրը ծալում ա, տինում տակէն, նըստում* (Ձ): 6. Շարժական մասերը իրար վրա բերելով՝ փակել: *Տէնակը ծալում ա, տինում խուրջինումը* (Ձ): 7. *փխբ.* Կռվի՝ մրցության մեջ հաղթել: *Ըսքըսում ըն կըռվէլը, Շիրինը փանիլիվանէն ծալում ա* (Ձ):

- Ծալած շորը ինքը ուրան կըմաշի - Իրը չօգտագործելով կփչանա:

- Ծալած չըվալ - Հոգնած, թույլ, անուժ (մարդ, անասուն): *Ծալած չըվալ ը՞ս, խէ թայդի չը՞ս ըղնում* (Բ):

- Ծալիլ, ղըրաղ տինիլ - Գործը վերջացնել՝ փակել: *Արտը հընձում ըն, ծալում, ղըրաղ տինում* (Ձ):

- Ծալիլ, ջուբումը տինիլ - Իր արժանիքներով՝ կարողություններով մեկին գերազանցել, մեկին կամ մի բան հեշտությամբ հաղթահարել: *Մէր Վանին օխտը պըրափէսուրու ուրան խըլքավը կըծալի, ջուբումը տինի* (Բ):

- Ծալիլ, տակէն տինիլ - 1. *տեմ* Ծալիլ, ղըրաղ տինիլ: 2. *տեմ* Ծալիլ, ջուբումը տինիլ: 3. Սեփականացնել, յուրացնել, իրենը դարձնել: *Մին էրկու հօքի շէնին սաղ վըղէրը ծալալ ըն, տըկըրնէրէն տիրալ* (Բ):

ԾԱԼ-ԾԱԼ - *տեմ* ԾԸԼԿԸԾԱԼ:

ԾԱԼԿԱԾԱՆ - *տեմ* ԾԱԼԿԱԾԱՆ:

ԾԱԼԿԱԾԱՆ/ԾԱԼԿԱԾԱՆ - *գ.* Ոլորապտույտ՝ ծուռումուռ արահետ՝ կածան: *Էտ ծալկընծանավը քինամ ըն, հըսնում էտ ախպարը* (Ձ):

ԾԱԼՄԱԾ - *տեմ* ԾԱԼՄԱԾ:

ԾԱԼՄԱԾ/ԾԱԼՄԱԾ - *ած.* Ծալված վիճակում երկար մնալուց կամ շատ անգամ ծալվելուց մաշված: *Կօգի թազգա, ամիա ծալմաշ շօր ա* (Բ):

ԾԱԼՎԱՍԿ - *տեմ* ԾԱԼՎԱՍԿ:

ԾԱԼՎԱՍԿ/ԾԱԼՎԱՍԿ - *գ.* 1. *տեմ* ԾԱԼՔ: 2. Ծալելը, ծալվելը: *Կընէգը շորէրէն ծալվասկը պըրծընում ա, յըէտ տըռնում, խօրագ իփում* (Ձ): 3. Ծալելու ձեւը՝ եղանակը: *Ամէն շօր ուրան ծալվասկը օնէ* (Բ):

ԾԱԼՎԷԼ - *տեմ* ԾԱԼՎԻԼ:

ԾԱԼՎԻԼ/ԾԱԼՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԾԱԼԻԼ-ի: 2. *չբ. փխբ.* Խոնարհվել: *Նօքարը աղէն վէր տըսնում ա, դանտի ծալվում ա* (Ձ):

ԾԱԼՔ - *տեմ* ԾԱԼՔ:

ԾԱԼՔ/ԾԱԼՔ *(գրբ. ծալք)* - *գ.* 1. *տեմ* ԾԱԼ[1] (1, 2): 2. Իրար վրա դարսած անկողիններ՝ շորեր՝ սպիտակեղեն եւն: *...Առաջ պէտմա ըսկըսինք ծալքան, յօրդան-դօշակը պըժէնինք, յէտնան էլ մընացածը* (ՀԺՀ, VI, 238):

ԾԱԼՕՎԻ - *տեմ* ԾԸԼՕՎԻ:

ԾԱԼՕՎԻ - *տեմ* ԾԸԼՕՎԻ:

ԾԱԽ *(գրբ. ծախ)* - *գ.* Վաճառվելը, ծախելը, վաճառք: *Կուքուն բախտան էտ օրը հանդը կինի յա կամ ծախ* (ՆԼՂԺԲ, 93):

- Ծախ անէլ - *տեմ* ԾԱԽԷԼ:

- Ծախ փըռնէլ - Վաճառելու՝ ծախելու գործընթացը կազմակերպել: *Քինամ ա բազար, շինացուց ապրանքը ծախ փըռնում* (Ձ):

ԾԱԽ - *տեմ* ԾԷԽ:

ԾԱԽԷԼ *(գրբ. ծախեմ)* - *նբ.* 1. Վաճառել: *Էտ բանգը լօխ վըղէրը ծախալ ա հանդանութոցուց յըրա, քօչալ Ամէրիկա* (ԱԱ, 19): 2. *փխբ.* Դավաճանել, մատնել, դավել, խարդավանել: *Վէր թակում ըն, էտ կանը հընգէրունցը ծախում ա* (Բ):

ԾԱԽԼԻԿ - *տեմ* ԾԷԽԼԻԳ:

ԾԱԽՍ *(գրբ. ծախ)* - *տեմ* ԽԱՐՋ (1, 2):

- Ծախս անէլ/տըսնալ - *տեմ* Խարջ անէլ:

- Ծախսը տանուս օնէլ - *տեմ* Խարջը տանուս օնէլ:

- Ծախսու տակ ըղնէլ - *տեմ* Խարջու տակ ըղնէլ:

- Ծախսու տակ տինիլ/քըցիլ/թօղնէլ - *տեմ* Խարջու տակ տինիլ:

ԾԱԽՍԷԼ - *տեմ* ԽԱՐՋԻԼ:

ԾԱԽՍՎԷԼ - *տեմ* ԽԱՐՋՎԻԼ:

ԾԱԽՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԾԱԽԷԼ-ի: *չբ.* 2. Կաշառվել: *Սուդյան ծախվում ա, էտ օյինբազէն տանրմա ըզադում* (Ձ): 3. Շահադիտական նկատառումներով անազնիվ գործարքի մեջ մտնել՝ ընդդեմ իր գաղափարների՝ համոզմունքի՝ պաշտոնի եւն: *Թաքավէրը ըտըղ կըլխու վա ըղնում, վէր ուրան վէզիրը ծախված մարթ ա* (Ձ):

ԾԱԽՎԻԼ - *տեմ* ԾԷԽՎԷԼ:

ԾԱԽՎՕՈ - *ած.* Հեշտ վաճառվող, մեծ պահանջարկ ունեցող: *Թօթէն արաղը ծախվօղ ապրանք ա* (Բ):

ԾԱԽՈՒ - *ած.* 1. Վաճառքի հանված: *Սաղ բազարը շօռ ա կամ, ծախու ծի չի քըթէնում* (Ձ): 2. Վաճառքի ենթակա, ծախելու հատկացված: *Թանջիրը ասմա.- Ծախու ապրանք չօնիմ, մին էրկու շէբաթ ըսպասէ* (Ձ): 3. Հեշտությամբ կաշառվող, սեփական շահի համար ստոր գործարքի մեջ մտնող: *Ծախու մարթ ա Ափկարը* (Բ):

ԾԱԽՕՈ - *ած., գ.* Վաճառող, որեւէ բան վաճառող (անձ): *Ծախօղը ըտըրան խանփում ա, վէց կիլօվէն տըղ չօնք կիլօ քըշըռում* (Ձ):

ԾԱԾԱՌ[1] - *գ.* Երեխայի՝ նոր ոտքի կանգնելը: *Ըտըրա ծանծառը էրկու տիրըկանումը ա իլալ* (Բ): 2. Երեխային կանգնել սովորեցնելու ձայն: *Խօխան վըէնն ա կէնում, մարը համ ծափ ա տամ, համ ասում՝ ծանծա՛ռ, ծանծա՛ռ* (Ձ):

- Ծանծառ անէլ - Առաջին անգամ ոտքի կանգնել (փոքր երեխաների մասին): *Խօխան ծանծառ ա ըրալ* (Բ):

ԾԱԾԱՌ[2] - *գ.* Թռչնատեսակ: *Ծանծառը կըտուցում ա, կուրթնուկէն աշկը տանուս օնում* (Ձ):

ԾԱԾԱՌ[3] - *ած. տեմ* Խըլքան պակաս:

ԾԱԿ/ԾԱԿՍ *(գրբ. ծակ)* - *գ.* 1. Որեւէ բանի՝ առարկայի՝ գործիքի եւն վրա բացված անցք՝ ճեղք: *Մըղակէն ծակավը յէշանում ա, տըսնում ըտըրանք սիլի-բիլի յըն անում* (Ձ): 2. *փխբ.* Նեղ մուտք՝ անցում՝ դուռ: *Թաքավէրին տըղան էտ ծակավը նի յա մընանում, տըսնում ըտըղ մին մըծ օթաղ* (Ձ): 3. Բույն, որջ: *... Յէշում ա, տէսնում՝ էրկու մուկուն մին ծակա տանուս յէկէն, խաղ ըրէն* (ՀԱԲ, 15, 56): 4. *արհմ.* Փոքր կացարան՝ բնակարան՝ տուն՝ սենյակ: *Օխտը հօքավ էտ ծակումը հունց ը՞ք ապրում* (Բ): 5. *փխբ. տեմ* ՏՈՒՐՄԱ(1): *Հէնգ տարէ ծակումը կէնում ա Հէնդօն, մինչը՝կ փուլ ըն տամ, ըզադում* (Բ): 6. Մարմնի զանազան գործարանների՝ քթի՝ ականջի՝ հետույքի եւն անցք: *Ընգուճէս ծակը կանվալ ա, տիժէր ըմ ըսկանում* (Բ): 7. Կնոջ սեռական օրգան (հիմնականում գործածվում է հայհոյանքների մեջ կամ հեգնաբար): 8. *ած.* Ծակված, ճեղքված, պատռված: *Ծակ գանլբէքը կը՞ցալ ա, տանա յը՞կալ շինամաչ* (Բ):

- Ծակ աշկ - *տեմ* Աշկը ծակ:

- Ծակ բօղազ - Շատակեր, որկրամոլ (մարդ): *Համբօվէն նըման ծակ բօղազ վէշ մին տը՞ղ ինիլ չի* (Բ):

- Ծակը կօխէլ/քըցիլ - *տեմ* Տանրմա անէլ: *Թաքավէրէն տըղան քինամ ա պըրիստավէն, քուխվէն փըռնըմ, կըպօտըմ, քըցըմ ծակը, պըռավէն տըղէն էլ ըզադըմ* (ՀԺՀ, V, 308):

- Ծակը նի մընանէլ - Թաքնվել, վախից թաքստոց մտնել: *Խօսրօվը վէր թըվանգանվը մէհէտ յըրա յա անում, ըտըրանք ծակըն ըն նի մընանում* (Ձ):

ԾԱԿԱՆ - *ած.* Ծակելու հատկություն ունեցող, ծակող: *Ցանքը ծական քոլ ա* (Բ):

ԾԱԿԷԼ/ԾԱԿԸԼ *(գրբ. ծակեմ)* - *նբ.* 1. Որեւէ առարկայի վրա անցք՝ ճեղք բացել: *Մուկունը աշկ ա կուղացալ, պօլը կըրծկօրծալ, տապանը ծակալ* (ԱԱ, 63): 2. Խոցելով՝ սուր ծայրով մարմնի վրա թեթեւակի վերք բացելով՝ ցավ պատճառել, ծակոց առաջացնել: *Փօշը խուխէն մաննը ծակալ ա* (Բ): 3. Անախորժ խտուտ առաջացնել: *Պիրթի շօրը ջանըս ծակում ա* (Բ): 4. Աչքերը խտղտացնել: *Ինը՞վը աշկէրըս ծակում ա* (Բ): 5. Սուր ձայնով անախորժ լսողական տպավորություն թողնել: *Կամանց խօսէ, սանսըտ անգուճըս ծակում ա* (Բ): 6. *չբ.* Ծակոց՝ ցավ զգալ: *Սը՞րտը ծակում ա, վէր ըտի տը՞սնում ա* (Բ):

ԾԱԿԸԼ - *տեմ* ԾԱԿԷԼ:

ԾԱԿԸԾՈՒԿ/ԾԱԿՈՒԾՈՒԿ/ԾԱԿ-ԾՈՒԿ - *գ.* 1. Ջանազան ծակեր՝ անցքեր՝ ճեղքեր: *Խէղճ տըռռօնը տէս ա յէշում, տէն ա յէշում, հարուր ծակ-ծուկ կա, նըհանցավ ինքը նի մընոր ա՞* (ՆԱԲ, 71): 2. Ջանազան անկյուններ՝ թաքստոցներ: *Հէրիք-նազը տանքօրը տանը ծակըծուկըն ա նի մընում, էտ մուտանան քըթէնում* (Ձ):

- Ծակըծուկը գիդալ - Տեղանքին՝ վայրին՝ հանգամանքներին եւն լավ ծանոթ լինել, մանրամասնություններն իմանալ: *Էտ դէրվիշը ծակըծուկը լավ ար գիդիր, ըտըրա հը՞տէ էլ կարում չըն փըռնին* (Ձ):

ԾԱԿԼԱՆ - *տեմ* ԾԱԿ (7):

ԾԱԿ-ԾՈՒԿ - *տեմ* ԾԱԿԸԾՈՒԿ:

ԾԱԿՍ - *տեմ* ԾԱԿ:

ԾԱԿՎԷԼ/ԾԱԿՎԸԼ - *կբ. եւ չբ.* ԾԱԿԷԼ-ի:

ԾԱԿՎԸԼ - *տեմ* ԾԱԿՎԷԼ:

ԾԱԿՈՒԾՈՒԿ - *տեմ* ԾԱԿԸԾՈՒԿ:

ԾԱԿՈՒՌ - *գ.* 1. Պատի վրա բացված անցք, որ ծառայում է տարբեր նպատակների: *Թընրէքը ծակուռավը տանուս ըն տամ* (Բ): 2. *արհմ.* Փոքր տուն՝ խուց՝ գոմ՝ փչակ՝ բույն եւն: *Էտքան վընհճընէն ածում ա էտ ծակուռը, տօռնը քընլում* (Ձ):

ԾԱԿՈՒՑ - *տեմ* ԾԱԿՕՑ:

ԾԱԿՕՑ/ԾԱԿՈՒՑ - *գ.* 1. Սուր բանով մարմինը ծակելը եւ դրանից առաջացած ցավը: *Օշափը ըսը՞դէն ծընկօցէն մընհալ չի քընցանում* (Ձ): 2. Մարմնի տարբեր գործարաններում՝ սրտում՝ ստամոքսում՝ գլխում եւն առաջացած սուր ցավ: *Սընրտէս ծակօցը կընտընրում չի* (Բ):

ԾԱՂԷԳ - *տեմ* ԾԱՂԷԳ:

ԾԱՂԷԳ/ԾԱՂԻԳ/ԾԱՂԻԿ/ԾԱՂԷԳ *(գրբ. ծաղիկ)* - *գ.* 1. Ծաղիկ, ծաղկաբույս: *Կարունքը վէր կաս ա, մէր հընդէրանումը հինչ ծաղէգ ասիս, փըսնէս ա* (Բ): 2. Ծանր վարակիչ հիվանդություն, որ արտահայտվում է լորձաթաղանթի եւ մաշկի վրա գոյացող թարախային բշտիկներով եւ դողէրոցքով: ... *Վար խօխէնքը ծաղկան ինգալ ըն, կանլիս ա իլալ ծընընգնէ քընդէլիս, ճար չինիլիս, հիվընդնէրէն սընընցընէլիս* (ԱԱ, 51): 3. *փխբ.* Բորբոս, որ առաջանում է հացի եւ որոշ այլ սննդամթերքների վրա: *Հացէն իրը՞սը սաղ ծաղէգ ա* (Բ): 4. Իբրեւ զարդ որեւէ բանի վրա նկարված՝ քանդակված՝ ասեղնագործված ծաղկապատկեր: *Խուխէն շօրին յընրա ծընընգնէ յա կօրծալ* (Բ):

- Ծաղէգը յընրա(ն) - 1. Բոլորովին թարմ՝ մատղաշ: *Ծաղէգը յընրան խընյար ա* (Բ): 2. Խակ (պտուղների մասին): *Խընձօրը հալա ծաղէգը յընրա յա ինիս, վէր էտ խօխէնքը քընէս ըն* (Ձ):

- Ծաղէգ կիրիլ - Ծաղիկ հիվանդության դեմ պատվաստել: *Միհէնգ լօխ խօխօնցը կուռնէրէն ծաղէգ ըն կիրիլ, վէր ծաղկան ընդնին վէչ* (Բ):

- Ծաղէգ շօռ ածող - Ըստ սնոտիապաշտության՝ հրեշտակ, որ իբր տարածում է ծաղիկ հիվանդությունը: *Այան մատաղ ա անում, հանցու ծաղէգ շօռ ածողը ուրանց տօնը կա վէչ* (Ձ):

Ծաղէգ չափէլ - Հմայության ձեւ. համբարձման նախորդ գիշերը աղջիկները թիզով որեւէ ծաղկաբույս էին չափում եւ կարմիր թելով նշան անում՝ հաջորդ օրը կրկին չափելու համար. եթե երկարում էր, լավ նշան էր, իսկ եթե ոչ՝ վատ: *Ընհճընկէրքը նի յընն տը՞ռնում հանդէրը, ծաղէգ չափում* (Ձ):

- Ծաղէգ պահէլ - Լավ խնամել, լավ պահել: *Խօրթ մարը էտ ընհճընկօրցը ծաղէգ ա պահում* (Ձ):

- Ծաղէգ տը՞սնալ - Դաշտանի ենթակա լինել, հասունացած լինել (աղջիկների մասին): *Առաչ, վէր ահճիգը ծաղէգ ար տը՞սնում, էլ թողում չին տանան տանուս կա* (Բ):

- Ծաղէգ տինիլ - Շիրիմին՝ հուշարձանին ծաղիկներ՝ ծաղկեփունջ դնել՝ ի հիշատակ հանգուցյալի: *Ամմէն մայիսի էրկուսէն ժուղովուրթը քիս ըն հանգիստը, ծաղէգ տինիս* (Բ):

- Ծաղկում պըտըտօրվէլ - Ծաղկել, փթթել: *Բաղէրը ծաղկում պըտըտօրվալ ըն* (Բ):

ԾԱՂԸՐ *(գրբ. ծաղր)* - *տեմ* ՏԸՆԱՁ:

ԾԱՂԸՐԷԼ/ԾԱՂՐԷԼ *(գրբ. ծաղրեմ)* - *նբ. տեմ* Տընազ անել:

ԾԱՂԸՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԱՂՐԷԼ-ի:

ԾԱՂԻԳ - *տեմ* ԾԱՂԷԳ:

ԾԱՂԻԿ - *տեմ* ԾԱՂԷԳ:

ԾԱՂԿԷԼ *(գրբ. ծաղկեմ)* - *չբ.* 1. Բույսի ծաղկաբողբոջները բացվել եւ վրան ծաղիկներ երեւան գալ, ծաղիկներ արձակել: *Մանրդումը հունին ծաղկում ա* (Բ): 2. *փխբ.* Ծաղկունքով՝ կանաչով պատվել: *Հանդէրը ծաղկալ ըն* (Բ): 3. *փխբ.* Բորբոսնել, մգլոտել (հացի եւ որոշ այլ սննդամթերքների մասին): *Հացը ծաղկալ ա* (Բ): 4. Հասակ առնել, զորանալ (հաճախ գործածվում է իբրեւ բարեմաղթություն): *Ծաղկէ Նուշան, ամմէն դօնում քօմանգ ա անում շէնին պըռըվկէրէն* (Բ):

- Ծաղկած հաց - Արժանիքներից զուրկ՝ անպետք մարդ: *Էտ ծաղկած հացը լօխճին աշկէն պըլօր ա տը՞ռալ* (Բ):

- Ծաղկած շըլօրէ - Սիրուն, գեղեցկատես (հատկապես աղջիկ): *Ահճիգ, հինչ ա՞խճիգ, մին ծաղկած շըլօրէ յա* (Բ):

ԾԱՂԿԷԼ-ԾԻՐԱՆԱԼ *(գրբ. ծաղկեմ +ծերանամ)* - *չբ.* Շատ ապրել ու բազմանալ՝ զավակներ ունենալ (հաճախ գործածվում է իբրեւ բարեմաղթություն): *Ծաղկին-ծիրանան մէր ջիհիլնէն, մէզ թօրքէն անա ըզընը՞ցէն* (Բ):

ԾԱՂԿՈՒՏ *(գրբ. ծաղկուտ (ծաղկալից)* - *ած.* Ծաղիկ հիվանդության թողած սպիներ ունեցող, ծաղկատար (մաշկի, դեմքի մասին): *Մին ծաղկուտ իրը՞սավ ահճիգ ա օգալ Սանասարը* (Բ):

ԾԱՂԿՈՒՑ - *տեմ* ԾԱՂԿՕՑ:

ԾԱՂԿՕՑ/ԾԱՂԿՈՒՑ *(գրբ. ծաղկոց (ծաղիկների պարտեզ)* - *գ.* Բույսերի ծաղկելու ժամանակը: *Խընյարը շընլօրանուն ծընընկօցումը կընվարին* (Բ):

ԾԱՂՐԷԼ - *տեմ* ԾԱՂԸՐԷԼ:

ԾԱՂՔ - *գ.* Բույսերի համատարած ծաղկելը: *Օրէրը թընքացավ, ծընռէրէն ծաղքը ընքընսիգ* (Բ):

ԾԱՄ[1] *(գրբ. ծամ)* - *գ.* 1. Կանացի մազերի երկար հյուսք: *Քընշէրը աղան կամ ա տոն, տէսնում խանումը ծամէրը կընտօրած* (ՀԺՀ, V, 243): 2. Մսի մեջ եղած սպիտակ չծամվող մաս, որն ուտողի մազերը իբրեւ երկարում են: *Մէսը իփանում ըն օտում, ուրանն էլ մին ծամ տամ, թա.-էտ ա քու փայըտ, կէր, հանցու մազէրընտ իրկընանա* (Ձ): 3. Որեւէ բանի՝ կաշվի՝ ավելուկի եւն հյուսք: *Էրկու ծամ ընվիլանկ ա իփանում* (Բ):

- Ծամ անել - Մազերը՝ ավելուկը եւն հյուսել, հյուսք անել: *Մազէրը ծամ ա անում, քինամ* (Բ):

- Ծամը՝ էրկան, խը՞լքը՝ կարճ - *տեմ* Մազը՝ էրկան, խը՞լքը՝ կարճ:

- Ծամը կընտընրած - Անամոթ, անառակ, լիրբ (կանանց մասին): *Ծամը կընտընրած կընէգ ա Հէղանէն հարթանը, օխտը սիրական ա պահում* (Բ):

- Ծամը կընտընրէլ - Մազերը կարճ կտրելով՝ խուզելով՝ անառակել, խայտառակել (կանանց մասին): *Առաչ վէր կընէգը բուզօթուն ա իլալ ընէս, ծամը կընտընրէլիս ըն իլալ* (Ձ):

- Ծամը տափավը քաշ ինիլիս - Երկար ծամ՝ մազեր ունեցող (աղջիկների մասին): *Մաքաղաթէն էրկու ծամը տափավը քաշ ինիլիս ախճիգ օնէ* (Բ):

ԾԱՄ[2] - *գ.* 1. Ծամելը: *Մըսէն ճիլին ծամը տիժէր ա* (Բ): 2. *տե՛ս* ՍԱՂՈՒՆՁ:

ԾԱ՛ՄԱՆ - *տե՛ս* ԾԱ՛ՄՍ:

ԾԱՄԷԼ/ԾԱՄԸ՝Լ *(գրբ. ծամեմ)* - *նբ.* 1. Ուտելիքը բերանում ատամներով մանրացնել եւ թքի հետ շաղախել: *Հացը ծամում ա, կօլ տամ* (Բ): 2. Որեւէ բան ատամներով տրորել առանց մանրացնելու: *Սաղունձ ա ծամում* (Բ): 3. *արհմ.* Շատ ուտել, անընդհատ ուտել: *Խըրէգ՝ ծամէ, պատառ էլ թօղէ՝քու հա՛ր օտէ* (Բ): 4. *փխբ.* Տրորել, ճմլել, լավ չկտրել: *Մըկըրատը լ՚ավ չի կըտրում, ծամում ա* (Բ):

- Ծամէլ-պիրանումը տինիլ - Լավ՝ մանրամասն բացատրել՝ հասկացնել՝ սովորեցնել՝դյուրըմբռնելի դարձնել, մեկի գործը հեշտացնել: *Ծամում ըմ, պիրանումը տինում, էլիա կըլօխ չի ըղնում, դանգըլա խօխա յա* (Բ):

ԾԱ՛ՄԿԱԽ - *ած. տե՛ս* Ծա՛մսը կախ:

ԾԱ՛ՄՍ - *տե՛ս* ՉԱ՛ՆԱ՛:

- Ծա՛մսը կախ/կօտըրած - Անհամարձակ, լուռումունջ նստող, դանդաղ՝ ծանրծանր խոսող: *Ծա՛մսը կախ մարթ ա Յէգօրը* (Բ):

ԾԱՄՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԱՄԷԼ-ի:

ԾԱ՛ՄՔ[1](ԸՎ)ԻԼ - *տե՛ս* ԼԸՌՎԷԼ[2]:

ԾԱՅՆ - *տե՛ս* ԾԷՆ[1]:

ԾԱՅՆԱՁՈՒՐԿ - *ած., գ.* Քաղաքացիական իրավունքներից զրկված, ձայնազուրկ (մարդ): *Ժօղովէն վախտը Կա՛նդին յը՝ր ա կընաս, թա.- Հինչ ա՞, մունք ծայնազուրկ ը՞նք, վէր մէզ վէշ մին տը՝ղ թավ չընք ընէս* (Ձ):

ԾԱ՛ՆԳ[1] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծա՛նգ՝ա՛վ ըղնել - *տե՛ս* Քաշկավ ըղնել:

- Ծա՛նգ՝ա՛վ քըցիլ - *տե՛ս* Քաշկավ քըցիլ:

ԾԱՆԴԸՐ *(գրբ. ծանր)* - *ած.* 1. Կշիռով համեմատաբար մեծ, մեծ կշիռ ունեցող, ծանրաքաշ: *Մին ծանդը՛ր քար ա յօր օնում, քըցո՛ւմ էտ օխծէն յըրա, ըսպանում* (Ձ): 2. *փխբ.* Կատարելու՝ գլուխ բերելու համար մեծ ջանք՝ ճիգ՝ լարվածություն՝ նեղություն պահանջող: *Սիրգօնը ասմա.- Էտ ծանդը՛ր կօրծ ա, յը՝ս կարէլ չըմ անիմ* (Ձ): 3. *փխբ. տե՛ս* ՅԸՂԷ: 4. *փխբ.* Ջրկանքներով՝ հոգսերով՝ նեղություններով լի: *Ծանդը՛ր օրէր շատ ընք տը՝սալ* (Բ): 5. *փխբ.* Առողջական վիճակի համար վտանգավոր, լուրջ մարմնական տանջանքներ պատճառող: *Չը-խօթական ծանդը՛ր հիվընդութուն ա* (Բ): 6. *փխբ.* Ապականված, կեղտոտ: *Քըղաքէն օթը ծանդը՛ր ա* (Բ): 7. *փխբ.* Առողջական վիճակը շատ վատ, վտանգավոր դրության մեջ գտնվող: *...Տըրո՛ւթունը փիս ա, ծանդը՛ր հիվանդ ըմ* (ԼՂԲ, 304): 8. *փխբ.* Հաստ շերտ կազմող: *Ծանդը՛ր ծո՛ւն ա նըստալ* (Բ): 9. *փխբ.* Անդուր, հոտառության՝ ճաշակելու համար ոչ հաճելի, անախորժ: *Տանան ծանդը՛ր վը՝ս ա կ՚ամ* (Բ): 10. *փխբ.* Ստամոքսը ծանրաբեռնող, դժվարամարս: *Կուրկուտը ծանդը՛ր խօրա՛գ ա* (Բ): 11. *փխբ.* Լրջմիտ, ծանրաբարո: *Ըստըրանց էլ էրկու ախճիգ՝ ա ինո՛ւմ՝ մինը՝ ծանդը՛ր, մինը՝ սա՛հլիգ՝* (Ձ): 12. *փխբ.* Ոչ մարդամոտ, անբարեհամբույր: *Սօնա բաջին ծանդը՛ր խասյաթ օնէ* (Բ): 13. *փխբ.* Խիստ դատապարտելի: *Ծանդը՛ր մէխկ ա ըստրա ըրածը* (Բ): 14. *փխբ.* Մեծ վիշտ պատճառող: *Արտէրը էրվիլը շինա՛ցուց հը՝տէ ծանդը՛ր կօրուստ ա* (Բ): 15. *փխբ.* Ցրտաշունչ, ցուրտ: *Էս ծըմը՝ռը ծանդը՛ր ծըմը՝ռ ար* (Բ):

- Ծանդը՛ր անգուճ - *տե՛ս* Անգուճը ծանդը՛ր:

- Ծանդը՛ր լո՛ւծ - Մեծ պարտավորություն՝ հանձնառություն՝ ծանրաբեռնություն: *Ժուղուվուրթէն յըրա ծանդը՛ր լո՛ւծ ըն տիրա՛լ, կարում չընն կըդարին* (Բ):

- Ծանդը՛ր լ՝ք[1] - *տե՛ս* ԼՕՔ[1](2):

- Ծանդը՛ր խօսկ - Վիրավորական խոսք, ամոթանք, նախատինք: *Ըսկէսվօրը ծանդը՛ր խուսկէրէն հարթանը ջօղաբ չի տամ* (Բ):

- Ծանդը՛ր ծը՝ռք - *տե՛ս* Ծը՝ռքը ծանդը՛ր:

- Ծանդը՛ր հակէն նըստէլ - Շահադիտական նպատակներով կողմնապահություն անել, ուժեղի կողմն անցնել: *Ըշտը՝ղ մին կըռը՝վ ար ինո՛ւմ, հէյդարը ծանդը՛ր հակէն ար նըստում* (Ձ):

- Ծանդը՛ր նըստէլ - *տե՛ս* Թա՛նգ՝ նըստէլ:

- Ծանդը՛ր պահէլ (ո՛ւրա՛ն) - Լուրջ՝ հավասարակշռված լինել, հիմարություն՝ թեթեւսոլիկություն չանել: *Հէրսիլա՛ն հըրսընքումը ծանդը՛ր ար պահում ո՛ւրա՛ն* (Բ):

- Ծանդը՛ր պէռնը - 1. *տե՛ս* Ծանդը՛ր լո՛ւծ: 2. Մեծ հոգս: *Հիվանդ պահէլը ծանդը՛ր պէռն ա* (Բ):

- Ծանդը՛ր քարը սըրտէն տինիլ - Դժբախտացնել: *Թօրքէն բալան թաղիմ, վէր ծանդը՛ր քարը մէր սըրտէն տիրա՛վ* (Ձ):

- Ծանդը՛ր քըշըռքէն նըստէլ - *տե՛ս* Ծանդը՛ր հակէն նըստէլ:

ԾԱՆԴԸՐ-ԾԸՆԴԸՐՄԷ - 1. *ած.* Ծանրաբարո, խոհեմ, լուրջ, ծանրակշիռ: *Ծանդը՛ր-ծընդըրմէ մարթիք՝ ըն Ասթըխէգ՝ին խընամուքը* (Բ): 2. *մ.* Հանդիսավոր կերպով, հպարտորեն, ծանրակշիռ կերպով: *Թաքուհին կ՚ամ ա, ծանդը՛ր-ծընդըրմէ նըստում* (Ձ):

ԾԱՆԴԸՐ-ԾԸՆԴԸՐՄԸ՝Ծ - *տե՛ս* ԾԱՆԴԸՐ-ԾԸՆԴԸՐՄԷ:

ԾԱՆԴԸՐ-ԾԸՆԴԸՐՅԱՆԱ - *տե՛ս* ԾԱՆԴԸՐ-ԾԸՆԴԸՐՄԷ:

ԾԱՆԴ(Ը)ՐՈՒՍԿ - *տե՛ս* ԾԸՆԴԸՐՈԹՈՒՆ:

ԾԱ՛ՆԻ - *տե՛ս* ԹՕՐՔ:

ԾԱՆՈՒԹ - *տե՛ս* ԾԱՆՕԹ:

ԾԱՆՈՒԹԱՆԱԼ - *տե՛ս* ԾԱՆՕԹԱՆԱԼ:

ԾԱՆՈՒԹՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԾԱՆՕԹՑ(Ը)ՆԷԼ:

ԾԱՆՈՒԹՕԹՈՒՆ - *տե՛ս* ԾԱՆՕԹՕԹՈՒՆ:

ԾԱՆՕԹ/ԾԱՆՈՒԹ (*գրբ. ծանօթ*) - *տե՛ս* ՃԱՆԱ(Ն)Չ:

ԾԱՆՕԹԱՆԱԼ/ԾԱՆՈՒԹԱՆԱԼ *(գրբ. ծանօթանամ)* - *չբ.* 1. Մեկի հետ ծանոթ դառնալ՝ ծանոթություն հաստատել: *Էս մարթը մին քանի վախտ ապրում ա թաքավէրէն նըհէտ, ծանութանում ա թաքուհու նըհէտ...* (ՀԺՀ, V, 242): 2. Տեղեկություն ձեռք բերել, իրազեկ դառնալ: *Թաքավէրին տըղան հօրը կուրծէրէն ծանօթանում ա* (Ձ):

ԾԱՆՕԹՑ(Ը)ՆԷԼ/ԾԱՆՈՒԹՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ծանօթացուցանեմ)* - *նբ.* ԾԱՆՕԹԱՆԱԼ-ի:

ԾԱՆՕԹՈՒԹՈՒՆ/ԾԱՆՈՒԹՕԹՈՒՆ *(գրբ. ծանօթութիւն)* - *տե՛ս* ՃԸՆԸ(Ն)ՉՕԹՈՒՆ:

ԾԱ՛ՊԱ՛Ն - *տե՛ս* ԾԻՊԼԻ:

ԾԱ՛ՊԸՌ - *տե՛ս* ԾԸՆԳԸԼ:

ԾԱ՛ՊԼԻ[1] - *տե՛ս* ԸՌԸՀԱ՛ԹԻ:

ԾԱ՛ՊԼԻ[2] - *տե՛ս* ԾԻՊԼԻ:

ԾԱ՛ՊԼԻՊՈ՛ՒԼԻ - *տե՛ս* ԾԻՊԼԻՊՈ՛ՒԼԻ:

ԾԱ՛ՊՆՈ՛ՒՏ *(ռուս. тянуть)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծա՛պնո՛ւտ անել - *հեգն.* Կոնծել: *Մին էրկու ըստաքան Մակիչը վէր թօթէն ըրաղան ծա՛պնո՛ւտ ա անում, ք՚ը՝փը լ՚ըվանում ա* (Ձ):

ԾԱՊՈՒ - *տե՛ս* ԾԱ՛ՊՈՒ:

ԾԱ՛ՊՈՒ/ԾԱՊՈՒ - *տե՛ս* ՏԸՔՈ՛ՒՐԻ(Գ)[1]: *Ի մար ծապուն ըռաշկէն կավը քըթից, ծգո՛ւմ ար կաթնը թըղցընէ...* (ԼՂԲ, 269):

ԾԱՌ/ԾԱՌՆԸ *(գրբ. ծառ)* - *գ.* 1. Ամուր փայտաբուն, ճյուղեր ու տերեւներ ունեցող բազմամյա բույս: *Ք՚ընում ա տէսնում՝ ք՚անդիրը մին ծառու կապած, ինքը կա վուչ* (ՀԱԲ, 15, 109): 2. Տունկ, տնկի: *Էրկու ծառ ա պիրո՛ւմ, հըյաթումը տընգում* (Ձ): 3. *փխբ.* Ծառանման փայտե հարմարանք, որի ճյուղերից մրգեր, քաղցրավենիք, կանաչ-կարմիր թելերի վրա շարած սիսեռ՝ չամիչ կախելով, վերեւի ծայրին եփած հավ, իսկ տակը մի շիշ խմիչք դնելով՝ պտտեցնում

են հարսանիքում պարելիս՝ վերջում մատուցելով փեսային եւ նրան ուղեկցողներին: *Ծառը պիրի̈մ ըն, տինի̈մ փըսէն ըռըշին, պէլին տի̈ւս ա օնում մին տըսսանուց տամ* (Ջ):

- Ծառան ծըռատակը հիշտ ա ըրվամ - Ասում են այն ժամանակ, երբ մեկը, անփորձ՝ անտեղյակ լինելով, թերագնահատում է գործի դժվարությունը: *Ծառան ծըռատակը հիշտ ա ըրվամ. Անդօնը ժանքումը արտ հընձած չի, ասում ա.- Մին հէքտարը մին օրումը կըհընձիմ* (Ջ):

- Ծառան ճէղնը վէր կըղնէ - Մարդ իր ունեցածից՝ եղածից նաեւ կորցնում է: *Ծառան ճէղնը վէր կըղնէ, Վա́լօդ, կավ ա, լի՞, ըստակյալ ա, ըստակյալ ա, էն ա իրըᵉքըն էլ օնիս* (Բ):

- Ծառէն շուքավը շօռ տալ - Իր օգտին գործել, անախորժություններից խուսափել: *Լօխ ծառէն շուքավըն ըն շօռ տամ, հօքˈումˈթէն հըᵉտէ կօրծ անօղ չի կա* (Բ):

- Ծըծաղը պըրծընէլ - Շատ եւ բուռն կերպով ծիծաղել, ծիծաղից թուլանալ: *ՎըԽր թաքուհին ասալ ա՝վըԽրց օլաբանը աշկըս տըԽսնա վուչ, ծՀուկնէրէն ծիծՀաղը պըրծալ ա* (ՆԼՂԺԲ, 45):

- Ծըծաղը փըռնէլ - 1. *տե՛ս* Ծըծաղը կ'ալ: 2. Սկսել անզուսպ կերպով ծիծաղել, հատկապես այն դեպքում, երբ մեկը անհավանական՝ անհավատալի բան է ասում՝ պատմում: *Ավէտը հիբը պատմում ար, թա հունց ա արչին խէխտալ, ջհիհլնէրէն ծըծաղը փըռնում ար* (Ձ):

ԾԸԾԱՂԷԼ/ԾԻԾԱՂԷԼ *(գրբ. ծիծաղեմ)* - *չբ.* 1. Ծիծաղ արձակել, ծիծաղի ձայն հանել: *Ըտէղ թաքավէրը ծըծաղըմ ա, տըԽսնըմ ա, վըԽր էտ մարթը Հուրան ճընանչալ ա* (ՀԺՀ, V, 246): 2. Դեմքին՝ աչքերին՝ հայացքին ծիծաղի՝ ուրախու-

թյան՝ հրճվանքի՝ գոհունակության արտահայտություն տալ: *Էտ ախճիգը կօգի ըշկէրավը ծընծաղում ա, ամմա թաքավէրը կըլօխ ա ըղնում, վէր սօտ տը՛ղան ա ըտի անում* (Զ): 3. *փխբ.* Վետվետալ, փայլել, ցոլալ: *ԼՀուսնինգ՛ան ծընծաղում ա* (Բ): 4. Մեկին ձեռ առնել՝ ծաղրել: *Ըխճըկէրքը ըտըրա յըրա ծընծաղում ըն միշտ* (Բ):

ԾԸԾԱՂԿՈՒՏ/ԾԻԾԱՂԿՈՒՏ *(գրբ. ծիծաղկոտ)* - *ած.* 1. Շատ ծիծաղող, ծիծաղել սիրող: *Ծընծաղկուտ մարթը խային չինիլ* (Զ): 2. *տե՛ս* ԾԸԾԸՂԻՐԸՍ:

ԾԸԾԱՄԱՐ - 1. *գ.* Ստնտու կին, ուրիշի երեխային իր կաթով կերակրող կին: *Մին ծընծամար ըն քըթէնում, էտ խուխէն ամմէն օր ծէծ ա տամ* (Զ): 2. *ած., գ.* Կրծքի երեխա ունեցող (կին): *Ծընծամար կընէգ՛ ա, վէր էտքան էլ կարում ա անէ, լ՛ավ ա* (Զ):

ԾԸԾԱՄԸ՞Ռ - *ած., գ.* 1. *տե՛ս* ԾԸԾԱՆՁԻՋ (1): *Հայրանէն էրկու ծընծամը՞ռ տըղա յա իլանլ* (Բ):

- Ծընծամը՞ռ մընալ - Ծնկեր հասակում մեռնել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Խօխէնք՛ըտ ծընծամը՞ռ մընան, խէ ք՛օրփիս թակում ը՞ս* (Բ):

ԾԸԾԱՆՁԻՋ - *տե՛ս* ԾԸԾԱՆՁԻՋ:

ԾԸԾԱՆ - *գ.* Հեղուկը, հատկապես թանաքը ներծծելու հատկություն ունեցող թուղթ՝ ծծանաթուղթ, որ օգտագործվում է թաց գրությունները չորացնելու համար: *Թընաքավը կ՛իրում ա, ծընծանավը չուրըցընում, թօխտը տամ ըտըրան* (Զ):

ԾԸԾԱՆՈՒԿ - *գ.* Մեղրատու խոտաբույս, որի բաց կապույտ ծաղիկները պարունակում են քաղցր հյութ: *Ծընծանուկը վէր ծաղկում ա, մըղըրըճանջէրը հըվաքվում ըն յըրան* (Բ):

ԾԸԾԱՏԱԿ - *գ.* Ծծի՝ ստինքի ներքեւի մասը: *Տըղան թօրավը թըխում ա, դէվին աչի ծընծատակը կըտըրում* (Զ):

- Ծընծըտակէրը կըտօրէլ - Թարմությունը կորցնել՝ պառավել (աղջիկների եւ կանանց մասին): *Մըրմանրին ծընծըտակէրը կըտօրալ ա, մին լ՛ավ տըղա չի կա, թա մարթու ք՛ինի* (Բ):

ԾԸԾԱՔԱՐ - *գ.* Ծծի՝ ստինքի նմանվող մեծ քար՝ ժայռ, որ պաշտվում է՝ որպես կանանց կաթը առատացնող սրբատեղի: *Հանր տօշ ցըմաքում ա, կ՛ամ ա ծընծքարէն ըռաչին չօքում, աղօթկ անում, վէր կաթնը շընտանա* (ԱԱ, 40):

ԾԸԾԷԼ *(գրբ. ծծեմ)* - *նբ.* 1. Շրթունքների եւ լեզվի դեպի ներս ձգող եւ սեղմող շարժումներով հեղուկը բերանը առնել՝ խմել: *Խօխան մին մունուտումը էտ բընգէն կաթնը ծընծում ա* (Զ): 2. *տե՛ս* Ծը՛ծ օտէլ: 3. Որեւէ բան բերանն առնելով ու թուքով թրջելով՝ լեզվով ու շրթունքներով դեպի ներս ձգող ու սեղմող շարժումներ անել: *Էտ դ՛ովը սըկըսէս ա էտ ըխճըկանը մաննը ծընծէլը, էնքան ծընծէս ա, վէր ախճիգը ըշտըփէս ա* (ՀԺՀ, V, 255): 4. Նման ձեւով որեւէ բան՝ կոնֆետ, շաքար եւն, բերանում հալեցնելով՝ կակղացնելով՝ ուտել: *Կանփէտը քընցանում ա պէրանը, ծընծում* (Բ): 5. Հեղուկը՝ խոնավությունն իր մեջ քաշել, ներծծել: *Վը՛ղը ճանրը ծընծում ա* (Բ):

- Ծընծած մամփասէր - Շատ նիհար մարդ: *Էտ ծընծած մամփասէրը օխտը տըղամարթու մընչանք օտում ա* (Բ):

ԾԸԾԷԼԻ - *տե՛ս* ԾԸԾՕՎԻ:

ԾԸԾԷՅՆԸ - *տե՛ս* ԿԸԾԷՅՆԸ:

ԾԸԾԷՌՆԱԿ - *տե՛ս* ՑԸՑԷՌՆԱԿ:

ԾԸԾԸ՞ՆԷ - *գ.* Երկարավուն ձվաձեւ հատիկներով խաղողի տեսակ: *Ծընծը՞նէն համ սիպտակ ա ինանում, համ սը՛վ, համ կ՛արմանր* (Բ):

ԾԸԾԸԽԸՌԱՎ - *ած.* Ծիծ ուտելուց հրաժարված, ծծից խռոված (երեխաների մասին): *Ծընծըխըռավ խուխէն խաթիրը քընթէնալը տիժէր ա* (Զ):

ԾԸԾԸԽԸՌԱՎԷԼ - *չբ.* Ծիծ ուտելուց հրաժարվել, ծծից խռովել: *Կընէգ՛ըն ասից.- Մստուծ, խօնցըս թօղիս վէչ, վէր ծընծըխըռավին* (Զ):

ԾԸԾԸՂԱՏԸ՞Ղ/ԾԻԾԸՂԱՏԸ՞Ղ - *գ.* Ծիծաղելու՝ ծաղրելու առարկա՝ անձ՝ առիթ՝ պատճառ: *Սօջին շէնին ջիհիլնուն ծընծըղատը՞ղըն ա* (Բ):

ԾԸԾԸՂԷԼԻ/ԾԻԾԸՂԷԼԻ *(գրբ. ծիծաղելի)* - *ած.* 1. Ծիծաղ շարժող, ծիծաղաշարժ, ծիծաղի՝ ծաղրի առիթ տվող: *Քը՛շէրնէն հըվաքվում ին, ծընծղէլի գ՛ուրանցնէ պատմում* (Զ): 2. *փխբ.* Անհավանական, անիրական: *Վը՛րսկանը ծընծղէլի պէնէր ա ասում, վէշ մինը հըվատում չի* (Զ):

ԾԸԾԸՂԻՐԸ՞Ս/ԾԻԾԸՂԻՐԸ՞Ս - *ած.* Ծիծաղադեմ, ծիծաղկուն՝ ուրախ դեմքով: *Ծընծղիրը՞ս ախճիգ՛ ա Ախշալանում* (Բ):

ԾԸԾԸՂՑ(Ը)ՆԷԼ/ԾԻԾԸՂՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ծիծաղեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ԾԸԾԱՂԷԼ-ի:

ԾԸԾԸՂՕՏԷԼ/ԾԻԾԸՂՕՏԷԼ - *տե՛ս* ԾԸԾԱՂԷԼ (շատերի մասին):

ԾԸԾԸՄԸՐԱՑՈՒ - *գ., ած.* Ստնտու լինելու համար հարմար (կին): *Սաղ շէնումը մին ծընծըմըրացու չի կար, ք՛ը՛ցէն կօխկէ շէնան քընթին* (Զ):

ԾԸԾԸՊԸԼԻԹ - *ած.* Կլոր ու գեղեցիկ ծծեր՝ կուրծք ունեցող (կանանց մասին): *Ծընծըմարա քարը քար չի ըլալ, քարա շինած մին ծընծպըլիթ կընէգ՛ ա ըլալ՝ խօխան էլ խըտտէն* (ՆԱԲ, 83):

ԾԸԾԸՊՏՕԿ - *տե՛ս* ԾԸ՞Ծ (2):

ԾԸԾԸՑ(Ը)ՆԷԼ - *պբ.* ԾԸԾԷԼ-ի:

ԾԸԾԻՆԳ՛ - *տե՛ս* ԿԸԾԷՅՆԸ:

ԾԸԾԿԷՐ - *տե՛ս* ԾԸԾԱԿԷՐ:

ԾԸԾՎԱՆՔ - *գ.* 1. Մոր կրծքից ծծած կաթը: *Այան ասում ա.- Քու ծընծվանքըտ ք՛ը՛գ հալալ ինի* (Զ): 2. Մնացորդ, տականք, նստվածք: *Կ՛ինուն ծընծվանքը շատ ա* (Բ):

ԾԸԾՕԿ - *տե՛ս* ԾԸԾԱՆՈՒԿ:

ԾԸԾՕՂ - *գ., ած.* Սաստիկ անբարոյական (անձ):

ԾԸԾՕՎԻ - *ած.* Այնպիսին, որ կարելի է միայն ծծել: *Մին ծընծօվի ճար ա տինանում լանզվին տակէն, ծընծում* (Զ):

- Ծընծօվի կամփէտ - Կարծր կոնֆետ, որ ուտում են ծծելով: *Մամփասէրը ծընծօվի կամփէտ ա* (Բ):

ԾԸԿԱԿ/ԾԸԿԸՐԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծընկակէն կ՛ալ/տալ - 1. Կոկորդում փուշ կամ այլ բան մնալուց սուր ծղրտոցներ հանել (սովորաբար ասվում է հավերի, արհամարհաբար՝ նաեւ մարդկանց մասին): *Հավը էրկու օր ծընկակէն ա կ՛ամ, մօրթում ըն* (Բ): 2. *փխբ.* Փողային գործիքները խաթարվելուց բարակ ու անդուր ձայն հանել: *Կընլառնէտը ծընկակէն ա կ՛ամ* (Բ): 3. *փխբ.* Խիստ սոված լինել, ուտելու մեծ ցանկություն ունենալ: *Մարթը ծընկակէն ա կ՛ամ, ամմա կընէգ՛ը պէն չի տամ ուտէլի* (Զ):

ԾԸԿԱՄՈՒՏՔ - *գ.* Ձմեռանամուտի խստաշունչ օրեր: *Ծընկամուտքը վէր ըստի յա, պա ծըմը՞ռը հունց ա ինանն* (Զ):

ԾԸԿԷՅՆԸ - *տե՛ս* ԿԸԾԷՅՆԸ:

ԾԸԿԸԹԷԼ - *չբ.* 1. Պատռելով ծայրը դուրս գալ (ծիլի՝ նոր դուրս եկող ատամի՝ ձվից նոր դուրս եկող ճտի եւն մասին): *Խուխէն կընէգ՛ը ծընկընթալ ա* (Բ): 2. Ոսկորի մեջ սաստիկ ցավ զգալ: *Վէր կընռացէ, մաշկընս ծընկընթից* (Բ): 3. Մարմնի որեւէ մաս՝ ոտք, մատ եւն, տեղից խախտվել՝ կոտրվել: *Խօխան վէր ընգավ, վը՛ննը ծընկընթից* (Բ): 4. *նբ.* Ճարպկորեն գողանալ, ձեռքից թռցնել: *Տըղան դէվին ծը՛ռքան վը՛սկէ աչառը ծընկընթում ա, փախչում* (Զ):

ԾԸԿԸԹՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԾԸԿԸԹԷԼ-ի:

ԾԸԿԸԼԹԱԼ - *չբ.* 1. Ծղրտալ, ծղրտոց հանել (թռչունների մասին): *Ղուշը վէր ծընկընթամ ա, վը՛ռսկանը թընկանգ՛ը հըզընցընում ա* (Զ): 2. Ճչալ, վախից՝ ցավից՝ վշտից եւն սուր ճիչ

արձակել (մարդկանց մասին): ... *Կումէն շէմքը հրսնէլընու բաստ ծրկըլթաց հու բէջիթ վագ տրվավ...* (ԼՂԲՔ, 262):

ԾԸԿԸԼԹՕՆ - *գ.* Ծղրտալը, ճչալը, ծղրտալու՝ ճչալու ձայնը: *Ըխճըկանը ծըկըլթօնը վէր ըսկանում ա, հաարը դաստի քինամ ա, տըէսնում մին զըէռ օխծ ըտըէղ մըէկնըվածէ* (Ձ):

ԾԸԿԸԼԹՕՑ - *տե՛ս* ԾԸԿԸԼԹՕՆ:

ԾԸԿԸԼՈՒԿՈՒ - *տե՛ս* ԾԸԿԼՈՒԿՈՒ:

ԾԸԿԸԾՈՒԿ(Ի)/ԾՈՒԿ(Ի)-ԾՈՒԿ(Ի) - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծըկըծուկ(ի) անէլ - Մի բանի ետեւից՝արանքից՝տակից թաքուն նայել, ծիկրակել: *Ծառան մըղակէն ծակավը ծըկըծուկի յա ընէս, ամմէն հինչ տըսնաս, քիս թաքավէրին խաբար տաս* (Ձ): 2. Երեւալ ու ծածկվել (լուսատուների մասին): *Մինչըէվ միհէնգ էլ ուրան մօրը լուսնընգան մընանա քըցում չի, յըրգինքան միշտ ծըկըծուկի յա անում* (ՆԱԲ, 78):

ԾԸԿԸՂԷՅՆԸ - *տե՛ս* ԾԸԿԷՅՆԸ:

ԾԸԿԸՐԱԿ - *տե՛ս* ԾԸԿԱԿ:

ԾԸԿԸՌՀԱՏ - *տե՛ս* ԶԸԿԸՌՀԱՏ:

ԾԸԿԼԱԿԷ - *տե՛ս* ԾԸԿԼՈՒԿՈՒ:

ԾԸԿԼԸՎԷՐԱՆ - *ած.* Կիսաքանդ, հատկապես տանիքը քանդված: *Սաղ տարէն էտ ծըկլըվէրան կումումը կէնում ըն* (Ձ):

ԾԸԿԼՈՒԿՈՒ/ԾԸԿԸԼՈՒԿՈՒ/ԾԸԿԼԱԿԷ/ԾՈՒԿԼՈՒԿՈՒ/ԾՈՒԿՈՒԼՈՒԿՈՒ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծըկլուկու անէլ/տալ - 1. Հեղուկը բարակ շիթով ուժգին դուրս ցայտել՝ հոսել: *Կարասը ծակվում ա, կինին ծըկլուկու վա տամ* (Բ): 2. Միզել (երեխաների մասին): *Խօխան ծըկլուկու վա անում* (Բ): 3. Բարակ ձայնով կանչել (դեռահաս աքլորի մասին): *Կուճի վըրցըկնէն վէր ծըկլուկու վըն անում, Մինա ազին ուրխանում ա, ըշխարքավըս մին տըէռնում* (Ձ):

ԾԸԿԾԱԿՈՒՏ - *տե՛ս* ԾԸԿԾԸԿՕՏ:

ԾԸԿԾԸԿՕՏ/ԾԸԿԾԱԿՈՒՏ *(գրբ. ծակոտ)* - *ած.* Շատ ծակեր ունեցող, ծակծկված: ... *Տըրխընէն ծըկծըկօտ, չօխան ըփռըմ-ափռըմ, մին խուրջին լիգը պէրավ թօփխանըմը թօղից...* (ԶՏ, Ա, 52):

ԾԸԿԾԸԿՕՏԷԼ - 1. *նբ.* Շատ տեղերից կամ շատ անգամ ծակել, ծակծկել: *Բիզավը կաշին ծըկծըկօտում ա* (Ձ): 2. *չբ.* Շատ տեղերից կամ շատ անգամ ծակվել, ծակծկվել: *Էնքան կըէցալ ըմ, գուլբէնէս սաղ ծըկծըկօտալ ա* (Բ):

ԾԸԿԾԸԿՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸԿԾԸԿՕՏԷԼ (1)-ի:

ԾԸԿԾԸԿՕՐԷԼ - *տե՛ս* ԾԸԿԾԸԿՕՏԷԼ:

ԾԸԿԾԸԿՕՐՎԷԼ - *տե՛ս* ԾԸԿԾԸԿՕՏՎԷԼ:

ԾԸԿՆՕՐՍ *(գրբ. ձկնորս)* - *տե՛ս* ԾՈՒԿՀԱՆ: *Մին ծըկնօրս ա ինում, տըրան իրէք ախճիգ ա ինում* (ՀԱԲ, 15, 35):

ԾԸԿՈՒՌԻ/ԾԸԿՕՌԻ/ԾԻԿՈՒՌԻ/ԾԻԿՕՌԻ/ԿԸԾՈՒԼԻ/ԿԸԾՕՌԷԳ/ԿԸԾՕՌԻ - *գ.* Մի տեսակ միջատ, որ մթության մեջ լույս է տալիս, կայծոռիկ, լուսատիկ: *Մին պէն իշըէղ ա անում, մուտանում ա, տըէսնում մին կուճի ծըկուռի* (Ձ):

ԾԸԿՕՌԻ - *տե՛ս* ԾԸԿՈՒՌԻ:

ԾԸԿՕՏԷԼ *(գրբ. ծակոտեմ)* - *տե՛ս* ԾԸԿԾԸԿՕՏԷԼ:

ԾԸԿՕՏԻՉ - *գ.* Հացթուխի մախաթանման սուր գործիք, որով թխելուց առաջ հացի խմորագնդերը ծակծկում են, որ չուռչեն: *Պուլէրը յըէտ ըն անում, ծըկօտիչավը ծըկօտում, թուրնէն պատան տամ* (Բ):

ԾԸԿՕՏՎԷԼ - *տե՛ս* ԾԸԿԾԸԿՕՏՎԷԼ:

ԾԸՀԱՆ - *գ.* 1. Մի ծայրը թաթաձեւ, իսկ մյուսը կեռ երկաթե երկար ձող՝թոնրից հացը պոկելու՝հանելու՝քերելու՝թոնիրը խառնելու եւն համար, ակիշ: *Դարվիշը հարայ տրվավ, վէր թօրէնը ծրհանավը խառնին...* (ՀԺՀ, V, 148): 2. Մի ծայրը թաթաձեւ, իսկ մյուսը ծալած կարճ ակիշ, որով խմոր հունցելուց հետո քերում են տաշտը: *Խըմօրը պուլում ըն, յըէտնան ծրհանավը տաշտը քիրում* (Բ):

ԾԸՀԸՆԱԹԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծրհընաթակ անէլ/տալ - Ծհանով թոնրի հացը տփտփել՝ ծեծել՝ ծակծկել: *Էնքան ծրհընաթակ ըրավ, հացէրը լօխ բարբադ ըրավ* (Բ):

- Ծրհընաթակ հաց - 1. Տարբեր տեղերից ծակծկված, անդուր տեսքով հաց: *Ծրհընաթակ հաց ա, վէր յէշում ըս, գանլատ տանում ա* (Բ): 2. Անհարթ, տգեղ (դեմք): *Ըտըրա իրըէսըն էլ հօ իրըէս չի՞, ծրհընաթակ հաց ա* (Ձ):

ԾԸՀՈՒՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծրհուր անէլ - Ծածուկ գողանալ՝ թռցնել: *Ա՛զի, մին սիպտակ էրկու շրհանուց թօղալ ըմ կամօդին յըրա, տըէս ընդէղ ա՞, թա գանգան ծրհուր ա՞ ըրալ* (Ձ):

ԾԸՂԱՂԱԿ/ԾԸՂԱՐԱԿ *(գրբ. ծուղակ)* - *գ.* 1. Բարակ ճյուղերից հյուսած փոքրիկ կողովանման հարմարանք, որով թռչուններ կամ ձուկ էին որսում: *Ծըղարակը մին դուշ ա ըղնում* (Ձ): 2. *փխբ.* Փոքրիկ՝ անշուք տնակ: *Մին ծըղարակ ա շինալ, մաչին ինքըն ա կընէգը ապրում ըն* (Ձ):

ԾԸՂԱՄԱՆ - *գ.* Լայն տերեւներից եւ ծղոտից պատրաստած աման, որով այգիներից թութ եւ այլ պտուղներ են տեղափոխում: *Մին ծըղաման ա շինում, թութը քաղում, ածում մաչը, տանում նըշընածէն հըէտէ* (Ձ):

ԾԸՂԱՆ(Գ) - *գ.* 1. Կտրող գործիքով ճեղքած եւ մանրացրած փայտի կտոր՝ տաշեղ: *Ծըղանը տինում ա փանդին տակէն, փիչը նի կըցընում* (Ձ): 2. Ցորենի՝ խոտի եւն չոր ցողուն, հարդի շյուղ: *Խոտէն ծըղանավը փափաղ ա կօրծում* (Ձ):

- Ծըղան անէլ - *տե՛ս* ԾԸՂԱՆԷԼ:

- Ծըղանավ փըռնէլ - Որեւէ բան մեծ դժվարությամբ անել: *Կարօն հինչը անում ա, ծըղանավ ա փըռնում* (Բ):

ԾԸՂԱՆԷԼ - *նբ.* Կտրող գործիքով փայտը ճեղքել եւ մանրացնել, ծղաններ սարքել: *Վալօդը ցըկատավը փանդը ծըղանում ա, սըմավարը նի կըցընում* (Ձ):

ԾԸՂԱՆ-ԾԸՂԱՆ - *տե՛ս* ԿԸՌԷՔ-ԿԸՌԷՔ:

ԾԸՂԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՂԱՆԷԼ-ի:

ԾԸՂԱՐԱԿ - *տե՛ս* ԾԸՂԱՂԱԿ:

ԾԸՂԷԼԱԿ - *գ.* 1. Ծղոտից գործած զամբյուղ՝ կողով: *Էտ պառավը ծըղէլակ ար կօրծում, ծախում, կըլօխը պահում* (Ձ): 2. Ծղոտից գործած գլխարկ: *Ծըղէլակը տինում ա կըլխէն, քինամ, վէր բաստանը քըղանէ* (Ձ):

ԾԸՂԸԳ-ԾԱՂԷԳ - *տե՛ս* ԾԸՂԿԾԱՂԿՈՒՏ:

ԾԸՂԸՆՕՏԷԼ - *նբ.* Շատ փայտ կամ շատ անգամ ճեղքել եւ մանրացնել՝ ծղանել: *Մին խըտէտ փանդ ա ծըղընօտալ* (Բ):

ԾԸՂԸՆՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՂԸՆՕՏԷԼ-ի:

ԾԸՂԸՐԱՏԸԷՂ - *տե՛ս* ՏԸՆԸՔԱՏԸԷՂ:

ԾԸՂԸՐՏԱԼ - *տե՛ս* ԾԸԿԸԼԹԱԼ:

ԾԸՂԸՐՏՕՆ - *տե՛ս* ԾԸԿԸԼԹՕՆ:

ԾԸՂԸՐՏՕՑ - *տե՛ս* ԾԸԿԸԼԹՕՆ:

ԾԸՂԸՐՈՒՂՈՒ - *տե՛ս* ԾՈՒՂՈՒՂՈՒ:

ԾԸՂԾԱՄ - *տե՛ս* ԾԷՂԾԱՄ:

ԾԸՂԾԸՂԱԼ - *նբ. տե՛ս* ԾԷՂԾամ տալ:

ԾԸՂԿԱԹԱՓ - 1. *ած.* Ծաղիկները թափած: *Ըտըէղ մինակ մին ծըղկաթափ խընձորէ յա ինում, էրուշ ծառ չի ինում* (Ձ): 2. *գ.* Ծառերի ծաղիկները թափվելը եւ դրա ժամանակը: *Աբըրէլի վէրջին ծըղկաթափը ըսքըսում ա* (Բ):

- Ծըղկաթափ անէլ - *տե՛ս* ԾԸՂԿԸԹԱՓԷԼ:

- Ծըղկաթափ ինիլ/տըէռնալ *(գրբ. ծաղկաթափ լինիմ)* - *տե՛ս* ԾԸՂԿԸԹԱՓՎԷԼ:

ԾԸՂԿԱԼԻ *(գրբ. ծաղկալից)* - *ած.* Ծաղիկներով լի, ծաղկաշատ: *Նի յըն մընում մին ծըղկալի բաղ* (Ձ):

ԾԸՂԿԱԾԱՄ - *ած., գ.* Սպիտակախառն, ալեխառն (մազեր): *Ծըղկածամ մազէր օնէ Ա՛րմիկ տօ՛տ՛ան* (Բ):

ԾԸՂԿԱԿՕԽ - 1. *տե՛ս* ԾԸՂԿԸԹԱՎԱԼ: 2. *տե՛ս* ԾԸՂԿԱԼԻ:

ԾԸՂԿԱՃԻՐ - *գ.* Ծաղկահյութերից պատրաստած անուշաբույր հեղուկ: *Էտ թաքավէրին ախճիգը իրը՛սը ծըղկըճիրա՛վ ար լըվանում* (Ձ):

ԾԸՂԿԱՄԱՆ - *գ.* Սափորաձեւ անոթ, որի մեջ ծաղիկներ են դնում: *Հունց ա պըտահում, մին օր էտ ծըղկամանը վէր ա ըղնում, կօտրում* (Ձ):

ԾԸՂԿԱՆԱԽՇ - 1. *գ.* Որեւէ բանի վրա նկարած՝ հյուսած՝ քանդակած ծաղիկներ՝ իբրեւ զարդ՝ նախշ: *Գիբին ծըղկընախշէրը թաքուհուն շատ ըն տուր կամ* (Ձ): 2. *ած.* Ծաղկանկարներով զարդարված՝ նախշված: *Ծըղկանախշ շօ՛ր ա կը՛ցալ* (Բ):

ԾԸՂԿԱՆՈՒՑ *(գրբ. ծաղկանոց)* - *գ.* Ծաղիկներ աճեցնելու՝ աճեցրած տեղ, ծաղիկների պարտեզ: *Ըշխարքէս տակէն հինչ ծաղէգ ասիս, Բայանդուր իշխանէն ծըղկընուցումը կար* (Ձ):

ԾԸՂԿԱԾՕՐ - 1. *գ.* Ծաղիկներով զարդարված՝ վրան ծաղիկներ պատկերած՝ հյուսած շօր: *Էտ ախճիգը ո՛ւրա՛ն ծըղկաշօ՛ր շատ ա իլա՛լ սիրիս* (Ձ): 2. *ած.* Ծաղկազարդ շոր հագած: *Ծըղկաշօ՛ր ըխճըկէրքը պար ըն կամ, թաքավէրին տըղան ճինանչում ա Քըչալէն* (Ձ):

ԾԸՂԿԱՁԻԹ - 1. *գ.* Ծաղկազարդ չիթ: *Միհէնգ էլ ծըղկաչիթ ինք օնօղ չի կա* (Բ): 2. *ած.* Ծաղկազարդ չթից կարված: *Մըրյանէն մին դա՛շանգ ծըղկաչիթ դարյա օնէ* (Բ):

ԾԸՂԿԱՊԱՀ - *գ., ած.* Ծաղկանոց պահող՝ մշակող՝ խնամող (անձ): *Ծըղկապահը ամմէն դօ՛նում էտ ըխճըկանը հը՛տէ ծաղէգ ա իլա՛լ տընէս* (Ձ):

ԾԸՂԿԱՍԸ՛ՐՄ - *գ.* Ծաղկի՝ ծաղկաբույսի սերմ: *Շաղօ աքէրը բըզարումը ծըղկասը՛րմ ա ծախում* (Բ):

ԾԸՂԿԱՎԸ՛Տ *(գրբ. ծաղկահոտ (ծաղկի հոտ ունեցող)* - 1. *գ.* Ծաղկի բույր՝ հոտ: *Կարունքը վէր քինամ ըս բաղէրը, ծըղկըվը՛տան քը՛փըտ կամ ա* (Բ): 2. *ած.* Ծաղիկների բույր՝ հաճելի բույր ունեցող: *Ծըղկավը՛տ հանդէր ըն մէր հանդէրը* (Բ):

ԾԸՂԿԱՎՈՒՐ/ԾԸՂԿԷՎՈՒՐ - *տե՛ս* ԾԸՂԿԾԱՂԿՈՒՏ:

ԾԸՂԿԱՎՈՒՐ-ՁԸՌԱՎՈՒՐ - *գ., ած.* Ոսկեթելով հյուսած ծաղկապատկերներ ունեցող (գորգ): *Մանի աքէրը թօռնանը մին լ՛ավ ծըղկավուր-զըռավուր ա պէժինք՛ տուվալ* (Ձ):

ԾԸՂԿԱՓՕՆՁ - *գ.* 1. Ծաղիկների փունջ, քաղած ու փունջ կապած ծաղիկներ: *Տ՛ուս ա կամ, տը՛սնում՝ մին մը՛ծ ծըղկափօնջ տիրա՛ծ ո՛ւրա՛նց մըղակէն ըռըչին* (Ձ): 2. Մեկ ծաղկակոթունի վրա աճած ծաղիկների փունջ: *Անց ա կէնում օխտը տարէ, էտ խընձօ՛ր՝ն ա յըրա մին ծըղկափօնջ ա տ՛ուս կամ* (Ձ):

ԾԸՂԿԱՔԱՂ - *գ.* Ծաղիկներ քաղելը: *Ծըղկըքաղէն վախտը օխնը էտ ըխճըկանը վը՛նանան կընում ա* (Ձ):

- Ծըղկաքաղ անէլ *(գրբ. ծաղկաքաղ առնեմ)* - Որեւէ բանի լավ՝ ընտիր մասերը՝ հատիկները քաղել՝ ընտրել: *Կօղէրը նի յըն մընանում բօստանը, ծըղկաքաղ անում* (Ձ):

ԾԸՂԿԷՎՈ՛Ի - *գ.* Բաց կապույտ կամ դեղին ծաղիկներով եւ երկար ցողուններով խոտաբույս, որից ավել են կապում, ինչպես նաեւ դրանից կապած ավել: *Բուղդան դային ծըղկէվո՛՝ն ա կըտորում, պիրո՛՝ում կապում, տանում բազար, մին ծըղկէվո՛՝ն՝ը մին կիլօ ցօրնու նը՛հը՛տ փօխում* (Ձ):

ԾԸՂԿԷՎՈՒՐ - *տե՛ս* ԾԸՂԿԱՎՈՒՐ:

ԾԸՂԿԸ՛ՆԷ - *ած.* 1. Ծաղիկներից պատրաստած: *Ծըղկը՛նէ փափաղ ա տիրա՛՝լ* (Բ): 2. *փխբ.* Ջահել, կենսաթրթիռ, գեղեցիկ: *Ծըղկը՛նէ ըխճըկէրքը կօժէրը յօր ըն ունէս, ք՛իս ախպո՛՝ւրը* (Ձ):

ԾԸՂԿԸԹԱՎԱԼ - *գ. ծծկ.* Գայլ: *Ծըղկըթավալը քը՛շէրէս մէր վը՛խճարը անուշ ա ըրալ* (Ձ):

ԾԸՂԿԸԹԱՓԷԼ - *նբ.* Ծաղիկները թափել: *Քամէն խընձօ՛ր՝օտը ծըղկըթափալ ա*:

ԾԸՂԿԸԹԱՓՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՂԿԸԹԱՓԷԼ-ի:

ԾԸՂԿԸԽԸՆՁԸԼՕՁ - *գ.* Սոխանման քաղցրահամ ուտելի վայրի բանջարի՝ խնջլոզի մի տեսակը, որի թեւերը ավելի նեղ են: *Հանդէրը լիգը՝ ծըղկըխընջըլօզ ա* (Բ):

ԾԸՂԿԸԾԱՂԷԳ - *գ.* 1. Ծաղիկների մեջ ամենագեղեցիկը՝ ընտիրը: *Գ՛ո՛՝լը ծըղըգ՛ևէրէն ծըղկըծաղէգ՛ըն ա* (Բ): 2. *փխբ.* Գեղեցիկների մեջ ամենագեղեցիկը: *Սօնան շէնին ըխճըկօրանցը ծըղկըծաղէգ՛ըն ա* (Բ): 3. *փխբ.* Ընդհանրապես ամենալավը՝ ամենաընտիրը՝ ամենագեղեցիկը: *Դարաբաղը ըշխարքէս ծըղկըծաղէգ՛ըն ա, հու վէր հըվատում չի, թօղէ կա, տը՛սնա* (Բ):

ԾԸՂԿԸՅԱՆ - *տե՛ս* ԾԸՂԿԱԹԱՓ (1):

ԾԸՂԿԸՄԸՆԱ - 1. *գ.* Ծաղիկ հիվանդությունից մնացած հետքեր մարմնի վրա: *Իրը՛սէն մին քանէ ծըղկըմընա յա մընացալ* (Ձ): 2. *ած.* Այդպիսի հետքեր ունեցող (դեմքի մասին): *Ըտըրա ծըղկըմընա իը՛սան լօխճին գա՛՝ի՛՝ան տանում ա* (Բ):

ԾԸՂԿԸՌԱ՛՝ՆԳ - *ած.* Ծաղկերանգ, գեղեցիկ ու վառվռուն գույներով: *Քու ծըղկըռա՛՝նգ՝ շօ՛՝ր՝էրըտ ինձ կըլխա տարալ ա* (Ձ):

ԾԸՂԿԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ծաղկեցուցանեմ)* - 1. *նբ.* ԾԱՂԿԷԼ-ի: *նբ.* 2. *փխբ.* Որեւէ դեպք՝ եղելություն՝ պատմություն եւն չափազանցնելով ներկայացնել՝ պատմել: *Մէհէտ Վազօ՛՝ն մին կ՛ո՛՝լ ա ըսպանալ, ամմէն դօ՛՝նում ծըղկըցընում ա* (Բ): 3. *փխբ.* Խնջույքի ժամանակ, հատկապես մեկի կենացի վրա երգել՝ արտասանել՝ պարել եւն՝ դրանով պատվելով՝ մեծարելով: *Թամադան նախագէն կէնացը վէր խըմում ա, բըրիգադիրը յը՛ր ա կէնում մին լ՛ավ յը՛՝ր՝ք ասում, ծըղկըցընում* (Ձ):

ԾԸՂԿԸՓԻՐՓԷՏ - *գ.* Փիփերթի տեսակ, որը ավելի կոպիտ է եւ ոչ ուտելի: *Ծըղկըփիրփէտը օտում չընն* (Բ):

ԾԸՂԿԾԱՂԿՈՒՏ - *ած.* 1. *տե՛ս* ԾԸՂԿԱԼԻ: 2. *տե՛ս* ԾԸՂԿԱՆԱԽՇ (2): 3. *տե՛ս* ԾԸՂԿԸՄԸՆԱ (2):

ԾԸՂԿՕՏԷԼ - *չբ.* 1. Ծաղիկներով պատվել (շատերի մասին): *Ծառէրը ծըղկօտալ ըն* (Բ): 2. *փխբ.* Բորբոսնել, մգլոտել (շատերի մասին): *Հացէրը ծըղկօտալ ըն* (Բ):

ԾԸՂՏՕՐ - *տե՛ս* ԽԸՋՆԻԿ:

ԾԸՂՐՈՒՂՈՒ - *տե՛ս* ԾՈՒՂՐՈՒՂՈՒ:

ԾԸՂՕՂԱՆՔ - *գ.* Կաթսայի մեջ մնացած կերակրի մնացորդ՝ տականք: *Խօրա՛՝գ՝ը օտում ըն, ծըղօղանքը տամ պըռավէն* (Ձ):

ԾԸՂՕՂ(Ն)ԷԼ - *նբ.* Պատառոտել (հագուստի մասին): *Շօնը յըրա յա պըրծընում, ըտըրա շալվարը ծըղօղնում* (Ձ):

ԾԸՂՕՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՂՕՂ(Ն)ԷԼ-ի:

ԾԸՄԱԿ *(գրբ. ծմակ (ստվերոտ տեղ)* - 1. *գ.* Անտառ: *Դօնգուն կընէգ՝ը էշին պէռնը վը՛ր ա օնում, ք՛ինա՛՝մ բիդի ծըմակը, թա մարթին քըթէնա* (ՆԼՂԺԲ, 119): 2. *ած., գ.* Ստվերոտ, արեւազուրկ (տեղ): *Ծըմակ տը՛ղը արտ չի տը՛ռնալ* (Բ):

- Ծըմակա փախած/փըռնած - Անկիրթ, բռի, վայրենի (մարդ): *Էտ ծըմակա փախածը հօրը կըլխէն հա՛՝լա՛՝ շատ ա օյին պիրլա՛՝կա՛՝ն* (Բ):

- Ծըմակը առանց կ՛էզա՛՝ն/չաղալ չինիլ - Ամեն ինչ թերություն ունի:

- Ծըմակ տը՛ռնալ - Շատ՝ խիտ՝ փարթամորեն աճել: *Վը՛՝ր՝էը կըլ՛՝օխ ըն ինգ՝ո՛՝ւմ, վար աղէն տը՛ղը ժէխըռ ա փըսալ, ծըմակ տա՛՝ռալ* (Ձ):

- Ծըմակու արչ - *տե՛ս* Ծըմակա փախած:

- Ծըմակում մընացած - *տե՛ս* Ծըմակա փախած:

ԾԸՄԱԿՈՒ(Տ) - *տե՛ս* ԾԸՄԱԿ (2):

ԾԸՄԱԿՓՈՒԼԻ - *գ.* Հարկատեսակ, որ վճարում էին անտառից օգտվելու համար: *Յու ծըմակփուլին տամ չար, մընամ ար առանց փանդ* (Ձ):

ԾԸՄԱՎԷՐ - *ած.* Երկար մազերի հյուսքեր՝ ծամեր ունեցող: *Միհէնգ՝ ծըմավէր ախճիգ՝ խըրէգ կա* (Բ):

ԾԸՄԷԼԻ(Ք՝) *(գրբ. ծամելի)* 1. *գ.* Ծամելու բան՝ նյութ: *Պառավը ծըմէլին քըցո՛ւմ ա պէրանը, ամմա հիշկան անում ա, կարում չի ծամէ* (Ձ): 2. *ած.* Ծամելու համար պիտանի: *Էս մէսը ըսկի ծըմէլի պէն չի* (Բ):

ԾԸՄԷՌ(ՆԸ) - *տե՛ս* ԾԸՄԸ՞Ռ(ՆԸ):

ԾԸՄԷՐՈՒԿ/ԾԸՄԸ՞ՐՈՒԿ/ԾԻՄԷՐՈՒԿ/ԾԻ՞ՄՕՐԻ՞Կ *(գրբ. ձմերուկ)* - *գ.* Ձմերուկ: *Կընէգը ծըմէրուկը կըտըրում ա, տը՞սնում՝ մաչը վը՞սկավ լիգը* (Ձ):

- Ծըմէրուկ կա՝ կօլան տէն - Ձմերուկը լրիվ փոխարինում է ջրին, ձմերուկ եղած դեպքում ջրի կարիք չկա:

- Ծըմըրուկու կ՝օղ - *տե՛ս* ԹԸՆԱԿ՝ՕՂ:

ԾԸՄԸ՞Ռ(ՆԸ)/ԾԸՄԷՌ(ՆԸ) *(գրբ. ձմեռն)* - *գ.* 1. Տարվա ամենացուրտ եղանակը, որ ընկած է աշնան եւ գարնան միջեւ, ձմեռ: *Ծըմը՞ռնը մը՞ր շէնումը վախտ ա պըտահում՝ էնչանք ծո՛ւն ա կ՝ամ, վը՞ր վը՞չ մին մարթ կարում չի ք՝ընա՛ հանդ* (ԼՂԲՔ, 267): 2. *մ.* Ձմռանը, ձմռան ընթացքում: *Սաղ ծըմը՞ռնը հիյվընէն էն ըն իլա՛լ կ՝ումումը, մանշվա՛լ ըն* (Բ):

- Ծըմը՞ռնը ծո՛ւն օգ՝իս՝ տալ չի - Ասում են խիստ ժլատ մարդկանց մասին:

- Ծըմը՞ռնը յը՞տ ըղնէլ - Ձմռանը ձյուն չտեղալ, ձմեռն առանց ձյան անցնել: *Ծըմը՞ռնը յը՞տ ա ընգալ, արաշտ ա հնա՛կան* (Բ):

ԾԸՄԸԷՐԿԱՆ - *ած.* Շատ երկար ծամեր ունեցող: *Ծո՛ւշանիգը մին ծըմըէրկան ախճիգ՝ ա իլա՛լ* (Բ):

ԾԸՄԸ՞ՐՈՒԿ - *տե՛ս* ԾԸՄԷՐՈՒԿ:

ԾԸՄԸԹԿԱՆ/ԾԸՆԸԹԿԱՆ *(գրբ. ծննդական)* - *գ.* 1. Ծննդաբերած կին, նորածին երեխայի մայր, ծնունդկան: *Ծըմըթկանէն մինակ թողնէլ չը՞ն* (Բ): 2. *փխբ.* Շատ թեյ խմող մարդ: *Ծըմըթկան ը՞ս, խըրէգ՝ չայ խըմէ լի՞* (Բ):

ԾԸՄԸԹԿ՝Ը՞ՎԱԹ/ԾԸՆԸԹԿ՝Ը՞ՎԱԹ - *գ.* 1. Նորածնի մկրտման առթիվ կազմակերպված խնջույք: *Ծըմըթկ՝ը՞վաթը ըսքըսում ըն, ամմա հարթանը հո՛ը կ՝ամ չի* (Ձ): 2. Ծննդկանին հարազատների կողմից ուղարկված ուտելիք՝ հատկապես մեղրով պատրաստած ձվածեղ, խավիծ: *Մանիշ աքէրը ծըմըթկ՝ը՞վաթը պըդըրաստում ա, մը՞ծ թօռնանը նըստավ դարկում* (Ձ):

ԾԸՄԸԾԱՄԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծըմըծամէ անէլ - *տե՛ս* ԾԸՄԾԸՄՕՐԷԼ:

ԾԸՄԸԿԱԳ՝ՈՒԼ - *գ.* Անտառային վարդ, վայրի վարդ: *Ծըմըկագ՝ուլը մանդին պէնվում ա* (Բ):

ԾԸՄԸԿԱՄՕՇ - *գ.* Անտառներում աճող մոշի տեսակ: *Ծըմըկամօշը աշունքըն ա հըսնում* (Բ):

ԾԸՄԸԿԱՌԸ՞Խ - *գ.* Անտառի սկիզբը՝ մուտքը: *Բալուն լ՝ըհա հըսնէս ա ծըմակը, ծըմըկըռը՞խումը մին կ՝ըխտար ա ջիհիս* (Ձ):

ԾԸՄԸԿԱՎԱՐԹ - *տե՛ս* ԾԸՄԸԿԱԳ՝ՈՒԼ:

ԾԸՄԸԿԹԱՓԱՆ - *գ.* Անտառային սնկի տեսակ, որ արտաքին տեսքով նման է կենդանու թափանի: *Խըրաված ծըմըկթափանը լանգա՛թ պէն ա* (Բ):

ԾԸՄԸԿԿԱԾԱՆ - *գ.* Անտառային կածան, անտառի միջով ձգվող կածան: *Լանլ՝ուն արտան մին ծըմըկկածան ք՝ինամ ա մինչը՞վ Ըրգ՝ունանգա՛ն ախպ՝ուրը* (Ձ):

ԾԸՄԸԿՈՒՏՈՒՐ - *ած. տե՛ս* Ծամը կըտըրած:

ԾԸՄԸՌ(Ն)ԱՆԱԼ *(գրբ. ձմեռանամ)* - *չբ.* Ձմեռը վրա հասնել, ձմեռային՝ ցուրտ օրերը սկսել: *Վէր ծըմըռնանում ա, ըտըրանք էլ կարում չը՞ն ք՝ինին ծըմակը* (Ձ):

ԾԸՄԸՌ(Ն)ԱՊԷՆԴ - *գ.* Խստաշունչ ձմեռ: *Թանրսու մընան էտ տարէն էլ փիս ծըմըռնապէնդ ա ընիս...* (ԱԱ, 23):

ԾԸՄԸՌ(Ն)ԱՏԱ՛ՆՁ - *գ.* Ուշ աշնանը հասնող եւ երկար ժամանակ պահպանվող տանձի տեսակ: *Ծըմըռնատանձը նօյէմբէրումըն ըն քաղում* (Բ):

ԾԸՄԸՌ(Ն)ԱՏԷՄ - *գ.* Ձմռան սկիզբ, ձմեռնամուտ: *Ծըմըռնատէմը վէր կ՝ամ ա, հիյվընէն ըսքըսում ըն լըդարէլը* (Բ):

ԾԸՄԸՌ(Ն)Ը՞ՆԷ - *գ., ած.* Ուշ աշնանը բերք տվող (պտղատու ծառատեսակներ՝ խնձորենի, տանձենի եւն): *Ծըմըռնը՞նէ տանձին չուրացալ ա* (Բ):

ԾԸՄԸՌ(ՆԸ)ՅԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծըմըռ(նը)հան անէլ - Օգնել՝ նպաստել, որ ձմռան դժվարությունները հաղթահարեն՝ ձմեռն անցկացնեն: *Խօջան էտ յիթիմնուն տանում ա հ՝ուրանց տօն, ծըմըռնըհան անում* (Ձ):

- Ծըմըռ(նը)հան ինիլ - Ձմռան դժվարությունները հաղթահարել, ձմեռը հանել՝ անցկացնել: *Էնը մըկըկալավ ա ծըմըռնըհան ինի՛ւմ* (ԱԲԲ, 24):

ԾԸՄԸՌ(ՆԸ)ՌԸ՞Խ - *տե՛ս* ԾԸՄԸՌ-(Ն)ԱՏԷՄ:

ԾԸՄԸՌ(Ն)ՕՐ - *գ.* 1. Ձմեռային օր: *Մին ծըմըռնօր Սանր ամին ք՝ինամ ա ծըմակը, վէր փանդ պիրի* (Ձ): 2. *փխբ.* Ցուրտ՝ խստաշունչ օր: *Մարդի վէրչը ա, ամմա հանլա՛ն ծըմըռնօրէրը պըրծալ չի* (Բ):

ԾԸՄԸՐ(Ը)ԿԷԼ/ԾԻՄԻՐ(Ը)ԿԷԼ/ԾԻ՞ՄԻՐ(Ի՞Ի)ԿԷԼ - *տե՛ս* ՊԸԼԻԹԻԼ (2):

ԾԸՄԼԸՄՕՐԷԼ - *տե՛ս* ԾԸՄԾԸՄՕՐԷԼ:

ԾԸՄԼԸՄՕՐՎԷԼ - *տե՛ս* ԾԸՄԾԸՄՕՐՎԷԼ:

ԾԸՄԾԱՄԷԼ - *տե՛ս* ԾԸՄԾԸՄՕՐԷԼ:

ԾԸՄԾԱՄՎԷԼ - *տե՛ս* ԾԸՄԾԸՄՕՐՎԷԼ:

ԾԸՄԾԸՄ - *ած.* 1. Դանդաղ ու առանց ախորժակի ուտող: *Ծըմծըմ ղօնաղը տընատը՞ռնը աշկէն պըլօր կինի* (Ձ): 2. *փխբ.* Դանդաղորեն խոսող, դանդաղախոս: *Ծըմծըմ մարթ ա Կէվին* (Բ):

ԾԸՄԾԸՄՕՏԷԼ - *տե՛ս* ԾԸՄԾԸՄՕՐԷԼ:

ԾԸՄԾԸՄՕՏՎԷԼ - *տե՛ս* ԾԸՄԾԸՄՕՐՎԷԼ:

ԾԸՄԾԸՄՕՐԷԼ - *նբ.* 1. Երկար ու շատ ծամել՝ ատամներով տրորել: *Շօնը էտ վընանամանը ծըմծըմօրում ա, վէր քընցո՛ւմ* (Ձ): 2. *տե՛ս* ԾԱՄԷԼ (4): 3. *տե՛ս* ԿԸՄԿԸՄԱԼ:

ԾԸՄԾԸՄՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՄԾԸՄՕՐԷԼ (1, 2)-ի:

ԾԸՄՕՐԷ[1] - *տե՛ս* ԻԾԸՄՕՐԷ[1]:

ԾԸՄՕՐԷ[2] - *տե՛ս* ԻԾԸՄՕՐԷ[2]:

ԾԸՆԳԱԼ - *չբ.* Ծնգոց հանել, մեղմ զնգալ: *Սըհաթը վէր ծընգամ ա, կուճուր ախպէրը լօք ա տամ տը՞դան* (Ձ):

ԾԸՆԳԱՆՔ՝ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծընգանք՝ ըղնէլ - 1. Դժվար կացության մեջ ընկնել: *Շինանցուց արտէրը նի յա կացալ, էրալ, խը՞ղճէրը ծընգանք՝ ըն ընգալ* (Ձ): 2. Սարսափել, սարսափի մեջ ընկնել: *Արչը վէր կ՝օռում ա, վը՞ռկանը ծընգանք՝ ա ըղնում* (Ձ):

ԾԸՆԳԸԼ/ԾԸՆԿԸԼ - *գ.* Շորի քրքրված՝ բզկտված կտոր, քուրջ: *Մին ծընգըլ ա քընցո՛ւմ ջանէն, ծակում* (Ձ):

- Ծընգըլ անէլ - *տե՛ս* Ծընգըլիան անէլ:

- Ծընգըլ ինիլ/տը՞ռնալ - *տե՛ս* Ծընգըլիան ինիլ:

- Ծընգըլնէն նը՞ստա կախ-կախ - Աղքատ, ցնցոտիավոր: *Էն ա ծընգըլնէն*

նը՛ստա կախ-կախ, ընդրա ըշտըղա յա՞ վը՛սկէ (Զ):

ԾԸՆԳԸԼՀԱՆ/ԾԸՆԿԸԼՀԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծընգըլիան անէլ - 1. Շատ քրքրել, ծվեն-ծվեն անել, բզկտել: *Շօնը տը-րը՛խը տանում ա, ծընգըլիան անում* (Զ): 2. *տե՛ս* Մէսը վէր անէլ:

- Ծընգըլիան ինիլ/տը՛ռնալ - 1. Շատ քրքրվել, ծվեն-ծվեն լինել, բզկտվել: *Էտ կընէգ՛ը ծըմակումը էնքան կէնում ա, շօ՛ղէրը սաղ ծընգըլիան ա ինո՛ւմ* (Զ): 2. *տե՛ս* Մէսը վէր կ՛ալ:

ԾԸՆԳԸԼ-ՄԸՆԳԸԼ/ԾԸՆԿԸԼ-ՄԸՆ-ԿԸԼ - *գ. հվք.* Քրքրված՝ պատառոտված՝ անպիտանի շորեր, ցնցոտիներ: *Տանը ծընգըլ-մընգըլը հըվաքում ա, տամ էտ ըգ՛օդէն* (Զ):

ԾԸՆԳԸՑ(Ը)ՆԷԼ - *պբ.* ԾԸՆԳԱԼ-ի:

ԾԸՆԳԾԸՆԳԱԼ - *չբ.* Տեւականորեն կամ շատ բաներ ծնգալ: *Վէր գ՛անգ՛ը ծընգծընգամ ա, ք՛արվանը հըդէ յա ինո՛ւմ* (Զ):

ԾԸՆԳԾԸՆԳՑ(Ը)ՆԷԼ - *պբ.* ԾԸՆԳ-ԾԸՆԳԱԼ-ի:

ԾԸՆԳԾԸՆԳՕՆ - *գ.* Ծնգծնգալը, ծնգծնգալու ձայնը: *Ուղտէրէն պուժուժ-նէրէն ծընգծընգօնը հըռանցէ ըսկան-վում ար* (Զ):

ԾԸՆԳԾԸՆԳՕՑ - *տե՛ս* ԾԸՆԳԾԸՆ-ԳՕՆ:

ԾԸՆԳՕՆ - *գ.* Նվագարանի՝ մետաղ-ների՝ զանգի եւ այլնի մեղմ զնգոց: *Մին ըբըսանուց ա ջուբան վէր ըղնում, ծընգօնը դէրվիշը ըսկանում ա* (Զ):

ԾԸՆԳՕՑ - *տե՛ս* ԾԸՆԳՕՆ:

ԾԸՆԴԸՐԱԼԷԾ - *ած.* 1. Խոշոր ու գեր մարմին ունեցող, ծանրամարմին: *Ծընդըրալէշ մարթ ա Արտաշը, մին թ՛ահրա՛վ ա պիցըրանում սարը* (Զ): 2. Մեծ ու ծանր զանգված ունեցող: *Արչը վէր մարթին տը՛սնում ա, մին ծընդը-ռալէշ ք՛օ՛թ՛ուկ ա խըտտում, բիդի ըտըրան թող անում* (Զ):

ԾԸՆԴԸՐԱԽՕՍ *(գրբ. ծանրախօս)* - *ած.* 1. Դանդաղախոս, ծանր՝ դանդաղ խոսող: Ծընդըրախօս մարթին անա զ՛ահլ՛ա՛ս տարած ա (Բ): 2. Լրջախոս, լուրջ բաներ եւ լրջորեն խոսող: *Կընէգ՛ը բիդի ծընդըրախօս ինի, վէչ թա Քընա-ռիկին նըման սա՛հլիգ՛* (Բ):

ԾԸՆԴԸՐԱՀԱՄ *(գրբ ծանրահամ)* - 1. *գ.* Անախորժ՝ տհաճ համ: *Յը՛ղէն ծընդըրհաման սը՛ռտըս խառնում ա* (Բ): 2. *ած.* Ծանր՝ տհաճ համ ունեցող: *Ծընդըրահամ մէս ա, կարում չըմ օտիմ* (Բ):

ԾԸՆԴԸՐԱՆԱԼ *(գրբ. ծանրանամ)* - *չբ.* 1. Քաշը՝ կշիռը ավելանալ, ծանր դառնալ: *Փա՛ղը թըրչըվում ա, ծընդը-ռանում* (Զ): 2. Ծանրամարմին դառնալ, գիրանալ: *Խօգ՛էրը կաղէն ըն օտում, ծընդըրանում* (Բ): 3. Դժվարանալ, շա-տանալով դժվարություններ առաջ գալ: *Կավըն էլ վէր ըստակում ա, Մ՛ուք՛ո՛ւն կօրծէրը ծընդըրանում ա* (Զ): 4. Ավե-լանալ: *Հ՛օ՛ղ՛ումա՛թին խարջէրը ծընդը-ռացալ ա, կարում չընք տանք* (Բ): 5. *փխբ.* Ծանր կացություն՝ վիճակ ստեղծ-վել, բարդանալ, դժվարանալ: *Ծըմը՛ռնը վէր կ՛ամ ա, շինըցուց հա՛լը ծընդըրա-նում ա* (Բ): 6. Կյանքի պայմանները վատթարանալ: *Ամմէն հինչ թ՛ինգ՛ա՛լ ա, ապըրուստը ծընդըրացալ ա* (Բ): 7. Լրջություն ձեռք բերել, ծանրաբարո դառնալ, լրջանալ: *Թավաք՛ա՛լի, սա՛հլիգ՛ ախճիգ՛ ա իլա՛լ, միհէնգ ա ծընդըրացալ* (Բ): 8. Ընչելու համար ծանր լինել, ա-պականվել (օդի մասին): *Հինչ ա էտ զա-վօղը շինա՛լ ըն, քըղաքէն օթը ծընդը-ռացալ ա* (Բ): 9. Համը՝ հոտը անախորժ դառնալ (ուտելիքի մասին): *Խօրա՛գ՛ը ծընդըրացալ ա, կարում չըմ օտիմ* (Բ): 10. Շատ ուտելու պատճառով ծանրա-շարժ դառնալ: *Ղուշէրը էտ լէշը օտում ըն, ծընդըրանում, էլ կարում չըն թըռչին* (Զ): 11. *փխբ.* Հղիանալ (անասունների մասին): *Կ՛ումաշը ծընդըրացալ ա, մայիսըմը ծընան ա* (Բ): 12. Վիճակը վատթարանալ, մահամերձ լինել (հի-վանդի մասին): *Բօրիկը ծընդըրացալ ա, դուխտուրնէն էլ կարում չըն վէշ մին պէն անին* (Բ): 13. Թեթեւությունը՝ դյուրաշարժությունը կորցնել: *Այուն վը՛ննէրը ծընդըրացալ ա, էլ կարում չի ք՛ինի բօստանը* (Զ): 14. *փխբ.* Ծան-ությունը՝ հոգսը՝ դժվարությունը մեկի՝ մի բանի վրա կենտրոնանալ: *Հա՛ղը մը՛ռնում ա, տանը հօքսը մը՛օ՛ տըղէն յըրա յա ծընդըրանում* (Զ):

ԾԸՆԴԸՐԱՊԷՌ(ՆԸ) - 1. *գ.* Ծանր բեռ: *Էտ ծընդըրապէռնը տինո՛ւմ ըն էշին յըրա, էշը չօքում ա* (Զ): 2. *ած.* Ծանր բեռով բեռնավորված՝ բարձված: *Ծընդըրապէռնը օղտէրը մին թ՛ահրա՛վ ըն պիցըրանում սարը* (Զ):

ԾԸՆԴԸՐԱՎԸ՛Տ *(գրբ. ծանրահոտ)* - 1. *գ.* Անախորժ՝ տհաճ հոտ: *Թաքավէրը էտ ծընդըրվը՛տէն կարում չի տըմանա, դա՛ստի տո՛ւս ա կ՛ամ ութաղան* (Զ): 2. *ած.* Ծանր՝ տհաճ հոտ ունեցող՝ արձակող: *Ծընդըրավը՛տ ծաղէգ՛ էլ ա ինո՛ւմ* (Բ):

ԾԸՆԴԸՐԷԼ *(գրբ ծանրեմ)* - *տե՛ս* ԾԸՆԴԸՐԱՆԱԼ:

ԾԸՆԴԸՐԹԻԹԸ՛Վ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծընդըրթիթը՛վ անէլ - 1. Ձեռքի մեջ շարժելով՝ վեր ու վար անելով՝ առար-կայի ծանրն ու թեթեւը որոշել: *Ինք՛ օնօղը ծընդըրթիթը՛վ ա անում, թա.- Էս էրկու կիլօ կա վէչ* (Զ): 2. Մի բան անե-լուց առաջ խորհրդածել՝ երկար կշռա-դատել: *... Մանաս ապէրը քինալ-չըքի-նալին յըրա հա՛լա՛ ծընդըրթիթէվ ա անըմ...* (ՋՏ, Ա, 35): 3. Մեկին խոսեցնել՝ նրա տրամադրությունը՝ մտադրությու-նը՝ ցանկությունը իմանալու համար: *Պառավը էտ ըխճըկանը ծընդըրթիթը՛վ ա անում, ամմէն հինչ գ՛ո՛ւդ՛ո՛ւմ* (Զ):

ԾԸՆԴԸՐ-ԾԱՆԴԸՐ - *ած.* 1. Շատ ծանր: *Ծընդը՛ր-ծանդը՛ր քարէր ըն պի-ր՛ո՛ւմ, հըդէն կապում* (Զ): 2. Լուրջ, լրջա-խոհ: *Ծընդը՛ր-ծանդը՛ր մարթիք՛ ըն Սը՛ր-ք՛իսանք* (Բ): 3. *մ.* Դանդաղորեն, ծան-րորեն: *Ծընդը՛ր-ծանդը՛ր ա շօռ կ՛ամ* (Բ):

ԾԸՆԴԸՐՄԸ՛Ծ - 1. *տե՛ս* ԾԸՆԴԸՐԱ-ԼԷԾ: 2. *տե՛ս* ԾԱՆԴԸՐ-ԾԸՆԴԸՐՄԷ:

ԾԸՆԴԸՐՅԱՆԱ - *տե՛ս* ԾԱՆԴԸՐ-ԾԸՆԴԸՐՄԷ:

ԾԸՆԴԸՐՅԷՐԻԾ - *ած.* Դանդաղ-ընթաց, դանդաղաշարժ: *Ծընդըրյէրիշ կընէգ՛ ա Հէղուշը* (Բ):

ԾԸՆԴԸՐՎԸ՛ՆՆԸ - *ած.* 1. *տե՛ս* ԾԸՆ-ԴԸՐՅԷՐԻԾ: 2. Հղի (կանանց մասին): *Ծընդըրվը՛ննը կընգանը շատ պինը-ցընէլ չընը* (Զ):

ԾԸՆԴԸՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ծանրացու-ցանեմ, ծանրեցուցանեմ)* - *նբ.* ԾԸՆԴԸ-ՐԱՆԱԼ-ի:

ԾԸՆԴԸՐՕԹՌԻՆ *(գրբ. ծանրութիւն)* - *գ.* 1. Կշիռ, քաշ: *Էտ կընվէն ծընդը-րօթունը էրկու կ՛ումաշին անա շատ ա ինո՛ւմ* (Զ): 2. Բեռ: *Էշը նասազ ա ինո՛ւմ, էտ ծընդըրօթունը կարում չի տանէ* (Զ): 3. *փխբ.* Դժվարություն, չարչարանք: *Արտ հընձիլը ծանդը կօրծ ա, էտ ծընդըրօթունը ամմէն մարթ չի կարէլ տանէ* (Զ):

ԾԸՆԷ - *ած.* Ծնելու ընդունակ՝ ենթակա՝ կարող: *Մին ծընէ կավ օնէ, էրկու սըբէ կ՛ումաշ* (Բ):

ԾԸՆԷԼ *(գրբ. ծնանիմ, ծնիմ)* - *նբ.* Ծնունդի միջոցով սերունդ արտադրել, ծննդաբերել, երեխա կամ ձագ բերել: *Էտ օռնօցին յըրան էտ տըղան ք՛ինըմ ա, տը՛սնըմ մին ծ՛օ՛ղըմ մին կ՛ո՛ւլ ծընըմ ա* (ՀԺՀ, V, 54): 2. *արհմ.* Ճարել, գտնել, ստեղծել: *Թ՛ա՛ջիրը ասում ա.- Էտ իմ կօրծըս չի, ըշտըղա օգում ըս՝ հազգար մանէթըս ծընէ* (Զ): 3. *չբ. արհմ.* Տանջվել, չարչարվել: *Մարթը արչին լըծում ա, թա.- Դէ ըտի ծընէ՛* (Զ):

- Ծընած էծ - Նիհար՝ տկար անձ: *Էտ ծընած էծընն ա՞ մընացալ, վէր ինձ նը՛հը՛ստ կօխուլ կէնա* (Բ):

- Ծընած կավ - *տե՛ս* Քըթէ կավ:

ԾԸՆԷ-ԾԸՆԷ - Գործածվում է կա-պակցությունների մեջ:

- Ծընէ-ծընէ ըղնէլ - Դժվար կացության մեջ ընկնել: *Ապրանքը կ'ուղանում ըն, առուտուրականը ծընէ-ծընէ յա ըղնում* (Ձ):

- Ծընէ-ծընէ քըցիլ - Դժվար կացության մեջ գցել: *Ծո՛ւնը ժուղուվուրթէն ծընէ-ծընէ յա քըցա՛լ* (Ձ):

ԾԸՆԷՓԱԿ/ԾԻՆԷՓԱԿ/ԾԸՆԸ՝ՓԱԿ *(գրբ. ծնեբեկ)* - *գ.* Շուշանազգիների ընտանիքին պատկանող բազմամյա բույս, որի դալար ցողունը գործածվում է եփած՝ տապակած՝ խորոված վիճակում, ծնեբեկ: *Խըրաված ծինըփակէն տը՝ղը վէշ մին պէն տալ չի* (Բ):

ԾԸՆԸ՝ՓԱԿ - *տե՛ս* ԾԸՆԷՓԱԿ:

ԾԸՆԸԹԿԱՆ - *տե՛ս* ԾԸՄԸԹԿԱՆ:

ԾԸՆԸԹԿ'Ը՝ՎԱԹ - *տե՛ս* ԾԸՄԸԹԿ'Ը՝ՎԱԹ:

ԾԸՆԸԼԱՅՈՒԿ - *գ.* Նոր ծնված երեխա՝ ձագ: *Կավը ծընում ա, ծընըլացուկը ըղնում ա վը՝տանը տակը, ըստակում* (Ձ):

ԾԸՆԸՆԴԱԿԱՆ - *տե՛ս* ԾԸՆՈՒՆԴԱԿԱՆ:

ԾԸՆԸՎԸ՝ՌԷԳ' - *գ.* Վայրի խոտաբույսի տեսակ: *Էծէրը յըրա յըն տը՝ռնում, էտ ծընըվը՝ռէգ'ին կըպուկէն, լօխ օտում* (Ձ):

ԾԸՆԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ծնուցանեմ)* - 1. *պբ.* ԾԸՆԷԼ (1, 2)-ի: 2. *նբ.* ԾԸՆԷԼ(3)-ի:

ԾԸՆԹԷԼ - *տե՛ս* ԾԸԿԸԹԷԼ (4):

ԾԸՆԹՕՐԱՆ/ԾԸԹՕՐԱՆ/ԾԷԹՐՈՒՆ *(գրբ. ծոթորին, ծոթրին)* - *գ.* Շրթնածաղիկների ընտանիքին պատկանող հոտավետ խոտաբույս, ծոթրին: *Ծընթորանը չուրըցընում ըն, համ չային մաչը քըցո՛ւմ, համ խուրա՛գ'ին* (Բ):

ԾԸՆԿԸԼ - *տե՛ս* ԾԸՆԳԸԼ:

ԾԸՆԿԸԼՀԱՆ - *տե՛ս* ԾԸՆԳԸԼՀԱՆ:

ԾԸՆԿԸԼ-ՄԸՆԿԸԼ - *տե՛ս* ԾԸՆԳԸԼ-ՄԸՆԳԸԼ:

ԾԸՆՁՕՐԷԼ - *չբ.* Հնանալուց՝ շատ օգտագործելուց մաշվել՝ քրքրվել (հագուստի մասին): *Մին ծընձօրած պէնջակ օնէ, միշտ էտ ա կ'ը՝նում* (Բ):

ԾԸՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՆԷԼ(1)-ի:

ԾԸՆՈՒՆԴ - *տե՛ս* ԾԸՆՕՆԴ:

ԾԸՆՈՒՆԴԱԿԱՆ/ԾԸՆԸՆԴԱԿԱՆ/ԾՈՒՆՈՒՆԴԱԿԱՆ - *գ.* Ծննդյան տարեթիվն ու ամսաթիվը հաստատող վկայական, ծննդական: *Նախշուն աքօրը ծընունդական չօնէ, ասում ա.- Էն վէր Մըրքըրաց մարա՛ք'ը նի յա կացալ էրալ, էն օրէն ըմ ծընվալ* (Ձ):

ԾԸՆՕՂԱՔՕՆ - *տե՛ս* ՄԱՄԱՅԱՔՕՆ:

ԾԸՆՕՂ(Ք) *(գրբ. ծնօղ)* - *գ.* Երեխայի հայրը եւ մայրը: *Տըղէն ծընօղնէն ամէն ուռթանա յէր ըն կընաս, պըտըրհանէն յիշիս, տըսնաս էն ա մուտանան հա՛լա՛ տըրա՛ծ տէղը* (ՀԺՀ, V, 279):

ԾԸՆՕՆԴ/ԾԸՆՈՒՆԴ/ԾՈՒՆՈՒՆԴ *(գրբ. ծնունդ)* - *գ.* 1. Ձավակ՝ որպես ծննդաբերության արդյունք: *Էտ կընէգ'ը ըզադվում ա, ամմա ծընօնդը մը՝ռնում ա* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* ԸՌԱԺԴԷՆ(Ն)Ի:

ԾԸՆՕՏԷԼ - *նբ.* Ծնել, ծնունդաբերել (շատերի մասին): *Մայիսըմը վըխճըրնէն ծընօտում ըն* (Բ):

ԾԸՊՊԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Թաքուն գողանալ՝ թռցնել: *Տը՝սնում ա՝ կարում չի ծը՝ռքան ինք' օնէ, քըշէրը ծըպպըցընում ա* (Ձ):

ԾԸՊՏԱԼ - *չբ. տե՛ս* Ծըպտուն հանել:

ԾԸՊՏՈՒՆ/ԾՈՒՊՏՈՒՆ *(հ.ե. *g'ep(h)-(ծնոտ, բերան, ուտել, խժռել)* - *գ.* Թույլ ու կարճ ձայն՝ խոսք՝ բացականչություն: *Ըտըրա ծըպտունը վէշ մինը ըսկանում չի* (Ձ):

- Ծըպտուն հանէլ - 1. Թույլ ձայն հանել: *Էս մարթը ծըպտուն չի հանում* (ՀԺՀ, VII, 394): 2. Թեթեւակի առարկել, անհամաձայնություն պարունակող որեւէ բան ասել: *Էս խազնադարը ասըմ ա.- Յէս խազնադար ինիլավ, ըտըրանք հինչ ը՞ն, վէր իմ ըսածէս ծըպտուն հանին* (Ձ):

- Ծըպտունը յը՝ր հանէլ - *տե՛ս* Ծըպտուն հանէլ:

ԾԸՊՊՈՒԼ(Ի)/ԾՈՒՊՊՈՒԼ(Ի) - *գ.* 1. Հազիվ առկայծող կրակ՝ ճրագ: *Հը՝ռէ տը՝ղ մին ծըպո՛ւլի յա ըրվամ* (Ձ): 2. *փխբ.* Եկամտի նվազ աղբյուր: *Էտ բօստանը պըռավէն հը՝տէ մին ծըպո՛ւլի յար* (Ձ):

- Ծըպո՛ւլի անէլ/տալ - 1. *չբ.* Թեթեւակի լույս տալ՝ արձակել՝ վառվել: *...Նը-մուսավ մարթկանց ասթխէրը պարգ' ըն լո՛ւս տամ, բէյնամուս մարթկանց ասթխէրը՝ շատ թո՛ւլ, լ'ըհա ինդի ծո՛ւպո՛ւլի յըն անում* (ԱԱ, 15): 2. *նբ.* Թեթեւակի լուսավորել՝ լուսավոր դարձնել՝ վառել: *Պըլը-պուղին տընէս ա փա՛ղէր տինիս, մին կուծի ծո՛ւպո՛ւլի ընէս...* (ԼՂԲ, 379):

ԾԸՊՈՒՏ/ԾՈՒՊՈՒՏ - *տե՛ս* ԾԸՊՏՈՒՆ:

ԾԸՊՈՒՏ-ԺԸՆԳ'ԸՌ - *տե՛ս* ՍԱ՛Ս-ՍԷՄՈ՛ՒՐ:

ԾԸՌԱԲԱՂ - *գ.* 1. Պտղատու ծառերի այգի: *Ճարտար ծըռըբաղէր շատ կա* (Բ): 2. Այգի, որտեղ խաղողի շիվերը փաթաթվում են ծառերի վրա: *Ծըռըբաղէն խաղուն քախծըր ա ինո՛ւմ* (Ձ):

ԾԸՌԱԲԱՐ - *տե՛ս* ԾԸՌԸՊԸՏՕՂ:

ԾԸՌԱՅԷԼ/ԾԱՌԱՅԷԼ *(գրբ. ծառայեմ)* - *չբ.* 1. Որեւէ կարգի սպասարկությամբ վարձու աշխատանք կատարել (ոչ արտադրության մեջ): *Արշօն բանգըմըն ա ծըռայում* (Բ): 2. Մեկին սպասարկել, նրա պետքերը հոգալ, ծառայություններ մատուցել: *Քաչալը էրկու տարէ էտ տըղէն լ'ավ ծըռայում ա* (Ձ): 3. Ձինվորական ծառայություն կատարել, զինվորական լինել: *Հո՛ւր տըսնըօթ տիրը՝կանը թըմամում ա, տանում ըն բանակ, վէր ծըռայէ* (Բ): 4. Մեկին իր օգնությունը առաջարկել: *Արչը ասմա.- Մա՛թթ ախպէր, յը՝կալ ըմ, ա՛սէ, հինչավ ծառա՞յիմ ք'ը՝զ* (Ձ): 5. Գործադրվել, օգտագործվել՝ որպես մի բան: *Կարպէտը ըտըրանց հունցը յօրդան ա ծըռայում* (Ձ):

ԾԸՌԱՅՕՂ/ԾԱՌԱՅՕՂ - *գ., ածական.* 1. Վարձու աշխատանք (ոչ արտադրության մեջ) կատարող (անձ): *Ծըռըյօղնուն ըռօճիգ'ը պիցըրցըրալ ըն* (Բ): 2. Ձինվորական ծառայության մեջ գտնվող (անձ): *Ծըռայօղ ա Ըրշամէն տըղան, բանակը վէր պըրծընէ, կ'ըլական ա հօրը ք'ը՝ծմա՛գ' անէ* (Ձ):

ԾԸՌԱ՛ՆԳ'/ԾԸՌԼԱ՛ՆԳ' - *տե՛ս* ԿՕՌՆԸ՝²: *Բարխուդարը, ասում ըն, մէլիք' Սաջումէն ծըռա՛նգ'ը ա* (Բ):

ԾԸՌԱՇԱՋ - *գ.* Թեթեւ քամի, որից ծառերի ճյուղերը օրորվում են: *Մա՛ռդի վէրչին ծըռաշաջ շատ ա ինո՛ւմ* (Բ):

ԾԸՌԱՎԱՐԹ - *գ.* Տաղտազգիների ընտանիքին պատկանող վերձիգ ծաղկաբույս եւ դրա ծաղիկը: *Ծըռավարթը դաշա՛նգ' ծաղէգ' ա տամ* (Ձ):

ԾԸՌԱՏԱԿ - *գ.* 1. Ծառի տակը, այն տեղը, որտեղից սկիզբ է առնում ծառի բունը: *Սըխտուրշէնա տինջիրուն ծըռատակը էնքան մը՝ծ ա, վէր տասսը տըղամարթ կարէլ չըն խըստին* (Ձ): 2. Ծառապսակի տակի տարածությունը: *Պիրո՛ւմ ա վըխճըրնէն էտ ծըռըտակէն մա՛գ'ա՛լ անում, ինք'ը՝ն էլ պարանց ըղնում, քօն ինո՛ւմ* (Բ):

ԾԸՌԱՏՕՆԳ *(գրբ. ծառատունկ (անտառ)* - *գ.* Մատղաշ ծառ, տունկ: *Բուղդան դային Պիլիթանուց հիշկան սօրփ կա, ամմէնին քըշտէն ծըռատօնգ ա տընգալ* (Բ):

ԾԸՌԷԼ *(գրբ. ծռեմ)* - *նբ.* 1. Աղեղաձեւ կամ անկյունաձեւ ճկել: *Ախճիգ'ը աչ վը՝ննը ծըռըմ ա* (ՀԺՀ, V, 39): 2. Մի կողմի վրա թեքել: *Կուփէ յա տամ, էտ պիհիրը ծըռում բիդի աչ* (Ձ): 3. Ուժով մի բան կորացնել՝ ճկել՝ կեռացնել: *Օշափը էտ ըրկաթէ ըստօլբան տինո՛ւմ ա ծուլնանը յըրա, հօփ տամ, ծըռում, տըղան մընամ ա ըրմացած* (Ձ): 4. Ճանապարհը՝ ուղղությունը՝ ընթացքը փոխել: *Քըշէրը ք'ունո՛ւմ ա, արխէն ճո՛ւրը ծըռում բիդի ո՛ւրա՛նց բօստանը* (Ձ): 5. *չբ.* Կորանալ, ճկվել, թեքվել: *Տանը սըթո՛ւնը վէր ծըռէ, տօնը պարան կըկ'ա* (Ձ):

ԾԸՌԸՋԼՈՐԹԼՈՐ - *տե՛ս* ՋԸՌԸՋԼՈՐԹԼՈՐ:

ԾԸՌԸԾԱՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծրռընծառը վազիլ - Անելանելի դրության՝ հուսահատության մեջ ընկնելով՝ սրա-նրա օգնությանը դիմել: *Խը՛ղճ Աբէլը ծրռընծառը վազից, վէշ մինը ք՛ծմանգ՝ չըրավ* (Ձ):

ԾԸՌԸԾՕՌ - *տե՛ս* ԾԸՌԸՄՕՌ:

ԾԸՌԸԿԱՏԼԻ/ՑԸՌԸԿԱՏԼԻ - *գ.* Փայտփորիկի նման թռչուն՝ դեղնավուն փետուրներով: *Ծրռընկատլին ծրռընկուտկուտէն նըման ա, ամմա տէղէն ըռանգի* (Բ):

ԾԸՌԸԿԸԼԸԽ - *գ.* Ծառի գագաթը, ծառակատար: *Պիցըրանում ա ծրռընկըլ՝ խը, ընդըղան հարայ տամ* (Ձ):

ԾԸՌԸԿԻՏԿԻՏ - *տե՛ս* ԾԸՌԸԿՈՒՏԿՈՒՏ:

ԾԸՌԸԿՈՒՏԿՈՒՏ/ԾԸՌԸԿԻՏԿԻՏ/ՑԸՌԸԿՈՒՏԿՈՒՏ - *գ.* Ծառերի մեջ ապրող որդերով՝ միջատներով սնվող խայտաբղետ գունավորումով թռչնատեսակ, փայտփորիկ: *Դարաբաղա ամմէնաղաշանգ՝ դուշը ծրռընկուտկուտըն ա* (Բ):

ԾԸՌԸՄԱՆԳ(Ը)ԼԻ - *տե՛ս* ԾԸՌԸՄՕՌ: *Մին կավ օնիմ՝ հանդին ա, պօգ՝էրը ծրռըմանգլի յա...* (ԱՋ, 61):

ԾԸՌԸՄՕՌ/ԾԸՌԸԾՕՌ/ԾԸՌՄԸԾՕՌ/ԾԸԽԸԾՕՌ - *ածական, մ.* Շատ տեղերից ծռմռված՝ ծռմռվելով՝ ծուռ ձեւով: *Մարթիկ կըլխէն ըն ընգալ, խըմալ, կ՝իժվալ, սաղ խաղօղէն ծառէրը կուտրատալ, ծրռըմօռ կըպօտալ* (ՀԱԲ, 15, 153):

- Ծրռըմօռ անել - Օրորվել, օրորվելով քայլել (հատկապես հարբած լինելու պատճառով): *Մացակը հըրսընքան տ՝ուս ա կ՝ամ, ծրռըմօռ ընէլավ ք՝ունում տօն* (Ձ):

ԾԸՌԸՊԷԺԻՆՔ՝ - *գ.* Ամուսնացող աղջկան որպես օժիտ հարազատների կողմից տրվող պտղատու ծառ կամ այգի: *Ուբէլը ըխճըկանը էրկու ծրռըպէժինք՝ ա տամ* (Ձ):

ԾԸՌԸՊԸՏՕԿ - *տե՛ս* ԾԸՌԸԿԸԼԸԽ:

ԾԸՌԸՊԸՏՕՂ - *գ.* Ծառերի տված բերքը, ծառի պտուղ: *Ըստարէ ծրռըպըտօղը խըրէգ՝ ա* (Բ):

ԾԸՌԸՏԱԿ(Ը)Ռ(Է) - *գ.* Ծառի արմատ, ծառարմատ: *Էտ ծրռընտակըռէն պատը պարան ա տամ* (Ձ):

ԾԸՌԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԾԸՌԷԼ (1, 2, 3, 4):

ԾԸՌԼԱՆԳ՝ - *տե՛ս* ԾԸՌԱՆԳ՝:

ԾԸՌԽԱ - *տե՛ս* Ք՝ՕՄԲԱ:

ԾԸՌԾԱՌՈՒՏ - *ածական.* Ծառաշար, ծառապատ: *Տումէն ծրռծառուտ շէն ա* (Բ):

2. *փխբ.* Նախշերով պատված, նախշազարդ: *Էտ կընէգ՝ը մին ծրռծառուտ գ՝ամբա՝ յա կ՝օրծում,, դարկում թաքավէրին* (Ձ): 3. *փխբ.* Մի քանի տեղից ճղված, պատառոտված: *Մէլիք՝ը վէր ըտըրա ծրռծառուտ շ՝ՕՐէրը տըսնաս ա, մէխկըն ա կ՝աս* (Ձ):

ԾԸՌԾԸՌ(Հ)ԱՏ(Վ)ԷԼ - *չբ.* 1. Ծաղկել, փթթել: *Բաղը ծրռծըռատալ ա* (Բ): 2. *փխբ.* Խմբվել, մի տեղ հավաքվել: *Ժուղովուրթը շինըմաչումը ծրռծըռատվալ ըն* (Ձ):

ԾԸՌԾԸՌ(ՕՏ)ԷԼ - *տե՛ս* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ԷԼ:

ԾԸՌԾԸՌ(ՕՏ)ՎԷԼ - *տե՛ս* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ՎԷԼ:

ԾԸՌՄԸԾՕՌ - *տե՛ս* ԾԸՌԸՄՕՌ:

ԾԸՌՄԸՌ(ԱՏ)ԷԼ - *տե՛ս* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ԷԼ:

ԾԸՌԸՄՌ(ԱՏ)ՎԷԼ - *տե՛ս* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ՎԷԼ:

ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ԷԼ/ԾԸՌՄԸՌ(ԱՏ)ԷԼ/ԾԸՌԾԸՌ(ՕՏ)ԷԼ - 1. *նբ.* Շատ տեղերից կամ շատ անգամ ծռել՝ ճկել՝ կեռացնել: *Գ՝ըմփուլավը վէր ա թակում, էտ լինգ՝ը ծրռմըռօտում* (Ձ): *չբ.* 2. Շատ տեղերից կամ շատ անգամ ծռվել՝ ճկվել: *Դուրբան վէր ա ըղնում քըրէրէն յըրա, ծրռմըռօտում* (Բ): 3. *փխբ.* Սեթեւեթել: *Մին խիլլա ծրռմըռօտէլանը յէտը ըսէս ա...* (ՀԺՀ, V, 47):

ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ՎԷԼ/ԾԸՌՄԸՌ(ԱՏ)ՎԷԼ/ԾԸՌԾԸՌ(ՕՏ)ՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ԷԼ(1)-ի: 2. *տե՛ս* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ԷԼ (3):

ԾԸՌՆԱԿՕՐԾ - *տե՛ս* ԾԸՐՔԱԿՕՐԾ:

ԾԸՌՆԸՎԸՏ - *տե՛ս* ՎԸՆՆԸԾԸՐՔ:

ԾԸՌՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՌԷԼ-ի:

ԾԸՌՏ - *տե՛ս* ԾԸՐՏ:

ԾԸՌՏԱԹԱԿ - *տե՛ս* ԾԸՐՏԱԹԱԿ:

ԾԸՌՏԱԹԼՈՌ - *տե՛ս* ԾԸՐՏԱԹԼՈՌ:

ԾԸՌՏԱՎԸՏ - *տե՛ս* ԾԸՐՏԱՎԸՏ:

ԾԸՌՏԷԼ - *տե՛ս* ԾԸՐՏԷԼ:

ԾԸՌՏԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ԾԸՐՏԸԹԱԹԱԽ:

ԾԸՌՏԸՎԸՌԷԼ - *տե՛ս* ԾԸՐՏԸՎԸՌԷԼ:

ԾԸՌՏԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԾԸՐՏԸՑ(Ը)ՆԷԼ:

ԾԸՌՏԻ-ՊԸՌՏԻ - *տե՛ս* ՑԸՐԹԻ-ՓԸՐԹԻ:

ԾԸՌՏՈՒՏ - *տե՛ս* ԾԸՐՏՕՏ:

ԾԸՌՏՕՏ - *տե՛ս* ԾԸՐՏՕՏ:

ԾԸՌՏՕՏԷԼ - *տե՛ս* ԾԸՐՏՕՏԷԼ:

ԾԸՌՏՕՏՎԷԼ - *տե՛ս* ԾԸՐՏՕՏՎԷԼ:

ԾԸՌՕԹՈՒՆ *(գրբ. ծռութիւն)* - *գ.* Ծուռ լինելը, ծռություն: *Կէրանէն ծրռօթունը շատ ա* (Բ):

ԾԸՌՕՏԷԼ - *տե՛ս* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ԷԼ:

ԾԸՌՕՏՎԷԼ - *տե՛ս* ԾԸՌՄԸՌ(ՕՏ)ՎԷԼ:

ԾԸՍԿԱԽՕՍ *(գրբ. ծածկախօս (ծածուկ խոսող)* - *ած.* Ծածկալեզվով՝ կողմնակի մարդկանց համար անհասկանալի պայմանական լեզվով խոսող: *Ըստըրանք ծըսկախօս մարթիք՝ ըն, վէշ մինը ըստըրանց գ՝ուրհ՝ացանն պէն չի կըլ՝ՕԽ ըղնում* (Ձ):

ԾԸՍԿԱԿ՝ԻՐ - *գ.* Կողմնակի մարդկանց համար անհասկանալի նշաններով գրված գրություն, գաղտնագիր: *Ծառան թաքավէրին ծըսկակ՝իրը տանում ա տամ վէզիրին, համ էլ ամմէն հինչ նաղլ անում* (Ձ):

ԾԸՍԿԱՄԸԹԿ *(գրբ. ծածկամիտ)* - *ած.* Իր մտածումները՝ գաղտնիքները ուրիշներին չհայտնող, գաղտնապահ, ծածկամիտ: *Էտ չօբանը էլ շատ ծըսկամը՝թկ մարթ ա ինհ՝ում* (Ձ):

ԾԸՍԿԱՊԱՀ - *տե՛ս* ԾԸՍԿԱՄԸԹԿ:

ԾԸՍԿԱՍԷՐ - *տե՛ս* ԾԸՍԿԱՄԸԹԿ:

ԾԸՍԿԱՐԱՐ - *ած.* Գաղտնաբար գործող: *Ծըսկարար մարթ ա Ք՝ՕՍՀ՝ունց Ալ՝ՕԿը, հանց կօրծ ա փըռնում, վէր շէնումը վէշ մինը գ՝ուդհ՝ում չի* (Բ):

ԾԸՍԿԸՂԸՄՓՕՑ(Ի) - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծըսկըղըմփօց(ի) անել - 1. Թաքցնել, պահել, երեւան չհանել: *Կընէգ՝ը մարթին կ՝ուղօթունը կարից ծըսկըղըմփօցի անէ* (Ձ): 2. Գաղտնաբար սպանել՝ մեջտեղից վերացնել: *Մինչը՝վ միհէնգ՝ էլ վէշ մինը գ՝ուդհ՝ում չի, թա էտ թօրքէն հու վա ծըսկըղըմփօցի ըրալ* (Ձ):

ԾԸՍԿ(Ը)ԸՐԲԱ - *գ.* Շարժական ծածկ ունեցող կառք՝ սայլ: *Կուղացած ապըրանքը ածում ըն ծըսկըրբան, տանում Աղդամ ծախում* (Ձ):

ԾԸՎԱՆԳ՝/ԾԻՎԱՆԳ՝ - *գ.* Մահացողի՝ մեռնողի ճիչը: *Ծըվանգ՝ը ըսկանում ա, նի մընում, տըս՝նում մը՝ռած* (Ձ):

- Ծըվանգ՝ը կըտըրէլ - *տե՛ս* ԾԸՎԱՆԳԻԼ:

ԾԸՎԱՆԳԻԼ - *չբ.* 1. Ձայնը կտրվել, նվաղել: *Վէրչը, կ՝ամ ըն էտ պատին տակէն տըրան քըթանում, տէսնում վը՝ՆՆը փըշրած, ծըվանգ՝ած* (ՀԺՀ, V, 403): 2. *փխբ. տե՛ս* Թիլը կըտըրէլ:

ԾԸՎԱՆԳ՝-ԾԸՎԱՆԳ՝ - *տե՛ս* ԿԸՌԷՔ՝-ԿԸՌԷՔ՝:

ԾԸՎԷԼ - *նբ.* Ընդեղենը սկուտեղի՝ մաղի եւն մեջ լցնել եւ վեր-վեր նետելով՝ աղբն ու քարերը մաքրել՝ զտել: *Սիսը՝ռը ծըվում ա, ածում թօրբան* (Բ):

ԾԸՎԸՐԱԿԷՐ - *տե՛ս* ՇԸՎԷՆ:

ԾԸՎԾԸՎԱԼ - *տե՛ս* ԾՈՒՎԾՈՒՎԱԼ:

ԾԸՎԾԸՎԱԼԻ - *տեմ* ԾՈՒՎԾՈՒՎԱԼԻ:

ԾԸՎԾԸՎԱՏԷԼ - *չբ. տեմ* Ծիվ-ծիվ անէլ:

ԾԸՎԾԸՎՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ԾՈՒՎԾՈՒՎ(Ց)ԸՆԷԼ:

ԾԸՎԾԸՎՈՒՆ - *ած.* Խմելու համար ախորժելի (գինու մասին): *Ծըվծըվուն կ'ինի ամմէն մարթ չի կարում շինի* (Բ):

ԾԸՎԾԸՎՕՆ - *տեմ* ԾՈՒՎԾՈՒՎՕՆ:

ԾԸՎԾԸՎՕՑ - *տեմ* ԾՈՒՎԾՈՒՎՕՑ:

ԾԸՎՎԱԼ - *տեմ* ԾՈՒՎՎԱԼ:

ԾԸՎՎԱՆ - *տեմ* ԾՈՒՎՎԱՆ:

ԾԸՎՎԸՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ԾՈՒՎՎՈՒՑ(Ը)ՆԷԼ:

ԾԸՎՎՕՆ - *տեմ* ԾՈՒՎՎՕՆ:

ԾԸՎՎՕՆ-ԾԸԿԸԼԹՕՆ - *տեմ* ԾՈՒՎՎՕՆ-ԾԸԿԸԼԹՕՆ:

ԾԸՎՎՕՑ - *տեմ* ԾՈՒՎՎՕՑ:

ԾԸՎՎՕՑ-ԾԸԿԸԼԹՕՑ - *տեմ* ԾՈՒՎՎՕՑ-ԾԸԿԸԼԹՕՑ:

ԾԸՏԱԿՆԸ/ԾԸՏԱՇԿ - *գ. տեմ* Ծըտու աշկ (ԾԸ՝Տ-ի տակ):

ԾԸՏԱՆՔ - *գ.* Շատ մանր եւ հողախառն կուտ՝հատիկեղեն: *Ծըտանքը վէր ա ածում, հավէրը հըվաքվում ըն* (Զ):

ԾԸՏԱՇԿ - *տեմ* ԾԸՏԱԿՆԸ:

ԾԸՏԱՊԻՒՆ - *գ.* Ծտի բույն: *Օխծը նի մըտավ ծըտապ'ունը* (Բ):

ԾԸՏԱՏԱՆՁ - *գ.* Մանր տանձի տեսակ: *Մէր ծըմըկնումը ծըտատանձ շատ կա* (Բ):

ԾԸՏԱՓԱՅ/ԾԸՏԸՓԱՅԻ - *գ.* Փոքր՝ չնչին՝ աննշան բաժին: *Ցօրէնը կէս-կէս ըն անում, մին ծըտըփայ էլ տամ կուճի ախպօրը* (Զ):

ԾԸՏԱՔՕՆ - *գ.* Կարճատեւ քուն՝ քնելը: *Ըտըրա քօն ինիլը հինչ քօ՞ն, ծըտաքօն ա* (Զ):

- Ծըտաքօն տալ - Կարճ ժամանակով քնել: *Մին պատառ ծըտաքօն ըն տամ, յը՛ր կէնում, էլիա կօրծ անում* (Զ):

ԾԸՏԸԳ'ԻՒԼԱՍ - *գ.* Մանր կեռասի տեսակ: *Ծըտըգ'ուլասը վէր չուրըցընում ըս, տակէն պէն չի մընամ* (Բ):

ԾԸՏԸԳ'ԻՒԼԱՍԻ - *գ.* Մանր պտուղներ տվող կեռասենու տեսակ: *Ծըտըգ'ուլասուն անա լ'ավ ցըկատու կօթ ա տը՛ռնում* (Բ):

ԾԸՏԸ՝ՆԷ - *գ.* Մանր հատիկներով խաղողի տեսակ: *Ծըտը՛նէն էլ ա լ'ավ խաղու, կօգի կուծի-կուծի գ'ուլէք' օնէ* (Բ):

ԾԸՏԸԽԱՇՈՒ - *գ.* 1. Ծտի մսից եփած կերակուր: *Ծը՛տը հինչ ա՞, թա ծըտըխաշուն հինչ ինի* (ԱԲԲ, 40): 2. *փխբ.* Քիչ՝ աննշան ուտելիք: *Լօխ օտում ըն, մին ծըտըխաշու էլ տամ նօք'ա՛րին* (Զ):

ԾԸՏԸԽԸՆՁՕՐ - *գ.* Մանր խնձորի տեսակ: *Ծըմըկնէն ծըտըխընձօրա՛վ լըցցած, բաշիր չի անում, թա քաղէ, պիրի՝խօխէնք'ը օտին* (Բ):

ԾԸՏԸԽԸՆՁՕՐԷ - *գ.* Մանր պտուղներ տվող խնձորենու տեսակ: *Ծըտըխընձօրէն տըմասկան ծառ ա* (Բ):

ԾԸՏԸԽՈՒՐՄԱ - *տեմ* ՁԸՆՁԸԳ'ՈՒԼԱՍ:

ԾԸՏԸՃԻՆՁԸ՝Խ - *գ.* Գյուղատնտեսական մշակություններին դեղնավուն ծիլերով փաթաթվող մակաբույծ բույս: *Ծըտըճինձը՛խը բօստանը փուչըցըրավ* (Բ):

ԾԸՏԸՄՕՐԷ - *գ.* Բազմամյա խոտաբույս, որ տալիս է կլոր ուլունքաձեւ մանր ու կարմիր ոչ ուտելի պտուղներ, ինչպես նաեւ այդ պտուղները: *Խօխէնք'ը ծըտըմօրէ յըն քաղում, շըրանուկ անում, քըցո՛ւմ վիզըրնէն* (Զ):

ԾԸՏԸՊԱՇԱՐ - *տեմ* ՏԸՏԸՊԱՇԱՐ:

ԾԸՏԸՎԸ՝ՆՆԷՆ - *տեմ* ԾԱ՛ՔԻՆ:

ԾԸՏԸՎԸ՝ՆՆԸ - *գ.* 1. Վայրի խոտաբույսի տեսակ: *Ծըտըվը՛ննը քաշլիգ' խոտ ա* (Զ): 2. Պտուղներով՝ ծաղիկներով՝ բողբոջներով պատված՝ բեռնավորված փոքրիկ ճյուղ: *Ապան գ'ուլասուն անա մին ծըտըվը՛ննը կօտըրից, տուվավ թօռնանը* (Բ):

ԾԸՏԸՏԱ՛ՆՁԻ - *գ.* Մանր պտուղներ տվող տանձենու տեսակ: *Ծըտըտանձուն փանդան լ'ավ շիրը՛փ ըն շինում* (Բ):

ԾԸՏԸՓԱՅԻ - *տեմ* ԾԸՏԱՓԱՅ:

ԾԸՏԸՓԱՓՈՒՃ - *գ.* Փոքր երեխայի կոշիկ: *Խօխան ծըտըփափուճը հանում ա, տամ շանը* (Զ):

ԾԸՏԸՔԱՐԷ - *տեմ* ՄԸՆՆԸՔԱՐԷ:

ԾԸՏԸՔԸՇԻ - *գ.* Երկար մետաղալարի կամ թելի վրա շարած մետաղյա ամաններ, որ շարժելով՝ ծտերին քշում են: *Ծըտըքըշին վէր տուրուր ըն տամ, զըրընգզըրընգամ ա, ծըտէրը փախչում ըն* (Զ):

ԾԸՐ - *տեմ* ԾԻՐ:

ԾԸՐԱՆԱԼ *(գրբ. ծերանամ)* - *տեմ* ՊԸՌԱՎԷԼ (1):

ԾԸՐԱՎԷԼ *(գրբ. ծարաւեմ)* - *չբ.* Ջուր խմելու պահանջ զգալ, ծարավել: *Թաքավէրին պուճուր տըղան խէ շատ ծըրավում ա* (ՀԺՀ, V, 21):

ԾԸՐԱՏԷԼ - *նբ.* 1. Ծայրը կտրել: *Մըկըրատը յօր ա ունէս, էտ շալլը՛ղը ծըրըտէս* (Զ): 2. Որոշ բույսերի ծայրերը կտրել լավ աճելու՝ ճյուղավորելու համար: *Լիմօնէն ծառը բիդի ծըրատիս, վէր ճըղնէր տա* (Բ):

ԾԸՐԱՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՐԱՏԷԼ-ի:

ԾԸՐԷԼ - *նբ.* Ծիր՝ ակոս բացել, ակոսել: *Թօռը յը՛ս չի օնում, թա արտէրը ըսքըսին ծըրէլը* (Զ):

ԾԸՐԸԿՈՒՏՈՒՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծըրըկուտուր անէլ - Արտը երկարությամբ հերկելուց հետո լայնությամբ եւս հերկել: *Վը՛ղը բիդի ծըրըկուտուր անիս, վէր փափուկ ինի* (Բ):

ԾԸՐԸՀԱՆԷԼ - *նբ. տեմ* Հըղա տ'ուս օնէլ (ՀԸՂԷ-ի տակ):

ԾԸՐԸՀԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՐԸՀԱՆԷԼ-ի:

ԾԸՐԸՎԱՃԻՒՐ - *գ.* Անալի՝ անհամ աղբյուրի ջուր: *Էս հինչ ճ'ուր ա՞, ծըրըվաճ'ուր ա, խըմում ըս, խըմում, պէն չըս կըլխու ըղնում* (Բ):

ԾԸՐԸՎԱՆԱԼ *(գրբ. ծարաւանամ)* - *տեմ* ԾԸՐԱՎԷԼ: *Վար ծըրըվացալ ա, քըշացալ ա, տափէն ղըրաղէն ըխպիրան վար ճ'ուր խըմէ* (ԱԱ, 59):

ԾԸՐԸՎՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԾԸՐԱՎԷԼ-ի:

ԾԸՐԸՎՕԹՈՒՆ *(գրբ. ծարաւութիւն)* - *գ.* Ծարավ լինելը, ծարավի զգացումը՝ պահանջը: *... Ծըրըվթունան վէր ա ընգընէս, քարէրը լ'ուզ տալավ ուռնաս, յիրգ'ինք'ան ք'օմանգ' ուզիս* (ԱԱ, 56):

ԾԸՐԻ/ԾԻՐԻ *(գրբ. ձրի)* - *ած., մ.* Առանց վարձատրության, անվճար: *...Օգալ ա՝ ծըրի շինի՝ ուրան անվանի, վար Ըստուծէն աշկը յըրան քախծըր ինի* (ԱԱ, 29):

ԾԸՐԾԸՆՔՕՏԷԼ - *տեմ* ԾԸՐԾՕՆՔԷԼ:

ԾԸՐԾԸՐՕՏԷԼ - *նբ.* Շատ տեղերից կամ շատ անգամ ծրել՝ ակոսել: *Վը՛ղը ծըրծըրօտում ըն, թօղնում ըտի* (Զ):

ԾԸՐԾԸՐՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՐԾԸՐՕՏԷԼ-ի:

ԾԸՐԾՕՆՔԷԼ - *նբ.* Մինչեւ վերջին կաթիլը ագահաբար խմել: *Օշափը կօլան յօր ա ունէս, սաղ կ'ինին ծըրծունքէս* (Զ):

ԾԸՐԾՕՐՈՒՏ/ԾՈՒՐԾՕՐՈՒՏ - *ած.* Շատ ձորեր՝ խորդուբորդություններ ունեցող: *Պիլիթանուցը ծըրծօրուտ շէն ա* (Բ):

ԾԸՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՐԷԼ-ի:

ԾԸՐՏ - *տեմ* ԾԸ՝ՐՏ:

ԾԸՐՏԱԹԱԿ/ԾԸՌՏԱԹԱԿ - *տեմ* ԾԸՐՏԸԹԱԹԱԽ:

ԾԸՐՏԱԹԱ՛Ն/ԾԸՌՏԱԹԱ՛Ն - 1. *գ.* Հավերի ծրտոտ թառ: *Էվ'ուլը յը՛ր ա օնում, էտ ծըրտաթանը թըմիզցընում* (Զ): 2. *տեմ* ԾԸՐՏԸԹԱԹԱԽ:

ԾԸՐՏԱՎԸ՝Տ/ԾԸՌՏԱՎԸ՝Տ - *գ.* 1. Ծերտի՝ թռչնաղբի հոտ: *Հավէն պ'ունան ծըրտավը՛տ ա կ'ամ* (Բ): 2. *փխբ.* Գարշահոտ, տհաճ հոտ: *Յը՛խտուտ կընէգ' ա, վէր նի յըս մընէս տօնը, ծըրտըվը՛տան օշըտ տընէս ա* (Բ):

ԾԸՐՏԷԼ/ԾԸՌՏԷԼ *(գրբ. ծրտեմ)* - *չբ.* 1. Ծիրտ արտաթորել (թռչունների մա-

սին): *Ծը՛տը խօնչին յըրա ծըրտալ ա* (Բ): 2. *փխբ.* Շատ քիչ արտաթորել (մարդկանց մասին): *Խօխան ծըրտալ ա* (Բ):

ԾԸՐՏԸԹԱԹԱԽ/ԾԸՐՏԸԹԱԹԱԽ - *ած.* Ծերտով թաթախված՝ կեղտոտված՝ պատված: *Ծըրտըթաթախ շՅր ա* (Բ):

ԾԸՐՏԸՎԸ՛ՌԷԼ/ԾԸՐՏԸՎԸ՛ՌԷԼ - *չբ.* Փորլուծով հիվանդանալ, լուծել (թռչունների մասին): *Հավը ծըրտըվը՛ռալ ա* (Բ):

ԾԸՐՏԸՑ(Ը)ՆԷԼ/ԾԸՐՏԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ԾԸՐՏԷԼ-ի: 2. *տե՛ս* ՊԸՋՏԸՑ(Ը)ՆԷԼ (2):

ԾԸՐՏԻ-ՊԸՐՏԻ - *տե՛ս* ՑԸՐԹԻ-ՓԸՐԹԻ:

ԾԸՐՏՈՒՏ - *տե՛ս* ԾԸՐՏՕՏ:

ԾԸՐՏՕՏ/ԾԸՌՏՕՏ/ԾԸՐՏՈՒՏ/ԾԸՌՏՈՒՏ - *տե՛ս* ԾԸՐՏԸԹԱԹԱԽ:

ԾԸՐՏՕՏԷԼ/ԾԸՌՏՕՏԷԼ - 1. *չբ.* Շատերը՝ շատ տեղերում կամ շատ անգամ ծրտել: *Հավերը ծըրտօտալ ըն, պի՛ւնը մըլամաթ ըրալ* (Բ): 2. *նբ.* Ծրտոտ դարձնել: *Էտ շՅրէրըտ ը՛ղտը՛ղ ը՞ս ծըրտօտալ* (Բ):

ԾԸՐՏՕՏՎԷԼ/ԾԸՌՏՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՐՏՕՏԷԼ (2)-ի:

ԾԸՐՔԱԹԱԿ/ԾԻՐՔԱԹԱԿ - *ած.* Ձեռքով թակած՝ ծեծած: *Ծըրքաթակ պի՛ւրթ ա* (Բ):

- Ծըրքաթակ անել - Ձեռքով թակել՝ ծեծել: *Խըմօրը հուսցում ըն, իրը՛սը ծըրքաթակ անում, ծասկում* (Ձ):

- Ծըրքաթակ ինիլ/տը՛ռնալ - Ձեռքով թակվել՝ ծեծվել: *Էտ խօխէնք՝ը հիշկան ծըրքաթակ ըն ինի՛ւմ, էնքան ք՝ուքանում ըն* (Ձ):

ԾԸՐՔԱԿՕՐԾ/ԾԻՐՔԱԿՕՐԾ/ ԾԸՌՆԱԿՕՐԾ/ԾԸ՛ՌՆԱԿՕՐԾ/ԾԷՌ(Ն)ԱԿՕՐԾ *(գրբ. ձեռագործ) - ած.* 1. Ձեռքով հյուսված՝ գործված: *Ծըրքակօրծ փայկա յա կ՝ը՛ցալ* (Բ): 2. Ձեռքով շինված՝ պատրաստված՝ կերտված: *Ծըրքակօրծ կացէնը մ՝ծ՝ք՝ա՛մ կինի* (Բ): *գ.* 3. Ձեռքով հյուսած՝ գործած՝ պատրաստած իր: *Մին ծըրքակօրծ ա տանում, բըզարումը ծախում*: 4. Ձեռքով գործելու՝ հյուսելու արվեստը: *Անուշը ծըրքակօրծը ի՛ւրա՛ն հըրաքվէրը անա յա սըվէրալ* (Բ):

- Ծըրքակօրծ անել - Ձեռքով հյուսել՝ գործել, ասեղնագործել: *Տը՛սնըմ մին դա՛ՔՐէթկա, յըրան նըստած մին ախճիգ՝, ծըրքակօրծ ա անում* (ՀԺՀ, V, 641):

ԾԸՐՔԱՃԻ՛ՒՐ/ԾԻՐՔԱՃԻ՛ՒՐ - *ած.* Բնատուր շնորհք (հատկապես արհեստավորի): *Յէգօրը լ՝ավ ծըրքաճի՛ւր օնէ* (Բ):

ԾԸՐՔԱՄԱՆ/ԾԻՐՔԱՄԱՆ - *տե՛ս* ԱԼՋԱ՛Կ:

ԾԸՐՔԱՄԱԾ/ԾԻՐՔԱՄԱԾ - *ած.* 1. Շատ աշխատելուց ձեռքերը մաշված: *Ծըրքամաշ մարթ ա Ղուլին* (Բ): 2. Ձեռքերը մաշող, ծանր (աշխատանքի մասին): *Քըրտը՛շՅթունը ծըրքամաշ կօրծ ա* (Բ):

ԾԸՐՔԱՇԷՆ/ԾԻՐՔԱՇԷՆ - *տե՛ս* ԾԸՐՔԱԿՕՐԾ (2):

ԾԸՐՔԱՊԷՆ/ԾԻՐՔԱՊԷՆ - 1. *տե՛ս* ԾԸՐՔԱԿՕՐԾ (2): 2. *տե՛ս* ԾԸՐՔԱՃԻ՛ՒՐ: 3. *գ.* Մեկի կողմից կատարվող աշխատանք: *Բա՛ննա՛հը ծըրքապէնը թօղնում ա, ըտը՛ղատ փախչի՛ւմ* (Ձ):

ԾԸՐՔԱՏԱԿ/ԾԻՐՔԱՏԱԿ - *տե՛ս* ԹԸՎԱՏԱԿ:

- Ծըրքըտակէն պահէլ - Մեկին հովանավորել՝ պաշտպանել: *Նախագան էտ իրփըվէրուն ծըրքըտակէն պահում ար* (Ձ):

- Ծըրքըտակու կօլա - *տե՛ս* ԾԸՐՔԸԿՕԼԱ:

- Ծըրքըտակու պընըցընէլ - Մեկին կամ մի բան առօրյա կարիքների համար աշխատեցնել՝ բանեցնել: *Էտ յէթիմին տանում ա տօն, ծըրքըտակու պինընցընում* (Ձ):

ԾԸՐՔԱՏԱՐ/ԾԻՐՔԱՏԱՐ - *ած.* Որեւէ բան անելու հմտություն՝ շնորհք ունեցող (հատկապես արհեստավորների մասին): *Խըզխըզանց Բօրիկը լ՝ավ ծըրքատար ա, հանց փալան ա կարում, ք՝ը՛փըտ կ՝ամ ա* (Ձ):

ԾԸՐՔԱՏԸ՛Ղ/ԾԻՐՏԱՔԸ՛Ղ *(գրբ. ձեռնատեղ (ափ, բուռ) - գ.* Տան այն բաժանմունքը, որտեղ պահում են առօրյա գործածելի իրերը: *Ա՛զին էտ թօրբան նօխուդավ լըցնում ա, տինի՛ւմ ծըրքըտը՛ղումը* (Ձ):

- Ծըրքըտը՛ղէն նի կ՝ա՛ալ - Տնից գողություն անել, առանց տանտիրոջ թույլտվության որեւէ բան օգտագործել (տան անդամների, հատկապես հարսների մասին): *Մարյան աքէրը մին օր էլ կըլՅխ ա ըղնում, վէր մաշնակ հարթնը ծըրքըտը՛ղէն նի յա յը՛կալ* (Ձ):

ԾԸՐՔԱՏՈՒ/ԾԻՐՔԱՏՈՒ *(գրբ. ձեռնատու, ձեռնտու (ձեռք բռնող, օգնական) - ած.* Շահավետ, ձեռնտու: *Էս թըվըմըս առուտուր անէլը ծըրքատու կօրծ ա* (Բ):

ԾԸՐՔԱՑԱՎ/ԾԻՐՔԱՑԱՎ - *գ.* 1. Ձեռքի հոդացավ: *Ծըրքըցաված խը՛ղճը տա՛ննՅվում ա* (Բ): 2. *փխբ.* Բժշկին կամ ծառայություն մատուցած այլ անձի տրվող վարձատրություն: *Դօխտուրը ծըրքացավը յօր ա ունէս, ք՝իս* (Ձ):

ԾԸՐՔԱՓՈՒԼ/ԾԻՐՔԱՓՈՒԼ - *տե՛ս* ԽԱՇԼԸՂ:

ԾԸՐՔԱՓՕԽ/ԾԻՐՔԱՓՕԽ - *գ.* Առձեռն պարտքով վերցրած փոքր գումար, ձեռաց պարտք: *Մարթ կա՝ սիրում ա էզզա՛նա՛ն ծըրքափօխ յը՛ր օնէլը* (Բ):

ԾԸՐՔԸԾԸ՛ՐՔ/ԾԻՐՔԸԾԷՐՔ/ԾԸ՛ՐՔԱԾԸ՛ՐՔ/ԾԷՐՔԱԾԷՐՔ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծըրքըծը՛րք ըղնէլ/ընցընէլ - Մերթ մեկին, մերթ մյուսին պատկանել, ձեռքից ձեռք անցնել: *Էտ թէշտը շէնումը էնքան ծըրքըծը՛րք ա ընգալ, լըկաման ա տը՛ռալ* (Բ):

- Ծըրքըծը՛րք քըցիլ - Իրար փոխանցել, ձեռքից ձեռք գցել: *Ծըրքըծը՛րք ըն քըցի՛ւմ, էտ թա՛ռը կօտըրում* (Ձ):

ԾԸՐՔԸԿՕԼԱ/ԾԻՐՔԸԿՕԼԱ - *գ.* 1. Ձեռքի փոքրիկ կուլա: *Ծըրքըկօլան ճիրա՛վ լըսնում ա, տինի՛ւմ խուրջինումը, ք՝ինամ* (Ձ): 2. *փխբ.* Փոքր ծառայություններ մատուցող փոքրահասակ տղա կամ աղջիկ: *ՀՅնձ ընուղնէն էտ խուխէն ի՛ւրա՛նց նըհը՛տ հունցը ծըրքըկօլա տանում ըն արտը* (Ձ):

ԾԸՐՔԸՀԱՐԷԼ/ԾԻՐՔԸՀԱՐԷԼ - *նբ.* Ձեռքով տրորել՝ տնտղել՝ շոշափել: *Խօխէնք՝ը էնքան ծըրքըհարում ըն, էտ թուլան ըստակում ա* (Ձ):

ԾԸՐՔԸՀԱՐ(Վ)ԱԾ/ԾԻՐՔԸՀԱՐ-(Վ)ԱԾ - *ած.* Անբարոյական՝ արատավոր բարք ունեցած (աղջիկների մասին): *Ծըրքըհարված ախճիգ՝ ա, վէշ մինը օգ՝ում չի* (Բ):

ԾԸՐՔԸՀԱՐՎԷԼ/ԾԻՐՔԸՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԸՐՔԸՀԱՐԷԼ-ի:

ԾԸՐՔԸՀՕՐԷՆՔ՝/ԾԻՐՔԸՀՕՐԷՆՔ՝ - *գ.* Մեկ ձեռքով բանեցնելու փոքրիկ ուրագ: *Ծըրքըհուրէնք՝ավ մը՛ծ կ՝էրանը կարէլ չըս տա՛ՅՀս* (Ձ):

ԾԸՐՔԸՃԻՐԱ՛Վ/ԾԻՐՔԸՃԻՐԱ՛Վ - *տե՛ս* ԾԸՐՔԱՏԱՐ: *Ուստան տը՛սալ ա, վար էտ ի՛ւրա՛ն անա ծըրքըճիրա՛վ ա, վօրօշալ ա ըսպանէ* (ԱԱ, 31):

ԾԸՐՔԸՃԻՐԱ՛Ք՝/ԾԻՐՔԸՃԻՐԱ՛Ք՝ - *գ.* Ձեռքի փոքրիկ ճրագ: *Ծըրքըճիրա՛ք՝ը յօր ա օնում, քը՛ՅՀրը ք՝ինամ բաղը* (Ձ):

ԾԸՐՔԸՃՈՒՎԱՐԱՆ/ԾԻՐՔԸՃՈՒՎԱՐԱՆ - *գ.* Փոքրիկ կողով՝ զամբյուղ: *Ծըրքըճուվարանը հի՛ՅՀնավ լըցնում ա, թա ք՝ինի, բաղվանչին յըրա յա հըսնում* (Ձ):

ԾԸՐՔԸՅԱԼԼԸ՛Խ/ԾԻՐՔԸՅԱԼԼԸ՛Խ - *գ.* 1. Փոքրիկ թաշկինակ: *Քի՛ւրի՛ՅՀստօսը ջուբան ծիրքըյալլը՛խը տի՛ՅՀս ա ունէս, խըչըկընքէս, վէր քըցիս* (ԱԱ, 72): 2. *փխբ.* Կամակատար, մեկի ձեռքին խաղալիք՝ ժամանակավոր հաճույքի առարկա դարձած անձ: *Էտ դաշա՛նգ՝ ախճիգ՝ը էլ խանէն ծիրքըյալլը՛խըն ա ինի՛ւմ* (Ձ):

ԾԸՐՔԸՊԸՏԱՏԱՆ/ԾԻՐՔԸՊԸՏԱՏԱՆ - *տե՛ս* ԹԸԹԱՇԸ՛Ր:

ԾԸՐՔԸՎԸՆՆԱՎ - *տե՛ս* ՎԸՆՆԱՎԾԸՐՔԱՎ:

ԾԸՐՔԸՎԸՆՆԸ - *տե՛ս* ՎԸՆՆԸԾԸՐՔ:

ԾԸՐՔԸՓԱԹԱԹ/ԾԻՐՔԸՓԱԹԱԹ - *տե՛ս* ԹԸԹԱՇՕՐ:

ԾԸՐՕՐ(Վ)ԷԼ - 1. *տե՛ս* ԾԸՆՁՕՐԷԼ: 2. *տե՛ս* ԹԸՌԸՄՕՇԿԷԼ:

ԾԸՓԱԾԷՆ - *գ.* Ծափահարության՝ ծափ տալու ձայնը: *Օխտը օր, օխտը քըշէր հըրսանէք՝ ըն անում, ծըփածէնը հըսնում ա յէրգ՝ինք՝* (ՆԱԲ, 50):

ԾԸՓԱՆ *(գրբ. ծփանք (ալեկոծություն, ծփալը)* - *ած.* Ծփացող, տարուբերվող: *Ընդըրա թըշէրը հէնց էր ծաղկած խընձո՛ր ծառի ծաղիկ՝ների ռանգ՝ի, ծամէրը ծըփան, բոյավ-բուսաթավ* (ԼՂԲ, 339):

ԾԸՓԷ - *տե՛ս* ԾԸՓԸՆԷ:

ԾԸՓԸԳ՝-ԾԸՓԷԳ՝ - *տե՛ս* ԾԸՓԾԸՓԱՆ:

- Ծըփըգ՝-ծըփէգ՝ անել - 1. *տե՛ս* ԾԸՓԾԸՓԱԼ: 2. Բարձր ձայնով շատախոսել: *Էնքան ծըփըգ՝-ծըփէգ՝ ըրավ, լափ քըռացէնք՝* (Բ):

ԾԸՓԸՆԷ/ԾԸՓԷ - *գ.* Թեղի ծառի մի տեսակը: *Մարտակէրտա ծըմըկնումը ծըփը՞նէ յէլ կա* (Բ):

ԾԸՓԾԸՓԱԼ *(գրբ. ծփամ, ծփիմ)* - *չբ.* 1. Շատ ծփանքներ տալ՝ ալիքաձեւ շարժվել՝ ծածանվել: *Քամէ յա անում, Սըրսանգա ճո՛ւրը ծըփծըփամ ա* (Ձ): 2. *տե՛ս* ԼԸՓԼԸՓԱԼ:

ԾԸՓԾԸՓԱՆ *(գրբ. ծփանք (ալեկոծություն, ծփալը)* - *ած.* 1. Շատ ծփացող՝ ծածանվող՝ ծփծփուն: *Ծըփծըփան ծօվ ար, վախում ար լըղ տա* (Ձ): 2. *տե՛ս* ԼԸՓԼԸՓԱՆ:

ԾԸՓԾԸՓՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ծփեցուցանեմ)* - *նբ.* ԾԸՓԾԸՓԱԼԻ-ի:

ԾԸՔ՝ԱՄԱՐ/ԾԻՔ՝ԱՄԱՐ - *գ.* Ձագ հանած կենդանի՝ թռչուն, ձագի մայրը: *Ծըք՝ամարը ըստակում ա, ծէք՝էրը մընամ ըն տո՛ւզնը* (Ձ):

ԾԸՔ՝ԱՏԱՐ/ԾԻՔ՝ԱՏԱՐ - *տե՛ս* ԾԸՔ՝ԱՄԱՐ:

ԾԸՔ՝ԸԿԱ՛ԼԻԼ/ԾԻՔ՝ԸԿԱ՛ԼԻԼ[2] - *տե՛ս* ՃՈՒՏԸՀԱՆԷԼ:

ԾԸՔ՝ԸՀԱՆԷԼ/ԾԻՔ՝ԸՀԱՆԷԼ - *տե՛ս* ՃՈՒՏԸՀԱՆԷԼ:

ԾԸՔ՝ԸՊԸՏԱՌԷՆ/ԾԻՔ՝ԸՊԸՏԱՌԷՆ - *տե՛ս* ԾԱ՛Ք՝ԻՆ:

ԾԸՔ՝ԸՊՈՒՔ(Ի)/ԾԻՔ՝ԸՊՈՒՔ(Ի) - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծըք՝ըպուք(ի) անել - Քաշքշելով ջանալ մի բան պոկել՝ կորզել՝ խլել: *Ղաչչաղը ծիք՝ըպուք ա անում, ըտըրա խուրջինը խըլո՛ւմ* (Ձ):

ԾԸՔ՝ԸՑ(Ը)ՆԷԼ/ԾԻՔ՝ԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. տե՛ս* Բիզ-բիզ անել (2):

ԾԸՔ՝ԾԸՔ՝ՕՏԷԼ/ԾԻՔ՝ԾԻՔ՝ՕՏԷԼ - *չբ.* Արեւը նոր-նոր ծագել՝ շողարձակել, լույսը սկսել բացվել: *Մինչը՞վ ծըք՝ծըք՝օտէլը տը՞սնամ՝ էս ա յէկին, ծիյանքը կըպէցին, նի մըտին պալատը* (ՀԺՀ, V, 33):

ԾԸՔ՝ԾԸՔ՝ՕՏՈՒՑ/ԾԻՔ՝ԾԻՔ՝ՕՏՈՒՑ - *գ.* Արեւի նոր-նոր ծագելը՝ շողարձակելը: *Ծըք՝ծըք՝օտուցը վէր ըսքըսում ա, Հըրանդիկը էն ա ինըմ ուժէ հո՛նձ ընէլիս* (Ձ):

ԾԸՔ՝ՈՒԼԻՆ - *տե՛ս* ԾԱ՛Ք՝ԻՆ:

ԾԻ *(գրբ. ձի)* - *գ.* 1. Ձիազգիների ընտանիքին պատկանող միասմբակ ընտանի կենդանի, ձի: *Ծին նըստում ա, կ՝ամ ախպո՛ւրը* (ՀԱԲ, 15, 107): 2. *փխբ.* Թռչունների, հատկապես հավի կրծքի սպիտակ միսը եւ այն պահող ոսկորը: *Հավը իփո՛ւմ ըն, կըտօրում, ծին տամ խուխէն* (Ձ): 3. *փխբ.* Երկար եղեգ՝ ճիպոտ, որի մի ծայրին թել՝ լար կապելով եւ իբրեւ ձիու հեծնելով՝ երեխաները քշում են: *Խօխէնք՝ը մարթա մին ղարդու վը՞ն յօր ունէս, ծի՞ շինիս, քըշիս* (Բ):

- Ծի խըղցընել - *չբ.* Ձիուն հեծած մարմնամարզական վարժություններ անել, ձիախաղալ: *Առաչ Ջըդրդո՛ւզո՛ւմը ջիհիլնէն ծի յըն իլա՛լ խըղցընէլիս* (Ձ):

- Ծիյան վէր ըղնօղը ապըրից, էծան վէր ըղնօղը ըստակից - Ասում են այն ժամանակ, երբ ծանր հիվանդը ապաքինվում է, իսկ թեթեւ հիվանդը՝ մեռնում:

- Ծիյան վէր կ՝ալ/քըշանալ, էշ նըստէլ - Բարձր պաշտոնից զրկվել ու ավելի ցածր պաշտոն ստանալ: *Թ՝օսո՛ւնց Ա՛րծվիկը ծիյան վէր ա յը՞կալ, էշ նըստալ, էլ մըհալ քըցո՛ղ չի կա* (Ձ):

Ծիյան վէր կ՝ալ/քըշանալ, ծին մընանա քըցիլ - Երախտամոռ լինել: *Սանթուրը ծիյան վէր ա կ՝ամ, ծին մընանա քըցո՛ւմ, ըտըրա հը՞տէ էլ վէշ մինը ծը՞րք չի մը՞կնում* (Բ):

- Ծիյին կըլո՛խը պէց թօղնէլ - Ձին արագ քշել, ձիով արագ սլանալ: *Ափկարը ծիյին կըլո՛խը պէց ա թօղնում, մին մունուտումը հըսնում հա՛նդը, տը՞սնում արտը էրած* (Ձ):

- Ծիյին հա՛ք՝ին քըշկըռէլ - Ձիով ճանապարհ գնալու պատրաստություն տեսնել: *Հըրուտըղա ծիյին հա՛ք՝ին քըշկըռում ըն, վէր ծա՛ք՝ին հըղէ ինին* (Ձ):

- Ծիյին յէշո՛ւմ ըն, կ՝անրին քըցո՛ւմ/նալը թըխում - *տե՛ս* Աստուծ սարէն յէշո՛ւմ ա, ծո՛ւնը տինո՛ւմ:

- Ծիյին քացըվէն ծին կըտըմանա - Մեծ դժվարությանը՝ վշտին եւն ուժեղ մարդը կարող է դիմանալ:

- Ծին էշին վը՞ռան կապէլ - *տե՛ս* Օղտը էշին վը՞ռան կապէլ:

- Ծին ծըյըվուրան վէր պիրիլ/վէր քաշիլ - Համարձակ՝ ճարպիկ՝ ձեռներեց լինել: *Էտ ա՞ խը՞ղճ, էտ ծին ծիյըվուրան վէր կըպիրի* (Բ):

- Ծին չափ ա ըղնում՝ ծիյըվուրէն ըն թա՛ռիփ անում, թօրը կըտըրում ա՝ ծը՞ր-քը՞ն ըն թա՛ռիփ անում - Գովում են ոչ թե միջոցը, այլ միջոցը կիրառողին:

- Ծին պէց թօղնէլ/չափ քըցիլ - Ձահելություն անել: *Ապան ութասսուն տը-ը՞կան ա, ամմա հա՛լա՛ դաթումը ծին պէց ա թօղնում* (Ձ):

- Ծին վը՞ռան կապէլ - *տե՛ս* Էշը վը՞ռան մօրթէլ:

- Ծի չիլա՛ծ տը՞ղը էշին կ՝ինը կըպիցըրանա - Արժանավորի բացակայության դեպքում անարժանին են մեծարում:

- Ծիտ պահէ՝ թըրքէ - Ասում են այն ժամանակ, երբ մեկը անհամբերություն՝ շտապողականություն է ցուցաբերում՝ մի՛ շտապիր, համբերի՛ր:

- Ծի քըշիլ - 1. Ձին վազեցնել, ձիավարել: *Մին օր էլ թաքավէրին տըղան ա վէզիրին տըղան էն ըն ինո՛ւմ ծի քըշիլիս* (Ձ): 2. Երկար եղեգի՝ ճիպոտի մի ծայրին թել՝ լար կապելով եւ իբրեւ ձիու հեծնելով ու քշելով՝ խաղալ: *Խօխէնք՝ը ճըպըտնէն նըստում ըն, ծի քըշո՛ւմ* (Բ):

ԾԻՋԸՏԷ - *տե՛ս* ԾԸՋԸՏԷ:

ԾԻԹԱ՛ԼԻ/ԾԸԹԱ՛ԼԻ - *ած.* Շատ ձեթ պարունակող: *Ծիթա՛լի ժընգ՝ա՛լա՛վ հացը լա՛զա՛թ պէն ա* (Բ):

ԾԻԹԱ՛ՀԱՄ/ԾԸԹԱՀԱՄ - 1. *գ.* Ձեթի համ: *Ծիթա՛համը ամմէն մարթու չի տուր կ՝ամ* (Բ): 2. *ած.* Ձեթի համ ունեցող: *Ծիթա՛համ խուրա՛գ՝ան զա՛հլա՛ս տանում ա* (Բ):

ԾԻԹԱ՛ՀԱՆՔ/ԾԸԹԱՀԱՆՔ - *տե՛ս* ՍԸՐԱՆՈՒՑ:

ԾԻԹԱ՛ՄԱՆ/ԾԸԹԱՄԱՆ - *գ.* Ձեթի ման: *Խօխան ծըթամանը վէր ա քըցո՛ւմ, ծէթը վէր ածում* (Ձ):

ԾԻԹԱ՛ՎԸՏ/ԾԸԹԱՎԸՏ - *գ.* Ձեթի հոտ: *Ծէթը վէր ըն ածում, ծըթավը՞տը ըղնում ա տօնը* (Ձ):

ԾԻԹԱ՛ՏՈՒ/ԾԸԹԱ՛ՏՈՒ - *ած.* Ձեթ տվող, որից ձեթ են ստանում: *Կըտըվհատը ծիթա՛տու հատէգ՝ ա* (Բ):

ԾԻԹԸԹԱԹԱԽ/ԾԸԹԸԹԱԹԱԽ - *ած.* Ձեթով թաթախված՝ կեղտոտված: *Ծիթըթաթախ շո՛ւրէրավ տո՛ւս ա կ՝ամ շինամաչը* (Բ):

ԾԻԹԸԿՕԼԱ/ԾԸԹԸԿՕԼԱ - *տե՛ս* ԾԻԹՕՇՆԱԿ:

ԾԻԹԸՊԸԼԻԹ/ԾԸԹԸՊԸԼԻԹ - *գ.* Ձեթով բլիթ: *Մարը մին ծիթըպըլիթ ա թըխէս, տաս խուխէն* (Ձ):

ԾԻԹՕՇՆԱԿ/ԾԸԹՕՇՆԱԿ - *գ.* Ձեթը պահելու կավե ման՝ կուլա: *Ծէթը ծիթօշնակումը՞ն ըն պահում* (Ձ):

ԾԻԹՕ՛ՏԷԼ/ԾԸԹՕ՛ՏԷԼ - 1. *նբ.* Ձեթ

քսել, ձեթով թաթախել՝ կեղտոտել: *Խոխան շՕրէրը ծիթՕտալ ա* (Բ): 2. *չբ.* Ձեթ քսվել, ձեթով թաթախվել՝ կեղտոտվել: *ՇՕրը ըղնում ա ծէթին մաչը, ծիթօտում* (Ձ):

ԾԻԹՕՏՎԷԼ/ԾԸԹՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԻԹՕՏԷԼ(1)-ի:

ԾԻԼ[1] *(գրբ. ծիլ)* - *գ.* 1. Բույսի ցողունը ծլելու սկզբնական շրջանում: *Յօրէնը վարում ըն, ծիլՒում ա, ծիլէրը ցօրտ տանում* (Ձ): 2. Չցանված սերմնահատիկի՝ պալարապտղի՝ սոխուկի աչքերից դուրս եկած նուրբ ցողուն: *Կարտօշկէն ծիլէրը տՒուս ա յըէկալ, հարկավէր ա վարած* (Բ): 3. Ընդհանրապես բույսի մատղաշ ցողուն, ընձյուղ: *Ցակատը յօր ա ունէս, էտ ծըռէրէն ծիլէրը կուտուրէս* (Ձ): 4. Թել, ծոպ: *Էնքան ցՒՔ ա շըլակալ, շՒուրէրէն ծիլէրը կախ-կախ ա իլՒալ* (Բ): 5. *փխբ.* Մսի շերտ՝ ծվեն: *Մին ծիլ մէս ա պուք տամ, օտում* (Ձ): 6. *փխբ. տեմ* ԴԸՄԸՔԼԸԷՂ:

- Ծիլ տալ - Ծլել, աճել, բուսնել: *Լօբին ծիլ ա տուվալ* (Բ):

- Ծիլ քաշիլ - Շերամի բոժոժից թել քաշել: *Բըրաման ճիրին մաչին պատառ պահում ըն, յըէտնան նըէստա թիլ քաշՒում* (Ձ):

ԾԻԼ[2] - *ած.* Բարձր, երկար: *Պիցըրանում ա ծիլ ծառէն պըտօկը, ծէն տամ* (Ձ):

- Ծիլ ինիլ - *տեմ* Ծիլ տալ (1, 5, 6):

- Ծիլ տալ - 1. Դեպի վեր ձգվել, շատ երկարել՝ բարձրանալ: *Ծառը ծիլ ա տուվալ, յէրգՒինՔը հըսալ* (Բ): 2. Արագ վեր նետել: *Պիճ ախպէրը վէր քարը ծիլ ա տամ, օշափնէն մընամ ըն ըռըխընէն պէց* (Ձ): 3. Բարձր ձայնով կանչել: *Ծիլ ա տամ, հընգէրունքը կՒամ ըն* (Ձ): 4. Արագ վազել: *Տըղան ծիլ ա տամ, հըսնում հօրը պալատը, լօխ ասում* (Ձ): 5. *տեմ* Բոյ քաշիլ: 6. *տեմ* ԾԸԼԸՆԳԷԼ:

- Ծիլ քաշիլ - *տ.* Ծիլ տալ (1, 5):

ԾԻԼՒՎՈՒՐ - *ած.* 1. Ծիլեր ունեցող: *ԾիլՒվուր կարտօշկան ճօկում ըն, վարում* (Բ): 2. Լոբու տեսակ: *ԾիլՒվուր լօբին սիրում չըմ* (Բ): 3. *տեմ* ԾՈՒՊԱՎՈՒՐ:

ԾԻԼՒՏԷԼ - *նբ.* Ածելիով խազել՝ թեթեւակի կտրել: *Իրըէսը վէր ընէլիս թօշը ծիլՒտում ա* (Բ):

ԾԻԼԷԼ - *տեմ* ԾԻԼԻԼ:

ԾԻԼԸՊԸՏՕԿ - *գ.* Որեւէ բանի ծայրային՝ ամենավերին մասը: *Մին ծըէտ ա կՒամ, թութուն ծիլըպըտկէն նըստում, ըսքըսում յըէրք ասէլը* (Ձ):

ԾԻԼԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ծլեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ԾԻԼԻԼ-ի:

ԾԻԼԻ *(գրբ. ածելի)* - *գ.* 1. Ածելի: *Ծիլին յօր ա ունէս, ծըէրքէն ղըմըրնէն կուտուրէս* (Ձ): 2. *փխբ.* Շատ սուր գործիք: *Ցակատ, հինչ ցա՞կատ, մին ծիլի* (Բ):

- Ծիլի ածէլ - Ածիլել, ածելիով սափրել (երեսը, գլուխը եւն): *ՀՒալՒ խոխա յար, ամմա ուժժէ իրըէսը ծիլի յար ածում* (Ձ):

- Ծիլի լՒուզ տալ - Շատ քաջ լինել: *Թըմասանց Սէրօփը ղօճճաղ, ծիլի լՒուզ տըվօղ մարթ ա* (Բ):

- Ծիլի շինիլ - Սրելով շատ սուր՝ հատու դարձնել: *Կացէնը էնքան սըրում ա, ծիլի յա շինում* (Բ):

- Ծիլի տըէռնալ - Սրվելով շատ սուր՝ հատու դառնալ: *Դարյազը թակում ըն, սըրում, ծիլի յա տըէռնում* (Ձ):

ԾԻԼԻ-ԾԸԼՊԱՆ - *տեմ* ԾԸԼՊԸ(Ն)-ԾԸԼՊԱՆ:

ԾԻԼԻԼ/ԾԻԼԷԼ *(գրբ. ծլեմ, ծլիմ)* - *չբ.* 1. Ծիլ արձակել (սերմի՝ արմատի՝ պալարապտղի եւն մասին): *Մին քանէ վըխտանը յըէտը ճուղուպուրը ծիլիս ա...* (ԱԱռ, 8): 2. Չցանված վիճակում տաքությունից կամ խոնավությունից ծիլեր արձակել: *Սըրմացուն ծիլՒալ ա, խէ վարում չը՞ք* (Բ): 3. Առհասարակ բուսնել՝ կանաչել: *Կարունքը յըէկալ ա, ծառէրը ծիլՒալ ա* (Բ): 4. Մազեր բուսնել: *Ըշօտէն բէղէրը ծիլՒալ ա* (Բ): 5. *փխբ.* Հասակ առնել, մեծանալ: *Այուն թօռնէրը ծիլՒալ ըն, միհէնգՒ շատ չի չըչարվում* (Բ): 6. *տեմ* ԾԸԼԸՆԳԷԼ:

ԾԻԼԻԼ-ԾԱՂԿԷԼ - *չբ.* 1. Փարթամորեն աճել, փթթել: *Բաղէրը ծիլՒալ-ծաղկալ ա, քու դՒարդէրըտ ինձ կՒալՒալ ա...* (Ձ): 2. *օրհ.* Ողջ-առողջ ապրել եւ շատ զավակներ ունենալ: *Այան թօռնանընն ա հընրթնըցուվէն ճըկատան պաչՒում ա, օրհնանք տամ.- ԾիլիՔ, ծաղկիՔ տուք* (Ձ):

ԾԻԼԻ-ԾԻԼԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծիլի-ծիլի անել - 1. Հեշտությամբ կտրտել, կոտրատել: *Տըղան փՒաղը ծիլի-ծիլի յա անում, տՒարսՒում* (Ձ): 2. Արագարագ ուտել: *Վըէխճարը խընրավում ըն, ծիլի-ծիլի անում, էլիա Քինամ* (Ձ):

- Ծիլի-ծիլի տալ - Խիստ զայրանալ, կատաղել: *Ալի-Վալի խանը վէր տէսնում ա, ծիլի-ծիլի յա տամ* (ՀԱԲ, 15, 114):

ԾԻԼԻ-ՎԻԼԻ - *գ.* Մանկական խաղատեսակ: *Կուճուր խօխէնՔընը ըն ծիլի-վիլի խաղ անում* (Բ):

ԾԻԼԼԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *չբ.* Բարձր եւ սուր ձայն հանել: *ԱխճիգՔը վէր ծիլըցընում ա, դէվը կօչ ա կՒամ* (Ձ): 2. *նբ. եւ պբ.* Բարձր եւ սուր ձայն հանել տալ: *Էս չօբանը թՒութՒաՔը ծիլըցընէլավ ՔինամՒ ա* (Ձ):

ԾԻԼԼԸՀԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծիլլըհան անէլ - *տեմ* ԾԻԼԼԸՑ(Ը)ՆԷԼ:

ԾԻԼ-ԾԻԼ[1] - *մ.* Ծիլ առ ծիլ, ծիլ ծիլի ետեւից: *Մէսը ծիլ-ծիլ օտում ա* (Բ):

- Ծիլ-ծիլ անէլ - Ծիլերի՝ ծվենների բաժանել: *Հավէն մէսը ծիլ-ծիլ ա անում, խուխէն ուտուցընում* (Բ):

ԾԻԼ-ԾԻԼ[2] - *ած.* Բարձր, ուժեղ, սուր (ձայնի մասին): *Ծիլ-ծիլ սՒաս օնէ* (Բ):

ԾԻԼԾԻԼՕՏԷԼ - *չբ.* Շատ կամ շատ տեղերից ծիլեր արձակել՝ ծլել՝ բուսնել: *ԿՒարին ծիլՒծիլՕտալ ա* (Բ):

ԾԻԼԿԱՆ - *ած.* 1. Ճարպիկ, արագաշարժ, արագավազ: *Էտ չուբանէն էլ մին ծիլկան շօն ա ինՒում, դՒաստի վազ ա տամ, կՒուլին պըկան փըռնում, խէխտում* (Ձ): 2. *տեմ* ԾԻԼՏԱՆ:

ԾԻԼՏԱՆ - *ած.* Առանց ճյուղեր արձակելու բարձրացող՝ աճող (բույսերի մասին): *Շամաղաջին ծիլտան ծառ ա* (Ձ):

ԾԻԽԻԼԿԱՆԷ - *տեմ* ԾԸԽԼԸԿԱՆԷ:

ԾԻԽԼԻԿԱՆԷ - *տեմ* ԾԸԽԼԸԿԱՆԷ:

ԾԻԾՒՂ - *տեմ* ԾԸԾՂ:

ԾԻԾՒՂԷԼ - *տեմ* ԾԸԾՂԷԼ:

ԾԻԾՒՂԿՈՒՏ - *տեմ* ԾԸԾՂԿՈՒՏ:

ԾԻԾԷՌՆԱԿ - *տեմ* ՑԸՑԷՌՆԱԿ:

ԾԻԾԸՂԱՏԸԷՂ - *տեմ* ԾԸԾԸՂԱՏԸԷՂ:

ԾԻԾԸՂԷԼԻ - *տեմ* ԾԸԾԸՂԷԼԻ:

ԾԻԾԸՂԻՐԸԷՍ - *տեմ* ԾԸԾԸՂԻՐԸԷՍ:

ԾԻԾԸՂՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ԾԸԾԸՂՑ(Ը)-ՆԷԼ:

ԾԻԾԸՂՕՏԷԼ - *տեմ* ԾԸԾԸՂՕՏԷԼ:

ԾԻԾԻԼՆԻԳՒ - *տեմ* ԿԸԾԷՅՆԸ:

ԾԻԾԻ(Կ) - *մակ. տեմ* ԾԸԷԾ:

ԾԻԾԻՅՆԸ - *տեմ* ԿԸԾԷՅՆԸ:

ԾԻԾԻՆ(Գ)ՆԸ - *տեմ* ԿԸԾԷՅՆԸ:

ԾԻԿ - *տեմ* ԾՒՈՒԿ:

ԾԻԿՈՒ - *տեմ* ԾԻՊԼԻ:

ԾԻԿՈՒ-ՄԻԿՈՒ - *տեմ* ԾԻՊԼԻ(2):

ԾԻԿՈՒՈՒ - *տեմ* ԾԸԿՈՒՈՒ:

ԾԻԿՕՈՒ - *տեմ* ԾԸԿՕՈՒ:

ԾԻՄԷՐՈՒԿ - *տեմ* ԾԸՄԷՐՈՒԿ:

ԾԻՄԻՐ(Ը)ԿԷԼ - *տեմ* ԾԸՄԸՐ(Ը)-ԿԷԼ:

ԾԻՅԱԹԱՓ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծիյաթաթափ անէլ - Ձիուց ցած գցել՝ գլորել: *Մին օր էլ ծըմակավը ՔինՒալիս ղըչչըղնէն առաշկը կըտըրում ըն, ծիյաթաթափ անում, ծին տանում* (Ձ):

- Ծիյաթաթափ ինիլ/տըէռնալ - Ձիուց ընկնել՝ գլորվել: *ՀՒընէ էս վախտըն ա իլՒալ, վէր Մանգունց Նէսին ծիյաթաթափ ա իլՒալ, մըէռալ* (Բ):

ԾԻՅԱԽԱՂ - *գ.* Ձիով զանազան հրապարակային վարժություններ եւ խաղեր անելը: *Առաչ ծիյախաղը ՒաղՒաթ ա իլՒալ* (Բ):

ԾԻՅԱԾԱՆ *(գրբ. ծիածան)* - *գ. տե՛ս* Ըստուծու կ՚օտէ (ԱՍՏՈՒԾ-ի տակ):

ԾԻՅԱԿՕԽ - *ած.* Ձիուց ոտնակոխ եղած, ձիու ոտքերի տակ կոխկրտված: *Ծիյակօխ հողէ յա* (Բ):

- Ծիյակօխ անէլ - Ձիու ոտքերի տակ կոխկրտել՝ տրորել՝ փչացնել: *Ասըմ ա.- Յը՚ս մին թաքավէր մըրչէմն ըմ, յէկալ ըմ ծը՚զ մին լ՚ըվօթուն անիմ, վէր տուք մը՚զ խընայալ ըք, ծիյակօխ չըք ըրալ...* (ՀԺՀ, V, 309):

- Ծիյակօխ ինիլ/տը՚ռնալ - Ձիու ոտքերի տակ կոխկրտվել՝ տրորվել՝ փչանալ: *Արտէրը ծիյակօխ իլին, փուչացէն* (Բ):

ԾԻՅԱԾԱՆՋ - *գ.* Ճանճի տեսակ, որ հատկապես լինում է ձիերի հետեւի ոտքերի արանքում: *Ծիյածանջը ծիյէրէն թօղում չի ըրածին* (Բ):

ԾԻՅԱՄԱՋ՚ - *գ.* Ձիու մազ: *Ծիյըմազ՚ան ջանլա յըն շինում, դուշ փըռնում* (Ձ):

ԾԻՅԱՆՈՒՑ - *գ.* Ձիերի ախոռ՝ գոմ: *Մին օր էլ նի յըն մընէս թաքավէրին ծիյանուցը, էրկու ծի կ՚ուղընաս* (Ձ):

ԾԻՅԱՊԱՀ - *տե՛ս* ԾԻՅԸՊԱՀԷ:

ԾԻՅԱՊԱՆ - *գ.* 1. Կառքի՝ սայլի եւն ձիերը կառավարող՝ քշող: *Ծիյապանը էտ կընգանը սաղ-սըլըմաթ տանում ա հըսցընում հօրը տօնը* (Ձ): 2. *տե՛ս* ԾԻՅԸՊԱՀԷ: *Մին քըշէր ծիյապանը ախօռումը կ՚օղըլ ա կէնում, տէսնում էն ա՝ մին կուճուր ախճիգ՚ նի մըտավ կ՚ումը...* (ՀԺՀ, V, 490):

ԾԻՅԱՊԱՐ - *գ.* Ձիով պարելը: *Էտ թաքավէրընն էլ ծիյախաղը, ծիյապարը շատ ար սիրիս* (Ձ):

ԾԻՅԱՊԷՌՆԸ - *գ.* 1. Ձիու վրա բարձած բեռ: *Ք՚օսանն ծիյապէռնը վէր ա օնում, ըտը՚ղ պարանց ըղնում, քօն ինիմ* (Ձ): 2. Մի ձիու բեռան չափ քանակություն: *Մին ծիյապէռնը փանդը Սուրվէն Բօրիկը հէնգ՚ մընէթավ ար ծախում* (Բ):

ԾԻՅԱՍԷՐ *(գրբ. ձիասէր)* - *ած.* Ձի եւ ձիավարժություն սիրող: *Թաքավէրին կուճի տըղան էլ խէ շատ ծիյասէր ար* (Ձ):

ԾԻՅԱՎԷՐ - *տե՛ս* ԾԻՅԱՎՈՒՐ:

ԾԻՅԱՎԷՐ-ՇԸՆԱՎԷՐ - *տե՛ս* ԾԻՅԱՎՈՒՐ-ՇԸՆԱՎՈՒՐ:

ԾԻՅԱՎՈՒՐ/ԾԻՅԱՎԷՐ *(գրբ. ձիաւոր)* - *ած., գ.* 1. Ձիավոր, հեծյալ: *Էտ մարթը տը՚սնըմ ա, վէր մին ծիյավէր ա կ՚ամ* (ԼՂԲ, 366): 2. *տե՛ս* ԾԻՅԱՏԱՐ: 3. *ած. փխբ.* Արագընթաց, արագավազ: *Հուռումաց էլ մին ծիյավուր էշ ա ինիմ* (Ձ):

ԾԻՅԱՎՈՒՐ-ՇԸՆԱՎՈՒՐ/ԾԻՅԱՎԷՐ-ՇԸՆԱՎԷՐ - *ած., գ.* Կենդանիների պատկերներով պատված (գորգի տեսակ): *Միհէնգ՚ էլ ծիյավուր-շընավուր կ՚օրծօղ չի կա* (Բ):

ԾԻՅԱՏԱՐ - *գ.* Ձիու տեր, ձի ունեցող: *Ծիյատարը ք՚ունիմ ա, տը՚սնում ծին ծընած, քօռակը կա վէջ* (Ձ):

ԾԻՅԱՆՈՒԾ - *գ.* Ձիեր արածեցնող: *Էտ նօք՚ար տըղան ան ծիյարածը հուրհուր նըհէտ ախպէր ըն տը՚ռնում, մինտէղ օտում, մինտէղ քօն ինիմ, մինտէղ էլ կօրծ անում* (ՆԼՂԺԲ, 75):

ԾԻՅԸՀՌԷ - *գ.* Ձիով գնալու ճանապարհ՝ կածան: *Էտ ծիյըհըղավը ք՚ունիմ ըն, հըսնում դէվին պալատը* (Ձ):

ԾԻՅԸՊԱՀԷ/ԾԻՅԱՊԱՀ - *գ.* Ձի պահող՝ խնամող: *Թաքավէրին ծիյըպահէն տը՚սնում ա, վէր ծիյը՚նը օրկանցօր մանվում ըն, ամմա թա խէ՝ գ՚ուդում չի* (Ձ):

ԾԻՅԸՎԷՐՎԷԼ - *տե՛ս* ԾԻՅԸՎԸ՚ՐՎԷԼ:

ԾԻՅԸՎԸ՚ՐՎԷԼ/ԾԻՅԸՎԷՐՎԷԼ/ԾԻՅԸՎՈՒՐՎԷԼ *(գրբ. ձիաւորիմ)* - *չբ.* 1. Ձի հեծնել եւ պատրաստվել: *Վէրչը մին օր լօխ ծիյըվը՚րվում ըն, ուրանց քըղաքան տուս կ՚ամ...* (ՀԺՀ, VII, 69): 2. *փխբ.* Պատրաստվել՝ շտապել մի տեղ գնալու: *Վէր հըրսանէք՚ ար ինում, Սաթէնիգ՚ը դանստի ար ծիյըվուրվում* (Ձ):

ԾԻՅԸՎՈՒՐՎԷԼ - *տե՛ս* ԾԻՅԸՎԸ՚ՐՎԷԼ:

ԾԻՆ/ԾԷՆ[2] *(գրբ. ծին)* - *գ.* 1. Անասունների ծնելը: *Կըվէն ծինը Նանբուն շատ ա ուրխընցընում* (Բ): 2. Անասունների ծնելու ժամանակը: *Հիյվընուն ծինը վէր կ՚ամ ա, չօբանը չընռվըռին ա ընղնում* (Ձ): 3. *տե՛ս* ԽՈՒԽԸՀԸՆԳԷՐ (2):

- Ծընու յըրա - 1. Ծնելուն մոտ, հղիության վերջին շրջանում (անասունների մասին): *Ծընու յըրա էտ կավը կօրչում ա* (Ձ): 2. Անհանգիստ վիճակում: *Հինչ ա՞ պըտահալ, հանց ըս ծընու յըրա ինիս* (Բ):

ԾԻՆԷՓԱԿ - *տե՛ս* ԾԸՆԷՓԱԿ:

ԾԻՊԱ - *գ. հեգն.* Հավ, ճուտ: *Վարթին մին ծիպա յա մօրթում, կէսը իփիմ, կէսը ժարիտ անում, խընըմլարէն հուրմանթ անում* (Ձ):

ԾԻՊԱ-ԾԻՊԱ/ԾԻՊ-ԾԻՊ[1] - *ձ.* Հավերին՝ ճտերին կանչելու ձայն: *Կօտը վէր ա ածում, համ էլ ծէն տամ.- Ծի՛պա-ծի՛պա...* (Ձ):

ԾԻՊԼԻ/ԾԱ՚ՊԼԻ[2]/ՑԻՊԼԻ - *գ., ած.* 1. Բարակ, դալար (շիվ, ճիպոտ եւն): *Հըրաման ա ըրալ, վէր ծըմական մին ծիպլի կըտրօղ էլ չինի* (ՁՏ, Ա, 28): 2. *փխբ.* Փոքր, նիհար, վտիտ (մարդ): *Ծիպլի ախճիգ՚ ա Անօն* (Բ):

- Ծիպլի Ծատօր - Շատ նիհար՝ վտիտ մարդ: *Էտ ծիպլի Ծատօրը հինչ ա՞, վէր նըստա վախում ըս* (Ձ):

ԾԻՊԼԻՊՈՒԼԻ/ԾԱ՚ՊԼԻՊՈՒԼԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծիպլիպուլի անէլ - Գործն իմիջիայլոց կատարել: *Ուստան կօրծը ծիպլիպուլի յա ընէս, ք՚իս* (Ձ):

ԾԻՊ-ԾԻՊ[1] - *տե՛ս* ԾԻՊԱ-ԾԻՊԱ:

ԾԻՊ-ԾԻՊ[2] - *տե՛ս* ԽՈՒՐԱ՚-ՄՈՒՐԱ՚: *... Մին քանէ կապը կըտրած ջահիլնէ ջուբըրնէրան ծիպ-ծիպ թըխթու պըտըռնէն հանըմ ին, շաղ տամ...* (ՁՏ, Բ, 127):

ԾԻՎ/ԾԷՎ/ՁԷՎ *(գրբ. ձեւ)* - *գ.* 1. *տե՛ս* ՓՕՐՄ: 2. Որեւէ բանի համար ձեւած կտոր: *Պինջակէն ծիվը յօր ա օնում, ք՚ինամ ուստէն կօխկը* (Ձ): 2. Ձեւելու որակը: *Շօրին ծիվը ըտըրան տուր չի կ՚ամ* (Ձ):

ԾԻՎԱ՚ՆԳ՚ - *տե՛ս* ԾԸՎԱ՚ՆԳ՚:

ԾԻՎԱՎՈՒՐ/ԾԷՎԱՎԷՐ - *ած.* Գծագրություն՝ նախշեր՝ ձեւ ունեցող: *Ծիվավուր ըստօլ ա* (Բ):

ԾԻՎԻԼ/ԾԷՎԷԼ *(գրբ. ձեւեմ)* - *նբ.* 1. Որեւէ բան կարելու համար որոշակի ձեւերով ու չափսերով կտորը՝ կաշին կտրտել: *Էս այամին կընանէքը վէջ պ՚ուրթ ըն կիզըմ, վէջ լըվացկ անըմ, վէջ ծիվըմ...* (ՁՏ, Բ, 101): 2. *փխբ.* Կտրտել, խազել: *Խօխան ցըկատավը խաղ ըրավ, ծը՚րքը ծիվից* (Բ): 3. *փխբ.* Հոշոտել, բզկտել: *Հանը ասմա.- Վէ՛չինչ, կըտանիմ իմ բաղէն մաչին պէց կըթօղիմ, առուծը տըրան լանվ կըծիվի* (ԲՀԲ, 54):

ԾԻՎԻՉ/ԾԷՎԻՉ - *գ.* 1. Կոշկակարի դանակ, որով ձեւում՝ կտրում է կաշին: *Սապօժնիգ՚ը ծիվիչը յօր ա ունէս, մին մընուտումը կաշին լօխ ծիվիս* (Ձ): 2. Գութանի սուր՝ հողը ճեղքող մասը: *Կ՚ութանէն ծիվիչը վէր սագ չի իլանվ, վար անօղը կըտանջվի* (Ձ):

ԾԻՎ-ԾԻՎ[1] - 1. *ձ.* Ճնճղուկի՝ ծտի՝ հավի ճտի հանած ձայնը: *Ծըտէրը ծըվ-ծըվամ ըն՝ ծի՛վ-ծի՛վ...* (Բ): 2. *տե՛ս* ՂԸՐՂԻ:

- Ծիվ-ծիվ անէլ - Ծվծվալ, ճռվողել: *Ծըտէրը ծիվ-ծիվ ըն անում* (Բ):

ԾԻՎ-ԾԻՎ[2]/ԾԷՎ-ԾԷՎ *(գրբ. ծիւ-ծիւ (պատառ-պատառ)* - *տե՛ս* ԹԻՔ՚Ա՚-ԹԻՔ՚Ա՚:

ԾԻՎՍ/ԾԷՎՍ - *տե՛ս* ԾԻՎ:

- Ծիվսը լ՚ավ/տը՚ղը - *տե՛ս* ԾԻՎՍԱՎ:

- Ծիվսը ճընանչիլ - *տե՛ս* Չափը ճընանչիլ:

ԾԻՎՍԱՎ/ԾԷՎՍԱՎ - *ած.* 1. Շնորհալի, շնորհքով: *Նաբաթը ծիվսավ ախճիգ՚ ա, ամմէն հինչ կարում ա անէ* (Բ): 2. Գեղեցիկ կազմվածք ունեցող, գեղանի: *Ծիվսավ ախճիգ՚ ա, մըղափանն, վէր շիլդի յա* (Բ):

ԾԻՎՎԱՍԿ/ԾԷՎՎԱՍԿ - *տե՛ս* ԾԻՎ:

ԾԻՎՎԻԼ/ԾԷՎՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾԻՎԻԼ-ի:

ԾԻՏԻԳ՚ - *ած.* Փոքրիկ եւ գեղեցիկ

(աղջիկների մասին): *Ծիտիգ՝ ախճիգ՝ ա* (Բ):

ԾԻՏԻԳ՝-ՄԻՏԻԳ՝ - *ած.* 1. *տեմ* ԾԻՏԻԳ՝: 2. Պուտավոր, վրան գույնզգույն նախշեր՝ պուտեր ունեցող (շորի մասին): *Ծիտիգ՝-միտիգ՝ շօրէր ա կ՚ըէցալ* (Բ):

ԾԻՐ/ԾԸՐ[3]/ԾԸՐ *(գրբ. ծիր)* - *գ.* 1. Սահման, եզրագիծ: *Խաբարը կ՚ամ ա, թա յէրգ՝իրին ծըրըմը կըռը՚վ ա ըսքըսալ* (Ձ): 2. Երկու արտերի սահմանագիծը կազմող խոր ակոս: *Ըտըտարէրը ամ-մէն օր կ՚ամ ին ծըրէն քըշտէն մինտը՚ղ հաց օտում* (Ձ): 3. Գութանի՝ արորի բացած ակոսը: *Ծէտը յէկալ ա, մըտալ կ՚ութանին ծըրէն տակը* (ՀԱԲ, 15, 149):

- Ծըրավը տանէլ - Ճիշտ ուղղությամբ տանել՝ վարել: *Կօրծը բիդի ծըրավը տանիս* (Ձ):

- Ծըրավը ք՚ինիլ - *տեմ* Ըստուծէն ծըրավը ք՚ինիլ (ԱՍՏՈՒԾ-ի տակ):

- Ծըրա տուս կ՚ալ - *տեմ* Հըղա տուս կ՚ալ:

- Ծըրա տուս (յը՚կած) - *տեմ* Հըղա տուս (յը՚կած) (ՀԸՂԷ-ի տակ):

- Ծըրա տուս օնէլ - *տեմ* Հըղա տուս օնէլ:

- Ծըրու կ՚ալ - *տեմ* Հըղու կ՚ալ:

- Ծըրու պիրիլ - *տեմ* Հըղու պիրիլ:

- Ծիր անէլ/ծըրէլ/տալ/քաշիլ - *տեմ* ԾԸՐԷԼ:

ԾԻՐԱՆԷ/ԾԻՐԱՆԻ - *գ.* Վարդագիների ընտանիքին պատկանող ծառ, որի պտուղն է ծիրանը, ծիրանենի: *Ծիրանէն չուրանում ա* (Ձ):

ԾԻՐԱՆԻ - *տեմ* ԾԻՐԱՆԷ:

ԾԻՐԱՆՈՒՏ - *տեմ* ԾԻՐԱՆՏՏ:

ԾԻՐԱՆՈՒՏ - *տեմ* ԾԻՐԱՆՏՏ:

ԾԻՐԱՆՏՏ/ԾԻՐԱՆՏՏ/ԾԻՐԱՆՈՒՏ/ԾԻՐԱՆՈՒՏ - *գ.* Շատ ծիրանենիներ աճած տեղ: *Էծէրը նի յըն տը՚ռալ ծիրանոտը* (Բ):

ԾԻՐԱՆՏՏ - *տեմ* ԾԻՐԱՆՏՏ:

ԾԻՐԸՆԾԱՂԷԳ՝ - *գ.* 1. Ծիրանագույն ծաղիկ: *Բըղէրումը ծիրընծաղէգ՝ շատ կա* (Բ): 2. Գորգանախշի տեսակ: *Գ՝իբին մաչտը՚ղը մին մը՚ծ ծիրընծաղէգ՝ ա կ՚օրծում* (Ձ):

ԾԻՐԻ - *տեմ* ԾԸՐԻ:

ԾԻՐՔԱԹԱԿ - *տեմ* ԾԸՐՔԱԹԱԿ:

ԾԻՐՔԱԿՕՐԾ - *տեմ* ԾԸՐՔԱԿՕՐԾ:

ԾԻՐՔԱՃԻՐ - *տեմ* ԾԸՐՔԱՃԻՐ:

ԾԻՐՔԱՄԱՆ - *տեմ* ԾԸՐՔԱՄԱՆ:

ԾԻՐՔԱՄԱԾ - *տեմ* ԾԸՐՔԱՄԱԾ:

ԾԻՐՔԱՇԷՆ - *տեմ* ԾԸՐՔԱՇԷՆ:

ԾԻՐՔԱՊԷՆ - *տեմ* ԾԸՐՔԱՊԷՆ:

ԾԻՐՔԱՏԱԿ - *տեմ* ԾԸՐՔԱՏԱԿ:

ԾԻՐՔԱՏԱՐ - *տեմ* ԾԸՐՔԱՏԱՐ:

ԾԻՐՔԱՏԸ՚Ղ - *տեմ* ԾԸՐՔԱՏԸ՚Ղ:

ԾԻՐՔԱՏՈՒ - *տեմ* ԾԸՐՔԱՏՈՒ:

ԾԻՐՔԱՑԱՎ - *տեմ* ԾԸՐՔԱՑԱՎ:

ԾԻՐՔԱՓՈՒԼ - *տեմ* ԾԸՐՔԱՓՈՒԼ:

ԾԻՐՔԱՓՕԽ - *տեմ* ԾԸՐՔԱՓՕԽ:

ԾԻՐՔԸԾԷՐՔ - *տեմ* ԾԸՐՔԸԾԸ՚ՐՔ:

ԾԻՐՔԸԿՕԼԱ - *տեմ* ԾԸՐՔԸԿՕԼԱ:

ԾԻՐՔԸՀԱՐԷԼ - *տեմ* ԾԸՐՔԸՀԱՐԷԼ:

ԾԻՐՔԸՀԱՐ(Վ)ԱԾ *տեմ* ԾԸՐՔԸՀԱՐ(Վ)ԱԾ:

ԾԻՐՔԸՀԱՐՎԷԼ - *տեմ* ԾԸՐՔԸՀԱՐՎԷԼ:

ԾԻՐՔԸՀՕՐԷՆՔ՝ - *տեմ* ԾԸՐՔԸՀՕՐԷՆՔ՝:

ԾԻՐՔԸՃԻՐԱՎ - *տեմ* ԾԸՐՔԸՃԻՐԱՎ:

ԾԻՐՔԸՃԻՐԱՔ՝ - *տեմ* ԾԸՐՔԸՃԻՐԱՔ՝:

ԾԻՐՔԸՃՈՒՎԱՐԱՆ - *տեմ* ԾԸՐՔԸՃՈՒՎԱՐԱՆ:

ԾԻՐՔԸՅԱԼԼԸ՚Խ - *տեմ* ԾԸՐՔԸՅԱԼԼԸ՚Խ:

ԾԻՐՔԸՊԸՏԱՏԱՆ - *տեմ* ԾԸՐՔԸՊԸՏԱՏԱՆ:

ԾԻՐՔԸՎԸ՚ՆՆԱՎ - *տեմ* ՎԸ՚ՆՆԱՎԾԸ՚ՐՔԱՎ:

ԾԻՐՔԸՎԸ՚ՆՆԸ - *տեմ* ՎԸՆՆԸԾԸ՚ՐՔ:

ԾԻՐՔԸՓԱԹԱԹ - *տեմ* ԾԸՐՔԸՓԱԹԱԹ:

ԾԻՔ՝ *(գրբ. ձիգ)* - *ած.* 1. Պիրկ, պինդ քաշած՝ ձգած: *Խօխէնք՝ը կ՚ամ ըն, էտ ծիք՝ ք՚ինդիրավը լօք տամ* (Ձ): 2. *փխբ.* Պինդ, անսասան, անհողդողդ: *Մաշտին ծիք՝ տըղամարթ ա* (Բ):

- Ծիք՝ տալ - 1. Ձգել, պրկել: *Ք՚անդիրը ծիք՝ ըն տամ, պինդըցընում* (Ձ): 2. Դեպի իրեն քաշել: *Էս բախտը կըտըրված մարթը էս էշին հաք՚վան վէր փըռնում չի՞, ծիք՝ տա, հաք՚ին պուք ա կ՚ամ* (ՀԱԲ, 15, 85): 3. Իր ետեւից քաշել, ձգելով տանել: *Քօղը կապում ա, ծիք՝ տամ, տանում* (Ձ): 4. Երկարացնել, ծոր տալ: *Ջուռնանչին զուռնէն սանը ծիք՝ ա տամ* (Ձ): 5. Ամրացնել, պնդացնել: *Սէրգ՝ին շալվարը կ՚ը՚նում ա, լ՚ավ ծիք՝ տամ, ք՚ինամ* (Ձ): 6. Մեկի հետ կարողանալ, հավասարվել, նրա կարողություններին չզիջել: *Ըխճըկանը հաՆրը ասից.- Ք՚ինա քու ճըպատըտ քու քօլատ կըտըրէ՚, վէր կարին ծըզնըհը՚տ ծիք՝ տան* (ՆԼՂԺԲ, 55): 7. *հեգն.* Ծխել: *Խըրէգ՝ ծիք՝ տօ, լի՞, տօնը սաղ ծօխ ա* (Բ):

- Ծիք՝ տան յը՚զնէք՝ը, տըռօտին ըչըռօտէնք՝ը - *տեմ* Անէ Հուրին, ծաղկէ Փուրին:

- Ծիք՝ տըված, ըրկընցըրած - *տեմ* Ծիք՝ տըված սաղունձ:

- Ծիք՝ տըված սաղունձ - 1. Բարձրահասակ եւ նիհար (մարդ): *Էտ ծիք՝ տըված սաղունձը վէր շօռ ա կ՚ամ, ծըծաղըս կ՚ամ ա* (Բ): 2. Ձգձգված (գործ): *Էտ կօրծը էս ա հէնգ՝ տարէ յա, ծիք՝ տըված սաղունձ ա տը՚ռալ* (Ձ):

ԾԻՔ՝ԱՄԱՐ - *տեմ* ԾԸՔ՝ԱՄԱՐ:

ԾԻՔ՝ԱՏԱՐ - *տեմ* ԾԸՔ՝ԱՏԱՐ:

ԾԻՔ՝ԸԿԱԼԻԼ[1] - *տեմ* ԾԻՔ՝ՎԻԼ:

ԾԻՔ՝ԸԿԱԼԻԼ[2] - *տեմ* ԾԸՔ՝ԸԿԱԼԻԼ:

ԾԻՔ՝ԸՀԱՆԷԼ - *տեմ* ԾԸՔ՝ԸՀԱՆԷԼ:

ԾԻՔ՝ԸՊԸՆԾԹՈՒՆ - *գ.* Ավելորդ մանրամասնություններով խոսքը երկարացնելը, երկարաբանություն: *Ըտըրա ծիք՝ըպընծթունան զանիլանս տանում ա* (Բ):

ԾԻՔ՝ԸՊԸՏԱՌԷՆ - *տեմ* ԾԸՔ՝ԸՊԸՏԱՌԷՆ:

ԾԻՔ՝ԸՊՈՒՔ(Ի) - *տեմ* ԾԸՔ՝ԸՊՈՒՔ(Ի):

ԾԻՔ՝ԸՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ԾԸՔ՝ԸՑ(Ը)ՆԷԼ:

ԾԻՔ՝ԻԼ *(գրբ. ձգեմ)* - *նբ. տեմ* Ծիք՝ տալ:

ԾԻՔ՝-ԾԻՔ՝ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծիք՝-ծիք՝ անէլ - 1. Ձգձգել, այս ու այն կողմ ձգել, քաշքշել: *Էտ մարթին փըռնում ըն, ըսկըսում մըրքան ծիք՝-ծիք՝ անէլը...* (ՆԼՂԺԲ, 148): 2. Պարբերաբար հետաձգել: *Ուստան կօրծը էնքան ծիք՝-ծիք՝ ըրավ, վէր ծուանը յը՚կավ* (Ձ):

ԾԻՔ՝ԾԻՔ՝ԻԼ - *նբ. տեմ* Ծիք՝-ծիք՝ անէլ:

ԾԻՔ՝ԾԻՔ՝ՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԾԻՔ՝-ԾԻՔ՝ԻԼ-ի:

ԾԻՔ՝ԾԻՔ՝ՕՏԷԼ - *տեմ* ԾԸՔ՝ԾԸՔ՝ՕՏԷԼ:

ԾԻՔ՝ԾԻՔ՝ՕՏՈՒՑ - *տեմ* ԾԸՔ՝ԾԸՔ՝ՕՏՈՒՑ:

ԾԻՔ՝ՎԻԼ - 1. *կբ. եւ չբ.* ԾԻՔ՝ԻԼ-ի: *չբ.* 2. Երկարելով հասնել մինչեւ: *...Էտ հըղէն ծիք՝վում ա մինչը՚վ Մը՚ղըր ախպ՚ուրը* (Ձ): 3. Ձգաստանալ, իրեն հավաքել, իրեն զուսպ պահել: *ՀաՆրը տըղէն թըխում ա, թա.- Ծիք՝վի՛, հինչ ը՞ս ճըղճըղամ* (Ձ):

ԾՈՒ - *տեմ* ԾՈՒ:

ԾՈՒ/ԾՈՒ *(գրբ. ձու)* - *գ.* 1. Ձուն: *Հավէն ծուն օտում ա, թա.- Հինչ լ՚ավ ա, ա՛պա, մին ծըմէրուկու մըչանք բիդանվ* (Ձ): 2. Արու կենդանու՝ թռչունի կամ տղամարդու ամորձիներից յուրաքանչյուրը: *Խօզ՝էրը կըռտում ըն, ծուվէնը խըրավում* (Բ):

- Ծուն ածէլ - 1. Ձուն մարմնից դուրս հանել, ձվադրել: *Էտ հավը օրը մին ծուն վար ածում, պառավը օտում ար* (Ձ): 2. Մեկից սաստիկ վախենալ՝ երկյուղել: *Հօրը անա ծուն վա ածում* (Բ):

- ԾՆ ածող հավ - Օգտակար՝ շահութաբեր գործ՝ իր եւն: *Էտ իլիգը ԱՁՆ հըՀտէ մին ծՆ ածող հավ ա* (Բ):

- ԾՆ խօզ՛օղ - *տեՀ* ԱսըՀղ մաշկօղ:

- ԾՆ կըռվըցընէլ - *տեՀ* ԿըռըվկըՀնէ տալ:

- ԾՆ կ՛ուղանօղը ծի յէլ կըկ՛ուղանա - *ասաց.* Փոքր բաներ գողացողը կվարժվի նաեւ մեծ գողություններ անելուն:

- ԾՆ մաշկօղ - *տեՀ* ԱսըՀղ մաշկօղ:

- ԾՆն կ՛ուղանալ - *տեՀ* Խաթիրը քըթէնալ:

- ԾՆն կուրցըրած հավ - Շփոթված, անհանգիստ՝ անել վիճակում գտնվող մարդ: *ԾՆն կուրցըրած հավ ա Մարգուշան, գ՛ՆդՆում չի, թա հունց անէ, վէր տըղէն հըՀտէ հըրսանէք՛ անէ* (Բ):

- ԾՆվա կըտըր(վ)էլ - 1. Ձու ածէլուց դադարել: *ԾըմըՀռնը վէր ցօրտ ա ինՆում, հավէրը ծՆվա կըտըրում ըն* (Բ): 2. Խիստ վախենալ, սարսափել: *Պիճ ապէրը էտ դէվէն վէր տըՀսնում ա, ծուվա կըտըրվում ա* (Ձ):

- ԾՆվա մազ՛ խօզ՛օղ - *տեՀ* ԱսըՀղ մաշկօղ:

- ԾՆվա նօր տՆուս յըՀկած - Նորելուկ, անփորձ, դեռահաս: *ԾՆվա նօր տՆուս յըՀկած խօխէնք՛ ըն, ամհա բըզարումը առըտօր ըն անում* (Բ):

- ԾՆվէնը տակը անէլ - 1. *տեՀ* Թօխս տինիլ (1): 2. Ամուսնացնել: *Վառին ասում ա.- Մխճի, Վա՛ռթի, տըղատ մըՀծ տըղա յա տըՀռալ, խէ ծուվէնը տակը չը՞ս անում* (Ձ):

- ԾՆվէն մաչին մազ՛ու շօռ կ՛ԱՆլ - Խիստ բծախնդիր՝ չմահավան լինել: *Ծուվէն մաչին մազ՛ու վա շօռ կ՛ամ, ըտըրա հըՀտէ էլ վէշ մինը նըհըՀտը հընգըրօթուն չի անում* (Ձ):

- ԾՆ տըՀռնալ - Ձվանման այտուցվել՝ ուռչել: *Վէր ճըկատէն տըրրքցընում ա, ծՆ վա տըՀռնում* (Ձ):

- ԾՆ քըշըռօղ - *տեՀ* ԱսըՀղ մաշկօղ:

- ԾՆ քըշկըռէլ - Թռչունի փորի մեջ մանր-մանր ձվիկներ աճել: *Կարունքը թՆզգՆ տՆխէրը ծՆ վըն քըշկըռում* (Ձ):

ԾՆԻԼ *(գրբ. ծոյլ)* - 1. *տեՀ* ԼՕԴՈՒՐ: 2. *տեՀ* ՓԱՍՕ: 3. *ածական. փխբ.* Թույլ, մեղմ: *ԾՆլ քամէ յա* (Բ):

ԾՆԻԼ-ԾՆԻԼ - *տեՀ* ԾԸԼՕՆԳ-ԾԸԼՕՆԳ:

ԾՈՒԼՈՒԼ/ԾԸԼՕԼ/ԾՈՒԼՕԼ *(գրբ. ծլուլ)* - *գ.* Բերանից՝ քթից հոսող լորձունք՝ շողիք: *Կընէգ՛ը էտ պըռավէն ծուլուլը վէր տըՀսնում ա, սըրտըմնա յա ինՆում* (Ձ):

- Ծուլուլը կախ/թօշավը ընգած - 1. Բերանից՝ քթից լորձունքը հոսող: *Ծուլուլը կախ խօխա յա, վէշ մինը սիրում չի ըտըրան* (Բ): 2. Կեղտոտ, փնթի, թափթփված: *Ծուլուլը կախ կընէգ՛ ա Թամարան, տօնը՝ յըՀխտուտ, շՆրէրը՝ ճըրդստած* (Բ): 3. Խեղճ, ողորմելի: *Ծուլուլը կախ մարթին մըհալ քըցՆղ չինիլ* (Ձ):

- Ծուլուլը հըղէ ինիլ/քՆինիլ - *տեՀ* Պիրանէն ճիրէրը քՆինիլ (ՊԷՐԱՆ-ի տակ): *Փարուն վէր տէսնում ա, մընամ ա ռէխը պէց, ծուլուլը քընիլիս...* (ՀԱԲ, 15, 108):

ԾՈՒԼՈՒՂ - *տեՀ* ԾՈՒՂՐՈՒՂՈՒ (2):

ԾՆԻԼՕԹՈՒՆ *(գրբ. ծուլութիւն)* - *տեՀ* ԼՕԴՈՒՐՕԹՈՒՆ:

ԾՈՒԼՕԼ - *տեՀ* ԾՈՒԼՈՒԼ:

ԾՈՒԽԱԹԱԿ - *ածական.* Ծխից սեւացած, մրով պատված: *Նի յըն մընում մին ծուխաթակ օթաղ, ըտըՀղ քըշէրը կէնում* (Ձ):

ԾՈՒԽԱՀԱՄ - 1. *գ.* Ծխահոտ ունեցող համ: *Խըրըվածան ծուխահամ ա կ՛ամ* (Բ): 2. *ածական.* Ծխից յուրահատուկ համ ստացած: *Ծուխահամ խաշլաման ամմէն մարթ չի սիրում* (Բ):

ԾՈՒԽԱՀՆՒՐԹ - *գ.* Պատի մեջ բացված անցք՝ վառարանի՝ կրակարանի ծուխը դուրս տանելու համար: *Բուխարին նի յըն կըցընում, ծօխը ծուխըհՆուրթՆվը կամանց տՆուս ա կ՛ամ* (Ձ):

ԾՈՒԽԱՎԸՀՏ - *գ.* Ծխի հոտ: *Ըղվէսին ճօտէրը ծուխըվըՀտան կարում չըն տէս կէնան, պՆունՆն տՆուս ըն տըՀռնում, փախչՆում* (Ձ):

ԾՈՒԽԸԹԱԿԷԼ - 1. *նբ.* Ծխով սեւացնել, մրով պատել: *Ռէվը էնքան ծօխ ա ըրալ, սաղ տօնը ծուխըթակալ ա* (Բ): 2. *չբ.* Ծխից սեւանալ, մրով պատվել: *Ծուխըթակած պատէր ա* (Բ):

ԾՈՒԽԸԹԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾՈՒԽԸԹԱԿԷԼ (1)-ի:

ԾՈՒԽԸԿԱԼԻԼ - *չբ.* 1. Ծխով պատվել՝ լցվել: *Խօտէն թայան վէր նի յըն կըցընում, շէնը ծուխըկԱլՆում ա* (Ձ): 2. *տեՀ* ԾՈՒԽԸԹԱԿԷԼ (2):

ԾՈՒԽԸՀԱՄԷԼ - *չբ.* Ծխի համ ստանալ: *ԽօրՆգը կ՛էճ փՆդին յըրա վէր իփիս, կընծուխըհամէ* (Ձ):

ԾՈՒԽԸՀԱՐԷԼ - *նբ.* Որոշ ժամանակ ծխի մեջ պահել, ծխահար անել (պտուղների՝ մսեղենի՝ ձկնեղենի եւն մասին): *Այան գ՛ԱՆվԱլը չուրըցընում ա, ծուխըհարըմ, վէր վէրթնի վէչ* (Ձ):

ԾՈՒԽԸՀԱՐՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԾՈՒԽԸՀԱՐԷԼ-ի: 2. *չբ.* Ծխից նեղվել, աչքերն արցունքոտվել: *Խօխան ծուխըհարվում ա, լՆց ինՆում* (Ձ):

ԾՈՒԾ - *տեՀ* ԾՕԾ:

ԾՆԻԾԼՆԻԿ - *տեՀ* ԿԸԾԷՅՆԸ:

ԾՆԻԾՆԻԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- ԾՆուծՆուլ անէլ - *տեՀ* ՍիլլՆ անէլ:

- ԾՆուծՆուլ նա ծՆուծՆուլ *(ռուս. тутелька в тутельку)* - 1. *տեՀ* ՏՕԾՆԻ: 2. *տեՀ* ԾԸԼՊԸ(Ն)-ԾԸԼՊԱ(Ն):

ԾՆԻԾՆԻՆ - *գ.* Մոշենու չոր ցողուն, որ ծեծելով օգտագործում են կրակը վառելու համար կամ որպես մոմ՝ նախապես պահելով ձեթի մեջ: *Առաչ վէր լամբ չի իլԱլ, ծՆուծՆունը նի յըք իլԱլ կըցընէս, գ՛ՆլբՆ ընէս* (Բ):

- ԾՆուծՆուն անէլ - Սաստիկ ծեծել: *...Յըրան ըն տէռնում, թակում, ծՆուծՆուն անում...* (ՆԱԲ, 63):

ԾՆԻԿ/ԾՆԻԿԻ/ԾԻԿ - *ձ.* Ասվում է երեխային նոր տեսնելիս կամ նայելիս ու թաքնվելիս: *ՀԱՐը իրըՀսը ծասկում ա, մին էլ պէնում, խուխէն թա՝ ծՆ՛ԱԿ* (Ձ):

- ԾՆԱԿ անէլ - 1. Նայել եւ ապա թաքնվել՝ հեռանալ: *Խօխան ծՆԱԿ ա անում, մարը ուրխանում ա* (Ձ): 2. Շատ կարճ ժամանակով մի տեղ գնալ: *ՔընՀցալ ա ախպօրը տօնը, ծՆԱԿ ըրալ, յըՀկալ* (Բ):

ԾՆԻԿԱՆ - *տեՀ* ԾՆԻԿՀԱՆ:

ԾՆԻԿԸՆ - *տեՀ* ԾՆԻԿՈՒՆ:

ԾՆԻԿԻ - *տեՀ* ԾՆԻԿ:

ԾՆԻԿ(Ի)-ԾՆԻԿ(Ի)/ԾԸԿԸԾՆԻԿ(Ի) - Գործածվում է կապակցության մեջ:

- ԾՆԱԿ(ի)-ծՆԱԿ(ի) անէլ - 1. Մի բանի ետեւից՝ տակից՝ արանքից թաքուն նայել: *Ըխճըկէրքը շՆուրընէն հանում ըն, նի մընում կ՛ըՀտը, Քաչալընը էլ քարէն քըմական ծՆԱԿ-ծՆԱԿ ա անում* (Ձ):

ԾՈՒԿԼՈՒԿՈՒ - *տեՀ* ԾԸԿԼՈՒԿՈՒ:

ԾՆԻԿՀԱՆ/ԾՆԻԿԱՆ - *գ., ածական.* Ձուկ որսացող՝ բռնող, ձկնորս: *Մին օր էլ ծՆԱԿհանը մին դաշՆնգ՛ ծՆԱԿուն ա փընռնում* (Ձ):

ԾՆԻԿՆԱՀԱՄ - 1. *գ.* Ձկան մսի համ: *ԾՆԱԿնըհաման սըՀրտը խառնում ա* (Բ): 2. *ածական.* Ձկան մսի համ ունեցող: *ԾՆԱԿնահամ մէս ա ինՆում, վէշ մինը օտում չի* (Ձ):

ԾՆԻԿՆԱՄԷՍ - *գ.* 1. Անասունի ողնաշարի երկու կողմի փափուկ, երկայնաձեւ ձգված միսը: *Տըվարէն ծՆԱԿնամէսը խըրաված լՆզՆթ ա ինՆում* (Բ): 2. Ոլոքի փափուկ միսը՝ մկանային հյուսվածքը: *Էրկու օր ա՝ ծէխէ վըՀննանըս ծՆԱԿնամէսը ցավում ա* (Բ):

ԾՆԻԿՆԱՎԸՀՏ - *գ.* Ձկան հոտ: *ԾՆԱԿունը իփՆում ըն, ծՆԱԿնավըՀտը տանավը մին ա տըՀռնում* (Բ):

ԾՆԻԿՆԱՓՕՐ - *ածական.* Բարակիրան, նուրբ կազմվածք ունեցող (հիմնականում աղջիկների մասին): *ԾՆԱԿնափօր ախճիգ՛ ա Մանէն* (Բ):

ԾՆԻԿՆԸ - *տեՀ* ԾՆԻԿՈՒՆ:

ԾՆԻԿՆԸԾԱԽԷ - *տեՀ* ԾՆԻԿՈՒՆԾԱԽԷ:

ԾՆԻԿՆԸԿՕԼԻ - *տեՀ* ԾՆԻԿՈՒՆԿՈՒԼԻ:

ԾՆԻԿՆԸՉԻ - *տեՀ* ԾՆԻԿՈՒՆՉԻ:

ԾՈՒԿՆԸՊԷՐԱՆ - *տե՛ս* ԾՈՒԿՈՒՆՊԷՐԱՆ:

ԾՈՒԿՈՒԼՈՒԿՈՒ - *տե՛ս* ԾԸԿԼՈՒԿՈՒ:

ԾՈՒԿՈՒՆ - *տե՛ս* ԾՈՒԿՈՒՆ:

ԾՈՒԿՈՒՆ - *տե՛ս* ԾՈՒԿՈՒՆ:

ԾՈՒԿՈՒՆ/ԾՈՒԿՈՒՆ/ԾՈՒԿՈՒՆ/ԾՈՒԿՈՒՆ/ԾՈՒԿԸՆ/ԾՈՒԿՆԸ/ԾՕԿՆԸ *(գրբ. ձուկն)* - *գ.* 1. Ջրային ողնաշարավոր կենդանի՝ ձուկ: *Տըղան, էտ ծուկունը մէխկընը ա կ'ամ, նօրիցան քընցում ա ճուրը* (Զ): 2. *փխբ.* Ճարպիկ լողորդ: *Դէ թաքավէրին տըղան էլ ծուկուն ա, ծուկուն, դաստի նի յա մընում ծօվէն տակը, էտ մուտանան տուս օնում, տամ ըխճընկանը* (Զ):

- Ծուկունը ծօվումը սօվդան անէլ - *տե՛ս* Մինչը՞վ կ'ը՞տը հըսնէլը փօխկէրքը յը՞ր քաշիլ:

- Ծուկունը կըլխան ա վը՞տում/վը՞րթնում - Անօրինությունները՝ անկարգադրությունները եւն պաշտոնյաներից են բխում:

- Ծուկունը կըլխան փըռնէլ - *տե՛ս* Կօրծը սափալու փըռնէլ:

- Ծուկունը տուս օնէլ, ճուրը քընցիլ - Բուն նպատակը քողարկելով՝ այլ զբաղմունքի պատրանք ստեղծել: *Ծուքուրը ծուկունը տուս ա օնում, ճուրը քընցում, կարէլ չըս գիդաս, թա մըթկէնը հինչ ա* (Զ):

- Ծուկուն փըռնօղ - *տե՛ս* ԾՈՒԿՀԱՆ: *... Ըտէղ ծուկուն փըռնօղնէրը թօռը քաշում ըն, տէսնում՝ թօռէն մաչին մին վըսկէ ծամ* (ՀԱԲ, 15, 32):

ԾՈՒԿՈՒՆ - *տե՛ս* ԾՈՒԿՈՒՆ:

ԾՈՒԿՈՒՆԾԱԽԷ/ԾՈՒԿՆԸԾԱԽԷ - *գ., ած.* Ձկնավաճառ, ձկան առեւտրով զբաղվող (անձ): *Ծուկունծախէն ծուկունը տամ ա, էտ դուշը ինք' օնում* (Զ):

ԾՈՒԿՈՒՆԿՈՒԼԻ/ԾՈՒԿՆԸԿՕԼԻ - *գ.* Բարձրասրունքների կարգին պատկանող ջրային թռչուն, ձկնկուլ: *Ըրախսէն ղըրղընէք'էն կա շատ ծուկունկուլի* (Բ):

ԾՈՒԿՈՒՆՉԻ/ԾՈՒԿՆԸՉԻ - *տե՛ս* ԾՈՒԿՀԱՆ:

ԾՈՒԿՈՒՆՊԷՐԱՆ/ԾՈՒԿՆԸՊԷՐԱՆ - *ած.* Փոքրիկ ու գեղեցիկ բերան ունեցող: *Ծուկունպէրան խօխա յա Միշիկը* (Բ):

ԾՈՒՂՈՒՐՈՒՂՈՒ - *տե՛ս* ԾՈՒՂՐՈՒՂՈՒ:

ԾՈՒՂՐՈՒՂՈՒ/ԾՈՒՂՈՒՐՈՒՂՈՒ/ԾԸՂՐՈՒՂՈՒ/ԾԸՂԸՐՈՒՂՈՒ - 1. *ձ.* Աքաղաղի կանչելու ձայնը: *Ծուղրուղո՛ւ,- վը՞ղցակը վէր կանչըմ ա, Գիրիշ դային քունը-տը՞ղա յը՞ր ա կէնում* (Զ): *գ.* 2. Աքաղաղի կանչելը: *Վըրցակէն ծուղրուղուն ըտըրանց քունըհարամ ա անում* (Զ): 3. Ընկույզի ամբողջական միջուկը: *Ճուղուպուրը կօտըրում ա, ծըղրուղուն տուս օնում* (Բ):

- Ծուղրուղու անէլ - *տե՛ս* ԿԱՆՉԻԼ (2): *Վը՞ղցակը ծուղրուղու վա անում, շանը յը՞ր կըցընում* (Զ): 2. Ընկույզի միջուկը ամբողջական ձեւով հանել: *Ճուղուպուրը ծուղրուղու վըն անում, տանում ծախում, տանը հը՞տէ տէս-տէն առնում* (Բ):

ԾՈՒՄ/ԾՕՄ *(գրբ. ծոմ)* - 1. *գ.* Եկեղեցական կանոններով սահմանված պահեցողություն՝ ծոմ: *Ծոմէն վախտը յա վէշ մին պէն չըբիդի օտիս, յա էլ մինակ չ'օր հաց բիդի օտիս, մին էլ ճուր խըմիս* (Բ): 2. *ած., մ.* Ոչինչ չկերած, ոչինչ չուտելով: *... Ռէգ'ան ըշխընդէյիս ընք ըլալ, ըռութանան չուրու ուրուգ'ունը՝ ծում ...* (ԼՂԲՔ, 271):

- Ծում լանգ'ի - Խիստ քչակեր: *Իգէն ծում լանգ'ի յա, մին թիք'ա հացավ իրը՞ք օր յօլլա յա քանում* (Զ):

- Ծում կէնալ/պահէլ - 1. Եկեղեցական կանոններով տարվա մեջ որոշ օրեր ոչինչ չուտել: *Միհէնգվա դէրէրը ծում էլ չըն պահում* (Բ): 2. Որեւէ բան չուտել, ուտելուց (նաեւ այլ բաներից) իրեն զրկել: *Մարթըն էլ գ'ուդում ա, թա տա լիհա միշտ ծում ա կէնում* (ՆԼՂԺԲ, 85):

ԾՈՒՄՈՒՐ(ՈՒ)ԿԷԼ - *տե՛ս* ԾԸՄԸՐ(Ը)-ԿԷԼ:

ԾՈՒՄՕՐՈՒԿ - *տե՛ս* ԾԸՄԷՐՈՒԿ:

ԾՈՒՅՆԱԽԱՂ - *գ.* Ծնկի հոդը, ծնկահոդ: *Վէր ա ընգալ, ծույնախաղը ճիլատալ* (Բ):

ԾՈՒՅՆԱԾԱԼ - *գ.* Ծնկի տակի ծալվող մասը, ծնկածալ: *Ծույնը-ծալին յըրա հըլօռէգ' ա տուս յը՞կալ, կարում չի, թա ծօյնը ծալի* (Բ):

ԾՈՒՅՆԱԿԱՊ *(գրբ. ծնկակապ (ծունկ-ծունկ, հանգույց առ հանգույց կապակցված)* - *գ.* 1. Կանացի գուլպաների՝ ծնկից վերեւ ագուցվող առաձգական կապ՝ ռետինե ժապավեն՝ երիզ եւն: *Հանսին ծույնակապը տուս ա օնում, մըղակը կապում* (Զ): 2. Ծնկի փաթաթան՝ պահպանակ: *Ծույնակապը կապում ա, վէր ծույնէրը մըրսէ վէչ* (Բ):

ԾՈՒՅՆԱՄԱՉ *(գրբ. ծնկնամէջ)* - *գ.* Երկու ծունկերի արանքը: *Նըստում ա, փանդը տինում ծույնըմաչին, տանջում* (Զ):

ԾՈՒՅՆԱԾՕՐ - *տե՛ս* ԾՈՒՅՆԱԿԱՊ (2):

ԾՈՒՅՆԱՏԱԿ - *տե՛ս* ԾՈՒՅՆԱԾԱԼ:

ԾՈՒՅՆԱՏԸ՞Ղ - *գ.* Ոտքի այն մասը, ուր գտնվում է ծունկը: *Ծույնատը՞ղըս ցավում ա* (Բ):

ԾՈՒՅՆԱՑԱՎ - *գ.* Ծնկի ցավ: *Պառավը ծույնըցավէն կարում չի տըմանա* (Զ):

ԾՈՒՅՆԸԾԱՓԱՆ - *տե՛ս* ԾՈՒՅՆԸԾԱՓԷ:

ԾՈՒՅՆԸԾԱՓԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ծույնը՝ծափէ տալ - 1. տե՛ս Ծույնէրը (վէր) թակէլ (ԾՕՅՆԸ-ի տակ): 2. Ծնկներն իրար զարկել՝ քսել: *Ծույնը-ծափէ տալավ ա շօռ կ'ամ* (Բ):

ԾՈՒՆ *(գրբ. ձիւն)* - *գ.* 1. Մթնոլորտային տեղում՝ սպիտակ աստղաձեւ փաթիլներով, ձյուն: *Սաղ ծըմը՞ռնը ծուն ա յը՞կալ, ան՞ը՞վ չի անում, թա ժուղօվուրթը ուրանց կօրծէն կէնան* (Բ): 2. Այդ տեղումների համատարած զանգվածը, որ ծածկում է գետինը: *Ծունը հանդէրը ծասկալ ա* (Բ):

- Ծունանն սիպտակ պէն չի կա, ամմա վընընտակու կօրչում ա - *տե՛ս* Ծունընն էլ ա սիպտակ, ամմա վէր յըրա կ'ուզում ըս, տըղնում ա:

- Ծունանվ ըղնէլ - *տե՛ս* Աշկէրը ծունը տանէլ (ԱՇԿ-ի տակ):

- Ծունանվընն էլ շօռ կ'ա՝ հը՞տը ըրվալ չի - Ասում են շատ զգուշավոր մարդկանց մասին:

- Ծունանվ ըրած յը՞խտ - Վաղ թե ուշ բացահայտվելիք արարք: *Կուղթունը ծունանվ ըրած յը՞խտ ա, յը՞տէ-ճէլլի մանալում ա ընանն* (Զ):

- Ծունանվ ըրած յը՞խտը էրկան կէնալ չի - Վատ արարքը շուտ կբացահայտվի:

- Ծունանվ լըցած հանդը յը՞տնան ծաղկավ կըլըցընէ - *ասաց.* Դժվարությունները վերջում դրական արդյունք են տալիս:

- Ծուն բիդի կ'ա, վէր վը՞ննը մըրսէ - Որեւէ բան կատարվելու՝ տեղի ունենալու համար պատճառ պետք է լինի:

- Ծունը ա ան՞ունը ուրուր խառնած - *տե՛ս* Կաթնը ա ան՞ունը ուրուր խառնած:

- Ծունը էլ ա սիպտակ, ամմա վէր յըրա կ'ուզում ըս, տըղնում ա - Ամեն ինչ հնարավոր է արատավորել՝ փչացնել:

- Ծունը տանէլ - 1. *տե՛ս* Աշկէրը ծունը տանէլ: 2. Ձյունից ցրտահարվել՝ սառչել: *Խօխան ծունավը էնքան խաղ ըրավ, մաննէրը ծունը տարավ* (Բ):

- Ծունու նըման *(գրբ. ձիւնանման (ձյան նման)* - Շատ սպիտակ, ձյունասպիտակ: *Գ'օզալ աքէրը ծունու նըման հացէր ա թըխում* (Բ):

- Ծունու նըման հալվիլ - *տե՛ս* Աղու նըման հալվիլ:

ԾՈՒՆԱԹԱՂ *(գրբ. ձիւնաթաղ)* - *ած.* Ձյան տակ թաղված: *Ծունաթաղ բաղէրը փուչացէն* (Բ):

ԾՈՒՆԱԽԷԽՏ *(գրբ. ձիւնախեղդ)* - *ած.* Ձյունից խեղդված, բքախեղդ: *Ըտը՞ղ մին ծունախէխտ աղվէս ըն քըթէնում* (Զ):

ԾՈՒՆԱՃՈՒՐ *(գրբ. ձիւնաջուր (ձյան*

պես մաքուր ջուր) - *գ.* Հալված ձյան ջուր: *Սաղ ծըմըռնը ախպերը սառչում ա, էտ շինանցէք ծունանճուր ըն պինը-ցընում* (Զ):

ԾՈՒՆԱՇԱՏ - *ած.* Ձյունառատ, ձյուն շատ եկող, որտեղ կամ երբ ձյունն առատ է: *Ըստրոնը-վա ծըմըռնը ծունաշատ ծըմըռն ա իլալ* (Բ):

ԾՈՒՆԱՊԷՆԴ - *տե՛ս* ԾԸՄԸՌ(Ն)ԱՊԷՆԴ:

ԾՈՒՆԱՐՈՒՆ - *ած. տե՛ս* Կաթնըն ա անրունը ուրուր խառնած:

ԾՈՒՆԴԸՐ - *տե՛ս* ԾՕՆԴԸՐ:

ԾՈՒՆԸԹԱԹԱԽ - *ած.* Ձյան մեջ թաթախված, վրան ձյուն նստած՝ քսված: *Ծունըթաթախ շօրէրը հանում ա, փիչին կօխկէն նըստում* (Զ):

ԾՈՒՆԸԽԱՌ(Ն)Է *(գրբ. ձիւնախառն)* - *ած.* Ձյան հետ խառն: *Մին ծունը-խառնէ քամէ յա ըսքըսում, քարվանբա-շին մընամ ա կըրակու մաչի* (Զ):

ԾՈՒՆԸԿԱԼԻԼ - *չբ.* Ձյունով պատվել՝ ծածկվել: *Սարէրը ծունըկալալ ա, արը՛վ ա ըրալ, հալալ ա...* (Զ):

ԾՈՒՆԸԿԸԼՈՒԼԱԿԷ - *տե՛ս* ԾՈՒՆԸԿԸ-ԼՈՒՆԴ(Ը)ՐԱԿԷ:

ԾՈՒՆԸԿԸԼՈՒՆԴ(Ը)ՐԱԿԷ/ԾՈՒՆԸ-ԿԸԼՈՒԼԱԿԷ - *գ.* Ձյունագնդիկներով իրար խփելու խաղ: *Ծունը կամ ա, խօխէնքը տուս ըն կամ, ծունըկըլուն-դըրակէ խաղ անում* (Բ):

- Ծունըկըլունդ(ը)րակէ տալ - Ձյու-նագնդիկներով խաղալ՝ իրար խփել: *Ջիհիլնէն ծունըկըլունդըրակէ յըն տամ* (Բ):

ԾՈՒՆԸԿԸԼՕԼԱԿ - *տե՛ս* ԾՈՒՆԸԿԸ-ԼՕՆԴԸՐԱԿ:

ԾՈՒՆԸԿԸԼՕՆԴԸՐԱԿ/ԾՈՒՆԸԿԸԼՕ-ԼԱԿ - *գ.* Ձյունից սարքած գնդակ, ձյունագնդակ: *Խօխէնքը ծունըկըլօն-դըրակ ըն շինում, յըրա անում* (Զ):

ԾՈՒՆԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ԾՈՒՆԸԹԱ-ԹԱԽ:

ԾՈՒՆԸՓԱՐԹԱԿ/ԾՈՒՆԸՓԱՏԱԿ - *ած.* Ձյունով պատված՝ ծածկված: *Տը-զափանդ սարը մինչը՛վ ամը՛ռնը ծունը-փարթակ ա ինում* (Զ):

ԾՈՒՆԸՓԱՐՏԱԿ - *տե՛ս* ԾՈՒՆԸ-ՓԱՐԹԱԿ:

ԾՈՒՆԻԼ *(գրբ. ձիւնանամ)* - *չբ.* 1. Ձյունել, ձյուն տեղալ: *Վէր մինչը՛վ ամսի վէրջը ծունից վէջ, գիդա վէր արաշտ ա ինանան* (Զ): 2. *տե՛ս* ԾՈՒՆԸԿԱԼԻԼ: *Քիրսը ծունալ ա* (Զ):

ԾՈՒՆԸԾԱՂԷԳ *(գրբ. ձիւնծաղէիկ, ձիւնածաղիկ)* - *տե՛ս* ԽԸՆՁԸՂԱ:

ԾՈՒՆ-ԾԸՄԸ՛ՌՆԸ - *գ., ած.* Խստա-շունչ ձմեռ, ձմռան սառնամանիք, ձմեռվա ցուրտ ժամանակ: *Էտ մարթը մին ծուն-ծըմըռնը օր հըղըցավը քընում վախտը տէսնըմ ա, վէր մին օխծը սառած, վէր ընգած* (ՀԺՀ, VII, 242):

ԾՈՒՆՈՒՆԴ - *տե՛ս* ԾԸՆՕՆԴ:

ԾՈՒՆՈՒՆԴԱԿԱՆ - *տե՛ս* ԾԸՆՈՒՆ-ԴԱԿԱՆ:

ԾՈՒՆՈՒՏ/ԾՈՒՆՕՏ - 1. *տե՛ս* ԾՈՒՆԸ-ԹԱԹԱԽ: 2. *տե՛ս* ԾՈՒՆԱՇԱՏ:

ԾՈՒՆՕՏ - *տե՛ս* ԾՈՒՆՈՒՏ:

ԾՈՒՆՕՏԷԼ - 1. *նբ.* Ձյունով թաթա-խել, ձյունոտ դարձնել: *Խօխան շօրէրը ծունօտալ ա* (Բ): 2. *չբ.* Ձյունով թաթախ-վել, ձյունոտ դառնալ: *Փափաղը վէր ա ըղնում, ծունօտում* (Բ):

ԾՈՒՆՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԾՈՒՆՕ-ՏԷԼ(1)-ի:

ԾՈՒՊ/ԾՕՊ *(գրբ. ծոպ, ծուպ)* - *գ.* 1. Որեւէ գործվածքի՝ հագուստի՝ գլխարկի՝ գոտու եզրերից կախված ձեւավոր քուղ՝ թել: *Մըկըրատը յօր ա օնում, էտ գիբին ծուպէրը կըտօրում* (Զ): 2. Բաժանված եղբայրների ընտանիքավորված զա-վակները: *Նէսին տըղէն հըրսընքավը սաղ ծուպէն ծէն ա տամ* (Զ):

ԾՈՒՊԱՎԷՐ - *տե՛ս* ԾՈՒՊԱՎՈՒՐ:

ԾՈՒՊԱՎՈՒՐ/ԾՈՒՊԱՎԷՐ - *ած.* Ծո-պեր ունեցող, ծոպերով զարդարված: *Ծուպավուր դարյա յա կը՛ցալ* (Բ):

ԾՈՒՊՈՒԼ(Ի) - *տե՛ս* ԾԸՊՈՒԼ(Ի):

ԾՈՒՊՏՈՒՆ - *տե՛ս* ԾԸՊՏՈՒՆ:

ԾՈՒՊՈՒՏ - *տե՛ս* ԾԸՊՈՒՏ:

ԾՈՒՌ(Ն)ԱՏԱՐ - *ած., գ.* Թոռան զա-վակ ունեցող: *Ծուռնատար մարթ ա Արշակ դային* (Բ):

ԾՈՒՌՏԻ(Գ) - *ած.* Մի քիչ ծուռ, փոքր-ինչ ծուռ: *Մուքանը մին ծուռտիգ կաղնէ յա կըտըրում, պիրում տաշում, սուրթուն շինում* (Զ):

ԾՈՒՌՏԻ(Գ)-ՄՈՒՌՏԻ(Գ) - *տե՛ս* ԾԸ-ՌԸՄՕՌ:

ԾՈՒՎԱԽԷԽՏ - *ած.* Ձվի մեջ խեղդ-ված: *Ծուն կօտըրում ա, տը՛սնում մաչին էրկու ծուվախէխտ ճօտ* (Զ):

ԾՈՒՎԱԾԱՆ - *տե՛ս* ԱԾԱՆ:

ԾՈՒՎԱԾԷՆ - Գործածվում է կա-պակցության մեջ:

- Ծուվածէն ածէլ - 1. Ձու ածելուց հետո կչկչալ (հավերի մասին): *Հավը վէր ծուվածէն ա ածում, աղվէսը սանսին յըրա կամ ա* (Զ): 2. Արածի մասին բարձրագոչ հայտարարել: *Ղըստանց Սումբաթը վէր մին ծէտ էլ ա փըռնում, ծուվածէն ա ածում* (Բ):

ԾՈՒՎԱԿԷՐ - *ած.* Իր ածած ձուն ուտող: *Ծուվակէր հավը օքութ չի տալ* (Բ):

ԾՈՒՎԱԿՕՂ - *ած., գ.* 1. Ձու գողա-ցող: *Մին օր էլ հը՛տը պահում ըն, էտ ծուվակօղ կատվէն փըռնում* (Զ): 2. *փխբ. տե՛ս* ԹԸՆԱԿՕՂ:

ԾՈՒՎԱՀԱՄ - 1. Ձվի համ: *Ծուվա-համը ամմէն մարթու չի տօր կաս* (Բ): 2. *ած.* Ձվի համ ունեցող: *Ծուվահամ թըխ-վասկ ա* (Բ):

ԾՈՒՎԱՎԸ՛Տ - *գ.* Ձվի հոտ: *Մարթ կա՝ ծուվըվը՛տան ջանը տուս ա տամ* (Բ):

ԾՈՒՎԱՏԸ՛Ղ - *գ.* Ձու ածելու տեղ: *Պառավը հիշկան շօռ ա կամ, կարում չի էտ հավէն ծուվատը՛ղը քըթէնա* (Զ):

ԾՈՒՎԸԿԱԽԷԼ - *չբ.* Ձուն հետեւից կախվել, ձու ածելու վիճակում լինել: *Վէր ածում ա, հարուստը ծուվըկախած հավու նըման ճըկըռում ա* (ՆԱԲ, 121):

ԾՈՒՎԸՀԱՆ - Գործածվում է կա-պակցության մեջ:

- Ծուվըհան ինիլ - *տե՛ս* Ծուվա կըտըր(վ)էլ (ԾՈՒ-ի տակ):

ԾՈՒՎԾՈՒՎԱԼ/ԾԸՎԾԸՎԱԼ - *չբ.* Շա-տերը կամ շատ անգամ սուր ճչոց՝ ծղրտոց հանել: *Ճօտը, բըղըրյար տա-ռած, սանսէրը քըցում ա ընդը՛ղէք, ծըվ-ծըվամ...* (ԱԱռ, 57):

ԾՈՒՎԾՈՒՎԱԼԻ/ԾԸՎԾԸՎԱԼԻ - *ած.* Աշխույժ, կենսուրախ: *... Տըղան մըծա-ցալ ա, ծըվծըվալի վախտըն ա, կընէգ ա օգում սը՛րտը* (ԲՀԲ, 209):

ԾՈՒՎԾՈՒՎՑ(Ը)ՆԷԼ/ԾԸՎԾԸՎՑ(Ը)-ՆԷԼ - *պբ.* ԾՈՒՎԾՈՒՎԱԼ-ի:

ԾՈՒՎԾՈՒՎՕՆ/ԾԸՎԾԸՎՕՆ - *գ.* Շա-տերի կողմից կամ շատ անգամ սուր ձայնով ճչալը՝ ծղրտալը, սուր ճչոց՝ ծղրտոց: *Կընգանը ծուվծուվօնէն յըրա հիրըվանէրը կաս ըն, ըտըրանց ուրուր անա պիժընէս* (Զ):

ԾՈՒՎԾՈՒՎՕՑ/ԾԸՎԾԸՎՕՑ - *տե՛ս* ԾՈՒՎԾՈՒՎՕՆ:

ԾՈՒՎՎԱԼ/ԾԸՎՎԱԼ - *չբ.* Բարակ եւ սուր ձայնով ճչալ՝ ծղրտալ: *Վէր ծուվվամ ա, պիրանան մին օխծու ճօտ ա տուս կամ* (ՀԺՀ, V, 514):

- Ծուվվացած, յը՛տ պէրած - Վտիտ, տկար (անձ): *Ծուվվացած, յը՛տ պէրած ախճիգ ա* (Բ):

ԾՈՒՎՎԱՆ/ԾԸՎՎԱՆ - *գ.* 1. Թույլ՝ բարակ ձայն: *Ըստրա ծուվվանը ըսկա-նում ըն, կամ, տը՛սնում վէր ընգած* (Զ): 2. Եղեգից պատրաստած փոքրիկ շվի՝ սրինգ: *Չօբանը կանլիս ա էտ ղամիշը կըտրում, մին ծըվվան շինում* (ՀԺՀ, V, 613): 3. *տե՛ս* ՊԸԿՈՒ:

- Ծուվվանը կըտըրէլ - Պապանձվել, չկարողանալ խոսել: *Վէր տէսի վէ՞չ Կափրէլ դային ա, յէկալ ա ինձ էն դուն-յան քուչընցնի, ծըվվանըս կըտըրից...* (ՋՏ, Բ, 3):

ԾՈՒՎՎՈՒՑ(Ը)ՆԷԼ/ԾԸՎՎԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *պբ.* ԾՈՒՎՎԱԼ-ի: 2. *նբ. հեգն.* Կոնծել: *Էրկու կը՛վաթ կինի յա ծուվվուցընում, քինամ* (Զ):

ԾՈՒՎՎՕՆ/ԾԸՎՎՕՆ - Բարակ եւ

սուր ձայնով ճչալը՝ ծղրտալը, ճչոց, ծղրտոց: *Օխծը վէր կըծում ա, ըտըրա ծուվվօնը շէնըմը ըսկանում ըն* (Ձ):

ԾՈՒՎՎՕՆ-ԾԸԿԸԼԹՕՆ/ԾԸՎՎՕՆ-ԾԸԿԸԼԹՕՆ - *տե՛ս* ԾՈՒՎԾՈՒՎՕՆ:

ԾՈՒՎՎՕՑ/ԾԸՎՎՕՑ - *տե՛ս* ԾՈՒՎՎՕՆ:

ԾՈՒՎՎՕՑ-ԾԸԿԸԼԹՕՑ/ԾԸՎՎՕՑ-ԾԸԿԸԼԹՕՑ - *տե՛ս* ԾՈՒՎԾՈՒՎՕՆ:

ԾՈՒՐԾՕՐՈՒՏ - *տե՛ս* ԾԸՐԾՕՐՈՒՏ:

ԾՈՒՐՈՒՆԻ *(գրբ. ծերունի)* - *գ.* Ծեր տղամարդ, ծերունի: *Նի յա մընընըմ մաչը, տէսնըմ մին ծուրունի մէչին աղօթկ ա անըմ* (ՀԺՀ, V, 344):

ԾՈՒՑ - *տե՛ս* ԾՕՑ:

ԾՈՒՑԱՋՈՒԲ - *գ.* Ծոցագրպան: *Թանջիրը էտ թօխտը ծանլում ա, տինում ծուցըջուբումը* (Ձ):

ԾՈՒՑԱՎ - *ած.* Հղի կամ ծծկեր երեխա ունեցող (կանանց մասին): *Ծուցավ կընէգ ա Աշխէնը, կարում չի մարթին ք'ծմանգ անէ* (Բ):

ԾՈՒՑԱՔԱՂ/ԾՕՑՔԱՂ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծուցաքաղ անէլ/տալ - Պտուղը քաղելով ծոցը լցնել: *Խօխէնք'ը նի յըն տը'ռնում բաղը, շանվթանլը ծուցաքաղ անում, փախչում* (Ձ):

ԾՈՒՑԸԿԱԼԻԼ - *չբ. տե՛ս* Ծըծէրը պըլիթիլ (ԾԸ'Ծ-ի տակ):

ԾՈՒՑ(Ը)ՎԷԼ - *չբ.* Հղիանալ (կնոջ մասին): *Հարթնը վէր ծուցվում ա, Թանմին էլ թօղում չի կօրծ անէ* (Ձ):

ԾՕԳՆԸ- *տե՛ս* ԾՕՅՆԸ:

ԾՕԹՕՐ - *տե՛ս* ԾԸՆԹՕՐԱՆ:

ԾՕԽ *(գրբ. ծուխ)* - *գ.* 1. Մանր ու պինդ մասնիկների եւ գազանման նյութերի ամբողջությունը, որ օդ է բարձրանում որեւէ բան այրվելիս, ծուխ: *Ք'ընընըմ ա, ք'ընընըմ, տը'սնըմ մին ծ'ըրըմ մին ծօխ ա յէր ինըմ* (ՀԺՀ, V, 54): 2. *փխբ.* Տնտեսություն, ընտանիք, տուն: *Պիլիթանուց միհէնգ' տասնըչօրս ծօխ կա* (Բ): 3. *փխբ.* Ընտանիք՝ տնտեսություն ծխատեր քահանայի նկատմամբ: *Էտ դէրին շէնումը օխտը ծօխ ա ինում* (Ձ): 4. *ած.* Ծխապատ, ծխով պարուրված: *Կամ ա, էտ ծօխ տը'ղը նըստում* (Ձ):

- Ծօխ անէլ - 1. Ծուխ բարձրանալ, ծխալ: *Խօստը նի յա կէնում, ծօխ ա անում, քըշէրէն պ'ունան տ'ուս ա կամ* (Ձ): 2. Ծխացնել, ծխալ տալ: *Տէրմանը ծօխ ըն անում, ուրանք ք'ինամ* (Ձ): 3. Շատ ծխախոտ ծխել: *Էնքան հուրըտըղա տանը ծօխ ըն ըրալ, տանան շընավը'տ ա կամ* (Բ):

- Ծօխը կըտըր(վ)էլ - 1. Օջախը քանդվել, տունը կործանվել: *Հարաբէդին հօրը տանը ծօխը կընօխէ յա կըտըրվալ* (Բ): 2. Սերունդը ընդհատվել՝ վերջանալ: *Մէլիք'ին էտ թօռնընն էլ վէր մը'ռնում ա, ծօխը կըտըրվում ա* (Ձ): 3. *տե՛ս* Թիլը կըտըրէլ:

- Ծօխը կըտըրցընէլ - 1. Օջախը քանդել, տունը կործանել: *... Ըտըրանք էն հանք'աթըմըն ըն, վէր շ'ուտ անին ուրանց օջախը քանդին, ծօխը կըտըրցընին...* (ՋՏ, Բ, 187): 2. Ոչնչացնել, բնաջնջել: *Թաքավէրը հըրաման ա տամ, վէր ըտըրա ազկէն-ծուպէն ծօխը կըտըրցընին* (Ձ): 3. *տե՛ս* Թիլը կըտըրցընէլ:

- Ծօխը յը'ր անէլ/հանէլ/տանէլ - 1. Օջախը շեն լինել: *Մարթին ուջախէն ծօխը յը'ր անօղը տըղան ա* (Ձ): 2. Ավերել: *Լէնգ' Թէմուրը շատ շէնու ծօխ ա յը'ր ըրալ* (Ձ):

- Ծօխը յը'ր ինիլ - 1. Օջախը շեն պահել: *Հինչ ա տըղան բընակա յը'կալ ա, Նուրէն օջախէն ծօխը յը'ր ա ինում* (Ձ): 2. Ավերվել: *Թօրքէրը նի յըն տը'ռէն շէնը, ծօխը յը'ր ա ինում* (Բ):

- Ծօխը փօրը ածէլ - *տե՛ս* Փօրը ծուխավ լըցնել:

- Ծօխը քամուն տալ - *տե՛ս* Ծօխը կըտըրցընէլ:

- Ծօխը քըթընընկէրավը տ'ուս կ'ալ - *տե՛ս* Քըթէն ծուխէրը յը'ր ինիլ (ՔԸ'Թ-ի տակ):

- Ծօխը քըթընընկէրավը տ'ուս օնէլ/ածէլ - *տե՛ս* Քըթէն ծուխէրը յը'ր անէլ (ՔԸ'Թ-ի տակ):

- Ծօխ թակէլ - Ծխից սեւանալ: *Տանը պատալօկը ծօխ թակալ ա* (Բ):

- Ծօխ կօխէլ - 1. Ծխով լցվել: *Փիչը ծօխ ըրավ, տօնը ծօխ կօխից* (Բ): 2. *տե՛ս* Ծօխ թակէլ:

- Ծօխ կօլ տալ - 1. Ծուխ ներշնչել: *Թուրունը ծօխ ա անում, կընանէք'ը ծօխ ըն կօլ տամ, օգ'ում ըն, թա խէխտըվին* (Ձ): 2. *տե՛ս* Ծօխ անէլ (3):

- Ծօխ տալ - 1. *տե՛ս* Ծօխ անէլ: 2. *տե՛ս* ԾՈՒԽԸՀԱՐԷԼ: 3. Փեթակները բացելիս ծուխ փչել մեղուների կողմը, որպեսզի չկծեն: *Մը'ղըրը վէր օգ'ում ըն կըտըրին, լ'ավ ծօխ ըն տամ, հանցու ճանջէրը կըծին վէչ* (Բ): 4. Ծառերը ցրտահարությունից փրկելու համար տակը անբոց կրակ վառել: *Փիս ցօրտ ա ինում, շինանցէք' ծառէրը ծօխ ըն տամ, վէր ցօրտ տանէ վէչ* (Ձ):

ԾՕԽՈՒՏ/ԾԸԽՕՏ - *ած.* 1. Որտեղ ծուխ կա, ծխով լցված: *Ծօխուտ տօն ա* (Բ): 2. Ծխից սեւացած, մրով պատված: *Ծօխուտ կ'էրանը կըտօրում ըն, էրում* (Ձ):

ԾՕԾ/ԾՈՒԾ *(գրբ. ծոծ)* - *գ.* 1. Սնամեջ ոսկորի մեջ գտնվող ճարպային նյութը, ոսկրածուծ: *Վը'սկըռը կօտըրում ըն, ծօծը օտում* (Բ): 2. *փխբ.* Բույսի ցողունի միջուկը՝ հյութը: *Ղըլղանը քըչըվում ըն, ծօծը օտում* (Բ): 3. *փխբ.* Տանիքի գերանների վրա փռվող ցախ՝ ճյուղեր՝ ծղոտ, որի վրայից լցնում են հողը: *Ծօծը մը'կնում ըն, վը'ղը ածում կըլխէն* (Ձ): 4. *փխբ.* Հարստություն, կարողություն: *Շինանցուն ծօծը հինչ բի՞դի ինի, մին կավ ա, մին պատառ վը'ղ* (Ձ): 5. *ած. փխբ.* Դատարկ, անպետք: *Թաղիմ ծօծ կըլ'ծ'խըտ* (Ձ):

- Ծօծը ծըծէլ - Հարստահարել, կեղեքել: *Էտ անխը'ղճը ախպօրցը ծօծը ծըծալ ա* (Բ):

- Ծօծը պէրակ - 1. Անկարող, աղքատ, խեղճ ու կրակ: *Ծօծը պէրակ տըղա յա, մին թանիրանվ յօլլա յա ք'ինամ* (Բ): 2. Վտիտ, նիհար: *Ծօծը պէրակ ախճիգ' ա, տա հինչ կօրծ բի՞դի անէ* (Բ):

ԾԸ՝ԿՆԸ - *տե՛ս* ԾՈՒԿՈՒՆ:

ԾԸ՝Ղ *(գրբ. ձող)* - *գ.* 1. Երկար բարակ փայտ: *Ըտը'ղ էլ փանդէր ա ինում վէր ածած, նըստա մին ծ'ըղ ա յօր օնում, էտ շանը վէր թակում, փախչում* (Ձ): 2. Մետաղյա նույնպիսի ճաղ: *Քամէն էտ ըրկաթէ ծ'ըղէրը սաղ քանդում ա* (Ձ): 3. *տե՛ս* ՁՕԼ (1, 2):

ԾԸ՝ՂԷ - *տե՛ս* ՁՕԼ (1, 2):

ԾԸ՝ՂԷԼ - Կաշին շերտ-շերտ կտրել՝ ձեւել: *Կ'ումաշին կաշին ծ'ըղում ա, հիրըվընընէրէն պիժը'նում* (Ձ):

ԾԸ՝Ղ-ԾԸ՝Ղ - *տե՛ս* ՁՕԼ-ՁՕԼ:

ԾՕՄ - *տե՛ս* ԾՈՒՄ:

ԾՕՅՆԸ/ԾՕՆԳ'ՆԸ/ԾՕԳՆԸ/ԾՕՆՆԸ *(գրբ. ծունկ(ն), ծունգ(ն))* - *գ.* 1. Ոտքի ծալվելու տեղը, ծունկ: *Ըտըրանք հացը կէրէն, մարթը կըլ'ծ'խը տիրանվ կընգանը ծօյնին, քօն իլանվ* (ՀԺՀ, V, 61): 2. *տե՛ս* ԱՐՄՈՒՆԳ (2, 3, 4): 3. *տե՛ս* ԳԱԼՂԱՆԱ:

- Ծույնէրէն ղաթը ըղնել - Դժվար կացության մեջ ընկնել: *Նէսօն ծույնէրէն ղաթընն ա ընգալ, կարում չի տօնը պահէ* (Բ):

- Ծույնէրը թակէլ - *տե՛ս* Ծույնէրը վէր թակէլ:

- Ծույնէրը թ'ուլանալ/ծ'ալվիլ - 1. Ուժասպառ լինել: *Էնքան քար ըմ քանդանլ, ծույնէրըս թ'ուլանցալ ա* (Բ): 2. Իրեն կորցնելով՝ թուլանալ, ուշքը գնալ (վախից, վշտից, որեւէ բանի բուռն ցանկությունից եւն): *Արչը վէր կ'օռռում ա, Կանփ'ուն ծույնէրը թ'ուլանում ա* (Ձ): 3. Ծերանալ, անզոր դառնալ: *Մուքի ապան ըսօր-էք'ուց հանրուր տըրը'կան ա, ծույնէրը թ'ուլանցալ ա* (Բ):

- Ծույնէրը չըկ'ալ - Նստած տեղից չկարողանալ բարձրանալ: *Ծույնէրըս կ'ամ չի, թա ք'ինիմ բօստանը ճիրիմ* (Բ):

- Ծույնէրը (վէր) թակէլ - 1. Վիշտը լացով՝ հեծեծանքով արտահայտել, հեծեծել, ողբալ: *Յը՛տնան պառավը ճինանչալ ա ուրան յըրա ըրած քարը, մընացալ ծույնէրը թըկէս* (ԱԱ, 69): 2. Խիստ զղջալ՝ փոշմանել: *Ծույնէրը վէր ա թակում, վէր վըխտէն հիրըվանէն կավը ինք՛ չի կալալ* (Զ):

- Ծույնու կըրկատան - *տե՛ս* Վը՛ռու կըրկատան:

- Ծօյնը ծույնավը քըցիլ - Պարապ նստել, հանգստանալ: *Լօխ կօրծ ըն անում, Ալրշակըն էլ ծօյնը ծույնավըն ա քըցում, կ՛իրք կարթում* (Զ):

- Ծօյնը կապած նանռ - Ուժեղ, զորեղ: *Օսունց Ջավադը ծօյնը կապած նանռ ա, վէշ մինը կարում չի ընդըրա ոչ՛տան կ՛ա* (Զ):

- Ծօյնը կըրկատած - 1. *տե՛ս* Վը՛ռը կըրկատած: 2. Աշխատասեր: *Ծօյնը կըրկատած մարթը տունզնը չի մընալ* (Զ):

- Ծօյնըն օնէլ - Մի բան ջարդելու՝ ծռելու համար ծնկի տակ դնել եւ երկու ձեռքով դեպի իրեն քաշել: *Դէվը կ՛ութանը ծօյնըն ա օնում, ծըռըցընում, ըխճըկանը ախպէրքը մընամ ըն մաթ մընացած* (Զ):

- Ծօյնը տալ - *տե՛ս* Արմունգ տալ:

ԾՕՆԳՆԸ - *տե՛ս* ԾՕՅՆԸ:

ԾՕՆԴԸՐ/ԾՈՒՆԴԸՐ *(գրբ. ծունր, ծունդր)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ծօնդըր տալ/տինիլ *(գրբ. ծունր դնեմ)* - Աղոթքի՝ աղերսանքի՝ երկրպագելու եւն համար ծնկի գալ, ծնրադրել: *Լըհա՛ վէր մուտանըմ ա, լօխ ժողովուրթը ծօնդըր ըն տամ, ուրան հըղէ տամ* (ՀԺՀ, VI, 189):

ԾՕՆԹԷԼ - *տե՛ս* ՉԱՆԹԷԼ:

ԾՕՆՆԸ - *տե՛ս* ԾՕՅՆԸ:

ԾՕՊ - *տե՛ս* ԾՈՒՊ:

ԾՕՌ *(գրբ. ծուռ)* - *ած.* 1. Ոչ ուղղագիծ, բեկված: *Խօխան մատիտը յօր ա ունէս, մին ծառ խագ՛ քըշիս* (Զ): 2. Շեղ, թեք: *Պատը ծառ ա ինում, ուստէն փուլը տամ չըն* (Բ): 3. Բնական դիրքից խախտված: *Ըտըրա ծառ քըթավը լօխ մազաղ ըն ընէս* (Բ): 4. Ուղիղ ընթացքից շեղված, հորիզոնական կամ ուղղահայաց ուղղությունը խախտված: *Սաղ շէնըմը մին ք՛ուչա՛ յար, էն էլ ծառ* (Զ): 5. Ոչ ընդունված ձեւով: *Փափաղը ծառ ա տիրալ* (Բ): 6. Խարդախ, անազնիվ, անարդար: *Ծառ մարթը ծառ պէն կըփըռնէ* (Զ): 7. Սխալ: *Հանը գ՛ուդում ա, վէր տըղէն ասածը ծառ ա, ամմա սուս ա անում, սանս չի անում* (Զ):

- Ծառ աշկավ յէշիլ - 1. Խեթ՝ խոժոռ նայել մեկին՝ մի բանի: *Մարթը վէր ծառ աշկավ յէշում ա, կընէգ՛ը հանը՛ը՛վը յը՛ր ա օնում* (Զ): 2. Անբարյացակամորեն՝ վատ վերաբերվել մեկին՝ մի բանի: *Էտ մարթը խօրթ տըղէն միշտ ծառ աշկավ ար յէշում* (Զ): 3. Վատ մտքով՝ ցանկական հայացքով նայել մեկին, մեկի նկատմամբ ստոր նպատակներ ունենալ: *Շաբօն հինչ մարթ ա՞, ախպօրցը կընանուցընը էլ ա ծառ աշկավ յէշում* (Զ):

- Ծառ խօսկ - Վիրավորական՝ տհաճ արտահայտություն: *Էտ հարթանը ուրան գ՛անքումը հանալ ըսկէսվօրը ծառ խօսկ ասած չի* (Բ):

- Ծառ հըղէ - Անազնիվ՝ ոչ շիտակ ճանապարհ՝ վարքագիծ՝ վերաբերմունք՝ միջոց: *Հանը ասմա.- Քու ըրածըտ ծառ ա, ծառ հըղավ կարէլ չըս լ՛ավ մարթ տը՛ռնաս* (Զ):

- Ծառ հըղու յըրա ինիլ - *տե՛ս* Հըղա տանուս կ՛անալ (ՀԸՂԷ-ի տակ):

- Ծառ մաշկը դանուգ փանդը կընդանուզընընէ - Խարդախ՝ անազնիվ՝ անարդար մարդուն միայն դագաղը՝ մահը կարող է ուղղել:

- Ծառ մընթկավ յէշիլ - *տե՛ս* Ծառ աշկավ յէշիլ (3):

- Ծառ յէշիլ - *տե՛ս* Ծառ աշկավ յէշիլ:

- Ծառ նըստինք՛, դանուգ/դօղուր խօսինք՛ - Չնայած մեր ոչ լավ հարաբերություններին՝ անկեղծորեն խոսենք: *Մացակը ասմա.- Խո՛ւդանն, ծառ նըստինք՛, դանուգ խօսինք՛, մինչը՛վ խընռավէլը յը՛ս ք՛ը՛գ փիսօթուն ըրած ը՞մ* (Զ):

- Ծառ վէգ դանուզընընօղ - Խեղճին՝ թույլին օգնող (անձ): *Արշակը ծառ վէգ դանուզընընօղ ա, շատ ա՛պրէ* (Բ):

- Ծառ փանդը չանլիգ՛ շինիլ - Անարդարություն անել, ճշմարտության դեմ մեղանչել: *Ապան հանրանուր տարէ ապըրից, ծառ փանդը չանլիգ՛ չի շինից* (Բ):

- Ծառ փանդին վէր մաշկընտ տէմ ընէր, մաշկընտ էլ կընծընռէ - Անարդար մարդուն՝ անարդարությանը ապավինողը ի վերջո տուժում է:

ԾՕՌ-ԾՕՌ - 1. *տե՛ս* ԾԸՌԸՄՕՌ: 2. *տե՛ս* ԾՕՌ (6):

- Ծառ-ծառ յէշիլ - *տե՛ս* Ծառ աշկավ յէշիլ:

ԾՕՌ(ՆԸ) - *գ.* Թոռան զավակ, թոռնորդի: *Մանիշ աքօրը տըսնընօխտը թոռնը օնէ, տըսնընօխտը ծառնը, էրկու կօռնը* (Բ):

- Ծառնը ծուռնատար ա տը՛ռալ - Անարդարությունները բազմապատկվել եւն: *Հինչա Դանրանց Սէրգ՛ին նախագա յա տը՛ռալ, կըլխօգումը ծառնը ծուռնատար ա տը՛ռալ* (Զ):

ԾՕՎ *(գրբ. ծով)* - *գ.* 1. Դառնաղի ջրով ջրային մեծ տարածություն, ծով: *Ընգնըմ ա էք՛ ծիյանցը կօշտը, ուրան կըճէղակավը վը՛ղ յօր օնըմ ծօվին տական, տանուս կ՛անմ* (ՀԺՀ, V, 105): 2. Արհեստական մեծ ջրամբար: *Սիրսանգ՛ա ծօվը Մարտակէրտա ըռայօնումըն ա* (Բ): 3. Ընդհանրապես ջրային տարածություն՝ ի հակադրություն ցամաքի: *Ըշխարքէս կէսան շատը ծօվ ա* (Զ): 4. *փխբ.* Շատ, առատ: *Ըստարէ խօտը ծօվ ա* (Բ):

- Ծօվէն դումը հըմբարէլ - *տե՛ս* Ասթխէրը հըմբարէլ:

- Ծօվէն մընչանք մը՛ծ, ըսթըխէրան իվիլ - Շատ մեծ եւ բազմաքանակ: *Լէնգ՛ Թէմուրէն էլ ծօվէն մընչանք մը՛ծ, ըսթըխէրան իվիլ զօրք ա ինում* (Զ):

- Ծօվը կըրակ տալ - 1. *տե՛ս* Ասթխէրը հըմբարէլ: 2. Ստաբանել, ստախոսել: *Հինչ ը՞ս ծօվը կըրակ տամ, ըտի պէն ինիլ չի* (Զ):

- Ծօվը մէրօղ, մածուն շինօղ - Շատ ճարպիկ՝ ձեռներեց: *Ծօվը մէրօղ, մածուն շինօղ տըղա յար Ափկարը* (Զ):

- Ծօվընն ըղնօղը տիրմանան՝ օխծէն հանք՛վան էլ ա փըռնում - Անելանելի՝ ծանր վիճակում հայտնվողը ցանկացած միջոցի դիմում է:

- Ծօվը ք՛ինի՝ կըցըմաքէ - *տե՛ս* Ախպանրը ք՛ինի՝ ճանրը կըցըմաքէ:

- Ծօվ կապէլ - 1. Ջուրը՝ հեղուկը մի տեղ հավաքելով՝ լճացնել: *Արխը հըսցընում ա հայաթը, ծըռէրէն տակը ծօվ կապում* (Զ): 2. *տե՛ս* Ծօվ տը՛ռնալ:

- Ծօվ տը՛ռնալ - Շատանալ, բազմանալ: *...Հայասըզօթունը, անաբուռ ու անխըղճմըտանք պէնէրը ծօվ ա տէռալ, յէրգ՛իրը Սօղօմ-Գօմօր շինալ* (ՋՏ, Բ, 35):

- Ծօվու մայա - Խառնակիչ, խառնակություն անող: *Ք՛օսանց Նուբարը ծօվու մայա յա, սաղ շինանցուց ուրանուր նըհը՛տ կըռվըցըրալ ա* (Բ):

ԾՕՐ *(գրբ. ծոր)* - *գ.* 1. Ծորալը, ծորում: *Արաշտ ըրավ, էտ ըխպիրին ծօրը կըտըրից* (Զ): 2. Հեղուկ կամ կիսահեղուկ նյութերի վերեւից ներքեւ հոսող շիթը: *Մը՛ղըրէն ծօրը վէր դանստի կըտըրվից վէջ, գ՛իդան վէր թանմանզ մը՛ղըր չի* (Բ): 3. Երգի՝ մեղեդու՝ եղանակի ձայների երկարաձգումը: *Ջուռնէն ծօրը ժուղովուրթէն հըվաքում ա* (Զ): 4. *տե՛ս* ԴԱՄ[1]:

- Ծօրը կաթէլ - *տե՛ս* Մաթը կաթէլ:

- Ծօր ըղնէլ - *տե՛ս* Ծօր տալ:

- Ծօր(ը) պահէլ - *տե՛ս* Դանմ(ը) պահէլ: *Իրէք հօքի յըն ինում. մինը՝ զուռնա փըչօղ, մինը՝ ծօր պահօղ, մինըն էլ՝ թաքլի թըխօղ* (ՆԼՂԺԲ, 112):

- Ծօր տալ - 1. Ծորալ, ծորով հոսել: *Մը՛ղըրը ծօր ա տամ, ծառան վէր տը՛ռնում* (Զ): 2. Երկարորեն՝ անընդմեջ

հնչել (ձայնի մասին): *Էտ սանը ծոր ա տամ, յըխծավը մին տըռնում* (Ձ): 3. Ձայնը երկարացնելով խոսել՝ երկարացնել՝ հնչեցնել: *Հինչ ը՞ս ծոր տամ, կարճ ամէ* (Բ):

- Ծոր քըցիլ - 1. Ծորով թափել՝ հոսեցնել: *Խօխան բանքմանը ծոր քըցից, շծրէրը մուրտառից* (Բ): 2. *տեմ* Ծոր տալ:

ԾՇՐ *(գրբ. ձոր)* - *գ.* Ձոր, կիրճ: *Հունծտա ծծրը խօր ծծր ա* (Բ):

- Ծծրան սարը պիցըրանալ/քինիլ - Հասակ առնել, չափահաս դառնալ: *Ըհմըդնէն մըծանըմ ըն՝ ծծրան քընում ըն սարը...* (ՆԱԲ, 53):

ԾՇՐԱԿ/ԾՇՐԱՆԿ *(գրբ. ձորակ)* - Փոքրիկ ձոր, ձորակ: *Էս ծծրանկումը առաչ մին դընդըվէր ա իլանլ ըպրէլիս* (ԱԱ, 51):

ԾՇՐԱՆԿ - *տեմ* ԾՇՐԱԿ:

ԾՇՐԷ *(գրբ. ծորենի (հաղարջի թուփը), ծոր (հաղարջ)* - *գ.* 1. Ծորենազգիների ընտանիքին պատկանող պտղատու ծառատեսակ: *Մին ծծրէ յա պիրում, հըյաթումը տընգում* (Ձ): 2. Այդ ծառի պտուղը, որ լինում է կլոր, թթվաշ, մուգ կապտավուն: *Ծծրանն լավ վարէննի յա տըռնում* (Բ):

ԾՕՑ/ԾՈՒՑ *(գրբ. ծոց)* - *գ.* 1. Կրծքի եւ այն պատող զգեստի արանքը՝ գոտկատեղից մինչեւ պարանոցը: *Տընդան էտ տիրէվը յօր ա օնում, տինում ծոցումը, հընէ հինում* (ՆԼՂԺԲ, 17): 2. *փխբ.* Կուրծք: *Հըմանչում էլ չի, ծոցը պէց ա ընալ, տիւս յըկալ հայաթը* (Բ): 3. Վերնահագուստի վերեւի ներսի մասը: *Հանը ծոցէն ջուբան մին կուճի խադալիկ ա տիւս ընէս, տաս ըտընրան* (Ձ): 4. *փխբ.* Գիրկ: *Խօխան մօրը ծոցումը քունավ ա ընցալ* (Բ): 5. *փխբ.* Որեւէ բանի ներսի տարածությունը, ներսը, մեջը: *Ըտի էտ հիյվընէն ծըմակէն ծոցումը կէնում ըն* (Ձ): 6. *փխբ.* Խոռոչ, խորշ, փոս: *Կընխտարը ընտըղ մին ծոց ա քընթէնում, նի մընում մաչը* (Ձ):

- Ծոց անէլ - Խոռոչի ձեւ տալ: *Փանը տանշում ա, ծոց անում* (Ձ):

- Ծոցը թընխծընէլ - Լավ վաստակել, շատ փող աշխատել: *Խուջանց Այդինը էրկու տարէ քինամ ա սիգօն, ծոցը թընխծընում, կամ* (Ձ):

- Ծոցը լիգը - 1. Պարարտ ստինքներ ունեցող: *Ծոցը լիգը ախճիգ ա, ջիհիլնէն աշկ չըն կընտըրում նըստա* (Բ): 2. Ունեւոր, հարուստ: *Ծոցը լիգը մարթ ա Առըստամը, ամմա ճըրդօտած շծրէր ա կընէնում* (Ձ):

- Ծոցը ծաղկավ լիգը - Ջավակներ ունենալու, սերելու, պտղաբերելու մեծ հնարավորություն ունեցող (հատկապես ասում են որդեկորույս ջահել կանանց մասին): *Մըրյանէն խօխան մըռալ ա.- Վէջինչ, էն ա ծոցը ծաղկավ լիգը, մինը էլ կըպիրի* (Ձ):

- Ծոցը կըրակ ըղնէլ - Մորմոքվել, մտատանջվել, ծանր մտքերի մեջ ընկնել: *Էն ա ծոցըս կըրակ ընգած, գանդում չըմ՝ հունց անիմ, վէր արտըս հընձիմ* (Ձ):

- Ծոցը նի մընէլ - 1. Մեկի անկողինը մտնել, մեկի հետ միասին քնել: *Թոռնը այուն ծոցընն ա նի մընում, այուն նընիրտ քօն հինում* (Ձ): 2. Մեկի հետ սիրաբանել՝ կենակցել: *Ղանխայն կընէգ ա, հուր տըսնում ա, ծոցընն ա նի մընում* (Բ):

- Ծոցը պէրակ - Նրբակազմ, նրբամարմին: *Աննան ծոցը պէրակ ախճիգ ա իլանլ, միհէնգ ա ըտի քուքացալ* (Բ):

- Ծոցումը կըրակ տինիլ - Մորմոքել, մտատանջել, ծանր մտքերի մեջ գցել: *Էտ ախճիգը հօրը ծոցումը կըրակ ա տիրանլ* (Բ):

- Ծոցումը քար տինիլ - Համարձակություն ստանալ, սրտապնդվել: *Տընդան հօրը խուսկէրքան սըրտընհանվում ա՝ ծոցումը քար տինում, փանիլիվանէն վէր քընցում* (Ձ):

- Ծոցումը օխծ թընխծընէլ - Մեկին խնամել՝ օգնել՝ հովանավորել՝ չգիտակցելով, որ նա իր թշնամին է կամ իր թշնամին է դառնալու: *Չօբանը էտ կանլին ճօտէն պիրում ա պահում, էլ գանդում չի, վէր ծոցումը օխծ ա թընխծընում* (Ձ):

- Ծոցում, փէշկում օտէլ - Մի բան թաքուն՝ ծածուկ ուտել: *Նընքանը վախան նընիրտ հինչը օտում ար, ծոցում, փէշկում ար օտում* (Ձ):

- Ծոց տալ - *տեմ* Ծոց անէլ:

ԾՕՑՔԱՂ - *տեմ* ԾՈՒՑԱՔԱՂ:

Կ

ԿԱ[1] *(գրբ. կա)* - *նբ.* Վերցրու, առ (հրամայական եղանակ): *Հանը աստա.- Կա՛, էս փուլը տա՛ր, տո՛ թանջիրին* (Ձ):

- Կա յէ՞ - *տեմ* Ալա յէ՞:

ԿԱ[2] *(գրբ. կա)* - *չբ.* Պակասավոր ԿԱՄ բայի սահմանական եղանակի ներկայի երրորդ դեմքը: 1. Գոյություն ունի: *Հիշկան կանլը կա, վընխճընէն կըրըլան չըն ազադ ըրածին* (Բ): 2. Առկա է, ներկա է: *Տէսնում ըն, վէր էտ քարէն տակէն մին պէն կա պըսպըղէ տամ* (ՀԺՀ, V 116): 3. Լինում է, հնարավոր է, պատահում է: *Մարթ կա՝ փուլու հընտէ հուրանն մօրը էլ կընծախէ* (Ձ):

- Կա հо կա - Մշտապես գոյություն ունի: *Ղարաբաղցուն տանը հինչ էլ ինի վէջ, թօթէն արաղը ա հացը կա հо կա* (Ձ):

- Կա-չըկա - Երեւի, հավանաբար, անշուշտ: *Ընտածում ա, վար կա-չըկա, սա յա էշին ծունն* (ՆԼՂԺԲ, 124):

- Կա ու կա - *տեմ* Կա հо կա:

ԿԱԲԱՆ *(ռուս. кабан)* - *տեմ* ՎԱՐԱՋ (1): *Էտ ընմիշծտումը կաբանէ շատ ըն հինում, թաքավէրը միշտ կամ ար ընտըղ՝ վընրս* (Ձ):

ԿԱԲԱՉԿԻ *(ռուս. кабачок)* - *գ.* Դդմենու մի տեսակը, որի պտուղը սպիտակ է, բարակ ու երկարավուն: *Կաբաչկին ժարիտ ընրած ա հինում լանզանթ* (Բ):

ԿԱԲԻՆԷՏ *(ռուս. кабинет, ֆր. cabinet)* *գ.* - Առանձնասենյակ, աշխատասենյակ: *Փափաղը կընլխէն ա տինում էս Մահմադը, ք՝ընում նի մընում ընխճընկանը կաբինէտը...* (ՀԱԲ, 15, 18):

ԿԱԲԻՆԿԱ *(ռուս. кабина, ֆր. cabine)* *գ* - Ավտոմեքենայի խցիկ: *Շօֆէրը կաբինկան կընշխը տիւս ա օնում, տընսնում՝ մին մընծ օխծ էտ ընընբընստընրակէն կօլ ա տամ* (Ձ):

ԿԱԲԼՈՒԿ/ԿԱԲԼՕԿ *(ռուս. каблук)* - Կոշիկի ներբանի դուրս ցցված մասը, կրունկ: *Ախճիգը վընննամանը հանում ա, կաբլուկավը ընտրա կընլխէն տընրընքցընում, ինքը փախչում* (Ձ):

ԿԱԲԼՕԿ - *տեմ* ԿԱԲԼՈՒԿ:

ԿԱԲՈՒՏԸ(ԲԸ)/ԲՈՒԹՏԸ(ԲԸ)/ԲՈՒՏՏԸ(ԲԸ) (*ռուս. как будто*) - *տեմ* ՄԸԹԱՄ:

ԿԱԴԱՐԷԼ - *տեմ* ԿԸԴԱՐԷԼ:

ԿԱԴԱՐՄՈՒՆՔ - *տեմ* ԿԸԴԱՐՄՈՒՆՔ:

ԿԱԴԱՐՎԷԼ - *տեմ* ԿԸԴԱՐՎԷԼ:

ԿԱԴԸՐՅԷԼ *(գրբ. կատարեալ)* - *ած.* Կարգին, կատարյալ, օրինավոր, անթերի: *Մաքաղաթը կաղընրյէլ կընէգ ա* (Բ):

ԿԱՋ - *տեմ* ԿԱՆՋ:

ԿԱՆՋ/ԿԱՆՋ[1]/ԿԱՋ *(գրբ. կազ)* - *գ.* 1. Մոխրաջրի մեջ եփած բոժոժ, որից թել են ստանում: *Կանզը մուխընրընճիրանն տիւս ըն տամ, վէր թիլ քաշին:* 2. Ծակված բոժոժից ստացված մետաքս: *Կընէգը կանզանն մին դաշանգ չօխա յա կարում* (Ձ):

- Կանզ տալ - *տեմ* Տընազ անէլ:

ԿԱՋԱՐՄԱ *(ռուս. казарма, իտ. caserma)* - *գ. 1.* Զորքի կացարան, զորանոց: *Էն ա մընթընժոռալ ար, վընր մին զուռնի սանս յէր իլավ կազարմին մանիլանն* (ՋՏ, Ա, 1): 2. *փխբ.* Մեծ՝ ընդարձակ շենք՝ բնակարան՝ սենյակ: *Օսէփը տընղէն հընտէ մին կազարմա յա շինանլ* (Բ):

ԿԱՋԷԹ *(ռուս. газета, իտ. gazzetta)* *գ.* Թերթ, լրագիր: *Միհէնգ կազէթ կարթող չի կա, լօխ էն ըն շաղված* (Ձ):

- Կազէթ ըղնէլ - Լրագրում տպագրվել, լրագրի նյութ դառնալ: *Դօրռւց Մաքաղաթէն էծը իրը՝ք հօլ ա ծընալ, էտ պէնը կազէթ ա ընգալ* (Բ):

- Կազէթ կ՚իրօղ - Լրագրի աշխատակից, լրագրող: *Դէ էլ հինչ կ՚իրի՞մ, պարոն՚ւն կազէթ կ՚իրօղ, կիլօխըտ շատ ցըվըցըրի...* (ՋՏ, Ա, 37):

- Կազէթ քըցիլ - Լրագրում տպագրել, լրագրի նյութ դարձնել: *Ասում ըն՝ մին քանէ տարէ առաչ Յէրէվանա յը՝կալ ըն Մըցակէն բաղը նըկարալ, տարալ կազէթ քըցա՚ալ* (Բ):

ԿԱ՚Ջ-ԿԱ՚Ծ - *տե՛ս* ԿԱԾ՚-ԿԱԾ՚:

ԿԱՋՄԱԿԷՐՊԷԼ *(գրբ. կազմակերպեմ (շինել, կոկել, ձեւացնել) - նբ.* Մի բան նախաձեռնել՝ ձեռնարկել: *Էտ էլ Օհանջանյան Մուշէղընն ա կազմակերպալ...* (ԱԱ, 19):

ԿԱՋՄԱԿԷՐՊ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԱՋՄԱԿԷՐՊԷԼ-ի:

ԿԱՋՄԷԼ - *տե՛ս* ԿԱ՚ՋՄԷԼ:

ԿԱ՚ՋՄԷԼ/ԿԱՋՄԷԼ/ԿԱ՚ՋՄԻԼ/ԿԱՋՄԻԼ *(գրբ. կազմեմ (շինել, շտկել, պատրաստել) - նբ.* 1. Կազմի մեջ առնել, կազմ պատրաստել: *Կ՚իրքէրը կա՚զմում ըն, շարում* (Ձ): 2. Իրար կողքի բերելով՝ միացնել, միակցել, կցել, կարգի բերել: *Հարթնը աման-չամանը կա՚զմում ա, խօրա՚գը իփռում, ք՚ինա՚մ բաղը* (Ձ): 3. *փխբ.* Մեկին խիստ նախատելով, ծեծելով՝ կարգի հրավիրել: *Մարթը կընգանը մին լ՚ավ կազմում ա* (Ձ):

ԿԱՋՄԸՎԷԼ - *տե՛ս* ԿԱ՚ՋՄԸՎԷԼ:

ԿԱ՚ՋՄԸՎԷԼ/ԿԱՋՄԸՎԷԼ/ԿԱ՚ՋՄԸՎԻԼ/ԿԱՋՄԸՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԿԱ՚ՋՄԷԼ-ի:

ԿԱՋՄԸՎԻԼ - *տե՛ս* ԿԱ՚ՋՄԸՎԷԼ:

ԿԱ՚ՋՄԸՎԻԼ - *տե՛ս* ԿԱ՚ՋՄԸՎԷԼ:

ԿԱՋՄԻԼ - *տե՛ս* ԿԱ՚ՋՄԷԼ:

ԿԱ՚ՋՄԻԼ - *տե՛ս* ԿԱ՚ՋՄԷԼ:

ԿԱՋՅՕՆՆԻ *(ռուս. казенный) - ածական.* Պետական, պետության կողմից տրվող՝ տրամադրվող: *Ըտըրան էլ մին քըսակ կազյօննի փուլ ա ինում* (Ձ):

ԿԱԹ *(գրբ. կաթ) - գ.* Կաթիլ, շիթ: *Էլ-հա ճընապարին վը՝ղին յըրան ա՚ռնին կաթէրին յէշիլավ ք՚ընըմ ըն, ք՚ընըմ, հըսնըմ էտ խօր վէրին* (ՀԺՀ, V, 18):

- Կաթ ըղնէլ - *տե՛ս* ԿԱԹԷԼ:

- Կաթը կըտըրէլ - Եկամտի նվազ աղբյուրից զրկվել: *Կավընն էլ վէր ըստակում ա, տահանց կաթը կըտըրում ա* (Ձ):

- Կաթը կըտըրցընէլ - Եկամտի նվազ աղբյուրից զրկել: *Նախագան դօրոչչուն կօրծա տա՚ւս ա քըցա՚ում, կաթը կըտըրցընում* (Ձ):

- Կաթ չըկաթէլ - Արնձրեւ չտեղալ, երաշտ լինել: *Հէնգ՚ ամէս ա՝ կաթ չի կաթալ* (Բ):

ԿԱԹԱՆ - *գ.* Խորոված՝ շամփուրներից քաշելու հացը կամ լավաշը, որ յուղով թաթախվում է: *Կաթանը խըրըվածան լա՚զա՚թ ա* (Բ):

ԿԱԹԷԼ/ԿԱԹԻԼ *(գրբ. կաթեմ) - չբ.* 1. Կաթիլ առ կաթիլ թափվել՝ ծորալ: *Ք՚ինըմ ա մին սարի տօ՚շըմ տը՝սնըմ՝ մին քարա ճա՚ւր ա կաթըմ* (ՀԺՀ, V, 80): 2. Ծածկից՝ տանիքից ջուր՝ անձրեւաջուր թափվել՝ դուրս տալ: *Կ՚ա՚մէն կըտօրը կաթում ա* (Բ): 3. Ցայտել, փայլել, ցոլալ: *Հա՚ւրթան մին լա՚ւս ա կաթա՚ւմ դարադամէն մաչին* (Ձ): 4. *տե՛ս Կաթա՚ւկ տալ* (1):

ԿԱԹԷՂ - *տե՛ս* ԿԸԹՆԸ՝ՂԱՆ:

ԿԱԹԸՂ(Ը)ԿՕՍ/ԿԸԹԸՂ(Ը)ԿՕՍ/ԿԱԹԸՂԻԿՕՍ/ՔԸԹԸՂԿԱ *(գրբ. կաթողիկոս) - գ.* Ծայրագույն պատրիարք, կաթողիկոս: *Ըսէս ա պըրծընէս, հըդէ ինիս Ամարասա վանքէն կաթըղըկօսէն կօշտը* (ԼՂԲ, 396):

ԿԱԹԸՂԻԿՕՍ - *տե՛ս* ԿԱԹԸՂ(Ը)-ԿՕՍ:

ԿԱԹԻԼ - *տե՛ս* ԿԱԹԷԼ:

ԿԱԹ-ԿԱԹ - *մ.* Կաթիլ առ կաթիլ, կաթկթելով, քիչ քանակությամբ: *Ծա՚ւնը կ՚ամ ա, կաթ-կաթ քամվում, ախպա՚ւր տա՚ռնում* (ԱԱ, 58):

ԿԱԹՆԱՎ - 1. *գ.* Կաթով, բրնձով եւ շաքարով պատրաստված կերակուր, կաթնապուր: *Կաթնավը Հէղան այուն սիրիլի խօրա՚գը՝ն ա* (Բ): 2. *տե՛ս* ԿԸԹՆԱՏՈՒ:

- Կաթնավ ճա՚շ - *տե՛ս* ԿԱԹՆԱՎ (1):

ԿԱԹՆԸ *(գրբ. կաթն) - գ.* 1. Կանանց եւ կաթնասունների գեղձերից արտադրվող՝ ճարպ ու սպիտակուց պարունակող սննդարար հեղուկ, կաթ: *Կաթնը պա՚ւրում ըն թաքավէրէն հէտէ, թաքավէրը խըմում ա, լիվանում* (ՀԺՀ, V, 441): 2. Որոշ բույսերի մեջ պարունակվող սպիտակավուն հյութը: *Թա՚ւզին ճէղնը վէր կըտըրում ըս, կաթն ա կ՚ամ* (Բ):

- Կաթնա կըտըրէլ - *տե՛ս* Ծըծա կըտըրէլ (ԾԸ՝Ծ-ի տակ):

- Կաթնա կըտըրվէլ - *տե՛ս* Ծըծա կըտըրվէլ (ԾԸ՝Ծ-ի տակ):

- Կաթնանը ըգ՚օրա՚ պըռանչիլ - Իր արածի՝ ստեղծածի համապատասխան խոսել: *Վէր ամէն մարթ ո՚ւրա՚ն կաթնանը ըգ՚օրա՚ պըռանչի, աշխարքըս դա՚ւզօթուն կըղնէ* (Ձ):

- Կաթնէն նըհը՝ետ նի մըտածը հա՚ւք՚վա՚ւն նըհը՝ետ տա՚ւս կըկ՚ա - Ժառանգականությամբ պայմանավորված հատկանիշները՝ բնավորության գծերը մինչեւ մահ պահպանվում են:

- Կաթնը ըղնէլ - Սկսել հասունանալ, կաթնամոմային հասունության շրջանում լինել (պտուղների եւ հացաբույսերի մասին): *Վէր մին էրկու օր էլ ա՚ռը՝վ անէ, ցօրէնը կաթն ա ըղնական* (Բ):

- Կաթնըն ա ա՚ռա՚ւնը ո՚ւրա՚ւր խառնած - Վարդագույն: *Կաթնըն ա ա՚ռա՚ւնը ո՚ւրա՚ւր խառնած թօշեր օնէ Նինիկը* (Բ):

- Կաթնը շաղել - 1. Գործը փչանալ՝ խանգարվել՝ գլուխ չգալ: *Մէր կաթնը շաղալ ա, հինչ ա էտ օյինբազը մը՝գ նը-հը՝ետ հըրակաշ ա տը՝ռալ* (Ձ): 2. Հարաբերությունները խզվել, իրար հետ գժտվել: *Ըտըրանց կաթնը էրկու տարէ առաչ ա շաղալ, ուրուր նըհը՝ետ խօսում չընն* (Բ):

- Կաթն ըս օգ՚ում՝ կավ պահէ - Արդյունք ունենալու համար պետք է միջոցներ ձեռնարկել:

- Կաթնը տալ - 1. *տե՛ս* Ծը՝ծ տալ: 2. Կաթ արտադրել: *Էտ էծը օրը մին լիտըր կաթն ար տամ* (Ձ):

- Կաթնը օտէլ - *տե՛ս* Ծը՝ծ օտել:

ԿԱԹՆՈՒԿ - *գ.* Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող խոտաբույս, որը կաթնահյութ է պարունակում, հազար: *Էշէրը կաթնուկը օտում ըն, պըլանում* (Ձ):

ԿԱԹՆՈՒՏ - *տե՛ս* ԿԸԹՆԸԹԱԹԱԽ:

ԿԱԹՏԱՄԱՋ - *ածական.* Պինդ, ամուր, չկաթող (ծածկի՝ տանիքի մասին): *Կաթտամազ կըտօր ա, հիշկան ծա՚ւն ա յը՝կալ, կաթալ չի* (Ձ):

ԿԱԹՈՒԿ - *տե՛ս* ԿԱ՚ԹՈՒԿ:

ԿԱ՚ԹՈՒԿ/ԿԱԹՈՒԿ - *գ.* Շատ հասած եւ ծառից վայր ընկած պտուղ: *Լըհա վը՝ննընտ փուխէս ըս, վը՝ննընտ սըլկըհէս ա, էնքան կաթուկ ա ինիս* (ԼՂԲ, 384):

- Կա՚թուկը վէր վէր ըղնէ, ծառեն տակը կըղնէ - Յուրաքանչյուրը իր ծնողներին է նմանվում:

- Կա՚թուկ տալ - 1. Շատ հասնելուց ծառից ընկնել (պտուղների մասին): *Աշունքը հա՚ւնը կա՚թուկ ա տամ, արչը օտում ա, քուշտանում* (Ձ): 2. Շատ ծերանալ, մեռնելու շէմին լինել: *Սաղ շէնումը էրկու պառավ կա, ըտըրանք էլ էն ըն կաթուկ տուված* (Բ): 3. Գլորվել, ընկնել: *Էշէրը կ՚ամ ըն թա՚վ՚ալ տամ, մինմին կաթուկ տամ, վը՝ր տը՝ռնում քը՝ոծէն տակը, ըստըկօտում* (ՆԼՂԺԲ, 101):

- Կա՚թուկ տը՝ռնալ - *տե՛ս* Փօփ տը՝ռնալ:

ԿԱԹՈՒՑ - *տե՛ս* ԿԱԹՕՑ:

ԿԱԹՕՑ/ԿԱԹՈՒՑ - *գ.* 1. Կաթիլ առ կաթիլ թափվելը, կաթկթելը: *Ճիրին կաթօցը թօղում չի, վէր քօն ինինք՚* (Բ): 2. Ծածկից՝ տանիքից ջուր՝ անձրեւաջուր կաթելը: *Էտ կաթօցան կ՚էրանը փըթում ա, կօտըրում* (Ձ): 3. Հասած պտղի ընկնելը ծառից: *Տա՚նձին կաթօցէն վախտը խօզ՚էրը ծըմական կ՚ամ չընն շէնը* (Ձ): 4. *տե՛ս* ԿԱԹ:

ԿԼԺԼՄԼՆԻ/ԿԼՃԼՄԼՆԻ/ԿԱԺՄԱՆ - *տե՛ս* ԼԸՂԱՐ:

ԿԱԺԻ - *տե՛ս* ԼԸՂԱՐ:

ԿԱԺՄԱՆ - *տե՛ս* ԿԼԺԼՄԼՆԻ:

ԿԱԼ - *տե՛ս* ԿԱԼ[2]:

ԿԼԼ[1] - *տե՛ս* ԿԱԼ[1]:

ԿԼԼ[2] - *տե՛ս* ԿԱԼ[2]:

ԿԱԼԱՆՉ - *տե՛ս* ԿԸԼԱՆՉՕՑ:

ԿԱԼԱԾ *(արաբ. gallas (նենգավոր խաբեբա) - ածական. տե՛ս* Աշկը ծակ:

ԿԱԼԱՋ *(ռուս. калач) - գ.* Հացի տեսակ: *Կալաջը թուրնումը չըն թըխում* (Բ):

ԿԱԼԱՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Կալաս անել - 1. Կալսել, կալում փռված հասկերը տրորել կամ ծեծել՝ հատիկը առանձնացնելու համար: *Խօրթնէրը կալ՝ումը մը՝կնում ըն, կալաս անում* (Ձ): 2. *փխբ.* Շատ ծեծել: *Փըռում ըն ըտըրա կալաս անում* (Ձ):

ԿԱԼԼՆՍԿԱ *(ռուս. коляска) - գ.* Անվավոր եւ ճոճվող հարմարանք, որի մեջ քնեցնում կամ զբոսանքի են տանում փոքր երեխաներին: *Կալլանսկան ադաթ ընգավ, ուրուրունցը թավա ընգավ* (Բ):

ԿԱԼԱՓ - *տե՛ս* ԿԸԼԱՓ:

ԿԱԼԲԱՍ(Ա) *(ռուս. колбаса) - գ.* 1. Երշիկ: *Առաջ ա իլլալ, վէր էն ընք իլլալ կըլբասու հասրաթ, միհէնգ էն ա մաղազինէն լըցաց* (Բ): 2. *փխբ. տե՛ս* ԽԱՅԱ:

ԿԱԼԷՆԴԱՐ *(ռուս. календарь, լատ. calendarium) - գ.* Տեղեկատու հրատարակություն, օրացույց: *Սիմոն դային մին կալէնդար ա ինք՝ օնում, տանը պատան նը՝ստա տամ* (Ձ):

ԿԱԼԻԴՕՐ - *տե՛ս* ԿԱՐԻԴՕՐ:

ԿԱԼԽՕՋ/ԿՕԼԽՕՋ *(ռուս. колхоз)* - 1. *հպվ. գ.* Կոլեկտիվ գյուղատնտեսական ընկերություն խորհրդային կարգերի օրոք, կոլտնտեսություն: *Մըհէնգ՝ մը՝ր կալխօզէն հէնգ՝ մաշին օնէ...* (ԼՂԲՔ, 274): 2. *մ., ածական.* Միացյալ, համատեղ: *Շինընցէք՝ զիրավ ըն տը՝ռնում, էտ մարթին տօնը կօլխօզ շինում* (Բ):

- Կըլխօզու ժողով - Խառնաշփոթություն, իրարանցում: *Հաՙրը ասմա.- Հօ կըլխօզու ժողով չի՞, սուս ըրը՝ցէք՝* (Ձ):

ԿԱԼԽՕՋՆԻԿ/ԿՕԼԽՕՋՆԻԿ *(ռուս. колхозник)* - 1. *գ.* Կոլխոզի՝ կոլտնտեսության անդամ: *Ճըրտարա կալխօզնիկնէն շատ հարուստ ըն իլլալ* (Ձ): 2. *փխբ.* Անկիրթ՝ անտաշ մարդ: *Կօզ՝ի պէցՙուր պաշտօն օնէ, ամմա մին ա, կօլխօզնիկ ա Տիկրանը* (Բ):

ԿԱԼՂԷԳ՝ - *տե՛ս* ԿԱՂԼԷԳ՝:

ԿԼԼՄԼՉ - *տե՛ս* ԿԱԼ՝ՄԱՉ:

ԿԼԼՄԼՍՆԻԼ - *տե՛ս* ԿԱԼ՝ՄԼՍՆԻԼ:

ԿԱԼ[1]/ԿԼԼ[1] *(գրբ. կալ) - գ.* 1. Հարթ պնդացրած գետին, որտեղ կալսում են հացահատիկը: *Ըստը՝ղ առաջ կալ՝էր ա իլլալ, կը՝լ՝էրումը՝ մին յէխծէ, անումը՝ Կօտրած յէխծէ* ...(ԱԱ, 30): 2. Օրանի ծեծելու գործողությունը, կալսելը: *Հՙօնձը սաղ-սըլմաթ պըրծընում ըն, ամմա կալ՝ին վախտը թօռը նի յա օնում* (Ձ): 3. Օրանի այն քանակը, որ մի անգամ փռում են եւ ծեծում, խրձակույտ, բարդոց: *Քամէն թՙունդՙում ա, կալ՝ը քը՝շՙում* (Ձ):

- Կալ՝ա յը՝տ - Ուշացումով, ուշ: *Պուդին կալ՝ա յը՝տ քՙունՙում ա, տը՝սնում արտը հընձՙօ* (Ձ):

- Կալ՝ անել - 1. *տե՛ս* Կալաս անել: 2. *տե՛ս* Կալ՝մաչ անել: 3. Միեւնույն տեղում շատ գնալ, գալ: *Հՙյվընէն բօստանը կալ՝ ըն ըրալ* (Բ):

- Կալ՝ թակել - *տե՛ս* Կալաս անել (1):

ԿԱԼ՝[2]/ԿԼԼ[2]/ԿԱԼ - ՕՆԷԼ բայի հրամայականը:

ԿԱԼ՝ՄԱՉ/ԿԼԼՄԼՉ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Կալ՝մաչ անել - 1. Լծկաններին կալի մեջ բերել կամին լծելու համար: *Յը՝գ-նէրը կալ՝մաչ ըն անում, վէր կալ՝ը թակին* (Ձ): 2. *փխբ.* Շրջապատել, շրջափակել: *Կՙուլէրը ծՙյին կալ՝մաչ ըն անում, օտում* (Ձ): 3. *փխբ.* Մեկի վրա թափվել, մեկի շուրջը հավաքվելով՝ նեղել, ստիպել: *Մը՝ծը՝խըլունքնէն հըվաքվում ըն, թաքավէրէն կալ՝մաչ անում, վէր փըսակվէ* (ԽԱԲ, 38):

- Կալ՝մաչ ինիլ - Շրջապատվել, շրջափակվել: *Թօրքէրը, վէր կալ՝մաչ իլ՝ին, էլ կըրը՝գէն վէչ փախՙին* (Ձ):

ԿԱԼ՝ՄԼՍՆԻԼ/ԿԼԼՄԼՍՆԻԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Կալ՝մՙանսՙիլ անել - Անորակ աղալ: *Յօրէնը տարալ ա ճէղաց, կալ՝մՙանսՙիլ ըրալ, պէրալ* (Ձ):

ԿԱԼ՝ՊԱՐԻ/ԿԼԼՊՙԱՐԻ - *գ.* Շուրջպարի տեսակ, որ պարում էին կալի աշխատանքները վերջացնելուց հետո: *Միհէնգ՝ վէչ կալ՝ում կօրծ անօղ կա, վէչ էլ կալ՝պարի պար կ՝ըվօղ* (Բ):

ԿԱԼ՝ՎԷՐ/ԿԼԼՎԷՐ - *գ.* Կալում աշխատող մարդ: *Կալ՝վէրը ք՝ինամ ա, տը՝սնում՝ կալ՝ումը ցօրէնը կ՝ՙուտՙօ, մին զը՝ռ օխծ էլ յըրան նըստած* (Ձ):

ԿԱԼ՝ՎՈՒՐԹ/ԿԼԼՎՙՈՒՐԹ - 1. *տե՛ս* ԿԱԼ՝ՎԷՐ: *Մը՝ծ արտըմը դուշ կինի, կըլվուրթէն ամանը կ՝ՙուշ կինի...* (ԼՂԲ, 120): 2. *տե՛ս* ՀԱՇԱՆ:

ԿԼԼՊՙԱՐԻ - *տե՛ս* ԿԱԼ՝ՊԱՐԻ:

ԿԱԼՍԷԼ/ԿԱԼՍԻԼ *(գրբ. կասում) - տե՛ս* Կալաս անել (1):

ԿԱԼՍԻԼ - *տե՛ս* ԿԱԼՍԷԼ:

ԿԼԼՎՙՈՒՐԹ - *տե՛ս* ԿԱԼ՝ՎՈՒՐԹ:

ԿԱԼՈՒԾ *(ռուս. галоши, ֆր. galoches) - գ.* Ռետինե կարճավիզ կոշիկ: *Շինացէն ցը՝խ օրը առանց կալուշ կարէլ չի յօլլա ք՝ինի* (Ձ):

ԿԱԼՕԴ *(ռուս. колода) - գ.* Կապոց, փաթեթ (թղթադրամի, խաղաթղթի եւն մասին): *Փուլէն կալօդը ջուբան վէր տՙուս ա անում, դէրվիշը մընամ ա քար կըտըրած* (Ձ):

ԿԱԽ *(գրբ. կախ) - ածական.* Կախած, կախ ընկած, կախված: *Մին շօն ա մուտանում՝ ըրկաթէ ժինջիլը պըկան կախ* (Ձ):

- Կախ ածել/անել - *տե՛ս* Կախ տալ:

- Կախ ըղնել/ինիլ - 1. Կախված մնալ՝ լինել: *Էրկու քուրը կընընչկ՝ՙարմՙուր ըն տէռնում, յըրգ՝ինք՝ան կախ ընում* (ԽԱԲ, 92): 2. Կախվելով ինքնասպանություն գործել: *Վէր խաբարը կ՝ամ ա, թա տըղան մարթ ա ըսպանալ, տՙուրմՙա նըստալ, մարը կախ ա ինՙում* (Ձ): 3. Թեքվել, մի կողմի վրա շուռ գալ: *Էշին պէռնը կախ ա ընգալ* (Բ): 4. Խիստ ժլատություն անել: *Կախ ա ինում, թա ախպօրը մին թօրբա ՙալլէր տա* (Ձ):

- Կախ ընգած/իլՙած - *ծՙկ. տե՛ս* ԽԸ՝Ռ:

- Կախ տալ - 1. Կախ անել, կախել: *Յէշում ա տը՝սնում՝ կընէգ՝ը լըվաց ըրած, տըռանը քուղավը կախ տըված* (ԽԱԲ, 136): 2. Կախաղան բարձրացնել: *Թաքավէրը հըրամանք ա տամ, վէր ծՙուկուն փըռնօղէն տըղէն կախ տան մէյդանումը* (Ձ) *:*

- Կախ քընցիլ/օնէլ - 1. *տե՛ս* Կախ տալ: 2. Իջեցնել, խոնարհեցնել: *Հավէրը թէվէրը կախ ըն քընցՙալ* (Բ):

ԿԱԽԱՂԱՆ *(գրբ. կախաղան) - գ.* Կախաղան բարձրացնելու՝ կախելու սարք՝ հարմարանք: *Թաքավէրը հըրամմայըմ ա՝ կախաղանը պըդրաստին* (ՀԺՀ, V, 79):

ԿԱԽԱՆ *(գրբ. կախան (կախաղան) - գ.* Ձմեռվա համար պահելու՝ մառանում կախած միրգ՝ խաղող: *Կախանը քընընցընում ըն, էտ խօնցը պիժէնում* (Ձ):

- Կախան անել - Ձմեռվա համար մրգեր՝ խաղող կախել, կախանել: *Տՙանձը, խընձՙօրը, խաղուն կախան ըն անում, վէր ծըմը՝ռնը օտին* (Ձ):

ԿԱԽԱՋ - *գ.* Չորացնելու՝ ապուխտ դարձնելու համար կախած միս: *Կախաջը կախ-կախ ըն անում, չուրընցընում* (Ձ): 2. *փխբ.* Սաստիկ նիհար՝ կմախքացած անձ: *Էտ կախաջը էրկու ամէս ա՝ հացա-ճիրՙա կընտրրած* (Բ):

ԿԱԽԱՐԴ - *տե՛ս* ԿԱԽԱՐԹ:

ԿԱԽԱՐԹ/ԿԱԽԱՐԴ *(գրբ. կախարդ)- գ., ածական.* Ըստ սնահավատության՝ մարդ-

կային կարողություններից վեր, գերբնական գործողություններ կատարող, ինչպես նաեւ դյութող, հմայող, գուշակող (անձ): *Ամեն մեծէն տըղան հրամմայէց էն կախարթ ըխճըկօրցը, վար ղութին պիրին պըլատէն մէջը* (ՀԺՀ, V, 382):

ԿԱԽ-ԿԱԽ - *ած.* Ամբողջապես կախված՝ կախ ընկած: *Ծըռէրէն կախ-կախ ճըղնէրը կըտօրում ըն, վէր կարին բաղումը կօրծ անին* (Ձ):

- Կախ - կախ անէլ - Շատ բաներ եւ տարբեր տեղեր կախել, կախկխել: *Խօզ'էրը մուրթօտում ըն, կախ-կախ անում* (Ձ):

- Կախ-կախ ինիլ - Շատ բաներ եւ տարբեր տեղեր կախվել, կախկխվել: *Ալակուշկուշնէն նի յըն տը'ռնում տօնը, պըտէրան կախ-կախ ինում* (Ձ):

ԿԱԽԿԸԼՕԽ - *ած., մ. տես* Կըլօխը կախ:

ԿԱԽՄՈՒՆՔ - *գ.* Մեկից՝ մի բանից կախված լինելը, կախում, կախվածություն: *Տըղէն կախմունքը էտ թանջիրին անա մը'ծ ար* (Ձ):

ԿԱԽՏԱԿԱՆ/ԿԱՂԹԱԿԱՆ *(գրբ. գաղթական)* - *գ., ած.* Հայրենիքից գաղթած՝ գաղթող (մարդ): *Ղարաբաղ կաղթականնէ շատ կա* (Բ):

ԿԱԽՏԷԼ/ԿԱՂԹԷԼ *(գրբ. գաղթիմ)* - *չբ.* Հայրենիքից հեռանալ եւ այլ երկրում բնակություն հաստատել, գաղթական դառնալ: *Էրկու հարիւր տարէ առաջ Իրանան շատ հայէր ըն կախտալ, յը'կալ Ղարաբաղ* (Բ):

ԿԱԾ - *տես* ԿԱԾ':

ԿԱԾ - *տես* ԿԱԾ':

ԿԱԾԱԿ - *տես* ԿԱԾԱԿ:

ԿԱԾԱԿ/ԿԱԾԱԿ/ԿԱԾԱԿ/ԿԷԾԱԿ-(ՆԸ)/ԿԱԾ'ԱԿ/ԿԱՅԾԱԿ *(գրբ. կայծակն)* - *գ.* Օդում մթնոլորտային էլեկտրական հոսանքի ակնթարթային պարպում, կայծակ, շանթ: *Մին օր էլ կայծակը թըխում ա, էտ նախըրջուն կընգանը ըսպանում* (Ձ):

- Կայծակ անէլ - *տես* Կըծ'ըկըրակ անէլ:

- Կայծակ տալ - Կայծակ խփել, կայծակը զարկել, կայծակնահարել: *Հըղըցումը տէհանք մին կայծակ տըված ծառ* (ԼՂԲՔ, 262):

- Կըծակէն անէլ/տալ - *տես Կըծ'ըկըրակ անէլ:*

ԿԱԾԱԿ - *տես* ԿԱԾԱԿ:

ԿԱԾԱՆ/ԿԷԾԱՆ *(գրբ. կածան)* *գ.* Նեղ ճանապարհ, արահետ, շավիղ: *Էս կէծանը յէրէ Հուռըթաղա տանում ա Վանք* (ԱԱ, 42):

ԿԱԾԻԳ' - *գ.* Կարճահասակ մարդ: *Հէղուշին մարթը կածիգ' ա* (Բ):

ԿԱԾԿԱԾ - *տես* ԿԱՍԿԱԾ:

ԿԱԾ'/ԿԱԾ/ԿԱԾ/ԿԷԾ *(գրբ. կայծ)* - *գ.* 1. Այրվող կամ շիկացած նյութի՝ կրակի փոքրագույն մասնիկ: *Մին կած՝ ըղնում ա շօրին յըրա, էրում* (Ձ): 2. Որեւէ բանի փայլող՝ կայծկլտացող փոքր մասնիկ, լուսավոր՝ փայլող կետ: *Հըռանցէ մին կած՝ ա ըրվամ* (Ձ): 3. Երկու մարմինների շփումից առաջացած լույսը: *Հըրա'ճավը վէր ըրկաթէն տըրըքցընում ա, կածէր ա տանս տը'ռնում* (Ձ): 4. *փխբ.* Ընդունակության՝ զգացմունքի եւն արտահայտություն՝ նշույլ՝ փայլատակում: *Տընը շինիտ մաչին ըսկի կած՝ չի կա* (Բ): 5. *ած.* Խիստ տաք, այրող, վառող: *Կած՝ ճանրը վէր ա ածում, վը'ննէրը էրում* (Ձ):

- Կած՝ արկաթ կօլ տալ - Խիստ անհանգիստ լինել, անընդհատ շարժվել: *Կած՝ արկաթ ա կօլ տըվալ, տը'ղը նըստում չի* (Բ)

ԿԱԾ'ԱԿ - *տես* ԿԱԾԱԿ:

ԿԱԾ'-ԿԱԾ'/ԿԱՆՁԿԱԾ - *ած.* 1. *տես* ԿԱԾ' (5): *մ.* 2. Մեծ եռանդով, եռանդագին: *Տըղան կած՝-կած՝ կօրծ ա անում* (Ձ): 3. Խիստ սիրահարված: *Թաքավէրին տըղան էլ էտ ըխճըկանը յըրա կած՝-կած՝ ա ինում* (Ձ):

ԿԱԾՆԻԿ/ԿԱԾՈՒԿ/ԿԱԾՆԻԿ/ԿԷԾՆԻԿ *(գրբ. կայծուկ)* - *գ.* 1. Երկար ու բարակ տերեւներով փշոտ խոտաբույս: *Էշէրը կած՝ուկ շատ ըն սիրում* (Բ): 2. *տես* ԿԸԾՈՒՁ(ՆԸ) (3):

- Կըծ՝ուկան կըծէլ - *տես* Խօտան կըծէլ:

ԿԱԾՈՒԿ - *տես* ԿԱԾՆԻԿ:

ԿԱԾՆԻԿ - *տես* ԿԱԾՆԻԿ:

ԿԱԾՕՌ(ՆԸ)/ԿԱՅԾՕՌ - *գ.* Հաղարջ: *Էտ հըլաթումը էլ լ'ավ կած՝ օռն ա ինում* (Ձ):

ԿԱԿԱ - *գ.* 1. *մնկ.* Կոնֆետ, միրգ, քաղցրավենիք: *Խօխան լանց ա ինում, թա կակա յըմ օգ'ում* (Ձ): 2. *փխբ.* Անանշան՝ չնչին բան՝ ուտելիք: *Տանը մին կակա յէլ չի կա* (Բ): 3. *տես* ԼԱԼԱ: 4. Վաղանցիկ, անցողիկ երեւույթ: *Գանքը կակա յա* (Ձ):

ԿԱԿԱԼ - *գ. հեգն. տես* ՃԸՂՈՒՊՈՒՐ:

ԿԱԿԱՆ *(գրբ. կական(ճիլ)* - *տես* ԼԱՑՈՒԿՕԾ:

ԿԱԿԱՉ *(գրբ. կակաչ)* - 1. *տես* ԼԱԼԱ: 2. *տես* ՏԸՂՆԸԿԱԿԱՉ:

ԿԱԿԱՎՕ(Յ) *(ռուս. какао, ֆր. cacao)* - *գ.* Արեւադարձային կակաո ծառի սերմերից պատրաստված փոշին եւ դրանից ու կաթից եփած ըմպելիքը: *Խօխենք'ը կակավօ շատ ըն սիրիս* (Բ):

ԿԱԿԱՐԴ - *գ.* 1. Թռչունի եւ մասնավորապես աքլորի կարմիր կատար: *Էտքան վըրցըկնէրէն մաչին մինակ մին սիպտակ, կակարդը մօք կ'ամրմուր վը'ռցակ ա ինում* (Ձ): 2. Գլխարկի վրա փակցվող մետաղե նշան, կակարդ: *Յանարալէն կըլխէն փըփաղէն կակարդը հըռանցէ պըսպըղէ յար տաս* (Ձ): 3. *փխբ.* Փոքր շինությունների, մասնավորապես հնձանի տանիք: *Քամէն հընձանին կակարդը քըշալ ա* (Բ):

- Կակարդը ցէվքին պըթկէն - Սաստիկ ինքնահավան՝ գոռոզ: *Հէրիք'նագէն կուճի հարթնանը կակարդը էն ա ցէվքին պըթկէն* (Բ):

ԿԱԿԸՌԱՁ - *տես* ԿԱԿՌԱՁ:

ԿԱԿՂԷԼ - *տես* ԿԸԿԸՂԷԼ:

ԿԱԿՌԱՁ/ԿԱԿԸՌԱՁ *(ռուս. какраз)* - *մ.* Ուղիղ, իսկ եւ իսկ, հենց: *Վէզիրը ասում ա.- Ինձ կակռազ ք'ը'զ նըման ախճիգ' ա հարկավէր* (Ձ):

ԿԱԿՌԱՆ - *տես* ՂԸՐԱԲԼԻ:

ԿԱԿՈՒՂ - *տես* ԿԱԿՕՂ:

ԿԱԿՕՂ/ԿԱԿՈՒՂ *(գրբ. կակուղ)* - *ած.* Փափուկ: *Այան մինակ փափուկ հացը ն ա կարում օտէ* (Ձ): 2. Փխրուն: *Կակօղ քարան արկանք չը'ն շինում* (Բ): 3. *փխբ.* Ախորժելի, հաճելի: *Գ'ըվանլին արաղը փափուկ արաղ ա* (Բ): 4. *փխբ.* Մեղմ՝ թույլ բնավորություն ունեցող: *Նախագան վէր կակօղ հ'լանվ, կալխօզը ցըրը'վ կըկ'ա* (Ձ): 5. Նուրբ: *Կակօղ թիլանն չուվալ չը'ն կ'օրծում* (Բ):

- Կակօղ դամարը փըռնէլ/քըթէնալ - *տես* Թանլ դամարը փըռնէլ:

- Կակօղ քօլ - Հեզաբարո՝ մեղմ բնավորությամբ անձ: *Մէխակ դային կակօղ քօլ ա* (Բ):

- Կըկօղան մին տանս կըկ'ա, պէնդան՝ էրկու - Ժլատ մարդը ի վերջո կրկնակի տուժում է ժլատության պատճառով:

ԿԱՀ *(գրբ. գահ)* - *գ.* Թագավորական իշխանություն: *Թաքավէրը մը'ռնըմ ա, կահը մընըմ ա էտ պուճուր տըղէն* (ՀԺՀ, V, 76):

ԿԱՂ *(գրբ. կաղ)* - *տես* ԿԱՂԼԷԳ': *Ըտըրանա էլ շէնին անումը տիրանլ ըն Կըղարծէ, յանի թա՝ կաղ արծիվ* (ԱԱ, 26):

- Կաղէն տալ - *տես* Կըղլըգ'ի տալ (ԿԱՂԼԷԳ'-ի տակ):

- Կաղ կաց, սաղ կաց - Կաղ՝ հաշմանդամ լինելը գերադասելի է մահից:

ԿԱՂԱՂ *(գրբ. կաղաղ (գազանի՝ սողունի որջ)* - *գ.* 1. Կանաչ ընկույզ, ինչպես նաեւ նրա կեղեւը: *...Բ'ուրդանն նըրա քըչալէն մին կաղաղ ա վը'ր ընգ'նում* (ՆԼՂԺԲ, 88): 2. Ոչխարների դմակին կպած գնդաձեւ կեղտ՝ թրիք: *Վըխճարէն կըղըղնէն պուք ըն տամ, յը'տնան խօզ'ում* (Ձ):

ԿԱՂԷՆ *(գրբ. կաղին)* - *գ.* Կաղնի ծառի պտուղը, կաղին: *Վարթէնիսա չօրս ախպէր կ'ամ ըն ըստէղ՝ խուզ'էրէն հէտի ծըմական կաղէն հըվաքէն* (ԱԱ, 27):

ԿԱՂԹԱԿԱՆ - *տե՛ս* ԿԱԽՏԱԿԱՆ:

ԿԱՂԹԷԼ - *տե՛ս* ԿԱԽՏԷԼ:

ԿԱՂԼԷԳ'/ԿԱՂԼԻԳ'/ԿԱՂԼԷՅԳ/ԿԱԼՂԷԳ' - *ած.* 1. Ոտքից հաշմանդամ, կաղ, կաղացող: *Ըտրիէնց էլ Թէմուրէն վը'էնը մընացալ ա կաղլիգ'* ... (ԱԱ, 77): 2. *փխբ.* Ընդհանրապես հաշմանդամ: *Կաղլէգ' ը՞ս, էտ ամանը խէ ծէրքատ վէր ը՞ս քըցո՛ւմ* (Բ):

- Կաղլէգ' էշավ ք'արվան նի մըննէլ - Իր ուժերից վէր գործ ձեռնարկել: *Կաղլէգ' էշավ ք'արվան նի մըննօղը կըփուշմանէ* (Ձ):

- Կաղլէգ' էշին քօռ նա՛լբա՛նդ քըթէնալ - Անարժանին համապատասխան ընտրություն կատարել: *Կաղլէգ' էշին քօռ նա՛լբա՛նդ ըն քըթա՛լ. էտ դանգըլա ըխճըկանը էտ ըխմաղէն նըհը'տ փըսակալ ըն* (Ձ):

- Կըղլըգ'ի տալ - Կաղալ: *Տըղան վէր ք'ընամ ա, դուշը տէսնում ա, վէր կըղլըգ'ի յա տամ...* (ՀԺՀ, V 273):

ԿԱՂԼԷՅԳ - *տե՛ս* ԿԱՂԼԷԳ':

ԿԱՂԼԻԳ' - *տե՛ս* ԿԱՂԼԷԳ':

ԿԱՂՆԷ/ԿԱՂՆԻ *(գրբ. կաղնի)* - 1. *գ.* Հաճարազգիների ընտանիքին պատկանող ամուր փայտանյութով ծառ՝ կաղնի: *Մին մը'ծ կաղնէ յա իլա՛լ՝ յըրան մին արծիվ թառ իլա՛ծ* (ԱԱ, 26): 2. *ած.* Կաղնե, կաղնու փայտից պատրաստված: *Կաղնէ կ'էրանը տըմասկան ա* (Բ):

- Կաղնէ խուլ' - Դիմացկուն, տոկուն, ամուր, համառ (մարդկանց եւ առարկաների մասին): *Սիրգօն դային կաղնէ խուլ' ա, իննա՛սուն տիրըկանումը արտ ա անում* (Բ):

ԿԱՂՆԷԼ *(գրբ. կանգնիմ)*- *չբ. տե՛ս* Վը'էնը կէնալ:

ԿԱՂՆԻ - *տե՛ս* ԿԱՂՆԷ:

ԿԱՂՆՈՒՏ - *տե՛ս* ԿԱՂՆՕՏ:

ԿԱՂՆՕՏ/ԿԱՂՆՈՒՏ - *գ.* Շատ կաղնիներ աճած տեղ, կաղնիների անտառ՝ պուրակ: *Նի յըն մըննում կաղնօտը, մին մը'ծ խօգ' վէր քըցո՛ւմ* (Ձ):

ԿԱ՛ՃԱ՛ՄԱ՛ՆԻ - *տե՛ս* ԿԱ՛ԺԱ՛ՄԱ՛ՆԻ:

ԿԱՃԱՊ - *գ.* Ավելուկանման բույս, որ չորացնելով եւ թթու լավաշի, չորացրած հոնի, բրնձի, սխտորի ու կծու համեմունքների հետ եփելով՝ ջրալի կերակուր են պատրաստում: *Կաճապը Հա՛ղրո՛ւթա շինիթկընէրումը՝ ըն շատ օտում* (Բ):

ԿԱՃԻ - *գ. տե՛ս* Թօրքու գառի:

ԿԱՄ[1]/ԿԱՄՔ *(գրբ. կամք)* - *գ.* Ցանկություն, կամք: ... *Խունջիկ- մունջիկ մի անի, տու ինձ կ'ա՛լի կամ օնիս* (ԼՂԲ, 43):

- Կամ անէլ/տալ - Ցանկություն՝ կամք հայտնել, համաձայնվել: *Տըղան շատ ա չըրչարվում, մինչը'վ վէր ախճիգը կամ ա անում, վէր ո՛ւրա՛ն նըհը'տ փըսակվէ* (Ձ):

ԿԱՄ[2] - *տե՛ս* ԿԱՄՆԸ:

ԿԱՄ[3] *(գրբ. կամ)* - *չբ.* Պակասավոր բայ, ունի միայն սահմանական եղանակի ներկա՝ *կամ, կաս, կա, կանք, կաք, կան,* եւ անցյալի անկատարի եզակի երրորդ դեմքը՝ *կար (տե՛ս նաեւ* ԿԱ[2] *(1, 2):*

ԿԱՄԱՆԴԻՐ *(ռուս. командир, գերմ. Kommandear)* - *գ.* Զորամասի՝ զորային ստորաբաժանման խմբի պետ, հրամանատար: *Էտ զօրքէն կամանդիրը վը'ր էտ ըխչըկանը տը'սնում ա, խըրէգ' ա մընամ, վը'ր օշը տանէ* (ՀԺՀ, VII, 46):

ԿԱՄԱՆՑ/ԿԱՄԱՑ - *մ.* 1. Դանդաղ, ոչ արագ, առանց շտապելու: *Կօրծը կամանց բիդի անիս, վէր թայդի ընգէր, ա՛մա՛լ չի կ'ա՛լ* (Բ): 2. Ցածրաձայն, ցածր: *Կամանց խօսէ, ճըղճըղա մէ՛լ* (Բ): 3. Մեղմ, հուշիկ, հանգիստ: *Տօռնը կամանց կապում ա, վէր մարթը զ'ուրթնանա վէչ* (Ձ): 4. *տե՛ս* ԿԱՄԱՆՑ-ԿԱՄԱՆՑ (1): 5. Զգույշ: *Բուստանըմը բիդի կամանց տ'ուրո՛ւր կ'աս, վէր շիթիլնէն կօխիս վէչ* (Բ):

ԿԱՄԱՆՑ-ԿԱՄԱՆՑ/ԿԱՄԱՑ-ԿԱՄԱՑ/ԿԸՄԸՆՑ-ԿԱՄԱՆՑ/ԿԸՄԸՑ-ԿԱՄԱՑ - *մ.* 1. Աստիճանաբար, հետզհետե: *Հավան կամանց-կամանց ցուրտում ա* (Բ): 2. *տե՛ս* Կամանց (1,2):

ԿԱՄԱՎԷՐ *(գրբ. կամաւոր)* - *1.* մ. Իր կամքով, հոժարակամ, կամովին: *Թաքավէրին պուճուր տըղան կամավէր ք'ինամ ա կըռը'վ* (Ձ): 2. *գ.* Պատերազմի ժամանակ հոժարակամ զինվորագրված մարդ: *Ղարաբաղա կըռվավը Հայաստանա կամավէրնէ շատ ըն իլա՛լ* (Բ):

ԿԱՄԱՐ *(գրբ. կամար)* - *գ.* 1. Շենքի՝ շինության՝ կառուցվածքի աղեղնաձեւ ճակատ: *Էտ պալատէն կամարը շատ դաշ՝ա՛նգ' ա ինո՛ւմ* (Ձ): 2. *տե՛ս* Ըստուծու կ'օտէ (ԱՍՏՈՒԾ-ի տակ): 3. *ած.* Կամարաձեւ, աղեղնաձեւ: *Օնքէրը կամար, թօշէրը կ'ա՛ռմո՛ւր, դաշշա՛նգ' ախճիգ' ա Հայկուշը* (Բ):

- Կամար կապէլ - 1. Կամար կառուցել: *Պալատը շինո՛ւմ ըն, ըռաշկէ պատըն էլ կամար կապում* (Ձ): 2. Ծիածան գոյանալ: *Թոռը յը'տ կալա՛վ, յիրգ'ինք'ումը մին դաշ՝ա՛նգ' կամար կապից* (Բ):

ԿԱՄԱՑ - *տե՛ս* ԿԱՄԱՆՑ:

ԿԱՄԱՑ - ԿԱՄԱՑ - *տե՛ս* ԿԱՄԱՆՑ-ԿԱՄԱՆՑ:

ԿԱՄԲԱՅ(Ի)Ն/ԿՕՄԲԱՅ(Ի)Ն *(ռուս. комбайн, անգլ. combine)* - *գ.* Երկրագործական մեծ մեքենա, որով արտը հնձում են եւ հացահատիկը ծղոտից առանձնացնում, կոմբայն: *Միհէնգ' մէր շէնին վը'ղէրը տըրախտըրն ա վըրէս, կօմբայնը՝ էլ հինձիս ա...* (ՀԲ, 348)

ԿԱՄԲԱՅՆԱՎԱՐ/ԿՕՄԲԱՅՆԱՎԱՐ - *գ.* Կոմբայնը վարող, կոմբայնի վարորդ: *Խըրմունջըղը'ցէ Ա՛ՐԾՎԻԿը լ'ավ կօմբայնավար ա* (Բ):

ԿԱՄԻՍՅԱ *(ռուս. комиссия)* - *գ.* Հանձնաժողով, հատուկ լիազորություններով ընտրովի կամ նշանակովի խումբ: *Մին օր էլ կամիսյա յա կ'ամ, ըտըրա մաղազինը ըստուգում* (Ձ):

ԿԱՄՆԷԼ - *նբ.* Կամով հացահատիկի խրձերը ծեծել, կալսել: *Խօրթէրը կալ'ումը մը'կնում ըն, կամնում* (Ձ):

ԿԱՄՆԸ/ԿԱՄ[2] *(գրբ. կամն, հ.ե. *g'm-)* - *գ.* Փայտե երկրագործական գործիք՝ տակը սուր-սուր քարեր ամրացրած, որին լծկան լծելով եւ կալում շրջելով՝ կալսում են հացահատիկը: *Մուխանը յը'զնէրը կամնէն լըծում ա, ըսքըսում կալաս անէլը* (Ձ):

- Կամնը անէլ - *տե՛ս* ԿԱՄՆԷԼ:

ԿԱՄՆԷՐ - *գ., հոգն., արիմ.* Մեծ ոտքեր: *Ըտըրա կըմնէրէն վըննաման չի տէմ կէնալ* (Բ):

ԿԱՄՊԱՆԻ(ՅԱ) *(ռուս. компания, ֆր. campagnie)* - *գ.* Ընկերախումբ: *Փախչող ղօչին տարը էն մին կամպանիյին հօ՛ջա՛շմիշ կինի, մըհէգ էլ ո՛ւրանք ո՛ւրո՛ւր կըտան* (ՁՏ, Բ, 231):

ԿԱՄՊՕ(Ր)Տ *(ռուս. компот, ֆր. compote, գերմ. Kompott)* - *գ.* Թարմ կամ չորացրած մրգերից շաքարով եփած քաղցր ըմպելիք, կոմպոտ: *Սըրկօ՛վլա՛ն լ'ավ կամպօտ ա տըռաս* (Բ):

ԿԱՄՍԱՄՕԼ/ԿՕՄՍՕՄՕԼ *(ռուս. комсомол)* - *գ. հպվ.* 1. Կոմունիստական երիտասարդական միություն՝ կոմերիտմիություն, որ գործում էր Խորհրդային միությունում: *Կամսամօլը սավետին վախտը լ'ավ կօրծէր շատ ա ըրալ* (Բ): 2. Այդ միության անդամ, կոմերիտական: *Շէնին կամսամօլնէն ժողով ըն անում, Բօրիկին մին լ'ավ թըքըթօ՛հմա՛թ տամ* (Ձ):

- Կամսամօլէն գընիշկան կուռնըտակէն - Կույս (նորահարսի մասին): *Թա՛զգա՛ հարթնը մին դաշ՝ա՛նգ' ախճիգ' ար, մին հալար ծըծկէր, կամսամօլէն գընիշկան կուռնըտակէն* (Ձ):

- Կամսամօլէն գընիշկան կուրցըրած - Մինչեւ ամուսնանալը կուսությունից զրկված (նորահարսի մասին): *Թա՛զգա՛ հարթնը վէր կամսամօլէն գը-*

նիշկան կուրցըրած իլանվ, պէնէրը պիւրթ ա (Զ):

ԿԱՄՈՒՆԻԶՄ/ԿՕՄՈՒՆԻԶՄ *(ռուս. коммунизм, ֆր. communiste, լատ. communis)* - *գ. 1.* Արտադրության միջոցների հանրայնացման վրա հիմնված բարձրագույն տնտեսական հասարակարգ, կոմունիզմ: *Կամունիզմ վէչ մին վախտ ինանն չի, յա էլ ինանն ա, մունք չընք տըսնըլական* (Բ): 2. *փխբ.* Լիություն, առատություն: *Մէր շէնումը կամունիզմ ա, հու վէր հունց օգում ա, ապըրում ա* (Բ):

ԿԱՄՈՒՆԻՍՏ/ԿՕՄՈՒՆԻՍՏ *(ռուս. коммунист, ֆր. communiste)* - *գ.* 1. Կոմունիստական կուսակցության անդամ: *Իզէն կօմունիստնուն սիրիս չար, ինզիս ար, վէր հայէրը սավէտան տիւս կան, մին ծրիւշ յէրգիր տըռան* (ԱԱ, 75): 2. *փխբ.* Արդար, անաչառ: *Իզէն կամունիստ ա, ծօռ պէն չի անէլ* (Բ):

ԿԱՄՓԷՏ/ԿԱՆՓԵՏ *(ռուս. конфета, իտ. confetto, լատ. confectum)* - *գ.* Հրուշակեղենի տեսակ, կոնֆետ: *Մին կամփետ ա տամ էտ խուխէն, խանփիում, նի մընում ըտըրանց տօնը* (Զ):

ԿԱՄՔ - *տե՛ս* ԿԱՄ[1];

ԿԱՄՕԴ *(ռուս. комод, ֆր. commode)* - *գ.* Արկղներով պահարան, հեշտադարան: *Շանճախը տէղը պընդըցըրավ, կամօդին ըռաչին կաղնից ...* (ՋՏ, Ա, 14):

ԿԱՅԾԱԿ - *տե՛ս* ԿԱԾԱԿ:

ԿԱՅԾՕՌ - *տե՛ս* ԿԱԾՕՌ(ՆԸ):

ԿԱՅՔ *(գրբ. կայք (կեցվածք, կյանք)*- *գ.* Մեկին պատկանող իրերի ամբողջություն, ունեցվածք: *Սալդաթը էն մին տօռնընը ա պէնում, տէսնըմ՝ մըէծ կայք կա* (ՀԺՀ, V, 642):

ԿԱՆԱԹ - *տե՛ս* ԸԿԱՆԱԹ:

ԿԱՆԱԼ - *տե՛ս* ԿԱՆԱՎ:

ԿԱՆԱՆՉ/ԿԱՆԱՉ *(գրբ. կանաչ)* - *ած* - 1. Կապույտի եւ դեղինի միջինը, կանաչ գույնի: *Էտ ախճիգը կանաչ շօրէր ար կըէնում միշտ* (Զ): 2. *փխբ.* Չհասած, խակ: *Խօխան կանանչ պամիդօր կէրավ, փօրը ցավից* (Բ): 3. *փխբ.* Թարմ, դալար, չչորացած: *Էտ տըղան մինչէվ քըշէրին կէսը, կանանչ խուտէրըմը թէք ընգած, յըրգինքին ա յէշըմ...* (ՀԺՀ, V, 16): *գ.* 4. Խոտ, սեզ: *Էրկան վախտ տըփէրէն կանանչ չի ինում, էծէրը տինզնանում ըն, ըստըկստում* (ԱԱ, 83): 5. Բուսականություն: *Դարաբաղա կանանչը շատ ա* (Բ): 6. *տե՛ս* ԿԸՆԱՆՉԻ (1):

- Կանանչ ինրէվ - Երիտասարդ կյանք, երիտասարդություն: *Ըտըրանք ինրանց կանանչ ինրէվը էտ շէնումըն ըն անցկըցըրալ* (Զ):

- Կանանչ խօտան կըծէլ - 1. *տե՛ս* Խօտան կըծէլ: 2. Առույգանալ, տրտնգի տալ (անասունների մասին): *Էծէրը կանանչ խօտան կըծալ ըն, իծանրածը շատ ա չըրչարվում* (Զ):

- Կանանչ խօտէն կըրակ անէլ - 1. Շատ երիտասարդ հասակում ամուսնանալ՝ ընտանիքավորվել: *Մըրյանէն տըղէքը կանանչ խօտէն կըրակ ըն ըրալ* (Զ): 2. Աղքատ՝ ապրուստի միջոցներից զուրկ լինել: *Դէ՛, էն վախտըն էլ կըռըէկ ա իլանվ, էն ընք իլանվ կանանչ խօտէն կըրակ ըրած* (Զ):

- Կանանչ խօտէն քինի՝ կնչուրանա - Ասում են ձախորդ մարդկանց մասին:

- Կանանչ հըղէ - Որեւէ բանի իրագործման համար անարգել առաջընթաց՝ լայն հնարավորություն: *Միհէնգի առուտօրէն հըէտէ կանանչ հըղէ յա, հու բաշիր ա անում, հըրուստանում ա* (Բ):

- Կանանչ մէռուն - *տե՛ս* ՄԷՌՈՒՆ (1):

- Կանանչ մըրտոց - Հստակ կանաչ, վառ կանաչ: *Կանանչ մըրտոց բուստան ա* (Զ):

- Կընանչին տալ - 1. Կանաչ գույն ստանալ, կանաչ երեւալ: *Հընռանցէ էտ բաղը կընանչին ա տամ* (Զ): 2. Կանաչ երանգ ունենալ (ուրիշ հիմնական գույնի հետ): *Էտ խընձօրը տէղէն ա ինում՝ պատառ կընանչին տալիս* (Զ):

- Կընանչու ընէլ - 1. Գարնանամուտին՝ կանաչը նոր բուսնելու ժամանակ, սկսել կանաչ արածել, չոր կերից կանաչ խոտի անցնել (անասունների մասին): *Կարունքը յըէկավ, հիյվընէն կընանչու ընգէն* (Բ): 2. Գարնանամուտին թարմ կանաչ ուտելուց ստամոքսի խանգարում ստանալ (անասունների մասին): *Կավը կընանչու ընգավ, ըստակից* (Զ):

ԿԱՆԱՉ - *տե՛ս* ԿԱՆԱՆՉ:

ԿԱՆԱՎ/ԿԱՆԱԼ *(ռուս. канал, լատ. kanalis)* - *գ.* Արհեստական մեծ հուն ջրի համար, ջրանցք: *Ըտըրանք էտ կընգանը ըսպանում ըն, քըցիում կանավը, ուրանք քինամ* (Զ):

ԿԱՆԳԼԱԾ - *տե՛ս* ԱԺԼԱՅԱ (1):

ԿԱՆԴԱՁ/ԿԻԱՆԴԱՁ/ԿԱՆԴԱՁ/ԿԱՆՆԱՁ/ԿԱՆՆԱՁ - 1. *արհմ. տե՛ս* ԿԸԼՕԽ (1): 2. *տե՛ս* ՏՕՄԲԱԼԱՆ (1):

ԿԱՆՆԱՁ - *տե՛ս* ԿԱՆԴԱՁ:

ԿԱՆՆԱՁ - *տե՛ս* ԿԱՆԴԱՁ:

ԿԱՆՆԱՁ - *տե՛ս* ԿԱՆԴԱՁ:

ԿԱՆԴԱԼ *(ռուս. кандалы (երկաթե շղթաներ), արաբ. gajdani)* - *գ. 1. տե՛ս* ԲԸԽՕ(Վ): 2. *փխբ.* Կոպիտ ոտնաման: *Կանդալնէն կըէնում ա, հըղէ ինում* (Զ):

ԿԱՆԴԸՐԱԽ(Տ)/ԿԱՆԴՐԱԽ(Տ) *(ռուս. контракт, լատ. contractus)* - *գ.* Պայմանագիր: *Ըտըրանց կանդրախտը մին ամսանը յըէտը փօզմիշ ա ինում* (Զ):

- Կանդրախտ կապէլ - Պայմանագիր կնքել: *Թաքավէրըն ասըմ ա.- Քըսան տարի ըստըրանա առաչ յըէս քու հօր նըհէտ կանդրախտ ըմ կապալ, վէր հիբը ուրանն տըղա ինի, դարկէ կօշտըս* (ՀԺՀ, V, 172):

ԿԱՆԴԸՐԷՎ/ԿԱՆԴՐԷՎ - *գ.* Արորի շղթայի ծայրին ամրացված մեծ օղակ, որ արորը միացնում է լուծին: *Կանդրէվը կօտըրում ա, վար անօղը գիւդում չի, թա հինչ անէ, նըստում ա, մընամ մանալ* (Զ):

ԿԱՆԴԻԴԱՏ *(ռուս. кандидат, լատ. kandidatus)* - *տե՛ս* ԹԷՔՆԱԾՈՒ:

ԿԱՆԴՐԱԽ(Տ) - *տե՛ս* ԿԱՆԴԸՐԱԽ(Տ):

ԿԱՆԴՐԷՎ - *տե՛ս* ԿԱՆԴԸՐԷՎ:

ԿԱՆԴՈՒԽՏԸՐ/ԿԱՆԴՈՒԽՏՕՐ *(ռուս. кондуктор, ֆր. conducteur)* - *գ.* Վագոնի ուղեկցորդ: *Քըշէրին կէսին կանդուխտօրը կամ ա, վըէր բիլէթնէն ըստուգէ* (ՆԼՂԺԲ, 129):

ԿԱՆԹ *(գրբ. կանթ)* - *գ.* 1. Ամանեղենի՝ անոթի բռնատեղ, ունկ, կոթ: *Սիմըվարէն կանթը պուք ա յըէկալ* (Բ): 2. Զարդին՝ ոսկե կամ արծաթե դրամին եւն ամրացված օղակ՝ շղթան կամ թելը անցկացնելու համար: *Քօղը էտ կանթավը անց ա կըցընում, վըէսկէն պըկան կախ տամ, մարթին անա թաքուն տանան տիւս կամ, քինամ հըրսանէք* (Զ):

- Կանթ անէլ - *տե՛ս* ԿԱՆԹԷԼ:

ԿԱՆԹԷԼ - *նբ.* 1. Ամաններին՝ զարդերին եւն կանթ դնել: *Ըրծաթէ փուլէրը կանթում ըն, կախ-կախ անում ճըկըտնուցան* (Զ): 2. *տե՛ս* Ծըէրքէրը կանթել:

ԿԱՆԻՍՏԸՐ *(ռուս. конистра, անգլ. canistter, լատ. canistrum)* - *գ.* Մետաղե կամ կապրոնե տարա հեղուկների համար: *Կինին ածում ա կանիստըրը, դարկում նախագէն հըէտէ* (Զ):

ԿԱՆԿԱՌ *(գրբ. կանկար, պրս. kangar)* - *գ.* Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող փշոտ բույս: *Կանկառէն կաթնը չուրըցընում ըն, սաղունծ շինում* (Զ):

- Կանկառ կըրծկօրծէլ - *հեգն.* Աղքատ՝ սոված լինել: *Իզէն էն ա կանկառ կըրծկուրծէս, ընդրրա ըշտըղա յամ փուլ* (Բ):

ԿԱՆՁ/ԿԻԱՆՁ[1] *(գրբ. գանձ)* - *տե՛ս* ԽԱԶՆԱ (1): *Ըտըրանց շատ կանձ ա ինում* (Զ):

ԿԱՆՁԱՊԷՏ/ԿԻԱՆՁԱՊԷՏ - *տե՛ս* ԽԱԶՆԱՊԱՐ (1): *...Դալին Դազանչէցունց ժամին կանձապէտ ա ինըմ Յարամիշանց Մըղդուսին...*(ՋՏ, Բ, 154):

ԿԱՆՁՈՒԼ - *տե՛ս* ԿՈՒՆՁՈՒԼ:

ԿԱՆՅԱԿ *(ռուս. коняк, ֆր. cognac)* - *գ.* Բարկօղի, կոնյակ: *Միհէնգի Դարաբաղ էլ ըն լավ կանյակ շինիս* (Բ):

ԿԱՆՅՕԿ *(ռուս. конек)* - *տե՛ս* ՍԱՄԱԿԱՏ:

ԿԱՆՉ/ԳԱՆՉ *(գրբ. կանչ)* - *գ.* 1. Կանչելը, ձայն տալը: *Մօրը կանչին խօխան մըհալ չի քըցնում* (Ձ): 2. Ձայն, բացականչություն: *Բ՚ուրդանն մին կանչ ա ըսկանում* (Ձ): 3. *տե՛ս* ԾՈՒՐՐՈՒՐՈՒ (2): 4. Հարսանիքում փեսայի օգտին հարսանքավորների կողմից արվող նվիրատվությունների հայտարարություն: *Կանչին վախտը, հունց ա պըտահում, հըրթնացուն վէր ա ըղնում* (Ձ): 5. *տե՛ս* ՍԱՀՅԱՆՈՒ:

- Կանչ դարկէլ - Հրավեր ուղարկել, հրավիրել: *Կանչ ա դարկում, շինանցուց հըվաքում* (Ձ):

ԿԱՆՉԷԼ - *տե՛ս* ԿԱՆՉԻԼ:

ԿԱՆՉԻԼ/ԿԱՆՉԷԼ *(գրբ. կանչեմ)* - *նբ.* 1. *տե՛ս* Ծէն տալ: 2. Աքլորի ձայն արձակել: *Վէր լ՚ուսը մուտանում ա, վէրցակը կանչում ա* (ՆԱԲ, 69):

ԿԱՆՉՎԷԼ - *տե՛ս* ԿԱՆՉՎԻԼ:

ԿԱՆՉՎԻԼ/ԿԱՆՉՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԱՆՉԻԼ-ի:

ԿԱՆՉՈՒՑ - *տե՛ս* ԿԱՆՉՕՑ:

ԿԱՆՉՕՑ/ԿԱՆՉՈՒՑ - *տե՛ս* ԿԱՆՉ:

ԿԱՆՋ - *տե՛ս* ԿԱՆՋ:

ԿԱՆՋ/ԿԱՆՋ - *գ.* Գիշատիչ թռչնատեսակ: *Կանջը, ղուզդունը ասում ըն, վը՚ր ո՚ւրանք ջամդանք՚ ըն օգում, մին օրիշ հավք մին օրիշ պէն ա ասըմ...* (ՆԼՂԺԲ, 140)

ԿԱՆՍ - *տե՛ս* ԿԱՆՑ:

ԿԱՆՍԷՐՎԱ *(ռուս. консерва, ֆր. conserve, լատ. conservare)* - *գ.* Հատուկ մշակումով պատրաստվող եւ հերմետիկորեն փակված տուփերի մեջ պահվող մթերք, հատկապես ձուկ, պահածո: *Ապան էլ կանսէրվա շատ ա իլալ սիրիս* (Ձ):

ԿԱՆՍՏԻՏՈՒՏՑԱ *(ռուս. конституция, լատ. constitutio)* - *գ.* Պետության հիմնական օրենքը, սահմանադրություն: *Ղարաբաղըն էլ կանստիտուցյա օնէ* (Բ):

ԿԱՆՎԷՐԹ - *տե՛ս* ԿԱՆՎԷՐՏ:

ԿԱՆՎԷՐՏ/ԿԱՆՎԷՐԹ *(ռուս. конверт, գերմ. Kuvert, ֆր. couvert)* - *գ.* Հատուկ ձեւով կտրած ու չորս կողմից իրար վրա բերված թղթի փոքրիկ տոպրակ, որի մեջ դնում են նամակ՝ փաստաթուղթ եւն՝ փոստային առաքման համար, ծրար: *Կանչըմ ըն գ՚ադին, մին կանվէրթ տամ, ղըրկըմ բախտ պիժընօղին կօշտը* (ՀԺՀ, V, 343):

ԿԱՆՏ(Ը)ՐԱԼՕՐ *(ռուս. контролер, ֆր. controleur)* - *գ.* Որեւէ բանի վերահսկումով՝ ստուգումով զբաղվող պաշտոնյա, վերահսկիչ: *Կանտըրալօր ը՞ս, խէ թօղում չը՞ս կօրծըս անիմ* (Բ):

ԿԱՆՏՈՒՋԻ(Ն)/ԿԱՆՏՈՒԺԻ(Ն) *(ռուս. контузия, ֆր. contusion, լատ. contusio)* - *գ.* 1. Մարմնի ընդհանուր վնասվածք՝ ճմլվածք, առանց մարմնի արտաքին վնասման, որ հատկապես լինում է ռումբերի՝ ականների՝ արկերի պայթյունների ժամանակ: *Կըռվէն վախտը շատ մարթ ա կանտուզի ըստացալ* (Բ): 2. Այդպիսի վնասվածք ստացած անձ: *Իզէն կանտուժին ա, սայաղ կացէք՚ նը՚ստա* (Բ):

ԿԱՆՏՈՒԺԻ(Ն) - *տե՛ս* ԿԱՆՏՈՒՋԻ(Ն):

ԿԱՆՏՕՐ *(ռուս. кантора, գերմ. Kontor, ֆր. comptoir, լատ. computare)* - *գ.* Հիմնարկ: *Մին օր էլ յէս ու յէս ըսէցի.- Խա՛չան, յէկ փօրցի մըհէնգ՚ էլ մէր ղըլըցէ համփա մարթօց կանտօրնէն քինա...* (ՋՏ, Բ, 90):

ԿԱՆՑ/ԿԱՆՍ/ԿԱՍ՚/ՔԱՆՑ/ՔԱՆ *(գրբ. քան)* - *չ.* 1. Կապում է երկու առարկա՝ համեմատելով իրար հետ որակի, քանակի կամ այլ կողմից: *Ճարտարը մը՚ծ ա, կանց Գիշին* (Բ): 2. Երկրորդական նախադասությամբ միացնում է գլխավորին համեմատվող արտահայտություն՝ ցույց տալով գերադասություն՝ գերազանցություն՝ առավելություն, եւ համապատասխանում է փոխանակ՝ փոխարեն բառերին: *Լավըն էն չի՞, ք՚ասիբ ինիս՝ անգուճըտ դինջ, կանց հարուստ՝ ղըլմըղալու մաչի* (Ձ):

- Կանց թա *(գրբ. քան թէ)* - *տե՛ս* ԿԱՆՑ:

ԿԱՆՑԷՐՏ *(ռուս. концерт, ֆր. concert, իտ. concerto, լատ. concertare)* - *գ.* 1. Համերգ, նվագահանդես, երգահանդես: *Ամը՚ռնը շինըթկընէրումը կանցերտ էլ ար ինիս* (Ձ): 2. *փխբ.* Խիստ տարօրինակ՝ փոփոխամիտ անձ: *Կանցէրտ ը՞ս տու, յըրկէ էրանուշ պէն ըս ասալ, ըսօր էրանուշ պէն ըս ասում* (Բ):

- Կանցէրտ տալ - Համերգ տալ՝ կազմակերպել: *Ջիհիլնէն պըղըրաստվում ըն, կըլուբումը մին լ՚ավ կանցէրտ տամ* (Ձ): 2. Աղմուկ-աղաղակ բարձրացնել, վիճաբանել: *Կըզնըված ք՚ունում ա քըվօրը տօնը, կանցէրտ տամ* (Ձ):

ԿԱՆՑԻԼԱՌ- *տե՛ս* ԿԱՆՑԻԼԱՌ:

ԿԱՆՑԻԼԱՌ/ԿԱՆՑԻԼԱՌ/ԿԱՆՑԻԼԱՌ *(ռուս. канцелярия)* - *գ.* Հիմնարկության՝ կոլտնտեսության ղեկավար մարմնի շենքը, գրասենյակ, վարչություն: *...Ընդի մըտըկհըլաված ք՚իս ըմ կուլխօզէն կանցիլարը, նախագէն կօշտը...* (ՀԲ, 362):

ԿԱՆՑԻԼԱՌ - *տե՛ս* ԿԱՆՑԻԼԱՌ:

ԿԱՆՈՒԹ - *տե՛ս* ԱԿՆԸ (3):

ԿԱՆՈՒԽ - *տե՛ս* ԿԱՆՕԽ:

ԿԱՆՓԵՏ - *տե՛ս* ԿԱՄՓԵՏ:

ԿԱՆՕԽ/ԿԱՆՈՒԽ *(գրբ. կանուխ)* - *մ.* 1. Ժամանակից առաջ, շուտ: *Թաքավէրը վէր ըսկանում ա, կանօխ տըղէն ծէն ա տամ, պ՚ուրանում պալատը...*(ՀԺՀ, V, 190): 2. Վաղ առավոտյան, առավոտ շուտ: *Ըստի կանօխ ըշտը՚ղ ը՞ս ք՚ինում, խէ ըսպասում չը՞ս՝ արը՚վը տանուս կ՚ա* (Բ): 3. *տե՛ս* ԿԸՆՕԽԷ:

- Կանօխ անէլ - *տե՛ս* Լաղ անէլ:

- Կանօխ կանչօղ վըրցակէն կըլօխը կըտըրում ըն - Շտապ՝ արագ կատարվող գործը ձախողվում է, շտապողը արդյունքում տուժում է:

ԿԱՇԱՌՔ *(գրբ. կաշառ)* - *տե՛ս* ԸՌՈՒՇՎԱԹ:

ԿԱՇԻ/ԿԱՇԻ *(գրբ. կաշի)* - *գ.* 1. Կենդանիների եւ մարդկանց մարմնի արտաքին ծածկույթը, մորթ: *Կ՚ումաշը մորթում ըն, մէսը յօր օնում, կաշին ա վընընկըլօխը թօղում ըստը՚ղ* (Ձ): 2. Քիմիական մշակման ենթարկված մորթ: *Մին մէտըր կաշի յա ինք՚ օնում, սապօկ կարում* (Ձ): 3. Որոշ պտուղների կեղեւը: *Քուլըխընձօրէն կաշին կօշտ ա* (Բ):

- Կաշի կըտըրէլ - 1. *տե՛ս* Կաշի տը՚ռնալ: *2. տե՛ս* Կաշին ա վը՚սկըռը մընալ:

- Կաշի կըրծկօրծող - Ստոր ձգտումներ ունեցող անձ: *Բուղանց Միսակը կաշի կըրծկօրծող ա, լօխ նըստա սայաղ ըն կընաս* (Բ):

- Կաշին ա վը՚սկըռը մընալ - Շատ նիհարել, կմախքանալ, հյուծվել: *Խը՚ղճը էնքան տ՚ուզնը կացալ ա, կաշին ա վը՚սկըռնէն ա մընացալ* (Բ):

- Կաշին գ՚արգ՚ու տալ - *տե՛ս* Կաշին մաշկել (1):

- Կաշին դաբաղխանումը ճընանչիլ - Մեկի բացասական՝ վատ հատկություններին վաղուց տեղյակ լինել: *Յը՚ս կաշին դաբաղխանումըն ըմ ճընանչալ, լ՚ավ ըմ գ՚ադում, վէր Նէսին մարթ չի* (Բ):

- Կաշին ըզադէլ - Վտանգից խույս տալ, իր գլուխն ազատել: *Վէր ըսքըսում ըն կըռվէլը, Խօյլունց Սիրօժը մին թ՚ահրանվ կաշին ըզադում ա, փախչ՚ում* (Ձ):

- Կաշին հաստ - *տե՛ս* Իրը՚սէն կաշին հաստ:

- Կաշին մաշկէլ/վէր օնէլ - 1. Խիստ պատժել՝ տանջել՝ չարչարել: *Հ՚անը ասում ա.- Վէր մէհէտ էլ կ՚ուղթուն ըրէր, կաշիտ մըշկըլան ըմ* (Ձ): 2. Հարստահարել, կեղեքել: *Էտ օյինբազը ախպօրցը կաշին էլ ա մաշկալ* (Ձ):

- Կաշին փոխէլ - Պայմաններին՝ հանգամանքներին հարմարվել, իր սկզբունքներից հրաժարվել: *Հու փուլ ա տը՚սնում, կաշին փոխում ա* (Ձ):

- Կաշի տը՛ռնալ - Կարծրանալ, պնդանալ, կոշտանալ: *Հացը չուրացալ ա, կաշի տը՛ռալ* (Զ):

- Կաշվան վախէլ - Զգուշանալ, անձը վտանգի չենթարկել: *Մանվէլը, ըշտը՛ղ կըռը՛վ ա ինում, կաշվան վախում ա, ղըրաղ կէնում* (Զ):

- Կաշվան տում կ՚ալ - 1. Մի բան անելու համար մեծ ջանք գործադրել, խիստ չարչարվել՝ մտատանջվել՝ ճգնել: *Կաշվաս տում ըմ կ՚աս, էլիա կըրէս չըմ տօնըս շինիմ, պըրծընիմ* (Բ): 2. Իր չափը չիմանալ, իր ուժերից վեր գործ ձեռնարկել: *Յու վեր կաշվան տում կ՚ա, վերչումը ծույնէրը վեր կըթակէ* (Զ):

- Կաշվավը մին տը՛ռնալ - 1. Խիստ չաղանալ՝ գիրանալ: *Քուքացալ ա, կաշվավը մին տը՛ռալ* (Բ): 2. Խիստ նիհարել: *Էնքան տուզնը կացալ ա, կաշվավը մին ա տը՛ռալ* (Բ):

- Կաշվին յըրա փօրցիլ - Սեփական փորձով զգալ՝ համոզվել: *Ղարիբութունը փիս պէն ա, կաշվիտ յըրա բիդի փօրցիս, վեր գ՚իդաս* (Զ):

- Կաշվումը մընալ - Իր չափն իմանալ՝ ճանաչել: *Ամմէն մարթ վեր կաշվումը մընա, լօխ կըդուզվի* (Զ):

ԿԱՇԻ - *տե՛ս* ԿԱԾԻ:

ԿԱՇԻԼՕԿ/ԿԱՇԻԼՕԿ *(ռուս. кошелек)* - *գ.* Կանացի ձեռքի փոքրիկ պայուսակ: *Խաբարը յէր ա ինում, թա Նանագ՚ուլում մանց հարթնանը կաշիլօկը կ՚ուղացալ ըն* (Զ):

ԿԱՇԻԼՕԿ - *տե՛ս* ԿԱԾԻԼՕԿ:

ԿԱԾԿԱՌ *(գրբ. կաշկառ)* - *գ.* Քարերի կույտ, քարակույտ: *Էտ կաշկառէն տակէն միշտ օխծէր ըն ինում* (Զ):

ԿԱԾՎԻ/ԿԱՇՎԻ *(գրբ. կաշեայ)* - *ած.* Կաշվից պատրաստած, կաշվե: *Կաշվի թօխկան յը՛տ ա անում, ըտըրան մին լ՚ավ վեր թակում* (Զ):

- Կաշվի քըշէռք - Շատ նիհար մարդ: *Էտ կաշվի քըշէռքը օտում ա, օտում, էլիա համանը* (Բ):

ԿԱՇՎԻ - *տե՛ս* ԿԱԾՎԻ:

ԿԱՊ *(գրբ. կապ)* - *գ.* 1. Անասունների վզից կամ ոտքերից կապելու պարան՝ թոկ՝ շղթա: *Հընգէրունքը, էշին կապը փըռնած, քօռ ու փէշման քիս ըն տօն* (ՆԼՊԺԲ, 37): 2. Կապանք, հանգույց: *Մուկունը կըրծկօրծում ա, էտ կապէրը կըտօրում* (Զ): 3. *տե՛ս* ԿԱՊՈՒԿ: 4. Առնչություն, առնչակցություն, աղերս: *Ուստան ասում ա.- Էս ախպարը հիշկան էլ արաշտ ա ինում, ցըմաքում չի, ըստըրա ցըմաքէլը կապ չօնէ ըրաշտէն նըհը՛տ* (Զ): 5. Հարաբերություն, հաղորդակցություն: *Ղարաբաղա մէլիքներէն կապը ուրուր նըհը՛տ գ՚ան լ՚ըվընալիս ա իլալ, գ՚ան փիսընալիս* (Զ): 6. Սիրային հարաբերություն: *Նօքարը գ՚ուդում ար, վը՛ր խազայինին կընէգ՚ը մին քանէ տարէ յա՝ քուխվը՛ն նըհէտ կապ օնէ* (ՀԺՀ, VII, 301): 7. Արգելք, խոչընդոտ: *Տըղան ասըմ ա.- Առաշկըս քար ա, կապ ա, հունց քինի՞մ* (Զ): 8. Փականք: *Ղըրբըզէն կապը կօտըրում ըն, նի տը՛ռնում* (Զ): 9. Պատի մասերն իրար հետ կապող երկար քար՝ գերան: *Կապէրը տինում ըն, էլիա պատը շարում* (Զ): 10. Լեռների միջով անցնող ճանապարհի նեղ մասը: *Էշէրը վեր պէռնած ըն ինում, էտ կապավը մին թանիրանվ ըն անց կէնում* (Բ): 11. *ած.* Փակ, գոց: *Կամ ըն, տը՛սնըմ տըռնէրը կապ* (Զ):

- Կապ անէլ - 1. *տե՛ս* Կապուկ անէլ: 2. Սառույցով պատել, սառցապատել: *Ցօրտը տափերը սաղ կապ ա ըրալ* (Բ):

- Կապավ ըղնէլ - Կապը՝ թոկը՝ պարանը՝ շղթան վզով փաթաթվելուց խեղդվել (անասունների մասին): *Քիս ըն, տըսնաս՝էշը կապավ ընգած* (Զ):

- Կապա փախած - *տե՛ս* Կապը կըտըրած:

- Կապը ծը՛ղքը հըվաքէլ/օնէլ - Մեկին խրատելու՝ դաստիարակելու գործն ստանձնել, կարգի բերել, ուղիղ ճանապարհի բերել: *Դային ըտըրա կապը ծը՛ղքըն ա հըվաքում, մարթ շինում* (Զ):

- Կապը կըլխավը տալ - 1. *տե՛ս* Կապը կըտըրել: 2. *տե՛ս* Կապը պէց թօղնէլ:

- Կապը կըլխավը տըված - *տե՛ս* Կապը կըտըրած:

- Կապը կըլխավը քըցիլ - *տե՛ս* Կապը պէց թօղնել:

- Կապը կըտըրած - 1. Անառակ, լիրբ, անզգամ: *Կապը կըտըրած կընգանը ճար չի ինիլ* (Զ): 2. Սանձարձակ, ապօրինություններ անող: *Կապը կըտըրած նախագա յա իլալ Թէմուրը, կալխօզը քանդալ ա* (Բ):

- Կապը կըտըրել - 1. Անբարոյական դառնալ, լրբանալ: *Մարթը մըռնէլանը յը՛տընն ա Սիրանը կապը կըտըրալ, առաչ ըբուռռ կընէգ՚ ա իլալ* (Բ): 2. Անկարգապահ՝ սանձարձակ դառնալ: *Բադուն տըղան կապը կըտըրալ ա, հօրը անգուռ չի օնում* (Զ):

- Կապը հըվաքէլ - *տե՛ս* Կապը ծը՛ղքը հըվաքէլ:

- Կապ ըղնէլ - 1. Թելը խճճվել: *Թիլը կապ ա ընգալ, կարում չըմ յը՛տ անիմ* (Բ): 2. *տե՛ս* Լուզունն կապ ըղնէլ:

- Կապը պէց թօղնէլ - Այլևս չհետևել՝ չսաստել՝ չդաստիարակել, անկարգապահ՝ սանձարձակ դարձնել: *Ըխճըկանը կապը վեր պէց թուղէցէր, էլ կարէլ չըս հըղէ պիրիս* (Զ):

- Կապը վընէրէն տակը քըցիլ - *տե՛ս* Կապը կըտըրել:

- Կապը քաշիլ - *տե՛ս* Կապը ծը՛ղքը հըվաքէլ:

- Կապ պէրան - *տե՛ս* Պէրանը կապ:

- Կապ տալ - Թեթեւակի կապել՝ հանգուցել՝ կպցնել՝ կարել: *Էտ լօթկան կապ ա տամ, ուրանք քինանմ ըն տօն* (ՀԺՀ, V, 545):

- Կապու կ՚ալ - Կարգի գալ, սանձահարվել, ուղիղ ճանապարհի գալ: *Կապը կըտըրած ախճիգ՚ ա իլալ, միհէնգ՚ ա ըտի կապու յը՛կալ* (Բ):

- Կապու պիրիլ - *տե՛ս* Կապը ծը՛ղքը հըվաքէլ:

- Կապ քըցիլ - 1. Թելը խճճել: *Թօռնը թիլէրը կապ ա քըցանում, այան կըզնըվում ա* (Զ): 2. *տե՛ս* Լուզունն կապ քըցիլ:

ԿԱՊԱ - *տե՛ս* ՂԱԲԱ:

ԿԱՊԱԼ *(գրբ. կապալ (կապած տուրք)* - *գ.* Պայմանագրային հիմունքներով ու վարձով որեւէ կալվածք կամ շինություն օգտագործելը, վարձակալություն: *Սավէտը ցըրը՛վ յը՛կավ, կապալը անանթ ընգավ, միհէնգ՚ լօխ կապալավուր ըն* (Բ):

ԿԱՊԱԼԱՎՈՒՐ *(գրբ. կապալաւոր (կապված)* - *գ.* Կապալային հանձնառություն վերցնող մարդ, կապալառու: *Արտէրը էրվից, խը՛ղճ կապալավուրնէն մընացէն կըրակու մաչի* (Զ):

ԿԱՊԱՆ *(գրբ. կապանք (ոտքի՝ ձեռքի կապ)* - *գ.* Օրորոցում երեխայի թեւերն ու ոտքերը կապելու գոտու նման լայն երիզ: *Մին հէտ էլ էս տըղան տը՛սալ ա, վեր ուրանը քուրը կըռնէն, վը՛ննէն կապանը կէրավ* (ՀԺՀ, VI, 49):

ԿԱՊԱՆԷԳ՚ - *գ.* 1. Կավե տափակ ամաններ: *Կապանէգը թանավ ա ածում, տամ ղունաղէն* (Զ): 2. *փխբ.* Շատ կարճահասակ մարդ: *Էտ կապանէգը կընգանը անա մին խըլլան քաշ ա* (Բ):

ԿԱՊԱՌ - *տե՛ս* ԿԱՊԱՐ:

ԿԱՊԱՐ/ԿԱՊԱՌ *(գրբ. կապար)* - *գ.* 1. Կապարազգիների ընտանիքներին պատկանող փշոտ գետնատարած բույս, որի ծաղկաբողբոջները եւ դալար ցողունը թթու են դնում: *Կապարը մարտունը՛ցէք՚ ըն շատ աղ տինիս* (Բ): 2. Բարակ շիվերից պատրաստած հյուսվածք, որ փռում են հնձանի հատակին՝ խաղողը ճմլելու եւ խաղողահյութը քամելու համար: *Կապարը շատ վախտ տըկօղնուն ճըպըտնէրան ըն շինում* (Զ):

ԿԱՊԷԼ *(գրբ. կապեմ)* - *նբ. 1.* Թելով՝ պարանով՝ լարով եւն իրար միացնել,

կապակցել: *Պիրիս ա մը՛սը քըցիս ճը-վըրանէն մաչը, ք՛ինդիրավը կըպէս, հը-սարէն կըլխավը կախ տաս* (ԼՂԲ, 391): 2. Իրար հետ միացված բաների թել՝ պարան՝ լար եւն փաթաթել՝ ցրիվ չգալու համար: *Խստէն կապուկնէն կապում ըն, թուլու տամ* (Զ): 3. Թելով՝ պարանով եւն մի բան փաթաթելով՝ ամրացնել մարմնի վրա: *Տըրըխնէն կապում ա, վազ տամ* (Զ): 4. Մարմնի վրա փաթաթելով՝ ամրացնել: *Վէր մըծանըմ ա, տը-ղան հօրը թըվանգը յօր ա օնըմ, պատ-րօնդաշը կապում, ք՛ինում* (ՀԺՀ, V, 617): 5. Որեւէ բանի՝ մեկի հետ միացնել՝ շփ-ման՝ հարաբերության մեջ պահել: *Էտ կընէգը կարում ա ախպօրը կապէ նա-խագէն նըհը՛տ* (Զ): 6. Լաթով՝ վիրակա-պով եւն փաթաթել: *Դօխտուրը ա՛ռ՛ունը թըմիզցընում ա, կըլօ՛խը կապում, հըդէ տինում* (Բ): 7. Շարժվելու հնարավորու-թյունից զրկել, կապանք դնել, կապկպել: *Կը՛ննէրըն ա ծէրքէրը կա-պում ըն, քըցում փօսէն մաչը* (Զ): 8. Արգելք ստեղծել, խոչընդոտել, առաջը փակել: *Ծունը հըդէն կապալ ա, կարում չընք, թա ք՛ինինք՛ ծըմակը* (Բ): 9. Խոս-քով հաղթել, լռեցնել: *Աշըղնէն վէր հը-վաքվում ըն, տըհանցա մինը լօխճինին կապում ա, սազէրը ծըռքընէրան ինք՛ օնում* (ՀԺՀ, VII, 200): 10. Շերտ գոյաց-նել: *Էտ կըվէն կաթնը էնքան յըղալի յա ինիս, վէր ըմանէն կըլօ՛խը յը՛ղ ա կըպէս* (Զ): 11. *փխբ.* Հատկացնել, նշանակել, սահմանել: *Ժողով ըն անում, Թամար բաջուն ամէսը հցցուն մանէթ պէնսյա կապում* (Զ): 12. Գործունեությունը խա-փանել՝ կասեցնել: *Ավաք՛ ա՛մին կարում ար ըղօթքավ չարը կապէ* (Բ): 13. Բաց թողնել, արձակել (ջրի մասին): ... *Ճ՛ուրը կապում ա յըրան* (ԱԱ, 58): 14. Հոսանքը փակել՝ դադարեցնել: *Թ՛ազ՛ աքէրըն էլ ըջըղվէս ա, ք՛իս ճիղացէն ճ՛ուրը կը-պէս...* (ԱԱ, 56): 16. Պատրաստել, կռել, սարքել: *Դ՛ամ՛ուրչին հէնգ՛ մանէթ ա յը՛ր օնում, Հարօվէն հը՛տէ մին լ՛ավ ցակատ կապում* (Զ): 17. *տե՛ս* ՔԸԼԼԷԼ: *Տըռնէրը կապում ըն, քօն ինում* (Զ):

- Կապած էվ՛ել - 1. Հավաք, դասա-վորված: *Էտ ախճիգը տօնը հանց պա-հում ար, լ՛ըհա ասիս՝ մին կապած էվ՛ել* (Զ): 2. Համերաշխ, միաբան: *Պիլթընէ-ցէք՛ կապած էվ՛ել ըն, հինչը անում ըն, մինտը՛ղ ըն անում* (Բ):

ԿԱՊԷԿ *(ռուս. копейка)* - *գ.* 1. Դրա-մական միավոր խորհրդային միություն-նում, որ հավասար էր 1/100 ռուբլու: *Նի յա մընում բազարը, տը՛սնում՝ վըխճա-րէն կըլօ՛խը տասսը կապէկ* (Զ): 2. Այդ արժողությամբ մետաղյա դրամը: *Կա-պէկը թօղ ա անում, տամ մէս ծըխօղէն իրը՛սան* (Զ):

- Կապէկըս մաչին ք՛ը՛ցալ ա՞ - Ինձ ի՞նչ փույթ, ես դրա վրա փող չեմ ծախ-սել: *Մարթը ասմա.- Հինչ ա՞նիմ կ՛ու-դացալ ըն, կապէկըս մաչին ք՛ը՛ցալ ա՞* (Զ):

- Կապէկ չ՛ա՛ժիլ - Անարժեք՝ աննշան լինել, ոչ մի արժեք՝ նշանակություն չու-նենալ: *Ախպօրը ըրածը ըտըրա հը՛տէ կապէկ չ՛ա՛ժի* (Բ):

- Կապէկ պէց չըթօղնէլ - Խիստ ագահություն՝ փողասիրություն ցուցա-բերել: *Էն մինըն էլ շատ բիդի ի՛ուրա՛ն քաշօղ ա ինում, կապէկըն էլ ա՝պէց չար թօղում* (ՀԺՀ, VII, 257):

- Կըպէկին ապա/ըզդըրաստի ասէլ/ չէստ տալ - Ֆինանսական ծանր կացու-թյան մեջ լինել, բոլորովին փող չունե-նալ: *Հ՛ըրանտիկը առաչ ա իլ՛ալ հարուստ, միհէնգ՛ կըպէկին ապա յա ասում* (Բ):

- Կըպէկու հը՛տա ըղնէլ - *տե՛ս* Կա-պէկ պէց չըթօղնէլ:

- Կըպէկու հը՛տա մը՛ռած - Խիստ ժլատ: *Կ՛ըպէկու հը՛տա մը՛ռած մարթ ա Սա՛մին* (Զ):

- Կըպէկու հը՛տէ ըստակէլ/գ՛անքը տալ/տըղտօղալ - Խիստ ժլատ լինել: *...Նա շատ մը՛ծ հարըստութուն օնար, ամմա կըպէկու հը՛տա տըղտօղում ար* (Զ):

ԿԱՊԷ(ՅԻ)ՇՆԻԿ *(ռուս. копеечный)* - *ած. գ.* - *տե՛ս* Կըպէկու հը՛տա մը՛ռած:

ԿԱՊԷՐՏ - *տե՛ս* ԿԱՐՊԷՏ:

ԿԱՊԸԼԻ/ԿԱՊԼԻ *(ռուս. капля)* - *տե՛ս* ԿԱԹ:

ԿԱՊԸՎԷԼ - *տե՛ս* ԿԱՊՎԷԼ:

ԿԱՊԸՐԱՏԻՎ/ԿԱՊՐԱՏԻՎ *(ռուս. кооператив, լատ. cooperatio)* - *տե՛ս* ՄԱ-ՂԱՋԻՆ:

ԿԱՊԸՐԱՏԻՎՉԻ/ԿԱՊՐԱՏԻՎՉԻ - *տե՛ս* ՄԱՂԱՋԻՆՉԻ:

ԿԱՊԸՐՕՆ - *տե՛ս* ԿԱՊՐՕՆ:

ԿԱՊԸՐՕՆ(ԸՎ)Ի - *տե՛ս* ԿԱՊ-ՐՕՆ(ԸՎ)Ի:

ԿԱՊԻԿ *(գրբ. կապիկ)* - *տե՛ս* ՄԷՅ-ՄՈՒՆ:

ԿԱՊԻԿՕԹՈՒՆ - *տե՛ս* ՄԷՅՄՈՒՆՕ-ԹՈՒՆ:

ԿԱՊԻՉ - *գ.* Տրեխները՝ կոշիկները կապելու կամ գուլպան ոտքին ամրաց-նելու թել՝ փոկ: *Կապիչը յը՛տ ա անում, տըրըխնէն հանում* (Զ):

ԿԱՊԼԻ - *տե՛ս* ԿԱՊԸԼԻ:

ԿԱՊ-ԿԱՊ - Գործածվում է կապակ-ցության մեջ:

- Կապ-կապ անէլ - *տե՛ս* ԿԸՊԿԸՊՕ-ՐԷԼ:

ԿԱՊՍ/ԿԱՓՍ - *գ.* Կազմություն, կազմվածք, արտաքին տեսք: *Ըտըրա կապսը թաքավէրին շատ ա տուր կ՛ամ* (Զ):

ԿԱ՛ՊՍՈ՛ՒԼ/ԿԱ՛ՓՍՈ՛ՒԼ *(ռուս. капсюль, ֆր. capsule, լատ. capsula)* - *տե՛ս* ՓԸՍ-ՏՕՆ[1]:

- Կա՛ապսո՛ւլնէն տո՛ւս տըված - *հեգն.* Վնասազերծված, անվնաս: *Կա՛ապսո՛ւլ-նէն տո՛ւս տըված լօբի յա, արխային կէ-ռէք՛* (Բ)

ԿԱՊՎԱՍԿ - *գ.* Հագնելու՝ կապելու ձեւը՝ եղանակը: *Դէ՛, Շուշվա նա՛նա՛մ-սա՛-նա՛մ հըրթնէրէն կապվասկըն էլ ճօկ փօրմի յա իլ՛ալ* (Զ):

ԿԱՊՎԷԼ/ԿԱՊԸՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԿԱ-ՊԷԼ-ի: *չբ.* 2. *փխբ.* Մեկի հետ հոգեկան՝ մտերմական կապ ունենալ, սիրային հա-րաբերությունների մեջ գտնվել: *Թաքա-վէրը կըլխու վա ընգնում, վէր ի՛ուրա՛ն ըխ-ճըկօրցան մինը կապված ա էտ տըղին նըհէտ* (ՀԺՀ, V, 174): 3. Ցամաքել: *Էտ վէ-ռէրը վէր կըպվէս ա, վը՛ղէն տական մին ախպ՛ուր ա տ՛ուս կ՛աս...* (ԱԱ, 56):

ԿԱՊՐԱՏԻՎ - *տե՛ս* ԿԱՊԸՐԱՏԻՎ:

ԿԱՊՐԱՏԻՎՉԻ - *տե՛ս* ԿԱՊԸՐԱՏԻՎ-ՉԻ:

ԿԱՊՐՕՆ/ԿԱՊԸՐՕՆ *(ռուս. капрон, լատ. capronoe)* - *գ.* 1. Արհեստական թել եւ դրանից գործվածքեղենը: *Կապրօնը առաթ ընգավ, էլ պիրթին մըհալ քըցօ՛ղ չի կար* (Զ): 2. Արհեստական փափուկ նյութ, կարծրախեժ, որից տարաներ՝ խողովակներ եւն են պատրաստում: *Կապրօնը ըրկաթան տըմասկան ա* (Բ):

ԿԱՊՐՕՆ(ԸՎ)Ի/ԿԱՊԸՐՕՆ(ԸՎ)Ի *(ռուս. капроновый)* - *ած.* Կապրոնից պատրաստած: *Էտ մաղազինումը հա՛մ կապրօնի չուլկի յըն ծախում, հա՛մ կապ-րօնի կանիստըր* (Բ):

ԿԱՊՈՒԿ - *գ.* Միատեսակ իրերի միասին կապած փունջ՝ տրցակ՝ խուրձ: *Խստէն կապուկը քըցո՛ւմ ա էշին առա-ջը* (Զ):

- Կապուկ անէլ - Խուրձ՝ փունջ՝ տրցակ պատրաստել: *Ճէխը հըվաքում ա, կապուկ անում, շըլակում, ք՛ինամ* (Զ):

ԿԱՊՈՒՍ - 1. *տե՛ս* ԿԱՊՎԱՍԿ: 2. *տե՛ս* ՀԱՔՈՒՍ - ԿԱՊՈՒՍ:

ԿԱ՛ՊՈ՛ՒՏ - *տե՛ս* Կ՛ԱՊՈ՛ՒՏ:

ԿԱՊՕՑ - *տե՛ս* ԿԱՊՈՒԿ:

ԿԱՌ[1] - *տե՛ս* ԿԱՌՆԸ[1]:

ԿԱՌ[2] - *տե՛ս* ԿԱՌՆԸ[2]:

ԿԱՌԱՎԱՐԷԼ *(գրբ. կառավարեմ)* - *նբ.* Երկիր՝ պետություն եւն ղեկավարել՝ գլխավորել: *Էտ տըղան իտի լ՛ավ կառա-վարըմ ա յէրգ՛իրը* (ՀԺՀ, V, 77):

ԿԱՌԱՎԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԱՌԱՎԱ-ՐԷԼ-ի:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ *(գրբ. կառավարութիւն)* - *գ.* 1. Պետական իշխանության կենտրոնական կառավարող, կարգադրիչ եւ գործադիր մարմին: *Կառավարությունը վօրօշալ ա, վէր պէնցյան շըտըցընէ* (Ձ): 2. Տերություն, պետություն: *Ըստի հըվաքվում ըն ամէն կառավարությունա մարթիք, խօրուրթ անում* (Ձ):

ԿԱՌԷԹ/ԿԱՐԷՏ *(ռուս. карэта)*- *գ.* Ծածկ ունեցող՝ փակ կառք: *Խանը կարէտ ա նըստում, կ՚ամ յէշում...* (ԲՅԲ, 47):

ԿԱՌԹ *(գրբ. կարթ)* - *գ.* Ձուկ որսալու կեռիկ՝ ճանկ, կարթ: *Մին օր էլ կառթը քըցում ա ծօվը, մին էրուշ փօրմի ծուկուն փըռնում* (Ձ):

ԿԱՌԹԷԼ/ԿԱՌԹԻԼ - *գ.* Կարթով ձուկ որսալ: *Էս մարթը ամմէն օր էրկու ծուկուն ար կառթում, մինը՝ ծախում, մինը՝ կընգանը նըհը՚տ օտում* (Ձ):

ԿԱՌԹԻԼ - *տե՛ս* ԿԱՌԹԷԼ:

ԿԱՌՆԸ[1]/ԿԱՌ[1] *(գրբ. կառն)* - *գ.* Կանկառների ընտանիքին պատկանող երկար ցողունով, փշոտ տերեւներով, կարմրագույն գնդաձաղիկով բույս: *Էշէրը կառնը շատ ըն սիրում* (Բ):

ԿԱՌՆԸ[2]/ԿԱՌ[2] - *գ.* Թոռան թոռան՝ կոռան զավակ: *Էս ախպուրը մէլիք՚ Յէգանէն կառնըն ա շինալ* (Ձ):

ԿԱՍ[1] - *տե՛ս* ԿԱՆՑ:

ԿԱՍ[2] - *տե՛ս* ԿԱՍՍ:

ԿԱՍԻՍ - 1. ԱՍԷԼ բայի ենթադրական ապառնու եզակի երկրորդ դեմքը: 2. *վ. տե՛ս* Ասիս թա (ԱՍԷԼ-ի տակ):

ԿԱՍԻՐ - *տե՛ս* ԿԱՍՍԻՐ:

ԿԱՍԿ - *տե՛ս* ԿԷՍԿ:

ԿԱՍԿԱ(Դ) *(ռուս. каска, ֆր. casque)* - *գ.* Գլխի մետաղյա ծածկոց, սաղավարտ: *Վէր կասկան կըլխէն չինար, գ՚ուլլան ըտըրան կըսպանար* (Ձ):

ԿԱՍԿԱԾ/ԿԱԾԿԱԾ *(գրբ. կասկած)*- *գ.* Տարակույս, երկմտանք, կասկած: *Էտ մարթը հինչը անում ա, կըսկածավ ա անում* (Ձ):

ԿԱՍԿԱՄ/ԿԸՑԸԿԱՄ - 1. *ած.* Կասկածող, կասկածամիտ: *Կասկամ մարթ ա Բիջանաց Ա՚ոշանկը* (Բ): 2. *մ.* Կասկածելով, կասկածամիտ կերպով: *Տընըշինիտ տըղան հացըն էլ ա կասկամ օտում* (Բ):

- Կասկամ անէլ - *տե՛ս* ԿԸՍԿԱԾԷԼ:

ԿԱՍՍ/ԿԱՍ[2] *(ռուս. касса, գերմ. Kasse, լատ. caspa)* - *գ. 1.* Դրամ եւ այլ արժեքներ պահելու անկիզելի արկղ՝ պահարան, գանձարկղ: *Մին օր էլ քըշէրը նի յըն մընում ըտըրա կանտորը, կասսը կօտրում, փուլէրը տանում* (Ձ): 2. Մետաղյա՝ կավե եւն փոքրիկ տուփ՝ հարմարանք՝ վերեւից բացած անցքով՝ մեջը մետաղադրամներ գցելու եւ հավաքելու համար: *Հա՚ը ամմէն օր կապէկ ար տամ, վէր խօխան քըցի կասսը* (Ձ):

ԿԱՍՍԻՐ/ԿԱՍԻՐ *(ռուս. кассир, գերմ. Kassier)* - *գ.* Հիմնարկության՝ հաստատության եւն դրամական գործառնությունները վարող պաշտոնյա: *Բա՚գումանց Նինան քըռասսուն տարէ կասսիր ա կօրծ ըրալ, ամմա հա՚լա՚ կարքէն փուլ հըմբարէլը գ՚ուդում չի* (Բ):

ԿԱՍՍԸՐՈՒԼԿԱ - *տե՛ս* ԿԱՍՏՈՒՐԿԱ:

ԿԱՍՏԻԼ *(ռուս. костиль)* - *գ.* Անթաթուպ: *Վը՚ենը կըտըրած մարթ ա Սօջին, մին թա՚հրա՚վ ա կաստիլա՚վ շօռ կ՚ամ* (Բ):

ԿԱՍՏԻՄ - *տե՛ս* ԿԱՍՏՈՒՄ:

ԿԱՍՏՈՒՄ/ԿԱՍՏԻՄ *(ռուս. костюм, ֆր. costume, իտ. costume)* - *գ.* Տղամարդու կամ կանացի զգեստի կոմպլեկտ, կոստյում: *Էք՚սը տանում ա, կաստո՚ւմ, պալտօն կ՚էց տամ...* (ՀԱԲ, 15, 79):

ԿԱՍՏՈՒՐԿԱ/ԿԱՍՏԸՐՈՒԼԿԱ *(ռուս. кастрюлька)* - *գ.* Փոքրիկ կաթսա: *Թամանը մին կաստո՚ւրկա կուրկուտ ա իփա՚լ, օխտը ղօնաղ ծէն տըվալ* (Բ):

ԿԱՍՔ - *տե՛ս* ԿԷՍԿ:

ԿԱՎ[1]/ԿՕՎ *(գրբ. կօվ)* - *գ.* 1. Խոշոր եղջերավոր կաթնասուն ընտանի կենդանի, կով: *Պէրըմ ըն խօրուրթ տէսնըմ, վէր էտ կօվը մօրթէն* (ԼՂԲՔ, 280): 2. *փխբ.* Գեր, անճոռնի ու դանդաղաշարժ կին: *Էտ կավը օ՚գալ ըս, հինչ ա՞նիս, տը՚ղան էլ չի տո՚ւրո՚ւր կ՚ամ* (Բ):

- Կավը դընու տը՚ղ ծախէլ - Ապրանքը էժան վաճառել: *Կավը դընու տը՚ղ ծախօղ առուտուրականը հըրուստանալ չի* (Ձ):

- Կավը յըրա անէլ - Կովը հեշտ կթելու համար հորթը տակը մտցնել, որ մի քիչ ծծի: *Կավը բիդի յըրա անիս, վէր հիշտ քըթիս* (Բ):

- Կավըս յըղէ ինի՝ հէնգ՚/օխտը ամէս յը՚տէ ծընէ - Կարեւորը արդյունք ստանալու մեջ համոզված լինելն է:

- Կավը վէր աշկավ չանէ, ք՚ա՚ղլա՚ն լօք չի տալ - Ոչինչ առանց պատճառի չի լինում:

- Կավ ճիրիլ - Ոգելից խմիչքը առատորեն լցնել բաժակները: *Կավ ը՞ս ճիրում, էտ ըստըքընէն պատառ թէհրատ ա՞ծէ* (Բ):

ԿԱՎ[2] *(գրբ. կաւ)* - *տե՛ս* ԼՈՒՍՆԱՎԸ՚Ղ[1]:

ԿԱՎԱԼԷՐ *(ռուս. кавалер, ֆր. cavalier)* - *գ* Տիկնոջ ուղեկցող՝ զբաղեցնող՝ նրա հետ պարի զույգ կազմող տղամարդ: *...Մէր խանըմնէրին կավալէրնին դիմիշ չըն անըմ՝ էրկու շահի տան մին փա՚հլի* (ՋՏ, Ա, 106):

ԿԱՎԷՃ - *տե՛ս* ԿԱՎԻՃ:

ԿԱՎԻՃ/ԿԱՎԷՃ *(գրբ. կավիճ)* - *գ. - 1.* Սպիտակ փափուկ կրաքար: *Մէր շէնին յը՚րէ ընգ՚ունին կավիճ կա* (Բ): 2. Այդպիսի կրաքարի կտոր, որ գործ է ածվում գրելու, ներկելու եւ այլ նպատակներով: *Խօխան կավիճը յօր ա օնում, մըղակէն յըրա խըգ՚բըգ՚օրում* (Ձ):

ԿԱՏՈ՚ԼՕԿ - *տե՛ս* ԿԱՏԻԼՕԿ:

ԿԱՏՈ՚ՆԱՔ - *գ.* 1. Քոսոտ այծ: *Էտ կատա՚նա՚զը ծախում ա, կընգանը հը՚տէ մին ճօխտ վընանման ինք՚ օնում* (Ձ): 2. *փխբ.* Վտիտ ու տգեղ անձ: *Էտ կատա՚նա՚զը մարթին շատ ա տա՚նջա՚ում* (Բ):

ԿԱՏՈ՚-ՎԱՏՈ՚ - *տե՛ս* ՎԻՃԻ-ՎԻՃԻ:

ԿԱՏԱՐ *(գրբ. կատար)* - *գ.* 1. Որեւէ բանի ամենաբարձր կետը, գագաթ: *Վընճընէն քըշ՚ում ա սարէն կատարը* (Ձ): 2. Թռչունների գլխին ցցված միսը, ցցունք: *Հընդ՚ուշկին կատարը վէր սըվացավ, գ՚իդա՚ վէր ըստըկըլական ա* (Ձ): 3. *փխբ.* Մարդու գլուխ: *Քըչալէն կատարը մըրսում ա, ամմա ինք՚ը սա՚ս չի անում* (Ձ):

- Կատարը թըխծընէլ - *տե՛ս* Կատարը թըքանալ (1):

- Կատարը թըքանալ/կըծ՚անալ/կ՚իրմիրել - 1. Գինովանալ, հարբել: *Վէր էրկու ըստաքան խըմում ա, կատարը թըքանում ա* (Ձ): 2. Բարկանալ, բորբոքվել: *Կընէգ՚ը վէր ջողաբը տամ ա, Մա՚ռդիրծսէն կատարը թըքանում ա* (Ձ):

- Կատարը սօր - Ժիր, աշխույժ: *Կատարը սօր ախճիգ՚ ա իլա՚լ Սօնան* (Բ):

- Կատարը տաք/կաճ՚/կ՚իրմիրա՚ծ - 1. Գինով, հարբած: *Կատարը տաք մարթին նըհը՚տ հօջա՚թ չըբիդի տաս* (Ձ): 2. Բարկացած, բորբոքված: *Հա՚բրա՚ն կըլխօզէն ժօղօվումը թըքըթծիմա՚թ ըն անում, ըտի կատարը տաք կ՚ամ ա տօն, կընգանը թակում* (Ձ):

- Կատարը տէրտակ - *տե՛ս* Կըլօխը տէրտակ:

ԿԱՏԱՑ *(ռուս. катать (ման ածել)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Կատաց անէլ - Մեկին մեքենայով՝ հեծանիվով՝ ձիով եւն ման ածել՝ զբոսեցնել՝ պտտեցնել: *Հա՚ը խուխէն տինում ա մըշինումը, կատաց անում* (Ձ):

- Կատաց ինիլ - Մեքենայով՝ հեծանիվով՝ ձիով եւն ման գալ՝ զբոսնել՝ պտտվել: *Ըստրանք միշտ հօրը մըշինավը կատաց ըն ինում* (Բ):

ԿԱՏԷԳ *(թրք. kadik* (դուրս ցցված) - *գ.* Կոկորդի մուտքի վրա կապված լեզվակը, որը սնվելու՝ խմելու ժամանակ փակում է այդ մուտքը, մակալեզու, կատիկ: *Կատէգ՚ը վէր ինի վէչ, հաց ուտէլիս մարթ կըխէխտըվի* (Բ):

- Կատկէն թըռչիլ - Կերածը կամ

խմածը շնչափողի բերանն ընկնել: *Կամանց բիդի օտիս, վէր կատկէտ չի թըռչի* (Զ):

- Կատկէն տէմ ըղնէլ/մընալ - Չկարողանալ մարսել, կուլ չգնալ: *Խը՛ղճը հինչը օտում ա, կատկէն ա ըղնում* (Բ):

- Կատկումը մընալ - *տե՛ս* Կատկէն տէմ ըղնէլ:

ԿԱՏԸԼԷՏ - *տե՛ս* ԿԱՏԼԷՏ:

ԿԱՏԸՐԷՋ - *տե՛ս* ԿԱՏՐԷՋ:

ԿԱՏԻԼ - *տե՛ս* ԿԷՏԷԼ:

ԿԱՏԻԼՕԿ/ԿԱՏԼՕԿ *(ռուս. котелок)* - *գ.* 1. *տե՛ս* ԿԱՍՏԻՐԿԱ: 2. *հեգն.* Փոքր աման՝ տարա: *Մին կատիլօկ մօշ ա քաղալ, ըշխարքավըս մին ըրալ* (Բ): 3. *արհմ.* Մարդու գլուխ: *Փափաղըտ տի՛ր, կատալօկըտ ցորտ տընական ա* (Բ):

- Կատիլօկը տէրտակ - *տե՛ս* Կըլօխը տէրտակ:

ԿԱՏԼԷՏ/ԿԱՏԸԼԷՏ *(ռուս. котлета, ֆր. cotelette)* - *գ.* Աղացած կամ ծեծած մսի երկարավուն՝ կլոր տապակած կտորներ, կոտլետ: *Թանգգան հարթնը խաշիլ իփիլը գ՛ուդ՛ում չար, ամմա լ՛ավ կատլէտ ար շինում* (Զ):

ԿԱՏՏ - *տե՛ս* ԿԷՏ[1]:

ԿԱՏՐԷՋ/ԿԱՏԸՐԷՋ/ԿԱՐՏԷՋ *(ռուս. картечь, հոլ. kartecra, գերմ. Kärtetsche)* - *գ.* Արճիճե, սովորականից մեծ կտոր որսորդական հրացանի փամփուշտի մեջ տեղադրելու համար: *Պատրօնէն մաչին կատրէջ բիդի ինի, վէր կարիս արչ ըսպանիս, ղըրմավ ամ՛ալ չի կ՛ալ* (Բ):

- Կատրէջ կըտրցընել - Պատժել, ամեն ինչից զրկել: *Տըղան կ՛ուղթուն ըրավ, հ՛ալը կատրէջ կըտրցըրավ* (Զ):

ԿԱՏՈՒ *(գրբ. կատու)* - *գ.* Կատվազգիների ընտանիքին պատկանող կաթնասուն կենդանի, կատու: *Կատուն տ՛ուզն ա ինում, ամմա կարում չի էտ մուկնէն փըռնէ* (Զ):

- Կատվէն վազ տալը մինչը՛վ մարդ՛ը՛ն ա ինում - Ասվում է, երբ ակնարկում են որեւէ բանի ոչ տեւական լինելը: *Կատվէն վազ տալը մինչը՛վ մարդ՛ը՛ն ա ինում. Սուրէնը տանը պատէրը տիրալ ա, թօղալ ընդի* (Բ):

- Կատվէք՛ը ք՛ը՛ցէն, մուկնէրէն հը՛ղէն պէցվավ - *տե՛ս* Վըխճարէն սի՛ր՛ուն յը՛տ տը՛ռավ, կաղլէգ՛ը առաշկ ընցավ:

- Կատվու լըպըզտած - Շատ մաքուր՝ դատարկ (ափսեների՝ ամանների մասին): *Նըստում ա լօխ օտում, մարը կ՛ամ ա, տը՛սնում՝ ըմանումը կուրկուտ չի կա, հանց ա կատվու լըպըզտած* (Զ):

- Կատվու աղ՛անձ - Չորուկ ուտելիք: *Էս էլ հօ խըրաված չի՞, կատվու աղ՛անձ ա* (Բ):

- Կատվու կըլխընէ - Մեծ-մեծ՝ խոշոր (սովորաբար ասվում է պտուղների մասին): *Գ՛ավ՛ալ, հինչ գ՛ա՛ն±վ՛ալ, կատվու կըլխընէ* (Զ):

- Կատվու նըման մաշկէն չըղնէլ - 1. Համառել, իր ասածը պնդել: *Մարթը հիշկան թակում ա, կընէգ՛ը էլիա կատվու նըման մաշկէն չի ըղնում* (Զ): 2. Վտանգից՝ վնասից խուսափել կարողանալ: *Իզէն կատվու նման մաշկէն չի ըղնէլ, հինչը ինում ա, ինք՛ը լ՛ավ ա պըրծընում* (Զ):

- Կատվու քըշէռք - *տե՛ս* Կաշվի քըշէռք:

- Կատու ընցընէլ մըչըրնէրավը - Հարաբերությունները վատանալ, անհամերաշխություն ծագել, գժտվել: *Ղուլգ՛ասը՛ն ա Սումբաթը էլ մինտը՛ղ արտ չըն անում. կատու վա ընցալ մըչըրնէրավը* (Զ):

- Կատու կըտրրէլ - *տե՛ս* Թանգի կըտրրէլ:

- Կատու կըրասկա տըվող - Խաբեբա, կեղծարար: *Կատու կըրասկա տըվող ա Դանվութը, վէշ մինը նըստա պէն չի ինք՛ օնում* (Բ):

- Կատու ճըղէլ - Ընտանիքում իր իշխանությունը հաստատել (տղամարդու մասին) (ըստ հին սովորության՝ հարսանիքից հետո փեսան հարսի ներկայությամբ կատվի ծնոտներից բռնում եւ քաշելով պատռում էր, որպեսզի հարսը նման վիճակում չհայտնվելու համար հնազանդվի իրեն): *Առաչ փը՛սան կատու վա իլ՛ալ ճըղէլիս, վէր հարթնը հ՛ալշը՛վը յը՛ր օնէ, միհէնգ՛վա տըղէք՛ը՛ն էլ հըրսընքանը յը՛տը ճ՛ուր ըն տինում, հըրթնէրէն վը՛ննէրը լըվանում, անդար անիմ ըստի դարը* (Բ):

- Կատուն աղ՛անձ ա օտում - Ասում են անզգույշ քայլ կատարողի՝ չափն անցնողի մասին:

- Կատուն բիղէրէն յըղըպարան ա՞ տըվալ - Որտեղի՞ց նրան հարստություն՝ շռայլ ապրուստ: *Կատուն բիղէրէն յըղըպարան ա՞ տըվալ, Սամսօնը հաց չի քըթէնում, թա օտէ, ք՛ը՛զ հինչ բի՞դի ք՛ը՛մ՛ալ անէ* (Բ):

- Կատուն մաչին թ՛ավիլ չի տալ - Շատ՝ չափազանց փոքր է (տեղի՝ տարածության մասին):

- Կատուն ի՛ուրն հը՛տէ փիս ա՛ն՛ալ չի տը՛սնալ - Ոչ ոք իր վատը չի ցանկանում:

- Կատուն ի՛ուրն փօրէն հը՛տէ յա մուկուն փըռնում - Յուրաքանչյուրը իր օգտին է գործում՝ իր կարիքներն է հոգում:

- Կատու շինիլ - *տե՛ս* Թանգի շինիլ:

- Կատու տը՛ռնալ - *տե՛ս* Թանգի կըտրրէլ:

ԿԱՏՕԼ *(ռուս. котел)* - *տե՛ս* ԿԱՏԻԼՕԿ:

ԿԱՐ *(գրբ. կար)* - *գ.* 1. Կարելու գործողությունը, կարելը: *Կընէգ՛ը տ՛ուս ա կ՛ամ բալկոնը, լ՛ալ ինում, էլիա կ՛ամ կարը ըսքըսում* (Զ): 2. Այն, ինչ կարվում կամ կարված է: *Կարը տինում ա ըստօլէն, յը՛ր կէնում, վէր մարթին հը՛տէ հաց շինի* (Զ): 3. Կարելու ձեւը՝ եղանակը: *Ծը՛ղքու կար ա, քանդվիլ չի* (Բ): 4. Կարված տեղը, կարվածք: *Շըլվարէն կարը յը՛տ ա տուվալ* (Բ): 5. Որեւէ բանի մասերի՝ կտորների միացման տեղը: *Մըղակը կէճ տըխտակա յա ինում շինա՛ծ, վէր չուրանում ա, կարէրը ի՛ուրն անա հըռանում ա* (Զ):

- Կար անէլ - Կարելով զբաղվել: *Մարթը ք՛ընում ար վը՛ռս անըմ, կընէգ՛ըն էլ տանը կար ար անըմ* (ՀԺՀ, V, 122):

- Կար անօղ/կարօղ - *տե՛ս* ԴԱՐՕՂԻ:

- Կարը քանդիլ - Վերքը լավանալուց հետո կարված թելերը մարմնից հանել: *Դօխտուրը կարէրը քանդում ա, հըղէ տինում* (Զ):

- Կար տինիլ/քըցիլ - Վերքի բացվածքները հատուկ թելով իրար կցել՝ կարել: *Դօխտուրը ասմա.- Յարան խօր ա, բիդի կար տինիմ* (Զ):

ԿԱՐԱԲԻՆ *(ռուս. карабин, ֆր. carabine, թրք. karabina)* - *գ.* Երկար փողով հնատիպ հեռահար հրացան: *Թէվանէն էլ մին լ՛ավ կարաբին ա իլ՛ալ* (Զ):

ԿԱՐԱԼ - *տե՛ս* ԿԱՐԷԼ[2]:

ԿԱՐԱԼՕԿ *(ռուս. корол,к)* - *գ.* Արքայանարինջի այն տեսակը, որը նախքան հասնելը տտիպ չէ եւ կարելի է ուտել: *Ա՛նկ՛ա՛ր՛անա կարալ՛օկը քախծըր ա ինում* (Բ):

ԿԱՐԱԿՈ՛ՒԼ *(ռուս. каракуль, թրք. karakül)* - *գ.* Միջինասիական կարակուլյան գառի թանկարժեք մորթի, ինչպես նաեւ այդ մորթուց կարված գլխարկ: *Մէլիք՛ը տ՛ուս ա կ՛ամ՝ կարակ՛ուլ փափաղը կըլխէն, թընգ՛անուց չօխան կ՛էցին...* (ՀԺՀ, V, 239):

ԿԱՐԱՆ - *տե՛ս* ՎԸ՛ՐՎԱՆ:

ԿԱՐԱՆՏԻՆ - *տե՛ս* ԿԸՐԱԽՏԻՆ:

ԿԱՐԱՍ[1] *(գրբ. կարաս)* - *գ.* Թրծած կավե մեծ աման՝ գինի, թթու եւն պահելու համար: *...Հանէսը թաքուն նի յա մընընըմ, կարասը յօր օնըմ, ըթտըբաթտի տը՛ռնըմ...* (ԼՂԲ, 307):

- Կարասը ընգած մուկուն - 1. Անելանելի՝ խեղճացած վիճակում գտնվող անձ: *Առաչ ա իլ՛ալ Բըխցարը ազդուն, միհէնգ՛ կարասը ընգած մուկուն ա* (Բ): 2. Չնչին, բայց վնասակար մարդ: *Իզէն կարասը ընգած մուկուն ա, սաղ շինա՛ցուց վը՛ննանը տակը քանդ՛ալ ա* (Զ):

- Կըրասէն հինչ վէր ծէն տաս, էն էլ կըսկանաս - *տե՛ս* Հինչ վէր վարիս, էն էլ կըհընձիս:

- Կըրասու կ՚ինի - Կարասի մեջ պահված՝ թունդ գինի: *Կըրասէն կ՚ինուն նըման կ՚ինի կա վէջ* (Բ):

- Կըրասու պէնէր - Թթու դրած ուտելեղեն: *Ըստըրանց տանը միշտ կըրասու պէնէր ա ինում* (Բ):

ԿԱՐԱՍ[2] *(ռուս. карась)* - *գ.* Տափակ փոքր ձկան տեսակ: *Կարասը փըշ-փոշուտ ծուկուն ա* (Բ):

ԿԱՐԱՎԱԹ - *տե՛ս* ԿԸՐԸՎԱԹ:

ԿԱՐԱՔ՚ - *տե՛ս* ԿԱՐՆՔ՚:

ԿԱՐՆՔ՚/ԿԱՐԱՔ՚ *(գրբ. կարագ)* - *գ.* Մածունը՝ սերուցքը հարելուց ստացված կենդանական յուղ: *Կարաք՚ը քըսում ա հացը, կընծուտէլավ ք՚ինում* (Ձ):

- Կարանք՚ յը՝ղ - 1. *տե՛ս* ԿԱՐԱՔ՚: 2. Ընտիր յուղ: *Խոզ՚ին փուրայէղը կարանք՚ յը՝ղ ա* (Ձ):

ԿԱՐԴԻՆԱԼ *(ռուս. кардинал (հոգեւորական բարձր տիտղոս), լատ. cardinalis, հուն. kardina'lis)* - *գ.* Կարմրավուն մեծահատ սեղանի խաղողի տեսակ: *Կարդինալը ճէլլի յա հըսնում* (Բ):

ԿԱՐԴՕՆ *(ռուս. картон, ֆր. carton)* - *գ.* Ստվարաթուղթ, խավաքարտ: *Կարդօնը կըտօրում ըն, յանշիգ՚նէ շինում* (Բ):

ԿԱՐԴՕՆ(Ն)Ի *(ռուս. картонный* - *ած.* Ստվարաթղթից՝ խավաքարտից պատրաստած: *Էտ ութըղնէրէն մաչի պատըն էլ կարդօննի յա ինիս, վէր թըխէս ըն, ճըղվէս ա* (Ձ):

- Կարդօննի յանշիգ՚ - 1. Ստվարաթղթից պատրաստած տուփ: *Խընձօրը ածում ըն կարդօննի յանշիգ՚նէն, շարում* (Ձ): 2. Խախուտ՝ ոչ ամուր շինություն: *Էտ էլ հօ տօն չի՞, կարդօննի յանշիգ՚ ա, վէր քամէ յա անում, օգ՚ում ա, թա պարան կ՚ա* (Բ):

ԿԱՐՋԻ(Ն)ԿԱ *(ռուս. корзин(к)а)* - *գ.* Բարակ ոստերից՝ ծղոտից՝ կոշտ թելից եւն հյուսած պայուսակ, զամբյուղ: *Մին էլ մին պարիկամ, մին կարզինկա յէր կանչած, պիրում ա տինում, տանում կ՚ամ* (ԲՅԲ, 151):

ԿԱՐԷԼ[1]/ԿԱՐԻԼ *(գրբ. կարեմ)* - *նբ.* 1. Հագուստ՝ կոշիկ եւն պատրաստելու համար ձեւած կտորի՝ կաշվի ծայրերը թելով ամրացնել՝ միացնել: *Էտ կընէգ՚ը մին լ՚ավ չօխա յա կարում, տանում էտ թանչիրին յըրա ծախում* (Ձ): 1. *տե՛ս* Կար անել: 3. *տե՛ս* Կար տինիլ:

- ԿԱՐԷԼ[2]/ԿԱՐԱԼ *(գրբ. կարեմ)* - *չբ.* Կարողանալ՝ ի վիճակի լինել մի բան անելու՝ կատարելու, կարենալ: *Էտ տըղան հիշքան կարըմ ա, վը՝սկէ յա յօր օնըմ, հըղէ ինըմ...* (ՀԺՀ, V, 37):

- Կարէլ չըս դանուզ ք՚ինիս, վէր հըղէն ծօռ ա - Անարդար միջավայրում անհնար է շիտակ ապրել:

- Կարում չի, թա խօնջանը կապէ - Ասում են ֆիզիկապես շատ թույլ, հիվանդ մարդկանց մասին:

- Կարող ա - Հնարավոր է: *Հանը ասմա.- Փափաղըտ տի՛ր, կարող ա ցօրտ ինի* (Ձ):

ԿԱՐԷԼԻ/ԿԱՐԻԼԻ *(գրբ. կարելի (հնարավոր)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Կարէլի յա - 1. Պետք է, լավ կլինի, որ...: *Ուստան ասմա.- Էտքան չընչրվէլին տը՝ղ, կարելի յա ցը՝խը ճիրին քըշտէն ըրած* (Ձ): 2. Թույլտվության խնդրանք եւ համաձայնություն: *Էտ տըղան ասում ա՝ կարէլի յա՞, ըխճըկէրք՚ը ասում ըն՝ կարէլի յա...* (ՀԺՀ, V, 395):

ԿԱՐԷՃ - *տե՛ս* ԿԱՐԻՃ:

ԿԱՐԷՇՆԸՎԻ *(ռուս. коричневый)* - *ած.* Դարչնագույն: *Կարէշնըվի շօ՚ր էր ա էզզանան կ՚ը՝նում Սիրանուշը* (Բ):

ԿԱՐԷՏ - *տե՛ս* ԿԱՌԷԹ:

ԿԱՐԹԱԼ - *տե՛ս* ԿԱՐԹԻԼ:

ԿԱՐԹԸՎԻԼ - *տե՛ս* ԿԱՐԹՎԻԼ:

ԿԱՐԹԻԼ/ԿԱՆՐԹԻԼ/ԿԱՐԹԱԼ *(գրբ. կարդամ)* - 1. *նբ.* Գրվածը կամ տպագրվածը բարձրաձայն կամ լուռ վերարտադրել, ընթերցել, կարդալ: *Էտ մարթը յօր ա ունէս թօխտը, էլ մաչինը կըրթիս չի, թա հինչ ա կ՚ըրած* (ՀԺՀ, V, 298): 2. Վերծանել: *Էտ յը՝խծուն պատէն յըրա պէնէր ա ինում կ՚իրած, ամմա կարում չըն կարթին* (Ձ): 3. Սովորել, ուսանել, ուսում ստանալ: *Միհէնգ՚վա խօխէնք՚ը լ՚ավ չըն կարթում* (Բ): 4. Արտաքին զանազան նշաններից իմանալ՝ կռահել՝ հասկանալ՝ գուշակել: *Մարթը կընգանը իրը՝սէն կարթում ա, վէր փիս պէն ա իլանչ* (Ձ):

- Կարթանչ էշ - Կրթություն ստացած, բայց տգետ՝ տխմար մարդ: *Կարթանչ էշէր էլ ըն շատ ինում* (Բ):

ԿԱՆՐԹԻԼ - *տե՛ս* ԿԱՐԹԻԼ:

ԿԱՐԹՄՈՒՆՔ - *տե՛ս* ՈՒՍՈՒՄ:

ԿԱՐԹՎԻԼ/ԿԱՐԹԸՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԿԱՐԹԻԼ-ի:

ԿԱԼԻԴՕՐ - *տե՛ս* ԿԱՐԻԴՕՐ:

ԿԱՐԻԴՕՐ/ԿԱԼԻԴՕՐ *(ռուս. коридор, գերմ. Korridor, ֆր. corridor, լատ. currere)*- *գ.* Շենքի ներսում հարկի բնակարաններն իրար հետ կապող երկար անցք, միջանցք: *Մին բօյահիլի յա ինք՚ օնում, տինում կարիդօրում* (ՀԱԲ, 15, 146):

ԿԱՐԻԼ - *տե՛ս* ԿԱՐԷԼ[1]:

ԿԱՐԻԼԻ - *տե՛ս* ԿԱՐԷԼ-ի:

ԿԱՐԻՃ/ԿԱՐԷՃ *(գրբ. կարիճ)* - *տե՛ս* ԿԸՌԸՅՆՔԻ (1):

ԿԱՐԾԻՔԱՎՈՒՐ - *տե՛ս* ԿԱՍԿԱՄ:

ԿԱՐԾԻՔԸՎՕՐԷԼ - *տե՛ս* ԿԸՍԿԱԾԷԼ:

ԿԱՐԿԱԺ/ԿԻՐԿԻԺ - *գ.* 1. *տե՛ս* ԲԸՐԸՆԻ: 2. Կուլայի ձեւ ունեցող դդումի տեսակ, որ, չորացնելով եւ ներսը մաքրելով, գործածում են որպես աման՝ տարբեր բաներ լցնելու համար: *Թօթէն չամէնչը կըրկաժին մաչին ըն իլանչ պը՝հէլիս* (Ձ): 3. *արիմ.* Մարդու գլուխ՝ գանգ: *Մին տօռնը պէնում ըն, տէսնում՝ էն ա մին հացու ըստօլ՝ մին մարթու կարկաժ տիրած ընդէղ...* (ՀԱԲ, 15, 29):

- Կարկաժը ժէժ/տէրտակ - *տե՛ս* Կըլօ՚խը տէրտակ:

- Կըրկաժէն յէկած (հավ) - *տե՛ս* Կըլխէն թըխած (հավ) (ԿԸԼՕ՚Խ-ի տակ):

- Կըրկաժու ծաղէգ՚ - Շատ գեղեցիկ անձ՝ իր: *Ախճիգ՚, հինչ ա՞խճիգ՚, մին կըրկաժու ծաղէգ՚* (Ձ):

ԿԱՐԿԱԺ - ԲԸՐԸՆԻ - *տե՛ս* ԲՕՐԱՆԻ:

ԿԱՐԿԱՉԱ - *գ. 1.* Մանկական խաղալիք՝ կոթավոր տուփիկ՝ մեջը մանր քարեր լցրած, որ շարժելուց չխկչխկում է: *Խօխէնք՚ը, մարթը մին կարկաչա ծըրքըրնէրէն, խաղ ըն անում* (Ձ): 2. *փխբ.* Շատախոս՝ շաղակրատ անձ: *Էտ կարկաչան էնքան խօսից, դանգ՚ ըրավ* (Բ):

ԿԱՐԿԱՌ - Գետ Դարաբաղում:

- Կարկառը վը՝ռէն կապիս՝ վը՝ռը թըրչիլ չի - Ասում են խիստ զգուշավոր եւ խորամանկ մարդկանց մասին:

ԿԱՐ-ԿԸՐԿԱՏԱՆ - *գ.* Կարելը եւ կարկատելը: *Կընէգ՚ը վէր կար-կըրկատան անէլը գ՚իդանց վէչ, էլ հանուր ա՞ հարկավէր* (Ձ):

ԿԱՐԿՈՒՏ/ԿԱՐԿՕՏ *(գրբ. կարկուտ)* - *գ.* Սառցե հատիկների ձեւով մթնոլորտային տեղում, կարկուտ: *Կարկուտը արտէրը փուչըցըրավ* (Բ):

- Կարկուտը թակած տը՝ղընն ա թակում - Տուժում է տուժածը:

- Կարկուտ թակած տանանձ - 1. *տե՛ս* Իրը՝սը քաշ կընտկօտած: 2. Խեղճ ու վտիտ անձ: *Իզէն կարկուտ թակած տանանձ ա, կարում չի, թա յօլլա ք՚ինի* (Ձ):

- Կարկուտ թակած սուղանու լաքէր - Անհամաչափ եւ նոսր աճած: *Վազ՚ովէն կընէգ՚ընն էլ շատ կ՚էշ ա ինում՝ քէթը մը՝ծ, բօյը կարճ, օնքէրը՝ կարկուտ թակած սուղանու լաքէր* (Ձ):

- Կարկուտ թակել - Կարկտահարել, կարկտահարվել: *Բուստընանէն կարկուտ թակալ ա* (Բ):

- Կարկուտ տանել - Կարկտահարությունից փչանալ: *Ըստըռնըվա բարը կարկուտ տարալ ա* (Բ):

- Կըրկուտու նըման յըրա տալ - 1.

Արագ-արագ խոսել: *Կըրկուտու նըման յըրա յա տամ, վէշ մինը պէն չի կըլխու ըղնում* (Ձ): 2. Անսպասելի հարձակվել: *Ըտըրանք կըրկուտու նըման յըրա յըն տամ, ք՛արվանը թըլանում* (Ձ):

ԿԱՐԿՕՏ - *տե՛ս* ԿԱՐԿՈՒՏ:

ԿԱՐՃ *(գրբ. կարճ) - ած. 1.* Երկարությամբ ոչ մեծ, փոքր: *Կարճ շալվար ա կ՛ը՞ցալ* (Բ): 2. Կարճահասակ: *Կարճ ախճիգ՛ ա Խօնարը* (Բ): 3. Քիչ բառերով արտահայտված՝ շարադրված, հակիրճ, համառոտ: *Մին օր էլ մին կարճ նամակ ա ըստանում* (Ձ): 4. Կարճատեւ, կարճ ժամանակ տեւող: *Ղարաբաղ ծըմը՞ռնը կարճ ա ինո՛ւմ* (Բ):

- Կարճ ասած - Առանց մանրամասնությունների մեջ ընկնելու՝ խորանալու: *Կընէգ՛ը ասում ա.- Մ՛ մարթ, կարճ ասած, ք՛ը՞գ էշու տը՞ղ ըն տիրա՛ալ, փուլէ-ըստ ծը՞րքատ ինք՛ կալա՛ալ* (Ձ):

- Կարճ խը՞լք - Անհեռատեսություն: *Կարճ խը՞լքը մարթին դո՛ւշմանը ա* (Ձ):

- Կարճ կապէլ/կըտըրէլ - Ասելիքը՝ անելիքը համառոտել: *Թամադան վէր տը՞սնում ա՝ վը՞րչը կըռը՞վ ա տըռնըլական, կարճ ա կապում կէնացնէն* (Ձ):

- Կարճ կապէլ, էրկան թակէլ/կըտըրէլ - Առանց կշռադատելու մեծ որոշում ընդունել՝ գործի անցնել: *Յու վէր կարճ կապում ա, էրկան կըտըրում, վէրչումը փուշմանում ա* (Բ):

- Կարճ կ՛ա՛ի հընձիլ - 1. Հոգնեցնող՝ դժվար գործ կատարել, հոգնել: *Կարճ կ՛ա՛ի յը՞ս հընձա՛ալ, խէ տը՞ղատ յը՞ր չը՞ս կէնում* (Բ): 2. Անհաջողության՝ նեղության մեջ ընկնել: *Մէխկ ա Սիմօնը, էրկու տարէ յա կարճ կ՛ա՛ի յա հընձո՛ւմ* (Բ):

- Կարճ կ՛ը՞նալ - Հայավարի հագնվել (կանանց մասին): *Նախշուն աքէրը չը-քօրանը մըհէնգ՛ էլ կարճ ա կ՛ը՞նում* (Բ):

- Կարճ մըտածէլ - Որեւէ բան ասելուց՝ անելուց առաջ չկշռադատել: *Յու վէր կարճ ա մըտածում, վեշ մին պենու հըսնում չի (Ձ):*

- Կարճ մըտածէլ՝ էրկան կըտըրէլ - *տե՛ս* Կարճ կապել՝ էրկան թակէլ:

ԿԱՐՃ(Լ)ԷԳ՝ - *տե՛ս* ԿԱՐՃ(Լ)ԻԳ՝:

ԿԱՐՃ(Լ)ԻԳ՝/ԿԱՐՃ(Լ)ԷԳ՝ *(գրբ. կարճիկ (գաճաճ) - տե՛ս* ԿԱՐՃ:

ԿԱՐՄԱՎՕՅ *(ռուս. кормовый) - ած.* Անասնակերի համար նախատեսված, կերային: *Կարմավօյ ճակընդէղը անհամ ա ինո՛ւմ* (Բ):

ԿԱՐՄԻՏ - *տե՛ս* ԿՕՐՄԻՏ:

ԿԱՐՄՈՒՆՁ/Կ՛ԱՐՄՈՒՆՁ *(գրբ. կամուրջ) - գ.* Կառուցվածք՝ գետի, ձորի եւն վրայով անցնելու՝ շարժվելու համար, կամուրջ: *Թաքավէրէն ծըռոտէնք՛ը միչէվ կարմունջը կ՛ամ ըն, տը՞սնում՝ վէշ մին պէն չի կա, յէտ ըն տը՞ռնում, ք՛ընում* (ՀԺՀ, V, 175):

- Կարմունջ կապէլ/քըցիլ - Կամուրջ կառուցել: *Էնգ՛ Թէմուրը հըրամմայում ա, վէր իրը՞ք օրումը էտ կ՛ը՞տէն յըրա կարմունջ կապին* (Ձ):

ԿԱՐՊ *(ռուս. карп) - գ.* Ծածան ձկան տեսակ: *Կարպը սազանէն նման ա, ամմա թէփուկնէն մը՞ծ-մը՞ծ* (Բ):

ԿԱՐՊԷՏ/ԿԱՐՊԸ՞Տ/ԿԱՊԷՐՏ/ԿԱՐՊԸՏ *(գրբ. կապերտ, կարպետ (քուրջ, ցնցոտի) - գ.* Բրդյա հաստ գործվածք, որ իբրեւ գորգ փռում են հատակին՝ թախտին եւն: *Նօ՛ք՛ա՛ը կ՛աս ա, թա կարպէտը տանէ թափ տա, տըսնաս՝ մին մը՞ծ օխծ կըրպէտին տակէն* (Ձ): 2. *ծծկ.* Հարյուր ռուբլանոց թղթադրամ ցարական Ռուսաստանում: *Յա՛ՇիգՀ՛ը պէնում ըն, տը՞սնում մին կալօդ կարպէտ մաչին* (Ձ):

- Կըրպէտին փուլ չի տըվալ, ամմա մաչտը՞ղըն ա նըստում - Ասում են նրանց մասին, ովքեր, որեւէ գործում մասնակցություն չունենալով, առատորեն օգտվում են դրա արդյունքներից:

- Կըրպէտին քացէ տալ - *տե՛ս* Յուրդանէն քացէ տալ (ՅՕՐԴԱՆ-ի տակ):

ԿԱՐՊԸ՞Տ - *տե՛ս* ԿԱՐՊԷՏ:

ԿԱՐՊԸՏ - *տե՛ս* ԿԱՐՊԷՏ:

ԿԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԱՐԷԼ-ի:

ԿԱՐՏ *(ռուս. карта, ֆր. cart, լատ. charta, հուն. chartes) - գ.* 1. Խաղալու թուղթ, խաղաթուղթ: *Մին կալօդ կարտ ըն ինք՛ օնում, ք՛ինամ ըտըրանց տօն* (Ձ): 2. Թղթախաղ, թուղթ խաղալը: *Կարտը շատ մարթու տօն ա քանդա՛ալ* (Բ):

- Կարտէ/կարտի տալ - Թուղթ խաղալ, թղթախաղով զբաղվել: *Ըտըրանք ըսկըսէցին կարտէ տալը մին օթախի մէջի* (ՀԺՀ, V, 147):

- Կարտէրը խառնել - Մեկի մտադրությունները՝ ծրագրերը իրագործելը ձախողել: *Տըղէն ըսպանէլը Սէրգ՛ուն կարտէրը խառնից* (Բ):

- Կարտէրը պէց անէլ - Մեկի գաղտնի մտադրությունները՝ ծրագրերը բացահայտել: *Ըտըրան թակում ըն, կարտէրը պէց անում* (Ձ):

ԿԱՐՏԷՋ - *տե՛ս* ԿԱՏՐԷՋ:

ԿԱՐՏԻՆԿԱ *(ռուս. картинка) - տե՛ս* ԿԱՐՏԻՇԿԱ:

ԿԱՐՏԻՇԿԱ *(ռուս. карточка)- 1. գ.* Նկար, լուսանկար: *Այան թօռանը կարտիշկան ծօցումըն ար պահում* (Ձ): 2. *ած. փխբ.* Գեղեցիկ, չքնաղ: *Մանէն կարտիշկա ախճիգ՛ ա* (Բ):

ԿԱՐՏՈՒՋ *(ռուս. картуз, հոլ. kardoes) - գ.* Տղամարդու հովարավոր գլխարկ: *Սիպտակ կարտուզը կըլխին, սիպտակ շօրէրը կ՛էցին, ըլբըստըրակու նըման խըլըշած՝ նի յա մընըմ...* (ՋՏ, Բ, 54):

ԿԱՐՏՈՒՇԿԱՏԸ՞Ղ - *գ.* Կարտոֆիլ ցանելու համար հատկացված՝ նախատեսված հողակտոր: *Էտ լէնջումը Շափաղաթէն մին կարտուշկատը՞ղ ա ինո՛ւմ, ք՛ինում ա, վէր պիհի* (Ձ):

ԿԱՐՏՕՃՆԻԿ *(ռուս. картожник) - ած. գ.* Մոլախաղ չափազանց սիրող (անձ), խաղամոլ: *Էտ կարտօճնիկը իլա՛ծ-չիլա՛ծը տանէլ ա տամ, տէրտակ ք՛ինամ տօն* (Ձ):

ԿԱՐՏՕՇԿԱ *(ռուս. картошка) - տե՛ս* ԿԸՐՏՕՊ(Լ)Ի:

ԿԱՐՈՒԾԻՎ - *գ.* Կարելը եւ ձեւելը: *Կարուծիվը Սուսանը մօրը անա յա սը-վը՞ռալ* (Բ):

ԿԱՐՔ *(գրբ. կարգ) - գ.* 1. Հասարակական կառուցվածքի ձեւ, իշխանություն: *Ասէլըս էն ա, վը՞ր մը՞ր էս կարքէրը մը՞ր ժըղուվուրթէն մըհար մին լ՛ուս ա՛* (ԼՂԲՔ, 274): 2. Ընդունված օրենք՝ կանոն: *Հըլիվուրը ասմա.- Կարքը էն ա, վէր ամէն ըստը՞ղ կ՛ըվօղ բիդի մին ծառ տընգէ* (Ձ): 3. *տե՛ս* Ա՛ՂԱԹ: 4. *տե՛ս* ԿԱՐՔ ՈՒ ԿԱՆՕՆ:

- Կարքը խախտէլ - Ընդունված օրենքից՝ կանոնից՝ սովորությունից շեղվել: *Մէլիք՛ը կըտաղալ ա, ք՛ը՞ցալ տը՞սալ՝ դո՛ւզ վէր ախպէրը կարքը խախտալ ա* (ԱԱ, 22):

- Կարքը պահէլ - Ընդունված օրենքից՝ կանոնից՝ սովորությունից չշեղվել, կարգը չխախտել: *Ապան ո՛ւրա՛ն գանքումը միշտ կարքը պահալ ա* (Բ):

- Կարքու ըղնէլ/կ՛ա՛ալ - Կարգավորվել, կանոնավորվել, բարելավվել: *...Յէտավ սըկըսում ա ո՛ւրա՛նց տօնը կարքու կ՛ա՛ալը...* (ՀԺՀ, V,116):

- Կարքու պիրիլ/տինիլ/քըցիլ - 1. Կարգավորել, կանոնավորել, բարելավել: *Տա ըսկըսում ա հօրը կօրծէրը կարքու պիրիլը* (Ձ): 2. Կարգի հրավիրել, կարգի ենթարկել: *Մարը հիշկան անում ա, կարում չի տըղօրանցը կարքու պիրի* (Ձ):

ԿԱՐՔԱԴԸՐԷԼ *(գրբ. կարգադրեմ (կարգի դնել) - տե՛ս* ՀԸՐԱՄԱՅԷԼ:

ԿԱՐՔԱԴԸՐՕԹՈՒՆ *(գրբ. կարգադրութիւն (կարգավորություն) - տե՛ս* ՀԸՐԱՄԱՆ:

ԿԱՐՔԷԼ *(գրբ. կարգեմ) - նբ.* 1. Որեւէ պաշտոնի՝ աշխատանքի նշանակել: *Ըտըրանա յէտը հա՛ը էտ տըղին կարքըմ ա թաքավէր, էտ ըխճըկանը էլ՝ թաքուհի* (ՀԺՀ, V, 40): 2. Եկեղեցական աստիճան շնորհել, ձեռնադրել: *Ըտի էտ չուբանէն էտ շէնին յըրա դէր ըն կարքում* (Ձ): 3. *տե՛ս* ՓԸՍԱԿԷԼ:

ԿԱՐՔԷՆ - *ած, մ.* 1. Կանոնավոր, օրինաչափ, վայելուչ, ինչպես հարկն է: *Էս մարթը սըկըսում ա կարքէն ապրէլը* (ՀԱԲ, 15, 83): 2. Բավականաչափ, շատ: *Ըտըրանք ըտը՛ղ կարքէն փուլ ըն ըշխադում* (Զ):

ԿԱՐՔԷՆ-ՍԱՐՔԷՆ/ՍԱՐՔԷՆ-ԿԱՐՔԷՆ - *ած.* Օգտագործման համար պիտանի, չխախտված, չփչացած, լավ վիճակում գտնվող: *Կարքէն-սարքէն տըրախտըր ար, տարավ խըրըբցըրավ* (Բ):

ԿԱՐՔ(Ը)ՎԷԼ - *կբ եւ չբ.* ԿԱՐՔԷԼ-ի:

ԿԱՐՔ ՈՒ ԿԱՆՕՆ *(գրբ. կարգ+կանոն)* - *գ.* Կարգապահություն, որեւէ բան կարգավորող կանոնների ամբողջություն: *Ըտըրանց տանը կարք ու կանօն չի կար, հու հինչ օգ՛ում ար, անում ար* (Զ):

ԿԱՐՔ ՈՒ ՍԱՐՔ - *գ.* Կահավորանք, կահավորություն: *Թանջիրին տանը կարք ու սարքը լօխճին արմանք ա պիրում* (Զ):

ԿԱՐՕՂ[1] *(գրբ. կարող)* - *ած.* Կարողացող, ձեռնհաս, ընդունակ: *Կարող մարթ ա Սումբաթը, լօխճին էլ ք՛ըմանգ՛ ա անում* (Զ):

- Կարօղ ա - Հնարավոր է, կարելի է: *Վազին հանց մարթ ա, վէր թըխիս էլ, կարօղ ա աշկըն էլ չըճըպէ* (Բ):

- Կարօղ ա՞ տափէն պէն ըս կուրցըրալ, քըթէնում չըս - *հեգն.* Ասում են կորամեջք մարդկանց:

ԿԱՐՕՂ[2] - *տե՛ս* ԴԱՆՔԻ:

ԿԱՐՕՂՈՒԹԻՒՆ/ԿԸՐԸՂՕԹՈՒՆ *(գրբ. կարողութիւն)* - *գ. 1.* Հնարավորություն, կարելիություն, ունակություն: *Կարողութիւն չօնէ, թա կօրծ անէ* (Բ): 2. Ունեցվածք, հարստություն: ...*Հինչ կա՞նին աշխարքիս կարօղութիւնը, վը՛ր մը՛ռնիլը կա լօխճին հէտի* ... (ԼՂԲ, 291):

ԿԱՐՕՏ *(գրբ. կարօտ)* - *տե՛ս* ՀԱՍՐԱԹ:

ԿԱՐՕՓԿԱ *(ռուս. коробка)* - *գ.* Տուփ: *Կընէգ՛ը շօրէրը ածում ա կարօփկան, կը՛ղում* (Զ):

ԿԱՑ/ԿԱՑԷՐ - *ԿԷՆԱԼ* բայի եզակի հրամայականը: *Ասում ա.- Կա՛ց, թօռը կըտըրվէ, յը՛տնան ք՛ինի՛* (Զ):

ԿԱՑԷՆ/ԿԱՑԸ՛Ն/ԿԱՑԻՆ *(գրբ. կացին)* - *գ.* Փայտ ճեղքելու՝ կտրելու՝ կոտրելու գործիք, կացին: *Կացէնը յը՛ր ա օնում, նըստում էշը, շուվշուվալավ ք՛ինամ ծըմակը* (Զ):

- Կացէնը յը՛ր օնէլ, տակըռավը կ՛ալ - *տե՛ս* Քարը գ՛օլէն կ՛ալ:

- Կացէնը քարէն նի կ՛ալ - Անսպասելի արգելքի՝ խոչընդոտի՝ դժվարության հանդիպել: *Խը՛ղճ Հանէսը հինչ օգ՛ում ա անէ, կացէնը քարէն նի յա կ՛ամ* (Զ):

ԿԱՑԷՐ - *տե՛ս* ԿԱՑ:

ԿԱՑԸ՛Ն - *տե՛ս* ԿԱՑԷՆ:

ԿԱՑԻՆ - *տե՛ս* ԿԱՑԷՆ:

ԿԱՑՆԷԼ - *տե՛ս* ԿԸՑՆԸՀԱՐԷԼ:

ԿԱՑՆԸՎԷԼ - *տե՛ս* ԿԸՑՆԸՀԱՐՎԷԼ:

ԿԱՓՍ - *տե՛ս* ԿԱՊՍ:

ԿԱՓՍԻՒԼ - *տե՛ս* ԿԱՊՍԻՒԼ:

ԿԱՔԱՎ *(գրբ. կաքաւ, հ.ե. *koko-, ասոր. qaqqəwa, հուն. kakkabē)* - *գ.* 1. Հավազգիների ընտանիքին պատկանող վայրի թռչուն, կաքավ: *Ռըհիմին ծօրՒմը միշտ կաքավ ա ինՒում* (Բ): 2. *փխբ.* Հեզաճկուն, հեզաքայլ կին՝ աղջիկ: *Ըտըրան էլ ինՒում ա էրկու դաշանգ՛ ախճիգ՛՝ էրկու կաքավ* (Զ): *փխբ.* Գութանի այն մասը, որտեղ բռնակը հաստատվում է խոփի մեջ: *Հունց ա պըտահում՝ կ՛ուԹանը կըքավէն կօխկան ճաքում ա* (Զ):

- Կըքավէն ծՒուն/ճօտը հավէն տակէն կէնալ չի - Յուրաքանչյուրն իր յուրայինին՝ համապատասխանին է հանդուրժում:

- Կըքավու ծՒու - Սիրուն՝ ժպտերես երեխա: *Խօխա, հինչ խօ՞խա, մին կըքավու ծՒու* (Զ):

ԿԷՋ - *տե՛ս* Կ՛ԷՋ:

ԿԷՋԱՆ - *տե՛ս* Կ՛ԷՋԱՆ:

ԿԷՋԱՌ/Կ՛ԷՋԱՌ *(գրբ. գազար)* - *գ.* Հովանոցավորների ընտանիքին պատկանող բանջարանոցային բույս, ինչպես նաեւ դրա ուտելի արմատը, գազար, ստեպղին: *Էծէրը նի յըն տը՛ռնում պադվալը, կ՛էզանը օտում, Մէլիք՛ը կըտաղում ա* (Զ):

ԿԷԹ/ԿԸ՛Թ *(գրբ. կիթ)* - *գ. 1.* Կթելը: *Կէթը պըրծընէլու յըրա կավը քացէ յա տամ, կաթնէն ամանը պարան տամ* (Զ): 2. Ինչ որ կթվում է, կթվածք: *Իտի յէլ տան իլանծը, կէթը, բաղը, բօստանը լօխ տամ ըն պուճուր հարսին* (ԼՂԲ, 303):

ԿԷԾ - *տե՛ս* ԿԱԾ՛:

ԿԷԾԱԿ(ՆԸ) - *տե՛ս* ԿԱԾԱԿ:

ԿԷԾԱՆ - *տե՛ս* ԿԱԾԱՆ:

ԿԷԾՒԿ - *տե՛ս* ԿԱԾՒԿ:

ԿԷՂԾԱՎԷՐ - *տե՛ս* Կ՛ԸՂԾԱՎԷՐ:

ԿԷՂԾԱՎԸՐՕԹՈՒՆ - *տե՛ս* Կ՛ԸՂԾԸՎԸՐՕԹՈՒՆ:

ԿԷՂՏԱԿ - *գ.* Ընկույզի միջուկի մեկ քառորդ մասը: *Մին ծուղրուղուն չՕրք՛ կէղտակ ա* (Բ):

ԿԷՃ - *տե՛ս* Կ՛ԷՃ:

ԿԷՄ(Ն)ԱԿՕԹ/Կ՛ԸՄԱԿՕԹ - *գ.* Կեմի երկու ծայրը, որ իրար հետ ոլորելով՝ ամրացնում են խուրձը կապելու ժամանակ: *Կէմնըկօթէրը հըլՕրում ա, կապուկը կապուկ* (Զ):

ԿԷՄ(Ն)ԱՏԷԼ/Կ՛ԸՄԱՏԷԼ - Խրձի կեմը՝ կապը կտրել: *Խօտէն կապուկը կէմատում ա, քըցՒում էշին առաշկը* (Զ):

ԿԷՄ(Ն)ԱՑՈՒ/Կ՛ԸՄԱՑՈՒ - *ած. գ.* - Կեմ սարքելու համար պիտանի՝ նախատեսված (խոտ, շիվ եւն): *Ծօռ ա կ՛ամ, կէմացու չի քըթէնում, թա էտ կապուկը կապէ* (Զ):

ԿԷՄ(ՆԸ)/Կ՛ԷՄ *(գրբ. կեմ)* - *գ.* 1. Խոտերից՝ շիվերից եւն ոլորած չվան՝ թոկ՝ խուրձեր կապելու համար: *Խօտէն կապուկնէն կէմնավ կապում ըն, պէռնում իշէրէն, տանում* (Բ): 2. Ծղոտից՝ բարակ շիվերից եւն հյուսած կլոր հյուսվածք՝ կճուճների տակը դնելու համար: *Պօլիգ՛նէրէն տակէն կէմն ըն տինՒում, վէր կօտըրէ վէչ* (Բ): 3. *փխբ.* Անճոռնի գոտի: *Շալվարը կ՛ը՛նում ա, կէմնը կապում, ք՛ինամ հՕնձ* (Զ): 4. *փխբ.* Մարդկանց՝ ընտանիքներին եւն իրար կապող՝ մերձեցնող անձ: *Մաքաղաթ հանսին շէնին կընանուցը կէմըն ա* (Բ):

- Կէմ կէմու տինիլ - 1. Կապերն իրար կցել: *Կէմ կէմու տիրին, կընպուտը՛ցէն* (Զ): 2. Իրար օգնել՝ օժանդակել: *Կէմ կէմու վընք տինՒում, ապըրում* (Բ) :

ԿԷՄ(Ն)ԸԿԱՊԷ/Կ՛ԸՄԸԿԱՊԷ - *տե՛ս* ԿԷՄ(ՆԸ):

ԿԷՆԱԼ/ԿԸ՛ՆԱԼ *(գրբ. կեամ (կյանք ունենալ, ապրել)* - *չբ. 1.* Որեւէ տեղ մնալ՝ հանգրվանել: ...*Ք՛ընըմ ա հանՒմին էտ տօնը դօնաղ ընգնըմ, քը՛շէրը ըտը՛ղ կը՛ընըմ* (ՀԺՀ, V, 37): 2. Բնակվել, ապրել: *Թաքավէրը կընալիս քը՛ղաքում մին ք՛ասիբ կընէգ՛ ա ինում* (ՀԺՀ, V, 37): 3. *տե՛ս* Նը՛ստա կէնալ (1): *Թըվանգ՛ը տըրըքցընըմ ա, գ՛ուլլանն կ՛ամ ա, էտ բախրին վը՛ՒնանՒ կէնըմ* (ՀԺՀ, V, 47): 4. Սպասել, համբերել: *Պատառ էլ ա կէնում, տը՛սնում, վէր տըղան կ՛ամ չի, ք՛ինամ ա* (Զ):

ԿԷՆԱՑ/Կ՛ԷՆԱՑ - *գ.* 1. Սեղանի շուրջը ոգելից խմիչքով մեկի կամ մի բանի պատվին առաջարկվող բարի ցանկություն, բաժակաճառ: *Թամադան լօխճին կէնացը պըրծընում ա, տՒուս կ՛ամ* (Զ): 2. Ոգելից խմիչքով լցված բաժակ, որ խմվում է որեւէ մեկի կամ որեւէ բանի պատվին՝ ի նշան բարի ցանկության: *Կէնացնէն ածում ըն, ամմա խըմօղ չի ինՒում* (Զ):

- Կէնաց ասէլ/խըմէլ/պիցըրցընէլ - Մեկի կենացն առաջարկել: *Վէր հանՒփՒում ըն, յը՛ր ըն կէնում մարթը մին կէնաց ասում* (Զ):

- Կէնացը ծըղկըցընէլ/քըխծըրցընէլ - *տե՛ս* ԾԸՂԿԸՑ(Ը)ՆԷԼ(3):

ԿԷՆԴՈՒ - *տե՛ս* ԿԸՆԴ:

- Կէնդու մինակ - Բոլորովին մենակ,

մեն-մենակ: *Կամ ա, էտ ծըմակումը կէնդու մինակ ապըրում* (Զ):

ԿԷՆԷ - *տե՛ս* Կ՚ԷՆԻ:

ԿԷՆԹԱՆ - *տե՛ս* Կ՚ԸՆԹԱՆ:

ԿԷՆԹԱՆԻ - *տե՛ս* Կ՚ԸՆԹԱՆԻ:

ԿԷՆԻ - *տե՛ս* Կ՚ԷՆԻ:

ԿԷՆՋ - *տե՛ս* ՂԸՆՋ:

ԿԷՆՋԱԿ - *գ.* 1. Լուծի երկու ծայրերից յուրաքանչյուրը, որ նստած է լինում լծկանի վզին: *Կէնջակը յը՛զնանը վէզը շատ ա ցըվըցընում* (Զ): 2. *տե՛ս* ԱՄԲՈՒԼ (2): 3. *տե՛ս* ԹԱԹ (4):

ԿԷՆՎՈՒՐ/ԿԸՆՎՈՒՐ - *տե՛ս* ՏԸՆԳԷՑ:

ԿԷՆՕՂ/ԿԸՆՕՂ - *գ.* Բնակիչ: *Ծէնին կընօղնէն մին ուստա յըն ծէն տուվալ, վար յէկէղէցի շինի* (ԱԱ, 29):

ԿԷԾ - *տե՛ս* Կ՚ԷԾ:

ԿԷԾԱՆ - *տե՛ս* Կ՚ԷԾԱՆ:

ԿԷԾ-ԼԱՄՓՈՒԾ - *տե՛ս* Կ՚ԷԾ-ԼԱՄՓՕԾ:

ԿԷՊԷՋԷ - *տե՛ս* ՏՈՒՐՄԱ:

ԿԷՌ - *տե՛ս* ԿԸՌ:

ԿԷՌԱՆ *(ռուս. հպվ. КПЗ)* - *ած., գ.* 1. Հասունացած (արտ): *Քինամ ըն, տը՛սնում արտէրը կէռան, հընձօղ չի կա* (Զ): 2. *փխբ.* Հասունացած՝ արբունքի հասած (աղջիկ): *Կէռան ըխճըկէրք ըն, օգ՚օղ չըկա, թա մարթու քինին* (Բ):

ԿԷՌԷՔ - *տե՛ս* ԿԸՌԷՔ՚:

ԿԷՌԻՔ՚ - *տե՛ս* ԿԸՌԷՔ՚:

ԿԷՍ/ԿԸՍ *(գրբ. կէս)* - *գ.* 1. Ամբողջի երկու հավասար մասերից մեկը: *Կէսը ինք՚ըն ա յը՛ր օնում, կէսըն էլ ք՚ըսիբնէրէն պիժը՛նում* (Զ): 2. Ժամանակի եւ տարածության միջին տեղը՝ միջինը: *Խընձանպէրթ մայիսի կէսէրին հանա ցորտ ա ինում* (Բ): 3. *փխբ.* Ամուսին, կողակից: *Մարթ բիդի ուրանն կէսին յըրա յէլ հանանս կէնա* (Զ): 4. *ած.* Կես մասը կազմող: *...Կ՚ամ ըն տէսնում՝ մին տէղ օխտը մարթ՝ ամեն մինին բոյը կէս մէտըր* (ՀԺՀ, V, 390):

- Կէս անէլ - 1. Երկու մասի բաժանել, կիսել: *Խընձօրը կէս ա անում, կէսը տամ ըտըրա* (Զ): 2. Կիսելով իրար մեջ բաժանել: *Վը՛սկէն կէս ըն անում էրկու ախպօր մաչի* (Զ):

- Կէսանը յը՛րը - Գոտկատեղից վերեւ: *Կէսանը յը՛րը ամմէն օր լըվանում ա ցորտ ճիրանվ* (Բ):

Կէսանը վէրը - Գոտկատեղից ներքեւ: *Դօխտուրը ըկօլ ա անում, ըտըրա կէսանը վէրը թանլանում ա* (Զ):

- Կէսը իվիլ ա - Ասում են այն ժամանակ, երբ որեւէ բան պահանջված չափից շատ է լինում:

- Կէսը հանլիլ - 1. Վախից՝ երկյուղից՝ ամաչելուց հալումաշ լինել: *Մարթը վէր ճըղղամ ա, կընգանը կէսը հանլում ա* (Բ): 2. Մեծ վնաս կրել, կիսով չափ վնասվել: *Խօխա յա, լի՞, թխալ ըմ, թըխալ ըմ, հինչ ա՞, կէսը հանլանլ ա՞* (Զ):

- Կէսը քըցիլ - Կես դարձնել, կիսատել, կեսն անել: *Սաղ օրը բօստանը պիհում ա, մինչը՛վ կարում ա կէսը քըցի* (Զ):

- Կէսը քինիլ - *տե՛ս* Կէսը հանլիլ:

- Կէս ինիլ - *տե՛ս* Կէս տը՛ռնալ:

- Կէսին կէսին կէսը - Շատ փոքր՝ քիչ՝ աննշան բաժին: *Հավը իփհում ըն, կըտօրում, կէսին կէսին կէսը տամ խօխոցը* (Զ):

- Կէս կօրէկ - Չնչին՝ անարժեք բան: *Կէս կօրէկ ըն տամ ըտըրա, սուսավ անում* (Զ):

- Կէս մարթ - Անդամալույծ, հաշմանդամ, տկար, ծեր: *Խաչին հինչ ա՞նէ, կէս մարթ ա, կարում չի, թա տը՛ղան յէր կէնա* (Բ):

- Կէս պէրան *(գրբ. կիսաբերան)* - *տե՛ս* Պիրանէն մին ընգ՚ունավը (ՊԷՐԱՆ-ի տակ):

- Կէս տը՛ռնալ - Երկու մասի բաժանվել, կիսվել: *Տըրըքցընում ըն, յէխծէն կէս ա տանռնում, անումը մընամ ա Կօտրած յէխծէ* (ՆԼՂԺԲ, 144):

- Կէսումը մընալ - Կիսատ մնալ, չկարողանալ վերջացնել: *Տօնը ըսքըսում ա շինիլը, ամմա կէսումըն ա մընում, փուլը հէրիք՚ չի անում* (Զ):

- Կէս քըշէր - Գիշերվա կեսը, գիշերվա ժամը տասներկուսը: *Կէս քըշէրը վը՛ր անց ա կէնըմ, թաքավէրին պուճուր տըղին քօնը տանըմ ա* (ՀԺՀ, V, 17):

ԿԷՍԱՆ/ԿԸՍԱՆ - *տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

ԿԷՍԱՏ/ԿԸՍԱՏ *(գրբ. կիսատ)* - *նբ. տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

ԿԷՍԷԼ/ԿԻՍԻԼ - նբ, տե՛ս Կէս անէլ:

ԿԷՍԿ/ԿԸՍԿ/ԿԱՍԿ/ԿԱՍՔ - *գ.* Գոտկատեղ: *Արչը ք՚ըթունկը յօր ա ունէս, մարթին կէսկին տըրըքցընէս, վէր քըցիս* (Զ):

- Կէսկը գ՚ըրգ՚ըվիլ - Գոտկատեղը ոսկրանալ, ճկունությունը կորցնել: *Ըխճըկանը կէսկը վէր գ՚ըրգ՚ըվից, էլ մըհալ քըցօղ չի ինիլ* (Զ):

- Կէսկը ըղնէլ - Գոտկատեղի մասից ողնաշարը խախտվել: *Վէր էս զը՛ռ ռուքը պիցըրցընէս ա, կէսկը ըղնես ա* (Զ):

- Կէսկը քըցիլ - Գոտկատեղի մասից ողնաշարը խախտել: *Մըհակավը թըխում ըն, Միշին կէսկը քըցանում* (Բ):

ԿԷՍ-ԿԷՍ - *տե՛ս* ԿԸՍԸՎԿԷՍ:

- Կէս-կէս անէլ - 1. Շատ մասերի բաժանել: *Կացէնը յը՛ր ա օնում, էտ կ՚ը՛ռանը կէս-կէս անում* (Զ): 2. Շատերի մեջ բաժանել: *Հէնգ՚ հօքավ մին կ՚ըխտար ըն վէր քըցանում, ուրանց մաչին կէս-կէս անում* (Զ):

ԿԷՍՊԱԿԷՍ - *տե՛ս* ԿԸՍԸՎԿԷՍ:

ԿԷՍՎԱԿԷՍ - *տե՛ս* ԿԸՍԸՎԿԷՍ:

ԿԷՍՎԷԼ/ԿԻՍՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԿԷՍԷԼ-ի:

ԿԷՍՈՒ/ԿԸՍՈՒ - *ած. մ.* 1. Կես բաժնով, ծախսը եւ արդյունքը կիսելու պայմանով կատարվող: *Ըտի արչըն ա մարթը կէսու կօրծ ըն անում* (Զ): 2. Միաժամանակ երկու մարդու պատկանող՝ վերաբերող՝ ենթարկվող: *Էտ բաղըն էլ կէսու վա ինում, ըտըրա հը՛տէ ախպէրքը միշտ ուրուր նըհը՛տ կըռվում ըն* (Զ):

ԿԷՍՕՐ - *տե՛ս* Ք՚ԸՍՕՐ:

ԿԷՏ[1]/ԿԸՏ[1]/ԿԱՏՏ *(գրբ. կէտ)*- *գ.* 1. Ճանճի տեսակ, որ մտնում է կովերի եւ հորթերի պոչի տակ, որից նրանք փախչում են՝ պոչերը տնկած: *Ամը՛ռնը վէր կ՚ամ ա, կէտը դընօտանցը շատ ա չըրչարում* (Զ): 2. Կովերի՝ հորթերի փախչելը՝ պոչերը տնկած: *Կէտին վախտը էտ դընօտանցան մինը ըղնում ա քը՛րծէն տակը, ըստակում* (Զ):

- Կէտ անէլ/ըղնէլ/ինիլ - *տե՛ս* ԿԷՏԷԼ:

ԿԷՏ[2]/ԿԸՏ[2] - *գ.* Արգելք, դժվարություն: *Պառավը թաքավէրին տըղէն ասմա.- էտ հըղավը ք՚ինիս վէջ, ըռըչիտ կէտ շատ ա ինանկան* (Զ):

ԿԷՏ[3]/ԿԸՏ[3] *(գրբ. կէտ)* - *գ.* Որեւէ սուր բանով հպելոց՝ ծակելուց մնացած հետք, փոքրիկ, կլոր բիծ: *Ախճիգ՚ը մատիտը յօր ա ունէս, էտ թուխտէն յըրա մին կուճի կէտ տինիս* (Զ):

ԿԷՏԷԼ/ԿԸՏԷԼ/ԿԷՏԻԼ/ԿԸՏԻԼ/ԿԱՏԻԼ - *չբ.* Պոչը վէր տնկած՝ փախչել (կովերի՝ հորթերի մասին): *Կէսօրին դէրին տըվըրնէն կէտում ըն՝ հը՛ք՚ըրնէն պըցըրցըրած...* (ՆԱԲ, 59): 2. *փխբ.* Արագ վազել՝ փախչել: *Էտ խէ կէտում ը՞ս* (Բ):

ԿԷՏԻԼ - *տե՛ս* ԿԷՏԷԼ:

ԿԷՐ[1]/ԿԸՐ[1]/Կ՚ԷՐ[1] *(գրբ. կիր)* - *գ.* Կրաքարի այրումից ստացվող նյութ, կիր: *...Պիրում ըն, պէրթումը հիշքան կէր ա ինում, տանս տամ մին աշկարա տը՛ղ, ըսքըսում մաղէլը ...* (ԱԱ, 41):

ԿԷՐ[2]/ԿԸՐ[2]/Կ՚ԷՐ[2] *(գրբ. կեր (կերակուր)* - *գ.* Անասունների ուտելիք, անասնակեր: *Մին դօնըմ թաքավէրին ծիյանցը կը՛րը պըկասում ա* (ՀԺՀ, V, 160):

- Կէր անէլ - Ուտել, խժռել: *Խօզ՚էրը էնքան կէր ըն ըրալ, կարում չըն, թա տանրանր կ՚ան* (Բ):

ԿԷՐ[3]/ԿԸՐ[3]/Կ՚ԷՐ[3]- ՕՏԷԼ բայի եզակի հրամայականը:

ԿԷՐԱԾ-ԽԸՄԱԾ/ԿԸՐԱԾ-ԽԸՄԱԾ/Կ՚ԷՐԱԾ-ԽԸՄԱԾ - *ած.* 1. Այլեւս ուտելու եւ խմելու պահանջ չզգացող, կուշտ: *Հընդցէն ղընրաղան մին կէրած-խըմած*

մարթ ա տ՛ուս կ՛ամ՝ բէդէրը սըղըլիլավ (ՆԱԲ, 51): 2. *փխբ.* Առատ եւ ապահով կյանք վայելած, պարարտ: *Ըտըրան էլ ի-նի՛մ ա մին կէրած-խըմած հիրը՛վան* (Ձ):

ԿԷՐԱԿՈՒՐ/ԿԸ՛ՐԱԿՈՒՐ/Կ՛ԷՐԱԿՈՒՐ *(գրբ. կերակուր)* - *տե՛ս* ԽՕՐԱ՛Գ՝: *Քըսո՛ր-ին մարթ ա դարկում տօն, վը՛ր կընէկը կ՛էրակուր իփի...* (ԼՂԲ, 308):

ԿԷՐԱՆԴՈՒ - *տե՛ս* Կ՛ԱՐԱՆԴԻ:

ԿԷՐԱՍԻՆ/ԿԷՐՕՍԻՆ *(ռուս. керосин, անգլ. kerosene, հուն. kēros)* - *տե՛ս* ՆՕԹ[1]:

ԿԷՐԱՍԻՆԿԱ/ԿԷՐՕՍԻՆԿԱ *(ռուս. керосинка)* - *գ.* Նավթով վառվող պատրույգավոր հարմարանք՝ կերակուր ե-փելու, ջուր տաքացնելու եւն համար: *Կէրասինկան առաչ ա իլա՛լ ա՛ղա՛թ, մի-հէնգ՛ լօխ գազ ըն պինըցընում* (Բ):

ԿԷՐԿՕԽ/Կ՛ԷՐԿՕԽ - 1. *գ.* Շատ ուտելը, շատակերություն: *Կէրկօխը փիս պէն ա* (Բ): 2. *ած.* Շատ կերած (մարդ, կենդանի): *Կէրկօխ խօգ՛ ա, կարում չի տը՛ղան յը՛ր կէնա* (Բ):

- Կէրկօխ անել - Շատ ուտեցնել՝ կերակրել: *Էնքան կէրկօխ ըրէն, էտ էշը ըստակից* (Բ):

- Կէրկօխ ինիլ/տը՛ռնալ - Շատ ուտել, շատ ուտելուց գիրանալ՝ տառապել: *Պառավը էտ հավէն էնքան կօտ տըվավ, կէրկօխ տը՛ռավ, փըյըկալից, օրը մին ծու վար ածում, նանա էլ կըտրից* (ՆԱԲ, II, 64):

ԿԷՐՊ - *տե՛ս* Կ՛ԷՐՊ:

ԿԷՐՊԱՐԱՆՔ- *տե՛ս* Կ՛ԷՐՊԱՐԱՆՔ:

ԿԷՐՈՒԽՈՒՄ/Կ՛ԷՐՈՒԽՈՒՄ - *գ.* Խնջույք, խրախճանք: *Կէրուխումէն վախտը ըտըրան հիրփըցընում ըն, փուլէրը կ՛ուղանում* (Ձ):

ԿԷՐՕՍԻՆ - *տե՛ս* ԿԷՐԱՍԻՆ:

ԿԷՐՕՍԻՆԿԱ - *տե՛ս* ԿԷՐԱՍԻՆԿԱ:

ԿԸԲԼՈՒԿԱՎԷՐ - *տե՛ս* ԿԸԲԼՈՒԿԱՎՈՒՐ:

ԿԸԲԼՈՒԿԱՎՈՒՐ/ԿԸԲԼՈՒԿԱՎԷՐ - *տե՛ս* ԴՈԲԸՆԱՎԷՐ:

ԿԸԴԱՐԵԼ/ԿԱԴԱՐԵԼ *(գրբ. կատարեմ)* - *նբ.* - 1. Իրականացնել, իրագործել, ի կատար ածել: *Սուք՛ա՛նը նան Դուգ՛ա՛նը ք՛ընի՛մ ըն, հինչ վէր պառավը՛ն ասալ ար, կըդարըմ ըն* (ՀԺՀ, V, 358): 2. Ավարտել, վերջացնել: *Էտ կօրծը ուտան մին ամսումը կըդարում ա, ամմա փուլը տամ չըն* (Բ): 3. Որեւէ բան անել: *Հ՛ամ՛ան պէնըն ըն կըդարում, ամմա մինը իծծուն մանէթ ա ըստանում, մինը հ՛ա՛ր՛ուր* (Ձ):

ԿԸԴԱՐՄՈՒՆՔ/ԿԱԴԱՐՄՈՒՆՔ *(գրբ. կատարումն)* - *գ.* Այն, ինչ կատարվել կամ ենթակա է կատարման, կատարված կամ կատարելիք բան: *Ըտըրանց կըդարմունքը թաքավէրին շատ ա կըգ-նըվցընում* (Ձ):

ԿԸԴԱՐՎԷԼ/ԿԱԴԱՐՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.*- ԿԸԴԱՐԵԼ-ի: 2. *չբ.* Տեղի ունենալ: *Թաքավէրին մըռնէլանը յը՛տը շատ պէ-նէր ա կըդարվում* (Ձ):

ԿԸՁԱԿ *(գրբ. կզակ)* - *գ.* Ստորին ծնոտի կլորավուն դուրս ընկած ծայրը, դունչ: *Կըզակը էրկան մարթ ա Վաղօն* (Բ):

- Կըզակավը ինիլ - Մեկի քմահաճույքով կատարվել: *Շէնումը ամմէն հինչ նախագէն կըզակավը ար ինի՛ում* (Ձ):

- Կըզակէն յէշիլ - Մեկի ասածով առաջնորդվել, մեկի ասածին կարեւորություն տալ: *Տըղամարթը վէր կընգա-նը կըզակէն յէշից, տըղամարթ չի* (Բ):

- Կըզակը թիթը՛էվ/թի՛ւլ - Շատախոս, շաղակրատ: *Կըզակը թիթը՛էվ մարթին անա գ՛ա՛հ՛լ՛ա՛ս տարած ա* (Բ):

ԿԸՁԱՆՈՒՑ - *տե՛ս* Կ՛ԸՁԱՆՈՒՑ:

ԿԸՁԱՔՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Կըզաքս անել - *տե՛ս* ԿԸՁՁԸՑ(Ը)-ՆԷԼ:

ԿԸՁԷԼ - *տե՛ս* ԿԸՁՁԷԼ:

ԿԸՁՁԷԼ/ԿԸՁԷԼ - *չբ.* 1. Մարմնով ներքեւ թեքվել, կռանալ: *Վէր կըզում ա, թա խուխէն յօր օնէ, քըմական թըխում ըն, քըցո՛ւմ կ՛ը՛տը* (Ձ): 2. *փխբ.* Խեղճանալ, հնազանդվել: *Էնքան թակում ըն, վէր կըզում ա* (Ձ):

ԿԸՁՁԸՑ(Ը)ՆԷԼ/ԿԸՁԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԿԸՁԷԼ-ի:

ԿԸՁԸԿՈ՛ՒՁ/ԿՈՒՁՈՒԿՈՒՁ - *մ.* Կռացած, կռանալով, կուզեկուզ: ...*Վըրդէղ վը՛ր-ս կար՝ սուսուփուս ք՛ընա՛ցէնք՛, վըրդէղ ահ կար, կուզուկուզ ք՛ընա՛ցէնք՛...* (ԼՂԲՁ, 260):

- Կըզըկո՛ւզ անել - 1. Կռացած շարժվել՝ գնալ (աննկատելի լինելու համար): *Յէշում ըն տը՛սնում՝ վըխճարէն սո՛ւրվէն մաչին մին մարթ կըզըկո՛ւզ ա անում* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* Նազըտուզ անել: 3. *փխբ. տե՛ս* Կըզ՛ըմըզ՝ անել (2):

ԿԸՁԸՐՈՒԿԱՎԷՐ/ԿՈՒՁՈՒՐՈՒԿԱ-ՎՈՒՐ - Հովար ունեցող, հովարավոր: *Առաչ կըզըրուկավէր փափաղ տինո՛ղ շատ ա իլա՛լ* (Բ):

ԿԸՁԸՐՕԿ/ԿՈՒՁՈՒՐՕԿ *(ռուս. козырек)* - *գ.* Գլխարկի առջեւի մասից կիսաշրջանաձեւ ցցված մաս, հովար: *Փը-փաղէն կըզըրօկը պուք ա յը՛կալ* (Բ):

- Կըզըրօկ պուք տըվող - Առույգ, կայտառ, ճարպիկ: *Կըզըրօկ պուք տըվող կընէգ՛ ա Սիրը՛էվ աքէրը* (Բ):

ԿԸՁԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՁՁԸՑ(Ը)-ՆԷԼ:

ԿԸՁԿԷԼ/ԿԸԾԿԷԼ/ԿԸՍԿԷԼ *(գրբ. կծկեմ)* - *նբ.* Թելը՝ լարը եւն կծիկ դարձնել, կծկել: *Սիպտակը կըզկէս ա՝ ցիրը՛կ ա ինիս, սը՛վընն ա կըզկէս՝ քը՛շէր ա ինիս* (ԱԱ, 16):

ԿԸՁԿԸՁԱԼ - *տե՛ս* ԿԸՄԿԸՄԱԼ:

ԿԸՁԿԸՁԱԽՕՍ - *տե՛ս* ԿԸՄԿԸՄԱ-ԽՕՍ:

ԿԸՁԿԸՁԱՆ - *տե՛ս* ԿԸՄԿԸՄԱՆ:

ԿԸՁԿԸՁՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՄԿԸՄ-Ց(Ը)ՆԷԼ:

ԿԸՁԿԸՁՕՆ - *տե՛ս* ԿԸՄԿԸՄՕՆ:

ԿԸՁԿԸՁՕՑ - *տե՛ս* ԿԸՄԿԸՄՕՆ:

ԿԸՁԿԸԼՕՔԻ - *տե՛ս* ԲԱԲԱՂՈՒՇԻ:

ԿԸՁԿԸՎԷԼ/ԿԸԾԿԸՎԷԼ/ԿԸՍԿԸՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԿԸՁԿԷԼ-ի: 2. *չբ. տե՛ս* Կը-ծէգ՛ տը՛ռնալ:

ԿԸՁ՛ԸՄԸՁԸ՝ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Կըզ՛ըմըզ՝ անել - 1. Այրել, խանձել: *Ա՛ը՛ը՛վը բուստուննէն կըզ՛ըմըզ՝ ըրավ* (Բ): 2. Գործը դժվարացնել, ձգձգել: *Էն-քան կըզ՛ըմըզ՝ ըրավ, հավան փիսա-ցավ, էլ կարից վէչ արտը վարէ* (Բ):

- Կըզ՛ըմըզ՝ ինիլ/տը՛ռնալ - 1. Այրվել, խանձվել: *Բաղէրը կըզ՛ըմըզ՝ իլինն* (Բ): 2. Գործը դժվարանալ, ձգձգվել: *Կօրծը վէր կըզ՛ըմըզ՝ իլա՛ալ, էլ ա՛մ՛ալ չի կ՛ա՛լ* (Ձ):

ԿԸՁՆԸՎԷԼ *(գրբ. գազանեմ (կատաղել)* - *չբ.* Բարկանալ, զայրանալ: *Մին օր էտ թաքավը՛ը՛ը շատ փիս կըզնըվում ա տըղէն յըրա՛* (ՆԼՂԺԲ, 27):

ԿԸՁՆԸՎՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. գազանացուցանեմ (կատաղեցնել)* - *նբ.* ԿԸՁՆԸ-ՎԷԼ-ի:

ԿԸՁՆԸՎՕԹՈՒՆ *(գրբ. գազանութիւն (գազանություն)* - *գ.* Բարկություն, զայրույթ: *Կընէգ՛ը վէր ըտի յա ասում, մար-թին կըզնըվօթունը փըռնում ա* (Ձ):

ԿԸՁՆԸՎՕԿ - *ած.* Շուտ՝ հեշտությամբ բարկացող, բարկացկոտ, զայրացկոտ: *Ապան կըզնըվօկ մարթ ա իլա՛լ* (Բ):

ԿԸՁՆԸՎՕՑ - *տե՛ս* ԿԸՁՆԸՎՕԹՈՒՆ:

- Կըզնըվօցը կ՛ա՛լ - *տե՛ս* ԿԸՁՆԸՎԷԼ: *Սարումը վէր տի յա ասում, նանուն կըզնըվօցը կ՛ամ ա Սարումէն յըրա* (ՀԺՀ, V, 194):

ԿԸՁՏ - *գ.* Քիչ՝ աննշան՝ փոքր բան: *Մէսը խըրավում ըն, օտում, մին կըզտ էլ տամ նո՛ք՛ա՛ր՛էն* (Ձ):

ԿԸՁՏԱՆ - *ած. գ. արհմ.* Խիստ կարճահասակ, փոքր (անձ, իր): *Էտ կըզտան կընէգ՛ը մարթին օր-իշը՛ը՛ղ չի տամ* (Բ):

ԿԸՁՏԸԼԻՓԻ - *տե՛ս* ԿԸՁՏԱՆ:

ԿԸՁՏԸՊԸԼԻԹ - *գ.* 1. Փոքր բլիթ: *Ք՛ա՛թ՛ա՛ն թըխում ըն, մին կըզտըպըլիթ էլ խուխէն հը՛տէ յըն թըխում* (Ձ): 2. *փխբ.*

տեմ ԿԸՋՏԱՆ: 3. *փխբ.* Տան ամենափոքր երեխան: *Կըզտրպըլիթին լօխ սիրում ըն* (Բ):

ԿԸՋՏԻ - *տեմ* ԿԸՋՏԱՆ:

ԿԸՋՏԻ-ՊԸՋՏԻ/ԿԸՋՏ-ԿԸՋՏ - 1. *տեմ* ԽՈՒՐԴԼ-ՄՈՒՐԴԼ: *Կ'ուլըն ասըմ ա.- Ք'ը^էզ մընան կըզտի-պըզտի պէնէրին հինչ ծը^էռք տամ* (ՀԺՀ, V, 459): 2. *տեմ* ԽԸՐԷԳ-ԽԸՐԷԳ:

ԿԸՋՏ-ԿԸՋՏ- *տեմ* ԿԸՋՏԻ-ՊԸՋՏԻ:

ԿԸՋՏՕՊ/ԿԸՋՏՕՓ/ԽԸՍՏՕՓ(Ի) - *գ.* 1. Աչքի կոպի վրա դուրս եկած փոքրիկ ուռուցք: *Յու վէր հըղըցէն ղըրադէն կ'ուզի, աշկէն կըզտօպ կըփըսնէ* (Ձ): 2. Վայրի սխտորահամ սոխուկավոր բույս: *Կըզտօպ ըն քանդում, աղ տինում* (Ձ):

ԿԸՋՏՕՓ - *տեմ* ԿԸՋՏՕՊ:

ԿԸ^էԹ - *տեմ* ԿԷԹ:

ԿԸ^էՆԱԼ - *տեմ* ԿԷՆԱԼ:

ԿԸ^էՆՎՈՒՐ - *տեմ* ԿԷՆՎՈՒՐ:

ԿԸ^էՆՕՂ - *տեմ* ԿԷՆՕՂ:

ԿԸ^էՌ - *տեմ* ԿԸՌ:

ԿԸ^էՌԷՔ' - *տեմ* ԿԸՌԷՔ':

ԿԸ^էՌՔԷԹ - *տեմ* ԿԸՌՈՔԸ^էԹ:

ԿԸ^էՌՔԷԼ - *տեմ* ԿԸՌՔԷԼ:

ԿԸ^էՍ - *տեմ* ԿԷՍ:

ԿԸ^էՍԱՆ - *տեմ* ԿԷՍԱՆ:

ԿԸ^էՍԱՏ - *տեմ* ԿԷՍԱՏ:

ԿԸ^էՍՈՒ - *տեմ* ԿԷՍՈՒ:

ԿԸ^էՍԿ - *տեմ* ԿԷՍԿ:

ԿԸ^էՏ[1] - *տեմ* ԿԷՏ[1]:

ԿԸ^էՏ[2] - *տեմ* ԿԷՏ[2]:

ԿԸ^էՏ[3] - *տեմ* ԿԷՏ[3]:

ԿԸ^էՏԷԼ - *տեմ* ԿԷՏԷԼ:

ԿԸ^էՏԻԼ - *տեմ* ԿԷՏԷԼ:

ԿԸ^էՐ[1] - *տեմ* ԿԷՐ[1]:

ԿԸ^էՐ[2] - *տեմ* ԿԷՐ[2]:

ԿԸ^էՐ[3] - *տեմ* ԿԷՐ[3]:

ԿԸ^էՐԱԾ-ԽԸՄԱԾ - *տեմ* ԿԷՐԱԾ-ԽԸՄԱԾ:

ԿԸ^էՐԱԿՈՒՐ - *տեմ* ԿԷՐԱԿՈՒՐ:

ԿԸԹԱՆ - *տեմ* ՔԸԹԱՆ:

ԿԸԹԷ - *տեմ* ՔԸԹԷ:

ԿԸԹԷԼ - *տեմ* ՔԸԹԷԼ:

ԿԸԹԷՃ - *տեմ* ՔԸԹԷՉ:

ԿԸԹԷՉ - *տեմ* ՔԸԹԷՉ:

ԿԸԹԸՂ(Ը)ԿՕՍ - *տեմ* ԿԱԹԸՂ(Ը)-ԿՕՍ:

ԿԸԹԸՑ(Ը)ՆԷԼ/ԿԸԹԸՑ(Ը)ՆԻԼ - *(գրբ. կաթեցուցանեմ)* - *տեմ* ԿԸԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ԿԸԹԿԱԹԷԼ/ԿԸԹԿԱԹԻԼ - *չբ.* Շատ տեղերից կամ շատ անգամ կաթել, կաթկթել: *...Ընռնին կըթկաթած տը^էղէրավը ք'ընըմ ա, տը^էսնըմ՝ էտ դօվը նի մըտավ մին խօր վը^էր* (ՀԺՀ, V, 17):

ԿԸԹԿԱԹԻԼ - *տեմ* ԿԸԹԿԱԹԷԼ:

ԿԸԹԿԱԹՈՒՑ - *տեմ* ԿԸԹԿԸԹՕՑ:

ԿԸԹԿԸԹՑ(Ը)ՆԷԼ/ԿԸԹԿԸԹՑ(Ը)-ՆԻԼ - *նբ.* ԿԸԹԿԱԹԷԼ-ի:

ԿԸԹԿԸԹՑ(Ը)ՆԻԼ - *տեմ* ԿԸԹԿԸԹՑ(Ը)ՆԷԼ:

ԿԸԹԿԸԹՕՑ/ԿԸԹԿԱԹՈՒՑ - *գ.* *տեմ* ԾԸԼԼԸԿԸԹ:

- Կըթկըթօցան պըրծընէլ, ծըլլօնէն տակը ըղնէլ - Փոքր ձախորդություններից ազատվելով՝ մեծ փորձությունների մեջ ընկնել: *Թաքավէրին տըղան էտ կ'ը^էտը ընցընում ա, մին էլ առաշկը մին մը^էծ ծօվ ա տ'ուս կ'ամ, հունցը ասում ըն՝ կըթկըթօցան պըրծընում ա, ծըլլօնէն տակը ըղնում* (Ձ):

ԿԸԹՆԱԽՊԷՐ - *գ.* Մեկ մոր կաթով սնված ոչ հարազատ եղբայրներից յուրաքանչյուրը մյուսի համար: *Մին մարթ ուրանն կըթնախպօրը ըսպանում ա, տանում քըցում վէրը* (Ձ):

ԿԸԹՆԱԽՊԻՈՒՐ *(գրբ. կաթնաղբիւր (կաթի աղբյուրը՝ ծիծ)* - *գ.* Նվիրական աղբյուր, որ իբր նորածին ունեցող կանանց կաթն առատացնում է: *Յարթնը էտ կըթնախպ'ուրան ճ'ուր ա խըմում, կաթնը շըտանում ա, խօխան օտում ա* (Ձ):

ԿԸԹՆԱԾ'ՈՒ/ԿԸԹՆԸԾ'ՈՒ - 1. *գ.* Կաթի, ձվի եւ շաքարի խառնուրդից պատրաստած քաղցրահամ ուտելիք: *Կըթնածու վա շինում, տամ խօխօնցը* (Ձ): 2. *տեմ* ԿԸԹՆԸԿՕՐԷԿ (2):

ԿԸԹՆԱԿԷՐ *(գրբ. կաթնակեր)* - *տեմ* ԾԸԾԱԿԷՐ:

ԿԸԹՆԱԿ'ԻՆ - *տեմ* ԾԸԾԱԿ'ԻՆ:

ԿԸԹՆԱՀԱՄ - 1. *գ.* Կաթի համ: *Ք'ուԹն կըթնահամ օնէ* (Բ): 2. *ած.* Կաթի համ ունեցող: *Կըթնահամ պանէր ա* (Բ):

ԿԸԹՆԱՀՈՒՆՑ - *գ.* Կաթով, յուղով, շաքարով եւ ալյուրով պատրաստած առանց խորիզի թխվածք: *Էտ տըղան պիրիս ա խուրջինը պընանա, ք'ուԹն, կըթնահունց, արաղ, պէն տ'ուս ունէս, մին լանվ ք'էփ ըն ընէս* (ՀԺՀ,V, 248):

ԿԸԹՆԱՃ'ՈՒՐ - *գ.* Կաթնաղբյուրի ջուր, կանանց կաթն առատացնող նվիրական ջուր: *Դէրվիշը ասում ա.- Էս ճ'ուրը կըթնաճ'ուր ա, թօղէ խմէ, կաթնը շըտընական ա* (Ձ):

ԿԸԹՆԱՇՕՐ - Կաթից ստացվող խյուս, լոռ: *Կըթնաշօրը մընշըշօրան քախծընը ա* (Բ):

ԿԸԹՆԱՎԸ^էՏ - *գ.* Կաթի հոտ: *Կաթնը իփ'ում ըն, կըթնավը^էտը ըղնում ա տօնը* (Ձ):

- Կըթնավը^էտը նը^էստա շընռշընռալ - Շատ թարմ լինել (յուղի՝ կարագի մասին): *Յամանն կարանք' ա, կըթնավը^էտը նը^էստա շընռշընռամ ա* (Ձ):

ԿԸԹՆԱՏՈՒ - 1. Կաթ տվող, կաթնաբեր: *Շինանցէն վէր կըթնատու հէյվան չըպահից, կարէլ չի յօլլա ք'ինի* (Բ):

- Կըթնատու կավ - Առատ բերք՝ արդյունք տվող: *Էտ բաղը մին կըթնատու կավ ա մըզը^էտէ* (Բ):

- Կըթնատու կըվու նըման քացէ տալ, կաթնէն ամանը պարան տալ- Մի վատ արարքով բոլոր արած լավությունները չեզոքացնել: *Սաղ գ'անքումը Մարգօ աքէրը քըվօրը ք'ըմանգ' ըրավ, վէրչումը կըթնատու կավու նման քացէ տըվավ, կաթնէն ամանը պարան տըվավ* (Ձ):

ԿԸԹՆԸ^էՂԱՆ - *գ.* Կաթ եւ կաթից պատրաստվող մթերքներ, կաթնամթերք: *Ընտրանք կըթնը^էղանավ ըն ապըրում* (Բ):

ԿԸԹՆԸ^էՆԷ - *գ.* Սպիտակ պտղամսով խնձորի տեսակ: *Կըթնը^էնէն քախծընը խընձօր ա* (Բ):

ԿԸԹՆԸԹԱԹԱԽ - *ած.* Վրան կաթ քսված, կաթով թաթախված: *Կըթնըթաթախ ըմընէք'ը կ'ուտում ա, ինք'ը քըվօրը նըհը^էտ քըսի-փըսի անում* (Ձ):

ԿԸԹՆԸԻՐԸ^էՍ- *տեմ* ԿԸԹՆԻՐԸ^էՍ:

ԿԸԹՆԸԾ'ՈՒ - *տեմ* ԿԸԹՆԱԾ'ՈՒ:

ԿԸԹՆԸԿԱԼԻԼ - *չբ.* Կաթով լցվել (կուրծքը): *Կըվէն կօրծը կըթնըկալալ ա, քըթօղ չի կա* (Բ):

ԿԸԹՆԸԿԸՌԷՔ' - *գ.* Երեխայի առաջին անգամ աճող ատամները, որոնք հետագայում թափվում են եւ փոխարինվում նոր ատամներով, կաթնատամ: *Խօխան վէր տը^էռավ օթ տիրը^էկան, կըթնըկըռքընէն լօխ վէր տը^էռավ* (Բ):

ԿԸԹՆԸԿՕՐԷԿ - *գ.* Կաթով եւ կորեկով եփած կերակուր: *Կըթնըկօրէկը շատ քախծընը ա ինում* (Բ): 2. *փխբ.* Իրար հետ շատ համերաշխ՝ մտերիմ անձեր: *Մընթընկընէգ' կըթնըկօրէկ ըն, ջան ըն ասում, ջան ըսկանում* (Բ):

ԿԸԹՆԸՄԱԾՈՒՆ - *գ.* Շատ թարմ՝ դեռ չպնդացած՝ չթթված մածուն: *Ամմէն մարթ չի կըթնըմածունը սիրում* (Բ):

ԿԸԹՆԸՄԸ^էՂԸՐ - *գ.* Հետը մեղր խառնած կաթ: *Ամմէն ուռթանա խօխօնցը կըթնըմը^էղըր ար տամ* (Ձ):

ԿԸԹՆԸՓԸԹԸՐՕԿ - *գ.* Ալյուրով եւ կաթով շաղախված կեր՝ ճտերի համար: *Կուճի ճուտէրէն կըթնըփըթըրօկ բիդի տաս, վէր ճէլլի մընանան* (Բ):

ԿԸԹՆԸՓԸՐԹ'ՈՒԾ - *գ.* Մեջը հաց բրդած կաթ: *Ապան ամմէն օր կըթնըփըրթ'ուշ ար օտում* (Բ):

ԿԸԹՆԸՔԱՄԷ - *գ.* Կաթ քամելու՝ մանր անցքերով հարմարանք: *Կըթնըքամէն տինում ըն ղըզղանէն յըրա, կաթնը քամում* (Ձ):

ԿԸԹՆԻՐԸ^էՍ/ԿԸԹՆԸԻՐԸ^էՍ - *գ.* Կաթի երեսի խիտ, թանձր ու յուղալի շերտը: *Յարթնը քըթ'ալանվը կըթնիրը^էսը քաշում ա, քըսում հացը, օտում* (Ձ):

ԿԸԹՎԷՐ - *տեմ* ՔԸԹՎԷՐ:

ԿԸԹՈՑ - *տեմ* ՔԸԹՕՑ:

ԿԸԺԱՎԷՐ - *տեմ* ԿՈՒԺԱՎՈՒՐ:

ԿԸԼԹԷ - *տեմ* ԿԸԼՍԱԹԷ:

ԿԸԼԱԽԷ/ԿԸԼԱԽԻ - *ած.* 1. Մեծ գլուխ ունեցող: *Կըլախի մարթ ա Ջավէնը, կըլօխը մին փութ կա* (Բ): 2. *փխբ.* Բթամիտ, անհասկացող: *Կըլախէ մարթ ա, վէշ մին պէն կըլօխ չի ըղնում* (Բ):

ԿԸԼԱԿՈՎ - *տեմ* ԿԸՌԱԿԼԱՎ:

ԿԸԼԱՄԱՉ - *տեմ* ԿԸԼՍԱՄԱՉ:

ԿԸԼԱՄՕՏ - *տեմ* ԿԸԼՍԱՄՕՏ:

ԿԸԼԱՆՉԷԼ/ԿԸԼԱՆՉԻԼ *(հ.ե. *gal-, *gleng(h)-, (կանչել, գոռալ)* - *չբ.* 1. Կաղկանձել, հաչել (շան մասին): *Սաղ քըշէրը էտ շօնը կըլանչում ա, մըհալ քըցօղ չի ինում* (Ձ): *2. փխբ. արհմ.* Լալագին կանչել՝ բղավել (մարդկանց մասին): *Սինան հիշկան կըլանչում ա, վէշ մինը մուտանում չի* (Ձ):

ԿԸԼԱՆՉՈՒՑ/ԿԸԼԱՆՉՕՑ - *գ. 1.* Շան աղիողորմ հաչոց, կաղկանձյուն: *Շանը կըլանչօցը չօբանը ըսկանում ա, վազ տամ* (Ձ): 2. *փխբ.* Լալագին կանչ՝ բղավոց: *Խօխօնցը կըլանչուցը վէր ըսկընաս ա, դիրիսօր ա ըղնէս* (Ձ):

- Կըլանչուց տալ - *տեմ* ԿԸԼԱՆՉԷԼ:

ԿԸԼԱՊԱՆ *(ռուս. клапан, գերմ. Klappe)*- *գ.* 1. Կալը քամուց պաշտպանելու շինվածք: *Կըլապանը վէր ինար վէչ, կալ՝ին ցօրէնը քամէն կըտանար* (Ձ): 2. *անրգ.* Մարդու բերան: *Կըլապանը զը՝ռ ախճիգ՝ ա* (Բ):

- Կըլապանը կապէլ - *անրգ. տեմ* Պէրանը կապէլ:

ԿԸԼԱՊԱՆ - *տեմ* ԿԸԼՍԱՊԱՆ:

ԿԸԼԱՊԷՆ - *տեմ* ԿԸԼՍԱՊԷՆ:

ԿԸԼԱՌՆԷՏ/ԿԸԼԱՐՆԷՏ *(ռուս. кларнет, ֆր. klarinette, լատ. clarus)* - *գ.* Երաժշտական փողային գործիք: *Էս էլ ա սըվէրում, մին կըլառնէտ էլ փէշքէշ ըստացած կ՝ամ տօն* (ՀԱԲ, 15, 65):

ԿԸԼԱՌՆԷՏՉԻ/ԿԸԼԱՐՆԷՏՉԻ - *գ.* Կլառնետ նվագող, կլառնետահար: *Կըլառնէտչին էտ հարթնանը վէր աշկավ ա անում, մարթը տը՝սնում ա* (Ձ):

ԿԸԼԱՎԷԼ - *տեմ* ՄԸԼԱՎԷԼ: *Մուկնէրը վէր կ՝ամ ըն, կատուն կըլավում ա, տ՝ուս պըրծընում* (ՀԱԲ, 15, 47):

ԿԸԼԱՎ-ԿԸԼԱՎ/ԿՈՒԼԱՄ-ԿՈՒԼԱՄ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Կըլավ-կըլավ անէլ/կ՝ալ - *տեմ* ԿԸԼԸՎԷԼ:

ԿԸԼԱՎՈՒՑ - *տեմ* ՄԸԼԱՎՕՑ:

ԿԸԼԱՎՕՑ - *տեմ* ՄԸԼԱՎՕՑ:

ԿԸԼԱՏԸ՝Ղ - *տեմ* ԿԸԼՍԱՏԸ՝Ղ:

ԿԸԼԱՐՆԷՏ - *տեմ* ԿԸԼԱՌՆԷՏ:

ԿԸԼԱՐՆԷՏՉԻ- *տեմ* ԿԸԼԱՌՆԷՏՉԻ:

ԿԸԼԱՓ/ԿԱԼԱՓ*(գրբ. կլափն (ստորին ծնոտ)* - *գ.* 1. Մեծ բերան, երախ: *Կ՝ալը կըլափը վէր պէնում ա, կ՝առնը սըրտաճաք ա ինում, չօքում* (Ձ): 2. *տեմ* ԿԸՋԱԿ:

- Կըլափէն տալ - 1. Բերանը բաց ու խուփ անել (հոգեվարքի ժամանակ, սոված ությունից, վշտից եւն): *Մուշէղը վէր ըսքըսում ա կըլափէն տալը, կընէգ՝ը ծուվծուվամ ա, սաղ շէնը կըլխէն հըվաքում* (Ձ): 2. Շատախոսել: *Խըրէգ՝ կըլափէտ տօ՛, դ՝անգ՝ըս անում* (Բ):

ԿԸԼԷԹԿԱ *(ռուս. клетка)* - *գ.* Մետաղյա կամ փայտե ձողերով սարքված պատերով արկղանման շինվածք՝ մեջը թռչուն՝ կենդանի պահելու՝ արգելափակելու եւ այլ նպատակների համար: *Խոզ՝ին մարուն քըցում ըն կըլէթկան, ճուտէրէն ըկօլ անում* (Ձ):

ԿԸԼԷԹԿԱ-ԿԸԼԷԹԿԱ - *ձ.* Խոզերին բույնը քշելու ձայնարկություն: *Խուզ՝ապահը խոզ՝էրը քըշում ա բիդի պ՝ունը, համ էլ ասում՝ կըլէթկա-կըլէթկա* (Ձ):

ԿԸԼԷԿ *(գրբ. կլայէկ)* - *գ.* Անագի բարակ շերտ, որով պատում են մետաղե առարկաները՝ ժանգից պահպանելու համար, կլայեկ: *Կըլէկչին, կըլէկը յը՝ր կալ՝ած, լօխ շէնէրը շօռ ա կ՝ամ, ըմընէք՝ը կըլէկում* (Ձ):

ԿԸԼԷԿԷԼ/ԿԸԼԷԿԻԼ - *նբ.* 1. Մետաղե առարկաները, հատկապես պղնձե ամանների ներսը անագի բարակ շերտով պատել, անագազօծել, կլայեկել: *Միսի ղըզղընէք՝ը ամմէն տարէ կըլէկում ըն, վէր ընջօտէ վէչ* (Ձ): 2. *փխբ.* Մաքրազարդել, մաքուր դարձնել: *Թ՝ազգ՝ հարթնը ըմընէք՝ը հըվաքում ա, մին ժամումը կըլէկում, շարում* (Ձ): 3. *փխբ.* Մաքուր՝ մինչեւ վերջ ուտել՝ խմել: *Ղօնաղը կըրկուտէն ամանը մին մընուտումը կըլէկից* (Բ): 4. *փխբ.* Խիստ անպատվել՝ անարգել: *Ժօղօվումը խուզ՝ըրա՝ծէն մին լ՝ավ կըլէկում ըն* (Ձ): Համոզելով մեկի համառությունը կոտրել: *Կընէգ՝ը շատ ա չըրչարվում, մինչը՝վ կարում ա էտ կօխկը հաստ մարթին կըլէկի* (Ձ):

ԿԸԼԷԿԻԼ - *տեմ* ԿԸԼԷԿԷԼ:

ԿԸԼԷԿՉԻ - *տեմ* ՂԸԼԷ(Գ՝)ՉԻ:

ԿԸԼԷԿՎԷԼ/ԿԸԼԷԿՎԻԼ - *կբ. եւ չբ.* ԿԸԼԷԿԷԼ-ի:

ԿԸԼԷԿՎԻԼ - *տեմ* ԿԸԼԷԿՎԷԼ:

ԿԸԼԷՅ *(ռուս. клей)* - *գ.* Թանձր, մածուցիկ նյութ՝ տարբեր բաներ կպցնելու՝ փակցնելու համար, սոսինձ: *Փ՝ադին կըլէյին յափըշխան ըն ասում* (Բ):

- Կըլէյու նըման նը՝ստա կէնալ - *տեմ* Նը՝ստա կէնալ, պուք չըկ՝ալ:

ԿԼԷՅԷԼ - *տեմ* ԿԸԼԷՅԻԼ:

ԿԸԼԷՅԻԼ/ԿԸԼԷՅԷԼ - *նբ. տեմ* Կըլէյիտ անէլ:

ԿԸԼԷՅԻՏ *(ռուս. клеить (սոսնձել)*- Գործածվում է կապակցությունների մեջ:

- Կըլէյիտ անէլ - Սոսինձով կպցնել՝ փակցնել, սոսնձել: *Կ՝իրքը ճըղվում ա, կըլէյիտ ըն անում* (Ձ):

- Կըլէյիտ ինիլ/տը՝ռնալ - Սոսինձով կպցվել՝ փակցվել, սոսնձվել: *Կըլէյը ք՝օհնա յա, թօխտը կըլէյիտ չինում* (Բ):

ԿԸԼԷՅՎԷԼ - *տեմ* ԿԸԼԷՅՎԻԼ:

ԿԸԼԷՅՎԻԼ/ԿԸԼԷՅՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸԼԷՅԻԼ-ի:

ԿԸԼԷՆՏ *(ռուս. клиент, ֆր. klient, լատ. client)* - *տեմ* ՄՈՒԾՏԱՐԻ:

ԿԸԼԷՊ - *տեմ* ՔԸԼԷԿ:

ԿԸԼԷՐ - *տեմ* ԿԸԼԻՐ:

ԿԸԼԸԿԸԼԻ - *տեմ* ԿԸԼԿԸԼԱՆ:

ԿԸԼԸ(Խ)ԿՕՆՁԻ - *գ.* Գլխի վրայով թավալվելով ոստյուն, ինչպես նաեւ այդպիսի ոստյունով խաղ: *Կըլըխկօնձին խօխօնցը շատ ա ուրխըցընում* (Բ):

- Կըլըխկօնձի անէլ/տալ - 1. Գլխի վրայով շուռ գալ, շրջվել: *Խօխէնք՝ը կըրպէտին յըրա կըլըխկօնձի յըն տամ* (Բ): 2. Գլորվել, տապալվել: *Էշէրը քը՝ռծէն կըլխէն կըռվում ըն, կըլըկօնձի տամ ծ՝ըը* (Բ): 3. *հեգն.* Մեռնել: *Սուդունց Հէյրանը էլ կըլըկօնձի տուվավ, շէնումը էլ պառավ չի մընաց* (Բ):

ԿԸԼԸԿԱՊ - *տեմ* ԿՈՒԼ՝ԸԿԱՊ:

ԿԸԼԸԿԱՍԱՆ -*տեմ* ԿԸԼ՝ԸԿԱՍԱՆ:

ԿԸԼԸԿՈ՝ՒՏ - *տեմ* ԿԸԼ՝ԸԿՈ՝ՒՏ:

ԿԸԼԸՄԱՐԱՔ՝- *տեմ* ԿԸԼ՝ԸՄԱՐԱՔ՝:

ԿԸԼԸՄԲՕՁ/ԿՈՒԼՈՒՄԲՕՁ/ԿԸԼԸՄԲՕՍ/ԿՈՒԼՈՒՄԲՕՍ *(հ.ե. *glemb(h)- (սեղմել, գնդել)* - 1. *տեմ* ՏԱԿ[1]: *ած., գ.* 2. *փխբ.* Հարուստ, պաշտոնատեր (անձ): *Աստուծ էլ իվիլի շընօրք տա կըլըմբօսին, վէր իտի ազկին մընար թ՝ասիրք՝էշ ա ու պարի...* (ՋՏ, Ա, 202): 3. *փխբ.* Գեր, հսկայամարմին (անձ, իր): *Ծատօրէն մին կըլըմբօզ կընէգ՝ օնէ, վը՝ռը օխտը փութ կա* (Բ):

ԿԸԼԸՄԲՕՍ - *տեմ* ԿԸԼԸՄԲՕՁ:

ԿԸԼԸՆԳԷԼ - *տեմ* ԿԸԼԷԿԷԼ (3):

ԿԸԼԸՆԴԸՐԷԳ՝ - *ած.* Կամակատար, հաճոյակատար: *Կըլընդընրէգ՝ մարթ ա Պարքէվը, կընէգ՝ը հունցը ասում ա, ընդի յա անում* (Բ):

ԿԸԼԸՆԴԸՐԷԳԻ - *տեմ* ԿԸԼԸՊԸՆԴԸՐԷԳ՝ի:

ԿԸԼԸՆՉ - ԿԱԼԱՆՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Կըլընչ - կալանչ կ՝ալ - *տեմ* ԿԸԼԱՆՉԷԼ:

ԿԸԼԸՆՉՑ(Ը)ՆԷԼ- *պբ.* ԿԸԼԱՆՉԷԼ-ի:

ԿԸԼԸՆՋ - Գործածվում է կապակցության մեջ:

- Կըլընջ մուսուլման - Մահմեդակա-

նացած՝ հավատափոխ եղած հայ: *Փու-զիւլի կըլընջ մուսուլմանանէ յէլ ըն իլալ ըպըրէլիս* (Բ):

ԿԸԼԸՊԷԼ - *տե՛ս* ՔԸԼԸՎԷԼ:

ԿԸԼԸՊԸՆԴԸՐԷԳԻ/ԿԸԼԸՆԴԸՐԷ-ԳԻ - *տե՛ս* ԿԸԼԸ(Խ)ԿՕՆՁԻ:

ԿԸԼԸՊՅԱՆ - *տե՛ս* ՔԸԼԸՎՅԱՆ:

ԿԸԼԸՊՎԷԼ - *տե՛ս* ՔԸԼԸՎՎԷԼ:

ԿԸԼԸՎԷԼ - *նբ.* Ագահաբար ուտել, խժռել: *Էնքան կուրկուտը ղօնաղը կըլը-վում ա, քինամ* (Ձ):

ԿԸԼԸՎ-ԿԸԼԱՎ - Գործածվում է կա-պակցությունների մեջ:

- Կըլըվ-կըլավ անէլ/կանալ - 1. *տե՛ս* ՄԸ-ԼԱՎԷԼ: 2. Սեռական ցանկություն ունե-նալ, զուգընկեր փնտրել: *Աշկը շօր մարթ ա Թէմուրը, սաղ օրը էն ա կըլըվ-կըլավ ընէլիս* (Բ):

ԿԸԼԻԲԻԼՕ - *տե՛ս* ԿԸԼԻԸԲԸԼՕ:

ԿԸԼԻՋՄԱ *(ռուս. клизма)* - *գ.* Բուժ-ման՝ ախտորոշման նպատակով արհեստական միջոցով աղիքների մեջ հեղուկներ ներարկելու ռետինե գործիք, հոգնա: *Կըլիզման յօր ա ունէս, խուխէն կըլիզմա ընէս* (Բ):

- Կըլիզմա անէլ - 1. Հոգնայով աղիք-ների մեջ հեղուկ ներարկել: *Վէր կլիզմա յըն անում, Բուդդանը պատառ ըրխըյնա-նում ա* (Բ): 2. Խիստ հանդիմանել՝ պատ-ժել: *Բըրիգադիրին կըլխօզէն ժօղովումը մին լավ կըլիզմա յըն անում* (Ձ):

ԿԸԼԻԿԱՊ - *տե՛ս* ԿՈՒԼԸԿԱՊ:

ԿԸԼԻՆԿՕՐ *(ռուս. коленкор, ֆր. calencar)* - *գ.* Սինթետիկ անջրանցիկ կտոր՝ սեղանի վրա փռելու՝ որեւէ բան փաթաթելու՝ ծածկելու եւն համար: *Կը-լինկօրը մը՛կնում ըն, ըմընէք՛ը յըրա շա-րում* (Ձ):

ԿԸԼԻՊԻԼԻ - *տե՛ս* ԿԸԼԻԸՊԸՃՕ:

ԿԸԼԻՊԻՃՕ - *տե՛ս* ԿԸԼԻԸՊԸՃՕ:

ԿԸԼԻՐ/ԿԸԼԷՐ - *տե՛ս* ԽԸ՛Ռ:

ԿԸԼԼԱՆ[1] - *գ.* Ձյունը կրակի տաքու-թյունից հալվելով կաթիլ-կաթիլ հոսելը: *Ծունը տինում ըն փիչին կօխկէն, կըլլա-նը ըսքըսում ա* (Ձ):

- Կըլլան շինիլ - Ձյունը հալեցնելով՝ ջուր հավաքել: *Ծունը կըլլան ըն շինում, լըվաց անում* (Բ):

ԿԸԼԼԱՆ[2] - *գ.* Կերակուր կուլ տալու օրգանը, կոկորդ: *Կըլլանըս ցավում ա* (Ձ):

- Կըլլանը կըլխըյը՛ր անէլ/ցը՛ց տինիլ - Պարապ՝ անգործ լինել, պառկել, հանգստանալ: *Հանը սաղ օրը չըրչըրվէս ա, ինք՛ըն էլ էն ա կըլլանը կըլխըյը՛ր ըրած* (Բ):

ԿԸԼԽԱԿԷՐ - *ածական.,* *գ.* 1. Դժբախտու-թյուն բերող, մահաբեր, աղետաբեր (երեւույթ, մարդ, իր եւն): *Կըլխակէր քա-մէ յա, ըստի քամէ հանալ Դարաբաղ իլած չի* (Բ): 2. *փխբ.* Մի քանի անգամ ամուս-նացած տղամարդ՝ կին, որի ամուսին-ները մահացել են: *Էտ կըլխակէրը օթ հէտ մարթու վա ք՛ը՛ցալ, օթըն էլ մը՛ռալ ըն* (Բ): 3. *փխբ.* Լալկան երեխա, որ իբր իր լացով մեռցնում է տնեցիներին: *Էտ կըլխակէր խօխա յա հնում, էնքան լանց ա հնում, սաղ տընընցուց կըլօխը օտում ա* (Ձ):

ԿԸԼԽԱԿԻՆ - *գ.* Փեսայի ծնողների կողմից հարսի ծնողներին տրվող գու-մար կամ նվեր՝ իբրեւ վարձ աղջկա խնամակալության: *Միհէնգ՛ էլ կըլխա-կ՛ին տըվօղ չի կա* (Բ):

ԿԸԼԽԱՀԱՐԿ *(գրբ. գլխահարկ)* - *գ.* Պետական հարկի տեսակ, որ դրվում է յուրաքանչյուր անձի վրա, շնչահարկ: *Էտ թաքավէրին վախտը կըլխահարկը շատ պէցնուր ա հնում* (Ձ):

ԿԸԼԽԱՄԱՆ - *տե՛ս* ՓԱՓԱՂ (1, 2):

ԿԸԼԽԱՄԸ՛Ռ - *ածական.* Մեռնելու արժա-նի (գործածվում է հատկապես անեծք-ներում): *Կըլխամը՛ռ մընաս տու* (Բ):

ԿԸԼԽԱՆԷ *(գրբ. գլխանի (գլուխներ)* - *ածական.* Թվականի ցույց տվող քանակով գլուխ ունեցող: *Տըղան նի յա մընում էն մին օթախը, տը՛սնում՝ մին օխտը կըլ-խանէ դէվ քօն իլած* (Ձ):

ԿԸԼԽԱՇՕՐ - *գ.* Գլխին կապելու՝ փաթաթելու շոր: *Կըլխաշօրը յը՛տ ա անում, էտ վը՛սկէն ածում մաչը, կա-պում, տինում քարէն տակէն* (Ձ):

ԿԸԼԽԱՊԷՐՑ/ԿԸԼԽԸՊԷՐՑ - *գ.* Գլխի տակ դնելու բարձ: *Կընէգ՛ը մին կըլխապէրց ա պիրում, տինում դունա-դէն կըլխըտակէն* (Ձ):


- Կըռքընէն փօրը (նի) ածէլ/վէր անել - *տե՛ս* Սը՛պէրը փօրը (նի) ածէլ:

- Կըռքընէրէն հօփ տալ - *տե՛ս* Կըռէք՚ կըռքու թըխէլ:

- Կըռքու պէն ինիլ - Հնարավորությունների սահմաններում լինել, հաղթահարելի լինել: *Հա՛ղը ասմա.- Տօն շինիլը կըռքու պէն չի, մէգ էտքան փուլ չօնիք՚* (Ձ):

- Կըռքու տակավ անց կըցընէլի (պէն) - *տե՛ս* Կըռքավ ըղնէլի (պէն):

- Կըռքու տակ(է) մընալ - Քիչ՝ չնչին լինել (ուտելիքի մասին): *Օշափը ասմա.- Էտ հինչ ա՞, վէր իփա՛լ ըս, էտ կըռքէս տակէն կըմընա* (Ձ):

- Կըռքու տակ ըղնէլ - Բամբասանքի՝ ծաղրի առարկա դառնալ: *Հո՛ւր կընէգ՚ Սանթուրէն կընգանը նըման ինի, ինք՚ընն էլ կըռքու տակ կըղնէ* (Բ):

ԿԸՌԷՔ՚-ԿԸՌԷՔ՚/ԿԸՌԸՔ՚-ԿԸՌԷՔ՚ - *մ.* 1. Մեկ առ մեկ, մանրամասնորեն: *Մարթը կընգանը լօխ կըռէք՚-կըռէք՚ պատմում ա* (Ձ): 2. Ծվեն առ ծվեն, կտոր առ կտոր: *Էտ քարը կըռէք՚-կըռէք՚ լօխ կուտրատում ա* (Ձ):

- Կըռէք՚-կըռէք՚ անել - Մանր կտորների բաժանել, ծվեն-ծվեն անել: *Էշը քը՛շէրը մընաց հա՛նդին, կ՚ուլէրը կըռէք՚-կըռէք՚ ըրէն, կէրէն* (Բ):

- Կըռէք՚-կըռէք՚ ինիլ/տը՛ռնալ - Մանր կտորների բաժանվել, ծվեն-ծվեն դառնալ: *Վէր գ՚ումփուլավը թըխում ա, էտ քարը կըռէք՚-կըռէք՚ ա ինում* (Բ):

ԿԸՌԸՔՆԱԽՕՏ/ԿՈՒՌՈՒՔՆԱԽՕՏ - *գ.* Վայրի խոտաբույսի տեսակ: *Կըռըքնախօտը կարճ խօտ ա* (Բ):

ԿԸՌԸՔՆՈՒՏԱՆԱԼ/ԿՈՒՌՈՒՔՆՈՒՏԱՆԱԼ - *չբ.* Գռուզ դառնալ, գանգրանալ: *Խուխէն քը՛չը՛լցընում ըն, քաչալը ծուվու տըղնօց քը՛սում, հանցու մազ՚էրը կըռքզնուտանա* (Ձ):

ԿՈՒՔՆՈՒՏՑ(Ը)ՆԷԼ/ԿՈՒՌՈՒՔՆՈՒՏՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԿԸՌԸՔՆՈՒՏԱՆԱԼ-ի:

ԿԸՌԸՔՆՕՏ/ԿՈՒՌՈՒՔՆՕՏ *(գրբ. գռուզ)* - *ածական.* 1. Գռուզ, խուճուճ, գանգուր: *... Մարը պը՛ղպը՛ղօրից տը՛ղին կըռքզնօտ մազ՚էրը, ճընապար տիրա՛վ* (ՀԺՀ, 5, 135): 2. Գանգուր մազեր ունեցող, գանգրահեր: *Կըռքզնօտ խօխա յա Ռուբիկը* (Բ): 3. *փխբ.* Արտասովոր, բոլորից տարբերվող: *Էտ գ՚ո՛ւլա՛ն բարը կըռքզնօտ գ՚ո՛ւլա՛ն ա ինում* (Ձ):

ԿԸՌԸՔՆՕՏԷԼ/ԿՈՒՌՈՒՔՆՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸՌԸՔՆՈՒՏԱՆԱԼ:

ԿԸՌԸ՛Վ/ԿԸՌԷՎ/ԿԸՌԸՎ *(գրբ. կռիվ)* - *գ.* 1. Զինված ընդհարում, պատերազմ: *Ղարաբաղա կըռվավը մէր ժուղովուրթը տը՛ժը՛ըրթուն շատ ա քաշա՛լ* (Բ): 2. Ռազմական գործողություն, ճակատամարտ: *Մըսմընու կըռվէն կամանդիրը կ՚իմիրկ՚ո՛ւճը՛ցէ Ասլանիկըն ա իլա՛լ* (Ձ): 3. Ներքին պայքար: *Էտ էրկու կալխօզէն կըռը՛վը ո՛ւրո՛ւր նըհը՛տ կընօխանց ա ինում* (Ձ): 4. Ծեծ, ծեծկռտուք: *Հա՛ղը ասմա.- Շան տըղա՛, չուբանու կըռը՛վ չի է՛, կամանց թըխէ* (Ձ): 5. Վեճ, վիճաբանություն: *Հը՛ըթնըսկէսուր վէր ո՛ւրո՛ւր նըհը՛տ յօլա չի ք՚ը՛ցէն, տանը ամէն օր կըռը՛վ կինի* (Բ):

- Կըռը՛վ անէլ - *տե՛ս* ԿԸՌՎԷԼ:

- Կըռը՛վ անէլը չի տըղըմըրթթուն, յը՛խնէլը ա տըղըմըրթթուն - Կարեւորը ոչ թե ընթացքն է, այլ արդյունքը:

- Կըռը՛վը թափէլ - Կռվին վերջ տալ, խաղաղեցնել, հաշտեցնել: *Հաբէդ ապան կ՚ամ ա կըռէվը թափում, խընձո՛ը կէս անում, մին լափուճ մընին տամ, մին լափուճ էլ՝ էն մընին* (ՆԱԲ, II, 50):

- Կըռը՛վ ըղնէլ - Կռիվ առաջանալ՝ սկսվել: *Ըտի մին խըտուրու պէնու դ՚ը՛ռդ՚ա էտ յէրգ՚իրը կըռը՛վ ա ըղնում* (Ձ):

- Կըռը՛վ կ՚ա՛լ/յը՛ր կէնալ - Կռիվ՝ պատերազմ սկսել, հարձակվել: *Վէր ըսկընաս ա, զօրքը յօր ա ունէս, կ՚աս կըռը՛վ* (ԱԱ, 20):

- Կըռը՛վ(ս) տալ - 1. *տե՛ս* ԿԸՌՎԷԼ: 2. Մաքառել, հանուն մի բանի ճիգ գործադրել: *Մարքարը շատ ա կըռը՛վս տամ, մինչը՛վ վէր էտ քըրքարուտ հա՛նդը արտ ա տը՛ռնում* (Ձ):

- Կըռը՛վ քաշիլ - *տե՛ս* Կըռվու մաչ ըղնէլ:

- Կըռը՛վ քըցիլ - 1. Կռվի պատճառ դառնալ: *Սօվը աշխարքը կըռը՛վ քըցից* (Ձ): 2. Իրար հետ կռվեցնել՝ գժտեցնել, խռովություն սերմանել: *Հարթնը տօնը կըռը՛վ քըցից* (Բ):

- Կըռը՛վ ք՚ինիլ - 1. Կռվի դաշտ՝ ռազմաճակատ մեկնել: *Տըղըմարթիք՚ը լօխ ք՚ը՛ցալ ըն կըռը՛վ* (Բ): 2. *տե՛ս* Կըռը՛վ կ՚ա՛լ:

- Կըռվա թափէլ - Կռվից ազատել: *Կընէգ՚ը վէր ըսկանում ա, ծին նըստում ա, ք՚ինամ հա՛նդը, մարթին կըռվա թափում, պիրում տօն* (Ձ):

- Կըռվու մաչ ըղնէլ - 1. Անկախ իր կամքից՝ կռվի խառնվել՝ մասնակցել: *Էն ինք՚ մըզը՛տէ ըպրէլիս, կըռվու մաչ ընգէնք՚, էսքան օյինը պէրէնք՚ մէր կըլ՚ օխը* (Բ): 2. *տե՛ս* Կըռը՛վ կ՚ա՛լ:

- Կըռվումը մընալ - Պատերազմից չվերադառնալ, պատերազմում զոհվել: *Շո՛ւշա՛ն աքօրը չօրս տըղան կըռվումըն ըն մընացալ* (Բ):

- Կըռվումը չամէնչ/ք՚ա՛թա՛ չըն/ըմ՚ պիժը՛նում - Կռվի ժամանակ դժբախտություններ են լինում, կռիվը հաճույքի՝ զվարճանքի տեղ չէ: *Մարը ասմա.- Մ՚ բալա, կըռվումը չամէնչ չըն պիժը՛նում, ը՛ղտը՛ղ ը՞ս ք՚ինամ* (Բ):

- Կըռվու պո՛ւն - *տե՛ս* ԿԸՌՎԱՊԷՆ:

ԿԸՌԸ՛Վ-ԴԱՎԻ - *գ.* Վեճ, վիճաբանություն, տուրուդմփոց: *Մարթը ըտի կըռվա-դավա պը՛ըրծընում ա, կ՚ամ ո՛ւրա՛ն կընգանը կօշտը* (Ձ):

ԿԸՌԸ՛Վ-ԿԸՌԸ՛Վ - *գ.* Խաղատեսակ: *Խօխէնքը կէս ըն տը՛ռնում, կըռը՛վ-կըռը՛վ խաղ անում* (Ձ):

ԿԸՌԸԾԻԼԻ/ԿԸՌԸՃԻԼԻ - *տե՛ս* ԿԸՌԱՃԻԼ (2):

ԿԸՌԸԿԸ՛Ռ - *տե՛ս* ԿԸՌՄԸԿԸ՛Ռ:

ԿԸՌԸԿԸՏՕՑ - *ածական.* Կեռ կտուց ունեցող: *Կըռըկըտօց դուշը լիշակէր կինի* (Ձ):

ԿԸՌԸԿ՚Ը՛Ղ - *տե՛ս* ԿԸՌԸՊԱՏ(Լ)Ի:

ԿԸՌԸԿՕՃ - *տե՛ս* ՂԱՐԱԴԱՄ:

ԿԸՌԸԿՕՌ[1]/ԿՈՒՌՈՒԿՕՌ[1]/ԿԸՌԸԿՕՍ/ԿՈՒՌՈՒԿՕՍ *(գրբ. կորակոր)* - *ածական.* Կորացած մեջքով, կորաքամակ, կուզիկ դարձած: *Կըռըկօռ պը՛ըռվնէ յըն մընացալ շէնումը* (Բ):

- Կըռըկօռ տը՛ռնալ - Շատ ծերանալ, ծերանալուց մեջքը կորանալ: *Հէղան ա-քէրը կըռըկօռ ա տը՛ռալ, կարում չի հըղէ ք՚ինի* (Բ):

ԿԸՌԸԿՕՌ[2]/ԿՈՒՌՈՒԿՕՌ[2]/ԿՈՒՌ-ԿՈՒՌ - *տե՛ս* ՆԸՐԿԱՐԱՐ (2):

ԿԸՌԸԿՕՍ - *տե՛ս* ԿԸՌԸԿՕՌ[1]:

ԿԸՌԸՀՅՈ՚Ք՚Ի - 1. *գ.* Կեռ պոչով կարիճ: *Կըռըհա՛ք՚ո՛ւն կը՛ծածը օխծէն կը՛ծածան փիս ա* (Բ): *ածական.* 2. Կեռ պոչ ունեցող: *Կըռըհա՛ք՚ի էծ ա էտ պը՛ըռավէն էծը* (Բ): 3. *փխբ.* Խարդախ, խորամանկ: *Կըռըհա՛ք՚ի մարթիք՚ շատ կան* (Բ):

ԿԸՌԸՀՕ - *ձ.* Անասուններին ջուր խմելու մղելու ձայն: *Ճիրին վէղըրան տինում ա կըվէն ըռըչին, թա.- Կըռըհո՛, կըռըհո՛...* (Ձ):

- Կըռըհо անէլ - *արհմ.* Ագահորեն

խմել՝ կոնծել: *Նըստում ըն էտքան կ'ինին լօխ կըռըհо անում* (Բ):

ԿԸՌԸՃԻԼԻ - *տե՛ս* ԿԸՌԸԾԻԼԻ:

ԿԸՌԸՄԱՆԴ(Լ)Ի - *տե՛ս* ԿԸՌԸՊԱՏ(Լ)Ի:

ԿԸՌԸՄԱՆՉԻ - *տե՛ս* ԿԸՌԸՊԱՏ(Լ)Ի:

ԿԸՌԸՄԲՕՇ - *ած.* Շատ գեր՝ անճոռնի: *Կըռըմբօշ կընգանան զանիլա տանում ա* (Բ):

ԿԸՌԸՄԸ՞Ռ - *տե՛ս* ԿԸՌՄԸԿԸ՞Ռ:

ԿԸՌԸՄԸ՞ՌՏԻԳ՝ - *տե՛ս* ԿԸՌԸՊԱՏ(Լ)Ի:

ԿԸՌԸՄԸՋԻ - Տարբեր տեսակի գինիների մնացորդների խառնուրդ, անորակ գինի: *Թամադան ասմա.- Էս կըռըմըզի յա, յը՞ս ըստի կ'ինավ կարէլ չըմ կէնաց ասիմ* (Ձ):

ԿԸՌԸՄԸՍՕ - *տե՛ս* ԾԸՌԸՄՕՌ:

ԿԸՌԸՆԴԷԳ՝ - *տե՛ս* ԿԸՌԷՆԴԸԼԱ՛Կ:

ԿԸՌԸՆԴԸԼԷԿ - *տե՛ս* ԿԸՌԷՆԴԸԼԱ՛Կ:

ԿԸՌԸՆԴ(Ը)ՐՈՒԾԻԳ՝ - *ած.* Ծայրը կոր ձեւով ցցված: *Գիրիշ ապան լ'ավ կըռընդըրուշիգ' տըրըխնէ յար կարում* (Բ):

ԿԸՌԸՆՉԱԼ - *տե՛ս* ԿԸՌԱՆՉԻԼ:

ԿԸՌԸՆՉՕՑ - *տե՛ս* ԿԸՌԱՆՉՈՒՑ:

ԿԸՌԸՉԱ՛ՆՉԻ՛Ռ - *ած.* Ծուռ թաթեր ունեցող, ծուռթաթ: *Կըռըչանչիլ արչը վէր տըրըքցընէս ա, Բուդդանը ըղնէս ա փօսը* (Ձ):

ԿԸՌԸՊԱՏԷՐ - *գ.* Շատ կեռմաններ ունեցող արահետ՝ կածան: *Էտ կըռըպըտէրավը պիցըրնաս ըն մինչը՞վ Տիզըփանդա կըլօխը* (Ձ):

ԿԸՌԸՊԱՏ(Լ)Ի/ԿԸՌԸՊԱՏՐԻ - *ած.* 1. Տարբեր տեղերից ծռված, ծուռումուռ: *Խըրմընջուդա հըդէն կըռըպատլի հըդէ յա, մաշինը մին թանիրավ ա քիս* (Բ): 2. *փխբ.* Շողոքորթություն պարունակող՝ արտահայտող: *Բարիշկին ծըծաղըն էլ ա կըռըպատլի* (Բ):

- Կըռըպատլի անէլ/տալ - 1. Ուղիղ ճանապարհից շեղվել, կողմնակի ճանապարհով գնալ: *Ծիյավէրը կըռըպատլի յա անում, վէր ըտըրանց ջիհի վէչ* (Ձ): 2. *տե՛ս* Լանզանն կըռ անէլ:

ԿԸՌԸՊԱՏՐԻ - *տե՛ս* ԿԸՌԸՊԱՏ(Լ)Ի:

ԿԸՌԸՊԷՑՆԻՐ - *տե՛ս* ՔԸՇԸՊԷՑՆԻՐ:

ԿԸՌԸՊԸՇՏԱԼ - *տե՛ս* ՊԸՐԿՈՒՇՏԱԼ:

ԿԸՌԸՊԸՇՏՕՏԷԼ - *տե՛ս* ՊԸՐԿԸՇՏՕՏԱԼ:

ԿԸՌԸՍԻՍԻ - *գ.* Ծայրը կեռ սիսեռ: *Ղըրակէնը մին աման կըռըսիսի յա իփանում, ածում դէրին ջուբէրը* (Ձ):

ԿԸՌԸՎ - *տե՛ս* ԿԸՌԸ՞Վ:

ԿԸՌԸՎԱՆ - *տե՛ս* ԿԸՌՎԱՆ:

ԿԸՌԸՎԱՊԷՆ - *տե՛ս* ԿԸՌՎԱՊԷՆ:

ԿԸՌԸՎԱՍԷՐ - *տե՛ս* ԿԸՌՎԱՍԷՐ:

ԿԸՌԸՎԱՏԸ՞Ղ - *տե՛ս* ԿԸՌՎԱՏԸ՞Ղ:

ԿԸՌԸՎԱՐԱՐ - *տե՛ս* ԿԸՌՎԱՐԱՐ:

ԿԸՌԸՎԷԼ - *տե՛ս* ԿԸՌՎԷԼ:

ԿԸՌԸՎԸ՞ՆԷ - *տե՛ս* ԿԸՌԸՎԿԸ՞ՆԷ:

ԿԸՌԸՎԽԸՆՁՕ՛Ր - *տե՛ս* ԿԸՌՎԸԽԸՆՁՕ՛Ր:

ԿԸՌԸՎԾԱՂԷԳ՝ - *տե՛ս* ԿԸՌՎԸԾԱՂԷԳ՝:

ԿԸՌԸՎԿԸ՞ՆԷ/ԿԸՌՈՒՎ(Կ)Ը՞ՆԷ/ԿՈՒՌՈՒՎ(Կ)Ը՞ՆԷ/ԿՈՒՌՈՒԿԸ՞ՆԷ - 1. *տե՛ս* ԿԸՌՕ(1): 2. *գ.* Այդպիսի պտուղներ տվող ծառ: *Չընխուրա ճըղպօրօտը լօխ կըռուվկը՞նէ յա* (Բ):

- Կըռըվկը՞նէ տալ - Խաղատեսակ, երբ խաշած ձվերը բռան մեջ սեղմելով՝ խփում են իրար. ում ձեռքի ձուն ջարդվեց, նա պարտվում է եւ իր ջարդած ձուն տալիս հաղթողին: *Խօխէնքը սիրում ըն կըռըվկը՞նէ տալը* (Բ):

ԿԸՌԸՎՀԱ՛ՆԳԻ - *տե՛ս* ԿԸՌՎԸՀԱ՛ՆԳԻ:

ԿԸՌԸՎՀԸՆԳԷՐ - *տե՛ս* ԿԸՌՎԸՀԸՆԳԷՐ:

ԿԸՌԸՎՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌՎԸՑ(Ը)ՆԷԼ:

ԿԸՌԸՎՕԿ - *տե՛ս* ԿԸՌՎՕԿ:

ԿԸՌԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. կորացուցանեմ)* - *նբ.* ԿԸՌԱՆԱԼ-ի:

ԿԸՌԸՔԸ՞Թ/ԿԸ՞ՌՔԷԹ/ԿԸՌՔԸ՞Թ - *ած.* 1. Կեռ քիթ ունեցող, կեռ քթով: *Կըռըքը՞թ մարթը ժանլիգ' կինի* (Բ): 2. *փխբ.* Կեռ ծայր ունեցող, կեռ ծայրով: *Մին կըռըքը՞թ փանդ ա յօր ունէս, քըցիս ճէղնը, քըշըցընէս* (Ձ):

ԿԸՌԸՔ՝-ԿԸՌԷՔ՝ - *տե՛ս* ԿԸՌԷՔ՝-ԿԸՌԷՔ՝:

ԿԸՌԹԱՆՔ/ԿԸՐԹԱՆՔ/ՔԸՌԹԱՆՔ - *գ.* Թելը մաքրելիս քռթիչի վրա մնացած կամ գետնին թափված մազմզուքը: *Թիլը կըռթում ա, կըռթանքը թօղում տափէն վէր տը՞ռած* (Ձ):

ԿԸՌԹԷԼ/ԿԸՐԹԷԼ/ՔԸՌԹԷԼ - *նբ.* Թելի մազմզուքը քերելով մաքրել: *Թիլը մանում ըն, յը՞տնան քըռթէչավ քըռթում* (Ձ):

ԿԸՌԹԷՉ/ԿԸՐԹԷՉ/ՔԸՌԹԷՉ - *գ.* Թելի մազմզուքները քերելու՝ մաքրելու հարմարանք: *Կըռթէչը յը՞ր ա օնում, թա թիլը կըռթէ, տը՞սնում էծէրը նի տը՞ռած բօստանը* (Ձ):

ԿԸՌԹ-ԿԸՌԹ/ԿԸՐԹ-ԿԸՐԹ - *ձ.* Հավերի, հատկապես թխսկանի հանած ձայնը: *Թուխսըկանը ճօտէրը կուրցընում ա, ըսքըսում սանս անէլը՝ կը՞ռթ-կը՞ռթ* (Ձ):

ԿԸՌԹԿԸՌԹԱԼ/ԿԸՐԹԿԸՐԹԱԼ - *չբ.* Հավերի՝ ձու դնելու կամ ձագ հանելու ժամանակ ձայն հանելը, կըռթ-կըռթ ձայն հանել: *Հավէրը կըռթկըռթամ ըն, այան գ'ուդանում ա, վէր ծանլ վըն ածալ* (Ձ): 2. *հեգն.* Ամուսնանալու ցանկություն հայտնել: *Էտ ախմաղը շատ ա կըռթ-կըռթամ, ամմա հանը փըսակում չի* (Բ):

ԿԸՌԹԿԸՌԹԱՆ/ԿԸՐԹԿԸՐԹԱՆ - *ած.* Կռթկռթացող: *Էտ հավըտ շատ կըռթկըռթան ա ինանում, կօզի ըսկի ծու չի ածում* (Ձ):

ԿԸՌԹԿԸՌԹՑ(Ը)ՆԷԼ/ԿԸՌԹԿԸՐԹՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹԿԸՌԹԱԼ:

ԿԸՌԹԿԸՌԹՕՆ/ԿԸՐԹԿԸՐԹՕՆ - *գ.* Հավերի կռթկռթալը, կռթկռթալու ձայնը: *Աղվէսը հավէն կըռթկըռթօնէն յըրա մուտանում ա* (Ձ):

ԿԸՌԹԿԸՌԹՕՑ/ԿԸՐԹԿԸՐԹՕՑ - *տե՛ս* ԿԸՌԹԿԸՌԹՕՆ:

ԿԸՌԹՆԷԼ/ԿԸՐԹՆԷԼ - *չբ.* 1. Թեւը՝ կուռը դիմահար անելով՝ հենվել՝ թիկնել՝ կիսապառկել: *Հացը օտում ըն, կարպէտը ծառէն տակէն մը՞կնում, կըռթնում* (Ձ): 2. *փխբ.* Թեքվել, թեքվելով գետնին հենվել: *Ծառէրը էնքան բար ըն յէր կալանլ, կըռթնալ ըն տափէն յըրա* (Բ):

ԿԸՌԹՆԸԼԱՏԸ՞Ղ/ԿԸՐԹՆԸԼԱՏԸ՞Ղ/ԿԸՌՆԱՏԸ՞Ղ - Թիկնելու՝ կռթնելու տեղ՝ հարմարանք: *Ապուն կըռթնըլատը՞ղը թութուն տակէն ա իլանլ* (Բ):

ԿԸՌԹՎԱՍԿ/ԿԸՐԹՎԱՍԿ/ՔԸՌԹՎԱՍԿ - *տե՛ս* ԿԸՌԹԱՆՔ:

ԿԸՌԹՕՏԷԼ/ԿԸՐԹՕՏԷԼ/ՔԸՌԹՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹԷԼ (շատ բան կամ շատ անգամ):

ԿԸՌԻՆԴԸՌԱ՛Կ - *տե՛ս* ԿԸՌԷՆԴԸԼԱ՛Կ:

ԿԸՌԻՍ *(ռուս. крыса)* - *գ.* 1. Մկնաձկերպների ցեղին պատկանող կրծող կաթնասուն, առնետ: *Կըռիսնէն նի յըն տը՞ռալ կ'ումը, էշին փալանը կըրծկօրծալ* (Բ): 2. *փխբ.* Ստոր՝ խարդախ անձ: *Իզէն կըռիս ա, ընդրա նըհը՞տ հըգըրօթուն անօղ չի կա* (Բ):

ԿԸՌԼԷԳ՝/ԿԸՌՏԷԳ՝ - *տե՛ս* ԿԸՌԱՎՈՒՆ:

ԿԸՌԾԷԼ - *տե՛ս* ԿԸՐԾԷԼ:

ԿԸՌԾԿՕՌԾԷԼ - *տե՛ս* ԿԸՐԾԿՕՐԾԷԼ:

ԿԸՌԾԿՕՌԾՎԷԼ - *տե՛ս* ԿԸՐԾԿՕՐԾՎԷԼ:

ԿԸՌԾԿՕՌԾՈՒՑ - *տե՛ս* ԿԸՐԾԿՕՐԾՈՒՑ:

ԿԸՌԾՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸՐԾՕՏԷԼ:

ԿԸՌԾՕՏՎԷԼ - *տե՛ս* ԿԸՐԾՕՏՎԷԼ:

ԿԸՌ-ԿԸՌ[1] - *ած.* Կեռաձեւ, շատ կեռ: *Էծը կըռ-կըռ պուզ'էրավը հարում ա, կ'ինլին ըսպանում* (Ձ):

ԿԸՌ-ԿԸՌ[2] - 1. *ած.* Շատ կռռացող, կռկռան: *Քաշը կըռ-կըռ դուշ ա* (Բ): 2.*գ.*

Ագռավի նման թռչնատեսակ: *Մինակ կըռ-կըռըն ա, պանան բէյխաբար, ուրան հէտի քըթօթ անում* (ԱԱ, 64):

ԿԸՌ-ԿԸՌԱԺՄՈՒՆՔ - *տե՛ս* ԿԸՌԱԺՄՈՒՆՔ:

ԿԸՌԿԸՌԱԼ - *չբ.* 1. Կռնչալ, կռավել (ագռավի, բուի, գորտի եւն մասին): *Էն վըխտան միչէվ մըհէնգ էլ քաշէրը վըզըրնէն ըրկընցընէս ըն, յէտնան կըռ-կըռաս* (ՀԺՀ, V, 589): 2. *փխբ.* Չարագուշակ՝ վատ բան ասել, բամբասել, չարախոսել: *Էնքան հիրըվանէրը կըռկըռացէն, Անդրի դային ծառան վէր ընգավ, մը՛ռավ* (Բ): 3. *փխբ.* Անընդհատ դժգոհել՝ տրտնջալ՝ քրթմնջալ: *Էտ կընէգը սաղ օրը էն ա ինում կըռկըռալիս* (Բ):

ԿԸՌԿԸՌՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌԿԸՌԱԼ:

ԿԸՌԿԸՌՕՆ - *գ.* 1. Կռկռալը, կռկռալու ձայնը: *Մինակ քաշէն կըռկըռօնըն ար ըսկանվում* (Ձ): 2. *փխբ.* Չարախոսություն, բամբասանք: *Սօնգսըզ կընգանը կըռկըռօնը փիս կինի* (Ձ): 3. *փխբ.* Անընդհատ դժգոհելը՝ տրտնջալը՝ քրթմնջալը: *Կըռկըռօնը Դօրուց կընանուցը անա անպակաս ա* (Բ):

ԿԸՌԿԸՌՕՑ - *տե՛ս* ԿԸՌԿԸՌՕՆ:

ԿԸՌԿՈՒՍԱՆԱԼ - *չբ. տե՛ս* Կըռըկօռ տը՛ռնալ:

ԿԸՌՃԷԼ - *տե՛ս* ԿԸՌՃԻԼ:

ԿԸՌՃԻ/ԿԸՃԻ/ԿԻՐՃԻ - *ած.* Խիստ ժլատ՝ գծուծ՝ ագահ: *Կըռճի մարթը վէրչումը տուգնը կըմը՛ռնէ* (Ձ):

ԿԸՌՃԻԼ/ԿԸՌՃԷԼ/ՂԸՐՃԻԼ *(գրբ. կռճեմ)* - *նբ.* Ջարդել, տրորել, մանրացնել (աղի խոշոր կտորները, շաքարը եւն): *Աղը կըռճում ըն, ածում ըղբքըսակը, կախ տամ* (Բ):

ԿԸՌՃՈՒՆՔ - *տե՛ս* ԿԸՌՃՕՆՔ:

ԿԸՌՃՕՆՔ/ԿԸՌՃՈՒՆՔ - *գ.* 1. Անասունների կերի մնացորդ: ... *Էշին սաղ օրը պէռնում ար, ուրուգինը մին հափուռ կըռճունք քըցում առաշկը* (ԱԱռ, 67): 2. Ուտելիքի մնացորդ՝ կտորտանք: *Հըրսընքէն էգսը պարիկամնէն հըվաքվում ըն, կըռճօնքը օտում* (Բ):

- Կըռճօնք անել - 1. Ուտելիքի՝ կերի լավ մասերն ուտել, վատերը թողնել: *Էծէրը խստը թանմուզ չըն օտում, կըռճօնք ըն անում* (Բ): 2. Ուտելիքի՝ կերի մնացորդները՝ կտորտանքը ուտել: *Էրկու օրանը յը՛տը ըտըրանք քինամ ըն հըրսընքատօն, կըռճօնք անում* (Ձ):

ԿԸՌՄԱՆ - *ած., գ.* Ոլորապտույտ (ճանապարհ): *Կըռման հըղէ յա Տումա հըղէն* (Բ):

- Կըռման տալ - Ճանապարհը թեքել: *Թաքավէրին տըղան էտ սանէրը վէր ըսկանում ա, կըռման ա տամ բիդի էտ տօնը* (Ձ):

ԿԸՌՄԱՐ - *տե՛ս* ԿԸՌԱՄԱՐ:

ԿԸՌՄԸՋՈՒԿ/ԿԸՌՄՈՒՋՈՒԿ/ԿՈՒՐՄՈՒՋՈՒԿ - *գ.* Դառնահամ վայրի բանջար, որ եփում են կամ թթու դնում: *Կըռմըզուկը ծըմըկնէրըմըն ա փըսնէս* (Բ):

ԿԸՌՄԸԿԸ՛Ռ/ԿԸՌԸՄԸ՛Ռ/ԿԸՌԸԿԸ՛Ռ - *տե՛ս* ԿԸՌԸՊԱՏ(Լ)Ի:

ԿԸՌՄՈՒՋՈՒԿ - *տե՛ս* ԿԸՌՄԸՋՈՒԿ:

ԿԸՌՆԱՏ - *ած.* Կուռ՝ թեւ չունեցող, կուռը՝ թեւը կտրած: *Չօբանը կ'ամ ա, տը՛սնըմ՝ մին կըռնատ ախճիգ, խօխան մաշկէն կապած, էտ ծառէն տակէն լանց ա ինում* (Ձ):

ԿԸՌՆԱՏԷԼ - *նբ.* 1. Կուռը՝ թեւը հատել՝ կտրել: *Պիրում ըն էտ հարթնանը կըռնատում, խօխան մաշկէն կապում, տանան տուս քըցում* (Ձ): 2. *փխբ.* Հուսահատեցնել, թեւաթափ անել, վհատեցնել: *Հօրը խուսկէրքը խը՛ղճ ըխճըկանը կըռնատից* (Բ):

ԿԸՌՆԱՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸՌՆԱՏԷԼ-ի:

ԿԸՌՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹՆԷԼ:

ԿԸՌՆԸԼԱՏԸ՛Ղ - *տե՛ս* ԿԸՌԹՆԸԼԱՏԸ՛Ղ:

ԿԸՌՉԱՆ - *տե՛ս* ԿԸՌԷՉԱՆ:

ԿԸՌՌԱԼ - *տե՛ս* ԿԸՌԿԸՌԱԼ:

ԿԸՌՌԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌԿԸՌՑ(Ը)ՆԷԼ:

ԿԸՌՌՕՆ - *տե՛ս* ԿԸՌԿԸՌՕՆ:

ԿԸՌՌՕՑ - *տե՛ս* ԿԸՌԿԸՌՕՆ:

ԿԸՌՎԱՆ/ԿԸՌԸՎԱՆ - *ած.* 1. Լավ կռվող, կռվի մեջ ուժեղ: *Լավ կըռվան ղօչին էլ ամէն օր կըռվըցնէլ չըն...* (ՋՏ, Բ, 232): 2. *տե՛ս* ԿԸՌՎԱՍԷՐ:

ԿԸՌՎԱՊԷՆ/ԿԸՌԸՎԱՊԷՆ - *գ.* Կռվի տեղիք՝ առիթ՝ պատճառ: *Շինանցուց կըռվապէնը էտ բաղընն ա ինում* (Ձ):

ԿԸՌՎԱՍԷՐ/ԿԸՌԸՎԱՍԷՐ *(գրբ. կռուասէր)* - *ած.* Կռիվ՝ կռվել սիրող, կռվարար: *Էտ թաքավէրին էլ օխտը տըղա յա ինիս, օխտըն էլ կըռվասէր* (Ձ):

ԿԸՌՎԱՏԸ՛Ղ/ԿԸՌԸՎԱՏԸ՛Ղ *(գրբ. կռուատեղ)* - *գ.* 1. Կռվի՝ կռվելու տեղ՝ վայր: *Ըտըրանց կըռըվատը՛ղը Ըրախսէն ղըրաղէն մին դանգ տը՛ղ կա, ըտը՛ղ ա ինում* (Ձ): 2. *տե՛ս* ԿԸՌՎԱՊԷՆ:

ԿԸՌՎԱՐԱՐ/ԿԸՌԸՎԱՐԱՐ *(գրբ. կռուարար)* - 1. *տե՛ս* ԿԸՌՎԱՍԷՐ: 2. *գ.* Թռչնատեսակ: *Կըռվարարը վէր ըրվաց, ծըտէրը փախէն* (Բ):

ԿԸՌՎԷԼ/ԿԸՌԸՎԷԼ *(գրբ. կռուեմ)* - *չբ.* 1. Իրար ծեծել, կռիվ անել: *Թաքավէրին տըղան ա իրը՛քկըլխանէ դէվը վէր կըռվում ըն, սաղ յէրգիրը տանուրուր ա կ'ամ* (Ձ): 2. Մարտ՝ պատերազմ վարել: *Էտ էրկու թաքավէրը զօրքէրը հըվաքում ըն, կ'ամ ըտը՛ղ կըռվում* (Ձ): 3. Վիճել, վիճաբանել: *Հըրթնըսկէսուր սաղ օրը ուրուր նըհը՛ստ էն ըն ինում կըռվէլիս* (Ձ): 4. Պայքարել, մաքառել, որեւէ դժվարության՝ արգելքի եւն դեմ մարտնչել: *Սանմի ապան վը՛ղէն նըհը՛ստ շատ ա կըռվում, մինչը՛վ կարում ա բար ըստանա* (Ձ): 5. Հարաբերությունները խզել, խռովել: *Սանամըն ա Մարգուշան էրկու տարէ յա՝ կըռված էն, ուրուր նըհը՛ստ խօսում չըն* (Բ):

ԿԸՌՎԸԽԸՆՁՕ՛Ր/ԿԸՌԸՎԽԸՆՁՕ՛Ր - *գ.* Այն, ինչ կռվի առիթ է տալիս, կռիվ գցող՝ առաջացնող բան: *Ըստի էտ վը՛ղը տը՛ռնըմ ա կըռվըխընձօր ճըրտընը՛ցուց ա խընուշինըկը՛ցուց մաչին* (Ձ):

ԿԸՌՎԸԾԱՂԷԳ/ԿԸՌԸՎԾԱՂԷԳ - *տե՛ս* ԿԸՌՎԸԽԸՆՁՕ՛Ր:

ԿԸՌՎԸՀԱ՛ՆԳԻ/ԿԸՌԸՎՀԱ՛ՆԳԻ - *մ.* Կռիվ անելու եղանակով՝ պես: *Կըռվըհանգի յա խօսում* (Բ):

ԿԸՌՎԸՀԸՆԳԷՐ/ԿԸՌԸՎՀԸՆԳԷՐ - *գ., ած.* 1. Կռվի՝ պատերազմի ընկեր, մարտակից: *Խիկառընն ա Սուրէնը կըռվըհընգէր ըն, առանց ուրուր հաց չըն օտում* (Ձ): 2. Ախոյան, մրցակից, հակառակորդ: *Մարթին կըռվըհընգէրըն էլ բիդի կարքէն* (ՆԱԲ, III, 340):

ԿԸՌՎԸՑ(Ը)ՆԷԼ/ԿԸՌԸՎՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. կռուեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ԿԸՌՎԷԼ-ի:

ԿԸՌՎՕԿ/ԿԸՌԸՎՕԿ - *տե՛ս* ԿԸՌՎԱՆ:

ԿԸՌՏԷԳ - *տե՛ս* ԿԸՌԼԷԳ:

ԿԸՌՏԷԼ/ԿՕՌՏԷԼ/ԿԸՐՏԷԼ/ԿՕՐՏԷԼ - *նբ.* 1. Ամորձատել, ամորձիքից զրկել: *Վը՛ղց խօզը՛ վէր կըռտիս վէչ, քուքանալ չի* (Բ): 2. *փխբ.* Ցորենի հասկի վերեւի մասը կտրել՝ միջին մասը լավ աճելու եւ սերմացու դառնալու համար: *Հասկէրը կըռտում ըն, վէր սըրմացու յը՛ր օնին* (Ձ): 3. *փխբ.* Հիմնական՝ էական՝ արժեքավոր մասերը ջոկել՝ վերցնել եւն: *Կօղէրը քըշէրը նի յըն տը՛ռնում Ջըմանէն բաղը, կըռտում* (Ձ): 4. *փխբ.* Խաղի մեջ հաղթել՝ կրել: *Խաղ ըն անում, Վաղարշակը լօխճին կըռտում ա* (Ձ):

- Կըռտած խօզ՝/ղազ - 1. Չաղ, գեր: *Դէ՛, Գագաշէն կընէգ՝ըն էլ հինչ կընէ՞գ՝, մին կըռտած խօզ՝ ա, օխտը փութ կա* (Ձ): 2. Անտաշ, կոպիտ, տգեղ: *Անդաթ ա, թանգանա հարթնը դաշանգ կինի, էս հարթնը հանց ա կըռտած ղազ* (Բ): 3. Անամոթ, աներես, լպիրշ: *Կըռտած խօզ՝ու նըման հինչը տը՛սնում ա, օգում ա* (Ձ):

ԿԸՌՏԸՊԸՌՏԱՆՔ/ԿԸՐՏԸՊԸՐՏԱՆՔ - *գ.* 1. Ամենավերջին զավակը՝ ծնունդը: *Մին մարթու օխտը տըղա յա ինում, վէցը փըսակում ա, մընամ ա կըրտըպըրտանքը* (ՆԼՂԺԲ, 54): 2. Ընդհանրապես որեւէ բանի մնացորդը՝ տակը

մնացածը: *Յօրէնը ածում ըն չըվըլնէն, կըռտըպըռտանքը տամ պըռավէն* (Ձ):

ԿԸՌՏ(Ը)ՎԷԼ/ԿԸՐՏ(Ը)ՎԷԼ/ԿՕՌՏ(Ը)ՎԷԼ/ԿՕՐՏ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸՌՏԷԼ-ի:

ԿԸՌՏՕՏԷԼ/ԿԸՐՏՕՏԷԼ - *նբ.* Շատերին կրտել՝ ամորձատել: *Էշին դուխտուրէն ծէն ըն տամ, շէնին խօզ'էրը կըռտօտում ա* (Բ):

ԿԸՌՏՕՏՎԷԼ/ԿԸՐՏՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸՌՏՕՏԷԼ-ի:

ԿԸՌՏՕՑ/ԿԸՐՏՕՑ - *գ.* 1. ԿԸՏՕՑ: 2. Փայտե շերեփի՝ գդալի եւն մեջը փորելու՝ տաշելու կեռ գործիք: *Առանց կըռտօց կարէլ չըս փանդի շիրը'փ շինիս* (Բ): 3. Կեռ դանակ, որով ամորձատում են կենդանիներին: *Կըռտօցը յը'ր ա օնում, էշին կըռտում* (Ձ):

ԿԸՌՈՒԿ/ԿԸՌՕԿ - *գ.* Հրահանի կեռիկը, ձգան: *Վէրսկանը լըհա օգ'ում ա, թա կըռուկը քաշի, էս մարդիմազարը մուտանում ա...* (ՆԱԲ, 64):

- Կըռուկէն տալ - Պոռոտախոսել: *Կօզի ծը'րքավը պէն չի կ'աս, ամմա սաղ օրը էն ա կըռուկէն տաս* (Բ):

ԿԸՌՈՒԿԱՆԷ - *գ.* Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող խոտաբույս, խատուտիկ: *Խօխէնք'ը կըռուկանէ յըն քաղում, խաղ անում* (Բ):

ԿԸՌՈՒԿ(Կ)Ը'ՆԷ - *տե՛ս* ԿԸՌԸԿԸ'ՆԷ:

ԿԸՌՔԱԹԱՓ - *ածական.* Ատամները թափված, ատամնաթափ: *Կըռքաթափ կընէգ' ա Բըխցարաց Սօնիշկան, հացը էլ չի կարում ծամէ* (Բ):

ԿԸՌՔԱՄԱԾ - *ածական.* Դժվար ծամելի (ուտելիքի մասին): *Կըռքամաշ մէս ա, կարում չըմ օտիմ* (Բ):

ԿԸՌՔԱՆԷ - *ածական.* 1. *տե՛ս* ԿԸՌՔԱՎՈՒՐ: 2. Թվականի ցույց տված քանակով ատամ ունեցող: *Էտ օշափը էլ էրկու կըռքանէ յա ինում, ամմէն մին կըռէք'ը՝ մին կ'ը'ղ* (Ձ):

ԿԸՌՔԱՊԷՆ - *գ.* 1. Ծամելու՝ ուտելու բան: *Մարթը տանուզնը կ'ամ ա տէս յէշում, տէն յէշում, կըռքապէն չի քըթէնում* (Ձ): 2. Ծամելը, ուտելը: *Այան կօզի պառավ, ամմա կըռքըպէնում լ'ավ ա* (Բ):

ԿԸՌՔԱՎԷՐ - *տե՛ս* ԿԸՌՔԱՎՈՒՐ:

ԿԸՌՔԱՎՈՒՐ/ԿԸՌՔԱՎԷՐ - *ածական.* Ատամնավոր, ատամներ կամ ատամնաձեւ ելուստներ ունեցող: *Բանրդանն ըտըրա առաշկըն ա տանուս կ'ամ մին կըռքավուր օխծ* (Ձ):

ԿԸՌՔԱՑԱՎ - *գ.* Ատամի ցավ: *Կըռքըցավէն նըման փիս ցավ չի կա* (Բ):

ԿԸՌՔԱՕՆՋ - *գ.* Ատամի վրա գոյացած կարծր զանգված, ատամնաժանգ, ատամնաքար: *Կըռքաօնջը կըռքընէս բարբադ ա ըրալ* (Բ):

ԿԸՌՔԷԼ/ԿԸ'ՌՔԷԼ - *նբ.* 1. Սղոցի եւ ատամնավոր այլ գործիքների ատամները սրել: *Մաշառը կըռքում ա, էտ փանդէրը լօխ կըտօրում* (Ձ): 2. Մաշված ջրաղացքարը՝ երկանաքարը եւն թեթեւ ծեծել՝ փորել՝ ելուստներ առաջացնել: *Ճըղաղացպանը ճը'դացը ճիրանտում ա, ուստէն ծէն տամ, վէր կ'ա ճըղըղացքարը կը'ռքէ* (Ձ):

ԿԸՌՔԸ'Թ - *տե՛ս* ԿԸՌԸՔԸ'Թ:

ԿԸՌՔԸԿԸՏ(Ը)ՐԷԼԻ - *ածական.* 1. Այն, ինչ ատամը կարող է կտրել: *Կըռքըկըտըրէլի մէս չի էս մէսը* (Բ): 2. *փխբ.* Շահավետ, օգտակար: *Վը'խճար պահէլը կըռքըկըտրէլի կօրծ ա* (Ձ):

ԿԸՌՔԸՀԸՄԲԱՐԷ - *գ.* Ծառերի վրա ապրող բազմոտանի մազմզոտ թրթուր: *Կաղնուն յըրա յա կըռքըհըմբարէ շատ ինում* (Բ):

ԿԸՌՔԸՊԸՏ(Ը)ՌԷ(ԼԻ) - *ածական., գ.* Ատամների փորելուն ծառայող, ատամնափորիչ (փայտիկ կամ այլ բան): *Հացը օտում ըն, մարթա մին կըռքըպըտըռէլի յօր օնում, կըռքըքընէն պըտըռում* (Ձ): 2. *փխբ.* Քիչ, աննշան: *Խուտահարքը հընցընում ա, չօբանը հանլա մին կըռքըպըտըռէ խօտ պիրիլու* (ՀԺՀ, VII, 172):

ԿԸՌՔԸՎԸ'ՆՆԷԼ - Որեւէ բան անելու, հատկապես ուտելու՝ ճաշկերույթի մասնակցելու պատրաստ լինել: *Կըռքըվը'ննած կ'ամ ա բադարանք', տը'սնում՝ ըսկի ուտէլի պէն չի կա* (Ձ):

ԿԸՌՕ/ԿՈՒՌՕ - *ածական.* 1. Կեղեւը պինդ, իսկ միջուկը դժվար դուրս եկող (ընկույզի՝ տխիլի մասին): *Կըռօ ճըղուպուր մաչ անէլը շատ ա տիժէր* (Բ): 2. *փխբ.* Համառ, անկոտրում: *Խոնրպիրթը'ցէք' կըռօ ժըղովուրթ ըն* (Բ):

ԿԸՌՕԹՆԸ/ԿՈՒՌՈՒԹՆԸ - *գ.* Լայնատերեւ վայրի խոտաբույս, որի արմատն ու զոխերը ուտում են: *Ուտէլի պէն չի ինում, ճարը կըտըրած՝ կըռօթնու զօխէր ա քաղում, տամ խօխօնցը* (Ձ):

ԿԸՌՕԿ - *տե՛ս* ԿԸՌՈՒԿ:

ԿԸՌՕՃ *(գրբ. գռիճ)* - *գ.* 1. Շաքարի՝ քարաղի եւն ամբողջական կտոր: *Ալզին էրկու կըռօճ շանք'անր ա պըտատում, թաքուն կօխում քըվօրը ջուբը* (Ձ): 2. Հողակոշտ, գուղձ: *Բօստանը պիհանում ա, կըռօճնէն թիյավը թակում, խանրդընցընում* (Բ): 3. *փխբ.* Ամրակազմ: *Ճըղըղացպանէն էլ մին կըռօճ խօխա յա ինում* (Ձ):

- Կըռօճ տը'ռնալ - Կարծրանալ, պնդանալ (աղը, շաքարավազը, հողը եւն): *Աղը վէր նամ տը'ղ պահիս, կըռօճ կըտը'ռնա* (Բ):

ԿԸՌՕՃ-ԿԸՌՕՃ - *ածական., մ.* Մեծ կտորներով, գունդ-գունդ: *Մըսէրը իփանում ըն, կըռօճ-կըռօճ տինանում ըստօլէն* (Ձ):

ԿԸՌՕՑ - *գ.* Գործիքի կեռ ծայրը: *Ցըկատէն կըռօցը նի յա կ'ամ քարէն, կօտըրում* (Ձ):

ԿԸՍԱԹԷՎ(Ք)/ԿԻՍԱԹԷՎ(Ք) - *ածական.* Կարճ՝ մինչեւ արմունկը հասնող թեւք ունեցող: *Հըմանչում էլ չի, էս ցօրտ օրը կիսաթէվ շօր ա կ'ը'ցալ, յը'կալ հանգիստը* (Բ):

ԿԸՍԱԿԻՆ/ԿԻՍԱԿԻՆ - *տե՛ս* ԿԸՍԸԿԻՆՈՒ:

ԿԸՍԱՀՈՒՄ/ԿԻՍԱՀՈՒՄ - *ածական.* Լրիվ չեփված, կիսով չափ հում: *Կըսահում մըսէրը ղըզղանան տանուս ըն տամ, օտում* (Բ):

ԿԸՍԱՄԱԾ/ԿԻՍԱՄԱԾ - *ածական.* Կիսով չափ մաշված: *Խը'ղճը կըսամաշ շօրէր ա կ'ը'նում, հինչ ա՞նէ, ք'անսիբ ա* (Բ):

ԿԸՍԱՄԸ'Ռ/ԿԻՍԱՄԸ'Ռ - *ածական.* Մահամերձ, մահվան եզրին գտնվող: *Պիրանում ըն, էտ կիսամը'ռ պըռավէն իլանծիլանծը ծիյին պէռնում, անրանն էլ տինում յըրան, ք'ինամ* (Ձ):

ԿԸՍԱՄՕՐԹ/ԿԻՍԱՄՕՐԹ - *տե՛ս* ՃԻԼԱՄՕՐԹ:

ԿԸՍԱՉՕՐ/ԿԻՍԱՉՕՐ - *ածական.* Ոչ լրիվ չորացած, կիսով չափ չոր: *Կըսաչօր փանդ ա, լ'ավ չի էրանում* (Բ):

ԿԸՍԱՋԱՆ/ԿԻՍԱՋԱՆ - *ածական.* 1. Մարմնի որեւէ մասը հատած, անդամալույծ: *Կըսաջան մարթ ա Վաղօն, կըռվավը համ աչի ծէրքընն ա կուրցըրալ, համ աչի վը'ննը* (Բ): 2. *տե՛ս* ԿԸՍԱՄԸ'Ռ:

ԿԸՍԱՔՕՆ/ԿԻՍԱՔՕՆ - *ածական., մ.* Կիսով չափ քնած, կիսարթուն, քնաթաթախ: *Ըտի կըսաքօն էտ բաղվանչին տանուս ա կ'ամ, տը'սնում՝ մին կընէգ' էտ ծառէն տակէն լանց ա ինանում* (Ձ):

ԿԸՍԸԹԷՀՐԱՏ/ԿԻՍԸԹԷՀՐԱՏ - *տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

ԿԸՍԸԿ'ԻՆՈՒ/ԿԻՍԸԿ'ԻՆՈՒ - *մ.* Կես գնով, արժեքի կեսով, էժան: *Թօռը վէր օգ'ում ա, թա նի օնէ, ըտըրանք անրանց ապրանքը կըսըկ'ինու ծախում ըն, հըդէ ինանում* (Ձ):

ԿԸՍԸՀԱՐ/ԿԻՍԸՀԱՐ - *ածական.* 1. Կիսով չափ բացած՝ բացված, կիսաբաց: *Էտ կըսըհար մը'ղակէն դաթավը յէշում ա, տը'սնում թաքուհին վէգիրին նը'հը'տ սիլի-բիլի ընէս* (Ձ): 2. *տե՛ս* ԹԷՀՐԱՏ:

- Կըսըհար անէլ - Կիսով չափ բացել: *Ժըլատէն ըսը'ցէն՝ տօռնը պէ՛ց, կըսըհար ըրավ* (ԱԲԲ, 32):

ԿԸՍԸՀԸՂԷ(ՆՆԻ)/ԿԻՍԸՀԸՂԷ(ՆՆԻ) - *մ.* Ճանապարհի կեսը՝ մի մասն անցած, կես ճանապարհին: *Կըսըհըղէ էտ*

տրդէն մէնըն ա ընգնում, վէր հայբան, վըՀսկավ լիգը, թողալ ա պըռավէն տանը (ՀԺՀ, V, 545):

ԿԸՍԸՄԱՍՈՒԼ/ԿԻՍԸՄԱՍՈՒԼ - *տե՛ս* ԿԸՍԸՏ-ՊԸՌԱՏ:

ԿԸՍԸՆ-ԿԷՍԱՆ/ԿԻՍԸՆ-ԿԷՍԱՆ - 1. *տե՛ս* ԹԷՀՐԱՏ: 2. *տե՛ս* ԿԸՍԸՏ-ՊԸՌԱՏ (1):

ԿԸՍԸՊԷՐԱՆ/ԿԻՍԸՊԷՐԱՆ - *ած., մ. տե՛ս* Կէս պէրան: *Ղըլըցէ Թամամ բաջին մին օր ուրանց պէլունց տօն մին կըսըպէրան դօնախլըղի ա ինըմ կանչված...* (ՋՏ, Ա, 215):

ԿԸՍԸՊԷՑ/ԿԻՍԸՊԷՑ *(գրբ. կիսաբաց)* - *տե՛ս* ԿԸՍԸՀԱՐ(1):

ԿԸՍԸՎԿԷՍ/ԿԻՍԸՎԿԷՍ/ԿԷՍՎԱԿԷՍ/ԿԷՍ-ԿԷՍ/ԿԷՍՊԱԿԷՍ *(գրբ. կէս ի կէս)* - *մ.* 1. Կես առ կես: *Կըսըվկէս ա պիժըՀնում, վէր լօխճին հէրիք անէ* (Ձ): 2. Կիսով չափ: *Կօրծը կըսըվկէս չըն անէ* (Բ):

ԿԸՍԸՏ-ԿԷՍԱՏ/ԿԻՍԸՏ-ԿԷՍԱՏ - *տե՛ս* ԿԸՍԸՆ-ԿԷՍԱՆ:

ԿԸՍԸՏ-ՊԸՌԱՏ/ԿԻՍԸՏ-ՊԸՌԱՏ - 1. *ած.* Թերի, անավարտ: *Կըսըտ-պըռատ պինէրա հանզ ա անում Ջավէնը* (Ձ): 2. *գ.* Բացթողում, պակասություն, թերություն: *Կըսըտ-պըռատը շատ ա, կարում չըմ դուզըցընիմ* (Բ):

ԿԸՍԿԱԾԷԼ/ԿԸԾԿԱԾԷԼ *(գրբ. կասկածեմ)* - *չբ.* Կասկածել, երկբայել, տարակուսել: *Թաքավէրը կըսկածում չի, վէր վէզիրը կարօղ ա ըտի պէն անէ* (Ձ):

ԿԸՍԿԱՐԷՆՔ[1] - *տե՛ս* ՔԸՍԿԱՐԷՆՔ[1]:

ԿԸՍԿԷԼ - *տե՛ս* ԿԸՋԿԷԼ:

ԿԸՍԿԸԾԱԼ/ԿԸԾԿԸԾԱԼ *(գրբ. կսկծիմ)* - *չբ.* Կսկծալ, խոր վիշտ՝ ցավ զգալով՝ վշտանալ: *Մարը շատ ա կըսկըծամ, վէր տըղան քինամ ա կըռէվ* (Ձ):

ԿԸՍԿԸԾԱԼԻ/ԿԸԾԿԸԾԱԼԻ - *ած.* Կսկիծ պատճառող, վշտալի: *Քու կըսկըծալի խօսկէրքըտ իմ ջանըս կանալ ա* (Ձ):

ԿԸՍԿԸԾԱՆՔ[1]/ԿԸԾԿԸԾԱՆՔ[1] *(գրբ. կասկածանք)* - *տե՛ս* ԿԱՍԿԱԾ:

ԿԸՍԿԸԾԱՆՔ[2]/ԿԸԾԿԸԾԱՆՔ[2] - *տե՛ս* ԿԸՍԿԸԾՕՆ:

ԿԸՍԿԸԾԷԼԻ/ԿԸԾԿԸԾԷԼԻ *(գրբ. կասկածելի)* - *ած.* Կասկած ներշնչող՝ հարուցող, կասկածելի: *Կըսկըծէլի մարթ ա ինում էտ դէրվիշը, ըտրրա հըՀտէ էլ թաքավէրը հըրաման ա տամ, վէր փըռնին, կօխին տուրմանն* (Ձ):

ԿԸՍԿԸԾՑ(Ը)ՆԷԼ/ԿԸԾԿԸԾՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԿԸՍԿԸԾԱԼ-ի:

ԿԸՍԿԸԾՕՆ/ԿԸԾԿԸԾՕՆ - *գ.* Կսկիծ, կսկծալը: *Էտ կըսկըծօնը խըՀղճ կընգանը ըսպանից* (Ձ):

ԿԸՍԿԸԾՕՎՈՒՐ/ԿԸԾԿԸԾՕՎՈՒՐ *(գրբ. կասկածաւոր)* - 1. *տե՛ս* ԿԸՍԿԸԾԷԼԻ: 2. *տե՛ս* ԿԱՍԿԱՄ (1): *Շատ կըսկըծօվուր մարթ ա Յէփրէմը, ուրան խօնցը յըրա էլ ա կըսկածում* (Բ):

ԿԸՍԿԸԾՕՑ - *տե՛ս* ԿԸՍԿԸԾՕՆ:

ԿԸՍԿԸՎԷԼ - *տե՛ս* ԿԸՋԿԸՎԷԼ:

ԿԸՍԿԸՏՕՐ/ԿԸՑԿԸՏՕՐ *(գրբ. կցկտուր)* - *ած.* Անկապ, կցկտուր: *Կըսկըտօր պէնէր ա խօսում* (Բ):

ԿԸՍԿԻԾ/ԿԸԾԿԻԾ - *տե՛ս* ԿԸՍԿԸԾՕՆ:

ԿԸՍՆԱԿԷԼ - *նբ. տե՛ս* Կէս անել (1):

ԿԸՍՆԱԿ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸՍՆԱԿԷԼ-ի:

ԿԸՍՕԿ/ԿՈՒՍՕԿ *(ռուս. кусок)* - *տե՛ս* ԹԻՔԼԱ:

ԿԸՍՕՎԻ/ԿԻՍՕՎԻ - *տե՛ս* ԿԷՍՈՒ:

ԿԸՎԱՊԱՀ - *տե՛ս* ԿԸՎԸՊԱՀԷ:

ԿԸՎԱՏԱՐ - *գ.* Կով ունեցող, կովի տեր: *Ծունը կուտում ա, կըվըտարէրը մընամ ըն կըրակու մաչի* (Բ):

ԿԸՎԱՐԱԾ - *գ., ած.* Կովերի նախրապան՝ հովիվ: *Էս կըվարածը ուրուգունը կամ ա, տէսնում՝ հընգէրը էն ա պըրանված* (ՀԱԲ, 15, 104):

ԿԸՎԷՋՆԸ *(ռուս. гвоздь)* - *գ.* Փոքր մեխ՝ գամ: *Մին կըվէզն ա յօր օնում, ապուն նըկարը պատան տամ* (Ձ):

ԿԸՎԸՊԱՀԷ - *գ., ած.* 1. *տե՛ս* ԿԸՎԱՐԱԾ: 2. Կով պահող՝ խնամող (մարդ): *Կըվըպահէն քըշէրը կըվէրէն քըշտէն ա կէնում, վէր ծընէլիս քօմանգ անէ* (Ձ):

ԿԸՎԻՏ/ԿԻՎԻՏ *(ռուս. квит)* - *ած., մ.* Իրար նկատմամբ այլեւս որեւէ պարտք՝ պահանջ չունեցող՝ չունենալով: *Պուդին ասմա.- Մունք կըվիտ ընք. յըՀս ասալ ըմ՝ տուք ըք ուրխացալ, տուք ածալ ըք՝ յըՀս ըմ ուրխացալ* (Ձ):

ԿԸՎԿԸՎԱԼ/ԿՈՒՎԿՈՒՎԱԼ - *չբ.* 1. *տե՛ս* ԿԸՂԿԸՂԱԼ: 2. *փխբ.* Ուրախ՝ առույգ լինել: *Սիրան աքէրը էն ա կըվկըվալիս. թոռնէրը մընացալ ըն, քօմանգ ըն անում* (Բ): 3. *փխբ.* Արբունքի հասնելով՝ ամուսնանալու նշաններ ցույց տալ: *Շէնին ջիհիլնէն կըվկըվամ ըն, ախճիգ չի կա, թա փըսակվին* (Բ):

ԿԸՎԿԸՎՑ(Ը)ՆԷԼ/ԿՈՒՎԿՈՒՎՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՎԿԸՎԱԼ:

ԿԸՎԿԸՎՕՆ/ԿՈՒՎԿՈՒՎՕՆ - *տե՛ս* ԿԸՂԿԸՂՕՆ:

- Կըվկըվօնը յըՀր ինիլ - *տե՛ս* ԿԸՎԿԸՎԱԼ (2, 3):

ԿԸՎԿԸՎՕՑ/ԿՈՒՎԿՈՒՎՕՑ - *տե՛ս* ԿԸՎԿԸՎՕՆ:

ԿԸՏԱԿ/ԳԸՂԱԿ *(գրբ. կտակ)* - *տե՛ս* ՎԸՍՅԱԹ:

ԿԸՏԱԿԷԼ/ԳԸՂԱԿԷԼ - *նբ. տե՛ս* Վըսյաթ անէլ:

ԿԸՏԱՂԷԼ *(գրբ. կատաղիմ)* - *չբ.* 1. Կատաղախտով հիվանդանալ, կատաղի դառնալ: *Չօբանը, ճարը կըտըրած, էտ կըտաղած շանը ըսպանում ա* (Ձ): 2. *փխբ.* Սաստիկ բարկանալ, զայրանալ, գազազել: *Ըտըրանք կըտաղում ըն, պըռավէն ըսպանում, մին թումբու յըրա թաղում* (ԱԱ, 26): 3. *փխբ.* Անսովոր ուժով եւ չափով արտահայտվել: *Կարունքը, վէր շատ թօռ ա կամ, Թանթառ կըՀտը կըտաղում ա* (Բ):

ԿԸՏԱՎ *(գրբ. կտաւ)* - *գ.* 1. Կտավատի՝ վուշի բույսից ստացվող թելը: *Հուռին կըտավ ա ինք օնում, մին մըծ շալ կօրծում* (Ձ): 2. Այդ թելից կամ բամբակաթելից գործած կտոր: *Կըտավ ըն ինք օնում, շօրէր կարում, էտ յիթիմնէրէն կըՀց տամ* (Ձ):

- Կըտավ կօրծել - Ծանր աշխատանք կատարել: *Խէ նըղացած ըՀս, կըտավ ըՀս կօրծալ* (Բ):

ԿԸՏԷՏ *(գրբ. կտիտ (ծիրտ, քակոր))* - *գ.* Ոչխարի՝ այծի՝ նապաստակի եւն աղբ, կտտոր: *Էտ օյինբազը էծին կըտէտը չուրըցընում ա, աղում, շինացուց խանփանում, թա մուկնու ճար ա* (Ձ): 2. *փխբ.* Շատ մանր, փոքրիկ (պտուղ, երեխա եւն): *Արաշտ ա, տանանը հանց ա կըտէտ* (Բ):

ԿԸՏԷՐ - *տե՛ս* ԿԸՏՕՐ[1]:

ԿԸՏԸՋ/ԿՈՒՏՈՒՋ - *ած.* Չափազանց փոքր, փոքրիկ: *Մին քանի ամըՀս վըՀր անց ա կէնում, խընձօրը մին կըտըզ տըղա յա տըՀռնըմ* (ՀԺՀ, VII, 11):

ԿԸՏԸՋԱՆԱԼ/ԿՈՒՏՈՒՋԱՆԱԼ - *չբ.* Ծավալով՝ չափով չափազանց փոքր դառնալ: *Դէրվիշը մընակավը վէր թըխում ա, էտ տըղան կըտըզանում ա, տըՀռնում մին սիսըՀռու մընչանք* (Ձ):

ԿԸՏԸՋԸՀՆԷ/ԿՈՒՏՈՒՋԸՀՆԷ - *տե՛ս* ԿԸՏԸՏԸՀՆԷ:

ԿԸՏԸՋՑ(Ը)ՆԷԼ/ԿՈՒՏՈՒՋՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ԿԸՏԸՋԱՆԱԼ-ի:

ԿԸՏԸԹԱՆԲԻ - *տե՛ս* ԹԱՆԲԻ:

ԿԸՏԸՂՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. կատաղեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ԿԸՏԱՂԷԼ-ի:

ԿԸՏԸՂՕԹՈՒՆ - *գ.* 1. Կատաղի լինելը, կատաղախտ: *Հօրը կըտըղօթունը էտ տըղէն հըՀտէ մըծ դանդ ա տըՀռնում* (Ձ): 2. Սաստիկ բարկություն, զայրույթ: *Կընէգը վէր ջօղաբ ա տամ, Մըրքըրէն կըտըղօթունը փըռնում ա* (Բ):

ԿԸՏԸՎՀԱՏ *(գրբ. կտաւահատ)* - *գ.* Կտավատազգիների ընտանիքին պատկանող յուղատու եւ թելատու բույս, ինչպես նաեւ այդ բույսի հատիկը: *Առաջ Ղարաբաղ կըտըվհատ շատ ըն իլալ բիջիրիս* (Բ):

ԿԸՏԸՎՀՕՈՒԷ - *գ.* Ուռենու մին տեսակը, որ բողբոջում է վաղ գարնանը: *Կըտըվիոռէն դաշանգ ծառ ա* (Բ):

ԿԸՏԸՏԱՎԸՏ - *գ.* Կտիտի հոտ: *Ի՛ծանածը վէր նի յա մընէս հըրսընքատօնը, կըտըտավըտը յըր ա ինիս* (Ձ):

ԿԸՏԸՏԷԼ - *չբ.* Արտաթորել, աղբել (ոչխարի, այծի, նապաստակի եւն մասին): *Էծէրը նի յըն տըռնում Մաքադաթէն տօնը, կըտըտում* (Բ):

ԿԸՏԸՏԸՆԷ - *գ.* Մանր պտուղներ տվող ծառ (ընկուզենի, խնձորենի, տանձենի եւն): *Կըտըտընէն շատ բար ա տամ* (Բ):

ԿԸՏԸՏՕՐ - *տե՛ս* ԿԸՏԷՏ:

ԿԸՏԸՐԱԾ/ԿԸՏՐԱԾ - *ծծկ. տե՛ս* ՂԸՌԱՆ:

ԿԸՏԸՐԱԿԱԼ/ԿԸՏՐԱԿԱԼ - *գ.* Կտուրի եզրերին դրվող քար: *Մին կըտըրակալ ա ըղնում ըտըրա կըլխէն, ճըպաղում ա, վէր ըղնում* (Ձ):

ԿԸՏԸՐԱԿԱՆ/ԿԸՏՐԱԿԱՆ - *ած.* Կտրուկ, առարկություն չընդունող, վճռական: *Տըղան վէր ըտի կըտրական պադասխանում ա, թաքավէրը էլ պէն չի խօսում* (Ձ):

ԿԸՏԸՐԱՔԱՐ/ԿԸՏՐԱՔԱՐ - *գ.* Հողածածկ կտուրը հարթելու՝ հողը պնդացնելու գլանաձեւ ծանր քար: *Ամմէն տարէ կըտըրըքարավը կըտօրը պինդըցընում ըն, վէր թօռը, ծունը նի չի ծրծէ* (Ձ):

ԿԸՏԸՐԷԼ/ԿԸՏՐԷԼ *(գրբ. կտրեմ)* - *նբ.* 1. Սուր գործիքով հատել: *Ցակատը յօր ա ունէս, էտ ծառէն հաստ ճէղնը կըտըրէս* (Ձ): 2. Կտրող՝ սուր բանով վիրավորել: *Խօխան տինակավը խաղ ըրավ, մաննը կըտըրից* (Բ): 3. Մակերեւույթը ճեղքել՝ փորել՝ ակոսել: *Բըխճումը մին փօս ա կըտրում, նի մընում մաչը...* (ՀԱԲ, 15, 98): 4. Խուզել, կարճացնել, չափը փոքրացնել: *Մազէրը կըտըրում ա, կ'իշանում* (Ձ): 5. Պատրաստել, սարքել (դրամ եւն): *Մին թաքավը՛ր ուստէն ծէն ա տամ, թա.- Քէզ մին քըշէր ժամանակ ըմ տամ, պիտի հանրուր մէխ կըտրէս...* (ՀԺՀ, VII, 199): 6. Պակաս տալ, քչացնել, զրկել: *Համօթ չընի հըրցընէլը, փօղըս խէ կըտրում ը՞ս* (ՆԱԲ, III, 163): 7. Անդամատել, վիրահատել: *Ռուխտուրնէն տըռնում ըն վէր էրանուշ ճար չի կա, պիրանում ըն ըտըրա վըռնը կըտրում* (Ձ): 8. Դադարեցնել, ընդհատել, վերջացնել: *Մարթը ասմա.- Ըտըրա սանը կըտըրէ, թա չէ փիս ա ինանկան* (Ձ): 9. Ձգելով խզել՝ պոկել: *Հացան պատառ կըտըրում ա, տամ պըռավէն* (Ձ): 10. Բաժանել, անջրպետել: *Տա տանը մաչան կըտրում ա, էրկու օթաղ շինում...* (ՀԺՀ, VII, 378): 11. Անջատել, առանձնացնել: *Ղարաբաղը Հայաստանան կըտըրողը վէչ մըխիթարվի* (Ձ): 12. Խոսակցին միջամտելով՝ իր խոսքն ասել: *Հու օգում ար խօսէ, ինքը կըտըրում ար, մին ախմաղ պէն ասում* (Ձ): 13. Կողոպտել, թալանել: *Կօղէրը քըշէրը նի յըն մընում Պըլը-Պուդուն տօնը, կըտըրում* (Ձ): 14. Շրջապատել, պատել, բոլորել, շրջափակել: *Տանուս ա կ'ամ, տըռնում՝ թօրքէրը հուրանց բանդը կըտըրած* (Ձ): 15. Անցնել, գնալ, հասնել: *Ծի, հինչ ծի՞, մին ժամումը շէնան սարը կըտըրում ա* (Ձ): 16. Խաղաթղթի կապուկը կիսել: *Կարտը կըտրում ա, ըսքըսում ըն խաղ անէլը* (Ձ): 17. Խաղաթղթում հակառակորդի խաղաթուղթը ավելի մեծով ծածկել՝ տանել: *Կարօլ'ավը կըտըրում ա, յօր օնում* (Բ): 18. *փխբ.* Հեռացնել, շեղել: *Սաղ հըրսընքէն վախտը թամադան աշկը կըտըրում չար էտ կընգանը անա* (Ձ): *չբ.* 19. Դադարել, վերջանալ, վերանալ: *Թօռը կըտըրում ա, կընանէքը էլիա քինամ ըն բուստընէն* (Բ): 20. Շաղվել, փսորվել: *Կաթնը կըտըրալ ա, հանլբաթայան լ'ավ չի մէրալ* (Բ): 21. Դառնալ, վերածվել մի բանի (գործածվում է հարադրությունների մեջ): *Քօթանկը էրվում ա, պօղ կըտըրում* (Ձ): 22. Հատվել, խզվել, պոկվել: *Քանդիրը փըթած ա ինում, կըտըրում ա* (Ձ):

- Կըտըրած հօռ - Անպիտանի, անգործածելի: *Հանը ասմա.- Էտ փըթած չաթուն պէրալ ըս հինչ ա՞նիս, էտ կըտըրած հօռ ա* (Ձ):

- Կըտըրած ղէյնը չանժի - Անարժեք է, ոչինչ է: *Հանը ասմա.- Մըհէնգանց տէնը քու ըշխադած փուլըտ ինձ՛տէ կըտըրած ղէյնը չանժի* (Ձ):

ԿԸՏԸՐԷԼ-ԸՆՑԸՆԷԼ/ԿԸՏՐԷԼ-ԸՆՑՆԷԼ - Որոշ տարածություն անցնել: *Վէր մին խըլլան տըղ կըտըրում ըն, ընցընում, փուշմանում ըն, վէր հուրանց քըվորը թօղալ ըն մինակ* (Ձ):

ԿԸՏԸՐՄԱՉԻ - *տե՛ս* ԱՇԿԱՐ(Ա) (1):

ԿԸՏԸՐՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԿԸՏԸՐԷԼ-ի: 2. *չբ.* Մեռնել, վերանալ (գործածվում է անեծքներում կամ մտերմաբար): *Արչը թա.- Կըտըրվէ՛ս տու, թա վար օժըտ պատէ, սաղ մարթ էլ կօտէս, ասլան էլ* (ԱԱռ, 49):

ԿԸՏԸՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* 1. Դադարեցնել, վերջ տալ: *Էտ վըխտանց էլ էտ հըրէվանը կըտըրցընէս ա ըտըրանց տօն քինիլը* (Ձ): 2. Պայման դնել, պայմանադրել: *Օրավ առաչ Ծիլկանը ախպօրցը կըտըրցըրած ա ընում, վէր վէչ մինը ուշափէն պադասխանը տա վուչ, հուրանն անայը կըման* (ՆԱԲ, 24):

ԿԸՏԸՐՓՈՒՏԻ - *ած.* Կտուրին պարապ-սարապ կանգնող: *Կընէգը ասմա.- Նէրակ ինձ տըված, վէր կըտըրփուստի Ջըհանգիրը բիդի իմ խընամէս տըռնա* (Ձ):

ԿԸՏԸՐՕԿ/ԿԸՏՐՕԿ - *տե՛ս* ԿԸՏԸՐԱԿԱՆ:

ԿԸՏԸՐՕՂ-ԿԱՊՕՂ/ԿԸՏՐՕՂ-ԿԱՊՕՂ - *ած.* Գործիմաց, հմուտ (արհեստավորի մասին): *Կըտըրօղ-կապօղ ուստա յա խուդանը* (Բ):

ԿԸՏԸՐՕՆ/ԿԸՏՐՕՆ *(գրբ. կտրոն (կտրած կտոր)* - *գ.* 1. Բույսից կտրած ոստ, որ տնկում են կամ պատվաստում: *Խաղվէն կըտըրօննէն տինանում ըն ճիրանումը, վէր էքսը տընգօտին* (Ձ): 2. Հնձած արտում մնացած ծղոտ: *Կըվէրը նի յըն տըռաս հընձած արտը, կըտըրօն ուտէս* (Բ): 3. Գորգը գործելուց եւ դազգահի վրայից կտրելուց հետո մնացած թելերի շարքը: *Գանբան կըտրում ըն, կըտրօկը տէն ածում* (Բ):

ԿԸՏԻ-ԿԸՏԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Կըտի-կըտի անէլ - Մեծամտել, գոռոզամտել: *Հանքվին տակէն պատառ յըէղ կա, կըտի-կըտի յա անում* (ԱԲԲ, 55):

ԿԸՏԼԻԼՏԱՑՈՒ - *գ., ած.* Կոտլետի համար նախատեսված (միս): *Մէսը կըտօրում ա, կըտլիտացուն ղըրաղ տինում* (Ձ):

ԿԸՏ-ԿԸՏ - *տե՛ս* ՏԸԿ-ՏԸԿ:

ԿԸՏԿԸՏԱԼ - *տե՛ս* ՏԸԿՏԸԿԱԼ:

ԿԸՏԿԸՏԱԼԻ - *տե՛ս* ՏԸԿՏԸԿԱԼԻ:

ԿԸՏԿԸՏԷԼ - *չբ.* Խիստ զղջալ: *Հանը ասում ա.- Տու կըկըտկըտիս, թա մըհէնգանց տէնը ինձանա մին կապէկ ըստանաս* (Ձ):

ԿԸՏԿԸՏՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸԿՏԸԿՑ(Ը)ՆԷԼ:

ԿԸՏԿԸՏՕՆ - *տե՛ս* ՏԸԿՏԸԿՕՆ:

ԿԸՏԿԸՏՕՑ - *տե՛ս* ՏԸԿՏԸԿՕՑ:

ԿԸՏԿՕՏԷԼ/ԿՈՒՏԿՕՏԷԼ - *նբ.* 1. Կտուցով խփել՝ հարվածել, կտցահարել: *Մին քանի օրանը յէտը էլ էն մընացած հավէրին ա կըտկօտէլավ ըսպանըմ* (ՀԺՀ, V, 458): 2. *փխբ.* Նեղել, չարչարել, խոսքով խայթել: *Խօրթ մարը ըտըրանց շատ ար կըտկօտում* (Ձ):

ԿԸՏԿՕՏՎԷԼ/ԿՈՒՏԿՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿՕՏԿՕՏԷԼ-ի:

ԿԸՏՎԱԽՕՏ - *գ.* Կատվախոտազգիների ընտանիքին պատկանող խոտաբույս՝ դեղին ծաղիկներով: *Էծէրը կըտվախօտ շատ ըն սիրում* (Բ):

ԿԸՏՎԱՔԱՐ - *գ.* Պինդ քարի տեսակ: *Կըտվաքարը պէնդ քար ա* (Ձ):

ԿԸՏՎԱՔՕՆ - *գ.* 1. Կեղծ քուն, կատվի նման քնած ձեւացնելը: *Ըտըրա կըտվաքօնը լօխճին կըտըղցընէս ա* (Ձ): 2. *փխբ.* Կարճատեւ քուն, կեղծ քուն: *Ապան ասմա.- Էս քօն ինիլ չար, էս կըտվաքօն ար* (Բ):

- Կըտվաքօն տալ - 1. Կատվի նման քնած ձեւանալ: *Մարթը կըլՕխ ա ըղնում, վէր կընէգ'ը կըտվաքօն ա տըվալ* (Ձ): 2. Թեթեւակի՝ կարճ ժամանակով քնել: *Հաց ըն օտում, պատառ կըտվաքօն տամ, էլիա կօրծը ըսքըսում* (Ձ):

ԿԸՏՎԸԱՇԿ - *տե՛ս* ԿԸՏՎԸ^աՆԷ:

ԿԸՏՎԸ^աՆԷ - *գ.* Մոխրագույն փոքր, կլոր հատիկներով գինու խաղողի տեսակ: *Կըտվը^անէն յը^ատէ յա հըսնում* (Բ):

ԿԸՏՎԸԼԸՎԱ - *գ.* Քիչ ջրով երեսն արագ լվանալը: *Կըտվըլըվան Յէգօրէն խասյաթը ա* (Բ):

- Կըտվըլըվա անէլ/տալ - Քիչ ջրով երեսն արագ լվանալ: *Մին կ'ը^ավաթ ճ՚ուր ա յը^ար օնում, կըտվըլըվա անում, ք'ինամ* (Ձ):

ԿԸՏՎԸՄՕՐԷ - *գ.* Մորու նման կարմիր պտուղներով անտառային խոտաբույս, ինչպես նաեւ դրա պտուղները: *Կըտվըմօրէն անհամ ա ինՒ՚ում* (Բ): 2. *տե՛ս* ԻԾԸՄՕՐԷ[1]:

ԿԸՏՎՕԹՈՒՆ - *գ.* 1. Կատվի էությունը, կատվի արարք: *Կատվէն հիշկան թակիս, մին ա, կըտվօթունը մընանա քըցիլ չի* (Ձ): 2. *փխբ.* Կեղծավորություն, շողոքորթություն: *Կըտվօթունը ԹՒ՚մ՚ից ցը^աղէն տըված ա* (Բ):

ԿԸՏՏԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. տե՛ս* Չըրթմա թըխէլ:

ԿԸՏՐԱԾ - *տե՛ս* ԿԸՏԸՐԱԾ:

ԿԸՏՐԱԿԱԼ[1] - *տե՛ս* ԿԸՏԸՐԱԿԱԼ[1]:

ԿԸՏՐԱԿԱՆ - *տե՛ս* ԿԸՏԸՐԱԿԱՆ:

ԿԸՏՐԱՔԱՐ - *տե՛ս* ԿԸՏԸՐԱՔԱՐ:

ԿԸՏՐԷԼ - *տե՛ս* ԿԸՏԸՐԷԼ:

ԿԸՏՐԷԼ-ԸՆՑՆԷԼ - *տե՛ս* ԿԸՏԸՐԷԼ-ԸՆՑԸՆԷԼ:

ԿԸՏՐՕԿ - *տե՛ս* ԿԸՏԸՐՕԿ:

ԿԸՏՐՕՂ-ԿԱՊՕՂ - *տե՛ս* ԿԸՏԸՐՕՂ-ԿԱՊՕՂ:

ԿԸՏՐՕՆ - *տե՛ս* ԿԸՏԸՐՕՆ:

ԿԸՏՈՒՋԽԱՆԱ - *տե՛ս* ԿՈՒՏԸՋԽԱՆԱ:

ԿԸՏՈՒՐԱԿՎԷԼ - *տե՛ս* ԿՈՒՏԸՐԱԿՎԷԼ:

ԿԸՏՈՒՐԹԱԿԷ - *գ.* Կտուրի հողն ամրացնելու փայտե երկար կոթով գործիք: *Կըտուրթակավը թակում ըն, կըտօրը պինդըցընում* (Բ):

ԿԸՏՈՒՐ(Հ)ԱՏԷԼ - *տե՛ս* ԿՈՒՏԸՐ(Հ)ԱՏԷԼ:

ԿԸՏՈՒՐ(Հ)ԱՏՎԷԼ - *տե՛ս* ԿՈՒՏԸՐ(Հ)ԱՏՎԷԼ:

ԿԸՏՈՒՐՏԱՆՔ - *տե՛ս* ԿՈՒՏԸՐՏԱՆՔ:

ԿԸՏՈՒՐՏԸ^աՆԷ - *տե՛ս* ԿՈՒՏԸՐՏԸ^աՆԷ:

ԿԸՏՈՒՑԱՎՈՒՐ/ԿՈՒՏՈՒՑԱՎՈՒՐ *(գրբ. կտցաւոր)* - *ած.* Կտուց ունեցող: *Լօխ ղուշէրը էլ կըտուցավուր ըն* (Բ):

ԿԸՏՈՒՑԷԼ/ԿՈՒՏՈՒՑԻԼ *(գրբ. կըտցեմ)* - *նբ.* 1. Կտուցով բռնել՝ վերցնել: *Քըչէղակը էլ քարը կուտուցալ ա, քըցՒ՚ պըռավէն տըղէն կըլխէն, ըսպանալ* (ԱԱ, 69): 2. *տե՛ս* ԿԸՏԿՕՏԷԼ: 3. Ձվի մեջ եղած ճուտը, ներսից կտուցով խփելով, կեղեւը կոտրել: *Ա՚զին տը^ասնում ա, վէր թուխսըկանէն տակէ ծուվէնը լօխ էն ա կըտուցած՝ մինին անա կըման* (Ձ):

ԿԸՏՈՒՑՅԱՐԷԼ/ԿՈՒՏՈՒՑՅԱՐԷԼ - *տե՛ս* ԿԸՏԿՕՏԷԼ:

ԿԸՏՈՒՑՅԱՐՎԷԼ/ԿՈՒՏՈՒՑՅԱՐՎԻԼ - *տե՛ս* ԿԸՏԿՕՏՎԷԼ:

ԿԸՏՈՒՑՎԷԼ/ԿՈՒՏՈՒՑՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸՏՈՒՑԷԼ-ի:

ԿԸՏՕՂԷՆ - *տե՛ս* ՏԸԿՕՂԷՆ:

ԿԸՏՕՂՆԷ - *տե՛ս* ՏԸԿՕՂՆԷ:

ԿԸՏՕՂՆՕՏ - *տե՛ս* ՏԸԿՕՂՆՕՏ:

ԿԸՏՕՐ[1]/ԿԸՏԷՐ - *գ.* Շինության հողե հարթ ծածկ, տանիք: *Կըտրան վէրցակը լօք ա տամ, ըռաչին կանչում՝ ծուղրուղո՛ւ* (ՆԱԲ, 104):

- Կըտօր անէլ - Մեկի տունը հաճախակի գնալ-գալ: *Սէյինը հիրըվանէն տօնը կըտօր ա ըրալ* (Բ):

- Կըտօրը քար քըցիլ - Կողմնակի կերպով մեկի մասին աննպաստ բան ասել՝ ակնարկել: *Ըսկէսուրը վՒ՚ին հարթնանը կըտօրը քար ար քըցիս* (Ձ):

ԿԸՏՕՐ[2] - *տե՛ս* ԿՈՒՏՈՒՐ:

ԿԸՏՕՐ[3]/ԿՈՒՏՕՐ - *գ.* Գործվածք, կտորեղեն: *Պառավը կըտօրը ծՒ՚լՒ՚ում ա, տինՒ՚ում խըլը^աղէն տակէն, ք'ինամ* (Ձ):

ԿԸՏՕՐԱԾ/ԿՈՒՏՕՐԱԾ *(գրբ. կոտորած)* - 1. *գ.* Զանգվածային սպանություն, ջարդ, եղեռն, սպանդ: *Վէր Շահ Ըբասէն կըտօրածը ըսքըսալ ա, ըտահանք քօչՒ՚լ ըն, յը^ակալ Ղարաբաղ* (ԱԱ, 35): 2. *ած.* Կտրտած, կտոր-կտոր արած: *Կըտօրած մէսը ածում ըն ղըզդանը, տինՒ՚ում կըրակէն յըրա, Ի՚ուրՒ՚ք քօն ինՒ՚ում...* (Ձ):

ԿԸՏՕՐԷԼ/ԿՈՒՏՕՐԷԼ *(գրբ. կոտորեմ)* - *նբ.* 1. Զանգվածաբար սպանել՝ ջարդել՝ ոչնչացնել: *Լէնգ' Թէմուրը զօրքէն հըրաման ա տամ, վէր էտ շէնին ժըղուվուրթէն կըտօրին* (Ձ): 2. Մեծաքանակ մահացություն պատճառել: *Ազարը հըվէրէն կըտօրից* (Բ): 3. Կտրտել, կտոր-կտոր անել: *Էտ մարթը Ի՚ուրՒ՚ն տըղէն նըհէտ ըսպընէս ըն կընգանը, հարթնէն, կուտուրէս, նի տաս վը^ար...* (ԼՂԲ, 315): 4. Ուժասպառ անել, թուլացնել: *Էնքան ծըծըղցըրավ, մը^ազ կըտօրից* (Բ): 5. Զանգվածաբար հատել: *Ծըմակը կըտօրալ ըն* (Բ):

ԿԸՏՕՐԷ(Ն)Ճ - *տե՛ս* ԿԸՏՕՐԷ(Ն)Ջ:

ԿԸՏՕՐԷ(Ն)Ջ/ԿԸՏՕՐԷ(Ն)Ճ/ԿՈՒՏՕՐԷ(Ն)Ջ/ԿՈՒՏՕՐԷ(Ն)Ճ - *գ.* Ոչխարի դմակը՝ խոզի ճարպը հալեցնելուց հետո մնացած կտորները: *Խօզ'ին յը^աղը հՒ՚ալՒ՚ում ըն, կըտօրէջը պիժը^անում* (Բ):

ԿԸՏՕՐ-ԿԸՏՕՐ - *տե՛ս* ԿՈՒՏՈՒՐ-ԿՈՒՏՈՒՐ:

ԿԸՏՕՐՎԷԼ/ԿՈՒՏՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸՏՕՐԷԼ-ի:

ԿԸՏՕՐՎՈՒՍԿ/ԿՈՒՏՕՐՎՈՒՍԿ - *գ.* 1. *տե՛ս* ԿԸՏՕՐԱԾ(1): 2. Վարակիչ հիվանդությունների՝ աղետի հետեւանքով առաջացած զանգվածային մահացություն: *Խօզ'ին չուման ընգալ ա Ղարաբաղ, կըտօրվուսկը շատ ա* (Բ):

ԿԸՏՕՑ/ԿՈՒՏՕՑ *(գրբ. կտուց)* - *գ.* 1. Թռչունների կտուց: *Էտ վախտը տըղան տը^ասնում ա, վէր ըտըրանց անա մինը ցօրէնը կըտուցավը յօր ա օնում, էլիա տափը քըցում...* (ՀԺՀ, V, 173): 2. *փխբ. տե՛ս* ԴՒ՚ԻԼԴՒ՚Ի (1):

- Կըտօց անէլ - *տե՛ս* Կըտօցը սըրէլ:

- Կըտօցը սըրէլ - 1. Աշխուժանալ, ժրանալ: *Կ'արունքը վէր կ'ամ ա, չօբանը կըտօցը սըրում ա* (Բ): 2. Համարձակ պատասխաններ տալ, չքաշվել, չամաչել: *ՀՒ՚ալՒ՚ էրկու օր ընցալ չի, թՒ՚զզՒ՚ հարթնը ուժժէ կըտօցը սըրալ ա* (Բ):

- Կըտօցը սօր - 1. Ժիր, աշխույժ: *Կըտօցը սօր խօխա յա Կուկուն* (Բ): 2. Համարձակ պատասխաններ տվող, լեզվանի: *Կըտօցը սօր կընգանը մարթին օրը սը^ավ կինի* (Ձ):

- Կըտօց տալ - *տե՛ս* Չըրթմա թըխէլ:

ԿԸՏՕՑ-ԿԸՏՕՑ/ԿՈՒՏՕՑ-ԿՈՒՏՕՑ - *մ.* Հատ-հատ: *Մուշըհավը կըտօց-կըտօց յէրք ըսէլավ էն ա ընում մօշէն քօլէն տակէն քըթօթ ընէյիս* (ՆԱԲ, 69):

ԿԸՐԱԲԼԻ - *տե՛ս* ՂԸՐԱԲԼԻ:

ԿԸՐԱԼԻ - *ած.* Կիրը շատ խառնած: *Կըրալի ցը^ախավ տիրՒ՚ած պատը հՒ՚ՒՒ՚ր տարէ պարան չի կ'Ի՚ալ* (Ձ):

ԿԸՐԱԽՄԱԼ *(ռուս. крахмал)* - *գ.* Որոշ բույսերից ստացվող սպիտակ անհամ փոշի, օսլա: *Միհէնգ'վա կընանէք'ը առանց կըրախմալ լըվասկ չըն անում* (Բ):

- Կըրախմալ տալ - Օսլայել: *Սիպտըկը^աղանը լըվանում ա, կըրախմալ տամ* (Բ):

- Կըրախմալ տըված - Փափկասուն, փափկակյաց: *Կըրախմալ տըված հարթնը կարէլ չի կավ քըթէ* (Բ):

ԿԸՐԱԽՏԻՆ/ԿԱՐԱՆՏԻՆ *(ռուս. карантин, ֆր. quarantaine)* - *գ.* Վարակիչ

հիվանդությունների՝ համաճարակների տարածումը կանխելու նպատակով հիվանդների եւ նրանց հետ շփում ունեցած անձանց մեկուսացումը: *Կըրախտինին վախտը վէշ մինին թօղալ չըն՝նի մընէ շէնը* (Ձ):

- Կըրախտին անէլ/տինիլ - Արգելք դնել, արգելել: *Նախագան կըրախտին ա անում, թօղում չի վէշ մինը քինի բաղէրը* (Ձ):

ԿԸՐԱԿ *(գրբ. կրակ)* - *գ.* 1. Այրվող նյութի՝ առարկայի շիկացած լուսավորող գազերը, հուր, բոց, կրակ: *Փիչին կըրակը վէր հընդանրդվում ա, տօնը իլբիհանլմըս ցուրտում ա* (Բ): 2. Հրդեհ: *Հանը կըզնըված փողըն էլիա յօր ա օնում, շըպըրտում, քըցանում կըրակէն մէջը* (ՆԼՂԺԲ, 58): 3. Այրվող վառելանյութ, օջախ: *Տըղան յէշում ա, տըէսնում՝ կըրակէն մին զըէռ ղըզղան տիրանած, մաչին օխտը կանմաշ* (Ձ): 4. *տե՛ս* ՊՕՂ: 5. *փխբ.* Լուսավորություն, ճրագ: *Ծըրքէն կըրակը մուտըցընում ա, տըէսնում անրանն ախպէրըն ա, էն ա ըշտափած, ըտըէղ վէր ընգած* (Ձ): 6. *փխբ.* Դժբախտություն, փորձանք: *Վէզիրը գանդում ա, վէր ըտըէղ քինանլը կըրակ ա, ըտըէղ քինանողը յըէտ կամ չի* (Ձ): 7. *փխբ.* Դժվարություն, չարչարանք: *Ծըմըէռնը հէյվան պահէլը կըրակ ա* (Բ): 8. *ած. փխբ. տե՛ս* ԿԱԾ(5): *Հանը մին մէծ քըթանլ նի յա օնում, տընում պըրանումը, տէսնում՝ կըրակ* (ՆԱԲ, 126):

- Կըրակ անէլ - Կրակ՝խարույկ վառել: *Վէրչը էտ տըղան ըտէղ ծանկըն ա փըռնըմ, մին թանիրանվ ապրըմ* (ՀԺՀ, V, 189):

- Կըրակէն (յըրա) յըէղ ածէլ - Կրքերը բորբոքել, գրգռել, լարված հարաբերությունները սրել: *Ըտըրանք անրանր նըհըէտ կըռվում ըն, Ալզին էլ կըրակէն յըրա յըէղ ա ածում* (Ձ):

- Կըրակէն (յըրա) ճանր ածէլ - Կրքերը հանդարտեցնել, խաղաղեցնել: *Լավ ըսկէսուրը էն ա, վէր հարթնէրը կըռվէլիս կըրակէն յըրա ճանր ածէ, վէչ թա ինքըն էլ մին թիրանփան բիզ-բիզ անէ* (Բ):

- Կըրակէն նըհըէտ խաղ անէլ - Վտանգավոր քայլ կատարել, կյանքը վտանգի ենթարկել: *Հանը տըէսնում ա, վէր խօխան ցըկատավը չօփ ա տանշանում, ասմա.- Կըրակէն նըհըէտ խաղ մէլ անէլ, վըէննըտ կըտըրլական ըս* (Ձ):

- Կըրակէն փըչիլ - *տե՛ս* Կըրակէն (յըրա) յըէղ ածէլ:

- Կըրակէն քըցիս/օնիս՝ խընձըրնավըէտ չի կանլ - Շատ աղքատ՝ սնանկ՝ խղճուկ է:

- Կըրակէն քըցիս/օնիս՝վայ չի անէլ - Ցավին դիմացող՝քաջ՝անվախ է:

- Կըրակը առանց ծօխ չինիլ - *տե՛ս* Ծըմակը առանց կէզանն չինիլ:

- Կըրակը էրանծ տըէղըն ա էրանում - *տե՛ս* Կարկուտը թակած տըէղըն ա թակում:

- Կըրակը ըղնէլ - Փորձանքի՝ անելանելի դրության մեջ ընկնել: *Աստուծ ասալ ա.- Տուք ծէր խէլքան, ծէր չար լանզվան ըք կըրակըն ընգալ* (ԲՀԲ, 174):

- Կըրակը թիժ պահէլ - Հարցը մոռացության չտալ, հետեւողական լինել: *Ապան ասալ ա.- Կօրծը մընանատ քըցիս վէջ, կըրակը թիժ կըպահիս* (Բ):

- Կըրակը ծօցը ածէլ/ըղնէլ - *տե՛ս* Կըրակը ջանը ըղնէլ:

- Կըրակ ըղնէլ - Հրդեհվել: *Խըէղճ Իրսէմին տօնը կըրակ ա ընգալ, էրալ* (Բ):

- Կըրակը ջանը ըղնէլ/քըցիլ - Բուռն զգացումով համակվել, մտատանջվել: *Հինչ ա էտ ըխճըկանը տըէսալ ա, կըրակը ջանըն ա ընգալ* (Բ):

- Կըրակը անրանն քըթըվէրէն տակը քաշիլ - Սեփական օգուտի՝ շահի համար ջանալ: *Էս թըվումըս ամմէն մարթ կըրակը անրանն քըթըվէրէն տակըն ա քաշանում* (Բ):

- Կըրակը քըցիլ - Փորձանքի՝ անելանելի դրության մեջ գցել: *Տըղան անրանն էլ կըրակը քըցից, հօրըն էլ* (Ձ):

- Կըրակ թափէլ - *տե՛ս* Կըրակ վէր ածէլ:

- Կըրակ կըտըրէլ - 1. Շիկանալ: *Մաշան քըցանում ըն կըրակէն մաչը, կըրակ ա կըտըրում* (Ձ): 2. Ջայրույթից՝ բուռն զգացումից՝ հարբելուց եւն կարմրել՝ կարմրատակել: *Թաքավէրը ըտըէղ կըտաղում ա, կըրակ կըտըրում* (Ձ):

- Կըրակ վէր ածէլ - 1. Սաստիկ շոգ անել: *Ալըէվը կըրակ ա վէր ածում* (Բ): 2. Խիստ բարկանալ, զայրանալ: *Հանը էտ վէր տըսնաս ա, կըրակ ա վէր ըծէս* (Ձ): 3. Տանջել, չարչարել: *Էտ ախճիգը տընացուց յըրա կըրակ ա վէր ըծէս* (Բ):

- Կըրակ տալ - 1. Վառել, այրել: ... *Ըսպանալ ըն, մէյդէրը կըրակ տուվալ* (ԱԱ, 36): 2. Հրդեհել, հրդեհ գցել: *Մէլիքը կըտաղում ա, հըրամմայում, վէր էտ շէնին սաղ տընէրը կըրակ տան* (Ձ):

- Կըրակ տըէռնալ - 1. *տե՛ս* Կըրակ կըտըրէլ: 2. Ճիգ թափել, չարչարվել: *Օգում ըս կըրակ տըէռ, մին ա, առանց ճանր բաստան չի տըէռնում* (Բ): 3. Պատուհաս՝ փորձանք դառնալ: *Էտ տըղան հօրը-մօրը հըէտէ կըրակ ա տըէռալ* (Բ):

- Կըրակու թիքանա - Դյուրաբորբոք՝ պոռթկուն բնավորությամբ մարդ: *Ջէմքուճը տըէսնում ա, վէր փըէսան կըրակու թիքանա յա, սուս ա անում* (Ձ):

- Կըրակու կանլ - *տե՛ս* Կըրակը ըղնէլ:

- Կըրակու կանին - Շատ թանկ, արժեքը շատ բարձր: *Ալիրին փուրը էրկու մանէթ կէս ա տէռալ, պըրինձը, քանմանը կըրակու կանին տէռալ* (ՋՏ, Ա, 113):

- Կըրակու մաչ ըղնէլ - *տե՛ս* Կըրակը ըղնէլ:

- Կըրակու մաչի (ինիլ) - Փորձանքի՝ պատուհասի ենթարկված՝ անելանելի դրության մեջ ընկած (լինել): *Էն ըմ կըրակու մաչի, կարում չըմ, թա տօնըս շինիմ* (Բ):

- Կըրակու մաչ քըցիլ - *տե՛ս* Կըրակը քըցիլ:

- Կըրակու յըրա իփանծ - *հեգն.* Շատ տաք (թեյի՝կերակուրի մասին): *Էս չայը հիշկան ա՞ տաք, կըրակու յըրա իփանծ ա* (Բ):

- Կըրակու պատառ - *տե՛ս* Կըրակու թիքանա:

- Կըրակու պատիժ - *տե՛ս* ՊԱՏԻԺ-ԿԸՐԱԿ:

- Կըրակու պըտատան - *հեգն.* Վառարան: *Յէրէմը ժէժտանչուն ասմա.- Ո՞ւստա, հինչ տա՞մ, վէր ինձըէտէ մին կըրակու պըտատան կապիս* (Ձ):

- Կըրակ քըցիլ - *տե՛ս* Կըրակ տալ:

ԿԸՐԱԿՈՒՑ - *գ.* Հրազենից կրակելու ձայնը, կրակոց: *Հըռանցէ մին կըրակուց ա ըսկանում* (Ձ):

ԿԸՐԱՂԷՆՔ - *տե՛ս* ԿԸՐԱՂԷՆՔ:

ԿԸՐԱՃԻՒՐ *(գրբ. կրաջուր)* - *գ.* Հանգած կրով հագեցած ջրային լուծույթ: *Կըրաճանուրը ածում ա ծառէն տակը, ծառը չուրանում ա* (Ձ):

ԿԸՐԱՄԻՏ - *տե՛ս* ԿԻՐԱՄԻՏ:

ԿԸՐԱՆԴԱՇ *(ռուս. карандаш)* - *տե՛ս* ՄԱՏԻՏ:

ԿԸՐԱՍԿԱ *(ռուս. краска)* - *գ.* Ներկ: *Առաչ ա իլանլ, վէր կըրասկա չի իլանլ, միհէնգ էն ա մաղազինէն լիգը* (Բ):

- Կըրասկա տալ - 1. Ներկ քսել, ներկել: *Տըռնէրը կըրասկա յա տամ* (Բ): 2. *փխբ.* Կեղծել, արտաքին ձեւով բուն էությունը թաքցնել: *Մարյան աքէրը կըրասկա յա տամ, հարթնանը փօչէրը պէց չի անում* (Ձ):

ԿԸՐԱՍԿՈՒՏ - *ած.* Ներկով կեղտոտված, ներկոտ: *Խօխան կըրասկուտ փանը յօր ա օնում, քըսում շօրէրը* (Ձ):

- Կըրասկուտ անէլ - Ներկով կեղտոտել, ներկոտել: *Կըրասկէն ամանը պարան ա տամ, շօրէրը կըրասկուտ անում* (Բ):

- Կըրասկուտ ինիլ/տըէռնալ - Ներկով կեղտոտվել, ներկոտվել: *Շօրէրը նի*

յա կ՛ամ կըրասկա տըված մըղակէն, կըրասկուտ տը՛ռնում (Բ):

ԿԸՐԱՎԱԹ - *տե՛ս* ԿԸՐԸՎԱԹ:

ԿԸՐԱՎԷՐ - *գ.* Կրաքարը այրելու հոր, կրահոր: *Ախմախ թաքավէրը հըվաքըմ ա էտ քըղաքէն ուստա-փա՛հլա՛ն, տանըմ մին դա՛ռզ տէղ, մին մէծ կըրավէր շինըմ...* (ՀԺՀ, VI, 187):

ԿԸՐԱՎՈՒՐ - *տե՛ս* ԿԸՐՕՎԻ:

ԿԸՐԱՑԸ՛Խ - *գ.* Կրախառն շաղախ՝ ցեխ: *... Ցըցէռնակնէն յըրա յըն տա՛ռալ, կըրացէխը կըրալ, տարալ տիյէր պա՛ռնէր շինալ* (ԱԱ, 52):

ԿԸՐԱՓԻՆԿԱ - *տե՛ս* ԳԸՐԱՓԻՆԿԱ:

ԿԸՐԱՔԱՐ *(գրբ. կրաքար)* - *գ.* Կրային բաղադրությամբ նստվածքային ապար, որից կիր են ստանում: *Կըրաքարը ածում ըն կըրավէրը, էրո՛ւմ, կէր ըստանում* (Բ):

ԿԸՐԷԼ *(գրբ. կրեմ)* - *նբ.* 1. Իր վրա դնելով կամ փոխադրական որեւէ միջոցով բեռներ փոխադրել մի տեղից մի ուրիշ տեղ: *Մին օրումը շինըցէք՛ շըլակավ, էշավ, ծիյավ սաղ կ՛ա՛ռին կըրում ըն կըլխոզէն պահէստը* (Ձ): 2. Ապօրինի կերպով տանել՝ տեղափոխել: *Խուզ՛ապահը խուզ՛էրէն կօրմը քըշէրը կըրում ա ո՛ւրա՛նց կ՛ումը* (Ձ): 3. Հաղթել, տանել, շահել (խաղը, մրցությունը): *Հիբը կարտ ըն խաղ անում, Հա՛մբա՛թը կըրում ա* (Ձ):

ԿԸՐԷՄՊ(Ը)ԼԻՆ *(ռուս. кримплен)* - *գ.* Սինթետիկ գործվածք, ինչպես նաեւ այդ գործվածքից կարված շոր: *Միհէնգ՛ էլ կըրէմպըլին չըն ծախում* (Բ):

ԿԸՐԸԺՈՒՎԱ/ԿՈՒՐՈՒԺՈՒՎԱ/ԿԸՐԺՈՒՎԱ/ԿՈՒՐԺՈՒՎԱ *(ռուս. кружева)* - *գ.* Ժանյակ: *Կըրուժուվա յա ինք՛ օնում, ըխճըկանը դըրյին թըվքէրէն յըրա կարում* (Ձ):

ԿԸՐԸԼԱՑՈՒԿ - *տե՛ս* ԿԱՐՕՂ[1]:

ԿԸՐԸԿԱՄԱՐ - *տե՛ս* ԱՆԹԷՂ(ՆԸ) (2):

ԿԸՐԸԿԱՊԱՇՏ *(գրբ. կրակապաշտ)* - *ած.* 1. Կրակը որպես աստվածություն պաշտող: *Լ՛ավ ա, վէր հայէրը կըրըկապաշտ չըն տը՛ռալ* (Ձ): 2. *փխբ.* Մեծ՝ ուժեղ կրակ պահանջող (եփվող բաների մասին): *Խաշը կըրըկապաշտ խորա՛ղ՛ ա* (Բ):

ԿԸՐԸԿԱՏԸ՛Ղ - *գ.* Կրակ վառելու՝ վառած տեղ: *Կըրըկատը՛ղը կըրակ ըն անում, մըտաղէն ղըզղընէք՛ը տինում յըրան* (Ձ):

ԿԸՐԸԿԸՐԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Կըրըկըրէ անել - Շատ բան եւ ապրագ-ապրագ կրել՝ տեղափոխել՝ փոխադրել: *Քըշէրը կ՛օղէրը պըհէստին ցօրէնը կըրըկըրէ յըն անում ո՛ւրա՛նց տընէրը* (Ձ):

ԿԸՐԸԿԹԱՓԷ - *գ.* Հնաոճ հրացանի կայծքար: *Միհէնգ՛վա թըվա՛նգ՛նէն կըրըկթափէ չօնին* (Բ):

ԿԸՐԸԿԽԱՌ(Ն)Է - *գ.* Կեռ ծայրով երկաթե ձող, որով խառնում են կրակը՝ թեժացնելու համար: *Կըրըկխառնէն յը՛ր ա օնում, կըրակը խառնում* (Ձ):

ԿԸՐԸԿՈՒՓ - *տե՛ս* ԿԸՐԿՈՒՓ:

ԿԸՐԸՀԱՆ - *ած.* Կարերը քանդված, պատռոտված: *Մին կըրըհան պէնջակ ա կ՛ը՛ցալ, յը՛կալ բադարա՛նք՛, հըմա՛նչո՛ւմ էլ չի* (Բ):

- Կըրըհան անէլ - Կարերը քանդել, պատռոտել: *Շալվարը էնքան լըվացալ ա, կըրըհան ա ըրալ* (Բ):

- Կըրըհան ինիլ/տը՛ռնալ - Կարերը քանդվել, պատռոտվել: *Հա՛լա՛ շէնան տո՛ւս կ՛ալու՝ Պատուն տըրըխնէն կըրըհան ա ընո՛ւմ* (Ձ):

ԿԸՐԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ԿԱՐՕՂՈՒԹՈ՛ՒՆ:

ԿԸՐԸՉՕԿ/ԿՈՒՐՈՒՉՕԿ *(ռուս. крючок)* - *գ.* Կեռ, որ, մտնելով օղի մեջ, կցում է մի իրը մյուսին, ճարմանդ: *Մըղակը կապում ա, մընանա ըղնում ա, թա կըրըչօկը քըցի* (Ձ):

ԿԸՐԸՍԱՔԱՐ - *գ.* 1. Խոր փորվածք ունեցող քար, որի մեջ հագցնում՝ կանգնեցնում են կարասը: *Կըրըսաքարը տինո՛ւմ ըն կըրասէն տակէն, հանցու կարասը դո՛ռզ վը՛ենը կէնա* (Ձ): 2. Տափակ կլորավուն քար, որ դնում են կարասի բերանին: *Կարասը կ՛ինավ լըցնում ըն, կըրըսաքարը տինում ըռըխէն, ցը՛խում* (Բ):

ԿԸՐԸՎԱԹ/ԿԸՐԱՎԱԹ/ԿԸՐՎԱԹ/ԿԱՐԱՎԱԹ *(ռուս. кровать)* - *գ.* Մահճակալ: *Կամ ըն տը՛սնըմ՝ օշը տարած, կարավաթին յէր ընգած* (ՀԺՀ, V, 48):

- Կըրըվաթ քըշիլ - Ոչինչ չանել, ամբողջ օրը տանը հանգստանալ: *Մարը ասմա.- Բա՛լա, էտ վէր տու սաղ օրը, տանը թէք՛ ընգած, կըրըվաթ ըս քըշո՛ւմ, քու ք՛ո՛ւրփէք՛ըտ հու վա՛ պըհըլական* (Ձ):

ԿԸՐԹԱՆՔ - *տե՛ս* ԿԸՌԹԱՆՔ:

ԿԸՐԹԱՑԱԾ/ԿԸՐԹԷՑԱԾ - *տե՛ս* ԿԸՐԹԷՎՈՒՐ:

ԿԸՐԹԱՑՄՈՒՆՔ - *գ.* Կարդացողություն, ընթերցանություն: *Կըրթացմունքը ըտըրանց տանան անպակաս ար* (Ձ):

ԿԸՐԹԱՑՕՂ/ԿԸՐԹԷՑՕՂ - 1. *տե՛ս* ԿԸՐԹԷՎՈՒՐ: 2. *գ.* Որեւէ կարգի ուսումնական հաստատությունում ուսանող, սովորող: *Էտ տըղան հա՛լա՛ն կըրթացօղ ա, կարում չի հօրը ք՛ը՛մա՛նգ՛ անէ* (Բ):

ԿԸՐԹԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹԷԼ:

ԿԸՐԹԷՉ - *տե՛ս* ԿԸՌԹԷՉ:

ԿԸՐԹԷՎՈՒՐ - *ած.* Շատ բան կարդացած, ուսյալ, գիտելիքներով հարուստ: *Կըրթէվուր մարթ ա իլա՛լ Հասան Ջալալյանը* (Ձ):

ԿԸՐԹԷՑԱԾ - *տե՛ս* ԿԸՐԹԷՎՈՒՐ:

ԿԸՐԹԷՑՕՂ - *տե՛ս* ԿԸՐԹԱՑՕՂ:

ԿԸՐԹԸԼԱՏԸ՛Ղ - *գ.* Ուսումնական հաստատություն: *Միհէնգ՛ ամմէն շէնում էլ կըրթըլատը՛ղ կա* (Բ):

ԿԸՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - *պբ.* ԿԱՐԹԻԼ-ի:

ԿԸՐԹ-ԿԸՐԹ - *տե՛ս* ԿԸՌԹ-ԿԸՌԹ:

ԿԸՐԹԿԸՐԹԱԼ - *տե՛ս* ԿԸՌԹԿԸՌԹԱԼ:

ԿԸՐԹԿԸՐԹԱՆ - *տե՛ս* ԿԸՌԹԿԸՌԹԱՆ:

ԿԸՐԹԿԸՐԹՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹԿԸՌԹՑ(Ը)ՆԷԼ:

ԿԸՐԹԿԸՐԹՕՆ - *տե՛ս* ԿԸՌԹԿԸՌԹՕՆ:

ԿԸՐԹԿԸՐԹՕՑ - *տե՛ս* ԿԸՌԹԿԸՌԹՕՑ:

ԿԸՐԹՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹՆԷԼ:

ԿԸՐԹՆԸԼԱՏԸ՛Ղ - *տե՛ս* ԿԸՌԹՆԸԼԱՏԸ՛Ղ:

ԿԸՐԹՎԱՍԿ - *տե՛ս* ԿԸՌԹՎԱՍԿ:

ԿԸՐԹՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹՕՏԷԼ:

ԿԸՐԺՈՒՎԱ - *տե՛ս* ԿԸՐԸԺՈՒՎԱ:

ԿԸՐԻՋԻՍ(Տ) *(ռուս. кризис, հուն. krisis)* - *գ.* Ճգնաժամ: *Միհէնգ՛ կըրիզիստ ա, վէչ մինը կարում չի կօրծ քըթէնա* (Ձ):

ԿԸՐԻՇ *(ռուս. крыша)* - *գ.* Տանիք, շինության վրայի ծածկ: *Քամէ ըրավ, տանը կըրիշը քըշից* (Բ):

ԿԸՐԻՇԿԱ *(ռուս. крышка)* - *տե՛ս* ԸՌԸԽԿԱԼԻ:

ԿԸՐՇԷԼ/ԿԸՌՇԷԼ/ԿՕՐՇԻԼ/ԿՕՌՇԻԼ *(գրբ. կրծեմ)* - *նբ.* Առջեւի ատամներով ճզմել՝ ծամել՝ մաշել: *Էտ տըղան ճա՛շը օտէլանը յէտը ըսկըսըմ ա էս վը՛ենկուռը կօռշիլը* (ՀԺՀ, V, 200):

ԿԸՐՇԿՕՐՇԷԼ/ԿԸՌՇԿՕՌՇԷԼ - *նբ.* Հաճախ՝ շատ անգամ զանազան տեղերից կրծել, կրծոտել: *Կ՛ո՛ւլը կէռքավը կըրշկօրշում ա, ծառը տական պարան տամ, ո՛ւրա՛ն կըլխէն վը՛ր քըցո՛ւմ* (ՀԺՀ, VII, 221):

ԿԸՐՇԿՕՐՇՎԷԼ/ԿԸՌՇԿՕՌՇՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿԸՐՇԿՕՐՇԷԼ-ի:

ԿԸՐՇԿՕՐՇՈՒՑ/ԿԸՌՇԿՕՌՇՈՒՑ - *գ.* Կրծոտելը, կրծոտվելը: *Մուկնէրէն կըրշկօրշուցը չըվալ էլ կըշակէ, ամբար էլ* (Բ):

ԿԸՐՇՕՏԷԼ/ԿԸՌՇՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸՐՇԿՕՐՇԷԼ:

ԿԸՐՇՕՏՎԷԼ/ԿԸՌՇՕՏՎԷԼ - *տե՛ս* ԿԸՐՇԿՕՐՇՎԷԼ:

ԿԸՐԿԱՏԱՆ *(գրբ. կարկատանք)* - *գ.* Ջգեստի՝ կոշիկի եւն մաշված մասերը նորոգելու համար վրան կցված նոր կտորի՝ կաշվի եւն կտոր: *Ք՛ա՛սիբը*

առանց կըրկատան շօր չի կ՚ը՝նալ, աշկ կըծակէ (Ձ):

- Կըրկատան անէլ/տինիլ/քըցիլ - *տե՛ս* ԿԸՐԿԱՏԷԼ:

ԿԸՐԿԱՏԷԼ *(գրբ. կարկատեմ)* - *նբ.* Մաշված զգեստը՝ կոշիկը եւն կարկատանով նորոգել: *Միհէնգ՚վա կընանէք՚ը շօրը վէր ծընձօրում ա, կըրկատում չընն, տէն ըն քըցո՛ւմ, թանզզանն ինք՚ օնում* (Բ):

- Կըրկատած տըրը՝խ - Ոչ դիմացկուն՝ թույլ առողջություն ունեցող մարդ: *Խաս աքէրը կըրկատած տըրը՝խ ա, սաղ օրը էն ա հիվանդ* (Բ):

ԿԸՐԿԷՆԷ - *տե՛ս* ԿԸՐԿԸ՝ՆԷ:

ԿԸՐԿԷՐ - *ած. տե՛ս* Աղի կըրկէր:

ԿԸՐԿԸ՝ՆԷ/ԿԸՐԿԷՆԷ - *տե՛ս* ՊԷՂԱՐԾ:

ԿԸՐԿԸԺԸ՝ՆԷ - *գ.* Խոշոր խնձորի տեսակ: *Կըրկըժը՝նէն մը՝ծ-մը՝ծ խընձօր ա* (Բ):

ԿԸՐԿԸՆԷԼ *(գրբ.կրկնեմ)* - 1. *նբ.* Ասածը նորից ասել, երկրորդել, կրկնել: *Վէր կըրկընում ա, մարթը էլ տէմ չի կէ՝նում, մէհէտ խըզ՚ըտակէն տըրըքցընում ա* (Ձ): 2. *տե՛ս* ԿԸՐԿԸՆՎԷԼ (2):

ԿԸՐԿԸՆՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ԿԸՐԿԸՆԷԼ (1)-ի: 2. *չբ.* Դեռ լրիվ չառողջացած՝ կրկին հիվանդանալ, հիվանդությունը վերստին երեւան գալ: *Հանա պըռօկը ընցալ չար, կըրկընվից* (Բ):

ԿԸՐԿԸՏՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸՐԿԸՏՕՐԷԼ:

ԿԸՐԿԸՏՕՐԷԼ/ԿԸՐԿԸՏՕՏԷԼ - *նբ.* Շատ տեղերից կարկատել կամ շատ բան կարկատել: *Մին քը՝շէրումը լօխ շօ՝րէրը կըրկըտօրում ա, տանրսում* (Ձ):

ԿԸՐԿԸՐՕՏԷԼ - *նբ.* Շատ տեղերից կարել կամ շատ բան կարել: *Թօրբան կըրկըրօտում ըն, ցօրէնը ածում մաչը* (Ձ):

ԿԸՐԿՈՒՏԱԹԱԿ - *ած.* 1. Կարկուտով ծեծված, կարկտահար: *Կըրկուտաթակ թութան արաղ չի տա՛ւս կ՚անլ, շախկա թըխած թութան ուրկուտակ տա՛ւս կըկ՚ա՛ն* (Ձ): 2. *փխբ.* Շատ դժբախտություններ տեսած, դժբախտ: *Կըրկուտաթակ կընէգ՚ ա Սիրը՝վ աքէրը* (Բ):

- Կըրկուտաթակ անէլ/տալ - Կարկտահար անել, կարկուտը խփել: *Կըրկուտաթակ ըրավ, բուստընէն փուչըցըրավ* (Բ):

- Կըրկուտաթակ ինիլ/տը՝ռնալ - Կարկտահար լինել, կարկուտից ծեծվել: *Կըրկուտաթակ իլանծ արտը պէրք չի տալ* (Բ):

ԿԸՐԿՈՒՓ/ԿԸՐԸԿՈՒՓ/ԿՈՒՐԿՈՒՓ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Կըրկուփ ածէլ - 1. Լռեցնել, պապանձվել տալ: *Մարը խօխօնցը կըրկուփ ա ածալ* (Բ): 2. Ախորժակը կորցնել տալ: *Ցամաք հացը կըրկուփ ա ածալ, ը՝ղտանի չօնիմ, թա հաց օտիմ* (Բ):

- Կըրկուփ կ՚անլ/ինիլ *(գրբ. կարկափանամ)* - 1. Լռել, պապանձվել: *Կընէգ՚ըն ասում ա.- Յէք կըրկուփ կ՚անք, հու խօսէ, նա յէլ յէգնը տանէ ճուր տա* (ՆԼՂԺԲ, 89): 3. Չանձրեւել, երաշտ լինել: *Յէրգ՚ինք՚ը կըրկուփ ա յը՝կալ, թօռ չի կ՚ամ, թա բուստընէն ճիրի* (Ձ):

- Կուռնէրը թուլանալ - *տեմ* Ծը'րքէրը թուլանալ:

- Կուռնէրը կանանչ կէնա - Գործածվում է որպես բարեմաղթություն՝ միշտ եռանդով՝ ուժով լինի: *Կուռնէրը կանանչ կէնա էրուշ յըրգ'իրնէրում ապրրօղ հըյէրէն, վէր Դարաբաղա էտքան ք'ամ'գ ըն անում* (Բ):

- Կուռնէրը կուտըրհատ(վ)էլ/վէր տը'ռնալ - 1. Ուժասպառ լինել, սաստիկ հոգնել: *Էնքան կօրծ ըրէ, կուռնէրըս կուտըրատից* (Բ): 2. Հուսահատվել, վհատվել, դժբախտության հանդիպել: *Խը'ղճըտ հինչ ա՞նէ, կուռնէրը կուտըրատած մարթ ա, էրկու տըղա օնար, ճօխտըն էլ ըսպընվը'ցէն* (Բ):

- Կուռնէրը յը'ր քաշիլ - *տեմ* Թէվքէրը յը'ր քաշիլ:

- Կուռնումը (թափ) ինիլ - Ուժեղ՝ զորեղ լինել: *Թաքավէրին տըղէն կուռնումը իլալ ա, օշափէն կօխալ ա տակը, ըստըկցըրալ* (Ձ):

- Կուռնումը խօսէլ - Հակառակվել, հակառակ լինել: *Մարթը հինչը անում ար, կընէգ'ը կուռնումըն ար խօսում* (Ձ):

- Կուռնումը կէնալ - *տեմ* Անգ'ունը պահէլ:

- Կօռնը էրկան - *տեմ* Ծը'րքը էրկան:

- Կօռնը կարճ - *տեմ* Ծը'րքը կարճ:

- Կօռնը կուռնավը քըցիլ - *տեմ* Թէվը նի մընէլ:

- Կուռնը հըլօրօղ չինիլ - Չափազանց ուժեղ լինել: *Արշակ դային կօզի պառավ, ամմա կօռնը հըլօրօղ չի կա* (Բ):

- Կօռնը չափէլ - Մեկի բազուկը չափելով՝ գուշակություններ անել: *Տանում ըն բախաջ'ուն կօշտը, կօռնը չափում ա, թա.- Էս տըղէն էն ա կ'իր ըրած* (Ձ):

- Կօռնը տալ - 1. Ապրանք կշռելիս խաբել: *Ղասաբը կօռնը տըվավ, մէսը պակաս քըշըռից* (Բ): 2. *տեմ* Արմունգ տալ: 3. *տեմ* Ծը'րք հըսցընէլ:

ԿՕՌՆԸ[2]/ԿՕՌ[2] - *գ.* Թոռան թոռը: *Մանիշ աքօրը էրկու կօռն ա իլալ* (Բ):

ԿՕՌՏ/ԿՕՐՏ *(գրբ. կուրտ (կրտած, ներքինի)* - *գ.* Ամորձատելը, կռտելը: *Հիյվընէրէն կօռտը վէր ըսքըսում ա, Ղըղըմը կ'ումէրան տօն չի կ'ամ* (Բ):

- Կօռտ անէլ - *տեմ* ԿԸՌՏԷԼ:

ԿՕՌՏԷԼ - *տեմ* ԿԸՌՏԷԼ:

ԿՕՌՏ(Ը)ՎԷԼ - *տեմ* ԿԸՌՏ(Ը)ՎԷԼ:

ԿՕՍ *(ռուս. коса)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Կօս անէլ - Մազերը գլխի վերին կամ հետեւի մասում անվաձեւ ոլորելով՝ հյուսել եւ ծասկելով ամրացնել (կանանց մասին): *Առաչ ան'դաթ ա իլալ՝ Շուշվա խանումնէն կօս ըն իլալ ընէլիս* (Ձ):

ԿՕՍԿԷԼ - *տեմ* ԿՕՋԿԷԼ:

ԿՕՍԿ(Ը)ՎԷԼ - *տեմ* ԿՕՋԿ(Ը)ՎԷԼ:

ԿՕՎ - *տեմ* ԿԱՎ[1]:

ԿՕՎԱՍԱՆՔ - *տեմ* Կ'ՕՎԱՍԱՆՔ:

ԿՕՎԷԼ - *տեմ* Կ'ՕՎԷԼ:

ԿՕՎԹԱ/ԿՕՓԹԱ *(ռուս. кофта)* - *գ.* Կանացի կարճ վերնազգեստ: *Կ'ամ'ուր կօվթա յա կը'ցալ* (Բ):

ԿՕՎԿԷԹ *(գրբ. կովկիթ)* - *ած., գ.* Կով կթող, կթվոր (անձ): *Կօվկէթ Ռիմին լօխ ճընանչում ըն իլալ ռայօնումը* (Բ):

ԿՕՎՎԷԼ - *տեմ* Կ'ՕՎՎԷԼ:

ԿՕՎՔ - *տեմ* Կ'ՕՎՔ:

ԿՕՏ[1] *(գրբ. կուտ)* - *գ.* 1. Թռչունների կեր դարձող զանազան հատիկեղեն: *Ջ'ումրուտ ղուշը ք'ընանցալ ար ուրանն ճըտէրին հէտի կօտ ճարի, պը'էրի* (ՀԺՀ, V, 23): 2. *փխբ.* Անորակ ցորեն: *Մին չըվալ կօտ ա տարալ ճէղացը, ըղացալ* (Ձ):

- Կօտավ անէլ - Մեկին կերուխումով զբաղեցնելով՝ կարեւոր գործից ուշացնել՝ մի բանից ուշադրությունը շեղել: *Ըտըրանք չուբանէն կօտավ ըն անում, ք'ինամ ա տը'սնում՝ վըխճըրնէն կ'ուղացած* (Ձ):

- Կօտավ ըղնէլ/ինիլ - 1. Կերուխումով տարվելով՝ կարեւոր գործից ուշանալ՝ ուշադրությունը շեղվել: *Էտ տըղան կօտավ ա ըղնում, կ'ամ տը'սնում՝ նըշընածէն փըխճըցըրալ ըն* (Ձ): 2. Շահավետ գործի հանդիպել: *Ան'ղրին ք'ը'ցալ ա սիզօն, կօտավ ընգալ* (Բ):

- Կօտ տալ - 1. Թռչուններին կերակրել: *Տ'ուս ա կ'ամ, վէր հըվէրէն կօտ տա, տը'սնում՝ մին զը'ռ օխծ հավէն պ'ունին ըռըշկին մը'կնըված* (Ձ): 2. Կաշառել: *Կօտ ա տամ, տըղէն տ'ուրման ըզադում* (Ձ):

ԿՕՏ[2] - *տեմ* ԳՕՂ:

ԿՕՏԱՊ - *տեմ* ԿՈՒՏԱՊ:

ԿՕՏԷԳ' *(գրբ. կոտակ (ձագ, կորյուն)* - *գ.* 1. Շան ձագ: *Էտ կօտէգ'ը յը'ր ա օնում, քըցում խուրջինը, ք'ինամ* (Ձ): 2. *փխբ.* Անպատկառ, անզգամ մարդ: *Էտ կօտէգ'ը լօխճին տընէրը կըռը'վ ա քըցալ, լօխճին ուրուր նըհը'տ կըռվըցըրալ* (Բ):

- Կօտէգ'ը շանը փօրէն տակէն ա կ'օղլը կէնում - Ամեն մեկն իր յուրայինին է ապավինում:

ԿՕՏԸՐ/ԿՕՏՈՒՐ *(գրբ. կոտոր (կտոր, պատառ)* - *ած.* Նվաստացած, ընկճված, խեղճացած: *Կօտըր մարթ ա Ալիսանը, վէ՛չ փուլ օնէ, վէ՛չ ք'ամ'գ անօղ* (Բ):

- Կօտըր ըղնէլ - Նվաստանալ, ընկճվել, խեղճանալ: *Տըղան տ'ուրման ըղնէլանը յը'տը Համաս ապան շատ ա կօտըր ընգալ* (Ձ):

- Կօտըր կաճան/հըղէ - Կարճ կաճան՝ ճանապարհ: *Մին կօտըր կաճան սարան հըսնում ա մինչը'վ Կ'օղէն ախպ'ուրը* (Ձ):

- Կոտրը քըցիլ - Նվաստացնել, ընկճել, խեղճացնել: *Ղանխպան կընէգը տը-ղըմարթին շէնումը կոտրը կըքըցի* (Բ):

ԿՕՏԸՐԱԿ/ԿՕՏՐԱԿ *(գրբ. կոտորակ (կտոր, պատառ)* - *տե՛ս* ԱՌԱՏԱՄ:

ԿՕՏԸՐԷԼ/ԿՕՏՐԷԼ *(գրբ. կոտորեմ)* - *նբ.* 1. Որեւէ կարծր՝ պինդ բան հարվածելով՝ ճկելով երկու կամ ավելի կտոր անել, ջարդել: *...Հացը օտում ա, էտ ան-ղընը էլ լօխ խըմում ա, պըրծնում, բու-թուլկան կոտրում...* (ՀԺՀ, V, 624): 2. Հարվածով մի բանի ամբողջությունը խախտել՝ վնասել: *Թըխում ա, ըսկէսվօրը ծը՛ռքը կոտրում* (Ձ): 3. *տե՛ս* Կոտրը քըցիլ: 4. Մեղմացնել, թուլացնել (խստությունը, բարկությունը): *Կընէգը կարում ա մարթին կըզնըվօթունը կոտրրէ* (Ձ): 5. *չբ.* Վնասվել, խախտվել, ջարդվել: *Վէր ըմ ընգալ, վը՛ննըս կոտրրալ ա, կարում չըմ, թա շօռ կ'ամ* (Ձ):

- Կոտրրած շիրը՛փ - *տե՛ս* Կոտրրած քըթօ՛ղ:

- Կոտրրած շիրը՛փու նըման մաչըն ըղնէլ - *տե՛ս* Կոտրրած քըթօ՛ղու նըման մաչըն ըղնէլ:

- Կոտրրած պըլաստինկա - Շատ եւ տհաճորեն խոսող մարդ: *Մանօվը կոտրրած պըլաստինկա յա, ըշտը՛ղ նըստում ա, լօխճին զանիլանքանուշ ա անում* (Բ):

- Կոտրրած սըրտավ - Հիասթափված, անտրամադիր, ընկճված: *Կոտրրած սըրտավ կարէլ չըս քը՛ըփ անիս* (Ձ):

- Կոտրրած տըշտակէն ըռաշկէն մընալ/վը՛ննը կէնալ - Նախկին թշվառ վիճակին հասնել: *Քանսիբը վէր բանրդանանց հըրուստացավ, էրկան կէնալ չի, էլիա կոտրրած տըշտակէն ըռաշկէն վը՛ննը կըկէնա* (Ձ):

- Կոտրրած քըթօ՛ղ - Իրեն չվերաբերող ամեն բանի խառնվող (մարդ): *Սարիբէգին կընէգը կոտրրած քըթօ՛ղ ա, քը՛թը ամմէն տը՛ղ կօխում ա* (Ձ):

- Կոտրրած քըթօ՛ղու նըման մաչը ըղնէլ - Իրեն չվերաբերող բանի մեջ խառնվել՝ միջամտել: *Ուրիշին զըրուցին խառնըվէլ չըն, կոտրած քըթօ՛ղու նըման ըղնէլ չըն մաչը* (ՆԱԲ, 162):

- Կոտրրած քըսկարէնք՝ - Խախտված միաբանություն՝ համերաշխություն՝ դաշինք: *Ըտրրանց ըխպըրօթունը կոտրրած քըսկարէնք՝ ա* (Բ):

ԿՕՏԸՐՎԱՍԿ - *գ.* Ոսկորի խախտում՝ ջարդվածք՝ ճաք, ինչպես եւ այդ վնասվածքի տեղը: *Վաղաշակ դային լ'ավ կոտրրվասկ ա իլալ սըղըցընէս* (Բ):

ԿՕՏԸՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ԿՕՏԸՐԷԼ-ի:

ԿՕՏՐԱԿ - *տե՛ս* ԿՕՏԸՐԱԿ:

ԿՕՏՐԷԼ - *տե՛ս* ԿՕՏԸՐԷԼ:

ԿՕՏՈՒՐ - *տե՛ս* ԿՕՏԸՐ:

ԿՕՐԱ - *տե՛ս* ԿՕՐԷ[1]:

ԿՕՐԱԾ - *ած.* 1. Ավելորդ, ոչ պետքական: *Քըշէրվա կէրածը կօրած ա* (Ձ): 2. Խեղճ, անճար: *Կօրած մարթ ա Ուբին, բաշիր չի անում, թա մին կօրծ անէ* (Բ):

ԿՕՐԷ[1]/ԿՕՐԻ[1]/ԿՕՐԱ *(գրբ. կրայ)* - *գ.* 1. Կրիա: *Մըհէնգ՝ էլ մին կօրէ յա պը-տահում, էտ կօրէն էլ ա յօր օնըմ, տինըմ ծօցըմը* (ՀԺՀ, V, 515): 2. *փխբ.* Շատ դանդաղաշարժ մարդ: *Կօրէ յը՞ս, պա-տառ թայդի ընգէլ, լի՞* (Բ):

- Կօրէն չընաղան տանուս ա յը՛կալ, չընաղէն հավան չի կէնում - Ասում են չմահավան երիտասարդների մասին:

- Կօրէն չընաղան տանուս կ'ալ - Աշխարհի գործերը խառնվել, ամեն ինչ տակնուվրա լինել: *Կօրէն չընաղան տանուս ա յըկալ, ժուղովորթը գանդում չըն, թա հինչ անին* (Ձ):

- Կօրու յէրիշ - Դանդաղ ընթացք: *Էտ հարթնը մինչը՛վ կօրու յէրիշավ քանամ ա արտը, մըթնում ա* (Ձ):

ԿՕՐԷ[2]/ԿՕՐԻ[2] *(գրբ. կորի (առվակ, փոքր ակոս)* - *գ.* 1. Արտի միջով առաջին անգամ բացված ակոս: *Կ'անթանը քըցանում ա մին կօրէ պէնում* (Ձ): 2. Վարելահողի չափման միավոր, որ հավասար է մեկ քառորդ օրավարի: *Ըսօրէ մին կօրէ վար ըմ ըրալ* (Ձ):

ԿՕՐԷՋ(ՆԸ)/ԿՕՐԻՋ(ՆԸ)/ԿՕՐԷՆՁ/ԿՕՐԻՆՁ *(գրբ. կորիզ)* - *գ.* Մսեղ պտուղների միջի պատիճավոր սերմը, կորիզ: *Ղուշընը էս վը՛ր ըսկանում ա, պէրանը պէնում ա, լանզվին տական մին խընձորու կօրէզ տանուս օնում...* (ՆԼՂԺԲ, 42):

- Կուրէզավ տալ - Հին սովորություն, երբ տոնական հանդեսների, հատկապես հարսանիքների ժամանակ չորացրած պտուղներ եւ կորիզ էին նետում իր պարտականությունների մեջ թերացող կամ չսիրած անձանց: *Առաչ, վէր հըրսանէք՝ ա իլալ, ուրուր կուրէզավ ընի իլալ տալիս* (Ձ):

ԿՕՐԷԿ *(գրբ. կորեակ)* - *գ.* Հացազգիների ընտանիքին պատկանող բույս եւ նրա հատիկը, կորեկ: *Կըզնըվում ա, կօրէկը յօր օնում, քամուն ռէխը տամ...* (ՀԱԲ, 15, 139):

- Կօրէկ անէլ - *տե՛ս* Կուրկուտ անէլ (2):

- Կօրէ կէրած կ'ումաշ - Շատ գեր՝ չաղ մարդ: *Սուրէնին կընէգ՝ընը էլ հօ կընէգ՝ չի՞, կօրէկ կէրած կ'ումաշ ա, վը՛ռը օխտը փութ կա* (Բ):

- Կօրկու սըվը՛ր կ'ումաշ - Նույն հանցանքը կրկնող, չխրատվող անձ: *Կ'օղ կընէգ՝ը կօրկու սըվը՛ր կ'ումաշ ա, հինչը օգում ըս ըրա, խըրատվէլ չի* (Ձ):

ԿՕՐԷԿ-ԿՕՐԷԿ - *մ.* Հատ-հատ, քիչ-քիչ: *Այան ասմա.- Էտքան փուլը յը՛ս կօրէկ-կօրէկ ըմ հըվաքալ, թուփ ըրալ* (Ձ):

ԿՕՐԷՆՁ - *տե՛ս* ԿՕՐԷՋ(ՆԸ):

ԿՕՐԸՆԳԱՆ *(գրբ. կորնգան)* - *գ.* Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող կերային խոտաբույս: *Կավը բիդի յօնջան օտէ, կօրընգան օտէ, վէր բոլ-բոլ կաթնը տա* (Բ):

ԿՕՐԻ[1] - *տե՛ս* ԿՕՐԷ[1]:

ԿՕՐԻ[2] - *տե՛ս* ԿՕՐԷ[2]:

ԿՕՐԻՋ(ՆԸ) - *տե՛ս* ԿՕՐԷՋ(ՆԸ):

ԿՕՐԻՆՁ - *տե՛ս* ԿՕՐԷՋ(ՆԸ):

ԿՕՐԾ[1]/ԿՈՒՐԾ *(գրբ. գործ)* - *գ.* 1. Աշխատանք: *Կօրծը շատ ա, կարում չընը հըսցընին* (Ձ): 2. Արհեստ, զբաղմունք, մասնագիտություն, աշխատանքի բնագավառ: *Դանլգանրին կօրծը տիժէր կօրծ ա* (Բ): 3. Պաշտոն, ծառայություն: *Ըտրրան կօրծա տանուս ըն քըցանում, մընամ ա տանուզնը* (Ձ): 4. Խնդիր, հարց: *Հինչ կօրծավ ը՞ս յը՛կալ կօշտրս* (Ձ): 5. Պարտականություն, անելիք: *Ըխպիրանն ճանր պիրիլը կուճի ըխճըկանը կօրծընը ար* (Ձ): 6. Նախաձեռնություն, ձեռնարկում: *Լ'ավ կօրծ ա, թա կարիս մինչը՛վ վէրչ անիս* (Ձ): 7. Վերաբերություն, առնչություն: *Հանը ասմա.- Յը՛ս ըտրրա նըհը՛տ կօրծ չօնիմ, ինք՝ընը ա գանդում, հինչը օգում ա, թօղէ անէ* (Ձ): 8. Մեկի՝ մի բանի առաջ բերած հետեւանք: *Թաքավէրը դանստի կընլօխ ա ըղնում, վէր տա ուրանն կընգանը կօրծընը ա* (Ձ):

- Կօրծ ածէլ - Բանեցնել, գործածել: *Էնքան կօրծ ա ածալ, ցակատը մաշանլ ա* (Բ):

- Կօրծա ըղնէլ - 1. Աշխատանքից ետ մնալ՝ ուշանալ, աշխատանքի ժամանակը կորցնել: *Կընանէք՝ը ուրուր պը-տահում ըն, զուրուց անում, կօրծա ըղ-նում* (Ձ): 2. Անաշխատունակ դառնալ, աշխատունակությունը կորցնել: *Խը՛ղճ Ալոսէմին վը՛ննէրը չուլխացալ ա, կօրծա ընգալ ա, էն ա տանը նըստած* (Բ):

- Կօրծան աշկ չըպէնալ - Անընդհատ աշխատել: *Կարունքը վէր կ'ամ ա, գիշըցէք՝ կօրծան աշկ չընը պէնում* (Բ):

- Կօրծ անէլ - 1. Աշխատել: *Սաղ օրը կօրծ ա անում, ուրանգանը վաստակ կ'ամ տօն* (Ձ): 2. Պաշտոն զբաղեցնել, ծառայող լինել: *Սուրփիկին տըղան պէ-ցանր պաշտօնում ա կօրծ անում* (Բ):

- Կօրծա քըցիլ - Մեկին աշխատանքից ետ պահել, աշխատելուն խանգարել: *Թօռը հանձ ընուղնէրէն կօրծա քը-ցանլ ա* (Բ):

- Կօրծէն/կօրծէտ/կօրծէս անըմը հինչ ա՞ - *տե՛ս* Պէնին անըմը հինչ ա՞:

- Կօրծէն կէնալ - Իր գործով զբաղվել, ուրիշի գործերին չխառնվել, ուշադրություն չդարձնել: *Տըղան օգում ա*

քՕմանգ անէ, հանը թողում չի, ասմա.- Կօրծէտ կա՛ց (Զ):

- Կօրծէն մաշկը կօտըրէլ - Գործի՝ աշխատանքի մեծ մասը կատարել, հիմնական դժվարությունները հաղթահարել: *ՀՕնձ ընուղնէն մինչը՛վ քըսՕր կօրծէն մաշկը կօտըրում ըն, նըստում, մին լ՛ավ հաց օտում* (Զ):

- Կօրծէն մաչին թաղվէլ/խըրվէլ - Որեւէ գործով խիստ զբաղված լինել: *Քըղան ընուղնէն կօրծէն մաչին թաղվում ըն, կըլՕխ էլ չըն ըղնում, թա հունց մըթնից* (Զ):

- Կօրծէն մաչին կ՚ուզիլ/քաքէլ - Գործը փչացնել՝ ձախողել: *Արտը ըսքըսը՛ցէն հընձիլը, թօռնը նի կանանվ, կօրծէն մաչին կ՚ուզից* (Զ):

- Կօրծէն յըրա ծուն կանալ - Գործը փչանալ՝ ձախողվել՝ ձգձգվել: *Թամարէն մարթը հիբը կօրծ ա փըռնում, կօրծէն յըրա ծուն ա կ՚ամ* (Բ):

- Կօրծէն նըսՕտա կէնալ - Գործը ավյունով սկսել՝ ջանադրաբար կատարել: *Ջըհիլնէն կօրծէն նը՛ստա յըն կէնում, մին օրումը պըրծընում* (Զ):

- Կօրծը աչ քՕինիլ - Գործը հաջող ընթացք ստանալ: *... Վէրչը, սահանց կօրծը աչ ա քՕընում, կարում ըն ըզադվին...* (ՀԱԲ, 15, 37):

- Կօրծը ըղնէլ մինին - Գործի լուծումը մեկից կախված լինել: *Քինամ ա թանջիրին կօշտը, թա.- Կօրծըս ընգալ ա քՕը՛զ, քՕմանգ ըրա* (Զ):

- Կօրծը թանսվիլ/թանս քՕինիլ - *տե՛ս* Կօրծը ծէխվէլ:

- Կօրծը իրը՛սէն յըրա թօղնէլ - Գործին ընթացք չտալ՝ ավարտին չհասցնել, իրեն վերաբերող գործը անուշադրության մատնել: *Լօդուր մարթը կօրծը իրը՛սէն յըրա կըթօղնէ* (Զ):

- Կօրծը խարաբ (ինիլ, տը՛ռնալ) - *տե՛ս* Պէնը պՕուրթ (ինիլ, տը՛ռնալ):

- Կօրծը ծէխվէլ/ծէխ քՕինիլ - Գործը անհաջող ընթացք ստանալ: *Էտ օրվանից էլ Փանօսէն կօրծը ծէխվում ա* (Զ):

- Կօրծը ծը՛րքէն մաչին հանլիլ - Ե-ռանդով աշխատել, գործը շուտ ավարտել: *Ազրահիլ դանլգանը ա Սունէն Ամիկը, կօրծը ծը՛րքէն մաչին հանլում ա* (Բ):

- Կօրծը կըլՕխ կանալ - Գործը հաջողվել՝ ավարտին հասնել: *Մանվէլ դային շատ ա չըրչարվում, մինչը՛վ վէր կօրծը կըլՕխ ա կ՚ամ* (Զ):

- Կօրծը կըլՕխ պիրիլ - Գործը հաջողությամբ ավարտին հասցնել, որեւէ գործ հաջողեցնել: *Ամմէն տըղամարթ չի կարէլ տիժէր կօրծը կըլՕխ պիրի* (Զ):

- Կօրծը կօրծէն օտէլ - Գործերը կուտակվել: *Կարունքը վէր կ՚ամ ա, շէնումը կօրծը կօրծէն օտում ա* (Բ):

- Կօրծը հինչումըն ա՞ - *տե՛ս* Պէնը հինչումըն ա՞:

- Կօրծը ճՕուրը ըղնէլ - Աշխատանքն ապարդյուն՝ իզուր անցնել: *Թօռը նի յա օնում, հՕնձ ընուղնէրէն կօրծը ճՕուրըն ա ըղնում* (Զ):

- Կօրծը յը՛ղու նըման քՕինիլ - Գործը հաջող՝ սահուն ընթանալ: *Տանը կօրծէրը յէղու մընան քՕինանմ ար...* (ՆԼՂԺԲ, 56):

- Կօրծը պՕուրթ (ինիլ, տը՛ռնալ) - *տե՛ս* Պէնը պՕուրթ (ինիլ, տը՛ռնալ):

- Կօրծը սափալու փըռնէլ - Գործին հմտությամբ՝ դժվարությունները հաշվի առնելով ձեռնամուխ լինել: *Յու վէր կօրծը սափալու չի փըռնում, յը՛տէ-ճէլլի փուշմանում ա* (Զ):

- Կօրծը տանէլ տալ - Գործը ձախողել, անհաջողության հանդիպել: *Շատ ա չըրչարվում, վէրչումը կօրծը տանէլ տամ* (Զ):

- Կօրծը տափէն թօղնէլ - *տե՛ս* Կօրծը իրը՛սէն յըրա թօղնէլ:

- Կօրծը տը՛ղան տՕուրՕուր կանալ - Աշխատանքն ընթացքի մեջ ընկնել՝ առաջ մղվել: *Թօռը յը՛տ ա օնում, քըղան ընուղնէրէն կօրծը տը՛ղան տՕուրՕուր ա կ՚ամ* (Զ):

- Կօրծը տը՛ղան տՕուրՕուր տալ - Աշխատանքն ընթացքի մեջ դնել՝ առաջ մղել: *Շանգէրդնէն կ՚ամ ըն, ուստէն կօրծը տը՛ղան տՕուրՕուր տամ* (Զ):

- Կօրծը տը՛սնալ - 1. Մի բան անել՝ իրականացնել, իր անելիքն անել: *Կօրծը տէսնում ա, իլանծ-չիլանծ պէռնում ծիյէրը...* (ՀԱԲ, 15, 128): 2. Մեկի հետ սեռական հարաբերությունների մեջ մտնել, կենակցել: *Սիրականը Նըխշունէն նըհը՛տ կօրծը տը՛սնում ա, քՕինամ* (Զ): 3. Որեւէ դեր խաղալ, օգտակար նշանակություն ունենալ: *Էրկան վախտ արաշտ ըրավ, անջախ-անջախ մի լ՛ավ թօռ յը՛կավ, կօրծը տը՛սավ* (Բ):

- Կօրծը քունավ անէլ - *տե՛ս* Կօրծը իրը՛սէն յըրա թօղնէլ:

- Կօրծի տինիլ - 1. Աշխատանքի տեղավորել, պաշտոն տալ: *Խընումանց Սէրօփը ախպօրցը լօխճին լ՛ավ կօրծի յա տիրանլ* (Բ): 2. Մեկին աշխատեցնել, աշխատանքի լծել: *Թանզգանը հարթնը ըսկէսվօրը կօրծի յա տինանմ, ինքը դինջանում* (Զ):

- Կօրծի քըցիլ - Աշխատեցնել, բանեցնել (մեքենաների՝ սարքերի մասին): *Հիշկան անում ըն, կարում չըն տըրախտըրը կօրծի քըցին* (Զ):

- Կո՛րծ չօնիս - Մի՛ խառնվիր, պետք չէ խառնվել: *Ասում ա.- Կո՛րծ չօնիս, ինքը՛ն ա գանդանում, հինչը անում ա, թողէ անէ* (Զ):

- Կօրծ պէց անէլ - Հոգսի՝ մտատանջության առիթ ստեղծել: *Տըղան կ՚ուղօթուն ըրավ, հօրը հը՛տէ կօրծ պէց ըրավ* (Զ):

- Կօրծ տը՛սնալ - *տե՛ս* Կօրծը տը՛սնալ:

- Կօրծու յըրա ինիլ - *տե՛ս* Պէնու յըրա ինիլ (ՊԷՆ-ի տակ):

- Կօրծու տար - Որեւէ աշխատանք՝ զբաղմունք՝ արհեստ ունեցող, որեւէ բանով զբաղված: *Կօրծու տար մարթը էս թըվումը տՕուզնը չի մընալ* (Բ):

- Կօրծու տինիլ - *տե՛ս* Կօրծի տինիլ:

- Կօրծ փըռնէլ - Որեւէ աշխատանք սկսել, մի բան ձեռնարկել: *Ըշխարքէս կօրծը հունցու փըռնիս, ընդի էլ ամանլ կըկ՚ա* (ՆԱԲ, II, 26):

ԿՕՐԾ[2] *(գրբ. կուրծք)* - *գ.* Կաթնասուն էգ կենդանու ստինք: *Կավը չըփարավը լօք տըվավ, կ՚ուլը կօրծը պուք տըվավ* (ԱՀ, 43):

- Կօրծ անէլ - 1. Հղիության ժամանակ ստինքը մեծանալ (անասունների մասին): *Կավը կօրծ ա ըրալ, էրկու ամսանը յը՛տը ծընան ա* (Զ): 2. Ստինքը կաթով լցվել (անասունների մասին): *Էծը ամմէն օր քՕինամ ար ըրածում, կօրծ անում, ուրանգանը կ՚ամ, պառավը քըթում ար, մըխթանրում* (Զ):

- Կօրծը տափավը քաշ ինիլիս - Մեծ կուրծք ունեցող եւ շատ կաթ տվող (հիմնականում կովերի մասին): *Ըստրան էլ մին լ՛ավ քըթէ կավ ա ինում՝ կօրծը տափավը քաշ ինիլիս* (Զ):

ԿՕՐԾԻԼ - *տե՛ս* ԿԸՐԾԷԼ:

ԿՕՐԿ *(գրբ. կորկ (կպած, մնացած աղտ)* - *տե՛ս* ՑԸ՛Ց[1]:

ԿՕՐՄ *(ռուս. корм)* - *գ.* Կոմբինացված՝ համակցված անասնակեր: *Դանվիշը ասում ա.- Վը՛ր ծիյանցը կօրմը փօխիս, ծիյանքը կըլըղարին, կըտօրվին...* (ՀԺՀ, VI, 117):

- Կօրմ տալ - Կերակրել (անասուններին): *Քաշը թօխկան վը՛ր ա քըցանում, լօկը տանում՝ ճուտէրէն կօրմ տալի հէտէ* (ՆԼՂԺԲ, 56):

ԿՕՐՄԻՏ/ԿԱՐՄԻՏ *(ռուս. кормить (բտել)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Կօրմիտ անէլ - Սնել, բտել, համակցված կերով կերակրել: *Խօզը կօրմիտ ըն անում, վէր աշունքը մորթին* (Բ):

- Կօրմիտ ըրած - Գեր, չաղ, պարարտ: *Կօրմիտ ըրած կընէգ ա Հէղուշը* (Բ):

ԿՕՐՉԻԼ *(գրբ. կորնչիմ)* - *չբ.* 1. Անհետանալ, չքանալ, առկա լինելուց դադարել: *Կումըշնէն կօրալ ա, յը՛կալ ըն, տը՛սալ՝ ըստըղէս ըխպիրին ղըրաղէն*

նըստստած (ԱԱ, 35): 2. Որեւէ տեղից արագ՝ աննկատելի հեռանալ՝ փախչել: *Ըտըրանա յէտը կօգնին քՒնըմ ա, կօրչըմ* (ՀԺՀ, V, 51): 3. *փխբ.* Երկար ժամանակ որեւէ տեղ չերեւալ: *Ըշտըէղ ը՞ս կօրալ, հիբանց ա ըրվամ չըս* (Բ): 4. *փխբ.* Փչանալ, ոչնչանալ: *Վըխտէն թութստը թըփըէցէն վէչ, էնքան թութը կորավ* (Բ): 5. *փխբ.* Իզուր վատնվել, սպառվել, ապարդյուն ծախսվել: *Տըղան վէր բիդասըլ իլՒվ, հորը աշխադանքը կըկօրչի* (Ձ): 6. *փխբ.* Թաղվել, պարուրվել, պատվել: *Կարունքը Ղարաբաղա շէնէրը ծաղկում կօրչՒում ըն* (Բ):

- Կօրած տըէղ չի - Ապարդյուն չի անցնի, անպայման որեւէ ձեւով կփոխհատուցվի: *Ղօնաղը Ըստուծէնըն ա, դունադէն հՒուրՒումՒթ անէլը կօրած տըէղ չի* (Ձ):

- Կօրած տինակէն կօթը վըէսկէ կինի - Իրը կորչելուց հետո ավելի է արժեքավորվում՝ գնահատվում:

ԿՕՐՍԻՆԿԿ *(ռուս. косынка)* - *գ.* Կանացի բարակ գլխաշոր՝ գլխաշալ: *Այան միշտ կօրսինկա յա իլՒլ կըպէլիս* (Բ):

ԿՕՐՍԻՆԿԱՑՈՒ - *գ., ած.* Գլխաշորի համար նախատեսված (կտոր): *ԽալխէրըՒուրանց հըրթնէրէն վըէսկէ յըն տամ, Նուրան էլ մին կօրսինկացու վա տըվալ* (Բ):

ԿՕՐՏ - *տե՛ս* ԿՕՌՏ:

ԿՕՐՏԷԼ - *տե՛ս* ԿԸՌՏԷԼ:

ԿՕՐՏ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ԿԸՌՏ(Ը)ՎԷԼ:

ԿՕՐՈՒՍՏ *(գրբ. կորուստ)* - *գ.* Այն, ինչ որ կորսված է: *Կարկուտը յըէտ ա օնում, քՒնամ ըն բաղէրը, տըէսնում՝ կօրուստը շատ ա* (Ձ):

- Կօրուստ տալ - Կորցնել, կորուստ ունենալ: *Ղարաբաղ ըտի տօն չի կա, վէր էս կըռվավը կօրուստ չինի տըված* (Բ):

ԿՕՓԷ/ՂԱՓԿ/ՂՒՓԿ *(ռուս. кофе, արաբ. kahve)* - *գ.* Սուրճ: *Ղարաբաղ առաչ լօխ չայ ըն իլՒլ խըմէլիս, կօփէն միհէնգՒ ա ՒդՒթ ընգալ* (Բ):

ԿՕՓԹԱ - *տե՛ս* ԿՕՎԹԱ:

Հ

ՀԱ *(գրբ. հա (այո, հապա, ահա)* - *մ., ձ.* 1. Տրված հարցին դրական պատասխան: - *ՀՒՒբի, կՒամ ը՞ք ծըմակը:* - *Հա՛, կՒամ ընք* (Բ): 2. Հարցական բառ՝ այո՞, այդպե՞ս է, համաձա՞յն ես: - *Մրտօ, քու դայի քըղաքան յըէկալ ա, էն ա ծէր տանը:* - *Հա՞* (Բ): 3. Բացականչություն մի մոռացված կամ նոր բան հիշելիս: *Հա՛, Մացակըն էլ ա իլՒլ, մընաաս քըցՒլ ըմ* (Ձ): 4. Զարմանքի բացականչություն՝ մի՞թե, իսկապե՞ս: *Ասում ըս՝ կըռըէվը պըրծալ ա հա՛* (Ձ): 5. Ուրիշի ասածին կամ արածին հավանություն տալու բացականչություն: *Ամմա Սիմօնը կՒօդէն մին լՒավ թակից հա՛* (Ձ): 6. Խրախուսանքի բացականչություն: *ՀՒարը ասմա.- Յըէք հա՛, պատառ ա մընացալ* (Ձ): 7. Զգուշացման՝ հիշեցման բացականչություն: *Մարը ասմա.- Ղըզղանը կած ա, նի չի կՒաս հա՛* (Բ): 8. Ուրախության բացականչություն: *Ամմա քՒըփ ըրէնքՒ հա՛* (Բ): 9. Դժգոհության արտահայտություն: *Հա ասէ, հա ասէ, ըսկանօղ չի կա* (Ձ): 10. Կռահելու՝ գլխի ընկնելու՝ հասկանալու բացականչություն: *Հա՛, ըրէմըս ըտըրա հըէտէ յա էնքան կՒամ մէր տօն* (Բ): 11. Անընդհատ, շարունակ: *Վէզիրը էլ հա թՒարիփ ա անում թաքավէրին* (Ձ): 12. Խոսակցի խոսքը՝ ասելիքը կարճ կապելու, նրան լռեցնելու արտահայտություն: *Հա՛, լՒավ, կՒըլական ըմ, քՒինի՛* (Բ): 13. Մի բան մատնացույց անելու արտահայտություն՝ ահա, ահավասիկ: *Չօբանը ասմա.- Սօրփը էն ա հա՛ էն ծառէն տակէն* (Ձ):

- Հա ասէլ - 1. Դրական պատասխան տալ, համաձայնել: *Նուշիկը առչին հա յա ըսիս, ամմէն օր մըտըծիս՝ առչին խափի, քՒինի տօն* (ՀԲ, 352): 2. Ամուսնության առաջարկն ընդունել (աղջկա մասին): *ԼՒըհա ախչիգՒը վէր հա յա ըսէս, Մուշէղը էքՒսը հօրը-մօրը յօր ա ունէս, քՒիս խընըմախօս* (Ձ):

- Հա հա՛ - Կասկածանքի՝ զարմանքի արտահայտություն: - *Ըսօր մին արչ ըմ ըսպանալ, վէր սօտ չինի, քըսանփութ կինի:* - *Հա հա՛* (Բ):

- Հա՛, հա՛, հա՛ - Ծիծաղի նմանաձայնական բացականչություն: *Պուդին պատմում ա, լօխ ծըծաղում ըն՝ հա՛, հա՛, հա՛* (Ձ):

- Հա-ն հա յա, չէ-ն՝ չէ - Իր խոսքի տերն է: *Մէր նախագէն հա-ն հա յա, չէ-ն՝ չէ, տըղամարթը ըտի բիդի ինի* (Բ):

- Հա ջան - 1. Որեւէ կանչի տրվող սիրալիր պատասխան: *Խօխան ասմա՝ ամպա, ապան էլ ասմա՝ հա ջան* (Ձ): 2. Ուրախության բացականչություն: *Հա ջան է՛, հա ջան, թօռը յըէկավ, արտէրը ճիրից* (Բ):

ՀՒԲԳՒ - *տե՛ս* ՀՒՅԲՒ:

ՀՒԲԻ[1]/ՀՒԲԻ-ՀՒԲԻ - *տե՛ս* ՉԸԽԿԸԼԴԱՆԻ:

ՀՒԲԻ[2] - *գ.* Նեղ եւ երկար տերեւներով մեծ ծառատեսակ: *ՀՒաբին կըտըրում ըն, փՒադ անում, պէռնում իշէրէն, քՒինամ* (Ձ):

ՀՒԲԻ-ՀՒԲԻ - *տե՛ս* ՀՒԲԻ[1]:

ՀԱԴԻԲՈՒԴԻ/ԱԴԻԲՈՒԴԻ - *գ.* 1. Աղանձած եգիպտացորեն: *Խօխէնքը հադիբուդի շատ ըն սիրում* (Բ): 2. *փխբ.* Անլուրջ, անարժան: *...Կըտակ ար ըրալ, թա վէր իտի մարթ չի ճարվի, տինին կացնին տակին, փըշրին, հադիբուդի մարթօց ըռէխ չընգնի...* (ՋՏ, Բ, 2):

ՀՒԴՐՒ-ԲՒԴՐՒ - *տե՛ս* ՀՒԹՒՐՒ(Ն)-ԲՒԹՒՐՒ(Ն):

ՀԱՋ[1] - *տե՛ս* ՀՒՋ[1]:

ՀԱՋ[2] - *տե՛ս* ՀՒՋ[2]:

ՀՒՋ[1]/ՀԱՋ[1] *(գրբ. հազ)* - *գ.* Թոքերում եղած օդի հանկարծական հնչեղ արտաշնչություն, որ ուղեկցվում է խռպոտ աղմուկով: *Ըտըրա հՒազը լօխ-ճին քունըհարամ ա անում* (Ձ):

ՀՒՋ[2]/ՀԱՋ[2] *(արաբ. hazz (ախորժանք)* - Գործածվում է կապակցության մեջ:

- ՀՒազ անէլ - Սիրել, ախորժել, հաճել: *Էտ մարթը վըէրսը շատ ար հՒազ անում* (Ձ):

ՀՒՋՒԼ - *տե՛ս* ՀՒՋԻԼ:

ՀԱՋԱՐ - *տե՛ս* ՀԱՋՋԱՐ:

ՀԱՋԱՐԻ *(թրք. həzari)* - *տե՛ս* ՀԱՋՋԱՐԻ:

ՀԱՋՈՒՒՆՔ - *տե՛ս* ՀՒՋՆՒՆՔ:

ՀՒՋՈՒՒՆՔ - *տե՛ս* ՀՒՋՆՒՆՔ:

ՀԱՋՋԱՐ/ՀԱՋԱՐ/ՀԸՋ(Ջ)ԱՐ/ՀԸՋ-(Ջ)ԷՐ/ՀԻՋ(Ջ)ԷՐ *(գրբ. հազար)* - *թ.* 1. Տասը հարյուրյակ՝ հազար: *Հազզար մանէթ ա տամ, էտ գՒաբՒն ինքՒ օնում* (Ձ): 2. *ած., փխբ.* Անորոշ ու մեծ քանակությամբ, բյուր, շատ: *Հազզար տարէ յա, իմ ախպօր տըէսալ չըմ* (Բ):

- Հազզարան բըլբՒուլ - *գ.* Հեքիաթներում հանդիպող կախարդական թռչուն: *Ղէրվիշը ասում ա.- Քու բաղըտ կըծաղկէ մինակ էն վախտը, վէր հազզարան բըլբՒուլը պիրիս, յըէրք ասէ* (Ձ):

- Հազզարան մին - *տե՛ս* Հըզզէրանց(ը) մին:

- Հազզար ասէ - Նախատական արտահայտություն՝ ինչքան ուզում ես՝ ասա, նա իրենն է անելու: *Ղըխպին հազզար ասէ, մին ա, էլիա ղըխպՒօթՒուն ա ընական* (Բ):

- Հազզար թիքՒՒ ինիլ/տըէռնալ - 1. Կտոր-կտոր լինել, ջարդուփշուր լինել: *Կըէվաթը վէր ընգավ, հազզար թիքՒՒ իլՒվ* (Բ): 2. Շատ ջարչարվել, բազում հոգսերի ու գործերի մեջ լինել: *Խըէղճը հազզար թիքՒՒ յա տըէռնում, էլիա կարում չի յօլլա քՒինի* (Բ):

- Հազզար թուման պարթկըս ինի, մըրթըմաչի մարթըս ինի - Թող աղքատ լինեմ, բայց լավ ամուսին ունենամ (կանանց մասին):

- Հազզար ինընը հանրուր հէնգ թըվին - *տե՛ս* Նօյին թըվին:

- Հազզար կըլօխ - Շատ անգամ, շատ ավելի: *Մէր շէնը հազզար կըլօխ լավ ա, քանց ծըէր քաղաքը* (Բ):

- Հազզար կըտօր ինիլ/տըէռնալ - *տե՛ս* Հազզար թիք՛ան ինիլ:

- Հազզար հըէտ(է) - Բազմիցս, շատ անգամ: *Հազզար հըէտէ փօրցանալ ըմ, ամանալ չի կամ* (Բ):

- Հազզար մաղա հաց կէրած - 1. Շատ բան տեսած, փորձառու: *Հազզար մաղա հաց կէրած մարթ ա Կանքին, խանփվիլ չի* (Բ): 2. Անամոթ, աներես: *Հազզար մաղա հաց կէրած կընգանը Աստուծ չօնէ* (Բ):

- Հազզար մաղավ ընցած - *տե՛ս* Հազզար մաղա հաց կէրած:

- Հազզար պարի - Հարգալից պատասխան ողջունողին:

- Հազզար պէրան ասէլ - Շատ անգամ ասել, հաճախակի հիշեցնել: *Հազզար պէրան ասալ ըմ, էլիա կըլօխ չի ընգալ* (Ձ):

- Հազզար տօռնը թակէլ - Շատերին դիմել, շատերից օգնություն խնդրել: *Էտ ըրըփըվէրին հազզար տօռնը թակից, մինչըվ կըրըցավ տըղէն կօրծի տինի* (Բ):

- Հազզար ու մի - Շատ, բազմաթիվ, բազմազան: *Հազզար ու մի դանդ օնէ դարաբաղցէն* (Բ):

- Հըզզարում(ը) հընդըր(վ)ած - Շատ լավ, ընտիր: ...*Հըզարըմ հընդըրված ախճիկ, ք՛ըզ տանօղին հազար նըէրակ* (ԼՂԲ, 161):

- Հըզզէրանց(ը) մին - Շատ ուշ-ուշ, հազվադեպ: *Միհէնգ՛ էլ, վար հըզէրանցը մին պըտահում ըն, արչը մըրմըրթամ ա, թըքստում...* (ԱԱ, 73):

ՀԱՋՋԱՐԻ/ՀԱՋԱՐԻ - *գ.* Մանր ու երկարավուն հատիկներով ու բարակ կեղեւով խաղողի տեսակ: *Հազզարին քախծըր խաղու վա* (Բ):

ՀԱՋԷԼ - *տե՛ս* ՀԱՋԻԼ:

ՀԱՋԸՐ/ՀԱՋԻՐ *(արաբ. hazər, թրք. hazir)* - 1. *տե՛ս* ՊԱՂԸՐԱՍՏ: *շ.* 2. Քանի, քանի որ: *Մա՛ղյան, տըղատ քըղաքան հազըր յըէկալ ա, փըսանկէ* (Բ): 2. Ասում են, երբ առարկում են մի բան՝ առաջարկելով մեկ ուրիշը՝ ավելի նպատակահարմարը: *Ասում ա.- Խէ ուրուշու վը՞ս տամ, հազըր տօ քու ախպօր լի՞* (Ձ):

- Հազըր անէլ - *տե՛ս* ՀԸՋԸՐԷԼ:

- Հազըր էշը կաշվին/կաշվումըն ա - Քանի դեռ ուշ չէ: *Հազըր էշը կաշվին ա, արտըտ հընձի* (Բ):

- Հըզըրու յաղի/տար - Պատրաստ բանի ձգտող: *Իզէն հըզըրու յաղի յա, կօրծ չի անում* (Բ):

ՀԱՋԻԼ - *տե՛ս* ՀԱՋԻԼ:

ՀԱՋԻԼ/ՀԱՋԻԼ/ՀԱՋԷԼ/ՀԱՋԱԼ *(գրբ. հազամ, հազեմ)* - *չբ.* Հազի ձայն հանել, հազալ: *Ապան մըրսալ ա, հազում ա* (Բ):

ՀԱՋԻՐ - *տե՛ս* ՀԱՋԸՐ:

ՀԱՋԱՆՔ - *տե՛ս* ՀԱՋՆԱՆՔ:

ՀԱՋՆԱՆՔ/ՀԱՋՆԱՆՔ/ՀԱՋՂԱՆՔ/ՀԱՋՂԱՆՔ - *վ.* Ենթադրենք թե, դիցուք: *Կընէգ՛ը ասմա.- Հազնանք ք՛ըցալ ընք, հինչ բի՞դի անինք՛* (Ձ):

ՀԱՋՆԷԼ/ՀԱՆՁՆԷԼ - *նբ.* 1. Տալ, ձեռքը տալ: *Տըղան էտ թօխտը տանում ա, հանձնում թանջիրին կընգանը* (Ձ): 2. Ավանդել, պահ տալ: *Առուտուրականը սաղ ապըրանքը էտ կընգանը հազնում ա, ինք՛ը մին շէփտավ ք՛ինամ տօն* (Ձ): 3. Ուրիշի տրամադրության տակ դնել, ուրիշի տնօրինությանը թողնել: *Ըտի վէզիրը ուրանն պաշտօնը հազնում ա չուբանէն տըղէն* (Ձ):

ՀԱՋՆ(Ը)ՎԷԼ/ՀԱՆՁՆ(Ը)ՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՀԱՋՆԷԼ-ի: 2. *չբ.* Անձնատուր լինել: *Թօրքէրը կըրը՞ցէն վէջ տէմ կէնան, հըզնըվը՞ցէն* (Բ):

ՀԱՋՐԱԲՈՒԹԱ - *ած.* Փափկասուն, փափակյաց: *Թա Նախճուվանու հազրաբութա հարսնէրըն ու ըխճըկէրքը հունց ըն ուրանց օրը յէյլաղում անց կըցնըմ, ըտըրա մըհար թօղ ուրանք խօսին, մունք անգուճ տինինք* (ՁՏ, Բ, 74):

ՀԱՋՐԱԹԱԲ(Բ)ԱՍ - *ծղր. տե՛ս* ԽԸՐ:

ՀԱՋՕՑ - *տե՛ս* ՀԱՋՕՑ:

ՀԱՋՕՑ/ՀԱՋՕՑ - *գ.* Հազալու ձայնը: *Վը՞րսկանէն հազօցը կ՛ըխտարէն խըրթնըցընէս ա* (Ձ):

ՀԱԹԱՐԱ(Ն)-ԲԱԹԱՐԱ(Ն)/ՀԱԹԱՐԱ(Ն)-ՓԱԹԱՐԱ(Ն)/ՀԱՇՏԱՐԱ(Ն)-ԲԱՇՏԱՐԱ(Ն)/ՀԱՍԱՐԱ(Ն)-ԲԱՍԱՐԱ(Ն)/ՀԱԴԱՐԱ-ԲԱԴԱՐԱ/ՀԸՏՐԸ-ՀԱՏՐԱ/ՀԻԹՌԻ-ՓԻԹՌԻ *(թրք. hədərən-pədərən (դատարկախոսություն)* - *մ.* Վայրիվերո, ավելպակաս: *Էտ մարթին էլ սուվըրցընում ըն, ասում.- Վը՞ր տը՞սնաս դէրը հանդրանդրա խօսում ա, յէր կըկէնաս դօթումը դիք՛ նըստիս* (ՀԺՀ, VII, 303):

ՀԱԹԱՐԱ(Ն)-ՓԱԹԱՐԱ(Ն) - *տե՛ս* ՀԱԹԱՐԱ(Ն)-ԲԱԹԱՐԱ(Ն):

ՀԱԹԷ-ՀԱԹԷ - *տե՛ս* ՍԱԲԻՐ:

- Հաթէ-հաթէ անէլ - *տե՛ս* Սաբիր կանալ:

ՀԱԹԻ[1] - *տե՛ս* ՊՈՒԺՈՒԺ:

ՀԱԹԻ[2] - *տե՛ս* ԼԱԼԱ:

ՀԱԼ[1]/ՀԱԼ[1] *(գրբ. հալ)* - *գ.* Հալելը, հալվելը: *Յը՞ղէն հալը վէր ըսքըսէս ա, ազին շիրը՞փը յօր ա ընէս, խըռէս* (Ձ):

- Հալ ածէլ/անէլ/տալ - 1. *տե՛ս* ՀԻԼԸ-Ց(Ը)ՆԷԼ: 2. Մանրամասնել: *Հիշկան հալ ըմ ածում, էլիա կըլօխ չի ընում* (Բ): 3. Չարչարել, ուժասպառ անել: *Էտ կօրծը մը՞գ լափ հալ ածից* (Բ):

- Հալ ընէլ/ինիլ/կանալ - 1. Սկսել հալվել: ...*Հայ կընէգ՛ արմատը վէր կա, հալ ընգած մումու նըման հինչ դալիբ ասիս՝ կըմընի...* (ՁՏ, Ա, 152): 2. Վրա պրծնել, ագահաբար անել: *Ղունըղնէն հալ ըն կ՛ամ փըլավէն յըրա, լօխ օտում* (Ձ):

- Հալ ընցընէլ/տըէռնալ/ք՛ինիլ - *տե՛ս* ՀԱԼՎԻԼ:

- Հալ իփ(վ)իլ - Լավ՝ լրիվությամբ եփ(վ)ել: *Կառնանը մէսը բիդի հալ իփիս, վէր քախծըր ինի* (Բ):

- Հալ տանէլ - Անհետ կորչել: *Խը՞ղճէն կավը հալ տարալ ա* (Բ):

ՀԱԼ[2]/ՀԱԼ[2] *(արաբ., պրս., թրք. hal)* - *գ.* Վիճակ, դրություն: *Շահէն ծառանէն վը՞ր տէսնըմ ըն առյուծէն էտ հալըմը, ք՛ինամ ըն շահէն խաբար տամ* (ՆԼՂԺԲ, 18):

- Հալան ընէլ/ինիլ - Ուժասպառ լինել, ուժասպառվել, հյուծվել, վիճակը վատթարանալ: *Կամ ա, տը՞սնում հարըմանը բէք՛էփ, պըռավաձ, հալան ինգանած* (ՀԺՀ, VII, 17):

- Հալան քընցիլ - Ուժասպառ անել, ուժասպառել, հյուծել, վիճակը վատթարացնել: *Խանը ընտրանց էնքան պինընցընում ա, լափ հալան քընցում ա* (Ձ):

- Հալը կընտրէլ - *տե՛ս* Հալան ընէլ: ...*Վը՞ննէրը թանլանցած, հալը կընտրած՝ նըստում ա ընտէղ, աշկը քընցըմ հընէն նըյէր, վար էս ա քըվօրը տըղան կըկ՛ա* (ՀԺՀ, V, 404):

- Հալը հալ չի - 1. Վատ վիճակի մեջ է, դրությունը լավ չէ: *Հէյրան աքէրը տըղըպէրց ա ընգալ, հալը հալ չի* (Բ): 2. Շատ առատ է: *Խաղվէն հալը հալ չի ընստարէ, հըսցընան չընք քաղինք՛* (Բ):

- Հալ չինիլ (յըրան) - Վիճակը՝ դրությունը ծանր՝ վատ լինել: *Խը՞ղճէն յըրան հալ չի կա, էն ա մըռնէլիս* (Ձ):

ՀԱԼ[3]/ՀԱԼ[3] - *տե՛ս* ԹՕՓ (1):

ՀԱԼԱ *(թրք. hala (խումբ, թիմ)* - *գ.* Որեւէ բանի երկու հատը միասին վերցրած՝ զույգ: *Ըտըրանք կէս ըն տը՞ռնում, տը՞ռնում էրկու հալա* (Ձ):

- Հալա կանալ - 1. Զույգերի բաժանվել: *Խօխէնք՛ը հալա յըն կ՛ամ, խաղ անում* (Բ): 2. Ընկերակցել, համերաշխվել: *Մըրթըկընէգ՛ վէր հալա չի յը՞կէն, կարէլ չըն տօն տը՞ռնան* (Բ):

ՀԱԼԱՆ/ՀԱԼԱՆՄ/ՀԱԼԱ(Մ)/ՀԸԼԱ(Մ) *(արաբ., թրք. hala)* - *մ.* 1. Դեռ, տակավին: ...*Թաքավէրին տըղան հանալ յաշիգ՛ը պէց չանում, տընում ա ուրանն*

օթախը մը, իտի էլ թօղում (ՀԺՀ, V, 167): *վ., ձ.* 2. Հորդորական խոսք մի բան անելու՝ ապա մեկ, հապա: *Մարը ասմա.- Հալա տը՛ս՝ էտ ախճիգը մէր կըլօխը հիշկան օյին ա պիրլական* (Զ):

- Հալա աղու յըրա յա քՀունում - Գործի դժվարությունը դեռ չի զգում: *Էտ ջահիլը հալա աղու յըրա յա քՀունում, յը՛տնան ա փուշմընական* (Բ):

- Հալա աշկ ճըպէլու - Ակնթարթորեն, շատ կարճ ժամանակում: *Հարը հալա աշկ ճըպէլու՝ տըղան արտէն կէսը հընձում ա* (Զ):

- Հալա ըշտը՛ղ ա՞/ը՞ս/ը՞մ - Սա դեռ ոչինչ, հիմնական դժվարությունները՝ փորձությունները առջեւում են: *Հարը ասմա.- Հալա ըշտը՛ղ ը՞ս, էքուց բիդի սաղ արտը հընձիս* (Զ):

- Հալա խը՛լքը հը՛տան հըսալ չի - Դեռ տհաս է, դեռ չի հասունացել: *Իզէն հունց ա՞ փըսակվում, հալա խը՛լքը հը՛տան հըսալ չի* (Բ):

- Հալա խօսկը պիրանումը - Դեռ ասելիքը չվերջացրած: *Հալա խօսկը պիրանումը՝ մարթը սաղ ջանավը ընգում ա յէզանը յիրան...* (ԱԱռ, 39):

- Հալա ծՀուվա նօր ա տՀուս յը՛կալ, օգում ա՝ թառ ինի - Ասում են իրենց ուժերից վեր գործ ձեռնարկող երիտասարդներին:

- Հալա շատ բիդի հաց ու պանէր օտէ/օտիս/օտիմ - Դեռ շատ ժամանակ է պետք, որպեսզի հասունանա՝ հմտանա՝ փորձ ձեռք բերի՝ մեկի հետ կարողանա մրցել: *Ծանգէրդը հալա շատ բիդի հաց ու պանէր օտէ, վէր կարէ ուստէն նըման պատ տինի* (Բ):

ՀԱԼԱԼ *(արաբ. halāl, պրս. halal, թրք. helāl)* - *ածական.* 1. Ազնիվ, արդար, անխարդախ: *Համանն էս ժողովուրթը պարի, շատ հալալ մարթիք ը՛ն իլալ* (ՀԺՀ, V, 469): 2. *տեմ* ՀԱԼԱԼ-ՋՈՒԼԱԼ: 3. Հարազատ, արյունակից: *Էտ պըռավէն էրկու ախչիգ ա իլալ. մինը՝ խօրթ, մինը՝ հալալ* (ՀԺՀ, V, 615): *մ., ածական.* 3. Ճիշտ ու ճիշտ, ուղիղ, հենց: *Հալալ իրէք սըհաթ թըմաշա ի անըմ...* (ՋՏ, Ա, 109):

- Հալալ ա - 1. Արժանի է, վայել է: *Ապրըհամ աղան ճարը կըտըրած ասըմ ա.- Պուղի, վը՛ր տի յա, քէզ հալալ ա...* (ՆԼՊԺԲ, 92): 2. Կեցցե՛, ապրի՛: ... *Հալալ ա թաքավէրին կուճուր տըղէն, օշափէն ըսպանից* (Զ):

- Հալալ անէլ - 1. Արժանի՝ արդարացի համարել: *Ապան ՀուրՀն աշխադանքը թուռնէրէն հալալ ըրավ* (Բ): 2. Վայելել: *Ըստարէ լ՛ավ խաղու քըղը՛ցէնք՛, հալալ ըրը՛ցէնք՛* (Բ): 3. Վիզը կտրելով՝ կենդանու՝ թռչունի միսն ուտելի դարձնել: *Մին ղօչ ա վէր քըցՀում դունաղէն ըռաշկէն, հալալ անում* (Զ):

- Հալալ ապըրանք - Արդար՝ ազնիվ աշխատանքով ձեռք բերած ունեցվածք՝ հարստություն: *Հալալ ապըրանքը աշկ չի ծակէլ* (Բ):

- Հալալ ինի - Թող վայելի, արժանի է դրան: *...Պիրիս ըն քըսան վը՛խճար տաս, թա.- Հալալ ինի, տա՛ր էք՛՝ ք՛ը՛փ անէ* (ԱԱ, 76):

- Հալալ ծընծկէր/ծէծ ծընծած/ կընթանակէր/կաթնը կէրած - Ազնիվ դաստիարակություն ստացած, առաքինի (հատկապես աղջիկների մասին): ... *Իրանա շահը մարթ ա դարկալ, վար ըխճըկանը պիրին, ամա էտ հալալ կընթանակէրը ռազի չի կացալ...* (ԱԱ, 31):

- Հալալ կէս անէլ - Երկու հավասար մասի բաժանել: *Թաքավէրին տըղան թընխում ա, դէվին հալալ կէս անում* (Զ):

- Հալալ կէս ինիլ/տը՛ռնալ - Երկու հավասար մասի բաժանվել: *Շաշկավը հանց թընխէս ա, էտ վը՛սկէ խընձՀրը հալալ կէս ա տըռնաս* (Զ):

- Հալալ մագը կընտըր(վ)էլ չի, հարամ կ՛էրանը կընկօտըրէ - Թույլ արդարը՝ ազնիվը ուժեղ խարդախից տոկուն է:

- Հալալ քընթնօնք - Արդար վաստակ: *Հալալ քընթնօնքավ ըշխադածը Ըստընծու վէլ լ՛ավ կընթըվա* (Բ):

ՀԱԼԱԼ-ՋՈՒԼԱԼ - *ածական.* 1. Շատ մաքուր, վճիտ, հստակ: *Հալալ-զուլալ ախպՀուրնէ շատ կա Ղարաբաղ* (Բ): 2. Անարատ, իսկական: *Միհէնգ հալալ-զուլալ մէս քընթէնալը տիժէր ա* (Բ): 3. *մ.* Արդար՝ ազնիվ կերպով: *Հալալ-զուլալ ապրում ըն* (ՀԺՀ, VII, 382):

ՀԱԼԱԼԸԳՆ/ՀԱԼԱԼԻԳՆ - *տեմ* ՀԱԼԱԼ:

ՀԱԼԱԼԻԳՆ - *տեմ* ՀԱԼԱԼԸԳՆ:

ՀԱԼԱԼԻՔ՝ *(թրք. hələlik)* - *տեմ* ՀԱԼԱԼ:

ՀԱԼԱ-ՀԱԼԱ/ՀԸԼԸ-ՀԱԼԱ/ՀԸԼԸՀԱԼ[2] - *մ.* Զույգերի բաժանված, զույգ-զույգ: *Խոխէնք՛ը հալա-հալա մուտանում ըն* (Զ):

- Հալա-հալա անէլ/կ՛ալ - *տեմ* Հալա կ՛ալ:

ՀԱԼԱՄ - *տեմ* ՀԱԼԱ:

ՀԱԼԱՆՑ - *ածական.* Չափից շատ հալած՝ եփած: *Հալանց յը՛ղը կընհամէ* (Բ):

ՀԱԼԱՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հալաս անէլ - 1. Մի բանի շատ ձգտել, ջանալ: *Շատ ա հալաս անում, ամա կարում չի էտ ծին կ՛ուղանա* (Զ): 2. Կազդուրվելու նշաններ ցույց տալ: *Ապան հէնգ՛ ամէս ա տըղըպէրցում, անջախ-անջախ էն ա հալաս ա անում* (Բ): 3. Շտապել: *Հիշկան հալաս ա անում, կարում չի կօրծը վընխտէն պըրծընէ* (Բ): 4. Ձեռ առնել: *Մէլիք՛ը Պըլը-Պուղուն էգզանանն օգ՛ում ար հալաս անէ, ամա ամանալ չար կ՛ամ* (Զ): 5. Շողոքորթել: *Վէզիրը թաքավէրին միշտ հալաս ար անում* (Զ): 6. Սեռական ցանկություն ունենալ: *Չօբանը մին էլ ա հալաս անում, ք՛ինամ էտ կընգանը կօշտը* (Զ):

ՀԱԼԱՎ *(գրբ. հալաւ (զգեստ, հագուստ)* - *գ.* 1. Կանացի ներքնաշապիկ: *Էք՛սը էտ տըղան ք՛ընամ ա բաղը, էտ ընխճըկէրքը վէր կ՛ամ ըն լընընալի, մինին հալավը կ՛ուղանում ա* (ՀԺՀ, V, 507): 2. Խորխ (օձի): *Հու վէր օխծէն հալավը տինի հացէն մաչին, օտէ, ծէրքէն յըրա փըսած կ՛օրթնուկը անց կընկէնա* (Բ): 3. Ճախարակի վրա ձգված ծածկոց: *Այան մանում ա, պըրծընում, հալավը քընցՀում չընխընրակէն յըրա* (Զ):

- Հալավը լաշան մօտէ յա ինՀում - *տեմ* Ամէն մարթ ծը՛ռքը ՀուրՀն պէրանը կընտանէ:

- Հալավը կընլխէն կապ տալ - Անվանարկել, վարկաբեկել: *Էտ կընէգ՛ը սաղ շինընցուց հալավը կընլխընրնէրէն կապ տընվավ* (Զ):

- Հալավը հանէլ - Հայրական տան սովորություններից հրաժարվել՝ նոր ընտանիքի նիստ ու կացին հարմարվելու համար (նորահարսի մասին): *Թանգգան հարթնը բիդի հալավը հանէ, վէր կարէ հընթնօթուն անէ* (Բ):

- Հալավը փօխէլ - Բնավորությունը փոխել: *Վէզիրը հալավը փօխալ ա, էլ ճընճընդամ չի* (Զ):

- Հալավը օրթնէլ - Պսակից առաջ հարս ու փեսայի զգեստներն օրհնել: *Առաչ հընրսընքան առաչ դէրը կ՛ալիս ա իլալ հալավը ուրթնէլիս* (Բ):

- Հալավ տը՛ռնալ, դընլվան կէնալ - *տեմ* Նը՛ստա կէնալ, պուք չընկ՛ալ:

- Հընլավավը մին տը՛ռնալ - 1. Շատ նիհարել: *Նա էնքան շատ ար մընտածըմ, քընէնք՛ անըմ, վը՛ր հալվալ-մանչվալ ար, չՀր չՀփ տը՛ռալ, հընլավավը մին տէռալ* (ՀԺՀ, V, 85): 2. Շատ չաղանալ: *Էնքան կէրալ ա, հընլավավը մին ա տը՛ռալ* (Բ):

ՀԱԼԱՎ-ՎԸՆՆԸՇՕՐԱԾ - *մ.* Միայն ներքնաշապիկով՝ տակի շորերով: *Էտ չարչին տը՛ղան յէր ա կէնում, հալավվընընշՀրած փախճում...* (ՀԺՀ, VII, 292):

ՀԱԼԱՔ՝/ՀԱԼ՝ԱՔ՝ - *տեմ* ՀԱԼ[2]:

- Հալաք՝ անէլ - *տեմ* Հալա քընցիլ:

- Հալաք՝ ընդնէլ/ինիլ/տը՛ռնալ - *տեմ* Հալա ընդնէլ:

ՀԱԼԱՔ՝Ի - *տեմ* ՀԱԼԱ:

ՀԱԼԲԱԹ/ՀԱՐԲԱԹ *(արաբ., թրք. elbett)* - 1. *վ.* Երեւի, հավանաբար: *Տահանք ասում ըն, վար ծին խէլՀունք ապրանք ա, հալբաթ մին պան կա, վար ք՛ը-*

նում չընՀ (ՀԺՀ, V, 404): 2. *մ.* Վաղ թե ուշ, երբեւէ: *Հալբանթ ծը՛ռքըս կըղնէ՛, յը՛ս ընդրրա դուվանը կանիմ* (Բ):

- Հալբանթ մին (տը՛ղա) լուս կըծանքի - Սփոփանքի արտահայտություն նեղ իրավիճակում գտնվողին:

- Հալբանթ քի - *տե՛ս* ՀԱԼԲԱԹ:

ՀԱԼԲԱՀԱԼ(ՄԸՍ) - *տե՛ս* ԻԼԲԻՀԱԼ-(ՄԸՍ):

ՀԱԼԷ/ՀԱԼԻԷ - *տե՛ս* ԹՕՓԷ:

- Հալէ տալ - 1. *տե՛ս* Թօփէ տալ: 2. Վեր նետել: *Հալէ յա տամ, էտ խուրջինը քըցում թախտափուշը* (Ձ):

ՀԱԼԷ-ԹՕՓԷ - *տե՛ս* ԹՕՓԷ:

ՀԱԼԷԼ - *տե՛ս* ՀԱԼԻԼ:

ՀԱԼԹԱՓ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հալթափ անել - *տե՛ս* Հալ ածել:

- Հալթափ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՀԱԼՎԻԼ:

ՀԱԼԻԼ/ՀԱԼԷԼ/ՀԱԼԻԼ *(գրբ. հալեմ)* - *նբ.* 1. Ջերմության ազդեցությամբ պինդ՝ սառած բանը հեղուկ դարձնել: *Յը՛ղը հալում ըն, ածում ղըզղընէքը՛ը* (Բ): 2. Հեղուկի մեջ լուծել: *Աղը ճիրին մաչին հալում ըն* (Բ): 3. *տե՛ս* ՀԱԼՎԻԼ:

- Հալած յը՛ղու նըման - Հեշտությամբ, առանց որեւէ դժվարության՝ խոչընդոտի: *Ըտըրա կօրծէրը հալած յը՛ղու նըման ա ք՛ընամ* (Բ):

- Հալած յը՛ղու տը՛ղ ընթունէլ/տինիլ - Առանց կասկածի ընդունել, անառարկելի ճշմարտություն համարել (մեկի ասածը): *Կընգանը ասածը մարթը հալած յը՛ղու տը՛ղ ար ընթունում* (Ձ):

- Հալիլ, ընգուճնէն/կըլօխը ածէլ - 1. Մարամասնորեն բացատրել՝ հասկացնել: *Հալում ըմ, ընգուճնէն ածում, էլիա կըլօխ չի ըղնում* (Բ): 2. Համոզել: *Էտ պառավը հալում ա, ընգուճնէն ածում, վէր կընգանը տուս քըցի* (Ձ):

ՀԱԼԻՄ/ՀԱԼԻՄ - *գ.* Աչքերից հոսող հեղուկ (հատկապես ծերերի): *Մայա աքէրը պըռավալ ա, ըշկէրան հալիմ ա ք՛ունում* (Բ):

ՀԱԼԼԱ - *տե՛ս* ԱՉՈՒ:

ՀԱԼ-ՀԱԼ[1] - *մ.* Լրիվությամբ, լիովին (եփ(վ)ելու մասին): *Խաշլաման հալ-հալ իփիլ բիդիս, վէր լազաթ ինի* (Բ):

ՀԱԼ-ՀԱԼ[2] - Գործածվում է կապակցության մեջ:

- Հալ-հալ անէլ - Շատ բան եւ անընդհատ վեր նետել: *Հալ-հալ ըն անում, էտ ք՛ըլիմնէն ածում թումբէն քամակը* (Ձ):

ՀԱԼ-ՀԱԼԲԱԹ - *մ.* Արագ, շտապ: *...Հալ-հալբաթ ջօղաբըս տօ, ղօրթ ա՞* (ՋՏ, Ա, 61):

ՀԱԼ-ՀԱՔՈՐ - *ձ.* Ջգուշացման արտահայտություն՝ իմացած լինես, որ... *Յէր ըն կէնում Մարդրուսին յըրա փըսպարում, վար հալ-հաք՛ար կընէգ՛ըտ օրէկան էրկու ջանիլ ա փօխ տամ* (ՆԼՂԺԲ, 29):

ՀԱԼ[1] - *տե՛ս* ՀԱԼ[1]:

ՀԱԼ[2] - *տե՛ս* ՀԱԼ[2]:

ՀԱԼ[3] - *տե՛ս* ՀԱԼ[3]:

ՀԱԼԱ(Մ) - *տե՛ս* ՀԱԼԱ:

ՀԱԼԱՔ՝ - *տե՛ս* ՀԱԼԱՔ՝:

ՀԱԼԻԷ - *տե՛ս* ՀԱԼԷ:

ՀԱԼԻԼ - *տե՛ս* ՀԱԼԻԼ:

ՀԱԼԻՄ - *տե՛ս* ՀԱԼԻՄ:

ՀԱԼՎԱԼ - *տե՛ս* ՀԱԼՎԻԼ:

ՀԱԼՎԱ *(արաբ., պրս., թրք. halva)* - *գ.* Ալյուրով, յուղով ու շաքարով պատրաստած քաղցրավենիք: *Խօխէնք՛ը հալվա շատ ըն սիրում* (Բ):

ՀԱԼՎԻԼ/ՀԱԼԻՎԻԼ - *կբ. եւ չբ.* 1. ՀԱԼԻԼ-ի: *չբ.* 2. Սաստիկ ամաչել: *Պատրօնը վէր խօսում ա, էտ հարթնը հալվում ա* (Ձ): 3. *փխբ.* Վերանալ, սպառվել, ոչնչանալ, վատնվել: *Ըտի խօջէն հըրըստօթունը հալվում ա* (Ձ): 4. *փխբ.* Հուզվել, նվաղել: *Չուբանէն վէր տը՛սնում ա, էտ ախճիգ՛ը հալվում ա* (Ձ): 5. *տե՛ս* ՀԱԼՎԻԼ-ՄԱՇՎԻԼ:

ՀԱԼՎԻԼ-ՄԱՇՎԻԼ - *չբ.* Տառապել, տանջվել, հյուծվել (սիրուց, վշտից, հիվանդությունից, կարոտից եւն): *Վը՛ր էտքան հալվըմ ա, մաշվըմ, մին օր էլ թաքավէրը օգըմ ա՝ գ՛իդա ընտրա մանին* (ՀԺՀ, V, 229):

ՀԱԼՈՒՃ - *տե՛ս* ՀԱԼՈՒՋ:

ՀԱԼՈՒՄԱՇ/ՀԸԼԱՄԱՇ *(գրբ. հալումաշ (հալող-մաշող)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հալումաշ անէլ - Տառապանք պատճառել, տանջել, հյուծել: *Բիդասը՛ լ ժառանգ՛ը հօրը-մօրը հալումաշ կանէ, ըսպանէ* (Բ):

- Հալումաշ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՀԱԼՎԻԼ-ՄԱՇՎԻԼ:

ՀԱԼՈՒՋ/ՀԱԼՈՒՃ *(թրք. aluğ)* - *գ.* Ալոճենու պտուղը, ալոճ: *Հանդրուտ ա ինումի շատ հալուջ* (Բ):

ՀԱԽ/ՀԱԽԿ *(արաբ., թրք. hakk)* - *գ.* 1. Արժեք, գին: *Էտ մարթը դընէն հախէն նըստա մին խիլլա խըրէգ՛ տաս ա, ծին ինք՛ ունէս, տընէս* (ՀԺՀ, V, 259): 2. Վարձ: *Ասում ա.- Տանըս հախը ամսանը քըսան մանէթ ա* (Ձ): *ած., մ.* 3. Արժանի, վայել: *Դէրը ասմա.- էս ախճիգ՛ը էս տըղէն հախ ա, նըհախ տը՛ղան փիսամարթ մէք՛ տը՛ռնալ, թողէ փըսակվին* (Ձ):

- Հախ անէլ - Պահանջել, պահանջ ներկայացնել: *Էս մարթը վէջ մին պէն կարում չի կընգանը յըրա հախ անէ* (ՆԱԲ, 108):

- Հախան կ՛ալ - Հախիցը գալ, պատժել: *Կ՛իժժին հախան հանփանծընն ա կ՛ամ* (ԱԲԲ, 47):

- Հախը թողէ դէրին հըսնէ, մը՛ռալը օգ՛ում ա լ՛ըհա գ՛օռբագ՛օռ ինի/տը՛ռնա - Յուրաքանչյուր ոք իր շահի մասին է մտածում:

- Հախը տալ - Վճարել, վարձահատույց լինել: *Հախը տամ ա, յը՛խան ըզադում* (Բ):

- Հախ տըված, կըռը՛վ ինք՛ կ՛ալած - Ասում են անընդհատ եւ անտեղի վեճի՝ կռվի մեջ ընկնողի մասին:

ՀԱԽԷ/ԱԽԷ - *գ.* Հորանջելը, հորանջ: *Հախէն ըտըրանա անպակաս ա* (Բ):

- Հախէ անէլ - *տե՛ս* ՊԸՐԿՈՒԾՏԱԼ:

ՀԱԽԷ-ՆԸՀԱԽԷ/ՀԱԽԻ-ՆԸՀԱԽԻ - *մ.* Տեղի-անտեղի, ամեն առիթով: *Ծընաճանջը կըտաղում ա, հախէ-նըհախէ լօխճին կընծում* (ԱԱռ, 46):

ՀԱԽԸՌԷԼ/ՀԱԽՈՌԷԼ - *նբ.* Ամբողջ բերանով խածել, ագահորեն կծել՝ խլել՝ խժռել եւն: *Օգը կըլօխը մը՛կնում ա, աղվէսը օգէն հախռում ա, պըկան կընծում, ըսպանում* (ՀԺՀ, VII, 228):

ՀԱԽԸՌ(Լ)ԱՄԻԾ/ՀԱԽՈՌԱՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հախըռ(լ)ամիշ անէլ - *տե՛ս* ՀԱԽԸՌԷԼ: *Ասում ա, յէզնանը պըկան փըռնում, հախըռամիշ անում, մին լանվ օտում, մօշտը մաչին պըրանվում* (ՀԺՀ, VII, 209):

- Հախըռ(լ)ամիշ ինիլ - տե՛ս ՀԱԽԸՌՎԷԼ:

ՀԱԽԹԷԼ - *տե՛ս* ՅԸ՛ԽՆԷԼ:

ՀԱԽԹԸՎԷԼ - *տե՛ս* ՅԸ՛ԽՆԸՎԷԼ (1):

ՀԱԽԸՌՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԱԽԸՌԷԼ-ի:

ՀԱԽԻ-ՆԸՀԱԽԻ - *տե՛ս* ՀԱԽԷ-ՆԸ-ՀԱԽԷ:

ՀԱԽԿ - *գ.* 1. *տե՛ս* ՀԱԽ: 2. Ընկերակից գութանավորներից յուրաքանչյուրի վարելու բաժինը: *Ըտի Ըշօտէն հախկը մընաց վըրէլու* (Ձ):

ՀԱԽԿԱՀԱՆԸ՛Վ - *տե՛ս* ՀԸԽԿԸ-ՀԱՆԸ՛Վ:

ՀԱԽԿԱՀԷՍԱԲ - *տե՛ս* ՀԸԽԿԸՀԷ-ՍԱԲ:

ՀԱԽԿԻ - *ած., մ.* Տեղին, իրավացի: - *Մ՛ Պուդ, ըսէցի շատ լ՛ավ ըս ասըմ, խօսկըտ հախկի ա...* (ՋՏ, Բ, 44):

ՀԱԽՈՌԱՄԻԾ - *տե՛ս* ՀԱԽԸՌ(Լ)ԱՄԻԾ:

ՀԱԽՈՌԷԼ - *տե՛ս* ՀԱԽԸՌԷԼ:

ՀԱԽՏԷԼ - *տե՛ս* ՅԸ՛ԽՆԷԼ:

ՀԱԽՏԸՎԷԼ - *տե՛ս* ՅԸ՛ԽՆԸՎԷԼ (1):

ՀԱԿ/ՀԱԿՆԸ - *գ.* 1. Խուրջինի երկու մասերից՝ աչքերից յուրաքանչյուրը: *Հացը տինում ա խուրջինին մին հակումը, կ՛ինին՝ էն մին, շըլանկում, ք՛ինամ ուրանց բաղէրը* (Ձ): 2. Բեռնակիր անասունի երկու կողքից կախ ընկած բեռներից ամեն մեկը: *Պիծի ախպէրը ըսէս ա.- Պէռանը մին*

հակը յէդ ա իլալ, մին հակըն էլ՝ մը՛ղըր (ՀԺՀ, V, 317): 3. Կշեռքի նժարներից յուրաքանչյուրը: *Ծըրքըլըլը՛խան մին պէն ա տ՛ուս օնում, տինում քըշըռքէն հակումը...* (ՀԱԲ, 15, 52): 4. Կալի եզրը: *Կալ՛ին հակումը վը՛նն ա կէնում, ճըղճըղամ* (Ձ):

- Հակէն (դայաղ) կէնալ/ինիլ - Օգնել, աջակցել, սատարել: *Ամէն ուռթանա յէր ըմ կացալ, Նըհըտակէն յէշալ, ասալ.- Մ՛ Նըհատակ, խօցըս հակէն կէնաս* (ՆԱԲ, 319):

- Հակ ըղնէլ - Մի կողքի վրա թեքվել: *Էշին պէռնը հակ ա ընգալ* (Բ):

- Հակ տալ - Գրաստի բեռը համետի երկու կողքերից կախ գցելով՝ բարձել: *Փանը հակ ա տամ, ինք՛ըն էլ մաչին նըստում, շուվշուվալավ կ՛ամ տօն* (Ձ):

ՀԱ՛ԿԼԱ՛ԿՈՒԿՈՒԾ/ԱԿՌԱԿՈՒԿՈՒԾ/ՀԱ՛ՊԼԱ՛ԿՈՒԿՈՒԾ - *գ., ած.* Տգեղ՝ անճոռնի կերպարանք ունեցող (մարդ): *Ըտըրան էլ ինա՛մ ա էրկու հա՛կլա՛կուկուշ ախճիգ՛* (Ձ):

- Հա՛կլա՛կուկուշ կըտըրէլ - Խիստ հարբել: *Մըկըրնէն խըմում ըն, հա՛կլա՛կուկուշ կըտըրում, հարթանըն ա փըսէն մըննըրնէրան քըցա՛ում* (Ձ):

ՀԱԿՆԸ - *տե՛ս* ՀԱԿ:

ՀԱԿՈՒՄ(ՆԸ)-ՀՈՒԿՈՒՄ(ՆԸ) - *գ.* Որեւէ գործի սկիզբը եւ վերջը: *Էտ կօրծէն հակումը-հուկումը մահլա՛ում չի անում* (Բ):

- Հակում-հուկումը ինիլ - Գործը գլուխ գալու վրա լինել: *Ըսլանէն տօնը հակում-հուկումըն ա, էս շէբաթը պըրծընական ըն* (Ձ):

ՀԱԿՈՒ(Ն) - *տե՛ս* ԿԱՂԼԷԳ՛:

ՀԱ-ՀԱ - *մ.* Գրեթե, համարյա: *Հա-հա մը՛ռնում ար, դոխտուրը յը՛կավ, ըգադից* (Բ):

ՀԱՂ - *տե՛ս* ԽԱՂ:

ՀԱՂԱԼ - *տե՛ս* ԽԱՂԱԼ:

ՀԱՂԱԼԻՔ՛ - *տե՛ս* ԽԱՂԱԼԻՔ՛:

ՀԱՂԱՂ - *տե՛ս* ԽԱՂԱՂ:

ՀԱՂԱՂՈՒԹԻՒՆ - *տե՛ս* ԽԸՂԸՂՕԹՈՒՆ:

ՀԱՂ-ՀԱՂ - *տե՛ս* ԽԱՂ-ԽԱՂ:

ՀԱՂՍ - *տե՛ս* ԽԱՂՍ:

ՀԱՂՈՒՂ - *տե՛ս* ԽԱՂՈՒ(Ղ):

ՀԱՂՕՂ - *տե՛ս* ԽԱՂՈՒ(Ղ):

ՀԱՂՕՐԹ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՀԸՂՕՐԹ(Ը)ՎԷԼ:

ՀԱՃԱՐ/ՀԱ՛ՃԱՐ *(գրբ. հաճար)* - *գ.* Հացազգիների ընտանիքին պատկանող հացաբույս՝ հաճար, ինչպես նաեւ նրա հատիկը: *Հըճարավ փըլավ ըն անում, ղունաղէն հա՛ուրա՛ումա՛թ անում* (Ձ):

- Հըճարէն ածէլ/անէլ - *տե՛ս* Լըվըկարկուտ անէլ:

ՀԱ՛ՃԱՐ - *տե՛ս* ՀԱՃԱՐ:

ՀԱՃԱՐԿ - *գ.* Հաճարենու պտուղը, որը նման է արեւաածաղկի սերմերի, սակայն ավելի խոշոր եւ եռանկյունաձեւ: *Խօգ՛էրը հաճարկը օտում ըն, յըղըկալ՛ում* (Բ):

ՀԱ՛ՃՈՒՃ-ՄԱ՛ՃՈՒՃ - *տե՛ս* ԱՃՈՒՃ-ՄԱ՛ՃՈՒՃ:

ՀԱՃՕՂ/ՀԱՉՕՂ/ՀԱՋՕՂ/ԱՃՕՂ *(գրբ. յաջող)* - *ած.* 1. Հաջողությամբ պսակվող: *Հաճօղ կօրծ ա փըռնալ Սըմսօնաց Յաշան* (Բ): 2. Շահավետ, օգտակար: *Բօստան անէլը հաճօղ կօրծ ա* (Բ): 3. Լավ, պահանջները բավարարող: *Մըրյանէն հարթնը հաճօղ հարթն ա* (Բ):

ՀԱՃՕՂՎԷԼ/ՀԱՉՕՂՎԷԼ/ՀԱՋՕՂՎԷԼ/ԱՃՕՂՎԷԼ *(գրբ. յաջողիմ)* - *չբ.* Իրականանալ, հաջողությամբ պսակվել: *Շատ ըն չըրչարվըմ վը՛ռսկաննին, վէրչը բախրին ըսպանիլը հաճօղվըմ ա* (ԼՂԲ, 334):

ՀԱՃՕՂՈՒԹԻՒՆ/ՀԱՉՕՂՈՒԹԻՒՆ/ՀԱՋՕՂՈՒԹԻՒՆ/ԱՃՕՂՈՒԹԻՒՆ *(գրբ. յաջողութիւն)* - *գ.* Հաջող՝ նպաստավոր արդյունք՝ ելք: *Թօղէ հաճօղութի՛ւն ինի մէր ջիհիլնէրէն կուրծէրէն, մէխկ ըն* (Բ):

ՀԱՄ[1] *(գրբ. համ)* - *գ.* 1. Ճաշակելիքով ստացած տպավորություն: *Խուրա՛գ՛ին համը ըտըրան տուր չի կ՛ամ* (Ձ): 2. *փխբ.* Ախորժելիություն, բավականություն, ախորժելի տպավորություն: *Համան քուշտացալ չընք* (Բ):

- Համա ըղնէլ - *տե՛ս* Համը տ՛ուս կ՛ալ:

- Համէն ըղնէլ - Հավանելով՝ ախորժելով մի բանից ձեռք չքաշել: *Խօխէնք՛ը համէն ըն ընգալ, ամմէն օր ք՛ինամ ըն խաղվէն բաղը* (Բ):

- Համը կ՛ալ - *տե՛ս* ՀԸՄԸՂԱՆԱԼ:

- Համը հանէլ - 1. Չափն անցնել, չափի զգացումը կորցնել: *Թա՛զգա՛ հարթնը համը հանում ա, տ՛ուս ըն քըցա՛ում* (Ձ): 2. Ձանձրացնել, տաղտկացնել: *Շուլուղըն էլ էնքան բիդի անիս, վէր համը հանիս վէչ* (Բ):

- Համը պիրանումը թօղնէլ - Մեծ հաճույք՝ բավականություն պատճառելով՝ կարոտ թողնել: *Ըտի էտ ախճիգ՛ը ա՛ուրա՛ն խուրըգ՛նէրէն համը տըղէն պիրանումըն ա թօղնում* (Ձ):

- Համը պիրանումը մընալ - Մեծ հաճույք՝ բավականություն ստանալով՝ փափագել կրկին ճաշակելու: *Էտ խըրըվածէն համը ղունաղէն պիրանումըն ա մընաս* (Բ):

- Համը տանէլ - *տե՛ս* Համը հանէլ:

- Համը տը՛սնալ/օնէլ - Համն առնել՝ փորձել, համտեսել: *Վէրչը, լօխճինին համըն օնում ա...* (ՀԺՀ, VII, 317):

- Համը տ՛ուս կ՛ալ/ք՛ինիլ - 1. Համը՝ համեղությունը կորչել: *Վէր թօռ յը՛կավ, գ՛իդա՛ վէր թօթէն համը տ՛ուս կըկ՛ա* (Բ): 2. Տաղտկալի՝ ձանձրալի՝ անախորժ դառնալ: *Էտ կընէգ՛ը էնքան խօսից, լափ համը տ՛ուս յը՛կավ* (Ձ):

- Համ յը՛ր օնէլ - Տհաճ համ ստանալ: *Կինին կըրասումը վէր շատ կէնա, համ յը՛ր կօնէ* (Բ):

- Համ տալ - Իր իսկական համի հետ ուրիշ՝ տհաճ համ էլ ունենալ: *Մարթը խըմում ա, թա.- Մ՛ կընէգ՛, էս կինին լ՛ավ կինի յա իլալ, էս խէ համ ա՞ տաս* (Ձ):

ՀԱՄ[2] *(պրս., թրք. hem)* - *շ.* Գործածվում է կրկնությամբ՝ եւ... եւ, թե՛...թե՛: *Սաղումըն էլ համ ղօչաղ ա լալ, համ դ՛ուզօ՛թուն սիրօղ* (ԱԱ, 22):

- Համ էլ (ամ) - Նաեւ, բացի դրանից: *Ամմա պուճուր տըղան լօխճան ղօչչաղըն ա ինա՛ում, համ էլ լօխճան խէլունքը* (ՀԺՀ, V, 15):

- Համ կ՛օղէն նըհը՛տ ա հընգէր, համ ք՛ըրվանէն նըհը՛տ պարիկամ - Ասում են նենգ՝ խարդախ մարդու մասին:

- Համ հավէն փիչիլ, համ կաճ՛ին - *տե՛ս* Համ նալէն թըխէլ, համ մէխին:

- Համ յը՛ր ինիլ, համ վէր - Շատ լինել, լրիվությամբ բավարարել: *Ասում ա.- Էլ օգ՛ում չըմ, էսքանը ինձը՛տէ համ յը՛ր ա, համ վէր* (Ձ):

- Համ նալէն թըխէլ, համ մէխին - Իրար հակասող բաներ ասել՝ անել: *Ըտըրանա պէն չընք կըլխու ըղնում. համ նալէն ա թըխում, համ մէխին* (Բ):

- Համ վը՛ննան տէպէգ՛ ինիլ, համ կըլխան - Եվ աղքատ, եւ հիմար լինել: *Ընդրրա հու բի՞դի ախճիգ՛ տա. համ վը՛ննան ա տէպէգ՛, համ կըլխան* (Բ):

- Համ տանան, համ շանան - Եվ օրինավոր, եւ անօրեն, բնավորության դրական եւ բացասական գծեր ունեցող: *Միհէնգ՛վա թըվումը տըղամարթը բիդի համ տանան ինի, համ շանան, վէր կարէ տօն պահէ* (Բ):

- Համ օղտան վախէլ, համ կըտըտան - Բոլորից՝ եւ մեծից՝ ուժեղից, եւ փոքրից՝ թույլից վախենալ: *Վէր ք՛ուխէն խօխան էլ ա ըսքըսէս ճըղճըղալը, Մացակը էլ տէմ չի կընաս, մէհէտ տըրըքցընէս ա, թա.- Հինչ ա՞, համ օղտան ըմ վըխըլան, համ կըտըտա՞ն* (Ձ):

ՀԱՄԱ - *տե՛ս* ԱՄՄԱ:

ՀԱ՛ՄԱ՛ՂԱ՛Ն - *տե՛ս* ԷԾ (1, 5, 6):

ՀԱՄԱԾԱՅՆ/ՀԱՄԱՁԱՅՆ *(գրբ. համաձայն)* - 1. *ած.* Համամիտ, համակարծիք: *...Ք՛ա՛ցա՛լ ա Ըստուծէն կօշտը, թա.- Ամմէն հինչու համաձայն ում...* (ԱԱ, 71): 2. *կ.* Ըստ, համապատասխան, համեմատ: *Ք՛ա՛հնա՛ ըդա՛թին համաձայն՝ առաչին օրը հարթնը պիտի ա՛ուրա՛ն պատրունէն վը՛ննէրը լըվանա...* (ՆԼՂԺԲ, 123):

ՀԱՄԱԾԱՅՆ(Ը)ՎԷԼ/ՀԱՄԱՁԱՅՆ(Ը)-ՎԷԼ *(գրբ. համաձայնիմ)* - *չբ.* Ընդունել, հավանություն՝ համաձայնություն տալ, համաձայնել: *Վէրջը համաձայնըվում ա, լաՆցավ, շուվանավ ք'ընում* (ՀԱԲ, 15, 53):

ՀԱՄԱԾԱՅՆ(Ը)Ց(Ը)ՆԷԼ/ՀԱՄԱՁԱՅՆ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *պբ. եւ նբ.* ՀԱՄԱԾԱՅՆ(Ը)ՎԷԼ-ի:

ՀԱՄԱԾԱՅՆՕԹՈՒՆ/ՀԱՄԱՁԱՅՆՕԹՈՒՆ *(գրբ. համաձայնութիւն)* - *գ.* Համաձայն լինելը, համաձայնություն: *Խանէն համաձայնօթունը ըտըրա շատ ա ուրխըցընէս* (Ձ):

ՀԱՄԱՁԱՅՆ - *տե՛ս* ՀԱՄԱԾԱՅՆ:

ՀԱՄԱՁԱՅՆ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՀԱՄԱԾԱՅՆ(Ը)ՎԷԼ:

ՀԱՄԱՁԱՅՆ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԱՄԱԾԱՅՆ(Ը)Ց(Ը)ՆԷԼ:

ՀԱՄԱՁԱՅՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՄԱԾԱՅՆՕԹՈՒՆ:

ՀԱՄԱՄ *(արաբ. hammām, պրս. hāmmam, թրք. hamam)* - *գ.* 1. Տաք ջրով լողանալու համար հատուկ հարմարություններով շենք՝ բաղնիք: *Արէվիատը տըրան յօր ա օնում, տանում համամ, լըողցընում...* (ՀԱԲ, 15, 40): 2. *փխբ.* Խիստ շոգ՝ խեղդուկ տեղ: *Էս էլ հօ տօն չի՞, համամ ա, լ'ըհա նի յըս մընում, բօղլամիշ ըս ինՆում* (Բ):

- Համամ անել - Բաղնիքում լողանալ: *Համամ ա անում, թանզզա՛ շօ՛րէրը կ'ը՛նում, ք'ինամ հըրսանէք'* (Ձ):

- Համամ ք'ինօղը կըքըրթնընքէ - Գործ ձեռնարկողը դժվարությունների՝ նեղությունների կհանդիպի:

ՀԱՄԱՄՉԻ *(թրք. hamamči)* - *գ.* Բաղնիքում ծառայող անձ, բաղնեպան: *Համամչին ըտըրա շօ՛րէրը կ'ուղանում ա, փախճՆում* (Ձ):

ՀԱՄԱՆ/ՀԱՄԻՆ *(պրս. heman)* - *դ.* Նույն: *Ք'իս ըն տըսնաս՝ համանն մարթը հըղըցէն մաչին նըստած, մին սէվ էշ էլ կօխկէն կապած* (ՆԼՂԺԲ, 37):

- Համանն բըյդաղէն տակէն ինիլ - Համախոհ լինել: *Նախագան ա բըրիգադիրը համանն բըյդաղէն տակէն ըն ինՆում* (Ձ):

- Համանն էշըն ա, փալանըն ա փոխվալ - *տե՛ս* էշը էլհա՛ էն էշըն ա, փալանըն ա փոխվալ:

- Համանն հացան կըծէլ - *տե՛ս* Մինտը՛ղ հաց կըտըրէլ:

ՀԱՄԱ(Ն)Չ/ՀԱՄԷՆՉ - *գ.* Ամաչելը, ամոթի զգացում: *Սէրըն ու համանչը քուրախպէր ըն...* (ՆԱԲ, III, 175):

- Համանչ ինիլ/քաշիլ - *տե՛ս* ՀԸՄԱՆՉԻԼ:

- Հըմանչավ թօղնէլ - Ամոթալի վիճակի մեջ գցել: *Ըսատուրը մէգ շատ ա ք'օ՛մանգ' անում, հըմանչավ թօղնում* (Բ):

- Հըմանչավ մընալ - Որեւէ պատճառով ամոթալի վիճակի մեջ ընկնել: *Խօսկ տըվէցէ, ըրէցէ վէջ, ըտի էլ հըմանչավ մընացէ* (Բ):

ՀԱՄԱ(Ն)Չ-ՀԱՐԿ - *գ.* Ամոթ ու պատկառանք: *Տընըշինիտ տըղան ըսկի համանչ-հարկ չօնէ* (Բ):

ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ - *ած., գ.* Հայտնի անբարոյական (կին): *Էտ համաշխարայինը օրը օխտը տըղամարթ ա փուխէս* (Բ):

ՀԱՄԱՎ - *տե՛ս* ՀԱՄԸ՛Ղ:

ՀԱՄԱՎ-ՀՕՏԱՎ/ՀԱՄԱՎ-ՎԸ՛ՏԱՎ - 1. *ած.* Համեղ ու հոտավետ, հաճելի, ախորժելի: *Համավ-հոտավ խաշլամա յա* (Բ): 2. *մ.* Հաճելիորեն: *Պէտին ըրթ'ը՛ղը քաշ ա տինըմ, մը՛ծ ախպօրը համավ-հոտավ նաղլ անում...* (ՀԺՀ, V, 668):

ՀԱՄԱՎԱՐ - *ած.* Հարթ, տափարակ: *Կ'ամ ըն, հըսնում մին համավար տը՛ղ* (Ձ):

ՀԱՄԱՎ-ՎԸ՛ՏԱՎ - *տե՛ս* ՀԱՄԱՎ-ՀՕՏԱՎ:

ՀԱՄԱՐ *(գրբ. համար)* - *տե՛ս* ՆՈՒՄԷՐ:

ՀԱՄԱՐԾԱԿ *(գրբ. համարձակ)* - *տե՛ս* ՂՕՀՉԱՂ:

ՀԱՄԱՐԾԱԿՕԹՈՒՆ *(գրբ. համարձակութիւն)* - *տե՛ս* ՂՕՀՉԱՂՕԹՈՒՆ:

ՀԱՄԱՐՅԱ (ԹԱ) *(գրբ. համարեա թէ)* - *մ.* Գրեթե, մոտավորապես: *Համարյա պըրծալ ըմ, պատառ ա մընացալ* (Բ):

ՀԱՄԲԱԼ *(արաբ. hammal)* - *գ.* 1. Շալակով բեռներ փոխադրող մարդ, բեռնակիր: *Պըլը-Մէլը կընգանը լըսըմ ա, տՆուս կ'ամ մին համբալ կանչըմ, սանդուղը շէլակ տամ՝ տանէ բազար* (ՀԺՀ, VI, 194): 2. *փխբ.* Ստոր՝ անարժան մարդ: *Էտ համբալը սաբավ հարուստ ա, կօշտ փօրավ հաց չի օտում* (Բ):

- Հըմբալու յը՛զնը - Բազմաչարչար՝ բազմաշխատ մարդ: *Ալ'օ՛ն հըմբալու յը՛զն ա, սաղ օրը էն ա չըրչըրվէս* (Բ):

ՀԱՄԱԲԱԼԱ - *գ.* Սյուների վրա դրվող երկար տաշած գերան, որի վրա տեղադրվում են տանիքի գերանների ծայրերը: *Համբալան վէր կօտըրից, կընէգ'ը ծուվվաց* (Ձ):

ՀԱՄԲԱՐՔ *(գրբ. համար, պրս. hamār)* - *տե՛ս* ՀԱՆԸՐԸՎ (1, 2, 3):

ՀԱՄԲՈՒՔ - *տե՛ս* ԹՈՒՓԱԿ:

- Համբուզ անէլ/տալ - *տե՛ս* Թուփ անէլ:

- Համբուզ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* Թուփ կ'ալ:

ՀԱՄԴԱԾ - *տե՛ս* ԱՐԻՑ:

ՀԱՄԷՆՉ - *տե՛ս* ՀԱՄԱ(Ն)Չ:

ՀԱՄԷՇԱ/ՀԱՄԻՇԱ *(պրս. hamiša)* - *տե՛ս* ԷՋՋԱՆ(ԱՆ): *Ի՛ւրանք էլ համէշա՛ իտի լանվ ապրէցին մինչը՛վ ի՛ւրանց գ'անքին վը՛ըրչը* (ՀԺՀ, V, 211):

ՀԱՄԷՑԱՔ - *տե՛ս* ՀԱՄԷՑԷՔ':

ՀԱՄԷՑԷՔ'/ՀԱՄԷՑԻՔ/ՀԱՄԷՑԱՔ - *ձ.* Որեւէ տեղ հրավիրելու կամ որեւէ բան մատուցելու արտահայտություն՝ խնդրեմ: *Համէ՛ցէք', էք'ՆՆց յը՛կէք' մէր տօն ղօնաղ* (Բ):

- Համէցէք' անէլ - 1. Հյուրասիրել, հրամցնել: *Տահանք վար շատ նըստում ըն, էտ ճըղացպանը վը՛չ մին պանի համէցէք' չանըմ* (ՆԼՂԺԲ, 105): 2. Հրավիրել: *Մուտունալավ ինք' մին բաղու, տարը հըտըռնէրաս կ'ամ ար, մը՛զ համէցիք ըրավ* (ԼՂԲՔ, 262):

ՀԱՄԷՑԻՔ - *տե՛ս* ՀԱՄԷՑԷՔ':

ՀԱՄԸ՛Ղ *(գրբ. համեղ)* - *ած.* Ախորժելի, համեղ: *Այան համը՛ղ խուրըգ'նէ յա իլալ շինիս* (Բ):

ՀԱՄԻՆ - *տե՛ս* ՀԱՄԱՆ:

ՀԱՄԻՇԱ - *տե՛ս* ՀԱՄԷՇԱ:

ՀԱՄՄԱ - *տե՛ս* ԱՄՄԱ:

ՀԱՄՆԸ - *գ.* Արորի երկար կորնթարդ ձողը, որի վրա հագցրած է մաճը: *Ըլաթէն համը կօտրում ա, մընամ ա մանթալ* (Ձ):

ՀԱՄՇԱՆՐԻ *(պրս. hemšehri, թրք. hemšeri)* - *գ.* 1. Համաքաղաքացի, համերկրացի: *Մին օր էլ ըտըրան էտ յիրգ'իրումը մին համշանրի յա ջըհանում* (Ձ): 2. *տե՛ս* ՊԱՐՍԻԿ: 3. *արհմ.* Անշնորհք՝ անտաշ՝ կեղտոտ մարդ: *Էտ համշանրին լօխճին աշկէն պըլօր ա* (Բ):

ՀԱՄՈՒՋ - *տե՛ս* ՀԱՄՕՋ:

ՀԱՄՈՒՋԷԼ - *տե՛ս* ՀԱՄՕՋԷԼ:

ՀԱՄՈՒՋՎԷԼ - *տե՛ս* ՀԱՄՕՋՎԷԼ:

ՀԱՄՈՒՋՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԱՄՕՋՑ(Ը)ՆԷԼ:

ՀԱՄՈՒԹ - *տե՛ս* ՀԱՄՕԹ:

ՀԱՄՈՒԹԱԼԻ - *տե՛ս* ՀԱՄՕԹԱԼԻ:

ՀԱՄՈՒԹԱՏԸ՛Ղ - *տե՛ս* ՀԱՄՕԹԱՏԸ՛Ղ:

ՀԱՄՈՒԹՔ - *տե՛ս* ՀԱՄՕԹՔ:

ՀԱՄՓ/ՀԱՓ - *ձ.* 1. Բերանը արագ բացել-փակելուց առաջացած ձայնը: *Աղվէսը, հա՛մփ, ճօտը յօր ա օնում, ք'ինամ* (Ձ): 2. Շան հաչոցի ձայնը: *Շօնը հանչՆում ա՝ հա՛մփ, հա՛մփ* (Բ):

- Համփ անէլ - 1. Բերանը արագ բացելով-փակելով՝ ձայն հանել, հաչել: *...Մին քանի շան թուլէք' բիրանդի հանչՆում ըն, մարընը էլ մէհէտ համփ ա անում, թուլէք'ը սուս ըն անում* (ՀԺՀ, VII, 313): 2. Խլել՝ հափշտակել ու անմիջապես ուտել՝ խռժել՝ կուլ տալ: *Էտ կընգանը աշկը ծակ ար, ինք'ըն էլ հինչ ինըմ ար, համփ ար անըմ...* (ՀԺՀ, V, 524):

ՀԱՄՓԱ *(պրս. ham (միասին) եւ pa(y) (ընկերին հավասար գնացող)* - *ած., գ.*

Հարուստ, ունեւոր (մարդ): *Միհէնգ՝ Դարաբաղ էլ համփա մարթիք՝ շատ կան* (Բ):

ՀԱՄՓԷԼ - *չբ., նբ. տե՛ս* Համփ անէլ:

ՀԱՄՓԷՐԱՆՔ/ՀԸՄՓԷՐԱՆՔ - *տե՛ս* ՀԱՎԱՆԱԼ:

ՀԱՄՓԷՐԻԼ/ՀԸՄՓԷՐԷԼ *(գրբ. համբերեմ)* - *չբ. տե՛ս* Հանվանալ անէլ: *Էտ տըղան համփէրում չի, ք՝ընում ա, տը՛սնըմ էտ ըխճըկանը...* (ՀԺՀ, V, 573):

ՀԱՄՓԷՐՈՒԹԻՆ/ՀԸՄՓԷՐՕԹՈՒՆ *(գրբ. համբերութիւն)* - 1. *տե՛ս* ՀԱՎԱՆԱԼ: 2. *ձ.* Ցավակցման արտահայտություն: *Լօխ մուտանում ըն էտ մը՛ռած տըղէն հօրը, ծը՛ռք տամ, ասում՝ համփէրութի՛ւն* (Ձ):

ՀԱՄՔԱՌ *(պրս. hemkār (գործակից)* - *գ.* Արհեստակիցների միության անդամ: *... Ղալին սօվդաք՝արնէն ու հանք՝անը թօխտ ըն շինըմ, ուրթումը օտըմ, վէր կ՝իրակի յա ազիզ օրէրը դուք՝ան չըպէնան...* (ՋՏ, Ա, 72):

ՀԱՄՕՋ/ՀԱՄՈՒՋ *(գրբ. համոզ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Համօզ անէլ/կըցընէլ - *տե՛ս* ՀԱՄՕՋԷԼ:

- Համօզ ինիլ/կէնալ - *տե՛ս* ՀԱՄՕՋՎԷԼ:

ՀԱՄՕՋԷԼ/ՀԱՄՈՒՋԷԼ/ՀԸՄՕՋԷԼ *(գրբ. համոզեմ)* - *նբ.* Հավանեցնել, բացատրելով ընդունել տալ, հորդորել: *Ամմա էտ մարթը հըմօզում ա էտ տըղէն...* (ՀԺՀ, V, 406):

ՀԱՄՕՋՎԷԼ/ՀԱՄՈՒՋՎԷԼ/ՀԸՄՕՋՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԱՄՕՋԷԼ-ի: *Իրէքան համօզվէս ըն, ք՝ընիս* (ՀԺՀ, V, 317):

ՀԱՄՕՋՑ(Ը)ՆԷԼ/ՀԱՄՈՒՋՑ(Ը)ՆԷԼ/ՀԸՄՕՋՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԱՄՕՋԷԼ: *Տը՛ղան ասում ա.- Ք՝ընա՛ պէ՛ր ծէր տօն, յը՛ս ընդրրան համօզցընիմ, ինձ մըհար յօր օնիմ* (ՀԺՀ, V, 327):

ՀԱՄՕԹ/ՀԱՄՈՒԹ *(գրբ. ամոթ)* - 1. *տե՛ս* ՀԱՄԱՆՉ: 2. *ձ.* Գործածվում է որպես նախատական բացականչություն: *Հանը կըզնըվում ա յըրան, թա.- Համօ՛թ ք՝ը՛զ* (Ձ):

- Համօթ ա - Ամոթալի է: *Մարթը ասմա.- Մ՝ կընէգ՝, համօթ ա, սո՛ւս ըրա* (Ձ):

- Համօթէն ծառը յը՛ր ինիլ - Ամոթի պատրվակի տակ անամոթություն անել: *Ղանխպա՛ կընէգ՝ը շատ հիշտ ա համօթէն ծառը յը՛ր ինի՛ում* (Բ):

- Համօթը տէն/մին ղօլ - Խոսքի մեջ բանաձեւային արտահայտություն, երբ ցանկանում են անպարկեշտ արտահայտություն անել կամ խոսակցի նեղ անձնական որեւէ հարց շոշափել: *Սի՛մօն, համօթը տէն, քու մըրաքուր էլիա ղըխպօթի՛ւն ա՞ ընէս* (Բ):

- Համօթ չինի - *տե՛ս* Համօթը տէն:

ՀԱՄՕԹԱԼԻ/ՀԱՄՈՒԹԱԼԻ *(գրբ. ամոթալի)* - *ած.* Ամոթ բերող, ամոթալի: *Էտ մարթը հ՝ուրան գ՝անքումը համօթալի պէն ըրած չի* (Բ):

ՀԱՄՕԹԱՏԸ՞Ղ/ՀԱՄՈՒԹԱՏԸ՞Ղ - *գ.* 1. Ամաչելու տեղիք՝ պատճառ՝ առիթ: *Կընգանը վէր համօթատը՞ղ չիլա՛վ, մարթին տօնը կը՝ք՝անդի* (Բ): 2. *տե՛ս* ՀԱՄՕԹՔ:

ՀԱՄՕԹՔ/ՀԱՄՈՒԹՔ *(գրբ. ամոթք)* - *գ.* Սեռական գործարաններ: *Հըմանչում էլ չի, վը՞ննէրը շըքըռալ ա, համօթքը պէց ըրալ* (Բ):

ՀԱՅ[1] *(գրբ. հայ)* - *գ.* Հայաստանի բնիկ ժողովուրդը, հայ ազգի ներկայացուցիչ: *Տըրա հէտէ յա հայը միշտ սըրէրում, քըրէրում ըպրէս* (ԲՅԲ, 177): 2. *փխբ.* Բանիմաց՝ հասկացող մարդ: *Տու հայ չը՞ս, էսքան ասում ըմ, կըլօխ չը՞ս ըղնում, վէր տի չի* (Բ): 3. *փխբ.* Միամիտ՝ հավատավոր մարդ: *Ոէ խիկարընն էլ հայ ա, լի՞, հըվատում ա, ծին տամ ըտըրան* (Ձ): 4. *փխբ.* Կանանց կողմից իրենց ամուսիններին տրվող անուն: *Մաքաղաթ հանսին ասմա.- Մէր հայը ք՝ը՞ցալ ա ծըմակը, հանլա՛ յը՞կալ չի. էն ըմ նիգ՝ա՛րանն* (Ձ):

- Հային տը՞ղը՝ օրը քըցիլ - Դժվար կացության մեջ դնել: *Շահը ասմա.- Վէր մէհէտ էլ ըտի պէն ըսկանամ, ծը՞զ հային տը՞ղընը ըմ քըցիլանն* (Ձ):

- Հայու ըռանգ՝ավ - Ցորնագույն: *Էտ ռուսնէրէն մաչին հայու ըռանգ՝ավ մին մարթ ա տը՞սնում* (Ձ):

- Հայում՝ տըվարած, թօրքում՝ տըվարած - Ասում են նրանց մասին, ում կենսամակարդակը չի փոխվում՝ անկախ բնակության տեղից:

- Հայօց հարցը - Դժվար՝ անլուծելի հարց: *Հայօց հարցընն ա տը՞ռալ, կարում չընք, թա տօնը շինինք՝, պըրծընինք՝* (Բ):

ՀԱՅ[2] - *ձ.* 1. Խրոխտանալու՝ սպառնալու բացականչություն: *Հա՛յ ծը՞ք՝ըքըս կըղնիս հա՛, դուվանըտ կանիմ* (Ձ): 2. Հանդիմանության՝ հեգնանքի բացականչություն: *Հայ քու տօնը չը՞ք՝անդըվի, էս հինչ ը՞ս ըրալ* (Բ): 3. Օգնության կանչ՝ հասե՛ք, օգնեցե՛ք: *Կընէգ՝ը ծուվծուվաս ա.- Հա՛յ, խօխաս մը՞ռավ...* (Ձ):

Հայ գ՝իդի հա՛ - Անցած երանության՝ լավ բանի վերհիշելու բացականչություն՝ երանի՜: *Հայ գ՝իդի հա՛, հի՞նչ ք՝ը՞փ ընք ըրալ մը՞կալ տարէն Արչին ըխպիրին ղըրաղէն* (Բ):

- Հայ դադ, հայ բէդադ - Ասում են, երբ մեկը անտեսում է տված խորհուրդները:

- Հայ թա - *տե՛ս* ՀԱՅ[2] (1):

- Հային կ՝ալ/հըսնէլ/ք՝ինիլ - Ծանր՝ նեղ վիճակում գտնվողին օգնության հասնել: *Տըղան ասում ա.- Վը՞ր յէկալ ըն կ՝ըխտարին հային, կ՝ինիստարնէն յէս հըվաքած ըմ իլա՛լ...* (ՀԺՀ, VI, 125):

- Հայ տալ - 1. Շտապեցնել, փութացնել: *Հայ տո՛, արտը հընձ՝ին, թօռը նի յա ունական* (Ձ): 2. Վանել, քշել: *Ըտի թուրքէրէն հայ տուվէցէնք՝ մէր շինըթկընէրան* (Բ): 3. Կանչել, գոռալ: *Հիշկան հայ տըվէ, վէշ մինը ըսկացավ վէչ* (Բ): 4. Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ տեղ հասնել: *Հայ ա տուվալ, յը՞կալ, տը՞սալ հանը մը՞ռած* (Բ):

ՀԱՅԱ *(թրք. hayā)* - *տե՛ս* ԱԲՈՒՌՀԱՅԱ(Թ):

ՀԱՅԱԹ *(թրք. hayat)* - *գ.* 1. Բակ: *Էտ ախճիգ՝ը տանուս ա կ՝ամ հայաթը, հէտո տօն մըտնում...* (ԲՅԲ, 41): 2. Այգի: *Մէլիք՝ին էլ մին հայաթ ա ինի՛ում, հինչ բար ասիս, մաչին ինի՛ում ա* (Ձ):

ՀԱՅԱՍԷՐ - *տե՛ս* ՀԸՅԱՍԷՐ:

ՀԱՅԱՍԸՋ *(թրք. hayasiz)* - *տե՛ս* ԼԱՉԱՌ:

ՀԱՅԱՍԸՋՕԹՈՒՆ - *տե՛ս* ԼԻՉԸՌՕԹՈՒՆ:

ՀԱՅԱՎԱՉԻ - *տե՛ս* ՀԸՅԸՎԱՉԻ:

ՀԱՅԱՎԱՐԻ - *տե՛ս* ՀԸՅԸՎԱՐԻ:

ՀԱՅԲԱ - *տե՛ս* ՀԱՅԲԱ՝:

ՀԱՅԲԱ՝/ՀԱՅԲԱ/ՀԱՅԲԳ՝Ա՝/ՀԱՎԳ՝Ա՝ *(թրք. heybe)* - *տե՛ս* ԽՈՒՐՋԻՆ: *Ախրը, մին հայբա՛ վը՞սկէ յա յէր կալալ, հըդէ ընգալ, ք՝էցալ* (ՀԺՀ, V, 544):

ՀԱՅ-ԲՈՒՅ - *տե՛ս* ՀԱՅ-ՀՈՒՅ:

ՀԱՅՈԱ *(թրք. hayidi)* - 1. *ձ.* Վտարելու՝ հեռացնելու բացականչություն՝ օ՞ն, գնացե՛ք: *Տը՞սնում ա, վէր էտ համը հանում ա, տանան տանուս ա քըցանում, թա՝ հայդա՛* (Ձ): 2. *մ.* Իսկույն, անմիջապես: *Ղօնաղը շօ՞րէրը կ՝ը՞նում ա, հայդա ք՝ինամ* (Ձ):

ՀԱՅԷՐԷՆ - *տե՛ս* ՀԸՅԷՐԷՆ:

ՀԱՅԻԼ-ՄԱՅԻԼ - *տե՛ս* ՀԸՅԻԼ-ՄԱՅԻԼ:

ՀԱՅԻՓ - *տե՛ս* ՄԸՂԱՓՆԻՆ:

ՀԱՅ-ՀԱՅ[1] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հայ-հայ անէլ - Գոռգոռալ, աղաղակել: *Էտ կընանէգ՝ը շատ հայ-հայ ըն անում, վէր հ՝ուրանք ուշուփնէ չընն, ընդրրանք հըվատում չընն* (ՀԺՀ, V, 547):

- Հայ-հայը ք՝ինիլ, վայ-վայը մընալ - Երիտասարդությունը՝ լավ օրերն անցնել, ծերությունը՝ վատ օրերը վրա հասնել: *Ինուրանն էլ մէնակ մին տըղա յա ինի՛ում, տըրան ասում ա.- Ոէ, իմ հայ-հայըս ք՝ը՞ցալ ա, մընացալ ա վայ-վայըս, էգ՝ի՛ծանլօր մըռնըլական ըմ...* (ՀԺՀ, VII, 99):

ՀԱՅ-ՀԱՅ[2]/ՀԷՅ-ՀԷՅ - *ձ.* Հիշելու՝ զարմանալու՝ ուրախանալու արտահայտություն: *Հայ-հա՛յ, լ՝ավ մարթ ա իլա՛լ Սուղումուն դային:*

ՀԱՅ-ՀԱՐԱՅ - 1. *տե՛ս* ՀԱՅ[2] (3): *Կը-նէգ՝ը վազ ա տամ, ծէն տամ, թա.- Հայ-հարա՛յ, յէկէ՛ք՝, մարթըս կ՝իժվալ ա...* (ՀԺՀ, VII, 280): 2. *մ.* Շտապով, շուտ: *Հընթնըսկէսուր էտ վէր տը՛սէն, հայ-հարայ փախէն* (Զ):

ՀԱՅ-ՀՈՒՅ/ՀԱՅ-ԲՈՒՅ/ՀՈՒՅ-ԲՈՒՅ - 1. *ձ.* Սպառնալիքի՝ հոխորտալու բացականչություն: *Խանը ճըղճըղամ ա.- Հայ-հո՛ւյ, ծը՛ղ կըկըտորիմ* (Զ): 2. *տե՛ս* ՀԱ-ՐԱՅ-ՀԸՐՕՑ: *Հայ-հույը ըղնում ա, թա վանզիրին տըղան կօրալ ա, ուրվամ չի* (ՀԱԲ, 15, 92):

- Հայ-հույ անէլ/քըցիլ - 1. Սպառնալ, հոխորտալ: *Աբէշիզ՝ը վէր շատ հայ-հույ ա անում, իշըվէրնէն փանը թօղնում ըն, յը՛տ տը՛ռնում շէնը* (Զ): 2. *տե՛ս* Հարայ-հըրօց անէլ:

ՀԱՅԿԱ - *գ.* Հայկ Նահապետը:

- Հայկա բալա - Հայորդի: *Հայկա բա-լան թօղէլ չի, վէր Ղարաբաղը թուր-քէրէն մընա* (Բ):

- Հայկան թըխից, մունք կէրանք - Ասում են այն դեպքում, երբ մեկն ան-ընդհատ ինչ-որ բան է անում, մյուսներն օգտվում են (գործածվում է հաթերք գյուղում):

ՀԱՅՎԱՆ - *տե՛ս* ՀԷՅՎԱՆ:

ՀԱՅՎԸՐՈՒԴ - *տե՛ս* ՎԱՅՎԸՐՈՒԴ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՒՆ/ՀԱՅՏԱՐԱՐՕ-ԹՈՒՆ - *գ.* Որեւէ բան հայտարարելը, հրապարակային ծանուցում, հայտա-րարություն: *Հայտարարութունը մին սալդաթ կարթըմ ա, ք՝ինում թաքա-վէրէն կօշտը, ասում.- Յը՛ս քու ըխճը-կանըտ կընքըթանամ...* (ՀԺՀ, V, 640):

- Հայտարարութիւն անէլ - Հրապա-րակավ ծանուցել, հայտարարել: *Հայ-տարարութիւն ըն անում, վէր թաքա-վէրը փըսակվում ա* (Զ):

ՀԱՅՏԱՐԱՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՅՏԱ-ՐԱՐՈՒԹՒՆ:

ՀԱՅՏՆԻ - *ած.* 1. Հանրածանոթ, որ բոլորը գիտեն, պարզ: *Թա մին էլ հիբ պէդմա էտ ճօլին լիւս աշխարք տիւս կ՝ա, հայտնի չի...* (ՋՏ, Բ, 67): 2. Որեւէ կողմով ճանաչված, հռչակված: *Հայտնի կ՝ինի շինօղ ա Ջըհան դային* (Բ): 3. *տե՛ս* ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ:

ՀԱՅՐԷՆԻՔ՝ *(գրբ. հայրենիք)* - *տե՛ս* ՎԱԹԱՆ: *Էտ ըխճըկէրքը յօր ըն օնըմ, յէտ տը՛ռնում բիդի ուրանց հայրէնիք՝ը* (ՀԺՀ, V, 31):

ՀԱՅՈՒԹՒՆ - *տե՛ս* ՀԸՅՕԹՈՒՆ:

ՀԱՆ - *տե՛ս* ՀԱՆԷ:

ՀԱՆԱԳ՝ - *տե՛ս* ԳԱՓ:

ՀԱՆԱԳ-ՄԱՍԽԱՐԱ - *տե՛ս* ՀԱՆԱԳ-ՄԱՍԽԱՐՕԹՈՒՆ:

ՀԱՆԱԳ-ՄԱՍԽԱՐՕԹՈՒՆ - *գ.* Կա-տակ ու ծաղր: *Հանանգ-մասխարութունը Պըլը-Պուղուն փէշակընը ա իլալ* (Զ):

ՀԱՆԱԳՉԻ - *տե՛ս* ԳԱՓՉԻ:

ՀԱՆԳ(Ի) - *տե՛ս* ՀԱՆԳ՝(Ի):

ՀԱՆԳ-ՀՈՒՆԳ - *տե՛ս* ՀԱՆԳ-ՀՕՆԳ:

ՀԱՆԳ-ՀՕՆԳ/ՀԱՆԳ-ՀՈՒՆԳ - *գ.* Կարճ ժամանակամիջոց: *Էս դուսաղը վը՛ր օտում ա, ջըքօրանը հանգը-հունգը ռանգ՝ը փօխվում ա...* (ՆԼՊԺԲ, 43):

ՀԱՆԳԸԲԱՆԴ(Ի) - *ած.* Արտասովոր, ոչ սովորական: *Լուզանուտ քախծըր ա, դանդ ա, խօսկէրքըտ հանգ՝ըբանդ ա...* (ԼՊԲ, 12):

ՀԱՆԳ՝(Ի)/ՀԱՆԳ(Ի) *(գրբ. յանգ (պատշաճ, հարմար)* - 1. Ձեւ, եղանակ: *Էտ մարթը էրանուշ հանգ՝ի յա խօսում* (Բ): *գ.* 2. Տեսակ: *Քաչալ ճօտին հընգէրնին մը՝ծանըմ ըն, ամմա ինք՝ը մին օրիշ թանվանուր ա ինըմ, մին օրիշ հանգի...* (ՀԺՀ, V, 458):

- Հանգ(էր)ը անէլ- Մեկին նմանակել, նրա արարքը՝ խոսելաձեւը՝ կեցվածքը եւն նմանողությամբ վերարտադրել: *Էտ խօխան լօխ դասատըվօցը հանգէրը անում ա* (Բ):

ՀԱՆԳԸՎԻԼ - *տե՛ս* ՀԱՆԳՎԻԼ:

ՀԱՆԳԸՎԻԼ - *տե՛ս* ՀԱՆԳՎԻԼ:

ՀԱՆԳԻԼ - *տե՛ս* ՀԱՆԳԻԼ:

ՀԱՆԳԻԼ/ՀԱՆԳԻԼ - *չբ.* Հանգչել, մա-ռել: *Սարկավաք Իմաստունըն ասից.- Ըստընծու կընրակը մարթիս մաչին ա, տանուրանուր բընդիս տալ, վէր հանգ՝ի վէչ* (ՆԱԲ, 73):

ՀԱՆԳԻՍ - *տե՛ս* ՀԱՆԳԻՍՏ:

ՀԱՆԳԻՍ/ՀԱՆԳԻՍ *(գրբ. հան-գիստ)* - *գ.* 1. Գերեզման, շիրիմ: *Ասում ըն՝ էտ հանգ՝իստը մին թօրք տընդու հանգ՝իստ ա* (ԱԱ, 53): 2. *տե՛ս* ՀԻՆ-ԳԸՍՏԱՐԱՆ:

ՀԱՆԳ՝ՎԻԼ - *տե՛ս* ՀԱՆԳՎԻԼ:

ՀԱՆԳ՝ՎԻԼ/ՀԱՆԳ՝ՎԻԼ/ՀԱՆԳԸՎԻԼ/ ՀԱՆԳԸՎԻԼ - *չբ.* 1. *տե՛ս* ՀԱՆԳԻԼ: *...Ասթխէն մընտէգ՝ ա ընրալ, տը՛սալ, վը՛ր մին հանգ՝վում ա, մին էլ պէնվում* (ՀԺՀ, VI, 31): 2. *փխբ.* Խիստ հյուծվել՝ տկարանալ: *Խը՛ղճը էնքան հիվանդ կացալ ա, լափ հանգ՝վանալ ա* (Բ): 3. *փխբ.* Խիստ հարբել, հարբելուց ինքնատիրա-պետումը կորցնել: *Ընգընընը՛ցէք՝ դու-նուղնէրէն էնքան կ՝ինի յընն խընմը-ցընում, ընտընանք լափ հանգ՝վում ըն* (Զ): 4. *փխբ.* Մեռնել: *Յէշում ըն, յէշում, թաքավէրը կ՝ամ չի. տու մէլ ասէլ՝ թաքավէրը հանգ՝վանալ ա* (Զ):

ՀԱՆԴ *(գրբ. անդ)* - *գ.* Դաշտ, արտ, արոտավայր, հանդ: *Էն մին օրը ուռու-թանա էլիա տավարը հանդընն ա տանըմ* (ԼՊԲ, 356):

- Հանդէրը օռվէլ - Շատ խոտ աճել, խոտառատ լինել: *Տարէն թուռույին ա իլալ, հանդէրը օռվալ ա* (Բ):

- Հանդին խօսկը տօն պիրիլ - Ան-գաղտնապահ լինել: *Տընդամարթը վէր հանդին խօսկը տօն պէրավ, տընդա-մարթ չի* (Բ):

- Հանդին կընտընրէ՛, վէր կալ՝ումը թօզ չանէ - Հետագա դժվարություններից՝ անախորժություններից խուսափելու համար գործը պետք է հերթականու-թյամբ անել:

- Հանդին մընացած դանա - Խեղճ՝ անօգնական՝ տկար անձ: *Իզէն հինչ մա՞թթ, հանդին մընացած դանա յա* (Բ):

ՀԱՆԴԱՎԱՐ - *տե՛ս* ՀԸՆԴԱՎԱՐ:

ՀԱՆԴԱՐԴ *(գրբ. հանդարտ)* - *տե՛ս* ԿԱՄԱՆՑ:

ՀԱՆԴՎՈՒՐԹ - *տե՛ս* ՀԸՆԴԸՎԷՐ:

ՀԱՆԷ/ՀԱՆԷՔ՝/ՀԱՆ/ՀԸՆԷ/ՀԸՆԷՔ՝ *(գրբ. ահաւանիկ)* - *ձ.* Ցուցական բա-ցականչություն՝ ահա, այն է, ահա-վանիկ: *Մարը ասմա.- Հանէ՛, էն ծառը տը՛սնում ը՞ս, էն ա ընդրա տակէն թաղած* (Զ):

ՀԱՆԷԼ *(գրբ. հանեմ)* - *նբ.* 1. *տե՛ս* Տանուս օնէլ: 2. Հագածը հանել: *...Ք՝ինանամ ա փէնջանրին տական յէշում, տը՛սնում Թընխկընք՝էչան շօրէրը հանում ա, վը՛ր քօն ինի* (ՆԼՊԺԲ, 47): 3. Սերունդ ար-տադրել, սերել (տղամարդու մասին): *Հանրը հանօղընն ա, մարը պիրօղը* (Զ):

ՀԱՆԷԾ - *տե՛ս* ՀԱՆԸ՛Ծ:

ՀԱՆԷԾ - *տե՛ս* ՀԱՆԸ՛Ծ:

ՀԱՆԷՂ(ՆԸ)/ԱՆԷՂ(ՆԸ) *(գրբ. աղեղն)* - *գ.* 1. Ձենքի տեսակ՝ աղեղ: *Հանէղնը յօր ա օնում, ք՝ինամ վը՛րս* (Զ): 2. Աղեղի ձեւ ունեցող որեւէ բան: *Ընընրա օնքէրը հօ օնքէր չի՞, հանէղն ա* (Բ):

ՀԱՆԷՐ *(գրբ. աներ)* - *գ.* Կնոջ հայրը, աներ: *... Հանէրը հըվատըմ ա, յէր ա կը՛նում էս պուճուր ըխճըկանընն էլ դարկըմ* (ՀԺՀ, V, 165):

ՀԱՆԷՔ՝ - *տե՛ս* ՀԱՆԷ:

ՀԱՆԸ՛Ծ - *տե՛ս* ՀԱՆԸ՛Ծ:

ՀԱՆԸ՛Ծ/ՀԱՆԸ՛Ծ/ՀԱՆԷԾ/ՀԱՆԷԾ/ ՀԱՆԻԾ/ՀԱՆԻԾ *(գրբ. անիծ)* - *գ.* Ոջիլի ձու՝ անիծ: *Կընլանը սաղ հանը՛ծ ա* (Բ):

- Հանը՛ծ անէլ - Բազմացնել: *Հիյվընտարէրը հիյվընանէն հանէծ ըն ընրալ, հանդէրը լընցալ* (Բ):

ՀԱՆԸՎԷԼ - *տե՛ս* ՀԱՆՎԷԼ:

ՀԱՆԻԾ - *տե՛ս* ՀԱՆԸ՛Ծ:

ՀԱՆԻԾ - *տե՛ս* ՀԱՆԸ՛Ծ:

ՀԱՆԻԾՈՒՏ - *տե՛ս* ՀԸՆԷԾՈՒՏ:

ՀԱՆԻԾՈՒՏ - *տե՛ս* ՀԸՆԷԾՈՒՏ:

ՀԱՆԾԿԷՂՆԸ - *գ.* Խիտ սանրի վրա թել փաթաթելով՝ ոջլոտի գլուխը սան-րելը՝ անիծները՝ ոջիլները մաքրելու համար: *Հանծկէղնընն ա վիչիլին առաշ-կը օնում* (Զ):

ՀԱՆՁՆԷԼ - *տե՛ս* ՀԱՁՆԷԼ:

ՀԱՆՁՆ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՀԱՁՆ(Ը)ՎԷԼ:

ՀԱՆՁԱՄԱ - *գ.* Ինքնաշեն մեծ ծխնի: *Մըղակէն հանձամանն կոտըրալ ա* (Բ):

ՀԱՆՎԷԼ/ՀԱՆԸՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՀԱՆԷԼ-ի: 2. *չբ.* Շորերը հանել, մերկանալ: *Յէշում ա, տէսնում՝ էն կ'էրթնուկը լօք-լօք ընէլավ յէկավ, հանվից, տէռավ մին հուրի-մանգա ախճիգ* (ՀԱԲ, 15, 27):

ՀԱՆՑ/ՀԷՆՑ[1] - *դ.* Այն կարգի՝ եղանակի, այնպես, այնպիսի: *Փանգը հուրան հէտէ բիդի մին հանցը յօր օնէ, վէր հուրան ըսըծնէն անէ* (ՀԺՀ, V, 519):

- Հանց ա - Ոնց որ, կարծես: *Բալամ, շատ ա ուրոտում, հանց ա կարկուտ ա կ'ըլական* (Բ):

- Հանց ա թօրք/մօլլա ինի՝ խօզու մըսու յըշիլիս - Ասում են, երբ մեկը խորշում՝ զգվում է մեկից՝ մի բանից:

- Հանց ապըրիս - Խնդրանքի արտահայտություն: *Հանց ապըրիս, էք'ուծ յը՛ք ք'օմանգ ըրա՛, արտըս հընձիմ* (Ձ):

- Հանց գ'իդանք/գ'իդաս - *տե՛ս* ՀԱՁՆԱՆՔ:

- Հանց ըմ (գ'ուդում) - Կարծում եմ, կարծեմ: - *Գ'ուդում չըմ, հանց ըմ Ջարայըն ա տանշալ* (ՆԱԲ, 118):

- Հանց ինի - *տե՛ս* Հանց ա:

- Հանց խօսկ կասէ՝ ծըմը՛ռնը խօտ կըփըսնէ, ամը՛ռնը կըչուրանա - Ասում են համարձակ՝ դիպուկ խոսողների մասին:

- Հանց սաբէ - *տե՛ս* ՀԱՁՆԱՆՔ:

ՀԱՆՑԱԲԱ - *վ.* Եթե հանկարծ, Աստված մի արասցե: *Հանցաբա, վէր թօռ չի կ'ա, արտէրը սաղ չուրընական ա. Շատ ա արաշտ* (Բ):

ՀԱՆՑԸ - *դ.* Որը: *Լօխ կ'ամ ըն. հանցը՝ մըշինավ, հանցը՝ ծիյավ, հանցըն էլ կա՝ վը՛ռնավ ա էտքան տը՛ղը կ'ամ* (Ձ):

ՀԱՆՑՄԱՐԷԼ/ՀԱՍՄԱՐԷԼ - *նբ.* Համարել, ընդունել: *Կանօխ էս շինըթկընումը հանցմարէ, թա վը՛չ մին տըղ ըշկօլ չի լանլ...* (ԼՂԲՔ, 274):

ՀԱՆՑՎԷՐ(ԱՄ) - *տե՛ս* ՀԱՆՑՈՒՎԷՐ(ԱՄ):

ՀԱՆՑՈՒ - *շ.* Որպեսզի: *Ք'ը՛ցալ ա ծըմակը, հանցու սօյնը քաղէ* (Ձ):

ՀԱՆՑՈՒՎԷՐ(ԱՄ)/ՀԱՆՑՎԷՐ(ԱՄ) - *տե՛ս* ՀԱՆՑՈՒ:

ՀԱՆՈՒՐ - *գ.* Ուղղություն, տեղ, վայր: *Էտ հըլիվուրէն անա շէնին հանուրը հըրցընում ա, ք'ինամ* (Ձ):

- Հանուրը օնէլ - Ուղղությունը որոշել: *Շօնը վը՛ռտ-վը՛ռտ ա անում, հանուրը օնում* (Ձ):

ՀԱՆՔ *(գրբ. հանք (մետաղ)* - *գ.* 1. Բնական հանքային նյութ: *Հանքը տանս ըն օնում, ղարկում թաքավէրին* (Ձ): 2. Այն տեղը, որտեղից հանում են հանքանյութը: *Ղըրըմբօնա վը՛սկուն հանքէրը շատ չի խօր* (Բ): 3. *փխբ.* Ծնունդ, զավակ: *Տընը՛շինիտ խօխան ըսկի մին հանք չի* (Բ):

ՀԱՇԱՄՆԸ - *տե՛ս* ՀԱՇԷՄՆԸ:

ՀԱՇԱԹՔ/ՀԱՇԱՏՔ - *գ.* Ամբոխ, բազմություն: *...էս ա քինըմ ըմ պակասպըռատը դ'ուզըցընէլ տամ, վէր էնքան հաշաթքին մէջին մաննի պըտատան չըտէռնանք* (ՋՏ, Բ, 219):

ՀԱՇԱՆ/ԱՇԱՆ - *գ.* Կալի մեջ փռած կալսելու հացահատիկ: *Թօռը նի յա ունէս, հաշանը բարբադ ընէս* (Ձ):

- Հաշան անէլ - 1. Հացահատիկը կալսելու համար կալի մեջ փռել: *Խօրթնէրը յը՛տ ըն անում, հաշան անում, վէր կալաս անին* (Ձ): 2. Ցրել, ցաքուցրիվ անել: *Շօրէրը տանավը մին հաշան ա ըրալ* (Բ):

- Հաշան ինիլ/տը՛ռնալ - Ցրվել, ցաքուցրիվ լինել: *Վէր թըխում ա, պէրցը ճըղվում ա, թէփուռը տանավը մին հաշան ինում* (Ձ):

ՀԱՇԱՏՔ - *տե՛ս* ՀԱՇԱԹՔ:

ՀԱՇԱՐԻ - *տե՛ս* ՀԱՇԱՆՐԻ:

ՀԱՇԱՆՐԻ/ՀԱՇԱՐԻ *(արաբ. hašeri)* - *ած.* Խիստ վավաշոտ, կրքամոլ, անառակ: *Հաշանրի մարթ ա իլանլ Ռուբէնը* (Բ):

ՀԱՇԷՄՆԸ/ՀԱՇԱՄՆԸ - *գ.* Գետի մի տեսակ անհամ ձուկ: *Հաշէմնը Ըրախսումը մին էլ Ք'ուռումըն ա շատ ինում* (Բ):

ՀԱՇԷՎ - *տե՛ս* ՀԱՇԸ՛Վ:

ՀԱՇԸ՛Վ - *տե՛ս* ՀԱՇԸ՛Վ:

ՀԱՇԸ՛Վ/ՀԱՇԸ՛Վ/ՀԱՇԷՎ/ՀԱՇԻՎ *(գրբ. հաշիւ)* - *գ.* 1. Հաշվելը, համրելը: *Հաշը՛վ էլ չի գ'ուդում, ըտըրա հու բի՞դի կօրծի յօր օնէ* (Բ): 2. Թիվ, համար: *Էնքան վը՛խճար օնէ, հաշը՛վը գ'ուդում չի* (Բ): 3. Հաշվելով ստացած արդյունքը: *Հըմբարում ա, հըմբարում, վէրչումը էլհա հաշը՛վը մընանա քըցում* (Ձ): 4. Մրցախաղի արդյունքով ստեղծված հարաբերությունը մրցող կողմերի միջեւ: *Նարդի յըն խաղ անում, Մուքին հէնգավ էրկու հաշվավ տանում ա* (Բ): 5. Որեւէ բանի համար վճարելիք՝ փոխանցելիք գումարը: *Հաշը՛վը տամ ա, կավը տանում* (Բ): 6. Միջոցներ, ծախս: *Ախպօրը հաշվին տօն ա շինանլ* (Բ): 7. Դրամական կամ այլ կարգի փոխհարաբերություն: *Ըտըրա հաշէվը ինձ նըհը՛տ հանլա պըրծալ չի* (Բ):

- Հաշը՛վ ա - Հաշվելու ենթակա է, ընդունելի է (հատկապես գործածվում է հարցական եւ ժխտական ձեւերով): *Մարթը ասմա.- Էտ հաշը՛վ չի, խըյինօթուն ըս ըրալ* (Ձ):

- Հաշը՛վ անէլ - 1. Հաշվել, համրել, քանակը որոշել: *Փուլը հաշը՛վ ա անում, տը՛սնում հէնգ մանէթ պակաս* (Ձ): 2. Համարել, ընդունել: *Մարը ասմա.- Հաշը՛վ ըրա, թա էտ փուլը ըսկի իլալ չի* (Ձ): 3. Նկատի ունենալ, նկատի առնել: *Տօն շինիլիս հաշը՛վ բիդի անիս, վէր հանլա տընանամչ էլ ըս ինք' ունական* (Բ):

- Հաշը՛վը կուրցընէլ - Շփոթվելով չկարողանալ հաշվել: *Փուլը էնքան շատ ա ինում, վէր հըմբըրէլիս հաշը՛վը կուրցընում ա* (Ձ):

- Հաշը՛վը մաքրէլ - 1. Վրեժ լուծել, պատժել: *Ըտի էտ ջանիլը խանէն հաշը՛վը մաքրում ա* (Ձ): 2. Որեւէ բան մինչեւ վերջ անել՝ վերջացնել: *Ուստան ասմա.- Պէն չի մընացալ, էք'ուց պատէն հաշը՛վը մընըրլական ըմ* (Ձ):

- Հաշը՛վը մաքուր - Վատ՝ անելանելի վիճակում, պատժի ենթակա: *Թաքավէրը թա.- Վէ՛ր յը՛ք, հաշը՛վըտ մաքուր ա* (Ձ):

- Հաշը՛վը յը՛ր օնէլ - Հաշվի առնել, զգաստանալ: *Վէզիրը վէր թանս յէշում ա, չօբանը հաշը՛վը յը՛ր ա օնում* (Ձ):

- Հաշը՛վ ըրէք՝ ծը՛ր տանըն ըք - Ասում են հյուրերին՝ մի՛ ամաչեք, ազատ զգացե՛ք:

- Հաշը՛վ չօնէ - Անհամար է, շատ է: *Ադ Չանչախ թաքավէրին կըվէրէն ա վըխճըրնէրէն էլ հաշը՛վ չօնէ* (Ձ):

- Հաշը՛վ տալ - Հաշվետու լինել, կատարած գործերի մասին զեկուցել: *Բըրիգադիրը ամմէն հուրանգ'ու ք'իս ա կանցիլանը, նախագէն հաշը՛վ տաս* (Ձ):

- Հաշը՛վ տը՛սնալ - Դրամական հաշիվները քննել եւ կարգավորել: *Հուրանգ'ունը առուտուրականնէն հըվաքվում ըն, հաշը՛վ տը՛սնում* (Ձ):

ՀԱՇԸ՛Վ-ՀԱՇՎԱՐԿ - *գ.* Ծախսերի՝ օգուտների նախնական հաշիվը: *Հաշը՛վ-հաշվարկը վէր ինի վէջ, առուտուրականը օքուտ չի անէլ* (Ձ):

- Հաշը՛վ-հաշվարկ անէլ - Ծախսերի՝ օգուտների նախնական հաշիվներ անել: *Հաշը՛վ-հաշվարկ ըն անում, տը՛սնում, վէր էտ կօրծան օքուտ կա* (Բ):

ՀԱՇԻԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հաշիլը խաշիլ (ինիլ, տը՛ռնալ) - *տե՛ս* Պէնը պ'ուրթ (ինիլ, տը՛ռնալ):

ՀԱՇԻՅԱ *(թրք. hăšiyä)* - *գ.* 1. Նուրբ թելերից հյուսած երիգ, որ կարում են սպիտակեղենի՝ զգեստի՝ կարպետի՝ գորգի եւն եզրերին: *Էտ ախճիգը հաշիյա յա կ'օրծում, տանում* (Ձ): 2. Գերանի ծայրերի տակ դրվող փայտ: *Կէրանէն ք'ը՛թը հաշիյին յըրա յա նըստում* (Բ):

ՀԱՇԻՎ - *տե՛ս* ՀԱՇԸ՛Վ:

ՀԱՇԻՐ *(թրք. hašir (դատաստանի օր)* - 1. *տե՛ս* ՀԱՇԸ՛Վ: 2. *տե՛ս* ՀԱՇԻՐ-ՂԸՅԱՄԱԹ:

ՀԱՇԻՐ-ՂԸՅԱՄԱԹ/ԽԱՇԻՐ-ՂԸՅԱՄԱԹ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հաշիր-ղըյամաթ անել/քըցիլ - Բողոքել, պահանջել, աղմուկ-աղաղակ բարձրացնել: *Էնքան հաշիր-ղըյամաթ ըրավ, վէր ուրան օգածը ըստացավ* (Ձ):

ՀԱՇՆԸ - *տե՛ս* ՀԱՐԹՆԸ:

ՀԱՇՎԱՌ - *գ.* Տնտեսության՝ հիմնարկի հառվառման գործը վարող անձ, հաշվառիչ: *Բափկէնը էրկան վախտ մէր կըլխօգէն հաշվառը ն ի լալ* (Բ):

ՀԱՇՎԱՐԿ - *տե՛ս* ՀԱՇԸԷՎ-ՀԱՇՎԱՐԿ:

ՀԱՇՎԷԼ - *տե՛ս* ՀԱՇՎԻԼ:

ՀԱՇՎԻԼ/ՀԱՇՎԷԼ *(գրբ. հաշուիմ)* - *նբ. տե՛ս* Հաշըէվ անել:

ՀԱՇՏ[1] - *տե՛ս* ՀԱՇՏ[1]:

ՀԱՇՏ[2] - *տե՛ս* ՀԱՇՏ[2]:

ՀԱՇՏ[1]/ՀԱՇՏ[1] *(գրբ. հաշտ)* - *ած.* 1. Համակարծիք, համերաշխ: *Սումբաթը ու Ամրիսակը հաշտ, սէրավ մըրթկըլնէգ ըն իլալ* (Բ): 2. *մ.* Առանց գժտության, համերաշխորեն: *Կընանէք՝ըն էլ ք՝ամանգ՝ ին անըմ, ուրուր նըհէտ հաշտ ապըրում* (Ձ):

ՀԱՇՏ[2]/ՀԱՇՏ[2] *(թրք. hašt)* - *տե՛ս* ՇԷՄՔ:

ՀԱՇՏԱՌԱ(Ն)-ԲԱՇՏԱՌԱ(Ն) - *տե՛ս* ՀԱԹԱՌԱ(Ն)-ԲԱԹԱՌԱ(Ն):

ՀԱՇՏԱՓՈՒՇՏԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հաշտափուշտան քաշիլ - *տե՛ս* Ըռանդ ինիլ:

ՀԱՇՏ(Ը)ՎԻԼ - *տե՛ս* ՀԱՇՏ(Ը)ՎԻԼ:

ՀԱՇՏ(Ը)ՎԻԼ/ՀԱՇՏ(Ը)ՎԻԼ *(գրբ. հաշտիմ)* - *չբ.* Խռովությանը՝ տարաձայնությանը վերջ տալ, հաշտության գալ: *Էրկան վախտ ա քաշէ՝ում, մինչը՝էվ ըտըրանք հաշտվում ըն* (Ձ):

ՀԱՇՏ ՈՒ ԽԱՂԱՂ - *տե՛ս* ՀԱՇՏ[1] (2):

ՀԱՇՏՈԹՈՒՆ - *տե՛ս* ՀԻՇՏՈԹՈՒՆ[2]:

ՀԱՇՏՈԹՈՒՆ - *տե՛ս* ՀԻՇՏՈԹՈՒՆ[2]:

ՀԱՉԱ *(թրք. hača)* - *գ.* 1. Երկճյուղ ցից: *Մին հաչա յա տընգում, խուրջինը նը՝ստա կախ տամ* (Ձ): 2. Ծառի երկու ճյուղերի միացման տեղը: ... *Քաչալը ք՝ինանմ ա պիցրանում սուրփ ծառէն հըչէն դաթը...* (ՀԺՀ, VII, 260): 3. *ած.* Երկճյուղ, երկու մասի բաժանված: ... *Մին հաչա հըղրցու կօխկէն վէր ըն կ՝ամ* (ՀԱԲ, 15, 108):

- Հաչա անել - *տե՛ս* Կ՝ը՝էվաթ անել:

ՀԱՉԱԼԸՂ *(թրք. hačaliğ)* - *գ.* Ճանապարհների հատման տեղը՝ խաչմերուկ: *Էտ հաչալըղըմը թաքավէրին տըղան էլիա ջիհոում ա էն պըռավէն* (Ձ):

ՀԱՉԱՆ - *տե՛ս* ՀԱՉԱՆ:

ՀԱՉԱՆ - *ած.* Շատ՝ շարունակ հաչող (շան մասին): *Մէլիք՝ին էլ մին հաչան շօն ա ինում* (Ձ):

- Հաչան շօնը կըծէլ չի - Շատ խոսողը չի գործի:

ՀԱՉԻԼ *(գրբ. հաչեմ)* - *նբ.* 1. Հաչոց արձակել, հաչել: *Շօնը վէր շատ հաչում ա, չօբանը թըվանգ՝ը յօր ա օնում, տոուս կ՝ամ* (Ձ): 2. *արհմ.* Վայրահաչել, զրախոսել, մրթմրթալ: *Հարթնը ըսկէսվօրը ասում ա.- Հիշկան օգում ըս՝ հաչի, վէջըս չի* (Ձ):

ՀԱՉՈՒՍԿ - *տե՛ս* ՀԱՉՕՑ:

ՀԱՉՈՒՑ - *տե՛ս* ՀԱՉՕՑ:

ՀԱՉՕՑ/ՀԱՉՈՒՑ - *գ.* 1. Հաչելը, հաչելու ձայնը: *Շանը հաչօցը ըտըրանց զուրթնըցընէս ա* (Ձ): 2. *արհմ.* Վայրահաչություն, զրախոսություն, մրթմրթոց: *Էտ կընգանը հաչօցան սաղ շինացուց զանիլան տանում ա* (Բ):

ՀԱՉՕՂ - *տե՛ս* ՀԱՃՕՂ:

ՀԱՉՕՂՎԷԼ - *տե՛ս* ՀԱՃՕՂՎԷԼ:

ՀԱՉՕՂՈՒԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՃՕՂՈՒԹՈՒՆ:

ՀԱՊԼԱԿՈՒԿՈՒՇ - *տե՛ս* ՀԱԿԼԱԿՈՒԿՈՒՇ:

ՀԱՊՈՒՆ - *ձ.* Հավերին բույնը քշելու բացականչություն: *Ալգին մըհակը յօր ա ունէս, հըվէրէն քըշիս բիդի պունը՝ հա՛պուն, հա՛պուն* (Ձ):

ՀԱՊՈՒՆ-ՀԱՊՈՒՆ - *տե՛ս* ՀԸՊԸՆ-ՀԱՊՈՒՆ:

ՀԱՋԱԹ - *տե՛ս* ՀԱՋԱԹ:

ՀԱՋԱԹ/ՀԱՋԱԹ *(արաբ. haǧet)* - *գ.* 1. Կարիք, կարեւորություն, պետք: *Էս ք՝ասիբը ասըմ ա.- Մէգ ծի օնէնք՝, քու ծի առնէլը հաջաթ չի* (ՀԺՀ, VII, 112): 2. Գործիք: *Ուստան առանց հաջաթ կարէլ չի կօրծ անէ* (Բ): 3. *փխբ. տե՛ս* ԽԸ՝Ռ: ...*Հաջաթը տ՝ուս ա օնում, թա.- Թաթօսը էլ ա սանա տ՝ուս կ՝ամ, Մաթօսը էլ, պա՛չի, ք՝ընի՛* (ԲՀԲ, 181):

ՀԱՋԱԹ-ՄԱՋԱԹ - *տե՛ս* ՀԱՋԱԹ-ՄԸՋՈՒԹ:

ՀԱՋԱԹ-ՄԸՋՈՒԹ/ՀԱՋԱԹ-ՄԱՋԱԹ - *հոգև. գ.* Գործիքներ: *Յէր ա կէնում հաջաթ-մըջութը հըվաքում,* (ՆԱԲ, 140):

ՀԱՋԻ - *տե՛ս* ՀԱՋԻ:

ՀԱՋԻ/ՀԱՋԻ *(արաբ. hāǧi)* - *գ.* 1. Մեքքա ուխտի գնացած մահմեդական: *Էրկու հարուստ թօրք ք՝ինանմ ըն, վը՝ր հաջի տը՝ռնան* (ՀԺՀ, VII, 203): 2. *տե՛ս* ՄՈՒՂՈՒՍԻ: 3. Հատուկ անունների՝ կոչումների վրա դրվող հարգական մակդիր: *Էտ Հաջի Միրզան էլ լ՝ավ մարթ ա իլալ* (Ձ):

- Հաջի հըսնէլ - Շատ առաջադիմել: *Տահանց վէր թօղնիս, հաջի կըհըսնին* (Ձ):

- Հաջի ք՝ինիլ - Ուխտի գնալ: ...*Հաջի Սայադը ամմէն տարէ կըք՝ինի հաջի* (ՀԱԲ, 15, 106):

ՀԱՋԻ-ԲՈՒՋԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հաջի-բուջի անել - Քայլել սովորել, սկսել քայլել (երեխաների մասին): *Էտ խօխան հալա օխտը ըմսը՝կան ինում չի, վէր հաջի-բուջի յա անում* (Ձ):

ՀԱՋԻԼԱԳԼԱԳ՝ - *տե՛ս* ՀԱՋԻԼԷՅԼԻ:

ՀԱՋԻԼԱՅԼԱՅ - *տե՛ս* ՀԱՋԻԼԷՅԼԻ:

ՀԱՋԻԼԷՅԼԻ/ՀԱՋԻԼԱՅԼԱՅ/ՀԱՋԻԼԱԳԼԱԳ՝ *(թրք. hačileylək)* - *տե՛ս* ԱՐԱԳԻԼ:

ՀԱՋՕՂ - *տե՛ս* ՀԱՃՕՂ:

ՀԱՋՕՂՎԷԼ - *տե՛ս* ՀԱՃՕՂՎԷԼ:

ՀԱՋՕՂՈՒԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՃՕՂՈՒԹՈՒՆ:

ՀԱՌԹԱ-ՊՈՒՌԹԱ - *տե՛ս* ՊԸՏԸՌ-ՊԱՏԱՌ:

ՀԱՌՆԸ - *տե՛ս* ՀԱՐԹՆԸ:

ՀԱՌՌԱ/ՀՈՒՌՌԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հառռա քաշիլ - *տե՛ս* Հուջում անել:

ՀԱՌՌԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հառռամիշ անել - 1. Արգելքները հաղթահարելով՝ առաջանալ: *Կումաշը հառռամիշ ըրավ, նի մըտավ բաստանը* (Բ): 2. *տե՛ս* Հուջում կ՝ալ:

ՀԱՍ[1] *(գրբ. հաս (հասնելը, հասունանալը))* - *գ., ած.* Ազգականության կամ տարիքի այնպիսի աստիճան, որ թույլատրելի է դարձնում ամուսնությունը տղայի եւ աղջկա միջեւ՝ ըստ եկեղեցական օրենքի: *Ղէրը ասմա.- Ախճիգ՝ը հաս ա, կարիս մարթու տաս* (Ձ):

ՀԱՍ[2] - *տե՛ս* ՀԱՍԷ(Ք՝):

ՀԱՍ *(գրբ. հայս (չհասած խմոր))* - *գ.* Յուղով, շաքարով եւն շաղախված զանգված, որ լցնում են թխվածքի մեջ՝ որպես միջուկ, խորիզ: *Հասը ն թըխվասկէն համը պ՝ուրում, առանց հաս թըխվասկը հինչ կա՞նին* (Բ):

- Հաս անել - Թխվածքի մեջ խորիզ լցնել, խորիզել: *Բիշին հաս ա անում, տինում թուրնումը* (Ձ):

ՀԱՍԱԿ *(գրբ. հասակ)* - *տե՛ս* ՅԱԾ: *Էտ ախճիգ՝ը ա տըղան մըծանում ըն, ուրանց հըսակէն հըսնում* (ՀԺՀ, V, 401):

ՀԱՍԱՍ *(թրք. hasas (բարապան))* - *տե՛ս* ՀԱՍԱՍԼՈՒ:

- Հասաս ինիլ/կէնալ - Ուշադիր՝ զգոն լինել, արթուն հսկել: *Ըտըրա հէտէ էլ ժուղօվուրթը շատ վախտ կ՝ումէրըմըն ըն իլալ քօն ինիս, ուրանց հիյվընուն յըրա հասաս կընաս* (ԱԱ, 21):

ՀԱՍԱՍԼՈՒ - *ած.* Ուշադիր եղող, զգոն, արթուն հսկող: *Էտ չուբանէն էրկու լ՝ավ, հասասլու շօն ա ինիս* (Ձ):

ՀԱՍԱՐ/ՀԱՍԱՐ/ՀԷՍԱՐ *(արաբ., թրք.*

hisar) - *գ.* Պատ, պարիսպ, ցանկապատ: *... Հրսարավը լօք ա տամ, վէր կ'ամ, կօգի հասարը շատ պէցիւր ա* (ԲՀԲ, 81):

- Հասար քաշիլ - Պարսպապատել, ցանկապատել: *... Կ'ամ ըն, տէսնըմ՝ էտ ծըմակումը լ'ավ տընէր շինած, չօրս անգ'ունը հասար քաշած, դըրբըզան յըրան ըրած* (ՀԱԲ, 15, 30):

ՀԱՍԱՐ - *տե՛ս* ՀԱՍԱՐ:

ՀԱՍԱՐԱ(Ն)-ԲԱՍԱՐԱ(Ն) - *տե՛ս* ՀԱԹԱՐԱ(Ն)-ԲԱԹԱՐԱ(Ն):

ՀԱՍԷ(Ք')/ՀԱՍ/ՀԸՍԷ(Ք')/ՀԷՐԱՍ *(գրբ. ահաւասիկ)* - *ձ.* Ցուցական բացականչություն՝ ահա, այս է, ահավասիկ: *Քաչալը մին տէղ վէնն ա կէնում, ասում.- Հասէ՛, ըշխարքէս մաչտէղը էս ա* (ՀԺՀ, VII, 390):

ՀԱՍԸՐԱԹ - *տե՛ս* ՀԱՍՐԱԹ:

ՀԱՍԹԷՐ - *տե՛ս* ՀԱՑԹԷՐ:

ՀԱՍԹՈՒԽ - *տե՛ս* ՀԱՑԹՈՒԽ:

ՀԱՍԹՈՒԽՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՑԹՈՒԽՕԹՈՒՆ:

ՀԱՍԻ - *տե՛ս* ԱՋԻ:

ՀԱՍԿԷՐՈՒԹԻՆ - *տե՛ս* ՀԱՑԿԷՐՈՒԹԻՆ:

ՀԱՍԿ(Ը) *(գրբ. հասկ)* - *գ.* Հացաբույսերի ծաղկաբույլը՝ հասկ: *Տը՛սնում ա մին լ'ավ արտ, հասկէրը՝ էրգ'անէրգ'ան* (ՀԺՀ, V, 662):

- Հասկէրը ուրուր պըկավ ընգած - *տե՛ս* ԴՕԼԱՇԸՂ:

- Հասկ փըռնէլ - *տե՛ս* ՀԸՍԿԸՎԷՐՎԷԼ:

ՀԱՍԿԸՎԷԼ - *տե՛ս* ՀԸՍԿԸՎԷՐՎԷԼ:

ՀԱՍՄԱՐԷԼ - *տե՛ս* ՀԱՆՑՄԱՐԷԼ:

ՀԱՍՏ *(գրբ. հաստ (ամուր, խոշոր)* - *ածական.* 1. Մեծ տրամագիծ ունեցող: *Կ'էրանը շատ ա ինում հաստ, կարում չը՛ն քաշ տան* (Ձ): 2. Ստվար, ոչ նուրբ: *Մին հաստ թախտ ա յօր օնում, մաչին պ'ըտատում* (Ձ): 3. Մարմնեղ, պարարտ: *Հաստ ախճիգ' ա Սիրուշը* (Բ): 4. Թավ, բամբ: *Հաստ սանս օնէ Միրզա դայիի* (Բ):

ՀԱՍՏԱՂ/ՀԱՍՏԱՏ *(գրբ. հաստատ)* - *ածական., մ.* 1. Ամուր, հաստատուն: *Էտ տանը փընթամէնտը հաստադ ա* (Բ): 2. Ստույգ, անկասկածելի: *Սա օգ'ում ա հաստադ գ'իդա՝ հաց տըլական ը՞ն, թա՝ չէ* (ՆԱԲ, 113):

ՀԱՍՏԱՏ - *տե՛ս* ՀԱՍՏԱՂ:

ՀԱՍՏ(ԸԼ)ԷԳ' - *ածական.* 1. Փոքր-ինչ հաստ, հաստավուն: *Վը՛ր ա կ'ամ ծիյան, նըստում մին հաստէգ' ծառու տակէ...* (ՆԼՂԺԲ, 70): 2. *փխբ.* Գիրուկ, չաղլիկ: *Հաստըլէգ' ախճիգ' ա Մարուսը* (Բ):

ՀԱՍՏ ՈՒ ՊԷՐԱԿ/ՀԸՍՏԸՊԷՐԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հաստ ու պէրակ մըտածէլ - Երկար մտածել, մանրամասն քննել: *...Հ'ուրընն էլ նի յա մընէնէս, հաստ ու պէրա՛կ մըտըծէլավ կըլ'ոխ ըղնէս...* (ՀԺՀ, V, 477):

ՀԱՍՐԱԹ/ՀԱՍԸՐԱԹ *(արաբ. hasrat, պրս. hāsrāt, թրք. hasret)* - *ածական.* Որեւէ բանի պահանջ զգացող, կարոտ: *Թօրքէն բալան թաղիմ. մէր շէնը հ'ունա՛վ լըցցած, մունք էն ընք մին հ'ունա՛ հասրաթ* (Բ):

- Հասրաթը քաշիլ - Մի բանի կարիք՝ պակասություն զգալ, կարոտել: *Հ'ուրը շատ ար հասրաթը քաշ'ում, ամմա տըղան կ'ամ չար* (Ձ):

- Հասրաթ թօղնէլ - Մի բանից զրկել, կարոտ թողնել: *Կարկուտը սաղ բաղէրը փուչըցըրավ, ժուղուվուրթէն թօղից մին ճիթ խաղվու հասրաթ* (Բ):

- Հասրաթ մընալ - Մի բանից զուրկ մնալ, փափագին չհասնել: *Ըտի էլ թաքավէրին տըղան էտ ըխճըկանը հասրաթ ա մընամ* (Ձ):

ՀԱՍ ՈՒ ՉԸՀԱՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հաս ու չըհաս անէլ - Տղայի եւ աղջկա միջեւ ամուսնությունը թույլատրելի համարելու համար ազգականության եւ տարիքի աստիճանը որոշել: *Հաս ու չըհաս ըն անում, թա.- Ախճիգ'ըտ չըհաս ա, կարէլ չընք փըսակինք'* (Ձ):

ՀԱՎ[1] *(գրբ. հաւ)* - *գ.* 1. Հավազգիների ընտանիքին պատկանող ընտանի թռչուն՝ հավ: *Սահանք էլ իլ'ուծ-չիլ'ուծ մին քաչալ հավ օնին, էլ պէն չօնին* (ՀԱԲ, 15, 60): 2. *փխբ.* Մոռացկոտ մարդ: *Հավ ը՞ս, խէ մընանատ ընգալ ա՞* (Բ): 3. *փխբ.* Կույր՝ տեսողությունը թույլ մարդ: *Իզէն հավ ա, տը՛սնում չի* (Բ):

- Հավան պանէր տ'ուս օնէլ - Անհնարին գործ ձեռնարկել: *Շատ մարթ ա փօրց'ում հավան պանէր տ'ուս օնէ, ա՛մ'ալ չի կ'ամ* (Բ):

- Հավէն ծ'ուն վէր ծըռվէ, նէյնիմնէյնիմը կըղնէ - Որեւէ բանի խիստ պահանջ զգացողը անհանգիստ կլինի:

- Հավէն հ'ուր'ուր հը՛ստ կօտ տօ, էլիա կըտօցը տափէրընն ա քըսըլական - Ժառանգական սովորությունը անհնար է վերացնել:

- Հավէն ճիրին ճ'ուրը - *տե՛ս* Խաշին ճիրին ճ'ուրը:

- Հավէն նըհը՛ստ քօն ինիլ, վըրցակէն նըհը՛ստ յը՛ր կէնալ - Ազատ՝ անհոգ կյանք վարել: *Իզէն հինչ կընէգ' ա՞. հավէն նըհը՛ստ քօն ա ինում, վըրցակէն նըհը՛ստ յը՛ր կէնում* (Բ):

- Հավէն վէրը թոխս կ'ա, ծ'ուվէնը տակը կանին - Առիթը պետք է բաց չթողնել:

- Հավէն ք'իշ անէլ - *տե՛ս* Էշին չու ասէլ:

- Հավէն ք'իշ ըրած - *տե՛ս* Էշին չու ասած:

- Հավը ըրազի կօտ ա տը՛սնում - Յուրաքանչյուր ոք երազում է իր չունեցած բանը:

- Հավը տանը կէնա, կօտը օտէ - Բարիքներից օգտվել կամեցողը պետք է ժամանակին եւ անհրաժեշտ տեղում ներկա գտնվի:

- Հավու խը՛լք - Խելքի պակասություն: *Ա՛ստ'ուշը հավու խը՛լք օնէ, վէշ մինը մարթու տը՛ղ չի տինում* (Բ):

- Հավու հ'ուշ - Հիշողության պակասություն: *Էտ կընգանընն էլ հավու հ'ուշ ա ինում, հինչը տինում ա մին տը՛ղ, մընանան ըղնում ա* (Ձ):

- Հավու ճօտ - Թույլ, անզոր, խեղճ: *Տըղան յէշ'ում ա, թա.- Էտ հինչ ա՞սլան, հավու ճօտ ա* (Ձ):

- Հավու նըման թ'ուռ/հավաք ինիլ - 1. Բարձր տեղ նստել՝ մնալ: *Ըտըրանք ամմէն օր շինըմաչումը հըվաքվում ին, պատէն կըլ'խէն հավու նըման թ'ուռ ինում* (Ձ): 2. Շատ շուտ քնել: *Սաղանք լ'ըհա ա՛ղը՛վը վէր մար ա մընանում, հավու նըման թ'ուռ ըն ինում* (Ձ):

- Հավու պանէր - Հազվագյուտ՝ չճարվող բան: *Էս թըվումըս բըզարումը հավու պանէր էլ ըն ծախում* (Բ):

- Հավու քօն - Շատ թեթեւ ու կարճ քուն: *Ճըղասպանը ասմա.- Էս հօ քօն ինիլ չա՞ր, հավու քօն ար* (Ձ):

ՀԱՎ[2]/ՀՕՎ[2] *(գրբ. հով)* - 1. *ածական.* Ջերմությունը նվազած, ոչ շատ տաք: *Չայը հավ ար, այան խըմից վէչ* (Բ): 2. *տե՛ս* ՍԱ՛ՐԻՆ:

- Հավ պահէլ - Հոգատարությամբ շրջապատել, փափկասուն դարձնել: *Դէ, թաքավէրին ախճիգ'ընն էլ հավ պահած խօխա յա, լի՞, էտ տիժըրթունէն կարում չի տէմ կէնա* (Ձ):

ՀԱՎԱ *(արաբ., պրս., թրք. hava)* - *գ.* 1. Մթնոլորտի վիճակը տվյալ տեղում եւ ժամանակում, եղանակ: *Մին օր հավան փիս ա ընիս, էտ պը՛էլը յէտ ա տըռնաս, թա՛.- Ըսօր էլ թօղ այան յը՛ս պահիմ, տու ք'ինի հ'ունդը* (ՀԺՀ, V, 548): 2. Երգի՝ պարի՝ երաժշտության եղանակ: *Դավալը մին լ'ավ հավա յա ըծէս, լօխ կընանէք'ը պար ըն կ'աս* (Ձ): 3. *փխբ.* Բարկություն, զայրույթ, կատաղություն, ուժգնություն, զորություն եւն: *Թաքավէրէն իմաց ըն տամ, վէր Թափէղը օրիշ հըվում ա կ'ամ պալատ* (ՆԱԲ, 50): 4. Հովանավորություն: *Ախպօրը հըվավը մը՛ծ պաշտօն ա ըստանում* (Ձ):

- Հավա անէլ - Պայծառ եղանակ անել: *Հավա չի անում, թա խաղուն քաղինք՝* (Բ):

- Հավան բուրի թըխէլ/տալ - 1. Ցուրտ եղանակին թեթեւ հագնվել, ցուրտն արհամարհել: *Հավատ բուրի յա՞ թըխում, էս ծունանվը ըրբըշկած ըշտը՞ղ ը՞ս ք՝ունում* (Բ): 2. Բարձր տրամադրություն ունենալ: *Մըկըրնուն հավան բուրի յա թըխում, լ՝ավ պար ըն կ՝ամ* (Բ):

- Հավան խառնըվէլ - Խառն՝ ամպամած՝ անձրեւոտ եղանակ սկսվել: *Հավան խառնըվից, կըրը՞ցէնք՝ վէջ, թա բուստընատը՞ղը պիհինք՝* (Բ):

- Հավան ծըծաղէլ - *տե՛ս* Հավա անէլ:

- Հավան կըլխէն թըխէլ/տալ - *տե՛ս* Հավալամիշ ինիլ: *Մին օր Մէլիք-Շահնազարը շատ ըջըղված ա ինիս, հավան կըլխէն տըված ա ինիս...* (ԼՂԲ, 384):

- Հավան կըկըղէլ/կըտըրէլ - Եղանակը մեղմանալ: *Հավան վէր կըկըղում ա, Մանդ՝ուրծսը ըսքըսում ա տանը բընծվրանն կըտըրէլը* (Ձ):

- Հավան նըստէլ - 1. Հանդարտվել, զայրույթն անցնել: *Մարթը տէսնում ա, վէր ղօնաղը կարմունջըն անց ա կացալ, հավան նըստում ա...* (ՀԺՀ, V, 454): 2. Խեղճանալ, խոնարհ դառնալ: *Նախագէն տ՝ուս քըցէցէն, հավան նըստից* (Ձ):

- Հավան նըստըցընէլ/օնէլ - 1. Հանդարտեցնել, հանգստացնել: *Հիշկան կընէգ՝ը անում ա, կարում չի մարթին հավան նըստըցընէ* (Ձ): 2. Խեղճացնել, խոնարհ դարձնել: *Ազդուն մարթ ա իլալ Հ՝ալբին, էնքան թակալ ըն, հավան կ՝ալալ ըն* (Բ):

- Հավան պարզ՝վիլ/պէնվալ - *տե՛ս* Հավա անէլ:

- Հավան սանհ՝ուրի ինիլ - *տե՛ս* Հավան բուրի թըխէլ (2):

- Հավան սանրին ինիլ - Զմտահոգվել: *Ասում ա.- Ինձը՞տէ հավան սանրին ա, օգ՝ում ըս՝ ըրա՛, օգ՝ում ըս՝ անէլ մէ՛լ* (Ձ):

- Հավա պինըցընէլ - Աղմուկ-աղաղակ՝ վայնասուն բարձրացնել: *Հարթնը հավա պինըցըրավ, ըսկէսվորը տանան տ՝ուս քըցանվ* (Բ):

- Հըվավը պար կ՝ալ (մինին) - *տե՛ս* Թ՝ութանգ՝ին տակէն պար կ՝ալ (մինին):

- Հըվումը վը՞ննը չի կէնվում - Ասում են կատաղի՝ մոլի՝ գոռոզ եւն մարդկանց մասին: *Դ՝որ՝ուց Սիրանը շատ ա ազդուն, հըվումը վը՞ննը չի կէնվում* (Բ):

- Հըվու պըրանէլ - *տե՛ս* Հավա անէլ:

ՀԱՎԱԴԱՐԻՄ *(գրբ. հաւատարիմ)* - *ած.* Անդավաճան, հավատարիմ: *...Թաքավէրէն ծառայօղնէրան մինը՝ ուրանն հավադարիմը, մը՞ռնըմ ա* (ՀԺՀ, VI, 186):

ՀԱՎԱԴԱՐՄՈՒԹ՝ԻՆ *(գրբ. հաւատարմութիւն)* - *գ.* Հավատարիմ լինելը, հավատարմություն: *Հավադարմութ՝ունը ամմէն մարթու պէն չի* (Ձ):

ՀԱՎԱՁ/ԱՎԱՁ *(գրբ. աւազ)* - *տե՛ս* ՂՈՒՄ[1]: *Ըտէղ տըղան տէսնըմ ա տափին ավազին յըրան էն ա մին լ՝ուս տըվօղ թէփուռ կա* (ՀԺՀ, V, 102):

ՀԱՎԱԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հավալամիշ անէլ - Կատաղեցնել, զայրացնել, կատաղի՝ մոլի դարձնել: *Մարթին ճըղճըղօցը կընգանը էլ իվիլ ա հավալամիշ ընէս* (Ձ):

- Հավալամիշ ինիլ/տը՞ռնալ - Կատաղել, զայրանալ, կատաղի՝ մոլի դառնալ: *Էս այամին ըխճըկէրքը հանց հավալամիշ ըն իլալ, կապընէն կըտըրըմ ըն, մէյդան ընգնըմ...* (ՋՏ, Բ, 122):

ՀԱՎԱՅԻ *(թրք. havai)* - 1. *մ.* Անտեղի, ավելորդ տեղը, անհարկի: *Հավայի ք՝ը՞ցալ ըմ, վէշ մին պէն էլ ամալ չի յը՞կալ* (Բ): *ած.* 2. Անհարմար, անպատշաճ: *Հավայի խուսկէրք շատ ա ասալ* (Բ): 3. Անլուրջ, թեթեւամիտ: *Հավայի մարթ ա Խօնդ՝ուց Ըսատուրը* (Բ):

- Հավայի տը՞ղան/տը՞ղը - *տե՛ս* ՀԱՎԱՅԻ (1):

ՀԱՎԱՆ *(գրբ. հաւան (հավանություն, հավանող)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հավան կէնալ/ինիլ - Իր ճաշակին՝ ուզածին համապատասխան համարել, հավանություն տալ, հավանել: *Շալէն շատ ա հավան կէնում, ուրկուտակ ա տամ կ՝ինը* (ՆԼՂԺԲ, 34):

- Հավան կըցընէլ - Հավանել տալ: *Հիշկան անում ըն, կարում չըն էտ տըղէն էտ ախճիգ՝ը հավան կըցընին* (Ձ):

ՀԱՎԱՆԳ՝ - *տե՛ս* Հ՝ԱՎ՝ԱՆԳ՝:

Հ՝ԱՎ՝ԱՆԳ՝/ՀԱՎԱՆԳ՝ *(պրս. haven)* - *գ.* Փոքր սանդ: *Աղը հ՝ավ՝անգ՝ումը թակում ա, խուրդ՝ուցընում* (Ձ):

Հ՝ԱՎ՝ԱՍ/ՀԱՎԷՍ *(արաբ. havas, պրս. hāvās, թրք. haves)* - *գ.* Ցանկություն, տրամադրություն: *Ասում ա.- Հ՝ավ՝աս չօնիմ, յը՞ս կ՝ամ չըմ* (Ձ):

- Հ՝ավ՝աս անէլ - 1. Տրամադրվել, մտադրվել: *Հ՝ավ՝աս չի անում, թա մի կօրծ անէ* (Բ): 2. Ցանկանալ, փափագել: *Հ՝ավ՝աս ըրէն հըրըստութունէն, էն գ՝ օգ՝ալ ախճիգ՝ը տըվէն էտ կըղլէգ՝ին* (Ձ):

- Հ՝ավ՝ասը կ՝ալ - Տրամադրությունը բարձրանալ, հետաքրքրությունը շարժվել: *Բախճան վէր ծաղկում ա, թաքավէրին հ՝ավ՝ասը կ՝ամ ա* (Ձ):

- Հ՝ավ՝ասը փախչիլ - Անտրամադիր դառնալ, հետաքրքրությունն անցնել: *Վէր ըտի տը՞սնում ա, հ՝ավ՝ասը փախչ՝ում ա* (Ձ):

- Հ՝ավ՝ասը փօրումը մընալ - Փափագին՝ ցանկությանը չհասնել: *Ըտի թաքավէրին ըխճըկանը հ՝ավ՝ասը փօրումը մընաց* (Ձ):

ՀԱՎԱՍԱՐ - *տե՛ս* ՀԸՎԸՍԱՐ:

ՀԱՎԱՏ(Ք) *(գրբ. հաւատ(ք))* - *գ.* 1. Անխախտ վստահություն որեւէ բանի նկատմամբ, հավատալը: *Ըտըրա հավատը ըխճըկանը յըրա մը՞ծ ա ինում* (Ձ): 2. Կրոնական դավանանք: *Մէր ժուղովուրթէն հավատքըն ա պահալ էսքան վախտ* (Բ):

- Հավատը ծօռ - Այլադավան: *Հավատը ծօռ մարթին անա ամմէն հինչ ըսպըսէլի յա* (Բ):

- Հավատը կ՝ալ - *տե՛ս* ՀԸՎԱՏԱԼ: *...Մօրը հավատը կամ չի, թա թաքավէրը ուրանն տըղին ախճիգ՝ կըտա...* (ՀԺՀ, V, 230):

- Հավատը կուրցընէլ/կօրչիլ/ճաք տալ/ք՝ինիլ - 1. Այլեւս չհավատալ՝ չվստահել: *Մարթը հավատը կուրցըրալ ա, էլ կընգանը հըվատում չի* (Ձ): 2. Անհավատ՝ այլադավան դառնալ: *Էնքան թուրքէրէն մաչին կէնում ա, հավատը կուրցընում ա* (Ձ):

- Հըվատու կ՝ալ - Տվյալ հավատին՝ դավանանքին հետեւել: *Էտ օրան յը՞տը էտ մարթը հըվատու վա կ՝ամ* (Ձ):

- Հըվատու պիրիլ - Տվյալ հավատին՝ դավանանքին հետեւել տալ: *Ախճիգ՝ը կարում ա թաքավէրին կուճուր տըղէն հըվատու պիրի* (Ձ):

ՀԱՎԱՔ *(գրբ. հաւաք)* - *ած., մ.* Մի տեղ ժողովված՝ հավաքված: *Շինացէք՝, ըտի հավաք, գ՝ուրուց ին անում* (Ձ): 2. Ամփոփ, կոկիկ: *Հավաք տօն ա ըտըրանց տօնը* (Բ): 3. Իրեն հավաքած, զուսպ: *Մարգօն հավաք կընէգ՝ ա* (Բ):

- Հավաք անէլ - 1. Հավաքել, ժողովել: *Ցօրէնը հավաք ըրէնք՝, պըրծէնք՝* (Բ): 2. Գոմը՝ բույնը տանել, գոմի՝ բնի մեջ հավաքել (անասուններին եւ թռչուններին): *Հավէրը հավաք ա անում, ք՝ինամ հիրըվանէն տօնը* (Ձ):

- Հավաք ինիլ - 1. Հավաքվել, ժողովվել: *Ցըրանք կուճի ախպօրը թօղալ ըն տանը, ուրանք ք՝էցալ վը՞ռսի, էլա ուրուգ՝ունը լօխ յէկալ ըտէղ հավաք իլալ* (ՀԺՀ, V, 252): 2. Գոմի՝ բնի մեջ մտնել՝ հավաքվել (անասունները եւ թռչունները): *Հավէրըն ա հիյվընէն հավաք ըն ինում էտ կումումը* (Ձ): 3. *տե՛ս* Թանռ ինիլ:

- Հավաք կէնալ - Ինքն իրեն զուսպ պահել: *Մարթը ասմա հավաք կաց, թա չէ փիս ա ինանկան* (Ձ):

- Հավաք պահէլ - Մի բան՝ մեկին

ամփոփ՝ զուսպ պահել: *Վը՛ննէրըտ հավաք պա՛հէ, հինչ ը՞ս մը՛կնալ* (Բ):

ՀԱՎԳԱ - *տե՛ս* ՀԱՅԲԱ:

ՀԱՎԷՍ - *տե՛ս* ՀԱՎԱՍ:

ՀԱՎԻՌԸՆԱԿԱՆ/ՀԱՎԻՏԷՆԱԿԱՆ *(գրբ. յաւիտենական)* - *ած.* Մշտնջենական, անմահ: *Հայը հաւիռընական ազկ ա* (Ձ):

ՀԱՎԻՌՅԱՆ/ՀԱՎԻՏՅԱՆ *(գրբ. յաւիտեան)* - *մ.* Միշտ, ընդմիշտ, հավերժ: *Կ՚ուղօթունը ը՛շխարքումըս հաւիռյան կա* (Բ):

ՀԱՎԻՏԷՆԱԿԱՆ - *տե՛ս* ՀԱՎԻՌԸՆԱԿԱՆ:

ՀԱՎԻՏՅԱՆ - *տե՛ս* ՀԱՎԻՌՅԱՆ:

ՀԱՎԿՈՒՐ/ՀԸՎԱՔՕՌ - *գ.* Աչքի հիվանդություն, հավկուրություն: *Հավկ՚ուրը փիս հիվընդութուն ա* (Բ):

ՀԱՎ-ՀԱՎ - *տե՛ս* ՀԱՎ[2]:

ՀԱՎ-ՃԻՎ - *գ. հվք.* Հավեր եւ ընտանի այլ թռչուններ: *Խըրըմուրթը՛ցէք՚ շատ հավ-ճիվ օնին* (Բ):

ՀԱՎՍԱԼԱ - *տե՛ս* ՀԱՎՍԱԼԱ:

ՀԱՎՍԱԼԱ/ՀԱՎՍԱԼԱ/ՀՕՎՍԱԼԱ/ ՀՕՎՍԱԼԱ *(թրք. havsala)* - *գ.* Համբերելը, համբերություն: *Հաւսալան լ՚ավ պէն ա* (Բ):

- Հաւսալա անել - Համբերել, տոկալ: *Կուճուրը հօվսալա չըրավ, խուրջիննին պէց ըրավ, տէսավ լօխ խուտուրումուտուրու պանէր ա* (ՀԺՀ, V, 631):

- Հաւսալան կըտրել - Համբերությունը հատել, այլեւս չհամբերել: *Քաչալին հաւսալան կըտրում ա, կ՚ամ ա ասում.- Մ՚ի ախպէրք, իմ փայըս տըվէք՚, յը՛ս ք՚ինամ ըմ* (ՀԺՀ, V, 630):

ՀԱՎՈՒՐ - *տե՛ս* ՀՕՎՈՒՐ:

ՀԱՎՔ *(գրբ. հաւ)* - *գ. տե՛ս* ՂՈՒԾ: *Վըրսկանէն ծէռքէն հավքէն կըլխէն էրկու պան ա ինում կ՚իրված...* (ՆԼՂԺԲ, 7):

- Հավքը՝ թէվավը, մարթը՝ խը՛ելքավը - Ցուրաքանչյուրը գոյատեւելու իր հիմնական միջոցն ունի:

- Հավքը հուրան թէվավը, օխնը հուրան պօրտավը - Ոչ մեկը եւ ոչ մի միջոցով: *Օշափը հըռնանցէ տէսնում ա, ծէն տամ.- Տու հու վը՞ս, ա՛ շան տըղա, հաւլա հավքը հուրան թէվավը, օխնը հուրան պօրտավը էս սըմթէրքավը անց չի կացալ* (ՆԱԲ, 27):

ՀԱՎՔԱԾ - *տե՛ս* ՄԱՌՔ (3):

ՀԱՎՕՂ - *տե՛ս* ԽԱՂՈՒ(Ղ):

ՀԱՏ[1] *(արաբ., պրս. hatk (հարվածի հետեւանքով աչքի տեսողության կորուստ)* - *գ.* 1. Աչքի եղջերաթաղանթի վրա առաջացած սպիտակ բիծ: *Ոխտուրը յէշում ա, թա.- Աշկէտ յըրա էն ա հատ կա, ըտըրա հը՛տէ չըս լ՚ավ տը՛սնում* (Ձ): 2. Գուլպայի եւ այլ գործվածքների յուրաքանչյուր օղակը ճաղի վրա: *Գ՚ուլբին հատէրը հըմբըրէս ա, տըսնաս խըրէգ՚* (Բ): 3. Միատեսակ առարկաներից յուրաքանչյուրը՝ որպես մեկ միավոր: *Օխտը հատ օտում ա էտ շըվթալան, էլիա քուշտանում չի* (Ձ):

- Հատը հըվաքէլ - Գործվածքի քանդված օղակը՝ թելը վերականգնել՝ վերահյուսել: *Ճաղը յօր ա օնում, գ՚ուլբին հատը հըվաքում* (Ձ):

- Հատ ըղնէլ - *տե՛ս* Աշկը հատ ըղնէլ:

- Հատը յը՛ր քաղէլ - 1. *տե՛ս* Աշկէն հատը յը՛ր քաղէլ: 2. *տե՛ս* Հատը հըվաքէլ:

- Հատը վէր ըղնէլ/ք՚ինիլ - Գործվածքի օղակը՝թելը քանդվել: *Գ՚ուլբին հատը վէր ա ընգալ* (Բ):

ՀԱՏ[2] - *տե՛ս* ՀԱՏԷ:

ՀԱՏԷ/ՀԱՏԷՔ՚/ՀԱՏ[2]/ՀԸՏԷ(Ք՚) *(գրբ. ահաւադիկ)* - *ձ.* Ցուցական բացականչություն՝ ահա, այդ է, ահավադիկ: - *Հատէ ըսէս ըմ, հու վէր մին հայ կընգա մին ցօրտ խօսկ ասից, էս օրըն ըմ քը՛ցիլանկան* (ԱԱ, 75):

ՀԱՏԷԳ՚ *(գրբ. հատիկ)* - *գ.* 1. Հատիկավոր բույսերի, հատկապես հացաբույսերի սերմ՝ հատ: *Ցօրնէն հատէգ՚ը ծըտէն կըտուցան վէր ա ըղնում, ըղնում պատէն դաթը* (Ձ): 2. Հացահատիկ: *Խամբարըն էլ ա լ՚ավ հատէգ՚* (Բ): 3. Ցորենով եւ այլ ընդեղեներով պատրաստվող կերակուր: *Հատէգ՚ը ք՚ըսիբու խօրանգ՚ ա* (Բ): 4. *տե՛ս* ՀԱՏ[1]:

ՀԱՏԷՔ՚ - *տե՛ս* ՀԱՏԷ:

ՀԱՏՐԱ - *տե՛ս* ՀՕԹԱՌ:

ՀԱՐ - 1. *գ.* Խոտ հնձելը, խոտհունձ: *Հարէն վախտը վէր կ՚ամ ա, շինանցէք՚ շատ ըն չըրչարվում* (Բ): 2. Խնոցի հարելը: *Խնօցուն հարը ըտըրա լափ տանջից* (Բ):

- Հար անել - *տե՛ս* ՀԱՐԷԼ (1, 2):

ՀԱՐ/ՀԷՐ[2] *(գրբ. հայր)* - *գ.* Ջավակ ունեցող տղամարդ, հայր: *Մահմադը շատ դաչանք ա անում, վէր հօրը ասածը հիշին, վէր չըկ՚ան, ամալ չի կ՚ամ* (ՀԱԲ, 15, 15):

- Հարը խաղու կէրավ, խօխան հարփից - *տե՛ս* Հարը շըլօր կէրավ, խուխէն կըռէք՚ը առնից:

- Հարը մը՛ռած - 1. Խեղճ, անօգնական, առանց հոր մնացած: *Հարը մը՛ռած մարթ ա Սումբաթ դային, հաց չի ըրթէնում, թա օտէ* (Բ): 2. Անզգամ: *Էտ հարը մը՛ռածը շինացուց օր ա տաս, իշը՛ղ չի տաս* (Բ):

- Հարը շըլօր կէրավ, խուխէն կըռէք՚ը առնից - Ասում են այն դեպքում, երբ մեկի ստացած հաճույքի վնասը կրում է ուրիշը:

- Հարը տընգալ ա, խօխան՝ մընցըրալ, կ՚օղը յը՛կալ ա տար վը՛ննը կացալ - Տարիներով ձեռք բերածը հաճախ ուրիշին՝ անարժանին է հասնում:

- Հէրը ընէծիլ - 1. Պատժել (հաճախ գործածվում է որպես սպառնալիք): *Ասում ա.- Վէր մէհէտ էլ կ՚ուղութուն անիս, փըռնըլական ըմ, հէրըտ ընէծիմ:* 2. Վնասել, ոչնչացնել: *Կումըշնէն նի տը՛ռէն բաստանը, հէրը ընիծը՛ցէն* (Բ):

- Հէրըն էլ ընէծած - *տե՛ս* Կըլօխը քարը:

- Հօրը կ՚ինը յըրա տինիլ - *տե՛ս* Ապօրը կ՚ինը յըրա տինիլ (ԱՊԷՐ-ի տակ):

- Հօրը հըրսանէք՚ը մը՛ննը ըղնէլ - *տե՛ս* Ապօրը հըրսանէք՚ը մը՛ննը ըղնէլ:

- Հօրը հըրսանէք՚ը մը՛ննը քըցիլ - *տե՛ս* Ապօրը հըրսանէք՚ը մը՛ննը քըցիլ:

- Հօրը տըղան ինիլ - Արտաքինով կամ բնավորությամբ՝ վարքագծով եւն հոր նման լինել: *Սիմօնը հօրը տըղան ա, հա՛մ ղօչչաղ ա, հա՛մ բօյավ* (Բ):

ՀԱՐԱՁԱՂ/ՀԱՐԱՁԱՏ/ՀԸՐԱՁԱՂ/ ՀԸՐԱՁԱՏ *(գրբ. հարազատ)* - *ած.* 1. Ուղիղ գծով արյունակից, հարազատ: *Մին օր էլ էտ տըղան մը՛տընն ա քըցըմ հուրան հարազաթ մօրը...* (ՀԺՀ, V, 55): 2. Բարեկամ, մտերիմ: *Ըտըրա հարազադ մարթիք՚ շատ ա ինում* (Ձ): 3. *գ.* Ազգականներ, բարեկամներ, մտերիմներ: *Հարազատնէն հըվաքվում ըն, ք՚ըմանգ՚ անում* (Բ):

ՀԱՐԱՁԱՏ - *տե՛ս* ՀԱՐԱՁԱՂ:

ՀԱՐԱՄ *(արաբ., թրք. harām)* - *ած.* 1. Պիղծ, ապականված: *Էտ օրվանից ա, վէր քաշէն վէշ մինը հարամ դուշ չի հաշէվ անում* (ԱԱ, 67): 2. Անարդար, խարդախ: *Հարամ մարթիք՚ շատ կան ը՛շխարքումըս* (Բ): 3. Անազնիվ ճանապարհով ձեռք բերված: *Հարամ փուլը հարամ կըտը՛ռնա* (Ձ): 4. Արգելված, նզովված: *Մարթը ասմա.- Ըստը՛ղ հարամ ա, բիդի քօչինք՚* (Ձ):

- Հարամ անել - *տե՛ս* ՀԸՐԸՄՑ(Ը)-ՆԷԼ:

- Հարամ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՀԸՐԱՄԷԼ:

- Հարամ թիք՚ան - 1. Գողացած՝ խարդախ ճանապարհով ձեռք բերած բան: *Հարամ թիք՚ան տօն կըքանդի* (Բ): 2. Անբարոյական արարք: *Կընէգ՚ը ասմա.- Յը՛ս ըտի պէն կարէլ չըմ անիմ, էտ հարամ թիք՚ան յա* (Ձ):

- Հարամ ծընծակէր/ծէծ ծընծած/կընթանակէր/կաթնը կէրած - Ի ծնե անազնիվ՝ անզգամ: *Ըտի էտ հարամ ծընծակէրըտ էտ ըխճըկանը ք՚ըմբըխտըցընում ա* (Ձ):

- Հարամ ուլախ - 1. Ասում են հույսերը չարդարացնող բեռնակիր անասուն-

ներին: *Էտ հարամ ուլախը պէռնանը տակէն նըստում ա* (Զ): 2. Շատ տխմար մարդ: *Իզէն հինչ մ՚որթ, հարամ ուլախ ա* (Բ):

ՀԱՐԱՄՋԱԴԱ *(արաբ. harām (պիղծ) եւ պրս. zade (ծնունդ), պրս. hāram-zade)* - *գ.* Խարդախ՝ նենգ մարդ: *Մարթը ք՚անցանալ ա Ըստուծէն կօշտը, թա.- Ինձ ըզադէ էս հարամզադէն անա* (ԱԱ, 71):

ՀԱՐԱՄՋԱԴՕԹՈՒՆ - *գ.* Խարդախություն, նենգություն: *Հարամզադօթունը թուրքէրէն Ըստուծանա տուված ա* (Բ):

ՀԱՐԱՆԻ *(արաբ. hārami)* - *տե՛ս* ԸՎԱՋԿԿ: *...էլ պարսիկ, թօրք, հանանի, հու կըրը՚ցալ ա, յը՚կալ ա, թըլանալ* (ԱԱ, 32):

ՀԱՐԱՅ *(թրք. haray (օգնության կանչ)* - *գ.* 1. Օգնության աղաղակ՝ կանչ: *Հարայը պալատըն ա ընգընըմ, թա.- Թաքավէրին ախճիգ՚ը տարէն* (ՀԺՀ, V, 34): 2. Ընդհանրապես՝ կանչ, հրավեր: *Ղօնաղը տը՚սնում ա, վէր հաց ուտէլա հարայ չի կա, օգ՚ում ա՝տ՚ուս կ՚ա, ք՚ինի...* (ԱԱ, 83):

- Հարայ անէլ/տալ/քըցիլ - Օգնություն աղաղակել՝ կանչել, տագնապ բարձրացնել: *Խանէն ծառանէն հարայ ըն տամ, ք՚ինամ Ք՚օռօղլուն դիստին նըհը՚տ կըռը՚վս տամ...* (ՀԺՀ, VII, 180):

- Հըրէյին կ՚ալ/հըսնէլ/ք՚ինիլ - *տե՛ս* Հային կ՚ալ: *Պա վէր տըվըրածէն տըղան ՚ուրանը նըման ք՚ասիբ մարթին հըրէյին հըսնէ վուչ, հու բի՞դի հըսնէ* (ՀԺՀ, V, 308):

ՀԱՐԱՅ-ՀԸՐՕՑ/ՀԱՐԱՅ-ՀՈՒՐՕՑ - *գ.* Աղմուկ-աղաղակ, ժխոր: *Էտ հարայ-հըրօցը թաքավէրին շատ ա կըզնըվցընէս* (Զ):

- Հարայ-հըրօց անէլ/տալ/քըցիլ - Աղմուկ-աղաղակ՝ ժխոր բարձրացնել: *...Վար մըթէնը ինՀ՚ում ար, տ՚ուս ին կ՚ամ մին թումբու յիրա, ըսկըսում հարայ-հուրօց անէլը* (ԱԱ, 80):

ՀԱՐԱՅ-ՀՈՒՐԱՅ *(թրք. haray-huray (ժխոր)* - *տե՛ս* ՀԱՐԱՅ-ՀԸՐՕՑ:

ՀԱՐԱՅ-ՀՈՒՐՕՑ - *տե՛ս* ՀԱՐԱՅ-ՀԸՐՕՑ:

ՀԱՐԱՅ-ՂՕԹՄԻԾ - *տե՛ս* ՀԱՐԱՅ (1): *Ղօչին հըղէ յա ըղնում, ք՚ինում Պուղուն բանդան հարայ-ղօթմիշ անում* (ՆԱԲ, III, 154):

ՀԱՐԱՅ-ՄԱԴԱԹ *(թրք. haray+արաբ., պրս. madad (օգնություն)* - *տե՛ս* ՀԱՐԱՅ (1): *Հարայ-մադաթ ըն անում, ժուղուվուրթէն հըվաքում* (Զ):

ՀԱՐԱՅՉԻ - *գ.* Օգնություն աղաղակող՝ կանչող անձ: *Հարայչին հարայը ըքցում ա շէնը, թա կ՚ուլէրը նի յըն տը՚ռալ նըխէրէն մաչը* (Զ):

- Հարայչու կօռնը - *հեգն.* Մահակ, գավազան: *Ասում ա.- Էտ հարայչուն կօռնավը բիդի՞ արչ ըսպանիս* (Զ):

ՀԱՐԱ(Ն)Ք/ՀԷՐԱ(Ն)Ք - *գ.* Հայրական տունը՝ տան անդամները առանձին ապրող որդու կամ ամուսնացած աղջկա համար: *Սիրանուշին հարանք քօչալ ըն Ըմէրիկա* (Բ):

- Հարանց ք՚ինիլ - 1. Ծնողներին՝ հայրական տունը այցելել: *Մարթը թուղէս չի, թա մէհէտ հարանց ք՚ինի* (Բ): 2. *տե՛ս* Արտը հարանց ք՚ինիլ:

ՀԱՐԱՔ՚ԱԹ - *տե՛ս* ՀԱՐԱՔ՚ԱԹ:

ՀԱՐԱՔ՚ԱԹ/ՀԱՐԱՔ՚ԱԹ *(արաբ., թրք. hareket)* - *գ.* Ուժ, զորություն, կարողություն: *...էն հարաք՚աթըմըն ըն, վէր մինմինու պըլօկին, մինմինու աշկէն վըղըմօխէր փըչին* (ՋՏ, Ա, 139):

- Հարանք՚աթ անէլ - Ջանալ, ջանք գործադրել: *Տըղան հարանք՚աթ ա անում, թա սիպտակէն յըրա ընգի, հունց ա պըտահում, ընգնում ա սը՚վին յըրա* (ՀԺՀ, V, 272):

- Հարանք՚աթը կըտըրէլ/կուրցընէլ - Ուժը հատել, ուժասպառ լինել: *Էնքան քար ըմ քանդալ ըսօր, հարանք՚աթըս կըտըրալ ա* (Բ):

ՀԱՐԲԱ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հարբա կ՚ալ/նի մընէլ - Սպառնալ, վիճել: *...Ք՚ուչին մէչին փըռնալ ա, հարբա յա կ՚ամ, թա.- Յէս ծէր տան դօխտուրը ըմ, խէ օրիշ դօխտուրի կօշտ ը՞ս ք՚ինըմ* (ՋՏ, Բ, 81):

ՀԱՐԲԱԹ - *տե՛ս* ՀԱԼԲԱԹ:

ՀԱՐԳԱՆՔ/ՀԱՐԿԱՆՔ *(գրբ. յարգանք)* - *գ.* Ակնածություն, պատիվ, մեծարանք, հարգանք: *Ըտըրան շէնումը մը՚ծ հարգանք ա ինՀ՚ում* (Զ):

ՀԱՐԳԱՆՔ-ՊԱԴԷՎ - *տե՛ս* ՀԱՐԳԱՆՔ:

ՀԱՐԳԷԼ/ՀԱՐԿԷԼ *(գրբ. յարգեմ)* - *նբ.* 1. Մեկի նկատմամբ հարգանք տածել: *Ժուղօվուրթը շատ սիրըմ, հարկում ա իլալ խօրթ ըխչըկանը* (ՀԺՀ, V, 615): 2. Պատվել, մեծարել: *Շարմաղը ղունաղէն տանում ա տօն, լանվ հարգում, պահում, վը՚ննէրընը էլ լըվանում...* (ՆԼՂԺԲ, 28):

ՀԱՐԳԷԼ-ՊԱԴՎԷԼ - *տե՛ս* ՀԱՐԳԷԼ (2):

ՀԱՐԳ(Ը)ՎԷԼ/ՀԱՐԿ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԱՐԳԷԼ-ի:

ՀԱՐԳ՚ԻՋ *(թրք. hərgiz (ամենեւին, ոչ մի)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հարգ՚իզ ինիլ/տը՚ռնալ - Մեռնել: *Հարգ՚իզ ինի Ալմինակը, կ՚առնըս կ՚ուղացալ ա* (Բ):

ՀԱՐԳԱՆԲԻՐ/ԳԱՐԳԱՆԲԻՐ/ԲԻՐԳԱՆԲԻՐ *(թրք. gahdanbir)* - *տե՛ս* ԳԱՀԳԱՀ:

ՀԱՐՋԱԿ - *տե՛ս* ՀԱՐՋԱԿ:

ՀԱՐՋԱԿ/ՀԱՐՋԱԿ *(գրբ. արձակ)* - *ած.* 1. Ընդարձակ, լայնատարած: *Հարզանկ օթաղ ա ինՀ՚ում, լօխ տը՚ղ քօն ըն ինՀ՚ում* (Զ): *մ.* 2. Չկաշկանդված, ազատորեն: *Մըզը՚տէ հարզանկ ապըրում ընք* (Բ):

ՀԱՐԷԼ *(գրբ. հարեմ)* - *նբ.* 1. Հնձել, քաղել: *Վար հարըմ ա, պըրծնում, խօտը տանում ա մին տանձի ծառի տակին թուփ անում...* (ՀԺՀ, V, 661): 2. Խնոցին ետ ու առաջ շարժել՝ կարագ ստանալու համար: *Խըմօրը հունցէլիս խընէցէն մաշկան կապում ա, համ հունցում, համ էլ հարում* (ՆԼՂԺԲ, 106): 3. Գդալով կամ այլ հարմարանքով խփելով, տրորելով՝ միապաղաղ զանգված դարձնել: *Ծ՚ուն հարում ա, յուղուծու անում* (Զ): 4. Եղջյուրներով խփել, հարու տալ: *Կումաշը հարում ա, կըվէն ըքցՀ՚ում ը՚ռծէն տակը* (Բ): 5. Խփել, հարվածել: *Կըլխէն հարում ըն, ըսպանում* (Զ): 6. Շատ քսվելով՝ տրորել, մաշկը քերել: *Վընանմանըս հարալ ա, վը՚ննըս պըլուքհան ըրալ* (Բ):

ՀԱՐԷՆՔ՚ - 1. *տե՛ս* ՓՈՒՐԸՀԱՐԷՆՔ՚: 2. *տե՛ս* ՊԻՐԸՆՀԱՐԷՆՔ՚:

ՀԱՐԸՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸՐՈՒՍՏՕԹՈՒՆ:

ՀԱՐԹԱՀՈՒՐԹ - *գ.* Սնապարծություն, ավելորդ գոռոզամտություն, զրախոսություն: *ՀարթահՀ՚ուրթը շատ մարթկանց ա տըված* (Բ):

- ՀարթահՀ՚ուրթ անէլ - Զրախոսել, ավելորդ սպառնալիքներ տալ: *Վէր շատ հարթահՀ՚ուրթ ա անում, ախճիգ՚ը տ՚ուս ա կ՚ամ, փախճՀ՚ում* (Զ):

ՀԱՐԹՆԸ/ՀԱՌՀՆԸ/ՀԱՇՆԸ/ՀԱՐՍ *(գրբ. հարսն)* - *գ.* 1. Նոր ամուսնացող կամ ամուսնացած կին, նորահարս: *Մըկըրնէն հարթանընը ա փըսէն կալ՚մաչ ըն անում, պար կ՚ամ* (Զ): 2. Որդու կինը նրա ծնողների եւ ազգականների համար: *Խընջըլօզանց հարթանը, ասում ըն, ըսկէսվօրը պըկումը աղու վա մըզ՚ում* (Զ):

- Հարթանանը վը՚ռավը փըսէն լ՚ըվօթուն անէլ - Մեկի միջոցներով մյուսին լավություն անել: *Սունէն նըման ժ՚ուլիգ՚ կընէգ՚ չի կա. հարթանանը վը՚ռավը փըսէն լ՚ըվօթուն ա անում, լ՚ըվամարթ տը՚ռնում* (Զ):

- Հարթանը պըլօթուն ըրավ, ըսկէսվօրը ը՚թը դըղէցէն - Ասում են այն ժամանակ, երբ մեղավորի փոխարեն պատժվում է անմեղը:

- Հարթանը՝ վէց, վը՚ռը՝ պէց - Շատ հարս ունեցողը աղքատ կլինի:

- Հարթանը տանէլ/պիրիլ - Ամուսնանալ, աղջիկ ուզել: *Ըտըրանք էլ ք՚ինամ ըն, կօխկէ շէնան հարթանը տանում* (Զ):

- Հարթնը ուրան հըտէ յա ցըրըվ տամ, ըսկէսուրը՝ ուրան - Ասում են անկազմակերպ՝անհամերաշխ ընտանիքի մասին:

- Հարթնը քինիլ - Ամուսնանալ, մեկի հարսը դառնալ: *Սանամը էտ շէնը հարթն ա քինում* (Ձ):

ՀԱՐԹՎԱԾ - *ած.* Աներես, շփացած, լիրբ: *Հարթված կընէգ ա Տիկրանէն կընէգը* (Բ):

ՀԱՆՐԻՓ *(արաբ. harif, թրք. herif)* - 1. *ած., գ.* Անգետ, անհասկացող, աշխարհից անտեղյակ (անձ): *Հանրիփ մարթ ա. կընէգը օխտը սիրական ա պահում, ինքը խաբար չօնէ* (Բ): 2. *տե՛ս* ՀԱՍՐԱԹ: *Հըլիվուրընը ասում ա.- Յէս լիհա տըրա հանրիփը ըմ, դա՛րկէ, թէփռիմ* (ՀԺՀ, VII, 365):

- Հանրիփու տը՛ղ տինիլ - Հիմարացնել, խաբել: *Հանրիփու տը՛ղ ըն տինում, ծին իժժան կ՚ինավ ինք՚ օնում* (Ձ):

ՀԱՆՐԻՓԱՆԱԼ - *չբ.* Հարիֆ՝ չհասկացող դառնալ: *Կարքէն մարթ ա իլալ Խսրովը, մըհէնգ ա ըտի հանրիփացալ* (Բ):

ՀԱՆՐԻՓՎԱՉԻ - *տե՛ս* ՀԱՆՐԻՓՎԱՐԻ:

ՀԱՆՐԻՓՎԱՐԻ - *մ.* Հարիֆի՝ չհասկացողի պես, հիմարաբար: *Հանրիփվարի յա կօրծ փըռնում* (Բ):

ՀԱՆՐԻՓՑ(Ը)ՆԷԼ - *նբ. տե՛ս* Հանրիփու տը՛ղ տինիլ:

ՀԱՆՐԻՓՕԹՈՒՆ - *գ.* Անգիտություն, անհասկացողություն: *Հանրիփօթունէն մըհար վէշ մինը Մինասէն տըղէն ախճիգ՚ չի տամ* (Ձ):

ՀԱՐԾԱԿ(Ը)ՎԷԼ/ՀԱՐՁԱԿ(Ը)ՎԷԼ - *չբ.* 1. Վրա վազել, վրա պրծնել: *Կ՚ուլէրը հարծակվըմ ըն, Խսրովը ըսկըսըմ ա էտ կ՚ուլէրէն կըտօրէլը* (ԼՂԲ, 370): 2. Հարձակում գործել, գրոհել: *Մօնղոլնէն վար հարձակվում ըն, մին խը՚ալա հայէր փախչում ըն, կ՚ամ յէրէ քէրծումը վը՛ննը կէնում* (ԱԱ, 30):

ՀԱՐԿ[1] *(գրբ. հարկ)* - *տե՛ս* ԽԱՐՁ(1):

ՀԱՐԿ[2] *(գրբ. յարկ)* - *տե՛ս* ԱՏԱԺ:

ՀԱՐԿԱՆՔ - *տե՛ս* ՀԱՐԳԱՆՔ:

ՀԱՐԿԱՎԷՐ/ՀԱՐԿԱՎԸ՚Ր *(գրբ. հարկաւոր)* - *ած.* Կարեւոր, պիտանի, անհրաժեշտ: *Սըմբաթը, հինչքան հարկավէր ա, վէսկէ յա յօր օնում, քընում...* (ՆԱԲ, 41):

- Հարկավէր ինիլ/կ՚ալ - Պետք լինելը՝ կարիքն զգացվել, պետքական լինել: *Ասում ա.- Քար ա, լի՞, տանիմ տօն, հանբաթ հարկավէր կինի* (Ձ):

ՀԱՐԿԱՎԷՐՎԷԼ/ՀԱՐԿԱՎԸ՚ՐՎԷԼ - *չբ. տե՛ս* Հարկավէր ինիլ:

ՀԱՐԿԱՎԸ՚Ր - *տե՛ս* ՀԱՐԿԱՎԷՐ:

ՀԱՐԿԱՎԸ՚ՐՎԷԼ - *տե՛ս* ՀԱՐԿԱՎԷՐՎԷԼ:

ՀԱՐԿԱՎ(Ը)ՐԱԿԱՆ *(գրբ. հարկաւորական)* - *ած.* Պիտանի, պետքական, օգտակար: *Շինանցուց հը՛տէ հարկավըրական պէնէրը ինք՚ ա օնում, դարկում* (Բ):

ՀԱՐԿԱՎ(Ը)ՐՕԹՈՒՆ *(գրբ. հարկաւորութիւն)* - *գ.* Հարկավոր լինելը, անհրաժեշտություն, պիտանիություն: *Փիս արաշտ ա, էս սըհաթէս թօռ կ՚ալը մը՛ծ հարկավըրօթուն ա* (Բ):

ՀԱՐԿԷԼ - *տե՛ս* ՀԱՐԳԷԼ:

ՀԱՐԿ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՀԱՐԳ(Ը)ՎԷԼ:

ՀԱՐՁԱԿ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՀԱՐԾԱԿ(Ը)ՎԷԼ:

ՀԱՐՄԱՐ *(գրբ. յարմար)* - *ած.* Պատշաճ, համապատասխան, հարմար: *Քինամ ա բազար, ուրան հը՛տէ մին հարմար շօր ինք՚ օնում* (Ձ):

ՀԱՆ-ՄԱՐ/ՄԱՐ-ՀԱՆ - *գ.* Ծնողներ: *Վէրջը, հանը-մարը դաբով ըն կը՛նում, վը՛ր քինին, հըրսնացուն պը՛ռին* (ՀԺՀ, V, 43):

- Հանը-մարը քաշիլ - *տե՛ս* Հօրավ-մօրավ ասէլ:

- Հօրավ-մօրավ անէլ - Յուրացնել, տնօրինել: *Ըտի էտ վը՛ղէրը հօրավ-մօրավ ըն անում, բիջանում* (Ձ):

- Հօրավ-մօրավ ասէլ - Ծնողներին հայհոյել: *Տըրանք կըռվում ըն, ուրուր հօրավ-մօրավ ասում* (Ձ):

- Հօրավ-մօրավ ինի - Բարեմաղթություն երեխային, հատկապես նորածնին՝ թող միշտ ծնողների հովանավորության տակ լինի: *Նախշուն աքէրը պանրուրան պաչում ա, թա.- Հօրավ-մօրավ ինի* (Բ):

ՀԱՐՄԱՐՈՒԹՈՒՆ/ՀԱՐՄԱՐՕԹՈՒՆ *(գրբ. յարմարութիւն)* - *գ.* 1. Հարմար լինելը: *Ասում ա.- Յը՛ս կարէլ չըմ քը՛զ ըստիպիմ. քու հարմարութունէտ յէշանծ* (Ձ): 2. Նպաստավոր պայման: *Թաքավէրը վօրօշում ա ըխճըկանը հէտէ ծօվումը մին տօն շինի ուրան հարմարօթունէրավը...* (ՀԺՀ, V, 639):

ՀԱՆՑԷՐԴԱ(Ն) - *տե՛ս* ԷՋՋԱՆ(ԱՆ):

ՀԱՐՍ - *տե՛ս* ՀԱՐԹՆԸ:

ՀԱՐՎԱՍԿ - *գ.* Խնոցի հարելու համար հավաքած սեր՝ մածուն: *Ըսօրվա հարվասկը հարալ ըմ* (Բ):

ՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԱՐԷԼ-ի:

ՀԱՐՑ *(գրբ. հարց)* - *գ.* 1. Հարցում, պատասխան պահանջող առաջարկություն: *Վէշ մինը կարում չի ըտըրա հըրցէրէն պադասխանէ* (Ձ): 2. Լուծում պահանջող դրույթ՝ հանգամանք: *Էտ հարցը ըտի էլ մընաց* (Ձ): 3. Որեւէ բանի վերաբերող հանգամանք: *Հանը ասամ.- Նըմուսու հարց ա, կարէլ չըմ* (Ձ): 4. Վիճելի խնդիր, կասկածելի հանգամանք: *Էտ հանալ հարց ա. մունք կօ՞զինք՚՝ թուրքէրէն նըհը՛տ հաշտըվինք՚, թա չէ՞* (Բ):

- Հարցը կապէլ - Խնդիրը ավարտին՝ լուծմանը հասցնել, քննարկումը դադարեցնել: *Հարցը կապում ըն, քինամ մարթա ուրանց կօրծէն* (Ձ):

- Հարցը մաչտը՛ղ պիրիլ/պիցըրցընէլ/տինիլ - Հարցը՝ խնդիրը քննության առարկա դարձնել: *Հարցը մաչտը՛ղ պէրավ հանը, տը՛սնա՝ կըլխան հի՞նչ ա տանս կ՚ամ* (ՆԼՂԺԲ, 55):

- Հարց տալ - *տե՛ս* ՀԸՐՑԸՆԷԼ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ - *տե՛ս* ՀԸՐՑԸՓՕՐՑ: *Նա մը՛ծ ախպօրան հարցմունք ըրավ, մը՛ծ ախպէրընն էլ ասից, վէր դիբի էն ղօլէրը վը՛րս չի կա...* (ՀԺՀ, V, 202):

ՀԱՐՈՒ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հարու տալ - *տե՛ս* ՀԱՐԷԼ (4):

ՀԱՐՈՒՍՏ *(գրբ. հարուստ)* - *ած.* 1.Ունեւոր, մեծատուն, մեծ ունեցվածքի տեր (մարդ): *Մին շատ հարուստ մարթ ա ինում, բայց տըրա հափուռը կօչ յէկած ա ինում* (ՀԱԲ, 15, 124): 2. Առատ, առատորեն մի բան ունեցող: *Քինըմ ըն, քինըմ, վէրջը հըսնըմ ըն մին մը՛ծ, հարուստ քաղաքի* (ՀԺՀ, V, 331): 3. Բերրի, բերքառատ: *Մէր վը՛ղէրը հարուստ վը՛ղէր ա* (Բ): *գ.* 4. Ունեւոր մարդ: *Հարուստը քընսիբին դադիրը գ՚իդալ չի* (Ձ): 5. *մ.* Հարուստի նման: *Ըտըրանք հարուստ ըն ապրում* (Ձ):

- Հարուստը թանզզան շօր կ՚ը՛ցավ, ըսը՛ցէն՝ շընըրհավէր ինի, քանսիբը կ՚ը՛ցավ, ըսը՛ցէն՝ ըշտըղա յամ՝ - Անսովոր երեւույթը հարցում անելու տեղիք է տալիս:

- Հարուստը ջուբէն ա թըխում, քանսիբը՝ ծույնանը - Կարիքի դեպքում ունեւորը իր հարստությանն է ապավինում, իսկ չքավորը ողբում է:

- Հարուստը օխնը կէրավ, ըսը՛ցէն՝ ճար ա, քանսիբը կէրավ, ըսը՛ցէն՝ տանզն ա - Մարդկանց արարքները դիտվում են որպես նրանց կենսակերպի արտահայտություն:

- Հըրուստէն վը՛րցակըն էլ ա թօխս կ՚ամ, ճօտէր անում - Ամեն ինչ նպաստում է ունեւորի ինչքի ավելանալուն:

- Հըրուստէն օժժընն ա հանքին ջուբումը կինի - Ունեւորն իր հարստությանը համապատասխան է գործում:

ՀԱՐՈՒՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸՐՈՒՍՏՕԹՈՒՆ:

ՀԱՆՐԻՒՐ *(գրբ. հարիւր)* - *թ.* 1. Հարյուր թիվը եւ քանակությունը: *Միհէտ էլ հանրուր վը՛խճար ա տըվալ ջիհիլնէրէն, վէր տանին, քը՛ը՛փ անին* (ԱԱ, 25): 2. *տե՛ս* ՀԱՋՋԱՐ (2):

- Հարուրը անց կըցընէլ/խուրդան անէլ/չընգըլցընէլ - Խոր ծերության հասնել: *Սուղումուն դային հարուրը անց ա կըցըրալ, էլիա բաղան տօն չի կամ* (Բ):

- Հարուրը կուրցընօղը մինավը ախ չի քաշիլ - Մեծ կորուստ ունեցողը փոքր դժվարություններից չի նեղվի:

- Հարուր թըխօղէն մինը բիդի ինի, վէր ասէ՝ թըխէ՛ - Ցանկացած բնագավառում առաջնորդի առկայությունը պարտադիր է:

- Հարուր թօկա պըրծած - Փորձառու սրիկա: *Հարուր թօկա պըրծած մարթ ա կ'օղ Հաբին* (Բ):

- Հարուր կապավ ընցած - *տե՛ս* Հազզար մաղա հաց կէրած:

- Հարուր կապավ կապէլ - Խիստ հսկողության տակ պահել: *Ղըխպին օգ'ում ըս լ'ըհա հարուր կապավ կապէ, մին ա, ղըխպօթուն ա ընական* (Ձ):

- Հարուր հը՝ստ(է) - *տե՛ս* Հազզար հը՝ստ(է):

- Հարուր ճըղուպուրան հէնգ'ը փօչ կինի - Շատերի՝ մեծ քանակության մեջ նաեւ վատերն են լինում:

- Հարուր մաղա հաց կէրած - *տե՛ս* Հազզար մաղա հաց կէրած:

- Հարուր մըրքա մին-մին մազ', կըտը՝ռնա մին սաղ մըրօք - Ամբողջը՝ մեծը մասնիկներից՝ փոքրից է գոյանում:

- Հարուր տըռնըվա/տարվա - Բազում տարիների: *Կօգ'ի հարուր տարվա մըրթըկընէգ', էլիա մարթը կընգանան բըդի հըմանչի, կընէգ'ը՝ մարթան* (ՆԱԲ, III, 175):

- Հարուր տըռնըվա էշ - *արհմ.* Բազում տարիների փորձ ունեցող աշխատավոր: *Հարուր տըռնըվա էշ ա, էլիա կարում չի կարքէն կօրծ անէ* (Բ):

- Հարուր տըռնըվա փըսած կաղնէ - Ամուր, անսասան: *Հարուր տըռնըվա փըսած կաղնէ յա ապան* (Բ):

- Հարուր տօկօսավ - 1. *տե՛ս* ԸՍՏՕՊԸՐԱՑԷՆՏՆԻ: 2. *մ.* Հաստատ, անպայման: *Հարուր տօկօսավ կ'ըլական ըմ, պաղըրաստ կըկէնաս* (Ձ):

- Հարուր ցավու ածէլ - Մեկին մեծ տառապանքներ պատճառել, հոգսերի մեջ գցել: *Բիդասըլ ժառանգը հօրը-մօրը հարուր ցավու կածէ* (Բ):

- Հարուր ցավու կ'ալ - Շատ տառապել, հոգսերի մեջ ընկնել: *Սինամ աքէրը հարուր ցավու յը՝կած կընէգ' ա* (Բ):

- Հարուր փարչավ ճուր խըմած - *տե՛ս* Հազզար մաղա հաց կէրած:

ՀԱՐՓԱՆ - *տե՛ս* ԱՐԿԱԳՕԼԻԿ:

ՀԱՐՓԻԼ *(գրբ. արբենամ, արբեմ)* - *չբ.* Գինովանալ, հարբել: *Մին հէտ Մէլիքին տըղան հարփում ա, հուրանց բաղըմը մին ծառի տակի թէք' ընգնում, քօն ինում* (ՀԺՀ, V, 236):

- Հարփած ըռուս - Շատ հարբած՝ հարբելուց ինքնատիրապետումը կորցրած մարդ: *Հարփած ըռուս ը՞ս, խէ յը՝ր չը՞ս կէնում* (Բ):

ՀԱՐՔԱՐՔԻՆԱ - *ած.* Բարձիթողի, անտերունչ: *Հարք'արք'ինա յէրգ'իր ա, հու հինչը օգ'ում ա, անում ա* (Ձ):

ՀԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ - *տե՛ս* ԸՐՔԸՎՕԹՈՒՆ:

ՀԱՑ *(գրբ. հաց)* - *գ.* 1. Ալյուրից թխած ամենօրյա ուտելիք: *Մին կուտուր հաց ա տինում խօրթ ըխճըկանը ծը՝ռքէն, էլիա դարկում ծըմակը* (Ձ): 2. Առհասարակ՝ ուտելիք, սնունդ, ուտեստ: *...Ըտըրանք կ'աս ըն տօն, տըսնաս կընէգ'ը հացը հըզըրած...* (ՀԺՀ, V, 260): 3. Հացահատիկ: *Ըստարէ արաշտ ա իլալ, հացը պակաս ա* (Բ): 4. *տե՛ս* ՄԸՂԸՐԱՀԱՑ: 5. Ճաշ, ընթրիք, հացկերույթ: *Հացէն վախտը վէր կ'ամ ա, խօխէնք'ը ուրխանում ըն* (Ձ): 6. *տե՛ս* ԲԱԴԱՐԱՆՔ': 7. *փխբ.* Ապրուստի միջոց: *Հանդօվէն հացը հուրան փէշակընա* (Բ):

- Հացա կըտըր(վ)էլ - *տե՛ս* Հացա-ճիրա կըտըր(վ)էլ (ՀԱՑ-ՃԻՒՐ-ի տակ):

- Հացա մօտէ - Եկամտաբեր: *Հացա մօտէ փէշակնէ շատ կա* (Բ):

- Հաց անէլ - Հաց թխելու համար խմոր հունցել: *Յը՝ր ա կէնում հաց անում, տընէրը հըվաքում, ք'ինամ բօստանը* (Ձ):

- Հացան կըտըրէլ - Մեկի տանը հյուրասիրվել: *Ասում ա.- Կարէլ չը՞մ, յը՝ս ըտըրա հացան կըտըրալ ըմ* (Ձ):

- Հացա մօտէ փէշանկ - Եկամտաբեր արհեստ՝ մասնագիտություն: *Դուլգ'ըրօթունը հացա մօտէ փէշանկ ա* (Բ):

- Հաց ասէլ, Ըստուծէն յէշիլ - Սոված լինել: *Դէ ղօնաղընա էլ հունց քօն ինի՞. հաց ա ասում, Ըստուծէն յէշում* (Ձ):

- Հացէն ծառան վէր ըղնէլ - Օգտվելու՝ եկամուտ ստանալու հնարավորությունից զրկվել: *Պաշտօնը ծը՝ռքան ինք' կալին, խը՝ղճը հացէն ծառան վէր ընգավ* (Ձ):

- Հացէն կըտըրածը թօրը կըտըրէլ չի - Հյուրասիրությամբ ձեռք բերածը սպառնալիքով հնարավոր չէ ձեռք բերել:

- Հացէն մաչին աղ չինիլ - *տե՛ս* Հափըռումը աղ չինիլ (ՀԱՓՈՒՌ-ի տակ):

- Հացէն յը՝ղ քըսէլ - 1. Մեկին անուղղակիորեն օգնել, նրա օգտին խոսել՝ գործել: *Էտ ախմաղը կըլօխ չի ըղնում, վէր հիրըվանէն հացէն ա յը՝ղ քըսում* (Ձ): 2. Շողոքորթել, քծնել: *Մարթ կա՝ սաղ գ'անքումը ըստուր-ընդուր հացու յը՝ղ ա քըսէս, կըլօխը պըհէս* (Բ):

- Հացէն (պըտառէն) թըքէլ, տէմ անէլ - Մեկին ստորացնելով՝ նրան օգնել՝ օժանդակել: *Իզէն հինչ մարթ ա՞. հացէն պըտառէն թըքում ա, տէմ անում ախպօրը* (Բ):

- Հացէն (պըտառէն) թըքիս, տէմ անիս՝ յը՝ր կօնէ - Ասում են արժանապատվությունից զուրկ՝ ստոր մարդկանց մասին:

- Հացէն տանտա/պապա ասէլ - 1. Երեխա լինել, տհաս լինել: *Հարը ասմա.- Տու հալա հացէն տանտա յըս ասում, քու փըսըկվէլի վախտըտ չի* (Ձ): 2. *տե՛ս* Տանտավայ անէլ:

- Հացէն քացէ տալ - Իր օգուտից՝ շահից անգիտաբար հրաժարվել: *Իզէն կընօխանց ա հացէն քացէ տաս* (Բ):

- Հացը դուշմանին տօռնը կըտանէ - Հացի կարիքը՝ սովը մարդուն ամեն քայլի կդրդի:

- Հացը ըղուվէլ - Դժբախտության մեջ լինել: *Խը՝ղճէն տըղէն ըսպանալ ըն, հացը ըղուվալ ա* (Բ):

- Հացը թուրնան չըկէնալ - Գործը ձախողվել: *Մէր հացը թուրնան չի կէնում* (Բ):

- Հացը խըլէբ ա տը՝ռալ - *հեգն.* Ասում են ռուս հարս ունեցողների մասին:

- Հացը (ծը՝ռքան) խըլիլ - Ապրուստի՝ եկամուտի միջոցներից զրկել, պաշտոնից զրկել: *Պահէստապէտը լ'ավ ապրում ար, հացը ծը՝ռքան խըլէցէն* (Բ):

- Հացը՝ ծույնանը, աշկը՝ կընգանը - Ասում են երախտամոռ՝ խարդախ մարդկանց մասին:

- Հացը ծույնանը ինիլ - Երախտամոռ լինել: *Միլիցին հացը ծույնանընա* (Ձ):

- Հացը ծույնանը ք'ուրդ - Խիստ ժլատ մարդ: *Մինասը հացը ծույնանը ք'ուրդ ա* (Բ):

- Հացը կըտըրէլ - 1. *տե՛ս* Հացան կըտըրէլ: 2. *տե՛ս* Հացը (ծը՝ռքան) խըլիլ:

- Հացը կըտըրցընէլ - *տե՛ս* Հացը (ծը՝ռքան) խըլիլ:

- Հացը կ'ուրի/կուտանա տը՝ռնալ - *տե՛ս* Հացը թուրնան չըկէնալ: *Կընէգ'ընա ասում ա.- Քու քուր հուրան լանվ չի պահում, տըրա հէտէ յէլ մը՝ր հացը կ'ուրի յա տը՝ռնում...* (ՀԺՀ, VII, 259):

- Հացը կուտուր տը՝ռնալ - 1. Իղձերը լրիվ չիրականանալ՝ կիսատ մնալ: *Պառավը համ հըզըրվում ա, վէր մահէն նըհէտ ք'ընի, համ էլ բըլբըլամ. - Հացըս կուտուր տէռած ըմ ք'ընում, Մստուծ, լանվ*

անգուճ կալ՝ (ՆԱԲ, 65): 2. Ընտանիքը կիսվել: *Հանբուն հացը էլ կուտուր տը՝ռավ տըղան փըսըկվէլանը յը՝տը* (Բ):

- Հացը հարամ անէլ/հըրըմցընէլ - 1. Ուտելու ժամանակ խանգարել, չթողնել, որ մինչեւ վերջ ուտի: *Ծը՝տը ծըրտում ա ըմանէն մաչին, Վաղօվէն հացը հարամ անում* (Ձ): 2. Չթողնել, որ խաղաղ՝ հանգիստ ապրի: *Թօրքէրը մէր հացը հըրըմցըրէն* (Բ):

- Հացը հարամ ինիլ/տը՝ռնալ/ հըրամէլ - 1. Ուտելը խանգարվել, չկարողանալ մինչեւ վերջ ուտել: *Թօռը նի կալ՝ավ, ուստը՝ցը հացը հարամ տը՝ռավ* (Ձ): 2. Խաղաղ՝ հանգիստ կյանքը խանգարվել: *Կըռը՝վը ըսկըսվից, մէր հացը հըրամից* (Բ):

- Հացը հըլալ(վ)էլ - Խաղաղ՝ հանգիստ կյանք սկսվել: *Թուրքէրէն տանուս ըրէնք՝, մէր հացը հըլալվից* (Բ):

- Հացը մինտը՝ղ թուրնան չըկէնալ - Իրար հետ լեզու չգտնել, գժտվել, վատ հարաբերությունների մեջ լինել: *Ըտըրանց հացը մինտը՝ղ թուրնան չի կէնում, սաբավ հիրըվանէր ըն* (Բ):

- Հացը պատան չըկէնալ - *տե՛ս* Հացը թուրնան չըկէնալ:

- Հացը պէրանը տընէլին տը՝ղ անգուճը տանէլ - *տե՛ս* Ծը՝ղքը պէրանը տընէլին տը՝ղ անգուճը տանէլ:

- Հացը պըկավը չըք՝ինիլ - Հուզմունքի՝ մտահոգության՝ վշտի եւն պատճառով չկարողանալ որեւէ բան ուտել: *Խը՝ղճ Թամարէն հացը պըկավը քՀունում չի. մարթը էն ա ծանդըր* (Բ):

- Հացը վընանատակ տալ - Երախտամոռ լինել, հյուրասիրությունը՝ լավությունը մոռանալ՝ արհամարհել: *Հացը վընանատակ տըվօղ մարթիք՝ ամմէն տը՝ղ էլ կան* (Ձ):

- Հացը տանան անէլ - Իր միջոցներով ապրել: *Էտ կընէգ՝ը կօգի իրփըվէրի, ամմա հացը տանան ա անում, Հուրհուշու միննաթու տակ չի ըղնում* (Ձ):

- Հացը ցամաք օտէլ - Աղքատանալ, աղքատ ապրել: *Կ՝Հուք՝Հունք մին վըխտու վըն իլալ համփա, միհէնգ՝ հացը ցամաք ըն օտում* (Բ):

- Հացը ցէց տինիլ, քըմակէն կ՝օղլը կէնալ - Ստորություն՝ խարդախություն անէլ: *Էն հինչ տըղամարթ ա՞. հացը ցէց ա տինում, քըմակէն կ՝օղլը կէնում* (Բ):

- Հացը ցօրէն տը՝ռնալ - Գործը հաջողվել: *Քուրըն ասում ա.- Տըղաս կըտանիս շէնը, հացըտ ցօրէն ա տըռնըլական* (ՀԺՀ, VII, 259):

- Հացը քըրթնօնքըն ա սիրում - Եկամուտ՝ արդյունք ստանալու համար պետք է չարչարվել:

- Հացը օտէլ - 1. *տե՛ս* Հացան կըտըրէլ: 2. *տե՛ս* Ուրանն հացը օտէլ:

- Հացը օտէլ, էշը յը՝ր ինիլ - Գործը ավարտել: *Ուստան հացը կէրալ ա, էշը յը՝ր իլալ, մընամ ա հախը տանք* (Բ):

- Հացը օտէլ, խօնչան կըրակէն տինիլ - *տե՛ս* Հացը վընանատակ տալ:

- Հացը օտվէլ - Հյուրասեր լինել: *Ջավէնը լ՝ավ մարթ ա, ընդըրա հացը օտվում ա* (Բ):

- Հաց նըստէլ - Ճաշել, սեղան նստել: *Վէր հաց ըն նըստէս, էտ կընէգ՝ը թաքուն դունաղէն խուրջինան էտ քըթօլը կ՝ուղընաս ա* (Ձ):

- Հաց շինիլ - Ճաշ պատրաստել, կերակուր եփել: *Մարթըն ասում ա.- Դէ հաց շինի, օտէնք՝* (ՀԺՀ, V, 398):

- Հաց տալ - 1. Հյուրասիրել, կերակրել: *Կընէգ՝ը ըտըրանց հաց ա տաս, քունավ ընէս* (Ձ): 2. Հանգուցյալի պատվին ճաշկերույթ կազմակերպել: *Հօրը մըռնէլավը Մէլիք՝ը ժուղուվուրթէն լ՝ավ հաց ա տուվալ* (Ձ):

- Հաց տինիլ - *տե՛ս* Հաց քըցիլ:

- Հացու հընգէր - Մտերիմ ընկեր, հացի՝ ճաշի ընկեր: *Ըտըրանք էլ հացու հընգէրունք՝ ըն ինում* (Ձ):

- Հացու հըսցընէլ - *տե՛ս* Հացու տար շինիլ:

- Հացում՝ կ՝Հուլ, պէնում՝ թՀուլ - Ասում են նրանց մասին, ովքեր օգտվելիս շատ ակտիվ են, աշխատելիս՝ ծույլ:

- Հացում քօռ - *տե՛ս* ՀԸՑԱՔՕՌ:

- Հացու տար ինիլ/տը՝ռնալ - Ապրուստի միջոցներ ունենալ, իր ապրուստը կարողանալ հոգալ: *Մաքսիմը հացու տար տը՝ռավ, հօրը մընանան քըցից* (Բ):

- Հացու տար շինիլ - Մեկին օգնել՝ օժանդակել, որ կարողանա իր ապրուստը հոգալ: *Ախպէրքը կօրծի տիրին, Համօվէն հացու տար շինը՝ցէն* (Բ):

- Հացու տինիլ - Ճաշի հրավիրել, ճաշել տալ: *Հացու վրս տինում՝ նըստում ա, պէնու վրս տինում՝ կօրչում ա* (ԱԲԲ, 55):

- Հաց քըցիլ - Սեղան բացել: *Հացը վը՝ր քըցում ըն, տընատարըն արաղըն ածում ա ըստըքանէրը, մինը ինքը՝ յօր օնում, մինը տամ դունաղէն...* (ՆԼՂԺԲ, 65):

- Հաց օտէլ - Ճաշել, նախաճաշել, ընթրել: *Մին ըխպըրու ղըրաղէ նըստում ըն, վէր հաց օտին* (ՆԱԲ, 132):

ՀԱՑԱՎ - *ած.* Հյուրասեր, առատասիրտ, պատվասեր: *Հացավ մարթ ա իլալ Ավանք՝ ամին, ըղօրմի ընդրա* (Բ):

ՀԱՑԷ - *տե՛ս* ՀԱՑՑԷ:

ՀԱՑ-ԹԱՑ - *տե՛ս* ՀԱՑ-ՄԱՑ:

ՀԱՑԹԷՐ/ՀԱՍԹԷՐ - *տե՛ս* ԹԸՐԹԷՐՈՒԿ:

ՀԱՑԹՈՒԽ/ՀԱՑԹՕԽ/ՀԱՍԹՈՒԽ - *գ.* Հաց թխող արհեստավոր, հացագործ, հացթուխ: *... Տը՝սնըմ ըն Հուրանց հացթուխը հաց թըխէլիս, ըտըրա ախճիգ՝ը էլ խօնչին յըրան պՀուլէրը կըրէլիս* (ՀԺՀ, V, 34):

ՀԱՑԹՈՒԽՕԹՈՒՆ/ՀԱՑԹՕԽՕԹՈՒՆ/ ՀԱՍԹՈՒԽՕԹՈՒՆ - *գ.* Հացթուխի զբաղմունքը, հացագործություն: *ԾՀուշիգ՝ տօ՝տան յիթիմնէն հացթուխութունավ ա պահալ, մընընցըրալ* (Բ):

ՀԱՑԹՕԽ - *տե՛ս* ՀԱՑԹՈՒԽ:

ՀԱՑԹՕԽՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՑԹՈՒԽՕԹՈՒՆ:

ՀԱՑԻ - *տե՛ս* ՀԱՑՑԷ:

ՀԱՑԿԷՐՈՒԹՀՒՆ/ՀԱՑԿԷՐՕԹՈՒՆ/ ՀԱՍԿԷՐՈՒԹՀՒՆ *(գրբ. հացկերութիւն)* - *գ.* 1. Հաց ուտելը, ճաշելը: *Կարկուտ ա կ՝ամ, հօնձ ընուղնէրէն հացկերութՀունը խընգարում* (Ձ): 2. Ճաշկերույթ: *Էտ հացկերութՀունավը Ռուբէն դային սաղ շինանցՀուց ծէն ա տուվալ* (Ձ):

ՀԱՑԿԷՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՑԿԷՐՈՒԹՀՒՆ:

ՀԱՑ-ՃՀՒՐ - *գ.* Հաց եւ ջուր, ուտելիք եւ խմելիք: *Էքսի օրը նօրից ա Հուրան օրվա հացը-ճՀուրը յօր օնում, քՀինանամ հանդ...* (ՆԼՂԺԲ, 85):

- Հացա-ճիրա կընտըր(վ)էլ - Ախորժակը փակվել, ոչինչ չուտել եւ չխմել (հիվանդության եւն պատճառով): *Քըշէրցիրէկ ըտըրա հէտի յա քընէնք՝ անըմ, հացա-ճիրա կընտըրվըմ, տանջըվըմ* (ՀԺՀ, V, 229):

- Հաց-ճՀուր շինիլ - *տե՛ս* Հաց շինիլ: *Էս ախճիգ՝ը ամմէն օր էտ մարթին հացը-ճՀուրը շինում ա, տօնը սըրփՀում, տանը պէնէրը լօխ անում...* (ՀԺՀ, VII, 16):

ՀԱՑ-ՄԱՑ/ՀԱՑ-ԹԱՑ - *գ. հվք.* Հաց եւ ուրիշ ուտելիքներ: *Հանէրը էրկու ըստաքան արաղ ա խըմում, հացա-մացա ածում կըլխէն, տՀուս կ՝ամ* (ՆԱԲ, 112):

ՀԱՑՄՈՒՐԱՑ - *ած., գ.* Հաց մուրացող (անձ): *Փարք՝ Ըստըծու, Ղարաբաղ միհէնգ՝ հացմուրաց մարթ չի կա* (Բ):

ՀԱՑՊՈՒԿԻ - *տե՛ս* ՀԱՑՕՏԷՔ՝:

ՀԱՑՑԷ/ՀԱՑԷ/ՀԱՑԻ *(գրբ. հացի)* - 1. *գ.* Ձիթենազգիների ընտանիքին պատկանող ծառ՝ հացենի: *Հացցէն տըմասկան ծառ ա* (Բ): 2. *ած.* Հացենու փայտից պատրաստած: *Ցըկատէն կօթը հացցէ բիդի ինի, վէր էրկան տէմ կէնա* (Բ):

ՀԱՑՑՈՒՏ - *տե՛ս* ՀԱՑՑՕՏ:

ՀԱՑՑՕՏ/ՀԱՑՑՈՒՏ/ՀԱՑՕՏ[1]/ՀԱՑՈՒՏ[1] - *գ.* Շատ հացենիներ աճած տեղ: *ՔՀինամ ա, տը՝սնում՝ կ՝ումըշնէն հացցօտումը* (Ձ):

ՀԱՑ ՈՒ ՊԱՆԷՐ - *գ.* 1. *տե՛ս* ՊԸՆԸՐՀԱՑ: 2. *փխբ.* Շատ հեշտ բան: *Հեշնձ անէլը հաց ու պանէր չի* (Զ):

ՀԱՑՈՒՏ[1] - *տե՛ս* ՀԱՑՑՕՏ:

ՀԱՑՈՒՏ[2]/ՀԱՑՕՏ[2] - *տե՛ս* ԿՕՇՏ[2] (1):

ՀԱՑՈՒՏԻՔ[1] - *տե՛ս* ՀԱՑՕՏԷՔ[1]:

ՀԱՑՕՏ[1] - *տե՛ս* ՀԱՑՑՕՏ:

ՀԱՑՕՏ[2] - *տե՛ս* ՀԱՑՈՒՏ[2]:

ՀԱՑՕՏԷՔ[1]/ՀԱՑՈՒՏԻՔ[1] *(գրբ. հացուտիք (հացկերույթ)* - *գ.* Երկրորդ անգամ ամուսնացողի հարսանեկան հանդես: *Սա հըրսանէք[1] չի, հացուտիք[1] ա* (ՆԱԲ, II, 313):

ՀԱՓ - *տե՛ս* ՀԱՄՓ:

ՀԱՓԱՓ *(գրբ. հագագ)* - *գ.* Հեւալը, հեւոց: *Ըտըրա հափափը վէր տը[ա]սնում ա, մէխկընը ա կ[ա]մ* (Զ):

- Հափափ անէլ - *տե՛ս* Հափափը ըղնէլ:

- Հափափը ըղնէլ/կըտըր(վ)էլ - 1. Հեւալ, շնչասպառ լինել: *Էս մարթը, հափափընը ընգած, վազ ա տաս* (ԱԱռ, 5): 2. Մեռնելու շեմին լինել, մահամերձ լինել: *Հիվանդը ծանդըր ա, էն ա հափափը կըտըրած* (Զ): 3. Շատ ծերանալ, ծերությունից խոսել չկարողանալ: *Սէյրան ապան հանրուր տիրը[ա]կան ա, հափափը կըտըրալ ա* (Բ):

- Հափափը քըցիլ - Մեկին շատ չարչարելով՝ հեւասպառ անել: *Ուստան շանգ[ա]էրդին էնքան պինըցընում ա, լափ հափափընը ա քըցում* (Զ):

ՀԱՓ(Ը)ՌԷԼ - *նբ.* Ձեռքով՝ բռով ագահորեն վերցնել՝ խլել: *Ծը[ա]ռքը մը[ա]կնում ա, վը[ա]սկան հափըռում, ածում ջուբը* (Զ):

- Հափըռիմ՝ պըրծընիս - Սպառնական արտահայտություն:

ՀԱՓ(Ը)ՌԱՂԻ - *ածական.* Վայրահաչող: *Հափըռաղի մարթին անա զանիլանս տարած ա* (Բ):

ՀԱՓ(Ը)ՌԱՆՔ - *գ.* Վայրահաչելը, վայրահաչություն: *Ըտըրա հափըռանքէն դանրդանն վէշ մինը տանս չի կ[ա]մ շինամաչը* (Բ):

ՀԱՓՈՒՌ *(գրբ. ափ)* - *գ.* 1. Ձեռքի միջին փոսորակը, բուռ: *Հափուռը մօշավ լըցնում ա, տէմ անում ըխճըկանը, ախճիգ[ա]ը օտում ա, քուշտանում* (Զ): 2. Այն քանակությունը կամ ծավալը, որ կարելի է բռան մեջ տեղավորել: *Թափէղը մին հափուռ վէսկէ յա տանս օնում, տամ պըռավէն* (ՆԱԲ, 43): 3. *տե՛ս* ԿԻՑ(Կ):

- Հափըռան վը[ա]ս օնէլ - Նախազգալ, գուշակել (հիմնականում գործածվում է հարցական ձեւով): - *Էքանչ ծանն ա կ[ա]ըլական: - Հինչ ը՞ս գանդում, հափըռատ վը[ա]ս ը՞ս կանլալ* (Զ):

- Հափռավը մին - Մի բուռ, բռան չափով: *Հափըռավը մին վը[ա]սկէ յա տամ, էտ դուշը ինք[ա] օնում* (Զ):

- Հափըռէն մաչին - 1. Մեկին ենթարկված, մեկից լիովին կախված: *Հարթնէրը առաչ էն ըն իլալ ըսկէսվորը հափըռէն մաչին* (Բ): 2. Լավ տեսանելի, բացահայտ: *Ք[ա]իրսա կըլխան վէր յէշանում ըս, սաղ Ղարաբաղը էն ա հափըռէտ մաչին* (Բ):

- Հափըռէն մաչին պահէլ - Լավ խնամել, հոգատարությամբ պահել: *Մարը խօխօնցը հափըռէն մաչին ա պահում* (Բ):

- Հափըռու մաչ - Լավ խնամված: *Բաղ հինչ բա՞ղ, մին հափըռու մաչ ա* (Զ):

- Հափըռումը աղ չինիլ - Երախտիքը չգնահատվել: *Հափըռումըս աղ չի կա, էնքան լ[ա]ըվօթուն ըմ անում, վէշ մինը կ[ա]ընհատում չի* (Բ):

- Հափըռումը աղու ինիլ - Ձախորդ լինել, ձեռնարկած գործը ձախողվել: *Անդրի դայուն հափըռումը աղու կա. հինչը օգ[ա]ում ա անէ, անմալ չի կ[ա]մ* (Բ):

Հափըռումը թըքէլ - Վստահ լինել, ստույգ տեղեկություն ունենալ (հիմնականում գործածվում է հարցական ձեւով): *Հափըռումըտ թըքալ ը՞ս, վէր ըստարէ արաշտ չինանն* (Բ):

- Հափըռումը չօփ տինիլ - 1. Մեկին գերազանցել հնարամտությամբ՝ խորամանկությամբ՝ գործով եւն: *Կընէգ[ա]ը շատ ար ժանլիգ[ա], մարթին հափըռումը չօփ ար տինանում* (Զ): 2. Մեկին խաբել: *Հափըռումը չօփ տիրին, կավը ծը[ա]ռքան ինք[ա] կալին* (Զ):

- Հափըռումը պէն տինիլ - *տե՛ս* Հափուռը պէն կօխէլ:

- Հափըռումը տինիլ - Մանրամասնորեն հաղորդել՝ տեղեկացնել: *Մարթը հինչը անում ար, կընէգ[ա]ը վազ ար տամ, նախագէն հափըռումը տինանում* (Զ):

- Հափուռ անէլ - *տե՛ս* Կից(կ) անէլ:

- Հափուռը թակիս՝ կօրէկ/կապէկ/կակա չի վէր ըղնէլ - Ասում են խիստ ժլատ մարդկանց մասին: *Մին սապօժնիկ ա ընում, շատ ըսկուպօյ, վը[ա]ր հափուռը թակիս, կօրէկ չի վէր ընգնիլ...* (ԼՂԲ, 354):

- Հափուռը կապ/հօփ/կօչ յը[ա]կած/պէնդ - *տե՛ս* ԸՍԿԸՊՕՑ:

- Հափուռը հըվաքէլ - *տե՛ս* Ծը[ա]ռքը հըվաքէլ:

- Հափուռը նի մընէլ - Մեկի իշխանությանը ենթարկվել, հպատակվել, հնազանդվել: *Սաղ շինանցէք[ա] նախագէն հափուռընը ըն իլալ նի մըտած* (Բ):

- Հափուռը պէն կօխէլ - Կաշառք տալ, կաշառել: *Սուդյին հափուռը պէն ըն կօխում, կօրծը դանզըցընում ա* (Զ):

- Հափուռը պէց - Առատաձեռն: *Հափուռը պէց կընէգ[ա] ա Մաքաղաթը* (Բ):

- Հափուռը պըճըղէլ - Գաղտնիք կորզել: *Ըտըրան հիրփըցընէս ըն, հափուռը պըճըղէս* (Զ):

- Հափուռը պօղ ածէլ - Տանջել, չարչարել: *Էն ըռնըխըմէ թաքավէրը մարթկանցը հափուռը պօղ ա իլալ ըծէս* (Զ):

- Հափուռը քարու պատառ - *տե՛ս* ԸՍԿԸՊՕՑ:

- Հափուռը քօր կ[ա]ալ - Փող ստանալու կամ կորցնելու՝ ծախսելու նախազգացում ունենալ: *Վէր ծէխէ ծէրքէտ հափուռընը ա քօր կ[ա]մ՝ փուլ ըս ըստընան, վէր աչինը՝ փուլ ըս կուրցընան* (Զ):

ՀԱՓՕ - *գ. մնկ.* Շուն: *Խօխան լանց ա ինանում, թա.- Հափօն կընծալ ա* (Զ):

ՀԱՔ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հաքը քըցիլ - *տե՛ս* ԿԸ[ա]ՆԱԼ:

ՀԱՔ[1]ԱԹ - *տե՛ս* ՀԾՔ[1]ԱԹ:

ՀԾՔ[1]ԱԹ/ՀԱՔ[1]ԱԹ *(արաբ. hikāyat, պրս. hikayet)* - *տե՛ս* ՔԱԹ (1):

ՀԱՔ[1]Ի - *տե՛ս* ՀԾՔ[1]Ի:

ՀԾՔ[1]Ի/ՀԱՔ[1]Ի/ՀԾՔ[1]Ի *(գրբ. ագի)* - *գ.* 1. Կենդանիների՝ սողունների՝ ձկների՝ թռչունների եւն մարմնի ետեւից երկարող հավելվածական մասը՝ պոչ: *Հու վէր խըլէգնին հաք[ա]ին կըտըրէ, տինի ջուբումը, փուլ ա քըթինանն* (Զ): 2. Որեւէ բանի կոթ՝ բռնակ: *Շիրէփին հաք[ա]ին ծըռալ ա* (Բ): 3. Ձգեստի տուտ, փեշ (գետնին քարշ եկող): *Ծանը էրկան ա ինանում, հաք[ա]ին տափավը քաշ ա ինանում* (Զ): 4. *փխբ.* Մեկին շարունակ հետեւող՝ հետեւից քարշ եկող անձ: *Մէր բըրիգադիրը նախագէն հաք[ա]ին ա* (Զ): 5. *փխբ.* Որեւէ բանի վերջնամասը: *Կ[ա]էրանը քաշ ա տամ, քըցանում պանանը, ամմա հաք[ա]ին մընամ ա չանանումը* (Զ):

- Հաք[ա]ի խըղղցընէլ/թակէլ/թըխէլ - 1. Շողոքորթել, քծնել: *Շատ ա հաք[ա]ի խըղղցընէս, մինչը[ա]վ կըրէս ա վէգիրին խաթիրը քըթէնա* (Զ): 2. *տե՛ս* Ուրանն թանգ[ա] ծախէլ: 3. Խորամանկել: *Դէ Ծիլկանըն էլ ժանլիգ[ա] ա, չէ՞, հաք[ա]ի յա խըղղցընում, տանս պըրծընում* (Զ): 4. Ուրախանալ: *Շօնը, վէր տը[ա]ռնը տը[ա]սնում ա, հաք[ա]ի յա խըղղցընում* (Զ):

- Հաք[ա]ին բուլի-բուլի անէլ - *տե՛ս* Հաք[ա]ի խըղղցընէլ:

- Հաք[ա]ին խօգ[ա]իլ - *տե՛ս* Հաք[ա]ին քըշկըռէլ (2, 3):

- Հաք[ա]ին խօր թաղէլ - 1. *տե՛ս* Ուրանն թանգ[ա] ծախէլ: 2. Նենգություն՝ խարդախություն անել: *Իզէն հաք[ա]ին խօր թաղող ա, սայաղ կաց* (Բ):

- Հաք[ա]ին ծանլիլ - *տե՛ս* Հաք[ա]ին քըշկըռէլ:

- Հլք՝ին ծալիլ, տակէն տինիլ/քամակը կօխէլ - 1. Հեռանալ, մի կողմ քաշվել: *Թըշնամին տը՛սնում ա, հլք՝ին ծալում, կօխում քամակը, ըտըղատ հաշտանփուշտան քաշում* (ԱԱ, 41):

- Հլք՝ին ծաղէգ՝ - 1. Պոչի վրա այլ գույնի մազափունջ ունեցող: *Էտ պըռավէն էլ մին հլք՝ին ծաղէգ՝ կավ ա ինում* (Զ): 2. Չմահավան, քաղքենի: *Մէլիք՝ին էլ էրկու հլք՝ին ծաղէգ՝ ախճիգ՝ ա ինում* (Զ):

- Հլք՝ին ծառավընն օնէլ - Մեկի հանդեպ դատական գործ հարուցել, դատաստանն անել, պատժել: *Ըտի վէզիրին հլք՝ին ծառավընն ըն օնում* (Զ):

- Հլք՝ին կախ - Խեղճացած, հնազանդ: *Առաչ շատ հըրուստնէ յըն իլալ, միհէնգ՝ էն ըն հլք՝ին կախ* (Բ):

- Հլք՝ին կըզկէլ - *տե՛ս* Հլք՝ին քըշկըռէլ:

- Հլք՝ին կըտըրած (քօչու) շօն - Պարապ-սարապ թափառող մարդ: *Խօրէնընն էլ հօ տըղամարթ չի՞, հլք՝ին կըտըրած շօն ա* (Զ):

- Հլք՝ին կըտըրած օխծ - Կատաղի՝ վրիժառու մարդ: *Դէ խանընն էլ հինչ խա՞ն, հլք՝ին կըտըրած օխծ ա, լի՞* (Զ):

- Հլք՝ին նի քաշիլ - 1. Մեղմանալ, հանդարտվել, խեղճանալ: *Տըղան վէր մէհէտ թըխում ա, օշափը հլք՝ին նի յա քաշում* (Զ): 2. Զգուշավոր կյանք վարել: *Հլք՝ին նի քաշած՝ ապրում ա* (Զ):

- Հլք՝ին չարխու օնէլ - Անընդհատ շարժվել՝ շարժման մեջ լինել: *Հլրը կըզնըվէս ա, թա.- Հինչ ը՞ս հլք՝իտ չարխու կալալ, տը՛ղըտ նըստէ՛* (Զ):

- Հլք՝ին չափէլ - *հեգն.* Մեկին փորձել, նրա էությունը պարզել: *Ասում ա.- Հլք՝ին չըփը՛ցէք՝, տը՛սէք՝՝ հինչ մարթ ա* (Զ):

- Հլք՝ին (պէնդ) փըռնէլ - Մեկից ձեռք չքաշել, մեկի պոչից կպչել: *Էտ կընէգ՝ը տանք՝օրը հլք՝ին պէնդ ա փըռնալ* (Բ):

- Հլք՝ին սառնումը/տըռնանը դաթումը թօղնէլ/մընալ - Հանցանքի մեջ բռնվել: *Շատ ա կ՝ուղօթուն ըրալ, մէհէտ էլ հլք՝ին սառնումընն ա թօղալ* (Զ):

- Հլք՝ին սըլվէն անէլ - *տե՛ս* Հլք՝ին քըշկըռէլ:

- Հլք՝ին տընգէլ/ցը՛ց անէլ - 1. Ծլկել, փախչել, ամոթահար մի կողմ քաշվել: *Վէր մին քանէ հը՛տ յըրա տուվէցէնք՝, թօրքէրը հըք՝վիրնէն տընգէցէն, էլ կըռէցէնք՝ վէչ, թա հիտըրնէրան հըսնինք՝* (Զ): 2. *արհմ.* Մեռնել, սատկել: *Տըղան վէր թօրավը թըխէս ա, դէվը հլք՝ին տընգէս ա* (Զ):

- Հլք՝ին տուրուր տալ - *տե՛ս* Հլք՝ի խըղըցընէլ:

- Հլք՝ին ցը՛ց - Ինքնահավան, գոռոզ: *Հլք՝ին ցը՛ց ք՝ասիբ էլ կա շատ* (Բ):

- Հլք՝ին ուրան քաշիլ - *տե՛ս* Հլք՝ին նի քաշիլ:

- Հլք՝ին քանդած վը՛ղցակ/քըչէղակ - Տգեղ (կին, աղջիկ): *Մէլիք՝ին կընգանավը Պուղին էզգան շուլուղ ար ընէս, թա.- Հլք՝ին քանդած վը՛ղցակ ա* (Զ):

- Հլք՝ին քանդիլ - *տե՛ս* Հլք՝ին քըշկըռէլ (2, 3):

- Հլք՝ին քաշ անէլ/տալ - Դժվարությամբ քայլել: *Հումբաթին վը՛ռնէրը ցըվէս ա, ըտըրա հը՛տէ յա ըտի հլք՝ին քաշ տաս* (Բ):

- Հլք՝ին քաշիլ - 1. *տե՛ս* Հլք՝ին տընգէլ (1): 2. Մի բանից հրաժարվել (իրեն ապահովելու նպատակով): *Տը՛սնում ա, վէր էտ կօրծը կըրըլան չի անէ, հլք՝ին քաշում ա* (Զ):

- Հլք՝ին քըշկըռէլ - 1. Խեղճանալ, մի կողմ քաշվել: *Արչը վէր ըտի տը՛սավ, հլք՝ին քըշկըռից, նի մըտավ պանը* (Զ): 2. Խեղճացնել, պատժել, վռնդել: *Թուրքէրէն հլք՝ին քըշկըռալ ընք, էլ տիժէր ըն կ՝ամ Ղարաբաղ* (Զ): 3. Պաշտոնից՝ ծառայությունից հանել՝ հեռացնել: *Պահէստապէտը պըհէստան կ՝ուղօթուն ըրավ, հլք՝ին քըշկըռը՛ցէն* (Բ):

- Հլք՝ի տը՛ռնալ - *տե՛ս* Հլք՝ին (պէնդ) փըռնէլ:

- Հլք՝վավը ուրխացած կատու - Որեւէ բանով շատ ուրախացած, անչափ ուրախ (անձ): *Դէ խօխէնք՝ընն էլ հլք՝վավը ուրխացած կատու վընն, լի՞. դային քըղաքան յը՛կալ ա* (Զ):

- Հլք՝վին նըհը՛տ խաղ անէլ - Իր տարիքին անհամապատասխան կատակներ անել, մանկական արարքներ թույլ տալ: *Մը՛ծ ախճիգ՝ ա Մարուսան, ամմա հալա էն ա հլք՝վին նըհը՛տ խաղ ընէս* (Բ):

- Հլք՝վին տակէն կընծուզնը/փօշ տինիլ - Անհանգիստ դարձնել, անհանգստություն պատճառել: *Մարթը կընգանը հլք՝վին տակէն փօշ ա տիրալ, խը՛ղճը էն ա չըռըվըռին ընգած* (Բ):

- Հլք՝վին տակը կէտ ըղնէլ - Անհանգիստ լինել, անհանգիստ շարժումներ անել: *Հլք՝վիտ տակը կէտ ա՞ ընգալ, խէ էտքան տուրուր ը՞ս կ՝ամ* (Բ):

ՀԼՔ՝ԻՄ/ՀԷՔ՝ԻՄ *(արաբ. hakim, պրս. hākim, թրք. hekim)* - *գ.* 1. Բժշկական կրթություն չստացած՝ տնային միջոցներով բուժող անձ: *Էտ մարթը հլք՝իմի շօր ա կ՝էնըմ, ք՝ինըմ թաքավէրին պալատը...* (ՀԺՀ, V, 526): 2. *փխբ.* Տգետ՝ ապաշնորհ բժիշկ: *Ղըվութանց Ափկարընն էլ հօ դօխտուր չի՞, հլք՝իմ ա, կարըմ չի ապլէցա՛ անէ* (Զ):

ՀԼՔ՝ԻՄԲԱՇԻ/ՀԷՔ՝ԻՄԲԱՇԻ - *գ.* Ավագ հեքիմ: *Լօխչու տէղ ու դանրմանը էլ-հա հլք՝իմբաշին կըգ՝իդա...*(ՋՏ, Ա, 160):

ՀԼՔ՝ԻՄՓՈՒԼԻ/ՀԷՔ՝ԻՄՓՈՒԼԻ - *գ.* Հեքիմին տրվող վարձ: *Հլք՝իմը էտ տըղէն լիվըցընում ա, հլք՝իմփուլին յօր օնում, ք՝ինամ* (Զ):

ՀԼՔ՝ԻՄՕԹՈՒՆ/ՀԷՔ՝ԻՄՕԹՈՒՆ - *գ.* Հեքիմի զբաղմունքը, տնային միջոցներով բժշկություն: *Հէք՝իմօթունը էտ տըղան ղօրփօրը անա յա ինում սըվը՛ռած* (Զ):

ՀԼՔ՝ԻՒ - *տե՛ս* ՀԼՔ՝Ի:

ՀԱՔՆԷԼ *(գրբ. հագնիմ)* - *տե՛ս* Կ՝ԸՆԱԼ:

ՀԱՔՆԸՎԷԼ - *տե՛ս* Կ՝ԸՆՎԱԼ:

ՀԱՔՐՕՂԼԻ - *գ.* 1. Հորաքրոջ որդի: *Սըմսօնէն հաքրօղլին պէցանուր պաշտօնում ա* (Բ): 2. Մտերիմներին դիմելու կոչական բառ: *Հա՛քրօղլի, խէ մէհէտ կ՝ամ ը՞ս՝ ք՝ը՛փ անինք՝* (Բ):

ՀԱՔՈՒ - *գ.* 1. *տե՛ս* ՀԸՐԱՔՈՒՐ: 2. Տարեց կանանց դիմելու կոչական բառ: *Հա՛քու, էս հըղղցէն ըշտը՛ղ ա՞ տընէս* (Զ):

ՀԱՔՈՒՍ - *գ.* Հագուստ, հագուստեղեն: *Հաքուստը ածում ա խուրջինը, խօխան էլ յօր օնում, ք՝ինամ* (Զ):

ՀԱՔՈՒՍ-ԿԱՊՈՒՍ - *գ.* Կրայի բոլոր շորերը՝ հագուստեղենը: *Հաքուստ-կապուստը էտ շալէն մաչին պըտատում ա, քօլէն տակէն կ՝ը՛ղում* (Զ):

ՀԱՔՈՒՐ - *տե՛ս* ՀԸՐԱՔՈՒՐ:

ՀԱՔՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. հագուցանեմ)* - *նբ. եւ պբ.* Կ՝ԸՆԱԼ-ի:

ՀԷ - 1. *տե՛ս* ԷՀԷՑ (1): *ձ.* 2. Անասուններին քշելու ձայնարկություն: *Չօբանը հիյվընէն քըշում ա՝՝ հէ՛, հէ՛...* (Զ):

ՀԷԲ - *տե՛ս* ՀԻԲ:

ՀԷԴՐՈՒ - *մ.* Միասին, համատեղ: *Ժուղօվուրթը հըվաքվում ըն, հէդրու ք՝ինամ հանգ՝իստը* (Զ):

ՀԷԾԱՆ - *գ.* 1. Ճյուղաշատ ծառ կամ մեծ ճյուղ, որի վրա դարսում են գերանները: *Կէրանանէն հէծանէն յըրա տանրսում ըն* (Զ): 2. *տե՛ս* ՔԱՇԱՆ:

ՀԷԿՏԱՐ - *տե՛ս* ՀԷՔՏԱՐ:

ՀԷ-ՀԱ - *ձ.* Ոչխարներին քշելու բացականչություն: *Վըխճըրնէրէն քըշում ա բիդի սարը՝՝ հէ-հա՛* (Զ):

ՀԷՂԷ/ՀԷՂԻ *(գրբ. եղի)* - *գ.* 1. Նոր հասնող՝ կիսահաս ցորեն: *Մին հասկ ա պուք տամ, տը՛սնում՝՝ հալա հէղէ յա* (Զ): 2. Այդպիսի ցորենի աղանձ: *Խօխէնք՝ը հէղէ շատ ըն սիրիս* (Բ):

- Հէղէ անէլ - Կիսահաս ցորենը հասկերով՝ փնջերով կրակի վրա աղանձել: *Հէղէ յըն անում, նըստում օտում* (Զ):

- Հէղէ ինիլ/տը՛ռնալ - 1. Ցորենը սկսել

հասունանալ: *Յօրէնը հէղէ յա տը՛ռալ, էրկու շէփտանը յը՛տը հընձիլի վախտըն ա* (Բ): 2. Ընդհանրապես սկսել հասունանալ: *Խաղուն հէղէ յա տը՛ռալ* (Բ):

ՀԷՂԻ - *տե՛ս* ՀԷՂԷ:

ՀԷՄՆԷԼ/ՀԷՄՆԻԼ/ՀԻՄՆԷԼ/ՀԻՄՆԻԼ *(գրբ. հիմնեմ)* - *նբ.* Կառույցի հիմքը դնել՝ շարել, պատ շարել: *Էն ժամըն էլ պարան չի կալ էն վախտը, վէր շէնին տէրտէրը պատըմը տինին, հէմնին* (ՀԺՀ, V, 208):

ՀԷՄՆ(Ը)/ՀԻՄՆ(Ը)/ՀԷՄՔ/ՀԻՄՔ *(գրբ. հիմն)* - *գ.* Շինության հիմքային մասի պատը, հիմնապատ, պատ: *Տանը հէմնը բիդի մնք՛կամ ինի* (Բ):

ՀԷՄՆը անել - *տե՛ս* ՀԷՄՆԷԼ:

ՀԷՄՆԸՎԷԼ/ՀԷՄՆԸՎԻԼ/ՀԻՄՆԸՎԷԼ/ՀԻՄՆԸՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՀԷՄՆԷԼ-ի:

ՀԷՄՆԸՎԻԼ - *տե՛ս* ՀԷՄՆԸՎԷԼ:

ՀԷՄՆԻԼ - *տե՛ս* ՀԷՄՆԷԼ:

ՀԷՄՔ - *տե՛ս* ՀԷՄՆ(Ը):

ՀԷՅ *(գրբ. հէ)* - *ձ.* 1. *տե՛ս* ԷՀԷՅ: 2. Գործածվում է որպես որեւէ կանչի պատասխան՝ լսում եմ: - *Ռուբէն, Ռուբէն.* - *Հէյ, հինչ ա՞ իլա՛լ* (Զ):

- Հէյ անէլ - Լսել, արձագանքել: *Հիշկան ծէն ըն տամ, հէյ չի անում* (Զ):

- Հէյ գիդի հա՛ - *տե՛ս* Հայ գիդի հա՛:

ՀԷՅՂԱՐՀԱՅ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հէյդարհայ անէլ - 1. Խնդրել, աղաչել, օգնություն կանչել: *Շատ ըն հէյդարհայ անում, ամիա վէշ մինը մուտանում չի* (Զ): 2. Անմշակ լինել, խնամքի կարոտ լինել: *Բաղէրը էն ըն հէյդարհայ ընէլիս, մինը կա վէջ, թա բիջա՛ռի* (Բ):

ՀԷՅ-ՀԷՅ - *տե՛ս* ՀԱՅ-ՀԱՅ[2]:

ՀԷՅՎԱՆ/ՀԱՅՎԱՆ *(արաբ., թրք. heyvan)* - *1. գ.* Անասուն, կենդանի: *...Հա՛ւր հէյվան մընում ար հանդումը, յա ծըմակումը, կ՛ուլին պէրանը կապում ար, վէր օտէ վէջ* (ԲՀԲ, 173): 2. *ածական.* Ապուշ, տխմար, անպարկեշտ: *Հէյվան մարթ ա, ընդըրա նըհը՛տ կօրծ փըռնէլի չի* (Բ):

- Հէյվան կըտրէլ - *տե՛ս* Էշ կըտրէլ:

ՀԷՅՐԱՆ *(արաբ. hairan, պրս. hayran)* - *տե՛ս* ՀԸՅԻԼ-ՄԱՅԻԼ:

ՀԷՆ - *տե՛ս* ԷՆ:

ՀԷՆԱՋ - *տե՛ս* ՊԸԼԸՀՈՒՇՏ(Ը)ՐԻ:

ՀԷՆԳ[1] *(գրբ. հինգ)* - 1. *թ.* Չորսին հաջորդող թիվը՝ հինգ: *Հէնգ՝ օր ըտը՛ղ կէնում ըն, մինչը՛վ ծ՛ունը հանի՛ում ա, ք՛ինում ըն հ՛ուրանց տօն* (Զ): 2. *գ.* Սովորողի առաջադիմության կամ որեւէ այլ բանի բարձր գնահատական՝ գերազանց: *Էտ խօխան ամմէն օր ըշկօլումը հէնգ՝ ա ըստանում* (Զ):

- Հէնգ՝ ախպէր - *հեգն.* Ապտակ: *Վէր հէնգ՝ ախպէր տըվէ, ծէնը կըտըրից* (Բ):

- Հէնգ՝ գ՛ըրվընքանուց քարը քըշո՛ւմ ա - Ասում են վարար հորդող՝ ժայթքող հեղուկի մասին: *Ըտըրա վը՛ենան ա՛ռ՛ուն ար պըզգամ, հինչ ա՞ռ՛ուն, հէնգ՝ գ՛ըրվընքանուց քարը քըշո՛ւմ ար* (Զ):

- Հէնգ՝ մաննան նըման (գ՛իդա՛լ, ճընանչիլ) - Շատ լավ, լիովին, ամբողջապես (իմանալ, ճանաչել): *Ծիլկանը էտ ծըմըկնէն հէնգ՝ մաննան նըման ար գ՛ուդա՛ում* (Զ):

ՀԷՆԳ՝ԸՆՋԻ - *տե՛ս* ՀԷՆԳ՝ԻՆՋԻ:

ՀԷՆԳ՝ԻՆՋԻ/ՀԷՆԳ՝ԸՆՋԻ - *թ.* Չորրորդին հաջորդող դասական թվականը՝ հինգերորդ: *Հէնգ՝ինջի օրը հիվանդը աշկէրը պէնում ա* (Զ):

ՀԷՆԳ՝ՏԸՐՈՔԱՆԷ - *ածական.* Հինգհարվածային՝ միանգամից հինգ փամփուշտ տեղավորող (հրազենի մասին): *Թավադէն էլ մին լ՛ավ հէնգ՝տըրըքանէ թըվանգ՝ ա իլա՛լ* (Զ):

ՀԷՆԳ՝ՔԸՐԱՆԷ - *ածական.* Մանկական խաղատեսակ: *Հէնգ՝քըրանէն հէնգ՝ քարավ ըն խաղ անում* (Բ):

ՀԷՆԹԻ - *ածական.* Շատ սեւ դեմք ունեցող: *Հէնթի կընէգ՝ ա Յէղիսաբէթը* (Բ):

ՀԷՆՑ[1] - *տե՛ս* ՀԱՆՑ:

ՀԷՆՑ[2] - *վ.* Ուղիղ, իսկ եւ իսկ: *Էտ ախճիգը վը՛ր մընանում ա, հէնց էտ պըլատումըն էլ ուսում ըն տամ...* (ՀԺՀ, VII, 46):

ՀԷՆՔ - *տե՛ս* ՀԷՆՔ՝:

ՀԷՆՔԻԼ - *տե՛ս* ՀԷՆՔ՝ԻԼ:

ՀԷՆՔ՝/ՀԷՆՔ - *գ.* 1. Հինելը, հինելու գործողությունը: *Թիլէրը պըդըրաստում ա, հէնք՝ը ըսկըսում* (Զ): 2. Հինած նյութը, առէջք: *Հէնք՝ը թուդէս ա ըտը՛ղ, ք՛իս* (Զ): 3. Գործվածքի հիմնական երկայնակի ձգվող թելերը: *Տէնակը յօր ա օնում, գ՛իբին հէնքը կըտօրում* (Զ):

ՀԷՆՔ՝ԻԼ/ՀԷՆՔԻԼ - *նբ.* Գործվածքի հիմնական թելերը ձգել, հինել: *Կարպէտը հէնք՝ում ա, վէր ախճիգը կ՛օրծէ* (Զ):

ՀԷՉ *(պրս. hič)* - *մ.* 1. Բնավ, բոլորովին: *Ի՛ւրո՛ւր հէչ ճընանչո՛ւմ չընը* (Բ): 2. Երբեւիցե: *Հէչ տը՛սալ ը՞ս, վէր հարթնը ըսկէսվօրը սիրի* (Բ): 3. *ածական.* Ոչինչ: *Խաղուն վէր տ՛ուս յէկու, ծըմէրուկը՝ հէչ* (ՆԱԲ, III, 347):

- Հէչ անէլ - 1. Չեղյալ համարել: *Հօրը ըսըծնէն հէչ ըրավ* (Զ): 2. Ոչնչացնել: *Էնքան բաղէրը հէչ ըրէն, միհէնգ՝ մին ճիթ խաղու չի կա, թա օտին* (Բ):

- Հէչ վէր չէ - 1. Գոնե, գեթ: *Էս թօռը հէչ վէր չէ, լ՛ըհա բօստանը կըճիրի* (Բ): 2. Ինչ էլ որ լինի: *Հէչ վէր չէ, քու հա՛ն ա* (Բ):

ՀԷՉՕԼՄԱՍԱ - *տե՛ս* ԿՕՆՅԱ:

ՀԷՌ - *տե՛ս* ՀԸ՛Ռ:

ՀԷՌԱԼ - *տե՛ս* ՀԸ՛ՌԱԼ:

ՀԷՌԷ - *տե՛ս* ՀԸ՛ՌԷ:

ՀԷՌԿԻ - *տե՛ս* ՀԷՍԿԻ:

ՀԷՌՄԱՆ - *տե՛ս* ՀԸ՛ՌՄԱՆ:

ՀԷՌՌԷ - *տե՛ս* ՀԸ՛ՌԷ:

ՀԷՌՈՒ - *տե՛ս* ՀԸ՛ՌԷ:

ՀԷՌՈՒՑ - *տե՛ս* ՀԸ՛ՌՈՒՑ:

ՀԷՍ - *տե՛ս* ԷՍ:

ՀԷՍԱԲ *(արաբ. hisab, պրս. hesab, թրք. hesap)* - *տե՛ս* ՀԱ՛ՇԸԷՎ:

ՀԷՍԱՆ *(գրբ. յեսան)* - *գ.* Գործիքներ սրելու քար: *Հէսանը յօր ա ունէս, դարյազը սըրէս* (Բ):

ՀԷՍԱՆԱՔԱՐ - *տե՛ս* ՀԷՍԱՆ:

ՀԷՍԱՆԷԼ *(գրբ. յեսանեմ)* - *նբ.* Հեսանով սրել: *Օրաղը հէսանում ա, ըսքըսում հարէլը* (Զ):

ՀԷՍԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԷՍԱՆԷԼ-ի:

ՀԷՍԱՐ - *տե՛ս* ՀԱՍԱՐ:

ՀԷՍԿԻ/ՀԷՌԿԻ - *գ.* Սրունքները փաթաթելու երկար շոր՝ գործվածք, սռնապան, զանգապան: *Հէսկին պըտատում ա, էլիա ք՛ինամ* (Զ):

ՀԷՍՍ - *ձ.* Բեռնակիր անասունին հետ մղելու ձայնարկություն: *Էշին ըռաշկէն վը՛ենն ա կէնում, քամակ կուփէ տամ, թա՝ հէսս, հէ՛սս* (Զ):

ՀԷՎ[1] - *գ.* 1. Անմիաբանություն, տարաձայնություն, վիճաբանություն, գժտություն: *Էտ շէնումը միշտ հէվ ա ինում* (Բ):

ՀԷՎ[2] *(թրք. hev (վախ, տագնապ)* - *տե՛ս* ՀԻՎԸՆԴՕԹՈՒՆ:

ՀԷՎ[3] - *գ.* Հողի, քարի եւն բարակ շերտ: *Մին հէվ վը՛ղ ա, ըտը՛ղ պէն չի տը՛ռնալ* (Բ):

ՀԷվ տալ - Բարակ շերտերով՝ թերթթերթ թափվել: *Թուրունը նըմացավ, հէվ տըվավ* (Բ):

ՀԷՏ[1] - *տե՛ս* ՀԸ՛Տ[1]:

ՀԷՏ[2] - *տե՛ս* ՀԸ՛ՏԷ[1]:

ՀԷՏ[3] - *տե՛ս* ԷՏ:

ՀԷՏԱ(Ն) - *տե՛ս* ՀԸ՛ՏԱ(Ն):

ՀԷՏԱՎ - *տե՛ս* ՅԸ՛ՏԱՎ:

ՀԷՏԷ[1] - *տե՛ս* ՀԸ՛ՏԷ[1]:

ՀԷՏԷ[2] - *տե՛ս* ՀԸ՛ՏԷ[2]:

ՀԷՏԻ[1] - *տե՛ս* ՀԸ՛ՏԷ[1]:

ՀԷՏԻ[2] - *տե՛ս* ՀԸ՛ՏԷ[2]:

ՀԷՏՔ - *տե՛ս* ՀԸ՛Տ[1]:

ՀԷՏՕ *(գրբ. յետոյ)* - *տե՛ս* ՅԸ՛ՏՆԱՆ: *Հէտօ գ՛ուրջին յէր ա կէնում տաղատ մին բաշ ք՛ընում* (ՀԱԲ, 15, 151):

ՀԷՐ[1]/ՀԷՐ-ՀԷՐ[2] - *ածական.* Երեւացող, տեսանելի: *Ք՛իրսը հէր սար ա* (Բ):

ՀԷՐ[2] - *տե՛ս* ՀԱ՛Ր:

ՀԷՐԱ(Ն)Ք - *տե՛ս* ՀԱ՛ՐԱ(Ն)Ք:

ՀԷՐԱՍ - *տե՛ս* ՀԱՍԷ(Ք՝):

ՀԷՐԷ/ՀԷՐԻ *(գրբ. երի (քովը, առընթեր)* - *գ.* Մորթած անասունի առաջին ոտքերի վերին մասը: *Հէրուն մէսը*

ամմէնաքախծըրըն ա, ամմա լօխ բուդէն ըն թամահ անում (Բ):

ՀԷՐԷՆՋ/ՀԷՐԻՆՋ *(գրբ. երինջ)* - *գ.* 1. Երեք տարեկան էգ հորթ կամ առաջին ծինն ունեցող կով: *Հէրէնջը մօրթում ըն, տը՛սնում ճօխտակ դանան փօրումը* (Ձ): 2. *փխբ.* Ոեռատի գեղեցիկ հարս: *Էտ հէրէնջը ըսկէսվօրը լ՚ավ ա պահում* (Բ):

ՀԷՐԹ[1] - *տե՛ս* ՀԸՏՐԹ:

ՀԷՐԹ[2] - *տե՛ս* ՀՈՒՐԹ:

ՀԷՐԹԱՀԷՐԹ - *տե՛ս* ՀԸՏՐԸԱՀԸՏՐԹ:

ՀԷՐԹԱՎ - *տե՛ս* ՀԸՏՐԹԱՎ:

ՀԷՐԹԱՎԷՐ - *տե՛ս* ՀՈՒՐԹԱՎԷՐ:

ՀԷՐԻ - *տե՛ս* ՀԷՐԷ:

ՀԷՐԻԿ - *տե՛ս* ՀԷՐՐԻԿ:

ՀԷՐԻՆՋ - *տե՛ս* ՀԷՐԷՆՋ:

ՀԷՐԻՔ - *տե՛ս* ՀԷՐԻՔ՚:

ՀԷՐԻՔԻԼ - *տե՛ս* ՀԷՐԻՔ՚ԻԼ:

ՀԷՐԻՔ՚/ՀԷՐԻՔ *(գրբ. հերիք)* - *մ.* Բավական, հերիք: *...Թօրք, շօն, կ՚ուլ ըռէխը կօխըմ ա յէրան, հէրիք չի, վէնէրըն էլ ա հանըմ, մէջին թըրչօց տինըմ...* (ՋՏ, Ա, 105):

- Հէրիք՚ անէլ - Բավական անել, բավականացնել, հերիքել: *Օշափէն դուսուղ ըն անըմ, ասըմ.- Հացը, կ՚ինին հէրիք չի ընն՝ական, պա հունց ը՞ք անըմ* (ՀԺՀ, V, 314):

ՀԷՐԻՔ՚ԻԼ/ՀԷՐԻՔԻԼ *(գրբ. հերքեմ)* - *չբ. տե՛ս* Հէրիք՚ անէլ:

ՀԷՐ-ՀԷՐ[1] - *գ.* Բուրդը նախնական մաքրման ենթարկելու՝ գզելու սանդերք: *Հէր-հէրը տինո՛ւմ ա, պո՛ւրթը հիր-հէրում* (Ձ):

ՀԷՐ-ՀԷՐ[2] - *տե՛ս* ՀԷՐ[1]:

ՀԷՐՍ - *տե՛ս* ՀԻՐՍ:

ՀԷՐՐԻԿ/ՀԷՐԻԿ/ՀԻՐԻԿ - *գ.* Երկար պոչով եւ առանց դմակի ոչխարի տեսակ, որ տարածված էր Ղարաբաղում: *Ղարաբաղ էլ հէրրիկ պահօղ չի կա, կընդրմընդ ա մընացալ* (Բ):

ՀԷՐՈՒ - *տե՛ս* ՀԸՌՆԷ:

ՀԷՐՈՒՆ *(գրբ. հերիւն)* - *տե՛ս* ԲԻՋ (1):

ՀԷՓ - *տե՛ս* ՀԻԲ:

ՀԷՐՕՍ - *տե՛ս* ԳԷՐՕՑ:

ՀԷՔ՚ԱԼ - *գ.* 1. Գոմեշի վզի սպիտակ նշան: *Տէզընն էլ կ՚ամ ա, լափ կ՚ումաշէն հէք՚ալան կէնում* (Ձ): 2. Դալար ճյուղերից կտրած փոքրիկ փայտ, որ որպես զարդ կախում էին հորթերի ու գառների վզից: *Ապան էզգա՛ն հէք՚ալնէ յար շինիս, կ՚ըռնէրէն վիզա՛ն կախ-կախ ընէս* (Բ): 3. Միջատ: *Տի՛ւզնի՛թի՛նան հէք՚ալ ար օտում* (Ձ): 4. *փխբ.* Մեծահատ, խոշոր (հատկապես հատապտուղների եւ ընդեղենի մասին): *Ցօրէն հինչ ցօ՞րէն, ամմէն մինը մին հէք՚ալ* (Բ):

ՀԷՔ՚ԻՄ - *տե՛ս* ՀԱ՚ՔԻՄ:

ՀԷՔ՚ԻՄԲԱՇԻ - *տե՛ս* ՀԱ՚ՔԻՄԲԱՇԻ:

ՀԷՔ՚ԻՄՓՈՒԼԻ - *տե՛ս* ՀԱ՚ՔԻՄՓՈՒԼԻ:

ՀԷՔ՚ԻՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱ՚ՔԻՄՕԹՈՒՆ:

ՀԷՔՏԱՐ/ՀԷԿՏԱՐ *(ռուս. гектар, ֆր. hectare, հուն. hectaron)* - *գ.* Հողային մակերեւույթի մետրական չափ, որ հավասար է 10000 քառակուսի մետրի՝ հեկտար: *Խըզալանց Սէրօփը օթ հէքտար վը՞ղ օնէ, էլիա կօհ չի* (Բ):

ՀԸ - *ձ.* 1. Հարցական բացականչություն՝ ի՞նչ, ինչպե՞ս: *...Ծէն ա տաս շինամաչը, թա.- Հը՞, պա՛տմէ, տը՞սնամ՝ հինչ կա, հինչ չի կա* (ԱԱ, 75): 2. Սաստելու՝ սպառնալու բացականչություն: *Փարին անումը վէր տամ ըն, տատմարը օգում ա, թա տ՚ուս կ՚ա, ջօբանը ասում ա՝ հը՞...* (ՀԱԲ, 15, 112):

- Հը անիս/ըրած - Մոտավորապես, համարյա: *Ըրտաշէն խօգ՚ը հը ըրած իրը՞ք հա՛ռի՛ւր կիլօ կինի* (Բ):

ՀԸԴԷՂԱ - *տե՛ս* ԹԷԹԱ՚:

ՀԸԴԸԴԻԼ - *տե՛ս* ՀԻԴԻԴԻԼ:

ՀԸԴԻԴԱ - *տե՛ս* ՀԻԴԻԴԱ:

ՀԸԴՐՈ՚ԻԹԸ՞ՑԷ - *գ., ածական.* Հադրութի շրջանի կամ Հադրութ քաղաքի բնակիչ:

- Հը՞դրո՛ւթօցու սուփրա - Աղքատ սեղան՝ ճաշկերույթ, որտեղ հատկապես հացը պակաս է: *Հինչ ա՞, հը՞դրո՛ւթօցու սուփրա յա՞, էտ հացան խէ բօլ-բօլ պիրում չը՞ք* (Բ):

ՀԸՋԱ՚ԽԱՉ - *գ.* Սրբատեղի, ուր իբր գնում են հազը բուժելու: *Մին օր էլ խուխէն յօր ըն օնում, տանում հը՞զա՛խաչը* (Ձ):

ՀԸՋԱ՚ԽԷԽՏ - *ածական.* Շատ հազալուց խեղդված: *Էտ հը՞զա՛խէխտ պը՞ռավէն ըտը՞ղ թաղում ըն, ո՛ւրա՛նք ք՚ինամ* (Ձ):

- Հը՞զա՛խէխտ ինիլ/տը՞ռնալ - Շատ հազալուց շնչասպառ լինել: *Էնքան հը՞զէցէնք՚, լափ առռէ հը՞զա՛խէխտ իլինք՚* (Բ):

ՀԸՋ(Ջ)ԱՐ - *տե՛ս* ՀԱՋՋԱՐ:

ՀԸՋ(Ջ)ԷՐ - *տե՛ս* ՀԱՋՋԱՐ:

ՀԸՋ(Ջ)ԸՐԱՆՈՒՑ - *ածական.* 1. Հազար միավորից բաղկացած: *Մէլիք՚ը ո՛ւրա՛ն հը՞զզըրանուց զօրքը ղարկում ա* (Ձ): 2. Հազար դրամական միավոր արժեցող: *Հը՞զզըրանուց կավ ա ինք՚ կալա՛լ* (Բ): *գ.* 3. Հազար միավորի արժողությամբ թղթադրամ: *Մին հը՞զզըրանուց ա տամ, էտ գ՚ա՛բա՛ն տանում* (Ձ):

ՀԸՋ(Ջ)ԸՐԱՎԷՐ *(գրբ. հազարաւոր)* - 1. Հազարներով հաշվող, հազարավոր: *Հը՞զզըրավէր վը՞րչէմնէ յը՞ն հը՞վաքվում* (Ձ): *ածական.* 2. Շատ, բազմաթիվ, բյուրավոր: *Հը՞զզըրավէր մարթիք՚ ըն մը՞ռնում էտ կը՞ռվավը* (Ձ):

ՀԸՋ(Ջ)ԸՐԱՏԱՐ - *ածական.* Մեծ հարստության տեր, հազարներ ունեցող: *Կօզի հը՞զզըրատար մարթ ա Սամսօնը, ամմա կօշտ փօրավ հաց չի օտում* (Ձ):

ՀԸՋ(Ջ)ԸՐՃԷՂՆԸ - *ածական.* 1. Բազմաթիվ ճյուղեր՝ ճյուղավորումներ ունեցող: *Հը՞զզըրճէղնը ճը՞ղպօրէ յա իլա՛լ Հա՛բո՛ւն ճը՞ղպօրէն* (Բ): 2. *փխբ.* Սերնդաշատ, շատ զավակներ ունեցող: *Հը՞զզըրճէղնը ազկ ա Դ՚ը՞ր՚ունց ազկը* (Բ):

ՀԸՋ(Ջ)ԸՐՊԱՏԷԳ՚ *(գրբ. հազարպատիկ)* - *ածական., մ.* Հազար՝ շատ անգամ ավելի: *Միհէնգ՚ հը՞զզըրպատէգ՚ լ՚ավ ընք ապրում, քանց կը՞ռվէն վը՞խտէն* (Բ):

ՀԸՋ(Ջ)ԸՐՎԸՆՆԱՆԷ - *գ.* Բազմաթիվ հոդվածավոր ոտներ ունեցող որդի նման կենդանի: *Հը՞զզըրվընանէն մը՞զ՚մազ՚ուտ ա ինիս* (Բ):

ՀԸՋ(Ջ)ԸՐՓԷՇԱ՚Կ - *ածական.* Շատ արհեստների՝ հմտությունների տիրապետող: *Հը՞զզըրփէշա՛կ մարթը տո՛ւզնը չի մընալ* (Ձ):

ՀԸՋԸՆ-ՀԱ՚ՋԻՆ/ՀԸՋԻՆ-ՀԱՋԻՆ - *տե՛ս* ԳԱՀ-ԳԱ՚Հ:

ՀԸՋԸՐԷԼ - *տե՛ս* ՊԸՂԸՐԱՍՏԷԼ:

ՀԸՋԸՐՎԷԼ - *տե՛ս* ՊԸՂԸՐԱՍՏԸՎԷԼ:

ՀԸՋԸՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸՂԸՐԸՍՏՕԹՈՒՆ:

ՀԸՋԻՆ-ՀԱՋԻՆ - *տե՛ս* ՀԸՋԸՆ-ՀԱ՚ՋԻՆ:

ՀԸՋՏ - *ձ.* Ծաղրական արտահայտություն՝ ուղղված որեւէ գործ ձեռնարկողին՝ ասողին՝ չե՛ս կարող: - *Էք՚ո՛ւց ք՚ինա՛ն ըմ ծը՞մակը, մին կ՚ը՞խտար վէր քը՞ցիմ.* - *Հը՞զտ* (Բ):

ՀԸ՞Ռ/ՀԸՌ/ՀԷՌ *(գրբ. եռ)* - *գ.* 1. Եռալը, եռ գալը, եռք: *Չը՞ղանէն հը՞ռը վէր կը՞տը՞ռում ա, ածում ա տաշտը, վը՞ննէրը տինո՛ւմ մաչին* (Ձ): 2. Ցավ, կսկիծ, մարմաջ: *Տա տէնակը ջուբան հանըմ ա, մաննը կը՞տը՞ռըմ, յը՞ռան աղ ածըմ, վը՞ր հը՞ռան քօնը տանէ վը՞չ* (ՀԺՀ, V, 17):

- Հը՞ռ ածէլ/տալ - 1. Եռացնել, եռ տալ: *Ճո՛ւրը հը՞ռ ա ածում, մօրթած հավը կօխում մաչը, թէփը՞ռում* (Ձ): 2. Ցավ՝ կսկիծ՝ մարմաջ պատճառել: *Էտ տը՞ղան պէնջա՛ը պուք ա տամ, քը՞վօրը թը՞խում, հը՞ռ ածում* (Ձ):

- Հը՞ռ կ՚ալ - 1. Եռալ, եփ գալ: *Կաթնը հէռ կ՚ալիս ա ինո՛ւմ, յօր ա օնում, ածում ուշափէն կը՞լիխէն, ըսպանում* (ՀԺՀ, VII, 22): 2. Խմորվել: *Թօթը հը՞ռ ա յը՞կալ, արաղը քը՞շիլի վախտըն ա* (Բ): 3. Մարմնի վրա ցավ՝ կսկիծ՝ մարմաջ զգացվել: *Էնքան պէնջա՛ը ըմ քաղալ, ծը՞ռքըս հը՞ռ ա կ՚ամ* (Բ): 4. *փխբ.* Հուզվել, բորբոքվել, զայրանալ: *Մէլիք՚ը էտ վէր ըսկանում ա, հը՞ռ ա կ՚ամ* (Ձ): 5. *փխբ.* Բուռն կերպով

տեղի ունենալ, թափ ստանալ: *Կործը հըէռ ա կ'ամ* (Բ):

ՀԸԷՌԱԼ/ՀԸՌԱԼ/ՀԷՌԱԼ *(գրբ. եռամ)* - *չբ. տե՛ս* Հըէռ կ'անալ:

ՀԸԷՌԷ/ՀԸՌԷ[1]/ՀԷՌՌԷ/ՀԷՌՌՈՒ/ՀԷՌԷ *(գրբ. հեռի)* - *ած.* 1. Հեռու գտնվող, ոչ մոտիկ, հեռավոր: *Հըէռէ տըէղ ա ինում էտ ծառը, մին օրումը կարում չըն հըսնին* (Ձ): 2. Ազգակցական կապերով հեռու, օտար: *Հըէռէ պարիկամը հինչ բի՞դի անէ* (Բ): 3. *գ.* Հեռավոր տեղ՝ վայր՝ կետ: *Հըէռէն տըէսնում չըմ* (Բ): 4. *կ.* Որեւէ սահմանից՝ կետից այն կողմ: *Ըշկօլը շէնան հըէռէ յըն շինանալ* (Բ):

- Հըէռէ ինիլ (մին պէնա) - Որեւէ բանից՝ արհեստից՝ մասնագիտությունից եւն գաղափար չունենալ՝ չտիրապետել: *Աշօտը դանլգ'ուրթանա հըէռէ յա* (Բ):

Հըէռէ կէնալ/մընալ/շօռ տալ/քաշվիլ - 1. *տե՛ս* ՀԸՌԱՆԱԼ: 2. Մի բանի հետ գործ չունենալ, չխառնվել, զգուշանալ, խուսափել: *Էտ օրվանից էտ տըղան կ'ուղութունա հըէռէ յա կընաս* (Ձ):

- Հըէռէ կըցընէլ/պահէլ/քաշիլ - 1. *տե՛ս* ՀԸՌԸՑ(Ը)ՆԷԼ: 2. Մի բանից խուսափել տալ: *Հանը շատ չըրչարվից, մինչը'վ կարից տըղէն կ'ուղութունա հըէռէ կըցընէ* (Ձ):

- Հըէռէ մըզանա - Բարեմաղթություն, որ պատմվող չարիքը չպատահի: *Հըէռէ մըզանա, ասում ըն՝ Իրան չումա յա ըսքըսալ* (Բ):

- Հըէռէ յէշիլ - Հեռատես լինել, ապագան նկատի ունենալ: *Մարթ բիդի հըէռէ յէշի, վէր կարէ կըլօխը պահէ* (Բ):

- Հըէռէ շօռ ըս կ'ամ, մօտէ քըթէնում - Ասում են, երբ այլ տեղերում փնտրածը ճարվում է շրջապատում:

- Հըէռէ տըէղէն հալվան շիրը'փավ կօտին - *տե՛ս* Հըէռէ տըէղէն սօրփը զըրավուր կինի:

- Հըէռէ տըէղէն սօրփը զըրավուր կինի - Անորոշը՝ անծանոթը ավելի լավն է թվում:

- Հըէռէ ք'ինիլ - 1. Առաջ գնալ, մեծ հաջողություն ունենալ: *Ասում ա.- Շատ ըշկապէց խօխա յա, հըէռէ յա ք'ինանկան* (Ձ): 2. Հեռավոր՝ տվյալ բանի հետ անմիջական կապ չունեցող հանգամանքները քննել՝ հիշել, նյութից շեղվել: *Տըէսնում ա, վէր զ'ուրանց ընէլիս տա շատ ա հըէռէ ք'ինանում, ղըրաղ ա կէնում* (Ձ): 3. Չափազանցության՝ ծայրահեղության մեջ ընկնել, չափն անցնել: *Էտ տըղան շատ ա հըէռէ ք'ըէցալ, խըտուրու-մըտուրու պէնէր ա անում* (Ձ):

ՀԸԷՌՄԱՆ/ՀԸՌՄԱՆ/ՀԷՌՄԱՆ - *ած.* Շատ տաք, եռման աստիճանն անցած: *Հըէռման ճանր ա ածում կըլխէն, ըսպանում* (Ձ):

ՀԸԷՌՈՒՑ/ՀԸՌՈՒՑ/ՀԷՌՈՒՑ - *տե՛ս* ՀԸԷՌ:

ՀԸԷՏ[1]/ՀԸԷՏՔ/ՀԷՏ[1]/ՀԷՏՔ *(գրբ. հետ(ք))* - *գ.* Որեւէ բանի թողած դրոշմը մեկ այլ բանի վրա, հետք: *Միհէնգ' էլ, վէր յէշում ըս, լանսինգ'ին իրըէսէն մօրը խըմօրուտ մընէրէն հըէտքէրը ըրվամ ա* (ԱԱ, 15):

- Հըէտը անէլ/քըցիլ - *տե՛ս* Հըէտան անէլ:

- Հըէտը ըղնէլ/ընցընէլ - *տե՛ս* Հըէտան ըղնէլ:

- Հըէտը կըտըրէլ/պահէլ/քաշիլ - 1. Հետեւել, հետապնդել: *Էտ կընէգ'ը տըէսնում ա, վըէր մարթըն ուրանա հէտը պահում ա, խըրատվում ա* (ՆԼՂԺԲ, 67): 2. Սիրահետել: *Շատ տըղա յա ինում էտ ըխճըկանը հըէտը կըտըրած, ամմա ինք'ը մինակ չուբանէն տըղէն ա ինում սիրիլիս* (Ձ):

- Հըէտը կուրցընէլ - 1. Մեկի հետքից շեղվել: *Շօնը արչին հըէտը կուրցընէս ա* (Ձ): 2. *տե՛ս* Հըէտը-թէփուռը կուրցընէլ:

- Հըէտումը ինիլ/կէնալ - Հետամտել, հետամուտ լինել: *Վէր կօրծէն հըէտումը չըկացէր, գ'իդանա վէր անանալ չի կ'ըլանա* (Բ):

ՀԸԷՏ[2] - *տե՛ս* ՀԸԷՏԷ[1]:

ՀԸԷՏԱ(Ն)/ՀԷՏԱ(Ն) *(գրբ. հետ)* - *մ.* 1. Հետեւից: *Հէնգ' մարթ ուրանր հըէտա հըսնըմ չըն* (ԱՀ, 50): 2. *տե՛ս* ՅԸԷՏՆԱՆ:

- Հըէտան անէլ - Իր հետեւից բերել՝ տանել եւն: *Էտ մարթը, շընէրը հէտան ըրած, կ'ամ ա շօռ կ'ամ, ըղվէսին քըթէնում, փըռնում խէխտում...* (ՀԺՀ, VII, 237):

- Հըէտան գ'ուլլա քըցիլ - Մեկի՝ մի բանի կարիքը խիստ զգալ, ձեռք բերելու համար մտատանջվել: *Սօվ ա ինում, ժուղօվուրթը հացէն հըէտան գ'ուլլա յըն քըցանում* (Ձ):

- Հըէտան ըղնէլ - 1. *տե՛ս* Հըէտը կըտըրէլ: 2. *տե՛ս* Հըէտումը ինիլ:

- Հըէտան թանմք'անծ ծի դարկէլ - *տե՛ս* Հըէտան կ'անրմանր խընձօր դարկէլ (2):

- Հըէտան թըլըթափէլ - Մեկին շատ սիրել: *Շէնին ըխճըկէրքը Ըղանսանա հըէտան թըլըթափում ըն* (Բ):

- Հըէտան խօսէլ - Մեկի մասին նրա բացակայությամբ չարախոսել՝ բամբասել: *Շէնին կընանէք'ը նախագէն կընգանը հըէտան շատ ին խօսում* (Բ):

- Հըէտան ծէն տալ - Կոչել, անվանել, հորջորջել: *Լօխ ըտըրա հըէտան կ'օղ կատու ին ծէն տամ* (Ձ):

- Հըէտան կ'անրմանր խընձօր դարկէլ - 1. Որպես հավանելու երաշխիք՝ աղջկան կարմիր խնձոր ուղարկել. եթե ընդունում է, ուրեմն համաձայն է: *Առաչ, վէր մին տըղա մին ըխճըկա հավան կընալիս ա իլալ, հըէտան կ'անրմանր խընձօր ա իլալ ղըրկէլիս* (Ձ): 2. Հանդիսավոր հրավիրել (հաճախ գործածվում է ժխտական կամ հարցական ձեւերով): *Հըէտատ կ'անրմանր խընձօր ը՞մ դարկալ, հօր ը՞ս յըէկալ* (Բ):

- Հըէտան կուտանա ինիլ/տըէռնալ - Մեկին անմնացորդ նվիրվել: *Կընէգ'ը վէր մարթին հըէտան կուտանա չիլանվ, էն տօնը տօն չի տըէռնալ* (Բ):

- Հըէտան կուտանն ծէն տալ - Արհամարհել: *Շինանցէք' ըտըրա հըէտան կուտանն ըն ծէն տաս* (Բ):

- Հըէտան հըսնէլ - Իր հնարավորություններով՝ կարողություններով մեկին հավասարվել: *Կ'էցընն էլ վըէչ մին լանվ շօր կար, վըէչ էլ մին մարթու հէտա հըսնում ար* (ՀԺՀ, VII, 259):

- Հըէտան հըրավէրք դարկէլ - *տե՛ս* Հըէտան կ'անրմանր խընձօր դարկէլ (2):

- Հըէտան ճանր թօղ անէլ - Բարի ճանապարհ մաղթել: *Վէր պարիկամէրան մինը հըէռէ տըէղ ա ք'ինում, հըէտան ճանր ըն թօղ անում* (Ձ):

- Հըէտան ճանր ինիլ/տըէռնալ - *տե՛ս* Հըէտան կուտանա ինիլ:

- Հըէտան մարթ դարկէլ - Մեկի միջոցով մեկին կանչել՝ հրավիրել: *Կ'անք'անն հըէտան մարթ ըն դարկում, ամմա ք'ինամ չի* (Բ):

- Հըէտան մըէռնէլ/մըէռնէլ-կըտըրէլ - *տե՛ս* Հըէտան թըլըթափէլ: *Արսէնը մէծ ախպօրը հէտան մըէռնում ար. էն ըշտէղ ք'ինամ ա, դանչանք ա անում, վէր անանալ էլ նըհէտը տանէ* (ՀԺՀ, V, 438):

- Հըէտան յէշիլ - 1. Հմայվել, զմայլվել: *Թաքավէրին տըղան էտ ըխճըկանը վէր տըէսնում ա, մընամ ա հըէտան յիշիլիս* (Ձ): 2. Ջղջալ, փոշմանել: *Կավը իժժան ծախից, մընաց հըէտան յիշիլիս* (Բ):

- Հըէտան շօռ կ'անալ - Մեկին փնտրել՝ որոնել: *Շանտ ըն ընէս ք'իս մօտէ ծրմակը, էծին հէտան շօռ կ'անս* (ԼՂԲ, 317):

- Հըէտան պէրած - Երկրորդ անգամ ամուսնացող կնոջ՝ նախորդ ամուսնուց ունեցած զավակը նոր ամուսնու եւ նրա հարազատների համար: *...էտ կընէգ'ը յըտվակէն ա ինում՝ հէտան էրկու տըղա խօխա պիրած* (ՆԼՂԺԲ, 7):

- Հըէտան պըրծընէլ - Մեկի՝ մի բանի հետեւից վազել: *Պուղին չօր ճաթը յօր ա օնում, հէտան պըրծընում* (ՆԱԲ, 132):

- Հըէտան քարավ տալ - Քշել, ծաղրել: *Հինչ ա կօրծա տանս ըն քըցանալ, լօխ հըէտան քարավ ըն տամ* (Բ):

- Հըէտան քըցիլ - *տե՛ս* Հըէտան անէլ: *Տըղան շընէրը հէտան ա քըցանում, հըղէ ինում* (ՆԼՂԺԲ, 17):

- Հըէտատ պըրծընօղ կա՞ - Ինչո՞ւ ես

շտապում: *Հը՞տատ պըրծընօղ կա՞, խէ հանդարդ չըս կօրծ անում* (Բ):

ՀԸՏԷ[1]/ՀԸՏԻ[1]/ՀԸՏՏ[2]/ՀԷՏԷ[1]/ՀԷՏԻ[1]/ՀԷՏ[2] - *գ., մ.* Քանակական թվականների եւ քանակ ցույց տվող այլ բառերի հետ ցույց է տալիս կրկնություն՝ բազմապատիկություն, անգամ: *Էտ մարթը էրկու հը՞տէ փօրցիում ա, ամալ չի կ'ամ* (Ձ):

ՀԸՏԷ[2]/ՀԸՏԻ[2]/ՀԷՏԷ[2]/ՀԷՏԻ[2] - *կ.* 1. Նպատակով: *Փուլ ըշխըդէլի հը՞տէ ջիհիլնէն ք'իս ըն իլալ սիզօն* (Ձ): 2. Պատճառով: *Թաքավէրը շատ պարի թաքավէր ար, ժողովուրթը ըտըրա հէտի էլ ընդըրա կըլօխը յէր իլին* (ԼՂԲ, 290): 3. Հօգուտ՝ հանուն մեկի՝ մի բանի: *Ախպօրը հը՞տէ գանքը կըտա* (Բ): 4. Վերաբերությամբ, մասին: *Մարը ըխճըկանը հը՞տէ շատ ար մըտըծէս* (Ձ): 5. Ցույց է տալիս հատկացում: *Լ'ավ թիք'էք'ը տըղէն հը՞տի ար պըհէս* (Ձ):

ՀԸ՞ՏԸ-ԹԷՓՈՒՌԸ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հը՞տը-թէփուռը կուրցընէլ - Անհետ կորցնել՝ ոչնչացնել: *Ըտի էտ տըղէն տանում ըն, հը՞տը-թէփուռը կուրցընում* (Ձ):

- Հը՞տը-թէփուռը կօրչիլ/չըրվալ/մանիլում չանէլ - Անհետ կորչել, ոչ մի լուր՝ տեղեկություն չլինել: *Համամչին բառասխանըմ ա.- Թա՛ջիր, վախէլ մի՛ր, հէտը-թէփուռը մանիլում չի* (ՀԺՀ, VII, 114):

ՀԸ՞ՏԻ[1] - *տե՛ս* ՀԸ՞ՏԷ[1]:

ՀԸ՞ՏԻ[2] - *տե՛ս* ՀԸ՞ՏԷ[2]:

ՀԸ՞ՏՔ - *տե՛ս* ՀԸ՞Տ[1]:

ՀԸ՞ՐԹ/ՀԷՐԹ *(հ.ե. *ser- (կողք կողքի շարել, միացնել)* - *գ.* 1. Հաջորդական կարգ՝ դասավորություն: *Հը՞րթավ մուտանում ըն, թաքավէրին ծը՞րքը պաչիում* (Ձ): 2. Որոշ ժամանակամիջոցում կատարվող անընդհատ աշխատանք, որի ժամանակ մեկը հաջորդում է մյուսին, հերթափոխ: *Ջավօղը էրկու հէրթավ ա ըշխադում* (Բ): 3. Որեւէ բանի համար իրարից հետո հաջորդական կարգով սպասող մարդկանց խումբ՝ շարք: *Հէրթը մը՞ծ ա ինում, կարում չի ըսպասէ* (Ձ):

- Հը՞րթը կ'ալ/հըսնէլ - Հերթը՝ ժամանակը վրա հասնել: *Կը՞ր հը՞րթը կ'ամ ա ուրանա, մէսը պըրծած ա ինում* (Ձ):

- Հը՞րթը մը՞զ հըսավ, ճըղացէն քարը կօտըրից - Ասում են այն դեպքում, երբ գործը վերջին պահին անակնկալ դժվարության է հանդիպում՝ ձախողվում է:

- Հը՞րթը մը՞զ հըսավ, Լէնինը մը՞ռավ - *տե՛ս* Հը՞րթը մը՞զ հըսավ, ճըղացէն քարը կօտըրից:

- Հը՞րթը ուրուր կըտօրէլ/օտէլ - Մեծ հերթ գոյանալ: *Քինամ ա, թա մէս ինք' օնէ, տը՞սնում՝ հը՞րթը ուրուր ուտէլիս* (Ձ):

- Հը՞րթ պահէլ/փըռնէլ/վը՞ննը կէնալ - Իր հերթը հասնելուն սպասել: *Հը՞րթ ա պահում, վէր կարէ էրկու հաց ինք' օնէ* (Ձ):

ՀԸ՞ՐԹԱՀԸ՞ՐԹ/ՀԷՐԹԱՀԷՐԹ - *մ.* Հերթով, իրար փոխարինելով: *Հը՞րթահը՞րթ կօրծ ըն անում* (Բ):

ՀԸԹԷԹԱ - *տե՛ս* ԹԷԹԱ:

ՀԸԹԸՅԱԹ/ՀԻԹԻՅԱԹ *(թրք. ehtiyat)* - *գ.* Խնայված դրամական գումար, խնայողություն: *Լ'ավ կընէգ'ը էն ա, վէր տանը միշտ հըթըյաթ պահէ* (Բ):

- Հըթըյաթ անէլ - Խնայողություն անել, խնայել: *Էրկու հըզէր մանէթ ըմ պէրալ, էն էլ մարթըս կ'իրըմ ա, թա հըթըյաթ ըրա, էլ փօղ չըմ դարկէլու...* (ՋՏ, Բ, 78):

ՀԸԹԸՅԱԹԱՎ/ՀԻԹԻՅԱԹԱՎ - *ած.* Ծախսերի մեջ խնայող՝ տնտեսող, խնայված դրամական գումար՝ խնայողություն ունեցող: *Հըթըյաթավ կընէգ' ա իլալ Մանիշ աքէրը* (Բ):

ՀԸԹԸՐՔԸ՞ՑԷ - *գ.* 1. Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի բնակիչ: *Մին օր հըթըրքը՞ցէք' հըվաքվում ըն, մըսլըհաթ անում, վար մը՞ր հօղը կ'էտէն էս ընգ'ունանա պուկէն, տանէն էն դօլը* (ՆԼՂԺԲ, 99): 2. *տե՛ս* ԽԸՆՈՒԾԻՆԸԿԸ՞ՑԷ (2):

ՀԸԹ(Հ)ՕԹԷԳ' - *տե՛ս* ՎԸԹՎԸԹԷԳ':

ՀԸԹ(Հ)ՕԹԷԼ - *տե՛ս* ՎԸԹՎԸԹԱԼ:

ՀԸԼԱԼ(Վ)ԷԼ - *չբ.* Մաքրվել, անարատ դառնալ: *...Էլիա շօնը կ'ան ա լ'ուզ տաս, էլիա յօր ա ունէս, տընէս դէրին կօշտը, վը՞ր օծէ, հըլալվէ* (ԼՂԲ, 376):

ՀԸԼԱ՞ԾԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հըլանցակ անէլ - 1. Հալածել, վտարել: *Շօնը հէտան ա պըրծընում, ըղվէսին շէնան հըլանցակ անում* (Ձ): 2. *տե՛ս* Լըղաճա(ն)ք անէլ:

- Հըլանցակ ինիլ/տը՞ռնալ - 1. Հալածվել, վտարվել: *Էտ թաքավէրին վախտը շատ կ'օղէր ըն էտ յիրգ'իրան հըլանցակ իլալ* (Ձ): 2. *տե՛ս* Լըղաճա(ն)ք ինիլ:

ՀԸԼԱ՞(Մ) - *տե՛ս* ՀԱԼԱ՞:

ՀԸԼԱ՞ՄԱԾ - *տե՛ս* ՀԱԼԱ՞ՄԱԾ:

ՀԸԼԱՎԱԾ - *մ.* Միայն շապիկով, շապկանց: *Հըլավաց տանս ա կ'ամ ք'ուչան, լօխ ծըծընդօստում ըն* (Ձ):

ՀԸԼԷՄԱ/ՀԻԼԷՄԱ - 1. *գ.* Բրնձով պատրաստած ջրալի դյուրամարս կերակուր: *Հըլէման ահնամ շօրվա յա* (Բ): 2. *ած. փխբ.* Շատ կակուղ: *Ջանը հըլէմա յա* (Բ):

ՀԸԼԷՎՈՒՐ/ՀԸԼԻՎՈՒՐ/ՀԻԼԻՎՈՒՐ/ՀԸԼԸՎՈՒՐ/ՀՈՒԼՈՒՎՈՒՐ/ՀՈՒԼՈՒՎԷՐ/ՀԸԼԻՎԷՐ/ՀԸԼԻՎԸ՞Ր *(գրբ. ալեւոր)* - 1. *գ.* Ծերունի, ալեւոր: *Հըղէննի մին հըլէվուր ա պըտահում, էս մարթը հընգըրանում ա տահանց* (ՆԱԲ, 53): 2. *ած.* Ծերացած, ծեր: *Հանլանվուր մարթ ա Սումբաթը, ամհա սաղ օրը էն ա կօրծ ընէս* (Բ):

ՀԸԼԸԼՕԹՈՒՆ - *գ.* Ազնվություն, արդարություն, շիտակություն: *Թաքավէրը ըտի ըստակում ա, յէրգ'իրը հըլըլօթուն ա ըղնում* (Ձ):

ՀԸԼԸԼՑ(Ը)ՆԷԼ - *նբ. տե՛ս* Հալալ անէլ:

ՀԸԼԸԾԱԿԱՆ - *ած., գ.* Հալածված, վտարված (մարդ): *Հըլըծական մարթին օրը սը՞վ կինի* (Ձ):

ՀԸԼԸՅԱ՞Ն[1] - *տե՛ս* ՀԸԼ'ՎԸՅԱ՞Ն:

ՀԸԼԸՅԱ՞Ն[2] - *տե՛ս* ՀԱԼԱ-ՀԱԼԱ:

ՀԸԼԸ-ՀԱԼԱ - *տե՛ս* ՀԱԼԱ-ՀԱԼԱ:

ՀԸԼԸՂՈՒՐԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐԷԼ:

ՀԸԼԸՂՈՒՐՎԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐՎԷԼ:

ՀԸԼԸՂՕՐԷԼ/ՀԸԼԸՂՈՒՐԷԼ/ՀԸՂԼԸՂՕՐԷԼ/ՀԸՂԼԸՂՈՒՐԷԼ - *նբ.* Շատ տրորել: *Հըլըղօրում ըն, մաշկը կ'իրմիրցընում* (Ձ):

ՀԸԼԸՂՕՐՎԷԼ/ՀԸԼԸՂՈՒՐՎԷԼ/ՀԸՂԼԸՂՕՐՎԷԼ/ՀԸՂԼԸՂՈՒՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸԼԸՂՕՐԷԼ-ի:

ՀԸԼԸՎԱՑՈՒ - *գ., ած.* Շապիկ կարելու համար նախատեսված (կտոր): *Մին հըլըվացու էլ դարկում ա ախպօրը կընգանը հը՞տէ* (Ձ):

ՀԸԼԸՎՈՒՐ - *տե՛ս* ՀԸԼԷՎՈՒՐ:

ՀԸԼԸՎՈՒՐԷԼ/ՀԸԼԻՎՈՒՐԷԼ/ՀԻԼԻՎՈՒՐԷԼ/ՀՈՒԼՈՒՎՈՒՐԷԼ/ՀԸԼԻՎԷՐԷԼ/ՀԸԼԻՎԸ՞ՐԷԼ *(գրբ. ալեւորիմ)* - *չբ.* Ծերանալ: *Ապան շատ ա հըլըվուրալ, էլ կարում չի տանս կ'ա շինամաչը* (Բ):

ՀԸԼԸՎՈՒՐՕԹՈՒՆ/ՀԸԼԻՎՈՒՐՕԹՈՒՆ/ՀԻԼԻՎՈՒՐՕԹՈՒՆ/ՀՈՒԼՈՒՎՈՒՐՕԹՈՒՆ/ՀԸԼԻՎԷՐՕԹՈՒՆ *(գրբ. ալեւորութիւն)* - *գ.* Ալեւոր լինելը, ծերություն: *Հըլըվուրօթունը մարթին ամմէն հինչա քըցում ա* (Բ):

ՀԸԼԸՎՓՕԽԱՆ - *գ.* Կարճ շապիկ: *Տընդըղում ա, լըվացան մին հըլըվփոխան յօր օնում, պըտատում, տընում կըռուտակէն, նի մընանում տօն* (ՆԱԲ, 136):

ՀԸԼԸՎՕՐՅՆԷՔ' - *գ.* Հարսանիքից առաջ հարսի եւ փեսայի զգեստներն օրհնելու ծես: *Հըլըվօրհնէք'ը վէր պըրծընէս ա, դէրը հախը յօր ա ընէս, ք'իս* (Ձ):

ՀԸԼԻՎԷՐ - *տե՛ս* ՀԸԼԷՎՈՒՐ:

ՀԸԼԻՎԷՐԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՎՈՒՐԷԼ:

ՀԸԼԻՎԸ՞Ր - *տե՛ս* ՀԸԼԷՎՈՒՐ:

ՀԸԼԻՎԸ՞ՐԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՎՈՒՐԷԼ:

ՀԸԼԻՎՈՒՐ - *տե՛ս* ՀԸԼԷՎՈՒՐ:

ՀԸԼԻՎՈՒՐԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՎՈՒՐԷԼ:

ՀԸԼԻՎՈՒՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸԼԸՎՈՒՐՕԹՈՒՆ:

ՀԸԼԼԱ՞ - *տե՛ս* ՀԻԼԼԱ՞:

ՀԸԼՀԸԼԱ՞ - *ած.* Թույլ, անկարող: *Հըլիհըլա՞ մարթ ա Կըրիքօրը* (Բ):

ՀԸԼՂԱԿ - *տե՛ս* ՀԸՂԼԱԿ:

ՀԸԼՎԸՀԱԼ/ՀԸԼԸՀԱԼ[1] - *ած.* 1. Հալվելու մոտ, հալվեհալ: *Էտ հըլվըհալ յըէղը ածում ա բալօնը, կօխում խուրջինը...* (Զ): 2. Շատ փխրուն՝ փափուկ (ուտելիքի մասին): *Հըլվըհալ մէս ա, լըհա կարում ըս՝ կէր* (Բ):

- Հըլվըհալ անէլ, ընգուճնէն/կըլօխը ածէլ - *տե՛ս* Հալիլ, ընգուճնէն/կըլօխը ածէլ:

ՀԸԼՎԸԷՆԷ - *գ.* Խնձորի տեսակ: *Հըլվըէնէն քախծըր խընձօր ա* (Բ):

ՀԸԼՀԻԼ-ԲԸԼՀԻԼ - *ած.* Շատ հարբած՝ գինով: *Դէ հըլհալ-բըլհալ մըկըրնէ յըն, լի՞, ճըղճըղամ ըն* (Զ):

ՀԸԼՈՒՃԻ - *տե՛ս* ՀԸԼՈՒՋԻ:

ՀԸԼՈՒՋԻ/ՀԸԼՈՒՃԻ - *գ.* Վայրի փշոտ թուփ, որ տալիս է պնդուկի մեծությամբ դեղնակարմիր քաղցր պտուղներ, ալոճենի: *Հըլուջին ամմէն վըէղում չի փըսնէս* (Բ):

ՀԸԼՈՒՌՆԷ - *տե՛ս* ՈՒԼՈՒՌՆԷ:

ՀԸԼՕՌ(Ն)ԷԳ[1]/ՀԻԼՕՌ(Ն)ԷԳ[1]/ՀՈՒԼՕՌ(Ն)ԷԳ[1] - *գ.* Թարախակալած ուռուցք մարմնի վրա, թարախապալար, չիբան: *Վըէննէն յըրա հըլօռնէգ ա տուս յըէկալ* (Բ):

ՀԸԼՕՐ/ՀԻԼՕՐ/ՀՈՒԼԼՕՐ *(գրբ. ոլոր)* - *ած.* 1. Ոլորված, ոլորուն: *Մին հըլօր քօղ ա յօր օնում, կապում* (Զ): 2. Ոլորապտույտ, ոլորաններ ունեցող: *Ըտըղատ մին հըլօր կածան ք'ինամ ա Թըղլարա կըլօխը* (Բ):

- Հըլօր տալ - *տե՛ս* ՀԸԼՕՐԷԼ:

ՀԸԼՕՐԷԼ/ՀԻԼՕՐԷԼ/ՀՈՒԼԼՕՐԷԼ *(գրբ. ոլորեմ)* - *նբ.* 1. Մի ծայրից բռնելով՝ մյուս ծայրով առարկան պտտել իր շուրջը: *Ապուն խասյաթ ա իլալ, բիդէրէն քըթան փըռնէլիս ա իլալ, հըլուրէլիս* (Բ): 2. Ուժգնորեն դարձնել՝ ճկել՝ ծռել: *Արմօն կ'ումաշին կըլօխը հըլօրում ա, վէր քըցում* (Զ): 3. Շրջել, շուռ տալ, թեքել: *Հալալ խօսկը պըրծընէլու, տըղան ղամանն հըլօրում ա, մօրը էլ ըսպանում* (ՆԱԲ, 36):

- Հըլօրած քօղ - Չնչին՝ անարժեք բան: *Սաբավ կընէգ ա, տանը մին հըլօրած քօղ էլ չի կա* (Բ):

ՀԸԼՕՐ-ՀԸԼՕՐ - *տե՛ս* ՀԸԼՕՐ-ՊԸԼՕՐ:

ՀԸԼՕՐՉԱՆ/ՀԻԼՕՐՉԱՆ/ՀՈՒԼԼՕՐՉԱՆ - *գ.* 1. Ոստայնի անիվը, որի վրա փաթաթվում է գործած կտավը: *Վըէստանէն հըլօրչանը կօտըրում ա* (Զ): 2. Փոքրիկ փայտ, որով պտտելով՝ ամրացնում են բեռների թուլացած պարանը՝ թոկը: *Փանը էշին պէռնում ըն, յըէտնան հըլօրչանավ պինդըցընում* (Բ):

- Հըլօրչան տալ - Փոքրիկ փայտով պտտելով՝ բեռների պարանը՝ թոկը պրկել՝ ամրացնել: *Պէռնը ծիյին յըրա կըպօտում ըն, հըլօրչան տամ* (Զ):

ՀԸԼՕՐ-ՊԸԼՕՐ/ՀԸԼՕՐ-ՀԸԼՕՐ/ՀԻԼՕՐ-ՊԻԼՕՐ/ՀԻԼՕՐ-ՀԻԼՕՐ - *ած., մ.* 1. Ծուռումուռ, այս ու այն կողմը դառնալով: *Հըլօր-պըլօր հըղըցկընէ շատ կա Ղարաբաղ* (Բ): 2. *փխբ.* Մանվածապատ, խճճված: *Հըլօր-պըլօր կօրծա զանիլաս տանում ա* (Բ): 3. *փխբ.* Ոչ շիտակ, ոչ անկեղծ: *Էտ մարթը հըլօր-պըլօր ա խօսում, սայաղ կաց* (Զ):

- Հըլօր-պըլօր անէլ - Տարբեր տեղերից ոլորել, ծռմռել: *Էտ արկաթը յօր ա օնում, հըլօր-պըլօր անում, տէն քըցում* (Զ):

ՀԸԼՕՐՎԷԼ/ՀԻԼՕՐՎԷԼ/ՀՈՒԼԼՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸԼՕՐԷԼ-ի:

ՀԸԽԸՌ-ՀԱԽՈՒՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հըխըռ-հախուռ անէլ - *տե՛ս* ՀԸԽԸՌՕՏԷԼ:

ՀԸԽԸՌՕՏԷԼ/ՀԸԽՌՕՏԷԼ - նբ. Շատերը եւ շատ բան ամբողջ բերանով խածել՝ կծել՝ խլել՝ խժռել: *Շընէրը հըխըռստում ըն, մէսը լօխ օտում* (Զ):

ՀԸԽԸՌՕՏՎԷԼ/ՀԸԽՌՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸԽԸՌՕՏԷԼ-ի:

ՀԸԽԿԸԹԷԽԿՈՒ(Տ) - *տե՛ս* ԸԽԿԸԹԷԽԿՈՒ(Տ):

ՀԸԽԿԸՀԱՇԸԷՎ/ՀԱԽԿԱՀԱՇԸԷՎ - *տե՛ս* ՀԱՇԸԷՎ-ՀԱՇՎԱՐԿ:

ՀԸԽԿԸՀԷՍԱԲ/ՀԱԽԿԱՀԷՍԱԲ *(թրք. haqq-hesab)* - *տե՛ս* ՀԱՇԸԷՎ-ՀԱՇՎԱՐԿ:

ՀԸԽՌՕՏԷԼ - *տե՛ս* ՀԸԽԸՌՕՏԷԼ:

ՀԸԽՌՕՏՎԷԼ - *տե՛ս* ՀԸԽԸՌՕՏՎԷԼ:

ՀԸԾԱՆԻԼ - *նբ.* Փայտերը՝ ցախը հաստ ճյուղի՝ գերանների վրա դարսել՝ քաշ տալու համար: *Հըծանում ըն, վէր փանը ծըմական քաշ տան, պիրին* (Զ):

ՀԸԿԱՌԱԿ/ՀԸԿԸՌԱԿ *(գրբ. հակառակ)* - *ած.* 1. Դեմ, անհամաձայն: *Տըղան օգում ար ք'ինի, ամմա ախճիգը հըկառակ ա ինում* (Զ): 2. Ներհակ, ոչ համերաշխ: *Ըտըրանք ուրուր նըհըէտ հըկառակ ըն ինում* (Զ): 3. *կ.* Դեմ, ընդդեմ: *Տըղան հօրը ըսածէն հըկառակ ա խօսում* (Բ):

ՀԸԿԸԼ[1]-ՀԱԿԱԼ[1] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հըկըլ[1]-հակալ[1] անէլ - 1. Շատ ջարջարել՝ հոգնեցնել: *Իզէն ինձ շատ ա հըկըլ[1]-հակալ[1] ըրալ* (Բ): 2. *տե՛ս* Հըկը-հակու անէլ:

- Հըկըլ[1]-հակալ[1]ը ըղնէլ - 1. *տե՛ս* Ըսօր-էք'ուցը ըղնէլ: 2. *տե՛ս* Հըկըն-հակունը ըղնէլ:

- Հըկըլ[1]-հակալ[1]ը քըցիլ - *տե՛ս* Հըկըլ[1]-հակալ[1] անէլ (1):

ՀԸԿԸՀԱԿ - *տե՛ս* ՆԸՀԱԽ: *Ինձ էրըմ ըս, խըրավըմ, թօհմանթըտ հըկըհակ ա* (ԼՂԲ, 28):

ՀԸԿԸ(Ն)-ՀԱԿՈՒ(Ն) - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հըկը-հակու անէլ - Երկու կողմից կաղալ, օրորվել, լնգլնգալ: *Էտ վախտը տըսնաս ա՝ մին օխծ հա՛մ հըկըհակու ընէլավ, հա՛մ փըշշըցնէլավ կ'աս ա, նի մըննէս վէրը* (ՀԺՀ, V, 592):

ՀԸԿԸՌԱԿ - *տե՛ս* ՀԸԿԱՌԱԿ:

ՀԸԿԸՌԱԿՎԷԼ *(գրբ. հակառակիմ)* - *տե՛ս* ԹԱՆՍՎԻԼ:

ՀԸԿԸՌԱԿՈՒ - *տե՛ս* ԸՆԴԸՂՈՒ:

ՀԸԿ(Ը)ՌԸ-ՄԱԿ(Ը)ՌԻ - *տե՛ս* ՀԸԿԱՌԱԿ (2):

ՀԸՂԱԼԻՔ[1] - *տե՛ս* ԽԱՂԱԼԻՔ[1]:

ՀԸՂԱՂԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐԷԼ:

ՀԸՂԱՂՄՈՒՆՔ - *տե՛ս* ԽԸՂԱՂՄՈՒՆՔ:

ՀԸՂԱՂՎԷԼ[1] - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐՎԷԼ:

ՀԸՂԱՂՎԷԼ[2] - *տե՛ս* ԽԸՂԱՂՎԷԼ:

ՀԸՂԱՄԱՉ[1] - *գ.* Ճանապարհի ներսը: *Մին էլ յէշում ա տըէսնում՝ մին ըստակած օխծ հըղըմաչին վէր ընգած* (Զ):

ՀԸՂԱՄԱՉ[2] - *տե՛ս* ԽԸՂԱՄԱՉ:

ՀԸՂԱՄԱՐ - *տե՛ս* ԽԸՂԱՄԱՐ:

ՀԸՂԱՍԷՐ - *տե՛ս* ԽԸՂԱՍԷՐ:

ՀԸՂԱՏԸԷՂ - *տե՛ս* ԽԸՂԱՏԸԷՂ:

ՀԸՂԷ/ՀԸՂԷՑ/ՀԸՂԸԷՑ/ՀԸՂԸՑԷ/ՀԸՂԷՑԿԸ/ՀԸՂԻ *(գրբ. ուղի)* - *գ.* Ուղի, ճանապարհ: *Էտ պէրթէն մէչավը մին հըղէ յա ընում տարած Թըռթանռին յիրանա՝ տաղատ ճանուր յօր անէլի հէտի* (ԼՂԲՔ, 281):

- Հըղա յըէտ տալ - Չթողնել, որ շարունակի, արգելել մի բան անելու: *Շատ մարթ ա փօրցանում էտ խընձօրը պիրի, ամմա էտ պառավը հըղա յըէտ ա տամ* (Զ):

- Հըղա յըէտ տըէռնալ - Գործը կիսատ թողնել, մինչեւ վերջ չհասցնել: *Ջավէնը հինչ կօրծ ըսքըսէս ա, հըղա յըէտ ա տըռնաս* (Բ):

- Հըղա տանուս կ'անալ - Ճիշտ ճանապարհից՝ կարգ ու կանոնից շեղվել, մոլորություններ անենատուր լինել: *Ջանիլը վէր մըէծէն ասածը անէ վէչ, հըղա տանուս կըկ'ա* (Բ):

- Հըղա տանուս (յըէկած) - Անկարգ, անբարոյական: *Հըղա տանուս յըէկած կընգանը տիժէր ա հըղու պիրիլը* (Բ):

- Հըղա տանուս օնէլ - Ճիշտ ճանապարհից՝ կարգ ու կանոնից շեղել, մոլորեցնել: *Ղանխպա կընէգը անուն ըմճըկանըն էլ հըղա տանուս կօնէ* (Բ):

- Հըղէ անէլ - 1. *տե՛ս* Հըղէ տինիլ: *Ղասաբը խուխօցը հըղէ յա անում, ինք'ը շանը հըղօղը նան ջիգ'անը տանում տամ տահանց հօրը* (ՀԺՀ, VII, 39): 2. Հոսեցնել: *Թօրավը թըխում ա, կարասը կօտըրում, կ'ինին հըղէ անում* (Զ):

- Հըղէ ըղնէլ/ինիլ - 1. Ճանապարհվել, ուղեւորվել: *Ինք'ը ծին նըստում ա,*

հըղէ ինում, քինամ (ՆԼՂԺԲ, 15): 2. Հոսել: *Բալօնը կօտըրում ա, բանքմանզը հըղէ յա ինում, նի տըռնում խուրջինը* (Ձ):

- Հըղէ խաղ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԷ:

- Հըղէ կըտըրէլ/ընցընէլ - *տե՛ս* Հըղէ քինիլ:

- Հըղէ կանալ - 1. *տե՛ս* Հըղու կանալ: 2. *տե՛ս* Հըղէ քինիլ:

- Հըղէ նըհաշ տալ - Բարի խորհուրդ տալ, որեւէ անցանկալի վիճակից դուրս գալու ելք՝ միջոց՝ հնարավորություն թելադրել՝ ասել: *Ինիլը բիդի ջըհիլին հըղէ նըհաշ տա* (Բ):

- Հըղէն ծըռէլ - 1. Ընթացքը՝ ուղղությունը փոխել: *Ըտըրանք վէր արչին հըռանցէ տըսնում ըն, դանստի հըղէն ծըռում ըն* (Ձ): 2. *տե՛ս* Հըղա տանուս կանալ:

- Հըղէն կըտըրէլ/կապէլ - 1. Մեկի առջեւը ելնելով՝ թույլ չտալ գնալու, ընթացքը արգելել: *Հըղէն կըտրում ըն, էտ մարթին փըռնում* (ՆԼՂԺԲ, 148): 2. Մեկի առաջադիմությանը՝ հաջողությանը՝ զարգանալուն խանգարել՝ արգելք լինել: *Պահէստապէտը լավ հըրուստանում ար, նախագան հըղէն կըտըրից* (Ձ): 3. Թալանել, կողոպտել: *Ղըչչըղնէն շատ մարթու հըղէ յըն կըտըրալ* (Ձ): 4. Ավանդույթ, երբ հարսանիքի ժամանակ հարսի հարազատները փակում են նորապսակների ճանապարհը՝ փեսայից, քավորից կամ նրանց յուրայիններից դրամ պահանջելու ակնկալիքով: *Էնքան հըղէն կըտըրէցէն, խըղճ պէլուն ջուբումը փուլ չի մընաց* (Բ):

- Հըղէն շիլ քըցիլ/կուրցընէլ - Մոլորվել, անելանելի վիճակի մեջ ընկնել: *Էս թըվումըս շատ ջիհիլնէ յըն հըղէն շիլ քըցում* (Բ):

- Հըղէն պահէլ/յէշիլ - 1. Մեկի գալուն կարոտով սպասել, անհամբեր մեկին սպասել: *Մարը օխտը տարէ տըղէն հըղէն պահում ա, ամմա տըղան ըտի էլ կամ չի* (Ձ): 2. Դարան մտած սպասել, դարանակալել: *Ղաչչաղը էտ ծիյըվուրէն հըղէն պահում ար* (Ձ):

- Հըղէն պէնվալ - Մեկի երթեւեկելու՝ գործելու համար նպաստավոր պայմաններ ստեղծվել՝ արգելքները վերանալ: *Թաքավէրը մըռնում ա, վէզիրին հըղէն պէնվում ա* (Ձ):

- Հըղէն պէց ա - Արգելող չկա, կարող է ազատ գնալ՝ գործել (հաճախ գործածվում է հեգնաբար): *Ինրփէնիզ, քըզ հինչ կա յէ՞, քու ըսկէսուր մըռալ ա, հըղէտ պէց ա* (Բ):

- Հըղէն փըռնէլ - Ուղղություն վերցնել, որոշ ուղղությամբ գնալ: *Տահանք քըշէրը ըտըղ կէնում ըն, ուռթանան հըղէ փըռնում բիդի Սիպտակ դէվին պալատը* (Ձ):

- Հըղէն ցանքիլ/ցանքլ քըցիլ/քար քըցիլ - *տե՛ս* Հըղէն կըտըրէլ (2):

- Հըղէն քուռանալ - Ճանապարհը խոպանանալ, աներթեւեկելի դառնալ: *Շէնըմը վէր մարթ չի ապըրից, հըղէն կըքուռանա* (Բ):

- Հըղէն օտէլ - Ճանապարհով հեշտ ու արագ ընթանալ (հիմնականում ձիու մասին): *Դէ թաքավէրին ծին էլ ճօկ ծի յա ինում, հըղէն օտում ա* (Ձ):

- Հըղէն օնէլ - *տե՛ս* Հըղէն կըտըրէլ:

- Հըղէ պէնալ/պէց անէլ - 1. Ճանապարհ կառուցել: *Ուզէցալ ըն տըրանավ ծօրը քարավ լըսնէն, բիդի բէրթը հըղէ պէնան...* (ՆԼՂԺԲ, 142): 2. Առաջադիմության՝ առաջընթացի հնարավորություններ ստեղծել, ուղի հարթել: *Դայուն պաշտոն տըվէն, Միսակէն հըտ հըղէ պէցավ* (Բ):

- Հըղէ պիրիլ - *տե՛ս* Հըղու պիրիլ:

- Հըղէ տալ - 1. Գնալուն չխանգարել՝ չարգելել: *Ժուղովուրթը հըղէ յըն տամ, վէր էտ կընէգը անց կէնա* (Ձ): 2. Առաջադիմության՝ առաջընթացի՝ որեւէ գործով զբաղվելու հնարավորություններ տրամադրել: *Թաքավէրը հըղէ յա տամ, վէր էտ տըղան առուտուր անէ ուրան յիրգիրումը* (Ձ):

- Հըղէ տինիլ/քըցիլ - 1. Ճանապարհել, ուղեւորել, ուղարկել: *Ուսէփանց Սաքին ըրբան նըստում ա, տանում ախպօրը Յէվլախա հըղէ քըցում Բաքու* (ՆԱԲ, III, 181): 2. Ազատել, արձակել (պաշտոնից, գործից եւն): *Կուղութուն ըրավ, հըղէ տիրին* (Բ):

- Հըղէ քինիլ - Որոշ տարածությամբ ճանապարհ անցնել՝ գնալ՝ գալ: *Շատ ըն հըղէ քունում, մին էլ ջիհում ըն մին պառավ մարթու* (Ձ):

- Հըղու կանալ - Ուղղվել, ուղիղ ճանապարհի գալ, կարգ ու կանոնի ենթարկվել: *Էտ տըղան տըրանա յըտը հըղու յա կամ, հօրը-մօրը տըրութուն անում* (Ձ):

- Հըղու յըրա - Ճանապարհի գնացող, ճանապարհագնաց: *Էտ մարթը հինչքան դանչանք ա անում, վար հըվըտցընէ, վար հըղըցու յըրա մարթ ա, կօղ չի, ամանալ չի կամ* (Ձ):

- Հըղուն էս անգունը էլ ա ուրանը, էն անգունը էլ - Բոլոր հնարավորությունները՝ միջոցները իր ձեռքում են:

- Հըղու պիրիլ - Ուղղել, ուղիղ ճանապարհի բերել, դաստիարակել: *Հանը շատ ա չըրչարվում, վէրչը կարում ա տըղէն հըղու պիրի* (Ձ):

ՀԸՂԷՆՆԻ - *մ.* Ճանապարհ գնալու ժամանակ՝ միջոցին: *Հըղէնին մին վարար կէտ ա պըտահում* (ՆԼՂԺԲ, 67):

- Հըղէնին թօղնէլ - Գործը կիսատ թողնել՝ չավարտել: *Սանրանդ մարթ ա Վանին. հինչը ըսքըսում ա, հըղէնին յա թօղնում* (Բ):

- Հըղէնին մընալ - Գործը կիսատ մնալ՝ չավարտվել: *Կըռըէվը ըսքըսից, տօնը շինիլը հըղէնին մընաց* (Բ):

ՀԸՂԷՑ - *տե՛ս* ՀԸՂԷ:

ՀԸՂԷՑԿԸ - *տե՛ս* ՀԸՂԷ:

ՀԸՂԸՑ - *տե՛ս* ՀԸՂԷ:

ՀԸՂԸԼԱԿ - *տե՛ս* ՀԸՂԼԱԿ:

ՀԸՂԸԼԱՑԱՎ - *տե՛ս* ԽԸՂԸԼԱՑԱՎ:

ՀԸՂԸԼԸՑԱՎՈՒՏ - *տե՛ս* ԽԸՂԸԼԸՑԱՎՈՒՏ:

ՀԸՂԸՀԱՆ - *տե՛ս* ԽԸՂԸՀԱՆ:

ՀԸՂԸՀԷՂԷ/ՀԻՂԸՀԷՂԷ - *տե՛ս* ԸԽԿԸԹԷԽԿՈՒ(Տ):

ՀԸՂԸՀԸՆԳԷՐ - *տե՛ս* ԽԸՂԸՀԸՆԳԷՐ:

ՀԸՂԸՂԱՍԷՐ - *տե՛ս* ԽԸՂԸՂԱՍԷՐ:

ՀԸՂԸՂՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՂԸՂՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՂԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ԽԸՂԸՂՕԹՈՒՆ:

ՀԸՂԸՑԱՎԷՐ/ՀԸՂԸՑԱՎՈՒՐ - *գ.* Ճանապարհորդ, ճամփորդ: *Մին հըղըցավուր կամ ա, թան քինան, տէսնըմ ա՝ աղվէսը վէր ընգած...* (ՀԺՀ, V, 520):

ՀԸՂԸՑԱՎՈՒՐ - *տե՛ս* ՀԸՂԸՑԱՎԷՐ:

ՀԸՂԸՑԷ - *տե՛ս* ՀԸՂԷ:

ՀԸՂԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԽԸՂԸՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՂԸՑԿԸՏ(Ը)ՐԷՔ - *գ.* Աղջիկ ուզելու նպատակով նրա ծնողների մոտ մարդ ուղարկելը՝ մտադրությունը իմանալու համար: *Միհէնգ հըղըցկըտըրէք չի կա, միհէնգվա ըխճըկէրքը ուրանք ըն տըղօրանցը խուսըցընէս* (Բ):

ՀԸՂԸՑՀԸՆԳԷՐ - *գ.* Ուղեւորության ընկեր, ուղեկից, ճանապարհակից: *Էրկու հըղըցհընգէր քինալիս էտ ըխպիրին քըշտէն նըստում ըն, վէր հաց օտին* (Ձ):

ՀԸՂԻ - *տե՛ս* ՀԸՂԷ:

ՀԸՂԼԱԿ/ՀԸՂԸԼԱԿ/ՀԸԼՂԱԿ *(արաբ. halka)* - *գ.* 1. Պարանի՝ թոկի՝ թելի եւն ծայրի վրա սարքած օղակ: *Հըղլակը քըցում ըն վէզը, կախ տամ* (Ձ): 2. Ձանազան հարմարանքների վրայի օղակաձեւ մաս: *Քիլիղը քըցում ա մըղակէն հըղլակը, քըլլում* (Ձ):

- Հըղլակ անէլ - Պարանի՝ թոկի՝ թելի եւն ծայրին օղակ սարքել՝ որեւէ բան կամ որեւէ մեկին սեղմելու՝ խեղդելու համար: *Տանում ըն քանդիրը հըղլակ անում, ըխճըկանը պիցըրցնում, հըղլակը քըցում պօկը, վէր կախ տան* (ՀԺՀ, VII, 122):

ՀԸՂԼԸՂՈՒՐԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐԷԼ:

ՀԸՂԼԸՂՕՐԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐԷԼ:

ՀԸՂԼԸՂՈՒՐՎԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐՎԷԼ:

ՀԸՂԼԸՂՕՐՎԷԼ - *տե՛ս* ՀԸԼԸՂՕՐՎԷԼ:

ՀԸՂԿԷԼ *(գրբ. յղկեմ (կոկել, շտկել)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Հըղկիմ քը՛ղ - *տե՛ս* Բօյըտ թաղիմ:

ՀԸՂՎԱԲԱՂ - *տե՛ս* ԽԸՂՎԱԲԱՂ:

ՀԸՂՎԱԾԱՌ - *տե՛ս* ԽԸՂՎԱԾԱՌ:

ՀԸՂՎՕՐՀՆԷՔ՝ - *տե՛ս* ԽԸՂՎՕՐՀՆԷՔ՝:

ՀԸՂՈՒԿԱՆՈՒՑ - *տե՛ս* Կ՝ԸՂԱՆՈՒՑ:

ՀԸՂՈՒՂԱԲԱՂ - *տե՛ս* ԽԸՂՎԱԲԱՂ:

ՀԸՂՈՒՂԱԾԱՌ - *տե՛ս* ԽԸՂՎԱԾԱՂ:

ՀԸՂՈՒՂՕՐՀՆԷՔ՝ - *տե՛ս* ԽԸՂՎՕՐՀՆԷՔ՝:

ՀԸՂՕԿ/ՀԸՂՕՔ *(գրբ. ուղուկ (չորս մատի չափ)* - *տե՛ս* Կ՝ԸՂ:

ՀԸՂՕՂ/ՀՈՒՂՕՂ *(գրբ. ուղեղ)* - *գ.* 1. Գանգի խոռոչում պարփակված ուղեղը՝ գլխուղեղ: *... Շանգիրդը ծէրքան փըռնում ա, թա.*- Վէր մըշավը ծիք՝ տաս, տէգին ջանը պուք ա կ՝ըլական, վը՛ննէրը էլիա մընա հըղօղումը... (ԱԱ, 77): 2. *տե՛ս* ԽԸ՛ԼՔ (1): 3. *տե՛ս* ԾՕԾ (1):

- Հըղօղը թափ տալ - Խը՛լքը թափ տալ:

- Հըղօղը հըղէ անէլ - Գլուխը ջարդել: *Թօրավը թըխէս ա, հըղօղը հըղէ ընէս* (Ձ):

ՀԸՂՕՐԹ(Ը)ՎԷԼ/ՀԱՂՕՐԹ(Ը)ՎԷԼ *(գրբ. հաղորդիմ)* - *չբ.* Հաղորդություն ընդունել՝ ստանալ: *Էտ ծըռէրէն տակէն էլ մին սօրփ ա իլալ, ըշտէղ մարթիք՝ քինիյիս ըն իլալ հաղորթվէյիս* (ԱԱ, 27):

ՀԸՂՕՔ - *տե՛ս* ՀԸՂՕԿ:

ՀԸՃԱՐԿԷ *(գրբ. հաճարի, հաճարուկ)* - *գ.* Հաճարազգիների ընտանիքին պատկանող խոշոր ծառ, հաճարենի: *Մարտակէրտա ծըմըկնումը կա շատ հըճարկէ* (Բ):

ՀԸՃԱՐԿՕՏ - *գ.* Շատ հաճարենիներ աճած տեղ: *Խօգէրը նի յըն տը՛ռնում հըճարկօտը, հաճարկ օտում* (Ձ):

ՀԸՃԸՐԱԽՕՏ - *գ.* Վայրի խոտաբույսի տեսակ: *Հըճըրախօտը սըրէրումըն ա ինում* (Բ):

ՀԸՃԸՐԿՈՒՐԿՈՒՏ - *գ.* Հաճարով եփած կորկոտ: *Հըճըրկուրկուտը քիսիբու խօրանգ ա* (Բ):

- Հըճըրկուրկուտ անէլ - *տե՛ս* Լըվըկարկուտ անէլ:

ՀԸՃՈՒՐՔ - *տե՛ս* ՊԱՏԱԼՕԿ (1):

ՀԸՄ - *ձ.* 1. Կարծիքը հայտնել չկամենալու բացականչություն: *Հինչը հըրցընում ըն, ասմա՝ հը՛մ* (Ձ): 2. Կռահելու, մտաբերելու բացականչություն: *Տըղան ասմա.- Հը՛մ, մը՛ննըս ընգավ, հէնգ՝ մարթ ա իլալ* (Ձ):

ՀԸՄԱՅԻԼ *(գրբ. հմայեմ)* - *նբ.* Հրապուրել, դյութել, հմայել: *Էտ ախճիգընն ասըմ ա.- Տու իմ սը՛րտըս հըմայալ ըս, ամմա իմ հանր ինձ քը՛ղ չի տալ...* (ՀԺՀ, V, 39):

ՀԸՄԱՅՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՄԱՅԻԼ-ի:

ՀԸՄԱ(Ն)ՇԿՈՒՏ - *տե՛ս* ՀԸՄԱ(Ն)ՉԿՈՒՏ:

ՀԸՄԱ(Ն)ՇԿՕՏ - *տե՛ս* ՀԸՄԱ(Ն)ՉԿՈՒՏ:

ՀԸՄԱ(Ն)ՉԷԼ - *տե՛ս* ՀԸՄԱ(Ն)ՉԻԼ:

ՀԸՄԱ(Ն)ՉԻԼ/ՀԸՄԱ(Ն)ՉԷԼ/ՀԸՄԱՆՉԻԼ *(գրբ. ամաչեմ)* - *չբ.* 1. Քաշվել, ամոթխածություն զգալ: *Հանը փըսակալ չի, տըղան էլ հըմանչալ ա, թանի հօրը ասէ՝ փըսակկում ըմ* (ՀԺՀ, V, 544): 2. Անհարմար զգալ: *Ախպօրը ըրածան ինքը՛ն ա հըմանչում* (Ձ):

- Հըմընչիլան մը՛ռնէլ/տափը նի մընէլ - Շատ ամաչել, ամաչելուց մարդկանց աչքին չերեւալ: *Հինչ ա տըղէն տանումանը յըն քըցալ, Ափկարը հըմընչիլան մը՛ռնում ա* (Բ):

ՀԸՄԱ(Ն)ՉԻԼ - *տե՛ս* ՀԸՄԱ(Ն)ՉԻԼ:

ՀԸՄԱ(Ն)ՉԿՈՒՏ/ՀԸՄԱ(Ն)ՉԿՕՏ/ՀԸՄԱ(Ն)ՇԿՈՒՏ/ՀԸՄԱ(Ն)ՇԿՕՏ *(գրբ. ամաչկոտ)* - *ածական.* Ամաչող, քաշվող, ամոթխած: *Տա ամէնաշատը սիրիլիս չի իլալ հըմաշկուտ տըղօրանցը* (ՀԺՀ, VII, 362):

ՀԸՄԱ(Ն)ՉԿՕՏ - *տե՛ս* ՀԸՄԱ(Ն)ՉԿՈՒՏ:

ՀԸՄԱՐ - *տե՛ս* ՄԸՀԱՐ:

ՀԸՄԲԱՐԴ/ՀԸՄԲԱՐՏ *(գրբ. հպարտ)* - *տե՛ս* ԳԱՌ:

ՀԸՄԲԱՐԴԱՆԱԼ/ՀԸՄԲԱՐՏԱՆԱԼ *(գրբ. հպարտանամ)* - *տե՛ս* ԳԸՌԱՆԱԼ: *Ծանունը հըմբարդացավ, վը՛ր էտքան օժի տանր ա* (ԼՂԲ, 303):

ՀԸՄԲԱՐԴՈԹՈՒՆ/ՀԸՄԲԱՐՏՕԹՈՒՆ *(գրբ. հպարտութիւն)* - *տե՛ս* ԳԸՌՕԹՈՒՆ:

ՀԸՄԲԱՐԷԼ/ՀԸՄԲԱՆՐԷԼ *(գրբ. համարեմ)* - *նբ. տե՛ս* Հաշը՛վ անէլ (1): *Էրկու հազար մանէթ փող ա հըմբարում էս մարթը, ըլբաստրակը յօր օնում, քընում* (ՀԱԲ, 15, 96):

- Հըմբարած վը՛խճարը կ՝անլը օտէլ չի - Անհրաժեշտ ուշադրությունը՝ խնամքը իր արդյունքը տալիս է:

ՀԸՄԲԱՆՐԷԼ - *տե՛ս* ՀԸՄԲԱՐԷԼ:

ՀԸՄԲԱՐՎԷԼ/ՀԸՄԲԱՆՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՄԲԱՐԷԼ-ի:

ՀԸՄԲԱՆՐՎԷԼ - *տե՛ս* ՀԸՄԲԱՐՎԷԼ:

ՀԸՄԲԱՐՏ - *տե՛ս* ՀԸՄԲԱՐԴ:

ՀԸՄԲԱՐՏԱՆԱԼ - *տե՛ս* ՀԸՄԲԱՐԴԱՆԱԼ:

ՀԸՄԲԱՐՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸՄԲԱՐԴՕԹՈՒՆ:

ՀԸՄԲԱՆՐՑ(Ը)ՎԻԼ/ՀԻՄԲԱՆՐՑ(Ը)ՎԻԼ *(գրբ. համբառնամ)* - *չբ.* Վերանալ, անհայտանալ, համբարձվել: *Ալիսանը հըմբանրցվալ ա, ըրվամ չի* (Բ):

ՀԸՄԲԸԼՕԹՈՒՆ - *գ.* Համբալ լինելը, բեռնակրություն: *Հըմբըլօթուն ա անում, տօնը պահում* (Բ):

ՀԸՄԲԸՐՎԷ/ՀԸՄԲԸՐՕՎԻ - *ածական.* 1. Համրած, համրելով քանակը որոշած: *Ասում ա.- Հըմբըրվէ ապըրանք ա, կարէլ չըմ տամ* (Ձ): 2. *փխբ.* Քիչ, սակավաթիվ: *Դէ քիսիբին էլ հիշկան հա՞վ բիդի ինի, հըմբըրվէ հավէր ա, լի՞* (Ձ):

ՀԸՄԲԸՐՕՎԻ - *տե՛ս* ՀԸՄԲԸՐՎԷ:

ՀԸՄԸՂԱՆԱԼ - *չբ.* Համեղ՝ ախորժահամ դառնալ: *Խուրանգին մաչը բիդի բօլ-բօլ յը՛ղ ածիս, վէր հըմըղանա* (Բ):

ՀԸՄԸՂՎԱՉԻ - *ածական.* Քիչ համեղ՝ ախորժահամ: *Էտ ճանուրը հըմըղվաչի ճանուր ա* (Բ):

ՀԸՄԸՂՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՀԸՄԸՂԱՆԱԼ-ի:

ՀԸՄԸՂՕԹԻՆ - *գ.* Համեղ լինելը: *Էտ տանձին հըմըղօթինը թաքավէրին շատ ա տուր կ՝ամ* (Ձ):

ՀԸՄԸ(Ն)ՇՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԸՄԸ(Ն)ՉՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՄԸ(Ն)ՉԱՏԸ՛Ղ - *գ.* 1. Որեւէ սխալի՝ թերության եւն պատճառով ամաչելը: *Տըղէն կ՝ուղօթուն անէլը հօրը հը՛տէ հըմընչատը՛ղ ա* (Բ): 2. Գոտկատեղից ներքեւ ընկած մասը: *Հըմանչում չը՞ս, հինչ ը՞ս հըմընչատը՛ղըտ պէց ըրալ* (Բ):

ՀԸՄԸ(Ն)ՉԻՐԸ՛Ս - *ածական.* Ամոթահար: *Հըմընչիրը՛ս կընէգ՝ ա, տանան տանուս չի կ՝ամ* (Բ):

ՀԸՄԸ(Ն)Չ-ՀԱՄԱ(Ն)Չ - *մ.* Ամաչելով: *Մինչը՛վ վէրչ էլ էտ հարթանը ըսկը՛սվօրը նըհը՛տ հըմընչ-համանչ ար խօսում* (Ձ):

ՀԸՄԸ(Ն)ՉՑ(Ը)ՆԷԼ/ՀԸՄԸ(Ն)ՇՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ամաչեցուցանեմ)* - *նբ.* ՀԸՄԱ(Ն)ՉԻԼ-ի:

ՀԸՄԸ(Ն)ՉՕԹԻՆ - *գ.* Ամաչելը: *Էտ մարթիքը դանստի հըմընչըթունան իրէսնէն ունէս ըն, յէտ տը՛ռնաս, քիս* (ԼՂԲ, 393):

ՀԸՄՓԷՐԱՆՔ - *տե՛ս* ՀԱՄՓԷՐԱՆՔ:

ՀԸՄՓԷՐԷԼ - *տե՛ս* ՀԱՄՓԷՐԻԼ:

ՀԸՄՓԷՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՄՓԷՐՈՒԹԻՆ:

ՀԸՄՕՋԷԼ - *տե՛ս* ՀԱՄՕՋԷԼ:

ՀԸՄՕՋՎԷԼ - *տե՛ս* ՀԱՄՕՋՎԷԼ:

ՀԸՄՕՋՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԱՄՕՋՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՅԱՄՕՐԹ - *ածական.* Հայի ձեռքով մորթած (անասունների մասին): *Հըյամօրթ հիյվանէն մէսը հալալ ա* (Բ):

ՀԸՅԱՆԱԼ - *չբ.* 1. Հայ դառնալ (լեզվով, հոգով, սովորություններով): *Էտ*

թօրքը ըտի հըյընաս ա, մընաս Ղարաբաղ (Զ): 2. *փխբ.* Չափավոր ուտել՝ խմել: *Խըրէգ՛ խըմէ՛, հըյա՛ց* (Բ):

ՀԸՅԱՍԷՐ/ՀԱՅԱՍԷՐ *(գրբ. հայասէր)* - *ած.* Հայերին՝ հայ ազգին սիրող: *Հըյասէր խան չինիլ* (Զ):

ՀԸՅԱՎԸՏ - *գ.* 1. Հային հատուկ հոտ: *Հային անա հըյավը՛տ բիդի կ՛ա* (Բ): 2. *փխբ.* Բանիմացություն, հասկացողություն: *Տընը՛շինիտ մարթը ըսկի հըյավը՛տ չօնէ* (Զ):

ՀԸՅԷՎԱՐ - *տե՛ս* ՀԸՅՕՎՈՒՐ:

ՀԸՅԷՎՈՒՐ - *տե՛ս* ՀԸՅՕՎՈՒՐ:

ՀԸՅԷՐԱՆ - *տե՛ս* ՀԸՅԷՐԷՆ:

ՀԸՅԷՐԷՆ/ՀԱՅԷՐԷՆ/ՀԸՅԷՐԱՆ *(գրբ. հայերէն)* - *տե՛ս* ՀԸՅՕՎՈՒՐ:

ՀԸՅԸԼՈՒ *(թրք. hayirli (բարի, բարեգործ)* - *տե՛ս* ԸԲՈՒՌԷՆ:

ՀԸՅԸՎԱՉԻ/ՀԱՅԱՎԱՉԻ - *տե՛ս* ՀԸՅԸՎԱՐԻ:

ՀԸՅԸՎԱՐԻ/ՀԱՅԱՎԱՐԻ - *մ., ած.* 1. Հայի պես, հայի նման, հայաբար: *Էտ ք՛ուրդը կօգի ք՛ուրդ, ամմա հըյըվարի ար ապրում* (Զ): 2. Հայկական տարազ՝ երեքփեշանի արխալուղ հագած: *Էտ տանըն էլ ապրում ար մին նախշուն հարթնը՝ կըլխէն վը՛սկէ փուլ տըրած, հայավարի...* (ՀԺՀ, V, 630): 3. *փխբ.* Համեստ, պարկեշտ: *Հայավարի ախճիգ՛ ա Մանրմանը, լօխ սիրում ըն ընդըրան* (Բ):

ՀԸՅԻԼ-ՄԱՅԻԼ/ՀԱՅԻԼ-ՄԱՅԻԼ *(թրք. hail (հիացած)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հըյիլ-մայիլ ինիլ/կըտըրէլ/մընալ/տը՛ռնալ - Ջմայլվել, սքանչանալ, դյութվել: *Մանդրդանսը լըհա՛ վար էտ ըխճըկանը տը՛սնում չի՛, հըյիլ-մայիլ ա տանռնում, թա խէլքը կուրցնէ* (ՆԼՂԺԲ, 27):

ՀԸՅՎԸՆԱՊԱՀ - *տե՛ս* ՀԻՅՎԸՆԱՊԱՀ:

ՀԸՅՎԸՆԱՏԱՐ - *տե՛ս* ՀԻՅՎԸՆԱՏԱՐ:

ՀԸՅՎԸՊԱՀԷ - *տե՛ս* ՀԻՅՎԸՊԱՀԷ:

ՀԸՅՎԸՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԻՅՎԸՆՕԹՈՒՆ:

ՀԸՅՕԹՈՒՆ/ՀԱՅՈՒԹՈՒՆ *(գրբ. հայութիւն)* - *գ.* 1. Հայ լինելը: *Հայը ըշտը՛ղ էլ ապըրէ, հըյօթունը մընանա քընցիլ չի* (Բ): 2. Ամբողջ հայ ազգը: *Հայութունը Ղարաբաղէն ղըլվումը վը՛ննը կացած ա* (Բ):

- Հըյօթունա ընկնել - Հայոց լեզուն՝ հայկական սովորույթները կորցնել: *Հըյօթունա ընգած հայը հայ չի* (Բ):

ՀԸՅՕՎՈՒՐ/ՀԸՅԷՎՈՒՐ/ՀԸՅԷՎԱՐ - *գ.* 1. Հայոց լեզուն: *Հըյօվուրը ք՛օհնա լ՛ուզա՛ւ վա* (Բ): *մ.* 2. Հայոց լեզվով: *Հըյօվուր ա ինա՛մ կ՛իրա՛ծ, ռուսը կըլօ՛խ չի ըղնում* (Զ): 3. *փխբ.* Մատչելի, պարզ, հասկանալի: *Հըյօվուր չը՞մ ասում, խէ կըլօ՛խ չըս ըղնում* (Զ): 4. *տե՛ս* ՀԸՅԸՎԱՐԻ:

ՀԸՆԱՐ - *տե՛ս* ՀԻՆԱ՛Ր:

ՀԸՆԱ՛Ր - *տե՛ս* ՀԻՆԱ՛Ր:

ՀԸՆԱ՛ՐԱՎ - *տե՛ս* ՀԻՆԱ՛ՐԱՎ:

ՀԸՆԱՐԷԼ *(գրբ. հնարեմ)* - *նբ.* Ստեղծել, սարքել, հերյուրել: *Հայէրընը ըն հընարալ, հանցու թօրքէրը վանքը քանդին ուչ* (ՆԱԲ, 95):

ՀԸՆԱ՛ՐՈՌՈՒ - *տե՛ս* ՀԻՆԱ՛ՐՈՌՈՒ:

ՀԸՆԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՆԱՐԷԼ-ի:

ՀԸՆԱՐՔ - *տե՛ս* ՀԻՆԱ՛Ր:

ՀԸՆԱՐՔԱՎ - *տե՛ս* ՀԻՆԱ՛ՐԱՎ:

ՀԸՆԳԷՐ/ՀԸՆԳԷՐ *(գրբ. ընկեր)* - *գ.* 1. Մտերմությամբ՝ սիրով՝ գործունեությամբ՝ ընդհանուր հայացքներով մեկի հետ կապված մարդ, ընկեր: *Չօրս հընգ՛էր մինտէղ շարունակում ըն ա՛ւրանց հըղէն* (ՀԺՀ, V, 269): 2. Գործածվում է անունների կամ ազգանունների վրա՝ քաղաքացի նշանակությամբ: *Խօխան ասմա.- Հընգէ՛ր Մէլիք՛յան, իմ պապա ք՛ը՛էգ ծէն ա տաս* (Զ): 3. Ջույգ կազմող իրերի՝ հագնելիքի յուրաքանչյուր հատը: *Գ՛ուլբին հընգէրը կօրալ ա* (Բ): 4. *ած.* Հավասար, նման: *Մարը ասմա.- Ընդըրանք հարուստ ըն, մունք ընդըրանց հընգէր չընք* (Զ): 5. *տե՛ս* ԱՌԻՑ:

- Հընգէր անել - *տե՛ս* ՀԸՆԳԸՐՑ(Ը)ՆԷԼ:

- Հընգէր տը՛ռնալ - *տե՛ս* ՀԸՆԳԸՐԱՆԱԼ:

ՀԸՆԳԷՐ-ՀԸՐԸ՛ՎԱՆ - *գ. հվք.* Մտերիմներ, բարեկամներ: *Հընգէրհըրը՛վան տըսնաս ըն, զըրմընաս...* (ԼՂԲ, 316):

ՀԸՆԳԷՐ-ՀԸՐԸՎԸՆՕԹՈՒՆ - *գ.* Մտերմություն, բարեկամություն: *Հընգէր-հըրըվընութունա հը՛ռէ շօռ տըվօղ մարթ ա խաչօն* (Զ):

ՀԸՆԳԸՐԱՄԱՉ - *գ.* Ընկերական շրջապատ: *Էտ մարթը լօխ հընգըրմաչի ցըրէվ ա տամ...* (ՀԺՀ, VII, 127):

ՀԸՆԳԸՐԱՆԱ - *տե՛ս* ՀԸՆԳԸՐՎԷ:

ՀԸՆԳԸՐԱՆԱԼ *(գրբ. ընկերանամ)* - *չբ.* 1. Մեկի հետ ընկեր դառնալ, ընկերանալ: *Թա օգ՛ում ըս հընգըրանաս, հօրը յէ՛շի, տըղէն նըհը՛տ հըգըրա՛ց* (ԱԲԲ, 31): 2. *տե՛ս* Հըրակաշ ինիլ: 3. Ուղեկցել, ուղեկից դառնալ: *Հըղէննի մին մարթ ա մուտանում, հընգըրանում* (Զ): 4. Ընկեր ընկնել, հավասարվել, նմանվել: *Թաքավէրընն ա չա՛ղչին կարէլ չընն հընգըրանան. մինը միշտ հարուստ ա ինա՛ն, մինը՝ ք՛ա՛սիբ* (Զ):

ՀԸՆԳԸՐԱՍԷՐ - *ած.* Ընկեր սիրող, ընկերասեր: *Հընգըրասէր տըղա յա Արշակը* (Բ):

ՀԸՆԳԸՐԱՑՈՒ - *գ., ած.* Ընկեր եղող, նա, որ մեկի ընկերը պետք է դառնա: *Թաքավէրին տըղան օգում ա փօրցի, տը՛սնա՝ էտ հընգըրացուն հինչ մարթ ա* (Զ):

ՀԸՆԳԸՐՎԱՉԻ - *տե՛ս* ՀԸՆԳԸՐՎԷ:

ՀԸՆԳԸՐՎԱՐԻ - *տե՛ս* ՀԸՆԳԸՐՎԷ:

ՀԸՆԳԸՐՎԷ/ՀԸՆԳԸՐՕՎԻ - *մ.* 1. Ընկերովի, ընկերաբար, միասին: *Հընգըրվէ կօրծ ըն անում, ա՛ւրա՛ւր ջան ասում, ջան ըսկանում* (Զ): 2. *տե՛ս* ԿԷՍՈՒ (1):

ՀԸՆԳԸՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՀԸՆԳԸՐԱՆԱԼ-ի:

ՀԸՆԳԸՐՕԹՈՒՆ *(գրբ. ընկերութիւն)* - *գ.* 1. Ընկեր լինելը, ընկերական հարաբերություն, մտերմություն: *Հընգըրօթունը լ՛ավ պէն ա, թաք՛ի կարիս լ՛ավ հընգէր քըթէնաս* (Զ): 2. *տե՛ս* ՀԸՆԳԸՐԱՄԱՉ:

ՀԸՆԳԸՐՕՎԻ - *տե՛ս* ՀԸՆԳԸՐՎԷ:

ՀԸՆԳԱՆՈՒՑ - *տե՛ս* ՀԻՆԳԱՆՈՒՑ:

ՀԸՆԳԷՐ - *տե՛ս* ՀԸՆԳԷՐ:

ՀԸՆԳԷՔԱՆ - *տե՛ս* ՀԻՆԳԸ՛ՔԱՆ:

ՀԸՆԳԸՇԷԲԱԹ - *տե՛ս* ՀԻՆԳԸՇԷԲԱԹ:

ՀԸՆԳԸՊԱՏԷԳ՛ - *տե՛ս* ՀԻՆԳԸՊԱՏԷԳ՛:

ՀԸՆԳԸՏԱԿ - *տե՛ս* ՀԻՆԳԸՏԱԿ:

ՀԸՆԳԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԻՆԳԸՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՆԳԻԴԱ՛Մ - *տե՛ս* ՀԻՆԳԻԴԱ՛Մ:

ՀԸՆԳԻՍՏԱՏԸ՛Ղ - *տե՛ս* ՀԻՆԳԸՍՏԱՏԸ՛Ղ:

ՀԸՆԳԻՍՏԱՐԱՆ - *տե՛ս* ՀԻՆԳԸՍՏԱՐԱՆ:

ՀԸՆԳԻՍՏԱՔԱՐ - *տե՛ս* ՀԻՆԳԸՍՏԱՔԱՐ:

ՀԸՆԳԻՍՏԸՐԸՆԱԹՈՒՄԲ - *տե՛ս* ՀԻՆԳԸՍՏԸՐԸՆԱԹՈՒՄԲ:

ՀԸՆԳԻՍՏՕՐՀՆԷՔ՛ - *տե՛ս* ՀԻՆԳԸՍՏՕՐՀՆԷՔ՛:

ՀԸՆԴԱ՛ՎԱՐ/ՀԻՆԴԱ՛ՎԱՐ/ՀԱ՛ՆԴԱ՛ՎԱՐ - *գ.* 1. Հանդ ու անդաստան, դաշտ ու արտեր: *Սաղ օրը էն ա հընդըվարումը կօրծ ընէլիս* (Բ): 2. *փխբ.* Տունը՝ իր շրջակայքով: *Էտ շօանը հըյաթումը պէց ըն թօղնում, վէր հընդա՛վարը պահէ* (Զ):

- Հընդա՛վարը կօխէլ - Որեւէ մեկի տունը գնալ: *Էն օրը վէչ պիտար, վէր Բարիբախանց ախչիգ՛ը մէր հանդա՛վարը կօխից...* (ՋՏ, Ա, 167):

ՀԸՆԴԱ՛ՌԴ(Վ)ԻԼ/ՀԻՆԴԱ՛ՌԴ(Վ)ԻԼ *(գրբ. հանդարտիմ)* - *չբ.* 1. Խաղաղվել, հանգստանալ: *Ախըրը, վէր լօխ հինդիրդիս ա, Թէվանը շէնին ջիհիլնուն մօրանցը ծէն ա տաս...* (ԱԱ, 76): 2. Մեղմանալ, թուլանալ: *Քամէն հընդա՛ռդա՛լ ա* (Բ):

ՀԸՆԴԸԿԸՏԸՔ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հընդրկըտրզը ըղնէլ - Շատ շտապել, անհամբերություն ցուցաբերել: *Հինչ ը՞ս հընդրկըտրզը ընգալ, բաստան ա, լի՞, էք՛ուց կըճիրիս* (Բ):

ՀԸՆԴԸՎԷՐ/ՀԻՆԴԸՎԷՐ/ՀԸՆԴՎՈՒՐԹ - *ած., գ.* Հանդում աշխատող, հանդվոր: *Հընդրվէրնէն ըրգ՛օնէն վըստակած կ՛ամ ըն տօն* (Ձ):

ՀԸՆԴԸՐԱԾ-ՊԸՏԸՐԱԾ - *ած.* Շատ լավ, ընտիր: *Հընդրած-պըտրած տանն ա, տըղա յըս՝ քա՛ղէ* (Ձ):

ՀԸՆԴԸՐԴ-ՀԸՆԴԸՐԴ/ՀԻՆԴԸՐԴ-ՀԸՆԴԸՐԴ - *տե՛ս* ԿԱՄԱՆՑ-ԿԱՄԱՆՑ:

ՀԸՆԴԸՐԴՑ(Ը)ՆԷԼ/ՀԸՆԴԻՐԴՑ(Ը)-ՆԷԼ/ՀԻՆԴԸՐՑ(Ը)ՆԷԼ/ՀԻՆԴԻՐԴՑ(Ը)-ՆԷԼ *(գրբ. հանդարտեցուցանեմ)* - *նբ.* ՀԸՆԴԸՐԴԻԼ-ի:

ՀԸՆԴԸՐԴԹՈՒՆ/ՀԸՆԴԻՐԴԹՈՒՆ/ՀԻՆԴԸՐԴՕԹՈՒՆ/ՀԻՆԴԻՐԴՕԹՈՒՆ *(գրբ. հանդարտութիւն)* - *գ.* Հանդարտ լինելը, հանդարտություն: *Էտ հընդրդ՝ութունը թաքավէրին էլ իվիլ ա կըտրղցընում* (Ձ):

- Հընդրդ՝ութուն ըղնէլ - Խաղաղություն՝ հանգստություն տիրել: *Կընանուցը կըռը՛վը վէր պըրծընէս ա, բաստընէն հընդրդ՝ութուն ա ըղնէս* (Բ):

ՀԸՆԴԸՐԷԼ *(գրբ. ընտրեմ)* - *նբ.* Ջոկել, զատել, լավերն առանձնացնել: *Կընանչին հընդրում ա* (Բ):

- Հընդրէլ, հընդրվասկավ ըղնէլ - Շատ փնտրել, սակայն վատը գտնել: *Լօխ ըն օգ՛ում դաշանգ՛ ախճիգ՛ օգ՛ին, ամմա հընդրում ըն, հընդրվասկավ ըղնում* (Ձ):

ՀԸՆԴԸՐՎԱՍԿ - *գ.* 1. Ընդեղենը՝ կանաչեղենը եւն մաքրելուց հետո առանձնացված աղբը՝ մնացուկը: *Կընանչին հընդրում ա, հընդրվասկը ածում հըվէրէն առաշկը* (Բ): 2. *փխբ.* Որեւէ բանի վատը: *Խընձ՝ը քաղում ըն, հընդրվասկը տամ խուգ՛էրէն* (Ձ):

- Հընդրվասկավ ըղնէլ - Վատը ընտրել, մնացուկներին տիրանալ: *Օգ՛օղը ամմէն օր ք՛ինամ ար շէնին բաստընէն, հընդրվասկավ ըղնում* (Ձ):

ՀԸՆԴԸՐՎԷ - *ած.* Լավագույն, ջոկված, ընտիր: *Էտ կընէգ՛ը միշտ հընդրվէ ապրանք ար ծրխէս* (Ձ):

ՀԸՆԴՑԷ/ՀԻՆԴՑԷ - *տե՛ս* ՀԸՆԴԸՎԷՐ:

ՀԸՆԴԻՐԴՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԸՆԴԸՐԴՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՆԴԻՐԴ՝ԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸՆԴԸՐԴ՝ԹՈՒՆ:

ՀԸՆԴ՝ԻՇԿԱ - *տե՛ս* ՀԸ՝ՒՆԴ՝ԻՇԿԱ:

ՀԸՆԷ - *տե՛ս* ՀԱՆԷ:

ՀԸՆԷԾՈՒՏ/ՀԻՆԻԾՕՏ/ՀԱՆԻԾՈՒՏ/ՀԸՆԻԾՈՒՏ - *ած.* 1. Անիծ ընկած, վրան անիծ ունեցող: *Հընէ՛ծուտ կըլ՝ի՛խը քօր կըկ՛ա* (Բ): 2. *տե՛ս* ՎԻՉԸԼՈՒՏ (2):

ՀԸՆԷՐԱԿ[1] - *տե՛ս* ԸՐԷՆԱԿ:

ՀԸՆԷՐԱԿ[2] - *տե՛ս* ՆԷՐԱԿ:

ՀԸՆԷՔ[1] - *տե՛ս* ՀԱՆԷ:

ՀԸՆԸԳ՝ԱՏԸ՝Ղ - *տե՛ս* ԳԸՓԱՏԸ՝Ղ:

ՀԸՆԸԳ՝ՎԱՉԻ - *տե՛ս* ԳԸՓԸՎԱՐԻ:

ՀԸՆԸԳ՝ՎԱՐԻ - *տե՛ս* ԳԸՓԸՎԱՐԻ:

ՀԸՆԸԳ՝ՎԷ - *տե՛ս* ԳԸՓԸՎԱՐԻ:

ՀԸՆԸԾԿԼԻԼ/ՀԻՆԻԾԿԼԻԼ - *տե՛ս* ՀԸՆԸԾՕՏԷԼ:

ՀԸՆԸԾՕՏԷԼ/ՀԻՆԻԾՕՏԷԼ - *չբ.* Անիծ ընկնել, անիծով պատվել: *Կըլ՝ի՛խը հընըծկ՝ալ՝ալ ա* (Բ):

ՀԸՆԸՐՍԸՔ - *տե՛ս* ՀԻՆԸՐՍԸՔ:

ՀԸՆԸՐՏԸՂԱ - *գ.* Աներոջ որդի, աներձագ: *Միշին հընըրտըղան լ՛ավ տըղա յա* (Բ):

ՀԸՆԸՐՓԸ՝ՍԱ - *գ.* Աներ եւ փեսա: *Հընըրփը՛սա հաց ուտէյիս ըն ընո՛ւմ* (ՆԱԲ, III, 152):

ՀԸՆՁԱ՝ԿԱՊ/ՀԻՆՁԱ՝ԿԱՊ/ՀԱ՝ՒՆՁԱ՝-ԿԱՊ - *գ.* Խոտից՝ ծղոտից պատրաստած կապ՝ կեմ՝ խրձերը կապելու համար: *Հընձա՛կապ ա շինո՛ւմ, խոտէն խորթ-նէրը կըպոտում* (Ձ): 2. Հնձելիս անմիջապես խուրձ կապելը: *Հընձա՛կապը տիժէր կօրծ ա* (Ձ):

- Հընձա՛կապ անէլ - 1. Հնձածը խրձերով կապել: *Խոտը հընձո՛ւմ ըն, հընձա՛կապ անում* (Ձ): 2. Գործը արագ եւ մաքուր կատարել: *Էտ հարթը լ՛ավ հարթ ա ինո՛ւմ, հինչ կօրծ տանը ինո՛ւմ ա, հընձա՛կապ ա անում* (Ձ): 3. Միաժամանակ եւ ուտել, եւ գինի խմել: *Ղօնաղը տընատը՛ռնը նըհը՛տ նըստում ա, հընձա՛կապ անում* (Ձ):

ՀԸՆՁԱ՝Ն/ՀԻՆՁԱ՝Ն *(գրբ. հնձան)* - *գ.* 1. Այգիներում շինած հարմարանք՝ խաղողը ոտքերով ճմլելու եւ հյութը հանելու համար: *Առաչ ամմէն խաղվու բաղում էլ հընձա՛ն ա իլ՝ալ* (Բ): 2. Այգիներում շինած հյուղակ այգեպանի համար: *Բաղվանչին հընձա՛ն՝ն տո՛ւս ա կ՛աս, տըսնաս՝ խաղուն քաղած* (Ձ):

ՀԸՆՁԱ՝ՎԱ՝ՐՁ - *տե՛ս* ՀԸՆՁԱ՝ՎԱ՝ՐԶ:

ՀԸՆՁԱ՝ՎԱ՝ՐԶ/ՀԸՆՁԱ՝ՎԱ՝ՐԶ/ՀԻՆՁԱ՝-ՎԱ՝ՐԶ/ՀԻՆՁԱ՝ՎԱ՝ՐԶ/ՀԱ՝ՒՆՁԱ՝ՎԱ՝ՐԶ/ՀԱ՝ՒՆՁԱ՝ՎԱ՝ՐԶ - *գ.* Հնձելու վարձ: *Էրկու օր էլ հօնձ ըն անում, ո՛ւրանց հընձա՛վարձը յէր կա՛լ՝ած, առօք-փառօք կ՛ամ ըն շէնը* (ՆԼՂԺԲ, 97):

ՀԸՆՁԱ՝ՏԸ՝Ղ/ՀԻՆՁԱ՝ՏԸ՝Ղ/ՀԱ՝ՒՆՁԱ՝-ՏԸ՝Ղ - *գ.* Հնձելու տեղ, հնձելու արտ: *Ուռթանա ք՛ինամ ըն հինձա՛տը՛ղը, տը՛սնում՝ արտը նի կացած, էրած* (Ձ):

ՀԸՆՁԻԼ/ՀԻՆՁԻԼ *(գրբ. հնձեմ)* - *նբ.* 1. Հացաբույսերը՝ խոտը գերանդիով՝ մանգաղով քաղել՝ հարել: *Խոտը հընձո՛ւմ ըն, թայա տամ* (Բ): 2. *փխբ.* Ջանգվածորեն ոչնչացնել՝ կոտորել: *Ազարը շէնին հավէրը հընձից* (Բ):

ՀԸՆՁՎԷՐ/ՀԻՆՁՎԷՐ - *ած., գ.* Հունձ անող, հնձող (մարդ): *Հընձվէրը, ծառէն տակէն նըստած, մըծնըփըրթո՛ւշ ա օտում* (Ձ):

ՀԸՆՁՎԻԼ/ՀԻՆՁՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՆՁԻԼ-ի:

ՀԸՆՁՕ՝Ղ/ՀԻՆՁՕ՝Ղ - *տե՛ս* ՀԸՆՁՎԷՐ:

ՀԸՆՁՕ՝ՏԷԼ/ՀԻՆՁՕ՝ՏԷԼ/ՀԸՆՁՕ՝-ՏԻԼ/ՀԻՆՁՕ՝ՏԻԼ - *նբ.* Բոլորը հնձել: *Էրկու օրոմը հընձ՝ՕՏոում ըն, պըրծընում* (Ձ):

ՀԸՆՁՕ՝ՏԻԼ - *տե՛ս* ՀԸՆՁՕ՝ՏԷԼ:

ՀԸՆՑԱԾ - *տե՛ս* ԸՆՑԱԾ:

ՀԸՆՑԸՆԷԼ - *տե՛ս* ԸՆՑԸՆԷԼ:

ՀԸՆՑԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՆՑԸՑ(Ը)-ՆԷԼ:

ՀԸՆՑԿՈՒՆ - *ած.* Բազմերանգ, տարբեր գույներ ունեցող: *Աշունքը թօրնը յէշո՛ւմ ըս՝ հընցկուն բաղէր ա* (Բ):

ՀԸՆՑԿՈՒՆԷԼ - *չբ.* Տարբեր երանգներ ստանալ: *Միրհավէն թէփուռը ըրէվէն տակէն հընցկունում ա* (ՆԱԲ, III, 348):

ՀԸՆՑՆԷԼ - *տե՛ս* ԸՆՑԸՆԷԼ:

ՀԸՆՔԱՃ՝ՈՒՐ - *գ.* Հանքային ջուր: *Ք՛ալբա՛ջա՛ր կա լ՛ավ հընքաճ՝ուր* (Ձ):

ՀԸՆՔԱՏԱՐ - *գ.* Հանքերի սեփականատեր, հանքատեր: *Էտ մարթը էլ հընքատար ա ինո՛ւմ* (Ձ):

ՀԸՇԱՆԷԼ/ԸՇԱՆԷԼ - *նբ. տե՛ս* Հաշան անել:

ՀԸՇՎԱՐԿԷԼ - *նբ. տե՛ս* Հա՛շը՛էվ-հաշվարկ անել:

ՀԸՇՏԱԽՈՒՄ - *տե՛ս* ՀԻՇՏԱԽՈՒՄ:

ՀԸՇՏԱԿԷԹ - *տե՛ս* ՀԻՇՏԱԿԷԹ:

ՀԸՇՏԱՀՕՌ - *տե՛ս* ՀԻՇՏԱՀՕՌ:

ՀԸՇՏԱՆԱԼ - *տե՛ս* ՀԻՇՏԱՆԱԼ:

ՀԸՇՏԱՎԱՐ - *տե՛ս* ՀԻՇՏԱՎԱՐ:

ՀԸՇՏԸ՝Ղ - *տե՛ս* ԸՇՏԸ՝Ղ:

ՀԸՇՏԸՀԱ՝ՄԲՈ՝ՒՐ - *տե՛ս* ՀԻՇՏԸ-ՀԱ՝ՄԲՈ՝ՒՐ:

ՀԸՇՏԸՀԱ՝ՆԳԻ - *տե՛ս* ՀԻՇՏԸ-ՈՒՆԳԻ:

ՀԸՇՏԸՎՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԻՇՏԸՎ-Ց(Ը)ՆԷԼ:

ՀԸՇՏԸՑ(Ը)ՆԷԼ[1] - *տե՛ս* ՀԻՇՏԸՑ(Ը)-ՆԷԼ[1]:

ՀԸՇՏԸՑ(Ը)ՆԷԼ[2] - *տե՛ս* ՀԻՇՏԸՎ-Ց(Ը)ՆԷԼ:

ՀԸՇՏՕԹՈՒՆ[1] - *տե՛ս* ՀԻՇՏՕԹՈՒՆ[1]:

ՀԸՇՏՕԹՈՒՆ[2] - *տե՛ս* ՀԻՇՏՕ-ԹՈՒՆ[2]:

ՀԸՉԱԲԱԾ - *գ.* Հաստ կեղեւով եւ մեծ հատիկներով խաղողի տեսակ: *Հընչաբաշը էրկան կէնօղ խաղու վա* (Բ):

ՀԸՉԸՀԱՉԱ - *ած.* Երկու ճյուղի՝ մասի բաժանված (շատերի մասին): *Հ՝ըչըհաչա փանդէր ա կըտորում, տընգօտում* (Զ):

ՀԸՉԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԻՉԸՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՊԱՐԱՊ *(գրբ. պարապ)* - *ած.* 1. Պարապ, անգործ, որեւէ բանով չզբաղված: *Էս թըվումը հըպարապ մարթը կարէլ չի յօլլա ք՛ինի* (Բ): 2. Չզբաղեցրած, ազատ: *Մին հըպարապ օր Մէլիքը Պուղուն հըրցընում ա...* (ՆԱԲ, 133):

- Հըպըրապէ տալ - Պարապ մնալ, ոչ մի բանով չզբաղվել: *Հ՝ընձ անողը վէր հըպըրապէ տա, տանուզնը կըմընա* (Զ):

ՀԸՊԱՐԱՊ-Ս(ԸՊ)ԱՐԱՊ/ՊԱՐԱՊ-ՍԱՐԱՊ - *ած.* Բոլորովին պարապ՝ անգործ, անբան: *Հ՝ըպարապ-սարապ մարթիք՝ ըն, սաղ օրը էն ըն պատէն տակէն նըստստած, գ՝ուրանուց ընէլիս* (Բ):

- Հըպարապ-սըպարապ ման կ՝ալ/շօռ կ՝ալ - Անգործ թափառել, ոչ մի բանով չզբաղվել: *...Չըրու սօր պարապ-սարապ ման ի կ՝ամ...* (ՋՏ, Ա, 157):

- Հըպարապ-սըպարապ նըստել - Բոլորովին անգործ մնալ՝ նստել, անգործության մատնվել: *Ջըհիլնէն, հըպարապ-սըպարապ նըստած, կօրծ չի կա, թա անին* (Զ):

ՀԸՊԸՆԱՓԱՆԴ - *գ.* Գորգի ոստայնի կողքերի փայտերի արանքում հաստատված փայտի կտոր, որ սեղմում է դրանք: *Հ՝ըպընափանդը տանուս ա կ՝ամ, գ՝ապա կ՝օրծողը կըլ՝ախ չի ըղնում* (Զ):

ՀԸՊԸՆ-ՀԱՊԱՆՈՒՆ/ՀԱՊԱՆՈՒՆ-ՀԱՊԱՆՈՒՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հըպընհ՝ապանուն անէլ/ըղնէլ - 1. Ձու ածելու տեղ որոնել (հավերի մասին): *Հավէրը շատ ըն հըպընհ՝ապանուն անում, տը՛ղ չընը քըթէնում, թա ծանու ածին* (Բ): 2. *փխբ.* Շիվարել, այս ու այն կողմ վազել, ինչ անելը չիմանալ: *Ըստէղ, պէլի, վէչ ամը՛ռնը կա, վէր խալիքը հ՝ապանուն-հ՝ապանը ըղնին, դաչէք՝ փախչին, վէչ ծըմէռնը...* (ՋՏ, Բ, 9):

- Հըպընհ՝ապանը քընցիլ - Հալածել, անհանգստություն պատճառել: *Աղվէսը հըվէրէն հըպընհ՝ապանընը ա քընցալ* (Բ):

ՀԸՊԸՐԱՊԷԼ *(գրբ. պարապեմ)* - *չբ.* 1. Դադարել, դադար առնել: *Թօռը հըպըրապում չի, թա բուստընանէն պիհինք՝* (Բ): 2. Պարապ մնալ, որեւէ բանով չզբաղվել: *Հինչ ը՞ս հըպըրապալ, խէ կօրծ չը՞ս անում* (Բ): 3. Որեւէ բանով զբաղվել: *Սիրում չար ուրանն հընգէրունցը, ընդրա մըհար, վը՛ր ըստրա-ընդրա տօնը քընդիլավ ըն հըպըրապած* (ՀԺՀ, VI, 177):

ՀԸՊԸՐՊՕԹՈՒՆ *(գրբ. պարապութիւն)* - *գ.* Պարապ լինելը, պարապություն: *Ըշխընդօվուր մարթին հը՛տէ հըպըրըպութունան տիժէր պէն չի կա* (Բ):

ՀԸՋԸԹԱԿԱՆ - *տե՛ս* ՀԻՋԸԹԱԿԱՆ:

ՀԸՌԱԹԷՎ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հըռաթէվը ընդնէլ - Դեպի մայրամուտ թեքվել (արեգակի մասին): *Ըրիք՝ նակը վէր հըռաթէվը ընգավ, չօբանը վընխճընէն ըսքըսից սարան քընշիլը բիդի շէնը* (Զ):

ՀԸՌ - *տե՛ս* ՀԸ՝Ռ:

ՀԸՌԱԼ - *տե՛ս* ՀԸ՝ՌԱԼ:

ՀԸՌԱՇԱԾ - *գ.* 1. *տե՛ս* ԹԱՆԱՎ: 2. Եռացրած հեղուկ: *Հ՝ըռաշածը ածում ըն կըլխէն, ըսպանում* (Զ):

ՀԸՌԱԿ՝ԻՐ - *գ.* Հեռագիր: *Մին քանի օրանը յէտը թաքավէրէն անա հըռակ՝իր ըն ըստանում, վէր ախճիգ՝ը կ՝ամ ա...* (ՀԺՀ, V, 643):

- Հըռակ՝իր տալ - Հեռագրել: *Մարը հըռակ՝իր ա տուվալ, թա.- Ճէլլի յը՛կէք՝, ծէր հ՝ար ծանդը ա* (Զ):

ՀԸՌԱՆԱԼ *(գրբ. հեռանամ)* - *չբ.* 1. Հեռու գնալ, գտնված տեղից ավելի հեռուն փոխադրվել: *Վէր պալատան մին խիլլա՝ հըռանում ըն, ծիյէնուցան վէր ըն կ՝ամ, նըստում մին ըխպըրու կօխկէ* (ՆԱԲ, 46): 2. Մի տեղից դուրս գալ, թողնել-հեռանալ: *Խիլլա՝ վախտ ախպօրցը հարայ տալանը յէտը տը՛սավ՝ ծէն-ծ՝ուն չի կա. տու մէլ ասէլ ախպէրքը թաքուն հըռացալ ըն* (Զ): 3. Անջատվել, բաժանվել, ջոկվել: *Միհէնգ՝վա ջիհիլնէն լ՝ըհա փըսակվում ըն, հօրը տանան հըռանում* (Բ): 4. Մի բանից հրաժարվել: *Լ՝ավ դ՝ուլգ՝ար ա իլ՝ալ Սամսօնը, մըղ՝ափ՝ուն վէր դ՝ուլգ՝ուրթ՝ունա հըռացալ ա* (Բ):

ՀԸՌԱՆՑԷ - *տե՛ս* ՀԸՌՆԱՆՑԷ:

ՀԸՌԱՔԱՇ/ՀԸՌԸՔԱՇ - *մ.* 1. *տե՛ս* ՀԸՌՆԱՆՑԷ: 2. Դանդաղ կերպով, դանդաղորեն: *Շանշ՝ինկա բաջին հըռընքաշ ք՝իս ա տօն, տըսնաս՝ տըղան նըստած կ՝իր ա կըրթիս* (ՀԲ, 333):

- Հըռաքաշ անէլ/տալ - Ընթացքը դանդաղեցնել: *Ախպէրը ճընապար ա ընգընում, ըտրրա հէտան հըսնըմ, հըռաքաշ ըրած ք՝ինըմ* (ՀԺՀ, V, 110):

ՀԸՌԷ[1] - *տե՛ս* ՀԸ՝ՌԷ:

ՀԸՌԷ[2] - *տե՛ս* ՀԸՌՆԷ:

ՀԸՌԸԹԷՎԷԼ - *չբ. տե՛ս* Հըռաթէվը ընդնէլ:

ՀԸՌԸԿՕՊԱԼ - *ած.* Բռի, անտաշ, կոպիտ: *Էտ խանընը էլ շատ հըռընկօպալ մարթ ա ինում* (Զ):

ՀԸՌԸՀՕՌ - *տե՛ս* ՀՕՌ-ՀՕՌ:

ՀԸՌԸՄԱՌ(Կ)Ի - *տե՛ս* ՃԸԽԷՎԼԻ:

ՀԸՌԸՇԿՕՏԱԼ - *տե՛ս* ՊԸՐԿԸՇՏՕՏԱԼ:

ՀԸՌԸՇՆԻԼ - *չբ.* 1. Տաքությունից՝ ամաչելուց եւն դեմքը կարմրել, շիկնել: *Հ՝ըռընշնում ա, կըլ՝ախը քաշ քընցում, թա.- Նէրօղ կինիք...* (ԱԱռ, 68): 2. *փխբ.* Սկսել հասունանալ (բանջարեղենի եւ պտուղների մասին): *Խընձ՝ը լ՝ըհա վէր հըռընշնում ա, խօխէնք՝ը բընդէրան տօն չընկ՝ամ* (Բ):

ՀԸՌԸՑԱՆԱ/ՀԸՌՈՒ(Ն)ՑԱՆԱ/ՀՈՒՌՈՒ(Ն)ՑԱՆԱ - *տե՛ս* ՀԸՌՆԱՆՑԷ:

ՀԸՌԸՑ(Ը)ՆԷԼ[1] *(գրբ. հեռացուցանեմ)* - *նբ.* ՀԸՌԱՆԱԼ-ի:

ՀԸՌԸՑ(Ը)ՆԷԼ[2] - *նբ. տե՛ս* Հը՛ռ ածէլ:

ՀԸՌԸՔԱՇ - *տե՛ս* ՀԸՌԱՔԱՇ:

ՀԸՌՀԸՌ - *ած.* Բարձր եւ անախորժ ծիծաղող՝ հռհռացող: *Հ՝ըռհըռ մարթ ա Սանասարը* (Բ):

ՀԸՌՀԸՌԱԼ - *չբ.* Բարձր եւ անախորժ ծիծաղել, քոքռալ: *Հինչ ը՞ս հըռհըռամ, համօթ չի՞* (Բ):

ՀԸՌՀԸՌՕՆ - *գ.* Հռհռալը, հռհռալու ձայնը: *Կընգանը հըռհըռօնը մարթին կըտըղցընէս ա* (Զ):

ՀԸՌՀԸՌՕՑ - *տե՛ս* ՀԸՌՀԸՌՕՆ:

ՀԸՌՆԱԽՊԷՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱԽՊԷՐ:

ՀԸՌՆԱԽՕԱ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱԽՕԱ:

ՀԸՌՆԱՀ՝ԱՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՀ՝ԱՐ:

ՀԸՌՆԱՄԱՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՄԱՐ:

ՀԸՌՆԱՆՈՒՑ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՆՈՒՑ:

ՀԸՌՆԱՏԱՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՏԱՐ:

ՀԸՌՆԱՏՕՆ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՏՕՆ:

ՀԸՌՆԱՑՈՒ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՑՈՒ:

ՀԸՌՆԱՔԱՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՔԱՐ:

ՀԸՌՆԱՔՈՒՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՔՈՒՐ:

ՀԸՌՆԸԾԱՂԷԳ՝ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸԾԱՂԷԳ՝:

ՀԸՌՆԸՆՔԱՀԱՑ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆՔԱՀԱՑ:

ՀԸՌՆԸՆՔԱՎԷՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆՔԱՎԷՐ:

ՀԸՌՆԸՆՔԱՏԱՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆՔԱՏԱՐ:

ՀԸՌՆԸՆՔԱՏՕՆ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆՔԱՏՕՆ:

ՀԸՌՆԸՆՔԱՐ(ԱՐ) - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆՔԱՐ(ԱՐ):

ՀԸՌՆԸՍԿԷՍՈՒՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՍԿԷՍՈՒՐ:

ՀԸՌՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸՐԹՆՕԹՈՒՆ:

ՀԸՌՄԱՆ - *տե՛ս* ՀԸ՝ՌՄԱՆ:

ՀԸՌՈՒՑ - *տե՛ս* ՀԸ՝ՌՈՒՑ:

ՀԸՌՆԱՆՑ/ՀԸՐՆԱՆՑ - *մ.* Անցյալ տարվանից: *Հ՝ըռնանց ա ըտրրանց դ՝ուշմընօթունը* (Զ):

ՀԸՌՆԱՆՑԷ/ՀԸՌԱՆՑԷ - *մ.* 1. Հեռու տեղից: *Հ՝ըռնանցէ օշափը տէսնում ա, սըկսում ճըղճըղալը...* (ՆԱԲ, 24): 2. Կողմնակիորեն: *Հ՝ըռնանցէ ըսկացած ա ինում, վէր կընէգ՝ը էտ մարթին նըհէտ դօստ ա* (Զ):

- Հըռնանցէ յէշիլ - Սեփականին

ուրիշի աչքով նայել՝ քննադատաբար մոտենալ: *Մարթ ուրան կօրծէն հըռնանցէ բիդի յէշի* (Զ):

ՀԸՌՆԷ/ՀԸՌՆՈՒ/ՀԸՌԷ[2]/ՀԷՐՈՒ/ՀԸՌՆԷ *(գրբ. հերու)* - *մ.* Անցյալ տարի, անցյալ տարում: *Հըռնէ էս վախտը էն ա իլալ թօթը հըսած* (Բ):

ՀԸՌՌ - *ձ.* Արու էշին, ձիուն, խոյին, ցուլին եւն գրգռելու՝ սեռական ակտի մղելու բացականչություն: *Քանան լօք ա տամ յէր ինում կըվէն մաշկը, խօխէնքընն էլ կօխական ծէն ըն տամ՝ հը՛ռռ, հը՛ռռ* (Բ):

- Հըռռ անել - Արու կենդանուն գրգռել՝ սեռական ակտի մղել: *Հիշկան հըռ ըն անում, վը՛ռց էշը ծիյան մուտանում չի* (Զ):

ՀԸՌՈՒ(Ն)ՑԱՆԱ - *տե՛ս* ՀԸՌԸՑԱՆԱ:

ՀԸՌՕԹ(ՆԸ) - *տե՛ս* ՂԸՌՈՒԹ(ՆԸ):

ՀԸՌՕԹՈՒՆ *(գրբ. հեռաւորութիւն)* - *գ.* 1. Հեռավոր լինելը: *Հըռօթունէն դանդան կարում չի քինի բօստանը* (Բ): 2. Երկու առարկայի՝ կետի՝ վայրի միջեւ եղած տարածությունը: *Խըծ՛ըպէրթա հըռօթունը Հանդուրթա շատ ա* (Բ):

ՀԸՍ - *տե՛ս* ՔԸՍ:

ՀԸՍԱԾ - *ածական.* 1. Ոչ խակ, հասուն: *Հըսած տանձը ճէլլի կըփըթէ* (Բ): 2. Չափահաս, արբունքի հասած: *Հըսած ախճիգ՛ ա Նախշունը, մարթու տալի վախտըն ա* (Բ): 3. Ծերացած, ալեւոր: *Հըսած մարթ ա Սէյրան դայի, կարում չի տանան տուս կ՛ա* (Բ):

ՀԸՍԱԾ-ՓԸՍԱԾ - *տե՛ս* ՀԸՍԱԾ (2):

ՀԸՍԱՐԷԼ - *նբ. տե՛ս* Հասար քաշիլ:

ՀԸՍԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՍԱՐԷԼ-ի:

ՀԸՍԷ(Ք՝) - *տե՛ս* ՀԱՍԷ(Ք՝):

ՀԸՍԸԿԱՎԷՐ *(գրբ. հասակաւոր (չափահաս))* - *ածական.* Հասակն առած, հասակավոր: *Հըսըկավէր մարթ ա Սումբաթը, ամմա ուրան ջանիլ տըղու նըման ա պահում* (Բ):

ՀԸՍԸՆԷԼԻՔ՝ - *տե՛ս* ՀԸՍՆԷԼԻՔ՝:

ՀԸՍԸՎՀԱՍ/ՀԸՍՎԸՀԱՍ *(գրբ. հասուհաս)* - *ածական., մ.* 1. Հասնելու մոտ, հասնելու վրա, հասվեհաս: *... Ամմա հըսըվհաս էլ հանքա՛նթը հէրիք՛ չի անում, վը՛նն ա կէնում, վար նանա անէ...* (ԱԱ, 66): 2. *ածական. փխբ.* Չափահաս, արբունքի հասած: *Հըսըվհաս ըխճըկէրք ըն, մարթու տալի վախտըն ա* (Բ):

ՀԸՍԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԸՍՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՍԿԱՆԱԼ/ԸՍԿԱՆԱԼ *(գրբ. հասկանամ)* - *նբ.* Ըմբռնել, գլխի ընկնել, հասկանալ: *Հըդէննի կ՛ալիս, վէր ծըտէրը ծըլվըլըմ ըն, ինք՛ը հըսկանըմ ա, ծըծաղըմ...* (ՀԲ, 347):

ՀԸՍԿԱՑՄՈՒՆՔ - *գ.* Հասկանալու՝ ըմբռնելու կարողություն, հասկացողություն: *Թաքավէրը տը՛սնում ա, վէր ըտըրա հըսկացմունք չօնէ* (Զ):

ՀԸՍԿԱՑՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՍԿԱՆԱԼ-ի:

ՀԸՍԿԱՑՕՂ - *ածական.* Խելոք, ուշիմ, հասկացող: *Հըսկացօղ տըղա յա Մանվէլը* (Բ):

ՀԸՍԿԱՔԱՂ - *գ.* Հնձից հետո արտում թափթփված հասկերը հավաքելը: *Լ՛ըհա հըսկաքաղը ըսքըսում ըն, թօռը նի յա օնում* (Զ):

- Հըսկաքաղ անել - 1. Հնձից հետո արտում թափթփված հասկերը հավաքել: *Հըսկաքաղ ըն անում, խարարը լըցնում* (Բ): 2. Որեւէ բանի ընտիր մասերը հավաքել: *Նի յա մընում խաղվէն բաղը, հըսկաքաղ անում* (Զ):

ՀԸՍԿԸԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ՀԸՍԿԸՎԷՐՎԷԼ:

ՀԸՍԿԸՀԱՆԷԼ - *չբ.* Հասկերը նոր դուրս գալ: *...Յէր ա կէնում, տէսնում՝ փըսած, հըսկըհանած* (ՀԱԲ, 15, 42):

ՀԸՍԿԸՀԱՎԱՔ - *տե՛ս* ՀԸՍԿԱՔԱՂ:

ՀԸՍԿԸՎԷՐՎԷԼ/ՀԸՍԿԸՎԸ՛ՐՎԷԼ/ՀԸՍԿԸՎՕՐՎԷԼ/ՀԱՍԿԸՎԷԼ - *չբ.* Հասկեր բռնել՝ տալ, հասկավորվել: *Արտը վէր հըսկըվէրվում ա, ըրտատարը ըրխըյնանում ա* (Զ):

ՀԸՍԿԸՎԸ՛ՐՎԷԼ - *տե՛ս* ՀԸՍԿԸՎԷՐՎԷԼ:

ՀԸՍԿԸՎՕՐՎԷԼ - *տե՛ս* ՀԸՍԿԸՎԷՐՎԷԼ:

ՀԸՍԿԸՑ(Ը)ՆԷԼ/ԸՍԿԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. հասկացուցանեմ)* - *պբ.* ՀԸՍԿԱՆԱԼ-ի:

ՀԸՍ-ՀԸՍ - *տե՛ս* ՔԸՍ-ՔԸՍ:

ՀԸՍՆԷԼ *(գրբ. հասանեմ)* - *չբ.* 1. Գալ, ժամանել, տեղ հասնել, ներկայանալ: *Ըտըրանք հըսնէս ըն քաղաքը, ք՛իս հանլանվէրէն տօնը* (ՀԲ, 343): 2. Մեկի՝ մի բանի ետեւից գնալով՝ մոտենալ՝ հավասարվել նրան: *Խօխան վազ ա տամ, հըսնում հօրը* (Զ): 3. Տարածվելով ընկալելի դառնալ՝ ընկալվել: *Էս սանը հըսնում ա շէնը, շինանցէք՛ վըխէլան նըհը՛ստ նի յըն տը՛ռնում տընէրը* (Զ): 4. Զգվել՝ տարածվել մինչեւ: *Էտ կածանը հըսնում ա ք՛ոհնա շէնը* (Բ): 5. Պահպանվել՝ մնալ մինչեւ: *Էտ մանալը մէր ապուպապէրան ա հըսալ* (Բ): 6. Մի բանի անելու ժամանակը գալ: *Հոնին վախտը հըսալ ա* (Բ): 7. Հասունանալ: *Վը՛ոչը խընձորը հըսնըմ ա, ծառան պուք ըն տամ, պը՛ռում, տամ թաքավէրին* (ՀԺՀ, V, 199): 8. Չափահաս դառնալ: *Ախճիգ՛ը վէր հըսավ, բիդի ճէլ անիս, մարթու տաս* (Բ): 9. Բաժին ընկնել, վիճակվել: *Ամմէն մինին էրկու վը՛խճար ա հըսնում* (Զ): 10. Նպատակը՝ մտադրությունը իրականանալ: *Ըտի Ծիլկանը օգածէն հըսավ* (Զ): 11. Բավականացնել, հերիք անել: *Հանը ասմա.- Լօխճիտ հըսնական ա, կըռը՛վ մէ՛ք՛ անէլ* (Զ): 12. Վրա հասնել: *Լ՛ըհա էն վախտըն ա հըսնըմ, վէր հանը էն ա ինում մըռնէլու յըրա* (Բ): 13. Օգնության կանչ՝ օգնեցե՛ք նշանակությամբ (հրամայական եղանակը): *Մարը ծուվծուվաս ա.- Վա՛յ, հըսէ՛ք՛, խօխաս տարէն* (Զ):

ՀԸՍՆԷԼԱՎ - *տե՛ս* ՀԸՍԸՎՀԱՍ (1):

ՀԸՍՆԷԼԻՔ՝/ՀԸՍԸՆԷԼԻՔ՝ - *ածական., գ.* Ինչ որ մեկին հասնում է, հասանելիք: *Մարթը ուրան հըսնէլիք՛ ցօրէնը յօր ա ունէս, ղըրաղ կընաս* (Զ):

ՀԸՍՆԷԼ-ՓԸՍՆԷԼ - *տե՛ս* ՀԸՍՆԷԼ (8): *...Հանը ասըմ ա.- Մ բալա, էտ ա հըսալ-փըսալ ըս, հարկավէր ա ք՛ը՛զ փըսակած* (ՀԺՀ, V, 176):

ՀԸՍՍ - *ձ.* Բավականության բացականչություն: - *Հը՛սս, ուխա՛յ, վը՛տիտ մատա՛ղ,- ասում ա, պըրծնըմ, մին էլ մին լանվ վը՛տ քաշում, յէտ տէռնում տօն* (ՀԺՀ, V, 454):

ՀԸՍՎԸՀԱՍ - *տե՛ս* ՀԸՍԸՎՀԱՍ:

ՀԸՍՏԱՊԷԼ/ՀԸՍՏԱՏԷԼ *(գրբ. հաստատեմ (հաստատ դնել, կանգնել, որոշել եւն))* - *նբ.* Ճշտությունը՝ ստուգությունը վկայել: *Ծառան չուբանէն ըսրծնէն հըստադում ա* (Զ):

ՀԸՍՏԱՊՄՈՒՆՔ/ՀԸՍՏԱՏՄՈՒՆՔ - *գ.* Ճշտությունը՝ ստուգությունը վկայելը: *Վէզիրին հըստադմունքը թաքավէրին ըրխըյնըցընէս ա* (Զ):

ՀԸՍՏԱՊՎԷԼ/ՀԸՍՏԱՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՍՏԱՊԷԼ-ի:

ՀԸՍՏԱՆԱԼ *(գրբ. հաստանամ)* - *չբ.* 1. Հաստ դառնալ, հաստանալ: *Էտ հանին էրկու տըռնումը հըստանում ա, տը՛ռնում հաստ ծառ* (Զ): 2. *փխբ.* Գիրանալ: *Էշէր կան՝ սօր հըստացալ ըն, ուրանց թօվլին էլ հավան չընն...* (ՋՏ, Բ, 151):

ՀԸՍՏԱ՛ՆՊԷՄՆԸ - *ածական.* Անճոռնի մարմին ունեցող: *Հըստանդէմնը կընգանան զանիլաս տարած ա* (Բ):

ՀԸՍՏԱՎԷՋ - *ածական.* Հաստ վիզ ունեցող: *Նի յա մընէս, տըսնաս մին հըստավէզ օշափ կարավաթէն յըրա քօն իլանծ* (Զ):

ՀԸՍՏԱՎՈՒՆ - *տե՛ս* ՀԱՍՏ(ԸԼ)ԷԳ՝:

ՀԸՍՏԱՏԷԼ - *տե՛ս* ՀԸՍՏԱՊԷԼ:

ՀԸՍՏԱՏՄՈՒՆՔ - *տե՛ս* ՀԸՍՏԱՊՄՈՒՆՔ:

ՀԸՍՏԱՏՎԷԼ - *տե՛ս* ՀԸՍՏԱՊՎԷԼ:

ՀԸՍՏԱՓՕՐ - *ածական.* Հաստ՝ մեծ փոր ունեցող: *Յէրվանդը հըստափօր տըղամարթ ա* (Բ):

ՀԸՍՏԸԲՕՐԴ - *տե՛ս* ՀԸՍՏԸԿՈՒՊԷՏ:

ՀԸՍՏԸ(ԼԸ)ԳԱՆԱԼ - *չբ.* 1. Փոքր-ինչ հաստանալ: *Էտ շօշը մին ամսումը հըստը՛գացալ ա* (Բ): 2. *փխբ.* Փոքր-ինչ գիրանալ: *Շատ ա իլալ մանշվանծ, միհէնգ՛ պատառ հըստըլը՛գացալ ա* (Բ):

ՀԸՍՏԸԼԸԳԱՎՈՒՆ - *տե՛ս* ՀԱՍՏ(ԸԼ)ԷԳ:

ՀԸՍՏԸ(ԼԸ)ԳՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՀԸՍՏԸ(ԼԸ)ԳԱՆԱԼ-ի:

ՀԸՍՏԸԿԸԼՕԽ - *ած.* Անհասկացող, բթամիտ: *Մէլիքի՛ն էլ էրկու հըստըկըլօ՛խ նօ՛քա՛ր ա ինիս* (Ձ):

ՀԸՍՏԸԿՈՒՊԷՏ - *ած.* Հաստ եւ կոպիտ: *Հըստըկուպէտ գա՛նբա՛ յա* (Ձ):

ՀԸՍՏԸՊԷՐԱԿ - *տե՛ս* ՀԱՍՏ ՈՒ ՊԷՐԱԿ:

ՀԸՍՏԸՎԱՉԻ - *տե՛ս* ՀԱՍՏ(ԸԼ)ԷԳ:

ՀԸՍՏԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՀԸՍՏԱՆԱԼ-ի:

ՀԸՍՀԸՍՏԱՆԱԼ - *չբ.* Հաստանալ (շատերի մասին): *Ծառէրը հըստհըստացալ ըն* (Բ):

ՀԸՍՏՀԸՍՏՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՀԸՍՏՀԸՍՏԱՆԱԼ-ի:

ՀԸՍՏՕԹՈՒՆ/ՀԸՍՏՕԹՈ՛ՒՆ *(գրբ. հաստություն (գոյանալը, հաստատություն, ամրություն)* - *գ.* Առարկայի՝ մարմնի լայնական կտրվածքի մեծությունը, հաստություն: *Էտ ծառէն հըստօթունը էրկու մէտըր կինի* (Բ):

ՀԸՍՑ(Ը)ՆԷԼ/ՀԸՍԸՑ(Ը)ՆԷԼ/ՀՈՒՍՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. հասուցանեմ)* - 1. *նբ. եւ պբ.* ՀԸՍՆԷԼ-ի: *նբ.* 2. Կարողանալ տվյալ ժամանակում որեւէ բան անել: *Էլ էտ դաչաղը հըսցընում չի, թա մին պէն անէ...* (ՀԱԲ, 15, 128): 3. *փխբ.* Հարվածել, խփել: *Տըղան վէր մէհէտ հըսցընում ա, օշափը մը՛կնըվում ա* (Ձ):

ՀԸՎԱԿԱ՛ՕՂ - *գ.* Հավ գողացող, հավի գող: *Ըտի էլ այան գա՛ՒՂՒՄ չի, թա հու վա իլա՛լ հըվակա՛օղը* (Բ):

ՀԸՎԱՆԱԼ - *տե՛ս* ՀՈՒՎԱՆԱԼ:

ՀԸՎԱՆԷԼ - *նբ. տե՛ս* Հավան կէնալ:

ՀԸՎԱՊԱՀ - *գ., ած.* Հավ պահող, հավաբույծ: *Հըվապահը ըղվէսին էնքան թակում ա, վէր ըստակում ա* (Ձ):

ՀԸՎԱՊՈ՛ՒՆ - *գ.* 1. Հավերի բույն: *Նի յա մընէնէս հըվապո՛ւնը, տըսնաս հավէրը կա՛ուղացած* (Բ): 2. *փխբ.* Փոքր՝ խոճուկ տուն՝ բնակարան: *Էս հըվապո՛ՒՆՒՄը հունց ը՞ք ըպըրէս* (Բ):

ՀԸՎԱՍԱՐ - *տե՛ս* ՀԸՎԸՍԱՐ:

ՀԸՎԱՏԱԼ *(գրբ. հաւատամ)* - *չբ.* Իբրեւ ճշմարտություն ընդունել, հավատի համարել, հավատալ: *Էտ մարթը հըվատում չի, վէր կարօղ ա տի պէն ինի...* (ՀԱԲ, 15, 83):

ՀԸՎԱՐԱ - *տե՛ս* ԸՎԱՐԱ:

ՀԸՎԱՐԱԾ - *տե՛ս* ՀԸՎԱՊԱՀ:

ՀԸՎԱՔԷԼ/ՎԸՀԱՔԷԼ *(գրբ. հաւաքեմ)* - *նբ.* 1. Եղածը ժողովել՝ խմբել: *Հըվաքում ա, յօր օնում պիրում, հըրսանէք՝ անում, տի ապրում ըն* (ՀԱԲ, 15, 24): 2. Մի տեղ դարսել՝ դիզել՝ կուտակել: *Պըլըպուդին քարէր ա հըվըքէս, ըսկըսէս էտ քըրէրէն նըհէտ կօխլը-կօխլը անէլը...* (ԼՂԲ, 378): 3. Որեւէ բանի վրայից վերցնել՝ ժողովել: *Կըռանում ա, կաթուկը տափան հըվաքում, տանում տօն* (Ձ): 4. Կուտակել, ամբարել: *Ըստարէ բօլ-բօլ ցօրէն ընք հըվաքալ* (Բ): 5. Կարգի բերել, հարդարել: *Միշտ յէր ա կընաս, տօնը հըվըքէս, սըրփիս...* (ՀԺՀ, V, 594):

- Հըվաքած ա՛ալէրը թուրնան չի կէնալ - Մուրացկանությամբ հնարավոր չէ գոյատեւել:

ՀԸՎԱՔՎԷԼ/ՎԸՀԱՔՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՀԸՎԱՔԷԼ-ի:

ՀԸՎԱՔՕՌ - *տե՛ս* ՀԱՎԿՈՒՐ:

ՀԸՎԷԼՈՒԿ - *տե՛ս* ԸՎԻԼԻ՛ՒԿ:

ՀԸՎԷՐԱ - *ած.* Հեզասահ, մեղմ՝ հանդարտ ընթացող: *Հըվէրա կը՛ը՛տէր շատ կան Ղարաբաղ* (Բ):

ՀԸՎԸՋԱՀԱՆՔ - *տե՛ս* ՂՈՒՄԱՀԱՆՔ:

ՀԸՎԸՋԱՔԱՐ - *տե՛ս* ՂՈՒՄԱՔԱՐ:

ՀԸՎԸՋԽԱՌ(Ն)Է - *տե՛ս* ՂՈՒՄԸԽԱՌ(Ն)Ը:

ՀԸՎԸՋԽԱՌ(Ն)Ը - *տե՛ս* ՂՈՒՄԸԽԱՌ(Ն)Ը:

ՀԸՎԸԿԸՏԿՕՏԷ/ՀԸՎԸԿՏԸԿՕՏԷ/ՀԸՎԸԿՈՒՏԿՈՒՏ - *գ.* Մի տեսակ թուփ, որի պտուղներից ներկ էին ստանում: *Հըվըկըտկօտէն դաշա՛նգ՝ քօլ ա* (Բ):

ՀԸՎԸԿՏԸԿՕՏԷ - *տե՛ս* ՀԸՎԸԿԸՏԿՕՏԷ:

ՀԸՎԸԿՈՒՏԿՈՒՏ - *տե՛ս* ՀԸՎԸԿԸՏԿՕՏԷ:

ՀԸՎԸՊԱՀԷ - *տե՛ս* ՀԸՎԱՊԱՀ:

ՀԸՎԸՍԱՐ/ՀԸՎԱՍԱՐ/ՀԱՎԱՍԱՐ *(գրբ. հաւասար)* - *տե՛ս* ԲԸՐԸԲԱՐ:

ՀԸՎԸՍԱՐՎԷԼ *(գրբ. հաւասարիմ)* - *չբ.* Հավասար դառնալ: *Ծո՛ՒՆը կա՛ՒՏՒՄ ա, էտ քըրէրէն հըվըսարվում* (Ձ):

ՀԸՎԸՍԸՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. հաւասարեցուցանեմ)* - *նբ.* ՀԸՎԸՍԱՐՎԷԼ-ի:

ՀԸՎԸՍԸՐՕԹՈՒՆ *(գրբ. հաւասարութիւն)* - *գ.* Հավասար լինելը: *Հընգըրօթունը հըվըսըրօթուն ա սիրո՛ՒՄ* (Բ):

ՀԸՎԸՏԱԼԻ - *ած.* Հավատ ներշնչող, հավանական, հավատալի: *Ասում ա.- Ղա՛ՒԼԳա՛ՒՆ, հըվըտալի պէն չըս ասում, ըտի պէն ինիլ չի* (Ձ):

ՀԸՎԸՏԱՎԷՐ - *տե՛ս* ՀԸՎԸՏՕՎՈՒՐ:

ՀԸՎԸՏԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԸՎԸՏՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՎԸՏՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հըվըտմիշ անէլ - *տե՛ս* ՀԸՎԸՏՑ(Ը)ՆԷԼ: *...էտ տըղատ էտ ըխճըկանը հըվըտմիշ ա անում, սըկսում ըն ասէլ-խօսէլ* (ՀԱԲ, 15, 43):

ՀԸՎԸՏՑ(Ը)ՆԷԼ/ՀԸՎԸՏԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. հաւատացուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՀԸՎԱՏԱԼ-ի:

ՀԸՎԸՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԱՎԱՏ(Ք):

ՀԸՎԸՏՕՎՈՒՐ/ՀԸՎԸՏԱՎԷՐ *(գրբ. հաւատաւոր)* - *ած., գ.* 1. Որեւէ կրոնի հետեւող (անձ), հավատացյալ: *Հավատը հըվըտուվուրէն խա՛փիլ չի* (Ձ): 2. Որեւէ բանի հեշտությամբ՝ միամտորեն հավատացող: *Արշակը շատ ա հըվըտօվուր, լօխ խա՛փի՛ՒՄ ըն* (Բ):

ՀԸՎԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀՈՒՎԸՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՎԸՔԱՐԱՆ/ՎԸՀԸՔԱՐԱՆ - *գ.* Հավաքվելու տեղ, հավաքարան: *Ճուղուպուրը հըվաքում ըն, տանում հըվըքըրանումը կա՛ՒՏՒՄ* (Ձ):

ՀԸՎԸՔ-ՀԱՎԱՔ/ՀԸՎԸՔ-ՉԱՎԱՔ - *տե՛ս* ՀԸՎԸՔՏԸ՛ՂԱԿ:

ՀԸՎԸՔ-ՉԱՎԱՔ - *տե՛ս* ՀԸՎԸՔ-ՀԱՎԱՔ:

ՀԸՎԸՔՏԸ՛ՂԱԿ/ՎԸՀԸՔՏԸ՛ՂԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Հըվըքտը՛ղակ անէլ - Ժողովել, ի մի բերել, կարգի գցել: *...Ծէն ա տաս, թա.- Ղէ՛ ք՝ը՛ցէք՝, ք՝ը՛ցէք՝ ծէր իլա՛ծ-չիլա՛ծը հըվըքտը՛ղակ ըրէք՝* (ԱԱ, 76):

- Հըվըքտը՛ղակ ինիլ/տը՛ռնալ - Ժողովվել, ի մի գումարվել, կարգի գցվել: *Հիյվընէն նի յըն տը՛ռնում կա՛ումը, հըվըքտը՛ղակ ինի՛ՒՄ* (Բ):

ՀԸՎԸՔՕՏԷԼ/ՎԸՀԸՔՕՏԷԼ - *նբ.* Մեծ քանակությամբ կամ շատ տեղերից հավաքել: *Խօխէնք՝ը նի յըն տը՛ռնում բաղէրը, մին խըլլա՛ խընձո՛ր հըվըքօտում* (Բ):

ՀԸՎԸՔՕՏՎԷԼ/ՎԸՀԸՔՕՏՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՀԸՎԸՔՕՏԷԼ-ի: 2. *չբ.* Մի տեղ հավաքվել, ամբոխվել: *Ջիհիլնէն ամը՛ռնը հըվըքօտվում ըն էտ ըխպիրին կօխկէն, ք՝ը՛փ անում* (Ձ):

ՀԸՎՈՒՐ - *տե՛ս* ՀՈՒՎՈՒՐ[1]:

ՀԸՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀՈՒՎՕԹՈՒՆ:

ՀԸՏԱԿՕԽ - *ած.* Հատիկներով լեցուն: *Հըտակօխ հասկէր ա փըսալ ըստարէ* (Բ):

- Հըտակօխ ինիլ - Ջրաղացքարը՝ երկանքը հատիկների շատության պատճառով դժվար պտտվել: *Արկանքը հըտակօխ ա իլա՛լ, շօռ չի տամ* (Բ):

ՀԸՏԷ(Ք՝) - *տե՛ս* ՀԱՏԷ:

ՀԸՏԸԳ-ՀԱՏԷԳ - *մ.* Մեկիկ-մեկիկ, հատ-հատ: *Այան չօքում ա, էտ սիսը՛ռնը հըտըգ-հատէգ՝ լօխ վըհաքում* (Ձ):

ՀԸՏԸԿՈՒՏՈՒՐ *(գրբ. հատուկտուր)* - *ած.* 1. Կտոր-կտոր եղած, կոտրատված: *Էտ հըտըկուտուր կօլան թօղում ա ը՛տը՛ղ, ք՝ինամ* (Ձ): 2. *փխբ.* Անկապ, կցկտուր, կիսատ-պռատ: *Ըտըրա հըտը-*

կուտուր պառասխաննան թաքավէրը պէն չի կըլլօխ ըղնում (Ձ):

ՀԸՏԸԿՕՐՈՒՏ - *ած.* Հետքը կորած, հետակորույս: *Պառավը ասմա.- Մին հըտըկօրուստ տըղա օնիմ* (Ձ):

- Հըտըկօրուստ անէլ *(գրբ. հետակորոյս առնեմ)* - Հետքը կորցնել, անհետացնել: *Ըտըրան տանում ըն ծըմակը, հըտըկօրուստ անում* (Ձ):

- Հըտըկօրուստ ինիլ/տըէռնալ *(գրբ. հետակորոյս լինիմ)* - Հետքը կորչել, անհետանալ: *Շատ մարթ ա օգում էտ հըտըկօրուստ իլլած տըղէն քըթէնա* (Ձ):

ՀԸՏԸՊԸՏ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հըտըպըտ անէլ - Հետամտել, հետամուտ լինել, հալածել: *Էնքան հըտըպըտ ըրէն, խըէղճ կընէգը չէնան քօչից* (Բ):

ՀԸՏԸՏԷ - *գ.* Մի տեսակ թուփ, որ տալիս է սեւ գույնի մանր պտուղներ: - *Հըտըտէ, էծը օտէ, կըտըտէ* (Ձ):

ՀԸՏՆԱԾՕՂ - *գ.* 1.Կովը մի անգամ կթելուց հետո նորից կթելը: *Հըտնածօղը դընէն տուզնը կըթօղնէ* (Բ): 2. *փխբ.* Որեւէ բանի մնացորդ: *Խօրագը օտում ըն, հըտնածօղը տամ շանը* (Ձ):

ՀԸՏՐԸ-ՀԱՏՐԱ - *տե՛ս* ՀԱԹԱՐԱ(Ն)-ԲԱԹԱՐԱ(Ն):

ՀԸՐԱՁԱՌ - *տե՛ս* ՀԱՐԱՁԱՌ:

ՀԸՐԱՁԱՏ - *տե՛ս* ՀԱՐԱՁԱՌ:

ՀԸՐԱԹԱ - *գ.* Խաղատեսակ, երբ մութ ժամանակ իրար կանչում են եւ կանչվողը պետք է ճանաչի կանչողին: *Հըրաթան քըշէրըն ըն իլլալ խաղ ընէս* (Բ):

ՀԸՐԱԹԱԹ *(արաբ. harad (թիկնոսկրի ցավ)* - *գ.* 1. Մարդու կամ կենդանիների թիակների թաթաձեւ մասը: *Գուլլան կէնում ա հըրըթաթան* (Ձ): 2. *տե՛ս* ԿՈՒՌ(Ն)ԱՏԱԿ: ...*Հարթանը շօրէրը կէնում ա, ղամանը տինում հըրըթաթումը, քունում* (ԱԱ, 50):

ՀԸՐԱԺԱՐՎԷԼ *(գրբ. հրաժարեմ)* - *չբ.* Մի բանից հետ կանգնել, մերժել, ուրանալ: *Էտ մարթը տամ չի, հըրաժարվում ա* (ՀԺՀ, V, 456):

ՀԸՐԱԽՊԷՐ - *տե՛ս* ՂՕՐՓԷՐ:

ՀԸՐԱԿԱԾ *(գրբ. հարակաշ (ընկեր, գործակից)* - *ած., գ.* Վարուցանքի կամ այլ բանի կիսովի ընկեր, կիսո

ՀԻՐԷՎԱՆ *(պրս. hadavan)* - *գ., ած.* 1. Դրացի, դրկից: *Հրրվանանէրէն տընէրը քրթէնում ա, ուրանց տօնը քրթէնում չի* (ՀԱԲ, 15, 49): 2. *ած.* Մոտակա, մոտ գտնվող: *Մին օր էլ հրրէվան շէնան մին մարթ ա կամ տահանց տօն* (Ձ):

- Հրրվանէն հավը հրրվանէն աշկէն ղազ կրրվա - Ուրիշի ունեցվածքը միշտ շատ է թվում:

- Հրրվանէն վրէխճարը կիուլը տարավ, հրրէվանը ուրանէն յրրա սայաղ կացավ - Մարդ ուրիշի հետ տեղի ունեցածից է դաս առնում:

ՀԸՐԸԿԸՇՎԷ - *տե՛ս* ՀԸՐԿԸՇՎԷ:

ՀԸՐԸԿԸՇՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸՐԿԸՇՕԹՈՒՆ:

ՀԸՐԸՀԱՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Հրրիհաս ինիլ - *տե՛ս* Հային կանլ:

ՀԸՐԸՂԱԾ - *տե՛ս* ՀԸՐՈՂԱԾ:

ՀԸՐԸՄԱՆՔԷԼ - *տե՛ս* ԸՐԸՄԱԿԷԼ:

ՀԸՐԸՄԱՆՔԷՆ - *տե՛ս* ԸՐԸՄԱԿԷՆ:

ՀԸՐԸՄԱՔԷԼ - *տե՛ս* ԸՐԸՄԱԿԷԼ:

ՀԸՐԸՄԱՔԷՆ - *տե՛ս* ԸՐԸՄԱԿԷՆ:

ՀԸՐԸՄ(Ց)ԸՆԷԼ - *նբ.* ՀԸՐԱՄԷԼ-ի:

ՀԸՐԸՄՕԹՈՒՆ - *գ.* 1. Հարամ լինելը, հարամություն: *Թօռը նի կալանվ, քրէփը հարամ տրէռավ, էտ հրրըմօթունը մինչրէվ միհէնգ մըննաս ընգընէս չի* (Բ): 2. Հարամ արարք, խարդախություն: *Հրրըմօթունավ կարէլ չըս անգուճըտ դինջ ապրրիս* (Ձ):

ՀԸՐԸՆՂԱՐՈՒՆ - *ած.* Գեղեցիկ, արտասովոր: *Հրրընղարուն ախճիգ ա մէր Նախշունը* (Բ):

ՀԸՐԸՇԿՕՏԱԼ - *տե՛ս* ՊԸՐԿԸՇՏՕՏԱԼ:

ՀԸՐԸՍՏԱՆԱԼ - *տե՛ս* ՀԸՐՈՒՍՏԱՆԱԼ:

ՀԸՐԸՍՏՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՀԸՐՈՒՍՏՑ(Ը)ՆԷԼ:

ՀԸՐԸՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՀԸՐՈՒՍՏՕԹՈՒՆ:

ՀԸՐԸՎԸՆԱՓԱՑ/ՀԻՐԸՎԸՆԱՓԱՑ - *գ.* Տանը պատրաստված կերակրից հարեւաններին ուղարկվող բաժին: *Այան հիբը կուրկուտ ար իփհում, հրրըվընափայը դարկում ար* (Բ):

ՀԸՐԸՎԸՆՄԱՉԻ/ՀԻՐԸՎԸՆՄԱՉԻ - *մ.* Հարեւանությունում, հարեւանների մեջ: *Հիրրվընմաչի լավ պադէվ օնէ Փարամազը* (Բ):

ՀԸՐԸՎԸՆՊԷԺԻՆ/ՀԻՐԸՎԸՆՊԷԺԻՆ - *տե՛ս* ՀԸՐԸՎԸՆԱՓԱՑ:

ՀԸՐԸՎԸՆՎԱՉԻ/ՀԻՐԸՎԸՆՎԱՉԻ - *տե՛ս* ՀԸՐԸՎԸՆՎԱՐԻ:

ՀԸՐԸՎԸՆՎԱՐԻ/ՀԻՐԸՎԸՆՎԱՐԻ - *մ.* Իբրեւ հարեւան, հարեւանություն անելով, հարեւանաբար: *Ըտի հրրըվընվարի ապրրում ըն* (Ձ):

ՀԸՐԸՎԸՆՕԹՈՒՆ/ՀԻՐԸՎԸՆՕԹՈՒՆ - *գ.* Հարեւան լինելը, դրացիություն: *Հիրրվընօթուն կա, վէր ըխպրրթունա լավ ա* (Բ):

- Հրրըվընօթուն անէլ - Հարեւանական հարաբերություններ պահպանել, հարեւանների հետ գնալ-գալ: *Ամմէն մարթ չի կարում հիրրվընօթուն անէ* (Բ):

ՀԸՐԹԱԾՕՐ - *գ.* Տեղ-տեղ հարթ, տեղ-տեղ խորդուբորդ տեղանք: *Էտ հրրթըծօրումը լավ սիսրէռ ա տրէռնում* (Ձ):

ՀԸՐԹԸՓԸՐԹ - *տե՛ս* ՀԸՐԲԸՋՕՐԲԱ:

ՀԸՐԹՆԱԽՊԷՐ/ՀԸՐՀՆԱԽՊԷՐ *(գրբ. հարսնեղբայր)* - *գ.* Հարսի եղբայրը: *Հրրթնախպէրը դիրխօր նըստած ար* (Ձ):

ՀԸՐԹՆԱԽՕՍ/ՀԸՐՀՆԱԽՕՍ - *տե՛ս* ԽԸՆԸՄԱԽՕՍ:

ՀԸՐԹՆԱՀԱՆՐ/ՀԸՐՀՆԱՀԱՆՐ - *գ.* Հարսի հայրը: *Հրրթնահանը մըղակը կապում ա, թօղում չի՝ հարթնը տանան տանս օնին* (Ձ):

ՀԸՐԹՆԱՄԱՐ/ՀԸՐՀՆԱՄԱՐ - *գ.* Հարսի մայրը: *Հրրթնամարը հա լանց ար ինում* (Բ):

ՀԸՐԹՆԱՆՈՒՑ/ՀԸՐՀՆԱՆՈՒՑ/ՀԸՐՍԱՆՈՒՑ - *գ.* Կանացի գլխազարդ: *Հունց ա պըտահում՝ էտ կընէգը հրրթնանուցը կուրցընում ա* (Ձ):

ՀԸՐԹՆԱՏԱՐ/ՀԸՐՀՆԱՏԱՐ - *գ.* Հարս՝ հարսներ ունեցող: *Հրրթնատար կընէգ ա Սիրանը* (Բ):

ՀԸՐԹՆԱՏՕՆ/ՀԸՐՀՆԱՏՕՆ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆՔԱՏՕՆ:

ՀԸՐԹՆԱՑՈՒ/ՀԸՐՀՆԱՑՈՒ/ՀԸՐՍՆԱՑՈՒ *(գրբ. հարսնացու)* - *գ.* 1. Հարս դառնալու հասակին հասած աղջիկ, հասած աղջիկ: *Շէնը էն ա հրրթնըցուվավ լիգը, Մինասէն տըղան բաշիր չի անում, թա մինին օգի* (Բ): 2. Նշանադրված աղջիկ՝ փեսայի եւ նրա ազգականների նկատմամբ: *...Իրանա խանը ծէն ա տուվալ, թա.- Հրռհնըցուվէտ նըհրէտ ըռըչի քըշէրը յրէս բէդը քօն ինիմ* (ԱԱ, 20):

ՀԸՐԹՆԱՔԱՐ/ՀԸՐՀՆԱՔԱՐ/ՀԸՐՍՆԱՔԱՐ - *գ.* Թագավորական պալատի բակում դրված մեծ քար, որի վրա նստում էին թագավորի աղջկան հարսնախոսության գնացածները եւ սպասում թագավորի ընդունելությանը: *Էն մին օրը էտ կընէգը էլիա քրընըմ ա թաքավէրին դրրբըզին հրրսնընքարին նըստըմ* (ՀԺՀ, V, 51):

ՀԸՐԹՆԱՔՈՒՐ/ՀԸՐՀՆԱՔՈՒՐ - *գ.* 1. Հարսի քույրը: *Հրրթնաքուրը հարթնանը անա դաշանգ ա ինում* (Ձ): 2. Հարսանիքի ժամանակ հարսին միշտ ընկերակցող մտերիմ աղջիկ: *Հրրսընքավը հրրթնաքուրը հարթնանը մըրաքվէրը ախճիգընը ա իլալ* (Բ):

ՀԸՐԹՆԸԾԱՂԷԳ/ՀԸՐՀՆԸԾԱՂԷԳ - *գ.* Հարսնածաղիկ, վայրի խաշխաշ: *Մէր արտէրը լիգը հրրթնընծաղէգ ա* (Բ):

ՀԸՐԹՆԸՆՔԱՀԱՑ/ՀԸՐՀՆԸՆՔԱՀԱՑ/ՀԸՐՍԸՆՔԱՀԱՑ - *գ.* Հարսանիքի ժամանակ մատուցվող ուտելիք: *Հրրթնընքահացը բիդի սըրտանց օտիս* (Բ):

ՀԸՐԹՆԸՆՔԱՎԷՐ/ՀԸՐՀՆԸՆՔԱՎԷՐ/ՀԸՐՍԸՆՔԱՎԷՐ *(գրբ. հարսնաւոր)* - *գ.* Հարսանիքին մասնակցող, հարսանիքի հյուր: *Հրրսընքավէրնէն հրրփոտում ըն, փըռնում պէլուն թակում* (Ձ):

ՀԸՐԹՆԸՆՔԱՏԱՐ/ՀԸՐՀՆԸՆՔԱՏԱՐ/ՀԸՐՍԸՆՔԱՏԱՐ - *գ.* Հարսանիքի տերը: *Էս հրրթնընքատէրնընն էլ օխտը ախճիգ ա ընում, հանլա ըրչինակընը ա ընում փըսըկվէյիս* (ՆԱԲ, 63):

ՀԸՐԹՆԸՆՔԱՏՕՆ/ՀԸՐՀՆԸՆՔԱՏՕՆ/ՀԸՐՍԸՆՔԱՏՕՆ - *գ.* 1. Այն տունը, որտեղ կատարվում է հարսանիքը: *Հրրթնընքատանը տրէղ չի ինում, էնքան մարթ ա ինում յրէկած* (Ձ): 2. *փխբ.* Աղմկոտ՝ ուրախանալու անկարգ աղմուկ-աղաղակով լի տեղ: *Նախագան ասմա.- Սո՛ւս ըրէք, ըստրէղ հօ հրրթնընքատօն չի՞* (Ձ):

ՀԸՐԹՆԸՆՔԱՐ(ԱՐ)/ՀԸՐՀՆԸՆՔԱՐ(ԱՐ)/ՀԸՐՍԸՆՔԱՐԱՐ(ԱՐ) - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆՔԱՎԷՐ:

ՀԸՐԹՆԸՍԿԷՍՈՒՐ/ՀԸՐՀՆԸՍԿԷՍՈՒՐ - *գ.* Հարս եւ կեսուր: *...Մրհրէտէ հրրթնընսկէսուր ըտրդավ ընցնէլիս հարթնը ըսկէսվօրը խէխտում ա, վէր քրցում, քինում* (ԱԱ, 46):

ՀԸՐԹՆՕԹՈՒՆ/ՀԸՐՀՆՕԹՈՒՆ *(գրբ. հարսնութիւն)* - *գ.* 1. Հարս լինելը, հարսնություն: *Հրրթնօթունը ամմէն կընգա պէն չի* (Բ): 2. *փխբ.* Համեստություն, հեզություն: *Տընըշինիտ կընէգը ըսկի հրրթնօթուն չօնէ* (Բ):

- Հրրթնօթուն անէլ - 1. Որպես հարս ծառայել: *Մէլիքին ախճիգը լավ հրրթնօթուն ա անում Դօրունց տանը* (Բ): 2. Համեստ՝ հեզ լինել, մեկին հնազանդվել: *Շինանցէք նախագէն քըշտէն հրրթնօթուն ըն անում* (Ձ):

ՀԸՐԻՇՏ(Ը)ՐԱԿ/ՀԻՐԻՇՏ(Ը)ՐԱԿ/ՀԸՐԷՇՏԱԿ *(գրբ. հրեշտակ)* - *գ.* 1. Գերբնական արարած՝ Աստծու պատգամաբերը, հոգեառ հրեշտակ: *Հրրիշտրակը ըստրրանա յէտը թէվէրը թրփրհարից, թա ծըլկէ, յէրգինք պըցըրանա, մէր Թունի դային փէշկան փըռնից...* (ՀԺՀ, VI, 179): 2. *փխբ.* Շատ տգեղ՝ այլանդակ

անձ: *Էտ հըրիշտըրակը հինչ ա՞, վէր նըհը՛տը փըսակվալ ըս* (Բ):

ՀԸՐԻՇՏ(Ը)ՐԸԿԱԿՕԽ/ՀԻՐԻՇՏ(Ը)-ՐԸԿԱԿՕԽ - *ած.* Հոգեառ հրեշտակի սարսափից մեռած: *Էտ հըրիշտըրը-կակօխ մարթին տանում ըն էտ ծառէն տակէն թաղում* (Ձ):

- Հըրիշտըրըկակօխ ինիլ/տը՛ռնալ - Հոգեառ հրեշտակի սարսափից մեռնել: *Առաչ շատ մարթ ա իլա՛լ հըրիշտըրը-կակօխ ինիլիս* (Բ):

ՀԸՐԿԷՎՈՒՐ - *տե՛ս* ՀԸՐԳԷՎՈՒՐ:

ՀԸՐԿԸՇՎԷ/ՀԸՐԸԿԸՇՎԷ - *տե՛ս* ԿԷ-ՍՈՒ (1): *Հ՞ւսո՞ւսը ա Ա՛լին հըրկըշվէ ցօ-րէն ըն վարում, հընձո՞ւմ...* (ԱԱ, 16):

ՀԸՐԿԸՇՕԹՈՒԽ/ՀԸՐԸԿԸՇՕԹՈՒԽ - *գ.* Հարակաշ՝ կիսարար լինելը: *Հըրկըշօ-թունը վէրչումը կըռը՛վ ա տը՛ռնում* (Ձ):

- Հըրկըշօթուն անել - Կիսովի՝ ծախ-սը եւ արդյունքը կես անելու պայմանով իրար հետ գործ ձեռնարկել: *Հարուս-տըն ա ք՛ա՞սիբը կարէ չըն հըրկըշօթուն անին* (Բ):

ՀԸՐՀԱՐԷԼ - *տե՛ս* ՀԸՐՄԸՇՏԷԼ:

ՀԸՐՀԸՐՕՑ - *տե՛ս* ՀԸՐՄԸՇՏՕՑ:

ՀԸՐՂԱԾ/ՀԸՐԸՂԱԾ - *ած.* 1. Վաղա-հաս, սովորական ժամանակից շուտ հասնող: *Ամմէն մայիս ամսում Հէղուշ աքէրը հըրղաշ գ՛ո՞ւլա՛ս ա ծախում* (Բ): 2. Վաղ հասունացած, շուտ ծնված եւ մեծացած: *Պիրում ա մին հըրղաշ կ՛առնը մօրթում դունաղէն վը՛ննանը տակէն* (Ձ):

ՀԸՐՄԱՐԱՆՔ *(գրբ. յարմարանք)* - *գ.* Սարք՝ կահավորանք եւն, որի օգնու-թյամբ կամ միջոցով որեւէ բան է ար-վում: *Մին հըրմարանք չի կա, թա վընանամանըս տինիմ յըրան, մէխիմ* (Բ):

ՀԸՐՄԱՐՎԷԼ - *չբ.* Համակերպվել, հարմարվել: *Թա՛զզա՛ հարթը մին թա՛հ-ր՛ավ ըտըրանց տանը հըրմարվում ա* (Ձ):

ՀԸՐՄԸՇՏԷԼ/ՀԻՐՄԻՇՏԻԼ - *նբ.* Հրհրել, բոթբոթել, հրմշտել: *Կ՛ամ ա, տը՛սնում՝ իրը՛ք մարթ ըտը՛ղ ո՞ւրո՞ւր հըրմըշտում ըն* (Ձ):

ՀԸՐՄԸՇՏՕՑ/ՀԻՐՄԻՇՏՕՑ - *գ.* Հրհրելը, բոթբոթելը, հրմշտելը: *Ըտը-րանց հըրմըշտօցը վէր տը՛սնում ա, մուտանում ա* (Ձ):

ՀԸՐՆԱՆՑ - *տե՛ս* ՀԸՌՆԱՆՑ:

ՀԸՐՆԷ - *տե՛ս* ՀԸՌՆԷ:

ՀԸՐՍԱՆԷՔ - *տե՛ս* ՀԸՐՍԱՆԷՔ՝:

ՀԸՐՍԱՆԷՔ՝/ՀԸՐՍԱՆԷՔ/ՀԸՐՍԱ-ՆԻՔ՝/ՀԸՐՍԱՆԻՔ *(գրբ. հարսանիք)* - *գ.* 1. Ամուսնության հանդես, հարսանիք: *Հըրսընքէն վախտը քաչալը տը՛սնում ա, վէր թաքավէրին տըղան շատ դիրիսօր ա* (Ձ): 2. *փխբ.* Մեծ խնջույք՝ ուրախություն: *Թաքավէրին պըլատումը ամմէն օր հըրսանէք՝ ա ինո՞ւմ* (Ձ):

- Հըրսանէք՝ անել - Հարսանեկան հանդեսով պսակել, հարսանիք կազմա-կերպել: *Օխտը օր, օխտը քը՛շէր հըրսա-նէք՝ ըն անում, թաքավը՛ր-էն տըղէն ան Թընխկը՛ք-էչին փըսակում* (ՆԼՂԺԲ, 48):

- Հըրսանէք՝ը կըտօրըտ կըտըրալ՞ - Ասում են շտապողին. ինչո՞ւ ես շտա-պում, շտապելու կարիք չկա:

- Հըրսանէք՝ը օտել - Մեկի հարսա-նիքի խնջույքին ներկա լինել, հարսանի-քի սեղանը վայելել: *Նօ՛ք՛ա՞նէն էլ ըն թա-քավէրին տըղէն հըրսանէք՝ը օտում* (Ձ):

- Հըրսանէք՝ը փըռնել - Հարսանիք սկսել: *...էն ա հըրսանիքը փըռնած, վէչ-խարը մօրթած, ամմա ախճիգ՛ը համօզ չի՛* (ՀԺՀ, V, 327):

- Հըրսընքա յը՛ռ - Հանգիստ՝ ազատ ժամանակ: *Մին հըրսընքա յը՛ռ վախտ հըվաքվում ըն, ախպո՞ւրը շինո՞ւմ* (Ձ):

- Հըրսընքա յը՛ռ նըղարա - Ասում են այն ժամանակ, երբ ինչ-որ բան ուշա-ցած է կատարվում, երբ դրա կարիքն այլեւս չի զգացվում:

- Հըրսընքում տըռած հարթը - Խայ-տառակված անձ: *Ախսախկալնէն պու-ճուր ախպօրը լաղ ըն անում, շինո՞ւմ հըրսընքում տըռած հարս* (ՀԺՀ, VI, 214):

- Հըրսընքու շիրը՛փ/քըթ՝ օլ - 1. *տե՛ս* Կօտըրած քըթ՝ օլ (ԿՕՏԸՐԷԼ-ի տակ): 2. Բոլորին օգնող, անկողմնակալ: *Ջամանը հըրսընքու շիրը՛փ ա* (Բ):

ՀԸՐՍԱՆԻՔ - *տե՛ս* ՀԸՐՍԱՆԷՔ՝:

ՀԸՐՍԱՆԻՔ՝ - *տե՛ս* ՀԸՐՍԱՆԷՔ՝:

ՀԸՐՍԱՆՈՒՑ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՆՈՒՑ:

ՀԸՐՍԸՆՔԱՀԱՑ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆ-ՔԱՀԱՑ:

ՀԸՐՍԸՆՔԱՎԷՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆ-ՔԱՎԷՐ:

ՀԸՐՍԸՆՔԱՏԱՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆ-ՔԱՏԱՐ:

ՀԸՐՍԸՆՔԱՏՕՆ - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆ-ՔԱՏՕՆ:

ՀԸՐՍԸՆՔԱՐ(ԱՐ) - *տե՛ս* ՀԸՐԹՆԸՆ-ՔԱՐ(ԱՐ):

ՀԸՐՍՆԱՑՈՒ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՑՈՒ:

ՀԸՐՍՆԱՔԱՐ - *տե՛ս* ՀԸՐԹՆԱՔԱՐ:

ՀԸՐՍՕ՞ՏԷԼ/ՀԻՐՍՕ՞ՏԷԼ - *տե՛ս* Կ՛Ը-ՋԱ՞ՋԻԼ:

ՀԸՐՍՕ՞ՏՎԷԼ/ՀԻՐՍՕ՞ՏՎԷԼ - *տե՛ս* Կ՛ԸՋԱ՞ՋԻԼ:

ՀԸՐՑԱԿՕԽ - Գործածվում է կա-պակցությունների մեջ:

- Հըրցակօխ անել - Հարցերի տարա-փով շփոթեցնել՝ շշմեցնել: *Էնքան հըր-ցակօխ ըրավ, լափ ինձ նը՛ղը ածից* (Բ):

- Հըրցակօխ ինիլ/տը՛ռնալ - Հարցե-րի տարափից շփոթվել՝ շշմել: *Ըտըրա ճա՞նգ՛ը ըղնօղը հըրցակօխ կինի* (Բ):

ՀԸՐՑԸՆԷԼ/ՀԸՐՑՆԷԼ *(գրբ. հարցա-նեմ)* - *նբ.* Մի բան իմանալու համար մեկին հարց ուղղել, հարցնել: *Թափէղը պըտահած մարթան հըրցնում ա, թա իրէքան վէրավը ք՛ընի* (ՆԱԲ, 39):

ՀԸՐՑԸՊԱՐՕՎ - Գործածվում է կա-պակցության մեջ:

- Հըրցըպարօվ անել - Ողջունել, որ-պիսությունը հարցնել: *Նա էլ հըրցըպա-ր՛օվ ընէլանը յէտը ասից.- Խա՛չան, նը-հախ ըս յէկալ...* (ՋՏ, Բ, 91):

ՀԸՐՑԸՓՕՐՑ *(գրբ. հարցափորձ)* - *գ.* Տեղեկություն ստանալու համար սրան-նրան դիմելը, հարցուփորձ: *Ըտը-ր՛ա հըրցըփօրցան լօխճին զա՞հլա՞ն տա-նում ա* (Բ):

- Հըրցըփօրց անել - Տեղեկություն ստանալու համար սրան-նրան դիմել, հացուփորձ անել: *Սահանք հըրցըփօրց ըն անում, թա հունց ա պըտահալ, վէր պիծի մարթը ընգալ ա ըստէղ* (ՆԱԲ, 29):

ՀԸՐՑՆԷԼ - *տե՛ս* ՀԸՐՑԸՆԷԼ:

ՀԸՐՈՒԱԽՃԻԳ՝/ՀՈՒՐՈՒԱԽՃԻԳ՝/ՀՈՒՐԸԱԽՃԻԳ՝ - *գ.* Հայր ու դուստր: *Հու-ր՛ըախճիգ՛ էտ պըռավէն յօր ըն օնում, պիրում տօն* (Ձ):

ՀԸՐՈՒՍՏԱՆԱԼ/ՀԸՐԸՍՏԱՆԱԼ/ՀՈՒ-ՐՈՒՍՏԱՆԱԼ *(գրբ. հարստանամ)* - *չբ.* Հարուստ՝ ունեւոր դառնալ, հարստանալ: *Դէ, դ՛ուզ ա՝ ք՛ասիբ ա, պայց օգում ա հըրուստանա, կարում չի...* (ՀԱԲ, 15, 44):

ՀԸՐՈՒՍՏՑ(Ը)ՆԷԼ/ՀԸՐԸՍՏՑ(Ը)ՆԷԼ/ՀՈՒՐՈՒՍՏՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. հարստացու-ցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՀԸՐՈՒՍՏԱՆԱԼ-ի:

ՀԸՐՈՒՍՏՕԹՈՒՆ/ՀԸՐԸՍՏՕԹՈՒՆ/ՀՈՒՐՈՒՍՏՕԹՈՒՆ/ՀԱՐՈՒՍՏՕԹՈՒՆ/ՀԱ-ՐԸՍՏՕԹՈՒՆ *(գրբ. հարստութիւն)* - *գ.* 1. Հարուստ լինելը, հարուստի հատկու-թյունը: *Հըրուստօթունը ամմէն մարթու պէն չի* (Ձ): 2. Ունեցվածք, գույք: *Էտ տըղան ա ղըլէգ՛չին շատ հարուստօթուն ըն կ՛ո՞ւտո՞ւմ* (ՀԺՀ, V, 393):

- Հըրուստօթունը էն ա էշին/շանը տըռընծակումը, լ՞ուզո՞ւտ կըռ բիդիս անել, տո՞ւս օնել - Հարստանալը՝ հարստու-թյուն կուտակելը դժվար է՝ մեծ ջանք է պահանջում:

ՀԸՐՈՒՏԸՂԱ/ՀՈՒՐՈՒՏԸՂԱ/ՀՈՒՐԸ-ՏԸՂԱ - *գ.* Հայր ու որդի: *Հըրուտըղա նըս-տում ըն, վէր շըփօթ օտին* (ՆԱԲ, 126):

ՀԸՐՈ՞ՒՐԱՆՈՒՑ/ՀՈ՞ՒՐՈ՞ՒՐԱՆՈՒՑ - 1. *ած.* Հարյուր միավոր պարունակող (չա-փի, կշռի, ծավալի մասին): *Հըրո՞ւրա-նուց դուրբավ էտ ճո՞ւրը հըսցընում ըն շէնը* (Ձ): 2. *գ., ած.* Հարյուր ռուբլիանոց (թղթադրամ): *Մին հըրո՞ւրանուց ա տամ, էտ ղօչը ինք՛ օնում* (Ձ):

ՀԸՐՈ՞ՒՐԱՎԷՐ/ՀՈ՞ՒՐՈ՞ՒՐԱՎԷՐ *(գրբ. հարիւրաւոր)* - *ած.* 1. Հարյուրներով

հաշվվող, հարյուրավոր: *Հուրհուրավէր ջանիլ տըղէրք էտ ըխճըկանը դանդան կըլօխ ըն տիրալ* (ՀԺՀ, V, 209): 2. Բազմաթիվ, շատ: *Հըրհուրավէր հէտէ ասալ ըմ, անգուճ չի օնում* (Ձ):

ՀԸՐՀՈՒՐՊԱՏԷԳ/ՀՈՒՐՀՈՒՐՊԱՏԷԳ *(գրբ. հարիւրպատիկ) - ած., մ.* Հարյուր անգամ ավելի: *Մացակը միհէնգ հուրհուրպատէգ լ'ավ ա ապըրում, քանց առաչ* (Բ):

ՀԸՐՓԸԾԱՎԸՏ/ՀԻՐՓԻԾԱՎԸՏ - *գ.* Հարբած մարդուց եկող հոտ, խմիչքի տհաճ հոտ: *Հըրփանծէն անա հըրփըծավըտ կըկ'ա* (Բ):

ՀԸՐՓԸՑ(Ը)ՆԷԼ/ՀԻՐՓԻՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. արբեցուցանեմ) - նբ. եւ պբ.* ՀԱՐՓԻԼ-ի:

ՀԸՐՓԸԹՆԻՆ/ՀԻՐՓԸԹՆԻՆ *(գրբ. արբեցութիւն) - գ.* Հարբած լինելը, հարբածություն: *Հըրփըթնինը շատ մարթու տօն ա քանդալ* (Բ):

ՀԸՐՓԸՏԷԼ/ՀԻՐՓԸՏԷԼ - *չբ.* Հարբել (շատերի մասին): *Մըկըրնէն հըրփըտում ըն, կըռըվ քըցում* (Ձ):

ՀԸՐՕԹՈՒՆ/ՀՈՒՐՕԹՈՒՆ *(գրբ. հայրութիւն) - գ.* Հայր լինելը, հայրություն: *Հըրօթունը ամմէն մարթու չի տըված* (Ձ):

- Հըրօթուն անէլ - Մեկին հայրական վերբերմունք ցույց տալ: *Վէզիրը էտ տըղէն հըրօթուն ա անում* (Ձ):

ՀԸՐՕՏԷԼ - Հարու տալ (շատերը կամ շատ անգամ): *Կըվէրը հըրօտում ըն, կ'ումաշին քըցում ծըրը* (Բ):

ՀԸՐՕՏՕՂ - *ած.* Հարու տվող (եղջյուրավոր անասունների մասին): *Մէգ մին հըրօտող կավ ա իլալ* (Բ):

ՀԸՑԱԼԼԷՐ - *գ.* Հաց թխելու համար նախատեսված այլուր: *Վախտ ա իլալ՝ մին փութ հըցալլէրը մին կըվու նըհըտ ըն փօխալ* (Բ):

ՀԸՑԱԿԷՐ - *ած., գ.* Հաց ուտող (մարդ): *Խըղճը հինչ ա՞նէ. տանը օթ հըցակէր կա* (Ձ):

- Հըցակէր բանդա - Մարդ արարած, բանական էակ: *Ասում ա.- Պա տու ըսկի հըցակէր բանդա չը՞ս* (Ձ):

ՀԸՑԱՄԱՆ - *գ.* Հացի աման: *Հըցամանը պէնում ա, տըսնում օխնը մաչին* (Ձ):

ՀԸՑԱՄՕՌ - *ած.* Կերած հացը՝ հյուրասիրությունը մոռացող, երախտամոռ: *Հըցամօռ մարթին Աստուծ չօնէ* (Բ):

ՀԸՑԱՇԷՆ - *տե՛ս* ՀԸՑԱԿԷՐ:

ՀԸՑԱՊԷՆ - *գ.* 1. Ճաշ, ճաշելը, ճաշկերույթ: *Ըշտըղ հըցապէն ա ինում, Ռուբէնը ընդըղէն յըրա յա քունում* (Բ): *ած.* 2. Ճաշ պատրաստող: *Կընէգը հըցապէն բիդի* (ԱԲԲ, 45):

ՀԸՑԱՊԷՐ - *տե՛ս* ՀԸՑԱՏՈՒ:

ՀԸՑԱՎԱԽՏ - *գ.* Ճաշելու ժամանակը: *Հըցավախտը վէր կ'ամ ա, հօնծ ընօղնէն հըվաքվում ըն* (Բ):

ՀԸՑԱՎԷՐ - *ած.* Հաց ունեցող, ապահով ապրուստ ունեցող: *Խուջաք հըցավէր ըն իլալ էն սօվէն վախտը* (Բ):

ՀԸՑԱՎԸՏ - *գ.* Հացի հոտ: *Հացան հըցավըտ բիդի կ'ա, մաղազինին հացան վէշ մին վըտ չի կ'ամ* (Բ):

ՀԸՑԱՏԱՐ - *տե՛ս* ՀԸՑԱՎԷՐ:

ՀԸՑԱՏԸՂ - *գ.* Հաց պահելու տեղ: *Հըցըտըղան էրկու հաց ա յօր ունէս, կուխէս խուրջինը, ք'իս* (Ձ):

ՀԸՑԱՏՈՒ *(գրբ. հացտու (ամենքին հաց տվող՝ Աստված) - ած.* Հաց տվող՝ բերող, բերրի: *Մարտունա վըէղերը հըցատու վըէղէր ա* (Բ):

ՀԸՑԱՏՕՆ - *գ.* Տան այն մասը, որտեղ թոնիրն է, եւ որտեղ եփում են կերակուրները: *Միհէնգվա տընէրումը հըցատօն էլ չի կա* (Բ):

ՀԸՑԱՐԱՐ - *ած.* Հաց արարող: *Հըցարար մարթը տանուզնը չի մընալ* (Բ):

- Ղըլմըղալու յՆշիգ՚ - *հեգն.* 1. Երաժշտական սարք, մագնիտոֆոն: *Էտ ջիհիլնէն էլ, մարթը մին ղըլմըղալու յՆշիգ՚ յը՞ր կալՆծ, ք՚Ն՚էջ՚ը չափում ըն* (Ջ): 2. Շատախոս՝ շաղակրատ անձ: *ԱՆրիվհատը ղըլմըղալու յՆշիգ՚ ա, ջըլաման չի տաս, թա մին պէն խօսինք՚* (Բ):

ՂԸԼՄԸՂԱԼՉԻ/ՂԱԼՄԱՂԱԼՉԻ *(թրք. qalmaqalči)* - *գ., ած.* 1. Աղմկարար: *Սըհակը ղըլմըղալչի յա, սաղ օրը շէնը ղըլմըղալ ա քըցՆում* (Բ): 2. *տե՛ս* ՂՈՒԼ՚ՂՈՒԼ՚Ա:

ՂԸԼՎԷԳ՚ - *գ.* Պղնձե փոքր կաթսա: *Պառավը մին ղըլվէգ՚ սիսը՞ռավ լըցնում ա, տամ էտ օգ՚օղէն* (Ջ):

ՂԸԼՎԸԼԱԼ - *տե՛ս* ՂԸԺԲԸԺԱԼ:

ՂԸԼՎԸԼԱԼԻ - *տե՛ս* ՂԸԺԲԸԺԱԼԻ:

ՂԸԼՎԸԼՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՂԸԺԲԸԺՑ(Ը)ՆԷԼ:

ՂԸԼՎԸԼՕՆ - *տե՛ս* ՂԸԺԲԸԺՕՆ:

ՂԸԼՎԸԼՕՑ - *տե՛ս* ՂԸԺԲԸԺՕՆ:

ՂԸԽՊԱԼԱՑ - *տե՛ս* ԲՈՒՔԱԼԱՑ:

ՂԸԽՊԱՆԱԼ - *տե՛ս* ԲՈՒՋԱՆԱԼ[1]:

ՂԸԽՊԱՆՈՒՑ - *տե՛ս* ԲՈՒՋԱՆՈՒՑ:

ՂԸԽՊԱՌԱԾ - *տե՛ս* ԲՈՒՋԱՌԱԾ:

ՂԸԽՊԸԽԱՆԱ - *տե՛ս* ԲՈՒՋԱՆՈՒՑ:

ՂԸԽՊԸՎԱՉԻ - *տե՛ս* ԲՈՒՋԸՎԱՐԻ:

ՂԸԽՊԸՎԱՐԻ - *տե՛ս* ԲՈՒՋԸՎԱՐԻ:

ՂԸԽՊԵԹՈՒՆ - *տե՛ս* ԲՈՒՋԵԹՈՒՆ:

ՂԸՀԱԹ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըհաթ ինիլ - *տե՛ս* Չաշմիշ ըղնէլ:

ՂԸՂԱՃԻԼ/ՂԻՂԱՃԷԼ/ՂԸՂԸՃԻԼ - *նբ.* 1. Թեքել, ծռել: *Ախճիգը վէր ծէխէ վը՛ենը ղըղըճում ա, տըղան դաստի ճընանչում ա* (Զ): 2. Կտորը թեք ծալել: *Այան խըլըղացուն ղըղաճում ա, տինում մուշուրուն մաչին* (Զ):

ՂԸՂԸՃԻԼ - *տե՛ս* ՂԸՂԱՃԻԼ:

ՂԸՄԱ(Լ)ԹԻ/ՂԻՄԱ(Լ)ԹԻ - *գ.* Փոքրիկ դաշույն: *Ղօնաղը դիմաթավը թըխէս ա ըտըրա ծըծէն...* (ԱԱ, 15):

ՂԸՄԱՎԷՐ/ՂԸՄԱՎՈՒՐ/ՂԻՄԱՎԷՐ/ՂԻՄԱՎՈՒՐ - *ած.* Դաշույնով զինված: *Մին էլ բուրդան էրկու ղըմմավէր մարթ ըն նի մընում* (Զ):

ՂԸՄԱՎՈՒՐ - *տե՛ս* ՂԸՄԱՎԷՐ:

ՂԸՄԻԾ/ՂԻՄԻԾ *(թրք. keymak (չխնայել)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըմիշ անէլ - 1. Խնայել, ափսոսալ, մեղքանալ (սովորաբար գործածվում է ժխտական կամ հարցական ձեւերով): *Էս ախճիգը քինացալ ա ասալ, Սուրփ Սարքիսը էլ ասալ ա.- Ղըմիշ չըմ անիլ քէզ տանիմ* (ՀԺՀ, VI, 67):

ՂԸՄԻԾՕՏ - *տե՛ս* ՂԱՄՇՕՏ:

ՂԸՄԻԾՕՏ - *տե՛ս* ՂԱՄՇՕՏ:

ՂԸՄՄԸՋԱՆԱԼ - *չբ.* Բթամտանալ, ապուշ՝ անհասկացող դառնալ: *Ջավէնը առաչ մին պէն չի իլալ, միհէնգ էլ լափ ղըմմըզացալ ա* (Բ):

ՂԸՄՄԸՋ-ՂԱՄՄԱՋ - *տե՛ս* ՂԸՄՄԸՋՎԱՐԻ:

ՂԸՄՄԸՋՎԱՉԻ - *տե՛ս* ՂԸՄՄԸՋՎԱՐԻ:

ՂԸՄՄԸՋՎԱՐԻ - *մ.* Բթամտորեն, ապուշի՝ անհասկացողի պես: *Փը՛սան վէր ըտի ղըմմըզվարի խօսում ա, հանէրը կըտաղում ա* (Զ):

ՂԸՄՄԸՋՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՂԸՄՄԸՋԱՆԱԼ-ի:

ՂԸՄՄԸՋՕԹՈՒՆ - *գ.* 1. Բթամիտ՝ ապուշ՝ անհասկացող լինելը: *Ղըմմըզօթունը Ուշաղանց ը՛ղան անպակաս ա* (Բ): 2. Բթամտի՝ ապուշի՝ անհասկացողի կատարած գործ՝ ասած խոսք: *Հինչ ղըմմըզօթուն ասիս, ըտըրանա տուս կըկ՛ա* (Բ):

ՂԸՅԱՄԱԹ *(արաբ., թրք. kəyamet, պրս. ğiyamat)* - *գ.* Սաստիկ ցուրտ, սառնամանիք: *Կօզի հալա ծըմը՛ռնը յը՛կալ չի, ամմա ղըյամաթ ա* (Բ):

ՂԸՅԴԻՆ - *տե՛ս* ՂԱՅԴԻՆ:

ՂԸՅՆԱՄԱՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըյնամաչը նըյը՛ր անէլ - *տե՛ս* Ղէյնը մըսան տուս օնէլ:

ՂԸՅՐԱԹ - *տե՛ս* ՂԷՅՐԱԹ:

ՂԸՅՐԱԹԱՎ/ՂԸՐՅԱԹԱՎ - *տե՛ս* ՂԸՅՐԸԹԱՎԷՐ:

ՂԸՅՐԸԹԱՎԷՐ/ՂԸՐՅԸԹԱՎԷՐ - *ած.* 1. Մեծ եռանդ ունեցող, եռանդուն: *Ղօրուց հարթնէրը ղըյրըթավէր հարթնէր ըն* (Բ): 2. Շահավետ, օգտակար: *Ճանաչ պահէլը ղըյրըթավէր կօրծ ա* (Բ):

ՂԸՆԱԲԱԹ - *տե՛ս* ՆԱԲԱԹ:

ՂԸՆԱՄԻԾ - *տե՛ս* ՂԱՆԱՄԻԾ:

ՂԸՆԱՎՈՒՋ - *տե՛ս* ՂԱՆԱՎՈՒՋ:

ՂԸՆՋԻՏԱՎԸՏ - *տե՛ս* ԸՂԸՆՋԱՎԸՏ:

ՂԸՆՋԻՏԱՑՈՒ - *տե՛ս* ԸՂԸՆՋԱՑՈՒ:

ՂԸՆՃԸՐՆԱՎԸՏ/ՂԸՆՋԸՐՆԱՎԸՏ - *գ.* Այրվող յուղի՝ ճարպի՝ մսի տհաճ հոտ, ճենճահոտ: *Յը՛ղը էրում ըն, ղընճըրնավը՛տը քըցում չէնը* (Զ):

ՂԸՆՋ/ՂՈՒՆՋ/ՂՕՆՋ/ԿԷՆՋ *(թրք. xinč (մանր)* - *գ.* 1. Փշրանք, փշուր, փոքր կտոր: *Հացէն ղընջէրը հըվաքում ա, օտում* (Զ): 2. Անկյունային ծայր: *Ըստուլէն ղընջը նի յա կ՛ամ պատէն, սըվաղը վէր ածում* (Զ):

- Ղընջէրը հըվաքէլ - Ծայրերն ի մի բերել: *Ծօրին ղընջէրը հըվաքում ա, ծալում, տինում թախտէն մաչին* (Զ):

ՂԸՆՋԸՂ(Ն)ԷԼ - *չբ.* 1. Չարանալուց՝ կատաղելուց բերանը կնճռոտել (շան մասին): *Շօնը վէր ըտըրա տը՛սնում ա, դաստի ղընջըղնում ա* (Զ): 2. *փխբ.* Տհաճ հոտ առնելիս՝ արհամարհանք դրսեւորելիս մռայլվել՝ քիթ ու մռութը ծռմռել: *Հարթնը վէր խօսում ա, ըսկէսուրը ղընջըղում ա* (Զ):

- Ղընջըղ(ն)ած շօն - *անրգ.* Մռայլադեմ՝ դժգոհություն արտահայտող դեմքով մարդ: *Էտ ղընջըղնած շօնը վէշ մինին նը՛հը՛տ հիրըվընօթուն չի ընէս* (Բ):

ՂԸՆՋԸՐ/ՂԸՆՋՈՒՐ - *տե՛ս* ՂԸՆՋ:

ՂԸՆՋԸՐ-ՂԸՆՋԸՐ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ղընջըր-ղընջըր անէլ - Փշրտել, կտրտել, մանր կտորների՝ փշրանքների վերածել: *Թօրավը թըխում ա, էտ հիլին ղընջըր-ղընջըր անում* (Զ):

- Ղընջըր-ղընջըր ինիլ/տը՛ռնալ - Փշրտվել, կտրտվել, մանր կտորների՝ փշրանքների վերածվել: *Կարասը վէր ընգավ, ղընջըր-ղընջըր իլավ* (Բ):

ՂԸՆՋԸՐՆԱՎԸՏ - *տե՛ս* ՂԸՆՃԸՐՆԱՎԸՏ:

ՂԸՆՋ-ՂԸՆՋ - *ած.* Թնկթնկացող, լալկան, թնձկացող: *Ղընջ-ղընջ խուխէն անա զանիլաս տարած ա* (Բ):

ՂԸՆՋՂԸՆՋԱԼ - *չբ.* Թնկթնկալ, թնձկալ: *Կընէգը վէր շատ ղընջղընջամ ա, մարթը տանան տուս ա կ՛ամ* (Զ):

ՂԸՆՋՂԸՆՋԱՆ - *տե՛ս* ՂԸՆՋ-ՂԸՆՋ:

ՂԸՆՋՂԸՆՋՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ՂԸՆՋՂԸՆՋԱԼ: 2. *նբ.* ՂԸՆՋՂԸՆՋԱԼ-ի:

ՂԸՆՋՂԸՆՋՕՆ - *գ.* Թնկթնկոց, թնձկոց: *Ըտըրա ղընջղընջօնը մէզ լափ զըզըվցըրավ* (Բ):

ՂԸՆՋՂԸՆՋՕՑ - *տե՛ս* ՂԸՆՋՂԸՆՋՕՆ:

ՂԸՆՋՈՒՐ - *տե՛ս* ՂԸՆՋԸՐ:

ՂԸՇԸՀՅԱՅԲԱ - *գ.* Նախշազարդ խուրջին: *Մահմադը, մին ղըշըհայբա քըցած ծիյավը, քընում ա* (ՀԱԲ, 15, 17):

ՂԸՇԸՆԳԱԿՕՐԾ - *տե՛ս* ՂԸՇԸՆԳԱԿՕՐԾ:

ՂԸՇԸՆԳԱՆԱԼ - *տե՛ս* ՂԸՇԸՆԳԱՆԱԼ:

ՂԸՇԸՆԳԱՎՈՒՆ - *տե՛ս* ՂԸՇԸՆԳԱՎՈՒՆ:

ՂԸՇԸՆԳՎԱՉԻ - *տե՛ս* ՂԸՇԸՆԳՎԱՉԻ:

ՂԸՇԸՆԳՎԱՐԻ - *տե՛ս* ՂԸՇԸՆԳՎԱՐԻ:

ՂԸՇԸՆԳՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՂԸՇԸՆԳՑ(Ը)ՆԷԼ:

ՂԸՇԸՆԳՕԹՈՒՆ - *տե՛ս* ՂԸՇԸՆԳՕԹՈՒՆ:

ՂԸՇԼԱՂ *(թրք. kəšlak, պրս. ğešlağ)* - *գ.* 1. Գյուղ, ավան, բնակավայր: *Թէմուրը կըտաղալ ա, ասալ ա.- Վէր Աստուծ էլ քըշանա, յէս բիդի էտ ղըշլաղը պըրիշակ շինիմ* (ԱԱ, 35): 2. Ձմեռանոց: *Ամը՛ռնը պիցըրանում ըն սարէրը, ծըմը՛ռնը քըշանում ղըշլաղը* (Զ):

ՂԸՇ-ՂԸՇ/ՂԻՇ-ՂԻՇ - *ձ.* Սուր գործիքով կտրելու ձայնը: *Մին էլ սաս ա ըսկանում՝ ղը՛շ-ղը՛շ* (Զ):

- Ղըշ-ղըշ անէլ - *տե՛ս* ՂԸՇՂԸՇՑ(Ը)ՆԷԼ:

ՂԸՇՂԸՇՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Ղըշ-ղըշ ձայն հանելով՝ կտրել: *Ղըշղըշցընում ըն, կ՛առնը մօրթում* (Զ):

ՂԸՇԸՆԳԱԿՕՐԾ/ՂԸՇԸՆԳԱԿՕՐԾ - *գ.* Գեղեցիկ գործ, անթերի կատարված գործ: *Տըղըմարթին ըրած կօրծը ղըշշընգ՛ակօրծ բիդի ինի, վէր յէշիս, քը՛ը՛փըտ կ՛ա* (Զ):

ՂԸՇԸՆԳԱՆԱԼ/ՂԸՇԸՆԳԱՆԱԼ - *չբ.* Գեղեցիկ դառնալ, գեղեցկանալ: *...Ծառէրը ծաղկալ, ղըշշընգ՛ացալ, հանց ըն լ՛ըհա զըրթարված հարթնը ինին* (ԱԱ, 23):

ՂԸՇԸՆԳԱՎՈՒՆ/ՂԸՇԸՆԳԱՎՈՒՆ -

ած. Որոշ չափով գեղեցիկ: *Հրդեանացուն ղըշշընգավուն ախճիգ ա* (Ջ):

ՂԸՇՇԸՆԳՎԱՉԻ/ՂԸՇՇԸՆԳՎԱՉԻ - *տես* ՂԸՇՇԸՆԳԱՎՈՒՆ:

ՂԸՇՇԸՆԳՎԱՐԻ/ՂԸՇՇԸՆԳՎԱՐԻ - *մ.* Գեղեցիկ կերպով, գեղեցկաբար: *Այան ամմէն հինչը ղըշշընգվարի յա իլալ ընէս* (Բ):

ՂԸՇՇԸՆԳՑ(Ը)ՆԷԼ/ՂԸՇՇԸՆԳՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՂԸՇՇԸՆԳԱՆԱԼ-ի:

ՂԸՇՇԸՆԳՕԹՈՒՆ/ՂԸՇՇԸՆԳՕԹՈՒՆ - *գ.* Գեղեցկություն: *Ղըշշինգ օթունը լ՚ավ պէն ա, ամմա կարող ա մարթու տօն քանդի* (Բ):

ՂԸՉԸՂԷԼ - *չբ.* Փքվել, փքվածություն առաջանալ (փորի՝ ստամոքսի եւն մասին): *Էնքան հաց ա կէրալ, փորը ղըչըղալ ա, կարում չի, թա տը՚ղը նըստէ* (Բ):

ՂԸՉԸՂՕԹՈՒՆ - *տես* ՂԸՉՉԸՂՕԹՈՒՆ:

ՂԸՉԸՐՂՈՒ/ՂՈՒՉՈՒՐՂՈՒ - *տես* ՀԱՐԱՑ-ՀԸՐՕՑ:

ՂԸՉՉԸՂՕԹՈՒՆ/ՂԸՉԸՂՕԹՈՒՆ - *գ.* Դաչաղ լինելը, դաչաղություն: *Ղըչչըղօթունը անջախ-անջախ Ղարաբաղ կըտըրից* (Բ):

ՂԸՋԻ - *տես* ՂԸԺԻ:

ՂԸՌ[1] *(թրք. kuru (չոր, մերկ)* - *տես* ԿՈՒՊԸՐ[1]:

ՂԸՌ[2] - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըռը կըտըրցընէլ - *տես* Կըռը կըտըրցընէլ:

ՂԸՌԱՀԱՄ - *տես* ԿՈՒՊԸՐԱՀԱՄ:

ՂԸՌԱՆ - *գ.* Պարսկական արծաթադրամ: *... Տէրտակ ղութին մըսմառըմ ա, տանըմ մօլլին թափշուր անըմ, մին էրկու ղըռան հափըռըմը տինըմ...* (ՋՏ, Ա, 231):

ՂԸՌԱՎԸ՚Տ - *տես* ԿՈՒՊԸՐԱՎԸ՚Տ:

ՂԸՌԸԲԸՌԱԼ/ՂԸՌՂԸՌԱԼ - *տես* ՂԸԺԸԲԺԱԼ (1):

ՂԸՌԸԲԸՌԱԼԻ/ՂԸՌՂԸՌԱԼԻ - *տես* ՂԸԺԸԲԺԱԼԻ:

ՂԸՌԸԲԸՌՑ(Ը)ՆԷԼ/ՂԸՌՂԸՌՑ(Ը)ՆԷԼ - *տես* ՂԸԺԸԲԺՑ(Ը)ՆԷԼ:

ՂԸՌԸԲԸՌՕՆ/ՂԸՌՂԸՌՕՆ - *տես* ՂԸԺԸԲԺՕՆ:

ՂԸՌԸԲԸՌՕՑ/ՂԸՌՂԸՌՕՑ - *տես* ՂԸԺԸԲԺՕՆ:

ՂԸՌԷԼ - *տես* ԿՈՒՊԸՐԷԼ[1]:

ՂԸՌԷՃ - *տես* ԽԸՌԷՃ:

ՂԸՌԷՐ *(թրք. kuru (չոր, մերկ)* - *հոգն. գ.* Անջրդի հողեր: *Ղըռէրումը բօստան չի տը՚ռնալ* (Բ):

ՂԸՌԸ-ԲԸՌԻ/ՂԸՌԻ-ԲԸՌԻ - *տես* ՂԸԺԸԲԺՕՆ:

- Ղըռը-բըռի անէլ - *տես* ՂԸԺԸԲԺԱԼ:

ՂԸՌԸԽ *(թրք. qurxliq)* - *գ.* Բուրդ խուզելու մեծ մկրատ: *Ղըռըխը յօր ա ունէս, էտ ղօչը խուգ՚իս* (Ջ):

ՂԸՌԸԽԷԼ - *նբ.* 1. Բուրդ խուզելու մկրատով խուզել, բուրդ խուզել: *Վըխճըրնէն ղըռըխում ըն, պէց թօղնում* (Ջ): 2. *արհմ.* Մազերը անկանոն խուզել: *Էտ հու վա՞ կըլ՚ըխըտ ղըռըխալ* (Բ):

ՂԸՌԸԽՄԻՇ (թրք. *karəšmak*) - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ղըռըխմիշ անէլ - Մտահոգել, անհանգստացնել, նեղել: *Ըլըչափան մին տը՚ղան ա վը՚ր թակում, ցօրտըն էլ մին տը՚ղան ա ղըռըխմիշ անում...* (ՀԺՀ, VII, 213):

- Ղըռըխմիշ ինիլ/տը՚ռնալ - Մտահոգվել, անհանգստանալ, նեղվել: *Վը՚ր հըղէ յա ինում, ղըռըխմիշ իլանի ք՚ընանմ, հըղըցէն քըշտան մին օց ծէն ա տամ...* (ԼՂԲՔ, 265):

- ՂԸՌԸՀԱՄԷԼ - *տես* ԿՈՒՊԸՐՀԱՄԷԼ:

ՂԸՌԸՄՕՐԹԷ - *տես* ԿՈՒՊԸՐՄՕՐԹԷ:

ՂԸՌԸՇՄԱԼ - *տես* ՂԸՌԸՇՄԱՂ:

ՂԸՌԸՇՄԱՂ/ՂԸՌԸՇՄԱԼ *(թրք. karəšək)* - *տես* ՕՂԸՌԱՇ:

ՂԸՌԹ - *տես* ՂԸՐԹ:

ՂԸՌԹ(ՂԸՌԹ)ԱԼ - *տես* ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ԱԼ:

ՂԸՌԹ(ՂԸՌԹ)Ց(Ը)ՆԷԼ - *տես* ՂԸՐԹ(ՂԸՐԹ)Ց(Ը)ՆԷԼ:

ՂԸՌԹ(ՂԸՌԹ)ՕՆ - *տես* ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ՕՆ:

ՂԸՌԹ(ՂԸՌԹ)ՕՑ - *տես* ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ՕՑ:

ՂԸՌԻ-ԲԸՌԻ - *տես* ՂԸՌԸ-ԲԸՌԻ:

ՂԸՌԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըռիշ ածէլ - Չարչարել, նեղել, տանջել: *Թաքավէրը ժուղուվուրթէն ղըռիշ ա ածալ* (Ջ):

ՂԸՌՂԸՌԱԼ - *տես* ՂԸՌԸԲԸՌԱԼ:

ՂԸՌՂԸՌԱԼԻ - *տես* ՂԸՌԸԲԸՌԱԼԻ:

ՂԸՌՂԸՌՑ(Ը)ՆԷԼ - *տես* ՂԸՌԸԲԸՌՑ(Ը)ՆԷԼ:

ՂԸՌՂԸՌՕՆ - *տես* ՂԸՌԸԲԸՌՕՆ:

ՂԸՌՂԸՌՕՑ - *տես* ՂԸՌԸԲԸՌՕՑ:

ՂԸՌՉԻ - *ած., գ.* Ձյութ թորող (անձ): *Ղըռչին ըտըրան քըցո՞ւմ ա յ՚ալշիգ՚ը, ղըռը ածում կըլխէն* (Ջ):

ՂԸՌՌ - *ձ.* Աղմուկի ձայնը: *Մին էլ, ղը՚ռռ, պատը պարան ա կ՚ամ* (Բ):

ՂԸՌՌԱԼ - *տես* ՂԸԺԸԲԺԱԼ (1):

ՂԸՌՌԱԼԻ - *տես* ՂԸԺԸԲԺԱԼԻ:

ՂԸՌՌՑ(Ը)ՆԷԼ - *տես* ՂԸԺԸԲԺՑ(Ը)ՆԷԼ:

ՂԸՌՌՕՆ - *տես* ՂԸԺԸԲԺՕՆ:

ՂԸՌՌՕՑ - *տես* ՂԸԺԸԲԺՕՆ:

ՂԸՌՌՈՒԴԱ - *գ.* Անպետք, անպիտանի: *Էտ ղըռուդա սըրմացուն պէրալ ըս՝ հինչ ա՞նիմ* (Բ):

ՂԸՌՈՒԹ(ՆԸ)/ՂԸՌՕԹ(ՆԸ)/ՀԸՌՕԹ(ՆԸ)/ՂՈՒՌՈՒԹ(ՆԸ) - *գ.* Խաղողահյութի համ ունեցող կպչուն սերմերով խոտաբույս, որով ծածկում են հնձանի հատակը եւ խաղողը ճմլում: *Ղըռութը Հանդրո՞ւթ ա շատ փըսնէս* (Բ):

ՂԸՌՕԹ(ՆԸ) - *տես* ՂԸՌՈՒԹ(ՆԸ):

ՂԸՍԱՐԱԹ - *տես* ԽԸՍԱՐԱԹ:

ՂԸՍԸԲՕԹՈՒՆ - *գ.* Մսագործ՝ մսավաճառ լինելը, մսագործություն, մսավաճառություն: *Ղըսըբօթունը հացա մօտէ փէշանկ ա* (Բ):

ՂԸՍԸԼՄԻՇ/ՂԸՍԼԱՄԻՇ/ՂԸՍՏ-Տ(ԸԼ)ԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ղըսըլմիշ անէլ - Մտրակով խփել, մտրակել: *Ղըսըլմիշ ա անում, ծին ըսքըսում ա վազ տալը* (Ջ):

- Ղըսըլմիշ ինիլ - *տես* Սաթաշմիշ ինիլ:

ՂԸՍԸՂՍԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըսըղսա անէլ - Տնտեսել, խնայողություն անել: *Ղըսըղսա ընէլավ ըն հըրուստանում* (Բ):

ՂԸՍԸՄԱ՚Ն/ՂԸՍՄԱ՚Ն *(արաբ., պրս., թրք. kəsmet)* - *գ.* Ի վերուստ նախասահմանված բաժին, բախտով վիճակված բաժին: *Ղըսմանան իվիլ օտվէլ չի* (ԱԲԲ, 61):

ՂԸՍԸՄԱ՚ՆՎ/ՂԸՍՄԱ՚ՆՎ - *ած.* Բախտը բանող, հաջողաբախտ: *Մարթ բիդի ղըսըմանանվ ինի, մընացածը սօտ ա* (Բ):

ՂԸՍԸՐ *(թրք. qisir)* - *ած.* Ստերջ, չբեր (անասունների, արհամարհաբար՝ նաեւ կանանց մասին): *Պիրում ըն էտ ղըսըր կավը մօրթում, բադարաք՚ անում* (Ջ):

ՂԸՍԸՐԱԹ - *տես* ԽԸՍԱՐԱԹ:

ՂԸՍԸՐԱՂ/ՂԸՍՐԱՂ *(թրք. kəsrak)* - *գ.* Ջամբիկ, մատակ ձի: *Մէլիք՚ը խանէն մին լ՚ավ ղըսրաղ ա տամ* (Ջ):

ՂԸՍԼԱՄԻՇ - *տես* ՂԸՍԸԼՄԻՇ:

ՂԸՍՄԱ՚Ն - *տես* ՂԸՍԸՄԱ՚Ն:

ՂԸՍՄԱ՚ՆՎ - *տես* ՂԸՍԸՄԱ՚ՆՎ:

ՂԸՍՏ(ԸԼ)ԱՄԻՇ - *տես* ՂԸՍԸԼՄԻՇ:

ՂԸՍՐԱԹ - *տես* ԽԸՍԱՐԱԹ:

ՂԸՍՐԱՂ - *տես* ՂԸՍԸՐԱՂ:

ՂԸՎԱԹ/ՂՈՒՎԱԹ *(արաբ. kuvvet, թրք. kuvvet)* - *տես* ՂԷՅՐԱԹ: *Շընահավէր թանգա՚ տարի, ա՛մ մէշկան կըռացած փէշաք՚ար, դանմո՞ւրչի ինիս, թա դո՞ւլգ՚ար, բանանա՞ հինիս, թա գանգ՚ա՞ր, Աստուծ քէզ ղըվաթ տա...* (ՋՏ, Բ, 198):

ՂԸՎԱԹԱՎ/ՂՈՒՎԱԹԱՎ - *տես* ՂԸՅՐԸԹԱՎԷՐ:

ՂԸՎԱԹԼՈՒ/ՂՈՒՎԱԹԼՈՒ *(թրք. kuvvetli)* - *տե՛ս* ՂԸՅՐԸԹԱՎԷՐ:

ՂԸՎԸԽԷ - *տե՛ս* ՂԸՐՄԸԽԷ:

ՂԸՐԱԲԼԻ/ԳԸՐԱԲԼԻ/ԿԸՌԱԲԼԻ/ԿԸՐԱԲԼԻ *(ռուս. грабли)* - *գ.* Ձեռքի գյուղատնտեսական ատամնավոր գործիք, փոցխ: *Ղըրաբլին յօր ա օնում, հըյաթէն տիրըվնէն հըվաքում, թուփ անում* (Ձ):

- Ղըրաբլի/ղըրըբիլա՛վ տալ - Փոցխով հավաքել, փոցխել: *Ղըրաբլի տըվէ, հայաթը թըմիզցըրէ* (Բ):

ՂԸՐԱՂ/ԳԸՐԱՂ *(ռուս. град)* - *գ.* Ռմբակոծող շարժական կայան: *Թօրքէրը Ղարաբաղա լօխ շինէրքին յըրա յէլ ղըրադավ յըրա յըՐտուվալ* (Բ):

ՂԸՐԱՂՈՒՋ/ԳԸՐԱՂՈՒՋ *(ռուս. градус, լատ. gradus)* - *գ.* Ջերմության՝ հեղուկի խտության, սպիրտի թնդության եւն չափման միավոր, աստիճան: *... էտ դօխտուրնէն լըհա վէր ղըրադուսը թըմամըմ ա, թողըմ ըն, փախչըմ...* (ՋՏ, Բ, 81):

ՂԸՐԱՂՈՒՋՆԻԿ/ԳԸՐԱՂՈՒՋՆԻԿ *(ռուս. градусник)* - *գ.* Ջերմությունը, հեղուկի խտությունը, սպիրտի թնդությունը եւն ցույց տվող սարք: *Ղըրադուզնիկը քըցո՛ւմ ա թօթէն ըրադէն մաչը, տը՛սնում՝ դո՛ւզ վացցունըհէնգ՝ ղըրադուզ ա* (Ձ):

ՂԸՐԱՂ/ՂԸՐԱ՛Ղ *(թրք. qrag)* - *գ.* 1. Ծայր, սահման, եզր: *Մին քաղաքի ղըրաղ տը՛ղ ապրըմ ին մին մարթ, մին կընէկ* (ԼՂԲ, 357): 2. Որեւէ բանի եզրային շերտը՝ մասը: *Պիրում ա հացէն մաչը սաղ տո՛ւս օնում, թողում ղըրղընէքը՝ը* (ՀԱԲ, 15, 98): 3. Որեւէ բանի՝ տեղի՝ տարածության կողքը՝ կողմային տարածությունը: *Առաչին քա՛ղլին գո՛ւլլան նի չի կամ, ղըրաղավըն ա անց կը՛ենըմ* (ՀԺՀ, V, 233): 4. Իբրեւ մակբայ կամ կապ՝ ցույց է տալիս մի բանի մոտ տեղը: *Կամ ըն լափ էտ ճըղպօրուն ղըրաղէն վէր կամ* (Ձ):

- Ղըրաղ անէլ/կըցընէլ/քաշիլ - *տե՛ս* Հը՛ռէ կըցընէլ:

- Ղըրաղ կէնալ/շօռ տալ/քաշվիլ - *տե՛ս* Հը՛ռէ կէնալ: *Շօնըն ասում ա.- Ղըրա՛ղ քաշվի, թա չէ քէզ մուրթըհան կանէմ* (ՀԺՀ, VII, 214):

ՂԸՐԱ՛Ղ - *տե՛ս* ՂԸՐԱՂ:

ՂԸՐԱՂՂԱՍ/ՂԸՐԱ՛ՂՂԱՍ - *տե՛ս* ՀԸՌՆԱՍՑԷ:

ՂԸՐԱ՛ՂՂԱՍ - *տե՛ս* ՂԸՐԱՂՂԱՍ:

ՂԸՐԱՂԲՈՒՋԱՂ/ՂԸՐԸԲՈՒՋԱՂ/ՂԸԼԲՈՒՋԱՂ *(թրք. qrag + bucak (անկյուն)* - *հոգն. գ.* Ծայրեր, ծայրամասեր: *Ղըրըբուջաղէն շինըթկընան էլ վա՛ռին կաս ըն լա՛լ, թըլընէս...* (ՀԲ, 347):

ՂԸՐԱՄԱՓՕՆ/ ՂԱՐԱՄԱՓՕՆ/ ԳԸՐԱՄԱՓՕՆ/ԳԱՐԱՄԱՓՕՆ *(ռուս. грамафон, հուն. gramma+phōnē)* - *գ.* Ձայնափողով երաժշտական սարք՝ գրոմոֆոն: *...Ղըրամափօնու ծէն ա, վէր յէր ա ինըմ...* (ՋՏ, Բ, 182):

ՂԸՐԱՐ - *տե՛ս* ՂԱՐԱՐ:

ՂԸՐՂԸՂՈՒԼԻ - *ած.* Խարդախ, նենգ, խառնակիչ: *Ղըրդըղուլի մարթ ա Հէնդօն* (Բ):

ՂԸՐԸԲՈՒՋԱՂ - *տե՛ս* ՂԸՐԱՂԲՈՒՋԱՂ:

ՂԸՐԸՋՎԷ - *մ.* Թշնամաբար: *Ղըրըզվէ ըրած կօրծան խէր չի ինիլ* (Բ):

ՂԸՐԸԼԸԽ - *տե՛ս* ՂԱՐԱՆԼԸՂ:

ՂԸՐԸ(Լ)ԹՈՒ/ՂՈՒՐՈՒ(Լ)ԹՈՒ *(թրք. karartə (մթություն)* - *գ.* Նշմարվող կերպարանք, ուրվական: *Հըդէննի քօռըն ասում ա.- Հըռնանցէ մին ղըրըլթու վա ըրվամ* (ՆԱԲ, 101):

ՂԸՐԸՂՈՒԾ/ՂԱՐԱՂՈՒԾ *(թրք. karakuš (արծիվ)* - 1. *տե՛ս* ԼԷԼԱ՛Կ: 2. *տե՛ս* ԱՐԾԷՎ:

ՂԸՐԸՆ-ՂԱՐԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ղըրըն-ղարան անէլ/քըցիլ - Հալածել, այս ու այն կողմ քշել, դես ու դեն ցրել: *Կո՛ւլը ըղնում ա վըխճարէն սո՛ւրո՛ւն, ղըրըն-ղարան անում* (Բ):

- Ղըրըն-ղարան ինիլ/տը՛ռնալ - Հալածվել, այս ու այն կողմ քշվել, դես ու դեն ցրվել: *Լօխ էլ ղըրըն-ղարան ըն ընըմ, էս ախմախ թաքավէրը կամ ա, էլ գո՛ւդըմ չի, թա հինչ անէ, հինչ ասէ* (ՀԺՀ, V, 187):

ՂԸՐԸՍՈՒ - *տե՛ս* ՂՈՒՐՈՒՍՈՒ:

ՂԸՐԹ/ՂԸՌԹ - Մի բան միանգամից կտրելու՝ կտրվելու ձայնը: *Աղվէսը սը՛վ հավէն վէզը, ղը՛րթ, կըտըրից* (Ձ):

- Ղըրթ անէլ - Միանգամից կտրել: *Ցակատը յէր կալա՛վ էտ շէվէն ղըրթ ըրավ* (Ձ):

- Ղըրթ ինիլ/տը՛ռնալ - Միանգամից կտրվել: *Կառնանը կըլօ՛խը ղըրթ իլա՛վ* (Բ):

ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ԱԼ/ՂԸՌԹ(ՂԸՌԹ)ԱԼ - *չբ.* Ղըրթ ձայն հանել: *Վէր կըցէնավը ճըղնանը թըխում ա, ղըրթամ ա* (Ձ):

ՂԸՐԹ(ՂԸՐԹ)Ց(Ը)ՆԷԼ/ՂԸՌԹ(ՂԸՌԹ)Ց(Ը)ՆԷԼ - *նբ.* ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ԱԼ-ի:

ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ՕՆ/ՂԸՌԹ(ՂԸՌԹ)ՕՆ - *գ.* Կտրելու՝ կտրվելու ձայնը: *Ղըրթօնէն յըրա ապան գո՛ւրթանում ա* (Ձ):

ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ՕՑ/ՂԸՌԹ(ՂԸՌԹ)ՕՑ - ՂԸՐԹ(ՂԸՐԹ)ՕՆ:

ՂԸՐԻԲԸՐԹՈՒՆ - *տե՛ս* ՂԱՐԻԲԸՐԹՈՒՆ:

ՂԸՐԽԸԼԸՂ - *տե՛ս* ՂԸՌԸԽ:

ՂԸՐԿԷԼ - *տե՛ս* ՂԱՐԿԷԼ:

ՂԸՐԿԷԼԻՔ՝ - *գ.* Ուղարկելու՝ առաքելու բան: *Ղըրկէլիքը՝ը ածում ա յա՛շիգը՝ը պէնդ կապում, տամ ըտըրան* (Ձ):

ՂԸՐԿ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՂԱՐԿ(Ը)ՎԷԼ:

ՂԸՐՂԱԹ - *գ.* *տե՛ս* Ըռուսօթի շըլօ՛ր:

ՂԸՐՂԱՆ - *գ.* Մացառուտ: *Կումաշը ղըրղանը ճըմօռում ա, նի մընում արտը* (Ձ):

ՂԸՐՂԸՆ - *տե՛ս* ԽԸՌՕԿ:

ՂԸՐՂԸՐԴԱ՛ԼԻ/ՂՈՒՐՂՈՒԴԱ՛ԼԻ/ՂՈՒՐԴԱ՛ԼԻ - *տե՛ս* ԽԱՄԲԱՐ:

ՂԸՐՂԻ/ՂԻՐՂԻ *(թրք. karga (ագռավ)* - 1. *տե՛ս* ԼԷԼԱ՛Կ: *... Յէշա՛լ ըն, տը՛սալ՝ մին ծը՛տ ղըրղուն անա փախավ, յէկավ նի մըտավ յէզնանը կուռնատակը* (ԱԱ, 24): 2. *փխբ.* Արագաշարժ, արագընթաց (մարդ, կենդանի): *Հա՛բուն կընէգ՝ը ղըրղի յա, ղըրղի* (Բ):

ՂԸՐՂՈՒԾՈՒՄ - *տե՛ս* ՂՈՒՐՂՈՒԾՈՒՆ:

ՂԸՐՂՈՒԾՈՒՆ - *տե՛ս* ՂՈՒՐՂՈՒԾՈՒՆ:

ՂԸՐՃԱԼ - *չբ.* Ղրճոց արձակել: *Վէր օշափը էտ ճուղուպուրը կըռքընէրավը կուտուրէս ա, ղըրճաս ա* (Ձ):

ՂԸՐՃԸՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* Ատամներով կտրելով՝ փշրելով ղրճոց հանել: *Տըղան ղըրճըցընում ա, լօխ օտում* (Ձ):

ՂԸՐՃԻԼ - *տե՛ս* ԿԸՌՃԻԼ:

ՂԸՐ(Ճ)ՂԸՐՃԱԼ - *չբ.* Շատ՝ տեւականորեն ղրճալ: *Վը՛սկըռը շօնը վէր կըրծկօրծում ա, ղըրճղըրճամ ա* (Բ):

ՂԸՐ(Ճ)ՂԸՐՃԱՆ *(գրբ. հրճրճուկ)* - *գ.* Առաձգական ու կարծր հյուսվածք, որից կազմված են կմախքի որոշ մասերը՝ կռճիկ: *Մին ղըրճղըրճան ա յօր ունէս, կուրծկուրծէս* (Ձ):

ՂԸՐ(Ճ)ՂԸՐՃ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *չբ.* Շատ՝ տեւականորեն ղրճացնել: *Ղըրճղըրճըցնում ըն, էտ մըսէրը լօխ օտում* (Ձ):

ՂԸՐ(Ճ)ՂԸՐՃՕՆ - *գ.* Ղրճղրճալը, ղրճղրճալու ձայնը: *Շօնը էտ ղըրճղըրճօնէն յըրա կամ ա* (Ձ):

ՂԸՐ(Ճ)ՂԸՐՃՕՑ - *տե՛ս* ՂԸՐՃՂԸՐՃՕՆ:

ՂԸՐՃՕՆ - *գ.* Ատամներով մի բան կտրելու՝ մանրելու ձայնը: *Խօսրօվը վէր հաց ա օտում, ղըրճօնը յը՛ր ա ինո՛ւմ* (Բ):

ՂԸՐՄԱ *(թրք. qurma)* - *գ.* 1. Փամփուշտի արճճե մանր գնդակներ: *Ախպո՛ւրը էլ խո՛ւրդա՛ քարէր ա պիրո՛ւմ, վար լըհա՛ հէնց ա ղըրմա ինի* (ԱԱ, 58): 2. *ած. փխբ.* Մանր (պտուղների մասին): *Ղըրմա թօթը քախծըր կինի*:

ՂԸՐՄԸԽԷ/ՂԸՎԸԽԷ *(թրք. kavak)* - *գ.* Ծառատեսակ՝ կաղամախի: *Էտ ըխպիրին ղըրաղէն էլ մին մը՛ծ ղըրմըխէ յա ինո՛ւմ* (Ձ):

ՂԸՐՅԱԹ - *տե՛ս* ՂԷՅՐԱԹ:

ՂԸՐՅԱԹԱՎ - *տե՛ս* ՂԸՅՐԱԹԱՎ:

ՂԸՐՅԸԹԱՎԷՐ - *տե՛ս* ՂԸՅՐԸԹԱՎԷՐ:

ՂԸՐՏԸՋ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըրտըզ անէլ - Մազերը շատ կարճ կտրել: *Այան սիրում չար, վէր թօռնը ղըրտըզ ար անում* (Բ):

ՂԸՐՈՒՂ - *տե՛ս* ՂՈՒՐՈՒՂ:

ՂԸՐՈՒՂԱՏԸՊ - *տե՛ս* ՂՈՒՐՈՒՂԱՏԸՊ:

ՂԸՐՈՒՂՉԻ - *տե՛ս* ՂՕՐՕՂՉԻ:

ՂԸՐՈՒՂՉՕԹՈՒՆ - *տե՛ս* ՂՕՐՕՂՉՕԹՈՒՆ:

ՂԸՐՓ - *տե՛ս* ՂԱՇԷՎ:

ՂԸՐՓԷԼ *(գրբ. գերփեմ, (կողոպտել, կործանել)* - *նբ.* Ուժեղ քորել (եղունգներով, ատամներով): *Կըռվում ըն, Անուշ աքէրը Մըրյանէն անէսկ ա տամ.- Աստուծ քըէգ քօս տա, ղէյնը չի տա, վէր ջանըտ ղըրփիս* (Ձ):

ՂԸՐՓԸ(Շ)ՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղըրփը(շ)միշ ինիլ - Իրար քաշկռտել: *Մըրթըկընէգ ամմէն օր ղըրփըմիշ ըն ինում* (Բ):

ՂԸՐՓԸՐԱԿԷՆ - *տե՛ս* ՂՈՒՐՓՈՒՐԱԿԷՆ:

ՂԸՐՓՈՒՆ - *տե՛ս* ՂՈՒՐՓՈՒՆ:

ՂԸՐՓՕՆ - *գ.* Ուժեղ քորելը: *Ըտըրա ղըրփօնը վէր տըսնում ա, գ'ուդում ա, թա քօսան ընգած ա* (Ձ):

ՂԸՐՓՕՑ - *տե՛ս* ՂԸՐՓՕՆ:

ՂԸՓԸԼ/ՂԸՓՈՒԼ *(թրք. kapali (փակված, ծածկված)* - *գ.* Ամանի՝ անոթի կափարիչ, խուփ, կափույր: *Միսը՛ռնը ածում ա պօլիգ'ը, ղըփըլը տինում յըրան* (Ձ):

- Ղըփըլ տինիլ - *տե՛ս* ՂԸՓԸԼԷԼ:

ՂԸՓԸԼԷԼ - *նբ.* Փակել, ծածկել, կողպել: *Մին մարթ ծըմակավը ք'իս տէ-ղը քօլըմը մին ղըփըլած ղըզդան ա տըսնաս* (ԱԱռ, 19):

ՂԸՓԸԼՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՂԸՓԸԼԷԼ-ի: *... Յէնանան լօխ էծէրը վը՛ր նի յըն տը՛ռալ, բիրդանն սարը ղըփըլվալ ա* (ՀԺՀ, VI, 50):

ՂԸՓԸՂԱՎԷՐ - *ած.* Կափարիչ ունեցող: *Մէսը ածում ըն ղըփըղավէր ղըզդանը, իփում* (Ձ):

ՂԸՓՈՒԼ - *տե՛ս* ՂԸՓԸԼ:

ՂԻ/ՂԷ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ղի տալ/անէլ - *տե՛ս* Ծէն տալ (1): *Էրգան մըտըծէլանը յէտը թաքավէրը ղէ յա տամ ուրանն գիդնականնէրէն, վէր նահանք գիդան, թա մանին հինչ ա...* (ՀԺՀ, V, 352):

ՂԻԴԻ - *տե՛ս* ՂԸԼԴԻ:

ՂԻԺԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղիժի անէլ - Անքթիթ նայել: *Հինչ ը՞ս ղիժի ըրալ, ախճիգ' տը՛սած չը՞ս* (Ձ):

ՂԻԺՏԻ - *տե՛ս* ՂԸԺՏԻ:

ՂԻԼԴԻ - *տե՛ս* ՂԸԼԴԻ:

ՂԻՂԱՃԷԼ - *տե՛ս* ՂԸՂԱՃԻԼ:

ՂԻՄԼ(Լ)ԹԻ - *տե՛ս* ՂԸՄԼԼ(Թ)Ի:

ՂԻՄԼՎԷՐ - *տե՛ս* ՂԸՄԼՎԷՐ:

ՂԻՄԼՎՈՒՐ - *տե՛ս* ՂԸՄԼՎԷՐ:

ՂԻՄԻԾ - *տե՛ս* ՂԸՄԻԾ:

ՂԻՆԼՐ-ՂԻՆԼՐ - *մ.* Կտոր-կտոր: *Սա էլ յէր ա կէնում խօսում, վէր դէրվիշին ղըմանվ շախկա տան, ղինանր-ղինանր կըտորին* (ՀԺՀ, V, 603):

- Ղինանր-ղինանր անէլ - Կտրտել, կտոր-կտոր՝ ծվեն-ծվեն անել: *Էտ ախճիգը ըտըրանց ասըմ ա.- Ք'էցէք' ըստըդան, թանչէ օշաթը կ'ալու ա ծը՛էգ ղինանր-ղինանր անէ* (ՀԺՀ, V, 555):

- Ղինանր-ղինանր ինիլ/կ'անալ/տը՛ռնալ - Կտրտվել, կտոր-կտոր՝ ծվեն-ծվեն լինել: *Կ'առնը ընգավ կ'ուլին ճանգ'ը, ղինանր-ղինանր իլանվ* (Բ):

ՂԻԾ-ՂԻԾ - *տե՛ս* ՂԸԾ-ՂԸԾ:

ՂԻՉ - *գ.* Սատանայի եղջյուր: *Սադանան վէր դալթու վա տամ, ղիչը մընամ ա Ապէր դայուն հափըռումը* (Ձ):

ՂԻՐՂԻ - *տե՛ս* ՂԸՐՂԻ:

ՂՈՒԲՈՒԼ - *տե՛ս* ՂՕԲՈՒՐ:

ՂՈՒՋ *(պրս. kūz)* - 1. *գ.* Թիկունքին կամ կրծքին ցցված ուռուցիկություն, սապատ: *Անց ա կէնում մին ամէս, էտ մարթին ղուզը էլ ա մըծանում* (Ձ): 2. *ած.* Կուզ ունեցող, սապատավոր: *Էտ թաքավէրը ղուզ ա ինում* (Ձ):

- Ղուզ կէնալ - Կռանալ: *Ղուզ ա կէնում, թաքուն յէշում* (Ձ):

ՂՈՒՋԷ *(թրք. kuzey (հյուսիս)* - *ած.* Ոչ արեւկող, ոչ արեւահայաց: *Մէր շէնը ղուզէ տը՛ղ ա* (Բ):

ՂՈՒՋԻ *(թրք. kuzu (գառ)* - *գ.* Ձագ, զավակ, որդի: *Պառավը վըխէլան նըհէտ ասում ա.- Մ' ղուզի, ինձ ըսպանէլ մէք', կասէմ* (ՀԺՀ, V, 357):

ՂՈՒՋԼԷԳ' - *տե՛ս* ՂՈՒՋ (2):

- Ղուզլէգ'ին ախճիգ' չընն տամ, ամիա ինք'ը օգ'ում ա՝ զէմքուճընն էլ ինի ղանշանգ' - Մարդ պահանջներ է ներկայացնում՝ առանց հաշվի առնելու, թե ինչի է ինքը արժանի:

ՂՈՒՋՂՈՒՆ/ՂԸՋՂՈՒՆ *(թրք. kurgun)* - *տե՛ս* ՔԱԾ[1]: *...Բիրդանն ղուզղունը թէվավը թըխըմ ա, էտ ճուրը յէր ածըմ* (ՀԺՀ, V, 80):

ՂՈՒՋՄԱՆ - *տե՛ս* ՂՈՒՋ (2): *Ղուզմանը հընգ'իստումընն ա դանգվում* (ԱԲԲ, 61):

ՂՈՒՋՈՒԼՈՒԼԼ - *գ., ած.* Ծուռ, կռացած (իր): *Ղուզուլանլանն փանդանն կացնու կօթ չի տը՛ռնալ* (Բ):

ՂՈՒՋՈՒՂՈՒՋ - *տե՛ս* ՂԸՋԸՂՈՒՋ:

ՂՈՒԹԻ/ՂՕԹԻ *(պրս. ğuti, թրք. kutə)* - *գ.* Դագաղ: *... Թաքավէրին ծառան կ'աս ա դանլգ'արէն հէտան, թա.- Թաքավէրը մը՛ռալ ա, յը՛ք ղութին շի՞նի* (ԱԱ, 85):

ՂՈՒԼ *(թրք. kul)* - *տե՛ս* ՆՕՔ'ԼՐ: *Ղուլէրը, դարավաշնին ընդրան ամման վախտ հըրցընում ին, թա խէ յա՞ բէք'էփ...* (ՀԺՀ, V, 170):

ՂՈՒԼԱՂ/ՂՈՒԼՈՒՂ *(թրք. kulak)* - *արհմ. տե՛ս* ԱՆԳՈՒՃ (1): *Ջըռռայիս էշին ղուլաղէն թըխէլ չընն* (ՆԱԲ, II, 270):

ՂՈՒԼԱՆԻ - *գ.* Տանձի տեսակ: *Ղուլանին վէր օտում ըս, հանց ա մաչը ղումավ լըցցած ինի* (Բ):

ՂՈՒԼԱՋ/ՂՕԼԱՋ *(թրք. kulağ)* - *տե՛ս* ԽԸՏԷՏ (2):

ՂՈՒԼԱՋ-ՂՈՒԼԱՋ - *տե՛ս* ԽԸՏԷՏ-ԽԸՏԷՏ (2):

ՂՈՒԼԲՈՒՂ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ղուլբուդ անէլ - *տե՛ս* Կալ'մաչ անէլ (2):

- Ղուլբուդ ինիլ - *տե՛ս* Կալ'մաչ ինիլ:

ՂՈՒԼՂՈՒՐ - *տե՛ս* ՂԸԼՂԸՐ:

ՂՈՒԼՂՈՒՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՂԸԼՂԸՐՕԹՈՒՆ:

ՂՈՒԼԹԱՄԱՉ - *տե՛ս* ՂԸԼԹԱՄԱՋ:

ՂՈՒԼԹԱՄԱՋ - *տե՛ս* ՂԸԼԹԱՄԱՋ:

ՂՈՒԼԼՈՒՂ *(թրք. kulluk (ծառա լինելը, ծառայություն, թրք. qulluq)* - *գ.* 1. *տե՛ս* ՆՕՔ'ԼՐ: *Տա շատ ա ք'ինանմ, թա խըրէգ', հըսնում ա մին շիհանր, տը՛ղ մին խազայինու քըշտի ղուլլուղ ա նի մընում* (ՀԺՀ, VII, 136): 2. Ծառայող, սպասարկող: *Ղուլլուղը մին ամէս էտ զավօդումը կօրծ ա անում, տանս կ'ամ* (Ձ):

- Ղուլլուղ անէլ - Ծառայել, սպասարկել: *... Ուրանց հօրընն էլ թաքավէր ըն տիրանլ, հու ուրանք էլ ընդրրա ղուլլուղ ըրալ* (ՀԺՀ, VI, 45):

ՂՈՒԼԼՈՒՂՉԻ *(թրք. kullukču)* - *տե՛ս* ՂՈՒԼԼՈՒՂ: *Նա մինակ ուրանն պալատին ըխճըկօրցը, ուրանն ղուլլուղչօցը իրէսընն ար տը՛սնըմ* (ՀԺՀ, V, 38):

ՂՈՒԼԼՈՒՂՕԹՈՒՆ - *գ.* 1. *տե՛ս* ՆՈՒՔ'ԸՐՕԹՈՒՆ: 2. Ծառայություն, սպասավորություն: *Ղուլլուղօթունընն էլ չի փիս փէշակ* (Բ):

- Ղուլլուղօթուն անէլ - 1. *տե՛ս* Նուք'ըրօթուն անէլ: 2. *տե՛ս* Ղուլլուղ անէլ:

ՂՈՒԼ'ՂՈՒԼ'Ա - 1. *գ.* Իրարանցում, խառնաշփոթություն: *Շէնը ղուլ'ղուլ'ա յա ըղնում* (Ձ): 2. *տե՛ս* ԼԱՂԼԱՂԻ:

ՂՈՒԼՈՒՂ - *տե՛ս* ՂՈՒԼԱՂ:

ՂՈՒԼՈՒՂԱՏԱԿ - *տե՛ս* ԸՆԳՈՒՃԱԿԱՏ:

ՂՈՒԼՓ - *գ.* Պարանի կտոր, որով ամրացնում՝ միացնում են երկու տակառների ունկերը՝գրաստի վրա բարձելիս: *Ղուլփը դայիմ բիդի ինի, վէր տէմ կէնա* (Բ):

ՂՈՒ-ՂՈՒ - *ձ.* Աղավնու հանած ձայնը: *Ղօնէգը սանս ա անում՝ ղո՛ւ-ղո՛ւ* (Բ):

- Ղու-ղու կանչիլ/ծէն տալ - Միայնակ՝ անտեր մնալ: *Մարթիս կընէգըն էլ մէռնում ա, ինքը մընամ ա կօճին տակէն ղու-ղու կընչիյիս* (ՆԱԲ, 65):

ՂՈՒՄ[1] *(թրք. kum)* - *գ.* Ավազ: *Առանց ղում կարէլ չըս ցը՝խ անիս* (Բ):

- Ղում տը՝ռնալ - Ավերվել, քանդվել: *Տը՝սնում ա՝ վը՝չ մին քարու տը՝ղ մնիլ՝ում չի անում, լօխ ղում ա տը՝ռալ* (ՀԺՀ, VII, 197):

- Ղումու յըրա տօն շինիլ - Անհիմն գործ ձեռնարկել: *Ղումու յըրա տօն շինօ՝ղը կարէլ չի հըրուստանա* (Բ):

- Ղումու նըման մաղվէլ - Շատ աշխատել՝ չարչարվել՝ տանջվել: *Էս էլ հօ կօրծ անէլ չի՞, ղումու նըման մաղվում ընք* (Բ):

ՂՈՒՄ[2] - *տե՛ս* ԿՈՒՄ:

ՂՈՒՄԱԾ *(արաբ., թրք. kumāš)* - *գ.* 1. Մետաքսյա կտոր, կերպաս: *Ղումաշը միշտ էլ թընգ՝անուց կըտոր ա իլա՝լ* (Բ): *ած.* 2. *փխբ.* Նուրբ, բարակ: *Ղումաշ մաշկ օնէ Հէրիք՝նազը* (Բ):

- Ղումաշը դա՝ռդ ա անում, թա՝ ինձ հու բի՞դի մաշի - Գեղեցիկը՝ լավը մտահոգվում է, որ իր համապատասխանը՝ արժանին չի գտնվի:

ՂՈՒՄԱՀԱՆՔ - *գ.* Ավազի հանք: *Թըրթա՝ռա՝ ծօ՝ղը սաղ ղումահանք ա* (Բ):

ՂՈՒՄԱՐ/ԿՈՒՄԱՐ *(գրբ. գումար (բազմություն), արաբ. kumar (դրամով բախտախաղ), թրք. kumar)* - *գ.* 1. Դրամի որոշ քանակություն: *Դա՝րվիշը էտ կումարը տամ ա, էտ օղտին յըրա օթախը առնըմ* (ՀԺՀ, V, 180): 2. *տե՛ս* ԿԱՐՏ (2):

Ղումարի տալ - *տե՛ս* Կարտէ տալ: *Էտ տըղան հըսնըմ ա էն տօնը, ըշտէղ ո՝ւրա՝ն ախպէրքը ղումարի յըն տամ, տանիլ տամ* (ՀԺՀ, V, 75):

ՂՈՒՄԱՐԲԱԶ/ԿՈՒՄԱՐԲԱԶ *(արաբ., պրս., թրք. kumarbaz)* - *գ., ած.* Փողով թղթախաղ խաղացող (անձ), խաղամոլ: *Ղումարբազը կընգանըն ա խօխօնցըն էլ տանէլ կըտա* (Բ):

ՂՈՒՄԱՔԱՐ - *գ.* Ավազի նստվածքային կարծրացած ապար: *Ղումարքարը ճէլլի յա կուտըրատվում* (Բ):

ՂՈՒՄԸԽԱՌ(Ն)Է - *տե՛ս* ՂՈՒՄԸԽԱՌ(Ն)Ը:

ՂՈՒՄԸԽԱՌ(Ն)Ը/ՂՈՒՄԸԽԱՌ(Ն)Է - *ած.* Ավազի հետ խառն: *Էտ ղումը-խառնը ցօրէնը ծախում ա, ք՝ինամ* (Զ):

ՂՈՒՄԻՋ - *տե՛ս* ՉԸՐԹՄԱ: *... Կամ ա, հըսնում թաքավէրին էրկու փէսին, սահանց կըլխին մին-մին ղումիզ թըխում, ինքը թըռչո՝ւմ, անց կէնում* (ՀԺՀ, VI, 136):

ՂՈՒՄԼԷԳ՝ - *ած.* Ավազով առատ, ավազուտ: *Էտ տը՝ղընը էլ ղումլէգ՝ տը՝ղ ա ինո՝ւմ* (Զ):

ՂՈՒՄ-ՂՈՒՄ - *տե՛ս* ԿՈՒՄ-ԿՈՒՄ:

ՂՈՒՅ/ՂԱՅ - *գ.* 1. Աղվամազ: *Էտ ծը-տէրէն ղույը լ՝ըհա վէր փըսնէս ա, թըռչիս ըս, ք՝իս* (Զ): 2. *ած. փխբ.* Փափուկ: *Նա էլ ասալ ա.- Վէր գ՝իդա՝, թա տու հու վըս, ք՝էգ ղայ յօրղան-դօ՝շակում կըպահի...* (ՀԺՀ, VI, 79):

ՂՈՒՅԻ/ՂԱՅԻ - *ած.* Աղվամազե, աղվամազից կազմված: *... Տօ՝շին էլ վէր յէշիս, ամմա՝ն Աստուծ, ասիս ղույի պէրց ինի* (ՀԺՀ, V, 476):

ՂՈՒՅՈՒՂ - *տե՛ս* ՂԱՅՈՒՂ:

ՂՈՒՆԴՈՒՋ *(թրք. qundūz)* - 1. *տե՛ս* ՔԱՉԱԼ: 2. *տե՛ս* ՔՕՍՈՒՏ:

ՂՈՒՆԸԽԼԸՂ - *տե՛ս* ՂՕՆԱԽԼԸՂ:

ՂՈՒՆԸՂԱՍԷՐ - *ած.* Հյուրասեր: *Տը-նատարը կօգի ք՝ա՝սիբ, ղունուղասէր մարթ ա ինիս...* (ԱԱ, 72):

ՂՈՒՆԸՂԱՎԷՐ - *տե՛ս* ՂՈՒՆԸՂԱՏԱՐ:

ՂՈՒՆԸՂԱՏԱՐ - *ած., գ.* Հյուր ունեցող, հյուրի տեր: *Ղունը՝ղատար մարթը շաղված կինի* (Բ):

ՂՈՒՆԸՂԱՏԸ՝Ղ - *գ.* 1. Հյուր գնալու կամ գնացած տեղը: *Ք՝ինամ ա էտ ղունը՝ղատը՝ղը, տը՝սնում՝ ղօնաղը կա վէչ* (Զ): 2. *տե՛ս* ՂՈՒՆԸՂԱՏՕՆ (2):

ՂՈՒՆԸՂԱՏՕՆ - *գ.* 1. Այն տունը, որտեղ հյուր կա: *Հա՝ռա՝ք էդին տօնը էրկու շէբաթ ա՝ ղունը՝ղատօն ա* (Բ): 2. Հյուրասենյակ: *Ղունաղէն տանում ա ղունը՝ղատանը քունավ անում, ինք՝ը էլ հըյաթումը քօն ինո՝ւմ* (Զ): 3. Հյուրանոց: *Ըստէփանակ՝ը՝ղոտ բօլ-բօլ ղունը՝ղատօն ը՝ն շինա՝լ* (Բ):

ՂՈՒՆԸՂԱՓԱՅ - *գ.* Հյուրի բաժին, սովորաբար ուտեստ, որ պահում են հյուրերի համար: *Ղունը՝ղափայը կըտըրցընէլ չըն, ղունը՝ղափայը կըպահին* (Զ):

ՂՈՒՆԸՂՎԱՉԻ - *տե՛ս* ՂՈՒՆԸՂՎԱՐԻ:

ՂՈՒՆԸՂՎԱՐԻ - *մ.* Հյուրի պես, հյուրաբար: *Էտ կընէգ՝ը ո՝ւրա՝նց տանըն էլ ա ո՝ւրա՝ն ղունը՝ղվարի պահում* (Զ):

ՂՈՒՆԸՂՓԱՅԻ - *տե՛ս* ՂՈՒՆԸՂԱՓԱՅ:

ՂՈՒՆԸՂՕԹՈՒՆ - *գ.* 1. Հյուր լինելը: *Խասան ղունը՝ղթունա խամ չի* (Բ): 2. *փխբ.* Խորթություն, օտարություն: *Այան ասմա, ղունը՝ղօթուն մէ՛լ անէլ, հաց կէ՛ր* (Բ):

ՂՈՒՆՂՈՒՆԱԼ - *չբ.* 1. *Ղու-ղու* ձայն հանել (աղավնիների մասին): *Ը՝ղօնէգ՝ նէն ղունղունամ ըն* (Բ): 2. *փխբ.* Թոթովել, բլբլալ: *Խօխան ղունղունամ ա* (Բ): 3. *փխբ.* Սիրախոսել: *Էտ տըղան ա էտ ախճիգ՝ը ղունղունամ ըն* (Զ):

ՂՈՒՆՂՈՒՆՕՑ - *գ.* 1. Ղունղունալը, ղունղունալու ձայնը: *Ը՝ղօնէգ՝ին ղունղունցը թօղնում չի, թա քօն ինինք՝*: 2. *փխբ.* Թոթովանք, բլբլոց: *Խուխէն ղունղունօցը հօրը ուրխըցընէս ա* (Բ): 3. *փխբ.* Սիրախոսելը: *Ըտըրա ղունղունօցը ըխճըկանը սըրտավընն ա* (Զ):

ՂՈՒՆՁ - *տե՛ս* ՂԸՆՁ:

ՂՈՒՇ *(թրք. kūš)* - *գ.* 1. Թռչուն: *Քաթ ըն ընէս, թա ըսկի ղուշէրընն էլ չընն կը-ը՝ցալ էտ ծըմակավը թըռչին, մըչանք դալին ա իլա՝լ* (Զ): 2. *փխբ.* Մետաղադրամի այն երեսը, որտեղ պատկեր է նկարված: *Կապէկը թօղ ըն անում, փըռնում, ղուշ ա ըղնում* (Զ): 3. *փխբ.* Արագավազ, թռչկան (մարդ, կենդանի): *Էտ ծին ղուշ ա, ղուշ* (Բ):

- Ղուշը ծը՝ռքան պէց ըղնէլ/թօղնէլ - Հնարավորությունից զրկվել, գործը ձախողվել: *Ղուշը ծը՝ռքատ պէց ա ընգալ, էլ նըհախ տը՝ղան լա՝նց մէլ ինիլ* (Զ):

- Ղուշը կըլխէն թա՝ռ անէլ - Մեծարել, պատվել: *Հարթնէրը ղուշը ըսկէսվօրը կըլխէն թա՝ռ ըն անում, էլհա կօհ չի* (Բ):

- Ղուշը կըլխէն թա՝ռ ինիլ - Մեծարվել, պատվվել: *Վէր ղուշը կըլխէն թա՝ռ էլ ինի, էլհա Մըխթա՝ռին կընէգ՝ը ք՝ըթէն տակէն մը՝ղթմը՝ղթական ա* (Բ):

- Ղուշին թէվավը - Արագ, շտապ: *Էտ տըղան ղուշին թէվավը հըսնում ա հօրը պալատը* (Զ):

- Ղուշ չըմ պըհըլական, ջըմդա՝նք՝ու յըրա պէց թօղնիմ - Աշխատանքս պետք է գնահատվի ըստ արժանվույն:

- Ղուշու նըման ապըրէլ - Անհոգ կյանք վարել: *Խուխատար մարթը կարէլ չի ղուշու նըման ապըրէ*:

- ՂՈՒՇԱ՝ՊՈ՝ՒՆ - *գ.* Թռչնաբույն: *Օխ-ծը նի յա մընէս ղուշա՝պո՝ւնը, ճօտէրը կօլ տաս* (Բ):

ՂՈՒՇԲԱԶ *(թրք. kūšbaz)* - *գ., ած.* Թռչուններ, հատկապես աղավնիներ պահող (անձ): *Ղուշբազ Անդօնը լ՝ավ մարթ ա իլա՝լ* (Բ):

ՂՈՒՇԸՎՐԱ՝ԳԻ - *գ.* Մանր ու երկարավուն հատիկներով խաղողի տեսակ: *Ղուշըվրա՝գ՝ին լ՝ավ կ՝ինու խաղու վա* (Բ):

ՂՈՒՇԽՈՒՆ *(թրք. qušqun)* - *գ.* Թամբը՝ համետը գրաստի մեջքին ամրացնելու հաստ գոտի, որ անց են կացնում փորի եւ պոչի տակով: *Փըլանը՝ն ք՝ըմակէն ղուշխունընը ինգ՝ո՝ւմ ա տըրա պօկը, նըհը՝տը թումփալի վը՝ր ա ինգ՝ո՝ւմ...* (ՀԺՀ, VII, 315):

ՂՈՒՇ-ՂԱ՝ՆՆԱ՝Թ/ՂՈՒՇ-ՂԱՍԱԹ *(թրք. kuš-qanad (թեւ)* - *գ.* Թռչուններ եւ թռչող այլ էակներ: *Ղուշ-ղա՝ննա՝թ հըղէ յընն ինո՝ւմ բիդա Աստուծը, ամմէնաբռաշկէն էլ արծիվընն ա թըռչո՝ւմ...* (ԱԱ, 66):

ՂՈՒՇ-ՂԱՍԱԹ - *տե՛ս* ՂՈՒՇ-ՂԱ՝ՆՆԱ՝Թ: *...Ղուշ-ղասաթ ընդրա կօշտը ք՝էցած չի հա՝լա՝* (ՀԺՀ, V, 652):

ՂՈՒՉԱՑՈՒ - *ած., գ.* Խոյ դառնալու համար պահվող (արու գառ): *Պիրում ըն, էտ ղուչացուն մօրթում* (Զ):

ՂՈՒՉՈՒՐՂՈՒ - *տեմ* ՂԸՉԸՐՂՈՒ:

ՂՈՒՌՈՒԹ(ՆԸ) - *տեմ* ՂԸՌՈՒԹ(ՆԸ):

ՂՈՒՌՈՒՄՍԱՂ - *տեմ* ՕՂԸՌԱԾ: *Հանլա Իվան հուրան խօսկը պըրծած վէջ, էն ղուռումսաղը թարփանչան տուս կալավ, թա Իվանէ ճըկատէն օնէ...* (ՀԲ, 335):

ՂՈՒՌՈՒՄՍԸՂՕԹՈՒՆ - *տեմ* ՕՂԸՌԱԾՕԹՈՒՆ:

ՂՈՒՍԽՈՒՆ - *տեմ* ԲՈՒՍԽՈՒՆ:

ՂՈՒՎԱԹ - *տեմ* ՂԸՎԱԹ:

ՂՈՒՎԱԹԱՎ - *տեմ* ՂԸՎԱԹԱՎ:

ՂՈՒՎԱԹԼՈՒ - *տեմ* ՂԸՎԱԹԼՈՒ:

ՂՈՒՎՐԱԽ - *տեմ* ՂՈՒՐԱԽ:

ՂՈՒՎՐԱԽԼԱՄԻԾ - *տեմ* ՂՈՒՐԱԽԼԱՄԻԾ:

ՂՈՒՎՐԸԽԱՆԱԼ - *տեմ* ՂՈՒՐԸԽԱՆԱԼ:

ՂՈՒՎՐԸԽՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ՂՈՒՐԸԽՑ(Ը)ՆԷԼ:

ՂՈՒՎՐԸԽՕԹՈՒՆ - *տեմ* ՂՈՒՐԸԽՕԹՈՒՆ:

ՂՈՒՐԱԽ/ՂՈՒՎՐԱԽ - *ած.* Ժիր, կայտառ, առույգ: *Մէյրան ապան ըսօրէքՒուց հանրուր տիրըէկան ա, ամմա հանա ղուրախ ա* (Բ):

ՂՈՒՐԱԽԼԱՄԻԾ/ՂՈՒՎՐԱԽԼԱՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղուրախլամիշ ինիլ - *տեմ* ՂՈՒՐԸԽԱՆԱԼ:

ՂՈՒՐԱՆ/ՂՕՐԱՆ *(գրբ. ղուրան, արաբ. qurān)* - *գ.* Մահմեդականների սրբազան գիրքը: *Մօլլան ղուրանը պէց ա անում, կարթում* (Զ):

ՂՈՒՐԲԱՆ *(արաբ., թրք. kurbān, պրս. ğorban)* - *տեմ* ՄԱՏԱՂ[1]:

ՂՈՒՐՂԱԼԻ - *տեմ* ՂԸՐՂԸՂԱԼԻ:

ՂՈՒՐՂԻ-ՂՈՒՐՂԻ - *տեմ* ՂՈՒԼ[1]-ՂՈՒԼ[1]Ա:

ՂՈՒՐՂՈՒՂՈՒՋ - *գ.* Սրիկա, ավազակ: *...էտ սանսին յըրան ղուրդուղուզնէն գիդաս ըն, վըէր ըտէղ մարթ կա* (ԼՂԲ, 314):

ՂՈՒՐԸԷՆԷ - *գ.* Վայրի խաղողի տեսակ: *Մէր ծըմըկնէրումը ղուրըէնէ յէլ կա* (Բ):

ՂՈՒՐԸԽԱՆԱԼ/ՂՈՒՎՐԸԽԱՆԱԼ - *չբ.* Ժրանալ, կայտառանալ, առույգանալ: *Վէր տըղան սաղ-սըլմաթ կըռվան կ'աս ա, Հէղան աքէրը ղուրըխնաս ա* (Բ):

ՂՈՒՐԸԽՑ(Ը)ՆԷԼ/ՂՈՒՎՐԸԽՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՂՈՒՐԸԽԱՆԱԼ-ի:

ՂՈՒՐԸԽՕԹՈՒՆ/ՂՈՒՎՐԸԽՕԹՈՒՆ - *գ.* Ժրություն, կայտառություն, առույգություն: *Ղուրըխութունը ամմէն մարթու չի տըված* (Բ):

ՂՈՒՐԹԸՂՕՐԹ - *տեմ* ԸՂՈՒՐԹԸՂՕՐԹ:

ՂՈՒՐԹԸՂՕԹ - *տեմ* ԸՂՈՒՐԹԸՂՕԹ:

ՂՈՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ԸՂՈՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ՂՈՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ԸՂՈՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ՂՈՒՐԹԻԼ - *տեմ* ԸՂՈՒՐԹԻԼ:

ՂՈՒՐԹԻԼ - *տեմ* ԸՂՈՒՐԹԻԼ:

ՂՈՒՐԹՕԹՈՒՆ - *տեմ* ԸՂՈՒՐԹՕԹՈՒՆ:

ՂՈՒՐԹՕԹՈՒՆ - *տեմ* ԸՂՈՒՐԹՕԹՈՒՆ:

ՂՈՒՐՂՈՒՂԱԼԻ - *տեմ* ՂԸՐՂԸՂԱԼԻ:

ՂՈՒՐՂՈՒԹՈՒՆ - *տեմ* ԽԸՋՈՒՋՈՒՆ:

ՂՈՒՐՂՈՒՇՈՒՄ - *տեմ* ՂՈՒՐՂՈՒՇՈՒՆ:

ՂՈՒՐՂՈՒՇՈՒՆ/ՂՈՒՐՂՈՒՇՈՒՄ/ՂԸՐՂՈՒՇՈՒՄ/ՂԸՐՂՈՒՇՈՒՆ *(թրք. kuršun)* - *գ.* Դյուրահալ մետաղ՝ կապար: *Խօխէնքը ղուրղուշունը հանում ըն, վըխճարէն մօրթէն էլ կըտօրում, բօփսիկ շինում* (Զ):

ՂՈՒՐՄ - *տեմ* ԸՂՈՒՐՄ:

ՂՈՒՐՄԱԹԱՍ - *տեմ* ԸՂՈՒՐՄԱԹԱՍ:

ՂՈՒՐՄԱԾԱԿ - *տեմ* ԸՂՈՒՐՄԱԾԱԿ:

ՂՈՒՐՄԱԾԻԳ[1] - *տեմ* ԸՂՈՒՐՄԸՑԻՔ[1](Ի):

ՂՈՒՐՄԱՎ - *տեմ* ԸՂՈՒՐՄԱՎ:

ՂՈՒՐՄՈՒՏԱԼ - *տեմ* ԸՂՈՒՐՄԸՏԱԼ:

ՂՈՒՐՄՈՒՑԻՔ[1](Ի) - *տեմ* ԸՂՈՒՐՄԸՑԻՔ[1](Ի):

ՂՈՒՐՄՕԹՈՒՆ - *տեմ* ԸՂՈՒՐՄՕԹՈՒՆ:

ՂՈՒՐՈՒ(Լ)ԹՈՒ - *տեմ* ՂԸՐԸ(Լ)ԹՈՒ:

ՂՈՒՐՈՒԽՉԻ - *տեմ* ՂՕՐՕՂՉԻ:

ՂՈՒՐՈՒԽՉՕԹՈՒՆ - *տեմ* ՂՕՐՕՂՉՕԹՈՒՆ:

ՂՈՒՐՈՒՂ/ՂԸՐՈՒՂ *(թրք. qoruq)* - *գ.* Մուտքն արգելված արոտավայր՝ հանդ՝ դաշտ եւն: *Ճըղասպանըն ասում ա.- Հանէ էն լէնջը յունջու ղուրուղ ա...* (ՀԺՀ, VII, 164):

- Ղուրուղ անէլ - Մուտքն արգելել: *Էտ խուտատըէղը ղուրուղ ըն անում, հանցու խօտը հարին* (Զ):

ՂՈՒՐՈՒՂԱՏԸ[1]Ղ/ՂԸՐՈՒՂԱՏԸ[1]Ղ - *տեմ* ՂՈՒՐՈՒՂ: *... Տա յէլ Քօռօղլուն ղուրուղատըէղըն ա ինում* (ՀԺՀ, VII, 187):

ՂՈՒՐՈՒՂՉԻ - *տեմ* ՂՕՐՕՂՉԻ:

ՂՈՒՐՈՒՂՉՕԹՈՒՆ - *տեմ* ՂՕՐՕՂՉՕԹՈՒՆ:

ՂՈՒՐՈՒՍՈՒ/ՂԸՐԸՍՈՒ *(թրք. qarasu (սեւ ջուր)* - *գ.* Գետի ջրից հողի տակ անցած եւ մաքուր բխող աղբյուր, ոչ իսկական աղբյուր: *Ըտըէղ մին ղուրուսու վա ինում, ըտըղատ ըն ճուր յօր օնում, խըմում* (Զ):

ՂՈՒՐՓՈՒՆ/ՂԸՐՓՈՒՆ/ՂՕՐՓՈՒՆ - *տեմ* ԲՈՒՂԱՆԸՂ:

ՂՈՒՐՓՈՒՐԱԿԷՆ/ՂԸՐՓԸՐԱԿԷՆ - *գ.* Հորեղբոր կին: *Իմ ղուրփուրակէն լ'ավ կարպէտ ա կ'օրծում* (Բ):

ՂՕԲԻ - *գ.* Ձորահովիտ: *Մանմանը քըվօրը տանում ա մին ղօբում մօրթում, շօրէրը ըռնուտ պիրում, հօրը նըհաշ տամ* (Զ):

ՂՕԲՈՒՐ/ՂՈՒԲՈՒԼ *(թրք. kubur (ման, պատյան)* - *գ.* Որեւէ իր մեջը դնելու՝ պահելու տուփ՝ արկղիկ, հատկապես զենքի պատյան: *Տըէսնում ա՝ թաքավըէրէն կընէգ'ը մարթին սուրը ղօբուրան տուս կալավ, թաքավէրէն կըլխանը յէրը մին քանէ հէտ տուրուր տըվավ...* (ՆԼՂԺԲ, 44):

ՂՕՋ - *գ.* Տգեղ, այլանդակ: *Էտ վէզիրին էլ մին ղօզ ախճիգ' ա ինըմ* (Զ):

ՂՕՋԱ - *տեմ* ԿԸՆԳՕՂ:

ՂՕԹԷԼ - *տեմ* ԸՂՕԹԷԼ:

ՂՕԹԸՐ - *տեմ* ԹԱՓ (1, 2):

ՂՕԹԻ - *տեմ* ՂՈՒԹԻ:

ՂՕԹՄԱ - *գ.* 1. Խոտի խուրձ: *Ղօթման շըլակում ա, ք'ինամ* (Զ): 2. *տեմ* ԹԱՅԱ:

- Ղօթմա անէլ/տալ - 1. Խուրձ կապել՝ պատրաստել: *Խօտը հարում ա, ղօթմա անում, պիրում տօն* (Զ): 2. *տեմ* Թայա տալ:

ՂՕԹՄԱ-ՂՕԹՄԱ - *մ.* Խրձերով: *Էնքան խօտը Նաղաշը լօխ ղօթմա-ղօթմա կըրից հուրանց տօռնը* (Բ):

- Ղօթմա-ղօթմա անէլ - Խրձերի վերածել: *Խօտը հըվաքում ըն, ղօթմա-ղօթմա անում, կէս անում* (Բ):

ՂՕԹՈՒՐ *(թրք. qotur)* - 1. *տեմ* ՔՕՍ: 2. *տեմ* ՔՕՍՈՒՏ:

ՂՕԼ *(թրք. kol (թեւ, բազուկ)* - *տեմ* ԱՆԳՈՒՆ:

ՂՕԼԱՆ - *տեմ* ՂՈՒՇԽՈՒՆ:

ՂՕԼԱՋ - *տեմ* ՂՈՒԼԱՋ:

ՂՕԼԲ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ղօլբը տալ - *տեմ* Կալ[1]մաչ անէլ (2): *... Յէկավ ժըղօվուրթին ղօլբը տըվավ, տարավ* (ԼՂԲՔ, 276):

ՂՕԼԹՈՒՂ - *տեմ* ԿՈՒՌ(Ն)ԱՏԱԿ:

ՂՕՂ - *տեմ* ԸՂՕՂ:

ՂՕՂԷԼ - *տեմ* ԸՂՕՂԷԼ:

ՂՕՂՎԷԼ - *տեմ* ԸՂՕՂՎԷԼ:

ՂՕՃ(Ճ)ԱՂ - *տեմ* ՂՕՉՉԱՂ:

ՂՕՃ(Ճ)ԱՂԱՆԱԼ - *տեմ* ՂՕՉՉԱՂԱՆԱԼ:

ՂՕՃ(Ճ)ԱՂՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ՂՕՉՉԱՂՑ(Ը)ՆԷԼ:

ՂՕՃ(Ճ)ԱՂՕԹՈՒՆ - *տեմ* ՂՕՉՉԱՂՕԹՈՒՆ:

ՂՕՅՈՒՂ - *տեմ* ՂԱՅՈՒՂ:

ՂՕՆԱԽԼԸՂ/ՂՈՒՆԸԽԼԸՂ *(թրք. qonaqliq)* - *գ.* Հյուրասիրություն, հրավերք, ճաշկերույթ: *Թաքավէրը աշխարքիս*

չանք ուրխանըմ ա, քառասուն օր ղօնախլըղնի յա սարքըմ... (ՀԺՀ, V, 200):

- Ղօնախլըղ անէլ - Յյուրասիրություն կազմակերպել, հյուրասիրել: *Շինանցէք՝ ըտը՝ղ միշտ ղունըխլըղ ըն իլալ ընէլիս, ըտըրա հը՝տէ էլ անումը տիրալ ըն Ղունըխլըղէն թումբ* (ԱԱ, 47):

ՂՕՆԱՂ *(թրք. konuk)* - *գ.* 1. Նա, որ այցի է գնում մեկի տունը կամ հրավիրվում է որեւէ խնջույքի՝ հյուրասիրության, հյուր: *Քը՝փէն վախտը Խընջըլօզանց ղունըղնէրան մինը խըմում ա, վը՝ռէն ծակը կուրցընում* (Ձ): 2. Ուղեւոր՝ օտարական, որը օտար տեղում է հայտնվել: - *Ղօնաղը Ըստուծէնըն ա, բա՛լա, Ըստուծէն էլ մատաղ, ղունաղէն էլ,- ասըմ ա պառավ կընէգ՝ը, ղունաղէն տանում տօն* (ՆԼՂԺԲ, 27): 3. *փխբ.* Իր միջավայրի համար իրեն խորթ պահող անձ: *Էտ հարթնըն էլ հինչ հա՞րթը, ղօնաղ ա ուրանց տանը* (Ձ):

- Ղունաղու նըման ուրան պահէլ - Անհամարձակ լինել, անհարմար զգալ, քաշվել (հատկապես ճաշելիս): *Այան ասմա.- Այան մա՛տաղ, ղունաղու նըման մէ՛լ ը՝զ պահէլ, հաց կէ՛ր* (Ձ): 2. Տան տնտեսության հոգսերով չզբաղվել՝ չմտահոգվել (տան անդամի մասին): *Հարթնը վէր ղունաղու նըման ուրան պահից, էն տօնը տօն չի տը՝ռնալ* (Ձ):

- Ղօնաղ անէլ - Յյուրասիրել: *Էգ՝սը Բախշուն մարը կանչում ա լօխճին, լավ ղօնաղ անում* (ՆԼՂԺԲ, 97):

- Ղօնաղ ըղնէլ - Յյուրընկալվել: *...Փանի խանը Բարդի խանէրան մինին քըշտին ղօնաղ ա ընգընըմ* (ԼՂԲ, 333):

ՂՕՆԱՂ-ՂԱՐԱ *(թրք. konuk-qara)* - *գ. հոգն.* Հյուրեր: *Ըտըրանց տօնը ղօնաղղարա շատ ին կ՝ամ* (Ձ):

ՂՕՆԱՂՓԱՅԻ - *տե՛ս* ՂՈՒՆԸՂԱՓԱՅ:

ՂՕՆԱՂ *(թրք. kundak)* - *գ.* 1. Հրազենի, հատկապես հրացանի կոթ: *Վը՝ռսկանը ղունդաղավը թըխում ա կ՝ուլին կըլխէն, փախչում* (Ձ): 2. *տե՛ս* ՊԱՐՈՒՐ:

ՂՕՆԴԱՂՍԱՋ - *գ.* Ձինագործ, զենք պատրաստող արհեստավոր: *Դէրանց Տիկրանը լ՝ավ ղօնդաղսագ ա իլալ* (Ձ):

ՂՕՆԷԳ՝ - *տե՛ս* ԸՂՕՆԷԳ՝:

ՂՕՆՋ - *տե՛ս* ՂԸՆՋ:

ՂՕՇԱ *(թրք. qoša)* - *տե՛ս* ՃՕԽՏԱԿ:

ՂՕՇԱԼՈՒԼԱ *(թրք. qošalülə)* - *գ.* Երկփողանի հրացան: *Ղօշալանի յօր ա օնում, նըստում ծին, ք՝ինամ* (Ձ):

ՂՕՇԱ-ՂՕՇԱ *(թրք. qoša (ջուխտ)* - *մ.* 1. *տե՛ս* ՃՕԽՏ-ՃՕԽՏ: 2. Ջուգահեռ կերպով, զուգահեռաբար: *Էտ փանդէրը ղօշա-ղօշա մը՝կնում ա* (Ձ):

ՂՕՇԱՆԱՂԱՐԱ/ԳՕՇԱՆԱՂԱՐԱ - *գ.* Իրար կցված երկու թմբուկներից կազմված երաժշտական գործիք: *Ղօշանաղարան էլ միհէնգ՝վա հըրսընքը՝ցումը ածում չընը* (Բ):

ՂՕՇՈՒՆ *(թրք. košu)* - *գ.* 1. *տե՛ս* ՁՕՐՔ: *Միպտանկ թաքավէրը յէկալ ա ուրանն ղօշունավը չանդիրնի յէր թողալ քաղաքին չօրս ղօլավը...* (ՀԺՀ, V, 95): 2. Խումբ, բազմություն: *... Իրէք օր լըհա մին ղօշուն հընգէր-հըրըվանու հաց պէդմա տա, վէր բէքէփ չինին...* (ՁՏ, Բ, 40): 3. Ոհմակ: *Ըստուծանա բույրուղ ա կ՝ամ, վը՝ր կ՝ուլէրէն ղօշունը պիտի ք՝ինան փըլան խազայինին վըխճըրնէն օտէ* (ՀԺՀ, VII, 193):

ՂՕՉ *(պրս. ğuč, թրք. koč)* - 1. *գ.* Արու ոչխար, խոյ: *Շատ ըն ք՝ինամ, խըրէգ՝ ըն ք՝ինամ, յէշըմ ըն տէսնըմ՝ մին մէծ ղօչ՝ ժինջիլը պ՝ուգէրան կապած, ծառան կախ տըված* (ՀԺՀ, V, 309): 2. *ած. փխբ.* Արու: *...Աստուծ մէր շինացէ Թ՝ունի դանյուն մին ղօչ խօխա բախշից* (ՀԺՀ, VI, 177): 3. *տե՛ս* ՂՕՉՉԱՂ:

ՂՕՉԱ - *ած.* 1. Մեծ, աժդահա: *Կամ ա, տը՝սնում մին ղօչա օշափ ըտը՝ղ նըստած* (Ձ): 2. Ծեր, տարիքով: *Ղօչա մարթ ըս, հըմանչում չը՞ս* (Բ):

ՂՕՉԱՂ - *տե՛ս* ՂՕՉՉԱՂ:

ՂՕՉԱՂԱՆԱԼ - *տե՛ս* ՂՕՉՉԱՂԱՆԱԼ:

ՂՕՉԱՂՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՂՕՉՉԱՂՑ(Ը)ՆԷԼ:

ՂՕՉԱՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ՂՕՉՉԱՂՕԹՈՒՆ:

ՂՕՉԹՕՂ - *գ.* Խոյերին ոչխարների մեջ թողնելը՝ բեղմնավորման համար, ինչպես նաեւ դրա ժամանակը: *Ղօչթօղը վէր ըսքըսում ա, չուբընանէն չընդ-վընդ յընը ընդնում* (Բ):

ՂՕՉԻ - *տե՛ս* Ք՝ԱԼԼԱԳ՝ՕՁ: *Թուրանան Պուղուն կօշտը մին ղօչի յա կ՝ամ* (ՆԱԲ, III, 145):

- Ղօչի տալ - 1. Իրար պոզահարել, պոզերով իրար խփել: *Վէր ղօչի յընն տաս, կածանկ ա կույունաս, ուրօտուցը ընգընէս ա ախշարքըս* (ԱԱ, 16): 2. *փխբ.* Իրար հետ վիճել՝ կռվել: *Մընթընկընէգ՝ սաղ օրը էն ըն ղօչի տալիս* (Բ):

ՂՕՉԻ-ՂՕՉԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ղօչի-ղօչի անէլ/տալ - *տե՛ս* Ղօչի տալ:

ՂՕՉՉԱՂ/ՂՕՉԱՂ/ՂՕՃ(Ճ)ԱՂ *(թրք. kočak)* - *ած.* 1. Քաջ, կտրիճ: *Էտ թաքավէրին ինանում ա իրէք տընղա, իրէքընն էլ մինը մինան դանշանգ՝, մինը մինան ղօչչաղ...* (ՀԺՀ, V, 15): 2. *փխբ. տե՛ս* ԸՌԱՇԻՂ:

ՂՕՉՉԱՂԱՆԱԼ/ՂՕՉԱՂԱՆԱԼ/ՂՕՃ-(Ճ)ԱՂԱՆԱԼ - *չբ.* 1. Քաջ, կտրիճ դառնալ: *Էս տընղան մընծանում ա, ղօչչաղանում, տը՝ռնում մին սագ տընղամարթ* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* ԸՌԸՇԻՂԱՆԱԼ:

ՂՕՉՉԱՂՑ(Ը)ՆԷԼ/ՂՕՉԱՂՑ(Ը)ՆԷԼ/ՂՕՃ(Ճ)ԱՂՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՂՕՉՉԱՂԱՆԱԼ-ի:

ՂՕՉՉԱՂՕԹՈՒՆ/ՂՕՉԱՂՕԹՈՒՆ/ՂՕՃ(Ճ)ԱՂՕԹՈՒՆ - *գ.* 1. Քաջություն, կտրիճություն: *Ղօչչաղօթունը դարաբաղցուց Աստուծ ա տուվալ* (Բ): 2. *փխբ. տե՛ս* ԸՌԸՇԻՂՕԹՈՒՆ:

ՂՕՐԱ *(թրք. koruk)* - 1. *գ.* Խակ խաղող: *Խօխան ղօրա կէրավ, փօրը ցավից* (Բ): 2. *տե՛ս* ՂՈՒՐԸՆԷ: 3. *ած.* Խակ, տհաս, չհասունացած: *Գ՝ուլանը հանան ղօրա յա:*

ՂՕՐԱՆ - *տե՛ս* ՂՈՒՐԱՆ:

ՂՕՐԹ - *տե՛ս* ԸՂՕՐԹ:

ՂՕՐԹ - *տե՛ս* ԸՂՕՐԹ:

ՂՕՐԿԷԼ - *տե՛ս* ՂԱՐԿԷԼ:

ՂՕՐԿ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՂԱՐԿ(Ը)ՎԷԼ:

ՂՕՐՄԻ - *տե՛ս* ԸՂՕՐՄԻ:

ՂՕՐՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄՕԹՈՒՆ:

ՂՕՐՏ-ՂՕՐՏ - Գործածվում է կապակցության մեջ:

Ղօրտ-ղօրտ անէլ - *չբ.* Կռկռալ (գորտի մասին): *Կուրթնուկնէն ղօրտ-ղօրտ ըն անում, զանիլա տանում* (Բ):

ՂՕՐՓԷՐ *(գրբ. horteğbayr)* - *գ.* Հորեղբայր: *Ըտըրան էլ ինանում ա մին լ՝ավ ղօրփէր* (Ձ):

ՂՕՐՓՈՒՆ - *տե՛ս* ՂՈՒՐՓՈՒՆ:

ՂՕՐՕՂՉԻ/ՂՈՒՐՈՒՂՉԻ/ՂՕՐՕԽՉԻ/ՂՈՒՐՈՒԽՉԻ *(թրք. qoruqču)* - *գ.* Այգու՝ դաշտի՝ արոտավայրի եւն պահակ: *Ղօրօղչին յէշանում ա, տը՝սնում մին մարթ բաղան խաղու վա քընդէս* (Ձ):

ՂՕՐՕՂՉՕԹՈՒՆ/ՂՈՒՐՈՒՂՉՕԹՈՒՆ/ՂՕՐՕԽՉՕԹՈՒՆ/ՂՈՒՐՈՒԽՉՕԹՈՒՆ - *գ.* Այգու՝ դաշտի՝ արոտավայրի եւն պահակի զբաղմունքը՝ պահակություն: *Ղօրօղչօթունը վէր ինի վէչ, կ՝ուղօթունը կընշընտանա* (Բ):

Ճ

ՃԱԳԱՐ/ՃԱԿԱՐ *(գրբ. ճագար)* - *գ.* Նապաստակի նման կենդանի՝ ճագար: *Ճըգըրնէն վէր նի տը՛ռէն բաստանը, սաղ բարբադ կանին* (Բ):

ՃԱԹ - *տե՛ս* ՃԱԹ:

ՃԱԹ/ՃԱԹ *(վրաց. čat)* - *գ.* 1. Գարուց կամ կորեկից թխած հաց: *Պուղին էլ մին չօր սէվ ճաթ ա տանում օնում, տընում կօխկէն* (ՆԱԲ, 132): 2. *փխբ.* Կոշտ՝ անորակ հաց: *Էտ ճաթը հինչ ա՞, վէր օտում ըք* (Բ):

- Ճաթը ծօցումը փըշըր(վ)էլ - Հիասթափվել: *Խը՛ղճը հինչ ա՞նէ, կարում չի կօրծի նի մընէ, ճաթը ծօցումը փըշըրվալ ա* (Բ):

ՃԱԹ-ՃԱԹ - տե՛ս Պըտըռ-պատառ:

ՃԱԹՏԱԲՈՒՐԻ - *տե՛ս* ՃԱԹՏԱԲՈՒՐԻ:

ՃԱԹՏԱԲՈՒՐԻ/ՃԱԹՏԱԲՈՒՐԻ - *տե՛ս* ՃԱԹ:

ՃԱԹՏԻ - *տե՛ս* ՃԱՏՏԻ:

ՃԱԹՏԻ - *տե՛ս* ՃԱՏՏԻ:

ՃԱԼ(Լ)ՕՐ - *տե՛ս* ՉԱԼԼՕՐ:

ՃԱԽ - *տե՛ս* ՃԷԽ:

ՃԱԿԱՆԴԷՂ - *տե՛ս* ՃԱԿԸՆԴԷՂ:

ՃԱԿԱՏ *(գրբ. ճակատ)* - *գ.* 1. Մարդու եւ կենդանիների երեսի՝ աչքերից վեր գտնվող մասը: *Գ՛ուլլանն կէնում ա արչին ճըկատան, ըսպանում* (Ձ): 2. *փխբ.* Առարկայի աջակողմի վերին մասը կամ առաջակողմը: ... *Ըտէղ մին յէխծէ յըն շինում, ճըկատէն կ՛իրում.- Շահի մահը սըրօվ* (ԱԱ, 31):

- Ճակատը աշ տըված կաշի/թօքի/կըտըրված/կ՛ումաշու կաշի - *տե՛ս* ԹՕՔԻ:

- Ճակատը ծաղէգ՛/ղաշխա - Ճակատին մարմնի ընդհանուր գույնից տարբերվող գույնի նշան կամ մազափունջ ունեցող (կենդանի): *Պուղուն էլ մին ճակատը ծաղէգ՛ հէրէնջ ա ինում* (Ձ):

- Ճակատը մէռուն քըսած - *տե՛ս* Մէռունը իրը՛սէն:

- Ճակատը մօր քըսէլ - Անպատվել, զրպարտել, խայտառակել: *Էն հինչ կընէգ՛ ա՞, սաղ օրը էն ա հըրթնէրէն ճակատը մօր քըսէս* (Բ):

- Ճակատը յը՛տ ք՛ինիլ - *տե՛ս* Ունքամաչը յը՛տ կ՛ալ:

- Ճակատը նըմանալ - Շատ աշխատել, աշխատելուց քրտնել: *Ճակատըս նըմացալ ա, մինչը՛վ էտ քարը պուք ըմ տըվալ* (Ձ):

- Ճակատը շան կաշի - *տե՛ս* ԹՕՔԻ:

- Ճակատը պատավը կ՛ալ - 1. Ձեռնարկված գործը ձախողվել՝ արգելքի հանդիպել: *Հինչը օգ՛ում ըմ անիմ, ճակատըս պատավըն ա կ՛ամ* (Բ): 2. Խիստ զղջալ՝ փոշմանել: *Ալէգ՛ը ընէլանը յը՛տը հիշկան օգ՛ում ըս՝ ճակատըտ պատավը յը՛ք, օքուտ չի* (Բ):

- Ճակատը պէնդ - 1. *տե՛ս* ԹՕՔԻ: 2. Տոկուն, դիմացկուն, համառ: *Ճակատը պէնդ մարթ ա Համբօն, էնքան չըրչարվում ա, էլիա վըստակում չի* (Բ):

- Ճակատը պէց - *տե՛ս* Իրը՛սը պէց:

- Ճակատը պընդոցընէլ/տէմ անէլ/տէմ տալ - *տե՛ս* Իրը՛սը պընդոցընէլ:

- Ճակատ ինիլ - Անամոթ, պնդերես լինել: *Ընդըրա ճակատ օնէ, վէր ասալ ա, բիդի տանէ* (Բ):

- Ճակատ ճըկատու - Իրար դիմաց, դեմ-հանդիման: *Ճակատ ճըկատու վը՛ենն ըն կէնում, հօջանթ տամ* (Ձ):

- Ճըկատան պաչիլ - Հիացմունքը՝ գոհունակությունը արտահայտել, գովաբանել: *Թաքավէրը շատ ա հավան կէնում, կանչում ա, ճըկատան պաչում...* (ՀԺՀ, VI, 139):

- Ճըկատավըտ վազ տամ - Հեգնաբար՝ մտերմաբար ասվում է պնդերես մարդկանց:

- Ճըկատատ կէնա - *արհմ.* Թող քեզ լինի, չեմ ուզում: *Սէրգ՛ին ասմա.- Ցակատըտ ճըկատատ կէնա, ինձ հարկավէր չի* (Բ):

- Ճըկատէն ասէլ - *տե՛ս* Իրը՛սէն ասէլ:

- Ճըկատէն կ՛իրիլ - Նախասահմանել, կանխորոշել: *Էտ մըրքավուրը ասմա.- Էս խուխէն ճըկատէն կ՛իրէցէ, վար փըսակվէլի օրը սէլու տակ ընի, մը՛ռնէ* (ԱԱ, 82):

- Ճըկատէն կ՛իր(վ)ած մ՛ - Ինչպե՞ս իմանայի, ակնհայտ չէր: *Տըղան ասմա.- Ճըկատէն կ՛իրվածմ՛, յը՛ս հինչ ը՞մ գ՛ուդում, թա էն թաքավէրին ախճիգ՛ը ա* (Ձ):

- Ճըկատէն կ՛իր(վ)ածը ճինջվիլ չի - Ի վերուստ սահմանվածը արհեստականորեն հնարավոր չէ վերացնել:

- Ճըկատէն կ՛իր(վ)ած ինիլ - 1. Նախասահմանված լինել, նախասահմանվել: *Չըրչարվէլը դարաբաղցուն ճըկատէն կ՛իրվածմ ա* (Բ):

- Ճըկատէն յէշիլ - *տե՛ս* Իրը՛սէն յէշիլ:

- Ճըկատէն պօգ՛էր փըսնէլ - *տե՛ս* Պօգ՛էր անէլ:

- Ճըկատու զօռռուք - Մի կերպ, համառությամբ: *Ճըկատու զօռռուք էտ տօնը շինից, պըրծավ* (Ձ):

- Ճըկատու քըրթնօնք - *տե՛ս* Ա՛րթ՛ար քըրթնօնք:

ՃԱԿԱՏԱԿ՛ԻՐ - *տե՛ս* ՃԸԿԸՏԱԿ՛ԻՐ:

ՃԱԿԸՆԴԷՂ/ՃԱԿԱՆԴԷՂ - *տե՛ս* ՏԱԿ[1]:

ՃԱԿԱՐ - *տե՛ս* ՃԱԳԱՐ:

ՃԱՂ *(վրաց. ǵali (սայլի ճաղ, ցից)* - *գ.* 1. Մետաղյա կամ այլ նյութից սարքած բարակ ու կլոր ձողիկ՝ գործվածքներ հյուսելու համար: *Ախճիգ՛ը ճաղէրը յօր ա օնում, գ՛ուլբանն կ՛օրծում* (Ձ): 2. Պատշգամբի, սանդուղքների եւն կոդերի ձող: *Փալանքանէն ճաղը կօտըրում ա, խանը ըղնում ա տափը* (Ձ): 3. Սանդերքի ատամներից յուրաքանչյուրը: *Սընդէրքին ճաղէրը ծըռվալ ա* (Բ): 4. *տե՛ս* ԿՈՒԽԿԱՃԱՂ: 5. Անվաճաղ: *Ըրբէն չարխէն ճաղը կօտըրալ ա* (Բ): 6. Ձանազան բաների համար օգտագործվող մետաղյա նուրբ ձող: *Մին ճաղ ա յօր օնում, թակում* (Ձ):

ՃԱՂԱՏ *(գրբ. ճաղատ)* - *տե՛ս* ՔԱՉԱԼ:

ՃԱՂԱՐ *(պրս. čağār, թրք. čakir)* - *ած.* 1. Բաց կապույտ, կապտավուն: *Ալիքսանը, ճաղար աշկէրը չըռած, ասըմ ա.- Էտ դ՛ուզ ը՞ս ասըմ* (ՀԺՀ, V, 565): 2. Բաց կապույտ աչքեր ունեցող: *Ճաղար մարթը ժ՛ուլիգ՛ կինի* (Բ):

ՃԱՂԱՑ - *տե՛ս* ՃԷՂԱՑ:

ՃԱՃԱՄԱՆԻ - *տե՛ս* ԹՕՐՆԸՍՔ՛ԸՆ՛ԻՄ:

ՃԱՃԱՆ - *տե՛ս* ՀՕԹԱՆ (1):

ՃԱՃՕՌ - *ած., գ.* Կարճահասակ (կին): *Ճանճօռ կընէգ՛ը ըռաշիդ կինի* (Բ):

ՃԱՄԱՆ - *գ.* Վայրի խոտաբույսի տեսակ: *Ճամանը բաստանը կանալ ա* (Բ):

ՃԱՆԱ(Ն)Չ - *ած.* 1. Նախապես ճանաչված, ծանոթության մեջ գտնվող: *Քինամ ա ուրանն ճանանչ մարթկանցը անա պարթկ օգ՛ում* (Ձ): 2. Հայտնի, նախկինում արդեն հանդիպած՝ պատահած: *Էտ հըղէն ճանանչ ա ինում, ըտըրանավ ք՛ինամ ա* (Ձ): 3. Տեղյակ, իրազեկ: *Ինք՛ը ճանանչ ա ինում էտ ծըմըկնէրէն* (Ձ): 4. Հանրահայտ, հանրածանոթ: *Ամարասա վանքը ճանանչ վանք ա* (Բ):

ՃԱՆԱՊԱ(Ր) - *տե՛ս* ՃԸՆԱՊԱ(Ր):

ՃԱՆԱՊԱՐԷԼ - *տե՛ս* ՃԸՆԱՊԱՐԷԼ:

ՃԱՆԱՊԱՐՎԷԼ - *տե՛ս* ՃԸՆԱՊԱՐՎԷԼ:

ՃԱՆԳ՛ - *տե՛ս* ՉԱՆԳ՛:

- Ճանգ՛ը ըղնէլ - *տե՛ս* Ծը՛ռքը ըղնէլ:

- Ճանգ՛ը քըցիլ - *տե՛ս* Ծը՛ռքը քըցիլ:

- Ճանգ՛ ըղնէլ/տալ - 1. *տե՛ս* ԾԸԷՌՔ պիրիլ: Ճանգ՛ը ըղնէլ: *Ըստէղ թաքավէրը մաննը կըծըմ ա, վէր ուրանն անա մին*

բէթար խըմօղը ճանգ՝ ա ընգալ... (ՀԺՀ, VI, 99): 2. Հաջողվել, ստացվել: *...Պարիկամնէն շօռ յէկին, վէր մին շընօրքին մարթ ճարին, Ջուռնա-Տըմ-բըլան թափշուր անին, ճանգ՝ չընգավ...* (Ջ�տ, Բ, 2):

ՃԱՆԳԻԼ - *տե՛ս* ՉԱՆԳԻԼ:

ՃԱՆԳՎԻԼ - *տե՛ս* ՉԱՆԳՎԻԼ:

ՃԱՆՋ - *տե՛ս* ՃԱՆՋ:

ՃԱՆՋ/ՃԱՆՋ *(գրբ. ճանճ)* - *գ.* 1. Երկթեւանիների կարգին պատկանող միջատ՝ ճանճ: *Բուրդան մին ճանջ թըռչում ա, կամ մին հընգէրէն իրէսէն վը՞ր կամ* (ՆԼՂԺԲ, 132): 2. *տե՛ս* ՄԸՂԸՐԱՃԱՆՋ: 3. *փխբ.* Անհաշան էակ: *Օշափը տըղէն ասմա.- Տու հինչ ճանջ ը՞ս, վէր յը՞ս քըզ նըհը՞տ կըռը՞վ անիմ* (Ձ):

- Ճանջան յը՞ղ քամէլ - Շատ ժլատ՝ ագահ լինել: *Իզէն ճանջան յը՞ղ ա քամում, մարթու պէն չի տալ* (Բ):

- Ճանջավ անէլ - 1. Գլուխը շարժել՝ տարուբերել: *Ծին ճանջավ ա անում* (Բ): 2. Աշխատել ձեւացնել, գործի մեջ գլուխ պահել: *Խալխէրը կօրծ ըն անում, մէր Տօրք՝ըն էլ ճանջավ ա անում* (Բ): 3. *տե՛ս* Ճանջ փըռնէլ:

- Ճանջէրը իրը՞սէն ծէք՝ տալ - Շատ ծույլ՝ անճար լինել: *Ճանջէրը իրը՞սէն ծէք՝ տըված տըղէն հու բի՞դի ախճիգ՝ տա* (Բ):

- Ճանջը ածում ա, ճիճին՝ տանում - Մեկն աշխատում է, մյուսը՝ օգտվում՝ վայելում:

- Ճանջը մին պէն չի, ամիա վէր ըղնում ա թանէն մաչը, սաղ մուրտառում ա - *տե՛ս* Մուկունը մին պէն չի, ամիա վէր ըղնում ա կ՝ինուն կարասը, սաղ մուրտառում ա:

- Ճանջը՝ կօրած, աշկըտ՝ օռած - Ոչինչ առանց հետեւանքի չի անցնում:

- Ճանջը փօրան կընծալ ա - Հեգնաբար ասում են հղի կնոջ մասին:

- Ճանջին տըզգօցը ըսկանվալ - Կատարյալ լռություն տիրել: *Թամադան ասմա.- Յը՞ս վէր խօսում ըմ, բիդի ճանջին տըզգօցը ըսկանվա* (Ձ):

- Ճանջ պահէլ - Մեղվաբուծությամբ զբաղվել: *Յու ճանջ ա պահում, լ՝ավ ք՝ար ա անում* (Բ):

- Ճանջ պահօղ - *տե՛ս* ՃԻՆՋԱՊԱՀ:

- Ճանջու զակուսկի - *հեգն.* Փոքրամարմին էակ: *Հինչ ա՞խճիգ՝, ճանջու զակուսկի յա* (Բ):

- Ճանջ փըռնէլ/քըշիլ - Գործ չանել, պարապ-սարապ մնալ: *Ջանիլ տըղա յա, մին պէն ընէլին տը՞ղ սաղ օրը էն ա ճանջ փըռէս* (Բ):

ՃԱՆՏԸՌԱԿՈՒԼԻ - *տե՛ս* ՃԸՆՏԸՌԸԿՈՒԼԻ:

ՃԱԾ - *տե՛ս* ՃԱՇԸ:

ՃԱՇԸ/ՃԱԾ *(գրբ. ճաշ, պրս. čašt (նախաճաշ)* - *գ.* 1. Կեսօրին ուտելու կերակուր, հատկապես՝ բրնձով փլավ: *Օշափը գ՝ուդ՝ում ա, թա մարը ճաշ ա իփա՝լ, ղըզղանը յօր ա օնում, տընում ըռաչին...* (ՆԱԲ, 27): 2. Ճաշելը, ճաշկերույթ: *Ճա՝շ՝ան յէտը տըղէրք՝ը ք՝ընա՝մ ըն՝ մին պատառ շօռ կ՝ան, ՝ուրանց հէտէ ասին, խօսին* (ՀԺՀ, V, 354): 3. Ճաշելու ժամանակը, կեսօր: *Ճա՝շին հ՝ընձ ընօղնէն հըվաքվում ըն ըխպիրին ղըրաղէն* (Ձ):

- Ճա՝շ անէլ - Կերակուր, հատկապես՝ բրնձով փլավ եփել: *Այան պատառ ճա՝շ ա անում, տամ ապուն* (Բ):

- Ճա՝շը իփիլ (մինին) - Մեկին ծեծել՝ խիստ պատժել: *Կընէգ՝ը թա.- Կօրի ք՝ինա՝մ, մարթըս վը՞ր գ՝իդա՝, կ՝իլա՝կան ա ճա՝շըտ իփի...* (ՀԺՀ, VII, 364):

ՃԱՇԹՕՂ - *տե՛ս* ՃԱՇԹՕՂ:

ՃԱՇԹՕՂ/ՃԱՇԹՕՂ - *գ.* 1. Ճաշելու համար սահմանված ընդմիջում: *Ճա՝շթօղ ըն անում, էլիա հ՝ընձը ըսքըսում* (Ձ): 2. *տե՛ս* ՃԱՇԸ (3):

ՃԱՇՔՕՆ - *տե՛ս* ՃԱՇՔՕՆ:

ՃԱՇՔՕՆ/ՃԱՇՔՕՆ - *գ.* Հետճաշյա քուն, ճաշելուց հետո քնելը: *Ճա՝շքօնէն վախտը ըտըրանց անա մինը թաքուն նի յա մընում ախօռը, ծիյը՞նը պէց թօղնում* (Ձ):

- Ճա՝շքօն տալ - Ճաշելուց հետո քնել: *Էտ հարթանը ամմէն օր ճա՝շքօն ար տաս, ըսկէսվօրը իստէրը նի կընցընէս* (Ձ):

ՃԱՇՕՑ - *տե՛ս* ՃԱՇՕՑ:

ՃԱՇՕՑ/ՃԱՇՕՑ - *գ.* Ճաշի ժամերգության ժամանակ կարդացվող հատվածներ հին եւ նոր կտակարաններից եւ այդ հատվածները պարունակող գիրք: *Դէրը ճա՝շօցը պէնում ա, կարթ՝ում* (Ձ):

ՃԱՇԿԷՐՈՒԹՒՆ - *տե՛ս* ՂՕՆԱԽԼԸՂ: *Ճաշկէրո՝ւթ՝ունը վէր պըրծընում ա, Պըլը-Պուղին յը՞ր ա կէնում, տ՝ուս կ՝ամ* (Ձ):

ՃԱՊԸՌԷԼ - *տե՛ս* ՃԸ՞ՊԸՌԷԼ:

ՃԱՊԸՌՎԷԼ - *տե՛ս* ՃԸ՞ՊԸՌՎԷԼ:

ՃԱՊԻ - *գ., ածական.* Ճարպիկ ու խորամանկ (մարդ): *Էտ ճապին սաղ շինացուց խա՝փ՝ում ա* (Ձ):

ՃԱՊԿԷ/ՃԱՊԿԻ/ՃԷՊԿԷ/ՃԱՓԿԷ/ՃԱՓԿԻ/ՃԷՓԿԷ *(գրբ. ճապուկ (դյուրաթեք, ծռմռկող)* - *գ.* Հոնազգիների ընտանիքին պատկանող ծառատեսակ: *Տ՝ու մի ասիլ, մըհակը լըհա՝ ճապկէ ծառան ա ինըմ* (ՀԺՀ, V, 57):

- Ճապկէ ճըպատ - 1. Ճկուն, դյուրաթեք: *Հինչ ա՞, ճապկէ ճըպատ ա՞, վէր ծըռըցընիմ* (Ձ): 2. Գեղիրան, նրբակազմ: *Ախճիգ՝, հինչ ա՞խճիգ՝, մին ճապկէ ճըպատ* (Ձ):

ՃԱՊԿԻ - *տե՛ս* ՃԱՊԿԷ:

ՃԱՊՈՒԷԼ - *տե՛ս* ՃԸ՞ՊԸՌԷԼ:

ՃԱՌ - *տե՛ս* ՋԱՌ:

ՃԱՌԹ - *տե՛ս* ՃԱՐԹ:

ՃԱՌԹԷԼ - *տե՛ս* ՃԱՐԹԷԼ:

ՃԱՌԹ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՃԱՐԹ(Ը)ՎԷԼ:

ՃԱՌԼԱՄԻՇ - *տե՛ս* ՋԱՌԼԱՄԻՇ:

ՃԱՌՉԻ - *տե՛ս* ՋԱՌՉԻ:

ՃԱՏՏԻ - *տե՛ս* ՃԱՏՏԻ:

ՃԱՏՏԻ/ՃԱՏՏԻ/ՃԱԹՏԻ/ՃԱԹՏԻ/ՃԱՔՏԻ/ՃԱՔՏԻ - *գ.* Հին պարատեսակ, որ պարում էին այլակերպված, դիմակավորված, ցնցոտիներով՝ նմանակելով տարբեր մարդկանց: *Ամմէն մարթ չի կարէլ ճատտի պար կ՝ա* (Ձ):

- Ճատտի տալ - 1. Այդ պարը պարել: *Իզէտ վէր ճաթտի յա տամ, լօխ ծընընդոտում ըն* (Ձ): 2. *փխբ.* Չարչարվել, տանջվել: *Խօխան մընամ ա էն կընգանը ծէրքէն ճատտի տայիս* (ՆԱԲ, 50):

ՃԱՐ *(գրբ. ճար, պրս. čār, թրք. čare)* - *գ.* 1. Միջոց, հնար: *Խէղճ Պուղին շատ ա մընտածըմ, վէրչը տէսնըմ ա, վէր ՝ՕրիՀ ճար չի կա, համաձայնըվում ա* (ՆԼՂԺԲ, 91): 2. Դեղ, դարման, բուժանյութ: *Դօխտուրը մին ճար ա տամ, թա.- Վէր խըմիս, էլ վը՞ննէրըտ ցըվըլան չի* (Ձ): 3. Թույն: *Ճարը խըմընցընում ըն, էտ մարթին ըսպանում* (Ձ):

- Ճար անէլ - Միջոց գտնել, դարման անել: *Էլ դօխտուր չի թօղում, հընցընում ա, վը՞չ մինըն կարում չի ճար անէ* (ՀԺՀ, VII, 202):

- Ճարէրը ճ՝ուր տը՞ռնալ - Բժշկությունը չօգնել, հիվանդը մեռնել: *Շատ դօխտուրի կօշտ տարէն, ամիա ճարէրը ճ՝ուր տը՞ռավ* (Ձ):

- Ճարը կըտըրած - 1. Ճարահատյալ, ստիպված: *Ճարը կըտըրած ք՝ընում ա հանդին լ՝ից ընում, մինչէվ հ՝ուր կ՝ամ ա* (ՆԱԲ, 51): 2. Ողորմելի, թշվառ: *Էտ մարթը ճարը կըտըրած մարթ ա ինա՝ում, կարում չար թա կըլ՝օխը պահէ* (Ձ):

- Ճարը կըտըրէլ - 1. Միջոցները սպառվել, այլեւս հնար՝ միջոց չունենալ: *Ճարը կըտըրալ ա, ք՝ը՞ցալ ա խանէն ըռաշկէն չօքալ, թա.- Ըռազի յըմ, մինակ թա տըղէս պէց թօղէ* (Ձ): 2. Հոգնել, ուժասպառ լինել: *Էնքան կօրծ ըրէ, լափ ճարըս կըտըրից* (Բ):

- Ճա՞րը/ճա՞րըս/ճա՞րըտ հինչ - Ի՞նչ կարող է/եմ/ես անել, կամա-ակամա, ուզած-չուզած: *Ասում ա.- Ճա՞րըս հինչ, բիդի ք՝ինիմ* (Ձ):

- Ճարը ճուվարանը ըղնէլ/ճուվարան տը՞ռնալ - *տե՛ս* Ճարը կըտըրէլ:

- Ճարը/ճարըս/ճարըտ նա՝ղը՞, ճուվարան - *տե՛ս* Ճա՞րը հինչ:

- Ճարը տը՞սնալ - *տե՛ս* Ճար անէլ:

- Ճար տալ - *տե՛ս* ՃԱՐԷԼ (2):

- Ճարումը ճար ինի - Եթե հնարավորություն ունենա: *Ճարումը ճար ինի, ըստրան կըսպանէ* (Բ):

- Ճարումը ճար ինի, թըրթէվունքան մազ՝ պուք կըտա - Ասում են շատ ժլատ մարդկանց մասին:

ՃԱՐԱՀԱՏՅԱԼ - *մ., ածական.* Ճարը կըտըրած:

ՃԱՐ-ԴԱՆՐՄԱՆ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ: *Ըստրան էլ մին լալէգ՝ ախճիգ՝ ա լալ, հինչ ճար-դանրմանն ըրալ ըն, օքութ չի ըրալ* (ԱԱ, 60):

ՃԱՐԷԼ[1] - *նբ.* Ձեռք բերել, գտնել, հայթայթել: *Տէս ա ընգընըմ, տէն ա ընգընըմ, վէրչը մին պառավի տօն ա ճարըմ* (ՀԺՀ, V, 21):

ՃԱՐԷԼ[2] - *նբ.* Թունավորել, դեղել: *Մէհէտ էլ յօրդանը ճըրէս ա, վէր կ՝ան քօն ինին, կըտօրվին* (ՀԺՀ, V, 473):

ՃԱՐԸՃՈՒՐ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ:

ՃԱՐԸՎԱՐ - *տե՛ս* ՃԱՐ-ՎԱՐ:

ՃԱՐԸՓԻԹԻԳ՝ - *տե՛ս* ՃԱՐ-ՓԻԹԻԳ՝:

ՃԱՐԹ/ՃԱՌԹ - *գ.* Մասսայական կոտորած, ջարդ: *Էտ ճարթան մինակ մին խօխա յա ըզըդվէս* (Ձ):

- Ճարթ տալ - Մասսայաբար կոտորել, ջախջախել: *Թաքավէրին դօշունը նի յա մընում էտ շէնը, ճարթ տամ* (Ձ):

ՃԱՐԹԷԼ/ՃԱՌԹԷԼ *(գրբ. ջարդեմ)* - *նբ.* 1. Կոտրել, ջարդել: *... Էս տըղան, հիշքան վը՛ր օժըմը կա, էրկու ծը՛րքավ պը՛նդ հօփ ա տամ, ճօխտ ծը՛րքէրը ճարթըմ...* (ՀԺՀ, VI, 112): 2. *տե՛ս* Ճարթ տալ:

ՃԱՐԹԸՎԷԼ/ՃԱՌԹԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՃԱՐԹԷԼ-ի:

ՃԱՐ-ՃԱՄՓԱ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ:

ՃԱՐ-ՃԱՐԱՆ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ:

ՃԱՐ-ՃԸՐԱԿԱՆ - 1. *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ: 2. *տե՛ս* ՃԱՐ-ՄԱԴԱՐ:

ՃԱՐ-ՃԻՐԱ՝Ք՝ - *տե՛ս* ՃԱՐ-ՄԱԴԱՐ:

ՃԱՐ-ՃՈՒՐ/ՃԱՐԸՃՈՒՐ - *գ.* Դեղ եւ դարման, դեղ եւ սփոփանք, փրկության տարբեր միջոցներ: *Վէշ մին ճար-ճուր օքուտ չի անում, թաքավէրը մը՛ռնում ա* (Ձ):

- Ճար-ճուր անել - Բոլոր միջոցները ձեռնարկել, դեղ ու դարման անել: *Էս վէզիրին մին ախճիգ՝ ա ինում, միշտ փօրը ցըվէյիս, էնքան ճար-ճուր ըն անում, ք՝ըմանգ՝ չի անում* (ՆԼՂԺԲ, 40):

ՃԱՐ-ՄԱԴԱՐ - *գ., ածական.* Մինուճար, միակ ունեցածը՝ օգնականը՝ հույսը (սովորաբար ասվում է միակ զավակի մասին): *Էտ կընգանը ճար-մադար մին ախճիգ՝ ա ընում* (ՆԼՂԺԲ, 27):

ՃԱՐ-ՎԱՐ/ՃԱՐԸՎԱՐ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ: *Ըստը՛ղ հիշքան ճարըվար ըն անըմ, կարըմ չընն, թա ախճիգ՝ը օխծան ըզադին* (ՀԺՀ, VI, 208):

ՃԱՐՎԷԼ[1] - *կբ. եւ չբ.* ՃԱՐԷԼ[1]-ի:

ՃԱՐՎԷԼ[2] - *կբ. եւ չբ.* ՃԱՐԷԼ[2]-ի:

ՃԱՐՏԱՐ *(գրբ. ճարտար)* - *ածական.* Վարժ, հմուտ, ճարտար: *Ճարտար ուստա յա Ղուլգ՝անգը* (Բ):

ՃԱՐ-ՓԻԹԻԳ՝/ՃԱՐԸՓԻԹԻԳ՝ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ: *Թաքավէրը խօսկ ա տամ համ ՝ուրանն ալագ՝ծգ ախճիգ՝ը տա, համ թաքավէրութունէն կէսը, ամմա էլիա ճարըփիթիգ՝ անօղ չի տ՝ուս կ՝ամ* (ՀԺՀ, V, 580):

ՃԱՓԿԷ - *տե՛ս* ՃԱՊԿԷ:

ՃԱՓԿԻ - *տե՛ս* ՃԱՊԿԷ:

ՃԱՔ - *գ.* Ճաքած տեղը, ճեղք, ճեղքվածք: *Ըստրա ճըքէրումը սառնէ լ՝ուլէք՝ կան, վար ըմըռնէն տաքումըն էլ հանլ՝ում չի* (ԱԱ, 44):

- Ճաք տալ - *տե՛ս* ՃԱՔԷԼ:

ՃԱՔԷԼ - *չբ.* 1. Ճաք բացվել, երկար ու բարակ գծով պատռվել: *Կարասը վէր ա ըղնում, ճաքում* (Բ): 2. *փխբ.* Սաստիկ զայրանալ, համբերությունից դուրս գալ: *Կընէգ՝ը ճաքում ա, ամմա մարթին վէջը չի* (Ձ): 3. *փխբ.* Խիստ նեղվել՝ ուժասպառ լինել (դժվարին գործից, շոգից, հուզմունքից եւն): *Լափ ճըքէցէնք՝, մինչը՛վ էս կօրծը պըրծէնք՝* (Բ):

ՄԱՉԱԿ/ՄԷՉԱԿ/ՄԻՉԱԿ *(գրբ. միջակ)* - *ած.* Միջին տեղը բռնող, միջակ: *...Դէրը կամ ա հըղըցէն մաչակ տը՛ղը վը՛ննը կէնում...* (ՀԺՀ, VII, 271):

ՄԱՉԱՆ[1] - *գ. ծծկ.* Աղջնակի սեռական անդամ:

ՄԱՉԱՆ[2] - *մ.* Հնարովի՝ ինքնահնար ձեւով: *Դասատուն էլ դէ հինչ ա՞սէ. թումբէն անում օնէ՞, վէր ասէ, լըհա մաչան ասում ա՝ Բըլըրի գագաթ* (ԱԱ, 46):

ՄԱՉԸՄԸ - *տե՛ս* ՄԱՉՈՒՄԸ:

ՄԱՉԻԼ - *նբ.* 1. Վերմակի՝ ներքնակի մեջը բուրդ՝ բամբակ լցնել եւ կարել: *Ոծշանկը մաչում ա, ղըրաղ տինում* (Զ): 2. Հավի՝ նապաստակի եւն փորը բրնձով՝ թթվեղենով եւն խորիզ լցնել՝ եփելու համար: *Հավը մաչում ա, տինում կըրակէն* (Բ):

ՄԱՉԿԻՆԻՍ/ՄԱՇԿԻՆԻՍ - *տե՛ս* ՄԱՉՂՕԼ: *Տահանց անա մինը օժավ ա ինում, հընգէրէն կուփէ յա տամ, քըցում մաշկինուս* (ԼՂԲՔ, 270):

ՄԱՉՄՈՒՐԹ - *գ.* 1. Ներսի պարունակությունը: *Դուշանկէն մաչմուրթը տուս ըն տամ, ծախում* (Զ): 2. Գրաստի բեռան աջ եւ ձախ կողմերի արանքի պարունակությունը: *Ճուրղուտուննէն պէռնում ա էշին, մաչմուրթըն էլ քօթուկ նի տամ* (Բ):

ՄԱՉՂՕԼ/ՄԱՇՂՕԼ/ՄԱԺՂՕԼ - *գ.* Ներսը, ներսի կողմը: *Տօռնը կօտրում ըն, նի մընում մաչղօլ, տը՛սնում մարթ չի կա* (Զ):

ՄԱՉՆԱԿ - *տե՛ս* ՄԱՇՆԱԿ:

ՄԱՉՏԸ՛Ղ/ՄԱՇՏԸ՛Ղ - *գ.* Իրարից հեռու երկու կետերի՝ տարածությունների միջին մաս, մեջտեղ: *Էրկու շէնին մաչտը՛ղը մին յը՛խծէ յըն շինում* (Զ):

- Մաչտը՛ղ ըղնէլ/մընէլ - *տե՛ս* Մաչ ըղնէլ:

- Մաչտը՛ղ պիրիլ/քըցիլ - Տրամադրել, ներկայացնել, հանդես բերել: *Սուդեն վախտը շատ պէն ըն մաչտը՛ղ պիրում* (Զ):

- Մաչտը՛ղ փուլ խաղ անէլ - Մի բան փողով՝ կաշառքով գլուխ գալ, կաշառել, կաշառք տալ: *Ասում ա.- Էտ տիժէր կօրծ ա, մինչը՛վ վէր մաչտը՛ղ փուլ չի խաղ անէ, ամանլ չի կըլական* (Զ):

- Մաչտը՛ղ օտէլ, ղըրաղ/տուս տը՛ղ շօռ տալ - Բարիքներից օգտվել՝ դրանց ստեղծման հետ կապված անախորժություններից խուսափելով: *Մաչտը՛ղ օտում ա, ղըրաղ շօռ տամ, էն հինչ մարթ ա՞* (Բ):

ՄԱՉՈՒՄԸ/ՄԱՉԸՄԸ - *մ.* Հոգում, իր մեջ, ներքուստ: *Մը՛ծ օշափը մաչումը կըզնըվում ա, լօք տամ, էն ընգունին վը՛ննը կէնում* (ՆԱԲ, 31):

- Մաչումը կըտօրէլ - Ներքուստ զայրանալ՝ հուզվել, բայց չարտահայտվել, զայրույթը՝ հուզմունքը մի կերպ զսպել: *Հանկուվէրը էս դօնումըս թունդումը կըզնըվէս ա, մաչըմըն էլ կուտուրէս* (ՀԲ, 343):

ՄԱՋԱ - *գ.* Ջգեստի թեւի եզր: *Ծը՛ղքը կօխում ա կարասը, մաջան յըխտոտում* (Զ):

ՄԱՋԱԼ - *տե՛ս* ՄԸՋԱԼ:

ՄԱՌ[1] *(գրբ. մառ (մռայլ))* - *գ.* Գինու՝ քացախի երեսին կապած փառի բարակ շերտ: *Քըցախէն իրը՛սը մառ ա կապալ* (Բ):

ՄԱՌ[2] - *գ.* Երգելու համար անհրաժեշտ ձայն: *Դէրը մառ չօնէ, վէշ մինը ըսկանում չի* (Զ):

ՄԱՌԼԻ *(ռուս. марля, ֆր. marli)* - *գ.* Ծակոտկեն թեթեւ կտոր, շղարշ: *Մառլին յօր ա օնում, յարան պըտատում* (Զ):

ՄԱՌՄԱՌ - *տե՛ս* ՄԱՌՄԱՌ:

ՄԱՍ *(թրք. mest)* - *տե՛ս* ՉՈՒՍՏ: *Տանում ա ծախում, մին ճօխտ մանս ինք օնում, քըցում վը՛ննէրը, կամ* (ՀԱԲ, 15, 55):

ՄԱՍԱԲ - *տե՛ս* ՄԱՍՍԱԲ:

ՄԱՍԱԺ - *տե՛ս* ՄԱՍՍԱԺ:

ՄԱՍԱԼ *(արաբ., թրք. mesel, պրս. māsāl)* - *գ.* 1. Արձակ կամ չափածո ոչ մեծ այլաբանական երկ, առակ, զրույց: *Մին անումը յէր իլանծ մարթ ա իլալ՝ մաստուն, մանալ կիրօղ* (ԱԱ, 58): 2. Դժվարիմաց այլաբանություն, հանելուկ: *Էտ մանալը վէշ մինը կարում չի կըլօխ ըղնէ* (Զ): 3. Իմաստալից խոսք, առած: *Թամադան բիդի կարէ մանալնէրավ խօսէ* (Բ):

- Մանալ վէր պիրիլ - Երկար խոսել՝ պատմել: *Ջավէնը մանալ ա վէր պիրում, ըտըրանց կօրծա քըցում* (Զ):

ՄԱՍԱԼԱ *(թրք. masala)* - *գ.* Ատաղձ, շինանյութ: *Դուլգանը մանալա յա ինք օնում, մին լավ կամօդ շինում* (Զ):

ՄԱՍԱԽՔ/ՄԱՍՕԽՔ - *գ.* Գութանի՝ արորի խարազանն ու համը միացնող փայտե՝ երկաթե սեպ: *Մասախքը տուս ա կամ, մաճկալը մընամ ա մանալ* (Զ):

ՄԱՍԱՆ - *գ.* Արորի՝ համնի եւ լուծի միջեւ գտնվող մասը: *Մանանը պէնդ փանդա կըշինին* (Բ):

ՄԱՍԱՆՕՐԻՆ/ՄԱՍՍԱՆՕՐԻՆ - *գ.* Ավելորդ երկարաբանություն, զրախոսություն: *Ըտըրա մասանՕրինան լօխճին զանիլան տանում ա* (Բ):

- ՄասանՕրին անէլ/կընցէլ - Երկար խոսել, նույն բանը մի քանի անգամ ասել՝ պատմել: *Տէսնըմ ա, վէր Հէրսիլան ճուրը կակօղ կընէգ ա, մասանՕրին ա կընցըմ* (ՋՏ, Ա, 169):

ՄԱՍԻՆ - *կ.* Վերաբերմամբ, նկատմամբ: *Էտ մասին նա ուրան ծընՕղնէրին ասըմ ա* (ՀԺՀ, V, 168):

ՄԱՍԼԱՀԱԹ - *տե՛ս* ՄԸՍԼԸՀԱԹ:

ՄԱՍԽԱՐԱ *(արաբ. masxara (խեղկատակ), թրք. maskara)* - *տե՛ս* ՏԸՆԱՋ: *Առաջնէրում մէլիքնէրը շատ ըն մասխարա ըրալ քասիբ-քուսուբնէրէն...* (ԲՀԲ, 200):

ՄԱՍԽԱՐԱՋԻ *(թրք. masxareji)* - *տե՛ս* ՏԸՆԱՋՋԻ:

ՄԱՍԽԱՐԱՎԱՋԻ - *տե՛ս* ՏԸՆԱՋՎԱՐԻ:

ՄԱՍԽԱՐԱՎԱՐԻ - *տե՛ս* ՏԸՆԱՋՎԱՐԻ:

ՄԱՍԽԱՐԱՏԸ՛Ղ - *տե՛ս* ՏԸՆԸՋԱՏԸ՛Ղ:

ՄԱՍԽԱՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՏԸՆԸՋՕԹՈՒՆ:

ՄԱՍԿԱ *(ռուս. маска, իտ. maschera, ֆր. masque)* - գ. Դիմակ: *Մասկա յա քընցՀում, քՀինամ, վէր ճընանչին վէչ* (Ձ):

ՄԱՍՆԱԿՑԵԼ *(գրբ. մասնակցեմ (մասն հանել՝ ունենալ)* - չբ. Մասնակից լինել, մասնակցություն ունենալ: *Էտ մարթըտ էլ քՀիս ա՝ բադարաքՀին մասնակցէ* (ՀԺՀ, V, 262):

ՄԱՍՆԸ *(գրբ. մասն)* - գ. 1. Մաս, բաժին, հատված: *Մին մասնը պըտատում ա, դարկում ախպօրը տօնը* (Ձ): 2. Հաղորդություն՝ օրհնած նշխար եւ գինի, որ, իբրեւ Քրիստոսի մարմին եւ արյուն, ճաշակում են հավատացյալները: *ՔՀինամ ըն յըէխծէն, մարթը ՀուրՀն մասնը յօր օնում, տՀուս կՀամ* (Ձ):

- Մասնը առնել - Հաղորդվել, հաղորդություն ընդունել: *ՉՀուլըցէ հայէրը կՀամ ըն շըՀՀարը, վէր մասնը առնին...* (ՋՏ, Ա, 189):

ՄԱՍՍԱԲ/ՄԱՍՍԱԲ *(արաբ. mushaf, պրս. māshāf (օրենսգիրք)* - գ. Հավատ, դավանանք: *... Մէր հային վէրըն ա՞ մասսաբու ղուլլուղ ըրալ, վէր յէս անիմ...* (ՋՏ, Ա, 82):

ՄԱՍՍԱԺ/ՄԱՍԱԺ *(ռուս. массаж, ֆր. massage)* - գ. Մերժում, մաժում: *Մասաժը ջանէն օքութ ա* (Բ):

- Մասսաժ անել - Մերսել, մաժել: *Այան ասմա.- ՄիհէնգՀվա հարթնէրը ջընըրնէն մասսաժ ըն անում, յըէտնան կօրծ անում* (Բ):

ՄԱՍՍԱՆՕՐԻՆ - *տե՛ս* ՄԱՍԱՆՆՕՐԻՆ:

ՄԱՍ[1] - գ. Որեւէ բան անելու հարմար ձեւ՝ միջոց: *ՀՀնձ ընէլին մաստը բիդի գՀիդՀա, թա չէ կարէլ չըս* (Բ):

- Մաստը փըռնել/ըքթեքնալ - Հարմար ձեւ՝ միջոց ընտրել: *Մաստը փըռնում ա, ըսքըսում քՀՀրթՀուկը ճըրդօտէլը* (Ձ):

ՄԱՍ[2] *(գրբ. մաստ (պինդ, խիստ, խիտ)* - գ., *ածական.* 1. Դժվարամարս (կերակուր, ուտելիք): *Կուրկուտը մաստ խորՀգՀ ա* (Բ): 2. Տոկուն, դիմացկուն (մարդ, առարկա): *Մաստ մարթ ա իլՀալ Սուղումուն դային* (Բ):

ՄԱՍՏԱԿ *(հուն. mastixč)* - գ. 1. *տե՛ս* ՍԱՂՈՒՆՁ: 2. *փխբ.* Չնչին բաժին, որից մարդ խռովում է: *Էտ մաստակը հինչ ա՞, վէր ինձ ըս տամ* (Ձ):

ՄԱՍՏԱՆ - *ածական., գ.* Մեծ օգուտ տվող, ընտանիք կերակրող (կով): *Մաստանը ըստակում ա, Իլյազէն խօխէնքՀը մընամ ըն տՀուզնը* (Ձ):

ՄԱՍՏՈՒՆ - *տե՛ս* ԻՄԱՍՏՈՒՆ:

ՄԱՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ԻՄԱՍՏՕԹՈՒՆ:

ՄԱՍՐԱՖ *(արաբ., թրք. masraf)* - գ. Ծախս, ծախսեր: *... Կուճի ախճիգՀը ասում ա.- Լանվընն էն ա, վըէր թուփ անիմ, բանքՀամ մին պէնու մանսրանփ տէռնա* (ՀԺՀ, VI, 145):

- Մանսրանփ անց կընցընէլ - Մի բանի ծառայեցնել: *...Նըստա յա կընաս, կընրէս չի մանսրանփ անց կընցընէ* (ՀԺՀ, V, 591):

ՄԱՍՈՒԼ - *տե՛ս* ՄԱՍՈՒԼ:

ՄԱՍՈՒԼ/ՄԱՍՈՒԼ - *տե՛ս* ԲԱՐ:

ՄԱՍՈՒՆՔ *(գրբ. մասունք)* - գ. Թանկագին՝ սրբազան բան: *Ասում ա՝ էտ խաչը մասունք ա, կարէլ չըմ ծախիմ* (Ձ):

ՄԱՍՕԽՔ - *տե՛ս* ՄԱՍԱԽՔ:

ՄԱՎԶԷՐ/ՄԱՈՒԶԷՐ *(ռուս. маузер, գերմ. Mauser)* - գ. Ավտոմատ ատրճանակի տեսակ՝ մաուզեր: *... Մավզէրը տՀուս ա օնում, վըէր յիրանՀ անէ վըէր քընցի, մինգէլ խազայինին վէրչին խօսկը մըէտընն ա քընցՀում, յէտ քաշում...* (ՀԺՀ, VII, 138):

ՄԱՏ *(ռուս. мат)* - գ. Շախմատի խաղում արքայի այնպիսի դրություն, երբ հնարավոր չէ պաշտպանվել հակառակորդի հարվածից, ինչն էլ ենթադրում է պարտություն: *ՀՀարը ասմա.- Մատ ըս, նըհախ տըէղան չընրչարվէլ մէ՛չ* (Ձ):

- Մատ անել - 1. Շախմատի խաղում հակառակորդին պարտության մատնել: *Շախմատ ըն խաղ անում, ՀՀաբին ԿՀանփՀուն մատ ա անում* (Ձ): 2. *փխբ.* Անսպասելի կերպով մեկին լռեցնել՝ ձախողման մատնել: *Մարթը լՀըհա օգՀում ա խօսէ, կընէգՀը մատ ա անում* (Ձ):

ՄԱՏԱԾԻԿԸԼ/ՄԱՏԱԾԻԿԼԷՏ/ՄԱԾԱԿԼԷՏ/ՄԱԾԻԿԼԷՏ *(ռուս. мотоцикл, ֆր. motocucle)* - գ. Ներքին այրման շարժիչով աշխատող երկանիվ կամ եռանիվ փոխադրամիջոց, մոտոցիկլ: *Առաչ ճըրտընրօցուց լօխճին մատացիկըլ ա իլՀալ* (Բ):

ՄԱՏԱԾԻԿԼԷՏ - *տե՛ս* ՄԱՏԱԾԻԿԸԼ:

ՄԱՏԱՂ[1]/ՄԱՏՏԱՂ[1] - գ. 1. Ջոհ մատուցելու կենդանի: *Մատաղը պիրում ըն, աղը ուտընցընում, տանում սօրփը* (Ձ): 2. Ջոհ մատուցելու արարողությունը: *Մընտաղէն վախտը տընղան էտ ըխճընկանընը ար յէշում* (Ձ): 3. Ջոհի համար մորթած կենդանու միսը, որ եփում եւ ձրի բաժանում են մարդկանց: *Մատաղը պըժանէլին վէրչումը էտ տընղին միշնակ ախպէրը յէկավ...* (ՀԺՀ, V, 93): 4. *վ.* Գործածվում է որպես փաղաքշանքի՝ խրախուսանքի՝ սիրո արտահայտություն (հիմնականում անձնական կամ ցուցական դերանունների հետ): *Դէրընն ասըմ ա.- Մատտաղ, կարում չըմ յէր կէնամ, ծէրքաս փըռնէ, յէր կէնամ* (ԲՀԲ, 196):

- Մատաղ անել/մորթել - Ջոհաբերել, զոհ մատուցել: *Վէրչը, էտ տընղան մատաղ ա մորթում, կընդ-կընդ պըժէնըմ* (ՀԺՀ, V, 92):

- Մատաղը ընթունէլի ինի - Ասում են զոհ մատուցողին՝ թող նպատակդ իրականանա: *Մարթը ՀուրՀնց ըստաքանը յօր ըն օնում, ասում՝մատաղը ընթունէլի ինի, յըէտնան խընմում* (Ձ):

- Մատաղ ինիլ/տընէռնալ/քՀինիլ - Կյանքը մեկին նվիրաբերել: *Օգում ա թա թուռնէրէն հըէտէ մատաղ ինի* (Բ):

- Մատաղ ինիմ/անիմ (քՀընէզ) - *տե՛ս* ՔՀընէզ մատաղ (ինիմ):

ՄԱՏԱՂ[2]/ՄԱՏՏԱՂ[2] *(գրբ. մատաղ)* - *ածական.* Մատղաշ, դեռ չհասունացած, դեռատի: *Ծիլկանընը ասում ա.- Յա՛ յէս, յա՛ մատաղ տավարը, հա՛մ վէննան տէպէգՀ, հա՛մ կընլխան* (ՆԱԲ, 24):

ՄԱՏԱՂԱԾ/ՄԱՏՂԱԾ - գ. Դեռեւս շատ չմեծացած կով: *Մատաղաշը մօրթում ըն, բադարանքՀ անում* (Ձ):

ՄԱՏԱՂ-ՍԱՏԱՂ/ՄԱՏՏԱՂ-ՍԱՏՏԱՂ/ՄԸՏԸՂ-ՍԱՏԱՂ - *տե՛ս* ՄԱՏԱՂ[1] (4):

- Մատաղ-սատաղ անել - Քաղցր խոսքերով խրախուսել՝ փաղաքշել: *Տատը մատաղ-սատաղ ա անում թօռնանը* (Բ):

ՄԱՏԱՏ *(ռուս. матать (փաթաթել)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Մատատ անել - Որեւէ բանի վրա փաթաթել (թելը, լարը եւն): *ՄանթՀուլը յօր ա օնում, էտ փանդին յընրա մատատ անում* (Ձ):

ՄԱՏԱՐՅԱԼ/ՄԱՏԷՐՅԱԼ *(ռուս. материал, լատ. materialis)* - գ. 1. Շինանյութ: *Վէրչը յէր ա կէնում մատէրյալ պիրում, մին լՀավ քՀօրփի շինՀում...* (ՀԱԲ, 15, 105): 2. *փխբ. տե՛ս* ԱՆԱՆԻՄԿԱ:

ՄԱՏԱՐՅԱԼԻՍՏ/ՄԱՏԷՐՅԱԼԻՍՏ *(ռուս. материалист, լատ. materialis)* - *ածական.* Ջրպարտագրեր գրող: *Սավէտին վախտը մատարյալիստնէ շատ ըն իլՀալ* (Բ):

ՄԱՏԷՐՅԱԼ - *տե՛ս* ՄԱՏԱՐՅԱԼ:

ՄԱՏԷՐՅԱԼԻՍՏ - *տե՛ս* ՄԱՏԱՐՅԱԼԻՍՏ:

ՄԱՏԻՏ/ՄԱԴԻԹ *(իտ. matita)* - գ. Մատիտ: *Սա էլ, թախտը, մատիտը յէր կալած, կՀիրատում ա, թա հու հինչ ա պէրալ* (ՀԱԲ, 15, 79):

ՄԱՏՂԱԾ - *տե՛ս* ՄԱՏԱՂԱԾ:

ՄԱՏՏԱՂ[1] - *տե՛ս* ՄԱՏԱՂ[1]:

ՄԱՏՏԱՂ[2] - *տե՛ս* ՄԱՏԱՂ[2]:

ՄԱՏՏԱՂ-ՍԱՏՏԱՂ - *տե՛ս* ՄԱՏԱՂ-ՍԱՏԱՂ:

ՄԱՏՈՒՌ(ՆԸ) *(գրբ. մատուռն)* - գ. Փոքրիկ եկեղեցի՝ աղոթատեղի: *Էտ յէխծէն ըռաչին էլ մին մատուռ ա իլՀալ...* (ԱԱ, 30):

ՄԱՏՈՒՔ - գ. Մատի վրա փաթաթած եւ հանած թելի փաթույթ: *Մատուքը կօխում ա ջուբը, տՀուս կՀամ* (Ձ):

ՄԱՏՈՐ *(ռուս. мотор, ֆր. moteur, լատ. motor)* - *գ.* 1. Շարժիչ: *Մըշինին մատորը խըրըբացալ ա* (Բ): 2. Շատ շարժվող՝ աշխատող մարդ: *Տընըշինիտ կընէգը մատոր ա, սաղ օրը էն ա կօրծ ընէս* (Բ):

ՄԱՐ/ՄԱ̈Ր/ՄԵՐ[3] *(գրբ. մայր)* - *գ.* 1. Ծնող կինը իր զավակների համար: *Իմ մա̈րը քըէզ ախճիկ չի տալ, վախտէն կըլխէտ ճարը տըէս* (ԼՂԲ, 244): 2. Զագ բերած կենդանի՝ թռչուն եւն: *Էտ ըղվէսին ճուտէրէն մարը ըստակում ա* (Ջ): 3. Մեղվափեթակի՝ մյուսներից իր մեծությամբ տարբերվող էգ մեղուն, որ ձու է ածում: *Մարը վէր ըստակում ա, մըղըըճա̈նջէրը կըտօրվում ըն* (Բ): 4. *տե՛ս* ԽԸՂԱՄԱՐ: 5. *տե՛ս* ԿՈՒՃԸԿԱՄԱՐ: 6. Կողովի՝ փսիաթի եւն հիմնական հաստ ձողերը, որոնց վրա հյուսված են ավելի բարակները: *Ճուվըրանէն մարէրը տընգօտում ըն, ըսքըսում կ'օրծէլը* (Ջ): 7. *ած.* էգ: *Մար օշափը յէր ա կըէնըմ կըռէվ անըմ, ըտէղ Ավէտիսին սօրը կօտըրըմ ա* (ՅԺՅ, V, 128):

- Մար անել - *տե՛ս* Մար տալ:

- Մարը լա̈ց ինիլ - Խիստ նեղվել, մեծ վշտի՝ ձախորդության՝ չարիքի հանդիպել: *Թօռըն էլ վէր նի կա̈լա̈վ, հօ̈նծ ընօղնէրէն մարը լա̈ց իլա̈վ* (Ջ):

- Մարը լիցըցընել - Մեկին խիստ նեղել, մեծ վիշտ՝ չարիք պատճառել: *Խանը ժուղովուրթէն մարը լիցըցընում ար* (Ջ):

- Մարը խօխան մըննան քըցիլ - Խառնաշփոթ իրավիճակ ստեղծվել, մեծ աղետ՝ պատահար՝ կոտորած լինել: *Ղօշունը նի յա տըէռնում շէնը, մարը խօխան մըննան քըցը̈ում ա* (Ջ):

- Մարը մըէռած - 1. Խեղճ, անօգնական, առանց մոր մնացած: *Մարը մըէռած մարթ ա Սէյրանը* (Ջ): 2. Անզգամ: *Էտ մարը մըէռածը լօխճին տօնը քանդից* (Բ):

- Մարը մըէռնել - Դժբախտանալ: *Շընա̈ցուն կավը վէր ըստակից, գ'իդա̈ վէր մարը մըէռավ* (Բ):

- Մարը մըէռնէ (վէչ) - 1. Խղճալու արտահայտություն: *Մարը մըէռնէ Սիմօնէն, հինչ ա՞նէ, ք'ա̈սիր ա* (Բ): 2. Գոհունակության՝ գովքի արտահայտություն: *Մարը մըէռնէ վէչ ըտի կըվէն, օրը քըսան լիտըր կաթն ա տամ* (Բ):

- Մարը վէր յըէր ինի ծառը, ախճիգ'ըն էլ յըէր կինի ճըղնէրը - Վատ արարքի՝ անբարոյական կնոջ աղջիկն ավելի վատը կլինի:

- Մարը վէր տակըռավը յըէր ինի, ախճիգ'ը տըլլիտա̈լ շօռ կըկ'ա - *տե՛ս* Մարը վէր յըէր ինի ծառը, ախճիգ'ըն էլ յըէր կինի ճըղնէրը:

- Մարը տըղա պիրիլ - Գործը հաջողվել, մեծ հաջողության հանդիպել: *Յա̈րա̈քէդին մարը տըղա յա պէրալ. կավը ճօխտակ ա ծընալ* (Բ):

- Մարը քօնած - *տե՛ս* ՄԱՄԱՅԱՔՕՆ:

- Մարը քօնել - 1. *տե՛ս* Մարը լիցըցընել: 2. *տե՛ս* Քաքմաչ անել:

- Մար մըննել *(գրբ. ի մայրն մտանել)* - *տե՛ս* Ա̈րըէվը մար մըննել:

- Մար տալ - 1. *տե՛ս* ԿՕՃԿԷԼ: 2. Յորթը՝ գառը բաց թողնել, որ մոր կուրծքը ծծի: *Կավը քըթում ըն, յըէտնան դանան մար տամ* (Բ):

- Մար քըցիլ - *տե՛ս* ԿՕՃԿԷԼ:

- Մօրա թա̈զզա̈ իլա̈ծ - 1. Ասում են մեծ պատահարից փրկվածի մասին: *Մօրա թա̈զզա̈ իլա̈ծ ա Սէյրանը. մաշինը ընգալ ա ծօ̈րը, ճըղպօրու մաչու նըման ա պըրծալ* (Բ): 2. Ասում են առույգ՝ կայտառ տարեց մարդկանց մասին: *Այան հանց ա մօրա թազզա իլա̈ծ* (Բ):

- Մօրա իլա̈լ ըմ՝ ըստի պէն չըմ տըէսալ - Անբնական՝ անիրական՝ արտասովոր է: *Յըլիվուրը կ'ամ ա յէշում, թա.- Մօրա իլա̈լ ըմ՝ ըստի պէն չըմ տըէսալ, յըէս կարէլ չըմ ըտըրա մանին ասիմ* (Ջ):

- Մօրա խըռաված - Անդաստիարակ: *Մօրա խըռաված ը՞ս, խէ խէլը̈նք չը՞ս կէնում* (Բ):

- Մօրը թա̈րիփ ըրածը թօ́ղէ, փա́խէր, հըրըվանէն թա̈րիփ ըրածը յըէ՞ր կա̈լ, փա́խէր - Իրականը՝ ճշմարիտը ոչ թե հարազատի, այլ օտարի կարծիքն է:

- Մօրը ծօցը ք'ինիլ - *տե՛ս* Ա̈րըէվը մար մըննել:

- Մօրը յէ́շի/տըէ́ս, ըխճըկանը օ́գ'ի - Աղջկա մասին կարծիք կարելի է կազմել նրա մոր էությունից ելնելով, աղջիկը մորը կնմանվի:

- Մօրը պէժինք'ը ըխճըկանը կ'օտկումը կինի - Մոր բախտը աղջկան բաժին կընկնի:

- Մօրը ք'ա̈թա̈ն էն ա ըխճըկանը կուռնըտակէն - *տե՛ս* Մօրը պէժինք'ը ըխճըկանը կ'օտկումը կինի:

- Մօր ծըէծ/կաթնը ծըծած/կէրած - *տե՛ս* Յալալ ծըծկէր:

- Մօր ծըէծ կըտըըօղ - Խորամանկ՝ ճարպիկ սրիկա: *Իզէն մօր ծըէծ կըտըըօղ ա, նըէստա սա̈յաղ կաց* (Բ):

- Մօր ծըծվանքը վէր ածէլ/վէր թափէլ - Տառապել, տանջվել, չվայելել, զզվել: *Խըէղճը լափ մօր ծըծվանքը վէր ածից, էնքան տըղըպէրցում կացավ* (Բ):

- Մօր ծըծվանքը վէր թըփըցընէլ - Տանջել, զզվեցնել: *Մէլիք'-Շահնազարը ժուղովուրթէն մօր ծըծվանքը վէր ար թըփըցընում* (Ջ):

- Մօր պահած - Քնքշորեն խնամված՝ փայփայված: *Մօր պահած տըղա յա Սիրգօնը* (Բ):

ՄԱ̈Ր - *տե՛ս* ՄԱՐ:

ՄԱՐԱ *(պրս. mār, հուն. máris (չափ))* - 1. *տե՛ս* ՔԱՅՄԱՆ: 2. *տե՛ս* ՔԸՅՄԸՆԱՔԱՐ: 3. *տե՛ս* ՉԱՓՍ:

ՄԱՐԱԼ *(թրք. maral)* - 1. *տե՛ս* ՋԷՅՐԱՆ: *ած., գ.* 2. *փխբ.* Գեղեցիկ, չքնաղ (կին, աղջիկ): *Վէրչը, գը̈ւրթնըցընում ա, տէսնում մին մարալ ախճիգ' պիրած, վէր ըռէվէն ասում ա.- Տու տը̈ւ մի՛կ'ա̈լ, յըէս ըմ տը̈ւս կ'ա̈լու* (ՅԺՅ, V, 537): 3. *փխբ.* Ազնվացեղ (կով): *Պիրում ըն էրկու մարալ կըվու հախկը տամ տըրան* (ՅԱԲ, 15, 101):

ՄԱՐԱԼՅՕ̈ՆՋԱ̈ - *գ.* Վայրի առվույտ: *Արտէրը մարալյօ̈նջա̈վ լըցվալ ա, կառում չընք հընձինք'* (Բ):

ՄԱՐԱԼ-ՋԷՅՐԱՆ - *տե՛ս* ՄԱՐԱԼ (2): *Էտ թաքավէրին մին մարալ-ջէյրան ախճիգ' ա ինըմ* (ՅԺՅ, V, 331):

ՄԱՐԱԼՕԹՈՒՆ - *գ.* Գեղեցկություն, չքնաղություն (կանանց, աղջիկների): *Մարալօթունը հինչ կա՞նին, դը̈ւշմա̈նը բախտը քարալ ա* (ԼՂԲ, 22):

ՄԱՐԱԽ - *տե՛ս* ՄՕՐԷԽ:

ՄԱՐԱՂ *(պրս. mārağ)* - *գ.* Դարան, թաքստոց: *Կատուն մարաղան տը̈ւս ա կ'ամ, մուկնէն փըռնում* (Ջ):

- Մարաղ կէնալ/մըննել/նըստել - Թաքնվել, դարան մտնել, դարանակալել, դարան մտած՝ հարմար պահի՝ առիթի սպասել: ... *Վէրսկան շան նըման մարաղ ըն կացած, յէշըմ ըն, թա հըշտըղան ա վէրսը տը̈ւս կ'ալու...* (ՁՏ, Բ, 114):

ՄԱՐԱՆԴԱ - *գ.* Մեծ եւ կլոր, վարդագույն հատիկներով ու հաստ կեղեւով սեղանի խաղողի տեսակ: *Ղարաբաղ էլ մարանդա չի կա* (Բ):

ՄԱՐԱՔ - *տե՛ս* ՄԱՐԸ̈Ք':

ՄԱՐԸ̈Ք'/ՄԱՐԱՔ/ՄԱ̈ՐԸ̈Ք' *(գրբ. մարագ)* - *գ.* Յարդը՝ խոտը պահելու տեղ, հարդանոց, մարագ: *Արտէրը հընձը̈մ ըն, կալ'էրը թակում, տէրմանըն ածում մըրըք'նէն* (ՅԺՅ, VII, 172):

- Մըրը̈ք'ու կատու - Խարդախ մարդ: *Իզէն մըրը̈ք'ու կատու վա, ախպօրըն էլ ա փիսօթուն ըրալ* (Բ):

ՄԱ̈ՐԸ̈Ք' - *տե՛ս* ՄԱՐԸ̈Ք':

ՄԱՐԳԱՐԻՆ *(ռուս. маргарин, ֆր. margarin)* - *գ.* Ճարպի, բուսական յուղի եւ այլ նյութերի խառնուրդից պատրաստվող յուղ՝ մարգարին: *Մարգարինավ թըխած ք'ա̈թա̈ն հինչ բի՞դի ինի* (Բ):

ՄԱ̈ՐԳ-Ի-ՄԸ̈Ւ́Շ *(պրս. marg-i-muš)* - *գ.* Քնեցնող թույն: ... *Մէր հային ադաթըն*

ա, վէր մուտա մարգամուշ ինի, յրա կըվազի, հախռէ, նիսյա օրհնանք տա... (ՋՏ, Ա, 139):

ՄԱՐԴ[1]/ՄԱՐՏ *(հուն. martios, լատ. mártios)* - *գ.* Տարվա երրորդ ամիսը՝ մարտ: *Մարդը էլ յըկավ, ամմա հալա փիս ցորտ ա* (Բ):

- Մարդու հավա/քամէ - Հեղհեղուկ բնավորությամբ՝ փոփոխամիտ մարդ: *Մէր Ալիսանը մարդու հավա յա, մէհէտ ասում ա՝կավը ծախում ըմ, մէհէտ էլ թա՝ չէ՛, ծախում չըմ* (Բ):

- Մարդու կատու - Կրքոտ՝վավաշոտ մարդ: *Հու չի՞ գիդում, վէր Մացակը մարդու կատու վա* (Բ):

ՄԱՐԴ[2] *(պրս, mārd)* - *ած., գ.* 1. Բարի, առաքինի (մարդ): *Վէրչը մարդ ախպորը հացը ըն օտըմ, պըրծընում* (ՀԺՀ, V, 293): 2. Անհողդողդ, իր խոսքի տերը եղող (մարդ): *Մարդ մարթ ա լալ՝ ուրան խուսկէն տարը. համ ասալ ա, համ ըրալ* (ԱԱ, 21):

ՄԱՐԴԱՎԱՆ/ՄԱՐԴԻՎԱՆ/ՄԱՐԴՈՒՎԱՆ/ՆԱՐԴԻՎԱՆ *(պրս. nardivan)* - 1. *տե՛ս* ՓԱԼԱՔԱՆ: 2. *տե՛ս* ՄԱՐԴԱՎԱՆԱԽՕՏ:

ՄԱՐԴԱՎԱՆԱԽՕՏ/ՄԱՐԴԻՎԱՆԱԽՕՏ/ՄԱՐԴՈՒՎԱՆԱԽՕՏ/ՆԱՐԴԻՎԱՆԱԽՕՏ - *գ.* Խոտաբույսի տեսակ: *Մարդվընախոտը կակոդ խոտ ա* (Բ):

ՄԱՐԴԻՄԱԶԱՐ *(թրք. mərdimazar)* - *ած., գ.* Չարիք գործելու հատկություն ունեցող, չարագործ (մարդ): *Տու մէլ ասէլ, էս մարդիմազարը ամմէն օր թաքուն փէթակնէն պէնում ա, բալ-բալ մըէղըր օտում* (ԱԱ, 64):

ՄԱՐԴԻՄԸԶԸՐՕԹՈՒՆ - *գ.* 1. Չարագործ լինելը: *Խոխան հորը անա յա մարդիմըզըրօթուն սըվըէրում* (Բ): 2. Չարագործ արարք՝ գործ՝ գործողություն: *Ըտըրա ըրած մարդիմըզըրըթունը հորը շատ ա կըտըղցընէս* (Ձ):

ՄԱՐԴԻՎԱՆ - *տե՛ս* ՄԱՐԴԱՎԱՆ:

ՄԱՐԴԻՎԱՆԱԽՕՏ - *տե՛ս* ՄԱՐԴԱՎԱՆԱԽՕՏ:

ՄԱՐԴՈՒՎԱՆ - *տե՛ս* ՄԱՐԴԱՎԱՆ:

ՄԱՐԴՈՒՎԱՆԱԽՕՏ - *տե՛ս* ՄԱՐԴԱՎԱՆԱԽՕՏ:

ՄԱՐՁԱ - *տե՛ս* ՄԱՁՐԱ:

ՄԱՐԹ/ՄԱՐԹ *(գրբ. մարդ)* - *գ.* 1. Խոսելու, մտածելու, գործիքներ արտադրելու ու դրանք հասարակական աշխատանքի գործընթացում գործածելու ընդունակությամբ օժտված կենդանի էակ, մարդ: *... Ամբէն դօնում վըխլըկօտ մարթա խուսէլիս՝ Տէրմանց Ավդալը մէտըս ա ընում* (ԼՂԲՔ, 264): 2. Արական սեռի մարդ: *Կընանէքը լըհա կընանէք, մարթ կա՝ կընգանա բէթար ա...* (ՆԱԲ, 133): 2. Տղամարդ ամուսին, այր: *Մարթը կընգանը յօր ա օնում, տանում, վըէր քըցի ծօվը* (ՆԼՂԺԲ, 133): 4. Բարոյական ու մտավոր բարձր արժանիքներով օժտված անձ: *Տընըշինիտ տըղան ըսկի մարթ չի* (Բ): 5. Աշխատող ուժ, աշխատող ձեռք: *Էտ տօնը շինիլի հըէտէ մարթ շատ ա հարկավէր* (Բ): 6. Անորոշ ձեւով՝ ոմն, ինչ-որ մեկը: *Մարթ կա՝ մարթ ա, մարթ կա՝ քարթ ա* (Ձ): 7. Անորոշ ձեւով՝ առհասարակ մարդկային էակ՝ առանց որեւէ առանձին անհատի նկատի առնելու: *Հանց վախտ ա ինում՝ մարթ գիդում չի ապըրէլը ա՞ դիւզ, թա մը՞ռնէլը* (Ձ): 8. Ներկայացուցիչ: *Մին օր էլ հոնքանամարթն մարթ ա կամ ըտըրանց շէնը* (Ձ): 9. Անձ, հոգի (որպես հաշվի միավոր): *Հէնգամարթ քինամ ըն, հէնգը՝կամ* (Ձ):

- Մարթ ա - Կարող է պատահել, բնական է մարդու համար: *Հարը ասմա.- Վէ՛չինչ, թըխալ ա, թըխալ ա, հինչ ա՞ իլալ, մարթ ա, սըխալվալ ա* (Ձ):

- Մարթ էլ ա վէր ըղնում, մը՞ռնում - Պետք չէ վշտանալ՝ տրտնջալ, ավելի մեծ դժբախտություններ են լինում (հատկապես ասում են մեկին սփոփելիս): *Էշ ա, լի՞, հինչ ա՞նինք, թա ըստակալ ա, մարթ էլ ա վէր ըղնում, մը՞ռնում* (Բ):

- Մարթ էլ թաղիս՝ կըփըսնէ - Ասում են լավ մշակված եւ բերրի հողերի մասին: *Դէ Ղարաբաղա վը՞ղընն էլ ճօկ վը՞ղ ա. մարթ էլ թաղիս՝կըփըսնէ* (Բ):

- Մարթը կարունքը վը՞րս ըրավ, Ըստուծէն փայը տարավ, օրթանքէն տը՞ղակ անէսկ յը՞ր կանալվ - Ասում են գարնանը որս անողներին՝ գարնանը որս անելը չարագործություն է, քանի որ կենդանիները ծննդաբերում են:

- Մարթին աշկը (մին հափուռ) վը՞ղը կըքուշտըցընէ - Մարդը միայն մեռնելուց հետո է կորցնում ագահությունը:

- Մարթ ինիլ - Հովանավոր՝ պաշտպան՝ որեւէ գործ գլուխ բերելու համար միջնորդ ունենալ: *Հուր մարթ չօնէ, կարում չի կօրծ քըթէնա* (Բ):

- Մարթին վէր թարիփ անիս, պօզէրը տուս կօնէ - Մարդը գովելուց գոռոզամտում է:

- Մարթ լուզվավ ա թալանկ ըղնում - Մարդը իր խոսքերի՝ ասածի պատճառով է տուժում:

- Մարթ կօլ տալ - 1. Շատակեր՝ անկուշտ լինել: *Ըտըրան վէր թօղնիս, մարթ կօլ կըտա. սաղ օրը էն ա կէր ընէլիս* (Բ): 2. Լպիրշ՝ լեզվանի լինել: *Թանզգան հարթնը շատ ար ազդուն, մարթ ար կօլ տամ* (Ձ):

- Մարթ ճընանչիլ - Շատ մարդկանց հետ շփվել, շրջապատ ունենալ: *Քինամ ա քաղաք, կօրծ անում, մարթ ճընանչում* (Ձ):

- Մարթ մընալ - Մարդկային բարձր հատկությունները պահպանել: *Էտ տըղան կօգի ղըչըղնէրէն նըհը՞տ հընգըրօթուն ա անում, ամմա մարթ ա մընամ* (Ձ):

- Մարթ շինիլ (մինին) - Մեկին օգնել՝ նպաստել պաշտոն՝ հաստատուն վիճակ՝ բարձր արժանիքներ ձեռք բերելու գործում: *Հանէրը խըչըտուրէն մարթ ա շինում* (Բ):

- Մարթ տը՞ռնալ - Պաշտոն՝ հաստատուն վիճակ՝ բարձր արժանիքներ ձեռք բերել: *Ղանգարը իծարած ա իլալ, միհէնգ ա մարթ տը՞ռալ* (Բ):

- Մարթու թայ տը՞ռնալ - *տե՛ս* Մարթ տը՞ռնալ:

- Մարթու իրը՞ս չըտը՞սնալ - 1. Անմարդաբնակ լինել, մարդը այնտեղ այցելած չլինել: *Ղարաբաղ տը՞ղէր կա, վէր մարթու իրը՞ս չըն տը՞սալ* (Բ): 2. Կույս լինել: *Ասում ա.- Էն ախճիգը հանալ մարթու իրը՞ս չի տը՞սալ, սօտ ըս ասում* (Ձ):

- Մարթու չիր - *ծող.* Տկար՝ հյուծված՝ վտիտ մարդ: *Դէ Ըսատուրըն էլ հինչ մա՞թ, մարթու չիր ա* (Բ):

- Մարթու վը՞ռա ինիլ/վէր ըղնէլ - Մարդկային արժանիքներ ունենալ, մարդուց ծնված լինել (հատկապես գործածվում է հարցական եւ ժխտական ձեւերով): *Ասում ա.- Մրա, պա բալ ա, լի՞, հիշկան մը՞զ տանջալ ըս, պա տու մարթու վը՞ռա չը՞ս* (Ձ):

- Մարթու տալ - Ամուսնացնել (աղջկան): *Մանի աքէրը թօռնանը մարթու տըվավ, ըրխըյնացավ* (Բ):

- Մարթու տը՞ղ տինիլ/տը՞ղ քըցիլ - *տե՛ս* Մըրթատը՞ղ տինիլ:

- Մարթ ուրան աշկը քօռ չի օգիլ - Ոչ ոք չի ցանկանա վնասվել՝ անհաջողության մեջ ընկնել:

- Մարթու քինիլ - Ամուսնանալ (աղջկա մասին): *Էտ ըխճըկօրանցան մինը մարթու վա քինում էրուշ շէն* (Ձ):

- Մարթ քըցիլ մաչը/դաթը - Որեւէ գործ գլուխ բերելու համար մեկին միջնորդ դարձնել: *Մարթ ըն մաչ քըցում, էտ տըտմարէն Կանփուն նըհէտ փըսակում* (ՀԺՀ, VII, 322):

- Մարթ օլաբա - Մարդ արարած: *...Տընդըղից չօրս դօլը, տը՞սնա մարթ օլաբա չի կա հո՞ւ...* (ԼՂԲ, 307):

ՄԱՐԹ - *տե՛ս* ՄԱՐԹ:

ՄԱՐԹԱ/ՄԱՐԹԱ/ՄԱՐԹԸ/ՄԱՐԹԸ - *դ., գ.* 1. Ամեն մեկը, յուրաքանչյուրը,

ամեն մարդ: *Մարթը մին պէն ըն ասալ. մինը՝ Ծըղկաշէն, մինը՝ Ծըմըկաշէն, մինը՝ Պէցուր շէն* (ԱԱ, 23): 2. Ամեն մեկին, յուրաքանչյուրին, ամեն մարդու: *Չօբանը տահանց մարթա մին կ'առն ա տամ, հըղէ տինում* (Ձ): 3. Ամեն մեկից, յուրաքանչյուրից, ամեն մարդուց: *Հիշկան մարթ կա, վէր մարթա մին մանէթ տան Սունէն, էլիա քուշտանալ չի* (Բ):

ՄԱՐԹԱ - *տե՛ս* ՄԱՐԹԱ:

ՄԱՐԹԱՍՊԱՆ - *տե՛ս* ՄԸՐԹԸՍՊԱՆ(Է):

ՄԱՐԹԸ - *տե՛ս* ՄԱՐԹԱ:

ՄԱՐԹԸ - *տե՛ս* ՄԱՐԹԱ:

ՄԱՐԹ-ԿԸՆԷԳ' - *տե՛ս* ՄԸՐԹԸԿԸՆԷԳ':

ՄԱՐԹԿՈՒԹԻՒՆ/ՄԱՐԹԿՈՒԹԻՒՆ *(գրբ. մարդկութիւն)* - *գ.* 1. Մարդկային ցեղը՝ որպես հավաքական ամբողջություն: *Ըշխարքէս մարթկութիւնը վէր օգ'ի, ըշխարքումըս էլ կըռը'վ չինիլ* (Բ): 2. *տե՛ս* ՄԸՐԹՕԹՈՒՆ:

ՄԱՐԹԿՈՒԹԻՒՆ - *տե՛ս* ՄԱՐԹԿՈՒԹԻՒՆ:

ՄԱՐԹ-ՄՈՒՐԹ/ՄԱՐԹ-ՄՈՒՐԹ - *գ.* Մարդ եւ կենդանի այլ էակներ: *Մարթ-մուրթ հըվաքվում ըն, թա տէսնան սարը հինչ ա պիրիլան* (ԱԱռ, 47):

ՄԱՐԹ-ՄՈՒՐԹ - *տե՛ս* ՄԱՐԹ-ՄՈՒՐԹ:

ՄԱՐԻ/ՄԱՐՈՒ(Ն) *(գրբ. մարի (էգ թռչուն))* - *գ.* 1. Էգ թռչուն: *Թաքավէրը պիրում ա մին մարուն, մինէլ օխտը ծու տամ...* (ՀԱԲ, 15, 69): 2. Էգ խոզ: *Մարին ծընում ա, տըսնըէրկու գոճի պիրում* (Ձ):

ՄԱՐԻՆ(ԱՎ)ԱԴ/ՄԱՐԻՆ(ԱՎ)ԱՏ *(ռուս. маринад, ֆր. marinade)* - *գ.* Ապակյա բանկաների մեջ հերմետիկ փակած թթու: *Պամադորէն ա խըյարէն մարինադը ծըմը'ռնը լանգան ա ինում* (Բ):

- Մարին(ավ)ադ անել *(ռուս. маринова́ть)* - Ապակյա բանկաների մեջ թթու փակել: *Պամադորը մարինադ ըն անում, տանրսում* (Ձ):

ՄԱՐԻՆ(ԱՎ)ԱՏ - տե՛ս ՄԱՐԻՆ(ԱՎ)ԱԴ:

ՄԱՐԻՓԱԹ *(արաբ., թրք. marifet)* - *տե՛ս* ՇԸՆՕՐՔ:

ՄԱՐԻՓԱԹԱՎ - *տե՛ս* ՇԸՆՕՐՔԱՎ:

ՄԱՐԻՓԱԹԷՆ - *տե՛ս* ՇԸՆՕՐՔԱՎ:

ՄԱՐԽՕՇ *(պրս. mayxoš)* - *տե՛ս* ԹԸԹՎԱՇ:

ՄԱՐԿԱՆԿՕՍԻ - *տե՛ս* Ք'ՕՍԱ:

ՄԱՐ-ՅԱՐ - *տե՛ս* ՅԱՐ-ՄԱՐ:

ՄԱՐՄԱՂ - *տե՛ս* ԹԸՔՈՒՉԻ:

ՄԱՐՄԱՆԴ *(գրբ. մարմանդ)* - *ած.* 1. Մեղմ, զով: *... Սարէրան յէկող մարմանդ հօվընն էլ քախծընր քօն ար պը'ըրմ...* (ԼՂԲ, 298): 2. Թույլ, ոչ բորբոքուն: *Կուրկուտը բիդի մարմանդ կըրակէն յըրա իփիս, վէր համավ ինի* (Բ):

ՄԱՐՄԱՐ/ՄԱՌՄԱՌ/ՄԸՐԱՄԸՐ/ՄԸՌԱՄԸՌ *(ռուս. мрамор, հուն. mármaros)* - 1. *գ.* Ջանազան գույների բյուրեղային լեռնապար՝ մարմար: *Ղարաբաղա հարավ շէնումը մարմար շատ կա* (Բ): *ած.* 2. *փխբ.* Ողորկ, սպիտակ եւ փայլուն: *Խանը ըտըրա մարմար վը'ենէրը վէր տը'սնըմ ա, հանշըհան ա ինում* (Ձ): 3. *փխբ.* Ընտիր՝ սպիտակ հատիկներով (ցորենի մասին): *Մարմար ցօրէն բիդի ինի, վէր լ'ավ կուրկուտ տը'ռնա, մընացածը հէչ պէն ա* (Բ):

ՄԱՐՅԱԹ - *տե՛ս* ՄԱԼՅԱԹ:

ՄԱՐՇԱԼ *(ռուս. маршал, ֆր. marechal)* - *գ.* Զինվորական բարձրագույն կոչում եւ այդ կոչումն ունեցող անձը: *Բաղրամյանը լ'ավ մարշալ ա իլալ* (Բ):

ՄԱՐՁ - *գ.* 1. Պայման վիճող կամ մրցող կողմերի միջեւ, որի համաձայն՝ տարվող կողմը պետք է որեւէ բան անի՝ որոշ գումար մուծի կամ որեւէ իր նվիրի, գրազ: Գրազի մի տեսակն էլ այն է, երբ պայմանավորվածության համաձայն՝ մեկը, մյուսին մի բան տալով, ասում է՝ տարած եւ հաղթում: Մյուսը չպարտվելու համար պետք է մյուսից որեւէ բան վերցնելիս իսկույն ասի՝ մը'տըս (հիշում եմ): *Ըտըրանց պարյօր ա տամ, նըստըմ թաքավէրին նըհէտ մարջանվ նարդի հաղ անըմ* (ՀԺՀ, V, 570): 2. Գրազը տարվողի կողմից տանողին տրվող իր՝ գումար եւն, որ պայմանավորվել են սկզբից: *Սըտանան, ճարը կըտրած, մարջը տամ ա* (ԼՂԲ, 365): 3. Հավի կրծքի երկճյուղ՝ եղանաձեւ ոսկորը՝ հավքաշ: *Հավը կըտօրում ըն, մարջը տամ խուխէն* (Ձ):

- Մարջը կըտրել - Երկու կողմերի գրազ գալը հաստատել. գրազ եկողներն իրար ճկույթ կամ ձեռք բռնում են, իսկ երրորդը, աջ ձեռքով խփելով, անջատում է դրանք, որ նշանակում է՝ գրազն ուժի մեջ է: *Հաբին ա Կանփին մարջ ըն կ'ամ, Բէնօն էլ մարջը կըտըրում ա* (Բ):

- Մարջը տանել - Գրազի պայմանի համաձայն՝ հաղթանակ շահել: *Շատ ըն չըրչարվըմ, վէշ մինը կարըմ չի մարջը տանէ* (ՀԺՀ, V, 227):

- Մարջ կ'ալ/փըռնել - Գրազ գալ, գրազով պայմանավորվել, որ կատարվում է կամ իրար ձեռք՝ ճկույթ բռնելով ու քաշելով (նաեւ երրորդ անձի կողմից անջատելով), կամ էլ՝ հավքաշի երկու ճյուղերից քաշելով ու ջարդելով: *Մարջ ըն կ'ամ, Պուղին էտ շանըտ տանում ա հուրանց տըռնանը կապում...* (ԱԱ, 82):

- Մարջ կ'ամ - Մեկին մի բան համոզելու՝ հավատացնելու բանաձեւ՝ պատրաստ եմ գրազ գալ՝ երդվել: *Մարջ կ'ամ՝ էք'ուց թօռ ա կ'ըլական* (Բ):

ՄԱՐՋԱՆ *(արաբ. margān, թրք. merčan)* - *գ.* Ծովային որոշ կենդանիների կրացած մարմիններից գոյացած սպիտակ, կարմիր եւ սեւ գույնի քար, որը մշակելով՝ զարդեր են պատրաստում, մարջան: *Էտ թաքավէրը հուրանն կընգանը նըհէտ ապրըմ ըն իլալ մին շատ դաշանգ', մարջանավ զըրթարած պալատըմ* (ՀԺՀ, V, 142):

ՄԱՐՍԷԼ - *նբ.* Վայելել, յուրացնել: *Ըտի ըտըրանք ըտը'ղ ապըրում ըն, հուրանց ըշխադածը մարսում* (Ձ):

ՄԱՐՍԿԱՆ - *տե՛ս* ՄԸՐՍԱԿԱՆ:

ՄԱՐՍՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԱՐՍԷԼ-ի:

ՄԱՐՏ - *տե՛ս* ՄԱՐԴ[1]:

ՄԱՐՈՒ(Ն) - *տե՛ս* ՄԱՐԻ:

ՄԱՐՔԱՐԷ - *տե՛ս* ՄԸՐՔԸՐԱ:

ՄԱՐՔԱՐԻԴ *(գրբ. մարգարիտ)* - *գ.* Թանկարժեք քարի տեսակ՝ մարգարիտ: *Մին քանի օրանը յէտը էտ խօխան լանց ինիլիս աշկէրան մարքարիդնի յա յէր ածըմ* (ՀԺՀ, V, 42):

ՄԱՐՕՋ *(ռուս. мороз)* - *տե՛ս* ԱՅԱՋ:

ՄԱՐՕԺՆԻ *(ռուս. мороженое)* - *գ.* Կաթով, շաքարով եւն պատրաստվող սառեցրած քաղցր ուտելիք, պաղպաղակ: *Խօխէնք'ը մարօժնի շատ ըն սիրում* (Բ):

ՄԱՈՒՋԷՐ - *տե՛ս* ՄԱՎՋԷՐ:

ՄԱՓԱՐ/ՆԱՓԱՐ - 1. *տե՛ս* ՅԱՐԱՔ'ԱԹ: 2. *տե՛ս* ՆԱՓԱՍ:

ՄԱՓԹԻԼ - *տե՛ս* ՄԱՆԹԻԼ:

ՄԱՓՈՒՇ - *տե՛ս* ՆԱՓՈՒՇ:

ՄԱՔԸՐԷԼ - *տե՛ս* ՄԱՔՐԷԼ:

ՄԱՔԸՐՎԷԼ - *տե՛ս* ՄԱՔՐԸՎԷԼ:

ՄԱՔԸՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՄԱՔՐՕԹՈՒՆ:

ՄԱՔ'ՏԱԲ - *տե՛ս* ՄԱԹԱԲ:

ՄԱՔ'ՏԱՅ - *տե՛ս* ՄԱԹԱՅ:

ՄԱՔ'ՏԻԼ - *տե՛ս* ՄԱՆԹԻԼ:

ՄԱՔՏԻԼ - *տե՛ս* ՄԱՆԹԻԼ:

ՄԱՔՐԷԼ/ՄԱՔԸՐԷԼ *(գրբ. մաքրեմ)* - *տե՛ս* ԹԸՄԻՋՑ(Ը)ՆԷԼ:

ՄԱՔՐԸՎԷԼ/ՄԱՔԸՐՎԷԼ - 1. *տե՛ս* ԹԸՄԻՋՎԻԼ: 2. *տե՛ս* ՄԱՇՎԻԼ-ՄԱՔՐԸՎԷԼ:

ՄԱՔՐՕԹՈՒՆ/ՄԱՔԸՐՕԹՈՒՆ *(գրբ. մաքրութիւն)* - *տե՛ս* ԹԸՄԻՋՕԹՈՒՆ:

ՄԱՔՐՕՂԼԻ - *գ.* 1. Մորաքրոջ որդի: *Իմ մաքրօղլի լ'ավ ուստա յա* (Բ): 2. Մտերիմ տղամարդկանց դիմելու կոչական բառ: *Առուստամը Սընթուրէն ջիհանում ա, թա.- Մաքրօղլի, յը'ք ք'ինինք' մարթը մին ըստաքան թօթու արաղ խըմինք'* (Ձ):

ՄԱՔՈՒՐ[1] *(գրբ. մաքուր)* - *տե՛ս* ԹԱՄՈՒՋ:

ՄԱՔՈՒՐ[2] - 1. *տե՛ս* ՄԸՐԱՔՈՒՐ: 2. *տե՛ս* ՀԱՔՈՒ (2):

ՄԷԲԷԼ *(ռուս. мебель, ֆր. meuble, լատ. mobilis)* - *գ.* Կահույք, կահկարասի: *Միհէնգ՝ շատ տընէրում կա թընգ՝անուց մէբէլ* (Բ):

ՄԷԴԱԼ *(ռուս. медаль, ֆր. medailie, լատ. metallia)* - *գ.* Շքադրամ, մեդալ: *Պիրում ըն ժողով անում, Ալիսան դայուն ըրծաթէ մէդալ տամ* (Ձ):

ՄԷԴԱԼՅՕՆ *(ռուս. медальон, ֆր. médailion)* - *գ.* Վզից կախելու կամ կրծքին կպցնելու՝ ոսկուց կամ այլ մետաղից պատրաստած կլոր՝ ձվաձեւ՝ սրտաձեւ եւն զարդ: *... Էտ ախճիգ՝ը մին տըղա յա պիրիս, պատրօնը շատ ա ուրխունաս, հարթնէնը հէտէ մին վը՛սկէ մէդալյօն ա ինք՝ ունէս* (ՀԺՀ, V, 598):

ՄԷԴՊՈՒՆՔՏ *(ռուս. медпункт)* - *տե՛ս* ՊՈՒՆՔՏ:

ՄԷՋ - *տե՛ս* ՄԸ՛Ջ:

ՄԷՋԱՐ *(արաբ. mézār)* - *գ.* Մազից՝ բրդից գործած մեծ սփռոց, որի վրա շարում են խմորի գնդերը կամ թոնրից հանած տաք հացերը, ինչպես նաեւ գործածում են այլ նպատակներով: *Էս մարթը կ՝էցին շօրէրընն էլ հանըմ ա, վը՛ր ածըմ, մէզարը շօռ օնըմ...* (ՀԺՀ, VI, 203):

ՄԷԹԿ - *տե՛ս* ՄԸ՛ԹԿ:

ՄԷԼ/ՄԷՐ[2]/ՄԸ՛Ր[2]/ՄԻԼ[2]/ՄԻՐ/ՄԻ[2] *(գրբ. մի)* - Մասնիկ, որով կազմվում է արգելական հրամայականի եզակին: *Հարը ասում ա.- Քի՛նալ մէ՛լ, ընդը՛ղ քի՛նօղը յը՛ստ կ՝ամ չի* (Ձ):

ՄԷԼԱՎ - *տե՛ս* ՄԱ՛ԼԱՎ:

ՄԷԼԻՔ - *տե՛ս* ՄԷԼԻՔ՝:

ՄԷԼԻՔԱՐԱՆ - *տե՛ս* ՄԷԼԻՔ՝ԱՐԱՆ:

ՄԷԼԻՔ՝/ՄԷԼԻՔ *(արաբ. malik, պրս. malek, թրք. melik)* - *գ.* 1. 16-18-րդ դարերում տոհմական կալվածատեր իշխան Ղարաբաղում: *... Հըրամման ա տամ Ղարաբաղի մէլիքնէրին, վը՛ր սաղ Ղարաբաղի վը՛ղին կէսը թըթի բաղէր քըցին* (ՀԺՀ, V, 232): 2. Ընդհանրապես՝ իշխան, տեր: *Ուրան մէլիք՝ու նըման ա պահում* (Բ): 3. Ազգանվանը կցվող մակդիր՝ որպես նշան մելիքական ծագման: *Մէլիք՝ Շահնազարյանէրան համ լ՝ավ մարթ ա տուս յը՛կալ, համ փիս* (Ձ):

ՄԷԼԻՔ՝ԱՐԱՆ/ՄԷԼԻՔԱՐԱՆ - *գ.* Մելիքի առանձնասեռյակը՝ որպես պաշտոնական ընդունարան եւ աշխատանոց: *Մէլիք՝նէն հըվաքվում ըն մէլիք՝ Յէգանէն մէլիք՝արանումը* (Ձ):

ՄԷԼԻՔ՝ՕԹՈՒՆ/ՄԷԼԻՔՕԹՈՒՆ - *գ.* 1. Մելիք լինելը: *Մէլիք՝օթունը հիշտ պէն չի* (Ձ): 2. Մելիքին պատկանող երկրամաս: *Վարանդան մը՛ծ մէլիքօթուն ար Ղարաբաղի հէնգ՝ հայ մէլիքօթունէրին մէջին* (ՀԺՀ, V, 236): 3. Մեկի՝ մելիք լինելու ժամանակաշրջանը: *Մէլիք՝ Յէգանէն մէլիք՝ութունէն վախտը Ղարաբաղա անումը յը՛ր իլած ա իլալ* (Ձ):

ՄԷԼԻՔՕԹՈՒՆ - *տե՛ս* ՄԷԼԻՔ՝ՕԹՈՒԹ:

ՄԷԽ *(պրս. mēx)* - *գ.* Գամ, բեւեռ: *Դանմուրչին մէխէրը շինում ա, պիրում տամ էտ տըղէն* (ՀԺՀ, V, 544):

- Մէխավ ըղնէլ - 1. Անասունը պայտելու ժամանակ մեխը մսի մեջ խրվել: *Էշը մէխավ ա ընգալ, կըղլըգ՝ի յա տամ* (Բ): 2. Արգելքի հանդիպել: *Հինչը օգ՝ում ըմ անիմ, մէխավ ըմ ըղնում* (Բ):

- Մէխին թըխէլ - Բուն նյութը՝ցավոտ խնդիրը շոշափել: *Ասում ա.- Խօսկըստ կըտօրը մէ՛լ քըցիլ, մէխին թըխէ՛* (Ձ):

ՄԷԽԱԿ - *տե՛ս* ՄՈՒԽԱԳ՝:

ՄԷԽԱՆԻԶԱՏԸՐ *(ռուս. механизатор)* - *գ.* Մեքենաների ու մեքենայացված սարքերի գործմարկման՝ աշխատեցման մասնագետ: *Ուրծվիկը լ՝ավ մէխանիզատըր ա իլալ* (Բ):

ՄԷԽԷԼ/ՄԷԽԻԼ - *նբ.* 1. Մեխով ամրացնել, գամել, բեւեռել: *Յօր ա օնում, էտ նըկարը պատէն յըրա մէխում* (Ձ): 2. *փխբ.* Մխրճել, խրել: *Տըղան թօրը մէխում ա դէվին սը՛րտը* (Ձ): 3. *փխբ.* Մտքում ամրապնդել՝տպավորել: *Դասատուն տանսը հանց մէխում ա, վէր խօնցը մընընընան ըղնէ վէչ* (Բ): 4. *փխբ.* Հայացքը բեւեռել՝ սեւեռել: *Էտ տըղան սաղ հըրսընքէն վախտը աշկէրը մէխում ա էտ ըխճըկանը յըրա* (Ձ): 5. *փխբ.* Տեղում գամել՝ արձանացնել: *Արչը կ՝օռռում ա, ըտըրան մէխում ծառէն տակէն* (Ձ):

ՄԷԽԻԼ - *տե՛ս* ՄԷԽԷԼ:

ՄԷԽԿ/ՄԸ՛ԽԿ *(գրբ. մեղք)* - *գ.* 1. Հանցանք, մեղավորություն, մեղք: *Ամմէն մարթ էլ մէխկէր օնէ* (Բ): 2. Խիղճ, գութ: *Ասում ա.- Էտ խուխէն խէ թակում ը՞ս, պա մէխկ չօ՞նիս* (Ձ): 3. *ածական.* Խեղճ, ողորմելի: *Մէխկ մարթ ա Սիմօնը* (Բ):

- Մէխկա թափէլ - Մեկին արդարացնել, մեղքերից ազատել: *Ղաթը ինգ՝ան, էտ տըղէտ ու քըվօրըս մէխկա թըփէցէ* (ԼՂԲՔ, 265):

- Մէխկա թըմիզվիլ/մըզվիլ/թափվել - Մեղքերը քավել, մեղքերից ազատվել: *Ղէրը ասըմ ա.- Թա ուզիս ըք՝ մէխկա միզվիք՝, բիդի մին յը՛խցէ շինիք՝, մաչին աղօթք անիք՝* (ԱԱ, 49):

- Մէխկ անէլ - Մեղք գործել: *Պառավը ասում ա.- Մէխկ մէ՛լ անէլ, էն ախճիգ՝ը ըտի պէն ասալ չի* (Ձ):

- Մէխկ(ը) կ՝ալ - Մեղքանալ, խղճալ: *Վէր շատ ա ըղաչըմ, դարվիշը մէխկըն ա կ՝ամ, էլ ըսպանըմ չի* (ՀԺՀ, V, 642):

- Մէխկըս հինչ կ՝ը՞ղիմ - Խոստովանության արտահայտություն՝ մեղավոր եմ: *Տըղան ասում ա.- Մէխկըս հինչ կ՝ը՞ղիմ, յը՛ս ըմ ըսպանալ* (Ձ):

- Մէխկը վէզը - Ինքն է պատասխանատուն, իր գործն է: *Ղէրվիշը ասմա.- Մէխկը վէզը, վէր օգ՝ում ա, թօղէ ք՝ինի* (Ձ):

- Մէխկը վըզ՝ավ օնէլ - Հանցանքը խոստովանել: *Քի՛նամ ա թաջիրին կօշտը, մէխկը վըզ՝ավ օնում* (Ձ):

- Մէխկը (ուրան յըրա) յօր օնէլ - 1. Մեկին անհիմն կերպով մեղադրել: *Ըտի սուդյան էտ տըղէն տուրմա յա քըցիս, մէխկը ուրան յըրա յա յօր ունէս* (Ձ): 2. Մեկի վատ արարքի պատասխանատվությունն իր վրա վերցնել: *Հարը, ճարը կըտըրած, տըղէն մէխկը ուրան յըրա յօր կալալավ* (Բ):

- Մէխկ ինիլ - 1. Խղճալու՝ կարեկցանքի արժանի լինել: *Ասում ա.- Մէխկ ա էտ մարթը, ք՝օ՛մանգ՝ ըրա* (Ձ): 2. Մեղք համարվել: *Կ՝արունքը վը՛ր անէլը մէխկ ա* (Բ):

- Մէխկին տական տուս կ՝ալ - *տե՛ս* Մէխկա թըմիզվիլ:

- Մէխկին տական տուս օնէլ - *տե՛ս* Մէխկա թափէլ:

- Մէխկում փըլալվէլ - Մեծ ու շատ մեղքեր գործել: *Ըտի Մէլիք՝-Շահնազարը, Շուշին Փանահ խանէն տալավ, մէխկում փըլալվում ա* (Ձ):

- Մէխկու տակ ըղնէլ - Մեկի դժբախտության պատճառ դառնալ: *Մարը ասմա.- Յէթիմ ախճիգ՝ ա, կօրծ չօ՞նիս, մէխկու տակ մէ՛լ ըղնէլ* (Ձ):

- Մէխկու տակ քըցիլ - Մեկին դժբախտության պատճառ դարձնել: *Ըտի մարը ուրան տըղէն մէխկու տակ ա քըցիս* (Ձ):

ՄԷԽԿ ՈՒ ԿԸՐԱԿ - *տե՛ս* ԽԸ՛ՂՃ ՈՒ ԿՐԱԿ:

ՄԷԽՎԷԼ/ՄԷԽՎԻԼ - *կբ. եւ չբ.* Մէխէլ-ի:

ՄԷԽՎԻԼ - *տե՛ս* ՄԷԽՎԷԼ:

ՄԷԾ - *տե՛ս* ՄԸ՛Ծ:

ՄԷԾԱՐՔ - *տե՛ս* ՄԸ՛ԾԱՐՔ:

ՄԷԿ - *տե՛ս* ՄԻՆ[1]:

- Մէկավ մեկ - Շատ հեշտ՝ դյուրին: *Ըտըրան խանփիլը մէկավ մէկ ա* (Ձ):

- Մէկին գումարած մէկ - Շատ հեշտ՝ դյուրին բան՝ գործ: *Սամսօն դայուն հը՛տէ պատ տինիլը մէկին գումարած մէկ ա* (Բ):

- Մէկին գումարած մէկ՝ տը՛ռնում ա էրկու - Հստակ՝ ապացուցված բան է, կարիք չկա քննարկելու՝ վիճաբանելու: *Նախագան ասում ա.- Մէկին գումարած*

մէկ՝ տը՛ռնում ա էրկու, հէնգ՝ աշխօրէտ հէնգ՝ կիլօ ցօրէն ա հրսնում, էլ հօր ը՞ս հօջա՛թ տամ (Ձ):

ՄԷԿԱԼ - *տե՛ս* ՄԸ՛ԿԱԼ:

ՄԷԿՆԷԼ - *տե՛ս* ՄԸ՛ԿՆԷԼ:

ՄԷԿՆԸՎԷԼ - *տե՛ս* ՄԸ՛ԿՆԸՎԷԼ:

ՄԷԿՍԱԼ - *տե՛ս* ՄԸ՛ԿՍԱԼ:

ՄԷՀԷՏ - *տե՛ս* ՄԸ՛ՀԸ՛Տ:

ՄԷՀԷՏԱՆ(Ց) - *տե՛ս* ՄԸՀԸ՛ՏԱՆ(Ց):

ՄԷՀՄԱՆ/ՄԸ՛ՀՄԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մէհման անէլ - Ծեծել, ջախջախել: *Պառավը Աժդահակէն ասում ա.- Տի՛ւս յէք, թա՛ չէ օշափը յէր ա կընական ք՝ը՛զ մէհման անէ* (ՀԺՀ, V, 422):

ՄԷՂԱ *(գրբ. մեղայ)* - *ձ.* 1. Մեղքին՝ հանցանքին թողություն խնդրելու բացականչություն: *Էտ վէր կը՝լօ՛խ ա ըղնում, վէր փիս պէն ա ըրալ, խըչը՛կընքում ա, թա.- Մէ՛ղա, էս հինչ ըրէ՞* (Ձ): 2. Ջարմանքի եւ երկյուղածության բացականչություն: *Մէ՛ղա, էս հինչ ծո՛ւն ա կ՝ամ* (Բ):

- Մէղա Ա՛ստըծօ - *տե՛ս* ՄԷՂԱ:

- Մէղա կ՝ա՛լ - Մեղքը խոստովանել եւ ներում խնդրել: *... Թաքավէրին տըղան մէղա յա կ՝ամ, ախճիգ՝ը նէրում ա* (ՀԺՀ, V, 177):

- Մէղաց հացու տար ինիլ/տը՛ռնալ - Մեղք գործել: *Տի՛ւ ինձա՛նա՛ լափ արխա՛յին կաց, Ըստուծէն անավ ո՛ւրթը նըմ օտում, վար յէս մէղաց հացու տար ինիլ չըմ* (ՆԼՂԺԲ, 28):

- Մէղա ք՝ը՛զ, Ա՛ստուծ - *տե՛ս* ՄԷՂԱ:

ՄԷՂԱՂԸՐԷԼ *(գրբ. մեղադրեմ)* - *նբ.* Մեկին մեղավոր համարել՝ դատապարտել: *Ըստէղ լօխ ժօղօվուրթը թաքավէրէն մէղաղըրըմ ըն, վը՛ր հիշքան սըխալ պէն ա փըռնալ մէծ-մէծ մարթկունցը կուտուրէլավ* (ՀԺՀ, VI, 97):

ՄԵՂԱՂԸՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԷՂԱՂԸՐԷԼ-ի:

ՄԷՂԱՎԷՐ/ՄԷՂԱՎԸ՛Ր/ՄԱՂԱՎԷՐ *(գրբ. մեղաւոր)* - *ած.* Մեղք գործած, մեղավոր: *Մէղավէր մարթ շատ կա, ամմա լօխ չընի ո՛ւրա՛նց մէխկը վըզա՛վ օնում* (Բ):

ՄԷՂԱՎԷՐՑ(Ը)ՆԷԼ/ՄԷՂԱՎԸ՛Ր-Ց(Ը)ՆԷԼ/ՄԱՂԱՎԷՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Մեղավոր ճանաչել, մեղադրել: *Ըտի էտ խը՛ղճ տըղէն մէղավէրցընէս ըն, տընէս տո՛ւրմա՛ն* (Ձ):

ՄԷՂԱՎԸ՛Ր - *տե՛ս* ՄԷՂԱՎԷՐ:

ՄԷՂԱՎԸ՛ՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԷՂԱՎԷՐՑ(Ը)ՆԷԼ:

ՄԷՂԱՎԸՐՕԹՈՒՆ/ՄԱՂԱՎԸՐՕԹՈՒՆ - *գ.* Մեղավոր լինելը, մեղավորություն: *Մէղավը՛րօթունը քունըն ա, էլ հօր ը՞ս ճըղճըղամ* (Բ):

ՄԷՂՄԷՐՈՒՑ - *տե՛ս* ՄԷՂՄՈՒՑ:

ՄԷՂՄԸ *(գրբ. մեղմ)* - *տե՛ս* ՄԷՂՄՈՒՑ:

ՄԷՂՄՈՒՑ/ՄԷՂՄԷՐՈՒՑ - *ած.* Հանդարտ, մեղմ: *Մէղմուց քամէ յա փը՛ջ՝ում* (Բ):

- Մէղմուց տալ - Հանդարտ վառվել: *Կը՛ղակը մէղմուց ա տամ* (Բ):

ՄԷՅՈ/ՄԷՅԻՈ *(թրք. meyit)* - *գ.* 1. Մեռած մարդու մարմին, դիակ: *Ամէն օր ք՝ինամ ըն, տը՛սնում մէյդը վը՛ղէն իրէսէն վը՛ր ընգած...* (ՆԼՂԺԲ, 52): 2. *փխբ.* Անշարժ՝ անգործունյա մարդ: *Իզէն մէյդ ա, տը՛ղան յը՛ր չի կէնում, թա մին կօրծ անէ* (Բ):

- Մէյդ անէլ - Խիստ ծեծել, սպանել: *Փըռնում ըն ըտըրա ըտը՛ղ մէյդ անում* (Ձ):

- Մէյդ տը՛ռնալ - Խիստ հյուծվել ու դալկանալ: *Մին օր մին մարթ, լըհա մէյդ տէռած, կ՝ամ ա Մէլիք-Շահնազարէն կօշտը* (ՀԱԲ, 15, 130):

- Մէյդըս թողէ մէր հա՛նդին քըչէղակը օտէ - Թող իմ հայրենիքում մեռնեմ: *Ապան ասմա.- Յը՛ս էրո՛ւշ տը՛ղ կ՝ա՛լ չըմ, մէյդըս թողէ մէր հա՛նդին քըչէղակը օտէ* (Բ):

- Մէյդիտ յըրա պըպը՛ղ-պապա՛ղ անիմ/նըստիմ/չօքիմ - *անծ.* Մեկին մեռած տեսնելու ցանկություն: *Մէյդիտ յըրա պըպը՛ղ-պապա՛ղ անիմ, խէ հավըս կ՝ուղացալ ը՞ս* (Բ):

ՄԷՅԴԱՆ *(արաբ., պրս. meydan, թրք. maidan)* - *գ.* Հրապարակ, ասպարեզ: *Էտ առուտուրականը ք՝ասիբի շօ՛րէր ա կ՝էնըմ, ք՝ընըմ կաղնըմ քաղաքին մէյդանը՛մը...* (ՀԺՀ, V, 66):

- Մէյդան ըղնէլ/(տո՛ւս) կ՝ա՛լ - Ասպարեզ ընկնել, հայտնվել: *Վէր Ծատօրը մէյդան ա ըղնում, լօխ ծը՛ծաղում ըն* (Ձ):

- Մէյդան (տո՛ւս) պիրիլ/քըցիլ - Ասպարեզ հանել: *Ափկար դային էլ ո՛ւրա՛ն քօսուտ ծին ա մէյդան տո՛ւս պիրո՛ւմ* (Ձ):

ՄԷՅԻՈ - *տե՛ս* ՄԷՅՈ:

ՄԷՅՄՈՒՆ *(պրս. maymun)* - *գ.* 1. Կապիկ: *Էս մէյմունը յէր ա կացալ, տը՛սալ ո՛ւրա՛ն յօրղանդօ՛շա՛նկը ճընթը՛ռ, փիս...* (ՀԺՀ, VI, 90): 2. *փխբ.* Տգեղ մարդ: *Մարը ասմա.- Էտ մէյմունը հինչ ա՞, վէր օգ՝իմ տըղէս հը՛տէ* (Ձ): 3. *փխբ.* Ծաղրածու, ծամածռություններ անող մարդ, խեղկատակ: *Յէգօրէն տըղան մէյմուն ա, սաղ օրը էն ա ժըժըպապա ընէս* (Բ):

ՄԷՅՄՈՒՆՕԹՈՒՆ - *գ.* Խեղկատակություն, կապկություն, ծամածռություն: *Մարթ կա՝ մէյմունօթուն ընէլավ ա փուլ ըշխադում* (Բ):

ՄԷՅՎԱ *(թրք. meyve)* - *գ. հեգն.* Միրգ, պտուղ: *Տարէն արաշտ ա իլա՛լ, մին մէյվա չի կա, թա օտինք՝* (Բ):

ՄԷՆԱԿ - *տե՛ս* ՄԻՆԱԿ:

ՄԷՆՋԻ - *ած., գ.* Փոքրամարմին, վտիտ (մարդ): *Էտ մէնզին ո՛ւրա՛ն ըգ՝օ՛ր՝ա՛ չի* (Բ):

ՄԷՆՆԸ - *տե՛ս* ՄԸ՛ՆՆԸ:

ՄԷՆՇԷՎԻԿ *(ռուս. меньшевик)* - *գ.* Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության՝ բոլշեւիզմին թշնամի հոսանքի անդամ: *...Հա՛մա՛ն էն վախտը՝ալ մէնշէվիկնէն յէկած ըն լա՛լ շէնը կա՛լա՛ծ* (ՀԲ, 334):

ՄԷՇ՝ *(թրք. meše)* - *տե՛ս* ԾԸՄԱԿ:

ՄԷՇ՝ԲՇ՝ԳԻ - *տե՛ս* ՄԷՇ՝ԲՇ՝ՅԻ:

ՄԷՇ՝ԲՇ՝ԳՕԹՈՒՆ - *տե՛ս* ՄԷՇ՝ԲՇ՝ՅՕԹՈՒՆ:

ՄԷՇ՝ԲՇ՝ՅԻ/ՄԷՇ՝ԲՇ՝ԳԻ *(թրխ. məšəbəyi)* - *տե՛ս* Ա՛ԲԷՇԻԳ՝:

ՄԷՇ՝ԲՇ՝ՅՕԹՈՒՆ/ՄԷՇ՝ԲՇ՝ԳՕԹՈՒՆ - *տե՛ս* Ա՛ԲԷՇԻԳ՝ՕԹՈՒՆ:

ՄԷՇԱԴ - *տե՛ս* ՄԷՇԱՏ:

ՄԷՇԱՏ/ՄԷՇԱԴ *(ռուս. мешать)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Մէշատ անէլ - *տե՛ս* ԽԸՆԳԱՐԷԼ:

ՄԷՇԿ - *տե՛ս* ՄԱՇԿ:

ՄԷՇՆԱԿ - *տե՛ս* ՄԱՇՆԱԿ:

ՄԷՇՈՒԿ/ՄԷՇՕԿ *(ռուս. мешок)* - 1. *գ.* Մեծ տոպրակ, պարկ: *Մէշուկը ցօրնավ լըսնում ա, շըլակում, ք՝ինամ* (Ձ): *գ., ած.* 2. Պարկի տարողությունը՝ որպես չափ: *Էրկու մէշուկ ցօրէնը մին հա՛ռ՝ո՛ւր կիլօ տը՛ռնում ա* (Բ):

- Մէշուկ տը՛ռնալ - Ուռչել, լայնանալ: *Էտ շ՝օ՛ր՝ը էնքան կ՝ը՛ցալ ըս, մէշուկ ա տը՛ռալ* (Բ):

ՄԷՇՕԿ - *տե՛ս* ՄԷՇՈՒԿ:

ՄԷՋ - *տե՛ս* ՄԱՋ:

ՄԷՋԱԿ - *տե՛ս* ՄԱՋԱԿ:

ՄԷՋԻԴ *(արաբ. masdžid)* - *գ.* Մահմեդականների աղոթատուն, մզկիթ: *Ք՝ընում ա մէջիդումը, ժամումը աղօթք անում, Աստվածանա ժառանգ՝ օգում* (ՀԱԲ, 15, 105):

- Մէջիդում տըռած մօլլա - Խայտառակված անձ: *Դէ, էտ պէնանը յը՛տը թա՛ջիրը մէջիդում տըռած մօլլա յա, հըմա՛նչում ա, թա մըրթամաչ տո՛ւս կ՝ա* (Ձ):

ՄԷՋՆԱԿ - *տե՛ս* ՄԱՇՆԱԿ:

ՄԷՋՔ - *տե՛ս* ՄԱՇԿ:

ՄԷՋԼԻՍ *(արաբ. majlis, պրս. majles, թրք. mečlis)* - *գ.* Հանդիսավոր ժողով, հանդես, հավաքույթ, ինչպես եւ դրա մասնակիցներ: *Սաղ մէջլիսը ծիծաղում ա* (ՀԱԲ, 15, 153):

- Մէջլիս կանչիլ - Հանդիսավոր ժողով հրավիրել՝ անել: *Վէզիրը թը՛ղէլան յէտը շահը մէջլիս ա կանչըմ, հարցը տինըմ, թա.- Հունց ա՞նինք՝, վը՛ր վէզիրին ըսպընօղէն ճարինք՝* (ՀԺՀ, VI, 112):

ՄԷՋԼՈՒՄ - *գ.* Անձնանուն:

- Մէջուն արտը - Հադրութի շրջանի Պլեթանց (Բլութան) գյուղի գերեզմանոցը (ըստ ավանդության՝ այդ տեղանքը

նախկինում եղել է գյուղացիներից մեկի՝ Մեջլումի արտատեղը):

- Մէջուն արտը քՒնիլ - *տե՛ս* ՄԸԷՌՆԷԼ: *Մարօվէն մարթը՝ Իսակ դային էլ Մէջուն արտը քՒԸՒցավ, շէնումը էլ հիլիվուր չըմընաց* (Բ):

ՄԷՌԱԼ - *տե՛ս* ՄԸԷՌԱԼ:

ՄԷՌՈՒՆ/ՄԸԷՌՈՒՆ *(գրբ. մեռուն, միւռոն)* - 1. *գ.* Անուշահոտ յուղ, որ գործածվում է եկեղեցում՝ մկրտությունների եւ օծումների ժամանակ: *Ղէրը մէռունը քըսում ա խուխէն ճակատը* (Ձ): *ած., գ.* 2. *փխբ.* Շատ քաղցր՝ անուշ (բան): *Մէռուն տանձ ա* (Բ): 3. *փխբ.* Ազնիվ, արդար, սուրբ (մարդ): *Ղէրը ասմա.- Տըէսնում ըմ, վէր մէռուն մարթ ըս...* (Ձ):

- Մէռունը իրըէսէն/ճըկատէն - Պարկեշտ, խոնարհ: *Մէռունը իրըէսէն ախճիգՒ ա Թամարէն հըրթնացուն* (Բ):

ՄԷՌՈՒՆԱՃՈՒՐ/ՄԸԷՌՈՒՆԱՃՈՒՐ - *գ.* Մեջը մեռոն խառնած ջուր, մեռոնաջուր: *Մէռունաճուրը յօր ա օնում, քըսում խուխէն ջանը* (Ձ):

ՄԷՌՈՒՆԱՄԱՆ/ՄԸԷՌՈՒՆԱՄԱՆ - *գ.* Մեռոնը պահելու ամանի, մեռոնաման: *Հունց ա պըտահում՝ մեռունամանը վէր ա ըղնում, մեռունը վէր ա տըէռնում տափը* (Ձ):

ՄԷՌՈՒՆԱՎԸԷՏ/ՄԸԷՌՈՒՆԱՎԸԷՏ - *գ.* 1. Մեռոնի հոտ: *Մէռունամանը վէր պէնում ըն, մէռունավըէտը յըէխծավը մին ա տըէռնում* (Բ): 2. *փխբ.* Լավ հոտ, անուշ հոտ: *Էտ տանձանն մէռունավըէտ ա կՒամ* (Բ):

ՄԷՍ/ՄԸԷՍ *(գրբ. միս)* - *գ.* 1. Ոսկորները պատող մկանային հյուսվածք, միս: *Ծօվան մին դուշ ա տանս կՒամ. վէչ մէս օնէ, վէչ ՝արանս* (ԱՀ, 41): 2. Մորթած անասունի, թռչունի, ինչպես նաեւ ձկան միսը՝ որպես ուտելիք: *Մարթը մըէսը տանում ա թօղում տանը, ինքՒընը էլիա յէտ տանռնում, կՒամ արչին կօշտը* (ՆԼՂԺԲ, 138): 3. *փխբ.* Որոշ պտուղների փափուկ միջուկը: *ԽընձՒրէն մէսը բիդի շատ ինի, վէր օտիս, քուշտանաս* (Բ): 4. *փխբ.* Մարդկային մարմինը՝ որպես հեշտանքի առարկա: *Հըմանչում էլ չի, մըէծ ախճիգՒ ա, մէսը պէց ա ըրալ, տըղըմարթկանցը ըռաշկէն վըէնը կացալ* (Բ):

- Մէսը առանց վըէսկըռ չինիլ - *տե՛ս* Ծըմակը առանց կՒէգան չինիլ:

- Մէսը ծամէլ - *տե՛ս* Մէսը օտէլ:

- Մէսը կըծէլ, պուք տալ - 1. *տե՛ս* Մէսը օտէլ: 2. Մեկի հանդեպ մեծ ոխ ունենալ: *Իզէն Ըշօտէն մէսը կըկըծէ, պուք տա, հունց կարող ա՞ հընգէր տըէռնան* (Բ):

- Մէսը կէրած - *տե՛ս* Աշկան դաղած:

- Մէսը կըրծկօրծէլ - *տե՛ս* Մէսը օտէլ:

- Մէսը հանՒլիլ, վըէսկըռը մընալ - Խիստ նիհարել, հյուծվել: *Էնքան կօրծ ա ըրալ, մէսը հանՒլանՒ ա, վըէսկըռըն ա մընացալ* (Բ):

- Մէսը հաց անէլ, վըէսկըռը՝ ճՒուր - Սաստիկ ծեծել՝ տանջել: *Աղան էտ նՒՕքանՒրէն մէսը հաց ար անում, վըէսկըռը ճՒուր* (Ձ):

- Մէսըն ա ծՒուկունը մին տըէղ իփվիլ չի - *տե՛ս* Էրկու տըվարէն կըլՒՕխը մին ղըզղանում իփվիլ չի:

- Մէսը պուք տալ - *տե՛ս* Մէսը օտէլ:

- Մէսը վէր անէլ/թըփըցընէլ - Մեկին զզվեցնել՝ ձանձրացնել՝ հոգնեցնել՝ հիասթափեցնել: *Էնքան խօսից, լափ մէսըս վէր ըրավ* (Բ):

- Մէսը վէր կՒանՒլ/թափվէլ - Զզվել, ձանձրանալ, հոգնել, հիասթափվել: *Մէսըս վէր յըէկավ, էնքան քար քընդէցէ* (Բ):

- Մէսը քՒինիլ, վըէսկըռը մընալ - *տե՛ս* Մէսը հանՒլիլ, վըէսկըռը մընալ:

- Մէսը օտէլ - 1. Մեկին տանջել՝ չարչարել: *Թաքավէրը ժուղուվուրթէն մէսը օտում ար* (Ձ): 2. Ձայրույթը՝ հուզմունքը մի կերպ զսպել: *ԿընէգՒը վըէնները պէց պար ա կՒամ, մարթըն էլ նըստած տըէղը լՒընիա մէսը օտում ա* (Ձ):

- Մըսան կըտըրէլ, ըռըխէն տէմ անէլ - *տե՛ս* Վըէռան կըտըրէլ, ըռըխէն տէմ անէլ:

- Մըսէն ինիլ - *տե՛ս* Ձանէն ըղնէլ:

- Մըսէն փուլ չի տըվալ, ամմա զըէռզըէռ թիքՒէքՒընը ա օտում - Ասում են նրանց մասին, ովքեր, որեւէ գործում մասնակցություն չունենալով, առատորեն օգտվում են դրա արդյունքներից:

- Մըսէրը կախ-կախ - Շատ գեր: *Մըսէրը կախ-կախ կընէգՒ ա Սօնիկը* (Բ):

ՄԷՍ-ՄՕՐԹԷ/ՄԸՍԸՄՕՐԹԷ - *գ.* Մարմին: *Ըտըրա մէսը-մօրթէն վէրընա՞, վէր կօրծ անէ* (Բ):

- Մէս-մօրթա ըղնէլ - Նիհարել, հյուծվել: *Ըտի մէս-մօրթա ընգած կՒամ ա, թաքավէրին պըլատէն ըռաշկէն կօչ կՒամ* (Ձ):

- Մէս-մօրթէ փըռնէլ - Գիրանալ, չաղանալ: *Ըտըէղ մին էրկու շէբաթ կէնում ըն, մըսըմօրթէ փըռնում* (Ձ):

ՄԷՏԱԿ - *տե՛ս* ՄԸԷՏԱԿ:

ՄԷՏԻՍ/ՄԻՏԻՍ *(ռուս. метис, ֆր. metis)* - *գ., ած.* 1. Երկու տարբեր ցեղերի խաչավորումից առաջ եկած (կենդանի կամ բույս): *Մէտիս վըխճարէն մէսը քախծըր կինի* (Ձ): 2. Տարբեր ցեղերի պատկանող տղամարդու եւ կնոջ ամուսնությունից ծնված (մարդ): *Էտ շէնումը մին մէտիս ա ինՒում կընալիս* (Ձ):

ՄԷՏԸ - *տե՛ս* ՄԸԷՆԸ:

ՄԷՏԸՐ *(ռուս. метр, ֆր. metre, հուն. metron)* - *գ.* 1. Չափի մետրական միավոր, որ հավասար է հարյուր սանտիմետրի: *Մին կիլօմետրըը հազար մէտրը ա* (Բ): 2. Մեկ մետրաչափ ձող՝ ժապավեն եւն: *Մէտրըը յօր ա օնում, չափում* (Ձ):

ՄԷՏԿ - *տե՛ս* ՄԸԷԹԿ:

ՄԷՏՔ - *տե՛ս* ՄԸԷԹԿ:

ՄԷՐ[1]/ՄԸԷՐ *(գրբ. մեր)* - *դ.* Անձնական դերանվան առաջին դեմքի հոգնակի թվի՝ ՄՈՒՆՔ-ի սեռական հոլովաձեւը: *Իծանանծը հըրցընէս ա էտ վար ընօղան, թանՒ.- Մէր էծէրը տըէսալ չը՞ս* (ՀԺՀ, V, 486):

- Մէր բախտը էն ա մըէզ նըհըէտ - Ասում են վտանգավոր գործ ձեռնարկող հարազատներին՝ մի՛ գնա այդ քայլին, առանց այն էլ մենք փորձանքների շատ ենք հանդիպել: *Մարը ասմա.- Կօրծ չօնիս, տու վըէրս անօղ չըս, մէր բախտը էն ա մըէզ նըհըէտ* (Ձ):

- Մէր էշին թայը/թան - *տե՛ս* Իմ ապօր էշին թայը:

- Մէր լՒուզՒուն շօղուլ կաղնէ յա. օզՒում ըս՝ համնը շինի, օզՒում ըս՝ մանսանն - Հայերենը (Ղարաբաղի բարբառը) ճոխ ու ճկուն լեզու (բարբառ) է:

- Մէր կՒանՒուն բըրըբար չի - Մերն էլ էժան չէ, պետք է ըստ արժանվույն գնահատել: *Յէգօրը ասմա.- Ասածըտ մէր կՒանՒուն բըրըբար չի, իմ կավըս լՒավ կավ ա, կարքէն կՒին տօ* (Ձ):

- Մէր կօռնը թՒղէ մէր թէվքումը մընա - Մեր աղջկան՝ տղային ճիշտ կլինի համագյուղացու՝ համերկրացու՝ բարեկամի հետ ամուսնացնենք:

- Մէր մաչին ասած - *տե՛ս* Խօսկը մէր մաչին (մընա):

- Մէր մարթը - Ամուսինս (ասում են տարեց կանայք): *Այան ասում ա.- Մէր մարթը քըէցալ ա ճէղաց* (Ձ):

- Մէր տըղա - Բարեկամական դիմելաձեւ երիտասարդներին: *Հըլիվուրը ասում ա.- Մէր տըղա, յըէք հաՒց կէր, էլիա կընքՒինիս* (Ձ):

ՄԷՐ[2] - *տե՛ս* ՄԷԼ:

ՄԷՐ[3] - *տե՛ս* ՄԱՐ:

ՄԷՐ[4] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մէր ածէլ/տալ - *տե՛ս* ՄԷՐՎԷԼ:

- Մէր կՒանՒլ/օտէլ - *տե՛ս* ՄԷՐՎԷԼ:

ՄԷՐԱՆ/ՄԷՐՈՒՆ - *գ.* Պանրի կամ մածնի մակարդ: *Մէրանը քընցՒում ըն կաթնէն մաչը, մածունը մէրում* (Բ):

ՄԷՐՈՒՆ - *տե՛ս* ՄԷՐԱՆ:

ՄԷՐԱՆՔ - *գ.* Հարսի՝ մոր կողմից հարազատները: *Հարթնանը մէրանքՒ կՒամ ըն ղօնաղ* (Ձ):

ՄԷՐԷԼ/ՄԷՐԻԼ - *նբ.* Կաթին մերան խառնել՝ մածուն կամ պանիր ստանալու համար: *Կաթնը մէրում ըն, շծրանվ պըտատում, տինում քունջումը* (Ձ):

ՄԷՐԻԼ - *տե՛ս* ՄԷՐԷԼ:

ՄԷՐՎԷԼ/ՄԷՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՄԷՐԷԼ-ի:

ՄԷՐՎԻԼ - *տե՛ս* ՄԷՐՎԷԼ:

ՄԷՐՈՒ(Ն)Ք/ՄԸՐՈՒ(Ն)Ք - *գ.* 1. Խոսողի հետ որեւէ կարգի, հատկապես արյունակցական՝ ընտանեկան խմբակցություն կազմող մարդիկ, մերոնք: *Կընէգը ասում ա.- Մ մարթ, էքինց մէրունք կըլական ըն, մին կառնը ինքյ կանվ, վէր մորթինքյ* (Ձ): 2. Խոսողի երկրի զորքերը՝ բանակը: *Մէրունք վէր Աղդամը ըզըղէցէն, ժուղովուրթը շատ ուրխացավ* (Բ):

ՄԷՐՈՒՍԿ/ՄԷՐՈՒՑ(Կ) - *գ.* 1. *տե՛ս* ՄԷՐԱՆ: 2. Նոր մերած եւ դեռ չպնդացած մածուն: *Մէրուսկը քախծըր ա ինում* (Բ): 3. Կավե աման, որի մեջ մերում են մածունը: *Մէրուսկը վէր ա ընում, կստրում* (Ձ):

ՄԷՐՈՒՑ(Կ) - *տե՛ս* ՄԷՐՈՒՍԿ:

ՄԷՔ/ՄԻՔ - Մասնիկ, որով կազմվում է արգելական հրամայականի հոգնակին: *Մարը լանց ա ինում, թա.- Քինիլ մէք, ծէր հանր էլ ա քըէցալ, կըլիսէն յըրա կօրչանվ* (Ձ):

ՄԷՔՍԱԼ - *տե՛ս* ՄԸՔՍԱԼ:

ՄԸԳԸՐՈԴԷԼ - *տե՛ս* ՄԸԿԸՐՈԴԷԼ:

ՄԸԳԸՐՈԴ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՄԸԿԸՐՈԴ(Ը)ՎԷԼ:

ՄԸԳՆԸԼԻԼ/ՄԻԳՆԸԼԻԼ *(գրբ. մակաղեմ)* - *նբ. տե՛ս* Մանվ անէլ:

ՄԸԳՆԸԼՎԻԼ/ՄԻԳՆԸԼՎԻԼ (գրբ. մակաղիմ) - *կբ. եւ չբ.* ՄԸԳՆԸԼԻԼ-ի:

ՄԸԳԱՄ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԸԳՆՄ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԸԳԸԼՆՏԸՊ/ՄԻԳԸԼՆՏԸՊ *(գրբ. մակաղատեղ)* - *գ.* Անասունների, հատկապես ոչխարների՝ կեսօրվա մակաղելու տեղը, մակաղատեղի: *Քինամ ա մըգըլանտըղը, տըսնում չօբանը ծառէն տակէն քօն իլանվ* (Ձ):

ՄԸԴԱՐԵԼ - *չբ.* Միակը մնալ՝ դառնալ: *Խըղճէն խօխա շատ ա իլանվ, չումանը յըտըն ա մըդարալ* (Բ):

ՄԸԴՂԱՐ/ՄԸԴՂՆՐ - *տե՛ս* ՂԱԴԻՐ:

ՄԸՋԱՃԱՔ - *տե՛ս* ՄԸՋԱՃԱՔ:

ՄԸՋԱՄԱՐ - *տե՛ս* ՄԸՋԱՄԱՐ:

ՄԸՋԱՉԱՓ - *տե՛ս* ՄԸՋԱՉԱՓ:

ՄԸՋԱՎԷՐ - *տե՛ս* ՄԸՋԱՎԷՐ:

ՄԸՋԱՎՈՒՐ - *տե՛ս* ՄԸՋԱՎՈՒՐ:

ՄԸՋԱՓՕՆՋ - *տե՛ս* ՄԸՋԱՓՕՆՋ:

ՄԸՋՋԱԼ - *չբ.* Թեթեւ կերպով ցավել՝ կսկծալ: *Կըռէքըս մըզզամ ա* (Ձ):

ՄԸՋՋԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՄԸՋՋԱԼ-ի:

ՄԸՋՋՕՆ - *գ.* Թեթեւ կերպով ցավելը, կսկծալը: *Վըէնէնէս մըզզօնան սաղ քըշէրըս քօն չըմ իլանվ* (Բ):

ՄԸՋՋՕՑ - *տե՛ս* ՄԸՋՋՕՆ:

ՄԸՋԸՊԱՆ - *տե՛ս* ՄԸՋԸՊԱՆ:

ՄԸՋԸՏԷ/ՄԻՋԸՏԷ - *մ.* Մեզ համար: *Մըզըտէ լավ կինի էն վախտը, հիբը թօրքէրը ինին վէջ* (Բ):

ՄԸՋԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ՄԸՋԸԹԱԹԱԽ:

ՄԸՋԸԿԱԼԻԼ - *տե՛ս* ՄԸՋԸԿԱՆԼԻԼ:

ՄԸՋԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ՄԸՋԸԿՈՒԼՈՒԼ:

ՄԸՋԸՀԱՆ - *տե՛ս* ՄԸՋԸՀԱՆ:

ՄԸՋԸՂԱՏԸՊ - *տե՛ս* ՏԸՆԸՋԱՏԸՊ:

ՄԸՋԸՂՎԱՉԻ - *տե՛ս* ՏԸՆԸՋՎԱՐԻ:

ՄԸՋԸՂՎԱՐԻ - *տե՛ս* ՏԸՆԸՋՎԱՐԻ:

ՄԸՋԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ՏԸՆԸՋՕԹՈՒՆ:

ՄԸՋԸՄՕՐԹԷ - *տե՛ս* ՄԸՋԸՄՕՐԹԷ:

ՄԸՋԻԼ/ՄԸՐՋԻԼ/ՄԸՋԻԼ/ՄԻՋԻԼ *(գրբ. մզեմ)* - *նբ.* 1. Ճմլելով՝ ճնշելով հյութը՝ հեղուկը քամել, մզել: *Նօռնը մըզում ա, սօկը խըմում* (Բ): 2. *փխբ.* Հարստահարել, ունեցվածքը կորզել, սնանկացնել: *Փանանի խանը Շուշվա ժուղուվուրթէն օր-իշըէղ չար տամ, մըզում ար* (Ձ):

- Մըզանվ նօռնը - *հեգն.* Հյուծված՝ նիհար մարդ: *Էտ մըզանվ նօռնը օխտը տըղըմարթու մըչանք օտում ա* (Բ):

ՄԸՋՄԱՋՈՒՏ - *տե՛ս* ՄԸՋՄԱՋՈՒՏ:

ՄԸՋՄԸՋ *(թրք. mizmiz)* - *ածական.* 1. Դանդաղկոտ, ծանրաշարժ: *Մըզմըզ մարթ ա ուստա Մաքսիմը, մին օրումը մին մէտըր պատա իվիլ տինում չի* (Բ): 2. Բծախնդիր, մանրախնդիր: *Էտ մարթըն էլ շատ մըզմըզ ա ինում, ըտըրա հըէտէ էլ վէշ մինը նըհըէտը առըտօր չի անում* (Ձ): 3. Ծանր խոսող, կակազող: *Էտ մըզմըզ մարթը մինչըէվ խօսկը պըրծընում ա, կինալը վըխճարը տանում ա* (Ձ):

ՄԸՋՄԸՋԱԼ[1] - *չբ.* 1. Դանդաղ շարժվել: *Էրկու սըհաթ ա՝ մըզմըզամ ա, կարում չի թա յուղուծու անէ* (Բ): 2. Ծանր խոսել, կակազել: *Հինչ ը՞ս մըզմըզամ, ճէլլի ամսէ, տըսնամ՝ հինչ ա պըտահալ* (Բ): 3. Քրթմնջալ, դժգոհել: *Հընգէրը ասում ա.- Չէ՛, մըզմըզա մի՛լ, կընէգըտ էլ բիդի կէս անէս* (ՀԺՀ, VII, 106):

ՄԸՋՄԸՋԱԼ[2] - *տե՛ս* ՄԸՋՋԱԼ:

ՄԸՋՄԸՋՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՋՋԸՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸՋՄԸՋՕՆ - *տե՛ս* ՄԸՋՋՕՆ:

ՄԸՋՄԸՋՕՑ - *տե՛ս* ՄԸՋՋՕՆ:

ՄԸՋՄԸԾԱՆԱԼ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾԱՆԱԼ:

ՄԸՋՄԸԾԱՆԷՔ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾԱՆԷՔ:

ՄԸՋՄԸԾԱՎՈՒՆ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾԱՎՈՒՆ:

ՄԸՋՄԸԾՀԱՆ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾՀԱՆ:

ՄԸՋՄԸԾՀԱՆԷԼ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾՀԱՆԷԼ:

ՄԸՋՄԸԾՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸՋԱՃԱՔ/ՄԸՋԱՃԱՔ - *գ.* Շատ նեղ՝ մազանման ճաք: *Մըզաճաքը վէր վըխտէն կըպէցէլ վէջ, կըմըծանա* (Բ):

- Մըզաճաք տալ - Թեթեւակի ճաքել: *Կարասը մըզաճաք ա տըվալ* (ՆԱԲ, III, 360):

ՄԸՋԱՄԱՐ/ՄԸՋԱՄԱՐ - *գ.* Կաթը քամված՝ սպառված՝ ցամաքած: *Մըզամար հէյվանը կաթնը ըշտըղա տա՞* (Բ):

- Մըզամար դանա - 1. Կաթը ցամաքած մայր ունեցող հորթ: *Մըզամար դանան տանվզնը կըմընա* (Բ): 2. Տկար՝ վտիտ անձ: *Էտ մըզամար դանան հորըմորը օր-իշըէղ չի տաս* (Բ):

- Մըզամար կավ - 1. Կաթը ցամաքած կով: *Իլանվ-չիլանվը մին մըզամար կավ ա ինում, էն էլ ա ըստակում* (Ձ): 2. Բարիք չարարող մարդ: *Էրկու տըղա օնէ, ճօխտըն էլ՝ մըզամար կավ* (Բ):

ՄԸՋԱՉԱՓ/ՄԸՋԱՉԱՓ - *ածական. տե՛ս* Մազու մընչանք:

ՄԸՋԱՎԷՐ/ՄԸՋԱՎՈՒՐ/ՄԸՋԱՎԷՐ/ՄԸՋԱՎՈՒՐ - *ածական.* 1. Վրան մազեր կամ մազե խավ ունեցող: *Մըզավուր պէնջակ ա կըէցալ* (Բ): 2. Երկար ու առատ մազեր ունեցող: *Էտ չուբանէն էլ մին դաշանգ մըզավէր ախճիգ ա ինիս* (Ձ):

ՄԸՋԱՎՈՒՐ - *տե՛ս* ՄԸՋԱՎԷՐ:

ՄԸՋԱՓՕՆՋ/ՄԸՋԱՓՕՆՋ - *գ.* Մազի փունջ, մազափունջ: *Մըզափօնջը կըլիսէն կապած վէր տիւս ա կամ, լօխ մընամ ըն ըռխընէն պէց* (Ձ):

ՄԸՋԸՂԱՆ/ՄԸՋԸՂԱՆ *(գրբ. մազեղեն)* - *գ., հվք.* Մազից պատրաստված՝ հյուսված՝ գործված իրեր՝ զգեստներ: *Մին խըլլանվ մըզըէղան ա տանում բազարը, ծախում, խօխօնցը հըէտէ տէս-տէն ինքյ օնում, պիրում* (Ձ):

ՄԸՋԸԹԱԹԱԽ/ՄԸՋԸԹԱԹԱԽ - *ածական.* Վրան մազեր թափված, մազերով ապականված: *Մին մըզըթաթախ պէրց ա տինում դունաղէն կըլիսընտակէն* (Բ):

ՄԸՋԸԿՆԼԻԼ/ՄԸՋԸԿԱԼԻԼ - *չբ.* Մազերով ծածկվել, մազակալել: *Տա ծըմընկէրումը կէնում ա, շծրէրը լօխ ճըղօրտվում ա, իրէսը մըզըկանում* (Ձ):

ՄԸՋԸԿՈՒԼՈՒԼ/ՄԸՋԸԿՈՒԼՈՒԼ - *ածական.* Մազերի մեջ կորած, մազակոլոլ: *Նի յա մընում, տըսնում մին մըզըկուլուլ դէվ ըտըղ քօն իլանվ* (Ձ):

ՄԸՋԸՀԱՆ/ՄԸՋԸՀԱՆ - *տե՛ս* ԹՈՒՔԸՀԱՆ:

ՄԸՋ՝ԸՄՕՐԹԷ/ՄԱՋ՝-ՄՕՐԹԷ/ՄԸՋԸ-ՄՕՐԹԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըզ՝ըմօրթէ փըռնէլ - Գիրանալ, չաղանալ: *Տավարը կընչկօտըմ ըրբէ-լավ, մըզ՝ըմօրթէ յա փըռնըմ* (ՁՏ, Բ, 33):

ՄԸՋ՝ԻԼ - *տե՛ս* ՄԸՋԻԼ:

ՄԸՋ՝ՄԱՋ՝ՈՒՏ/ՄԸՋՄԱՋՈՒՏ - *ած.* Խիտ ու շատ մազեր ունեցող, մազմզոտ: *Մին մըզ՝մազ՝ուտ արչ ա տ՚ուս կ՚ամ քօլէն քըմական, յըրա պըրծընում էտ կընգանը յըրա* (Ձ):

- Մըզ՝մազ՝ուտ ճանջ - *արհմ.* Մազմզոտ անձ: *Մխչի, մինը կա վէ՞չ, Մըրյանէն ասէ.- Էտ մըզ՝մազ՝ուտ ճանջըտ հինչ ա՞, վէր օգ՝ալ ըս տըղէտ հը՞տէ* (Բ):

ՄԸՋ՝ՎԻԼ - *տե՛ս* ՄԸՋՎԻԼ:

ՄԸՋՆԱԹԱՆ - *տե՛ս* ՄԸԾՆԱԹԱՆ:

ՄԸՋՆԱԿԷՐ - *տե՛ս* ՄԸԾՆԱԿԷՐ:

ՄԸՋՆԱՀԱՄ - *տե՛ս* ՄԸԾՆԱՀԱՄ:

ՄԸՋՆԱՃԻՒՐ - *տե՛ս* ՄԸԾՆԱՃԻՒՐ:

ՄԸՋՆԱՇՕՐ - *տե՛ս* ՄԸԾՆԱՇՕՐ:

ՄԸՋՆԱՍԷՐ - *տե՛ս* ՄԸԾՆԱՍԷՐ:

ՄԸՋՆԱՎԸՏ - *տե՛ս* ՄԸԾՆԱՎԸՏ:

ՄԸՋՆԸՂԱՆ - *տե՛ս* ՄԸԾՆԸՂԱՆ:

ՄԸՋՆԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ՄԸԾՆԸԹԱԹԱԽ:

ՄԸՋՆԸԼԱՎԱՇ - *տե՛ս* ՄԸԾՆԸԼԱՎԱՇ:

ՄԸՋՆԸՓԸՐԹԻՒՇ - *տե՛ս* ՄԸԾՆԸՓԸՐԹԻՒՇ:

ՄԸՋՆԸՔԱՄԷ - *տե՛ս* ՄԸԾՆԸՔԱՄԷ:

ՄԸՋՆԻՐԸՍ - *տե՛ս* ՄԸԾՆԻՐԸՍ:

ՄԸՋՎԻԼ/ՄԸՐՋՎԻԼ/ՄԸՋ՝ՎԻԼ/ՄԻՋՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՋ՝ԻԼ-ի:

ՄԸՋՆԻԿ/ՄԻՋՆԻԿ/ՄՆԻՋՆԻԿ - *գ.* 1. Մզված հյութը, քամվածք: *Նօռնը մը-զ՝ում ա, մըզ՝ուկը ածում խըրըվածէն յըրա* (Բ): 2. Ավելուկով եւ թթվեղենով պատրաստած ջրալի կերակուր: *Այան լ՚ավ մըզ՝ուկ ա իլ՚ալ իփիյիս* (Բ):

ՄԸՋՆԻԿԱՃՆԻՐ/ՄԻՋՆԻԿԱՃՆԻՐ/ՄՆԻՋՆԻԿԱՃՆԻՐ - *գ.* Ավելուկով եւ թթվեղենով պատրաստած կերակրի՝ *մըզ՝ուկի* հյութը: *Մըզ՝ուկաճ՝ուրը լ՚ազ՚աթ պէն ա* (Բ):

ՄԸՋՆԻԿԹԸԹՕ/ՄԻՋՆԻԿԹԸԹՕ/ՄՆԻՋՆԻԿԹԸԹՕ - *տե՛ս* ՄԸՋՆԻԿ (2):

ՄԸՋՆԻՐ - *գ.* Փոքր՝ չնչին բան՝ չափ: *Էտ տըղան ասմա.- Թաքավէրըն ապ-րած կէնա, խէ յը՞ս կըլ՚ըխ տամ, յը՞ս մին մըզ՝ուր ըմ* (Ձ):

ՄԸՋՕՎԷԼ - *տե՛ս* ՆԸՋՕՎԷԼ:

ՄԸՋՕՎՎԷԼ - *տե՛ս* ՆԸՋՕՎՎԷԼ:

ՄԸՋՕՎՔ - *տե՛ս* ՆԸՋՕՎՔ:

ՄԸ՞Ջ/ՄԷՋ - *դ.* Անձնական դերանվան առաջին դեմքի հոգնակի թվի՝ ՄՈՒՆՔ-ի տրական եւ հայցական հոլովաձեւը: *Ք՚ինամ ըն թաքավէրին կօշտը, թա.- Մը՞զ փըլան մարթըն ա դարկալ* (Ձ):

- Մը՞զ էլ ա մար պէրալ - Մենք էլ ենք արժանի՝ կարոտ հոգատար վերաբերմունքի՝ ուշադրության: *Նօք՚անէն ասում ըն.- Վէզիրըն ապըրած կէնա, մը՞զ էլ ա մար պէրալ, մը՞զ էլ հաց տօ* (Ձ):

- Մը՞զ յը՞կավ՝ Լէնինը մը՞ռավ - Ասում են այն ժամանակ, երբ անհրաժեշտության դեպքում մի բան սպառվում՝ խափանվում է: *Մը՞զ յը՞կավ՝ Լէնինը մը՞ռավ. ք՚ը՞ցէնք՚, թա ա՚ալէր աղանք՚, ճըղաց-պանը ասից.- Ճըղացէն քարը կօտըրալ ա* (Բ):

ՄԸ՞Ջ-ՄԸ՞Ծ - *տե՛ս* ՄԸ՞Ծ-ՄԸ՞Ծ:

ՄԸ՞ԹԿ/ՄԷԹԿ/ՄԸ՞ՏՔ/ՄԷՏՔ/ՄԸ՞ՏԿ/ՄԷՏԿ *(գրբ. միտք)* - *գ.* 1. Մտածելու՝ դատելու կարողություն՝ միտք: *Ըտըրա ըշտըղան ա՞ մը՞թկ, վէր ըտի պէն մըտածէ* (Բ): 2. Մտածմունք: *Էտ մը՞տքը ըտըրան շատ ա տ՚անջ՚ում* (Ձ): 3. Հիշողություն: *Մըթկումըս մէր շէնին ք՚ՕՀնա՚ ախպ՚ուրըն ա* (Բ): 4. Մտադրություն, նպատակ: *Տըհանցա մինին մը՞թկը էն ա ինում, վար Շըրմաղէն օգի* (ՆԼՂԺԲ, 30):

- Մը՞թկ անէլ - Մտածել, խորհել: *Էտ կընէգ՚ը մը՞թկ ա անըմ, մը՞թկ, վօրօշում ա, վէր մարթը տօն կ՚ա՚, մարթին ասէ...* (ԼՂԲ, 294):

- Մը՞թկը խային/ծօռ - 1. Նենգավոր, խարդախամիտ, հետին միտք ունեցող: *Տու մի ասիլ, սուդ՚ին մը՞տքըն էլ ա խա-յին, ասըմ ա.- Յէտնան կըտամ* (ՆԼՂԺԲ, 122): 2. Գայթակղեցնելու տրամադիր, շնանալու մտադրություն ունեցող: *Վէ-զիրին մը՞թկը խային ա ինում, խօխօցը քունավ ա անում, ինք՚ը ք՚ինամ էտ կընգանը օթաղը* (Ձ):

- Մը՞թկը ծըռ(վ)էլ - 1. Մտադրությունը փոխվել, նախկին մտադրությունից հրաժարվել: *Մը՞թկըս ծըռվում ա, հըղան յը՞տ ըմ տը՞ռնում* (Բ): 2. Ցանկական միտք հղանալ: *... Մը՞տքը ծըռվում ա, օգում ա ըխճըկանան մուտանա* (ՀԺՀ, VII, 115):

- Մը՞թկը կըրըհան ինիլ - Հիշողությունը թուլանալ: *Ապան ասում ա.- Պը-ռավալ ըմ, մը՞թկըս կըրըհան ա իլ՚ալ* (Բ):

- Մը՞թկը կ՚ալ - *տե՛ս* Մը՞ննը ըղնէլ:

- Մը՞թկը հըլ՚ՕրէլՀտանէլ - Մեկին մտափոխել՝ մոլորեցնել: *Պառավը էս ըխճըկանը մը՞թկը հըլ՚ՕրՀում ա, տանում ծըմակը* (Ձ):

- Մը՞թկըտ հինչ ա՞ - Ի՞նչ ես ուզում՝ մտածում, ի՞նչ մտադրություն ունես: *Դէրվիշը ասում ա.- Մը՞թկըտ հինչ ա՞, խէ ըտի շատ ը՞ս մըտածում* (Ձ):

- Մը՞թկը փօխ(վ)էլ - *տե՛ս* Մը՞թկը ծըռ(վ)էլ:

- Մը՞թկ ինիլ - Մտադրություն ունենալ, մտադրվել: *Օխնը, կըլ՚ՕխՀ բիդի ինձ ըրած, ըսքըսից յէշիլ, ամմա մէթկը չօնար կ՚ալ՚ի* (ԼՂԲՔ, 268):

- Մը՞թկան հանէլ/տ՚ուս օնէլ/քըցիլ - 1. Մոռանալ, չհիշել, այդ մասին չմտածել: *Հօրը ըսըծնէն մը՞թկան հանում ա* (Ձ): 2. Մոլորեցնել, խելքից հանել: *Պառավը էտ ըխճըկանը մը՞թկան հանում ա* (Ձ):

- Մը՞թկավը(ն) ընցընէլ - 1. Կարծել, միտք հղանալ: *Մը՞թկավըս ընցավ, վէր էտ պէնը Արտաշը կինի ըրած* (Ձ): 2. Հիշել: *... Էտ վախտը մը՞թկավըն անց ա կը՞նըմ, վէր հըրէվանին կընէգ՚ը ըրկու-հ՚ուք՚իս ա* (ՀԺՀ, V, 59):

- Մը՞թկէն դօնը ըղնէլ - Մտքերի մեջ խորասուզվել, մտածմունքի մեջ ընկնել, մտմտալ: *Էտ առուտուրականը շատ ա մըտածում, նըստում, ընգնում մը՞թկէն դօնը* (ՀԺՀ, V, 59):

- Մը՞թկէն դօնը քըցիլ - Մեկին մտքերի մեջ խորասուզել, մտածմունքի մեջ գցել: *Տըղան ՝ուրՀն խուսկէրքավը հօրը մը՞թկէն դօնըն ա քըցիս* (Ձ):

- Մը՞թկումը ասէլ/խօսէլ - Ինքն իրեն՝ անլսելի խոսել՝ ասել՝ մտածել: *Էտ պէնը ըսկանում ա, մը՞թկումը ըսէլավ ք՚ինամ* (Ձ):

- Մը՞թկումը ինիլ - Համաձայն լինել, մտադիր լինել: *Էտ կուճուր ըխճըկանը մը՞թկումըն էլ ա ինում, վէր էտ տըղէն նըհէտ ման կ՚ա* (ՀԺՀ, V, 395):

- Մը՞թկումը ծը՞ծաղէլ - Առանց արտահայտվելու մեկին՝ մի բան ծաղրի ենթարկել՝ արհամարհել՝ չհավանել: *Վէզիրը մը՞թկումը ծը՞ծաղում ա թաքավէրին յըրա* (Ձ):

- Մը՞թկումը կուրկուտ քըցիլ - Մի բանի մասին շատ մտածել, կշռադատել: *...Էտ ուստան մը՞տքումը կուրկուտ ա քը-ցըմ, թա.- Աստուծ ինձ պահալ ա, վէր ք՚ի-նամ, ՝ուրՀն դուլը տէռնամ...* (ՁՏ, Ա, 31):

- Մը՞թկումը մէխէլ/տըպէլ - Տպավորել, հիշողության մեջ ամրապնդվել: *Ըտըրա մը՞թկումը մէխում ըն, վէր կը-նէգ՚ը սիրական ա պահում* (Ձ):

- Մը՞թկումը մէխվէլ/տըպվէլ - Տպավորվել, հիշողության մեջ ամրապնդվել: *Տը՞ղ հ՚ՕրընՀ ասում ա.- Մը՞տկըրնէրումըս տըպված ա իլ՚ալ, վը՞ր սա մէր տըղան չի* (ՀԺՀ, VII, 76):

- Մը՞թկումը շընէր ցըղն(օտ)էլ - 1. Վատ՝ չար մտքեր հղանալ: *Մարթին մը՞թկումը վէր շընէր ա ցըղնօտում, բիդի ճէլլ անիս, առաշկըն օնիս* (Ձ): 2. *տե՛ս* Մը՞թկը ծըռ(վ)էլ (2):

- Մը՞թկումը տինիլ - Վճռել, նպատակադրվել: *Մը՞թկըմը տինըմ ա, վէր,*

հինչ էլ ինի, էտ ծօխին յըրան քՒնի (ՀԺՀ, V, 54):

ՄԸԽԿ - *տե՛ս* ՄԷԽԿ:

ՄԸԾ/ՄԷԾ/ՄԸԾ/ՄՕԾ *(գրբ. մեծ)* - *ած.* 1. Ծավալով՝ չափսերով սովորականից՝ հարկ եղածից ավելին՝ խոշոր: *Էտ սարէն լէնջին մին մԸծ կաղնէ յա ինՒում փըսած* (Ձ): 2. Ընդարձակ, լայնատարած: *Ըտըրան մին մԸծ արտ ա ինՒում* (Ձ): 3. Բազմաքանակ, բազմամարդ: *Մին մԸծ խալխ ա հըվաքվում, քՒնամ ըն թաքավէրին կօշտը՝ կՒէնգՒնտ* (Ձ): 4. Ուժգնությամբ՝ հաճախականությամբ՝ զորությամբ՝ սաստկությամբ եւն նշանակալից: *ՄԸծ տըժըրութունը քըշէլի հԸտէ մԸծ օժ ա հարկավէր* (Ձ): 5. Կարեւոր, նշանակալից: *Հասան Ջալալյանը Ղարաբաղա հԸտէ մԸծ կօրծ ա ըրալ* (Ձ): 6. Շատ, զգալի քանակությամբ: *Էտ պուճուր ախպէրը էտ մԸծ կումարը տամ ա, ախպօրցը ըզաղըմ...* (ՀԺՀ, V, 76): 7. Մեծահասակ, հասակավոր: *Մէր մըծէրէն անա ըսկացած զըրՒց կա...* (ՆԱԲ, 85): 8. Տաղանդավոր, անվանի, նշանավոր: *ՄԸծ մարթկանցը ասթըխէրը մԸծ ըն, կուճի մարթկանցը՝ կուճի...* (ԱԱ, 15): 9. *ած., գ.* Բարձր դիրք՝ պաշտոն ունեցող, մեծավոր, առաջնորդ, ղեկավար: *Տահանց մԸծէն ախճիգը քՒԸցալ ա, թա ճՒուր պիրի, վԸնենը սըլկըհալ ա, ընգալ ա նօվը, տակ ըրալ* (ԱԱ, 61): 10. Ըստ դիրքի կամ տարիքի՝ ավագ: *ՄԸծ նան միշնակ ախպէրքը թաքուն ՒուրՒուր խօսկ ըն տամ, վԸր պուճուր ախպօրը ըսպանին* (ՀԺՀ, V, 76):

- ՄԸծան կուճուր - Ամենքը, բոլորը՝ առանց տարիքային տարբերության: *ՇՒնանցէք մԸծան կուճուր լօխ հըվաքվում ըն, վէր թըմանշան անին* (Ձ):

- ՄԸծ դանրդին մԸծ խըլք ա հարկավէր - Մեծ վշտին՝ դժբախտությանը՝ աղետին դիմակայելու համար պետք է լրջորեն գործել:

- ՄԸծէն նըհԸտ մԸծ ա, կուճուրէն նըհԸտ՝ կուճուր - Ասում են բարյացակամ՝ մարդամոտ՝ մարդկանց մասին:

- ՄԸծ էշը թՒվլՒումը/կՒումումը թօղնել - *տե՛ս* ԿՒումէն մԸծ էշը մընանա քըցիլ (ԿՒՈՒՄ-ի տակ):

- ՄԸծ ըշկօլ - *տե՛ս* ՊէցՒուր ըշկօլ:

- ՄԸծը ՒուրՒն տԸղը օնէ, կուճուրը՝ ՒուրՒն - Ամեն մեկին պետք է ըստ արժանվույն գնահատել:

- ՄԸծ թիքՒն/պատառը անգուճը/կըռէքը թօղնել - Ջարդուփշուր անել, կտոր-կտոր անել (գործածվում է նաեւ որպես սպառնալիք): *Բաղվանչին ասում ա.- Վէր մէհէտ էլ յԸկէր բաղը, մԸծ թիքՒատ անգուճըտ ըմ թուղնըլական* (Ձ):

- ՄԸծ թիքՒն/պատառը անգուճը կըռէքը մընալ - Ջարդուփշուր լինել, կտոր-կտոր լինել: *Ըտըրա մօրըն էլ ծիյին հանքՒվան կապըմ ըն, քաշ-քաշ անըմ, մԸծ պատառը անգուճըն ա մընամ* (ՀԺՀ, V, 48):

- ՄԸծ մաննը - *տե՛ս* ՊՒՒՏՆԸ (1):

- ՄԸծ նէնջ - *տե՛ս* ՄԸծ քօն:

- ՄԸծ պահք - Յոթ շաբաթյա պասը՝ բուն բարեկենդանից մինչեւ զատիկը: *Ամմէն մարթ չի կարում մԸծ պահքը պահէ* (Ձ):

- ՄԸծ պէնու յըրա ինիլ - *հեգն.* Կարեւոր գործով զբաղված լինել: *Հանը կօրծ ա անում, տըղէրքըն էլ մԸծ պէնու յըրա յըն. կարտ ըն խաղ անում* (Ձ):

- ՄԸծ պէրան - Շատակեր, որկրամոլ: *ՄԸծ պէրան մարթ ա Ռուբէնը* (Բ):

- ՄԸծ քօն - 1. Շերամի երրորդ՝ վերջին քունը: *ՄԸծ քօնանը յԸտը վէրթնը բըրամա յա անում* (Բ): 2. Մահ, վախճան: *Իսակ դային հինանսՒուն տըրըԸկան ա, մԸծ քօնէն վախտըն ա* (Բ):

ՄԸԾԱԿ/ՄՕԾԱԿ - *գ.* 1. Միջատի տեսակ՝ մոծակ: ... *ՄԸծակը թըռչՒում ա, քՒնանամ ամմէն հիյվանու անա կըծում...* (ՆԼՂԺԲ, 137): 2. *փխբ.* Չնչին՝ անարժեք մարդ կամ կենդանի: *Ղէվը տըղէն ասում ա.- Տու հինչ մԸծակ ը՞ս, վէր ինձ նըհԸտ կըռԸվ անիս* (Ձ):

- Մըծակու հիրս (ինիլ) - *տե՛ս* ՄըկըծԸռնու հիրս (ինիլ): *Տըղըմարթին վէր մըծակու հիրս ինի, կընէգը հինչ օգի՝ կանէ* (Բ):

ՄԸԾԱՄԸԾ - *տե՛ս* ՄԸԾ-ՄԸԾ:

ՄԸԾԱՎԸՐ - *տե՛ս* ՄԸԾԱՎԷՐ: *ՒուրՒն կընանօցը տամ ա էտ մԸծավԸրին, ընդըրան կընանիքը էլ յօր օնըմ, պԸրըմ ՒուրՒն տօնը* (ԼՂԲ, 373):

ՄԸԾԱՐՔ/ՄԷԾԱՐՔ *(գրբ. մեծարանք (պատիվ, հարգություն)* - *գ.* Հարսանիքից հետո՝ կիրակի օրը, գյուղի հասակավոր տղամարդկանց համար տղայի ծնողների կողմից կազմակերպված խնջույք: *Մին լաւ մԸծարք ըն անում, քԸփ անում* (Ձ):

ՄԸԾ-ՄԸԾ/ՄԸՁ-ՄԸԾ/ՄԸԾԱՄԸԾ *(գրբ. մեծամեծ)* - *ած.* 1. Շատ մեծ, խոշոր-խոշոր: *Ընդըրա աշկին ըռաչին մԸծ-մԸծ տընէր ա ըրվըմ, ծըռօտէնքը, գանդա-գՒուդէքը, լանվ ապրուստ...* (ԼՂԲ, 307): 2. Շատ կարեւոր: *Տա վէր յէշում ա, տԸսնում լօխ լանվ կՒէցված, մԸծ-մԸծ պաշտօնու տար, հըմընչիլան կուչօռ ա անում* (ՀԺՀ, VII, 206): 3. Ծեր, մեծահասակ: *ՄԸծ-մԸծ մարթիքը ասում ըն, վէր մին էլ քըսան թըվին ա ըստի քամէ իլալ* (Բ): *գ.* 4. *հոգն.* Պաշտոնավորներ, բարձր դիրք՝ կոչում ունեցողներ, ավագանի: *Թաքավէրը ՒուրՒն մԸծամԸծնէրին նըհէտ նըստըմ ա տըռնին աչ ղօլին, ժօղօվուրթը՝ ծանխ ղօլին* (ԼՂԲ, 295):

- ՄԸծ-մԸծ խուսէլավ փըլավ չի իփվում, յԸղ ու պըրինձ բիդի - Միայն խոսելով գործը գլուխ չի գա, միջոցներ են պետք:

- ՄԸծ-մԸծ խօսէլ/յըրա տալ/տըռօտէլ/տըրքցընէլ/տՒուս տալ/փըրթիլ - Մեծախոսել, հոխորտալ, պոռոտախոսել: *Մէր Պավլին մԸծ-մԸծ խօսում ա, ամհա ծԸրքավը պէն չի կՒամ* (Բ):

- ՄԸծ-մԸծ տընէր, տՒուզնը շընէր - Ասում են ունեւոր, բայց ժլատ մարդկանց մասին:

ՄԸԿԱԼ/ՄԷԿԱԼ - *դ.* Մյուս, ուրիշ: *ՄԸկալ մարթիքը հՒնձ ըն անում, ինքըն էլ սաղ օրը էն ա հըպարապ շօռ ա կՒամ* (Ձ):

- ՄԸկալ օրը/տարէն - Երկու օր/ տարի առաջ: *ՄԸկալ օրը արչը յըրա յա պըրծալ, Տումըցէ Թէվանէն զիլբա-զիլբա ըրալ* (Բ):

- ՄԸկալ օրվա/օրէն խօխան - Անչափահաս, անփորձ: *Պուղին մէկալ օրէն խօխան չի, վէր մէլիքին հըվատա. հըղէննի պէց ա անում, նամակը կարթում* (ՆԱԲ, 133):

ՄԸԿՆԷԼ/ՄԷԿՆԷԼ *(գրբ. մեկնեմ)* - *նբ.* 1. Փռել, տարածել: *Պիրում ա տէսատէնա մէկնում, նըստըցնում...* (ՀԱԲ, 15, 47): 2. Պարզել, կարկառել, երկարել: *Մարթը նըստում ա, վէննէրը փիչին տակէն մԸկնում* (ՆԼՂԺԲ, 89):

ՄԸԿՆԸՎԷԼ/ՄԷԿՆԸՎԷԼ *(գրբ. մեկնիմ)* - 1. *կբ. եւ չբ.* ՄԸԿՆԷԼ-ի: 2. *չբ.* Անշնորհք կերպով նստել՝ պառկել: *Հինչ ը՞ս կարավաթէն մԸկնըվալ, խէ յԸր չը՞ս կէնում, քու հօր քՒՕմանգ անիս* (Բ):

ՄԸԿՍԱԼ/ՄԷԿՍԱԼ/ՄԸՔՍԱԼ/ՄԷՔՍԱԼ - *տե՛ս* ՄԸԿԱԼ:

- ՄԸկսալ օրը/տարէն - Երեք օր/ տարի առաջ: *ՄԸքսալ տարէն փիս արաշտ ա իլալ* (Բ):

ՄԸՀԷՏ - *տե՛ս* ՄԸՀԸՏ:

ՄԸՀԸՏ/ՄԸՀԷՏ/ՄԷՀԷՏ/ՄԸՀԸՏ/ՄԸՀԷՏ/ՄԻՀԷՏ - *մ.* 1. Մեկ անգամ: *Տըղան վէր թօրավը մԸհԸտ թըխէս ա, դէվին չՕրք կըլՕխը թըռչիս ա* (Ձ): 2. Ինչոր ժամանակ, մի օր, օրերից մի օր: *Մէհէտ ծՒուկունը փըռնում ա պիրում տօն, տԸսնում ըտահանց մաչին մին էրկունըն ՒուրՒն կՒէտէն ծՒուկնէրէն նըման չըն* (ՆԼՂԺԲ, 39):

- ՄԸհԸտ աղի ինիլ, մԸհԸտ՝ նանլի - 1. Անփորձ լինել: *Էն հինչ ուստա յա՞, մԸհԸտ աղի յա, մԸհԸտ՝ նանլի* (Ձ): 2. Անիմաստ լինել: *Պուղին ասմա.- ՄԷլիք, խուսկէրքըտ մԸհԸտ աղի յա ինՒում,*

մը՝հը՝տ նա՛լի, մին փութ ցօրէն տօ՛, ք՛ը՝զ խօսէլը սը՛վը՛րցընիմ (Ձ):

- Մը՝հը՝տ էլ ծէր տըռանը «տա՛շի գըդըլ» - Մտերմաբար ասում են ժլատ մարդկանց՝ մի անգամ էլ դու հյուրասիրություն կազմակերպիր:

- Մը՝հը՝տ մը՝ռնէլ - Մահից չվախենալ: *Տըղամարթը էն ա, վէր մը՝հը՝տ մը՝ռնէ* (Բ):

ՄԸ՝ՀՄԱՆ - *տե՛ս* ՄԷՀՄԱՆ:

ՄԸ՝ՂԸՐ/ՄԸՂԸՐ *(գրբ. մեղր)* - 1. *գ.* Մեղուների պատրաստած քաղցր ու թանձր հյութը՝ մեղր: *Մը՝ղըրը էլ էնքան շատ ա իլա՛լ, վէր ծըլլացալ ա ծառավը, վէր տը՝ռալ, կ՛էտէն նը՛հէտ խառնը՛վալ* (ԱԱ, 60): 2. *փխբ. ած., գ.* Շատ քաղցր՝ ախորժելի (բան): *Մը՝ղըր հաց ա* (Բ):

- Մը՝ղըր անէլ - Մեղր կուտակել (մեղուների մասին): *Ասում ը՛ն, կ՛էտէն կօխկէն վիրի մը՛ղրը՛ճանջէրը պա՛ուն ը՛ն տիրա՛լ, մը՝ղըր ը՛րալ* (ԱԱ, 60):

- Մը՝ղըր կըտըրէլ - Մեղուների պատրաստած մեղրը հավաքել՝ հանել: *Փէթակնէն պէնում ը՛ն, մը՝ղըրը կըտրում* (Բ):

- Մը՝ղըրը ուստէն կըտըրէլ տօ, վէր աշկըտ օռչի վէչ - Չտուժելու համար գործը պետք է մասնագետին հանձնարարել:

- Մը՝ղըրը ծախօղը/կըտըրօղը/ քամօղը մաննը լա՛ուզ կըտա - Որեւէ գործով զբաղվողը դրանից կօգտվի:

- Մը՝ղըր տը՝ռնալ - Շատ քաղցրանալ՝ քաղցր դառնալ: *Թօթը ծառէն յըրա չը՛մը՛ընչա՛լ ա, մը՝ղըր տը՝ռալ* (Բ):

ՄԸ՝ՂԸՐՈՒՏ - *տե՛ս* ՄԸ՝ՂՐՈՒՏ:

ՄԸ՝ՂՐՈՒՏ/ՄԸ՝ՂԸՐՈՒՏ/ՄԸՂՐՈՒՏ/ՄԸՂԸՐՈՒՏ *(գրբ. մեղրոտ)* - *ած.* Վրան մեղր քսված: *Մը՝ղրուտ ը՛ը՛թ՝ը՛ը տամ ա, թա.- Էտ ա քու փայըտ* (Ձ):

ՄԸ՝ՆՆԸ/ՄԷՆՆԸ/ՄԸ՝ՏԸ/ՄԷՏԸ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մը՝ննը ը՛ղնէլ/կ՛ա՛լ/պիրիլ/ը՛ը՛ցիլ - Հիշել, մտաբերել: *Բ՝ուրդա՛ն էտ մարթին խօսկը մը՛տը՛ն ա ինգ՛ա՛մ...* (ՆԼՂԺԲ, 63):

- Մը՝ննը ինիլ/կէնալ - Դեռեւս հիշողության մեջ լինել, չմոռացվել: *Մացակը ասմա.- Կ՛ա՛՛կ՛ի, մը՝ննը՛ը՛ տ՛, վէր մէհէտ օգ՛ալ ը՛մ, տուվալ չը՛ս* (Ձ):

- Մը՝ննը պահէլ - 1. Հիշողության մեջ պահել, չմոռանալ: *Յականը ը՛ուրան անումը կարում չի մը՝ննը պահէ, ճըլլը՛ճէլլի մը՛ննա ը՛ղնում ա* (ՆԱԲ, 125):

- Մը՝ննը՛ը՛ պա՛հէ - Վրեժխնդիր լինելու սպառնալիքի արտահայտություն: *Յէգօ՛ր տը՛ղա, մը՝ննը՛ը՛ պա՛հէ, հիբ էլ ինի, ը՛ը՛թ՝ը՛ը՛ծ՝ը՛կէրավը՛ը՛ տ՛ուս ը՛մ ը՛ը՛ծ՝ը՛լական* (Ձ):

- Մը՝ննա ը՛ղնէլ/ը՛ը՛ցիլ/ը՛ինիլ - Մոռանալ, չհիշել, չմտաբերել: *Վէր Մուքին էտ ը՛խ՝ը՛ճ՝ը՛կանը տէսնում ա, տավարը մը՛ննա ը՛ղնում ա* (ԲՀԲ, 189):

ՄԸ՝ՇԿ - *տե՛ս* ՄԱՇԿ:

ՄԸ՝ՇՆԱԿ - *տե՛ս* ՄԱՇՆԱԿ:

ՄԸ՝Չ - *տե՛ս* ՄԱՉ:

ՄԸ՝ՉՆԱԿ - *տե՛ս* ՄԱՇՆԱԿ:

ՄԸ՝ՌԱԼ/ՄԷՌԱԼ *(գրբ. մեռեալ)* - *գ.* 1. Մեռած մարդ, ննջեցյալ: *Կամ ա մը՛ռալին թը՛ղէլի օրը, սաղ ջամհաթը հը՛վաքված, սօ՛ք՛-շիվան ը՛ը՛ցա՛նծ, հարայ ա կ՛ամ, թա՝թաքավէրը կ՛ամ ա* (ՀԺՀ, VI, 187): 2. Արդեն մեռած ու թաղված մարդ: *Ասում ը՛ն, մը՛հէտ էլ ը՛ը՛շ՝էրը հինգ՛իստին ը՛ը՛շ՝տավը ք՛ինա՛լիս յէշա՛լ ա, տը՝սալ մը՛ռը՛ը՛լ՝նէն, վը՛ղէն տական տ՛ուս յը՛կած, պար ը՛ն կ՛ամ* (Ձ): 3. *տե՛ս* ՄԷՅՈ:

- Մը՝ռալը հը՛նգ՛իստան տ՛ուս օնէլ - Հանգուցյալներին հայհոյել: *Ը՛ստը՛րանք կը՛ռվում ը՛ն, ը՛ուրը՛ուր անէսկ տամ, ը՛ուրը՛ուր մը՛ռալ հը՛նգ՛իստան տ՛ուս օնում* (Ձ):

- Մը՝ռալը շօն տը՝ռնալ/շը՛նէրը քաշ-քաշ անէլ - Հայհոյական արտահայտություն՝ անեծք հանգուցյալների հասցեին: *Ասում ա.- Մը՝ռալը՛ը՛ տ՛ը՝ռնա, խուխէս խէ թակում ը՛՞ս* (Ձ):

- Մը՝ռալը վայ տամ - Նախատական՝ զարմացական՝ հիացական արտահայտություն: *Էս նախագան չօրս ա՛նգ՛ա՛ունը թը՛մ՝ա՛նշ՝ յա անում, թա.- Սա մը՝ռալը վայ տամ, հա՛նգ՛իստը ը՛ստի կ՛ինի, յէ՛...* (ԱԱ, 85):

- Մը՝ռալը տը՝ղան յը՛ր կը՛ցը՛նէլ - Բոլորին աշխատանքի լծել: *Հ՝օ՛նձին վախտը վէր կ՛ամ ար, կը՛լ՝խ՝օզէն նախագան մը՛ռալէն էլ ար տը՝ղան յը՛ր կը՛ցը՛նում* (Ձ):

- Մը՝ռալը տը՛ղը՛հան անէլ - 1. Հանգուցյալի մարմինը գերեզմանից հանել եւ այլ տեղ թաղել: *Այան մագ՛էրը քանդ՝ա՛ում ա, թա.- Յը՝ս թ՝օղէլ չը՛մ իմ մը՛ռալը՛ս տը՛ղը՛հան անիք՛, թա հինչ ա՝ հը՛ղէ յը՛ք շ՝ինում* (Ձ): 2. *տե՛ս* Մը՝ռալը հը՛նգ՛իստան տ՛ուս օնէլ:

- Մը՝ռալ կ՛ուղանօղ - Շատ ստոր՝ խարդախ՝ գծուծ: *Մը՝ռալ կ՛ուղանօղ մարթ ա Սէտրակը* (Բ):

- Մը՝ռալ պ՛ինը՛ցը՛նօղ - Խիստ գործարար: *Իզէն մը՝ռալ պ՛ինը՛ցը՛նօղ ա, ը՛ը՛շ՝տը՝ղ էլ ք՛ինի, հը՛ր՝ուստը՛նական ա* (Բ):

- Մը՝ռալան խարջ չը՛ն օգ՛իլ - Անգործունյա՝ չունեւոր մարդուց կարիք չկա եկամուտ ակնկալել:

- Մը՝ռալէն կօխկավը՛ն էլ չը՛մ անց կէնում - Հետը վատ հարաբերությունների մեջ եմ: *Պ՝օղ՝օսը ասում ա.- Յը՝ս Սը՛ն՝թ՝ուրէն անա պէն չը՛մ օգ՛իլ, յը՛ս ը՛ն՝ը՛ղ՝ը՛ռա մը՛ռալէն կօխկավը՛ն էլ չը՛մ անց կէնում* (Ձ):

- Մը՝ռալէն յը՛ր տարը լա՛նց կինի, դէրը՛ը՛ կուրխանա - Մեկի դժբախտությունը մյուսի համար բարեբախտություն է:

- Մը՝ռալէն պարթկը տալ - 1. *տե՛ս* Բ՝ադարա՛ն՝ք՛ անէլ: 2. Հանգուցյալի շիրիմին գերեզմանաքար դնել: *Լ՝ավ տը՛ղան էն ա, վէր մինչ՝ը՛վ տարէն թ՝ը՛մ՝ամ՝էլը՛ մը՛ռալէն պարթկը տա՝ հ՝օ՛ր՝ ը՛ը՛ր՝ քար ք՛ը՛ցի* (Ձ):

- Մը՝ռալու ա՛՛ը՛ը՛՝վ - Թույլ՝ անզոր ձմռան արեւ: *Մը՝ռալու ը՛ը՛ր՝էվավ պէն չի չ՝ուրանալ* (Ձ):

- Մը՝ռալու ը՛զդ՝աչի - Հյուծված՝ նիհար՝գունատ մարդ: *Էտ մը՝ռալու ը՛զդ՝աչի յա ,հինչ կօ՞ղ՝ծ բ՝իդի անէ* (Ձ):

- Մը՝ռալու ը՛ռանգ՛ - Դժգույն, սփրթնած: *Էտ հինչ ա՞ հա՛՛ալը՛ը՛տ, հը՛ը՛՝սը՛ը՛տ հանց ա մը՛ռալու ը՛ռանգ՛* (Բ):

- Մը՝ռալու կը՛ալխա տաս՝ յը՛ր կը՛կէնա - Շատ չոր՝ կարծր է: *Պ՝ուղ՝ին թ՝ուրբան մին չ՝օ՛ր կ՛ա՛՛ր՝ի հաց ա տ՛ուս օնում, հինչ հա՞ց, մը՛ռալու կը՛ալխա տաս՝ յը՛ր կը՛կէնա* (Ձ):

- Մը՝ռալու կ՛ը՛՝փէր - 1. Նիհար՝ դժգույն ազդրեր: *Հ՝ը՛մ՝ա՛նչ՝ում չը՛՞ս, հինչ ը՛՞ս էտ մը՛ռալու կ՛ը՛՝փէրը՛ը՛տ պէց ը՛ը՛ռալ* (Բ): 2. Ծուռումուռ բան: *Ասում ա.- Էտ հինչ սա՛՛թ՝ա՛՛ննէ յա, մը՛ռալու կ՛ը՛՝փէր ա* (Ձ): 3. *հեգն.* Լոտո խաղի մեջ 77 թվակիր խաղաքարը: *Ծ՝ը՛՝ղ՝ը՛ք ը՛ը՛ցա՛՛ում ա, ը՛ը՛սական մին քար տ՛ուս օնում, թա.- Մը՛ռալու կ՛ը՛՝փէր* (Ձ):

- Մը՝ռալու նը՛ման ը՛օն ինիլ - Շատ խոր քնել: *Արշ՝ակը մը՛ռաու նը՛ման ը՛օն ա հնա՛՛ում, կ՛ամ ը՛ն հ՝իյվը՛ննէն կ՛ուղանում* (Բ):

- Մը՝ռալու շ՝իթ՝իլ - *տե՛ս* Մը՝ռալու ը՛զդ՝աչի:

ՄԸ՝ՌԱԾ - *ած.* 1. Անկենդան, աշխույժից զրկված: *Կամ ը՛ն, թա.- Թ՝ա՛՛քավ՝էրը՛ն ապ՛ը՛ր՝ած կ՛էնա, էտ չ՝էնը՛ մը՛՝ռ՝ած չ՝էն ա, էրկու պ՝ա՛՛ռ՝ավ ը՛ն կ՛էնում* (Ձ): 2. Անարտահայտիչ: *Մը՝ռ՝ած աշ՝կէր օնէ* (Բ):

ՄԸ՝ՌԱԾԸ - 1. *գ.* Անզգամ, ճարպիկ սրիկա (հաճախ գործածվում է որպես կոչական բառ): *Էտ կուճ՝ի մը՛՝ռ՝ածը գ՝ուդ՝ա՛՛ում ար, վը՛՝ր ը՛ուրա՛՛ն ա՛՛մ՝ուն կը՛ը՛նէգ՛ը՛ սիրական օնի...* (ՀԺՀ, V, 576): 2. *մ.* Ամենաքիչը, առնվազն: *Ասում ա.- Իմ կավը՛ս մը՛՝ռ՝ածը՛ հա՛՛ր՝ուր կ՛ի՛լ՝օ կ՛ինի, խ՝ը՛ր՝էգ՛ ը՛ս կ՛ը՛նհ՝ատում* (Ձ):

ՄԸ՝ՌԷԼ - *տե՛ս* ՄԸ՝ՌՆԷԼ:

ՄԸ՝ՌԺԻԼ - *տե՛ս* ՄԸ՝ՐԺԻԼ:

ՄԸ՝ՌՆԷԼ/ՄԸ՝ՌԷԼ *(գրբ. մեռանիմ)* - *չբ.* 1. Մահանալ, ապրելուց դադարել, սպանվել: *...Հ՝ը՛ր՝ցը՛ցփ՝օ՛ր՝ց ա անը՛մ, տը՝սնը՛մ, վը՛՝ր էտ տը՛ղան խ՝ը՛մ՝ալ ա հա՛՛ր՝փ՝ա՛՛լ, ք՛էցալ ը՛ն՝դ՝էդ վը՛՝ր ը՛ն՝գ՛ա՛՛լ, մը՛՝ռ՝ալ* (ՆԼՂԺԲ, 18): 2. *փխբ.* Վերանալ, վերջանալ, կանգ առնել, դադարել, վերջ դրվել: *Էտ օրան յէտը տահանց ղ՝օնաղ անէլը մը՛՝ռ՝ավ* (ՆԼՂԺԲ, 103): 3. *փխբ.* Սաստիկ փափագել, տենչալ: *Մէր շ՝էնը*

թօթավ լիգ՝ը, մունք էն ընք մըռնէլիս թօթու հը՝տէ (Բ):

- Մը՝ռած ինիլ, թաղ(վ)ած չինիլ - Ծանր վիճակում լինել: *Խը՝ղճ Դավութը մը՝ռած ա, թաղած չի. կարկուտը թակալ ա, համ արտը փուչըցըրալ, համ բաստանը* (Բ):

- Մը՝ռած մէյդ - 1. Խիստ դալուկ՝ հյուծված մարդ: *Մը՝ռած մէյդ ը՞ս, էտ հինչ ա՞ հա՛ալըտ* (Ձ): 2. Խոր քուն մտած: *Իգէն վէր նի յա մընում տը՝ղը, մը՝ռած մէյդ ա, տօնըն էլ կըտրիս տանիս, կըլխու չի ըղնէլ* (Ձ):

- Մը՝ռնիմ՝ կ՝աս վէչ, մը՝ռնիս՝ կ՝ա՛ալ չըմ - Ասում են, երբ մեկի հետ վիճում են, վիրավորվում, խռովում եւ նրա հետ հարաբերությունները խզում: *Արչը ասալ ա.- Մէր հընգըրօթունը պըրծած ա, մը՝ռնիմ՝ կ՝աս վէչ, մը՝ռնէս՝ կ՝ա՛ալ չում* (ԱԱ, 73):

- Մըռածէն հը՝տան հաց/ճ՝ուր տանէլ - Մեռնել, մահանալ (հատկապես գործածվում է որպես անեծք): *Մըռածէն հը՝տան հաց տանիս տու, էտ վըխ-ճըրնէն խէ նի յը՞ս ըրալ հա՛նգ՝իստը* (Բ):

ՄԸ՝ՌՈՒՆ - *տե՛ս* ՄԷՌՈՒՆ:

ՄԸ՝ՌՈՒՆԱՃՈՒՐ - *տե՛ս* ՄԷՌՈՒՆԱՃՈՒՐ:

ՄԸ՝ՌՈՒՆԱՄԱՆ - *տե՛ս* ՄԷՌՈՒՆԱՄԱՆ:

ՄԸ՝ՌՈՒՆԱՎԸ՝Տ - *տե՛ս* ՄԷՌՈՒՆԱՎԸ՝Տ:

ՄԸ՝Ս - *տե՛ս* ՄԷՍ:

ՄԸ՝ՏԱԿ/ՄԷՏԱԿ *(գրբ. մետական (հասարակ)* - *ած.* 1. Մեկ ծալքով, աստառ չունեցող (շորի մասին): *Մին տէղ տասսը ջուռա գ՝էյիմ ըն փօխըմ, մին օրիշ տէղ մէտակ հալավ էլ չըն ք՝ըթ-նըմ...* (ՋՏ, Բ, 87): 2. *փխբ.* Միայնակ, անօգնական: *Մը՝տակ տըղա յա Տիկրանը, մինը կա վէչ, թա ք՝ՕՄ՝ա՛գ՝ անէ* (Բ):

ՄԸ՝ՏԸ - *տե՛ս* ՄԸ՝ՆՆԸ:

ՄԸ՝ՏԿ - *տե՛ս* ՄԸ՝ԹԿ:

ՄԸ՝ՏՔ - *տե՛ս* ՄԸ՝ԹԿ:

ՄԸ՝Ր[1] - *տե՛ս* ՄԷՐ[1]:

ՄԸ՝Ր[2] - *տե՛ս* ՄԷԼ:

ՄԸ՝ՐԺԻԼ/ՄԸ՝ՌԺԻԼ *(գրբ. մերժեմ)* - *նբ.* Խնդիրքը՝ փաստարկը՝ առարկությունը եւն չընդունել, մերժել: *Տըղան էտ ըխճըկանըն էլ մը՝րժից, խօսկը կօտ-րից...* (ՀԺՀ, V, 89):

ՄԸ՝ՐՈՒ(Ն)Ք - *տե՛ս* ՄԷՐՈՒ(Ն)Ք:

ՄԸ՝ՔՍԱԼ - *տե՛ս* ՄԸ՝ԿՍԱԼ:

ՄԸԹԱՄ/ՄԸԹԱ՛Մ/ՄԻԹԱՄ/ՄԻԹԱ՛Մ/ՄԸԳ՝ԱՄ/ՄԸԳ՝Ա՛Մ/ՄԻԳ՝ԱՄ/ՄԻԳ՝Ա՛Մ/ՄԸ-ԿԱՐ *(վրաց. mitam)* - *վ.* Իբրեւ թե: *ԴՕվին ծէն ըն տաս միթա՛մ ղօնաղ, դՕվը կ՝աս ա, լը՛հա՛ կարպէտը կօխէլիս ընգընէս ա վէրին մաչը* (ՀԺՀ, V, 255):

ՄԸԹԱ՛ՆԱ՛/ՄԻՆԹԱՆԱ *(պրս. nimten, թրք. mintan)* - *գ.* Կանացի երկար վերնազգեստ: *Պիրըմ ըն էրկունչի բըլ՝ուղը, իրը՝քինչինը, էլիա մըթա՛նին փէշկըն ա տէմ անըմ...* (ՋՏ, Ա, 216):

ՄԸԹԷՆ/ՄԸԹԻՆ *(գրբ. մթին)* - *ած.* 1. Մութ, մթին, խավարչտին: *Մին մըթէն քըշէր ա ինըմ, տ՝ուս ըն կ՝ամ, ք՝ինամ* (Ձ): 2. Չլուսավորված, խավար (տեղ): *Ք՝ընըմ ա, ք՝ընըմ, հըսնըմ մին մըթէն ծըմակ* (ՀԺՀ, V, 124): 3. *փխբ.* Չար, ստոր, վատ: *Կընէգ՝ը գ՝ուդ՝ում ա, վէր մարթը մըթէն կօրծէր շատ ա անում* (Ձ): 4. *գ.* Մթություն, խավար: *Քօռ մարթ ա Վանէսը, վէ՛չ լ՝ուսըն ա ճօկում, վէ՛չ մըթէնը* (Բ):

- Մըթէն աշխար(ք) - Երկիր, որ միշտ մութ է լինում: *Ախճիգ՝ը ասմա.- Վէր սը՝վ էծին յըրա նըստիս, ք՝ը՝գ տը-նական ա մըթէն աշխարքը* (Ձ):

- Մըթէնը ըղնէլ - Մթնել, երեկոյանալ: *Վէր մըթէնը ըղնում ա, տահանք էլիա հըղէ յըն ինում* (Ձ):

- Մըթէնը (վէր) կօխէլ - Խավարը՝ մթությունը պատել: *Մըթէնը կօխում ա, էլ վէչ մին պէն տը՝սնում չըն* (Ձ):

- Մըթէն ըղնէլ - Ցերեկով չհասցնել տեղ հասնել, ճանապարհին մութը վրա հասնել: *Էտ տըղան ք՝ընըմ ա յարմուրկա, յէտ տըռնալիս մըթէն ա ընգնըմ* (ՀԺՀ, V, 36):

- Մըթէն տը՝ղը լ՝ուս տալ - 1. Շատ գեղեցիկ լինել: *Կ՝ամ ա տը՝սնում՝ ըտը՝ղ մին ախճիգ՝ կա, վէր լ՝ըհա մըթէն տը՝ղը լ՝ուս ա տամ* (Ձ): 2. Մեծ զորություն ունենալ: *Փուլը մըթէն տը՝ղը լ՝ուս կըտա* (Ձ):

- Մըթէն տը՝ղը մազ՝ մանէլ - 1. Շատ ժլատ՝ կծծի լինել: *Իգէն մըթէն տը՝ղը մազ՝ ա մանում, ընդրրա փուլ շատ կինի* (Բ): 2. Բանսարկությամբ զբաղվել: *Մարթ կա՝ պէն-փէշակ չօնէ, սաղ օրը մըթէն տը՝ղը մազ՝ ա մանում, ըստ՝ուր-ընդ՝ուր տըռըպըռտում* (Ձ):

- Մըթէն տը՝ղը քար թօղ անէլ/քըցիլ - Առանց որոշակի նպատակի որեւէ բան անել: *Հինչ ը՞ս մըթէն տը՝ղը քար թօղ անում, էտ քարը հօր ը՞ս թուլուլ տամ* (Բ):

ՄԸԹԷՆ-ԿԸՐՕՆԷԳ՝ - *տե՛ս* ԸԿՆԱԿՕՐ:

ՄԸԹԷՆ-ՄԸԹԷՆ - *տե՛ս* ՄԸԹԸՆ-ՄԸԹԷՆ:

ՄԸԹԷՆ-ՕԹԻ - *տե՛ս* ԸԿՆԱԿՕՐ:

ՄԸԹԷՐՈՒՄ *(գրբ. մթերումն (դիզելը, դիզած բանը)* - *գ.* Խորհրդային կարգերի օրոք պետության անհրաժեշտ պաշարներ ստեղծելու համար կոլտնտեսություններից՝ սովխոզներից՝ մեքենատնտեսներից ապրանքներ գնելը՝ մթերելը: *Տուք խօսկ ըք տուվալ ուրէնք՝ին, վէր մէր մըթէրման պըլանէրը ժամանակէն կըկըդարիք՝* (ՀԲ, 359):

- Մըթէրում անէլ - Կուտակել, մթերել: *Ծէնան տարէն մէհէտ պ՝ուրթ ըն իլա՛ալ մըթէրում ընէս* (Բ):

ՄԸԹԸՆԳ՝Ա - *ած.* Մութ, մթնկա: *Մին օր էլ տըղան յը՝ր ա կէնում, մին մըթընգ՝ա ք՝ըշէր հըղէ ինում բիդի ծըմակը* (Ձ):

ՄԸԹԸՆ-ՄԸԹԷՆ/ՄԸԹԷՆ-ՄԸԹԷՆ - *մ.* Դեռեւս մութ՝ լույսը լավ չբացված ժամանակ: *Էտ մ՝ուրթիքըտ քիշերավ՝ մը-թըն-մըթէն, հըղէ յըն ինիս, ք՝ըսօ՛րէն հըսնէս շէնը* (ՀԲ, 338):

ՄԸԹԻԼ/ՄԻԹԻԼ *(թրք. mitil)* - *գ.* 1. Առանց երեսի վերմակ: *Պարանց ա ըղ-նում, մըթիլը շօռ անում* (Ձ): 2. Հնացած՝ քրքրված վերմակ՝ զգեստ: *Էտ մըթիլը հինչ ա՞, վէր կ՝ը՝ցալ ըս, համութ չի՞* (Բ): 3. Վերմակի՝ ներքնակի՝ բարձի տոպրակաձեւ կտորը, որի մեջ լցնում են բուրդը՝ բամբակը՝ փետուրը: *Պ՝ուրթը ածում ըն մըթիլը, ըսքըսում յօրդանը կարէլը* (Բ):

- Մըթիլ շինիլ - 1. Շատ տրորելով՝ լվանալով՝ գործածելով՝ քրքրել: *Էնքան լըվացալ ա, պէնջակը մըթիլ ա շինա՛ալ* (Բ): 2. Խիստ ծեծել: *Սըմսօնէն փըռնում ըն, միթիլ շինում, ըտը՝ղ վէր քըցո՛ում, ո՛ւրա՛նք ք՝ինամ* (Ձ):

- Մըթիլ տը՝ռնալ - 1. Հնանալ, քրքրվել: *Յօրդանը մըթիլ ա տը՝ռալ* (Բ): 2. Խիստ հոգնել: *Մըթիլ տը՝ռած կ՝ամ ա տօն, տը՝սնում վէ՛չ կընէգ՝ը կա, վէ՛չ խօխէնք՝ը* (Ձ):

ՄԸԹԻԼԱ՛ՑՈ՛Ի/ՄԻԹԻԼԱ՛ՑՈ՛Ի - *ած., գ.* Մթել կարելու համար նախատեսված՝ հարմար (կտոր): *Օթ մէտըր մըթիլա՛ցո՛ւ վա ինք՝ օնում* (Բ):

ՄԸԹԻՆ - *տե՛ս* ՄԸԹԷՆ:

ՄԸԹԿԱՎԷՐ/ՄԸՏՔԱՎԷՐ/ՄԸՏԿԱՎԷՐ *(գրբ. մտաւոր (միտք ունեցող)* - *ած.* 1. Լավ միտք՝ խելք ունեցող, խելոք, ուշիմ: *Մըթկավէր մարթին անա ք՝ը՝փըս կ՝ամ ա* (Բ): 2. *տե՛ս* ՄԸԹԿԱՏԱՐ:

ՄԸԹԿԱՏԱՐ/ՄԸՏՔԱՏԱՐ/ՄԸՏԿԱՏԱՐ - *ած.* Որեւէ մտադրություն ունեցող: *Մէլիք՝ը ասում ա.- Պո՛ղի, հանց ըս մըթկատար, հինչ ա՞ իլա՛ալ* (Ձ):

ՄԸԹԿԱՏՕՆ/ՄԸՏՔԱՏՕՆ/ՄԸՏԿԱՏՕՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըթկատօն ըղնէլ/մընէլ - Մտածմունքի մեջ ընկնել, մտքերի մեջ խորասուզվել: *Կամ ըն, տը՝սնում՝ խանը նըստած, մըթկատօն ընգած* (Ձ):

ՄԸԹԿԱՓՕԽ/ՄԸՏՔԱՓՕԽ/ՄԸՏԿԱՓՕԽ - 1. *ած.* Միտքը փոխած՝ փոխված, *Էտ տըղան ըտի մըթկափօխ յը՝ս ա տը՝ռնում, կ՝ամ հօրը պալատը* (Ձ): 2. *ած., գ.* Նոր հղիացած (կին): *Մըթկափօխ կընգա նըման ճէլլի-ճէլլի մը՝թկը փօխում ա* (Ձ):

- Մըթկափօխ ինիլ *(գրբ. մտափոխ լինիմ (խենթանալ)* - *տե՛ս* Մը՛թկը ծըռ-(վ)էլ:

ՄԸԹԿԱՔՕՌ/ՄԸՏՔԱՔՕՌ/ՄԸՏԿԱ-ՔՕՌ *(գրբ. մտակոյր)* - *ած.* Մտքով կույր, բթամիտ: *Թաքավէրը վէր մըթկաքօռ իլա՛ւ, յէրգ՛իրը կըքա՛նդըվի* (Ձ):

ՄԸԹԿԸՀԱՆ/ՄԸՏՔԸՀԱՆ/ՄԸՏԿԸ-ՀԱՆ/ՄԸՏԸՀԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըթկըհան անել - Մոռանալ, մտքից հանել: *Անց ա կէնում մին քանէ տարէ, տըղան էտ ըխճըկանը մըթկը-հան ա անում* (Ձ):

- Մըթկըհան ինիլ - Մոռացվել: *Մըթ-կըհան իլա՛ծ պէնէր շատ կա* (Բ):

ՄԸԹԿԸՄՕԼՕՌ/ՄԸՏՔԸՄՕԼՕՌ/ՄԸՏԿԸՄՕԼՕՌ *(գրբ. մտամոլոր (միտքը մոլորած, ցնդած)* - *ած.* Շվարած, մոլորված: *Մըթկըմօլօր տըղա յա, լի՞, գ՛ուդում չի, թա հուց անէ, վէր լ՛ավ ինի* (Ձ):

ՄԸԹԿԸՓՕԽՎԷԼ/ՄԸՏՔԸՓՕԽՎԷԼ/ՄԸՏԿԸՓՕԽՎԷԼ - *չբ. տե՛ս* Մը՛թկը ծըռ(վ)էլ:

ՄԸԹԿՈՒՄԸ/ՄԸՏՔՈՒՄԸ/ՄԸՏԿՈՒՄԸ - *մ.* Մտքով, մտովի, մտացի: *Թաքավէրը մըթկումը էն ա ինում՝ ուրա՛ն յէրգ՛իրումը, վէր դէրվիշը նի յա մընում* (Ձ):

ՄԸԹՆԱՊԷՆ - *գ.* 1. Գիշերային գործ: *Էտ մարթը սիրում ար մըթնապէն անէլը* (Ձ): 2. *փխբ.* Կենակցություն, սեռական հարաբերություն: *Մըթնապէնը թաքուն կանին, համօթ ա* (Բ):

ՄԸԹՆԱՎՈՒՆ - *ած.* 1. Մի քիչ մութ, մթին տվող: *Մին մըթնավուն քըշէր Պարսէղը էշը պէռնում ա, գ՛ինամ ճէղաց* (Ձ): 2. *տե՛ս* ՄՈՒՔԱՎՈՒՆ:

ՄԸԹՆԷԼ *(գրբ. մթնիմ)* - *չբ.* 1. Մութն ընկնել, երեկոյանալ: *Ի՞ւրա՛ւգ՛ունը, վը՛ր մըթնում ա, մին տօն ղօնաղ ըն ընգ՛ում* (ՆԼՂԺԲ, 90): 2. *փխբ.* Ամպել, ամպերով պատվել: *Յէրգ՛ինք՛ը մըթնալ ա* (Բ): 3. *փխբ.* Մռայլվել, խոժոռվել, խիստ տխրել: *Էտ խէ ըտի մըթնալ ը՞ս, հու վա՞ էշիտ չու ասալ* (Ձ):

ՄԸԹՆԸԺՈՒՌ/ՄԸԹՆԸԺՕՌ/ՄԸԹՆԸ-ԺՈՒՌ/ՄԸԹՆԸԺՕՌ - *տե՛ս* ԸԺԸՄԸԺԷՆՔ՝: *Էք՛սի օրէն՝ մըթընըժուռէն, տըղան գ՛ի-նում ա, էլիա ըխճըկանան պաչում, կ՛ամ ուրան տէղը կըչօռ անում* (ՆԱԲ, II, 20):

ՄԸԹՆԸԺՈՒՌԷԼ/ՄԸԹՆԸԺՕՌԷԼ/ՄԸԹՆԸԺՈՒՌԷԼ/ՄԸԹՆԸԺՕՌԷԼ - *տե՛ս* ԸԺԸՄԸԺԷՆՔ՝ԻԼ: *Ուռթանա քըշէրավ, հա՛լա՛ մըթնըժօրած, հարթը յէշում ա, տէսնում՝ յիրգ՛ինք՛ավը մին դուզդուն ա թըռչում* (ՀԱԲ, 15, 79):

ՄԸԹՆԸԺՈՒՌ - *տե՛ս* ՄԸԹՆԸԺՈՒՌ:

ՄԸԹՆԸԺՈՒՌԷԼ - *տե՛ս* ՄԸԹՆԸ-ԺՈՒՌԷԼ:

ՄԸԹՆԸԺՕՌ - *տե՛ս* ՄԸԹՆԸԺՈՒՌ:

ՄԸԹՆԸԺՕՌԷԼ - *տե՛ս* ՄԸԹՆԸԺՈՒ-ՌԷԼ:

ՄԸԹՆԸԺՕՐ - *տե՛ս* ՄԸԹՆԸԺՈՒՌ:

ՄԸԹՆԸԺՕՐԷԼ - *տե՛ս* ՄԸԹՆԸԺՈՒ-ՌԷԼ:

ՄԸԹՆԸԼՈ՞ՒՍ - *տե՛ս* ԸԺԸՄԸԺԷՆՔ՝:

ՄԸԹՆԸԽԱՌ(Ն)Ը - *տե՛ս* ԸԺԸՄԸ-ԺԷՆՔ՝:

ՄԸԹՆԸՇԱՂ - *տե՛ս* ԸԺԸՄԸԺԷՆՔ՝:

ՄԸԹՆԸՎԷԼ - *չբ.* 1. *տե՛ս* ՄԸԹՆԷԼ (2, 3): 2. *տե՛ս* ՄՈՒՔԱՆԱԼ: *Ասում ըն՝ ըխճըկանը մօրը ընէսկան գ՛օլը դա՛ստի սըվացալ ա, մըթնըվալ* (ԱԱ, 61):

ՄԸԹՆԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. մթացուցանեմ)* - *նբ.* ՄԸԹՆԷԼ-ի:

ՄԸԹՆԸՔԸՇԷՐ - *ած., գ.* Խիստ մութ եւ լռին (գիշեր): *Մըթնըքըշէր ար. ընդ-ըանք մին թա՛ւիրա՛վ յէկին էտ պըռավին տանը քըշէրը կը՛նան* (ՀԺՀ, V, 132):

ՄԸԺՂԱԼ - *տե՛ս* ՇԱՂԷԼ[1]:

ՄԸԺՄԱ՛ՀԻ/ՄԻԺՄԱ՛ՀԻ/ՄՈ՛ՒԺՄԱ՛ՀԻ *(արաբ. majmai)* - *գ.* Մեծ սկուտեղ՝ մատուցարան: *Պարկէն ք՛ունջան փըռնում ա, բադարկան թափ տամ էտ վէսկէ մըժմա՛հուն մաչը* (ՀԱԲ, 15, 134):

- Մըժմա՛հու մաչի պար կ՛ա՛լ - 1. Լավ պարել իմանալ: *Ղըշլըղը՛ցէք՛ մըժմա՛հու մաչի պար կ՛ըվօղ ըն* (Բ): 2. Իր գործի վարպետը լինել: *Դէ ուստա Ա՛նդրին էլ ճօկ ուստա յա, մըժմա՛հուն մաչին պար ա կ՛ամ* (Ձ):

ՄԸԺՈՒԺ/ՄՈՒԺՈՒԺ - *ած.* Մանր, փոքրիկ: *Էտ ծառը մըժուժ խընձօ՛ռնէ յար յօր օնում* (Ձ):

ՄԸԼԱՄԱԹ *(պրս. mālamāt (կշտամբանք, պարսավանք)* - *ած.* Որեւէ բանով թաթախված՝ թրջված՝ կեղտոտված: *Ըստրա մըլամաթ շօ՛ռէրը հանում ըն, թա՛ւզգա՛ւ շօ՛ռէրը կ՛ը՛ց տամ, տը՛ռնըմ ա մին դաշանգ՛ տըղա* (Ձ):

- Մըլամաթ անել - Որեւէ բանով թաթախել՝ թրջել՝ կեղտոտել: *Միկա վէր կէնում ըն, թօռը մէծէն մըլամաթ ա անում...* (ՆԱԲ, II, 33):

- Մըլամաթ ինիլ/տը՛ռնալ - Որեւէ բանով թաթախվել՝ թրջվել՝ կեղտոտվել: *Վէր կըռանում ա, փափաղը ըղնում ա կ՛ինուն կարասը, մըլամաթ տը՛ռնում* (Ձ):

ՄԸԼԱ՛ՄԲԱ/ՄՈՒԼԱ՛ՄԲԱ - *ած.* Թմրած, ընդարմացած: *Մըլա՛մբա մարթ ա, կարում չի, թա տը՛դան յը՛ր կէնա* (Բ):

ՄԸԼԱ՛ՄԻԾ - *տե՛ս* ՄԱ՛ԼԱ՛ՄԻԾ:

ՄԸԼԱՊԷՆ - *գ.* Ծեփելու՝ սվաղելու գործ: *Ըշտը՛ղ մըլապէն ար ինում, Վաղօվէն ծէն ին տամ* (Ձ):

ՄԸԼԱՎԷԼ/ԿԸԼԱՎԷԼ - *չբ.* Մլավոց հանել, մլավել (կատվի մասին): *Խալխէն յըրա շօն ա հա՛ջում, ինձ յըրա էլ կատու վա մըլավում* (ԱԲԲ, 37):

ՄԸԼԱՎՈՒՑ - *տե՛ս* ՄԸԼԱՎՕՑ:

ՄԸԼԱՎՕՑ/ՄԸԼԱՎՈՒՑ/ԿԸԼԱՎՕՑ/ԿԸԼԱՎՈՒՑ - *գ.* Մլավելը, մլավելու ձայնը: *Ծօնը կատվէն մըլավօցէն յըրա ընգուճնէն խըլըշում ա* (Ձ):

ՄԸԼԱՔ/ՄՕԼԱՔ *(գրբ. մլակ)* - *տե՛ս* ԹԱԽՏԱԲԻԹԻ: *Յօր ա օնում մին էրկուիրէք ք՛ա՛րփհա՛ւչ աղում, մըլաքու ճարու տէղ տանում ծըխէլու* (ԲՀԲ, 201):

ՄԸԼԸ(ԼԸ)ՄԻԾ - *տե՛ս* ՄԱ՛ԼԱ՛ՄԻԾ:

ՄԸԼԸՄԱԼԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըլըմալա կ՛ա՛լ - Խիստ կարոտել՝ տենչալ: *Սար ա՛մ՛ուն կընէգ՛ը էրկան վախտավ ք՛ինամ ա Իրէվան, Սար ա՛մին մընամ ա մըլըմալա կ՛ա՛լիս* (Ձ):

ՄԸԼԸՆՉԸ՞ՆԷ - *գ.* Քաղցր եւ հյութալի տանձի տեսակ: *Մըլընչը՛նէն ճիրճիրա՛լի տա՛նձ ա* (Բ):

ՄԸԼԸՆՉԿԸԼՕԼԷ - Գզած բուրդը ոլորելու գործիք: *Մըլընչկըլօլէն յօր ա օնում, էտ մըլընչնին կըլօլում* (Ձ):

ՄԸԼԸՆՉ-ՄԱԼԱՆՉ - *մ.* Մալանչնեռով, մալանչ առ մալանչ: *Այան պ՛ուրթը կ՛իզ՛ում ա, մըլընչ-մալանչ տա՛ռսում* (Բ):

- Մըլընչ-մալանչ կ՛ա՛լ - Աղերսագին լացել: *Խը՛դ՛ոճ խօխան մըլընչ-մալանչ ա կ՛ամ, ամմա մարը ծէծ չի տամ* (Ձ):

ՄԸԼԸ-ՇՈ՞ՒԼԱ՛/ՄՈ՛ՒԼՈ՞Ի-ՇՈ՞ՒԼԱ՛/ՄՈ՛ՒԼԻ-ՇՈ՞ՒԼԻ/ՇՈ՞ՒԼԻ-ՄՈ՛ՒԼԻ/ՄԸԼՈ՞ՒԼ-ՇՈ՞ՒԼՈ՞ՒԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըլը-շո՞ւլա՛ անել - Գործը դիտմամբ ձգձգել, ծուլություն անել: *Էտ տընատարը ըտի մ՛ուլի-շո՞ւլի ընէլավ յէտ ա տը՛ռնում...* (ՀԺՀ, V, 453):

ՄԸԼԼԱ՛Լ/ՄԻԼԼԱ՛Լ - *չբ.* Հանդարտ բարձրանալ՝ տարածվել (ծուխը, հոտը, փոշին եւն): *Ծօխը մըլլա՛մ ա, պատալօկը սաղ սըվըցընում* (Բ):

ՄԸԼԼԸՑ(Ը)ՆԷԼ/ՄԻԼԼԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸԼԼԱ՛Լ-ի:

ՄԸԼԼՕ՛Ռ(Վ)ԷԼ *(գրբ. մոլորիմ)* - *չբ.* Մոլորվել, շփոթվել, շվարել: *Յա՛ր, քու լ՛ուսնընգ՛ա՛ իրէսատ իմ սը՛ռտըս մըլ՛ըրալ ա* (ԼՂԲ, V, 180):

ՄԸԼՄԸԼԱ՛Լ/ՄԻԼՄԻԼԱ՛Լ - *չբ.* 1. *տե՛ս* ՄԸԼԼԱ՛Լ: 2. Թույլ կերպով վառվել, մարմրել: *Փիչը մըլմըլա՛մ ա* (Բ):

ՄԸԼՄԸԼՑ(Ը)ՆԷԼ/ՄԻԼՄԻԼՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸԼՄԸԼԱ՛Լ-ի:

ՄԸԼ՝ԱՆԷՐ - *տե՛ս* ՄԻԼԼԱ՛ՆԷՐ:

ՄԸԼ՝ԱՐԴ - *տե՛ս* ՄԻԼԼԱ՛ՐԴ:

ՄԸԼ՝ԱՐԴԱՏԱՐ - *տե՛ս* ՄԻԼԼԱ՛Ր-ԴԱՏԱՐ:

ՄԸԼ՝ԱՐԴԷՐ - *տե՛ս* ՄԻԼԼԱ՛ՐԴԷՐ:

ՄԸԼՅԸՐԱՊԷՆ - *գ.* Ներկարարի կատարելի գործ, ներկելու գործ: *Ծէն ըն տաս, թա.- Մըյըրապէն կա, յը՞ք* (Ձ):

ՄԸԼՅԸՐՕԹՈՒՆ - *գ.* 1. Ներկարար

լինելը: *Մըլըրօթունավ ա տօնը պահում* (Բ): 2. Ներկարարի արհեստը: *Մըլըրօթունը հիշտ փէշակ չի* (Բ):

ՄԸԼ՝ՄԸԼ՝Օ - *տե՛ս* ԹԱԽՏԱԲԻԹԻ:

ՄԸԼ՝ՕՆ - *տե՛ս* ՄԻԼԼՕՆ:

ՄԸԼ՝ՕՆԱՏԱՐ - *տե՛ս* ՄԻԼԼՕՆԱՏԱՐ:

ՄԸԼ՝ՕՆՇԻԿ - *տե՛ս* ՄԻԼԼՕՆՇԻԿ:

ՄԸԼՈՒԼ-ՇՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ՄԸԼԸ-ՇՈՒԼԼ:

ՄԸԼՕՔՈՒՐ - *տե՛ս* ՄԸՐՕՔՈՒՐ:

ՄԸԽԱՇԱՌ - *տե՛ս* ՄԸԽԱՇԱՐ:

ՄԸԽԱՇԱՐ/ՄԸԽԱՇԱՌ *(արաբ. mukašser (կեղեւը հանած)* - *տե՛ս* ԱԽՏԱ:

ՄԸԽԸԹԱԿԱՐ - *ած.* Մախաթով կարած, խոշոր կարեր ունեցող, անճոռնի կարված: *Մըխըթակար շօր ա կը՛ցալ* (Բ):

ՄԸԽԸԼ(Լ)Ա - *տե՛ս* ԽԻԼ(Լ)Ա:

ՄԸԽԸՐԷ(Գ՝)/ՄԸԽՐԷ(Գ՝) - *ած., մ. տե՛ս* Մին խըրէ(գ՝):

ՄԸԽԹԱՍԸ՞Ղ/ՄԸՐԹԱՍԸ՞Ղ - *գ.* Մախաթի նման մեծ ասեղ՝ վերմակ՝ մուշտակ եւն կարելու համար: *Մըխթասը՞ղը յօր ա օնում, յօրղանը կարում* (Ձ):

ՄԸԽԹԱՌՆՔ *(գրբ. մխիթարանք)* - *տե՛ս* ՄԸԽԹԸՐՕԹՈՒՆ:

ՄԸԽԹԱՌԷԼ/ՄԸԽԹԱՌԻԼ *(գրբ. մխիթարեմ)* - *նբ.* 1. Մեկին սփոփել, հուսադրել: *Շինանցէք՝ հըվաքվում ըն, ք՝ինամ էտ արտը էրած մարթին մըխթարում* (Ձ): 2. Մեկին գոհացնել, լիացնել, հաճույք պատճառել: *Բաղվանչին բոլ-բոլ խաղու վա տամ, ըտըրանց մըխթարում* (Ձ): 3. *չբ.* Գոհանալ, լիանալ, հաճույք ստանալ: *Շինանցիք՝ խըմալ ըն, մըխթարանալ, անումըն էլ տիրանալ Ռուսէն ախպարուր* (ԱԱ, 57):

ՄԸԽԹԱՌԻԼ - *տե՛ս* ՄԸԽԹԱՌԷԼ:

ՄԸԽԹԱՌՎԷԼ/ՄԸԽԹԱՌՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՄԸԽԹԱՌԷԼ-ի:

ՄԸԽԹԱՌՎԻԼ - *տե՛ս* ՄԸԽԹԱՌՎԷԼ:

ՄԸԽԹԸՍԸ՞ՂԷԼ/ՄԸՐԹԸՍԸ՞ՂԷԼ - *նբ.* Մեծ ասեղով կարել, անորակ կարել: *Կընէգ՝ը մարթին շալվարը մըխթըսը՞ղում ա, տամ ուրան* (Բ):

ՄԸԽԹԸՐՕՑ(Ը)ՆԷԼ/ՄԸԽԹԻՐՕՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸԽԹԱՌԷԼ (1, 2):

ՄԸԽԹԸՐՕԹՈՒՆ/ՄԸԽԹԻՐՕԹՈՒՆ *(գրբ. մխիթարութիւն)* - *գ.* 1. Մխիթարող հանգամանք՝ վիճակ: *Յըշին էշը ըստակալ ա, հանան օրըն էլ էշը ծընալ ա. էլիա մին մըխթըրօթուն ա* (Բ): 2. Մխիթարելը, մխիթարվելը: *Ժամին փօղին նի յէկօղը, խային աշկավ յէշօղը, մըխթիրօթուն չի տէսնալ...* (ՋՏ, Բ, 156):

ՄԸԽԹԻՐՕՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸԽԹԸՐՕՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸԽԹԻՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՄԸԽԹԸՐՕԹՈՒՆ:

ՄԸԽԿԱԾ - *ած.* 1. Բորբոսնած, դառնհամ ստացած: *Մըխկած ճուղուպուրը օտէլ չընը* (Բ): 2. *փխբ.* Նախանձ, խարդախ: *Մըխկած կընէգ՝ ա իլալ Փառանձինը. վը՛ղը խաբար չի տանէ* (Բ):

ՄԸԽԿԱՀԱՄ - *գ.* Բորբոսնելուց ստացած դառն համ: *Ք՝ըթան մըխկահամ ա կ՝ամ* (Բ):

ՄԸԽԿԷԼ *(գրբ. մխկեմ (լխկեցնել, հոտեցնել)* - *չբ.* Բորբոսնելուց դառն համ ստանալ (հատկապես ընկույզը՝ պնդուկը): *Ճուղուպուրը վէր էրկան վախտ պահիս, կըմըխկէ* (Բ):

ՄԸԽԿԸՏԱԼ/ՄԸՂԿԸՏԱԼ *(գրբ. մաղկատիմ)* - *չբ.* Խոր կսկիծ զգալ, մղկտալ: *... Վէր ըտըղան ուրան յէրգ՝իրը ըրվաց, թաքավէրին տըղին սը՞րտը մըղկըտաց...* (ՀԺՀ, V, 210):

ՄԸԽԿԸՏՑ(Ը)ՆԷԼ/ՄԸՂԿԸՏՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸԽԿԸՏԱԼ-ի:

ՄԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸԽԿԷԼ-ի:

ՄԸԽՄԸԽԱԼ - *չբ.* Շարունակ մխալ, ծուխ արձակել: *Նամ փանդը վէր քըցիս փիչը, կըմըմըխա* (Բ):

ՄԸԽՐԷ(Գ՝) - *տե՛ս* ՄԸԽԸՐԷ(Գ՝):

ՄԸԽՈՒՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըխուր կ՝ալ - Խոստովանել: *Վէր տանում ըն սուդը, դանստի մըխուր ա կ՝ամ* (Ձ):

ՄԸԽՕՏԷԼ - *նբ.* Գավազանը՝ գործիքների փայտե կոթերը եւն այրելով՝ սեւ գույներ եւ ամրություն տալ: *Կըվազանը թուրնէն մաչին մըխօտում ա, տամ ըտըրան* (Ձ):

ՄԸԾ - *տե՛ս* ՄԸ՞Ծ:

ՄԸԾԱՔԻ - *գ.* Մեծ մայր, տատ: *Մըծանգին էլ վէր մը՞ռնում ա, բօստանը մընամ ա անդար* (Ձ):

ՄԸԾԱԽՊԷՐ - *գ.* Մեծ՝ ավագ եղբայր: *Ըրտաշէն մըծախպէրը լ՝ավ բաննանի ա* (Բ):

ՄԸԾԱՄԱՐԹ/ՄԸԾԸՄԱՐԹ - *գ.* 1. Տարիքն առած՝ հասակավոր մարդ: *Շէնումը էլ ջանիլ չի կա, մըծըմարթիք՝ըն ըն մընացալ* (Բ): 2. Նշանավոր՝ երեւելի մարդ: *Ղարաբաղա ամմէն շէնա էլ մըծամարթ ա տուս յը՞կալ* (Բ):

ՄԸԾԱՆԱԼ *(գրբ. մեծանամ)* - *չբ.* 1. Չափահասության հասնել: *Տարինէ յա անց կէնում, ք՝անիբին տըղան մըծանում ա, տանռնում մին դաշանգ՝ տըղա* (ՆԼՂԺԲ, 35): 2. Հասակավոր դառնալ, ծերանալ: *Այան մըծացալ ա, աշկէրը տը՞սնում չի* (Բ): 3. Ծավալով՝ չափերով խոշորանալ: *Հունին բիդի ճիրիս, վէր հունը մըծանա* (Բ): 4. Մարմնեղ դառնալ, մարմնով խոշորանալ: *Խօզ՝ը բիդի կաղէն օտէ, վէր մըծանա* (Բ): 5. Բարձրությամբ աճել: *Էտ շէվէն մըծանում ա, տը՞ռնում մը՞ծ ծառ* (Ձ): 6. Քանակն ավելանալ, բազմանալ: *Վըխճարէն սուրուն շատ ա մըծացալ, չօբանը կարում չի մինակ պահէ* (Ձ): 7. Սաստկանալ, ուժգնանալ: *Կավըն էլ վէր ըստակից, Մաշինկա աքօրը դանրդը մըծացավ* (Բ):

ՄԸԾԱՊՈՒՐԹ/ՄԸԾԸՊՈՒՐԹ - *գ.* Ոչխարի՝ առաջին անգամ խուզած բուրդը, երկար բուրդ: *Մըծապուրթը հիշտ ա կ՝իզգիլը* (Բ):

ՄԸԾԱՎԷՐ/ՄԸ՞ԾԱՎԷՐ/ՄԸԾԱՎՈՒՐ - *ած., գ.* Աստիճանավոր, իշխանավոր, պետ, առաջնորդ: *Էտ մըծավէրին անը-մը ինըմ ա Ամիրխան, տա շահէն պալատըմը մը՞ծ կօրծի յա ինըմ* (ԼՂԲ, 335):

ՄԸԾԱՎՈՒՆ - *ած.* Որոշ չափով մեծ, մի քիչ մեծ: *Մին մըծավուն փանդ էլ ինք՝ըն ա շըլակում, ըտահանց նըհը՞տ ք՝ինամ* (Ձ):

ՄԸԾԱՎՈՒՐ - *տե՛ս* ՄԸԾԱՎԷՐ:

ՄԸԾԱՏԱՐ - *ած.* Ընտանիքում ծեր մարդ՝ ծնող ունեցող: *Հարը ասմա.- Մըծատար ընք, մունք կարէլ չընք քօչինք՝* (Ձ):

ՄԸԾԱՑԱԾ-ԿՈՒՃՈՒՐԱՑԱԾ - *ած.* Մեծի նման խոսող՝ գործող (երեխաների մասին): *Մըծացած-կուճուրացած խօխա յա Ափկարէն թօռնը* (Բ):

ՄԸԾԱՔՈՒՐ - *գ.* Մեծ՝ ավագ քույր: *Սիրանէն մըծաքուրը մը՞ռալ ա* (Բ):

ՄԸԾԸԳ՝ՈՒԼԼԱ - 1. *ած.* Մեծ՝ խոշոր հատիկներ՝ պտուղներ ունեցող (խաղողի մասին): *Ք՝էջանմջային մըծըգ՝ուլլա խաղու վա* (Բ): 2. *գ.* Խաղողի մեծ հատիկ՝ պտուղ: *Խաղուն ուտէլիս մին մըծըգ՝ուլլա վէր ա ըղնում, ըղնում կըրպէտին տակը* (Ձ):

ՄԸԾԸԳ՝ՈՒԼԼԸ՞ՆԷ - *գ.* Մեծահատ խաղողի տեսակ: *Մըծըգ՝ուլլը՞նէն քախծըր խաղու վա* (Բ):

ՄԸԾԸԽԷԼՈՒՆՔ - *ած., գ.* Ծեր եւ խելոք՝ իմաստուն (մարդ): *Մին օր էլ թաքավէրին մըծըխըլ՝ունքնէն հըվաքվում ըն, մըսլըհաթ անում...* (Ձ):

ՄԸԾԸԿԸԼՕԽ - *տե՛ս* ՁԸՌԸԿԸԼՕԽ:

ՄԸԾԸԿԸԼԽՕԹՈՒՆ - *տե՛ս* ՁԸՌԸԿԸԼԽՕԹՈՒՆ:

ՄԸԾԸՀԱԽԿԻ - *գ.* Մեծ՝ ավել վարձ, որ տրվում է վարձատրվողների ավագին: *Ըտըրանք մինտը՞ղ կօրծ ըն անում, ամիա մըծըհախկին Ջանփօլադընը ա յօր օնում* (Ձ):

ՄԸԾԸՀԱՆ(Ա) - *մ.* Մեծաբար, մեծավարի, մեծի նման: *Էտ տըղան մըծըհանա ք՝ինամ ա վէգիրին կօշտը, լօխ ասում* (Ձ):

- Մըծըհանա անց կըցընէլ/տանէլ - Իրեն պատճառած նյութական՝ բարոյա-

կան վնասը՝ ցավը՝ վիրավորանքը մեծավարի՝ վեհանձնաբար՝ առանց բարձրաձայնելու տանել՝ կրել: *Ըսկէսուրը հարթնանը շատ ա անէսկ տամ, ամա հարթնը պէն չի խօսում, մընծրհանա տանում ա* (Ձ):

ՄԸԾԸՀԱՍԱԿ *(գրբ. մեծահասակ (չափահաս)* - *ած.* Մեծահասակ, հասակավոր: *Էտ մարթը ք'ինըմ ա, ք'ինըմ, էն մընծրհասակ ըխճըկանը պըտահըմ* (ԼՂԲ, 368):

ՄԸԾԸՀՈՒՔ'Ի - *ած.* Մեծ հոգու տեր, վեհանձն, մեծահոգի: *Սուղումուն դային մընծրհուք'ի մարթ ա իլալ* (Բ):

ՄԸԾԸՄԱՐԹ - *տե՛ս* ՄԸԾԱՄԱՐԹ:

ՄԸԾԸՆԱԼՈՒԿ - *գ.* Երեխաների կոկորդի՝ ծնոտի եւ մարմնի այլ մասերի վրա առաջացած պալար՝ ուռուցք, որ դիտվում է իբրեւ մեծանալու՝ չափահաս դառնալու նշան: *Խուխէն պըկէն յըրա մընծրնալուկ ա տուս յը՛կալ* (Բ):

ՄԸԾԸՊԸԼԻԹ - *գ.* Մեծահատ թուզի տեսակ: *Մընծրպըլիթը քախծըր թօզ ա* (Բ):

ՄԸԾԸՊՈՒՃՈՒՐ - *գ. հոգն.* Եվ մեծերը, եւ փոքրերը, բոլորը: *Ք'ընըմ ա մուտանըմ, տը՛սնըմ՝ մընծրպուճուր լօխ ճուր ըն կըրըմ* (ՀԺՀ, V, 155):

ՄԸԾԸՊՈՒՐԹ - *տե՛ս* ՄԸԾԱՊՈՒՐԹ:

ՄԸԾԸՍԷՐՈՒՆ - *ած.* Մեծ ու գեղեցիկ: *Ըստը՛ղ մին մընծրսէրուն պալատ ա շինիլ տամ* (Ձ):

ՄԸԾԸՎԱՉԻ - *տե՛ս* ՄԸԾԸՎԱՐԻ:

ՄԸԾԸՎԱՐԻ - 1. *տե՛ս* ՄԸԾԱՎՈՒՆ: 2. *տե՛ս* ՄԸԾԸՀԱՆ(Ա):

ՄԸԾԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. մեծացուցանեմ)* - *նբ.* ՄԸԾԱՆԱԼ-ի:

ՄԸԾԸՓԱՅԻ - *գ.* Մեծ բաժին, ավագին՝ տարեցին հասնող բաժին: *Տօնը կէս ըն անում, մընծրփայիս տամ մը՛ծ ախպօրը* (Ձ):

ՄԸԾԸՔԱՐԷ - *տե՛ս* ՆԸՇԸՆՔԱՐԷ:

ՄԸԾԸՔ'ՕՐՈՒՔ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մընըք' օրուզ խօսէլ - *տե՛ս* Մը՛ծ-մը՛ծ խօսէլ:

ՄԸԾՄԸԾԱՆԱԼ/ՄԸՔՄԸԾԱՆԱԼ - *չբ.* Հետզհետե ավելի ու ավելի մեծանալ (շատերի մասին): *Էտ խօխէնք'ը մընծմընանում ըն, տը՛ռնում մը՛ծ տըղէրք* (Բ):

ՄԸԾՄԸԾԱՆԷՔ'/ՄԸՔՄԸԾԱՆԷՔ' - *գ. հոգն.* Աստիճանավորներ, իշխանավորներ, մեծավորներ: *Էտ յիրգ'իրին մընծմընանէք'ը լօխ վըհաքվում ըն թաքավէրին պըլատումը* (Ձ):

ՄԸԾՄԸԾԱՎՈՒՆ/ՄԸՔՄԸԾԱՎՈՒՆ - *ած.* Եղածների մեջ ավելի մեծ՝ խոշոր: *Կընանէք'ը յըրա յըն տը՛ռնում, մընծմընավուն խընձօրնէն ճօկում* (Ձ):

ՄԸԾՄԸԾՀԱՆ/ՄԸՔՄԸԾՀԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մընծմընծհան անէլ - Եղածների միջից ավելի մեծերը՝ խոշորները զատել՝ առանձնացնել: *Ասում ա.- Էտ վէր տու մընծմընծհան ըս անում, պա էն խուրդէ՛ք'ը հու բիդի ինք' օնէ* (Ձ):

ՄԸԾՄԸԾՀԱՆԷԼ/ՄԸՔՄԸԾՀԱՆԷԼ - *նբ. տե՛ս* Մընծմընծհան անէլ:

ՄԸԾՄԸԾՑ(Ը)ՆԷԼ/ՄԸՔՄԸԾՑ(Ը)-ՆԷԼ - *նբ.* ՄԸԾՄԸԾԱՆԱԼ-ի:

ՄԸԾՆԱԹԱՆ/ՄԸՔՆԱԹԱՆ - *գ.* Մածունից պատրաստած թան: *Չօբանը մընծնաթանը խըմում ա, ծառէն տակէն թէյնը տամ* (Ձ):

ՄԸԾՆԱԿԷՐ/ՄԸՔՆԱԿԷՐ - *ած.* Մածուն ուտող: *Մընծնակէր խօխան ճըլագ կինի* (Բ):

ՄԸԾՆԱՀԱՄ/ՄԸՔՆԱՀԱՄ - 1. *գ.* Մածնի համ: *Քընսակէն հացան մըզնահամ ա կ'ամ* (Բ): 2. *ած.* Մածնի համ ունեցող: *Մընծնահամ խաշիլ ա* (Բ):

ՄԸԾՆԱՃՈՒՐ/ՄԸՔՆԱՃՈՒՐ - *գ.* Մածունից քամված ջուրը՝ հեղուկը: *Ղըզղանը յօր ա օնում, մընծնաճուրը կըլխէն քաշում* (Ձ):

ՄԸԾՆԱՇՕՐ/ՄԸՔՆԱՇՕՐ - *գ.* Մածունից պատրաստած շոռ: *Մընծնաշօրըն էլ ա լանգ'թտու պէն, կըթնաշօրըն էլ* (Բ):

ՄԸԾՆԱՍԷՐ/ՄԸՔՆԱՍԷՐ - *ած.* Մածուն սիրող: *Դօրունք մընծնասէր խալխ ըն* (Բ):

ՄԸԾՆԱՎԸՏ/ՄԸՔՆԱՎԸՏ - *գ.* Մածնի հոտ: *Խընը՛ցան մընծնավը՛տ կըկ'ա* (Բ):

ՄԸԾՆԸ՛ՂԱՆ/ՄԸՔՆԸ՛ՂԱՆ - *գ., հվք.* Մածուն եւ նրանից ստացվող ուտելիքներ: *Յը՛ս մընծնը՛ղան շատ ըմ սիրում* (Բ):

ՄԸԾՆԸԹԱԹԱԽ/ՄԸՔՆԸԹԱԹԱԽ - *ած.* Վրան մածուն քսված, մածնով թաթախված: *Մըզնըթաթախ շօրը յօր ա օնում, կապում կըլօխը* (Ձ):

ՄԸԾՆԸԼԱՎԱԾ/ՄԸՔՆԸԼԱՎԱԾ - *ած.* Վրան մածուն քսած եւ սաջի վրա թխած լավաշ: *Մընծնըլավաշը կակօղ ա ինում* (Բ):

ՄԸԾՆԸՓԸՐԹՈՒՇ/ՄԸՔՆԸՓԸՐ-ԹՈՒՇ - *գ.* Սառը ջրով բացած եւ մեջը հաց (նաեւ վարունգ՝ կանաչի եւն) բրդած մածուն, մածնաբրդոջ: *Ղարաբաղցէն առանց մընծնըփըրթուշ կարէլ չի յօլլա ք'ինի* (Բ):

ՄԸԾՆԸՔԱՄԷ/ՄԸՔՆԸՔԱՄԷ - *գ.* Մածունը քամելու ծակոտկեն շոր՝ հարմարանք: *Մընծնըքամէն տինում ա, մածունը քամում* (Ձ):

ՄԸԾՆԸՔԸՍԱԿ/ՄԸՔՆԸՔԸՍԱԿ - *գ.* Տոպրակ, որի մեջ լցնում եւ քամում են մածունը: *... Մըզնըքսակը պէնում ա, վէր փըրթուշ անէ, յէշում ա, տը՛սնում՝ կընէգ'ը փըրթուշին տազը մընանա քընցալ ա* (ԱԱ, 58):

ՄԸԾՆԻՐԸ՛Ս/ՄԸՔՆԻՐԸ՛Ս - *գ.* Մածնի սերուցք՝ սեր: *Մընծնիրը՛սը քընսում ա հացը, տամ խուխէն* (Ձ):

ՄԸԾՕԹՈՒՆ *(գրբ. մեծութիւն)* - *գ.* Մեծ (խոշոր, ընդարձակ, բազմաքանակ, ուժգին, կարեւոր, շատ, մեծահասակ, նշանավոր, մեծավոր, ավագ) լինելը, մեծություն: *Մընծօթունը ամմէն մարթ չի կարում կուճուրթունան ճօկէ* (Ձ):

- Մընծութունավ անց կընցընէլ/տանէլ - *տե՛ս* Մընծրհանա անց կընցընէլ/տանէլ:

ՄԸԾՕՑ - *մ.* Մեծ տարիքում: *Մընծօց տիժէր ա դ'ունլգ'ուրօթուն սընվը՛րէլը* (Ձ):

ՄԸԿԱՐ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԸԿԸԼԱՎԸ՛Տ/ՄԸԿԼԱՎԸ՛Տ *(գրբ. մգլահոտ (հոտած, փտած)* - *գ.* Այրված շորի հոտ, գարշելի հոտ: *Ըստրա տանան մընկըլավը՛տ ա կ'ամ* (Բ):

- Մընկըլավը՛տը յը՛ր անէլ - Խիստ ծեծել՝ ավերել: *Ըստրան փըռնում ըն, մընկըլավը՛տը յը՛ր անում* (Ձ):

- Մընկըլավը՛տը յը՛ր ինիլ - 1. Ծայրահեղ աղքատ լինել: *Խը՛ղճը փուլ չօնէ, թա հաց ինք' օնէ, մընկըլավը՛տը յը՛ր ա ինում* (Բ): 2. Խիստ երաշտ լինել: *Չօրք' ամէս ա՝ թօռ չի յը՛կալ, մընկըլավը՛տը յը՛ր ա ինում* (Բ):

ՄԸԿԸԾԸ՛Ռ(ՆԸ)/ՄԸԿԸԾԸՌ(ՆԸ) - *գ.* 1. Սկյուռ: *Միհէնգ' էլ, վէր մընկըծը՛ռնը մարթ ա տընսնաս, իլբիհանալ ա պիցընաս ծառէն պըտօկը...* (ԱԱ, 71): 2. *փխբ.* Նիհար՝ վտիտ մարդ: *Էտ մընկըծը՛ռնը կընգանը ամմէն օր թակում ա* (Բ):

- Մընկըծը՛ռնու հանքի - Փարթամ՝ շքեղ բան: *Ծաղէգ' հինչ ծա՞ղէգ', մին մընկըծը՛ռնու հանքի յա* (Բ):

- Մընկըծը՛ռնու հիրս (հնիլ) - Թույլ՝ անզոր (լինել): *Թընվադէն հիրսը մընկըծը՛ռնու հիրս ա* (Բ):

- Մընկըծը՛ռնու ճուր - Անարժեք՝ չնչին բան: *Ավաք'ը մին կը՛վաթ խընմում ա, թա.- էս կ'ինի չի, էս մընկըծը՛ռնու ճուր ա* (Ձ):

- Մընկըծը՛ռնու պուն - Բարձրադիր տեղ: *Սարէն շէնը մընկըծը՛ռնու պուն ա* (Բ):

- Մընկըծը՛ռնու պուն քանդիլ - Անիրավ՝ անգութ բան կատարել: *Մընկըծը՛ռնու պուն քանդօղ մարթիք' ամմէն տը՛ղ էլ կան* (Բ):

ՄԸԿԸԾԸՌ(ՆԸ) - *տե՛ս* ՄԸԿԸԾԸ՛Ռ(ՆԸ):

ՄԸԿԸԿԱԼ *(հ.ե. *mēkk-)* - *չբ.* Մայել, մկկալ (այծի՝ ուլի մասին): *Անց կը՛նալի վախտը մին հօլ ը՛ծրծան յէր ա ընգընըմ, մընկըկըմ* (ԼՂԲ, 355):

ՄԸԿԸԿՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՄԸԿԸԿԱԼ-ի:

ՄԸԿԸԿՕՆ - *գ.* Մկկալը, մկկալու ձայնը: *Էծին մըկըկօնէն յըրա կ'ուլէրը հըվաքվում ըն* (Ձ):

ՄԸԿԸԿՕՑ - *տե՛ս* ՄԸԿԸԿՕՆ:

ՄԸԿԸՆՕՏԷԼ/ՄԸԿՆՕՏԷԼ - *տե՛ս* ՄԸԿՆԷԼ (շատերի մասին):

ՄԸԿԸՆՕՏՎԷԼ/ՄԸԿՆՕՏՎԷԼ - *տե՛ս* ՄԸԿՆԸՎԷԼ (շատերի մասին):

ՄԸԿԸՌԱՎԷՐ/ՄԸԿԸՐԱՎԷՐ - *տե՛ս* ՄԱԿԱՌ:

ՄԸԿԸՌԿՕՉԷ(Ն)Ք'/ՄԸԿԸՐԿՕՉԷ(Ն)Ք' - *գ.* Հարսանիքից հետո՝ կիրակի երեկոյան կամ երկուշաբթի առավոտյան, մակարների պատվին կազմակերպված խնջույք փեսայի տանը: *Մըկըռկօչէք'ըն էլ ըդ'ա՛թ ընգավ* (Բ):

ՄԸԿԸՐԱՏ/ՄԸԿՐԱՏ *(գրբ. մկրատ)* - *գ.* 1. Շարժական շեղբերից կազմված կտրող գործիք՝ մկրատ: *Տըղան սիպտա՛կ թօխտը մըկըրատավը կուտուրէս ա, տինիս ըստօլէն...* (ՀԺՀ, V, 286): 2. *փխբ.* Համառ՝ կամակոր մարդ: *Բուդդանէն կընէգ'ը մըկրատ ա, խըղճ Բուդդանը հինչը ասում ա, դ'ա՛ստի ինք'ը թ'ա՛րս ա անում* (Բ):

- Մըկըրատըն էլ ա ո՛ւրա՛նը, կըտօրըն էլ, հունցը օգ'ում ա, կըտըրում ա - *տե՛ս* Տէնակըն էլ ա ո՛ւրա՛նը, տըմակըն էլ, հունցը օգ'ում ա, կըտըրում ա:

ՄԸԿԸՐԱՏ-ՄԸԿԸՐԱՏ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըկըրատ-մըկըրատ անէլ - 1. Ցուցամատն ու միջին մատը վեր պարզելով՝ մկրատաձեւ շարժել: *Կընէգ'ը ճիրին տակէն խըխտվիլիս էլիա չի յըխնըվում, ծըռքը տո՛ւս ա օնում, մըկըրատ-մըկըրատ անում* (Ձ): 2. Բերանը բացախուփ անել: *Տըղան վէր մըհէտ էլ ա թըխում, դէվը վէր ա ըղնում, մըկըրատ-մըկըրատ անում* (Ձ): 3. *ածական.* Մկրատաձեւ: *Ցըցէռնակը մըկըրատ-մըկըրատ հ'ա՛ք'ի օնէ* (Բ):

ՄԸԿԸՐԴԷԼ/ՄԸԳԸՐԴԷԼ *(գրբ. մկրտել)* - *նբ.* Կնքել, մկրտել: *Կ'ա՛նձ'ա՛սար միհէնգ' շատէրէն ըն մըկըրդում* (Բ):

ՄԸԿԸՐԴ(Ը)ՎԷԼ/ՄԸԳԸՐԴ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԸԿԸՐՏԷԼ-ի:

ՄԸԿԸՐԿՕՉԷ(Ն)Ք' - *տե՛ս* ՄԸԿԸՌԿՕՉԷ(Ն)Ք':

ՄԸԿԼԱՎԸՏ - *տե՛ս* ՄԸԿԸԼԱՎԸՏ:

ՄԸԿՆՕՏԷԼ - *տե՛ս* ՄԸԿԸՆՕՏԷԼ:

ՄԸԿՆՕՏՎԷԼ - *տե՛ս* ՄԸԿԸՆՕՏՎԷԼ:

ՄԸԿՐԱՏ - *տե՛ս* ՄԸԿԸՐԱՏ:

ՄԸՀԱԼ[1] - *տե՛ս* ՄԱՀԱԼ:

ՄԸՀԱԼ[2]/ՄԱՀԱ՛Լ *(թրք. mahal (հարգանք)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըհալ տինիլ/քըցիլ/անէլ - Ուշադրություն դարձնել, հաշվի առնել, բանի տեղ դնել (հիմնականում գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Թաքավէրին տըղան էլ մահա՛ալ չի քըցիս ըտըրա ըսածէն, ընգնէս ա հըղէն, ք'իս* (ՀԺՀ, V, 529):

ՄԸՀԱԿ[1] *(գրբ. մահակ)* - *գ.* 1. Գավազան, մահակ: *Ասում ա պըրծընըմ, մին չօբանի մըհակ յօր օնըմ, հըղէ ինըմ, ք'ինըմ հէռու տէղէր* (ՀԺՀ, V, 53): 2. *փխբ.* Բռնություն, ճնշում: *Թաքավէրը մըռնում ա, ժուղովուրթը մըհակէն տական տո՛ւս ըն կ'ամ* (Ձ):

- Մըհակէն տակը տալ - Մահակով խիստ ծեծել: *Խանը հըրաման ա տամ, վէր էտ նօ՛ք'ա՛րէն մըհակէն տակը տան* (Ձ):

- Մըհակէ տալ - Մահակներով խաղալ/կռվել: *Խօխէնք'ը մըհըկնէն յօր ըն օնում, մըհակէ տամ* (Բ):

- Մըհակը լ՚օրէն նի կ'ա՛լ - Գործը հաջողվել: *Կ'էվին էն ա օրախ, հ'ա՛լբա՛թ մըհակը լ՚օրէն նի յա յըկալ* (Բ):

- Մըհակը ծըռքան վէր չըտինիլ - Միշտ զգոն՝ ուշադիր լինել: *Չօբանը մըհակը ծըռքան վէր չըբիդի տինի* (Բ):

- Մըհակը յըրան կուտըրատէլ - *տե՛ս* Մըհակէն տակը տալ:

- Մըհակը յըր օնէլ, դաթը ըղնէլ - Կռվող կողմերին իրարից բաժանել: *Հ'ա՛ք'ին ա Կ'ա՛փին վէր ըսքըսըցէն ո՛ւրո՛ւր վէր թակէլը, Սիրգօն ապան մըհակը յըր կ'ա՛լ'ա՛վ, դաթը ընգավ* (Ձ):

- Մըհակ թըխէլ - *տե՛ս* Մըհակէ տալ:

ՄԸՀԱԿ[2] - *տե՛ս* ՄԸՏ: *Մին օր էլ ճըղաղպանը ա ջըհո՛ւմ, թա.- Տու մըհակ ը՞ս, վէր կընէգ'ըտ Վըզգէնին նըհըտ ամմէն օր կ'ամ ա ծօրո՛ւմը սիլի-բիլի անում* (Ձ):

ՄԸՀԱՆԱ - *տե՛ս* ՄԱՀԱՆԱ:

ՄԸՀԱՍԻԼ/ՄՈՒՀԱՍԻԼ - *ածական.* 1. Դաժան, խստապահանջ: *Լէնգ' Թէմուրը, ասում ըն, շատ մըհասիլ մարթ ա իլա՛լ* (Ձ): 2. Անհամբեր, համբերություն չունեցող: *Մըհասիլ մարթ ա Ծըղտօրանց Խէչանը, տըմանում չի, թա խաղուն հըսնէ, խակ քաղում ա* (Բ): 3. *գ. փխբ.* Հարկահավաք: *Մըհասիլնէն էն վախտը տարանը մըհըտ նի տըռնալիս ըն իլա՛լ Դարաբաղա շէնէրքը, խարջէրը հըվըքէլիս* (Ձ):

ՄԸՀԱՍՈՒՐ/ՄԱՀԱՍՈՒՐ/ՄԸՀԱՍՕՐ *(գրբ. մասուր)* - *գ.* 1. Մասրենու պտուղը, մասուր: *Ջըկըռ ա կէրալ, մըհասուր, յօլլա ք'ըցալ* (ԱԱ, 71): 2. *տե՛ս* ՄԸՀԸՍԸՐԷ (1):

ՄԸՀԱՍՕՐ - *տե՛ս* ՄԸՀԱՍՈՒՐ:

ՄԸՀԱՐ/ՀԸՄԱՐ *(գրբ. ի համար, պրս. hamār)* - *տե՛ս* ՀԸՏԷ[2]:

ՄԸՀԷ[1] - *տե՛ս* ՄԸՀԷՆԳ':

ՄԸՀԷ[2]/ՄԻՀԷ[2] - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԸՀԷԳ - *տե՛ս* ՄԸՀԷՆԳ':

ՄԸՀԷԿ - *տե՛ս* ՄԸՀԷՆԳ':

ՄԸՀԷՆԳ'/ՄԸՀԷԳ/ՄԸՀԷԿ/ՄԸՀԷ[1]/ՄԻՀԷ[1]/ՄԻՀԷՆԳ' *(գրբ. հեմ)* - *մ.* 1. Հիմա, այժմ, ներկայումս: *Մըհէնգ' սարան կուճի-կուճի քարէր ըն վէր տըռնում* (ԱԱ, 33): 2. Արդ, ուրեմն, հետեւաբար, վերջապես: *Առուտուրականը ասում ա.- Մըհէնգ' կավըտ ծախում ը՞ս, թա չէ՞* (Ձ):

- Մըհէնգ' էլ - 1. Նաեւ: *Խըրէգ' ար դիրդըրնէս շատ, մըհէնգ' էլ ծուն յըկավ* (Բ): 2. *տե՛ս* ՄԸՆԷԼ[2]:

ՄԸՀԷՆԳ'ԱՆ(Ց)/ՄԻՀԷՆԳ'ԱՆ(Ց) - *մ.* Այս պահից սկսած, այժմվանից: *Հ'ա՛ղը ասմա.- Մըհէնգ'անց բիդի պըդըրաստըվինք', յըտնան հըսցընան չընք* (Ձ):

- Մըհէնգ'ան(ց)/մըհէնգ'աս յըտը/տընը - Այսուհետեւ: *Էտ խօխէնք'ը լ'ա՛ց ըն ընիս, թա.- Հունց կա՞պրինք' մըհէնգ'ան տէնը* (ՀԺՀ, V, 550):

ՄԸՀԷՆԳ'Ի(Ս)/ՄԻՀԷՆԳ'Ի(Ս) - *մ.* Քիչ առաջ: *Ռէրվիշը ասմա.- Տըսալ ըմ, մըհէնգ'իս ըստէղավ ընցալ ըն* (Ձ):

ՄԸՀԷՆԳ'ՍԱ/ՄԻՀԷՆԳ'ՍԱ - *մ.* Այժմվա, ներկայիս: *Մըհէնգ'սա խօխէնք'ը շատգ'իդ ըն* (Բ):

ՄԸՀԷՏ - *տե՛ս* ՄԸՀԸՏ:

ՄԸՀԷՏԱՆ(Ց) - *տե՛ս* ՄԸՀԸՏԱՆ(Ց):

ՄԸՀԸՏ - *տե՛ս* ՄԸՀԸՏ:

ՄԸՀԸՏԱՆ(Ց)/ՄԸՀԷՏԱՆՑ/ՄԻՀԷՏԱՆ(Ց)/ՄԷՀԷՏԱՆ(Ց) - *մ. տե՛ս* Մին դ'ունո՛ւմա(ն)ց:

ՄԸՀԸԿԱԹԱԿ - 1. *գ.* Մահակով ծեծ՝ գանահարություն: *Խանը ասում ա.- Ըտըրա մինակ մըհըկաթակը տըղան յըր կըկըցընէ* (Ձ): 2. *ածական.* Մահակով ծեծած՝ ծեծված: *Քամէ յա անում, էտ մըհըկաթակ պ'ա՛ւրթը սաղ քըղշ'ում* (Բ):

- Մըհըկաթակ անէլ/տալ - *տե՛ս* Մըհակէն տակը տալ:

- Մըհըկաթակ օտէլ - Մահակով խիստ ծեծվել: *Նօ՛ք'ա՛րնէն լ'ավ ին գ'ա՛ղ'ում, վէր հու ըտըրա ասածը անում չի, մըհըկաթակ ա օտում* (Ձ):

ՄԸՀԸԿԱՎԷՐ/ՄԸՀԸԿԱՎՈՒՐ - *ածական., գ.* Մահակ կրող, մահակով զինված (մարդ): *Մըհըկավէրը վէր մըհակավը կ'ա՛ւլին տըրրքցընում ա, կ'ա՛ւլը վըխճարէն պէց ա թօղնում* (Ձ):

ՄԸՀԸԿԱՎՈՒՐ - *տե՛ս* ՄԸՀԸԿԱՎԷՐ:

ՄԸՀԸԿԱՑՈՒ - *ածական., գ.* Մահակ պատրաստելու համար հարմար (ճյուղ, շիվ, փայտ): *Մին օր էլ էտ չօբանը նի յա մընէս ծըմակը, վէր մըհըկացու կըտըրէ* (Ձ):

ՄԸՀԸԿԿԸՌԸՎ - *գ.* Մահակներով կռիվ: *Ըտըրանց մըհըկկըռըվը էրկան ա քըղշիս* (Ձ): 2. Խաղատեսակ, երբ մահակներով կռվում են, եւ հաղթող է ճա-

նաչվում նա, ում հաջողվում է հարվածներով ցած գցել կամ կոտրել հակառակորդի մահակը: *Մըհըկկըռըէվը չուբանէն տըղօրանցը սիրիլի խաղըն ա ինում* (Ձ):

ՄԸՀԸԿՎԸՐՎԷԼ - *չբ.* Մահակներով զինվել, մահակներ վերցնել: *Ըտըրանք մըհըկվըրվում ըն, ք'ինամ* (Ձ):

ՄԸՀԸՍԸՐԷ/ՄԸՀԸՍՈՒՐԻ - *գ.* 1. Վարդագգիների ընտանիքին պատկանող փշոտ թփաբույս՝ մասրենի: *Ղարաբաղ ամմէն տը'ղ էլ մըհըսըրէ յա փըսնէս* (Բ): 2. Մասրենու նման մի տեսակ փշոտ բույս: *Մըհըսըրէն մըհըսուրէն նըման ա, ամմա բար չի յօր ունէս* (Բ): 3. Խնձորենու տեսակ եւ դրա պտուղը: *Մըհըսըրէն կ'ամ'ուր խընձօր ա* (Բ):

ՄԸՀԸՍԸՐԹԸԹՕ/ՄԸՀԸՍՈՒՐԹԸԹՕ - *գ.* Մասուրից եփած թթվաշ ապուր: *Մըհըսըրթըթօն ծըմը'ռընն ա ինում լա՛զ'թտու* (Բ):

ՄԸՀԸՍՈՒՐԹԸԹՕ - *տե՛ս* ՄԸՀԸՍԸՐԹԸԹՕ:

ՄԸՀԸՍՈՒՐԻ - *տե՛ս* ՄԸՀԸՍԸՐԷ:

ՄԸՀԸՔԸՐԹՆՕՆՔ - *գ.* Մաիվան պահին մահացողի վրա առաջացող քրտինք, մահաքրտինք: *Վէր մըհըքըրթնօնքը տը'սնում ըն, կըլխու վըն ըղնում, վէր Ղումաշը մըռնէլու յըրա յա* (Բ):

ՄԸՀՆԸ-ՇԱՀՆԱ/ՄԱՀՆԱ-ՇԱՀՆԱ/ՇԸՀՆԸ-ՄԱՀՆԱ - *գ. հոգն.* Սուտ պատրվակներ՝ պատճառներ: *Ըտըրա մըհնը-շըհնէն վէշ մինը հըվատում չի* (Բ):

- Մըհնը-շահնա անէլ - Սուտ պատրվակներ՝ պատճառներ բերել: *Մարթը ասմա.- Մըհնը-շահնա չանիս, յը'ր կաց կօ'րծ ըրա* (Ձ):

ՄԸՂԱԿ - *գ.* 1. Դուռ: *Մին օր, հէնգ' օր վէր քանդում ա, մին մըղակ ա պէնվում...* (ՆԱԲ, II, 20): 2. Դռան անմիջապես առջեւի տարածությունը՝ շեմք: *Շարմաղը յէշում ա, տը'սնում մին ջ'ահիլ տըղա ո՛ւրանց մըղակումը վը'տ կացած* (ՆԼՂԺԲ, 28):

- Մըղակը մըղակէն/մըղակ մըղակու - Դրկից, մոտիկ հարեւան: *Մըղակը մըղակէն մարթիք' ըն, ամմա ո՛ւրո՛ւր նը-հը'տ խօսում չըն* (Բ):

ՄԸՂԱՄՈՒՆՋ - *գ.* Ծառերի՝ հատկապես կաղնու վրա աճող մշտադալար կիսամակաբույծ բույս: *Մըղամունջը կը-տօրում ըն, տանում, վէր ճար շինին* (Ձ):

ՄԸՂԱՅԻԴ - *տե՛ս* ՄԸՂԷՅԻԴ:

ՄԸՂԱՓՈՒՆ - *տե՛ս* ՄԸՂԱՓՈ՛ՒՆ:

ՄԸՂԱՓՈ՛ՒՆ/ՄԸՂԱ՛ՓՈՒՆ/ՄԸՂԱՓՈՒՆ - 1. *ձ.* Վշտի՝ ափսոսանքի արտահայտություն՝ ավա՜ղ, ափսո՜ս: *Մըղա՜փո՛ւն էն տըղա, ք'ը'ցավ կըռվումը ըսպանվից* (Բ): 2. *ած.* Խնայելու արժանի, ափսոսալի: *Խօջան ասում ա.- Մըղափուն ա քու էտ ջ'ահիլ կ'անքըտ, վը'ր խըվըրցընում ըս...* (ՀԺՀ, VII, 268):

- Մըղափո՛ւն էն հաց, վէր էն/տու ա/վըս օտում - Արհամարհանքի արտահայտություն անարժան՝ անզգամ՝ ստոր մարդու հասցեին՝ արժանի չէ ապրելու:

- Մըղափո՛ւն(ը) կ'ա՛ն - Ափսոսալ, ցավել: *Մըղափո՛ւնընն ա կ'ամ, վէր տի դաշ'ա՛նգ' վանքը փըչացալ ա* (ՀԱԲ, 15, 146):

- Մըղափո՛ւն մընացած - Խեղճ, թշվառ: *Մըղափո՛ւն մընացած ախճիգ' ա. վէ՛չ հա՛ր օնէ, վէ՛չ մար* (Բ):

ՄԸՂԱ՛ՓՈՒՆ - *տե՛ս* ՄԸՂԱՓՈ՛ՒՆ:

ՄԸՂԱ՛ՂՐ - *տե՛ս* ՄԸՂԱՂՐ:

ՄԸՂԱ՛ՂՈՒՍԻ - *տե՛ս* ՄՈՒՂԱ՛ՂՈՒՍԻ:

ՄԸՂԷՂ *(գրբ. մղեղ (մոխիր, կայծ, փոշի)* - *գ.* 1. Կալը կալսելու ժամանակ առաջացած հարդի մանրացած փոշին: *Մըղէղը նի յա տը'ռնում աշկէրը* (Ձ): 2. *փխբ.* Շատ մանր հարդ՝ փայտի կտորտանք եւն: *Մըղէղը ածում ըն փա՛ղդին տակը, նի կըցընում* (Բ):

ՄԸՂԷՂՈՒՏ - *ած.* Վրան հարդի փոշի նստած, մղեղով պատված: *Մըղէղուտ խուրջինը շըլակում ա, ք'ինամ* (Ձ):

ՄԸՂԷՅԻԴ/ՄԸՂԱՅԻԴ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըղէյիդ ինիլ/կէնալ - Զգույշ՝ ուշադիր լինել մեկի՝ մի բանի նկատմամբ, հոգ տանել: *Հըրըվանէն վը'խճարը կ'ու՛լը տարավ, հըրը'վանը ո՛ւրանէն մըղէյիդ կացավ* (ԱԲԲ, 57):

ՄԸՂԸԼԸՔԸՇԿՕՌ/ՄԸՂԸԼՔԸՇԿՕՌ - *գ.* Հանգույցի տեսակ, որը, մի ծայրից ձգելով, հեշտությամբ բացվում է: *Բարդաննէն կապում ըն, մըղըլըքըշկօռ անում, վէր հիշտ յը'տ անին* (Ձ):

ՄԸՂԸԼԼԱԽԷ/ՄԸՐԸԼԼԱԽԷ/ՄՈՒՂԱՆԼԸԽ *(պրս. maglag (գլխիվայր շրջված)* - *տե՛ս* ԿԸԼԸ(Խ)ԿՕՆՁԻ:

- Մըղըլլախէ անէլ/տալ *(գրբ. մաղլաղ առնեմ (պտտվել)* - 1. *տե՛ս* Կըլը(խ)-կօնձի անէլ: 2. *տե՛ս* Գ'ԸՌԱՆԱԼ:

ՄԸՂԸՄԷՐՈՒՑ/ՄԸՂՄԷՐՈՒՑ - *ած., գ.* Մեղմ՝ հանդարտ (վառվելը): *Ք'ո՛թ'ուկը քըցո՛ւմ ըն փիչը, մըղմէրուց կըրակէն յըրա կուրկուտը իփո՛ւմ ա* (Ձ):

- Մըղմէրուց տալ - Մեղմ՝ հանդարտ վառվել: *Փիչը մըղմէրուց ա տամ* (Բ):

ՄԸՂԸՄԸ'Ղ/ՄԸՂՄԸ'Ղ *(հ.ե. *mel-)* - 1. *տե՛ս* ՄԱ՛ՐՄԱ՛ՆԴ: 2. *տե՛ս* ՄԸՂԷՂ:

- Մըղըմը'ղ հաց - Մեղմ կրակի վրա տաքացրած՝ չորացրած հաց: *Յու վէր մըղըմը'ղ հացա, մընէլ էծու պընէրա քուշտացավ, գ'իդա՛ վէր հիվանդ ա* (Բ):

ՄԸՂԸՄԻԹԷՋ - *տե՛ս* ՄԸՂԸՄԻԹԷՍ:

ՄԸՂԸՄԻԹԷՍ/ՄԸՂԸՄԻԹԷՋ - *տե՛ս* ԹԸՔԸԹՕ՛ՀՄԱ՛Թ:

ՄԸՂԸՄՕՂ/ՄԸՂՄՕՂ *(գրբ. մեղմեղ (կեղծավոր, նենգավոր)* - *տե՛ս* ՑԸ'Ց[1]:

ՄԸՂԸՐ - *տե՛ս* ՄԸ'ՂԸՐ:

ՄԸՂԸՐԱԾՕՐ/ՄԸՂՐԱԾՕՐ - *ած.* Քաղցրահամ, անուշ: *Մին աման մըղըրածօր թ'օզ ա քաղում, տինում դունադէն ըռըչին* (Ձ):

ՄԸՂԸՐԱԿԱՊ/ՄԸՂՐԱԿԱՊ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըղըրակապ ինիլ/տը'ռնալ - Գետինը սառչել ու փայլուն դառնալ: *Քը-շէրը, վէր ցօրտը վէր ա կօխում, տափը մըղըրակապ ա տը'ռնում* (Բ):

ՄԸՂԸՐԱԿԷՐ/ՄԸՂՐԱԿԷՐ - *ած.* Մեղր ուտող: *Դէ՛, արչընն էլ մըղըրակէր հէյվան ա, լի՞, քըշէրը նի յա մընում հայաթը, քըթօցնէն ցըրը'վ տամ* (Ձ):

ՄԸՂԸՐԱՀԱՄ/ՄԸՂՐԱՀԱՄ *(գրբ. մեղրահամ)* - 1. *գ.* Մեղրի համ: *Ըտի մարթ չի կա, վէր մըղըրահամը տուրը չի կ'ա* (Բ): *ած.* 2. Մեղրի համ ունեցող: *Մըղըրահամ չայ ա* (Բ): 3. *փխբ.* Քաղցր, հաճելի, անուշ: *Այան մըղըրահամ լուբուշօրվա յա իլա՛ալ իփիլիս* (Բ):

ՄԸՂԸՐԱՀԱՑ/ՄԸՂՐԱՀԱՑ - *գ.* Մեղրի խորիսխ: *...Մըղրըճա՛նջէրը քըթօցան թըռչըմ ըն, մը'ղըր հըվաքում, մըղըրհացէրը լըցնըմ...* (ՋՏ, Բ, 33):

- Մըղըրըհացու կըրօյնը - Գեղեցիկ: *Էտ տըղան տէսնում ա՝ մին ախճիգ' յէկավ, ասիս լըհա՛ մըղըրհացու կըրօյնը ինի* (ՀԺՀ, V, 476):

ՄԸՂԸՐԱՃԱ՛ՆՁ/ՄԸՂՐԱՃԱ՛ՆՁ - *գ.* 1. Թաղանթաթեւերի կարգին պատկանող միջատ՝ մեղու: *... Մըղրըճա՛նջէրը էտ ծառէն յըրա պա՛ուն ըն տիրա՛լ, մը'ղըր շինա՛լ* (ԱԱ, 59): 2. *փխբ.* Շատ աշխատասեր մարդ: *Մէր Արտօն մըղըրաճա՛նջ ա, քըշէր-ցիրը'կ կօրծ ա անում* (Բ):

- Մըղըրըճա՛նջո՛ւ պա՛ուն - Բազմամարդ տեղ: *Ըտըրանց տօնըն էլ հօ տօն չի՞, մըղըրըճա՛նջո՛ւ պա՛ուն ա* (Բ):

ՄԸՂԸՐԱՃԱ՛ՒՐ/ՄԸՂՐԱՃԱ՛ՒՐ *(գրբ. մեղրաջուր)* - *գ.* 1. Մեղրից պատրաստած օշարակ: *Էտ տըղան մըղրաճա՛ւրը խըմըմ ա, էտ ըխճըկանը մին լա՛ավ պաչըմ...* (ՀԺՀ, V, 30): 2. *փխբ.* Քաղցր՝ անուշահամ հեղուկ: *Էս էլ հօ կ'ինի չի՞, մըղըրաճա՛ւր ա* (Բ):

- Մըղըրաճա՛ւրը պիրանան վէր ա տը'ռնում - Ասում են քաղցրախոս մարդկանց մասին:

ՄԸՂԸՐԱՄԱՆ/ՄԸՂՐԱՄԱՆ - *գ.* Մեղրի աման, մեղր պահելու աման: *Վըրչէմնէն նի յընն տը'ռալ մըղրամանը*:

ՄԸՂԸՐԱՄՈՒՄ/ՄԸՂՐԱՄՈՒՄ - *գ.* Մեղուների պատրաստած մոմ, մեղրամոմ: *Մըղըրամումը հա՛լ'ում ըն, նը'ստա մում շինում* (Բ):

ՄԸՂԸՐԱՍԷՐ/ՄԸՂՐԱՍԷՐ - *ած.* Մեղր սիրող: *Մէր Թամարէն նման մը ղրասէր մարթ վէշ մին տը՛ղ ինիլ չի* (Բ):

ՄԸՂԸՐԱՎԱՐԹ/ՄԸՂՐԱՎԱՐԹ - *գ.* Վայրի մեղրատու խոտաբույսի տեսակ: *Ճանչէրը մը ղրը ղրավարթին անա լ՛ավ մը՛ղը ը ն շինում* (Բ):

ՄԸՂԸՐԱՎԸ՛Տ/ՄԸՂՐԱՎԸ՛Տ - *գ.* 1. Մեղրի հոտ՝ բույր: *Մը՛ղրէն ըմանան մը ղրաավը՛տ ա կ՛ամ* (Բ): 2. *փխբ.* Անուշ հոտ՝ բույր: *Ծիրանան մը ղրաավը՛տ ա կ՛ամ* (Բ):

ՄԸՂԸՐԱՏԱ՛ՆՁ/ՄԸՂՐԱՏԱ՛ՆՁ - *գ.* Քաղցրահամ տանձի տեսակ: *Մը ղրատանը շատ քախծը ը տանձ ա* (Բ):

ՄԸՂԸՐԱՏԱՐ/ՄԸՂՐԱՏԱՐ - *գ.* Մեղվի՝ մեղրի տեր: *Տարէն վէր արաշտ ա ինում, մը ղրը ղրատարէրը դիրխոր ը ն ը ղնում* (Բ):

ՄԸՂԸՐԱՏՈՒ/ՄԸՂՐԱՏՈՒ - *ած.* 1. Մեղվի նեկտար արտադրող: *Ակացին մը ղրատու ծառ ա* (Բ): 2. Շատ մեղր արտադրող՝ պատրաստող: *Ափկարէն ճանչէրը մը ղրատու ճանչէր ը ն* (Բ):

ՄԸՂԸՐԸ՛ՆԷ/ՄԸՂՐԸ՛ՆԷ/ՄԸՂԸՐԿԸ՛ՆԷ/ՄԸՂՐԸԿԸ՛ՆԷ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՏԱ՛ՆՁ:

ՄԸՂԸՐԸԹԱԹԱԽ/ՄԸՂՐԸԹԱԹԱԽ - *ած.* Մեղրի մեջ թաթախված, մեղրոտ: *Մը ղրը ղրթաթախ մաննէրը լ՛ուզ ա տամ* (Բ):

ՄԸՂԸՐԽԸՆՁՕ՛Ր/ՄԸՂՐԸԽԸՆՁՕ՛Ր - *գ.* Քաղցրահամ խնձորի տեսակ: *Մը ղրը ղրխընձո՛ր ան լ՛ավ վարէննի յա տը՛ռնում* (Բ):

ՄԸՂԸՐԽԸՆՁՕ՛ՐԷ/ՄԸՂՐԸԽԸՆՁՕ՛ՐԷ - *գ.* Մեղրախնձորի ծառ: *Ապան ամմէն տարէ մին մը ղրը ղրխընձո՛ր է յա իլալ տընգէս բաղումը* (Բ):

ՄԸՂԸՐԽԱՂՈՒ/ՄԸՂՐԸԽԱՂՈՒ - *գ.* Քաղցրահամ խաղողի տեսակ: *Մը ղրը ղրխաղուն մինչը՛վ հըսնէլը ճանչէրը լօխ օտում ը ն* (Ձ):

ՄԸՂԸՐԿԸ՛ՆԷ - *տե՛ս* ՄԸՂԸՐԸ՛ՆԷ:

ՄԸՂԸՐ-ՄԱՂԱՐ - *տե՛ս* ՄՈՒՂՈՒՐ-ՄՈՒՂՈՒՐ:

ՄԸՂԸՐՊԷՐԱՆ/ՄԸՂՐԸՊԷՐԱՆ - *ած.* Քաղցրալեզու, քաղցրախոս: *Մը ղրը ղրպէրան խօխա յա Մանէն* (Բ):

ՄԸՂԸՐՊԸԼԻԹ/ՄԸՂՐԸՊԸԼԻԹ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՀԱՑ:

ՄԸՂԸՐՊՈՒԼԻԳ/ՄԸՂՐԸՊՈՒԼԻԳ - *գ.* Մեղրով լիքը պուլիկ: *Մին մը ղրը ղրպուլիգ ա տամ, հը ղէ տինում* (Ձ):

ՄԸՂԸՐՊՈՒՊ/ՄԸՂՐԸՊՈՒՊ *(գրբ. մեղրապոպ (շամամ, ձմերուկ)* - *տե՛ս* ՄԸՂՐԱՀԱՑ:

ՄԸՂԸՐՏԱ՛ՆՁԻ/ՄԸՂՐԸՏԱ՛ՆՁԻ - *գ.* Մեղրատանձի ծառ: *Էտ բախչումը ն էլ մին մը՛ծ մը ղրտանձի յա ինում* (Ձ):

ՄԸՂԸՐՈՒՏ - *տե՛ս* ՄԸ՛ՂՐՈՒՏ:

ՄԸՂԸՐՕՏԷԼ/ՄԸՂՐՕՏԷԼ - *նբ.* 1. Վրան մեղր քսել, մեղրոտ դարձնել: *Խօխան հացը մը ղրը ղրօտում ա, օտում* (Բ): 2. *չբ.* Մեղրոտ դառնալ, վրան մեղր քսվել: *Ծը՛ղրքը նի յա կ՛ամ մը՛ղրէն ըմանէն, մը ղրը ղրօտում* (Ձ):

ՄԸՂԸՐՕՏՎԷԼ/ՄԸՂՐՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՂԸՐՕՏԷԼ (1)-ի:

ՄԸՂԼԸՔԸՇԿՕՌ - *տե՛ս* ՄԸՂԸԼԸՔԸՇԿՕՌ:

ՄԸՂԿԸՏԱԼ - *տե՛ս* ՄԸԽԿԸՏԱԼ:

ՄԸՂԿԸՏՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸԽԿԸՏՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸՂՄԷՐՈՒՑ - *տե՛ս* ՄԸՂԸՄԷՐՈՒՑ:

ՄԸՂՄԸ՛Ղ - *տե՛ս* ՄԸՂԸՄԸ՛Ղ:

ՄԸՂՄՕՂ - *տե՛ս* ՄԸՂԸՄՕՂ:

ՄԸՂՐԱԶՕՐ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱԶՕՐ:

ՄԸՂՐԱԿԱՊ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱԿԱՊ:

ՄԸՂՐԱԿԷՐ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱԿԷՐ:

ՄԸՂՐԱՀԱՄ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՀԱՄ:

ՄԸՂՐԱՀԱՑ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՀԱՑ:

ՄԸՂՐԱՃԱ՛ՆՁ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՃԱ՛ՆՁ:

ՄԸՂՐԱՃԻ՛ՒՐ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՃԻ՛ՒՐ:

ՄԸՂՐԱՄԱՆ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՄԱՆ:

ՄԸՂՐԱՄՈՒՄ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՄՈՒՄ:

ՄԸՂՐԱՍԷՐ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՍԷՐ:

ՄԸՂՐԱՎԱՐԹ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՎԱՐԹ:

ՄԸՂՐԱՎԸ՛Տ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՎԸ՛Տ:

ՄԸՂՐԱՏԱ՛ՆՁ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՏԱ՛ՆՁ:

ՄԸՂՐԱՏԱՐ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՏԱՐ:

ՄԸՂՐԱՏՈՒ - *տե՛ս* ՄԸՂԸՐԱՏՈՒ:

ՄԸՂՐԸ՛ՆԷ - *տե՛ս* ՄԸՂԸՐԸ՛ՆԷ:

ՄԸՂՐԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ՄԸՂԸՐԹԱԹԱԽ:

ՄԸՂՐԸԽԸՆՁՕ՛Ր - *տե՛ս* ՄԸՂԸՐԽԸՆՁՕ՛Ր:

ՄԸՂՐԸԽԸՆՁՕ՛ՐԷ - *տե՛ս* ՄԸՂԸՐԽԸՆՁՕ՛ՐԷ:

ՄԸՂՐԸԽԱՂՈՒ - *տե՛ս* ՄԸՂԸՐԽԱՂՈՒ:

ՄԸՂՐԸԿԸ՛ՆԷ - *տե՛ս* ՄԸՂԸՐԸ՛ՆԷ:

ՄԸՂՐԸՊԷՐԱՆ - *տե՛ս* ՄԸՂԸՐՊԷՐԱՆ:

ՄԸՂՐԸՊԸԼԻԹ - *տե՛ս* ՄԸՂԸՐՊԸԼԻԹ:

ՄԸՂՐԸՊՈՒԼԻԳ - *տե՛ս* ՄԸՂԸՐՊՈՒԼԻԳ:

ՄԸՂՐԸՊՈՒՊ - *տե՛ս* ՄԸՂԸՐՊՈՒՊ:

ՄԸՂՐԸՏԱ՛ՆՁԻ - *տե՛ս* ՄԸՂԸՐՏԱ՛ՆՁԻ:

ՄԸՂՐՈՒՏ - *տե՛ս* ՄԸ՛ՂՐՈՒՏ:

ՄԸՂՐՕՏԷԼ - *տե՛ս* ՄԸՂԸՐՕՏԷԼ:

ՄԸՂՐՕՏՎԷԼ - *տե՛ս* ՄԸՂԸՐՕՏՎԷԼ:

ՄԸՃԱԽՊԷՐ - *գ.* Գութանի մաճին շեղակի դրված մաճ: *Ըլաթէն մը ճախպէր չի ինում* (Բ):

ՄԸՃԱԿՕԹ - *գ.* Գութանի՝ արորի կոթի՝ մաճի ծայրը: *Ապան մը ճը կօթավը շօ՛ր ա զիրավ տամ* (Բ):

ՄԸՃԷՃ/ՄԻՃԷՃ/ՄԸՃՈ՛ՒՃ/ԽԸՃԷՃ - *գ.* Խճճանք, թնջուկ: *Հիշկան անում ա, կարում չի էտ կը ծէգ՛ին մը ճէճը յը՛տ անէ* (Ձ):

- Մը ճէճ ը ղնել - *տե՛ս* ՄԸՃԸՃԻԼ (3, 4):

- Մը ճէճ քը ցիլ - *տե՛ս* ՄԸՃԸՃԻԼ (1, 2):

ՄԸՃԸՃԻԼ/ՄԻՃԻՃԻԼ/ԽԸՃԸՃԻԼ - *նբ.* 1. Մազերը՝ թելերը եւն խառնակել, թնջուկ դարձնել, խճճել: *Պառավը թիլէրը մը ճը ճո՛ւմ ա, տամ ը ն տը ղրան* (Ձ): 2. *փխբ.* Խառն՝ շփոթ վիճակ ստեղծել, խառնակել: *Ժը ղուվուրթէն միճիճա՛ծը Աստուծ էլ չի կարէլ դ՛ուզը ցը ն է* (ԱԲԲ, 33): *չբ.* 3. Մազերը՝ թելերը եւն խառնակվել, թնջուկ դառնալ: *Կը ծէգ՛ը թուլուկ ա ը ղնում, մը ճը ճո՛ւմ* (Բ): 4. *փխբ.* Խառն՝ շփոթ վիճակ ստեղծվել: *Աշխարքը ս մը ճը ճա՛լ ա* (Բ):

ՄԸՃԸՃԵՎԻԼ/ՄԻՃԻՃԵՎԻԼ/ԽԸՃԸՃԵՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՃԸՃԻԼ (1, 2)-ի:

ՄԸՃԸՃՕ՛Ր/ՄԻՃԻՃՕ՛Ր/ԽԸՃԸՃՕ՛Ր - *տե՛ս* ՄԸՃԷՃ:

ՄԸՃԸՃՕ՛ՐԷԼ/ՄԻՃԻՃՕ՛ՐԷԼ/ԽԸՃԸՃՕ՛ՐԷԼ - *տե՛ս* ՄԸՃԸՃԻԼ:

ՄԸՃԸՃՕ՛ՐՎԷԼ/ՄԻՃԻՃՕ՛ՐՎԷԼ/ԽԸՃԸՃՕ՛ՐՎԷԼ - *տե՛ս* ՄԸՃԸՃԵՎԻԼ:

ՄԸՃԿԸԼՕԹՈՒՆ *(գրբ. մաճկալութիւն)* - *գ.* 1. Մաճկալ լինելը: *Մը ճկը ղլօթունը Դ՛որ՛ուց տը ղված ա* (Ձ): 2. Մաճկալի գործը՝ զբաղմունքը: *Մը ճկը ղլօթունը հիշտ պէն չի* (Բ):

ՄԸՃՈ՛ՒՃ - *տե՛ս* ՄԸՃԷՃ:

ՄԸՄԸՌԱՎԸ՛Տ - *տե՛ս* ՄԸՄՈՒՌՆԱՎԸ՛Տ:

ՄԸՄԸՌԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ՄԸՄՈՒՌՆԸԿԱ՛ԼԻԼ:

ՄԸՄՈՒՌՆԱՎԸ՛Տ/ՄԸՄԸՌԱՎԸ՛Տ - *գ.* Մամուռի հոտ՝ բույր: *Քը ղրէրան մը մմուռնավը՛տ ա կ՛աս* (Բ):

ՄԸՄՈՒՌՆԸԿԱ՛ԼԻԼ/ՄԸՄԸՌԿԱ՛ԼԻԼ - *չբ.* 1. Մամուռով պատվել՝ ծածկվել: *Անց ա կէնում շատ վախտ, էտ քարը մը մմուռնը կա՛ալ՛ում ա, յը ղրան կ՛իրվա՛ծը էլ ը ղրվամ չի* (Ձ): 2. *փխբ.* Պարարտանալ, գիրանալ: *Մէր պահէստապէտը մը մմը ռկա՛ալ՛ալ ա* (Բ):

ՄԸՅԸԿԱ՛ԼԻԼ - *չբ.* Փող կուտակել, հարստանալ: *Բափկէնը մը ղը ղկա՛ալ՛ալ ա, էլ մարթու խուսցը ն ում չի* (Բ):

ՄԸՅԿԱՑ - *մ.* Միայն անթեւ ներքնաշապիկ՝ մայկա, հագած, շապկանց: *Մը ղկաց տ՛ուս ա կ՛ամ հայաթը, մը ղրսում, հիվը ն դանում* (Բ):

ՄԸՆԱԼ *(գրբ. մնամ)* - *չբ.* 1. Շարունակել լինել՝ գտնվել որեւէ տեղում, չտեղափոխվել, չհեռանալ:

Իրէք օր տըղան մընաց ըստ՝ էդ, մին լաւ դինջացավ... (ՀԺՀ, V, 91): 2. Նույն վիճակում հարատեւել, չփոփոխվել: *... Յու սաղ ա մընացալ, տօն-տը՝ էդ յէր ա կալալ, քօջալ Գօրիսա ռայօնէն Քըրահունջ շէնը* (ԱԱ, 24): 3. Ընկնել, գտնվել: *Տօնը պարան ա կ'ամ, տահանք մընամ ըն տակէն* (Ջ): 4. Եղածից որոշ մաս հանելուց հետո ստացվել: *Պարթկէրը տիւս ա կ'ամ, մընամ ա օթ մանէթ* (Ջ): 5. Վիճակվել: *Թաքավէրին տըղէն էլ հինչ ա՞ մընամ, վը՝սկէն տամ ա, էտ դուշը ինք' օնում* (Ջ): 6. Պակասել, հարկավոր լինել մի բան լրացնելու: *Թաքավը՝ էրը խըրէգ' ա մընաս, թա կ'իժվի* (ՆԼՂԺԲ, 61): 7. Հետաձգվել: *Կօրծը էլլա մընաց էն մին ամսըվան* (Բ): 8. Հաջորդ դասարան՝ կուրս չփոխադրվել: *Խօխան մընաց վէցինջի դասարանումը* (Բ): 9. Ավանդվել, ավանդությամբ հասնել: *Ըտէղան էլ էս յիրգ'իրին անումը մընացալ ա Ղարաբաղ* (ՆԼՂԺԲ, 142): 10. Մեկի հետ կամ մենակ լինել: *Հաւրը, մարը վէր մէռնում ըն, լաւ կընդակ ա մընում* (ՀԱԲ, 15, 60): 11. Որեւէ պաշտոն՝ գործ որեւէ ժամանակամիջոցում վարել՝ տանել: *Էտ թաքավէրը օթ տարի թաքավէր մընաց* (ԼՂԲ, 290):

- Մընալ վը՝ռը/խըզ'ատակը/ընգուճէն քամակը քուրէլիս - Դատարկաձեռն եւ փոշմանած մնալ: *Փուլէրը սաղ տամ ա էտ կընգանը, մընամ վը՝ռը քուրէլիս* (Ջ):

- Մընաս պարօվ - Հրաժեշտի բարեմաղթություն: *Մընա՛ս պարօվ, ա՛յ իմ վանթան, գ'իդվալ չի, յը՝ս յը՝տ կըկ'ա՞մ, թա չէ* (Ջ):

- Մընաս պարօվ ասէլ - 1. Հրաժեշտ տալ: *... Տըմբըլիս վէրջին դօնըմ թըխըմ ըմ ու իմ ազիզ ղըլըցուց մընաս պարօվ ասըմ, տիւս կ'ամ* (Ջ�տ, Ա, 102): 2. Մեռնել, վախճանվել: *Իսակ դային էլ մընաս պարօվ ասից, էգ'իւց օխնըն ա* (Բ):

ՄԸՆԱԿԱԼ - *ած.* Խնամող, հովանավոր: *Պիծինը մէծէն մընակալ կընի* (ՆԱԲ, 319):

ՄԸՆԱՆ - *տե՛ս* ՆԸՄԱՆ:

ՄԸՆԱՆԱ *(գրբ. մանանայ)* - *գ.* 1. Ըստ Աստվածաշնչի ավանդության՝ երկնքից թափվող սնունդ: *Յիրգ'ինք'ան մընանա յա վէր տը՝ռնում* (Ջ): 2. *փխբ.* Ուտելիք, սնունդ, հատկապես՝ ուտելիքի փշրանք: *Ըսօրէ մին մընանա էլ չըմ կէրալ, տիւզնը մը՝ռնում ըմ* (Բ): 3. *փխբ. տե՛ս* ՄԱԴԱՐ:

- Մընանա անէլ - Մի քիչ ուտել՝ սնվել: *Յըրկանց տը՝սնա մընանա յէլ չի ըրալ* (Ջ):

- Մընանա տը՝ռնալ - Քաղցածությունը մի քիչ մեղմվել: *Մին պէն կէր, մընանա տը՝ռնա, մինչը՝վ ճաշը իփիմ* (Բ):

- Մընանավ ապըրէլ - Կիսաքաղց ապրել: *Քանսիբ մարթ ա Ղուլգ'ասը, մընանավ ա ապըրում* (Բ):

ՄԸՆԱՑԱԾ *(գրբ. մնացած (մնացորդ)* - *ած., գ.* Մյուս, մյուսները: *Մընացած խօխէքը վազ ըն տամ խուխէն հօրը-մօրը դույուղ անում* (ՆԱԲ, 123):

ՄԸՆԱՔՕՆ - *գ.* Շերամի առաջին քունը: *Մընաքօնը կարճ ա ինում* (Բ):

ՄԸՆԳ'ԷԼ - *տե՛ս* ՄԸՆԷԼ[2]:

ՄԸՆԳԱԿ - *տե՛ս* ՄԸՆԴԷԿ:

ՄԸՆԳԱԿԷԼ - *տե՛ս* ՄԸՆԴԷԿԷԼ:

ՄԸՆԳԱԿՎԷԼ - *տե՛ս* ՄԸՆԴԷԿՎԷԼ:

ՄԸՆԴԷԿ/ՄԸՆԳԱԿ/ՄԻՆԴԸ՝Կ - *գ.* Բամբակե կամ բրդե միջադիր ունեցող կտորի կար: *Յուրդանէն մընդէկը քանդվալ ա* (Բ):

ՄԸՆԴԷԿԷԼ/ՄԸՆԳԱԿԷԼ/ՄԻՆԴԸ՝ԿԷԼ/ՄԸՆԴԷԿԻԼ - *նբ.* Կտորի երկու շերտերի միջեւ բամբակե կամ բրդե միջադիր դնելով՝ կարել: *Դօշակը մընդէկում ա, տամ քըվօրը* (Ջ):

ՄԸՆԴԷԿԻԼ - *տե՛ս* ՄԸՆԴԷԿԷԼ:

ՄԸՆԴԷԿՎԷԼ/ՄԸՆԴԱԿՎԷԼ/ՄԻՆԴԸ՝ԿՎԷԼ/ՄԸՆԴԷԿՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՆԴԷԿԷԼ-ի:

ՄԸՆԴԷԿՎԻԼ - *տե՛ս* ՄԸՆԴԷԿՎԷԼ:

ՄԸՆԴԸՐ-ՄԱՆԴԸՐ/ՄԸՆԴԸՐ-ՄԸՆԴՈՒՐ/ՄԱՆԴԸՐ-ՄՈՒՆԴԸՐ/ՄԱՆԴԸՐ-ՄՈՒՆՋՈՒՐ - *տե՛ս* ԽՈՒՐԴԱ-ՄՈՒՐԴԱ:

ՄԸՆԴԸՐ-ՄԸՆԴՈՒՐ - *տե՛ս* ՄԸՆԴԸՐ-ՄԱՆԴԸՐ:

ՄԸՆԴԻԼԿԱՊԷ - *տե՛ս* ԽԸՄԲԸՐԿԱՏՈՒ:

ՄԸՆԷԼ[1] - *տե՛ս* ՄԸՆՆԷԼ:

ՄԸՆԷԼ[2]/ՄԸՆԳ'ԷԼ/ՄԻՆԷԼ/ՄԻՆԳ'ԷԼ - *մ.* 1. Հանկարծ, անսպասելիորեն: *Մին էլ ա տը՝սնըմ, վը՝ր կընէգ'ը մը՝ռած տը՝դան յէր կացավ* (ՀԺՀ, V, 65): 2. Մի անգամ եւս, մի անգամ էլ, նորից: *Մին քանէ վըխտանը յէտը մընէլ ա կ'ամ, թաքավէրը մընէլ ա տէսը-տէնը տաս, հըդէ տինիս* (ՀԺՀ, V, 297): 3. *շ.* Նաեւ, եւ: *Էտ օխտը ախպօրցը նըստա էրկունէն անը-մընն ա մէգ հըսալ՝ Հակուփէն, մին էլ Խալափէն* (ԱԱ, 19):

- Մընէլ տարէ լիւսանա - Հաջորդ անգամ՝ տարի: *Մարթը ասմա.- Մընէլ տարէ լիւսանա, յը՝ս էլ ըտըրա նըհը՝տ հըրկըշվէ կօրծ չըմ փըռնէլ, բօլ ա հիշկան խանփվալ ըմ* (Ջ):

ՄԸՆԷՆ(Ն)Ի *(ռուս. мнение)* - *գ.* Կարծիք, տեսակետ: *... Թակըմ ըն, քըշըմ, չիւն շատ ըն արթմիշ ըրալ, հինչ զըրիւցում ասիս, հիւրանց մընէնին տամ* ըն (ՋՏ, Ա, 75):

ՄԸՆԷՇԱԿ/ՄԻՆԷՇԱԿ/ՄԻՐԷՇԱԿ/ՄԱՆԻՇԱԿ *(գրբ. մանուշակ)* - *գ.* Մանուշակազգիների ընտանիքին պատկանող խոտաբույս, մանուշակ: *Էտ ախճիգ'ը էտ պառավ մարթին մին քանի փօնջ մանիշակ ա տամ...* (ՀԺՀ, V, 45):

ՄԸՆԸԹԱՆՈՒՑ - 1. Մեկ ռուբլի արժողությամբ դրամ: *Անուշ աքէրը մին ճուրդօտած մընըթանուց օնար, տա վէշ մին տը՝ղ էլ տը՝ղ չար ընցընէս* (ՅԲ, 350): *ած.* 2. Մեկ ռուբլու արժողություն ունեցող: *Իլած-չիլածը մին մանէթ ա ինում, սաղ բազարը շօռ ա կ'ամ, մընըթանուց պէն չի քըթէնում, թա ինք' օնէ* (Ջ): 3. *փխբ.* Էժանագին, անարժեք: *Մընըթանուց մըսան կարէլ չըս լ'ավ խըրաված անիս* (Բ):

- Մընըթանուց շինիլ - Հեղինակազրկել, խայտառակել: *Կընէգ'ը մարթին մընըթանուց ա շինալ* (Բ):

- Մընըթանուց տը՝ռնալ - Հեղինակազրկվել, խայտառակվել: *Էտ կ'ուղութունանը յը՝տը Սէտրակը մընըթանուց տը՝ռավ* (Բ):

ՄԸՆԸՄԱՆԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մընըմանի անէլ - 1. *տե՛ս* Հըրցըփօրց անէլ: 2. Բծախնդրություն անել: *Մընիմանի անօղ մարթին անա զանիլանս տանում ա* (Բ):

ՄԸՆԸՄԸՆԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մընըմընի անէլ - 1. Ցածր ձայնով՝ քթի տակ խոսել: *Հինչ ը՞ս մընըմընի անում, պէցիւր խօսէ* (Բ): 2. Քրթմնջալ, քթի տակ փնթփնթալ: *Հարթնէրը պար ըն կ'ամ, ըսկէսուրը էլ մընըմընի յա անում* (Ջ):

ՄԸՆԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. մնացուցանեմ (թողնել, որ մնա, պահել)* - *նբ. եւ պբ.* ՄԸՆԱԼ (8)-ի:

ՄԸՆԹ(Ը)ՌՈՒԾ - *տե՛ս* ՄՈՒՆԹ(Ը)ՌՈՒԾ:

ՄԸՆԹՈՒՌՈՒԾ - *տե՛ս* ՄՈՒՆԹ(Ը)ՌՈՒԾ:

ՄԸՆԻԾԱԿԻ/ՄԻՆԸԾԱԿԻ/ՄԻՐԸԾԱԿԻ - *ած.* Մանուշակագույն: *Մանէն մընիշակի շօրէր ա կ'ը՝ցալ* (Բ):

ՄԸՆԻԾԸԿԱՎԸ՝Տ/ՄԻՆԸԾԸԿԱՎԸ՝Տ/ՄԻՐԸԾԸԿԱՎԸ՝Տ - 1. *գ.* Մանուշակի բույր: *Կարունքը վէր նի յըս մընում բաղը, մընիշըկավը՝տը քըթէտ ա թըխում* (Բ): 2. *ած.* Մանուշակի բույր ունեցող, անուշաբույր: *Մընիշըկավը՝տ դուխի յա* (Բ):

ՄԸՆՆԱԹ/ՄԻՆՆԱԹ/ՄԱ՞ԻՆՆԱԹ *(արաբ., թրք. minnet (երախտիք), պրս. minnat)* - *գ.* Արած լավությունը՝ երախտիքը երեսով տալը: *Մընանաթը փիս պէն ա* (Բ):

- Մընանաթ անէլ/կ'ալ - Արած լավությունը՝ երախտիքը երեսով տալ՝ ավե-

լորդ անգամ հիշեցնել: *Էրկու տարէ առաչ մին էծ ա տըվալ հիրըվանէն, ամմէն օր միննաթ ա ընէս* (Բ):

- Մըննաթին տական տՀւս կՀալ - Երախտիքը՝ լավությունը փոխհատուցել: *Ասում ա.- Տու ինիս, էն յըէրէ կՀաՀուտը, տըդէս ըզադէ, յըս քու մըննաթիտ տական տՀւս կըկՀամ* (Ձ):

- Մըննաթ յըէր օնէլ - Երեսով տալը հանդուրժել: *ՀաՀը ասմա.- Հօր ը՞ս մըննաթ յըէր օնում, հինչը տըվալ ա, տար յըէտ տօ, պըրծէր* (Ձ):

- Մըննաթու տակ ըղնէլ - Մեկին իրեն երեսով տալու՝ մուննաթ գալու առիթ տալ՝ պատճառ ստեղծել: *Քինամ ա բըրիգադիրին անա պարթկ յօր օնում, մըննաթու տակ ըղնում* (Ձ):

- Մըննաթու տակ թօղնէլ/քըցիլ - Մեկին լավություն անելով՝ նրան երեսով տալու՝ մուննաթ գալու առիթ՝ պատճառ ստեղծել, նրան ճնշել: *Թաքավէրը ըտի վէզիրին մըննաթու տակ ա քըցիս* (Ձ):

ՄԸՆՆԱՂԱԹ - *գ.* Մատների արանքը: *... Ծուցան ղուզղունէն ծուն տՀւս կալավ, հօփ տըվավ, ծուվէն մաչը մըննըղթէրավը ճըլըպըզտ ըրավ* (ՆԱԲ, 31):

ՄԸՆՆԱՄԱՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըննամաչ անէլ - Մի բան չափելիս՝ հաշվելիս՝ կշռելիս մատերը արագ շարժելով՝ խաբել՝ գողանալ: *Առուտուրականը կըտօրը չըփէլիս կէս մէտըր մըննամաչ ա անում* (Ձ):

ՄԸՆՆԱՆՈՒՑ/ՄԸՆՆԱՆՕՑ *(գրբ. մատնոց)* - *գ.* 1. Կար անելիս միջամատին հագցվող մետաղյա պահպանակ: *Մըննանուցը քըցՀում ա, յըէտնան կարում* (Բ): 2. *փխբ.* Շատ փոքր բաժակ՝ անոթ եւն: *Ասում ա.- Էտ մըննանուցավը բի՞դի կՀինի խըմինք՝* (Ձ):

ՄԸՆՆԱՆՕՑ - *տեՀ* ՄԸՆՆԱՆՈՒՑ:

ՄԸՆՆԱՇՕՇ - *գ.* Մատի ծայրին առաջացող թարախային վերք, մատնաշունչ: *Մաննը մըննաշՕշ տըէռավ, ղէյնը վէր ընգավ* (Բ):

ՄԸՆՆԷԼ/ՄԸՆԷԼ[1]/ՄԸՏՆԷԼ *(գրբ. մտանեմ)* - *չբ. տեՀ* Նի մըն(ն)էլ: *Ուխտավէրնէն էլ չըքըչօք մըննըմ ին, մում վառըմ...* (ՋՏ, Ա, 110):

ՄԸՆՆԸԹԱՎԷՐ/ՄԻՆՆԸԹԱՎԷՐ/ՄՆԻՆՆԱԹԱՎԷՐ - *ած.* Լավությունը՝ երախտիքը երեսով տվող՝ անհարկի հիշեցնող: *ՄըննըթաՀվէր մարթին անա զՀիլՀաս տանում ա* (Բ):

ՄԸՆՆԸՀՀՇԸՎ - *գ.* Մատներով հաշվելը: *ՄըննըհՀաշըէվը ամմէնադՀուզըն ա* (Բ):

- ՄըննըհՀաշըէվ անէլ - Մատներով հաշվել: *Այան ամմէն ըրՀուգՀուն վըրցըկնէն մըննըհՀաշըէվ ա իլՀալ ընէս* (Բ):

ՄԸՆՆԸՀԱՐԷԼ - *նբ.* Մատներով տրորել՝ շոշափել՝ տնտղել: *Յարան վէր մըննըհարիս, յըէտէ կըսըղանա* (Բ):

ՄԸՆՆԸՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՆՆԸՀԱՐԷԼ-ի:

ՄԸՆՆԸՄԱՉԻ/ՄԸՉԸՄԱՆՆԻ - *գ.* Մանկական խաղ, երբ մեկը մի ձեռքը մյուսի մեջ ամփոփում է այնպես, որ միայն մատների ծայրերը երեւան, իսկ մյուսը պետք է գուշակի, թե որն է միջնամատը: *Խօխէնքը հըվաքվում ըն փիչին կօխկէն, մըննըմաչի խաղ անում* (Բ):

- Մըննըմաչի տալ - 1. Այդ խաղը խաղալ: *Խօխէնքը մըննըմաչի յըն տամ* (Ձ): 2. Իրար հետ արտամուսնական սիրային կապերի մեջ լինել: *Խօսրօվըն ա հիրըվանէն կընէգը մըննըմաչի յըն տամ* (Բ):

ՄԸՆՆԸՔԱՐԷ - *գ.* Մանկական խաղ, որ խաղում են հինգ մանր կլորավուն քարերով: *Մըննըքարէն ըխճըկէրքըն ըն խաղ անում* (Բ):

ՄԸՆՉԱ(Ն)Ք/ՄԸՉԱՆՔ/ՄԸՉԱՔ/ՄԸՆՉՈՒ(Ն)Ք/ՄԸՉՈՒ(Ն)Ք/ՉԱՆՔ - 1. *տեՀ* ԷՆՔԱՆ: 2. *տեՀ* ՄԻՆՉԸԷՎ: 3. *կ.* Ծավալով, մեծությամբ: *ԳՀուլՀանը ճըղուպուրու մընչանք մընծացալ ա* (Ձ):

ՄԸՆՉՈՒ(Ն)Ք - *տեՀ* ՄԸՆՉԱ(Ն)Ք:

ՄԸՆՋԷՂ(ՆԸ)/ՄԸՐԺԷՂ(ՆԸ) *(գրբ. մնջեխ)* - *գ.* Փոքր ճանճ՝ միջատ: *Մին մընջէղնը կՀամ ա, ըղնում ըրաղէն ըստաքանը* (Ձ):

ՄԸՆՈՒՏ/ՄՈՒՆՈՒՏ *(ռուս. минута, լատ. minutus)* - *գ.* 1. Որպե: *Հըրիշտըրակը թա.- Քըէգ քըսան մընուտ ժամանակ ըմ տամ...* (ՀԺՀ, VII, 206): 2. *փխբ.* Ակնթարթ: *Մընուտ էլ չի քաշՀում, էտ մարթը վէր ա ըղնում, մըէռնում* (Ձ):

ՄԸՇԱԼ(Լ)Ա - *տեՀ* ՄԱՇԱԼ(Լ)Ա[1]:

ՄԸՇԱԿ *(գրբ. մշակ)* - *գ.* Հողի աշխատավոր: *Ինիս ա, չինիս, մին մըշակ, մին հօտաղ ա ինիս, քիս ըն վար...* (ԼՂԲՔ, 384):

ՄԸՇԱԿԷԼ *(գրբ. մշակեմ)* - *տեՀ* ԲԸՋՆՈՒԼ:

ՄԸՇԱԿՎԷԼ - *տեՀ* ԲԸՋՆՈՎԻԼ:

ՄԸՇԱՌԷԼ/ՄԸՇԱՐԷԼ - *նբ.* Սղոցով կտրել, սղոցել: *Մին օրումը էտ կընէգը էտքան կէրաննէն լօխ մըշառում ա* (Ձ):

ՄԸՇԱՌՎԷԼ/ՄԸՇԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՇԱՌԷԼ-ի:

ՄԸՇԱՐԷԼ - *տեՀ* ՄԸՇԱՌԷԼ:

ՄԸՇԱՐՎԷԼ - *տեՀ* ՄԸՇԱՌՎԷԼ:

ՄԸՇԸՀԱՄՈՒԿ/ՄԸՇԸՀԱՆՈՒԿ/ՄԸՇՀԱՄՈՒԿ/ՄԸՇՀԱՆՈՒԿ - *գ.* Բուրավետ ծաղկի տեսակ, մշկածաղիկ: *Մէլիքին բըխճըմը մըշըհամուկ էլ ա իլՀալ* (Ձ):

ՄԸՇԸՀԱՆՈՒԿ - *տեՀ* ՄԸՇԸՀԱՄՈՒԿ:

ՄԸՇԸՂՈՒԼ/ՄՈՒՇՈՒՂՈՒԼ - *գ.* Մկնանման կենդանի: *Մըշըղուլը մուկնէն անա մըէծ ա ինՀում* (Բ):

ՄԸՇԸՌԱՔԱԾ/ՄԸՇԸՐԱՔԱԾ - *ած.* Սղոցով կտրած՝ քաշած: *Մըշըռաքաշ տըխտըկնէն շըլակում ա, քՀինամ* (Ձ):

ՄԸՇԸՐԱՔԱԾ - *տեՀ* ՄԸՇԸՌԱՔԱԾ:

ՄԸՇԿԱԾՈՒ - *գ.* Դեռեւս լրիվ չձեւավորված՝ կեղեւը փափուկ ձու: *Մին օր էլ էտ հավը մին մըշկաածՀու վա ածում* (Ձ):

- ՄըշկաածՀու վէր քըցիլ - 1. Հիվանդ լինել (հավերի մասին): *Հավէրը մըշկաածՀու վըն վէր քըցՀում, հարկավէր ա մըրթստած* (Բ): 2. *փխբ.* Խիստ վախենալ: *Արչը վէր կՀօռռում ա, Սարօն մըշկաածՀու վա վէր քըցՀում* (Բ):

ՄԸՇԿԱՀՕՌ - 1. *գ.* Ողնաշար: *Մըշկահօռըս ցավում ա* (Բ): *ած.* 2. Մեջքը կոտրած: *Կամ ըն, տըէսնում մին մըշկահօռ էշ ըտըէղ պարանց ընգած* (Ձ): 3. Մեջքը ճկած՝ կորացած, կորամեջք: *Մըշկահօռ մարթ ա Ինդրի դային, էնքան կօրծ ա ըրալ, մաշկը կըռացալ ա* (Բ):

- Մըշկահօռ անէլ - 1. Ողնաշարը ջարդել: *Չօբանը մըհակավը թըխում ա, կՀուլին մըշկահօռ անում* (Ձ): 2. *փխբ.* Խիստ չարչարել՝ տանջել: *ՀաՀը տըղէն տարավ հՀնձ, մըշկահօռ ըրավ* (Ձ):

- Մըշկահոռ ինիլ/տըէռնալ - 1. Ողնաշարը ջարդվել: *Ըտի մըշկահօռ իլՀած՝ վէր ա ըղնում, մինը ինՀում չի, թա պիցըրցընէ* (Ձ): 2. *փխբ.* Խիստ չարչարվել՝ տանջվել: *Էնքան մըշկահօռ ա ինՀում, փուլ ըշխադում, տըղան լօխ տանում ա ցըրըէվ տամ* (Բ):

ՄԸՇԿԱՊԷՆԴ/ՄԸՇԿԸՊԷՆԴ - *ած.* *տեՀ* Մաշկը պէնդ:

ՄԸՇԿԱՑԱՎ - *գ.* Մեջքի ցավ: *Մըշկացավը մարթին կըլիցըցընէ* (Բ):

ՄԸՇԿԸԹՕՌԷԼ - *չբ.* Չորանալ (վերքը): *Յարան մըշկըթօռալ ա* (ՆԱԲ, III, 363):

ՄԸՇԿԸԿԱՊԷ - *գ.* Մեջքին կապելու լայն գոտի: *Ապան միշտ մըշկըկապէ յա իլՀալ կըպէլիս* (Բ):

ՄԸՇԿԸԿԸԼՕԼԷ - *ած.* Նիհար եւ կորամեջք: *Մըշկըկըլօլէ մարթ ա Սիրօժ դային* (Բ):

ՄԸՇԿԸԿՈՒՏՈՒՐ/ՄԸՇԿԸԿՕՏՈՒՐ - *տեՀ* ՄԸՇԿԱՀՕՌ (2, 3):

ՄԸՇԿԸԿՕՏՈՒՐ - *տեՀ* ՄԸՇԿԸԿՈՒՏՈՒՐ:

ՄԸՇԿԸՀԱՆ - *ած.* 1. Մաշկը՝ կաշին՝ մորթը քերթված՝ պոկված՝ հանած: *Մին էլ ա տըէսնում մին մըշկըհան խօզ՝ ծառէն տակէն* (Ձ): 2. *տեՀ* ՄԸՇԿԱՀՕՌ (2):

- Մըշկըհան անէլ - 1. *տեՀ* ՄԱՇԿԷԼ: 2. *տեՀ* Մըշկահօռ անէլ:

- Մըշկըհան ինիլ/տըէռնալ - 1. *տեՀ* ՄԱՇԿԸՎԷԼ: 2. *տեՀ* Մըշկահօռ ինիլ:

ՄԸՇԿԸՀՕՌԷ - *գ.* Խաղատեսակ,

երբ, մեջք մեջքի կանգնելով, իրար թեւերից բռնում եւ բարձրացնում-իջեցնում են: *Ըտըրանք տ՚ուս ըն կ՚ամ, ըսքըսում մը՛շկըհոռէ տալը* (Ձ):

ՄԸԾԿԸՊԷՆԴ - *տե՛ս* ՄԸԾԿԱՊԷՆԴ:

ՄԸԾԿԸՊԷՐԱԿ - *ած.* Նուրբ մեջք՝ կազմվածք ունեցող: *Էտ չուբանէն էլ մին ղ՚աշ՚անգ՚, մը՛շկըպէրակ ախճիգ՚ ա ինիս* (Ձ):

ՄԸԾԿԸՊՈՒԼԻԳ՚ - *տե՛ս* ԲԱՆԳԱ (2): *Վէր տանան մինը հիվընդընալիս ա իլա՚ն, այան մաշկէն մը՛շկըպուլիգ՚ ա քըցա՚ն* (Բ):

ՄԸԾՀԱՄՈՒԿ - *տե՛ս* ՄԸԾԸՀԱՄՈՒԿ:

ՄԸԾՀԱՆՈՒԿ - *տե՛ս* ՄԸԾԸՀԱՄՈՒԿ:

ՄԸԾՄԸԾԱԼ - *չբ.* 1. Քթով շունչ քաշելիս կամ արտաշնչելիս օդի մղումը լսելի դարձնել: *Հինչ ը՞ս մը՛շմը՛շամ, կարում չը՞ս հա՚նդա՚ռդ նա՚փա՚ս քաշիս* (Բ): 2. Քթով շնչելով՝ հանդարտ քնել: *Կամ ա, տը՛սնում՝ խօխան, աշկէրը կապած, մը՛շմը՛շամ ա* (Ձ): 3. Մշմշոցով կաթ ծծել: *Խուխէն մը՛շմը՛շալան մօրը քը՛փը կ՚ամ ա, ճէլլի-ճէլլի ծէծ ա տամ* (Ձ):

ՄԸԾՄԸԾԱԼԻ - *մ.* Մշմշալով, մշմշոց արձակելով: *... Տը՛սնըմ ըն՝ խօխան մը՛շմը՛շալի քօն իլա՚ծ, օխծըն էլ պըտըռ-պատառ ըրած* (ՀԺՀ, V, 81):

ՄԸԾՄԸԾՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* Մշմշալու ձայն հանել: *Խըրէգ՚ մը՛շմը՛շցըրու՚ն* (Բ):

ՄԸԾՄԸԾՕՆ - *գ.* Մշմշալը, մշմշացնելը, մշմշալու՝ մշմշացնելու ձայնը: *Խուխէն մը՛շմը՛շօնը կօխկէ ութաղան ըսկանվում ա* (Ձ):

ՄԸԾՄԸԾՕՑ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾՕՆ:

ՄԸԾԾԱԼ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾԱԼ:

ՄԸԾԾԱԼԻ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾԱԼԻ:

ՄԸԾԾԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸԾԾՕՆ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾՕՆ:

ՄԸԾԾՕՑ - *տե՛ս* ՄԸԾՄԸԾՕՆ:

ՄԸԾՌԷԼ/ՄԸԾՐԷԼ - *նբ.* Սղոցով խազել՝ հետք անել սղոցելու համար: *Կ՚էրանը մը՛շռում ա, յը՛տնան մը՛շառում* (Ձ):

ՄԸԾՎԸՑ(Ը)ՆԷԼ/ՄԻԾՎԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Մ՚ԱԾՎԻԼ (2)-ի:

ՄԸԾՏԱԿ - *տե՛ս* ՓԱՓԱԾ (2):

ՄԸԾՏԱԿԱՆ/ՄԻԾՏԱԿԱՆ *(գրբ. մշտական)* - *մ.* Հավերժորեն, մշտապես, շարունակ: *Մին կընէգ՚ ու մի մարթ մը՛շտական կըռվու մաչ ըն իլա՚ն* (ԲՀԲ- 58):

ՄԸԾՏԸԼԷՂ - *տե՛ս* ՄԸԾՏԸԼԸ՚Ղ:

ՄԸԾՏԸԼԸ՚ՂՈՒ/ՄԸԾՏԸԼԷՂ *(թրք. muštulik)* - *գ.* Ուրախ լուր բերողին տրվող նվեր կամ դրամ: *Վազ տալավ կ՚ամ ա, թա.- Մը՛շտըլը՛ղըս տօ՛, ծէր կավը ծընալ ա* (Ձ):

- Մը՛շտըլը՛ղը չ՚ա՚ժիլ (մինին) - Մազ՚ը չ՚ա՚ժիլ (մինին):

ՄԸԾՏԸԼԷՂԻ - *տե՛ս* ՄԸԾՏԸԼԸ՚ՂԻ:

ՄԸԾՏԸԼԸ՚ՂԻ/ՄԸԾՏԸԼԷՂԻ - *գ.* Ուրախ լուր բերող անձ: *Մէհէտ էտ կավը նըստած օգում ա, թա՚ ծընէ, մին մը՛շտըլէղի յա կ՚ամ, թա.- Կընէգ՚ըտ մին տըղա յա պէրալ* (ՀԺՀ, V, 540):

ՄԸԾՏՈՒԿ/ՄՈՒԾՏՈՒԿ *(ռուս. мундштук, գերմ. Mundstuck)* - *գ.* Փայտից կամ այլ նյութից սարքած՝ երկայնակի ծակած ձող, որի մի ծայրին հագցնում են ծխախոտը եւ ծխում, ծխափող: *Գիշի ապան պապռոզը մը՛շտուկավ ա իլա՚ն քը՛շիս* (Բ):

ՄԸԾՈՒԷԼ - *տե՛ս* ՄԸԾՈՒԷԼ:

ՄԸԾՈՒԾԻ - *ած.* Մշուշով պատած, մշուշոտ: *Ըսօր մը՛շուշի հավա յա* (Բ):

ՄԸՉԱԼԻ - *ած.* Միջուկը շատ, հաստ միջուկ ունեցող (գաթա, ձմերուկ եւն): *Այան էզգա՚նան մը՛չալի ք՚ա՚թա՚ յա իլա՚ն թըխէս* (Բ):

ՄԸՉԱԼԻ՚Ծ - *գ.* Սայլի երկար տափակավուն ձողը՝ լուծը: *Մը՛չալի՚ուծը կօտըրում ա, արաբաչին մընամ ա մ՚ա՚թա՚ն* (Ձ):

ՄԸՉԱՄԱՐԹ - *գ. տե՛ս* Մաչի մարթ:

ՄԸՉԱՆՈՒՑ - *տե՛ս* ՄԸՉԸՀԱՆՈՒԿ:

ՄԸՉԱՆՔ - *տե՛ս* ՄԸՆՉԱ(Ն)Ք:

ՄԸՉԱՎՈՒՐ - *ած., գ.* Ծայրերը գունավոր, իսկ մնացածը սպիտակ (գուլպա): *Մին դաշ՚ա՚նգ՚ մը՛չավուր գ՚ի՚ալբա՚ յա կ՚օրծում, տամ թօռնանը* (Ձ):

ՄԸՉԱՑՈՒ - *ած., գ.* Միջելու՝ որպես միջադիր տեղադրելու՝ մեջը լցնելու համար հարմար (նյութ): *Յուրղանէն ամ-մէնալ՚ավ մը՛չացուն պ՚ուրթը՚ն ա* (Բ):

ՄԸՉԱՔ - *տե՛ս* ՄԸՆՉԱ(Ն)Ք:

ՄԸՉԸԿԱ՚ԼԻԼ - *տե՛ս* ՍԸՐՄԸԿԱ՚ԼԻԼ:

ՄԸՉԸՀԱՆՈՒԿ - *գ.* Տարեց կանանց գլխազարդի կենտրոնում դրված ոսկեդրամ: *Ճըկըտընուցէն մը՛չըհանուկը պուք ա տամ, տամ ըտրրան* (Ձ):

ՄԸՉԸՄԱՆՆԻ - *տե՛ս* ՄԸՆՆԸՄԱՉԻ:

ՄԸՉԸՄԱՉ - *տե՛ս* ՄԻՆԸՄԱՉ:

ՄԸՉԸՔԱՆԴԻ - *ած.* Խառնակություն գցող, խառնակիչ: *Լօխ ըն գ՚ի՚ղդ՚ում, վէր Ղըրղանց Սիրօժէն կընէգ՚ը մը՛չըքանդի յա* (Բ):

ՄԸՉՈՒ(Ն)Ք - *տե՛ս* ՄԸՆՉԱ(Ն)Ք:

ՄԸՋԱԼ/ՄԱՋԱԼ *(թրք. mačal)* - *գ.* 1. Ժամանակ, պահ: *Հ՚ա՚մին էտ թուբունը քըսօր մը՛ջալին Վանուն փօղ տարավ...* (ՋՏ, Ա, 90): 2. Մի բան անելու հնարավորություն՝ հարմար պահ՝ միջոց: *... Ըսէս ա.- Մա՚մա, մէր վարժաբէղը շատ տ՚ա՚ս ա տըվալ, մը՛ջալ չօնիք՚* (ՀԺՀ, V, 473):

- Մը՛ջալ անէլ/տը՛ռնալ - Դադար առնել, հանգստանալ: *Ղէ հըսած տանձ, տ՚ուզնը, մաջալ տէռած հէյվան, յըրան ըն տըռնաս, հանց օտէս, վէր մինը էլ չընն թուղէս* (ՀԺՀ, V, 549):

- Մը՛ջալ տալ - Հնարավորություն՝ հարմար պահ՝ միջոց ընձեռել: *Աջալը յը՛կավ, մը՛ջալ չըտըվավ* (ԱԲԲ, 19):

ՄԸՋԱՎԱՐ - *գ.* Կենտրոնական հոդամաս՝ վարելահող: *Մը՛ջավարը վարում ըն, յը՛տ տը՛ռնում* (Ձ):

ՄԸՋԸՎԷՐ - *տե՛ս* ՄԻՋԸՎԷՐ:

ՄԸՋԻ - *տե՛ս* ՄԻՋԻ:

ՄԸՌԱԹԱՂ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱԹԱՂ:

ՄԸՌԱ՚Ծ/ՄԸՌԷՆՋ *(հ.ե. *mōrs-)* - *գ.* Մշուշ, մառախուղ: *Մը՛ռա՚ծը հա՚նդէրը ծասկալ ա* (Բ):

ՄԸՌԱԿՕԽ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱԿՕԽ:

ՄԸՌԱՀԱՑ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՀԱՑ:

ՄԸՌԱՃԻ՚ՒՐ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՃԻ՚ՒՐ:

ՄԸՌԱՄԸՌ - *տե՛ս* Մ՚ԱՌՄ՚ԱՌ:

ՄԸՌԱՄՕԾ - 1. *գ.* Մոշի՝ մոշենու տեսակ, որի պտուղները ավելի խոշոր են եւ կարծես պատված են մառով՝ մշուշով: *Մէր բաղէրը մը՛ռըմօշավ լիգ՚ըն ա* (Բ): 2. *փխբ. ած., գ.* Նուրբ, փափուկ (բան): *Մը՛ռամօշ հաց ա, լ՚ըհա տըղա յըս՝ կէր* (Բ):

- Մը՛ռամօշ շինիլ - Հնազանդեցնել, խեղճացնել, մեղմացնել: *Տըղան էտ կը՛տաղած ծիյին էնքան քը՛շի՚ում ա, մը՛ռամօշ ա շինի՚ում* (Ձ):

- Մը՛ռամօշ տը՛ռնալ - Հնազանդվել, խեղճանալ, մեղմանալ: *Վէր մին էրկու հէտ տըրրքցընէս ա, դէվը մը՛ռամօշ ա տըռնաս* (Ձ):

ՄԸՌԱՎ - *գ.* Լեռ Ղարաբաղում:

- Մը՛ռավա լաշը կըկըղէլ - Գարունը բացվել: *Վար Մը՛ռավա լաշը կըկը՛ղում ա, ժողովուրթը ուրխանում ըն* (Բ):

ՄԸՌԱՎԸ՚Տ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՎԸ՚Տ:

ՄԸՌԱՏԱՐ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՏԱՐ:

ՄԸՌԱՏՕՆ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՏՕՆ:

ՄԸՌԱՓԱՑ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՓԱՑ:

ՄԸՌԱՔԱԾ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՔԱԾ:

ՄԸՌԷՆՋ - *տե՛ս* ՄԸՌԱ՚Ծ:

ՄԸՌԸԳՈՒՆԷԼ - *տե՛ս* ՄԸՌԸԼԳՈՒՆԷԼ:

ՄԸՌԸՋ(Վ)ԻԼ/ՄԸՌԸԺ(Վ)ԻԼ - *չբ.* 1. Մթագնել, ամպել: *Յէրգ՚ինք՚ը մը՛ռըզվա՚ն ա* (Բ): 2. *փխբ.* Խոժոռվել, մռայլվել: *Խանը էտ վէր տը՛սնում ա, մը՛ռըզ՚ում ա* (Ձ):

ՄԸՌԸՋՑ(Ը)ՆԷԼ/ՄԸՌԸԺՑ(Ը)ՆԷԼ - 1. *պբ.* ՄԸՌԸՋ(Վ)ԻԼ-ի: 2. *նբ.* Հայացքը՝ դեմքը՝ աչքերը խոժոռ դարձնել, խոժոռ արտահայտություն տալ: *Հ՚ա՚ղը կը՛զնը-վում ա, իրը՛սը մը՛ռըզցընում, թախտէն յըրա նըստում* (Ձ):

ՄԸՌԸԹԱՂԷ - *տե՛ս* ՄԸՌԸԼԹԱՂԷ:

ՄԸՌԸԺ(Վ)ԻԼ - *տե՛ս* ՄԸՌԸՋ(Վ)ԻԼ:

ՄԸՌԸԺՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՌԸՋՑ(Ը)-ՆԷԼ:

ՄԸՌԸԼԱԹԱՂ/ՄԸՌԱԹԱՂ - *գ.* Հուղարկավորություն, մեռելի թաղում: *Կը՛ռվէն վախտը հանց օր ա իլա՚ն, մը՛ռըլաթաղը՚ն էլ չընք կը՛ը՛ցալ կարքէն անինք՚* (Բ):

ՄԸՌԸԼԱԿՕԽ/ՄԸՌԱԿՕԽ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըռըլակօխ ինիլ/տը՝ռնալ - Նույն ընտանիքից՝ գերդաստանից՝ գյուղից եւն իրար հետեւից շատ մարդ մեռնել: *Չումէն վախտը Պիլիթանուցը մըռըլակօխ ա տը՝ռալ* (Բ):

ՄԸՌԸԼԱՀԱՑ/ՄԸՌԱՀԱՑ - *տե՛ս* ԲԱԴԱՐԱՆՔ:

ՄԸՌԸԼԱԾՈՒՐ/ՄԸՌԱԾՈՒՐ - *գ.* Մեռելին լողացնելու ջուր: *Մըռըլաճուրը ցօրտ-ցօրտ բիդի ինի* (Բ):

ՄԸՌԸԼԱՎԸ՝Տ/ՄԸՌԱՎԸ՝Տ - *գ.* Նեխվող մեռելի հոտ: *Վէր ըսքըսէս ա մըռըլավը՝տ կ'ելը, տընէս ըն թըղէս* (Ձ):

ՄԸՌԸԼԱՏԱՐ/ՄԸՌԱՏԱՐ - *գ.* Մեռելի տերը, նա, որին պատկանում է մեռելը: *Մըռըլատարը աշկէն տակավը յիշիս ա, տը՝սնա՝հու վա կ'աս, հու վա ք'իս* (Ձ):

ՄԸՌԸԼԱՏՕՆ/ՄԸՌԱՏՕՆ - *գ.* Այն տունը, որտեղ մարդ է մեռել, որտեղ գտնվում է մեռելը: ... *Կամ ա մըռըլատօնը, թա.- Լօխ տը՝ղընն ա...* (ԱԱ, 87):

ՄԸՌԸԼԱՓԱՅ/ՄԸՌԱՓԱՅ - *գ.* Մահացած մարդու բաժին: *Այան տասսը մանէթ ղըրաղ ա տինում, թա.- Էս էլ մըռըլափայըն ա, տէս-տէն ինք' կօնիք', տանիք' հանգ'իստը* (Ձ):

ՄԸՌԸԼԱՔԱԾ/ՄԸՌԱՔԱԾ - *տե՛ս* ՄԸՌԸԼՔԸՇՕԹՈՒՆ:

ՄԸՌԸԼԳՈՒՆԷԼ/ՄԸՌԸԳՈՒՆԷԼ - *չբ.* Մեռելի գույն ստանալ, սփրթնել, գունատվել: *Վանին արչին վէր տը՝սնում ա, մըռըլգունում ա* (Ձ):

ՄԸՌԸԼԹԱՂԷ/ՄԸՌԸԹԱՂԷ - *ած., գ.* Մեռել թաղող՝ հուղարկավորող: *Արտաշըն ա Նիկօլը չումէն վախտը մըռըլթաղէ յըն իլալ, ամմա հ'ուրանք չուման ընգալ չըն* (Բ):

ՄԸՌԸԼԿԱԽԷԼ/ՄԸՌԸԿԱԽԷԼ - *չբ.* Հիվանդ՝ մահամերձ լինել: ... *Տու էլ աշկէս լալ չըս ըրված, հէտ ըս մըռըլկախած...* (ՀԺՀ, VI, 186):

ՄԸՌԸԼՔԸՇԱՏԸ՝Ղ/ՄԸՌԸՔԸՇԱՏԸ՝Ղ - *տե՛ս* ՄԸՌԸԼՔԸՇՕԹՈՒՆ:

ՄԸՌԸԼՔԸՇՕԹՈՒՆ/ՄԸՌԸՔԸՇՕԹՈՒՆ - *գ.* Մեռելներին՝ հանգուցյալներին հայհոյելը: *Ըտըրանք վէր մըռըլքըշօթունը ըսքըսէս ըն, Մընասանց Կարօն էլ տէմ չի կընաս, մուտընաս ա* (Ձ):

- Մըռըլքըշօթուն անէլ - Մեռելներին՝ հանգուցյալներին հայհոյել: ... *Էլ օր չի անց կէնըմ, վէր ղըլըցէք մըռըքըշօթուն չանին...* (ՋՏ, Ա, 38):

- Մըռըլքըշօթուն տը՝ռնալ - Անեծքի՝ հայհոյանքի թիրախ դառնալ: *Մարօն հիրըվանէն բուստանան կ'ուղօթուն ըրավ, մըռըլքըշօթուն տը՝ռավ...* (Բ):

ՄԸՌԸԽ/ՄԸՐԸԽ - *տե՛ս* ՄԸՌՕՋ:

ՄԸՌԸԽԷԼ/ՄԸՐԸԽԷԼ - *չբ.* 1. Մառախուղով պատվել: *Աշխարքըս մըռըխալ ա* (Բ): 2. *տե՛ս* ՄԸՌԸՋ(Վ)ԻԼ: 3. *փխբ.* Խիտ, անանցանելի դառնալ, փթթել: *Բօստանը մըռըխալ ա* (Բ):

ՄԸՌԸԽԿԸՎԷԼ/ՄԸՐԸԽԿՎԷԼ - *տե՛ս* ՄԸՌԸԽԷԼ:

ՄԸՌԸԿԱԽԷԼ - *տե՛ս* ՄԸՌԸԼԿԱԽԷԼ:

ՄԸՌԸՆՉԱԼ *(գրբ. մռնչամ)* - *չբ.* Մռնչյուն արձակել: *Քավթառ դ'ընը էլ հըլա՛ ըստէղ մըռընչում ա, ըստակալ չի* (Ձ):

ՄԸՌԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՌՆԸՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸՌԸՔԸՇԱՏԸ՝Ղ - *տե՛ս* ՄԸՌԸԼՔԸՇԱՏԸ՝Ղ:

ՄԸՌԸՔԸՇՕԹՈՒՆ - *տե՛ս* ՄԸՌԸԼՔԸՇՕԹՈՒՆ:

ՄԸՌԼԸՆԳԱԼ - *չբ.* Խուլ՝ անորոշ ձայն հանել: *Օշափը մէհէտ էլ ա մըռլընգամ, վէր ըղնում* (Ձ):

ՄԸՌՄԸՌԱԼ *(գրբ. մռմռամ)* - *չբ.* 1. Մռլտալ, մռմռոց հանել: ...*Առաչը շըլ'ր ա ածում, շօնը մըռմըռալավ ըսկըսում ա օտէլը* (ՆԼՂԺԲ, 99): 2. Քթի տակից անորոշ ձայներ հանել, քրթմնջալ: *Մարթը քըթէն տակէն մըռմըռալավ կ'ամ ա տօն* (ՆԱԲ, 55):

ՄԸՌՄԸՌԱՆ - *ած., գ.* Շատ մռռացող (շուն, կատու): *Մըռմըռան շօն ա ինի՛ում Մէլիք'ին շօնը* (Ձ):

ՄԸՌՄԸՌՑ(Ը)ՆԷԼ - 1. *պբ.* ՄԸՌՄԸՌԱԼ-ի: 2. *տե՛ս* ՄԸՌՄԸՌԱԼ:

ՄԸՌՄԸՌՕՆ *(գրբ. մռմռումն)* - *գ.* Մռմռալը, մռմռալու ձայնը: *Շանը մըռմըռօնը ըսկանում ա, տի՛ուս կ'ամ* (Ձ):

- Մըռմըռօնը յը՝ր ինիլ - Առույգ՝ կայտառ լինել: *Թէվան ամին կօզի ութասուն տիրը՝կան ա, ամմա հալա՛ մըռմըռօնը յը՝ր ա ինի՛ում* (Բ):

ՄԸՌՄԸՌՕՑ - *տե՛ս* ՄԸՌՄԸՌՕՆ:

ՄԸՌՆԸՑ(Ը)ՆԷԼ/ՄԸՌԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՄԸ՝ՌՆԷԼ-ի:

ՄԸՌՌԱԼ - *տե՛ս* ՄԸՌՄԸՌԱԼ:

ՄԸՌՌԱՆ - *տե՛ս* ՄԸՌՄԸՌԱՆ:

ՄԸՌՌԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՌՄԸՌՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸՌՌՕՆ - *տե՛ս* ՄԸՌՄԸՌՕՆ:

ՄԸՌՌՕՑ - *տե՛ս* ՄԸՌՄԸՌՕՆ:

ՄԸՌՈՒՆՉ-ՄԸՌՈՒՆՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըռունչ-մըռունչ կ'ալ - Ցավից անընդհատ մռնչալ՝ գոռալ: ... *Նանը նըստում ար, յէր կէնում, դուդան տափէն քըսում, մըռունչ-մըռունչ կամ* (ԼՂԲՔ, 268):

ՄԸՌՕՋ/ՄԸՌՕԺ - *ած.* Մռայլ, խոժոռ, խոժոռադեմ: *Մըռ'զ մարթին անա գ'ալ'ս տարած ա* (Բ):

ՄԸՌՕԺ - *տե՛ս* ՄԸՌՕՋ:

ՄԸՍԱԼԻ *(գրբ. մսալի)* - *ած.* 1. Միս ունեցող, միսը շատ: *Հէյվանը բիդի կօրմիտ անիս, վէր մըսալի ինի* (Բ): 2. *փխբ.* Ուտելու նյութը՝ մասը շատ: *Էրկու մըսալի խընձ'ր ա օտում* (Ձ):

ՄԸՍԱԿԷՐ *(գրբ. մսակեր)* - *ած.* 1. Միս ուտող, հիմնականում մսով սնվող: *Խօզ'ը մըսակէր չի, ամմա վէր տի՛ուզն ա ինի՛ում, մէս էլ ա օտում* (Բ): 2. Գիշատիչ, գիշակեր: *Արծիվը հըրամանք ա տամ՝ դարավուլ քաշի, հանցու քըշանա մըսակէր դուշէրը հըվաքվէն, ք'էփ անէն* (ԱԱ, 60):

ՄԸՍԱՀԱ՛ՐՓ - *ած.* Շատ միս ուտելուց գազազած: *Էտ չուբանէն մին մըսահա՛րփ շօն ա ինի՛ում* (Ձ):

ՄԸՍԱԾՈՒՐ - *գ.* Եփած մսի ջուր, արգանակ: *Մէսը իփի՛ում ա, մսաճ՛ուրը տամ շանը* (Ձ):

ՄԸՍԱՎԸ՝Տ - *գ.* Մսի հոտ: *Մըսան բիդի մըսավը՝տ կ'ա, վէչ թա շընավը՝տ* (Բ):

ՄԸՍԱՏՈՒ - *ած.* Սնանդի համար միս տվող, իբրեւ մսացու՝ պահվող՝ բուծվող: *Մըսատու կավը կաթնը խըրէգ' կըտա* (Բ):

ՄԸՍԱՑՈՒ(Կ) - *ած., գ.* Մորթելու համար պահված՝ խնամված (անասուն): *Մըսացուն մօրթում ըն, դավուրմա շինում* (Ձ):

ՄԸՍԷ - *ած.* Մսից պատրաստված: *Մըսէ խ'ր'ա՛գ' բիդի օտիս, վէր կարիս քար քանդիս* (Բ):

- Մըսէ քըլլան - *ծնկ.* Պահապան շուն: *Չօբանը ասում ա.- Մին մըսէ քըլլան տօ, էրկու վը՝խճար տամ* (Ձ):

ՄԸՍԸ՝ՂԱՆ *(գրբ. մսեղեն (մսե, մարմնավոր)* - *գ., հվք.* Մսից պատրաստված ուտելեղեններ՝ մթերքներ: *Ք'ինամ ա բազարը, բօլ-բօլ մըսը՝ղան ինք' օնում, պիրում տօն* (Ձ):

ՄԸՍԸԹԱԿԷ - *գ.* Միս ծեծելու հարմարանք: *Ղըլըցէք' ք'ա՛ւվթա՛ն շատ ըն իլա՛լ սիրիլիս, ըտըրա հը՝տէ էլ ամմէն տան մըսըթակէ յա իլալ* (Ձ):

ՄԸՍԸԿԱ՛ԼԻԼ - *չբ.* Խիստ մսոտ դառնալ, չաղանալ: *Խօզ'էրը կաղէնը օտում ըն, մըսըկա՛լ'ում* (Բ):

ՄԸՍԸՀԱՆ - *ած.* Միսը վրայից հանած: *Էրկու մըսըհան վը՝սկըռ ա ինք' օնում, պիրում տօն* (Ձ):

- Մըսըհան անէլ - Միսը վրայից հանել: *Հէրէն մըսըհան ա անում, վըսկըռնէն էլ տամ շանը* (Բ):

ՄԸՍԸՀԱՆԷ *(գրբ. մսահան)* - *գ.* Միսը ամանից հանելու հարմարանք, մեծ պատառաքաղ: *Աշպազը մըսըհանէն յօր ա օնում, կատվէն հը՝տան ըղնում* (Ձ):

ՄԸՍԸՄԸ - *տե՛ս* ՄԸՍՈՒՄԸ:

ՄԸՍԸՄՕՐԹԷ - *տե՛ս* ՄԷՍ-ՄՕՐԹԷ:

ՄԸՍԸՊՕՏԷԼ - *չբ.* 1. Միս ուտելու բուռն պահանջ՝ կարոտ զգալ: *Շընէրը մըսըպօտալ ըն* (Բ): 2. *փխբ.* Կրքոտվել, վավաշոտել, սեռական բուռն ցանկությամբ բորբոքվել: *Դէրվիշը տը՛սնում ա, վէր էտ կընէգ՛ը մըսըպօտած ա* (Ձ):

ՄԸՍԼԱՀԱԹ - *տե՛ս* ՄԸՍԼԸՀԱԹ:

ՄԸՍԼԸՀԱԹ/ՄԸՍԼԱՀԱԹ/ՄԱՍԼԱՀԱԹ *(արաբ., պրս. maslahat (գործ)* - *գ.* 1. Ջրույց, խոսակցություն: *Ըտըրանց մըսլըհաթը իրկընանում ա, ըսքըսում ըն միէնգ՛ էլ հիրըվընէրէն անա խօսէլը* (Ձ): 2. Որեւէ բանի համատեղ քննարկում, խորհրդակցություն: *Ամմէն պէն վէր մըսլըհաթավ ինի, լօխ լ՛ավ կինի* (Բ):

- Մըսլըհաթ անէլ/տը՛սնալ - 1. Ջրուցել: *Անինկան լ՛ըհա վէր մին կընէգ՛ ա տը՛սնում, ըսքըսում ա նըհը՛տը մըսլըհաթ անէլը* (Բ): 2. Խորհրդակցել, խորհրդակցելով պայմանավորվել՝ որոշել: *Տը՛ղ մըսլըհաթ ըն ընէս, կ՛աս ըստը՛ղ շէն շինիս* (ՀԲ, 358):

- Մըսլըհաթու կ՛ալ - Պայմանավորվել, համաձայնել: *Առուտուրականը հիշկան անում ա, թա Իսախանէն կավը ինք՛ օնէ, Իսախանը մըսլըհաթու չի կ՛ամ* (Բ):

ՄԸՍԼԸՀԱԹԷՆ - *մ.* Խորհրդակցելով, խաղաղ ճանապարհով: *Հանց բիդ՛ալ, վէր ամմէն հինչ մըսլըհաթէն ինի, կը-ռը՛վ չինի* (Բ):

ՄԸՍԽԱԼ *(արաբ. mitkal, պրս. misxāl, թրք. miskal)* - *գ.* Ծանրության հին չափ, որ հավասար է մեկուկես գրամի: *Մէլիք՛-Շահնազարը ըսէս ա.- Էյ, Պըլըպո՛ւղի, էնքան կէր, վէր մին մըսխալա իվիլ չինի* (ԼՂԲ, 386):

ՄԸՍՄԱՌ/ՄԸՍՄԱՐ *(արաբ. mismār)* - *տե՛ս* ՄԷԽ: ... *Թաքավը՛ռէն պըլատան մարթիք՛ ըն կ՛ամ, թա.- Ճէ՛լլ ըրա, ղօթուն հէտէ մին քանի մըսմառ հըսցըրու, թաքավը՛ռը մը՛ռալ ա* (ՀԺՀ, VII, 199):

ՄԸՍՄԱՌԷԼ/ՄԸՍՄԱՐԷԼ - *տե՛ս* ՄԷԽԷԼ:

ՄԸՍՄԱՌՎԷԼ/ՄԸՍՄԱՐՎԷԼ - *տե՛ս* ՄԷԽՎԷԼ:

ՄԸՍՄԱՐ - *տե՛ս* ՄԸՍՄԱՌ:

ՄԸՍՄԱՐԷԼ - *տե՛ս* ՄԸՍՄԱՌԷԼ:

ՄԸՍՄԱՐՎԷԼ - *տե՛ս* ՄԸՍՄԱՌՎԷԼ:

ՄԸՍՄԸՍԱԼ - *չբ.* Ձայնը քթից հանելով՝ խոսել, քթի մեջ խոսել (հարբուխի կամ այլ պատճառով): *Խօխան մըսմըսամ ա, հա՛րբա՛թ մըրսալ ա* (Բ):

ՄԸՍՄԸՍՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՍՄԸՍԱԼ:

ՄԸՍՄԸՍՕՆ - *գ.* Մսմսալը, մսմսալու ձայնը: *Մըսմըսօնէն յըրա գ՛ունդ՛ում ա, վէր կ՛ըվօղը ո՛ւրա՛ն մարթը ա* (Ձ):

ՄԸՍՄԸՍՕՑ - *տե՛ս* ՄԸՍՄԸՍՕՆ:

ՄԸՍՍԱԼ - *տե՛ս* ՄԸՍՄԸՍԱԼ:

ՄԸՍՍԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՍՄԸՍՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸՍՍՕՆ - *տե՛ս* ՄԸՍՄԸՍՕՆ:

ՄԸՍՍՕՑ - *տե՛ս* ՄԸՍՄԸՍՕՆ:

ՄԸՍՈՒՄԸ/ՄԸՍԸՄԸ - *տե՛ս* ՅԸ՛-ՔՈՒՄ(ՆԸ):

ՄԸՍՈՒՏ/ՄԸՍՕՏ *(գրբ. մսոտ)* - *ած.* 1. *տե՛ս* ՄԸՍԱԼԻ: 2. Վրան միս քսված, մսով կեղտոտված: *Մէսը տո՛ւս ա օնում, մըսօտ խուրջինը կ՛ը՛տումը լըվանում* (Ձ):

ՄԸՍՕՏ - *տե՛ս* ՄԸՍՈՒՏ:

ՄԸՏԱԴԻՐ *(գրբ. մտադիր (հոժար, սրտանց, ուշադիր)* - *ած.* Որեւէ բանի մտադրություն ունեցող, մտադիր: *Թո՛ւնին կըլօխ ա ըղնում, վէր տընատարը մըտադիր չի ուռթընէն հացը տա* (ՆԱԲ, 105):

- Մըտադիր ինիլ - Մտադրություն ունենալ: *Մըտադիր ըմ ըստարէ արտ անիմ* (Բ):

ՄԸՏԱՁԿՈՒՏ - *տե՛ս* ՄԸՏԱԾԿՕՏ:

ՄԸՏԱՁՄՈՒ(Ն)Ք - *տե՛ս* ՄԸՏԱԾՄՈՒ(Ն)Ք:

ՄԸՏԱԾԷԼ *(գրբ. մտածեմ)* - *նբ.* 1. Միտք անել, խորհել: *Մին քըշէր վար բիրա՛ն դի քօն իլա՛ծ ըն ինո՛ւմ, մարթըն ըսկըսում ա մըտածէլը համ էլ ինք՛ըն ո՛ւրա՛ն խօսէլը...* (ՆԼՂԺԲ, 138): 2. Դատողություն անել, կշռադատել: *Թաքավէրը մըտածում ա, թա հունց անէ, վէր տըրան կուրցընէ* (ՀԺՀ, V, 268): 3. Կարծել, ենթադրել: *Չօբանը ասմա.- Մըտածում ըմ, վէր էք՛ո՛ւց թօռ ա կ՛ըլական* (Ձ): 4. Միտքը դնել, մտքում ունենալ: *Մըտածում ա՝ մին տօն էլ ինք՛ը շինի* (Ձ): 5. Հոգալ, հոգ տանել: *Խը՛ղճը գ՛ունդ՛ում չի՝ մարթին մասին մըտածէ, թա տըղէն* (Ձ):

ՄԸՏԱԾԿՕՏ/ՄԸՏԱՁԿՈՒՏ - *ած.* Մտածմունքների մեջ խորասուզված, մտազբաղ: *Մըտածկօտ մարթ ա, խընգարէլ մէ՛լ* (Ձ):

ՄԸՏԱԾՄՈՒ(Ն)Ք/ՄԸՏԱՁՄՈՒ(Ն)Ք *(գրբ. մտածումն)* - *գ.* 1. Խորհրդածություն, կշռադատություն: *Թաքավէրը մընըմ ա մինա՛կ մըտածմունքի մը՛չի* (ՀԺՀ, V, 85): 2. Միտքը զբաղեցնող խոհեր: *Շատ ա քընէնք՛ ըրալ, մըտըծմունքու մաչ ընգալ, պէն չի դ՛ունդ՛ալ* (ԱԱ, 48): 3. Հոգս, մտատանջություն: *Արաշտը ժուղովուրթէն հը՛տէ մըտածմունք շատ պէրավ* (Բ):

ՄԸՏԱԿԷԼ - *նբ.* 1. *տե՛ս* ՄԸ՛ԿՆԷԼ: 2. Հյուսված՝ ոլորված թելը կամ ծալված շորը բացելով՝ մեկը դարձնել՝ մի ծալքի վերածել: *Թիլը յը՛տ ա տամ, մըտակում, նօրիցան կըզկում* (Ձ):

ՄԸՏԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՏԱԿԷԼ-ի:

ՄԸՏԱՆԻ(Ք՛) - *տե՛ս* ՄՈՒՏԱՆԱ:

ՄԸՏԷԳ՛ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըտէգ՛ անէլ/տալ - *տե՛ս* ՅԷԾԻԼ:

ՄԸՏԷՍ - *ծ.* Ասվում է, երբ հավքաշով գրազ բռնածներից մեկը մյուսից մի բան է վերցնում՝ հիշում եմ, չեմ մոռացել: *Վէր մա՛նջ յը՛կած ըն ինո՛ւմ, մինը էն մինին մին պէն ա տամ, բիդի ասէ՝ մըտէ՛ս, թա չէ տանէլ կըտա* (Բ):

ՄԸՏԸԿԱԹԻԼ - *գ.* Մեկ ոլորքով թել: *Մըտըկաթիլը դայիմ չի ինիլ* (Բ):

ՄԸՏԸԿՀԱԼԱՎ - *գ.* Առանց աստառի շապիկ: *Մըտըկհալավընն էլ վէր հանում ա, մընամ ա լափ տըկլօր* (Ձ):

ՄԸՏԸԿՀԸԼԱՎԱԾ - *տե՛ս* ՀԸԼԱՎԱԾ: *Մէլիքը մըտըկհըլավածտ օ՛ռնը պէց ա անում* (ՆԱԲ, 129):

ՄԸՏԸԿ-ՄԸ՛ՏԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըտըկ-մը՛տակ կ՛ալ - Տառապել, խիստ մտահոգվել: *Կընէգ՛ը թա.- Խա՛չի, էտ վէր տի մըտըկ-մը՛տակ ըս կ՛աս, ինձ շատ ը՞ս սիրիս, թա՛ խըրէ՞գ՛* (ՀԺՀ, V, 470):

ՄԸՏԸԿՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՏԱԿԷԼ:

ՄԸՏԸՀԱՆ - *տե՛ս* ՄԸԹԿԸՀԱՆ:

ՄԸՏԸՂԱՀԸ՛ՐԹ - *գ.* Մատաղ անելու հերթ: *Վախտ ա ինո՛ւմ, վէր էտ սօրփէն ըռընչին մըտըղահը՛րթ ա կույանում* (Ձ):

- Մըտըղիը՛րթա պըրծընէլ - Փորձանքից՝ մահից ազատվել՝ փրկվել: *Նէսին ճըղպօրան վէր ընգավ, վէշ մին պէն չիլա՛վ, մըտըղիը՛րթա պըրծավ* (Բ):

ՄԸՏԸՂԱՃԻ՛ՒՐ - *գ.* Մատաղի մսի արգանակ: *Մատաղը օտում ըն, մըտըղաճ՛ուրը էլ՝ խըմում* (Ձ):

ՄԸՏԸՂԱՑՈՒ - *ած., գ.* Մատաղ անելու համար պահած (կենդանի, թռչուն): *Ասում ա.- էտ կ՛առնը մըտըղացու վա, կարէլ չըմ ծախիմ* (Ձ):

ՄԸՏԸՂ-ՍԱՏԱՂ - *տե՛ս* ՄԱՏԱՂ-ՍԱՏԱՂ:

ՄԸՏԻՏԷՂՆԸ *(գրբ. մատիտեղ)* - *գ.* Մատիտեղազգիների ընտանիքին պատկանող մակաբույծ խոտաբույս: *Բօստանը մըտիտէղնը կ՛ալ՛ալ ա* (Բ):

ՄԸՏԿԱՎԷՐ - *տե՛ս* ՄԸԹԿԱՎԷՐ:

ՄԸՏԿԱՏԱՐ - *տե՛ս* ՄԸԹԿԱՏԱՐ:

ՄԸՏԿԱՏՕՆ - *տե՛ս* ՄԸԹԿԱՏՕՆ:

ՄԸՏԿԱՓՕԽ - *տե՛ս* ՄԸԹԿԱՓՕԽ:

ՄԸՏԿԱՔՕՌ - *տե՛ս* ՄԸԹԿԱԽՕՌ:

ՄԸՏԿԸՀԱՆ - *տե՛ս* ՄԸԹԿԸՀԱՆ:

ՄԸՏԿԸՄՕԼՕՐ - *տե՛ս* ՄԸԹԿԸՄՕԼՕՐ:

ՄԸՏԿԸՓՕԽՎԷԼ - *տե՛ս* ՄԸԹԿԸՓՕԽՎԷԼ:

ՄԸՏԿՈՒՄԸ - *տե՛ս* ՄԸԹԿՈՒՄԸ:

ՄԸՏՆԷԼ - *տե՛ս* ՄԸՆՆԷԼ:

ՄԸՏՐԸՔԱԿԱՆ *(ռուս. метрик)* - *տե՛ս* ԾԸՆՈՒՆԴԱԿԱՆ:

ՄԸՏՔԱՎԷՐ - *տե՛ս* ՄԸԹԿԱՎԷՐ:

ՄԸՏՔԱՏԱՐ - *տե՛ս* ՄԸԹԿԱՏԱՐ:

ՄԸՏՔԱՏՕՆ - *տե՛ս* ՄԸԹԿԱՏՕՆ:

ՄԸՏՔԱՓՕԽ - *տե՛ս* ՄԸԹԿԱՓՕԽ:

ՄԸՏՔԱՔՕՌ - *տե՛ս* ՄԸԹԿԱՔՕՌ:

ՄԸՏՔԸՀԱՆ - *տե՛ս* ՄԸԹԿԸՀԱՆ:

ՄԸՏՔԸՄՕԼՕՐ - *տե՛ս* ՄԸԹԿԸՄՕԼՕՐ:

ՄԸՏՔԸՓՕԽՎԷԼ - *տե՛ս* ՄԸԹԿԸՓՕԽՎԷԼ:

ՄԸՏՔՈՒՄԸ - *տե՛ս* ՄԸԹԿՈՒՄԸ:

ՄԸՏՕԿ/ՄԸՏՕՔ *(գրբ. մտօք (միտք բառի գործիական հոլովածեւը)* - *տե՛ս* ԽՍԼՔԸԿՈՒՏՈՒՐ:

ՄԸՏՕՔ - *տե՛ս* ՄԸՏՕԿ:

ՄԸՐԱՄԸՌ - *ած. տե՛ս* Մարը մը՛ռած:

ՄԸՐԱՄԸՐ - *տե՛ս* ՄԱՆՐՄԱՆՐ:

ՄԸՐԱՊԱՊ - *գ.* Մոր կողմի պապ, մոր հայրը: *Հանրանբէդին մըրապապը թօրք ա իլալ* (Բ):

ՄԸՐԱՏԱՏ - *գ.* Մոր կողմի տատ, մոր մայրը: *Մըրատատը էլ վէր մը՛ռնում ա, էտ ախճիգը մընամ ա լափ յէթիմ* (Ձ):

ՄԸՐԱՑԸ՚Ղ - *տե՛ս* ՄԸՐԱՑՈՒ:

ՄԸՐԱՑՈՒ - *գ.* Խորթ մայր: *Մըրացուն Գ՚ուլուն օր-իշը՛ղ չի տամ* (Բ):

ՄԸՐԱՓ - *անրգ.* Քուն: *Ըտըրա մըրափը էրկու օր քաշո՛ւմ ա* (Բ):

ՄԸՐԱՓԷԼ *(գրբ. մրափեմ)* - *չբ. անրգ.* Քնել: *Օշափը վէր մըրափում ա, էտ ախճիգը տո՛ւս ա կ՚ամ, փախճո՛ւմ, ք՚ինամ տօն* (Ձ):

ՄԸՐԱՔԷՐ - *տե՛ս* ՄԸՐԱՔՈՒՐ:

ՄԸՐԱՔՈՒՐ/ՄԸՐԱՔԷՐ/ՄԱՔՈՒՐ[2] *(գրբ. մորաքոյր)* - *գ.* Մոր քույրը, մորաքույր: *Էտ մըրաքուրը քըվօրը ըխճըկանը տամ ա ըտըրանց, վէր պատէն մաչին տինին, հիմնին* (Ձ):

ՄԸՐԱՔՕՂ - *գ.* Մրի մեջ թաթախած թել՝ լար, որ երկու ծայրերից ձգելով՝ մեջտեղից քաշում եւ բաց են թողնում՝ պատի՝ փայտի եւն վրա գիծ քաշելու համար: *Ուստան մըրաքօղը յօր ա օնում, պատէն յըրա նըշան անում, ըսքըսում կըրասկա տալը* (Ձ):

ՄԸՐԱՔՕՆ - *տե՛ս* ՄԱՄԱՅԱՔՕՆ:

ՄԸՐՋԻԼ - *տե՛ս* ՄԸՋԻԼ:

ՄԸՐՋՎԻԼ - *տե՛ս* ՄԸՋՎԻԼ:

ՄԸՐՋՈՒՔԷԼ/ՄՈՒՐՋՈՒՔԷԼ - *նբ.* 1. Կթելով կամ հորթը ծծեցնելով՝ կովի կուրծքը լրիվ դատարկել՝ ցամաքեցնել: *Հանց մըրզո՛ւքում ա, մին կաթ կաթնը չի թօղնում կըվէն կուրծումը* (Ձ): 2. *փխբ.* Լրիվ խմել՝ուտել, ամանը լրիվ դատարկել: *Ապան կուվէն կ՚ինին մըրզո՛ւքում ա, թէյնը տամ* (Բ): 3. Կոշտ կերպով տրորել: *Ծօրը մըրզո՛ւքում ա, յը՛խտը վէր անում* (Բ):

ՄԸՐՋՈՒՔՎԷԼ/ՄՈՒՐՋՈՒՔՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՐՋՈՒՔԷԼ-ի:

ՄԸՐԸԼԼԱԽԷ - *տե՛ս* ՄԸՂԸԼԼԱԽԷ:

ՄԸՐԸՄԱՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըրըմար անէլ - Կովը կթելուց առաջ հորթը մի քիչ ծծեցնել, որ հեշտ կթվի: *Դանան բիդի մըրըմար անիս, վէր կավը թօղէ՝ քըթիս* (Բ):

ՄԸՐԸՆԱՏԱՔ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըրթընատաք անէլ - Կաթը քիչ տաքացնել՝ պանիր պատրաստելու համար: *Կաթնը բիդի մըրընատաք անիս, յը՛տնան մայան քըցիս* (Բ):

ՄԸՐԸՓՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸՐԱՓԷԼ-ի:

ՄԸՐԸՓՕՏԷԼ - *տե՛ս* ՄԸՐԱՓԷԼ (շատերի մասին):

ՄԸՐԸԽ - *տե՛ս* ՄԸՌԸԽ:

ՄԸՐԸԽԷԼ - *տե՛ս* ՄԸՌԸԽԷԼ:

ՄԸՐԸԽԿԸՎԷԼ - *տե՛ս* ՄԸՌԸԽԿԸՎԷԼ:

ՄԸՐԸՔԸՇՕԹՈՒՆ - *գ.* Ծնողին՝ մորը հայհոյելը: *Մըրըքըշօթունը ամմէնափիս ուշունցըն ա* (Բ):

- Մըրըքըշօթուն անէլ - Ծնողին՝ մորը հայհոյել: *Բաղվանչին հա՛մ խօնցը բաղան նըհը՛ետ ա տամ, համ էլ մըրըքըշօթուն անում* (Ձ):

ՄԸՐԸՔ՚ԱՏԸ՚Ղ - *գ.* Մարագի՝ հարդանոցի տեղը: *Մըրըքատը՛ղը թըմիզցընում ըն, տէրմանը ածում* (Ձ):

ՄԸՐԹԱԲԱ/ՄԸՐԹԱԲԱ՝ - *գ.* Պղնձե ափսե: *Միհէնգվա հարթնէրը մըրթաբա չընը պինըցընէս* (Բ):

ՄԸՐԹԱ՝ԲԱ՝ - *տե՛ս* ՄԸՐԹԱԲԱ:

ՄԸՐԹԱԲՕՅ - *ած.* Մարդու հասակի չափ: *Մին մըրթաբօյ արչ ա տո՛ւս կ՚ամ, ըտըրանց յըրա պըրծընում* (Ձ):

ՄԸՐԹԱԹՕՂ - *ած.* Ամուսնուց բաժանված, ամուսնուն թողած (կին): *Ջըվէնին չօ՛ղք մըրթաթօղ ախճիգ օնէ* (Բ):

- Մըրթաթօղ ինիլ - Ամուսնուց բաժանվել (կնոջ մասին): *Հուվա՞ մէր դօ՛վրին ըսկացալ, վէր մին ախճիգ առանց ո՛ւրանն հօրը-մօրը կամքին մարթի քինա, յա մըրթաթօղ ինի...* (ՋՏ, Բ, 172):

ՄԸՐԹԱԿԷՐ *(գրբ. մարդակեր)* - *ած., գ.* 1. Մարթ ուտող, մարդկային մսով կերակրվող: *Խաբարը յէր ա ինում, թա մին մըրթակէր օշափ ա լո՛ւս աշխարք յը՛կալ, հու ք՚ինամ ա ծըմակը, փըռնում ա կօլ տամ* (Ձ): 2. *փխբ.* Գազանաբարո (մարդ): *Մըրթակէր մարթ ա իլալ էտ խանը* (Ձ):

ՄԸՐԹԱԿՈ՝ՒԼ *(գրբ. մարդագայլ (գայլի պես մարդ)* - 1. *տե՛ս* ՄԸՐԹԱԿԷՐ: 2. Բորենի: *Լ՚ավ ա՝ Դարաբաղա ծըմըկնըմը մըրթակ՚ուլ չի կա* (Բ): *գ.* 3. Ըստ սնոտիապաշտության՝ քաջքերի կողմից կախարդված մարդ (սովորաբար՝ կին), որ գիշերները գայլ է դառնում եւ շրջում գայլերի ոհմակի հետ: *Էտ հարթնը մըրթակ՚ուլ ար տը՛ռնում, կ՚ուլէրէն նըհը՛ետ շօռ կ՚ամ* (Ձ): 4. *փխբ.* Շատակեր մարդ: *Մըրթակ՚ուլ ա մէր Արշակը, մին ղըզդան կուրկուտը մին դ՚ունո՛ւմանց ա օտում* (Բ):

ՄԸՐԹԱՄԱՉ - *գ., մ.* Մարդկանց մեջ, հասարակական միջավայր: *Կընէգ՚ընն ասում ա.- Լ՚ավընն էն չի՞, թակիս, քան թա մըրթըմաչի ինձ խըյտառակ անիս* (Ձ):

- Մըրթամաչ ըղնէլ/տո՛ւս կ՚ալ - *տե՛ս* Ըրամակ ըղնէլ:

- Մըրթամաչ քըցիլ/տո՛ւս պիրիլ - *տե՛ս* Ըրամակ քըցիլ:

ՄԸՐԹԱՄԸ՚Ռ - *ած.* 1. Մարդը՝ ամուսինը մահացած, այրի: *Մըրթամը՛ռ կընէգ՚ ա Սօփին, մին թանիրանվ ա տօնը պահում* (Ձ): 2. *փխբ.* Անզգամ: *Էտ մըրթամը՛ռը շէնին տըղըմարթկանցը խը՛լքա տարալ ա* (Բ):

- Մըրթամը՛ռ մընալ - Այրիանալ, ամուսնուն կորցնել (հատկապես գործածվում է որպես անեծք): *Մըրթամը՛ռ մընաս, կավըս խէ քըթալ ը՞ս* (Բ):

ՄԸՐԹԱՄՕՏ *(գրբ. մարդամօտ (մարդկանց մոտիկ տեղ, մարդաբնակ վայր)* - *ած.* Մարդկանց հետ մտերմություն անող, մարդամոտ: *Էտ կընէգ՚ընն էլ, կօգի վէգիրու կընէգ՚, շատ մըրթամօտ ա ինում* (Ձ):

ՄԸՐԹԱՉԱՓ - *տե՛ս* ՄԸՐԹԱԲՕՅ:

ՄԸՐԹԱՍԱ՝Ս - *գ.* Մարդու ձայն, մարդու արձակած ձայն: *Մին էլ բ՚ուրդանն էտ վէրին մաչան մին մըրթասանս ա ըսկանում* (Ձ):

ՄԸՐԹԱՍԸ՚Ղ - *տե՛ս* ՄԸԽԹԱՍԸ՚Ղ:

ՄԸՐԹԱՎԸ՚Տ - *գ.* 1. Մարդու հոտ: *Օշափը նի յա մընանում, թա.- Մ՚մար, ըստըղէքաս մըրթավէտ ա կ՚ամ* (ՆԱԲ, 26): 2. *փխբ.* Մարդու շնորհք ունենալը, մարդավարություն: *Տընըշինիտ տըղան ըսկի մըրթավը՛ետ չօնէ. ո՛ւրանն ախպօրընն էլ ա թըլանալ* (Բ):

ՄԸՐԹԱՏԱՐ - *ած.* Մարդ՝ ամուսին ունեցող, արամբի: *Մըրթատար կընէգ՚ ա, ամմա սաղ օրը էն ա ըստանո՛ւր-ընդանո՛ւր նըհը՛ետ սիլի-բիլի ընէս* (Բ):

ՄԸՐԹԱՏԸ՚Ղ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Մըրթատը՛ղ տինիլ/քըցիլ - Մարդ համարել, որպես մարդու՝ մեծարել, կարծիքը հաշվի առնել: *Տը՛սնում ա, վը՛ր ծիյավուրը ո՛ւրանն մըրթատը՛ղ չի տինո՛ւմ, կ՚ամ ա կըլխէն թըխում, քըցո՛ւմ ծիյին տակը* (ՀԺՀ, VII, 376):

ՄԸՐԹԱՑԻ - *մ.* Մարդու օգնությամբ՝ միջոցով: *Ծանդըր կօրծը մըրթացի կանին* (Բ):

ՄԸՐԹԱՑՈՒ - *ածական, գ.* Իբրեւ ամուսին ընտրված, ամուսնացու (անձ): *Յէդիսաբէթը օգում ա ըխճըկանը մարթու տա, ամմա լ՛ավ մըրթացու չի քըթէնում* (Բ):

ՄԸՐԹԸԿԱԾԱՆ - *գ.* Մարդկանց գնալ-գալուց առաջացած կածան: *Էնքան ըտըղավ քըշանում ըն ախպէ՛ուրը, կ՛ամ, մըրթըկածան ա կույանում* (Զ):

ՄԸՐԹԸԿԸԼՕԽ *(գրբ. մարդագլուխ)* - *գ.* 1. Ամեն մեկը, ամեն մեկին: *Տահանք մըրթըկըլօ՛խ ամէ՛ա մին սօտ ըն ասում, ծիծաղում* (ՀԺՀ, VII, 288): 2. Բոլորը, ամբողջը: *Շէնումը մըրթըկըլօ՛խ իծծուն մարթ ա ապըրում* (Բ): 3. *ածական.* Մարդու գլխի նման գլուխ ունեցող: *Մին մըրթըկըլօ՛խ ծի յա ջիհի՛ում* (Զ):

ՄԸՐԹԸԿԸՆԷԳ՛/ՄԱՐԹ-ԿԸՆԷԳ՛- *գ.* 1. Մարդ ու կին, ամուսիններ: ... *Մըրթըկընէգ՛ մընամ ըն ո՛ւրո՛ւր իրէսու յիշիլիս* (ԱԱռ, 43): 2. *փխբ.* Մտերիմ անձնավորություններ: *Սաքօն ա Կա՛ռաբէդը մըրթըկընէգ՛ ըն, սաղ օրը ո՛ւրո՛ւր նըհը՛ստ ըն ինում* (Բ):

- Մըրթըկընէգ՛ տը՛ռնալ - Ամուսնանալ: *Ըտըրանք մըրթըկընէգ՛ ըն տը՛ռնում, մին տը՛ղ ապրում* (Զ):

ՄԸՐԹԸՀԱ՛ՇԸ՛Վ - *տե՛ս* ՄԸՐԹԱՏԸ՛Ղ:

ՄԸՐԹԸՀԷՍԱԲ - *տե՛ս* ՄԸՐԹԱՏԸ՛Ղ:

ՄԸՐԹԸՍԸ՛ՂԷԼ - *տե՛ս* ՄԸԽԹԸՍԸ՛ՂԷԼ:

ՄԸՐԹԸՍՊԱՆ(Է)/ՄԱՐԹԱՍՊԱՆ *(գրբ. մարդասպան)* - *գ., ածական.* 1. Մարդ սպանող, մարդասպան (անձ): *Էտ մըրթըսպանուն ճօ՛ր՛ուն վը՛ռան կապում ըն, քաշ-քաշ անում* (Զ): 2. Մարդ սպանելուն ծառայող: *Մին մըրթըսպանէ տէնակ ա յօր օնում, տո՛ւս կ՛ամ* (Զ):

ՄԸՐԹԸՍՊԸՆՕԹՈՒՆ *(գրբ. մարդասպանություն)* - *գ.* Մարդ սպանելը, սպանություն: *Մըրթըսպընօթունը ա՛դա՛թ քըցօ՛ղէն բալան թաղիմ* (Զ):

ՄԸՐԹԸՎԱՉԻ - *տե՛ս* ՄԸՐԹԸՎԱՐԻ:

ՄԸՐԹԸՎԱՐԻ - *ածական, մ.* Մարդու նման, մարդուն վայել, օրինավոր, կարգին: *Մստուծ կըզնըվալ ա, թա.- Մինչէվ ըրէսուն տարէն մըրթըվարի ա՛պրէ, ըտըրանա յէտը չըրչա՛րվէ...* (ԱԱ, 87):

ՄԸՐԹԸՎԸՐՕԹՈՒՆ - *գ.* 1. Մարդավարի լինելը: *Հա՛ը ասմա.- Մըրթըվըրօթունա խօսէլ մէ՛լ, քու ըրածըտ իշօթուն ա* (Զ): 2. Մարդուն վայել գործ՝ արարք, քաղաքավարություն: *Ասում ա.- Նէրում ըմ, ամմա ըրածըտ մըրթըվըրօթուն չար* (Զ):

ՄԸՐԹԸՓԱՍՕՆ - *ածական.* Մարդու ձեւ՝ կերպարանք ունեցող: *Էտ դո՛ւլգ՛ա՛ը փա՛դա՛ն մին մըրթըփասօն պէն ա շինում* (Զ):

ՄԸՐԹՄԸՐԹԱԼ - *չբ.* Քթի տակ փընփնթալ՝ քրթմնջալ՝ տրտնջալ: *Ըտի մըրթմըրթալավ ք՛ընըմ ա...* (ԼՂԲ, 354):

ՄԸՐԹՄԸՐԹԱԽՕՍ - *տե՛ս* ՄԸՐԹՄԸՐԹԱՆ:

ՄԸՐԹՄԸՐԹԱՆ - *ածական.* Քթի տակ փնթփնթացող՝ քրթմնջացող՝ տրտնջացող: *Մըրթմըրթան պառավ ա Գ՛ո՛ւլնազարին ըսկէսուրը* (Բ):

ՄԸՐԹՄԸՐԹԱՎԸ՛Տ - *գ.* Տհաճ հոտ: *Ո՛ւրո՛ւգ՛ո՛ւնը տըղէրքը կ՛ամ ըն, թա.- Մ՛մար, էս հինչ մըրթմըրթավէտ ա կ՛ամ* (ՀԺՀ, V, 506):

ՄԸՐԹՄԸՐԹԷԳ՛ - *տե՛ս* ՄԸՐԹՄԸՐԹԱՆ:

ՄԸՐԹՄԸՐԹՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ՄԸՐԹՄԸՐԹԱԼ-ի: 2. *տե՛ս* ՄԸՐԹՄԸՐԹԱԼ:

ՄԸՐԹՄԸՐԹՕԿ - *տե՛ս* ՄԸՐԹՄԸՐԹԱՆ:

ՄԸՐԹՄԸՐԹՕՆ - *գ.* Քթի տակ փնթփնթալը՝ քրթմնջալը, փնթփնթալու՝ քրթմնջալու ձայնը: *Ըտըրա մըրթմըրթօնան լօխճին զա՛ա՛հլա՛ն տարած ա* (Բ):

ՄԸՐԹՄԸՐԹՕՑ - *տե՛ս* ՄԸՐԹՄԸՐԹՕՆ:

ՄԸՐԹՕԹՈՒՆ - *գ.* 1. *տե՛ս* ՄԸՐԹԸՎԸՐՕԹՈՒՆ: 2. Այրական պարտականություն, ամուսին լինելը: *Կընէգ՛ը ասմա.- Ինձ քու մըրթօթունըտ հարկավէր չի, տո՛ւս յը՛ք ք՛ինի՛* (Զ):

- Մըրթութունա ըղնէլ - Մարդկային վեհ հատկություններից զրկվել, անօրեն դառնալ: *Ըտի էտ տըղան ղաչաղնուն նըհը՛ստ հընգըրօթուն ա ընէս, մըրթութունա ըղնէս* (Զ):

- Մըրթութունա քըցիլ - Մարդկային վեհ հատկություններից զրկել, անօրեն դարձնել: *Էտ կ՛օղ կընէգ՛ը մարթին էլ ա մըրթութունա քըցա՛ն, տըղէն էլ* (Բ):

- Մըրթօթուն անէլ - 1. Մարդկային վեհ արարք՝ քայլ կատարել, օրինական քայլ ձեռնարկել: *Թաքավէրը մըրթօթուն ա անում, տահանց ըսպանէլ չի տամ* (Զ): 2. Այրական պարտականությունները կատարել, որպես ամուսին վարվել կնոջ հետ: *Տըղան ասում ա.- Թաքավէրըն ապրած կէնա, ք՛ըզանա կըման էս վէց հո՛ւք՛ին քու կընգանը մըրթօթուն ըն անում* (ՀԺՀ, VI, 144):

ՄԸՐԹՕՏԷԼ/ՄՈՒՐԹՕՏԷԼ - *նբ.* Շատերին մորթել: ... *Պէռնէրը վէր ա ունէս, օղտէրըն էլ մըրթուտէս, ըծէս կըրըսնէն* (ՀԺՀ, V, 301):

ՄԸՐԹՕՏՎԷԼ/ՄՈՒՐԹՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՄԸՐԹՕՏԷԼ-ի:

ՄԸՐԺԷՂ(ՆԸ) - *տե՛ս* ՄԸՆՋԷՂ(ՆԸ):

ՄԸՐԿ(ԸՎ)ԷԼ *(հ.ե. *(s)mug-ro-)* - *չբ.* 1. Ոչ լրիվ այրվել, խանձվել: *Շօ՛ղը մըրկալ ա* (Բ): 2. *տե՛ս* ՄԸՌԸԽԷԼ:

ՄԸՐԿԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸՐԿԷԼ-ի:

ՄԸՐՃԷՂՆԸ *(գրբ. մճիր)* - *գ.* Կրակը վառվելուց հետո ածուխների վրա առաջացած մոխիրի բարակ շերտ: *Կըռանում ա, փիչ՛ում, մըրճէղնը նի յա տը՛ռնում աշկէրը* (Զ):

ՄԸՐՃԸՂՆԸԿԱ՛ԼԻԼ - *չբ.* Կրակը վառվելուց հետո մոխիրի բարակ շերտ առաջանալ ածուխների վրա: *Կըրակը վէր էրում ա, մըրճըղնըկա՛լ՛ում, յը՛ր ըն կէնում, ք՛ինամ* (Զ):

ՄԸՐՄԱ՛ՆԴԻԼ - *չբ.* 1. Հովանալ, մեղմանալ: *Համան մըրմա՛նդա՛լ ա* (Բ): 2. Հանդարտվել, թուլանալ: *Կըրակը մըրմա՛նդա՛լ ա* (Բ):

ՄԸՐՄԸՆՋԱԼ *(գրբ. մարմաջեմ)* - *տե՛ս* ՄԸՐՄԸՌԱԼ:

ՄԸՐՄԸՆՋՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. մարմաջեցուցանեմ)* - *տե՛ս* ՄԸՐՄԸՌՑ(Ը)ՆԷԼ:

ՄԸՐՄԸՆՋՕՆ *(գրբ. մարմաջիւն)* - *տե՛ս* ՄԸՐՄԸՌՕՆ:

ՄԸՐՄԸՆՋՕՑ - *տե՛ս* ՄԸՐՄԸՌՕՆ:

ՄԸՐՄԸՌԱԼ - *չբ.* Մորմոքվել, մրմուռ զգացվել, կսկծալ: *Սօղան ուտօղէն սը՛ր-տը կըմըրմըռա* (ԱԲԲ, 86):

ՄԸՐՄԸՌՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸՐՄԸՌԱԼ-ի:

ՄԸՐՄԸՌՕՆ *(հ. ե. * mōrs-)* - *գ.* Մարմնական ցավ, կսկիծ: *Մըրմըռօնան սաղ քըշէրը քօն չըմ իլա՛լ* (Բ):

ՄԸՐՄԸՌՕՑ - *տե՛ս* ՄԸՐՄԸՌՕՆ:

ՄԸՐՉԷՄՆԸ - *տե՛ս* ՎԸՐՉԷՄՆԸ:

ՄԸՐՋԷՄՆԸ - *տե՛ս* ՎԸՐՉԷՄՆԸ:

ՄԸՐՉԸՄՆԱԿԷՐ - *տե՛ս* ՎԸՐՉԸՄՆԱԿԷՐ:

ՄԸՐՉԸՄՆԱՊԱ՛ՒՆ - *տե՛ս* ՎԸՐՉԸՄՆԱՊԱ՛ՒՆ:

ՄԸՐՋԸՄՆԱԿԷՐ - *տե՛ս* ՎԸՐՉԸՄՆԱԿԷՐ:

ՄԸՐՋԸՄՆԱՊԱ՛ՒՆ - *տե՛ս* ՎԸՐՉԸՄՆԱՊԱ՛ՒՆ:

ՄԸՐՋԸՄՆԱԿԷՐ - *տե՛ս* ՎԸՐՉԸՄՆԱԿԷՐ:

ՄԸՐՋԸՄՆԱՊԱ՛ՒՆ - *տե՛ս* ՎԸՐՉԸՄՆԱՊԱ՛ՒՆ:

ՄԸՐՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Մըրսը կ՛ա՛լ - *տե՛ս* ՄԸՐՍԷԼ:

ՄԸՐՍԱԿԱՆ/ՄԱՐՍԿԱՆ - *ածական.* Հեշտ մարսվող, դյուրամարս: *Բընըզուրա կ՛ինին մըրսական կ՛ինի յա* (Բ):

ՄԸՐՍԷԼ *(գրբ. մրսիմ)* - *չբ.* 1. Ցուրտ զգալ: ... *Մին ծըմըռվա քըշէր արչը մարթին խըտտալ ա, քօն իլա՛լ, հանցու մըրսէ վէչ. այազ ա իլա՛լ* (ԱԱ, 72): 2. Ցրտից հիվանդանալ: *Հէյրանը մըրսալ ա, էն ա բալնիցումը* (Բ): 3. Ցրտահարվել, ցրտից թառամել: *Կընանչին մըրսալ ա* (Բ): 4. *փխբ.* Սարսափել: *Մարթը արչին վէր տը՛սավ, մըրսից* (Զ):

ՄԸՐՍԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՄԸՐՍԷԼ-ի:

ՄԸՐՍԿԱՆ - *ածական.* 1. Շուտ մրսող,

ցրտին չդիմացող: *Խոզը մըրսկան հէյվան ա* (Բ): 2. *փխբ.* Վախկոտ: *Հա՛րը ասմա.- Տու մըրսկան ըս, տու արչ ըսպանօղ չըս, նըհախ կալ մէլ* (Ձ):

ՄԸՐՎԱԹՍԸՋ - *տե՛ս* ՄՈՒՐՎԱԹՍԸՋ:

ՄԸՐՏՕՑ *(գրբ. մուրտ (մրտենի՝ մշտադալար թփաբույս)* - *ած. տե՛ս* Կանանչ մըրտօց:

ՄԸՐՐԷԼ *(գրբ. մրրիմ (մրուր բռնել, պղտորվել)* - *չբ.* 1. Կեղտոտվել, սեւանալ: *Պատէրը ծուխան մըրրալ ա* (Բ): 2. *փխբ.* Կատաղել: *Հա՛րը էտ վէր տը՛սնում ա, մըրրում ա* (Ձ): 3. *փխբ.* Գիրանալ, ճարպակալել: *Էնքան կէրալ ա, մըրրալ ա* (Բ):

ՄԸՐՈՒԱԽՃԻԳ՝/ՄՈՒՐՈՒԱԽՃԻԳ՝/ՄՈՒՐԸԱԽՃԻԳ՝ - *գ.* Մայր եւ դուստր: *Մուրըախճիգ՝ էտ մարթին օր ըն տամ, իշը՛ղ չըն տամ* (Բ):

ՄԸՐՈՒԹԱՆՔ - *գ.* Գերդաստան Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում:

- Մըրութանց քաշկը - Շատ տգեղ անձ: *Դէ էն էլ հինչ հա՞րթանը, Մըրութանց քաշկըն ա* (Բ):

ՄԸՐՈՒՏԸՂԱ/ՄՈՒՐՈՒՏԸՂԱ/ՄՈՒՐԸՏԸՂԱ - *գ.* Մայր եւ որդի: *Մուրըտըղա մընամ ըն ուրո՛ւր յիշիլիս* (ՆԼՂԺԲ, 36):

ՄԸՐ(ՈՒ)ՔԱՎԷՐ/ՄՈՒՐ(ՈՒ)ՔԱՎՈՒՐ - *ած.* Մորուք ունեցող: *Ըրա՛զումը մին սիպտա՛կ մըրքավէր մարթ ա կամ, ըտըրա ասում.- Օգում ըս մըհէնգ՝ լա՛վ ա՞պրիս, թա՛ պըռըվօ՞ց* (ՀԺՀ, V, 498):

ՄԸՐ(ՈՒ)ՔԱՏԸ՞Ղ/ՄՈՒՐ(ՈՒ)ՔԱՏԸ՞Ղ - *գ.* Մորուք աճելու տեղը: *Մըրուքատը՛ղը կուշտա՛լ ա* (Բ):

ՄԸՐՔԸ՞ՂԱՆ - *տե՛ս* ԲԸՐԸ՞ՂԱՆ:

ՄԸՐՔԸՐԱ/ՄԸՐՔԸՐԷ/ՄԱՐՔԱՐԷ *(գրբ. մարգարե)* - *գ.* Նա, որ Աստծու պատգամները բացատրում է մարդկանց, մարգարե: *Մօվսէս մարքարէն ըղութարան ա շինում, ըղօնէգ՝նէն կամ ըն, մաչին պո՛ն տինում* (ԱԱ, 64):

ՄԸՐՔԸՐԷ - *տե՛ս* ՄԸՐՔԸՐԱ:

ՄԸՐՕԹՌՈՒՆ/ՄՈՒՐՕԹՌՈՒՆ *(գրբ. մայրութիւն)* - *գ.* Մայր լինելը, մայրություն: *Կընէգ՝ կա՝մըրօթունը մընանա քըցո՛ւմ ա* (Բ):

- Մըրօթուն անէլ - Մեկին մայրական վերաբերմունք ցույց տալ: *Թա՛նջիրին կընէգ՝ը էտ յիթիմիմ մըրօթուն ա անում* (Ձ):

ՄԸՐՕՔ/ՄՈՒՐՕՔ *(գրբ. մորուք)* - *գ.* 1. Տղամարդկանց ստորին ծնոտի եւ այտերի վրա բուսնող մազերը: *Թաքավէրը ք՝ինից ընդըրան մըրքան պաչից* (ԼՂԲ, 293): 2. Որոշ կենդանիների կզակից կախ ընկած երկար մազափունջը: *Էտ էծին մըրօքըն էլ էնքան էրկան ա ինո՛ւմ, վէր առռէ մինչը՛վ տափը հըսնում ա* (Ձ):

- Մըրքէն թըքէլ - Անպատվել, խայտառակել: *Քավթառ մարթ ա Սիմօնը, շընօթուն ըրավ, հարթնէրը մըրքէն թըքը՛ցէն, տանան տո՛ւս քըցէցէն* (Բ):

- Մըրքէն հը՛տան ք՝ինիլ, բէղէրըն էլ կուրցընէլ - *տե՛ս* Աշկը շինիլին տը՛ղ օնքըն էլ ցըրը՛վ տալ:

- Մըրօքը մինչը՛վ թուխկատը՛ղը/կյուտկատը՛ղը տափը (հըսած) - Ծեր: *Տըսնաս ա մին մարթ, մըրօքը մինչը՛վ թուխկատը՛ղը հըսած, նըստած հըղէցը ղըրաղէն* (ՆԼՂԺԲ, 37):

- Մըրօքը չըլէլ - Հասուն՝ տարեց մարդ դառնալ: *Ա՛նդօն մըրօքը չըլալ ա, ամմա հա՛լա՛ խուխօթուն ա անում* (Բ):

ՄԸՐՕՔՈՒՐ/ՄԸԼՕՔՈՒՐ/ՄՈՒՐՈՒՔՈՒՐ/ՄՈՒԼՈՒՔՈՒՐ - *գ.* Հիվանդություն, երբ մաշկի վրա բշտիկներ են առաջանում՝ առաջ բերելով քորելու մարմաջ: *Խը՛ղոնը մըրօքուրան ընգալ ա, սաղ օրը էն ա ջանը ղըրփէս* (Բ):

- Մըրօքուրա ընգած ը՞ս - Ասում են մարմինը հաճախակի քորողին:

- Մըրօքուրը տո՛ւս տալ - Զզվել, նողկալ: *Ըտըրան վէր տը՛սնում ըմ, մըրօքուրըս տո՛ւս ա տամ* (Բ):

ՄԸՔԸԼԷԼ - 1. *տե՛ս* ՅԷԾՆԻԼ: 2. *տե՛ս* ԹՈՒԽՊԷԼ:

ՄԸՔ(Ը)ՌՕԾ/ՄՈՒԿ(Ը)ՌՕԾ - *տե՛ս* ՄԸԿԸԾԸ՞Ռ(ՆԸ):

ՄԻ[1] - *տե՛ս* ՄԻՆ[1]:

ՄԻ[2] - *տե՛ս* ՄԷԼ:

ՄԻԳԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ՄԸԳԱ՛ԼԻԼ:

ՄԻԳԱ՛ԼՎԻԼ - *տե՛ս* ՄԸԳԱ՛ԼՎԻԼ:

ՄԻԳԱՄ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԻԳԱ՛Մ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԻԳԸԼԱ՛ՏԸ՞Ղ - *տե՛ս* ՄԸԳԸԼԱ՛ՏԸ՞Ղ:

ՄԻՋԸ՞ՏԷ - *տե՛ս* ՄԸՋԸ՞ՏԷ:

ՄԻՋԻԼ - *տե՛ս* ՄԸՋԻԼ:

ՄԻՋՎԻԼ - *տե՛ս* ՄԸՋՎԻԼ:

ՄԻՋՈ՛ՒԿ - *տե՛ս* ՄԸՋՈ՛ՒԿ:

ՄԻՋՈ՛ՒԿԱՃՈ՛ՒՐ - *տե՛ս* ՄԸՋՈ՛ՒԿԱՃՈ՛ՒՐ:

ՄԻՋՈ՛ՒԿԹԸԹՕ - *տե՛ս* ՄԸՋՈ՛ՒԿԹԸԹՕ:

ՄԻԹԱՄ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԻԹԱ՛Մ - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՄԻԹԻԼ - *տե՛ս* ՄԸԹԻԼ:

ՄԻԹԻԼԱ՛ՑՈ՛Ւ - *տե՛ս* ՄԸԹԻԼԱ՛ՑՈ՛Ւ:

ՄԻԺՄԱ՛ՀԻ - *տե՛ս* ՄԸԺՄԱ՛ՀԻ:

ՄԻԼ[1] *(արաբ., պրս., թրք. mil (շյուղ, ճաղ)* - *գ.* 1. Տանիքի տակի՝ պատից պատ ձգվող գերան: *Կէշանը մին միլ ա ընո՛ւմ պէրած, վէր աշունքը կօճին կօտրած կ՝էրանը փօխէ* (ՆԱԲ, 118): 2. *փխբ.* Երկար՝ ընդարձակ տարածություն: *Ք՝ընում ա, տը՛սնում մին մէծ շէնք՝ մի միլ դո՛ւզում* (ՀԱԲ, 15, 51):

ՄԻԼ[2] - *տե՛ս* ՄԷԼ:

ՄԻԼԱ՛Թ - *տե՛ս* ՄԻԼԼԱ՛Թ:

ՄԻԼԱ՛ՂԱԹ - *գ.* Տանիքի գերանների արանքը: *Միլըղաթէրը ցը՛խում ըն, վէր ծըմը՛ռնը տաք ինի* (Ձ):

ՄԻԼԱ՛ՑՈՒ - *ած., գ.* Միլի՝ գերանի համար հարմար (փայտ): *Մին օր էլ հուրը-տըղա ք՝ինամ ըն ծըմակը, վէր միլա՛ցու պիրին* (Ձ):

ՄԻԼԷՅԻՆ - *գ.* Մի քիչ տաք՝ գոլ ջուր: *Էտ ըխպիրին ճո՛ւրըն էլ հօ ճո՛ւր չի՞, միլէյին ա* (Ձ):

ՄԻԼԸՄԻԾ - *տե՛ս* ՄԱ՛ԼԱ՛ՄԻԾ:

ՄԻԼԻՑԱ՛ *(ռուս. милиция, լատ. militia)* - *գ.* 1. Ոստիկանություն: *Միլիցա՛ն վէր ինի վէջ, կ՝ուղօթունը կը՛շըտանա* (Բ): 2. Ոստիկան: *Միլիցին նիհէտ վէր կ՝ամ ըն, թա նը՛ստին ծիյանքը, ծին թառանչ ա քաշում* (ԲՀԲ, 270): 3. Ոստիկանական բաժանմունք: *Ըտըրան փը՛ռնում ըն, տանում միլիցա՛* (Ձ):

ՄԻԼԼԱ՛Թ/ՄԻԼԱ՛Թ/ԻԼԼԱ՛Թ/ԻԼԱ՛Թ *(արաբ., պրս. mellet, թրք. millet)* - *գ.* 1. Ազգ, ցեղ: *Իսկի շատէրը կը՛լօ՛խ չըն ընգալ, թա հինչ միլլա՛թ ըն* (ՀԱԲ, 15, 154): 2. *տե՛ս* ԻԼԼԱ՛Թ-ՄԻԼԼԱ՛Թ: *Տըղան ասըմ ա.- Հինչ միլլա՛թ ը՞ս՝ էս քը՛շէրէն էտ ծառէն յըրա* (ՀԺՀ, V, 536):

ՄԻԼԼԱ՛Լ - *տե՛ս* ՄԸԼԼԱ՛Լ:

ՄԻԼԼԱ՛ՆԷՐ/ՄԸԼԻԱՆԷՐ *(ռուս. миллионер, ֆր. millionnaire)* - *տե՛ս* ՄԻԼԼՕ՛ՆԱՏԱՐ:

ՄԻԼԼԱ՛ՐԴ/ՄԸԼԻԱՐԴ *(ռուս. миллиард, ֆր. milliard)* - *թ.* Հազար միլիոն, միլիարդ: *Միհէնգվա դարումը միլլա՛րդ դըրամ բիդի ինի, վէր կարիս տօն շինիս* (Բ):

ՄԻԼԼԱ՛ՐԴԱՏԱՐ/ՄԸԼԻԱՐԴԱՏԱՐ - *ած., գ.* 1. Մեկ միլիարդ եւ ավելի հարստություն ունեցող (մարդ): *Միլլա՛րդատար մարթ ա Սուղումունէն թօռնը, հէնգ՝ միլլա՛րդ դըրամ փուլ օնէ* (Ձ): 2. Շատ հարուստ: *Միլլա՛րդատէր ա, ամմա կ՝ը՛ցը մին կարքէն շօ՛ր չի կա* (Բ):

ՄԻԼԼԱ՛ՐԴԷՐ/ՄԸԼԻԱՐԴԷՐ *(ռուս. миллиардер, ֆր. milliardaire)* - *տե՛ս* ՄԻԼԼԱ՛ՐԴԱՏԱՐ:

ՄԻԼԼԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸԼԼԸՑ(Ը)ՆԷԼ:

ՄԻԼԼԻՄԻՐԻ - *գ., ած.* 1. Թափառող մարդ, թափառական: *Մին օր էլ ըտըրանց շէնը մին միլլիմիրի յա կ՝ամ* (Ձ): 2. *տե՛ս* ԱՆԴԱՐ-ԸՆԴԷՐՈՒ:

ՄԻԼԼՕ՛Ն/ՄԸԼԻՕՆ *(ռուս. миллион, ֆր. million)* - 1. *թ.* Հազար անգամ հազար, միլիոն: *Միլլօ՛ն մանէթ ա տամ, էտ ծին ինք՝ օնում* (Ձ): 2. *ած.* Շատ, բազմաթիվ: *Խասան միլլօ՛ն վը՛խճար օնէ, ամմա մինը մօրթում չի, թա խօխէնք՝ը օտին* (Բ):

ՄԻԼԼՕ՛ՆԱՏԱՐ/ՄԸԼԻՕՆԱՏԱՐ - *ած., գ.* Մեկ միլիոն եւ ավելի հարստություն

ունեցող (մարդ): *Միլլիոնատար մարթիք՝ շատ կան* (Բ): 2. *տե՛ս* ՄԻԼԼԻՈՆԱՏԱՐ (2):

ՄԻԼԼԻՈՆՇԻԿ/ՄԸԼԻՈՆՇԻԿ - *տե՛ս* ՄԻԼԼԻՈՆԱՏԱՐ:

ՄԻԼՄԻԼԼԼ - *տե՛ս* ՄԸԼՄԸԼԼԼ:

ՄԻԼՄԻԼՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸԼՄԸԼՑ(Ը)ՆԷԼ:

ՄԻԼՉԼՔ՝ - *տե՛ս* ՄԸՆՋԷՂ(ՆԸ):

ՄԻԽԿԸԹԱԹԱԽ - *ած.* Շատ մեղք գործած, մեղքերի մեջ թաթախված: *Ղէրը ասմա.- Տու միխկըթաթախ մարթ ըս, տըրախտը ք՝ը՝զ ընթունական չի* (Ձ):

ՄԻԽԿԸԹԱՓՎԷԼ - *չբ. տե՛ս* Մէխկա թըմիզվիլ:

ՄԻԿԱ - *ած., մ.* Մի քիչ, փոքր-ինչ: *Տըղան ուրան ասած վախտան միկա յէլ ճէլլի կ՝ամ ա...* (ՆԼՂԺԲ, 44):

ՄԻՀԷ[1] - *տե՛ս* ՄԸՀԷՆԳ՝:

ՄԻՀԷ[2] - *տե՛ս* ՄԸՀԷ[2]:

ՄԻՀԷՆԳ՝ - *տե՛ս* ՄԸՀԷՆԳ՝:

ՄԻՀԷՆԳԱՆ(Ց) - *տե՛ս* ՄԸՀԷՆԳԱՆ(Ց):

ՄԻՀԷՆԳԻ(Ս) - *տե՛ս* ՄԸՀԷՆԳԻ(Ս):

ՄԻՀԷՆԳՍԱ - *տե՛ս* ՄԸՀԷՆԳՍԱ:

ՄԻՀԷՏ - *տե՛ս* ՄԸ՝ՀԸ՝Տ:

ՄԻՀԷՏԱՆ(Ց) - *տե՛ս* ՄԸՀԸ՝ՏԱՆ(Ց):

ՄԻՃԷՃ - *տե՛ս* ՄԸՃԷՃ:

ՄԻՃԻՃԻԼ - *տե՛ս* ՄԸՃԸՃԻԼ:

ՄԻՃԻՃՎԻԼ - *տե՛ս* ՄԸՃԸՃՎԻԼ:

ՄԻՃԻՃՕՐ - *տե՛ս* ՄԸՃԸՃՕՐ:

ՄԻՃԻՃՕՐԷԼ - *տե՛ս* ՄԸՃԸՃՕՐԷԼ:

ՄԻՃԻՃՕՐՎԷԼ - *տե՛ս* ՄԸՃԸՃՕՐՎԷԼ:

ՄԻՅԱՄԻԴ/ՄԻՅԱՄԻՏ *(գրբ. միամիտ)* - *ած.* Պարզամիտ, ոչ խորամանկ, միամիտ: *Ծախօղը դանստի կըլօխ ա իյնում, վար էտ մարթը միյամիտ ա...* (ՆԼՂԺԲ, 124):

- Միյամիդը ըղնէլ - Միամտանալ, հոգեպես հանգստանալ, կասկածը փարատվել: *Թաքավէրը վէր ըտի յա ասում, կընէգը միյամիդը ա ըղնում, ք՝ինամ* (Ձ):

- Միյամիդը քըցիլ - Միամտացնել, հոգեպես հանգստացնել: *Էտ Շըրմաղէն միյամիդը ա քըցում, պըրծնում, բուրդան դանման տուս օնում, թըխում...* (ՆԼՂԺԲ, 30):

ՄԻՅԱՄԻՏ - *տե՛ս* ՄԻՅԱՄԻԴ:

ՄԻՅԱՆԱԼ *(գրբ. միանամ)* - *չբ.* 1. Կցվել, կապվել, ներգրավվել, միանալ: *Միյանում ա ըտըրանց նըհը՝տ, ք՝ինամ* (Ձ): 2. Ամուսնական կապի մեջ մտնել: *Աղա ապան մին օր ջիհանում ա Մաքաղաթ աքօրը, թա.- Մա՛քաղաթ, քու մարթըտ էլ ա մը՝ռալ, իմ կընէգ՝ըս էլ, յը՝ք միյանանք, մինտը՝ղ ապըրինք՝* (Բ):

ՄԻՅԱՊԱՆ *(գրբ. միաբան)* - *մ.* Համախմբված կերպով, համերաշխաբար: *Էն ընք միյապան ըպրէլիս, Աստուծ տա՝ միշտ ըստի կէնանք* (Բ):

ՄԻՅԱՆՍԼԻԿ *(ռուս. мясник)* - *տե՛ս* ՂԱՍԱԲ:

ՄԻՅԱՎՈՒ - *ձ.* Կատվի հանած ձայնը: *Մին էլ, միյավո՛ւ, մին սանս ա ըսկանում* (Ձ):

ՄԻՅԱՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. միացուցանեմ)* - *նբ.* ՄԻՅԱՆԱԼ-ի:

ՄԻՅԱՑՈՒՄ - *գ.* Միանալը, միացվելը, միավորվելը: *Փարք՝ Ըստուծէն, էն ընք լ՝ավ ըպրէլիս, մէր օգ՝ածը Հայաստանա նը՝հը՝տ միյացումըն ա, վէր էտ էլ ինի, էլ օրիշ պէն օգ՝ում չընք* (Բ):

ՄԻՅՈՂԱՎԸ՝Տ - *տե՛ս* ՄԸՌԸԼԱՎԸ՝Տ:

ՄԻՅՎԸ՝ՂԱՆ - *տե՛ս* ԲԸՐԸ՝ՂԱՆ:

- Յբէխան ըզադէլ/թափէլ/թափ տալ/թանվ անէլ/պէց թօղնէլ/պբրծբցընէլ - 1. Մեկից՝ մի բանից դժվարությամբ ազատվել՝ պոկ գալ: *Ընի էտ մարթը մին թանիրանվ յբէխան ըզադում ա էտ կընգանան* (Զ): 2. Մեկին բաց թողնել, այլեւս չնեղել՝ չստիպել, ձեռք քաշել: *Էս մարթը Քբչալէն յէխան թանվ չի անում, նբհէտը յէր ա կէնում, քընում...* (ՀԱԲ, 15, 96):

- Յբէխան ծախէլ/ծբէրքու տինիլ - Մեկից կախման մեջ ընկնել: *Մարթ վէր յբէխան կընգանը ծախից, պբրծած ա* (Զ):

- Յբէխան հբվաքէլ/կբտբրէլ/փբռնէլ/օնէլ - Ստիպել, հարկադրել, նեղել: *Հարթնը տընընցուց յբէխան հբվաքում ա, թա.- Կավը ծբխբէցէք, ինձբէտէ վբսկբղան ի՛ք կանիք* (Զ):

- Յբէխան ճբղէլ - Լացելով՝ կոծելով՝ երդվելով եւն հավատացնել: *Նօքանը յբէխան ճբղում ա, թա.- Յբէս չբմ բրալ* (Զ):

- Յբէխան յբխան կարէլ - *տե՛ս* Յբէխան ծախէլ:

- Յբխան կախ ինիլ/կախ կէնալ (պուք չբկանալ) - *տե՛ս* Յբէխան հբվաքէլ:

ՅԸԷԽԾԷ/ՅԸԷԽՑԷ/ՅԸՂԸՑԷ/ՅԷԿԷՂԷՑԻ *(գրբ. եկեղեցի)* - *գ.* Քրիստոնյաների կրոնական-պաշտամունքային արարողությունների շենքը, եկեղեցի: *Տիզափանդ սարէն կբլխէն էն ա մին յբէխծէ կա՝ անումը Կատարօ վանք* (Բ):

- Յբէխծուն քարէրը լբվանալ - *տե՛ս* Սօրփէն քարէրը լբվանալ:

ՅԸԷԽՆԷԼ/ՅԷԽՆԷԼ/ՅԱԽՏԷԼ/ՅԷԽՏԷԼ/ՅԱԽԹԷԼ/ՀԱԽՏԷԼ/ՀԱԽԹԷԼ *(գրբ. յաղթեմ)* - *նբ.* 1. Կռվի՝ մրցության մեջ թշնամուն՝ հակառակորդին պարտության մատնել, հաղթել: *Աղվէսը ասըմ ա.- Թաքավէրընը ապրած կէնա, հունց յբխնէ՞ցէր էտ մէծ յէզնանը* (ՀԺՀ, V, 520): 2. Որեւէ հատկությամբ՝ գործով՝ վարքագծով եւն մեկին ընկճել՝ գերազանցել: *Հիվընդբթունը Մբրյանէն յբէխնալ ա* (Բ):

ՅԸԷԽՆԸՎԷԼ/ՅԷԽՆԸՎԷԼ/ՅԱԽՏԸՎԷԼ/ՅԷԽՏԸՎԷԼ/ՅԱԽԹԸՎԷԼ/ՀԱԽՏԸՎԷԼ/ՀԱԽԹԸՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՅԸԷԽՆԷԼ-ի: 2. *չբ. տե՛ս* Իրբէսը յբէխնբվէլ (ԻՐԸԷՍ-ի տակ):

ՅԸԷԽՏ/ՅԷԽՏ/ՅԸԷՂՏ/ՅԷՂՏ *(գրբ. աղտ)* - *գ.* 1. Աղտ, կեղտ: *Հիշկան լբվանում ա, շբլվարէն յբէխտը վէր չի կամ* (Զ): 2. *փխբ.* Մարդու պատիվն ու անունը արատավորող հանգամանք՝ գործ՝ արարք՝ բիծ՝ արատ: *Կուղբթուն անէլը փիս յբէխտ ա, վէր մարթին անա կացավ, էլ կարէլ չբս պուք տաս* (Զ):

- Յբէխտը ծանինի տակէն կէնալ չի - Վատ արարքը վերջիվերջո կբացահայտվի:

- Յբէխտ թբղաղուսկ անէլ/փբրթակէլ - Կեղտոտ արարքներ՝ չարագործություններ քողարկել: *Մարթը ամմէն դբնում կբղբթուն ա անում, կընէգբն էլ յբէխտ ա թբղաղուսկ անում* (Զ):

- Յբէխտ յբէր օնօղ - *տե՛ս* ՅԸԽՏԸԿՈՒԼԻ:

- Յբէխտում կբրած/փբլալված - 1. *տե՛ս* ՅԸԽՏԸԹԱԹԱԽ: 2. Կեղտոտ արարքների տեր, չարագործ: *Յբէխտում կբրած մարթին անա հիշկան հբէռէ շբռ տաս, էնքան քու օքութբտ ա* (Բ):

- Յը՝խտու շօռ կ՝ըվօղ - Խառնակիչ: *Յը՝խտու շօռ կ՝ըվօղ կընէգ՝ ա Օլինկան* (Բ):

- Յը՝խտ փըռնէլ - *տե՛ս* ՅԸԽՏՕՏԷԼ (2):

- Յը՝խտ քըսէլ (մինին) - Մեկին անվանարկել: *Հիրը՝վանը վէր հիրըվանէն յը՝խտ քըսից, հիրըվընօթունը դ՝ուշմընօթուն կըտը՝ռնա* (Ձ):

ՅԸ՝ԽՏՈՒՏ/ՅԷԽՏՈՒՏ/ՅԱԽՏՕՏ/ՅԷՂՏՈՒՏ/ՅԸ՝ՂՏՈՒՏ/ՅԷԽՏՈՒՏ - *ած.* 1. Կեղտոտ, աղտոտ, ոչ մաքուր: *Յը՝խտուտ շօ՛րէրը հանում ա, թանգգա՛ շօ՛րէր կ՝ը՝նում, ք՝ինամ* (Ձ): 2. *փխբ.* Անազնիվ, խարդախ, ստոր: *Յը՝խտուտ մարթ ար էտ սուդյան* (Ձ):

- Յը՝խտուտ յալլը՝խ - Կեղտոտ՝ անօգտագործելի իր: *Մա՛ուշտա՛րին էտ գ՝իբին յէշում ա, թա.- Էս յը՝խտուտ յալլը՝խը հու բի՞դի ինք՝ օնէ* (Ձ):

- Յը՝խտուտ պէրան - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑԱՏՈՒ:

ՅԸ՝ԽՏՈՒՏ-ՃԸՃՎՕՏ - 1. *տե՛ս* ՅԸԽՏԸԹԱԹԱԽ: 2. Փնթի, ոչ մաքրասեր: *Յը՝խտուտ-ճըճվուտ կընէգ՝ ա Մաքունց Աղունը* (Ձ):

ՅԸ՝ԽՏՈՒՏ-ՔԱՔՈՒՏ - *տե՛ս* ՅԸ՝ԽՏՈՒՏ-ՃԸՃՎՕՏ:

ՅԸ՝ԽՑԷ - *տե՛ս* ՅԸ՝ԽԾԷ:

ՅԸ՝Կ - *տե՛ս* ՅԸ՝Ք:

ՅԸ՝Ղ/ՅԷՂ *(գրբ. եւդ, իւդ)* - *գ.* 1. Կաթից՝ որոշ բույսերի սերմերից՝ պտուղներից՝ ծաղիկներից եւն ստացվող ճարպային նյութ, յուղ: *Կօվան ըստացած կաթնը, յէղը ծախըմ ին, ըտը՝ռանավ ապրըմ...* (ԼՂԲ, 361): 2. Նույնը հալած վիճակում: *Նահանք յէր ըն կէնում, տէսնում ղազանը կը՝ըակէն տը՝ռածմ, յէղը մէջին ճըլթճըլթամ ա* (ՀԺՀ, V, 367): 3. *տե՛ս* ԿԱՐԱ՛Ք՝: 4. Կենդանիների մսի վրայի ճարպային շերտը, ճարպ: *Խօգ՝ը մաշկում ըն, յը՝ղը վէր օնում, մէսը ծախում* (Բ): 5. Մեքենաներին՝ սարքերին՝ գործիքներին եւն քսելու թանձր յուղային նյութ, քսայուղ: *Յը՝ղը յօր ա օնում, մաշինը յը՝ղում* (Ձ):

- Յը՝ղը կը՝ըակէն իլլա՛լ - Շտապել, աճապարել: *Յը՝ղը կը՝ըակէն իլլա՛ում ա՞, խէ հանդա՛ռտ չը՝ս ք՝ինամ* (Բ):

- Յը՝ղը մածնան ա կույանում - Ճշմարտություն է, ապացուցելու կարիք չկա:

- Յը՝ղը մօխէրը տը՝ռնալ - 1. Գործը ձախողվել, մեծ վնաս կրել: *Խը՝ղճը հինչը օգ՝ում ա անէ, յը՝ղը մօխէրըն ա տը՝ռնում* (Ձ): 2. Շատ վշտանալ: *Էտ հինչ ա՞ իլլա՛լ, էլիա խէ յը՝ղըտ մօխէրըն ա՞ տը՝ռալ* (Բ):

- Յը՝ղը յըրա - Բոլորովին նոր՝ չօգտագործված: *Հա՛ռաբէդին տը՝ղան մին յը՝ղը յըրա մաշին ա ինք՝ կա՛լլալ հօրը հը՝տէ* (Բ):

- Յը՝ղընն ու մէսը հա՛լ(վ)իլ - Նիհարել: *Խօգ՝ը էնքան տա՛ուզնը կացալ ա, յը՝ղընն ա մէսը հա՛լվա՛լ ա* (Բ):

- Յը՝ղ(ը) վէր ածիս՝ կըհըվաքվէ - Չափազանց մաքուր է: ... *Ք՝ուչէք՝, հինչ ք՝ուչէ՞ք՝, յէղը վէր ածիս՝ կըհըվաքվէ...* (ՁՏ, Բ, 25):

- Յը՝ղը տըմակընն ըն քըսում - *տե՛ս* Փուլը փուլէն յըրա յա կ՝ամ:

- Յը՝ղ ինի՝ պարիկ՝ը՝նթան շատ կա - Կարեւորը միջոցներն են:

- Յը՝ղ կապէլ/փըռնէլ - *տե՛ս* ՅԸՂԸԿԱ՛ԼԻԼ:

- Յը՝ղ տը՝ռնալ, ջանավը ընցընէլ - 1. Լավ մարսվել: *Կ՝ինի, հինչ կ՝ի՞նի, լ՝ըհա վէր խըմում ըս, յը՝ղ ա տը՝ռնում, ջանավըտ ընցընում* (Բ): 2. Նպատակին ծառայել, օգուտ տալ: *Էտ կավը յը՝ղ ա տը՝ռնում, էտ յիթիմնէրէն ջանավը ընցընում* (Ձ):

- Յը՝ղու թիք՝ա՛/պատառ - *տե՛ս* Յը՝ղալի թիք՝ա՛:

- Յը՝ղու նըման - Հեշտ, սահուն, անարգել: *Տանը կօրծէրը յէղու նըման ար ք՝ինամ* (Ձ):

- Յը՝ղումը տըպակվէլ (ո՛ւրա՛ն) - Իր աշխատանքով՝ իր ունեցածով գոյատեւել՝ յոլա գնալ, ուրիշի օգնությանը չդիմել: *Թօղում չը՝ն, թա մունք մէր յը՝ղումը տըպակվինք՝* (Ձ):

- Յը՝ղու նըման հա՛լ(վ)իլ - *տե՛ս* Տափէն տակը ընցընէլ (1):

- Յը՝ղու պո՛ւլ - Թմբլիկ՝ փափլիկ երեխա: *Խօխա, հինչ խօ՞խա, մին յը՝ղու պո՛ւլ* (Բ):

- Յը՝ղու քըցիլ - *տե՛ս* Ժարիտ անէլ (1): *Պառավը էրկու ծո՛ւ վա կօտրում, յը՝ղու քըցո՛ւմ, ըտրրա ըռաշկէն տինո՛ւմ* (Ձ):

ՅԸ՝ՂԷԼ/ՅԷՂԷԼ *(գրբ. իւղեմ)* - *նբ.* 1. Յուղ քսել, յուղել (գործիքները, մեքենան եւն): *Կարէն մաշինը յը՝ղում ա, ըսքըսում շօ՛րը կարէլը* (Ձ): 2. *տե՛ս* Կաշառել: *Սուդյին յը՝ղում ըն, էտ տը՝ղէն ըզադում* (Ձ): 3. *տե՛ս* Կը՝ըօ՛խը յը՝ղէլ: 4. Նպաստել, օժանդակել, հովանավորել: *Աստուծ հը՝զարէն յը՝ղում ա, մինին՝ դաղում* (ԱԲԲ, 20): 5. Կալի հասկերը շրջել, որ մյուս երեսն էլ կալսվի: *Հաշանը յը՝ղում ըն, էլիա ըսքըսում կալաս անէլը* (Ձ):

ՅԸ՝ՂԷՄՆԸ - *տե՛ս* ՅԸ՝ՂԸՄՆԸ:

ՅԸ՝ՂԸՄՆԸ/ՅԸ՝ՂԷՄՆԸ *(գրբ. եղեամն)* - *գ.* Գետնի՝ բույսերի եւն վրա նստող մթնոլորտային տեղում, եղյամ: *Յը՝ղըմնը բաղվանչուն վը՝ննէրը թը՝ըչից* (Ձ):

- Յը՝ղըմնը նըստէլ/տինիլ - Գետնի՝ բույսերի եւն վրա եղյամի շերտ կապել, եղյամակալել: *Քը՝շէրը ծը՝ռէրէն յըրա վէր յը՝ղըմնը նըստից, գ՝իդա՛ վէր խաղուն քը՝ղէլի վախտըն ա* (Ձ):

- Յը՝ղըմնը օտէլ - Քիչ ցրտահարվելով՝ քաղցրանալ (պտուղների մասին): *Խաղուն էնքան պահում ըն, վէր յը՝ղըմնը օտէ* (Բ):

ՅԸ՝ՂԸՐ-ՄԸ՝ՂԸՐ - *տե՛ս* ՅԸՂԸՐ-ՄԸ՝ՂԸՐ:

ՅԸ՝ՂՆԸ/ՅԷՂՆԸ *(գրբ. եղն)* - *տե՛ս* Կ՝ԸԽՏԱՐ: ... *Ըտըրանա յը՝տը ըստը՝ղ յէղնիկ չի ըրվացալ...* (ԱԱ, 38):

ՅԸ՝ՂՎԷԼ/ՅԷՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՅԸ՝ՂԷԼ-ի:

ՅԸ՝ՂՏ - *տե՛ս* ՅԸ՝ԽՏ:

ՅԸ՝ՂՏԷՄ/ՅԷՂՏԷՄ - *գ.* Բարակ փայտ՝ շիվ, որը մտցնելով խնոցու մեջ՝ ստուգում են կարագի պատրաստ լինելը: *Յը՝ղտէսը քը՝ցո՛ւմ ա խընը՝ցէն, տա՛ուս օնում, թա.- Յը՝ղը պաղըրաստ ա* (Ձ):

ՅԸ՝ՂՏՈՒՏ - *տե՛ս* ՅԸ՝ԽՏՈՒՏ:

ՅԸ՝ՂՈՒՏ/ՅԷՂՈՒՏ - *ած.* 1. Յուղոտված, վրան յուղ քսված, յուղով կեղտոտված: *Յը՝ղուտ շո՛ւրէրավ վէր նի յա մընում, լօխ ծը՝ծաղում ըն* (Ձ): 2. *տե՛ս* ՅԸ՝ՂԱԼԻ:

- Յը՝ղուտ անէլ - *տե՛ս* ՅԸ՝ՂՕՏԷԼ:

- Յը՝ղուտ ինիլ/տը՝ռնալ - *տե՛ս* ՅԸ՝ՂՕՏՎԷԼ:

ՅԸ՝ՂՈՒՏ-ՄԸ՝ՂՐՈՒՏ - *ած.* Շատ գեղեցիկ, չքնաղ, փարթամ: *Յը՝ղուտ-մը՝ղրուտ ըխճըկէրք ըն Անվանց Ապրըհամէն թօռնէրը* (Բ):

ՅԸ՝ՂՈՒՏ-ՅԸ՝ՂԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ՅԸ՝ՂՈՒՏ-ՄԸ՝ՂՐՈՒՏ: ... *Տէսնում ա մին յը՝ղուտ-յը՝ղըթաթախ տը՝ղա բըդի ո՛ւրան տէղը կ՝ամ ա...* (ՆԱԲ, II, 21):

ՅԸ՝Մ/ՅԷՄ *(թրք. yem)* - *գ.* Ուտելիք, կեր: *Յը՝մ չի կա, հիյվընէն մընացալ ըն տա՛ուզնը* (Բ):

- Յը՝մ անէլ - Սնվել, կերակրվել: *Ուշըփնէն նըստում ըն, թա յը՝մ անին, Պիճ ախպէրը մուտանում ա* (Ձ):

ՅԸ՝ՆԹԱՐԿԸՎԷԼ/ՅԷՆԹԱՐԿԸՎԷԼ *(գրբ. ենթարկիմ)* - *չբ.* Հպատակվել, հնազանդվել: *Ախճիգ՝ը էլիա չի յէնթարկվալ, պիցըրացալ ա քը՝րծէն պըտօկը, կը՝ռը՝վ տըվալ* (ԱԱ, 41):

ՅԸ՝Ս/ՅԷՍ/ՅԸՍ/ԻՍ *(գրբ. ես)* - *դ.* Անձնական դերանվան առաջին դեմքի եզակին՝ ես: *Էն բա՛ւսը պահող նը՝ք՝արընն ասըմ ա.- Յը՝ս տը՝սալ ըմ՝ հու վա խըխօցը մօրթալ* (ՀԺՀ, V, 538):

- Յը՝ս ասում ըմ, յը՝ս՝ ըսկանում - Ասածս ոչ ոք չի լսում՝ անարձագանք՝ անկատար է մնում:

- Յը՝ս զըհա՛ր օտիմ, տուք կէրէք՝ -

Դժգոհության արտահայտություն ճաշելու՝ որեւէ բան ճաշակելու ժամանակ:

- Յըս էլ ասիմ - Ինձ համար անհասկանալի էր (ասում են, երբ պարզում՝ կռահում են, թե ինչ է եղել): *Հանը կըզնըվում ա, թա.- Յըս էլ ասիմ, էս ըշտըղան ա ըստըրա էսքան փուլը* (Ձ):

- Յըս էն յըզնանը յըղիմ, տու՝ էն հըրէնջին - Մեծը եւ լավը՝ ինձ, փոքրը եւ վատը՝ քեզ:

- Յըս ըմ, վէր կամ - Մեծամտելու՝ գոռոզամտելու արտահայտություն: *Կատուն վէր մուկուն փըռնած, կէրած ա ընհում, առուծու նըման վէնէրը հուրհուր ա փըթաթում, յանի՝ յէս ըմ, վէր կամ* (ՆԱԲ, 75):

- Յըս ըմ տըռալ, ինքը՛ն ա տըռալ - Չնայած բոլոր ջանքերիս՝ չի հաջողվել համոզել:

- Յըս էշըս իմ հըղըցավըս ըմ քըշիլանն - Ես իմ անելիքն անելու եմ:

- Յըս ի(մ) հօր տըղան չինիմ, թա... - Երդման կամ սպառնալիքի արտահայտություն մի բան անպայման կատարելու՝ վրեժ լուծելու եւն մասին: *Վըրսկանը շինըմաչումը վընն ա կէնում, թա.- Յըս իմ հօր տըղան չինիմ, թա էտ կուլին ըսպանիմ վէջ* (Ձ):

- Յըս ի(մ) մօր ծըծընն էլ չըմ մընանթավ կէրալ - Ոչ ոք իրավունք չունի երեսովս տալու արած լավությունը, ես բոլորի լավությունը փոխհատուցել եմ:

- Յըս ի(մ) մօր մընանթը էլ չըմ յըր կալանլ - *տեմ* Յըս իմ մօր ծըծընն էլ չըմ մընանթավ կէրալ:

- Յըս իմ մօր փօրան մըհըտ ըմ ծընվալ - Ես մի բանը մի անգամ եմ ասում, իմ խոսքը չեմ փոխի:

- Յըս՝ ինձըտէ, տու՝ քըզըտէ/ինքը՛ն՝ հուրանն հըտէ - Մենք այլեւս իրար հետ գործել՝ մտերմություն անել՝ լինել չենք կարող:

- Յըս կանն ըմ ասում, տու՝ տանն - Իմ ու քո ասածներն իրար չեն համընկնում, դու ինձ չես հասկանում:

- Յըս հինչու տար ը՞մ - Ո՞րն է իմ օգուտը՝ ունեցածը՝ աշխատանքի արդյունքը: *Հանը ասմա.- Էտ վէր լօխ տանում ըս ծախիս, յըս հինչու տար ը՞մ* (Ձ):

- Յըս հուվ ը՞մ, վէր... - Ես իրավասու չեմ, անզոր եմ: *Կընէգը թա.- Խանըն ապրրած կէնա, յըս հուվ ը՞մ, վէր քըզ ջօղաբ տամ* (Ձ):

- Յըս՝ մըռած, տու՝ սաղ - Երբեւէ կհամոզվես իմ ասածների ճշմարտության մեջ: *Մարթը թա.- Յըս՝ մըռած, տու՝ սաղ, էս լակուտը կըլօխըտ օյին շատ ա պիրլանկանն* (Ձ):

- Յըս մըռնիմ, թա... - Երդման բանաձեւ: *Նօքանը ասմա.- Մղա, յըս մըռնիմ, թա էտ պէնան սըտ ինիմ* (Ձ):

- Յըս յըս չինիմ, թա... - *տեմ* Յըս իմ հօր տըղան չինիմ, թա...

- Յըս պէն ըմ ասում, տու պէմբակ ըս ըսկանում - *տեմ* Յըս կանն ըս ասում, տու՝ տանն:

- Յըս վէ՛չ մաչումըն ըմ, վէ՛չ տհուսհումը - Ես ոչ մի գործի չեմ խառնվում, չեզոք դիրք եմ բռնում:

- Յըս տանձանձ յըմ խօսում, տու կանձանձ - *տեմ* Յըս կանն ըմ ասում, տու՝ տանն:

- Յըս տարը չըմ - Ես այդ գործին չեմ խառնվի, պատասխանատու չեմ:

- Յըս քըզ նըհաշ կըտամ, թա ըշտըղ ա Դառթունց շանը կըլօխը թաղած - Սպառնալիքի արտահայտություն:

- Յըս քու շօնըտ ըմ - Մեկին իր նվիրվածությունը՝ հպատակ լինելը ցույց տվող արտահայտություն: *Ասում ա.- Յըս քու շօնըտ ըմ, հինչը ասիս, էն էլ կանիմ* (Ձ):

- Յըս՝ քօն, մէխկըս՝ գէրթանն - Ինչքան էլ անմեղ լինեմ, միեւնույն է՝ մեղավոր կհամարեն:

ՅԸՍ-ՅԸՍ - *տեմ* ՅԸՍ Ու ՅԸՍ:

ՅԸՍ ՈՒ ՅԸՍ/ՅԸՍ-ՅԸՍ - *մ.* Ինքս ինձ հետ: *Էտ վէր տըսէ, տհուս յըկէ, յըս ու յըս խուսէլավ քըցէ* (Ձ):

ՅԸՏ/ՅԷՏ *(գրբ. յետ)* - *մ.* 1. Դեպի հետ, դեպի հետեւի կողմը: *Յըտ յէշում ա, տըսնում խօխան կա վէջ* (Ձ): 2. Նորից, դարձյալ, վերստին: *Պիրում ըն յըտ խըմօր հունցում, հաց թըխում* (Ձ):

- Յըտ անէլ - 1. Արձակել, բաց անել, քանդել (հանգույցը, օղակը եւն): *Ծիլկանը կապը յէտ ա անում...* (ՆԱԲ, 27): 2. Խմորի գնդերը բացել: *Պհլը յըտ ա անում, հաց թըխում* (Բ): 3. Ետ դարձնել, ետ գցել, ետ թողնել: *Դանան նըխէրան յըտ ըն անում, վէր մօրը ծըծէ վէջ* (Բ): 4. Երեխային կրծքից կտրել: *Խօխան վէր տըռավ էրկու տիրըկան, մարը յըտ ըրավ* (Ձ): 5. *տեմ* Յըտ օնէլ (1):

- Յըտ ըղնէլ - 1. Ուրիշներից ետ մնալ, ուրիշների ընթացքին չհասնել: *Էտ էծը ամմէն օր նըխէրան յըտ ար ըղնում* (Ձ): 2. Ուշանալ: *Ըստարէ ծըմըռնը յըտ ա ընգալ* (Բ): 3. Չառաջադիմել, հետադիմել: *Էտ խօխան ըշկօլումը յըտ ա ըղնում* (Ձ): 4. Հղիանալ: *Էս կընէգը յէտ ա ընգալ, մին ախճիգ պէրալ, յէտնան մըռալ* (ՀԺՀ, VI, 46):

- Յըտ ընգած(ը) - *տեմ* Տէն ընգած(ը):

- Յըտ ընցած - Ուշ, կեսօրից հետո: *Յըտ ընցած քինամ ա հօնձ, տըսնում հընգէրունքը հուրանց արտէրը հընձալ ըն, պըրծալ* (Ձ):

- Յըտ ընցընէլ - Ուշանալ, կեսօրն անցնել: *Մին պատառ վըր օրը յէտ ա ընցնըմ, էս կընէգը կօժը յօր ա օնըմ, վըր քինի ախպհուրը, ճուր պէրի* (ՀԺՀ, VI, 202):

- Յըտ ինիլ - Արձակվել, քանդվել (հանգույցը, օղակը եւն): *Ծին վէր ծիք ա տամ, կապը յըտ ա ինհում* (Ձ):

- Յըտ կաղնէլ/կէնալ - *տեմ* Յըտ վըսնը կէնալ:

- Յըտ կալ - 1. Վերադառնալ: *Օխծը յըտ կամ ա, ճօտէն քըթէնում, փուշմանում հուրանն ըրածան...* (ԱԱ, 70): 2. Վերականգնվել: *Ընցածը լանց ինիլավ էլ յըտ չի կալ* (ԱԲԲ, 28): 3. Փսխվել, կերածը ետ թափվել: *Վէր մաննը կօխում ա պէրանը, կէրածը յըտ ա կամ* (Ձ): 4. Ուշքի գալ, վերակենդանանալ, սթափվել, կազդուրվել: *Ճըպաղում ա, վէր ըղնում, մընէլ, վէր ճհուրը ածում ըն կըլխէն, յըտ ա կամ* (Ձ): 5. Փափկել, կակղել, նախկին վիճակն ընդունել: *Սառած մէսը տինում ա փիչին կօխկէն, էնքան պահում, մինչըվ յըտ ա կամ* (Ձ): 6. Նյութականը փոքր-ինչ բարելավվել: *Միրօժը հաց չի իլալ քըթինանլիս, թա օտէ, միհէնգ կօրծի յա նի մըտալ, յըտ յըկալ* (Բ): 7. Փթթել, ծաղկել, փարթամանալ: *Թօռը յըկավ, բաղէրը յըտ յըկէն* (Բ):

- Յըտ մաչիլ - 1. Ետ շարժվել, ընկրկել: *Օշափնէն էտ վէր տըսէն, յըտ մըչէգեն* (Ձ): 2. Տրամադրությունը բարձրանալ, տրտմությունը՝ մռայլությունն անցնել: *Վէր թօռնանը տըսնում ա, յըտ ա մաչում* (Ձ): 3. Եղանակը բացվել, անձրեւը՝ ձյունը՝ ամպամածությունը դադարել: *Թօխպը մին խըրէգ վէր յէտ ա մաչում, յէշում ըն տէսնում՝ ծօրան մին լհուս ա ըրվամ* (ՆԱԲ, II, 60):

- Յըտ մընալ - *տեմ* Յըտ ըղնէլ:

- Յըտ յըկած - 1. Աչքաբաց, ճարպիկ, փորձառու: *Յըտ յըկած մարթ ա Սուղումունը* (Բ): 2. Ամուսնալուծված եւ հայրական տուն վերադարձած (կին): *Խըղճ խօսրօվը հինչ ա՞նէ, իրը՛ք ախճիգ օնէ, իրը՛քան՝ յըտ յըկած, էնըն տանը նըստած* (Բ):

- Յըտ յըր օնէլ - 1. Տվածը նորից վերցնել: *Ըստրանք կըռվում ըն, Սանթուրը կավը յըտ յըր ա օնում* (Բ): 2. Հրաժարվել (խոսքից, ասածից, խոստացածից եւն): *Ասում ա.- Անէսկըտ յըտ յըր կալ, թա չէ փիս ա ինանկանն* (Ձ):

- Յըտ պահէլ - *տեմ* Յըտ քաշիլ (2):

- Յըտ պէրած - Ամուսնուց վտարված եւ հայրական տուն ուղարկած

(կին): *Յը՛տ պէրած կընգանը հու բի՞դի օգ՛ի* (Բ):

- Յը՛տ պիրիլ - 1. Վերադարձնել, տեղը բերել: *Շինա՛ցէք՛ ք՛ինամ ըն ըտը-րանց մին լ՛ավ թակում, ո՛ւրա՛նց հիյվընն-էն յը՛տ պիրում* (Զ): 2. Ուշքի բերել, վե-րակենդանացնել: *Ճո՛ւր ըն շաղ տաս, էտ խուխէն յը՛տ պիրիս* (ԱԱ, 17):

- Յը՛տ վը՛ենը կէնալ - 1. Խոստումից հրաժարվել, խոսքը չկատարել: *Տըղա-մարթը վէր խօսկ ա տամ, բիդի անէ, վէչ թա յը՛տ վը՛ենը կէնա* (Զ): 2. Մի բան անելուց դադարել, թողնել, ձեռք վերց-նել: *Էտ օրվանից վը՛ռսկանը վը՛ռս ընէ-լան յը՛տ ա վը՛ենը կէնում* (Զ):

- Յը՛տ տալ - 1. Վերադարձնել: *Տա-նում ա փուլը յը՛տ տամ, թա.- Օգ՛ում չըմ* (Զ): 2. Ընթացքը շուռ տալ, շրջել: *Տը-ղան կըռէվ ա անում, հախտում, զօրքը յէտ տամ, կ՛ամ...* (ՀԺՀ, V, 482): 3. Բացել, քանդել (կծիկը, փաթեթը եւն): *Էտ թիլը հըղըցումը յէտ տալավ էտ ախճիգ՛ը կ՛աս ա տօն* (ՀԺՀ, V, 255): 4. Փսխել, կերածը թափել: *Էնքան օտում ա, մինչը՛վ յը՛տ ա տամ* (Զ):

- Յը՛տ տանէլ - 1. Վերադարձնել, տեղը տանել: *Կավը յը՛տ տանում ըն հա՛նդը* (Զ): 2. Մի կողմ քաշել՝ ձգել: *Փա՛ր-դա՛ն յը՛տ ա տանում, տը՛սնում հըրթնա-ցուն ըտը՛ղ կ՛օղլը կացած* (Զ): 3. Տարա-ծել, մեկնել, փռել: *Վը՛ենէրը յը՛տ ա տանում, փիչին ղըրաղէն նըստում* (Զ):

- Յը՛տ տը՛ռնալ - 1. *տե՛ս* Յը՛տ կ՛ալ (1, 2): 2. Շրջվել: *Յը՛տ ա տը՛ռնում, յէշում* (Զ):

- Յը՛տ քաշիլ - 1. *տե՛ս* Յը՛տ տանէլ (2): 2. Քաշելով ետ պահել՝ խանգարել՝ զսպել: *Դանան յը՛տ ա քաշո՛ում, վէր մօրը ծրծէ վէչ* (Զ):

- Յը՛տ քաշվիլ - Նահանջել, հետ գնալ, հեռանալ: *Ք՛ընո՛ւմ ըն մուտանում, վէր ճո՛ւր յօր օնին, ճո՛ւրը յէտ ա քաշվում ճիրըվէրէն տակը* (ՀԺՀ, V, 170):

- Յը՛տ քըցիլ - 1. Մեկին ետ թողնել, զարգացումը՝ առաջխաղացմանը խան-գարել: *Սաբավ դասատու վա, խօխօնցը յը՛տ ա քըցո՛ում* (Բ): 2. Ուշացնել, հետա-ձգել: *Էս ծո՛ւնը մէր կօրծը յը՛տ քըցից* (Բ): 3. *տե՛ս* Յը՛տ տանէլ (2): *Յօրդանը յը՛տ ա քըցում, նի մըննում դաթը...* (ՀԱԲ, 15, 99): 4. Խնայելով հավաքել, տնտեսել: *Այան փուլ ա յը՛տ քըցո՛ում, թօռնանը հը՛տէ մին լ՛ավ կաստո՛ում ինք՛ օնում* (Զ): 5. Դժվարությամբ խնամել՝ պահել՝ մե-ծացնել: *Էրկու խօխա յա յը՛տ քըցա՛լ, ճօխտըն էլ բըդասըլ ըն տո՛ւս յը՛կալ* (Բ):

- Յը՛տ ք՛ինիլ - 1. Վերադառնալ, տե-ղը գնալ: *Տը՛սնում ա, վէր քըղաքումը կարում չի յօլլա ք՛ինի, յը՛տ ք՛ինո՛ում ա շէնը* (Զ): 2. Դեպի ետ շարժվել՝ ծռվել՝ թեքվել: *Թօռը վէր կ՛ամ ա, պատը նըմա-նում ա, յը՛տ ք՛ինո՛ում* (Զ): 3. Հետադիմել: *Խալխը առաշկ ըն ք՛ինո՛ում, մէր Ծըտօ-ռէն տըղան էլ յը՛տ ա ք՛ինո՛ում, իլա՛ծըն էլ դընգըլացալ ա* (Բ):

- Յը՛տ օնէլ - 1. Դադարել, այլեւս չտեղալ: *Թօռը վէր յը՛տ ա օնում, խո-խէնք՛ը տո՛ւս ըն կ՛ամ, վէր խաղ անին* (Զ): 2. *տե՛ս* Յը՛տ անէլ (4):

ՅԸ՛ՏԱՎ/ՅԷՏԱՎ/ՅԸ՛ՏԱՎ/ՅԷՏԱՎ - *տե՛ս* ՅԸ՛ՏՆԱՆ:

ՅԸ՛ՏԷ/ՅԷՏԷ *(գրբ. յետի (ետեւի, վեր-ջին)* - *մ., ած.* 1. Նշանակված՝ պայմա-նավորված՝ հարկ եղած ժամանակից հետո: *Ըտըրանք մըսլըհաթ ըն անում, վէր ուռթանա քըշէրավ ք՛ինին ծըմակը, ամմա յը՛տէ յըն ք՛ինո՛ում* (Զ): 2. Ցան-կալի՝ հարմար ժամանակից՝ պահից ուշ տեղի ունեցող՝ եղող: *Ըստարէ խաղուն յը՛տէ յա հըսալ, թուռըթացը ըսքըսալ ա, էլ կրը՛ցալ չընք քաղինք՛* (Բ): 3. Դան-դաղ: *Հա՛ղը ասմա.- Շատ ըս յը՛տէ կ՛ամ, պատառ թա՛յդի ընգէլ, ճէլ անինք՛ հըս-նինք՛ շէնը* (Զ):

- Յը՛տէ խը՛լք - Ճիշտ եզրակացու-թյուն: *Յը՛տէ խը՛լքը լ՛ավ պէն ա, վէր յը-տանա վէչ* (Բ):

- Յը՛տէ օր - Ծերության օրեր: *Մարթ բիդի յը՛տէ օրվա հը՛տէ էլ մըտածէ* (Զ):

ՅԸ՛ՏԷ-ՃԷԼԼԻ - *մ.* Վաղ թե ուշ: *Պիճօ-թունը յէտէ-ճէլլի աշխարքըս ուննական ա* (ՆԱԲ, 34):

ՅԸ՛ՏԷ-ՅԸ՛ՏԷ - *տե՛ս* ՅԸՏԸՅԸ՛ՏԷ:

ՅԸ՛ՏԸ/ՅԷՏԸ - *մ.* Որեւէ ժամանա-կակետի կամ գործողության հաջորդե-լով, որեւէ բանից նշված ժամանակով ուշ լինելը, անց: *Մին քանի մունուտանը յէտը օշափը տը՛սավ, վը՛ր էտ տըղան սաղ-սալամաթ էն ա կաղնած* (ՀԺՀ, V, 87):

ՅԸ՛ՏԸՀԸ՛ՏԸ/ՅԷՏԸՀԷՏԸ/ՅԸՏԸ-ՀԸ՛ՏԸ - *տե՛ս* ՅԸ՛ՏՆԱՆ:

ՅԸ՛Տ-ՅԸ՛Տ/ՅԷՏ-ՅԷՏ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Յը՛տ-յը՛տ անէլ - 1. Շատ կապեր արձակել՝ բաց անել՝ քանդել: *Թաքուն նի յա մընում, էտ ծիյօտանցը կապէրը յը՛տ-յը՛տ անում* (Զ): 2. Փորփրել: *Մը՛ծ հառնը թէն ա յօր օնում, ք՛ինա՛մ մը՛ծ տանձուն տակը յէտ-յէտ անում...* (ՀԺՀ, VII, 290):

- Յը՛տ-յը՛տ ինիլ/տը՛ռնալ - 1. Շատ կապեր արձակվել՝ բացվել՝ քանդվել: *Վէր բո՛ւրդա՛ն ծիք՛ ա տամ, կապէրը յը՛տ-յը՛տ ա ինո՛ում* (Զ): 2. Փորփրվել: *Պիրում ա էտ յը՛տ-յը՛տ իլա՛ծ վը՛ղումը սըխտօր վարում* (Զ):

- Յը՛տ-յը՛տ ք՛ինիլ - *տե՛ս* Յը՛տ ք՛ինիլ (2, 3):

ՅԸ՛ՏՆԱՆ/ՅԷՏՆԱՆ/ՅԷՆՆԱՆ - *մ.* 1. Ապա, այնուհետեւ, հետո: *Թաքավէրին տըղան սուս ա անում, յը՛տնան ասում.- Յը՛ս ըմ ծէր թաքավէրին տըղան* (Զ): 2. Ավելի ուշ, հետագայում: *Յէտնան էտ քէրծէն անումը տինո՛ւմ ըն Սախկալթու-թան* (Զ): 3. Ըստ կարգի՝ տեղի՝ աստի-ճանի՝ հաջորդելը: *Ըտըրանք ծըլըպա-տակ նըստոտում ըն. հա՛ղը, յը՛տնան՝ տը-ղէք՛ը, յը՛տնան՝ թօռնէրը* (Զ): 4. Հետո ի՞նչ պիտի անենք (հարցական շեշտով): *Կընէգը ասմա.- Մ՛ մարթ, էտ վէր ճօխտ կավը ծախում ըս, պա յը՛՞տնան* (Զ):

- Յը՛՞տնան հինչ - 1. Ի՞նչ ես ուզում ասել, ասելիքդ ի՞նչ է: *Վէգիրը ասմա.- Ասինք՛ թա տու վըս ըզադալ, յը՛՞տնան հինչ* (Զ): 2. Ի՞նչ կա որ, դա ոչինչ չի նշա-նակում: *Յը՛՞տնան հինչ, թա փըսացուն կաղլէգ՛ ա, զատօ հարուստ ա* (Զ):

ՅԸ՛ՏՆՈՒԹՈՒՆ - *գ.* Ուշանալը, ուշացվելը, ուշացում: *...Յէտնո՛ւթո՛ւնավ վը՛ր քըշտան տո՛ւս կ՛ա՛ս, կըտանիս մուրթօտիս* (ԼՂԲ, 292):

ՅԸ՛ՏՎԱՅԸ՛Տ - *տե՛ս* ՅԸՏՎԸՅԸ՛Տ:

ՅԸ՛Տ ՈՒ ԱՌԱՇԿ - *մ.* Մերթ դեպի ետ, մերթ դեպի առաջ: *Էտ էլ գ՛ուդո՛ւմ չի, թա հինչ անէ, լ՛ըհա յը՛տ ու առաշկ ա ք՛ի-նամ* (Զ):

- Յը՛տ ու առաշկ անէլ - 1. Դեպի ետ եւ դեպի առաջ քայլել, գնալ-գալ: *Էնքան ըտը՛ղ յը՛տ ու առաշկ ա անում, լափ վըստակում ա* (Զ): 2. Տեղերը փոխել, ետեւինը՝ առաջ, առջեւինը ետ տանել (հատկապես՝ հնացած շորը նորոգելիս՝ կարկատելիս): *Այան ապուն չօխան յը՛տ ու առաշկ ա անում* (Բ):

ՅԸ՛Ր/ՅԷՐ[1] *(գրբ. վեր)* - 1. *տե՛ս* ՏԻՅԸ՛Ր: 2. *կ.* Ավելի, ավել, առավել: *Ասում ա.- Ք՛ըզանա յը՛ր ղաշա՛նգ՛ ախճիգ՛ չի կա, յը՛ս մինակ ք՛ը՛զ ըմ սի-ռում* (Զ): 3. Գործածվում է որպես հրա-մայական բացականչություն՝ վե՛ր կաց, ելի՛ր: *Պառավը մարթին ղութի՛ւն քըշտէն սօ՛ք՛ ա ասում.- Յը՛ր է՛, ա՛ մարթ, տըղէ-ք՛ըտ ա հարթնէրըտ յը՛կալ ըն, յը՛ր* (Զ):

- Յը՛ր ալլահ - *տե՛ս* Տէր Աստուծ:

- Յը՛ր ածած - *տե՛ս* ԹԱՓԱԾ (2):

- Յը՛ր ածէլ - 1. Փսխել, ետ տալ: *Էտ կ՛ը՛վաթ կ՛ինին էլ վէր խըմում ա, էլ կա-րում չի ո՛ւրա՛ն պահէ, յը՛ր ա ածում* (Զ): 2. *տե՛ս* ԹԱՓԷԼ (1, 2, 3):

- Յը՛ր անէլ - 1. Տարածել: *Վէր խուր-ջինը պէնում ա շըվթա՛ղլին վը՛տը յը՛ր անում, խօխէնք՛ը դա՛ստի հըվաքվում ըն* (Զ): 2. Մի տեղ բարձրացնել, վեր բարձ-րացնել, վերեւ տանել: *Մին մը՛ծ արծիվ ա կ՛ամ, չանգ՛էրավը փըռնում, ըտըրան յը՛ր անում սարէն պըտօկը* (Զ):

- Յը՛ր էլ ա, վէր էլ - Լիուլի բավարար է: *Մը՛ծ հառհնը ասում ա.- Էս պօլիգ՛ը վը՛ր վը՛սկավ լիգ՛ըն ինի, մը՛զ յէր էլ ա, վը՛ր էլ* (ՀԺՀ, VII, 290):

- Յը՛րը դըբըլ՝ու - Ամենեւին: *Կամ ըն թաքավէրէն կօշտը, ասում, վը՛ր ՝ուրանք ծ՝ուկուն չըն կըրը՛ցալ փըռնին, յը՛րը դըբըլ՝ու* (Զ):

- Յը՛ր ըղնէլ - 1. Մեկի հետ կատակներ անել: *Շինանցէք՛ վանրին էտ կընգանը նըհը՛տ յը՛ր ին ըղնում* (Զ): 2. Տրորելուց՝ մաժելուց թիակների տակով անցնող երկու գլխավոր երակները տռզել: *Էնքան հըլըղօրում ըն վէգիրին մաշկը, վէր դըմըրնէն յը՛ր ա ըղնում* (Զ): 3. *տե՛ս* Վէր ըղնէլ (ՎԷՐ[4]-ի տակ):

- Յը՛ր թըռչ՝ած - 1. Համարձակ խոսող: *Մընասէն էլ մին յը՛ր թըռչ՝ած կընէգ՛ ա ինում* (Զ): 2. Իրեն բարձր գնահատող, ինքնահավան: *Էտ հարթնըն էլ քէթը ցը՛ց, յը՛ր թըռչ՝ած կընէգ՛ ար* (Զ):

- Յը՛ր թըռչիլ - Հանկարծ վեր թռչել տեղից, ընդոստնել: *Էտ տըղան յէր ա թըռչըմ տը՛ղան, թօրավը թըխըմ, չօրս կըլ՝ՕխԸ կըտրըմ, մընըմ ա իրէք կըլ՝ՕխԸ* (ՀԺՀ, V, 17):

- Յը՛ր ինիլ - 1. Բարձրանալ մի տեղ՝ մի բանի վրա: *Յը՛ր ա ինում ծառը, ընդրղան հարայ տամ* (Զ): 2. Հեծնել, նստել (ձի, գնացք եւն): *Չանանբին էտ վէր ըսկանում ա, յը՛ր ա ինում ծին, հայդա* (Զ): 3. Դեպի վեր ձգվել՝ բարձրանալ: *Տը՛սնում ըն՝ ծըմակումը ծօխ ա յէր ինում* (ՀԺՀ, V, 499): 4. *փխբ.* Տարածվել: *Խըրըվածէն վը՛տը յը՛ր ա իլ՝ալ, շէնավը մին տը՛ռալ* (Բ): 5. *փխբ. տե՛ս* ՔՕՆԷԼ (1):

- Յը՛ր խըմել - Քթից կախված խլինքը ետ քաշել: *Խըլէնք՛ը յը՛ր խըմէլավ վէր նի յա մընում, լօխ ծըծըղօտում ըն* (Զ):

- Յը՛ր խուրտակվել - Վերանալ, չքանալ (հատկապես գործածվում է անեծքներում): *Յը՛ր խուրտակվէ Հ՝ուրաբէղը, բօստանըս քաղալ ա* (Բ):

- Յը՛ր կէնալ - 1. Ելնել, բարձրանալ, ոտքի կանգնել: *Ըտըրանք էնքան ՝անպէն ին, վը՛ր յէր էլ չին կը՛նըմ, թ՝ա հաց օտին, ճ՝ուր խըմին...* (ԼՂԲ, 352): 2. Հարձակվել: ... *Կը՛ռէվ ա յէր կացալ հըրէվան պարի թաքավը՛ռէն յըրա՝, սաղ յէրգ՛իրը քըրըքանդ ըրալ...* (ԱԱ, 68): 3. Արթնանալ, զարթնել: *Ուռութանա յէր ա կը՛ենըմ, տը՛սնըմ վը՛սկէ խընձ՝ՕրանմինԽիլլա՝ քաղած, տարած* (ՀԺՀ, V, 16): 4. Ծագել, առաջանալ, տեղի ունենալ, բարձրանալ, առաջ գալ, սկսվել: *Քը՛շէրը մին փիս քամէ յա յը՛ր կէնում, կալ՝ին խօրթնէրը սաղ քը՛շ՝ում, տանում* (Զ): 5. Վերանալ, անհետանալ: *Յէտնան, վէր ծ՝ունը յէր ա կէնում, պառավը քօռ ու փօշման ք՝ունում ա հ՝անդը...* (ԱԱ, 83):

- Յը՛ր կըց(ը)նէլ - 1. Տեղից հանել, բարձրացնել: Յէր ա կըցնում ըխճըկանը, *Բաղդասարէն կօխկէն վը՛նը կըցընում* (Զ): 2. Կռվի՝ պայքարի մղել: *Էտ ախճիգ՛ը խը՛ալքա տանում ա թաքավէրին, հիրը՛վան թաքավէրին յըրա կըռը՛վ յը՛ր կըցընում* (Զ): 3. Արթնացնել, զարթեցնել: *Քը՛շ՝էրի ըրազի Հաջի Սայադէն յէր ըն կըցնում, թա.- Ճէ՛լ ըրա ք՝ընի ժամ* (ՀԱԲ, 15, 106):

- Յը՛ր կ՝ալ - *տե՛ս* Վէր կ՝ալ (ՎԷՐ[4]-ի տակ):

- Յը՛ր հանէլ - *տե՛ս* Յը՛ր անէլ:

- Յը՛ր հըմբ՝ՕրցվիլԽ - Մեռնել, վախճանվել: *Արշօն էլ յը՛ր հըմբ՝ՕրցվիԽ* (Բ):

- Յը՛ր հըվաքէլ - Իրար վրա հավաքել, կիտել: *Յօրէնը յը՛ր ըն հըվաքում, ծասկում* (Զ):

- Յը՛ր տը՛ռնալ - *տե՛ս* Վէր տը՛ռնալ (ՎԷՐ[4]-ի տակ):

- Յը՛ր քաղէլ - 1. Հավաքել (սեղանը, սփռոցը եւն): *Մին լ՝ավ ք՝ը՛փ ըն անում, ըստօլը յը՛ր քաղում, ք՝ինամ* (Զ): 2. *արհմ.* Լափել, խժռել: *Ըտըրանք էրկու հօքավ նըստում ըն, էտ խուրջինին մաչի տէս-տէնը լօխ յը՛ր քաղում* (Զ):

- Յը՛ր քաշիլ/քը՛շ՝տիլ - Դեպի վեր ձգել, բարձրացնել: *Փօխկէրքը յը՛ր ա քաշ՝ում, նի մընում կ՝ը՛տը* (Զ):

- Յը՛ր քաշ՝ած մը՛ռալ - Նիհար ու դալուկ մարդ: *Յը՛ր քաշ՝ած մը՛ռալ ա Զինավուրը* (Բ):

- Յը՛ր քըցիլ - 1. Ուռչել: *Կօռնըս յը՛ր ա քըցալ* (Բ): 2. *տե՛ս* Վէր քըցիլ (ՎԷՐ[4]-ի տակ):

- Յը՛ր/յօր օնէլ - 1. Մի ընկած՝ դրված բան բարձրացնել, ձեռքն առնել: *Ըստէղ թաքավը՛ռէն տըղան ըստաքանը յօր ա օնում, ըսկըսում պատմէլը...* (ԽԼՂԺԲ, 72): 2. Իր վրա կրել, տանել: *Պէռնէրը շըլըկօտում ըն, ամմէնածանդըրըն էլ Ա՝լիսանըն ա յը՛ր օնում* (Զ): 3. Առնել իրեն համար: *Մ՝ՕրդըրՕ՝ուսըն ՝ուրանց տանան յէր կալած վը՛սկան պիրՕ՝ում ա պալատնէ շ՝ինում, վար մէչին ապրէն* (ԽԼՂԺԲ, 28): 4. Հետն առնել (մի տեղ գնալու համար): *Հէնգ՝ ծիյավէր ա յը՛ր օնում, ք՝ինամ* (Զ): 5. Հանձն առնել, ստանձնել: *Թաքավէրին մըռնէլանը յը՛տը թաքավըրօթունը կուճի տըղան ա յը՛ր օնում* (Զ): 6. Կարողանալ տանել, հանդուրժել: *Մէր համփա մարթէքը իտի պէնը յօր չըն օնըմ, վայը յէկալ ա կ՝իրօղէն տարալ...* (ՁՏ, Ա, 17): 7. Ընդօրինակել: *Լուդուրօթունը հօրը անա յա յը՛ր կ՝ալ՝ալ* (Բ): 8. Գրավել, նվաճել, տիրել: *Կէս տարէ կըրը՛ցալ չի, թա պէրթը յօր օնէ* (ԱԱ, 57): 9. Խլել, յուրացնել: *Ըստրանք մըսլըհաթ ըն ընէս, վէր էտ մարթիտ ըսպանէն, փուլը յօր օնէն* (ՀԺՀ, V, 259): 10. Ընդունել: *Մին հարուստ մին ախկադ, յէթիմ տըղի ն՝ՕՕ՝ար ա յօր օնըմ* (ԼՂԲ, 356): 11. Հուղարկավորել: *Էտ օրը էտ շէնումը չօրս մը՛ռալ ըն յը՛ր օնում* (Զ): 12. Հյուրընկալել: *Էտ օրը մին դարիբ մարթ ա կ՝ամ, թա ինձ ղօնաղ չը՛ք յօր օնէլ* (ՀԺՀ, VII, 309): 13. Պտղավորվել: *...Խաղվէն թ՝ունանգը քախծըր խաղու վա յօր կալ՝ալ, մարթիգ՝ կէրալ ըն, մըխթ՝ՕրանՕ՝ալ* (ԱԱ, 62): 14. Արդյունք ստանալ: *Ըստարէ թուռուին ա, հու վէր մին փութ ցօրէն վարէ, քըսան փութ յը՛ր ա ունական* (Բ): 15. Բաց անել, բացել, հանել: *Իրըսծասկանը յը՛ր ըն օնում, տը՛սնում էտ ՝ուրանց հարթնը չի* (Զ): 16. Տարածվել: *Քէցալ ըն տէսալ, վը՛ր մազը սաղ ջանը յէր ա կալալ...* (ՀԺՀ, VI, 23):

ՅԸՐԲԱՅԸՐ/ՅԷՐԲԱՅԷՐ *(թրք. yerbəyer (տեղը տեղին)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Յը՛րբայը՛ր անէլ/թօղնէլ - Սպանել, սատկացնել: *Տըղան թըխում ա, էտ դէվին յը՛րբայը՛ր անում* (Զ):

- Յը՛րբայը՛ր ինիլ/մընալ/տը՛ռնալ - Սպանվել, սատկել: *Կամ ըն, տը՛սնում էտ քավթառը յը՛րբայը՛ր իլ՝ած* (Զ):

ՅԸՐԳ՝ԻՆՔ՝ - *տե՛ս* ՅԷՐԳ՝ԻՆՔ՝:

ՅԸՐԷ/ՅԸՐԻ/ՅԷՐԷ/ՅԷՐԻ *(գրբ. վերին)* - *ած.* Վերեւի, վերին: *Էտ իշատար մարթը ք՝ընում ա լափ յէրէ ընգ՝ունին նըստում* (ՀԱԲ, 15, 84):

- Յը՛րէ ակնան ճ՝ուր խըմել - Գոռոզանալ, գոռոզամտել: *Էտ ախճիգ՛ը էլ կօգ՝ի չուբանու ախճիգ՝ ար, ամիա յը՛րէ ակնան ար ճ՝ուր խըմում* (Զ):

- Յը՛րէ ատաժ - Գլուխ, խելք: *Մին թաքավէր ՝ուրանն վէգիրին կանչըմ ա, ըտըրա յէրի ատաժը փօրցէլի հէտի, տըմ՝նալի հէտի՝ խէլ՝ունք ա՞, թ՝ա չէ՞...* (ՀԺՀ, V, 568):

- Յը՛րէ ատաժը պակաս/սըլկըհած/տէրտակ - *տե՛ս* Խը՛ալքան պակաս: *Մարթին յէրի ատաժը մին խըրէկ պակաս էր, ըտըրա հէտի յէլ լօխ կօրծը կընէկըն էր անըմ* (ԼՂԲ, 361):

- Յը՛րէ արտէն գ՝ՕրդՕ՝ան - *տե՛ս* Յը՛րէ բաղէն խընձ՝Օրը:

- Յը՛րէ բաղէն խընձ՝Օրը/գ՝ունը/ ծաղէգ՝ը - Արտոնյալ, ընտրյալ: *Ասում ա.- Հինչ ա՞, տու յը՛րէ բաղէն խընձ՝ՕրընԸ՞ս, վէր առանց հըրցընէլու բաղը քաղում ըս* (Զ):

- Յը՛րէ ծընկէրէն ածել - Հոխորտալ, գոռոզամտել: *Տա վէր շատ ա յը՛րէ ծընկէրէն ածում, փըռնում ըն, կըպօտում, քըցՕ՝ում վէրը* (Զ):

- Յը՛րէ կըխէն - Ամենավերեւում: *Կըլխոյէր յէշում ա, տը՛սնում լափ բէրթին յէրէ կըլխէն մին արմաղ-շարմաղ ախճիգ վը՛ննը կացած* (ՆԼՊԺԲ, 69):

- Յը՛րէ կ՚ապո՛ւտ - 1. *տե՛ս* ՅԷՐԳ՚ԻՆՔ՝: 2. *տե՛ս* ԱՍՏՈՒԾ (1): *Ախճիգը ծէրքէրը բիդի յէրգ՚ինք՚ըն ա ունէս, թա. Մ՚ յը՛րէ կ՚ապո՛ւտ, տու ինձ հըրօթուն ըրա...* (ԱԱ, 73):

- Յը՛րէ սիմին թըխէլ/ճընգըցընէլ - Վերեւից՝ գլխավորից սկսել: *Ասում ա.- Հինչ ը՞ս յը՛րէ սիմին թըխում, թայդի մէ՛լ ըղնէլ* (2):

- Յը՛րէ վը՛ննումը/վըննէրումը ինիլ - 1. Շտապել, արագ գնալ: *Էտ խէ յը՛րէ վը՛ննումըն ը՞ս* (Բ): 2. Պատրաստ լինել մի բանի՝ մի բան անելու: *Հարթնըն էլ էն ա ինո՛ւմ յը՛րէ վը՛ննումը, լ՚ըհա մարթը վէր ասում ա, դա՛ստի հըդէ յա ինո՛ւմ* (Ձ):

ՅԸ՛ՐԻ - *տե՛ս* ՅԸ՛ՐԷ:

ՅԸ՛ՐՔ/ՅԷՐՔ *(գրբ. երգ)* - 1. Բառերով արտահայտված երաժշտական երկ, երգ: *Էտ յը՛րքը ըտրրան ծանօթ ա ինո՛ւմ* (Ձ): 2. *փխբ.* Թռչունների ճռվողյուն, դայլայլ: *Ծըտէրէն յը՛րքը վըրսկանէն խընգարում ա, էլ կ՚ըխտարէն վըննասա՛նը ըսկանում չի* (Ձ):

- Յը՛րք ասէլ - 1. Երգել, երգային ստեղծագործությունը վերարտադրել: *Կ՚ամ ա էտ քը՛րծէն յըրա նըստում, ըսքըսում յը՛րք ասէլը* (Ձ): 2. Երգել կարողանալ: *Խաբարը հըսնում ա թաքավէրին, վէր փըլան շէնումը մին խոխա կա, լ՚ավ յը՛րք ա ասում* (Ձ): 3. *փխբ.* Ճռվողել, դայլայլել: *Ղուշէրը վէր յը՛րք ըն ասում, ք՚ը՛փըս կ՚ամ ա* (Բ):

- Յը՛րքը յը՛րքըվէլ - Բանը վերջացած լինել, անկումը՝ պարտությունը՝ կործանումը՝ վերջը անխուսափելի լինել: *Թուրքէրէն յը՛րքը յը՛րքըված ա, էլ կարէլ չըն նի մընին Ղարաբաղ* (Բ):

- Յը՛րքըտ ասէ - Բուն ասելիքդ ասա: *Վէզիրը ասում ա.- Ըստըղավ-ընդըղավ մէ՛լ ըղնէլ, յը՛ՐՔըտ ասէ* (Ձ):

- Յը՛րք կապէլ - *տե՛ս* Խաղ կապէլ:

ՅԸ՛ՐՔԷԼ/ՅԷՐՔԷԼ - *նբ. եւ չբ. տե՛ս* Յը՛րք ասէլ:

ՅԸ՛ՐՔԸՎԷԼ/ՅԷՐՔԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՅԸ՛ՐՔԷԼ-ի:

ՅԸ՛Ք/ՅԸ՛Կ/ՅԷՔ՚/ՅԷՔ/ՅԷԿ *(գրբ. եկ (գալը)* - *գ.* 1. Խմորում, խմորման բավարար աստիճան: *Խըմօրէն յը՛քը պակաս ա* (Բ): 2. Օդի քաշելու ժամանակ առաջին թորածը: *Ըրաղէն յը՛քը թո՛ւնդ ա* (Բ): 3. Մթնոլորտային տեղում (անձրեւ, ձյուն եւն): *Փիս արաշտ ա, յը՛ք չի կա* (Բ): 4. *չբ.* Կ՚ԱԼ (գալ) բայի հրամայական եզակին: *Ասում ա.- Յը՛ք, հըմա՛նչու մէ՛լ* (Ձ): 5. *վ.* Արտահայտում է հորդորանք: *Ք՚ինամ ա հիրըվանէն դաչանք անում, թա.- Յը՛ք լի ք՚ը՛մա՛գ ըրա, էշը պէռնիմ* (Ձ):

- Յը՛ք ho հա - Կովերին քշելու ձայն: *Ուռթանա կըվէրը համ քը՛շո՛ւմ ա, համ էլ ծէն տամ.- Յը՛ք ho հա՛, քու տը՛ռնը հինչը՞ն ըմ ասալ* (Ձ):

ՅԸ՛Ք՚ՈՒՄ(Ն)Ը/ՅԷՔ՚ՈՒՄ(Ն)Ը - *ած.* Պարարտ, չաղ, առողջ: *Յը՛ք՚ումը խօգ՚ ա ինո՛ւմ, մօրթում ըն, ք՚ը՛փ անում* (Ձ):

ՅԸ՛Ք՚(Ք՚)Ա - *տե՛ս* ՅԷՔ՚(Ք՚)Ա:

ՅԸ՛Ք(Ք)Ա - *տե՛ս* ՅԷՔ՚(Ք՚)Ա:

ՅԸԹԻՄԱՆԱԼ/ՅԷԹԻՄԱՆԱԼ - *նբ.* Որբանալ, որբ դառնալ: *Ըտի էտ խօխան յըթիմանում ա, օգ՚օղ տը՛ռնում* (Ձ):

ՅԸԹԻՄԱՏՕՆ/ՅԷԹԻՄԱՏՕՆ - *տե՛ս* ՅԸԹԻՄԽԱՆԱ:

ՅԸԹԻՄԽԱՆԱ/ՅԷԹԻՄԽԱՆԱ *(թրք. yetimxana)* - *գ.* 1. Պետական կամ բարեգործական հաստատություն, որ պահում ու դաստիարակում է որբերին ու ընկեցիկներին, որբանոց: *Ըստէփանակ՚ը՛ռտ էլ կա յըթիմխանա* (Բ): 2. Որբանոցի շենքը: *Ք՚ինամ ա յըթիմխանէն ըռաշկէն վը՛ննը կէնում, յէշում, վէր յէթիմնէն տո՛ւս կ՚ան* (Ձ):

ՅԸԹԻՄՑ(Ը)ՆԷԼ/ՅԷԹԻՄՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՅԸԹԻՄԱՆԱԼ-ի:

ՅԸԹԻՄՕԹՈՒՆ/ՅԷԹԻՄՕԹՈՒՆ - *գ.* 1. Որբ լինելը, որբություն: *Յըթիմօթունը շատ փիս պէն ա* (Բ): 2. Որբի վիճակը՝ կյանքը: *Էտ ախճիգ՚ը յըթիմօթունը շէնումըն ա անց կըցընում* (Ձ):

ՅԸԼԸՆԹԸՐԱՂ - Գործածվում է կապակցության մեջ:

- Յըլընթըրաղ անէլ - Խաբել, սուտ ասել: *Յըլընթըրաղ ըն անում, տահանց տընէրան տո՛ւս օնում* (Ձ):

ՅԸԼՂԸՐՂԻ - *տե՛ս* ԴԱ՚ԼԻ:

ՅԸԼՂՈՒՋԱԽ - *տե՛ս* ԸՎԱՋԱԿ:

ՅԸԽԱՎԷՐ - *ած.* Օձիք ունեցող: *Յըխավէր շօ՛ր ա կ՚ը՛ցալ* (Բ):

ՅԸԽԸԲՕՂԱՋ - *տե՛ս* ՅԸԽԸԿԸՌԸ՚Վ (1):

- Յըխըբօղազ անէլ/ինիլ - 1. Վիճել, լեզվակռիվ տալ: *... Վէր մին խիլլա՛ն յըխըբօղազ ըն ինո՛ւմ, կուճուր ախպէրը իլա՛ծ-չիլա՛ծը յօր ա օնում, տո՛ւս կ՚ամ, ք՚ինամ* (Ձ): 2. Ստիպել, պարտադրել: *Մին օր տահանք հօրը յըխըբօղազ ըն անում, թա մը՛զ պիտի փըսակէս* (ՀԺՀ, VII, 149):

ՅԸԽԸԼԱՄԻԾ/ՅԱԽԱԼԱՄԻԾ *(թրք. yakalamak)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Յըխըլամիշ անէլ/ինիլ - *տե՛ս* Յը՛խան հըվաքէլ: *... Հանց խօսըմ ըն, լըհա ասիս ինձ վէքսիլավ փօղ ինին տըված, սըրօկը ընցըցըրալ ըմ, յախալամիշ ըն իլա՛լ, թա փօղըս տօ* (ՋՏ, Բ, 63):

ՅԸԽԸԿԸՌԸ՚Վ - *գ.* 1. Վիճաբանություն, լեզվակռիվ: *Ըտըրանց տանը միշտ յըխըկըռը՛վ ա ինո՛ւմ* (Բ): 2. Խաղատեսակ, երբ երեխաները իրար օձիքից քաշքշում են՝ փորձելով գետնին գցել: *Յըխըկըռը՛վը՞ն էլ ա ըդա՛թ ընգալ, էլ խաղ չը՞ն անում* (Բ):

ՅԸԽԸՂ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Յըխըղ անէլ/ինիլ - *տե՛ս* Յը՛խան հըվաքէլ:

ՅԸԽՆԸՓԸԼԱՎ - *տե՛ս* ՅԱԽՆԻ-ՓԸԼԱՎ:

ՅԸԽՏԱՃՈ՛ՒՐ - *գ.* Կեղտոտ ջուր, կեղտաջուր: *Պիրում ա էտ յըխտաճո՛ւրը թըխծընում, ղունաղէն վը՛ննէրը լըվանում* (Ձ):

ՅԸԽՏԸԹԱԹԱԽ - *ած.* Վրան շատ կեղտ քսված, կեղտի մեջ թաթախված, կեղտակոլոլ: *Յըխտըթաթախ շօ՛րէրը տէն ըն ածում, ըտրրան լըղըցընում, թաքավէրու շօ՛րէր կ՚ը՛ց տամ* (Ձ):

ՅԸԽՏԸԿԱ՚ԼԻԼ - *չբ.* Կեղտ կապել, կեղտակալել: *Գ՚ա՛բա՛ն յըխտըկա՚լալ ա* (Բ):

ՅԸԽՏԸԿՈՒԼԻ - *ած.* 1. Շուտ կեղտոտվող: *Յըխտըկուլի շօ՛ր աշկէս պըլօր ա* (Բ): 2. Անմաքրասեր, փնթի (հատկապես կանանց մասին): *Յըխտըկուլի կընէգ՚ ա Ա՛րփէնիգ՚ը* (Բ):

ՅԸԽՏԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ՅԸԽՏԸԹԱԹԱԽ:

ՅԸԽՏԸՀԱՆ - *ած.* Կեղտը հանող, մաքրող: *Մօխէրը էլ ա յըխտըհան, առաչ, վէր սապուն չիլա՛լ, շօ՛րէրը մօխրավ ըն իլա՛լ լըվընալիս* (Բ):

- Յըխտըհան անէլ - *տե՛ս* ՅԸԽՏԸՀԱՆԷԼ:

- Յըխտըհան ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՅԸԽՏԸՀԱՆՎԷԼ:

ՅԸԽՏԸՀԱՆԷԼ - *նբ.* Կեղտը հանել՝ մաքրել: *Ըտըրա շօ՛րէրը լըվանում ա, յըխտըհանում, տամ ո՛ւրա՛ն* (Ձ):

ՅԸԽՏԸՀԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՅԸԽՏԸՀԱՆԷԼ-ի:

ՅԸԽՏԸՌԸ՚Խ - *տե՛ս* ՈՒՇՈՒԽՑԱՏՈՒ:

ՅԸԽՏՈՒՏՑ(Ը)ՆԷԼ/ՅՈՒԽՏՈՒՏՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. աղտեղացուցանեմ)* - *տե՛ս* ՅԸԽՏՕՏԷԼ (1):

ՅԸԽՏՕԹՈՒՆ - *գ.* Կեղտոտ լինելը, կեղտոտություն: Յըխտօթունը *Բըխցարաց տանան անպակաս ա, տօնը սաղ յը՛խտ ա* (Բ):

ՅԸԽՏՕՏԷԼ/ՅՈՒԽՏՕՏԷԼ - 1. *նբ.* Կեղտոտել, կեղտոտ դարձնել: *Խօխան ցը՛խէն մաչին խաղ ա անում, շօ՛րէրը յըխտօտում* (Բ): 2. *չբ.* Կեղտոտվել,

կեղտոտ դառնալ: *Տըրը՛խը ըղնում ա ցը՛խը, յըխտօտում* (Զ):

ՅԸԽՏՕՏՎԷԼ/ՅՈՒԽՏՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՅԸԽՏՕՏԷԼ(1)-ի:

ՅԸՀԱՆՐ/ՅԻՀԱՆՐ *(թրք. eyer)* - *տե՛ս* ԹԱՆՄՔ:

ՅԸՀԱՆՐԻԼ/ՅԻՀԱՆՐԻԼ - *տե՛ս* ԹԱՆՄՔԻԼ:

ՅԸՀԱՐԿԷ/ՅԻՀԱՐԿԷ - *վ.* Իհարկե, այո, անտարակույս: *Տըղան ասում ա.- Յըհա՛ր կէ, կ՚ըլան ըմ, յը՛ս հունց կա՞ղող ա ք՚ը՛գ մինակ թողիմ* (Զ):

ՅԸՂԱԼԻ *(գրբ. իւղալի)* - *ած.* 1. Յուղը շատ, յուղի առատ պարունակություն ունեցող: *Փըլավը բիդի յըղալի ինի, վէր լանգանթ քաշիս* (Բ): 2. *փխբ.* Օգուտ բերող, շահավետ: *Սէտրակէն տըղան յըղալի պաշտօն օնէ* (Բ):

- Յըղալի թիք՚ա/պատառ - 1. Առավել արժեքավոր՝ շահավետ բան: *Էտ ճըղ-պօրէն մին յըղալի թիք՚ա յա մըզը՛տէ* (Զ): 2. Հաճելի՝ գրգռիչ կին: *Դէ Սօնան էլ մին յըղալի թիք՚ա յա, թանջիրը օգում ա ծը՛ռքը քըցի* (Զ):

ՅԸՂԱՀԱՄ - *գ.* Յուղի համ: *Մաղա-զինան ինք՚ կանանց յը՛ղը ըսկի յըյղահամ չօնէ* (Բ):

ՅԸՂԱՀՈՒՆՑ - *ած.* Յուղով հունցած՝ թխած: *Յըղահունց հացը լանգանթ պէն ա* (Բ):

ՅԸՂԱՃԻՐ - *գ.* Կարագը հարելուց հետո տակը մնացած հեղուկը: *Յը՛ղը հարում ըն, յըղաճի՛ւրը տամ շանը* (Բ):

ՅԸՂԱՃԵԹ - *գ.* Յուղի կտոր՝ պատառ: *Յաման մէս ա, ճըղըճօթէրը էն ա նը՛ստա կախ* (Բ):

ՅԸՂԱՇՕՐ - *տե՛ս* ՅԸՂԸՇՕՐ:

ՅԸՂԱՄԱՆ - *գ.* 1. Յուղը՝ կարագը պահելու աման: *Յըղամանը տինում ա ըռաչին, սաղ յը՛ղը քըսում հացը, օտում* (Բ): 2. Քսայուղը պահելու փոքրիկ տուփ: *Յըղամանը պէնում ա, չօփավը պատառ յը՛ղ յը՛ր օնում, քըսում մըկըրատը* (Զ):

ՅԸՂԱՎԸ՛Տ - *գ.* Յուղի հոտ: *Յը՛ղը հանում ըն, յըղավը՛տը ըղնում ա տօնը* (Զ):

ՅԸՂԱՏՈՒ - *ած.* 1. Յուղ տվող, որից յուղ է ստացվում: *Կըտըվհատը յըղատու վա* (Բ): 2. Յուղալի կաթ տվող: *Տիկրա-նէն մին յըղատու կավ օնէ* (Բ):

ՅԸՂԱՔԱՐ - *տե՛ս* ՅԸՂԸՍԸՐՕՑ:

ՅԸՂԷ/ՅԸՂԻ *(գրբ. յղի)* - *ած.* Հղի (կենդանիների, անարգաբար՝ նաեւ կանանց մասին): *Վէրջը, կընէգ՚ը պատճառավէր ա տէռալ, կավը էլ յըղէ յա տէռալ* (ՀԺՀ, V, 540):

- Յըղէ կավ - Անձ, որից կարելի է օգտվել: *Շահէնը շինանցուց հը՛տէ մին յըղէ կավ ա* (Բ):

- Յըղէ կօրէ - Խիստ դանդաղաշարժ մարդ կամ կենդանի: *Չանանն ծին յըղէ կօրէ յա* (Բ):

- Յըղէ յըս ըրալ՝ ծընէ՛ - Խոստացել ես՝ կատարիր: *Ասում ա.- Իմ կօրծըս չի, թա ըշտըղան ըս քըթէնում, յըղէ յըս ըրալ՝ ծընէ՛* (Զ):

- Յըղէ յըս՝ ծընէ՛, սըբէ յըս՝ ծընէ՛ - Որտեղից որ է՝ գտի՛ր: *Կընէգ՚ը թա.- Ինձ փուլ ա հարկավէր, յըղէ յըս՝ ծընէ՛, սըբէ յըս՝ ծընէ՛* (Զ):

- Յըղէ շինիլ - Ենթարկեցնել, համառությունը կոտրել, իրենից կախման մեջ դնել: *Թանջիրը ըտըրան պարթկ ա տամ, յըղէ շինում* (Զ):

- Յըղէ տը՛ռնալ - Ենթարկվել, համառությունը կոտրվել, մեկից կախման մեջ ընկնել: *Տըրան էնքան թակում ըն, վէր յըղէ յա տը՛ռնում* (Զ):

ՅԸՂԸ՛ՂԱՆ - *գ., հվք.* Յուղ եւ նրանից պատրաստած մթերքներ: *Կէ՛ր յըղը՛ղան, վէր պիրիս հըրը՛ղան* (ԱԲԲ, 44):

ՅԸՂԸԹԱԹԱԽ - *ած.* 1. Յուղով թաթախված, վրան յուղ քսված: *Յըղըթաթախ հացը կըտօրում ա, տամ խօնցը* (Զ): 2. Յուղով ապականված՝ կեղտոտված: *Յըղըթաթախ շալվարը կ՚ը՛ցալ ա, յը՛կալ շինամաչը, հըմանչում էլ չի* (Բ): 3. *փխբ. տե՛ս* ՅԸ՛ՂՈՒՏ-ՄԸ՛ՂՐՈՒՏ:

ՅԸՂԸԼԱՎԱՇ - *գ.* Յուղով հունցած եւ սաջի՝ վառարանի վրա թխած անթխմոր լավաշ, որ փաթաթում են վերքին՝ որպես սպեղանի: *Վէր շէնումը մինին վը՛ենը հըլօրվում ար, յա յարա յար տը՛ռնում, Վաղաշակ դային ասում ար.- Յըղըլավաշ տիրի՛ք՚ յըրան, անց ա կընական* (Բ):

- Յըղըլավաշ անէլ - 1. Խմորը յուղով հունցելով եւ թխելով սպեղանի պատրաստել: *Յըղըլավաշ ա անում, կապում ծը՛ռքէն* (Զ): 2. Հանդարտ՝ առանց շտապելու աշխատել: *Խալխը յըրա պըրծած ղըրյազավ խօտ ըն հարում, մէր Արտաշըն էլ, օրաղը յը՛ր կանանց, յըղըլավաշ ա անում* (Բ):

ՅԸՂԸԼԻՏԸՐ - *գ.* Փոքրիկ կապտավուն թռչնատեսակ: *Յըղըլիտըրը մին ճանց ա փըռնում, քօլէն յըրա վը՛ենը կէնում* (Զ):

ՅԸՂԸԽԱՇՈՒ - *գ.* Յուղի մեջ տապակած ձվով ջրալի կերակուր: *Յըղըխաշու վա շինում, տամ խօնցը* (Զ):

ՅԸՂԸԾԱՂԷԳ՚ - *տե՛ս* ՋԸՎԷՐԱԲՕՑ:

ՅԸՂԸԾԻ՛Ն/ՅԸՂՈՒԾԻ՛Ն/ՅՈՒՂՈՒԾՈՒ/ՅՈՒՂԸԾՈՒ *(գրբ. ձուազեղ)* - *գ.* 1. Ձվածեղ: *Աղվէսը պիցրանում ա մին թումբ, յէշում, տը՛սնում տըվըրածը՛ը, յուղուծու ըրած, օտում ըն* (ՀԺՀ, VII, 225): 2. Մի տեսակ խոտաբույս, որի ծաղկաբույլը նման է ձվածեղի: *Ղարաբաղա ամմէն շէնում էլ յըղըծի՛ւ վա փըսնում* (Բ):

- Յըղըծի՛ւն օտէլ, քըթըվէրէն մաչին թըքէլ - Երախտամոռ լինել, լավությունը վատությամբ փոխհատուցել: *Ախմաղ մարթ ա Հայասէրը. յըղըծի՛ւն օտում ա, քըթըվէրէն մաչին թըքում* (Բ):

- Յըղըծի՛ւվէն խաթրի՛ւ քըթըվէրէն կօթան կըպաչին - Մեծ նպատակի հասնելու՝ օգուտ քաղելու համար նվաստության են դիմում:

ՅԸՂԸԿԱ՛ԼԻԼ - *չբ.* 1. Ճարպակալել: *Խօզ՚ը վէր յըղըկանալից, բիդի մօրթիս* (Բ): 2. Վրան յուղի շերտ կապել: *Կուրկուտէն ղըզղանը յըղըկանալալ ա* (Բ): 3. *փխբ.* Գիրանալ, չաղանալ: *Պաշտօն ըստընալանը յը՛տը, Կըրօմվէլը յըղըկանալալ ա, փօրը տանում յը՛կալ* (Բ): 4. *փխբ.* Հարստանալ: *Էն ա իլանալ տանզնը, միհէնգ՚ յըղըկանալալ ա, էլ կարում չըս խուսցընիս* (Բ):

ՅԸՂԸՃԸՄՕՈ - *տե՛ս* ՃԸՄՕՈ:

ՅԸՂԸՃԸՊԱՏ - *տե՛ս* ՅԸ՛ՂՏԷՍ:

ՅԸՂԸՃԻՐԱ՛Ք՚ - *գ.* Յուղի՝ ձեթի ճրագ: *Միհէնգ՚ էլ յըղըճիրանք՚ պինըցընօղ չի կա* (Բ):

ՅԸՂԸՄՆԸԿԱ՛ԼԻԼ - *չբ.* Յը՛ղըմնը նըստել:

ՅԸՂԸՇՕՐ/ՅԸՂԱՇՕՐ - *գ.* Կարագի եւ շոռի խառնուրդ: *Շինանցէն վէր յըղըշօր չի կէրավ, էլ հինչ շինա՞ցէ* (Բ):

ՅԸՂԸՇՕՐՎԱ - *գ.* Յուղով եփած ապուր: *Մին աման յըղըշօրվա յա օտում, տանում կ՚ամ* (Զ):

ՅԸՂԸՊԱՏԱՌ - *գ.* 1. Յուղ՝ կարագ քսած հացի կտոր: *Անրիվհատ աքէրը հիբը խընը՛ցէ յա իլալ հըրէս, շէնին խօնցը յըղըպատառ ա իլալ տաս* (Բ): 2. *փխբ.* Գեղեցիկ՝ սիրունիկ երեխա: *Խօխա, հինչ խօ՞խա, մին յըղըպատառ ա* (Բ):

ՅԸՂԸՊԱՐԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Յըղըպարան անէլ - Ծայրերը յուղ քսել եւ ոլորել: *Սարօ անմին ամմէն ուրուգ՚ուն բէդէրը յըղըպարան ար անում, տանում կ՚ամ շինամաչ* (Բ):

ՅԸՂԸՊԸԼԻԹ - *տե՛ս* ԲԻՇԻ:

ՅԸՂԸՊՈՒԼԻԳ՚/ՅԸՂԸՐՊՈՒԼԻԳ՚ - *գ.* Յուղով լիքը պուլիկ՝ կավե աման: *Յըղըպուլիգ՚ը վէր ա ըղնում, կօտրում, յը՛ղը տափավը մին տը՛ռնում* (Զ):

- Յըղըպուլիգա տանում յը՛կած - *տե՛ս* ՅԸ՛ՂՈՒՏ-ՄԸ՛ՂՐՈՒՏ:

ՅԸՂԸՍԸՐՕՑ - *գ.* Սրոց, որի վրա յուղ են քսում՝ գործիքները սրելու համար: *Տէնակը յըղըսըրօցավ ա լ՚ավ սըրվում* (Բ):

ՅԸՂԸՐՄԸ՛ՂԸՐ/ՅԸ՛ՂԸՐ-ՄԸ՛ՂԸՐ - *գ.* Կարագի եւ մեղրի խառնուրդ: *Յըղըրմը՛ղըրը լանգանթտու պէն ա* (Բ):

- Յղղրմը՝ղրը շան տըկում - Ասում են ժլատ հարուստների մասին:

- Յղղրմը՝ղրը տը՝ռնալ - *տե՛ս* ՔԸԽԾԸՐԱՆԱԼ:

ՅԸՂԸՐՊՈՒԼԻԳ՝ - *տե՛ս* ՅԸՂԸՊՈՒԼԻԳ՝:

ՅԸՂԸՑԷ - *տե՛ս* ՅԸ՝ԽԾԷ:

ՅԸՂԸՓԱԼԱԼ - *տե՛ս* ՅԸՂԸԹԱԹԱԽ:

ՅԸՂԿԸ՝ՆԷ - *գ.* Յուղալի պտուղներ ունեցող ընկուզենու տեսակ: *Յղղկը՝նէն ըստարէ խըրէգ՝ ա յը՝ր կա՛լա՛լ* (Բ):

ՅԸՂԻ - *տե՛ս* ՅԸՂԷ:

ՅԸՂՈՒԾՈ՛Ի - *տե՛ս* ՅԸՂԸԾՈ՛Ի:

ՅԸՂՈՒՐ/ՅՈՒՂՈՒՐ/ՅՕՂՈՒՐ *(թրք. uğur)* - *գ., ած.* Բարի ոտք ունեցող, հաջողության բերող (անձ): *Յուղուրավ մարթ ա մէր հիրը՝վանը* (Բ):

- Յղղուրէն/յըղուրումը կէնալ/ջան տալ - Մեկին հովանավորել՝ օգնել, նրա հաջողությանը նպաստել: *Ախպէրը քը՝վորը յըղուրէն կացավ, մինչը՝վ խոխէնք՝ը մը՝ծացէն* (Ձ):

- Յղղուրէն/յըղուրումը տինիլ - Մեկի օգտին գործել: *Հինչը օնէ, թոռնանը յըղուրէն ա տինում* (Ձ):

ՅԸՂՕԼԻ - *գ.* 2-4 մատներով գյուղատնտեսական երկարակոթ գործիք՝ հնձած խոտ՝ հացաբույս՝ դարման եւն վերցնելու համար, եղան: *Յըղօլին յօր ա օնում, խօտը տա՛ռսո՛ւմ* (Ձ):

- Յղղօլա՛վ ճո՛ւր/թան խըմել - Իրարից խռով լինել, իրար թշնամի լինել: *Արտէն հիրըվանէրը վէր խըռավ յա դա՛ւշման ըն ինո՛ւմ, հա՛մա՛ն տը՝ղան յըղօլին ծիրքըրնէրէն ըն ճո՛ւր խըմում՝ յըղօլա՛վ ըն ճո՛ւր խըմում* (Ձ):

ՅԸՂՕՆԷԳ՝ - *տե՛ս* ԸՂՕՆԷԳ՝: *...Նըստում ա, թա պատառ դինջանա, տը՝սնըմ ա յէրգ՝ինքավը մին յըղօնէգ՝ ա թըռչում* (ՀԺՀ, V, 150):

ՅԸՂՕՇՆԱԿ - *տե՛ս* ՅԸՂԸՊՈՒԼԻԳ՝:

ՅԸՂՕՇՆԻԼ - *չբ.* Բորբոսնելով կծու համ ստանալ (պանիրը): *Պանէրը վէր յըղօշնից, բիդի տէն ածիս* (Բ):

ՅԸՂՕՏԷԼ - *նբ.* 1. Յուղի մեջ թաթախել: *Հացը յըղօտում ըն, օտում* (Բ): 2. Յուղով կեղտոտել: *Ծո՛ր էրը յըղօտում ա, մարը փը՝ղռնում ա, թակում* (Ձ): 3. Շատ բան կամ շատ անգամ յուղել՝ յուղ քսել (գործիքները, մեքենան եւն): *Հիշըթնէն յըղօտում ա, հըղէ ինո՛ւմ* (Ձ): 4. *չբ.* Յուղով կեղտոտվել: *Ծո՛ր էրը՝ս յըղօտէլ ա* (Բ):

ՅԸՂՕՏՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՅԸՂՕՏԷԼ-ի: 2. *չբ. փխբ.* Հարստանալ: *Կօլի դային յըղօտվալ ա, էլ մը՝գ մըհալ չի քըցո՛ւմ* (Բ):

ՅԸՂՕՐԹԻ - *գ.* Յուղով պատրաստած ուտելիք: *Հո՛նձ անօը յըղօրթի բիդի օտէ, վէր կարէ հո՛նձ անէ* (Ձ):

ՅԸՄԲԸՐՈՒԴ/ՅՈՒՄԲՈՒՐՈՒԴ *(թրք. yumruk)* - *գ.* 1. Կռուփ, բռունցք: *Մարթը կը՝զնը՝վէս ա, յըմբըրուդավը խը՝գ՝իտակէն տըրը՝ք՝ցը՝նէս* (ԱԱ, 16): 2. *փխբ.* Ուժ, բռնություն: *Թօրքէրը մինակ յըմբըրուդա յըն վախում* (Ձ):

- Յըմբըրուդէն տըմանօը քացուն էլ կըտըմանա - Դիմացկուն՝ տոկուն մարդը ամեն ինչի կդիմանա:

- Յըմբըրուդը բօղազը կօխէլ - *տե՛ս* Յը՝խան հըվաքէլ:

- Յըմբըրուդը կըլխան անպակաս անէլ/կըլխէն պահէլ - Մշտապես ճնշման՝ սպառնալիքի տակ պահել: *Թաքավէրը յըմբըրուդը ժուդուվուրթէն կըլխան անպակաս ար անում* (Ձ):

- Յըմբըրուդ նը՝հաշ տալ - Իր ուժով սպառնալ: *Մարթը վէր կը՝նգանը յըմբըրուդ չի նը՝հաշ տը՝վավ, կը՝նէգ՝ը հավալամիշ կինի* (Ձ):

- Յըմբըրուդ տը՝ռնալ - 1. Կուչ գալ, կծկվել, խեղճանալ: *Վը՝րսականը սըրտաճաք ա ինո՛ւմ, յըմբըրուդ տը՝ռնում, քօլէն տակէն կ՝օղը կէնում* (Ձ): 2. Կուտակվելով՝ միավորվելով մեծ ուժ կազմել: *Հայէրը յըմբըրուդ տը՝ռէն, մէր յէրգ՝իրը էտ խաշփուշնէրան ըզըդը՝ցէն* (Ձ):

ՅԸՄԲԸՐՈՒԴԱԹԱԿ/ՅՈՒՄԲՈՒՐԱԴԱԹԱԿ - *ած.* Բռունցքներով ծեծած՝ ծեծված: *Կամ ըն, տը՝սնում մին յըմբըրուդաթակ դէրվիշ չըփարէն տակէն վէր ընգած* (Ձ):

- Յըմբըրուդաթակ անէլ/տալ - *տե՛ս* ՅԸՄԲԸՐՈՒԴՀԱՐԷԼ:

- Յըմբըրուդաթակ ինիլ/տը՝ռնալ/օտէլ - *տե՛ս* ՅԸՄԲԸՐՈՒԴՀԱՐՎԷԼ:

ՅԸՄԲԸՐՈՒԴԱՉԱՓ/ՅՈՒՄԲՈՒՐՈՒԴԱՉԱՓ - *ած.* Մի բռունցքի մեծություն ունեցող, բռնցքաչափ: *Մին յըմբըրուդաչափ քար ա յը՝ր օնում, յըրա անում, ըտըրա ճըկատան տամ, վէր քըցո՛ւմ* (Ձ):

ՅԸՄԲԸՐՈՒԴԼԱՄԻՇ/ՅՈՒՄԲՈՒՐՈՒԴԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Յըմբըրուդլամիշ անէլ - *տե՛ս* ՅԸՄԲԸՐՈՒԴՀԱՐԷԼ:

- Յըմբըրուդլամիշ ինիլ/տը՝ռնալ - *տե՛ս* ՅԸՄԲԸՐՈՒԴՀԱՐՎԷԼ:

ՅԸՄԲԸՐՈՒԴԿԸՌԸ՝Վ/ՅՈՒՄԲՈՒՐՈՒԴԿԸՌԸ՝Վ - *գ.* Բռունցքներով կռիվ, բռունցքամարտ: *Ըտըրանց յըմբըրուդկը՝ռը՝վան սաղ աշխարքը՝ս տո՛ւրո՛ւր ա կ՝ամ* (Ձ):

ՅԸՄԲԸՐՈՒԴՀԱՐԷԼ/ՅՈՒՄԲՈՒՐՈՒԴՀԱՐԷԼ - *նբ.* Բռունցքով հարվածել՝ ծեծել, բռնցքահարել: *Յըմբըրուդհարում ա, էտ ուշափէն ըսպանում* (Ձ):

ՅԸՄԲԸՐՈՒԴՀԱՐՎԷԼ/ՅՈՒՄԲՈՒՐՈՒԴՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՅԸՄԲԸՐՈՒԴՀԱՐԷԼ-ի:

ՅԸՄԻՇՀԱՄ/ՅԻՄԻՇՀԱՄ - 1. *գ.* Սեխի համ: *Յըմիշահամը ամմէն մարթու չի տուր կ՝ամ* (Բ): 2. *ած.* Սեխի համ ունեցող: *Յըմիշահամ տա՛նձ ա* (Ձ):

ՅԸՄԻՇԱՎԸ՝Տ/ՅԻՄԻՇԱՎԸ՝Տ - *գ.* Սեխի հոտ՝ բույր: *Վէր նի յըս մը՝նում բօստանը, յըմիշավը՝տը թը՝խում ա քը՝թէտ* (Ձ):

ՅԸՄԻՇԸ՝ՆԷ/ՅԻՄԻՇԸ՝ՆԷ - *գ.* Տանձի տեսակ: *Յըմիշը՝նէն քախծը՝ր տա՛նձ ա* (Բ):

ՅԸՅԸՅԱՅԱ/ՅԻՅԻՅԱՅԱ - *տե՛ս* ԺԸԺԸՊԱՊԱ[1] (1):

ՅԸՅԼԸՂԱՎԷՐ/ՅԱՅԼԱՂԱՎԷՐ - *գ., ած.* Յայլաղում ամառն անցկացնող (մարդ): *Աշունքը վէր կ՝ամ ա, յըյլըղավէրնէն սարան քը՝շանում ըն* (Բ):

ՅԸՅԼԸՂԱՏԸ՝Ղ/ՅԱՅԼԱՂԱՏԸ՝Ղ - *գ.* Այն վայրը, որ ծառայում է որպես յայլաղ: *Ըստարէ փիս արաշտ ար, յըյլըղը՝տը՝ղէն էլ չի կա խօտ* (Ձ):

ՅԸՅԼԸՂԸ՝ՆԷ/ՅԱՅԼԱՂԸ՝ՆԷ - *գ.* Խաղողի տեսակ: *Յըյլըղը՝նէն տաք տը՝ղէրը՝ն ա տը՝ռնաս* (Բ):

ՅԸՆԸՂԿՈՒԿՈՒ/ՅԸՆՆԸԿՈՒԿՈՒ - *գ.* Երկրորդ անգամ ամուսնացող եւ հետը երեխա տանող կին: *Էտ յընը՝ղկուկուն փիս կը՝նէգ՝ ա ինո՛ւմ, ո՛ւրա՛ն խուխէն լ՝ավ պահում ա, մարթին խօսնցը միշտ թակում* (Ձ):

ՅԸՆԸՅԱՆԱ - 1. *տե՛ս* ԴԱ՛ԴԱ՛ՐԳ՝Ո՛ՒՆ: *... Ինք՝ը մին պուճուր Շուշի, ընգալ ա յընը՝յանա* (ԼՂԲ, 45): 2. *մ.* Կսկծալով, մղկտալով: *Էտ ախճիգ՝ը ծառէն տակէն նը՝ստում ա, յընը՝յանա լա՛ց ինո՛ւմ* (Ձ):

- Յընը՝յանա կ՝ա՛լ - Կսկծալ, մղկտալ: *Էտ կը՝նէգ՝ը շատ ա լա՛ց ինո՛ւմ, շատ ա յընը՝յանա կ՝ամ, ամմա պէն չի ա՛մա՛լ կ՝ամ, վէշ մինը ք՝ՕՄԱ՛Գ՝ չի անում* (Ձ):

ՅԸՆՆԱԿԱՄ/ՅԻՆՆԱԿԱՄ - *տե՛ս* ԾԸՆԴԸՐՅԷՐԻԾ:

ՅԸՆՆԸԿՈՒԿՈՒ - *տե՛ս* ՅԸՆԸՂԿՈՒԿՈՒ:

ՅԸՇՆԱՀԱՄ/ՅԻՇՆԱՀԱՄ - *գ.* Բորբոսի համ: *Հացը յէշնա՛լ ա, վէր օտում ըս, յըշնահամ ա կ՝ամ* (Բ):

ՅԸՇՆԱՎԸ՝Տ/ՅԻՇՆԱՎԸ՝Տ - *գ.* Բորբոսի հոտ: *Յըշնավը՝տը ընգալ ա մարթ՝ը՝ը* (Բ):

ՅԸՇՆԸԿԱ՛ԼԻԼ/ՅԻՇՆԸԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ՅԷՇՆԻԼ:

ՅԸՇՆԸՑ(Ը)ՆԷԼ/ՅԻՇՆԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՅԷՇՆԻԼ-ի:

ՅԸՇՆՕՏԷԼ/ՅԻՇՆՕՏԷԼ - *տե՛ս* ՅԷՇՆԻԼ (շատերի մասին): *Նէրքէ տանը հինչը կա, լօխ յըշնօտալ ա* (Բ):

ՅԸՊԻՍԿՕՊՕՍ - *տե՛ս* ՅԷՊԻՍԿՕՊՕՍ:

ՅԸՌԱԹԷՎ - *գ.* Հողամասը վարելու ձեւ, երբ վարում են վերեւից ներքեւ: *Յամանջ տը՝ղը յըռաթէվ ըն վարում* (Ձ):

ՅԸՌԸԹԷՎԷԼ - Հողամասը վարելով՝ վերեւից ներքեւ իջնել: *Յը՛զևէրը վըստակալ ըն, մին թանիրանվ ըն յըռըթէվում* (Ձ):

ՅԸՌ(Ը)ՂԱՆ - *տե՛ս* ՅԸՐՂԱՆ:

ՅԸՍ - *տե՛ս* ՅԸ՛Ս:

ՅԸՍԻՐՕԹՈՒՆ/ՅԷՍԻՐՕԹՈՒՆ - *գ.* Գերի լինելը, գերություն: *Յըսիրօթունը փիս պէն ա* (Բ):

ՅԸՎԸ-ՅԱՎԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Յըվը-յավա խօսէլ - Անիմաստ՝ անտեղի՝ տակից-գլխից խոսել: *Խըրէգ՝ յըվը-յավա խօսէ, գանիլանս տանում ըս* (Բ):

ՅԸՎԸԾ-ՅԱՎԱԾ/ՅԱՎԱԾ-ՅԱՎԱԾ - *տե՛ս* ԿԱՄԱՆՑ-ԿԱՄԱՆՑ:

ՅԸՏԱՆԱԼ *(գրբ. յետնանամ)* - *չբ.* 1. Նշանակված ժամանակին չլինել հարկ եղած տեղում, ուշ գալ՝ գնալ: *Մինակ էշընն ա յըտացալ. էն ա լանլ ծըմական փանդ կըրէս* (ԱԱ, 74): 2. Նպատակահարմար՝ սովորական ժամանակից ուշ լինել՝ տեղի ունենալ՝ կատարվել: *Ըստարէ ծըմը՛ռնը յըտանում ա* (Բ): 3. Դանդաղել, հապաղել: *Հանը ասմա.- Յըտանալ մէ՛լ, օրը մըթնում ա, հանլա արտէն կէսըն ընք հընձանլ* (Ձ):

ՅԸՏԸՀԸ՛ՏԸ - *տե՛ս* ՅԸ՛ՏԸՀԸ՛ՏԸ:

ՅԸՏԸՅԸ՛ՏԷ/ՅԸ՛ՏԷ-ՅԸ՛ՏԷ - *մ.* 1. Դանդաղաբար, դանդաղորեն: *Տանը տարը յըտըյը՛տէ յա տանիրանիր կ՛ամ, ղօնաղընն էլ սօված ա* (ԲՀԲ, 199): 2. Հազվադեպ, հազվադեպորեն: *Մին օր էլ պըտահում ա, թա.- Հըրէ՛վան, յըտըյը՛տէ յըս ըրվամ, հինչ ա՞ պըտահալ* (Ձ):

ՅԸՏԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՅԸՏԱՆԱԼ-ի: 1. Ժամանակին՝ նշանակված պահին գալու՝ գնալու արգելք՝ խոչընդոտ լինել: *Ըտըրան յըտըցընում ըն, ք՛ինամ ա, տը՛սնում հընգէրունքը վարը ըսկըսած* (Ձ): 2. Ձգձգել: *Կօրծը վէր յըտըցըրէլ, էլ տարը չըս* (Ձ): 3. Հետաձգել: *Կօրծը վէր յըտըցըրէր, յէտնան տիժէր կինի* (Ձ):

ՅԸՏՆԱԹԷՐ - *տե՛ս* ՅԸՏՎԱԹԷՐ:

ՅԸՏՆԱԿԱԼ - *տե՛ս* ՅԸՏՎԱԿԱԼ:

ՅԸՏՆԱԿԱՊ - *տե՛ս* ՅԸՏՎԱԿԱՊ:

ՅԸՏՆԱԿԷՆ - *տե՛ս* ՅԸՏՎԱԿԷՆ:

ՅԸՏՆԱՀԱՉ - *տե՛ս* ՅԸՏՎԱՀԱՉ:

ՅԸՏՆԱՃԻՒՐ - *տե՛ս* ՅԸՏՎԱՃԻՒՐ:

ՅԸՏՆԱՄԱՐ - *տե՛ս* ՅԸՏՎԱՄԱՐ:

ՅԸՏՆԱՆՁՈՒՂ - *տե՛ս* ՅԸՏՎԱՆՁՈՒՂ:

ՅԸՏՆԱՏՕՐ - *տե՛ս* ՅԸՏՎԱՏՕՐ:

ՅԸՏՆԱՑԱՎ - *տե՛ս* ՅԸՏՎԱՑԱՎ:

ՅԸՏՆԱՓԱԿ - *տե՛ս* ՅԸՏՎԱՓԱԿ:

ՅԸՏՆԱՔԱՂ - *տե՛ս* ՅԸՏՎԱՔԱՂ:

ՅԸՏՎԱԹԷՐ/ՅԸՏՆԱԹԷՐ/ՅԷՏՎԱԹԷՐ/ՅԷՏՆԱԹԷՐ - *գ.* Կանաչեղենի՝ արմատից անմիջապես վերեւ գտնվող կոշտ տերեւները: *Կընանչին քաղում ըն, յըտվըթէրէրը տէն ածում* (Ձ):

ՅԸՏՎԱԿԱԼ՝/ՅԸՏՆԱԿԱԼ՝/ՅԷՏՎԱԿԱԼ՝/ՅԷՏՆԱԿԱԼ՝ - *տե՛ս* ՎԸՌԱԿԱԼ:

ՅԸՏՎԱԿԱՊ/ՅԸՏՆԱԿԱՊ/ՅԷՏՎԱԿԱՊ/ՅԷՏՆԱԿԱՊ - *տե՛ս* ՀԸՆՁԱԿԱՊ:

ՅԸՏՎԱԿԷՆ/ՅԸՏՆԱԿԷՆ/ՅԷՏՎԱԿԷՆ/ՅԷՏՆԱԿԷՆ - *գ.* Կինը մեռնելուց հետո ամուսնու հաջորդ կինը: *Յէտվակէնը հանրան հէտան էրկու ախճիգ՝ ա պէրում* (ՀԺՀ, V, 495):

ՅԸՏՎԱՀԱՉ/ՅԸՏՆԱՀԱՉ/ՅԷՏՎԱՀԱՉ/ՅԷՏՆԱՀԱՉ - *գ.* Շան վերջին հաչոցը, որ անծանոթի՝ տուն մտնելուց հետո է լինում: *Յըտվըհանչին յըրա տընատարը տանս ա կ՛ամ* (Ձ):

ՅԸՏՎԱՃԻՒՐ/ՅԸՏՆԱՃԻՒՐ/ՅԷՏՎԱՃԻՒՐ/ՅԷՏՆԱՃԻՒՐ - *տե՛ս* ՓԱՍԵ:

ՅԸՏՎԱՄԱՐ/ՅԸՏՆԱՄԱՐ/ՅԷՏՎԱՄԱՐ/ՅԷՏՆԱՄԱՐ - *ածական.* Խորթ մայր: *Յըտնամարը էտ խօնցը լ՛ավ ար պահում* (Ձ):

ՅԸՏՎԱՆՁՈՒՂ/ՅԸՏՆԱՆՁՈՒՂ/ՅԷՏՎԱՆՁՈՒՂ/ՅԷՏՆԱՆՁՈՒՂ - *գ.* 1. Կովը կթելուց հետո նորից կթելը: *Յըտվանձուղը դընէն փայըն ա խըրըգ՝ցընում* (Բ): 2. Ամանները լվանալուց հետո ջրով թեթեւակի ցողելը: *Յըտվանձուղըն ա ըմընէք՝ը թըմիզցընում* (Ձ): 3. Մնացորդ: *Հաց ըն օտում, յէտվանձողը տամ էտ պըռավէն* (Ձ):

ՅԸՏՎԱՏՕՐ/ՅԸՏՆԱՏՕՐ/ՅԷՏՎԱՏՕՐ/ՅԷՏՆԱՏՕՐ - *գ.* Հացը թխելուց հետո առանց թոնիրը վառելու կամ թեթեւակի վառելով՝ երկրորդ անգամ թխած հաց: *Յըտվատօրը քախծըր ա ինանում* (Ձ):

ՅԸՏՎԱՑԱՎ/ՅԸՏՆԱՑԱՎ/ՅԷՏՎԱՑԱՎ/ՅԷՏՆԱՑԱՎ - *գ.* Ծննդաբերությունից հետո կանանց մոտ առաջացած ցավեր: *Ծըմըթկանը յըտվըցաված տանջվանում ա* (Բ):

ՅԸՏՎԱՓԱԿ/ՅԸՏՆԱՓԱԿ/ՅԷՏՎԱՓԱԿ/ՅԷՏՆԱՓԱԿ - *գ.* Դռան ներսից կախված փայտե կամ երկաթե ձող՝ դուռը փակելու համար, սողնակ, պարզունակ: *Տօռնը կապում ըն, յըտվափակը քըցանում, քօն ինանում* (Ձ):

- Յըտվափակ տալ - Դուռը հետեւից սողնակով փակել: *Տօռնը էզգանան յըտվափակ ար տամ, վէր կ՛օղ չի նի մընէ* (Ձ):

ՅԸՏՎԱՔԱՂ/ՅԸՏՆԱՔԱՂ/ՅԷՏՎԱՔԱՂ/ՅԷՏՆԱՔԱՂ - *գ.* Այգեքաղից հետո ծառերի վրա մնացած պտուղները հետագայում քաղելը: *Յըտվաքաղը վէր ըսքըսում ըն, ծանանը յը՛կած ա ինանում* (Ձ):

ՅԸՏՎԸՅԸ՛Տ/ՅԸ՛ՏՎԱՅԸ՛Տ - *մ.* 1. Աստիճանաբար, հետզհետե: *Հական յըտվըյը՛տ ցուրտում ա* (Բ): 2. Կրկին, նորից: *Յըտվըյը՛տ փօրցանում ըն, էլիա չի ամանլ կ՛ամ* (Ձ):

ՅԸՐԱ/ՅԸՐԱ՝/ՅԻՐԱ/ՅԻՐԱ՝/ՅԷՐԱ/ՅԷՐԱ՝ *(գրբ. վերայ)* - *կ.* 1. Ցույց է տալիս առարկայի՝ տեղի՝ տարածության վերեւի՝ արտաքին կողմը՝ մակերեսը՝ ծայրը: ... *Ժողովուրթը տը՛սին, վէր էրկու կաթ կաթից գ՛ապին յըրան* (ՀԺՀ, V, 210): 2. Գործածվում է այն անձը՝ առարկան ցույց տալու համար, որին հանձնարարվում՝ վստահվում՝ թողնվում՝ վերագրվում է մի բան: *Հըրսընքէն սաղ ծախսը տինում ըն մը՛ծ ախպօրը յըրա* (Բ): 3. Ցույց է տալիս այն կողմը, դեպի որն ուղղված է գործողությունը, դեպի: *Աչի թըրանփէն յըրա ք՛ունում ա, տը՛սնում մին պառավ մարթ ըտը՛ղ նըստած* (Ձ): 4. Գործածվում է այն անձը՝ առարկան եւն ցույց տալու համար, որի նկատմամբ՝ որի դեմ կատարվում է մի բան: *Մին օր էլ հիրը՛վան թաքավէրը կըռը՛վ ա յը՛ր կէնում էտ թաքավէրին յըրա* (Ձ): 5. Ցույց է տալիս այն անձը՝ առարկան, որին մի բան ուղարկվում՝ առաքվում՝ վաճառվում կամ փոխադրվում է: *Մըրյանէն տըղան ամմէն ամէս մօրը յըրա փուլ ա դարկում* (Բ): 6. Ցույց է տալիս խոսքի՝ քննարկման՝ մտքի եւն առարկան՝ մասին նշանակությամբ: *Աշըղը ըտը՛ղ ըտըրա յըրա մին խաղ ա կապում, ասում* (Ձ): 7. Ցույց է տալիս վերաբերություն՝ նկատմամբ, վերաբերյալ: *Վէգիրին մը՛ծ անրք՝ ա ինանում թաքավէրին յըրա* (Ձ): 8. Ցույց է տալիս տվյալ գործողությանը անմիջականորեն նախորդող կամ հաջորդող ժամանակը: ... *Մըթնէն յիրա էլ ք՛ուխվը՛ն տըղան յէկավ, ըսկըսը՛ցէն օտը՛լ-խըմը՛լը...* (ՀԺՀ, VII, 202): 9. Ցույց է տալիս այն առարկան՝ գործողությունը եւն, որ առիթ է տալիս մի բանի: *Թաքավէրը էտ խօսկէտ յըրա շատ ա կըզնըվէս* (Ձ): 10. Ցույց է տալիս հաջորդականություն՝ հերթականություն: *Օրը օրէն յըրա էտ կավը լըղարում ա* (Բ): 11. Ցույց է տալիս զբաղմունքի առարկան: *Հինչ կօրծու յըրա յը՞ս մըհէնգ՝* (Բ): 12. Ցույց է տալիս բաշխման՝ բաժանման հարաբերություն: *Հանը անրան իլանծ-չիլանծը մըռնէլան առաչ խօնցը յըրա պիժէնում ա* (Ձ): 13. Գործածվում է՝ ցույց տալու համար գործողության բնույթը՝ նրա կատարման եղանակը՝ ձեւը: *Մաշկէն յըրա վէր ա ըղնում, ըղնում ցը՛խէն մաչը* (Ձ): 14. Ցույց է տալիս այն նվագարանը, որով նվագում են: *Էտ տըղան ք՛ամանչին յըրա լ՛ավ ածում ա* (Բ): 15. Ցույց է տալիս գործողության միջոցը՝ առարկան՝ մի բանի հասնելու հանգամանքը: *Տիժըրթունէն յըրա յըն կօրծ անէլը սըվը՛ռում* (Բ): 16. Ցույց է

տալիս այն անձը՝ առարկան եւն, որին մեկը ապավինում է: *Ումէդը տիրա՛լ ա հիրըվանէն յըրա* (Բ): 17. Ցույց է տալիս ներգործության առարկան: *Հա՛ղը շատ ա կըզնըվում ըխճըկանը յըրա* (Բ): 18. Ցույց է տալիս որեւէ բանի չափը՝ քանակը: *Մին կարաս կ'ինու յըրա մա՛նջ ըն կ'ամ* (Բ): 19. Ցույց է տալիս այն անձը՝ առարկան, հանուն որի կամ որի անունով մի բան կատարվում է: *Ա՛ւրթումն ա օտում հօրը հինգ'իստին յըրա* (Բ): 20. Ցույց է տալիս միասնություն՝ հետ: *Էս տըղան պիրալ ա էս ախճկանը ա՛ւրան յըրան փըսակալ* (ՀԺՀ, VI, 69):

- Ցըրա ածէլ - Լցնել, վրան թափել: *...Կոտը յիրա՛ յա ածում, հավէրը յիրա՛ անում, ըսկըսում ըն օտէլը* (ՀԺՀ, VII, 369):

- Ցըրա անէլ - 1. Նետել, ձգել: *Քարը յըրա յա անում, նըստա տամ* (Ձ): 2. Կրակել, հրազեն արձակել: *Ցըրա յա անըմ, թա կ'էշ օխծը ըսպանէ, նի յա կ'ամ, նախշուտը ըսպանվըմ* (ՀԲ, 346): 3. Արձակել, բաց թողնել: *Կըխճըրնէն յըրա յա անում խօտէն թըյին, օտում ըն, քուշտանում* (Բ): 4. Ամրացնել, կպցնել, տեղադրել: *Նըշընածէն թօղում ա բէրթումը՝ըրկաթէ դըրբըզէք'ը յըրա՛ն ըրած...* (ՆԼՂԺԲ, 68): 5. *տե՛ս* Ցըրա ածէլ: *Յօր ա օնում մէյդը հըղըցան տա՛ւս օնըմ, մին կ'ըրէզման քա՛նդա՛ում, վը՛ր տընի մաչին, վը՛ղան յըրա անէ, ծասկէ* (ՀԺՀ, VI, 181):

- Ցըրա ըղնէլ - 1. Կռանալ մի բանի վրա: *Տա յըրա յա ընգնըմ էտ մօխրավ լիգ'ը տօպրակին, գ'ուդում ա, թա էն ա ախպէրը միչին* (ՀԺՀ, V, 56): 2. *տե՛ս* Ցըրա պըրծընէլ (1, 2):

- Ցըրա թափվէլ - *տե՛ս* Ցըրա տալ (1):

- Ցըրա թըռչիլ - *տե՛ս* Ցըրա պըրծ(ը)նէլ:

- Ցըրա խուվվալ/խըվվալ - *տե՛ս* Ցըրա պըրծընէլ (3):

- Ցըրա ծըծաղէլ - Ծաղրել, ձեռ առնել: *Էտ օրանը յը՛տը, հիբը Ծատօրը տա՛ւս ա կ'ամ շինամաչ, լօխ յըրա ծըծաղում ըն* (Բ):

- Ցըրա կէնալ - Հսկել, հետեւել, ուշադրության կենտրոնում պահել: *Ասում ա.- Ցըրա՛ կացէք'ը, վէր էտ պէնը սաղ սըլմաթ տանին, տը՛ղաց անին* (Ձ):

- Ցըրա՛ կ'ալ - 1. Ձարկել, հարվածել: *Թափէղը տօռնը յը՛րան ա կ'ամ, պալատան տա՛ւս կ'ամ, ք'ընում...* (ՆԱԲ, 39):

- Ցըրա կ'ա՛ղ - 1. Նպաստավոր լինել, լավ ազդել: *Էտ ըխպիրին ճա՛ւրը ինձ յըրա կ'ա՛մ ա* (Բ): 2. Հարմար լինել, պատշաճել, չափերով համապատասխանել, սազել: *Դարյան փօրցա՛ում ա, յըրա կ'ա՛մ չի* (Ձ): 3. Կուտակվել, շատանալ, ավելանալ: *Փուլը փուլէն յըրա յա կ'ամ* (Ձ):

- Ցըրա կ'իրիլ - 1. Մեկի հաշվին իբրեւ պարտք գրել: *Պարթկը կուճուր ախպօրը յըրա յըն կ'իրում* (Ձ): 2. Մեկին կտակել, նրա անունով գրանցել: *Հա՛ղը տօնը մը՛ծ տըղէն յըրա յա կ'իրում* (Ձ):

- Ցըրա կօխէլ - Սեղմել, ճնշել: *Ցըրա յըն կօխում, էտ ծուվէնը լօխ կուտրատում* (Ձ):

ՇԱԽԿԱ[2] - *գ.* Բույսերի հիվանդություն, երբ տերեւները դեղնում եւ թափվում են ցրտերից հետո փչող տաք քամուց: *Շախկան փիս հիվընդութուն ա ծըռէրէն հըէտէ* (Բ):

- Շախկա թըխէլ/նի կՒԝլ/տալ - Այդ հիվանդությամբ հիվանդանալ (բույսերի մասին): *Կարկուտ թակած թութան արաղ չի տԝուս կՒալ, շախկա տըված թութան ըրկուտակ տԝուս կըկՒա* (ԱԲԲ, 44):

ՇԱԽԿԱԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Շախկալամիշ անէլ - *տե՛ս* Շախկա տալ:

ՇԱԽԿԱՄ/ՇԱՂԿԱՄ *(գրբ. շաղգամ)* - *գ.* Վայրի բանջարի տեսակ: *Շախկամը արտը կԝլԝլ ա* (Բ):

ՇԱԽԿԱՐԱՄԱ - *գ.* Խաղատեսակ, որի ժամանակ երկու խաղացողներից մեկը, մյուսին տեսնելով ձեռքը գրպանում, ասում է՝ տարա՛ծ, եւ վերջինս պետք է գրպանում եղածը տա նրան: *ԽօխէնքՒը սիրում ըն շախկարամա խաղ անէլը* (Բ):

ՇԱԽՄԱՏ *(ռուս. шахматы)* - *գ.* 1. Շախմատ խաղը: *Հայէրը սիրում ըն շախմատ խաղը* (Բ): 2. Շախմատի տախտակն ու քարերը՝ որպես միասնություն: *Հԝրը տըղէն հըէտէ շախմատ ա հինքՒ օնում, ամմէն օր նըհըէտը խաղ անում* (Բ):

ՇԱԽՄԱՏԻՍ *(ռուս. шахматист)* - *գ.* Շախմատի գծով մասնագիտացած անձ: *Հայէրը լՒավ շախմատիստնէ շատ ըն տուվալ* (Բ):

ՇԱԽՇԱԽԻ - *գ.* Ուրախ պարեղանակ կամ պարատեսակ: *Ախըր հինչ սըրտա՞վ շախշախի ածիմ, ըխճըկօրանց պար ածիմ...* (ՋՏ, Բ, 45):

ՇԱԽ-ՇՈՒԽ - *գ.* Ուրախ ժամանց, քեֆ: *Աստուծ տա՝շախը-շուխը մէր ջիհիլնէրէն անա անպակաս ինի* (Բ):

ՇԱԽՍԷՅ-ՎԱԽՍԷՅ *(թրք. šaxsey-*

vaxsey) - *գ.* Մահմեդականների սգի կրոնական արարողություն՝ ինքնաձաղկումով եւ ինքնախոշտանգումով: *Շախսէյ-վախսէյին վախտը թօրքէրը ժինջիլ-նէրավ ուրանց վէր ին թակում* (Բ):

ՇԱԽՏ *(ռուս. шахта, գերմ. Schacht)* -*գ.* Հանքահոր: *Դրրըմբօնա վը՛սկուն շախ-տէրումը շատ մարթ ա կօրծ անում* (Բ):

ՇԱԿ - *տե՛ս* ՇԻՇԱԿ:

ՇԱՀ[1] *(պրս. šah)* - *գ.* 1. Մի քանի արեւելյան երկրներում, հատկապես Իրանում՝ միապետի տիտղոսը, թագավոր: *...Շահը հըրաման ա տամ, վը՛ր ուրանն յիրգիրըմը հու վը՛ր խըմիշկ քաշի, յա պինըցընէ, կըլօխը կըտրը-լական ա* (ՆԼՂԺԲ, 18): 2. *փխբ. ած.* Փարթամ, ընտիր, մշակովի, ոչ վայրի (ծառ, պտուղ եւն): *Թըխմըչարը քանդում ըն, տը՛ղը շահ նուռնօտ տընգօտում* (Ձ):

- Շահ դամար - *գ.* Ջարկերակ: *Շահ դամարը վէր կըտրէցէլ, մարթը կըմը՛ռ-նէ* (Բ):

- Շահէն գ՛ալ հա գ՛ալը տը՛ռնալ - Ձգձգվել (գործը): *Ըրամէն հըրսանէք՝ անէլը շահէն գ՛ալ հա գ՛ալըն ա տը՛-ռալ* (Բ):

ՇԱՀ[2] *(գրբ. շահ)* - *տե՛ս* ԽԷՐ:

ՇԱՀԱՆԷ/ՇԱՀՆԻ - *գ.* Խաղողի ընտիր տեսակ: *Մին ճուվարան շահանէ յա քա-ղում, դարկում հըրթնըցուվէն հը՛տէ* (Ձ):

ՇԱՀԱՌԱ - *գ.* Թույլ՝ նոսր գործած ձե-ռագործ: *Էտ ախճիգը մին շահառա յա կ՛օրծում, տամ թանջիրին* (Ձ):

ՇԱՀՋԱԴԱ *(պրս. šahsāde)* -*գ.* Շահի որդի, արքայորդի: *Խաբարը յէր ա ինում, վէր շահզադան մըռնէլու յըրա յա* (Ձ):

ՇԱՀԷԼ *(գրբ. շահիմ)* - *նբ.* 1. Օգուտ քաղել, շահ ստանալ: *Էտ բաղան Մու-կուչը լ՛ավ շահում ա* (Բ): 2. Խնամել, հոգ տանել: *Պառավը էտ յիթիմին շահում ա, մըծրցընում*:

ՇԱՀԻ - *տե՛ս* ՇԱՀԻ:

ՇԱՀԻ/ՇԱՀԻ *(պրս. šāhi)* - *գ.* 1. Պարս-կական փոքր դրամ՝ ղռանի մեկ քսաներորդ մասը: *Աղան հէնգ՝ շահի փող ա տամ, ծառան ք՛ինըմ ա մին քանի ծու առնըմ, հավ առնըմ...* (ԼՂԲ,364): 2. Նախախորհրդային Ռուսաստանում հինգ կոպեկանոց մետաղադրամ: *Տ՛ուս ա օնում մէծ, Նիկալայի շանիին, վէր էշու նալու նըման ա, տինում Պուղուն հափ-ռէն մաչին* (ԲՀԲ, 199):

ՇԱՀԻՈ - *տե՛ս* ՇԸՀԱՂ[2]:

ՇԱՀՄԱՐ *(պրս. šah (թագավոր)+mar (օձ)* - *գ., ած.* Կարմրագույն եւ մեծ օձի տեսակ: *Յէշում ա տէսնում՝ մին շահ-մար օխծ աղուն թըփէյիս* (ՀԱԲ, 15, 130):

ՇԱՀՆԱ *(պրս. šahna)* - *գ.* Որեւէ գոր-ծի արդյունքում օգտվող անձ: *Մահնան յը՛ս տը՛ռէ, շահնան ինք՝ը* (Բ):

ՇԱՀՆԻ - *տե՛ս* ՇԱՀԱՆԷ:

ՇԱՂ *(գրբ. շաղ)* - *տե՛ս* ՅԸ՛ՂԸՄՆԸ: *Մին խիլլա՝ վէր կընաս ա, մին փիս էլ շաղ ա նի օնէս, յէրգ՝ինք՝ը թուխպէս* (ՀԺՀ, V, 247):

- Շաղը յըրա - *տե՛ս* ՇԸՂԸԹԱԹԱԽ:

- Շաղ ընցընէլ/կ՛ալ - Սփռվել, ցրվել, տարածվել: *Կ՛ը՛վաթը վէր ա ըղնում, կօ-տըրում, պէզնիգ՝նէն տափավը մին շաղ կ՛ամ* (Ձ):

- Շաղ տալ - 1. Սփռել, ցրել, տարա-ծել: *Ախրը, էտ մարթը, ճարը կըտրած, տանում ա քէրծէն կըլխէ արտէն ղըրա-ղէն մօխէր շաղ տամ...* (ԼՂԲ, 346): 2. Ցողել, ցայել: *Տա ճուր ա շաղ տամ, էտ ըխճըկանը յէտ պէրըմ...* (ՀԺՀ, V, 47):

- Շաղ ք՛ինիլ - 1. *տե՛ս* Շաղ ընցընէլ: 2. *տե՛ս* ՃԷԽ ք՛ինիլ:

ՇԱՂԱԽ/ՇԱՂԱՂ *(գրբ. շաղախ)* - *գ.* Ջանազան նյութերի միապաղաղ խմո-ռանման զանգված: *Ջառին ք՛ընում ա, թա մին կից նէստա յօր օնէ, շաղաղ անէ* (ՆԱԲ, 142):

ՇԱՂԱՂ - *տե՛ս* ՇԱՂԱԽ:

ՇԱՂԷԳ՝ - *գ.* Շաղի՝ ցողի կաթիլ: *Մին շաղեգ՝ էլ մինէշակէն յըրա յա նըս-տում* (Ձ):

ՇԱՂԷԼ[1] - *չբ.* Մանրամաղ անձրեւ՝ ձյուն տեղալ: *Թօռը շաղում ա* (Ձ):

ՇԱՂԷԼ[2] - *չբ.* Կտրվել, մակարդվել, փսորվել: *Կաթնը շաղալ ա* (Բ):

ՇԱՂԷՆՔ՝ *(գրբ. շողիք)* - *տե՛ս* ԹԸՔ (1):

ՇԱՂԿԱՄ - *տե՛ս* ՇԱԽԿԱՄ:

ՇԱՂՎԵԼ[1] - *չբ.* 1. Շշմել, շփոթվել: *Պայց կընէգ՝ը շատ շըղվելան բիշին թօղալ ա ըստօլէն* (ՀԺՀ, VII, 393): 2. *տե՛ս* Աշկէրը ճըթն(ըվ)էլ (ԱՇԿ-ի տակ):

ՇԱՂՎԵԼ[2] - *տե՛ս.* ՇԱՂԷԼ[2]:

ՇԱՂՈՒՏ - *տե՛ս* ՇԸՂԸԹԱԹԱԽ(1):

ՇԱՄ[1] *(արաբ. šema)* - *տե՛ս* ՄՈՒՄ:

ՇԱՄ[2] *(թրք. šam (սոճի)* - *տե՛ս* ՇԱ-ՄԱՂԱՋԻ:

ՇԱՄԱԹԱ *(արաբ., թրք. šamata)* - *տե՛ս* ՀԱՐԱՅ-ՀԸՐՕՑ:

ՇԱՄԱՂԱՋԻ/ՍԱՄԱՂԱՋԻ *(թրք. ča-mačaci)* - *գ.* Սոճի: *Սամաղաջին կըտը-րում ըն, տախտակ քաշ՝ում* (Ձ):

ՇԱՄԱՄ *(պրս. šamāma)* - *գ.* 1. Անուշ-ահոտ փոքր սեխի տեսակ: *Շամամը վէր հըսնում ա, վը՛տը բօստանը օնում ա* (Բ): 2. *փխբ. ած., գ.* Փոքր եւ կլոր (ստինք): *Շամամ ծըծէրըտ ինձ անքօն ա թօղալ* (Ձ):

ՇԱՄԱՋ - Գործածվում է կապակ-ցության մեջ:

- Շամաջ անէլ - *տե՛ս* Կ՛ը՛վաթ անէլ:

ՇԱՄԱՐ - *տե՛ս* ՍԻԼԼԱ՝[1]:

ՇԱՄԲ/ՇԷՄԲ *(գրբ. շամբ)* - *գ.* 1. Եղեգով պատված տեղ, եղեգնուտ: *Ըրախ-սէն ղըրաղէ շամբումը շատ վիրի խօգ՝ կա* (Բ): 2. Մացառով պատված տեղ, մա-ցառուտ: *Սարէն շամբումը ըլըբաստը-րակը կ՛օղըլ ա կէնում* (Ձ):

Շամբին տալ - Փախչել, ճողոպրել: *Թօրքերը մէգ վէր տը՛սէն, շամբին տը-վէն* (Բ):

ՇԱՄԲՈՒՏ/ՇԱՄԲՕՏ/ՇԷՄԲՈՒՏ/ՇԷՄ-ԲՕՏ *(գրբ. շամբուտ)* - *տե՛ս* ՇԱՄԲ:

ՇԱՄԲՕՏ - *տե՛ս* ՇԱՄԲՈՒՏ:

ՇԱՄԴԱՆ/ՇԱՄԴԱՆ *(պրս. šemdān)* - *գ.* Աշտանակ, մոմակալ: *Յէտավ ըստօ-լէն յըրա մին շամդան ա տինըմ...* (ՀԺՀ, VII, 103):

ՇԱՄԴԱՆ - *տե՛ս* ՇԱՄԴԱՆ:

ՇԱՄԷ - *տե՛ս* ՄՈՒՄԷ:

ՇԱՄԹԱԼ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼ:

ՇԱՄԹԱԼԻ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼԻ:

ՇԱՄԹԱԼՕՏ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼՕՏ:

ՇԱՄՊԱՆԸՍԿԻ - *տե՛ս* ՇԱՆՊԱՑԿԻ:

ՇԱՄՓՈՒՌ - *տե՛ս* ՇԱՄՓՈՒՐ:

ՇԱՄՓՈՒՐ/ՇԱՄՓՈՒՌ *(գրբ. շամ-փուր)* - *գ.* 1. Մի ծայրը սուր ձող, որի վրա շարում են միսը, կարտոֆիլը եւն ու խորովում կրակի վրա: *Մէսը քաշում ըն շըմփուրնէն, խըրավում* (Ձ): 2. Հրացանի փողը մաքրելու ձող: *Շամ-փուրը յօր ա օնում, թըվանգ՝ին լ՛ուլան թըմիզըցընում, տանում հօրը ուրաղէն պատան կախ տամ* (Ձ):

- Շամփուրը նի քաշիլ - Տանջել, նե-ղել, չարչարել: *Հարթնը ըսկէսվօրը շամ-փուրըն ար նի քաշ՝ում* (Բ):

- Շամփուր կօլ տալ - Ուղիղ՝ գագաթ-նահայաց դիրքով կանգնել կամ քայլել՝ առանց թեքվելու: *Հինչ ը՞ս դիք՝ վը՛ննը կացալ, շամփուր ը՞ս կօլ տըվալ* (Բ):

- Շամփուր կօլ տըված - Նիհար, բարձրահասակ եւ ձիգ քայլով (մարդ): *Էտ շամփուր կօլ տըվածը մինչը՛վ տը՛-ղան տ՝ուր՝ուր կ՛ա, կըմըթնէ* (Բ):

- Շամփուր տալ - Փորը սաստիկ գա-լարվել: *Փօրը շամփուր ա տամ, խը՛ղճը ցավան պըռանչ՝ում ա* (Բ):

ՇԱՅԻՐ - Գործածվում է կապակ-ցության մեջ:

Շայիր կըտրրէլ - Մի բանով տարվել, ամբողջությամբ նվիրվել: *...Սօվդաք՝արը թամաք՝ար ա, ուսումնականը՝ փօղի յըրա շայիր կըտրրած* (ՋՏ, Բ, 138):

ՇԱՅԿԱ *(ռուս. шайка)* - *գ.* Ավազակա-խումբ, հրոսակախումբ: *Էտ ըրդաքումը էլ մին շայկա յա ինում, միշտ ժուղուվուր-թէն տընէրը թըլանում ին* (Ձ):

ՇԱՅԿԱԲԱՇԻ - *գ.* Ավազակախմբի

պարագլուխ: *Տահանք էլ ըն կ'ամ ոնրանց շայկաբաշուն նըհէտ* (ՀԱԲ, 15, 70):

ՇԱՅԿԱԲԷՌ - *տե՛ս* ՇԱՅԿԱԲԱՇԻ:

ՇԱՆՃԱԽ - *տե՛ս* ՍԱՆՋԸՊ:

ՇԱՆՊԱՑԿԻ/ՇԱՄՊԱՆԸՍԿԻ *(ռուս. шампанское, ֆր. champagne)* - *գ.* Շամպայն: *Շանպացկին լ'ավ պէն ա, ամիա վէր շատ խըմէցէր, կըհանրփիս* (Բ):

ՇԱՆՋԱՂ - *տե՛ս* ՍԱՆՋԸՊ:

ՇԱՆՋՈՒ - *տե՛ս* ՍԱՆՋՈՒ:

ՇԱՆՎԸՐԹՕԹՈՒՆ - *տե՛ս* ՇԱՆՏԸՂՕԹՈՒՆ:

ՇԱՆՏԸՂՕԹՈՒՆ - *գ.* 1. Խարդախություն, տմարդություն, խարդախ՝ տմարդի լինելը: *Շանտըղօթունը Ըսկ'ան'անց ցը'ղան անպակաս ա* (Բ): 2. Խարդախ՝ տմարդի արարք: *Շանտըղօթուն ըրավ, հիրըվանէն տոնրմա՛ն քըցից* (Բ):

ՇԱՇ - *գ., ածական.* Անխելք, միամիտ, հիմար, խելառ, խենթ: *Շա՛շին շօռ կ'ալ՝ալ քըթէնալ չըս* (Ձ):

ՇԱՇԷՆՆԻ *(ռուս. шоссейный)* - *գ.* Շոսսե, խճուղի: *Նի յա մընում մը'ծ շաշենին, ք'ինամ, թա ըշտը'ղ ա ք'ինամ, ինք'ըն էլ չի գ'ուդում* (Ձ):

ՇԱՇԿԱ *(ռուս. шашка)* - *գ.* Ծայրը կեռ թուր: *Էտ տըղան ք'ինում ա էտ շաշկան հանում, պիրում տամ հօրը* (ԲՀԲ, 83):

ՇԱՇԿԻ *(ռուս. шашки)* - *գ.* 1. Շաշկի խաղը: *Ըսատուրը էզգանան հիրըվանէն նըհը'տ շաշկի ար խաղ անում* (Բ): 2. Շաշկու տախտակն ու քարերը՝ որպես միասնություն: *Շաշկին քըցում ա թօրբան, տանում* (Ձ):

ՇԱՇ-ՄԱՇ - *տե՛ս* ՇԸՇԸՄԱՇ:

ՇԱՇՄԻՇ - *տե՛ս* ՉԱՇՄԻՇ:

ՇԱՇՄԻՇ - *տե՛ս* ՉԱՇՄԻՇ:

ՇԱՇՎԻԼ - *չբ.* Գժվել, խենթանալ: *Տա վէր կ'ամ չի՜ տը'սնում մին կընէգ' ոնրան ծին նալէլ ա տամ, կըգնըվէլան օգում ա, թա շաշվի* (ՆԼՂԺԲ, 25):

ՇԱՇՏ *(գրբ. շեշտ (սուր՝ կտրուկ՝ բարկ ձայն, թրի պես կտրող, սաստող)* - *գ.* 1. Եռանդ, տրամադրություն: *Շաշտ օնէ, լ'ավ կօրծ ա անում* (Բ): 2. *տե՛ս* ՇԱՇՏԻՆ:

- Շաշտ ինիլ/տը'ռնալ - Անակնկալ արգելքի հանդիպելով՝ շվարել՝ տրամադրությունն ընկնել: *Թօռը նի յա օնում, հանձ ընուղնէն շաշտ ըն ինում* (Ձ):

ՇԱՇՏԻՆ - *ածական.* 1. Կարգին, ամեն ինչ տեղը: *Ալիսանը շաշտին տօն ա շինալ* (Բ): 2. Դիպուկ, կտրուկ: *Շաշտին խօսկ ասօղ ա Մարքարը* (Բ):

ՇԱՇՏՈՒՄ - *տե՛ս* ՇԱՇՏԻՆ:

ՇԱՊԱԹ - *տե՛ս* ՇԷԲԱԹ:

ՇԱՋ[1] - *տե՛ս* ՍԱՋ[1]:

ՇԱՋ[2] - 1. *տե՛ս* ԺԱԺ[1]: 2. *տե՛ս* ԾԸՌԱՇԱՋ:

ՇԱՌ *(արաբ. šarr (չարիք, խռովություն)* - *գ.* 1. Փորձանք, ձախորդություն: *Ըշտըղա վէրէ յա, մին շառ մէգ ջիհում ա, պա ըստի պէն կինի՞* (Բ): 2. Սուտ մեղադրանք, զրպարտություն: *Աստուծ հը'ռէ տանէ կընգանը շառան...* (ԱԲԲ, 20): *ածական.* 3. Աղետաբեր, փորձանք բերող: *Շառ կօրծա հիշքան հը'ռէ կէնաս, էնքան քու օքութը՛ն ա* (Ձ): 4. *ածական.* Չարագուշակ: *...Հանրը վը'ր պըտահըմ ար, շանտ ար անըմ, մին շառ պէն ասըմ* (ՀԺՀ, VI, 183):

- Շառավ տալ - Զրպարտել: *Թաքուհին մըհէտէ շառավ ա տըվալ Թափէղէն, էն էլ կըլօխ ա յէր կալալ, յիրգ'իրան տանս յէկալ* (ՆԱԲ, 49):

- Շառը քաշիլ - Հեռանալ, որպեսզի փորձանք չլինի: *Հանրը ասմա.- Տու վը'ռս անօղ չըս, շառըտ քաշի ըստըղան* (Ձ):

- Շառ սըհաթու ջիհիլ - Գործը ձախողվել, ձախորդության հանդիպել: *Խը'ղճը հինչը անում ա, շառ սըհաթու վա ջիհանում* (Բ):

Շառ տինիլ - *տե՛ս* Շառավ տալ: *Հառհնը էտ ըխճըկանը ղանշանգ' ինիլին նախանձվում ա, շատ շառէր տինանում յիրանն* (ՀԺՀ, VII, 21):

ՇԱՌԱՓ - *տե՛ս* ՇԸՌԱՎԱՆՔ:

- Շըռափէն տալ - *տե՛ս* Շըռավանք տալ:

ՇԱՌԲԱՇԱՌ/ՇԱՐԲԱՇԱՌ/ՇԸՌԲԸՇԱՌ/ՇԸՐԲԸՇԱՌ - *տե՛ս* ՇԱՌ:

ՇԱՌԷԼ - *նբ. տե՛ս* Շառավ տալ:

ՇԱՌԸՇԸԼԹԱՂ - *տե՛ս* ՇԸՌԸՇԸԼԹԱՂ:

ՇԱՌԸՇՈՒՌ/ՇԱՌ-ՇՈՒՌ - *տե՛ս* ՇԱՌ:

ՇԱՌԻՆՃ - *գ.* Ջրհորից ջուր հանելու դույլ: *Ք'անդիրը կըտըրում ա, շառինճը ըղնում ա ճիրին վէրէն մաչը* (Ձ):

ՇԱՌԼԱՏԱՆ *(ռուս. шарлатан, ֆր. charlatan)* - *գ., ածական.* Միամիտ մարդկանց հավատը՝ միամտությունը չարաշահող խաբեբա: *Շառլատան մարթ ա Իսակը* (Բ):

ՇԱՌ-ՇՈՒՌ - *տե՛ս* ՇԱՌԸՇՈՒՌ:

ՇԱՍՍԷ - *տե՛ս* ՇՕՍՍԷ:

ՇԱՎԱԼ(Լ)Ի/ՇԱՎՈՒ - *գ., ածական.* Հեղհեղուկ բնավորությամբ եւ թափթփված (մարդ): *Մին շանվալլի մարթ մըթըն-մըթէն յէր ա կէնում, վը'ր ք'ինան փադու* (ՆԼՂԺԲ, 110):

ՇԱՎԹԱԼ/ՇԱՄԹԱԼ/ՇԷՎԹԻԼ/ՇԷՄԹԻԼ *(պրս. šeftalu)* - *գ.* Դեղձ: *Մօսի ապան մին յանշիգ' շանվթալ ա տանում բազարը, վէր ծախէ* (Ձ):

ՇԱՎԹԱԼԻ/ՇԱՄԹԱԼԻ/ՇԷՎԹԻԼԻ/ՇԷՄԹԻԼԻ/ՇԸՄԹԻԼԻ - *գ.* Վարդագգիների ընտանիքին պատկանող պտղատու բույս, դեղձենի: *Գիշվա բըղէրումը շանվթալի շատ կա* (Բ):

ՇԱՎԹԱԼՕՏ/ՇԱՄԹԱԼՕՏ/ՇԷՎԹԻԼՕՏ/ՇԷՄԹԻԼՕՏ - *գ.* Շատ դեղձենիներ աճող տեղ, դեղձենիների այգի: *Նի յընմընում շանվթալօ՛ն, մարթը մին թօրբա շանվթալ քաղում* (Ձ):

ՇԱՎՈՒ - *տե՛ս* ՇԱՎԱԼ(Լ)Ի:

ՇԱՏ *(գրբ. շատ)* - *ածական.* 1. Մեծ քանակությամբ, բազմաթիվ: *Շատ մարթիք' ըն հըվաքվում, ամիա կարում չընէ էտ քարը տը'ղան տանրանրի տան* (Ձ): 2. Սաստիկ, խիստ: *Տահանք շատ ք'ասիբ ին՝ օրէն հացէն մանհտանց* (ՀԺՀ, VII, 93): *մ.* 3. Հաճախ, շուտ-շուտ: *Շատ ըս կ'ամ մէր շէնը, հինչ ա՞ իլալ* (Բ): 4. Երկար, երկար ժամանակ: *Շատ ա վը'ռսու շօռ կ'ամ, մին էլ բանրդանն մին ծառու յըրա մին դուշ ա տը'սնում...* (Ձ): 5. Չափից ավել: *Շատ ա ք'ինում, թա խըրէգ', հըսըվհաս մին շէնանը՝ յէշում ա տէսնում՝ ըռաշկէն մին մարթ ա ք'ինանմ* (ՆԼՂԺԲ, 90): *գ.* 6. Մեծ քանակությամբ մարդիկ՝ առարկաներ: *Շատէրընը ըն օգում հարուստ ապրին, ամմա անմալ չի կ'ամ* (Բ): 7. *Մեծ մասը, մեծամասնությունը: Կօրծէն շատը ըրալ ըմ* (Բ):

- Շատ էլ - Ենթադրենք թե: *Շատ էլ խէլանանք ա, հինչ օ՞քուտ, վէր կարում չի փուլ ըշխադէ* (Բ):

- Շատ լ'ավ/պարի - Գոհունակության՝ հավանության՝ համաձայնության՝ հոժարության արտահայտություն: *Վէզիրը ասմա.- Շանտ լ'ավ, էք'ուց կըկ'աս տանիս* (Ձ):

- Շատ ճանր ք'ինիլ - Բավական ժամանակ անցնել, շատ դեպքեր՝ փոփոխություններ կատարվել: *Էտ պէնանը յը'տը շատ ճանր ա ք'ը'ցալ, ամմէն հինչ փոխվալ ա* (Բ):

- Շատ պէթկընս ա՞/հարկավէր ա՞ - Ինձ համար ոչ մի կարեւորություն՝ նշանակություն չունի: *Խօսում ա՝ խօսէ, շատ պէթկընս ա՞* (Բ):

- Շատ պէն կասէ/կօգ'ի - Նրա ասելը նշանակություն չունի, պետք չէ ուշադրություն դարձնել: *Հանրը ասմա.- Էն շատ պէն կասէ, մընհալ մէ՛լ տինիլ* (Ձ):

ՇԱՏԱՆ-ԽԸՐԷԳԱՆ - *տե՛ս* ՇԱՏԽԸՐԷԳ':

ՇԱՏԳ'ԻՂ - *ածական.* Շատ բան իմացող, բանիմաց: *Էտ ախճիգ'ընէ էլ շատգ'իդ ա ինում* (Ձ):

ՇԱՏ-ԽԸՐԷԳ' - *մ.* Շատ թե քիչ, որոշ չափով: *...Շատ-խըրէգ' ք'ը'ցալ ըն, էս Ասլան Բալասուն կ'ուզը յէկալ ա* (ՀԺՀ, VI, 26):

ՇԱՏ-ՇԱՏ - *մ.* Առավելագույն չափով,

ամենաշատը: *Մին մէշուկ ալլէրը շատ-շատ մին ամէս ա հէրիք անում* (Բ):

ՇԱՏՎԷՐ - *ած.* Բազմանդամ, շատ անձերից բաղկացած: *Շատվէր խալխըն Անվանք* (Բ):

ՇԱՐ[1] *(գրբ. շար)* - *տե՛ս* ՇԱՐԱՆ:

- Շար ըղնել - Շարվել, իրար ետեւից կանգնելով՝ շարք կազմել: *Ղազէրը, օրդակնէն սէրավ կըք'ինին կըրըծին, լըղընին, շար ընգած տօն կ'ին* (Ջ�տ, Ա, 183):

- Շար քըցիլ - Շարել, իրար հետեւից կանգնեցնելով՝ շարք կազմել: *Կամանդիրը սըլդըթնուն շար ա քըցում* (Ձ):

ՇԱՐ[2] *(ռուս. шар)* - *տե՛ս* ՇԱՐԻԿ:

ՇԱՐԱ - *գ.* 1. Առանց հատիկների հասկ ունեցող մոլախոտ: *Արտէրը շարան կալալ ա* (Բ): 2. *տե՛ս* ՀԱՃԱՐ:

ՇԱՐԱԲ - *տե՛ս* ՇԱՐԱԲ:

ՇԱՐԱԲ/ՇԱՐԱԲ *(պրս. šārāb (գինի)* - *տե՛ս* ՇԱՐԲԱԹ:

ՇԱՐԱԿԱՆ/ՇԸՐԱԿԱՆ *(գրբ. շարական)* - *գ.* Եկեղեցում երգվող հոգեւոր երգ: *Դէ էլ տառ չի ճինանչում, վըր սաղմօս յա շարական կարթի, ըսկըսում ա ինք'ըն ուրան խօսէլը* (ՀԺՀ, V, 250):

ՇԱՐԱՆ - *գ.* 1. Իրար հետեւից՝ կողքի կանգնած՝ դրված մարդկանց կամ իրերի շարք: *Քամէն էտ ըստօլբօցը շարանը պարան ա տամ* (Ձ): 2. Թելի վրա շարած զանազան առարկաների (զարդերի, պտուղների եւն) շարք: *Ջիրին շարանը քըշըցնում ա, տամ խօնցը, օտում ըն* (Ձ):

ՇԱՐԱՆ-ՇԱՐԱՆ - *տե՛ս* ՇԸՐՎԸՇԱՐ: *Պատառ վէր անց ա կէնում, Պուղին յէշում ա, տէսնում՝ մէծ-պիծի շարան-շարան ք'ընում ըն Մէլիքին տօնը...* (ՆԱԲ, 132):

ՇԱՐԲԱԹ - *տե՛ս* ՇԱՐԲԱԹ:

ՇԱՐԲԱԹ/ՇԱՐԲԱԹ *(արաբ. šarbat, թրք. šerbet)* - *գ.* Օշարակ: *...Շարբաթ ա խըմում, թախտին յըրա պըրտըյէր թէք' ընգնըմ...* (ՋՏ, Բ, 114):

ՇԱՐԲԱՇԱՐ - *տե՛ս* ՇԱՌԲԱՇԱՐ:

ՇԱՐԷԼ *(գրբ. շարեմ)* - *նբ.* 1. Իրար հետեւից կամ իրար կողքի դասավորել՝ զետեղել՝ դնել՝ շարք կազմել: *Քարէրը տափէն շարում ըն, խաղ անում* (Բ): 2. Պատ շարել: *Մըրաքուրը ըսէս ա.- Վէ՛չինչ, բա՛լա, թող շարին, մինչէվ ծօյնէրըտ թող քարին, Աստված անխէղճ չի, յէթիմնէրին կըզադէ* (ՀԺՀ, V, 589): 3. Թելի՝ ոստի՝ մետաղալարի՝ շամփուրի եւն վրա իրար ետեւից ամրացնել՝ անցկացնել, շարան անել: *Շըմփուրնէն շարում ա, տինում մընդալէն յըրա* (Ձ):

ՇԱՐԹ *(արաբ. šart (պայման, համաձայնություն)* - *տե՛ս* ՄԱՐՋ (1, 2):

ՇԱՐԺ - *տե՛ս* ԺԱՐԺ[1]:

ՇԱՐԻԴ - *գ.* Կապած թոկ՝ պարան: *Շարիդը յըէտ ա անում, էշին պէց թողնում* (Ձ):

ՇԱՐԻԿ *(ռուս. шарик)* - *գ.* 1. Գնդի ձեւ ունեցող փոքրիկ իր: *Խօխէնք'ը շարիկնէն թուլուլ ըն տամ, վէր քըցին էտ ծակը* (Ձ): 2. Օդով լցված՝ լցվող գնդաձեւ թաղանթ, փուչիկ: *Խօխան շարիկը փըչում ա, պէց թօղնում* (Բ):

ՇԱՐԻՅԱԹ - *գ.* Մուսուլմանական կրոնական եւ կենցաղային կանոնների ժողովածու: *Մօլլան շարիյաթը պէց ա անում, կարթում...* (Ձ):

ՇԱՐԻՇՏԱ - *տե՛ս* ՍՈՒՍՈՒՆ:

ՇԱՐՀԱՄԻ - *տե՛ս* ՇԱՐՄԱՀԻ:

ՇԱՐՄԱՀԻ/ՇԱՐՀԱՄԻ - 1. *գ.* Ծաղանների ընտանիքին պատկանող ձուկ: *Կասպից ծովումը կա շատ շարմահի* (Ձ): 2. *ած.* Փղոսկրե: *Ծը'ռքինը շարմահի սանդը ա...* (ԼՂԲ, 65):

ՇԱՐՄԱՂ *(գրբ. շարմաղ)* - 1. *գ.* Շատ մանր ծակոտիներով մաղ: *Շարմաղը յօր ա օնում, ալլէրը մաղում* (Ձ): *ած.* 2. Այդ մաղով մաղած, շատ նուրբ (ալյուրի մասին): *Շարմաղ իլլէրան լ'ավ ք'ալթա յա տը'ռնում* (Ձ): 3. *փխբ.* Քնքուշ, նուրբ, գեղեցիկ: *Խաբարը հըսնում ա թաքավէրէն, վար էս հինչ շէնումը մին լալ, շարմաղ կընէգ' կա...* (ՀԺՀ, V, 386): 4. *փխբ.* Սպիտակամաշկ, ճերմակ: *Շարմաղ ծէրքէր օնէ Նունիկը* (Բ):

ՇԱՐՄԱՂ-ՎԸԼԼԱՄԱՂ - *տե՛ս* ՎԸԼԼԱՄԱՂ-ՇԱՐՄԱՂ:

ՇԱՐ-ՇԱՐ - 1. *տե՛ս* ՇԸՐՎԸՇԱՐ(ԱՆ): 2. *տե՛ս* ՇԸՐԱՎՈՒՐ:

ՇԱՐՎԱՐ - *տե՛ս* ՇԱԼՎԱՐ:

ՇԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԱՐԷԼ-ի:

ՇԱՐՓ *(ռուս. шарф, ֆր. e'charpe)* - *գ.* Վզին գցելու կամ կապելու կտոր՝ նուրբ շոր, շարֆ: *Այան թօռնանը հը'տէ մին լ'ավ շարփ ա կ'օրծալ* (Բ):

ՇԱՐՔ - *գ.* 1. *տե՛ս* ՇԱՐԱՆ: 2. Մեկ գծի վրա դասավորված նստելու տեղերի ամբողջությունը, կարգ: *Էրկունչի շարքումը կընանէք'ը ըն նըստում* (Ձ):

- Շարքա տուս կ'ալ - Գոյություն ունենալուց դադարել, անպետքանալ, փչանալ: *Տըրախտըրը շարքա տուս ա յը'կալ* (Բ):

- Շարքա տուս օնէլ - 1. Անպետքացնել, փչացնել: *Էնքան քարէն թըխալ ա, դարյազը շարքա տուս ա կալալ* (Բ): 2. Վերացնել, ոչնչացնել, սպանել: *Օգում հին, վար մարթին շարքա տուս օնէն, կընգանը յօր օնէն* (ՆԼՂԺԲ, 25):

ՇԱՐՔԱՎ - *տե՛ս* ՇԱՐՔ-ՇԱՐՔ:

ՇԱՐՔԱՑԱՆ - *գ.* Շարքով՝ շարք առ շարք ցանող մեքենա: *Միհէնգ' լօխ շարքացանավ ըն արտը վարում* (Բ):

ՇԱՐՔԷՆ - *տե՛ս* ՇԱՐՔ-ՇԱՐՔ:

ՇԱՐՔ-ՇԱՐՔ - *մ.* Շարքով, իրար կողքի կամ իրար հետեւից: *Սըլդըթնէն շարք-շարք վը'նն ըն կէնում* (Ձ):

ՇԱՓԱ - *գ.* 1. Ուժեղ քամուց մի տեղ կուտակված ձյուն: *Հըղըցկընէն սաղ շափա յա, մըշինէն կարում չըն անց կէնան* (Բ): 2. Ուժեղ քամուն զուգընթաց տեղացող մանրամաղ ձյուն: *Մին շափա յա նի օնում, վէր լ'ըհա նի յա տը'ռնում աշկէրըտ, թողում չի, թա առաչ ք'ինիս* (Ձ):

ՇԱՓԱԹ - *տե՛ս* ՇԷԲԱԹ:

ՇԱՓԱՂ *(արաբ. šafak)* - 1. *գ.* Ցոլք, շողշողոյուն: *Իրը'էվէն շափաղը ընգալ ա տանը յըրա* (Բ): 2. *ած.* Ցոլուն, փայլող, շողշողուն: *Ախճիգ' տէսէ՝ տօշին ծաղէգ', աշկը շափաղ, ծաղկէն շաղէգ'...* (ՆԱԲ, II, 114):

- Շափաղ տալ - Ցոլալ, փայլել: *Ալը'էվը շափաղ ա տամ* (Բ):

ՇԱՓԱՂԱԹ *(արաբ. šefekat)* - *գ.* Կարեկցություն, գութ: *...Թաքավէրին շափաղաթավը մէր հայ ազգը կասիս մըթէն ըշխարքա լուս աշխարք ա տուս կ'ամ* (ՋՏ, Բ, 203):

ՇԱՔ'/ՇԱՔ'Ի *(թրք. šaka (հանաք)* - *գ.* 1. *տե՛ս* ԱՅԻԲ (2): 2. Վարկաբեկում, անվանարկում: *Էտ շաք'անը յը'տը խը'ղճը հըմանչում ա, թա տուս կ'ա շինամաչը* (Ձ):

- Շաք' տինիլ - Մեկին թերություն վերագրել, անտեղի մեկին անվանարկել: *Ըսկէսուրը վարին հարթնանը շաք' ար տինում* (Ձ):

ՇԱՔ'ԱՐ *(գրբ. շաքար)* - *գ.* 1. Սպիտակ ու քաղցր սննդամթերք, որ ստանում են ճակնդեղից կամ շաքարեղեգից, շաքար: *Այան մինակ շիք'արավ ար չայ խըմէս* (Բ): 2. *գ., ած.* Շատ քաղցր, համեղ (ուտելիք): *Էս էլ հօ խօրաց' չի, շաք'ար ա, շաք'ար* (Բ):

- Շաք'արը վէր շատ/ամմէն օր օտիս, շէպու համ կըկ'ա - Նույնիսկ ամենալավ բանը տեւականորեն գործածելու դեպքում ձանձրալի է դառնում:

- Շաք'ար չըմ, վէր հալիմ - Անձրեւից՝ ջրից չեմ վախենում:

ՇԱՔ'ԱՐԴԱՆ/ՇԱՔ'ԱՐԴԱՆ - *գ.* Շաքարը մեջը լցնելու եւ սեղանին դնելու աման, շաքարաման: *Շաք'արդանը շըք'արավ լըսնում ա, տինում դունըդնէրէն ըռաչէն* (Ձ):

ՇԱՔ'ԱՐԴԱՆ - *տե՛ս* ՇԱՔ'ԱՐԴԱՆ:

ՇԱՔ'ԱՐԻ - *ած.* Քաղցր, հաճելի: *Սաֆարի ջանիտ մատաղ, խօսկը'ռքըտ շաք'արի յա* (ԼՂԲ, 40):

ՇԱՔ'Ի - *տե՛ս* ՇԱՔ':

ՇԱՔ'ԻԼ/ՇԸՔ'ԻԼ/ՇԻՔ'ԻԼ *(արաբ., պրս., թրք. šekil (կերպարանք, ձեւ, տեսք)* - *գ.* Դիմանկար, պատկեր: *Յըտնան քաշէլ տըվէք' խուրդանուփարա կը-*

նանօց շիք՝իլնէն, էն կընանօց, վէր սօր, ոնրանց մարթօց ծէռքին յէսիր կընտրած, ընտասունք ըն թափըմ (ՋՏ, Ա, 192):

ՇԷԲԱԹ/ՇԷԲԷԹ/ՇԱԲԱԹ/ՇԷՓԱԹ/ՇԸՓԹ/ՇԸՊԸԹ *(գրբ. շաբաթ)* - *գ.* 1. Ժամանակի հաշվման միավոր՝ երկուշաբթի օրվանից մինչեւ կիրակի ներառյալ: *Կուքուն կընէգ՝ը էրկու շէբթավ ք՝ընում ա Բաքու* (ՆԱԲ, 123): 2. *տե՛ս* Կ՝ԸՐԿ՝ԱՄՕՏ (1,2):

ՇԷԲԷԹ - *տե՛ս* ՇԷԲԱԹ:

ՇԷԳ՝/ՇԷՅԳ *(գրբ. շէկ)* - *ած.* 1. Դեղնակարմիր, խարտյաշ: *Շէգ՝ ըռանգ՝ը սիրում չըմ* (Բ): 2. Շիկահեր: *Նէսին պըտահում ա մին շէգ՝ մարթու* (ՆԱԲ, 171):

ՇԷԼԱԿ - *տե՛ս* ՇԷԼԸԿ:

ՇԷԼԸԿ/ՇԷԼԱԿ *(գրբ. շալակ)* - *գ.* 1. Մարդու թիկունքը, բեռ կրելու տեղը: *Պէլունց շէնան մին մարթ ըղնում ա Բաքու՝ էրկու լիգ՝ը չըվալ էլ շըլակէն* (ՆԱԲ, 143): 2. Բեռան՝ ծանրության այն չափը՝ քանակը, որ մարդ կարող է միանգամից կրել: *Ամէն օր մին շէլանկ չօփ ա հըվաքում, պիրոնում ուրոնգ՝ունը կըրակ անում...* (ՆԼՂԺԲ, 46): 3. Շալակած բեռը: *Շէլակը տինում ա տափէն, վէր պատառ դինջանա, էլիա յը՝ր կէնա հըղէն ք՝ինի* (Ձ):

- Շէլանկը յը՝ր ինիլ - Մեկին իրեն ենթարկել, մեկի վրա իշխել: *Կընէգ՝ը էր մարթին շէլանկը յը՝ր իլանվ, էն տօնը տօն չի տը՝ռնալ* (Ձ):

- Շէլանկըն օնէլ - *տե՛ս* ՇԸԼԱԿԷԼ:

- Շէլանկը շըլօր քաղէլ - Շատ աղքատ լինել: *Խը՝ղճ Հանմզանն հինչ անէ՝ տօնը, տը՝ղը էրված, շէլանկը շըլօր ա քաղում* (Բ):

Շէլանկըս շըլօր ա՞/շըլօր ը՞ս տը՝սալ - Ինձ մի թերագնահատիր:

Շէլանկ տալ - Մեկի շալակին դնել, շալակել տալ: *Օղտը ըսկըսում ա էշին ըղաչանք անէլը, վար նա յէրք չասէ, թա չէ կըկ՝ան ուրանց տանէն ք՝արվան, ծանդըր պէռնը շէլակ կըտան* (ՆԼՂԺԲ, 83):

ՇԷԼԱԿ-ՇԷԼԱԿ/ՇԸԼԸԿ-ՇԷԼԱԿ/ՇԻԼԸԿ-ՇԷԼԱԿ - *մ.* Առատորեն: *Շէլանկ-շէլանկ ծուն ա կ՝ամ* (Բ):

- Շէլանկ-շէլանկ տը՝ռնալ - Առատորեն պտղավորվել (ծառերի մասին): *Ըստարէ թուռըյին ա իլանվ, խընձօրօտը շէլանկ-շէլանկ ըն տը՝ռալ* (Բ):

ՇԷԽ/ՇԱԽ *(թրք. šax (ճյուղ, ձիգ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Շէխ անէլ/տալ - Փռել, տարածել: *Հավը թէվէրը շէխ ա ըրալ* (Բ):

ՇԷԿԷԼ - *նբ.* Խփել, հարվածել: *Վէր շէկում ա, կ՝օղը կ՝ումէն մըղակավը տոնս ա պըրծընում* (Ձ):

ՇԷՀՇՈՒԼԱ - *տե՛ս* ՇԱԼԱ-Ք՝ՈՒԼԱ:

ՇԷՂՈՒՆ - *ած.* Ոչ ուղիղ, շեղ, թեքված: *Շէղուն հըղէ յա շէնին հըղէն* (Բ):

ՇԷՄԲ - *տե՛ս* ՇԱՄԲ:

ՇԷՄԲԱՇԷՆ/ՇԷՄԲԱՇԷՆ/ՇԷՆԲԱՇԷՆ/ՇԷՆԲԱՇԷՆ/ՇԻՆԸՇԷՆ - *մ.* Գյուղեգյուղ: *...Ըղնում ըն շէմբաշէն, հինչքան թանմբանլնէ կա՝ հըվաքում* (ՀԱԲ, 15, 45):

- Շէմբաշէն յը՝տ ասէլ - Շատ գովել՝ գովաբանել: *Էտ օրան յը՝տը ըսկէսուրը ըսքըսում ա հըրթնէրէն շատ թանրիփ անէլը, շէմբաշէն յը՝տ ասէլը* (Ձ):

ՇԷՄԲԱՇԷՆ - *տե՛ս* ՇԷՄԲԱՇԷՆ:

ՇԷՄԲՈՒՏ - *տե՛ս* ՇԱՄԲՈՒՏ:

ՇԷՄԲՕՏ - *տե՛ս* ՇԱՄԲՈՒՏ:

ՇԷՄԹՈՒԼ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼ:

ՇԷՄԹՈՒԼԻ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼԻ:

ՇԷՄԹՈՒԼՕՏ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼՕՏ:

ՇԷՄԻՇԿԱ -*տե՛ս* ՍԷՄԻՇԿԱ:

ՇԷՄՔ *(գրբ. շեմ)* - *գ.* Շենքի, տան եւն դռան՝ դարպասի անմիջապես առջեւի տարածությունը: *Լըհա վար հըսավ կ՝ումին շէմքը, ծուվվաց...* (ԼՂԲՔ, 268):

ՇԷՅԳ - *տե՛ս* ՇԷԳ՝:

ՇԷՅԹԱՆ *(արաբ. šeytān, թրք. šeytan)* - 1. *տե՛ս* ՍԱԴԱՆԱ: 2. *գ., ած.* Անբարոյական (կին): *Էտ շէյթանը տաք՝ուրը նըհը՝տ էլ ա սիլի-բիլի ընէս* (Բ):

ՇԷՅԹԱՆԱՂԱՋԻ/ՍԷՅԹԱՆԱՂԱՋԻ *(թրք. šeytansačі)* - *գ.* Երկար եւ տհաճ հոտ ունեցող տերեւներով ծառատեսակ: *Շէյթանաղաջին ամմէն տը՝ղ փըսնում ա* (Բ):

ՇԷՅԽ *(արաբ. šēx (ծերունի, վանահայր, գիտուն), պրս. šeyx)* - *գ.* 1. Արաբական երկրներում ցեղապետ: *Շէյխը հըրամանք ա տամ, վէր ըտըրան կախ տան* (Ձ): 2. Մահմեդական բարձր հոգեւորականության ներկայացուցիչ: *Շէյխերը էտ մէչիդումը հըվաքվում ըն* (Ձ):

ՇԷՆ/ՇԸ՝Ն *(գրբ. շէն)* - *գ.* 1. Ոչ քաղաքատիպ բնակավայր, գյուղ: *Էտ պառավը ըպրէս ա իլանվ Հանդրութա ռայօնումը՝ Տումէ շէնումը, Գագիկ թաքավէրէն վըհտէն* (ՀԺՀ, V, 675): 2. Գյուղական հետամնաց կյանք (ի հակադրություն քաղաքի կյանքի): *Շէնը կըտըրվէ, մըղանփոնն չի՞ քաղաքը* (Բ): 3. Գյուղի բնակչությունը: *Առաչ վէր փանիլիվան ար կ՝ամ, սաղ շէնը տոնս ար կ՝ամ, թըմանշան անում* (Բ): 4. *ած.* Մարդաշատ, բարգավաճ: *Շէն տօն ա Դօրոնց տօնը* (Բ):

- Շէն անէլ - Բարգավաճ անել, շենացնել: *Տըղէրքը հօրը օջախը շէն ըն ըրալ* (Բ):

- Շէնավը մին անէլ - Ի լուր ամենքի հայտնել՝ տարածել (լուրը): *Խաբարը շէնավը մին ըն անում* (Ձ):

- Շէնավը մին ինիլ/տը՝ռնալ - Ամենուր տարածվել (լուրը): *Շէնավը մին ա ինում, թա Քանպանը հիրըվանէն կընգանը սաթաշմիշ ա իլանվ* (Ձ):

- Շէնին յըրա ճոնր ա մաղվալ/քաք ա յը՝կալ - Ասում են անակնկալ փորձանքի ժամանակ:

- Շէն կէնա(ս)/մընա(ս) - Բարեմաղթության՝ շնորհակալության արտահայտություն: *Շէն կէնա Մաքսիմը. ք՝ամանգ՝ ա ըրալ, թօթը թափալ ընք* (Բ):

- Շէնու մածուն կէրած - Ուժեղ, առույգ: *Շէնու մածուն կէրած տըղա յա Տիկրանը* (Բ):

ՇԷՆԱՇԽԱՐԻԿ *(գրբ. չնաշխարհիկ)* - *ած.* Անզուգական, չնաշխարհիկ: *Շէնաշխարիկ յէրգ՝իր ա Դարաբաղը* (Բ):

ՇԷՆԲԱՇԷՆ - *տե՛ս* ՇԷՄԲԱՇԷՆ:

ՇԷՆԲԱՇԷՆ - *տե՛ս* ՇԷՄԲԱՇԷՆ:

ՇԷՆԼԻՔ՝ - *գ. հոգն.* Մարդիկ, գյուղացիներ: *Ք՝ընում ա, ք՝ընում, վէչ շէն ա ուրվամ, վէչ էլ շէնլիք՝* (ՀԱԲ, 15, 44):

ՇԷՆՔ՝ *(գրբ. շէն)* - *գ.* 1.Շինություն, կառույց: *Նի յըն մընում էտ շէնք՝ը, կ՝օղը կէնում* (Ձ): 2. *տե՛ս* ՇԷՆՔ՝-ՇԸՆՕՐՔ:

ՇԷՆՔ՝ԱՎ-ՇԸՆՕՐՔԱՎ - *ած.* Գեղեցիկ, բարետես: *Շէնք՝ավ-շընօրքավ հարթն ա Մընքըղաթէն հարթնը* (Բ):

ՇԷՆՔ՝-ՇԸՆՕՐՔ - *գ.* Արտաքին տեսք, կերպարանք: *Ախճիգ՝ը ասմա.-Քու շէնք՝ըտ-շընօրքըտ վէրըն ա՞, վէր ք՝ը՝գ նըհը՝տ փըսակվիմ* (Ձ):

- Շէնք՝ա-շընօրքա ըղնէլ - Տգեղանալ, այլանդակվել: *Ըտի էտ ք՝ը՝թը ցէց ախճիգ՝ը մընամ ա տանը, շէնք՝ա-շընօրքա ըղնում* (Ձ):

- Շէնք՝ա-շընօրքա քընցիլ - Տգեղացնել, այլանդակել: *Կացէնը յօր ա օնում, տանշում, կ՝էրանը շէնք՝ա-շընօրքը քընցնում* (Ձ):

- Շէնք՝ը-շընօրքը տը՝ղը - *տե՛ս* Շէնք՝ավ-շընօրքավ:

- Շէնք՝ու-շընօրքու կ՝անլ - Գեղեցկանալ, բարետես դառնալ: *Լըղանում ա, շէնք՝ու-շընօրքու կ՝ամ* (Բ):

ՇԷՇՄԱ/ՇԷՇՄԱ *(թրք. šašma (զարմանք)* - *գ., ած.* Ջոկած, ընտիր (բան): *Ծառը վէր շըղրհարում ըս, շէշման ա վէր ըղնում* (ԱԲԲ, 40):

- Շէշմա անէլ - Լավերը ջոկել՝ ընտրել: *Սիսը՝ռնը մը՝կնում ա, շէշմա անում* (Բ):

ՇԷՇՄԱ - *տե՛ս* ՇԷՇՄԱ:

ՇԷՊ - *գ.* Ավելուկի տեսակ՝ դառնահամ եւ ոչ թթվաշ: *Շէպը աղու վա ինում* (Բ):

ՇԷՌ - *տե՛ս* ՇԸՌ:

ՇԷՎ/ՇԻՎ *(գրբ. շիւ)* - *գ.* 1. Բարակ ու դալալ ճյուղ, ոստ, շիվ: *Մին շէվ ա կընտրում, յէր օնում ք՝ինում* (Ձ): 2. *տե՛ս* ՇԷՎԷ:

ՇԷՎԷ *(հ.ե. *skei-)* - *գ.* Նորատունկ ծառ: *Ըստարէ շէվէն մին թորբա ճուղուպուր ա յէր կանլանվ* (Բ):

ՇԷԿՕՏ - *գ.* Նորատունկ՝ մատղաշ ծառաստան: *Շէկօտը չըփարում ա* (Ձ):

ՇԷԿԹԻՒԼ - *տես* ՇԼԿԹԼԼ:

ՇԷԿԹԻՒԼԻ - *տես* ՇԼԿԹԼԼԻ:

ՇԷԿԹԻՒԼՕՏ - *տես* ՇԼԿԹԼԼՕՏ:

ՇԷՐԱՆ[1] - 1. *գ.* Ջրային հավերժահարս: *Ասում ըն էտ ծօվումը մին դաշանգ շէրան ա իլալ ըպրէլիս* (Ձ): 2. *փխբ. գ., ածական.* Գեղեցիկ (աղջիկ, կին): *Շէրան ախճիգ ա Մանէն* (Բ):

ՇԷՐԱՆ[2] - *տես* ԾԸՂԱՆ:

ՇԷՓԱԹ *տես* ՇԷԲԱԹ:

ՇԷՓՏԱՆԸ - *մ.* Ամբողջ շաբաթվա ընթացքում: *Շէփտանը մըհէտ Առըստամը քինում ար վըհրսու* (Ձ):

ՇԷՔ *(գրբ. շէգ)* - *տես* ՇԸՔԸՌ:

- ՇԷՔ տալ - *տես* ՇԸՔԸՌԷԼ:

ՇԷՔԷԼ - *տես* ՇԸՔԸՌԷԼ:

ՇԷՔ-ՇԷՔ - *տես* ՇԸՔԸՌ-ՇԸՔԸՌ:

ՇԸԲԻԼԷՂ - *տես* ՇԻԲԻԼԸՂ:

ՇԸԳԱՆԱԼ/ՇԻԳԱՆԱԼ - *չբ.* 1. Շեկ գույն ստանալ, շեկ դառնալ: *Ըտըրա մագէրը քանէ քիւնում, շիգանում ա* (Բ): 2. Շիկահեր դառնալ: *Խանումը մագէրը ըռանգ ա տամ, շիգանում* (Ձ):

ՇԸԳԱՎՈՒՆ/ՇԻԳԱՎՈՒՆ - *ածական.* 1. Մի քիչ շեկ, շիկավուն: *Շիգավուն մագէր օնէ* (Բ): 2. Մի քիչ շիկահեր: *Շիգավուն տըղա յա Ափկարը* (Բ):

ՇԸԳԸՎԱՉԻ/ՇԻԳԸՎԱՉԻ - *տես* ՇԸԳԱՎՈՒՆ:

ՇԸԳԸՎԱՐԻ/ՇԻԳԸՎԱՐԻ - *տես* ՇԸԳԱՎՈՒՆ:

ՇԸԳԸՑ(Ը)ՆԷԼ/ՇԻԳԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՇԸԳԱՆԱԼ-ի:

ՇԸԳՕԹՈՒՆ/ՇԻԳՕԹՈՒՆ - *գ.* 1. Շեկ լինելը, շեկ գույն ունենալը: *Շիգօթունը ըտըրա մըգէրէն փըռնում ա* (Բ): 2. Շիկահեր լինելը: *Շիգօթունը Սուխանանց ցըղէն տուված ա* (Բ):

ՇԸԴՆԹ - *տես* ՇԻԴՆԹ:

ՇԸՆ - *տես* ՇԷՆ:

ՇԸՌ -*տես* ՇԸՌ:

ՇԸԹԻԼ - *տես* ՇԻԹԻԼ:

ՇԸԹԻԼՑՈՒ - *տես* ՇԻԹԻԼՑՈՒ:

ՇԸԹԻԼԻԼ - *տես* ՇԻԹԻԼԻԼ:

ՇԸԹԻԼՎԻԼ - *տես* ՇԻԹԻԼՎԻԼ:

ՇԸԼԱԲԱ - *տես* ՇԸԼԱՓԿԱ:

ՇԸԼԱԼԷԼ - *տես* ՇՈՒԼԱԼԷԼ:

ՇԸԼԱԼՎԷԼ - *տես* ՇՈՒԼԱԼՎԷԼ:

ՇԸԼԱԼԻՆՔ - *տես* ՇԱԼՔ:

ՇԸԼԱԿԷԼ/ՇԻԼԼԿՎԷԼ *(գրբ. շալակեմ)* - *նբ.* Որեւէ բան շալակն առնել, շալակել: *Ավետիսը էտ խօխին շըլակում ա, տանըմ դիբի ինդի, ըշտեղ էտ խօխան նըշանց ա տամ* (ՀԺՀ, V, 124):

ՇԸԼԱԿՎԷԼ/ՇԻԼԼԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸԼԱԿԷԼ-ի:

ՇԸԼԱՆԳ *(ռուս. шланг, գերմ. Schlange)* - *գ.* Կաշվե՝ ռետինե եւն ճկուն խողովակ՝ հեղուկների, գազերի, սորուն նյութերի մի տեղից մի այլ տեղ լցնելու՝ թափելու եւն համար: *Շըլանգը քըցում ա պօժկան, կինին ածում չէթվէռը* (Ձ):

ՇԸԼԼԱՂԱՂ - *տես* ՇԻԼԷՁԱՂ:

ՇԸԼԱՓԿԱ/ՇԸԼԱԲԱ *(ռուս. шляпка, գերմ. Schlappe)* - *գ.* Կանացի կամ տղամարդու գլխարկ՝ սովորաբար բարձր գագաթնամասով: *Մին խիլլա ընցնում ա, Քօսակը օգում ա թա շըլափկան դիւզըցընէ, չունքի վէր շըլըփկումըն ա միշտ էշին կօրէ տըվալ, էշը զըռռամ ա* (ՀԺՀ, V, 304):

ՇԸԼԷՆ/ՇԻԼԷՆ/ՇԻՆԷԼ[1] *(ռուս. шинель, ֆր. chenille)* - *գ.* Ջինվորական երկար վերարկու: *Սալդաթը շըլէնը հանում ա, քըցում էտ ըխճըկանը ջընըղնէրէն, վէր սառչի վէջ* (Ձ):

ՇԸԼԷՆՔ *(գրբ. շլնի)* - *տես* ՎԷՋ:

ՇԸԼՂԸԲԱԼՂԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Շըլղըբալղի կըտըրէլ - *տես* Բուլղի կըտըրէլ:

ՇԸԼԸԲԱՎԷՐ - *տես* ՇԸԼԸՓԿԱՎԷՐ:

ՇԸԼԸԿԱՊԷՌՆԸ/ՇԻԼԸԿԱՊԷՌՆԸ - *գ.* Շալակելով կրվող բեռ, շալակաբեռ: *Շըլըկապէռնը տամ ա ըտըրան, հաՒրը յօր օնում, քինում* (Ձ):

ՇԸԼԸԿԱՎԷՐ/ՇԻԼԸԿԱՎԷՐ - *ածական., գ.* Շալակին բեռ ունեցող (մարդ): *Շըլըկավէրը էտ վէր տըսնում ա, շըլըկապէռնը վէր ա քըցում, փախճում* (Ձ):

ՇԸԼԸԿԱՏԱՐ/ՇԻԼԸԿԱՏԱՐ - *տես* ՇԸԼԸԿԱՎԷՐ:

ՇԸԼԸԿԸՎԷՐԷԼ/ՇԻԼԸԿԸՎԷՐԷԼ - *նբ.* Մեկի շալակին բեռ դնել, շալակավորել: *Աղան ծըռօտանցը շըլըկըվէրում ա, ինքըն էլ նըստում ծին, հըտըրնէրան քինում* (Ձ):

ՇԸԼԸԿԸՎԷՐՎԷԼ/ՇԻԼԸԿԸՎԷՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸԼԸԿԸՎԷՐԷԼ-ի:

ՇԸԼԸԿՃՈՒՎԱՐԱՆ/ՇԻԼԸԿՃՈՒՎԱՐԱՆ - *գ.* Շալակն առնելու կողով՝ տարբեր բաներ տեղափոխելու համար: *Ջըկըռը ածում ա շըլըկճուվարանը, շըլակում, քինում* (Ձ):

ՇԸԼԸԿ-ՇԷԼԼԿ - *տես* ՇԷԼԼԿ-ՇԷԼԼԿ:

ՇԸԼԸԿՕՏԷԼ/ՇԻԼԸԿՕՏԷԼ - *նբ.* Շատ անգամ կամ շատ բան շալակել: *Պէռնէրը շըլըկօտում ըն, քինում* (Ձ):

ՇԸԼԸՓԿԱՎԷՐ/ՇԸԼԸԲԱՎԷՐ - *ածական.* Շլլապա դրած՝ կրող: *Մին օր էլ տահանց տօնը մին շըլըփկավէր մարթ ա կամ* (Ձ):

ՇԸԼԹԱՂ *(թրք. šaltak)* - *գ.* Իրարանցում: *Ըտըրանք կըռվում ըն, շըլթաղը քըցում հըրսընքատօնը* (Ձ):

ՇԸԼԼԸՂԱԹԱԿ - *ածական.* Մտրակով ծեծած՝ ծեծված: *Ըտըրանք, ըտի շըլլըղաթակ, էտ ցըխումը վէր ըն տըռնում* (Ձ):

- Շըլլըղաթակ անէլ/տալ - Մտրակով ծեծել: *Աղան կըզնըվում ա, նօքիրին շըլլըղաթակ անում* (Ձ):

ՇԸԼԼԸՂԱՀԱՐ - *տես* ՇԸԼԼԸՂԱԹԱԿ:

ՇԸԼԼԸՂՀԱՐԷԼ - *նբ. տես* Շըլլըղաթակ անէլ:

ՇԸԼԿԸՐԱՑՈՒ/ՇԸՐԿԸՐԱՑՈՒ - *գ., ածական.* Շալվար կարելու համար նախատեսված՝ հարմար (կտոր):

ՇԸԼԿԸՐՏՈՒԿ - *տես* ԽԸՆՁԸԼՕՁ:

ՇԸԼԿԸՐՏՕՁ - *տես* ԽԸՆՁԸԼՕՁ:

ՇԸԼՈՒԼԱԿԱՐ - *տես* ՇՈՒԼԸԼԱԿԱՐ:

ՇԸԼՆԻՐԱՉԻՐ/ՇՆԻԼՆԻՐԱՉԻՐ - *գ.* Շլորի չիր, սալորաչիր: *Այուն շինած շըլնիրաչիրը ճօկ պէն ա* (Բ):

ՇԸԼՆԻՐԹԸԹՕ/ՇՆԻԼՆԻՐԹՈՒԹՕ - *գ.* Չորացրած վայրի սալորից եփած ջրալի թթվաշ կերակրատեսակ: *Մըրսածը բիդի շըլնիրթըթօ օտէ, վէր սըղանա* (Բ):

ՇԸԼՕՐ/ՇԻԼՕՐ/ՇՆԻԼՕՐ*(գրբ. շլոր)* - *գ.* Սալոր (հիմնականում՝ վայրի): *Պըլըպուղին ըսկանում ա, թա.- Մէլիքըն ապրած կէնա, մին փութ ցօրնավ մանջ կանք, յըս քու շանըտ շինլօր օտէլը սըվըրցընիմ* (ԱԱ, 82):

- Շըլօր ուտողէն կըռէքը կառնէ- Բարիքից օգտվողը կրում է նաեւ դրա հետ կապված անախորժությունը՝ վնասը:

ՇԸԼՕՐԷ/ՇԻԼՕՐԷ/ՇՆԻԼՕՐԷ - *գ.* Վարդազգիների ընտանիքին պատկանող ծառ, սալորենի (հիմնականում՝ վայրի): *Ապունց հըյաթումը մին մըծ շըլօրէ յա իլալ* (Բ):

ՇԸԼՕՐՈՒՏ/ՇԻԼՕՐՈՒՏ/ՇՆԻԼՕՐՕՏ - *գ.* Շատ սալորենիներ աճած տեղ: *Խօգէրը նի յըն տըռնում շինլօրօտը* (Ձ):

ՇԸԽԱՆԱԼ/ՇՈՒԽԱՆԱԼ - *չբ.* Ուրախանալ, ոգեւորվել: *Ջիհիլնէն շըխանում ըն, պար կամ* (Բ):

ՇԸԽԸՑ(Ը)ՆԷԼ/ՇՈՒԽԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՇԸԽԱՆԱԼ-ի:

ՇԸԽԿ - *տես* ՇԸՐԸԽԿ:

ՇԸԽԿԱԼ - *տես* ՇԸՐԸԽԿԱԼ:

ՇԸԽԿԱԼԻ - *տես* ՇԸՐԸԽԿԱԼԻ:

ՇԸԽԿԱՆ - *տես* ՇԸՐԸԽԿԱՆ:

ՇԸԽԿԱՇԸ(ՐԸ)ԽԿ - *տես* ՇԸՐԸԽԿՀԱՇԸՐԸԽԿ:

ՇԸԽԿԱՐԱ *(թրք. šaka (կատակ)* - *գ.* Բարձր ծիծաղ: *Ըտըրանց շըխկարան վէզիրը ըսկանում ա* (Ձ):

- Շըխկարա տալ - Բարձր ծիծաղել: *Ջիհիլնէն զանրանց ըն անում, շըխկարա տամ* (Բ):

ՇԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տես* ՇԸՐԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ՇԸԽ(Կ)ՇԸԽԿԱԼ - *տես* ՇԸՐԸԽ(Կ)ՇԸՐԸԽԿԱԼ:

ՇԸԽ(Կ)ՇԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ՇԸՐԸԽ(Կ)-ՇԸՐԸԽԿԱԼԻ:

ՇԸԽ(Կ)ՇԸԽԿԱՆ - *տե՛ս* ՇԸՐԸԽ(Կ)-ՇԸՐԸԽԿԱՆ:

ՇԸԽ(Կ)ՇԸԽԿ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՇԸՐԸԽ(Կ)ՇԸՐԸԽԿ(Ը)Ց(Ը)ՆԷԼ:

ՇԸԽ(Կ)ՇԸԽԿՕՆ - *տե՛ս* ՇԸՐԸԽ(Կ)-ՇԸՐԸԽԿՕՆ:

ՇԸԽ(Կ)ՇԸԽԿՕՑ - *տե՛ս* ՇԸՐԸԽ(Կ)-ՇԸՐԸԽԿՕՑ:

ՇԸԽԿՕՆ - *տե՛ս* ՇԸՐԸԽԿՕՆ:

ՇԸԽԿՕՑ - *տե՛ս* ՇԸՐԸԽԿՕՑ:

ՇԸԽՈՒՐ/ՇՈՒԽՈՒՐ *(գրբ. ժխոր, ռուս. шухер)* - *տե՛ս* ՀԱՐԱՅ-ՀԸՐՕՑ:

ՇԸԽՈՒՐՉԻ/ՇՈՒԽՈՒՐՉԻ - *ած., գ.* Աղմկարար: *Շըխուրչի յա իլա՛լ Վանէս դայիս* (Բ):

ՇԸԿԱԿԱԾ - *մ.* Սրընթաց կերպով, արագորեն: *Ծիյավէրը շըկակած անց ա կէնում* (Ձ):

ՇԸԿԱԿԷԼ - *չբ.* 1.*տե՛ս* Շըկըկու տալ: 2. Արագորեն ընթանալ՝ գնալ՝ վազել: *Ծին քուռակէն հըռանցէ վէր տը՛սնում ա, շըկակում ա* (Ձ):

ՇԸԿԸԿՈՒ/ՇՈՒԿՈՒԿՈՒ *(հ.ե. *(s)kek-(ցատկել, արագ շարժում)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Շըկըկու տալ - Ուժեղ ցայտել՝ ժայթքել՝ հորդել (հեղուկների մասին): *Վէր թօրավը թըխէս ա, ա՛ռ՛ունը շըկըկու վա տաս* (Ձ):

ՇԸՀԱՂ[1] *(թրք. šahit)* - *գ.* Աղուն աղալիս՝ օղի թորելիս եւն ջրաղացպանին՝ օղի թորողին եւն տրվող տասանորդը՝ իբրեւ վարձ: *...Վէզիրը տը՛ղ ճըղասպան ա տը՛ռնում, էտ մարթըն ամը՛ն շէբթին վէրչին կ'ամ ա, շըհաղը տանում տօն* (ՀԺՀ, VII, 132):

ՇԸՀԱՂ[2]/ՇԱՀԻԴ *(արաբ. šahid, պրս. šāhadāt, թրք. šehadet)* - *գ.* Ականատես, վկա: *Կարում չըն շըհաղ քըթէնան, կ'օղէն ըզադում ըն* (Ձ):

- Շըհաղ վը՛ննը կէնալ - Որպես վկա՝ որեւէ բան հաստատել, ցուցմունք տալ, վկայել: *Հիրը՛վանը շըհաղ ա վը՛ննը կէնում, վէր Կ'ա՛փին Մընվէլին կավը մօրթալ ա* (Բ):

ՇԸՀԱՆԱԼ - *չբ.* Աճել, մեծանալ, փարթամանալ: *Ծառը վէր ճիրիս վէջ, շըհանալ չի* (Բ):

ՇԸՀԱՆՑ - *տե՛ս* ՆԸՀԱԾ:

ՇԸՀԱՆՈՒՑ - *գ.* 1. *տե՛ս* Շ՚ՀԻ (2): 2. *ած.* Մեկ շահի (հինգ կոպեկ) արժեցող: *Ք՚ա՛սիբ մարթ ա Ափկարը, շըհանուց շ՚օ՛ր ա կ՚ը՛նում* (Ձ):

ՇԸՀԱՆՕՈՆԸ - *գ.* Նռան խոշոր տեսակ: *Շըհանօռնը մըգ՚ում ա, խըմում* (Բ):

ՇԸՀԱՍԷՐ *(գրբ. շահասէր)* - *ած.* Շահ՝ օգուտ սիրող, ամեն ինչի մասին շահադիտական տեսակետից դատող: *Կըլխօզէն նախագան վէր շըհասէր իլա՛վ, էն կալխօզը կը՚ք՚ա՛նդըվի* (Ձ):

ՇԸՀԱՎԷՐ - *տե՛ս* ՇԸՀԱՏՈՒ:

ՇԸՀԱՏՈՒ - *ած.* Շահ՝ օգուտ բերող, շահութաբեր: *Ճա՛նջ պահէլը շըհատու կօրծ ա* (Բ):

ՇԸՀԱ՚Ռ/ՇԻՀԱ՚Ռ *(պրս. šahr (երկիր, նահանգ)* - *տե՛ս* ՔԱՂԱՔ: *Շատ ա ք՚ը՛նամ, խըրէգ՚ ա ք՚ընամ, հըսնըմ ա մին շըհա՛ռի* (ՀԺՀ, V, 556):

ՇԸՀԱ՚ՌԲԱՇԸՀԱ՚Ռ/ՇԻՀԱ՚ՌԲԱՇԸՀԱ՚Ռ - *մ.* Քաղաքից քաղաք, մի քաղաքից մյուսը, շատ քաղաքներ (գնալով): *...Շը՛ռու սօր դադարգ՚ուն ընգած շըհարբաշըհար ման ի կ՚ամ...* (ՋՏ, Ա, 157):

ՇԸՀԱՓՕԿ - *գ.* Տրեխի վերեւի մասով անցնող փոկը, որի վրայով անց են կացնում տրեխաթելերը: *Շըհափօկը էծին կաշվան ըն իլա՛լ շինիս* (Բ):

ՇԸՀԸՐԸԷՆԷ - *գ.* Միջակ մեծությամբ տանձի տեսակ: *Շըհըրը՛ էն քախծըր տա՛նծ ա* (Բ):

ՇԸՀՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. շահեցուցանեմ)* - 1. *նբ.* ՇԸՀԱՆԱԼ-ի: 2. *նբ.* Դրամագլուխը տոկոսով տալով՝ շահ ստանալ: *Էտ փուլը շըհըցը՛նում ա, հըրուստանում* (Ձ):

ՇԸՀՆԸ-ՄԱՀՆԱ - *տե՛ս* ՄԸՀՆԸ-ՇԱՀՆԱ:

ՇԸՂԱԿԷՐ - *տե՛ս* ՇԸՂԸԹԱԹԱԽ (1):

ՇԸՂԱԽԷԼ/ՇԸՂԱՂԷԼ *(գրբ. շաղախեմ)* - *նբ.* Որեւէ նյութ կամ նյութերի խառնուրդ հեղուկով շաղախի վերածել: *Ուստան ղումը՛ն ա կէրը շըղախում ա, ըսքըսում պատը շարէլը* (Ձ):

ՇԸՂԱԽՎԷԼ/ՇԸՂԱՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՂԱԽԷԼ-ի:

ՇԸՂԱՂԷԼ - *տե՛ս* ՇԸՂԱԽԷԼ:

ՇԸՂԱՂՎԷԼ - *տե՛ս* ՇԸՂԱԽՎԷԼ:

ՇԸՂԱՐԷԼ - *տե՛ս* ՇԸՂԸՀԱՐԷԼ:

ՇԸՂԱՐԹ/ՇԸՂԱՐԾ - *գ.* 1. Ձմերուկի՝ սեխի եւն՝ երկարությամբ կտրված շերտ: *Մին շըղարթ յէմիշ ա կըտրում, տամ պըռավէն* (Ձ): 2. Առարկայի մեկ չորրորդական մասը: *Մին շըղարթը կէսին կէսը՛ն ա* (Բ):

- Շըղարթ-շըղարթ անէլ - Ձմերուկը՝ սեխը եւն երկարությամբ շերտերի՝ շղարթների բաժանել: *Ծըմէրուկը շըղարթ-շըղարթ ա անում, տամ խօնցը* (Բ):

ՇԸՂԱՐԾ - *տե՛ս* ՇԸՂԱՐԹ:

ՇԸՂԱՐՎԷԼ - *տե՛ս* ՇԸՂԸՀԱՐՎԷԼ:

ՇԸՂԱՓՈՒՔ/ՇԸՐԸՓՕՔ - *գ.* Անասունների հիվանդություն, որի ժամանակ փորը ուռչում է՝ գազերով լցվելով: *Վըխճըրնէն շըղափուքան ըստըկուտը՛ցէն* (Բ):

ՇԸՂԸԹԱԹԱԽ - *ած.* 1. Շաղով թաթախված, վրան շաղ դրած (հիմնականում պտուղների մասին): *Շըղըթաթախ խընձո՛ր ա պուք տամ, թաքավէրին համէցիք՚ անում* (Ձ): 2. *փխբ.* Թարմ: *Շըղըթաթախ մէս ա* (Բ): 3. *փխբ.* Գեղեցիկ: *Շըղըթաթախ կընէգ՚ ա Սօնան* (Բ):

ՇԸՂԸԿԱ՚ԼԻԼ - *չբ.* Շաղով պատվել, շաղ նստել վրան, ցողապատվել: *Ծառէրը շըղըկա՚լա՚լ ա* (Բ):

ՇԸՂԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ՇԸՂԸԹԱԹԱԽ (1):

ՇԸՂԸՀԱՐԷԼ/ՇԸՂԱՐԷԼ - *նբ.* 1. Ցընցել, թափահարել, թափ տալ: *Յէր ա ընիս մին լա՛վ շըղըհըրէս, սաղ ծառէն հիշքան տա՛նծ ա ինիս, վէր ընէս ծառէն տակը...* (ՀԺՀ, V, 549): 2. *փխբ.* Խիստ հանդիմանել, պարսավել, քննադատել: *Ժօղովէն վախտը նախագան բըրիգադիրին մին լ՚ավ շըղըհարում ա* (Ձ):

ՇԸՂԸՀԱՐՎԷԼ/ՇԸՂԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՂԸՀԱՐԷԼ-ի:

ՇԸՂԸՄՔՕՐ - *տե՛ս* ՇՈՒՂՈՒՄՔՈՒՐ:

ՇԸՂԸՊԱՏԷԼ - *նբ.* Շաղով պատել, շաղ դնել: *Ք՚ը՛շէրը շաղը սաղ ծառէրը շըղըպատալ ա* (Բ):

ՇԸՂԸՊԱՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՂԸՊԱՏԷԼ-ի:

ՇԸՂԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՇԱՂԷԼ[2]-ի:

ՇԸՂԼԸՂՕՐԷԼ - *նբ.* Խառնել, խառնաշփոթ վիճակի մեջ գցել: *Հարթնը սաղ տօնը շըղլըղօրում ա, տա՚ուս կ'ամ* (Ձ):

ՇԸՂԼԸՂՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՂԼԸՂՕՐԷԼ-ի:

ՇԸՂԼԸՄԱՂԼԻ/ՇԸՂԼԸՄԱՂԼԻ - *ած.* Անկարգ, խառն, խառնաշփոթ: *Շըղլըմաղլի կօրծան բիդի հը՛ռէ կէնաս* (Բ):

- Շըղլըմաղլի կ՚ա՚լ - Անկարգորեն ցրվել, խառնաշփոթ վիճակ ստեղծվել: *...Կէսը ըստի յա թըռչում, կէսը՝ ինդի, շըղլըմաղլի յըն կ'ամ* (ՀԱԲ, 15, 19):

ՇԸՂԼԸՄԸՃԷԾ - *տե՛ս* ՇԻԼԸՄԸՃԷԾ:

ՇԸՂՈԱԼ - *տե՛ս* ՇԱՂԷԼ[1]:

ՇԸՂՄԱ՚ՆԳ՚ԻԼ - *տե՛ս* ՉԸՇՄԱ՚ՆԳ՚ԻԼ:

ՇԸՂՇՈՒՂԱՏԷԼ/ՇՈՒՂՇՈՒՂԱՏԷԼ - *տե՛ս* ՇԸՂՇՕՂԱԼ:

ՇԸՂՇՈՒՂՑ(Ը)ՆԷԼ/ՇՈՒՂՇՈՒՂՑ(Ը)-ՆԷԼ - *նբ.* ՇԸՂՇՕՂԱԼ-ի:

ՇԸՂՇՕՂԱԼ/ՇՈՒՂՇՕՂԱԼ - Շողշողալ, շողարձակել, փայլփլել: *...Ինք՚ը տօն չար կ'ամ, քանի վը՛ր արէվին նըման շըղշօղըմ ար* (ՀԺՀ, V, 38):

ՇԸՂՇՕՂՈՒՑ/ՇՈՒՂՇՕՂՈՒՑ - *գ.* Շողշողալը, շողարձակում, փայլփլոց: *Իրը՛վէն շըղշօղուցը ըտըրան չա՚շմիշ ա քըցո՛ւմ* (Ձ):

ՇԸՂՎԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՇԱՂՎԷԼ[1]-ի:

ՇԸՂՈՒԼՀԱՆ/ՇՈՒՂՈՒԼՀԱՆ - *ած.* Ուղղությունից շեղված, ծուռ (շարվող պա-

տի մասին): *Շըղուլիան պատը պարան կըկ՛ա* (Բ):

- Շըղուլիան ինիլ - *տե՛ս* Շօղուլա ըղնել:

ՇԸՂՈՒՄՔՈՒՐ - *տե՛ս* ՇՈՒՂՈՒՄՔՈՒՐ:

ՇԸՂՈՒՓ/ՇՈՒՂՈՒՓ - *գ.* Դանակի՝ ցաքատի՝ կացինի առանց կոթի՝ կտրող երկաթե մասը: *Ինք՛ըն էլ գ՚ուդում ա, թա՛ ցըկատէն շուղուփըն ա տո՛ւս յէկալ* (ՀԺՀ, V, 503):

- Շըղուփ քըթա՛ծ խօխա - Շատ ուրախ՝ ուրախացած անձ: *Քա՛սպա՛ը հանց ա շըղուփ քըթա՛ծ խօխա. տըղան բընակա յը՛կալ ա* (Բ):

ՇԸՄԱԹ *(գրբ. շրատ)* - *գ.* 1. Մակարդված կաթի պանրային նյութերը հանելուց հետո մնացող հեղուկը, շիճուկ: *Պանէրը մէրում ըն, շըմաթը տամ խուզ՛էրէն* (Ձ): 2. Մածնից զատվող ջուրը: *Ապան մածնէն շըմաթը սիրում ար* (Բ): 3. *փխբ.* Անհամ՝ անյուղ կաթ: *Էտ կըվէն կաթնըն էլ հինչ կա՞թնը, շըմաթ ա* (Բ):

ՇԸՄԱԼ *(թրք. šumal)* - *գ.* 1. Ծառի նուրբ ու դալար երկար շիվ: *Ցակատը յօր ա օնում, թութուն շըմալնէն կըտորում* (Ձ): 2. *փխբ. ած.* Նուրբ ու բարձրահասակ: *Շըմալ բոյ օնէ* (Բ):

- Շըմալ տալ - Երկարել, բարձրանալ: *Էտ շո՛շըտ էլ շըմալ ա տուվալ, ծառ տը՛ռալ* (ԱԱ, 34):

ՇԸՄԲԱԼՈՒԹ *(գրբ. շահպալուտ, պրս. šah-bālut)* - *գ.* 1. Շագանակ: *Ուստան ք՛ընըմ ա բըզարան մին փութ շըմբալութ առնըմ, պը՛ռում ո՛ւրա՛ն տամ, ք՛ընըմ տօն* (ՀԺՀ, V, 26): 2. *հեգն.* Էշի կղկղանք: *Էշին շըմբալութը ածում ա թօրբան, ք՛ինամ* (Ձ):

ՇԸՄԲԷԼ - *նբ.* Խոշոր եւ անորակ կարել, շուլալել: *Դա՛ռգին շալվարը շըմբում ա, տամ ո՛ւրա՛ն* (Ձ):

ՇԸՄԲԸԼԱ՛Ն/ՇԻՄԲԻԼԱ՛Ն - *ած.* Չափազանց շատ, առատ: *Ըստարէ խաղուն շըմբըլա՛ն ա* (Բ):

ՇԸՄԲՇԸՄԲԷԼ - *տե՛ս* ՇԸՄԲՇԸՄԲՕՐԷԼ:

ՇԸՄԲՇԸՄԲՕՏԷԼ - *տե՛ս* ՇԸՄԲՇԸՄԲՕՐԷԼ:

ՇԸՄԲՇԸՄԲՕՐԷԼ - *տե՛ս* ՇԸՄԲԷԼ (շատ անգամ կամ շատ բան):

ՇԸՄԲՕՏԷԼ - *տե՛ս* ՇԸՄԲՇԸՄԲՕՐԷԼ:

ՇԸՄԸՄԱՀԱՄ - 1. *գ.* Շամամի համ: *Շըմըմահամը մընացալ ա պիրանումը* (Բ): 2. *ած.* Շամամի՝ հաճելի համ ունեցող: *Շըմըմահամ խընձո՛ր ա* (Բ):

ՇԸՄԸՄԱՎԸ՛Տ - *գ.* Շամամի հոտ՝ բույր: *Տանան շըմըմավը՛տ ա կամ:*

ՇԸՄԹԷԼՈ՛ՒԿ/ՇԸՎԹԷԼՈ՛ՒԿ - *տե՛ս* ՇԱ՛ՎԹԱ՛Լ:

ՇԸՄԹԸԼՈ՛ՒԿԷ/ՇԸՎԹԸԼՈ՛ՒԿԷ - *տե՛ս* ՇԱ՛ՎԹԱ՛Լ:

ՇԸՄԹՈ՛ՒԼԻ - *տե՛ս* ՇԱ՛ՎԹԱ՛Լ:

ՇԸՄՇԸՌ(Ն)Է - *գ.* Վայրի ծառատեսակ: *Շըմշըռնէն սիպտակ փա՛ղ օնէ* (Բ):

ՇԸՄՓ - *տե՛ս* ՇԸՐՕՄՓ:

ՇԸՄՓԱԼ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓԱԼ:

ՇԸՄՓԱԼԻ- *տե՛ս* ՇԸՐԸՄՓԱԼԻ:

ՇԸՄՓԱՇԸՄՓ - *տե՛ս* ՇԸՐՕՄՓԱՇԸՐՕՄՓ:

ՇԸՄՓԷՌՆԸ - *տե՛ս* ՓԱՌ:

ՇԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ:

ՇԸՄՓՇԸՄՓԱԼ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓՇԸՐԸՄՓԱԼ:

ՇԸՄՓՇԸՄՓԱԼԻ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓՇԸՐԸՄՓԱԼԻ:

ՇԸՄՓՇԸՄՓԱՎԸ՛Տ/ՇՈՒՄՓՇՈՒՄՓԱՎԸ՛Տ - *գ.* Տհաճ հոտ, գարշահոտ: *Ռէվը նի յա մընում տօնը, թա.- էս հինչ մըրթավը՛տ ա՞, էս հինչ շըմփշըմփավը՛տ ա՞* (Ձ):

ՇԸՄՓՇԸՄՓՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓՇԸՐԸՄՓՑ(Ը)ՆԷԼ:

ՇԸՄՓՇԸՄՓՕՆ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓՇԸՐԸՄՓՕՆ:

ՇԸՄՓՇԸՄՓՕՑ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓՇԸՐԸՄՓՕՑ:

ՇԸՄՓՈՒՌԱՔԱՐ - *տե՛ս* ՇԸՄՓՈՒՐԱՔԱՐ:

ՇԸՄՓՈՒՌԷԼ- *տե՛ս* ՇԸՄՓՈՒՐԷԼ:

ՇԸՄՓՈՒՌՎԷԼ- *տե՛ս* ՇԸՄՓՈՒՐՎԷԼ:

ՇԸՄՓՈՒՌՇԸՄՓՈՒՌԷ - *տե՛ս* ՇԸՄՓՈՒՐՇԸՄՓՈՒՐԷ:

ՇԸՄՓՈՒՌՕՏԷԼ - *տե՛ս* ՇԸՄՓՈՒՐՕՏԷԼ:

ՇԸՄՓՈՒՌՕՏՎԷԼ - *տե՛ս* ՇԸՄՓՈՒՐՕՏՎԷԼ:

ՇԸՄՓՈՒՐԱՔԱՐ/ՇԸՄՓՈՒՌԱՔԱՐ - *գ.* Օջախի եզրին դրվող քար, որի վրա հենում են շամփուրների ծայրերը: *Շըմփուրաքարը քաշ ա, խըրավածը էրում ա* (Բ):

ՇԸՄՓՈՒՐԷԼ/ՇԸՄՓՈՒՌԷԼ - *նբ.* 1. Շամփուրի վրա անցկացնել, շամփուրին հագցնել: *Մէսը շըմփուրում ըն, տինում մընղալէն յըրա* (Ձ): 2. Շամփուրով կամ այլ սուր բանով ծակել՝ խոցել: *Նո՛ք՛ը շըմփուրում ա, խանէն ըսպանում* (Ձ):

ՇԸՄՓՈՒՐՎԷԼ/ՇԸՄՓՈՒՌՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՄՓՈՒՐԷԼ-ի:

ՇԸՄՓՈՒՐՇԸՄՓՈՒՐԷ/ՇԸՄՓՈՒՌՇԸՄՓՈՒՌԷ - *գ.* Խաղատեսակ: *Խոխէնք՛ը շըմփուրշըմփուրէ յըն խաղ անում* (Բ):

ՇԸՄՓՈՒՐՕՏԷԼ/ՇԸՄՓՈՒՌՕՏԷԼ - *տե՛ս* ՇԸՄՓՈՒՐԷԼ (շատերին կամ շատ տեղերից):

ՇԸՄՓՈՒՐՕՏՎԷԼ/ՇԸՄՓՈՒՌՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՄՓՈՒՐՕՏԷԼ-ի:

ՇԸՄՓՕՆ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓՕՆ:

ՇԸՄՓՕՑ - *տե՛ս* ՇԸՐԸՄՓՕՑ:

ՇԸՄՔԱՏԱԿ/ՇԻՄՔԱՏԱԿ - *գ.* Շեմքի անմիջապես առջեւի տարածությունը: *Կամ ա, պըլատէն շիմքըտակէն նըստում* (Ձ):

ՇԸՄՔԱՔԱՐ/ՇԻՄՔԱՐԱՐ - *գ.* Շեմքի առջեւը դրած տափակ քար: *Շըմքըքարէն նըստում ա, քընէնք՛ անում* (Ձ):

ՇԸՅԹԸՆՕԹՈՒՆ/ՇԻՅԹԸՆՕԹՈՒՆ - *գ.* 1. *տե՛ս* ՍԸՂԸՆՕԹՈՒՆ: 2. *փխբ.* Անբարոյականություն: *Կընէգ՛կա՝ շըյթընօթունավ ա կըլօ՛խը պահում* (Բ):

ՇԸՆԱԹԱԿ - *գ.* Շան ծեծ, սաստիկ ծեծ: *Շընաթակըն էլ չի ըտըրան յը՛խնում* (Բ):

- Շընաթակ տալ - Խիստ ծեծել, քոթակել: *Բաղվանչին կ՚օղէն փըռնում ա, մին լ՚ավ շընաթակ տամ* (Ձ):

ՇԸՆԱԹԱՂ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Շընաթաղ տալ/անէլ - Թաղել, ինչպես շանը, անպատվորեն եւ իմիջիայլոց թաղել: *Անդար-ընդէրու մըռալէն շընաթաղ կըտան* (Ձ):

ՇԸՆԱԽՏ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Շընախտը կուտըր(հ)ատէլ/կօտըրէլ - 1. Հիասթափեցնել, եռանդը կոտրել: *Կարկուտը բաստանըս փուչըցըրավ, շընախտըս կօտրից* (Բ): 2. *տե՛ս* Շընախտը կուտըրատվէլ:

- Շընախտը կուտըր(հ)ատվէլ/կօտըրվէլ - Հիասթափվել, եռանդը կոտրվել: *Շընախտըս կուտըրատվալ ա, էլ օգում չըմ, թա արտ անիմ* (Բ):

ՇԸՆԱՀԱ՛Ղ - *տե՛ս* ՇԸՆԸՀԱ՛ՂՕ՛Տ:

ՇԸՆԱՀԱ՛Ր - *գ.* Նախատական բառ՝ շան որդի: *Էտ շընահա՛ը ժուղուվուրթէն թըլանից* (Բ):

ՇԸՆԱՃԱ՛ՆՁ *(գրբ. շանաճանճ)* - *գ.* Խայթող վայրի ճանճի տեսակ: *Շընըճա՛նջէրը զիրավ ըն տը՛ռնում, կըծոտում, ըսպանում* (Ձ):

- Շընըճա՛նջին պա՛ւնին բիշտի տալ - Կրքերը բորբոքել, գործը բարդացնել: *Գ՚իդա՛լա՛վ, վէր Ափոն կըզնըված ա, ինք՛ը էլ լափ շընըճա՛նջին պա՛ւնին բիշտի յա տամ* (Ձ):

ՇԸՆԱՆԱԼ *(գրբ. շնամ)* - *չբ.* Շնություն անել, պոռնկություն անել: *Կընէգ՛ը վէր շընացավ, մարթին տօնը կը-քա՛նդվի* (Ձ):

ՇԸՆԱՆՈՒՑ - *գ.* Վատ մարդկանց հավաքատեղի: *Ըտի ըտըրանց տօնը շընանուց ա տը՛ռնում* (Ձ):

ՇԸՆԱՊՈ՛ՒՆ - *գ.* Շան բույն: *Շընապո՛ւնը քանդո՛ւմ ըն, շանը թօղում չօ՛ղ-ում* (Ձ):

ՇԸՆԱՎԸՏ - *գ.* 1. Շան հոտ: *Շանան շընավը՛տ կը կ՚ա* (Ջ): 2. Խիստ անախորժ հոտ: *Շընավը՛տը յը՛ր ինիլանը յը՛տը քը՛թը ծասկէլը ն ա մինակ ք՚ծմանգ՚ անում* (ԱԲԲ, 79):

- Շընավը՛տը յը՛ր անէլ - *տե՛ս* Շընաթակ տալ:

ՇԸՆԱՏԱՐ - *գ., ած.* Շան տեր, շուն ունեցող (անձ): *Շընատարը շօնը տամ ա, մին փութ կ՚արի ինք՚ օնում* (Ջ):

ՇԸՆԷՐԷՑ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Շընէրէց անէլ - 1. Աննպատակ կերպով ծախսել՝ վատնել: *Էտ բիդասըլը հօրը փուլէրը սաղ շընէրէց ըրավ* (Ջ): 2. Շների՝ անարժան մարդկանց բաժին դարձնել: *Խը՛ղճ Մարյամը կավը պահից, պահից, շընէրէց ըրավ* (Բ):

- Շընէրէց ինիլ/տը՛ռնալ - 1. Աննպատակ կերպով ծախսվել՝ վատնվել: *Ըտի թաքավէրին հըրըստօթունը ըղնում ա էտ օյինբազէն ճանգ՚ը, շընէրէց ինում* (Ջ): 2. Շների՝ անարժան մարդկանց բաժին դառնալ: *Ալիսանէն կ՚առնը շընէրէց ա տը՛ռալ* (Բ):

ՇԸՆԸԹԻՋԻ - *գ.* Վայրի թզենի, որ աճում է ժայռերի արանքում եւ տալիս է սովորականից փոքր եւ դառնահամ պտուղներ: *Էտ քը՛րծէն ղաթումը մին շընըթուզի յա ինիս փըսած* (Ջ):

ՇԸՆԸԹՈՒԼԱ - *տե՛ս* ԿՕՏԷԳ՝:

ՇԸՆԸԹԻՒՆ - *տե՛ս* ՇԻՆԻԹԻՒՆ:

ՇԸՆԸԼԱԿՈՒՏ - *տե՛ս* ԿՕՏԷԳ՝: *...Տէսալ ըն, վը՛ր մին շընըլակուտ կա, փըռնալ ըն, մօրթալ...* (ՀԺՀ, VI, 23):

ՇԸՆԸԽԸՅԱՐ - *գ.* Վայրի գետնատարած բույս՝ վարունգի նման փոքր թունավոր պտուղներով, որոնք հասունանալով դիպչելուց նետվում են: *Շընըխըյարը վէր նի յը՛կավ աշկէտ, աշկըտ կըցավէ* (Բ):

ՇԸՆԸԿԱՏՈՒ - *ած.* Իրար հետ անհաշտ, իրար հակառակ: *Մըրթըկընէգ՚ շընըկատու վրն, սաղ օրը էն ըն կըռվէլիս* (Բ):

- Շընըկատու ըղնէլ փօրը - Սաստիկ լուծել՝ փորլուծություն ունենալ: *Շընըկատու վա ընգալ փօրը, մընուտանը մին ջօլ ա ք՚ինում* (Բ):

- Շընըկատու տը՛ռնալ - Իրար հետ թշնամանալ՝ հակառակվել: *Առաչ Մօսին ա Համսն մօտէ հընգէրունք ըն ի՚լալ, միհէնգ՚ ըն շընըկատու տը՛ռալ* (Բ):

ՇԸՆԸԿՈՒՏԷՄՆԸ - *գ.* Վայրի խոտաբույս: *Շընըկուտէմնը աղու վա* (Բ):

ՇԸՆԸԿՕՏԷԳ՝ - *տե՛ս* ԿՕՏԷԳ՝:

ՇԸՆԸՀԱՆՉՕՑ - *գ.* 1. Շան հաչոց: *Շընըհանչօց ար ընգալ, օղտէրը խըրտնալ ին, գ՚օգռակնէրին օգըմ ին տակընէրավը անին...* (ՋՏ, Բ, 112): 2. *անրգ.* Վայրահաչ, անտեղի եւ անիմաստ խոսակցություն, փնթփնթոց: *Ըրշակէն գանիլանն տանում ա կընգանը շընըհըչօցանն* (Բ):

ՇԸՆԸՀԱՎԷՐ/ՇԸՆԸՐՀԱՎԷՐ/ՇԸՆԸՀԱՎՈՒՐ/ՇԸՆՀԱՎԷՐ/ՇՈՒՆՀԱՎՈՒՐ *(գրբ. շնորհաւոր (շնորհալի)* - *վ.* Բարեմաղթություն որեւէ հաճելի՝ ուրախալի առիթով: *Շընըհա՛վէր, շընըհա՛վէր, էտ հինչ թանգգան շօր ը՞ս կ՚ը՛ցալ* (Ջ):

- Շընըհավէր անէլ - Շնորհավորանք հայտնել, շնորհավորել: *Ք՚ինամ ըն, վէր նախագէն թանգգան տօնը շընըհավէր անին* (Ջ):

ՇԸՆԸՀԱՎՈՒՐ - *տե՛ս* ՇԸՆԸՀԱՎԷՐ:

ՇԸՆԸՃՈՒՃՈՒ - 1. *գ.* Շուն, հավ եւ այլ կենդանիներ եւ թռչուններ՝ իրար խառնված: *Հոյաթումը էնքան շընըճուճու կա, վէր կարըմ չըս, թա տուրուր կ՚աս* (Բ): 2. *տե՛ս* ՇԻԼԸՄԸՃԷՃ:

ՇԸՆԸՄԸՃԷՃ - *տե՛ս* ՇԻԼԸՄԸՃԷՃ:

ՇԸՆԸՄՈՒՌՏԱՌ - *ած.* Վատ, զզվելի, կեղտոտ: *Քըշէրը շընըմուռտառ ըրըզնէ յա տըսնաս* (ՀԺՀ, V, 258):

- Շընըմուռտառ անէլ - Փչացնել, այլանդակել, կեղտոտել: *Կօրծը շընըմուռտառ ըրավ, տիրավ ընդէղ* (Բ):

- Շընըմուռտառ ինիլ/տը՛ռնալ - Փչանալ, այլանդակվել, կեղտոտվել: *Կարկուտը թակից, բուստընէն սաղ շընըմուռտառ տը՛ռավ* (Բ):

ՇԸՆԸՄԸՌՏԸՌՕԹՈՒՆ - *գ.* Վատ՝ զզվելի՝ կեղտոտ արարք: *...Պիժինէյիս տը՛ղը Ալին շընըմըռտըռօթուն ա անում, սաղ ցօրէնը խըլում* (ԱԱ, 16):

ՇԸՆԸՊԷՔ՚Ի - *գ.* Վայրի խոտաբույս: *Շընըպէք՚ին պէք՚ու նըման ա, ամմա շատ ա աղու* (Բ):

ՇԸՆԸՍԱՏԱԿ/ՇԸՆՍԱՏԱԿ/ՇԸՆԸՍՏԱԿԱԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Շընըսատակ անէլ - Շան նման սատկացնել, անարգ մահով սպանել: *Էտ իփանծ ճուրը ածից իրէքին կըլխէն, իրէքին շընըսատակ ըրավ...* (ԼՂԲ, 310):

- Շընըսատակ ինիլ/տը՛ռնալ - Շան նման սատկել, անարգ մահով մեռնել՝ սպանվել: *...Նի յըն մընում, տը՛սնում՝ խոշանբանգ՚ը շընըսատակ տը՛ռած* (ԱԱ, 51):

ՇԸՆԸՍՊԱՆԷ - *տե՛ս* ՇԸՆԸՍԱՏԱԿ: *Էտ մարթը սիրըկանէն պէց ա թողում, մինգ՚էլ տըրան թակում, շընըսպանէ անում* (ՀԺՀ, VII, 315):

ՇԸՆԸՍՏԱԿԱԾ - *տե՛ս* ՇԸՆԸՍԱՏԱԿ:

ՇԸՆԸՍՈՒՐՈՒ - *գ.* 1. Շների ոհմակ: *Շընըսուրուն յըրա յա պըրծընում, կ՚ուլէրէն նըհէտ տամ* (Բ): 2. *անրգ.* Ստոր մարդկանց բազմություն: *Թօրքէրը էլ հօ ժըղօվուրթ չը՞ն, շընըսուրու յըն* (Ջ):

- Շընըսուրու կապէլ - Շների պես հավաքվել՝ խմբվել: *Թօրքէրը շընըսուրու վրն կապում, նի տը՛ռնում շէնը*:

ՇԸՆԸՎԱՉԻ - *տե՛ս* ՇԸՆԸՎԱՐԻ:

ՇԸՆԸՎԱՐԻ - *ած., մ.* Շան նման, շան վարվեցողությամբ: *...Թա օգ՚ում ըս մըրթըվարի ապրիս, շընըվարի մը՛ռնիս, փըսակվը մէ՚լ* (ԱԲԲ, 32):

ՇԸՆԸՎԸ՛ՆՆԸ - *մ.* Ոտքերից մեկը առաջ, մյուսը հետ պառկեցնելով (նստել): *Հինչ ը՞ս շընըվը՛ննը նըստալ* (Բ):

ՇԸՆԸՐՀԱՎԷՐ - *տե՛ս* ՇԸՆԸՀԱՎԷՐ:

ՇԸՆԸՐՕԿ/ՇՈՒՆՈՒՐՕԿ *(ռուս. шнурок)* - *գ.* Կոշիկները ամրացնելու թել՝ քուղ: *Շընըրօկը յը՛տ ա անում, վընընըմանէրը հանում* (Բ):

ՇԸՆԸՔԸԼՕԼԷ/ՇԸՆԸՔՈՒԼՕԼԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Շընըքըլօլէ տալ - *անրգ.* Շան պես կենակցել: *Էտ տըղատ ա էտ ախճիգ՚ըտ էզգանան պըտրհին, շընըքըլօլէ տըվին* (Ջ):

ՇԸՆԸՔՈՒԼՕԼԷ - *տե՛ս* ՇԸՆԸՔԸԼՕԼԷ:

ՇԸՆԹԸՌԿԱՃԱԾ - *գ. հեգն.* Հարսնառից հետո զոքանչի կողմից փեսային ու նրա հետ մնացողներին տրվող ճաշ, որի ժամանակ փեսան ազատ ճաշում է՝ առանց հյուրերից նեղվելու: *Շընթըռկաճաշը օտում ըն, հըդէ ինում* (Ջ):

ՇԸՆԹԸՌԿԷԼ - *տե՛ս* ՇԸՆԹԸՌ(Ն)ԷԼ:

ՇԸՆԹԸՌ(Ն)ԷԼ/ՇԸՆԹԸՌԿԷԼ/ՔԸՆԹԸՌՆԷԼ - *նբ., անրգ.* Անշնորհք կերպով նստել՝ փռվել: *Աշխարքըս շօռ ա կամ, կամ տըռանը ըռըչին շընթըռըմ* (ԱՀ, 27):

ՇԸՆՀԱՎԷՐ - *տե՛ս* ՇԸՆԸՀԱՎԷՐ:

ՇԸՆՉԱՎԷՐ/ՍԸՆՉԱՎԷՐ *(գրբ. շընչաւոր)* - *գ., ած.* Շնչող՝ շունչ ունեցող (էակ): *Յիրգ՚իրումը հիշկան շընչավէր կա, հըվաքվում ըն* (Ջ):

ՇԸՆՍԱՏԱԿ - *տե՛ս* ՇԸՆԸՍԱՏԱԿ:

ՇԸՆՈՒՐ/ՇՈՒՆՈՒՐ *(ռուս. шнур, գերմ. Snour)* - *գ.* Լար, մետաղալար: *Մին շընուր ա յօր օնում, կապում* (Ջ):

ՇԸՆՈՒՐՀԱԿԱԼ/ՇՈՒՆՈՒՐՀԱԿԱԼ *(գրբ. շնորհակալ)* - *ած.* 1. Արված լավությունը՝ բարիքը գիտակցող, երախտագետ: *Շընուրհակալ մարթ ա Յէփրէմը* (Բ): 2. *փխբ.* Շնորհակալության արժանի, խրախուսելի: *Շընուրհակալ կօրծ ա ըրալ Մայիսը* (Բ):

- Շընուրհակալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն - 1. Շնորհակալության զգացումը՝ գիտակցությունն արտահայտող արտահայտություն: *Մստուծ, շընուրհակալ ըմ, խուխէս ըզըղը՛ցէր օյինբազէն անա* (Ջ): 2. Որեւէ բանից քաղաքավարի կերպով

հրաժարվելու՝ մերժելու արտահայտություն: *Դէրվիշը ասմա.- Շընուրհակալ ըմ, օգում չըմ* (Ձ):

- Շընուրհակալ ինիլ/տը՛ռնալ - Գոհ լինել, շնորհակալության զգացմունքով տոգորվել: *Էտ տըղան մին խիլլա՛ն շընուրհակալ ա տէռնըմ* (ՀԺՀ, V, 618):

ՇԸՆՈՒՐՔ - *տե՛ս* ՇԸՆՕՐՔ:

ՇԸՆՈՒՐՔԱՎ - *տե՛ս* ՇԸՆՕՐՔԱՎ:

ՇԸՆՈՒՐՔԷՆ - *տե՛ս* ՇԸՆՕՐՔԷՆ:

ՇԸՆՕԹՈՒՆ *(գրբ. շնութիւն)* - *գ.* 1. Շան հատկություն, վատ բնույթ, նենգություն, խարդախություն: *...Թաքավէրը զինքը՛ տամ ա շընօթունի, իլլա՛ծ-չիլլա՛ծը տանէլ տամ...* (ՀԺՀ, VI, 97): 2. Անբարոյականություն, անառակություն: *Սըրա հէտէ յա, վէր մարթիք՝ համ շընօթուն ըն անում, համ իշօթուն* (ԲՀԲ, 173):

ՇԸՆՕՐՔ/ՇԸՆՈՒՐՔ *(գրբ. շնորհ)* - *գ.* 1. Որեւէ կարգի բնատուր ձիրք՝ հմտություն՝ ընդունակություն: *Էշին ըսը՛ցէն՝ շընօրքըտ նըհաշ տո՛, զըռռաց* (ԱԲԲ, 26): 2. Արտաքին գեղեցկություն, բարետեսություն, բարեձեւություն: *Ըտըրա շընօրքը վէր տը՛սնում ա, կըլլա՛խ ա ըղնում, վէր տա թաքավէրու տըղա յա* (Ձ): 3. Քաղաքավարություն: *Շընօրք էլ չօնէ, թա լ՛ըհա շինըմաչումը վը՛ննը կացած տըղըմարթկանցը պարյօր տա* (Բ):

- Շընօրքա ըղնէլ - Արտաքին գեղեցկությունից զրկվել: *Շէնըմը էնքան կօրծ ա ըրալ, շընօրքա ընգալ ա* (Բ):

- Շընօրքը կ՛ա՛լ - Արտաքնապես գեղեցկանալ: *Մագ՛էրը սանդրրըմ ա, թա՛զգա՛ շօրէրը կը՛նում, շընօրքը կամ ա* (Ձ):

- Շընօրքը(տ) կըտըրվէ - Հանդիմանական արտահայտություն՝ անարգ, անքաղաքավարի, անփույթ արարքի համար: *Շընօրքը կըտըրվէ Մինասէն, մօրը հը՛տէ վէչ մին պէն չի անում* (Բ):

- Շընօրք նըհաշ տալ/պինըցընէլ - Հնարամտություն՝ ճարպկություն՝ խելք գործադրել՝ ցուցաբերել: *Շընօրք ա նըհաշ տամ, տո՛ւրմա՛ն փախչո՛ւմ* (Ձ):

- Շընօրքու մըհար - Ձեւի համար, արտաքին տպավորության համար: *Շընօրքու մըհար մէհէտ էլ չի կամ, թա ո՛ւրա՛ն պառավ մօրը տը՛սնա* (Բ):

- Շընօրքու տար - *տե՛ս* ՇԸՆՕՐՔԱՎ (1, 2):

ՇԸՆՕՐՔԱՎ/ՇԸՆՈՒՐՔԱՎ - *ած.* 1. Արտաքին հաճելի տեսքով, վայելուչ: *Շընօրքավ ախճիգ՝ ա, հու տը՛սնում ա, քը՛ը՛փը կ՛ամ ա* (Բ): 2. Քաղաքավարի, բարեկիրթ: *Շընօրքավ բիդի ինի մարթ* (Ձ): 3. *մ.* Հարկ եղածին պես, կարգին: *Շընօրքավ ա կօրծ անում* (Բ):

ՇԸՆՕՐՔԷՆ/ՇԸՆՈՒՐՔԷՆ - *տե՛ս* ՇԸՆՕՐՔԱՎ:

ՇԸՇԱ՛ՎՈՒՆ/ՇԻՇԱ՛ՎՈՒՆ - *ած.* Մի քիչ անխելք՝ միամիտ՝ հիմար: *Էտ թաքավէրին էլ մին շըշա՛վուն տըղա յա ինո՛ւմ* (Ձ):

ՇԸՇԸՄԱ՛Շ/ՇԻՇԸՄԱ՛Շ/ՇԱ՛Շ-ՄԱ՛Շ - *տե՛ս* ՇԸՇԱ՛ՎՈՒՆ:

ՇԸՇԿԸՌԷԼ - *տե՛ս* ՇԸՇԿԸ(Լ)Ց(Ը)ՆԷԼ:

ՇԸՇԿԸՌՎԷԼ - *տե՛ս* ՇԸՇԿԸ(Լ)ՎԷԼ:

ՇԸՇԿԸՌՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՇԸՇԿ՛Ը(Լ)Ց(Ը)ՆԷԼ:

ՇԸՇԿ՛Ը(Լ)ՎԷԼ/ՇԻՇԿ՛Ի(Լ)ՎԻԼ - *չբ.* Շփոթվել, շվարել, մոլորվել: *Էտ կարկաժ ծախօղը տէսնըմ ա, վը՛ր էտ մարթը շըշկ՛ըվալ ա...* (ԼՂԲ, 348):

ՇԸՇԿ՛Ը(Լ)Ց(Ը)ՆԷԼ/ՇԻՇԿ՛Ի(Լ)Ց(Ը)ՆԷԼ - *նբ.* ՇԸՇԿ՛Ը(Լ)ՎԷԼ-ի:

ՇԸՇՄԷԼ - *չբ.* Թմրել, թմրության մեջ ընկնել: *Էնքան արաղ ա խըմալ, շըշմալ ա* (Բ):

ՇԸՇՊԸՌԷԼ - *նբ.* Խիստ կերպով նախատել՝ հանդիմանել: *Ժօղովումը տըրան մին լ՛ավ շըշպըռում ըն* (Ձ):

ՇԸՇՊԸՌՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՇՊԸՌԷԼ-ի:

ՇԸՇՎԸՑ(Ը)ՆԷԼ/ՇԻՇՎԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՇԱ՛ՇՎԻԼ-ի:

ՇԸՇՕԹՈՒՆ/ՇԻՇՕԹՈՒՆ - *գ.* 1. Շաշ լինելը, խենթություն, խելառություն: *Շըշօ՛թունէն մըհար Սիրօժին նըհէտ վէչ մինը կօրծ չի փըռնում* (Բ): 2. Խենթ՝ խելառ արարք: *Մօսին ըշտէղ ք՛ինամ ա, մին շըշօ՛թուն անում ա* (Ձ):

- Շըշօ՛թունը փըռնէլ - Խենթանալ, մոլեգնել, կատաղել: *Էտ վէր ըսկանում ա, շըշօ՛թունը փըռնում ա* (Ձ):

ՇԸՊԱՐԻՏ - Գործածվում է կապակցության մեջ:

- Շընպարիտ անէլ - Թափով՝ ուժգին՝ շեշտակի որեւէ բան անել (նետել, խփել, աշխատել եւն): *Շընպարիտ ըրավ, կօրծը պըրծավ մին օրումը* (Բ):

ՇԸՊԸՌ - *ած.* Անզգույշ: *Շընպըռ մարթ ա Կարօն* (Բ):

ՇԸՊԸՌՏԷԼ - *տե՛ս* ՇԸՊԸՐՏԷԼ:

ՇԸՊԸՌՏ-ՇԸՊԸՌՏ - *տե՛ս* ՇԸՊԸՐՏ-ՇԸՊԸՐՏ:

ՇԸՊԸՌՏՎԷԼ - *տե՛ս* ՇԸՊԸՐՏՎԷԼ:

ՇԸՊԸՌՏՕՏԷԼ - *տե՛ս* ՇԸՊԸՐՏՕՏԷԼ:

ՇԸՊԸՌՏՕՏՎԷԼ - *տե՛ս* ՇԸՊԸՐՏՕՏՎԷԼ:

ՇԸՊԸՐԻՑ - *տե՛ս* ԸՇՊԸՐԻՑ:

ՇԸՊԸՐՏԷԼ/ՇԸՊԸՌՏԷԼ - *նբ.* Ուժգնորեն դեն նետել, նետել, գցել, ձգել: *Ամմէն մինը մին հափուռ վը՛ղ ա շըպըրտում* (ՆԼՂԺԲ, 145):

ՇԸՊԸՐՏ-ՇԸՊԸՐՏ/ՇԸՊԸՌՏ-ՇԸՊԸՌՏ - Գործածվում է կապակցության մեջ:

- Շընպըրտ-շընպըրտ անէլ - *տե՛ս* ՇԸՊԸՐՏՕՏԷԼ:

ՇԸՊԸՐՏՎԷԼ/ՇԸՊԸՌՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՊԸՐՏԷԼ-ի:

ՇԸՊԸՐՏՕՏԷԼ/ՇԸՊԸՌՏՕՏԷԼ - *նբ.* 1. Շատ բաներ այս ու այն կողմ շպրտել: *Էտ քարէրը շընպըրտտում ըն, ածում ծօ՛ը* (Ձ): 2. Վեր ու վար նետել: *Ղօչը տըմակը շընպըրտտուտէլավ կ՛ամ ա* (Բ):

ՇԸՊԸՐՏՕՏՎԷԼ/ՇԸՊԸՌՏՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՇԸՊԸՐՏՕՏԷԼ-ի:

ՇԸՊԻԼԿԱ - *տե՛ս* ԸՇՊԻԼԿԱ:

ՇԸՊԻՅՕՆ - *տե՛ս* ԸՇՊԻՅՕՆ:

ՇԸՊԻՅՕՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՇՊԻՅՕՆՕԹՈՒՆ:

ՇԸՊԻՇԿԱ - *տե՛ս* ԸՇՓԻՇԿԱ:

ՇԸՌ/ՇԸ՛Ռ/ՇԷՌ *(գրբ. շէռ)* - *գ.* 1. Անասունների (անարգաբար նաեւ՝ մարդու) մեզ: *Տարը էշին հըրցընում ա.- Էտ խէ ամմէն էշու թըքա, շըռա վը՛տ ը՞ս օնում...* (ԱԱռ, 79): 2. *փխբ.* Պաղ ու անորակ թեյ՝ ջրալի կերակուր եւն: *Էս չայ չի, շըռ ա* (Բ):

ՇԸՌԱՎԱՆՔ/ՃԸՌԱՎԱՆՔ - *գ.* Ճառագայթ, շող, ցոլանք: *Մին ախճիգ՝ ա տո՛ւս կ՛ամ, շըռավանքը տամ ընդրդէքավ* (ՆԱԲ, 36):

- Շըռավանք տալ - Ճառագայթել, փայլել, ցոլցլալ: *Ա՛ը՛ը՛վը շըռավանք ա տամ* (Բ):

ՇԸՌԲԸՇԱՌ - *տե՛ս* ՇԱՌԲԱՇԱՌ:

ՇԸՌԴԸԲԱՆԻ - *տե՛ս* ՇԸՌՏԸՊԱՆԻ:

ՇԸՌԴԸԲԸՐԴԱՆԻ - *տե՛ս* ՇԸՌՏԸՊԱՆԻ:

ՇԸՌԸՄՕՌ/ՇՈՒՌՈՒՄՕՌ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Շըռըմօռ անէլ/տալ - 1. Այս ու այն կողմ շուռ տալ՝ պտտել, շրջշրջել: *Էնքան շըռըմօռ ա ըրալ, խաղալիկը կօտրրալ ա* (Ձ): 2. *տե՛ս* Շըռըմօռ կ՛ա՛լ:

- Շըռըմօռ կ՛ա՛լ - Այս ու այն կողմ շրջվել՝ պտտվել, շրջշրջվել: *Սաղ քըշէրը կարում չի քօն ինի, շըռըմօռ ա կ՛ամ* (Բ):

ՇԸՌԸՆԲՈՒՌՈՒՆ/ՇՈՒՌՈՒՆԲՈՒՌՈՒՆ - *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ:

ՇԸՌԸՆԴՈՒ - *տե՛ս* ՇԸՌ (2):

ՇԸՌԸՇԸԼԹԱՂ/ՇԱՌԸՇԸԼԹԱՂ - *տե՛ս* ՇԱՌ:

ՇԸՌԻ-ՓԸՌԻ *(ֆր. charivari (խառնաշփոթ երաժշտություն)* - *ած.* 1. *տե՛ս* ԽԸՌՆԸԽԱՌՆԷ: 2. Փնթի, թափթփված: *Շըռի-փըռի մարդ ա Աբօն* (Բ):

ՇԸՌԼԸՄԱՂԼԻ - *տե՛ս* ՇԸՂԼԸՄԱՂԼԻ:

ՇԸՌԼԸՄԸՃԷԶ - *տե՛ս* ՇԻԼԸՄԸՃԷԶ:

ՇԸՌՇԸՌԱԼ/ՉԸՌՉԸՌԱԼ - *տե՛ս* ՇԸՌՌԱԼ (տեւականորեն): *Կինին սաղ քըշէրը շըռշըռացալ ա, տափը սաղ դօղալ* (Բ):

ՇԸՌՇԸՌԱԼԻ/ՉԸՌՉԸՌԱԼԻ - *տե՛ս* ՇԸՌՌԱԼԻ:

ՇԸՌՇԸՌԱՆ/ՉԸՌՉԸՌԱՆ - *գ.* Բարձունքից սրընթաց թափվող ջրի հոսանք, ջրվեժ: *Շուշվա տակէն մին լ՛ավ շըռշըռան կա* (Բ):

- Շօռ կ'ըվօղ կ'ուլը տուզնը կէնալ չի - Հետաքրքրվողը՝ որոնողը՝ ջանք թափողն արդյունքի կհասնի:

- Շօռ տալ - 1. Շրջել, մյուս երեսը դարձնել: *Քարը շօռ ըն տամ, տը՝սնում պէն կա կ'իրած* (Ձ): 2. Շրջել, գլորել: *Էտ ք'օթանկը շօռ ա տամ, քընցում ծօրը* (Ձ): 3. Դարձնել, թեքել, դեպի... *Կըլօխը շօռ ա տամ բիդի շէնը, տը՝սնում ծօխ ա պիցըրանում* (Ձ): 4. Աղավաղել, փոխել (խոսքը, ասածը եւն): *Սուդումը էտ մարթը ասածը շօռ ա տամ* (Ձ): 5. Շրջվել, թեքվել դեպի... *Շօռ ա տամ, անց կէնում մին պէցանուր տը՝ղ, ընդըղան յըրա անըմ մը՝ծ արչին յըրան* (ԼՂԲ, 352): 6. *տե՛ս* Շօռ կ'ալ (1):

- Շօռ օնէլ - Վրան առնել, մեջը փաթաթվել՝ ծածկվել: *Էտ տըղան շանը մօրթէն շօռ ա օնում, քօն ինում* (Ձ):

ՇՕՌԱՔ'ԱԹ - *տե՛ս* ՇՕՐԱՔ'ԱԹ:

ՇՕՌ-ՇՕՌ - *տե՛ս* ՇՕՐ-ՇՕՐ:

ՇՕՍՍԷ/ՇԱՍՍԷ *(ռուս. шоссе, ֆր. chausse°e)* - *տե՛ս* ՇԱՇԷՆՆԻ: ... *Հանգ'իստին տակավը մին շօսսէ ճընապար ա ինում* (ՀԺՀ, V, 573):

ՇՕՏ *(ռուս. щет)* - *գ.* Հաշվելը, հաշիվ, հաշվարկ: *Հըմբարում ա, հըմբարում, շօտը մընանա քընցում* (Ձ):

- Շօտու կաղնէլ - Գրանցվել, հաշվառման մեջ մտնել: *Ք'ինամ ա, թա.- Օգ'ում ըմ շօտու կաղնիմ* (Ձ):

ՇՕՏՉԻԿ - *տե՛ս* ՇՕՉԻԿ:

ՇՕՐ[1]/ՇՕՌ[1] - *գ.* Եփած թանից՝ կաթից՝ շիճուկից ստացվող խյուս, լոռ: *Խօխէնք'ը շօրը քընում ըն հացը, կընուտէլավ ք'ինամ* (Ձ):

ՇՕՐ[2]/ՇՕՌ[2] *(պրս. šir)* - *ած.* Աղի, աղահամ: *Շօր ճուր ա էտ ըխպիրին ճուրը* (Ձ):

ՇՕՐ - *գ.* 1. Ջգեստ, հագուստ: *Աթանէսը զուրթանում ա, շօրէրը դընիդէհա կ'էնում, կընգանըն էլ յէր կընցնում* (ՆԱԲ, 100): 2. Կտոր, լաթ: *Շօրը յօր ա օնում, ըշկափը սիրփում* (Ձ): 3. Երեխայի բարուրի կտորեղենը: *Խուխէն լընընցընում ա, շօրումը պընտատում* (Ձ):

- Շուրէրավը կ'իժ/պը՝էլ - Խիստ բարկացկոտ՝ խենթ: *Սօջին շուրէրավը կ'իժ ա* (Բ):

- Շուրէրավը մին տը՝ռնալ - Գիրանալ, չաղանալ: *Էն ա իլալ մանշվանծ մընէս, միհէնգ' ա շուրէրավը մին տը՝ռալ* (Բ):

- Շօրէրը ածիս կընրակը՝ մընկլավը՝ետ չի կ'ալ - Չափազանց աղքատ է:

- Շօրէրը հանիս՝ կընլխու չի ընդնէլ - 1. Խիստ զբաղված է: 2. Շատ միամիտ՝ հիմար է:

- Շօրը չօփավը տալ, պընընց(ը)նէլ - Աշխատանքի բոլոր միջոցներն օգտագործել: *Լ'ավ ուստան շօրընն էլ ա չօփավը տամ, պընընցընում* (Ձ):

ՇՕՐԱՔ'ԱԹ/ՇՕՌԱՔ'ԱԹ - *գ.* Աղ դրած վիճակում պահվող բանջարեղեն: *Տանընն էլ էրանուշ ուտէլի պէն չի ինում. կ'ամրի հաց ա ինում, մին էլ պատառ շօրաք'ատ* (Ձ):

ՇՕՐ-ՄՕՐ - *տե՛ս* ՇՈՒՐը՝ՂԱՆ:

ՇՕՐ-ՇԻՐԹ - *տե՛ս* ՇՈՒՐը՝ՂԱՆ:

ՇՕՐ-ՇՕՐ[1] - *ած.* Մի քիչ աղի, հաճելիորեն աղի: *Խընրաված բիդի շօր-շօր ինի, վէր լանգաթ ինի* (Բ):

ՇՕՐՎԱ *(պրս. šurva)* - *գ.* Ջրիկ կերակուր, ապուր: *Կէսօրէն կ'ամ ա, տէսնում՝ ղընգղան չընկա կընրակէն, վէ՛չ դօլմա կա իփած, վէ՛չ շօրվա* (ՆԱԲ, 125):

ՇՕՐՎԱՆԻ - *գ.* Խնձորի տեսակ: *Շօրվանին մը՝ծ-մը՝ծ խընձօր ա* (Բ):

ՇՕՓԷՐ *(ռուս. шофер, ֆր. chouffeur)* -

գ. Ավտովարորդ: *Ըրշակէն հէնգ՝ տըղա օնէ, հէնգ՝ըն էլ շօփէր ըն* (Բ):

ՇՕՓԷՐՕԹՈՒՆ - *գ.* Ավտովարորդի մասնագիտությունը, ավտովարորդ լինելը: *Քինամ ա շօփէրօթուն սըվը՝ռում* (Ձ):

ՇՕՔ/ՇԸՎԱՔ *(գրբ. շուք)* - *գ.* 1.Ստվեր, շուք: *Քընամ ա, քընամ, տը՝սնըմ ո՝ւրա՛ն նանէն, մին լա՛վ ծառու շօքըմ նըստած, չըխարակ ա մանըմ* (ՀԺՀ, V, 194): 2. *փխբ.* Հովանավորություն, պաշտպանություն: *Ախպօրը շօքը քըվօրցը անա անպակաս ա* (Բ): *գ., ած.* 3. Ստվերոտ, հով (տեղ): *Հիշկան շօռ ըն կ՝ամ, մին շօք տը՝ղ չըն քըթէնում, թա էտ շուքումը նըստին, հաց օտին* (Ձ):

- Շուքում մընացած - 1. Փափկասուն: *Շուքում մընացած ախճիգ՝ը կարէլ չի տօն պահէ* (Ձ): 2. Անհամ (պտուղ, բանջարեղեն): *Շուքում մընացած խըյար ա* (Բ):

- Շուքում փըսած - Նիհար՝ բարակ եւ երկարահասակ: *Տընաշինըտ հանց ա շուքում փըսած ինի. բոյը էրկու մէտըր կա* (Բ):

- Շօք անէլ - 1. Ստվեր ձգել՝ գցել: *Ջո՛ւմբո՛ւրո՛ւտ դուշը կ՝ամ ա թը՝վէրը յէտ տանում, էտ տըղին յիրա՛ն շօք անում, վը՝ր տըղան քօն ինի* (ՀԺՀ, VI, 119): 2. Հովանավորել, պաշտպանել: *Ախպէրը շօք ըրավ, ախպօրը յիթիմնէն մընացէն* (Բ):

- Շօքը քըցիլ - 1. Գողանալ, թռցնել: *Նըստում ըն հաց օտում, Կամօն Աբրիկին տէնակը շօքըն ա քըցո՛ւմ* (Բ): 2. Թաքցնել: *Կընէգ՝ը էրկու բօթուլ արաղ ա շօքը քըցո՛ւմ, վէր տա ախպօրը* (Բ):

ՇՕՔ/ՇՈՒՔ *(գրբ. շոգ (արեւի տաքը)* - *գ.* Շոգից մարմնի վրա բշտիկներ առաջանալը, որ հատկապես լինում է փոքր երեխաների մոտ: *Շօքը փիս պէն ա, խօխա կըսպանէ* (Բ):

- Շօքը տո՛ւս տալ - *տե՛ս* ՇՕՔԻԼ:

ՇՕՔԻԼ/ՇՈՒՔԻԼ *(գրբ. շոգանամ (շոգի դառնալ)* - *չբ.* Շոգից նեղվել՝ շոգեհարվել՝ մարմնի վրա բշտիկներ առաջանալ: *Ըսօր փիս տաք ա, շօքի՛ում ըմ* (Բ):

Չ

ՉԱԲԱԼԱՇՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չաբալաշմիշ կ՝ա՛լ - Անհանգիստ շարժումներ անել, այս ու այն կողմ շրջվել՝ պտտվել: *Գուլումը տընքտընքում ար, կօչ կ՝ամ յա չաբալաշմիշ կ՝ամ...* (ՋՏ, Ա, 11):

ՉԱ՛ԴԻՐ *(պրս. čadir)* - *գ.* Վրան, տաղավար: *Ղարավուլչէք՝ը նը՝շանց ըն տամ սիպտա՛կ թաքավէրին չա՛դիրը* (ՀԺՀ, V, 95):

ՉԱ՛ԴՐԻ՛/ՉԻԴ(Ը)ՐԱ *(վրաց. čadri (սավան)* - *գ.* 1. Սպիտակ կամ գույնզգույն շոր՝ սավան, որի մեջ Արեւելքի կանայք փաթաթվում էին տնից դուրս գալիս: *Խանը ըտըրա չա՛դրա՛ն քաշո՛ւմ ա, տը՝սնում ո՝ւրա՛ն նօ՛ք՝ա՛րը՝ն ա* (Ձ): 2. *տե՛ս* ՇԱԼ[1] (2):

ՉԱԹԱԼ *(թրք. čatal)* - *ած.* 1. Ծայրը երկճյուղված, երկճյուղ: *Մին չաթալ փա՛դ ա յօր օնում, տէմ տամ էտ կօտրած ճըղնանը* (Ձ): 2. *փխբ.* Իրար կպած՝ զույգ (պտուղների մասին): *Մին չաթալ տա՛նձ կ՝աս ա ընգընէս մին սը՝վ էծու պօգ՝* (Ձ): 3. *գ. փխբ.* Ամորձիք:

ՉԱԹԱԼ-ՉԱԹԱԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չաթալ-չաթալ անէլ - Իրար միացնել, կցմցել: *Չաթալ-չաթալ ըն անում, մին էրկան ք՝ա՛նդիր շինում* (Ձ):

ՉԱԹԱ՛Ն *(թրք. čətənə (կանեփ)* - *գ.* Ղըլղանի՝ աստղափուշի սերմերը, որ ցորենի հետ բովում եւ աղանձ են պատրաստում: *Առանց չա՛թա՛ն աղա՛նձը անհամ ա ինո՛ւմ* (Բ):

ՉԱԹԷԼ - *նբ.* 1. Իրար կցել՝ կապել: *Էտ էրկու ք՝օ՛թ՝ուկը չաթում ա, քըցո՛ւմ էշին մաշկավը, կ՝ամ տօն* (Ձ): 2. *տե՛ս* ԱՐՑԻԼ:

ՉԱԹԼԱԽ/ՉԱԹԼԱՂ *(թրք. čatlak (ճեղք, ճեղքվածք)* - *գ., ած.* Անարգ, ստոր (մարդ): *Էտ չաթլախը հընգէրէն կընգանը՝ն էլ ա բընյաբուռ ընրալ* (Բ):

ՉԱԹԼԱԿ/ՉԱԹԼՈՒԿ *(թրք. čatak (կցել)* - *տե՛ս* ՉԱԹԱԼ (2):

ՉԱԹԼԱՂ - *տե՛ս* ՉԱԹԼԱԽ:

ՉԱԹԼՈՒԿ - *տե՛ս* ՉԱԹԼԱԿ:

ՉԱԹՄԱ *(թրք. čatma)* - *գ.* Խնոցին կախելու հարմարանք: *Չաթման կօտրում ա, խընէգէն, շօ՛մփ, վէր ա ընդնում* (Ձ):

ՉԱԹ-ՉԱԹ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չաթ-չաթ ինիլ - *տե՛ս* ՉԸՔՉԸՔՕՏԷԼ:

ՉԱԹՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՉԱԹԷԼ-ի:

ՉԱԹՈՒ *(թրք. čatu)* - *գ.* Կարճ պարան, թոկ: *Պըլըպուդին մին վը՝խճար ա մուրթէս, մին չաթու, մին ճուվարան յօր ունէս, հըդէ ինիս...* (ԼՂԲ, 391):

- Չաթու կապած - Իրար հետեւից, շարան կազմած: *...Մին ղօլան սիպտակ լավաշնէն ա չաթու կապած տո՛ւս կ՝ամ, էն մին ղօլան հընդուշկի ժարկօն ու կ՝առնավ փըլավը...* (ՋՏ, Բ, 7):

- Չաթուն ճո՛ւր խըմից, դընէն փօրը օռավ - Ասում են, երբ մեկը հանցանք՝ զանցանք է գործում, իսկ նրա փոխարեն տուժում է անմեղը, որը ինչ-որ բանով կապված է նրա հետ:

- Չաթուն կըտըրած (դանա) - Անզուսպ, սանձարձակ, կատաղի (մարդ): *Իզէն չաթուն կըտըրած դանա յա, սա՛յաղ կաց* (Բ):

- Չաթուն չըվանէն տալ - Գործը ձգձգել: *Ուստան էնքան չաթուն չըվանէն տըվավ, մինչը՝վ կարունքը յը՝կավ* (Ձ):

- Չաթուն պօգ՝ին տարալ ա՞ - Հոգ չէ, ի՞նչ վնաս: *Սիմօնէն հի՞նչ, թա կարկուտ ա կ՝ամ, չաթուն պօգ՝ին տարալ ա՞, վէ՛չ բաստան օնէ, վէ՛չ արտ* (Բ):

- Չաթու չըմ տալ, վէր կախ ինի/խէխտըվի - *տե՛ս* Ք՝ա՛նդիր չըմ տալ, վէր կախ ինի:

ՉԱԼ *(պրս., թրք. čal)* - *ած.* 1. Խատուտիկ, պուտ-պուտ, խայտավոր: *Պընաս ըն, տըսնաս՝ ո՝ւրա՛ն՝ց չալ դանան* (ԼՂԲՔ, 286): 2. *փխբ.* Ընտիր, գեղեցիկ: *Չալ աշկէր օնէ* (Բ): 3. *փխբ.* Օտար տարրերի խառնուրդ ունեցող, խառն: *Չալ ռուսէրէն ա խօսում* (Ձ):

- Չալ սօտ - Բացահայտ սուտ: *Ամմէն մարթ չի կարէլ չալ սօտ ասէ* (Բ):

ՉԱԼԱ *(թրք. čala)* - 1. *գ.* Փոս, խրամ: *Թաքավէրը ճըղճըղաս ա, թա.- Քէցէք՝ վը՝սկուն ըմբարէն չօրք թըրա՛ն՝փա՛ն՝վը չալա կըտրէցէք՝, մաչը կուպրավ լըցէք՝...* (ՀԺՀ, V, 300): 2. *ած.* Մի փոսի՝ խրամի չափով՝ ծավալով: *Մին չալա ցը՝խ ըն անում, ըսքըսում պատը շարէլը* (Ձ):

ՉԱ՛ԼԱ՛ԲԻ *(թրք. čelebi (դաստիարակված եւ կիրթ մարդ)* - *ած.* Ճարպիկ, խիզախ: *Չա՛լա՛բի տըղա յա Ասլանը* (Բ):

ՉԱԼԱՂԱՋ - *գ.* Անասունների մեջքի միսը՝ ոսկորներով: *Ամմէնալ՝ավ խըրավածը խօգ՝ին չալաղաջան ա տը՝ռնում* (Բ):

ՉԱԼԱՉԸԽՈՒՐ/ՉԱԼԱՉՈՒԽՈՒՐ *(թրք. čala-čuxur)* - *ած., գ.* Խորդուբորդ, անհարթ (տեղ): *Մէր շէնին հըդէն չալաչը՝խուր ա* (Բ):

ՉԱԼԱՉՈՒԽՈՒՐ - *տե՛ս* ՉԱԼԱՉԸԽՈՒՐ:

ՉԱ՛Ն՝Ք՝Ի - *գ.* Լավաշ հաց, որ բաժանում էին մատաղի մսի հետ: *Մըտաղէն մէսը իփում ըն, թիք՝էք՝ը տինում չա՛ն՝ք՝ի՛ն յըրա, պըժէնում* (Ձ):

ՉԱԼԸԽ - *տե՛ս* ՉԱԼԸԾ:

ՉԱԼԸԾ/ՉԱԼԻԾ/ՉԱԼԸԽ/ՉԱԼԻԽ *(թրք. čaləšmak (աշխատել, ջանալ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Չալըշ ածէլ/պիրիլ - Շատ աշխատեցնել, չարչարել, ճգնել տալ: *Սաղ օրը տահանց չալըշ ա ածում, վէրչումըն էլ տունզնը հըղէ տինում* (Ձ):

Չալըշ կ'ալ - Շատ աշխատել, չարչարվել, ճգնել: *...Շատ չալիշ յէկին, կըրը՞ցին վը՞չ լըհա՛ մին ըլըբաստըրակ էլ ա վէր քըցին* (ՀԺՀ, VI, 91):

ՉԱԼԹՈՒԿ *(թրք. čəltiq)* - *գ.* Պատիճը դեռ չհասած բրինձ: *Պըրինձին մաչի չալթուկնէն ճօկում ա, տէն ածում* (Ձ):

ՉԱ՛ԷԱԳ՝ *(պրս. čāliq, թրք. čalik)* - *գ.* Ցուպ, գավազան, բռնակով ձեռնափայտ: *Ապան առանց չա՛լիգ կարում չի շօռ կ'ա* (Բ):

ՉԱ՛ԼԻԳ-ՄԱ՛ԼԻԳ/ՉԱԼՏԷԳ-ՄԱԼՏԷԳ՝ - *ած.* Խատուտիկ ու սիրուն: *Չա՛լիգ-մա՛լիգ շօրէր ա կ'ը՞ցալ* (Բ):

ՉԱԼԻԽ - *տե՛ս* ՉԱԼԸԾ:

ՉԱԼԻԾ - *տե՛ս* ՉԱԼԸԾ:

ՉԱ՛ԼԼՕՐ/ՉԱԼՕՐ/ՃԱ՛Լ(Լ)ՕՐ - *մ., գ.* Վաղը չէ, մյուս օրը չէ, մյուս օրը: *Ասում ա.- Ա՛լլօր կարէլ չըմ, չա՛լլօր կըկ'ամ* (Ձ):

ՉԱԼՂՈՒՆ - *տե՛ս* ՓԸՍՈ՛ՒՆԳՈ՛Ի:

ՉԱԼՄԱ *(թրք. čalma)* - *գ.* Գլխի փաթթոց (հիմնականում մահմեդականների): *Խանը չալման պըտատում ա, ք'ինամ* (Ձ):

ՉԱԼՄԻԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չալմիշ անէլ - Հանկարծակի խփել՝ զարկել՝ բռնել եւն: *Օխնը լըհա՛ չալմիշ ա անըմ, թա կընէ, էս մարթը շատ ա ըդաչանք անըմ, թա՝ պատառ էլ ք'ինանք...* (ՀԺՀ, VI, 250):

Չալմիշ կ'ալ - *տե՛ս* Չալըշ կ'ալ: *Շատ ա չալմիշ կ'աս, խըրէգ ա չալմիշ կ'աս, կըրէս չի, ըտը՞ղ էլ քունավ ա ընցընէս* (ՀԺՀ, VI, 25):

ՉԱԼՏԷԳ՝/ՉԱԼՏԻԳ՝ - *տե՛ս* ՉԱԼ:

ՉԱԼՏԷԳ՝-ՄԱԼՏԷԳ՝ - *տե՛ս* ՉԱ՛ԼԻԳ՝-ՄԱ՛ԼԻԳ՝:

ՉԱԼՏԻԳ՝ - *տե՛ս* ՉԱԼՏԷԳ՝:

ՉԱԼՓԱՂԱՆ - *ած.* Կտրուկ, վճռական: *Չալփաղան ջօղաբնէ յա տամ* (Ձ):

ՉԱԼՓԱՇՈՒՂ - *գ.* 1. Խորդուբորդ տեղ, դարուփոս: *Էտ չալփաշուղումը մին դա՛գա՛ յըն շինում, մաչին կէնում* (Ձ): 2. Հեռավոր՝ անմարդաբնակ տեղ: *Կըլօխ ա յօր օնում, ք'ինամ մին չալփաշուղ, ըտը՞ղ կէնում* (Ձ):

ՉԱ՛ԼԼՕՐ - *տե՛ս* ՉԱ՛ԼԼՕՐ:

ՉԱԽ *(թրք. čağ)* - *մ.* Ինչ-որ ժամանակ: *Էտ չըխանց էլ շէնին անըմը մընացալ ա Բուլութան, յը՞տնան էլ՝ Պիլիթանուց* (ԱԱ, 20):

ՉԱԽԿԱԼ - 1. *տե՛ս* ՃԱՂԱՐ: 2. *տե՛ս* ՉԱՂԱԼ:

ՉԱԽԿԱՉՈՒԽԿ - *գ.* Աշխատելու գործիքների՝ առարկաների իրար խփվելու ձայնը: *Ուստէն չախկաչուխկը տընըցուց քունըհարամ ա անում* (Ձ):

- Չախկաչուխկ անէլ - Գործիքներն՝ առարկաներն իրար խփելով՝ ինչ-որ բան անել՝ աշխատել: *Չախկաչուխկ ըն անում, էրկու օրումը էտ մըղրկնէն շինում* (Ձ):

ՉԱԽԿՈՒ - 1. *ած.* Հնացած, փչացած, ոչ պիտանի: *Ըտըրանց հըյաթումըն էլ մին չախկու մաշին ա ինում* (Ձ): 2. *գ.* Գրպանի ժանգոտած դանակ: *Էն ըխճըկանը մըհար մին շըհանօռնը, մին չախկու, մին բուրընտիկին ա պէրալ* (Ձ):

ՉԱԽՄԱԽ *(պրս., թրք. čakmak)* - *գ.* 1. Երկաթե կամ պողպատե հարմարանք, որով կայծքարին խփելիս կայծ է առաջանում: *Միհէնգ՝ էլ չախմախ պինըցընօղ չի կա* (Բ): 2. Ձեռքի հրազենի հարվածող մեխանիզմի մաս՝ ոտք, շնիկ: *Չախմախը քըշըցընում ա, թա յըրա անէ, մին էլ բո՛ւրդանն կ'ըխտարը աշկէն ըռաշկան կօրչում ա* (Ձ):

- Չըխմախու քար - *տե՛ս* ԿԸԾ՝ԱՔԱՐ:

ՉԱԽՄՈՒՐ - *տե՛ս* ՉԱԼ:

ՉԱՂ - *տե՛ս* Ք՝ՕՔ[1]:

ՉԱՂԱԼ *(պրս., թրք. čacal)* - *գ.* Շնագգիների ընտանիքին պատկանող աղվեսանման գիշատիչ կենդանի, շնագայլ: *Չըղըլնէն քըշէրը Հէնդօվէն էշը կէրալ ըն* (Բ):

ՉԱՂԼԷԳ՝ - *ած.* Չափավոր գիրություն ունեցող, գիրուկ: *Մին չաղլէգ՝ խօզ՝ ըն մօրթում, ք'ը՞փ անում* (Ձ):

ՉԱՂՈՒՆ - *տե՛ս* ՉՕՂՈՒՆ:

ՉԱՄ[1] *(թրք. čam)* - *գ.* Սոճի: *Չամը լ'ավ մատարյալ ա տը՞ռնում* (Բ):

ՉԱՄ[2] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Չամէն ըղնէլ - Դասավորվել, կարգավորվել, ընթացք ստանալ: *Կօրծը չամէն ա ընգալ* (Բ):

- Չամէն քըցիլ - Դասավորել, կարգավորել, ընթացք տալ: *Ամմա մուրազըս սըրտումըս մընաց. լա՛վ իշտա՛հ ունի վը՞րս ընէլի, հա՛զիր չամէն ի քըցա՛լ* (ԼՂԲՔ, 263):

ՉԱՄԱՂԱՆ *(ռուս. чемодан, պրս. čāmedān)* - *գ.* Ճամպրուկ: *Ղօնաղը չամաղանան մին տէտրակ ա հանըմ, կ'իրըմ* (ՀԺՀ, V, 565):

ՉԱՄԱՆ[1] *(գրբ. չաման)* - *գ.* Հովանոցավորների ընտանիքին պատկանող խոտաբույս՝ քիմոն, ինչպես նաեւ նրա սերմերը, որ աղալով գործածում են որպես համեմունք՝ հատկապես ապուխտ պատրաստելիս: *Առանց չաման բաստուրման անհամ կինի* (Բ):

ՉԱՄԱՆ[2] - *գ. ծծկ.* Աղջնակի սեռական անդամ:

ՉԱՄԱՆԳ՝ՈՒԼ(Ի) - *տե՛ս* ՉԱՄԱՆ[2]:

ՉԱ՛ՄԲԱ՛Լ - *տե՛ս* ՉԱ՛ԼԱ՛ԲԻ:

ՉԱՄԷՆ - *տե՛ս* ԿԱՐՔԷՆ (1):

ՉԱՄԷ(Ն)Չ/ՉԱ՛ՄԻ(Ն)Չ/ՉԱ՛ՄՈ՛Ի(Ն)Չ *(գրբ. չամիչ)* - *գ.* Չորացրած խաղող կամ թութ: *Կ'օ՞ք'ը չա՛մչավ լըցնում ա, պիրում տամ քըվօրցը, օտում ըն, ըտէղ էլ ապրում* (ՀԺՀ, V, 490):

- Չամէնչ ը՞ն/չը՞ն պիժը՞նում - Ասում են, երբ մարդիկ հավաքվում՝ խռնվում են մի տեղ. ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք հավաքվել: *Նախագան ասմա.- Հինչ ը՞ք շինըմաչումը նըստօտալ, չամէնչ ը՞ն պիժը՞նում, խէ ք'ինամ չը՞ք հօնդ* (Ձ):

- Չամէնչ տը՞ռնալ - *տե՛ս* ՉԸՄԸՆՉԻԼ:

ՉԱՄԻ(Ն)Չ - *տե՛ս* ՉԱՄԷ(Ն)Չ:

ՉԱ՛ՄՉԻԳ՝ *(պրս. čamča, թրք. čemča)* - *գ.* Կարճ կոթով փայտե մեծ շերեփ կամ գդալ: *Չա՛մչիգ՝ը տակավը՞ն ա տամ, օտում* (Ձ):

ՉԱ՛ՄՈ՛Ի(Ն)Չ - *տե՛ս* ՉԱ՛ՄԷ(Ն)Չ:

ՉԱՅ *(պրս., թրք. čay, ռուս. чай)* - *գ.* 1. Թեյազգիների ընտանիքին պատկանող մշտադալար թփաբույս, որի տերեւներից ըմպելիք են պատրաստում, թեյաբույս: *Մըղա՛ փո՛ւն, վէր Ղարաբաղ չայ չի փըսնէս* (Բ): 2. Այդ բույսի չորացրած՝ մշակած տերեւները: *Էրկու կուճի քըսակ չայ ա ինք՝ օնում, դարկում քըվօրը հը՞տէ* (Բ): 3. Այդ տերեւներից պատրաստվող գույնը եւ ըմպելիքը: *Այան առանց չայ կարէլ չի ապըրէ* (Բ): 4. Այդ ըմպելիքը խմելը, խմելու ժամանակը: *Չային վախտը բո՛ւրդանն տո՛ւսանն ծըկըլթօց ա ըսկանում* (Ձ):

- Չայ տալ - Թեյ մատուցել, թեյով հյուրասիրել: *Ղունըղնէրէն չայ ա տամ, հըղէ տինում* (Ձ):

- Չայու փուլ - Մանր դրամ, քիչ դրամ: *Ծը՞ղքէն չայու փուլ էլ չի կա* (Բ):

- Չայ քըցիլ - Թեյ պատրաստել, թեյի պատրաստություն տեսնել: *Էտ կընէգ՝ը՞ն էլ չայ ա քըցում, խօրագ՝ իփում* (ՀԱԲ, 15, 126):

ՉԱՅԴԱՆ - *գ.* Կանթավոր ու կտցավոր աման՝ թեյի ջուրը եռացնելու համար: *Չայդանը ճիրավ լըցնում ա, տինում կըրակէն* (Ձ):

ՉԱ՛ՅԷՐ - *տե՛ս* ՉԱ՛ՅԻՐ:

ՉԱ՛ՅԻՐ/ՉԱ՛ՅԷՐ *(թրք. čayir)* - *գ.* 1. Մարգագետին: *Կըվէրը տանում ա չա՛-*

յիրը, վէր ըրրծըցընէ (Զ): 2. Մոլախոտ, մոլախոտի արմատները: *Բոստանը պիհիում ա, չայիրը ճօկում, տէն ածում* (Բ):

ՉԱՅԻՐ-ՉԻՄԱՆ *(թրք. čayir čemen)* - *տե՛ս* ՉԱՅԻՐ (1):

ՉԱՅԼԱՂ *(թրք. čaylak)* - 1. *տե՛ս* ՉԱՅԻՐ (1): 2. *գ.* Գետափի քարքարոտ տեղ: *Էտ չըյլաղումը կըրակ ըն անում, ծուկունը խըրավում, օտում* (Զ):

- Չայլաղ քար - *տե՛ս* ՉԸՅԼԸՂԱՔԱՐ:

ՉԱՅԽԱՆԱ *(թրք. čaihana)* - *գ.* Թեյ խմելու տեղ, թեյարան: *Մին թօրք չայխանումը չայ ա խըմում* (ԲՀԲ, 235):

ՉԱՅՆԻԳ - *տե՛ս* ՉԱՆԻԳ:

ՉԱՅՉԻ *(թրք. čayci)* - *գ., ած.* Թեյ պատրաստող (անձ): *Մին անումը յէր իլած չայչի յա ինում, վէշ մինը կարում չի տըրան նըման չայ քըցի...* (ԱԱռ, 32):

ՉԱՆ *(ռուս. чан)* - *գ.* Մետաղե մեծ աման՝ ջուր եւն լցնելու՝ պահելու համար: *Չանը ճիրավ լըցնում ըն, բոստանը ճիրում* (Բ):

ՉԱՆԱ *(թրք. čene)* - *գ.* Դեմքի ստորին մասի կլորավուն վերջավորությունը, ծնոտ: *Մին դօվ, ծը՛ռքը չանին տակավը տիրած, քօն ա իլալ* (ՀԺՀ, V, 19):

- Չանա թակէլ - 1. Շատախոսել, դատարկաբանել: *Չանա թըկէլավ կարէլ չըս տօն պահիս, ըշխադէլ բըդիս* (Զ): 2. Երկար սակարկել: *...Էրկու դաստա փիրփէտը մին կապէկավ առնէլու մըհար իրէք սըհաթ չանա ին թակըմ...* (ՋՏ, Ա, 72):

- Չանա ծըռէլ - Ստորանալով խնդրել՝ աղերսել: *Չանա ծըռից, կօրծը դուզըցըրավ* (Բ):

- Չանան ծօռ - Տգեղ դեմք ունեցող: *Չանան ծօռ Ալօն էլ ա հըրամաք ընգալ* (Բ):

- Չանան բիզվիլ - Հյուծվել, նիհարել: *Էնքան տուզնը կացալ ա, չանան բիզվալ ա* (Բ):

- Չանան բօշ/թիթը՛վ/թուլ/լախ - Շատախոս: *Չանան բօշ տըղըմարթին անա զանիլաս տանում ա* (Բ):

- Չանան կախ անէլ/տալ - Լռել, ուր անհրաժեշտ է խոսել, հիմար կեցվածք ընդունել: *Բըրիգադիրը ըտըրան ուշունց ա տամ, ինքըն էլ չանան կախ ա անում, ըսկանում* (Զ):

- Չանան հըպըրապում չի - Ասում են նրա մասին, ով անընդհատ խոսում կամ ուտում է:

- Չանան յը՛ր կապած - Խեղճ ու լռակյաց: *Էտ չանան յը՛ր կապածը կընգանը յէսիրըն ա* (Բ):

- Չանան յը՛ր կապէլ - Ննջեցյալի ծնոտի տակով շոր անցկացնել եւ գլխի վերեւում կապել, որ բերանը բաց չմնա: *Ադաթ ա, վէր մարթ մը՛ռնում ա, չանան յը՛ր ըն կապում* (Բ):

- Չանան չարխու տինիլ/քըցիլ/օնէլ - 1. *տե՛ս* Չանա թակէլ: 2. Անընդհատ ուտել: *Չանան չարխու վա տինում, մինչը՛վ ըստօլէն ուտէլի պէնէրը պըրծընում ա* (Զ):

- Չանան պէնու կէնալ - *տե՛ս* Չանան չարխու տինիլ (2):

- Չընին յըրա չանա փըսնէլ/նըստէլ - *արիմ.* Շատ գիրանալ՝ չաղանալ, չաղությունից ծնոտի տակի փափուկ մսերը կախվել: *Էնքան հըպարապ կացալ ա, չընին տակէն չանա յա փըսալ* (Բ):

ՉԱՆԱՂ *(թրք. čanak)* - *գ.* 1. Կավե կամ փայտե խոր աման: *Չանաղը ըլլէրավ լըսնում ա, տամ էտ խը՛ղճ կընգանը* (Զ): 2. Կրիայի եւ այլ կենդանիների ոսկրե ծածկույթը՝ պատյանը: *Կօրուն չանաղը տուս ա օնում, աման շինում* (Զ): 3. Թառի՝ քամանչայի եւ ուռուցիկ մասը: *Թառին չանաղը կօտըրալ ա* (Բ):

ՉԱՆԱԳԸՌԷԼ/ՉԱՆԱԳՈՒԷԼ - *նբ.* Ճանկերով՝ եղունգներով եւն մաշկը քերծել՝ պատռել, ճանկռել: *Կատվէն հանց կըփըռնին, վէր չանագըռէ վէչ* (ԱԲԲ, 43):

ՉԱՆԱԳԸՌՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՉԱՆԱԳԸՌԷԼ-ի:

ՉԱՆԱԳ/ՃԱՆԱԳ *(գրբ. ճանկ, ճանգ)* - *գ.* 1. Գազանների եւ թռչունների (նաեւ մարդկանց) կեռ՝ սրածայր եղունգ, ճիրան, մագիլ: *Ախճիգը ուրխանըմ ա, վը՛ր ուրան ըզադից էտ դօվին ճանգան* (ՀԺՀ, V, 19): 2. Երկաթյա կեռ: *Վը՛խճարը մօրթում ըն, չանգան կախ տամ, մաշկում, խըրավում* (Բ): 3. Կիսալուսնի ծայրերը: *...Լուսնընգին չանգէրը բիդի կըլխըյէր ա. տարէն արաշտ ա ընանկան* (ՆԼՂԺԲ, 37): 4. *տե՛ս* ՀԱՓՈՒՌ (2): *Յէշում ա տը՛սնում պառավը մինակ հօնձ ա անում, զօրքէն հըրաման ա տամ՝ ամմէն մինը մին չանգ հընձի* (ՆԼՂԺԲ, 145):

- Չանգ անէլ - *տե՛ս* Պըլլօր անէլ:

- Չանգէրը սըրէլ - Պատրաստվել հարձակվելու: *Հինչ ը՞ս չանգէրըտ սըրալ, տու կարէլ չըս ընդրա յը՛խնիս* (Բ):

ՉԱՆԳԱԼ *(պրս. čangal, թրք. čengel)* - *գ.* 1. *տե՛ս* ՉԱՆԳ (2): 2. Պատառաքաղ: *Շինացէն վէր չընգալավ հաց կէրավ, տօն չի տը՛ռնալ* (Զ): 3. *տե՛ս* ԿԱՌԹ: 4. Ղարաբաղի կանացի տարազի գլխասարքն ամրացնող ոսկե կամ արծաթե զարդ: *Մէլիքին կընգանը չանգալը կըլխան վէր ա ըղնում, կօրչում* (Զ):

- Չանգալ(ը) քըցիլ - *տե՛ս* Գըրավան քըցիլ:

ՉԱՆԳԻ - *տե՛ս* ԿԸՃԸՊՈՒՆ:

ՉԱՆԳԻԼ/ՃԱՆԳԻԼ - 1. *տե՛ս* ՉԱՆԳԸՌԷԼ: 2. *տե՛ս* ՉԱՆԹԷԼ:

ՉԱՆԳՈՒԷԼ - *տե՛ս* ՉԱՆԳԸՌԷԼ:

ՉԱՆԳՎԻԼ/ՃԱՆԳՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՉԱՆԳԻԼ-ի:

ՉԱՆԹԱ *(պրս., թրք. čanta)* - 1. *գ.* Ուսին գցելու պայուսակ՝ պարկ՝ տոպրակ: *Նըստում ա մին արխու ղըրաղէ, չընթան տուս օնում կընգանը տըրած պարիպասը, սըկսում օտէլը* (ՆԱԲ, 119): 2. *փխբ. ած.* Պոռոտախոս: *Չանթա մարթ ա Ըփկարանց Ալին* (Բ):

- Չանթա տը՛ռնալ - Շատ լայնանալ (շորի մասին): *Էնքան կը՛ցալ ա, դարյան չանթա յա տը՛ռալ* (Բ):

ՉԱՆԹԷԼ - *նբ.* 1. Խլել, հափշտակել, մեկի ձեռքից անսպասելիորեն մի բան վերցնել: *...Մին մը՛ծ ադծիվ դաստի քըշանըմ ա, քարը կըտուցավը չանթըմ, յէտ թըռչըմ...* (ՀԺՀ, V, 184): 2. Արագ ընկալել՝ ըմբռնել: *Շուշանիգը հունչու սըվըրցնում ա, Թափէղը դաստի չանթում ա* (ՆԱԲ, 43): 3. Արագ բռնել: *Չանթում ա, ճըղնան կախ ինում* (Զ):

ՉԱՆԹԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՉԱՆԹԷԼ-ի:

ՉԱՆԻԳ/ՉԱՅՆԻԳ *(ռուս. чайник)* - *գ.* Փոքրիկ ծորակավոր աման՝ թեյի գույնը պատրաստելու համար, թեյնիկ: *Չանիգը պէնում ա, տը՛սնում՝ տէրտակ* (Զ):

ՉԱՆՉ[1] - *տե՛ս* ՊԸԼԼՕՐ (1):

ՉԱՆՉ[2] *(պրս. čunča (խաղողի կորիզ)* - 1. *տե՛ս* ՔԸՆԹԸ՛Ռ(ՆԸ) (1): 2. *տե՛ս* ՋԷՋԱ:

ՉԱՆՉԱԽ *(պրս. čākāčāk, թրք. čakčak (դռան թակիչ)* - *գ.* 1. Ջրաղացի կրիճակին ամրացված ու ծայրով ջրաղացքարի վրա ընկած փայտե շերտիկ, որի ցնցումները հաղորդվում են կրիճակին եւ աղունը դանդաղորեն թափվում է քարի անցքի մեջ: *Չանչախը կօտըրում ա, ճըղասպանը մընամ ա մանալ* (Զ): 2. Փայտե հաստ ցից, որ խրում են գետնի մեջ: *Կամ ա կը՛ըրըզմընօտան մին չանչախ ա տուս օնում, տինում օսէն, ք՛ընում...* (ՀԱԲ, 15, 151): 3. *փխբ.* Շատախոս մարդ: *Էտ չանչախը թօղում չի, թա մին խօսկ էլ մունք ասինք* (Բ):

- Չանչախ կընտըրէլ - Շատախոսել: *Հինչ ը՞ս չանչախ կընտըրալ, խըրէգ խօսէ* (Բ):

ՉԱՆՉԱՆԱ - *տե՛ս* ՉԱՐՉԱՄԲԱ:

ՉԱՆՉԻԼ - 1. *չբ. տե՛ս* Պըլլօր անէլ: 2. *նբ.* Թաթով խփել՝ հարվածել: *Մին յէզան մաշկէ վէր չանչըմ ա, յէզանը մաշկը կօտրըմ ա, յէզանը վէր ա ընգում* (ՀԺՀ, V, 520):

ՉԱՆՉՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՉԱՆՉԻԼ(2)-ի:

ՉԱՆՉՈՒԼ *(պրս. čančul)* - *տե՛ս* ԹԱՆԹՈՒԼ:

ՉԱՆՔ - *տեմ* ՄԸՆՉԱ(Ն)Ք:

ՉԱՇԿԱ *(ռուս. чашка)* - *գ.* 1. Հախճապակյա բաժակ՝ թեյ, սուրճ եւն խմելու համար: *Կամ ա մին չաշկա դափա դէրին ըռաշկէն տինում...* (ԲՀԲ, 184): 2. *փխբ. տեմ* ԹՕՓՈՒԴ:

ՉԱՇԿԱ-ԼՕՇԿԱ *(ռուս. чашка-ложка)* - Գործածվում է կապակցության մեջ:

Չաշկա-լօշկա անել - Սիրային խոսակցություն վարել, սիրաբանել: *Ամ-ը՛ռնը ջանիլ տըղէք՛ըն ա ըխճըկէրքը ք՛ինամ ին էտ բաղէրը, չաշկա-լօշկա անում* (Ձ):

ՉԱՇՄԻՇ - *տեմ* ՉԱՇՄԻՇ:

ՉԱՇՄԻՇ/ՉԱՇՄԻՇ/ՇԱՇՄԻՇ/ՇԱՇՄԻՇ *(թրք. šašmak (ապշած մնալ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Չաշմիշ անել/քըցիլ - Շփոթեցնել, շիվար վիճակի մեջ գցել: *Էտ տըղան ուրանն խուսկէրավը թաքավէրին չաշ-միշ ա քըցում* (Ձ):

- Չաշմիշ ըղնէլ/ինիլ - Շփոթվել, շիվարել: *Դոխտուրը չաշմիշ ա ըղնում, գ՛ուդում չի, թա հինչ անէ* (ԱԱ, 77):

ՉԱՌ/ՉՕՌ *(թրք. čor)* - *գ.* Անասուններ-ի մահացու հիվանդություն: *Չառը ընգալ ա շէնը, հիյվընէն լօխ կըտօրվալ ըն* (Բ):

- Չառը պըկան կէնալ/տանէլ/օնէլ - Այդ հիվանդությամբ վարակվել եւ սատկել՝ մեռնել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Չառը պըկատ կէնա, խէ խուխէս թակում ը՞ս* (Բ):

ՉԱՌԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չառլամիշ ինիլ - *տեմ* Չառը պըկան կէնալ:

ՉԱՍԱՎՕՅ *(ռուս. часовой)* - *տեմ* ՊԱՐԱՎՈՒԼՀԻ: *...Ըսէս ա.- Թաքավէրըն ապրած կէնա, էս քըշէր էլ յը՛ս ըմ ք՛ինական չասավօյ կէնամ* (ՀԺՀ, V, 606):

ՉԱՍ[1] *(ռուս. часть)* - *գ.* Ջորամաս: *Էտ չաստումըն էլ հազգար սալդաթ ա ինում* (Ձ):

ՉԱՍ[2] *(ռուս. часть)* - *տեմ* ՋԱՓ-ՉԱՍ:

ՉԱՎ *(թրք. čav (ձայն)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Չավ անէլ/քըցիլ - Հռչակել, բոլորին ասել, տարածել (լուրը, խոսքը): *...Ինք՛ը կ՛ամ ա ուրանց շէնումը չավ անում, թան.- Կաշին տարալ ըմ վը՛սկավ փօխալ, պէրալ* (ՀԺՀ, V, 305):

- Չավ ըղնէլ/ինիլ/տը՛ռնալ - Հռչակվել, տարածվել (լուրը, խոսքը): ... *Մին խաբար ա չավ ընգնըմ, թան թաքավէրին մադար տըղան ծանդըր հիվանդ ա...* (ՀԺՀ, V, 69):

ՉԱՐ *(գրբ. չար (վատ, չարաչար, անպիտան)* - *ած.* 1. Ոչ բարի, չարիք գործելու հատկություն ունեցող: *Իլալ ա, չիլալ, մին չար պառավ ա իլալ* (ՀԺՀ, V, 615): 2. Չարություն արտահայտող՝ պարունակող: *Չար ծըծաղ օնէ* (Բ): 3. Չարիք ծնող՝ բերող՝ պատճառող: *Չար կօրծան բիդի հը՛ռէ կէնաս* (Բ): 4. Չարաճճի, անհանգիստ: *Չար խօխա յա Յուրան* (Բ): 5. *գ.* Ցավ, հիվանդություն: *Ըշտըղա վէրէ յա, մին չար կ՛ամ ա մըզանա կէնում* (Բ): 6. *ած., մ.* Սաստիկ, շատ: *Խօրանգ՛ը չար աղի յա* (Բ):

- Չար ասթըխու տակէ ծընվէլ - Դժբախտ՝ անհաջողակ լինել: *Արտաշը չար ասթըխու տակէ յա ծընվալ, դանդրէրը շատ ա* (Բ):

- Չար աշկ - Չարագուշակ՝ չարաբեր՝ նախանձկոտ հայացք՝ նայվածք: *Լօխ ըն գ՛ուդում, վէր Իսակը չար աշկ օնէ* (Բ):

- Չար աշկավ յէշիլ - Անբարյացակամորեն՝ նախանձկոտ հայացքով նայել: *Տընաշինըտ ուրան ախպօրըն էլ ա չար աշկավ յէշում* (Ձ):

- Չար աշկ նի կ՛անալ - Չար աչքից վնասվել՝ անհաջողության՝ փորձանքի մեջ ընկնել: *Վէր խօխա վախտը հիվընդընալիս ընք իլալ, այան ըսէլիս ա լալ.- Հանլբանթ չար աշկ ա նի յը՛կալ* (Բ):

- Չարը տանիմ/քաղիմ - *տեմ* Ցավը տանիմ:

- Չար թիլ - Շուտ՝ հեշտությամբ խճճվող թել: *Մին կընծէգ՛ չար թիլ ա տամ, թա.- Ինձը՛տէ գ՛ուլբան կ՛օրծէ* (Ձ):

- Չար թիլ հըլօրէլ - Չարիք նյութել: *Էտքան ամպաթկը մարթ վէչ մին տը՛ղ ինիլ չի. սաղ օրը չար թիլ ա հըլօրում* (Բ):

- Չար լ՛ուզանու - 1. Չարասեր՝ բամբասասեր լեզու: *Կօգ՛ի չար լ՛ուզանու օնէ, ամհա փիս կընէգ՛ չի Մարօն* (Ձ): 2. Չարախոս՝ բամբասկոտ մարդ: *Ամմէն շէնում էլ չար լ՛ուզանու կա* (Բ):

- Չար կըրակէն պատառը - Խիստ չարաճճի (երեխա, մարդ): *Յուկան չար կըրակէն պատառըն ա* (Բ):

ՉԱՐԱՆՁ *(պրս. čerez)* - *գ.* Աղանդեր, չարազ: *Չարանզը հացանը յը՛տը կոտին* (Ձ):

- Չարանզ անէլ - Չարազ ուտել, չարազ ուտելով ժամանակ անցկացնել: *Էտ տըղան ք՛ինըմ ա նօխուդ, չանմինչ առնըմ, ածըմ ջըբէրը, չարանզ ընէլավ ք՛ինըմ...* (ՀԺՀ, VI, 113):

ՉԱՐԲԱՆԴ - *գ.* Երկար մահակ: *Չոբանը վէր չարբանդավը թըխում ա, կ՛ուլը չօքում ա* (Ձ):

ՉԱՐԳ՛ԷՎ/ՉՕՐՔԻՎ - *տեմ* ՉՕՐԷՑ:

ՉԱՐԴ - *տեմ* ՉԱՐԴ:

ՉԱՐԴ/ՉԱՐԴ - *գ.* Վայրի թռչնատեսակ: *Ըտէղ, հուց ա պըտահում, մին չարդ ա փըռնում...* (ԱԱ, 59):

ՉԱՐԴԱԽ *(պրս. čardak (տանիքի վրա չորս կամարով վրան), ռուս. чердак)* - *գ.* 1. Ծածկ, ծածկված տեղ: *Թաքավէրըն ու թաքուտին տըղտօղում ըն, մին թանիրավ ուրանց քըցում չարդախը* (Ձ): 2. Հյուղակ, քողտիկ: *Մին չարդախ ըն շինում, մաչին ապրում* (Ձ): 3. *փխբ.* Դեզ (հիմնականում խոտի): *Կատուն նի յա մընում խօտէն չարդախը, վէր մըրսէ վէչ* (Ձ):

- Չարդախ անէլ - *տեմ* Կ՛ը՛վաթ անէլ:

ՉԱՐԴՕՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չարդօշ անէլ - *տեմ* Կ՛ը՛վաթ անէլ:

ՉԱՐԷԽ/ՉԱՐՈՒԽ/ՉԱՐՕԽ *(պրս. čaroğ, թրք. čarik)* - *տեմ* ՏԸՐԸ՛Խ:

ՉԱՐԷՔ՝ *(պրս. čaryak, թրք. čaryek)* - *գ.* Քառորդ մաս, քառորդ: *Ծօրը շընօրքէն չարէք՛ըն էլ չի* (Ձ):

ՉԱՐԽ *(պրս. čarx, թրք. čark)* - *գ.* 1. Իր առանցքի շուրջը պտտվող անիվ: *Ճանրը տանում ա էս կընգանը, մի ճըղացու չընրխու տէմ անում* (ՆԱԲ, 15, 57): 2. Կտրող գործիքներ սրելու հարմարանք: *Տինընկնէն չարխավ սըրում ա* (Բ): 3. *փխբ.* Բախտ: *Մէր չարխը շօռ ա յը՛կալ, մունք բախտ չօնինք՛* (Բ):

- Չարխ անէլ - Տնկել, ցցել: *Էք՛սը կ՛ամ ըն տը՛սնում՝ արտը հընձանծ, կալ՛ը քընցած, ցօրէնը թակած, մին թէ էլ մաչին չարխ ընրած* (ՀԺՀ, VI, 145):

- Չարխը ծընվէլ - Բախտը երես թեքել, անհաջողության մեջ ընկնել: *Խը՛ղճը հինչ ա՞նէ, չարխը ծընվալ ա* (Ձ):

- Չարխ(ու) տալ - Չորս կողմը պտտվել: *Ըշտը՛ղ խընրաված ըն անում, Բափկէնը ք՛ինամ ա չարխու տամ* (Բ):

ՉԱՐԽԷԼ - *նբ.* Չարխով սրել: *Իփանծ տակ, չարխած տէնակ* (ԱՀ, 38):

- Չարխած պահէլ - Ամեն ինչ տեղը տեղին պահել, ընթացքին հետեւել: *Կուճուր հարթնը տօնը չարխած ար պահում* (Ձ):

ՉԱՐԽ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՉԱՐԽԷԼ-ի:

ՉԱՐԽԻ - *ած.* Տեղը տեղին, անթերի: *Չարխի կօրծ ա* (Բ):

ՉԱՐՂԱԹ - *գ.* Մետաքսյա գլխաշոր՝ քող: *Չարղաթը քընցում ա կըլխէն, տուս կ՛ամ* (Ձ):

ՉԱՐՉԱՄԲԱ/ՉԱՆՉԱՆԱ - *գ.* 1. Մշուշ, մառախուղ: *Ախէր տը՛սած բիդիք՛, վէր գ՛իդաք, թա հինչ շընանա ա իլալ Շուշի-Ղալան, էն չանչամբա կալ՛ած Լօնդօնը հինչ ա՞ ընդրրա քընշտին...* (ՀԺՀ, V, 686): 2. *փխբ.* Չար՝ խարդախ գործեր, չարություն, խարդախություն: *Ընդրրա ընրածը սաղ չանչամբա յա* (Բ): 3. *տեմ* ՉԱՐ (4):

ՉԱՐ-ՉԱՐ *(գրբ. չարաչար (խիստ վատ, վատ կերպով, սոսկալի)* - 1. *ած.*

Շատ չար՝ չարաճճի: *Չար-չար խօխէնք՛ ըն* (Բ): 2. *ած., մ.* Սաստիկ, չափազանց: *Խօրանգ՛ը չար-չար աղավ ա ըրալ* (Ձ):

ՉՆՐՉԸՎԱ - *տե՛ս* ՉՆՐՉԻՎԱ:

ՉԱՐՉԻ - *տե՛ս* ՉՆՐՉԻ:

ՉՆՐՉԻ/ՉԱՐՉԻ *(պրս. čarči)* - *գ.* 1. Շրջիկ մանրավաճառ, փերեզակ: *Մին չարչի ք՛ինայիս պըտահում ա ըդվէսին...* (ՀԱԲ, 15, 133): 2. *փխբ.* Գծուծ՝ մանր բաների ետեւից ընկնող մարդ: *Գուգին էլ հօ տըղամարթ չի՞, չարչի յա* (Բ):

- Չանչին բազար - Խառնաշփոթ տեղ: *Էս էլ հօ ժողով չի՞, չանչին բազար ա* (Ձ):

- Չանչին էշը շինիլ - Շատ գովել: *Հինչ ը՞ս չանչին էշը շինանլ, մին ա, վէշ մինը հըվատում չի* (Բ):

ՉՆՐՉԻՎԱ/ՉՆՐՉԸՎԱ/ՉՆՐՉՆԻՎԱ *(թրք. čerčeve)* - *գ.* Դռան՝ պատուհանի շրջանակ: *Մինը յէր կինի չանչիվին կը-լօխը, մինը՝ տակը, վէր տին կ՛ա, թըխին ըսպանին* (ՀԲ, 346):

ՉՆՐՉՆԻՎԱ - *տե՛ս* ՉՆՐՉԻՎԱ:

ՉԱՐՉՕԹՈՒՆ - *տե՛ս* ՉՆՐՉՕԹՈՒՆ:

ՉՆՐՉՕԹՈՒՆ/ՉԱՐՉՕԹՈՒՆ - *գ.* 1. Չարչի լինելը, չարչու զբաղմունքը: *Չանչօթունը էլ ա հացա մօտէ փէշանկ* (Ձ): 2. *փխբ.* Գծուծ լինելը, մանրախնդրություն: *Տըղամարթը վէր չանչօթուն ը-րավ, էլ հինչ տըղամարթ* (Բ):

ՉԱՐՍԱՎ *(թրք. čarsaf)* - 1. *տե՛ս* ՊԸ-ՐԱՍՏԻՆ: 2. *տե՛ս* ՉԱՆՐԻ:

ՉԱՐՎԱԴԱՐ *(պրս. čārvā (չորքոտանի) + dār (պահող)* - *գ.* Ձիապան՝ ուղտապան՝ ջորեպան, որ իր ձին՝ ուղտը՝ ջորին վարձով է տալիս կամ դրանցով վարձով բեռներ է փոխադրում: *Էս չարվադարը մըռնէլիս վախտը խընթրում ա, վը՛ր ին՛ան կօշտը պիրին ին՛ան նանռ օղտը* (ՀԺՀ, VI, 212):

ՉԱՐՈՒԹՆԻՆ - *տե՛ս* ՉԸՐՕԹՈՒՆ:

ՉԱՐՈՒԽ - *տե՛ս* ՉԱՐԷԽ:

ՉԱՐՔ *(գրբ. չարն (սատանա)* - *գ.* Երեւակայական չար էակ, քաջք, սատանա: *Ասում ըն՝ էտ խօր ծօրին՛ումը չարքէր ըն իլանլ ըպրէլիս* (Ձ):

ՉԱՐՔԱԾ - *ած.* 1. Ջրկանքներ՝ նեղություններ՝ դժվարություններ կրած՝ կրող: *Չարքաշ մարթ ա Սումբաթը* (Բ): 2. Ջրկանքներով՝ նեղություններով՝ դժվարություններով լի, տառապալից: *Կըռվէն վախտը մէր գ՛անքը չարքաշ գ՛անք ա իլանլ* (Բ):

ՉԱՐՕԽ - *տե՛ս* ՉԱՐԷԽ:

ՉԱՓ[1] *(գրբ. չափ)* - *գ.* 1. *տե՛ս* ՉԱՓԱ: 2. Որեւէ աման՝ անոթ եւն՝ որեւէ բան չափելու՝ կշռելու եւն համար: *Քընում ա, ասում.- Թաքավէրընն ապրած կէնա, ծէր չափը տօք, տանիմ Չանչախ թաքավէրէն վը՛սկէն չափինք՛* (ՀԺՀ, V, 627): 3. Սահման, որեւէ բանի ընդունված նորմա: *Չուբանէն շընօրքէն չափըն էլ էտ ա, լի՞* (Ձ): 4. Գնահատման՝ որակման եւն չափանիշ: *Լօխճին ին՛ան չափավընն ա չափում* (Ձ): 5. *տե՛ս* ՄԸՆՉԱՆՔ (3):

- Չափ անէլ - Ամանը բերնեբերան լցնել: *Վէդրան իլլէրավ չափ ա անում, տամ ըգ՛օղէն* (Ձ):

- Չափը ընցընէլ/անց կէնալ - Պատշաճ սահմանից դուրս գալ, կարգը խախտել, ծայրահեղության հասնել: *Մարթը վէր տը՛սնում ա՝ ին՛ան կընէգ՛ը չափը ընցընում ա, կըզնըվում ա, տանան տին՛ քընցին՛ում* (Ձ):

- Չափը ճընանչիլ - Իր վիճակին՝ դիրքին՝ հեղինակությանը եւն համապատասխան պահել իրեն: *Վէր ամմէն մարթ ին՛ան չափը ճընանչի, աշխարքը կընդ՛ունգվի* (Բ):

- Չափ ընգած ծի - Այս ու այն կողմ ընկնող, անհանգիստ: *Չափ ընգած ծի յը՞ս, խէ տը՛ղըտ նըստում չը՞ս* (Բ):

- Չափ թօղնէլ/տալ/քընցիլ - Արշավասույր վազեցնել: *Քաչալը նըստում ա ծին, չափ քընցին՛ում, վէսկէն էլ, թանք՛էն կապած, հանում ին՛ան՛նց շէնը* (ՀԺՀ, VII, 390):

ՉԱՓ[2] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Չափ ըղնէլ - 1. Արշավասույր վազել: *Ծին չափ ա ըղնում, մին մունուտումը ըտըրան հըսցընում տօն* (Ձ): 2. Արագորեն աշխատել՝ որեւէ բան անել: *Ծնն ընօղնէն չափ ըն ըղնում, մինչը՛վ քըսօր սաղ արտը հընանին՛ում* (Ձ):

ՉԱՓ *(թրք. čēp)* - 1. *ած.* Շեղ, ծուռ: *Չանչ վը՛ննէր օնէ* (Բ): 2. *մ.* Շեղակի, շեղ դիրքով՝ ուղղությամբ: *Ուստան հանրփին՛ում ա, պատը չանչ շարում* (Ձ):

- Չանչ ըղնէլ - Հակառակվել: *Ըտի թաքավէրը վէգիրին նըհը՛տ չանչ ա ըղնում* (Ձ):

- Չանչին թըխէլ - Մեկին զրպարտել: *Շէնումը հիշկան ջանիլ ախճիգ՛ կա, Թամարան լօխճին չանչին թըխալ ա* (Բ):

ՉԱՓԱԳԻ - *տե՛ս* ՉԱՓԱՆԻ:

ՉԱՓԱՂՈՒՋ - *տե՛ս* ՉԱՓ:

ՉԱՓԱԾ-ԾԻՎԱԾ - *ած., մ.* Ճիշտ, պետք եղած մեծությամբ, ճիշտ որոշված, տեղը տեղին: *Էս աթաղան-բաբաղան ասված խօսքէրը ասիս չափածծիված ըստըռնան յէրա ինի ասված* (ՋՏ, Ա, 128):

ՉԱՓԱԾ-ԿԸՏԸՐԱԾ - *տե՛ս* ՉԱՓԱԾ-ԾԻՎԱԾ:

ՉԱՓԱՆԻ/ՉԱՓԱԳԻ - *տե՛ս* ՉԱՓ:

ՉԱՓԱՋԱՂ *(թրք. čapacaq)* - 1. *գ.* Կացնանման հարմարանք՝ ոսկրոտ միս կտրելու համար: *Չափաջաղավը վէր թըխում ա, ըտըրա կըլ՛օխը մաչան կէս ա տը՛ռնում* (Ձ): 2. *տե՛ս* ՄԸՍԸԹԱԿԷ:

ՉԱՓԱՎ - *ած., մ.* Անհրաժեշտ չափով, չափավոր: *Ամմէն հինչ չափավ բիդի անիս, վէր Ըստուծու լ՛ավ թըվա* (Բ):

ՉԱՓԱՐ *(գրբ. չափար (բակ), պրս. čapar)* - *գ.* Պարտեզների՝ բակերի եւն ցանկապատ: *Ավէտիսը էտ պը՛ցուր չըփարավը պըցրանընում ա, նի մընընում հաղուղին բաղը* (ՀԺՀ, V, 128):

- Չափար անէլ - *տե՛ս* ՉԸՓԱՐԷԼ:

- Չափարը ճըմօռէլ/ճըղէլ - *տե՛ս* Չափը ընցընէլ (ՉԱՓ[2]-ի տակ):

- Չըփարավ ընգած լօկ - Անշարժունակ՝ թմրած՝ ծույլ մարդ: *Էտ չըփարավ ընգած լօկը բաշիր չի անում, թա լ՛ըհա փիչը նի կըցընէ, թըքանա* (Բ):

- Չըփարու պիհիր - *տե՛ս* Չըփարավ ընգած լօկ:

ՉԱՓԱՐԱԽ - *տե՛ս* ՉԸՓԸՐԱՂ:

ՉԱՓԱՐԱՂ - *տե՛ս* ՉԸՓԸՐԱՂ:

ՉԱՓԱՐՓՈՒԼԻ - *գ.* Գյուղացու հարկատեսակ: *Առաչ շինանցէք՛ չափարփուլի էլ ըն իլանլ տաս* (Ձ):

ՉԱՓԱՔ՛Ի *(թրք. čəpkəi)* - *տե՛ս* ՍԻԼԼԱ[1]: *...Մին լանվ չանփանք՛ի տըրաքից իրէսիս. - Քէզ ասըմ ըմ՝ յէր յէկ, քանի թակ չըս կէրալ...* (ՋՏ, Բ, 3):

ՉԱՓԷԼ *(գրբ. չափեմ)* - *նբ.* 1. Մի բանի մեծությունը որոշել չափի որեւէ միավորով: *Վը՛ղը չափում ըն, պիժը՛նում ժուղուվուրթէն* (Ձ): 2. Պարապ-սարապ ման գալ, թափառել: *Խալխը կօրծ ըն անում, Սէտրակըն էլ հըպարապ ըստը՛ղէրք չափում ա* (Ձ): 3. *փխբ.* Տնտղել, զննել: *Թաքավէրը աշկէն տակավը յէշում ա, էտ տըղէն մին լ՛ավ չափում* (Ձ):

ՉԱՓԷԼ-ԾԻՎԻԼ - *նբ.* Կշռադատել, խորապես՝ հանգամանորեն մտածել: *Հանը ասմա.- Հինչը անիս, չափէ-ծի՛վի, յը՛տնան ըրա՛* (Ձ):

ՉԱՓԷԼ-ԿԸՏԸՐԷԼ - *տե՛ս* ՉԱՓԷԼ-ԾԻՎԻԼ:

ՉԱՓԻՉ - *տե՛ս* ՉԱՓՈՒՃ:

ՉԱՓՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չանփմիշ անէլ - Հարձակվել, արշավել: *Քանի՞, քանի՞ հէտ մէր շընհարնէն վէր ա կօխալ, չանփմիշ ըրալ, տանէլին տարալ, չընտանէլին կընրակի ռէխ տըվալ...* (ՋՏ, Բ, 210):

ՉԱՓ-ՉԱՓ/ՉԸՓԸՉԱՓ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չափ-չափ անէլ - 1. Շատ անգամ կամ շատ բաներ չափել: *Կընտորը չափչափ ա անում, տանրսում* (Ձ): 2. Պարապ-սարապ թափառել: *Էտ տըղան կօրծ չի անում, սաղ օրը էն ա չափ-չափ ընէս* (Բ):

ՉԱ̈ՓՌԱ̈Ճ/ՉԱ̈ՓՌԱ̈ՍՏ *(պրս. čeprast (խաչաձեւող), թրք. čapraz)* - *տե՛ս* ՉԸՌԸ-ՉԱ̈ՓՌԱ̈Ճ:

ՉԱ̈ՓՌԱ̈ՍՏ - *տե՛ս* ՉԱ̈ՓՌԱ̈Ճ:

ՉԱՓՍ *(գրբ. չափ)* - *գ.* Որեւէ բանի չափերը որոշող տվյալների ամբողջությունը՝ մեծությունը՝ չափման միավորը: *Թաքավէրին ախճիգ'ը տանըմ ա դա̈մո̈ւրչուն զակազ տամ, վըէր էտ չափսավը մին պըլա̈նի շինի* (ՅԺՅ, V, 129):

- Չափսէրը յըէր օնէլ - Որեւէ բանի չափերի տվյալները որոշել՝ վերցնել: *Դա̈րզին Ծիլկանէն չափսէրը յըէր ա օնում, մին լ'ավ պէնջակ կարում* (Զ):

- Չափսումը կ'ա̈լ - Որոշակի չափի համապատասխանել: *Էշին փալանը չափում ա, տըէսնում չափսումը կ'ա̈մ չի* (Զ):

ՉԱՓՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՉԱՓԷԼ-ի:

ՉԱ̈ՓՎԷԼ - *չբ. տե՛ս* Չա̈փ ըղնէլ:

ՉԱ̈ՓՈ̈ՒՃ/ՉԱ̈ՓԻՉ *(թրք. čepič)* - *գ.* Դեռեւս չծնած մատաղ այծ: *Չա̈փո̈ւճը մօրթում ըն, ք'ըէփ անում* (Զ):

ՉԱ̈Ք' - *գ.* Գզրարի թակ: *Կ'իզրա̈րը առանց չա̈ք' կարէլ չի կօրծ անէ* (Զ):

ՉԱ̈Ք'Ա̈ՐԱ̈Ք' - *տե՛ս* ՅԸԹԸՅԱԹ:

ՉԱ̈Ք'ՄԱ̈ *(թրք. čekme)* - *գ.* Երկարաճիտ կոշիկ: *Էս Կարա վա̈զիրը ք'ընում ա չըք'մա̈վը տըռանը քացի տամ...* (ՅԱԲ, 15, 108):

ՉԱ̈Ք'ՄԱ̈ՉԻ *(ադրբ. çəkməçi)* - *տե՛ս* ՍԱՊՕԺՆԻԿ':

ՉԱ̈ՔՄԱ̈ՉՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԱՊՕԺՆԻԿ'ՕԹՈՒՆ:

ՉԱ̈Ք'Ո̈ՒՃ/ՉԱ̈Ք'Ո̈ՒՉ *(թրք. čekig)* - *գ.* Մուրճ: *Ապան մին կարմունջ ա շինա̈լ, վէ՛չ փա̈դ օնէ, վէ՛չ չա̈ք'ո̈ւճ* (ԱՅ, 28):

- Չըք'ո̈ւճա̈վ կըլխէն թըխած/զարկած - Շփոթված, շշմած: *Չըք'ո̈ւճա̈վ կըլխէտ թըխած ա՞, խէ օշըտ կըլօխըտ չը՞ս հըվաքում*:

- Չա̈ք'ո̈ւճ տըէռնալ - Խստություն ցուցաբերել, մեկի նկատմամբ խստաբարո լինել: *Նախագան հö̈նձ ընօղնէրէն յըրա չա̈ք'ո̈ւճ ա տըէռալ* (Զ):

ՉԱ̈Ք'Ո̈ՒՉ - *տե՛ս* ՉԱ̈Ք'Ո̈ՒՃ:

ՉԷ/ՉԻ *(գրբ. չէ)* - 1. Է էական կամ օժանդակ բայի ժխտական ձեւը: *...Օզում ա գ'իդա̈[a] էտ մարթը սաղ ա՞, թա՝չէ, ամհա կարում չի* (Զ): 2. *վ.* Գործածվում է իբրեւ ժխտման պատասխանական բառ՝ ոչ: *Էտ մարթը թա.- Չէ՛, յէս թայդի յըմ, Աստուծ ինձ բախտ ա տուվալ, ք'ինա̈մ ըմ* (ՅԺՅ, VII, 373):

- Չէ ասէլ - Մերժել, մեկի առաջարկը՝ խնդրանքը չընդունել, խոսք չտալ: *Էտ կընէգ'ը չէ յա ասում, թաքավէրը կըտաղում ա, ըսպանէլ տամ* (Զ):

- Չէ մի - *տե՛ս* ՉԸՉԷՄԻՆ:

- Չէ մի՝ պօզ'էր/փըրթա̈ծ մածուն՝ քըթö̈լը մաչին տընգած - *տե՛ս* Է՞լ հինչ կօզ'իս:

- Չէ վէր չէ - Բոլորովին ոչ, ոչ մի դեպքում, լինելու բան չէ: *Պիծի ախպէրըն ասալ ա.- Չէ վըէր չէ, վըէր իմ հա̈րըն ասալ ա, տալ պիտիմ* (ՅԺՅ, VI, 37):

ՉԷԹ/ՉԷՏ - *գ.* 1. *տե՛ս* ՉԱՐԷՔ': *Խէլո̈ւնք ախպէրը պիրալ ա շարալ, մին չէթի տէղ պակաս ա մընացալ* (ՅԺՅ, VII, 699): 2. *փխբ.* Փուչ՝ դատարկ բան: *Էտ ըրըծնէտ սաղ չէթ ա* (Բ): 3. *փխբ.* Գրոշ, չնչին գումար: *Մին չէթ էլ չի տամ կընգանը* (Բ):

- Չէթ կապէկ (էլ) չա̈ժի - *տե՛ս* Քօռ կապէկ (էլ) չա̈ժի:

- Չէթ կապէկ չինիլ - *տե՛ս* Քօռ կապէկ չինիլ:

ՉԷԹՎԷՌ/ՉԷԹՎԷՐ/ՉԷՏՎԷՌ/ՉԷՏՎԷՐ *(ռուս. четверть (քառորդ)* - *գ.* 1. Տարողության չափ, որ հավասար է չորս լիտրի: *...Մին վըխճարու շախկա յա ինք' օնում, նըհըէտըն էլ մին քանի չէթվէռ կ'ինի, ղարկում տօն...* (ՅԺՅ, VII, 308): 2. Այդպիսի տարողությամբ աման՝ շիշ: *Չէթվէռը կ'ինավ լըսնում ա, տամ ախպօրը* (Բ):

ՉԷԹՎԷՐ - *տե՛ս* ՉԷԹՎԷՌ:

ՉԷԼԱ̈(ՆԸ)/ՉԷԼԸ/ՉԸՔՕՐԱՆԸ/ՉԸՔԷԼԱ̈ՆԸ/ՉԸՔԷՐԱՆԸ/ՉՕՐԱՆԸ/ՉԸՔԱՆՑ/ՉԷՐԸ/ՉՈՒՐՈ̈Ւ/ՉՕՐԸ/ՉԸՐՈՒ - *տե՛ս* ՄԻՆՉԸԷՎ:

ՉԷԼԸ - *տե՛ս* ՉԷԼԱ̈(ՆԸ):

ՉԷՄՈՒՉՈՒՄ - *գ.* Առերես՝ ձեւականորեն հրաժարվելը՝ մերժելը, նազ անելը: *Ըտըրա չէմուչումէն մըհալ չըն քըցո̈ւմ* (Զ):

- Չէմուչում անէլ - Առերես հրաժարվել՝ մերժել, նազ անել: *Օց թաքավըէրը մըխրէ չէմուչում ա անում, վէրչումըն էլ թա.- Վըէր ասալ ըս, պիտի ք'էզ տամ* (ՅԺՅ, VII, 94):

ՉԷՇՄԱԿ/ՉԸԷՇՄԱԿ *(պրս. češmek)* - *գ.* Ակնոց: *...Մի կանանչ չէշմակ ինք' կա̈լա̈վ, տիրավ էշին ըշկէրէն, տէրմանը տիրա̈վ ըռաշկէն* (ՅԲ, 349):

ՉԷՇՆԱ/ՉԷՇՆԱ̈ *(պրս. čašni, թրք. češni (ճաշակ, նմուշ)* - *տե՛ս* ԸՐԷՆԱԿ:

ՉԷՇՆԱ̈ - *տե՛ս* ՉԷՇՆԱ:

ՉԷՉ - *տե՛ս* ՉԻՉ:

ՉԷՉԷՄԻՆ - *տե՛ս* ՉԸՉԷՄԻՆ:

ՉԷՉՈՒՏ - *տե՛ս* ՉԻՉՈՒՏ:

ՉԷՉՕՏ - *տե՛ս* ՉԻՉՈՒՏ:

ՉԷՊՉԻԿ' - *տե՛ս* ՉԷՓՉԻԿ':

ՉԷՍՏ *(ռուս. честь (պատիվ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Չէստ տալ - 1. Զինվորական պատվի կեցվածք ընդունելով՝ բարձրաստիճան անձանց, հրամանատարներին եւն մեծարանքով ողջունել: *Կամանդիրը վէր նի յա մընում, սըլդըթնէն չէստ ըն տամ* (Զ): 2. Մեկին կուրորեն ենթարկվել՝ մեծարել, նրա ասածներն անմիջապես անել: *Կընէգ'ը հինչը ասում ար, մարթը չէստ ար տամ* (Զ):

ՉԷՏ - *տե՛ս* ՉԷԹ:

ՉԷՏՎԷՌ - *տե՛ս* ՉԷԹՎԷՌ:

ՉԷՏՎԷՐ - *տե՛ս* ՉԷԹՎԷՌ:

ՉԷՐԷՇՉՈՒՐ - *տե՛ս* ՉԷՐԷՇՉՈ̈ՒՐ:

ՉԷՐԷՇՉՈ̈ՒՐ/ՉԷՐԷՇՉՈՒՐ *(ռուս. чересчур)* - *մ.* Չափից դուրս, չափազանց: *Ասում ըն ըստըէղ առաչ մին կընէգ' ա իլա̈լ՝չէրէշչուր պարի...* (ԱԱ, 33):

ՉԷՐԸ - *տե՛ս* ՉԷԼԱ̈(ՆԸ):

ՉԷՐՎՕՆ *(ռուս. червон)* - *գ.* 1.Մաքուր ոսկի: *Չէրվօն ա ինք' օնում, կըռքընէն լօխ վըէսկէ քըցո̈ւմ* (Զ): 2. Հին Ռուսաստանում հինգ կամ տասը ռուբլիանոց ոսկեդրամ: *Մին չէրվօն ա տամ, էտ կ'ումաշը ինք' օնում* (Զ):

ՉԷՐՎՕՆԷՑ *(ռուս. червонец)* - *տե՛ս* ՉԷՐՎՕՆ (2):

ՉԷՐՎՕՆՆԻ *(ռուս. червонный)* - *ած.* Մաքուր ոսկուց պատրաստած: *Չէրվօննի մուտանաւն կուրցընում ա, ըսքըսում լա̈ց ինիլը* (Զ):

ՉԷՐՔ'ԷՔԿԱ - *գ.* Տղամարդու երկար, մեջքի շրջանում փոթեր ունեցող զգեստ, որ հագնում են կովկասյան լեռնականները: *Մարթըն էլ ք'ինա̈մ ա ո̈ւրա̈ն հէտէ լա̈վ շö̈րըէր, լա̈վ չէրք'էզկա, փափաղ ինք' օնում, կ'ամ տօն* (ՅԺՅ, VII, 285):

ՉԷՓՉԻԿ'/ՉԷՊՉԻԿ' - *գ.* Կանացի եւ մանկական թասակ՝ գլխադիր: *Խուխէն հըէտէ մին չէփչիգ' ըմ ինք' կալա̈լ* (Բ):

ՉԷՔ'Ո̈ՒԼ/ՉՕ̈Ք'Ո̈ՒԼ *(թրք. čəkil)* - *գ.* Փշոտ թփաբույս, մացառ: *Մին չէք'ո̈ւլ ա կըտըրում, շըլակում, կ'ամ տօն* (Զ):

ՉԸԲՈՒԽ/ՉԻԲՈՒԽ/ՉՈՒԲՈՒԽ *(ռուս. чубук, թրք. čbuk)* - *գ.* Ծխափող, ծխամորճ: *Էտ սալդաթը իսկի մըհալ չի տինո̈ւմ, չուբուխը ծիք' տալավ ք'ինո̈ւմ ա* (ՅԺՅ, V, 648):

- Չըբուխէն պօղ տինիլ - *տե՛ս* Յացէն յըէղ քըսէլ:

ՉԸԲՈՒՆԽԱ̈ՓԻ/ՉՈՒԲԸՆԽԱ̈ՓԻ/ՉՈՒԲՈՒՆԽԱ̈ՓԻ/ՉՕԲԱՆԽԱ̈ՓԻ - *գ.* Ճնճղազգիների ընտանիքին պատկանող երգեցիկ թռչուն, արտույտ: *Մէր հընդէրումը չըբունխա̈փի շատ կա* (Բ):

ՉԸԲՈՒՆՎԱՉԻ/ՉՈՒԲԸՆՎԱՉԻ/ՉՈՒԲՈՒՆՎԱՉԻ/ՉՕԲԱՆՎԱՉԻ - *տե՛ս* ՉԸԲՈՒՆՎԱՐԻ:

ՉԸԲՈՒՆՎԱՐԻ/ՉՈՒԲԸՆՎԱՐԻ/ՉՈՒԲՈՒՆՎԱՐԻ/ՉՕԲԱՆՎԱՐԻ - *ած., մ.* 1. Չոբանի նման: *Էտ խօխան հանց չուբընվարի վըխճըրնէն քըշո̈ւմ ա, մընամ ըս մաթ մընացած* (Բ): 2. *փխբ.* Կոպիտ,

գռեհիկ, կոպտաբարո, գռեհկաբար: *Չը-բունվարի յա կօրծ անըմ* (Բ):

ՉԸԲՈՒՆՕԹՈՒՆ/ՉՈՒԲԸՆՕԹՈՒՆ/ՉՕԲԱՆՕԹՈՒՆ - *գ.* 1. Չոբան լինելը, չոբանի զբաղմունքը: *Չըբունօթունը հիշտ փէշակ չի* (Բ): 2. *փխբ.* Գռեհիկ՝ կոպիտ արարք, գռեհկություն, կոպտություն: *Ասում ա.- Ըրածըտ չըբունօթուն ա, նըհախ տը՛ղան թանրիփ մէ՛լ անէլ* (Ձ):

ՉԸԳԻՈՂԼԸՎ - *մ.* Անգիտակցաբար: *Մին օր էլ չգ՛իդալավ մին քար ա յօր օնըմ, թող անըմ* (ՀԺՀ, V, 60):

ՉԸԳԻՈՂԼԸՒՔ - *տե՛ս* ՉԸԳԻՈՂԼԸՎ:

ՉԸԳԻԹԿ - *տե՛ս* ՉԸԳԻՈՂԼԸՎ:

ՉԸՂԸՐ/ՉԻՂԸՐ - *գ.* Ոտքերը կապելու թոկ՝ շղթա, ոտնակապ: *Չըդարը քըցիում ա էշին վը՛ննէրը, պէց թօղում* (Ձ):

ՉԸՂԸՐԻԼ/ՉԻՂԸՐԻԼ - *նբ.* Ոտնակապով ոտքերը կապել: *Կամ ըն, տը՛սնում մին չիդարած ծի ըտը՛ղ ըրածում ա* (Ձ):

- Չըդարած էշ - Տխմար՝ անհասկացող մարդ: *Հանդօն էլ հօ մարթ չի՞, չըդարած էշ ա* (Բ):

- Չըդարած հավ - Անշարժունակ՝ թմրած՝ ծույլ մարդ: *Իզէն հինչ հա՞ղթը, չըդարած հավ ա* (Բ):

ՉԸՂԸՐՎԻԼ/ՉԻՂԸՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՉԸՂԸՐԻԼ-ի:

ՉԸՂԸԼՀԱՂԴԻ/ՉԸՂԸՐՀԱՂԴԻ/ՉԸՂԸԼՀԱՂԴԻ/ՉԸՂԸՐՀԱՂԴԻ - *տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ:

ՉԸՂԸՐՀԱՂԴԻ - *տե՛ս* ՉԸՂԸԼՀԱՂԴԻ:

ՉԸ՝ՇՄԱԿ - *տե՛ս* ՉԷՇՄԱԿ:

ՉԸԹԱՂԿԷ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼԻ:

ՉԸԹԱՂՈՒԿ - *տե՛ս* ՇԱՎԹԱԼ (հատկապես այն տեսակը, որ հնարավոր է կիսել եւ կորիզը հանել):

ՉԸԹԸ՝ՂԱՆ/ՉԻԹԸ՝ՂԱՆ - *գ., հվք.* Չթից պատրաստված՝ կարված շորեր: *Չըթը՛ղան ա ինք՛ օնում, դարկում մօրը հը՛տէ* (Ձ):

ՉԸԹԸՆԱԼԻ/ՉԻԹԸՆԱԼԻ - *ած.* Մեջը շատ *չանան* խառնած, մեջի *չանանը* շատ (աղանձի մասին): *Այան միշտ չըթընալի դանձատ ա իլալ ընէս մըզը՛տէ* (Բ):

ՉԸԹԸԼԱԿՎԷԼ - *չբ.* Կենակցել (կենդանիների՝ սողունների մասին): *Օվչի Փիրումէն նամուսը յօր չօնում, վար էն դաշանգ՛ օցէն նըհէտ կ՛էշը չըթըլակվալ ա* (ՆԼՂԺԲ, 10):

ՉԸԹԸԼԸԿՕՏԷԼ - *տե՛ս* ՉԱԹԷԼ (շատ բան կամ շատ անգամ):

ՉԸԹԸԼԸԿՕՏՎԷԼ[1] - *կբ. եւ չբ.* ՉԸԹԸԼԸԿՕՏԷԼ-ի:

ՉԸԹԸԼԸԿՕՏՎԷԼ[2] - *տե՛ս* ՉԸԹԸԼԱԿՎԷԼ (շատերը կամ շատ անգամ):

ՉԸԹԸՐՈՒՔԹԷՎԻԼ - *չբ.* 1. Նոր աճած կանաչեղենի չորրորդ թեւերը՝ տերեւները դուրս գալ: *Կուտէմնը չըթըրուքթէվալ ա* (Բ): 2. *տե՛ս* ԻՐԸՔԹԷՎԻԼ (2):

ՉԸԹԻ/ՉԻԹԻ - *ած.* Չթից պատրաստված՝ կարված: *Էտ իրէք մանէթին տէս-տէն ա ինք՛ օնում, մին հըմբալու մաշկէ տինանում՝ մին մէծ չըթի յալլէխում կապած* (ԲՀԲ, 44):

ՉԸԼԱ - *տե՛ս* ՉԸԼԱ՝:

ՉԸԼԱ՝/ՉԸԼԱ/ՉԻԼԱ՝ *(պրս., թրք. čila (պահեցողություն)* - *գ.* 1. Նորընծա քահանաների քառասնօրյա պահեցողություն: *Դէ դէրընն էլ էն ա չըլա յա պահում, տանուս չի կ՛ամ շինամաչ* (Ձ): 2. Արջերի՝ օձերի եւն ձմռանը երկար ու խոր քուն մտնելը: *Ծըմը՛ռնը վէ՛չ արչ կըտը՛սնաս, վէ՛չ օխծ, լօխ չըլա յըն նի մըտալ* (Ձ):

ՉԸԼԱԾ - *տե՛ս* ՉԻԼԱԾ:

ՉԸԼԱԾԸ՝Տ - *գ.* Խատուտիկ փոքրիկ թռչնատեսակ: *Մինակ մարդիմազար մարթը չըլածը՛տ կըսպանէ* (Բ):

ՉԸԼԱՆԱԼ - *տե՛ս* ՉԸԼԷԼ:

ՉԸԼԱՇԿ - *ած.* Կապտականաչավուն աչքեր ունեցող: *Չըլաշկ մարթը ժանլիգ՛ կինի* (Բ):

ՉԸԼԱՎԸ՝Ղ - *գ.* Կապտամոխրագույն հող: *Չըլըվը՛ղումը բօստան չի տը՛ռնալ* (Բ):

ՉԸԼԱՔ՝Ի - *գ.* Թոնրից հանած փքած հաց: *Էտ չըլաք՛ին տամ ըն հաց թըխողէն, հըղէ տինանում* (Ձ):

ՉԸԼԳԸՐ - *տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ:

ՉԸԼԳԸՐԱՆԱԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐԱՆԱԼ:

ՉԸԼԳԸՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՑ(Ը)ՆԷԼ:

ՉԸԼԳԸՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՕԹՈՒՆ:

ՉԸԼԷԼ - *չբ.* 1. Ալեխառն դառնալ (մազերը): *Ափօն, մազ՛էրը չըլալ ա, ամմա հանալ քսան տիրը՛կան ա* (Բ): 2. *փխբ.* Սկսել հասունանալ (միրգը, բանջարեղենը): *Տանձը վէր չըլում ա, շէնին խօխէնք՛ը բըղէրան տօն չըն կ՛ամ* (Բ):

ՉԸԼԸԲԱԼԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չըլըբալի անէլ - Թռվռալ, թպրտալ: *Վէր յըրա յա անում, կ՛ըխտարը վէր ա ըղնում, ըսկըսում չըլըբալի անէլը* (Ձ):

ՉԸԼԸՀԱՆՔ՝Ի - *ած.* Խատուտիկ պոչ ունեցող: *Էտ չուբանէն էլ մին չըլըհանք՛ի լ՛ավ շօն ա ինում՝ անումը՝ Ալաբաշ* (Ձ):

ՉԸԼԸՄԸ՝Լ - *տե՛ս* ՉԱԼ (1):

ՉԸԼԸՄՍԸՋ *(թրք. čelimsiz)* - *ած.* Փոքրիկ, վտիտ, տկար: *Պառավընն ասըմ ա.- Բա՛լա, մին ծէռքը ծափ չի տալ, տու էլ մին չըլըմսըզ տըղա* (ՀԺՀ, V, 307):

ՉԸԼԸՄՓ - *տե՛ս* ՉԸԼՕՄՓ:

ՉԸԼԸՄՓԱԼ/ՉՈՒԼՈՒՄՓԱԼ/ՉԸՄՓԱԼ/ՉՈՒՄՓԱԼ - *չբ.* Չլմփոց հանել: *Ծուկունը վէր չըլըմփամ ա, ծուկուն փըռնօղը դանստի զուրթանում ա* (Ձ):

ՉԸԼԸՄՓԱԼԻ/ՉՈՒԼՈՒՄՓԱԼԻ/ՉԸՄՓԱԼԻ/ՉՈՒՄՓԱԼԻ - *մ.* Չլմփալով, չլմփոց հանելով: *Խօխէնք՛ը չըլըմփալի կ՛ը՛տումը լըղանում ըն* (Բ):

ՉԸԼԸՄՓԱՆԱ - *տե՛ս* ՉԸՄՓԱԼԱ(Խ):

ՉԸԼԸՄՓԱՉԸԼԸՄՓ - *տե՛ս* ՉԸԼՕՄՓԱՉԸԼՕՄՓ:

ՉԸԼԸՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ/ՉՈՒԼՈՒՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ/ՉԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ/ՉՈՒՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՉԸԼԸՄՓԱԼ-ի:

ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓԱԼ/ՉՈՒԼՈՒՄՓՉՈՒԼՈՒՄՓԱԼ/ՉԸՄՓՉԸԼԸՄՓԱԼ/ՉՈՒՄՓՉՈՒՄՓԱԼ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓԱԼ (շատերը կամ շատ անգամ):

ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓԱԼԻ/ՉՈՒԼՈՒՄՓՉՈՒԼՈՒՄՓԱԼԻ/ՉԸՄՓՉԸԼԸՄՓԱԼԻ/ՉՈՒՄՓՉՈՒՄՓԱԼԻ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓԱԼԻ:

ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ/ՉՈՒԼՈՒՄՓՉՈՒԼՈՒՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ/ՉԸՄՓՉԸԼԸՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ/ՉՈՒՄՓՉՈՒՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *նբ.* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓԱԼ-ի:

ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓՕՆ/ՉՈՒԼՈՒՄՓՉՈՒԼՈՒՄՓՕՆ/ՉԸՄՓՉԸԼԸՄՓՕՆ/ՉՈՒՄՓՉՈՒՄՓՕՆ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՕՆ (տեւական):

ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓՕՑ/ՉՈՒԼՈՒՄՓՉՈՒԼՈՒՄՓՕՑ/ՉԸՄՓՉԸԼԸՄՓՕՑ/ՉՈՒՄՓՉՈՒՄՓՕՑ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓՕՆ:

ՉԸԼԸՄՓՕՆ/ՉՈՒԼՈՒՄՓՕՆ/ՉԸՄՓՕՆ/ՉՈՒՄՓՕՆ - *գ.* Ջրի մեջ ընկնելու՝ նետվելու, ջրի մակերեսին որեւէ բանով հարվածելու, ջուրը մի բանի՝ մեկի վրա լցնելու, ինչպես նաեւ ջրալի կերակուր ուտելիս լեզվի եւ շրթունքների հպումով հանած ձայնը, ճողփյուն: *Ճիրին չըլըմփօնը վըրսկանէն ընգուճավընն ա ըղնում* (Ձ):

ՉԸԼԸՄՓՕՑ/ՉՈՒԼՈՒՄՓՕՑ/ՉԸՄՓՕՑ/ՉՈՒՄՓՕՑ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՕՆ:

ՉԸԼԸՆԳԲՈՒՌԸՆ/ՉԻԼԻՆԳԲՈՒՌԸՆ - *գ.* Վայրի խոտաբույս: *Ըստը՛ղ էլ շատ չըլընգ՛բուռընն ա ինիս փըսած* (Ձ):

ՉԸԼԸՆԳԻ/ՉԻԼԻՆԳԻ - *գ.* Խաղատեսակ, երբ 70-100 սմ երկարությամբ մահակով խփում եւ հեռու են նետում երկու ծայրը սրած 10-20 սմ երկարությամբ փայտիկը. մրցակիցը պետք է կարողանա փայտիկը օդում բռնել կամ էլ ընկած տեղից նետելով՝ խփել գետնին դրված մահակին: *Չըլընգ՛ին առաչ ադաթ ա իլալ ամմէն շէնում* (Բ):

- Չըլընգ՛ի տալ - 1. Այդ խաղը խաղալ: *Խօխէնք՛ը չըլընգ՛ի յընն տամ* (Բ): 2. *փխբ.* Պարապ-սարապ թափառել: *Խալխը կօրծ ըն անում, Մարուսէն մարթընն էլ չըլընգ՛ի յա տամ* (Բ):

ՉԸԼԸՆԳԻԼ/ՉԻԼԻՆԳԻԼ - *նբ.* Մեջ-

տեղից կոտրել: *Փանդը տինում ա ծույնանը, չըլընգում* (Բ):

ՉԸԼԸՆԳՎԻԼ/ՉԻԼԻՆԳՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՉԸԼԸՆԳԻԼ-ի:

ՉԸԼԸՊԷՂԷԳ - 1. *տե՛ս* ՉԱԼ (1): 2. *գ., ած.* Լոբու տեսակ՝ սեւ եւ սպիտակ պուտերով: *Չըլըպէղէգ լօբին քախծըր ա ինում* (Բ):

ՉԸԼԸՊԸՂՕՃ - *տե՛ս* ՁԱՏԷԳ[2]:

ՉԸԼԸՎԸՆՆԸ - *ած.* Խատուտիկ ոտքեր ունեցող: *Թիվանէն մին չըլըվը՛ննը ծի յա իլա՛լ* (Ձ):

ՉԸԼԻՆԳ - *գ.* Փայտի կտոր, որով *չըլընգի* են խաղում: *Վէր թըխում ա, չըլինգը ըղնում ա բաստանը* (Ձ):

ՉԸԼՂԱՆ - *տե՛ս* ԼԷԼԱ՛Կ: *Մին օր էլ չըլղանը կամ ա էտ պըռավէն թուխսըկանէն ճստէրը տանում* (Ձ):

ՉԸԼՄԸԼՕՏԻԳ - *տե՛ս* ՉԸԼԸՊԷՂԷԳ:

ՉԸԼՊԸՏՈՒՐԻԳ - *տե՛ս* ՉԸԼԸՊԷՂԷԳ:

ՉԸԼՎԱ՛ՆԴ - *գ.* Բարձր՝ բարձրադիր տեղ: *Պիցըրանում ըն էտ չըլվանդը, ընդրղան յէշ՝ում* (Ձ):

ՉԸԼՕՄՓ/ՉԸԼԸՄՓ/ՉՈՒԼՕՄՓ/ՉԸՄՓ/ՉՕՄՓ - *ձ.* Չլմփալու ձայնի նմանությունը: *Չըլօմփ, օշափը ըղնում ա կ՚ը՛տը* (Ձ):

- Չըլօմփ-չըլօմփ անէլ - Չլմփալու ձայներ հանելով՝ լողալ՝ լողանալ: *Խօխան չըլօմփ-չըլօմփ ա անում* (Բ):

ՉԸԼՕՄՓԱՉԸԼՕՄՓ/ՉԸԼԸՄՓԱՉԸԼԸՄՓ/ՉՈՒԼՕՄՓԱՉՈՒԼՕՄՓ/ՉԸՄՓԱՉԸՄՓ/ՉՕՄՓԱՉՕՄՓ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓԱԼԻ:

ՉԸԽԱՐ - *ած.* 1. Անորակ, ցածրորակ, անարժեք: *Չըխար վը՛ղումը բաստան չի տը՛ռնալ* (Ձ): 2. *հեգն.* Հիվանդ, վատառողջ: *Էտ խէ չըխար ը՞ս, հինչ ա՞ պըտահալ* (Բ):

ՉԸԽԱՐԱԿ *(գրբ. ճախարակ)* - *գ.* 1. Մանելու գործիք, ճախարակ: *Պառավը չըխարակը տինում ա ըռաշկէն, ըսքըսում պա՛ւրթը մանէլը* (Ձ): 2. *փխբ.* Հնացած՝ փչացած մեքենա՝ սարքավորում եւն: *Մին չըխարակ օնէ, մին օր քըշ՝ում ա, մին ամէս ըռէմօնտ անում* (Բ): 3. Երկար թեւերով միջատ: *Խօխան մին չըխարակ ա փըռնում, ուրխանում* (Բ): 4. Գետերի ափերին աճող փշատերեւ խոտաբույս: *Չըխարակը տօնածառու նըման ա ինում* (Բ):

- Չըխարակ մանէլ - 1. Ճախարակով թել մանել: *Ամմէն կընէգ՝ չի կարէլ չըխարակ մանէ* (Բ): 2. Փքվելով եւ թեւերը տարածելով՝ շարժվել: *Հա՛ւնդա՛ւշկան չըխարակ ա մանում* (Բ):

ՉԸԽԸ(Ր)ԹՄԱ - *գ.* Կերակուր, որ պատրաստում են հավի մսով, սոխով, քացախով եւ հարած ձվով: *Չըխըրթման լանգա՛թ խօրանգ՝ ա* (Բ):

ՉԸԽԿ - *տե՛ս* ՉԸՐԸԽԿ:

ՉԸԽԿԱԼ - *տե՛ս* ՉԸՐԸԽԿԱԼ:

ՉԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ՉԸՐԸԽԿԱԼԻ:

ՉԸԽԿԱՆ - *տե՛ս* ՉԸՐԸԽԿԱՆ:

ՉԸԽԿԱՉԸԽԿ - *տե՛ս* ՉԸՐԸԽԿԱ-ՉԸՐԸԽԿ:

ՉԸԽԿԸ(Լ)ԴԱՆԻ - *գ.* Մանկական խաղ, որի ժամանակ ոտքի մեկը վեր բարձրացնելով եւ անշարժ պահելով՝ մյուս ոտքով ցատկելով առաջ են շարժվում գետնին գծած վանդակներով՝ առանց գիծը կոխելու: Խաղում են նաեւ տափակ քարով կամ կղմինդրով՝ դրանք ոտքով հրելով հաջորդ վանդակը: *Չըխկըլդանին տիժէր խաղ ա* (Բ):

ՉԸԽԿԸԼԻ/ՉԸԽԿԻ[1]/ՉԸԽՏԻ[1] - 1. *տե՛ս* ՉԸԽԿԸ(Լ)ԴԱՆԻ: 2. *տե՛ս* ԿԱՂԼԷԳ: *Հա՛ն-ը, մարը պայման ըն կապում, ըտըրան մին չըխկի մարթու նըհէտ փըսակում* (ԱԱ, 68):

ՉԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՉԸՐԸԽ-Կ(Ը)Ց(Ը)ՆԷԼ:

ՉԸԽԿԻ[1] - *տե՛ս* ՉԸԽԿԸԼԻ:

ՉԸԽԿԻ[2]/ՉԸԽՏԻ[2] - *տե՛ս* ՊԱԼԻ:

ՉԸԽ(Կ)ՉԸԽԿԱԼ - *տե՛ս* ՉԸՐԸԽ(Կ)-ՉԸՐԸԽԿԱԼ:

ՉԸԽ(Կ)ՉԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ՉԸՐԸԽ(Կ)-ՉԸՐԸԽԿԱԼԻ:

ՉԸԽ(Կ)ՉԸԽԿԱՆ - *տե՛ս* ՉԸՐԸԽ(Կ)-ՉԸՐԸԽԿԱՆ:

ՉԸԽ(Կ)ՉԸԽԿԸ՛ՆԷ - *տե՛ս* ՉԸ-ՐԸԽ(Կ)ՉԸՐԸԽԿԸ՛ՆԷ:

ՉԸԽ(Կ)ՉԸԽԿ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՉԸ-ՐԸԽ(Կ)ՉԸՐԸԽԿ(Ը)Ց(Ը)ՆԷԼ:

ՉԸԽ(Կ)ՉԸԽԿՕՆ - *տե՛ս* ՉԸՐԸԽ(Կ)-ՉԸՐԸԽԿՕՆ:

ՉԸԽ(Կ)ՉԸԽԿՕՑ - *տե՛ս* ՉԸՐԸԽ(Կ)-ՉԸՐԸԽԿՕՑ:

ՉԸԽԿՕՆ - *տե՛ս* ՉԸՐԸԽԿՕՆ:

ՉԸԽԿՕՑ - *տե՛ս* ՉԸՐԸԽԿՕՑ:

ՉԸԽՄԱՋ - *ած.* Անհասկացող, բթամիտ: *Էտ թաքավէրին էլ մին չըխմազ տըղա յա ինում* (Ձ):

ՉԸԽՄԸԽԱՎԷՐ - *ած.* 1. Չախմախ՝ կայծահան ունեցող՝ օգտագործող: *Մին չըխմըխավէր ա ջիհում, չախմախը յօր ա օնում, կըրակը նի կըցընում* (Ձ): 2. Չախմախով՝ կայծքարով կրակվող: *Միհէնգ՝ էլ չըխմըխավէր թըվանգ՝ պինը-ցընօղ չի կա* (Բ):

ՉԸԽՄԸԽԱՔԱՐ - *տե՛ս* ԿԸԾ՚ԱՔԱՐ: *Ասում ըն՝միշտ կ՚ալիս ըն իլալ, ըտըղատ չըխմըխաքար տընէլիս* (ԱԱ, 46):

ՉԸԽՏԻ[1] - *տե՛ս* ՉԸԽԿԸԼԻ:

ՉԸԽՏԻ[2] - *տե՛ս* ՉԸԽԿԻ[2]:

ՉԸԽՈՒՐ/ՉՈՒԽՈՒՐ *(թրք. čukur)* - *գ.* Գոգաձեւ տեղանք, գոգահովիտ, գոգավորություն: *Չօբանը քըշանում ա, տը՛սնում մին դանգ՝ ախճիգ՝ էտ չըխուրումը սօյն ա քաղում* (Ձ):

ՉԸԽՕԹԿԱ/ՉԸԽՕՏԿԱ/ՉՈՒԽՕԹԿԱ/ՉՈՒԽՕՏԿԱ *(ռուս. чахотка)* - *գ.* Թոքերի պալարախտ, թոքախտ: *Չըխօթկան փիս հիվընդութուն ա* (Բ):

ՉԸԽՕՍԿԱՆ - *ած.* Անխոս, սակավախոս: *Չըխօսկան մարթը հինչ կա՞նին* (Բ):

- Չըխօսկան հարթանը - Անտրտունջ՝ հանդուրժող՝ լուռ մնացող մարդ: *Չըխօսկան հարթն ը՞ս, խէ մին պէն չը՞ս ասում* (Ձ):

ՉԸԽՕՏԿԱ - *տե՛ս* ՉԸԽՕԹԿԱ:

ՉԸԿԱՄ - *ած.* Ուրիշի լավը չկամեցող, ուրիշին բարիք չցանկացող: *Չըկամ մարթ ա Բուղդանը, ախպօրը լ՚ավը՛ն էլ չի օգ՚ում* (Բ):

ՉԸԿԱՄՕԹՈՒՆ (*գրբ. չկամութիւն (չուզելը)* - *գ.* Ուրիշի լավը չկամենալը, չկամ լինելը: *Չըկամօթունան ըսկըսըմ ա ա՛ւրանն մէսը օտէլը* (ՀԺՀ, V, 537):

ՉԸՀԱՍ - *գ., ած.* Ազգականության կամ տարիքի այնպիսի աստիճան, որ անթույլատրելի է դարձնում ամուսնությունը տղայի եւ աղջկա միջեւ՝ ըստ եկեղեցական օրենքի: *Շատ վախտ, վէր ախճիգ՝ը չըհաս ար ինում, դէրին ըռուշվաթ ին տամ, վէր փըսակէ* (Ձ):

ՉԸՂԱՆԱԼ - *տե՛ս* Ք՚ՈՒՔԱՆԱԼ:

ՉԸՂԱՎՈՒՆ - *տե՛ս* Ք՚ՈՒՔԱՎՈՒՆ:

ՉԸՂԸԼԱՎԸ՛Ղ - *տե՛ս* ՉԸԼԱՎԸ՛Ղ:

ՉԸՂԸՎԱՉԻ - *տե՛ս* Ք՚ՈՒՔԱՎՈՒՆ:

ՉԸՂԸՎԱՐԻ - *տե՛ս* Ք՚ՈՒՔԱՎՈՒՆ:

ՉԸՂԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* Ք՚ՈՒՔԸՑ(Ը)ՆԷԼ:

ՉԸՂՈՒԼ - *ած.* 1. Շողոքորթ, քծնող, ստոր: *Չըղուլ մարթ ա իլալ Իսակը* (Բ): 2. *տե՛ս* ԽԸԲԸՐԲԸՋԱ՛Ն: 3. *փխբ.* Թաքնված, չհայտնաբերված: *Ասում ըն՝էտ ծըմակումը մին չըղուլ ախպա՛ւր կա, հու էտ ըխպիրանն խըմում ա, ջըհիլանում ա* (Ձ):

ՉԸՂՈՒԼՕԹՈՒՆ - *գ.* 1. Քծնություն, շողոքորթություն: *Ըշխարքէս տօնը քանդօղը չըղուլօթունը ա* (Ձ): 2. *տե՛ս* ԽԸԲԸՐԲԸՋԸՆՕԹՈՒՆ:

ՉԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* Ք՚ՈՒՔՕԹՈՒՆ:

ՉԸՄԲՈ՛ՒԼ/ՉՈ՛ՒՄԲՈ՛ՒԼ - 1. *տե՛ս* ՔԸՆ-ԹԸ՛Ռ(ՆԸ) (2): 2. *տե՛ս* ՉԱՄԱՆ[2]:

ՉԸՄԱ՛ՆԳՈ՛ՒԼ - *տե՛ս* ՉԸՇՄԱ՛ՆԳՈ՛ՒԼ:

ՉԸՄԲՈ՛ՒԼՀԱՆ/ՉՈ՛ՒՄԲՈ՛ՒԼՀԱՆ - *տե՛ս* ՔԸՆԹԸՌՆԸՀԱՆ:

ՉԸՄԸ՛ԹԿ(Ը)-ՉԸՄԸ՛ԹԿ(Ը) - *մ.* Չուզենալով, չցանկանալով, չկամենալով: *Էս խօխան չըմը՛թկը-չըմը՛թկը հըդէ յա ըղնում, ք՚ընա՛մ* (Ձ):

ՉԸՄԸԽԱՄԷ - *տե՛ս* ՉԸՄԸԽԸՄԷ:

ՉԸՄԸԽԱՄԻ - *տե՛ս* ՉԸՄԸԽԸՄԷ:

ՉԸՄԸԽԸՄԷ/ՉԸՄԸԽԱՄԷ/ՉԸՄԸ-ԽԱՄԻ - *տե՛ս* ՉԷՄՈՒՉՈՒՄ:

ՉԸՄԸՀԱՎԱՆ - *ած.* Դժվարահաճ, ոչնչի եւ ոչ ոքի չհավանող: *Չըմըհավան կընէգ՝ ա Սիրուշը* (Բ):

ՉԸՄԸՆՉԸԷՆԷ - *գ.* Դեղնագույն անկորիզ փոքր ու կլոր հատիկներով խաղողի տեսակ: *Չըմընչը*ԷՆԷՆ ճէլլի յա հըսնում* (Բ):

ՉԸՄԸՆՉԻԼ - *չբ.* 1. Չամիչ դառնալ, չորանալով չամիչի վերածվել: *Խաղուն բըղէրումը չըմընչալ ա, քաղօղ չի կա* (Բ): 2. *փխբ.* Սմքել, ծերանալ: *Չըմընչած մարթ ա Ռուբէն ապան* (Բ):

- Չըմընչած թօթ - Սմքած՝ ծերացած (մարդ): *Այան էլ հինչ կընէ՞գ, մին չըմընչած թօթ ա* (Ձ):

ՉԸՄԸՆՉՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՉԸՄԸՆՉԻԼ-ի:

ՉԸՄԸՇԿԱՎԷՐ/ՉԸՄԸՇՔԱՎԷՐ - *ածական.* Չմուշկ հագած: *Կամ ա, տը*էսնում՝ մին չըմըշկավէր տըղա ըտը*էղ նըստած* (Ձ):

ՉԸՄԸՇՔԱՎԷՐ - *տե՛ս* ՉԸՄԸՇԿԱՎԷՐ:

ՉԸՄՉԸՄԱԿԷՐ - *ածական.* Առանց ախորժակի եւ քիչ ուտող: *Չըմչըմակէր տըղամարթը հինչ կօրծ բիդի ա՞նէ* (Ձ):

ՉԸՄԸՉԸՄԷ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Չըմըչըմէ անէլ/տալ - Առանց ախորժակի ուտել՝ ծամծմել: *Ղօնաղը պատառ չըմըչըմէ յա տամ, յը*էր կէնում* (Ձ):

ՉԸՄՉԸՄԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չըմչըմէ տալ - Ճոխ՝ փարթամ կյանք վարել, հաճույք ստանալ: *Մին օր էտ տըղան ասըմ ա.- Մին հէտան օգին ըսպանիմ, խազնան տա՛ւս տամ, չըմչըմէ տալավ ապրիմ* (ՋՏ, Բ, 142):

ՉԸՄՓ - *տե՛ս* ՉԸԼՕՄՓ:

ՉԸՄՓԱԼ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓԱԼ:

ՉԸՄՓԱԼԱ(Խ)/ՉԸԼԸՄՓԱՆԱ *(պրս., թրք. šaplağ)* - *տե՛ս* ՍԻԼԼԱ[1]: *...Մարը կըզնըվալ ա, խըմօրուտ ծէրքավ չըմփալախ տըվալ իրէսէն* (ԱԱ, 15):

ՉԸՄՓԱԼԻ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓԱԼԻ:

ՉԸՄՓԱՉԸՄՓ - *տե՛ս* ՉԸԼՕՄՓԱՉԸԼՕՄՓ:

ՉԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓԸՑ(Ը)ՆԷԼ:

ՉԸՄՓՉԸՄՓԱԼ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓԱԼ:

ՉԸՄՓՉԸՄՓԱԼԻ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓԱԼԻ:

ՉԸՄՓՉԸՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓ(Ը)Ց(Ը)ՆԷԼ:

ՉԸՄՓՉԸՄՓՕՆ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓՕՆ:

ՉԸՄՓՉԸՄՓՕՑ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՉԸԼԸՄՓՕՑ:

ՉԸՄՓՕՆ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՕՆ:

ՉԸՄՓՕՑ - *տե՛ս* ՉԸԼԸՄՓՕՑ:

ՉԸՄՕՇԿ/ՉԸՄՕՇՔ *(գրբ. չմուշկ)* - *գ.* Սրաքիթ կոշիկ, չմուշկ: *Էրկու սը*էկ օգը քինըմ ըն նի մընըմ Օվչի Փիրո՛ւմէն չըմըշկնէրին մէջը* (ՀԺՀ, V, 219):

ՉԸՄՕՇՔ - *տե՛ս* ՉԸՄՕՇԿ:

ՉԸՅԸ՞Ք - 1. *տե՛ս* ԱՆՅԸ՞Ք: 2. *փխբ. ածական.* Չհասունացած, տհաս (մարդ, պտուղ): *Կօգ՞ի մը*էծ տըղա յա, ամհա հա՛լա՛ չըյը*ք ա* (Բ):

ՉԸՅԸՔԱՄԷ(Չ) - *գ.* Փոքրիկ գոգավոր ցանցով քամիչ, որ դնում են բաժակների վրա եւ թեյի գույնը լցնում, որպեսզի թեյի տերեւները չանցնեն, թեյաքամիչ: *Այան առանց չըյըքամէ չայ չար ածում* (Բ):

ՉԸՅԼԸՂԱՔԱՐ/ՉԻԼԼԻՂԱՔԱՐ - *գ.* 1. Կլորավուն ողորկ քար, գետաքար: *Կուրկուտը չըյլըղըքարավը թակում ըն, պըղըրաստում* (Ձ): 2. *փխբ.* Պնդաճակատ մարդ: *Էտ չըյլըղաքարը վէչ մինին նըհը*էտ հընգըրօթուն չի անում* (Բ):

ՉԸՆԱ՛ՏԱԿ/ՉԻՆԱ՛ՏԱԿ - *գ.* Ծնոտի տակը: *Յէշում ա, տը*էսնում արչըն էլ ո՛ւրա՛ն ըռաչի թա՛նթա՛ւլը ա տանում բիդի ո՛ւրա՛ն չինա՛տակը* (ՀԺՀ, VII, 208):

ՉԸՆԳԸԼ/ՉԸՆՂԸԼ *(թրք. čəngəl)* - *տե՛ս* ԽԸՌԷՃ:

ՉԸՆԳԸԼՃՕՏԷՐ - *տե՛ս* ՃԸՆԳԸԼՃՕՏԷՐ:

ՉԸՆԳԸԼՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԿԸՌՃԻԼ:

ՉԸՆԳԸՌ-ՄԱՆԳՈՒՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չընգըռ-մանգուռ անէլ - Մի կերպ՝ դժվարությամբ ապրուստ հայթայթել: *Չընգըռ-մանգուռ ընէլավ ապրում ընք* (Բ):

ՉԸՆԳԸՌՕՏ/ՉԸՆԳՈՕՏ - *ածական.* Ճանկռոտված: *Մին քը*շէր ծըմական տ՛ուս ա յէկալ, լըհա ինդի քընձընռօտ, չընգըռօտ* (ՀԱԲ, 15, 109):

ՉԸՆԳԸՌՕՏԷԼ/ՉԸՆԳՈՕՏԷԼ - *նբ.* 1. Շատ տեղերից կամ շատ անգամ ճանկռել, ճանկռտել: *Էտ սա՛սին յըրա կ՛ամ ա, տը*էսնում մին քօռ ախճիգ՛, իրէսը, ծը*էռքէրը չընգռօտած, էն ա ըտէղ յէր ընգա՛ծ* (ՀԺՀ, V, 44): 2. *փխբ.* Մակերեսորեն՝ իմիջիայլոց վարել՝ փորել: *Սաբավ վար ա ըրալ, չընգըռօտալ ա, յը*էկալ տօն* (Բ):

ՉԸՆԳԸՌՕՏՎԷԼ/ՉԸՆԳՈՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՉԸՆԳԸՌՕՏԷԼ-ի:

ՉԸՆԳ՛ԸԿԸՌԸ՞Վ/ՉԻՆԳ՛ԸԿԸՌԸ՞Վ - *գ.* Իրար ճանկռոտելով կռվելը: *Ըտըրանց չընգ՛ըկըռը*էվը մին սաղ օր քաշ՞ում ա* (Ձ):

ՉԸՆԳ՛ԸԼՏԷՆԱԿ/ՉԻՆԳ՛ԸԼՏԷՆԱԿ - *գ.* Պատառաքաղ եւ դանակ՝ որպես սեղանի պարագաներ: *Ապան կօգ՞ի շինա՛ցէ, չընգ՛ըլտինակավ ա իլա՛լ հաց ուտէս* (Բ):

ՉԸՆԳ՛ՉԱ՛ՆԳ՛Ո՞ՒՏ/ՉԻՆԳ՛ՉԱ՛ՆԳ՛Ո՞ՒՏ *(գրբ. ճանկճանկոտ)* - *ածական.* 1. Վրան ճանկաձեւ սուր ելուստներ ունեցող (հիմնականում՝ մետաղալար, որով ցանկապատում են): *Չընգ՛չա՛նգ՛ո՞ւտ մանթա՛ւլ ա ինք՛ օնում, բօստանը չըփարում* (Ձ): 2. *տե՛ս* ԽՈՒԼ՛ԽՈՒԼ՛ՕՏ: 3. *տե՛ս* ԽԸՐԹԸԲՕՐԹ:

ՉԸՆԳՈՕՏ - *տե՛ս* ՉԸՆԳԸՌՕՏ:

ՉԸՆԳՈՕՏԷԼ - *տե՛ս* ՉԸՆԳԸՌՕՏԷԼ:

ՉԸՆԳՈՕՏՎԷԼ - *տե՛ս* ՉԸՆԳԸՌՕՏՎԷԼ:

ՉԸՆՂԸԼՀԱ՛ՂԻ - *տե՛ս* ՉԸՂԸԼՀԱ՛ՂԻ:

ՉԸՆՂԸՐՀԱ՛ՂԻ - *տե՛ս* ՉԸՂԸԼՀԱ՛ՂԻ:

ՉԸՆԹԸՊՈՒԿԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Չընթըպուկի անէլ - Գռփել, կողոպտել: *Էտ նախագան սաղ շինացուց չընթըպուկի ըրավ* (Ձ):

- Պա տու հ՝ուր շօն ը՞ս/հուվ ը՞ս - Անարգական արտահայտություն՝ դու ո՞վ ես, ի՞նչ իրավունքով ես խառնվում գործին՝ խոսքին: *Մը՞ծ ախպէրը ասմա.- Լ՝ավ ըմ անում, պա տու հ՝ուր շօն ը՞ս* (Զ):

ՊԱԲԷԼԿԱ *(ռուս. пабелка)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Պաբէլկա անէլ - Կրաջուր քսելով՝ սպիտակեցնել: *Այան ամմէն կ'արունք տանը պատէրը պաբէլկա յա իլալ ընէս* (Բ):

ՊԱԳՕՆ *(ռուս. пагон)* - *գ.* 1. Ուսադիր: *Ըտըրա ջընընդնէրէն պագոննէն վէր տը՞սնում ա, զինք'ը հըվաքում ա* (Զ): 2. *տե՛ս* ՉԻՆ[2]:

ՊԱԳՕՆԱՎԷՐ - *ած., գ.* 1. Ուսադիրներ կրող (անձ), զինվորական: *Կամ ա, տը՞սնում էրկու պագոնավէր ի՞ուրանց տանը նըստած* (Զ): 2. *տե՛ս* ՉԻՆԱՎԷՐ[2]:

ՊԱԴԱԳՕԼՆԻԿ *(ռուս. подоконник)* - *տե՛ս* ԹԱՐՔԻՆՎԱ:

ՊԱԴԱՍԽԱՆ/ՊԸԴԱՍԽԱՆ/ԲԱԴԱՍԽԱՆ *(գրբ. պատասխան)* - *գ.* 1. Տրված հարցին բավարարություն տալու խոսք: *Մարթը մին քանէ հը՛ետ հըրցընում ա, ամմա պադասխան չի ըստանում* (Ձ): 2. Իր ստացած նամակի՝ հեռագրի եւն դիմաց գրած՝ ուղարկած նամակ՝ հեռագիր եւն: *Շատ ա նամակ կ՚իրում, վէրջը պադասխանը կ՚ամ ա* (Ձ): 3. Գործողություն՝ ի հակակշիռ մեկ ուրիշի որեւէ գործողության: ... *Պուճուր ախպէրը խընթրում ա, վէր ծին տա ուրան, ինքը՝ քինի Սիպտակ թաքավէրին պադասխանը տա* (ՀԺՀ, V, 96):

- Պադասխան տալ - *տե՛ս* ՊԱԴԱՍԽԱՆԷԼ:

ՊԱԴԱՍԽԱՆԱՏՈՒ/ՊԸԴԸՍԽԸՆԱՏՈՒ/ԲԱԴԱՍԽԱՆԱՏՈՒ - 1. *ած., գ.* Իր կամ մեկ ուրիշի արարքների համար պատասխան տվող՝ հաշվետու (անձ): *Էտ կօրծին պադասխանատուն էլ Դօրուց Սուրէնը ա ինում* (Բ): 2. *ած.* Չափազանց կարեւոր՝ էական, շատ լուրջ: *Ասում ա.- Էս պադասխանատու կօրծ ա, տու կարէլ չըս անիս* (Ձ):

ՊԱԴԱՍԽԱՆԷԼ/ՊԸԴԸՍԽԱՆԷԼ/ԲԱԴԱՍԽԱՆԷԼ - *նբ.* 1. Իբրեւ պատասխան՝ մի բան ասել, պատասխան տալ: *Հինչ ասում ա թաքավէրը, էտ ախճիգը դանստի պադասխանում ա* (Ձ): 2. Իբրեւ պատասխան՝ նամակ, հեռագիր եւն ուղարկել: *Շատ նամակ ա ըստանում, ամմա վէչ մինին պադասխանում չի* (Ձ): 3. Ուրիշի գործողությանը համապատասխան գործողությամբ հատուցել: *Ասում ա.- Օգում ըմ ասիմ, վէր տու հինչ անիս, ընդի էլ քը՛ըզ պադասխանական ըմ* (Ձ):

ՊԱԴԱՎԱՏ *(ռուս. подавать (մատուցել))* - Գործածվում է կապակցության մեջ:

- Պադավատ անէլ - Հրամցնել, մատուցել: *Վէր փըլավը պիրում ա՝ պադավատ անէ, էս տըղան քըմքըծիծանը ա տամ* (ՀԱԲ, 15, 127):

ՊԱԴԱՐՆՔ՚ - *տե՛ս* ԲԱԴԱՐՆՔ՚:

ՊԱԴԱՐԿԱ/ԲԱԴԱՐԿԱ *(ռուս. подарок)* - *գ.* Ընծա, նվեր: *Թաքավէրը մը՛ծ պադարկանէրավ քինըմ ա էտ տըղին առաջը, յօր օնըմ, կ՚ամ պալատը* (ՀԺՀ, V, 98):

- Պադարկա տալ - Ընծայել, նվիրել: *Շահը ըտըրան մին լ՚ավ ծի յա պադարկա տամ* (Ձ):

- ՊԱԴԷՎ/ՊԱՏԷՎ/ՊԱԴԻՎ *(գրբ. պատիւ)* - *գ.* 1. Արժանիքների համար մեկի վայելած հարգանք, փառք, համբավ, հեղինակություն: *Էտ մարթին էլ շէնումը լ՚ավ պադէվ ա ինում* (Ձ): 2. *տե՛ս* ՆԱՄՈՒՍ:

- Պադէվ անէլ - *տե՛ս* Պադէվ տալ:

- Պադէվը ծախէլ - Շահադիտական նկատառումներով խղճին կամ բարոյականությանը դեմ գործ բռնել: *Տըղամարթը էն ա, վէր վէչ մին վախտ պադէվը ծախէ վէչ* (Ձ):

- Պադէվը կ՚ուղանալ - *տե՛ս* Պադէվը քըցիլ:

- Պադէվը պահէլ - 1. Իրեն կամ ուրիշի վարկաբեկող բան չանել: *Էտ կընէգը կարում ա ուրանն պադէվը պահէ* (Ձ): 2. Մեկին հարգել, հետը զիջողաբար վարվել: *Հիրըվանէն հիյվանէն թըխէլ չընն. հիրըվանէն պադէվը կըպահին* (Ձ):

- Պադէվը վընանատակ անէլ/տալ - *տե՛ս* Պադէվը քըցիլ:

- Պադէվը տափավը կ՚անլ/տալ - *տե՛ս* Պադէվը քըցիլ:

- Պադէվը քըցիլ/տափը քըցիլ - Անվանարկել, վարկաբեկել: *Ըտի էտ կընէգը սաղ շէնին պադէվը քըցից* (Ձ):

- Պադէվ պըհանջիլ - Վիրավորանքի՝ սուտ մեղադրանքի եւն համար բավարարող պատասխան՝ հատուցում պահանջել: *Ժողովէն վախտը բաստանչին յը՛ր ա կէնում բըրիգադիրին անա պադէվ պըհանջում* (Ձ):

- Պադէվ տալ - 1. Անհրաժեշտ՝ վայել հարգանք մատուցել: *Պիրիս ա ըտըրան լ՚ավ պադէվ տաս, վը՛սկէ տաս...* (ՀԺՀ, V, 297): 2. Հյուրասիրել: *Ոօչը մորթում ա, էտ դունը՛ղնէրէն մին լ՚ավ պադէվ տամ* (Ձ):

ՊԱԴԸԼԷՑ/ՊԱԴԼԷՑ *(ռուս. подлець)* - *տե՛ս* ՕՂԸՌԱԾ:

ՊԱԴԸԼԷՑՕԹՈՒՆ/ՊԱԴԼԷՑՕԹՈՒՆ - *տե՛ս* ՕՂԸՌԱԾՕԹՈՒՆ:

ՊԱԴԸՐԱՍՏ/ՊԱԴՐԱՍՏ/ԲԱԴ(Ը)ՐԱՍՏ *(գրբ. պատրաստ)* - *ած.* 1. Ավարտված, պատրաստի վիճակի բերված: *Քըշէրավ ուստան կ՚ամ ա, տը՛սնում պադրաստ, յօր օնըմ, տանըմ պալատը...* (ՀԺՀ, V, 25): 2. Լիովին նախապատրաստված, անհրաժեշտ պատրաստությունները տեսած: *Կ՚ամ ըն, թա.- Թաքավէրը՛ն ապըրած կէնա, փայտօնը պադրրաստ ա* (Ձ): 3. Տրամադիր, որեւէ բանի հակված: *Պադրաստ ը՞ս քը՛ը՛փ ընէլի* (Բ): 4. Հնարավորություն՝ ունակություն՝ կարողություն ունեցող: *Ասում ա.- Յը՛ս պադրրաստ ըմ, թուղէ՛ցէք՚, քինիմ ջօղաբը տամ* (Ձ): 5. Անհրաժեշտ պատրաստականություն՝ փորձ՝ գիտելիքներ ունեցող: *Խուսցընում ըն, տը՛սնում՝ էտ մարթը բադրաստ մարթ ա* (ՀԱԲ, 15, 75): 6. Առձեռն, անմիջականորեն առկա՝ տրամադրության տակ եղող: *Տանը բիդի միշտ պադրրաստ փուլ պահիս* (Բ):

- Պադրրաստ կէնալ - Պատրաստ լինել, պատրաստվել: *Հիշկան մէր հըրը՛վանը թօրքըն ա, մունք միշտ բիդի կըռվէն պադրաստ կէնանք* (Ձ):

ՊԱԴԸՐԱՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸԴԸՐԸՍՏՕԹՈՒՆ:

ՊԱԴԻՎ - *տե՛ս* ՊԱԴԷՎ:

ՊԱԴԼԷՑ - *տե՛ս* ՊԱԴԸԼԷՑ:

ՊԱԴԼԷՑՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԱԴԸԼԷՑՕԹՈՒՆ:

ՊԱԴՆՕՍ/ՊԱՏՆՕՑ *(ռուս. поднос)* - *գ.* Սկուտեղ, մատուցարան: *Խանը ծափ ա տամ, նը՚ստը՚ը նի յա մընում՝ պադնօսը ը՛ընքէն* (Ձ):

ՊԱԴՎԱԼ *(ռուս. подвал)* - *գ.* 1. Ներքնատուն, նկուղ: *Էտ տըղան օղտէրը տանում ա, ուրանց պադվալ ա ինում, պըդվալումը պէռնէրը վէր օնում...* (ՀԱԲ, 15, 72): 2. *հեգն.* Էշի հետանցք:

ՊԱԴՎԱԿԱՆ/ՊԱՏՎԱԿԱՆ *(գրբ. պատուական)* - *տե՛ս* ՊԱԴՎԱՎԷՐ:

ՊԱԴՎԱՎԷՐ/ՊԱՏՎԱՎԷՐ *(գրբ. պատուաւոր)* - *ած.* Պատիվ՝ հարգանք վայելող, պատվարժան: *Էտ ախճիգը՚ն էլ պադվավէր տանա յա ինում* (Ձ):

ՊԱԴՎԷԼ/ՊԱՏՎԷԼ - *նբ.* *տե՛ս* Պադէվ տալ:

ՊԱԴՎԷՐ/ՊԱՏՎԷՐ *(գրբ. պատուէր (հրաման, կարգադրություն))* - *գ.* 1. *տե՛ս* ՁԱԿԱՁ: 2. Հրաման, կարգադրություն: *Խանէն պադվէրը նը՚ք՚ուրնէն դանստի կըդարում ըն* (Ձ):

- Պադվէր տալ - 1. *տե՛ս* Ձակազ տալ: 2. Հրամայել, կարգադրել: ...*Մին վէր ա ընում, քըցում ա մաչը, պադվէր տամ, վէր ընդէղ պահին...* (ՆԱԲ, II, 20):

ՊԱԴՐԱՍՏ - *տե՛ս* ՊԱԴԸՐԱՍՏ:

ՊԱԴՐԱՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸԴԸՐԸՍՏՕԹՈՒՆ:

ՊԱԴՐՈՒԳ *(ռուս. подруку)* - *տե՛ս* ԿՈՒՌ(Ն)ԸՓԸՌ(Ն)ՕԿ(Ի):

ՊԱԴՕՇ *(ռուս. подошва)* - 1. *գ.* Կոշկի տակի հաստ կաշին: *Ուստան պադօշը թըրչօց ա տինում, վէր կըկըդէ* (Ձ): 2. *փխբ. ած.* Պինդ, ոչ փափուկ: *Պադօշ հաց ա* (Բ):

ՊԱՁՄԷԼ *(գրբ. բազմիմ)* - *չբ.* Հանդիսավոր կերպով՝ փառավորությամբ նստել, բազմել: *Հէլահէլ թաքավէրը, ուրանն թախտին պազմած, հըմբարդ նըստած ար* (ՀԺՀ, V, 209):

ՊԱՁՄՈՒԹԻՒՆ *(գրբ. բազմութիւն (շատություն))* - *գ.* Մարդկանց մեծ խումբ, բազմություն: *Թաքավէրը մը՛ծ հարըստութուն ա տամ, մը՛ծ պազմութիւնավ ճանապարըմ բիդի ուրանն ախպօրը կօշտը* (ՀԺՀ, VI, 107):

ՊԱՆՋՈՒԿ - *տե՛ս* ՊԷՋՈՒԿ:

ՊԱԹԿՊԷՐ(Ք)/ՊԱՏԿԷՐ(Ք) *(գրբ. պատկեր)* - *գ.* 1. Նկար, դիմանկար, լու-

սանկար: *Ըտէղ էտ տէրտէրը էտ պատկէրան պաչում ա, տանում ժամումը տինում...* (ՀԺՀ, V, 412): 2. Կերպարանք, դեմք, տեսք: *... Էս թաքավէրին մին ախճիգ ա ինում, ամմա վէչ ինսանու պըտկէրավ* (ՀԺՀ, VI, 129): 3. *փխբ.* Շատ գեղեցիկ անձ՝ իր: *Էտ չուբանէն էլ մին ախճիգ ա ինում, հինչ ա՞խճիգ, մին պաթկ՝էրը* (Զ):

ՊԱԹԿ՝ԷՐ(Ք)ՀԱՆ/ՊԱՏԿԷՐ(Ք)ՀԱՆ *(գրբ. պատկերահան)* - *գ.* Պատկերահան, նկարիչ, լուսանկարիչ: *Մին պատկէրհան ըն կանչըմ, պը՛ռըմ, պատկէրը քաշըմ ա* (ՀԺՀ, V, 152):

ՊԱԺԱԿ/ՊԷԺԱԿ *(գրբ. բաժակ)* - *տե՛ս* ԸՍՏԱՔԱՆ:

ՊԱ՛ԺԱՆ - *տե՛ս* ՊԻԺԸ՛Ն:

ՊԱԺԱՆՔ *(գրբ. բաժան (բաժանված, բաժին)* - *գ.* Որեւէ բան իրար միջեւ բաժանելը: *Հա՛նը մը՛ռնում ա, տանը պաժանքը ըսքըսում ա* (Զ):

- Պաժանք անէլ - *տե՛ս* ՊԻԺԸ՛ՆԷԼ:

ՊԱԺԱՌ/ՊԱԺԱՐ *(ռուս. пожар)* - *գ.* Շինության՝ անտառի՝ խոտի դեզի եւն մասնակի կամ ամբողջական բոցավառում, հրդեհ: *Պաժառը սաղ ծըմակը էրից* (Բ):

- Պաժառ ա՞ - Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես շտապում: *Հա՛նը ասմա.- Պաժառ ա՞, արտ ա, լի՞, կըհընձինք՝, թայդի մէ՛լ ըղնէլ* (Զ):

- Պաժառ ըղնէլ - Հրդեհ ծագել՝ առաջանալ, հրդեհվել: *Մին օր էլ ք՝ուխէն տօնը պաժառ ա ըղնում, հինչը կա, լօխ էրվում* (Զ):

- Պաժառ տալ/քըցիլ - Հրդեհ առաջացնել, հրդեհել: *Էտ օյինբազը քը՛շէրը ք՝ինամ ա, շինացուց արտէրը պաժառ տամ* (Զ):

ՊԱԺԱՌՆԻ/ՊԱԺԱՐՆԻ *(ռուս. пожарный)* - 1. *ած.* Հրշեջ, հրդեհը մարող՝ հանգցնող: *Պաժառնի մաշինը մինչը՛վ տը՛ղ ա հըսնում, տօնը էրած, պըրծած ա ինում* (Զ): 2. *տե՛ս* ՊԱԺԱՌՆԻԳ՝:

ՊԱԺԱՌՆԻԳ՝/ՊԱԺԱՐՆԻԳ՝ *(ռուս. пожарник)* - *գ.* Հրշեջ խմբի ծառայող: *Պաժառնիգը էտ խուխէն խըստում ա, տա՛ւս օնում* (Զ):

ՊԱԺԱՐ - *տե՛ս* ՊԱԺԱՌ:

ՊԱԺԱՐՆԻ - *տե՛ս* ՊԱԺԱՌՆԻ:

ՊԱԺԱՐՆԻԳ՝ - *տե՛ս* ՊԱԺԱՌՆԻԳ՝:

ՊԱ՛ԺԻՆ - *տե՛ս* ՊԷԺԻՆ:

ՊԱ՛ԺԻՆՔ՝ - *տե՛ս* ՊԷԺԻՆՔ՝:

ՊԱ՛ԺԻՆՔ՝ԱՎԷՐ - *տե՛ս* ՊԷԺԻՆՔ՝ԱՎԷՐ:

ՊԱԺԿԱ - *տե՛ս* ՊԱՇԿԱ:

ՊԱԼԱԹԿԱ/ՊԱԼԱՏԿԱ *(ռուս. палатка)* - *տե՛ս* ՕԲԱ: *Խաբարը ք՝ընամ ա, հըսնում թաքավէրէն.- Պա ասէլ ը՛ղ՞ս՝ օրիշ տէղա զօրք ըն յէկալ, պալատկէքը վէր թօղալ, էն ըն ընդէղ* (ՀԱԲ, 15, 20):

ՊԱԼԱՏ *(գրբ. պալատ)* - *գ.* 1. Արքայական՝ իշխանական ապարանք: *Էտ մարթը ճարը կըտրած յէր ա կէնում, հըդէ ինում բիդի թաքավէրէն պալատը* (ԼՂԲՔ, 265): 2. *փխբ.* Պալատական պաշտոնյաների ամբողջությունը, արքունիք: *Սաղ պալատը տա՛ւս ա կ՝ամ, թըմա՛ղա՛ անում* (Զ): 3. *փխբ.* Մեծ ու շքեղ՝ պալատանման շենք՝ տուն՝ բնակարան: *Խօզ՝ պահօղ Կա՛փին էլ ա պալատ շինա՛լ* (Բ):

ՊԱԼԱՏԱԿԱՆ - *գ., ած.* Պալատում ծառայող՝ պաշտոնավորող (անձ): *Թաքավէրը մին օրիշ պալատական տըղի յա ղարկըմ...* (ՀԺՀ, V, 80):

ՊԱԼԱՏԿԱ - *տե՛ս* ՊԱԼԱԹԿԱ:

ՊԱԼԻ - *գ.* Կտորից կարված եւ զարդարված շրջանակ, որի վրա դրվում եւ հարդարվում են կանացի գլխակապի մասերը: *Պալին կապած ծանդըր-ծընդըրմէ՛ծ կընէգ՝ ա ընում Քաթանը* (ՆԱԲ, III, 158):

ՊԱԼԿՕՎՆԻԿ *(ռուս. полковник)* - *գ.* Հրամկազմի զինվորական կոչում եւ աստիճան, ինչպես նաեւ այդ կոչումն ու աստիճանը կրող սպա, գնդապետ: *Չինգ՝իթաղա վէրչին պըրիստավը պալկօվնիկ Վիլմանընն ա իլա՛լ...* (ԱԱ, 52):

ՊԱԼՏՕՆ *(ռուս. пальто, ֆր. paletot)* - *գ.* Վերարկու: *Յէր ա կէնում, պալտօնը օսէրը քըցում, ք՝ընում...* (ՀԱԲ, 15, 106):

ՊԱԽԽՕ(Վ) - *ձ.* Զարմացական բացականչություն՝ ինչքա՛ն շատ է: *Պախխօ՛, էս հիշկան ծո՛ւն ա՞ յը՛կալ* (Բ):

ՊԱԽԾ - *տե՛ս* ԲԱԽԾ:

ՊԱԽԾԱՅԻԾ - *տե՛ս* ԲԱԽԾԱՅԻԾ:

ՊԱԽԾԷԼ - *տե՛ս* ԲԱԽԾԻԼ:

ՊԱԽԾԷՅԻԾ - *տե՛ս* ԲԱԽԾԱՅԻԾ:

ՊԱԽԾԻԼ - *տե՛ս* ԲԱԽԾԻԼ:

ՊԱԽ-ՊԱԽ-ՊԱԽ - *ձ.* Հեգնանքի արտահայտություն: *Պա՛խ-պա՛խ-պա՛խ, էշ կօռտօղ համօն էլ ա հըրամաք ընգալ, տէ՛ն կացէ՛ք՝* (Բ):

ՊԱԾ՝/ՊԷԾ *(գրբ. պէծ)* - *տե՛ս* ԿԱԾ՝ (1-4):

- Պած՝ին տալ - Կայծ արձակել: *Կըրակը պած՝ին ա տամ* (Բ):

ՊԱ՛Կ - *տե՛ս* ՊԷԿ:

ՊԱԿԱՍ *(գրբ. պակաս)* - *ած.* 1. Ոչ լրիվ, ոչ կատարյալ, թերի: *Կ՝իրքին թուխտէրը պակաս ա* (Բ): 2. Նվազ, ավելի քիչ: *Հըռնընվա յէշա՛ծ՝ ըստարէ ցօրէնը պակաս ա* (Բ): 3. Պակասավոր: *Ասում ա.- Հա՛լա՛ պակաս պէնէր շատ կա* (Զ): 4. Վատ: *Մէր շէնին ըշկօլը հինչավ ա՞ պակաս ծէրան* (Բ): 5. Խելքը պակաս, հիմար: *Իզէն պատառ պակաս ա, սա՛յաղ կաց* (Բ): 3. *տե՛ս* ՊԸԿԸՍՕԹՈՒՆ: 7. *մ.* Պակաս կերպով՝ չափով, ոչ լրիվ: *Ասում ա.- Խէ՞ յը՛ս ք՝ը՛զ պակաս ը՞մ սիրում* (Զ):

- Պակաս խօսկ - Տհաճ խոսք, հայհոյանք: *Թաջիրը կըզնըվում ա, էտ կ՝ը՛ռա՛ծ ճըկըտակ՝իրը ճըդօրտում, մին քանէ պակաս խօսկ էլ ասըմ ընտահանց* (ՀԺՀ, VII, 110):

- Պակաս տարէ - Ոչ բարեբեր՝ անբարենպաստ տարի: *Պակաս տարէ յա իլա՛լ, մին պէն չի իլա՛լ ուտէլի...* (ԲՀԲ, 249):

- Պակաս տը՛ղ չինիլ - Անթերի՝ կատարյալ լինել: *Էտ ըխճըկանը ըսկի պակաս տը՛ղ չօնէ* (Բ):

- Պակաս օր - Նեղություն, նեղ վիճակ: *Ասում ա.- Վէ՛չինչ, պակաս օր ա, յօ՛ւլա ք՝ը՛ցէք՝* (Զ):

ՊԱԿԱՍ-ՊԸՌԱՏ/ՊԸԿԸՍ-ՊԸՌԱՏ - 1. *տե՛ս* ԿԸՍԸՏ-ՊԸՌԱՏ: 2. *ած.* Կարիքավոր, աղքատ: *Պակաս-պըռատ մարթիք՝ շատ կան* (Բ):

ՊԱ՛ԿԼԱ՛ - *տե՛ս* ՊԷԿԼԱ՛:

ՊԱԿՐԻՇԿԱ *(ռուս. покрышка)* - *տե՛ս* ԱԿՆԸ[3]:

ՊԱՀ[1] - *ձ. տե՛ս* Պա հօ՛ (վէ՛): *Ախպէրը յէր ա կէնում, ասում.- Պա՛հ, էս հինչ շատ ը՞մ քօն իլա՛լ* (ՀԺՀ, V, 557):

ՊԱՀ[2] *(գրբ. պահ, պահապան)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Պահ տալ - 1. Պահպանության հանձնել, պահելու համար մեկին՝ մի տեղ հանձնել: *Մըռնէլան առաչ ո՛ւրա՛ն իլա՛ծ-չիլա՛ծը պահ ա տաս մին էրո՛ւշ առըտուրականու* (ԱԱ, 65): 2. Հանձնարարել, պարտավորեցնել: *Տըրանք ամէն օր իտի պահ ըն տաս, ք՝իս վը՛ռսի* (ՀԺՀ, V, 254):

ՊԱ՛Հ - *տե՛ս* ՊԻՀ:

- Պա՛հի տալ - *տե՛ս* Պիհավ տալ:

ՊԱՀԱԾ-ՊԱՇՏԱ՛Ծ - *ած.* Լավ խնամված, փարթամ: *Պահած-պաշտա՛ծ բաղ ա Սիրգօնէն բաղը* (Զ):

ՊԱՀԱԿ *(գրբ. պահակ)* - *գ.* Պահապան, պահպանող՝ հսկող անձ: *Պահակը յէշում ա, տէսնում մինը բաղէն չափարը ճըմօռում ա* (ՆԱԲ, III, 154):

- Պահակ կաղնէլ/վը՛ռնը կէնալ - *տե՛ս* Պըհըկօթուն անէլ: *Դա՛ռզի ախպէրը նըղացած ա ինըմ, յէր ա կըցընըմ ո՛ւրա՛ն պուճուր ախպօրը, վէր պահակ կաղնի, ինք՝ը պարանց ընգնըմ, քօն ինըմ* (ԼՂԲ, 328):

ՊԱ՛ՀԱ՛ԿՕԹ - *տե՛ս* ՊԻՀԱԿՕԹ:

ՊԱՀԱԿՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸՀԸԿՕԹՈՒՆ:

ՊԱՀԱՆՋ - *գ.* Բավարարման ենթակա անհրաժեշտ պետք, կարիք, հարկավորություն, ցանկություն: *Դէ հինչ ա՞նէ,*

թաքավը՛ր ասալ ա՝ հու հինչ պահանջ օնէ, էն էլ կանիք՝ (ԼՂԲՔ, 270):

ՊԱՀԱՆՋԻԼ - *տե՛ս* ՊԸՀԱՆՋԻԼ:

ՊԱՀԱՆՋԿՈՒՏ - *տե՛ս* ՊԸՀԱՆՋԿՈՒՏ:

ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ - *տե՛ս* ՊԸՀԱՆՋՄՈՒՆՔ:

ՊԱՀԱՆՋՎԻԼ - *տե՛ս* ՊԸՀԱՆՋՎԻԼ:

ՊԱՀՊԱՆ - *տե՛ս* ՊԻՀԱՊԷՆ:

ՊԱՀՎ - *տե՛ս* ՊԻՀԱՎ:

ՊԱՀՎԷՐ - *տե՛ս* ՊԻՀԱՎԷՐ:

ՊԱՀԷԼ/ՊԱՀԻԼ *(գրբ. պահեմ)* - *նբ.* 1. Որոշ վիճակում՝ դրության մեջ՝ դիրքում թողնել՝ պահպանել: *Էտ մարթը ծը՛ռքը պիցըրցընում ա, ըտի պահում* (Ձ): 2. Սնել, կերակրել, խնամել: *Մին օր մըսլըհաթ ըն անում, վը՛ր տանէն կավը ծախէն, պիրին խօխէնք՝ը պահէն* (ՆԼՂԺԲ, 62): 3. Հետեւել, խնամք տանել: *Ք՝ը՛զ պահէ, մըրսիս վէջ, հիվընդանաս* (Բ): 4. Հսկել, պահպանել: *Շէնին զըհմընէն Շունդանք ըն ըլալ պըհէյիս* (ՆԱԲ, 85): 5. Տեղավորել, ապաստան տալ: *... Ուրանց զօրքան մին խը՛ղլա հօքի ըստէղ ըն իլալ պըհիլիս* (ԱԱ, 30): 6. Թաքցնել, ծածկել: *Կընէգ՝ը դանստի փուլը տընէս ա պէրցին տակէն պըհէս* (Ձ): 7. Բռնել: *Մին ծը՛ռքավ թըվանգ՝ը ա պահում, մինավը՝ ջըլանվը* (Ձ): 8. Հետ դնել, հավաքել, խնայել՝ հետագայի համար: *Լ՝ավ կընէգ՝ը նը՛ղ օրվա հը՛տէ տանը միշտ փուլ կըպահէ* (Բ): 9. Իրեն դրսեւորել: *Էտ տըղան դունընղնուն քըշտէն ուրան լ՝ավ չի պահում, հանը կըգնըվում ա յըրան* (Ձ): 10. Պահապան լինելով՝ արածեցնել: *Էտ տըղան ամմէն օր տանում ա էծերը պահում, ուրուգ՝ունը պիրում տօն* (ՆԼՂԺԲ, 15): 11. Ունենալ: *Կամօ դային ջուբումը միշտ տէնակ ար պըհէս* (Բ): 12. Ջսպել: *Ըտը՛ղ թաքավէրը էլ կըրէս չի ծըծաղը պահէ, ջըխկարա յա տաս* (Ձ): 13. Ետ պահել, կասեցնել: *Պալական աքէրը պըհէս ա, թուղէս չի էտ ըռնըխըմէն յըրա պըրծընէ, ըսպանէ Գ՝ուլուն* (Ձ): 14. Պաշտպանել: *Մէր յէրգ՝իրը մունք բիդի պահինք՝, էրանը մըզը՛տէ հինչ բի՞դի անէ* (Բ): 15. Չսպառել, չսպանել, չօգտագործել եւն: *Վէր ա յէկալ, ըստահանց լօխճին կըտօրալ, էն էծին պահալ* (ՀԺՀ, VI, 256): 15. Պարգել, դեմ տալ: *Էտ էլ փէշկը պահում ա, Մահմադը լըցնում ա* (ՀԱԲ, 15, 15):

ՊԱՀԷԼ - *տե՛ս* ՊԻՀԻԼ:

ՊԱՀԷԼ-ՊԱՇՏԻԼ *(գրբ. պահեմ (պահել, պահպանել)+պաշտեմ (սրտանց պատվել, հոգալ)* - *նբ.* Լավ խնամել: *Պը՛հը՛ցէ, պըշտը՛ցէ, յըրան խօտը հընձէցէ, տական ճանը խըմը՛ցէ* (ԱՀ, 72):

ՊԱՀԷՍ *(գրբ. պահեստ (պահված բան, մթերք, ավանդ)* - *գ.* 1. Ապրանքներ՝ իրեր՝ մթերքներ եւն պահելու հատուկ տեղ՝ շենք: *Աթանը էշը առաչընն ա անում, ք՝ընում պահէստ* (ՆԱԲ, 127): 2. *փխբ.* Պահեստում պահվող ապրանքը՝ մթերքների ամբողջությունը: *Մին օր էլ կըլխօգէն պահէստը թըլանում ըն* (Ձ):

ՊԱՀԷՍՏԱՊԷՏ - *գ.* Պահեստի վարիչ, որը պատասխանատու է պահեստի համար: *Էտ պահէստապէտը ամէն դօնում արաղը, պէնը պըժընէյիս ամէն մինին փայան էրկու ըստաքան խըմում ա* (ՀԱԲ, 15, 138):

- Պահէստապէտու կընէգ՝ - Փարթամ՝ լիքը՝ գեր կին: *Պահէստապէտու կընէգ՝ ը՞ս, էտ հիշկան ը՞ս ք՝ուքացալ* (Բ):

ՊԱՀԸՌԸ՛Խ - *տե՛ս* ՊԻՀԸՌԸ՛Խ:

ՊԱՀԻԼ - *տե՛ս* ՊԱՀԷԼ:

ՊԱՀՎԷԼ/ՊԱՀՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՊԱՀԷԼ-ի:

ՊԱՀՎԷԼ - *տե՛ս* ՊԻՀՎԻԼ:

ՊԱՀՎԷԼ-ՊԱՇՏԸՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՊԱՀԷԼ-ՊԱՇՏԻԼ-ի:

ՊԱՀՎԻԼ - *տե՛ս* ՊԱՀՎԷԼ:

ՊԱՀՔ/ՊԱՔ/ՊԱՍ[1] *(գրբ. պահք, պաս)* - *գ.* 1. Եկեղեցական օրենքներով սահմանված պահեցողություն ուտիսվա կերակուրներից, պաս: *Պահքը լ՝ավ պէն ա, վէր կարիս պահիս* (Բ): 2. Այդպիսի պահեցողության ժամանակը: *Մին օր էլ խաբար ըն տուվալ, վէր կիճի ախպէրը՝ Խօսրօվը, պահքէն էն ա մէս ուտէս* (Ձ):

- Պահքը պէնալ - Պահեցողությունը ավարտել, պասը լուծել: *Պահքը պէնում ըն, մին լ՝ավ ք՝ը՛փ անում* (Ձ):

- Պահք պահէլ/փըռնէլ - Ուտիսվա կերակուրներից հրաժարվել: *Շատ մարթ ա օգ՝ում պահք պահէ, ամմա կարում չի* (Ձ):

- Պահք տը՛ռնալ - 1. Չափավորվել: *Ջըհիլնուն ք՝ը՛փ անէլը պահք ա տը՛ռալ* (Ձ): 2. Զերեւալ: *Պահք ըս տը՛ռալ, էտ ըշտըէղ ը՞ս, մին ամէս ա՝ տը՛սնում չըմ* (Բ):

- Պահքու պուժուժ - Փոքրիկ զանգուլակ՝ բոժոժ, որ կախում են մատաղացու գառան վզից: *Մին պահքու պուժուժ ա ինք՝ օնում, կ՝առնանը վիգ՝ան կախ տամ* (Ձ):

ՊԱՂԱՐՃ - *տե՛ս* ՊԷՂԱՐՃ:

ՊԱՃ(Ճ)ԱՌ/ՊԱՏՃԱՌ *(գրբ. պատճառ)* - *տե՛ս* ՄԱՆԻ[1]:

ՊԱՃ(Ճ)ԱՌԱՎԷՐ/ՊԱՏՃԱՌԱՎԷՐ/ ՊԱՏՃԱՌԷՎՈՒՐ *(գրբ. պատճառաւոր (պատճառ տվող, հանցավոր)* - *ած.* Հղի (կնոջ մասին): *Պաճճառավէր կընանուցըն էլ ըն ըսպանալ* (Ձ):

- Պաճճառավէր մընալ/տը՛ռնալ - Հղիանալ: *Վէրչը, էտ տըղէն նըհէտ փըսակվում ա, մընամ պատճառավէր* (ՀԱԲ, 15, 47):

ՊԱՃ[1] - *գ.* Որոշ ընդեղենների՝ հատիկների արտաքին պատյանը, պատիճ: *Միսը՛ռը թակում ըն, ճօկում, պաճ՝ը տէն ածում* (Ձ):

ՊԱՃՕ - *ած.* Մեծ ու տափակ քիթ ունեցող: *Պաճօ մարթին անա գ՝անիլանս տարած ա* (Բ):

ՊԱՄԱԴԱ *(ռուս. помада, ֆր. pommade)* - *գ.* Շրթներկ: *Միհէնգ՝ պառավ կընանէք՝ը՛ն էլ ըն պամադա քըսում* (Ձ):

ՊԱՄԱԴՕՐ - *տե՛ս* ՊԱՄԻԴՕՐ:

ՊԱՄԲԱՋԻՆ *(ռուս. бумазея)* - 1. *գ.* Մի երեսը մազեղեն խավով պատված բամբակյա գործվածք: *Պամբագինը առաչ թանգ՝ ա իլալ* (Բ): 2. *ած.* Այդ գործվածքից պատրաստված՝ կարված: *Պամբագին շալվար ա կ՝ը՛ցալ* (Բ):

ՊԱՄԲԱԿ - *տե՛ս* ՊԷՄԲԱԿ:

ՊԱՄԲՈՒԼԻ - *ած., գ.* 1. Թեթեւսոլիկ, թեթեւամիտ (անձ): *Պամբուլի ախճիգ՝ ա Խըզալանց Սուսանը* (Բ): 2. Հարբած (անձ): *Էտ պամբուլին կարում չի, թա վը՛ննանը յըրա վը՛ննը կէնա* (Ձ):

- Պամբուլի կըտըրէլ - 1. Թեթեւսոլիկություն անել: *Հինչ ը՞ս պամբուլի կըտըրալ, համօթ չի՞* (Բ): 2. Հարբել: *Կ՝ինին խըմում ըն, պամբուլի կըտըրում* (Ձ):

- Պամբուլի շինիլ - Մեկին ծաղրի առարկա դարձնել: *Հիրըվանէրը ըտըրան պամբուլի յըն շինալ* (Ձ):

ՊԱՄԷՏ(ՆԻԿ) - *տե՛ս* ՊԱՄՅԱՏՆԻԿ:

ՊԱՄԻԴՕՐ/ՊԱՄԱԴՕՐ *(ռուս. помидор, ֆր. pommedor)* - *գ.* Պոմիդոր, լոլիկ: *Ղարաբաղցէն առանց պամադօր կարէլ չի յօլլա ք՝ինի* (Ձ):

ՊԱՄՅԱՏՆԻԿ/ՊԱՄԷՏ(ՆԻԿ) *(ռուս. памятник)* - *տե՛ս* ԱՐԾԱՆ:

ՊԱՄՕՇՆԻԳ՝ *(ռուս. помощник)* - *գ., ած.* Օգնող, օգնական: *Պամօշնիգ՝ը նի յա մընում, տը՛սնում դօխտուրը տափէն վէր ընգած* (Ձ):

ՊԱՅԹԱԼ - *տե՛ս* ԲԱՅԹԱԼ:

ՊԱՅՄԱՆ *(գրբ. պայման)* - *գ.* 1. Համաձայնություն երկու կամ ավելի կողմերի միջեւ որեւէ բանի մասին: *Թաքավէրին տըղան պայմանին օրը կ՝ամ ա* (ՀԺՀ, V, 39): 2. Պահանջ կամ առաջարկ, որ անում է կողմերից մեկը որեւէ կարգի համաձայնության համար: *Դէրվիշը ասմա.- Իմ պայմանըս էն ա, վէր մը՛ծ ըխճըկանըտ ինձ տաս* (Ձ): 3. Որեւէ կարգի համաձայնության գործողության ժամանակը՝ ժամկետը: *Ասում ա.- Մէր պայմանը մինչը՛վ աշունքըն ա իլալ, էլ կարէլ չըմ* (Ձ):

- Պայման անէլ/կապէլ/նըստէլ - Պայ-

մանավորվել, համաձայնության գալ մի բանի շուրջ: *Քՙանիբը մըտածում ա, մըտածում, ասում.- Քՙինանմ կընգանըս նըհէտ պայման նըստիմ, կՙամ...* (ՆԼՂԺԲ, 34):

- Պայման տինիլ - 1. *տե՛ս* Պայման անել: 2. Պահանջ ներկայացնել, որեւէ բանի համար անհրաժեշտ նախապայման համարել: *Թաքավէրը ՝ուրՙան պայմանը տինՙիմ ա էտ կընգանը առաջին* (ԲՅԲ, 51):

ՊԱՅՄԱՆԱՎԸՐՎԷԼ/ՊԱՅՄԱՆԱՎԸՐՎԻԼ - *չբ. տե՛ս* Պայման անել:

ՊԱՅՄԱՆԱՎԸՐՎԻԼ - *տե՛ս* ՊԱՅՄԱՆԱՎԸՐՎԷԼ:

ՊԱՅՑ/ԲԱՅՑ *(գրբ. բայց)* - *տե՛ս* ԱՄՄԱ:

ՊԱՅՕԿ *(ռուս. пакет)* - *գ.* Սննդաբաժին, սննդի օրաբաժին: *Քընում ա ՝ուրՙան ըստացած պայօկը պիրում, լօխ տամ էտ շանը* (ՅԱԲ, 15, 73):

ՊԱՆ - *տե՛ս* ՊԷՆ:

ՊԱՆԱԼ - *տե՛ս* ՊԷՆԱԼ:

ՊԱՆԱԿ - *տե՛ս* ԲԱՆԱԿ:

ՊԱՆԷՐ/ՊԱՆԸՐ *(գրբ. պանիր)* - *գ.* Կաթից հատուկ եղանակով պատրաստվող սննդամթերք՝ պանիր: *Հու վէր էծու պընէրա մին էլ թաժժա հացա քուշտացավ, գՙիդա վէր ջանումը քամէ կա* (ԱԲԲ, 59):

ՊԱՆԷՐ-ՀԱՑ - *տե՛ս* ՊԸՆԸՐՀԱՑ:

ՊԱՆԸՐ - *տե՛ս* ՊԱՆԷՐ:

ՊԱՆԻԼ - *չբ.* Աշխատել, գործել, բանել: *Պանՙոդ յը՝զնը յա՛ վարումը կինի, յա՛ հանդՙումը* (Ձ):

ՊԱՆԻԿԱ *(ռուս. паника, հուն. panikon)* - *գ.* Տագնապ, խուճապ: *Պանիկան փիս պէն ա, ժուղովուրթէն տօնը կընքանդի* (Բ):

- Պանիկա ընկնել - Տագնապալից վիճակ՝ իրարանցում՝ խուճապ առաջանալ: *Կընռը՝վը ընքըսվէլի խաբարը վէր կՙամ ա, պանիկան ընկնում ա յէրգՙիրը* (Ձ):

- Պանիկա քընցիլ - Տագնապալից՝ խուճապային իրադրություն ստեղծել: *Հինչ ը՞ս պանիկա քընցանՙլ, արտ ա, լի՞ էրալ ա, էրալ ա* (Բ):

ՊԱՆԻԿԱՎԱՏ *(ռուս. паниковать (խուճապի մատնվել)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Պանիկավատ անել - *տե՛ս* Պանիկա քընցիլ:

ՊԱՆԻԿՙՕՐ *(ռուս. паникер)* - *ած., գ.* Խուճապ գցող՝ առաջացնող (անձ), խուճապարար, խուճապարկու: *ԴՙՕրՙուց Միրզին նըման պանիկՙօր վէչ մին շէնում կա վէչ* (Բ):

ՊԱՆՁԱՆՐ - *տե՛ս* ՊԷՆՁԱՆՐ:

ՊԱՆՎԱԼ - *տե՛ս* ՊԷՆՎԱԼ:

ՊԱՆՎՕՐ(Թ) - *տե՛ս* ՊԷՆՎՈՒՐ(Թ):

ՊԱՆՕՍ *(ռուս. панос)* - *տե՛ս* ՓՈՒՐԸ-ՀԱՐԷՆՔՙ:

- Պանսօս անել - Փորլուծություն ունենալ, լուծել: *Խօխան գՙՙուլՙանս շատ ա կէրալ, պանսօս ա անում* (Բ):

ՊԱՇԱՐ *(գրբ. պաշար)* - *գ.* Ճանապարհ գնալիս հետը վերցնելու ուտեստ՝ սննդամթերք: *Իտի թաքավէրին իրէք տըղէրքը ՝ուրՙանց զէնքը-զըրահը, ճընապարին պաշարը յօր ըն օնըմ, ծի նըստըմ, քՙընըմ* (ՀԺՀ, V, 85):

ՊԱՇԿԱ/ՊԱԺԿԱ *(ռուս. пачка)* - *գ.* 1. Փոքր տուփ: *Սըրմացուն ածում ա էտ պաշկան, տինում կամօդումը* (Ձ): 2. *տե՛ս* ԿԱԼՕԴ:

ՊԱՇՅՕԼ/ՊԱՇՕԼ *(ռուս. пошел)* - *ձ. արիմ.* Մեկին վտարելու՝ վռնդելու հրամայական արտահայտություն՝ կորի՛ր, գնա՛: *Կընգնըվում ա, թա.- Պաշյօ՛լ, էլ ըստը՝ղ կՙաս վէչ* (Ձ):

- Պաշյօլը քաշիլ - *արիմ.* Հեռանալ, կորչել: *Էտ վէր տը՝սնում ա, պաշյօլը քաշՙիմ ա* (Ձ):

ՊԱՇՇ - *ձ.* Զարմանքի՝ ափսոսանքի՝ վախի եւն արտահայտություն: *Խասա այան մընրքավուր մին ջահիլ ա տէսնում, ծուլանանը թընխում.- Պա՛շշ, տէսնաս հի՞նչ դՙարդ օնէ...* (ՆԱԲ, 104):

ՊԱՇՊԱՆ/ՊԱՇՏՊԱՆ *(գրբ. պաշտպան)* - *գ.* Մեկին՝ մի բան պաշտպանող մարդ: *Էս դՙարումըս հՙուր պաշտպան չօնէ, կարէլ չի ապընրէ* (Ձ):

ՊԱՇՊՕՐՏ - *տե՛ս* ԲԱՇԲՕՐՏ:

ՊԱՇՏԷԼ - *տե՛ս* ՊԱՇՏԻԼ:

ՊԱՇՏԸՎԷԼ - *տե՛ս* ՊԱՇՏԸՎԻԼ:

ՊԱՇՏԸՎԻԼ/ՊԱՇՏԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՊԱՇՏԻԼ-ի:

ՊԱՇՏԻ/ՊԱՉՏԻ *(ռուս. почти)* - *տե՛ս* ՀԱՄԱՐՅԱ: *Դաթը քաշում ա պաշտի մին տարուց ՙանվիլ* (ՀԱԲ, 15, 48):

ՊԱՇՏԻԼ/ՊԱՇՏԷԼ *(գրբ. պաշտեմ)* - *նբ.* Անչափ սիրել, երկրպագել, աստվածացնել: *Թօռնէրը այուն պաշտում ըն* (Բ):

ՊԱՇՏՊԱՆ - *տե՛ս* ՊԱՇՊԱՆ:

ՊԱՇՏՈՒՆ - *տե՛ս* ՊԱՇՏՕՆ:

ՊԱՇՕԼ - *տե՛ս* ՊԱՇՅՕԼ:

ՊԱՇՏՕՆ/ՊԱՇՏՈՒՆ *(գրբ. պաշտոն)* - *գ.* Հիմնարկում՝ ձեռնարկությունում եւն մեկի ծառայության դիրքը եւ դրա հետ կապված պարտականություններն ու իրավունքները: *Քաչալը տահանց լՙանվ պաշտոննի յա տամ* (ՀԺՀ, V, 632):

ՊԱՉ *(գրբ. պագ, հ.ե.* bu-)* - *գ.* Համբույր, համբուրելը: *Մօրը մին պաչը խուխէն հը՝տէ ամմէն հինչ ա* (Ձ):

- Պաչ անել - *տե՛ս* ՊԱՉԻԼ:

ՊԱՉԷԼ - *տե՛ս* ՊԱՉԻԼ:

ՊԱՉԻԼ/ՊԱՉԷԼ *(գրբ. պագանեմ)* - *նբ.* Համբուրել, պաչել: *Տըղան մուտանում ա, թա թօշան պաչի, ախճիգՙը բըլՙական փընռնում ա* (ՆԱԲ, II, 21):

- Պաչիլ, խաչ հանել/կընլխէն/ճընկատէն տինիլ - *տե՛ս* ՊԱՇՏԻԼ:

ՊԱՉԻՆԿԱ *(ռուս. починка)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Պաչինկա անել - Պատռված՝ կոտրված՝ ճաքած տեղը կարել՝ կարկատել՝ կպցնել, նորոգել: *Մին սաղ օր տանը հիշկան ճաքած, կօտրած ամանչաման ա ինՙիմ, լօխ պաչինկա յա անում* (Ձ):

ՊԱՉ-ՊԸՌՕՇՏԻ - *գ.* Պաչպչելը, պաչպչվելը, գրկախառնվելը: *Թաքավէրը ընընրանց պաչ-պընռօշտին վէր տը՝սնում ա, մանանը կընծում ա* (Ձ):

- Պաչ-պընռօշտի անել - *տե՛ս* ՊԸՉ-ՊԸՉՕՐՎԷԼ (2):

ՊԱՉՎԷԼ - *տե՛ս* ՊԱՉՎԻԼ:

ՊԱՉՎԻԼ/ՊԱՉՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՊԱՉԻԼ-ի:

ՊԱՉՏԻ - *տե՛ս* ՊԱՇՏԻ:

ՊԱՊ/ՊԱՊԷ/ՊԱՊԸ՝ *(գրբ. պապ)* - *գ.* 1. Հոր կամ մոր հայրը, թոռան համար: *Իմ պապ ա շինՙալ մէր շէնին ախպՙուրը* (Բ): 2. Տոհմի՝ ցեղի՝ գերդաստանի նախնին, նախահայր: *Էս ազկէն բընՙՕվրՙան Տօնի պապընը ա տիրալ* (ԱԱ, 79): 3. Պապին կամ ընդհանրապես տարեց տղամարդկանց դիմելու կոչական բառ: *Թօռնը վը՝ր տը՝սնում ա, ասում ա.- Պա՛պէ, էտ հինչ ա իլՙալ, վը՝ր իտի բէքՙէփ ըս* (ՆԼՂԺԲ, 41):

- Պընպէրէն տընղընհան անել - Պապերին՝ նախապապերին՝ հանգուցյալներին հայհոյել: *Հիրը՝վանը վէր հիրըվանէն պընպէրէն տընղընհան ընրավ, էլ հինչ հիրը՞վան* (Ձ):

ՊԱՊԱ *(ռուս. папа, լատ. papa, հուն. pappos)* - *գ.* 1. *տե՛ս* ՀԱՆՐ: *...Մին էլ մին ջուհուդ տՙուս ա կՙաս, շառավ տաս, թՙ.- Էտ իմ պապու ջամըն ա* (ՀԺՀ, V, 605): 2. Հորը դիմելու կոչական բառ: *Խօխան ասմա.- Պա՛պա, ինձ էլ տա՛ր* (Ձ):

- Պապուն ՙարը՝վ - Երդման բանաձեւ՝ երդվում եմ հայրիկի արեւով: *Պապուն ՙարը՝վ, յը՝ս չըմ ընրալ* (Ձ):

ՊԱՊԱՋՙ - *արիմ. տե՛ս* ԿԸԼՕԽ (1):

ՊԱՊԱԼՙ/ՊԱՊԱՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Պապալՙ անել - *մնկ. տե՛ս* Պար կՙալ:

ՊԱՊԱԿԱՆ - *տե՛ս* ՊԸՊԱԿԱՆ:

ՊԱՊԱԿԸԼՕՆՁ - *տե՛ս* ՊԸՊԸԿԸԼՕՆՁ:

ՊԱՊԱՃԸՁՏ - *գ.* 1. Ճնճղուկից փոքր թռչնատեսակ: *Պապաճընզտը կՙընտէրէն ղընրղընը՝ցընը ա ինՙիմ* (Բ): 2. *փխբ.* Փոք-

ռամարմին, բայց ժիր ու ճարպիկ անձ: *Էտ պապաճըզտը սաղ շինանցուց խափից* (Բ):

ՊԱՊԱՐ - *տե՛ս* ՊԱՊԱԼ[1]:

ՊԱՊԷ - *տե՛ս* ՊԱՊ:

ՊԱՊԸ[1] - *տե՛ս* ՊԱՊ:

ՊԱՊԸՌՕՋ/ՊԱՊՌՕՋ/ՊԱՊԻՐՕՍ/ՊԱՊՐՕՍ *(ռուս. папироса)* - *գ.* Ծխախոտ, գլանակ: *Միհէնգվա քՕրփանի խօխէնքը էլ ըն պապըռօզ քաշում* (Բ):

- Պապըռօզը պապըռօզան նի կըցընէլ - Շատ՝ հաճախակի ծխել: *Տընաշինըտ պապըռօզը պապըռօզան ա նի կըցընէս* (Բ):

ՊԱՊԸՐԱՎԻՏ/ՊԱՊՐԱՎԻՏ *(ռուս. поправить(ուղղել, կարգադրել, կարգի բերել)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Պապըրավիտ անէլ - Գլուխը խուզել, մազերը կարգի բերել: *Ամանը մըհըտ քինամ ար դանգանք Սըմսօնէն կօշտը, կըլՕխը պապըրավիտ անում* (Ձ):

ՊԱՊԻՐՕՍ - *տե՛ս* ՊԱՊԸՌՕՋ:

ՊԱՊՌՕՋ - *տե՛ս* ՊԱՊԸՌՕՋ:

ՊԱՊՐԱՎԻՏ - *տե՛ս* ՊԱՊԸՐԱՎԻՏ:

ՊԱՊՐՕՍ - *տե՛ս* ՊԱՊԸՌՕՋ:

ՊԱՊՈՒՑԻ - *գ.* Մորատատ, մոր կողմի տատ: *Սիտրակէն պապուցին մըռալ ա* (Ձ):

ՊԱՌ[1] *(գրբ. բառ)* - *գ.* 1. Լեզվի միավոր՝ բառ: *Լըհան վէր վըոչին պառը ասըմ ա, պըրծընըմ, էտ օթախին ակուշկին տակին էտ ըխպըրացուն քար ա տըռնըմ* (ՀԺՀ, V, 205): 2. *փխբ.* Բնավորություն, վարվեցողություն: *Տընըշինիտ կընգանը պառը ըսկի պառ չի* (Ձ):

- Պառը կակօղ - Մարդամոտ, մեղմ բնավորություն ունեցող: *Պառը կակօղ մարթ ա Անդրին* (Ձ):

- Պառը կօշտ - Կոպտող, կոպիտ բնավորություն ունեցող: *Էտ տըղին կօխկը հաստ ար, պառը՝ կօշտ* (ՀԺՀ, V, 29):

ՊԱՌ[2] *(ռուս. пар)* - *տե՛ս* ԲՈՒՂ:

ՊԱՌԱԿ/ՊԸՌԱԿ *(գրբ. պառակ (ոչխարի բակ, փարախ, խոզի կող), պրս. para (կող)* - *գ.* 1. Լեռ, սար: *Ղըզղըլէն մօտէ մին սարը՝ անումը Լէն պառակ, նըրան շատ տուր ա կամ* (ՀԱԲ, 15, 146): 2. Լեռան կող՝ լանջ: *Քանպանը ասըմ ա.- Մդէր, պըռակըմը մին լանվ բաղ օնիմ, էն էլ կըտամ, մին թանիրը ըրա՛, դանգանցրու՛* (ՀԺՀ, VII, 385):

- Պըռըկնէն ըղնէլ - *տե՛ս* ՉՕլէրը ըղնէլ:

- Պըռըկնէն քըցիլ - *տե՛ս* ՉՕլէրը քըցիլ:

ՊԱՌԱՎ *(գրբ. պառաւ (ծեր կին)* - *ած., գ.* Ծեր, տարիքն առած (կին, տղամարդ, նաեւ՝ կենդանի, բույս): *Էն պառավ նանին էլ նըստած տըղը քօն իլանծ ա իլանլ* (ՀԺՀ, V, 81):

- Պառավը գիթկան չար, ամմա կըլՕխը յըկած ար - Ասում են շատ բան տեսած՝ փորձառու մարդկանց մասին:

- Պառավը հիշկան կուտըր(հ)ատվէ, ախճիգ չի տըռնալ - Արհեստական միջոցներով հնարավոր չէ բնականի տպավորություն թողնել:

- Պառավը ուրանն թանէն թըթօ չի ասէլ - Մարդ իր ունեցածը չի վատաբանի:

- Պառավ կանուլ/քըթՕլ - Փորձառու ավազակ: *Պառավ կանուլ ա Քանպանը* (Բ):

- Պըռավէն էծէրը - Մարտ կամ ապրիլ ամսին տեղացող անսպասելի ձյուն: *Ըտըրա հըտէ էլ աբրէլին ծունին ասում ըն Պըռավէն էծէրը* (ԱԱ, 83):

- Պըռավու խօրանգ - Փափուկ ուտելիք: *Լըբըշօրվան պըռավու խօրանգ ա* (Բ):

- Պըռավու պօրտ - Վայրի բանջարի տեսակ: *Առանց պըռավու պօրտ էլ ըն ժընգանլանվ հաց թընխում* (Բ):

ՊԱՌԿԷԼ *(գրբ. պառակիմ)* - *չբ. տե՛ս* Պարանց ըղնէլ: *Քընում ա թաքավէրին կօշտը էն ժամանակ, վէր թաքավէրը պառկած ա ինում* (ՆԱԲ, 15, 37):

ՊԱՌՆԱԼ - *տե՛ս* ՊԷՌ(Ն)ԷԼ:

ՊԱՌՆԸՎԷԼ - *տե՛ս* ՊԷՌ(ՆԸ)ՎԷԼ:

ՊԱՌՆԻԿ *(ռուս. парник)* - *գ.* Ջերմոց: *Միհէնգ էլ Ղարաբաղ ինդթ ա ընգալ, լօխ հընըթնէրումը պառնիկ ըն շինում* (Բ):

ՊԱՌՊԱՌ - *տե՛ս* ՊԱՐՊԱՌ:

ՊԱՌՆԻԳՆԻՄ - *տե՛ս* ՊԱՐՆԻԳՆԻՄ:

ՊԱՌՆԻԳՆԻՆ - *տե՛ս* ՊԱՐՆԻԳՆԻՄ:

ՊԱՍ[1] - *տե՛ս* ՊԱՀՔ:

ՊԱՍ[2] *(ռուս. пас, անգլ. to pass, ֆր. passe)* - *գ.* 1. Որեւէ բան մեկը մյուսին տալը՝ փոխանցելը (հատկապես խաղերի ժամանակ): *Աշօտը հընգէրէն պասը կարում չի յօր օնէ, տանէլ ըն տամ* (Բ): *ձ.* 2. Թղթախաղի մեջ խաղին չմասնակցելու հայտարարություն: *Կարտէրը ծըՕքան վէր ա քընցում, թա.- ՅըՕս պաս* (Ձ):

- Պաս տալ - Որեւէ բան մեկը մյուսին տալ՝ փոխանցել (հատկապես խաղերի ժամանակ): *Ուրանր պաս տալավ ըն փուտբալ խաղ անում* (Ձ):

ՊԱՍԱԺԻՐ *(ռուս. пассажир, գերմ. Passagier, ֆր. passager)* - *գ.* Փոխադրամիջոցներով որեւէ տեղ գնացող մարդ՝ ուղեւոր: *Ախտաբուզը պարան ա կամ, ըղնում ծՕրը, հէնգ պասաժիր ա մըռնում* (Ձ):

ՊԱՍԻԼԿԱ - *տե՛ս* ՊԱՍԻՐԿԱ:

ՊԱՍԻՐԿԱ/ՊԱՍԻԼԿԱ *(ռուս. посылка)* - *գ.* Փաթեթավորված փոստային առաքում՝ ծանրոց: *...Մինակ իրէսուսօխտը պասիլկա յըք դարկալ փըրօնտը* (ՀԲ, 337):

- Պասիլկա անէլ - Փոստով ծանրոց ուղարկել: *Սիվէտ աքան ամմէն տարէ մըզըտէ պասիրկա յա իլանլ ընէս Դանշանքանի* (Բ):

ՊԱՍՊՕՐՏ - *տե՛ս* ԲԱՇՊՕՐՏ:

ՊԱՍՈՒԴ *(ռուս. посуда)* - *գ.* Տարբեր տեսակի, հատկապես ապակյա ամանեղեն: *Տանը շատ պասուդ կա* (Ձ):

ՊԱՎԱՐՏ *(գրբ. պարարտ)* - *ած.* 1. *տե՛ս* ՔՈՔ[1]: *Մին պավարտ խօզ ըն մօրթում, կուրկուտ քընցում* (Ձ): 2. Արգավանդ, բերրի: *Մէր վըոդէրը պավարտ վըոդէր ա* (Բ):

ՊԱՎԱՐՕՏ *(ռուս. поворот)* - *գ.* Ճանապարհի ոլորվելու տեղը, ոլորան, շրջադարձ: *Էտ պավարօտումը մաշինէն ուրանր ջիհանում ըն* (Ձ):

- Պավարօտ անէլ/տալ - Շրջադարձ կատարել, թեքվել: *Պավարօտ ա տամ, բիդի աչ քինամ* (Ձ):

ՊԱՎԷՍԿԱ *(ռուս. повестка)* - *գ.* Որեւէ տեղ ներկայանալու գրավոր փաստաթուղթ: *Սուդը պավէսկա յա դարկում...* (ՀԺՀ, V, 646):

ՊԱՎԻԴԼԱ *(ռուս. повидло)* - *գ.* Տրորած պտուղներից եփած քաղցրահամ թանձր ուտելիք, պովիդլո: *Խօխէնքը պավիդլա շատ ըն սիրում* (Բ):

ՊԱՏ[1]/ՓԱԹ *(գրբ. պատ)* - *գ.* 1. Որմ, պատ: *Հընանցէ տէսնում ա՝ իրէք հօքի էն ըն մին պատու տակէ նըստած, կըրակ ըրած, զըրուց ըն անում* (ՆԱԲ, II, 27): 2. Առարկայի շուրջը որեւէ բանի մեկ պտույտ՝ փաթ՝ տակ: *Կընծէգան չՕրք պատ թիլ ա յըէտ տամ* (Բ):

- Պատէն իրըսէն յէշիլ - *տե՛ս* ՉՕրք պատէն դաթումը մընալ:

- Պատէն տէմ անէլ/տէմ տալ - Նեղը գցել, նեղել, ստիպել: *Պատէն տէմ ա ընալ, խըդնէն իլանծ-չիլանծը լօխ յէր կալանլ* (Ձ):

- Պատընն էլ անգուճ/աշկէր օնէ - Գաղտնիքը կտարածվի՝ կլսեն՝ կտեսնեն: *Ասում ա.- Մխճի, տո՛ւս ըրա, պատընն էլ անգուճ օնէ* (Ձ):

- Պատը չօփ կօխէ/կուխըցէք - Հեգնաբար ասում են, երբ մեկը անսպասելիորեն որեւէ լավ բան է անում: *Պատը չօփ կուխըցէք, Սանթուրը կանռնը մօրթալ ա, մըզ ղօնաղ ա ծէն տամ* (Բ):

- Պատը պարան տալ - *հեգն.* Ամուսնության առաջին գիշերն անցկացնել, հարսնացուի հետ կենակցել (տղայի մասին): *Ասում ըն փըսան կընրըցալ չի հընրսընքէն քընշէրը պատը պարան տա* (Բ):

- Պըտէրէն տակէն թօղնէլ - *տե՛ս* ՉՕր տափէն թօղնէլ:

- Պըտէրէն տակէն խօսէլ - Բամբասել, ոչ առերես ասել: *Տընդամարթը, վէր*

պըտէրէն տակէն խօսից, էլ հինչ տը-ղա՞մարթ, կընգանա բէթանր ա (Զ):

- Պըտէրէն տակէն մընալ - *տե՛ս* ՉՕր տափէն մընալ:

- Պատ կանալ - 1. Փաթաթվել: *... Նի յա մընանում, տէսնում մին օխծ խէղճ ըխճը-կանը փօրավը պատ յէկած...* (ՆԱԲ, 37): 2. *տե՛ս* Պատ տալ (2):

- Պատ պիրիլ - 1. *տե՛ս* Պատ տալ (1): 2. Խփել, հարվածել: *Մըհակավը պատ ա պիրում, օխծէն ըսպանում* (Զ):

- Պատ տալ - 1. Փաթաթել: *Քանդիրը յօր ա օնում, էտ ծառավը պատ տամ* (Զ): 2. Պտույտ՝ շրջադարձ կատարել: *Պատ ա տամ հըսարավը, դընրբըզան քըթանում, նի մընանում, տէսնում վէչ մին մարթ չի կա* (ՀԺՀ, V, 389): 3. Պտտեցնել, ման ածել: *Էտ վը՛սկէ ղօչը տանում ըն քըղաքավը պատ տամ* (Զ):

ՊԱՏ[2] *(ռուս. пат)* - *գ.* Շախմատի խաղում այնպիսի դրություն, երբ հակառակորդը չի կարող որեւէ քայլ անել առանց թագավորը հարվածի տակ դնելու, որով եւ խաղը համարվում է ոչ ոքի: *Լ՛ավ շախմատ խաղ անօղը հանց անէլ չի, վէր խաղը պատավ պըրծընէ* (Բ):

ՊԱՏԱԼՕԿ *(ռուս. потолок)* - *գ.* 1. Շինության ծածկի ներսի մասը՝ առաստաղ: *Ախպէրը մին տօպրակ մօխէրավ լըցնըմ ա, պատալօկան կախ տամ...* (ՀԺՀ, V, 56): 2. *փխբ.* Որեւէ բանի՝ երեւույթի առավելագույն բարձրությունը՝ աստիճանը՝ չափը: *Ասում ա.- Պատալօկը հէնգ՛ մանէթ կարիմ ք՛ը՛զ տամ* (Զ):

ՊԱՏԱՆ(Ք) *(գրբ. պատան)* - *գ.* 1. Մեռելը՝ դիակը փաթաթելու սպիտակ սավան: *Թօրքէրը, մարթ վէր մը՛ռնում ա, դանստի պատանքումը պըտատում ըն, տանում թաղում* (Զ): 2. *տե՛ս* ՊԸՏԱՏԱՆ:

- Պատանը կարէլ - *անծ.* Թաղել: *Պատանըտ կարիմ քու, խէ կ՛առնըս կ՛ուղացալ ը՞ս* (Բ):

- Պատանը կէրած մը՛ռալ - Աղքատ, չքավոր: *Ասում ա.- Յը՛ս մին պատանը կէրած մը՛ռալ ըմ, ըշտըղա տա՞մ պարթ-կըս* (Զ):

- Պատանը ճըղած, մաչան տանուս յը՛կած - Շատ ճարպիկ՝ գործարար: *Ի-զէն պատանը ճըղած, մաչան տանուս յը՛կած ա, կարէլ չըս խանփիս* (Բ):

- Պատանը ճիտը քըցիլ - Մահամերձ լինել: *...էլ քօռ, կօնդ՛, պատանը ճիտը քըցած՝ լօխճու էլ առանց ճարի սըղըց-նըմ ա...* (ՋՏ, Բ, 141):

ՊԱՏԱՌ *(գրբ. պատառ)* - 1. *գ.* Որեւէ բանի փոքր կտոր՝ մաս: *Հացէն պատա-ռը թօղէլ չընն տափէն, կըպաչին, տընին ճըկատէն* (ՆԱԲ, 162): 2. *ածական, մ.* Քիչ, մի քիչ: *Պուդին պատառ կը՛նըմ ա տանում, սուսըփուս կ՛ամ տօն, քօն ինըմ* (ԼՂԲ, 390):

- Պատառ անէլ - Ուտելիքը մինչեւ վերջ չուտել, կտորներ թողնել: *Խօխան հացը պատառ ա անում* (Բ):

- Պատառ տէմ անէլ - Մեկին օգնության ձեռք մեկնել, օժանդակել: *Վէչ մինը պատառ չի տէմ ընէս՝ վէչ ք՛անիբ, վէչ հարուստ* (ԱԱ, 88):

ՊԱՏԷԼ *(գրբ. պատեմ)* - *նբ.* 1. Բոլոր կողմերից ծածկել, պարուրել: *...Մին էլ տը՛սավ յէրգ՛ինք՛ը մըթնէց, ըրօտաց, յէրգ՛իրը թօխպավ պատէց* (ՀԺՀ, V, 373): 2. Պատ շարել, պատ կառուցել: *Պուլ՛ուր քարավ պատ չընն պատէլ* (Զ):

ՊԱՏԷՎ - *տե՛ս* ՊԱԴԷՎ:

ՊԱՏԸՄՋԱՆ - *տե՛ս* ԲԱԴԸՄՋԱՆ:

ՊԱՏԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՊԱՏԷԼ-ի:

ՊԱՏԸՐՋԱՆ - *տե՛ս* ԲԱԴԸՄՋԱՆ:

ՊԱՏԸՐՕՆ[1] - *տե՛ս* ՊԱՏՐՕՆ[1]:

ՊԱՏԸՐՕՆ[2] - *տե՛ս* ՊԱՏՐՈՒՆ:

ՊԱՏԸՐՕՆ[3] - *տե՛ս* ՊԱՏՐՕՆ[3]:

ՊԱՏԸՐՕՆԴԱԾ - *տե՛ս* ՊԱՏՐՕՆԴԱԾ:

ՊԱՏԸՐՕՆՆԻԿ - *տե՛ս* ՊԱՏՐՕՆՆԻԿ:

ՊԱՏԺԸՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՊԱՏԺԻԼ-ի:

ՊԱՏԺԻԼ *(գրբ. պատժեմ)* - նբ. Պատժի ենթարկել, պատժել: *Աստուծ տը՛սալ ա, էտ կընգանըտ պատժանալ* (ԱԱ, 51):

ՊԱՏԻԺ/ՊԱՏԻՃ *(գրբ. պատիժ)* - *գ.* 1. Հանցանքի կամ զանցանքի համար մեղավորի նկատմամբ կիրառվող միջոց: *Վէր պըրծնում ա, ասըմ ա, վը՛ր ամիգ՛ան ուրանց պատիժը ըստանալ բիդին* (ՆԼՂԺԲ, 72): 2. *տե՛ս* ՊԱՏԻԺ-ԿԸՐԱԿ:

- Պատիժ տալ - *տե՛ս* ՊԱՏԺԻԼ: *Ըստրա հէտէ Մէլիք-Շահնազարը շուտ-շուտ Պըլըպուդուն պատիժնի յա իլալ տաս...* (ԼՂԲ, 377):

ՊԱՏԻԺ-ԿԸՐԱԿ - *գ., ածական.* 1. Չափազանց չար՝ չարաճճի (անձ): *Պատիժ-կըրակ խօխա յա Յուկան* (Բ): 2. Շատ գլխացավանք պատճառող (անձ, իր դեպք): *Ըտի էտ վը՛սկէն պատիժ-կըրակ ա տը՛ռնում ք՛ըսիբին հը՛տէ* (Զ): 3. Փորձանք, պատուհաս: *Ըշտըղա վէրէ յա՝ մին պատիժ-կըրակ ա կ՛ամ մըզը՛տէ* (Զ):

ՊԱՏԿԷՐ(Ք) - *տե՛ս* ՊԱԹԿ՛ԷՐ(Ք):

ՊԱՏԿԷՐ(Ք)ՀԱՆ - *տե՛ս* ՊԱԹԿ՛ԷՐ(Ք)-ՀԱՆ:

ՊԱՏՃԱՌ - *տե՛ս* ՊԱՃՃԱՌ:

ՊԱՏՃԱՌԱՎԷՐ - *տե՛ս* ՊԱՃՃԱՌԱ-ՎԷՐ:

ՊԱՏՃԱՌԷՎՈՒՐ - *տե՛ս* ՊԱՃՃԱՌԱ-ՎԷՐ:

ՊԱՏՄԷԼ *(գրբ. պատմեմ)* - *նբ.* Հայտնել, հաղորդել, տեղեկացնել (սովորաբար ընդարձակ խոսքով): *Թափէղը էս զըրանցը վէր ըսկանում ա, յէտ ա տէռնում օբան, Սըմբաթէն պատմում...* (ՆԱԲ, 49):

ՊԱՏՄԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՊԱՏՄԷԼ-ի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ *(գրբ. պատմութիւն)* - *գ.* Իրական դեպքերի՝ փաստերի՝ իրողությունների ամբողջություն՝ նկարագրություն, պատմություն: *Մէր ժուղովուրթէն պատմութանը շատ ա էրկան* (Զ):

ՊԱՏՆՕՑ - *տե՛ս* ՊԱԴՆՕՍ:

ՊԱՏՎԱԿԱՆ - *տե՛ս* ՊԱԴՎԱԿԱՆ:

ՊԱՏՎԱՎԷՐ - *տե՛ս* ՊԱԴՎԱՎԷՐ:

ՊԱՏՎԷԼ - *տե՛ս* ՊԱԴՎԷԼ:

ՊԱՏՐՈՒՆ/ՊԱՏՐՕՆ[2]/ՊԱՏԸՐՕՆ[2] - *գ.* Տղամարդու հայրը իր կնոջ համար՝ սկեսրայր: *...Քըշէրավ հարթանը պըտրունան շանտ ա յէր կէնում...* (ՀԱԲ, 15, 145):

ՊԱՏՐՕՆ[1]/ՊԱՏԸՐՕՆ[1] *(ռուս. патрон, ֆր. patron)* - *գ.* Փամփուշտ: *Պատրօննէն ածում ա ջուբէրը, թըվանգ՛ը ճիտը քըցանում, ք՛ինամ* (Զ):

ՊԱՏՐՕՆ[2] - *տե՛ս* ՊԱՏՐՈՒՆ:

ՊԱՏՐՕՆ[3]/ՊԱՏԸՐՕՆ[3] *(ռուս. патрон)* - *գ.* Էլեկտրական սարք, որի մեջ պտուտակելով մտցնում են լամպը՝ էլեկտրական հոսանքին միացնելու համար, կոթառ: *Լամբուշկան պատրօնան տանուս ա օնում, տամ ըտրրան* (Զ):

ՊԱՏՐՕՆԴԱԾ/ՊԱՏԸՐՕՆԴԱԾ *(ռուս. патрондаш)* - *գ.* Գրպանիկներով ժապավենաձեւ լայն գոտի, որի մեջ զետեղում են փամփուշտները, փամփշտակալ: *Յէվան տօռնը պինանս ա, նի յա մընէս մի ուռուս սալդաթ՝ թիրփանգ՛ը ճիտըմը, պատրօնդաշը կապած...* (ՀԲ, 345):

ՊԱՏՐՕՆՆԻԿ/ՊԱՏԸՐՕՆՆԻԿ *(ռուս. патронник)* - *գ.* Հրազենի փողանցքի հետեւի այն մասը, ուր տեղադրում են փամփուշտը՝ կրակելու համար: *Պատ-րօնը քըցանում ա պատրօննիկը, տանուս կ՛ամ* (Զ):

ՊԱՏՈՒՄՃԱՆ - *տե՛ս* ԲԱԴԸՄՋԱՆ:

ՊԱՐ *(գրբ. պար)* - *գ.* Նվագի կամ երգի տակ մարմնի բարեձեւ ու ներդաշնակ շարժումների ամբողջություն, պար գալը: *Ըստրա պարը թաքավէրէն շատ ա տուր կ՛ամ* (Զ):

- Պար ածէլ - 1. Պարել տալ: *Մին օր մահը տահանց տըռնավը անց կընայիս տէսնում ա՝ էտ կընէգ՛ը թօռանը պար ա ածում...* (ՆԱԲ, 65): 2. *փխբ.* Չարչարել: *Խօխէնք՛ը մօրը պար ըն ածում, էնքան պըլօթուն ըն անում* (Զ):

- Պար կանալ - 1. Պարել: *Տա վը՛ր ծը՛ռ-քէրը պիցըրցընում ա, պար կ՛ամ, էտ ճօրէն խըռհնում ա...* (ՀԺՀ, VII, 305): 2. *փխբ.* Ուրախությունից թռչկոտել: *Խօ-*

խան վէր խաղալիկը տը՛սնում ա, ըսքը-սում ա պար կ՚ելը (Զ): 2. *փխբ.* Երերալ, շարժվել: *Ուստան ասմա.- Էս ա՞ ծէր տիրոջ սըթունը, էն ա պար կ՚ելիս* (Զ):

- Պար կ՚ելով - Հեշտությամբ, առանց դժվարության: *Էշին պէռնը վէր թիթը՛վ ինի, պար կ՚ելով կը՚ինի* (ԱԲԲ, 26):

- Պար փըռնել - Խմբովին պարել սկսել: *Մըկըրնէն հարփիում ըն, պար փըռնում* (Զ):

ՊԱՐԱԴ *(ռուս. парад, ֆր. parade)* - *գ.* Շքերթ: *Ամմէն տարէ մայիսի իննին Ըստէփանակ՚էրտ պարադ ա ինում* (Բ):

ՊԱՐԱԼԻԾ - *տե՛ս* ՊԱՐԱԼԻՀ:

ՊԱՐԱԼԻՀ/ՊԱՐԱԼԻԾ *(ռուս. паралич, հուն. paralysis)* - *գ.* Հիվանդություն, երբ մարմնի որեւէ օրգան կամ մաս կորցնում է կամային շարժումների ընդունակությունը: *Դոխտուրը յէշում ա հիվանդէն, թա.- Պարալիչ ա* (Զ):

- Պարալիչ թըխէլ - Կաթվածահար-(վ)ել: *Բուդդանէն պարալիչ թըխալ ա, էն ա բալնիցումը* (Բ):

ՊԱՐԱԽՕԴ/ՊԸՐԱԽՕԴ *(ռուս. пароход)* - *գ.* Շոգենավ: *Ախճիգ՚ը հինչքան հարայ ա տամ, պըրախօդը վը՛ննը չըն կըցնում* (ՀԺՀ, V, 642):

ՊԱՐԱԿ - *տե՛ս* ՊԷՐԱԿ:

ՊԱՐԱՆ - *տե՛ս* ԲԱՐԴ[2] (1):

- Պարան ածել - *տե՛ս* Պարան տալ (2): *Մին կօլա էլ էտ ճիրանն պարան ա ածում, տըրա յըրան ածում, լիվըցնում* (ՆԼՂԺԲ, 30):

- Պարան անել - *տե՛ս* Բարդ անել:

- Պարան կ՚ել - 1. Փլվել, փլուզվել: *Խէղճ Ջառուն մին սըթունանէ տօնը կըլխըրնէրէն պարան ա կ՚ամ* (ՆԱԲ, 143): 2. Շուռ գալ, շրջվել, կողքի վրա դառնալով՝ պարունակությունը թափվել: *Ճուվարանը պարան ա կ՚ամ, զըկը՛ռը սաղ վէր տը՛ռնում* (Զ):

- Պարան տալ - 1. Փլել, փլուզել: *Կուփէ յա տամ, պատը պարան տամ* (Զ): 2. Շուռ տալ, շրջել, կողքի վրա դարձնելով՝ պարունակությունը թափել: *Տաշտը ճիրավ լըցալ ըն, ելէրը պարան տըվալ մէջը, հունցալ հու պէղարճ թըխալ* (ՀԺՀ, VI, 260):

ՊԱՐԱՆ - *տե՛ս* ՊԷՐԱՆ:

ՊԱՐԱՆՑ/ՊԱՐԱՑ/ՊԱՐԱՍ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Պարանց ըղնէլ/կ՚ել - Պառկել, ընկողմանել: *Քընում ըն վէրս, տէղ պարանց ըն ըղնում, քունավ ա ընցնում էտ Սանասարը* (ՀԱԲ, 15, 12):

- Պարանց քըցիլ - Պառկեցնել, ընկողմանել տալ: *Ըտըրան ծառէն տակէն պարանց ըն քըցի՛ում, քունավ անում* (Զ):

ՊԱՐԱՇՈՒՏ *(ռուս. парашют, ֆր. parachute)* - *գ.* Օդի մեջ հովանոցի ձեւով բացվող հարմարանք, պարաշյուտ: *Մին էլ տը՛սնում ա՝ մին մարթ պարաշո՛ւտավ քըշանում ա* (Զ):

ՊԱՐԱՇՕԿ - *տե՛ս* ՊԸՐԱՇՕԿ:

ՊԱՐԱՋՕՂՈՒՄ - *ձ.* 1. Բարեմաղթության արտահայտություն՝ թող գործդ հաջող լինի: *Էտ հինչ լ՚ավ կօրծ ը՞ս անում, պարաչօղում* (Զ): 2. Ողջույնի արտահայտություն: *Պարաչօ՛ղում, Սո՛ւմբաթ դայի, հունց ը՞ս* (Բ):

ՊԱՐԱՊ-ՍԱՐԱՊ - *տե՛ս* ՀԸՊԱՐԱՊ-Ս(ԸՊ)ԱՐԱՊ:

ՊԱՐԱՍ - *տե՛ս* ՊԱՐԱՆՑ:

ՊԱՐԱՎ/ՊԱՐԷՎ/ՊԱՐՕՎ *(գրբ. բարեաւ)* - 1. *գ.* Ողջույն, ողջունելու արտահայտություն: *Ըտըրա պարավը լօխ ըսկանում ըն, ամմա ջօղաբը տամ չըն* (Զ): *մ.* 2. Ուրախությամբ, հաճույքով: *Ասում ա.- Աստուծ պահէ քը՛ը՛զ, պարավ փըսակվիս, տընըվը՛ռվիս* (Զ): 3. Հաջողությամբ, առանց փորձանքի: ... *Պարօվ մունք էլ մէր դանդանն ըզադվինք, մին լանվ, օրախ ապրինք* (ՀԺՀ, V, 527):

- Պարավ անէլ - 1. Բարեւել: *Կամ ա շինամաչ, լօխճին պարավ անում, մին ղըրաղ տը՛ղ էլ ինք՚ը նըստում* (Զ): 2. Բարեւը՝ ողջույնը մեկին հաղորդել: *Տը-ղան ասմա.- Թաքավէրը ասալ ա՝ պարավ կանիս* (Զ):

- Պարավ ըս յը՛կալ - 1. Ողջույնի խոսք եկողին: *Պարավ ըս յը՛կալ, էս ա էրկու տարէ յա քը՛ը՛զ տը՛սնում չըմ* (Բ): 2. Հեգնանքի կամ դժգոհության արտահայտություն՝ անցանկալի մեկի գալու կամ անտեղի պահանջի՝ ասածի առթիվ: *Պարավ ըս յը՛կալ, տու իր պակաս, վէր քը՛ը՛զ փուլ տամ* (Զ):

- Պարավ մաշիս - Բարեմաղթություն եւ շնորհավորանք նոր զգեստի՝ բնակարանի եւն առթիվ: *Պարավ մաշիս, էտ հինչ լ՚ավ շօր ը՞ս կ՚ը՛ցալ* (Զ):

- Պարավ տալ - *տե՛ս* Պարավ անէլ (1): *Ըտըրանց մին էլ ա պարօվ տամ, ամմա էլիա բադասխանը տամ չըն...* (ՀԺՀ, V, 125):

- Պարավ տանէլ - *տե՛ս* Պարավ անէլ (2):

- Պարավ տը՛սէնք՚ - *տե՛ս* Պարավ ըս յը՛կալ:

- Պարավ քինիս - Ողջերթի արտահայտություն: *Պարավ քինիս, հըղէտ թօ պարի ինի* (Բ):

ՊԱՐԱՎ-ԽԷՐԱՎ - *տե՛ս* ՊԱՐԱՎ (3):

ՊԱՐԱՎ-ՊԱՐԼԻՒՍ - *գ.* Մեկին ողջունելը՝ բարեւելը: *Պարավ-պարլի՛ւսանը յը՛տը ըսքըսում ըն զըրի՛ց անէլը* (Զ):

- Պարավ-պարլի՛ւսը կըտըրցընէլ - Մեկի հետ գժտվել՝ հարաբերությունները լրիվ խզել: *Էտ օրվանից Այդինը հըրըվանէն նըհը՛ետ պարավ-պարլի՛ւսը կըտըրցընէս ա* (Զ):

ՊԱՐԱՎՕՋ/ՊԸՐԱՎՕՋ *(ռուս. паровоз)* - *գ.* Շոգեքարշ: ...*Մին տէղ էս վըգօնէն ըռըշկէն պըրավօզը պուք ըն տամ, վէր քընա՛ն ճի՛ւր յօր օնէ...* (ՀԺՀ, V, 647):

ՊԱՐԱՐՏԱՆՈՒԹ - *գ.* Հողը արգավանդ դարձնելու՝ պարարտացնելու նյութ: *Շաղ տըված աղը լանվ պարարտանութ ա իլալ տանռանծ* (ՆԼՂԺԲ, 100):

ՊԱՐԱՑ - *տե՛ս* ՊԱՐԱՆՑ:

ՊԱՐԱՓԻՆ *(ռուս. парафин, գերմ. Paraffin)* - *գ.* Մոմի նման սպիտակ կամ դեղնավուն նյութ, պարաֆին: *Պարափինը հանում ըն, կ՚ինուն ըմընը՛ցը ըռը՛խը քըսում, ծասկում* (Զ):

ՊԱՐՁ՚ *(գրբ. պարզ)* - *ածական.* 1. Պայծառ, հստակ, ջինջ: *Ըտըղատ էլ, վէր հավան պարզ՚ ա ինիս, Արախսը ըրվաս ա* (ԱԱ, 22): 2. Մաքուր, զուլալ, վճիտ: *Մէր ըխպիրին ճի՛ւրը պարզ՚ ճի՛ւր ա* (Բ): 3. Հասկանալի, դյուրըմբռնելի: *Պարզ՚ խուսկէրքըն էլ չի կըլօխ ըղնէս* (Զ): 4. Անկեղծ, միամիտ: *Պարզ՚ մարթ ա Սանթուր դայիս* (Բ): 5. Բացահայտ, ակնհայտ, ինքնին հայտնի: *Պարզ՚ զըրի՛ւց ա* (Բ): 6. *մ.* Պարզ կերպով, բացահայտորեն: *Էտ մարթը շատ պարզ՚ ա խօսում* (Զ):

ՊԱՐՁ՚ԻԼ *(գրբ. պարզեմ)* - *նբ.* 1. Բացահայտել, հայտնաբերել, պարզ դարձնել: *Պարզ՚ում ըն, վէր կ՚ըղօթունը կօխկէ շինանցէ Ըրշակէն տըղան ա ըրալ* (Բ): 2. *տե՛ս* ՊԱՐՁ՚ՎԻԼ (2, 3, 4):

ՊԱՐՁ՚ՎԻԼ - 1. *կբ. եւ չբ.* ՊԱՐՁ՚ԻԼ (1)-ի: *չբ.* 2. Պայծառ՝ ջինջ դառնալ: *Հավան պարզ՚վում ա, ժըղօվուրթը նօրից քը՛ինամ ըն հանդը* (Զ): 3. Զուլալ՝ վճիտ դառնալ: *Վէր ճի՛ւրը պարզ՚վում ա, քաշը էլիա թըխում ա գ՚օլէն մաչը* (ՀԱԲ, 15, 153): 4. Իրադրությունը պարզ դառնալ: ...*Ըտէղ պարզ՚վըմ ա, թանն էտ ախճիկը յէտնան հունց կինի...* (ԼՂԲ, 323):

ՊԱՐՁ՚-Ք՚ԱՀԱՐԲԱՐ - *ածական.* Խիստ պարզ՝ պայծառ՝ ջինջ՝ վճիտ եւն: *Պարզ՚-ք՚ահարբար ախպի՛ւր ա Մէլիք՚ին ախպի՛ւրը* (Զ):

ՊԱՐԷԲԱՇՏ *(գրբ. բարեպաշտ)* -*ածական., գ.* Իր կրոնի պատվերները ճշտությամբ կատարող, հավատացյալ, բարեպաշտ: *Էս կընէկընն էնչանք պարէբաշտ ա իլալ, վէր հիրիշտակնէրի նըհէտ ա իլալ խօսում* (ՀԺՀ, VI, 619):

ՊԱՐԷԲԱՇՏՕԹՈՒՆ *(գրբ. բարեպաշտութիւն)* - *գ.* Բարեպաշտ լինելը, բարեպաշտի վարք՝ կենցաղ: *Պարէբաշտօթունը ամմէն մարթու պէն չի* (Զ):

ՊԱՐԷԽՕՍ *(գրբ. բարեխօս)* - *ածական., գ.*

Մեկի համար բարի խոսող՝ բարեխոսող (անձ): *Խը՛ղճ տըղէն կախ ըն տամ, մին պարէխօս էլ չի ինի՛մ, թա լ՛ըհա կօխկան մին պարի խօսկ խօսէ* (Ձ):

ՊԱՐԷԽՕՍԷԼ *(գրբ. բարեխօսեմ)* - *չբ.* Բարեխոսություն անել, ի նպաստ մեկի բարեխոսել: *Շէնին ախսախկալնէն հըվաքվում ըն, ք՛ինամ խանէն կօշտը, պարէխօսում, էտ տըղէն ըզադում* (Ձ):

ՊԱՐԷԽՕՍՈՒԹԻՒՆ *(գրբ. բարեխօսութիւն)* - *գ.* Բարեխոսելը, բարեխոսություն: *Վէր էտ թ՛ա՛ջիրին պարէխօսութի՛ւնը չինա՛ր, ըտըրան կախ ին տալու* (Ձ):

ՊԱՐԷԿՕՐԾ *(գրբ. բարեգործ)* - *ած., գ.* Բարի գործ կատարող (անձ), բարեգործ: *Պարէկօրծ մարթ ա վընքըցէ Հայրապէտյան Լէվօնը* (Բ):

ՊԱՐԷԿՕՐԾՈՒԹԻՒՆ *(գրբ. բարեգործութիւն)* - *գ.* 1. Բարի գործ անելը, բարեգործ լինելը: *Պարէկօրծութի՛ւնը ամմէն մարթու պէն չի* (Բ): 2. Բարեգործական արարք: *Ըտըրա պարէկօրծութի՛ւնը լօխ կ՛ընհատում ըն* (Բ):

ՊԱՐԷՀԻՒՔ՛Ի - *ած.* Հոգով բարի, բարեսիրտ, բարեհոգի: *Պարէհի՛ւք՛ի կընէգ՛ ա Թամարը* (Բ):

ՊԱՐԷՎ - *տե՛ս* ՊԱՐԱՎ:

ՊԱՐԸԼԻՒՍ - *տե՛ս* ՊԱՐԼԻՒՍ:

ՊԱՐԸԿԷՆԹԱՆ - *տե՛ս* ՊԱՐԻԿ՛ԸՆԹԱՆ:

ՊԱՐԹԿ/ՊԱՐՏՔ *(գրբ. պարտք)* - *գ.* 1. Մեկից փոխարինաբար վերցրած գումար կամ ապրանք, որ վերցնողը պարտավոր է վճարել՝ հատուցել: *Պարտքը յըտանում ա, ամմա խէղճ շինա՛ցին փող չի ճարըմ, վը՛ր տա* (ՆԼՂԺԲ, 91): 2. Պարտականություն: *Ամմէն մարթ բիդի ի՛ւրա՛ն պարթկը կը՛դարէ ի՛ւրա՛ն մօրը ըռաշկէն* (Ձ): 3. *փխբ.* Չհատուցված երախտիք՝ խոստում: *Ասում ա.- Տու ինձ մին օտէլ-խըմէլ ըս պարթկ, էրի՛ւշ վէչ մին պէն* (Ձ):

- Պարթկ անէլ - Փոխարինաբար մի բան վերցնել, պարտքով վերցնել: *Ք՛ինամ ա հըրըվանէն անա փուլ պարթկ անում, տըղէն փըսակում* (Ձ):

- Պարթկէն տական պըրծընէլ/տի՛ւս կ՛ալ - 1. Պարտքը մարել, պարտքից ազատվել: *Պարթկըս շատ ա, կարում չըմ պարթկէն տական պըրծընիմ* (Բ): 2. Մեկին վարձահատույց՝ երախտահատույց լինել: *Մարթ վէչ մին վախտ կարէլ չի ի՛ւրա՛ն մօրը-հօրը պարթկէն տական պըրծընէ* (Ձ):

- Պարթկը գ՛օլ տալ - *տե՛ս* Պարթկու մաչի թաղվել:

- Պարթկը, լ՛ու տը՛ռած, նի կըմընէ տօնը, օղտ տը՛ռած՝ տի՛ւս չի կ՛ալ - Պարթկը չմարելու դեպքում հետզհետե կշատանա:

- Պարթկը պըկէն/վըզին գ՛օլ տալ/չօքէլ/տէմ ըղնէլ/տէմ ինիլ - *տե՛ս* Պարթկու մաչի թաղվել:

- Պարթկըս ա/ինի - Պարտավոր եմ, Իմ պարտականությունն եմ համարում: *Ասում ա.- Պարթկըս ա, յը՛ս քու խօխօնցըտ յէթիմ չըմ թուղլական* (Ձ):

- Պարթկ մընալ - 1. Մեկին որոշ գումար կամ որոշ բան որպես տալիք ունենալ: *Հէնգ՛ մանէթը տամ ա, թա.- Էլ օնիմ վէչ, էն հէնգ՛ըն էլ պարթկ ըմ մընում* (Ձ): 2. Որեւէ բան անհատույց թողած լինել: *Արշակը ինձ լ՛ըվօթուն շատ ա ըրալ, պարթկ ըմ մընացալ* (Բ):

- Պարթկու մաչի թաղվել/խըրվել - Շատ պարտք ունենալ: *Էն ըմ պարթկու մաչի թաղված, մինը կա վէչ, թա ք՛օմա՛գ՛ անէ* (Բ):

- Պարթկու տակ ըղնէլ/մընալ - 1. *տե՛ս* Պարթկ մընալ: 2. *տե՛ս* Պարթկու մաչի թաղվել:

- Պարթկու տակ քըցիլ - *տե՛ս* Այնպես անել, որ մեկը պարտքի տակ ընկնի: *Բըդասըլ տըղան հօրը պարթկու տակ կը՛քըցի* (Ձ):

ՊԱՐԹԿՕՄ *(ռուս. партком)* - *գ., հպվ.* Խորհրդային կարգերի օրոք կոլտնտեսությունների՝ հիմնարկների՝ գործարանների եւն կուսակցական կոմիտեի նախագահ: *Սավէտին վախտը հու վա՛ կը՛ըը՛ցալ կըլխօզէն պարթկօմէն ըռըչին ծըպտուն հանէ* (Ձ):

ՊԱՐԻ *(գրբ. բարի, լավ, ընտիր)* - *ած.* 1. Բնավորությամբ՝ էությամբ ոչ չար, բարեսիրտ, գթոտ: *Թափէղընն էլ էնքան պարի տըղա յա ընում, վէր թաքավըրթունը տամ ա ի՛ւրա՛ն ախպօրը* (ՆԱԲ, 50): 2. Անվնաս, հեզաբարո, հեզ: *Պարի մարթ ա Սօկրատը, հու հինչ ասում ա, դա՛ստի անում ա* (Բ): 3. Օգտակար, հանրօգուտ: *Տընաշինըտ ի՛ւրա՛ն գ՛անքումը ըսկի մին պարի կօրծ ըրած չի* (Բ): 4. Բախտավոր, նպաստավոր: *Պարի հավա յա, լ՛ըհա կարում ըս՝ հօ՛նձ ըրա* (Բ): 5. Լավ, գովելի: *Պարի անում օնէ խըչատուրը* (Ձ): 6. Ուրախալի, ուրախություն պատճառող: *Պարի խաբարը վէր ըսկանում ա, կ՛առնը մօրթում ա, շինացուց ծէն տամ ղօնաղ* (Ձ): 7. Այն, ինչ որ իր էությամբ լավ է՝ ազնիվ է՝ օգտակար է: *Մստուծ, պարին մէր ժուղուվուրթան անպակաս անիս* (Ձ):

- Պարի աշկ - Բարի ցանկություն, բարեբեր՝ բարյացակամ հայացք՝ նայվածք: *Պարի աշկ օնէ խօնար աքէրը* (Բ):

- Պարի աշկավ յէշիլ - Մեկի հանդեպ բարյացակամ լինել, հաջողություն՝ բարեբախտություն ընձեռնել: *Նախագան պարի աշկավ ա յէշի՛մ ժուղուվուրթէն* (Բ):

- Պարի ասթըխ - Բախտավորություն, երջանկություն, հաջողություն: *Մարթին բիդի պարի ասթըխ ինի*:

- Պարի ասթըխէն, պարի սըհաթէն - Անփորձանք, հաջող: *Պարի ասթըխէն, պարի սըհաթէն հօ՛նձը պըրծէնք՛* (Ձ):

- Պարի ասթըխու տակէ ծընվէլ - Բախտավոր՝ երջանիկ՝ հաջողակ լինել: *Պարի ասթըխու տակէ յա ծընվալ Մամիկօնը, հինչը օգ՛ում ա անէ, ա՛մմ՛ալ ա կ՛ամ* (Բ):

- Պարի Ըստուծէն - *տե՛ս* Պարի ասթըխէն, պարի սըհաթէն:

- Պարի կ՛ալ՛ուստ - *տե՛ս* Պարավ ըս յը՛կալ:

- Պարի ճանապար - Որեւէ տեղ մեկնողին ուղղված հրաժեշտի ողջույն: *Պարի ճանապար, այ իմ տա՛նջվա՛ծ բալա, ք՛ը՛զ լ՛ավ կըպահիս՝ հիվընդանաս վէչ* (Ձ):

- Պարի պըտօղ չի - Անարժան՝ խարդախ մարդ է: *Իզէն պարի պըտօղ չի, սա՛յաղ կաց* (Բ):

- Պարի քըշէր - Երեկոյան կամ գիշերը մեկին հրաժեշտ տալու արտահայտություն: *Դէ լ՛ավ, պարի քըշէր, յը՛ս ք՛ը՛ցէ* (Ձ):

ՊԱՐԻԳ՛ԻՒՄ - *տե՛ս* ՊԱՐՈ՛ՒԳ՛ԻՒՄ:

ՊԱՐԻԳ՛ԻՒՆ - *տե՛ս* ՊԱՐՈ՛ՒԳ՛ԻՒՄ:

ՊԱՐԻԿԱՄ *(գրբ. բարեկամ)* - 1. *գ.* Ազգական, մտերիմ մարդ: *Ըստէղ պարիկամնէրան մինը ասում ա.- Յէ՛նքաք, էս դ՛օ՛նըմըս էլ Կ՛ի՛ւլըթաղա դէրին ծէն տանք...* (ԱԱ, 28): 2. *ած.* Մտերմական՝ սրտամոտ վերաբերմունք ունեցող: *Ռուսը մէր պարիկամըն ա* (Ձ):

ՊԱՐԻԿԱՄ-ՉԱՐԻԿԱՄ - *գ. հոգն.* Ազգականներ՝ մտերիմներ եւ թշնամիներ: *Պարիկամ-չարիկամ լօխ հըվաքվում ըն* (Ձ):

ՊԱՐԻԿԷՆԹԱՆ - *տե՛ս* ՊԱՐԻԿ՛ԸՆԹԱՆ:

ՊԱՐԻԿԸՄԱԿՕԽ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Պարիկըմակօխ ինիլ/տը՛ռնալ - Բարեկամների շատ գնալ-գալուց նեղվել: *Խը՛ղճ Յա՛ր՛ա՛բէղընն ա Նախշունը լ՛ավ պարիկըմակօխ ըն տը՛ռալ* (Ձ):

ՊԱՐԻԿԸՄԱՆԱԼ *(գրբ. բարեկամանամ)* - *չբ.* Բարեկամ դառնալ, մտերմանալ: *Ըստրանք պարիկըմանում ըն, ի՛ւրի՛ւր ք՛օմա՛գ՛ ընէլավ ապըրում* (Ձ):

ՊԱՐԻԿԸՄՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. բարեկամեցուցանեմ)* - *նբ.* ՊԱՐԻԿԸՄԱՆԱԼ-ի:

ՊԱՐԻԿԸՄՕԹՈՒՆ *(գրբ. բարեկամութիւն)* - *գ.* 1. Բարեկամ լինելը, բարեկամական հարաբերություն: *Պարիկը-*

մութունը լ՚ավ պէն ա, վէր կարիս անիս (Բ): 2. Բարեկամների՝ ազգականների խումբ: *Պարիկըմութունը հըվաքում ա, մին լ՚ավ ք՚ըէփ ըն անում* (Զ):

ՊԱՐԻԿՄԱԽԷՐ *(ռուս. парикмахер, գերմ. Perückenmacher)* - *տե՛ս* ԴԱԼԼԱՔ՚:

ՊԱՐԻԿՄԱԽԷՐԸՍԿԻ *(ռուս. парикмахерская)* - *տե՛ս* ԴԱԼԼԱՔ՚ԽԱՆԱ:

ՊԱՐԻԿ՚ԸԷՆԹԱՆ/ՊԱՐԸԿԷՆԹԱՆ/ՊԱՐԻԿԷՆԹԱՆ/ՓԸՐԳԻՆԴԱՆ *(գրբ. բարիկենդան)* - *գ.* Մեծ պասին նախորդող շաբաթվա տոն, բարեկենդան: *Միհէնգ՚ ժուղովուրթը պարիկ՚ըէնթանըն էլ ա մընանա քըցալ* (Զ):

ՊԱՐԻՊԱՍ *(ռուս. припасы)* - *գ.* Ուտելիքի պաշար: *Ծին պիրիս ա պիռնիս ուրան պարիպասավը, էտ շընէրէն նըհէտ էլիա ընգնէս հըղէն* (ՀԺՀ, V, 282):

ՊԱՐԼՈՒՍ/ՊԱՐԸԼՈՒՍ - 1. *գ.* Առավոտյան ողջույն: *Պարլո՛ւս, Սամսոն դայի, էտ քըշէրավ ըշտը՚ղ ը՞ս ք՚ունում* (Բ): 2. *փխբ.* Օրվա այն պահը, երբ մարդիկ միմյանց բարի լույս են ասում, վաղ առավոտ: *Տընաշինըտ տըմացալ չի, թա լ՚ըհա պարլուսը կ՚ա, քըշէրը հըղէ յա իլալ, ք՚ը՚ցալ* (Բ): 3. *ձ. տե՛ս* Պարավ ըս յը՚կալ (2):

- Պարլուս ասէլ - 1. Առավոտյան միմյանց ողջունել: *Մուտանում ըն, պարլուս ասում, կօրծը ըսքըսում* (Զ): 2. Առավոտյան իրար հետ բաժակ խփելով՝ օղի խմել: *Ասում ա.- Յը՚ք մին պարլուս ասինք՚, էլիա կը՚ք՚ինիս* (Զ):

- Պարլո՛ւս, Ա՛րշա՛լուս - *տե՛ս* Պարավ ըս յը՚կալ (2):

- Պարլուսը մըթնըքըշէր շինիլ - Կոնծելով տարվել ու ժամանակի մասին մոռանալ: *Կինուն կարասը պէնում ըն, պարլուսը մըթնըքըշէր շինում* (Բ):

- Պարլուսը տը՚ղը պահէլ - Իրար հետ չգժտվել, համերաշխ լինել: *Տահանք վէչ մին վախտ ուրուր նըհը՚տ կըռվում չը՚ն, պարլուսը տը՚ղըն ըն պահում* (Զ):

ՊԱՐԿ *(գրբ. պարկ)* - *գ.* Տոպրակ, պարկ: *Կընէգ՚ը ուրխացավ, պարկէրը, խուրջինը հըզըրից, թանգա ք՚անդիրը յէր կալավ* (ՀԺՀ, V, 524):

- Պարկավը լուս ա՞ պէրալ - Հեգնական արտահայտություն մեկի գալստյան առթիվ՝ հազիվ թե լավ բանի համար եկած լինի: - *Հա՞բի, քու հանէր յը՚կալ ա: - Պարկավը լուս ա՞ պէրալ* (Զ):

- Պարկը կօխէլ - 1. Մեկին խոսքով հաղթել: *Հոջանթ ըն տամ, Մարուսան մարթին պարկըն ա կօխում* (Զ): 2. Նեղել, ճնշել: *Թաքավէրը ուրան նանգիրվէզիրնէրէն պարկըն ար կօխում* (Զ):

ՊԱՐՅՕՐ - *գ.* Ցերեկվա ողջույնի արտահայտություն: *Պարյօ՛ր, Ա՛լիսան* (Բ):

- Պարյօր տալ - Ցերեկը մեկին ողջունել: *Հըրսանէք՚ը վէր ըսկըսում ըն, մին ջանիլ մարթ էտ պըռավէն մուտանում ա, պարյօր տամ...* (ՆԼՂԺԲ, 127):

- Պարյօր տըվող չինիլ - Վատ մարդ լինել, հետը շփվող՝ մտերմություն անող չունենալ: *Բափկէնը հինչ մարթ ա՞, պարյօր տըվող էլ չօնէ* (Բ):

ՊԱՐՊԱՌ/ՊԱՌՊԱՌ *(գրբ. բարբառ (լեզու)* - *գ.* Ընդհանուր լեզվի տարածական տարբերակը, բարբառ: *Դէ պարպառ ա, լի՞, ժուկ ա ընցալ, ժամանակ ա ընցալ, էս անումը փոխվալ ա...* (ԱԱ, 23):

ՊԱՐՍ *(գրբ. պարս)* - *տե՛ս* ԾԷՔ՚(2):

ՊԱՐՍԻԿ *(գրբ. պարսիկ)* - *գ.* Իրանի հիմնական ժողովրդի անվանումը կամ այդ ժողովրդին պատկանող անձ: *Պարսիկնէն վար յէկալ ըն՝ խարջէրը վըհաքէն, ըտահանց միչըռնէրումը մինը իլալ ա՝ անումը Միրզա* (ԱԱ, 43):

ՊԱՐՍՈՒԴ - *տե՛ս* ԲԱՐՍՈՒԴ:

ՊԱՐՏԱՎԷՐ - *տե՛ս* ՊԱՐՏԱՎԸ՚Ր:

ՊԱՐՏԱՎԷՐՎԷԼ - *տե՛ս* ՊԱՐՏԱՎԸ՚ՐՎԷԼ:

ՊԱՐՏԱՎԸ՚Ր/ՊԱՐՏԱՎԷՐ *(գրբ. պարտաւոր (մեղապարտ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Պարտավը՚ր ինիլ - Որեւէ պարտավորություն՝ պարտականություն ունենալ: *Ասում ա.- Հինչ ա՞, պարտավէր ը՞մ, անում չը՚մ* (Զ):

ՊԱՐՏԱՎԸ՚ՐՎԷԼ/ՊԱՐՏԱՎԷՐՎԷԼ *(գրբ. պարտաւորեմ (հանցավոր գտնվել)* - *չբ.* Պարտավորություն՝ պարտականություն ստանձնել: *Ուստան պարտավը՚րվըմ ա, վէր մին շէփթումը պատը տինանա, պըրծընէ* (Զ):

ՊԱՐՏԱՎԸՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. պարտաւորեցուցանեմ (դատապարտել, հանցավոր դարձնել)* - *նբ.* ՊԱՐՏԱՎԸ՚ՐՎԷԼ-ի:

ՊԱՐՏԱՎԸՐՕԹՈՒՆ *(գրբ. պարտաւորութիւն (մեղապարտություն)* - *գ.* Պարտավորություն, պարտականություն: *Ամմէն մարթ չի ուրան պարտավըրօթունը կընդարում* (Բ):

ՊԱՐՏԲԻԼԷԹ *(ռուս. партбилет)* - *գ., հպվ. տե՛ս* Պարտիյնի բիլէթ:

ՊԱՐՏԸՎԷԼ - *տե՛ս* ՊԱՐՏՎԷԼ:

ՊԱՐՏ(Ի)ՅԱ *(ռուս. партия, ֆր. parti, անգլ. party, լատ. partis)* - *գ.* 1. Քաղաքական կուսակցություն (հատկապես խորհրդային կարգերի օրոք՝ կոմունիստական կուսակցություն): *Սավէտին վախտը յէրգ՚իրը պարտիյան ա իլալ կառավարէս* (Բ): 2. *տե՛ս* ՕՅԻՆ (1): 3. Ապրանքների՝ առարկաների եւն որոշ (սովորաբար մեծ) քանակություն՝ խումբ: *Մին պարտյա պիրում ըն, պիժը՚նում ժուղուվուրթէն* (Զ):

ՊԱՐՏ(Ի)ՅԱԿԱՆ - *ածական.* 1. Կուսակցության (հատկապես կոմունիստական կուսակցության) վերաբերող՝ հատուկ, կուսակցական: *Մին օր էլ շէնումը պարտիյական ժողով ա ինում* (Զ): 2. Կուսակցության (հատկապես կոմունիստական կուսակցության) անդամ: *Պարտիյականնէն հըվաքվում ըն, ժողով անում* (Զ):

ՊԱՐՏԻՅՆԻ *(ռուս. партийный)* - *տե՛ս* ՊԱՐՏ(Ի)ՅԱԿԱՆ (1):

- Պարտիյնի բիլէթ *(ռուս. партийный билет)* - Կուսակցական (հատկապես կոմունիստական) տոմս: *Հունց ա պըտահում՝ Անդրի դային պարտիյնի բիլէթը կուրցընում ա* (Զ):

- Պարտիյնի բիլէթը (ծը՚ղքան) ինք՚ օնէլ/յը՚ր օնէլ - Կուսակցությունից (հատկապես կոմունիստական) վտարել: *Սավէտին վախտը լ՚ավը էն ա իլալ՝ մարթին տուրմա քըցին, քանց թա պարտիյնի բիլէթը ծը՚ղքան յը՚ր օնին* (Բ):

ՊԱՐՏՎԷԼ/ՊԱՐՏԸՎԷԼ *(գրբ. պարտեմ (հաղթել)* - *չբ.* Հաղթվել, պարտություն կրել: *Էն վախտը էլ ադամ ա իլալ. հախթօղը պարտվօղէն կըլօխը կըտրում ա* (ՀԱԲ, 15, 12):

ՊԱՐՏՎԷՅՆ/ՊԱՐՏՓԷՅՆ *(ռուս. портвейн, գերմ. Portwein)* - *գ.* Սպիրտային խառնուրդով քաղցր թունդ գինի: *Պարտվէյնը դանստի յա հըրփըցընում* (Բ):

ՊԱՐՏՓԷԼ *(ռուս. портфель, ֆր. portefeuille)* - *գ.* Թղթապանակ: *Թօխտը ծանում ա, տինում պարտփէլումը, ք՚ինամ* (Զ):

ՊԱՐՏՓԷՅՆ - *տե՛ս* ՊԱՐՏՎԷՅՆ:

ՊԱՐՏՔ - *տե՛ս* ՊԱՐԹԿ:

ՊԱՌՑ - *տե՛ս* ՊԷՐՑ:

ՊԱՐՈՒԳ՚ՈՒՄ/ՊԱՐՈՒԳ՚ՈՒՆ/ՊԱՐԻԳ՚ՈՒՄ/ՊԱՐԻԳ՚ՈՒՆ/ՊԱՌՈՒԳ՚ՈՒՄ/ՊԱՌՈՒԳ՚ՈՒՆ - *գ.* Երեկոյան կամ գիշերվա ողջույնի արտահայտություն: *Մուտանում ա, թա.- Պարուգ՚ում ծը՚գ, դարիբ մարթ ըմ, ինձ էս քըշէրը ղօնաղ ըդէք՚* (Զ):

- Պարուգ՚ում տալ - Երեկոյան կամ գիշերը մեկին ողջունել: *Պարուգ՚ում ա տամ, կօխկէն նըստում* (Զ):

ՊԱՐՈՒՆ *(գրբ. պարոն (իշխան, տեր, գլխավոր)* - *գ.* 1. Մեծավոր, տեր: *Ծըռէն փէշակըն էլ էն ա, վէր ուրան պըրունէն լանվ ծըռայի* (ՆԱԲ, 36): 2. Տղամարդուն դիմելու հարգական բառ: *Դէ էլ հինչ կ՚իրի՞մ, պարոնէն կազէթ կ՚իրոդ...* (ՋՏ, Ա, 37):

ՊԱՐՈՒՐ/ՊԷՐՈՒՐ - *գ.* Խանձարուրի մեջ փաթաթած երեխա: *Քինամ ա, թա ճուր պիրի, կ՚ամ, տը՚սնում՝ պանրուրը կա վէչ* (Զ):

- Պարուր անել - Խանձարուրի մեջ փաթաթել, բարուրել: *Էտ օխծին ճստը պարուր ըն անում, տինում մին թախտու յըրա* (ՀԱԲ, 15, 43):

ՊԱՐՕԴԻ *(ռուս. породный)* - *ած.* Ընտիր տեսակի՝ ցեղի պատկանող (միրգ, բանջարեղեն, կենդանի եւն): *Պարօդի գիւլա ա, ամմէն մինը մին ճըղուպուրու մըչանք կա* (Բ):

ՊԱՐՕՎ - *տե՛ս* ՊԱՐԱՎ:

ՊԱՐՕՎԱԿԻՐ - *տե՛ս* ՊԸՐԸՎԱԿԻՐ:

ՊԱՐՕՎԱՏԸՂ - *տե՛ս* ՊԸՐԸՎԱՏԸՂ:

ՊԱՐՕՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸՐԸՎՕԹՈՒՆ:

ՊԱՑ - *տե՛ս* ՊԷՑ:

ՊԱՑԱԿԱ/ԲԱՑԱԿԱ *(գրբ. բացակայ (հեռավոր, օտար, հեռու մնացող)* - *ած.* Ոչ ներկա, ոչ առկա: *Ասում ա.- Պացակա մարթ չի կա, կարինք ժողովը ըսքըսինք* (Ձ):

ՊԱՑԱՊԱՑ - *տե՛ս* ՊԷՑԱՊԷՑ:

ՊԱՑԻԼ - *տե՛ս* ՊԷՆԱԼ:

ՊԱՑՎԻԼ - *տե՛ս* ՊԷՆՎԱԼ:

ՊԱՑԻՒՐ - *տե՛ս* ՊԷՑԻՒՐ:

ՊԱՔ - *տե՛ս* ՊԱՀՔ:

ՊԷՋԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Պէզա կըտըրէլ - *հեգն.* Անքուն մնալ, չքնել: *Սաղ քըշէրը պէզա յա կըտըրալ, մէզ էլ թողալ չի, թա քօն ինինք* (Բ):

ՊԷՋՆԷԳ - *տե՛ս* ՊԷՋՆԻԳ:

ՊԷՋՆԻԳ/ՊԷՋՆԷԳ/ՊԷՆՁՆԻԳ/ՊԷՆՁՆԷԳ - *գ.* Խեցեղեն ամանի կոտրված մաս՝ կտոր: *Կօլան կօտըրում ա, պէզնիգնէն վէր ածում* (Ձ):

ՊԷՋՆԸ - *տե՛ս* ՊԱՏԱՌ (1):

ՊԷՋՈՒԿ/ՊԱՋՈՒԿ *(գրբ. բազուկ (թեւ)* - *տե՛ս* ԹԷՎ (4):

ՊԷԹԿ(Ը)/ՊԸԹԿ(Ը)/ՊԷՏՔ(Ը)/ՊԸՏՔ(Ը) *(գրբ. պէտք)* - *տե՛ս* ՀԱՐԿԱՎԷՐ: *Թաքուհին էտ տըղին ասըմ ա.- Թա վըրց ա, պէթկը չի* (ՀԺՀ, V, 78):

ՊԷԹԿԱԿԱՆ/ՊԸԹԿԱԿԱՆ/ՊԷՏՔԱԿԱՆ - *տե՛ս* ՀԱՐԿԱՎ(Ը)ՐԱԿԱՆ: *Կօվան ըստացած կաթնը, յէղը ծախըմ ին, տանը հէտի պէթկական պըՀնէր առնըմ* (ԼՂԲ, 361):

ՊԷԺԱԿ - *տե՛ս* ՊԱԺԱԿ:

ՊԷԺԻՆ/ՊԱԺԻՆ *(գրբ. բաժին)* - *տե՛ս* ՓԱՅ: *Յօր ըն օնում ուրանց պէժինը, կամ տօն* (ՀԱԲ, 15, 49):

ՊԷԺԻՆՔ/ՊԱԺԻՆՔ - *գ.* Ծնողների՝ ազգականների կողմից ամուսնացող աղջկան տրվող ունեցվածք, օժիտ: *Օխտը օր, օխտը քըշէր հըրանէք ա անըմ, մըծ պէժինքավ ըխճըկանը ճընապար տինըմ...* (ՀԺՀ, V, 39):

- Պէժինքը կապած մընալ - Համուսնանալ (հաճախ գործածվում է որպես անեծք՝ ուղղված ջահել աղջիկներին): *Պէժինքըտ կապած մընա, տըղէս խէ էն օրըն ը՞ս քըցալ* (Բ):

- Պէժինքին յըրա նըստէլ - Հին սովորույթ, երբ աղջկա օժիտը փեսայի տուն տանելիս ազգականներից մեկը՝ սովորաբար տղա երեխա, նստում է օժիտի կապոցների վրա եւ տղայի՝ փեսայի հարազատներից որոշակի գումար ստանալով միայն՝ թույլատրում, որ օժիտը տուն տանեն: *Պէժինքին յըրա տըղա խօխա յա նըստում* (Ձ):

ՊԷԺԻՆՔԱՎԷՐ/ՊԱԺԻՆՔԱՎԷՐ - *ած.* Մեծ օժիտ ունեցող: *Մին պէժինքավէր ախճիգ ա օգում, լավ ապրում* (Ձ):

ՊԷԼ - *տե՛ս* ՊԸԼ:

ՊԷԼԻ/ՊԸԼԻ *(ֆր. baile (դայակ, խնամակալ)* - *գ.* 1. Հարսանիքի քավոր, ով հարսանիքի ընթացքում ընկերակցում է հարսին ու փեսային, խաչեղբայր: *Հըրսանէքին վախտը պէլին յէշում ա, տըՀսնում մին քանէ ջահիլ օգում ըն կըռըվ քըցին* (Ձ): 2. Այն անձնավորությունը, որ մկրտության ժամանակ ավազանից ընդունում է մկրտվածին՝ դառնալով նրա կնքահայրը: *Էտ խօնցը պէլին շատ հարուստ ա ինում* (Ձ):

ՊԷԽԷ/ՊԷԽԻ/ՊՕԽԷ/ՊՕԽԻ - *գ.* Կեչազգիների ընտանիքին պատկանող ծառ՝ բոխի: *...Շէնին ըռըչին մին մըծ թէղէ ծառ ա իլալ՝ քըշտէն էրկու պէխէ* (ԱԱ, 27):

ՊԷԽԻ - *տե՛ս* ՊԷԽԷ:

ՊԷԽԿ/ՊՕԽԿ/ՊԸԽԿ *(գրբ. բողկ)* - *գ.* Խաչածաղկավորների ընտանիքին պատկանող բանջարաբույս եւ նրա արմատը՝ բողկ: *Խաշին վախտը վէր պէխկ չիլավ, էլ հինչ խա՞շ* (Բ):

- Պէխկու նըման - Քաջառողջ, պնդակազմ, առույգ: *Պէխկու նըման հըլիվուր ա Մըրքըրա դային* (Բ):

ՊԷԽԿ-ՊԷԽԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Պէխկ-պէխկ անել - Կայտառ՝ առույգ՝ քաջառողջ լինել: *Կօզի հինանսուն տըրըՀկան ա Սէրգի ապան, ամիա հալա էն ա պէխկ-պէխկ ընէս* (Բ):

ՊԷԽԿՈՒԿ/ՊՕԽԿՈՒԿ/ՊԸԽԿՈՒԿ - *գ.* Մի տեսակ վայրի ճյուղավորված խոտաբույս: *Պէխկուկ ըն քանդում, պիրում, վէր վէրթնը յըրան բըրամա անէ* (Ձ):

ՊԷԾ - *տե՛ս* ՊԱԾ:

ՊԷԿ/ՊԱԿ *(գրբ. բակ (ոչխարների գոմ)* - *գ.* 1. *տե՛ս* ԸԽՊԸՀԱՐ: 2. Ավերված՝ քանդված տեղ: *Կամ ըն էտ պէկին պատէրը քանդում, քարը տանում* (Ձ): 3. Փոս, հոր: *Աղվէսը վազ տալավ քունում ա, բուրդան ըղնում էտ խօր պէկը* (Ձ):

ՊԷԿԼԱ - *տե՛ս* ՊԷԿԼԱ:

ՊԷԿԼԱ/ՊԷԿԼԱ/ՊԱԿԼԱ *(գրբ. բակլայ)* - *գ.* Լոբազգիների ընտանիքին պատկանող բույս, ինչպես նաեւ այդ բույսի ունդը: *Մէհէտ դըրըկընգանը աշկավընն ա ընգում պէկլան...* (ՆԼՂԺԲ, 114):

ՊԷՀ - *տե՛ս* ՊԻՀ:

ՊԷՂԱՐԾ/ՊԱՂԱՐԾ *(գրբ. բաղարջ)* - *գ.* 1. Չթթված խմորից թխած հաց: *Չօբանը մին պէղարծ ա տինում ծէրքէն* (ՀԱԲ, 15, 55): 2. *տե՛ս* ԿԸԹՆԱՀՈՒՆՑ:

ՊԷՄԲԱԿ/ՊԷՄԲԱԿ/ՊԱՄԲԱԿ - *գ.* 1. Տուղտազգիների ընտանիքին պատկանող բույս՝ բամբակենի: *Մըղափուն, վէր Ղարաբաղ պէմբակ ըն բիջըրիս* (Բ): 2. Բամբակենուց ստացվող նուրբ սպիտակ թելերի փունջ՝ բամբակ: *Պէմբակը թըրչում ա, տինում պիրանէն* (Ձ): 3. Ուռենու ծաղիկներից անջատվող բամբականման թելերը: *Քամէն հոռուն պէմբակը քըշում ա, ածում տընէրը* (Ձ): *ած.* 4. *փխբ.* Փափուկ եւ սպիտակ: *Պէմբակ հաց ա* (Բ): 5. *փխբ.* Հնազանդ, մեղմաբարո: *Պէմբակ տըղամարթ ա Միրզան* (Բ):

- Պէմբակ տըՀռնալ - 1. Սպիտակել: *Մագէրը պէմբակ ա տըՀռալ* (Ձ): 2. Մեղմանալ, հնազանդ դառնալ: *Ըտըրան վէր մին էրկու հէտ թըխում ըն, պէմբակ ա տըՀռնում, ըսքըսում կօրծ անէլը* (Ձ):

- Պիմբակու մաչի պահած - Փափկասուն: *Պիմբակու մաչի պահած ախճիգը կարէլ չի կավ քըթէ* (Բ):

- Պիմբակու քըթավ ճուր խըմէլ/խըմըցընէլ - *տե՛ս* Պըռըշնէն պիմբակավ թըրչիլ:

ՊԷՆ/ՊԱՆ/ՊԸՆ *(գրբ. բան)* - *գ.* 1. Խոսք: *Տընաշինըտ մին պէն չի խօսում, թա ըսկանանք* (Բ): 2. Միտք, մտադրություն: *Ըտըրա պէնը կարէլ չըս կըլիխու ըղնիս* (Բ): 3. Իրողություն, իրադարձություն, դեպք, պատահար: *Ըտըրանա յէտը շատ պէնէր ա յէկալ, քէցալ, պարպառընն էլ ա խառնըվալ...* (ԼՂԲ, 345): 4. Գործ, աշխատանք: *Մէլիք-Շահնազարը մաննը կընծէս ա, գիդաս ա, վըր Պըլըպուղուն պըՀնէրընն ա* (ԼՂԲ, 393): 5. Սեռական անդամ: 6. Արդյունք: *Տէսնում ա, վէր պէն չի տուս կամ, էծու նըման կըռանում ա, սըկսում մըկըկալը...* (ՆԱԲ, 119): 7. Որեւէ բանի ոչ բացահայտ՝ կռահվող արտահայտություն՝ ակնարկ: ... *Պըլըպուղին դաստի հըսկանում ա, վըր Մէլիքը պէն ա ասըմ* (ԼՂԲ, 383): 8. Գործածվում է իբրեւ անորոշ անուն ամեն կարգի առարկայի՝ երեւույթի եւն փոխարեն: *Յէշում ա տէսնում՝ էրկու մարթ մին պէնու վէր ըն թակում* (ՀԱԲ, 15, 34):

- Պէն ա - Ով գիտե, հնարավոր է,

եթե հանկարծ: *Ասում ա.- Պէն ա, վէր վը՛ենընտ ըղնէ մէր շէնը, իմ ախպօր ասիս վէջ, վէր յը՛ս սաղ ըմ* (Ձ):

- Պէնա բէյխաբար - Իրավիճակին՝ իրողությանը անտեղյակ, անիրազեկ: *Կըրիքօր կըզնըվիս ա, պէնան բէյխաբար, ղամա՛ն պիցըրցընիս...* (ԱԱ, 17):

- Պէնա ըղնէլ - 1. *տե՛ս* Կօրծա ըղնէլ: 2. Գործածությունից դուրս գալ, փչանալ: *Չըխարակը պէնա ընգալ ա* (Բ):

- Պէն ածէլ - *տե՛ս* Կօրծ ածէլ: *Էտ ախպա՛ւրը էնքան վարար ա իլա՛լ, վէր էրկու ճէղաց ա իլա՛լ պէն ըծէյիս* (Ձ):

- Պէն անէլ - 1. *տե՛ս* Կօրծ անէլ (ԿՕՐԾ[1]-ի տակ): 2. *տե՛ս* Մին պէն անէլ:

- Պէնան ըրվալ/մա՛հլա՛ւմ անէլ/պարզ՝ վիլ/տա՛ւս կա՛լ - Պարզվել, հայտնի դառնալ: *Պէնան ըրվամ ա, վէր Սէյրանը ըսկի էտ կ՝ըղութունէն սը՛տ չի* (Ձ):

- Պէն ա, պըտահմունք ա - *տե՛ս* Պէն ա:

- Պէնա պըրծընէլ - Աշխատանքներից թեթեւանալ: *Սաղ օրը կօրծ ըմ անում, էլիա պէնա պըրծընում չըմ* (Բ):

- Պէն ասէլ - Որեւէ բան ասել, համաձայն լինելը կամ չլինելը արտահայտել: *Տըղան ըխճըկանը շատ ա խուսցընում, ամիա ախճիգ՝ը պէն չի ասում* (Ձ):

- Պէն ա՛սէ՝ պէն ըսկանանք - Այնպես խոսիր, որ հասկանալի՝ հաճելի լինի: *Ասում ա.- Հինչ ը՞ս լըվըկարկուտ անում, պէն ա՛սէ՝ պէն ըսկանանք* (Բ):

- Պէն ա՛սէ՝ պէնու նըման ինի - Ասածդ անհեթեթություն՝ հիմարություն է: *Խըրէգ՝ խըտուրու-մըտուրու խօ՛սէ, պէն ա՛սէ՝ պէնու նըման ինի* (Բ):

- Պէնավ ըղնէլ/ինիլ - Գործով՝ աշխատանքով տարվել, որեւէ բանով զբաղված լինել: *Պէնավ ա ըղնում, մը՛ննան քը՛ցնում, վէր բիդի քը՛ինի հը՛ըսանէք՝* (Ձ):

- Պէնա քըցիլ - 1. *տե՛ս* Կօրծա քըցիլ: 2. Գործածությունից հանել, փչացնել: *Էնքան պինը՛ցըրավ, ը՛ըրբան պէնա քը՛ցից* (Ձ):

- Պէն գ՝իդա՛լ - 1. Որեւէ գաղտնիք՝ տեղեկություն իմանալ: *Թաքավէրը կըլխու վա ըղնում, վէր նօ՛ք՝ա՛ը պէն ա գ՝ի՛ղդ՝ում* (Ձ): 2. Որոշ չափով գիտելիքներ ունենալ՝ գրագետ լինել (հիմնականում գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Սաբավ դասատու վա, պէն չի գ՝ի՛ղդ՝ում* (Բ):

- Պէնը աչ ք՝ինիլ - *տե՛ս* Կօրծը աչ ք՝ինիլ:

- Պէնը էն ա/ընդը՛ըրանում ա, վէր... - Իրողությունն այն է՝ այնպես է: *Պէնը էն ա, վէր կ՝ի՛ութա՛ն չօնէ՝ վար անէ* (Ձ):

- Պէնը ըղնէլ մինին - *տե՛ս* Կօրծը ըղնէլ մինին:

- Պէնը ընդը՛ղ հըսնէլ, վէր... - Գործը՝ իրավիճակը այնքան բարդանալ՝ սրվել, որ...: *Պա՛նը ընդէղ ա հը՛ըսնում, վը՛ր ըսկըսում ըն տահանք կը՛ռէվ անէլը* (ՆԼՂԺԲ, 133):

- Պէնը թա՛րսվիլ/թա՛րս ք՝ինիլ - *տե՛ս* Կօրծը ծէխվէլ:

- Պէնը ինիլ մինին - 1. Մեկին վերաբերել: *Ասում ա.- Մէր շէնին կ՝օղը էն ա, էտ ընդըրա պէնը՛ն ա* (Ձ): 2. Մեկի կարողություններին՝ հնարավորություններին՝ ուժերին համապատասխան լինել: *Ղարիբ մարթը ասմա.- Էտ լ՝ըհա իմ պէնը՛ս ա, յը՛ս բա՛ննա՛ի ըմ* (Ձ):

- Պէնը խարաբ (ինիլ, տը՛ռնալ) - *տե՛ս* Պէնը պա՛ւրթ (ինիլ, տը՛ռնալ):

- Պէնը ծէխվէլ/ծէխ ք՝ինիլ - *տե՛ս* Կօրծը ծէխվէլ:

- Պէնը կըլօ՛խ կ՝ա՛լ - *տե՛ս* Կօրծը կըլօխ կ՝ա՛լ:

- Պէնը կըլօ՛խ պիրիլ - Կօրծը կըլօ՛խ պիրիլ:

- Պէնը կըտըր(վ)էլ - Գործ չունենալ, պարապ լինել (գործածվում է հարցական ձեւով): *Պէնը՛ս կըտըրվալ մ՞, վէր յը՛ս տը՛ռնամ, ք՝ըզը՛տէ խօրա՛գ՝ իփիմ* (Ձ):

- Պէնը կըրակ ըղնէլ - Խիստ կրքոտվել, սեռական հարաբերություն ունենալու մեծ պահանջ զգալ (սովորաբար կանանց մասին): *Պէնը՛ս կըրակ ա՞ ընգալ, հինչ ը՞ս էտ տըղըմարթկանցը հը՛տը ընգալ* (Բ):

- Պէնը հըսավ դիվանբաշուն - Ասում են, երբ իրավիճակը բարդանում է:

- Պէնը հինչումը՞ն - Ո՞րն է իրողությունը՝ պատճառը: *Պէնը՛ հինչումը՞ն ա՞, խէ թակում ը՞ս էտ հիյվանէն* (Բ):

- Պէն ըղնէլ - Աշխատել, բանել, գործել սկսել: *Ջիհիլնէն պէն ը՛ն ընգալ, հօ՛նձ ը՛ն անում* (Ձ):

- Պէն ըմ ասում - *տե՛ս* Ք՝ը՛ղ պէն ըմ ասում:

- Պէնը յըմբըրուդէն հըսնէլ - Ծեծկռտուք սկսվել: *Օտում ը՛ն, խըմում, վէրջումը պէնը յըմբըրուդէն ա հը՛ըսնում* (Ձ):

- Պէնը պէնան անց կէնալ/ընցընէլ - Ուշ լինել, այլեւս ամեն ինչ անօգուտ լինել, ելք չլինել: *Պըլը՛նաս ա, սըկսէս ծըվ-ծըվալը, ամմա դէ պէնը պէնան ընցած ա ինիս* (Ձ):

- Պէնը պէնին օտէլ - *տե՛ս* Կօրծը կօրծէն օտէլ:

- Պէնը պէն կըպէնա/նը՛հաշ կըտա - Գործի՝ աշխատանքի ընթացքում նոր հանգամանքներ կպարզվեն, գործը ցույց կտա հետագա անելիքը: *Հա՛նը ասմա.- Կօրծը ըսքըսէ՛, յը՛տնան պէնը պէն նը՛հաշ կը՛ըտա* (Ձ):

- Պէնը պէնվալ/պէցվիլ - Գաղտնիքը բացահայտվել: *Պէնը պէնվում ա, Կա՛ֆ՝ունց Արամայիսին սուդի յըն տամ* (Ձ):

- Պէնը պէց անէլ - Գաղտնիքը բացահայտել: *Սուդյան պէնը պէց ա անում, կ՝օղէն քը՛ցնում տա՛ւրմա՛ն* (Ձ):

- Պէնը պընդիլ - Գործը՝ իրավիճակը բարդանալ: *Թօռը նի յա օնում, պէնը պընդա՛ւմ, հօ՛նձ ընուղնէն մը՛նամ ը՛ն մա՛թա՛լ* (Բ):

- Պէնը պըրծընէլ - 1. *տե՛ս* Պէնը պէնան անց կէնալ: 2. *տե՛ս* Պէնը կըտըր(վ)էլ:

- Պէնը պա՛ւրթ (ինիլ, տը՛ռնալ) - Վիճակը՝ գործերի ընթացքը վատ՝ անհուսալի (լինել, դառնալ): *Քաչալը տէսնում ա, վէր պէնը պա՛ւրթ ա, յէխծան տա՛ւս ա կ՝ամ, փախճում...* (ՀԺՀ, VII, 387):

- Պէնը տը՛սնալ - *տե՛ս* Կօրծը տը՛սնալ:

- Պէնը օնգատը ըղնէլ - Գործը հաջողվել: *Ժըղօվուրթը նի յա մը՛ըտալ ղօթալ, պէնը՛ն էլ օնգատը՛ն ա ընգալ* (ՆԱԲ, 94):

- Պէնին/պէնիտ/պէնիս անը՛մը հինչ մ՞ - Պարապ է, անգործ է: *Պէնիտ անը՛մը հինչ մ՞, խէ ք՝ինամ չը՞ս ծէր բաստանը պիհիս* (Բ):

- Պէնին կէնալ - *տե՛ս* Կօրծէն կէնալ:

- Պէնին տակը՛ն էլ գ՝ի՛դա՛լ, կըլօ՛խը՛ն էլ - Ամեն ինչ իմանալ, գործի՝ իրավիճակի բոլոր մանրամասնություններին տեղյակ լինել: *Ա՛լօ՛ն լ՝ավ դ՝ի՛ւլգ՝ա՛ր ա, պէնին տակը՛ն էլ ա գ՝ի՛ղդ՝ում, կըլօ՛խը՛ն էլ* (Բ):

- Պէնին տակէն պէն ինիլ - Գործի մեջ գաղտնիք կամ այլ հանգամանքներ լինել: *Վէգիրը կըլօ՛խ ա ըղնում, վէր պէնին տակէն պէն կա, ամմա սա՛ս չի անում* (Ձ):

- Պէն կըլխու ըղնէլ - 1. Գլխի ընկնել, հասկանալ: *Հիշկան ասում ա, էտ խոխան պէն չի կըլխու ըղնում* (Ձ): 2. Բավականություն ստանալ: *Անհամ մէս ա, օտում ընք, օտում, պէն չընք կըլխու ըղնում* (Բ):

- Պէն շինիլ - 1. Որեւէ գործ գլուխ բերել: *Հիշկան չըրչարվում ա, կարում չի պէն շինի* (Ձ): 2. Խոսակցության՝ բամբասանքի նյութ դարձնել: *Ըսկէսուրը հարթնանը ալէգ՝ը պէն ա շինա՛ւմ, շէնավը մին անում* (Ձ):

- Պէն չի կա - Ոչինչ, հոգ չէ: *Պէն չի կա, լա՛ց մէ՛ր ինիլ* (Բ):

- Պէ՛ն չօնիս - *տե՛ս* Կօ՛րծ չօնիս:

- Պէն պէնավ ածէլ - Որեւէ բանով զբաղվել: *Խէ հը՛ըպարապ ը՞ս, խէ մին պէն չը՞ս պէնավ ածում* (Բ):

- Պէն տը՛ռնալ/տա՛ւս կ՝ա՛լ - Արդյունք՝ ցանկալի հետեւանք ստացվել, հաջողվել: *Կօրծ բիդի անիս, վէր պէն տը՛ռնա* (Բ):

- Պէն տը՛սնալ - *տե՛ս* Կօրծը տը՛սնալ:

- Պէնու ըղնէլ - *տե՛ս* Պէն ըղնէլ:

- Պէնու իրը՛ս տը՛սնալ - Որեւէ բան ստանալ՝ վայելել՝ ճաշակել: *Կընէգ՛ը թա.- Մ՛ մարթ, կօգ՛ի բաղվանչի յրս, ըսկի պէնու իրը՛ս չըմ տը՛սնում* (Ձ):

- Պէնու յըրա ինիլ - 1. Գործ ունենալ, գործով զբաղված լինել (հաճախ գործածվում է հեգնաբար): *Հինչ պէնու յըրա յը՞ս միհէնգ՛* (Բ): 2. Հղի լինել: *Իգէն էն ա պէնու յըրա, կօրծ չօնիս* (Բ):

- Պէնու նըման ինիլ - Որեւէ արժեք ներկայացնել, արժեք ունենալ (հաճախ գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Հա՛�ը կըզնըվում ա, թա.- Էս պէնու նըման չի, մինըն էլ շի՛նի* (Ձ):

- Պէնու պէթկ ինիլ/կ՛ալ - Պետքական՝ պիտանի լինել: *Ասում ա.- Պէնու պէթկ կինի, յը՛ր կա՛լ* (Ձ):

- Պէնու վը՛ռա ինիլ/վէր ըղնէլ - *տե՛ս* Մարթու վը՛ռա ինիլ (ՄԱՐԹ-ի տակ):

- Պէնու տար - 1. *տե՛ս* Կօրծու տար: 2. Որեւէ վատ արարք՝ զանցանք՝ հանցանք կատարած: *Ասում ա.- Թաքավէրըն ապրած կէնա, սօտ ըն ասում, յը՛ս ըտի պէնու տար չըմ, յը՛ս գ՛անքումըս կ՛ըղօթուն ըրած չըմ* (Ձ):

- Պէնու տը՛ղ տինիլ - 1. Գնահատել, կարեւորություն տալ, ուշադրության արժանացնել (հաճախ գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Հասան բէգ՛ը տահանց պէնու տը՛ղ չի տինում* (ՀԺՀ, VII, 187):

- Պէնու տինիլ - *տե՛ս* Կօրծի տինիլ (2):

- Պէն փըռնէլ - *տե՛ս* Կօրծ փըռնէլ:

ՊԷՆԱԼ/ՊԷՆԷԼ/ՊԷՆՑԻԼ/ՊԸՆԱԼ *(գրբ. բանամ)* - *նբ. տե՛ս* Պէց անէլ:

ՊԷՆԷԼ - *տե՛ս* ՊԷՆԱԼ:

ՊԷՆԴ/ՊԸՆԴ *(գրբ. պինդ)* - *ած.* 1. Ամուր, հաստատուն: *Պէնդ պատէր ա յը՛խծուն պատէրը* (Ձ): 2. Կարծր: *Պէնդ պանէր ա, կըրէս չըմ օտիմ* (Բ): 3. Ուժեղ, կուռ: *Պէնդ ծը՛ղք օնէ Վանս դային* (Բ): 4. Խիստ: *Էս ծըմը՛ռը պէնդ ծըմը՛ռ ա* (Բ): 5. Թանձր: *Պէնդ խըմօրը պատան չի կէնալ* (Ձ): 6. Դիմացկուն: *Պէնդ ք՛անդիր ա, կըտըրվէլ չի* (Բ): 7. Հաստատ, անհողդողդ: *Պէնդ մարթ ա իլա՛լ Թէվանը, ո՛ւրա՛ն խուսկէն տարը* (Ձ): 8. Ժլատ: *Պէնդ կընէգ՛ ա Սօնիշկան, ղըմիշ չի անում, թա հացան բօլ-բօլ տա խօնցը* (Բ): 9. Կապ, դժվար գործող (փորի՝ ստամոքսի մասին): *Խուխէն փօրը պէնդ ա* (Բ): *մ.* 10. Ամուր կերպով: *Պէրըմ ըն ք՛անդիրը պէնդ կապըմ, կախ տամ* (ՀԺՀ, V, 18): 11. Ուժգին, ուժգնորեն: *Պէնդ թըխում ա, օշափը վէր ա ըղնում* (Ձ): 12. Սաստիկ, սաստկորեն: *Ախըրը, էտ սըլդաթէտ կ՛էղած պըհէս ըք էնչաք վախտ, վէր պէնդ մըթնէս ա* (ՀԲ, 345):

- Պէնդ կէնալ - Հաստատ մնալ, չընկճվել: *Ասում ա.- Պէնդ կացէք՛, մին շէփթանը յը՛տը կ՛ըլան ըմ* (Ձ):

- Պէնդ նը՛ստա կէնալ - 1. Եռանդուն ու հաստատակամորեն ձեռնարկել մի բան: *Մարթ կօրծան պէնդ բիդի նը՛ստա կէնա, վէր ա՛մա՛լ կ՛ա* (Ձ): 2. Ձեռք չքաշել, օձիքը բաց չթողնել: *Նա՛գիրը տը՛սնում ա, վէր տա պէնդ ա նը՛ստա կացալ, ըռազի յա կէնում* (Ձ):

- Պէնդ վը՛ննը կէնալ - Համառել, իր ասածը պնդել, դիմադրել: *Էտ խօխան պէնդ վը՛ննն ա կընաս, թա.- Ասէլ չըմ, վէր ասէլ չըմ* (ՀԺՀ, V, 289):

ՊԷՆՁՆԷԳ՝ - *տե՛ս* ՊԷՁՆԻԳ՝:

ՊԷՆՁՆԻԳ՝ - *տե՛ս* ՊԷՁՆԻԳ՝:

ՊԷՆՅԱ - *տե՛ս* ԽԱՐՁ (1):

ՊԷՆՁԱԿ - *տե՛ս* ՊԷՆՁԱ՛Կ:

ՊԷՆՁԱ՛Կ/ՊԷՆՁԱԿ *(ռուս. пиджак, անգլ. peajacket)* - *գ.* Պիջակ, կիսաբաճկոն: *Հա՛րը պէնջակը հանում ա, ծառան կախ տամ, ինք՛ը փախճում* (ԲՀԲ, 49):

ՊԷՆՁԱՐ - *տե՛ս* ՊԷՆՁԱ՛Ր:

ՊԷՆՁԱ՛Ր/ՊԷՆՁԱՐ/ՊԱ՛ՆՁԱ՛Ր *(գրբ. բանջար (կանաչեղեն, բանջար)* - *գ.* Եղինջազգիների ընտանիքին պատկանող բույս, եղինջ: *Պէնջա՛րը քաղէլը տիժէր ա* (Բ):

ՊԷՆՍՅԱ - *տե՛ս* ՊԷՆՑՅԱ:

ՊԷՆՍՅԱՆԷՐ - *տե՛ս* ՊԷՆՑՅԱՆԷՐ:

ՊԷՆՎԱԼ/ՊԷՆՎԱ՛Լ/ՊԱ՛ՆՎԱ՛Լ/ՊԸՆՎԱԼ/ՊԷՑՎԷԼ/ՊԷՑՎԻԼ/ՊԱ՛ՑՎԻԼ/ՊԸՆՑՎԷԼ - *կբ. եւ չբ.* 1. ՊԷՆԱԼ-ի: *չբ.* 2. *տե՛ս* ՊԱՐՁՎԻԼ (2): 3. Տրամադրությունը բարձրանալ: *Վէր մին էրկու ըստաքան խըմում ա, պէնվում ա* (Ձ): 4. Գաղտնիքը մեկին պատմել՝ խոստովանել, մեկի առջեւ սիրտը բացել: *Էտ ախճիգ՛ը պէնվում ա, մօրը լօխ ասում* (Ձ): 5. Սկսվել, վրա հասնել (օրը, ցերեկը, առավոտը եւն): *Կ՛արունքը վէր պինվաս ա, արչը քունը-տը՛ղա յէր ա կընաս, տըսնաս՝ հ՛ունին ծաղկած* (ԱԱ, 73):

- Պէցված գ՛ուլ/վարթ/ծաղէգ՝ - *տե՛ս* Պըճըղված գ՛ուլ:

ՊԷՆՎԱ՛Լ - *տե՛ս* ՊԷՆՎԱԼ:

ՊԷՆՎՈՒՐ(Թ)/ՊԱ՛ՆՎՕՐ(Թ) - *գ., ած.* Վարձով աշխատող (անձ), բանվոր: *Էտ տըղան ըղչչըղնէրէն ասմա.- Յը՛ս ծը՛գ նըհը՛տ էն վախտը կըհընգըրանամ, վէր պէնվուր մարթկանց ծը՛րք չի տաք* (Ձ):

ՊԷՆՑՅԱ/ՊԷՆՍՅԱ *(ռուս. пенсия, լատ. pensio)* - *գ.* Ծերության՝ հաշմանդամության եւն համար պետության հաշվին քաղաքացիներին կանոնավորապես տրվող դրամական նպաստ, կենսաթոշակ: *Պառավը ասմա.- Կըլխավը շօռ տամ հ՛ոնքի՛ հ՛ունմա՛նթին, պէնսյան ըստանում ըմ, ապըրում* (Ձ):

ՊԷՆՑՅԱՆԷՐ/ՊԷՆՍՅԱՆԷՐ *(ռուս. пенсионер)* - *գ., ած.* Կենսաթոշակ ստացող (անձ), կենսաթոշակառու: *Պէնցյանէր մարթ ա Բուղդան դային, ամմա էլհա սաղ օրը կօրծ ա անում* (Բ):

ՊԷՆ ՈՒ ԿՕՐԾ - *գ.* Աշխատանք, զբաղմունք: *Պէն ու կօրծ չօնէ, սաղ օրը հըպարապ շօռ ա կ՛ամ* (Բ):

- Պէն ու կօրծա ըղնէլ - *տե՛ս* Կօրծա ըղնէլ:

- Պէն ու կօրծա քըցիլ - *տե՛ս* Կօրծա քըցիլ:

- Պէն ու կօրծը ջիյրանէն պօգ՛էրը յը՛ր ինիլ - Գործ՝ զբաղմունք չլինել՝ չճարվել, պարապ մնալ: *...Բախտըս քարին ու կապին տէմ ար ընգալ, պէնըն ու կօրծը ջիյրանէն պօգ՛էրը յէր իլա՛լ* (ՋՏ, Ա, 125):

ՊԷՆ-ՓԷՇԱ՛Կ/ՊԸՆԸՓԷՇԱ՛Կ/ՊԻՆԸ-ՓԷՇԱ՛Կ - *տե՛ս* ՊԷՆ ՈՒ ԿՕՐԾ:

ՊԷՇ - *տե՛ս* ՂԸՐԱՂ (1):

ՊԷՉԷՆ *(ռուս. печень)* - *գ. տե՛ս* Սը՛վ թօք:

ՊԷՊԷԳ՝ - *տե՛ս* ՏԷՊԷԳ՝:

ՊԷՊԷԼՆԻՑԱ *(ռուս. пепельница)* - *գ.* Ծխախոտի մնացուկը եւ մոխիրը մեջը թափելու աման, մոխրաման: *Էնքան պապռօզ ա քաշա՛լ, պէպէլնիցան մօխրավ լըցցալ ա* (Բ):

ՊԷՊԻԳ՝ - *տե՛ս* ՏԷՊԷԳ՝:

ՊԷՌ - *տե՛ս* ՊԷՌՆԸ[1]:

ՊԷՌ(Ն)ԷԼ/ՊԸ՛Ռ(Ն)ԷԼ/ՊԱ՛ՌՆԱԼ *(գրբ. բեռնեմ)* - *նբ.* 1. Բեռը՝ ծանրությունը գրաստի՝ փոխադրական միջոցների վրա՝ մեջ դնել, բարձել: *Չինա՛ռ՛ն տակէն քարը պարան ըն տաս, աղվէսին վը՛սկէն պըռնէս էտ օխտը ճօրն՛ուն, ք՛իս* (ՀԺՀ, V, 295): 2. *փխբ.* Ծանրաբեռնել: *Աղան նի՛ւք՛ըրնէրէն կօրծավ պէռնում ա, ինք՛ը քօն ինի՛ւմ* (Ձ):

ՊԷՌՆԸ[1]/ՊԸ՛ՌՆԸ/ՊԷՌ/ՊԸ՛Ռ *(գրբ. բեռն)* - *գ.* 1. Փոխադրելի ծանրություն՝ իր՝ նյութ: *Վէր թըկէցէր, կավը կաթնը չի տալ, էշը պէռնըտ տանէլ չի...* (ՆԱԲ, III, 170): 2. Ծանրության՝ իրերի այն քանակը, որ միանգամից կարելի է փոխադրել: *Մին պէռնը փա՛դ ա անում, էշին պէռնում, ք՛ինամ* (Ձ): 3. *փխբ.* Մեկի վրա դրված՝ ընկած պարտավորություն՝ աշխատանք՝ հոգս: *Էտ բաղը Սուղուն հը՛տէ մը՛ծ պէռն ար, կարում չար բըջա՛ռի* (Ձ):

- Պէռնանը տակէն տընքալ - 1. Ծանր բեռ ունենալ մեջքին: *Ծին պէռնանը տակէն տընքամ ար, կարում չար*

պիցըրանա էտ կըծանավը (Զ): 2. Խիստ ծանրաբեռնված լինել: *Ամըռնը, վէր թոռնէրը կամ ին դաչ, այան պէռնանը տակէն տընքամ ար* (Բ):

- Պէռնը տըռնալ մինին հըտէ/յըրա - Մեկին ծանրաբեռնել իր հոգսով: *Հիվանդը պէռնը կըտըռնա տընըցուց հըտէ* (Զ):

- Պէռնը փըռնէլ - Ճանապարհվելու պատրաստ լինել: *Յաղուզ պէռնըտ փըռնալ ը՞ս, էտ ըշտըղ ը՞ս օգում քինիս* (Բ):

ՊԷՌՆԸ[2] - *տե՛ս* ՊՈՒՌՆԸ:

ՊԷՌՆԸ-ՊԷԺԻՆՔ[1] - *տե՛ս* ՊԷԺԻՆՔ[1]:

ՊԷՌ(ՆԸ)ՎԷԼ/ՊԸՌ(ՆԸ)ՎԷԼ/ՊՈՌՆԸ-ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՊԷՌ(Ն)ԷԼ-ի:

ՊԷՍՈՒԿ/ՊԻՍՕԿ *(ռուս. песок)* - *գ.* Շաքարավազ: *Էն վախտըն էլ պէսուկ չի իլալ, թա վարէննի իփինք* (Զ):

ՊԷՏԸՌ - *ած.* Անվայել, անպարկեշտ (խոսքի մասին): *Ըշտըղ քինամ ա, մին պէտըռ խօսկ բիդի ասէ* (Զ):

ՊԷՏԸՌԷԳ[1] - *ած.* Անվայել՝ անպարկեշտ խոսող: *Պէտըռէգ մարթ ա Խուջանց Իսակը* (Բ):

ՊԷՏԸՌԷԳ-ՄԷՏԸՌԷԳ[1] - *տե՛ս* ՊԷՏԸՌ(Ի)-ՊԷՏԸՌ(Ի):

ՊԷՏԸՌԻ - *տե՛ս* ՊԷՏԸՌԷԳ[1]:

ՊԷՏԸՌ(Ի)-ՊԷՏԸՌ(Ի) - *մ.* Անվայել կերպով, անպարկեշտորեն: *Էս բիդասըլը էլ մին քանէ ուրան նըմանը կըլխէն ա հըվաքում, պէտըռի-պէտըռի խօսում* (Զ):

ՊԷՏԻ - *տե՛ս* ԲԻԴԻ[1]:

ՊԷՏԼԱ/ՊԷՏԼԱ *(ռուս. петля)* - *գ.* 1. Իրար ագուցվող երկու շարժական մասից բաղկացած հարմարանք, որի մի մասը ամրացվում է դռանը՝ պատուհանի փեղկին, մյուսը՝ շրջանակին, եւ որի օգնությամբ բացվում եւ փակվում է դուռը՝ փեղկը, ծխնի: *Մըղակէն պէտլան պուք ա կամ, մըղակը մընամ ա կախ իլած* (Զ): 2. *տե՛ս* ԿՈՒՃԸԿԱՄԱՐ:

ՊԷՏԼԱ - *տե՛ս* ՊԷՏԼԱ:

ՊԷՏՄԱ - *տե՛ս* ԲԻԴԻ[1]:

ՊԷՏՔ(Ը) - *տե՛ս* ՊԷԹԿ(Ը):

ՊԷՏՔԱԿԱՆ - *տե՛ս* ՊԷԹԿԱԿԱՆ:

ՊԷՐ *(գրբ. բեր (կենդանիների արտադրություն կամ ծնունդ)* - *գ.* Անասունների, հատկապես կովերի զուգավորվելը՝ բեղմնավորվելը: *Կարունքը վէր կամ ա, կըվէրէն պէրը ըսքըսում ա* (Բ):

- Պէր ածէլ - Զուգավորել, բեղմնավորել (կենդանիների մասին): *Քանալան քըցում ըն նըխէրէն մաչը, վէր կըվէրէն պէր ածէ* (Զ):

- Պէր ըս յըկալ՝ ծընէ՛ - Հեգնաբար ասում են նրանց, ովքեր որեւէ բան են խոստացել կամ պարտավորություն են վերցրել. խոստացել՝ պարտավորվել ես, ուրեմն կատարի՛ր:

- Պէր կանալ - Զուգավորվել, բեղմնավորվել (կենդանիների մասին): *Շէնումը քանալան չի կա, թա կըվէրը պէր կան* (Բ):

ՊԷՐԱԿ/ՊԷՐԱՆԿ/ՊԱՆՐԱՆԿ *(գրբ. բարակ)* - *ած.* 1. Ոչ հաստ, նվազ հաստություն ունեցող: *Մին պէրակ տախտակ ա յօր օնում, թըխում, էտ ծակը օնում* (Զ): 2. Ոչ հորդ, նվազ, քիչ: *Միհէնգ ախպուրը էլիան տուս ա յըկալ, ամմա շատ պէրակ ա* (ԱԱ, 61): 3. Բարեձեւ, ճկուն, նուրբ: *Պէրակ մաշկ օնէ Հէրսիլան* (Բ): 4. Ջգայուն, դյուրազգաց: *Պէրակ սըրտ օնէ մէր Աղասին* (Բ):

- Պէրակ ախպուր - 1. Սակավաջուր աղբյուր: *Ռուսէն ախպուրը պէրակ ախպուր ա* (Բ): 2. Սակավ, բայց մշտական եկամուտ: Էտ բօստանը *Կըրիքօրէն հըտէ մին պէրակ ախպուր ա* (Զ):

- Պէրակ մանէլ - Հիվանդության պատճառով հետզհետե հյուծվել՝ նիհարել: *Էտ ախճիգը ըտի պէրակ մանում ա, մըռնում* (Զ):

- Պէրակ քամէ - Թույլ՝ մեղմ քամի, զեփյուռ: *Մին պէրակ քամէ յա պիցըրանում, հանդ ընուղնէն լանգաթ ըն քաշում* (Զ):

ՊԷՐԱՆԿ - *տե՛ս* ՊԷՐԱԿ:

ՊԷՐԱՆ/ՊԷՐԱՆ/ՊԱՆՐԱՆ *(գրբ. բերան)* - *գ.* 1. Երկու ծնոտների միջեւ ընկած խոռոչը շրթունքներից մինչեւ ըմպանը՝ բերան, ինչպես նաեւ գազանների՝ թռչունների երախը՝ կտուցը: *Մին վախտ զուրթանում ա, տըսնում առուծնուն պիրինէն ըռնըփալալ* (ՀԺՀ, V, 533): 2. Շրթունքների գծագրությունը՝ կտրվածքը: *Էտ ըխճըկանը շատ դաշանգ պէրան օնէ* (Բ): 3. *փխբ.* Կտրող գործիքների սայր՝ շեղբ: *Տինակէն պէրանը շատ ա սօր, սայաղ կաց* (Բ): 4. Ամանի՝ անոթի վերին մասը՝ ելքը: *Կօժէն պէրանը նըղ ա ինում, ըծելիս ճուրը վէր ա տըռնում* (Զ): 5. Սնամեջ առարկաների անցքի սկիզբը՝ մուտքը, եւ վերջը՝ ելքը: *Թըվանգին լուլին պէրանը խաշէմնավ լըցվալ ա* (Զ): 6. Մարդ, անձ (իբրեւ ուտող միավոր): *Խըղճը հինչ ա՞նէ, տանը օխտը պէրան կա, մինակ ինքը ա կօրծ անում* (Բ): 7. Անցք, ծակ, մուտք: *Վըրվանէն պէրանը նըղ ա ինում* (Զ): 8. Գետաբերան: *Կըտէն պէրանը էն ա Ըրգունաշա ծմակումը* (Բ): 9. Կրկնության քանակ, անգամ (ասելու՝ խոսելու մասին): *Քանէ՞ պէրան ըմ ասալ, ըսկանում չի* (Բ): 10. Դիմացը, առջեւը: *Քամուն պիրանումը նըստէլ չըն* (Զ):

- Պէրանը էրանը մանէն էլ ա փըչում, յըտնան օտում - Մի բանից տուժածը խիստ զգուշավոր է դառնում:

- Պէրանը ըղանդվիլ - *տե՛ս* Պէրանը չուրանալ:

- Պէրանը թանուզ պահէլ/պէնալ - Պարկեշտ խոսել, չհայհոյել: *Ուշունց չի տա՛ս, պէրանըտ թանուզ պահէ* (Բ):

- Պէրանը թըրչիլ - *տե՛ս* Բօղազը թըրչիլ:

- Պէրանը խէրավ պէց անէլ - Լավ՝ բարի բան ասել: *Պէրանըտ խէրավ պէ՛ց ըրա, հունց թա՞ թա կարկուտ ա կըլլական* (Բ):

- Պէրանը ծէփէլ - *տե՛ս* Պէրանը կապէլ:

- Պէրանը ծըռէլ - *տե՛ս* Պէրան ծըռէլ:

- Պէրանը ծուխավ լըցընէլ - Սպանել, սատկացնել (հրազենով): *Ասում ա.- Սուս ըրա, թա չէ թըվանգը կըպիրիմ, պէրանըտ ծուխավ լըցընիմ* (Զ):

- Պէրանը ծուվավ կապէլ - Բարեկենդանին վերջում ձու ուտել: *Ադաթ ա՝ պարիկըենթանէն վէր քըփ անին, պէրանը ծուվավ կըկապին* (Զ):

- Պէրանը կաթնուտ ինիլ - *տե՛ս* Պիրանան կըթնավըտ կանալ£

- Պէրանը կապ - 1. Գաղտնապահ: *Պէրանը կապ մարթ ա Վաղօն, կօխկէն մարթ էլ մօրթիս, վէշ մին տըղ ասէլ չի* (Բ): 2. Չխոսկան: *Պէրանը կապ հարթնու նըման մին պէն չի խօսում, թա ըսկանաս* (Բ):

- Պէրանը կապէլ/կուպ(ըր) անէլ - 1. Խոսել ցթողնել, խոսքով լռեցնել: *Լուզվանէգ կընէգ ա Ադրիսակը, վէշ մինը կարում չի ընդրրա պերանը կապէ* (Բ): 2. Լռել, պապանձվել: *Հինչ ը՞ս պէրանըտ կապալ, մին պէն էլ տու ա՛սէ* (Զ): 3. Կաշառել, կաշառելով լռեցնել: *Փուլ ա պարթկ անում, սուդին պէրանը կապում* (Զ):

- Պէրանը կապէլ-նըստէլ - 1. Լուռումունջ նստել, խոսակցությանը չխառնվել: *Լօխ զըրուց ըն անում, ծրծրդօտում, ինքըն էլ պէրանը կապում ա, նըստում* (Զ): 2. Ոչինչ չուտել՝ չխմել: *Պէրանը կապալ ա, նըստալ, վէշ մին պէն օտում չի* (Բ):

- Պէրանը կապիս՝ վըռավը կըխօսէ - Ասում են շատախոս մարդկանց մասին:

- Պէրանը կըրակ ըղնէլ - Ուտելու մեծ ցանկություն՝ տենչ ունենալ (սովորաբար գործածվում է հարցական ձեւով): *Պէրանըտ կըրակ ա՞ ընգալ, էս շօրվան խէ լօխ կէրալ ը՞ս* (Բ):

- Պէրանը համ ըղնէլ - 1. Բերանից անախորժ հոտ գալ: *Էնքան սըխտօր ա կէրալ, պէրանը համ ա ընգալ* (Բ): 2. Մի բանի համը՝ հաճույքը չմոռանալ եւ կրկին ցանկանալ: *Հանբին մէհէտ վըրս ա ըրալ, պէրանը համ ա ընգալ* (Զ):

- Պէրանը հավաք պահէլ - Խոսելիս չափավոր լինել, ավել-պակաս չխոսել: *Վէր ամմէն մարթ պէրանը հավաք պահէ, լօխ կըդ՝ուզի* (Զ):

- Պէրանը հըղաղէլ/հը(ղ)լըղօրէլ - Բերանը՝ քիթումռութը ջարդել՝ արյունլվա անել: *Ըտըրան մին օր էլ կ՝ըղօթուն ընէլիս փըռնում ըն, պէրանը հըղաղում* (Զ):

- Պէրանը հըմըղց(ը)նէլ/քըխծըրց(ը)նէլ - 1. Քաղցր բան ուտել կամ մեկին քաղցր բան հյուրասիրել: *Իվան Մարկօվիչը յալլը՝խը պինա՝ա ա, մէր պիրընէն հըմըղցընէս...* (ՀԲ, 345): 2. Մեկին կաշառելով կամ խոստումներ տալով՝ լռեցնել: *Բըրիգադիրը նախագէն պէրանը հըմըղցըրավ, վէր կօրծա տ՝ուս չըքըցի* (Զ):

- Պէրանը հօփ - *տե՛ս* Պէրանը կապ:

- Պէրանը հօփ օնէլ - *տե՛ս* Պէրանը կապէլ:

- Պէրանը ճըղած/ճօթըռած - 1. Անգաղտնապահ, բացբերան: *Պէրանը ճըղած մարթին քըշտէն բիդի վէշ մին պէն չասիս* (Բ): 2. Վայրահաչ, շատախոս, ավել-պակաս խոսող: *Պէրանը ճօթըռած կընէգ՝ ա, սաղ օրը էն ա տական-կըլխան խուսէս* (Բ):

- Պէրանը ճըղէլ/ճօթըռէլ - *տե՛ս* Բօղազը ճըղէլ:

- Պէրանը ճիրըկա՝լիլ - *տե՛ս* Պիրանէն ճիրէրը քՙինիլ:

- Պէրանը յը՝կածը ասէլ - Առանց մտածելու՝ կշռադատելու խոսել: *Պէրանը յը՝կածը ասէլ չըն, կըմըտածին, յը՝տնան խօսին* (Զ):

- Պէրանը յը՝ղէլ/յըղօտէլ - 1. *տե՛ս* Պէրանը կապէլ (3): 2. Կերուխում՝ քեֆ անել: *Լ՝ըհա վէր ծը՝րքը փուլ ա ըղնում, մէր Ա՝ՐսէՄը դա՝ստի հընգէրունցը հըվաքում ա, պէրանը յը՝ղում* (Զ):

- Պէրանը յըղօտվէլ - Հարստանալ: *Պահէստապէտը էնքան ցօրէն ա ծախալ, պէրանը յըղօտվալ ա* (Զ):

- Պէրանը նի մըննէլ - 1. Մեկին շատ մոտիկ կանգնել: *Հինչ ը՞ս պէրանըս նի մըտալ, պատառ տէ՝ն կաց* (Բ): 2. Մեկի խոսքը ուշադիր լսել: *Նախագան վէր խօսում ար, բըրիգադիրնէն պէրանըն ին նի մըննում* (Զ):

- Պէրանը շաղ տալ - 1. Վայրահաչել, ավել-պակաս խոսել: *Էտ կընէգը սաղ օրը քՙինամ ար ըստը՝ղ-ընդը՝ղ պէրանը շաղ տամ* (Զ): 2. *տե՛ս* Պէրանը հըղաղէլ:

- Պէրանը շօռ ածէլ - 1. Ուտելու համար այս ու այն կողմ ընկնել: *Սաղ օրը էն ա պէրանը շօռ ըծէս, թա տը՝սնա՝ ըշտը՝ղ ա հաց ուտըլական* (Բ): 2. Վավաշոտ լինել, սեռական հարաբերություն ունենալու համար զուգընկեր փնտրել: *Քավթառ մարթ ա, ամմա սաղ օրը էն ա, կընանուցը հը՝տը ընգած, պէրանը շօռ ըծէս* (Զ):

- Պէրանը չափէլ - Մեկի տրամադրությունը՝ մտադրությունն իմանալ: *Պառավը շատ ա ինա՝ում ժա՝ուլիգ՝, դա՝ստի էտ տըղէն պէրանը չափում ա* (Զ):

- Պէրանը չըփարէլ - *տե՛ս* Պիրանէն չափար տինիլ:

- Պէրանը չուրանալ - 1. *տե՛ս* Բօղազը չուրանալ: 2. Համրանալ, պապանձվել, խոսել չկարողանալ (սաստիկ վախենալուց): *Վը՝Րսկանը արչին վէր տը՝սավ, պէրանը չուրացավ* (Զ):

- Պէրանը պաժառ ըղնէլ - *տե՛ս* Պէրանը կըրակ ըղնէլ:

- Պէրանը պահէլ - Ուտելիք՝ սնունդ հայթայթել: *Ըստըրա-ընդըրա հը՝տէ կօրծ ա անում, պէրանը պահում* (Զ):

- Պէրանը պէն քըցիլ - 1. Մի բան ուտել, քիչ ուտել: *Թայդի կ՝ամ ա տօն, պէրանը պէն քըցա՝ում, քՙինամ* (Զ): 2. *տե՛ս* Պէրանը կապէլ (3):

- Պէրանը պէց - 1. Ապշահար, զարմացած, զմայլված: *Թաքավէրին տըղան պէրանը պէց թըմա՝շա՝ յա անում* (Զ): 2. *տե՛ս* Պէրանը ճըղած (1):

- Պէրանը պէց անէլ/պէնալ - 1. Սկսել խոսել, խոսք բաց անել: *... Ջատ չըմ օգըմ, վէր գիդի՝ էտ ըս տըլական, ըսկի պէրան չի պէց անէլ* (ՋՏ, Ա, 15): 2. Հանդգնել խոսելու, իր կարծիքը հայտնել: *Հու վա՞ կըրը՝ցալ ընդրա քըշտէն պէրան պէց անէ* (Զ): 3. *տե՛ս* Պէրանը պէց մընալ: 4. Պասը լուծել: *Ջատէգ՝ը յը՝կավ, պահք պըհուդնէն պիրընէն պէց ըրէն* (Զ): 5. Մեկին գրգռել՝ դրդել խոսելու՝ գանգատվելու՝ հայհոյելու եւն: *Հինչ ը՞ս ըտըրա պէրանը պէց անում, խէ թօղում չը՞ս դինջ նըստինք՝* (Զ):

- Պէրանը պէց թօղնէլ - Ապշեցնել, զարմացնել, զմայլել: *Էտ ախճիգ՝ը ա՝ուրա՝ն յը՝րքավը լօխճին պէրանը պէց թօղից* (Զ):

- Պէրանը պէց մընալ/ինիլ - 1. Ապշել, զարմանալ, զմայլվել: *Էտ հարթնը վէր պար յը՝կավ, թաքավէրին պէրանը պէց մընաց* (Զ):

- Պէրանը վը՝սկավ պէռնած - Ատամները ոսկի: *Սավէտին վախտը պէրանը վը՝սկավ պէռնած մարթ շատ ա իլա՝լ* (Զ):

- Պէրանը վը՝սկըռ կօխէլ/քըցիլ - 1. *տե՛ս* Պէրանը կապէլ (3): 2. Անասուններին զբաղեցնելու համար քիչ ուտելիք տալ: *Կըվէն պէրանը վը՝սկըռ ա կօխում, քըթում* (Զ):

- Պէրանը վը՝տէլ - Որեւէ բան անընդհատ ասել՝ կրկնել՝ հիշեցնել: *Պէրանը ը՝ստ վը՝տալ ա, էլ էտ պէնը ասիս վէչ* (Զ):

- Պէրանը վըսկըճիրա՝ծ - Քաղցրախոս, ճարտարախոս: *Պէրանը վըսկըճիրա՝ծ մարթը տ՝ուզնը կէնալ չի* (Զ):

- Պէրանը ը՝ստ կըցա՞վէ - Ասում են նրան, ով դժվարանում է մի լավ՝ հաճելի բան ասել: *Պէրանը ը՝ստ կըցա՞վէ, վէր տուվ էլ ասիս՝ շընըրհավէր ինի* (Բ):

- Պէրանը ցա՝Րՙիլ/ցա՝Րՙ կօխէլ/ցը՝խէլ - *տե՛ս* Պէրանը կապէլ:

- Պէրանը ցըմաքէլ - *տե՛ս* Պէրանը չուրանալ:

- Պէրանը ցըրը՝վ տալ - *տե՛ս* Պէրանը շաղ տալ:

- Պէրանը ՝ուրա՝ն պահէլ - *տե՛ս* Պէրանը հավաք պահէլ:

- Պէրանը փըրփըրէլ - Խիստ զայրանալ, կատաղել: *Խանը էտ վէր տը՝սնում ա, պէրանը փըրփըրում ա* (Զ):

- Պէրանը քըխծըրց(ը)նէլ - *տե՛ս* Պէրանը հըմըղց(ը)նէլ:

- Պէրան ծըռէլ - 1. Ծաղրելու՝ կատակելու համար բերանով ծամածռություններ անել: *Պէրան ա ծըռում, թաքավէրին ծըծըղցընում* (Զ): 2. Հոխորտալ, ամբարտավանանալ: *Պէրան չի ծըռիս, քՙը՝զ մըհալ քըցօղ չի կա* (Բ): 3. Աղաչել, խնդրել: *Պէրան ծըռից, մին փուլ կ՝ա՝ի ինքՙ կալա՝ալ* (Զ):

- Պէրան տալ - *տե՛ս* ԾԸԾԸՑԸՆԷԼ (3):

- Պիրանան բօշ - 1. *տե՛ս* Պէրանը ճըղած: 2. *տե՛ս* ԾԸԾՕՈ:

- Պիրանան բօշ/գիդի/թա՝ուլ/խը՝ղճ - 1. *տե՛ս* Պէրանը ճըղած: 2. Ուտելիքի հանդեպ անզուսպ, անկշտում: *Պիրանան բօշ մարթ ա Շաբօն, հինչը տաս՝ կօտէ* (Բ):

- Պիրանան լալաջավահիր վէր ածէլ - Գեղեցիկ՝ ճարտար խոսել: *Տըղա, հինչ տըղա՞, պիրանան լալաջավահիր ա վէր ածում* (Զ):

- Պիրանան կըթնավը՝տ կ՝ա՝լ - Դեռ երեխա լինել, անփորձ լինել: *Ժուղովուրթը զըրմանում ըն, ասում.- Էս պիրա՝նա՝ն կըթնավը՝տ կ՝ա՝լիս խօխա՞ն պիտի մը՝ր թաքավէրը՝ն ինի* (ՀԺՀ, VII, 40):

- Պիրանան կըտըրէլ - Իրեն զրկելով՝ տնտեսել, խնայողություն անել,ուրիշին օգնել: *Պիրանան կըտըրէլավ էտ խօնցը պահում ա, մըծըցընում* (Զ):

- Պիրանան կըրակ վէր ածէլ - 1. Խիստ զայրացած լինել, զայրույթով խոսել: *Վէր տը՝սնում ա՝ թաքավէրը պիրանան կըրակ ա վէր ածում, թաքուհին սուս ա անում* (Զ): 2. *տե՛ս* Պիրանան լալաջավահիր վէր ածէլ:

- Պիրանան հախ օգ՝իլ - *տե՛ս* Պիրանան քըրէհ օգ՝իլ:

- Պիրանան մըռալու վը՝տ կ՝ա՝լ -

Շատ ծեր կամ հիվանդ լինել, մահամերձ լինել: *Խօսրով դային հանուր տիրը՝կան ա, պիրանան մը՝ռալու վը՝տ ա կ՚ամ* (Բ):

- Պիրանան յավա - *տե՛ս* Պիրանան բօշ:

- Պիրանան շընավը՝տ կ՚ալ/շընը՝թուլա վէր տը՝ռնալ - Հայհոյասեր լինել, անպարկեշտ խոսել: *Մէր Խօնդին էլ հօ մարթ չի՞, պիրանան շընավը՝տ ա կ՚ամ* (Բ):

- Պիրանան չՕր/պէնդ - 1. Ուտելիքի հանդեպ ժուժկալ, քչակեր: *Պիրանան չՕր մարթ ա Ջավենը, ծըտու մը՝ջանք ա օտում* (Բ): 2. *տե՛ս* Պէրանը կապ:

- Պիրանան վը՝սկէ վէր տը՝ռնալ - *տե՛ս* Պիրանան լալաջավահիր վէր տը՝ռնալ:

- Պիրանան տանուս կ՚ալ/տանուս քըցիլ - Միամտաբար՝ անգիտակցաբար՝ պատահաբար մի բան՝ գաղտնիք՝ ավելորդ խոսք ասել: *Ասում ա.- Յէշի հա՛, հանց կանիս, էս պէնը պիրանատ տանուս չի կ՚ա* (Ձ):

- Պիրանան տանուս կ՚ալ, ծօցը ըղնէլ - Ասածն իսկույն կատարել՝ կատարվել: *Տըղամարթը էն ա, վէր պիրանան տանուս յը՝կածը ծօցը ըղնէ* (Ձ):

- Պիրանան քըրէի օգ՚իլ - Դժկամությամբ խոսել (գործածվում է հարցական կամ ժխտական ձեւով՝ որպես հանդիմանություն՝ ուղղված լռակյաց՝ քչախոս մարդկանց): *Պիրանատ քըրէի ը՞ն օգ՚ում, մին պէն ասէ, լի՞* (Բ):

- Պիրանավը հավք փըռնէլ - Չափազանց ճարտար լեզու ունենալ: *Իզէն պիրանավը հավք կըփըռնէ, տու կարէլ չըս ընդըրա նը՝հը՝տ վը՝ննը մը՝կնիս* (Բ):

- Պիրանավը յը՝տ ասէլ - Ճշմարտությունն ասել, մեղքը վիզ առնել: *Վէր մին էրկու հը՝տ շըլլաղավ տըրըքցըրէն, պիրանավը յը՝տ ասից* (Ձ):

- Պիրանավըտ անգուճըտ պահէ - Հանդիմանական արտահայտություն՝ խրատդ պահիր քեզ:

- Պիրանէն զօռ տալ - 1. Շատախոսել: *Հինչ ը՞ս պիրանէտ զօռ տամ, սո՛ւս ըրա* (Բ): 2. Շատ ուտել: *Ղօնաղը վէր պիրանէն զօռ տըվավ, տընատը՝ռնը աշկէն պըլօր կըտը՝ռնա* (Ձ):

- Պիրանէն թըքը չուրանալ - *տե՛ս* Պէրանը չուրանալ:

- Պիրանէն թիք՚ան խըլիլ - Մեկին ապրուստի միջոցներից զրկել: *Մը՝ծ ախպէրը շատ ա փիս ինում, կուճի ախպօրը պիրանէն թիք՚ան էլ ա խըլում* (Ձ):

- Պիրանէն թիք՚ան կէս անէլ - Բարի՝ հոգատար՝ առատաձեռն լինել: ... *Ըստը՝ղ մին կընէգ՚ ա ինում՝ պարի, պիրանէն թիք՚ան կէս անօղ, ուրուշին հըրէյին հըսնօղ* (Ձ):

- Պիրանէն ծուլուլը քիինիլ - *տե՛ս* Պիրանէն ճիրէրը քիինիլ:

- Պիրանէն կապը կըտըրէլ - Սանձարձակ՝ համարձակ խոսել: *Թանզզան հարթնը մին շէբաթ ա սուս ըրած կէնում, յը՝տնան պիրանէն կապը կըտըրում ա* (Ձ):

- Պիրանէն համը գ՚իդալ - Լավ ճաշակ ունենալ, համադամ եւ ընտիր ուտելիք գործածել: *Արշակը պիրանէն համը գ՚ուդում ա, խըտուրու-մը՝տուրու պէն չի օտում* (Բ):

- Պիրանէն համը կուրցընէլ - Կերածի համը չզգալ: *Պիրանէս համը կուրցըրալ ըմ* (Բ):

- Պիրանէն հօփ տալ - 1. Իրեն զսպել, չխոսել: *Պիրանէն հօփ ա տամ, պէն չի խօսում* (Ձ): 2. Սնունդը չափավորել, քիչ ուտել: *Տը՝սնում ա, վէր ալլէրը պըրծընական ա, պիրանէն հօփ ա տամ* (Ձ): 3. *տե՛ս* Պիրանան կըտըրէլ:

- Պիրանէն ղափաղ չինիլ - 1. Շատախոս լինել: *Շուշվա կընանէգ՚ը պիրընէրէն ղափաղ չունին, սաղ օր հըվաքվում ին, զըրուց անում* (Ձ): 2. Շատակեր՝ որկրամոլ լինել: *Տընաշինըտ պիրանէն ղափաղ չօնէ, սաղ օրը կէր ա անում* (Բ):

- Պիրանէն ճիրէրը քիինիլ - Համեղ՝ հաճելի՝ գեղեցիկ բան տեսնելիս ճաշակելու՝ վայելելու՝ ձեռք բերելու մեծ ցանկություն ունենալ՝ տենչալ: *Ղօնաղը վէր կուրկուտէն ղըզղանը տը՝սնում ա, պիրանէն ճիրէրը քիինում ա* (Ձ):

- Պիրանէն ճուրը վը՝ննը կէնալ - Սովածությունն անցնել: *Պատառ հաց ա օտում, պիրանէն ճուրը վը՝ննն ա կէնում* (Ձ):

- Պիրանէն մը՝ղդարը գ՚իդալ - *տե՛ս* Պիրանէն համը գ՚իդալ:

- Պիրանէն մին ընգ՚ունանվը/ղըրաղավը - Ի միջի այլոց, հենց այնպես, ձեւի համար: *Պիրանէն մին ընգ՚ունանվը համէցէք՚ ա անում* (Ձ):

- Պիրանէն յէշիլ - 1. Մեկից սպասելիք՝ ակնկալիք ունենալ: *Կօրծ չի անում Մուշէղը, էն ա ախպօրը պիրանէն յիշիս* (Ձ): 2. Մեկին լսել՝ հնազանդվել: *Տըղան, վէր հօրը պիրանէն յէշից վէչ, վը՝ննը քարէն նի կըկ՚ա* (Ձ): 3. Ուտելիքով ապահովել, կերակրել: *Մարը տըղէն պիրանէն լանվ ար յէշում* (Բ): 4. *տե՛ս* Պէրանը կապէլ (3):

- Պիրանէն յը՝խտէրը/քաքէրը վէր ածէլ/ցըրը՝վ տալ - Անպարկեշտ խոսել, հայհոյել: *Էն հինչ մարթ ա՞, սաղ օրը պիրանէն յը՝խտէրը վէր ա ածում, էլ ասում չի՝ ախճիգ՚ կա, կընէգ՚ կա* (Ձ):

- Պիրանէն չափար տինիլ - 1. Ոչինչ չասել, չխոսել: *Հարթնը խըռավում ա, պիրանէն չափար տինում, վէչ մինին նը՝հը՝տ խօսում չի* (Ձ): 2. Ոչինչ չուտել, ուտելիքից հրաժարվել: *Սաղին պիրանէն չափար ա տիրալ, օրը օրէն լըղարում ա* (Բ): 3. *հեգն.* Բերանի շուրջը բեղեր՝ միրուք թողնել: *Համասը պէրանը չըփարալ ա, հու տը՝սնում ա, ծըծաղում ա* (Բ):

- Պիրանէն պատառը խըլիլ - *տե՛ս* Պիրանէն թիք՚ան խըլիլ:

- Պիրանէն պատառը կէս անէլ - *տե՛ս* Պիրանէն թիք՚ան կէս անէլ:

- Պիրանէն ջըլանվ չինիլ - Սանձարձակ՝ լկտի լինել: *Ընդըրա պիրանէն ջըլանվ չի կա, լօխ նը՝ստա հը՝ռէ յըն շօռ տամ* (Բ):

- Պիրանէն ջըլանվ/տօռնը տինիլ - Լռեցեցնել, զսպել, հնազանդեցնել: *Էտ կընգանը պիրանէն մինակ մարթըն ար կարում ջիլանվ տինի* (Ձ):

- Պիրանէն սաղուանը կ՚ուղանալ - Մեկի գաղտնիքն իմանալ: *Կընէգ՚ը մարթին պիրանէն սաղուանը կ՚ուղացավ, ըշխարքավըս մին ըրավ* (Բ):

- Պիրանումը թիք՚ա չըտինիլ - Ոչինչ չուտել՝ չճաշակել, անոթի լինել: *Յըրկանց տը՝սնա պիրանումըս թիք՚ա չըմ տիրալ* (Բ):

- Պիրանումը լանզու չինիլ - Խոսելու՝ ճարտասանելու շնորհք չունենալ, չկարողանալ պատասխաններ տալ: *Պիրանումը լանզու չի կա, հինչը ասում ըն, սուս ա անում* (Ձ):

- Պիրանումը լանզու տինիլ - 1. Իր թույլ տված արարքով մեկին առիթ տալ խոսելու՝ բամբասելու: *Մարյանգ՚անլը Ըփկարէն նը՝հը՝տ ք՚ը՝ցավ բօստանը, շէնին կընանունցը պիրանումը լանզու տիրանվ* (Բ): 2. Մեկին գրգռել՝ թելադրել՝ սովորեցնել մեկ ուրիշի դեմ խոսելու, լեզվանի դարձնել: *Կընէգ՚ը մարթին պիրանումը լանզու յա տինում, դարկում հիրըվանէն տօնը* (Ձ):

- Պիրանումը իփանծ/խըրավանծ կըրտօպլի/կարտօշկա ինիլ - Անհասկանալի՝ ոչ պարզ՝ ոչ հստակ խոսել (հիմնականում գործածվում է հարցական ձեւով): *Պիրանումըտ իփանծ կըրտօպլի կա՞, հանց խօսէ, պէն կըլխու ըղնինք՚* (Բ):

- Պիրանումը լօբի չի թըրչվիլ - Ասում են անգաղտնապահ՝ բացբերան մարդկանց մասին:

- Պիրանումը մընանա չըտինիլ - *տե՛ս* Պիրանումը թիք՚ա չըտինիլ:

- Պիրանումը կըռէք չըթօղնէլ - Հոգին հանել, նեղ օրը գցել: *Պիրանումըս կըռէք՚ չի թօղալ, էնքան չըրչարալ ա ինձ* (Ձ):

- Պիրանումը շիրա մընալ - *տե՛ս* Պէրանը համ ըղնէլ (2):

- Պիրանումը շունչ ինիլ - Կենդանի լինել: *Նի մըտէնք՝ տօն, տը՛սէնք՝ իրը՛ք պառավ՝ մինը մը՛ռած, իրը՛քէն պիրանումըն էլ ըսկի շունչ չի կա* (Ձ):

- Պիրանումը չէ չինիլ - Ոչ մեկին չմերժել, շատ բարի լինել: *Մէր Մարուսէն պիրանումը չէ չի կա, հու հինչ օգ՝ում ա, տամ ա* (Բ):

- Պիրանումը պատառ/պէն չըտինիլ - *տե՛ս* Պիրանումը թիք՝ան չըտինիլ:

- Պիրանումը տաք ճո՛ւր չի պահէլ - *տե՛ս* Պիրանումը լօբի չի թըրչվիլ:

- Պիրանու սաղունձ շինիլ, ծամէլ - *տե՛ս* Մին ծամ սաղունձ շինիլ, ծամէլ:

- Պիրանու սաղունձ տը՛ռնալ - *տե՛ս* Մին ծամ սաղունձ տը՛ռնալ:

ՊԷՐԱ՛Ն - *տե՛ս* ՊԷՐԱՆ:

ՊԷՐԱՆ-ՊԷՐԱՆ/ՊԻՐԸՆ-ՊԷՐԱՆ - *մ.* Փոխանցելով, մեկը մյուսին հաղորդելով, բերնեբերան: *Էտ խաբարը պէրան-պէրան շէնավը մին ըն անում* (Ձ):

- Պէրան-պէրան լա՛ց ինիլ - Իրար ձայնակցելով լացել՝ սգալ: *Կընանէք՝ը հըվաքվում ըն էրած արտումը, պէրան-պէրան լա՛ց ինում* (Ձ):

ՊԷՐԷԼ - *տե՛ս* ՊԻՐԻԼ:

ՊԷՐԷՑ *(ռուս. перец)* - *տե՛ս* ՏԱ՛ԽՏԸ՛Ղ:

ՊԷՐԹ/ԲԷՐԹ/ՊԸ՛ՐԹ *(գրբ. բերդ)* - *գ.* Բերդ, ամրոց: *Էտ մարթը Թա՛ղրթա՛ռ կ՝էտէն ղըրա՛ղին մին պէրթ ա շինէլ, էտ պէրթին մէչավը մին հըղէ յա ընում տարած Թըռթա՛ռին յիրա՛ տաղատ ճո՛ւր յօր ունէլի հէտի* (ԼՂԲՔ, 281):

ՊԷՐԻ - Գործածվում է *Աշկ տալ, պէրի չըտալ, Օր տալ, պէրի չըտալ* դարձվածներում:

ՊԷՐԻԼ - *տե՛ս* ՊԻՐԻԼ:

ՊԷՐՄՈՒՆՔ - *գ.* Եկամուտ, աշխատավարձ: *Պէրմունքը ըստանում ա, լօխ ախպօրցը պիժը՛նում* (Ձ):

ՊԷՐՎԷԼ - *տե՛ս* ՊԻՐՎԻԼ:

ՊԷՐՎԻ *(ռուս. первый)* - *տե՛ս* ԸՌԸՉԻ:

ՊԷՐՎԻԼ - *տե՛ս* ՊԻՐՎԻԼ:

ՊԷՐՑ/ՊԸ՛ՐՑ/ՊԱ՛ՐՑ *(գրբ. բարձ)* - *գ.* Փետուրներով՝ բրդով եւն լցրած փափուկ տոպրակ գլխի տակ դնելու կամ վրան թիկնելու համար, բարձ: *Ըտահանց լ՝ավ ուտրցընում ըն, խըմըցընում, պըծ՝իպածի՝ ընէյիս պէրցէր տինում, քունավ անում* (ԱԱ, 78):

- Պէրցը ճօկէլ - Ամուսնալուծվել: *Անց ա կէնում մին ամէս, էտ հարթնը էլ կարում չի տէմ կէնա, պէրցը ճօկում ա* (Ձ):

- Պէրցը փոխէլ - Ամուսնական ուխտը խախտել, ուրիշի հետ կենակցել (հատկապես զավակ ունենալու ակնկալությամբ): *Օխտը տարէ ըտրրա նըհը՛ստ ապըրում ա, վէրջը, տը՛սնում ա, վէր ըտրրանա խօխա չի ինա՛ւմ, պէրցը փոխում ա* (Ձ):

- Պէրցին տակէն օտէլ (ըշխադածը) - Անօրինությամբ վաստակածը՝ ձեռք բերածը հիվանդ՝ անկողնային վիճակում գործածել, հիվանդության վրա ծախսել, չվայելել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Պէրցին տակէն օտիս ըշխադածը՛ստ, խէ խուխէս տօնը քանդա՛ում ը՞ս* (Ձ):

- Պէրցու հընգէր - Ամուսին, կողակից: *Ա՛հիլը ջըհիլին պէրցու հընգէր չի* (Ձ):

ՊԷՐՈՒԾ - *գ., ած.* Հղի դառնալու ենթակա (անասուն): *Էտ պէրուծ հէ՛ր էնջը ծախում ա, մին էշ ինք՝ օնում* (Ձ):

ՊԷՐՈ՛ՒՐ - *տե՛ս* ՊԱ՛ՐՈ՛ՒՐ:

ՊԷՐՔ/ԲԷՐՔ *(գրբ. բերք)* - *գ.* 1. Հողագործական արտադրանք՝ արդյունք, բերք: *Ըստարէ թուռըյին ա, պէրքը շատ ա ինա՛կա՛ն* (Բ): 2.Ծնունդ, ծին: *Պէրքը կըտրրվէ ըտրրա, օղռաշ մարթ ա* (Բ):

ՊԷՐՔԱՏՈՒ/ՊԻՐՔԱՏՈՒ/ԲԷՐՔԱՏՈՒ/ԲԻՐՔԱՏՈՒ - *ած.* Բերք տվող, պտղաբեր: *Ապուն մին լ՝ավ պէրքատու բաղ ա իլա՛լ Խարթիվէրդ* (Բ):

ՊԷՐՔ՝Ի - 1. *տե՛ս* ՊԷՐՔԱՏՈՒ: 2. *ած.* Ժառանգ տալու ընդունակ: *Տը՛սնում ըն, վէր էտ հարթնը պէրք՝ի չի, տա՛ւս ըն քըցա՛ւմ* (Ձ):

ՊԷՑ/ՊԸ՛Ց/ՊԱ՛Ց *(գրբ. բաց)* - *ած.* 1. Բացված վիճակում գտնվող, չծածկված: *Պէց ակուշկէն ըռըշկին խըրէգ՝ վը՛ննը կաց, կըմըրսիս* (Բ): 2. Փականքով՝ կողպեքով չփակված: *Պէց տօռն ա, հու կարում ա, պէնում ա, նի մըննում* (Բ): 3. Չծածկված, անծածկույթ, չփաթաթված: *Պէց կըլ՝ՕՀխը կըմըրսէ* (Ձ): 4. Ազատ, արձակ: *Ըտի յէկալ ըն միհէնգ՝վա շէնին տը՛ղը, տուրրընէն ա յէկալ. իրէք ա՛նգ՝ունը թումբէր, առաչը պէց* (ԱԱ, 24): 5. Ոչ գաղտնի, հայտնի: *Պէց զըրա՛ւց ա, կարիս ըսկանաս* (Բ): 6. Ծաղկած, բացված: *Պէց վարթէրէն շաղ ա նըստալ, նամ քըրէրէն յարրս ա նըստալ...* (Ձ): 7. Թեթեւ գունավորված, ոչ մուգ: *Պէց կանանչ շՕՀ ա կ՝ը՛ցալ* (Բ): 8. Արգելքներից զերծ, ազատ: *Պէց ա հըղէն, կարիս ք՝ինիս* (Բ): 9. Ծառազուրկ, անտառազուրկ: *Պէց սար ա Լիսագօրը* (Բ):

- Պէց ամանը շօնըն էլ լ՝ուզ կըտա, կատուն էլ - Անտեր՝ չհսկվող ինչքից բոլորն էլ կօգտվեն:

- Պէց անէլ - 1. Որեւէ բանի ներսը մատչելի դարձնել, բացել: *Պէց ա անում, ժուղօվուրթը նի յըն տը՛ռնում յը՛խծէն* (Ձ): 2. Ծածկույթը՝ կափարիչը եւն վերցնել՝ պատռել: *Ծիլկանը հըղէնի պէց ա անում, կարթում...* (ՆԱԲ, 25): 3. Ծալքը՝ ծալվածքը ետ դարձնել, փռել: *Կարպէտը պիրում ա պէց անում, դունըղնէն յըրան նըստտում ըն* (Ձ): 4. Ջրի հոսանքի եւն համար անցք ստեղծել: *Բայանդուր իշխանը ասում ա.- Իմ ախճիգ՝ըս ընդրրա կըտամ, հու կ՝ը՛տան մինչը՛վ իմ բախճաս արխ պէց կանէ* (Ձ): 5. Ետ քաշել, ծածկույթը բարձրացնել: *Թաքավէրէն տըղան ք՝ինա՛մ ա խուխէն իրէսը պէց անում, տը՛սնում խօխան էն ա մօրթած...* (ՆԼՂԺԲ, 48): 6. Դեպի աջ եւ ձախ տարածել: *Ծը՛ղքէրը պէց ա ըրալ, խըտտալ* (Ձ): 7. Փակվածքը վերացնել, իրար հպվող մասերը իրարից հեռացնել: *Աշկէրը պէց ա անում, տը՛սնում՝ մարթ չի կա* (Ձ): 8. Հիմնել, հիմնադրել: *Շէնումը մին մաղազին ա պէց անում, առըտօր անում* (Ձ): 9. Առաջացնել, գոյացնել: *Մին ծակ ա պէց անում, քուղավ կապում, ծիք՝ տամ* (Ձ): 10. Բացահայտել, երեւան հանել: *Սուդյան կ՝ուղօթունը պէց ըրավ* (Բ): 11. Պատռել, ճեղքվածք՝ բացվածք ստեղծել: *Տէնակը յօր ա օնում, վըխճարէն փօրը պէց անում, տը՛սնում մին հափուռ մուկնու ճար մաչին* (Ձ): 12. Որեւէ տեղամաս մաքրել՝ քարերից՝ թփերից եւն ազատել՝ օգտագործելու համար: *Շատ ա չըրչարվում, մինչը՛վ էտ ցա՛ք՝օտը կըտօրում ա, բուստընատը՛ղ պէց անում* (Ձ): 13. Կազմում է բազմաթիվ հարադրություններ՝ *ըշտա՛հը պէց անէլ, սուփրա-սէղան պէց անէլ, տը՛ղը պէց անէլ, սը՛ռտը պէց անէլ* եւն, որոնք տրված են առաջին բառերի տակ:

- Պէց աշկավ լ՝ուսցը(ը)նէլ - Ամբողջ գիշերը չքնել՝ անքուն մնալ: *Խը՛ղճ կընէգ՝ը սաղ քըշէրը պէց աշկավ ա լ՝ուսցընում, մինչը՛վ խաբարը կ՝ամ չի* (Ձ):

- Պէց ասէլ - Առանց թաքցնելու՝ բացահայտորեն ասել: *Տըղամարթը էն ա, վէր պէց ասէ* (Ձ):

- Պէց ըղնէլ - 1. Արձակվել, բաց թողնվել: *Դընստէնք՝ը պէց ըն ըղնում, նի տը՛ռնում արտը* (Ձ): 2. Վրիպել, սպրդել: *Թա հունց ա պէց ընգալ, գ՝ուդա՛ում չըմ* (Բ): 3. *տե՛ս* Կապը կըտրրէլ:

- Պէց ընգած - *տե՛ս* Կապը կըտրրած:

- Պէց թօղնէլ - 1. Ազատել, արձակել, թողնել: *Ախրը, պէց թուղէցէն օղտէն, ա՛ւրանք ք՝էցէն* (ԼՂԲՔ, 268): 2. Հարմար առիթը կորցնել: *Էն ա՛ղը՛վ օրէրը պէց ա թօղալ, ծա՛ւնը յը՛կալ ա, էլ կըրը՛ցալ չի փա՛ղ անէ* (Ձ): 3. Գրելիս՝ խոսելիս որեւէ բառ՝ անուն՝ թիվ եւն չարտահայտել: *Ցուցակ ա անում, հունց ա պըտահում Ըրտէմին անումը պէց ա թօղնում* (Ձ): 4. Տալ, տրամադրել, հատկացնել: *Կալխո-*

զը աշխօրէն էրկու կիլօ ցօրէն ա պէց թօղալ (Զ): 5. Թողարկել: *Ջավօդը օրը հազզար բօթուլ կ'ինի յա պէց թօղում* (Զ): 6. Որեւէ նյութի արգելքը վերացնելով՝ հոսեցնել: *Ճ'ուրը պէց ա թօղում, ծառէրը ճիրՆում* (Բ): 7. Որեւէ պահած՝ բռնած իր՝ առարկա եւն ցած թողնել: *Տըրան վէր պէց ըն թօղնում, թօմի, ըղնում ա վը'էրին տակը* (ՀԱԲ, 15, 25): 8.Որեւէ բռնած իրից՝ առարկայից եւն ձեռքը հետ քաշել: *Բաղվանչին ըտըրա ծը'էրքան պէնդ փըռնում ա, պէց չի թօղնում* (Զ): 9. Այլեւս չհսկել՝ չմշակել եւն, ձգել հեռանալ: *Բօստանը պէց ա թօղալ, էլ բիջ'Նրում չի* (Զ): 10. Թույլ տալ, արտահայտել: *Շատ սըխալնէ յա պէց թօղալ* (Զ): 11. Սանձը թուլացնելով՝ թույլ տալ, որ ձին արշավի: *Ծին պէց ա թօղում, մին մընուտումը հըսնում պէրթը* (Զ): 12. Արձակել, որպեսզի արածի: *Հիվընէն պէց ա թօղում, ինք'ը ծառէն տակէն թէյնը տամ* (Զ): 13. Թույլատրել՝ իրավունք տալ աշխատանքից՝ պարապմունքներից բացակայել: *Կըլխօզէն նախագան Թէմուրէն հէնգ' օրավ պէց ա թօղնում, վէր ք'ինի Բաքու* (Զ): 14. Բաց պահել, չփակել: *Մըղակը պէց ա թօղալ, շօնը նի յա մըտալ, խըմօրը կէրալ* (Զ): 15. Չկոճկել, չկապել: *Հինչ ը՞ս յը'էխատ պէց թօղալ, քամուն ըռխումը վը'էննը կացալ* (Բ): 16. Հրազենից կրակել: *Վէր թըվՆնգ'ը պէց թօղից, արչը փախավ* (Զ):

- Պէց ինիլ - *չբ.* Պէց անէլ-ի:

- Պէց իրը'էսավ/ճըկատավ - Համարձակ ու պարզերես, ամաչելու՝ քաշվելու ոչ մի առիթ չունենալով: *Մարթ բիդի հանց անէ, վէր ամմէն տը'էդ պէց իրը'էսավ խօսէ* (Զ):

- Պէց պէրան - *տե՛ս* ՊԻՑԸՊԷՐԱՆ:

- Պէց պէրանը ճՆնջ նի կըմընէ - *տե՛ս* Պէց ամանը շօնըն էլ լՆուզ կըտա, կատուն էլ:

- Պէց սըրտավ - 1. Սրտանց, անկեղծորեն, առանց ձեւականության: *Մելիք'ը ըտըրանց պէց սըրտավ ղօնաղ ա անում* (Զ): 2. *տե՛ս* Սը'էրտը պէց:

- Պէց վը'էռը լօխ կը'ընօնին - *տե՛ս* Պէց ամանը շօնըն էլ լՆուզ կըտա, կատուն էլ:

- Պէց տօռնը թակէլ - Անտեղի գործել, փորձել ապացուցել այն, ինչ անառարկելի ճշմարտություն է: *...Ասում ա.- Շահ-Աբասը ապրած կէնա, խէ պէց տօռն ը՞ս թակում, մէր հընգէրէն մինը տու չը՞ս ըլալ* (ՆԱԲ, II, 28):

ՊԷՑԱՊԷՑ/ՊԸ'ՑԱՊԸ'Ց/ՊԸՑԸՊԷՑ/ՊԻՑԸՊԷՑ/ՊՆՑՆՊՆՑ *(գրբ. բացէիբաց (բոլորովին, իսպառ)* - *մ.* Բացահայտ կերպով, առանց թաքցնելու, բացեիբաց: *Ըտըրանք պէցապէց Ռ'ուրՆուր նը-հը'էտ սիլի-բիլի յընն անում* (Զ):

ՊԷՑԻՐ - *տե՛ս* ՊԷՑՆԻՐ:

ՊԷՑ-ՊԻՑԸՀՆՐ - 1. *ած.* Բոլորովին բաց՝ չծածկված, չփակված: *Պէց-պիցը-հՆր տօն ա, հու կարում ա, նի յա մընում, հիշկան թօռ ա կ'ամ, նի յա տը'էռնում մաչը* (Զ): 2. *տե՛ս* ՊԷՑԱՊԷՑ:

ՊԷՑՎԱԾՔ - *տե՛ս* ՊԷՑՎԱՍԿ:

ՊԷՑՎԱՍԿ/ՊԷՑՎԱԾՔ - *գ.* Ճեղքվածք, պատռվածք: *Պատէն պէցվասկը մը'էծ ա ինՆում* (Զ):

ՊԷՑՎԷԼ - *տե՛ս* ՊԷՆՎԱԼ:

ՊԷՑՎԻԼ - *տե՛ս* ՊԷՆՎԱԼ:

ՊԷՑԻՐ - *տե՛ս* ՊԷՑՆԻՐ:

ՊԷՑՈՒՐ - *տե՛ս* ՊԷՑՆԻՐ:

ՊԷՑՆԻՐ/ՊԷՑՈՒՐ/ՊԷՑԻՐ/ՊՆՑՆԻՐ/ՊՆՑՆԻՐ/ՊԸ'ՑՈՒՐ *(գրբ. բարձր)* - *ած., մ.* 1. Ներքեւից վերեւ մեծ ձգվածություն ունեցող: *Ք'ընում ա, թաքավէրէն տան ըռաչին մին պէցուր քար կա, յըրան նըստում* (Զ): 2. Ձգալի բարձրության վրա գտնվող: *Մէր շէնը պէցՆուր տը'էղ ա* (Բ): 3. Գետնից՝ հատակից զգալիորեն վերեւ գտնվող: *Պատալօկը շատ ա պէցՆուր* (Բ): 4. Ըստ քանակի՝ շատ, մեծ: *Ըստարէ պէցՆուր պէրք ընք յէր կալՆլ* (Բ): 5. Նման առարկաների համեմատությամբ ավելի վերեւ գտնվող: *Ղօչչաղ կընէգ'ը էն դարադամէն տէղը մին ինդի պալատ ա շինիլ տամ, վէր Ռ'ուրՆն հօրը պալատան պէցՆուր ա ինՆում* (ՀԺՀ, V, 448): 6. Սուր, զիլ: *ՊէցՆուր սՆս օնէ Ակօփը* (Բ): 7. Ըստ պաշտոնական ենթակայության՝ վերադաս: *ՊէցՆուր պաշտօնում ա կօրծ անում* (Բ): 8. Բարձրահասակ: *ՊէցՆուր մարթ ա Խիկարը* (Բ): 9. Ըստ աստիճանի՝ չափի՝ սովորականից ավելի մեծ: *ՊէցՆուր կ'ին օնէ մէսը բըզարումը* (Բ): 10. Բարձրաձայն: *ՊէցՆուր կարթՆում ա, վէր լօխ ըսկանան* (Զ): *գ.* 11. Բարձունք, բարձրադիր տեղ: *ՊէցՆուրան քը'ըշանում ըն, էտ ծՆրՆումը կ'օղլու կէնում* (Զ): 12. Իշխանություն, կառավարություն: *Պէցըրան մարթ ա կ'ամ շէնը, Պէնին ք'ընում ա կօշտը, խընթրում, վէր պարէխօսէ, Ռ'ուրան մին դինջ կօրծ տան* (ՆԱԲ, 107):

- ՊէցՆուր ըշկօլ - Բարձրագույն ուսումնական հաստատություն: *ՉՆրք' ախճիգ' օնէ Սիրանուշը, չՆրք'ըն էլ պէցՆուր ըշկօլում ըն կարթՆում* (Զ):

- ՊիցՆուրՆն յէշիլ - Գոռոզամտել, ուրիշներին արհամարհանքով վերաբերվել: *Ք'ը'էթը ցէց կընէգ' ա պահէստապէտին կընէգ'ը, պիցՆուրՆն ա յէշում* (Զ):

- ՊիցՆուրՆն փըռնըց(ը)նէլ - *տե՛ս* Ցը'էրէ սիմին թըխէլ:

ՊԷՑՆԻՐ-ՊԷՑՆԻՐ - *տե՛ս* ՊԻՑՆԻՐ-ՊԷՑՆԻՐ:

ՊԷՔ'Ի/ՊՆԻՔ'Ի *(գրբ. բոգի)* - *գ.* Հովանոցավորների ընտանիքին պատկանող բանջարաբույս՝ ձիասամիթ, որ թթու են դնում: *Աղ տիրՆծ պէք'ին լ'ավ ըրաղու մՆզՆ յա* (Բ):

ՊԸԴԱՍԽԱՆ - *տե՛ս* ՊԱԴԱՍԽԱՆ:

ՊԸԴԸՍԽԱՆԷԼ - *տե՛ս* ՊԱԴԱՍԽԱՆԷԼ:

ՊԸԴԸՍԽԸՆԱՏՈՒ - *տե՛ս* ՊԱԴԱՍԽԱՆԱՏՈՒ:

ՊԸԴԸՐԱՍՏԷԼ/ՊԸԴՐԱՍՏԷԼ *(գրբ. պատրաստեմ)* - *նբ.* 1. Որեւէ բան սարքել՝ ձեւավորել: *Ուստան էտ փՆդէրը տՆշՆում ա, մին լ'ավ ըստօլ պըդըրաստում* (Զ): 2. Կարգի բերել, կարգավորել: *Տօնը պըդըրաստում ա, վէր դունըդնէրէն հՆմէցիք' անէ* (Զ): 3. Կազմակերպել: *Մին լ'ավ ք'ը'էփ ա պըդըրաստում* (Զ): 4. Պատրաստի վիճակի մեջ դնել: *Թաքավէրը հըրաման ա տամ, վէր զօրքը պըդըրաստին* (Զ): 5. Անհրաժեշտ՝ հարմար տեսք՝ ձեւ տալ: *Տը'էդէրը պըդըրաստում ըն, դունըդնէրէն քունավ անում* (Բ): 6. Եփել, տապակել, թխել: *Ջէմքուճը յըդուծու վա պըդըրաստում* (Բ): 7. Ձեւակերպել, գրել: *Թուխտէրը պըդըրաստում ա, տանում սուդը* (Զ): 8. Սովորեցնել, անհրաժեշտ հմտություններ տալ: *Ուստա Կարօն Ռ'ուրՆն գանքումը շատ դՆլգ'Նր ա պըդըրաստալ* (Բ): 9. Նախապատրաստել, որեւէ բան ասելու՝ հայտնելու համար անհրաժեշտ տրամադրություն՝ միտում՝ հող ստեղծել: *Հիրըվանէրը Սէրօփէն պըդըրաստում ըն, յը'էտնան ասում* (Զ): 10. Նյութել, լարել, հորինել: *Ըտըրանք մին սօտ ըն պըդըրաստում, վէր էտ մարթին խըյտառակ անին* (Զ): 11. Հավաքել, ամբարել, կուտակել: *Ծըմըռնըվա հը'էտէ չիրը'էդան ընք պըդըրաստալ* (Բ):

ՊԸԴԸՐԱՍՏԸՎԷԼ/ՊԸԴՐԱՍՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* 1. ՊԸԴԸՐԱՍՏԷԼ-ի: *չբ.* 2. Մի բանի պատրաստություն տեսնել, նախապատրաստվել մի բան անելու համար: *Ք'ՆցՆլ ա շահէն կօշտը, թա.-էրկու օր վախտ տաս, պըդրաստվէմ, տէփավ-զուռնավ հըդէ տինիմ* (ԱԱ, 42): 3. Մտադրվել, տրամադրվել: *Էլհա էտ տըղան պըդրըստվէս ա՝ ախճիգ' հավան կընալի* (ՀԺՀ, V, 529):

ՊԸԴԸՐԸՍՏՕԹՈՒՆ/ՊԸԴՐԸՍՏՕԹՈՒՆ/ՊԱԴԸՐԱՍՏՕԹՈՒՆ/ՊԱԴՐԱՍՏՕԹՈՒՆ *(գրբ. պատրաստութիւն (պատրաստ լինելը)* - *գ.* Որեւէ բանի համար կատարվող նախապատրաստական աշխատանքների՝ միջոցառումների, ինչպես

նաեւ անհրաժեշտ պիտույքների՝ պաշարի՝ հանդերձավորման եւ ամբողջությունը: *Ասում ա.- Վէգիրը ապրած կէնա, էտքան պըդըրըստօթունըտ նըհախ տը՛դան ա, թաքավէրը կ'ըլական չի* (Ձ):

- Պըդըրըստօթուն տը՛սնալ/քաշիլ - *տե՛ս* ՊԸԴԸՐԱՍՏԸՎԷԼ (2): *Քա՛սիբը մին լա՛վ պըդըրըստօթուն ա տը՛սնում, դօնախլըդ անում հանօրը հէտէ* (ՆԼՂԺԲ, 36):

ՊԸԴԸՐԸՔ'ԱՎԷՐ - *տե՛ս* ԲԸԴԸՐԸՔ'ԱՎԷՐ:

ՊԸԴԸՐԸՔ'ԱՏԱՐ - տե՛ս ԲԸԴԸՐԸՔ'ԱՏԱՐ:

ՊԸԴԸՐԸՔ'ԱՏՕՆ - *տե՛ս* ԲԸԴԸՐԸՔ'ԱՏՕՆ:

ՊԸԴՐԱՍՏԷԼ - *տե՛ս* ՊԸԴԸՐԱՍՏԷԼ:

ՊԸԴՐԱՍՏՎԷԼ - *տե՛ս* ՊԸԴԸՐԱՍՏԸՎԷԼ:

ՊԸԴՐԸՍՏՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸԴԸՐԸՍՏՕԹՈՒՆ:

ՊԸՁԶ - *ձ.* Պզզալու՝ պզզոցի նմանաձայնությունը: *Պը՛զզ, ճո՛ւրը վէր ա տը՛ռնում* (Բ):

ՊԸՁԶԱԼ - *չբ.* Նեղ ճեղքից՝ անցքից հեղուկը ուժեղ շիթով ցայթել: *Վէր ծակում ա, կ'հինին պըզզամ ա, իրը՛սավը տամ* (Ձ):

ՊԸՁԶԱԼԻ - *մ.* Ուժեղ շիթով ցայթելով (հեղուկի մասին): *Ճո՛ւրը պըզզալի վէր ա տը՛ռնում* (Բ):

ՊԸՁԶԱՆ - 1. *գ.* Փոքրիկ սրինգ՝ շվի: *Մին պըզզան ա շինում, տամ խուխէն* (Ձ): 2. *ած.* Ուժեղ շիթով հոսող, պզզացող: *Պըզզան ախպո՛ւր ա* (Բ):

ՊԸՁԶԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՊԸՁԶԱԼ-ի:

ՊԸՁԶՕՆ - *գ.* 1. Պզզալը, պզզացնելը, պզզալու՝ պզզացնելու ձայնը: *Ճիրին պըզզօնը կըտըրվալ ա* (Բ): 2. Սրինգի, շվիի, զուռնայի եւ նման փչովի գործիքների սուր ձայնը: *Զուռնէն պըզզօնը ըղնում ա շէնը* (Ձ):

ՊԸՁԶՕՑ - *տե՛ս* ՊԸՁԶՕՆ:

ՊԸՁԷՋ *(գրբ. բզեզ)* - *գ.* Բզեզ: *Հաց օտէլի վախտը մին սէվ պըզէզ ա տո՛ւս կ'ա՛մ պուճախան, կ'ա՛մ բիդի ո՛ւրա՛նց* (ԼՂԲ, 372):

ՊԸՁԿԱԹԱՆ - *գ.* 1. Քամած թան, որից չորաթան են պատրաստում: *Պըզկաթանը յօր ըն օնում, շըմաթը տամ շանը* (Ձ): 2. Թարմ չորաթան: *Պըզկաթանը շարում ա խօնչին յըրա, տինում կըտրէն* (Ձ):

ՊԸՁՄԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. բազմեցուցանեմ)* - *նբ.* ՊԱՁՄԷԼ-ի:

ՊԸՁՊԸՁԱԼ - *տե՛ս* ՊԸՁՁԱԼ (տեւականորեն):

ՊԸՁՊԸՁԱԼԻ - *տե՛ս* ՊԸՁՁԱԼԻ:

ՊԸՁՊԸՁԱՆ - *տե՛ս* ՊԸՁՁԱՆ (2):

ՊԸՁՊԸՁՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՊԸՁՁԸՑ(Ը)ՆԷԼ:

ՊԸՁՊԸՁՕՆ - *տե՛ս* ՊԸՁՁՕՆ:

ՊԸՁՊԸՁՕՑ - *տե՛ս* ՊԸՁՁՕՆ:

ՊԸՁՏԸԼԻԳ' - *ած.* Չափազանց փոքրիկ, պստլիկ: *Պըզտըլիգ' խօխա յա* (Բ):

ՊԸՁՏԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* 1. *տե՛ս* ՊԸՁՁԸՑ(Ը)ՆԷԼ: 2. Մի քիչ դնել՝ լցնել: *Ամմէն ըմանում պատառ կուրկուտ ա պըզտըցընում, տինում ըռըշկընէրէն* (Ձ):

ՊԸՁՏԻ - *տե՛ս* ՊԸՁՏԸԼԻԳ':

ՊԸ՛ԹԿ(Ը) - *տե՛ս* ՊԷԹԿ(Ը):

ՊԸ՛ԹԿԱԿԱՆ - *տե՛ս* ՊԷԹԿԱԿԱՆ:

ՊԸ՛Լ/ՊԷԼ - *տե՛ս* Կ'ԻԺ:

ՊԸ՛ԼԻ - *տե՛ս* ՊԷԼԻ:

ՊԸ՛ԽԿ - *տե՛ս* ՊԷԽԿ:

ՊԸ՛ԽԿՈՒԿ - *տե՛ս* ՊԷԽԿՈՒԿ:

ՊԸ՛ՈՇ *(գրբ. պիղծ)* - *տե՛ս* ՄՈՒՏԱՌ:

ՊԸ՛Ն - *տե՛ս* ՊԷՆ:

ՊԸ՛ՆԱԼ - *տե՛ս* ՊԷՆԱԼ:

ՊԸ՛ՆԴ - *տե՛ս* ՊԷՆԴ:

ՊԸ՛ՆՎԱԼ - *տե՛ս* ՊԷՆՎԱԼ:

ՊԸ՛Ռ - *տե՛ս* ՊԷՌՆԸ[1]:

ՊԸ՛Ռ(Ն)ԷԼ - *տե՛ս* ՊԷՌ(Ն)ԷԼ:

ՊԸ՛ՌՆԸ - *տե՛ս* ՊԷՌՆԸ[1]:

ՊԸ՛Ռ(ՆԸ)ՎԷԼ - *տե՛ս* ՊԷՌ(ՆԸ)ՎԷԼ:

ՊԸ՛ՏՔ(Ը) - *տե՛ս* ՊԷԹԿ(Ը(:

ՊԸ՛ՐԷԼ - *տե՛ս* ՊԻՐԻԼ:

ՊԸ՛ՐԻԼ - *տե՛ս* ՊԻՐԻԼ:

ՊԸ՛ՐՎԷԼ - *տե՛ս* ՊԻՐՎԻԼ:

ՊԸ՛ՐՎԻԼ - *տե՛ս* ՊԻՐՎԻԼ:

ՊԸ՛ՐՑ - *տե՛ս* ՊԷՐՑ:

ՊԸ՛Ց - *տե՛ս* ՊԷՑ:

ՊԸ՛ՑԱՊԸ՛Ց - *տե՛ս* ՊԷՑԱՊԷՑ:

ՊԸ՛ՑՎԷԼ - *տե՛ս* ՊԷՆՎԱԼ:

ՊԸ՛ՑՈՒՐ - *տե՛ս* ՊԷՑՈ՛ՒՐ:

ՊԸԹԿԱԼ/ՊԸՏԿԱԼ - *գ.* Ջուռնայի՝ եղեգնափողի եւ բերանի խցան: *Պըթկալը տո՛ւս ա օնում, փըչո՛ւմ* (Ձ):

ՊԸԹԿԱԿԱՐ/ՊԸՏԿԱԿԱՐ - *գ.* Ջգեստի՝ թաշկինակի եւ եզրերի կարը, եզրակար: *Յըլլը՛խէն պըթկակարը քանդվա՛լ ա* (Բ):

ՊԸԹԿԸ՛ՍԱՊԷՐՔ/ՊԸՏԿԷՍԱՊԷՐՔ - *գ.* Եկեղեցի Ասկերանի շրջանի Ուլուբաբ գյուղի տարածքում:

- Պըթկը՛սապէրքա յը՛կած - *տե՛ս* Յը՛ՐԷ բաղէն խընձո՛ը:

- Պըթկը՛սապէրք ք'ը՛ցած - *տե՛ս* ՉԸՏԷՍ (2):

ՊԸԹԿ(ԸՎ)ԷԼ/ՊԸՏԿ(ԸՎ)ԷԼ *(գրբ. պտկեմ (ծլել))* - *չբ.* 1. *տե՛ս* Պըտօկ անէլ: 2. *փխբ.* Ծնունդ առնել, ծնվել, գոյանալ: *Ինք'ը հինչ ա՞, թա ո՛ւրա՛ն անա պըթկըվածը հինչ ինի* (Ձ): 3. *փխբ.* Հղիանալ: *Աստուծ ասում ա՝ պըտկըվի՛ս, չըպէ՛րք, պըտկըվում ա* (ԱԱ, 54):

ՊԸԺԱ՛ՆԷԼ - *տե՛ս* ՊԻԺԸ՛ՆԷԼ:

ՊԸԺԱ՛ՆՎԷԼ - *տե՛ս* ՊԻԺԸ՛ՆՎԷԼ:

ՊԸԺԷՆ - *տե՛ս* ՊԻԺԸ՛Ն:

ՊԸԺԷՆԷԼ - *տե՛ս* ՊԻԺԸ՛ՆԷԼ:

ՊԸԺԷՆՎԷԼ - *տե՛ս* ՊԻԺԸ՛ՆՎԷԼ:

ՊԸԺԸԺԿԷԼ - *տե՛ս* ՊԸԺԸՇԿԷԼ:

ՊԸԺԸԺԿ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՊԸԺԸՇԿ(Ը)ՎԷԼ:

ՊԸԺԸԺԿՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸԺԸՇԿՕԹՈՒՆ:

ՊԸԺԸՆԸ'ԿԱՊԱ - *տե՛ս* ՊԻԺԸՆԸ'ԿԱՊԱ:

ՊԸԺԸՆ(Օ)ՎԻ - *տե՛ս* ՊԻԺԸՆ(Օ)ՎԻ:

ՊԸԺԸՇԿԷԼ/ՊԸԺԸԺԿԷԼ*(գրբ. բժշկեմ)* - *նբ.* Բժշկել, բուժել: *Էլ դօխտուր չընթօղալ, պէրալ ըն, վէր պըժը՛շկէ, վէշ մինը կըրը՛ցալ չի...* (ԱԱ, 36):

ՊԸԺԸՇԿ(Ը)ՎԷԼ/ՊԸԺԸԺԿ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՊԸԺԸՇԿԷԼ-ի:

ՊԸԺԸՇԿՕԹՈՒՆ/ՊԸԺԸԺԿՕԹՈՒՆ *(գրբ. բժշկութիւն)* - *տե՛ս* ԴՈՒԽՏԸՐՕԹՈՒՆ:

ՊԸԺԺԱԼ - *չբ.* Շատ թթվելուց՝ խմորվելուց պղպջակներ արձակել: *Կ'հինին պըժժամ ա* (Բ):

ՊԸԺԺԱԼԻ - *մ.* Պղպջակներ արձակելով: *Խըմօրը պըժժալի թութվում ա* (Բ):

ՊԸԺԺԱՆ - *ած.* Թթվող, խմորվող, պղպջակներ արձակող: *Էտ պըժժան կ'հինին հունց ը՞ս խըմում* (Ձ):

ՊԸԺԺԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՊԸԺԺԱԼ-ի:

ՊԸԺԺՕՆ - *գ.* Պժժալը, պժժալու ձայնը: *Թօթը վէր պուժկումը իփո՛ւմ ա, պըժժօնը հըռանցէ ըսկանվում ա* (Ձ):

ՊԸԺԺՕՑ - *տե՛ս* ՊԸԺԺՕՆ:

ՊԸԺԻԺԿ - *տե՛ս* ՊԸԺԻՇԿ:

ՊԸԺԻՆ-ՊԷԺԻՆ - *տե՛ս* ՊԻԺԸ՛Ն-ՊԻԺԸ՛Ն:

ՊԸԺԻՇԿ/ՊԸԺԻԺԿ *(գրբ. բժիշկ)* - *տե՛ս* ԴՕԽՏՈՒՐ: *Ամմա էտ դուխտուրէն անումը գ'իդա՛ցա՛լ չընը, լօխ պարի պըժիշկ ըն ասալ* (ԱԱ, 55):

ՊԸԺԿԸՊԷՐԱՆ - *ած.* Բերանը սուրբ հաղորդության բաժակի նման սուրբ, պարկեշտ խոսող, մաքրախոս: *Պըժկըպէրան մարթ ա Վաղաշակը* (Բ):

ՊԸԺՊԸԺԱԼ/ՊԸՃՊԸՃԱԼ *(գրբ. պղպջամ)* - *տե՛ս* ՊԸԺԺԱԼ (շատ բան կամ տեւականորեն): *Կ'հինուն կըրըսնէն պըժպըժամ ըն* (Ձ):

ՊԸԺՊԸԺԱԼԻ/ՊԸՃՊԸՃԱԼԻ - *տե՛ս* ՊԸԺԺԱԼԻ:

ՊԸԺՊԸԺԱՆ/ՊԸՃՊԸՃԱՆ - *տե՛ս* ՊԸԺԺԱՆ:

- Սարա-քօլա հը՛ռէ - Գյուղական աշխատանքներին անծանոթ: *Ըտըրանք սարա-քօլա հը՛ռէ մարթիք՚ ըն, հինչ ը՞ն գ՚ուդում բաստան բիջարիլը* (Բ):

ՍԱՐՕՇԿԱ *(ռուս. сорочка)* - *տե՛ս* ԸՐԲԱՇԿԱ:

ՍԱՓ *(արաբ. sāf (մաքուր), թրք. saf)* - *ած.* Ամբողջ, առողջ, անվնաս: *Էտքան ճուղուպուրէն մաչին մին սափը կա վէչ, լօխ փօչ ա* (Բ):

ՍԱՓԱԼ(Լ)ՈՒ - 1. *տե՛ս* ՍԱՓ: 2. *ած., մ.* Կշռադատելով, կշռադատված: *Կօրծը սափալու կըփըռնին* (Զ):

ՍԱՓԱՐԻ *(արաբ. safara)* - *գ.* Ճանապարհորդ: *Ըշտը՛ղ քը՛ինի, պարի յա, իմ յարսը սանփարի յա...* (ԼՂԲ, 40):

ՍԱՓԱՐԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սանփարլամիշ անէլ - *տե՛ս* Հըղէ տինիլ:

- Սանփարլամիշ ինիլ - *տե՛ս* Հըղէ ըղնէլ:

ՍԱՔ - *տե՛ս* ՍԱՐՔ:

ՍԱՔԻԼ - *տե՛ս* ՍԱՔՕԼ:

ՍԱՆ՚ - *տե՛ս* ՏԱՆՈՍ:

ՍԱՆ՚Ի *(թրք. sanki)* - *տե՛ս* ՄԸԹԱՄ:

ՍԱՆ՚ԻԹ/ՍԱՆ՚ԻՏ *(թրք. sakit (ընկած)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սանք՚իթ անէլ - *անրգ.* Սպանել, սատկացնել: ոչնչացնել: *... Ինքը ուրան սանք՚իթ ըրավ* (ՋՏ, Ա, 205):

- Սանք՚իթ ինիլ/տը՛ռնալ - *անրգ.* Սպանվել, սատկել, ոչնչանալ: *Ըտի էտ խանը սանք՚իթ ա տը՛ռնում, ժըղովուրթը ըսքըսում ըն լ՚ավ ապըրէլը* (Զ):

ՍԱՆ՚ԻԼ - *տե՛ս* ՏԱՆՈՍԻԼ:

ՍԱՆ՚ԻՏ - *տե՛ս* ՍԱՆ՚ԻԹ:

ՍԱՆ՚-ՍԱՆ՚ - 1. *տե՛ս* ՏԱՆՈՍ-ՏԱՆՈՍ: 2. *տե՛ս* ԿԱՐՔԷՆ: 3. *ած.* Մաքրասեր, մաքուր աշխատող: *Սանք՚-սանք՚ կընէգ՚ ա Փառանձինը* (Բ):

- Սանք՚-սանք՚ անէլ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏԷԼ:

- Սանք՚-սանք՚ ըղնէլ - Շատ աճելով՝ հունձքը իրար վրա փռվել՝ դարսվել: *Արտը սանք՚-սանք՚ ա ընգալ* (Բ):

ՍԱՆ՚Ի - *գ.* 1. Սենյակում կամ ախոռում պատին կից սարքված երկայնական թախտ կամ լայն կիսապատ՝ վրան պառկելու՝ նստելու՝ տարբեր բաներ դնելու համար: *Կարպէտը սանք՚ուվէն յը՛րա մը՛կնում ըն,նըստոտում* (Զ): 2. *տե՛ս* ՍԸՆԳՈՒ:

ՍԱՔՈՒԼ - *ած.* Հարթ, ողորկ: *Մին սաքուլ քար ա տինում, յըրան նըստում* (Զ):

ՍԱՔՕԼ/ՍԱՔԻԼ - *գ., ած.* Սմբակներից վերեւը սպիտակ գույնով (ձի): *Բաբուն Վաղաշակէն մին լ՚ավ սաքօլ ա իլալ* (Բ):

ՍԷՋՆԸ - *տե՛ս* ՍԸ՛ՋՆԸ:

ՍԷԹԿԱ *(ռուս. сетка)* - *գ.* Մետաղալարից՝ թելից հյուսված ցանցկեն հյուսվածք՝ տարբեր նպատակների համար: *Սէթկա յա ինք՚ օնում, բաստանը չըփարում* (Զ):

ՍԷԼ(ԱՎ) *(արաբ. seyl, պրս. seilab, թրք. sel)* - *գ.* Հեղեղ, սելավ: *Սէլ յը՛կավ, սաղ բուստընէն բարբաղ ըրավ* (Բ):

ՍԷԼԻՏ(Ը)ՐԱ - *տե՛ս* ՍԻԼԻՏ(Ը)ՐԱ:

ՍԷԼՍԱՎԷՏ *(ռուս. сельсовет)* - *տե՛ս* ԳՈՒԽՍԱՎԷՏ:

ՍԷԽՏԷՄԲԷՐ - *տե՛ս* ՍԷՔՏԷՄԲԷՐ:

ՍԷԿ/ՍԸ՛Կ *(գրբ. սեկ (կոկած մորթ, կաշի)* - *գ.* 1. *տե՛ս* ՍԻՐԸ՛Կ: 2. *փխբ.* Պինդ՝ ցամաք հաց՝ ցեխ եւն: *Էտ սէկը հինչ ա՞, վէր օտում ըս* (Բ):

ՍԷԿԱ *(ռուս. сека)* - *գ.* Թղթախաղ: *Նըստում ըն, սէկա խաղ անում* (Զ):

ՍԷԿ(Ը)ՐԷՏ/ՍԻԿ(Ը)ՐԷՏ *(ռուս. секрет, ֆր. secret, լատ. secretum)* - *գ.* Գաղտնիք: *... Թաքավէրը հիշքան մըտածըմ ա, վէչ մին հընար չի քը՛ընըմ՝ էտ տըղին սէկրէտը գ՚իդա* (ՀԺՀ, V, 80):

ՍԷԿ(Ը)ՐԷՏԻՀ/ՍԻԿ(Ը)ՐԷՏԻՀ *(ռուս. секретный)* - *ած.* Ծածուկ, ջիրապարակվող: *Ասում ա.- Էս թօխտը սէկրէտնի թօխտ ա, հանց կանիս՝ էրուշ կարթի վէչ* (Զ):

ՍԷԿՏԷՄԲԷՐ - *տե՛ս* ՍԷՔՏԷՄԲԷՐ:

ՍԷԿՈՒՆԴ *(ռուս. секунда, լատ. secundus)* - *գ.* 1. Վայրկյան: *Անց ա կը՛նըմ հինը ամիս, հինը օր, հինը ժամ, հինը մունուտ, հինը սէկունդ, Աստված ըտըրանց էրկու տըղա յա տամ* (ՀԺՀ, V, 143): 2. *տե՛ս* ՄԸՆՈՒՏ (2):

ՍԷՀԸՐ - *տե՛ս* ՍԷՅԸՐ:

ՍԷՀՐԱ՚Կ/ՍԷՅՐԱ՚Կ *(թրք. seyrek)* - *տե՛ս* ՆՕՍՏՈՒՐ: *Սէյրանկ արտը պիրքատու կինի* (ԱԲԲ, 85):

ՍԷՂԱՆ *(գրբ. սեղան)* - *տե՛ս* ԸՍՏՕԼ:

ՍԷՄԻՇԿԱ/ՇԷՄԻՇԿԱ *(ռուս. семечки)* - *գ.* 1. Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող միամյա յուղատու բույս՝ արեւածաղիկ: *Սէմիշկան վէր ծաղկում ա, հանց ա իրիք՚նակ ինի* (Բ): 2. Այդ բույսի ուտելի սերմը: *Մին հափուռ սէմիշկա յա ածում ջուբը, ուտէլավ քը՛ինամ* (Զ):

- Սէմիշկու փուլ - *տե՛ս* Չայու փուլ:

ՍԷՅԸՐ *(արաբ., թրք. seyr)* - *տե՛ս* ԹԸՄԱՆՇ (1):

ՍԷՅԹԱՆԱՂԱՋԻ - *տե՛ս* ՇԷՅԹԱՆԱՂԱՋԻ:

ՍԷՅԻԴ *(արաբ., թրք. seyid)* - *գ.* Մահմեդականների պատվավոր տիտղոս, որոնք իբր սերում են Մուհամեդ մարգարեի տոհմից: *Ասում ըն՝ մին վըխտէ ըստէղավ թօրքու քօչ ա աս կացալ, ըտահանց միչին էլ մին սէյիդ ա իլալ, էս հանման տէղը գ՚օռբագ՚օռ ա տանալ* (ԱԱ, 42):

ՍԷՅՐԱ՚Կ - *տե՛ս* ՍԷՀՐԱ՚Կ:

ՍԷՅՐՈՒ/ՍԸ՛ՅՐՈՒ *(թրք. iseyr (ման գալը)* - *ած.* Առողջ, առույգ: *... Ախճիգ՚ը*

ասըմ ա.- Տու քՀինի՛ ծը՛ր պալատը, տը՛ս քու հա՛ր հունց ա, սաղ ա՞, սը՛յրու ա՞, հի՞նչ կա՞, հինչ չի կա՞... (ՀԺՀ, V, 176):

ՍԷՊԱՐԱՏԸՐ *(ռուս. сепаратор, լատ. seporator)* - *գ.* Սերը՝ յուղը կաթից զատող մեքենա՝ սարք, սերզատ: *Ըտըրանց կաթնը էնքան շատ ա, վէր հըսցընում չըն խընը՛ցէ հարին, սէպարատըր ըն պինըցընում* (Բ):

- Սէպարատըրավ քաշա՛ծ - Շատ նիհար, վտիտ, հյուծված: *Սէպարատըրավ քաշա՛ծ ը՞ս, էտ հինչ ա՞ հա՛լըտ* (Բ):

ՍԷՊ - *տե՛ս* ՍԸ՛Պ:

ՍԷՊԷԼ - *տե՛ս* ՍԸ՛ՊԷԼ:

ՍԷՊ(Ը)ՌԷԳ - *տե՛ս* ՍԸ՛Պ(Ը)ՌԷԳ:

ՍԷՊ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՍԸ՛Պ(Ը)ՎԷԼ:

ՍԷՌ - *տե՛ս* ՍԸ՛Ռ:

ՍԷՍՏ(Ը)ՐԱ *(ռուս. сестра)* - *գ.* Բուժքույր: *Ըսլանէն կընէգը լավ սէստըրա յա* (Բ):

ՍԷՎ - *տե՛ս* ՍԸ՛Վ:

ՍԷՏ - *տե՛ս* ՍԸ՛Տ:

ՍԷՐ/ՍԸ՛Ր/ՍԻՐ *(գրբ. սէր)* - *գ.* 1. Գորովանքի խոր զգացում մեկի՝ մի բանի նկատմամբ: *Մորը սէրին տը՛ղը վէշ մին պէն տալ չի* (Ձ): 2. Հակառակ սեռի ներկայացուցչի նկատմամբ տածվող բուռն զգացմունք: *Տըղան ասմա.- Իմ սէրըս հալալ ա, յը՛ս քը՛զ խա՛փին չըմ* (Ձ): 3. Որեւէ բանի նկատմամբ հետաքրքրություն, հակում, ձգտում: *Ըտըրա սէրը բիդի արաղը մը՛ծ ա* (Բ): 4. Սիրային հարաբերություն՝ կապ: *Հասիկը ա՛լի՛ստի կըլօխ ա ընգընէս, վէր նա իրավունք ա տաս ի՛ւրա՛ց սէրը լօխ քաթ անէ խալխէն* (ՀԲ, 341): 5. *տե՛ս* ՍԷՐԱՎ: *Մին մարթ, մին կընէգ շատ սէր ըն ինըմ* (ՀԱԲ, 15, 56):

- Սէր անէլ - Սիրային կապի մեջ լինել: *Խաբարը յէր ա ինիս, թա թաքավէրը վէզիրին կընգանը նըհը՛տ սէր ա անում* (Ձ):

- Սէրը Սըհակավը ըղնէլ - Տարեց հասակում սիրահարվել: *Բուդդան դային, սէրը Սըհակավըն ա ընգալ, Փառանձին աքօրը նըհը՛տ սաղ օրը էն ա սիլի-բիլի ընէս* (Բ):

- Սէրը սըրտէն բանդ անէլ - *տե՛ս* ՍԻՐԱՀԱՐՎԷԼ:

- Սէր տալ - Սիրել: *Էտ չախը էտ ախճիգը էտ տըղէն սէր ա տամ* (ՀԺՀ, V, 62):

- Սէր տալ, սէր առնէլ - Փոխադարձաբար սիրել: *Ըտըրանք սէր ըն տամ, սէր առնըմ, ըտը՛ղ օրախ ապըրում* (Ձ):

- Սէր փըշըրէլ - Սիրաբանել: *Մին օր հանդին մին չօբան տէսնում ա էտ ըխճըկանը, ըսկըսում ընդըրա նըհէտ սէր փըշըրէլը* (ՀԺՀ, V, 490):

ՍԷՐԱՎ - *ած. մ.* Համերաշխ, հաշտ: *... Թաքավէրին թաղըմ ըն, ի՛ւրանք էլ սէրավ ապրըմ* (ԼՂԲ, 359):

ՍԷՐԱՎ-ՍՕ՛ՀԲԱ՛ԹԱՎ - *տե՛ս* ՍԷՐԱՎ: *Չօրս հըրէվան կընանէք ըն ընում՝ ի՛ւրի՛ւր քը՛օմանգ ընէլավ, սէրավ-սօ՛հբա՛թավ թուրնէն հաց թընխէյիս* (ՆԱԲ, 60):

ՍԷՐԻԼ - *տե՛ս* ՍԻՐԻԼ:

ՍԷՐՄ - *տե՛ս* ՍԸ՛ՐՄ:

ՍԷՐՄԷԼ - *տե՛ս* ՍԸ՛ՐՄԷԼ:

ՍԷՐՄ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՍԸ՛ՐՄ(Ը)ՎԷԼ:

ՍԷՐ-ՍԷԿ(Ը)ՐԷՏ *(արաբ. sərr (գաղտնիք) + ռուս. секрет (գաղտնիք)* - *գ.* Անձնական գաղտնիք: *... Թաքավէրին պուճուր տըղան Սինան թաքավէրին սէրը-սէկրէտը ըտըրան նաղլ ա անըմ* (ՀԺՀ, V, 35):

ՍԷՐ-ՍԻՐԱՄԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սէրա-սիրըմանա խօսէլ - Սիրային խոսակցություն վարել, փոխադարձաբար սեր բացատրել՝ խոստովանել: *Ջա՛նիլ տըղէրքըն ա ըխճըկէրքը քՀինամ ին բաղէրը, սէրա-սիրըմանա խօսում* (Ձ):

ՍԷՐ-ՍՕ՛ՀԲԱ՛Թ *(արաբ. sərr (գաղտնիք) + sohbāt (զրույց)* - *գ.* Սիրային խոսակցություն՝ զրույց: *Ըտըրանց սէրը-սօ՛հբա՛թը ըսկանում ա, քՀինամ վէզիրին լօխ պատմում* (Ձ):

ՍԷՐՎԱՆԴ/ՍԻՐՎԱՆԴ *(ռուս. сервант, ֆր. servant, լատ. servare)* - *գ.* Սպասքապահարան: *Սիրվանդան ըստըքննէն տա՛ւս ա օնում, ըստօլէն յըրա շարում* (Ձ):

ՍԷՐՎԻՋ *(ռուս. сервиз)* - *տե՛ս* ՍԱԽՍԻ:

ՍԷՐՏ[1] - *տե՛ս* ՍԸ՛ՐՏ[1]:

ՍԷՐՏ[2] - *տե՛ս* ՍԸ՛ՐՏ[2]:

ՍԷՐՏԷԼ - *տե՛ս* ՍԸ՛ՐՏԷԼ:

ՍԷՐՈՒԹԻ՛Ն/ՍԷՐՕԹՈՒՆ - *գ.* Իրար սիրելը, սեր: *Հըրըստօթունը կապ չօնէ սէրուութա՛ն նըհէտ* (ՆԼՂԺԲ, 55):

ՍԷՐՈ՛ՒՆ/ՍՈ՛ՒՐՈ՛ՒՆ/ՍՕ՛ՐՈ՛ՒՆ/ՍԻՐՈՒՆ *(գրբ. սիրուն)* - 1. *տե՛ս* ԿԱՐՔԷՆ: 2. *ած.* Հաճելի արտաքինով, գեղեցիկ: *Մին ախճիգ ա ընի՛ւմ, էն էլ էնքան սի՛ւրի՛ւն ա ընի՛ւմ, վար կարալ չըմ ասէմ* (ՆԼՂԺԲ, 27):

- Սէրի՛ւն ծառ՝ Ըստուծէն ծաղէգը յըրան - Ասում են գեղեցիկ արտաքինով եւ պարկեշտ մարդկանց մասին:

ՍԷՐՈ՛ՒՆ-ՂԱ՛ՇՇԱ՛ՆԳ - *տե՛ս* ԿԱՐՔԷՆ (1): *Յէր ա կէնում, սէրի՛ւն-դաշանգ ղա՛մա՛ն տինում հըրըթաթումը, հանօրը տըղէն ասում.- Ինձ տա՛ր Խօշանբագի կօշտը* (ՀԱԲ, 15, 146):

ՍԷՐՈ՛ՒՆՕԹՈՒՆ/ՍՈ՛ՒՐՈ՛ՒՆՕԹՈՒՆ/ՍՕ՛ՐՈ՛ՒՆՕԹՈՒՆ/ՍԻՐՈՒՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ՂԸՇՇԸՆԳՕԹՈՒՆ:

ՍԷՐՈՒՍԿ - *գ.* Կաթի սեր, սերուցք: *Մարյան աքէրը կաթնէն սէրուսկը քաշո՛ւմ ար, յը՛տնան ծախում* (Բ):

ՍԷՐՕ՛ՋՆԻ *(ռուս. серьезный, ֆր. sérieux, լատ. serium)* - *ած.* 1. Ծանրաբարո, լրջախոհ: *Սէրօ՛զնի մարթ ա Ա՛նդրին* (Բ): 2. Կարեւոր: *Ասում ա.- Սէրօ՛զնի կօրծ օնիմ, բիդի քՀինիմ* (Ձ): 3. Իրական, ճշմարիտ: *Սէրօ՛զնի պէն ըմ ասում, ըսկա՛ց* (Բ):

ՍԷՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԷՐՈՒԹԻ՛Ն:

ՍԷՓՏԷՄԲԷՐ - *տե՛ս* ՍԷՔՏԷՄԲԷՐ:

ՍԷՔ՛ՏԷՄԲԷՐ - *տե՛ս* ՍԷՔՏԷՄԲԷՐ:

ՍԷՔՏԷՄԲԷՐ/ՍԷԿՏԷՄԲԷՐ/ՍԷՔ՛ՏԷՄԲԷՐ/ՍԷԽՏԷՄԲԷՐ/ՍԷՓՏԷՄԲԷՐ *(գրբ. սեպտեմբեր, սեկտեմբեր, լատ. september)* - *գ.* Տարվա իններորդ ամիսը՝ սեպտեմբեր: *Սէքտէմբէրը վէր կ՛ամ ա, խաղուն ըսքըսում ըն քաղէլը* (Բ):

ՍԸ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սը կ՛իրիլ - *տե՛ս* Սիք՛տիրը քաշիլ:

ՍԸԲԷ - *տե՛ս* ՍՈՒԲԱՀ:

ՍԸԲԸԼԴԸՐԱՆ/ՍԸԼԲԸԴԸՐԱՆ - 1. *տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ: 2. *տե՛ս* ՏԷՐՏԱԿ (6):

ՍԸԲՈՒՏ - *տե՛ս* ԸՌԱՋԻ:

ՍԸԲՕՏՆԻԿ - *տե՛ս* ՍՈՒԲՕՏՆԻԿ:

ՍԸԴԱՓԷ/ՍԱԴԱՓԷ - *ած.* Սադափից պատրաստված կամ սադափով պատած, սադափյա: *Շատ վը՛ր ըստրիէնց ա ըրալ, ախճիգը ծըծաղալ ա, սըդափէ կըռէք՛ը պէց ա ի՛լալ* (Ձ):

ՍԸԴԱՓԷԼ/ՍԱԴԱՓԷԼ - *նբ.* Վրան սադափի շերտիկներ կպցնել, սադափով պատել: *Ըտըրան էլ մին լ՛ավ սըդափած կ՛ըվազան ա ինի՛ւմ* (Ձ):

ՍԸԴԱՓՎԷԼ/ՍԱԴԱՓՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԸԴԱՓԷԼ-ի:

ՍԸԴԸՂԱ *(արաբ. sadaqa, պրս. sādāge)* - *տե՛ս* ՄԱՀՆԱ:

ՍԸԴԸՆՕԹՈՒՆ/ՍԸՏԸՆՕԹՈՒՆ/ՍԱԴԱՆՕԹՈՒՆ/ՍԱՏԱՆՕԹՈՒՆ *(գրբ. սատանայութիւն)* - *գ.* 1. Խորամանկություն, հնարամտություն: *Սըդընօթունավ դային կարում ա ըտըրանց անա պըրծընէ* (Ձ): 2. Չարաճճիություն: *Խոխէնքը սըդընօթուն ըն անում, մորը չըրչարում* (Բ): 3. Խորամանկ արարք՝ գործ: *Ըտըրա սըդընօթունը լօխճին կըգնըվցընում ա* (Բ):

ՍԸՋ(ԸԼ)ԱԿԱՆ/ՍԸՋ(ԸԼ)Ա՛ԿԱ՛Ն - *ած.* 1. Սազող, համապատասխան: *Ասում ա.- Էտ շօրը քը՛ը՛զ սըզական չի, էն մինը կ՛ը՛զ* (Ձ): 2. Վայել, արժանի: *Տահանք էտ ընտանիքի՛ն ըն յէշում, էտ ըխճըկանը ըն յէշում, էս տանը սըզըլական ախճիգ չի...* (ՀԱԲ, 15, 47):

ՍԸՋ(ԸԼ)Ա՛ԿԱ՛Ն - *տե՛ս* ՍԸՋ(ԸԼ)ԱԿԱՆ:

ՍԸՋԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* Սա՛ՋԻԼ-ի:

ՍԸՋՆԷ *(գրբ. սնձնի (խեժ ունեցող ծառի անուն)* - *վ.* Վարդազգիների ընտանիքին պատկանող բույս՝ սգնենի: *Ըստը՛ղերք էլ առաչ սաղ սըզնու քօլէր ա իլա՛ալ, կըտօրալ ըն, թիմիզցըրալ, շէն շինա՛ալ* (ԱԱ, 35):

ՍԸՋՆԸԹԸԹՕ - *գ.* Սգնենու չորացրած պտուղներով եփած թթվաշ կերակուր: *Ա՛րիսակ աքէրը լ՛ավ սըզնըթթօ վա իլա՛ալ իփիլիս* (Բ):

ՍԸ՛ՋՆԸ/ՍԷՋՆԸ *(գրբ. սինձ (անուշ պտուղ, փշատ)* - *գ.* Սգնենու պտուղը, ալոճ: *Սը՛էվ սը՛զնը լ՛ավ դա՛ռմա՛ն ա* (Բ):

ՍԸ՛Կ - *տե՛ս* ՍԷԿ:

ՍԸ՛ՅՐՈՒ - *տե՛ս* ՍԷՅՐՈՒ:

ՍԸ՛ՊՊ/ՍԷՊ/ՍԸՊ *(գրբ. սեպ)* - *գ.* 1. Ներքեւի ծայրը սրած եւ աստիճանաբար լայնացող ու վերեւում հաստ փայտե կամ մետաղե ձող՝ զանազան բաներ ճեղքելու՝ ճղելու կամ գործիքների մասեր միացնելու համար: *Էտ տըղան փէդդին դաթան սը՛էպը հանըմ ա* (ՀԺՀ, V, 55): 2. Նույնպիսի երկար ձող, որ խրում են գետնի մեջ՝ անասուններին կապելու համար: *Ծին սը՛պան կապում ա, ինք՛ը պարանց ըղնում, քօն ինըմ* (Ձ): 3. *արհմ.* Ատամ: *Վէր թըխում ա, դէվին սը՛էպերը կուտըրատում ա* (Ձ):

- Սը՛էպերը պէց անէլ - *տե՛ս* ՀԸՌ-ՀԸՌԱԼ:

- Սը՛էպերը պէց մընալ - 1. *անրգ.* Մեռնել: *Այան մընաս ա թէշտումը, մընաս կըռըքնէն պէց* (ՀԺՀ, V, 548): 2. *անրգ.* Սաստիկ նիհարել: *Էնքան տա՛ւզնը պահալ ըն, սը՛էպերը պէց ա մընացալ* (Ձ):

- Սը՛էպերը փօրը (նի) ածէլ/վէր անէլ - *անրգ.* Սաստիկ ծեծել: *Ըստըրան ըստը՛ղ փըռնում ըն, սը՛էպերը փօրը նի ածում* (Ձ):

- Սը՛էպ տալ - Որեւէ բանի արանքը սեպ կամ այլ բան խրել, սեպել: *...Սըտանօցը ասալ ա.- Յէկէք՛ ծէռքընէտ սէպ տըվէք՛, վը՛ր կ՛էրա՛նը ճըղվէ* (ՀԺՀ, VI, 51):

ՍԸ՛ՊԷԼ/ՍԷՊԷԼ/ՍԸՊԷԼ - *նբ. տե՛ս* Սը՛էպ տալ:

ՍԸ՛Պ(Ը)ՌԷԳ՛/ՍԷՊ(Ը)ՌԷԳ՛/ՍԸՊ(Ը)-ՌԷԳ՛ - *ած.* Նոսր ատամներ ունեցող, նոսրատամ: *Սը՛էպռէգ՛ մարթ ա, կարում չի, թա կարքէն հաց օտէ* (Բ):

ՍԸ՛Պ(Ը)ՎԷԼ/ՍԷՊ(Ը)ՎԷԼ/ՍԸՊ(Ը)-ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԸ՛ՊԷԼ-ի:

ՍԸ՛Ռ/ՍԷՌ/ՍԸՌ *(գրբ. սայր)* - *գ.* 1. Լեռան գագաթնային գիծը, որի երկու կողմերից սկսվում է վայրէջքը: *... Ղա՛ւլբա՛ւդ ըն ըրալ Ղըրդին սը՛էռումը, լօխճին կըտօրալ...* (ԱԱ, 29): 2. *փխբ.* Ողնաշարի երկայնական ցցուն գիծը: *Մաշկէս սը՛էռը ցավում ա* (Բ): 3. *տե՛ս* ԸՌԸ՛Խ (3): 4. *տե՛ս* ՕԽ[2]:

- Սըռնու քամէ - Հեղհեղուկ բնավորություն ունեցող մարդ: *Դէ Ա՛լիսանէն էլ սըռնու քամէ յա, ըսօր մին պէն ա ասում, էք՛ա՛ւց՝ մին* (Ձ):

ՍԸ՛ԷՎ/ՍԷՎ/ՍԸՎ *(գրբ. սեաւ)* - *ած.* 1. Ածխի՝ մրի գույնի, սեւագույն: *Մին էլ ա տէսնում էրկու վը՛էխճար, մինը՝ սը՛էվ, մինը՝ սիպտա՛կ, ղօչի-ղօչի ընէլավ կ՛ամ ըն* (ՀԺՀ, V, 271): 2. *փխբ.* Չափազանց մուգ գույնի: *Էտ սը՛էվ հացը հինչ ա՞, վէր օտում ը՛ք* (Բ): 3. *փխբ.* Մութ, մթամած: *Սը՛էվ յէրգ՛ինք՛ը ըտըրանց սըրտաճաք ըրավ* (Ձ):

- Սը՛էվ անէլ - Դժբախտացնել: Թռվառ վիճակի մեջ գցել: *Էտ տըղան մօրը գ՛անքը սը՛էվ ըրավ* (Ձ):

- Սը՛էվ անձօղ(նը) - *տե՛ս* Սը՛էվ խանձուղ:

- Սը՛էվ աշխարք - *տե՛ս* Մըթէն աշխարք:

- Սը՛էվավ սիպտակէն յըրա կ՛իրա՛ծ - Պարզորոշ կերպով, պարզ (արտահայտված, ասված, գրված): *Ասում ա.- Խէ չը՞ս կըլօ՛խ ըղնում, էն ա սը՛էվավ սիպտակէն յըրա կ՛իրա՛ծ* (Ձ):

- Սը՛էվ ատակը - *տե՛ս* ՁԱՌԸ-ՁԸՀԱ՛ՆԴԱ՛ՍԸ:

- Սը՛էվ էծ - *տե՛ս* Սը՛էվ քաշ:

- Սը՛էվ էծը սը՛էվ օր կընծընէ - Յուրաքանչյուրի արարքները բխում են նրա բնույթից:

- Սը՛էվէն սը՛էվ ասէլ, սիպտակէն՝ սիպտակ - Ճշմարտությունն ասել: *Տըղամարթը էն ա, վէր սը՛էվէն սը՛էվ ա ասում, սիպտակէն՝ սիպտակ* (Բ):

- Սը՛էվէն սիպտակ ասէլ, սիպտակէն՝ սը՛էվ - Որեւէ բան բոլորովին հակառակ կերպով ներկայացնել՝ գնահատել՝ մեկնաբանել: *Հըվատալ մէ՛լ, իզէն սը՛էվէն սիպտակ ա ասում, սիպտակէն՝ սը՛էվ* (Բ):

- Սը՛էվըն ա մըթէնը կըլխէն կ՛ա՛լ - Դժբախտանալ: *Խը՛ղճը հինչ ա՞նէ. սը՛էվըն ա մըթէնը կըլխէն ա յը՛էկալ* (Բ):

- Սը՛էվըն ա սիպտակը ճօկէլ - *տե՛ս* Կ՛իրին սը՛էվըն ա սիպտակը ճօկէլ:

- Սը՛էվը սիպտըկցընէլ, սիպտակը սըվըցընէլ - *տե՛ս* Սը՛էվէն սիպտակ ասէլ, սիպտակէն՝ սը՛էվ: *... Կագէթ կ՛իրօղնէն հանց արթմիշ ըն ըրալ, վէր սէվը սիպտըկցընըմ ըն, սիպտակը սըվըցընըմ...* (ՋՏ, Ա, 218):

- Սը՛էվ թըխօց - Շատ մուգ, շատ սեւ: *Սը՛էվ թըխօց շօ՛ռէր ա կ՛ը՛էցալ* (Բ):

- Սը՛էվ թըխօց կըտըրէլ/տը՛էռնալ - 1. Խիստ սեւանալ, սեւ գույն ստանալ: *Պուլիգ՛ը պէնում ա, տը՛էսնում՝ պա՛ւք՛ին սը՛էվ թըխօց կըտըրած* (Ձ): 2. Շատ հասունանալ, հասունանալուց սեւանալ (որոշ պտուղների մասին): *Խաղուն սը՛էվ թըխօց ա կըտըրալ* (Բ): 3. Սաստիկ տխրել: *Էտ հինչ ա՞ պըտահալ, խէ ըտի սը՛էվ թըխօց ը՞ս կըտըրալ* (Բ):

- Սը՛էվ թըրէք՛/թըրքընկըլօլէ - *տե՛ս* Սը՛էվ քաշ:

- Սը՛էվ թուխպա տա՛ւս յը՛էկած կընծ՛ը-կընրակ - Շատ արագաշարժ եւ ճարպիկ: *Էրկու ախպէրը էլիա ք՛ընում ըն թաքավէրէն կօշտը, թա.- Պա ասէլ չը՞ս՝ օշափը մին հընրէդան ծի օնէ, հանց ա սէվ թուխպա տա՛ւս յը՛էկած կընծ՛ընկընրակ ընի* (ՆԱԲ, 27):

- Սը՛էվ թօխպ - Աղետի՝ վտանգի՝ չարիքի սպառնալիք: *Ասում ա.- Ըտըրա ասածը սը՛էվ թօխպ ա մըզը՛էտէ, սա՛յաղ կացէք՛* (Ձ):

- Սը՛էվ թօխտ - Պատերազմում զոհվածի մասին ծանուցում, որ սովորաբար գրվում է սեւ շրջանակով թղթի վրա: *Մին օր էլ սը՛էվ թօխտը յը՛էկալ ա* (ԱԱ, 47):

- Սը՛էվ թօք - Լյարդ: *Տըվարէն սը՛էվ թօքը կըտօրում ըն, խըրավում* (Ձ):

- Սը՛էվ ինիլ - Չքվել, կորչել, կործանվել, չլինել: *Կընէգ՛ը ասում ա.- Սը՛էվ ինի էն օրը, վէր յը՛էս ք՛ը՛էգ նըհը՛էտ փըսակվալ ըմ* (Ձ):

- Սը՛էվ իշըխառանչ - *տե՛ս* Սը՛էվ քաշ:

- Սը՛էվ լալա - Շատ տխուր: *Էտ հինչ ա լա՛ալ, հանց ըս սը՛էվ լալա* (Բ):

- Սը՛էվ խանձուղ/խընձուղակօթ - 1. *տե՛ս* Սը՛էվ քաշ: 2. Վառված, ածխացած, խանձված (բան): *Տօնը էրվից, տը՛էռավ սը՛էվ խանձուղ* (Բ):

- Սը՛էվ կատու ընցընէլ մըչըրնէրավը - *տե՛ս* Կատու ընցընէլ մըչըրնէրավը:

- Սը՛էվ կըրակէն տարէն - Դաժան տարին: *Սը՛էվ կըրակէն տարէն էլիա յը՛էկալ ա, սօվ ա* (Ձ):

- Սը՛էվ կ՛ը՛էնալ - Սգի մեջ լինել, սուգ պահել: *Ասում ա.- Թաքավէրին մադար տըղան մը՛էռալ ա, ըտըրա հը՛էտէ յա ժուղօվուրթը սը՛էվ կ՛ը՛էցալ* (Ձ):

- Սը՛էվ կ՛իր - 1. *տե՛ս* Սը՛էվ թօխտ: 2. Չար բախտ: *Ըտըրան սը՛էվ կ՛իր օնէ* (Բ):

- Սը՛էվ հավը ծընկըլթալ - Պատերազմ՝ կոտորած սպասվել: *Հա՛ւրը դիրխօր կ՛ամ ա, թա.- Բա՛լամ, սը՛էվ հավը ծընկըլթամ ա, սա՛յաղ կացէք՛* (Ձ):

- Սը՛էվ հաց - 1. *տե՛ս* ԲԱԴԱՐՆԱ՛Ք՛: 2. Ապրուստի նվազագույն միջոց: *Խը՛էղճը հինչ ա՞նէ, սը՛էվ հաց էլ չօնէ* (Բ):

- Սը՛էվ հացէն կարօտ/հասրաթ թօղնէլ/նըստըցընէլ - Ապրուստի նվազագույն միջոցից զրկել, սնանկացնել: *Էտ ըռնընխըմէ խանը ժուղուվուրթէն լափ սը՛էվ հացէն կարօտ թօղից* (Ձ):

- Սը՛էվ հացէն կարօտ/հասրաթ մը-

նալ/նըստէլ - Ապրուստի նվազագույն միջոցից զրկվել, սնանկանալ: *Յու իմ սիրածէս տա վուչ, կարօտ մընա սէվ հացէն* (ԼՂԲ, 68):

- Սը՝վ ճ՝ուր մաղէլ կըլխէն - Դժբախտացնել: *Ըսկէսուրը էնքան անէսկ տըվավ, խը՝ղճ հարթնանը կըլխէն սը՝վ ճ՝ուր մաղից* (Զ):

- Սը՝վ ճ՝ուր մաղվէլ կըլխէն - Դժբախտանալ: *Ըտի էտ մադար տըղան մը՝ռավ, թաքավէրին կըլխէն սը՝վ ճ՝ուր մաղվից* (Զ):

- Սը՝վ մըրտօց - *տե՛ս* Սը՝վ թըխօց:

- Սը՝վ յը՝զնը վէր վէր ըղնէ, տընը-կավէրը կը՝շըտանա - Հեշտությամբ ձեռք բերվող եկամուտից շատերն են ձգտում օգտվել:

- Սը՝վ նօթ/նութըկօլա - Շատ կեղտոտ՝ կեղտից սեւացած բան: *Հըմ՝ննչ՝ում էլ չի, շ՝որ էրը հանց ա սը՝վ նօթ* (Բ):

- Սը՝վ սադանա - 1. *տե՛ս* ՍԱԴԱՆԱ: 2. *տե՛ս* Սը՝վ քաշ:

- Սը՝վ սաթ - *տե՛ս* Սը՝վ թըխօց: *...Ծամէր օնի՝ սէվ սաթ ա* (ԼՂԲ, 14):

- Սը՝վ սապի - *տե՛ս* Սը՝վ քաշ:

- Սը՝վ սար/սընդ՝ք՝ար - Շատ ծանր, ծանրաքաշ, ծանրամարմին: *Մին օր ըտըրանց պալատը ն ա կ՝ամ մին դ՝ուրվիշ, նըհը՝տը էլ մին ք՝օք մարթ՝ մին սը՝վ սար* (Զ):

- Սը՝վ սըրօց - *տե՛ս* Սը՝վ նօթ:

- Սը՝վ սիրը՝կ - 1. *տե՛ս* Սը՝վ թըխօց: 2. Ատելի բան: *Ասում ա.- էտ սը՝վ սիրը՝կ ա, օգում չըմ* (Զ):

- Սը՝վ վը՝ղ - Հումուսով հարուստ արգավանդ հող: *Դարաբաղա վը՝ղը սը՝վ վը՝ղ ա, հինչու տընգիս, պէրք կըտա* (Բ):

- Սը՝վ վը՝ղէն արժան տը՝ռնալ/կ՝էրի ք՝ինիլ - Վախճանվել, մեռնել: *Սուղումուն դային էլ սը՝վ վը՝ղէն արժան տը՝ռավ* (Զ):

- Սը՝վ տէզ - *տե՛ս* Սը՝վ քաշ: *Էտ մարթկանցը մէջին ա հնըմ թաքավէրին պալատին դուլլուղչին՝ ն՝ուրն սէվ տէզ ըխճըկանը նըհէտ* (ՀԺՀ, V, 43):

- Սը՝վ տը՝ռնալ - *տե՛ս* Սը՝վ ինիլ:

- Սը՝վ քաշ - Չափազանց սեւադեմ՝ սեւամաշկ եւ տգեղ (մարդ): *Ըտըրան էլ հնըմ ա մին ա՝յբէջ՝ար կընէգ՝՝ մին սը՝վ քաշ, վէր լ՝ըհա յէշում ըս, զ՝ահլ՝ատ տանում ա* (Զ):

- Սը՝վ քար - 1. *տե՛ս* Սը՝վ սար: 2. *տե՛ս* ՀԻՆԳ՝ԸՍՏԱՔԱՐ: 3. *փխբ.* Մռայլադեմ, դաժան անհաղորդ (մարդ): *Սը՝վ քար ը՞ս, էտ խուխէն խէ մէհէտ խըստում չը՞ս, պաչում* (Բ):

- Սը՝վ քարան պաչիլ - *անծ.* Սգի մեջ լինել: *Սը՝վ քարան պա՛չիս տու, վէր մադար խուխէս կօրծա տ՝ուս ըս քըցա՝՝ լ* (Բ):

- Սը՝վ քափում կօրչիլ - Խիստ քրտնել: *Էնքան քար տ՝ա՝՝շից, սը՝վ քափում կօրավ* (Բ):

- Սը՝վ ք՝ՀՀմ՝ուր - *տե՛ս* Սը՝վ խանձուղ:

- Սը՝վ օթի - Խիստ մռայլ՝ տխուր: *Կընէգ՝ը ասըմ ա.- էտ հինչ ա՞ պըտահալ, վը՝ր սէվ օթի յըս տէռալ* (ՀԺՀ, V, 243):

- Սը՝վ օխծ - Նենգ՝ խարդախ մարդ: *Շափաղաթէն կընէգ՝ը սը՝վ օխծ ա, սը՝վ օխծ, սաղ օրը էն ա հիրըվընէրէն ն՝ուրն՝ուր նըհը՝տ կըռըվցընէլիս* (Բ):

- Սը՝վ օխծ տը՝սնօղը սը՝վ չաթվան կըվախէ - Մի բանից վախեցածը՝ տուժածը զգուշանում է այն հիշեցնող առարկաներից:

- Սը՝վ օր - Ծանր՝ դժվարին վիճակ՝ կյանք, դժբախտություն: *Մէր ժուղովուրթը սը՝վ օրէր շատ ա տը՝սալ* (Բ):

- Սըվէ տալ - 1. Սեւ երեւալ, սեւավուն նշույլով նշմարվել: *Մին էլ յէշում ա, տը՝սնում՝ հըռանցէ մին պէն սըվէ յա տամ* (Զ): 2. Քիչ հասունանալ, հասունանալով քիչ սեւանալ (որոշ պտուղների մասին): *Լ՝ըհա վէր խաղուն սըվէ յա տամ, խօխէնք՝ը բըդէրան տօն չըն կ՝ամ* (Զ):

ՍԸ՝Տ/ՍԷՏ/ՍԸՏ - *ածական.* Որեւէ բանի մասին տեղեկություն ստացած, տեղյակ, իրազեկ: *Մարթը կընգանը ըրած պիտէրէն սը՝տ չար* (Զ):

- Սը՝տ ինիլ - Իմանալ, ծանոթ՝ տեղյակ լինել: *Տու սը՝տ ը՞ս, վէր շէնին արտերը լօխ մուկունը կէրալ ա* (Բ):

- Սը՝տ պահէլ - Տեղեկացնել, իրազեկել: *Հինչու ինն՝ում ար, դ՝ուստի թաքավէրին սը՝տ ին պահում* (Զ):

ՍԸ՝Ր - *տե՛ս* ՍԷՐ:

ՍԸ՝ՐՄ/ՍԷՐՄ *(գրբ. սերմն)* - *գ.* 1. Ցանելու համար նախատեսված սերմացու: *Լաքէրը շինն՝ում ա, սուղանէն սը՝րմը շաղ տամ* (Զ): 2. Առհասարակ հատիկի, կորիզի կամ հունդի ձեւ ունեցող սերմնապտուղների ընդհանուր անվանում: *Սէմիշկին սը՝րմը դանձ՝ում ըն, ուտէլավ ք՝ինամ* (Զ): 3. *տե՛ս* ԹՕԽՈՒՄ: 4. Շերամի հունդ՝ ձու: *Ըրըմու սը՝րմ ա ինք՝ օնում* (Զ): 5. *փխբ.* Ջարմ, սերունդ: *Սը՝րմը կըտըրվէ ընդրա* (Բ):

ՍԸ՝ՐՄԷԼ/ՍԷՐՄԷԼ *(գրբ. սերմանեմ)* - *նբ.* Սերմ ցանել՝ շաղ տալ: *Աստված չայլաղը տամ ա, մօլլա Նասրադինը կօրէկ ա սէրմում* (ՀԱԲ, 15, 139):

ՍԸ՝ՐՄ(Ը)ՎԷԼ/ՍԷՐՄ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԸ՝ՐՄԷԼ-ի:

ՍԸ՝ՐՏ[1]/ՍԷՐՏ[1]/ՍԸՌՏ *(գրբ. սիրտ)* - *գ.* 1. Մարդկանց եւ կենդանիների արյան շրջանառության կենտրոնական գործարան՝ սիրտ: *Վարթանը դ՝ամ՝ն կոխում ա խանէն սը՝րտը, ըսպանում* (Զ): 2. Կրծքավանդակի այն մասը, որի տակ գտնվում է սիրտը: *Ծէրքը տինում ա սըրտէն, կօչ կ՝ամ* (Բ): 3. *փխբ.* Սիրտը որպես մարդու զգացումների՝ ապրումների՝ տրամադրությունների կենտրոնացման խորհրդանիշ: *Մօր սըրտէն տը՝ղը վէշ մին պէն տալ չի* (Բ): 4. *փխբ.* Մի բանի առանցքը՝ կենտրոնը: *Ըշխարքէս սը՝րտը Դարաբաղըն ա* (Բ): 5. *փխբ.* Ներսը, խորք: *Նի մըտէնք՝ ծըմակէն սը՝րտը* (Բ):

- Սը՝րտ անէլ - Համարձակվել, հանդգնել, խիզախել: *Դի մին ծըմը՝ռն ա լ՝՝ալ, վէր վէչ մինը սը՝րտ չի լ՝՝ալ ըրիս, թա տանան տ՝ուս կ՝ա* (ՀԲ, 334):

- Սը՝րտ գ՝իդ՝՝ող - Սրտակից, կարեկցող: *Սը՝րտ գ՝իդ՝՝ող մարթ ա Կ՝՝ափի դային* (Բ):

- Սը՝րտը ահ ըղնէլ - *տե՛ս* Սը՝րտը վախ ըղնէլ: *Էտ վէր ըստի յա ասում, դունաղէն սը՝րտը ահ ա ընգնում...* (ՆԼՂԺԲ, 65):

- Սը՝րտը ահ քըցիլ - *տե՛ս* Սը՝րտը վախ քըցիլ:

- Սը՝րտը ասէլ - 1. Նախազգալ, կանխագուշակել, սիրտը վկայել: *Մարթը ասմա.- Սը՝րտըս ասում ա, վէր էս կօրծը ա՝մ՝՝ալ չի կ՝ըլ՝՝ան* (Զ): 2. Ներքին մղում՝ զգացում՝ ցանկություն ունենալ: *Սը՝րտըս ասում ա՝ ք՝ինամ ծըմակը, մին ջէյրան վէր քըցիմ, պիրիմ* (Զ):

- Սը՝րտը գ՝իդ՝՝ալ - 1. *տե՛ս* Սը՝րտը ասէլ (1): 2. Մեկի վշտին՝ զգացումներին ծանոթ լինել, նրան լավ հասկանալ: *Հ՝՝ուրը ըխճըկանը սը՝րտը գ՝իդ՝՝ում չի...* (ՀԺՀ, V, 118):

- Սը՝րտը դաղէլ/դաղ անէլ - Ծանր վիշտ պատճառել: *Էտ ախճիգ՝ը ն՝ուրն՝՝ան մըռնէլավը թաքավէրին սը՝րտը դաղում ա* (Զ):

- Սը՝րտը դաղվէլ/դաղ ինիլ - Ծանր վիշտ ունենալ: *Ընդըրանք շատ ին քընէնք՝ անըմ, վը՝ր ն՝ուրն՝՝անք խօխա չօնին, վը՝ր ն՝ուրն՝՝անց սը՝րտը դաղված ա, օջաղը հ՝՝անգ՝՝ած ա* (ՀԺՀ, V, 122):

- Սը՝րտը դ՝՝ուրդ՝՝ում խըրվէլ - Մեծ վշտի՝ հոգսի՝ ցավի մեջ լինել: *... Յա՛ր ջան, սալդաթ մի՛ ք՝ինիլ, սը՝րտըս դ՝՝ուրդ՝՝ում խըրվալ ա* (ԼՂԲ, 21):

- Սը՝րտը դինջ - *տե՛ս* Անգուճը դինջ: *Անց ա կը՝նըմ մին տարի, էրկու տարի, էտ մարթը սը՝րտը դինջ ապրըմ ա* (ՀԺՀ, V, 525):

- Սը՝րտը դինջանալ - *տե՛ս* Անգուճը դինջանալ:

- Սը՝րտը դիք՝իլ - 1. Սիրտը վատ բան գուշակել: *Ասում ա.- Սը՝րտըս դիք՝՝ալ ա, հանց ա խուխէս պէն ա պըտահալ* (Զ): 2. *տե՛ս* Սը՝րտը փօրը ըղնէլ:

- Սը՛րտը էրիլ - 1. *տե՛ս* Սը՛րտը դաղէլ: 2. Տհաճ զգացողություն առաջանալ՝ առաջացնել: *Կը՛ծօ տա՛խտը՛ղ կէրալ, սը՛րտը էրից* (Բ): 3. Խիստ մտահոգվել, ցավալ, կարոտել: *Էտ կընէգանը սը՛րտը շատ ար էրում տըղէն հը՛տէ* (Ձ): 4. Կրծքավանդակի մասում այրող ցավ զգալ: *Սը՛րտը էրում ա, վէր ա ըղնում մը՛ռնում* (Բ):

- Սը՛րտը ըռանիմ ըղնէլ - 1. Խղճմտանքով լցվել, գթասիրտ դառնալ: *...Սուլթանին սէրտը ռանիմ ա ընգալ, օգըմ ա Հայաստանը հայէրին փէշքէշ անի...* (ՋՏ, Բ, 22): 2. *տե՛ս* Սը՛րտը փօրը ըղնէլ:

- Սը՛րտը թամ՛ուզ - Արդար, ազնիվ: *Սը՛րտը թամ՛ուզ մարթիք՝ ք՛ինալանվ խըրըգանում ըն* (Բ):

- Սը՛րտը թափէլ - 1. Փսխել: *Էնքան չըբիդի օտիս, վէր վէրչումը սը՛րտըտ թափիս* (Բ): 2. Վիշտը՝ ապրումները եւն մեկին պատմելով՝ թեթեւություն զգալ: *Ք՛ինամ ա քըվօրը կօշտը, դանդէրը նաղլ անում, սը՛րտը թափում, դինջանում* (Ձ):

- Սը՛րտը թիթըվանալ - Հոգեպես հանգստանալ: *Լաց ա ինում, սը՛րտը թիթըվանում ա* (Բ):

- Սը՛րտը թիթըվցընէլ - Հոգեպես հանգստացնել: *Քուրը կ՛ամ ա նըհը՛տը զըրուց անում, սը՛րտը թիթըվցընում* (Ձ):

- Սը՛րտը թըխէլ - 1. Ապրել, կենդանի լինել: *Ըտըրան փօսան տուս ըն օնում, տը՛սնում՝ հանա սը՛րտը թըխում ա* (Ձ): 2. *տե՛ս* Սը՛րտը թըմփթըմփալ: *Կընգանը սը՛րտը ըսկըսըմ ա թըխէլը, վը՛ր մարթին ա ախպօրը մին փօրցանք ա պըտահալ* (ՀԺՀ, VI, 104):

- Սը՛րտը թըքանալ մինին՝ մին պէնու յըրա - *տե՛ս* ԹԸՔԱՆԱԼ (6):

- Սը՛րտը թըխծընէլ մինին՝ մին պէնու յըրա - *տե՛ս* ԹԸԽԾ(Ը)ՆԷԼ (3):

- Սը՛րտը թըմփթըմփալ - Հուզմունքից՝ վախից եւն սիրտը տրոփել: *Էս ղօնաղը վէր ղըրըլթուն աշկըն ա քըցում, սըկսում ա սէրտը թըմփթըմփալ* (ՀԱԲ, 15, 145):

- Սը՛րտը թիք՝ա-թիք՝ա անէլ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր անէլ:

- Սը՛րտը թիք՝ա-թիք՝ա ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր ինիլ:

- Սը՛րտը թուխպէլ - Վշտանալ, տխրել: *Հանը ասմա.- Վէ՛չինչ, սը՛րտը թուխպած մարթ ա, կըզնըվէլ մէլ* (Ձ):

- Սը՛րտը լէն - Սրտաբաց, մեծահոգի: *Սը՛րտը լէն մարթին անա ք՛ը՛փըս կ՛ամ ա* (Բ):

- Սը՛րտը՝ լէն, ծը՛րքը՝ կարճ - Սրտաբաց՝ մեծահոգի, բայց աղքատ՝ անկարող: *Սը՛րտը՝ լէն, ծը՛րքը՝ կարճ մարթ ա Ըսատօրը* (Բ):

- Սը՛րտը լէն պահէլ - Չնեղվել, չհուսահատվել: *Սը՛րտըտ լէն պահէ, լօխ լ՛ավ ա ինանան* (Բ):

- Սը՛րտը՝ լէն, ջուբը՝ տէրտակ - *տե՛ս* Սը՛րտը՝ լէն, ծը՛րքը՝ կարճ:

- Սը՛րտը լէն ք՛ինիլ - *տե՛ս* Սը՛րտը լինանալ:

- Սը՛րտը լիգ՝ը - Հուզված, զգացված: *Էն ա սը՛րտը լիգը, լ՛ըհա վէր մին պէն ասիս, լանց ա ինանան* (Բ):

- Սը՛րտը լինանալ - 1. Ուրախանալ, հրճվել, տրամադրությունը բարձրանալ: *Թօռը վէր նի կանվ, շինացուց սը՛րտը լինացավ* (Բ): 2. Բարիանալ, խղճմտանքով լցվել: *Սը՛րտը լինանում ա, պըռավէն խընթիրք՝ը կըդարում* ա (Ձ):

- Սը՛րտը լինըց(ը)նէլ - Ուրախություն՝ հրճվանք պատճառել: *Մարթին սը՛րտը լինըցընօղը հուրան ժանանգ՝ըն ա* (Ձ):

- Սը՛րտը խառնէլ - 1. Սրտախառնուք զգալ, փսխելու պատրաստ լինել: *Էնքան խակ խընձո՛ր ա կէրալ, սը՛րտը խառնում ա* (Բ): 2. Մեկից՝ մի բանից զզվել՝ խորշել: *Ընդըրանա սը՛րտըս խառնում ա* (Բ): 3. *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր անէլ: 4. Սուր բանով սրտին հարվածելով՝ սպանել: *Տէնակը կօխում ա, սը՛րտը խառնում* (Ձ):

- Սը՛րտը խարաբ անէլ - Տրամադրությունը գցել: *Մարթը ճըղճըղամ ա, կընգանը սը՛րտը խարաբ անում* (Ձ):

- Սը՛րտը խարաբ ինիլ/տը՛ռնալ - Տրամադրությունն ընկնել: *Էտ վէր ըսկանում ա, սը՛րտը խարաբ ա ինում* (Բ):

- Սը՛րտը խըշարէլ - Հոգեպես նեղվել՝ տանջվել: *Իմ հանր ք՛ը՛զ ախճիկ չի տալ, սը՛րտը խըշարած տըղա՛* (ԼՂԲ, 34):

- Սը՛րտը խըրթնէլ - Կասկածել, կասկածամիտ դառնալ: *Պառավը վէր ըտի յա ասում, էտ տըղէն սը՛րտը խըրթնում ա* (Ձ):

- Սը՛րտը խուսկավ բանդ անէլ - Մեկին խոսքերով հրապուրել, սիրտը նվաճել: *Չուբանէն տըղան ըտի թաքավէրին ըխճըկանը սը՛րտը խուսկավ բանդ ա անում* (Ձ):

- Սը՛րտը ծակէլ - 1. Սրտի շրջանում սուր ցավ զգալ: *Սը՛րտըս բանրդան ծակում ա* (Բ): 2. Խիստ վիրավորել: *Քու խուսկէրքըտ իմ սը՛րտըս ծակից* (Բ):

- Սը՛րտը ծըտըճինջը՛խ տը՛ռնալ - *տե՛ս* Սը՛րտը փօրը ըղնէլ:

- Սը՛րտը ծիք՝ տալ - Սրտամոտ մեկին ցանկանալ: *Կընէգ՝ը թա.- Իմ քըվօր էրկու տարէ յա՝ տը՛սալ չըմ, սը՛րտըս ծիք՝ ա տամ* (Ձ):

- Սը՛րտը կախ - 1. Դժկամ, առանց ցանկություն ունենալու: *Թանջիրը, սը՛րտը կախ, տուս ա օնում փուլը տամ* (Ձ):

- Սը՛րտը կարթիլ - Մեկի ներքին ապրումները՝ մտքերը հասկանալ: *Վէզիրը թաքավէրին սը՛րտը կարթում ա, գ՝ուդում ա, վէր կօգ՝ի ծըծաղում ա, ամհա շատ ա դիլխօր* (Ձ):

- Սը՛րտը կէս անէլ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր անէլ:

- Սը՛րտը կէս տը՛ռնալ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր ինիլ:

- Սը՛րտը կըկըղէլ - Մեղմանալ, զիջել: *Մահէն ահը վէր մարթին սէրտըն ա ըղնում, սէրտը կըկըղում ա* (ՆԱԲ, 127):

- Սը՛րտը կըկըղց(ը)նէլ - Մեղմացնել, զիջել տալ: *Ամմա էտ տըղան ասըմ ա.- Յը՛ս տօն չըմ կ՛ալու, միչէվ էս ըխճըկանը օգիմ վէչ, միչէվ ըստըրա սը՛րտը կըկըղցընիմ վը՛չ* (ՀԺՀ, V, 47):

- Սը՛րտը կըտըրէլ - 1. *տե՛ս* Սը՛րտը փօրը ըղնէլ: 2. Մեկի՝ մի բանի նկատմամբ նախկին սերը՝ հարգանքը՝ ձգտումը չունենալ: *Ըտի էտ տըղէն սը՛րտը թաքավէրին ըխճըկանը անա կըտըրում ա* (Ձ):

- Սը՛րտը կըտօրէլ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր անէլ:

- Սը՛րտը կըրակ ըղնէլ - *տե՛ս* Ձանը կըրակ ըղնէլ:

- Սը՛րտը կ՝անլ, բուղազէն տէմ ըղնէլ - *տե՛ս* Սը՛րտը պիրանավը տուս կ՝անլ:

- Սը՛րտը կ՝իրմիրց(ը)նէլ - 1. Շատ ուրախացնել: *Թաքավէրը պըռավէն սը՛րտը կ՝իրմիրցընում ա. ըտըրա տըղէն ըզադում ա տուրմանն* (Ձ): 2. Մեծ վիշտ պատճառել, կսկծացնել: *...Աստուծ վէչը մէր սէրտը կ՝իրմիրցընէլի հէտէ յա ըստէղծալ* (ՆԱԲ, 317):

- Սը՛րտը կուտուր տը՛ռնալ - Սիրած մարդուց բաժանվել: *Ըտի թաքավէրին տըղէն սը՛րտը կուտուր ա տը՛ռնում. չուբանէն ըխճըկանը կ՝ուղանում ըն, տանում* (Ձ):

- Սը՛րտը կօշտ - *տե՛ս* Աշկը կօշտ:

- Սը՛րտը կօչ ածէլ - 1. Սրտնեղություն պատճառել: *Խուխէն հիվընդութունը ըտըրա սը՛րտը կօչ ածից* (Ձ): 2. *տե՛ս* Սը՛րտը կօչ կ՝անլ:

- Սը՛րտը կօչ կ՝անլ - Սրտնեղվել: *Խը՛ղճը հինչ ա՞նէ, իլանը մին արտ ար, էն էլ կարկուտը թակից, սը՛րտը լափ կօչ ա յը՛կալ* (Բ):

- Սը՛րտը կօտըրէլ - Վշտացնել, տխրեցնել, ընկճել: *Էտ խէ դիրխօր ը՞ս, հու վա՞ սը՛րտըտ կօտըրալ* (Բ):

- Սը՛րտը կօտըրվէլ - Վշտանալ, տխրել, ընկճվել: *Թաքավէրը վէր ըտի ասից, թաքուհուն սը՛րտը կօտըրվից* (Ձ):

- Սը՛րտը հանլ(վ)իլ - Երանություն՝ հա-

ճույք զգալ: *Թօթէն արաղը վէր խըմում ըս, սըրտըտ հանվում ա* (Բ):

- Սըրտը հանրգանկ - *տե՛ս* Սըրտը լէն:

- Սըրտը հըռալ - 1. Սրտի ցավ զգալ, վշտանալ: *Սըրտըս հըռում ա, վէր տըսնում ըմ մէր շէնին տընէրը քանդվածծ* (Բ): 2. Մեկի՝ մի բանի համար մտահոգվել՝ ցավ զգալ: *Մօրը սըրտը հըռում ար ըխճըկանը հըտէ* (Ձ):

- Սըրտը հըտան քինիլ - *տե՛ս* Խըլքը հըտան քինիլ:

- Սըրտը հուվանալ - 1. Փափագը՝ ցանկությունը կատարելով՝ հանգստանալ, բավարարություն զգալ: *Ըտի ծարավ հըսնում ա մին լավ ըխպիրու, ցօրտ-ցօրտ ճիրան խըմում, սըրտը հուվանում ա* (Ձ): 2. Վիշտը՝ տանջանքը մեղմանալ: *Պարիկամէրան էլ յէկէն, լանց իլին, վըր սըրտըրնէն հուվանա...* (ԼՂԲՔ, 272):

- Սըրտը հուվըց(ը)նէլ - 1. Փափագը՝ ցանկությունը կատարելով՝ հանգստացնել, բավարարություն պատճառել: *Աստուծ ըսկանում ա, ըտըրանց մին ղօչ տըղա տամ, սըրտըրնէն հուվըցընում* (Ձ): 2. Վիշտը՝ տանջանքը մեղմացնել: *Սանքըվէրէն սըրտը մինակ սանքըվէրը կըկարէ հուվըցընէ* (Ձ):

- Սըրտը հօփ ածէլ/տալ - *տե՛ս* Սըրտը կօչ ածէլ:

- Սըրտը հօփ կանալ - *տե՛ս* Սըրտը կօչ կանալ:

- Սըրտը ճաքէլ - 1. Խիստ վախենալ, ահաբեկվել: *Կընէգը արչին վէր տըսնում ա, սըրտը ճաքում ա* (Ձ): 2. Զանձրանալ, խիստ նեղվել: *Մստուծ, սըրտըրնէս ճաքում ա, բօլ ա, հիշկան արաշտ ա իլալ* (Ձ): 3. Ինֆարկտ ստանալ, մեռնել: *Ըստըղ Պըլըպուդին սըրտը ճըքէս ա, դանստի մըռնէս ա* (ԼՂԲ, 397):

- Սըրտը ճըքըց(ը)նէլ - 1. Խիստ վախեցնել, ահաբեկել: *Բանրդան քօլէն քըմական մին չաղալ ա տանս կամ, ըտըրա սըրտը ճըքըցընում* (Ձ): 2. Զանձրացնել, սրտնեղություն պատճառել: *Էնքան հըրթնէրէն անա կէնգատ ըրավ, լավ սըրտըրնէս ճըքըցըրավ* (Բ): 3. Ինֆարկտի հասցնել, մեռցնել: *Տըղէն տանրմանն ըղնէլը Փառանձիմ աքօրը սըրտը ճըքըցըրավ, ըսպանից* (Ձ):

- Սըրտը ճանր կըտըրէլ/տըռնալ - *տե՛ս* Սըրտը ճաքէլ (1):

- Սըրտը մաշիլ - 1. Տանջվել, տառապել: *Լօթուն ջըբումը վէր փօղ չիլավ, սէրտը մաշում ա* (ՀԱԲ, 15, 103): 2. Տանջվել, տառապանք պատճառել: *Էս արաշտը շինացուց սըրտը մաշից* (Բ):

- Սըրտը մէրած մածուն - Հանգիստ, խաղաղ, անխռով (մարդկանց մասին): *Սըրտը մէրած մածուն մարթ ա մէր Մօսէսը* (Բ):

- Սըրտը մըրսէլ - Վախենալ: *Ըստի էտ թաքավէրէն սէրտըն էլ ա պատառ մըրսում...* (ՀԱԲ, 15, 63):

- Սըրտը մին պանալ/փութ յըղ քըսէլ - 1. Ուրախանալ, հաճույք զգալ (հատկապես ուրիշի ձախորդության՝ դժբախտության դեպքում): *Լավ հիրըվանը հիրըվանէն դանրդանվը կըտըխըրվէ, վէշ թա սըրտը մին պանալ յըղ կըքըսէ* (Ձ): 2. Մեկին ուրախացնել՝ հաճույք պատճառել: *Թաքավէրը ասում ա.- Տու էտ խաբարը պիրիլանվ սըրտըս մին պանալ յըղ քըսէցէր* (Ձ):

- Սըրտը մուտընէն աշկը հըվաք(վ)էլ - Խիստ վշտանալ՝ տխրել: *Թաքավէրը կամ ա, տըսնում կընէգը, սըրտը մուտընէն աշկը հըվաքած, նըստած* (Ձ):

- Սըրտը յարա - Վիշտ ունեցող, վշտոտ, հոգեպես վիրավորված՝ խոցված: *Թօրնը յէշանում ըս, սըրտը յարա մարթիք ըն, Մստուծ, հիբ ա՞ աշխարքըս խըղըղօթուն ըղնական* (Ձ):

- Սըրտը յըղէլ - *տե՛ս* Սըրտը կիրմիրցընել (1):

- Սըրտը յըտ տալ - *տե՛ս* Սըրտը թափէլ:

- Սըրտը յըտ քինիլ - *տե՛ս* Սըրտը լինանալ:

- Սըրտը յըր օնէլ - Տանել, հանդուրժել (հաճախ գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): *Սըրտը յօր չունէս, վէր կէշը ղըշանգէն տար տըռնա...* (ԱԱ, 76):

- Սըրտըն էլ ճաքէլ, սըրտըպըտըրհանըն էլ - *տե՛ս* Սըրտը ճաքէլ (1):

- Սըրտը նըղ - 1. Շուտ նեղացող, նեղացկոտ: *Սըրտը նըղ մարթ ա, լըհա մին պէն ըս ասում, դանստի քըրտիքէն նի յա կամ* (Բ): 2. Փոքրոգի, գծուծ: *Ջահլանս տանում ա սըրտը նըղ մարթին անա* (Բ):

- Սըրտը նըղանալ/նըղ անէլ/նըղվար(վ)էլ - 1. Զանձրանալ: *Էնքան խօսից, լափ սըրտըս նըղացավ* (Բ): 2. Ճնշվել, մտահոգվել, մտատանջվել, նեղսրտել: *Ինրէվ չի անում, թա արտէրը հընձինք, սըրտըրնէս նըղացալ ա* (Բ):

- Սըրտը նըստա կէնալ - Հավանել, ախորժել, սիրահարվել: *Տու մէլ ասէլ՝ թաքավէրին տըղէն սըրտը չուբանէն ըխճըկանը նըստա յա կացալ* (Ձ):

- Սըրտը նի մըն(ն)էլ - Մեկին գրավել, նրա սիրուն՝ մտերմությանը՝ վստահությանն արժանանալ: *Էտ նանքանրըն էլ էնքան դաշանգ, էնքան խէլանք ա ինում, վէր թաքավէրին ա թաքուհուն սըրտըն ա նի մըննում* (Ձ):

- Սըրտը շահէլ - Իր նկատմամբ լավ տրամադրել, սիրաշահել: *Աղվէսը քինըմ ա, վըր կատվին հէտի վըրս պըրի, ընդըրան սըրտը շահի...* (ԼՂԲ, 360):

- Սըրտը պարան տալ - *տե՛ս* Սըրտը թափէլ:

- Սըրտը պէնալ/պէց անէլ - 1. Գաղտնիքները՝ մտատանջությունները՝ վշտերը մեկի մոտ բացել՝ պատմել: *Մէր Թանանի դանային սըրտը պէց ըրավ ու հինչ վըր կար, ասից ընդըրան...* (ՀԺՀ, VI, 78): 2. Զվարթացնել, ուրախացնել: *Կինին մարթու սըրտ ա պէնում* (Ձ):

- Սըրտը պէնվալ/պէց ինիլ - Զվարթանալ, ուրախանալ: *... Կընգանը սիրէլան գիդըմ չի, թա հինչ անի, դաչա յա տարալ, վէր սէրտը պէնվա...* (ՋՏ, Բ, 168):

- Սըրտը պէրակ - *տե՛ս* ՍԸՐՏԸ-ՊԷՐԱԿ:

- Սըրտը պէց - *տե՛ս* Սըրտը լէն: *Սըրտը պէց մարթը զըրանց ընէլավ ա մըռնում* (ԱԲԲ, 86):

- Սըրտը պըլթպըլթալ - Խիստ անհանգստանալ՝ մտահոգվել: *Ասում ա.- Տըղաս քըրցալ ա ծըմակը, մինչըվ միհէնգ յըկալ չի, էն ա սըրտըս պըլթպըլթալիս* (Ձ):

- Սըրտը պըրտանղէլ - 1. Կասկածների մեջ գցել, հուզել: *... Վախըմ ըմ ղըրամափանըս քօք անիմ, էլիա իստի խաբարնէ պիրի, իմ սէրտըս էլ պըրտանղի, ծէր սէրտըն էլ...* (ՋՏ, Բ, 174): 2. *տե՛ս* Սըրտը պըրտանղվէլ:

- Սըրտը պըրտանղվէլ - Կասկածների մեջ ընկնել, հուզվել: *Թաքավէրը էտ վէր տըսնում ա, սըրտը պըրտանղվում ա* (Ձ):

- Սըրտը պիրակէլ - *տե՛ս* ՍԸՐՏԸ-ՊԻՐԱԿԷԼ:

- Սըրտը պիրանավը տանս կանալ - Հոգեկան խռովքի մատնվել, սաստիկ նեղվել՝ տանջվել: *Սըրտըս պիրանավըս տանս յըկավ, մինչըվ էս կօրծը պըրծէ* (Բ):

- Սըրտը պիրանավը տանս օնէլ - Հոգեկան խռովքի մեջ գցել, սաստիկ հուզել, տանջել: *Վէզիրը ըտըրա սըրտը պիրանավը տանս ա օնում* (Ձ):

- Սըրտը պիրանէն տալ - *տե՛ս* Սըրտը ճաքէլ (1):

- Սըրտը պուդէրէն ըղնէլ/հըվաքէլ/քըցիլ - *հեգն.* Մեկի համար խիստ ցավել՝ մտահոգվել: *Հինչ ա՞, Ըփկարէն հըտէ սըրտըս պուդէրէն ա՞ ընգալ, հինչ ա՞նիմ՝ տանուզն ա* (Ձ):

- Սըրտը պուք կանալ - *տե՛ս* Սըրտը էրիլ (3):

- Սըրտը պօղ ըղնէլ - *տե՛ս* Ձանը կըրակ ըղնէլ:

- Սըրտը սէր ըղնէլ - Մեկին սիրել, սիրով լցվել: *Ոէ՛, Կանփին էլ սըրտը սէր*

ընգած տըղա յա, լի՞, ուրխութունան գ'իդ'ում չի, թա հինչ անէ (Ձ):

- Սը՛րտը սը՛վ - Վշտացած, սգավոր: *Սը՛րտը սը՛վ կընէգ' ա Սիրանը* (Բ):

- Սը՛րտը սընդ'ՈՒքար - *տե՛ս* Սը՛րտը քար:

- Սը՛րտը սըվանալ - Վշտանալ, դժբախտանալ: *Մադար-գ'ՈՒդ'ՈՒր տըղան մը՛ռավ, Լ'ուսիգ'ին սը՛րտըն էլ սըվացավ* (Բ):

- Սը՛րտը վախ ըղնէլ - Վախի զգացումով տոգորվել: *Կ'ուլին սը՛րտը վախ ա ընգընըմ* (ԼՂԲ, 360):

- Սը՛րտը վախ քըցիլ - Վախի զգացումով տոգորել, վախ ներշնչել: *Ըտի կը՛տը ըտըրա սը՛րտը վախ ա քըցի՛ում* (Ձ):

- Սը՛րտը վէր ածէլ - *տե՛ս* Սը՛րտը թափէլ:

- Սը՛րտը վըկայէլ - *տե՛ս* Սը՛րտը ասէլ (1):

- Սը՛րտը տալ - *տե՛ս* Սը՛րտը օգ'իլ: *Էտ մարթը մին օգ'ում ա ք'ինի, մին էլ սէրտը տամ չի* (ՀԺՀ, V, 403):

- Սը՛րտը տաք ինիլ (յըրան) - Մեկին՝ մի բանի սիրով՝ հոգատարությամբ վերաբերվել, համակրանք ունենալ: *Այուն սը՛րտը տաք ար թուռնէրէն յըրա* (Ձ):

- Սը՛րտըտ է՞լ հինչ ա օգ'ում - *տե՛ս* է՞լ հինչ կօգ'իս:

- Սը՛րտը տը՛ղը ըղնէլ/կ'ՈՒլ - Հուզմունքը՝ վախը եւն անցնել, հոգեպես հանգստանալ: *Վը՛ր տի յա ասում, մարթին սը՛րտը մըխըրէ կ'ամ ա տը՛ղը* (ՀԺՀ, VII, 235):

- Սը՛րտը տը՛ղը քըցիլ - Հոգեպես հանգստացնել: *Ք'ինամ ա հիրըվանէն ք'օմ'ՈՒգ' անում, արտը հընձ'ում, սը՛րտը տը՛ղը քըցի՛ում* (Ձ):

- Սը՛րտը տըկըտիյը՛ր/տըղըհան անէլ - Հուզել, վշտացնել: *Պառավը լօխ նաղլ ա անում, էտ ջիհիլին սը՛րտը տըկըտըյը՛ր անում* (ՆԼՂԺԲ, 70):

- Սը՛րտը տըկըտիյը՛ր ինիլ/տըղըհան տը՛ռնալ - Հուզվել, վշտանալ: *Սը՛րտըս տըկըտիյը՛ր ա ինի՛ում, վէր մէր յը՛խծէն ըտի տը՛սնում ըմ* (Ձ):

- Սը՛րտը տըկտըկալ - Սիրտը ուժեղ, բաբախել՝ խփել: *Ծը՛րքը տինի՛ում ա սըրտէն, տը՛սնում սը՛րտը տըկտըկամ ա* (Ձ):

- Սը՛րտը տըմանալ - Տոկալ, հոգեպես տանել՝դիմանալ: *Մին օր էլ, էլ սը՛րտը տըմանում չի, յը՛ր ա կէնում, ք'ինամ թաքավէրին լօխ նաղլ անում* (Ձ):

- Սը՛րտը տըրաքէլ - *տե՛ս* Սը՛րտը ճաքէլ:

- Սը՛րտը տըրիմ-տըրիմ անէլ - *տե՛ս* Սը՛րտը թըմփթըմփալ:

- Սը՛րտը տըրտակէլ - *տե՛ս* Սը՛րտը թափէլ:

- Սը՛րտը տի՛ուրի՛ՈՒր կ'ՈՒլ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր ինիլ:

- Սը՛րտը տի՛ուրի՛ՈՒր տալ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր անէլ:

- Սը՛րտը տ'ՈՒղ ըղնէլ - *տե՛ս* Սը՛րտը վախ ըղնէլ:

- Սը՛րտը տ'ՈՒղ քըցիլ - *տե՛ս* Սը՛րտը վախ քըցիլ:

- Սը՛րտը ցավէլ - *տե՛ս* Սը՛րտը հը՛ռալ:

- Սը՛րտը փըփըկէլ - *տե՛ս* Սը՛րտը կըկըղէլ:

- Սը՛րտը փըփըկց(ը)նէլ - *տե՛ս* Սը՛րտը կըկըղց(ը)նէլ:

- Սը՛րտը փիչ-փիչ անէլ - *տե՛ս* Սը՛րտը պուղէրէն ըղնէլ:

- Սը՛րտը փօլ ածէլ - Փղձկալ տալ, լացացնել: *Էտ կընէգ'ը ի՛ուրա՛ն դ'ՈՒրդէրը պատմում ա, լօխճին սը՛րտը փօլ ածում* (Ձ):

- Սը՛րտը փօլ կ'ՈՒլ - Փղձկալ, լացել: *Մարը տըղէն վէր ըտի տը՛սնում ա, սը՛րտը փօլ ա կ'ամ* (Ձ):

- Սը՛րտը փօրը ըղնէլ - Խիստ ահաբեկվել, երկյուղի մատնվել: *Թ'ՈՒջիրը վէր էտ տը՛սնում ա, սը՛րտը փօրըն ա ըղնում, լ'ուզվա կըտըրում ա* (Ձ):

- Սը՛րտը փօրումը ծըլօնգ-ծըլօնգ ինիլ/կ'ՈՒլ - *տե՛ս* Սը՛րտը փօրը ըղնէլ:

- Սը՛րտը քամէ տարած - Դյուրազգաց: *Սը՛րտը քամէ տարած մարթ ա Ակիօն, հինչ ասում ըս, կըզնըվում ա* (Ձ):

- Սը՛րտը քանդիլ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր անէլ:

- Սը՛րտը քանդվիլ - *տե՛ս* Սը՛րտը տըկըտիյը՛ր ինիլ:

- Սը՛րտը քար - Քարասիրտ, անխիղճ, անկարեկից: *Էտ կընէգ'ը խօխա չօնար, գ'ՈՒդ'ում չար, թա հինչ պը՛ն ա մար ինէլը, ըտըրա հը՛տի էլ սը՛րտը քար ար...* (ՀԺՀ, V, 115):

- Սը՛րտը քար կըտըրէլ/քըրանալ - Քարասիրտ՝անխիղճ՝անկարեկից դառնալ: *Ըսկէսուրը ասմա.- Մխճի, սը՛րտըտ քար ա՞ կըտըրալ, էտ խուխէն խէ ծէծ չը՞ս տաս* (Ձ):

- Սը՛րտը քըլըքօլա անէլ - *տե՛ս* Սը՛րտը պուղէրէն ըղնէլ:

- Սը՛րտը ք'ինիլ - 1. *տե՛ս* Սը՛րտը հը՛տան ք'ինիլ: 2. Նվաղել, սաստիկ թուլանալ, ուժասպառ լինել: *Տ'ուզնութունան սը՛րտըս ք'ինում ա* (Բ):

- Սը՛րտը ք'ինիլ, յը՛տ կ'ՈՒլ - Ձզվել, խորշել: *Սը՛րտըս ք'ինում ա, յը՛տ կ'ամ, վէր ըտըրան տը՛սնում ըմ* (Բ):

- Սը՛րտը օգ'իլ - Ցանկանալ, ախորժել, փափագել: *Մօրը սը՛րտը օգ'ում ար, վէր ք'ինի շէնը, ամմա տըղան թօղում չար* (Ձ):

- Սը՛րտը օխտը ճիրՈՒվ լըվացած - Շատ ազնիվ՝անքեն՝մաքրասիրտ: *Սը՛րտը օխտը ճիրՈՒվ լըվացած մարթ ա Առըստամը, խ'ՈՒփիլ չի* (Բ):

- Սը՛րտը օտէլ - Ծանր վիշտ՝տառապանք պատճառել, տանջել: *Ըսկէսուրը հըրթնէրէն սը՛րտը օտում ար* (Ձ): 2. *տե՛ս* Կըլ'օխը օտէլ:

- Սը՛րտ թափէլ - *տե՛ս* Սը՛րտը թափէլ (1):

- Սը՛րտ կըտըրէլի - Սրտաճմլիկ: *Սը՛րտ կըտըրէլի զըրի՛ՈՒցնէ յա պատմում, լօխճին լիցըցընում* (Ձ):

- Սը՛րտ չինիլ - 1. Անգութ՝ անխիղճ լինել: *Իզէն սը՛րտ չօնէ, ընդըրա նըհը՛տ հօր ը՞ս հընգըրօթուն անում* (Բ): 2. Տրամադրություն չունենալ: *Ասում ա.- Յը՛ս կ'ամ չըմ. սը՛րտ չօնիմ* (Ձ):

- Սը՛րտ տալ/տինիլ - 1. Քաջալերել, մխիթարել: *Տը՛սնում ա, վէր հիրը՛վանը շատ ա դ'իլխօր, ք'ինամ ա սը՛րտ տամ* (Ձ): 2. Արտապնդել, խիզախություն ներշնչել: *Կընէկը սը՛րտ ա տինըմ, վը՛ր վախի վէջ* (ԼՂԲ, 359):

- Սըրտա հը՛ռէ - Ոչ սրտամոտ, ոչ սրտակից: *Հիրը՛վանը վէր սըրտա հը՛ռէ ի՛լՈՒվ, էլ հինչ հիրը՞վան* (Բ):

- Սըրտա մօտէ - Սրտամոտ, սրտակից: *Ըտըրան էլ մին լ'ավ, սըրտա մօտէ հընգէր ա ինի՛ում, անումը՝Խօսրօվ* (Ձ):

- Սըրտա մօտէ ընթունէլ - Մեկի ասածը լուրջ ընդունել, ազդվել: *Մարթը ասմա.- Սըրտատ մօտէ մէ՛լ ընթունէլ, շուլուղ ըմ ըրալ* (Ձ):

- Սըրտան Ո՛ՈՒն կաթէլ - Սաստիկ տխուր՝ վշտացած՝ անտրամադիր լինել: *Վէգիրը կ'ամ ա տօն՝ սըրտան Ո՛ՈՒն կըթէլավ* (ՆԼՂԺԲ, 41):

- Սըրտան լէն ք'ինիլ - *տե՛ս* Սը՛րտը լինանալ:

- Սըրտան խօսէլ/ճ'ՈՒր խըմէլ (մինին) - Մեկի կամքի՝ ցանկության համաձայն խոսել՝ վարվել: *Թաքավէրը վէգիրին սըրտան ար խօսում* (Ձ):

- Սըրտան կըճըմթէլ - Բարոյական հարված հասցնել: *Էտ անըզկամը լօխճին սըրտան էլ կըճըմթալ ա* (Բ):

- Սըրտան ճ'ՈՒր խըմէլ - *տե՛ս* Սը՛րտը լինըցը(ը)նէլ:

- Սըրտան մին փութ քար վէր ըղնէլ - Հոգսերից՝ մտատանջությունից ազատվել, հանգստանալ: *Տօնը շինը՛ցէ պըրծէ, սըրտաս մին փութ քար վէր ընգավ* (Բ):

- Սըրտան յը՛տ ք'ինիլ - *տե՛ս* Սը՛րտը լինանալ:

- Սըրտան պէրակ - *տե՛ս* ՍԸՐ-ՏԸՊԷՐԱԿ:

- Սըրտան պիրակէլ - *տե՛ս* ՍԸՐՏԸՊԻՐԱԿԷԼ:

- Սըրտան (քացէ) տալ - *տե՛ս* Սը՛րտը օգ՛իլ:

- Սըրտավը աղու/ա՛ռուն ք՛ինիլ - *տե՛ս* Սըրտան ա՛ռուն կաթէլ:

- Սըրտավը ինիլ - Մեկի ցանկության՝ ձգտումին համապատասխան լինել: *Ամմա ուրա՛ն սըրտավը չի ինիս, էզգանան քընէնք՛ ա ընէս, վէր մին թա՛հըր անէ, ըտըղատ ըզադվէ* (ԱԱ, 65):

- Սըրտավը պէն տը՛ռնալ - *տե՛ս* Սը՛րտը մին պ՛ուլ յը՛ղ քըսէլ:

- Սըրտավը ք՛ինիլ (մինին) - *տե՛ս* Սըրտան խօսէլ (մինին):

- Սըրտէնը լ՛ուզվին պըթկէն (ինիլ) - Անկեղծ խոսող, պարզասիրտ (լինել): *Լ՛ավ մարթը էն ա, վէր սըրտէնը էն ա լ՛ուզվին պըթկէն* (Ձ):

- Սըրտէնը սըրտումը մընալ - Իղձը՝ փափագը չկատարվել: *Ջա՛հիլ-ջիվան մը՛ռավ, սըրտէնը սըրտումը մընաց* (Բ):

- Սըրտէնը տը՛ղ տալ - Իղձը՝ փափագը կատարել: *Հիշքան դաշանգ՛ դուշէր կան, Թութուն ըխպիրին ակնան ըն տուս կ՛ամ, հանցու վէր ուրանց յէրքէրըն ասին, սըրտէնը տէղ տան* (ՆԱԲ, 92):

- Սըրտէն խաթիրը կօտըրէլ - *տե՛ս* Խաթիրը կօտըրէլ:

- Սըրտէն ծընդըրանալ - Մտահոգություն պատճառել, մի բանում իրեն շարունակ մեղավոր զգալ, խիղճը տանջել: *Կը՛ռսկանը ասում ա.- Մին շէբաթ առաչ մին յըղէ ջէյրան ըմ ըսպանալ, սըրտէս ծընդըրացալ ա* (Ձ):

- Սըրտէն կալ՝ կըթակվէ - Ասում են մեծահոգի՝ լայնասիրտ մարդկանց մասին:

- Սըրտէն կըրակը թունդ (ինիլ)- Տաքարյուն (լինել): *Սըրտէն կըրակը թունդ տըղամարթ ա իլալ Թունի դային* (Ձ):

- Սըրտէն ճուր շաղ տալ - Հանգստացնել, խաղաղեցնել: *Տը՛ռսնում ա, վէր հիրը՛վանը շատ ա կըզնըված, ասում ա.- Ըստըրա վէրչը փիս ա ինանկան, ք՛ինիմ սըրտէն ճուր շաղ տամ* (Ձ):

- Սըրտէն մաչին յարա տը՛ռնալ - Խոսքից վիրավորվել, հոգեպես խոցվել: *Քու խուսքէրքատ սըրտէս մաչին յարա յա տը՛ռալ* (Բ):

- Սըրտէն մին պ՛ուլ/փութ յը՛ղ քըսէլ - *տե՛ս* Սը՛րտը մին պ՛ուլ/փութ յը՛ղ քըսէլ:

- Սըրտէն յըրա յը՛ր օնէլ - *տե՛ս* Սըրտա մօտէ ընթունէլ:

- Սըրտէն նըստէլ, մըրօքը քանդիլ - Մեկին սիրելի դառնալով, նրա վստահությունը շահելով՝ նրան վնասել, նրա հաշվին ապրել: *Վէզիրը էլ կըլ՛ըխ չի ըղնում, վէր էտ նը՛ք՛ա՛նը ուրա՛ն սըրտէն նըստալ ա, մըրօքը քանդում ա* (Ձ):

- Սըրտէն նի կ՛ալ - Վիրավորել, նեղացնել: *Յարը յարէն սըրտէն նի չի կ՛ալ* (Ձ):

- Սըրտէն պէրթ կըշինվի - *տե՛ս* Սըրտէն կալ՝ կըթակվէ:

- Սըրտէն սառնը կօտըրվէլ - *տե՛ս* Սը՛րտը պէնվալ:

- Սըրտէն սունը (ինիլ) - Ամենասիրելին, թանկագինը (լինել): *Թա՛ջիրը ասմա.- Էտ օղտը իմ սըրտէս սունը ա, կարէլ չըմ ծախիմ* (Ձ):

- Սըրտէն սունը կօտըրվէլ - Մեծ դժբախտության հանդիպել, ամենասիրելիին կորցնել: *Ըտի թաքավէրին սըրտէն սունը կօտըրվում ա. մադար տըղան մը՛ռնում ա* (Ձ):

- Սըրտէն վը՛ննը կէնալ - *տե՛ս* Մընանա տը՛ռնալ:

- Սըրտէն տէնակ թըխիս՝ ա՛ռուն չի կաթէլ - Ասում են չափազանց տխուր՝ վշտահար մարդկանց մասին:

- Սըրտէն տը՛ղընը էլ չի գ՛ուդում - Ասում են առողջ՝ երբեք չհիվանդացած մարդկանց մասին:

- Սըրտէն տը՛ղ վէր կըքըցվի - *տե՛ս* Սըրտէն կալ՝ կըթակվէ:

- Սըրտէն ուզ՛ածէն նըման - Հրաշալի, հոյակապ: *Մին լ՛ավ, սըրտէն ուզ՛ածէն նըման տօն ա ջինալ* (Բ):

- Սըրտէն փօշը տուս օնէլ - Մեկին օգնել, նեղ վիճակին հասնել: *Սաղ ըշխարքումըս մինը կա վէջ, վէր ըտըրա ք՛ա՛ծանգ՛ անէ, սըրտէն փօշը տուս օնէ, լօխ նըհը՛տը ըռնատար ըն* (Ձ):

- Սըրտումը դաղ թօղնէլ/տինիլ - Չմոռացվող վիշտ պատճառել: *Էս կըռը՛վը շատ դարաբաղցու սըրտում ա դաղ թօղալ* (Բ):

- Սըրտումը դաղ մընալ - Չմոռացվող վիշտ ունենալ, վիշտը՝ կսկիծը չմոռանալ՝ միշտ հիշել: *Սըրտումըս դաղ ա մընացալ քու ասած խուսկատ* (Ձ):

- Սըրտումը ման/շօռ կ՛ալ - Ատելի լինել: *Ասում ա.- Էն իմ սըրտումըս ման ա կ՛ամ, յը՛ս ընդըրա նըհէտ հուց տը՛ռնամ խընամէ* (Ձ):

- Սըրտումը պ՛ուն տինիլ - Մեկի մեջ մի բան արմատավորվել: ... *Չարութունը սըրտումը պ՛ուն տիրած մարթը ուրա՛ն օրըմը հըղէ չի կ՛ալ* (ՋՏ, Բ, 209):

- Սըրտումը տալ/տըպվէլ - Մի բան կանխազգալ եւ համոզվել: *Ասըմ ա.- Մ մարթ, լ՛ավ ըս ըրալ, վը՛ր յէկալ ըս, ախէր սըրտըմըս տըվավ, վը՛ր կ՛ալու յըս...* (ՀԺՀ, V, 226):

- Սըրտու փօշ տուս օնօղ - Բարյացակամ, հոգատար, ուրիշի նեղ վիճակին հասնող: *Սըրտու փօշ տուս օնօղ կընէգ՛ ա Յէփիրաքսյան* (Բ):

ՍԸ՛ՐՏ[2]/ՍԷՐՏ[2] *(գրբ. սերտ (սրտակից)* - *ած.* Սերտորեն միմյանց հետ կապված, սերտ: *Սը՛րտ պարիկամնէ յընն* (Ձ):

ՍԸ՛ՐՏԷԼ/ՍԷՐՏԷԼ *(գրբ. սերտեմ (հաստատել, պնդացնել)* - *նբ.* Լավ սովորել, սերտել: *Ուստան հինչու ասում ար, շա՛ք՛էրդը սը՛րտում ար* (Ձ):

ՍԸԹԻԼՋԱՄ/ՍԸԹԻՐՋԱՄ/ՍԻԹԻԼՋԱՄ/ՍԻԹԻՐՋԱՄ *(արաբ. zatiljenb, թրք. sateəjan)* - *գ.* Մրսելու հետեւանքով առաջացող հիվանդություն՝ թոքաբորբ: *Սըթիլջամը մարթ կըսպանէ* (Ձ):

- Սըթիլջամ անէլ - Մրսեցնել, թոքաբորբոքով հիվանդացնել: *Էս ցօրտը լօխճիս սըթիլջամ ըրավ* (Բ):

- Սըթիլջամ ինիլ/տը՛ռնալ - Մրսելով թոքաբորբով հիվանդանալ: *Կավը սըթիլջամ իլա՛վ, ըստակից* (Բ):

ՍԸԹԻՐՋԱՄ - *տե՛ս* ՍԸԹԻԼՋԱՄ:

ՍԸԹԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸԿՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸԹԿՕՏԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸԿՕՏԷԼ:

ՍԸԹՈ՛ՒՆ - *տե՛ս* ՍՈ՛ՒԹՈ՛ՒՆ:

ՍԸԹՈ՛ՒՆԱՏԱԿ - *տե՛ս* ՍՈ՛ՒԹՈ՛ՒՆԱՏԱԿ:

ՍԸԹՈ՛ՒՆԱՓԱ՛Դ - *տե՛ս* ՍՈ՛ՒԹՈ՛ՒՆԱՓԱ՛Դ:

ՍԸԹՈ՛ՒՆԱՔԱՐ - *տե՛ս* ՍՈ՛ՒԹՈ՛ՒՆԱՔԱՐ:

ՍԸԹՈ՛ՒՆԿԸԼՕ՛Խ - *տե՛ս* ՍՈ՛ՒԹՈ՛ՒՆԿԸԼՕ՛Խ:

ՍԸԹՈՒՐԻ/ՍԸԹՈ՛ՒՐԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սըթուրի անէլ/տալ - 1. Հողը վարելու ժամանակ գութանի խոփը խոր չմտնել՝ հողի երեսով սահել անցնել: *Կ՛ութանը սըթուրի յա անում* (Ձ): 2. Ոչ խոր վարել, անորակ վարել: *Ասում ա.- Էս հինչ վար ա՞, վէր ըրալ ըս, սըթուրի յըս տըվալ, պըրծալ* (Ձ):

ՍԸԹՈ՛ՒՐԻ - *տե՛ս* ՍԸԹՈՒՐԻ:

ՍԸԼԱԼԸԽ/ՍԸԼԱԼՈՒԽ - *ած.* Խախուտ, երերուն: *Էս ըստօլէն վը՛ննէրը սըլալըխ ա ինիս, ղօնաղը նըստէլըն ըբանստ վէր ա ըղնէս* (Ձ):

ՍԸԼԱԼՈՒԽ - *տե՛ս* ՍԸԼԱԼԸԽ:

ՍԸԼԱՇԱՐ - 1. *գ.* Սալակառույց պատ: *Սըլըշարէն կըլխավը լօք ա տամ, ընցընում խանէն հայաթը* (Ձ): 2. *ած.* Սալերով շարած՝ ծածկած՝ պատած: *Սըլաշար հըղէ յա* (Բ):

ՍԸԼԱՐԷԼ - *չբ. տե՛ս* Կօչ կ՛ալ:

ՍԸԼԱՔԱՐ *(գրբ. սալաքար)* - 1. *տե՛ս* ՍԱԼ[1] (1): 2. *տե՛ս* ՍԱ՛ԼԸԱ՛ՆԴ:

ՍԸԼԸԱԹԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սըլբաթակ անէլ/տալ - Հաստ եւ երկար փայտե ձողով՝ սալբայով, ծեծել: *Սըլբաթակ ա անում, կ'ուզի ասպանում* (Ձ):

ՍԸԼԲԸԴԸՐԱՆ - *տե՛ս* ՍԸԲԸԼԴԸՐԱՆ:

ՍԸԼԲ(ԸՀ)ԱՆԱԿ - *տե՛ս* ՃԸՂՊԸՐԹԱՓԷ:

ՍԸԼԷԹԱ/ՍԻԼԷԹԱ - *տե՛ս* ԱՆՀԱՄԱ(Ն)Չ: *... Էս այամին ուրէնք'ավը ղօչչաղ ըն անիրէս, սիլէթա մարթէք, վէր վէչ Ըստուծանա յըն վախըմ, վէչ մարթա հըմանչըմ...* (ՋՏ, Բ, 123):

- Սըլէթա հավ/շօն - Շատ անամոթ մարդ: *Էտ սըլէթա հավը սաղ օրը էն ա ըստ'ուր-ընդ'ուր տանը* (Բ):

ՍԸԼԸԽԿԱԼ - *տե՛ս* ՍԸԼԿԸՀԷԼ:

ՍԸԼԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ՍԸԼԿԸՀԱԼԻ:

ՍԸԼԸԽԿԷԼ - *տե՛ս* ՍԸԼԿԸՀԷԼ:

ՍԸԼԸԽԿԸՀԱՆ - *տե՛ս* ՍԸԼԿԸՀԱՆ:

ՍԸԼԸԽԿԸՀՕՏ - *տե՛ս* ՍԸԼԿԸՀՕՏ:

ՍԸԼԸԽԿ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՍԸԼԿԸՀՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸԼԸՄԱԹ/ՍԸԼՄԱԹ/ՍԱԼԱՄԱԹ *(արաբ. salāmat (փրկություն, ապահովություն), թրք. selemet)* - *ած.* Զգույշ, հուշիկ, կամաց: *Մին մարթ սըլըմաթ կ'ա՛ս ա, Պըլըպուդուն չըվալէն տա՛նձը ըծէս ո՛ւրա՛ն չըվալը, շըլըկէս, ք'իս* (ԼՂԲ, 385):

ՍԸԼԸՆԳԷ - 1. *տե՛ս* ՍԸԼԿԸՀԱՆ: 2. *տե՛ս* ՇԸՌ (2):

ՍԸԼԸՆԴՈՒԴԱ/ՍԸԼԸՆԴՈՒԴՈՒ - *ած.* Տափակ քիթ ու բերան ունեցող: *Է՛, էն սըլընդուդու ախմախ ջա՛մդա՛ռը մը'զ կըտորում ա ըլա՛լ* (ԼՂԲ, 27):

ՍԸԼԸՆԴՈՒԴՈՒ - *տե՛ս* ՍԸԼԸՆԴՈՒԴԱ:

ՍԸԼԸՍՈՒ - *տե՛ս* ՍԻԼԸՍՈ՛Ի:

ՍԸԼԸՏԸՐԱԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սըլըտըրած քաշ - *տե՛ս* Սըլէթա հավ:

ՍԸԼԿԷՎԼԻ/ՍԸՐԿԷՎԼԻ/ՍԸՎԿ'ԷՎԼԻ/ՍՈ՛ՒՐԿՕՎԼԻ *(գրբ. սերկեւլի)* - *գ.* Վարդազգիների ընտանքին պատկանող պտղատու ծառ՝ սերկեւլենի: *Սըրկէվլին կըտըրում ա, յըրան տա՛նձի ջըլաղում* (Ձ):

ՍԸԼԿԷՎՈ՛ՒԼ/ՍԸՐԿԷՎՈ՛ՒԼ/ՍԸՎԿ'ԷՎՈ՛ՒԼ/ՍՈ՛ՒՐԿՕՎՈ՛ՒԼ *(գրբ. սերկեւիլ)* - *գ.* Սերկեւլենու պտուղը՝ սերկեւիլ: *Սըլկէվ'ուլը լ'ավ բար ա* (Բ):

ՍԸԼԿԸՀԱԼԻ/ՍԸԼԸԽԿԱԼԻ - 1. *տե՛ս* ՍԸԼԿԸՀԱՆ: 2. *մ.* Հեշտ ու արագ: *Կօրծը սըլկըհալի անում ըն, մինչը'վ քըսօր պըրծընում* (Ձ):

ՍԸԼԿԸՀԱՆ/ՍԸԼԸԽԿԸՀԱՆ *(գրբ. սահուն (անհաստատ, փոփոխական)* - *ած.* Սայթաքուն, լպրծուն, սահուն: *Ըխպիրին հըղէն էլ շատ ա ինա՛ւմ սըլկըհան, վէր ա ըղնում, կօժը կօտըրում* (Ձ):

ՍԸԼԿԸՀԷԼ/ՍԸԼԸԽԿԱԼ/ՍԸԼԸԽԿԷԼ *(գրբ. սահիմ (տատանվել, ծփալ)* - *չբ.* 1. Ոտքը սահել, գայթել, սայթաքել: *... Կօվը ք'ընա՛լիս սըլկըհըմ ա, վէր ըղնըմ, քըմակի աչի վը'էնը կօտրըմ ա* (ԼՂԲՔ, 280): 2. *փխբ.* Մոլորվել, սխալ թույլ տալ: *Ըտի էտ տըղան սըլկըհում ա, էտ կ'ուղէրէն հընգէր տը'ռնում* (Ձ):

- Սըլկըհած, բիստի քըթա՛ծ - Ասում են անսպասելի հաջողության հանդիպած՝ հասած մարդկանց մասին:

- Սըլկըհած, ո՛ւրո՛ւր քըթա՛ծ - Ասում են իրար սիրահարված՝ իրարով հմայված մարդկանց մասին:

ՍԸԼԿԸՀՑ(Ը)ՆԷԼ/ՍԸԼԸԽԿ(Ը)Ց(Ը)ՆԷԼ - *նբ.* ՍԸԼԿԸՀԷԼ-ի:

ՍԸԼԿԸՀՕՏ/ՍԸԼԸԽԿԸՀՕՏ - *տե՛ս* ՍԸԼԿԸՀԱՆ:

ՍԸԼՄԱԹ - *տե՛ս* ՍԸԼԸՄԱԹ:

ՍԸԼՎԷ(Ն) - *գ.* 1. Օղակաձեւ զարդ, ապարանջան: *Մին վը'սկէ սըլվէն ա թօղում, ասում.- Վը'էր տըղա ինի, բըլա՛նկը կըքըցիս, վը'էր ախճիգ' ինի՝ վիզը* (ՀԺՀ, VII, 187): 2. Տակառի երկու ծայրի մետաղե շրջանակներից յուրաքանչյուրը: *Պուժկէն տակէ սըլվէն տա՛ւս ա յը'էկալ* (Բ):

ՍԸԼՎԸԼԱԼ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼԱԼ:

ՍԸԼՎԸԼԱՆ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼԱՆ:

ՍԸԼՎԸԼՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸԼՎԸԼՕՆ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼՕՆ:

ՍԸԼՎԸԼՕՑ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼՕՆ:

ՍԸԼՈ՛ՒԿՆԸ - *տե՛ս* ՍԸԼՈ՛ՒԿՈՒՆ:

ՍԸԼՈ՛ՒԿՈՒՆ/ՍԸԼՈ՛ՒԿՆԸ/ՍՈ՛ՒԼՈ՛ՒԿՈՒՆ/ՍՈ՛ՒԼՈ՛ՒԿՆԸ *(պրս. zeluk, թրք. sülük)* - *գ.* 1. Քաղցրահամ ջրերում ապրող որդ, որ սնվում է կենդանիների արյունով, տզրուկ: *Ասում ըն՝ էտ գ'օլումը շատ սըլո՛ւկուն կա, ըտըրա հը'տէ յա անումը Սըլո՛ւկնածօվ* (Ձ): 2. *փխբ.* Հարստահարող, ուրիշներին շահագործող՝ տանջող մարդ: *Էտ սո՛ւլո՛ւկնը սաղ շինացուց թըլանալ ա* (Բ):

ՍԸԼՈՒՂ/ՍՈՒԼՈՒՂ/ՍԸԼՈՒՓ/ՍՈՒԼՈՒՓ - *տե՛ս* ԽԷԺՆԸ (2):

ՍԸԼՈՒՊՈՒՆ/ՍՈՒԼՈՒՊՈՒՆ - *գ.* Փայտե մեծ ձող: *Մին սուլուպուն էլ ինք'ըն ա տինում ջընաղէն, ք'ինամ* (Ձ):

ՍԸԼՕԹԿԱ - *տե՛ս* ՍԻԼՕԹԿԱ:

ՍԸԼՕԺՆԻ *(ռուս. сложный)* - *ած.* Բարդ, խրթին: *... Հանց սըլօժնի հարցէր կա, վէր առանց ընդըրա մունք կարէլ չընք պէն շինինք...* (ՋՏ, Ա, 150):

ՍԸԽ *(թրք. səkə)* - *տե՛ս* ՊԷՆԴ:

- Սըխէն սըխտօր (վարէլ) - Վատության դիմաց ավելի մեծ վատություն (անել): *Ձա՛ղը ասմա.- Սըխէն սըխտօր, ինք'ը իմ բաստանըս ա քանդա՛լ, յը'ս բիդի ընդըրա տօնը քանդիմ* (Ձ):

ՍԸԽԱԼ *(գրբ. սխալ)* - *գ.* 1. Գրության՝ հաշվումների եւն մեջ թույլ տված անճշտություն: *Հիշքան հա՛ճըէվ ա անում, պադասխանը սըխալ ա տա՛ւս կ'ամ* (Ձ): 2. Անճիշտ արարք՝ վարմունք՝ գործողություն: *Կըլօ՛խ չի ըղնում, վէր ո՛ւրա՛ն ըրածը սըխալ ա* (Բ): 3. *ած.* Ոչ ճիշտ, չկշռադատված, չմտածված: *Ուստան ասմա.- Սըխալ պէնէր շատ ըս անում...* (Ձ):

ՍԸԽԱԼՄՈՒՆՔ *(գրբ. սխալանք)* - *տե՛ս* ՍԸԽԱԼ (2):

ՍԸԽԱԼՎԷԼ *(գրբ. սխալեմ)* - *չբ.* 1. Սխալ կատարել՝ անել, սխալմունք թույլ տալ: *Հըրիշտըրակը թա.- Դէ վը'էր սըխալվալ ըս, ճէլլ ըրա հօքիտ տօ, վը'էր տանէմ* (ՀԺՀ, VII, 206): 2. Ոչ ճիշտ՝ ոչ խրախուսելի ընթացք՝ գործ բռնել, մոլորվել, ուղիղ ճանապարհից շեղվել: *Ասում ա.- Թաքավը'րընա ապըրած կէնա, սըխալվալ ըմ, էլ ըտի պէն չըմ ընական, նէրօղ կինիս* (Ձ): 3. Շփոթվել, շփոթմունքով մի բան մի ուրիշ բանի տեղ ընդունել: *Տըղան սըխալվում ա, սիպտակ վըխճարէն տը'ղ սը'էվէն յըրա նըստում* (Ձ):

ՍԸԽԷԼ - *տե՛ս* ՊԸՆԴԻԼ:

ՍԸԽԸԼ-ՄԸԽԱԼ - *տե՛ս* ՍԸԽԱԼ (շատերի մասին):

ՍԸԽԸԼՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. սխալեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՍԸԽԱԼՎԷԼ-ի:

ՍԸԽԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՊԸՆԴԸՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸԽԸՑԸՆՎԷԼ - *տե՛ս* ՊԸՆԴԸՑԸՆՎԷԼ:

ՍԸԽԿԷ - *գ.* 1. Փոքրիկ ընկույզ: *Կուճուր ճըղուպուրէն սըխկէ յըն ըսէս* (Ձ): 2. *տե՛ս* ԹՈՒԼՈՒԲԱ՛ՆԴԻ:

ՍԸԽԿՕ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սըխկօվան ընգած - Շատ հազող: *Էտ սըխկօվան ընգածը թօղնում չի, թա պատառ քօն ինինք'* (Բ):

ՍԸԽՆԱԽ[1] - *տե՛ս* ՍԱԽՆԱԽ:

ՍԸԽՆԱԽ[2]/ՍԸՂՆԱԽ *(թրք. səğnaq)* - *գ.* Բնական կամ արհեստական ամրացրած տեղ՝ դիրք՝ թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար, բերդամրոց: *Էն վախտը Քըչըղրկապէրթը սըխնախ ա իլա՛լ* (Ձ):

ՍԸԽՏՈՒՐ - *տե՛ս* ՍԸԽՏՕՐ:

ՍԸԽՏՈՒՐԱԹԷՎ/ՍՈՒԽՏՈՒՐԱԹԷՎ/ԽԸՍՏՈՒՐԱԹԷՎ - *տե՛ս* ՍԸԽՏՈՒՐԱԹԷՐ:

ՍԸԽՏՈՒՐԱԹԷՐ/ՍՈՒԽՏՈՒՐԱԹԷՐ/ԽԸՍՏՈՒՐԱԹԷՐ - *գ.* Սխտորի թեր՝ տերեւ: *Փըրթո՛ւշին մաչը մին էրկու սըխտուրաթէր բիդի կըտօրիս, վէր համը կա* (Ձ):

ՍԸԽՏՈՒՐԱԼԻ/ՍՈՒԽՏՈՒՐԱԼԻ/ԽԸՍՏՈՒՐԱԼԻ - *ած.* Մեջը շատ սխտոր

լցրած: *Լիւսիգ աքան լավ սըխտուրալի կաճապ ա իլալ իփիս* (Բ):

ՍԸԽՏՈՒՐԱՀԱՄ/ՍՈՒԽՏՈՒՐԱՀԱՄ/ԽԸՍՏՈՒՐԱՀԱՄ - 1. *գ.* Սխտորի համ: *Սըխտուրահամը ամմէն մարթու չի տուր կամ* (Բ): 2. *ած.* Սխտորի համ ունեցող: *Կըզտօպը սըխտուրահամ ժէնգալ ա* (Բ):

ՍԸԽՏՈՒՐԱՃԻՒՐ/ՍՈՒԽՏՈՒՐԱՃԻՒՐ/ԽԸՍՏՈՒՐԱՃԻՒՐ - *գ.* Սխտորը ծեծելով պատրաստվող հյութ, սխտորի հյութ, որի մեջ աղ եւ այլ համեմունքներ են լցնում: *Խաշէն համը սըխտուրաճիւրըն ա պիրում* (Ձ):

ՍԸԽՏՈՒՐԱՄԱՆ/ՍՈՒԽՏՈՒՐԱՄԱՆ/ԽԸՍՏՈՒՐԱՄԱՆ - *գ.* 1. Սխտոր ծեծելու փոքրիկ հավանգ, սխտորագուշ: *Սըխտօրը սըխտուրըմանումը թակում ա, ածում կըճապէն մաչը* (Ձ): 2. Ծեծած սխտորը լցնելու աման: *Սըխտուրամանը վէր ա ըղնում, կօտըրում* (Բ):

ՍԸԽՏՈՒՐԱՎԸՏ/ՍՈՒԽՏՈՒՐԱՎԸՏ/ԽԸՍՏՈՒՐԱՎԸՏ - *գ.* Սխտորի հոտ: *Խաշ ուտօղէն անա սըխտուրավըտ կըկա* (Ձ):

ՍԸԽՏՈՒՐԷԼ - *տե՛ս* ՍԸԽՏՕՐԷԼ:

ՍԸԽՏՈՒՐԹԱԿԷ/ՍՈՒԽՏՈՒՐԹԱԿԷ/ԽԸՍՏՈՒՐԹԱԿԷ - *գ.* 1. Սխտորը հավանգի մեջ ծեծելու փայտը: *Սըխտուրթակէն յօր ա ունէս, սըխտօրը թըկէս* (Ձ): 2. *փխբ.* Նիհար մարդ: *Էտ սըխտուրթակէն հանցա ըսկի հըցակէր բանդա չինի* (Բ):

- Սըխտուրթակէ տըռնալ - Շշմել, անշարժանալ: *Էտ վէր ըսկանում ա, սըխտուրթակէ յա տըռնում* (Բ):

ՍԸԽՏՈՒՐՃԸՄՕՌԷ/ՍՈՒԽՏՈՒՐՃԸՄՕՌԷ/ԽԸՍՏՈՒՐՃԸՄՕՌԷ - *գ.* Սխտոր ճզմելու գործիք: *Սըխտուրճըմօռավը սըխտօր ա ճըմօռում* (Բ):

ՍԸԽՏՕՐ/ՍԸԽՏՈՒՐ/ՍՈՒԽՏՕՐ/ԽԸՍՏՕՐ *(գրբ. խստոր, սխտոր)* - *գ.* Շուշանազգիների ընտանիքին պատկանող բանջարանոցային բույս եւ դրա սոխուկը, սխտոր: *Ղարաբաղցէն առանց սըխտօր կարէլ չի յօլլա ք'ինի* (Բ):

- Սըխտօրու պահակ - Պարապ մարդ: *Սըխտօրու պահակ ը՞ս, խէ յը՞ր չը՞ս կէնում, մին կօրծ անիս* (Ձ):

ՍԸԽՏՕՐԷԼ/ՍԸԽՏՈՒՐԷԼ/ՍՈՒԽՏՈՒՐԷԼ/ՍՈՒԽՏՕՐԷԼ/ԽԸՍՏՕՐԷԼ - *նբ.* 1. Սխտորով համեմել, վրան սխտոր ճզմել՝ ծեծած սխտոր լցնել: *Մէսը խաշ ըն տամ, սըխտօրում, շարում* (Ձ): 2. *փխբ.* Խիստ նախատել: *Շինըմաչումը կ'օղէն փըռնում ա, մին լավ սըխտօրում* (Ձ):

- Սըխտօրած լօբի - Ճաշատեսակ, որ պատրաստում են եփած կանաչ լոբու վրա եփած լոլիկ եւ ճզմած՝ ծեծած սխտոր լցնելով: *Սըխտօրած լօբին լանգաթ պէն ա* (Բ):

ՍԸԿԸՍԷԼ - *տե՛ս* ԸՍԿԸՍԷԼ:

ՍԸԿԸՍՎԷԼ - *տե՛ս* ԸՍԿԸՍՎԷԼ:

ՍԸԿՍԸԿԱԼ - *չբ.* Ժլատություն անել, չնայած ունեւոր լինելուն՝ տրտնջալ: *Էտ թանջիրին կընէգ'ըն էլ, կօգի շատ հարուստ ար, ամմա սաղ օր սըկսըկամ ար* (Ձ):

ՍԸՀԱԲ(ԱԲ)/ՍԸՀԱՊ(ԱՊ) - *գ.* Առաջնորդ, պետ, ավագ, գլխավոր: *Ընդէղ շատ լանվ հանք'իմնէ կան, համ ցավին ճար կանին, համ էլ Ղալին հանք'իմ սըհաբաբին հըթէթա կըտան...* (ՋՏ, Ա, 35):

ՍԸՀԱԹ *(արաբ., պրս., թրք. sāat)* - *գ.* 1. Ժամացույց: *Սալդաթը սըհաթը տամ ա ուրան, պըրծընում, թա ք'ինի, դասիդան մուտանան վէր ա քըցում...* (ՀԺՀ, V, 649): 2. *տե՛ս* ԺԱՄ (1, 2, 3):

ՍԸՀԱԹԱՄ(Ը)ՆՈՒՏ - *տե՛ս* ՍԸՀԱԹՄԸՆՈՒՏ:

ՍԸՀԱԹՄԸՆՈՒՏ/ՍԸՀԱԹԱՄ(Ը)ՆՈՒՏ/ՍԱԹԱՄ(Ը)ՆՈՒՏ - *մ.* Հաճախ, անընդհատ: *Սըհաթմընուտ կ'ամ ա, գ'ուլին յէշում, ուրխանում* (ՀԱԲ, 15, 62):

ՍԸՀԱԹՍԱՋ *(պրս. saatsaz)* - *գ.* Ժամացույց վերանորոգող՝ սարքող արհեստավոր: *Հընդրութը՞ցէ Վարթանը լավ սըհաթսազ ա* (Բ):

ՍԸՀԱՊ(ԱՊ) - *տե՛ս* ՍԸՀԱԲ(ԱԲ):

ՍԸՀԱՐ/ՍԸՐԱՀ *(գրբ. սրահ)* - *գ.* Շենքի՝ տան մուտքի առջեւ սարքված ծածկավոր տեղ: *Տանում ա ծին սըհարան կապում, ինք'ը խուրջինը ծը՞ռքընօնում, պիցրանում տօն* (ՆԼՊԺԲ, 16):

ՍԸՀԱՐԻ - *տե՛ս* ՍԱՀԱՐԻ:

ՍԸՀԷՆՑ - *տե՛ս* ԸՍԸՀԷՆՑ:

ՍԸՀԼԻԳ'ԱՆԱԼ/ՍԻՀԼԻԳ'ԱՆԱԼ - *տե՛ս* ԹԻԹԸՋԱՆԱԼ:

ՍԸՀԼԻԳ'Ց(Ը)ՆԷԼ/ՍԻՀԼԻԳ'Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԻԹԸՋՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸՀԼԻԳ'ՕԹՈՒՆ/ՍԻՀԼԻԳ'ՕԹՈՒՆ - *տե՛ս* ԹԻԹԸՋՕԹՈՒՆ:

ՍԸՂԱԼ - *տե՛ս* ՍԸՂԱԼ':

ՍԸՂԱԼԻԼ - *տե՛ս* ՍԸՂԱԼ'ԻԼ:

ՍԸՂԱԼ'/ՍԸՂԱԼ - *տե՛ս* ՔԱՐԹԸ՞Ղ:

ՍԸՂԱԼ'ԻԼ/ՍԸՂԱԼԻԼ *(հ.ե. *(s)lei-(լորձնոտ, լպրծուն, սահել)* - 1. *տե՛ս* ՔԸՐԹԸ՞ՂԷԼ: *նբ.* 2. Շոյել, փաղաքշել: *Շէնանն հէռէ նըստում ա, յէշում տը՞սնում՝ էրկու կընէգ'ը էլլա էտ մարթին սըղալ'ում ըն* (ՆԼՊԺԲ, 67): 3. Վայելուչ տեսք տալ, հարդարել: *Հիլվին ըռընչին նըստում ա, մագ'էրը մին լ'ավ սըղալ'ում, տանս կ'ամ, ք'ինամ սիրըկանէն կօշտը* (Ձ):

ՍԸՂԱՆԱԼ - *չբ.* 1. *տե՛ս* Կ'ԸՆԹԸՆԱՆԱԼ (1): *Էտ վախտը ինդի մին անդաթ կար, վը՞ր մը՞ռած, մին էլ սըղացած մարթին նըհէտ ապրէլ չը՞ն* (ՀԺՀ, V, 65): 2. Ապաքինվել, առողջանալ, բուժվել: *Լիւզվէն տական տըղէն մէսը տ'ուս ա օնում, տընում տէղը, թէփուռը քըսում, սըղանում ա* (ՀԱԲ, 15, 26):

ՍԸՂԸԼ'ԱՓԱՆՂ - *տե՛ս* ՍԸՂԸԼ'ԱՓԱՆՂ:

ՍԸՂԸԼ'ԱՓԱՆՂ/ՍԸՂԸԼԱՓԱՆՂ - *գ.* Գլանաձեւ փայտե գործիք՝ որեւէ բան կոկելու՝ հարթելու համար, կոկիչ, հարթիչ: *Սըղըլ'ափանդը յօր ա ունէս, լիւսնըվը՞ղան շինած ամանը կուկէս* (Ձ):

ՍԸՂԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ՍԸՂԱՆԱԼ-ի: 2. *նբ. փխբ.* Անարժան՝ անարժեք մեկին՝ մի բան հաջողությամբ անցկացնել՝ գլուխ բերել՝ իրացնել՝ վաճառել եւն: *Կաղլէգ' կավը տանում ա բազար, մին ախմաղ մարթու յըրա սըղըցընում* (Ձ):

ՍԸՂՂԱԼ - *չբ.* Սահել, սահելով շարժվել: *Խօխէնք'ը տանս ըն կ'ամ, սառնէն յըրա սըղղում* (Ձ):

ՍԸՂՆԱԽ - *տե՛ս* ՍԸԽՆԱԽ[2]:

ՍԸՂՈՒՋԷ/ՍՈՒՂՈՒՋԻ - *գ.* Երաշտադիմացկուն ծառատեսակ: *Սըղուզէն պը՞նդ փանդ օնէ* (Բ):

ՍԸՂՈՒՋԻ - *տե՛ս* ՍԸՂՈՒՋԷ:

ՍԸՂՈՒՆԱՂԱՂ/ՍՈՒՂՈՒՆԱՂԱՂ - *գ.* Մանր կտրտած եւ յուղով՝ ձեթով տապակած սոխ, սոխառած: *Խաշիլը իփանում ըն, սըղունադաղը ածում յըրան, օտում* (Ձ):

ՍԸՂՈՒՆԱԹԷՎ/ՍՈՒՂՈՒՆԱԹԷՎ - *տե՛ս* ՍԸՂՈՒՆԱԹԷՐ:

ՍԸՂՈՒՆԱԹԷՐ/ՍՈՒՂՈՒՆԱԹԷՐ - *գ.* Սոխի թեր՝ տերեւ: *Ժընգ'ալանվ հացէն մաչին սըղունաթէր էլ ըն կըտօրում* (Բ):

ՍԸՂՈՒՆԱԼԻ/ՍՈՒՂՈՒՆԱԼԻ - *ած.* Մեջը շատ սոխ լցրած: *Մին լ'ավ սըղունալի բաստըրմա յա անում, վէր էք'սը խըրավէ* (Ձ):

ՍԸՂՈՒՆԱՀԱՄ/ՍՈՒՂՈՒՆԱՀԱՄ - 1. *գ.* Սոխի համ: *Սըղունըհաման սը՞րտըս խառնում ա* (Բ): 2. *ած.* Սոխի համ ունեցող: *Սըղունահամ ժէնգալ ա* (Բ):

ՍԸՂՈՒՆԱՀԸ՞Դ/ՍՈՒՂՈՒՆԱՀԸ՞Դ - *տե՛ս* ՍԸՂՈՒՆԱԴԱՂ:

ՍԸՂՈՒՆԱՎԸ՞Տ/ՍՈՒՂՈՒՆԱՎԸ՞Տ - *գ.* Սոխի հոտ: *Սօղանը կըտօրում ա, սըղունավը՞տը քըցանում տօնը* (Ձ):

ՍԸՂՈՒՆՀԸ՞ՌԱՋ/ՍՈՒՂՈՒՆՀԸ՞ՌԱՋ - *գ.* Մեջը հաց կամ կտրտած լյարդ լցրած եւ տապակած սոխառած: *Սըղունը՞ռաջը լանգաթ պէնա* (Բ):

ՍԸՂՕՑ/ՍՈՒՂՕՑ/ՍՈՒՂՈՒՑ *(գրբ. սղոց)* - *տե՛ս* ՄԱՇԱՌ:

ՍԸՄԱԹԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սըմաթակ անէլ/տալ - Սամիով ծեծել: *Աշօտը կըզնըվում ա, յըզնէրէն սըմաթակ անում* (Ձ):

ՍԸՄԱԽ - *տե՛ս* ՍԸՄԱՂ:

ՍԸՄԱԽԷԽՏ/ՍԸՄԱԽԸԽՏ - *ած.* 1. Սամիով խեղդված: *Կամ ըն տը՛սնում՝ ըտը՛ղ մին սըմախէխտ յը՛զնը վէր ընգած* (Ձ): 2. *փխբ.* Վշտից՝ սովածությունից հյուծված՝ մեռած: *Սըմախէխտ կընէգ ա, խէ յը՞ս չըչարում* (Բ):

- Սըմախէխտ անել - 1. Սամին ձիգ կապելով՝ խեղդել (անասունը): *Յը՛զնանը սըմախէխտ ըրավ* (Ձ): 2. Վիշտ պատճառելով՝ սոված պահելով հյուծել՝ մեռցնել: *Էնքան տո՛ւզնը պահից, սըմախէխտ ըրավ* (Ձ):

- Սըմախէխտ ինիլ/տը՛ռնալ - 1. Սամիի ձիգ կապված լինելու պատճառով խեղդվել (անասունը): *Սամէն վէր շատ պէնդ կապիս, յը՛զնէրը սըմախէխտ կինին* (Ձ): 2. Վշտից՝ սովածությունից հյուծվել՝ մեռնել: ... *Հուռիս դա՛ռդ ընէլան լափ սըմախէխտ ա ինըմ* (ՋՏ, Ա, 117):

ՍԸՄԱԽԸ՛ԽՏ - *տե՛ս* ՍԸՄԱԽԷԽՏ:

ՍԸՄԱՂ/ՍԸՄԱԽ *(ռուս. сумах)* - *գ.* Աղտորազգիների ընտանիքին պատկանող բույս՝ աղտոր, որի թթվաշ սերմերը ծեծում՝ փոշիացնում եւ գործածում են որպես համեմունք: *Մին ղօլան լավաշնէն ա տո՛ւս կ'ամ, էն մին ղօլան կ'առնավ փըլավը, սըմաղը* (ՋՏ, Բ, 7):

ՍԸՄԱՎԱՐ/ՍԻՄԱՎԱՐ *(ռուս. самовар)* - *գ.* Ինքնաեռ: *Այուն մին ք'ո՛հնա՛ սըմավար ա իլա՛լ* (Բ):

- Սըմավարը վէր տինիլ - Թեյի համար ինքնաեռով ջուր եռացնել: *Խաշլաման իփո՛ւմ ըն, սըմավարը վէր տինո՛ւմ, ք'ը՛փ անում* (Ձ):

ՍԸՄԲԷՏԱՆ/ՍԸՄԿԷՏԱՆ/ՍԸՄՔԷՏԱՆ *(գրբ. սամետ)* - *գ.* Սամիները կապելու փոկ, սամեթել: *Մին սըմբէտան ա յօր օնում, կապում* (Ձ):

ՍԸՄԲՈ՛ՒԼ/ՍՈ՛ՒՄԲՈ՛ՒԼ *(գրբ. սմբուլ)* - *գ.* 1. Ընդհանուր անվանում տարբեր անուշահոտ եւ գույնզգույն ծաղիկների: *Յարըս պէցված մին գ'ո՛ւլ ա, մագ'էրը սարու սըմբո՛ւլ ա* (Ձ): 2. *տե՛ս* ՀԱՍԿ(Ը):

ՍԸՄԷՏԱՆ *(ռուս. сметана)* - *գ.* Թթվասեր: *Միհէնգ'վա հարթնէրը սըմէտան ըն օտում, ասում ըն.- Ղայմաղը լ'ավ չի* (Բ):

ՍԸՄԸՆԴՈ՛ՒԿ/ՍԻՄԻՆԴՈ՛ՒԿ/ՍԸՆԴՈ՛ՒԿ/ՍԻՆԴՈ՛ՒԿ - *գ.* Վայրի բանջար, որ թթու են դնում: *Սըմընդո՛ւկ ա քաղում, պիրում աղ տինում* (Ձ):

- Սըմընդո՛ւկու կարաս/պուլիգ'/տոճ - Չաղ՝ ուռած՝ փքված մարդ: *Սըմընդո՛ւկու կարաս ը՞ս, էտ հինչ ա փօրէտ հա՛լը* (Բ):

ՍԸՄԿԷԼ/ՍԸՄՔԷԼ - *չբ.* 1. Հյութը կորցնել, կուչ գալ, ցամաքել, չորանալ: *Հացը սըմկալ ա* (Բ): 2. Նիհարել, հյուծվել, հալումաշ լինել: *Էտ պառավը քանէ ք'ո՛ւնում ար, էնքան սըմկում ար* (Ձ): 3. Դժգունել, գույնը գցել: *Սըմկալ ա, ըռանգ'ը տը՛ռալ մըռալու ըռանգ'* (Բ):

- Սըմկած ճա՛թ - 1. Անորակ՝ չորացած՝ դժգույն հաց՝ թխվածք եւն: *Էտ սըմկած ճա՛թը հունց ը՞ս օտում* (Բ): 2. Նիհար՝ հյուծված մարդ: *Էտ սըմկած ճա՛թը կընգանը օր-իշը՛ղ չի տամ* (Ձ):

ՍԸՄԿԷՏԱՆ - *տե՛ս* ՍԸՄԲԷՏԱՆ:

ՍԸՄԿԸՑ(Ը)ՆԷԼ/ՍԸՄՔԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. սմքեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՍԸՄԿԷԼ-ի:

ՍԸՄՍԻՄՕԿ/ՍԻՄՍԻՄՕԿ - *գ.* Մի տեսակ վայրի բանջար: *Սըմսիմօկը ժընգ'ա՛լա՛վ հացէն մաչը՛ն ըն քըցո՛ւմ* (Բ):

ՍԸՄՔԷԼ - *տե՛ս* ՍԸՄԿԷԼ:

ՍԸՄՔԷՏԱՆ - *տե՛ս* ՍԸՄԲԷՏԱՆ:

ՍԸՄՔԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՍԸՄԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸՅԸՂԱՆԱԼ - *չբ. տե՛ս* Սայաղ ինիլ:

ՍԸՅԸՂՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՍԸՅԸՂԱՆԱԼ-ի:

ՍԸՅԸՂՕԹՈՒՆ - գ. Ուշադիր՝ զգոն լինելը, զգուշություն: *Սըյըղօթունը լ'ավ պէն ա* (Ձ):

ՍԸՆԳՍԸՆԳԱԼ - *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹԱԼ:

ՍԸՆԳՍԸՆԳՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸՆԳՍԸՆԳՕՆ - *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹՕՆ:

ՍԸՆԳՍԸՆԳՕՑ - *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹՕՆ:

ՍԸՆԴՔԱՐ/ՍԻՆԴՔԱՐ - *գ.* 1. Սանդի՝ քարե գլանաձեւ թակիչ, սանդիտոռն, սանդակոթ: *Թը՛ղլը՛ղը՛ցէք' լօխ ըտը՛ղան ըն լա՛ալ սինդը՛քարէր պիրիս* (ԱԱ, 37): 2. Քարե մեծ սանդ՝ մեջը հատիկներ՝ աղ եւն ծեծելու՝ մանրացնելու համար: *Սընդա՛քարը տինում ըն, կուրկուտ թակում* (Ձ): 3. *փխբ.* Շատ ծանր բան: *Էս էլ հօ աթուռ չի՞, սընդա՛քար ա* (Բ):

ՍԸՆԴԸԹԱԿԷ/ՍԻՆԴԸԹԱԿԷ - *տե՛ս* ՍԸՆԴՔԱՐ (1):

ՍԸՆԴԸԼԱ *(թրք. sandalye)* - *գ.* Որպես աթոռ ծառայող կոճղ: *Մին սընդըլա յա տինո՛ւմ տակէն նըստում* (Ձ):

ՍԸՆԴԸԼԱՎԷՐ *(գրբ. սանդալաւոր)* - *ած.* Սանդալ հագած: *Հը՛ղէննի մին սընդըլավէր խօխա յա ջիհո՛ւմ* (Ձ):

ՍԸՆԴԸԿՈՒԿՈՒ/ՍԻՆԴԻԿՈՒԿՈՒ/ՍՈ՛ՒՆԴՈ՛ՒԿՈՒԿՈՒ/ՍԸՆԴՈ՛ՒԿՈՒԿՈՒ - *գ.* 1. Իբր տանը բնակվող չար ոգի: *Ասում ա.- Վէր քօն չինիս, սընդըկուկուն կ'ըլան ա ք'ը՛զ տանէ* (Բ): 2. Չափածո աղոթք, որ կարդում էին գիշերները տակը միզող երեխաների մոտ: *Առաչ տակէն կ'ուզո՛ղ խօխօնցը քը՛շտէն սընդըկուկու վը՛ն իլա՛լ կըրթիս* (Ձ):

ՍԸՆԴԸՐԱԿԱՊ/ՍԸՆԴԸՐԿԱՊԷ[1] - *տե՛ս* ՅՈՒՊՈՒՊ:

ՍԸՆԴԸՐԱՏՕՆ - *գ.* Ոստայնի այն մասը, որտեղ տեղադրվում է սանդրը: *Ծը՛ռքը քըցո՛ւմ ա սընդըրատօնը, օխծը ծը՛ռքան կըծում ա* (Ձ):

ՍԸՆԴԸՐԿԱՊԷ[1] - *տե՛ս* ՍԸՆԴԸՐԱԿԱՊ:

ՍԸՆԴԸՐԿԱՊԷ[2] - *գ.* Սանր պատրաստող արհեստավոր: սանրագործ: *Բուղդան ա՛մին լ'ավ սընդըրկապէ յա իլա՛լ* (Բ):

ՍԸՆԴԸՐՍԱՊՈՒՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սընդըրսապուն անել - Լավ լվալ՝ մաքրել: *Օրը էրկու հէտ էտ շօ՛րը սընդըրսապուն ա անում, կախ տամ, ամմա մին ա՝ վը՛ռտը անց չի կէնում* (Ձ):

ՍԸՆԴՈ՛ՒՀ/ՍՈ՛ՒՆԴՈ՛ՒՀ *(գրբ. սնտու)* - *գ.* 1. Գետնի երեսից հողի տակով թոնրի ներսը ձգվող խողովակաձեւ անցք՝ կրակը բորբոքելու համար: *Սընդո՛ւն ընդըրա հը՛տէ յա, վէր թուրնէն կըրակը թիժանա* (Բ): 2. Գետնի երեսից հողի տակով ջրավազանի ներսը ձգվող խողովակաձեւ անցք՝ ջուրը բաց թողնելու համար: *Սընդո՛ւն պէնում ա, գ'օլէն ճո՛ւրը լօխ ք'ինամ ա* (Ձ):

- Սընդո՛ւյին ծակավը յը՛ր (հ)անել - *տե՛ս* ՉՕ՛Ր ԾԱՌԸ ՅԸ՛Ր (Հ)ԱՆԷԼ:

- Սընդո՛ւյին ծակը կօխել - *տե՛ս* ՉՕ՛Ր ԾԱՌԸ ՅԸ՛Ր (Հ)ԱՆԷԼ:

ՍԸՆԴՈ՛ՒԼ/ՍՈ՛ՒՆԴՈ՛ՒԼ - *գ.* Թոնրի կամ ջրավազանի տակն անցկացրած խողովակաձեւ անցքի՝ սնդուի մուտքը փակող հարմարանք: ... *Կը՛ռացալ ա, թա սո՛ւնդո՛ւլը տո՛ւս օնէ, տը՛ղ գ'օլէն մաչին աշկավը՛ն ա ընգալ ո՛ւրանա՛ շանը շօխկը* (ՀԲ, 351):

ՍԸՆԴՈ՛ՒԿ - *տե՛ս* ՍԸՄԸՆԴՈ՛ՒԿ:

ՍԸՆԴՈ՛ՒԿՈՒԿՈՒ - *տե՛ս* ՍԸՆԴԸԿՈՒԿՈՒ:

ՍԸՆԴՕԽՉԱ - *գ.* 1. *տե՛ս* ՍԱՆԴՕՂ: 2. Սնդուկի մեջ պահվող որեւէ բան: *Սընդօխչան տո՛ւս ա տամ, ըստօլէն շարում* (Ձ):

ՍԸՆԸԽՉԻ *(թրք. sənəči)* - *ած., գ.* Կոտրվածքներ կապող՝ բուժող (ժողովրդական բժիշկ): *Վաղաշակ դային լ'ավ սընընխչի յա իլա՛լ* (Բ):

ՍԸՆԸԽՉՕԹՈՒՆ - *գ.* Կոտրվածքներ կապողի՝ բուժողի՝ սնխչու մասնագիտությունը: *Սընընխչօթունը ամմէն մարթու պէն չի* (Բ):

ՍԸՆՉԱՎԷՐ - *տե՛ս* ՇԸՆՉԱՎԷՐ:

ՍԸՊ - *տե՛ս* ՍԸ՛Պ:

ՍԸՊԱՍՕՐ - *ած.* Սեպի պես սուր, ծայրը սեպի պես տաշած: *Մին սըպասօր փա՛ռ ա տինում ճէխկումը, թըխում* (Ձ):

ՍԸՊԷԼ - *տե՛ս* ՍԸ՛ՊԷԼ:

ՍԸՊ(Ը)ՆԱԼԻ - *ած.* Մեջը շատ օճառ լցրած: *Սըպընալի ճո՛ւր ա* (Բ):

ՍԸՊ(Ը)ՆԱՀԱՄ - 1. *գ.* Օճառի համ: *Խուրձգ'ան սըպնահամ ա կ'աս* (Բ): 2. *ած.* Օճառի համ ունեցող: *Սըպընահամ խօրձգ' ա* (Բ):

ՍԸՊ(Ը)ՆԱՃԻՒՐ - *գ.* 1. Մեջը օճառ բացած ջուր, օճառով փրփրացրած ջուր: *Ծօրէրը ածում ա սըպընաճիւրը, լըվանում* (Ձ): 2. Օճառով լվացվելուց՝ լվանալուց հետո մնացած կեղտոտ ջուր: *... Ծէռքընէն սապնավ լըվանըմ ըն, թըմիզվըմ, սըպնաճիւրը մինմինու յըրա շըպըրտըմ* (ՋՏ, Ա, 209):

ՍԸՊ(Ը)ՆԱՄԱՆ - *գ.* Օճառի աման: *Սապունը տինում ա սըպնըմանումը, կօխում թօրբան* (Ձ):

ՍԸՊ(Ը)ՆԱՊՕՋ' - *գ.* Սայլի սռնուն քսելու համար լուծված օճառը պահելու եղջյուր: *Սըպընապօգ'ը ծը'ռքան վէր ա ըղնում, սապունը սաղ վէր տը'ռնում* (Ձ):

ՍԸՊ(Ը)ՆԱՎԸ'Տ - *գ.* Օճառի հոտ: *Ծիւրէրան սըպընավը'տ ա կ'աս* (Բ):

ՍԸՊ(Ը)Ն(Ը)ՀԱՐԷԼ - *նբ.* Շատ օճառ քսել եւ տրորելով լվանալ՝ մաքրել: *Սըպընհարում ա, էտ շօրէրը լօխ թըմիզցընում* (Ձ):

ՍԸՊ(Ը)Ն(Ը)ՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԸՊ(Ը)Ն(Ը)ՀԱՐԷԼ-ի:

ՍԸՊ(Ը)Ն(Ը)ՃԻՐԻԼ - *նբ.* Լվացքի շորերը օճառաջրի մեջ լվանալ: *Շօրէրը սըպընճիրում ըն, յը'տնան պըրգ'ըճիրում* (Ձ):

ՍԸՊ(Ը)Ն(Ը)ՃԻՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՍԸՊ(Ը)Ն(Ը)ՃԻՐԻԼ-ի:

ՍԸՊ(Ը)ՆԸՓ(Ը)ՐՓՕՐ - *գ.* Օճառի փրփուր: *Խօխէնքը նի յըն տը'ռնում լըվացէն տաշտը, սըպընփըրփօրավը խաղ անում* (Ձ):

ՍԸՊ(Ը)ՆՕՏԷԼ - *նբ.* Վրան օճառ քսել, օճառով ապականել: *Շօրէրը սաղ սըպնօտալ ա* (Ձ):

ՍԸՊ(Ը)ՆՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԸՊ(Ը)ՆՕՏԷԼ-ի:

ՍԸՊ(Ը)ՌԷԳ' - *տե՛ս* ՍԸ'Պ(Ը)ՌԷԳ':

ՍԸՊ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՍԸ'Պ(Ը)ՎԷԼ:

ՍԸՌ - *տե՛ս* ՍԸ'Ռ:

ՍԸՌԱԼ/ՍԸՌԷԼ - *նբ.* Ասածի վրա համառել, խստիվ պահանջել: *... Սըռըմ ա, թա.- Յէս օգըմ չըմ, վէր իմ դուզը դ'ուզըցնիք'...* (ՋՏ, Բ, 62):

ՍԸՌԱԽՕՏ/ՍԸՌՆԱԽՕՏ - *գ.* 1. Լեռան գագաթնային գծի վրա աճած խոտ: *Սարէն կըլխէն լ'ավ սըռնախօտ կա* (Ձ): 2. *փխբ.* Տատանվող՝ հեղհեղուկ բնավորությամբ մարդ: *Իզէն հինչ տը-դա՞մարթ, սըռնախօտ ա* (Բ):

ՍԸՌԷԼ - *տե՛ս* ՍԸՌԱԼ:

ՍԸՌԸՊԱՐԱՆ/ՍԸՌՆԸՊԱՐԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սըռըպարան ինէլ - 1. Վայրէջք կատարել, վերեւից դեպի ներքեւ իջնել: *Լ'ըհա վէր սարավը սըռըպարան ըն ինում, օրը մըթնում ա* (Ձ): 2. Աստիճանաբար ավարտվել՝ նահանջել: *Կըռը'վը սըռըպարան ա ինում* (Ձ): 3. Արեւը խոնարհվել, սարի հետեւն անցնել: *Ար'ը'վը վէր սըռըպարան ա ինում, չօբանը վըխճընէն քը'շում ա* (Ձ): 4. Ծերանալ: *Սումբաթ դային սըռըպարան ա իլ'ալ, էլ կարում չի բօստանը բիջ'ի* (Բ):

ՍԸՌՆԱԽՕՏ - *տե՛ս* ՍԸՌԱԽՕՏ:

ՍԸՌՆԱՏՕՆ - *գ.* 1. Սառույցի մեջ փորած տուն՝ խորշ՝ այր: *Ըտըրանք սաղ ծըմը'ռնը էտ սըռնըտանը ըն կէնում* (Ձ): 2. *փխբ.* Շատ ցուրտ բնակարան: *Էս վէր փիչ չըք տիրալ, էս սըռնատանը հունց ը՞ք ապըրում* (Բ):

ՍԸՌՆԱՑԻԼ - *գ.* Ուշ աշնանը կամ ձմռանը արվող ցել՝ հերկ: *Տարէ յա ինում, վէր սըռնացիլ անօղը նաղդում ա* (Բ):

ՍԸՌՆԷ *(գրբ. սեռն)* - *գ.* Առանցք, որի երկու ծայրին հագցնում են սայլի՝ կառքի անիվները: *Ըրբէն սըռնէն կօտըրալ ա* (Ձ):

ՍԸՌՆԸԽԱՆԱ - *գ.* Շատ ցուրտ տեղ՝ կացարան: *Էս էլ հօ տօն չի՞, սըռնըխանա յա* (Բ):

ՍԸՌՆԸԿԱ՛ԼԻԼ - *չբ.* Սառույցով պատվել, սառցակալել: *Շէնին հըդէն սըռնըկա՛լալ ա* (Բ):

ՍԸՌՆԸԿԱԾԱՆ - *գ.* Սառույցով պատված՝ սառցակալած արահետ: *Սըռնըկըծանավը բիդի շատ սայաղ ք'ինիս, վէր սըլկըհիս վէչ* (Բ):

ՍԸՌՆԸԿՈՒԼՈՒԼ - *ած.* Սառցի մեջ կոլոլված, սառցակոլոլ, սառցապատ: *Էտ սըռնըկուլուլ յափընջին տինում ա փիչին կօխկէն, վէր յը'տ կ'ա՛* (Ձ):

ՍԸՌՆԸՊԱՐԱՆ - *տե՛ս* ՍԸՌԸՊԱՐԱՆ:

ՍԸՌՉԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. սառուցանեմ)* - *նբ.* ՍԱՌՉԻԼ-ի:

ՍԸՌՉԸՑԸՆՎԷԼ - *կբ.* ՍԸՌՉԸՑ(Ը)ՆԷԼ-ի:

ՍԸՌՌԱԼ - *չբ.* Հոսելով՝ սահելով թափվել (ավազի, ցորենի եւն մասին): *Վէր քացէ յա տամ, ըմբարէն մին թա՛ռ՛ափը պուք ա կ'ամ, ցօրէնը սըռռամ տափը* (Ձ):

ՍԸՌՌԱԼԻ - *մ.* Հոսելով, սահելով: *Ղումը սըռռալի վէր ա տը'ռնում* (Բ):

ՍԸՌՍԸ'ՌՈՒՏ - *տե՛ս* ՍԸՐՍԸՌՕՏ:

ՍԸՌՍԸՌԸ'ՆԷ - *տե՛ս* ՍԸՐՍԸՌԸ'ՆԷ:

ՍԸՌՍԸՌՕՏ - *տե՛ս* ՍԸՐՍԸՌՕՏ:

ՍԸՌՏ - *տե՛ս* ՍԸ'ՐՏ[1]:

ՍԸՍԿԸՎԷԼ - *չբ.* Լռել, պապանձվել: *Խանը վէր նի յա մընում, լօխ դ'ստի սըսկըվում ըն* (Ձ):

ՍԸՍՍ - *տե՛ս* ՍՈՒՍՍ:

ՍԸՎ - *տե՛ս* ՍԸ'Վ:

ՍԸՎԱԲ - *տե՛ս* ՍՈՒՎԱԲ:

ՍԸՎԱԲԱԽՏ - *տե՛ս* Ք'ԱՄԲԱԽՏ:

ՍԸՎԱՅԻ - *տե՛ս* ՍԸՎԱՅԻ: *... Օրիշ տըղի ք'ինիս վը'չ, յա՛ր ջան, ինձա՛նա՛ սըվահի* (ԼՂԲ, 136):

ՍԸՎԱՂ *(թրք. səva)* - *գ.* Ավազից եւ կպչուն նյութից՝ ցեմենտից, կրից, ինչպես նաեւ միայն կավահողից պատրաստվող շաղախ, որով պատում են շենքի պատերի մակերեսը: *Սըվաղը բիդի կակօղ ինի, վէր ուստան կարէ լ'ավ սըվաղէ* (Բ): 2. Այդ շաղախի չորացած շերտը պատերի վրա: *Պատէն սըվաղը նըմացալ ա, վէր տը'ռալ* (Բ):

- Սըվաղ անէլ - *տե՛ս* ՍԸՎԱՂԷԼ:

ՍԸՎԱՂԷԼ - *նբ.* 1. Սվաղի շերտով պատել, սվաղ քսել: *Էրկու օրըմը ղում ըն կըրալ, պատէրը սըվաղալ...* (ՅԲ, 351): 2. *փխբ.* Չափազանց շատ շպար քսել՝ շպարել: *Յըմա՛նչում էլ չի, իրը'սը սըվաղալ ա, յը'կալ մընատօն* (Բ): 3. *փխբ.* Որեւէ բանի արտաքին երեւույթ տալ, սքողել, դիմակավորել, քողարկել: *Լ'ավ կընէգ'ը էն ա, վէր ի՛ւրա՛ն մարթին ալէգ'ը կըսըվաղէ* (Ձ):

ՍԸՎԱՂՉԻ *(թրք. səvajə)* - *գ.* Սվաղ անող արհեստավոր: *Խըրմընջուղը'ցէ Վօլին լ'ավ սըվաղչի յա* (Բ):

ՍԸՎԱՂՉՕԹՈՒՆ - *գ.* Սվաղ անելը, սվաղ անողի զբաղմունքը՝ մասնագիտությունը: *Սըվաղչօթունը լ'ավ փէշակ ա* (Բ):

ՍԸՎԱՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԸՎԱՂԷԼ-ի:

ՍԸՎԱՃԱ՛ՆՋ - *գ.* Սեւ գույնի եւ սովորականից ավելի խոշոր ճանճի տեսակ: *Մին սըվաճա՛նջ կ'ամ ա, թաքավէրին ջընաղէն նըստում* (Ձ):

ՍԸՎԱՄԱՋ' - *ած.* Սեւ մազեր ունեցող, սեւահեր: *Էտ չուբանէն էլ մին դաշանգ', սըվամագ' ախճիգ' ա ինում, անումը՝ Գօհար* (Ձ):

ՍԸՎԱՄՕԾ - *գ.* Սեւ մոշի տեսակ: *Սըվամօշը հա՛մ մը'ծ-մը'ծ ա, հա՛մ քախծը* (Բ):

ՍԸՎԱՅԻ/ՍԸՎԱՅԻ - *տե՛ս* ԿԸՄԱՆ-(ՑԷ) (1): *Մէր Կըվկագին խալխան սըվայի Ռուսէթա խալխըն էլ ա դաչա յէկալ...* (ՋՏ, Բ, 85):

ՍԸՎԱՆԱԼ *(գրբ. սեւանամ)* - *չբ.* 1. Սեւ գույն ստանալ, սեւագույն դառնալ: *Փիչը էնքան ծօխ ա ըրալ, պատէրը սաղ սըվացալ ա* (Բ): 2. Արեւայրուքի ազդեցությամբ թխանալ: *Խօխէնքը'ը տըկլօր էնքան իրը'վէն տակէն խաղ ըն ըրալ, սըվացալ ըն* (Բ): 3. *փխբ.* Ամպով՝ թուխպով ծածկվել: *Յէրգ'ինքը'ը սըվացալ ա* (Բ): 4. *փխբ.* Հասնել, հասունանալ (որոշ

պտուղների մասին): *Խաղուն սըվացալ ա, քըղէլի վախտըն ա* (Բ): 5. *փխբ.* Սեւ՝ մռայլ՝ դժբախտ դառնալ: *Էտ օրանց էլ մէր գ'անքը սըվացալ ա* (Զ): 6. *փխբ.* Հուզմունքից՝ զայրույթից եւն դեմքը սեւագույն դառնալ: *Կըտըղթունան խանը սըվանում ա* (Զ): 7. *փխբ.* Շատ կեղտոտվել, կեղտից գույնը սեւին տալ: *Էտ պէնջակը էնքան կ'ը՞ցալ ա, սըվացալ ա* (Բ): 8. *փխբ.* Մութով պատվել, մթնել: *Աշխարքըս սըվացալ ա, ամմա վար ընօղնէն հ'ալ'ն էն ըն վար ընէլիս* (Զ): 9. *փխբ.* Հողը հերկվել, հերկվելով սեւ գույնով երեւալ: *Վէր կ'ամ ա տը՞նում՝ ըրտատը՞ղը սըվացած, ուրխանում ա* (Զ):

ՍԸՎԱՉԱԼ - *ած.* Սեւ պուտեր ունեցող: *Էտ վըրսկանէն էլ մին սըվաչալ շօն ա ինում* (Զ):

ՍԸՎԱՍԸ՞ՐՏ - *ած. տե՛ս* Սը՞րտը սը՞վ:

ՍԸՎԱՎԸ՞Ղ - *գ. տե՛ս* Սը՞վ վը՞ղ:

ՍԸՎԱՎՈՒՆ - *ած.* Սեւին տվող, սեւավուն: *Հընանցէ մին սըվավուն հէյվան ա աշկավը ըղնում* (Զ):

ՍԸՎԱՏԷՋ - 1. *գ.* Սեւ գույնի տիզ: *Մին սըվատէզ կ'ամ ա, նի մընում ջուբը* (Զ): 2. *գ., ած. փխբ.* Սեւ մաշկով եւ տգեղ (մարդ, հատկապես աղջիկ): *Էտ սըվատէզ ախճիգ'ը էտ դաշ'ինգ' ըխճըկանը տը՞ղ տամ ըն թաքավէրին տըղէն* (Զ):

ՍԸՎԱՔԱԾ - 1. *գ.* Սեւ գույնի ագռավ: *Մարթ կա՝ սըվըքաշէն մէսը օտում ա* (Բ): 2. *տե՛ս* ՍԸՎԱՏԷՋ (2):

ՍԸՎԱՔԸ՞ՍՏ - *գ.* Ցորենի տեսակ: *Սըվաքը՞ստը մէր վըդէրումը լ'ավ ա տը՞ռնում* (Բ):

ՍԸՎԱՔ'ԻՐ - 1. *ած.* Դժբախտ, թշվառ: *Սըվաք'իր կընէգ ա Մանծվը* (Բ): 2. *ծ.* Կարեկցանքի՝ ցավակցության արտահայտություն: *Սըվաք'իր իլ'ածը մին տըղա յար, էն էլ մը՞ռավ* (Բ):

ՍԸՎԱՕԽԾ(Ը)/ՍԸՎԸՕԽԾ(Ը) - *գ.* 1. Սեւ գույնի օձ: *Մին սըվաօխծ կ'ամ ա նի մընում ըտըրա պէրցին տակը* (Զ): 2. *փխբ. տե՛ս* Սը՞վ օխծ:

ՍԸՎԷՐ - *տե՛ս* ՍԸՎԸ՞Ր:

ՍԸՎԷՐԷԼ - *տե՛ս* ՍԸՎԸ՞ՐԷԼ:

ՍԸՎԷՐՎԷԼ - *տե՛ս* ՍԸՎԸ՞ՐՎԷԼ:

ՍԸՎԷՐՈՒԹԿ - *տե՛ս* ՍԸՎԸ՞ՐՈՒԹԿ:

ՍԸՎԸԲԸԽՏՕԹՈՒՆ - *տե՛ս* Ք'ԸՄԲԸԽՏՕԹՈՒՆ:

ՍԸՎԸ՞ՆԷ - *գ.* Սեւ խաղողի՝ թթի՝ թզի եւն տեսակ: *Սըվը՞նան բ'ա՞ք'մ'ա՞զ չը՞ն իփում* (Բ):

ՍԸՎԸ՞Ր/ՍԸՎԷՐ/ՍՈՒՎԸ՞Ր *(գրբ. սովոր)* - *ած.* Որեւէ բանի վարժված՝ ընտելացած, սովոր: *Ղուգ'ա՞նը գ'ուդում ար, վը՞ր ի՞ւրա՞ն յէգնը Տըժէր ծ՞օրանը տը՞ն ք'ինիկ չի. նա էտ ծ՞օրին ա սըվէր* (ԼՂԲ, 298):

ՍԸՎԸ՞ՐԷԼ/ՍԸՎԷՐԷԼ/ՍՈՒՎԸ՞ՐԷԼ *(գրբ. սովորեմ)* - *նբ.* 1. Գիտելիքներ ձեռք բերել, յուրացնել, սերտել: *Հարությունը յէր ա կէնում նըստում, ասում.- Էտ կօրկէն հըմբարքավը մին էլ խօսկէրք ըմ սուվը՞րալ* (ՀԺՀ, VII, 181): 2. Մեկի՝ մի բանի օրինակը յուրացնել, ընդօրինակել: *Կ'ուղթուն անէլը հօրը անա յա սըվը՞րալ* (Բ): 3. Որեւէ բան սովորություն դարձնել: *Սըվէրալ ա՝ ամմէն դ՞օնում կընգանը յըրա ճըղճըղա* (Բ): *չբ.* 4. Մի բանի վարժվել՝ ընտելանալ: *Ծէնին էշէրը էտ արտէն սըվէրած ըն ընում* (ԼՂԲ, 346): 5. Ուսանել, կրթական հաստատության սովորող լինել: *Իմ քուր ծէր ըշկօլումըն ա սըվըրէս* (Բ): 6. Որոշակի առաջադիմություն ցուցաբերել: *Մին օր դասատուն ջըհ՞ում ա, թա.- Ծէր խօխան լ'ավ չի սըվը՞րում* (Զ):

ՍԸՎԸ՞ՐՎԷԼ/ՍԸՎԷՐՎԷԼ/ՍՈՒՎԸ՞ՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԸՎԸ՞ՐԷԼ-ի:

ՍԸՎԸ՞ՐՈՒԹԿ/ՍԸՎԷՐՈՒԹԿ/ՍՈՒՎԸ՞ՐՈՒԹԿ/ՍԸՎՈՒՐՈՒԹԿ/ՍԸՎՕՐՈՒԹԿ *(գրբ. սովորոյթ)* - *գ.* Ընդհանուրի կողմից իբրեւ ավանդություն ընդունված կարգ, սովորույթ, սովորություն: *Հըրսընքէն վախտը կըռը՞վ անէլը Ճարտար սըվը՞րութկ ա* (Բ):

- Սըվըրութկու պար - *տե՛ս* ՅԱԼԼԻ:

ՍԸՎԸԹՕԽ - *ած.* 1. Սեւին տվող թուխ, շատ թուխ: *Սըվըթօխ մազ'էր օնէ* (Բ): 2. *փխբ.* Անիծված, ատելի: *...Ջ'ա՞հիլ տըղօրց կ'ըրէգմանը տը՞ռավ սըվըթօխ Կէրչը* (ԼՂԲ, 84):

ՍԸՎԸԾԱՂԷԳ' - *գ.* Սեւ գույնի ծաղիկ: *Ախճիգ'ը ասում ա.- Յը՞ս ըռազի կըկէնամ մինակ էն վախտը, վէր ինձը՞տէ մին սըվըծաղէգ' պիրիս* (Զ):

ՍԸՎԸԿ'ԱՌԻ - 1. *գ.* Վայրի հացաբույսի տեսակ: *Մէր հընդէրումը սըվըկ'ա՞ռի էլ կա* (Բ): 2. *տե՛ս* ՍԸՎԱՏԷՋ (2):

ՍԸՎԸԿ'ԱՌՄԱ՞ՒՐ - *ած.* Սեւին տվող կարմիր, սեւ երանգավորում ունեցող կարմիր: *Սըվըկ'ա՞ռմա՞ւր շ՞օրէր ա կ'ը՞ցալ* (Բ):

ՍԸՎԸՄԸԹԷՆ - *ած.* 1. Սեւ ու մութ, սեւագույն ու խավար: *Սըվըմըթէն թուխպէր ա* (Բ): 2. *փխբ.* Թշվառ, ողբալի: *Սըվըմըթէն գ'անք ա մէր Հայկուշին գ'անքը* (Բ):

ՍԸՎԸՄՕՐԷԽ - 1. *գ.* Սեւ գույնի մորեխ: *Սըվըմօրէխը արտը կէրավ* (Զ): 2. *տե՛ս* ՍԸՎԱՏԷՋ (2):

ՍԸՎԸՊԸՂՕՃ - 1. *գ.* Սեւ գույնի միջատ: *Պօլիգ'ը պէնում ա, տը՞սնում վը՞սկուն տը՞ղ սըվըպըղօճավ լըցցած* (Զ): 2. *տե՛ս* ՍԸՎԱՏԷՋ (2):

ՍԸՎԸՍԸՐՏԷԼ - *չբ. տե՛ս* Սը՞րտը սըվանալ:

ՍԸՎԸՍԻՊՏԱԿ - *ած.* Սեւ եւ սպիտակ, սպիտակի վրա սեւ պուտերով կամ հակառակը: *Սըվըսիպտակ շալ ա քըցա՞ալ կըլիխէն* (Զ):

ՍԸՎԸՍՕ՞Ք' - *ած.* Ծանր սգի մատնված, սգավոր: *Սըվըսօ՞ք' կընէգ' ա Աշխէնը* (Բ):

ՍԸՎԸՎԱՉԻ - *տե՛ս* ՍԸՎԱՎՈՒՆ:

ՍԸՎԸՏԷՂԷՆ - *ած.* Սեւին տվող դեղին, սեւավուն դեղին: *Ապուն մին սըվըտէղէն յը՞զն ա ի՞լալ* (Բ):

ՍԸՎԸՏԸՌԱԾԱԿ - *տե՛ս* ՍԸՎԱՏԷՋ (2): *Էտ սըվըտըռածակ ախճիգ'ը կըլ՞օխը պիցըրցընում ա, յէշըմ, տը՞սնըմ՝ մին մարալ-ջէյրան ախճիգ' ծառին յըրան* (ՀԺՀ, V, 159):

ՍԸՎԸՐՑ(Ը)ՆԷԼ/ՍՈՒՎԸՐՑ(Ը)ՆԷԼ/ՍՈՒՎՈՒՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. սովորեցուցանեմ)* - *պբ. եւ չբ.* ՍԸՎԸ՞ՐԷԼ-ի:

ՍԸՎԸՐՕԹՈՒՆ/ՍՈՒՎԸՐՕԹՈՒՆ/ՍՈՒՎՈՒՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԸՎԸ՞ՐՈՒԹԿ:

ՍԸՎԸՐՕՎԻ/ՍՈՒՎԸՐՕՎԻ/ՍՈՒՎՈՒՐՕՎԻ - *ած.* Սովորելով ձեռք բերվող՝ բերված, ոչ բնատուր, ոչ բնական: *Ամմէն հինչ էլ սըվըրօվի յա* (ԱԲԲ, 15):

ՍԸՎԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. սեւացուցանեմ)* - *նբ.* ՍԸՎԱՆԱԼ-ի:

ՍԸՎԸՔՈՒԾՈՒ - *գ.* 1. Էշի սեւ քուռակ: *Էծը ծախում ա, մին սըվըքուշու ինք' օնում* (Զ): 2. *տե՛ս* ՍԸՎԱՏԷՋ (2):

ՍԸՎԸՕԽԾ(Ը) - *տե՛ս* ՍԸՎԱՕԽԾ(Ը):

ՍԸՎԹԱ՞/ՍԻՎԹԱ՞/ՍՈ՞ՒՎԹԱ՞/ՍՈ՞ՒՐԹԱ՞ *(արաբ. siftah)* - 1. *մ.* Սկզբում, ամենից առաջ: *Սըվթա՞ հընգէրուց մինին ըն կախ տամ, հընգէրը սըկսում ա ճըղճըղալը...* (ՀԺՀ, V, 270): 2. *ած.* Սկզբի, առաջին: *Սիվթա՞ յէկօղընն ալ լ'ալ ա Ըվաք'ա՞ց Նազար* (ԱԱ, 18): 3. *գ.* Որեւէ բանի համար վճարված նախնական գումար: *Ուստան ասմա.- Հ՞ալ'ն մին սըվթա՞ տօ, յը՞տնան կօրծը ըսքըսինք'* (Զ):

- Սըվթա՞ անէլ - Փորձել, սկսել: *Պըլըպուղին ըսէս ա.- Տը՞ր հայր, առաջին վօղորմութի՞ւնը տօ՛, մին սո՞ւվթա՞ անիմ* (ԼՂԲ, 396):

ՍԸՎԻՏԸՐ *(ռուս. свитер, անգլ. sweater)* - *տե՛ս* ՓԱՅԿԱ:

ՍԸՎԻՐԸ՞Ս - *ած.* 1. Սեւ՝ սեւագույն երեսով: *Կօգ'ի սըվիրը՞ս, ամմա ղաշ'ինգ' ախճիգ' ար Շարմաղը* (Զ): 2. *փխբ.* Ամոթով մնացած, ամոթահար: *Տըղան սըվիրը՞ս տ՞ուս ա կ'ամ, ք'ինամ, էլ կ'ամ չի* (Զ): 3. *փխբ. տե՛ս* ԱՆՀԱՄԱՆՉ:

- Սըվիրը՞ս անէլ - Խայտառակել, ամոթահար անել: *Կընէգ'ը բիդի մարթին սըվիրը՞ս չանէ, մարթը՝ կընգանը* (Բ):

- Սըվիրը՝ս թօղնէլ - Ամոթով թողնել, ամոթահար դարձնել: *Կը՝ղօթուն ըրավ, հօրը-մօրը շէնումը սըվիրը՝ս թօղից* (Ձ):

- Սըվիրը՝ս ինիլ/տը՝ռնալ - Խայտառակվել, ամոթահար լինել: *Ասում ա.- Պա ըտի պէն կինի՞, սըվիրը՝ս իլինք՝* (Ձ):

- Սըվիրը՝ս մընալ - Ամոթով մնալ, ամոթահար դառնալ (տված խոստումը՝ պարտականությունը չկատարելու եւն պատճառով): *Տըղամարթը բիդի ո՝ւրա՝ն ասածը անէ, վէր սըվիրը՝ս չի մընա* (Ձ):

ՍԸՎԿ՝ԷՎԼԻ - *տե՛ս* ՍԸԼԿԷՎԼԻ:

ՍԸՎԿ՝ԷՎՆ՝ԻԼ - *տե՛ս* ՍԸԼԿԷՎՆ՝ԻԼ:

ՍԸՎՍԸՎԸ՝ՆԷ - *տե՛ս* ՍԸՎԱՎՈՒՆ:

ՍԸՎ-ՍԸՎԹԱ՝/ՍԻՎ-ՍԻՎԹԱ՝/ՍՈ՝ՒՎ-ՍՈ՝ՒՎԹԱ՝/ՍՈ՝ՒՐ-ՍՈ՝ՒՐԹԱ՝ - *տե՛ս* ՍԸՎԹԱ՝(1): *Հալա՝ սո՝ւր-սո՝ւրթա՝ հացը՝ն սուփրան քըցո՝ւմ ըն, նըստում մին լա՝վ օտում...* (ՀԺՀ, VII, 263):

ՍԸՎՈՒՐՈՒԹԿ - *տե՛ս* ՍԸՎԸ՝ՐՈՒԹԿ:

ՍԸՎՕԹՈՒՆ *(գրբ. սեւութիւն)* - *գ.* Սեւ գույն ունենալը, սեւ լինելը: *Յիրգինք՝ին սըվօթունը մօշ քըղօղնէրէն վըխծընցընում ա* (Ձ):

ՍԸՎՕԼՈՒՃ/ՍՈՒՎՕԼՈՒՃ *(ռուս. сволочь)* - *տե՛ս* ՕՂԸՌԱԾ:

ՍԸՎՕՐՈՒԹԿ - *տե՛ս* ՍԸՎԸ՝ՐՈՒԹԿ:

ՍԸՎՕՑ - *գ.* 1. Աչքի բիբի սեւավուն գունդը: *Մըկըրատը քաղում ա աշկը, սըվօցը խառնում* (Ձ): 2. Խաղողի վազի բունը: *Թառհնէն սըվօցը լ՝ավ էրում ա, պօղ տը՝ռնում* (Բ): 3. Բնափայտի միջուկը: *Կաղնուն սըվօցը շատ տըմասկան ա* (Բ): 4. Թթի օղու տակ նստած մրուրը: *Ըռաղէն տակէն սըվօց կա, հարկավէր ա քամած* (Բ):

ՍԸՏ - *տե՛ս* ՍԸ՝Տ:

ՍԸՏԱՆԱ - *տե՛ս* ՍԱԴԱՆԱ:

ՍԸՏԸՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԸԴԸՆՕԹՈՒՆ:

ՍԸՏԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸԿՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸՏԿՕՏԷԼ - *տե՛ս* ԸՍՏԸԿՕՏԷԼ:

ՍԸՐԱ - *տե՛ս* ԸՍՏԸՐԱ:

ՍԸՐԱՋՈՒ *(ռուս. сразу)* - *տե՛ս* ԻԼԲԻՀԱ՝Լ(ՄԸՍ):

ՍԸՐԱՀ - *տե՛ս* ՍԸՀԱՐ:

ՍԸՐԱՆՈՒՑ - *գ.* Կտավատից ճմլելով ձեթ հանելու գործարան, ձիթահանք: *Առաչ Ղարաբաղ շատ տը՝ղէր ա սըրանուց իլա՝լ, միհէնգ՝ մինըն էլ չի մընացալ* (Բ):

- Սըրընուցու կ՝ումաշ - Մեծ ուժի տեր: *... Իզէն սըրընուցու կ՝ումաշ ա, ճըղրցաքարը մինակ էն կըկարէ տը՝ղան տո՝ւս օնէ* (Ձ):

ՍԸՐԱՎԷՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սըրավէր ինիլ - Գորգի՝ կարպետի կեսից ավելին գործած լինելով՝ դազգահի վերին գերանից՝ սարից, կախել: *Գ՝ա՝բա՝ կ՝օրծողը ասմա.- Վէր պատառ էլ կ՝օրծինք՝, սըրավէր ընք ինա՝կա՝ն* (Ձ):

ՍԸՐԷԼ[1] *(գրբ. սրեմ)* - *նբ.* 1. Կտրող գործիքի բերանը՝ ատամները սուր՝ հատու դարձնել: *Դա՝րվիշը էտ վախտը տը՝նակնին սըրում ար* (ՀԺՀ, V, 168): 2. Կտրելով՝ տաշելով՝ ոլորելով եւն ծայրը սուր դարձնել: *Մին պիհիր ա սըրում, տափէն տընգում, ծին կապում* (Ձ):

ՍԸՐԷԼ[2] - *տե՛ս* ՍԱՐԷԼ:

ՍԸՐԸԿԱԾԱՆ - *գ.* Լեռնային արահետ: *Էտ սըրըկըծանավը ք՝ինում ըն, հըսնում Արչին ախպո՝ւրը* (Ձ):

ՍԸՐԸՊԱՐԱՆ - *տե՛ս* ՍԸՌԸՊԱՐԱՆ:

ՍԸՐԸՍԱՐ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սըրըսար ըղնէլ - Տնից-տեղից հեռանալ, թափառումների մատնվել: *...Ինքը կ՝ամ ա, էլիա ման կ՝ամ սըրըսար ընգած* (ՀԺՀ, V, 221):

- Սըրըսար շօռ/ման կ՝ա՝լ - Լեռնեռում թափառել՝ ման գալ: *Սըրըսար շօռ ըն կ՝ամ, սօյնը քաղում, տանում ծախում* (Ձ):

- Սըրըսար քըցիլ - Տնից-տեղից վտարել, թափառումների մատնել: *Խանը կըզնըվում ա, ո՝ւրա՝ն տըղէն տանան տո՝ւս քըցո՝ւմ, սըրըսար քըցո՝ւմ* (Ձ):

ՍԸՐԸՍԸ՝Պ - *գ.* Սարի՝ սեպի նման սուր գագաթ: *Կըխտարը փախճո՝ւմ ա, սըրըսը՝պէն վը՝ննը կէնում* (Ձ):

ՍԸՐԸՑԷ - *գ.* 1. Լեռնաստանի բնակիչ, լեռնցի: *Սըրըցէն չուլըցուն տօնը դօնաղ ա կ՝ամ* (ՆԱԲ, 117): 2. *փխբ.* Անտաշ՝ կոպիտ մարդ: *Սըրըցէ յը՞ս, էտ կընգանը խէ թակում ը՞ս* (Ձ):

ՍԸՐԸՔ՝Ա՝ԹԱ՝ - *գ.* Գորգ՝ կարպետ գործելու ընթացքում, երբ աշխատանքի կեսից ավելին կատարված է եւ գործածը դազգահի վերին գերանից՝ սարից կախած, գործողների համար բերվող գաթա: *Ա՝դա՝թ ա իլա՝լ, վէր գ՝ա՝բա՝ կ՝օրծողը սըրավէր ա իլա՝լ, տընատարը սըրըք՝ա՝թա՝ յա թըխալ* (Բ):

ՍԸՐԹԷԳ՝ - *տե՛ս* ՍԸՐԹԸՂ:

ՍԸՐԹԸԳ՝ԱՆԱԼ - *տե՛ս* ՍԸՐԹԸՂԱՆԱԼ:

ՍԸՐԹԸԳ՝Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՍԸՐԹԸՂՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸՐԹԸԳ՝ՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԸՐԹԸՂՕԹՈՒՆ:

ՍԸՐԹԸՂ *(թրք. sirtiq)* - *ածական.* Սաստիկ աներես՝ անամոթ: *... Կարժապէտնէն անսէրտ ըն, մունթէրը՝ սըրթըղ, սօվդաք՝ա՝ը՝ թամաքար...* (ՋՏ, Բ, 138):

ՍԸՐԹԸՂԱՆԱԼ - *չբ.* Աներես՝ անամոթ դառնալ: *Հօրը մընէլանը յը՝տը էտ խօխէնք՝ը շատ ըն սըրթըղանում* (Ձ):

ՍԸՐԹԸՂՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՍԸՐԹԸՂԱՆԱԼ-ի:

ՍԸՐԹԸՂՕԹՈՒՆ - *գ.* Աներեսություն, անամոթություն: *Սըրթըղօթուն ընէլավ տօնը շինից, պըրծավ* (Բ):

ՍԸՐԹՍԸՐԹԱԼ - *չբ.* Ցրտից դողդողալ: *Մին օր, մին քըշէր Թըթօ ճիրը՝մը սըրթսըրթալավ անցկընցնէլան յէ՝տը հըղէ ընգի Դիզափադ* (ՋՏ, Ա, 107):

ՍԸՐԹՍԸՐԹՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ՍԸՐԹՍԸՐԹԱԼ-ի: 2. *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹԱԼ:

ՍԸՐԹՍԸՐԹԱՆ - *ածական.* Սրթսրթացող, ցրտի չդիմացող: *Սըրթսըրթան ախճիգ՝ ա Գո՝ւլին* (Ձ):

ՍԸՐԹՍԸՐԹՕՆ - *գ.* Սրթսրթալը, ցրտից դողդողալը: *Չօբանը վէր ըտը՝րա սըրթսըրթօնը տը՝սնում ա, մէխկընը ա կ՝ամ, յափընջին հանում ա, քըցո՝ւմ ջընըղնէրէն* (Ձ):

ՍԸՐԹՍԸՐԹՕՑ - *տե՛ս* ՍԸՐԹՍԸՐԹՕՆ:

ՍԸՐԿԱՎԱՔ՝ - *տե՛ս* ՍԱՐԿԱՎԱՔ՝:

ՍԸՐԿԷՎԼԻ - *տե՛ս* ՍԸԼԿԷՎԼԻ:

ՍԸՐԿԷՎՆ՝ԻԼ - *տե՛ս* ՍԸԼԿԷՎՆ՝ԻԼ:

ՍԸՐՄԱԼԻ - *ածական.* Սերմը շատ, շատ սերմ պարունակել: *Սըրմալի լօբի յա* (Բ):

ՍԸՐՄԱԿԷՐ - *ածական.* Սերմեր ուտող, սերմերով սնվող: *Սըրմակէր դուշ ա* (Բ):

ՍԸՐՄԱԿ՝ՕՂ - *ածական.* Սերմ գողացող: *Ք՝ինամ ըն, տը՝սնում սը՝րմ չի կա. սըրմակ՝օղ դուշէրը սաղ տարալ ըն* (Ձ):

ՍԸՐՄԱՎԷՐ - *ածական.* Սերմ ունեցող, սերմ բռնած: *Հիյվընէն նի յընն տը՝ռնում բօստանը, սըրմավէր լօբին լօխ օտում* (Ձ):

ՍԸՐՄԱՐԱՆՔ՝/ՍԸՐՄԱ՝ՐԱ՝ՆՔ՝ *(գրբ. սերմանիք)* - *գ., հվք.* Ջանազան տեսակի սերմերի ամբողջություն՝ հավաքածու: *Այան սըրմարանք՝ը սընդօղումընա ա իլա՝լ պըհէս* (Բ):

ՍԸՐՄԱ՝ՐԱ՝ՆՔ՝ - *տե՛ս* ՍԸՐՄԱՐԱՆՔ՝:

ՍԸՐՄԱՑՈՒ *(գրբ. սերմանացու)* - *գ.* 1. Ցանելու համար ընտրված ու պահված զանազան բույսերի սերմ: *Սուղանէն սըրմացուն մուկնէրը կէրալ ըն* (Բ): 2. Ցանելու սերմ ստանալու համար պահվող՝ խնամվող պտուղ՝ բանջարեղեն՝ բույս: *Խըյարը լօխ քաղում ա, էրկունը թօղում սըրմացու* (Ձ):

ՍԸՐՄԸ՝ՆԷ - *գ.* Թթի տեսակ: *Սըրմը՝նէն քախծըր թօթ ա* (Բ):

ՍԸՐՄԸԽԸՅԱՐ - *գ.* 1. Մեծացած՝ հասունացած ու դեղնած վարունգ, որից սերմ են ստանում: *Սըրմըխըյարը վէր լըխկում ա, սը՛ռմէրը ճօկում ըն, չուրըցընում* (Ձ): 2. *փխբ.* Շատ հասունացած եւ ուտելու համար ոչ պիտանի պտուղ: *Էտ էլ հօ յէմիշ չի՞, սըրմըխըյար ա, հունց ը՞ք օտում* (Բ):

ՍԸՐՄԸԿԱԼԻԼ - *չբ.* Սերմ բռնել, սերմով լցվել, սերմակալել: *Խըյարը սըրմըկալալ ա* (Բ):

ՍԸՐՁԱՆ - *տե՛ս* ՇԸՐՁԱՆ:

ՍԸՐՍԱՂՎԷԼ/ՍԻՐՍԱՂՎԷԼ - *տե՛ս* ԸԽՄԸԽԱՆԱԼ:

ՍԸՐՍԱՄՆԷԼ - *տե՛ս* ՍԸՐՍԸՄՆԷԼ:

ՍԸՐՍԱՐՈՒՏ/ՍԸՐՍԱՐՕՏ - *ած.* Սարերով պատված, լեռնոտ: *Ղարաբաղը սըրսարուտ յէրգ՛իր ա* (Բ):

ՍԸՐՍԱՐՕՏ - *տե՛ս* ՍԸՐՍԱՐՈՒՏ:

ՍԸՐՍԸ՛ՌՈՒՏ - *տե՛ս* ՍԸՐՍԸՌՕՏ:

ՍԸՐՍԸՂԱՆԱԼ/ՍԻՐՍԸՂԱՆԱԼ - *տե՛ս* ԸԽՄԸԽԱՆԱԼ:

ՍԸՐՍԸՂ-ՄԱ՛ՐՍԱՂ/ՍԻՐՍԸՂ-ՄԱ՛ՐՍԱՂ/ՍԱ՛ՐՍԱՂ-ՄԱ՛ՐՍԱՂ - *տե՛ս* ԸԽՄԸԽՎԱՐԻ:

ՍԸՐՍԸՂՎԱՉԻ/ՍԻՐՍԸՂՎԱՉԻ - *տե՛ս* ԸԽՄԸԽՎԱՐԻ:

ՍԸՐՍԸՂՎԱՐԻ/ՍԻՐՍԸՂՎԱՐԻ - *տե՛ս* ԸԽՄԸԽՎԱՐԻ:

ՍԸՐՍԸՂՑ(Ը)ՆԷԼ/ՍԻՐՍԸՂՑ(Ը)-ՆԷԼ - *տե՛ս* ԸԽՄԸԽՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸՐՍԸՂՕԹՈՒՆ/ՍԻՐՍԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸԽԸՄԸԽՕԹՈՒՆ:

ՍԸՐՍԸՄՆԷԼ - *չբ.* Ցրտից՝ վախից եւն կծկվել՝կուչ գալ: *... Քինա՛մ ըն, շատ շօռ կ՛ամ, տը՛սնում՝ մին ղընդաղում ըշտափած, սառած, սըրսամնած, քունավ ընցած* (ՀԺՀ, VII, 181):

ՍԸՐՍԸՊԱՏԷԼ - *չբ.* Սարսափել, երկյուղից դողալ: *... Մէր կընանէքը սըրսըպատըմ ըն, սաղ մա՛հլան կըլխըրնէրին հըվաքըմ* (ՋՏ, Ա, 227):

ՍԸՐՍԸՌԱԼ *(գրբ. սարսռամ)* - *չբ.* Սարսուռ՝ դող զգալ, դողդողալ, ցնցումների մեջ լինել (ցրտից, երկյուղից, ցավից եւն): *Կ՛ամ ըն, տը՛սնում՝ վէզ՛իրը, խընձո՛ր՛ն տակէն նըստած, սըրսըռամ ա* (Ձ):

ՍԸՐՍԸՌԸ՛ՆԷ/ՍԸՌՍԸՌԸ՛ՆԷ - *գ.* Անհարթ կեղեւով խնձորի տեսակ: *Սըրսըռը՛նէն խուլ՛խուլ՛օտ խընձո՛ր ա* (Բ):

ՍԸՐՍԸՌՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ՍԸՐՍԸՌԱԼ-ի: 2. *տե՛ս* ՍԸՐՍԸՌԱԼ:

ՍԸՐՍԸՌՕՆ - *գ.* Ցրտից՝երկյուղից՝ ցավից եւն առաջացող մարմնի դող, դողդողանք, սարսուռ: *Արչին վէր տը՛սնում ա, ըտրրա սըրսըռօնը փըռնում ա* (Ձ):

ՍԸՐՍԸՌՕՏ/ՍԸՌՍԸՌՕՏ/ՍԸՐՍԸ՛ՌՈՒՏ/ՍԸՌՍԸ՛ՌՈՒՏ - *ած.* Անհարթ՝ կտրտված մակերես՝ եզրեր՝ կողեր ունեցող: *Էն դա՛շանգ՛, կօխկէրքը սըրսը՛ռուտ տիրէվնէրավ ծառէրը մըծանըմ ըն, թօթը հըսնըմ ա, թափըմ ըն, ա՛ռաղ քաշըմ...* (ՀԺՀ, V, 239):

ՍԸՐՍԸՌՕՑ - *տե՛ս* ՍԸՐՍԸՌՕՆ:

ՍԸՐՎԷԼ[1] - *կբ. եւ չբ.* ՍԸՐԷԼ[1]-ի:

ՍԸՐՎԷԼ[2] - *տե՛ս* ՍԱՐՎԷԼ:

ՍԸՐՏԱԼԻ - *տե՛ս* ՍԸՐՏԱՆՑ:

ՍԸՐՏԱԽԱՂ - Գործածվում է կապակցության մեջ:

- Սըրտախաղ ինիլ - Հուզվել, սիրտը ելեւէջել՝ տրոփել: *Տըղան վէր ըխճըկանը սա՛սը ըսկանում ա, սըրտախաղ ա ինի՛ում* (Ձ):

ՍԸՐՏԱՃԱ(Ն)Ք - *տե՛ս* ԼԸՂԱՃԱ(Ն)Ք:

ՍԸՐՏԱՄԱՉ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սըրտամաչ գ՛իդո՛ղ - Ուրիշին լավ հասկացող, նրա վշտին՝ զգացմունքներին կարեկցող: *Սըրտամաչ գ՛իդո՛ղ կընէգ՛ ա իլալ Մա՛նիշ աքէրը* (Բ):

- Սըրտամաչը պէնալ/պէց անէլ - *տե՛ս* Սը՛րտը պէնալ:

- Սըրտամաչը պէնվալ/պէց ինիլ - *տե՛ս* Սը՛րտը պէնվալ:

ՍԸՐՏԱՄԸ՛Ծ - *ած. տե՛ս* Սը՛րտը լէն:

ՍԸՐՏԱՄԸ՛Ռ - *ած.* 1. Սիրտը մեռած, վշտահար: *Սըրտամը՛ռ կընէգ՛ ա Նանօվը. մին մադար տըղա օնար, էն էլ մը՛ռավ* (Բ): 2. Սիրտ չունեցող, անգութ, անխիղճ: *Էտ սըրտամը՛ռը խը՛ղճ յիթիմին տա՛նջում ա* (Ձ):

ՍԸՐՏԱՆՑ - *մ.* 1. Սրտաբուխ կերպով, ամբողջ հոգով: *Թաքավէրը սըրտանց սիրում ար նը՛ք՛ա՛րին* (Ձ): 2. Անկեղծ կերպով, անկեղծորեն: *Ասում ա.- Սըրտանց ըմ ասում, յը՛ս տը՛սալ չըմ* (Ձ):

ՍԸՐՏԱՊԷՆԴ *(գրբ. սրտապինդ)* - *ած.* 1. Անվախ, համարձակ, անվեհեր: *Սըրտապէնդ տըղա յա Մա՛րդին, քը՛շէրը մինակ հըղէ յա ինի՛ում, ծըմակավը ք՛ինամ* (Ձ): 2. Անխիղճ, անգութ: *Սըրտապէնդ մարթ ա, ի՛ւրա՛ն խօխօնցը էլ չի ք՛ը՛մա՛գ՛ անում* (Բ):

ՍԸՐՏԱՎ *(գրբ. սրտեայ)* - 1. *տե՛ս* ՍԸՐՏԱՊԷՆԴ (1): 2. *տե՛ս* ՍԸՐՏԱՆՑ: 3. *տե՛ս* ՍԸՐՏԸԿԱԿՕՂ:

ՍԸՐՏԱՎԸ - *մ.* Ցանկությամբ, ըստ մեկի ցանկության: *Թաքավէրին սըրտավը Թափէղընն ա Սըմբաթը ծիյէնը նըստում ըն, հըղէ ընում բըդի ի՛ւրանց յէրգ՛իրը* (ՆԱԲ, 48):

ՍԸՐՏԱՑԱՎ *(գրբ. սրտացաւ (սիրտը ցավող, ցավակից)* - *ած.* Հոգատար, սրտակից, կարեկից: *Սըրտացավ կընէգ՛ ա Ասթըխէգ՛ը* (Բ):

ՍԸՐՏԸԾԱՆՈՂԸՐ - *ած.* Վշտացած, տխուր: *Սըրտը՛ծանողը՛ր մարթ ա, հօր ը՞ս կը՛զնը՛վցընէս* (Բ):

ՍԸՐՏԸԿԱԿՕՂ - *ած.* Բարի սիրտ ունեցող, խիղճ ունեցող: *Սըրտըկակօղ մարթին անա ք՛ը՛փըս կ՛ամ ա* (Բ):

ՍԸՐՏԸԿՈՒՏՈՒՐ *(գրբ. սրտակտուր)* - *ած., մ.* 1. Սիրտը կոտրած, սրտաբեկ: *Թաքավէրին տըղան ըտի սըրտըկուտուր նըստում ա ծին, ք՛ինամ* (Ձ): 2. Սիրտ կոտրող՝ կսկծեցնող, սրտաճմլիկ: *Կ՛ի՛ւլը շէնին սըմթէրքումը սըրտըկուտուր կ՛օռռաց* (Ձ):

- Սըրտըկուտուր անէլ - *տե՛ս* Սը՛րտը կօտըրէլ:

- Սըրտըկուտուր ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* Սը՛րտը կօտըրվէլ:

ՍԸՐՏԸՀԱՆՎԷԼ/ՍԸՐՏԸՎԱՆՎԷԼ - *չբ.* Համարձակություն ձեռք բերել, համարձակ դառնալ: *... Ա՛հա՛ռ վէր մուտունաս ըք, տահանք առռէ յըն սըրտրհընվէս* (ՀԲ, 363):

ՍԸՐՏԸՀԱՑ(Վ)ԷԼ - *չբ.* Հուսահատվել, վհատվել, վշտանալ: *Թօռը յը՛տ չի անում, թա խաղուն քաղինք՛, ժուղուվուրթը լօխ սըրտրհատվալ ըն* (Բ):

ՍԸՐՏԸՀԸ՛ՌԷՀ *(գրբ. սրտահառաչ (սրտանց հառաչող)* - *տե՛ս* ՍԸՐՏԱՑԱՎ:

ՍԸՐՏԸՀԸՌԸՉՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԸՐՏԸՑԸՎՕԹՈՒՆ:

ՍԸՐՏԸՀԸՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԸՐՏԸՀՈՒՎՕԹՈՒՆ:

ՍԸՐՏԸՀՈՒՎՕԹՈՒՆ/ՍԸՐՏԸՀԸՎՕԹՈՒՆ - *գ.* Սրտի հովություն՝ հանգստություն, սրտահովանք: *Ախըրը, հինչ անէ, հինչ չանէ, սըրտրհըվօթուն ա, լի՞, պէրալ ա ըստը՛ղ ախպի՛ւր շինա՛լ* (ԱԱ, 60):

ՍԸՐՏԸՄ(Ը)ՆԱ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սըրտըմընա անէլ - Խորշանք պատճառել, զզվեցնել: *Չօբանը ըտի յը՛ստուտ շի՛ւրէրավ նի յա մընում, թաքուհուն սըրտըմընա անում* (Ձ):

- Սըրտըմընա ինիլ/տը՛ռնալ/փըռնէլ - Խորշել, զզվել: *Մարթըն էլ շընուրհակալ ինիլին տը՛ղ, յէտ ա տա՛ռալ, թա.- Մրչ ախպէր, կը՛լ՛օխըտ պատառ տէն քաշի, սըրտըմընա յում ինի՛ում* (ԱԱ, 72):

ՍԸՐՏԸՆԸ՛Ղ(Վ)ԷԼ - *տե՛ս* ՆԸՂԸՍԸՐՏ(Վ)ԷԼ: *Ասում ա, սըրտընը՛ղված տանան տի՛ւս կ՛ամ* (ՆԱԲ, 54):

ՍԸՐՏԸՊԱՏԱՌ - *տե՛ս* ԼԸՂԱՃԱ(Ն)Ք:

ՍԸՐՏԸՊԷՑ - *ած. տե՛ս* Սը՛րտը պէց:

ՍԸՐՏԸՊԷՐԱԿ - *ած.* Ջգայուն սիրտ ունեցող, սրտացավ: *Սըրտըպէրակ տըղամարթ ա, լ՛ըհա թուռնէրէն տը՛սնում ա, ուրխութունան լա՛ց ա ինի՛ում* (Ձ):

ՍԸՐՏԸՊԸՆԴ(Վ)ԻԼ *(գրբ. սրտապնդեմ (սիրտ տալ, զորացնել)* - *տե՛ս* ՍԸՐՏԸՀԱՆՎԷԼ: *Տըղան էս դ՛ընըմ վա-*

խըմ չի, սըրտըպընդված ա ընում, մուտանում ա օշափէն (ՀԺՀ, V, 326):

ՍԸՐՏԸՊԸՏԸՐՀԱՆ - *գ.* Սրտի երկու ներքին խոռոչներից յուրաքանչյուրը, սրտախորշ: *Խանչալը կօխում ա սըրտըպըտըրհանը, ըսպանում* (Ձ):

ՍԸՐՏԸՊԻՐԱԿԷԼ - *չբ.* Ձգայուն՝ սրտացավ դառնալ: *Կընէգ'ը մըռնէլանը յը'տը Սանք'ին սըրտըպիրակում ա, ՝ուրանն խօնցը պահում մըծըցընում* (Ձ):

ՍԸՐՏԸՎԱՆՎԷԼ - *տե՛ս* ՍԸՐՏԸՀԱՆՎԷԼ:

ՍԸՐՏԸՎԸ'ՐՎԷԼ - *տե՛ս* ՍԸՐՏԸՀԱՆՎԷԼ: *Ախըրը, սըրտըվը'րվում ա, նի մընում* (ՀԺՀ, V, 516):

ՍԸՐՏԸՑԸՎՕԹՈՒՆ *(գրբ. սրտացաւութիւն (սրտի ցավ)* - *գ.* Սրտացավ լինելը, հոգատարություն, կարեկցություն: *Հէրսիլին ըսկի սըրտըցըվօթուն չօնէ* (Բ):

ՍԸՐՏԸՓԱՅԻ - *տե՛ս* ՍԸՐՏՈՒՋ'ԻԼԻՔ':

ՍԸՐՏԸՔԸԹՕԼ - *գ.* Կրծքավանդակի ներքեւի փոսորակը: *Վը'նն ըն կըցնում, մաշկը, տծ՝ը, կուռնըտակէրը, պօրտը, սըրտըքըթ՝ելէն տէղէրը ցէխավ լըպատում* (ՆԼՂԺԲ, 97):

- Սըրտըքըթ՝ելանն ճ՝ուր խըմել (միհին) - *տե՛ս* Սրտան խօսել (ՍԸ'ՐՏԻ[1]-ի տակ): *Վէր ըտի ըսը'ցիր, սըրտըքըթ՝ելաս ճ՝ուր խըմը'ցէր* (Ձ):

- Սըրտըքըթ՝ելը նի կանանծ - Խոժոռ, զայրացած: *Էտ հինչ ա՞ իլանլ, խէ ըտի սըրտըքըթ՝ելըտ նի կանանծ ա* (Բ):

- Սըրտըքըթ՝ելը նի կէնալ - Հուզվել, սիրտը կսկծալ: *Սըրտըքըթ՝ելըս նի յա կէնում, վէր տը'սնում ըմ մէր յը'խծէն քանդվանծ* (Ձ):

ՍԸՐՏԽԱՌՆՈՒՑ/ՍԸՐՏԽԱՌՆՕՑ - *գ.* Սիրտը խառնելը: *Խը'ղճը սըրտխառնուցան կարում չի, թա շօռ կ'ա* (Բ):

ՍԸՐՏԽԱՌՆՕՑ - *տե՛ս* ՍԸՐՏԽԱՌՆՈՒՑ:

ՍԸՐՏՈՒՋ'ԻԼԻՔ' - *տե՛ս* ՍԸՐՏՈՒՋ'ԻԼԻՔ':

ՍԸՐՏՈՒՋ'ԻԼԻՔ' - *տե՛ս* ՍԸՐՏՈՒՋ'ԻԼԻՔ':

ՍԸՐՏՈՒՋ'ԻԼԻՔ'/ՍԸՐՏՈՒՋԻԼԻՔ'/ՍԸՐՏՈՒՋԻԼԻՔ' - *գ.* Սրտի ուզելիք, սրտի ցանկացած բան: *Ոէ, ՝ուրանն սըրտ՝ուզիլիք'ը էլ էտ սըհաթէն հինչ բի՞դի ինի. օգ՝ում ա՝ մին լ'ավ թան անէ, կըլխէն քաշի* (ԱԱ, 86):

- Սըրտուզ'իլիք'ը տը'ղաց անէլ - Ցանկությունը՝ իղձը կատարել: *Նօր հարթանանը սըրտուզիլիք'ը տը'ղաց կանին, հանցու վըսկը'ք'ա՝ն'ել տըղա պիրի...* (ՆԱԲ, III, 245):

ՍԸՐՏՕՋ'ԱԾ - *տե՛ս* ՍԸՐՏՕՋ'ԱԾ:

ՍԸՐՏՕ՝ՋԱԾ - *տե՛ս* ՍԸՐՏՕՋ'ԱԾ:

ՍԸՐՏՕՋ'ԱԾ/ՍԸՐՏՕ՝ՋԱԾ/ՍԸՐՏՕՋԱԾ - *տե՛ս* ՍԸՐՏՈՒՋ'ԻԼԻՔ': *Օշը յէրգ'ինք ա օնում, վէր Աստուծ ՝ուրան սըրտօզածը կը'դարէ* (ՆԱԲ, 46):

ՍԸՐՏՕՏ - *տե՛ս* ՍԸՐՏԱՊԷՆԴ (1):

ՍԸՐՓԱ՝ՆԳ/ՍԻՐՓԱ՝ՆԳ - *տե՛ս* ԽՈՒԽԸՀԸՆԳԷՐ (2):

ՍԸՐՓԸԼԻ՝ՒՍ *(գրբ. սրբալոյս)* - *ած.* Սուրբ լույս ունեցող, սուրբ ու լուսավոր: *Սըրփըլ՝ուս մէռուն ըն քըսում ճակատը* (Ձ):

ՍԸՐՓԻԼ/ՍԻՐՓԻԼ/ՍԻՐՓԷԼ *(գրբ. սրբեմ)* - *նբ.* 1. Որեւէ բանի թացությունը՝ խոնավությունը վերացնել՝ ցամաքեցնել՝ չորացնել: *Մարընն էլ դ՝ուշլիգ'ավը աշկէրընն ար սիրփիս* (ՀԲ, 361): 2. Կեղտը՝ փոշին եւն որեւէ բանով հավաքել՝ մաքրել՝ հեռացնել: *Էվ՝ուլը յօր ա օնում, ութը'ղնէն լօխ սըրփ՝ում, ք'ինանմ ը'շկափէն փիրդին քըմակէն կ'օղլը կէնում* (ՀԺՀ, VII, 22): 3. *փխբ.* Ոչնչացնել, ավերել, քշել տանել: *Մէլը սաղ բուստընէն սըրփից* (Բ): 4. *փխբ.* Կոտորել, շատերին սպանել: *Թօրը յօր ա օնում, նըստում սը'վ ծին, նի մընում դ՝ուշմանին զօրքէն մաչը, լօխճին սիրփ՝ում* (Ձ): 5. *փխբ.* Ամբողջությամբ ուտել՝ խմել: *Էն ճում օտօղ մարթը հըրսընքէն հացընն ա լօխ սըրփում, ճ՝ուր խըմօղ մարթընն էլ՝ կ'ինին* (ՀԺՀ, V, 314):

- Սըրփ՝անծ թօր - Գեղեցիկ եւ կտրիճ երիտասարդ: *Ոէ թաքավէրին կուճուր տը'ղան էլ սըրփ՝անծ թօր ա, վէր նի յա մընում, լօխ մընամ ըն պիրընէն պէց* (Ձ):

ՍԸՐՓԻՉ *(գրբ. սրբիչ (սրբող, մաքրող, ածելի)* - *գ.* Գութանի խոփին կպած հողը քերելու երկաթե կամ փայտե տափակ հարմարանք: *Սըրփ՝իչը յօր ա օնում, թա խօփը թըմիզցընէ, տը'սնում՝ մին օխծը կ'՝ութանէն տակէն* (Ձ):

ՍԸՐՓ(Ի)ՎԻԼ/ՍԻՐՓ(Ի)ՎԻԼ/ՍԻՐՓ(Ի)ՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՍԸՐՓԻԼ-ի: չբ. 2. Ինքն իրեն սրբել: *Նի յա մընում կ'ը'տը լըղանում, տ՝ուս կ'ամ, թա սըրփվի, տը'սնում մահըրման կա վէչ* (Ձ): 3. *արհմ. տե՛ս* Ըռանդ ինիլ:

ՍԸՐՓԱ՝ՌԴԱ՝ՒՄ/ՍԸՓԱ՝ՒՐԴԱ՝ՒՄ/ՍԱ՝ՒՐՓԱ՝ՌԴԱ՝ՒՄ/ՍԱ՝ՒՐՓԱ՝ՒՐԴԱ՝ՒՄ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Սըրփ՝ուդ՝ում անէլ - *տե՛ս* Ըռանդ անէլ:

- Սըրփ՝ուդ՝ում ինիլ - *տե՛ս* Ըռանդ ինիլ:

ՍԸՐՓԱ՝ԹԱ՝ՒՆ/ՍԱ՝ՒՐՓԱ՝ԹԱ՝ՒՆ *(գրբ. սրբութիւն)* - *գ.* Սուրբ՝ նվիրական համարվող բան, սրբություն: *Սըրփ՝ութ՝ուն ըս ինձ հէտի, վախիլ մի՛, նի չըմ կ'անլ ք'ը'զ...* (ԼՂԲ, 71):

ՍԸՐՓՕ՝ՏԷԼ/ՍԻՐՓՕ՝ՏԷԼ - *տե՛ս* ՍԸՐՓԻԼ (շատերի մասին):

ՍԸՐՓՕ՝ՏՎԷԼ/ՍԻՐՓՕ՝ՏՎԷԼ - *տե՛ս* ՍԸՐՓՎԻԼ (շատերի մասին):

ՍԸՐՔՕՎԻ - *տե՛ս* ՇԻՆՕ՝ՎԻ:

ՍԸՐՕԿ *(ռուս. срок)* - *գ.* Որեւէ բանի հատկացվող՝ սահմանված ժամկետ: *Մին թաքավէր վէզիրին կանչում ա, թա.- Իրէք տարէ սըրօկ ըմ տամ, ինձանա հարուստ մին մարթ ըս ճարում* (ԲՀԲ, 141):

- Սըրօկը ընցած - Պահպանման ժամկետն անցած, փչացած (մթերքների մասին): *Սըրօկը ընցած կալբաս կէրավ, ատրավից իլանվ* (Ձ):

ՍԸՐՕՇՆԻ *(ռուս. срочный)* - *ած.* Անհետաձգելի, շուտափույթ կատարում՝ լուծում պահանջող, շտապ: *Ասում ա.- Կարէլ չըմ, սըրօշնի կօրծ ա, բիդի պըրծընիմ* (Ձ):

ՍԸՐՕՏԷԼ[1] - *տե՛ս* ՍԸՐԷԼ[1] (շատերի մասին):

ՍԸՐՏՕՏԷԼ[2] - *տե՛ս* ՍԱՐԷԼ (շատերի մասին):

ՍԸՐՕՏՎԷԼ[1] - *տե՛ս* ՍԸՐՎԷԼ (շատերի մասին):

ՍԸՐՏՕՏՎԷԼ[2] - *տե՛ս* ՍԱՐՎԷԼ (շատերի մասին):

ՍԸՐՕՑ - *գ.* 1. *տե՛ս* ՀԷՍԱՆ: 2. *տե՛ս* Սը'վ սըրօց:

ՍԸՓԱԹ/ՍԸՓԱՏ *(արաբ. səfat, թրք. sifat)* - *գ. արհմ.* Կերպարանք, դեմք: *Միհէտ մին հիլի յա քըթանլ, սըփաթը մաչին տը'սալ, ըսքըսալ լանց ինիլը* (ԱԱ, 77):

ՍԸՓԱ՝ՌՅՆ(ԸՎ)ԻԼ - *տե՛ս* ՍԸՓԱ՝ՐԹՆ(ԸՎ)ԻԼ:

ՍԸՓԱՎՈՒՆ - *ած.* Ոչ շատ վնասված՝ փչացած, մի քիչ ամբողջ՝ առողջ՝ անվնաս: *Մին սըփավուն խընձ՝ը ա ծառէն տական քըթէնում, օտում* (Ձ):

ՍԸՓԱՏ - *տե՛ս* ՍԸՓԱԹ:

ՍԸՓԱ՝ՐԹՆ(ԸՎ)ԻԼ/ՍԻՓԱ՝ՐԹՆ(ԸՎ)ԻԼ/ՍԸՓԱ՝ՌՅՆ(ԸՎ)ԻԼ/ՍԻՓԱ՝ՌՅՆ(ԸՎ)ԻԼ *(հ.ե. *(s)p(h)erd(h)-)* - *չբ.* Գույնը գցել, գունատվել: *Տա վէր մին ծը'տընն ըսպանում ա, դ՝ովընն ՝ուրանն տանը օժը խիլլանա թուլըցընում ա, ըռանանգ'ը սիփանռհնում ա...* (ՀԺՀ, VII, 73):

- Սըփ՝ադթանանծ սուկի - Գունատ եւ տգեղ մարդ: *Աշխարքըս շօռ ա յը'կալ, ք'ը'ցալ մին կ'իշընկ'իրօղ ախճիգ' օգ'ալ, հինչ ա՞խճիգ', մին սըփ՝ադթանանծ սուկի* (Բ):

ՍԸՓԸՐԹ - *տե՛ս* ԻԼԲԻՀԱ՝Ն(ՍԸՍ):

ՍԸՓԱ՝ՒՐԴԱ՝ՒՄ - *տե՛ս* ՍԸՐՓԱ՝ՌԴԱ՝ՒՄ:

ՍԸՔԸՌ(Թ)ՆԷԼ *(հ.ե. *(s)keut- (խորշոմել, կնճռոտվել)* - *չբ.* Ցրտից կուչ գալ: *Ցօրտ ա, հավէրը սըքըռնալ ըն* (Բ):

ՍԸՔԸՌ(Թ)ՆԸ - *տե՛ս* ՍԸՔՕՌ(Թ)ՆԸ:

ՍԸՔԸՌ(Թ)ՆԸԿԱ՝ԼԻԼ - *չբ.* Սառչել, սառցակալել, վրայից սառցե լուլաներ կախվել: *Ծառէրը սըքըռթնըկ'ալ'ալ ըն* (Բ):

ՍԸՔԸՍԷԼ - *տե՛ս* ԸՍԿԸՍԷԼ:

ՍԸՔԸՍՎԷԼ - *տե՛ս* ԸՍԿԸՍՎԷԼ:

ՍԸՔ՝ՍԼՔ՝ԻԼ/ՍԻՔ՝ՍԼՔ՝ԻԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏԷԼ:

ՍԸՔ՝ՍԼՔ՝ՎԻԼ/ՍԻՔ՝ՍԼՔ՝ՎԻԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏՎԷԼ:

ՍԸՔ՝ՍՕՏԷԼ/ՍԻՔ՝ՍՕՏԷԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏԷԼ:

ՍԸՔ՝ՍՕՏՎԷԼ/ՍԻՔ՝ՍՕՏՎԷԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏՎԷԼ:

ՍԸՔ՝ՍԸՔ՝ՕՐԷԼ/ՍԻՔ՝ՍԸՔ՝ՕՐԷԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏԷԼ:

ՍԸՔ՝ՍԸՔ՝ՕՐՎԷԼ/ՍԻՔ՝ՍԸՔ՝ՕՐՎԷԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏՎԷԼ:

ՍԸՔ՝ՏԻՐ - *տե՛ս* ՍԻՔ՝ՏԻՐ:

ՍԸՔ՝ՏԻՐԼԼՄԻՇ - *տե՛ս* ՍԻՔ՝ՏԻՐԼԼՄԻՇ:

ՍԸՔ՝ՏԻՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՍԻՔ՝ՏԻՐՑ(Ը)ՆԷԼ:

ՍԸՔ՝ՕՏԷԼ/ՍԻՔ՝ՕՏԷԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏԷԼ:

ՍԸՔ՝ՕՏՎԷԼ/ՍԻՔ՝ՕՏՎԷԼ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏՎԷԼ:

ՍԸՔՕՌ(Թ)ՆԸ/ՍԸՔԸՌ(Թ)ՆԸ - *գ.* Ծառերից կախված սառցե լուլա: *Ծառան մին սըքօռթնը պուք տըվավ, ճիրո՛ւ տը՛ղ կէրավ* (Ձ):

ՍԸՔՕՌ(Թ)ՆԸ-ՍԸՔՕՌ(Թ)ՆԸ - *ած.* 1. Սառչելուց գնդիկներ կազմած: *Սըքօռթնը-սըքօռթնը յը՛ղ ա* (Բ): 2. Սառը եւ հաճելի: *Սըքօռնը-սըքօռնը խըյար ա, լ՛ըհա տըղա յըս՝կէ՛ր* (Ձ):

ՍԻԲԷԽ(ՆԸ)/ՍԻԲԷՂ(ՆԸ) *(գրբ. սիպէխ)* - *գ.* Հովանոցավորների ընտանիքին պատկանող բանջարաբույս, սիբեխ: *Սիբեխը հա՛մ իփո՛ւմ ըն, հա՛մ ժարիտ անում* (Բ):

ՍԻԲԷՂ(ՆԸ) - *տե՛ս* ՍԻԲԷԽ(ՆԸ):

ՍԻԲԻՐ *(ռուս. сибир)* - *գ.* 1. Ռուսաստանի արեւելյան մասը, որը հայտնի է իր ցուրտ կլիմայով, եւ որտեղ խորհրդային կարգերի օրոք ուղարկում էին աքսորյալներին: *Սիբիրը ցօրտ տը՛ղ ա* (Ձ): 2. *փխբ.* Շատ ցուրտ տեղ: *Դէ ծըմը՛ռնը խըծապէրթը սիբիր ա, սիբիր* (Բ):

- Սիբիր դարկէլ/քըշիլ - Աքսորել: *Ըստալինին վըխտէն Դարաբաղան էլ ըն շատ մարթ Սիբիր դարկալ* (Ձ):

ՍԻԳՆԱԼ - *տե՛ս* ՍԻՂՆԱԼ:

ՍԻՋՕՆ *(ռուս. сезон, ֆր. saison, լատ. satione)* - *գ.* 1. Տարվա ժամանակի որոշ շրջան, որը հարմար է որոշ աշխատանքի՝ գործունեության եւն համար: *ՀՅՕնձին սիզօնը վէր կ՛ամ ար, շինա՛ցէք՝ ըրտէրան տօն չին կ՛ամ* (Ձ): 2. Դրսում՝ այլ երկրում կատարվող ժամանակավոր վարձու աշխատանքի վայրը: *Էտ տըղան ամմէն տարէ ք՛ինամ ար սիզօն, լ՛ավ փուլ ըշխադում, կ՛ամ* (Ձ):

ՍԻՋՕՆԱՏԸ՝Ղ - *տե՛ս* ՍԻՋՕՆ(2):

ՍԻՋՕՆՇԻԿ *(ռուս. сезонник)* - *գ., ած.* Դրսում՝ այլ երկրում ժամանակավոր վարձու աշխատանք կատարող (մարդ): *Կ՛արունքը վէր կ՛ամ ար, Մուխրըթաղա սիզօնշիկնէն ք՛ինամ ին Ռուսաստան՝ սիզօն* (Ձ):

ՍԻԹԻԼՋԱՄ - *տե՛ս* ՍԸԹԻԼՋԱՄ:

ՍԻԹԻՐՋԱՄ - *տե՛ս* ՍԸԹԻԼՋԱՄ:

ՍԻԼԼՃՈՒՐ - *գ.* Հեղեղի ջուր: *Էրո՛ւշ ճար չի ինո՛ւմ, սիլլճո՛ւր ա իփո՛ւմ, չայ քըցո՛ւմ* (Ձ):

ՍԻԼԷԹԱ - *տե՛ս* ՍԸԼԷԹԱ:

ՍԻԼԷԽԿԸ - *տե՛ս* ԼԸՔԸՉԱՆ:

ՍԻԼԸՍՈ՛Ի/ՍԸԼԸՍՈՒ - 1. *գ.* Երկարատեւ հորդ անձրեւ: *Էրկու օր ա՝ սիլըսո՛ւ վա, կարում չընք, թա տանան տո՛ւս կ՛անք* (Բ): 2. *փխբ.* Մեծ եկամուտ՝ շահույթ, առատություն: *Ըստարէ պէրքը սիլըսո՛ւ վա* (Ձ):

- Սիլըսո՛ւ անել - Երկար ժամանակ հորդ անձրեւ տեղալ: *Քըշէրը սիլըսո՛ւ յա անում, կ՛էտը վըրարում, էտ ք՛արվանը քըշո՛ւմ տանում* (ՀԺՀ, VII, 138):

ՍԻԼԸՏԱՐԱՆՔ - Հեղեղի փորած տեղը, հեղեղի չորացած հունը: *Հըթէրքա հըղէն սաղ սիլըտարանք ա* (Ձ):

ՍԻԼԻ-ԲԻԼԻ - *գ.* Սիրալիր՝ սիրային՝ մտերմական խոսակցություն: *Թաքուն սիլի-բիլին նօթը կըլխած լամբու վա նըման* (ԱԲԲ, 31):

- Սիլի-բիլի անել - Մտերմաբար խոսել՝ զրուցել, սիրաբանել: *Մին մարթ ըրազումը տէսնում ա՝ կընէգ՛ը ո՛ւրո՛ւշո՛ւ նըհէտ սիլի-բիլի յա անում* (ՆԱԲ, 104):

ՍԻԼԻԿՈՒԿՈՒ - *տե՛ս* ՍԻԼԼԼ՝[2]:

ՍԻԼԻՏ(Ը)ՐԱ/ՍԷԼԻՏ(Ը)ՐԱ *(ռուս. селитра)* - *գ.* Բորակաթթվային տարբեր աղերի խառնուրդ՝ բորակ, որ գործածում են հողը պարարտացնելու համար: *Սիլիտըրան շաղ ըն տամ բուստանէն լըքէրումը, ճիրո՛ւմ* (Ձ):

- Սիլիտըրա տալ - Հողը բորակաթթվային աղերով պարարտացնել՝ սնուցել: *Սիլիտըրա տըված վը՛ղը լ՛ավ պէրք կըտա* (Բ):

ՍԻԼԼԱ[1] - *տե՛ս* ՍԻԼԼԼ՝[1]:

ՍԻԼԼԱ[2] - *տե՛ս* ՍԻԼԼԼ՝[2]:

ՍԻԼԼԼ՝[1]/ՍԻԼԼԱ[1] *(թրք. sille)* - *գ.* Ձեռքի ափով երեսին հասցվող հարված, ապտակ: *Հօրը սիլլա՛ն տըղէն մընանան ընգընէս չի* (Ձ):

- Սիլլա՛ն տալ - Ապտակել: *Չօբանը գ՛ուդում ա, թա մազաղ ա անում, ք՛ընում ա մին կուճի սիլլա՛ն տամ, էտ խօխան վէր ա ընգ՛նում* (ՀԺՀ, V, 348):

- Սիլլա՛ն տամ, ջօղաբըս տօ - Ասում են այն մարդկանց մասին, ովքեր միջոցներ են ձեռնարկում միայն տուժելուց՝ վնաս կրելուց հետո:

- Սիլլա՛ն օտէլ - Ապտակվել: *Խօխան պըլօթուն ըրավ, սիլլա՛ն կէրավ* (Բ):

ՍԻԼԼԼ՝[2]/ՍԻԼԼԱ[2] *(թրք. silme)* - *ած.* Բերնեբերան լցված, լեփլեցուն: *Էրկու վէդըրա սիլլա՛ն գ՛ո՛ւլլաս ա քաղում, դարկում* (Ձ):

- Սիլլա՛ն անել - Բերնեբերան լցնել: *Մօշը քաղում ըն, ըմընէգ՛ը սիլլա՛ն անում* (Ձ):

- Սիլլա՛ն ինիլ/տը՛ռնալ - Բերնեբերան լցվել: *Էնքան կ՛ինի յընք շինա՛լ, կըրըսնէն լօխ սիլլա՛ն յա տը՛ռալ* (Բ):

ՍԻԼԼԼԼՄԻՇ[1] - *տե՛ս* ՍԻԼԼԼ՝[1]:

- Սիլլալլամիշ անել - *տե՛ս* Սիլլա՛ն տալ: *Հա՛մին էտ վախտը մին առչ ա մուտընաս, աղվէսին մին լա՛վ սիլլալլամիշ ընէս* (ԼՂԲ, 300):

ՍԻԼԼԼԼՄԻՇ[2] - *տե՛ս* ՍԻԼԼԼ՝[2]:

ՍԻԼԼԼՏԸՐԱՔ(Է) - *տե՛ս* ՍԻԼԼԼ՝[1]: *...Բաքվա կըլուբումը սիլլա՛տըրաքը, ուշունցը մօդա յա տէռալ* (ՋՏ, Ա, 210):

ՍԻԼՕԹԿԱ/ՍԸԼՕԹԿԱ *(ռուս. селдка)* - *գ.* Ապխտած կամ չորացրած ձուկ: *Սիլօթկան լա՛զա՛թ պէն ա* (Բ):

ՍԻԼՕՍ/ՍԻԼՕՍ *(ռուս. силос, հուն. siros)* - *գ.* Մանրացրած կերաբույսերի կանաչ զանգվածը հորի մեջ փակելու եւ թթվեցնելու միջոցով պատրաստված հյութալի անասնակեր: *Առաչ կալխօզնէն ամմէն տարէ բօլ-բօլ սիլօս ըն ի՛լլալ շինիս* (Ձ):

ՍԻԼՕՍ - *տե՛ս* ՍԻԼՕՍ:

ՍԻԿ(Ը)ՐԷՏ - *տե՛ս* ՍԷԿ(Ը)ՐԷՏ:

ՍԻԿ(Ը)ՐԷՏՆԻ - *տե՛ս* ՍԷԿ(Ը)ՐԷՏՆԻ:

ՍԻՅԼԻԳ՝ԱՆԱԼ - *տե՛ս* ՍԸՅԼԻԳ՝ԱՆԱԼ:

ՍԻՅԼԻԳ՝Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՍԸՅԼԻԳ՝Ց(Ը)ՆԷԼ:

ՍԻՅԼԻԳ՝ՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԸՅԼԻԳ՝ՕԹՈՒՆ:

ՍԻՅՐԸԿԱՆԱԼ/ՍԻՅՐԸԿԱՆԱԼ - *չբ.* 1. Նոսր դառնալ, նոսրանալ: *Էնքան կըտօրալ ըն, ծըմակը սիհրըկացալ ա* (Բ): 2. Նվազել, պակասել, քչանալ: *Կըրիզիստ ա նի յէկալ Բաքվա թատրօնին, ըտըրա մըհար էլ թամաշչէքը սիյրըկանըմ ըն* (Ձ):

ՍԻՅՐԸԿՑ(Ը)ՆԷԼ/ՍԻՅՐԸԿՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՍԻՅՐԸԿԱՆԱԼ-ի:

ՍԻՅՐԸԿՕԹՈՒՆ/ՍԻՅՐԸԿՕԹՈՒՆ - *գ.* Նոսր լինելը, նոսրություն: *Արտէն սիհրըկօթունը ըրաշտան ա* (Ձ):

ՍԻՂՆԱԼ/ՍԻԳՆԱԼ *(ռուս. сигнал, ֆր. signal, լատ. signum)* - *գ.* Ավտոմեքենայի՝ շոգեքարշի եւն շչակ՝ սուլիչ եւ դրա

արձակած ձայնը: *Մը շինին սիղնալը ըստրան բըղըյար ա անում* (Զ):

- Սիղնալ տալ - Շչակով ազդանշան տալ, շչակ հնչեցնել: *Շօփէրը հիշկան սիղնալ ա տամ, պառավը ըսկանում չի* (Զ):

ՍԻՄ *(պրս. sim (արծաթ), թրք. sim (կեղծ ոսկեթել)* - *գ.* 1. Բարակ մետաղալար: *Մուխանը մին պէրանկ սիմ ա յօր ունէս, կըպէս ըռաշկէ օղտէն չըվալան...* (ՀԺՀ, V, 301): 2. Նվագարանի լար: *...Հարությունը քանմանչան յօր ա օնում, ըսկըսում չօրս սիմին յըրա ածէլըն ու չօրս լուզվավ յէրք ասէլը* (ՀԺՀ, VII, 182):

- Սիմին թըխէլ/ճընգըց(ը)նել - Մեկին գրգռել՝ հրահրել: *Խըրէգ ըստըրա-ընդրա սիմին թըխէ, բոլ ա, համօթ ա* (Բ):

ՍԻՄԱՎԱՐ - *տե՛ս* ՍԸՄԱՎԱՐ:

ՍԻՄԻՆԴԻԿ - *տե՛ս* ՍԸՄԸՆԴԻԿ:

ՍԻՄՍԻՄ - *մ.* Դանդաղ, դանդաղորեն: *Սիմսիմ ա խօսում* (Բ):

- Սիմսիմ անել - Դանդաղորեն եւ իմիջիայլոց որեւէ բան անել: *Հինչ ը՞ս սիմսիմ անում, խէ ճէլ չը՞ս անում կօրծըտ պըրծընիս* (Զ):

- Սիմսիմ մէլ անել, Սիմօն ա՛սէ - Ասում են պարզ չարտահայտվողին, խոսքը կտուրը գցողին:

ՍԻՄՍԻՄՕԿ - *տե՛ս* ՍԸՄՍԻՄՕԿ:

ՍԻՅ - *տե՛ս* ՇՈՒՀ[2]:

ՍԻՅՐԸԿԱՆԱԼ - *տե՛ս* ՍԻՀՐԸԿԱՆԱԼ:

ՍԻՅՐԸԿՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՍԻՀՐԸԿՑ(Ը)ՆԷԼ:

ՍԻՅՐԸԿՕԹՈՒՆ - *տե՛ս* ՍԻՀՐԸԿՕԹՈՒՆ:

ՍԻՆԴՔԱՐ - *տե՛ս* ՍԸՆԴՔԱՐ:

ՍԻՆԴԸԹԱԿԷ - *տե՛ս* ՍԸՆԴԸԹԱԿԷ:

ՍԻՆԴԻԿՈՒԿՈՒ - *տե՛ս* ՍԸՆԴԸԿՈՒԿՈՒ:

ՍԻՆԴԻԿ - *տե՛ս* ՍԸՄԸՆԴԻԿ:

ՍԻՆ(Ն)Ի *(պրս., թրք. sini)* - *տե՛ս* ՊԱԴՆՕՍ:

ՍԻՊՏԱԿ/ՍԻՊՏԱԿ *(գրբ. սպիտակ)* - *ած.* 1. Ձյան՝ կաթի գույնի, այդ գույնն ունեցող, սպիտակագույն: *Սիպտակ շօ՛ղէր ա կ՚ը՛ցալ* (Բ): 2. Սպիտակամաշկ, սպիտակ մաշկ՝ մորթ ունեցող: *Սիպտակ խօխա յա Մանէն* (Բ): 3. *փխբ.* Մաքուր, ջինջ: *Մին սիպտակ թօխտ ա յօր օնում, կ՚իրանում* (Զ):

- Սիպտակ աղ - Հողային խառնուրդ չունեցող՝ մաքուր աղ: *Սիպտակ աղը էն վախտը տիժէր ա իլալ քըթինվալիս* (Զ):

- Սիպտակ աշխարք - *տե՛ս* Լանս աշխարք:

- Սիպտակ բըլբանլ/դանլբանդ - *տե՛ս* Սիպտակ պիմբըկքօլա:

- Սիպտակէն սը՚վ ասէլ, սը՚վէն՝ սիպտակ - *տե՛ս* Սը՚վէն սիպտակ ասէլ, սիպտակէն՝ սը՚վ:

- Սիպտակէն սիպտակ ասէլ, սը՚վէն՝ սը՚վ - *տե՛ս* Սը՚վէն սը՚վ ասէլ, սիպտակէն՝ սիպտակ:

- Սիպտակ ըմանու հասրաթ - Աղքատ, չունեւոր: *Մարթ կա՝ փուլը կացէն չի կըտրրում, մարթ էլ կա՝ էն ա սիպտակ ըմանու հասրաթ* (Զ):

- Սիպտակը սը՚վէն վէգ չի ծըռէլ - Ունեւորը չունեւորին չի խնդրի:

- Սիպտակը սըվըցընել, սը՚վը սիպտըկցընել - *տե՛ս* Սը՚վը սիպտըկցընել, սիպտակը սըվըցընել:

- Սիպտակ թօք - *տե՛ս* ԹՕՔ(1):

- Սիպտակ լանս - *տե՛ս* Սիպտակ ճիրանք՝:

- Սիպտակ կըռէք՝ նըհաշ տալ - Մեկին շփանալու՝ քմահաճ դառնալու առիթ տալ: *Խուխէն վէր սիպտակ կըռէք՝ նըհաշ տըվէլ, պըրծած ա* (Բ):

- Սիպտակ ճիրանք՝ - 1. Պայծառ, պարզ: *Սիպտակ ճիրանք՝ ասթըխ ա* (Զ): 2. *տե՛ս* Սիպտակ պիմբըկքօլա:

- Սիպտակ ճանր - Օղի: *Ուստան ասմա.- Յը՚ս կ՚ինի չըմ խըմում, թա սիպտակ ճանր օնիս, պէ՛ր* (Զ):

- Սիպտակ մըրօքը սըրտէն նսըտած - Ծերացած, ծեր: *Հըղէննի մին սիպտակ մըրօքը սըրտէն նըստած մարթ ա պըտահում* (Զ):

- Սիպտակ պիմբըկքօլա/փըրփօր - Շատ սպիտակ, ճերմակ, ճերմակամաշկ: *Կըլխավը մին տարի էլ ընցավ, Աստուծ մին ղօչ վէրթի տըվավ, հինչ խո՚խա, մին սիպտակ պիմբըկքօլա* (ՋՏ, Ա, 168):

ՍԻՊՏԱԿ - *տե՛ս* ՍԻՊՏԱԿ:

ՍԻՊՏԱԿԷԼ/ՍԻՊՏԱԿԷԼ *(գրբ. սպիտակիմ)* - *չբ.* 1. Սպիտակ գույն ստանալ, սպիտականալ: *Ըտի կ՚ը՛տէն ճանրը սիպտակալ ա, ք՚ը՛ցալ նի տը՛ռալ նէրքէ շէնը* (ԱԱ, 20): 2. Սպիտակ բանով ծածկվել: *Ծանը յը՛կավ, տափէրը սիպտակից* (Բ): 3. *փխբ.* Ալեհեր դառնալ, ճերմակել: *Սամսօն դային սիպտակալ ա* (Բ): 4. *փխբ.* Գունատվել, սփրթնել: *Վախան սիպտակալ ա* (Զ):

ՍԻՊՏԱԿԷԼ - *տե՛ս* ՍԻՊՏԱԿԷԼ:

ՍԻՊՏԱԿՈՒՑ - *տե՛ս* ՍԻՊՏԸԿՕՑ:

ՍԻՊՏԱԿՈՒՑ - *տե՛ս* ՍԻՊՏԸԿՕՑ:

ՍԻՊՏԸԿԱՄԱՔ՝ - *ած.* Սպիտակ մազեր՝ բուրդ ունեցող: *Պըռավէն մին սիպտըկամագ՝ էծ ա ինանում* (Զ):

ՍԻՊՏԸԿԱՆԱԼ - *տե՛ս* ՍԻՊՏԱԿԷԼ:

ՍԻՊՏԸԿԱՎԸ՚Ղ - *ած.* Սպիտակավուն գույն ունեցող հող: *Էտ հանդին վը՚ղէրը սաղ սիպտըկավը՚ղ ա* (Բ):

ՍԻՊՏԸԿԱՎՈՒՆ - *ած.* Սպիտակին տվող, սպիտակավուն: *Սիպտըկավուն դարյա յա կ՚ը՛ցալ* (Բ):

ՍԻՊՏԸԿԸ՚ՂԱՆ - *գ., հվք.* Սովորաբար սպիտակ կտորից կարված՝ անմիջականորեն մարմնի վրա հագնելու կամ տնային-կենցաղային կարիքների համար պատրաստված կարվածքներ: *Սիպտըկը՚ղանը ճէլլի յա յըխտօտվում* (Զ):

ՍԻՊՏԸԿԸ՚ՆԷ - 1. *գ.* Սպիտակ խաղողի՝ թթի՝ թզի եւն տեսակ: *Սիպտըկը՚նան լ՚ավ սիպտակ կ՚ինի յըն շինում* (Բ): 2. *ած.* Սպիտակ դեմք ու մաշկ ունեցող: *Սիպտըկը՚նէ ախճիգ՝ ա հըրթնացուն* (Բ):

ՍԻՊՏԸԿ(Ը)ՌԱՆԳ՝(Ի) - *տե՛ս* ՍԻՊՏԱԿ(1):

ՍԻՊՏԸԿՎԱՉԻ - *տե՛ս* ՍԻՊՏԸԿԱՎՈՒՆ:

ՍԻՊՏԸԿՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. սպիտակացուցանեմ)* - *նբ.* ՍԻՊՏԱԿԷԼ-ի:

ՍԻՊՏԸԿՑԸՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԻՊՏԸԿՑ(Ը)ՆԷԼ-ի:

ՍԻՊՏԸԿՕԹՈՒՆ *(գրբ. սպիտակութիւն)* - *գ.* Սպիտակ գույն ունենալը, սպիտակ լինելը: *Սիպտըկօթունը Նըխշունէն Ըստուծանա յա տուված* (Բ):

ՍԻՊՏԸԿՕՑ/ՍԻՊՏԱԿՈՒՑ/ՍԻՊՏԱ՚ԿՈՒՑ *(գրբ. սպիտակուց)* - *գ.* 1. Ձվի դեղնուցը շրջապատող սպիտակավուն նյութը: *Ծանն իփանում ա, տըղնօցը օտում, սիպտըկօցը տէն քըցանում* (Զ): 2. Աչքի ուռուցիկ անթափանց սպիտակագույն թաղանթը: *Թըխում ա, աշկէն սիպտըկօցը վէր ածում* (Զ): 3. Հացահատիկի սաղմը պատող եւ նրան ծելելիս իբրեւ սնունդ ծառայող ալյուրային՝ յուղային մասը: *Լըղար ցօրնէն հինչ սիպտըկօ՚ց բիդի ինի* (Բ): 4. Բնափայտի՝ անմիջականորեն կեղեւի տակ գտնվող շերտը: *Կաղնէն կըտրրում ըն, սիպտըկօցը տանշանում, սըվօցը յը՚ր օնում* (Զ): 5. *տե՛ս* ՍԻՊՏԸԿՕԹՈՒՆ:

ՍԻՍԷՌ(ՆԸ) - *տե՛ս* ՍԻՍԸ՚Ռ(ՆԸ):

ՍԻՍԸ՚Ռ(ՆԸ)/ՍԻՍԷՌ(ՆԸ) *(գրբ. սիսեռն)* - *գ.* Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող ընդավոր բույս եւ նրա հատիկը, որ չորացրած վիճակում գործածում են իբրեւ սննդամթերք, սիսեռ: *Ըստարէ բոլ-բոլ սիսը՚ռ ընք վարալ* (Բ):

ՍԻՍՕ *(հուն. sisóč (մազերի հյուսակ)* - *գ.* Սողոցի տեսակ, որի երկու ծայրերը դրված են շրջանակի մեջ եւ վերեւից ձգված ոլորած՝ հյուսած թելով՝ լարով, որն էլ կենտրոնում տեղադրված փայտիկի միջոցով կարող է պրկվել կամ թուլացվել: *Դանլգանը սիսօն յօր ա օնում, տախտակը կըտրրում* (Զ):

ՍԻՎԹԼ - *տե՛ս* ՍԸՎԹԼ:

ՍԻՐ - *տե՛ս* ՍԷՐ:

ՍԻՐԱԾ *(գրբ. սիրած (Աստծուն սիրելի)* - 1. *գ., ած.* Մեկի սիրելի անձը, որի հետ պետք է ամուսնանա: *Թաքավէրը ճընանչըմ ա ուրան սիրածին...* (ՀԺՀ, V, 47): 2. *տե՛ս* ՍԻՐԻԼԻ (2, 3):

ՍԻՐԱԿԱՆ - *տե՛ս* ՍԻՐԸԷԿԱՆ:

ՍԻՐԱԿԱՆ - *տե՛ս* ՍԻՐԸԷԿԱՆ:

ՍԻՐԱՀԱՐՎԷԼ - *չբ.* 1. Հակառակ սեռի անհատի սիրով համակվել, սեր տածել: *Տա ուրէրան մին օր սիրահարվում ա ուրանց տանը նօքարը Ջամալէն յիրա* (ՆԼՂԺԲ, 147): 2. *փխբ.* Շատ տարվել՝ գրավվել մի բանով: *Թաքավէրին ախճիգը էտ վըէսկէ ղուշը տըսնալըն ըբանստ սիրահարվում ա* (Ձ):

ՍԻՐԱՀԱՐՈՒԹՈՒՆ - Սիրահարված լինելը, սիրո բուռն զգացմունք հակառակ սեռի անհատի նկատմամբ: *...Տըրանց սիրահարութունը մինչըվ միհէնգ էլ հանմանըն ա* (Ձ):

ՍԻՐԱՄԱՆ - *տե՛ս* ՍԷՐ-ՍԻՐԱՄԱՆ:

ՍԻՐԱՆ - *ած.* Սեր ունեցող, սիրահարված: *Սիրան տըղէրքըն ա ըխճըկէրքը ամմէն ուրուգուն ըտըէղ ին ուրուր ջիհում* (Ձ):

ՍԻՐԱՉԻ/ՍՈՒՉԻ *(թրք. sujə)* - *ած., գ.* Ջուր բաշխող՝ բաժանող (մարդ): *Սիրաչին քինամ ա, թա ճուրը պէգ թօղնէ, տըէսնում՝ մին զըէռ օխծ գօլէն քըշտէն մըէկնըված* (Ձ):

ՍԻՐԱՓԻԼ - *գ.* Առանց ծածկի տանիք: *Ըտըրան կըպօտում ըն, սիրափիլիումը վէր քըցում* (Ձ):

ՍԻՐԷԿ - *տե՛ս* ՍԻՐԸԷԿ:

ՍԻՐԷԿԷԼ - *տե՛ս* ՍԻՐԸԷԿԷԼ:

ՍԻՐԷԿՎԷԼ - *տե՛ս* ՍԻՐԸԷԿՎԷԼ:

ՍԻՐԷՄՆԸ - *տե՛ս* ՍԻՐԸԷՄՆԸ:

ՍԻՐԸԷԿ/ՍԻՐԷԿ *(գրբ. սերեկ)* - *գ.* Անասունի թափանի կամ կաշվի կտոր, որով փակում են խնոցու եւ այլ ամանների բերանը: *Սիրըէկը տինում ըն, կապում* (Ձ):

ՍԻՐԸԷԿԱՆ/ՍԻՐԱԿԱՆ/ՍԻՐԱԿԱՆ *(գրբ. սիրական (սիրելի)* - *գ.* Արտամուսնական սիրային կապի մեջ գտնվող անձերից յուրաքանչյուրը մյուսի նկատմամբ: *Կընէգը ծուկունը ժարիտ ա անում, սիրըկանըն նըհըտ օտում...* (ՀԺՀ, VII, 280):

ՍԻՐԸԷԿԷԼ/ՍԻՐԷԿԷԼ - *նբ.* Խնոցու եւ այլ ամանների բերանը *սիրըէկ*-ով փակել: *Խընընըցէն սիրըէկում ա* (Բ):

ՍԻՐԸԷԿՎԷԼ/ՍԻՐԷԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՍԻՐԸԷԿԷԼ-ի:

ՍԻՐԸԷՄՆԸ/ՍԻՐԷՄՆԸ - *գ.* Ծառի՝ շիվի դալար կեղեւը կամ կեղեւի ներսի բարակ շերտերը, որով որեւէ բան են կապում: *Սէրը սիրէմնավ ըն կապում* (ԱԲԲ, 85):

ՍԻՐԸՆ(Ն)ԱՆԱԼ - *չբ.* 1. Ջովություն՝ զով զգալ, մարմնի տապն անցնել: *Կամ ըն, էտ կ'ըէտէն ղըրաղէն սիրընանում* (Ձ): 2. Ջով դառնալ, հով ընկնել (եղանակի մասին): *Հավան վէր սիրընանում ա, հըղէ յըն ըղնում* (Ձ):

ՍԻՐԸՆ(Ն)ՕԹՈՒՆ - *գ.* Ջով լինելը, զովություն: *Քամէն սիրընօթուն ա պիրիս* (Բ):

ՍԻՐԸՆՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՍԻՐԸՆ(Ն)ԱՆԱԼ-ի:

ՍԻՐԸՎԸՍԿԸՌ - *ած.* Գրավիչ, հաճելի, իր հանդեպ սեր՝ համակրանք առաջացնող: *Սիրըվըսկըռ տըղա յա Մուքին* (Ձ):

ՍԻՐԷԼ - *տե՛ս* ՍԻՐԻԼ:

ՍԻՐԷԼԻ - *տե՛ս* ՍԻՐԻԼԻ:

ՍԻՐԻԼ/ՍԻՐԷԼ *(գրբ. սիրեմ)* - *նբ.* 1. Որեւէ մեկի կամ մի բանի նկատմամբ խորին կապվածություն՝նվիրվածություն՝ սեր զգալ՝ դրսեւորել: *Ղարաբաղցէքի ուրանց վըէղը շատ ըն սիրիս* (Բ): 2. Հակառակ սեռին պատկանող անհատի նկատմամբ սեր տածել՝ զգալ: *Էտ ախճիգը սիրիլիս ա իլալ մին քանսիբ տըղղու, ամա հանը ռազի չի իլալ* (ԱԱ, 29): 3. Բուռն հետաքրքրություն՝ սեր ունենալ մի բանի նկատմամբ: *Ծուկուն փըռնէլը շատ ըմ սիրում* (Բ): 4. Որեւէ բանի անհրաժեշտություն՝ պահանջ զգալ: *Արչը սիրում ա մինակ շօռ կ'ալը* (Ձ): 5. Հավանել, ախորժել: *Ապան հունըթթօ շատ ար սիրիս* (Բ): 6. Գնահատել, արժեքն իմանալ: *Ըրթիրօթունը շատ ըմ սիրում* (Բ): 7. Փաղաքշել, փայփայել, գուրգուրել: *Առաչին քըշէրը տըղան ըսկըսըմ ա էտ ըխճըկանը սիրիլը, կըլօխը սըղալիլը* (ՀԺՀ, V, 230):

ՍԻՐԻԼԻ/ՍԻՐԷԼԻ *(գրբ. սիրելի)* - *ած.* 1. Սեր վայելող, սիրո արժանացած: *Սիրիլի տըղա յար թաքավէրին կուճուր տըղան* (Ձ): 2. Հարազատ, մտերիմ: *Ըտի ուրան սիրիլի հընգէրըն էլ ա ըտըրան խանփում* (Ձ): 3. Ցանկալի, ախորժելի: *Իմ սիրիլի խօրանգը խաշլաման ա* (Բ):

ՍԻՐԻ-ՍԻՐԻ - *գ.* Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող խոտաբույս, որի թերթիկները հատ-հատ պոկելով՝ բախտ են փորձում, հատկապես գուշակում՝ իր նախընտրած անձը իրեն սիրո՞ւմ է, թե՞ ոչ: *Մին սիրի-սիրի յա պուք տամ, բախտը փօրցում* (Ձ):

ՍԻՐՍԱՂՎԷԼ - *տե՛ս* ՍԸՐՍԱՂՎԷԼ:

ՎԸՍԿԸԾԻՐԻԼ - *նբ.* 1. Ոսկու բարակ շերտով պատել, ոսկեզօծել, ոսկեջրել: *Ուստան մուտանան վըսկըծիրհ'ում ա, տամ տըղէն* (Ձ): 2. *փխբ.* Ոսկեգույն ներ-կել՝ զարդարել: *Իրիք'նակը աշխարքըս վըսկըծիրնալ ա* (Բ):

ՎԸՍԿԸԾԻՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՎԸՍԿԸ-ԾԻՐԻԼ-ի:

ՎԸՍԿԸՄԱՋ' - *ած.* Ոսկեգույն մազե-րով, ոսկեմազ: *Մը'ր ք'օհլ'ան ծին վըսկը-մազ' ա...* (ԼՂԲ, 12):

ՎԸՍԿԸՇԱՓԱՂ - *ած.* Ոսկեգույն ցոլք՝ փայլ՝ շող՝ շափաղ ունեցող: *Սալ-դաթը յօր ա օնում վըսկըշափաղ դարյան, մուտանան, ծին յէր ինհ'ում...* (ՀԺՀ, V, 643):

ՎԸՍԿԸՇԷԼԼ'Ակ - *գ.* Այն աղջիկ երե-խան, որից հետո արու զավակ է ծնվում: *Հիրըվանէրը սը'րտ ըն տամ, թա.- Վէ՛-չինչ, Ա'նդրի, էս վըսկըշէլ'ակ ա, էն մինը տըղա յա ինա'կան* (Ձ):

ՎԸՍԿԸՊԸՂՕԾ - *գ.* 1. Ոսկեգույն կապտականաչավուն պատյանով բզե-զի տեսակ: *Խօխան մին վըսկըպըղօճ ա փըռնում, ուրխանում* (Ձ): 2. *հեգն.* Ոսկե զարդերով պաճուճված կին: *Էտ վըսկը-պըղօճը մարթին ըսկի մըհալ չի քը-ցհ'ում* (Բ):

ՎԸՍԿԸՌ - *տե՛ս* ՎԸ'ՍԿԸՌ:

ՎԸՍԿԸՌԱԼԻ - *տե՛ս* ՎԸՍԿԸՌՈՒՏ(1):

ՎԸՍԿԸՌԱՀԱՍՏ - *ած.* Հաստ եւ պինդ ոսկորներ ունեցող, ամրակազմ, պնդակազմ: *Վըսկըռահաստ հըլէվուր ա Ռուբէն ա'մին* (Բ):

ՎԸՍԿԸՌԱԾ'ՈՒՐ - *գ.* Ոսկորները եփելուց հետո մնացած ջուրը՝ ջրիկ մնացորդը: *Վըսկըռնէն իփհ'ում ա, վըս-կըռաճ'ուրը խըմում* (Ձ):

ՎԸՍԿԸՌԱՆԳ' - *ած.* Ոսկու գույն ունեցող, ոսկեգույն: *Լ'ուսնինգ'ան պըգ-ր'անըմ ար, վըսկըռանգ' ասթխէրը հէ-տան տանըմ...* (ԼՂԲ, 298):

ՎԸՍԿԸՌԱՊԷՆԴ - *տե՛ս* ՎԸՍԿԸ-ՌԱՀԱՍՏ:

ՎԸՍԿԸՌԱՑԱՎ - *գ.* Ոսկորների ցավ: *Վըսկըռցավան խը'ղճը կարում չի, թա քօն ինի* (Բ):

ՎԸՍԿԸՌ(Ը)ՀԱՆ - *ած.* Ոսկորները հանած՝ զատած: *Էրկու կիլօ վըսկըռհան մէս ա ինք' օնում, ղարկում տօն* (Ձ):

- Վըսկըռ(ը)հան անել - Ոսկորները մսից հանել՝ զատել: *Էն տըղան լօխճին*

մըրթստում ա, վըսկըռըհան անում, վէսկըռը սարու նըման կ'ուտում ա (ՀԺՀ, V, 618):

- Վըսկըռ(ը)հան ինիլ/տը՝ռնալ - Ոսկորները մսից հանվել՝ զատվել: *Խաշլաման էնքան իփիլ բիդիս, վէր վըսկըռըհան ինի* (Ձ):

ՎԸՍԿԸՌՈՒՏ/ՎԸՍԿԸՌՕՏ *(գրբ. ոսկրոտ)* - *ած.* 1. Վրան կամ մեջը շատ ոսկորներ ունեցող (մսի մասին): *Վըսկըռուտ մըսան դօլմա չի տը՝ռնալ* (Ձ): 2. *տե՛ս* ՎԸՍԿԸՌԱՀԱՍՏ: 3. Նիհարած եւ ոսկորները ցցված: *Վըսկըռուտ հէյվան ա, մօրթում ըս, հինչ ա՞նիս* (Բ):

ՎԸՍԿԸՌՕՏ - *տե՛ս* ՎԸՍԿԸՌՈՒՏ:

ՎԸՍԿԸՌՕՏԷ(Ն)Ք՝ - *գ. հվք.* Ոսկորներ: *Կամ ըն, տը՝սնում վըխճըրնէրէն վըսկըռօտէնք՝ը կ'ը՝տէն ղըրաղէն վէր տը՝ռած* (Ձ):

ՎԸՍԿԸՎԱՐԱՂ - *ած.* Ոսկու նուրբ թերթով պատած: *Ըսկըսըմ ըն ժամը շինիլը՝ տական մինչէվ կըլօ՛խ վըսկըվարաղ...* (ՀԺՀ, V, 84):

ՎԸՍԿԸՔ՝ԼԻՔ՝ - *տե՛ս* ՎԸՍԿԸՔ՝ՆԻՒԼ:

ՎԸՍԿԸՔ՝ՆԻՒԼ - *ած.* Ոսկեգույն գանգուրներ ունեցող, ոսկեգանգուր: *Ժամանակ ա անց կէնում, կուճուր քուրը մին վըսկըք՝անք՝ուլ տըղա յա պիրուում* (ՀԺՀ, VII, 19):

ՎԸՍՅԱԹ/ՎԻՍՅԱԹ/ՎԱՍՅԱԹ/ՎԱՆՋԻՅԱԹ/ՆԱՍՅԱԹ *(արաբ. wasiyat, պրս. vāsiyāt, թրք. vasiyet)* - *գ.* 1. Մահվանից հետո ժառանգությունը տնօրինելու եւ դրա իրավունքները վերապահող պաշտոնական փաստաթուղթ, կտակ: *Ըտըրանա յէտը Վարանդու մէլիք՝ը վըսյաթ ա կ'իրիլ տամ, վէր ուրանն հըրըստօթունը հըսնում ա ժուղուվուրթէն* (Ձ): 2. Նվիրական ցանկություն, որ հանգուցյալը իբրեւ պարտականություն դնում է կենդանի մնացածների վրա, պատգամ: *Տըղէրքը շատ ըն օգում հօրը վըսյաթը կըդարին, ամմա կարում չըն* (Ձ):

- Վըսյաթ անէլ - 1. Կտակել, կտակով ունեցվածքը տնօրինելու կարգադրություն անել, կտակով իբրեւ ժառանգություն թողնել: *Հարը հըրըստօթունը վըսյաթ ա անում տըղէն* (Ձ): 2. Պարտավորություն դնել, պատգամել: *Մարը տը՝սնում ա, վար ինք՝ը մըռնէլու յըրա յա, մարթին վըսյաթ ա անում.- Վար մը՝ռնէմ, իմ աչի ծը՝ռքըս կըտրէ՛, պա՛հէ* (ՆԼՂԺԲ, 108):

ՎԸՍՅՕ *(ռուս. вс,)* - *տե՛ս* ՎԷՐՉ (4):

ՎԸՍՍ - 1. *տե՛ս* ԹԸՍՍ: 2. *տե՛ս* ՓԸՇԸ:

ՎԸՍՍԱԼ - 1. *տե՛ս* ԹԸՍՍԱԼ: 2. *տե՛ս* ՓԸՇՇԱԼ:

ՎԸՍՍԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ԹԸՍՍԸՑ(Ը)ՆԷԼ: 2. *տե՛ս* ՓԸՇՇԸՑ(Ը)ՆԷԼ: 3. *տե՛ս* ԹԸՍԷԼ:

ՎԸՍՍՕՆ - 1. *տե՛ս* ԹԸՍՍՕՆ: 2. *տե՛ս* ՓԸՇՇՕՆ:

ՎԸՍՍՕՑ - *տե՛ս* ՎԸՍՍՕՆ:

ՎԸՍ-ՎԸՍ - *տե՛ս* ՎԸՍՎԸՍԱՆ:

ՎԸՍՎԸՍԱԼ - *տե՛ս* ԹԸՍԹԸՍԱԼ:

ՎԸՍՎԸՍԱՆ - *տե՛ս* ԹԸՍԹԸՍԱՆ:

ՎԸՍՎԸՍՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԸՍԹԸՍՑ(Ը)ՆԷԼ:

ՎԸՍՎԸՍՕՆ - *տե՛ս* ԹԸՍԹԸՍՕՆ:

ՎԸՍՎԸՍՕՑ - *տե՛ս* ԹԸՍԹԸՍՕՆ:

ՎԸՍՏԱԿԷԼ *(գրբ. վաստակեմ)* - 1. *նբ.* Աշխատանքով նյութական արդյունք՝ դրամ ստանալ՝ ապրուստի միջոցներ հայթայթել: *Շատ փուլ ա վըստակում, ղարկում հօրը-մօրը հը՝տէ* (Ձ): 2. *չբ.* Հոգնել, խոնջանալ: *Էնքան կօրծ ա անում, վէր վըստակում ա, պարանց ըղնում, քունավ ընցընում* (Ձ):

ՎԸՍՏԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՎԸՍՏԱԿԷԼ(1)-ի:

ՎԸՍՏԸԿՑ(Ը)ՆԷԼ - *պբ. եւ նբ.* ՎԸՍՏԱԿԷԼ-ի:

ՎԸՍՏԸԿՕԹՈՒՆ *(գրբ. վաստակութիւն (աշխատություն))* - *գ.* Հոգնություն, խոնջանք: *Վըստըկթունան կարում չըմ, թա տը՝դաս յը՝ր կէնամ* (Բ):

ՎԸՏ - *տե՛ս* ՎԸ՝Տ:

ՎԸՏԷԼ - *տե՛ս* ՎԸ՝ՏԷԼ:

ՎԸՏԸՌԷՔ՝ - *գ. հվք.* Ոտնամաններ, տրեխներ: *Ծօ՛ղէրը, վըտըռէք՝ը հըվաքում ա, ք՝ինամ* (Ձ):

ՎԸՏԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՎԸ՝ՏԷԼ-ի:

ՎԸՏՎԸ՝ՏԱԼ - *տե՛ս* ՎԸԹՎԸԹԱԼ:

ՎԸՏՎԸ՝ՏԷԼ - *տե՛ս* ՎԸԹՎԸԹԱԼ:

ՎԸՐԱՏՆԻԿ - *տե՛ս* ՎԱՐԱՏՆԻԿ:

ՎԸՐԱՐԷԼ *(գրբ. վարարեմ (ցոփանալ))* - *չբ.* 1. Ջուրը շատանալ, հորդանալ: *Հանէսը վըխէյիս ա ընում, թա վըրարած Կըռկառավըն անց կէնա* (ՆԱԲ, 139): 2. *փխբ.* Առատանալ, փարթամանալ: *Սօնա աքէրը ըխճըկանը օրհնանք ա տամ.- Վարսըտ վըրարէ* (Բ):

ՎԸՐԱՑՆԱԿ - *գ.* Վրացական գլխանոց՝ գլխի ծածկոց: *Շուշվա խանումնէն վըրացնակ ըն իլալ կըլխըրնէրէն քըցիլիս* (Ձ):

ՎԸՐՈՂԷՈ - *տե՛ս* ԸՇՏԸ՝Ղ:

ՎԸՐՈՂԸ՝Ղ - *տե՛ս* ԸՇՏԸ՝Ղ:

ՎԸՐԸԼԱՎԸ՝Ղ - *գ.* Վարելու համար պիտանի հող, վարելահող: *Շէնին վըրըլավը՝ղը խըրէգ՝ ա* (Բ):

ՎԸՐԸԽԿԱԼ - *չբ.* Առատորեն բխել՝ հորդել՝ հոսել: *Ճ՛ուրը ըսկըսըմ ա վըրըխկալ...* (ՀԺՀ, V, 22):

ՎԸՐԸԽԿԱԼԻ - 1. *տե՛ս* ՎԸՐԸԽԿԱՆ: *... Մին վըրըխկալի ըխպիրի քըշտի էն օխտը օշափին քըվօրը տը՝սին ընդէղ կաղնած* (ՀԺՀ, V, 202): 2. *մ.* Առատորեն բխելով՝ հորդելով՝ հոսելով: *Էտ ճ՛ուրը վըրըխկալի վէր ա տը՝ռնում, նի տը՝ռնում քը՝րծէն տակը* (Ձ):

ՎԸՐԸԽԿԱՆ - *ած.* Հորդորեն բխող, հորդաբուխ: *Վըրըխկան ախպ՛ուր ա Արչին ախպ՛ուրը* (Բ):

ՎԸՐԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՎԸՐԸԽԿԱԼ-ի:

ՎԸՐԸԽԿՕՆ - *գ.* Հորդելը, հորդելու ձայնը: *Ըխպիրին վըրըխկօնը թօղնում չի, վէր ըտըրանք քօն ինին* (Ձ):

ՎԸՐԸԽԿՕՑ - *տե՛ս* ՎԸՐԸԽԿՕՆ:

ՎԸՐԸԿԱԾԱՆ - *գ.* Վարած հողի միջով անցնող կածան: *Վըրըկածանավը ք՝ինալիս բ՛ուրդան մին աղվէս ա պըտահում* (Ձ):

ՎԸՐԸՁՅՈՒ(Լ)/ՎԻՐԸՁՅՈՒ(Լ) *(գրբ. վերահասու լինիմ (լավ հասկանալ, տեղեկանալ))* - *տե՛ս* ՅԱՍԱՍԼՈՒ:

ՎԸՐԸՆԴԸ՝ՆԷ - *գ.* Խաղողի տեսակ: *Վըրընդը՝նէն Ղարաբաղա Վարանդու սօրթ ա* (Բ):

ՎԸՐԸՆԻ - *տե՛ս* ՎԻՐԻ(ՆԻ):

ՎԸՐԸՎՈ՛ՒՐԴ/ՎՈ՛ՒՐՈ՛ՒՎՈ՛ՒՐԴ *(թրք. varavurd (կշռադատում))* - Գործածվում է կապակցության մեջ:

- Վըրըվո՛ւրդ անէլ - Ջնջել, տնտղել: *Ավազակնէրէն վըրըվո՛ւրդ անում, կարում չի ճինանչի* (ՆԱԲ, 42):

ՎԸՐԸՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՎԸՐԱՐԷԼ-ի:

ՎԸՐԹԱԲԷԴ - *տե՛ս* ՎԸՐԹԸԲԷԴ:

ՎԸՐԹԱԼ - *տե՛ս* ՎԸՌԹԱԼ:

ՎԸՐԹԱԼԻ - *տե՛ս* ՎԸՌԹԱԼԻ:

ՎԸՐԹԱԶՈ՛ՒՐ *(գրբ. վարդաջուր)* - *գ.* Վարդից ստացվող անուշահամ եւ բուրավետ ջուր, վարդաջուր: *Գ՛ըբէնէն մը՝կնում ըն, յըրան էլ վըրթաճ՛ուր շաղ տամ* (Ձ):

ՎԸՐԹԱՄԱՐ - *տե՛ս* ԴԸՆԱՄԱՐ:

ՎԸՐԹԱՆԱԿ - *տե՛ս* ՕԽԼԱՎ:

ՎԸՐԹԱՆՈ՛ՒՑ *(գրբ. որթոց)* - *տե՛ս* ԴԸՆԱՆՈՒՑ:

ՎԸՐԹԱՎԸ՝Տ *(գրբ. վարդահոտ)* - 1. *գ.* Վարդի բույր՝ հոտ: *Վարթէրը պէցվալ ա, վըրթավը՝տը ընգալ բաղը* (Բ): 2. *ած.* Վարդի բույր՝ հոտ ունեցող, լավ: *Վըրթավը՝տ խընձօ՛ր ա* (Բ):

ՎԸՐԹԱՎՈՒՐ - *ած.* Վրան վարդեր նկարված, վարդերով նախշված: *Այուն մին լ՛ավ վըրթավուր գ՛անբա՛ն յա իլալ* (Բ):

ՎԸՐԹԱՆՏԷԼ/ՎԸՐԹԱՆՏԻԼ - 1. *նբ.* Վաղաժամ արգանդից դուրս մղել, պտուղը փչացնել, վիժել (կենդանիների մասին): *Կավը վըրթանտալ ա* (Բ): 2. *չբ.* Պտուղը փչանալ, վիժվել: *Դանան վըրթանտալ ա* (Բ):

ՎԸՐԹԱՆՏԻԼ - *տե՛ս* ՎԸՐԹԱՆՏԷԼ:

ՎԸՐԹԱՐԱԾ - *տե՛ս* ԴԸՆԱՐԱԾ:

ՎԸՐԹԱՆՈՒՓ - *տե՛ս* ԲԸԹԱՆՈՒՓ:

ՎԸՐԹԷՎՈՒՐ/ՎԱՆՈՒՐԹԱՆՈՒՐ *(գրբ. վարդավառ)* - *գ.* Քրիստոնեական տոն՝ վարդավառ: *Վըրթէվուրը կ'ալնը բանստ սաղ ժըղովուրթը ք'իս ըն ըտէղ, ք'էփ ընէս* (ՀԺՀ, V, 469):

ՎԸՐԹԸԲԷԴ/ՎԸՐԹԱԲԷԴ/ՎԱՐԹԱԲԷԴ/ՎԱՆՐԹԱԲԷԴ *(գրբ. վարդապետ)* - *գ.* Կուսակրոն քահանա, վարդապետ: *Վանքումը օխտը դէր ըն ինում, էտ օխտը դէրին մին վըրթաբէդ ա ինում* (ՀԺՀ, VII, 182):

ՎԸՐԹԸԲԸՂՕԹՈՒՆ *(գրբ. վարդապետություն)* - *գ.* Վարդապետ լինելը: *Վըրթըբըղօթունը հացա մօտէ փէշակ ա* (Ձ):

ՎԸՐԹԸՎԸՐԸԷՆԷ/ՎԱՆՈՒՐԹԱՆՈՒՎԱՆՈՒՐԸԷՆԷ - *գ.* Տանձի մի տեսակ, որ հասնում է վարդավառի ժամանակ: *Վըրթըվըրը՝ էնէն քախծը տանձ ա* (Բ):

ՎԸՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՎԸՌԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ՎԸՐԹԻՐԸԷՍ - *ած.* Վարդի նման կարմրավուն, նուրբ ու գեղեցիկ երես ունեցող: *Վըրթիրը՝ էս ախճիգ ա իլալ Նախշունը* (Բ):

ՎԸՐԹՆԱԿԷՐ - *ած.* Որդերի կերած, որդը կերած: *Ք'ինամ ա, տը՝սնում՝ սաղ ծառէն յըրա էրկու վըրթնակէր խընձոր ա մընացալ* (Ձ):

ՎԸՐԹՆԸՄԸՂՄՕՂ - *գ.* Անհանգիստ՝ անընդհատ շարժման մեջ գտնվող մարդ: *Էտ վըրթնըմըղմօղը սաղ օրը էն ա տուրուր կ'ալիս, նըստում չի, թա պատառ դինջանա* (Ձ):

ՎԸՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ/ՎԻՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ՎԸՐԹՆԻԼ-ի: 2. *փխբ.* Մեկին մի ակնկալիքով վարակել՝ գրգռել: *Հանը վըրթնըցընում ա, տըղէրքը թըվընգ'նէն յօր ըն օնում, ք'ինամ ծըմակը* (Ձ):

ՎԸՐԹՆՕՏԷԼ/ՎԻՐԹՆՕՏԷԼ - *տե՛ս* ՎԸՐԹՆԻԼ (շատերի մասին):

ՎԸՐԹՎԸՐԹԱԼ - *տե՛ս* ՎԸՌԹՎԸՌԹԱԼ:

ՎԸՐԹՎԸՐԹԱԼԻ - *տե՛ս* ՎԸՌԹՎԸՌԹԱԼԻ:

ՎԸՐԹՎԸՐԹՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՎԸՌԹՎԸՌԹՑ(Ը)ՆԷԼ:

ՎԸՐԹՎԸՐԹՕՆ - *տե՛ս* ՎԸՌԹՎԸՌԹՕՆ:

ՎԸՐԹՎԸՐԹՕՑ - *տե՛ս* ՎԸՌԹՎԸՌԹՕՑ:

ՎԸՐԹՕՆ - *տե՛ս* ՎԸՌԹՕՆ:

ՎԸՐԹՕՑ - *տե՛ս* ՎԸՌԹՕՑ:

ՎԸՐԺԸԲԷԴ - *տե՛ս* ՎԱՐԺԱԲԷԴ:

ՎԸՐԺԸԲԸՂԱՑՈՒ/ՎԸՐՁԸԲԸՂԱՆՈՒ - *գ., ած.* Վարժապետ դառնալու թեկնածու: *Սաղ շէնումը մին վըրժըբըդացու չի կա* (Ձ):

ՎԸՐԺԸԲԸՂՕԹՈՒՆ/ՎԸՐՁԸԲԸՂՕԹՈՒՆ *(գրբ. վարժապետություն)* - *գ.* Վարժապետ լինելը, վարժապետություն: *Վըրժըբըդօթունը տիժէր փէշակ ա* (Ձ):

ՎԸՐԺՈՒՀԻ - *տե՛ս* ՎԱՐԺՈՒՀԻ:

ՎԸՐՀԱՎԸՐ *(ադրբ. vurhavur)* - *տե՛ս* ՎԱՆՐԻՆ:

ՎԸՐՁԱՆԱԼ - *տե՛ս* ՎԻՐՁԱՆԱԼ:

ՎԸՐՁԷՄՆԸ/ՎԻՐՁԷՄՆԸ/ՄԸՐՁԷՄՆԸ/ՄԸՐՁԷՄՆԸ/ԲԸՐՁԷՄՆԸ/ԲՈՒՐՁՈՒՄՆԸ *(գրբ. մրջիմն, մրջիւն)* - *գ.* 1. Թաղանթաթեւավորների կարգին պատկանող միջատ, մրջյուն: *Էտ կըծանըմը թուփ տէռած ըն ինըմ ըշխարքէս մըրչըմնէն* (ՀԺՀ, V, 308): 2. *փխբ.* Աննշան էակ, չնչին արարած: *Վաղօն հինչ մա՞րթ, վըրչէմն ա, ընդըրա հու վա՞ մըհալ տինում* (Բ): 3. *փխբ.* Շատ աշխատասեր մարդ: *Մէր Ալրտէմը վըրչէմն ա, վըրչէմնը, քըշէր-ցիրը՝կ կօրծ ա անում* (Բ):

- Վըրչէմն էլ չի կօխ տալ - Ասում են շատ բարի՝ ազնիվ՝ արդար մարդու մասին:

- Վըրչէմնու նըման - Մեծ աշխատասիրությամբ: *Վըրչէմնու նըման կօրծ ա անում* (Ձ):

- Վըրչէմնու պանն - *տե՛ս* ՎԸՐՁԸՄՆԱՊԱՆՈՒՆ:

ՎԸՐՁԸՄՆԱԿԷՐ/ՄԸՐՁԸՄՆԱԿԷՐ/ՄԸՐՁԸՄՆԱԿԷՐ/ԲԸՐՁԸՄՆԱԿԷՐ *(գրբ. մրջմնակեր)* - *ած.* Մրջյունների կերած: *Մին վըրջըմնակէր տանձ ա քըթէնում, օտում* (Ձ):

ՎԸՐՁԸՄՆԱՊԱՆՈՒՆ/ՄՐՁԸՄՆԱՊԱՆՈՒՆ/ՄԸՐՁԸՄՆԱՊԱՆՈՒՆ/ԲԸՐՁԸՄՆԱՊԱՆՈՒՆ - *գ.* 1. Մրջյունների բույն: *Հըղէննի մին վըրչըմնապանն ա ջիհում* (Ձ): 2. *փխբ.* Խառնաշփոթ տեղ: *Էս էլ հօ հըրսանէք' չի՞, վըրչըմնապանն ա* (Բ):

ՎԸՐՁԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՎԻՐՁԸՑ(Ը)ՆԷԼ:

ՎԸՐՁԸԲԷԴ - *տե՛ս* ՎԱՐԺԱԲԷԴ:

ՎԸՐՁԸԲԸՂԱՆՈՒ - *տե՛ս* ՎԸՐԺԸԲԸՂԱՑՈՒ:

ՎԸՐՁԸԲԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ՎԸՐԺԸԲԸՂՕԹՈՒՆ:

ՎԸՐՍԱԿԱԽ - *ած.* Վարսերը կախած՝ դեպի ցած փռած: *Կամ ըն, տը՝սնում՝ մին վըրսակախ ախճիգ' ըտը՝ղ նըստած* (Ձ):

- Վըրսակախ հոռէ - 1. Ուռենու տեսակ, որ վարսաձեւ երկար, դեպի ցած կախվող ոստեր ունի, լացող ուռենի: *Մէր ըխպիրին քըշտէն մին մը՝ծ վըրսակախ հոռէ կա* (Ձ): 2. *փխբ.* Սգվոր: *Մարյան աքէրը վըրսակախ հոռէ յա, սաղ օրը էն ա սօք ըսէլիս* (Բ):

ՎԸՐՍԱԿ'ՕՂ - *գ.* Որսագողություն անող մարդ, որսագող: *Մին օր էլ էտ վըրսըկ'օղէն փըռնում ըն՝ կ'ըխտարը շըլակէն* (Ձ):

ՎԸՐՍԱՇՕՆ - *գ.* Որսի շուն, որսաշուն: *Վը՝րսական Ըռըստամէն էրկու լ'ավ վըրսաշօն օնէ* (Բ):

ՎԸՐՍԱՏԸ՝Ղ - *գ.* Որս անելու տեղ, որսատեղի: *Ախպէրը վըրսըտը՝ղա կ'ալիս ջըհում ա էտ պանրուրէն, յօր ա օնըմ, պիրում տամ քըվէրը, թան պահէ* (ՀԺՀ, V, 493):

ՎԸՐՍԱՑՈՒ - *գ.* Որսի՝ որսալու հարմար կենդանի՝ թռչուն: *Ծըմը՝ռնը ըլըբաստըրակը լ'ավ վըրսացու վա* (Բ):

ՎԸՐՍԸԿՈՒՏՈՒՐ - 1. *ած.* Մազերը կտրած՝ խուզած: *Ըտըրան էլ ինում ա էրկու դաշանգ' ախճիգ' մինը՝ վըրսըկուտուր, մինը՝ ծըմավուր* (Ձ): 2. *ած., գ. փխբ. տե՛ս* Ծամը կըտրած:

ՎԸՐՍԸՑԱԼԼԸԷԽ - *տե՛ս* ԿՕՐՍԻՆԿԱ:

ՎԸՐՍԸՎԱՐԱՐ - *ած.* Խիտ՝ փարթամ մազեր ունեցող, վարսառատ: *Վըրսըվարար ախճիգ' ա մէր Սօնիշկան* (Բ):

ՎԸՐՍԿԸՆՕԹՈՒՆ - *գ.* Որսկան լինելը, որսկանություն: *Վըրսկընօթունը ամմէն մարթու պէն չի* (Բ):

ՎԸՐՎԱՐՈՒՏ - *ած.* Կռվարար, խռովասեր, մարդկանց իրար դեմ լարող: *Վըրվարուտ մարթ ա իլալ Մացակը* (Բ):

ՎԸՐՎԸԹԱԼ - *չբ.* Վիշտը լացով ու հառաչանքներով արտահայտել, հեծեծել: *Բօ՛լ ա, այ իմ անզիգ հայէր, հինչքան մէր ցավէրը թօղած, էրանշին ցավէրին դանդանն վըրվըթացալ ըք* (Ձ):

ՎԸՐՎԸԹՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՎԸՐՎԸԹԱԼ-ի:

ՎԸՐՎԸԹՕՆ - *գ.* Հեծեծանք, հեծեծելու ձայնը: *Կընգանը վըրվըթօնը մարթին լափ կըտըղցընում ա* (Ձ):

ՎԸՐՎԸԹՕՑ - *տե՛ս* ՎԸՐՎԸԹՕՆ:

ՎԸՐՑԱՊԷԽԿ - 1. *գ.* Դախացած՝ սերմեր բռնած բողկ: *Տանը ուտէլի պէն չի ինում, մին կուտուր հաց ա տամ, մին էլ մին վըրցապէխկ* (Ձ): 2. *տե՛ս* ՎԸՐՑԱՏՈՒ:

ՎԸՐՑԱՏԷԼ - *տե՛ս* ԿԸՌՏԷԼ:

ՎԸՐՑԱՏ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ԿԸՌՏ(Ը)ՎԷԼ:

ՎԸՐՑԱՏՈՒ - *գ., ած.* 1. Պտուղ չբռնող՝ չտվող (բույս): *Էս տանձին վըրցատու վա* (Բ): 2. *փխբ.* Կոպիտ, անտաշ, տղամարդու հատկանիշներով օժտված (կին, աղջիկ): *Սիմօնը չօրք' ախճիգ' օնէ, չօրք'ըն էլ վըրցատու* (Բ):

- Վըրցատու կէզանր - *տե՛ս* ՎԸՐՑԸԿԷՁԱՐ:

- Վըրցատու պէխկ - *տե՛ս* ՎԸՐՑԱՊԷԽԿ:

ՎԸՐՑԱՔԱՐ *(գրբ. որձաքար)* - *գ.* Կարծր՝ պինդ քար: *Վըրցաքար ա կըրում, պատ տինում* (Ձ):

ՎԸՐՑԸԿԱԿԱՆՉ/ՎԸՐՑԸԿԱՆՉ - *գ.* 1. Աքլորի կանչելը լուսադեմին: *Վըրցըկականչը վէր ինի վէչ, շինանցէք' կարէլ*

չըն վըխտէն յը՛ր կէնան քունըտը՛ղա (Ձ): 2. Աքլորի կանչելու ձայնը: *Աղվէսը բ՚ուրդ՚ն մին վըրցըկականչ ա ըսկանում* (Ձ): 3. Աքլորի կանչելու ժամանակը, լուսադեմ: *Այան վըրցըկանչին յը՛ր ար կէնում, խըմօրը հունցում* (Բ):

ՎԸՐՑԸԿԱՃՕՏ - *գ.* Արու ճուտ: *Էրկու վըրցըկաճօտ ա մօրթում, ժարիտ անում, փըսէն ուտըցընում* (Ձ):

ՎԸՐՑԸԿԱՆԱԼ - *չբ. տե՛ս* Վը՛րցակ կըտըրէլ:

ՎԸՐՑԸԿԱՆՉ - *տե՛ս* ՎԸՐՑԸԿԱԿԱՆՉ:

ՎԸՐՑԸԿԱՊԷՌՆԸ - *գ., ած. տե՛ս* Մին վըրցըկապէռնը:

ՎԸՐՑԸԿԱՍԱՍ - *տե՛ս* ՎԸՐՑԸԿԱԿԱՆՉ:

- Վըրցըկասա՛ս ըսկընալու - Ազնիվ, մաքուր, չարատավորված, միամիտ: *Վըրցըկասա՛ս ըսկընալու ախճիգ՚ ա Սանամը* (Ձ):

ՎԸՐՑԸԿԸՌԸ՛Վ - *գ.* 1. Աքլորների կռիվ: *Վըրցըկկըռը՛վը ըսքըսում ա, Ճա՛տ՚ն վը՛րցակը Մա՛ղդ՚ն վըրցակէն յը՛խնում ա* (Ձ): 2. *փխբ.* Անիմաստ՝ անտեղի, բայց տաք վիճաբանություն: *Վըրցըկկըռը՛վը էտ էրկու հիրըվըննէրան անպակաս ար* (Ձ):

- Վըրցըկկըռը՛վ տալ - Անտեղի վիճաբանել: *Ջիհիլնէն հ՚ուրփ՚ում ըն, ըսքըսում վըրցըկկըռը՛վ տալը* (Ձ):

ՎԸՐՑԸԿԷՋԱ՛Ր - 1. *գ.* Դախացած՝ սերմեր բռնած գազար: *Էտ վըրցըկէզա՛ր հինչ ա՞, վէր օտում ըս* (Բ): 2. *տե՛ս* ՎԸՐՑԱՏՈՒ:

ՎԸՐՑՕԹՈՒՆ - *գ.* 1. Որձ լինելը: *Վըրցօթունը ա իք՚օթունը ճօկում չի* (Ձ): 2. Արական սեռական կարողություն: *Կըռտէգէն, վըրցութունա քըցէգէն* (Բ): 3. *փխբ.* Քաջություն, տղամարդկություն: *Տըղըմարթին վէր վըրցօթուն չիլ՚ա՛վ, էլ հինչ տըղա՞մարթ* (Բ):

- Վըրցօթուն անէլ - Կենակցել, բեղմնավորել: *Էրո՛ւշ տը՛ղա մին ք՚ա՛լ՚ա՛ յըն պիրում քըցո՛ւմ կըվէրէն մաչը, վէր վըրցօթուն անէ* (Բ):

ՎԸՐՔ՚ԸՋԱ՛ՆԻ - *տե՛ս* ՎԸՐՔ՚ԸՋԻ:

ՎԸՐՔ՚ԸՋԻ/ՎԻՐՔ՚ԻՋԻ/ՎԸՐՔ՚ԸՋԱ՛ՆԻ/ՎԻՐՔ՚ԻՋԱ՛ՆԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Վըրք՚ըզի տալ - Ցատկոտել, խաղալ, անհոգ ու անգործ ման գալ: *Դէ՛, խօխէնք՚ ըն, լի՞, սաղ օրը էն ըն վըրք՚ըզի տալիս* (Ձ):

ՎԸՐՔ՚ԸՏՆԻՐՔ՚/ՎԻՐՔ՚ԸՏՆԻՐՔ՚/ՎԱ՛ՆԻՐՔ՚-ՏՆԻՐՔ՚ - *գ.* Ունեցվածք, հարստություն: *Մին հարուստ ճըրտըրը՛ցէ յա ինո՛ւմ, լ՚ավ տընէր ա շինում, վ՚ուրք՚-տ՚ուրք՚ ըստը՛ղծում* (ԱԱ, 86):

ՎԸՐՕՇԷԼ - *տե՛ս* ՎՕՐՕՇԻԼ:

ՎԸՑ(Տ)Ա՛ՆՈՒՑ/ՎԻՑ(Տ)ԱՆՈՒՑ/ՎԷՑՆՕՑ *(գրբ. վեցոց)* - 1. *ած.* Վեց մաս՝ չափ՝ քանակ՝ ծավալ պարունակող: *Վիցցանուց փա՛դ ա* (Բ): 2. *գ.* Թղթախաղի մեջ վեց նիշ պարունակող թուղթը: *Կարտը պիժը՛նում ըն, տը՛սնում՝ մին վըցցա՛նուցը կա վէչ* (Ձ):

ՎԸՑ(Տ)Ը՛ՔԱՆ/ՎԻՑ(Տ)ԷՔԱՆ *(գրբ. վեցեքեան)* - *թ.* Վեցն էլ, բոլոր վեցը միասին: *Ըտըրանք վըցցը՛քան էլ ք՚ա՛սիբ ըն ինո՛ւմ* (Ձ):

ՎԸՑ(Տ)ԸՊԱՏԷԳ՚/ՎԻՑ(Տ)ԸՊԱՏԷԳ՚ - *ած., մ.* Վեց անգամ ավելի: *Հօրը անա վըցցըպատէգ՚ շատ ա օտում* (Բ):

ՎԸՑ(Տ)ԸՏԱԿ/ՎԻՑ(Տ)ԸՏԱԿ - *տե՛ս* ՎԸՑ(Տ)ԸՊԱՏԷԳ՚:

ՎԻ[1] - *տե՛ս* ՎԱՅ (1-5):

- Վի ախճի՛ - Զարմանքի կամ ափսոսանքի բացականչություն: - *Վի ախճի՛, Բուղդանը էլ ա՞ մը՛ռալ* (Բ):

- Վի ամա՛ն - *տե՛ս* ԱՄԱՆ[2]:

ՎԻ[2] - *տե՛ս* ԼԷԼԱ՛Կ:

- Վի հա՛, վի հա՛ - Բազեին քշելու ձայն: *Էլ՚ա՛կը թուխսըկանէն ճօտը փըռնում ա, այան էլ ծէն ա տամ՝ վի հա՛, վի հա՛...* (Ձ):

ՎԻԴ *(ռուս. вид)* - *գ.* Արտաքին տեսք: *Բայց տըղան վիդում, պէնում շատ լ՚ավ ա...* (ՀԱԲ, 15, 46):

ՎԻԴՆԻ *(ռուս. видный)* - *ած.* Գեղեցիկ արտաքինով: *Վիդնի մարթ ա Արշակը* (Բ):

ՎԻՁ - *տե՛ս* ՎԷՁ:

ՎԻՁԸ - *տե՛ս* ՎԷՁԸ:

ՎԻԼԱ - *տե՛ս* ՎԷԼԱ:

ՎԻԼԻՍԱՊԷՏ - *տե՛ս* ՎԷԼԻՍԱՊԷՏ:

ՎԻԼ(Լ)Ի-ԹԷԼ(Լ)Ի - Գործածվում է կապակցության մեջ:

- Վիլ(լ)ի-թէլ(լ)ի անէլ - 1. Առանց կշռադատելու՝ հետեւանքները հաշվի առնելու գործ ձեռնարկել: *Յու վիլլի-թէլլի անէ, վէրչումը կըլ՚օխը կըթակէ* (Ձ): 2. Պարապ-սարապ թափառել: *Խալիսը հ՚ոնձ ըն անում, մէր Մայիսըն էլ սաղ օրը էն ա վիլլի-թէլլի ընէլիս* (Բ):

ՎԻԼԿԱ *(ռուս. вилка)* - *տե՛ս* ՅԸՂՕԼԻ:

ՎԻԼՆԻԿ - *տե՛ս* ԸՎԻԼՆԻԿ:

ՎԻԿՐԻԿ *(ռուս. выкройка)* - *գ. արհմ.* Պատկեր, կերպարանք, կազմվածք: *Ասում ա.- Ըռնդ ի՛լ, օգ՚ում չըմ վիկրիկըտ տը՛սնամ* (Ձ):

ՎԻՃԱԿ/ՎԷՃԱԿ *(գրբ. վիճակ)* - *տե՛ս* ՅԱ՛Լ[2]:

ՎԻՃԻ-ՎԻՃԻ/ՎԻՏԻ-ՎԻՏԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Վիճի-վիճի անէլ - Արագ-արագ եւ անտեղի խոսել: *Խըրէգ՚ վիճի-վիճի ըրա՛մ* (Բ):

ՎԻՄ - *գ.* Հացահատիկը՝ ընդեղենը մաքրելու՝ զտելու գործիք՝ մեքենա, զտիչ: *Կըլխօզէն ցօրէնը վիմավ ընք ի՛լ՚ալ թըմիզցընէլիս* (Ձ):

- Վիմավ անց կըցընէլ - Զտիչով մաքրել (հացահատիկը, ընդեղենը): *Միսը՛ռը վիմավ անց ըն կըցընում, ածում միշուկնէն* (Ձ):

ՎԻՅ - *տե՛ս* ՎԱՅ:

ՎԻՆՆԱՎՍԻ - *տե՛ս* ՎԸՆԱՎՍԻ:

ՎԻՆԷԳԸՐԷԴ *(ռուս. винегрет, ֆր. vinaigrette)* - *գ.* Եփած կարտոֆիլով, գազարով, բազուկով, լոբու հատիկներով եւն պատրաստած աղցան: *Վինէգըրէդը էլ ըդ՚ա՛թ՚ ընգավ* (Բ):

ՎԻՇ *(գրբ. վուշ)* - *գ.* Կտավատի բույսից ստացվող թել, վուշ: *Փ՚ա՛ն՚գը ասըմ ա.- Մինա՛կ վիշավ վէր կըպօտիս, բ՚ա՛լի կարիմ վուչ, ընդրրա հէտէ, վէր պէրա՛կ ա, չընչ՚ա՛ւլնէս կըցըվըցնէ* (ՀԺՀ, V, 520):

ՎԻՇԸԼԿԱ - *տե՛ս* ՎԻՇԻԼԿԱ:

ՎԻՇԻԼԿԱ/ՎԻՇԸԼԿԱ *(ռուս. вешалка)* - *գ.* Զգեստներ կախելու հարմարանք, կախիչ, կախարան: *Պէնջակը հանում ա, վիշիլկան կախ տամ* (Ձ):

ՎԻՇԿԱ/ՎԸՇԿԱ *(ռուս. вышка)* - *գ.* Շրջանաձեւ՝ քառակողմ կամ բազմակողմ բարձր ու նեղ կառուցվածք, աշտարակ: *... էտ խանըն պէցիր չարդախ ա շինիլ տամ, վըշկա...* (ՀԱԲ, 15, 118):

ՎԻՇՆԸ - *տե՛ս* ՎԻՇՆԻ:

ՎԻՇՆԻ/ՎԻՇՆԸ *(ռուս. вишня)* - 1. *տե՛ս* Գ՚ՈՒԼԱ՛ՌՆԸ: 2. *տե՛ս* Գ՚ՈՒԼԱ՛ՌՆԷ:

ՎԻՇՆՕՏ - *տե՛ս* Գ՚ՈՒԼԱ՛ՌՆՕՏ:

ՎԻՇՇ - *տե՛ս* ՎԱՇՇ:

ՎԻՇ-ՎԻՇ - *տե՛ս* ՎԱՇԸՎԻՇ:

ՎԻՇՎԻՇԱԼ - *չբ. տե՛ս* Ախուվախ անէլ:

ՎԻՉԸԼԿԱ՛ԼԻԼ/ՎԻՉԻԼԿԱ՛ԼԻԼ/ՎՈ՛ՒՉՈ՛ՒԼԿԱ՛ԼԻԼ/ՅՈ՛ՒՉՈ՛ՒԼԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ՎԻՉԻԼՕՏԷԼ:

ՎԻՉԸԼՈ՛ՒՏ/ՎԻՉԻԼՈ՛ՒՏ/ՎՈ՛ՒՉՈ՛ՒԼՈ՛ՒՏ/ՅՈ՛ՒՉՈ՛ՒԼՈ՛ՒՏ - *ած.* 1. Վրան ոջիլ ունեցող, ոջիլ ընկած: *Վիչըլ՚ուտ կըլ՚օխը տինում ա մօրը գ՚ուրգ՚ումը, վէր մարը վիչիլնէն ճօկէ* (Ձ): 2. *փխբ.* Կեղտոտ: *Վիչըլ՚ուտ շ՚օրէր ա կ՚ը՛ցալ* (Բ):

- Վիչըլ՚ուտ շօն - Կեղտոտ՝ վրան ոջիլներ ունեցող մարդ: *Էտ վիչիլ՚ուտ շօնը՝ ա՞ մընացալ, վէր նըհը՛տը հըրակաշ տը՛ռնամ* (Բ):

ՎԻՉԸԼՕՏԷԼ/ՎԻՉԻԼՕՏԷԼ/ՎՈ՛ՒՉՈ՛ՒԼՕՏԷԼ/ՅՈ՛ՒՉՈ՛ՒԼՕՏԷԼ - *չբ.* Ոջիլ ընկնել, ողջլակալել, ոջլոտել: *Խուխէն կըլ՚օխը վիչըլ՚օտալ ա* (Բ):

ՎԻՉԻԼ/ՎՈ՛ՒՉՈ՛ՒԼ/ՅՈ՛ՒՉՈ՛ՒԼ *(գրբ. ոջիլ)* - *գ.* Մարդկանց ու կենդանիների, ինչպես նաեւ բույսերի, հացահատիկների, ընդեղենների վրա ապրող անթեւ մակաբույծ միջատ, ոջիլ: *Կըլխան մին վիչիլ ա պուք տամ, տամ ըտրրան, թա.- էս ա քու ճարըտ* (Ձ):

- Վիչիլ ըղնէլ - *տե՛ս* ՎԻՉԸԼՕՏԷԼ:

- Վիչիլը օտէլ - Շատ ոջլոտ լինել: *Խուխէն կը[1]ՕԽը վիչիլը օտում ա* (Բ):

- Վիչիլ[1]ու յէրիշ - Արագ ընթացք: *Ծատօրը վիչիլու յէրիշՕվ ա հըղէ ք'ինում* (Բ):

ՎԻՉԻԼԿԱԼԻԼ - *տե՛ս* ՎԻՉԸԼԿԱԼԻԼ:

ՎԻՉԻԼՈՒՏ - *տե՛ս* ՎԻՉԸԼՈՒՏ:

ՎԻՉԻԼՕՏԷԼ - *տե՛ս* ՎԻՉԸԼՕՏԷԼ:

ՎԻՍԱԼ(Լ)Ի/ՎԷՍԱԼ(Լ)Ի/ՎԱՍԱԼ(Լ)Ի - *տե՛ս* ԹԸՐԹԷՐՈՒԿ: *Ամը[1]ն հինչ տիրալ ար ըռընչնէրէս՝ վիսալի, մը[1]ղըր, կաթնը...* (ԼՂԲՔ, 258):

ՎԻՍԻԼԿԱ - *տե՛ս* ՎԸՍԻԼԿԱ:

ՎԻՍՅԱԹ - *տե՛ս* ՎԸՍՅԱԹ:

ՎԻՏԻ-ՎԻՏԻ - *տե՛ս* ՎԻՃԻ-ՎԻՃԻ:

ՎԻՐԱՎՕՐ *(գրբ. վիրաւոր)* - *ած.* 1. Վերք ստացած, վիրավորված: *Կամ ըն, տը[1]սնում՝ էրկու վիրավոր սալդաթ էտ փօսումը վէր ընգած* (Ձ): 2. *փխբ.* Հոգեպես վշտացած, վիրավորանք կրած: *ՈՒ՛, Մաքաղաթը էլ վիրավոր կընէգ[1] ա լի՞, մարթին էնքան ուշունցան հու չի՞ վիրավորվէլ* (Բ): 3. *գ.* Վերք ստացած՝ վիրավորված մարդ: *Կըռվէն վախտը հանց օր ա իլալ, վէր կըրը[1]ցալ էլ չընք, թա վիրավորնէրէն հըսցընինք[1] բալնիցան* (Բ):

ՎԻՐԱՎՕՐԷԼ *(գրբ. վիրավորեմ)* - *նբ.* 1. Հարվածով վերք հասցնել, խոցել: *Յըրա յա անում, քըվօրը վիրավորում* (Ձ): 2. *փխբ.* Խոսքով կամ գործով բարոյական՝ հոգեկան վերք հասցնել, վիրավորանք պատճառել: *Արչընը ասում ա.- Մա՛րթ ախպէր, էտ խուսկէրքավըտ ինձ վիրավորէցէլ, մունք էլ կարէլ չընք հընգըրօթուն անինք[1]* (Ձ):

ՎԻՐԱՎՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՎԻՐԱՎՕՐԷԼ-ի:

ՎԻՐԷՆԻ - *գ.* Սեւ հատկիներով ու բարակ կեղեւով խաղողի տեսակ: *Էն վախտը մէր բըղէրումը վիրէնի էլ ա իլալ* (Բ):

ՎԻՐԸՁԱՍՈՒ(Լ) - *տե՛ս* ՎԸՐԸՁԱՍՈՒ(Լ):

ՎԻՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՎԸՐԹՆԸՑ(Ը)ՆԷԼ:

ՎԻՐԹՆՕՏԷԼ - *տե՛ս* ՎԸՐԹՆՕՏԷԼ:

ՎԻՐԻ(ՆԻ)/ՎԸՐԸՆԻ/ԸՎԻՐԻ/ԻՎԻՐԻ *(գրբ. վայրի)* - *ած.* 1. Չընտելացված, վայրենի (կենդանիների ու թռչունների մասին): *Էրկու վիրի էծ հընգէր ըն տը[1]ռնում, մինտը[1]ղ ըրածում* (ԱԱռ, 31): 2. Չպատվաստված, ոչ մշակութային (բույսերի մասին): *Մին վիրի տանձի յա կըտըրում, փանդ անում* (Ձ): 3. Այդպիսի բույսերի տված (պտուղների ու հատապտուղների մասին): *Վիրի գ'ուլանը աղու վա ինում* (Բ): 4. Ամայի, անմարդաբնակ: *Էրկուսըն էլ էտ քըշէր մընամ ըն մին վիրի հանդում* (ՀԺՀ, V, 371): 5. *փխբ.* Անկիրթ, կոպիտ, անտաշ: *Վիրի մարթ ա Ափկարը* (Բ):

ՎԻՐՉԱՆԱԼ/ՎԸՐՉԱՆԱԼ *(գրբ. վերջանամ (ետեւ մնալ, ետ քաշվել, վախճանվել)* - *տե՛ս* ՊԸՐԾԸՆԷԼ (1, 2):

ՎԻՐՉԷՄՆԸ - *տե՛ս* ՎԸՐՉԷՄՆԸ:

ՎԻՐՉԸՑ(Ը)ՆԷԼ/ՎԸՐՉԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. վերջացուցանեմ)* - *նբ.* ՎԻՐՉԱՆԱԼ-ի:

ՎԻՐՔ[1]ԻՁԻ - *տե՛ս* ՎԸՐՔ[1]ԸՁԻ:

ՎԻՐՔ[1]ԻՁԱՆԻ - *տե՛ս* ՎԸՐՔ[1]ԸՁԻ:

ՎԻՐՔ[1]ԸՏՈՒՐՔ[1] - *տե՛ս* ՎԸՐՔ[1]ԸՏՈՒՐՔ[1]:

ՎԻՑ(Ց)ԱՆՈՒՑ - *տե՛ս* ՎԸՑ(Ց)ԱՆՈՒՑ:

ՎԻՑ(Ց)Է՛ՔԱՆ - *տե՛ս* ՎԸՑ(Ց)Ը[1]ՔԱՆ:

ՎԻՑ(Ց)ԸՊԱՏԷԳ[1] - *տե՛ս* ՎԸՑ(Ց)ԸՊԱՏԷԳ[1]:

ՎԻՑ(Ց)ԸՏԱԿ - *տե՛ս* ՎԸՑ(Ց)ԸՏԱԿ:

ՎՈՒՁՆԱԽՕՏ - *գ.* Հացազգիների ընտանիքին պատկանող խոտաբույս: *Մէր հընդէրումը վուզնախօտ էլ կա* (Բ):

ՎՈՒՅ - *տե՛ս* ՎԱՅ:

ՎՈՒՅ-ՎՈՒՅ[1] - *գ.* Վայրի թռչնատեսակ: *Վույ-վույը սաղ քըշէրը էնքան սանս ըրավ, թօղից վէջ, թա քօն ինի* (Ձ):

ՎՈՒՅ-ՎՈՒՅ[2] - *տե՛ս* ՎԱՅ-ՎԱՅ:

ՎՈՒՅՈՒՎՈՒՐԴ - *տե՛ս* ՎԱՅՎԸՐՈՒԴ:

ՎՈՒՉ - *տե՛ս* ՎԷՉ:

ՎՈՒՉ - *տե՛ս* ՎԷՉ:

ՎՈՒՉՈՒԼ - տե՛ս ՎԻՉԻԼ:

ՎՈՒՉՈՒԼԿԱԼԻԼ - *տե՛ս* ՎԻՉԻԼԿԱԼԻԼ:

ՎՈՒՉՈՒԼՈՒՏ - *տե՛ս* ՎԻՉԸԼՈՒՏ:

ՎՈՒՉՈՒԼՕՏԷԼ - *տե՛ս* ՎԻՉԸԼՕՏԷԼ:

ՎՈՒՍ - *գ.* Դրական հատկություն, արժանիք, հեղինակություն, պատիվ: *Ընդըրա վուսը վէրընն ա՞, վէր տիրալ ըք գ'ուղապէտ* (Բ):

ՎՈՒՐԹՈՒՎՈՒՐ - *տե՛ս* ՎԸՐԹԷՎՈՒՐ:

ՎՈՒՐԹՈՒՎՈՒՐԸ[1]ՆԷ - *տե՛ս* ՎԸՐԹԸՎԸՐԸ[1]ՆԷ:

ՎՈՒՐՀԱՑ - *տե՛ս* ՎԱՂՐԻՀԱՂ:

ՎՈՒՐՈՒՎՈՒՐԴ - *տե՛ս* ՎԸՐԸՎՈՒՐԴ:

ՎՈՒՐՔ[1]-ՏՈՒՐՔ[1] - *տե՛ս* ՎԸՐՔ[1]ԸՏՈՒՐՔ[1]:

ՎՕ - *տե՛ս* ՊՕ:

ՎՕՁԻՆ - *տե՛ս* ԿՕՁ[1]ՆԻ:

ՎՕԼԱԺ *(ռուս. валежник)* - *գ.* Անտառում չորացած եւ փտած փայտ: *Վէր շատ շօռ ա կ'ամ, կացէնը քըթէնում չի, ճարը կըտըրած վօլաժ ա հըվաքում, էշին պէռնում, կ'ամ տօն* (Ձ):

ՎՕԽՃԱՐ - *տե՛ս* ՎԸ[1]ԽՃԱՐ:

ՎՕԽՉ *(գրբ. ողջ)* - *տե՛ս* ՍԱՂ:

ՎՕԽՉ-ԱՌՕԽՉ - *տե՛ս* ՍԱՂ-ՍԸԼ(Ը)ՄԱԹ:

ՎՕՂՕՐՄԱԾ - *տե՛ս* ՎԸՂՕՐՄԱԾ:

ՎՕՆՆԱՎ - *տե՛ս* ՎԸ[1]ՆՆԱՎ:

ՎՕՆՆԸ[1] - *տե՛ս* ՎԸ[1]ՆՆԸ[1]:

ՎՕՆՆԸ[2] - *տե՛ս* ՎԸ[1]ՆՆԸ[2]:

ՎՕՆՆԸ[3] - *տե՛ս* ՎԸ[1]ՆՆԸ[3]:

ՎՕՆՆՈՒՔ - *տե՛ս* ՎԸ[1]ՆՆՈՒՔ:

ՎՕՌԻ *(գրբ. յոռի, ոռի (վատ, փուչ)* - *ած. հեգն.* 1. Վատթար: *Սըմսօնէն հանը վօռի յա* (Բ): 2. Շատ դժվար: *Հանձ անէլը վօռի կօրծ ա* (Բ):

ՎՕՍԿԻ - *տե՛ս* ՎԷՑԿԻ:

ՎՕՍՊ - *տե՛ս* ՎԸ[1]ՍՊ:

ՎՕՍՓ - *տե՛ս* ՎԸ[1]ՍՊ:

ՎՕՐ - *տե՛ս* ՎԷՐ[2]:

ՎՕՐՕՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Վօրօշ անէլ - *տե՛ս* ՎՕՐՕՇԷԼ: *Վօրօշ ըն անում՝ կացէնը յօր օնին, սըթանը կըտրին* (ՆԱԲ, 143):

ՎՕՐՕՇԻԼ *(գրբ. որոշեմ)* - *նբ.* Որոշում կայացնել: *Ամմա վէր ուրանն ճընանչում ին հուսցու կ'օղ, վօրօշում ա՝ ուրանց սըրջանան տուս կ'ա* (ՀԺՀ, V, 645):

ՎՕՓՇԸՄ *(ռուս. вобщем)* - *տե՛ս* ՎՕՓՇՈՒՄ:

ՎՕՓՇՈՒՄ/ՎՕՓՇԸՄ - *վ.* Ինչեւէ, բոլոր դեպքերում: *Վօփշում, յը[1]ս կօրծ չօնիմ, տուք ըք գ'ուդուում* (Ձ):

Տ

ՏԱ[1] *(գրբ. դա)* - *դ.* Երկրորդ դեմքի գոյականական ցուցական դերանուն, որ ցույց է տալիս խոսակցին մոտ գտնվող՝ եղող կամ խոսակցի հիշատակած անձ՝ առարկա: *Տա դանստի ք'ընըմ ա էտ տըղէն հօրը ասըմ* (ՀԺՀ, V, 65):

ՏԱ[2] - *տե՛ս* ԸՏԸՐԱ:

ՏԱԲԸՐԷԹԿԱ - *տե՛ս* ԴԱԲԸՐԷՏԿԱ:

ՏԱԲԸՐԷՏԿԱ - *տե՛ս* ԴԱԲԸՐԷՏԿԱ:

ՏԱՁ[1]/ԴԱՁ *(ռուս. таз)* - *գ.* Մետաղյա լայն եւ ոչ խոր աման, կոնք: *Տահանք մին մէծ դազ փանթաշ ըն անում* (ՀԱԲ, 15, 135):

ՏԱՁ[2] - Գործածվում է կապակցության մեջ:

- Տազ անէլ - 1. Լռել, սսկվել: *... էս քառընս տազ ըրած պանրանում ա բէջիթ մին փօս կըտրում, լօխ ածըմ մէջը...* (ԼՂԲՔ, 259): 2. Համբերել, սպասել: *Աղվէսընն ասում ա.- Ճըղա՛ցպան ախպէր, տու տա՛զ ըրա, յը[1]ս ք'ըզը[1]տէ թաքավէրէն ախճիգ'ընն ըմ անզլական* (ՀԺՀ, V, 626):

ՏԱԼ *(գրբ. տամ)* - *նբ.* 1. Մեկին մի բան հանձնել՝ փոխանցել: *Տըղան ջուբան տՀուս ա օնում թոխտը, տամ թաքավէրէն* (ՆԱԲ, II, 26): 2. Մեկին թողնել՝ հանձնել, մեկի ձեռքը մատնել: *Հինչ էլ ինի, մունք մէր յէրգ՝իրը թուրքէրէն չընք տալ* (Զ): 3. Տրամադրել, մեկի՝ մի բանի տրամադրության տակ դնել: *Բուստանէն կէսը մին տարավ տամ ա հիրըվանէն, վէր բիջՀրի* (Բ): 4. Վճարել: *Էտ տըղան մին խիլլՀ վը՝սկի յա տամ, ոչը յոր օնըմ, ք՝ընըմ* (ՀԺՀ, V, 38): 5. Շնորհել, արժանացնել, պարգեւատրել: *Լ՝ավ կօրծ ընէլի հը՝տէ ՍՀրիբէկ դայուն մէդալ ըն տամ* (Զ): 6. Հանձնարարել, պատվիրել: *Հարուստը ըտըրանց շատ կօրծ ա տամ* (Զ): 7. Հարվածել, խփել, զարկել: *Տամ ըն, կըռվում, ժուղովուրթը ըրմանում ա* (ԱԱ, 28): 8. Կազմակերպել, սարքել (հյուրասիրություն՝ խնջույք եւն): *Ժուղովուրթէն լ՝ավ հաց ա տամ, ուտուցունում, խըմըցընում, հըղէ տինՀում* (Զ): 9. Հրապարակով ներկայացնել, հանդես գալ որեւէ բանով: *Մին օր էլ քըղաքան յը՝րք ըսօղնէ յըն կ՝ամ, շէնումը կանցէրտ տամ* (Զ): 10. Արձակել, ծլեցնել: *Էրկու տարումը էտ խընձՀրէն մըծանում ա, ճըղնէր տամ* (Զ): 11. Առաջ բերել, սերել, ծագեցնել: *Հըրուստէն համ ծառէրըն ըն բօլ-բօլ պէրք տամ, համ հիյվընէն ըն բօլ-բօլ ծէք՝ տամ* (Զ): 12. Կնության տալ, ամուսնացնել: *Կ՝ՀփիՀ Հուրն վըլլամադ-շարմադ ըխճըկանը տըվավ քօռ Վընէսին* (Բ): 13. Վաճառել: *Կընէգ՝ը տանը կէնում ա, մարթը տանում ա կավը հազար մընէթավ տամ, յէտ տը՝ռնում, վը՝ր կ՝ա տօն* (ՆԼՂԺԲ, 62): 14. Մատուցել, հրամցնել: *Ջէմքուչը յուղուծու վա շինում, տամ փըսէն* (Զ): 15. Բաժին՝ մաս հանել: *Մը՝ծ ախպէրը հօրը հըրըստութունը լօխ յօր ա օնում, կուճի ախպօրը վէշ մին պէն տամ չի* (Զ): 16. Թույլ տալ իր հետ կենակցել: *ԴՀխպՀ կընէգ՝ ա, լօխճին տամ ա* (Բ): 17. Կցել, միացնել: *Ճարը կըտըրած՝ էտ թէվէրըտ էտ ջիմդՀք՝Հն ա տուվալ, ալակուշկուշէն ըստը՝ղծալ* (ԱԱ, 69): 18. Ուղղել՝ դարձնել դեպի... *ՍՀութՀունը ծօռ ա, պատառ բիդի աչ տօ՛* (Բ): 19. Մի բանով տարվել, անձնատուր լինել մի բանի: *Սէտրակը ՀուրՀն տըվալ ա խըմէլին* (Բ): 20. Արձակել, տարածել, սփռել: *Քըշէրը էտ պըղօճը լՀուս ա տամ* (Զ): 21. Արտաքին տպավորությամբ որոշել (տարիքը, քանակը եւն): *ԼՀրմիկ դային ութասսուն տիրը՝կան ա, ամմա վէր յէշիս, վացցուն էլ չըս տալ* (Բ): 22. Սնուցել որեւ բանով: *Բօստանը փէյնը բիդի տաս, վէր լ՝ավ պէրք յը՝ր օնիս* (Զ): 23. Որեւէ գույնի երանգ ունենալ, այդ գույնով փայլել: *Հըռանցէ վէր բաղէն յէշում ըս, խաղուն սըվէ յա տամ* (Բ): 24. Սրընթաց մտնել, մխրճվել: ... *Էտ ճօրը՝ն խըռհնում ա, տամ ծըմըկնը՝րէն, ըմընէք՝ը լօխ կուտրատում* (ՀԺՀ, VII, 305): 25. Փաթաթել: *ՔՀանդիրը վընէրավընը ա տամ, քաշ անում* (Զ): 26. Հատել, կտրտել: *Ցակատը յօր ա ունէս, ծառէն ճըղնէրը տաս* (Բ): 27. Հնչեցնել: *Դասատուն զանգ՝ը տամ ա, խօխէնք՝ը նի յըն տը՝ռնում ըշկօլը* (Բ): 28. Խաղալ: *Խօխէնք՝ը կունդըմըհակէ յըն տամ* (Բ): 29. Մեղադրական վճիռ կայացնելով՝ պատժաչափը սահմանել: *Սուդ ըն անում, Հանէսին տասսը տարէ տամ* (Զ): 30. Նշել, հացկերույթ կազմակերպել (մահվան յոթնօրյակը, քառասունքը, տարելիցը եւն): *ՀՀրՀբէդը կընգանը տարէն տամ ա, յը՝տնան փըսակվում* (Զ): 31. Իբրեւ օժանդակ բառ՝ ներգործական եւ չեզոք բայերի անորոշ դերբայի հետ կազմում է պատճառական բայեր, ինչպես՝ *ասէլ տալ, խօսէլ տալ, պիրիլ տալ, խըմէլ տալ, օտէլ տալ* եւն: 32. Գոյականների հետ կազմում է հարադրական բայեր, ինչպես՝ **խօսկ տալ, պարէվ տալ, սը՝րտ տալ, օխնը տալ** եւն: *չբ.* 33. Հնչել: *Ջանգ՝ը տըվալ ա, ամմա խօխէնք՝ը ըսկացալ չըն* (Զ): 34. Փաթաթվել: *Կամ ըն, տը՝սնում մին զը՝ռ օխծ՝ ծառավը տուված* (Զ):

- Տօր վէր կըտաս (շանը ճըկատէն) - Սաստիկ ծեծել: *Ափանդին տՀուս ա կ՝ամ, կընգանը յըրա պըրծնում, տօր վը՝ր կըտաս, էնքան ա թակում, վը՝ր թան ծըմէլա քըցՀում ա* (ՀԺՀ, VI, 233):

ՏԱԼ[1]/ՏԱԼ[1] *(գրբ. տալ)* - *գ.* Ամուսնու քույրը կնոջ համար: *Մին օր ինք՝ը ըմընէք՝ը կուտուրատում ա, տալլին անավ քըցՀում* (ՀԺՀ, VII, 21):

ՏԱԼ[2]/ՏԱԼ[2] *(հ.ե. *dhel-)* - *գ.* Ծառի ճյուղ: *Ծըռէրան խընձՀր, տանձ ըն քաղըմ, օտում, ծըռէրէն տալլէրը կուտուրատում...* (ՀԺՀ, V, 467):

ՏԱԼԱՐ/ՏԷԼԱՐ/ՏԻԼԱՐ *(գրբ. դալար)* - *ած.* Դալար, մատղաշ: *Մին տալլար ծառ ա կըտըրում, շըլակում, կ՝ամ տօն* (Զ):

ՏԱԼԷՐՔ/ՏԱԼԷՔ[1] *(ռուս. тарелка)* - *գ.* Ափսե: *Էտ հընգ՝էրը մին տալլէրք խորՀգ՝ ա քըցՀում, տամ Հուրն, թա օտէ* (ՀԺՀ, V, 269):

ՏԱԼԷՔ[1] - *տե՛ս* ՏԱԼԷՐՔ:

ՏԱԼ[1] - *տե՛ս* ՏԱԼ[1]:

ՏԱԼ[2] - *տե՛ս* ՏԱԼ[2]:

ՏԱԽ - 1. *ած.* Գիրուկ, թմբլիկ: *Մին տախ կ՝առն ըն մօրթում, ք՝ը՝փ անում* (Զ): 2. *գ.* Բտման դրված խոզ: *Հունց ա պըտահում՝ կ՝Հուլը տախէրան մինը կ՝ուղանում ա* (Զ):

- Տախ կըտըրէլ - Գիրանալ: *Խօզ՝էրը կաղէնը օտում ըն, տախ կըտըրում* (Զ):

ՏԱԽԾԸ - *տե՛ս* ՏԷՍՆԸ:

ՏԱԽՏ - *տե՛ս* ԹԱԽՏ:

ՏԱԽՏԱԿ *(գրբ. տախտակ)* - *գ.* 1. Փայտի տափակ, երկարավուն, ոչ հաստ շերտ: *Յէր ա կէնում ախպօրը տինում մին տըխտակու յըրա, կըտօրում, տէն ածում* (ՀԱԲ, 15, 58): 2. *փխբ.* Նիհար՝ կմախքացած մարդ: *Դէ մէր Նանօվըն էլ հինչ կընէ՞գ՝, տախտակ ա, լի՞, էրկու փութ կա վէչ* (Բ): 3. *փխբ.* Բութ՝ անզգա մարդ: *Տախտակ ը՞ս, խէ կըլօ՞խ չըս ըղնում* (Զ):

- Տախտակ քաշիլ - Գերանը սղոցելով՝ տախտակներ կտրել: ... *ՀՀզը՝ցալ ըն՝ մինը կըտրին, տախտակ քաշին, ըռիսկ չըն ըրալ* (ԱԱ, 82):

ՏԱԽՏԷՂ - *տե՛ս* ՏԱԽՏԸ՝Ղ:

ՏԱԽՏԸ՝Ղ/ՏԱԽՏԷՂ - *գ.* Տաքդեղ, պղպեղ: *Սօգրաթը կընօ տՀախտը՝ղ շատ ա սիրում* (Բ):

ՏԱԿ[1] - *գ.* Ճակնդեղ: *Մին մը՝ծ տակ ա իփՀում, կըտօրում, տամ խօնցը* (Զ):

ՏԱԿ[2] *(գրբ. տակ)* - *գ.* 1. Առարկայի ներքեւի՝ ցածրի՝ ստորին կողմը՝ մասը: *Ըտի հայէրը դէրին նիհէտ կ՝աս ըն Նապատը՝ միհէնգ՝վա Սարէն շէնին տակը* (ԱԱ, 23): 2. Մարմնի որեւէ անդամի ցածի մասը: *Մին օր էլ վը՝ննանը տակը փօշ ա նի մընում* (Զ): 3. Հատակ, խորք: *Տըղան նի յա մընում ծօվը, տական էտ քարը տՀուս օնում* (Զ): 4. Երեխայի տակի շոր: *Խուխէն տակը փօխում ա* (Բ): 5. Որեւէ բանի տակ դնելու հարմարանք: *Փիչին տակը վը՝ղ ըն ածում, վէր պօլը էրի վէչ* (Բ): 6. Ծալ, շերտ, դարս (թվականների հետ): *Հէնգ՝ տակ դՀշՀնկ ա պէժինք՝ տամ* (Զ): 7. *փխբ.* Ծայր, վերջ: *Շէփտըվա տակէն մին ոչ ա մօրթում, ք՝ը՝փ անում* (Զ): *կ.* Ցույց է տալիս. 8. Այն առարկան՝ տեղը, որի ցածի մասում կա՝ գտնվում է մեկը՝ մի բան կամ կատարվում է որեւէ բան: *Ճընապան անց ար կէնում մին մը՝ծ ք՝ը՝րծի տակավ* (ԼՂԲ, 355): 9. Այն առարկան՝ երեւույթը եւն, որին ենթարկվում է մեկը կամ մի բան: *Ըտի Հայրօն թօռու տակ ա ըղնում, թըրչվում, հիվընդանում* (Զ): 10. Այն անձը՝ երեւույթը, որի հովանավորությանը՝ պաշտպանությանը՝ խնամքին է ենթարկվում մեկը կամ մի բան: *Խօխան բիդի հօրը-մօրը ծը՝րքէն տակէն մըծանա, վէր կարքէն մարթ տը՝ռնա* (Զ): 11. Գործողության ուղղվածությունը դեպի մի բանի խորքը՝ հատակը: *Վը՝սկէ ծՀուկունը էտ վէր ըսկանում ա, նի յա մընում ճիրին տակը* (Զ): 12. Այն առարկան, որի ծանրությանը՝

ճնշմանն է ենթարկվում մեկը կամ մի բան: *Էշը պէռնանը տակէն չօքալ ա* (Բ): 13. Այն առարկան՝ երեւույթը, որով մեկը՝ մի բան քողարկվում՝ ծածկվում՝ պահվում է: *Խօխան յուրդանէն տակէն կ'օղալ ա կացալ* (Բ):

- Տակ անէլ - 1. Սուզվել, խորտակվել: *Էտ խընձօրնէն քըցիս ա ճիրին մաչը, տըսնաս՝ մինը տակ ա ընէս...* (ՀԺՀ, V, 291): 2. Անհետանալ, այլեւս չերեւալ: *Չօբանը թա.- Մըտկավըտ էտ պէնըտ անց չի կըցընիս, վըէր անց կըցըրէր, ճուրը տակ ա ընանական* (ՀԺՀ, VII, 191):

- Տական (մինչըէվ) կըլօխ(ը) - Ամբողջովին, ամբողջապես: *Մացակը խըմած ըղնում ա գ'օլը, տական մինչըէվ կըլօխը թըրչվում* (Բ):

- Տական նամ յըէր օնէլ/քաշիլ - Թեթեւ դիտողությունից՝ խոսքից վիրավորվել: *Վայ ա, վէր մինը մին պէն ա ասում, մէր Հայկուշը տական նամ ա յըէր օնում* (Բ):

- Տական նի կէնալ - *տե՛ս* Վըէռան նի կէնալ:

- Տական նի կըց(ը)նէլ - *տե՛ս* Վըէռան նի կըց(ը)նէլ:

- Տական տալ - Խանութի լավ ապրանքը թաքուն թանկ վաճառել: *Սավէտին վախտը մաղազինչէք'ը լ'ավ ապըրանքը տական ըն իլալ տալիս* (Ձ):

- Տական տ'ուս կ'ալ - 1. Ստանձնած գործը հաջողությամբ ավարտել՝ գլուխ բերել: *Խըէղճ Մուխանը հէնգ' տարէ յա՝ տօն ա շինում, ամմա կարում չի տական տ'ուս կ'ա* (Բ): 2. Պրծնել, ազատվել: *Էս գ'ուլ'ումէն տական վէր կարինք' տ'ուս կ'անք, լ'ավ ա* (Բ): 3. Լավության փոխարեն հատուցել: *Ասում ա.- Թաջիրընը ապըրած կէնա, յըէս քու ըրած լ'ըվութունէն տական հուց տ'ուս կ'ամ* (Ձ):

- Տակավ(ը) անէլ - 1. Մի բան իր տակը թողնել (փլվելով, վրաերթ անելով եւն): *Պատը պարան յըէկավ, Մըրքըրէն տակավը ըրավ, ըսպանից* (Բ): 2. Գողանալ, յուրացնել: *Նախագան կըլխօզէն ցօրէնը տակավ ըրավ, ծախից* (Ձ): 3. Թաքցնել, ծածկել, խողարկել: *... Էլ կօլ տըված վէքսիլնէ, տակավըն ըրած կումարնէ չի մընալ, վէր լ'ուս աշխարք չի կ'ան...* (ՋՏ, Բ, 71):

- Տակավ(ը) ինիլ - 1. Մի բանի տակը մնալ: *Մըշինին տակավը իլանվ, մըէռավ* (Ձ): 2. Գողացվել, յուրացվել: *Վէր բաղէն ղօրօղչին Աշօտը ինի, էն բաղէն խաղուն տակավը կինի* (Բ): 3. Թաքցվել, ծածկվել, քողարկվել: *Ըտի էտ կ'ուղօթունը տակավը իլանվ* (Ձ):

- Տակավը պէն փըռնէլ - Գաղտնի՝ ծածուկ գործել: *Իզէն տակավըն ա պէն փըռնում* (Բ):

- Տակավը սէլ քինիլ - *տե՛ս* Վըէռավը սէլ քինիլ:

- Տակավը տալ - Ամանը՝ շերեփը՝ գդալը եւն մի բանի մեջ մտցնելով եւ հանելով՝ լցնել: *... Պիրիս ըն ըծէս կարասը, կ'ըվըթնէն տակավը տաս, թա խըմին, մընաս մին մինն' իրըէսու յիշիս* (ԱԱռ, 6):

- Տակավը տալ/նի մընէլ, կըլխավը տ'ուս կ'ալ - Ձեռն ընկածը անխնա վատնել՝ շռայլել: *Էն էլ հօ կընէգ' չի՞, լ'ըհա վէր ծըէրքը փուլ ա ըղնում, տակավը տամ ա, կըլխավը տ'ուս կ'ամ* (Բ):

- Տակավը օնէլ - Մի բան մի այլ բանի տակ պահել: *Էրկու հափուռը ծըծէրէն տակավըն ա կալալ, մինչէվ կաթալ ա, հափուռը լըցալ...* (ՆԱԲ, 84):

- Տակէն կըրակ էրիլ - Անհամբեր՝ անհանգիստ լինել: *Տակէտ կըրակ ա՞ էրում, խէ նըստում չը՞ս* (Բ):

- Տակէն կ'ուզիլ - 1. Անկողնու կամ վարտիքի մեջ միզել: *Էտ խօխան մը՞ծ խօխա յա, ամմա հանալ տակէն կ'ուզում ա* (Ձ): 2. Վախից, սաստիկ ծիծաղելուց եւն տակը միզել: *Արչը վէր կ'օռռում ա, վըէրսկանը տակէն կ'ուզում ա* (Ձ):

- Տակէն պարանց ըղնէլ - *տե՛ս* ՏԱԼ (16):

- Տակէն պէն կա - Մի գաղտնիք կա, մեջը մի բան կա թաքնված: *Էտ վէր յըէկալ չի, գ'իդա վէր տակէն պէն կա* (Ձ):

- Տակէն պէն չըմընալ - Լրիվությամբ սպառվել՝ վերջանալ՝ ոչնչանալ: *Ղօնաղը յըրա յա պըրծընում, ղըզղանէն կուրկուտը օտում, տակէն պէն չի մընամ* (Ձ):

- Տակէն տինիլ - Տակը դնել, զգետնել: *Վալօղը ըտըրան տինում ա տակէն, վէր թակում* (Բ):

- Տակէն քաքէլ - *տե՛ս* Տակը լըցնել:

- Տակէ տօն - Ներքնահարկ: *Ուրանք տակէ տանըն ին կէնում* (Ձ):

- Տակէ քարը կըլօխը ըղնէլ, կըլխէ քարը՝ տակը - 1. Հիմնահատակ ավերվել, քարուքանդ լինել: *Լէնգ' Թէմուրը ուրանն զօրքավը վէր շէն ք'ինամ ար, տակէ քարը կըլօխըն ար ըղնում, կըլխէ քարը՝տակը* (Ձ): 2. Աշխարհը՝ կարգերը հիմնովին փոխվել: *Սավէտը ցըրը՞վ յըէկավ, տակէ քարը կըլօխը ընգավ, կըլխէ քարը՝տակը* (Ձ):

- Տակէ քարը կօտըրած - Հիմքը խախուտ: *Կօրծէն տակէ քարը վէր կօտըրած իլանվ, էն կօրծը անմալ չի կ'ալ* (Ձ):

- Տակը թըրչիլ - *տե՛ս* Տակէն կ'ուզիլ:

- Տակը լըցնէլ - 1. Տակը կեղտոտել (երեխայի մասին): *Խօխան տակը լըցցավ, մարը թակից* (Բ): 2. Խիստ վախենալ, ահաբեկվել: *Կօղը վէր բաղվանչուն տըէսավ, տակը լըցավ* (Ձ):

- Տակը կապէլ - Կաշառել: *Սուդյին տակը կապից, տըղէն ըզադից* (Բ):

- Տակը կըլօխ անէլ, կըլօխը՝ տակ - Ավերել, քարուքանդ անել: *Ջօրքէն հըրամանք ա տամ, վէր էտ պըռավէն տօնը տակը կըլօխ անին, կըլօխը՝տակ* (Ձ):

- Տակը ճիրիլ - 1. *տե՛ս* Տակէն կ'ուզիլ: *Խութ'ին պըթկէն ապան կ'ուռռացալ ա, շէնըմը անգին տակը ճիրալ ա* (ԱՀ, 39):

- Տակըն էլ գ'իդալ, կըլօխըն էլ - Լավ ճանաչել, բոլոր մանրամասներին տեղյակ լինել: *Ասում ա.- Արխայ'ին կաց, յըէս էս ծըմակէն տակըն էլ ըմ գ'ուդում, կըլօխըն էլ* (Ձ):

- Տակը ըղնէլ - 1. *տե՛ս* Տակավ(ը) ինիլ: 2. Մի բանի ազդեցությանը ենթարկվել: *Պարթկու տակ ա ընգալ* (Բ):

- Տակը կըրկատած - Անբարոյական, կուսությունից զրկված (աղջիկների մասին): *Էրկու ախճիգ' օնէ՝ տակը կըրկատած* (Ձ):

- Տակը պէց անէլ - 1. *տե՛ս* Ատակ անել: 2. *տե՛ս* Փախըրը պէց անէլ:

- Տակը պօղ ածած - Անհանգիստ: *Տակըտ պօղ ածած ա՞, էտ խէ ըտի չըռըվըռին ը՞ս ընգալ* (Բ):

- Տակը տալ - 1. Մի բանի՝ մեկի տակ այլ բան լցնել դնել: *... Կուճուր ախպէրը շօր-շիրթ, յուրղընդօշանկ, պէն լօխ տակըն ա տամ, քօն ինում* (ՀԺՀ, VII, 343): 2. Բորբոքել (կրակը): *... Վըէխճարը մօրթում ա, կըտօրում, նի տամ ղըզղանէն մաչը, կըրակէն տակը տամ* (ՀԺՀ, VII, 204): 3. Գրգռել՝ դրդել՝ լարել (մեկի դեմ): *Արչին ք'օհնան կըռէք' ա ինում ըղվէսին յիրան, ըսքըսում ա ըսլանէն տակը տալը...* (ԱԱռ, 29): 4. Մի բանի՝ մեկի տակը մտնել: *... Սը՞վ ղօչը տակըն ա տամ, ըտըրան տանըմ սը՞վ աշխարքը* (ՀԺՀ, V, 21):

- Տակը տակ թօղնէլ, կըլօխը՝կըլօխ - Ամեն ինչ նույնը թողնել, ոչնչի ձեռ չտալ: *Կամ ա, տը՞սնում՝ հիրը՞վանը տօնը լ'ավ պահած, տակը տակ թօղած, կըլօխը՝ կըլօխ* (Ձ):

- Տակը տէրտակ, կըլօխը տէրտակ - Ոչինչ չունեցող, աղքատ: *Տակը տէրտակ, կըլօխը տէրտակ մարթ ա Սուղումունը, կարում չի, թա խօխէնքը պահէ* (Բ):

- Տակը քըցիլ - *տե՛ս* Տակավ(ը) անէլ:

- Տակ ինիլ - *տե՛ս* Տակ անէլ:

- Տակ տալ - Նյութական կորուստ կրել, անհաջողության մատնվել: *Ըստարէ փիս արաշտ ա, հու ցօրէն ա վարալ, տակ ա տըլական* (Բ):

ՏԱԿԱՆ(ԱՆ) - *մ.* Ի սկզբանէ, շատ հնուց: *Փըրջամալ տական էլ հայէր ըն ապրալ...* (ԱԱ, 55):

ՏԱԿԱՆ-ԿԸԼԽԱՆ - *մ.* 1. Ցածից ու վերեւից, այս ու այն կողմից, սկզբից ու վերջից: *Ք'անդիրը տական-կըլխան*

կըտըրում ըն, թողում մին չաթվու մըչանք (Ձ): 2. *փխբ.* Վայրիվերո, ավելպակաս: *Նօր ըն կըլխու ընգընըմ, վէր խէ յար իտի տական-կըլխան, նըհախ տըղան խօսում* (ՀԺՀ, V, 205):

ՏԱԿԷՆ-ԿԸԼԽԷՆ - *մ.* Անընդհատ, սկզբից մինչեւ վերջ: *Շէփտին տակէն-կըլխէն մէր Ռուբէնը էն ա կօրծ ընէյիս* (Բ):

ՏԱԿԸ-ԿԸԼՕԽԸ - *տե՛ս* ՏԸԿԸԿԸԼՕԽ (1, 2):

ՏԱԿԸՌ(Է)/ՏԱԿՌԷ *(գրբ. տակռի)* - *գ.* 1. Բույսի արմատ: *Ճըղպօրուն տակըռէն կըտըրում ըն, ճըղպօրէն չուրանում ա* (Ձ): 2. *փխբ.* Տոհմի՝ ցեղի՝ ընտանիքի սկիզբը: *Մէհտիշինացուց տակըռէն Իրանան ա* (Բ):

- Տակըռ(է) փըռնէլ/քընցիլ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ԿԱԼԻԼ:

- Տակըռը/տակըռէն խօր ինիլ - Ամուր կերպով հաստատվել: *Կաղնէն ասում ա.- Իմ տակըռէս խօր ա, տու ինձ կարէլ չըս պուք տաս* (Ձ):

ՏԱԿԸՌՕՏ/ՏԱԿՌՕՏ - *գ. հվք.* Արմատներ: *Տակռօտ ա քանդում, տամ խուզէրէն* (Ձ):

ՏԱԿԸՏՈՒԿ - *գ.* Մնացորդ: *Հաց ըն օտում, տակըտուկըն էլ հըվաքում, ածում թօրբան, հըղէ ինում* (Ձ):

ՏԱԿՌԷ - *տե՛ս* ՏԱԿԸՌ(Է):

ՏԱԿՌՕՏ - *տե՛ս* ՏԱԿԸՌՕՏ:

ՏԱՀԱՆՔ - *տե՛ս* ԸՏԸՐԱՆՔ:

ՏԱՀՆԻ-ՆԱՀՆԻ-ՆԱՀՆԻՆԱ - *գ.* Պարեղանակ, որ կատարվում է այդ բառերը արտաբերելով: *Քըթէն տակէն տանինանինի-նանինինա ըսէլավ քունում ա* (Ձ):

ՏԱՂ(ԷՔ) *(գրբ. տաղ)* - *գ.* Քնքուշ տաղ՝ երգ: *Ասում ըն՝ մին դուշ կա՝ տարանը մըհէտ տաղէգ ա ասում* (Ձ):

ՏԱՃԻԼ - *նբ.* 1. *տե՛ս* ՏԸՊԷԼ: 2. *փխբ.* Մանր կարել: *Ծօրը տանճում ա* (Բ):

ՏԱՃՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԱՃԻԼ-ի:

ՏԱՄԲՈՒԼ/ՏԷՄԲՈՒԼ - 1. *տե՛ս* ԳԱՎԱԼ: *Ավաքը ճըվըրանէրը տըմբուլավ լըցնում ա, էշին պէռնում, տանում՝ հըրէվան շէնումը ծախէ* (ՆԱԲ, III, 170): 2. *փխբ. տե՛ս* ՃՈՒՃՈՒԼ:

ՏԱՄԲՈՒԼԻ/ՏԷՄԲՈՒԼԻ - *տե՛ս* ԳԱՎԱԼԻ:

ՏԱՆԱԿ - *տե՛ս* ՏԷՆԱԿ:

ՏԱՆԱՅԻ - *տե՛ս* ՏԸՆԱԿԱՆ:

ՏԱՆԱՎ-ՏԸՂԱՎ - *մ.* 1. *տե՛ս* ՏԸՆԸՀԱՎԱ(Ն): 2. Ունեցած-չունեցածով: *Յէղիսաբէթը ուրան խօնցավը, տանավըտըղավը շատ ա գըռընաս* (Բ):

ՏԱՆԱՏԱՇՇԱՂԻ - *գ.* Վարդագույն, կլոր ու խոշոր հատիկներով եւ հաստ կեղեւով խաղողի տեսակ: *Մին ճըվարան տանատաշշաղի յա քաղում, դարկում խընամունց տօն* (Ձ):

ՏԱՆԳ/ՏԱՆԿ *(ռուս. танк, անգլ. tank)* - *գ.* 1. Հրասայլ, տանկ: *Էս կըռվէն վախտը շատ թօրքու տանգ ընք յէր կանչել* (Բ): 2. *փխբ.* Ուժեղ եւ մարմնեղ մարդ: *Դէ մէր Քանպարընն էլ տանգ ա, վէր քացէ յա տամ, մըղակը պուք ա կամ* (Ձ):

ՏԱՆԳ՝ - *տե՛ս* ՏԱՆԳ՝:

ՏԱՆԳ՝/ՏԱՆԳ՝ - *գ.* 1. *տե՛ս* Անգուճ (4): 2. Համետի վրա սարքած զույգ կանթ՝ բեռը կապելու համար: *Փըլանէն տանգը կըտըրալ ա* (Ձ):

ՏԱՆՈ *(գրբ. տենդ)* - *տե՛ս* ՃԷՐՄ:

ՏԱՆՈՂԾ - *ած.* Թմրած, դանդաղաշարժ: *Էն էլ հինչ հա՞րթնը, տանոնծ ախճիգ ա* (Բ):

ՏԱՆՈՒԼ - *տե՛ս* ՃԷՐՄԷԼ:

ՏԱՆՈՊՈՒՌ(ՆԸ) - *տե՛ս* ՏԱՆՈԾՈՌ(ՆԸ):

ՏԱՆՈԾՈՌ(ՆԸ)/ՏԱՆՈՊՈՒՌ(ՆԸ) - 1. *գ.* Դանդուռազգիների ընտանիքին պատկանող բանջարաբույս, դանդուռ: *Տանոնծոռը համ իփանծ ա ինում լավ, համ աղ տիրանծ* (Բ): 2. *ած., գ. փխբ.* Նուրբ, փափուկ (բան): *Էս էլ հօ հաց չի՞, տանոնծոռ ա, տանոնծոռ* (Ձ):

- Տանոնծոռ շինիլ - *տե՛ս* Մըռամօշ շինիլ:

- Տանոնծոռ տըռնալ - *տե՛ս* Մըռամօշ տըռնալ:

ՏԱՆԷԼ/ՏԱՆԸԼ/ՏԱՆԻԼ *(գրբ. տանիմ)* - *նբ.* 1. Մի տեղից մի այլ տեղ տեղափոխել: *Վըրը էրկու օրը անց ա կէնըմ, կամ ըն, վըսկէ ղօչը տանըմ* (ՀԺՀ, V, 39): 2. Հեռացնել: *Թաքավըրէն կընէգը գիրթ ծըկըլթամ ա, թա.- Էս սըհաթըս տարէք ռամ ըրէք ըստըդաս* (ՆԼՂԺԲ, 39): 3. Մի բան՝ մեկին մի տեղ հասցնել: *Թօխտը կիրիս ա, տաս էտ տըղէն, վըր տանէ տա խազնաչուն...* (ՆԼՂԺԲ, 60): 4. Դեպի որեւէ տեղ ուղղել՝ ձգել: *... Մին պէրթ ա շինալ, էտ պէրթին միչավը մին հըղէ տարալ կըտը՝ ճուր յօր ունէլի հէտի* (ԱԱ, 41): 5. Հասցնել՝ հանգեցնել մի բանի: *Հօրը խընատնէն տըղէն բիդի կուղթուն ա տանում* (Ձ): 6. Քշել, քշելով հասցնել: *Կըտը քընշալ ա, տարալ* (Բ): 7. Մեռցնել, սպանել: *Ըստուծէն կընզնըվթունը էլիա չի ընցալ, էտ խուփէտ ախպօրցընն ա քընվօրցընն էլ ա տարալ* (ԱԱ, 48): 8. Թալանել, կողոպտել: *Թօրքէրը նի տըռէն շէնը, հինչ կա՝ լօխ տարէն* (Ձ): 9. Գողանալ: *Քընշէրը նի յա մընում խանումէն օթաղը, փուլէրը տանըմ* (Ձ): 10. Կրել, տոկալ, համբերել, դիմանալ: *Շատ տիժընթուն ըմ տարալ* (Բ): 11. Խաղը շահել, մրցության մեջ հաղթել՝ կրել (փող կամ այլ բան): *Կարտէ յընն տամ, Սէրգին տանում ա* (Ձ): 12. Կանչել, ուղարկել, վերցնել: *Շէնումը ջանիլ չի մընաց, լօխճին կընըվ տարէն* (Ձ): 13. Մտցնել, խոթել: *Ծըրքը տանում ա ջուբը, տըսնում՝ փուլ չի կա* (Ձ): 14. Փչացնել, վնասել: *Կարկուտը բուստընէն տարավ* (Բ): 15. Քաշել (ակոս, գիծ եւն): *Տիյըրան կըլխընվէր մին գիծ ա տանում* (Ձ): 16. Իր մեջ տեղավորել, պարունակել: *Էս ղըզանը իցցուն լիտընը ճուր ա տանում* (Ձ): 17. Պաշտոնի նշանակել: *Ուջաղանց Սուրէնին կընլխօզու նախագա յընն տանում* (Ձ):

- Տանէլ ախպուրը/Արախսը/ճուրը/Քուռը, ծարավ յըտ պիրիլ - *տե՛ս* Ախպուրը տանէլ, ծարավ յըտ պիրիլ:

- Տանէլ-(յըտ) պիրիլ - 1. Այս ու այն կողմ շարժել՝ տեղափոխել (մի բան): *Էտ ըշկափը էնքան տարալ ա-պէրալ, սաղ կուտըրատալ ա* (Ձ): 2. Կշռադատել, ծանր ու թեթեւ անել: *Շատ ա տանում-պիրում, ամմա կարում չի փանդը քընթէնա* (Ձ): 3. Ամուսնանալուց կարճ ժամանակ հետո աղջկան հետ ուղարկել, պատվազրկել, անարգել: *Դէ Սօնան էլ տարած-յըտ պէրած ախճիգ ա, էլ վէշ մինը օգում չի* (Ձ):

- Տանէլ տալ - 1. Մեկի միջոցով մի բան ուղարկել՝ տեղափոխել, մեկին մի բան տեղափոխել տալ: *Էնքան ապըրանքը նըհախ տըղան տանէլ ա տամ ախպօրը տօնը* (Ձ): 2. Պարտվել, հաղթվել (մրցության՝ խաղի՝ կռվի մեջ): *Էս կընռվումը թօրքէրը փիս տանէլ տըվէն* (Բ): 3. Ձախողվել, անհաջողության մատնվել: *Մընըմ ա մաթ մընացած, կօրծը տանիլ տըված* (ՀԺՀ, V, 50): 4. Որոշ գումար կամ որեւէ բան տարվել՝ կրվել՝ կորցնել (թղթախաղում, գրավով եւն): *Ըստրանք յա՛ տանիլ տըված փողը բէդմա տան, յա՛ կընլխընէն պուք ըն տալու* (ՀԺՀ, V, 73):

ՏԱՆԷՔ՝ - *տե՛ս* ՏԱՆԻՔ՝:

ՏԱՆԸԼ - *տե՛ս* ՏԱՆԷԼ:

ՏԱՆԸՔ՝ - *տե՛ս* ՏԱՆԻՔ՝:

ՏԱՆԻԼ - *տե՛ս* ՏԱՆԷԼ:

ՏԱՆԻՔ՝/ՏԱՆԷՔ՝/ՏԱՆԸՔ՝ *(գրբ. տանիք (երդիկ)* - *տե՛ս* ԿԸՏՕՐ[1]:

ՏԱՆԿ - *տե՛ս* ՏԱՆԳ:

ՏԱՆՁ - *տե՛ս* ՏԱՆՁ:

ՏԱՆՁ/ՏԱՆՁ *(գրբ. տանձ)* - *գ.* 1. Տանձենու պտուղը, տանձ: *Քինամ ա բաղը, մին յաշիգ տանձ քաղում, դարկում քընվօրը հըտէ* (Ձ): 2. *հեգն. տե՛ս* ԽԸՌ:

- Տանձ մ՞ յըր ունական - *հեգն.* Այլեւս արդյունք չի տա, օգտակար չէ: *Էտ քավթառ էշը հօր ը՞ս պահում, տանձ մ՞ յըր ունական* (Բ):

- Տանձավը չօնէլ - *տեմ* Վէջաւվը չօնէլ:

- Տանձավըս էլ տէն քինիս - *տեմ* Խըէռավըս էլ տէն քինիս:

- Տանձը՝ ինձ, խընձօրը՝ ինձ, սըլկէվիւլու էլ ա ըշտահըս տամ - Ասում են աչքաճակ՝ ագահ մարդու մասին:

- Տանձ ըսէլիս - Հիվանդ: - *Մրշակ դայի, հունց ը՞ս. - էն ըմ տանձ ըսէլիս* (Ձ):

- Տանձը վէր հըսավ, ծառէն կէնալ չի - Եթե պայմանները հասունացել են, գործն իր ընթացքը կստանա:

- Տանձին լավը արչը կօտէ - Լավ բանը անարժանին է բաժին ընկնում:

- Տանձին (պըտկէն) չըտինիլ - *տեմ* Վէջաւվը չօնէլ:

- Տանձու կըլօխ - Ապուշ՝ բթամիտ՝ անարժան մարդ: *Ասում ա.- Տու հինչ տանձու կըլօխ ը՞ս, վէր քըէզ ըսկանամ* (Բ):

- Տանձու կօթ - 1. *տեմ* Տանձու կըլօխ: 2. Բարակ, նիհար: *Ըտըրա վէզը հանց ա տանձու կօթ ինի* (Բ):

- Տանձ քըշըռէլ - Նստած տեղը քնել, ննջել, ննջելիս գլուխը վեր ու վար անել: *Իմ քըռակէն տանձ ա քըշըռում, իմ քէռի էլ դօկի յա անում* (ՆԱԲ, II, 102):

ՏԱՆՁԻ - *տեմ* ՏԱՆՁԻ:

ՏԱՆՁԻ/ՏԱՆՁԻ *(գրբ. տանձի)* - *գ.* Վարդազգիների ընտանիքին պատկանող պտղատու ծառ, տանձենի: *Մէր հըյաթումը իրըէք մըէծ տանձի յա իլալ* (Բ):

ՏԱՆՁՕՏ - *տեմ* ՏԱՆՁՕՏ:

ՏԱՆՁՕՏ/ՏԱՆՁՕՏ - *գ.* Շատ տանձենիներ աճած տեղ: *Քինամ ըն տանձօտը, ծըռէրէն տակէն քըէփ անում* (Ձ):

ՏԱՆՁԱՆՔ *(գրբ. տանջանք)* - *գ.* Ֆիզիկական, ինչպես նաեւ բարոյական՝ հոգեկան չարչարանք՝տառապանք՝ցավ: *Շատ տանջանք ա քաշալ ապան* (Բ):

ՏԱՆՁԷԼ - *տեմ* ՏԱՆՁԻԼ:

ՏԱՆՁ(Ը)ՎԷԼ - *տեմ* ՏԱՆՁ(Ը)ՎԻԼ:

ՏԱՆՁ(Ը)ՎԻԼ/ՏԱՆՁ(Ը)ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԱՆՁԻԼ-ի:

ՏԱՆՁԻԼ/ՏԱՆՁԷԼ *(գրբ. տանջեմ)* - *նբ.* 1. Մարմնական սուր՝ անտանելի ցավ պատճառել, խոշտանգել: *Խըէղճէն տուրմանումը շատ ըն տանջում, մինչըէվ վէր էլ տըմանում չի, մըէռնում ա* (Ձ): 2. Ծանր աշխատանք կատարել տալ, ուժասպառ անել: *Խօրթ մարը օգում ա ըտըրա կըլօխը վարէ, հիշքան օժժը պատում ա, էտ խուխէն տանջում ա* (ԱԱ, 62): 3. Անհանգստացնել, հոգեկան տանջանք պատճառել: *Ըխճըկանը չըփըսակվէը Մարյան աքօրը շատ ա տանջում* (Բ):

ՏԱԾ - *տեմ* ՏԱԾ[1]:

ՏԱԾ[1]/ՏԱԾ *(գրբ. տաշ)* - *գ.* Տաշելը, տաշելու ձեւը՝որակը: *Ամմէնալավ տաշը քարըն ա յըէր օնում* (ԱԲԲ, 14):

- Տաշ անէլ - *տեմ* ՏԱՇԻԼ:

- Տաշ յըէր օնէլ - *տեմ* ՏԱՇՎԻԼ:

ՏԱԾ[2] - *տեմ* ՏՈՒԾ:

ՏԱԾԷՂ - *տեմ* ՏԱԾԸԷՂ:

ՏԱԾԸԷՂ/ՏԱԾԷՂ *(գրբ. տաշեղ)* - *գ.* Փայտը կամ այլ բան տաշելիս առաջացած մանր բարակ շերտ: *Կըտրէլիս մին տաշէղ յօք ա տամ, ընգնըմ պըռավէն հուրթըն ըվէր* (ՀԺՀ, V, 560):

ՏԱԾԻԼ - *տեմ* ՏԱՇԻԼ:

ՏԱԾԻԼ/ՏԱԾԻԼ *(գրբ. տաշեմ)* - *նբ.* 1. Փայտի երկարությամբ սուր գործիքով կտրելով՝ մակերեսի շերտը հանել: *Հորէնքը յօր ա ունէս, կէրանը տիշիս* (Ձ): 2. Մուրճով՝ հատիչով եւն կոկել՝ հղկել: *Քարը տաշում ա, ղըշշընգցընում* (Բ): 3. Փոթոթել, տտիպություն առաջացնել: *Խակ հունը կէրավ, պէրանը տաշից* (Ձ): 4. *փխբ.* Տանջել, չարչարել: *Խանը ժըդուվուրթէն տաշում ար* (Ձ):

- Տաշած փանդ - Նիհար (անձ): *Էտ էլ հօ հարթանը չի՞, տաշած փանդ ա* (Բ):

- Տաշած քարը տափէն չի մընալ - Լավ մասնագետը՝ արհեստավորը եւն միշտ էլ գնահատվում է՝ անուշադրության չի մատնվում:

ՏԱՇԻ-ՏՈՒՇԻ - *տեմ* ՏԱԾ-ՏՈՒԾ:

ՏԱՇՎԻԼ - *տեմ* ՏԱՇՎԻԼ:

ՏԱՇՎԻԼ/ՏԱՇՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՏԱՇԻԼ-ի:

ՏԱՇՏ *(գրբ. տաշտ)* - *գ.* 1. Փայտից, կավից եւն պատրաստած երկարավուն աման խմոր հունցելու եւն համար: *Էս Առաքէլը ճուտէրէն հաշիրավը շաղվում ա, խոզը նի յա մընընում, ըսկըսում տաշտին խըմօրը օտէլը* (ՀԺՀ, VII, 383): 2. Ջրաղացի ձագարաձեւ արկղը, որի մեջ լցնում են աղալու ցորենը: *Ցօրէնը ածում ըն տաշտը, ըսքըսում աղալը* (Ձ): 3. Գոգավոր սարալանջ: *Վըխճըրնէն տաշտումը նըստում ըն, արօճ անում* (Ձ):

- Տաշտէն մին հացը - Մինուճար զավակ: *Էտ կընէգը ըղնում ա խանէն վըէնէրը, թա.- Էտ տըղան իմ տաշտէս մին հացըն ա, ըսպանէլ մէլ* (Ձ):

- Տաշտը ծակվէլ - Գործը ձախողվել՝ անհաջողության մատնվել: *Մէր տաշտը ծակվալ ա, կարում չընք ապըրինք* (Ձ):

- Տաշտը տէրտակ/ցամաք - Աղքատ, ապրուստի միջոցներից զուրկ: *Խըէղճ Հարաբէդը հինչ ա՞նէ, տաշտը տէրտակ, խօխէնքը՝ շատ* (Բ):

ՏԱԾՏԱԿ *(գրբ. տաշտակ)* - *գ.* 1. Փոքր տաշտ: *Ալլէրը ածում ա տաշտակը, հունցում* (Բ): 2. Լողի ձեւ, երբ մեջքի վրա պառկում են ջրի երեսին եւ ձեռքերով լող տալիս: *Տաշտակը ամմէն մարթու պէն չի* (Բ): 3. *տեմ* ՀԻԾԸԼԱՆՏԸՊ:

- Տաշտակ անէլ - Մեջքի վրա պառկած՝ լողալ: *Տաշտակ ընէլավ մին թահրանվ ճիրան տուս ա կամ* (Ձ):

ՏԱԾ-ՏԱԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տաշ-տաշ անէլ - *տեմ* ՏԸՇՏԸՇՕՐԷԼ:

ՏԱԾ-ՏՈՒԾ/ՏԱԾԻ-ՏՈՒԾԻ - *գ.* Խրախուսանքի՝ պարողներին ոգեւորելու բացականչություն: *Մակառաշին հարփում ա, ծըէրքէրը պիցըրցընում, ծէն տամ.- Տաշի՜-տուշի՜, պար յըէկէք* (Ձ):

ՏԱՊ - *տեմ* ՏԱՊԸՌ:

ՏԱՊԱԿ[1]/ՏԸՊԱԿԱ *(գրբ. տապակ)* - *տեմ* ՔԸԹԱՎԷՐ (3):

ՏԱՊԱԿ[2] *(գրբ. դիպակ (ընտիր կտոր՝ հանդերձ)* - *գ.* Որեւէ բանի՝իրար միացած մասերից յուրաքանչյուրը, մաս, շերտ, բաժին: *Մըղըրաճանջը ա հայը մին տապակ ըն, հուրհուր նըման* (ՆԱԲ, 86):

ՏԱՊԱՆ *(գրբ. տապան)* - *գ.* 1. Գերեզմանաքարի առջեւը հորիզոնական դիրքով դրված տափակ երկար քար, տապանաքար: *Տապանը տինիլիս վէր ա ըղնում, կօտըրում* (Ձ): 2. Այն նավը, որով Նոյը իր ընտանիքով եւ բոլոր տեսակի կենդանիներով փրկվեց ջրհեղեղից: *Էտ մարթը ամմէն հիյվանա մին-մին ճօխտ յօր ա օնում հուրան նըհէտ, լօխ տըպանումը տըղվարում* (ՀԺՀ, VII, 166):

ՏԱՊԸՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տապըռ անէլ - 1. Թաքնվել, պահ մտնել: *Ախքադըն էլ լօք կըտա պատէն լուսըծակավը նի մընէլ յէխծէն, ընդէղ տապըռ անէ, յէշի վարթաբէդին կալին* (ՆԱԲ, 60): 2. Ձայնը կտրել, լռել: *Տըղան տապըռ ա անըմ, աշկէն տակավը տահանց հէտը պահում* (ՆԱԲ, II, 90):

ՏԱՌ *(գրբ. տառ)* - *գ.* Որեւէ լեզվի այբուբենի նշաններից յուրաքանչյուրը՝ գիր: *Էտ յըէխծուն տըռնանը կըլիխէն չօրք տառ ա ինում կիրանծ, ամմա կարում չընն կարթին* (Ձ):

- Տառէրը ճընա(ն)չիլ - Գրաճանաչ լինել, մի քիչ գրել-կարդալ իմանալ (հաճախ գործածվում է հարցական կամ ժխտական ձեւով): *Իզէն տառէրը ճընանչում ա՞, վէր նամակ կիրի* (Բ):

- Տառէրը պիրանումը հը(ղ)լըղօրէլ - *տեմ* Կիրկապ անէլ (1): *Տառէրը պիրանումը հըղլըղուրէլավ պատառ էլ ա կարթում, էլիա ղըրըցուվէն յըրա պըրծնում* (ՆԱԲ, 107):

ՏԱՌԱԾ - *տեմ* ՏԸՌԱԾ:

ՏԱՌԷԽ *(գրբ. տառեխ)* - *գ.* 1. Կակղաթեւ ձկների ցեղ՝ տառեխ: *Տառէխը չուրը ցրրած ա ինում լանգաթ* (Զ): 2. *տե՛ս* ՉՕր չօփ:

ՏԱՌԹ - *տե՛ս* ՏԱՐԹ:

ՏԱՌԿԱՊ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տառկապ անէլ - *տե՛ս* Կիրկապ անէլ (1): *Դէր Մուքրյէլը մին թանիրավ տառկապ ընէլավ կըրթէյիս ա ընում* (ՆԱԲ, 107):

ՏԱՌ(Ն)ԱԼ - *տե՛ս* ՏԸՌ(Ն)ԱԼ:

ՏԱՌՆԸ/ՏԷՌՆԸ *(գրբ. դառն)* - *տե՛ս* ԱՂՈՒ:

ՏԱՌՈԱ - *տե՛ս* ՏԱՊԸՌ:

ՏԱՌ-ՏԱՌ - *մ.* Յուրաքանչյուր տառն առանձին, տառ առ տառ: *Տառ-տառ լօխ կարթանում ա, ամմա վէշ մին պէն կըլօխ չի ըղնում* (Զ):

ՏԱՍ *(գրբ. դաս)* - *գ.* 1. Առանձին առարկայի հատկացված ուսումնական ժամ, դասաժամ: *Լ՛ըհա վէր տասէրը պըրծընում ա, խօխէնք՛ը տօն ք՛ինիլի տը՛ղ ք՛ինամ ըն բաղէրը* (Բ): 2. Ուսումնական աշխատանք՝ առաջադրանք, որ տրվում է սովորողներին՝ հաջորդ պարապմունքի համար պատրաստելու: *Խօխան տասէրը սրվը՛ռում ա, ք՛ինամ խաղ անում* (Բ): 3. *փխբ.* Խրատ, որ ձեռք է բերվում փորձով: *Հանը ասմա.- Էտ ք՛ը՛զ թօղէ տաս ինի, էլ շընըճանջու պանն չի քանդիս* (Զ):

- Տաս անէլ - Դասապարապմունք ունենալ: *Տասէրը անում ա, կ՛ամ տօն, տը՛սնում վէ՛չ մարընն ա տանը, վէ՛չ հանը* (Զ):

- Տաս տալ - 1. Դասավանդել: *Ամմէն դասատու չի կարում լ՛ավ տաս տա* (Բ): 2. Թելադրել, սովորեցնել մեկին մի բան անելու կամ չանելու, խրատ տալ: *Ըսկէսուրը հարթանը տաս ա տամ, դարկում հանանց տօն* (Զ): 3. Պատժել, պատժելով խրատել: *Մէհէտ էլ հայէրը հըվաքվալ ըն, տահանց մին լ՛ավ տաս տուվալ* (ԱԱ, 29):

- Տաս քաղէլ - Խրատվել, փորձից՝ իրողությունից խրատ առնել: *Կուղութունու հը՛տէ տանրմա քըցէցէն, տաս քաղից* (Զ):

ՏԱՍ(Ս)Ը *(գրբ. տասն)* - *թ.* Տասը՝ իններին հաջորդող թիվը: *Տըղան մըծանըմ ա, տը՛ռնըմ տասը տըրէկան...* (ՀԺՀ, V, 123):

- Տաս(ս)ը չափէլ, մին կըտ(ը)ռէլ - *տե՛ս* Օխտը չափէլ, մին կըտըրէլ:

- Տաս(ս)ը հը՛տ(է) - *տե՛ս* Հազգար հը՛տ(է):

ՏԱՍ(Ս)ԸՆՋԻ - *տե՛ս* ՏԱՍ(Ս)ԻՆՋԻ:

ՏԱՍ(Ս)ԻՆՋԻ/ՏԱՍ(Ս)ԸՆՋԻ - *թ.* Իններորդին հաջորդող դասական թվականը՝ տասներորդ: *Տասսինջի օրը հիվանդը աշկէրը պէնում ա* (Զ):

ՏԱՍ(Ս)ՈՒՑ - *տե՛ս* ՏԱՍ(Ս)ՕՑ:

ՏԱՍ(Ս)ՕՑ/ՏԱՍ(Ս)ՈՒՑ - *գ.* Տասը եզների լծվող գութան: *Սաղ շէնումը մինակ ըտըրան ա իլալ տասսօց* (Զ):

ՏԱՎԱՐ *(գրբ. տուար)* - *գ.* 1. Խոշոր եղջերավոր ընտանի կենդանի(ներ): *Պօլիգ՛ը տանս ըն օնում, տէսնում մաչին մին տըվարու պօգ...* (ՆԱԲ, 66): 2. *փխբ.* Հիմար՝ ապուշ՝ տխմար՝ բռի մարդ: *Էտ տավարը կըլօխ չի ըղնում, վէր կընէգ՛ը ամմէն օր հուրան խանփում ա* (Զ):

- Տավարը վը՛ռան մօրթէլ - *տե՛ս* Էշը վը՛ռան մօրթէլ:

- Տավար կըտ(ը)ռէլ - Հիմարանալ, տխմարանալ: *Առաչ կարքէն մարթ ա իլալ Սէտրակը, մըհէնգ՛ ա ըտի տավար կըտըրալ* (Բ):

- Տավար տը՛ռնալ - Ֆիզիկական ծանր աշխատանք կատարելուց խիստ հոգնել: *Տավար տը՛ռած կ՛ամ ա տօն, տը՛սնում՝ կընէգ՛ը հաց չի շինալ* (Զ):

ՏԱՎԱՐ-ՎԸ՛ԽՃԱՐ - *գ. հվք.* Խոշոր եւ մանր եղջերավոր ընտանի կենդանիների ընդհանուր անվանումը: *Էտ հարուստ մարթին հազարնէրավ տավարվը՛խճար ա ինըմ, ամմա ինք՛ը շատ ըսկուպօյ ա ինըմ* (ՀԺՀ, V, 584):

ՏԱՏ/ՏԱՏԷ/ՏԱՏԸ՛/ՏԱՆԱ[1]/ՏԱՆ - *գ.* 1. Հոր կամ մոր մայրը, մեծ մայր: *Էտ տըղան տատին լըսըմ չի, ճընապարվըմ ա, ք՛ընըմ* (ՀԺՀ, V, 157): 2. Ընդհանրապես պառավ՝ ծեր կին: *Կամ ա, տը՛սնըմ՝ էտ ծառէն տակէն մին տատէ նըստած* (Զ):

ՏԱՏ - *տե՛ս* ՏԱՏ:

ՏԱՏԱ[1] - *մնկ. տե՛ս* ՏԱՏ:

ՏԱՏԱ[2] - *մնկ. տե՛ս* ՀԱՑ(1):

ՏԱՏԱՎԱՅ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տատավայ անէլ - *հեգն.* Խիստ կարիքի՝ սովի՝ աղքատության մեջ լինել: *Մին վըխտու խօսրովը շէնին համփան ա իլալ, միհէնգ՛ էն ա տատավայ ընէս* (Բ):

ՏԱՏԷ - *տե՛ս* ՏԱՏ:

ՏԱՏԸ՛ - *տե՛ս* ՏԱՏ:

ՏԱՏՄԱՐ/ՏԱՏՄԱՐ - *գ.* Ինքնուս մանկաբարձուհի, ծննդկանին առաջին օգնություն ցույց տվող փորձառու կին: *Էտ էլ թայդի ք՛ընում ա տատմարէն հէտան* (ՀԱԲ, 15, 106):

ՏԱՏՄԱՐ - *տե՛ս* ՏԱՏՄԱՐ:

ՏԱՐ/ՏԱՐ/ՏԷՐ/ՏԸ՛Ր *(գրբ. տէր)* - *գ.* 1. Այն անձը, որին պատկանում է մի բան: *Տարը մուտացավ, տը՛սավ մին կ՛ալ յիրա պըրծած օգ՛ում ա՝ խէղճ հիյվանէն ցըրէվ տա* (ԱԱռ, 44): 2. Երկրի՝ երկրամասի՝ գավառի եւն տիրակալ: *Էտ յիրգ՛իրին տարընն էլ խօշանբանգ՛ընն ա ինանում* (Զ): 3. Վարձու աշխատող պահող անձ: ... *Թօխմախը էնքան թակօղ ա ինըմ, վէր միչէվ տարընն ասըմ չի՝ թակի մի՛լ, թակիլը թանգ՛ չի անըմ* (ՀԺՀ, V, 339): 4. Որեւէ կարգի ունեցվածք ունեցող անձ: *Էտ մարթըտ էլ մը՛ծ հըրըստութունու, վըղէրու, բըղէրու տար ար* (Զ): 5. Որեւէ կարգի զբաղմունք՝ պաշտոն ունեցող անձ: *Ինք՛ընն էլ մը՛ծ կօրծու տար ա հանում* (Զ): 6. Որեւէ կարգի հատկությամբ օժտված անձ: *Ռուբէնը մը՛ծ խը՛լքու տար ա* (Բ): 7. Ծնողը՝ որպես զավակ(ներ) ունեցող անձ: *Թէմուրը հէնգ՛ ըխճըկա տար ա* (Բ): 8. Որեւէ զգացմունք՝ հոգեվիճակ ունեցող անձ: *Խը՛ղճը հինչ ա՞նէ, դանրդու տար ա* (Բ): 9. Մեկի՝ մի բանի նկատմամբ լիիրավ իշխանություն ունեցող անձ՝ անձնավորված երեւույթ: *Ըշխարքէս տարը Աստուծընն ա* (Բ): 10. Արյունակցական կամ մերձավոր կապի մեջ գտնվող հարազատ՝ որպես խնամակալ՝ հովանավոր: *Էտ կընէգ՛ը ասմա.- Իմ տարըս իմ ախպէր ա* (Զ): 11. Տնօրեն, ղեկավար, կառավարող: *Նէրակ մէզ տըված, վէր Կանուզօղանց Մանտին բիդի մէզ տար ինի* (Բ): 12. Որեւէ բանով օժտված: *Էտ մարթը փիս պէնու տար ա՝ համ կ՛օղ ա, համ աշկը շօր* (Բ): 13. Տան գլխավորը: *Տանը տարը վէր կընէգ՛ը իլանվ, էն տօնը տօն չի տը՛ռնալ* (Զ):

- Տար անէլ/շինիլ - 1. Մի բանի տեր դարձնել: *Ըտի Մէլիք՛ Շահնազարը Իբրահիմ խանէն Շուշվա յըրա տար ա անում* (Բ): 2. Մի բանով օժտել, տալ: *Թանջիրը ըտըրան հուրան նըհը՛տ տանում ա, մը՛ծ կօրծու տար անում* (Զ):

- Տարը մը՛ռածը - *տե՛ս* ՄԸ՛ՌԱԾԸ(1):

- Տար(ը) չինիլ - Հրաժարվել, հանձն չառնել, տիրություն չանել: *Ասում ա.- Վէր փուլը վըխտէն տաս վէչ, յը՛ս տարը չըմ* (Զ):

- Տար ը՞ս - Կարո՞ղ ես տնօրինել՝ ղեկավարել՝ պատասխանատվություն վերցնել եւն: *Հանը ասմա.- Վէր փուլ տամ, կըկա՞ռիս առըտօր անիս, տար ը՞ս* (Զ):

- Տար վը՛ռնը կէնալ - 1. Տիրություն անել, որպես տեր հանդես գալ, տիրանալ, տեր դառնալ: *Էնքան վը՛ղէրը բիջանրանում ըն, վէրչումը Կանփանց Ղանգանրընն ա կ՛ամ, տար վը՛ռնը կէնում* (Բ): 2. Հովանավոր՝ պաշտպան կանգնել: *Ապրէսը ախպօրը յիթիմնէրէն տար վը՛ռնը կացավ* (Բ): 3. Հանձն առնել, ստանձնել: *Վէշ մինը օգ՛ում չի՝ էտ կօրծէն տար վը՛ռնը կէնա* (Զ):

- Տար տը՛ռնալ - *տե՛ս* Տար վը՛ռնը կէնալ (1, 3):

ՏԱՐԱԾ - *ձ.* Գրազը շահած լինելու բացականչություն: *Հավէն մանջանվը մանջ ըն կ'ամ, Կանփին մին խըյար ա տամ Հանբուն, Հանբին լ'ըհա յոր ա օնում, Կանփին ասմա՝ տարա՛ծ* (Բ):

ՏԱՐԱՆԴԱՁ - *տե՛ս* ԴԱՐԱՆԴԱՁ:

ՏԱՐԱՆԸ - *մ.* Ամբողջ տարվա ընթացքում: *Տարանը ըշխադածը մին օրումը լօխ խարջից* (Ձ):

ՏԱՐԱՆԻ(ՆԱ) - *գ.* 1. Հարսին հայրական տնից տանելիս նվագվող տխուր մեղեդի: *Տարանինանն վէր ածում ըն, հըրթնըցուվէն մարը ըսքըսում ա լանց ինիլը* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* ՀԸՐՍԱՆԷՔ: 3. *ձ.* Երգուպարի ձայնի նմանողություն: *Քըթէն տակէն յը՛րք ա ասում՝ տարանինին, տարանինան* (Ձ):

ՏԱՐԱՆՏՈՒԹ(Է) - *տե՛ս* ԴԱՐԱՆԴՈՒԹ(Է):

ՏԱՐԱ-ՏԱՐԱ - *տե՛ս* ՏԱՐԱՆԻ(ՆԱ):

ՏԱՐԱՐԱՄ *(ռուս. тарарам)* - *գ.* Աղմուկ-աղաղակ, խառնակություն: *Սանքիսը հանրփանած կամ ա տօն, տարարամ պիցըրցընում* (Ձ):

ՏԱՐԷ/ՏԱՐԻ/ՏԱՐԸ՝ *(գրբ. տարի)* - *գ.* 1. Տասներկու ամսվա տեւողություն՝ տարի: *Տըհէնց ամէն տարէ էտ մարթը հուրան օղտավը քըրէի ա անըմ, խօխէնքը պահում* (ՆԼՂԺԲ, 79): 2. Որոշ ժամանակաշրջան, ժամանակներ: *Հանը ասմա.- Վէ՛չինչ, խըռըխառէ տարէ յա, տէ՛մ կացէք՝* (Ձ): 3. Երկար ժամանակ: *Տընաշինըտ մինչը՛վ տանան հըսնում ա բաղը, տարէ յա ընցընում* (Բ): 4. Որեւէ բանով բնորոշվող տարեթիվ՝ ժամանակ: *Կըռվէն տարէն շատ մարթ ա մէր շինացուց ք'ըմանք՝ ըրալ* (Բ): 5. Մահվան տարելից: *Հօրը տարավը Մուքայիլը էրկու անչը՛ռ ա մօրթում, ժուղուվուրթէն լ'ավ հաց տամ* (Բ):

- Տարէն (կըլխավը) շօռ տալ - Մի տարի անցնել: *Տարէն կըլխավը շօռ ա տամ, կ'ամ ա աշունքը* (ՆԼՂԺԲ, 100):

- Տարէն պանլօրէլ - Տարին լրանալ: *Տարէն պանլօրանում ա, ամհա Խասան պարթկը պանրանում չի* (Ձ):

- Տարէն տընընէրկու ամէս - Շարունակ, ամբողջ տարվա ընթացքում, միշտ: *Տարէն տընընէրկու ամէս մէր Բափկէնը հանման շօրէրընը ա կը՛ենում* (Բ):

- Տարէն քուռըկատէլ - Անբարենպաստ տարի լինել: *Ըստարէ տարէն քուռըկատալ ա* (Ձ):

- Տարուն առաշկը կըտ(ը)ռէլ - Մինչեւ մեկ տարեկան դառնալը սկսել քայլել (երեխաների մասին): *Խօխա, հինչ խո՞խա, տարուն առաշկը կըտըրալ ա* (Բ):

- Տարուն հախկան ըղնէլ - Հիվանդ լինելով եւ այլ պատճառներով չկարողանալ տարվա բերք ու բարիքից օգտվել: *Խը՛ղճ Գուրգէնը ծառան վէր ընգավ, տարուն հախկան ընգավ* (Բ):

- Տարուն հախկան քըցիլ - Խանգարելով՝ վնաս հասցնելով տարվա բերք ու բարիքից զրկել: *Դավութէն տանրմանն ղըրկը՛ցէն, տարուն հախկան քըցէցէն* (Բ):

- Տարուն պէնը գ'իդվանլ չի - Տարվա բարենպաստ կամ անբարենպաստ լինելը անկախատեսելի է: *Հանը ասմա.- Տարուն պէնը գ'իդվանլ չի, թուռույին ինիլին յէշիլ մէ՛լ, մին էլ տը՛սէր՝ վէրչը արաշտ իլանվ* (Ձ):

ՏԱՐԷԿԱՆ *(գրբ. տարեկան)* - *տե՛ս* ՏԱՐԱՆԸ:

ՏԱՐԸ՝ - *տե՛ս* ՏԱՐԷ:

ՏԱՐԹ/ՏԱՌԹ - *գ.* 1. Մանր եղջերավոր անասունների կտտոր, որ հետզհետե շերտ է կապվում եւ ոտների տակ ծեծվելով՝ պնդանում: *Ճըղացիս տօռնը տառթ ա, կըտէրը լիգը մարթ ա...* (ԼՂԲ, 15): 2. *տե՛ս* ՔԱՔՈՒՌ:

ՏԱՐԻ - *տե՛ս* ՏԱՐԷ:

ՏԱՐՄԱՆ - *տե՛ս* ՏԷՐՄԱՆ:

ՏԱՐՍ - *գ.* 1. *տե՛ս* ԾԱԼՔ: 2. Կույտ, դեզ: *Մին տանրս խօստը մին մունուտումը էրվից* (Բ):

- Տանրս ըղնէլ/յը՛ր օնէլ - *տե՛ս* ՏԱՐՍ(Ը)ՎԻԼ:

ՏԱՐՍԻԼ - *նբ.* 1. Իրար վրա շարել՝ դիզել: ... *Վը՛րը վը՛ր կըրէցալ չի, թա սըղըցնէ, կըլօխը կըտըրալ ըն, տանրսանլ* (ՀԺՀ, VI, 103): 2. Որոշ կարգով՝ հերթականությամբ՝ հաջորդականությամբ դնել՝ շարել՝ տեղավորել, դասավորել: *Հարթնը չայը ածում ա ըստըքընէնէ, պիրում ըստօլէն յըրա դաշանք՝ տանրսանում* (Ձ):

ՏԱՐՍ(Ը)ՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՏԱՐՍԻԼ-ի:

ՏԱՐՍ-ՏԱՐՍ - *մ.* Դարսերով, կույտերով: *Շօրէրը տանրս-տանրս նի յա տամ սանդօղը, կապում* (Ձ):

- Տանրս-տանրս անէլ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏԷԼ:

- Տանրս-տանրս ինիլ - *տե՛ս* ՏԸՐՍՕՏՎԷԼ:

ՏԱՐՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՏԱՆԷԼ-ի: *չբ.* 2. Հրապուրվել, հափշտակվել, գրավվել, հմայվել: *Էտ վախտը թաքավը՛ռէն տըղան տէսնում ա ըխճըկանը, ընդրրա սիրունութունավը տարվում ա, հիվընդանըմ* (ՀԺՀ, V, 384): 3. Կլանվել, անձնատուր լինել: *Խօխան խաղավը տարվում է, կ'առնէրը կուրցընում* (Բ):

ՏԱՐՏԱԿ - *տե՛ս* ՏԷՐՏԱԿ:

ՏԱՐՏԱԿԸԲՕԾ - *տե՛ս* ՏԷՐՏԱԿԸԲՕԾ:

ՏԱՐ-ՏԸՐԱԿԱՆ - *գ.* 1. Միակ տերը՝ տիրություն անողը: *Շատ առաչ ըստըղէս տարը-տըրականը Վարթան հիշանընն ա իլանլ...* (ԱԱ, 17): 2. Միակ պաշտպանը՝ խնամակալը՝ հովանավորը: *Սօնա աքօրը տարը-տըրականը հուրան ախպօրը տըղան ա* (Բ):

ՏԱՓ *(գրբ. տափ)* - *գ.* 1. Տափարակ, հարթ տարածություն, հարթավայր: *Էնքան մարթ ա ըսպանալ, վար լիհան էս տափէն անումը տիրանլ ըն Մըրթըսպան* (ԱԱ, 44): 2. Ընդհանրապես՝ գետին: *Մէգ մինըն օնինք՝, ըսկի չօնինք՝, տափէն տակէն վը՛սկէ չօնինք՝* (ԱՀ, 53): 3. Տան հատակ: *Ուրհուգհունը կ'ամ ա տօն, տէսնում՝ կընէգը տափէն նըստած* (ՀԱԲ, 15, 83): 4. Արոտ, վարելահող: ...*Ալէքսան անումավ մին մարթ հուրան տափումը հօնձ ընէլիս ա իլանլ* (ԱԱ, 59): 5. Դաշտ, հողակտոր: *Դընրյըզնէն յոր ըն օնում, նի մընենում տափը* (ՆԱԲ, 24): 6. *փխբ.* Գորգի՝ կտորի՝ նկարի եւն հիմնական գույնը, որի վրա նախշեր են արված: *Գ'իբին տափը կ'անմուր ա* (Բ): 7. *տե՛ս* ՏԱՓ(Ը)ԼԱԿ (1):

- Տափ անէլ - 1. Ավերել, գետնին հավասարեցնել, ոչնչացնել: *Դանշմանին զօրքը նի յա տը՛ռնում էտ շէնը, տափ անում* (Ձ):

- Տափան կացած - Շատ ցածր՝ ցածրահասակ: *Դօրհունց Սուրէնին տըղան մին տափան կացած ախճիգ՝ ա օգալ* (Բ):

- Տափան կէնալ - 1. Գետնին պառկել՝ հպվել: *Մըրթըկընէգ՝ մընըմ ըն տափան կացած* (ՀԺՀ, V, 49): 2. Մեռնել, սատկել (գործածվում է որպես անեծք): *Տափան կէնա Անրիսակը, բօստանըս քաղալ ա* (Բ):

- Տափան կըտ(ը)ռէլ/կըտըրց(ը)նէլ - Մի ծանր բան գետնից վեր բարձրացնել: *Հիշկան անում ա, կարում չի էտ քարը տափան կըտըրցընէ* (Ձ):

- Տափան ճանր խըմէլ - Մեջքը խիստ կորանալ (ծերությունից՝ հիվանդությունից եւն): *Սօնիշկա աքէրը պըռավալ ա, տափան ճանր ա խըմում* (Բ):

- Տափան մինչը՛վ յէրգ'ինք՝(ը) - Խիստ շատ: *Ախճիգ՝ը տափան մինչէվ յէրգ'ինք ուրխացավ, աշխարքըս հուրանը տը՛ռավ...* (ՀԺՀ, V, 91):

- Տափան յը՛ր կանլած - Արժեք չունեցող: *Ասում ա.- Էտ տափան յը՛ր կանլած ա, էտ հինչ ա՞, վէր ըտրրան մին վը՛սկէ տամ* (Ձ):

- Տափան նամ յը՛ր օնէլ/քաշիլ - *տե՛ս* Տական նամ յը՛ր օնէլ:

- Տափան տանս յը՛կած - 1. *տե՛ս* Տափան յը՛ր կանլած: 2. Գունատ: *Էտ տափան տանս յը՛կած ախճիգ՝ը հինչ ա՞, վէր ծգանլ ըս* (Բ):

- Տափան փըսնէլ - *տե՛ս* Տափէն տական փըսնէլ:

- Տափան քըթած - *տե՛ս* Տափան յը՛ր կալած:

- Տափավը ընցընէլ - *տե՛ս* Տափէն տակը ընցընէլ:

- Տափավը կալ - *տե՛ս* Տափէն կալ:

- Տափավը մին անէլ - Գետնին շաղ տալ՝ թափել՝ ցիրուցան անել: *Շօրէրը տափավը մին ա ըրալ* (Բ):

- Տափավը մին ինիլ/տը՛ռնալ - Գետնին թափվել՝ ցիրուցան լինել: *Յօրէնը ըրբան վէր ա տը՛ռնում, տափավը մին ինում* (Ձ):

- Տափավը տալ - *տե՛ս* Տափէն կալ:

- Տափէն թըքում ըս՝ յէրգինք՝ըն ա ըղնում - Ամեն ինչ հիմնովին փոխվել է:

- Տափէն թօղնէլ - 1. Անուշադրության մատնել: *Ջավէնը խըմալ ա, կօրծը տափէն թօղալ* (Բ): 2. Թշվառ վիճակի մեջ թողնել: *... Էսքան տարի տու ընդրանց յօղուրին ջան ըս տըվալ, խէ՞, ընդրանք քէզ տափին կըթօ՞ղին* (ՋՏ, Բ, 91):

- Տափէն իրը՛սան ճինջիլ/սըրփիլ - Բնաջնջել, վերացնել, հիմնահատակ ավերել: *Խաբար ա դարկում հիրը՛վան թաքավէրին, թա.- Յա՛ ախճիգ՝ըտ ինձ բիդի տաս, յա՛ թա չէ յէրգ՝իրըտ տափէն իրը՛սան կըճինջիմ* (Ձ):

- Տափէն իրը՛սան ճինջվիլ/ սըրփվիլ - Բնաջնջվել, վերանալ, հիմնահատակ ավերվել: *Շատ ազկէր, շատ յէրգ՝իրնէ յըն տափէն իրը՛սան ճինջվալ, ամմա հայը կա հօ կա* (Բ):

- Տափէն իրը՛սէն - Ամբողջ աշխարհում: *Տափէն իրը՛սէն հիշկան մարթ կա, էնքան էլ դանդ կա* (Բ):

- Տափէն իրը՛սէն չըրվալ - Շատ փոքր՝ ցածրահասակ լինել: *Մըրյանէն մին շօն օնէ՝ տափէն իրը՛սէն ըրվամ չի* (Բ):

- Տափէն իրը՛սը տանուս կալ - 1. Հայտնվել, երեւան գալ: *Ըշտըղա վէրէ յա, մէր շէնումը մին կ՝օդ ա տափէն իրը՛սը տանուս կ՝ամ* (Բ): 2. Բացահայտվել, հայտնի դառնալ: *Ըտի կ՝ուղթունը տափէն իրը՛սը ա տանուս կ՝ամ* (Ձ):

- Տափէն կալ - Գետնին զարկել, տապալել, զգետնել: *... Վէզը էլ կըտրից, ջանմդանքը տափէն յէկավ...* (ՋՏ, Ա, 222):

- Տափէն հըվըսարվէլ - *տե՛ս* Տափ տը՛ռնալ:

- Տափէն հըվըսըրցընէլ - *տե՛ս* Տափ անէլ:

- Տափէն մընալ - 1. Անուշադրության մատնվել, չգործածվել, չվաճառվել եւն: *Ապրանքը տափէն ա մընացալ, ինք՝ օնօղ չի կա* (Բ): 2. Թշվառ վիճակի մեջ հայտնվել: *Սիրան աքէրը տափէն ա մընացալ, մին պարիկամ չօնէ, թա ք՝ՕՄանգ՝ անէ* (Բ):

- Տափէն տական էլ ա - Որտեղից էլ լինի, ինչպիսի դժվարությամբ էլ լինի: *Տըղան ասմա.- Տափէն տական էլ ա, յը՛ս բիդի էտ ըխճըկանը քըթէնամ* (Ձ):

- Տափէն տական փըսնէլ - Հանկարծակի հայտնվել, անսպասելիորեն երեւալ: *Ըշտը՛ղ ք՝ը՛փ կա, Ջարմէնը ընդէղ տափէն տական փըսնում ա* (Բ):

- Տափէն տակը ընցընէլ/(նի) մընէլ - 1. Անհետանալ: *Կավը տափէն տակըն ա ընցալ, ըրվամ չի* (Բ): 2. Մեռնել, թաղվել (գործածվում է որպես անեծք): *Տափէն տակը ընցընէ Վանին, վը՛խճարըս կ՝ուղացալ ա* (Բ): 3. Հողի տակ մնալ, հողով ծածկվել: *Շատ վախտ ա անց կէնում, էտ պալատը տափէն տակըն ա ընցընում* (Ձ):

- Տափէրը ճըպըռոտէլ/չընգըռոտէլ/ պուք տալ - 1. Ցավից գալարվել: *Կընգանը ցավը վէր փըռնում ա, ըսքըսում ա տափէրը ճըպըռոտէլը* (Ձ): 2. Չարաչար աշխատել, տքնել: *Սաղ օրը տափէրը ճըպըռոտում ա, էլիա կարում չի տօնը պահէ* (Բ): 3. Աղերսագին խնդրել՝ աղոթել (մի բանի կարիքը խիստ զգալով, մի բան փափագելով): *... Էն ա Հաջի Սայադը խուխու հէտի տափէրը պուք տայիս* (ՀԱԲ, 15, 105): 4. Շատ փնտրել՝ որոնել: *Ըտըրանք իրը՛ք օր, իրը՛ք քըշէր տափէրը պուք ըն տամ, ամմա էտ մարթին քըթէնում չընն* (Ձ):

- Տափէրը տըփտըփէլ - 1. Անորոշության մեջ հայտնվել, մոլորվել, խարխափել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Տափէրը տըփտըփէ նա ըսկէսուրը, տի հարթնանը կըթօ՞ղին՝ ծէրքէրը ցօրտ ճանուր քընցի* (ՆԱԲ, III, 180):

- Տափէրը քանդիլ - *տե՛ս* Տափէրը ճըպըռոտէլ:

- Տափը ընցընէլ - 1. *տե՛ս* Տափէն տակը ընցընէլ: 2. Սաստիկ ամաչելուց չհամարձակվել մարդկանց աչքին երեւալ, սաստիկ ամոթահար լինել: *Առաչ հարթնէրը վէր պըտրօնէն տըսնալիս ըն իլալ, տափըն ըն իլալ ընցընէլիս, միհէնգ՝վա հարթնէրը պատառ ա մընամ, թա պըտրօնէն ջընըղնէրէն նըստին* (Բ):

- Տափը թումբ անէլ - *տե՛ս* Տափէն տակը ընցընէլ (2):

- Տափը ծակէլ, (նի) մընէլ - *տե՛ս* Տափը ընցընէլ:

- Տափը կալ - *տե՛ս* Տափէն տակը ընցընէլ (2): *Մը՛զ ուրուր անա հանօղին բալան մը՛ռնէ, տափը կալ* (ԼՂԲ, 42):

- Տափը կօխէլ - 1. *տե՛ս* Տափը կօխէլ-տանուս օնէլ: 2. *տե՛ս* Տափումը տինիլ:

- Տափը կօխէլ-տանուս օնէլ - Խիստ նախատել՝ հանդիմանել՝ անպատվել՝ ամոթանք տալ: *Ժօղովումը կալխօզնիկնէն նախագէն տափըն ըն կօխում-տանուս օնում* (Ձ):

- Տափը կօտըրալ ա - Ասում են գետնին ընկած երեխաներին, որպեսզի սփոփվեն եւ լաց չլինեն:

- Տափը (նի) մընէլ - *տե՛ս* Տափը ընցընէլ:

- Տափը (նի) մըտած(ը) - Անամոթ, անզգամ, անպատկառ: *Էտ տափը մըտածնէն կըզնըվալ ըն, մօրը աշկէն ըռըչին ըխճըկանը մօրթալ* (ԱԱ, 33):

- Տափը տը՛ղ չըտալ (թա նըստէ) - Դադար՝ հանգստություն չունենալ, հանգստանալու տեղ չգտնել, խիստ անհանգիստ լինել: *Էն պէնին յըրա Մանրդիրօսը շատ ա կըզնըվալ, տափը տը՛ղ չի տամ* (Ձ):

- Տափը քընցիլ - 1. Վայր գցել, ցած գլորել: *Կուփէ յա տամ, ախպօրը տափը քընցանում* (Ձ): 2. Դեն նետել, շպրտել: *Էտ խանումը էնքան հարուստ ա ինանում, վէր մին շօրը մէհէտ կ՝ը՛նում ա, տափը քընցանում* (Ձ): 3. Բանի տեղ չդնել, անտեսել: *Ոէ Մէլիքին հըրամմանը հո՞ւ կընկարի տափը քընցի...* (ՀԺՀ, V, 236): 4. *տե՛ս* Տափը կօխէլ:

- Տափը քընցիլ-տանուս օնէլ - *տե՛ս* Տափը կօխէլ-տանուս օնէլ:

- Տափ տալ - Որեւէ բան բարձր տեղից գլորվելիս, ուժով գետնին հարվածելով, վեր թռչել եւ նորից գլորվել: *Քարը տափ տալավ թուլուլ ա ըղնում, ըղնում ծօրը* (Բ):

- Տափ տը՛ռնալ - Ավերվել, գետնին հավասարվել, ոչնչանալ: *Էնգ՝ Թէմուրը ուրանն զօրքավը վէր շէնն նի յար մընում, էն շէնը տափ ար տը՛ռնում* (Ձ):

- Տափումը տինիլ - Մեկի մահը ցանկանալ (գործածվում է անեծքներում): *Տափումը տինիմ Ղուլգ՝անզին , խուխէս թակալ ա* (Բ):

- Տափ ու տըհանր պուք տալ - *տե՛ս* Տափէրը ճըպըռոտէլ:

- Տափ ու տըհանր տալ - *տե՛ս* Տափէրը ճըպըռոտէլ (4):

- Տըփէրան փուշի հըվաքէլ - *տե՛ս* Փուշի հըվաքէլ:

- Տըփէրէն կալ - 1. *տե՛ս* Տափէն կալ: 2. Դժգոհելով՝ փնթփնթալով աշխատել: *Հինչ ը՞ս տըփէրէն կամ, խէ կարքէն չը՞ս կօրծ անում* (Ձ):

- Տըփէրէն յը՛կած(ը) - *տե՛ս* Տափը (նի) մըտած(ը):

ՏԱՓ - *տե՛ս* ՏԷՓ:

ՏԱՓԱՆ *(գրբ. տափան)* - *գ.* Երկրագործական գործիք, որով հարթում են ցանած արտը, կոշտերը փշրում եւ սերմը հողով ծածկում: *Առաչ արտը վէր վրէլիս ըն իլալ, տըփանավ ըն իլալ տըփընէլիս* (Բ):

- Տափան անել - *տե՛ս* ՏԸՓԱՆԷԼ:

ՏԱՓ(Ը)ԼԱԿ *(գրբ. տափարակ)* - *ած.* 1. Հարթ, առանց խորդուբորդությունների, տափակ: *Տափլակ քը՛րծ ա Յըղնաքարը* (Ձ): 2. *փխբ.* Ձանձրալի, ոչ սրամիտ: *Տափըլակ խուսկէրք ա ասում* (Բ): 3. *փխբ.* Խարդախ, ստոր: *Տափըլակ մարթ ա Աղնասը, սա՛յաղ կաց* (Բ):

ՏԱՓԿԱՆ/ԾԱՓԿԱՆ *(ռուս. тяпка)* - *գ. տե՛ս* ՔԱՆՐԹՄԱ: *Տանփկա՛ն յօր ա օնում, թառհնանը տակը քանդում* (Ձ):

- Տանփկա՛ն տալ - Այդ գործիքով հողը փխրեցնել: *Ծըռէրէն տակը ապան ամմէն տարէ տանփկա՛ն յա իլալ տալիս* (Ձ):

ՏԱՔ *(գրբ. տաք)* - *ած.* 1. Տաքություն՝ ջերմություն տվող՝ սփռող՝ տարածող: *Մին տաք ան՝ը՛կ չի անում, թա ծո՛ւնը հանլի* (Բ): 2. Ջերմությունը՝ տաքությունը սովորականից ավելի տաքացրած: *Վը՛ննէրը տինո՛ւմ ա տաք ճիրին մաչին, յուրղանումը փըթըթօրվում, քունավ ընցընում* (Ձ): 3. Տաքացնող, ցրտից պատսպարող: *Տաք շո՛ր էր ա կը՛ենում, ք՛ինամ ծըմակը* (Ձ): 4. Որտեղ կամ երբ օդի ջերմաստիճանը բարձր է, ոչ ցուրտ: *Աշունքը վէր կ՛ամ ա, էտ դուշէրը թըռչո՛ւմ ըն, ք՛ինամ տաք յըրգ՛իրնէ* (Բ): 5. Չսառած, սովորական ջերմությունը պահած: *Ծը՛ր՛քը տինում ա մըսէն, տը՛սնում՝ հանլա տաք ա* (Ձ) 6. *փխբ.* Շուտ բռնկվող, դյուրաբորբոք: *Տաք խասյաթ օնէ Տիկրանը* (Բ): 7. *փխբ.* Բուռն, լարված, թեժ: *Կօրծէն տաք վախտըն ա* (Բ): 8. *փխբ.* Սիրալիր, ջերմ: *Կըլ՝Օխը տինո՛ւմ ա մօրը տաք տո՛շին, քունավ ընցընում* (Ձ): 9. *փխբ.* Թարմ: *Տաք հաց ա, լ՛ըհա կարում ըս, կէ՛ր* (Բ): 10. Խիստ տաքացած, շիկացած: *Տաք ըրկաթավ ըտըրա մաշկը ը՛ղղում ըն, պէց թօղում* (Ձ): *գ.* 11. Շոգ, բարձր ջերմություն, տաքություն: *Տաքէն ամմէն մարթ չի կարէլ տէմ կէնա* (Բ): 12. Տաք եղանակ: *Տաքէ՛ը վէր ը՛ղնում ա, օգում ա պըրավէրկա անէ, տէսնա՝ կ՛ինին կէնում ա՞, թա քացախ ա՞ տէռալ* (ՀԱԲ, 15, 135): 13. *մ.* Տաքացնելու՝ տաքանալու չափ, այնպես, որ չմրսի՝ չսառի: *Խուխէն տաք բիդի կ՛ը՛ց տաս, վէր մըրսէ վէչ* (Բ):

- Տաք ճո՛ւր/ճիրէր - Հանքային տաք բուժիչ աղբյուր(ներ): *Ք՛ալբանջա՛ր տաք ճիրէր շատ կա* (Բ):

- Տաք չի, գ՛ո՛ւդ՝ում ըս, թա ցորտ ա - Մի բանի՝ երեւույթի բացակայությունը դրա հակառակի առկայության տպավորություն է թողնում:

- Տաք տը՛ղ - Լավ վարձատրվող՝ եկամտաբեր՝ պատվավոր պաշտոն՝ աշխատանք: *Հանը շատ ա օգ՝ում՝ մին տաք տը՛ղ տըղէն կօրծի տինի* (Բ):

ՏԱՔԻՐ - *տե՛ս* ՏԱՔ՝ԻՐ:

ՏԱՔ՝ԷՐ - *տե՛ս* ՏԱՔ՝ԻՐ:

ՏԱՔ՝ԻՐ - *տե՛ս* ՏԱՔ՝ԻՐ:

ՏԱՔ՝ԻՐ/ՏԱՔ՝ԻՐ/ՏԱՔ՝ԷՐ/ՏԱՔԻՐ/ՏԷՔ՝ԻՐ/ՏԷՔԷՐ *(գրբ. տայգր)* - *գ.* Ամուսնու եղբայրը կնոջ համար, տեգր: *... Մին էրո՛ւշ տը՛ղա յէլ տըղա յա պէրալ, փըսակալ ո՛ւրանն տանքրու ըխճըկան յըրա* (ՀԲ, 337):

ՏԱՔ-ՏԱՔ - *ած., մ.* 1. Տաք վիճակում, հենց նոր կրակից վերցրած: *Տաք-տաք խըրավածը պիրո՛ւմ ըն, թօթէն արաղը տինո՛ւմ, ք՛ը՛փ անում* (Ձ): 2. Շատ տաք: *Տաք-տաք ճո՛ւրը ածում ա կըլխէն, ըսպանում* (Ձ): 3. Բուռն, բուռն կերպով լարված, գրգռված: *Առռէ էն հըրսընքէն տաք-տաք վախտը Մէլիք-Շահնազարը խըմէս ա, կ՛իրմիրիս, ըսքընսէս տաք-տաք խօսէլը* (Ձ):

ՏԱՔՈՒԹՈ՛ՒՆ/ՏԸՔՕԹՈՒՆ *(գրբ. տաքութիւն)* - *գ.* 1. Արեւի՝ կրակի կամ այլ աղբյուրի արձակած ջերմությունը: *Իրը՛վէն տաքութո՛ւնը էնքան շատ ա, կարում չընք, թա տանան տո՛ւս կ՛անք* (Բ): 2. Մարմնի ջերմաստիճանի հիվանդագին բարձրացում, ջերմություն: *Խուխէն տաքութո՛ւնը պիցըրանում ա, մարը խացախ ա քընսում ջանը* (Բ):

- Տաքութո՛ւնո՛ւմը խօսէլ - Կցկտուր՝ անկապ խոսել (բարձր ջերմություն ունենալու ժամանակ): *Վէր Ա՛լիսանը ընքընսում ա տաքութո՛ւնո՛ւմը խօսէլը, կընէգ՛ը դօխտուր ա ծէն տամ* (Ձ):

ՏԱՔՕՑ - *տե՛ս* ՏԱՔ (11): *Էս տաքօցէն կարում չընք տէմ կէնանք* (Բ):

ՏԷԳ՝/ՏԷԿ՝/ՏԷՅԳ՝/ՏԸ՝Գ՝ *(գրբ. տիկ)* - *գ.* 1. Կենդանիների, հատկապես այծի եւ ոչխարի ամբողջական հանված մորթու տոպրակ՝ գինի եւն լցնելու համար, տիկ: *Էրկու փանդ, կըլխէն՝ մին տէգ՝, տէգ՝ին կըլխէն՝ մին ճէղաց...* (ԱՋ, 33): 2. Մի տիկի տարողություն: *Ասըմ ա.- Օխտը տիմանկ պէ՛ր, օխտը տէգ՝ ճո՛ւր. վէր մին մըսխալ պակաս ինի, կարէլ չըմ տո՛ւս օնիմ* (ՀԺՀ, V, 424):

- Տէգ՝ շինիլ - Ուռցնել, փքել: *Էնքան կէրալ ա, փօրը տէգ՝ ա շինալ* (Բ):

- Տէգ՝ տը՛ռնալ - Ուռչել, փքվել: *Պօկը տէգ՝ ա տը՛ռալ, էնքան ցօրտ ճո՛ւր ա խըմալ* (Բ):

ՏԷՋ[1]/ՏԸ՝Ջ[1]/ՏԸՋ[1] *(գրբ. տիզ)* - *գ.* 1. Բաշխերի կարգին պատկանող հավկիթաձեւ բարակ ու փոքրիկ միջատ՝ բույսերի, կենդանիների եւ մարդկանց մակաբույծ: *Ծը՛ր՛քը մը՛կնում ա, էտ տէզը կուռնը՝տական պուք տամ* (Ձ): 2. *փխբ.* Մեկի կամ մի բանի հաշվին ապրող: *Դէ՛, Մանրդին էլ տէզ ա, լի՞, ինք՛ը կօրծ չի անում, ամմա ախպօրցը ը՛ղխադածը օտում ա* (Ձ): 3. *փխբ.* Շատ փոքր բան: *Տանձին մը՛ծէրը ճօկում ա, տըզէրը թօղում* (Ձ):

- Տէզա մազ՝ խօզ՝օղ - *տե՛ս* Ասը՛ղ մաշկօղ:

- Տէզէրը քանդիլ - Մեկին միամտացնելով՝ մանրամասնությունները իմանալ՝ բացահայտել: *Էտ խուխէն խուսցընում ըն, տէզէրը քանդում* (Ձ):

- Տէզ կօխած դանա - Կեղտոտ՝ փնթի մարդ: *Ասում ա.- Էտ տէզ կօխած դանան ա՞ մընացալ, վէր ինձ օգ՝ի* (Ձ):

- Տէզ տը՛ռնալ, նը՛ստա կէնալ - *տե՛ս* Նը՛ստա կէնալ, պուք չընկ՝ալ:

- Տէզ տը՛ռնալ, պատան կէնալ - *հեգն.* Կյանքից կառչել, երկար ապրել (ծերերի մասին): *Սումբաթ դային տէզ ա տը՛ռալ, պատան կացալ* (Բ):

ՏԷՋ[2] - *տե՛ս* ՏԻՋ[2]:

ՏԷԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տէլին տալ - Ջառանցել, անկապ՝ կցկտուր բաներ ասել: *Ուռթունանց մօտէ հիվանդը ընքընսում ա տէլին տալը* (Ձ):

ՏԷԼԱՐ - *տե՛ս* ՏԱ՛ԼԱ՛Ր:

ՏԷԼԷԳ(Ը)ՐԷՅԿԱ - *տե՛ս* ՏԸՐԻԳ(Ը)ԼԷՅԿԱ:

ՏԷԼԷՂՐԱՄ - *տե՛ս* ԹԸԼԸՂՐԱՄ:

ՏԷԿ՝ - *տե՛ս* ՏԷԳ՝:

ՏԷՀՆԱԼ - *տե՛ս* ՏԸ՝ՍՆԱԼ:

ՏԷՀՆԸՎԱԼ - *տե՛ս* ՏԸ՝ՍՆԸՎԱԼ:

ՏԷՂ[1] *(գրբ. դեղ)* - *տե՛ս* ՃԱՐ (2, 3):

- Տէղ տալ - *տե՛ս* ՃԱՐԷԼ[2]:

ՏԷՂ[2] - *տե՛ս* ՏԸ՝Ղ[1]:

ՏԷՂ[3] - *տե՛ս* ԸՏԸ՝Ղ:

ՏԷՂԱԿ[1] - *տե՛ս* ՏԸ՝ՂԱԿ[1]:

ՏԷՂԱԿ[2] - *տե՛ս* ՏԸ՝ՂԱԿ[2]:

ՏԷՂԱՎ - *տե՛ս* ՏԸ՝ՂԱՎ:

ՏԷՂ-ԴԱ՛ՐՄԱՆ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ: *Թաքավէրը մարթիք՝ ա ը՛ղրկըմ աշխարքիս էն ճընդէրը, վէր տէղ-դանրմանն ճարին, ո՛ւրանն ջանիլ-ջիվան տըղին մին ճար անին* (ՀԺՀ, V, 580):

ՏԷՂԷԼ *(գրբ. դեղեմ)* - *տե՛ս* ՃԱՐԷԼ[2]:

ՏԷՂԷՆ[1]/ՏԸ՝ՂԷՆ[1]/ՏԷՂԻՆ[1] *(գրբ. դեղին)* - 1. *ած.* Ձվի դեղնուցի գույն ունեցող, դեղին: *Էտ ախճիգ՝ը էլ վանրին տէղէն շո՛ր էր ար կ՛ը՛նում* (Ձ): 2. *փխբ.* Գունատ, դալուկ: *Ըտըրա իլանը էլ մին մանշվանը, տէղէն իրը՛սավ տըղա յար* (Ձ):

- Տէղէն զանդան - *տե՛ս* ԶԱՆԴԱՆ:

- Տէղէն խօնգ/զանփռանն - Վառ դեղին, ոսկեգոյն: *Տէղէն խօնգ տանն ա* (Բ):

- Տէղէն ծը՛տ - *տե՛ս* ՏԸՂՆԱԾԸՏ:

- Տէղէն ծը՛տ ըսպանօղ - Անխիղճ, անգութ: *Իզէն տը՛ղէն ծը՛տ ըսպանօղ ա, էն հինչ յէթիմ բիդի պա՞հէ* (Բ):

- Տէղէն կակա - *տե՛ս* ՏԷՂԷՆ[1] (2):

- Տէղէն ճիտանուց - *տե՛ս* ՏԸՂՆԱԾԸՏ:

- Տէղէն ճիրանք - *տե՛ս* Տէղէն խօնգ:

ՏԷՂԷՆ[2] - *տե՛ս* ՏԸ՛ՂԷՆ[2]:

ՏԷՂԷՆ-ՏԸՂՆԸԿՈՒԿՈՒԾ - *տե՛ս* ՏԷՂԷՆ[1] (2):

ՏԷՂԸ - *տե՛ս* ՏԸ՛ՂԸ:

ՏԷՂԸՃԱՐ - *տե՛ս* ՃԱՐ-ՃՈՒՐ: *Թօթէն արաղը արաղ չի, ղարաբաղցուց հը՛տէ տըղըճար ա* (Զ):

ՏԷՂԻՆ[1] - *տե՛ս* ՏԸ՛ՂԷՆ[1]:

ՏԷՂԻՆ[2] - *տե՛ս* ՏԸ՛ՂԷՆ[2]:

ՏԷՄ/ՏԸ՛Մ - *կ.* 1. Մեկի՝ մի բանի դիմաց՝ առջեւ՝ հանդեպ: *Կամ ա, թաքավէրին տէմ չօքում, ըսքըսում նաղլ անէլը* (Զ): 2. Մեկի՝ մի բանի հակառակ՝ ընդդեմ: *Ըզարէն տէմ ճար չի կա* (Զ): 3. Ի վնաս մեկի՝ մի բանի, մեկի՝ մի բանի դեմ ուղղված: *Ժողովումը Կանփին նախագէն տէմ ա խօսում* (Զ): 4. *գ.* Դիմացի՝ առջեւի տարածություն՝ տեղ: *Էտ վախտը մին մարթ տէման տուս ա կամ* (ՀԱԲ, 15, 138):

- Տէմ անէլ - 1. Դեպի մեկի՝ մի բանի կողմը դարձնել՝ ուղղել: *Թըվանգը տէմ ա անում բիդի ախպօրը, յըրա անում* (Զ): 2. Մատուցել, առաջարկել, հրամցնել: *Միժմանիին խաղվավ լըցնում ա, տէմ անում դունըղնէրէն* (Զ): 3. Հեռել, հպել: *Ճըղացպանը մին ծը՛ռքը ճըղացէն քարէն տէմ ա անում, ճէղացը վը՛նն անում...* (ՆԼՂԺԲ, 134): 4. Որեւէ արգելքի առջեւ կանգնեցնել: *Մէզ էս դանդին տէմ ընօղէն բալան մը՛ռնէ* (Բ): 5. Մեկի՝ մի բանի ուղղությամբ՝ առջեւ բռնել՝ պահել մի բան: *Ռռնըթաթախ պիրում ըն մօրը տէմ անում* (Զ):

- Տէմը խաղ անէլ - Հղիության ժամանակ սաղմը մեկի ներկայությամբ արգանդի մեջ շարժվել, որ իբր նշան է, թե մանուկը այդ անձին կնմանվի: *Խօխան մօրը փօրումը թաքավէրին տէմը խաղ ա անում, մարը ուրխանում ա* (Զ):

- Տէմը խաղ չինիլ - Անհաղթելի՝ անկառավարելի լինել, արգելող՝ խանգարող չունենալ: *Դէ՛, Թէվանըն էլ ճօկ մարթ ա իլանլ, ընդրրա տէմը խաղ չիլանլ* (Զ):

- Տէմը կանլ/տանուս կանլ - Դիմավորել, ընդառաջ գալ, հանդիպել: *Վէր շէնան մուտանում ա, թօռնէրը տէմըն ըն կամ* (Զ):

- Տէմ ըղնէլ/ինիլ - 1. Կանգ առնել, չշարժվել, չշարունակել: *Խուսէլիս տէմ ա ըղնում, էլ կարում չի պէն ասէ* (Զ): 2. Հանդիպել: *Հըղէցը մին ծառու տէմ ա ընգնանում, ասում.- Էս լիհան կըտրիմ, քինանամ, էլ հօր ը՞մ հէռէ քինանամ* (ՆԼՂԺԲ, 110):

- Տէմ կէնալ - *տե՛ս* ՏԸՄԱՆԱԼ:

- Տէմ կըցընէլ - *տե՛ս* ՏԸՄԸՑ(Ը)ՆԷԼ:

- Տէմ տալ - 1. *տե՛ս* Տէմ անէլ: 2. *տե՛ս* Տէմ տինիլ:

- Տէմ տինիլ - Ստիպել, հարկադրել: *Էտ կընէգը տէմ ա տիրալ, թա.- Յա՛ յէս, յա՛ քու խօխատ, թա օգում ըս՝ մընամ, ըտըրան պիտի մօրթիս* (ԱԱ, 77):

- Տէմ օնէլ - *տե՛ս* Տէմ անէլ:

ՏԷՄԱՏԷՄ *(գրբ. դէմ ի դէմ, դէմ առ դէմ)* - *մ.* Երես երեսի, դեմառդեմ: *Քըշէրավը օխծը զանթնըմ ա, տը՛սնըմ, վը՛ր ուրանն անա մը՛ծ մին օխծ էն ա տէմատէմ կաղնած* (ՀԺՀ, V, 129):

ՏԷՄԱ(Ն)Ց/ՏԻՄԱ(Ն)Ց *(գրբ. ի դիմաց)* - *տե՛ս* ՏԷՄ:

ՏԷՄԲՈՒԼ - *տե՛ս* ՏԱՄԲՈՒԼ:

ՏԷՄԲՈՒԼԻ - *տե՛ս* ՏԱՄԲՈՒԼԻ:

ՏԷՄՀԱՐ/ՏԻՄՀԱՐ *(գրբ. դիմահար)* - 1. *գ.* Նեցուկ, հենարան: *Էտ ծառըն ա պատէն տէմհար կէնում, թա չէ պարան կըկա* (Բ): 2. *մ.* Դիմացից, դեմառդեմ: *Տէմհար մին արչ ա տանուս կամ, Ավօն սըրտաճաք ա տը՛ռնում* (Զ):

- Տէմհար անէլ/տալ - 1. Հենել, նեցուկ դնել: *Խընձորանն ճըղնէրէն տակէն փանդէրը տէմհար ա տամ, վէր կուտըրհատվին վէչ* (Բ): 2. Նեցուկ դարձնել, հենվել, կռթնել: *Չանլիգը տէմհար տալավ քինամ ա* (Բ):

ՏԷՄ-ՏԷՄԱ(Ն)Ց - *տե՛ս* ՏԷՄԱՏԷՄ:

ՏԷՅԳ - *տե՛ս* ՏԷԳ:

ՏԷՆ/ՏԸ՛Ն - *մ.* 1. Այն կողմ: *Պատառ տէն ըն քընում, տը՛սնում՝ կավը մին ծառու տակէ նըստած* (Զ): 2. Հեռու, մի կողմ: *Ասում ա.- Շուլուղը տէն, հանքին փըսըկվէլի մը՛թկ օնէ* (Զ): 3. *կ.* Հետո: *Քըշէրվա կէսանը տը՛նը թաքավէրին մը՛ծ տըղէն քօնը տանըմ ա* (ՀԺՀ, V, 16):

- Տէն ածէլ - Մի կողմ թափել (իբրեւ անպետք բան): *Տըրանա յէտը ժուղուվուրթան հուվը խըմիշկ ա քաշում, տանըմ ա տէն ածըմ* (ՆԼՂԺԲ, 18):

- Տէն անէլ - 1. Մի կողմ քշել, հեռացնել: *Հուռին հիյվընէն տէն ա անում, էլիա նըստում, վէր գանբան կօրծէ* (Զ): 2. Վտարել, վռնդել: *Ըտըրան թակում ըն, շէնան տէն անում* (Զ):

- Տէն ըղնէլ - 1. Մի կողմ՝ հեռու ընկնել: *Ծըմը՛ռնը կանթանը տէն ա ըղնում* (Զ): 2. Հյուծվել, ուժասպառ լինել: *Այան քանէ քինամ ա, տէն ա ըղնում* (Բ):

- Տէն ընգած(ը) - 1. Չնչին՝ անպետք՝ անարժան (բան): *Տէն ընգած մարթ ա Սաղին* (Բ): 2. Ամենաքիչը, առնվազն: *Ասում ա.- Էս էծը տէն ընգածը հէնգ մանէթ ածի* (Զ):

- Տէն կացէք - Հեգնական արտահայտություն՝ ուղղված իրեն ոչ հատուկ կամ իր ուժերից վեր որեւէ բան անողին: *Տէ՛ն կացէք, Մանրդին իրը՛քըտրժանէ տօն ա շինում* (Բ):

- Տէն կէնալ - 1. Մի կողմ քաշվել՝ հեռանալ՝ կանգնել: *Տը՛սնում ա, վէր հանը կամ ա, ինքը տէն ա կէնում* (Զ): 2. Ըստ ժամանակի՝ հեռանալ՝ անցնել: *Ծըմը՛ռնը վէր տէն ա կէնում, ծառէրը ըսքըսում ըն ծաղկէլը* (Բ):

- Տէն տալ - Մի կողմ անել՝ քաշել՝ լցնել՝ տեղափոխել: *Թիյը՛նը յօր ըն օնում, ծանը տէն տամ* (Բ):

- Տէն տինիլ - 1. Մի կողմ դնել, պահել: *Ճուղուպուրէն փօչէրը ճօկում ա, տէն տինում, վէր տա խուգէրէն* (Զ): 2. Ետ գցել, խնայելով կուտակել՝ հավաքել: *Այան ամմէն ամէս պատառ փուլ ար տէն տինում՝ նը՛ղ օրվա հը՛տէ* (Բ): 3. Հաշվի չառնել: *Կընէգ կա, մարթին ասածը տէն ա տինում* (Զ):

- Տէն քըցիլ - 1. Նետել, շպրտել, մի կողմ գցել: *Էս ախկատը չանլը տէն ա քըցում, էս խազանինը յէշում ա, տէսնում՝ Աստված ուրանն ըռաչին կաղնած* (ՀԱԲ, 15, 123): 2. Շատ էժան՝ ինքնարժեքից ցածր գնով վաճառել: *Տը՛սնում ա, վէր մանշտանի չի կա, յըղէ կավը քըսան մընէթավ տէն ա քըցանում, կամ տօն* (Զ):

- Տէն քինիլ - *տե՛ս* Տէն կէնալ:

ՏԷՆԱԿ/ՏԷՆԱԿ/ՏԱՆԱԿ/ՏԸ՛ՆԱԿ *(գրբ. դանակ)* - *գ.* 1. Կոթից եւ պողպատյա շեղբից բաղկացած կտրելու գործիք՝ դանակ: *Էս մարթին ջըբումը մին լավ տէնակ ա ինում, տուս ա օնում, տամ նագիր-վէգիրին...* (ՀԱԲ, 15, 84): 2. Որեւէ գործիքի կտրող մասը: *Ռռանդին տէնակը քուռացալ ա* (Բ):

- Տէնակըն էլ ա ուրանը, տըմակըն էլ, հունցը օգում ա, կըտրում ա - Բոլոր միջոցները իրենն են, գործի բնույթը ինքն է որոշում:

- Տէնակը պըկավը քաշիլ - *տե՛ս* ՄՕՐԹԷԼ (1):

- Տէնակը պըկէն տէմ անէլ/տինիլ - Բռնությամբ ստիպել, հարկադրել: *Տէնակը պըկէն տէմ ըն օնում, ծին յը՛ր օնում* (Զ):

- Տէնակը վըսկըռէն/պըկէն հըսնէլ/տէմ ըղնէլ - Այլեւս չկարողանալ համբերել, համբերությունը սպառվել: *Մին օր էլ տէնակը վըսկըռէն ա հըսալ, ժուղո-*

վուրթը էլ տէմ չի կացալ, դուշմանն էրէն նի յա ածալ շէնին յըէրէ խըրամատնէն, մուրթօտալ (ԱԱ, 32):

- Տէնակը վըսկըռէն/պըկէն հըսցընէլ/տէմ քըցիլ - Համբերությունից հանել: *Խանը տէնակը վէր վըսկըռէն տէմ ա քըցում, ժուղովուրթը բունտ ա պիցըրցընում* (Զ):

- Տէնակը տըմակումը քինիլ - Գործը հաջողվել, հաջողության՝ բախտավորության հանդիպել: *Ըսլանէն տէնակը տըմակումըն ա քըէցալ. կավը ճօխտակ ա ծընալ* (Բ):

- Տէնակը ուրանն կօթը կարէլ չի տանշի - *տե՛ս* Լամբը ուրանն տակէն իշըէղ չի տալ:

- Տէնակ թըխէլ - Դանակով հարվածել՝ վիրավորել՝ սպանել: *Կըռվում ըն, Սուրէնը տէնակ ա թըխում, ախպօրը ըսպանում* (Բ):

- Տէնակ թըխիս՝ ամրուն չի կաթէլ - Ասում են խիստ տխուր՝ հուսահատ՝ վշտացած մարդկանց մասին:

- Տէնակ նըհաշ տալ - Դանակով սպառնալ: *Վէր տէնակ ա նըհաշ տամ, կ'օղը փախճում ա* (Զ):

- Տէնակ քաշիլ - 1. Դանակով մեկի վրա հարձակվել՝ սպառնալ: *Հօրը յըրա տէնակ ա քաշում...* (Զ): 2. *տե՛ս* ՄՕՐԹԷԼ (1):

- Տէնակ քըցիլ - Գուշակության ձեւ, երբ դանակը նետում են եւ նրա ընկած դիրքից ելնելով՝ գուշակություններ անում: *Բախաջին ասմա.- էք'ուց կըկ'աս՝ տէնակ քըցիմ* (Զ):

- Տընակէն տակէն մընալ - Վիրահատության ժամանակ մեռնել: *Տանում ըն, վէր ապլէցան անին, տընակէն տակէն ա մընամ* (Բ):

- Տընակու տակ ըղնէլ - Վիրահատության ենթարկվել: *Խըէղճ Կ'իրիք'օրը ըստարէ իրքէք հըէտ տընակու տակ ա ընգալ* (Բ):

ՏԷՆԱԿ - *տե՛ս* ՏԷՆԱԿ:

ՏԷՆԳ' - *տե՛ս* ՂԱՆԳ':

ՏԷՊԷԳ'/ՏԷՊԻԳ'/ՊԷՊԷԳ'/ՊԷՊԻԳ' *(գրբ. բոկ)* - 1. *տե՛ս* ՎԸՆՆԸՏԷՊԷԳ': 2. *ածական. փխբ.* Որեւէ բանում անհմուտ՝ անտեղյակ, անգետ: *Ղէ՛, Սէգ'ին տէպէգ' ա, ըշտըղա յա՞ գ'ուդում հընձ անէլը* (Զ):

ՏԷՊԻԳ' - *տե՛ս* ՏԷՊԷԳ':

ՏԷՌ[1] - *տե՛ս* ՏԸՌ:

ՏԷՌ[2] *(գրբ. դեռ)* - *տե՛ս* ՀԱԼԱ:

ՏԷՌԱԾ - *տե՛ս* ՏԸՌԱԾ:

ՏԷՌ(Ն)ԱԼ - *տե՛ս* ՏԸՌ(Ն)ԱԼ:

ՏԷՌՆԸ/ՏԱՌՆԸ *(գրբ. դառն)* - 1. *ածական.* Յուրահատուկ անախորժ համ ունեցող՝ դառն: *Տէռնը տանն ա քաղում, պիրում* (Զ): 2. *գրական.* Դառնահամ ուտելիք: *Էտ տէռնը հունց ը՞ս օտում* (Բ):

ՏԷՌՆԸ-ՏԷՐՏԱԿ - *ածական.* Բոլորովին դատարկ: *Տէռնը-տէրտակ տօն ա* (Բ):

ՏԷՍ[1]/ՏԸԷՍ[1] - 1. *մակբայ.* Այս կողմ: *Տէս ա յէշում, տըէսնում էտ տըղէն, ասըմ.- Յէ՛ք ըստէղ* (ՀԺՀ, V, 564): 2. *կապ.* Ի վեր, այդ ժամանակվանից սկսած մինչեւ այժմ (ժամանակ ցույց տվող բառերի բացառականի հետ): *Էտ օրաց տէսըն էլ ըտըղէտ անը՝ մը մընաս ա Մամէդ ծլանն դանսի (Մամէդին մըէռած ծոր)* (ԱԱ, 21):

ՏԷՍ[2] - *տե՛ս* ՏԸԷՍ[2]:

ՏԷՍԱԿ/ՏԸԷՍԱԿ *(գրբ. տեսակ)* - *տե՛ս* ՋՈՒՌՈՒ:

ՏԷՍԸՏԷՆ - *տե՛ս* ՏԷՍ-ՏԷՆ:

ՏԷՍՆԱ - *տե՛ս* ՏԸԷՍՆԱ:

ՏԷՍՆԱԼ - *տե՛ս* ՏԸԷՍՆԱԼ:

ՏԷՍՆԱ(Ն)Ք - *տե՛ս* ՏԸԷՍՆԱ(Ն)Ք:

ՏԷՍՆԱՍ - *տե՛ս* ՏԸԷՍՆԱՍ:

ՏԷՍՆԸ/ՏԸԷՍՆԸ/ՏԱԽԾԸ *(գրբ. դաղձն)* - *գրական.* Շրթնաձաղիկների ընտանիքին պատկանող խոտաբույս՝ դաղձ: *Տէսնը լ'ավ համ օնէ* (Բ):

ՏԷՍՆԸՎԱԼ - *տե՛ս* ՏԸԷՍՆԸՎԱԼ:

ՏԷՍ-ՏԷՆ/ՏԷՍԸՏԷՆ/ՏԸԷՍ-ՏԸԷՆ/ՏԸԷՍԸՏԸԷՆ - *գրական.* Ջանազան բաներ (ուտեստներ, ապրանքներ եւն): *Էտ կընէգ'ըտ ըսկըսում ա վըէսկավը տանը հէտէ տէսա-տէնա՝ ինք' օնէլը* (ՆԼՂԺԲ, 29):

ՏԷՍ ՈՒ ՃԱՆԱ(Ն)Չ/ՏԸԷՍ ՈՒ ՃԱՆԱ(Ն)Չ - *ածական.* Հանրածանոթ, հանրաճանաչ: *Տէս ու ճանանչ մարթ ա իլալ Պըլը-Պուղին* (Զ):

ՏԷՍՈՒՏԷՆ/ՏԸԷՍՈՒՏԸԷՆ - *մակբայ.* Այս ու այն կողմ: *Շատ տըէսուտըէն ա ման կ'ամ, շատ ա ծըրավըմ...* (ՀԺՀ, V, 80):

- Տէսուտէն անէլ/ըղնէլ - 1. Այս ու այն կողմ ընկնել, թափառել: *Շատ ա տէսուտէն ըղնում, շատ ա շօռ կ'ամ, ամիա էտ մարթին քըթէնում չի* (Զ): 2. Ելք՝ միջոց փնտրել: *Շատ տէսուտէն ընէլան յէտը վըէչ մին պանն կարում չընն անէն* (ՆԼՂԺԲ, 100): 3. Որոշակի չասել, խոսքը ծամծմել: *Հինչ ը՞ս տէսուտէն ըղնում, կարքէն ամ՛ս, տըէսնամ՝ հինչ ա իլալ* (Բ):

- Տէսուտէն քըցիլ - Մեկին այս ու այն կողմ գցել, թափառական դարձնել: *Հանը տըղէն տանան տուս ա քըցում, տէսուտէն քըցում* (Զ):

ՏԷՍՔ/ՏԸԷՍՔ *(գրբ. տես)* - *գրական.* Արտաքին կերպարանք: *Վարթիթէրին տէսքան հայիլ-մայիլ կըտրած՝ մընըմ ա ըստըէղ կաղնած* (ԼՂԲ, 339):

ՏԷՍՔԱՎ/ՏԸԷՍՔԱՎ - *ածական.* Հաճելի՝ դուրեկան արտաքինով, գեղեցիկ: *Տէսքավ ախճիգ' ա Հէղանը* (Բ):

ՏԷՎ - *տե՛ս* ՂԷՎ:

ՏԷՏ - *տե՛ս* ՏԸԷՏ:

ՏԷՏ(Ը)ՐԱԿ[1]/ՏԷՏ(Ը)ՐԱԿ[1] *(գրբ. տետրակ)* - *գրական.* Շապիկի մեջ կարած որոշ չափի մաքուր թղթեր՝ գրելու՝ նկարելու եւն համար, տետր: *Տէտրակը պէնում ա, կ'իրում* (Զ):

ՏԷՏ(Ը)ՐԱԿ[2]/ՏԷՏ(Ը)ՐԱԿ[2] *(գրբ. տատրակ)* - *գրական.* Աղավնիների ընտանիքին պատկանող թռչուն՝ տատրակ: *Էրկու տէտրակ ա ըսպանում, յըէտ տըէռնում* (Զ):

ՏԷՏ(Ը)ՐԱԿ[1] - *տե՛ս* ՏԷՏ(Ը)ՐԱԿ[1]:

ՏԷՏ(Ը)ՐԱԿ[2] - *տե՛ս* ՏԷՏ(Ը)ՐԱԿ[2]:

ՏԷՐ *(գրբ. տէր)* - 1. *տե՛ս* ՏԱՐ: 2. *գրական.* Հարգական կոչական բառ՝ մեկին դիմելու համար: *Կամ ա, թա.- Տէր Բախշի, Մէլիք'ը ք'ըէզ ծէն ա տամ* (Զ):

- Տէր Աստուծ - Սրտնեղության՝ զարմանքի՝ երկմտանքի եւն արտահայտություն: *Տէր Աստուծ, էս կըռըէվը հիբ ա՞ պըրծընական, մէխկ ըն մէր ջիհիլնէն* (Բ):

- Տէր ըղօրմի ասէլ - *տե՛ս* Ըղօրմի ասէլ:

- Տէր հայր - *տե՛ս* ԴԷՐ:

ՏԷՐԻՏՕՐՅԱ *(ռուս. территория, լատ. territorium)* - *գրական.* Սահմանազատված տարածություն՝ տարածք: *Մէծ տէրիտօրյա յա ինում տըրան* (ՀԱԲ, 15, 114):

ՏԷՐՄԱՆ/ՏԸԷՐՄԱՆ/ՏԱՐՄԱՆ - *գրական.* Հացաբույսերի մանրացրած ցողունը՝ հարդը, որ աղյուսաձեւ կապում եւ պահում են որպես ձմեռվա անասնակեր: *Պիրում ա ախուռէն մաչին՝ տիրմանէն տակէն, լօխ թաղում* (ՀԱԲ, 15, 99):

- Տէրմանը մըլլըցընէլ/քամուն տալ - *տե՛ս* Թէփուռը մըլլըցընէլ:

- Տըրմանու տակավ ք'ինօղ ճուր - Խորամանկ՝ ծածկամիտ մարդ: *Ծատօրը տըրմանու տակավ ք'ինօղ ճուր ա* (Բ):

ՏԷՐՄՈՒՍ/ՏԸԷՐՄՈՒՍ *(ռուս. термос, հուն. thermos)* - *գրական.* Հատուկ կառուցվածքով անոթ՝ լցվող նյութերը սառչելուց կամ տաքանալուց պահպանելու համար, թերմոս, ջերմապահ: *Ապան ամ՛մէն օր բաղը ք'ինանլիս տէրմուսը չայավ լըցնում ար, տանում* (Բ):

ՏԷՐՏԱԿ/ՏԸԷՐՏԱԿ/ՏԱՐՏԱԿ *(գրբ. դատարկ)* - *ածական.* 1. Ոչնչով չլցված, մեջը բան չպարունակող: *Մին տէրտակ յանշիգ' ա յօր օնում, էտ վըէսկէն ածում մաչը, կ'ըէղում* (Զ): 2. Թափուր, չզբաղեցրած: *Լօխ նըստօտում ըն, տէրտակ տըէղ չի մընամ* (Զ): 3. Անմարդաբնակ, անբնակ: *Էտ ծըմակումը մին կուճուր տօն ա ինում, նի յըն մընում էտ տօնը, տէսնում տէրտակ* (ՀԺՀ, V, 269): 4. Անբովանդակ, բովանդակազուրկ, դատարկամիտ: *Մին տէրտակ խօսկ ա ասում, հօրը կըգնըվցընում* (Զ): 5. Ան-

նշան, չնչին: *Ջէջին արաղը թոթէն ըրաղէն քըշտէն տէրտակ պէն ա* (Բ): 6. Դատարկաձեռն, ձեռնունայն: *Էտ տըղան տէրտակ անց ա կընաս, քիս տօն* (ՆԼՂԺԲ, 59):

- Տէրտակ ա - *տե՛ս* ՎԷՉԻՆՉ:

- Տէրտակ ըրուրու(ն)ց ըրօրէլ - 1. Աննպատակ՝ անհիմն գործ բռնել: *Մինը կա վէջ՝մէր Միխակէն ասէ.- Միհէնգ հու վա՞ խաղուն քաղում, վէր տու քաղում ըս, հինչ ը՞ս տէրտակ ըրուրունց ըրօրում* (Բ): 2. Պարապ լինել, ոչինչ չանել: *Խալխը հօնձ ըն անում, մէր Ղանգարը էլ տէրտակ ըրուրուց ա ըրօրում* (Բ):

- Տէրտակ թօղ(ն)էլ Ամեն ինչից՝ ունեցվածքից զրկել, կողոպտել: *Ղըջղոնէն ըտըրան պըլօկում ըն, տէրտակ թօղնում* (Ձ):

- Տէրտակ ծը՛րքավ - Առանց նվերի՝ կաշառքի եւն: *Ինքը՛ն էլ տէրտակ ծէռքավ հըղէ յա ըղնում բըդի յէրգ՛ինք՛* (ՀԺՀ, VI, 180):

- Տէրտակ կարաս - Դատարկամիտ՝ դատարկախոս մարդ: *Հըմբանցին տէրտակ կարաս ա, լօխճին գանլան տանում ա* (Բ):

- Տէրտակ կըրասէն սանը պէցանր կինի - Դատարկամիտ՝ դատարկախոս մարդիկ բարձր են խոսում:

- Տէրտակ մըհակէն շօն չի հանչում - 1. Առանց պատճառի ոչինչ չի լինում: 2. Դատարկաձեռն այցելողին ուշադրության չեն արժանացնում:

- Տէրտակ մընալ/նըստէլ - Ջուրկ՝ ձեռնունայն մնալ: *Տօնը-տը՛ղը էրվում ա, Փառանձինը տէրտակ ա մընամ* (Ձ):

- Տէրտակ ջուբավ - *տե՛ս* Ջուբը ծակ (1):

- Տէրտակ տուպ(ը)ռակէն/ըխօռէն էշ չի զըռռալ - *տե՛ս* Տէրտակ մըհակէն շօն չի հանչիլ:

- Տըրտակավ լիգ՛ը - *հեգն. տե՛ս* ՏԷՐՏԱԿ:

ՏԷՐՏԱԿԸԲՕԾ/ՏԸ՛ՐՏԱԿԸԲՕԾ/ՏԱՐՏԱԿԸԲՕԾ/ՏԷՐՏԱԿՈՒԲՕԾ - *տե՛ս* ՏԷՐՏԱԿ (6): *Խաղ ա անում, փողը լօխ տանել տամ, տէրտակըբօշ տօն ք՛ընում* (ՀԺՀ, V, 478):

ՏԷՐՏԱԿ-ՄԷՐՏԱԿ/ՏԸՐՏԸԿ-ՄԷՐՏԱԿ/ՏԻՐՏԸԿ-ՄԷՐՏԱԿ - *ած., մ.* Դատարկամիտ, ոչինչ չարժեցող: *Տէրտակ-մէրտակ խուսկէրք ա ասում* (Բ):

- Տէրտակ-մէրտակ խօսէլ/տանուս տալ - Հիմար-հիմար խոսել, անմիտ բաներ ասել: *Սահանք ասում ըն.- Սա պը՛էլ ա, յէր պիտի կէնա, տիրտըկ-մէրտակ տանուս տա* (ՆԼՂԺԲ, 131):

ՏԷՐՏԱԿ-ՍԸԲԸԼԴԸՐԱՆ - *ած.* Ընչազուրկ, ծայրահեղ աղքատ: *Ուրէրան մին օր թաքավը՛ղը անրանն էտ հանրի-փանրի ըխճըկանը տամ ա էտ տէրտակ-սըբըլդըրան տըղէն* (ՀԺՀ, VII, 134):

ՏԷՐՏԱԿՈՒԲՕԾ - *տե՛ս* ՏԷՐՏԱԿԸԲՕԾ:

ՏԷՐՏԷՐ/ՏԸ՛ՐՏԸ՛Ր - *տե՛ս* ԴԷՐ: *Ախճիգը տը՛ռնում ա ժամ, տըղան էլ տէրտէր, ծիյանքըն էլ գանգ՛էր* (ՀԺՀ, V, 176):

ՏԷՐՈՒԹՈՒՆ *(գրբ. տէրութիւն)* - *գ.* Թագավորություն, երկիր, տերություն: *Շատ ա ք՛ինամ, խըրէգ՛ ա ք՛ինամ, հըսնում ա մին էրանուշ տէրութուն* (Ձ):

ՏԷՓ/ՏԱՓ *(հ.ե. *deph-, պրս. dāf)* - *գ.* 1. *տե՛ս* ԴԸՆԳԸԼԲԱՁ: 2. Ճյուղերից հյուսած, վրան կտորից երես քաշած եւ մեջը թեփ կամ լաթեր լցրած կլորավուն եւ տափակ բարձ՝ փայտե կոթով կամ առանց կոթի, որի վրա դնելով բացված խմորագունդը՝ կպցնում են թոնրի պատին: *Տէփը ըղնում ա թուրնէն մաչը, էրվում* (Ձ): 3. Օրորոցում երեխայի տակ դրվող բարձիկ: *Լօլակը տէփին մաչին ըն տինում* (Բ): 4. Այգիներում փոքրիկ հյուղակ: *Մէր խաղվէն բաղումը մին տէփ ա իլալ, բաղվանչին ըտը՛ղ ար քօն հինում* (Բ):

- Տէփին տինիլ, պատան տալ - Գործը տեղը տեղին՝ կարգով՝ ճիշտ կատարել: *Ուստա Կանք՛ին ամմէն հինչը լ՛ավ ա անում, տէփին ա տինում, պատան տամ* (Բ):

- Տէփը ճըղած (դավալ) - Աշխույժ, համարձակ խոսող (մարդ): *Տէփը ճըղած դավալ ա մէր խօրէնը* (Բ):

ՏԷՓ-ՋՈՒՌՆԱ - *տե՛ս* ՋՈՒՌՆԱ-ԴԱՎԱԼ:

ՏԷՓՉԻ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԲԱՁԻ:

ՏԷՓՈՒՐ/ԹԸՓՕՐԱ *(գրբ. թափուր)* - *գ.* 1. Միակտուր փայտե մեծ ափսե կամ սկուտեղ: *Մըսէրը իփանում ըն, տէփուրէն շարում, դունըղնէրէն տէմ անում* (Ձ): 2. Կլոր փոքրիկ սեղան: *Տանը իլանծը մին կարավաթ ա հինում, մին տէփուր, մին դաբըրէտկա* (Ձ):

ՏԷՔԷՐ - *տե՛ս* ՏԱՔ՛ԻՐ:

ՏԷՔ՛ԻՐ - *տե՛ս* ՏԱՔ՛ԻՐ:

ՏԸՋ[1] - *տե՛ս* ՏԷՋ[1]:

ՏԸՋ[2]/ՏԸ՛Ջ[2] - *տե՛ս* ՏԸՌ (երեխաների մասին):

ՏԸՋԱՏԱՐ/ՏԻՋԱՏԱՐ - *գ.* Խոտի դեզի տեր: *Տըզատարը կամ ա, տը՛ռնում՝ տիզը էրված* (Ձ):

ՏԸՋԱՓԱՂ/ՏԻՋԱՓԱՂ *(գրբ. դիզափայտ (որտեղ փայտի դեզ կա)* - *գ.* Խոտի դեզի կենտրոնում հաստատված փայտ՝ դեզը քանդվելուց պաշտպանելու համար: *Առանց տըզափանդ տիզը քամէն ցըրը՛վ կըտա* (Բ):

- Տըզափանդ տը՛ռնալ - Ուղիղ՝ ձիգ կանգնել: *Հինչ ը՞ս տըզափանդ տը՛ռալ, խէ նըստում չը՞ս* (Բ):

ՏԸՋԶ - *ձ.* 1. Տզզալու ձայնը: *Տը՛զզ, մին ճանջ կամ ա, ըտըրա կըլխէն վէր կամ* (Ձ): 2. *փխբ.* Փոքր երեխային լացելու մղող ձայն: *Վէր ասում ա՝տը՛զզ, խօխան լանց ա հինում* (Բ):

- Տըզզ անէլ - *տե՛ս* ՏԸՋԶԱԼ:

ՏԸՋԶԱԼ *(գրբ. տզզամ)* - *չբ.* 1. Տզզոց հանել: *Էտ վախտը մին էլ ա տը՛սնում մին ճանջ տըզզալավ ակուշկավը նի մըտավ* (ՀԺՀ, V, 173): 2. *փխբ.* Լալ, թնձկալ (երեխաների մասին): *Խօխան տըզզամ ա, մարը փըռնում ա թակում* (Բ):

ՏԸՋԶԱՆ[1] - *գ.* Վայրի տանձ կամ խնձոր: *Տըզզանավ թօրբան լըսնում ա, կամ տօն* (Ձ):

ՏԸՋԶԱՆ[2] - *ած.* Տզզացող, տզզոց հանող: *Տըզզան ճանջ ա* (Բ): 2. *փխբ.* Լալկան, նվնվան (երեխաների մասին): *Տըզզան խօխա յա Արտօն* (Բ):

ՏԸՋԶԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ՏԸՋԶԱԼ: 2. *նբ.* ՏԸՋԶԱԼ-ի:

ՏԸՋՕՆ - *գ.* 1. Ճանճերի՝ մեղվի եւն թռչելուց թեւերի թրթռումից առաջացող ձայնը: *Ճընջէրէն տըզզօնը մէզ քունը-հարամ ըրավ* (Բ): 2. *փխբ.* Երեխաների միալար լացի ձայնը: *Հանը թա.- Էտ խուխէն տըզզօնը կըտըրցըրէք՛* (Ձ):

ՏԸՋԶՕՑ - *տե՛ս* ՏԸՋԶՕՆ:

ՏԸՋԷԼ - *տե՛ս* ՏԸՌԷԼ (երեխաների մասին):

ՏԸՋԸԹԷՎԷԼ/ՏԻՋԻԹԷՎԷԼ - *չբ.* Կուչ գալ, կծկվել (ցրտից, հիվանդությունից եւն): *Հավէրը տըզըթէվալ ըն* (Բ):

ՏԸՋԸՎԱՎԱ/ՏԻՋԻՎԱՎԱ - *տե՛ս* ԹԸՍԸՎԱՎԱ:

ՏԸՋԸ-ՎԸՋԻ/ՏԻՋԻ-ՎԻՋԻ - *տե՛ս* ԽՈՒՐԴԱ-ՍՈՒՐԴԱ:

ՏԸՋՎԸՋԱԼ - *տե՛ս* ՏԸՋՏԸՋԱԼ:

ՏԸՋՎԸՋԱՆ - *տե՛ս* ՏԸՋՏԸՋԱՆ:

ՏԸՋՎԸՋՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸՋՏԸՋՑ(Ը)ՆԷԼ:

ՏԸՋՎԸՋՕՆ - *տե՛ս* ՏԸՋՏԸՋՕՆ:

ՏԸՋՎԸՋՕՑ - *տե՛ս* ՏԸՋԶՕՑ:

ՏԸՋՏԸՋԱԼ/ՏԸՋՎԸՋԱԼ - *տե՛ս* ՏԸՋԶԱԼ (շատերը կամ շատ անգամ):

ՏԸՋՏԸՋԱՆ/ՏԸՋՎԸՋԱՆ - *տե՛ս* ՏԸՋԶԱՆ[2]:

ՏԸՋՏԸՋՑ(Ը)ՆԷԼ/ՏԸՋՎԸՋՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ՏԸՋԶԸՑԱԼ: 2. *նբ.* ՏԸՋԶԸՑԱԼ-ի:

ՏԸՋՏԸՋՕՆ/ՏԸՋՎԸՋՕՆ - *տե՛ս* ՏԸՋԶՕՆ:

ՏԸՋՏԸՋՕՑ/ՏԸՋՎԸՋՕՑ - *տե՛ս* ՏԸՋՏԸՋՕՆ:

ՏԸՋՈՒԼԻ(Գ՛) - *տե՛ս* ՏԸՋՈՒՐԻ(Գ՛):

ՏԸՋՆԻՐԱԿ - *տե՛ս* ՏԸՋՆԻՐԻ(Գ)ի):

ՏԸՋՆԻՐԻ(Գ)/ՏԸՋՆԻՐԱԿ/ՏՆԻՋՆԻՐԻ(Գ)/ՏԸՋՆԻԼԻ(Գ)/ՏՆԻՋՆԻԼԻ(Գ) - *գ.* 1. Գյուղական փոքրիկ ճրագ: *Տըզուրիգը նի յա կըցընում, յոր օնում, նի մընում կ'ումը, տըէսնում՝ կավը ծընած* (Ձ): 2. *փխբ.* Աղոտ լույս արձակող լուսավորության աղբյուր, աղոտ լույս: *Էս էլ հо լամբ չի՞, տըզուրիգ ա, լի՞* (Բ):

- Տըզուրիգ անել - Աղոտ կերպով լուսավորել՝ լույս տալ: *Էս լամբը տըզուրիգ ա անում* (Ձ):

ՏԸՋՕՏԷԼ/ՏՈՒՋՕՏԷԼ - *տե՛ս* ՏԸՌՕՏԷԼ:

ՏԸԷԳ - *տե՛ս* ՏԷԳ:

ՏԸԷՋ[1] - *տե՛ս* ՏԷՋ[1]:

ՏԸԷՋ[2] - *տե՛ս* ՏԸՋ[2]:

ՏԸԷՋՆԸ - *տե՛ս* ՏԸՋՋԱՆ[1]:

ՏԸԷՅՆԱԼ - *տե՛ս* ՏԸԷՍՆԱԼ:

ՏԸԷՅՆԸՎԱԼ - *տե՛ս* ՏԸԷՍՆԸՎԱԼ:

ՏԸԷՊ[1]/ՏԸՊ[1]/ՏԷՊ[2] *(գրբ. տեղ)* - *գ.* 1. Տարածություն: *Պատառ տըէղ վէր քինամ ըն, մին պառավ մարթ ա ջիհիում* (Ձ): 2. Որեւէ բանով բնորոշվող վայր: *Աշանըն էլ կ'ինու տէղ ա* (ՅԱԲ, 15, 125): 3. Մեկի՝ մի բանի գտնվելու վայրը: *Օշափնէն էլ ուրթում ըն կէրալ, ճաքճաք ըն յէկալ, թա.- Տէղը գ'ուդում չընք* (ՅԺՅ, VI, 27): 4. Մեկին՝ մի բանի հատկացված վայր: *Նոքանը էլիա կանչում ա, կ'ամ տէղը* (ՅԺՅ, V, 280): 5. Որեւէ առանձին մաս՝ հատված՝ կտոր: *Մըսէն լավ տըղէրան կըտորում ա, խըրավում* (Ձ): 6. Որեւէ մեկի գրաված դիրքը հասարակության մեջ՝ ընտանիքում եւն: *Շէնըմը ուրանն օժժավ ինիլանվը առաչի տըէղը Սամսօնըն ա* (Բ): 7. Պաշտոն, աշխատանք: *Պէցուր տըէղ ա կօրծ անում Մաշինկին տըղան* (Բ): 8. Անկողին: *Տէղէրը վէր ըն քըցում, քօն ինըմ, Պիճուն ըշկէրէն քօն չի կ'ամ* (ՆԱԲ, 30): 9. Բաց՝ ազատ տարածություն, միջոց: *...Տօռնըն էլ քըմական նըհըէտ ա ինում, տուս կ'ալի տըէղ չի ինում* (ՅԺՅ, VI, 270): 10. Մաս, բաժին: *Վըէրսէն մէսը հէնգ տըէղ կէս ըն անում* (Ձ): 11. Մի բանից մնացած հետք: *Յարան հիշկան էլ սըղանա, մին ա, տըէղը մընան ա* (Բ): 12. Նշված՝ նշանակված վայր: *Ըտըրանք ասած վըխտէն կ'ամ ըն էտ տըէղը* (Ձ): 13. Միջավայր, հասարակություն, հասարակական վայր: *Պառավը ասում ա.- Մյ բալա, ըստըէղ լօխ կ'օղէր ըն, էս քու տըէղըտ չի* (Ձ): 14. Հիմք: *Հանց քամէ ըրավ, վէր քըէրծը տըէղան պուք յըէկավ* (Բ): 15. Դադար առնելու՝ գիշերելու վայր, իջեւան: *Մին տըէղ չընը քըթէնում, թա քըշէրը կէնան* (Ձ): 16. *կ.* Փոխարեն, փոխանակ: *Միհէնգ'վա ջիհիլնէն ուրանց հօրանցը քըօմանգ ընէլին տըէղ, սաղ օրը հըպարապ շօռ ըն կ'ամ* (Ձ):

- Տըէղ անէլ - Տեղավորելու՝ տեղավորվելու համար տեղ բաց անել: *...Աղվէսը կ'ինլին ասում ա.- Դէ վանքումը տըէղ ըրա, յէս էլ նի մընէմ* (ՅԺՅ, VII, 227):

- Տըէղան յըէր կէնալ/տուրուր կ'ալ - Որեւէ բանի ձեռնամուխ լինել, որեւէ բան ձեռնարկել (հիմնականում գործածվում է ժխտական կամ հարցական ձեւով): *Շէնումը լօխ կօրծ ըն անում, մէր Արտաշըն էլ ըսկի տըէղան յըէր չի կէնում* (Բ):

- Տըէղան յըէր կէնօղը - Ամեն մարդ, պատահական անձնավորություն: *Դէ Ռուբէնը հինչ բաղվանչի՞. տըէղան յըէր կէնօղը նի յա մընում բաղը, կ'ուղութուն անում* (Բ):

- Տըէղավը մին - Իր ողջ էությամբ, ամբողջովին: *Էս էլ հо ցօրէն չի՞, տըէղավը մին վըէսկէ յա* (Բ):

- Տըէղավը մին կըրակ տըէռնալ - Ջանք չխնայել, բոլոր միջոցները կիրառել: *Էտ մարթը մըտածում ա, ասում.- Վըէր յէս տըէղավըս մին կըրակ էլ տըէռնամ, մինչէվ լուսը իծծուն մէխ էլ չըմ կարէլ կըտրէմ...* (ՅԺՅ, VII, 199):

- Տըէղավը մին վըէսկէ տըէռնալ - Մեծ արժեք ներկայացնել, շատ թանկարժեք լինել: *Տըղան ասում ա.- Վէր տըէղավը մին վըէսկէ էլ տըէռնա, յըէս էտ կ'ուղացած ըպրանքան մուտանալ չըմ* (Ձ):

- Տըէղաց անել - 1. *տե՛ս* Տըէղ հըսցընել: 2. Ամուսնացնել: *Գ'ուլին տըղէն ա ըխճըկանը տըէղաց ըրավ, ըրխըյնացավ* (Բ):

- Տըէղաց ինիլ - 1. *տե՛ս* Տըէղ հըսնել: 2. Ամուսնանալ: *Հանբուն կուճի տըղան էլ տըէղաց իլանվ, տօն տըէռավ* (Բ):

- Տըէղ գ'իդօղ - Ուրիշներին հարգող՝ օգնող, երախտապարտ: *Տըէղ գ'իդօղ մարթ ա Մըրքըրան* (Բ):

- Տըէղէն ուրթակ - 1. *տե՛ս* Տըէղավը մին: 2. *տե՛ս* Տըէղը տըէղէն:

- Տըէղէն տակը ըղնէլ - Անկողնային հիվանդ դառնալ: *Մին օր էլ էտ թաքավէրը տըէղէն տակըն ա ըղնում* (Ձ):

- Տըէղէն տակը քըցիլ - Անկողնային հիվանդ դարձնել: *Էս ցօրտը շատ մարթու տըէղէն տակը կըքըցի* (Բ):

- Տըէղը անել - Տեղը որոշել՝ իմանալ: *Տըէղը անում ա, քինամ մին լավ ծի ինք օնում* (Ձ):

- Տըէղը գ'իդալ - Գնահատել, հարգել: *Տըղան վէր ուրան մօրը տըէղը գ'իդաց վէչ, էն հինչ տըղա՞* (Բ):

- Տըէղը դինչ կէնալ - *տե՛ս* Դինչ կէնալ:

- Տըէղը ըղնէլ - *տե՛ս* Տըէղը կ'ալ:

- Տըէղը ընգած տըէղը - Հարկ եղած դեպքում: *Տըէղը ընգած տըէղը մինը ինում չի, թա քըօմանգ անէ* (Բ):

- Տըէղը թըխծընէլ - *տե՛ս* Տըէղը պընդցը(ը)նէլ:

- Տըէղը թօղ(ն)էլ - 1. Անմիջապես մեռցնել՝ սպանել: *Գ'ուլլան տամ ա ճըկատան, տըէղը թօղում* (Ձ): 2. Անմիջապես ազդել՝ ներգործել՝ բուժել: *Ասում ա.- Էս ճարը խըմէ, կըլիսացավըտ տըէղըն ա թուղլական* (Ձ):

- Տըէղը ինիլ - 1. *տե՛ս* Ուրան տըէղը ինիլ: 2. Հարմար՝ պատշաճ լինել, արժանի լինել: *Քըօմանգ ընօղէն Աստուծ հիշկան քըօմանգ անէ, տըէղը ա* (Ձ):

- Տըէղը լէն - Նյութապես ապահով, ապրուստի միջոցներով ապահովված: *Ախճիգը թա.- Մ մար, իմ տըէղըս լէն ա, արխային կա՛ց* (Ձ):

- Տըէղը լինանալ - Ապրուստի միջոցներն ավելանալ, ապահով կյանք ստեղծվել: *Մին հարուստ ախճիգ ա օգում, տըէղը լինանում ա* (Ձ):

- Տըէղը լինը(ը)նէլ - Ապրուստի միջոցներն ավելացնել, ապահով կյանք ստեղծել: *Ըտի նախըրչուն տըղան էտ պալատումը տըէղը լինըցընում ա, թաքավէրին ըխճըկանը նըհըէտ լավ ապրում* (Ձ):

- Տըէղը ծանդըր ինիլ/կէնալ/ նըստէլ - 1. Իրեն լուրջ պահել, անմտություն՝ թեթեւություն չանել: *Ինանթ ա՝ պառավ մարթը տըէղը ծանդըր կըկէնա, միհէնգվա պըռըվնէն ջիհիլնէրան բէթանը ըն* (Բ): 2. Մի տեղ ամուր հաստատվել, հեռանալու՝ լքելու մտադրություն չունենալ: *Մէլիքը ասում ա.- Քըէցէք խանէն ըսը՛ցէք, վէր մունք մըէր տըէղը ծանդըր ընք նըստալ, մունք մէր վըէղան տուս յըէկօղը չընք* (Ձ):

- Տըէղը կ'ալ - 1. Հարմար առիթը ներկայանալ, դրություն ստեղծվել: *Ըրհա վէր տըէղըն ա կ'ամ, Շըմավօնը ըրած լ'իվօթունը Սիմօնէն իրըէսավը ա կ'ամ* (Բ): 2. Իր նախկին վիճակին վերադառնալ, դուրս ընկած մասը տեղը գցվել: *Սընըխչին հիշկան անում ա, ըտըրա տուս ընգած վըէնը տըէղի չի կ'ամ* (Ձ):

- Տըէղը հանրզանկ - *տե՛ս* Տըէղը լէն:

- Տըէղը հըրզանկ(վ)էլ - *տե՛ս* Տըէղը լինանալ:

- Տըէղը հըրզըկց(ը)նէլ - *տե՛ս* Տըէղը լինը(ը)նէլ:

- Տըէղը մէխէլ - Իր տեղում պահել, անշարժ պահել: *Կ'օղէն վիզան փըռնում ա, տըէղը մէխում* (Ձ):

- Տըէղը մէխվէլ - Իր տեղում մնալ, անշարժ մնալ: *Արչը վէր կ'օռռում ա, Սար անին տըէղը մէխվում ա* (Բ):

- Տըէղը մընալ - 1. Անմիջապես մեռ-

նել՝ շունչը փչել: *Ուստան ամմէնափիս, աղու ճարը շինում ա, վէր մարթ լիհա լուզին նի տալը ըբաստ տըէղըն ա մընամ* (ՀԺՀ, VII, 51):

- Տըէղը նըէղ - Նյութապես անապահով, դժվար վիճակում: *Ասում ա.- Մստուծ, տըէղըս նըէղ ա, կարում չըմ խոխէնքըս պահիմ, մին ճար ըրա՛* (Զ):

- Տըէղը նըղանալ - Ապրուստի միջոցները սպառվել, դժվար կացության մեջ ընկնել: *Մարթ, վէր տըէղը նըղանում ա, Ըստուծէն մըէնըն ա քըցում* (Բ):

- Տըէղը նըղըց(ը)նել - Ապրուստի միջոցներից զրկել, դժվար կացության մեջ դնել: *Էս կըռըէվը շատ մարթու տըէղ ա նըղըցըրալ* (Բ):

- Տըէղը նըստէլ - 1. Վերջ տալ, այլեւս չշարունակել: *Հաղը ասմա.- Տըէղըտ նըստէ՛, տու հոնձ անօղ չըս* (Զ): 2. Մեկին փոխարինել, պաշտոնը գրավել: *... Նաղիրը օգում ա, վըէր թաքավըէրէն ըսպանէ, տըէղը նըստէ* (ՆԼԷԺԲ, 63):

- Տըէղը նըստըց(ը)նել - 1. Ընդհատել, չթողնել, որ շարունակի: *Ժողովէն վախտը խուզարանը օգում ա ինքըն էլ խօսէ, նախագան տըէղը նըստըցընում ա* (Զ): 2. Մեկի փոխարեն՝ պաշտոնում մեկ ուրիշի նշանակել: *Ըտի թաքավէրին թախտան վէր ըն պիրում, էտ մարթին տըէղը նըստըցընում* (Զ):

- Տըէղը նի մըն(ն)էլ - 1. Անկողին մտնել, քնելու պատրաստվել: *Նի յա մընում տըէղը, բուրդան մին ծըկըլթօն ա ըսկանում* (Զ): 2. *տե՛ս* Տըէղը կանալ (2):

- Տըէղ ընցընել - Պիտանի՝ պետքական լինել, արդյունք տալ, հաճույք պատճառել եւն: *Էս խըրավածը լավ տըէղ ընցավ* (Բ):

- Տըէղըն ու տըէղը - 1. Իսկույն, անմիջապես: *Օխծը կըծէս ա, ախճիգը տէղըն ու տէղը մըռնէս ա* (ԲՀԲ, 163): 2. Հենց նույն տեղում: *Ջէյրանը վէր ըն քըցում, մաշկում, տըէղըն ու տըէղըն էլ խըրավում, քըփ անում* (Զ):

- Տըէղը պէնդ նըստէլ - *տե՛ս* Տըէղը պընդըց(ը)նել:

- Տըէղը պէց անէլ - *տե՛ս* Տըէղը քըցիլ (1):

- Տըէղը պընդըց(ը)նել - Որեւէ տեղում՝ վայրում՝ դիրքում՝ պաշտոնում եւն հաստատապես հիմնավորվել: *Տահանք իտի հըսնում ըն Չամլիբէլ, ըտէղ տըղերընէն պընդըցնում* (ՀԺՀ, VII, 190):

- Տըէղը պիրիլ - 1. Կարգի գցել, սարքել, թերությունները՝ պակասությունները լրացնել, վերջնական տեսքի բերել: *Ուստան կամ ա, տըռնէրըն ա մըղրկնէն էլ տըէղը պիրում, փուլը յօր օնում, քինամ* (Զ): 2. Հիշել, ճանաչել: *Հաղը շատ ա ինում պըռաված, տըղան տըէղը չի պիրում* (Զ):

- Տըէղը տալ - 1. Փոխարինել: *Վէշ մին հընգէր ախպօրը տըէղը տալ չի* (Զ): 2. Մի բանի դիմաց վճարել՝ փոխհատուցել: *Չօբանը Ջըվէնին կավը կուրցըրավ, տըէղը հէնգ վըէխճար տըվավ* (Բ):

- Տըէղը տաք - *տե՛ս* Տըէղը լէն:

- Տըէղը տէրտակ մընալ - 1. Մահանալ: *Ըրշակէն տըէղըն էլ տէրտակ մընաց, ըղօրմի ընդըրան* (Բ): 2. Փոխարինող չլինել: *Ուստա Կարօն քօչից, տըէղը տէրտակ մընաց* (Բ):

- Տըէղը տըէղէն - 1. Կարգին, կանոնավոր, ինչպես որ պետք է: *Վէր քունում ա, տըէսնում՝ ամէն հինչ տըէղը տըէղէն ա, կամ ա...* (ԱԱ, 87): 2. Ամենայն մանրամասնությամբ, կետ առ կետ: *Խօխան հօրը տըէղը տըէղէն լօխ պատմում ա* (Զ):

- Տըէղը տըէղ չըտալ (թա նըստէ) - *տե՛ս* Տափը տըէղ չըտալ: *Էս կընէգը սաղ օրը տէղը տէղ չի տամ, թա նըստէ* (ՀԺՀ, V, 411):

- Տըէղը տինիլ - 1. Վերցրածը կրկին իր տեղում զետեղել: *Կօղը փուշմանում ա, ապըրանքը պիրում, տըէղը տինում* (Զ): 2. Մեկին մի բանի փոխարեն ընդունել՝ կարծել: *Թաքավէրին աշկէրը լավ չի ինում տըսնալիս, ըտըրան ուրան նոքանէն տըէղըն ա տինում* (Զ): 3. Հարկ եղած պատասխանը տալ, շշպռել: *Հարթնը կըզնըված կամ ա, ըսկըսվօրը տըէղը տինում* (Զ):

- Տըէղը տիտիգ անէլ - *հեգն. տե՛ս* Տըէղը նըստէլ:

- «Տըէղըտ ծօխ ա, յըէր կաց, էն ղօլէն/ տէն նըստէ՛» ասէլ - Թեթեւակի հանդիմանել: *... Մին փիս պէնու խառնըվում չար, հանա մին մարթու ասած չար, թա.- Տէղըտ ծօխ ա, յէր կաց, տէն նըստէ՛...* (ՀԺՀ, VI, 177):

- Տըէղը տուս ածէլ/հանէլ/տուս օնէլ - Փոխարենը հատուցել կամ ստանալ: *Ասում ա.- Մաղրիս, հարբաթ մին օր էլ յըէս քըէզ լըվօթուն կանիմ, տըէղը տուս ածիմ* (Զ):

- Տըէղը ցուրտէլ - *տե՛ս* Տըէղը նըղանալ:

- Տըէղը ցօրտ - *տե՛ս* Տըէղը նըէղ:

- Տըէղը փափուկ քըշըրպըղօճ - Գիշերը չքնող երեխա: *Ղէ՛, Վազիկըն էլ տըէղը փափուկ քըշըրպըղօճ ա, սաղ քըշէրը անքօն ա կէնում* (Բ):

- Տըէղը փըռ(ն)էլ - 1. Մեկի տեղը գրավել՝ զբաղեցնել, փոխարինել: *Նախագէն տուս քըցէցէն, բըրիգադիրը դաստի տըէղը փըռնից* (Զ): 2. Իր հատկություններով (հիմնականում բացասական) ամբողջովին մեկին նմանվել: *Կօղ Յէրվանդէն տըղան հօրը տըէղը փըռնալ ա* (Զ):

- Տըէղը քըցիլ - 1. Անկողինը բաց անել: *Տանում ա ուրանց տօնը, տէղէրը քըցում, ախճիգը տինում մաչին...* (ՀԱԲ, 15, 73): 2. Տեղից դուրս եկած որեւէ բան իր տեղը դնել՝ տեղը հագցնել: *Տանում ըն սընըխչուն կօխկը, տուս ընգած ծըէրքը տըէղըն ա քըցում* (Զ): 3. Իր ընթացքի մեջ դնել, կարգավորել: *Կամ ա կօրծէրը տըէղը քըցում, էլիա քինամ* (Զ):

- Տըէղ ինիլ - 1. Լինել, առկա լինել: *Հանց բիդանվ, վէր փիսին ըշխարքումըս տըէղ չինի* (Բ): 2. Մեկի կողմից սիրվել՝ հարգվել: *Էտ դէրվիշին պալատումը տըէղ ա ինում* (Զ): 3. Պատճառ՝ առիթ ունենալ: *Ասում ա.- Սուս ըրա, տու խուսէլի տըէղ չօնիս* (Զ):

- Տըէղ հըսնէլ - 1. Նշանակված՝ պետք եղած տեղը հասնել՝ ժամանել: *Վէր տըէղ ըն հըսնում, մըթնած ա ինում* (Զ): 2. Հայտնի դառնալ, իմացվել, լուրը՝ խոսքը եւն հասնել: *Խաբարը տըէղ ա հըսնում, լօխ մընամ ըն մաթ մընացած* (Բ): 3. Նպատակին հասնել: *Վէր ամմէն մարթու օգաածը տըէղ հըսնէ, էլ հինչ դա՞ղդ* (Բ): 4. Հասկացվել, ըմբռնվել: *Հօրը ըսըծնէն տըէղ չի հըսնում, տըղան էլլա յա կուղթուն անում* (Զ):

- Տըէղ հըսց(ը)նել - 1. Նշանակված՝ պետք եղած տեղը տանել՝ հասցնել: *Թաջիրը էտ ապրանքը սաղ-սըլմաթ տըէղ ա հըսցընէս* (Զ): 2. Ասել՝ հայտնել ում որ պետք է, լուր տալ: *Նոքանը խաբարը տըէղ ա հըսցընում, թաքավէրը կըտաղում ա* (Զ):

- Տըէղ տալ - 1. Տեղ հատկացնել, տեղավորվելու՝ գիշերելու՝ նստելու եւն հարմարություն տալ: *Ըտըրան տըէղ ըն տամ, քըշէրը ուրանց կումումը քօն ա ինում* (Զ): 2. Որեւէ բանի մասնակից դարձնել, աշխատանք՝ պաշտոն տալ: *Շատ վէր դաչանք ա անում, տըէղ ըն տամ, վէր ուրանց կանտորումը կօրծ անէ* (Զ): 3. Կատարել, լրացնել, ավարտին հասցնել: *... Էտ մարթը էն համին մէյդըն ա ըլալ, յէկալ ա լըվօթունը տէղ տա* (ՆԱԲ, 37):

- Տըէղ տինիլ - *տե՛ս* Տըէղը տինիլ (2): *Տու ինձ հուր տըէղ ը՞ս տիրալ* (Զ):

- Տըէղ փըռնէլ - 1. Տեղավորվել, տեղ զբաղեցնել: *Տըէղ ա փըռնում, պարանց ըղնում* (Զ): 2. Մրցույթում որեւէ տեղ գրավել: *Վազ ըն տամ, Տիկօն էրկունջի տըէղըն ա փըռնում* (Բ):

- Տըէղ քինիլ - Գործով՝ որեւէ նպատակով մի տեղ՝ մեկի մոտ գնալ: *Մին օր էլ տըէղ ա քինում, կամ, տըէսնում հավէրը կուղացած* (Զ):

ՏԸԷՂ² - *տե՛ս* ԸՏԸԷՂ:

ՏԸԷՂԱԿ[1]/ՏԷՂԱԿ[1]/ՏԸՂԱԿ[1] *(գրբ. տեղեակ) - տե՛ս* ՍԸԷՏ:

- Տը՛ղակ անէլ - Մի բանի մասին հետաքրքրվել՝ հայտնել: *Ծին ինք՝ կալ՝ծ վէջ՝ ջըլ՝վու տը՛ղակ չընն անէլ* (ԱԲԲ, 41):

ՏԸԷՂԱԿ[2]/ՏԷՂԱԿ[2]/ՏԸՂԱԿ[2] - *տե՛ս* ՏԸԷՂ[1] (16):

ՏԸԷՂԱՎԸ/ՏԷՂԱՎԸ/ՏԸՂԱՎԸ - *մ.* Վիճակով, դրությամբ: *Կընէգ՝ տը՛ղավը լօխճին խա՝փից* (Բ):

ՏԸԷՂԷՆ[1] - *տե՛ս* ՏԷՂԷՆ[1]:

ՏԸԷՂԷՆ[2]/ՏԷՂԷՆ[2]/ՏԷՂԻՆ[2] - *մ., ած.* Հարմար, պատշաճ, արժանի, տեղին: *Տը՛ղէն ըն ասալ, վէր ասալ ըն.- Շօնը շանը մէսը կօտէ, վը՛սկըռը տէն չի քըցիլ* (Բ):

ՏԸԷՂԸ/ՏԷՂԸ/ՏԸՂԸ - *կ.* 1. Միջոցին, ընթացքում, պահին: *Թըխկը՝ք՝էչ՝ն լըղընայիս տը՛ղը թաքավը՛ռէն տըղան ծը՛ռքը մը՛կնում ա, մուտանէն մինը կ՝ուղանում...* (ՆԼՂԺԲ, 47): 2. *տե՛ս* ՏԸԷՂ[1] (16):

ՏԸԷՂՆՈՒՏԸԷՂԸ - *մ. տե՛ս* Տը՛ղընն ու տը՛ղը:

ՏԸԷՂՊԱՏԸԷՂ/ՏԸԷՂՎԱՏԸԷՂ - *մ.* Մանրամասնորեն: *Տա վէր լօխ տը՛ղ-պատը՛ղ քաթ ա ընէս, խազայինը իրավունք ա տաս, վէր տըրանք մըրթըկընէգ՝ տը՛ռան...* (ՀԲ, 341):

- Տը՛ղպատը՛ղ անէլ - *տե՛ս* Տը՛ղ հըսցընէլ:

- Տը՛ղպատը՛ղ ինիլ - *տե՛ս* Տը՛ղ հըսնէլ:

ՏԸԷՂՎԱՆՔ - *գ.* Տեղ, տարածք, վայր: *Խըծապէրթը պէցո՝ւր տը՛ղվանք ա* (Բ):

ՏԸԷՂՎԱՏԸԷՂ - *տե՛ս* ՏԸԷՂՊԱՏԸԷՂ:

ՏԸԷՂ-ՏԷՐՏԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տը՛ղը-տէրտակը չը՛գ՝իդա՝լ - Ոչ մի լուր՝ տեղեկություն չունենալ: *Հէնգ՝ տարէ յա՝ տըղան սիզօնում, մարը տը՛ղը-տէրտակըն էլ չի գ՝ուդա՝ում* (Բ):

- Տը՛ղը-տէրտակը մա՝հլ՝ում չանէլ - Հիմնովին ավերվել՝ վերանալ՝ ոչնչանալ: *Էտ շէնին տը՛ղը-տէրտակը էլ մա՝հլ՝ում չանում* (Ձ):

ՏԸԷՂ-ՏԸԷՂ - *մ.* Առանձին տեղերում, որոշ տեղերում: *Բաղումը տը՛ղ-տը՛ղ շավթա՝լ՝ծ էլ ա տընգօտում* (Բ):

ՏԸԷՂՏԸԷՍ - *գ.* Տեղի՝ վայրի հետ ծանոթացում, տեղանքը տեսնելը: *Խանը ասում ա.- Յը՛սս առանց տը՛ղտը՛սս կարէլ չըմ էտ վը՛ղէրը ինք՝ օնիմ* (Ձ):

ՏԸԷՄ - *տե՛ս* ՏԷՄ:

ՏԸԷՆ - *տե՛ս* ՏԷՆ:

ՏԸԷՆԱԿ - *տե՛ս* ՏԷՆԱԿ:

ՏԸԷՌ - *տե՛ս* ՏԸՌ:

ՏԸԷՌԱԾ/ՏԷՌԱԾ/ՏԸՌԱԾ - *ած.* 1. Հասունացած, հասած, հասուն (պտուղների մասին): *Տը՛ռած գ՝ուլ՝ա ա, հիշկան կարում ըս, կէ՛ր* (Բ): 2. Թունավոր խոտից կամ այլ բանից կատաղած (կենդանիների մասին): *Էտ տը՛ռած շօնը վէր կը՝ծում ա, մարթը մը՛ռնում ա* (Ձ):

ՏԸԷՌ(Ն)ԱԼ/ՏԷՌ(Ն)ԱԼ/ՏԸՌ(Ն)ԱԼ *(գրբ. դառնամ) - չբ.* 1. Շրջվել, թեքվել, շուռ գալ: *Քամէ յա անում, ծօխը բիդի շէնընն ա տը՛ռնում* (Ձ): 2. Մի բանի փոխարկվել՝ վերածվել: *Էտ դ՝աշ՝անգ՝ ախճիգ՝ը տը՛ռնըմ ա մին թօխպ, նի մընննըմ ծառին փըչակը* (ՀԺՀ, V, 159): 3. Խոսքով դիմել մեկին: *Բիդի քուրընն ա տը՛ռնում, ընգուճէն թաքուն ասում* (Ձ): 4. Լինել, ավարտին հասնել, գլուխ գալ, պատրաստ լինել: *Էտ մարթը հինչ կօրծ օգում ա անէ, տը՛ռնում չի* (Բ): 5. Հասունանալ, հասուն վիճակի հասնել: *Մէր շէնումը թօթը մայիսի վէրչին ա տը՛ռնում* (Բ): 6. Աճել: ... *Սըխտօրը ըստը՛ղ լ՝ավ չի տը՛ռնում* (ԱԱ, 23): 7. Որոշակի դիրքի՝ տարիքի եւն հասնել: ...*Էտ տըղան տըռնաս ա քըռասուն տըրէկան* (ՀԺՀ, V, 529): 8. Լցվել: *Վը՛ր շըլ՝վարան ծիք՝ ա տամ, պըտառվըմ ա, մօխէրընն աշկէրը տը՛ռնում...* (ՀԺՀ, VII, 63): 9. Տարածվել, ցրվել, փռվել: *Էս գ՝ուլը մին հափուռ կօրէկ ա տէռնում, տանավը տէռնում* (ՀԱԲ, 15, 24): 10. Մի բանի շուրջը հավաքվել: *Մուկնէրը տաշտավընն ըն տը՛ռնում* (Ձ): 11. Հանդիսանալ, լինել: *Ըտըրանց կըռվէն Մանին էլ էտ ծառը տը՛ռավ* (Ձ): 12. Կազմում է հարադիր բայեր, ինչպես՝ *դ՝ադ տը՛ռնալ, քար տը՛ռնալ, մըրթըկընէգ՝ տը՛ռնալ* եւն:

- Տը՛ռավ, վէր... - Պարզվում է, որ... *Հ՝ադը ասմա.- Քու ըսածատ տը՛ռավ, վէր մէր վը՛ղը էլ մէրը չի՞* (Ձ):

ՏԸԷՍ[1] - *տե՛ս* ՏԷՍ[1]:

ՏԸԷՍ[2]/ՏԷՍ[2]/ՏԸՍ - 1. *նբ.* Տեսնել բայի հրամայականը: *Մարը ասում ա.- Տ՝ուս յը՛ք, տը՛ս՝ թօռ ա՞ կ՝ամ* (Ձ): 2. *ձ.* Ձգուշացնելու՝ սպառնալու արտահայտություն, զգույշ եղիր՝ ուշադիր եղիր՝ իմացիր հա: *Բաղվանչին ասում ա.- Տը՛ս, վէր մէհէտ էլ յը՛կէր բաղը, կաշիտ վէր ըմ ունական* (Ձ):

- Տը՛ս հա - *տե՛ս* ՏԸԷՍ (2):

ՏԸԷՍԱԿ - *տե՛ս* ՏԷՍԱԿ:

ՏԸԷՍԸՏԸԷՆ - *տե՛ս* ՏԷՍ-ՏԷՆ:

ՏԸԷՍՆԱ/ՏԷՍՆԱ/ՏԸՍՆԱ - *տե՛ս* ՏԷՍ[1] (2):

ՏԸԷՍՆԱԼ/ՏԷՍՆԱԼ/ՏԸՍՆԱԼ/ՏԸԷՀՆԱԼ/ՏԷՀՆԱԼ *(գրբ. տեսանեմ) - նբ.* 1. Տեսողությամբ ընկալել: *Էտ օղտը կուրցըրած մարթը էտ ըխճըկանը վը՛ր տը՛սնըմ ա, դ՝ուստի մուտանըմ ա...* (ԼՂԲ, 321): 2. Տեսողություն՝ տեսողական կարողություն ունենալ: *Այան պըռավալ ա, լ՝ավ չի տը՛սնում* (Բ): 3. Տեսակցել, հանդիպել: *Էտ չօբանը տէմ ա տինում, թա.- Յը՛սս բիդի թաքավէրին տը՛սնամ. պէն օնիմ ըսէլի* (Ձ): 4. Հանդիպել, պատահել: *Կ՝ուլը ըլբըստըրակէն վըրդը՛ղ տը՛սնում ա, փըռնում ա տըմբըզում* (ԱԱռ, 56): 5. Հասկանալ, իմանալ: *Տըսնաս ա, վէր էտքանը մինակ կարէլ չի տանէ, հիրըվանէն ծէն ա տաս* (Ձ): 6. Դիտել, նայել: *Մին օր էլ շէնը փ՝ա՝հլ՝իվան ա կ՝ամ, լօխ ք՝ինամ ըն, վէր տը՛սնան* (Ձ): 7. Նկատել: ... *Յէշում ա, տը՛սնում հընգէրը տէրտակուբօշ կ՝ամ ա* (ԱԱռ, 69): 8. Ձգալ, ենթարկվել, կրել, ճաշակել: *Լըհա օզըմ ի սէրտը շահիմ, վէր յէխաս պէց թօղի, տէսնում մին թընթօլաշ էլ ուտըցըրավ* (ՋՏ, Բ, 4): 9. Համարել: *Ասում ա.- Յը՛սս դ՝ուզ չըմ տը՛սնում, վէր բիդի կավը ծախինք՝* (Ձ): 10. Ականատես լինել, վկա լինել: *Օրըցիրը՛կավ կ՝ուղօթուն ըն ըրալ, վէշ մինը տը՛սալ չի* (Բ): 11. Կաշառքով իր կողմը գրավել՝ իր օգտին տրամադրել, կաշառել: *Հ՝ադը սուդ՝ին տը՛սնում ա, տըղէն ըզադում* (Բ): 12. Այցելել, այցելության գնալ: *Կ՝ա՝փին հիվընդանում ա, հ՝ա՝բին մին բօթուլ թօթու արաղ ա յը՛ր օնում, ք՝ինամ, վէր տը՛սնա* (Ձ): 13. Ստուգել: *Մին վախտ էս Շահբազը ք՝ինացալ ա, տը՛սնա՝ ո՝ւրա՝ն տիրա՝ծ մազա՝նտա՝վընը ը՞ն զատ ծախում, թա չէ* (ՀԺՀ, VI, 157): 14. Կշռադատել, մտածել, որոշել: *Հըվաքվում ըն, վէր խը՛ղք խը՛ղքու տան, տը՛սնան՝ հինչ անին* (Ձ):

- Տը՛սածը տը՛սնալ - Ձախորդության՝ դժվար կացության եւն հանդիպելուց դաս քաղել, այլեւս նման քայլի չդիմել: *Վը՛րսկանը ասում ա.- Յը՛սս իմ տը՛սածըս տը՛սալ ըմ, յը՛սս էլ արչու յըրա չըմ անէլ* (Ձ):

- Տը՛սս վէրընն ա՞ մը՛ծ - Ասվում է թռչունների կրծքի երկճյուղ ոսկորով գրազ գալուց հետո, երբ կողմերից մեկը կոտրած ճյուղերից մեկը տալիս է մյուսին, որ նա վերցնի, եւ ինքը ասի՝ տարա՛ծ, ու գրազը շահի:

- Տըսածէն հըվատում չի - Ասում են խիստ կասկածամիտ մարդկանց մասին:

ՏԸԷՍՆԱ(Ն)Ք/ՏԷՍՆԱ(Ն)Ք/ՏԸՍՆԱ(Ն)Ք - *վ.* 1. Անորոշ պատասխան մեկի հարցին՝ խնդրանքին, եթե հնարավոր լինի: - *Մա՝գօ, էք՝ո՝ւց կ՝ամ ը՞ս վը՛րս.- Տը՛սնանք* (Բ): 2. Սպառնական կամ հեգնական պատասխան: *Չօբանը կըզնըվում ա, թա.- Տը՛սնանք՝ տու կըյէ՞խնիս, թա յը՛ս* (Ձ):

ՏԸԷՍՆԱՍ/ՏԷՍՆԱՍ/ՏԸՍՆԱՍ - *վ.* Անորոշության արտահայտություն՝ արդյո՞ք, ո՞վ գիտե, հետաքրքիր է իմանալ:

Տը՛սնաս մէր շէնումը էլ ա՞ ծո՛ւն յը՛կալ (Բ):

ՏԸՏՍՆԸ - *տե՛ս* ՏԷՍՆԸ:

ՏԸՏՍՆԸՎԱԼ/ՏԷՍՆԸՎԱԼ/ՏԸՍՆԸՎԱԼ/ՏԸՏՀՆԸՎԱԼ/ՏԷՀՆԸՎԱԼ - *կբ. եւ չբ.* ՏԸՏՍՆԱԼ-ի:

ՏԸՏՍ-ՏԸՏՆ - *տե՛ս* ՏԷՍ-ՏԷՆ:

ՏԸՏՍՈՒՏԸՏՆ - *տե՛ս* ՏԷՍՈՒՏԷՆ:

ՏԸՏՍՔ - *տե՛ս* ՏԷՍՔ:

ՏԸՏՍՔԱՎ - *տե՛ս* ՏԷՍՔԱՎ:

ՏԸՏՏ/ՏԷՏ/ՏՕՏ/ՏՕՏՆԸ/ՏՈՒՏ/ՏՈՒՏՆԸ *(գրբ. տուտն)* - *գ.* 1. Որեւէ բանի սկիզբը կամ վերջը, պոչ, ծայր: *Ինքը դիք՝, քէթը կը՛ռ, թա քթիր վէջ, տը՛տը կէր* (ԱՀ, 36): 2. *փխբ.տե՛ս* ԽԸ՛Ռ:

ՏԸՏՐ - *տե՛ս* ՏԱՐ:

ՏԸՏՐՄԱՆ - *տե՛ս* ՏԷՐՄԱՆ:

ՏԸՏՐՏԱԿ - *տե՛ս* ՏԷՐՏԱԿ:

ՏԸՏՐՏԱԿԸԲՕԾ - *տե՛ս* ՏԷՐՏԱԿԸԲՕԾ:

ՏԸՏՐՏԸՏՐ - *տե՛ս* ՏԷՐՏԷՐ:

ՏԸԺԱՐ - *տե՛ս* ՏԸԺԷՐ:

ՏԸԺԱ՛Ր - *տե՛ս* ՏԸԺԷՐ:

ՏԸԺԷՐ/ՏԻԺԷՐ/ՏԸԺԸ՛Ր/ՏԻԺԸ՛Ր/ՏԸԺԱՐ/ՏԸԺԱ՛Ր/ՏԻԺԱՐ/ՏԻԺԱ՛Ր *(գրբ. դժուար)* - *ածական.* 1. Շատ աշխատանք պահանջող, հոգնեցուցիչ: *Հ՞ենձ անէլը տը-ժէր կօրծ ա* (Բ): 2. Ծանր, անտանելի: *Տիժէր հա՛լըմ ըմ* (Բ): 3. Բարդ, խրթին: *Ասում ա.- Էտ տիժը՛ր հարց ա* (Ձ): 4. Դժվարություններով՝ անախորժություններով՝ զրկանքներով լի: *Հային գ'անքը տիժէր գ'անք ա* (Բ): 5. *մ.* Դժվարությամբ: *Կօրծէրը տը-ժէր ա ա՛մա՛լ կ'ամ* (Բ):

- Տըժէր ա ասէլը - *տե՛ս* Տըժէր թա:

- Տըժէր թա - Հազիվ թե, կասկածելի է, անհուսալի է: *Տըժէր թա էս ըրաշտանը յը՛տը ցօրէն հընձինք՝* (Բ):

- Տըժէր(ը) ըղնէլ/կ'ա՛լ - Դժվար կացության մեջ ընկնել, նեղվել: *Թօռըն էլ վէր նի յա օնում, հ՞ենձ ընուղնէն լափ տիժէրը ըն ըղնում* (Բ):

- Տըժէր(ը) քըցիլ - Դժվար կացության մեջ գցել, նեղել: *Էտ բըդասըլ տը-ղան հօրը տըժէրը ա քըցա՛լ* (Ձ):

ՏԸԺԸ՛Ր - *տե՛ս* ՏԸԺԷՐ:

ՏԸԺԸ-ՎԸԺԻ/ՏԻԺԻ-ՎԻԺԻ - *տե՛ս* ՏԸԺՏԸԺՕՆ:

- Տըժը-վըժի անէլ - *տե՛ս* ՏԸԺ-ՏԸԺԱԼ:

ՏԸԺԸՐԱԹՕԽ/ՏԻԺԸՐԱԹՕԽ - *ածական.* Դժվարությամբ թխվող (հացի մասին): *Էս հացը շատ տըժըրաթօխ հաց ար* (Բ):

ՏԸԺԸՐԱԾԻՆ/ՏԻԺԸՐԱԾԻՆ *(գրբ. դժուարածին)* - *ածական.* 1. Դժվարությամբ ծնող՝ ծննդաբերող: *Հէրէնջը տըժըրա-ծին կինի* (Բ): 2. Դժվարությամբ ծնված՝ ծնվող: *Տըժըրածին խօխա յա* (Բ):

ՏԸԺԸՐԱԿԷԹ/ՏԻԺԸՐԱԿԷԹ *(գրբ. դժուարակութ)* - *ածական.* Դժվար կթվող: *Մը՛զ մին տըժըրակէթ կավ ա իլա՛լ* (Բ):

ՏԸԺԸՐԱՆԱԼ/ՏԻԺԸՐԱՆԱԼ *(գրբ. դժուարանամ)* - *չբ.* 1. Դժվար դառնալ: *Ապըրէլը էլ ա տըժըրացալ, կօրծ անէ-լը՛ն էլ, կօրծ քըթէնալը՛ն էլ* (Բ): 2. Դժվարություն զգալ, անկարող լինել: *Տը՛սնում ա, վէր հըրը՛վանը տըժըրա-նում ա, ք'ինամ ա ք'ա՛ծմա՛գ' անում, արտը հընձա՛ում* (Ձ): 3. Երկմտել, չկարողանալ կողմնորոշվել: *Ուստան թա.- Տըժըրա-նում ըմ, կարէլ չըմ ասիմ՝ կօրծը հիբ կըպըրծընիմ* (Ձ): 4. Դժկամություն ցուցաբերել: *Տընաշինըտ, լ'ըհա վէր կ'ամ ա փուլը տալի վախտը, տըժըրանում ա* (Ձ): 5. Բարդանալ, կնճռոտ դառնալ: *Հարցը քանէ ք'ինամ ա, էնքան տիժը-րանում ա* (Բ):

ՏԸԺԸՐԱՊԷՐՔ/ՏԻԺԸՐԱՊԷՐՔ *(գրբ. դժուարաբեր (ծանր, որ դժվար է բերել կամ կրել)* - *տե՛ս* ՏԸԺԸՐԱԾԻՆ:

ՏԸԺԸՐՀԱ՛ՄԲՈ՛ՒՐ/ՏԻԺԸՐՀԱ՛ՄԲՈ՛ՒՐ - *տե՛ս* ՏԸԺԷՐ:

ՏԸԺԸՐՀԱ՛ՆԳ'Ի/ՏԻԺԸՐՀԱ՛ՆԳ'Ի - *տե՛ս* ՏԸԺԷՐ:

ՏԸԺԸՐՑ(Ը)ՆԷԼ/ՏԻԺԸՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸԺԸՐԱՆԱԼ-ի:

ՏԸԺԸՐՑԸՆՎԷԼ/ՏԻԺԸՐՑԸՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸԺԸՐՑ(Ը)ՆԷԼ-ի:

ՏԸԺԸՐՕԹՈՒՆ/ՏԻԺԸՐՕԹՈՒՆ *(գրբ. դժուարութիւն)* - *գ.* 1. Դժվար լինելը: *Կօրծէն տըժըրօթունը կօրծ անօղը կը-գ'իդա՛ն* (Բ): 2. Դժվար վիճակ՝ դրություն: *Կըռվէն վախտը լօխ հայէրը՛ն ըն իլա՛լ տըժըրօթունու մաչի* (Բ): 3. Արգելք, խոչընդոտ: *Էտ պառավը ասում ա.- Ըռըչիտ տըժըրօթուն շատ ա ինա՛կա՛ն* (Ձ): 4. Դժկամություն: *Տըժըրթունավ ա փուլը տամ* (Ձ): 5. Նեղություն, պակասություն: *Ըստարէ վէ՛չ ցօրէնը՛ն ա լ'ավ տը՛ռալ, վէ՛չ խաղուն, էս տըժըրթունէն հունց ը՞նք տէմ կը՛նական* (Բ): 6. Բարդ՝ խրթին լինելը: *Թաքավէրը էտ հարցէն տըժը-րօթունը կը՛լ՞ի՛խ չի ըղնէս* (Ձ):

- Տըժըրօթուն անէլ - Դժգոհել: *Մը՛-հէտ Պըլըպուղուն կընէգ'ը տըժըրօթուն ա անըմ մարթան* (ԼՂԲ, 389):

- Տըժըրօթուն տը՛սնալ/քաշիլ - Նեղություն կրել, չարչարվել, հոգեկան անհանգիստ վիճակ ապրել: *Ըստրանա յէտը մին խիլլա՛ն վախտ տըժըրօթուն չըն քըշիս* (ՀԺՀ, V, 299):

ՏԸԺԺ - *ձ.* Միջատների թեւերի թրթռումից՝ գնդակի թռիչքից՝ յուղի եռալուց եւն առաջացող ձայնը: *Մին էլ տը՛ժժ, գ'ա՛ելլա՛ն ընգուճտակավը ք'ը՛ցավ* (Ձ):

ՏԸԺԺԱԼ - *չբ.* 1. *Տը՛ժժ* ձայն հանել: *Յը՛ղը կըրակէն յըրա տըժժամ ա* (Բ): 2. Ականջներում խուլ աղմուկ լսվել: *Ընգուճնէս տըժժամ ա* (Բ):

ՏԸԺԺԱԼԻ - *մ.* Տժժալով, տժժոց հանելով: *Մէսը տըժժալի ժարիտ ա տը՛ռ-նում* (Ձ):

ՏԸԺԺԱՆ - *ածական.* Տժժացող: *Մէսը կը-տորում ա, ածում տըժժան յը՛ղէն մա-չը* (Բ):

ՏԸԺԺԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸԺԺԱԼԻ:

ՏԸԺԺՕՆ - *գ.* Տժժալը, տժժալու ձայնը: *Յը՛ղէն տըժժօնը հըռանցէ յա ըս-կանում* (Ձ):

ՏԸԺԺՕՑ - *տե՛ս* ՏԸԺԺՕՆ:

ՏԸԺԿՕՀ - *տե՛ս* ՃՈ՛ՒԺԿ'Ո՛Հ:

ՏԸԺԿՕՀԷԼ - *տե՛ս* ՃՈ՛ՒԺԿ'Ո՛ՒՀՕ՛ՐԷԼ:

ՏԸԺՎԸԺԱԼ - *տե՛ս* ՏԸԺՏԸԺԱԼ:

ՏԸԺՎԸԺԱԼԻ - *տե՛ս* ՏԸԺՏԸԺԱԼԻ:

ՏԸԺՎԸԺԱՆ - *տե՛ս* ՏԸԺՏԸԺԱՆ:

ՏԸԺՎԸԺՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸԺՏԸԺ-Ց(Ը)ՆԷԼ:

ՏԸԺՎԸԺՕՆ - *տե՛ս* ՏԸԺՏԸԺՕՆ:

ՏԸԺՎԸԺՕՑ - *տե՛ս* ՏԸԺՏԸԺՕՑ:

ՏԸԺՏԸԺԱԼ/ՏԸԺՎԸԺԱԼ - *տե՛ս* ՏԸԺ-ԺԱԼ (շատերը կամ շատ անգամ):

ՏԸԺՏԸԺԱԼԻ/ՏԸԺՎԸԺԱԼԻ - *տե՛ս* ՏԸԺԺԱԼԻ:

ՏԸԺՏԸԺԱՆ/ՏԸԺՎԸԺԱՆ - *տե՛ս* ՏԸԺԺԱՆ:

ՏԸԺՏԸԺՑ(Ը)ՆԷԼ/ՏԸԺՎԸԺՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸԺՏԸԺԱԼ-ի:

ՏԸԺՏԸԺՕՆ/ՏԸԺՎԸԺՕՆ - *տե՛ս* ՏԸԺԺՕՆ:

ՏԸԺՏԸԺՕՑ/ՏԸԺՎԸԺՕՑ - *տե՛ս* ՏԸԺԺՕՆ:

ՏԸԺՕԽԿ/ՏԸԺԾ՛ԽԿ/ՏԻԺՕԽԿ/ՏԻ՛Ի-ԺԾ՛ԽՔ - *գ.* 1. Դժոխք, գեհեն, տարտարոս: *Յօր ա օնըմ տըժօխկին կ'ավա-զանը, շօռ կ'ամ, վէր էտ ըխճըկանը ք'ըթնի* (ՀԺՀ, V, 167): 2. *փխբ.* Անտանելի իրադրություն՝ վիճակ՝ պայմաններ: *Հարթնը ըսկէսվօրը նըհը՛տ կըռվում ա, թա.- Յը՛ս էս տըժօխկումը էլ կարէլ չըմ ապրիմ* (Ձ):

- Տըժօխկու մաշալ(լ)ա - Շատ տգեղ անձ: *Դէ Սումբաթը էլ հինչ մա՞թ, տը-ժօխկու մաշալլա յա* (Բ):

- Տըժօխկու տըռնապահ - Խստաբարո եւ ժլատ մարդ: *Տըժօխկու տըռնապահ ը՞ս, էտ խուխէն խէ փուլ չը՞ս տամ* (Բ):

- Տըժօխկու փայ ինիլ/տը՛ռնալ - 1. Մեռնելուց հետո դժոխքը գնալ: *Փիս մարթիք՝ տըժօխկու փայ ըն տը՛ռնում* (Ձ): 2. Չարաչար մահով մեռնել՝ սպանվել (գործածվում է նաեւ որպես անեծք): *Ըտի էտ թաքավէրը քօսան ըղնում ա, տըժօխկու փայ տը՛ռնում* (Ձ):

- Տըժօխկու ք'էթո՛ւկ - Համառ, պնդաճակատ: *Իզէն տըժօխկու ք'էթո՛ւկ ա, հինչը օգ'ում ըս, ըրա՛, վէջը չի* (Բ):

ՏԸԺԾ՛ԽԿ - *տե՛ս* ՏԸԺՕԽԿ:

ՏԸԼԱՑՈՒԿ/ՏԸԼԱՑՈՒՔ - *գ., ածական.* Մեկին տալու՝ հանձնելու (բան), պարտք,

տալիք: *Տըլացուկըն էլ տամ ա, ըրխըյնանում* (Ձ):

ՏԸԼԱՑՈՒՔ - *տե՛ս* ՏԸԼԱՑՈՒԿ:

ՏԸԼԸՍՄԷԼ *(գրբ. տլսմեմ (տրորել, ճզմել)* - *նբ.* Սաստիկ ծեծել՝ պատժել: *...Լոթի Սօլօմօնը ըխճըկան տըլըսմէլին տէղ ընդրրա դօլըն ա պահիմ...* (ՋՏ, Բ, 17):

ՏԸԼԸՓԱԾ - *ած.* Գոռոզամիտ: *Տըլըփած ախճիգ ա էլէսը* (Բ):

ՏԸԼԸՓԱՏԸԼԸՓ - *տե՛ս* ԴԸԲԸՆԸԱՍՄԱ: *Էտ հարթնըն էլ, մին կ'ուլու մորթէ մաշկէն քըցած, ըտըրանց հը՛տան տըլըփատըլըփ ք'ինամ ա* (Ձ):

ՏԸԼԼԱԿՕՃ/ՏԻԼԼԱԿՕՃ - *գ.* Ծառի ճյուղերից սարքած գերաններ, որ շարում են տանիքի հիմնական գերանների վրա՝ հակառակ ուղղությամբ: *Մէր տընացէն մէր դարադամը սըրփէլիս տըլլըկօճին տակին մին ունջութաթախ դաբանլա ա քըթալ...* (ՋՏ, Ա, 114):

ՏԸԼԼԻԲՕՅԻ/ՏԻԼԼԻԲՕՅԻ - *մ.* Ճյուղերի ուղղությամբ: *Չիդրան տըլլիբօյի կըփըռնին, վէր թօթը նի տը՛ռնա մաչը* (Ձ):

ՏԸԼԼԻՏԱԼԼ/ՏԻԼԼԻՏԱԼԼ - *մ.* Ճյուղից ճյուղ, ճյուղեճյուղ: *Յէր ա ինում ծառը, տըլլիտալլ շօռ կ'ամ, մին տանծ էլ չի քըթէնում* (Ձ):

ՏԸԽԸՐ(Վ)ԷԼ *(գրբ. տխրիմ)* - *չբ. տե՛ս* Դիլխօր ըղնէլ:

ՏԸԽԸՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸԽԸՐ(Վ)ԷԼ-ի:

ՏԸԽԿԸՏԷՆԱԿ/ՏԸԽՏԸՏԷՆԱԿ/ԹԸԽԿԸՏԷՆԱԿ/ԹԸԽՏԸՏԷՆԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տըխկըտէնակը ըղնէլ - *տե՛ս* Ճօխտ վը՛ննը մին չըմըշկում տինիլ:

- Տըխկըտէնակ տը՛ռնալ, նը՛ստա կէնալ - *տե՛ս* Նը՛ստա կէնալ, պուք չըկ'ալ:

ՏԸԽՏԱԿԷ *(գրբ. տախտակեայ)* - *ած.* Տախտակից շինված՝ պատրաստված՝ կառուցված: *Մին տըխտակէ յաշիգ ա յօր օնում, էտ վը՛սկէն ածում մաչը, թաղում* (Ձ):

ՏԸԽՏԱԿԷԼ - *նբ.* Տախտակապատել, տախտակով ծածկել: *Ուստա յա ծէն տամ, տանը տափը լօխ տըխտակում* (Ձ):

ՏԸԽՏԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸԽՏԱԿԷԼ-ի:

ՏԸԽՏԱՃԱՇ - *տե՛ս* ԹԸԽՏԱՃԱՇ:

ՏԸԽՏԱՏԸ՛Ղ - *տե՛ս* ԹԸԽՏԱՏԸ՛Ղ:

ՏԸԽՏԸԿԱՇԷՆ - *տե՛ս* ՏԸԽՏԱԿԷ:

ՏԸԽՏԸԿՕՌ(ՆԸ) - *տե՛ս* Կ'ԸՌԹՆԸԿ'ՕՌ(ՆԸ):

ՏԸԽՏԸՂԱԼԻ/ՏԻԽՏԸՂԱԼԻ - *ած.* Հետը շատ պղպեղ խառնած, կծու: *Տըխտըղալի խօրանգը շատ ար սիրում ապան* (Բ):

ՏԸԽՏԸՂԱՀԱՄ/ՏԻԽՏԸՂԱՀԱՄ - 1. *գ.* Պղպեղի համ: *Տըխտըղահամը ամմէն մարթու հը՛տէ չի լանգանթ* (Բ): 2. *ած.* Պղպեղի համ ունեցող, կծվահամ: *Տըխտըղահամ շօրվա յա* (Բ):

ՏԸԽՏԸՂԱՃԱՆԻՐ/ՏԻԽՏԸՂԱՃԱՆԻՐ - *գ. հեգն. տե՛ս* ԱՐԱՂ: *Ծատօրը ասմա.- Կ'ուզ'ի, յը՛ք մարթը մին ըստաքան տըխտըղաճանիր թօղ անինք'* (Ձ):

ՏԸԽՏԸՂԱՄԱՆ/ՏԻԽՏԸՂԱՄԱՆ - *գ.* Մեջը աղացած պղպեղ լցնելու՝ պահելու փոքրիկ աման: *Ըղամանը ա տըխտըղամանը այան միշտ ըստօլէն ար պահում* (Բ):

ՏԸԽՏԸՄՈՒՐԱՄԱՆ - *տե՛ս* ԹԸԽՏԸՄՈՒՐԱՄԱՆ:

ՏԸԽՏԸՄՕՐ - *տե՛ս* ԹԸԽՏԸՄՕՐ:

ՏԸԽՏԸՏԷՆԱԿ - *տե՛ս* ՏԸԽԿԸՏԷՆԱԿ:

ՏԸԽՈՒՐ/ՏՈՒԽՈՒՐ *(գրբ. տխուր)* - *տե՛ս* ԴԻԼԽՕՐ:

ՏԸԿԱԹԷՐ - *գ.* Ճակնդեղի տերեւ: *Տըկաթէրը հա՛մ իփանում ըն, հա՛մ աղ տինանում* (Բ):

ՏԸԿԱՇՕՐ - *գ.* Տակի շոր, երեխայի տակը փռելու շոր: *Խուխէն տըկաշօրը թըրչվալ ա* (Բ):

ՏԸԿԱՔԱՐ - *գ.* 1. Ջրաղացի՝ երկանքի տակի քարը: *Ճըղացէն տըկաքարը մաշալ ա* (Ձ): 2. *փխբ.* Կին ամուսին: *Ք'օհնա վըխտէն կընգանը տըկաքար ըն իլալ ըսէլիս, մարթին՝ կըլխաքար* (Ձ):

ՏԸԿԸՁ(Վ)ԻԼ - *տե՛ս* ՏԸՌԸՁ(Վ)ԻԼ:

ՏԸԿԸՁՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸՌԸՁՑ(Ը)ՆԻԼ:

ՏԸԿԸՁՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ՏԸՌԸՁՕՏ(Վ)ԷԼ:

ՏԸԿԸԼԷՉԱԿ - *գ.* Եռանկյունաձեւ սպիտակ շոր, որ կանայք կապում էին գլխաշորի տակից: *Այան տըկըլէչակ ա իլալ կըպէլիս* (Բ):

ՏԸԿԸԼՎԱՁԻ/ՏՈՒԿՈՒԼՎԱՁԻ - *մ.* Առանց շորերը հագնելու կամ շատ թեթեւ հագնված: *Ըտի տըկըլվազի տանան տանում ա կ'ամ, փախճանում* (Ձ):

ՏԸԿԸԼՈՒՐԱՆԱ/ՏԸԿԼՈՒՐԱՆԱԼ/ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐԱՆԱԼ - *չբ.* 1. Վրայի բոլոր շորերը հանել, մերկանալ: *Էք'սի օրը Շահ-Աբբասը հըրաման ա տամ, վը՛ր ուրանա կընանէք'ը լօխ տըկլուրանան...* (ՀԺՀ, VII, 29): 2. *փխբ.* Բուսականությունից զրկվել: *Փիս արաշտ ա, սարէրը տըկըլուրացալ ըն* (Բ): 3. *փխբ.* Տերեւաթափ լինել: *Աշունքը վէր կ'ամ ա, ծառէրը ըսքըսում ըն տըկըլուրանալը* (Բ): 4. *փխբ.* Ունեցվածքից զրկվել, սնանկանալ, տնանկանալ: *Կըռվէն վախտը շատ մարթիք' ըն տըկըլուրացալ, օրվա հացէն մնք'տանք տը՛ռալ* (Բ):

ՏԸԿԸԼՈՒՐՑ)Ը)ՆԷԼ/ՏԸԿԼՈՒՐՑ(Ը)ՆԷԼ/ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸԿԸԼՈՒՐԱՆԱԼ-ի:

ՏԸԿԸԼՈՒՐՑԸՆՎԷԼ/ՏԸԿԼՈՒՐՑԸՆՎԷԼ/ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐՑԸՆԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸԿԸԼՈՒՐԱՆԱԼ-ի:

ՏԸԿԸԼՈՒՐՕԹՈՒՆ/ՏԸԿԼՈՒՐՕԹՈՒՆ/ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐՕԹՈՒՆ - *գ.* Տկլոր լինելը, մերկություն: *Իզէն ուրանա տըկըլուրութունան էլ չի հըմանչում* (Ձ):

ՏԸԿԸԼՕՁ/ՏԸԿԼՕՁ/ՏՈՒԿ(ՈՒ)ԼՕՁ - *ած.* 1. *տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ: 2. Մազերը թափած, մազաթափ եղած: *Հըղէննի մին տըկըլօզ էծ ա պըտահում* (Ձ):

ՏԸԿԸԼՕՐ/ՏԸԿԼՕՐ/ՏՈՒԿ(ՈՒ)ԼՕՐ - *ած.* 1. Բոլորովին մերկ, մերկանդամ: *Մին տըկլօր ռուս կիլէխը կօխըմ ա ճիրին տակը, պատառ կէնըմ, տանս կամ...* (ՋՏ, Ա, 106): 2. *փխբ.* Բուսականությունից զուրկ: *Տըկըլօր սար ա Լիսագօրը* (Բ): 3. *փխբ.* Տերեւները թափված: *Թառնը յէշանում ըս՝ տըկըլօր ծառէր ըն* (Բ): 4. *փխբ.* Աղքատ, տնանկ, ընչազուրկ: *Ըտի հըրուստէն ախճիգը տամ ըն էտ տըկլօր չուբանէն* (Ձ): 5. *փխբ.* Հագին կարգին շոր չունեցող, հագուստները մաշած: *Կընէգը ասմա.- Խօխէնք'ըտ էն ըն տըկլօր, համաթ չի՞, խէ թանգգան շօրէր չը՞ս ինք' օնում* (Ձ):

- Տըկըլօրէն լէշին կատու շըլակէլըն ար պակաս - Ասում են այն ժամանակ, երբ իր հոգսերը հոգալ չկարողացողին նոր՝ ոչ էական հոգսերով ծանրաբեռնում են:

- Տըկըլօր թաթար - *տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ (1):

- Տըկըլօր ցանք' շըլակէլ - Տանջվել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Տըկըլօր ցանք' շըլակիս տու, խէ բաղըս քաղալ ը՞ս* (Բ):

ՏԸԿԸԿԸԼՕԽ/ՏԱԿԸ-ԿԸԼՕԽԸ - *գ.* 1. Եղած-չեղածը, ամբողջը միասին վերցրած: *Տըկըկըլօխ մին մէշուկ ցօրէն ա ինում, տանում ա, վէր աղէ* (Ձ): 2. Մաղած ընդեղենի տականքն ու երեսի աղբը: *Յօրէնը խըխալում ա, տըկըկըլօխը ածում հըվէրէն առաշկը* (Բ): 3. *ած.* Լիակատար, բոլոր հարմարություններն ունեցող: *Չուբանէն հէտէ տըկըկըլօխ տընէր ըն շինում...* (ՀԱԲ, 15, 55): 4. *տե՛ս* ՏԸԿԸՏԻՅԸ՛Ր:

- Տըկըկըլօխ անէլ - 1. *տե՛ս* Տըկըտիյը՛ր անէլ: 2. Ընտրել, ջոկել: *Տըկըկըլօխ ա անում, լ'ավէրը յօր օնում* (Ձ): 3. Խորապես քննել, կշռադատել: *Տըկըկըլօխ ըն անում, վօրօշում, վէր էտ տըղէն տանին կուրցընին* (Ձ):

- Տըկըկըլօխ գիդալ - *տե՛ս* Տակըն էլ գիդալ, կըլօխըն էլ (ՏԱԿ²-ի տակ):

- Տըկըկըլօխը լիգ'ը - Հարուստ, ունեւոր: *Ըտի էտ ք'ասիբ տըղան մին*

տրկրկրլօ՝խը լիգը ախճիգ՝ ա օգ՝ում, լ՝ավ ապրրում (Զ):

- Տրկրկրլօ՝խը ինիլ - *տե՛ս* Տրկրտրյը՝ր ինիլ/տը՝ռնալ:

ՏԸԿԸՀԱԼԱՎ - *գ.* Շորերի տակից՝ անմիջապես մարմնի վրայից հագնելու կանացի շապիկ: *Մին տրկրհալավ էլ մորը հը՝տէ յա դարկում* (Զ):

ՏԸԿԸՀԱՆ(Ա) - *մ.* 1. Գաղտնի, ծածուկ, ոչ բացահայտ ու խորամանկորեն: *Էտ մարթը տրկրհան ա կօրծ փրռնում* (Զ): 2. *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆ(Ա):

ՏԸԿԸՃՕՌ(Ի) - *տե՛ս* ՏԸՌՕՃԱՆ:

ՏԸԿԸՌԱՄԱՔ՝/ՏԸԿՌԱՄԱՔ՝ - *գ.* 1. Բույսերի արմատների մազիկները, մազանման արմատ: *Վէր ծիք՝ ա տամ, վը՝ղան պուք տամ, թընանգ՝ին տրկրռամագ՝էրընը ա մընամ* (Զ): 2. Աղվամազ: *Ոէ ջանիլ խօխա յա, լի՞, իրը՝սէն տրկրռամագ՝ը հանլա թանզգան յա փրսնում* (Զ):

ՏԸԿԸՌԱՎԷՐ/ՏԸԿՌԱՎԷՐ - *ած.* Արմատ ունեցող, արմատավոր: *Մին տրկրռավէր կուճի խընձորէ յա տամ, պիրում ա ուրան բաղումը տընգում* (Զ):

ՏԸԿԸՌ(Ը)ԿԱԼԻԼ/ՏԸԿՌԸԿԱԼԻԼ - *չբ.* 1. Արմատներ արձակել, արմատակալել: *Էտ ծառը տրկրռկալիում ա, տը՝ռնում մը՝ծ ծառ* (Զ): 2. *փխբ.* Մի տեղ հաստատվել, հիմնավորվել: *Ըտրրանք քօչում ըն, կ՝ամ Կրսապատ շէնումը տրկրռկալիում* (Զ):

ՏԸԿԸՌ(Ը)ԿԸՀԱՆ(Ա) - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆ(Ա):

ՏԸԿԸՌ(Ը)ԿԸՀԱՆԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆԷԼ:

ՏԸԿԸՌ(Ը)ԿԸՀԱՆՎԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆՎԷԼ:

ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆ(Ա)/ՏԸԿԸՌՀԱՆ(Ա)/ՏԸԿԸՌ(Ը)ԿԸՀԱՆ(Ա)/ՏԸԿՌԸԿԸՀԱՆ(Ա) - 1. *ած.* Տակից՝ խորքից՝ արմատից՝ արմատով պոկած՝ հանած: *Նի յա մընում բաղը, տը՝սնում տրկրռրհան ծառէրը վէր ածած* (Զ): 2. *մ.* Ի սկզբանե, սկզբից: *Տրկրռրհանա յէլ Դօրհունք հարուստ ըն իլալ* (Զ):

- Տրկրռրհան անել - 1. Արմատով պոկել, արմատախիլ անել: *Նի յըն տը՝ռնում բաղը, թանանգ՝նէն սաղ տրկրռրհան անում* (Զ): 2. Ոչնչացնել, վերացնել: *Էտ թաքավէրը կ՝ուղօթունը տրկրռրհան ա անում ուրան յիրգ՝իրան* (Զ):

- Տրկրռրհան ինիլ - 1. Արմատով պոկվել, արմատախիլ լինել: *Վէր ծիք՝ ա տամ, շանվթանլին տրկրռրհան ա ինհում* (Զ):

ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆԷԼ/ՏԸԿՌԸՀԱՆԷԼ/ՏԸԿԸՌ(Ը)ԿԸՀԱՆԷԼ/ՏԸԿՌԸԿԸՀԱՆԷԼ - *նբ. տե՛ս* Տրկրռրհան անել:

ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆՎԷԼ/ՏԸԿՌԸՀԱՆՎԷԼ/ՏԸԿԸՌ(Ը)ԿԸՀԱՆՎԷԼ/ՏԸԿՌԸԿԸՀԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆԷԼ-ի:

ՏԸԿԸՌ(Ը)ՊՈՒՔ/ՏԸԿՌԸՊՈՒՔ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆ(Ա):

ՏԸԿԸՌՕՏԷ(Ն)Ք՝/ՏԸԿՌՕՏԷ(Ն)Ք՝ - *տե՛ս* ՏԱԿԸՌՕՏ:

ՏԸԿԸՏԻՅԸ՝Ր - *ած.* 1. Քարուքանդ եղած, ավերված: *Կամ ա, տը՝սնում՝ ուրանց շէնը տրկրտիյը՝ր* (Զ): 2. Իրար խառնած, ցաքուցրիվ: *Իզէն հինչ կընէգ՝ա՞. տօնը՝ տրկրտիյը՝ր, խօխէնքը՝ յը՝խտուտ* (Բ):

- Տրկրտիյը՝ր անել - 1. Քարուքանդ անել, ավերել: *Դուշմանին զօրքը նի յա տը՝ռնում էտ շէնը, տրկրտիյը՝ր անում, ժուղովուրթէն էլ կըտօրում* (Զ): 2. Իրար խառնել, մի բան գտնելու համար ամեն ինչ քրքրել, ամեն տեղ նայել՝ փնտրել՝ խուզարկել: *Սաղ տօնը տրկրտիյը՝ր ըն անում, ամմա էտ մուտանան քրթէնում չընը* (Զ):

- Տրկրտիյը՝ր ինիլ/տը՝ռնալ - 1. Քարուքանդ լինել, ավերվել: *Տը՝սնում ա՝ տը՝ղէրք տրկրտիյը՝ր իլած, վը՝չ մին քարու տը՝ղ մանիլում չի անում...* (ՀԺՀ, VII, 197): 2. Ամեն ինչ իրար խառնվել: *Քամէ ըրավ, կալ՝ին խօրթնէրը սաղ տրկրտիյը՝ր իլավ* (Զ):

ՏԸԿԼՈՒՐԱՆԱԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐԱՆԱԼ:

ՏԸԿԼՈՒՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՑ(Ը)ՆԷԼ:

ՏԸԿԼՈՒՐՑԸՆՎԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՑԸՆՎԷԼ:

ՏԸԿԼՈՒՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՕԹՈՒՆ:

ՏԸԿԼՕՋ - *տե՛ս* ՏԸԿԸԼՕՋ:

ՏԸԿԼՕՐ - *տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ:

ՏԸԿՌԱՄԱՔ՝ - *տե՛ս* ՏԸԿԸՌԱՄԱՔ:

ՏԸԿՌԱՎԷՐ - *տե՛ս* ՏԸԿԸՌԱՎԷՐ:

ՏԸԿՌԸԿԱԼԻԼ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ԿԱԼԻԼ:

ՏԸԿՌԸԿԸՀԱՆ(Ա) - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆ(Ա):

ՏԸԿՌԸԿԸՀԱՆԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆԷԼ:

ՏԸԿՌԸԿԸՀԱՆՎԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆՎԷԼ:

ՏԸԿՌԸՀԱՆ(Ա) - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆ(Ա):

ՏԸԿՌԸՀԱՆԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆԷԼ:

ՏԸԿՌԸՀԱՆՎԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՀԱՆՎԷԼ:

ՏԸԿՌԸՊՈՒՔ - *տե՛ս* ՏԸԿԸՌ(Ը)ՊՈՒՔ:

ՏԸԿՌՕՏԷ(Ն)Ք՝ - *տե՛ս* ՏԸԿԸՌՕՏԷ(Ն)Ք՝:

ՏԸԿ-ՏԸԿ/ԿԸՏ-ԿԸՏ - *ձ.* Պարբերական թույլ հարվածների ձայնը: *Մին էլ ընգուճավը մին սանս ա ըղնում՝ տը՝ղ-տը՝ղ...* (Զ):

- Տրկ-տրկ անել - 1. *տե՛ս* ՏԸԿՏԸԿԱԼ: 2. *տե՛ս* ՏԸԿՏԸԿՑ(Ը)ՆԷԼ:

ՏԸԿՏԸԿԱԼ/ԿԸՏԿԸՏԱԼ - *չբ.* 1. Որեւէ բանով չոր մակերեսի պարբերականորեն խփելու ձայն լսվել: *Վէր մը՝ղակը տրկտրկամ ա, այան քունը՝ղա յը՝ր ա կէնում* (Զ): 2. *փխբ.* Լացակումել, ցածրաձայն լացել: *Էտ վէր ասում ա, կընէգ՝ը տրկտրկամ ա* (Զ):

ՏԸԿՏԸԿԱԼԻ/ԿԸՏԿԸՏԱԼԻ - *մ.* 1. Տկտկալով, տկտկացնելով: *Տրկտրկալի շօռ ա կ՝ամ տանը* (Բ): 2. *փխբ.* Լացակումելով, ցածրաձայն լացելով: *Տրկտրկալի տանս ա կ՝ամ, ք՝ինամ մորը կօշտը* (Զ):

ՏԸԿՏԸԿՑ(Ը)ՆԷԼ/ԿԸՏԿԸՏՑ(Ը)ՆԷԼ - 1. *չբ.* Տկտկոց առաջացնել: *Հանը ասմա.- Խընրէգ՝ տրկտրկցընո՛ւ, թօ քօն ինինք՝* (Զ): *նբ.* 2. Մատներով կամ այլ բանով մի ուրիշ բանի պարբերականորեն խփել: *Էն խուփէն ասում ա.- Էն վախտը տու կրկրտկրտցընիս օղտէն մորթէն, դուշէրը ք՝ը՝զ կրհանէն* (ՀԺՀ, V, 394): 3. *փխբ.* Լացակումած վիճակի հասցնել, լացացնել: *Էտ կընգանը սօք՝ը խանէն տրկտրկցընում ա* (Զ):

ՏԸԿՏԸԿՕՆ/ԿԸՏԿԸՏՕՆ - *գ.* 1. Տկտկալը, տկտկալու ձայնը: *Էս տրկտրկօնը մէր գանիլան տարավ* (Բ): 2. *փխբ.* Լացակումելը, ցածրաձայն լացելու ձայնը: *Մարթը կրգնրվում ա, թա.- Տրկտրկօնըտ կրտրրէ՞, կավ ա, լի՞, ըստակալ ա, ըստակալ ա, մին էրանշը ինք՝ կօնինք՝* (Զ):

- Տրկտրկօնը յը՝ր անել - *տե՛ս* ՏԸԿՏԸԿՑ(Ը)ՆԷԼ (3):

- Տրկտրկօնը յը՝ր ինիլ - *տե՛ս* ՏԸԿՏԸԿԱԼ (2):

ՏԸԿՏԸԿՕՑ/ԿԸՏԿԸՏՕՑ - *տե՛ս* ՏԸԿՏԸԿՕՆ:

ՏԸԿՈՒՌԱՄԱՔ՝/ՏՈՒԿՈՒՌԱՄԱՔ՝ - *տե՛ս* ՏԸԿԸՌԱՄԱՔ՝ (2):

ՏԸԿՕՋ - *տե՛ս* ՏԸՌՕՋ:

ՏԸԿՕՂԷՆ/ՏԸԿՕՂԻՆ/ՏՈՒԿՕՂԷՆ/ԿԸՏՕՂԷՆ - *գ.* Տխլենու պտուղը՝ տխիլ, պնդուկ: *Թրղրվարթա ծրմակումը շատ տրկօղէն կա, խօգ՝էրը օտում ըն, ք՝ուքանում* (Բ):

ՏԸԿՕՂԻՆ - *տե՛ս* ՏԸԿՕՂԷՆ:

ՏԸԿՕՂՆԷ/ՏԸԿՕՂՆԻ/ՏՈՒԿՕՂՆԷ/ԿԸՏՕՂՆԷ - *գ.* Հաճարազգիների ընտանիքին պատկանող ծառ՝ տխլենի, պնդուկենի: *Էս ախճիգ՝ը ման ա յէկալ էն տրղէն հէտան, յէկալ ա տէսալ՝ տրկօղնէ ծառէն յրրա* (ՀԺՀ, VI, 53):

ՏԸԿՕՂՆԻ - *տե՛ս* ՏԸԿՕՂՆԷ:

ՏԸԿՕՂՆՕՏ/ՏՈՒԿՕՂՆՕՏ/ԿԸՏՕՂ-

ՆՕՏ - *գ.* Շատ տխլենիներ աճած տեղ: *Նի յըն տը՛ռնում տըկօղնօտը, բօլ-բօլ քաղում* (Ջ):

ՏԸԿՕՌ/ՏՈՒԿՕՌ *(գրբ. տ+կուռն (թեւ)* - *գ., ած.* Թեւերը դեռ չբուսած, անթեւ (թռչուն): *Հընգէր-հըրըվանու դօթուր, թէվը կօտրած յա տըկօռ մընացած ճուտէրընն էլ հէտնէն քըցած՝ քըթօթ ըն անըմ...* (ՋՏ, Ա, 77):

ՏԸՀԼ *(գրբ. տհալ (չհալած)* - *գ.* 1. *տե՛ս* ՂԱՎՈՒՐՄԱ: 2. Ձնհալ, հալիլոց: *Ընը՛վը տեւս յը՛կավ, տըհալը ըսքըսից* (Բ):

- Տըհալ ըղնէլ - 1. Հալիլել: *Խըծապէրթ մայիսումըն ա ծունը տըհալ ըղնում* (Բ): 2. *տե՛ս* ԼԻՀԼԻՀԼ:

ՏԸՀԼԼՑՈՒ - *տե՛ս* ՂԱՎՈՒՐՄԱՑՈՒ:

ՏԸՀԼՆԱԼ - *տե՛ս* ՏԸՀԼՆԷԼ:

ՏԸՀԼՆԷԼ/ՏԸՀԼՆԻԼ/ՏԸՀԼՆԱԼ/ՏԻՀԼՆԷԼ/ՏԻՀԼՆԻԼ - *տե՛ս* ԼԻՀԼԻՀԼ: *Ախճիգը ախպօրը հէտան վագ ա տամ տըհանէլավ...* (ՀԺՀ, V, 57):

ՏԸՀԼՆԻԼ - *տե՛ս* ՏԸՀԼՆԷԼ:

ՏԸՀԼՆՕՑ/ՏԻՀԼՆՕՑ - *տե՛ս* ԼԻՀԼԻՀՕՆ:

- Տըհանօցը ըղնէլ - *տե՛ս* ԼԻՀԼԻՀԼ:

ՏԸՀԼՕՐ/ՏԻՀԼՕՐ *(գրբ. դար)* - *գ.* Բարձր տեղ, բարձրավանդակ: *Կամ ըն էտ տըհարումը շէն շինում* (Ջ):

ՏԸՀԷՆՑ - *տե՛ս* ԸՏԸՀԷՆՑ:

ՏԸՂ[1] - *տե՛ս* ՏԸ՛Ղ[1]:

ՏԸՂ[2] - *տե՛ս* ԸՏԸ՛Ղ:

ՏԸՂԱ *(գրբ. տղայ)* - *գ.* 1. Արական սեռի երեխա կամ պատանի՝ երիտասարդ: *Ըտըրանք վագ տալավ կամ ըն, հըսնըմ էտ տըղին...* (ՀԺՀ, V, 57): 2. Արական սեռի որեւէ հասակի անձ իր ծնողների նկատմամբ, որդի: *Էտ ըխճըկանը օգըմ ըն թաքավէրէն տըղէն հէտէ* (ՀԺՀ, V, 385): 3. *տե՛ս* ՏԸՂԱՄԱՐԹ (4): 4. *ած.* Արական սեռին պատկանող: *... Դուշմաննէն կաս ըն լալ մէր շէնէրքը, ժուղովուրթէն կուտուրէս, տըղա խօխօնցը տընէս, մըծըցընէս, ուրաց հէտէ սալդաթ շինիս* (ԱԱ, 71):

- Տըղա յըս - Եթե կարող ես, եթե ի վիճակի ես: *Բաղ, հինչ բա՞ղ, լ՛ըհա տըղա յըս՝ բիջարի* (Բ):

- Տըղա յը՞ս, թա ա՞խճիգ - *տե՛ս* Ախճիգ ը՞ս, թա տըղա՞:

- Տըղան թաքավէրին թախտէն ա ծընվում, ախճիգը՝ շանը թախտէն - Ասում են՝ նկատի ունենալով որդու առավելությունը դուստրից:

- Տըղէն անա տըղա յա ինում, լավ տըղէն անա՝ ախճիգ - Ասում են նորածին աղջկա հորը՝ որպես սփոփանք:

ՏԸՂԱԹՕՌ(ՆԸ) - *գ.* Թոռ՝ աղջկա կողմից: *Թիմուրէն տըղաթօռնը բընական ուրան նըհը՛տ ռուս կընէգ ա պէրալ* (Բ):

ՏԸՂԱԿ[1] - *տե՛ս* ՏԸ՛ՂԱԿ[1]:

ՏԸՂԱԿ[2] - *տե՛ս* ՏԸ՛ՂԱԿ[2]:

ՏԸՂԱԿՕԽ - *ած.* Շատ տղա զավակներ ունեցող: *Տըղակօխ տօն ա Միխակէն տօնը* (Ջ):

Տըղակօխ ինիլ/տը՛ռնալ - Շատ տղա զավակներ ունենալ: *Մարյանը տըղակօխ ա իլալ* (Բ):

ՏԸՂԱՀԱՐ - *գ.* Փեսացուի հայրը: *Տըղահարը ա ըխճըկահարը հօջաթ ըն տամ, կըռը՛վ ա ըղնում* (Ջ):

ՏԸՂԱՃՕՏ - *գ.* Առույգ՝ ժիր՝ ճարպիկ տղա: *Տըղաճօտ ա մէր Կարօն, նըստում ա ծին, մին մունուտումը հըսնում հօրը կօշտը* (Ջ):

ՏԸՂԱՄԱՐ - *գ.* 1. Փեսացուի մայրը: *Տըղամարը հըրթնըցուվէն ճըկատան պաչում ա, տանում տօն* (Ջ): 2. Նորածին տղայի մայր: *Այան ասում ար.- Տըղամարը աշկէս լուսը ա* (Բ):

ՏԸՂԱՄԱՐԹ - *գ.* 1. Արական սեռի անձ, այր: *Շէնին տըղըմարթիքը հըվաքվում ըն, քօմանգ անում, էտ ըրփըվէրէ կընգանը արտը հընձում* (Ջ): 2. Կատարյալ հասակի հասած՝ առնական մարդ՝ երիտասարդ: *Բիդի հըրսանէքի անին. ախճիգը հըսած-փըսած ա ինիս, Մօսին էլ՝ տըղամարթ...* (ՀԺՀ, V, 670): 3. Ամուսնացած մարդը իր կնոջ նկատմամբ: *Տըղամարթը կընգանը բիդի օխտը տարէն մը՛հը՛տ անգուճ օնէ, հըկառակը անէ* (Ջ): 4. *ած., գ.* Համարձակ, կտրիճ, տոկուն, իր խոսքի տերը: *Տըղամարթ կընանէք՝ Ղարաբաղ շատ կան* (Բ): 5. *տե՛ս* ՏԸՂԱ (4):

- Տըղամարթ կէնալ - Համարձակ՝ տոկուն լինել, իր խոսքի տերը լինել: *Ասում ա.- Տըղամարթ կա՛ց, լօխ լ՛ավ ա ինանան* (Ջ):

- Տըղամարթ մը՛ռնէլ - Երիտասարդ հասակում մեռնել: *Յաշին էլ տըղամարթ մը՛ռավ* (Բ):

- Տըղըմարթու խօսկ - Խոստումը անպայման կատարելու խոսք, հաստատ խոսք, ազնիվ խոսք: *Դէ թաքավէրին խօսկընն էլ տըղըմարթու խօսկ ա, հինչը ասում ա, անում ա* (Ջ):

- Տըղըմարթու կ՛ինի - Թունդ գինի: *Դէ Բընըզուրա կ՛ինին էլ տըղըմարթու կ՛ինի յա, լի՞, խըմում ըն, հըրփօտում* (Ջ):

ՏԸՂԱՅՕԹՈՒՆ/ՏԸՂՕԹՈՒՆ *(գրբ. տղայութիւն)* - *գ.* 1. Տղա լինելը: *Տըղօթունը լ՛ավ ա, կանց ըխճըկօթունը* (Բ): 2. Տղա եղած ժամանակաշրջանը: *Սարօն տըղօթունը շէնումըն ա անց կընցըրալ* (Բ): 3. Տղայի վարքագիծ, տղային վայել արարք: *Ըտըրա տըղօթունան լօխճին ք՛ը՛փը կամ ա* (Ջ): 4. *փխբ.* Միամիտ՝ անխոհեմ գործ՝ արարք: *Մը՛ծ մարթ ա Ապէլը, ամմա հալան տըղօթուն ա անում* (Բ): 5. *տե՛ս* ՏԸՂԸՄԸՐԹ(Կ)ՕԹՈՒՆ (1): *Կըղօթունը տըղօթուն ա, վէր փըռնըվէցէր՝ շանտըղօթուն ա* (ՆԱԲ, III, 389):

ՏԸՂԱՇՕՐ - *տե՛ս* ՏԸ՛Ղ[1] (8):

ՏԸՂԱՊԷՆ - *գ.* Տղայի՝ տղամարդու գործ: *Հանձ անէլը տըղապէն ա* (Բ):

ՏԸՂԱՊԷՏ - *գ.* 1. Հազվագյուտ՝ չճարվող բան: *Ըստարէ թաթ չի իլալ, թաթէն արաղը տըղապէտ ա* (Բ): 2. Նեղ օրվա՝ հիվանդների եւն համար պահվող բան (պտուղ, քաղցրավենիք եւն): *Այան հէնգ խընձոր ա պըտատում, տինում սընդօղումը, թա.- Տըղապէտ ա, թօղէ կէնա* (Ջ):

- Տըղապէն տը՛ռնալ - Հազվագյուտ դառնալ, չճարվել: *Խօգին մէսը տըղապէտ ա տը՛ռալ* (Բ):

- Տըղըպէտու հը՛տէ էլ չինիլ - *տե՛ս* Տըղապէտ տը՛ռնալ:

ՏԸՂԱՍԷՐ - *ած.* Տղա զավակների նկատմամբ մեծ սեր ունեցող: *Այան տըղասէր ա իլալ* (Բ):

ՏԸՂԱՎԸ - *տե՛ս* ՏԸ՛ՂԱՎԸ:

ՏԸՂԱՏԱՐ - *գ.* 1. Տղա ունեցող ծնող: *Տըղատար, ըխճըկատար հիշկան կընէգ կա, հըվաքվում ըն, դանչանք անում խանէն, վէր ուրանց խօնցը կըտօրէ վէջ* (Ջ): 2. Փեսայի ծնողը: *Տըղատարընն ա ըխճըկատարը մըսլըհաթ ըն անում, վէր հըրսանէքը մինտը՛ղ անին* (Բ):

ՏԸՂԱՏՕՆ - *գ.* Փեսացուի հոր տունը: *Հարթանանը տըղատօնը տընէլիս սէլը նի յա օնում* (Ջ):

ՏԸՂԱՑԸ՛Ղ - *տե՛ս* ՏԸՂԱՑՈՒ:

ՏԸՂԱՑՈՒ - *գ.* Խորթ տղա: *Տու մէլ ասէլ, էտ Ամանը խանէն տըղացուն ա* (Ջ):

ՏԸՂԸ - *տե՛ս* ՏԸ՛ՂԸ:

ՏԸՂԸԿԱՆԱԼ *(գրբ. տեղեկանամ)* - *չբ.* Տեղեկություն՝ լուր առնել, տեղեկանալ: *Մին օր էլ տըղըկանում ա, վէր կընէգը սիրական ա պահում* (Ջ):

ՏԸՂԸԿՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. տեղեկացուցանեմ)* - *նբ.* ՏԸՂԸԿԱՆԱԼ-ի:

ՏԸՂԸԿՕԹՈՒՆ *(գրբ. տեղեկութիւն)* - *գ.* 1. Տեղյակ լինելը կամ տեղյակ պահելը: *Էտ տըղըկօթունը թաքավէրին կըտըղցընում ա* (Ջ): 2. Լուր: *Մին օր էլ տըղըկօթուն ա ըսկանում, վէր հիրը՛վան թաքավէրը մը՛ռալ ա* (Ջ):

- Տըղըկօթուն ինիլ - Տեղյակ լինել: *Էտ տըղէն տըղըկօթուն չի ինում հօրը կուրծէրան* (Ջ):

- Տըղըկօթուն տալ - Իմաց անել, տեղեկացնել: *Տըղըկօթուն ըն տամ, վէր դուշմանին զօրքը կամ ա* (Ջ):

ՏԸՂԸՀԱՆ - *ած.* 1. Տեղից հանած՝ հանված՝ խախտված: *Հիշկան անում ա, կարում չի էտ տըղըհան տոռնը տըէղը տինի* (Բ): 2. Բնակավայրից հանված, գաղթեցրած, գաղթեցված: *Խըէղճէրը հինչ ա՞նին, տըղըհան ժուղովուրթ ըն, վէչ տօն օնին, վէչ տըէղ* (Ձ):

- Տըղըհան անէլ - 1. Տեղից հանել՝ խախտել՝ շարժել: *Քարը տըղըհան ըն անում, տըէսնում՝ տակէն մին հափուռ վըէսկէ* (Ձ): 2. Հայրենիքից՝ բնակավայրից հանել՝ քշել, գաղթեցնել: *Ըտըրանց տըղըհան ըն անում, տընէրըն էլ սաղ էրում* (Ձ):

- Տըղըհան ինիլ/տըէռնալ - 1. Տեղից հանվել՝ խախտվել, տեղաշարժվել: *Վէր ա ըղնում, վըէնը տըղըհան ա ինում* (Բ): 2. Հայրենիքից՝ բնակավայրից հեռանալ՝ հանվել՝ քշվել, գաղթեցվել: *Կըռվէն վախտը էտ շինացէք տըղըհան ըն ինում, կամ մէր շէնը* (Ձ):

ՏԸՂԸՄԸՐԹ(Կ)ՕԹՈՒՆ - *գ.* 1. Տղամարդ լինելը, տղամարդու հատկությունը (համարձակություն, տոկունություն եւն): *Խըմէլը տըղըմըրթօթուն ա, հաբրիլը՝ շանտըղօթուն* (ԱԲԲ, 37): 2. Տղամարդու սեռական կարողություն: *Խանը հըրաման ա տամ, վէր ըտըրան կօռտին, տըղըմըրթկութունա քըցին* (Ձ):

ՏԸՂԸՄԸՐԹՎԱՉԻ - *տե՛ս* ՏԸՂԸՄԸՐԹՎԱՐԻ:

ՏԸՂԸՄԸՐԹՎԱՐԻ - *մ.* Տղամարդու նման՝ պես: *Տըղամարթը բիդի տըղըմըրթվարի կօրծ անէ* (Բ):

ՏԸՂԸՊԷՐՑ - *տե՛ս* ՏԸ[1]Ղ (8):

- Տըղըպէրց ըղնէլ - *տե՛ս* Տըէղէն տակը ըղնէլ (ՏԸ[1]Ղ-ի տակ):

ՏԸՂԸՊԷՐՑՈՒՄ - *ած.* Անկողնային, անկողնում պառկած բուժվող (հիվանդների մասին): *Տըղըպէրցում մարթ ա Զավէնը, կարում չի, թա տանուս կա շինամաչ* (Բ):

ՏԸՂԸՌԸԽ - *տե՛ս* ՏԸՂԱՄԱՐԹ (4):

ՏԸՂԸՍՏԸՂ - *մ. տե՛ս* Տըէղընն ու տըէղը:

ՏԸՂԸՎԱՉԻ - *տե՛ս* ՏԸՂԸՎԱՐԻ:

ՏԸՂԸՎԱՐԷԼ - *տե՛ս* ՏԸՂՎԱՐԷԼ:

ՏԸՂԸՎԱՐԻ - *մ.* Տղայի նման՝ պես: *Էտ էլ կօգի ախճիգ ա ինում, ամմա տըղըվարի յա շօռ կամ* (Ձ):

ՏԸՂԸՎԱՐՎԷԼ - *տե՛ս* ՏԸՂՎԱՐՎԷԼ:

ՏԸՂԸՎԸՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸՂՎԸՐՑ(Ը)ՆԷԼ:

ՏԸՂՆԱԾԱՄ/ՏԻՂՆԱԾԱՄ - *ած.* 1. Դեղին ծամեր ունեցող, դեղնահեր, դեղնամազ: *Տըղնածամ ախճիգ ա ինում էտ չուբանէն ախճիգը* (Ձ): 2. *փխբ.* Դեղին ծամերի նմանվող հասկեր՝ տերեւներ՝ թերթիկներ եւն ունեցող: *Արէվը մին ծաղէգ ա ղարկում՝ տէղէն, տըղնածամ* (ՆԱԲ, 82):

ՏԸՂՆԱԾԸՏ/ՏԻՂՆԱԾԸՏ - *գ.* Ճնճղուկի մեծությամբ փորը դեղին թռչուն, դեղնափորիկ: *Մինակ անխըէղճ վըէրսկանը տըղնածըէտ վէր կըքըցի* (Բ):

ՏԸՂՆԱՎԸԷՂ/ՏԻՂՆԱՎԸԷՂ - *գ.* Դեղին կավահող: *Ղարաբաղ տըղնավըէղ շատ կա* (Բ):

ՏԸՂՆԱՎՈՒՆ/ՏԻՂՆԱՎՈՒՆ - *ած.* Դեղին գույնին տվող, դեղնավուն: *Տըղնավուն իրըէսավ մին մարթ ա ջիհում* (Ձ):

ՏԸՂՆԱՑԱՎ/ՏԻՂՆԱՑԱՎ *(գրբ. դեղնացաւ)* - *գ.* Մաշկի եւ լորձաթաղանթների դեղնություն՝ որպես հետեւանք լյարդի հիվանդության, դեղնախտ: *Տըղնացավը փիս հիվընդօթուն ա* (Բ):

ՏԸՂՆԱՓԱՂ/ՏԻՂՆԱՓԱՂ - *գ.* Դեղնավուն գույն ունեցող բնափայտ: *Սըզնուն փանդը տըղնափանդ ա* (Բ):

ՏԸՂՆԷԼ - *տե՛ս* ՏԸՂՆԻԼ:

ՏԸՂՆԸՋԱՐԴԱ/ՏԻՂՆԸՋԱՐԴԱ - *գ. տե՛ս* ՋԱՐԴԱ:

ՏԸՂՆԸԷՆԷ/ՏԻՂՆԸԷՆԷ - 1. *գ.* Սալորենու՝ կեռասենու եւն տեսակ, որ տալիս է դեղին գույնի պտուղ: *Գավալօտը կըտօրում ա, թօղնում մինակ տըղնըէնէն* (Բ): 2. *տե՛ս* ՏԸՂՆԸԿՈՒԿՈՒԾ:

ՏԸՂՆԸԾԱՂԷԳ/ՏԻՂՆԸԾԱՂԷԳ - *գ.* Դեղին ծաղիկներով խոտաբույս, որից դեղին ներկ էին պատրաստում: *Տըղնըծըղէգան տէղէն ըռանգ ընք իլալ շինիս, թիլէրը ըռանգ տաս* (Բ):

ՏԸՂՆԸԾԱՄԷԼ/ՏԻՂՆԸԾԱՄԷԼ - *չբ.* Դեղին ծամերի նմանվել (հասկերի մասին): *Արտը հըսկըկալալ ա, տըղնըծամալ, հընձող չի կա* (Ձ):

ՏԸՂՆԸԿԱԿԱՉ/ՏԻՂՆԸԿԱԿԱՉ - *գ.* Դեղնագույն փետուրներով թռչնատեսակ: *Լալակը հըէտան ա պըրծընում, տըղնըկակաչը նի յա մընում քօլէն մաչը* (Ձ):

ՏԸՂՆԸԿԱՆԱ(Ն)Չ/ՏԻՂՆԸԿԱՆԱ(Ն)Չ - *ած.* Դեղին ու կանաչին տվող, դեղնականաչ: *Տըղնըկանաչ փափաղ ա տիրալ* (Բ):

ՏԸՂՆԸԿՈՒԿՈՒԾ/ՏԻՂՆԸԿՈՒԿՈՒԾ - *ած.* Գունատ: *Հարթնըն էլ մին տըղնըկուկուշ ախճիգ ա ինում* (Ձ):

ՏԸՂՆԸԿՕԹԷԼ/ՏԻՂՆԸԿՕԹԷԼ - *չբ.* 1. Շատ հասնելուց կոթը՝ պոչը դեղնել (մրգի, պտուղի մասին): *Տանձը տըղնըկօթալ ա, քըղէլի վախտըն ա* (Բ): 2. *փխբ.* Հիվանդությունից՝ վախից եւն խիստ գունատվել՝ գույնը գցել: *Էտ խէ ըտի տըղնըկօթալ ը՞ս, հիվանդ ը՞ս* (Բ):

- Տըղնըկօթած կարունք - Մարդու կյանքի վերջին շրջանը: *Խօսրօվը շատ ա պըռավալ, ըստարէ հանց ա ընդրրա հըէտէ տըղնըկօթած կարունք ա* (Բ):

ՏԸՂՆԸԿՕՑ/ՏԻՂՆԸԿՕՑ - *տե՛ս* ՏԸՂՆՕՑ:

ՏԸՂՆԸՎԷԼ - *տե՛ս* ՏԸՂՆԸՎԻԼ:

ՏԸՂՆԸՎԻԼ/ՏԸՂՆԸՎԷԼ/ՏԻՂՆԸՎԷԼ/ՏԻՂՆԸՎԻԼ - *տե՛ս* ՏԸՂՆԻԼ:

ՏԸՂՆԸՑ(Ը)ՆԷԼ/ՏԻՂՆԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. դեղնացուցանեմ)* - *նբ.* ՏԸՂՆԻԼ-ի:

ՏԸՂՆԻԼ/ՏԸՂՆԷԼ/ՏԻՂՆԻԼ/ՏԻՂՆԷԼ *(գրբ. դեղնեմ)* - *չբ.* 1. Դեղին գույն ստանալ, դեղնել: *Էտ անէսկանը յէտը թաքավէրին բաղը յավաշ-յավաշ տըղնըմ ա, չուրանըմ* (ՀԺՀ, V, 83): 2. *տե՛ս* ՏԸՂՆԸԿՕԹԷԼ (2):

- Տըղնած ճանթ - Գունատ մարդ: *Էտ տըղնած ճանթը օխտը տըղըմարթու մըչանք օտում ա* (Ձ):

ՏԸՂՆԻՐԸԷՍ/ՏԻՂՆԻՐԸԷՍ - *ած.* Դեղնագույն՝ գունատ դեմք ունեցող: *Տըղնըիրըէս ախճիգ ա Հայկանուշը* (Բ):

ՏԸՂՆԻՐԸԷՍԷԼ/ՏԻՂՆԻՐԸԷՍԷԼ - *չբ.* Դեմքը դեղին գույն ստանալ, գունատվել: *Էտ վէր տըէսնում ա, թաքուհին տըղնիրըէսում ա* (Ձ):

ՏԸՂՆՈՒԿ - *տե՛ս* ՏԸՂՆՕԿ:

ՏԸՂՆՕԹՈՒՆ/ՏԻՂՆՕԹՈՒՆ *(գրբ. դեղնութիւն)* - *գ.* 1. Դեղին լինելը, դեղին գույն ունենալը: *Աշունքը ծըմակէն տըղնօթունը լանգաթ ա ինում* (Բ): 2. Գունատություն: *Ըխճըկանը տըղնօթունը հօրը բըղըրյար ա անում* (Ձ):

ՏԸՂՆՕԿ/ՏԸՂՆՈՒԿ/ՏԻՂՆՕԿ/ ՏԻՂՆՈՒԿ - *գ.* 1. *տե՛ս* ՏԸՂՆԱՑԱՎ: 2. Բույսերի հիվանդություն, որից տերեւները դեղնում են ու թափվում: *Ծառէրը տըղնօկան ընգալ ըն* (Բ): 3. *տե՛ս* ՏԸՂՆԱՎՈՒՆ:

ՏԸՂՆՕՍԿ/ՏԻՂՆՕՍԿ - *տե՛ս* ՏԸՂՆՕՑ:

ՏԸՂՆՕՑ/ՏԻՂՆՕՑ/ՏԻՂՆՕՑ *(գրբ. դեղնուց)* - *գ.* 1. Թռչունների ձվի մեջ գտնվող սպիտակուցով պատած թանձրավուն դեղին նյութը՝ դեղնուց: *Թընըխըրավէն տըղնօցը օտում ա, սիպտըկօցը թօղում* (Ձ): 2. *տե՛ս* ՏԸՂՆՕԹՈՒՆ:

ՏԸՂՎԱՐԷԼ/ՏԸՂԸՎԱՐԷԼ - *նբ.* 1. Դնել, զետեղել, համապատասխան տեղ դնել՝ լցնել: *Բախշին հիյվընէն տըղվարում ա, պըրծնում, կամ տօն* (ՀԱԲ, 15, 136): 2. *փխբ.* Ամուսնացնել: *Մաքաղաթ աքէրը ուրան թուռնէրէն էլ տըղվարից, ըրխըյնացավ* (Բ): 3. Մեկին մի գործի՝ պաշտոնի՝ ուսման դնել: *Մին լավ կօրծ չընք քըթէնում, թա մէր Շուշանիգին տըղըվարինք* (Բ): 4. Տեղ հատկացնել, բնակեցնել: *Էտ դունըդնէրէն*

տանում ըն հիրըվընէրէն տընէրումը տըղըվարում (Ձ): 5. *փխբ.* Հուղարկավորել, թաղել: *Հօրը տըղվըրէլանը յէտը հըվաքվում ըն, կարում չըն գիդան, թա իրէք տըղէնան վէր անումը կըտըրվածըն ա, վէր հօրը թուղածան փայ չօնէ* (Ձ): 6. *չբ.* Ջետեղվել, տեղավորվել: *Հինչքան էս ծամէրումը տըղվարում ա, վէսկէ յա տինում* (ՀԱԲ, 15, 46):

ՏԸՂՎԱՐՎԷԼ/ՏԸՂԸՎԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸՂՎԱՐԷԼ-ի:

ՏԸՂՎԸՐՑ(Ը)ՆԷԼ/ՏԸՂԸՎԸՐՑ(Ը)ՆԷԼ - 1. *պբ.* ՏԸՂՎԱՐԷԼ-ի: 2. *տե՛ս* ՏԸՂՎԱՐԷԼ:

ՏԸՂՏՈՒՂԱԼԻ/ՏՈՒՂՏՈՒՂԱԼԻ - *մ.* Դողդողալով, երկյուղելով: *Տուղտուղալի նի յըն տը՛ռնում տընէրը, էլ տուս չըն կ'ամ* (Ձ):

ՏԸՂՏՈՒՂՑ(Ը)ՆԷԼ/ՏՈՒՂՏՈՒՂՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. դողացուցանեմ)* - 1. *նբ. եւ պբ.* ՏԸՂՏՕՂԱԼ-ի: 2. *տե՛ս* ՏԸՂՏՕՂԱԼ:

ՏԸՂՏՕՂԱԼ/ՏՈՒՂՏՕՂԱԼ - *չբ.* 1. Դողալ, սրսփալ, սարսռալ (մրսելուց, վախից եւն): *Տըրանա յէտը յէր ա կընաս, տուղտուղալավ ք'իս խազայինին կօշտը* (ՀԲ, 341): 2. Ցնցվել, երերալ: *Ուրուտուցան աշխարքըս տըղտօղաց* (Բ): 3. Թրթռալ, դողդոջալ, ընդհատ-ընդհատ հնչել (ձայնի մասին): *Ցուրտան սանը տըղտօղում ա* (Բ): 4. Սարսափել, երկյուղ կրել: *Տըղան հօրը անա տըղտօղում ար* (Ձ):

ՏԸՂՏՕՂՈՒՑ/ՏՈՒՂՏՕՂՈՒՑ - *գ.* 1. Դողդողալը: *Ըտըրա տըղտօղուցը վէր տը՛սնում ա, մէխկըն ա կ'ամ, պէց ա թօղնում* (Ձ): 2. *տե՛ս* ՏՕՂ[1]:

ՏԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ՏԸՂԱՅՕԹՈՒՆ:

ՏԸՄԱԿ/ՏԸՄԱԿ/ՏԻՄԱԿ/ՏԻՄԱԿ *(գրբ. դմակ)* - *գ.* 1. Ոչխարների (հեգնաբար՝ նաեւ կանանց) մարմնի ետեւի կախված ճարպային մասը, դմակ: *...Տըսնաս ըմ մի վըխճար՝տըմակը պուք յէկած, ան՞ունը վէր ա տըռնաս* (ԼՂԲՔ, 286): 2. Այդ ճարպի՝ հալելով ստացված յուղը: *Ըտըրանք խուրըգնէն տըմակավ ըն շինիս* (Ձ):

- Տըմակը ըչվընէխ շըպըրտօտել/ շըպըրտ-շըպըրտ անել - *հեգն.* Սեթեւեթել (կանանց մասին): *Խանումը տըմակը ըչվընէխ շըպըրտուտէլավ ք'ինամ ա* (Ձ):

- Տըմակը տափավը քաշ ինիլ - Շատ գեր՝ չաղ լինել, մեծ դմակ ունենալ (ոչխարների, հեգնաբար՝ նաեւ կանանց մասին): *Տըմակը տափավը քաշ ինիլիս մին ոչ ա մօրթում, ղունուղնէրէն հուրումանթ անում* (Ձ):

- Տըմակը օտում չըն, թա՝ վը՛ռան մօտէ յա, ամմա թափանը օտում ըն, վէր մաչը քաքավ լիգ'ըն ա - Անհամոզիչ են պատճառաբանում:

- Տըմակ փըռնէլ/քըցիլ - Գիրանալ, չաղանալ, դմակը մեծանալ (ոչխարների, հեգնաբար՝ նաեւ կանանց մասին): *Վըխճըրնէն մին էրկու ամէս սարումը կէնում ըն, տըմակ փըռնում* (Բ):

ՏԸՄԱՆԱԼ/ՏԻՄԱՆԱԼ *(գրբ. դիմանամ)* - *չբ.* 1. Որեւէ ուժի՝ ճնշման՝ ներգործության եւն հակազդել՝ դիմադրել: *Լըհա՞ ուզիս ա, թա մօրը հօք'ին հանէ, մարը տըմընաս չի, փըխչիս ա ուրան օթախը* (ՀԺՀ, V, 530): 2. *տե՛ս* Հանվանալ անել: 3. *տե՛ս* Հերիք' անել: 4. Դիմացկուն լինել, երկար գործածվել՝ օգտագործվել: *Ապուն կարած տըրըխնէն լ'ավ տըմանում ար* (Բ): 5. Գոյությունը պահպանել, հարատեւել: *Շատ ազկէր ըն կօրալ, ամմա հայը տըմացալ ա* (Ձ):

ՏԸՄԱՍԿԱՆ/ՏԻՄԱՍԿԱՆ - *ած.* Դիմացող, ամուր, տոկուն, դիմացկուն: *Տըմասկան ք'անդիր ա* (Բ):

ՏԸՄԲԱԼ/ՏՈՒՄԲԱԼ - *չբ. տե՛ս* Տըմբըհան ինիլ:

ՏԸՄԲԸՋԷԼ *(հ.ե. *dhen-)* - *նբ.* Շատ ծեծել: *... Յէր ա կէնըմ, ք'ընում ինքըն էլ ք'ուխվէն փըռնըմ, քու ծզած մին լանվ տըմբըզըմ...* (ՀԺՀ, V, 307):

ՏԸՄԲԸԼԱ/ԹԱԲԼԱ/ԹԱԲԼԻ *(գրբ. թմբուկ)* - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԲԱՋ: *Տըմբըլիս թըխէցի, մին սանս յէր իլավ* (ՋՏ, Ա, 24):

ՏԸՄԲԸԼ(Բ)ԱՋԻ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԲԱՋԻ:

ՏԸՄԲԸԼԷԳ' *(թրք. tombul (գիրուկ, թմբլիկ)* - *ած.* Կարճ եւ հաստ՝ լայն: *Տըմբըլէգ' քէթ օնէ Արմօն* (Բ):

ՏԸՄԲԸԼԹԱԿԷ/ՏԸՄԲԸԼԹԱԿԻ - *տե՛ս* ԿՕՊԱԼ (2): *... Սարին էն ղօլընը ի քէցալ, վէր ծըմընկնէրան էրկու հունի կօպալ կըտրիմ՝տըմբըլթակի...* (ՋՏ, Ա, 27):

ՏԸՄԲԸԼԹԱԿԻ - *տե՛ս* ՏԸՄԲԸԼԹԱԿԷ:

ՏԸՄԲԸԼԻՊԻՏՕ - *տե՛ս* ՂՕՇԱՆԱՂԱՐԱ:

ՏԸՄԲԸԼԻ-ՏԸՄԲԸԼԻ/ՏՈՒՄԲՈՒԼԻ-ՏՈՒՄԲՈՒԼԻ - *ած.* Չաղ, չաղությունից մարմնի մսերը շարժվող: *Տըմբըլի-տըմբըլի կ'առնէր ըն մօրթում* (Ձ):

ՏԸՄԲԸԼՕՃԻ - *տե՛ս* ՂՕՇԻ:

ՏԸՄԲԸՀԱՆ/ՏՈՒՄԲՈՒՀԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տըմբըհան անել - Տեղից մի կերպ՝ մի քիչ շարժել: *Հիշկան անում ըն, կարում չըն էտ քարը տըմբըհան անին* (Ձ):

- Տըմբըհան ինիլ - Տեղից մի կերպ՝ մի քիչ շարժվել: *Էտ պառավ մարթը տը՛ղան տըմբըհան իլանվ, ասից.- Չէ՛, բա՛լա, յէկօղ չիլանվ* (ՀԺՀ, V, 92):

ՏԸՄԲԸՐԿԱԼԻԼ - *տե՛ս* ՏԸՄԲԸՐ(Վ)ԷԼ:

ՏԸՄԲԸՐ(Վ)ԷԼ *(գրբ. թմբրիմ)* - *չբ.* 1. Ընդարմանալ, անզգայանալ: *Էրկան նըստէլան վը՛ննէրըս տըմբըրալ ա* (Բ): 2. Թուլանալ, թմրության մեջ ընկնել: *Հանը քունըտէղա յէր ա կէնում, տէսնում՝շատ տըմբըրված ա* (ՆԱԲ, 36): 3. *փխբ.* Ծշմել: *Հինչ ը՞ս տըմբըրալ, տը՛սնում չը՞ս, վէր խօգ'էրը նի յըն տը՛ռալ բօստանը* (Բ): 4. Բթանալ, տխմար դառնալ: *Էնքան անաշա յա քաշանալ, տըմբըրվալ ա* (Ձ):

- Տըմբըր(վ)ած կօրէ - *տե՛ս* Յըղէ կօրէ:

ՏԸՄԲԸՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. թմբրեցուցանեմ)* - *նբ.* ՏԸՄԲԸՐ(Վ)ԷԼ-ի:

ՏԸՄԲԸՐՑԸՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸՄԲԸՐՑ(Ը)ՆԷԼ-ի:

ՏԸՄԲԸՐՕԹՈՒՆ - *գ.* Թմրելը, թմրությունն: *Կըլօխը կօխում ա ցօրտ-ցօրտ ճիրին տակը, վէր տըմբըրօթունը անց կէնա* (Ձ):

ՏԸՄԲԸՑ(Ը)ՆԷԼ/ՏՈՒՄԲԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸՄԲԱԼ-ի:

ՏԸՄԲՏԸՄԲԱԼ/ՏՈՒՄԲՏՈՒՄԲԱԼ - *չբ.* Թեթեւակի շարժվել՝ երերալ՝ օրորվել: *Էտ պառավըտ տըմբտըմբալավ կ'ան ա Աղաբանգ'ին կօշտը...* (ԼՂԲ, 316):

ՏԸՄԲՏԸՄԲԱԼԻ/ՏՈՒՄԲՏՈՒՄԲԱԼԻ - *մ.* Երերալով, օրորվելով: *Տըմբտըմբալի ք'ինամ ա, հըսնում յը՛խծուն հայաթը* (Ձ):

ՏԸՄԲՏԸՄԲՑ(Ը)ՆԷԼ/ՏՈՒՄԲՏՈՒՄԲՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸՄԲՏԸՄԲԱԼ-ի:

ՏԸՄԲՏԸՄԲՕՆ/ՏՈՒՄԲՏՈՒՄԲՕՆ - *գ.* Երերալը, օրորվելը: *Ըտըրա տըմբտըմբօնը վէր տը՛սնում ըն, գ'իդում ըն վէր հիվանդ ա* (Ձ):

ՏԸՄԲՏԸՄԲՕՑ/ՏՈՒՄԲՏՈՒՄԲՕՑ - *տե՛ս* ՏԸՄԲՏԸՄԲՕՆ:

ՏԸՄԲՈՒԼՕՏ/ՏՈՒՄԲՈՒԼՕՏ - *տե՛ս* ԳԱՎԱԼՕՏ:

ՏԸՄԸԿԱԼԻ/ՏԻՄԸԿԱԼԻ - *ած.* 1. Մեջը շատ դմակ խառնած: *Տըմըկալի խաշլամա յա* (Բ): 2. Մեծ՝ պարարտ դմակ ունեցող (ոչխարների մասին): *Մին տըմըկալի ոչ ա տամ, էտ քօռակը ինք' օնում* (Ձ):

ՏԸՄԸԿԱՃՈՒՐ/ՏԻՄԸԿԱՃՈՒՐ - *գ.* Եփած դմակի հյութը: *Ամմէն մարթ չի կարէլ տըմըկաճուր խըմէ* (Բ):

ՏԸՄԸԿԱՅԸ՞Ղ/ՏԻՄԸԿԱՅԸ՞Ղ - *տե՛ս* ՏԸՄԱԿ (2):

ՏԸՄԸԿԱՎԷՐ/ՏԻՄԸԿԱՎԷՐ - *ած.* Դմակ ունեցող, դմակավոր (ոչխարների մասին): *Ապան սիրում ար տըմըկավէր վը՛խճարը* (Բ):

ՏԸՄԸԿԾԱՓԷ/ՏԻՄԸԿԾԱՓԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տըմըկծափէ տալ - Դմակի երկու մասերն իրար հարել: *Ոչէրը տըմըկծափէ տալավ ք'ինամ ա* (Բ):

ՏԸՄԸՑ(Ը)ՆԷԼ/ՏԻՄԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏԸՄԱՆԱԼ-ի:

ՏԸՄԿԷԼ *(գրբ. տամկանամ (թրջվել, թաց լինել)* - *չբ.* Փափկել, կակղել (խոնավությունից, եփվելուց եւն): *Կէճ փա՛ղը կըրակէն յըրա պահում ըն, մինչը՛վ տըմկում ա* (Ձ):

ՏԸՄԿԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. տամկացուցանեմ)* - *նբ.* ՏԸՄԿԷԼ-ի:

ՏԸՄԿՕԹՈՒՆ *(գրբ. տամկութիւն)* - *գ.* Տամուկ լինելը, տամկություն: *Փա՛ղին տըմկօթունը ըտըրան շատ ա դիրխօր անում* (Ձ):

ՏԸՄՏԷՄՈՒԿ/ՏԻՄՏԻՄՕԿ - *գ.* Լինդ, լնդերք: *Տըմտըմուկէրըս ցավում ա* (Բ):

ՏԸՄՏԸՈԷԼ - *տե՛ս* ՏԸԽԸՐ(Վ)ԷԼ:

ՏԸՄՏԸՈՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸԽԸՐ-Ց(Ը)ՆԷԼ:

ՏԸՑԸ՛Ր - *տե՛ս* ՏԻՑԸ՛Ր:

ՏԸՆԱՁ/ՏԸՆԱ՛Ձ/ՏԻՆԱ՛Ձ *(գրբ. տնազ)* - *գ.* Ծաղր: *Էտքան տընազանը յէտը Աժդահակը կ՚ամ ա ո՛ւրա՛ն ապօրը կօշտը...* (ՀԺՀ, V, 416):

- Տընազ անէլ/տալ/քընցիլ - Ծաղրել: *Տըղան գ՚ուդում ա, թա թաքավէրը տընազ ա անում* (ՀԺՀ, V, 321):

- Տընազ տը՛ռնալ - Ծաղրի առարկա դառնալ: *Ըտի վէգիրը տընազ ա տը՛ռնում պալատումը* (Ձ):

ՏԸՆԱ՛Ձ - *տե՛ս* ՏԸՆԱՁ:

ՏԸՆԱՁՉԻ/ՏԸՆԱ՛ՁՉԻ/ՏԻՆԱ՛ՁՉԻ - *գ.* Ուրիշներին ծաղրող անձ: *Էտ շէնումը լօխ ըն գ՚ուդում, վէր Կ՚ափո՛ւնց Գուրգէնը տընազչի յա* (Ձ):

ՏԸՆԱ՛ՁՉԻ - *տե՛ս* ՏԸՆԱՁՉԻ:

ՏԸՆԱԿԱՆ *(գրբ. տնական)* - *ած.* Տանը պատրաստված: *Ամմէնալ՚ավ պանէրը տընական պանէրընա* (Բ):

ՏԸՆԱՄԱՉ - *գ.* Ինչ որ տան մեջ կա, տան մեջ եղած-չեղածը, տանը եղած կահկարասի: *Կ՚օղէրը նի յընա տը՛ռնում, ըտըրա տընամաչը լօխ տանում* (Ձ):

ՏԸՆԱՄԷՐՁ - *գ.* Անձնական օգտագործման համար տրված հողամաս՝ այգի: *Մէր տընամէրձը Կիճի ապուց բաղէն տակէն ա իլա՛լ* (Բ):

ՏԸՆԱՇԻՆ *(գրբ. տնաշէն, տուն շինող, տունը շեն պահող)* - *ած.* Մտերմական հանդիմանություն՝ ուղղված սխալ՝ միամիտ՝ տարօրինակ՝ ոչ տեղին որեւէ բան անողին՝ ասողին կամ որեւէ շատ հայտնի բանի մասին տեղեկություն չունեցողին: *Մարթիք՚ նօրըմընա՛ն ըն հըվաքվում, թա.- Մ՚ տընաշին, պա ք՚էզ աբուռ-հայա չօնի՞ս* (ՀԺՀ, VII, 327):

- Տընըշինու տըղա - *տե՛ս* ՏԸՆԱՇԻՆ:

ՏԸՆԱՎԷՐ/ՏԸՆՎԷՐ - 1. *գ.* Մի տան մեջ ապրող անձ, տան՝ ընտանիքի անդամ: *Սայուց տանը տասսը տընավէր կա* (Բ): 2. *տե՛ս* ՏԸՆԳԷՑ:

ՏԸՆԱՏԱԿ - *գ.* Տան՝ շենքի տակը՝ հիմքը: *Տընատակը քը՛րծ ա ինո՛ւմ, կարում չընը քանդին* (Ձ):

ՏԸՆԱՏԱՐ *(գրբ. տանտէր)* - *գ., ած.* 1. Սեփական տուն ունեցող (անձ): *Տընատարը հինչ էլ անում ա, էտ ղօնաղը ք՚ինա՛ւմ չի ո՛ւրա՛նց տօն* (ՆԼՂԺԲ, 133): 2. Վարձով տրվող տան կամ սենյակի տեր: *Տընատարը լ՚ավ մարթ ա ինո՛ւմ, էրկու ամսըվա փուլը յօր չի օնում* (Ձ):

- Տընատար շինիլ - Մեկին օգնել՝ հովանավորել, որ տուն ու տեղ դնի: *Քաչալը տահանց լա՛վ պաշտօնի յա տամ, փըսակում, տընատար, խուխատար շինում* (ՀԺՀ, V, 632):

- Տընատար տը՛ռնալ - Տուն ու տեղ դնել: *Էտ տըղան ըտը՛ղ լ՚ավ փուլ ա ըշխադում, մին լ՚ավ ախճիգ՚ էլ օգ՚ում, տընատար տը՛ռնում* (Ձ):

ՏԸՆԱՏԸ՛Ղ - *գ.* Տան տեղը, շինված կամ շինվելիք տան տեղ: *Տընատը՛ղը քընրքարուտ ա ինո՛ւմ* (Ձ):

ՏԸՆԱՐԱՐ *(գրբ. տնարար)* - *տե՛ս* ՏԸՆԸՏԸՐԻ:

ՏԸՆԱՑԷ - *տե՛ս* ՏԸՆԸՑԷ:

ՏԸՆԱՔԱՆԴ/ՏԸՆԱՔԱ՛ՆԴ - *ած.* 1. Տուն քանդող՝ ավերող: *Տընաքանդ մարթ ա Սէրօփը, ըտըրա հը՛տէ լօխ անէսկ ըն տամ* (Բ): 2. Տունը քանդված՝ ավերված: *Մէր Ապրըհամը տընաքանդ շատ մարթու վա ք՚ամա՛ղ ընալ* (Ձ): 3. Հանդիմանական կոչական բառ՝ տնավեր: *Ասում ա.- Մ՚ տընաքանդ, էտ ծաղկած ծառը խէ կըտըրում ը՞ս* (Ձ):

ՏԸՆԱՕԽԾ - *գ.* Մեկի տանը՝ բակում ապրող օձ: *Տընաօխծը ըսպանէլ չընը* (Բ):

ՏԸՆԳԷ - *տե՛ս* ՏՕԼԳ:

ՏԸՆԳԷԼ *(գրբ. տնկեմ)* - *նբ.* 1. Բույսի տունկը՝ շիվը՝ արմատը եւն հողի մեջ դնել, որ արմատակալի եւ աճի: *Տընանք ք՚էցալ ըն, տը՛սալ՝ մին մարթ ծառը հանում ա, մին էլ տընգում* (ՀԺՀ, V, 28): 2. *փխբ.* Ցցել, վարսել, ուղղահայաց կանգնեցնել: *Մին մը՛ծ կ՚էրան ըն տընգում, էտ թօխտը նը՛ստա տամ, վէր ք՚ինօղ, կ՚ըվօղ կարթին* (Ձ): 3. *փխբ.* Մեկնել, երկարել: *Հինչ ը՞ս ծը՛րքըտ տընգալ* (Բ): 4. *փխբ.* *տե՛ս* ՔՕՆԷԼ:

ՏԸՆԳԷՑ/ՏԸՆԳԸ՛Ց/ՏԸՆԿԷՑ/ՏԸՆԿԸ՛Ց *(գրբ. տնկից (մեկ տան մեջ ապրող)* - *գ., ած.* Մեկի տանը վարձով ապրող: *Սօնիշկան տընգէց ար պահում, ըտըրանց տուված փուլավը յօլլա ք՚ինում* (Ձ):

ՏԸՆԳԸ՛Ց - *տե՛ս* ՏԸՆԳԷՑ:

ՏԸՆԳԸԼ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼ:

ՏԸՆԳԸԼԲԱՁ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԲԱՁ:

ՏԸՆԳԸԼԲԱՁԻ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԲԱՁԻ:

ՏԸՆԳԸԼԴԸՎԱ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԴԸՎԱ:

ՏԸՆԳԸԼԷ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԷ:

ՏԸՆԳԸԼԷԼ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԷԼ:

ՏԸՆԳԸԼԹԱ՛ՐԱՁ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼԹԱ՛ՐԱՁ:

ՏԸՆԳԸԼՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼՑ(Ը)ՆԷԼ[2]:

ՏԸՆԳԸԼՕՁԻ - *տե՛ս* ԴԸՆԳԸԼՕՁԻ:

ՏԸՆԳ(Ը)ՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՏԸՆԳԷԼ-ի: *չբ.* 2. Անշարժ կանգնել՝ ցցվել, կանգնած՝ ցցված մնալ: *Թաքավէրը օտիլընը ըբաստ կըլխին յըրան տընգվիս ա* (ՀԺՀ, V, 130): 3. Մի բանի մեջ խրվելով՝ անշարժ կանգնել՝ մնալ: *Կըրիքօր ղամա՛ն պիցըրցընիս ա, հանց թըխիս, վը՛ր կարպէտը ծըկիս ա, պօլումը տընգըվիս* (ԱԱ, 17): 4. *փխբ.* Պարտքերի տակ ընկնել, սնանկանալ: *Կօլին առաչ ա իլա՛լ հարուստ, միհէնգ՚ էն ա տընգըվա՛ծ* (Բ):

ՏԸՆԳՕՏԷԼ - *նբ.* Այս ու այնտեղ՝ շատ տեղերում տնկել: *Ծըմական զըկըռօտ ա քանդո՛ւմ, պիրում ո՛ւրա՛նց բաղումը տընգօտում* (Բ):

ՏԸՆԳՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸՆԳՕՏԷԼ-ի:

ՏԸՆԴԷԳԻՆ *(գրբ. տանտիկին)* - *գ.* 1. Տանտիրոջ կինը: *Տընդէգինընը ա տօնը պահողը* (Բ): 2. Տնարար՝ տնտեսվար կին: *Լ՚ավ տընդէգինը մինը հազգար կանէ* (Ձ): 3. *տե՛ս* ԿՕՎԿԷԹ:

ՏԸՆԴԸՂԷԼ *(գրբ. տնտղեմ)* - *նբ.* 1. Ուշադրությամբ զննել՝ դիտել՝ քննել: *Էս թաքավէրին տըղան լօխ մին-մին տը՛սնըմ ա, լօխ տընդըղըմ, յէտավ կ՚ամ ա թաքավէրին կօշտը...* (ՀԺՀ, V, 201): 2. Շոշափել, ձեռք տալ: *Քօռը տընդըղում ա, թա.- Չէ՛, էս իմ էծըս չի* (Ձ):

ՏԸՆԷԼ - *տե՛ս* ՏԻՆԻԼ:

ՏԸՆԷՑԷ - *տե՛ս* ՏԸՆԸՑԷ:

ՏԸՆԸՁԱՏԸ՛Ղ/ՏԸՆԸՁԱ՛ՏԸ՛Ղ/ՏԻՆԸՁԱ՛ՏԸ՛Ղ - *գ.* Տնազի՝ ծաղրի առարկա՝ առիթ: *Սա թա.- Յէս ո՛ւրո՛ւշո՛ւ տընըզատը՛ղը չըմ...* (ՀԺՀ, VII, 194):

ՏԸՆԸՁԱ՛ՏԸ՛Ղ - *տե՛ս* ՏԸՆԸՁԱՏԸ՛Ղ:

ՏԸՆԸՁՎԱՉԻ/ՏԻՆԸՁՎԱՉԻ - *տե՛ս* ՏԸՆԸՁՎԱՐԻ:

ՏԸՆԸՁՎԱՐԻ/ՏԻՆԸՁՎԱՐԻ - *մ.* Տնազի ձեւով, ծաղրաբար: *Տընըզվարի յա խօսում* (Բ):

ՏԸՆԸՁՕԹՈՒՆ/ՏԻՆԸՁՕԹՈՒՆ - *գ.* 1. Ծաղրելը, ծաղրանք: *Տընըզօթունը ըտըրանց անա անպակաս ար* (Ձ): 2. *փխբ.* Որեւէ բանի թույլ՝ անհաջող արտահայտություն՝ դրսեւորում: *Ոէ էտ էլ հօ յը՛րք ասէլ չի՞, տընըզօթուն ա* (Բ):

ՏԸՆԸԹԸՍԻ - *ած., գ.* Միշտ տանը նստող, դրսի աշխարհի հետ չշփվող,

ամաչկոտ, քաշված (անձ): *Տընդթըսի յը՞ս, խէ ք՛ինամ չը՞ս հընգէրունցըտ նըհը՞տ խաղ անիս* (Բ):

ՏԸՆԸԿԱՊԱԾ - *ած.* 1. Տանը՝ տնային պայմաններում պատրաստած՝ կռած՝ սարքած: *Տընըկապած կացէն ա* (Բ): 2. *փխբ.* Հաստ ու կոպիտ: *Տընըկապած ծը՛րքէր օնէ* (Բ):

ՏԸՆԸԿԱՎԷՐ/ՏԻՆԸԿԱՎԷՐ - *ած., գ.* 1. Դանակ՝ կտրող մաս կրող՝ ունեցող (գործիք): *Տընըկավէր ռանդա յա* (Բ): 2. Դանակով զինված (մարդ): *Ախճիգը էտ տընըկավէր մարթին վէր տը՛սնում ա, փախճում ա* (Ձ):

ՏԸՆԸԿԿԸՌԸ՛Վ/ՏԻՆԸԿԿԸՌԸ՛Վ - *գ.* Դանակով կռիվ, դանակով իրար հետ կռվելը: *Հծջաթը վէրչումը տընըկկըռը՛վ տը՛ռավ* (Բ):

ՏԸՆԸԿՀԱՐԷԼ/ՏԻՆԸԿՀԱՐԷԼ - *նբ.* Դանակով հարվածել՝ մարմնական վնասվածքներ հասցնել, դանակահարել: *Տընըկհարում ըն, ըսպանում* (Ձ):

ՏԸՆԸԿՀԱՐՎԷԼ/ՏԻՆԸԿՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏԸՆԸԿՀԱՐԷԼ-ի:

ՏԸՆԸԿՏԸՆԱԿԷ/ՏԻՆԸԿՏԻՆԱԿԷ - *գ.* Դանակներով խաղ: *Տինըկտինակէն ապասնի խաղ ա* (Բ):

ՏԸՆԸՀԱՆ - *ած.* Տնից հանված՝ վտարված: *Տընըհան մարթ ա, լի՞, ըստը՛ղ-ընդը՛ղ կըլօխը պահում ա* (Բ):

- Տընըհան անել - Տնից հանել՝ վտարել: *Ըտըրանց տընըհան ըն անում, քըցում չօլէրը* (Ձ):

- Տընըհան ինիլ/տը՛ռնալ - Տնից հանվել՝ վտարվել: *Տընըհան ա ինում, խօխէնքը յօր օնում, ք՛ինամ էրում չէն* (Ձ):

ՏԸՆԸՀԱՎԱ(Ն) - *մ.* Ընտանիքի բոլոր անդամները միասին, ողջ ընտանիքով: *Տընըհավան լօխ ք՛ինամ ըն հըրսանէք, տօնը թողում անդար* (Ձ):

ՏԸՆԸՄԸՆԱ - *ած.* Հասակ առած, բայց չամուսնացած (աղջիկների մասին): *Ճարը կըտըրած էտ տընըմընա դաշանգ ըխճըկանը տամ ըն քօռ չուբանէն* (Ձ):

ՏԸՆԸՊԱՀԷ *(գրբ. տնպահ)* - *ած.* Տունը պահող՝ պահպանող՝ հսկող: *Տընըպահէ մարթ ա Կըրիքօրը* (Բ):

ՏԸՆԸՍՏՕՆ/ՏԸՆԸՑՏՕՆ/ՏԸՆԸՏՕՆ - *մ.* 1. Տանից տուն, տնետուն: *Թաքավէրէն տըղան չանքմանն յօր ա օնում, ընգնում տընըստօն՝ տէսնա՝ վէր ըխճըկա վը՛ննէն կըկա, նըրան էլ օգի* (ՀԺՀ, V, 496): 2. Միայն ընտանիքով՝ մտերիմներով, առանց կողմնակի մարդկանց: *Էս տըղան կընգանը ափաթը կըտրում ա, ասըմ.- Ցէ՛ք քու ախպօր ըսպանինք՝, մունք տընըստօն ապրինք՝* (ՀԺՀ, V, 493):

ՏԸՆԸՎԱՐԻ - *մ.* Ինչպես տանը, ընտանիքում ընդունված ձեւով: *Նըստում ըն, մին լ՛ավ տընըվարի հաց օտում* (Ձ):

ՏԸՆԸՎԷՐՎԷԼ - *տե՛ս* ՏԸՆԸՎԸ՛ՐՎԷԼ:

ՏԸՆԸՎԸ՛ՐՎԷԼ/ՏԸՆԸՎԷՐՎԷԼ - *չբ.* 1. Տուն դնել, բնակություն հաստատել: *Յէտնան ըստը՛ղ թօրքէր ըն կ՛աս, տընըվէրվէս, շէնին անըմըն էլ փուխէս, տինիս Սանքանթին* (ԱԱ, 22): 2. Ամուսնանալ, ընտանիք կազմել: *Տահանք տընըվէրվում ըն, էրկունէն էլ շատ խօխա յա ընում, էրկունըն էլ բախտավէր ըն ընում* (ՀԺՀ, V, 401):

ՏԸՆԸՏԸՆԷ/ՏԸՆԸՏՕՆԷ - *գ.* Խաղատեսակ, որի ժամանակ երեխաները կենցաղային իրերի նմանվող առարկաներով իբր սենյակները դասավորում են կամ տուն են կառուցում: *Տընըտընէն ըխճըկէրքըն ըն խաղ անում* (Բ):

- Տընըտընէ տալ - 1. Այդ խաղը խաղալ: *Խօխէնքը՛ը տընընտընէ յըն տամ* (Բ): 2. Գործը իմիջիայլոց անել: *Հինչ ը՞ս տընընտընէ տամ, խէ կարքէն չը՞ս կօրծ անում* (Բ): 3. Տնետուն շարունակ շրջել: *Ըվարա կընէգ՛ ա Մանօվը, սաղ օրը էն ա տընընտօնէ տաս* (Բ):

ՏԸՆԸՏԸՐԻ/ՏԸՆՏԸՐԻ - *ած.* Տան տնտեսական գործերը լավ կառավարող, տնարար, տնտեսվար: *Տընընտըրի կընէգ՛ ա մէր Սէտրակէն հարթանը* (Բ):

ՏԸՆԸՏՕՆ - *տե՛ս* ՏԸՆԸՍՏՕՆ:

ՏԸՆԸՏՕՆԷ - *տե՛ս* ՏԸՆԸՏԸՆԷ:

ՏԸՆԸՏՕՈՆ(Ը) - *տե՛ս* ՏԻՆՍԸՏՕՆ: *Ըռութանա կընէգ՛ը յէր ա կը՛ննըմ, թանը տընընտօռն անի, մանթ ա մընըմ, վը՛ր մարթին տը՛սնըմ ա քօն իլանծ* (ԼՂԲ, 390):

ՏԸՆԸՑԷ/ՏԸՆԷՑԷ/ՏԸՆԱՑԷ - *գ.* 1. Նույն ընտանիքի՝ տան անդամ, տանեցի: *Խուխէն տընընցէք, պարիկամնէն կընզնըվածկ՛ամ ըն, թա ծառը պուք տան* (ՆԱԲ, 129): 2. Կին (ասում է տղամարդն իր կնոջ մասին): *Էտ մարթըն էլ ասում ա.- Մէր տընընցէն էք՛ին ք՛ինանամ ա հանանց տօն, կասիմ, կըպիրի* (Ձ):

ՏԸՆԸՑՏՕՆ - *տե՛ս* ՏԸՆԸՍՏՕՆ:

ՏԸՆԸՓԸ՛ՍԱ - *գ.* Կնոջ ծնողների տանն ապրող եւ նրանց ընտանիքի անդամ դարձող փեսա, տնփեսա: *Ասում ա.- Էս իմ տօնըս չի, յը՛ս տընընփը՛սա յըմ* (Ձ):

ՏԸՆԸՔԱՆԴԻ/ՏԸՆԸՔԱ՛ՆԴԻ - *տե՛ս* ՏԸՆԱՔԱՆԴ:

ՏԸՆԸՔԱ՛ՆԴԻ - *տե՛ս* ՏԸՆԸՔԱՆԴԻ:

ՏԸՆԸՔԸՆԴՕԹՌԻՆ - *գ.* Մեկին՝ մեկի տանը՝ տնտեսությանը հասած մեծ վնաս՝ դժբախտություն: *Էս կարկուտը մըզը՛տէ տընընքընդօթուն ա* (Բ):

ՏԸՆԻԼ - *տե՛ս* ՏԻՆԻԼ:

ՏԸՆԿԷՑ - *տե՛ս* ՏԸՆԳԷՑ:

ՏԸՆԿԸ՛Ց - *տե՛ս* ՏԸՆԳԷՑ:

ՏԸՆՁԱ՛ԲԱՂ/ՏԻՆՁԱԲԱՂ - *գ.* Տանձենիների այգի: *Ապուն մին լ՛ավ տընձաբաղ ա իլալ* (Բ):

ՏԸՆՁԱ՛ԾԱՌ/ՏԻՆՁԱԾԱՌ - *տե՛ս* ՏԱ՛ՆՁԻ:

ՏԸՆՁԱ՛ԿՕԹ/ՏԻՆՁԱԿՕԹ - *գ.* Տանձի կոթ: *Սաղ տանձէրը օտում ա, թողում տընձըկօթէրը* (Ձ):

ՏԸՆՁԱ՛ՀԱՄ/ՏԻՆՁԱՀԱՄ - 1. *գ.* Տանձի համ: *Էս խընձօրը տընձահամ օնէ* (Բ): 2. *ած.* Տանձի համ ունեցող: *Տընձահամ սըրկէվանլ ա* (Բ):

ՏԸՆՁԱ՛ՉԻՐ/ՏԻՆՁԱՉԻՐ - *գ.* Տանձի չիր: *Այան բօլ-բօլ տինձաչիր ա իլալ շինիս* (Բ):

ՏԸՆՁԱ՛ՎԸ՛Տ/ՏԻՆՁԱՎԸ՛Տ - 1. *գ.* Տանձի հոտ: *Տընձավը՛տը բաղավը մին ա տը՛ռալ* (Բ): 2. *ած.* Տանձի հոտ ունեցող: *Տընձավը՛տ ծաղէգ՛ ա* (Բ):

ՏԸՆՁԸԿԷՍ/ՏԻՆՁԸԿԷՍ - *գ.* Չնչին հասանելիք՝ քանակություն՝ բաժին: *Լօխ վը՛սկէն յօր ա օնում, ախպօրը տընձըկէս էլ չի տամ* (Ձ):

ՏԸՆՁԸՔԱՂԷ/ՏԻՆՁԸՔԱՂԷ - *գ.* 1. Տանձ քաղելու գործիք, որ կազմված է երկար ձողից՝ ծայրը շրջանակի մեխեր խփած կլորակ տախտակով կամ մետաղե շրջանակ հագցրած տոպրակով, որի մեջ ընկնում է տանձը, երբ ձգում կամ հրում են: *Առանց տընձըքաղէ կարէլ չըս մը՛ծ տանձին քաղիս* (Բ): 2. *տե՛ս* ՃԸՊԸՐԹԱՓԷ (2):

ՏԸՆՁԸՄԱՀ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տընձըմահ անել - 1. Տանջելով՝ տանջանքների ենթարկելով սպանել՝ մեռցնել: *Ըտրան տընձըմահ ըն անում, ամմա հընգէրունցը տը՛ղը ասում չի* (Ձ): 2. Շատ չարչարել, ուժասպառ անել: *Էս կօրծը մէգ լափ տընձըմահ ըրավ* (Բ):

- Տընձըմահ ինիլ/տը՛ռնալ - 1. Տանջվելով՝ տանջանքների ենթարկվելով մեռնել: *Ըտի էտ տըղան տանրմանումը տընձըմահ ա ինում, պիրում ըն շէնումը թաղում* (Ձ): 2. Շատ չարչարվել, ուժասպառ լինել: *Տընձըմահ իլինք՝, մինչը՛վ էս քարը տը՛ղան պուք տըվէնք՝* (Բ):

ՏԸՆՁԸՐԷ - *տե՛ս* ՏԸՆՁԸՐԻ:

ՏԸՆՁԸՐԻ/ՏԸՆՁԸՐԷ/ՏԻՆՁԻՐԻ/ՏԻՆՁԻՐԷ - *տե՛ս* ՁԻՆԱ՛Ր(Ի):

ՏԸՆՁԸՐՕՏ/ՏԻՆՁԻՐՕՏ - *տե՛ս* ՁԻՆԱ՛ՐՕՏ:

ՏԸՆՎԷՐ - *տե՛ս* ՏԸՆԱՎԷՐ:

ՏԸՆՏԸՐԻ - *տե՛ս* ՏԸՆԸՏԸՐԻ:

ՏԸՆՔԱԼ *(հ.ե. *(s)ten- (որոտալ, աղմկել)* - *չբ.* 1. Հառաչել, տնքոց հանել (հիվանդի մասին): *Հիվանդը վէր տըն-*

քում ա, մարը ըսքըսում ա լաց ինիլը (Զ): 2. Ծանրության ճնշման տակ կամ հոգնելուց՝ ուժասպառ լինելուց հառաչել: *Պէռնը շատ ա ծանդըր, էշը տընքում ա* (Բ): 3. Տանջվել՝ հեծել մի բանի ծանրությունից: *Պարթկէն տակէն տընքամ ա* (Բ): 4. *փխբ.* Ծանր՝ լարված աշխատանք կատարել, չարչարվել: *Չինը տինում ա ծը*ՐՔԷՆ, *քըցում արտը, թա.- Դէ տընքա՛* (Զ):

ՏԸՆՔԸՃԸՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տընքըճըռ անէլ - Որեւէ բանից խուսափելու համար հիվանդ ձեւանալ՝ տնքտնքալ: *Լ*ըհա վէր օգ*ում ըն, թա ք*'*ինին հ*ՕՆ*ն, Ռուբէնը ըսքըսում ա տընքըճըռ անէլը* (Զ):

ՏԸՆՔՏԸՆՔԱԼ - *չբ.* Շարունակ տնքալ՝ հառաչել: *Քըռակէնըն էլ տընքտընքում ա, հայ-հայ անում, վայ-վայ անում* (ՀԱԲ, 15, 93):

ՏԸՆՔՏԸՆՔՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՏԸՆՔՏԸՆՔԱԼ-ի:

ՏԸՆՔՏԸՆՔՕՆ - *գ.* Տնքտնքալը, տնքտնքալու ձայնը: *Ըտըրա տընքտընքօնէն յըրա մարթը նի յա մընում* (Զ):

ՏԸՆՏԸՆՔՕՑ - *տե՛ս* ՏԸՆՔՏԸՆՔՕՆ:

ՏԸՆՔՕՆ - *գ.* Տնքալը, տնքալու ձայնը: *Խուխէն տընքօնը մօրը լիցըցընում ա* (Զ):

ՏԸՆՔՕՑ - *տե՛ս* ՏԸՆՔՕՆ:

ՏԸՆՕԽՆԷՔ[1]/ՏԸՆՕՐՀՆԷՔ[1]/ՏԸՆՕՐԹՆԷՔ[1] - *գ* Կրոնական ծես՝ ծնունդի եւ զատկի տոներին քահանայի կողմից իր ծխականների տները օրհնելը: *Տընօխնէք*'*ը պըրծընում ա, դէրը հ*Ա*ՆՊ*Ա*ծ ք*'*ինա՛մ ա տօն* (Զ):

ՏԸՇԸՏԱՆՇԻ/ՏԻՇԸՏԱՆՇԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տըշըտանշի անէլ - *տե՛ս* ՏԸՇՏԸՇՕՐԷԼ:

ՏԸՇԸՏՕՇԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տըշըտօշի անէլ/տալ - Խաղի ժամանակ կամ կռվելիս կուրծք կրծքի զարկել, կրծքերով իրար խփել: *Ըտըրանք հ*Օ*ՇԱ*Թ *ըն տամ, յը*Ր*տնան էլ ըսքըսում տըշըտօշի տալը* (Զ):

ՏԸՇՏԱՆՇԻԼ/ՏԻՇՏԱՆՇԻԼ - *տե՛ս* ՏԸՇՏԸՇՕՐԷԼ:

ՏԸՇՏԱՆՇՎԻԼ/ՏԻՇՏԱՆՇՎԻԼ - *տե՛ս* ՏԸՇՏԸՇՕՐՎԷԼ:

ՏԸՇՏԱՎԷՐ - *ածական.* Փայտե կամ կավե տաշտ ունեցող՝ օգտագործող: *Օխտը տըշտավէր կընէգ*' *հըսցընում էրը, թա էտ հըրսընքէն խըմօրը հունցին* (Զ):

ՏԸՇՏԸՇԸՀԱՆ - *տե՛ս* ԾԸՀԱՆ (2):

ՏԸՇՏԸՄԱՂ - *գ.* 1. Հարսանիքի նախօրյակին ալյուր մաղելու արարողությունը: *Տըշտըմաղը ըսքըսում ըն* (Զ): 2. Այդ առթիվ ալյուր մաղողներին տրվող դրամ: *Փըսըցուվէն դ*Ը*ՐՎԷՐԸ մուտանում ա, մին տըսսանուց տըշտըմաղ տամ* (Զ):

- Տըշտըմաղը վէր տինիլ - Հարսանիքի պատրաստությունը սկսել: *Հ*Ա*ՆԼԱ էրկու ամէս կա մինչը*Ռ *հըրսանէք*'*ը, ամմա մէր Մարյանգ*'*ուլը տըշտըմաղը վէր ա տիրանլ* (Բ):

- Տու ինձ մէլիքʼ ասէ, յըᵉս քʼըᵉզ՝ Մէլիքʼսէթ - Ասում են այն ժամանակ, երբ երկու հոգի իրար գովում՝ մեծարում են:

- Տու ինձ պահէ բուխճըմաչի, յըᵉս քʼըᵉզ պահիմ մըրթըմաչի - Յագուստը պետք է խնամքով պահել, որպեսզի մարդկանց շրջապատում գեղեցիկ երեւալ:

- Տու լʼավ ինիս - 1. Պատասխան բարեմաղթություն՝ ուղղված իր առողջությամբ՝նիստ ու կացով հետաքրքրվողին: *- Սո՛ւրէն, հունց ը՞ս, - Տու լʼավ ինիս, Գո՛ւգի* (Բ): 2. Ասվում է որպես մխիթարանք՝ ուղղված կորուստ ունեցողին: *Տու լʼավ ինիս, Մա՛կիչ, կավ ա, լի՞, ըստակալ ա, ըստակալ ա, մին էրո̏ւշը ինքʼ կօնիս* (Բ):

- Տու կըռթկըռթա՛, յըᵉս ծո̏ւ ածիմ - *տե՛ս* Տու տըզզ ըրա՛, յըᵉս՝ մըᵉղըր:

- Տու հինչ - *տե՛ս* Տու մէլ ասէլ: *Տու հինչ, էտ քըչէղակը հիշքան վըᵉր հաց ար յօր օնում, պիրա̏նըմը պըհէլիս ա ընո̏ւմ, տընէլիս տալիս պըռավէն տըղէն* (ՆԼՂԺԲ, 140):

- Տու մէլ ասէլ - Բանից պարզվում է, որ... *Կամօդը պէնում ա, տըᵉսնում՝ ամանը տէրտակ, տու մէլ ասէլ՝ կընէգʼը թըմփըցըրալ ա* (ԱԱ, 86):

- Տու սաղ ինիս - *տե՛ս* Տու լʼավ ինիս:

- Տու վէլ բիդի ասիս՝ մարթ ըմ - Յանդիմանական՝արհամարհական արտահայտություն՝ արժանի չես մարդ կոչվելու, տմարդի ես:

- Տու վըս գʼո̏ւղո̏ւմ - Քո գործն է, ինչպես ցանկանում ես, այնպես էլ վարվիր, ես չեմ խառնվում: *Ասում ա.- Տու վըս գʼո̏ւղո̏ւմ, օզում ըս՝քʼինի՛, օզում ըս՝քʼինիլ մէ՛լ* (Չ):

- Տու վըս, վէր կաս - Միակն ես, ուրիշը չկա՝ պետք չէ: *Տըղան ասում ա.- Տու վըս, վէր կաս, յըᵉս էրո̏ւշ ախճիգʼ օզʼիլ չըմ* (Չ):

- Տու վիր պակաս - *տե՛ս* Տո՞ւ ըշտըղա յըᵉկէր:

- Տու տըզզ ըրա՛, յըᵉս՝ մըᵉղըր - Դու նախաձեռնիր, ես իրագործեմ:

- Տու քանէ կըլխանէ յը՞ս - Ինչպես հանդգնեցիր՝ համարձակվեցիր, ինչ ես քեզանից ներկայացնում: *Թաքավէրը ասում ա.- Տու քանէ կըլխանէ յը՞ս, վէր նի յըս մըտալ իմ բաղըս* (Չ):

- Տու՝ քʼըզըᵉտէ, յըᵉս՝ ինձըᵉտէ - Վիրավորվելու՝ գժտվելու արտահայտություն՝ ես ու դու այլեւս իրար հետ առնչություն՝ հարաբերություն ունենալ չենք կարող:

- Տու քու դա̏րդըտ քա՛շի/դա̏րդէտ կա՛գ - Ասվում է, երբ մեկը մտահոգվում է (հաճախ անտեղի) ուրիշի համար. քո մտահոգությունն ավելորդ է: *Ասում ա.- Տու քու դա̏րդէտ կա՛գ, յըᵉս գʼո̏ւղո̏ւմ ըմ՝ հինչ ըմ անում* (Չ):

ՏՈ̏Ւ - *տե՛ս* ՏՈՒ:

ՏՈ̏ՒԲԷՐԿՈ̏ՒԼՕ̈Զ *(ռուս. туберкулёз, լատ. tuberculum)* - *տե՛ս* ՉԸԽՕԹԿԱ:

ՏՈՒԴԻ-ՍՈՒԴԻ *(ռուս. туда-сюда (այնտեղ-այստեղ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Տուդի-սուդի անել - Այս ու այն կողմ ընկնել, տարբեր միջոցներ ձեռնարկել: *Շատ ա տուդի-սուդի անում, պէն չի ամ՚ալ կ՚ամ* (Ձ):

ՏՈՒՋ *(ռուս. туз)* - *գ.* 1. Թղթախաղի մեջ ամենաբարձր խաղաքարտը: *Կարտը պիժը՚նում ըն, տուզէրը Արմօյէն ա ըղնում* (Ձ): 2. *փխբ.* Որեւէ բնագավառում շատ ազդեցիկ՝ բարձրաստիճան մարդ: *Հաբուն տըղան բանգէն տուզըն ա* (Բ):

ՏՈՒՋԻ *(հ.ե. *teu- (բարեկամաբար ուշադրություն դարձնել, նկատել)* - *տե՛ս* ՏՈՒՄԱՐ[2]:

ՏՆԻՋՆԱՆԱԼ - *չբ.* Քաղց զգալ, սովածանալ: *Քիս ըն, քիս, հըղըցըմը տնուզնընաս ըն* (ՀԺՀ, V, 293):

ՏՆԻՋՆԸ - *ած.* 1. Քաղցած, ուտելու պահանջ ունեցող՝ զգացող: *Էս տնուզնը մարթը դանստի ծէրքը արխումը շօռ ա ածում, ծէրքըն ընգած փափուկ պէնը կօխում պէրանը* (ՆԱԲ, 119): 2. Ոչինչ չկերած, սնունդ չստացած: *Տնուզնը փօրը կըղըռղըռա* (Ձ): 3. *փխբ.* Ապրուստի միջոցներից զուրկ, ծայրահեղորեն աղքատ: *Ասում ա.- Խանըն ապըրած կէնա, տնուզնը մարթ ըմ, ինձ ըշտըղան ա՞ վը՚սկէ* (Ձ):

- Տնուզնը զըկըռհատ կ՚ալ - 1. Սաստիկ քաղցած լինել: *Ղօնաղըն էլ էն ա ինում տնուզնը զըկըռհատ կ՚ալիս, կուրկուտէն ղըզղանը քաշնում ա առաչը, լօխ օտում* (Ձ): 2. Ծայրահեղ աղքատ լինել: *Դօրունք էն ըն իլալ տնուզնը զըկըռհատ կ՚ալիս, միհէնգ՚ փուլավ խաղ ըն անում* (Բ):

ՏՆԻՋՆԸ-ԾԱՐԱՎ - *ած.* Եվ քաղցած, եւ ծարավ, ուտելու եւ խմելու պահանջ ունեցող՝ զգացող: *Իտի էլ յը՚տ ա տը՚ռնում, տնուզնը-ծարավ կ՚ամ տօն* (ԱԱ, 85):

ՏՆԻՋՆԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՏՆԻՋՆԱՆԱԼ-ի:

ՏՆԻՋՆՕԹՈՒՆ - *գ.* Սոված լինելը, սոված վիճակը, սովածություն: *Էտ մարթը քը՚շէր-ցիրէկ փօղ ա թուի ըրալ, ամմա ինք՚ը տնուզնը կացալ, տուզնութնունան վը՚ր ընգալ, մը՚ռալ* (ՆԼՂԺԲ, 65):

ՏՈՒՋՏՈՒՊՈՒՊՈՒՋ՚ - *ած.* Տեղի-անտեղի ուրիշի գործերին խառնվող՝ իրեն առաջ քաշող: *Տուզտուպուպուզ՚ մարթին անա գանիլաս տանում ա* (Բ):

ՏՈՒՋՐՈՒԿ *(գրբ. տզրուկ)* - *տե՛ս* ՍԸԼՆԻԿՈՒՆ:

ՏՆԻՋՆԻԼԻ(Գ՚) - *տե՛ս* ՏԸՋՆԻՐԻ(Գ՚):

ՏՆԻՋՆԻՐԻ(Գ՚) - *տե՛ս* ՏԸՋՆԻՐԻ(Գ՚):

ՏՈՒՋՕՏԷԼ - *տե՛ս* ՏԸՋՕՏԷԼ:

ՏՈՒԺԷԼ - *տե՛ս* ՏՈՒԺՎԻԼ:

ՏՈՒԺԱՆՔ *(գրբ. տուժանք)* - *գ.* Ընդունված որեւ կարգ խախտելու համար նշանակված պատիժ, որն արտահայտվում է դրամով կամ նկատողությամբ, տույժ: *Էտ տուժանքը ըտըրան շատ ա խըղճըցընում* (Ձ):

ՏՈՒԺԻԼ/ՏՈՒԺԷԼ *(գրբ. տուժեմ)* - *նբ.* Մեկին տույժի տակ դնել, պատժել: *Վէր էշէրը ք՚ը՚ցալ ըն Ըստուծէն կօշտը, ասալ ա.- Յը՚ս կարէլ չըմ մարթկանցը տուժիմ...* (ԱԱ, 88):

ՏՆԻԺԻՆ/ԴՈՒԺԻՆ *(ռուս. дюжина, ֆր. douzain, իտ. dozzina)* - 1. *գ.* Որեւէ բանի տասներկու հատը՝ որպես ամբողջություն, դյուժին: *Յէփիրէմին կընէգ՚ը էրկու տնուժին դարյա օնէ, ամմա ճըրոտած շնուրէրավ ա կ՚ամ հըրսանէք՚* (Բ): 2. *ած. փխբ.* Շատ: *Մին տուժին ծունն ա յը՚կալ* (Բ):

ՏՈՒԺՎԷԼ - *տե՛ս* ՏՈՒԺՎԻԼ:

ՏՈՒԺՎԻԼ/ՏՈՒԺՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՏՈՒԺԻԼ-ի:

ՏՆԻԺՕԽՔ - *տե՛ս* ՏԸԺՕԽԿ:

ՏՈՒԼԱԾ - 1. *գ.* Ագռավանման սեւ թռչուն: *Էտ չօլի հավքէրին մէջին ճակատը պէնդը տուլաշըն ու ակռավըն ըն* (ՋԱ, Ա, 185): 2. *տե՛ս* ԹՕՔԻ:

ՏՈՒԽՈՒՐ - *տե՛ս* ՏԸԽՈՒՐ:

ՏՈՒԿՈՒԼՎԱՋԻ - *տե՛ս* ՏԸԿԸԼՎԱՋԻ:

ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐԱՆԱԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐԱՆԱԼ:

ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՑ(Ը)ՆԷԼ:

ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐՑԸՆՎԷԼ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՑԸՆՎԷԼ:

ՏՈՒԿ(ՈՒ)ԼՈՒՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐՕԹՈՒՆ:

ՏՈՒԿ(ՈՒ)ԼՕՋ - *տե՛ս* ՏԸԿԸԼՕՋ:

ՏՈՒԿ(ՈՒ)ԼՕՐ - *տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ:

ՏՈՒԿՈՒՌԱՄԱՋ՚ - *տե՛ս* ՏԸԿՈՒՌԱՄԱՋ՚:

ՏՈՒԿՕՋ - *տե՛ս* ՏԸՌՕՋ:

ՏՈՒԿՕՂԷՆ - *տե՛ս* ՏԸԿՕՂԷՆ:

ՏՈՒԿՕՂՆԷ - *տե՛ս* ՏԸԿՕՂՆԷ:

ՏՈՒԿՕՂՆՕՏ - *տե՛ս* ՏԸԿՕՂՆՕՏ:

ՏՈՒԿՕՌ - *տե՛ս* ՏԸԿՕՌ:

ՏՆԻՂԱԹԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տնուղաթակ տալ - Ցրտից ատամներն իրար զարնել՝ կափկափել: *Կամ ըն, տը՚սնում՝ ծառէն տակէն նըստած, տնուղաթակ ա տամ* (Ձ):

ՏՆԻՂՆՕՑ - *տե՛ս* ՏԸՂՆՕՑ:

ՏՆԻՂՏՆԻՂԱԼԻ - *տե՛ս* ՏԸՂՏՆԻՂԱԼԻ:

ՏՆԻՂՏՆԻՂՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸՂՏՆԻՂՑ(Ը)ՆԷԼ:

ՏՆԻՂՏՕՂԱԼ - *տե՛ս* ՏԸՂՏՕՂԱԼ:

ՏՆԻՂՏՕՂՆԻՑ - *տե՛ս* ՏԸՂՏՕՂՆԻՑ:

ՏՈՒՄԱՐ[1] *(գրբ. տոմար)* - *գ.* Գիրք, որտեղ նշանակված են եկեղեցու տարեկան տոները, տոնացույց: *Դէրը տումարը պէնում ա, յէշնում, թա.- Հալա վախտը չի, մին շէբաթ էլ ըսպըսը՚ցէք՚* (Ձ):

ՏՈՒՄԱՐ[2] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տումար անէլ/տալ, յէշիլ - Աչքերը մեկին՝ մի բանի հառել, ակնապիշ նայել: *Սաղ հըրսընքէն վախտը էտ տըղան տումար ա անում, հըրթնըցուվէն յէշում* (Ձ):

ՏՆԻՄԲԱՂ՚ - *ած.* Բերնեբերան լցված, լիքը: *Էրկու տնիմբաղ՚ խարար պնուրթ ա ինք՚ օնում, դարկում տօն* (Ձ):

- Տնիմբաղ՚ անէլ - Բերնեբերան լցնել: *Մէշուկնէն ճըղուպուրավ տնիմբաղ՚ ա անում, պէռնում էշին* (Բ):

ՏՈՒՄԲԱԼ - *տե՛ս* ՏԸՄԲԱԼ:

ՏՈՒՄԲԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸՄԲԸՑ(Ը)ՆԷԼ:

ՏՈՒՄԲԷ - *տե՛ս* ՏՈՒՄԲԻ:

ՏՈՒՄԲԻ/ՏՈՒՄԲԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տումբի տալ - *տե՛ս* ՆԸՆՋԻԼ:

ՏՈՒՄԲՏՈՒՄԲԱԼ - *տե՛ս* ՏԸՄԲՏԸՄԲԱԼ:

ՏՈՒՄԲՏՈՒՄԲԱԼԻ - *տե՛ս* ՏԸՄԲՏԸՄԲԱԼԻ:

ՏՈՒՄԲՏՈՒՄԲՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՏԸՄԲՏԸՄԲՑ(Ը)ՆԷԼ:

ՏՈՒՄԲՏՈՒՄԲՕՆ - *տե՛ս* ՏԸՄԲՏԸՄԲՕՆ:

ՏՈՒՄԲՏՈՒՄԲՕՑ - *տե՛ս* ՏԸՄԲՏԸՄԲՕՑ:

ՏՈՒՄԲՈՒԼԻ-ՏՈՒՄԲՈՒԼԻ - *տե՛ս* ՏԸՄԲԸԼԻ-ՏԸՄԲԸԼԻ:

ՏՆԻՄԲՆԻԼՕՏ - *տե՛ս* ՏԸՄԲՆԻԼՕՏ:

ՏՈՒՄԲՈՒՀԱՆ - *տե՛ս* ՏԸՄԲԸՀԱՆ:

ՏՈՒՄԲՈՒՇԿԱ *(ռուս. тумбочка)* - *գ.* Փոքրիկ պահարան: *Տանը մին տումբուշկա էլ չօնին, թա մաչին մին պէն տինին* (Բ):

ՏՆԻՄՋԱՂԿ - *տե՛ս* ԴՆԻՄՋԱՂԿ:

ՏՈՒՆ - *տե՛ս* ՏՕՆ[2]:

ՏՈՒՆԳ - *տե՛ս* ՏՕՆԳ:

ՏՈՒՆԸԸՌՈՒՋ - *տե՛ս* ՏՈՒՆԴՈՒՌՈՒՋ:

ՏՈՒՆԴԻ - *տե՛ս* ՏՆԻՆԴԻ:

ՏՆԻՆԴԻ/ՏՈՒՆԴԻ/ՏՆԻՆԴՆԻ - *գ.* Գավակ, հետույք, նստուկ: *Տնունդնուրնէն թոդթոդ ըն անում, հանց ըն վըխճըրնէ ինին՝ կ՚ինլին աշկէրը տէսած* (ՆԱԲ, III, 175):

- Տնունդըվին վըռըքէց կընըստըվէ - Հանաքով ասում են մեծ եւ ցցուն հետույք ունեցող կանանց մասին, իբր այնքան մեծ է հետույքը, որ հնարավոր է վրան նստել:

- Տնունդին նըհաշ/շօռ տալ - Արհամարհաբար շրջվել՝ երես դարձնել: *Իզէն հինչ կընէգ՚ ա՞, վայ ա, վէր տօնը ղօնաղ ա կ՚ամ, ինք՚ը տնունդին նըհաշ ա տամ* (Բ):

ՏՈՒՆԴՌՈՒՋ - *տե՛ս* ՏՈՒՆԴՈՒՌՈՒՋ:

ՏՆԻՆԴՆԻ - *տե՛ս* ՏՆԻՆԴԻ:

ՏՈՒՆԴՈՒՌՈՒՋ/ՏՈՒՆԴԸՌՈՒՋ/ՏՈՒՆԴՈՒՌՈՒՋ - 1. *տե՛ս* ՏՆԻՆԴԻ: 2. *ած.* Ցցուն, ուռած, դուրս ցցված: *Տունդուռուզ վը՛ռ օնէ* (Բ):

ՏՈՒՆՉ *(գրբ. դունչ)* - *տե՛ս* ԴՈՒԴԱ: *Յէտ ա տը՛ռնըմ, տը՛սնըմ՝ խուրջինը ճընապարին վէր ընգած, շօնըն էլ տունչը տիրած լ՝ըրան, սատկած* (ՀԺՀ, V, 79):

ՏՈՒՇ *(ռուս. туш, գերմ. Tusche)* - *գ.* Թանաքի տեսակ, որ շուտ չորանում է: *Տուշը վէր ա ածում, շՅրէրը լըպատում* (Զ):

ՏՆԻՇ/ՏԼՇ[2] *(ռուս. туш, գերմ. Tusche)* - 1. *գ.* Նվագախմբի կողմից կատարվող կարճ երաժշտական ողջույն: *Մին տնուշ ա՛ծէ* (Զ): 2. *տե՛ս* ՏԼՇ-ՏՆԻՇ:

ՏՈՒՊԼԻ/ՏՈՒՓԼԻ *(ռուս. туфли, ֆր. pantoufle)* - *գ.* Անճիտք կոշիկ (հիմնականում՝ կանացի): *Մին ճօխտ դաշանգ՝ տուպլի յա ինք՝ օնում, հըրթնըցուվէն տամ* (Զ):

ՏՈՒՊՏՈՒՊՈՒՐԻԳ՝ - *տե՛ս* ՏԸՊ-ՏԸՊՈՒՐԻԳ՝:

ՏՈՒՊՕՅ - *տե՛ս* ՏԸՊՕՅ:

ՏՈՒՌԱԿ - *տե՛ս* ԴՈՒՌԱԿ:

ՏՈՒՌԱԿԻ - *տե՛ս* ԴՈՒՌԱԿԻ:

ՏՈՒՌՕՆ - *տե՛ս* ՏԸՌՕՆ:

ՏՈՒՌՏՈՒՌ - *տե՛ս* ՏԸՌՏԸՌ:

ՏՈՒՌՏՈՒՌՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ՏԸՌ-ՏԸՌՕՏ(Վ)ԷԼ:

ՏՈՒՌՕՋ - *տե՛ս* ՏԸՌՕՋ:

ՏՈՒՌՕՋ - *տե՛ս* ՏԸՌՕՋ:

ՏՈՒՌՕՃԱՆ - *տե՛ս* ՏԸՌՕՃԱՆ:

ՏՈՒՌՕՏԷԼ - *տե՛ս* ՏԸՌՕՏԷԼ:

ՏՈՒՌՕՏՕՂ - *տե՛ս* ՏԸՌՕՏՕՂ:

ՏՆԻՍ/Տ՝ՈՒՍ *(գրբ. ի դուրս)* - *մ.* 1. Բացօթյա տարածություն, ոչ ներսի տարածություն: *Բուղան գ՝ուդնում ա, վը՛ր բէրթումը մարթիք՝ ճ՝ուր ըն ըստանում տ՝ուսանն...* (ՆԼՂԺԲ, 143): 2. Քաղաքի՝ գյուղի՝ երկրի սահմաններից այն կողմը, արտաքին աշխարհ: *Էն վախտը Ղարաբաղա տ՝ուսին նը՛հը՛տ վէշ մին կապ չի իլ՝ալ* (Բ): 3. Արտաքին կողմը, արտաքուստ: *Էտ տօնը տ՝ուսանն շատ ա ինում դաշանգ՝* (Զ): *կ.* 4. Որեւէ բանի սահմաններից այն կողմ: *Ծէնան տ՝ուս վը՛ննն ըն կէնում, պատառ դինջանում* (Զ): 5. Բացի, զուտ: *Ասում ա.- Ըտըրանա տ՝ուս էրուշ պէն գ՝ուդնում չըմ* (Զ): 6. Մի բանի փոխարեն՝ որպես փոխհատուցում: *Էծը տամ ա տըրան, թա.- Էս էլ պարթկէտ տ՝ուս* (Զ): 7. Անմիջապես որեւէ բանից՝ առանց այլ տեղ լցնելու՝ տեղափոխելու եւն: *Ղօնաղը իլբիհ՝ալ կըլ՝օխ ա ընգ՝ում, խաշիլին ղըզղանը յօր օնում, ըսկըսում ղըզղանանը տ՝ուս օտէլը* (ՆԼՂԺԲ, 133): 8. Որպես կոչական բառ՝ արտահայտում է դուրս գալու հրաման՝ կորի՛ր, հեռացի՛ր, գնա՛: *Մարթը փը՛ռնում ա մին լ՝ավ թակում, թա.- Տ՝ուս, էլ իմ տանը ըրվաս վէչ* (Զ):

- Տ՝ուս ածէլ - 1. Մի բանի պարունակությունը հանել՝ դատարկել՝ քամել եւն: *Վը՛ննավը հօփ ա տամ, մուկնէն ճըղմաղէնք՝ը տ՝ուս ածում* (Զ): 2. *տե՛ս* Տը՛ղը տ՝ուս ածէլ:

- Տ՝ուս անէլ - 1. Ներսից ուղարկել՝ քշել դուրսը: *Վը՛ղխճըրնէն տ՝ուս ա անում, կ՝ումը սիրփ՝ում* (Բ): 2. *տե՛ս* Տ՝ուս քըցիլ: 3. Տեղ հասնել: *Օրը մը՛թնալ ա, ամմա վը՛ղրսկըննէն հ՝ալ՝ տ՝ուս չը՛ն ըրալ* (Բ): 4. *տե՛ս* Տ՝ուս օնէլ (1, 2): 5. Ձվից՝ բջիջից հանել: *Թուխսըկանը ճօտէրը տ՝ուս ա ըրալ* (Բ):

- Տ՝ուս ըղնէլ - Որեւէ բան, հատկապես՝ ոսկորը՝ հոդը բնական վիճակից ելնել՝ խախտվել, տեղահան լինել: *... Վէր ընգէ. ծէրքըս կօտրում ա, վը՛ննըս էլ տ՝ուս ընգում* (ԼՂԲՔ, 275):

- Տ՝ուս թօղ(ն)էլ - 1. Որեւէ բանի մեջ չընդգրկել՝ չընդունել: *Ցուցակ ըն անում, ամմա խըլ՝ափէն անը՛մը տ՝ուս ըն թօղում* (Զ): 2. *տե՛ս* Ըշկաթօղ անէլ:

- Տ՝ուս ծըլկէլ - *տե՛ս* ԾԸԼԿԷԼ:

- Տ՝ուս կ՝ալ՝ - 1. Ելնել, դուրս ելնել: *Էտ խօսկը մարը վար ասում ա, ժուղովուրթը լօխ ղըռռալի տ՝ուս ըն կ՝ամ...* (ՀԺՀ, VII, 201): 2. Ծագել (երկնային լուսատուների մասին): *Ա՛ր՝ը՛վը վէր տ՝ուս ա կ՝ամ, լօխ ուրխանըմ ըն* (Զ): 3. Բուսնել, ծլել, աճել: *Ցօրէնը վարալ ընք, ամմա թօռ չի կ՝ամ, թա տ՝ուս կ՝ա* (Բ): 4. Ձվից՝ բջջից ելնել: *Հավը թօխս ա կ՝ամ, քը՛սանը՛մին օրանը յը՛տը ճօտէրը տ՝ուս ըն կ՝ամ* (Բ): 5. Հայտնվել, երեւալ: *Վը՛ր շատ քը՛շանում ըն, ը՛ռը՛ղչնէն ա տ՝ուս կ՝ամ մին պալատ...* (ՆԼՂԺԲ, 45): 6. Մի բանի միջից պոկվել՝ ելնել, պատյանից հանվել: *Կը՛ռօ ճուղուպուրէն մաչը տիժէր ա տ՝ուս կ՝ամ* (Բ): 7. Պարզվել, բացահայտվել: *Էտ ախճիգ՝ը տ՝ուս ա կ՝ամ օշափ* (ԲՀԲ, 41): 8. Պակասեցնել, հանել: *Ըրաղան իրը՛ք լիտը՛ր շը՛հադ ըն տ՝ուս կ՝ամ* (Բ): 9. Հաջողվել, մի բան ստացվել: *Թաքավէրը հիշքան դօխտուրնի յա կանչը՛մ, պէն չի տ՝ուս կ՝ամ, վէչ մինը կարը՛մ չը՛ն լ՝ըվը՛ղցնին* (ՀԺՀ, V, 331): 10. Հասնել: *Քիս ըն, ք՝իս, տ՝ուս կ՝աս ն՝ուրանց տօնը, տը՛սնաս մարը պը՛ռռաված* (ՀԺՀ, V, 256): 11. Լույս տեսնել, հրատարակվել: *Ասում ը՛ն՝ մին կ՝իրք ա տ՝ուս յը՛կալ, մաչին մէր Ը՛ր՝շակէն նը՛կարը՛ն էլ կա* (Բ): 12. Ազատվել, փրկվել: *Էս գ՝ուլ՝ուման լ՝ավ տ՝ուս յը՛կէնք՝* (Բ): 13. Բխել (ջրի մասին): *...Տահանց տական մին լ՝ավ ախպ՝ուր ա տ՝ուս յէկալ* (ԱԱ, 57): 14. Հրաժարվել, թողնել, հեռանալ (աշխատանքից, պաշտոնից, ուսումնական հաստատությունից եւն): *Ըտի մէր Մ՝ուրդին ը՛շկօլան տ՝ուս ա կ՝ամ, չօբան տը՛ռնում* (Բ): 15. Հաստատվել, իրականանալ (ենթադրությունը, կանխատեսածը, կարծիքը եւն): *Վէրչը իմ ասածը տ՝ուս յը՛կավ. Մարյանը՛ն ար կ՝ուղօթունը ըրալ* (Բ): 16. *տե՛ս* Տ՝ուս ըղնէլ: 17. Հանգել (ճանապարհի՝ գետի եւն մասին): *Էս կածանը տ՝ուս ա կ՝ամ Թը՛ղլարա հը՛ղէն* (Բ): 18. Հրապարակ գալ, գտնվել: *Մին հարուստ մարթ չի տ՝ուս կ՝ամ, թա մէր շէնին յը՛խծէն շինիլ տա* (Բ): 19. Արտադրվել: *Միհէնգ՝ թ՝ա՛ն մը՛շինէ շատ ա տ՝ուս կ՝աս* (Բ): 20. Հանդիսանալ, լինել: *Յու վէր խօսում ա, սաբի յա տ՝ուս կ՝ամ* (ՆԱԲ, 197): 21. Պատկերվել, նկարվել: *Նը՛կարումը լ՝ավ ա տ՝ուս յը՛կալ* (Բ): 22. Գնալ: *... Մին վը՛ռսկան վը՛ռսի ար տ՝ուս յէկալ, պը՛ստահից մին կը՛ղքավու* (ՀԺՀ, VI, 255): 23. Ծնունդով սկիզբ առնել՝ սերվել: *Ղարաբաղա ընը՛մօվուր մարթիք՝ շատ ըն տ՝ուս յը՛կալ* (Բ): 24. Լրանալ: *Լ՝ըհա վէր քը՛ռռասունքը տ՝ուս ա կ՝ամ, էտ խօխան ըսքը՛սում ա չը՛ռանալը* (Զ): 25. Ամուսնուց բաժանվել, ամուսնալուծվել: *Տը՛սնում ա, վէր մարթը խը՛մէլը թ՝ա՛ռգ՝ում չի, տ՝ուս ա կ՝ամ* (Զ):

- Տ՝ուս կ՝իրիլ - 1. Ցուցակից՝ մատյանից՝ անձնակազմից՝ որեւէ վայրում գտնվողների կազմից եւն հանել: *Բալ՝ինցան տ՝ուս կ՝իրիլ՝անը՛ն յը՛տը Ափկարը էրկու օր ա ապը՛ռում* (Բ): 2. Մեկին վճարելու՝ հատկացնելու համար որոշ գումար կամ իր՝ ապրանք բաց թողնել՝ հաշվապահական ձեւակերպումով ելք անել: *Նախագան էտ ը՛ռփը՛վը՛ռուն հը՛տէ կը՛ղ՝խօզէն պ՝ըհէստան հէնգ՝ փուրթ ցօրէն ա տ՝ուս կ՝իրն՝ում* (Զ): 3. Բնագրից՝ գրքից եւն քաղվածք անել՝ արտագրել: *Նը՛ստում ա, կը՛զէթումը ն՝ուրանն անա հինչը կ՝իրա՛ծ ա ինն՝ում, տ՝ուս կ՝իրն՝ում* (Զ):

- Տ՝ուս հանէլ - *տե՛ս* Տ՝ուս օնէլ:

- Տ՝ուս մը՛նալ - Որեւէ բանի մեջ չընդգրկվել՝ չընդունվել: *Լօխ պէնցյա յը՛ն ըստանում, լ՝ըհա մէր Համօն ա տ՝ուս մը՛նացալ* (Բ):

- Տ՝ուս պը՛ըրծած - 1. Անբարոյական, անօրեն, անզգամ: *Էտ բ՝ա՛գ՝ին էլ մին տ՝ուս պը՛ըրծած կը՛նէգ՝ ա լ՝ալ...* (ԱԱ, 66): 2. Անսպասելի, պատահական: *Տ՝ուս պը՛ըրծած մին մաշին ա ջիհ՝ում, նը՛ստում ա, ք՝ինամ* (Զ):

- Տ՝ուս պը՛ըրծնէլ - 1. Ճարպկությամբ խուսափել՝ վտանգից ազատվել: *Ղը՛ջը՛ղնէն զիրավ ըն տը՛ռնում, ամմա Ա՛վանք՝ ա՛մին կարում ա տ՝ուս պը՛ըրծնէ* (Զ): 2.

Դեպի դուրս ցցվել՝ տարածվել: *Կամ ա տը՛սնում՝ կ՛ունը նի մըտած էտ պունը, լ՛ըհա մինակ հանքի՛ն ա տունս պըրծալ* (Զ): 3. Տեղից դուրս թռչելով՝ վազել, փախչել: *Ծոնը վէր հանչում ա, կատուն տունս ա պըրծընում, փախչում* (ՀԱԲ, 15, 47): 4. Պոկվել, անջատվել: *Ճծրէն վէր դարթու վա տամ, կապը Սըմսօնէն ծը՛ր-քան տունս ա պըրծընում* (Զ): 5. Իր տեղից դուրս գալ՝ ելնել: *Վէր թըխում ա, ուշափէն աշկը տունս ա պըրծընում* (Զ):

- Տունս պիրիլ - 1. Ներսից՝ որեւէ տեղից՝ որեւէ բանի միջից հանել: *Տըղան ք՛ընըմ ա օցը պատան տունս պը՛ըրմ* (ՀԺՀ, V, 31): 2. Դժվար վիճակից ազատել: *Կանփին պարթկու տակ ա ըղնում, ախպէրքը մին թանրով տունս ըն պիրում* (Բ): 3. Հասցնել: *Սէվ էծը սըրան տանում ա, տ՛ուս պիրում սէվ աշխար* (ՀԱԲ, 15, 25): 4. Պատրաստել, գլուխ բերել: *Տաշըմ ա, տաշըմ, մին կ՛էդէցիկ ախճիկ տունս պէրըմ* (ԼՂԲ, 327): 5. Որեւէ գործողություն կատարելով՝ պահանջվածը ստանալ: *Հիշկան հանշը՛էվ ա անում, կարում չի մէլիք՛ին ասածը տունս պիրի* (Զ): 6. Իր ցանկացած ձեւով նկարագրել՝ ներկայացնել, բնորոշել որպես: *Յէղիսաբէթը հիրըվընունն սաղ կ՛օղ ա տունս պիրում* (Բ): 7. Մի բան հաջողացնել: *Հիշկան չըրչարվում ա, կարում չի վէշ մին պէն տունս պիրի* (Զ): 8. Հրատարակել: *Յէս կըկա՞րիմ կազէթ տունս պիրիմ, սաղ տարին ուշունց տամ...* (ՋՏ, Ա, 134): 9. Արտատպել, նկարել: *Էտ տըղէն նըկարը տունս ա պիրում, պատան կախ տամ* (Զ):

- Տունս տալ - 1. Մի տեղից հանել՝ դատարկել՝ դուրս թափել: *Մին ճըղասպան յիշիս ա, տըսնաս՝մին թորք հային չուվալան ցօրէնը տունս ա տաս, ըծէս ուրանն չուվալը* (ԱԱռ, 8): 2. Մեջը փորել: *Էտ քարը տանշում ա, տունս տամ, լըկաման շինում* (Զ): 3. Հիմար-հիմար՝ տակից-գլխից խոսել, դատարկաբանել: *Պըլը-Մէլը կըգնըվում ա յըրան, թա.- Հինչ ը՞ս տունս տամ, մարթը ընդէղ հինչ ա՞ անըմ* (ՀԺՀ, VI, 194): 4. Մարմնի վրա բշտիկներ գոյանալ: *Խուխէն ջանը տունս ա տըվալ* (Բ):

- Տունս տը՛ռնալ - 1. *տե՛ս* Տունս կ՛անլ (1-4): 2. Ուռչել, ցցվել: *Էնքան ք՛ուքացալ ա, վը՛ռը տունս ա տը՛ռալ* (Զ):

- Տունս փըչիլ - *տե՛ս* Տունս տալ (4):

- Տունս քաշիլ - 1. Քաշելով մի տեղից՝ մի բանի միջից հանել: *Լըհան վէր մին խըրէգ՛ լունսացավ, ծին կ՛ուման տունս քաշից, խուրջինը յէր կանլավ, քըցից ծիյավը, ըտըղան ք՛ինից* (ՀԺՀ, V, 586): 2. Գաղտնիքը՝ խոսքը հնարքով իմանալ՝ դուրս կորզել: *Պառավը էտ թանզզան հարթնանը խուսցընում ա, ուրանն օզանը տունս քաշում* (Զ):

- Տունս քըցիլ - 1. Վտարել, արտաքսել: *Ըտըրանց շը՛ընըմը թողըմ չըն կէնան, տունս ըն քըցըմ...* (ՀԺՀ, V, 41): 2. Հեռացնել, ազատել (պաշտոնից, աշխատանքից, ուսումնական հաստատությունից եւն): *Կօրծա տունս ըն քըցունմ, էլ կարում չի փուլ ըշխադէ* (Բ): 3. Ներսից բխեցնել՝ հանել: *Էս ք՛անսիբը մին կ՛էղէցիկ պալատ ա շունում, հըյաթումը լանվ ք՛անիրիզ տունս քըցունմ...* (ՀԺՀ, VII, 111): 2. Որեւէ բան, հատկապես՝ ոսկորը՝ հոդը՝ բնական վիճակից հանել՝ խախտել, տեղահան անել: *Տըհանցա մինը ծառան վէր ա ըղնում, վէնը տունս քըցում* (ՆԱԲ, 129): 3. Կնոջը արձակել, կնոջից բաժանվել: *Մինչէվ Օվչի Փիրումը անդամ չըլանլ, վար մարթը կընէգ՛ տունս քըցի* (ՆԼՂԺԲ, 13): 4. Արտահոսել, դուրս բխել: *Կարասը ճաքած ա, կ՛ինին տական տունս ա քըցունմ* (Բ): 5. Ուժը՝ գույնը տալ: *Չայը բիդի դանմ տաս, վէր լ՛ավ տունս քըցի* (Բ):

- Տունս ք՛ինիլ - 1. Մի տեղից դուրս ելնել՝ հեռանալ: *Տա կարում չի տանը կէնա, տունս ա ք՛ինամ* (Զ): 2. *տե՛ս* Չօլ ք՛ինիլ:

- Տունս օնէլ - 1. Հանել, դուրս հանել: *Ըստէղ թաքավէրը սուրը տունս ա օնում, կընգանը կըլօխը վը՛ր քըցունմ* (ՆԼՂԺԲ, 145): 2. Տանել՝ առաջնորդել դեպի: *Էտ խօխան ղըչըղնէրէն տունս ա օնում ուրանց շէնին կըլօխը* (Զ): 3. Ազատել: *Վէրչը, մը՛ր սավէտին հօքուն մը՛ռնիմ, վը՛ր մը՛զ էն զուլումանն տունս կանլավ* (ԼՂԲՔ, 271): 4. *տե՛ս* Տը՛ղը տունս ածէլ: 5 Վաճառքի՝ ցուցադրելու եւն հանել: *Բազարը լ՛ավ մըսէր ըն տունս կանլալ* (Բ): 6. Արտադրել: *Ջավոդը լ՛ավ ապրանք ա տունս օնում* (Բ):

ՏՆԻՍԸՏՕՆ/Տ՛ՈՒՍԸՏՕՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տունսըտօն անէլ - 1. Շարունակ մի տեղ մտնել ու դուրս գալ, ներսուդուրս անել: *Ըսկէսուրը կըգնըվում ա, թա.- Համօթ ա, թանզզան հարթնը էտքան տունսըտօն չանէլ* (Զ): 2. Տան գործերը լավ կատարել: *Տունսըտօն անօղ կընէգ՛ա մէր Սիրանը, սաղ օրը էն ա կօրծ ընէս* (Բ):

ՏՆԻՍԸՏՕՌ(ՆԸ)/Տ՛ՈՒՍԸՏՕՌ(ՆԸ) - *տե՛ս* ՏՆԻՍԸՏՕՆ:

ՏՆԻՍԿ՛ՈՒՍ/Տ՛ՈՒՍԿ՛ՈՒՍ - *տե՛ս* ՏՆԻՍՂՕԼ:

ՏՆԻՍՂՕԼ/Տ՛ՈՒՍՂՕԼ - *գ.* Դուրսը, դրսի կողմը: *Ծօխավ տօնը լըցնում ա, էտ կընէգ՛ը մին թանրով խօխօնցը տունսղօլ ա տանում* (Զ):

ՏՈՒՎԱԼԷՏ *(ռուս. туалет, ֆր. toilette)* - *տե՛ս* ԸԲՕՈՆԻ:

ՏՈՒՎԷՐ - *տե՛ս* ՏԻՎԷՐ:

ՏՈՒՎՏԱ - *տե՛ս* ՏՈՒՓՏԱ:

ՏՈՒՎՈՒՏՈՒ/ՏՈՒ-ՏՈՒ - *մ.* Ինքդ քեզ հետ: *Տու վու տու խուսէլավ էտ ըշտը՛ղ ը՞ս ք՛ունում* (Բ):

ՏՈՒՏ - *տե՛ս* ՏԸ՛Տ:

ՏՈՒՏԸՌՈՒՋ - *տե՛ս* ՏՈՒՏՈՒՌՈՒՋ:

ՏՈՒՏՆԸ - *տե՛ս* ՏԸ՛Տ:

ՏՈՒՏՈՌՈՒՋ - *տե՛ս* ՏՈՒՏՈՒՌՈՒՋ:

ՏՈՒՏՈՒ - *տե՛ս* ԴՕԼԳԻ:

ՏՈՒ-ՏՈՒ - *տե՛ս* ՏՈՒ ՎՈՒ ՏՈՒ:

ՏՈՒՏՈՒՋ - *մնկ. տե՛ս* ՏՈՒՏՈՒՌՈՒՋ:

ՏՈՒՏՈՒԼ - *տե՛ս* ՏՈՒՏՈՒԾ:

ՏՈՒՏՈՒԾ/ՏՈՒՏՈՒԼ - *գ.* Երկանքի առանցք: *Յը՛ս քու տակէտ, տու իմ կըլխէս, տուտուշըս քու ծակէտ* (ԱՀ, 69):

- Տուտուշ կըտըրէլ - *տե՛ս* Սըխտուրթակէ տը՛ռնալ:

ՏՈՒՏՈՒՌՈՒՋ/ՏՈՒՏՈՌՈՒՋ/ՏՈՒՏՈՒՋ *(հ.ե. *teu- (ուռչել)* - *տե՛ս* ՏՈՒՆԴՈՒՌՈՒՋ:

ՏՈՒՏՈՒ-ՏՈՒՏԱ - *տե՛ս* ՏՕՏԱ-ՏՕՏԱ:

ՏՈՒՐ/ՏՕՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տուր կ՛անլ - Հաճելի՝ ախորժելի՝ հավանելի լինել՝ թվալ: *Տըղան էլ ըխճըկանը ա տուր կ՛ամ* (ՆԼՂԺԲ, 27):

ՏՆԻՐ *(գրբ. դուր)* - *գ.* Հյուսնի մետաղյա սրաբերան գործիք՝ փայտի մեջ փորվածքներ անելու համար: *Տնիրը ա չանքնեցը յօր ա օնում, ըսքըսում էտ փանդին մաչը տունս տալը* (Զ):

ՏՈՒՐԱԼԻ - *ած.* Դուրեկան, հաճելի, ախորժելի: *Տուրալի խօրանգ՛ ա* (Բ):

ՏՈՒՐԷԿԱՆ - *տե՛ս* ՏՈՒՐԱԼԻ:

ՏՆԻՐԷՄՇԻԿ *(ռուս. тюремщик)* - *գ.* Բանտարկության ենթարկված մարդ, բանտարկյալ: *Սէրգ՛ի դայիկ էրկու տըղա օնէ, ճօխտընն էլ՝տունրէմշիկ* (Բ):

ՏՆԻՐՄԱ - *տե՛ս* ՏՆԻՐՄԱՆ:

ՏՆԻՐՄԱՆ/ՏՆԻՐՄԱ *(ռուս. тюрьма)* - *գ.* 1. Դատարանով դատապարտվածներին եւ հետաքննության տակ գտնվողներին պահելու տեղ, կալանատուն, բանտ: *Տըվըրածէն տըղան հըրցընում ա, ասըմ.- Ծը՛զ հու վա՞ քըցալ էտ տունրմանն* (ՀԺՀ, V, 310): 2. *փխբ.* Բանտարկություն: *Տունրմանն շատ մարթու վա ուրանն կընգանը, խօխօնցը անա ճօկալ* (Զ): 3. *փխբ.* Ապրելու համար ծանր՝ տաժանելի տեղ՝ վայր: *Թաքավէրին պալատը էտ ըխճըկանը հը՛տէ տունրմանյար* (Զ):

- Տունրմանն անէլ/կօխէլ/նըստըց(ը)նէլ/տինիլ/քըցիլ - Բանտարկել, կալանավորել, բանտ նստեցնել: *Համ ասում ա, համ էլ քառասուն հօքուն փըռնստում, տունրմանն անում* (ՆԼՂԺԲ, 51):

- Տուրմա ընդել - Բանտարկվել, կալանավորվել: *Լաւ ա տուրմա ընդիս, քանց սատ ուրթումը օտիս* (ԱԲԲ, 33):

ՏՆԻՐՆԻ - *տե՛ս* ՏՆԻՐՆԻՐ:

ՏՈՒՐՈՒԴՈՒՄՓՕՑ - *տե՛ս* ՏԸՐԸԴԸՄՓՕՑ:

ՏՈՒՐՈՒԹԱԿ - *տե՛ս* ՏԸՐՈՒԹԱԿ:

ՏՆԻՐՆԻԹՆԻՆ - *տե՛ս* ՏԸՐՆԻԹՆԻՆ:

ՏՈՒՐՈՒՆ *(գրբ. տորոն)* - *գ.* 1. Տորոնազգիների ընտանիքին պատկանող բազմամյա բույս, որի արմատներից կարմիր ներկ էին ստանում: *Ղարաբաղ տուրուն էլ ա աճում* (Բ): 2. Այդ բույսի արմատներից ստացվող ներկը: *Թիլէրը տուրունավ ըռանգ ա տամ* (Ձ):

- Տուրուն քընդիլի քինիլ - Մեռնել: *Բօրիկընն էլ տուրուն քընդիլի քըցավ* (Ձ):

ՏՆԻՐՆԻՇՄԷԼ - *տե՛ս* ՏԸՐՆԻՇՄԷԼ:

ՏՆԻՐՆԻՇՄԸ - *տե՛ս* ՏԸՐՆԻՇՄԸ:

ՏՆԻՐՆԻՇՄ(Ը)ՎԷԼ - *տե՛ս* ՏԸՐՆԻՇՄ(Ը)ՎԷԼ:

ՏՈՒՐՈՒՍԻԿ - *տե՛ս* ՏԸՐՈՒՍԻԿ:

ՏՈՒՐՈՒՍԻԿԱՑ - *տե՛ս* ՏԸՐՈՒՍԻԿԱՑ:

ՏՈՒՐՈՒՍ - *տե՛ս* ՏԸՐՈՒՍ:

ՏՆԻՐՆԻՏՆԻՏՆԻ - *տե՛ս* ՏԸՐՆԻՏՆԻՏՆԻ:

ՏՆԻՐՆԻՐ/ՏՆԻՐՆԻ/ՏԸՐՆԻՐ/ՏԸՐՆԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տուրուր կալ - 1. Շարժվել, շարժումներ անել: *Էս ախճիգը տուրուր չի կամ* (ՆԼՂԺԲ, 72): 2. Երերալ, ցնցվել: *Մին էլ ա տըսնաս՝ սաղ աշխարքը տուրուր յէկավ...* (ՀԺՀ, V, 606): 3. Նորից սկսվել՝ զգացնել տալ: *Վէր մըրսում ա, ցավէրը էլիա տուրուր ա կամ* (Ձ): 4. *փխբ.* Օգտագործվել, մի բանի մեջ դեր խաղալ: *Էտ խէլունքը ըսէս ա.- Ըստէղ ուրաղ բըդի տուրուր կա, վէր կարիմ մին պէն ասիմ* (ՀԺՀ, V, 264): 5. *փխբ.* Այս կամ այն կերպ վերաբերմունք ցույց տալ: *Հարը լաւ տուրուր յըկավ, տըղէն տուրմա ըզադից* (Ձ): 6. *փխբ.* Մի բանով առաջնորդվել՝ ղեկավարվել: *Էտ մարթը կընգանը ըսածավընն ա տուրուր կամ* (Բ): 7. *փխբ.* Արագ՝ եռանդով որեւէ բան անել՝ կատարել: *Հարը ասում ա.- Տուրուր յըկէք, թոռը նի յա ունական* (Ձ):

- Տուրուր տալ - 1. Շարժել, տեղից հեռացնել: *Քարը տուրուր ա տամ, տական էտ պօլիգը տուս օնում* (Ձ): 2. Տատանել, երերել, ցնցել: *Էտ ըրօտուցը սաղ յէրգիրը տուրուր տըվավ* (Բ): 3. Մարմնի մասերը շարժման մեջ դնել: *Էս նազիր-վէզիրը կըլօխը տուրուր ա տամ, ասում.- Էտ քու խօսկէրքը չի* (ՀԱԲ, 15, 85): 4. Առաջացնել, առաջ բերել, նորոգել (վիշտ, ցավ եւն): *Վէր ցօրտ ճուր ա խըմում, ցավը տուրուր ա տամ* (Բ): 5. *փխբ.* Օգտագործել, գործածել: *Փուլ բիդի տուրուր տաս, վէր կօրծ ամալ կա* (Ձ): 6. *փխբ.* Դրդել, որեւէ բան անելու մղել: *Հարը տըղօրանցը տուրուր տըվավ, ըսքըսըցէն հօնձ անէլը* (Ձ): 7. *փխբ.* Օնանիզմով՝ ձեռնաշարժությամբ զբաղվել:

ՏՆԻՐՆԻՐՆԻՐ/ՏԸՐՆԻՐՆԻՐ - *գ. հեգն.* Լոտո խաղի մեջ 33 թվակիր խաղաքարը: *Վէր տուրուրուն քըսական տուս ա օնում, խանումը ուրխութունան ծափ ա տամ* (Ձ):

ՏՆԻՐՔ[1] - *տե՛ս* ՏՕՐՔ:

ՏՈՒՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՏԸՐՕԹՈՒՆ:

ՏՈՒՐՕՍ - *տե՛ս* ՏԸՐՕՍ:

ՏՈՒՓԼԻ - *տե՛ս* ՏՈՒՊԼԻ:

ՏՈՒՓՏԱ/ՏՈՒՎՏԱ - *տե՛ս* ԱԽՄԱԽ:

ՏՈՒՔ/ՏՆԻՔ *(գրբ. դուք)* - *դ.* Անձնական դերանվան երկրորդ դեմքի հոգնակին՝ դուք: *Պառավը ասում ա.- Տուք կարէլ չըք էտ դէվին ըսպանիք, մէխկ ըք, քինիլ մէք* (Ձ):

ՏՆԻՔ - *տե՛ս* ՏՈՒՔ:

ՏՕԼ/SOL[1] *(ռուս. толь)* - *գ.* Հատուկ բաղադրությամբ հագեցված ստվարաթուղթ, որով ծածկում են տանիքը: *Պիրում ա կըտորը տօլանվ ծասկում, վէր թոռը նի չըծըծէ* (Ձ):

ՏՕԼԱԲ - *տե՛ս* ԴՕԼԱԲ:

ՏՕԼԿ[1] *(ռուս. втулка)* - *գ.* Տակառի փայտե խցան: *Պուժկէն տօլկը տուս ըն օնում, տըսնում կինին քըցախած* (Ձ):

ՏՕԼԿ[2] *(ռուս. долг (պարտք)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Տօլկ անէլ - Գրավ դնել: *Պիրում ըն տօնը տօլկ անում, էլլըհան պըրծնում չըն* (ՀԱԲ, 15, 60):

ՏՕԼ[1] - *տե՛ս* ՏՕԼ:

ՏՕԽ - *տե՛ս* ՏՕԽ:

ՏՕԽ/ՏՕԽ *(գրբ. դոխ (աղավնի)* - *գ.* 1. Ձու ածել սկսած հավ, վառեկ: *Ջէմքուճը մին տօխ ա մօրթում, ժարիտ անում, տինում փըսէն ըռաշկէն* (Ձ): 2. *փխբ.* Մատաղահաս եւ փարթամ աղջիկ: *Ասում ա.- Էտ պառավը հինչ ա՞, վէր օգիմ, ինձ տօխ ա հարկավէր* (Ձ):

- Տօխու ծու - 1. Առաջին բերք՝ բարիք: *Մին խընձօր ա պուք տամ, թա.- Էս տօխու ծու վա* (Ձ): 2. Անարատ սնունդ: *Շինացէք տօխու ծու յընն օտում, ըտըրա հըտէ յա ջընըրնէն սափ* (Բ):

ՏՕԿ *(ռուս. ток)* - *գ.* 1. Էլեկտրահոսանք՝ ջերմություն՝ ձայն եւն հաղորդող՝ փոխանցող մետաղալար, հաղորդալար: *Պիցըրանում ա ըստօլբան, տօկէրը լօխ կըտորում, շինացուց թօղում առանց լուս* (Ձ): 2. Էլեկտրական հոսանք: *Տօկը թըխում ա, ըսպանում* (Բ):

ՏՕԿՕՍ *(գրբ. տոկոս (անիրավ շահ, պարտք), հուն tókos)* - *գ.* 1. Ամբողջական թվի մեկ հարյուրերորդական մաս: *Քըսանէն իծնուն տօկօսը տասընն ա* (Բ): 2. Որեւէ բանի քանակ, որ չափվում է որպես միավոր ընդունված որեւէ բանի հարյուրերորդական մասով: *Ըստարէ խաղվէն իծնուն տօկօսընն ընք կըրըցալ քաղինք* (Բ): 3. Այն վարձը, որ ստանում է վարկատուն՝ պարտատերը պարտք տված դրամի դիմաց: *Միհէնգ անդաթ ա. փուլ ըն պարթկ անում, ամմէն ամէս տօկօս տամ* (Բ):

ՏՕՂ[1] *(գրբ. տող, հ.ե. *dol-)* - *գ.* Միագիծ շարք, կարգ (հատկապես տետրի): *Ասում ա.- Աշկէրընս խարաբ ա, տօղէրը տըսնում չընմ* (Ձ):

ՏՕՂ[2]/ՏՕՇ[2]/ԴՕՂ - *տե՛ս* ՏԱՇՏ (2): *Էն էրկու մարթը նի յընն մընէս ճըղացէն նավը, հարթնընն էլ նի յա մընէս տօղը* (ՀԺՀ, V, 487):

ՏՕՂ[1] *(գրբ. դող)* - *գ.* 1. Մարմնի սարսուռ (մրսելուց, վախից, տագնապից եւն): *Վըխկընլօտ մարթին անա տօղը անպակաս ա* (Ձ): 2. *տե՛ս* ՃԷՐՄ:

- Տօղը ջանը ընդել - *տե՛ս* Ջանը տօղ ընդել:

- Տօղը ջանը քընցիլ - *տե՛ս* Ջանը տօղ քընցիլ:

- Տօղը փըռնէլ - Դող զգալ, սկսել դողալ: *Վէր արչին տըսնում ա, տօղը փըռնում ա* (Ձ):

- Տօղ ինիլ - *տե՛ս* Տօղը փըռնէլ:

ՏՕՂ[2] - *տե՛ս* ՏՕՂ[2]:

ՏՕՂԱԼ *(գրբ. դողամ)* - *տե՛ս* ՏԸՂՏՕՂԱԼ:

ՏՕՂ-ՏՕՂ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տօղ-տօղ ինիլ - *տե՛ս* ՏԸՂՏՕՂԱԼ:

ՏՕՃ(ԻԳ) - *գ.* 1. Փոքր տիկ: *Մին տօճ կինի յա դարկալ ախպօրը հըտէ* (Ձ): 2. *տե՛ս* ՊՈՒԼԻԳ:

ՏՕՄԲԱԼ(ԱՆ) *(թրք. dombalan)* - *գ.* 1. Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող պալարապտղավոր բույս, ինչպես նաեւ այդ բույսի պալարապտուղը, գետնախնձոր: *Ղարաբաղ շատ խըրէգ մարթ կա, վէր տօմբալան ա վըրէս* (Բ): 2. *փխբ. տե՛ս* ՏԸՄԲԸԼԷԳ:

ՏՕՄՍ *(գրբ. տոմս (մագաղաթ, թղթի թերթ)* - *տե՛ս* ԲԻԼԷԹ:

ՏՕՆ[1] *(գրբ. տուն)* - *գ.* 1. Շենք՝ կառույց, որ նախատեսված է բնակության կամ այլ նպատակների համար: *Էտ շէնին տընէրը լօխ էրկուընտրժանէ յա* (Բ): 2. Բնակարան: *Տա Օվչի Փիրնումին տըղան ա ինըմ, կամ ա, թա հօրը տօն տանի* (ՀԺՀ, V, 221): 3. Մարդու մշտական բնակավայրը (հայ-

րենի գյուղը՝ քաղաքը եւն): *Ախըրը, քըսան տարէ ղըրիբթունում կընալանը յըէտը Արշակ դային վօրօշում ա, վէր տօն կ'ա* (Զ): 4. Գերդաստան, ընտանիք: *Ըռըչան մին քանի տօն ըն իլալ՝ Կիվէրքանք, Սայանք, Սանքանք, Մարդիրօսանք, Ավանք, Աթանեսանք* (ԱԱ, 29): 5. Տնային տնտեսություն: *Կընէգը, վէր կարից վէչ տան կօրծէր անէ, հինչ կընէ՞գ* (Զ):

- Տանա մարթ - Ընտանիքին հարազատ՝ մտերիմ անձ: *Ապան ասում ա.- Սամսօնը տանա մարթ ա, քըէփէն նի՛ չի կ'աք* (Զ):

- Տանան տանիս քըցիլ - Ընտանիքից՝ տնից վտարել, հետը կապերը խզել: *Ըտի էտ հարթնանը տանան տանիս ըն քըցիս* (Զ):

- Տանավ անէլ - 1. Տան՝ ընտանիքի հետ կապելով՝ մեկին վատ ճանապարհից հետ կանգնեցնել: *Շատ ա չըրչարվում, մինչըէվ կարում ա էտ կապը կըտրած տըղէն տանավ անէ* (Բ): 2. Ամուսնացնել (տղային): *Մարյանգանը ճօխտ տըղէն տանավ ըրավ, ըրխըյնացավ* (Զ):

- Տանավը ածէլ - 1. Ընտանիքի՝ գերդաստանի անդամների ջանքերը օգախի շենացմանն ուղղել: *Տըղօրանցը լօխճին տանավը ածից, հըրուստացավ* (Բ): 2. *տե՛ս* Տանավ անէլ:

- Տանավը էվանալ ածիս՝ պէն չի ըղնէլ ըռըէխը - Ասում են ծայրաստիճան աղքատ մարդկանց մասին:

- Տանավը նի մըննիս՝ պարավըտ մըննատ կըքըցիս - Ասում են շքեղ եւ լավ կահավորված տան՝ բնակարանի մասին:

- Տանավը ցանքի շօռ ածիս՝ թիլ չի զիրանավ ըղնէլ - *տե՛ս* Տանավը էվանալ ածիս՝ պէն չի ըղնէլ ըռըէխը:

- Տանը թօղ(ն)էլ - Աղջկան մարդու չտալ, առանց ամուսնանալու թողնել: *Փիս կընէգ ա Փառանձիմը, էն գօզալ ըխճըկօրանցը տանը թօղից* (Բ):

- Տանը ծօխը կըտրոց(ը)նէլ - Անժառանգ մնալով՝ հայրական տունը թշվառ վիճակի հասցնել, սերունդը չշարունակել: *Ըրխցարէն իլածը էլ մին տըղա յար, էն էլ փըսակվից վէչ, տանը ծօխը կըտրոցըրավ* (Բ):

- Տանը ծօխը յըէր (հ)անէլ - Արու զավակ ունենալով, սերունդը շարունակելով՝ հայրական տունը շենացնել: *Ըտրան էլ տըղա չի ինում, վէր տանը ծօխը յըէր հանէ* (Զ):

- Տանը կըլօխը - Ընտանիքի գլխավորը: *Դէրվիշը տըէսնում ա, վէր ըտրանց տանը կըլօխը էտ հարթնը ա* (Զ):

- Տանը հըղէն կընանչիլ - Տունը անտեր մնալ՝ ավերվել: *Բիդասըլ տըղէն հօրը տանը հըղէն կըկընանչի* (Բ):

- Տանը ճիրանքը - Ընտանիքի միակ հույսը՝ նեցուկը: *Ասում ա.- Իմ տանըս ճիրանքը էտ խօխան ա, վէր տանիս, էլ յըէս հօր ը՞մ ապըրում* (Զ):

- Տանը ճիրանքը հանգիլանը յըէտը Մարյանը էլ կարում չի ապըրէ, ուրանն կախ ա տամ (Զ):

- Տանը ճիրանքը հինգիցը(ը)նէլ - Ընտանիքի միակ ժառանգին կորստյան մատնել՝ սպանել: *Էս կըռըէվը Դօրուց Սուրէնին տանը ճիրանքը էլ ա հինգիցըրալ* (Բ):

- Տանը մընալ - Մարդու չգնալ, առանց ամուսանանալու մնալ (չափահաս աղջիկների մասին): *Հըղէնին մին տանը մընացած ախճիգ ա ջըհըմ* (ԼՂԲ, 366):

- Տանը նըստէլ - Ոչինչ չանել, անգործ լինել: *Խալխը հօնձ ըն անում, Կանփունց Սէրգին էլ սաղ օրը էն ա տանը նըստած* (Զ):

- Տանը սնթունը/սնունը - Ընտանիքը կերակրողը՝ պահողը, միակ աշխատողը: *Ասըմ ա.- Մէր տանը սնունը էս ախճիգըն ա* (ՀԺՀ, V, 633):

- Տանը տըէղը սըխտօր վարէլ/ փըսնէլ - Տունը ավերվել (հիմնականում գործածվում է որպես անեծք): *Պառավըն էլ համ էծէրը բուստանան քըշում ա, համ էլ ինձըտարէն անէսկ տամ.- Տանըտ տըէղը սըխտօր վարիմ, Ամմինանկ, էս հինչ օյին ա՞, վէր պէրէլ կըլօխըս* (Զ):

- Տանը տօռնը ըռաշկէն պէց ինիլ - Մեկին հյուրընկալելու միշտ պատրաստ լինել: *Ասում ա.- Տանըս տօռնը քու ըռաշկէն պէց ա, հիբը օգում ըս, յըէք* (Զ):

- Տանը քանդիր չի կա, թա կախ ինի - *տե՛ս* Տանավը էվանալ ածիս՝ պէն չի ըղնէլ ըռըէխը:

- Տան կընէգ - *տե՛ս* ՏԸՆԴԷԳԻՆ:

- Տան քէթանկ - 1. Ընտանիքի՝ գերդաստանի նահապետ: *Ապան մէր տան քէթանկըն ա, հինչը ասում ա, դանստի անում ընք* (Բ): 2. Արմատական՝ կոթողային՝ առանցքային բան (մատյան, սնդուկ եւն): *Այան ասում ար.- Էս սանդօղը տան քէթանկ ա, լավ կըպահիք* (Բ):

- Տան օխծ - *տե՛ս* ՏԸՆԱՕԽԾ:

- Տօն անէլ - 1. Ներս անել՝ քշել՝ տանել՝ բերել: *Այան ասում ա.- Բալա, գօրէնը տօն ըրա, քանէ հավան լավ ա* (Զ): 2. *տե՛ս* Դալ անէլ:

- Տօնը կըլխէն փօլ ածէլ/քանդիլ - Մեծ վնաս հասցնել, թշվառացնել: դժբախտացնել: *Էս կըռըէվը շատ մարթու տօն ա կըլխէն փօլ ածալ* (Զ):

- Տօնը կըլխէն փօլ կանալ/քանդվիլ - Մեծ դժբախտություն պատահել, մեծ վնաս կրել, թշվառանալ: *Վէր կավը էլ ըստակում ա, քանսիբը լափ ըղնում ա կըրակու մաչ, տօնը կըլխէն փօլ ա կ'ամ* (Զ):

- Տօն ըղնէլ - Հիվանդության՝ ծերության եւն պատճառով տանը մնալ, տնից դուրս չգալ: *Հանաբէդը էլ ա տօն ընգալ, էլ տանս չի կ'ամ շինամաչ* (Բ):

- Տօնը մին մագու կապէլ - *տե՛ս* Տօնը վըրցակէն պէռ(ն)էլ:

- Տօնը նի կըցընիս՝ մըկըլավը՝ էտ չի կանալ - *տե՛ս* Տանավը էվանալ ածիս՝ պէն չի ըղնէլ ըռըէխը:

- Տօնը շըլակած՝ շօռ կանալ - 1. Շատ աղքատ լինել: *Ասում ա.- Մուխայիլին ըշտըղա յա՞ փուլ, էն ա, տօնը շըլակած, շօռ ա կ'ամ* (Զ): 2. Շատ տնարար՝ աշխատասեր լինել (տանտիկնոջ մասին): *Հարթնը, հինչ հա՞ղթնը, տօնը շըլակած՝ շօռ ա կ'ամ* (Բ):

- Տօնը վըրցակէն պահ տալ - Տունը՝ ունեցվածքը առանց պահպանության՝ հսկողության թողնել: *Տօնը վըրցակէն պահ տըվօղը վէրչումը ծուլնէրը վէր կըթակէ* (Բ):

- Տօնը վըրցակէն պէռ(ն)էլ - Սնանկացնել, թշվառության հասցնել: *Ըտի էտ տըղան հօրը փուլէրը լօխ քամուն ա տամ, տօնը վըրցակէն պէռնում* (Զ):

- Տօնը(տ) շինվի (վէչ) - Հանդիմանության արտահայտություն. բա այդպիսի բան կանե՞ն: *Տօնըտ շինվի, Մա՛ցակ, էս բըրատու ծառը խէ կըտրրալ ը՞ս* (Բ):

- Տօնը(տ) քանդվի - 1. *տե՛ս* Տօնը(տ) շինվի (վէչ): 2. Անեծքի արտահայտություն՝ մեծ փորձանքի գա(ս), դժբախտություն պատահի: *Տօնը քանդվի թօրքէն, վէր իմ տօնըս քանդալ ա* (Բ):

- Տօնըտ քանդվի վէչ - *տե՛ս* Տօնըտ շինվի (վէչ):

- Տօնը փըրսըվէր անէլ - Տանը եղածը տակնուվրա անել՝ խառնել: *Կամ ա տըէսնում՝ մըղակը կօտըրած, տօնըն էլ փըրսըվէր ըրած* (Զ):

- Տօնը քանդիլ - 1. *տե՛ս* Տօնը կըլխէն փօլ ածէլ: 2. Ընտանիքը քայքայել: *Էտ պառավը էտ ջըհիլնէրէն ուրուր նըհըէտ կըռըվցընում ա, ըտրանց տօնը քանդում* (Զ):

- Տօնը քանդվիլ - 1. *տե՛ս* Տօնը կըլխէն փօլ կանալ: 2. Ընտանիքը քայքայվել: *Ըտի համօվէն տօնըն էլ քանդվից. կընէգը էրուշ մարթու նըհըէտ փախավ* (Զ):

- Տօն թօղ(ն)էլ - Ներս ընդունել, թույլ տալ իր տունը մտնելու: *Ըտրանա յըէտը մըէծ քուրը շատ ա կ'ամ, ամհա կուճի քուրը տօն չի թօղնում* (Զ):

- Տօն չօնէ՝ տըռ(ն)ան ա շօռ կ'ամ - Ասում են նրանց մասին, ովքեր, հիմնականը թողած, երկրորդականին են ուշադրություն դարձնում:

- Տօն տանէլ - Իր տունը հրավիրել: *Շէնը վէր ղարիբ մարթ ար կ'ամ, Սումբաթ ամին տօն ար տանում* (Ձ):

- Տօն տը՛ռնալ/տինիլ - *տե՛ս* Տօն-տը՛ղ տինիլ:

- Տօն քըցիլ - *տե՛ս* Տօն անէլ (1): *Սա ասում ա.- Մ' հա՛ր, յէս կըք'ինամ էտ օխծէն, թա՛ք'ի լըհա՛ տու դա՛նը տօն քըցիս* (ՀԺՀ, VI, 146):

ՏՕՆ[2]/ՏՈՒՆ *(գրբ. տօն)* - *տե՛ս* ՊԸՌԱՁՆԻԳ:

ՏՕՆ[3] - *գ.* Արտահայտության՝ խոսքի ձեւ՝ եղանակ: *Էտ հինչ տօնավ ը՞ս խօսում քու մօր նըհը՛տ, համօթ չի՞* (Բ):

- Տօն տալ - 1 Գրգռել, դրդել: *Հարթնէրը կըռվում ըն, Ա՛րփէնիգ'ըն էլ ղըրաղան տօն ա տամ* (Բ): 2. Վերքը թարախակալել եւ հանկարծ բացվել: *Յարան տօն ա տըվալ* (Բ):

ՏՕՆԱԾԱՌ - *գ.* 1. Եղեւնի: *Մէր ծըմակնէրումը տօնածառ խըրէգ' կա* (Բ): 2. Նոր տարվա առթիվ զարդարված փոքրիկ եղեւնի, որ դնում են տանը: *Միհէնգ' թա՛զգա՛ տըռնավը Ղարաբաղ ամմէն տան էլ տօնածառ ա ինում* (Բ):

ՏՕՆԲԱՏՕՆ - *մ.* Տնից տուն, տնետուն: *Սաղ օրը տօնբատօն շօռ ա կ'ա՛մ...* (ԼՂԲ, 388):

ՏՕՆԳ/ՏՈՒՆԳ/ՏԸՆԳԷ *(գրբ. տունկ (տնկած ծառ)* - *տե՛ս* ԾԸՌԱՏՕՆԳ:

ՏՕՆԸ - *գ.* Յուրաքանչյուր ընտանիք: *Տօնը հէնգ' մանէթ ըն տամ, շէնին կըլխէն մին հօվուգ շինիլ տամ* (Ձ):

ՏՕՆՆԱ *(ռուս. тонна, ֆր. tonne, լատ. tunna)* - *գ.* Ծանրության չափ, որ հավասար է հազար կիլոգրամի, տոննա: *...Մէր կօլխօզը վօրօշալ ա, վէր նօրմանը տա՛ւս ուրէնք'ին մի քանէ տօննա հատէգ' էլ իվիլ տա...* (ՀԲ, 359):

ՏՕՆ-ՏԸ՛Ղ - *գ.* Ընտանիք, օջախ, ունեցած-չունեցած: *Տօն-տը՛ղ հըվըքէս ա, կ'աս ըստը՛ղէրք* (ԱԱ, 20):

- Տօն-տը՛ղ անէլ - Տնային գործերը կատարել: *... Էտ շամփուրը ախճիգ' ա տը՛ռնըմ, տօն-տը՛ղ անըմ, հըվաքըմ, սըրփըմ, սարքըմ* (ՀԺՀ, V, 159):

- Տօն-տը՛ղ տինիլ/տը՛ռնալ - Ընտանիք կազմել, տնային տնտեսություն հիմնել: *Ըտի էտ տըղան չուբանէն ըխճըկանը հավան ա կէնում, տօն տը՛ղ տինում, լ'ավ ապըրում* (Ձ):

ՏՕՆ-ՏԸՆԱՄԱՉ - *տե՛ս* ՏՕՆ-ՏԸ՛Ղ: *Էս ախկատ կընգանը մին էծ ա իլա՛լ. սաղ տօն-տընամաչ էտ էծըն ա իլա՛լ* (ՀԺՀ, VII, 392):

ՏՕՆ-ՏԸՆԸՀԱՎԱ(Ն) - *տե՛ս* ՏԸՆԸ-ՀԱՎԱ(Ն):

ՏՕԾ *(պրս. duš, թրք. döš)* - *գ.* 1. Մարդու եւ կենդանիների մարմնի առջեւի՝ պարանոցից ցած ընկած մասը՝ կուրծք, լանջ: *Յալլը՛խը յօր ա օնում, քըսում ծիյին տօ՛շը* (ՀԱԲ, 15, 55): 2. Սարալանջ: *Քաչալը փըխճէլիս յէշում ա, տէսնում՝ մին սարու տօ՛շում մին չօբան էծէր, վըխճըրնէ յա պահում* (ՀԺՀ, VII, 387): 3. *տե՛ս* ԾԸ՛Ծ (1): *... Լօխճին տա՛ւշըրնէն պէց անէլ ա տաս, ամմէնին յըրա թըքէս, թա.- Հարամ ինի էս ծէծը, վէր ըտի բէյնամուս ջիհիլնէն ըն կէրալ* (ԱԱ, 76): 4. Ջգեստի այն մասը, որ ծածկում է կուրծքը: *Ծիք' ա տամ, ըրբըշկէն տօ՛շը ճըղում* (Ձ): 5. *փխբ.* Առջեւի մաս: *Էտ նըկարը պիրում ա, տանը տօ՛շա՛ն կախ տամ* (Ձ):

- Տօ՛շա՛ ըղնէլ - *տե՛ս* Տօ՛շա՛ կըտրըվէլ:

- Տօ՛շա՛ կըտրըվէլ/յը՛տ անէլ - *տե՛ս* Ծը՛ծա կըտրըվէլ:

- Տօ՛շա՛ կըտրըվէլ/յը՛տ ինիլ/յը՛տ տը՛ռնալ - *տե՛ս* Ծը՛ծա կըտրըվէլ:

- Տօ՛շ անէլ - *տե՛ս* Տօ՛շը տէմ տալ:

- Տօ՛շա՛ն կէնալ (պուք չը՛կ'ա՛ն) - 1. Վախից փարվել մեկի կրծքին (երեխաների մասին): *Խօխան շանը վէր տը՛սնում ա, մօրը տօ՛շա՛ն ա կէնում, պուք չի կ'ամ* (Ձ):

- Տօ՛շէրը ծըմըրըկէլ/ճըղուպուր տը՛ռնալ/պըլիթիլ - *տե՛ս* Ծը՛ծէրը պըլիթիլ:

- Տօ՛շը ասը՛ղ/ բըլափկա քաղէլ - Ստիպել, հարկադրել, նեղել: *Հարթնը ըսկէսվօրը տօ՛շը բըլափկա քաղից, ա՛ւրա՛ն հը՛տէ վը՛սկէ սըհաթ ինք' օնէլ տըվավ* (Բ):

- Տօ՛շը թակէլ - 1. Գոռոզանալ, հպարտանալ: *Ճա՛տին մէհէտ մին արչ ա ըսպանալ, ըշտը՛ղ նըստում ա, տօ՛շը թակում ա* (Ձ): 2. Երդվել, իր ասածը հաստատելու համար ջանք չխնայել: *Ծառան հիշկան տօ՛շը թակում ա, վէզիրը հըվատում չի* (Ձ): 3. Կոծել, ողբալ: *Մարը տըղէն մէյդը վէր տը՛սնում ա, շատ ա ծուվծուվամ, տօ՛շը թակում, մագ'էրը քանդա՛ում, ամմա դէ հինչ օ՞քութ* (Ձ): 4. Հասարակական որեւէ պարտականություն՝ որեւէ գործ իր վրա վերցնել: *Շէնումը հինչ կօրծ ար ինա՛ում, մէր խաչին տօ՛շը թակում ար* (Բ):

- Տօ՛շը չուրանալ/ցըմաքէլ/ քուռանալ - *տե՛ս* Ծը՛ծը չուրանալ:

- Տօ՛շը չօ՛ր/ցամաք/քօռ - *տե՛ս* Ծը՛ծը չօ՛ր:

- Տօ՛շը տէմ տալ/տէմ անէլ - 1. Դիմադրել, դիմագրավել: *Մէր ջիհիլնէն տա՛ւշըրնէն տէմ տըվէն, թուրքէրէն մարը լիցըցըրէն* (Բ): 2. Համարձակորեն՝ խիզախորեն գործել, ջանք չխնայել: *Կարօ դային տօ՛շը տէմ տըվավ, արտը մին օրումը հընձից* (Ձ):

- Տօ՛շ տալ - 1. *տե՛ս* Ծը՛ծ տալ: 2. *տե՛ս* Տօ՛շը տէմ տալ:

- Տօ՛շ տօ՛շա՛ւ տալ - 1. Կրծքավանդակները իրար հենելով՝ պաշտպանվել (հիմնականում ձիերի մասին): *Ծիյը՛նը տօ՛շ տօ՛շա՛ւ վըն տամ, քըցըքացէ անում, կ'ա՛ւկէրը փախչա՛ւմ ըն* (Ձ): 2. Միաբանվել, իրար սատարել: *Շինա՛ցէք' տօ՛շ-տօ՛շա՛ւ տըվածա՛ ապրում ըն* (Բ):

- Տօ՛շ օտէլ - *տե՛ս* Ծը՛ծ օտէլ:

ՏՕ՛ՇԼԻԳ' - *տե՛ս* ԼԻՓՃԻԳ':

ՏՕՇՆԻ/ՏՕՉՆԻ *(ռուս. точный)* - *ած., մ.* Իսկ եւ իսկ, ճիշտ եւ ճիշտ: *Էտ տըղան էլ խըսյաթավ տօշնի հօրը նըման ա ինա՛ում* (Ձ):

ՏՕՇՊԱՏՕՇ/ՏՕՉՊԱՏՕՇ *(ռուս. точь-в-точь)* - *ած., մ.* 1. *տե՛ս* ՏՕՇՆԻ: 2. Տեղը տեղին, ինչպես որ պետք է: *Կօրծը տօշպատօշ անում ա, խաբարը դարկում* (Ձ):

ՏՕՉՆԻ - *տե՛ս* ՏՕՇՆԻ:

ՏՕՉՊԱՏՕՇ - *տե՛ս* ՏՕՇՊԱՏՕՇ:

ՏՕՊ[1] *(գրբ. պուտ, պոյտ)* - *գ.* 1. Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող ծաղկաբույս՝ կակաչների մի տեսակը: *Արտէրը լիգ'ը տօպ ա* (Բ): 2. Այդ ծաղկաբույսի գնդաձեւ կոկոնները, որ թթու են դնում: *Աղ տիրա՛ծ տօպը թօթէն ըրաղէն մա՛զա՛ն ա* (Բ):

ՏՕՊ[2] *(հ.ե. * b(h)eu- (փչել, ուռչել)* - *գ.* Հեղուկի շատ փոքր քանակություն՝ կաթիլ: *Էս ասլանին հօփ ըն տըվալ, կօլ տըվալ, ամմա մին տօպ ա՛ր՛ն ա կաթա՛լ մին տիրէվու յըրա* (ՀԺՀ, VI, 53):

ՏՕՊ(Ը)ՐԱԿ *(թրք. tubrak)* - *գ.* 1. Կտորից կամ թղթից կարած փոքր պարկ: *Վէր տօպըրակը ճըղվըմ ա, մօխէրը յէր ա տը՛ռնըմ, տը՛ռնըմ աշկէրը* (ՀԺՀ, V, 57): 2. *փխբ.* Մարդու մաշկի վրա՝ առավելապես դեմքին գոյացած ծալքավոր ուռուցք: *Վէր ըտըրա ըշկէրէն տակէն տուպրըկնէն տըսնաս ա, կըլօխ ա ըղնէս, վէր մարթը էլիա թակալ ա* (Ձ): 3. *տե՛ս* ԼՕՊ(Պ)ԱՔ:

ՏՕՊ(Ը)ՐԱԿ-ՏՕՊ(Ը)ՐԱԿ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տօպ(ը)րակ-տօպ(ը)րակ խօսէլ/ տա՛ւս տալ - Գոռոզամտել, մեծ-մեծ խոսել: *Ըտըրա տօպրակ-տօպրակ խուսէլին յէշիլ մէ՛լ, շատ ա վըխըլկօտ* (Բ):

ՏՕՌ(ՆԸ)/ՏՕ՛Ռ(ՆԸ) *(գրբ. դուռն)* - *գ.* 1. Շենքի՝ պարսպի՝ տան՝ այգու եւն ելումուտի համար հատկացվածք, մուտք: *Տըռնավը նի յա մընում, տը՛սնում՝ մին օշափ ըտը՛ղ քօն* (Ձ): 2. Մետաղից՝ փայտից եւն շինված հարմարանք՝ փեղկ

այդ բացվածքը փակելու եւ բացելու համար: *Տ'ուս ա կ'ամ, տօռնը քըլլում...* (ՀԱԲ, 15, 61): 3. Պահարանի՝ գրասեղանի եւն փակելու փեղկ: *Ըշկափէն տօռնը կօտըրալ ա* (Բ): 4. Դռան մոտի տարածությունը: *Պուդին յէր ա կէնում շօրէրը կ'էնում, ք'ընում Մէլիք-Շահնազարէն տըռնան ծէն տամ...* (ՆԱԲ, 129): 4. *փխբ.* Ելք, միջոց, հնարք: *Տը'սնում ա, վէր ըտըրանա ըզըդվէլի տօռնը չի կա, ըխճըկանը տամ ա ըտըրան* (Ձ): *մ.* 5. Դուրսը: *Ջօրքէրը կ'ալիս ըն, տըռնանը պըրընվօտում* (ՀԺՀ, V, 395): 6. Դռան տակ, մուտքի առջեւ: *Կամ ա, տը'սնում հ'որ տըռնանը կօչ յը'կած* (Ձ):

- Տըռնանը ա՛ռ՝ն քըսէլ - *տե՛ս* Չօ՛ր ծառը ա՛ռ՝ն քըսէլ:

- Տըռնանը թօղ(ն)էլ - Անօթեւան՝ անտեր-անտիրական թողնել: *Փիս հ'որ ո՛ւրա՛ն խուխէն էլ տըռնանը կըթօղէ* (Ձ):

- Տըռնանը մընալ - Անօթեւան՝ անտեր-անտիրական մնալ: *Տըռնանը մընացած մարթին օրը սը'վ կինի* (Բ):

- Տըռնանը շօնը ինիլ (մինին) - Անվերապահորեն մեկին նվիրված՝ հնազանդ լինել: *Ոէ բըրիգադիրըն էլ նախագէն տըռնանը շօնըն ա* (Ձ):

- Տըռնանը չօքէլ - Անսպասելիորեն վրա հասնել՝ բաժին ընկնել (աղետ, դժբախտություն եւն): *Էլիա ք'իսըբօթունը կ'ամ ա, նահանց տըռնանը չօքում* (ՀԺՀ, VII, 142):

- Տըռնանըս էլ չըմ կապէլ, վէր հ'աչի - Ասում են անարժան՝ ստոր մարդկանց մասին:

- Տըռնան յը'տ տալ - Չընդունել, մերժել: *Ծատօրը ք'ինամ ա, վէր Սաղուն նըհը'տ հ'աշտըվի, ամմա Սաղին տըռնան յը'տ ա տամ* (Բ):

- Տըռնան յը'տ տը'ռնալ - Ներս չմտնել: *Պիրում ա փուլը տամ, տըռնան յը'տ տը'ռնում* (Ձ):

- Տըռնավը տ՛ուս քըցիս՝ ակուշկավը նի կը մըննէ - Ասում են խիստ աներես՝ անամոթ մարդկանց մասին:

- Տըռնէրը ըղնէլ - *տե՛ս* Տըռնըտօռնը ըղնէլ:

- Տըռնէրը թակէլ - Շատերին դիմել (որեւէ խնդիրքով): *Շատ տըռնէր ա թակում, ամմա ք'օմ՛ա՛ անօղ չի ինում* (Ձ):

- Տըռնէրը լէն պէնալ/պէց անէլ - Մեծ սիրով ընդունել՝ հյուրընկալել: *Վէր ղօնաղ ար կ'ամ, Ասթըխէգ'ը տըռնէրը լէն ար պէնում* (Բ):

- Տըռնէրը պէց (ինիլ) - Հյուրասեր՝ հյուրընկալ (լինել): *Ասում ա.- Իմ ախպօր տըռնէրը պէց ա, հիբը օգում ըք, ք'ը'ցէք'* (Ձ):

- Տըռնէրը քըցիլ - *տե՛ս* Տըռնըտօռնը քըցիլ:

- Տօռնը չըխկըց(ը)նէլ - *տե՛ս* Տօռնը յըրա կ'ալ:

- Տօռնը իրը'սէն ծասկէլ/կապէլ/նըհը'տ անէլ - Մեկին թույլ չտալ մտնել՝ արհամարհաբար չընդունել՝ մերժել: *Սըվիրը'ս կընէգ' ա Մարգուշան, հ'ուր տօն ք'ինամ ա, տօռնը իրը'սէն կապում ըն* (Բ):

- Տօռնը կապէլ - Ավանդական սովորություն, երբ հարսին հայրական տնից տանելիս դուռը փակում են՝ փեսայից կամ նրա մտերիմներից բացելու համար գումար պահանջելով: *Հարթնանը ախպէրը տօռնը կապում ա, պէլին մին տըսսանուց ա տամ, վէր պէնա* (Ձ):

- Տօռնը կըտ(ը)ռէլ - 1. Մեկի տան մուտքի մոտ երկար կանգնել եւ սպասել նրա դուրս գալուն: *Ասում ա.- Էրկու ժամ ա՝ յը'ս քու տօռնըտ կըտըրած, խէ տ՛ուս չը՞ս կ'ամ* (Ձ): 2. Տունը շրջապատել: *Միլիցէք'ը քըշէրավ կ'ամ ըն, ըտըրա տօռնը կըտըրում* (Ձ): 3. Կտրականապես պահանջել (հարկը, պարտքը եւն): *Անց ա կէնում մին ամէս, պըրթկատարը կ'ամ ա տօռնը կըտըրում, թա՝ պարթկըս տո՛* (Ձ):

- Տօռնը յըրա կ'ալ - Մի տեղից՝ մեկի տնից դժգոհ՝ բարկացած հեռանալ՝ դուռը թափով փակելով: *Էտ վէր ըտի յա ասում, ղօնաղը տօռնը յըրա յա կ'ամ, ք'ինամ* (Ձ):

- Տօռնը նըհաշ տալ - 1. Մեկին արհամարհաբար տնից դուրս հրավիրել: *Հ'ոջ'ա՛թ ըն տամ, տընատարը դունաղէն տօռնը նըհաշ ա տամ* (Բ): 2. Մերժել: *Ք'ինամ ա՝ հիրըվանէն անա պարթկ յօր օնէ, հիրը'վանը տօռնը նըհաշ ա տամ* (Ձ):

- Տօռնը պէնօղ չինիլ - Անհյուրընկալ՝ անմարդամոտ լինել, բոլորի հետ գժտված լինել: *Իսակը հինչ մարթ ա՞. տօռնը պէնօղ չի կա* (Բ):

- Տօռնը պէց (հնիլ) - *տե՛ս* Տըռնէրը պէց (ինիլ):

- Տօռնը ք'ինիլ - Մեկի մոտ գնալ որեւէ խնդիրքով: *Ճարը կըտըրած էլիա հանօրը տօռնըն ա ք'ինամ* (Ձ):

ՏՕՌՆ(Ը) - *տե՛ս* ՏՕՌ(ՆԸ):

ՏՕՌՃԻ - *տե՛ս* ՏԸՌՕՃԱՆ:

ՏՕՌՆԸ-ՏՕՌՆԸ - *տե՛ս* ՏԸՌՆԸ-ՏՕՌՆԸ:

ՏՕՏ - *տե՛ս* ՏԸ՝Տ:

ՏՕՏԱ *(ռուս. тётя)* - *գ.* 1. Հորեղբոր կին: *Իմ տօ՛տա ինձ շատ ա սիրիս* (Բ): 2. Տարեց կանանց դիմելու կոչական բառ կամ նրանց տրվող հարգական կոչում, որ գործածվում է հատուկ անունից հետո: *Մրիսակ տօ՛տա, էտ ըշտըղա յը՞ս կ'ամ* (Բ): *Ջ՛ա՛րվ՛ա՛ր տօ՛տան իմ ղօրփուր ք'էնէն ա* (Բ):

ՏՕՏԱ-ՏՕՏԱ/ՏՈՒՏՈՒ-ՏՈՒՏՈՒ/ՏԸ-ՏԸ-ՏՕՏԱ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Տօտա-տօտա անէլ/ման կ'ալ/շօռ կ'ալ - 1. Շատ գեր լինելով՝ կամաց-կամաց եւ օրորվելով քայլել: *... Մին ջանավար մարթ տօտա-տօտա ման ա կ'ամ, ասըմ ըն՝ յէկալ ա, վէր լըղարէ* (ՋԲ, Բ, 84): 2. Քայլել սկսել (երեխաների մասին): *Խօխան տօտա-տօտա յա անում* (Բ):

ՏՕՏՆԸ - *տե՛ս* ՏԸ՝Տ:

ՏՕՏՕՆ - *տե՛ս* ԸՐՈՒՐՈՒ(Ն)Ց:

ՏՕՐ - *տե՛ս* ՏՈՒՐ:

ՏՕ՛ՐԱԿ *(գրբ դորակ)* - *տե՛ս* ՓԱՐՉ:

ՏՕՐՄՈՒՋ *(ռուս. тормоз, հուն. tórmos)* - *գ.* 1. Մեքենայի շարժումը դանդաղեցնող՝ կասեցնող հարմարանք՝ արգելակ: *Վէր տօրմուզը ինի վէչ, շատ մաշին կըղնէ ծ՛որ* (Բ): 2. *փխբ.* Շատ դանդաղաշարժ մարդ: *Իզէն տօրմուզ ա, մինչը'վ մին պէն անէ, օրը անց կըկէնա* (Բ):

- Տօրմուզ տալ - Արգելակով շարժումը դանդաղեցնել՝ կասեցնել: *Շօփէրը հըսցընում չի տօրմուզ տա, կավը ըղնում ա մըշինին տակը* (Ձ):

ՏՕՐՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Տօրս անէլ - *տե՛ս* Առուտօր անէլ:

ՏՕՐՏ *(ռուս. торт, իտ. torta)* - *գ.* Ձվով, շաքարով, կարագով եւն պատրաստվող խմորեղեն, տորթ: *Միհէնգ'վա հարթնէրը կըթնահունցէն հավան չըն, մինակ տօրտ ըն օտում* (Ձ):

ՏՕՐՈՒ - *գ.* Փայտյա իրերը հղկելու ատամներով գործիք: *Տօրուն յօր ա օնում, կացնէն կօթը տօրու տամ* (Ձ):

- Տօրու տալ - 1. Այդ գործիքով հարթեցնել՝ ողորկել: *Փ՛ա՛ղը տօրու տըվէ* (Բ): 2. *փխբ.* Փաղաքշել: *Կամ ա տը'սնում՝ տըղան կըլ՛օ՛խը տիրա՛ծ ըխճըկանը գ'ուրգ'ումը, ախճիգ'ը տօրու վա տամ* (Ձ):

ՏՕՐՔ/ՏՈՒՐՔ' *(գրբ. տուրք)* - *գ.* 1. *տե՛ս* ԽԱՐՋ (1): 2. Նվիրատվություն, մեկին նվիրած՝ թողած նյութական հարստություն: *Ուխտէքան էլ մըծանում ըն, հօրը տօրքավը տընատար տը'ռնում* (ՆԱԲ, 65):

Ր

ՐԱԺԱՆ - *տե՛ս* ԸՐԱԺԱՆ:

ՐԱԽԱ - *տե՛ս* ԽՕԽԱ:

ՐԱՇՕՏ - *տե՛ս* ԸՐԱՇՕՏ:

ՐԱՍԽՕԴ - *տե՛ս* ԸՐԱՍԽՕԴ:

ՐԸՇՕԹԿԱ - *տե՛ս* ԸՐԸՇՕԹԿԱ:

ՐՕՊԷ - *տե՛ս* ԸՐՕՊԷ:

Ց

ՑԱԼԱՓԱՆ - *տե՛ս* ՑԸԼԱՓԱՆ:

ՑԱԼՔՈՒՆ - *գ.* Հեղուկի հեռու թռչող՝ նետվող շիթ՝ ցայտ: ... *Կաթնէն ցալքունը պիցըրնաս ա յէրգինք՛ը, հէտքըն էլ չըքէրանը միհէնգ՛ ըտի մընաս ա* (ԱԱ, 15):

ՑԱԽ - *տե՛ս* ՃԷԽ:

ՑԱԿԱՏ - 1. *գ.* Պողպատե երկար շեղբով եւ փայտե կոթով գործիք՝ ոչ շատ հաստ ճյուղեր՝ փայտ կտրելու համար, ցաքատ: *Ասից պըրծավ, ցակատը յէր կանվ, քընանց ծըմակը* (ԼՂԲՔ, 267): 2. *ած. գ. փխբ.* Բնավորությամբ կոշտ՝ կոպիտ՝ խիստ (անձ): *Ցակատ մարթ ա Մաքսիմը* (Բ):

ՑԱՄԱՔ *(գրբ. ցամաք)* - *ած.* 1. Անջուր, անջրդի, ջրազուրկ: *Ցամաք վը՛ղումը բաստան չըն անէլ* (Ձ): 2. Խոնավություն չպարունակող, չոր: *Տափը նամ ա ինում, մին ցամաք տը՛ղ չըն քըթէնում, թա քօն ինին* (Ձ): 3. Ցամաքած: *Կամ ըն, կամ, հըսնում մին ցամաք կը՛տու* (Ձ): 4. *փխբ.* Բուսականությունից զուրկ, լերկ: *Ցամաք ծՕր ա Ռըհիմին ծՕրը* (Բ): 5. *փխբ.* Հյութը նվազ, ոչ հյութալի: *Ցամաք տանձ ա* (Բ): 6. *փխբ.* Ցուղը պակաս կամ առանց յուղի: *Ցամաք խորանգ՛ օտողը հինչ կօ՞րծ բիդի անէ* (Ձ): 7. *փխբ.* Ոչ մսեղ, ոչ գիրուկ, նիհար ու ոսկրոտ: *Ցամաք մարթ ա իլանլ ԴՕրհունց Սուրէնը* (Բ): 8. *փխբ.* Եկամուտ չբերող, անեկամտաբեր: *Ցամաք պաշտոն ա մէր Ջըվէնին պաշտոնը* (Բ): *ած., մ.* 9. *փխբ.* Կտրուկ, սառն, առանց ջերմություն արտահայտելու: *Տընաշինըտ էնքան ցամաք ա խօսում, օգում էլ չը, թա ըսկանաս* (Ձ): 10. *փխբ.* Ջուրկ, անմասն: *Մը՛ծ ախպէրը հօրը սաղ հըրըստութունը յը՛ր ա օնում, կուճի ախպօրը ցամաք թօղնում* (Ձ): 11. *գ.* Չոր՝ ոչ ջրապատ տարածություն՝ տեղ: *Մին թանիրանվ ծՕվան տհուս ըն կամ ցամաքը* (Ձ):

- Ցամաք աշկավ - Առանց արտասուքի՝ լացի՝ վշտի: *Էս կըռվանը յը՛տը Ղարաբաղ ցամաք աշկավ կընէգ՛ չը՛ս քըթէնալ* (Բ):

- Ցամաք ծՕրհ աղվէս - Շատ նիհար՝ հյուծված մարդ՝ կենդանի: *Մէր Ալսէմը էլ ցամաք ծՕրհ աղվէս ա, փըչիս՝ վէր կըղնէ* (Բ):

- Ցամաք կը՛ը՛տը քըշիլ - Շատ թույլ՝ տկար՝ վտիտ լինել: *Ասում ա.- Տու հու վը՞ս, վէր ինձ թակիս, ցամաք կը՛ը՛տը քը՛ը՛զ կըքըշի* (Ձ):

- Ցամաք կ՛ուզ - *տե՛ս* Կ՛ՈՒՋ:

- Ցամաք հաց - Միայն հաց՝ առանց ուրիշ ուտելիքի՝ թացանի: *Սանքանը էն ար, վը՛ր ուստան ըտահանց ցամաք հաց ար ուտուցընըմ...* (ԼՂԲ, 354):

- Ցամաք հացու կապէլ - Ծայրահեղ աղքատության՝ թշվառության մատնել՝ հասցնել: *Խանը ժուղուվուրթէն ցամաք հացու վար կապալ* (Ձ):

- Ցամաք հացու կարօտ/հասրաթ/մՕքտանջ - Ծայրահեղ աղքատ: *Ոէ էն վախտըն էլ կըռը՛վ ա իլանլ, լօխ էն ըն իլանլ ցամաք հացու կարօտ* (Բ):

- Ցամաք հըրսանէք՛ - Ծեծ, լաց ու կոծ: *Ըտըրանց տանը սաղ օրը ցամաք հըրսանէք՛ ա* (Բ):

- Ցամաք մընալ - Առանց թացանի մնալ: *Կավը ըստակից, Հանբանն խէզանը ցամաք մընաց* (Ձ):

- Ցամաք քըթՕլը պէրանը չըտանէլ - Հաշվենկատ լինել, առանց շահի ակնկալության որեւէ բան չանել: *Ղուլգանսին տու լ՛ավ չըս ճընանչհում, իզէն ցամաք քըթՕլը պէրանը չի տանէլ* (Ձ):

ՑԱՄՔԱՆ - *գ.* Հաստ ու խավոտ կտոր՝ լողանալուց հետո մարմինը ցամաքեցնելու՝ չորացնելու համար: *Լըղանում ա, ցամքանումը պըտըտօրվում, փիչին ղըրաղէն նըստում* (Ձ):

ՑԱՆՔ(Ս) *(գրբ. ցան)* - *գ.* 1. Որեւէ բան՝ հատկապես հացահատիկ ցանած տեղ, արտ: *Հիվընանէն նի յըն տը՛ռալ ցանքսը* (Բ): 2. Ցանելը: *Ցանքսը ըսքըսալ ըն* (Բ):

ՑԱՆՑԱՌ *(գրբ. ցանցառ)* - *ած.* 1. Նոսր, իրարից հեռու, ոչ խիտ: *Ցանցառ մըրօք օնար դէրը* (Ձ): 2. *փխբ.* Անմիտ, անիմաստ, հիմար: *Ըտըրա ցանցառ խուսկէրքան զանիլանս տանում ա* (Բ):

ՑԱՊԼԱ *(ռուս. цапля)* - *տե՛ս* ԾՈՒԿՈՒՆԿՈՒԼԻ:

ՑԱՎ *(գրբ. ցաւ)* - *գ.* 1. Մարմնական ցավագին զգացում՝ վերքի, հիվանդության եւն պատճառով: *Տա մանանը կըտրրըմ ա, յըրան աղ ածըմ, էլ ցաման քօնը տանըմ չի* (ՀԺՀ, V, 337): 2. Հիվանդություն: *Մին օր էլ էտ շէնին ժուղուվուրթէն մաչը ցավ ա ըղնում, լօխ կըտօրվում ըն* (Ձ): 3. *փխբ.* Վիշտ, հոգեկան տառապանք: *Արտը կարկուտ թակէլը մը՛ծ ցավ ա շինանցուց հը՛տէ* (Բ): 4. *փխբ.* Հոգս, մտահոգություն, նեղություն: *Հազզար ու մի ցավ օնինք՛, գ՛ինդում չընք, թա հինչ անինք՛* (Բ): 5. *փխբ.* Պատուհաս, չարիք, փորձանք: *Բըդասըլ ժառանգ՛ը ցավ կըպիրի հօրը հը՛տէ* (Ձ): 6. Ծննդաբերական երկունք: *Էս կընէգ՛ը վը՛ր ցավում ա իլանլ, էս օխտը տըղան ասալ ըն.- Մյա, պատառ տէմ կաց, էս ա տատմարը կ՛ամ ա* (Ձ): 7. *տե՛ս* ՉՕՌ (2):

- Ցավ գ՛իդՕղ - Ուրիշի նեղ վիճակին հասնող, բարյացակամ: *Ցավ գ՛իդՕղ մարթ ա Սիրոժը* (Բ):

- Ցավը տանիմ/քաղիմ - Փաղաքշական արտահայտություն, ցանկություն՝ իր վրա կրելու ուրիշի ցավը՝ նրան ցավից ազատելու: *Ցավը տանիմ Արտօվէն, յը՛կավ ք՛ՕմանգՕ՛ ըրավ, բաստանըս պիհէցէ* (Բ):

- Ցավըս տանիս/տանէ/քաղի/քաղէ - Անեծքի արտահայտություն՝ թող իմ ցավը քեզ/նրան հասնի: *Կընէգ՛ը թա.- Ցավըս տանիս տու, էտ ար պակաս, վէր ախճիգ՛ըս ք՛ը՛զ տամ* (Ձ):

- Ցավը փըռնէլ - 1. Երկունքի՝ ծննդյան ցավերը սկսվել: *Ուրէրան մին օր էտ կընանուցան մինին ցավը փըռնում ա...* (ԱԱ, 87): 2. Ընդհանրապես որեւէ կարգի ցավերը սկսվել: *Կըլիխէս ցավը փըռնալ ա* (Բ):

- Ցավ տալ - 1. *տե՛ս* ՑԱՎԷԼ: *Ասում ա.- Կարում չըմ տանուր կ՛ամ, մաշկըս ցավ ա տամ* (Ձ): 2. Ցավ պատճառել՝ հասցնել: *Աստուծ ցավը տըվալ ա, դանմանը էլ նըհը՛տը* (Ձ):

- Ցավու/ցավու-ցըցու կ՛անլ - Ցավով բռնկվել՝ տառապել: *Տա ցավու-ցըցու յա կ՛ամ, վը՛ր էտ ախճիգ՛ը էտքան կ՛էղէցիկ ա, ինք՛ը՝ կ՛էշ* (ՀԺՀ, V, 159):

- Ցավ քաշիլ - 1. Ծանր ցավ՝ հիվանդություն ունենալ, ծանր հիվանդությամբ տառապել: *Լանս ա տը՛ռալ, վէր Ակիկարը մը՛ռալ ա. խը՛ղճը էս ա չՕրք՛ տարէ յա՝ ցավ ա քաշանում* (Բ): 2. Նեղություն՝ չարչարանք կրել: *Շատ ցավ քըշէցէ, մինչը՛վ էս տօնը շինը՛ցէ, պըրծէ* (Բ):

ՑԱՎԱԳԱՐ - *տե՛ս* ՑԱՎԱԳԱՐ:

ՑԱՎԱԳ՛ԱՐ/ՑԱՎԱԳԱՐ *(գրբ. ցաւա-*

գար (հիվանդոտ) - *ած.* Որեւէ հիվանդությամբ՝ հատկապես ընկնավորությամբ տառապող: *Ըտըրա կուճի ախճիգ՛ըն էլ ցավագ՛ար ա ինում* (Ձ):

ՑԱՎԷԼ *(գրբ. ցաւիմ)* - *չբ.* Մարմնական ցավ զգացվել: *Վը՛ննէրը ցավում ա* (Բ):

ՑԱՎԸՈՒՐԴ - *գ.* Ցավ եւ վիշտ: *Ասում ա.- Յը՛ս էս ցավըդ՝ուրդին կարէլ չըմ տէմ կէնամ* (Ձ):

ՑԱՎՈՒՏ *(գրբ. ցաւոտ (հիվանդոտ)* - *ած.* 1. Ցավ առաջացնող: *Էտ ճարը ցավուտ ճար ա* (Բ): 2. Ցավող, ցավ ունեցող: *Ասում ա.- Իմ ցավուտ տը՛ղըս մինակ մաշկըս ա* (Ձ):

- Ցավուտ տը՛ղէն նի կ՛ալ - *տե՛ս* Ցարա տը՛ղէն նի կ՛ալ:

ՑԱՐ *(ռուս. царь)* - *գ.* Ցարական Ռուսաստանում միապետի տիտղոսը եւ այն կրող անձը, արքա: *Վար խաբ՝ուրը հըսալ ա ցարէն, պըրիկազ ա տուվալ, վար ըսպանօղնէրէն քըթ՝ննան, կախ տան* (ԱԱ, 52):

ՑԱ՛Ք՛ - *գ.* 1. Փշոտ թուփ, որով ցանկապատ են քաշում: *... Ըտաղատ ք՛ինամ ա, տէսնում՝ մին մարթ ցա՛ք՛ ա պ՝ուրում* (ՀԺՀ, V, 399): 2. *փխբ.* Կոշտ՝ կոպիտ բնավորությամբ մարդ: *Էն էլ հօ ըսկէսուր չի՞, ցա՛ք՛ ա, ցա՛ք՛* (Բ):

- Ցա՛ք՛ին յըրա վարթ չի փըսնէլ - Անարժան ծնողներից արժանավոր զավակ չի ծնվի:

- Ցա՛ք՛ում-կըրակում տինիլ, էրիլ - Խիստ պատժել՝ չարչարել: *Հու կ՛ուղօթուն ար անում, խանը ցա՛ք՛ում-կըրակում ար տի՛նում, էր՝ում* (Ձ):

- Ցա՛ք՛ու յըրա նըստէլ - Խիստ անհանգիստ վիճակում՝ նյարդայնացած լինել: *Ասում ա.- Էն ըմ ցա՛ք՛ու յըրա նըստած, մարթըս քը՛շէրավ ք՛ը՛ցալ ա ծըմակը, մինչը՛վ միհէնգ՛ հա՛լա՛ յը՛կալ չի* (Ձ):

- Ցա՛ք՛ու տակըռ(է) կէրած - *տե՛ս* Կ՛ուլու սը՛րտ կէրած:

- Ցա՛ք՛ու փօշ - *տե՛ս* ՑԱ՛Ք՛(2):

ՑԱ՛Ք՛ԱՆ *(գրբ. ցախան)* - *գ.* Փշոտ ճյուղերից կազմված հարմարանք, որը, նոր ցանած արտի վրայով քաշելով, սերմը ծածկում են հողով եւ հողը հարթում: *Արտը վարում ըն, ցա՛ք՛անը պիրում, ցը՛ք՛անում* (Ձ):

ՑԱ՛Ք՛Ի - *տե՛ս* ՑԱ՛Ք՛:

ՑԱ՛Ք՛ԻԼ - *նբ.* Փշոտ թփերով՝ ցաքով, պատել՝ ցանկապատել: *Բուստանէն ղըրղընէք՛ը ցա՛ք՛ում ա, վէր հէյվան չի նի մըննէ* (Ձ):

ՑԱ՛Ք՛ՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՑԱ՛Ք՛ԻԼ-ի:

ՑԱ՛Ք՛Ի՛Ի - *գ.* Գոմում՝ պատի տակ, սարքած հարմարանք նստելու կամ պառկելու համար: *Կ՛ումումը էն ա ցա՛ք՛ու կա, պառավը ցա՛ք՛ուվէն յըրա տէղէրը քըցում ա, տօռնը չօլան քըլլում, ք՛ընում* (ՀԱԲ, 15, 105):

ՑԱ՛Ք՛Ի՛Տ - 1. *գ.* Շատ ցաք աճած տեղ: *Քինամ ըն ցա՛ք՛ուտը, ցա՛ք՛ կըտորում, պիրում բուստանը չըփարում* (Ձ): 2. *տե՛ս* ՑԸՔ՛ՑԱ՛Ք՛Ի՛Տ:

ՑԷԹ(Ը)ՌԷԳ՛ - *տե՛ս* ՑԸ՛Թ(Ը)ՌԷԳ՛:

ՑԷԼ - *տե՛ս* ՑԻԼ:

ՑԷԼԿԱ *(ռուս. целка)* - *տե՛ս* ԱԽՃԻԳ՛(3):

ՑԷԽ - *տե՛ս* ՑԸ՛Խ:

ՑԷԽԷԼ - *տե՛ս* ՑԸ՛ԽԷԼ:

ՑԷԽԾԱՄ - *տե՛ս* ՑԸ՛ԽԾԱՄ:

ՑԷԽՎԷԼ - *տե՛ս* ՑԸ՛ԽՎԷԼ:

ՑԷԽՈՒՏ - *տե՛ս* ՑԸ՛ԽՈՒՏ:

ՑԷՂ - *տե՛ս* ՑԸ՛Ղ:

ՑԷՄԷՆԴ/ՑԷՄԷՆՏ *(ռուս. цемент, գերմ. Zement, լատ. caementum)* - *գ.* Հանքային փոշենման նյութ, որ, ջրի եւ ավազի հետ խառնելով, պատրաստում են կապող՝ արագ պնդացնող ու ամրացնող զանգված շինարարական աշխատանքների համար, ցեմենտ: *Ցէմէնդը բօլ-բօլ բիդի խառնիս, վէր տիրա՛ծ պատը պէնդ ինի* (Բ):

ՑԷՆՏԸՐ *(ռուս. центр)* - *գ.* 1. Որեւէ բանի միջին մասը՝ տեղը: *Մ՝ութ՝ունը պիրում ա ութաղէն ցէնտըրումը տընգում* (Ձ): 2. Քաղաքի կամ այլ բնակավայրի միջին մասը՝ վայրը, որտեղ սովորաբար կենտրոնացած են լինում վարչական՝ առեւտրական եւն կարեւոր հիմնարկները: *Քըղաքէն ցէնտըրըմըն էլ մին տօն ա շինում...* (ԲՀԲ, 153):

ՑԷՆՏԸՐԱԼՆԻ *(ռուս. центральный, ֆր. central, հուն. kentron)* - *ած.* Կենտրոնում գտնվող՝ գործող, կենտրոնական: *Ըստէփանակ՝ը՛ռտա ցէնտըրալնի ք՛ուչ՝ումը թ՝ազգ՝ն շէնքէր շատ ըն շինա՛լ* (Բ):

ՑԷՆՏՆԷՐ *(ռուս. центнер)* - *գ.* Ծանրության չափ, որ հավասար է հարյուր կիլոգրամի, ցենտներ: *Ըստարէ արաշտ ա իլա՛լ, մին հէկտարան ըսկի տասսը ցէնտնէր ցօրէն չընք ըստացալ* (Բ):

ՑԷՊ *(ռուս. цепь)* - *գ.* 1. *տե՛ս* ԺԻՆՋԻԼ (1): 2. Թանկագին եւ այլ մետաղներից պատրաստված եւ իրար ագուցված օղակների երկար ու նուրբ շարան, որ որպես զարդ գցում են վզին՝ բազկին եւն: *Այան թօռնանը հը՛տէ մին դաշ՝անգ՛ վը՛սկէ գէպ ա ինք՛ օնում* (Ձ):

ՑԷՌ - *տե՛ս* ՑԸՌ:

ՑԷՎՔ - *տե՛ս* ՑԸ՛ՎՔ:

ՑԷՐ *(գրբ. ցիր (ցիրուցան)* - *տե՛ս* ՑԸՐԸ՛Վ:

ՑԷՐԷՄՕՆԻ *(ռուս. церемония)* - *գ.* 1. Արարողություն, ծիսակատարություն: *Մինչէվ ցէրէմօնի չանիս, կ՛ալու չի...* (ԼՂԲ, 363): 2. *տե՛ս* ՆԱՁԸՏՈՒՁ:

ՑԷՐՑԷՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ցէրցէն տալ - Ջրով ցողել՝ թրջել, ցրցամել: *Էնքան ցէրցէն ա տըվալ, խըրէգ՛ ա մընացալ՝ ըստակէ* (ՀԱԲ, 15, 101):

ՑԷՑ[1] - *տե՛ս* ՑԸ՛Ց[1]:

ՑԷՑ[2] - *տե՛ս* ՑԸ՛Ց[2]:

ՑԸ՛Թ(Ը)ՌԷԳ՛/ՑԷԹ(Ը)ՌԷԳ՛/ՑԸԹ(Ը)ՌԷԳ՛/ՑԻԹԸՌԷԳ՛/ՑԻԹՌԷԳ՛ - *ած.* Հաճախակի միզող: *Էտ ցը՛թըռէգ՛ը ըբօռնան տօն չի կ՛ամ* (Բ):

ՑԸ՛Խ/ՑԷԽ/ՑԸԽ *(գրբ. ցեխ)* - *գ.* 1. Ջրով թրջված՝ ներծծված հող, ջրախառն հող: *Մինասը տէսնում ա՝ խօզը, հը՛ղըցէն ղըրաղէն ցէխումը պարանց ընգած, խըռխըռցընէյիս* (ՆԱԲ, 104): 2. Հողի՝ կավի՝ կրի՝ ցեմենտի շաղախ ավազի՝ հարդի եւն հետ շինարարական աշխատանքների համար: *Ցը՛խը պըրծընում ա, ուստան մընամ ա մ՝ա՛թ՝ալ* (Ձ): 3. Շաղախված կավե զանգված, որից տարբեր իրեր են պատրաստում: *Պ՝ուրուտը ցը՛խան կօլա յա շինում, ծախում* (Ձ): 4. Չափից շատ ջրային պարունակություն ունեցող հաց՝ թխվածք եւն: *Էս էլ հօ ք՛ա՛թ՝ չի՞, ցը՛խ ա* (Բ): 5. Հողախառն կեղտ որեւէ բանի վրա: *Ծ՝ՕՐԷՐը սաղ ցը՛խ ա* (Բ):

- Ցը՛խ անէլ - 1. Ցեխ շաղախել: *Ցը՛խ ըն անում, ըսքըսում պատը տինիլը* (Ձ): 2. *փխբ.* Վատնել: *Էտ ախմախ կընէգ՛ը մարթին ըշխադ՝ ած փուլէրը լօխ ցը՛խ ըրավ* (Բ):

- Ցը՛խավ էշ քը՛շիլ - Դժվար գործ կատարել: *Էս էլ հօ ք՛ը՛փ անէլ չի՞, ցը՛խավ էշ քը՛շիլ ա* (Բ):

- Ցը՛խէն նըհը՛տ հըվըսըրց(ը)նէլ - *տե՛ս* Ցը՛խը կօխէլ:

- Ցը՛խը ընգածէն կօխ տալ/քացէ տալ - Նեղ վիճակում գտնվողին տմարդորեն ավելի նեղ վիճակում դնել: *Ցը՛խը ընգածէն կօխ տըվօղէն Աստուծ սիրիլ չի* (Ձ):

- Ցը՛խը կօխէլ/քըցիլ (տ՝ուս օնէլ) - Անպատվել, խայտառակել: *Կընէգ՛ը կ՛ամ ա շինըմաչումը մարթին ցը՛խը կօխում, էնքանէն մաչին խըյտառակ անում* (Ձ):

- Ցը՛խ օրու մըհակ - Հույս: *Ասում ա.- Ցը՛ս էլ ցը՛խ օրու մըհակ չօնիմ, լօխ պըրծած ա* (Ձ):

ՑԸ՛ԽԷԼ/ՑԷԽԷԼ/ՑԸԽԷԼ - *նբ.* 1. Ցեխով պատել՝ ծեփել: *Վը՛սկուն պուլիգ՛ը տինում ա պատէն մաչին, ցը՛խում* (Ձ): 2. *փխբ.* Մեկին լռեցնել, բերանը փակել (խիստ պատասխանելով, կաշառելով եւն): *Սուդին ցը՛խը՛ցէն, կ՛օղէն ըզը՛ղը՛ցէն* (Ձ):

ՑԸᵉԽԾԱՄ/ՑԷԽԾԱՄ/ՑԸԽԾԱՄ - *տե՛ս* ԾԷՂԾԱՄ:

ՑԸᵉԽՎԷԼ/ՑԷԽՎԷԼ/ՑԸԽՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸᵉԽԷԼ-ի:

ՑԸᵉԽՈՒՏ/ՑԷԽՈՒՏ/ՑԸԽՈՒՏ *(գրբ. ցխոտ)* - *ած.* 1. Վրան ցեխ քսված, ցեխով կեղտոտված: *Ցըᵉխուտ շՅրէր ա կըᵉցալ* (Բ): 2. Ցեխապատ, որտեղ ցեխ է գոյացել՝ կուտակվել: *Ցըᵉխուտ հրդէ յա* (Բ):

- Ցըᵉխուտ կ'ումաշին օրթնըյա տէր ասէլ - *տե՛ս* Էշին դայի ասէլ (1):

ՑԸᵉՂ/ՑԷՂ/ՑԸՂ *(գրբ. ցեղ)* - 1. *տե՛ս* ԱՋԿ: 2. *տե՛ս* ՍՕՐԹ:

ՑԸᵉՌ - *տե՛ս* ՑԸՌ:

ՑԸᵉՎՔ/ՑԷՎՔ *(գրբ. ցիւ (տան ծածկ)* - *գ.* Որեւէ բանի վերին ծայրը՝ կատարը: *Քընըմ ա, տըᵉսնըմ՝ հաղուդին բաղին չօրս ղօլը չափար ըրած, էտ չափարին ցըᵉվքին էլ մարթի քՅանլէքՅ նի կօխած...* (ՀԺՀ, V, 128):

- Ցըᵉվքան վէր ըղնէլ - Մեծ դժբախտության հանդիպել, ծանր վիճակի մեջ ընկնել: *ՀՅրանբէդը ցէվքան վէր ա ընգալ. համ կավըն ա ըստակալ, համ արտը էրվալ* (Ձ):

- Ցըᵉվքէն պըտկէն - Շատ բարձր տեղ: *Խըծապէրթը էն ա ցըᵉվքէն պըտկէն* (Բ):

ՑԸᵉՑ¹/ՑԷՑ¹/ՑԸՑ¹ *(գրբ. ցեց)* - *գ.* 1. Բրդեղենի, հացահատիկների, կահույքի, բույսերի եւն վնասատու թիթեռ, ուտիճ: *Ցէցը յըրողնդՅշակը ընգալ, սաղ փուչըցըրավ* (Բ): 2. Մաշկի հիվանդություն, որ արտահայտվում է կսկծեցնող այտուցների երեւան գալով: *Ցէցը էրկուիրըᵉք շէփտանը յըᵉտը ընցընում ա* (Ձ): 3. *փխբ.* Հարստահարիչ, վնասատու, նենգ: *Էտ էլ հօ ժառանգՅ չի՞ Սըհակէն հըᵉտէ, ցէց ա, ցէց* (Բ):

ՑԸᵉՑ²/ՑԷՑ²/ՑԸՑ² *(գրբ. ցից)* - *գ.* 1. Փայտե կամ երկաթե սրածայր ձող, որ տնկում են գետնի մեջ: *Մին ցըᵉց ա տընգում, ճՅրէն նըստա կապում* (Ձ): 2. Ջրաղացի երկաթե ձողը, որի կենտրոնում ագուցված է անիվի գունդը, իսկ վերեւում՝ վերին երկնաքարը: *Ճըղացէն ցըᵉցը ծըռվալ ա* (Բ): 3. *ած.* Ցցի պես տնկված, ցցված: *Ուռթանա շՅուտ յէր ա կէնում, քընում, տէսնում ըտէղ մին սօր, ցէց քար...* (ՀԱԲ, 15, 148):

- Ցըᵉց անէլ/կըց(ը)նէլ/տինիլ/օնէլ - 1. Ուղղահայաց դիրքով կանգնեցնել՝ տնկել՝ դնել՝ ամրացնել՝ պահել, ցցել: *Քըշէրավ չօբանը յէր ա կէնում, չուվըլնէն ցէց տինում, մարթ ղարկում թաքավէրէն կօշտը, թա.- Ըսէ՛ցէք՝ կՅան ճօկած ցօրէնը, կՅարին նան կօրէկը տըᵉսնա* (ՀԺՀ, VII, 32): 2. Վեր բարձրացնել, դեպի վեր պարզել: *Էտ մարթը մինգէլ Յուրան մին մաննըն ա ցէց օնում, էս դՅնՅմըն էլ ա օգում Պըլըպուդուն խանփի...* (ՀԺՀ, VII, 349): 3. *փխբ. հեգն.* Սպանել: *Յըրա յա անում, ըտըրան ըտըᵉղ ցըᵉց տինում* (Ձ):

- Ցըᵉց ինիլ/կէնալ - Ուղղահայաց դիրքով կանգնել՝ տնկվել՝ դրվել՝ ամրացվել՝ պահվել, ցցվել: *... Ջանմդանռնին ցէց կացած մըᵉզ վՅուրՅուվՅուրդ ընէյիս ըն ըլանլ* (ԼՂԲՔ, 271):

ՑԸԹ(Ը)ՌԷԳ - *տե՛ս* ՑԸᵉԹ(Ը)ՌԷԳ:

ՑԸԼԱՓԱՆ/ՑԱԼԱՓԱՆ/ՑԸԼԸՓԱՆ *(ռուս. целлофан, անգլ. cellophane, լատ. cellula+հուն. phonos)* - *գ.* Ցելյուլոզի նուրբ եւ առաձգական թաղանթ, ցելոֆան: *Ցըլափան ա ինքՅ օնում, ակուշկէքը ծասկում* (Ձ):

ՑԸԼԷՓ - *տե՛ս* ՑԸԼԸᵉՓ:

ՑԸԼԸᵉՓ/ՑԸԼԷՓ/ՑԸԼԸՓ *(հ.ե. *(s)kel(e)-p- (կտրել)* - *գ.* Ջարդելիս՝ տաշելիս եւն պոկված՝ օդի մեջ թռչող փայտի՝ քարի՝ ապակու եւն մանր կտոր: *Փանը կըտուրէլիս հունց ա պըտահում՝ մին ցըլըᵉփ ա նի կՅամ աշկէն, քուռընցընում* (Ձ):

- Ցըլըᵉփ տալ - Փայտից՝ քարից՝ ապակուց եւն մանր կտոր պոկվել: *Կոլան նի յա կՅամ քարէն, ցըլըᵉփ տամ* (Ձ):

ՑԸԼԸՆՔՑԸԼԸՆՔՕՏԷԼ/ՑՈՒԼՈՒՆՔՑՈՒԼՈՒՆՔՕՏԷԼ - *չբ.* 1. Պղպջակները վեր-վեր թռչել: *ԿՅինին ցըլընքցըլընքօտում ա* (Բ): 2. *փխբ.* Վերքը թեթեւակի մրմռալ: *Յարան ցըլընքցըլընքօտում ա* (Բ):

ՑԸԼԸՓ - *տե՛ս* ՑԸԼԸᵉՓ:

ՑԸԼԸՓԱՆ - *տե՛ս* ՑԸԼԱՓԱՆ:

ՑԸԼԻԼ/ՑԻԼԻԼ *(գրբ. ցելեմ (պատռել, ճեղքել)* - *նբ.* Հողը հերկել, ցելել: *Հավան պէնվում չի, թա վըᵉղը ցըլինքՅ* (Բ):

ՑԸԼԻՆԴԸՐ/ՑԻԼԻՆԴԸՐ *(ռուս. цылиндр, ֆր. cilindre)* - *գ.* Տղամարդու լայնեզր գլանաձեւ գլխարկ: *Ցիլինդրը տինում ա կըլխէն, քՅինամ* (Ձ):

ՑԸԼԻՆԴ(ԸՐ)ԱՎԷՐ/ՑԻԼԻՆԴ(ԸՐ)ԱՎԷՐ - *ած.* Ցիլինդր դրած՝ կրող: *Հըդէնին մին ցըլինդրրավէր մարթ ա ջիհանում* (Ձ):

ՑԸԼԻՊԱՐԱՆ/ՑԻԼԻՊԱՐԱՆ - *գ.* Ցելը երկրորդ անգամ հերկելով՝ հողը շուռ տալը՝ շրջելը: *Ցիլիպարան բիդի անիս, վէր պէրքը շատ ինի* (Ձ):

ՑԸԼՎԻԼ/ՑԻԼՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՑԸԼԻԼ-ի:

ՑԸԽ - *տե՛ս* ՑԸᵉԽ:

ՑԸԽԱՃՈՒՐ - *գ.* Ցեխախառն ջուր: *ԽօզՅէրը նի յըն տըᵉռալ ցըխաճՅուրը* (Բ):

ՑԸԽԱՊԷՆ - *գ.* Շինարարական շաղախով կատարվող աշխատանք: *Ցըխապէնը տիժէր կօրծ ա* (Բ):

ՑԸԽԷԼ - *տե՛ս* ՑԸᵉԽԷԼ:

ՑԸԽԸԹԱԹԱԽ *(գրբ. ցեխաթաթախ)* - *ած.* Ցեխի մեջ թաթախված՝ շաղախված, ցեխակոլոլ: *Ըտի ցըխըթաթախ շՅուրէրավ քՅինամ ա տօն* (Ձ):

ՑԸԽԸԿԱԼԻԼ - 1. *նբ.* Ցեխ քսել վրան, ցեխով կեղտոտել: *Խօխան շՅրէրը սաղ ցըխըկՅանլ ա* (Բ): 2. *չբ.* Ցեխ քսվել վրան, ցեխով կեղտոտվել: *ԹՅոռը յըᵉկավ, օբան ցըխըկՅանլից* (Բ):

ՑԸԽԸԿԱԼՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՑԸԽԸԿԱԼԻԼ (1)-ի:

ՑԸԽԸԿԸԼՕԼԷ - *գ.* 1. Ցեխից սարքած գնդիկ: *Վըᵉնն ըն կըցնում, ցէխավ լըպատում, տէռնում ա Բախշին մին ցըխըկըլօլէ* (ՆԼՂԺԲ, 97): 2. Միջատի տեսակ: *Ցըխըկըլօլէն ցըᵉխան կըլօնդրակնէ յա շինում* (Բ): 3. *փխբ.* Շատ կարճահասակ եւ կաղ մարդ: *Էտ ցըխըկըլօլէն կընգանը օր ա տամ, իշըᵉղ չի տամ* (Բ):

ՑԸԽԸԿԸԼՕԼԱԿ - *տե՛ս* ՑԸԽԸԿԸԼՕԼԷ (1, 3):

ՑԸԽԸԿԸԼՕՆԴ(Ը)ՐԱԿ - *տե՛ս* ՑԸԽԸԿԸԼՕԼԷ(1, 3):

ՑԸԽԸԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ՑԸԽԸԹԱԹԱԽ:

ՑԸԽԸՇԱՂԱԽ - *տե՛ս* ՑԸԽԸԹԱԹԱԽ:

ՑԸԽԸՓԱԼԱԼ - *տե՛ս* ՑԸԽԸԹԱԹԱԽ:

ՑԸԽԾԱՄ - *տե՛ս* ՑԸᵉԽԾԱՄ:

ՑԸԽՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸᵉԽԷԼ-ի:

ՑԸԽՈՒՏ - *տե՛ս* ՑԸᵉԽՈՒՏ:

ՑԸԽՕՏԷԼ *(գրբ. ցխոտիմ)* - *տե՛ս* ՑԸԽԸԿԱԼԻԼ:

ՑԸԽՕՏՎԷԼ - *տե՛ս* ՑԸԽԸԿԱԼՎԻԼ:

ՑԸԿԸՏԱԿՕԹ - *գ.* Ցաքատի կոթ: *Ցըկըտակօթը բիդի հացցէ փանդ շինիս, վէր տըմասկան ինի* (Բ):

ՑԸԿԸՏԱՎԷՐ - *ած., գ.* Ցաքատով աշխատող (մարդ): *ԷքՅսը օխտը ցըկըտավէր ըն կՅամ բաղը, ծըռէրէն չՅրէրը տամ* (Ձ):

ՑԸԿԸՏԱՓԱԴ - *գ.* Ցաքատով կտրելու փայտ, բարակ փայտ: *Ապան ծըմական յա՛ քՅրթիկ ար պիրում, յա ցըկըտափանդ* (Բ):

ՑԸԿԸՏՀԱՐԷԼ - *նբ.* Ցաքատով կտրել՝ կտրտել: *Ցըկըտհարում ա, գՅանլանուն ճըղնէրը լօխ վէր ածում* (Ձ):

ՑԸԿԸՏՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸԿԸՏՀԱՐԷԼ-ի:

ՑԸԿԸՏ-ՄԸԿԸՏ - *գ.* Խաղատեսակ, երբ հակառակորդները ցաքատի մի հարվածով փորձում են կտրել ծառի ճյուղը. եթե հաջողվում է, ասում են՝ մըկըտ, եթե չի հաջողվում՝ ցըկըտ: *Առաչ ցըկըտ-մըկըտ էլ ընք իլանլ խաղ ընէլիս* (Բ):

ՑԸԿԸՏ-ՑԱԿԱՏ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ցըկըտ-ցակատ անել - 1. Վայրի-վերո խոսել: *Խըրէգ՛ ցըկըտ-ցակատ ըրա՛, մին ա, ք՛ը՞գ ըսկանօղ չի կա* (Բ): 2. Կոպտորեն պատասխանել, կոշտ վերաբերվել: *Հարթնէրը պառավ ըսկէս-վօրը նըհը՞տ շատ ին ցըկըտ-ցակատ անում* (Ձ):

ՑԸՂ - *տե՛ս* ՑԸ՞Ղ:

ՑԸՂՆԷԼ/ՑԸՆԳՆԷԼ/ՑԸՅՆԷԼ/ՑԸՆ-ՆԷԼ/ՑԸՐԹՆԷԼ *(գրբ. ցնկնիմ)* - *նբ.* 1. Ծնել, ձագ բերել (շան, կատվի եւ այլ կենդանիների մասին): *Էտ շօնը ցըղ-նում ա, վէց ծէք՛ պիրում* (Ձ): 2. *անրգ.* Ծնունդաբերել: *Թաքավէրը հըրամանք ա տամ, վէր էտ անըզկամ կընգանը կախ չի տան, ըսպասին, մինչը՞վ ցըղնէ* (Ձ):

- Ցըղնած շօն - Կատաղի (մարդ): *Ցըղնած շօն ը՞ս, հինչ ը՞ս օգ՛ում ինձանա* (Բ):

ՑԸՂՆԸՎԷԼ/ՑԸՆԳՆԸՎԷԼ/ՑԸՅՆԸ-ՎԷԼ/ՑԸՆՆԸՎԷԼ/ՑԸՐԹՆԸՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸՂՆԷԼ-ի:

ՑԸՂՆՕՏԷԼ/ՑԸՆԳՆՕՏԷԼ/ՑԸՅՆՕ-ՏԷԼ/ՑԸՆՆՕՏԷԼ/ՑԸՐԹՆՕՏԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԷԼ (շատերի մասին):

ՑԸՂՆՕՏՎԷԼ/ՑԸՆԳՆՕՏՎԷԼ/ՑԸՅ-ՆՕՏՎԷԼ/ՑԸՆՆՕՏՎԷԼ/ՑԸՐԹՆՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸՂՆՕՏԷԼ-ի:

ՑԸՄԱՔ(Վ)ԷԼ *(գրբ. ցամաքիմ)* - *չբ.* 1. Խոնավությունից զրկվել, չորանալ: *Ա՞ը՞վ չի անում, թա տափէրը ցըմաքէ* (Բ): 2. Ջուրը կտրվել: *Յէտնան, վէր ծօվը ցըմաքալ ա, ժուղովուրթ ըն յէկալ, տը-նէր շինա՛լ, շէն տը՞ռալ* (ԱԱ, 25): 3. Կաթից կտրվել, կաթ չտալ: ... *Կօվըն էլ ըն-դը՞ղ ա ցըմաքում, թօղում տօնը չօքած* (ԱԱռ, 43): 4. *փխբ.* Թառամել, թոշնել: *Արաշտ ա, արտէրը ցըմաքալ ա* (Բ): 5. *փխբ.* Սմքել, նիհարել: *Էտ խէ ըտի ցը-մաքալ ը՞ս* (Բ): 6. *փխբ.* Հատնել, վերջանալ: *Էլ վէչ մին տը՞ղա օքութ չի կա, լօխ ցըմաքալ ա* (Բ): 7. *փխբ.* Ապշել, քար կտրել: *Իտի պը՞ն տը՞սած չար, լըհա՛ իստի մընաց ցըմաքած* (ՀԺՀ, V, 200):

ՑԸՄԷՆԴԻ/ՑԸՄԷՆՏԻ - *ածական.* Ցեմենտից սարքած՝ շինած: *Ցըմէնտի դուրբա յա* (Բ):

ՑԸՄԷՆԴԻԼ/ՑԸՄԷՆՏԻԼ - *նբ.* Ցեմենտով ամրացնել, ցեմենտել: *Ոօքը տինում ըն յըրան, ցըմէնդում* (Ձ):

ՑԸՄԷՆԴՎԻԼ/ՑԸՄԷՆՏՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՑԸՄԷՆԴԻԼ-ի:

ՑԸՄԷՆՏԻ - *տե՛ս* ՑԸՄԷՆԴԻ:

ՑԸՄԷՆՏԻԼ - *տե՛ս* ՑԸՄԷՆԴԻԼ:

ՑԸՄԷՆՏՎԻԼ - *տե՛ս* ՑԸՄԷՆԴՎԻԼ:

ՑԸՄԸՔԱՄԱՆ - *գ.* Մեջը ցամաք՝ խոնավություն չպարունակող մթերքներ պահելու աման: *Ըտըրա տանը իլա՛ծը մին կօլա յար, մին էլ մին ցըմըքաման* (Ձ):

ՑԸՄԸՔԱՊԱՏ - *տե՛ս* ՑԸՄԸՔՕԹՈՒՆ:

ՑԸՄԸՔԱՏԷՍՆԸ - *գ.* 1. Դաղձի նման չորուկ բույս: *Ըտը՞ղ էլ շատ ցըմըքա-տէսնը կար փըսած* (Ձ): 2. *փխբ.* Շատ նիհար եւ ոսկրոտ մարդ: *Էտ ցըմըքա-տէսնը հանցա ըսկի հըցակէր բա՛նդա՛ չինի* (Բ):

ՑԸՄԸՔՅԱԹ - *տե՛ս* ՑԸՄԸՔՅԱՏ:

ՑԸՄԸՔՅԱՏ/ՑԸՄԸՔՅԱԹ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ցըմըքիատ ածէլ/ինիլ/մընալ - *տե՛ս* ՑԸՄԱՔ(Վ)ԷԼ (7):

ՑԸՄԸՔՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ցամաքեցու-ցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՑԸՄԱՔ(Վ)ԷԼ-ի:

ՑԸՄԸՔՑԸՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸ-ՄԸՔՑԸՆԷԼ-ի:

ՑԸՄԸՔՕԹՈՒՆ *(գրբ. ցամաքութիւն)* - *գ.* Ցամաք լինելը: *Վը՞ղէն ցըմըքօթունը շատ ա, թօռ բիդի կ՛ա, վէր արտը փըս-նէ* (Բ):

- Ցըմըքօթուն անել - Միայն հաց ուտել, ուտելու այլ բան չունենալ: *Ցըմը-քօթուն ընէլավ յօլլա յընք ք՛ունո՛ւմ* (Բ):

ՑԸՄԻՆԴԱ՛ԼԻ/ՑԸՄԻՆՏԱ՛ԼԻ - *ածական.* Ցեմենտը շատ, հետը շատ ցեմենտ խառնած: *Ցըմինդա՛լի ցը՞խ ա* (Բ):

ՑԸՄԻՆՏԱ՛ԼԻ - *տե՛ս* ՑԸՄԻՆԴԱ՛ԼԻ:

ՑԸՄՓԸ՞ՌՆԸ - *տե՛ս* ՔԸՆԹԸ՞ՌՆԸ:

ՑԸՅՆԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԷԼ:

ՑԸՅՆԸՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԸՎԷԼ:

ՑԸՅՆՕՏԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏԷԼ:

ՑԸՅՆՕՏՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏՎԷԼ:

ՑԸՆԳԸՌ(Ի) - *ածական.* Չնչին, ողորմելի, խղճուկ, քնձռոտ: *Ըտըրան էլ մին ցըն-գըռի ծի յա ինո՛ւմ* (Ձ):

ՑԸՆԳԸՌՕՏ - *տե՛ս* ՑԸՆԳԸՌ(Ի):

ՑԸՆԳՆԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԷԼ:

ՑԸՆԳՆԸՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԸՎԷԼ:

ՑԸՆԳՆՕՏԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏԷԼ:

ՑԸՆԳՆՕՏՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏՎԷԼ:

ՑԸՆԴԱԾ - *ածական.* Խելքը թռցրած, խելառ: *Ցընդած մարթ ա Ափօն* (Բ):

ՑԸՆԴԷԼ/ՑԸՆԴԻԼ *(գրբ. ցնդիմ)* - *չբ.* 1. Գազանման վիճակի վերածվելով՝ անհետանալ, գոլորշիանալ: *Համան էն-քան տաք ա, գ՛օլէն ճո՛ւրը սաղ ցընդալ ա* (Բ): 2. *փխբ.* Անհետանալ, չքանալ: *Քի-նա՛մ ա դէրին պիրո՛ւմ, վը՞ր օրթնի, սա-դանան ընդէղան ցընդի* (ՆԼՂԺԲ, 90): 3. *փխբ.* Խելքը թռցնել, ցնորվել: *Էնքան թակալ ըն, լափ ցընդալ ա* (Բ):

ՑԸՆԴԸՎԱԾ - *տե՛ս* ՑԸՆԴԱԾ:

ՑԸՆԴԸՎԷԼ/ՑԸՆԴԸՎԻԼ - *տե՛ս* ՑԸՆ-ԴԷԼ:

ՑԸՆԴԸՎԻԼ - *տե՛ս* ՑԸՆԴԸՎԷԼ:

ՑԸՆԴԸՑ(Ը)ՆԷԼ/ՑԸՆԴԸՑ(Ը)ՆԻԼ - *նբ. եւ պբ.* ՑԸՆԴԷԼ-ի:

ՑԸՆԴԻԼ - *տե՛ս* ՑԸՆԴԷԼ:

ՑԸՆՁՈՒԽ(ՆԸ)/ՑԸՆՁՈՒՂ(ՆԸ)/ՑՈՒՆՁՈՒԽ(ՆԸ)/ՑՈՒՆՁՈՒՂ(ՆԸ) *(գրբ. ցնցուղ)* - *գ.* 1. Ձագարձեւ գլխիկով անոթ՝ աման՝ հարմարանք ջուրը գետնին՝ ծաղիկներին եւն ցողելու համար: *Ցընձուխնը յօր ա օնում, ծըղը՞գ՛նէն ճի-ր՛ում* (Ձ): 2. *փխբ.* Հորիզոնի տեսքը արեւը ծագելու ժամանակ, արեւածագ: *Ըշխարքէս ամմէնաղաշնգ՛ պէնը ցըն-ձուխնը՞ն ա* (Բ):

- Ցընձուխ(նը) տալ - Արեւը ծագել, հորիզոնը արեւի ճառագայթներով լուսավորվել: *Ըռավօտը՝ լ՛ուսըպէցին՝ էն ցունձուխնը տամ վախտը, զուրթնացի, տէսնամ ուխտավէրնէն հըդէ ըն իլա՛լ պիտի սարին տակը* (ՋՏ, Ա, 109):

ՑԸՆՁՈՒՂ(ՆԸ) - *տե՛ս* ՑԸՆՁՈՒԽ(ՆԸ):

ՑԸՆՆԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԷԼ:

ՑԸՆՆԸՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԸՎԷԼ:

ՑԸՆՆՕՏԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏԷԼ:

ՑԸՆՆՕՏՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏՎԷԼ:

ՑԸՆՑԸՌՎԷԼ - *տե՛ս* ՑԸՆԴԷԼ(3):

ՑԸՌ/ՑԷՌ/ՑԸ՞Ռ *(գրբ. ցեռ, հ.ե. *sker-)* - *գ.* Ջրալի կղկղանք: *Արչը կալ՛ումը լըծէլը հիշտ ա, ցըռը օնէլըն ա տըժէր* (ԱԲԲ, 21):

- Ցըռան ըղնէլ - *տե՛ս* Պանօս անել:

ՑԸՌԱՆ - *ածական.* 1. Շարունակ փորլուծություն ունեցող, հաճախ ցռող: *Ցըռան մարթ ա, սաղ օրը ըբօռնան տօն չի կ՛ամ* (Բ): 2. *փխբ.* Վախկոտ, երկչոտ: *Ցըռան մարթ ա Կ՛ա՛փին, ըլբըստըրական էլ ա վախում* (Բ):

- Ցըռան Վէրգօ - Վախկոտ՝ երկչոտ մարդ: *Կընէգ՛ը ասմա.- Տու հինչ տը-դա՞մարթ, Ցըռան Վէրգօ յըս* (Ձ):

ՑԸՌԷԼ - *չբ.* 1. Փորը լուծել ջրալի կղկղանքով: *Նօթէ խաղու օտօղը կըցը-ռէ* (ՆԱԲ, III, 391): 2. *փխբ.* Փլվել: *Պատը ցըռալ ա* (Բ): 3. *փխբ.* Վախենալ, ահաբեկվել: *Վը՞րսկանը ըսլանէն վէր տը՞-սավ, ցըռից* (Ձ):

- Ցըռէլ պըտէրավը տալ - *տե՛ս* Տըռէլ տըկըղնօտավը տալ:

ՑԸՌԸԿԱՏԼԻ - *տե՛ս* ԾԸՌԸԿԱՏԼԻ:

ՑԸՌԸԿՈՒՏԿՈՒՏ - *տե՛ս* ԾԸՌԸ-ԿՈՒՏԿՈՒՏ:

ՑԸՌԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՑԸՌԷԼ-ի:

ՑԸՌԸՑԸՌԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ցըռըցըռէն ըղնէլ - Խիստ վախենալ: *Արչը վէր տո՛ւս ա կ՛ամ, Հէյրանը ցըռըցըռէն ա ըղնում* (Ձ):

ՑԸՌԹԻ-ՓԸՌԹԻ - *տե՛ս* ՑԸՐԹԻ-ՓԸՐԹԻ:

ՑԸՌՈՒՏ - *ածական.* Ցեռով ապականված, կեղտոտ: *Ցըռուտ վընընմանէր ա կ՛ը՞-ցալ* (Բ):

- Ցըռուտ դանա - Կեղտոտ՝ փնթի՝ անպատիվ մարդ: *Էտ ցըռուտ դանան ամէսը մը՛հը՛տ էլ չի լըղանում* (Բ):

ՑԸՌՕՏԷԼ - *տե՛ս* ՑԸՌԷԼ (շատերի մասին):

ՑԸՎԱԽԷԽՏ/ՑԸՎԱԽԸ՛ԽՏ - *ած.* Ցավից խեղդված՝ մեռած: *Էտ ցըվախէխտ մարթին թաղում ըն, յըրան էլ քար քըցո՛ւմ* (Ձ):

ՑԸՎԱԽԸ՛ԽՏ - *տե՛ս* ՑԸՎԱԽԷԽՏ:

ՑԸՎԱԿՕԽ - *ած.* Ցավից՝ վշտից տառապող, շատ ցավ՝ վիշտ ունեցող: *Ցըվակօխ մարթիք՝ շատ կան* (Բ):

ՑԸՎԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ցաւեցուցանեմ)* - *նբ.* ՑԱՎԷԼ-ի: *Էտ կօճը ըտըրանց թաթէրը հօփ ա տամ, ցըվըց(ը)նըմ* (ՀԺՀ, V, 55):

ՑԸՎՑԸՎԷԼ - *նբ.* Մատներով թեթեւակի գզել: *Պո՛ւրթը ցըվցըվում ա, ածում դո՛ւշանկէն մաչը* (Բ):

ՑԸՐԷՎ - *տե՛ս* ՑԸՐԸ՛Վ:

ՑԸՐԸ՛Վ/ՑԸՐԷՎ *(գրբ. ցրիւ (ցրված)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ցըրը՛վ ածէլ - *տե՛ս* Ցըրը՛վ տալ:

- Ցըրը՛վ կա՛ալ - 1. Ցիրուցան լինել, սփռվել, տարածվել: *Կամ ա տը՛սնում՝ շօ՛ղերը տանավը մին ցըրը՛վ յը՛կած* (Ձ): 2. Քանդվել, ավերվել: *Օշափը վէր թըխում ա, տանը պատը ցըրը՛վ ա կամ* (Ձ): 3. Ջախջախվել: *Գո՛ռլլան նի յա կամ աշկէն, աշկը ցըրը՛վ ա կամ* (Ձ): 4. Վերանալ, գոյությունը դադարել: *Ըտի մէր կալխօզը ցըրը՛վ յը՛կավ* (Բ): 5. *փխբ.* Իրարից հեռանալ, բաժան-բաժան լինել: *Հըրսանէքը՛ պըրծնում ա, լօխ ցըրէվ ըն կամ* (ՀԺՀ, V, 628): 6. Անտեղի վատնվել՝ ծախսվել՝ փչանալ: *Ըտի էտ հըրուստէն փուլէրը սաղ ցըրը՛վ ա կամ* (Ձ): 7. Հոշոտվել, պատառոտվել: *Կամ ըն, տը՛սնում՝ էշին քօռակը էտ քօլէն տակէն ցըրը՛վ յը՛կած* (Ձ):

- Ցըրը՛վ տալ - 1. Ցիրուցան անել, սփռել, տարածել: *Մընըցածէն քամէն տարավ ցըրէվ տըվավ...* (ՆԱԲ, 81): 2. Քանդել, ավերել: *Ջօրքէն հըրաման ա տամ, վէր էտ յը՛խծէն ցըրը՛վ տան* (Ձ): 3. Ջախջախել: *Փանվը թըխում ա, աշկը ցըրը՛վ տամ* (Ձ): 4. Վերացնել, գոյությունը դադարեցնել: *Գարբաչօվէն բալան թաղիմ, վէր սավէտը ցըրը՛վ տըվավ* (Բ): 5. *փխբ.* Իրարից հեռացնել, բաժան անել: *Էս կըռը՛վը ինձ ու հընգէրուցըս ցըրը՛վ ա տըվալ* (Բ): 6. Անտեղի վատնել՝ ծախսել՝ փչացնել: *Վը՛ռը կէրած կընէգը մարթին փուլէրը ցըրը՛վ կըտա* (Բ): 7. Հոշոտել, պատառոտել: *Ասըմ ա.- Էշին կո՛ւլը ցըրէվ ա տըվալ* (ԲՀԲ, 188):

ՑԸՐԹԻ-ՓԸՐԹԻ/ՑԸՌԹԻ-ՓԸՌԹԻ/ՉԸՐԹԻ-ՓԸՐԹԻ/ՉԸՌԹԻ-ՓԸՌԹԻ/ՑԻ-ԹԻ-ՓԻԹԻ/ԾԸՐՏԻ-ՊԸՐՏԻ/ԾԸՌՏԻ-ՊԸՌՏԻ - *ած.* Չնչին, ոչինչ չարժեցող: *...Մէր հայէրը ցիթի-փիթի պէնէրու մը-հար հա՛ռնէ կընխարջին...* (ՋՏ, Բ, 64):

- Ցըրթի-փըրթի անէլ - Դատարկաբանել: *Ցըրթի-փըրթի անօղ շատ կա, ամմա ըսկանօղ չի կա* (Բ):

ՑԸՐԹՆԷ *(գրբ. ցրդենի)* - *գ.* Գիհիի տեսակներից մեկը, ցրդենի: *Մարտակէրտա ծըմըկնէրումը ցըրթնէ յէլ կա* (Բ):

ՑԸՐԹՆԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԷԼ:

ՑԸՐԹՆԸՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆԸՎԷԼ:

ՑԸՐԹՆՕՏԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏԷԼ:

ՑԸՐԹՆՕՏՎԷԼ - *տե՛ս* ՑԸՂՆՕՏՎԷԼ:

ՑԸՐՏԷԼ/ՑՈՒՐՏԻԼ - *տե՛ս* ՑԸՐ(Տ)-ՑՈՒՐՏԱՆԱԼ:

ՑԸՐ(Տ)ՑՈՒՐՏԱՆԱԼ/ՑՈՒՐ(Տ)ՑՈՒՐՏԱՆԱԼ *(գրբ. ցրտանամ (պաղել)* - *չբ.* 1. Ցրտերն ընկնել, եղանակը ցուրտ դառնալ: *Հավան ցըրտցուրտացալ ա* (Բ): 2. Հովանալ, զովանալ: *Մին քամէ չի կա, թա պատառ ցըրտցուրտանանք* (Բ): 3. Ջերմությունը պակասել՝ նվազել: *Փիչը հանգո՛ւում ա, օթաղը ցուրցուրտանում ա* (Ձ): 4. Տաքությունը պակասել, պաղել: *Չայը ցըրտցուրտացալ ա* (Բ):

ՑԸՐ(Տ)ՑՈՒՐՏՑ(Ը)ՆԷԼ/ՑՈՒՐ(Տ)-ՑՈՒՐՏՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՑԸՐ(Տ)-ՑՈՒՐՏԱՆԱԼ-ի:

ՑԸՐ(Տ)ՑՈՒՐՏՕԹՈՒՆ/ՑՈՒՐ(Տ)-ՑՈՒՐՏՕԹՈՒՆ - *գ.* 1. Ցուրտ լինելը: *Պառավ վը՛ռսկանը ասում ա.- Վէր հըվէն ցըրտցուրտօթունէն յէշիս, կարէլ չըս վը՛ռս անիս* (Ձ): 2. Ցուրտ եղանակ, ցրտեր: *Ծըմըռնըվա ցըրտցուրտօթունը մը՛զ լափ նը՛ղընն ա լընծալ* (Բ): 3. Սառնություն, պաղություն: *Ասում ա.- Ճիրին ցըրտցուրտօթունը շատ ա, կարում չըմ նի մընիմ ծօվը* (Ձ):

ՑԸՐՏՈՒՑ(Ը)ՆԷԼ/ՑՈՒՐՏՈՒՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՑԸՐ(Տ)ՑՈՒՐՏՑ(Ը)ՆԷԼ:

ՑԸՐՏՕԹՈՒՆ/ՑՈՒՐՏՕԹՈՒՆ *(գրբ. ցրտութիւն (պաղություն)* - *տե՛ս* ՑԸՐ(Տ)-ՑՈՒՐՏՕԹՈՒՆ:

ՑԸՑ[1] - *տե՛ս* ՑԸ՛Ց[1]:

ՑԸՑ[2] - *տե՛ս* ՑԸ՛Ց[2]:

ՑԸՑԱՆԱԿ/ՑԻՑԱՆԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ցըցանակ ինիլ - Գլխիվայր տնկվել: *Տըղան վէր թըխում ա, օշափը ցը՛խէն մաչին ցըցանակ ա ինո՛ւմ* (Ձ):

ՑԸՑԱՎԷՐ - *գ.* Պակասավոր՝ թերի վար, երբ արորի կոտրակի հետեւը բարձր լինելով՝ խոփը, անընդհատ հողի մեջ մտնելով-դուրս գալով, լավ չի վարում:

ՑԸՑԷԼ *(գրբ. ցցեմ)* - *նբ. տե՛ս* Ցը՛ց անել:

ՑԸՑԷՌՆԱԿ/ՑԻՑԷՌՆԱԿ/ԾԸԾԷՌՆԱԿ/ԾԻԾԷՌՆԱԿ *(գրբ. ծիծառն)* - *գ.* 1. Նեղ ու սրածայր թեւերով եւ մկրատաձեւ պոչով արագաթռիչ չվող թռչուն, ծիծեռնակ: *... Մանանը ցըցէռնակ ա տը՛ռնում, թըռչում յէրգի՛ինքը՛ը* (ԱԱ, 63): 2. *փխբ.* Նիհար ու ժիր երեխա: *Էս էլ հօ խօխա չի՞, ցըցէռնակ ա* (Բ):

- Ցըռըռնակէն թէվըն էլ ա տինո՛ւմ կըրպէտին մաչին, կո՛ւրծում - Ասում են հմուտ՝ շնորհալի կարպետ՝ գորգ գործողների մասին:

ՑԸՑՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸՑԷԼ-ի:

ՑԸՔ՛ԱՆ/ՑԻՔ՛ԱՆ - *տե՛ս* ՑԸՔ՛ՆԱՓՕՍ:

ՑԸՔ՛ԱՆԷԼ/ՑԻՔ՛ԱՆԷԼ - *նբ.* Ցաքանով ցանած արտը հավասարեցնել եւ սերմը հողով ծածկել: *Տափը վարում ըն, ցիք՛անում...* (ՆԼՂԺԲ, 100):

ՑԸՔ՛ԱՆՎԷԼ/ՑԻՔ՛ԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՑԸՔ՛ԱՆԷԼ-ի:

ՑԸՔ՛ԸՆԱՄԱՐ/ՑԻՔ՛ԸՆԱՄԱՐ - *գ.* Ցաքանի երկու կողմերի հիմնական ճյուղերը, որոնց վրա ամրացնում են փշոտ ճյուղերը: *Ցա՛ք՛անը պահողը ցը-ք՛ընամարընն ա* (Բ):

ՑԸՔ՛ԸՆԱՎԷՐ/ՑԻՔ՛ԸՆԱՎԷՐ - *ած., գ.* Ցաքանով աշխատող, ցաքանող (երկրագործ, մշակ): *Ցը՛ք՛ընավէրը արտը ցը՛ք՛անում ա, նըստում, վէր պատառ դինջանա* (Ձ):

ՑԸՔ՛ՆԱՓՕՍ/ՑԻՔ՛ՆԱՓՕՍ - *գ.* Բույսերի բազմացման եղանակ՝ անդալիս, երբ որեւէ թփի՝ ծառի (հատկապես խաղողի որթի) դալար շիվը, առանց թփից անջատելու հողի մեջ կռացնելով եւ ծայրը հողից վեր բարձրացնելով, տնկում են եւ արմատակալելուց հետո մայր թփից՝ ծառից անջատում: *Ապան լ՛ավ ցը՛ք՛նափօս ա իլ՛ալ ընէլիս* (Բ):

ՑԸՔ՛ՑԱ՛ՔՈՒՏ/ՑԻՔ՛ՑԱ՛ՔՈՒՏ - *ած.* Շատ փշոտ, փշփշոտ: *Մին ցը՛ք՛ցա՛ք՛ուտ քօլ ա կըտըրում, չըփարէն ծակը ծասկում* (Ձ):

ՑԻԳԱՆ *(ռուս. цыган)* - *տե՛ս* ՂԱՐԱՉԻ:

ՑԻԹ *(գրբ. ցայտ (պուտ)* - *անրգ. տե՛ս* Կ՛ՈՒՋ:

ՑԻԹԱՄԱՆ - *անրգ. տե՛ս* Կ՛ՈՒՋԱՄԱՆ:

ՑԻԹԱՎԸ՛Տ - *անրգ. տե՛ս* Կ՛ՈՒՋԱՎԸ՛Տ:

ՑԻԹԱՐԱՆ - *անրգ. տե՛ս* Կ՛ՈՒՋԱՐԱՆ:

ՑԻԹԸՌԱՆ/ՑԻԹՌԱՆ - *տե՛ս* ՑԸ՛Թ(Ը)ՌԷԳ՛:

ՑԻԹԸՌԷԳ՛ - *տե՛ս* ՑԸ՛Թ(Ը)ՌԷԳ՛:

ՑԻԹԸՌԻ/ՑԻԹՌԻ - *տե՛ս* ՑԸ՛Թ(Ը)-ՌԷԳ՛:

ՑԻԹԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ցայթեցուցանիմ (ցայտեցնել)* - *անրգ. տե՛ս* Կ՛ՈՒՋԸ-Ց(Ը)ՆԷԼ:

ՑԻԹԻԼ *(գրբ. ցայթիմ (ցայտել)* - *անրգ. տե՛ս* Կ՚ՈՒՋԻԼ:

- Ցիթե՛ղ շօն - Ասում են անկողնում միզող երեխաներին:

ՑԻԹԻ-ՓԻԹԻ - *տե՛ս* ՑԸՐԹԻ-ՓԸՐԹԻ:

ՑԻԹԼԱՆ - *անրգ. տե՛ս* Կ՚ՈՒՋԼԱՆ:

ՑԻԹԿԱՊ - *անրգ. տե՛ս* Կ՚ՈՒՋԿԱՊ:

ՑԻԹՌԱՆ - *տե՛ս* ՑԻԹԸՌԱՆ:

ՑԻԹՌԷԳ՝ - *տե՛ս* ՑԸ՝Թ(Ը)ՌԷԳ՝:

ՑԻԹՌԻ - *տե՛ս* ՑԻԹԸՌԻ:

ՑԻԹՈ՞ՒՏ - *անրգ. տե՛ս* Կ՚ՈՒՋՈ՞ՒՏ:

ՑԻԹՕՌ - *տե՛ս* ՑԸ՝Թ(Ը)ՌԷԳ՝:

ՑԻԼ/ՑԷԼ - *գ.* 1. Հող, որ գութանով ճեղքում՝ ցելում են եւ մի տարի թողնելուց հետո՝ վարում: *Ցիլը մին տարէ ըտի վէր կէնա, էն մին տարէն լ՚ավ պէրք կըտա* (Բ): 2. Ընդհանրապես վարած հող, հերկած արտ: *Հիյվընէն նի յըն տը՝ռալ ցիլը, կօխ տըվալ* (Բ):

- Ցիլ անէլ - *տե՛ս* ՑԸԼԻԼ:

ՑԻԼԻԼ - *տե՛ս* ՑԸԼԻԼ:

ՑԻԼԻՆԴԸՐ - *տե՛ս* ՑԸԼԻՆԴԸՐ:

ՑԻԼԻՆԴ(ԸՐ)ԱՎԷՐ - *տե՛ս* ՑԸԼԻՆԴ(ԸՐ)ԱՎԷՐ:

ՑԻԼԻՊԱՐԱՆ - *տե՛ս* ՑԸԼԻՊԱՐԱՆ:

ՑԻԼՎԻԼ - *տե՛ս* ՑԸԼՎԻԼ:

ՑԻՊԼԻ - *տե՛ս* ԾԻՊԼԻ:

ՑԻՐԷԿ - *տե՛ս* ՑԻՐԸ՝Կ:

ՑԻՐԷԿԱՎ - *տե՛ս* ՑԻՐԸ՝ԿԱՎ:

ՑԻՐԸ՝Կ/ՑԻՐԷԿ *(գրբ. ցերեկ)* - *գ.* Օրվա մի մասը՝ առավոտից մինչեւ երեկո, ցերեկ: *Քը՛շէրը քը՛ընում ա, ցիրէկը քօն ինում* (ՀԱԲ, 15, 109):

ՑԻՐԸ՝ԿԱՎ/ՑԻՐԷԿԱՎ - *մ.* Մինչեւ մութն ընկնելը, ցերեկ՝ ոչ մութ ժամանակ: *Քը՛շէրավ ըն տե՛ւս կ՚ամ, վէր ցիրը՝կավ տօն հըսնին* (Ձ):

ՑԻՐԹ *(հ.ե. * ḱer- (աճել, աճեցնել)* - *անրգ. տե՛ս* ԾԸ՝Ծ(1): *Ըտըրա ցիրթը օտօղը ե՛ւրա՛ն նըման բիդի ինի, լի՞* (Բ):

- Ցիրթէրը կախ - Անամոթ, անզգամ: *Ասում ա.- Իզէն ցիրթէրը կախ կընէգ՚ ա, կօրծ չօնիս* (Ձ):

- Ցիրթըտ կըտըրվէ - Անարգական արտահայտություն՝ ուղղված անամոթ՝ անզգամ մարդուն (հատկապես կնոջը):

ՑԻՐԹ[2] - *անրգ. տե՛ս* ԸՐՏԱՍՈՒՆՔ:

- Ցիրթէրը կախ տալ/հըղէ անէլ/ դաշ տալ/վէր ածէլ - *անրգ.* Լացել: *Հինչ ը՞ս ցիրթէրըտ վէր ածում, ըռըհէլըտ քաշի ըստըղաս* (Բ):

ՑԻՐԿ *(ռուս. цирк, ֆր. cirque, լատ. circus)* - *գ.* 1. Թատերական արվեստի տեսակ՝ կրկես: *Արզումանի դայուն թօռնէրը տանում ըն ցիրկ* (Ձ): 2. *փխբ.* Ձավեշտի՝ ծիծաղի՝ խեղկատակության առարկա կամ վայր: *Ասում ա.- Հինչ ա՞, ըստը՝ղ ցիրկ ա՞, վէր հըվաքվալ ըք* (Ձ):

- Ցիրկու մէյմուն - Անլուրջ՝ թեթեւսոլիկ անձ՝ խեղկատակ: *Մարթը կըզնը՝վում ա, թա.- Ցիրկու մէյմուն ը՞ս, խէ տը՝ղըտ նըստում չը՞ս* (Ձ):

ՑԻՑԱՆԱԿ - *տե՛ս* ՑԸՑԱՆԱԿ:

ՑԻՑԷՌՆԱԿ - *տե՛ս* ՑԸՑԷՌՆԱԿ:

ՑԻՔ՚ԱՆ - *տե՛ս* ՑԸՔ՚ԱՆ:

ՑԻՔ՚ԱՆԷԼ - *տե՛ս* ՑԸՔ՚ԱՆԷԼ:

ՑԻՔ՚ԱՆՎԷԼ - *տե՛ս* ՑԸՔ՚ԱՆՎԷԼ:

ՑԻՔ՚ԸՆԱՄԱՐ - *տե՛ս* ՑԸՔ՚ԸՆԱՄԱՐ:

ՑԻՔ՚ԸՆԱՎԷՐ - *տե՛ս* ՑԸՔ՚ԸՆԱՎԷՐ:

ՑԻՔ՚ՆԱՓՕՍ - *տե՛ս* ՑԸՔ՚ՆԱՓՕՍ:

ՑԻՔ՚ՑԱՔ՚ՈՒՏ - *տե՛ս* ՑԸՔ՚ՑԱՔ՚ՈՒՏ:

ՑՈՒԼՈՒՆՔՑՈՒԼՈՒՆՔՕՏԷԼ - *տե՛ս* ՑԸԼԸՆՔՑԸԼԸՆՔՕՏԷԼ:

ՑՈՒՆՁՈՒԽ(ՆԸ) - *տե՛ս* ՑԸՆՁՈՒԽ(ՆԸ):

ՑՈՒՆՁՈՒՂ(ՆԸ) - *տե՛ս* ՑԸՆՁՈՒԽ(ՆԸ):

ՑՈՒՌՆԱԼԼԷՐ - *տե՛ս* ՑՈՒՐՆԱԼԼԷՐ:

ՑՈՒՌՆԱԽՕՏ - *տե՛ս* ՑՈՒՐՆԱԽՕՏ:

ՑՈՒՌՆԱՀԱՑ - *տե՛ս* ՑՈՒՐՆԱՀԱՑ:

ՑՈՒՌՆԱՎԷՐ - *տե՛ս* ՑՈՒՐՆԱՎԷՐ:

ՑՈՒՌՆԱՎԸ՝Տ - *տե՛ս* ՑՈՒՐՆԱՎԸ՝Տ:

ՑՈՒՌՆԱՏԱՐ - *տե՛ս* ՑՈՒՐՆԱՏԱՐ:

ՑՈՒՐՆԱԼԼԷՐ/ՑՈՒՌՆԱԼԼԷՐ - *գ.* Ցորենի ալյուր: *Ոէ էն վախտըն էլ սօվ ա իլա՛լ, վէշ մինին տանը ցուրնա՛ալլէր չի իլա՛լ* (Ձ):

ՑՈՒՐՆԱԽՕՏ/ՑՈՒՌՆԱԽՕՏ - *գ.* Ցորենի նման վայրի խոտաբույս: *Ցուրնախօտ ա հարում, պիրում տամ վըխճըրնէրէն* (Ձ):

ՑՈՒՐՆԱՀԱՑ/ՑՈՒՌՆԱՀԱՑ - *գ.* Ցորենի ալյուրից թխած հաց: *Մէլիք՚ը ե՛ւրա՛ն թուրբան սիպտակ թուրնահաց ա տե՛ւս օնում, Պուղին էլ՝ կ՚ա՛ռի ք՚ե՛ւթ* (Ձ):

ՑՈՒՐՆԱՎԷՐ/ՑՈՒՌՆԱՎԷՐ - *գ.* Ցորենի հոր, մեջը ցորեն լցնելու՝ պահելու հոր: *Ցուրնավէրը պէնում ա, ցօրէնը շինացուց պիժը՝նում* (Ձ):

ՑՈՒՐՆԱՎԸ՝Տ/ՑՈՒՌՆԱՎԸ՝Տ - 1. *գ.* Ցորենի հոտ: *Ճըղացան ցուրնավը՝տ կըկ՚ա* (Ձ): 2. *ածական.* Ցորենի հոտ ունեցող: *Ցուրնավը՝տ հաց ա* (Բ):

ՑՈՒՐՆԱՏԱՐ - *գ.* 1. Նա, որին պատկանում է տվյալ ցորենը, ցորենի տեր: *Ճըղացէն քարը կօտըրում ա, ցուրնը՝տարէրը մընամ ըն մա՛թալ* (Ձ): 2. Շատ ցորեն ունեցող՝ ցորենով ապահովված մարդ: *Էն վախտըն էլ շէնումը մինակ ք՚օխան ա իլա՛լ ցուրնատար* (Բ):

ՑՈՒՐՏԻԼ - *տե՛ս* ՑԸՐՏԷԼ:

ՑՈՒՐ(Տ)ՑՈՒՐՏԱՆԱԼ - *տե՛ս* ՑԸՐ(Տ)ՑՈՒՐՏԱՆԱԼ:

ՑՈՒՐ(Տ)ՑՈՒՐՏՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՑԸՐ(Տ)ՑՈՒՐՏՑ(Ը)ՆԷԼ:

ՑՈՒՐ(Տ)ՑՈՒՐՏՕԹՌՈՒՆ - *տե՛ս* ՑԸՐ(Տ)ՑՈՒՐՏՕԹՌՈՒՆ:

ՑՈՒՐՏՈՒՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՑԸՐՏՈՒՑ(Ը)ՆԷԼ:

ՑՈՒՐՏՕԹՌՈՒՆ - *տե՛ս* ՑԸՐՏՕԹՌՈՒՆ:

ՑՈՒՑԱԿ *(գրբ. ցուցակ)* - *գ.* Որեւէ կարգի բաների կամ անձանց գրավոր թվարկումը ներկայացնող փաստաթուղթ, ցանկ: *Մէլիք Շահնազարը կարքաղըրում ա, վէր Պուղին Շուշի քաղաքէն հիմարնէրէն ցուցակը անէ, տա ե՛ւրա՛ն* (ՆԱԲ, 131):

- Ցուցակ անէլ - Որեւէ նպատակով ցուցակ կազմել: *Ցուցակ ըն անում, շինացուց ամմէն մի տանը մին մէշուկ ա՛ալլէր տամ* (Ձ):

- Ցուցակ ըղնէլ - Ցուցակի մեջ մտնել՝ գրանցվել, ցուցակագրվել: *Քինամ ա նախագէն ղաչանք անում, ինք՚ըն էլ ցուցակ ըղնում* (Ձ):

- Ցուցակ քըցիլ - Ցուցակի մեջ մտցնել՝ գրանցել, ցուցակագրել: *Էտ ըրփըվէրուն անըմըն էլ ըն ցուցակ քըցա՛ում, վէր ցօրէն ըստանա* (Ձ):

ՑՈՒՑՈՒ - *տե՛ս* ՉՈՒՉՈՒ:

ՑՈՒՓ - *տե՛ս* ՑՈՒՓԼԷԳ՝:

ՑՈՒՓԷ - *գ.* Խաղատեսակ: *Խօխա վըխտըրնէս շատ ընք իլա՛լ ցուփէ խաղ ընէլիս* (Ձ):

ՑՈՒՓԸՄԸ - *տե՛ս* ՑՈՒՓՈՒՄԸ:

ՑՈՒՓԼԷԳ՝ - *ածական., մ.* Կոկիկ, մարմնի վրա լավ՝ ամփոփ նստած: *Ք՚ասունց Վանին նի մըտավ՝ հանց ցուփլէգ՚ կ՚էցված, հանց կօկված, լըհա ասիս մին ինգլիզ ա ըռաչիտ կաղնած* (ՋՏ, Բ, 91):

ՑՈՒՓՈՒՄԸ/ՑՈՒՓԸՄԸ - *տե՛ս* ՑՈՒՓԼԷԳ՝: ... *Շալվարը ցուփըմը բալդուրան նըստա կացած, լըհա ասիս նիստա տըվածինի* (ՋՏ, Ա, 78):

ՑՕՐԷՆ *(գրբ. ցորեան)* - 1. *գ.* Ցորեն (բույսը եւ հատիկը): *Թաքավէրը ըստըրանց առաչը ցօրէն ա ածըմ, լօխ ըսկըսում ըն օտիլը* (ՀԺՀ, V, 173): *ածական.* 2. Ցորենից պատրաստած: *Էն վախտը ամմէն մարթ չի կըրը՝ցալ ցօրէն հաց օտէ* (Բ): 3. *փխբ.* Ցորենի գույն ունեցող: *Ցօրէն իրը՝ս օնէ* (Բ):

- Ցօրէն արտը կօրէկ շինիլ - Մեկի գործերը ձախողել, հիասթափեցնել: *Ապան մատաղ, խէ կըզնըվում ը՞ս, իմ ցօրէն արտը կօրէկ շինե՛ւմ* (ՆԼՂԺԲ, 84):

- Ցօրէն արտը կօրէկ տը՝ռնալ - Գործերը ձախողվել, հիասթափվել: *Կարկուտ յը՝կավ, մէր ցօրէն արտը կօրէկ տը՝ռավ* (Ձ):

- Ցօրէնը կ՚ա՛ռնա՛ն ճօկէլ - Լավը վատից, անմեղը մեղավորից, արդարն անարդարից զանազանել՝ տարբերել: *Ասում ա.- Յը՝ս ք՚ը՝զ նըհէտ հըրակաշ չըմ տը՝ռնալ, տու ցօրէնը կ՚ա՛ռնա՛ն ճօկում չըս* (Ձ):

- Ցօրէնը նրհաշ տալ, կ'ԝրին ծախէլ/կ'ԝրԝվ ապրրէլ - Կեղծարարություն անել, խաբել: *Բուդին էլ հо մարթ չի՞. ցօրէնը նրհաշ ա տամ, կ'ԝրին ծախում* (Բ):

- Ցօրէն հացէն պօզ'էր ա ինՀում - Մարդ պետք է երախտամոռ չլինի, կարողանա արժանիքը գնահատել:

ՑՕՐՏ *(գրբ. ցուրտ)* - *ած.* 1. Բավականաչափ ջերմություն չունեցող, ջերմությունից զուրկ, սառը: *Էս ցօրտ հրվավը ըշտը'ղ ը՞ս ք'ինամ* (Բ): 2. Սառնորակ, զովացնող: *Մին կ'ը'վաթ ցօրտ ճՀուր բիդԝր՝ խըմինք'* (Բ): *գ.* 3. Ցուրտ եղանակ, ցրտեր, սառնամանիք: *Ըստը'ղ Մէլիք-Շահնազարը թԝ.- Ոէ ասէ ընդօր ըս իլի՞ ցուրտէն տըմացալ...* (ԼՂԲ, 379):

- Ցուրտավ ըղնէլ - Մրսել, ցրտից վնասվել: *Հայրօն ցուրտավ ընգավ, հիվընդացավ* (Բ):

- Ցուրտէրը ըղնէլ - Ցուրտ եղանակները սկսվել: *Կամ ա ծըմը'ռնը մուտանըմ, ցուրտէրը ընգնըմ* (ՀԺՀ, VI, 276):

- Ցօրտ անէլ - Եղանակը ցրտել: *Ըսօր ցօրտ ա անում* (Բ):

- Ցօրտը ըղնէլ - *տե՛ս* Ցուրտէրը ըղնէլ:

- Ցօրտը թըխէլ/նի կ'ԝլ/տալ - Ցրտահար անել, ցրտահարել: *Ցօրտը թըխալ ա, ծառէրը ըստարէ տիժէր թա պէրք տան* (Բ):

- Ցօրտ(ը) տանէլ - Ցրտից վնասվել, ցրտահարվել: *Ցօրտ տարած խընձօրը հինչ բի՞դի ինի* (Ձ):

- Ցօրտ խօսկ - Կոպիտ՝ վիրավորական խոսք: *Թաքավէրը էնքան պարի մարթ ա ընՀում, վար տահանց մին ցօրտ խօսկ էլ ա, ասում չի...* (ՀԺՀ, V, 496):

- Ցօրտ կօլ տալ - *տե՛ս* Ցուրտավ ըղնէլ:

ՑՕՐ(Տ)-ՑՕՐՏ - *տե՛ս* ՑՕՐՏ (2): *Դարաբաղ ցօրտ-ցօրտ ըխպիրնէ շատ կա...* (ԱԱ, 60):

- Ցօր(տ)-ցօրտ ճՀուր խըմէլ - *հեգն.* Սառը ջուր խմել՝ իբր հանգստանալու՝ բարկությունը՝ հուզմունքը եւն անցնելու համար: *Հու վէր ինձանա նըղացած ա, թօղէ ցօրտ-ցօրտ ճՀուր խըմէ* (Ձ):

ՈՒ

ՈՒ/ՀՈՒ[2] *(գրբ. ու)* - *շ.* 1. Իրար հետ կապում է նախադասության համազոր անդամները եւ համազոր նախադասությունները: *Մէլիքըն ու Պուղին ք'ընում ըն վէրսի* (ՆԱԲ, 132): 2. Իրար հետ կապում է միմյանց հաջորդող գործողությունները՝ ապա, որից հետո: *Բիրդԝն էս պառավ մարթը էս տըղէն ծէռքան փըռնալ ա հու շըպըռտալ քըցԝլ լը'էը...* (ՀԺՀ, VI, 27):

ՈՒԲԱՎԷՐ - *ած.* 1. Վրանում բնակվող, վրանաբնակ: *Քամէն ուբէք'ը քըշում ա, խը'ղճ ուբավէրնէն մընամ ըն կըրակու մաչի* (Ձ): 2. *փխբ.* Ոչ նստակյաց, քոչվոր: *Ուբավէր մարթ ա չօբան Իսակը. մին օր՝ էս սարումը, մին օր՝ էն սարումը* (Ձ):

ՈՒԲԱՏԸ'Ղ - *գ.* Այն տեղը, որտեղ վրաններ են կանգնեցված՝ կանգնեցվելու են կամ եղել են, վրանատեղի: *Էտ շօնը, ըտի յարալամիշ իլԝծ, մընամ ա ուբատը'ղը նըստած* (Ձ):

ՈՒԲՈՒՌԷՆ - *տե՛ս* ԸԲՈՒՌԷՆ:

ՈՒԲՈՒՌՈՒ - *տե՛ս* ԸԲՈՒՌՈՒ:

ՈՒԲՕՌՆԻ - *տե՛ս* ԸԲՕՌՆԻ:

ՈՒԳԿՆ - *տե՛ս* ՈՒԳԱՆ:

ՈՒԳԱՆ/ՈՒԳԿՆ - *տե՛ս* ՊԷՐՔ (1): *...Ժուղուվուրթէն, հրվաքալ ա, թա.- Վէրէրը քընդէ'ցէք, պաշարնէն պիժինէ'ցէք, մինչէվ Հուգԝանը տՀուս կ'ալը* (ԲՀԲ, 272):

ՈՒԴԱԲ(Ը)ՐԷՆ(Ն)Ի *(ռուս. удобрение)* - *գ.* Հողը պարարտացնելու նյութ, պարարտանյութ: *Ուդաբըրէննի յա շաղ տամ, վէր արտը լ'ավ պէրք տա* (Ձ):

ՈՒԴԱՐ *(ռուս. удар)* - *գ. տե՛ս* ԹԸԽ:

ՈՒԴԻ - *գ.* Հստակ՝ կանոնավոր չխոսող մարդ: *Ուդի յը՞ս, կարքէն խօսէ, տը'սնամ՝ հինչ ըս ասում* (Ձ):

- Ուդի կըտըրց(ը)նէլ - Չարչարել, տանջել: *Խօխէնք'ը մօրը ուդի յըն կըտըրցընում* (Բ):

ՈՒԴՕՁԱՂ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ուդօջաղ անէլ - *տե՛ս* ՊԸՆԸՎԸ'ՐՎԷԼ:

ՈՒՁԲԷԿ - *գ.* Ուզբեկստանի բնիկ ազգը, ինչպես նաեւ այդ ազգի ներկայացուցիչը: *Ասում ըն, ԴօրՀունց Թամարէն տըղան ԴԝՀշք'ԝնդա մին ուզբէկ ա օգ'ալ, պէրալ շէնը* (Բ):

- Ուզբեկու բէղէր - Նոսր՝ ցանցառ որեւէ բան: *Էս էլ հо կընանչու լաք չի՞, ուզբէկու բէղէր ա* (Բ):

ՈՒՁԻՅԱԹ - *տե՛ս* ԻՆՁԸ(Թ)ՄԻԾ:

ՈՒՁ'ԸՂՕԹՈՒՆ/ԸՂՁԸՂՕԹՈՒՆ/ՈՒՁՈՒՂՕԹՈՒՆ - *գ.* Մուրացկանություն, մուրացկան լինելը: *Ուզ'Հուղութունավյօլլա ք'ինօղ մարթ շատ կա ըշխարքումը* (Բ):

- Ուզ'Հուղօթուն անէլ - *տե՛ս* Մուր անէլ:

ՈՒՁՈՒՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ՈՒՁ'ԸՂՕԹՈՒՆ:

ԸՂՁԸՂՕԹՈՒՆ - *տե՛ս* ՈՒՁ'ԸՂՕԹՈՒՆ:

ՈՒՁՈՒՆ *(թրք. yzun)* - *ած. արհմ.* Նիհար եւ բարձրահասակ (մարդկանց մասին): *Ուզուն մարթ ա իլԝլ Ուզաղանց Սիրօժան* (Բ):

- Ուզուն ախմախ/ղուլաղ - *տե՛ս* ԱԽՄԱԽ: *Կուդացին ասըմ ա.- Յը'ս պէն չըմ գ'ՀուդՀում, յը'ս հունցու մին ուզուն ախմախ* (ՀԺՀ, V, 340):

ՈՒՁՈՒՆԴԱՐԱ *(թրք. uzundərə)* - *գ.* Պարեղանակ, որի տակ պարում էին հարսանեկան զույգերը: *Ղըվըլնէն ուզունդարա յըն ածում, փը'սան ա հարթնը պար ըն կ'ամ* (Ձ):

ՈՒԹԱՆԱԼ - *չբ.* Ժամանակին չկատարվել, ուշանալ: *Կօրծ ա լի՞, կանինք', թօղէ պատառ ութանա* (Ձ):

ՈՒԹԱՆՈՒՑ - 1. *ած.* Ութ մաս՝ չափ՝ քանակ՝ ծավալ պարունակող: *Ութանուց դուրբա յա* (Բ): 2. *գ.* Թղթադրամի մեջ ութ նիշ պարունակող թուղթը: *Չօրս ութանուցընն էլ ինձ ա ընգալ* (Բ):

ՈՒԹԱՍ(Ս)ՈՒՆ *(գրբ. ութսուն)* - *թ.* Ութսուն: *Ութասսուն տիրըկանումը Ղազԝր ԝմին փըսակվալ ա* (Բ):

ՈՒԹԷՔԱՆ - *տե՛ս* ՈՒԹԸ'ՔԱՆ:

ՈՒԹԸ'ՔԱՆ/ՈՒԹԷՔԱՆ *(գրբ. ութեքեան)* - *թ.* Ութն էլ, բոլոր ութը միասին: *Օթ տըղա օնէ, ութը'քան էլ՝ ԝզԝփ* (Բ):

ՈՒԹԸՂԱՆԷ/ՈՒԹՈՒՂԱՆԷ - *ած.* Թվականի ցույց տված քանակով սենյակներից բաղկացած՝ սենյականոց: *Ծը'ր տօնը քանէ ութը'ղանէ յա՞* (Բ):

ՈՒԹԸՊԱՏԷԳ' *(գրբ. ութապատիկ)* - *ած., մ.* Ութ անգամ ավելի, ութով բազմապատկած: *Տըղան հօրը անա ութըպատէգ' շատ ա փուլ ըշխադում* (Բ):

ՈՒԹԸՏԱԿ - *տե՛ս* ՈՒԹԸՊԱՏԷԳ':

ՈՒԹԸՓՕԹ/ՈՒԹՈՒՓՕԹ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ութը'փօթ անէլ - *տե՛ս* Էն դօլը տէս անէլ:

ՈՒԹՈՒ *(թրք. ütü)* - *գ.* Արդուկ: *Էն վախտըն էլ սաղ շէնումը մինակ ԿԝփՀունց տանըն ա ՀութՀու իլԝլ* (Ձ):

- ՈՒթՀու տալ - 1. Արդուկելով շորերը հարթեցնել՝ կոկել: *Հարթնը լ'ավ հարթն ար, ամմէն օր պըտրօնէն շօրէրը ՀութՀու վար տամ* (Ձ): 2. *փխբ.* Հարթել, հավասարեցնել: *Սօղանը վարում ա, վը'ղը ՀութՀու տամ* (Ձ): 3. *փխբ. տե՛ս* ՔՕՆԷԼ:

ՈՒԹՈՒՂԱՆԷ - *տե՛ս* ՈՒԹԸՂԱՆԷ:

ՈՒԹՈՒՓՕԹ - *տեմ* ՈՒԹԸՓՕԹ:

ՈՒԺ(Ժ)Է *(ռուս. уже)* - *մ.* Արդեն: *Ասում ա.- Յըտացալ ըս, ուժժէ վէգիրը քը՛ը՛ցալ ա* (Զ):

ՈՒԺ(Ժ)ԸՎԱՆԱԼ/ՈՒԺ(Ժ)ՈՒՎԱՆԱԼ *(գրբ. ուժովանամ)* - *չբ.* Ուժեղ դառնալ: *Էտքան մէսը մին սըհաթումը օտում ըն, ուժժըվանում, քՒնամ ուշափէն յըրա կըռը՛կվ* (Զ):

ՈՒԺ(Ժ)ԸՎՑ(Ը)ՆԷԼ/ՈՒԺ(Ժ)ՈՒՎՑ(Ը)-ՆԷԼ - *նբ.* ՈՒԺ(Ժ)ԸՎԱՆԱԼ-ի:

ՈՒԺ(Ժ)ԸՎՑԸՆՎԷԼ/ՈՒԺ(Ժ)ՈՒՎՑԸՆ-ՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՈՒԺ(Ժ)ԸՎՑ(Ը)ՆԷԼ-ի:

ՈՒԺ(Ժ)ԸՎՕԹՈՒՆ/ՈՒԺ(Ժ)ՈՒՎՕԹՈՒՆ - *գ.* Ուժեղ լինելը, ուժեղի հատկանիշը: *Ուժժըվթունէն մըհար ըտըրան թաՒջիրը ՒրաՒն նըհը՛ետ տանում ա* (Զ):

ՈՒԺ(Ժ)ՈՒՎԱՆԱԼ - *տեմ* ՈՒԺ(Ժ)Ը-ՎԱՆԱԼ:

ՈՒԺ(Ժ)ՈՒՎՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ՈՒԺ-(Ժ)ԸՎՑ(Ը)ՆԷԼ:

ՈՒԺ(Ժ)ՈՒՎՑԸՆՎԷԼ - *տեմ* ՈՒԺ-(Ժ)ԸՎՑԸՆՎԷԼ:

ՈՒԺ(Ժ)ՈՒՎՕԹՈՒՆ - *տեմ* ՈՒԺ-(Ժ)ԸՎՕԹՈՒՆ:

ՈՒԺԻՆ *(ռուս. ужин)* - *տեմ* ՔԸ-ՇԸՐԱՀԱՑ:

ՆԻԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ւլը Ւլին կէրավ, վը՛սկըռը տէն չի քըցից - *տեմ* Շօնը շանը մէսը կէրավ, վը՛սկըռը տէն չի քըցից:

ՈՒԼԱԼՈՒՇ - *տեմ* ԼԱԼՈՒՇ:

ՈՒԼԱԽ *(պրս. olağ (ավանակ)* - *գ.* 1. Բեռնակիր անասուն, գրաստ, հատկապես՝ ավանակ: *Յօր ա օնըմ, տինըմ ուլախէն պէռնէն մաշտէղը, ինքը՝ առաչ ընգնում...* (ՀԺՀ, V, 520): 2. *փխբ.* Տխմար մարդ: *Էտ ուլախը ամմէն օր լակում ա, կամ կընգանը թակում* (Բ):

ՆԻԼԱՆՄ - *տեմ* ԼՕԴՈՒՐ:

ՆԻԼԱՆԱԼ *(գրբ. յուլանամ, ծուլանամ)* - 1. *տեմ* ԼՕԴՈՒՐԱՆԱԼ: 2. *տեմ* ՆԸ-ՂԱՆԱԼ (2):

ՆԻԼԷՌ(ՆԸ) - *տեմ* ՀՆԻԼԷՌ(ՆԸ):

ՆԻԼԻ - *տեմ* ՕԼԻ:

ՆԻԼԼՆԻՀՕ - Գործածվում է կապակցության մեջ:

- ՒլլՒՒհօ անէլ - *տեմ* Խօսկը կըտօրը քըցիլ:

ՈՒԼՆԻԳ - *տեմ* ԿՕԼԱ (1):

ՈՒԼՈՒԴՈՒ/ԸԼԸԴՈՒ - *տեմ* ՀԱՐԱՑ-ՀԸՐՕՑ:

ՆԻԼՆԻՆՔ - *տեմ* ՀՆԻԼՆԻՆՔ:

ՆԻԼՆԻՌՆԷ/ԸԼՆԻՌՆԷ/ՀՆԻԼՆԻՌՆԷ/ՀԸԼՆԻՌՆԷ - *գ.* Լորենազգիների ընտանիքին պատկանող ծառ, լորենի: *Էտ ըխպիրին ղըրաղէն էլ մին մը՛ծ ՒլՒռնէ յա իլՒլ* (Զ):

- ՒլՒռնու ծաղէգ - 1. Բուրավետ միրգ՝ կերակուր եւն: *Էս էլ հօ տՒնՒն չի՞, ՒլՒռնու ծաղէգ ա* (Բ): 2. Գեղեցիկ մարդ՝ առարկա: *Ախճիգ, հինչ ա՞խճիգ, մին ՒլՒռնու ծաղէգ* (Բ):

ՈՒԽ/ՕԽ[3] - *տեմ* ՈՒԽԱ(Յ):

ՈՒԽԱ(Յ)/ՕԽԱ(Յ)/ԸԽՈՒ - *ձ.* Հաճույքի՝ վայելքի՝ հիացման՝ բավականության բացականչություն: *... Քինում ա, համ էլ ասում. - Ուխա՛յ, հինչ լՒՒվ խընձՕրի ծառէր ըն Է՛* (ՀԺՀ, V, 399):

ՈՒԽԱՐ - *գ.* Կրակի կույտ՝ շեղջ: *Թօղ ա անում, քըցՒում ուխարէն մաչը, ինքը՝ քՒնՒՒմ* (Զ):

ՈՒԽԱՐԷԼ - *նբ.* Կրակի մեջ խանձել: *Ըստըրան քըցՒում ըն կըրակէն մաչը, ուխարում* (Զ):

ՈՒԽԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՈՒԽԱՐԷԼ-ի:

ՈՒԽՆԱՎԷՐ - *տեմ* ՈՒԽՏԱՎԷՐ:

ՈՒԽՆՕՐԷՔ - *տեմ* ՕԽՆԸ[1]:

ՈՒԽՏ - *տեմ* ՕԽՏ:

ՈՒԽՏԱՆՈՒՑ - 1. *ած.* Յոթ մաս՝ չափ՝ քանակ՝ ծավալ պարունակող: *Մին ուխտանուց տախտակ ա տամ, թա.- Ինձը՛տէ մին լ՚ավ օխլավ շինի* (Զ): 2. *գ.* Թղթադրամի մեջ յոթ նիշ հարունակող թուղթը: *Կարտը պիժը՛նում ըն, տը՛սնում մին ուխտանուցը պակաս* (Զ):

ՈՒԽՏԱՎԷՐ/ՈՒԽՆԱՎԷՐ/ԸԽՏԱՎԷՐ/ԸԽՆԱՎԷՐ *(գրբ. ուխտաւոր)* - *գ., ած.* Ուխտագնաց, ուխտավոր: *Կէս քըշէրին յավաշ-յավաշ ուխտավէրնէրին սՒՒսը փօրըն ընգավ, խօխա-ըրախա քօն իլին...* (ՋՏ, Ա, 109):

ՈՒԽՏԷՔԱՆ - *տեմ* ՈՒԽՏԸ՛ՔԱՆ:

ՈՒԽՏԸ՛ՔԱՆ/ՈՒԽՏԷՔԱՆ *(գրբ. եօթանեքեան)* - *թ.* Յոթն էլ, բոլոր յոթը միասին: *Ըստըրանք ուխտը՛քան էլ կ՚օղ ըն ինՒՒմ* (Զ):

ՈՒԽՏԸԼՀՆՔԻ - *գ.* Խաղատեսակ: *Էլ ուխտըլիՒՒզի խաղ անօղ չի կա* (Բ):

ՈՒԽՏԸՀՆԻՔ՚ՎԻԼ - *չբ.* Յոթը՝ յոթ հոգի դառնալ: *Ըստըրանք ուխտըհՒՒլ՚վում ըն, քՒնամ* (Զ):

ՈՒԽՏԸՆԱՍ(Ս)ՈՒՆ/ՈՒԽՏՈՒՆԱՍ-(Ս)ՈՒՆ *(գրբ. եօթանասուն)* - *թ.* Յոթանասուն: *Ուխտընասուն օրանը յը՛տը դէրվիշը կ՚ամ ա* (Զ):

ՈՒԽՏԸՊԱՏԷԳ՚/ՈՒԽՏՈՒՊԱՏԷԳ՚ *(գրբ. եօթնպատիկ)* - *ած., մ.* Յոթ անգամ ավելի, յոթով բազմապատկված: *ԹաՒՒջիրը ասում ա.- Յը՛ս կ՚ինը ուխտըպատէգ՚ կըտամ, թաՒՒք՚ի էտ դուշը ինձ տաս* (Զ):

ՈՒԽՏԸՏԱԿ/ՈՒԽՏՈՒՏԱԿ - *տեմ* ՈՒԽՏԸՊԱՏԷԳ՚:

ՈՒԽՏՈՒՆԱՍ(Ս)ՈՒՆ - *տեմ* ՈՒԽ-ՏԸՆԱՍ(Ս)ՈՒՆ:

ՈՒԽՏՈՒՊԱՏԷԳ՚ - *տեմ* ՈՒԽՏԸ-ՊԱՏԷԳ՚:

ՈՒԽՏՈՒՏԱԿ - *տեմ* ՈՒԽՏԸՏԱԿ:

ՈՒԽՈՒՌԱՏԸ՛Ղ - *տեմ* ԸԽՈՒՌԱՏԸ՛Ղ:

ՈՒԽՈՒՌԱՓԼՆԴ - *տեմ* ԸԽՈՒՌԱՓԼՆԴ:

ՈՒԿՕԼ - *տեմ* ԸԿՕԼ:

ՈՒՀ/ՕՀ *(գրբ. օհ)* - *ձ.* 1. Դժգոհության բացականչություն: *ՒՒհ, էս հիշկան ա՞ տաք* (Բ): 2. Վշտի՝ ցավի բացականչություն: *ՒՒհ, Մստուծ, էս հինչ դՒՒրդ ա՞, վէր ինձ ըս տուվալ* (Բ): 3. Հիացմունքի բացականչություն: *ՒՒհ, հինչ լ՚ավ ծՒՒն ա՞ կ՚ամ* (Բ):

ՈՒՂԱԿԱՎԱՐ - *տեմ* ՕՂԱԿԱՎԱՐ:

ՈՒՂԼՈՒՇԱՂ - *տեմ* ՕՂԼՈՒՇԱՂ:

ՈՒՂՏԱՆՉԻ - *ած., գ.* 1. Ուղտ քշող՝ բանեցնող, ուղտով բեռներ տեղափոխող (անձ): *Ուղտանչին ըստրան տինում ա օղտէն յըրա, տանում* (Զ): 2. *տեմ* ՈՒՂՏԱՐԱԾ:

ՈՒՂՏԱՇԿ - *գ. տեմ* Օղտու աշկ:

ՈՒՂՏԱՊԱՀ - *տեմ* ՈՒՂՏԸՊԱՀԷ:

ՈՒՂՏԱՊԱՆ *(գրբ. ուղտապան)* - 1. *տեմ* ՈՒՂՏԱՆՉԻ (1): 2. *տեմ* ՈՒՂՏԸ-ՊԱՀԷ:

ՈՒՂՏԱՊԷՌ(ՆԸ) - *գ.* 1. Ուղտին բարձած բեռ: *Ուղտապէռնը շատ ա ինՒՒմ ծանդըր, օղտը կարում չի պիցըրանա* (Զ): 2. Մեկ ուղտի բարձելու բեռ՝ ծանրություն: *Թաքավէրը ասում ա.- Վէր կարիս իմ ըխճկանըս սըղըցընիս, քը՛ը՛գ օխտը ուղտապէռնը վը՛սկէ յըմ տըլան, վէր կարիս վէչ, կըլՕխըտ կըտըրլան ըմ* (Զ):

ՈՒՂՏԱՊՆԻՐԹ - *գ.* Ուղտի բուրդ: *Ամմէնալ՚ավ պՒՒրթը ուղտապՒՒրթըն ա* (Բ):

ՈՒՂՏԱՎԷՐ - *ած., գ.* 1. Ուղտ հեծած, ուղտով ճանապարհորդող (անձ): *Ուղտավէրը օղտան քըշանում ա, վէր պատառ դինՒՒնա* (Զ): 2. *տեմ* ՈՒՂՏԱՏԱՐ:

ՈՒՂՏԱՏԱՐ - *գ.* Ուղտի տեր, ուղտ ունեցող: *Ուղտատարը ՒՒրՒՒն նըհէտ մին էշու քօռակ ա ընՒՒմ յէր կալած* (ՆԼԺՂԲ, 79):

ՈՒՂՏԱՐԱԾ - *ած., գ.* Ուղտեր արածեցնող (անձ): *Քինամ ա, մին էլ ուղտըրածէն ջըհում* (ՀԱԲ, 15, 41):

ՈՒՂՏԸՊԱՀԷ/ՈՒՂՏԱՊԱՀ - *ած., գ.* Ուղտ պահող՝ խնամող (անձ): *Ըստըրան էլ մին ժՒՒլիգ՚ ուղտըպահէ յա ինՒՒմ* (Զ):

ՈՒՂՈՒԲ - *տեմ* ԲԼԲԼՆԳ՚:

ՈՒՂՈՒԹԱՍԷՐ - *տեմ* ԸՂՈՒԹԱՍԷՐ:

ՈՒՂՈՒԹԱՎԷՐ - *տեմ* ԸՂՈՒԹԱՎԷՐ:

ՈՒՂՈՒԹԱՏԱՐ - *տեմ* ԸՂՈՒԹԱՏԱՐ:

ՈՒՂՈՒԹԱՏԸ՛Ղ - *տեմ* ԸՂՈՒԹԱՏԸ՛Ղ:

ՈՒՂՈՒԹԱՐԱՆ[1] - *տեմ* ԸՂՈՒԹԱՐԱՆ[1]:

ՈՒՂՈՒԹԱՐԱՆ[2] - *տեմ* ԸՂՈՒԹԱՐԱՆ[2]:

ՈՒՂՈՒԹԱՐԱՐ - *տեմ* ԸՂՈՒԹԱՐԱՐ:

ՈՒՂՈՒՎԱՆԱԼ - *տեմ* ԸՂՈՒՎԱՆԱԼ:

ՈՒՂՈՒՎԱՉԻ - *տեմ* ԸՂՈՒՎԱՉԻ:

ՈՒՂՈՒՎԱՐԻ - *տեմ* ԸՂՈՒՎԱՐԻ:

ՈՒՂՈՒՎԷԼ - *տե՛ս* ԸՂՈՒՎԷԼ:

ՈՒՂՈՒՎԸՆԷ - *տե՛ս* ԸՂՈՒՎԸՆԷ:

ՈՒՂՈՒՎՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՂՈՒՎՑ(Ը)ՆԷԼ:

ՈՒՂՈՒՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՂՈՒՎՕԹՈՒՆ:

ՈՒՂԻՒՐԹԸՂԾՐԹ - *տե՛ս* ԸՂԻՒՐԹԸՂԾՐԹ:

ՈՒՂԻՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԸՂԻՒՐԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ՈՒՂԻՒՐԹԻԼ - *տե՛ս* ԸՂԻՒՐԹԻԼ:

ՈՒՂԻՒՐԹՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՂԻՒՐԹՕԹՈՒՆ:

ՈՒՂՈՒՐՄ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄ:

ՈՒՂՈՒՐՄԱԹԱՍ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԱԹԱՍ:

ՈՒՂՈՒՐՄԱԾԱԿ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԱԾԱԿ:

ՈՒՂՈՒՐՄԱԾԻԳ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԱԾԻԳ:

ՈՒՂՈՒՐՄԱՎ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԱՎ:

ՈՒՂՈՒՐՄՈՒՏԱԼ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԸՏԱԼ:

ՈՒՂՈՒՐՄՈՒՑԻՔ(Ի) - *տե՛ս* ԸՂՈՒՐՄԸՑԻՔ(Ի):

ՈՒՂՈՒՐՄՕԹՈՒՆ - *տե՛ս* ԸՂՈՒՐՄՕԹՈՒՆ:

ՈՒՂՕԹԷԼ - *տե՛ս* ԸՂՕԹԷԼ:

ՈՒՂՕՂ - *տե՛ս* ԸՂՕՂ:

ՈՒՂՕՂԷԼ - *տե՛ս* ԸՂՕՂԷԼ:

ՈՒՂՕՂՎԷԼ - *տե՛ս* ԸՂՕՂՎԷԼ:

ՈՒՂԾՐԹ - *տե՛ս* ԸՂԾՐԹ:

ՈՒՂՕՆԷԳ - *տե՛ս* ԸՂՕՆԷԳ:

ՈՒՂՕՐՄԻ - *տե՛ս* ԸՂՕՐՄԻ:

ՈՒՄ - *տե՛ս* ԸՄ:

ՈՒՄԲԸՐ - *տե՛ս* ՈՒՄԲՈՒՐ:

ՈՒՄԲԸՐԱՆԸՎ - *տե՛ս* ՈՒՄԲՈՒՐԱՆԸՎ:

ՈՒՄԲԸՐԱՔԱՄ - *տե՛ս* ՈՒՄԲՈՒՐԱՔԱՄ:

ՈՒՄԲՈՒՐ/ՈՒՄԲԸՐ/ՕՄԸՐ *(հ.ե. *ōmōr, արաբ. omr, umr)* - *գ.* 1. Կյանք, կյանքի տեւողություն: *Ասում ա.- Պա յը՛ս մադար տըղա յըմ, ումբուրըս պատառ իրկընցըրո՛ւ* (ՀԺՀ, V, 484): 2. Ընդհանրապես որեւէ բանի շարունակվելու՝ տեղի ունենալու՝ գոյություն ունենալու ժամանակամիջոցը, տեւողություն: *Նը՛ղ օրէն ումբուրը կարճ կինի* (ԱԲԲ, 77):

- Ումբուրէն դըվա անել - Կյանքի տեւողությունը կրկնապատկել: *Ապան ասում ար.- Մէր թօթէն արաղը մէր ումբուրէն դըվա յա անում* (Բ):

ՈՒՄԲՈՒՐԱՆԸՎ/ՈՒՄԲԸՐԱՆԸՎ - *տե՛ս* ՈՒՄԲՈՒՐ:

ՈՒՄԲՈՒՐԱՔԱՄ/ՈՒՄԲԸՐԱՔԱՄ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ումբուրաքամ անել - Մեռցնել: *Ծօքը մարթին ումբուրաքամ կանէ* (Ձ):

- Ումբուրաքամ ինիլ/տը՛ռնալ - Մեռնել: *Տըղէն թըղէլանը յը՛տը Թամարը էլ կարից վէչ ապըրէ, ումբըրաքամ իլա՛վ* (Ձ):

ՈՒՄԷԴ/ՈՒՄՈՒԴ *(արաբ. umid, պրս. omid, թրք. umut)* - *գ.* 1. Որեւէ ցանկալի բանի սպասելը՝ իրականանալու հավատով, հույս, ակնկալություն: *Ասում ա.- Յը՛ս ումէդ չօնիմ, թա իմ տըղաս կըկ՛ա* (Ձ): 2. *տե՛ս* ՈՒՄԸՂԱՏԸ՛Ղ:

- Ումէդ անել (մինին՝ մին պէնում) - *տե՛ս* Ումէդ տինիլ:

- Ումէդը ըղնէլ (մինին՝ մին պէնու) - Հույսը մեկի՝ մի բանի հետ կապվել, մեկի՝ մի բանի հույսին մնալ: *Կընգա ումէդ ըղնօղը տո՛ւզնը կըմընա* (ԱԲԲ, 45):

- Ումէդը կըտըր(վ)էլ/կուրցընէլ - Այլեւս չհուսալ, հուսահատվել: *Յէշում ա, յէշում, մինչէվ ումէդը կըտըրում ա* (ՆԱԲ, 71):

- Ումէդը կըտըրց(ը)նէլ - Մեկի հույսը կտրել տալ, հուսահատեցնել: *Էս կարկուտը լափ շինացուց ումէդը կըտըրցըրավ* (Բ):

- Ումէդը տինիլ/քըցիլ (մինին՝ մին պէնու յըրա) - Հույսը մեկի՝ մի բան հետ կապել, մեկին՝ մի բանի ապավինել: *Քըշէր-ցիրէկ մըտածըմ ա, մըտածըմ, ումէդը քըցըմ Աստըծու, թա.- Հանբա՛ն մին ճար կինի* (ՀԺՀ, V, 187):

- Ումէդին մընալ (մինին՝ մին պէնու) - *տե՛ս* Ումէդը ըղնէլ (մինին՝ մին պէնու):

- Ումէդ տալ - 1. Հույս ներշնչել, հուսադրել: *Էտ յիթիմնէն ո՛ւրո՛ւր ումէդ տալավ ըտը՛ղ ապրում ըն* (Ձ): 2. Մի բանի խոստում տալ: *Թաքավէրը ումէդ ա տամ, վէր վէրչը լ՛ավ ա ինա՛կան* (Ձ):

ՈՒՄԸՂԱՏԸ՛Ղ/ՈՒՄՈՒՂԱՏԸ՛Ղ - *գ.* Նա, որի հետ կապում են իրենց ակնկալությունը, ապավեն: ... *Օշը բիդի Տըզըփանդա՛ թանա՛փը ա ըրալ, ըղաչանք-պըղատանք ըրալ.- Իմ ումըդատը՛ղըս տու վըս մընացալ, խօխաս սըղըցըրո՛ւ...* (ԱԱ, 36):

ՈՒՄՈՒԴ - *տե՛ս* ՈՒՄԷԴ:

ՈՒՄՈՒԴԱՏԸ՛Ղ - *տե՛ս* ՈՒՄԸՂԱՏԸ՛Ղ:

ՈՒՅԸՂԱՆԱԼ/ՕՅԱՂԱՆԱԼ - *չբ. տե՛ս* Ա՛յիմիշ ինիլ:

ՈՒՅԸՂԼԱՄԻԾ - *տե՛ս* Ա՛ՅԻՄԻԾ:

ՈՒՅԸՂՑ(Ը)ՆԷԼ/ՕՅԱՂՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՈՒՅԸՂԱՆԱԼ-ի:

ՈՒՅԸՂՕԹՈՒՆ/ՕՅԱՂՕԹՈՒՆ - *գ.* Սթափ վիճակ, սթափություն: *Մացակը գ՛ո՛ւդ՛ում չի՝ ույըղօթունը հինչ ա. սաղ օրը հա՛րփա՛ծ ա ինում* (Բ):

ՈՒՅՆԱՎԷՐ - *ած.* Ունկ՝ կանթ ունեցող: *Մին ույնավէր աման ա յօր ունէս, ճիրավ լըցնէս, տաս դէրվիշին* (Ձ):

ՈՒՅՈՒՂ - *գ.* 1. Թռչուններին վախեցնելու եւ փախցնելու համար այգիներում՝ բանջարանոցներում եւն դրված խամաճիկ, խրտվիլակ: *Բըղէրըմը մին քանէ տը՛ղ ույուղ ա տինո՛ւմ, վէր դուշէրը վախին, կ՛ան վէչ խաղուն օտին* (Ձ): 2. *փխբ.* Նիհարած՝ կմախքացած մարդ: *Էտ ույուղը կընգանը օր-իշը՛ղ չի տաս* (Բ):

ՈՒՆԱԲ/ՈՒՆԱՊ *(գրբ. յունապ)* - *գ.* Ունաբենու պտուղը, որ նման է հոնի, սակայն ավելի մեծ եւ քաղցր: *Ունաբ ա քաղում, ածում ջուբէրը* (Ձ):

ՈՒՆԱԲԷ/ՈՒՆԱՊԷ *(գրբ. յունապի)* - *գ.* 1. Դժնիկազգիների ընտանիքին պատկանող ոչ շատ բարձր փշոտ բույս: *Մարտակէրտ մին քանէ տը՛ղ կա ունաբէ* (Բ): 2. Հին պարատեսակ, որ պարում էին աղջիկները՝ կարմիր շորեր հագած: *Այան ասում ա.- Ախճիգ՛ վախտըս յը՛ս ունաբէ յըմ իլա՛ալ պար կ՛ա՛ալիս* (Բ):

ՈՒՆԱՊ - *տե՛ս* ՈՒՆԱԲ:

ՈՒՆԱՊԷ - *տե՛ս* ՈՒՆԱԲԷ:

ՈՒՆԳԱՏԷՆ - *տե՛ս* ՕՆԳԱՏԱ:

ՈՒՆԹՈՒՆԷԼ - *տե՛ս* ԸՆԹՈՒՆԷԼ:

ՈՒՆԹՈՒՆՎԷԼ - *տե՛ս* ԸՆԹՈՒՆՎԷԼ:

ՈՒՆՋԱՀԱՄ/ԸՆՋԱՀԱՄ - 1. *գ.* Ժանգի համ: *Ճիրան ունջահամ ա կ՛աս* (Բ): 2. *ած.* Ժանգի համ ունեցող: *Ունջահամ ճո՛ւր ա* (Բ):

ՈՒՆՋԱՃԻ՛ՒՐ/ԸՆՋԱՃԻ՛ՒՐ - *գ.* 1. Մեջը ժանգ խառնված ջուր, ժանգաջուր: *Կըռանը պէնում ըն, ունջաճի՛ւր ա կ՛ամ* (Բ): 2. Ծխնելույզից՝ վառարանների խողովակից եւն կաթող մրոտ ջուրը: *Հո՛ւրթա՛ն ունջաճի՛ւր ա կաթում* (Բ):

ՈՒՆՋՈՒԹԱԹԱԽ/ԸՆՋՈՒԹԱԹԱԽ - *ած.* 1. Ժանգով պատված, ժանգոտած, ժանգ բռնած: *Էտ ունջութաթախ չինը յօր ա օնում, ք՛ինըմ հօնծ* (Ձ): 2. Շատ կեղտոտ, հատկապես՝ մրով թաթախված: *Ունջութաթախ շօ՛րէր ա կ՛ը՛ցալ* (Բ):

ՈՒՆՋՈՒԿԱ՛ԼԻԼ/ԸՆՋՈՒԿԱ՛ԼԻԼ - *չբ.* 1. Ժանգոտվել, վրան ժանգ նստել: *Յակատը ունջուկա՛լա՛ալ ա* (Բ): 2. Ծխնելույզը՝ վառարանի խողովակը եւն մրով լցվել: *Փիչին դուրբան ունջուկա՛լա՛ալ ա, խէ թափ չը՞ս տամ* (Բ): 3. Ժանգագույն կեղտով պատվել (ատամների մասին): *Կըռընէն ունջուկա՛լա՛ալ ա* (Բ): 4. Կեղտոտվել, հատկապես՝ մրով: *Տանը պատէրը ունջուկա՛լա՛ալ ա* (Բ):

ՈՒՆՋՈՒՎԱՐ - *տե՛ս* ՋԸՎԱՐ:

ՈՒՆՋՈՒՏՑ(Ը)ՆԷԼ/ԸՆՋՈՒՏՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՈՒՆՋՕՏԷԼ-ի:

ՈՒՆՋՕՏ - *տե՛ս* ՕՆՋՈՒՏ:

ՈՒՆՋՕՏԷԼ/ԸՆՋՕՏԷԼ - *տե՛ս* ՈՒՆՋԻ՛ՒԿԱ՛ԼԻԼ:

ՈՒՆՔ - *տե՛ս* ՕՆՔ:

ՈՒՆՔԱԿԱԽ - *ած. տե՛ս* Էշին չու ասած:

ՈՒՆՔԱՄԱՉ - *գ.* Հոնքերի մեջը, երկու հոնքերի միջի տարածությունը: *Փանդ-վը թըխում ա, ունքամաչը ճըղում* (Ձ):

- Ունքամաչը յըէտ կ'ալ/յըէտ ք'ինիլ/պէնվալ - Մռայլությունն անցնել, տրամադրությունը բարձրանալ: *Վէր ըտի յա ասում, թաքավէրին ունքամաչը յըէտ ա ք'ունում* (Ձ):

- Ունքամաչը փօթ ըղնէլ - *տե՛ս* Ունքըմաչան աղու կաթէլ:

- Ունքամաչը փօթ քըցիլ - Մռայլվել, տխրել: *Կընէգ'ը ասմա.- Մ'մարթ, ունքամաչըտ փօթ մէ՛լ քըցիլ, յըէր կաց ոչչը մօ՛րթէ՝ ք'ըէփ անինք', լ'ուսը կըծանք'ի, պարին նիհէտը* (ԱԱ, 84):

- Ունքըմաչան աղու կաթէլ - Շատ մռայլ՝ տխուր լինել: *Թաքավէրըն էլ հիշքան անում ա, տըղան էլ փըսակվում չի, ունքըմաչան աղուն կաթում ա* (ՆԼՂԺԲ, 49):

- Ունքըմաչան ան'ուն կաթէլ - 1. *տե՛ս* Ունքըմաչան աղու կաթէլ: 2. Խիստ բարկացած՝ կատաղած լինել, արյունարբու լինել: ... *Տըէղ էլ ըպրէլիս ա ինում մին այբէջանռ, ունքըմաչան ան'ուն կըթէլիս մարթ* (ՀԺՀ, VII, 158):

- Ունքըմաչին յէշիլ - Ակնապիշ մեկին նայել՝ ասելիքը չիմանալով, նրա հրահանգին սպասելով, ինչ-որ բան ակնարկելով եւն: *Թաքավէրը վէր ըտի յա ասում, վէզիրը մընամ ա ունքըմաչին յիշիլիս* (Ձ):

ՈՒՆՔԱՊԷՑ - *ած.* Ձվարթ տեսք ունեցող, ոչ մռայլադեմ: *Ունքապէց կընէգ' ա մէր Նուբարէն ըսկէսուրը* (Բ):

ՈՒՆՔԸԿԱԽԷԼ - *չբ. տե՛ս* Օնքէրը բէշ անէլ:

ՈՒՇ *(գրբ. ուշ)* - *տե՛ս* ՅԸՏԷ:

ՈՒՇԱԴ - *տե՛ս* ՈՒՇԱՏ:

ՈՒՇԱՆԱԼ *(գրբ. ուշանամ)* - *տե՛ս* ՅԸՏԱՆԱԼ:

ՈՒՇԱՏ/ՈՒՇԱԴ *(ռուս. ушат)* - *գ.* Փայտից պատրաստած տակառանման հարմարանք, որ գրաստի երկու կողմերին դնելով՝ թութ՝ խաղող՝ հեղուկ եւն են տեղափոխում: *Ուշըտնէն քըցում ա էշավը, ըսքըսում թօթը կըրէլը* (Ձ):

ՈՒՇԱՓ - *տե՛ս* ՕՇԱՓ:

ՈՒՇԸԷՆԷ - *գ.* Ուշահաս խաղողի տեսակ: *Ուշը՛էնէն հօքտէմբէրումըն ըն քաղում* (Ձ):

ՈՒՇԸՓՕԹՈՒՆ/ՕՇԱՓՕԹՈՒՆ - *գ.* 1. Հրեշին՝ դեւին հատուկ արարք, գազանություն: *Ուշըփօթունը էտ մարթին անա անպակաս ար, ամմէն օր մարթ ար ըսպանում* (Ձ): 2. *փխբ.* Շատակերություն: *Ուշըփօթունէն դ'ադ'ան վէշ մինը Սէտրակէն ղօնաղ չի ծէն տամ* (Բ):

Ն'ՈՒՇԿ'Ն'ՈՒՆԱ'/ԸՇԿ'Ն'ՈՒՆԱ' - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ն'ուշկ'ն'ունա' անէլ - Շատ ծիծաղեցնելով՝ թուլացնել, ուշաթափության հասցնել: *Տընատարը ծընծըղէլի պէնէր ա պատմում, ղունըղնէրէն ն'ուշկ'ն'ունա' անում* (Ձ):

- Ն'ուշկ'ն'ունա' ինիլ/ք'ինիլ - Շատ ծիծաղելուց թուլանալ՝ ուշագնաց վիճակի հասնել: *Մարթը ն'ուշկ'ն'ունա' յա ընն'ում, թա.- Ծը՛էտ ախպէր, մին լիտըր յը՛էղը ըշտըղա հիլըցըրէ՞ր* (ԱԱռ, 23):

ՈՒՇՈՒՆՑ/ԸՇՈՒՆՑ *(գրբ. յիշոցք)* - *գ.* Հիշոց, հայհոյանք: *Պըտրօնէն ուշունցնէրէն հարթնը մըհալ չի տին'ում* (Ձ):

- Ուշունց տալ - Հայհոյել: *Կընռվէն թ'ունդ վախտը կուճուր ախպէրը մը՛ծէն ուշունց ա տամ. էլ հ'ար, մար չի թօղում* (ՆԼՂԺԲ, 122):

ՈՒՇՈՒՆՑԱԿՕԽ/ԸՇՈՒՆՑԱԿՕԽ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ուշունցակօխ անէլ - Մեկին՝ մի բանի շատ հայհոյել: *Բաղվանչին էտ վէր տը՛էսնում ա, էտ խօնցը ուշունցակօխ ա անում* (Ձ):

- Ուշունցակօխ ինիլ/տը՛էռնալ - Հայհոյանքների ենթարկվել: *Էտ կընէգ'ը շատ ա ուշունցակօխ ին'ում, ամմա պըտրօնէն ջօղաբը տամ չի, սուս ա անում* (Ձ):

ՈՒՇՈՒՆՑԱՏԸ՛Ղ/ԸՇՈՒՆՑԱՏԸ՛Ղ - *գ.* Հայհոյանքի՝ հայհոյելու թիրախ՝ տեղ՝ առարկա: *Ըտըրա ուշունցատը՛ղընն էլ կընէգ'ը ա ին'ում* (Ձ):

ՈՒՇՈՒՆՑԱՏՈՒ/ԸՇՈՒՆՑԱՏՈՒ *(գրբ. յիշոցատու)* - *ած.* Հիշոցներ տվող, հայհոյող: *Սարօ ամին կօգ'ի ուշունցատու, ամմա լ'ավ մարթ ա իլալ* (Բ):

ՈՒՇՈՒՆՑ(Ը)ՌԸ՛Խ/ԸՇՈՒՆՑ(Ը)ՌԸ՛Խ - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑԱՏՈՒ:

ՈՒՇՈՒՆՔԱՇԷՔ' - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՇԷՔ':

ՈՒՇՈՒՆՔԱՀԱՍ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՀԱՍ:

ՈՒՇՈՒՆՔԱՃՕՏ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՃՕՏ:

ՈՒՇՈՒՆՔԱՄՕՇ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՄՕՇ:

ՈՒՇՈՒՆՔԱՆԱԼ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՆԱԼ:

ՈՒՇՈՒՆՔԱՎԱՐ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՎԱՐ:

ՈՒՇՈՒՆՔԱՏԱ'ՆՁ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԱՏԱ'ՆՁ:

ՈՒՇՈՒՆՔԸ՛ՆԷ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԸ՛ՆԷ:

ՈՒՇՈՒՆՔ(Ը)ՌԸ՛Խ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔ(Ը)ՌԸ՛Խ:

ՈՒՇՈՒՆՔԿ'Ա'ՐԻ - *տե՛ս* ԸՇՈՒՆՔԿ'Ա'ՐԻ:

ՈՒՉ - *տե՛ս* ՎԷՉ: *Մահը կըզնըվածկ'ամ ա, ասում.- Բօլ ա, հիշքան նէրվալ ըս, էլ խօսիս ուչ* (ՆԱԲ, 65):

ՈՒՉԱՍՏԸԿ/ՉԱՍՏՕԿ *(ռուս. участок)* - *գ.* Որեւէ նպատակով առանձնացրած տարածություն՝ տեղամաս: *Հայրօն ն'ուրանն ուչաստըկըմը մին դանգ'ան յա շինալ* (Բ):

ՈՒՉ(Ը)ՐԷԴ - *տե՛ս* ՕՉ(Ը)ՐԷԴ:

ՈՒՌԹԱՆԱ - *տե՛ս* ԸՌՈՒԹԱՆԱ:

ՈՒՌԹԸՆԱՀԱՑ - *տե՛ս* ԸՌՈՒԹԸՆԱՀԱՑ:

ՈՒՌԹԸՆԱ(Ն)Ց - *տե՛ս* ԸՌՈՒԹԸՆԱ(Ն)Ց:

ՈՒՌՆԱԼ - *տե՛ս* ՕՌՆԱԼ:

ՈՒՌՉԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. ուռուցանեմ)* - *նբ.* ՕՌՉԻԼ-ի:

ՈՒՌՌԱ *(ռուս. ура, անգլ. hurrah)* - *ձ.* Ցնծության՝ հիացման՝ հաղթանակի եւն բացականչություն: *Ուռռա՛, ծ'ունը նի յա կ'ալալ* (Բ):

- Ուռռա անէլ - 1. Ցնծությունից՝ հիացմունքից՝ ուրախությունից գոռալ՝ «ուռռա» կանչել: *Թաքավէրը վէր տ'ուս ա կ'ամ, լօխ ուռռա յըն անում* (Ձ): 2. Առանց կշռադատելու՝ հանգամանքները հաշվի առնելու՝ որեւէ բան անել: *Էս մարթը, լօխ մընանա քըցանծ, ուռռա ընէլավ ք'ընում ա* (ՆԱԲ, 63): 3. Գործը արագ եւ անորակ անել, վերջացնել: *Ուռռա յըն անում, տանը պատէրը մին շէփտումը տին'ում* (Ձ):

ՈՒՌՌԱԼ - *տե՛ս* ՕՌՆԱԼ:

ՈՒՌՈՒԹԱՆԱ - *տե՛ս* ԸՌՈՒԹԱՆԱ:

ՈՒՌՈՒԹՈՒՆԱՀԱՑ - *տե՛ս* ԸՌՈՒԹԸՆԱՀԱՑ:

ՈՒՌՈՒԹՈՒՆԱ(Ն)Ց - *տե՛ս* ԸՌՈՒԹԸՆԱ(Ն)Ց:

ՈՒՌՈՒՆ - *գ.* Շատ վատ եղանակ՝ սելավ, բուք ու բորան եւն: *Էս ուռունավը ըշտը՛էղ ը՞ս ք'ինամ* (Բ):

ՈՒՌՈՒՆՑ - *տե՛ս* ԱՌԱՆՑ:

ՈՒՌՈՒՇՎԱԹ - *տե՛ս* ԸՌՈՒՇՎԱԹ:

ՈՒՌՈՒՍ - *տե՛ս* ԸՌՈՒՍ:

ՈՒՍՈՒՍԱՆԱԼ - *տե՛ս* ԸՌՈՒՍԱՆԱԼ:

ՈՒՌՈՒՍԻ - *տե՛ս* ԸՌՈՒՍԻ:

ՈՒՌՈՒՍԿ - *տե՛ս* ՕՌՈՒՍԿ:

ՈՒՌՈՒՍՈՒՀԱՑ(Ց)Է - *տե՛ս* ԸՌՈՒՍԸՀԱՑ(Ց)Է:

ՈՒՌՈՒՍՈՒՎԱՉԻ - *տե՛ս* ԸՌՈՒՍՈՒՎԱՉԻ:

ՈՒՌՈՒՍՈՒՎԱՐԻ - *տե՛ս* ԸՌՈՒՍՈՒՎԱՐԻ:

ՈՒՌՈՒՍՕԹԻ - *տե՛ս* ԸՌՈՒՍՕԹԻ:

ՈՒՌՈՒՍՕՎՈՒՐ - *տե՛ս* ԸՌՈՒՍՕՎՈՒՐ:

ՈՒՌՈՒՔ - *տե՛ս* ԸՌՈՒՔ:

ՈՒՌՈՒՔԱՔԱՐ - *տե՛ս* ԸՌՈՒՔԱՔԱՐ:

ՈՒՌՕՔ - *տե՛ս* ԸՌՈՒՔ:

ՈՒՍԱԾԱԿ - *գ.* Լծի երկու ծայրերին բացված անցքերը, որոնց միջով անց են կացնում սամիները: *Ուսածակը կուճի յա ինՀում, սամէն նի չը մընանում* (Ձ):

ՈՒՍԱՇՕՐ - *գ.* Ուսին գցելու շոր՝ կուժը կամ այլ ծանրություն ուսին կրելու համար: *Ախճիգը մընանա քըցՀում ա, ուսաշՕրը թօղում ըխպիրին* (Ձ):

ՈՒՍԿՈՒՍՈՒՐ - *տե՛ս* ԸՍԿԷՍՈՒՐ:

ՆՈՒՍ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Նուստը կըտըրէլ/հըվաքէլ/օնէլ - *տե՛ս* Ափաթը կըտըրէլ (1):

ՈՒՍՏԱ *(պրս., թրք. usta)* - 1. *գ.* Վարպետ, արհեստավոր: *Մին ուստա մին մարթու հէտէ մին ցակատ ա շինում...* (Ձ): 2. *ած.* Իր գործին հմոտ, ճարտար: *Ուստա հՕնձ անօղ ա իլալ Սանթուր դային* (Բ):

ՈՒՍՏԱԲԱՇԻ *(պրս., թրք. usta +պրս., թրք. baš (գլուխ)* - *գ.* Վարպետների գլխավոր, ավագ, վարպետ: *Ուստաբաշին ուստօցը հըվաքում ա, քՀինամ պալատը* (Ձ):

ՈՒՍՏԱՑՈՒ - *գ.* Վարպետ դառնալու թեկնածու, վարպետացու: *Ուստան ասում ա.- Էտ խօխան լՀավ ուստացու վա* (Ձ):

ՈՒՍՏԱՓԷՇԱՐ - *տե՛ս* ՈՒՍՏԱ (1): *Յանարալ Մանթօվը վէր յըէտ կՀամ ա Չանախչի, ՀուրանՆըհըէտ Կիրօվաբաթա ուստափէշար էրկու ախպէր ա պիրում...* (ԱԱ, 34):

ՈՒՍՏԱՓԷՇԱՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՈՒՍՏՕԹՈՒՆ:

ՈՒՍՏԱՔԱՐ *(թրք. ustakar)* - *տե՛ս* ՈՒՍՏԱ (1):

ՈՒՍՏԱՔԱՐՕԹՈՒՆ - *տե՛ս* ՈՒՍՏՕԹՈՒՆ:

ՈՒՍՏԸՌԸԽ - *ած.* Վարպետի հմտություն ունեցող: *Ուստըռըէխ մարթ ա մէր Տիկրանը, լՀավ պատ ա շարում* (Բ):

ՈՒՍՏԸՎԱՉԻ - *տե՛ս* ՈՒՍՏԸՎԱՐԻ:

ՈՒՍՏԸՎԱՐԻ - *մ.* Վարպետորեն, վարպետաբար: *Էտ տըղան հանց ուստըվարի կօրծ ա անում, լօխ մընամ ըն մաթ մընացած* (Ձ):

ՈՒՍՏՈՒԳԷԼ - *տե՛ս* ԸՍՏՈՒԳԷԼ:

ՈՒՍՏՈՒԾԱՆԱ - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԱՆԱ:

ՈՒՍՏՈՒԾԱՇԷՆ - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԱՇԷՆ:

ՈՒՍՏՈՒԾԱՊԱՇՏ - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԱՊԱՇՏ:

ՈՒՍՏՈՒԾԱՍԷՐ - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԱՍԷՐ:

ՈՒՍՏՈՒԾԱՎԱԽ - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԱՎԱԽ:

ՈՒՍՏՈՒԾԱՏՈՒՐ - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԱՏՈՒՐ:

ՈՒՍՏՈՒԾԸԷՎՈՒՐ - *տե՛ս* ԸՍՏՈՒԾԸԷՎՈՒՐ:

ՈՒՍՏՕԹՈՒՆ - *գ.* Վարպետ՝ արհեստավոր լինելը, վարպետություն: *ԴՀլգՀար Սիմօնը ուստօթունը ՀուրանՆ հօրը անա յա սըվըէրալ* (Բ):

ՈՒՍՈՒՄ/ՀՈՒՍՈՒՄ *(գրբ. ուսումն)* - *գ.* Կրթություն, ուսանելը: *Ուսումըն ա մարթին մարթ շինում* (Ձ):

- Ուսում առնէլ - Կրթություն ստանալ, ուսանել: *Մին թաքավըէրու մին շատ կՀարթՀած, ուսում առած ախճիգ ա ինՀում* (ՀԺՀ, VII, 24):

- Ուսում տալ - Մեկի ուսման՝ կրթության մասին հոգ տանել: *Ասում ըն մէր Ղալին համփէքը օգըմ ըն էտ խուխօցը էջմիյածին ղարկին, ուսում տան...* (ՋՏ, Ա, 58):

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ/ՀՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ *(գրբ. ուսումնական (ուսման տեղյակ)* - *ած., գ.* Ուսում ստացած, ուսյալ (մարդ): *ՍօվդաքՀարը թամաքՀար ա, ուսումնականը՝ անբարիշ...* (ՋՏ, Բ, 138):

ՈՒՍՈՒՄՆԱՎԷՐ/ՀՈՒՍՈՒՄՆԱՎԷՐ - *ած., գ.* Ուսում առնող՝ ուսանող (անձ): *Էրկու խօխա օնէ, ճօխտըն էլ՝ ուսումնավէր* (Ձ):

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ/ՀՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ - *գ.* Միջնակարգ կամ տարրական մասնագիտական ուսումնական հաստատություն: *Էն վախտըն էլ Ղարաբաղ մինակ Շուշի յա իլալ ուսումնարան* (Ձ):

ՆՒՎՈՒԼՆՒԿ - *տե՛ս* ԸՎԻԼՆՒԿ:

ՈՒՎ-ՈՒՎ - *տե՛ս* LO-LO[2] (2):

ՈՒՎՈՒՎԱՆԷ - *տե՛ս* LO-LO[2](1):

ՈՒՏԷԼԻ/ՕՏԷԼԻ *(գրբ. ուտելի)* - 1. *ած.* Ուտելու համար պիտանի: *Տըղան հըրամմայըմ ա ծառին, վըէր էրկու փայ օտէլի պըէն պէրի* (ՀԺՀ, V, 65): 2. *գ.* Ուտելու բան, ուտելիք: *Հինչ ա՞նին, վէչ ուտէլի կա, վէչ խըմէլի* (ԲՀԲ, 49):

ՈՒՏԷՄ-ՏԻՏԷՄ(ՆԸ)/ԿՈՒՏԷՄ-ՏԻՏԷՄ(ՆԸ)/ՈՒՏԻՄ-ՏԻՏԷՄ(ՆԸ)/ԿՈՒՏԻՄ-ՏԻՏԷՄ(ՆԸ) - *գ.* Վայրի ուտելի բանջար: *Ժինգալավ հացէն մաչը ուտէմ-տիտէմ էլ ըն քըցիս* (Բ):

ՈՒՏԸԼԸՊԱՆ/ՈՒՏՈՒԼԸՊԱՆ - *գ. հվք.* Ուտելու համար պիտանի բաներ: *Ուտըլըէղանը խուրջինան տՀուս ա տամ, տափէն շարում* (Ձ):

ՈՒՏԸՑ(Ը)ՆԷԼ/ՈՒՏՈՒՑ(Ը)ՆԷԼ/ՈՒՏՈՒՑՈՒՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՕՏԷԼ-ի:

ՈՒՏԸՑ(Ը)ՆԷԼ-ԽԸՄԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՕՏԷԼ-ԽԸՄԷԼ-ի:

ՈՒՏԻՄ-ՏԻՏԷՄ(ՆԸ) - *տե՛ս* ՈՒՏԷՄ-ՏԻՏԷՄ(ՆԸ):

ՆՒՏԿՆԻՆ - *տե՛ս* ՆՒՔԿՆԻՆ:

ՈՒՏՈՒՍ - *տե՛ս* ՕՏԷՍ:

ՈՒՏՈՒՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՈՒՏԸՑ(Ը)ՆԷԼ:

ՈՒՏՈՒՑՈՒՆԷԼ - *տե՛ս* ՈՒՏԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԷԹԱԿ *(գրբ. փեթակ)* - *գ.* Հատուկ ձեւով պատրաստած արկղ կամ կողով, որի մեջ մեղուներ են պահում: *Փէթակը պէնում ա, տը՛սնում՝ մաչին ճ՝ անջ չի կա* (Ձ):

ՓԷԼՇԷՐ *(ռուս. фельдшер, գերմ. Feldschere)* - *գ.* Միջնակարգ բժշկական կրթությամբ մասնագետ, բուժակ: *Տըրըխտըգ՛ը՛ցէ Վաղարշակը լ՛ավ փէլշէր ա իլալ* (Բ):

ՓԷԼՇԷՐՕԹՌԻՆ - *գ.* Բուժակի մասնագիտությունը՝ զբաղմունքը: *Փէլշէրօթունը լ՛ավ փէշակ ա* (Բ):

ՓԷԼՈՒՆ/ՓԸ՝ԼՈՒՆ/ՓԻԼՕՆ *(գրբ. փիլոն)* - *գ.* Անթեւ երկար հագուստ, որ կոճկվում է միայն կրծքին եւ որ քահանաները ձգում են ուսերին եկեղեցական արարողությունների ժամանակ: *Դէրը փէլ՝ ունը հըվաքում ա, տը՛ղատ փախճում...* (ՀԺՀ, VII, 364):

ՓԷՂ - *տե՛ս* ՓԸ՝Ղ:

ՓԷՅԴԱ/ՓԱՅԴԱ *(արաբ. faide, թրք. fayda)* - *գ.* Օգուտ, օգտակար ազդեցություն: *... Տէսի, վէր վէչ մինան մին փայդա չի կա, էլիա իմ ղադիմի զուռնան ու տըմբըլան յէր կալի* (ՁՏ, Բ, 94):

- Փէյդա անէլ - Օգնել, օգտակար ազդեցություն ունենալ: *Տըսնաս ըք, վէր վէչ մին պէն փէյդա չի ընէս, ճէխէրը կըրակ ըք տաս...* (ՀԲ, 353):

ՓԷՅԻՆ - *տե՛ս* ՓԷՅՆ(Ը):

ՓԷՅՆ(Ը)/ՓԷՅԻՆ *(գրբ. փին (աղբ)* - *գ.* 1. Գոմաղբ: *Փէյնը հըվաքում ըն, տանում ածում բուստընէն* (Ձ): 2. *փխբ.* Անհամ ուտելիք (հատկապես՝ միրգ, բանջարեղեն): *Էս էլ հօ խըյար չի՞, փէյն ա* (Բ):

- Փէյնում փըսած *(ղըլղան, կ՛ ՝ ան՝ ի, փիրփէտ)* - Փարթամ (բույսերի մասին): *Կընանչի, հինչ կընա՞նչի, հանց ա փէյնում փըսած ղըլղան* (Բ):

ՓԷՅՆԻԼ - *նբ.* Հողը գոմաղբով սնուցել՝ պարարտացնել: *Ապան ամմէն տարէ բաստանը փէյնում ար* (Բ):

ՓԷՅՎԱ - *ած.* Մշակովի, խոշոր (զկեռի մասին): *Տումէ կա շատ փէյվա զըկըռ* (Բ):

ՓԷՆՋ՝ ՈՒ - *տե՛ս* ՓԸՆՋԸՐՈՒ:

ՓԷՇ - *տե՛ս* ՓԷՇԿ:

ՓԷՇԱԿ - *տե՛ս* ՓԷՇ՝ ԱԿ:

ՓԷՇ՝ ԱԿ/ՓԷՇԱԿ/ՓԸ՝ՇՆԱԿ *(պրս. piše)* - *գ.* Արհեստ, զբաղմունք: *Էք՛սը իրէք ախպէրքընն էլ ճընապար ըն ընգընըմ, ք՛ինին ամէգ՛ա մին փէշ՝ ակ սըվէրին* (ՀԺՀ, V, 332):

- Փըշ՝ ակէն անըմը հինչ ա՞ - Ասում են նրանց մասին, ովքեր, ազատ՝ անգործ՝ պարապ լինելով, չեն ցանկանում որեւէ բան անել: *Նախագան ասում ա.- Փըշ՝ ակէտ անումը հինչ ա՞, վէր օգում չըս կըլխօգէն խօգ՛էրը պահիս* (Ձ):

ՓԷՇԱՎ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փէշավ ք՛ինիլ - Միզելու գնալ: *...Տըռնանը ըրգան տամ ա, տ՝ ուս կ՛ամ, փէշավ ք՛ընում* (ՀԱԲ, 15, 141):

ՓԷՇԱՔ՝ ԱՐ - *տե՛ս* ՓԷՇ՝ ԱՔ՝ ԱՐ:

ՓԷՇ՝ ԱՔ՝ ԱՐ/ՓԷՇԱՔ՝ ԱՐ/ՓԸ՝ՇՆԱՔ՝ ԱՐ *(պրս. pišekar)* - *գ., ած.* Որեւէ արհեստով զբաղվող (մարդ), արհեստավոր: *Փէշ՝ ակ՝ ար մարթը տ՝ ուգնը չի մընալ* (Ձ):

ՓԷՇԱՔ՝ ԱՐՕԹՌԻՆ - *տե՛ս* ՓԷՇ՝ ԱՔ՝ ԱՐՕԹՌԻՆ:

ՓԷՇ՝ ԱՔ՝ ԱՐՕԹՌԻՆ/ՓԷՇԱՔ՝ ԱՐՕԹՌԻՆ/ՓԸ՝ՇՆԱՔ՝ ԱՐՕԹՌԻՆ - *գ.* Արհեստավոր լինելը, արհեստավորի զբաղմունքը: *Միհէնգ՛վա ջըհիլնէն փէշ՝ ակ՝ ար՝ օթ՝ ուն սըվըրէլին տը՛ղ սաղ օրը հըպարապ շօռ ըն կ՛ամ* (Բ):

ՓԷՇԽՈՒՐԹ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փէշխուրթ անէլ/ինիլ - *տե՛ս* ՉԸԼԷԼ (2):

ՓԷՇԿ/ՓԷՇ *(պրս. peš)* - *գ.* 1. Ձգեստի քղանցք: *Հունց ա պըտահում՝ հարթնա-*

նը փէշկը ըղնում ա փիչին յըրա, մըրկում (Զ): 2. *տեմ* ԳՈՒՐԳ: 3. Որեւէ տեղանքի ծայրամաս: *Ծիյան վէր ա կ'ամ, յափընջին կըլխէն քըցում, ըխպիրին փէշկէն քօն ընում* (ՆԱԲ, 42):

- Փէշկան ծիք տալ - Զգուշացնել: *Կընէգ'ը տը՛սնում ա, վէր մարթը հա՛ր-փում ա, փէշկան ծիք' ա տամ* (Զ):

- Փէշկան կախ ինիլ/կէնալ - 1. *տեմ* Փէշկէր(ք)ը ըղնէլ: 2. Մեկից չպոկվել՝ ձեռք չքաշել: *Մը՛ծ խօխա յա, ամմա սաղ օրը էն ա մօրը փէշկան կախ* (Բ):

- Փէշկան կըտ(ը)ռէլ, ծույնանը քըցիլ - Շատ աղքատ ապրել, մի կերպ տնտեսելով՝ ծայրը-ծայրին հասցնել: *Դէ Ա՛զնէվը՛ն էլ ըրփըվէրի կընէգ' ա, լի՞, փէշկան կըտրում ա, ծույնանը քըցի՛ում, խօխէնք'ը պահում* (Զ):

- Փէշկավ սըրփա՛ծ խընձօ՛ր - Աչքի ընկնող, ուշադրություն գրավող: *Փէշկավ սըրփա՛ծ խընձօ՛ր ա մէր Ասթըխէգ'ը, ըշտը՛ղ ք'ունո՛ւմ ա, լօխ ո՛ւրա՛ն ըն յէշ'ում* (Բ):

- Փէշկէր(ք)ը ըղնէլ - Մեկին թախանձագին խնդրել, աղաչել: *Ք'ինամ ա խանէն փէշկէրքը ըղնում, տըղէն ըզադում* (Զ):

- Փէշկէր(ք)ը լ՛ուզիլ/լ՛ուզ տալ - Ստորաքարշություն անել, քծնել: *Էն հինչ մարթ ա՞, ըստըրա-ընդրա փէշկէրքը լ՛ուզիլա՛վ ա ապըրում* (Բ):

- Փէշկէր(ք)ըն էլ ա ըռազի - Լիովին համաձայն է: *Ասում ա.- Հու վա՞ ասալ, թա Ղօ՛ր՛ուց Թամարան օգում չի՝ ո՛ւրա՛ն ախճիգ'ը տա իմ տըղէս, փէշկէրքըն էլ ա ըռազի* (Զ):

- Փէշկէր(ք)ըն էլ ա պը՛էլ - Լրիվությամբ գիժ՝ խենթ է: *Սօջուն փէշկէրքըն էլ ա պը՛էլ, սա՛յաղ կաց* (Բ):

- Փէշկէր(ք)ը վը՛սկէ - Շատ աշխատասեր: *Փէշկէրը վը՛սկէ մարթ ա իլա՛լ Սունէն Ա՛լիսանը* (Բ):

- Փէշկը թափ տալ - Հրաժարվել, ձեռք քաշել: *Հա՛ղը տը՛սնում ա, վէր տըղան կ'ուղօթունը թա՛ղգ'ում չի, փէշկը թափ ա տամ նը՛ստա* (Զ):

- Փէշկը կըլխան կապ տալ - *տեմ* Դարյան կըլխավը ածէլ:

- Փէշկը կ'ումաշին պօզ'ավը օնէլ - *տեմ* Ք'ա՛նդիրը ծըմակավը օնէլ:

- Փէշկը նի կէնալ - Արագ-արագ որեւէ բան անել, շտապել: *Փէշկըտ նի յա՞ կացալ, խէ կամանց չը՞ս ք'ինամ* (Բ):

- Փէշկը պէց թօղնէլ - Մեկի հովանավորությունից՝ խնամակալությունից՝ ընկերակցությունից հրաժարվել՝ զրկվել: *Ըտի էտ կընէգ'ը ախպօրը փէշկը պէց ա թօղնում* (Զ):

- Փէշկը փըռնէլ - 1. Մեկի հովանավորությանը՝ խնամակալությանը՝ ընկերակցությանը ապավինել, հույսը մեկի վրա դնել: *Ըրփըվէրին էտ հըրուստէն փէշկը փըռնում ա, յըթիմնէն պահում, մը՛ծըցընում* (Զ): 2. *տեմ* Փէշկան կախ ինիլ (Զ):

- Փէշկը քօլէն տալ - Չարչարվել, տքնել: *Շատ ա փէշկը քօլէն տամ, ամմա պէն չի ա՛մա՛լ կ'ամ* (Զ):

- Փէշկին տակէն - Մեկի հովանավորության՝ խնամակալության տակ: *Էտ խօխան դայուն փէշկին տակէն մը՛ծացավ, փըսակվից, տօն տը՛ռավ* (Զ):

- Փէշկին տակը օնէլ - Մեկին հովանավորել՝ խնամել: *Պառավը էտ յիթիմնուն փէշկին տակը կա՛լա՛վ, պահից* (Զ):

- Փէշկին քարէրը վէր ածէլ - *տեմ* Քարը գ'ուրգ'ա՛ն վէր ածէլ:

- Փէշկու տակէ պահէլ - Լավ խնամել՝ հոգ տանել: *Մարը խօխօնցը փէշկու տակէ յար պահում* (Բ):

ՓԷՇՄԱՆ/ՓԷՇՄԱ՛Ն/ՓՕՇՄԱՆ/ՓԸ՛Շ-ՄԱՆ *(գրբ. փաշաման (սրտի՝ մտքի խռովություն, հանդիմանություն, վիշտ)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փէշման ինիլ/մընալ - Իր արածի համար զղջալ: *Վը՛ր ըսկէսուրը կ'ամ ա, մօխրէն յէշում ա, մընամ ա փէշմա՛ն* (ՆԼՂԺԲ, 111):

ՓԷՇՄԱ՛Ն - *տեմ* ՓԷՇՄԱՆ:

ՓԷՇՔ'ԷՇ - *տեմ* ՓԷՇՔ'ԷՇ:

ՓԷՇՔ'ԷՇ/ՓԷՇՔԷՇ *(պրս. piškaš, թրք. peškeš)* - 1. *գ.* Նվեր, ընծա: *Աշըղէն մին փէշք'էշ էլ ա տամ, ո՛ւրա՛ն պալատումը պահում* (ՀԺՀ, V, 353): 2. *ձ.* Թող նվեր լինի, քեզ նվեր: ... *Տանում ա տօնը, թա.- Էս իմ տօնը սաղ քէզ փէշք'էշ* (ԲՀԲ, 154):

- Փէշք'էշ անէլ/տալ - Նվիրել, ընծայել: ... *Պուճուր ախպէրը, մին կ'իխտար շըլակին տիրա՛ծ, յէկավ, թաքավէրին փէշքէշ ըրավ* (ՀԺՀ, VI, 91):

- Փէշք'էշ տըված ծիյին կըռքընէն հըմբարէլ չընն - Նվերի որակը՝ արժեքը քննարկելու կարիք չկա:

ՓԷՉԱՏ/ՓԸՉԱ՛Տ/ՓԻՉԱ՛Տ *(ռուս. печать)* - *գ.* Կնիք: *Փէչատը կ'ուղանում ա, փախճո՛ւմ* (Զ):

- Փէչատ թըխէլ/տինիլ - *տեմ* ՓԸ-ՉԱ՛ՏԷԼ:

ՓԷՍԱ - *տեմ* ՓԸ՛ՍԱ:

ՓԷՏ - *տեմ* ՓԱ՛Դ:

ՓԷՏԸՐՎԱՐ - *տեմ* ՓԷՂԸՐՎԱՐ:

ՓԷՏԻ - *տեմ* ՓԱ՛ԴԻ:

ՓԷՏՎԱՆՔ - *տեմ* ՓԱ՛ԴՎԱՆՔ:

ՓԷՏՎԱՍԿ - *տեմ* ՓԱ՛ԴՎԱՍԿ:

ՓԷՔ(Վ)ԷԼ - *տեմ* ՓԸՔ(Վ)ԷԼ:

ՓԸՂԱ՛ՆԱԼ/ՓԸՂԱՆԱԼ/ՓԸՏԱ՛ՆԱԼ/ՓԸՏ'ԱՆԱԼ/ՓԻՂԱ՛ՆԱԼ *(գրբ. փայտանամ)* - *չբ.* 1. Փայտի նման դառնալ, կարծրանալ: *Փիրփէտը փըղա՛ցալ ա, հիշկան իփո՛ւմ ընք, կընկըղում չի* (Բ): 2. *փխբ.* Ցրտից սառչել՝ անդամներն ընդարմանալ: *Ըստի ցօրտ Ղարաբաղ հա՛ղ ի՛լա՛ծ չի, վը՛ննէրըս փըղա՛ցալ ա* (Բ): 3. *փխբ.* Հիվանդության հետեւանքով շարժունությունը կորցնել (մարմնի անդամների մասին): *Ասում ըն՝ Ա՛րսէմ դայուն պարալիչ ա թըխալ, ծէխէ ծը՛ռքը փըղա՛ցալ ա* (Բ): 4. *փխբ.* Փայտի նման ցցվել, անշարժ կանգնել: *Հինչ ը՞ս փիղա՛ցալ, խէ կօրծ չը՞ս անում* (Զ): 5. *փխբ.* Զարմանքից՝ վախից եւն շշմել, քարանալ, ապուշ կտրել-մնալ: *Սօնին կ'ո՛ւլին վէր տը՛սավ, փըղա՛ցավ* (Զ): 6. *փխբ.* Անշարժ դառնալ, ձգվել-սառչել (նոր մեռածի մասին): *Կամ ըն, տը՛սնում՝ հա՛ղը մը՛ռած, փըղացած* (Զ):

ՓԸՂԱ՛ՊԷՆ/ՓԸՂԱՊԷՆ/ՓԸՏԱ՛ՊԷՆ/ՓԸՏ'ԱՊԷՆ/ՓԻՂԱ՛ՊԷՆ - *գ.* Փայտյա զանազան իրեր պատրաստելը, փայտի հետ կապված գործ: *Աշօտ դային փըղա՛պէնը լ'ավ ա կըլ՛օխ ընում* (Բ):

ՓԸՂԱ՛ՐԱՐ/ՓԸՂԱՐԱՐ/ՓԸՏԱ՛ՐԱՐ/ՓԸՏ'ԱՐԱՐ/ՓԻՂԱ՛ՐԱՐ - *գ.* Փայտահատությամբ զբաղվող մարդ, փայտահատ: *Փըղա՛ռարը կացնավը թըխում ա, էտ արչին ըսպանում* (Զ):

ՓԸՂԸՎԸ՛ՏԱՆ/ՓԸՂ'ԸՎԸ՛ՏԱՆ/ՓԸՏԸՎԸ՛ՏԱՆ/ՓԸՏ'ԸՎԸ՛ՏԱՆ/ՓԻՂԸՎԸ՛ՏԱՆ - *գ.* Ջուլիակի կամ գորգագործի փայտե հաստոց, ոստայն: *Այուն մին լ'ավ փըղըվը՛ստան ա իլա՛լ* (Բ):

ՓԸՂԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՂ'ԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՏԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՏ'ԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԻՂԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓԸՂԱ՛ՆԱԼ-ի:

ՓԸՂԱՆԱԼ - *տեմ* ՓԸՂԱ՛ՆԱԼ:

ՓԸՂԱՊԷՆ - *տեմ* ՓԸՂԱ՛ՊԷՆ:

ՓԸՂԱՐԱՐ - *տեմ* ՓԸՂԱ՛ՐԱՐ:

ՓԸՂԸՎԸ՛ՏԱՆ - *տեմ* ՓԸՂԸՎԸ՛ՏԱՆ:

ՓԸՂԸՑ(Ը)ՆԷԼ - *տեմ* ՓԸՂԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸ՛Ղ/ՓԷՂ/ՓԻՂ/ՓԻԼ *(գրբ. փիղ)* - *գ.* Խոշորամարմին երկարակնճիթ կաթնասուն կենդանի, փիղ: *Ասում ըն, էտ թաքավէրին էլ մին լ'ավ փը՛ղ ա իլա՛լ* (Զ): 2. *փխբ.* Հսկա եւ ուժեղ մարդ կամ կենդանի: *Ասում ա.- Տու փիլ ըս, վէր մինչը՛վ միհէնգ' կըրը՛ցալ ըս ըտըրա տէմ կէնաս* (Զ):

ՓԸ՛ՇԱ՛Կ - *տեմ* ՓԷՇԱ՛Կ:

ՓԸ՛ՇԱ՛ԿԱՎԷՐ/ՓԸՇԸԿԱՎԷՐ/ՓԻՇԸԿԱՎԷՐ - *տեմ* ՓԷՇԱ՛Ք'Ա՛Ր: *Գ'ըրագ'ի օրը լօխ փը՛շա՛կավէրնէն հըվաքվում ըն մէյդան ո՛ւրա՛նց շինած պը՛ննէրին նըհէտ* (ՀԺՀ, V, 200):

ՓԸ՛ՇԱ՛Ք'Ա՛Ր - *տեմ* ՓԷՇԱ՛Ք'Ա՛Ր:

ՓԸՀՇԼՔԻԼՈՐԹՈՒՆ - *տե՛ս* ՓԷՇԼՔԻԼՈՐԹՈՒՆ:

ՓԸՀՇՄԼՆ - *տե՛ս* ՓԷՇՄԱՆ:

ՓԸՀՍԱ/ՓԷՍԱ/ՓԸՍԱ *(գրբ. փեսայ)* - *գ.* Նշանված՝ պսակվող կամ ամուսնացած տղամարդն իր հարսնացուի կամ կնոջ հարազատների ու ազգականների համար՝ փեսա: ... *Փը՛սան ո՛ւրա՛ն ջուբան հանըմ ա կանվէրթը, տամ Սուղումուն իմաստունին* (ՀԺՀ, V, 346):

- Փը՛սան ասում ա՝ հաս ա, դէրը ասում ա՝ չըհաս ա - Յուրաքանչյուրն իր շահն է հետապնդում:

ՓԸԹԱԹԱՆ - *տե՛ս* ՊԸՏԱՏԱՆ:

ՓԸԹԱԹԷԼ - *տե՛ս* ՊԸՏԱՏԷԼ:

ՓԸԹԱԹՎԷԼ - *տե՛ս* ՊԸՏԱՏՎԷԼ:

ՓԸԹԱԹՈՒԿ - *տե՛ս* ՊԸՏԱՏՈՒԿ:

ՓԸԹԱԹՕՂ - *տե՛ս* ՊԸՏԱՏՕՂ:

ՓԸԹԱՆՔ - *գ. հվք.* Փայտի փտած կտորներ: *Փըթանք ա հըվաքում, պիրում տօն* (Բ):

ՓԸԹԱՎԱ/ՓԸԹՕՎԱՆ - *գ.* Ծայրերին քուղ ունեցող երկար գործած կտոր, որով փաթաթում են ոտքերը եւ հագնում տրեխները: *Փըթավան վընէրավընը ա տամ, կապում, տըրըխնէն կ՚ը՛նում, ք՚ինամ* (Ձ):

ՓԸԹԷԼ *(գրբ. փտեմ)* - *չբ.* 1. Նեխել, նեխման հետեւանքով քայքայվել: *Խընձո՛ր փըթալ ա* (Բ): 2. Քայքայվելով հող դառնալ: *Ըտի էլ էտ մարթին մէյդը ծըմակումը փըթում ա, վէշ մինը տը՛ղը գ՚ուդ՚ում չի* (Ձ): 3. *փխբ.* Փչանալ, կարծրությունը կորցնել: *Ք՚ա՛նդիրը փըթած ա ինո՛ւմ, վէր ծիք՚ ա տամ, կըտըրում ա* (Ձ): 4. *փխբ.* Կեղտի մեջ կորչել, չափազանց կեղտոտ լինել: *Էն էլ հօ կընէգ՚ չի՞, յը՛խտէն մաչին փըթում ա* (Բ): 5. *փխբ.* Երկար ժամանակ մի տեղ մնալ՝ պահվել: *Ըտըրա նըման մարթիք՚ տո՛ւրմ՚ումը բիդի բըթին* (Բ):

ՓԸԹԷԼԼ/ՓԻԹԷԼԼ *(ռուս. фитиль, արաբ. fitil)* - *գ.* Լամպի՝ ճրագի եւն միջի ոլորած թել կամ հյուսած երիզ, որ վառվում է, պատրույգ: *Կէս քըշէրին տը՛ղ ա հըսնըմ, տը՛սնըմ՝ էտ ըսկուպօյ մարթը ճիրանք՚ին փըթէլլա՛ն քըշըցըրալ ա, վը՛ր նօթը շատ չի ք՚ինի...* (ԼՂԲ, 355):

ՓԸԹԸԹ-ՓՕԹՈՒԹ/ՓՈՒԹՈՒԹ-ՓՈՒԹՈՒԹ *(գրբ. փոթոթ (փոթոթող)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըթը՛թ-փոթութ կ՚ա՛լ - 1. Մի բան անելու՝ գլուխ բերելու համար ջանալ՝ չարչարվել՝ դեսուդեն ընկնել: *Փըթը՛թ-փոթութ ա կ՚ամ, ամմա կարում չի էտ քարը տը՛ղան տո՛ւրո՛ւր տա* (Ձ): 2. Ցավից կսկծալ: *Խը՛ղճը ցավէն կարում չի տէմ կէնա, սաղ օրը էն ա փըթը՛թ-փոթութ կ՚ա՛լիս* (Ձ):

ՓԸԹԸԹՕՐԷԼ - *տե՛ս* ՊԸՏԸՏՕՐԷԼ:

ՓԸԹԸԹՕՐՀՆԷ(Ն)Ք՚ - *տե՛ս* ՓԸԹԸԹՕՐԹՆԷ(Ն)Ք՚:

ՓԸԹԸԹՕՐԹՆԷ(Ն)Ք՚/ՓԸԹԸԹՕՐՀՆԷ(Ն)Ք՚ - *գ.* Պսակից առաջ հարսի հանդերձը օրհնելը: *Փըթը՛թ-օրթնէք՚ին վախտը դէրը աշկը էտ կընգանան կըտըրում չար* (Ձ):

ՓԸԹԸԹՕՐՎՎԷԼ - *տե՛ս* ՊԸՏԸՏՕՐՎԷԼ:

ՓԸԹԸԿ՚ՕՎԷԼ/ՓԻԹԻԿ՚ՕՎԷԼ - *նբ.* Վարկաբեկել, հեղինակազրկել, զրպարտել: *Շէնումը էլ հարթը չի մընաց, վէր Խըզալանց Սօնիշկան փըթը՛կ՚օվէ վէջ* (Բ):

ՓԸԹԸԿ՚ՕՎԷԼ/ՓԻԹԻԿ՚ՕՎՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸԹԸԿ՚ՕՎԷԼ-ի:

ՓԸԹՎԱԼԻ - 1. *տե՛ս* ՓԸՆԹԻ: 2. *տե՛ս* ՓԸՆԹԸՎԱՐԻ:

ՓԸԹԸՐԱԿ/ՓԸԹՐԱԿ - *տե՛ս* ՓԸԹԱՆՔ:

ՓԸԹԸՐԱՂ/ՓԸԹՐԱՂ *(թրք. putraq)* - *գ.* 1. Կպչուն սերմերով վայրի խոտաբույս: *Հընյաթումը շատ փըթը՛ըրաղ ա փըսալ* (Ձ): 2. Այդ բույսի կպչուն սերմը: *Վըխճարէն մօրթուն յըրա սաղ փըթը՛ըրաղ ա* (Բ): 3. *փխբ.* Քայքայված՝ պատառոտված կոշիկ կամ տրեխ: *Էտ փըթը՛ըրաղը հինչ ա՞, վէր կ՚ը՛նում ըս, համօթ չի՞* (Բ):

- Փըթը՛ըրաղու մաչ ըղնէլ - Փորձանքի ենթարկվել: *Ղանզանը փըթը՛ըրաղու մաչ ա ընգալ, խը՛ղճը հինչ ա՞նէ* (Բ):

ՓԸԹԸՐԱՂՈՒՏ/ՓԸԹՐԱՂՈՒՏ - *ած.* Փթրաղով պատված: *Տափը փըթը՛ըրաղուտ ա, կօրէկը քանդվում չի* (ՆԱԲ, II, 265):

- Փըթը՛ըրաղուտ կօրէկ քանդիլ - *տե՛ս* Կարճ կ՚ա՛նի հընձիլ:

ՓԸԹԸՐԱՆՔ/ՓԸԹՐԱՆՔ - *տե՛ս* ՓԸԹԱՆՔ:

ՓԸԹԸՐՕԿ/ՓԸԹՐՕԿ *(գրբ. փթուր (փշուր, փոշի)* - *գ.* 1. Այլուրով ու կաթով կամ ջրով եփած հասարակ կերակուր: *Կընէգ՚ը փըթրօկ ա ինիս ըրած, մին աման նի յա քըցիս, տաս մարթին* (ՀԺՀ, V, 258): 2. Այլուրով՝ թեփով եւ ջրով շաղախած կեր, որ տալիս են հավի ճտերին: *Փըթը՛ըրօկ ա շինում, ճուտէրէն ըռըշին վէր ածում* (Ձ):

ՓԸԹԻԼՔԱՇԻ/ՓԻԹԻԼՔԱՇԻ - *գ.* Լամպի՝ ճրագի եւն պատրույգի ծայրը բարձրացնելու կամ իջեցնելու հարմարանք, պատրույգակալ: *Մարթը ասում ա.- Փիթիլքաշին լամբը՛էն յիրա՛ կինի՞, թա սա՞ղքէն յիրա՛* (ՀԺՀ, VII, 272):

ՓԸԹՐԱԿ - *տե՛ս* ՓԸԹԸՐԱԿ:

ՓԸԹՐԱՂ - *տե՛ս* ՓԸԹԸՐԱՂ:

ՓԸԹՐԱՂՈՒՏ - *տե՛ս* ՓԸԹԸՐԱՂՈՒՏ:

ՓԸԹՐԱՆՔ - *տե՛ս* ՓԸԹԸՐԱՆՔ:

ՓԸԹՐՕԿ - *տե՛ս* ՓԸԹԸՐՕԿ:

ՓԸԹՈՒԹ(ՆԸ) - *տե՛ս* ՊԸՏՈՒՏ(ՆԸ):

ՓԸԹՈՒԾ - *տե՛ս* ՓԸՐԹՈՒԾ:

ՓԸԹՓԸԹՕՐԷԼ - *տե՛ս* ՊԸՏԸՏՕՐԷԼ:

ՓԸԹՓԸԹՕՐՎԷԼ - *տե՛ս* ՊԸՏԸՏՕՐՎԷԼ:

ՓԸԹՓՕԹՈՒՏ/ՓԸՏՓՕՏՈՒՏ - *ած.* Փոթեր՝ ծալքեր ունեցող, ոչ հարթ (շորերի մասին): *Փըթփօթուտ շօ՛ղէր ա կ՚ը՛ցալ* (Բ):

ՓԸԹՕԹԷԼ/ՓՈՒԹՕԹԷԼ - *նբ.* 1. Բերանը այրել, փոթոթել: *Տա՛խտը՛ղը կը՛ծօ յար, պէրանը փըթօթից* (Բ): 2. *փխբ.* Վիշտ պատճառել, կսկծացնել: *Բընդասըլ ժա՛ռանգ՚ը հօրը-մօրը կը՛փըթօթէ* (Ձ):

ՓԸԹՕԹՎԷԼ/ՓՈՒԹՕԹՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸԹՕԹԷԼ-ի:

ՓԸԹՕՎԱՆ - *տե՛ս* ՓԸԹԱՎԱ:

ՓԸԼԱՋԷ - *ած.* Փալասից պատրաստած: *Մին փըլազէ ըռըխկալի յա յօր օնում, կուլէն ըռը՛խը կապում* (Ձ):

ՓԸԼԱԼԷԼ *(հ.ե. *pel- (ծածկել, փաթաթել)* - *նբ.* Մի բանով պատել՝ թաթախել: ... *Էտ շօ՛ղէրը ըռնում փըլալում ա, յօր օնում ք՚ընում* (ՀԱԲ, 15, 107):

ՓԸԼԱԼՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸԼԱԼԷԼ-ի: *Տըղան թըխում ա, օշափը ա՛ռնա՛վ փըլալվում ա, վէր ինգ՚ում, հօքին փըչ՚ում* (ՀԺՀ, VII, 14):

ՓԸԼԼԿ - *տե՛ս* ՓԻԼԷԿ:

ՓԸԼԱՆ *(արաբ. filan)* - *դ.* Այսինչ, այնինչ: *Դէ էտ փըլան տէղը ք՚ընացօղը էլ յէտ չի կ՚ամ* (ՀԱԲ, 15, 26):

ՓԸԼԱՆԷԼ - *նբ.* 1. Գրաստի վրա համետ դնել, համետել: *Էշը փըլանում ա, հա՛յբա՛ն յըրան քըցո՛ւմ, յէր ինո՛ւմ էշը, ք՚ինո՛ւմ* (ՀԺՀ, V, 609): 2. *փխբ.* Մեկին ծանրաբեռնել (գործով, հանձնարարություններով եւն): *Տարը նօ՛ք՚ա՛ր էն շատ ար չըրչարում, ամմէն օր կօրծավ փըլանում ար* (Ձ): 3. *փխբ.* Մեկին իր կամակատարը դարձնել: *Կընէգ՚ը վէր մարթին փըլանից, էն մարթը էլ հինչ մա՞րթ* (Բ):

ՓԸԼԱՆ-ՓԷՇՄԼՔԻԼՆ - *տե՛ս* ՓԸԼԱՆ-ՓԸՍՏԱՆ: *Քաչալը կ՚ամ ա, տահանց ասըմ.- Հինչ ը՞ք անում, կարտի տալըս վէրը՞ն ա՞, փըլան-փէշմա՛ք՚ա՛նըս վէրը՞ն ա՞, ծէր հօր օջաղը քա՛նդո՛ւմ ըք...* (ՀԺՀ, V, 629):

ՓԸԼԱՆ-ՓԸՍՏԱՆ - *դ.* Այսինչ-այնինչ, այլեւայլ: *Փըլան-փըստան լօխ հըվաքվում ըն, օտում-խըմում, ք՚ինամ* (Ձ):

ՓԸԼԱՆՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸԼԱՆԷԼ-ի:

ՓԸԼԱՆՔԻԼՍ/ՓԱԼԱՆՔԻԼՍ - *տե՛ս* ՓԸԼԱՆ: *Ըստըրանա-ընդըրանա հըրցնըմ ա, թա՛ն.- Փըլանք՚ա՛սին տօնը ըշտէղ ա՞* (ՀԺՀ, V, 448):

ՓԸԼԱՎ *(պրս., թրք. pilav)* - *գ.* Բրնձով ու յուղով, ինչպես նաեւ մսով ու համեմունքներով պատրաստվող կերակրա-

տեսակ: *Էս ոնրոնգ՞ունը էլ պօվըրնէն տահանց հէտէ փըլավ ին իփնալ* (ՀԱԲ, 15, 15):

- Փըլավ օտէլ - Անհոգ լինել, գործ չանել: *Խալխը սաղ օրը կօրծ ըն անում, ինք՛ըն էլ փըլավ ա օտում* (Ձ):

ՓԸԼԷԿ - *տե՛ս* ՓԻԼԷԿ:

ՓԸԼԸԲԱԽԱ(Ն)/ՓԱԼԱԲԱԽԱ(Ն) *(թրք. falabaxan)* - *տե՛ս* ՓԱԼՉԻ:

ՓԸԼԸԲԸԽ(ԸՆ)ՕԹՈՒՆ/ՓԱԼԱԲԱԽ(ԱՆ)ՕԹՈՒՆ - *տե՛ս* ՓԸԼՉՕԹՈՒՆ:

ՓԸԼԸՋԾԱՄԷ - *ած., գ.* Կնասեր, կնամոլ (տղամարդ): *Էտ փըլըզծամէն սաղ օրը էն ա կընանուցը հը՛տը ընգած* (Բ):

ՓԸԼԸԽԿԱԼ - *չբ.* Ուժգին հոսանքով բխել, ժայթքել, արտավիժել (հեղուկների մասին): *Էտ ծառէն տական մին լ՛ավ ախպ՞ուր ա փըլըխկամ* (Ձ):

ՓԸԼԸԽԿԱԼԻ - *մ.* Ուժգին հոսանքով բխելով, ժայթքելով: *Ճ՞ուրը տափէն տական փըլըխկալի տ՞ուս ա տը՛ռնում* (Բ):

ՓԸԼԸԽԿԱՆ - *ած.* Ուժգին հոսանքով բխող, հորդ: *Փըլըխկան ախպ՞ուրնէ Ղարաբաղ շատ կա* (Ձ):

ՓԸԼԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓԸԼԸԽԿԱԼ-ի:

ՓԸԼԸԽ(Կ)ՓԸԼԸԽԿԱԼ - *տե՛ս* ՓԸԼԸԽԿԱԼ (շատերը կամ անընդհատ): *Կարունքը վէր կ՛ամ ա, շէնին ախպ՞ուրնէն փըլըխկփըլըխկամ ըն* (Բ):

ՓԸԼԸԽ(Կ)ՓԸԼԸԽԿԱԼԻ - *տե՛ս* ՓԸԼԸԽԿԱԼԻ:

ՓԸԼԸԽ(Կ)ՓԸԼԸԽԿԱՆ - *տե՛ս* ՓԸԼԸԽԿԱՆ:

ՓԸԼԸԽ(Կ)ՓԸԼԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸԼԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸԼԸԽ(Կ)ՓԸԼԸԽԿՕՆ - *տե՛ս* ՓԸԼԸԽԿՕՆ:

ՓԸԼԸԽ(Կ)ՓԸԼԸԽԿՕՑ - *տե՛ս* ՓԸԼԸԽԿՕՆ:

ՓԸԼԸԽԿՕՆ - *գ.* Ուժգին հոսանքով բխելը, ժայթքելը: *Թաքավէրը էտ ըխպիրին փըլըխկօնը վէր տը՛սնում ա, շատ ա ըրմանում* (Ձ):

ՓԸԼԸԽԿՕՑ - *տե՛ս* ՓԸԼԸԽԿՕՆ:

ՓԸԼԸՂՕՐԷԼ/ՓՈՒԼՈՒՂՕՐԷԼ - *նբ.* Ատամներով վիրավորել, խածել, հոշոտել: *Կամ ըն, տը՛սնում՝ շօնը կ՛առնանը փըլըղօրալ ա* (Ձ):

ՓԸԼԸՂՕՐՎԷԼ/ՓՈՒԼՈՒՂՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸԼԸՂՕՐԷԼ-ի:

ՓԸԼԸՆԱՄԱՋ - *գ.* Համետի միջուկը՝ մեջը լցրած թաղիքը կամ լաթերը: *Փըլընամաջը տ՞ուս ա տամ, տը՛ղը թ՞ազգ՞ ք՛էջ՞ն ածում* (Ձ):

- Փըլընամաջը վէր ածէլ - Մեկի հետ վիճելով եւ վիրավորելով՝ կապերը խզել: *Առաջ Կազ՞ն Ըփկարէն նըհէտ մօտէ հընգէր ա իլ՞ալ, միհէնգ՞ փըլընամաջը վէր ա ածալ* (Ձ):

ՓԸԼԸԾԿ(Ը)ՎԷԼ - *չբ.* Փլվել, ավերակվել: *Տօնը փըլըշկըվալ ա* (Ձ):

ՓԸԼԸՍՏԸՐԱԿԷ - *տե՛ս* ՓԸԼԸՍՏԸՐԱՏԷ:

ՓԸԼԸՍՏԸՐԱՏԷ/ՓԸԼԸՍՏԸՐԱԿԷ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըլըստըրատէ տալ - *տե՛ս* ՊԸՍՊԸՂԱԼ: *... Յէշում ա, տէսնում՝ յիրգ՞ինք՛ավը մին ղուզղուն ա թըռչում, վընն էրէն ղաթումը մին պէն փըլըստըրատէ ա տամ* (ՀԱԲ, 15, 79):

ՓԸԼԸՎՔԱՄԷ - *տե՛ս* ՃԸՇԸՔԱՄԷ(Չ):

ՓԸԼԸՓԱԼԻ/ՓԸԼԻՓԼԻ *(հ.ե. *pelə-(լայն եւ հարթ տարածել)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըլըփալի անէլ - Թավալվել: *Ըտըրանց քըմական վազ ա տամ, մին քանիսին էլ մըհակավ թըխէլավ տափէն յէր քըցըմ, թօղըմ փըլըփալի ընէլիս* (ԼՂԲ, 370):

ՓԸԼԹ - *տե՛ս* ՊԸԼԹ:

ՓԸԼԹԱԼ - *տե՛ս* ՊԸԼԹԱԼ:

ՓԸԼԹԱԼԻ - *տե՛ս* ՊԸԼԹԱԼԻ:

ՓԸԼԹԱՆ - *տե՛ս* ՊԸԼԹԱՆ:

ՓԸԼԹԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՊԸԼԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸԼԹԸ-ՓԱԼԹԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըլթը-փալթի կ՛ալ - *տե՛ս* Չալը շ կ՛ալ:

ՓԸԼԹ ՀԱ ՓԸԼԹ - *տե՛ս* ՊԸԼԹ (ՀԱ) ՊԸԼԹ:

ՓԸԼԹՓԸԼԹԱԼ - *տե՛ս* ՊԸԼԹՊԸԼԹԱԼ:

ՓԸԼԹՓԸԼԹԱԼԻ - *տե՛ս* ՊԸԼԹՊԸԼԹԱԼԻ:

ՓԸԼԹՓԸԼԹԱՆ - *տե՛ս* ՊԸԼԹՊԸԼԹԱՆ:

ՓԸԼԹՓԸԼԹՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՊԸԼԹՊԸԼԹՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸԼԹՓԸԼԹՕՆ - *տե՛ս* ՊԸԼԹՊԸԼԹՕՆ:

ՓԸԼԹՓԸԼԹՕՑ - *տե՛ս* ՊԸԼԹՊԸԼԹՕՑ:

ՓԸԼԹՕՆ - *տե՛ս* ՊԸԼԹՕՆ:

ՓԸԼԹՕՑ - *տե՛ս* ՊԸԼԹՕՑ:

ՓԸԼԻԿԱՄԱՐ - *տե՛ս* ԿՈՒՃԸԿԱՄԱՐ:

ՓԸԼԻԿԱՎԷՐ - *տե՛ս* ԿՈՒՃԸԿԱՎԷՐ:

ՓԸԼԻԿԱՏԸ՞Ղ - *տե՛ս* ԿՈՒՃԸԿԱՏԸ՞Ղ:

ՓԸԼԻՓԼԻ - *տե՛ս* ՓԸԼԸՓԱԼԻ:

ՓԸԼԻՔ՛ԱՆ - *տե՛ս* ՓԼՆԼՔ՛ԼՆ:

ՓԸԼՉՕԹՈՒՆ/ՓԱԼՉՕԹՈՒՆ - *գ.* 1. Գրբացի զբաղմունքը, գրբացություն: *Փըլչօթունը ն՞ուն հօրը անա յա սըվը՞ռալ* (Բ): 2. Գուշակություն, կախարդություն: *Էտ փալչին Շուշի փըլչօթուն ար անում, ապըրում* (Ձ):

ՓԸԼՈՒԽՈՒՐ/ՓՈՒԼՈՒԽՈՒՐ - *ած.* Ոչ պինդ, փխրուն: *Փըլուխուր քար ա* (Բ):

ՓԸԼՓԸԼԱԼ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼԱԼ:

ՓԸԼՓԸԼԱՆ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼԱՆ:

ՓԸԼՓԸԼՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸԼՓԸԼՕՆ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼՕՆ:

ՓԸԼՓԸԼՕՑ - *տե՛ս* ՊԸԼՊԸԼՕՑ:

ՓԸԽԷԽ - *տե՛ս* ՓԸԼՈՒԽՈՒՐ:

ՓԸԽԷԽՎԷԼ - *չբ.* Փխրուն դառնալ: *Փ՞ադը էնքան չուրացալ ա, փըխէխվալ ա* (Բ):

ՓԸԽԸԼՕԹՈՒՆ/ՓԱԽԸԼՕԹՈՒՆ/ՓՈՒԽՈՒԼՕԹՈՒՆ/ՓՈՒԽԸԼՕԹՈՒՆ - *գ.* Նախանձելը, նախանձանք, նախանձություն: *Փըխըլօթունը փիս պէն ա* (Բ):

- Փըխըլօթունը քաշիլ - Մեկի առավելությունը՝ հաջողությունը եւն տեսնելով՝ նախանձի զգացումով լցվել, նախանձել: *Սը՛վ դուշըն էլ տը՛սալ ա, փըխըլօթունը քաշ՞ալ* (ԱԱ, 88):

ՓԸԽԸՏՕՐՍ/ՓՈՒԽՈՒՏՕՐՍ/ՓՈՒԽԸՏՕՐՍ/ՓՕԽՏՈՒՐՍ/ՓՕԽՏՕՐՍ - *գ.* 1. Փոխանակելը, փոխանակում (հատկապես ապրանքների): *Շէնումը փըխըտօրսը միշտ էլ ն՞դ՞ութ ա իլ՞ալ* (Բ): 2. *փխբ.* Մտերիմ հարաբերություն, իրար տուն գնալ-գալը, բարեկամություն: *Ըտըրանց փըխըտօրսը, պարիկըմօթունը կընօխանց ա* (Բ):

- Փըխըտօրս անէլ - 1. Փոխանակություն կատարել, ապրանքներ փոխանակել: *Գիշիցէք՛ կ՛ինի յըն իլ՞ալ տընէլիս փըխըտօրս ընէլիս* (Ձ): 2. *փխբ.* Մտերմություն՝ բարեկամություն անել, իրար հետ գնալ-գալ ունենալ: *Ըխճըկանը հ՞ուրընն՞ սից.- Մունք ք՛՞սիբ խալխ ընք, հարուստ մարթու նըհէտ կարէլ չընք փօխտուրս անինք՛...* (ՆԼՂԺԲ, 55):

ՓԸԽԸՓԱԽ(Է) - *տե՛ս* ՓԱԽԱՓԱԽ(Է):

ՓԸԽՓՕԽ(Է)/ՓՈՒԽՈՒՓՕԽ(Է)/ՓՈՒԽԸՓՕԽ(Է) *(գրբ. փոխփոխ (փոխնիփոխ)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըխըփօխ(է) անէլ - Հաճախակի կամ պարբերաբար փոխել, փոփոխել: *Կը՛սկէն տինն՞ում ըն մին տէղ, յէտնան էլ տ՞ուս օնում տինն՞ում մին օրիշ տէղ, մի քանի օր տէղը փուխըփօխ անում...* (ՀԺՀ, VII, 329):

ՓԸԽԿ - *ձ.* Մեկին մտերմաբար՝ կատակով վախեցնելու բացականչություն: *Պատէն քըմական տ՞ուս ա կ՛ամ, թա՝ փըխկ* (Ձ):

- Փըխկ անէլ - Այդ բացականչությամբ վախեցնել: *Մին մարթ ա մուտանըմ, փըխկ անըմ* (ԱԱռ, 23):

- Փըխկ անիս՝ լըղաճա(ն)ք/սըրտա-

ճա(ն)ք կըտը՛ռնա - Ասում են շատ վախկոտ մարդկանց մասին:

- Փըխկը քաշիլ - *տե՛ս* Ըռնդ ինիլ:

ՓԸԽԿԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. տե՛ս* Փըխկ անել:

ՓԸԽԿՕՆ - *գ.* Փխկացնելը եւ փխկացնելու ձայնը: *Ըտըրա փըխկօնը էտ մարթին սըրտաճաք ա անում* (Ձ):

ՓԸԽԿՕՑ - *տե՛ս* ՓԸԽԿՕՆ:

ՓԸԽՃԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸԽՉԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸԽՃԸՑ(Ը)ՆՕՎԻ - *տե՛ս* ՓԸԽՉԸՑ(Ը)ՆՕՎԻ:

ՓԸԽՃԸ-ՓԱԽՃԻ - *տե՛ս* ՓԸԽՉԸ-ՓԱԽՉԻ:

ՓԸԽՉԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԸԽՃԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. փախուցանեմ)* - 1. *նբ.* ՓԱԽՉԻԼ-ի: 2. *նբ.* Առեւանգել, փախցնել (կին, աղջիկ): *Առաչ ախճիգ՝ փըխչըցընէլը ա՛նա՛թ ա իլա՛լ* (Ձ):

ՓԸԽՉԸՑ(Ը)ՆՕՎԻ/ՓԸԽՃԸՑ(Ը)-ՆՕՎԻ - *ած.* Փախցնելով ձեռք բերած, փախցրած: *Փըխչըցընօվի կընգանը լ՚ուզա՛ւն կարճ կինի* (Ձ):

ՓԸԽՉԸ-ՓԱԽՉԻ/ՓԸԽՃԸ-ՓԱԽՃԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըխչը-փախչի անէլ/ըղնէլ - 1. Խուճապահար փախչել, տարբեր կողմերի վրա փախչել: *Ճո՛րէն ծառս ա ինի՛ւմ, վազ-վազ անում, սըրէրավ-քուլէրավ փըխճը-փախճի անում* (ՀԺՀ, VII, 262): 2. Մեկից՝ մի բանից խուսափել: *Ըշտը՛ղ մին տիժէր կօրծ ար ինի՛ւմ, Քա՛նապա՛նը փըխչը-փախչի յար անում* (Բ):

ՓԸԽՓԸԽԱԼ - *չբ.* Առատ լինել: *Կարունքը վէր կ՚ամ ա, կըվէրէն կաթնը փըխփըխամ ա* (Բ):

ՓԸԽՓԸԽԱԼԻ - *մ.* Առատ կերպով: *Փըխփըխալի պէրք ըն տըվալ ըստարէ ծառէրը* (Ձ):

ՓԸԽՓԸԽՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓԸԽՓԸԽԱԼ-ի:

ՓԸԽՓԸԽՕՆ - *գ.* Առատ լինելը, առատություն: *Էտ փըխփըխօնը թաքավէրին շատ ա ուրխըցընէս* (Ձ):

ՓԸԽՓԸԽՕՑ - *տե՛ս* ՓԸԽՓԸԽՕՆ:

ՓԸՀՄԱՔՕՌ/ՓԸՅՄԱՔՕՌ/ՔՈՒՌԱ-ՓԱՀՄ/ՔՈՒՌԱՓԱՅՄ - *տե՛ս* ԲԷՅԲԸՇԸ-ՐԸՌ:

ՓԸՂԱՂԷԼ *(գրբ. փաղաղեմ (լափել, տոչորել)* - *նբ.* 1. Շաղախել, որեւէ նյութ կամ նյութերի խառնուրդ հեղուկով խառնելով՝ խմորանման զանգված դարձնել: *Ա՛լլէրը փըղաղում ա, ածում հըվէրէն առաշկը* (Ձ): 2. *փխբ. տե՛ս* ՓԸԼԸՂՕՐԷԼ:

ՓԸՂԱՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՂԱՂԷԼ-ի:

ՓԸՄՓԸԽԷԼ - *տե՛ս* ՓԸՄՓԸՌՆԷԼ:

ՓԸՄՓԸՌՆԷԼ *(հ.ե. *p(h)amp(h)-(ուռչել)* - *չբ.* Ուռչել, տոզել, գիրանալ: *Էնքան կէրալ ա, փըմփըռնալ ա* (Բ):

ՓԸՄՓԸՌՆՕՏԷԼ - *տե՛ս* ՓԸՄՓԸՌՆԷԼ:

ՓԸՅԱՂԱ/ՓԻՅԱՂԱ *(պրս., թրք. piyade)* - 1. *մ.* Ոտքով, հետիոտն: *... Տըղան լօք ա տամ էշին նըստում, հօրը փըյադա քըցո՛ւմ առաչը* (ՀԺՀ, VII, 295): 2. *գ.* Լոբու տեսակ, որի բույսը տարածվում է գետնին: *Փըյադան փիս լօբի չի, ամմա ամմէն մարթու չի տուր կ՚ամ* (Բ):

- Փըյադա լօբի - *տե՛ս* ՓԸՅԱՂԱ(2):

ՓԸՅԱԼԱ/ՓԻՅԱԼԱ *(պրս., թրք. piyale)* - *գ.* Վերեւը՝ լայն, տակը՝ նեղ հախճապակե բաժակ՝ առանց ունկի: *Մին փըյալա չայ ա խըմում, տո՛ւս կ՚ամ* (Ձ):

ՓԸՅԸՂԱՎԷՐ/ՓԻՅԸՂԱՎԷՐ - *ած., գ.* 1. Հետիոտն, ոտքով գնացող: *Փըյը-ղավէրը ծիյըվէրէն նըհը՛տ կարէլ չի հը-ղէ քինի* (Ձ): 2. Հետեւակային զորքի զորական, հետեւակ: *... Յէտնան զօրք ըն տա՛ռնի՛մ՝ փըյըղավէր, թօփավ, թը-վա՛նգ՚ավ* (ՀԺՀ, V, 391):

ՓԸՅՄԱՔՕՌ - *տե՛ս* ՓԸՀՄԱՔՕՌ:

ՓԸՆԴԸՓԷԼ - *տե՛ս* ՓԱ՛ՆԴՈՒՓԱՐԱ:

ՓԸՆԴԸՓԻԼ - *տե՛ս* ՓԱ՛ՆԴ ՈՒ ՓԱՐԱ:

ՓԸՆԹ - *մ.* Իսկը, ճիշտ ու ճիշտ, ուղղակի: *Էտ խօխան փընթ ի՛ւրա՛ն հա՛ռընն ա* (Բ):

ՓԸՆԹԱՄԷ(Ն)Տ/ՓԸՆՏԱՄԻ(Ն)Տ/ ՓՈՒՆԹԱՄԻ(Ն)Տ - *տե՛ս* ԲԸՆՕ՛ՎՐԱ՛:

ՓԸՆԹԱՄԻ(Ն)Տ - *տե՛ս* ՓԸՆԹԱ-ՄԷ(Ն)Տ:

ՓԸՆԹԷ - *տե՛ս* ՓԸՆԹԻ:

ՓԸՆԹԷՌՆԸ - *գ.* Միջատի տեսակ: *Ղուշը մին փընթէռն ա փըռնալ* (Բ):

ՓԸՆԹԸՎԱՉԻ/ՓԸՆԹԻՎԱՉԻ - *տե՛ս* ՓԸՆԹԸՎԱՐԻ:

ՓԸՆԹԸՎԱՐԻ/ՓԸՆԹԻՎԱՐԻ - *մ.* Փնթի՝ անփույթ կերպով: *Կընէգ՚ը վէր փընթըվարի կօրծ ըրավ, էլ հինչ կը-նէ՞գ՚* (Բ):

ՓԸՆԹԸՓԱՐԱԽ/ՓԸՆԹԻՓԱՐԱԽ *տե՛ս* ՓԸՆԹԻ:

ՓԸՆԹԻ/ՓԸՆԹԷ *(գրբ. փնթի)* - *ած.* Անմաքուր եւ թափթփված, փնթի: *Մէր շէնումը մին կընէգ՚ ա լա՛լ, շատ փընթի յա լա՛լ...* (ԲՀԲ, 221):

ՓԸՆԹԻՎԱՉԻ - *տե՛ս* ՓԸՆԹԸՎԱՉԻ:

ՓԸՆԹԻՎԱՐԻ - *տե՛ս* ՓԸՆԹԸՎԱՐԻ:

ՓԸՆԹԻՓԱՐԱԽ - *տե՛ս* ՓԸՆԹԸ-ՓԱՐԱԽ:

ՓԸՆԹՓԸՆԹԱԼ - *տե՛ս* ՄԸՐԹ-ՄԸՐԹԱԼ:

ՓԸՆԹՓԸՆԹԱԽՕՍ - *տե՛ս* ՄԸՐԹ-ՄԸՐԹԱԽՕՍ:

ՓԸՆԹՓԸՆԹԱՆ - *տե՛ս* ՄԸՐԹ-ՄԸՐԹԱՆ:

ՓԸՆԹՓԸՆԹՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՄԸՐԹ-ՄԸՐԹՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՆԹՓԸՆԹՕՆ - *տե՛ս* ՄԸՐԹ-ՄԸՐԹՕՆ:

ՓԸՆԹՓԸՆԹՕՑ - *տե՛ս* ՄԸՐԹՄԸՐ-ԹՕՆ:

ՓԸՆՉԱԼ *(գրբ. փնչեմ)* - *չբ.* Ուժգնորեն հեւալ, փնչալ: *Օշափը փընչալալ յէկավ...* (ՀԺՀ, V, 86):

ՓԸՆՉԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՆՉԱԼ:

ՓԸՆՉԸՓԱՐԱԽ - *տե՛ս* ՃՈՒԹԸՌ-ՊԱՏԱՌ:

ՓԸՆՉՕՆ - *գ.* Փնչալը, փնչալու ձայնը: *Ծիյին փընչօնը ըլըբըստըրակէն խըրթնըցընէս ա* (Ձ):

ՓԸՆՉՕՑ - *տե՛ս* ՓԸՆՉՕՆ:

ՓԸՆՋԱ՛Ն/ՓԻՆՋԱ՛Ն *(արաբ. fingān)* - *գ.* Գավաթ, սկահակ: *Էտ թաքավէրին էլ մին դաշանգ՚ վը՛սկէ փընջա՛ն ա ինի՛ւմ* (Ձ):

ՓԸՆՋԱ՛ՔԷԼ/ՓԻՆՋԱ՛ՔԷԼ - *նբ.* 1. Բռով բռնել՝ վերցնել (խոտը, հացաբույսը եւն): *Փընջա՛քում ա, մին հափուռ խօտ տամ էշին* (Ձ): 2. Խոտի՝ հացաբույսի եւն խրձերը դարսել՝ դիզել: *Խօրթ-նէրը պիրում ա, փընջա՛քում* (Ձ):

ՓԸՆՋԱ՛ՔՎԷԼ/ՓԻՆՋԱ՛ՔՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՆՋԱ՛ՔԷԼ-ի:

ՓԸՆՋԷՎՈ՛ՒԼ/ՓԻՆՋԷՎՈ՛ՒԼ - *գ.* Վայրի խոտաբույս, որից ավել են կապում: *Փընջէվո՛ւլ ա քանդո՛ւմ, էվո՛ւլ կապում* (Ձ):

ՓԸՆՋԸՐՈ՛Ւ/ՓԻՆՋԻՐՈ՛Ւ/ՓԱ՛ՆՋԱ՛ՐՈ՛Ւ/ ՓԷՆՋԱ՛ՐՈ՛Ւ *(պրս., թրք. penčere)* - *գ.* 1. *տե՛ս* ԱԿՈՒՇԿԱ: *Մուտանում ա, փանջա՛-ռանվը յէշում, տէսնում՝ մին մարթ, մին տէփ ծը՛ռքէն, թակում ա, կընէգ՚ը պար ա կ՚ամ* (ՀԺՀ, VII, 329): 2. Մետաղյա ճաղաշար, որ ամրացնում են լուսամուտի դրսի կողմից: *Առաչ ակուշկօցը յըրա փընջըրա՛ն յըն իլա՛լ տինիլիս* (Ձ):

ՓԸՆՋԻԳ՚/ՓԻՆՋԻԳ՚ - *գ.* Փոքրիկ փունջ: *Մին փընջիգ՚ ա կապում էտ ծըղէգ՚նէրան, դարկում նըշընածէն հը՛-տէ* (Ձ):

ՓԸՆՋԻԼ/ՓԻՆՋԻԼ - *նբ.* 1. Փունջ կազմել՝ կապել՝ սարքել: *Մօրէ յա քա-ղում, փընջի՛ւմ* (Ձ): 2. *փխբ.* Քաղել, հավաքել: *Քըշըրհանա յէր ա կէնում, տը՛ս-նում արտը հինձած, փընջած, կա՛լի՛ւմը թակած, կ՚ի՛ւտանա՛ծ...* (ՀԺՀ, V, 559): 3. *փխբ.* Ապօրինի զավակ ունենալ: *Ըտըրան էլ մարթ չի ինի՛ւմ, մին խօխա յա փընջի՛ւմ, պահում* (Ձ):

- Փընջա՛ծ մընէշակ - Գեղեցիկ: *Էտ չուբանէն էլ մին լ՚ավ ախճիգ՚ ա ինի՛ւմ, մին փընջա՛ծ մընէշակ* (Ձ):

- Փընջած մօրու նըման պահէլ - Շատ լաւ պահել՝ խնամել: *Խօրթ մարը շատ պարի կընէգ ա ինում, ըտըրանց փընջած մօրու նըման ար պահում* (Զ):

ՓԸՆՋՎԻԼ/ՓԻՆՋՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՆՋԻԼ-ի:

ՓԸՆՓԸՆՕՏԷԼ/ՓԻՆՓԻՆՕՏԷԼ - *չբ.* Գիրանալ, մարմինը ճարպակալել: *Մանշված հարթն ա իլալ Խըզալանց Սիրանը, մըհէնգ փընփընօտալ ա* (Բ):

ՓԸՇԱԴ - *տե՛ս* ՓԸՇԱՏ:

ՓԸՇԱԴԷ - *տե՛ս* ՓԸՇԱՏԷ:

ՓԸՇԱՇԻԼ/ՓԻՇԱՇԻԼ - *չբ.* Ջուրը՝ խոնավությունը քաշվելով՝ մի քիչ չորանալ՝ ցամաքել: *Լ՛ըհա վէր թօռը յը՛տ ա օնում, տափէրը փըշաշում ա, Արտավազը մին էլ ա ք՛ընում ծըմակը* (Զ):

ՓԸՇԱՏ/ՓԸՇԱԴ/ՓՈՒՇԱՏ/ՓՈՒՇՈՒՀԱՏ *(գրբ. փշատ)* - *գ.* 1. Փշատենու պտուղը, փշատ: *Ամմէն մարթ չի փըշատը սիրում* (Զ): 2. *փխբ. տե՛ս* ՃՈՒՃՈՒԼ: 3. *տե՛ս* ՓԸՇԱՏԷ:

ՓԸՇԱՏԷ/ՓԸՇԱԴԷ/ՓՈՒՇԱՏԷ/ՓՈՒՇՈՒՀԱՏԷ *(գրբ. փշատի)* - *գ.* Փշատազգիների ընտանիքին պատկանող ծառ, փշատենի: *Փըշատէն վէր ծաղկում ա, վը՛տան կարում չըս քուշտանաս* (Բ):

ՓԸՇԸԿԱՎԷՐ - *տե՛ս* ՓԸ՛ՇԸԿԱՎԷՐ:

ՓԸՇԸՐԱՆՔ/ՓԸՇՐԱՆՔ *(գրբ. փշրանք)* - *գ.* 1. *հվք.* Որեւէ բանի փշրված մասերը, մանր կտորներ, կտորտանք: *Հացէն փըշըրանքը հըվաքում ա, ածում թօրբան* (Զ): 2. Որեւէ բանի մանր կտոր: *Մին հացու փըշըրանք ա քըթէնում, կօլ տամ* (Զ): 3. *փխբ.* Ողորմության ձեւով տրվող չնչին օգնություն: *Մարթ կա՝ ուրուշնէրէն տըված փըշրանքավըն ա տօնը պահում* (Բ): 4. *փխբ. տե՛ս* ՊԸՃԸՐԱՆՔ:

ՓԸՇԸՐԷԼ/ՓԸՇՐԷԼ *(գրբ. փշրեմ)* - *նբ.* 1. Որեւէ պինդ առարկա ծեծելով՝ տրորելով՝ կոտրտելով եւն՝ փշուրների վերածել՝ մանրել: *Տասը հացը տարալ ա փըշըրալ, վէր ածալ, դուշէրը կէրալ ըն* (ՀԺՀ, VI, 64): 2. Ծեծելով ջարդել, ջարդ տալ: *Ասում ա.- Խէլունք կաց, թա չէ ջանըտ կըփըշըրիմ* (Զ):

ՓԸՇԸՐԹԻՔ՛Ա - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըշըրթիք՛ա անէլ - *տե՛ս* ՓԸՇԸՐՕՏԷԼ:

- Փըշըրթիք՛ա ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՓԸՇԸՐՕՏՎԷԼ:

ՓԸՇԸՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՇԸՐԷԼ-ի:

ՓԸՇԸՐՕՏԷԼ/ՓԸՇՐՕՏԷԼ - *տե՛ս* ՓԸՇԸՐԷԼ (շատ բան կամ շատ անգամ):

ՓԸՇԸՐՕՏՎԷԼ/ՓԸՇՐՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՇԸՐՕՏԷԼ-ի:

ՓԸՇԸՔԱՂ(Վ)ԷԼ - *տե՛ս* ՓՈՒՇԸՔԱՂ(Վ)ԷԼ:

ՓԸՇԿԱՎԷՐ/ՓԻՇԿԱՎԷՐ - *ած.* Փեշ՝ քղանցք ունեցող: *Փըշկավէր էրկան շօր ա կ՛ը՛ցալ* (Բ):

ՓԸՇԿԸԿՕԽԷ/ՓԻՇԿԸԿՕԽԷ - *գ.* Խաղատեսակ՝ կոխի ձեւ, երբ հակառակորդները, մեջքներից կորացած եւ իրար փեշերից բռնած, ձգտում են մրցակցին վայր գցել: *Առաչ շատ ընք իլալ փըշկըկօխէ խաղ ընէլիս* (Բ):

ՓԸՇՄԱՆԳ՛ՈՒԼ/ՓԻՇՄԱ՛ՆԳ՛ՈՒԼ - *գ.* Կապույտ անհոտ ծաղկի տեսակ: *Վըխճըրնէն փըշմանգ՛ուլ ըն օտում* (Բ):

ՓԸՇՄԱՆԷԼ - *տե՛ս* ՓՈՒՇՄԱՆԷԼ:

ՓԸՇՄԸՆՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓՈՒՇՄԸՆՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՇՄԸՆՕԹՈՒՆ - *տե՛ս* ՓՈՒՇՄԸՆՕԹՈՒՆ:

ՓԸՇՇ - *ձ.* Օձի սուլելու ձայնը: *Մին էլ փը՛շշ, օխնը անց ա կէնում* (Զ):

ՓԸՇՇԱԼ - *չբ.* Ֆշշոց հանել, ֆշշալ: *Օխնը վէր փըշշամ ա, էտ ախճիգ՛ը սըրտաճանք ա տը՛ռնում* (Զ):

ՓԸՇՇԸՑ(Ը)ՆԷԼ - *չբ.* 1. *տե՛ս* ՓԸՇՇԱԼ: *Մին օրէ տըսնըմ ա՝ էտ անդար օխնըտ փըշշըցընէլով կ՛ըլօխը պ՛ունան տ՛ուս կալով...* (ԼՂԲՔ, 282): 2. *փխբ.* Ցածրաձայն եւ զայրույթով մի բան ասել՝ պատասխանել: *Ըսկէսուրը վէր փըշշըցընէս ա, էտ հարթնը կօչ ա կ՛աս* (Զ):

ՓԸՇՇՕՆ - *գ.* Ֆշշալու ձայնը, ֆշշոց: *Օխնէն փըշշօնը ըտըրանց շատ ա վըխնըցընում* (Զ):

ՓԸՇՇՕՑ - *տե՛ս* ՓԸՇՇՕՆ:

ՓԸՇՏԻԼ/ՓԻՇՏԻԼ - *չբ.* Մարմնի վրա բշտիկ գոյանալ: *Մէր Ծատօրը, վէր ծը՛ռքընն էլ ա փըշտում, լըղաճանք ա տը՛ռնում* (Բ):

ՓԸՇՏՓԸՇՏՕ՛ՏԷԼ/ՓԻՇՏՓԻՇՏՕ՛ՏԷԼ - *տե՛ս* ՓԸՇՏՕ՛ՏԷԼ:

ՓԸՇՏՕ՛ՏԷԼ/ՓԻՇՏՕ՛ՏԷԼ - *չբ.* Մարմնի՝ մարմնի որեւէ մաս բշտիկներով պատվել, բշտիկներ դուրս գալ: *Ուռթանա յը՛ր ա կէնում, տը՛սնում՝ ջանը սաղ փըշտօ՛տած* (Զ):

ՓԸՇՐԱՆՔ - *տե՛ս* ՓԸՇԸՐԱՆՔ:

ՓԸՇՐԷԼ - *տե՛ս* ՓԸՇԸՐԷԼ:

ՓԸՇՐՕՏԷԼ - *տե՛ս* ՓԸՇԸՐՕՏԷԼ:

ՓԸՇՐՕՏՎԷԼ - *տե՛ս* ՓԸՇԸՐՕՏՎԷԼ:

ՓԸՇՈ՛ՒՄ-ՓԸՇՈ՛ՒՄ/ՓԻՇՈ՛ՒՄ-ՓԻՇՈ՛ՒՄ/ՓՈ՛ՒՇՈ՛ՒՄ-ՓՈ՛ՒՇՈ՛ՒՄ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փըշո՛ւմ-փըշո՛ւմ անէլ - 1. Անասուններին ուտելիք մոտեցնելով՝ մոտ կանչել: *Փըշո՛ւմ-փըշո՛ւմ ա անում, էտ հ՛ոլը փըռնում, մօրթում* (Բ): 2. *փխբ.* Սիրաշահել: *Կուճի հարթնը ժ՛ուլիգ՛ ա ինում, ըսկէսվօրը փըշո՛ւմ-փըշո՛ւմ ա անում, լ՛ավ ապըրում* (Զ):

ՓԸՇՈՒՐ - *տե՛ս* ՓԸՇԸՐԱՆՔ:

ՓԸՇՈՒՐ-ՓԸՇՈՒՐ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փըշուր-փըշուր անէլ - *տե՛ս* ՓԸՇԸՐՕՏԷԼ:

- Փըշուր-փըշուր ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՓԸՇԸՐՕՏՎԷԼ:

ՓԸՇՓԸՇԱԼ - *տե՛ս* ՓԸՇՇԱԼ (շատերը կամ շատ անգամ):

ՓԸՇՓԸՇԻ(Գ՛)/ՓԻՇՓԻՇԻ(Գ՛) - *գ.* Լայն տերեւներով խոտաբույս: *Ղուշը փախճ՛ում ա, փըշփըշիգ՛ին տիրըվնէրէն տակէն կ՛օղալ կէնում* (Զ):

ՓԸՇՓԸՇՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՇՇԸՑ(Ը)ՆԷԼ (շատերը կամ շատ անգամ):

ՓԸՇՓԸՇՕՆ - *տե՛ս* ՓԸՇՇՕՆ:

ՓԸՇՓԸՇՕՑ - *տե՛ս* ՓԸՇՇՕՆ:

ՓԸՇՓՕՇՈՒՏ/ՓՈՒՇՓՕՇՈՒՏ - *ած.* Շատ փշոտ, փշփշոտ: *Փըշփօշուտ քօլ ա ցա՛ք՛ին քօլը* (Բ):

ՓԸՉԱԿ - *գ.* Ծառի բնի մեջ փտումից՝ քայքայումից առաջացած խոռոչ: ... *Մին էլ տը՛սնում ա՝ ծառին փըչական մին ղա՛ջանգ՛ ղուշ թըռավ* (ՀԺՀ, V, 212):

ՓԸՉԱՏ - *տե՛ս* ՓԷՉԱՏ:

ՓԸՉԱ՛ՏԷԼ/ՓԻՉԱ՛ՏԻԼ - *նբ.* 1. Կնիք դնելով՝ դրոշմելով վավերացնել: *Վէզիրը թօխտը կ՛իրիս ա, թաքավէրընն էլ փըչըտէս ա, տաս էտ ըխճըկանը* (ՀԺՀ, V, 653): 2. Կնիքը դնելով՝ փակել՝ գործունեությունը արգելել: *Մին օր էլ տիյը՛ռան մարթ ա կ՛ամ, ըտըրա մաղազինը փըչ՛ատ՛ում* (Զ):

ՓԸՉԱ՛ՏՎԷԼ/ՓԻՉԱ՛ՏՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՉԱ՛ՏԷԼ-ի:

ՓԸՉԷՉ/ՓԻՉԷՉ *(պրս. piče (դեմքը ծածկելու ցանցկեն քող, շղարշ), թրք. peče)* - *գ.* Գլխի չսանրված՝ գզգզված մազեր: *Առաչ մին լ՛ավ կընգանը փըչէչը քանդում ա, բիչէրը ծիք՛-ծիք՛ անում, յէտավ յէր կէնում...* (ՀԺՀ, V, 454):

- Փըչէչնէն կըրակ տալ - 1. Անելանելի վիճակի մեջ լինել: *Խը՛ղճը էն ա փըչէչնէն կըրակ տայիս, մինը կա վէչ, թա ք՛ամանգ՛ անէ* (Բ): 2. Խիստ ափսոսալ՝ զղջալ: *Հ՛ոբին կըթնատու կավը ծախից, մընաց փըչէչնէն կըրակ տայիս* (Զ):

ՓԸՉԷՉԻԳ՛/ՓԻՉԷՉԻԳ՛ - *ած.* Գզգզված եւ առատ մազեր ունեցող: *Փըչէչիգ՛ կընէգ՛ ա իլալ Սօնյան* (Բ):

ՓԸՉԸԳ՛ՕՏԷԼ/ՓԻՉԻԳ՛ՕՏԷԼ/ՓՈՒՉԻԳ՛ՕՏԷԼ - *չբ.* Մարմնի վրա փուչիկների նմանվող ուռուցքներ՝ պալարներ առաջանալ: *Ջանը սաղ փըչըգ՛օտալ ա* (Բ):

ՓԸՉԸՂԱՏԷԼ - *նբ.* Վաստակածը վատնել՝ ապարդյուն ծախսել: *Էրգ՛ին*

մին ամսվա ըշխադածը մին օրումը փը-ջըղատում ա, տէրտակըբօշ կամ տօն (Ձ):

ՓԸՉԸՂԱՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՉԸ-ՂԱՏԷԼ-ի:

ՓԸՉԸՌԳԻԼ - *չբ.* 1. Գզգզվել (մա-զերը): *Էտ մագէրըտ խէ սանդրում չը՞ս, փըչըռգվալ ա* (Բ): 2. Կուչ գալ, կծկվել (ցրտից): *Ցօրտ ա, հավերը փըչըռգվալ ըն* (Բ): 3. *փխբ.* Խեղճանալ, թշվառ վիճակում հայտնվել: *Դօրհնց Միրզան ազդուն մարթ ա իլալ, միհէնգ ա ըտի փըչըռգվալ* (Բ):

ՓԸՉԸՌԳԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓԸՉԸ-ՌԳԻԼ-ի:

ՓԸՉԸՌԳՕՏԷԼ - *տե՛ս* ՓԸՉԸՌԳԻԼ (շատերը կամ շատ անգամ):

ՓԸՉԸՓԱՉԱ - *տե՛ս* ՓԸՐՉԸ-ՓԱՐԱ(Խ):

ՓԸՉԻԼ/ՓԻՉԻԼ *(գրբ. փչեմ)* - *նբ.* 1. Բերանից օդի հոսանք արտամղել: *Ծօրէրը լիգը պիմբըկքօլա, թօղէ փիչիմ, ասէ՝ պէմբակը հօր ա՞* (ԱՀ, 41): 2. Ձանազան կարգի սարքերով՝ հարմա-րանքներով օդի ուժեղ հոսանք ուղղել որեւէ բանի վրա: *Ադին էլ փօքսավը փըչալ ա, քարը հիլըցըրալ, պօղվատ ըստացալ...* (ԱԱ, 80): 3. Փչելով օդը մղել փողային երաժշտական գործիքի մեջ եւ նվագել: *Էս տըղան էլ քինացալ ա զուռնան յէր կալալ, փըչալ, սաղ աշ-խարքը ղուշունավ լըցալ ա* (ՀԺՀ, V, 173): 4. Ճնշված՝ սեղմված օդի միջոցով հեղուկը՝ փոշին ցողել՝ սրսկել: *Ամմէն օր էտ ծըղրգևէրէն յըրա ճուր ար փիչում* (Ձ): 5. Օդով՝ փուքով լցնել (փուչիկ, ռետինե գնդակ, անվադող եւն): *Մին շարիկ ա փըչում, տամ խուխէն* (Ձ): *չբ.* 6. Օդի հոսանք առաջ բերել (քամու մասին): *Մըղակը պէց ա, քամէ յա փը-չում* (Բ): 7. Օդի միջոցով տարածվել: *Բըղէրան գուլու վը՞տ ա փըչում* (Ձ): 8. Անել, լինել (ցրտի՝ բուքի եւն մասին): *Փիս ցօրտ ա փըչում* (Ձ): 9. *փխբ.* Սուտ խոսել, ստել: *Մարթը վը՞ր հըսնում ա տօն, ըսկըսում ա փըչիլը, թա չօրս դա-չաղ ինձ յիրա տը՞ռէն...* (ՀԺՀ, VII, 341):

- Փըչիս՝ վէր կըղնէ - Թույլ է, ուժա-սպառ է, վտիտ է: *Ըտըրան էլ մին մանչվանց տըղա յա ինում, վէր լըհա փը-չիս, վէր կըղնէ* (Ձ):

ՓԸՉՎԻԼ/ՓԻՉՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՓԸ-ՉԻԼ-ի:

ՓԸՌԱՆԳ/ՓԸՌԱՆԳ - *գ.* Ֆրանսիա-ցի բնիկ ազգը, ինչպես նաեւ այդ ազգի ներկայացուցիչը: *Էտ ընդրան մըհար ա, վէր ղըլըցէք չէշնա յօր օնին, վէր ուրանք փըռանգ տէռնան* (ՋՏ, Ա, 78):

ՓԸՌԱՆԳ - *տե՛ս* ՓԸՌԱՆԳ:

ՓԸՌԷԼ - *տե՛ս* ՓԸՌՆԷԼ:

ՓԸՌԷՇՆԸ - *տե՛ս* ՊԸՌԷՇՆԸ:

ՓԸՌԸԿԱԼԻԼ - *չբ.* Վրան բարակ շերտ՝ թաղանթ գոյանալ: *Կինուն իրը՞սը փըռըկալալ ա* (Բ):

ՓԸՌԸՆԴԱՂ/ՓԸՐԸԼԴԸՂ *(թրք. fərəldak)* - *տե՛ս* ՀԱՎԱՅԻ (3):

ՓԸՌԸՆՉԱԼ *(գրբ. փռնչեմ)* - *չբ.* Օդն ուժգնորեն բերանից ու քթից աղմուկով արտաշնչել (ձիու՝ եզների եւն մասին): *Վար շատ քըշում ա, ծին փըռնըչամ ա, թօքը վէր ա ըղնում* (Ձ):

ՓԸՌԸՆՉՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ՓԸՌԸՆ-ՉԱԼ: 2. *նբ. եւ պբ.* ՓԸՌԸՆՉԱԼ-ի:

ՓԸՌԸՆՉՕՆ - *գ.* Փռնչալը, փռնչալու ձայնը: *Յը՞զևանը փըռընչօնը ծիյէնցը խըրթնըցընէս ա* (Ձ):

ՓԸՌԸՆՉՕՑ - *տե՛ս* ՓԸՌԸՆՉՕՆ:

ՓԸՌԸՇՆԻ - *տե՛ս* ՊԸՌԸՇՆԻ:

ՓԸՌԸՇՏԱԼ - *չբ. տե՛ս* Սանբիր կանալ:

ՓԸՌԸՇՏՕՆ - *տե՛ս* ՍԱՆԲԻՐ:

ՓԸՌԸՇՏՕՑ - *տե՛ս* ՍԱՆԲԻՐ:

ՓԸՌԸՎԱՐ - *տե՛ս* ՓՈՒՌՎԱՌ:

ՓԸՌԹ/ՓԸՐԹ - *ձ.* 1. Կրակը բոցա-վառվելու ձայնը: *Փը՛ռթ, կըրակը նի յա կէնում* (Բ): 2. Պոռթկուն կերպով ծիծա-ղելու ձայնը: *Մին էլ բանուրդանն թաքավէրը ըսքըսում ա ծըծաղէլը՝ փը՛ռթ* (Ձ): 3. *ածական.* Պոռթկուն: *Փըռթ մարթ ա Աբօն* (Բ):

- Փըռթ անել - *տե՛ս* ՓԸՌԹԱԼ:

ՓԸՌԹԱԼ/ՓԸՐԹԱԼ *(հ.ե. *phēr-t-)* - *չբ.* 1. Հանկարծակի բոցավառվել: *Կըրակը փըռթամ ա, նի կէնում* (Բ): 2. Հանկարծ բարձրաձայն ծիծաղել: *Վէզիրը էտ վէր ըսկանում ա, փըռթամ ա* (Ձ):

ՓԸՌԹԱՓԸՌԹ/ՓԸՐԹԱՓԸՐԹ - *մ.* Ընդհատվելով, ընդհատ-ընդհատ: *Կը-րակը փըռթափըռթ էրում ա* (Բ):

ՓԸՌԹԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *տե՛ս* ՓԸՌԹԱԼ: 2. *նբ.* ՓԸՌԹԱԼ-ի:

ՓԸՌԹՓԸՌԹԱԼ/ՓԸՐԹՓԸՐԹԱԼ - *տե՛ս* ՓԸՌԹԱԼ (շատերը կամ հաճա-խակի):

ՓԸՌԹՓԸՌԹՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՐԹՓԸՐԹ-Ց(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՌԹԱԼ (շատերը կամ հաճախակի):

ՓԸՌԹՓԸՌԹՕՆ/ՓԸՐԹՓԸՐԹՕՆ - *տե՛ս* ՓԸՌԹՕՆ:

ՓԸՌԹՓԸՌԹՕՑ/ՓԸՐԹՓԸՐԹՕՑ - *տե՛ս* ՓԸՌԹՕՆ:

ՓԸՌԹՕՆ/ՓԸՐԹՕՆ - *գ.* 1. Հանկար-ծակի բոցավառվելը եւ բոցավառվելու ձայնը: *Կըրակէն փըռթօնը հըռանցէ ըս-կանվում ար* (Ձ): 2. Հանկարծ բարձրա-ձայն ծիծաղելը եւ ծիծաղելու ձայնը: *Թաքուհուն փըռթօնը թաքավէրին տուր չի կամ* (Ձ):

ՓԸՌԹՕՑ - *տե՛ս* ՓԸՌԹՕՆ:

ՓԸՌԻ - Գործածվում է կապակցու-թյան մեջ:

- Փըռի տալ - Փողային երաժշտա-կան գործիք նվագելիս խոր ներշնչել՝ օդ հավաքելու համար: *Ջուռնաչին փըռի յա տամ* (Ձ):

ՓԸՌՆԷԼ/ՓԸՌԷԼ *(գրբ. բռնեմ (բռնել), փռեմ (սփռել, տարածել)* - *նբ.* 1. Բռի՝ ափի մեջ առնել, ատամներով՝ բերանով եւն պահելով բաց չթողնել: *Թըվանգը փըռնած էտ կօղէն բանը պահում ա* (Ձ): 2. Մոտենալով մեկին կամ մի բանի ձեռքով պահել իր մոտ, չթողնել՝ շարժվի: *Էտ մարթը էլ ըտըրա հէտան վազ ա տամ, թա՝ փըռնէ* (ԼՂԲ, 348): 3. Պատել, ծածկել: *Կաթնէն իրը՞սը յը՞ղ ա փըռնալ* (Բ): 4. Որսալ: *Ադանթ ա, կատուն մուկուն բիդի փըռնէ* (Ձ): 5. Ձերբակալել, կալա-նավորել: *Խաբարը հըսնում ա հօրը, թա.- Տըղէտ փըռնալ ըն, էն ա տանումը* (Ձ): 6. Արգելել, առաջն առնել՝ կապել: *Մին օշափ կամ ա, էտ ըխպիրին առաչը փըռնում* (Ձ): 7. Հայտնաբերել, գտնել: *Սէտրակը կընգանը սօտը փըռնում ա* (Ձ): 8. Վարձել: *Հօրը մըռնէլանը յէտը տըղան տանում ա՝ ապրանք ծախէ, համ էլ ծառա փըռնէ* (ՆԱԲ, 35): 9. Թռչող՝ նետվող իրը՝ առարկան օդում որսալ: *Էտ տըղան լօք ա տամ, էտ դուշը փըռնում* (Ձ): 10. Պատահել, հանդիպել: *Տընա-շինըտ ինձ ըշտը՞ղ փըռնում ա, ըրած լըվօթունը իրը՞սավըս ա կամ* (Բ): 11. Ձեռնարկել, սկսել: *Ըշխարքէս պէնը հունցը փըռնիս, ընդի էլ անալ կըկա* (ԱԲԲ, 28): 12 Տարածվել, լցվել, պատել: *Խըրըվածէն վը՞տը սաղ շէնը փըռնալ ա* (Բ): 13. Պատրաստել, սարքել: *Իզէն հինչ կընէգ ա՞, ըղաճուր փըռնէլը էլ չի գուդում* (Բ): 14. Ընտրել՝ ընդունել մի ուղղություն: *Պառավը ասում ա.- Էս կածանը փըռնէ՛, քը՞զ տընական ա թուշ էտ շէնը* (Ձ): 15. Գրավել, զբաղեցնել: *Վէր շատ անց ա կէնում, մին դէր ա կամ, վէր էն մը՞ռած դէրին տէղը փըռնէ* (ՀԱԲ, 15, 129): *չբ.* 16. Պատել, համակել, արծարծվել, բորբոքվել, սկսվել: *Էտ տըղէն հազը փըռնըմ ա, սունչը նի քըշէլիս տէնակը կօլ ա քընըմ* (ՀԺՀ, V, 456): 17. Համապատասխանել, պատշա-ճել: *Տըղըմարթին խօսկը վէր կօրծէն նըհը՞տ փըռնից վէջ, էլ հինչ տըղա՞մարթ* (Ձ): 18. Արմատակալել, կպչել: *Ջալաղը փըռնալ ա* (Բ): 19. Պտղավորվել: *Սա-հանց բախտը պիրում ա, լանվ լօբի յա փըռնում էտ տարի* (ՀԺՀ, VII, 389): 20. Կազմում է բազմաթիվ հարադրություն-ներ եւ դարձվածներ, ինչպես՝ *անէսկը փըռնէլ, աշկը փըռնէլ, տը՞ղ փըռնէլ* եւն:

- Փըռնիս յէրգինքը՝ յը՞ր ինիս - Ասում են հորդ անձրեւի՝ ձյան մասին:

ՓԸՌՆԸՊ - *տե՛ս* ՁԸՆՁԸԳՈՒԼԱՆ:

ՓԸՌՆԸՎԷԼ/ՓԸՌՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՓԸՌՆԷԼ-ի: *չբ.* 2. Ցավել, մարմնական ցավ զգացվել: *Տո՛ւզնութունան կըլօ՛խը փըռնըվալ ա* (Բ): 3. Իրար հետ վիճել՝ կռվել: *Ըտըրանք փըռնըվում ըն, ո՛ւրո՛ւր իրը՛ս ճըպըռոտում* (Ձ):

ՓԸՌՆԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՌՌԸՑ(Ը)ՆԷԼ - 1. *պբ.* ՓԸՌՆԷԼ-ի: Բռնել տալ: *նբ.* 2. Հարմարեցնել, համապատասխանեցնել: *Քընէնք՝ ըն ըրալ, քընէնք՝, էտ էրկու անըմըտ ո՛ւրո՛ւր նիհէտ փըռնըցըրալ, շինա՛լ Մուխրէնէս* (ԱԱ, 21): 3. Հարմար առիթ գտնել, առիթն օգտագործել: *Կարում չըմ, թա փըռնըցընիմ, բօստանըս պիհիմ* (Բ): 4. Նշան բռնել: *Վը՛րսկանը փըռնըցընում ա, յըրա անում* (Ձ): 5. Համեմատել, բաղդատել: *Փըռնըցընէս ա, տըսնաս՝ տըրը՛խէն մին թայը մը՛ծ ա, մինը՝կուճի* (Ձ): 6. *տե՛ս* ՓԸՌՆԷԼ (10): *Կամ ըն, տըրան փըռնըցընում, կօխում մէշուկէն մաչը, ք՛ընում* (ՀԱԲ, 15, 102): 7. Հարվածել: *Արչը կ՚ո՛ւլին մին հէնց սիլա յա փըռնըցընէս, վը՛ր կ՚ո՛ւլին աշկէրը կըծ՛ըկըրակ ա ընէս* (ԼՂԲ, 323): 8. Նետել: *Քարը փըռնըցընում ա, տամ ըտըրա կըլխան, ըսպանում* (Ձ):

ՓԸՌՆՕՏԷԼ - *նբ.* Շատերին՝ շատ բան բռնել: *Սահանք փըռնօտում ըն էտ քըռասուն կ՚ումա՛ջին, կըտօրում...* (ՀԺՀ, V, 420):

ՓԸՌՆՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՌՆՕՏԷԼ-ի:

ՓԸՌՌԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՌՆԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՌՌՕՆԻ - *տե՛ս* ՎԸՌՌՕՆԻ:

ՓԸՌՎԷԼ - *տե՛ս* ՓԸՌՆԸՎԷԼ:

ՓԸՌՓԸՌԱԼ - *չբ.* 1. Ծփալ, ծածանվել: *Վէր քամէ յա ինո՛ւմ, էտ բայդաղը փըռփըռամ ա* (Ձ): 2. *փխբ.* Խիստ անհանգիստ վիճակում լինել, նեղվել, ինչ անելը չիմանալ: *Կարկուտը արտէրը փուչըցըրալ ա, խը՛ղճ շինա՛ցէք՝ էն ըն փըռփըռալիս* (Բ):

ՓԸՌՓԸՌՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓԸՌՓԸՌԱԼ-ի:

ՓԸՌՓԸՌՕՆ - *գ.* 1. Ծփալը, ծածանվելը եւ դրա ձայնը: *Ծ՛ՕՐԻՆ փըռփըռօնը ապան ըսկանում ա* (Ձ): 2. *փխբ.* Անհանգիստ վիճակում լինելը, նեղվելը: *Մարթը կընգանը փըռփըռօնը վէր տը՛սնում ա, ուրխանում ա* (Ձ):

ՓԸՌՓԸՌՕՑ - *տե՛ս* ՓԸՌՓԸՌՕՆ:

ՓԸՍԱ - *տե՛ս* ՓԸ՛ՍԱ:

ՓԸՍԱԽՈՒՄ - *գ.* Նշանդրեքից հետո աղջկա հարազատների կողմից կազմակերպված հրավերք՝ ի պատիվ փեսայի: *Ք՛ինամ ըն փըսախում, մին լ՚ավ ք՛ը՛փ անում* (Ձ):

- Փըսըխումի տալ - Նշանդրեքից հետո աղջկա տանը ի պատիվ փեսայի կազմակերպված հրավերքի գնալով՝ քեֆ անել: *... Նը՛շան ըն տամ, փըսըխումի տամ, օթ ամսանը յէտը նը՛շանը փօզմիշ անըմ...* (ՋՏ, Ա, 77):

ՓԸՍԱԿ *(գրբ. պսակ)* - *գ.* Պսակադրություն, ամուսնություն: *Նա շընհավէր ա անըմ ընդ՛ըրանց փըսակը, Ալման ծիյան յէր ա կ՚ամ, էտ պառավ մարթին ծը՛ռքը պաչըմ...* (ՀԺՀ, V, 139):

ՓԸՍԱԿԱՆՉ - *գ.* Առաջին հրավերքը նշանադրությունից հետո աղջկա տանը՝ ի պատիվ փեսայի: *... Մէր կընանէքընն էլ հէնց էտ ին օզըմ. գիդա՛ցին, թա յա՛ փըսականչ ա, յա՛ ղօնախլընդ...* (ՋՏ, Ա, 23):

ՓԸՍԱԿԷԼ/ՓԸՍԱԿԻԼ *(գրբ. պսակեմ)* - *նբ.* ՓԸՍԱԿՎԷԼ-ի: *Էտ ըխճըկանը հա՛ՐԸ-մա՛ՐԸ հավան ըն կընաս, պիրիս ըն ըտըրանց փըսընկէս* (ԼՂԲ, 315):

ՓԸՍԱԿՎԷԼ/ՓԸՍԱԿՎԻԼ - *չբ.* Ամուսնանալ: *Էտ ախչիգ՚ը կընծ՛ացալ ա ո՛ւրաց նՕ՛ք՚ՈՐ Գագիկին յըրա, նիհէտը փըսակվալ* (ԱԱ, 78):

- Փըսընկվէլու մըրթընկընէգ՝ - Անհաշտ ամուսիններ: *Ըտըրանք սաղ օրը տանը կըռը՛էվ ըն անում, հանց ըն լ՚ըհա փըսընկվէլու մըրթընկընէգ՝ ինին* (Ձ):

ՓԸՍԱՀԱ՛ՆՐ - *գ.* Փեսայի հայրը: *Փըսահա՛նը շատ լ՚ավ մարթ ա ինո՛ւմ* (Ձ):

ՓԸՍԱՄԱՐ - *գ.* Փեսայի մայրը: *Փըսամարը հըրթնընցուվէն հը՛տէ մին ճօխտ գ՚ո՛ւլբա՛ յա կ՚օրծում, ղարկում* (Ձ):

ՓԸՍԱ՛ՄԱՐԹ - *տե՛ս* ՓԻՍԱՄԱՐԹ:

ՓԸՍԱ՛ՆԱԼ - *տե՛ս* ՓԻՍԱՆԱԼ:

ՓԸՍԱՉՕ՛Ր - *ած.* Բնական՝ կանգուն վիճակում չորացած: *Մին փըսաչ՚ՕՐ կաղնէ յա կըտըրէս, փա՛նդ ընէս* (Ձ):

ՓԸՍԱՏԱՐ - *գ.* Նա, որ փեսա ունի, փեսայի տեր: *Ասում ա.- Փըսատար ըս, համօթ ա, ուշունց մէ՛լ տալ* (Ձ):

ՓԸՍԱՏՕՆ - *գ.* Փեսայի տունը: *Վէր հըսնըմ ըն փըսատօնը, հըրթնացուն յա՛յմիշ ա ինո՛ւմ* (Ձ):

ՓԸՍԱՑՈՒ - *գ.* 1. Աղջկա ապագա ամուսինը: *Տըռռօնը փըսըցուվէն հէտան թըռչում ա, մուկունընն էլ վազ տալավ ք՛ընում ա, նի մընում պ՚ունը* (ՆԱԲ, 71): 2. Ամուսնանալու տարիքին հասած եւ հարսնացու փնտրող երիտասարդ: *Շատ փըսացու վա կ՚ամ, ամմա թաքավէրին ախճիգ՚ը վէշ մինին հավան չի կէնում* (Ձ): 3. Փեսա դարձնելու կամ դառնալու հարմար թեկնածու: *Ըտի էտ ախճիգ՚ը կարում չի, թա մին փըսացու ճօկէ էտքան տըղօրանցը մաչան* (Ձ):

ՓԸՍԸԿԱՏԸ՛Ղ - *գ.* Պսակադրության տեղ: *... Փըսակ ք՛ինալիս յա փըսըկտէղա կ՚ալիս մակարնէն մէծ շադդըղ կանին...* (ՋՏ, Բ, 138):

ՓԸՍԸՄԱՐԹԻ - *տե՛ս* ՓԻՍԸՄԱՐԹԻ:

ՓԸՍԸՆԳՈ՛Ի - *տե՛ս* ՓԸՍՈ՛ՒՆԳՈ՛Ի:

ՓԸՍԸՎԷՐ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐ:

ՓԸՍԸՎԷՐԷԼ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐԷԼ:

ՓԸՍԸՎԷՐՎԷԼ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐՎԷԼ:

ՓԸՍԸՑ(Ը)ՆԷԼ[1] *(գրբ. բուսուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՓԸՍՆԷԼ-ի:

ՓԸՍԸՑ(Ը)ՆԷԼ[2] - *տե՛ս* ՓԻՍԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՍԼԱ՛ՄԻԾ - *տե՛ս* ՓԻՍԼԱ՛ՄԻԾ:

ՓԸՍԼԷՆՔ՝ - 1. *տե՛ս* ԾՈՒԼՈՒԼ: 2. *տե՛ս* ԽՈՒԽԸՀԸՆԳԷՐ (2):

ՓԸՍԼԸՆՔՕՏ - *ած.* 1. Վրան փսլինք քսված, փսլինքով կեղտոտված: *Փըսլընքօտ շՕ՛Ր ա կ՚ը՛ցալ* (Բ): 2. *տե՛ս* Ծուլուվը կախ:

ՓԸՍՆԷԼ *(գրբ. բուսանիմ)* - *չբ.* 1. Ծիլը հողի երես դուրս գալ: *Էք՚սի օրը յէր ա կէնում, տը՛սնում՝ արտը փըսած* (ՀԺՀ, V, 559): 2. Աճել (բույսերի մասին): *Անճո՛ւր տը՛ղ ծառէր փըսած՝ճըղնէր օնէ, տիրը՛էվ չօնէ* (ԱՀ, 27): 3. Մազեր դուրս գալ՝ աճել: *Քաչալը էտ ճիրա՛ն խըմում ա, մագ՚էրը դա՛ստի փըսնում ա* (Ձ): 4. Գոյանալ, առաջանալ: *Հ՛ըղըցումը վէր կ՚ո՛ւզիս, աշկէտ պուզտի կըփըսնէ* (ՆԱԲ, 162): 5. *փխբ.* Հանկարծակի հայտնվել՝ երեւան գալ: *Մին էլ բ՛ուրդա՛ն սադանան փըսնում ա ըռաշկէն* (Ձ):

ՓԸՍՆՈ՛ՒՆԳՈ՛Ի - *տե՛ս* ՓԸՍՈ՛ՒՆԳՈ՛Ի:

ՓԸՍՊԱՐԱՆՔ - *տե՛ս* ՓԱՍՊԱՐՔ:

ՓԸՍՊԱՐԷԼ *(գրբ. ապսպարեմ)* - *նբ.* Միջնորդաբար որեւէ բանի մասին տեղեկացնել՝ հայտնել: *Փըսպարում ա, թա.- Կընէգ՚ըտ սիրական ա պահում, ճէլլի յը՛ք* (Ձ):

ՓԸՍՍ - *տե՛ս* ԹԸՍՍ:

ՓԸՍՍԱԼ - *տե՛ս* ԹԸՍՍԱԼ:

ՓԸՍՍԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ԹԸՍՍԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՍՍՕՆ - *տե՛ս* ԹԸՍՍՕՆ (2):

ՓԸՍՍՕՑ - *տե՛ս* ԹԸՍՍՕՆ (2):

ՓԸՍՏ - *ձ.* Վրիպելու՝ նպատակակետին չդիպչելու՝ չհասնելու բացականչություն: *Փը՛ստ, գ՚ո՛ւլլա՛ն վըզգալալ ըլըբըստըրակէն կըլխավը անց ա կէնում* (Ձ):

- Փըստ անէլ - Նպատակակետին չդիպչել՝ չհասնել, վրիպել: *Լ՚ավ վը՛րսկանը փըստ չի անում* (Ձ):

- Փըստը նըստէլ - *տե՛ս* Հավան նըստէլ:

- Փըստ ընցընէլ/ք՚ինիլ - Չհաջողվել, ձախողվել: *Կօրծը փըստ ք՛ը՛ցավ* (Բ):

ՓԸՍՏԱԼ - *չբ.* 1. *տե՛ս* Փըստ անէլ: 2. *տե՛ս* Փըստ ընցընէլ:

ՓԸՍՏԱՆՄԻԾ - *տե՛ս* ՓԻՍԼԱՆՄԻԾ:

ՓԸՍՏԱՆ - *տե՛ս* ՓԸԼԱՆ:

ՓԸՍՏԱՓԸՍ - *մ.* 1. Ծխելուց ծուխը փստացնելով: *Փըստափըստ պապռոզ ա քաշում* (Զ): 2. Անընդհատ վրիպելով: *Փըստափըստ յըրա յա տամ, պատրոնկէն պըրծընում ա* (Զ):

ՓԸՍՏԷ - *գ.* Խաղատեսակ: *Խոխէնք՝ փըստէ յըն տամ* (Զ):

ՓԸՍՏԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* 1. Ծխելուց ծուխը փը՛ստ-փը՛ստ ձայն հանելով փչել: *Չընբուխը նի յա կըցընում, փըստըցընում* (Զ): 2. *փխբ.* Մեկ-մեկ հենց այնպես՝ ձեւի համար ծխել: *Էն էլ պապռոզ չի քաշում, դաթումը փըստըցընում ա, լի՞* (Բ): 3. *չբ. տե՛ս* Փըստ անել:

ՓԸՍՏԾԹՈՒՆ/ՓԱՍՏԾԹՈՒՆ - *գ.* 1. Գոռոզամիտ լինելը, գոռոզամտություն: *Փըստծթունը ըշընը՝ցուց ըստուծանա յա տըված* (Բ): 2. Գոռոզամիտ վարքագիծ՝ արարք: *Հինչ փըստծթուն ասիս՝ մէր Արտավազէն անա տուս կըկ՛ա* (Բ):

ՓԸՍՏՕԿ/ՓԸՍՕԿ/ՓՈՒՍՏՕԿ/ՓՈՒՍՕԿ - *տե՛ս* ԾԻԼ (1, 2, 3):

- Փըստօկը տուս կ՛ալ/տուս քընցիլ - Հասունանալ, արբունքի հասնել: *Լ՛ըհա վէր փըստօկը տուս ա յը՝կալ, հաղը փըսակալ ա* (Զ):

ՓԸՍՏՕՆ[1] *(ռուս. пистон, ֆր. piston)* - *գ.* Փամփուշտի հրապատիճ: *Առըտուրականը թըվանգ՛ը յօր ա օնըմ, փըստօնը մէյին տինըմ, տըրընքցընըմ* (ՀԺՀ, V, 233):

ՓԸՍՏՕՆ[2] - *տե՛ս* ԽԸԼԹԸՋՈՒԲ:

ՓԸՍՏՕՆ[3] - *գ.* Փստացնելը եւ նրա ձայնը, փստոց: *Մին փստոց ա ըսկանում, յը՝ր կէնում* (Զ):

ՓԸՍՏՕՑ - *տե՛ս* ՓԸՍՏՕՆ[3]:

ՓԸՍՆԻՆԳ՛ՆԻ/ՓԸՍԼՆԻՆԳ՛ՆԻ/ՓՆԻՍՆԻՆԳ՛ՆԻ/ՓՆԻՍԼՆԻՆԳ՛ՆԻ/ՓԸՍԸՆԳ՛ՆԻ/ՓԼՆԳ՛ՆԻ - *գ.* Ձյունախառն ուժեղ քամի՝ փոթորիկ: *Մէհէտ՝ ծըմըռնան մին ցօրտ օր, վը՝ր փըսունգ՛ուն էն սըրէրավը փըչիս ար, Մէլիք Շահնազարը Պըլը Պուղուն ղարկում ա ծմակը* (Զ):

- Փըսունգ՛ու անել - 1. Ձյունախառն ուժեղ քամի՝ փոթորիկ բարձրանալ՝ փչել: *... Ամմա տօն տընէլիս փուսնունգ՛ու վա անում, տէրմանը քըշում յէրգ՛ինք՛* (ԱԱ, 15): 2. *փխբ.* Խիստ անհավանական բաներ ասել, ստել: *Հինչ ը՞ս փըսունգ՛ու անում, ըտի պէն չի կա* (Բ):

ՓԸՍՆԻՍ/ՓՆԻՍՆԻՍ - *տե՛ս* ՏԸՋՆԻՐԻ(Գ՛):

ՓԸՍՕՐՔԸՑԻ - *տե՛ս* ԽԱԹԱՆԳԱՋ:

ՓԸՍՓԸՍԱԼ - *նբ., չբ.* 1. Շշնջալ, ցածրաձայն՝ շշուկով խոսել: *Հինչ ը՞ս փըսփըսամ, պէցուր խօսէ* (Բ): 2. *փխբ.* Ծածուկ՝ գաղտնի խոսել, որ կողմնակի մարդիկ չլսեն: *Էտ վախտը քօռ ախպէրը կուփի յա տամ նախըրչի ախպօրը, թաքուն փըսփըսում, թա.- Պա խէ հըղըցէն տէսածըտ նաղըլ չը՞ս անում* (ՀԺՀ, V, 373): 3. *փխբ.* Բամբասել, չարախոսել: *Էնքան ըստը՝ղ-ընդը՝ղ փըսփըսաց, խը՝ղճ հարթնանը բըյաբուռ ըրավ* (Բ):

ՓԸՍՓԸՍՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՍՓԸՍԱԼ:

ՓԸՍՓԸՍՕՆ - *գ.* 1. Փսփսալը՝ շշնջալը, փսփսալու՝ շշնջալու ձայնը: *Կընգանը փըսփըսօնը մարթին քունը-տը՝ղա յը՝ր ա կըցընէս* (Զ): 2. *փխբ.* Ծածուկ խոսակցություն: *Պառավը ըտը-րանց փըսփըսօնը ըսկանում ա, լօխ թաքուհուն պատմում* (Զ): 3. *փխբ.* Բամբասանք, չարախոսություն: *Ըսկէսվօրը փըսփըսօնը կուճի հարթնը վէ-ջավը չար օնում* (Զ):

ՓԸՍՓԸՍՕՑ - *տե՛ս* ՓԸՍՓԸՍՕՆ:

ՓԸՍՕԹՈՒՆ - *գ.* Փեսա լինելը, փեսայություն: *Փըսօթունը ամմէն շան տը-ղու պէն չի* (Զ):

- Փըսօթուն անել - Որպես փեսա ծառայել: *Հայկան լ՛ավ փըսօթուն ա անում* (Բ):

ՓԸՍԾԹՈՒՆ - *տե՛ս* ՓԻՍՕԹՈՒՆ:

ՓԸՍՕԿ - *տե՛ս* ՓԸՍՏՕԿ:

ՓԸՍՕՆ/ՓՈՒՍՕՆ *(հուն. psōmos (հացի կամ մսի պատառ)* - *գ.* 1. *տե՛ս* ԹԸՌՄԱՍԿ: 2. Հանգանակությամբ որեւէ բան կազմակերպելիս յուրաքանչյուր մասնակցի վճարելիք մասը: *... Յէկէք փըսօն վէր կ՛անք, մէր ծէռքավը մին լ՛ավ պըրիպաս առնինք, ք՛ինանք Մաշուկ* (ՋՏ, Բ, 82):

ՓԸՍՕՐ/ՓՈՒՍՕՐ - *տե՛ս* ՋԻԲԻԼ:

ՓԸՏԱՆԱԼ - *տե՛ս* ՓԸՂԱՆԱԼ:

ՓԸՏԱՊԷՆ - *տե՛ս* ՓԸՂԱՊԷՆ:

ՓԸՏԱՐԱՐ - *տե՛ս* ՓԸՂԱՐԱՐ:

ՓԸՏԸՎԸ՝ՍՏԱՆ - *տե՛ս* ՓԸՂԸՎԸ՝ՍՏԱՆ:

ՓԸՏԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՂԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՏ՛ԱՆԱԼ - *տե՛ս* ՓԸՂԱՆԱԼ:

ՓԸՏ՛ԱՊԷՆ - *տե՛ս* ՓԸՂԱՊԷՆ:

ՓԸՏ՛ԱՐԱՐ - *տե՛ս* ՓԸՂԱՐԱՐ:

ՓԸՏ՛ԸՎԸ՝ՍՏԱՆ - *տե՛ս* ՓԸՂԸՎԸ՝ՍՏԱՆ:

ՓԸՏ՛ԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՂԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՏՓՕՏՈՒՏ - *տե՛ս* ՓԸԹՓՕԹՈՒՏ:

ՓԸՐԳԻՆԴԱՆ - *տե՛ս* ՊԱՐԻԿ՛Ը՝ՆԹԱՆ:

ՓԸՐԳՕՆ/ՓՈՒՐԳՕՆ *(ռուս. фургон, ֆր. fourgon)* - *գ.* Ծածկավոր բեռնասայլ, ֆուրգոն: *Էտ մարթը մին փըրգօն վը՝սկէ յա տամ, ըստակած ծիյին կաշին ինք՛ օնում* (ՀԺՀ, V, 464):

ՓԸՐԳՕՆՉԻ/ՓՈՒՐԳՕՆՉԻ - *գ.* Ծածկավոր սայլ վարող անձ, ֆուրգոնապան: *Փըրգօնչին պ՛ուրթ ա տամ, պէմբակ կ՛ըզում, համ էլ խըրատում...* (ՆԱԲ, 63):

ՓԸՐԴԸՎԷՐԱՆ/ՓԻՐԴԸՎԷՐԱՆ - *ած.* Անկիրթ, անկարգ, անշնորհք: *Փըրդըվէրան մարթ ա Մակիչը* (Բ):

ՓԸՐԸԼԴԸՂ - *տե՛ս* ՓԸՌԸՆԴԱՂ:

ՓԸՐԸՂԱԹ/ՓԸՐՂԱԹ *(արաբ. fereğat, պրս. fārağat)* - *մ.* Առանց շտապելու, կամաց-կամաց, անվրդով: *Փըրըղաթ կօրծ անօղը վըստակէլ չի* (Զ):

ՓԸՐԸՎԱՌ - *տե՛ս* ՓՈՒՌՎԱՌ:

ՓԸՐԸՓԱՐ - *տե՛ս* ՓԱՐ:

ՓԸՐԸՔԱՇԻԳ՛/ՓԸՐԻՔԱՇԻԳ՛ *(ռուս. приказчик)* - *գ.* Հրամաններ տվող անձ, պետ: *... Օխտը տարի դուքանըմը նըստած փըրըքաշիգ՛ ա, պարօվ յարմուկա ք՛ինա...* (ՋՏ, Ա, 55):

ՓԸՐԹ - *տե՛ս* ՓԸՌԹ:

ՓԸՐԹԱԼ - *տե՛ս* ՓԸՌԹԱԼ:

ՓԸՐԹԱԿԷԼ/ՓԸՐՏԱԿԷԼ/ՊԸՐՏԱԿԷԼ *(գրբ. պարտակեմ)* - *նբ.* 1. Թաքցնել, մի տեղ պահել: *... Ք՛ինամ ա կօշտը, թա.- Մին մարթ ըմ ըսպանալ, կարում չըմ փըրտակէմ, յէ՛ր կաց, տը՝սնանք՝ հինչ ընք անում* (ՀԺՀ, VII, 345): 2. Գաղտնի՝ ծածուկ պահել: *Լ՛ավ կընէգ՛ը էն ա, վէր ուրան մարթին ալէգ՛ը փըրթակէ* (Զ):

ՓԸՐԹԱԿՎԷԼ/ՓԸՐՏԱԿՎԷԼ/ՊԸՐՏԱԿՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՐԹԱԿԷԼ-ի:

ՓԸՐԹԱՆ-ՓԸՐԹԱՆ/ՓԻՐԹԱՆ-ՓԻՐԹԱՆ - *տե՛ս* ՊԸՏԸՌ-ՊԱՏԱՌ:

ՓԸՐԹԱՎԷԼ - 1. *տե՛ս* ՇԸՊԸՐՏՕՏԷԼ: 2. *չբ.* Որեւէ զսպված զգացմունք՝ հուզմունք՝ խռովք հանկարծակի եւ բուռն կերպով արտահայտել, պոռթկալ: *Էլ կարում չի տէմ կէնա, փըրթավում ա* (Զ):

ՓԸՐԹԱՓԸՐԹ - *տե՛ս* ՓԸՌԹԱՓԸՌԹ:

ՓԸՐԹԸՂԱՆ/ՓԻՐԹԸՂԱՆ - *տե՛ս* ՊԸՏԸՌ-ՊԱՏԱՌ:

ՓԸՐԹԸՎԻԼ/ՓԻՐԹԻՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՐԹԻԼ-ի:

ՓԸՐԹԸՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՌԹԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՐԹԻԼ/ՓԻՐԹԻԼ *(գրբ. բրդեմ (հաց բրդել, մանրել, փշրել), փերթեմ (պատռել, կտոր-կտոր անել)* - *նբ.* 1. Կտոր-կտոր անել, բրդել: *Հացը փըրթում ա կաթնէն մաչին, օտում* (Զ): 2. Կոտորել: *...Յէր ա կէնում, տը՝սնում մին բաբուռ ճուրէնուցը լօխճին փըրթած, կուխկըրնէրէն նըստած, օտում ա* (ՀԺՀ, VII, 86):

ՓԸՐԹՈՒՇ/ՓԻՐԹՈՒՇ/ՓՈՒՐԹՈՒՇ/ՓԸԹՈՒՇ/ՓԻԹՈՒՇ/ՓՈՒԹՈՒՇ - *տե՛ս* ՄԸԾՆԸՓԸՐԹՈՒՇ: *Ջաք՛ի ապէրը ք՛ինում ա, տը՝սնըմ փըրթուշը լօխ դուշէրը կէրած, մընում ա վայ-վայ ընէյիս* (ՀԺՀ, V, 610):

ՓԸՐԹՓԸՐԹԱԼ - *տե՛ս* ՓԸՌԹՓԸՌԹԱԼ:

ՓԸՐԹՓԸՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՌԹՓԸՌԹՑ(Ը)ՆԷԼ:

ՓԸՐԹՓԸՐԹՕՆ - *տե՛ս* ՓԸՌԹՓԸՌԹՕՆ:

ՓԸՐԹՓԸՐԹՕՑ - *տե՛ս* ՓԸՌԹՓԸՌԹՕՑ:

ՓԸՐԹՕՆ - *տե՛ս* ՓԸՌԹՕՆ:

ՓԸՐԹՕՑ - *տե՛ս* ՓԸՌԹՕՑ:

ՓԸՐՂԱԹ - *տե՛ս* ՓԸՐԸՂԱԹ:

ՓԸՐՉԱ՛ԹԿԱ/ՓԻՐՉԱ՛ԹԿԱ *(ռուս. перчатка)* - *տե՛ս* Ա՛ԼՋԱ՛Կ:

ՓԸՐՉԸՓԱՐԱ(Խ)/ՓԸՐՉԸՓԱՐՉԱ/ՓԸՉԸՓԱՉԱ *(պրս. pare parče (պատառ-պատառ)* - *տե՛ս* ՃՈՒԹԸՌՊԱՏԱՌ: *Ասըմ ա, պըրծընըմ, էտ մարթին փըռնըմ, փըրչըփարա անըմ, օտըմ* (ԼՂԲ, 368):

ՓԸՐՉԸՓԱՐՉԱ - *տե՛ս* ՓԸՐՉԸՓԱՐԱ(Խ):

ՓԸՐՍԸՎԷՐ/ՓԻՐՍԻՎԷՐ/ՓԸՍԸՎԷՐ/ՓԻՍԻՎԷՐ - *մ.* Բերանքսիվայր: *Յէշում ա տէսնում՝ մին կօրու չանաղ՝ տէրտակ, փըսըվէր, մաչը թուռըճիրավ լիգ՛ը* (ՀԱԲ, 15, 130):

- Փըրսըվէր անէլ/տինիլ/քըցիլ/օնէլ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐԷԼ: *Էտ կընանուցատ մինը մուտանում ա, մին աման փըրսըվէր տինում, օխծէն ճօտը ծասկում* (ԱԱ, 70):

- Փըրսըվէր ըղնէլ - 1. *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐՎԷԼ: *Ջա՛ւրթնանում ա, կըլօխը պըցըրցնում, տէսնում՝ քըշէր, մին էլ փըսըվէր ըղնում* (ՀԱԲ, 15, 107): 2. *փխբ.* Հիվանդ լինել, անկողնային վիճակում լինել: *Խը՛ղճը էրկու տարէ յա՝ փըրսըվէր ընգած* (Ձ): 3. *փխբ.* Խռովել, նեղանալ: *Հօրը ըսածան էտ ախճիգ՛ը փըրսըվէր ա ըղնում* (Ձ): 4. *տե՛ս* Թ՛արս ըղնէլ:

- Փըրսըվէր թաղէլ - Անարգաբար՝ խայտառակաբար թաղել: *Իզէն ըսկի մարթ չի, ընդըրա փըրսըվէր բիդի թաղիս* (Բ):

- Փըրսըվէր յարա - Ստոր՝ նենգ՝ խարդախ մարդ: *Դավութը՛ն էլ հօ մարթ չի՞, փըրսըվէր յարա յա* (Բ):

- Փըրսըվէր յէշիլ - *տե՛ս* Թ՛արս յէշիլ:

- Փըրսըվէր քօն ինիլ - *տե՛ս* Թ՛արս քօն ինիլ:

ՓԸՐՍԸՎԷՐԷԼ/ՓԻՐՍԻՎԷՐԷԼ/ՓԸՍԸՎԷՐԷԼ/ՓԻՍԻՎԷՐԷԼ - *նբ.* Գլխիվայր դարձնել, հակառակ երեսի վրա շուռ տալ: *... էս պիծի մարթըս սաղ փըլավը կէրալ ա հու ղըզդանը տափէն յըրա փըրսըվէրալ...* (ՀԺՀ, VI, 29):

ՓԸՐՍԸՎԷՐՎԷԼ/ՓԻՐՍԻՎԷՐՎԷԼ/ՓԸՍԸՎԷՐՎԷԼ/ՓԻՍԻՎԷՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՓԸՐՍԸՎԷՐԷԼ-ի:

ՓԸՐՍՕՂ/ՓՈՒՐՍՕՂ/ՓՕՐՍՈՒՂ/ՓՕՐՍՕՂ *(թրք. porsuk (գորշուկ)* - 1. *տե՛ս* ՔԸՇԷՐԷ: *մ.* 2. Փորի վրա սողալով: *Տա էլիա փուրսօղ ք՛ընըմ ա մին խըրէգ՛ մուտանըմ, ծէն տամ* (ՀԺՀ, V, 44): 3. *փխբ.* Քծնելով, շողոքորթելով: *Մարթ կա՝ սաղ գ՛անքը փըրսօղ ա ապըրում* (Ձ):

- Փըրսօղ տալ - 1. Սողալ: *Օխծը փըրսօղ տալավ մուտանում ա, կըծում, ըսպանում* (Ձ): 2. *փխբ.* Քծնել, շողոքորթել: *Փըրսօղ տալավ պաշտուն ըստացավ* (Բ):

ՓԸՐՏԱԿԷԼ - *տե՛ս* ՓԸՐԹԱԿԷԼ:

ՓԸՐՏԱԿՎԷԼ - *տե՛ս* ՓԸՐԹԱԿՎԷԼ:

ՓԸՐՈ՛ՒԴ/ՓՈ՛ՒՐՈ՛ՒԴ - *գ.* Ոգեւորություն: *Թաքավէրը տըղէն փըրո՛ւդը վէր տը՛սնում ա, շատ ա ուրխանում* (Ձ):

- Փըրո՛ւդ անէլ/տալ - *տե՛ս* Ցարի տալ:

ՓԸՐՈՒՔՏ/ՓՈՒՐՈՒՔՏ *(ռուս. фрукт, լեհ. frukt, լատ. fructus)* - *գ.* Միրգ: *Ըստարէ արաշտ ա իլա՛ւ, մին փըրուքտ չի կա, թա խօխէնք՛ը օտին* (Բ):

ՓԸՐՓԷՇՆԸ/ՓԻՐՓԷՇՆԸ/ՊԸՐՊՕՍՆԸ *(գրբ. բորբոս)* - *տե՛ս* ՅԷՇՆԸ:

ՓԸՐՓԷՇՆԻԼ/ՓԻՐՓԷՇՆԻԼ/ՊԸՐՊՕՍՆԷԼ *(գրբ. բորբոսիմ)* - *տե՛ս* ՅԷՇՆԻԼ:

ՓԸՐՓԸՏԱՃՈ՛ՒՐ/ՓԻՐՓԸՏԱՃՈ՛ՒՐ/ՓՈ՛ՒՐՓՈ՛ՒՏԱՃՈ՛ՒՐ/ՓԻՐՓՈ՛ՒՏԱՃՈ՛ՒՐ - *գ.* Խաշած փիփերթի ջուրը: *Փըրփըտաճո՛ւրը նի յա փըրթո՛ւմ, օտում* (Բ):

ՓԸՐՓԸՐԷԼ/ՓՈՒՐՓՈՒՐԷԼ *(գրբ. փրփրեմ)* - *չբ.* 1. Փրփուրի վերածվել, փրփուրով ծածկվել՝ պատվել՝ լցվել: *Սապունը քըցո՛ւմ ա ճո՛ւրը, ճո՛ւրը փըրփըրում ա* (Ձ): 2. *փխբ.* Կատաղել, գազազել: *Օշափը ընդի կըզնըվից, փըրփըրից, վէր ասվիլ չի...* (ՀԺՀ, V, 87):

ՓԸՐՓԸՐԿԱ՛ԼԻԼ/ՓՈՒՐՓՈՒՐԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ՓԸՐՓԸՐԷԼ:

ՓԸՐՓԸՐՑ(Ը)ՆԷԼ/ՓՈՒՐՓՈՒՐՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. փրփրեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՓԸՐՓԸՐԷԼ-ի:

ՓԸՐՓՕՐ/ՓՈՒՐՓՕՐ *(գրբ. փրփուր)* - *գ.* 1. Սպիտակավուն պղպջակներով զանգված, փրփուր: *Տաշտը փըրփօրավ լըսնում ա, նի մընում մաչը* (Ձ): 2. Դաշտային սպիտակ ծաղիկ: *Հա՛նդին փըրփօր շատ ա ինո՛ւմ փըսած* (Ձ): 3. *փխբ. տե՛ս* Սիպտակ պիմբըկքօլա:

ՓԸՐՕՆՏ/ՓՈՒՐՕՆՏ *(ռուս. фронт, ֆր. front, լատ. frons)* - *գ.* Ռազմաճակատ, ռազմադաշտ: *Շատէրէն նըհը՛տ ըստըրա մադար-գ՛ո՛ւդա՛ր տըղէն էլ ըն տարալ փըրօնտ* (ԱԱ, 47):

ՓԸՓԷԽՎԷԼ - *չբ.* Ծննդաբերությունից առաջ մարմինը փխրուն դառնալ: *Դօրո՛ւց Սիրանէն հարթնը փըփէխվալ ա. խօխա պիրիլի վախտըն ա* (Բ):

ՓԸՓԸԿԷԼ *(գրբ. փափկանամ)* - *տե՛ս* ԿԸԿԸՂԷԼ:

ՓԸՓԸԿԼԱ՛ՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փըփըկլա՛միշ անէլ - *տե՛ս* ՓԸՓԸԿՑ(Ը)ՆԷԼ:

- Փըփըկլա՛միշ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՓԸՓԸԿԷԼ:

ՓԸՓԸԿՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. փափկեցուցանեմ)* - *նբ.* ՓԸՓԸԿԷԼ-ի:

ՓԸՓԸԿ-ՓԱՓՈՒԿ - *տե՛ս* ԿԸԿԸՂԿԱԿՕՂ:

ՓԸՓԸԿՕԹՈՒՆ *(գրբ. փափկութիւն)* - *տե՛ս* ԿԸԿԸՂՕԹՈՒՆ:

ՓԸՓԸԿՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸԿԸՂՕՏԷԼ:

ՓԸՓԸՂԱՎԷՐ - *ած., գ.* 1. Փափախդնող՝ կրող: *Մին քանէ փըփըղավէր մարթ, քէնդիրը փըռնած, ծ՛ղ՛ում ըն, թա օղտէն կըլօխը քըցին, ամմա տը՛ռնում չար, օղտը կըտաղած ար* (ԼՂԲՔ, 268): 2. *փխբ.* Տղամարդ, տղամարդու արժանապատվություն ունեցող (անձ): *Իզէն վէր փըփըղավէր ինի, կընգանը մինակ ղարկէլ չի Սադախլու* (Բ):

ՓԸՔԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. փքացուցանեմ)* - *նբ.* ՓԸՔ(Վ)ԷԼ-ի:

ՓԸՔ(Վ)ԷԼ *(գրբ. փքեմ)* - *չբ.* 1. Ուռչել, ուռած տեսք ստանալ: *Էրած տը՛ղը փըքում ա* (Բ): 2. *փխբ.* Վիրավորվել, նեղանալ, թթվել: *Մէլիք՛ըն ասում ա.- Յաղուզ փըքվալ ը՞ս, հու վա՞ էշիտ չու ասալ* (Ձ): 3. *փխբ.* Գոռոզանալ: *Տէրտէրը փըքված ք՛ինըմ ա տօն, կընգանը ասըմ.- Մ կընէգ՛, Ծատին ինձ էրկու հազար մանէթ ա կըտակալ, ղէ էլ հինչ դա՞ղդ օնինք՛* (ՀԺՀ, V, 667):

- Փըք(վ)ած հընդո՛ւշկա - Գոռոզամիտ մարդ: *Էտ փըքված հընդո՛ւշկան լայաղ չի անում, թա շինացուց խուսըցընէ* (Ձ):

ՓԸՔՓԸՔՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ՓԸՔ(Վ)ԷԼ (շատերը կամ շատ անգամ):

ՓԸՔՓԸՔՕՐ(Վ)ԷԼ - *տե՛ս* ՓԸՔՓԸՔՕՏ(Վ)ԷԼ:

ՓԸՔՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ՓԸՔՓԸՔՕՏ(Վ)ԷԼ:

ՓԻ *(թրք. piy)* - *գ.* Որոճող կենդանիների փորի ճարպ՝ ճրագու: *Վը՛ռսկանը թալակը էծու փի յա քըսում, սարում* (Ձ):

ՓԻԳՈՒՐՆԻ *(ռուս. фигурный)* - *ած.* Նուրբ կազմվածք ունեցող, նրբամարմին: *Փիգուրնի կընէգ՛ ա Սօնան* (Բ):

ՓԻԴԱՅԻ(Ն) - *գ.* Թուրքական՝ ադրբեջանական բռնատիրության դեմ պայքարող հայ կամավոր: *Փիդայիննէն վէր յը՛կէն, թօրքէրը մին բաշ փախէն* (Ձ):

ՓԻԴԱ՛ՆԱԼ - *տե՛ս* ՓԸՂԱ՛ՆԱԼ:

ՓԻԴԱ՛ՊԷՆ - *տե՛ս* ՓԸՂԱ՛ՊԷՆ:

ՓԻԴԱՆՐԱՐ - *տես* ՓԸԴԱՆՐԱՐ:

ՓԻԴԸՎԸՏՏԱՆ - *տես* ՓԸԴԸՎԸՏՏԱՆ:

ՓԻԴԸՑ(Ը)ՆԷԼ - *տես* ՓԸԴԸՑ(Ը)ՆԷԼ:

ՓԻԶԱՆՕՄՅԱ *(ռուս. физаномия)* - *տես* ՎԻԴ:

ՓԻԹԷԼԱ - *տես* ՓԸԹԷԼԱ:

ՓԻԹԻ *(թրք. piti)* - *գ.* Ոչխարի ճարպոտ մսով, սիսեռով, կարտոֆիլով եւ համեմունքներով կավե կճուճներում եփած ջրալի կերակրատեսակ: *Ամմէն պօվուր չի կարում լ՚ավ փիթի իփի* (Զ):

ՓԻԹԻԼՔԱՇԻ - *տես* ՓԸԹԻԼՔԱՇԻ:

ՓԻԹԻԿ՚ՕՎԷԼ - *տես* ՓԸԹԸԿ՚ՕՎԷԼ:

ՓԻԹԻԿ՚ՕՎՎԷԼ - *տես* ՓԸԹԸԿ՚ՕՎՎԷԼ:

ՓԻԹԻՒՇ - *տես* ՓԸՐԹԻՒՇ:

ՓԻԹ-ՓԻԹ - *տես* ՍԱՔ՚-ՍԱՔ՚:

ՓԻԼ - *տես* ՓԸ՚Ղ:

ՓԻԼԱԿ - *տես* ՓԻԼԷԿ:

ՓԻԼԱՔ՚ԱՆ - *տես* ՓԱԼԱՔ՚ԱՆ:

ՓԻԼԷԿ/ՓԻԼԱԿ/ՓԸԼԱԿ/ՓԻԼԸ՚Կ/ՓԸԼԷԿ - *գ.* 1. *տես* ԿՕՃԱԿ (1): 2. Կոճակի նմանվող սերմերով խոտաբույս: *Ըտը՚ղ շատ փիլէկ ա ինում փըսած* (Բ):

ՓԻԼԸ՚Կ - *տես* ՓԻԼԷԿ:

ՓԻԼԻՔ՚ԱՆ - *տես* ՓԱԼԱՔ՚ԱՆ:

ՓԻԼՓԻԼԱԼ - *տես* ԻԼԼԱԼ:

ՓԻԼՓԻԼՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓԻԼՓԻԼԱԼ-ի:

ՓԻԼՕՆ - *տես* ՓԷԼՈՒՆ:

ՓԻՂ - *տես* ՓԸ՚Ղ:

ՓԻՅԱՂԱ - *տես* ՓԸՅԱՂԱ:

ՓԻՅԱԼԱ - *տես* ՓԸՅԱԼԱ:

ՓԻՅԱԼԻ - *ած.* Ճարպը շատ, ճարպոտ: *Փիյալի կ՚առն ա* (Բ):

ՓԻՅԱՆՂԱՋ *(պրս. piyāndāz (ոտքի տակ փռված)* - *գ.* Կարմիր մահուդե կամ այլ կտոր, որ փռում են պատվավոր հյուրերի ոտքերի տակ: *Խանէն ըռաչէն փիյանդազ ըն իլալ մըկնէս* (Զ):

ՓԻՅԱՎԸ՚Տ - *գ.* Ճարպի հոտ: *Ասում ա.- Փիս մէս ա, փիյավը՚տ ա կ՚ամ նը՚ստա, օտում չըմ* (Զ):

ՓԻՅԸՂԱՎԷՐ - *տես* ՓԸՅԸՂԱՎԷՐ:

ՓԻՅԸԿԱԼԻԼ - *չբ.* Ճարպոտել, ճարպակալել: *Խօզ՚էրը էնքան կաղէն ըն կէրալ, փիյըկալալ ըն* (Բ):

ՓԻՅՆԱԼԻ - *ած.* Գոմաղբով սնուցված, գոմաղբի պարունակությունը շատ: *Փիյնալի վը՚ղ ա* (Բ):

ՓԻՅՆԱՎԸ՚Տ - *գ.* 1. Գոմաղբի հոտ: *Ադաթ ա, ծաղկան լ՚ավ վը՚տ կըկ՚ա, էս ծաղկան փիյնավը՚տ ա կ՚ամ* (Բ):

ՓԻՅՆԸՃԸՎԱՐԱՆ - *գ.* 1. Գոմաղբ տեղափոխելու կողով: *Փիյնըճըվարանը շըլակում ա, ք՚ինամ* (Զ): 2. *փխբ.* Շատակեր եւ ամեն ինչ ուտող: *Փիյնըճըվարան ը՞ս, խըրէգ՚ կէր, լի՞* (Բ):

ՓԻՆԱԲԱԴ - *տես* ՓԱՆԱԲԱԴ:

ՓԻՆԱՉԻ *(պրս. pinači)* - *գ.* 1. Հին կոշիկներ կարկատող, հնակարկատ: *Վընանըմանէրը տամ ա փինաչուն, վէր կըրկատէ* (Զ): 2. *փխբ.* Վատ՝ անորակ արհեստավոր՝ մասնագետ: *Իզէն հինչ ո՞ւստա, փինաչի յա* (Բ):

ՓԻՆԱՉՕԹՈՒՆ - *գ.* 1. Փինաչու արհեստը՝ զբաղմունքը: *Փինաչուն խօխան փինաչօթուն կըսըվը՚ռէ* (Զ): 2. *փխբ.* Անորակ՝ ոչ հմուտ գործ կատարելը: *Ասում ա.- էս պատ տինիլ չի, էս փինաչօթուն ա* (Զ):

ՓԻՆԿԱ *(ռուս. финка)* - *տես* ՓՕԽԱՆ:

ՓԻՆՋԱՆ - *տես* ՓԸՆՋԱՆ:

ՓԻՆՋԱՔԷԼ - *տես* ՓԸՆՋԱՔԷԼ:

ՓԻՆՋԱՔՎԷԼ - *տես* ՓԸՆՋԱՔՎԷԼ:

ՓԻՆՋԷՎԱՒԼ - *տես* ՓԸՆՋԷՎԱՒԼ:

ՓԻՆՋԻՐԱ - *տես* ՓԸՆՋԸՐԱ:

ՓԻՆՋԻԳ՚ - *տես* ՓԸՆՋԻԳ՚:

ՓԻՆՋԻԼ - *տես* ՓԸՆՋԻԼ:

ՓԻՆՋՎԻԼ - *տես* ՓԸՆՋՎԻԼ:

ՓԻՆՓԻՆՕՏԷԼ - *տես* ՓԸՆՓԸՆՕՏԷԼ:

ՓԻՇԱՇԻԼ - *տես* ՓԸՇԱՇԻԼ:

ՓԻՇԸԿԱՎԷՐ - *տես* ՓԸ՚ՇԱԿԱՎԷՐ:

ՓԻՇԻԿ - *տես* ՉԻՇԻԿ:

ՓԻՇԻ-ՓԻՇԻ - *տես* ՓԻՍԻ-ՓԻՍԻ:

ՓԻՇԿԱՎԷՐ - *տես* ՓԸՇԿԱՎԷՐ:

ՓԻՇԿԸԿՕԽԷ - *տես* ՓԸՇԿԸԿՕԽԷ:

ՓԻՇՄԱՆԳՈՒԼ - *տես* ՓԸՇՄԱՆԳՈՒԼ:

ՓԻՇՇ - *տես* ՉԻՇՇ:

ՓԻՇՏ[1]/ՓՇՒՇՏ *(գրբ. բուշտ)* - *գ.* Մեջը դատարկ կամ հեղուկով լցված փոքրիկ ուռուցք մարմնի վրա, բշտիկ: *Իրը՚սը սաղ փիշտ ա* (Բ):

ՓԻՇՏ[2] - *ձ.* Կատվին քշելու՝ հեռացնելու բացականչություն: *Կատվէն տը՚սնում ա, թա՝ փի՛շտ* (Բ):

- Փիշտ անել - Փի՛շտ բացականչելով՝ կատվին քշել՝ հեռացնել: *Ղունաղէն խաթրո՞ւ կատվէն փիշտ չըն անէլ* (ԱԲԲ, 61):

ՓԻՇՏԻԼ - *տես* ՓԸՇՏԻԼ:

ՓԻՇՏՓԻՇՏՕՏԷԼ - *տես* ՓԸՇՏՓԸՇՏՕՏԷԼ:

ՓԻՇՏՕՏԷԼ - *տես* ՓԸՇՏՕՏԷԼ:

ՓԻՇԻՒՄ-ՓԻՇԻՒՄ - *տես* ՓԸՇԻՒՄ-ՓԸՇԻՒՄ:

ՓԻՇՓԻՇԻ(Գ՚) - *տես* ՓԸՇՓԸՇԻ(Գ՚):

ՓԻՉ *(ռուս. печь)* - *գ.* Վառարան: *Էտ մարթը նի յա մընում տօնը, վէնէրը հանում, գ՚ուլբէքը տինում փիչին տակէն* (ՀԱԲ, 15, 136):

- Փիչին տակէն վէր ընգած մաշա - Նիհար՝ հյուծված մարդ: *Էտ հինչ հա՞րթնը, փիչին տակէն վէր ընգած մաշա յա* (Զ):

ՓԻՉԱՏ - *տես* ՓԷՉԱՏ:

ՓԻՉԱՏԷԼ - *տես* ՓԸՉԱՏԷԼ:

ՓԻՉԱՏՎԷԼ - *տես* ՓԸՉԱՏՎԷԼ:

ՓԻՉԷՉ - *տես* ՓԸՉԷՉ:

ՓԻՉԷՉԻԳ՚ - *տես* ՓԸՉԷՉԻԳ՚:

ՓԻՉԻԳ՚ՕՏԷԼ - *տես* ՓԸՉԸԳ՚ՕՏԷԼ:

ՓԻՉԻԼ - *տես* ՓԸՉԻԼ:

ՓԻՉՎԻԼ - *տես* ՓԸՉՎԻԼ:

ՓԻՉ-ՓԻՉ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փիչ-փիչ անել - Ուժեղ վառվել՝ բոցավառվել: *Չօր փանդը նի յըն կըցընում, փիչ-փիչ ա անում* (Զ):

ՓԻՍ *(թրք. pis (կեղտոտ, անմաքուր)* - *ած.* 1. Բնավորության՝ հոգեբանության բացասական հատկություններ ունեցող: *Փիս մարթ ա Սումբաթը* (Բ): 2. Վատորակ, ցածրորակ: *Փիս ցօրնան լ՚ավ հաց չըս կարէլ թըխիս* (Զ): 3. Իր գործին անհմուտ, ոչ շնորհալի: *Փիս ուստա շատ կա* (Բ): 4. Պարսավելի: *Կ՚ուղթունը փիս պէն ա* (Զ): 5. Ծանր վիճակում գտնվող: *Հիվանդէն հանը փիս ա* (Բ): 6. Անբարենպաստ վիճակում գտնվող: *Կօրծէրը փիս ա* (Բ): 7. Խառն, մռայլ: *Փիս հավա յա ըսօր* (Բ): 8. Անախորժ, անդուր: *Էտ ծաղկան փիս վը՚տ ա կ՚ամ* (Զ): 9. Ոչ հարմարավետ: *Մին քանի օր ըտէղ կընալանը յէտը տըսնաս ըն, վէր ըտէղ փիս ա* (ՀԺՀ, V, 299): 10. Ոչ սուր, թույլ: *Ըտըրա համ աշկէրըն ա փիս, համ ընգուճնէն, վէչ լ՚ավ ա տը՚սնում, վէչ լ՚ավ ըսկանում* (Զ): 11. Անբավարար, ոչ հարկ եղածին պես: *Հըրսընքէն փիս ըն պըդըրաստըվալ* (Բ): 12. Վտանգավոր, վտանգներով հղի: *Էտ ըխճըկանը աշկը վախից, վը՚ր էտ տըղան ինդի փիս ճանապարնէրավ պիտի ք՚ընի...* (ՀԺՀ, V, 88): 13. Սաստիկ, խիստ: *Մէհէտ էն ա լալ ըստը՚ղ վը՚ննը կացած, փիս ծըրավալ ա* (ԱԱ, 61):

- Փիս աշկավ յէշիլ - Անբարյացակամորեն վերաբերվել: *Էտ թաքավէրը ժուղուվուրթէն փիս աշկավ ար յէշում* (Զ):

- Փիսը թըվալ - Չհանդուրժել, վիրավորվել: *Ըստըծու փիսըն ա թըվում. էտ քը՚րծէն ծրծէր ա տամ, խօխան օտում ա, մըծանում* (ԱԱ, 40):

- Փիս ինիլ - Լավ հետեւանք չունենալ: *Ասում ա.- Սո՛ւս ըրա, թա չէ փիս ա ինանկան* (Զ):

- Փիս խօսէլ - Անբարենպաստ բաներ ասել մեկի հասցեին: *Ըստըրանա շէնումը փիս ըն խօսում* (Զ):

- Փիս հըղէ - Մոլորություն, սխալ՝ կորստաբեր ընթացք: *Խաբարը հըսնում ա հօրը, վէր տըղան փիս հըղու յըրա յա* (Զ):

- Փիս սըվը՚ռէլ - 1. Վատ առաջադի-

մություն ունենալ: *Միհէնգվա խօխէնքը փիս ըն սըվէրում* (Բ): 2. Երես առնել, շփանալ: *Էնքան իրէս ըն տըվալ, փիս ա սըվէրալ* (Զ): 3. Որեւէ բանի ընտելացած լինելով կամ որեւէ բանից ախորժելով՝ միշտ նույնին ձգտել: *Նախագէն կընէգը փիս ա սըվէրալ, միշտ խըրաված ա օգում* (Զ):

- Փիս սըվըրցընել - Երես տալ, շփացնել: *Հանը խուխէն փիս ա սըվըրցըրալ, ամմէն դօնում փուլ ա օգում* (Բ):

- Փիս վըէտ կանալ - Անախորժ հետեւանք՝ իրադարձություն սպասվել: *Ասում ա.- Էտ մարթիտ վէր ըսպանալ ըք, ըտըրանա փիս վըէտ ա կամ, ըտըրա տըղէրքը, հունց էլ ինի, աջըղը տանս ըն ընական* (Զ):

ՓԻՍԱՄԱՐԹ/ՓԸՍԱՄԱՐԹ - *տե՛ս* ՓԻՍԸՄԱՐԹԻ:

ՓԻՍԱՆԱԼ/ՓԸՍԱՆԱԼ - *չբ.* 1. Վատ հատկություններ՝ հատկանիշներ ձեռք բերել: *Առաչ կարքէն մարթ ա իլալ, փըսակվալ ա, փիսացալ* (Զ): 2. Վատորակ՝ ծածրորակ դառալ: *Ճուղուպուրը վէր շատ պահիս, կըփիսանա* (Բ): 3. Անբարյացակամ դառնալ: *Առաչ կընգանը նըհէտ շատ սէրավ ա իլալ Հայկան, միհէնգ փիսացալ ա* (Բ): 4. Առողջությունը թուլանալ, տկարանալ: *Աշկէրքս փիսացալ ա, լավ չըմ տըէսնում* (Բ): 5. Վիճակը բարդանալ՝ ծանրանալ: *Հիվանդը քինանալանվ փիսանում ա, էլ վէշ մին ճար քօմանգ չի անում* (Զ): 6. Խառնվել, փչանալ: *Հավան փիսացալ ա* (Բ): 7. Տրամադրությունն ընկնել, հուզվել: *Էտ վէր տըէսնում ա, փիսանում ա* (Զ):

ՓԻՍԸՄԱՐԹԻ/ՓԸՍԸՄԱՐԹԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փիսըմարթի անէլ/շինիլ - Մեկին մի ուրիշի մոտ թշնամի ներկայացնել՝ վատաբանել: *Փիս կընէգը ուրան մարթին փիսըմարթի կըշինի* (Զ):

- Փիսըմարթի ինիլ/տըէռնալ - Մեկին իր դեմ տրամադրել՝ լարել, վատ մարդու անուն ձեռք բերել: *Յէս հինչ պէ՞ն օնիմ, վէր մէչտեղ փիսըմարթի տէռնամ* (ՋՏ, Ա, 64):

ՓԻՍԸՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՍԸՑ(Ը)ՆԷԼ[2] - *նբ.* ՓԻՍԱՆԱԼ-ի:

ՓԻՍԻ - *մնկ. տե՛ս* ԿԱՏՈՒ:

ՓԻՍԻՎԷՐ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐ:

ՓԻՍԻՎԷՐԷԼ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐԷԼ:

ՓԻՍԻՎԷՐՎԷԼ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐՎԷԼ:

ՓԻՍԻ-ՓԻՍԻ/ՓԻՇԻ-ՓԻՇԻ - *ձ.* Կատվին կանչելու բացականչություն: *Մուտանում ա կատվէն, թա՝փի՛սի-փի՛սի* (Զ):

- Փիսի-փիսի անէլ - 1. Կատվին կանչել: *Փիսի-փիսի յա անում, կատուն փըռնում* (Զ): 2. *փխբ.* Փաղաքշել, շոյել: *Սաղ օրը էն ա կընգանը փիսի-փիսի ընէլիս* (Զ):

ՓԻՍԼԱՄԻՇ/ՓԸՍԼԱՄԻՇ/ՓԻՍՏԱՄԻՇ/ՓԸՍՏԱՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փիսլամիշ անէլ - *տե՛ս* ՓԸԹԸԿՕՎԷԼ:

- Փիսլամիշ ինիլ/տըէռնալ - *տե՛ս* ՓԸԹԸԿՕՎՎԷԼ:

ՓԻՍՏԱ *(պրս. pista)* - *գ.* Պիստակենու պտուղը՝ պիստակ: *Տա քինըմ ա բազարը, մարթը հինչու ասալ ար, առնըմ՝ փիստա, խուրմա...* (ՀԺՀ, V, 125):

ՓԻՍՏԱԼԷՏ *(ռուս. пистолет, ֆր. pistolet)* - *տե՛ս* ԹԱՓԱՆՉԱ:

ՓԻՍՏԱՄԻՇ - *տե՛ս* ՓԻՍԼԱՄԻՇ:

ՓԻՍ-ՓԻՍ - *ածական.* Շատ վատ: *Վէր կըրակավը խաղ անին, քըշէրը փիս-փիս ըրըզնէ կըտէսնան* (ՆԱԲ, 161):

- Փիս-փիս տըէղէր - Սեռական գործարաններ: *Շօնը կամ ա կընգանը սիրըկանէն էն փիս-փիս տըղէրան փըռնում, խըղճըցընում* (ՀԺՀ, VII, 271):

ՓԻՍՕԹՈՒՆ/ՓԻՍՕԹՈՒՆ - *գ.* 1. Վատ լինելը, վատի հատկությունը: *Փիսօթունէն դանդան վէշ մինը նըհըէտը հընգրօթուն չի անում* (Զ): 2. Վատ արարք՝ գործ: *Ըստէղ Շարմաղը տահանց վըէչ մին փիսօթուն անում չի...* (ՆԼՂԺԲ, 32):

ՓԻՐՂԸՎԷՐԱՆ - *տե՛ս* ՓԸՐՂԸՎԷՐԱՆ:

ՓԻՐԹԱՆ-ՓԻՐԹԱՆ - *տե՛ս* ՓԸՐԹԱՆ-ՓԸՐԹԱՆ:

ՓԻՐԹԸՀԱՆ - *տե՛ս* ՓԸՐԹԸՀԱՆ:

ՓԻՐԹԻԼ - *տե՛ս* ՓԸՐԹԻԼ:

ՓԻՐԹԻՎԻԼ - *տե՛ս* ՓԸՐԹԻՎԻԼ:

ՓԻՐԹՈՒԾ - *տե՛ս* ՓԸՐԹՈՒԾ:

ՓԻՐՄԱ *(ռուս. ферма, ֆր. ferme)* - *գ.* Անասնաբուծական՝ թռչնաբուծական տնտեսություն՝ ձեռնարկություն եւ դրա շենքը: *Աղվէսըն ասում ա.- Մրչ ախպէր, մըէր քըշտին մին ծօր կա, ծօրանումը մին հավու փիրմա կա...* (ՀԺՀ, VII, 217):

ՓԻՐՉԱԹԿԱ - *տե՛ս* ՓԸՐՉԱԹԿԱ:

ՓԻՐՍԻՎԷՐ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐ:

ՓԻՐՍԻՎԷՐԷԼ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐԷԼ:

ՓԻՐՍԻՎԷՐՎԷԼ - *տե՛ս* ՓԸՐՍԸՎԷՐՎԷԼ:

ՓԻՐՓԷՇՆԸ - *տե՛ս* ՓԸՐՓԷՇՆԸ:

ՓԻՐՓԷՇՆԻԼ - *տե՛ս* ՓԸՐՓԷՇՆԻԼ:

ՓԻՐՓԷՏ/ՓԻՐՓԱՆՏ/ՓԱՆԻՐՓԱՆՏ *(հ.ե. *per-)* - *գ.* Տուղտազգիների ընտանիքին պատկանող բույս, որ եփում եւ ուտում են, փիփերթ: *Շատ մարթ ա մըէռալ, հու վէր էլ սաղ ա մընացալ, փանրփանտավ ա յօլլա քըէցալ...* (ԱԱ, 85):

- Փիրփէտ անէլ - Մեկնաբանել: *...Թաքավէրըն ապրած կէնա, յէս յէկալ ըմ արազըտ փանրփանտ անիմ* (ՆԱԲ, III, 107):

- Փիրփէտ տըէռնալ - 1. Քրքրվել, մաշվել: *Էտ յափընջին էնքան կըէցալ ա, լափ փիրփէտ ա տըէռալ* (Բ): 2. Խիստ հարբել, հարբելուց ինքնատիրապետումը կորցնել: *Մընկըրնէն խըմում ըն փիրփէտ տըէռնում, էլ կարում չընա պար կան* (Զ):

- Փիրփէտու տարէ - 1919 թվականը Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղի բնակիչների համար: *Հազգար ինը հանրանր տասնըհինը թիվը նուրընկըղըէցուց հըէտէ զանլանում տարէ յա իլալ, սօվ ա ընգալ, մինակ փանրփանտընը ա իլալ բոլլուղ, ըտըրա հըէտէ էլ շինանցէք էտ տարուն անումը տիրալ ըն՝ փանրփանտու տարէ* (ԱԱ, 85):

ՓԻՐՓԸՏԱՃԱՆԻՐ - *տե՛ս* ՓԸՐՓԸՏԱՃԱՆԻՐ:

ՓԻՐՓԱՆԻՏ - *տե՛ս* ՓԻՐՓԷՏ:

ՓԻՐՓԱՆԻՏԱՃԱՆԻՐ - *տե՛ս* ՓԸՐՓԸՏԱՃԱՆԻՐ:

ՓՈՒ/ՓՈՒՀ[2] *(գրբ. փու)* - *տե՛ս* ԹԱՆԻ (2):

ՓՈՒԳԱՆ *(ռուս. фуганок)* - *գ.* Երկար ու մեծ ռանդա: *Դանլգանը փուգանավը էտ տախտակը տանշում ա, տամ ըտըրա* (Զ):

ՓՈՒԹ *(ռուս. пуд)* - *գ.* Ծանրության չափ, որ հավասար է շուրջ 16 կիլոգրամի: *Չօբանը էրկու փութ պանմբանկ, մինգէլ մին լանվ ծի յա յօր օնըմ, հըդէ ընանում* (ՀԺՀ, V, 361):

ՓՈՒԹԱՆՈՒՑ - *ածական., գ.* Թվականի ցույց տված քանակով փութի ծանրություն ունեցող (իր, առարկա): *Աժդահակը սազ ա անում ուրան քըսան փութանուց մըհակը, վէր օշափէն կըլխէն թըխէ* (ՀԺՀ, V, 421):

ՓՈՒԹԻ-ՓՈՒԹԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փութի-փութի ածէլ/պիրիլ - *տե՛ս* Չալըշ ածէլ:

- Փութի-փութի անէլ/կանալ - *տե՛ս* Չալըշ կանալ:

ՓՈՒԹՈՒԹ(ՆԸ) - *տե՛ս* ՊԸՏՈՒՏ(ՆԸ):

ՓՈՒԹՈՒԹ-ՓՈՒԹՈՒԹ - *տե՛ս* ՓԸԹԸԹ-ՓՕԹՈՒԹ:

ՓՈՒԹՈՒԾ - *տե՛ս* ՓԸՐԹՈՒԾ:

ՓՈՒԹ-ՓՈՒԹ - *մ.* Փթերով: *Յօրէնը փութ-փութ քըշըռում ըն, ածում միշուկնէն* (Զ):

ՓՈՒԹՕԹԷԼ - *տե՛ս* ՓԸԹՕԹԷԼ:

ՓՈՒԹՕԹՎԷԼ - *տե՛ս* ՓԸԹՕԹՎԷԼ:

ՓՈՒԼ *(պրս., թրք. pul)* - *գ.* Դրամ, փող: *Տանում ա ծախում, մին քըսակ փուլ ա տէռնում...* (ՀԱԲ, 15, 55):

- Փուլա բիզանանծ - Շատ ունեւոր: *Մարթ կա՝ փուլա բըզանանծ ա, մարթ էլ կա՝էն ա օրվա հացէն մանքանջ* (Զ):

- Փուլավ խաղ անէլ - Շատ հարուստ

լինել: *Էն ա փուլավ խաղ ընէս, ամմա մօրը հը՛տէ մէհէտ մին պէն չի ղըրկէս* (Բ):

- Փուլէն փուլ չասէլ - *տե՛ս* Փուլավ խաղ անէլ:

- Փուլը կացէն չի կըտըրում - Ասում են շատ հարուստ մարդկանց մասին:

- Փուլը մըթէն տը՛ղը լ՚ուս կըտա - Փողով՝ հարստությամբ ամեն ինչի կարելի է հասնել:

- Փուլ ըմ տըվալ, ինք՚ կա՚ալ՚մ՚լ - *տե՛ս* Կապէկըս մաչին ք՚ը՛ցալ ա՞:

- Փուլ ըշխըդօղէն խը՛լքը՝ մին, թուփ ընօղէնը՝ տըսնըմին - Կարեւորը փող վաստակելը չէ, այլ տնտեսելը:

- Փուլը փուլէն յըրա յա կ՚ամ - Ունեւորը հետզհետե ավելի է հարստանում:

- Փուլ լօխ ըն ըշխադում, պէնը պահէլըն ա - *տե՛ս* Փուլ ըշխըդօղէն խը՛լքը՝ մին, թուփ ընօղէնը՝ տըսնըմին:

- Փուլ խըղըցընէլ - Որեւէ գործ գլուխ բերելու համար կաշառք տալ: *Ասում ա.- Մինչը՛վ վէր փուլ չի խըղըցընիս, էտ կօրծը ամա՚ալ չի կ՚ըլական* (Ձ):

- Փուլ կըտըրէլ - 1. Դրամ կտրել, փող տպել կամ ձուլել: *Թաքավէրը հըրամմայում ա, վէր փուլ կըտըրին* (Ձ):

- Փուլու թա՚ալ՚ակ - Թանկ ապրանք՝ առեւտրի տեղ: *Ըստէփանակ՚ը՛ռտա բազարը փուլու թա՚ալ՚ակ ա* (Բ):

- Փուլ շինիլ - Որեւէ բան վաճառելով՝ դրամի վերածել: *Հիյվընէն ծախում ա, փուլ շինում* (Բ):

- Փուլ օնիս՝ աղա յըս, փուլ չօնիս՝ գ՚ա՚դա՚ յըս - Հարստությամբ է որոշվում մարդկանց կարգավիճակը:

ՓՈՒԼԱՀԱ՚ՐՓ - *ած.* Շատ հարստացած, հարստությունից մեծամտացած: *Փուլահա՚ՐՓ մարթ ա Կա՚փին* (Բ):

ՓՈՒԼԱՍԷՐ - *ած.* Դրամ՝ փող սիրող, դրամասեր: *Փուլասէր մարթը ՚ուրա՚ն մօրը էլ կըծախէ* (Բ):

ՓՈՒԼԱՏԱՐ - 1. *գ., ած.* Շատ փող՝ դրամ ունեցող (մարդ): *Փուլատար մարթ ա Սիրգօնը, համ տըղէն հը՛տէ յա տօն շինա՚ալ, համ ըխճըկանը* (Բ): 2. *գ.* Փողի տերը, նա, որին պատկանում է փողը: *Փուլատարը շատ ա լա՚նց ինում, ամմա հինչ օ՞քուտ. փուլը կ՚ուղանօղը փախճա՚ալ ա* (Ձ):

- Փուլըտարէն խօսկը ամմէն տը՛ղ անց ա կէնում - Փող ունեցողը՝ ունեւորը ամեն ինչի կարող է հասնել:

ՓՈՒԼԸԿԱ՚ԼԻԼ - *չբ.* Շատ փող ձեռք բերել, շատ փող վաստակել, հարստանալ: *Մաքսիմը փուղըկա՚ալ՚ալ ա. էլ մը՛զ մըհալ չի քըցում* (Բ):

ՓՈՒԼԸՔԸՍԱԿ - *գ.* Փողի քսակ, իբրեւ դրամապանակ ծառայող քսակ: *Փուլըքըսական հէնգ՚ մանէթ ա տա՚ուս օնում, տամ ըտըրան* (Ձ):

ՓՈՒԼԼՈՒ *(թրք. pullu)* - *տե՛ս* ՓՈՒԼԱՏԱՐ (1):

ՓՈՒԼՈՒԽՈՒՐ - *տե՛ս* ՓԸԼՈՒԽՈՒՐ:

ՓՈՒԼՈՒՂՕՐԷԼ - *տե՛ս* ՓԸԼԸՂՕՐԷԼ:

ՓՈՒԼՈՒՂՕՐՎԷԼ - *տե՛ս* ՓԸԼԸՂՕՐՎԷԼ:

ՓՈՒԽ - *տե՛ս* ՓՕԽ:

ՓՈՒԽԸԼՕԹՈՒՆ - *տե՛ս* ՓԸԽԸԼՕԹՈՒՆ:

ՓՈՒԽԸՆԱՑՈՒ - *գ., ած.* Փոխան կարելու համար նախատեսված՝ հարմար (կտոր): *Մին փուխընացու վա ինք՚ օնում* (Ձ):

ՓՈՒԽԸՆՀԱ՚ՂԻ - *տե՛ս* ՉԸՂԸԼՀԱ՚ՂԻ:

ՓՈՒԽԸՏՕՐՍ - *տե՛ս* ՓԸԽԸՏՕՐՍ:

ՓՈՒԽԸՓՕԽ(Է) - *տե՛ս* ՓԸԽԸՓՕԽ(Է):

ՓՈՒԽԿԱԿԱՊ - *տե՛ս* ՓՈՒԽԿԱՔՕՂ:

ՓՈՒԽԿԱՔՕՂ - *գ.* Շալվարի փողքը կապելու քուղ: *Փուխկաքօղը յը՛տ ա անում, տամ ըտըրան* (Ձ):

ՓՈՒԽԸԿԱՊԷ/ՓՈՒԽԿՈՒԿԱՊԷ - *տե՛ս* ՓՈՒԽԿԱՔՕՂ:

ՓՈՒԽԿՈՒԿԱՊԷ - *տե՛ս* ՓՈՒԽԿԸԿԱՊԷ:

ՓՈՒԽՈՒԼՕԹՈՒՆ - *տե՛ս* ՓԸԽԸԼՕԹՈՒՆ:

ՓՈՒԽՈՒՏՕՐՍ - *տե՛ս* ՓԸԽԸՏՕՐՍ:

ՓՈՒԽՈՒՓՕԽ(Է) - *տե՛ս* ՓԸԽԸՓՕԽ(Է):

ՓՈՒԿ *(ռուս. фук)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փուկ անէլ - Դուրս թողնել, մասնակից չդարձնել: *Լօխճին ցօրէն ըն պիժէնում, մինակ Ծըտօրէն փուկ անում* (Ձ):

- Փուկ ինիլ/տը՛ռնալ - Դուրս մնալ, մասնակից չդառնալ: *Ըշտը՛ղ մին լ՚ավ կօրծ ա ինում, մէր հայկական փուկ ա տը՛ռնում* (Բ):

ՓՈՒԿԱՄԱՐ - *տե՛ս* ՇԸՀԱՓՕԿ:

ՓՈՒԿԱՐԱՐ - *ած., գ.* Փոկ պատրաստող (արհեստավոր): *Գիշի ապան լ՚ավ փուկարար ա* (Բ):

ՓՈՒԿԱՑՈՒ - *գ., ած.* Փոկ պատրաստելու համար նախատեսված՝ հարմար (կաշի): *Էծին կաշին լ՚ավ փուկացու վա* (Բ):

ՓՈՒԿԸՀԱՆ - *ած.* Կրայի փոկերը հանված՝ քրքրված: *Տըրըխնէն փուկըհան ա իլա՚ալ* (Ձ):

ՓՈՒՀ[1] - Գործածվում է կապակցության մեջ:

- Փուհ անէլ - 1. Փչել, բերանից օդի հոսանք արտամղել: *Փուհ ա անում, կըրակը հինգ՚ըցընում* (Ձ): 2. *հեգն.* Շունչը փչել, հոգին ավանդել: *Լ՚ըհա վէր մարթը փուհ ա անըմ, կընէգ՚ը ըսքըսում ա մարթու շօռ կ՚ա՚ալը* (Ձ):

ՓՈՒՀ[2] - *տե՛ս* ՓՈՒ:

ՓՈՒՀ-ՓՈՒՀ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փուհ-փուհ անէլ - Անընդհատ փնչալ՝ փնչացնել: *Մըռընչալավ, փուհ-փուհ ընէլավ դա՚Րվիշը կ՚ամ ա...* (ՀԺՀ, V, 166):

ՓՈՒՂԱՀԱ՚ՐՓ - *տե՛ս* ՓՈՒԼԱՀԱ՚ՐՓ:

ՓՈՒՂԱՍԷՐ - *տե՛ս* ՓՈՒԼԱՍԷՐ:

ՓՈՒՂԱՏԱՐ - *տե՛ս* ՓՈՒԼԱՏԱՐ:

ՓՈՒՂԸԿԱ՚ԼԻԼ - *տե՛ս* ՓՈՒԼԸԿԱ՚ԼԻԼ:

ՓՈՒՂԸՔԸՍԱԿ - *տե՛ս* ՓՈՒԼԸՔԸՍԱԿ:

ՓՈՒՆԹԱՄԻ(Ն)Տ - *տե՛ս* ՓԸՆԹԱՄԷ(Ն)Տ:

ՓՈՒՇԱՎՈՒՐ - *ած.* Փշեր ունեցող, փշոտ: *Մին փուշավուր քօլ ա կըտըրում, տինում բուստանէն ըռխումը* (Ձ):

ՓՈՒՇԱՏ - *տե՛ս* ՓԸՇԱՏ:

ՓՈՒՇԱՏԷ - *տե՛ս* ՓԸՇԱՏԷ:

ՓՈՒՇԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ԸԼԼԻՐԹԱԹԱԽ:

ՓՈՒՇԸՔԱՂ(Վ)ԷԼ/ՓԸՇԸՔԱՂ(Վ)ԷԼ *(գրբ. փշաքաղիլ)* - *չբ.* 1. Մարմնով դող անցնել, փշաքաղվել: *Չընքէլանը միհէնգ՚ էլ հու յէշում ա էտ քը՛րծէն, զիրգանդում ա, փուշընքաղվում* (ԱԱ, 47): 2. *տե՛ս* Մազ՚էրը փուշընքաղ(վ)էլ:

ՓՈՒՇԻ *(գրբ. փոշի (փշրած հող, մոխիր կտրած բան))* - *գ.* Այլուրի փոշի, ալրափոշի: *Կամ ա տօն, էս փուշին ածում մին բութուլու մաչ, տինում մին պըտըրհանում...* (ՆԼՂԺԲ, 40):

- Փուշի հըվաքէլ - Ծայրահեղ աղքատության մեջ ընկնել, մուրացկանություն անել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Փուշի հըվաքիս տու, խէ խուխէս թակում ը՞ս* (Բ):

- Փուշուն թըխէլ/նի կ՚ա՚ալ - Մեկին վնաս հասցնել՝ սնանկացնել: *Հարուստը ք՚ըսիբին փուշուն կըթըխէ* (Ձ):

- Փուշի շինիլ - Ոչնչացնել, վերացնել, ավերել: *Լանգ՚ Թէմուրը մին օրումը էտ քաղաքը փուշի շինից* (Ձ):

- Փուշի տը՛ռնալ - Ոչնչանալ, վերանալ, ավերվել: *Էտ ժա՚ամին վախտը շատ շէն ա փուշի տը՛ռալ* (Ձ):

ՓՈՒՇՄԱՆԷԼ/ՓԸՇՄԱՆԷԼ - *չբ.* Փոշմանել, զղջալ: *Կընէգ՚ը պիրում ա թա՚ազա՚ վընընըմանէրը, շօ՚Րէրը կ՚էց տամ, մընէլ փուշմանում* (ՆԱԲ, 114):

ՓՈՒՇՄԸՆՑ(Ը)ՆԷԼ/ՓԸՇՄԸՆՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓՈՒՇՄԱՆԷԼ-ի:

ՓՈՒՇՄԸՆՕԹՈՒՆ/ՓԸՇՄԸՆՕԹՈՒՆ *(գրբ. փոշիմանութիւն)* - *գ.* Փոշմանելը, զղջալը, զղջում: *Հընրփիլին վէրչը փըշմընօթունընը ա* (ԱԲԲ, 57):

ՓՈ՚ՐՇ - *տե՛ս* ՓԻՇՏ:

ՓՈՒՇՏԱ/ՓՕՇՏ[1] - *գ.* Ջրհորդանի եւ առվի միացման տեղը: *... Ղուլգ՚ա՚ազը ք՚ի-*

նամ ա յօնջա քաղում, պիրում ճըղացէն փուշտան պընդըցընում (ՀԺՀ, VII, 164):

ՓՈՒԾՈՒՀԱՏ - *տե՛ս* ՓԸՇԱՏ:

ՓՈՒԾՈՒՀԱՏԷ - *տե՛ս* ՓԸՇԱՏԷ:

ՓԻՒՇԻՒՄ-ՓԻՒՇԻՒՄ - *տե՛ս* ՓԸՇԻՒՄ-ՓԸՇԻՒՄ:

ՓՈՒԾՓՕՇՈՒՏ - *տե՛ս* ՓԸՇՓՕՇՈՒՏ:

ՓՈՒՉԱՆԱԼ - *չբ.* 1. Չորանալով՝ փտելով՝ շատ հասունանալով՝ ցրտահարվելով եւն անպետքանալ՝ անպետք դառնալ: *Խաղուն վըխտէն քըղէցէնք՝ վէչ, լօխ փուչացավ* (Բ): 2. Ոչնչանալ, վերանալ: *Վար ճիրիէղէը ինում ա, ըշխարքէս տակէն հինչու կա, մընում ա ճիրին տակէն, փուչանում* (ԱԱ, 16): 3. *փխբ.* Կոտորվել, սատկոտել: *Մին տարէ սօվ ա ընգնէս, ըտըրա հէյվանը լօխ փուչընաս ա...* (ՀԺՀ, V, 296): 4. *փխբ.* Ձախողվել, անհաջողության մատնվել: *Կօրծը փուչացալ ա* (Բ): 5. Խափանվել, անսարք դառնալ: *Տըրախտըրը փուչացալ ա, վարը մընացալ ա կէսատ* (Ձ): 6. Հիվանդանալ, վնասվել (մարմնի անդամների մասին): *Այուն աշկէրը փուչացալ ա, լ՚ավ չի տը՛սնում* (Բ): 7. *փխբ.* Բարոյապես ընկնել, այլասերվել: *Տա թա.- Մ մար, ըշխարքէս կընանէք՚ը լօխ փուչացած ըն, հունց փըսա՞կվէմ* (ՀԺՀ, VII, 77): 8. *փխբ.* Վատնվել, անհարկի սպառվել՝ ծախսվել: *Ըտի էտ բըդասըլ տըղէն դանդան էտ մարթին փուլէրը սաղ փուչացավ* (Ձ): 9. *փխբ.* Խաթարվել: *Ք՚ը՛փըս փուչացալ ա* (Բ):

ՓՈՒՉԵՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓՈՒՉԱՆԱԼ-ի:

ՓՈՒՉԻԳ՚ - *տե՛ս* ՓՕՉԻԳ՚:

ՓՈՒՉԻԳ՚ՕՏԷԼ - *տե՛ս* ՓԸՉԸԳ՚ՕՏԷԼ:

ՓՈՒՉԻԿ - *տե՛ս* ՇԱՐԻԿ (2):

ՓՈՒՉՓՈՒՉԱՆԱԼ - *չբ.* 1. Շատ մասերում փուչ տեղեր ունենալ, փափկել, փուչ-փուչ դառնալ: *Պիւրթը էնքան թակում ա, վէր փուչփուչանա* (Ձ): 2. *փխբ.* Հպարտությունից իրեն լավ զգալ: *Փուչ-փուչանում ա մաճկալը, շընուրհակալ ընում տըղէն, վէր էտքան պարի յա...* (ՆԱԲ, II, 26):

ՓՈՒՉՓՈՒՉԵՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՓՈՒՉՓՈՒՉԱՆԱԼ-ի:

ՓՈՒՌ/ՓՕՌՆԸ *(գրբ. փուռն)* - *գ.* 1. Հաց թխելու հատուկ վառարան: *Հացը փուռան տանս ա օնում, տինում ղունաղէն ըռաչէն* (Ձ): 2. Շինություն, ուր գտնվում է փուռը, փռատուն: *Նի յա մընում փուռը, տը՛սնում՝ մարթ չի կա* (Ձ):

ՓՈՒՌՎԱՌ/ՓՈՒՐՎԱՌ/ՓԸՌԸՎԱՐ/ՓԸՐԸՎԱՌ *(գրբ. բուրվառ)* - *գ.* Մետաղյա անոթ, որի մեջ կրակ են լցնում եւ խունկը մեջ գցելով՝ խնկարկում: *Տահանք վը՛ր ասում ա- պըրծընում, էլ ըսէլի պէն չի ինում, ըսկըսում ա փուռվառը տէսուտէն տանէլ-պիրիլը...* (ՀԺՀ, VII, 303):

ՓՈՒՍԱՆԱԼ - *չբ.* Փոս դառնալ, փոս ընկնել: *Վէր թըխում ա, տափը փուսանում ա* (Ձ):

ՓՈՒՍԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. փոսացուցանեմ)* - *նբ.* ՓՈՒՍԱՆԱԼ-ի:

ՓԻՒՍՆԻՒՆԳ՚ՈՒ - *տե՛ս* ՓԸՍԻՒՆԳ՚ՈՒ:

ՓՈՒՍԻ/ԲՈՒՍԻ - 1. *ած.* Սրածայր, սրագագաթ: *Փուստի փափաղը տինում ա, տանս կ՚ամ* (Ձ): 2. *փխբ. գ.* Մարդու գլուխ: *... Լօ՛թի, ամմա լ՚ավ պըրծիր հա՛, պատառ ար մընացալ՝ փուստիտ ցըրէվ տան* (ՋՏ, Բ, 105):

- Փուստին տալ - *տե՛ս* Վէրչը տալ:

ՓՈՒՍԻ-ՓՈՒՍԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Փուստի-փուստին ընկնել - Շփոթվել, անելիքը չիմանալ: *Այուն թօռնէրը քը՛ղաքան յը՛կալ ըն, փուստի-փուստին ա ընգալ* (Բ):

ՓՈՒՍՏՕԿ - *տե՛ս* ՓԸՍՏՕԿ:

ՓԻՒՍԻՒՆԳ՚ՈՒ - *տե՛ս* ՓԸՍԻՒՆԳ՚ՈՒ:

ՓԻՒՍԻՒՍ - *տե՛ս* ՓԸՍԻՒՍ:

ՓՈՒՍՕԿ - *տե՛ս* ՓԸՍՏՕԿ:

ՓՈՒՍՕՐ - *տե՛ս* ՓԸՍՕՐ:

ՓՈՒՏԲՕԼ *(ռուս. футбол, անգլ. football)* - *տե՛ս* ԹՕՓԷ:

ՓՈՒՐԱՀԱՑ - *տե՛ս* ՀԸՑԱՓՕՐ:

ՓՈՒՐԱՑԸ՚Ղ - *գ.* Անասունի փորի՝ որովայնի ճարպ: *Խօզ՚ին փուրայը՛ղը հանում ըն, ածում ղըզղընէք՚ը* (Բ):

ՓՈՒՐԱՍՕԹ - *գ.* Փորի վրա սողալը՝ սահելը: *Ըտըրա փուրասօթը թաքավէրին կըտըղցընում ա* (Ձ):

- Փուրասօթ տալ - Փորի վրա սողալ՝ սահել: *Փուրասօթ տալավ ըտըղատ հըռանում ա* (Ձ):

ՓՈՒՐԱՎՈՒՐ - *ած.* Մեծ փոր ունեցող: *Վէր թըխում ա, էտ փուրավուր մարթը ըղնում ա ծօրը* (Ձ):

ՓՈՒՐԱՏԱԿ - *գ.* 1. Մարդու փորի ներքեւի մասը: *Փուրատակը չանգըռում ա, ըսքըսում ա լանց ինիլը* (Ձ): 2. Կենդանիների փորի տակը, փորի տակի արտաքին մասը: *Էտ կըվէն փուրատակը սիպտակ ա ինում* (Ձ):

ՓՈՒՐԱՑԱՎ *(գրբ. փորացաւ)* - *գ.* 1. Փորի՝ որովայնի ցավ: *Խը՛ղճը սաղ քըշէրը փուրըցավան կըրը՛ցալ չի, թա քօն ինի* (Բ): 2. *փխբ.* Որեւէ խնդիրք՝ պահանջ՝ ակնկալություն, որ բացարձակապես չի ասվում: *Վէրցակը դանտի հըսկանըմ ա աղվէսին փուրացավը...* (ՋՏ, Բ, 155):

- Փուրացավը քաշիլ - Ուտելով զբաղվել: *Հանբուն փուրացավը քաշանալ ա, խօխէնք՚ը տանուզնը կըմընան* (Ձ):

- Փուրըցավան ընկնել - 1. Փորը՝ որովայնը ցավել: *Փուրըցավան ընգալ ա, կարում չի, թա տը՛ղը նըստէ* (Բ): 2. *փխբ.* Նախանձից իրեն վատ զգալ: *Կուճուր հարթնը ճօխտակ տըղա պէրավ, մը՛ծ հարթնը փուրըցավան ընգավ* (Ձ):

- Փուրըցավու ընկնել - *տե՛ս* Փուրացավը քաշիլ:

ՓՈՒՐԳՕՆ - *տե՛ս* ՓԸՐԳՕՆ:

ՓՈՒՐԳՕՆՉԻ - *տե՛ս* ՓԸՐԳՕՆՉԻ:

ՓՈՒՐԸԿԸՊՕԹՈՒՆ - *գ.* Փորը կապ լինելը, փորը կապվելը: *Փուրըկըպօթունը մարթին կըտանչի* (Բ):

ՓՈՒՐԸԿ՚ԸՆԹԱՆ - *գ.* Ծաղրաբար ասում են բարիկենդանին՝ ակնարկելով այդ օրվա առատ կերուխումը: *Պարիկ՚ը՛նթան չի, փուրըկ՚ը՛նթան ա* (Բ):

ՓՈՒՐԸՀԱՐԷՆՔ՚ - *գ.* Փորը լուծելը, փորլուծություն: *Ափկարը էնքան գ՚ավալ ա կէրալ, փուրըհըրէնք՚ան ընգալ ա* (Բ):

ՓՈՒՐԸՄԸՆԱ - *գ.* Ամուսնու կենդանության՝ ներկայության օրոք հղիացած եւ նրա մահից կամ ուրիշ տեղ գնալուց հետո ծնունդաբերած (կնոջ մասին): *Կընէգ՚ընա ասում ա.- Դէ վը՛ր տու դարիբօթուն ըս ք՚էցալ, յէս փուրըմընա յըմ իլալ, մինը քըզանա յէտըն ըմ պէրալ* (ՆԼՂԺԲ, 134):

ՓՈՒՐԸՉԸՎԱՆ - *տե՛ս* ՓՕՐՔԱԾ:

ՓՈՒՐԸՑԱՎԱՆՔ - *տե՛ս* ՓՈՒՐԱՑԱՎ:

ՓՈՒՐԸՑԱՎՈՒՏ - *տե՛ս* ՓԱԽԸԼ (2):

ՓՈՒՐԸՑԸՎՕԹՈՒՆ - *տե՛ս* ՓԸԽԸԼՕԹՈՒՆ:

ՓՈՒՐԸՔԱԾԻ - *տե՛ս* ՓՕՐՔԱԾ:

ՓԻՒՐԹԻՒԾ - *տե՛ս* ՓԸՐԹԻՒԾ:

ՓՈՒՐՍՕՂ - *տե՛ս* ՓԸՐՍՕՂ:

ՓՈՒՐՎԱՌ - *տե՛ս* ՓՈՒՌՎԱՌ:

ՓԻՒՐԻՒԴ - *տե՛ս* ՓԸՐԻՒԴ:

ՓԻՒՐԻՒՋԱ *(գրբ. firuza)* - *գ.* Կապույտ կամ կապտականաչ գույնի թանկարժեք քար: *Էտ մուտընէն քարընն էլ փիրիզան յա ինիս* (Ձ):

ՓՈՒՐՈՒՔՏ - *տե՛ս* ՓԸՐՈՒՔՏ:

ՓԻՒՐՓԻՒՏ - *տե՛ս* ՓԻՐՓԷՏ:

ՓԻՒՐՓԻՒՏԱՃԻՒՐ - *տե՛ս* ՓԸՐՓԸՏԱՃԻՒՐ:

ՓՈՒՐՓՈՒՐԷԼ - *տե՛ս* ՓԸՐՓԸՐԷԼ:

ՓՈՒՐՓՈՒՐԿԱԼԻԼ - *տե՛ս* ՓԸՐՓԸՐԿԱԼԻԼ:

ՓՈՒՐՓՈՒՐՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՐՓԸՐՑ(Ը)ՆԷԼ:

ՓՈՒՐՓՕՐ - *տե՛ս* ՓԸՐՓՕՐ:

ՓՈՒՐՕՆՏ - *տե՛ս* ՓԸՐՕՆՏ:

ՓՕԴԸՐԱԹ/ՓՕԴՐԱԹ *(ռուս. подряд, թրք. podrat (կապալ)* - *գ.* 1. *տե՛ս* ԾԸՐԻ: 2. *տե՛ս* ԲԸԹԱՎ: 3. Վարձակալություն,

պայմանագրային հիմունքներով ու վարձով որեւէ բան օգտագործելը: *...Սումարանին քՕհնա վարժապետնին էլիա փուղրաթավ յէր ըն կանալ խուխօց տանս տալը...* (ՋՏ, Ա, 22):

ՓՕԴԸՐԱԹՉԻ/ՓՕԴՐԱԹՉԻ *(թրք. podratči (կապալառու)* - *գ.* Որեւէ բան վարձակալող անձ, վարձակալ: *Տումըցէ Հիմբանցին էտ զըվօդէն փօդրաթչին ա* (Ձ):

ՓՕԴՐԱԹ - *տե՛ս* ՓՕԴԸՐԱԹ:

ՓՕՁՄԻԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փօզմիշ անէլ - 1. Չեղյալ համարել՝ հայտարարել: *Դօղվօրը փօզմիշ ըրէն* (Ձ): 2. Ձախողել: *Էտ մարթը լօխճիս կօրծէրը փօզմիշ ըրավ* (Բ):

- Փօզմիշ ինիլ/տը՛ռնալ - 1. Չեղյալ համարվել՝ հայտարարվել: *Էտ օրվանից էլ ըտըրանց պայմանը փօզմիշ ա ինում* (Ձ): 2. Ձախողվել: *Էս մարթը ռազի յա կէնըմ, ամմա դէ վախըմ ա՝ մարթը քըշէրավ կ՚ա պըտահէ, կօրծէրը փօզմիշ կինի...* (ՀԺՀ, V, 204):

ՓՕԹ/ՓՕՏ *(գրբ. փոթ)* - *գ.* 1. Ձգեստի՝ վարագույրի՝ կտորի եւն ծալք, ավելորդ՝ դուրս ընկած տեղ: *Ղըրյին փօթէրը կարում չի դուզըցընէ* (Ձ): 2. *փխբ.* Արատ, թերություն, պակասություն: *Սօնան շատ փօթէր օնէ* (Բ):

- Փօթ անըմ - Մականուն: *Ըտըրա փօթ անըմը Սօլախի յա* (Բ):

- Փօթ անրուն - Հիվանդ՝ վարակված արյուն: *Յարան պուք ա տամ, վէր փօթ անրունը տուս կ՚ա* (Ձ):

- Փօթ ըղնէլ - Փոթ՝ ծալք գոյանալ: *ՇՕրը փօթ ա ընգալ* (Բ):

- Փօթ տինիլ - Մեկին՝ մի բանի թերություն վերագրել, չհավանել: *Հինչ ըխճըկա նըհաշ ին տամ, էտ տըղան փօթ ար տինում* (Ձ):

- Փօթ քըցիլ - Փոթ՝ ծալք գոյացնել: *Հըլըղօրում ա, հարթանը շՕրը փօթ քըցում* (Ձ):

ՓՕԹԱՆ - *տե՛ս* ՉԱՄԱՆ[2]:

ՓՕԹԻ[1] - *գ.* Կավե փոքրիկ աման: *Մին փօթի սիսը՛ռավ լըսնում ա, տամ ըտըրան* (Ձ):

ՓՕԹԻ[2] - *տե՛ս* ԼՕԹԻ-ՓՕԹԻ:

ՓՕԹ-ՓՕԹ/ՓՕՏ-ՓՕՏ - *տե՛ս* ՓԸԹ-ՓՕԹՈՒՏ:

ՓՕԼ *(գրբ. փուլ (փլվելը, մաշելը)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փօլ ածէլ - 1. Քանդել, փլուզել, փլցնել: *Ըտըրանք մին օրումը էտ յը՛խծէն փօլ ըն ածում* (Ձ): 2. *տե՛ս* Փօզմիշ անէլ: 3. Մաշել, քրքրել: *Էտ շՕրը էնքան կը՛ցալ ա, փօլ ա ածալ* (Բ):

- Փօլ կ՚անալ *(գրբ. ի փուլ գամ)* - 1. Քանդվել, փլուզվել, փլվել: *Ուստէքը՛ լանվ ուստէքը՛ ին, ամմա լըհան քանի հէտ շինըմ ին, էլիա փօլ ար կ՚ամ* (ԼՂԲ, 342): 2. *տե՛ս* Փօզմիշ ինիլ: 3. Մաշվել, քրքրվել: *Փօլ ա կ՚ամ, աստէլ մին ճօխտըն ա կ՚էնում, էտ մին ճօխտըն էլ ա փօլ կ՚ամ* (ՀԱԲ, 15, 28): 4. Թուլացած ընկնել՝ փռվել: *Կօրծա վըստակած կ՚ամ ա տօն, թախտէն յըրա փօլ կ՚ամ* (Ձ):

ՓՕԼ-ՓՕԼ - *տե՛ս* ՓՕՁ-ՓՕՁ:

ՓՕԽ/ՓՈՒԽ *(գրբ. փոխ)* - *գ.* 1. Փոխարինաբար որեւէ բան տալը կամ վերցնելը: *Շինըթկընէրումը փօխը կընօխանց ա անդամ* (Բ): 2. Փոխարինաբար տրված կամ վերցված բան: *Հացէն փօխը տամ ա* (Բ):

- Փօխ անէլ/օնէլ - Փոխարինաբար մի բան վերցնել: *Ասում ա.- Մյ ախպէր, տու տանը կա՛ց, յէս քինանմ հըրըվանան հաց փօխ օնիմ, պիրիմ...* (ՀԺՀ, VII, 62):

- Փօխը քը՛ը՛զ/ծը՛ը՛զ ինի - Նույն բախտին արժանանաս՝ արժանանաք (ասվում է իբրեւ պատասխան՝ մի լավ՝ ուրախալի առիթով շնորհավորողին):

- Փօխ յը՛ր օնէլ - *տե՛ս* Փօխ անէլ:

- Փօխ տալ - 1. Փոխարինաբար մի բան տալ: *Մին թուրուն հաց ա թըխում, կէսը փօխ տամ* (Ձ): 2. *տե՛ս* ՓՕԽԷԼ (10): *Փըսպարում ըն, թա.- Կընէգ՚ըտ օրանը էրկու սիրական ա փօխ տամ, ճէլլի յը՛ք* (Ձ):

ՓՕԽԱՆ *(գրբ. փոխան (փոխանորդ)* - 1. *տե՛ս* ՎԸՆՆԱՇՕՐ: 2. *տե՛ս* ՇԱԼՎԱՐ:

- Փուխանան փըռնած - Դեռահաս, մանկահասակ: *Իզէն հանան էն ա փուխանան փըռնած, հօրը հինչ բի՞դի քՕմանգ անէ* (Ձ):

- Փուխանէն քօղը դայիմ/պէնդ փըռնել - Բարոյական լինել (կանանց մասին): *Սօնիշկա աքէրը ըբըռու, փուխանէն քօղը դայիմ փըռնած կընէգ՚ ա իլանլ* (Բ):

- Փուխանումը փըթըրաղ ինիլ - 1. Մեղավոր լինել, թերություն ունենալ: *Ասում ա.- Թա փուխանումըտ փըթըրաղ չի կա, խէ պէրալ չը՞ս* (Ձ):

- Փուխանումը քաքած - *տե՛ս* ՆԷՅՆԱՆ:

- Փօխանը կատու ըղնէլ - 1. Սաստիկ վախենալ՝ անհանգստանալ՝ շփոթվել: *Փօխանըտ կատու յա՞ ընգալ, խէ խօսում չը՞ս* (Ձ): 2. *տե՛ս* Փօխանը կըրակ ըղնէլ:

- Փօխանը կըրակ ըղնէլ - Մի բանի հասնելու՝ մի բան անելու ցանկությունից խիստ անհանգստանալ՝ անհանգիստ լինել: *Ըընաշինըտ տը՛ղը նըստում չի, հանց ա փօխանը կըրակ ընգած ինի* (Բ):

- Փօխանը վը՛ենէրը ըղնէլ - Խայտառակվել: *Ղանխպան կընգանը մարթին փօխանը վը՛ենէրը կըղնէ* (Ձ):

ՓՕԽԷԼ *(գրբ. փոխեմ)* - *նբ.* 1. Իր ունեցածը տալով՝ փոխարենը ստանալ՝ վերցնել ուրիշի ունեցածը, փոխանակել: *Պէռնէրը իշէրավը փօխում ըն, ուրխացած քինամ տօն* (ՆԼՂԺԲ, 129): 2. Որեւէ բան փոխարինել մի ուրիշ բանով: *Մին դՕնըմ էլիա շՕրէրը փօխած քինամ ա, վէր ժողովուրթէն տըրութունը գիդան* (ՀԺՀ, V, 131): 3. Այլափոխել, կերպարանափոխել, այլ գույն՝ տեսք եւն տալ: *Կինուն նըհը՛ետ վէր ճուր խառնիս, համ ըռանգը կըփօխէ, համ համը* (Ձ): 4. Մի տեղ թողնելով՝ այլ տեղ գնալ՝ հաստատվել, որեւէ բանի հատկացված տեղը փոխել: *Ժուղովուրթըն ասում ա.- Թա հիրը՛ենանըտ փիս ա, տօնըտ փՕխէ, էրուշ ճար չի կա* (Ձ): 5. Վճիռը՝ կարգադրությունը՝ որոշումը՝ հրամանը եւն փոխարինել այլ վճռով՝ կարգադրությամբ՝ որոշմամբ՝ հրամանով եւն: *Թաքավէրը էտ վէր տը՛ենում ա, դանստի հըրամանը փօխում ա* (Ձ): 6. Վերափոխել, վերակառուցել, հեղաշրջել: *Մին էրկու շան վէրթի աշխարքըս փուխէցէն* (Բ): 7. Կեղծել, աղավաղել, աղճատել: *Քաչալը, սանը փօխած, ղարադամէն հանրթըն ի վէր կանչում ա* (ՀԱԲ, 15, 94): 8. *փխբ.* Վերադաստիարակել, հոգեկան՝ մտավոր՝ վարքուբարքի նոր ոգի՝ ուղղություն տալ: *Ըտի չուբանէն ախճիգ՚ը կարում ա էտ կ՚օղ տըղէն փօխէ, կարքէն մարթ շինի* (Ձ): 9. Շեղել, ծռել, թեքել: *Ղէրվիշը հըղէն փօխում ա, բիդի ծըմակը քինամ* (Ձ): 10. Մեկին մեկ ուրիշով փոխարինել: *Կամ ա, տը՛ենում էտ կընէգ՚ը ուրանն փօխալ ա* (ՀԺՀ, V, 59):

ՓՕԽԸՓԷՇՄԱՆ/ՓՕԽՈՒՓԷՇՄԱՆ - *տե՛ս* ՔՈՒՌԸՓԷՇՄԱՆ: *Ըտըրանք էլ փօխուփէշման յէտ ըն տըռնաս, քիս ուրանց տընէրը* (ՀԺՀ, V, 261):

ՓՕԽԷՆԱ *(գրբ. փոխինձ (բոված ալյուր)* - *գ.* Բոված եւ երկանքով աղացած ցորեն: *Տա տ՚ուս ա օնում, թա պէրանը քըցի, փօխէնձը քամէն տանում ա...* (ՀԱԲ, 15, 138):

ՓՕԽԿ *(գրբ. փողք (քթի երկու անցքը)* - *գ.* Վարտիքի՝ անդրավարտիքի այն մասը, որ հագնում են ոտքին, փողք: *Էտ տըղան շալվարը հանում ա, փօխկէրքը կըպօտում, մօխրավ լըսնում, հանրթանն կախ տամ, ինքը՛ փախճում* (ՆԼՂԺԲ, 16):

- Փօխկէն ծիք՚ տալ - *տե՛ս* Վայնասուն անէլ:

- Փօխկէր(ք)ը յը՛ր քաշիլ/յը՛ր քըշտիլ - *տե՛ս* Թէվքէրը յը՛ր քաշիլ:

- Փօխկը ճօթըռած լօղվա - Աղքատ,

բայց պարծենկոտ մարդ: *Փոխկը ճօթռած լօղվա յա մէր Անդօնէն տըղան* (Բ):

- Փոխկումը փըթըրաղ ինիլ - *տե՛ս* Փուխանումը փըթըրաղ ինիլ (ՓՕԽԱՆ-ի տակ):

ՓՕԽՄՈՒՐԹ - *տե՛ս* ՓՕԽՆՈՒՐԹ:

ՓՕԽՄՕՐԹ - *տե՛ս* ՓՕԽՆՈՒՐԹ:

ՓՕԽՆՈՒՐԹ/ՓՕԽՆՕՐԹ/ՓՕԽՄՈՒՐԹ/ՓՕԽՄՕՐԹ *(գրբ. փոխանորդ)* - *գ.* Փոխնիփոխ հագնելու սպիտակեղեն (շապիկ, վարտիք եւն): *Հարթնը ճուրը կը՝ծրցընում ա, փոխմուրթը տընում կօխկէն, վէր կը՝լօխը լը՝վանա* (ՆԱԲ, 121):

ՓՕԽՆՕՐԹ - *տե՛ս* ՓՕԽՆՈՒՐԹ:

ՓՕԽՍ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փոխս ըղնէլ - Մի բան սխալմամբ մյուսի տեղ ընդունվել, իրար հետ շփոթվել: *Ծիյապահը մուտանում ա, ասում, վը՝ր էտ ծին ու՝ռանը չի, փոխս ա ընգալ* (ԼՂԲ, 331):

- Փոխս քըցիլ - Սխալմամբ մի բան մյուսի տեղ ընդունել, իրար հետ շփոթել: *Էտ տըղան ու՝ռանն ա հօրը տըրըխնէն փոխս ա քըցու՝մ* (Ձ):

ՓՕԽՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՓՕԽԷԼ-ի: *չբ.* 2. Ձգեստափոխվել, հագած շորերը փոխել: *Թաքավէրը էտ դէրվիշին շօ՝րէրը յօր ա օնում, փոխվում, ք՝ինամ* (Ձ): 3. Հերթափոխվել, հերթապահությունը փոխարինել: *Ղուլլուղչէք՝ը ճէլլի-ճէլլի փոխվում ին, հանցու մը՝րսին վէչ* (Ձ): 4. Բնավորությամբ՝ վարքագծով՝ վերաբերմունքով եւն այլ կերպ դառնալ: *Ք՝անպանը առաչ շատ ա իլանալ ուշունցատու, միհէնգ՝ փոխվալ ա* (Բ): 5. Մի այլ վիճակի վերածվել: *Համան փոխվալ ա* (Բ): 6. Փոխադրվել, տեղափոխվել: *Ըրամէն թօռնը փոխվալ ա հէնգ՝ինջի դասարան* (Բ):

ՓՕԽՏՈՒՐՍ - *տե՛ս* ՓԸԽԸՏՕՐՍ:

ՓՕԽՏՕՐՍ - *տե՛ս* ՓԸԽԸՏՕՐՍ:

ՓՕԿ *(գրբ. փոկ)* - *գ.* Կաշվի՝ ամուր գործվածքի եւն բարակ ու երկար շերտ՝ զանազան գործածությունների համար: *Թաքավը՝ր գ՝ուդ՝ում չար, թա փօկը՝ն էտքան էրկա կինի* (ՀԺՀ, VII, 353):

ՓՕԿՈՒՋ *(ռուս. фокус, գերմ. Hocus-pokus)* - *տե՛ս* ԸՇԿԸԿԸՊՕԹՈՒՆ:

ՓՕԿՈՒՋՆԻԿ *(ռուս. фокусник)* - *տե՛ս* ԸՇԿԸԿԱՊԷ (2, 3):

ՓՕՂ *(գրբ. փող)* - *տե՛ս* ՓՈՒԼ: ... *Մին քանէ մանէթ էլ փօղ ա տամ, մարթան թաքուն հը՝տը՝ն անում, ք՝ընում* (ԲՀԲ, 43):

ՓՕՄՓ(Ը)ՌԷԳ՝ *(հ.ե. *phamph-)* - *գ.* Գիրուկ, թմբլիկ, փափլիկ: *Փօմփը՝ռէգ՝ կ՝առն ա մ՝օրթում* (Ձ):

ՓՕՆՋ *(գրբ. փունջ)* - *գ.* Ծաղիկների՝ կանաչեղենի՝ մազերի եւն փնջաձեւ ամբողջություն, փունջ: *Էտ տըղան մին փօնջ մ՝ընէշ՝ակ ա քաղըմ, ք՝ընում հօրը կօշտը* (ՀԺՀ, V, 479):

- Փօնջ անէլ - *տե՛ս* ՓԸՆՋԻԼ:

ՓՕՆՋ-ՓՕՆՋ - *մ.* Փնջերով: *Ծաղէգ՝ը փօնջ-փօնջ տ՝ա՝ռնում ըն* (Ձ):

ՓՕՇ *(գրբ. փուշ)* - *գ.* 1. Որոշ բույսերի վրա գտնվող կոշտ ու սրածայր հավելված: *Ցա՝ք՝ին փօշը մաննըս ծակալ ա* (Ձ): 2. Ձկան բարակ՝ սրածայր ոսկոր: *Ծ՝ուկնէն փօշը մ՝ընացալ ա պը՝կէն* (Բ): 3. Ոզնու մորթը պատող ասեղնաձեւ ստեւը: *Կօզնուն փօշը վէր ինի վէչ, կօզնին կարէլ չի ապ՝ըրէ* (Ձ): 4. *տե՛ս* ԽԱՐՏ: 5. *փխբ.* Ասվում է խիստ՝ մռայլ՝ չար մարդու մասին: *Իզէն հօ ըսկէսուր չի՞, փօշ ա, փօշ* (Բ):

- Փուշէրէն անէլ - 1. Խստություն բանեցնել: *Ըսկէսուրը շատ ար փուշէրէն անում, կուճուր հարթնը տէմ չար կէնում* (Ձ): 2. Հակաճառել, հլու կերպով չեմթարկվել: *Միհէնգ՝վա հարթնէրը լ՝ըհա վէր հարթն ըն կ՝ամ, ըսքըսում ըն փուշէրէն անէլը* (Ձ):

- Փուշէրէն-թըվէրէն անէլ - *տե՛ս* Փուշէրէն անէլ:

- Փուշէրու յըրա նըստած ինիլ/նըստել - Խիստ անհանգիստ լինել: *Քը՝շէր տը՝ռավ՝ հ՝ա՝լա ապան ծըմական կ՝ա՝լ՝ու՝, այան էն ա փուշէրու յըրա նըստած* (Բ):

- Փօշէրը տ՝ու՝ս օնէլ - *տե՛ս* Փուշէրէն անէլ:

ՓՕԾՄԱՆ - *տե՛ս* ՓԷՇՄԱՆ:

ՓՕՇՏ[1] - *տե՛ս* ՓՈՒՇՏԱ:

ՓՕՇՏ[2] *(ռուս. почта, լեհ. poczta, իտ. posta)* - *գ.* 1. Ծանրոցների՝ նամակների՝ դրամի եւն առաքումն ու ընդունումը վարող կապի հիմնարկ, ինչպես նաեւ այդ հիմնարկի շենքը, փոստ: *Առաչ ամմէն շէնում էլ փօշտ ա իլանալ* (Բ): 2. Այն, ինչ որ առաքված կամ ստացված է կապի հիմնարկի միջոցով: *Փօշտը ըստանում ըն, ամմա էտ նամակը մաչին չի ինում* (Ձ):

- Փօշտու թընըկաման - Անբարոյական կին: *Ծատօրը գ՝ուդ՝ում չի, վէր ու՝ռանն կը՝նէգ՝ը փօշտու թընըկաման ա* (Բ):

- Փօշտու ճ՝ՕՐԷ - Շատ չարչարվող մարդ: *Փօշտու ճ՝ՕՐԷ յա մէր համօն* (Բ):

ՓՕՇՏԱԼ՝ՕՆ - *տե՛ս* ՓՕՇՏԱԼՕՆ:

ՓՕՇՏԱԼՕՆ/ՓՕՇՏԱԼ՝ՕՆ *(ռուս. почтальон, իտ. postiglione)* - *գ., ած.* Փոստատար: *Տա ու՝ռանն փօշտալ՝օն յըղօնէգ՝ին մին սօր ա տամ, ղարկըմ* (ՀԺՀ, V, 128):

ՓՕՇՏԸԽԱՆԱ - *տե՛ս* ՓՕՇՏ[2] (1):

ՓՕՇՈՒՏ *(գրբ. փշուտ)* - *ած.* Փշեր ունեցող, փշերով պատված, փշոտ: *Գ՝ուլը փօշուտ ծաղէգ՝ ա* (Բ):

ՓՕՉ *(պրս. pūč)* - *ած.* 1. Մեջը դատարկ, սնամեջ: *Մէր հրյաթումը մին մը՝ծ, փօչ թուրէ յա իլանալ* (Բ): 2. *փխբ.* Անիմաստ, անհեթեթ: *Փօչ խօսկէրք ա ըտըրա ըսը՝ծնէն* (Բ): 3. *փխբ.* Դառնություններով ու տառապանքներով լի: *Փօչ աշխարք ա* (Բ): 4. *փխբ.* Փտած, փչացած: *Ըխպիրանն տէնը էրկու ծառնը կա՝տակէն փօչ* (ՀԺՀ, V, 372): 5. *ած., գ.* Անպիտան, սրիկա, անզգամ: *Էրկու տը՝ղա օնէ, ճօխտը՝ փօչ* (Ձ): 6. *գ.* Թերություն, արատ (գործածվում է հիմնականում հոգնակի ձեւով): *Ըտըրա փօչէրը շատ ա* (Բ):

- Փօչ անէլ - Փչացնել, անպետքացնել: *Էնքան ապ՝ըրանքը թօղից թօռէն տակէն, փօչ ըրավ* (Բ):

- Փօչէրը պէց անէլ - Մեկի թերությունները՝ գաղտնիքները եւն բացահայտել: *Աղվէսը կ՝ամ ա, թա՝ կընգանը ք՝ը՝շտէն փօչէրը պ՝ա՝ց անէ, թաքավէրը թօղում չի...* (ՀԺՀ, V, 628):

- Փօչէրը պէց ինիլ - Մեկի թերությունները՝ գաղտնիքները եւն բացահայտվել: *Էտ կընանէք՝ը տը՝ռնում ըն, վէր ու՝ռանց փօչէրը պէց ա ինում, յը՝տ ք՝ունում ըն Ըստուծէն վը՝տքը...* (ԱԱ, 87):

- Փօ՞չ, թա տըռօ՞զ - Խաղատեսակ: *Խօխէնք՝ը փօ՞չ, թա տըռօ՞զ ըն խաղ անում* (Ձ):

- Փօչ իլանալ - *տե՛ս* ՓՕՉ (5): *Էք՝սը մարթը, կընէգ՝ը, խօխէնք՝ը յէր ըն կէնում, թա՝ ք՝ինանն, էս փօչ իլանէն թօղում չը՝ն* (ՀԺՀ, V, 499):

- Փօչ ինիլ - Փչանալ, անպետքանալ: *Արաշտ ըրավ, բարը սաղ փօչ իլանավ* (Ձ):

- Փօչ ճըղուպուր/պուպու - *տե՛ս* Մաչը փօչ ճըղուպուր (ՄԱՉ-ի տակ):

ՓՕՉԻԳ՝/ՓՈՒՉԻԳ՝ - *գ.* 1. Միզապարկ, միզափամփուշտ: *Ըփկարէն փօչիգ՝ը ա՝նպլէցա յը՝ն ըրալ* (Բ): Թռչունների կերակրափողի լայնացած պարկաձեւ մասը: *Պիրում ա էրկու միսրի մ՝օրթում, փուչիգ՝նէն տը՝ռըզցը՝նում, ծուլնէրէն կապում* (ՀԱԲ, 15, 94): 3. Մարմնի վրա գոյացած ուռուցք՝ պալար: *Պը՝ըկէն տակէն մին փօչիգ՝ ա տ՝ու՝ս յը՝կալ* (Բ): 4. Պղպջակ: *Կինին վէր ածում ա ըստաքանը, փուչիգ՝նէն լօք-լօք ըն անում* (Ձ): 5. Մաշկի վրա գոյացած բշտիկ, որ սովորաբար լցված է լինում հեղուկով: *Ծը՝ր՝քէրը սաղ փուչիգ՝նէ յա* (Բ):

- Փօչիգ՝ը ծակ/պիրանան մօտէ - Անգաղտնապահ: *Փօչիգ՝ը ծակ տը՝ղամարթը հինչ կա՞նին* (Բ):

- Փօչիգ՝ը վը՝ռան մօտէ - Բարկացկոտ, շուտ բարկացող: *Փօչիգ՝ը վը՝ռան մօտէ մարթ ա մէր Ապ՝ըհամը* (Բ):

- Փօչիգ՝ը տը՝ըրաքէլ - Միզելու խիստ

ցանկություն ունենալ: *Դէ թաքավէրին տըղան էլ, փօչիգը տըրաքում ա, հունց նըստէ՞* (Զ):

- Փուչիգումը պէն չըպահէլ - Անգաղտնապահ լինել: *Տընաշինըտ փուչիգումը պէն չի պահում, հինչու ըսկանում ա, լօխճին ասում ա* (Բ):

ՓՕՉ-ՓՕՉ - *ած.* 1. Ծակոտկեն, շատ մասերում փուչ տեղեր ունեցող: *Փօչ-փօչ հաց ա* (Բ): 2. Գզելով կամ ճիպոտով ծեծելով գզգզված ու փափկեցրած (բրդի՝ բամբակի մասին): *Փօչ-փօչ պ՚ուրթ ա* (Բ):

ՓՕՌՆԸ - *տե՛ս* ՓՈՒՌ:

ՓՕՍ *(գրբ. փոս)* - *գ.* 1. Գետնի մեջ փորած կամ որեւէ պատճառով խոր ընկած տեղ: *Մին խօր փօս ա կըտըրում, մինչէվ կ՚օտէն հօղումըն ա տինում...* (ՀԱԲ, 15, 13): 2. Հարթ մակերեւույթի վրա ներս ընկած տեղ: *Էս էլ հօ հըղէ չի՞, սաղ փօսէր ա* (Զ): 3. Գերեզմանափոս: *Ը՚ըհա վէր մէյդը տինում ըն փօսումը, կարկուտը նի յա օնում* (Զ): 4. Մարմնի վրայի կամ ներսի գործարանների խոռոչ: *Ըտըրա ըշկէրէն տակէ փօսէրը վէր տը՚սնում ա, վախում ա* (Զ): 5. *ած.* Ներս ընկած, խոր ընկած, փոսացած: *Մէր շէնը փօս տը՚ղ ա* (Բ):

- Փօս ըղնէլ - Ներս ընկնել, փոսանալ: *Խը՚ղճը էնքան մ՚ըշվ՚ալ ա, թօշէրը փօս ա ընգալ* (Բ):

- Փօս քանդիլ (մինին հը՚տէ) - Դավ նյութել մեկի դեմ, որոգայթ լարել: *Ն՚ուրն՚ուշին հը՚տէ փօս քանդ՚ողը ինք՚ը կըղնէ մաչը* (Զ):

- Փօս քըցիլ - Փոս գոյացնել, փոսացնել: *Վէդրան թըխում ա քարէն, փօս քըց՚ում* (Զ):

ՓՕՍԱԼԱՂ - *տե՛ս* ԼՕՂՎԱ:

ՓՕՏ - *տե՛ս* ՓՕԹ:

ՓՕՏՕԳՐԱՓ *(ռուս. фотограф)* - *գ.* Լուսանկարիչ: *Խուջաց Սիրգօնէն թօռը լ՚ավ փօտօգրրափ ա* (Բ):

ՓՕՐ *(գրբ. փոր)* - *գ.* 1. Մարդու եւ կենդանիների մարմնի մաս, որի մեջ տեղավորված են ստամոքսը, լյարդը, աղիքները եւ այլ գործարաններ: *Ղ՚ամ՚ան քաղում ա փօրը, ըսպանում* (Զ): 2. Փորոտիք: *Փօրը տ՚ուս ըն տամ, մէսը ածում խուրջինը, ք՚ինամ* (Զ): 3. Իրանի առջեւի մասը՝ կրծքից ներքեւ: ... *Սուփրան փօրավըն ա տամ, ք՚ընում* (ՀԱԲ, 15, 17): 4. Կնոջ արգանդ: *Իզէն հ՚ալ՚ ն՚ուրն մօրը փօրումըն ա իլ՚ալ նադինք* (Բ): 5. Ծին, ծնունդ: *Ղ՚ավրիշը ասում ա.- Թա ախճիգ՚ ինի, առաչին փօրը իմըն ա, թա տըղա ինի՝ քունը* (Զ): 6. *փխբ.* Ամանների՝ անոթների՝ իրերի միջին՝ ուռուցիկ մասը: *Կըրասէն փօրը ճաքալ ա* (Բ): 7. *փխբ.* Սնունդ, ապրուստի միջոց: *Ամմէն մարթ ն՚ուրն՚ն փօրէն հը՚տէ յա ըշխադում* (Զ):

- Փօրան ըղնէլ - *տե՛ս* Պօրտը տ՚ուս ըղնէլ:

- Փօրան փըռնէլ - Որովայնի ուժեղ ցավ զգալ՝ ունենալ: *Կամ ըն, տը՚սնում՝ թաքավէրը, փօրան փըռնած, ճըղճըղամ ա* (Զ):

- Փօրան փըռնէլ վէր ըղնէլ - *տե՛ս* Ն՚ուշկ՚ունա՚ ինիլ:

- Փօրան ք՚ինիլ - Փորը լուծել, փորլուծություն ունենալ: *Յու շատ գ՚ն՚ալ՚ն օտէ, փօրան կըք՚ինի* (Բ):

- Փօրավը չըվան/ք՚ն՚անդիր չի պատ կ՚ա՚լ - Ասում են շատ գեր՝ մեծ փոր ունեցող մարդկանց մասին:

- Փօրէն կըռը - Բուն նպատակը՝ ցանկությունը: *Ըտըրա փօրէն կըռը էն ա ինն՚ում, վէր հիրըվանէն նըհը՚տ հըրակաշ տը՚ռնա* (Զ):

- Փօրէն կուտընէք՚ը - Մարդու որովայնի ճարպը: *Ասում ա.- Ըտըրան էնքան թըկէցէք՚, վէր փօրէն կուտընէք՚ը հ՚ալ՚ի* (Զ):

- Փօրէն վը՚ռթնը կօտըրէլ - Մի քիչ սնվելով՝ քաղցը մեղմել: *Հիշկան շօռ ա կ՚ամ, մին պէն չի քըթէնում, թա լ՚ըհա փօրէն վը՚ռթնը կօտըրէ* (Զ):

- Փօրէն տակը քօրէլ - *տե՛ս* Մաշկը քօրէլ:

- Փօրէն ցավը - *տե՛ս* ՓՈՒՐԱՑԱՎ:

- Փօրը իփիլ - *տե՛ս* Լըղաճա(ն)ք ինիլ:

- Փօրը լըցնել - Ագահաբար ուտելով՝ կշտանալ: *Նըստում ա, փօրը լըցնում, ք՚ինամ* (Զ):

- Փօրը լիգ՚ը - 1. Կուշտ կերած՝ հագեցած: *Փօրը լիգ՚ը մարթին էլ հինչ դ՚ն՚ող կինի* (Բ): 2. *տե՛ս* ՊԱՃ(Ճ)ԱՌԱՎԷՐ:

- Փօրը՝ լիգ՚ը, կօխկը՝ տէրտակ - Ասում են այն կանանց մասին, որոնց երեխաները ծնվելուց մահանում են:

- Փօրը խ՚ն՚փիլ - *տե՛ս* Փօրէն վը՚ռթնը կօտըրէլ:

- Փօրը խէխտ՚ն՚ած բըրամա - Գոտկատեղը բարակ, նրբիրան մարդ: *Հարթնը, հինչ հա՞րթնը, փօրը խէխտ՚ն՚ած բըրամա* (Բ):

- Փօրը խըշարէլ - *տե՛ս* ՓԸՓԷԽՎԷԼ:

- Փօրը ծակէլ - 1. Հանգիստ չտալ, անհանգստություն պատճառել: *Կընգանը ջօղաբը մարթին փօրը ծակում ա* (Զ): 2. Նախանձը շարժել: *Ընխշունէն ղը՚շշընգ՚օթունը հիրըվընն՚էրէն փօրը ծակում ա* (Բ):

- Փօրը ծափ տալ - Խիստ սոված լինել: *Էրկու օր ա՝ պէն չի կէրալ. փօրը ծակում ա* (Զ):

- Փօրը ծըմըր(ը)կէլ - *տե՛ս* Փօրը տ՚ուս կ՚ա՚լ:

- Փօրը ծուխավ լըցնէլ - Հրազենով սպանել: *Թափանչան տ՚ուս ա օնում, ըտըրա փօրը ծուխավ լըցնում* (Զ):

- Փօրը կապվէլ - Փորկապություն ունենալ: *Խը՚ղճը հինչ ա՞նէ, փօրը կապվալ ա, կարում չի, թա չ՚ալ ք՚ինի* (Բ):

- Փօրը կատու ըղնէլ - *տե՛ս* Փօխանը կատու ըղնէլ:

- Փօրը կըլխան պէցն՚ուր - 1. Շատ գեր: *Փօրը կըլխան պէցն՚ուր ա, էտ հինչ կօրծ բիդի ա՞նէ* (Բ): 2. Հղիության վերջին շրջանում գտնվող (կին): *Փօրը կըլխան պէցն՚ուր հարթն ա, խօխա պիրիլի վախտըն ա* (Բ):

- Փօրը կըտօրէլ - Որովայնը խիստ ցավել: *Էնքան կէրալ ա, փօրը կըտօրում ա* (Բ):

- Փօրը կօշտ (ինիլ) - 1. Կուշտ կերած՝ հագեցած (լինել): *Փօրը կօշտը տ՚ուզնին դադիրը գ՚իդ՚ալ՚ չի* (Զ): 2. Տնտեսապես ապահով (լինել): *Դ՚օր՚ունք փօրը կօշտ խալխ ըն* (Բ):

- Փօրը կօշտ պահէլ - Իր կամ ուրիշի մասին հոգ տանելով՝ երբեք քաղցած չմնալ՝ չթողնել: *Սօնա բաջին քըշէրցիրը՚կ ըշխադում ար, համ ն՚ուրն՚ն փօրը կօշտ պահում, համ խօնցը* (Բ):

- Փօրը կօտ ըղնէլ - *տե՛ս* Փօրը մայա ըղնէլ:

- Փօրը հաստ - *տե՛ս* ՀԸՍՏԱՓՕՐ:

- Փօրը հացուտ անէլ - *տե՛ս* Փօրէն վը՚ռթնը կօտըրէլ:

- Փօրը ղաժավ լիգ՚ը - Նախանձ, չարակամ, խարդախ: *Փօրը ղաժավ լիգ՚ը մարթ ա Շաբօն* (Բ):

- Փօրը ճըրդօտէլ - 1. Բղավել, բարձր ձայնով կանչել: *Ծէն տալավ, փօրը ճըրդուտէլավ ք՚ինամ ա, տէսնում՝ լիհ՚ն հըղըցէն կըլխէն՝ մին փօսում, պըրանած* (ՆԼՂԺԲ, 119):

- Փօրը մայա ըղնէլ - Քաղցը անցնել: *Միկա վէր օտըմ ըն, խըմում, էտ տըղէն փօրը մայա յա ըղնում, ըսկըսում ա խաղ անէլ...* (ՀԺՀ, VII, 110):

- Փօրը մաշկան կէնալ - Սաստիկ նիհարել: *Էնքան կօրծ ա ըրալ, փօրը մաշկան ա կացալ* (Բ):

- Փօրը յը՚ր չօնէլ - Նախանձել: *Մը՚ծ հարթնանը փօրը յը՚ր չի օնում, վէր կուճի հարթնանը ըտի սիրում ըն* (Զ):

- Փօրը յըղըկ՚ալ՚ի - *տե՛ս* Փօրը փիյըկ՚ալ՚ի:

- Փօրը շինիլ - *տե՛ս* ՄԱՉԻԼ (2):

- Փօրը շօն ըղնէլ - *տե՛ս* Փօխանը կատու ըղնէլ:

- Փօրը պէն ըղնէլ - *տե՛ս* Փօրը մայա ըղնէլ:

- Փօրը պըլիթիլ - *տե՛ս* Փօրը տ՚ուս կ՚ա՚լ:

- Փորը պընդոցց(ը)նէլ - Կուշտ ուտել, հագենալ: ... *Ըստը՛ղ մին լ՛ավ փորը պընդոցցնէս ա, հրդէ ինիս* (Զ):

- Փորը վախավ լիգ՛ը - Սարսափի մատնված, սարսափահար: *Հիշտէղ ը՞ք տէսալ, վէր փորը վախավ լիգ՛ը մարթը քօն ինի* (ՆԱԲ, 30):

- Փորը վէր ածէլ - 1. Փորոտիքը հանել՝ դուրս թափել՝ մաքրել: *Ծունկնէն փորը վէր ըն ածում, լըվանում, իփոնում* (Զ): 2. Սպանել (հաճախ գործածվում է որպես սպառնալիք): *Ասում ա.- Ծէնըտ կըտըրէ՛, թա չէ փորըտ վէր կածիմ* (Զ):

- Փորը վը՛րթնած/վը՛րթնավ լիգ՛ը - *տե՛ս* Փորը դաժավ լիգ՛ը:

- Փորը վէց-վէց անէլ - Շատ քաղցած լինել, ուտելու մեծ ցանկություն ունենալ: *Էտ դ՛ուրըմը փորը վէց-վէց անէլավ, խըլուշկուտալավ մին աղվէս ա անց կէնըմ...* (ՋՏ, Բ, 155):

- Փորը տափավը քաշ ինիլ - 1. Սաստիկ գիրանալ, փորը շատ մեծանալ: *Տընաշինըտ կարում չի, թա տ՛ուրո՛ւր կ՛ա, փորը տափավը քաշ ա ինում* (Զ): 2. Ծնելու ժամանակը մոտ լինել (կենդանիների մասին): *Խոզ՛ին փորը տափավը քաշ ա ինում, էք՛ուց ծընական ա* (Բ):

- Փորը տափէրը քըսէլ - *տե՛ս* Պորտը տափէրը քըսէլ:

- Փորը տէրտակ - Քաղցած, անոթի: *Փորը տէրտակ մարթը կարէլ չի հոնձ անէ* (Բ):

- Փորը տըռըզգիլ/տըռըզգընէլ - *տե՛ս* Փորը տ՛ուս կ՛ալ:

- Փորը տըռոզ - 1. Գեր, չաղ: *Փորը տըռոզ մարթ ա իլալ Հայկան* (Բ): 2. *տե՛ս* ՊԱՌ(Ճ)ԱՌԱՎԷՐ:

- Փորը տըրաքէլ - 1. Չափազանց շատ կերած լինել: *Փորը տըրաքում ա, կարում չի թա նըստէ* (Բ): 2. Խիստ նախանձել, նախանձից պայթել: *Սունէն փորը տըրաքում ա, վէր տըք՛րակէնը ըտի դաշանգ՛ ա* (Բ):

- Փորը տ՛ումբանգ՛ անէլ - *տե՛ս* Փորը պընդոցց(ը)նէլ:

- Փորը տ՛ուս կ՛ալ - 1. Գիրանալ, չաղանալ: *Հինչա պաշտոն ըն տըվալ, Մըցակէն փորը տ՛ուս ա յը՛կալ* (Բ): 2. Հղիանալ, հղի դառնալ: *Անց ա կէնում մին քանէ վախտ, թաքուհուն փորը տ՛ուս ա կ՛ամ* (Զ):

- Փորը փիյըկ՛ալիլ - 1. *տե՛ս* Փորը տ՛ուս կ՛ալ (1): 2. Հարստանալ: *Սումբաթէն փորը փիյըկ՛ալալ ա, էլ մէզ մըրթատը՛ղ չի տինում* (Բ):

- Փորը քըթէն տէմ ըղնէլ - 1. *տե՛ս* Փորը տափավը քաշ ինիլ (1): 2. Ծննդաբերելու ժամանակը մոտ լինել (կանանց մասին): *Հէրիք՛նազէն փորը քըթէն տէմ ա ընգալ, էս շէբաթը հ՛ուրբ՛աթ խօխա կըպիրի* (Բ):

- Փորը քըշանալ - Սովածանալ: *Հիշկան կօրծ ա անում, էնքան փորը քըշանում ա* (Զ):

- Փորը քըշիլ - *տե՛ս* Փորան քի՛նիլ:

- Փորը քուշտըց(ը)նէլ - *տե՛ս* Փորը պընդոցց(ը)նէլ:

- Փոր պահէլ - 1. Ախորժակ պահել ավելի լավ ուտելիքի համար: *Ասում ա.- Փո՛ր պահէ, էս ա խըրաված ըմ անում* (Զ): 2. Այստեղ-այնտեղ սնվելով՝ գոյատեւել: *Փոր պըհէլավ տօն չըս տը՛ռնալ* (Զ):

- Փորումը այբու/այիփպէնու թիք՛ն/կուտուր/պատառ չինիլ - Տգետ՝ անգրագետ լինել: ... *Էտ դէրըն էլ պէն չի ինում գ՛իդ՛ալիս, փորումը այիփպէնու կուտուր չի ինում...* (ՀԺՀ, VII, 303):

- Փորումը ն՛ուն կաթէլ - *տե՛ս* Լըղաճա(ն)ք ինիլ:

- Փորումը կըռ ինիլ - Գաղտնի նպատակ՝ ցանկություն՝ պահանջ ունենալ: *Ընդըրա փորումը վէր կըռ չինի, էս ծունծըմը՛ռ օրը կ՛ալ չի մէր շէնը* (Զ):

- Փորումը կըտօրէլ - Զայրույթը մի կերպ զսպել: *Հարթնը ուտէս ա, ըսկէսուրըն էլ փորումը կըտուրէս ա* (Զ):

- Փորումը սադանա/օխծ ինիլ - Չար մտադրություն՝ դիտավորություն ունենալ: *Թաքավէրը դ՛ուստի յա կըլ՛օխ ըղնում, վէր վէզիրին փորումը սադանա կա* (Զ):

- Փորումը սը՛ռտ չըմընալ - տե՛ս Լըղաճա(ն)ք ինիլ:

- Փորու յէսիր - Միայն ուտելու մասին մտածող, ամեն ինչ փորին ծառայեցնող: *Փորու յէսիր մարթը կարէլ չի տօն պահէ* (Զ):

- Փորու ցավ - *տե՛ս* ՓՈՒՐԱՑԱՎ:

- Փոր քըցիլ - *տե՛ս* Փորը տ՛ուս կ՛ալ:

ՓՕՐԹԱՓ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փորթափ անէլ - *տե՛ս* Լըղաճա(ն)ք անէլ:

- Փորթափ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* Լըղաճա(ն)ք ինիլ:

ՓԸՐԹԸԽԱԼ - *տե՛ս* ԱՊԷԼՍԻՆ:

ՓՕՐԿԱՊ - *տե՛ս* ՓՈՒՐԸԿԸՊՕԹՈՒՆ:

ՓՕՐՄ *(ռուս. форма, լատ. forme)* - *գ.* Կերպ, ձեւ, եղանակ: *Էտ փորմի չօրսին էլ ըսպանում ա...* (ՀԱԲ, 15, 128):

- Փորմու հը՛տէ/մըհար - Արտաքուստ ցույց տալու համար, ձեւականորեն: *Փորմու հը՛տէ ինք՛ըն էլ ա ըսքըսում խօտ հարէլը* (Զ):

ՓՕՐՄԱ *(ռուս. форма)* - *գ.* Համազգեստ: *Առաչ ըշկօլնիկնէն փորմա յըն իլալ կ՛ընալիս* (Բ):

ՓՕՐՍՈՒՂ - *տե՛ս* ՓԸՐՍՕՂ:

ՓՕՐՍՕՂ - *տե՛ս* ՓԸՐՍՕՂ:

ՓՕՐՏՈՒՊԸՅԱՆ *(ռուս. фортепьяно, իտ. fortepiano)* - *գ.* Դաշնամուր: ... *Թ՛ռին, սազին էլ հավան չընը, փորտուպըյանէն ա մօդան* (ՋՏ, Ա, 26):

ՓՕՐՑ *(գրբ. փորձ)* - *գ.* 1. Կյանքից՝ գործունեությունից եւն քաղած գործնական գիտելիքների, հմտությունների, ունակությունների եւն ամբողջությունը: *Ուստա Արտաշը մը՛ծ փորց օնէ* (Բ): 2. Վարժություն, որ կատարվում է որեւէ բան սովորելու՝ որեւէ բանում հմտանալու համար: *Շատ ա փորց անում, մինչը՛վ կարում ա ինք՛ըն էլ հօրը նըման պար կ՛ա* (Զ):

ՓՕՐՑԱՆՔ *(գրբ. փորձանք)* - *տե՛ս* ԽԱԹԱ: *Կուճուր ախպօր փ՛անդէրավը Պարսէղը պըրծընում ա ամմէն մին փորցանքա* (ՀԺՀ, V, 439):

ՓՕՐՑԷԼ - *տե՛ս* ՓՕՐՑԻԼ:

ՓՕՐՑԻԼ/ՓՕՐՑԷԼ *(գրբ. փորձեմ)* - *նբ.* 1. Ստուգել՝ պարզել մեկի կամ մի բանի ինչպիսին լինելը: *Մին սօվ տարէ Աստուծ ն՛ուգիս ա ժուղուվուրթէն փորցի...* (ԱԱ, 88): 2. Համտեսել, համտես անել (համը, սպիրտայնությունը եւն որոշելու համար): *Կ՛ինին փորցն՛ում ա, տը՛սնում՝ թըթօ* (Զ): 3. Որեւէ բան անել՝ գործողությունների դիմել մի բանի հասնելու՝ մի բան իրականացնելու համար: *Շատէրը ըն փորցն՛ում, ամմա կարում չընը էտ ուշափէն յը՛խնին* (Զ): 4. Փորձարկել: *Ապան մին թ՛ազգ՛ն չընխարակ ա շինում, այան նըստում ա, վէր փորցի* (Զ): 5. Չափսը՝ սազելը՝ գույնի համապատասխանությունը եւն պարզել (հագնելով, չափելով եւն): *Էտ ախճիգ՛ը հինչ շօր փորցն՛ում ա, յըրան կ՛ամ չի* (Զ): 6. Գործածվում է որպես սպառնալիքի արտահայտություն՝ չհամարձակվես, եթե անես, կտուժես (հրամայական եղանակով): *Ասում ա.- Փո՛րցի լ՛ըհա մէհէտ էլ նի մընինիս իմ բաղըս* (Զ):

- Փորցն՛ած թանը անփորց մածնան լ՛ավ ա - Ծանոթ՝ փորձված մարդը՝ իրը՝ երեւույթը եւն, իրենց թերություններով հանդերձ, գերադասելի են անծանոթից՝ անփորձից, թեկուզ եւ դրանք նախորդներից ավելի առավել լինեն:

ՓՕՐՑՎԷԼ - *տե՛ս* ՓՕՐՑՎԻԼ:

ՓՕՐՑՎԻԼ/ՓՕՐՑՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՓՕՐՑԻԼ-ի: 2. *չբ.* Վարժվել, հմտանալ, փորձ ձեռք բերել, փորձառու դառնալ: *Փորցվ՛ած վը՛րսկան ա Աբօն* (Բ):

ՓՕՐՔԱԾ - *գ.* 1. *տե՛ս* ՂՈՒՇԽՈՒՆ: 2. Գոտու նման հատուկ կարված լայն երիզ, որ, օրորոցի վրայով ու տակով անցկացնելով, կապում են, որպեսզի երեխան չընկնի: *Խօխան տինում ա ըրուրուցումը, փորքաշավը կապում* (Զ): 3. *հեգն. տե՛ս* Կ՛ՕՏԷ (1):

ՓՕՓ - 1. *գ.* Պաքսիմատով, շաքարով եւ ջրով պատրաստած մանկական ճաշ: *Խոխէնքը փոփ շատ ըն սիրում* (Ձ): *ած.* 2. Շատ հասունանալուց եւն փափկած, փափուկ: *Փոփ զըկըռ ա* (Բ): 3. *փխբ.* Շատ ծերացած, ծերությունից մարմինը փափկած: *Փոփ պառավ ա* (Բ):

- Փոփ տը՛ռնալ - 1. Շատ փափկել: *Տանձը էնքան հըսալ ա, լափ փոփ ա տը՛ռալ* (Բ): 2. Շատ ծերանալ, ծերությունից մարմինը փափկել: *Մէր ազնավուրը քը՛ընում ա, տէսնում ուշափէն մարը պըռռաված, փոփ տէռած...* (ՆԱԲ, 26):

ՓՕՔ(Ը)Ս/ՓՕՔՍԸ *(գրբ. փուք)* - *գ.* Կաշվե կծկվող ու ծալքավոր հարմարանք օդի հոսանք դուրս մղելու համար, փուքս: *Փոքսըն էնքան փըչում ա, վար ջամը սըկսում ա կ՚իրմիրիլը* (ՀԺՀ, V, 392):

- Փոքսը նըստէլ - *տե՛ս* Հավան նըստէլ (ՀԱՎԱ-ի տակ):

ՓՕՔՍԸ - *տե՛ս* ՓՕՔՍ:

Ք

ՔԱ - *տե՛ս* ՔՈՒ (գործածվում է հիմնականում **հանր** եւ **մար** բառերի տրական հոլովաձեւի հետ): *Քա հոր, քա մոր տօնը շինվի, քը՛էգ խէ փըսակում չը՞ն* (Բ):

ՔԱԹ - *գ.* 1. Հեքիաթ: *Տըրանավ էլ քաթը պըրծընէս ա* (ՀԺՀ, V, 599): 2. *տե՛ս* ՋԸՐՈՒՑ:

ՔԱԹԱՆ *(գրբ. քթան)* - *գ.* Կտավատի թել եւ այդ թելից գործած կտոր՝ կտավ: *Քաթան ա ինք՚ օնում, մին դարյա կարում, տամ ըխճըկանը* (Ձ):

- Քաթան տը՛ռնալ - *տե՛ս* ՍԸՓԱՐԹՆ(ԸՎ)ԻԼ:

ՔԱԹՍՈՒՆ - *տե՛ս* ՔԱՑ(Ց)ՈՒՆ:

ՔԱԼ - *տե՛ս* Ք՚ԱԼ:

ՔԱԼԱՂԱ - *տե՛ս* Ք՚ԱԼԱՂԻ:

ՔԱ՚ԼԱ՚ՄԱՆԳՕ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քա՚լա՚մանգօ տը՛ռնալ - Սաստիկ մրսել: *Այազ ա, քա՚լա՚մանգօ յընք տը՛ռնում* (Ձ):

ՔԱԼՈՒԾ - *տե՛ս* Ք՚ԱԼՕԾ:

ՔԱԼՈՒՔՈՒԼ - *տե՛ս* Ք՚ԱԼՈՒՔ՚ՈՒԼ:

ՔԱԽԾԸՐ/ՔԱԽՑԸՐ *(գրբ. քաղցր)* - *ած.* 1. Քաղցրահամ: *Ծէրանը քախծըր բար ա* (Բ): 2. Զգայարանների համար դուրեկան՝ շոյող: *Քախծըր սա՚ս օնար աշըղ Առըստամը* (Ձ): 3. Գգվալից, սիրալիր: *Այան թուռնէրէն քախծըր ար յէշում* (Բ): 4. Բարի, բարյացակամ: *Քախծըր մարթ ա* (Բ): 5. Սիրելի, թանկագին: *Ասում ա.- Տու իմ քաղցըր ախպէրըս ըս, յը՛ս քը՛ընէգ կարէլ չըմ ըսպանիմ* (Ձ): 6. Հաճելի, հոգեկան հաճելի զգացումով լցնող: *... Մըն էլ քըշէրէն կէսըմը՝ քունուրնուս էն քախծըր վախտը, շընէրը ըսկըսը՛ցէն հա՚չիլը* (ՀԲ, 363): 7. Երջանիկ, լավ: *Մարթը թաքավէր ա տա՚ռնում, ինք՚ըն էլ՝ թաքուհի, ըսկըսում ըն քախծըր ապրէլը* (ՆԼՂԺԲ, 32): 8. *գ.* Քաղցրավենիք: *Ք՚ինամ ա բըզարան քախծըր ինք՚ օնում, դարկում մօրը հը՛տէ* (Ձ): 9. *մ.* Հաճույքով, սիրով, սիրալիր կերպով: *Տըրանց քախցըր ճանապար ա տինում* (ՀԱԲ, 15, 33):

- Քախծըր աշկ - Բարյացակամություն, բարեհաճ վերաբերմունք: *Էտ թաքավէրին էլ քախծըր աշկ ա ինում ժուղովուրթէն յըրա* (Ձ):

- Քախծըր աշկավ յէշիլ - Բարյացակամ՝ բարեհաճ լինել մեկի նկատմամբ: *Կօգ՚ի խօրթ, ամմա քախծըր աշկավ ար յէշում էտ խօնցը* (Ձ):

- Քախծըր լ՚ուզ՚ու - Ախորժալուր՝ դուրեկան խոսվածք՝ խոսք: *Քախծըր լ՚ուզ՚ու օնէ Մաքաղաթը* (Բ):

- Քախծըր լ՚ուզ՚ուն օխծը պ՚ունա՚ն տ՚ուս կօնէ - Հաճելի՝ դուրեկան՝ դյութող խոսքերով ամեն ինչի կարելի է հասնել:

- Քախծըր լ՚ուզ՚ու պընը՚ցը(ը)նէլ - Հաճելի՝ դուրեկան խոսքով մեկին հմայել: *Քախծըր լ՚ուզ՚ու պընը՚ցըրավ, թաքավէրին աչի թէվը տը՛ռավ* (Ձ):

ՔԱԽԾԸՐ-ՄԱԽԾԸՐ/ՔԱԽՑԸՐ-ՄԱԽՑԸՐ/ՔԸԽԾԸՐ-ՔԱԽԾԸՐ/ՔԸԽՑԸՐ-ՔԱԽՑԸՐ - 1. *ած.* Անախորժ եւ շատ քաղցր: *Քախծըր-մախծըր կ՚ինի յա* (Բ): 2. *փխբ.* Հաճոյախոսություն պարունակող, շողոքորթ: *Ջա՚ղ՚ա՚ս տանում ա Ջավէնին քախցըր-մախցըր խուսկէրքան* (Բ):

ՔԱԽԿԱՎԱՐԻ/ՔԱԽԿԸՎԱՐԻ/ՔԸՂԸ-ՔԸՎԱՐԻ - *ած., մ.* Քաղաքավարության նորմաներին՝ կանոններին համապատասխան: *Քախկըվարի յա խօսում* (Բ): 2. Քաղաքավարության նորմաներով առաջնորդվող, բարեկիրթ, քաղաքակիրթ: *Քախկըվարի խալխ ըն խօնդ՚ունք* (Ձ): 3. Քաղաքի տարազով: *Էս կարճլիգ՚ թօխ ծըմավէր հարսը քախկավարի յա. կ՚էցինը Մօսկօվի մախմ՚ուր ք՚ուլք՚ ա՝ յախան մարքարիդավ արած...* (ՋՏ, Ա, 2):

ՔԱԽԿԸՎԱՐԻ - *տե՛ս* ՔԱԽԿԱՎԱՐԻ:

ՔԱԽՑԸՐ - *տե՛ս* ՔԱԽԾԸՐ:

ՔԱԽՑԸՐ-ՄԱԽՑԸՐ - *տե՛ս* ՔԱԽԾԸՐ-ՄԱԽԾԸՐ:

ՔԱԾ *(գրբ. քած (էգ շուն)* - 1. *ած.* Էգ, ոչ արու (կենդանիների, անարգաբար նաեւ մարդկանց մասին): *Էտ կընէգ՚ը տը՛ռնում ա մին քած կ՚ուլ, ըղնում ծըմակը* (Ձ): 2. *գ.* Էգ կենդանի, հատկապես՝ շուն: *Քածը վէր թուլօցը սա՚սը ըսկանում ա, յըրա յա պըրծընում, կ՚ուլին կօխում տակը, ըսպանում* (Ձ): 3. *անրգ.* Կին, անբարոյական կին: *Էս քածընն էլ ա կըլխու ըղնում, բայց թասիբի պէն էլ կա չէ՞ մաչտը՛ղը* (ՀԱԲ, 15, 14):

- Քած ասթըխը տ՚ուս կ՚ա՚լ - Շատ ժամանակ անցնել: *Տընաշինըտ մինչը՛վ մին պէն ա ասում, քած ասթըխը տ՚ուս ա կ՚ամ* (Բ):

- Քած արմատ - Կին, աղջիկ: *Քած արմատ ա, էն հինչ ա՞ռտ բիդի անէ* (Ձ):

- Քած արչ - Գազազած, գազանաբարո: *Քած արչ ը՞ս, հինչ ը՞ս էտ կընգանը թակում* (Բ):

- Քած նա՚փա՚ս - Չար շունչ, որ իբր հիվանդի ներսում ծավալվում եւ սպանում է նրան: *Չար նա՚փա՚սը Ա՚լ՚էվէն էլ ըսպանից* (Ձ):

- Քած պըրիստավ - Խստաբարո կին ղեկավար: *Էտ քած պըրիստավը բաղվանչօցը օր-իշը՛ղ չար տամ* (Ձ):

ՔԱԾԻ - *ած.* Կանացի հատկություն ունեցող, վախկոտ, թույլ, կնամարդի (տղամարդկանց մասին): *Քածի մարթ ա Ղա՚զա՚ը* (Բ):

- Քածի Մանաս - Կնամարդի՝ կանացի հատկություն ունեցող տղամարդ: *Էտ քածի Մանասը կընգանը անա փիս վախում ա* (Բ):

ՔԱԾ(Ծ)ՈՒՆ - *տե՛ս* ՔԱՑ(Ց)ՈՒՆ:

ՔԱՀ-ՔԱՀ - *ած., մ.* Բարձրաձայն եւ լիաթոք (ծիծաղի՝ ծիծաղելու մասին): *Մէլիք-Շահնազարը Պուղուն յէշում ա, քահ-քահ ծըծա՚ղում* (ՆԱԲ, 129):

ՔԱՂ[1] *(գրբ. քաղ (մոլախոտ)* - *գ.* 1. Ցորեն՝խոտ՝տերեւ՝պտուղներ եւն հատհատ պոկելը՝ քաղելը՝ հնձելը, բերքահավաք: *Քաղը ըսքըսում ա, ժուղովուրթը լօխ ք՚ինամ ըն բաղէրը* (Բ): 2. *տե՛ս* ՔԸ(ԸՀ)ՂԱՆ: 3. Բերքահավաքի ժամանակը: *Քաղը վէր կ՚ամ ա, շինա՚ցէք՚ ի՚ւրի՚ւրօնցավ ըն ըղնում* (Ձ): 4. Քաղած բանը (պտուղ, հունձ, խոտ եւն): *Խընձօրին բաղը քաղում ին, քաղը պիրում մը՛կնում* (Ձ):

- Քաղ անէլ - 1. *տե՛ս* ՔԱՂԷԼ: 2. *տե՛ս* ՔԸՂ(ԸՀ)ԱՆԷԼ:

- Քաղ տալ - Գուլպայի մաշած տեղերը կտրելով՝ նոր թելերով գործել: *Ամմէն աշունք այան տընոցուց գ'ուլբէ-ք'ը քաղ ար տամ* (Ձ):

ՔԱՂ[2] *(գրբ քաղ (արու այծ, նոխազ)* - *տե՛ս* ՔԷՌ:

ՔԱՂԱՔ *(գրբ. քաղաք)* - *գ.* 1. Խոշոր բնակավայր, վարչական՝ արդյունաբերական՝ առեւտրական՝ մշակութային կենտրոն: *Ժուկավ-ժամանակավ Արմավիր քաղաքումը մին թաքավէր ար կէնում* (ՆԱԲ, 37): 2. *փխբ.* Քաղաքային կյանքը (ի հակադրություն գյուղականի): *Քըղաքան գ'ահլ'ա տանում ա* (Բ): 3. Քաղաքի բնակչությունը: *Էտ խաբարը վէր կ'ամ ա, սաղ քաղաքը սըրտաճաք ա տը'ռնում* (Ձ):

ՔԱՂԷԼ[1] *(գրբ. քաղեմ)* - *նբ.* 1. Ցորեն՝ խոտ՝ տերեւ՝ պտուղներ եւն պոկել՝ հավաքել՝ հնձել: *Ուռութանան վը'ր յէր ա կը'նըմ, տը'սնըմ ա՝ էլիա յէկած, մին խիլլա խընձ'ր քաղած* (ՀԺՀ, V, 17):

ՔԱՂԷԼ[2] - *տե՛ս* ԽԸՐԷԼ: ... *Լ'ըհա բա-գ'ը օգ'ում ա, թա «հարթնանը» գ'ենդրհ-կը յէտ քըցի, Յէղիշան ղ'ամ'ն քաղում ա փորը...* (ԱԱ, 50):

ՔԱՂՍԱՎԷՏ - *տե՛ս* ԳՕՐՍԱՎԷՏ:

ՔԱՂՎԷԼ[1] - *կբ. եւ չբ.* ՔԱՂԷԼ[1]-ի:

ՔԱՂՎԷԼ[2] - *կբ. եւ չբ.* ՔԱՂԷԼ[2]-ի:

ՔԱՄ *(գրբ. քամ (քամվածք)* - *գ.* Քամելը, քամվելը: *Քամը վէր պըրծընում ըն, կ'ինին ածում ըն կըրըսնէն, ջէջ'ան՝ պուժկէնէն* (Ձ):

- Քամ անել՝ տինիլ - *տե՛ս* ՔԱՄԷԼ:

- Քամ ըղնէլ/կ'ալ - *տե՛ս* ՔԱՄՎԷԼ:

ՔԱՄԱԿ *(գրբ քամակ)* - *գ.* 1. Կռնակ, թիկունք, մեջք՝ մինչեւ գավակը: *Ծը'ղքէ-ղը քըմակէն տիրած՝ պիրհ'ում ըն թաքավէրին կօշտը* (Ձ): 2. *տե՛ս* ՎԸ'Ռ (1, 2): *Արչը թաթը քըմական կօխում ա, ճըղ-մաղէնք'ը հանում...* (ՀԱԲ, 15, 132): 3. Ետեւ, հետեւ: *Էս ախճիգ'ը ու կընէգ'ը նա'զիր-վա'զիրնէրէն առաչնէն ըն ընգալ, ք'էցալ, նըրանք էլ՝ քըմական* (ՀԺՀ, VI, 19): 4. Հետեւի կողմը: *Ասում ա.- Քըմակաս ա յը'կալ, յը'ս քամակըս հունց տը'՞սնամ* (Ձ): *կ.* 5. Հետեւում: *Արչը կ'ամ ա, ըտըրա քըմակէն վը'ննը կէնում* (Ձ): 6. Բացակայությամբ: *Տըղոցը քըմակէն թաքուհին ա վէզիրնէրը թաքավէրէն թախտան քըցում ըն, փըսակվում...* (ՆԱԲ, 49):

- Քամակ ա'ժիլ - Ոչինչ չարժենալ: *Քըմակէն ասած խօսկը քամակ ա'ժի* (ԱԲԲ, 100):

- Քամակը աղ/ախտա ածել - *տե՛ս* Վը'ռը աղ ածել:

- Քամակը զը'ռ - *տե՛ս* Վը'ռը զը'ռ:

- Քամակը ըղնէլ/ընցընել - *տե՛ս* Հը'տան ըղնել:

- Քամակը թ'ուլ - *տե՛ս* ՎԸՌԸԲՕԾ:

- Քամակը խըշուր անել - *տե՛ս* Քամակը քըշիլ:

- Քամակը ծըռել - *տե՛ս* Մաշկը ծըռել:

- Քամակը կըտրրել - *տե՛ս* Հը'տը կըտրրել:

- Քամակը հօզա կօխել - *տե՛ս* Վը'ռը աղ ածել:

- Քամակը դայիմ - *տե՛ս* Մաշկը պէնդ:

- Քամակ ըղնել - *տե՛ս* Յը'տ ըղնել (1, 2, 3):

- Քամակը ճըղել/ճըրդօտել/ճութ-ռօտել/ճօթ(ը)ռել - *տե՛ս* Վը'ռը ճըղել:

- Քամակը նա'շանդը ածած - 1. Համարձակ: *Ընդրա քամակը նա'շա-ղը ածած ա, վէշ մին պէնա վախում չի* (Բ): 2. Արագաշարժ, արագընթաց: *Քա-մակըտ նա'շանդը ածած ա՞, խէ հանդ'ադ չը՞ս կօրծ անըմ* (Բ):

- Քամակը նըհը'տ չընկ'ալ - 1. Սկսած գործը ավարտին չհասնել: *Տօնը շինում ընք, շինում, քամակը նըհը'տ չի կ'ամ* (Բ): 2. Նյութական միջոցները չհերիքել: *Քամակըս նըհը'տ չի կ'ամ, թա արտըս վարէլ տամ, պըրծընիմ* (Ձ):

- Քամակը շուտ անել - *տե՛ս* Քամակը քըշիլ:

- Քամակը շօռ տալ - *տե՛ս* Իրը'սը շօռ տալ:

- Քամակը չօփ կօխել - *տե՛ս* Վը'ռը աղ ածել:

- Քամակը պահել - *տե՛ս* Մաշկը պահել:

- Քամակը պէնդ - *տե՛ս* Մաշկը պէնդ:

- Քամակը պէց - *տե՛ս* Վը'ռը պէց:

- Քամակը պըզզան ածել - *տե՛ս* Քամակը քըշիլ:

- Քամակը պըլթպըլթալ - *տե՛ս* Վը'ռան նի կէնալ:

- Քամակը պիհիր կօխել - *տե՛ս* Վը'ռը աղ ածել:

- Քամակը տանիս՝ առաշկը գ'իդ'ալ չի - Ասում են անուշադիր՝ անկազմակերպ մարդկանց մասին:

- Քամակըտ ըրա տըղէտ, հա՛ց կէր, իրը'սըտ ըրա մարթիտ, հա՛ց կէր - Ասում են՝ նկատի ունենալով ամուսնու եւ ոչ թե որդու նվիրվածությունը:

- Քամակը տանխտը'ղ ածած/ քըսած - *տե՛ս* Վը'ռը տանխտը'ղ ածած/քըսած:

- Քամակը տանխտը'ղ ածել - *տե՛ս* Վը'ռը աղ ածել:

- Քամակը տափէրը թակել/տըփէրէն կ'ալ - *տե՛ս* Վը'ռը տափէրը թակել:

- Քամակը տափէրը քըսել - Խիստ զոջալ: *Յըղէ կավը ծախում ա, մընամ քամակը տափէրը քըսէլիս* (Ձ):

- Քամակը տէմ անել - *տե՛ս* Իրը'սը շօռ տալ:

- Քամակը փանդ կօխել - *տե՛ս* Վը'ռը աղ ածել:

- Քամակը քըշիլ/քաշիլ - 1. *տե՛ս* Փորան ք'ինիլ: 2. *տե՛ս* Լըղաճա(ն)ք ինիլ:

- Քամակը քըչէղակ կօխել - *տե՛ս* Վը'ռը աղ ածել:

- Քամակ թօղնել - *տե՛ս* Յը'տ քըցիլ (1):

- Քամակ մընալ - *տե՛ս* Յը'տ մընալ:

- Քամակ նի մըն(ն)էլ - *տե՛ս* Վը'ռ մի մըն(ն)էլ:

- Քամակ քըցիլ - *տե՛ս* Յը'տ քըցիլ (1, 2, 3, 4):

- Քըմական էվ'ալ/վէդրրա կախ տալ - *տե՛ս* Վը'ռան էվ'ալ կախ տալ:

- Քըմական ճըղրցաքար կախ տըված - *տե՛ս* Վը'ռան ճըղրցաքար կախ տըված:

- Քըմական՝ պիյանէր, ըռաշկան՝ պէնսյանէր - Ասում են նրբակազմ, բայց տգեղ ու կնճռոտ դեմք ունեցող կանանց մասին:

- Քըմական սըրընուցու քար կախ տըված - *տե՛ս* Վը'ռան ճըղրցաքար կախ տըված:

- Քըմական վը'ստ օնէլ - Սեռական տրամարդությունը՝ հակումը ստուգել՝ մերձենալու նպատակով: *Սաղ օրը էն ա ըստըրա-ընդրրա քըմական վը'ստ ունէ-լիս* (Ձ):

- Քըմակավը անել/կօրծ փըռնէլ/պէն փըռնել - *տե՛ս* Վը'ռավը անել:

- Քըմակէն զօռ կ'ալ/հըսնէլ - *հեգն. տե՛ս* Զօռ ըղնել:

- Քըմակէն զօռ տալ - *տե՛ս* Զօռ անել (2):

- Քըմակէն խօսէլ - *տե՛ս* Հը'տան խօսէլ:

- Քըմակէն մարթ ինիլ - Հովանավոր՝ պաշտպան ունենալ: *Ընդրրա վէր քը-մակէն մարթ չինի, կարէլ չի ըտի մը'ծ-մը'ծ խօսէ* (Ձ):

- Քըմակէն վը'ննը կէնալ - *տե՛ս* Մաշկը պահել:

- Քըմակէս նըստում ա, թա՝ ըռաշկաս յը'ր կաց - Ասում են անհիմն՝ անարդար պահանջներ ներկայացնողի մասին:

ՔԱՄԷ/ՔԱՄԸ'/ՔԱՄԻ *(գրբ. քամի)* - *գ.* 1. Օդի հոսանքի շարժում հորիզոնական ուղղությամբ: *Քամէն այուն պ'ուրթը սաղ տարավ* (Ձ): 2. Փորի գազեր, փուք: *Դօխտուրը ճար ա տամ, վէր խըմէ՝ փո-ր'էն քամէն տ'ուս կ'ա* (Ձ): 3. Հոդացավ, ոսկրացավ: *Հ'ուր մաշկումը քամէ կա, բիդի քըշէրու մէս օտէ, վէր անց կէնա* (Բ): 4. *փխբ.* Դատարկաբանություն, փչոց: *Ընդրրա ըսրծնէն սաղ քամէ յա*

(Բ): 5. *փխբ.* Քամու նման արագասույր (հատկապես ձիերի մասին): *Էտ թաքավէրին էլ մին ծի յա ինձում, հինչ ծի՞, մին քամէ* (Ձ):

- Քամավ ըղնէլ - 1. Քամու ազդեցությանն ենթարկվելով՝ մրսել ու հիվանդանալ: *Կանփին քամավ ա ընգալ, էրկու օր ա՝ տունս չի կամ շինամաչ* (Բ): 2. Խենթանալ, գլուխը կորցնել: *Հինչ ը՞ս տական-կըլխան խօսում, քամավ ը՞ս ընգալ* (Բ):

- Քամէ անէլ - 1. Քամի փչել: *Քամէ ըրավ, հընձած խօտը սաղ ցըրը՝վ տուվավ* (Բ): 2. *տե՛ս* Քամէ տալ: 3. Ստել, սուտումուտ բաներ ասել: *Ժօրան մէհէտ մին դունգ պէն չի ասէլ, սաղ օրը քամէ յա անում* (Բ):

- Քամէ ըղնէլ - 1. *տե՛ս* Քամէ անէլ (1): 2. Կտրող բարակ գործիքների, հատկապես՝ գերանդու սայրը, ալիքաձեւ դառնալով, անպետքանալ: *Քամէ ընգած դըրյազավ կարէլ չըս խօտ հարիս* (Բ):

- Քամէ թակէլ - 1. Քամու տակ ընկնել, քամու ազդեցությանն ենթարկվել: *Լըվացը քամէ թակալ ա, չուրացալ* (Բ): 2. *տե՛ս* Ճունր թակէլ:

- Քամէ խաղ անէլ - Օդի մեղմ շարժում լինել, մեղմ քամի փչել: *Ըստը՝ղ շատ ա տաք, ըսկի չի քամէ խաղ անում* (Բ):

- Քամէ խըռէգ՝ տալ - *տե՛ս* Քամէ անէլ (3):

- Քամէ խըռէգ՝ տըվօղ - *տե՛ս* Քամէ քօնօղ:

- Քամէ կօլ տալ - 1. *տե՛ս* Քամավ ըղնէլ (1): 2. Անգործ թրեւ գալ: *Միհէնգվա ջիհիլնէն սաղ օրը էն ըն քամէ կօլ տալիս* (Ձ): 3. Ծայրահեղ կարիքի՝ աղքատության մեջ լինել, ուտելու բան չունենալ: *Ասում ա.- Ինձ ըշտըղա յա՞ փուլ, էն ըմ քամէ կօլ տալիս* (Ձ):

- Քամէ նըհը՝տ տալ - *տե՛ս* Քամէ խըռէգ՝ տալ:

- Քամէն թանս փըչիլ - Գործը ձախողվել՝ չհաջողվել: *Հինչը օգ՝ում ըմ անիմ, քամէն թանս ա փըչում* (Ձ):

- Քամէ նի կ՝անգ - *տե՛ս* Քամավ ըղնէլ:

- Քամէ տալ - 1. *տե՛ս* Քըմըքամէ անէլ: 2. Քամու առջեւ պահելով՝ մաքրել՝ զտել (ցորենը, գարին եւն), երնել: *Այան սիսը՝ռնը ածում ա խախալ՝ը, կըլխանը յը՝րը պահում, վէր ածում, քամէ տամ* (Ձ):

- Քամէ տաս՝ կըտանէ - *տե՛ս* Փըչիս՝ վէր կըղնէ:

- Քամէ տը՝ռնալ - Անկատարելիորեն հեռանալ՝ անհետանալ: *Կամ ըն, տը՝սնում՝ ախճիգ՝ չի կա, քամէ յա տը՝ռալ* (Ձ):

- Քամէ քօնօղ - Ստախոս, փչան: *Քամէ քօնօղ ա Ըսատուրը* (Բ):

- Քամու նըման - Շատ արագ, արագորեն, քամու նման սուրալով: *Ծին քամու նըման հըսնում ա պալատը* (Ձ):

- Քամուն ըռը՝խը ըղնէլ - Քամուց քշվել՝ տարվել: *Էնքան պէմբակը քամուն ըռը՝խը ընգավ, փուչացավ* (Ձ):

- Քամուն ըռը՝խը տալ - *տե՛ս* Քամուն տալ:

- Քամուն պէրածը քամէն կըտանէ - *տե՛ս* Կ՝ը՝տէն պէրածը կ՝ը՝տը կըտանէ:

- Քամուն տալ - 1. Քամու ազդեցությանը ենթարկել, քամու առաջ պահել, որ քամին քշի: *Ամէն տարէ ունրան խօխէքը պըցըրընայիս ըն ըլալ Մըռավը, կ՝ըրըզմանան էրկու հափուռ վէղ քամուն տայիս* (ՆԱԲ, 94): 2. Ցրիվ տալ, ցրել, հետք չթողնել: *Էնքան չօ՝ր խօտը լօխ քամուն տըվավ, տը՝ղըն էլ չի մնում* (Բ): 3. Վատնել, մսխել: *Էտ հօրը փուլէրը սաղ քամուն տըվավ* (Ձ):

ՔԱՄԷԼ[1]/ՔԱՄԸ՝Լ[1] *(գրբ. քամեմ)* - *նբ.* 1. *տե՛ս* ՄԸՋԻԼ: 2. Ծակոտկեն ամանի՝ պարկի եւն մեջը դնել, որպեսզի հեղուկը ծորվի՝ դուրս գա: *Ժէնգ՝ալը իփում ըն, ածում ճը՝ըրքամէն, քամում* (Ձ): 3. Մինչեւ վերջին կաթիլը խմել՝ ծծել: *Կ՝ինուն կ՝ը՝վաթը քամում ա, տունս կ՝ամ* (Ձ): 4. *փխբ.* Հոսեցնել (արցունք, արյուն եւն): *Էս կըռը՝վը շատ անունն քամից մէր ժուղուվուրթան* (Բ):

- Քամած մածուն - Ուտելիք, որ պատրաստում են մածունը քսակի մեջ լցնելով եւ կախելով, որ հեղուկը թափվի: *Քամած մածունը լանգանթ պէն ա* (Բ):

ՔԱՄԷԼ[2]/ՔԱՄԸ՝Լ[2] *(գրբ. քամեմ)* - *տե՛ս* Քամէ տալ (2): *Յէգնը ունանն պէնը լ՝ավ անում ար՝կալ՝ը թըկէլանը յէտը ցօրէնը, տէրմանը քամում* (ՀԺՀ, VII, 227):

ՔԱՄԷՉ - *գ.* Հեղուկ քամելու հարմարանք: *Քամէչը յը՝ր ա օնում, կաթնը քամում* (Ձ):

ՔԱՄԸ՝ - *տե՛ս* ՔԱՄԷ:

ՔԱՄԸ՝Լ[1] - *տե՛ս* ՔԱՄԷԼ[1]:

ՔԱՄԸ՝Լ[2] - *տե՛ս* ՔԱՄԷԼ[2]:

ՔԱՄԻ - *տե՛ս* ՔԱՄԷ:

ՔԱՄՀԱՐ - *ած.* Որտեղ հաճախ քամի է լինում, քամոտ: *Սարէն շէնը քամհար տը՝ղ ա* (Բ):

ՔԱՄՎԷԼ/ՔԱՄՎԸ՝Լ - *կբ. եւ չբ.* ՔԱՄԷԼ-ի:

ՔԱՄՎԸ՝Լ - *տե՛ս* ՔԱՄՎԷԼ:

ՔԱՄՈՒՏ - *տե՛ս* ՔԱՄՀԱՐ:

ՔԱՄՔԱՄ - *ած.* Թույլ, ուժասպառ: *Կամ ըն, տը՝սնում՝ մին քամքամ մարթ ըտը՝ղ վէր ընգած* (Ձ):

ՔԱՄՔԱՇ - 1. *գ.* Անցք, որով օդը մտնում է ներս եւ դուրս գալիս, օդանցք: *Պատէն քամքաշը ծակում ա, վէր ցօրտը կ՝ա վէչ* (Ձ): 2. Տաք քամիով հյութը՝ խոնավությունը քաշված՝ ցամաքած, խորշակահար: *Արտը հընձում ըն, մին փութ քամքաշ ցօրէն ա տը՝ռնում* (Ձ):

ՔԱՄՕՑ - *տե՛ս* ՔԱՄԷՉ:

ՔԱՆ - *տե՛ս* ԿԱՆՑ:

ՔԱՆԴԷԼ - *տե՛ս* ՔԱՆԴԻԼ:

ՔԱՆԴԷԼ - *տե՛ս* ՔԱՆԴԻԼ:

ՔԱՆԴԻԼ/ՔԱՆԴԻԼ/ՔԱՆԴԷԼ/ՔԱՆԴԷԼ *(գրբ. քանդեմ)* - *նբ.* 1. Ավերել, փլցնել: *Սավէտին վախտը էտ յը՝խծէն քանդանալ ըն, տը՝ղը կանցիլանր շինանալ* (Ձ): 2. Փորել: *Ճօրէն դըռնաղավը վը՝ղը քանդում ա, ճունր ա տունս կ՝ամ* (Ձ): 3. Քակել, արձակել: *Ծամէրը քանդում ա, տունս կ՝ամ* (Ձ): 4. Սարքի՝ գործիքի՝ մեքենայի մասերն իրարից անջատել՝ հանել: *Մաշինը քանդում ա, վէր շինի, ամմա կարում չի* (Բ): 5. Փորելով հանել: *Այան խընջըլօգ ա քանդում, պիրում իփում, տամ ապուն* (Ձ): 6. *փխբ.* Վնաս հասցնել, սնանկացնել: *Էտ օյինբազը ժուղուվուրթէն քանդից* (Ձ):

ՔԱՆԴԻԼ - *տե՛ս* ՔԱՆԴԻԼ:

ՔԱՆԴՎԷԼ - *տե՛ս* ՔԱՆԴՎԻԼ:

ՔԱՆԴՎԷԼ - *տե՛ս* ՔԱՆԴՎԻԼ:

ՔԱՆԴՎԻԼ/ՔԱՆԴՎԻԼ/ՔԱՆԴՎԷԼ/ՔԱՆԴՎԷԼ - 1. *կբ. եւ չբ.* ՔԱՆԴԻԼ-ի: 2. *չբ. փխբ.* Սաստիկ հարբել: *Մըկըռնէն էնքան խըմում ըն, վէր լափ քանդվում ըն* (Ձ):

- Քանդված չըվըստան - Հաշմված մարդ: *Խը՝ղճը հինչ ա՞նէ, քանդված չըվըստան ա, կարում չի, թա մին կօրծ անէ* (Բ):

ՔԱՆԴՎԻԼ - *տե՛ս* ՔԱՆԴՎԻԼ:

ՔԱՆԴ-ՔԱՆԴ/ՔԱՆԴ-ՔԱՆԴ/ՔԸՆԴ-ՔԱՆԴԻ/ՔԸՆԴԸՔԱՆԴԻ *(գրբ. քանդ (փորվածք)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քանդ-քանդ անէլ - 1. *տե՛ս* ՔԸՆԴ-ՔԸՆԴՕՐԷԼ: 2. Մի կերպ յոլա գնալ, ապրուստի քիչ միջոցներ վաստակել: *Քանդ-քանդ ընէլավ էտ խօքէնքը՝ պահում ա, մը՝ծընգընում* (Ձ):

- Քանդ-քանդ ինիլ/տը՝ռնալ - *տե՛ս* ՔԸՆԴՔԸՆԴՕՐՎԷԼ:

ՔԱՆԴ-ՔԱՆԴ - *տե՛ս* ՔԱՆԴ-ՔԱՆԴ:

ՔԱՆԷ/ՔԱՆԸ՝/ՔԱՆԻ *(գրբ. քանի)* - *դ.* 1. Հարցական բառ թիվը՝ քանակը՝ արժեքը՝ իմանալու համար: *Ասում ա.- Չօ՝բան ախպէր, քանէ՞ վը՝խճար օնիս* (Ձ): 2. Հարաբերական դերանվան իմաստով՝ որքան որ, ինչքան որ, ինչքան: *Քանէ ք՝ինանում ըն, էնքան մուտունալավ էն սիպտանկ պէնը մը՝ծանում ա* (ՀԺՀ, V, 419): *մ.* 3. Քանի դեռ: *Քանէ թոռ չի յը՝կալ, հարկավէր ա խաղուն քաղած* (Բ): 4. Քանի՞ անգամ, որքա՞ն: *Հանրը կըզնըվում ա, թա.- Քանէ՞ ասիմ ք՝ը՝զ, էլ*

վը՛ռս մէր անէլ (Ձ): 5. Որքա՞ն ժամանակ, մինչեւ ե՞րբ: *Քանէ՞ բիդի ըստի ք՛անսիբ կէնանք* (Ձ):

- Քանէ էշը կաշվին ա - Քանի դեռ ուշ չէ: *Ասում ա.- Քանէ էշը կաշվին ա, ք՛ինի՛, թա չէ փիս ա ինանան* (Ձ):

- Քանէ՞ կէս/թիք՛ա/կուտուր տը՛ռնամ - *տե՛ս* Մաչաս (էրկու) կէս տը՛ռնա՞մ (ՄԱՉ-ի տակ):

- Քանէ՞ կըլխանէ յա/յըմ/յըս - Ինչպե՞ս է (եմ, ես) հանդգնել, ո՞ր իրավունքով: *Ասում ա.- Տու քանէ կըլխանէ յը՞ս, վէր թաքավէրին ծիյին ախոռըն ըս նի մըտալ* (Ձ):

- Քանէ՞ մին - Քանի՞ անգամ: *Քանէ՞ մին ասիմ, ա՛ հայէր, ուրուր փիսութուն մէք՛ անէլ* (Ձ):

- Քանէ վէր - *տե՛ս* ՉՈՒՆ(Ք՛Ի): *Էտ պատրունը քանի վէր ք՛ասիբ ա ինում, լանվ պէն չի կարըմ տա* (ՆԼՂԺԲ, 123):

- Քանէ տըռնըվա շօն ըս, խէ մըհէնգ՛ ը՞ս հանչում - Ասում են նրանց, ովքեր որեւէ բանի մասին ուշացումով են նախազգուշացնում՝ բողոքում եւն:

- Քանէ ք՛ինում ա/ք՛ինի - Հետզհետե, աստիճանաբար: *Խըմում ա, ամմա մը՛ռնում չի, քանի ք՛ինում ա, լիվանում ա* (ՆԼՂԺԲ, 81):

ՔԱՆԷՆԸ - *տե՛ս* ՔԱՆԷՍԸ:

ՔԱՆԷՍԸ/ՔԱՆԸ՛ՍԸ/ՔԱՆԻՍԸ/ՔԱՆԷՆԸ/ՔԱՆԸ՛ՆԸ/ՔԱՆԻՆԸ - *գ. Քանի*-ի գոյականական հոլովվող ձեւը՝ քանի առարկա՝ մարդ՝ միավոր: *Ըտըրանց անա քանէսը ք՛ինամ ըն, էլ կ՛ամ չըն* (Ձ):

ՔԱՆԷ-ՔԱՆԷ/ՔԱՆԸ՛-ՔԱՆԸ՛/ՔԱՆԻ-ՔԱՆԻ - *ած.* Շատ-շատ: *Քանէ՛-քանէ՛ ջանիկ ըսպանվից էս կըռվումը* (Բ):

ՔԱՆԸ՛ - *տե՛ս* ՔԱՆԷ:

ՔԱՆԸ՛ՆԸ - *տե՛ս* ՔԱՆԷՍԸ:

ՔԱՆԸ՛ՍԸ - *տե՛ս* ՔԱՆԷՍԸ:

ՔԱՆԸ՛-ՔԱՆԸ՛ - *տե՛ս* ՔԱՆԷ-ՔԱՆԷ:

ՔԱՆԹԱԼ - 1. *գ.* Մեծ առնանդամ, հատկապես՝ էշի: *Վէր խըմալ ա, էն սըհաթը սըվացալ ա, մին էլ մին էշու քանթալ ճըկատան կախ ա իլալ* (ՀԺՀ, VI, 48): 2. *ած.* Ծանրաշարժ, դանդաղաշարժ: *Քանթալ կընէգ՛ ա Սիրանը* (Բ):

- Քանթալ շօն - Ծանրաշարժ՝ դանդաղաշարժ մարդ: *Էտ քանթալ շօնը հէնգ՛ օր օր ա, կարում չի, թա բոստանը պիհի պըրծընէ* (Բ):

ՔԱՆԻ - *տե՛ս* ՔԱՆԷ:

ՔԱՆԻՆԸ - *տե՛ս* ՔԱՆԷՆԸ:

ՔԱՆԻՍԸ - *տե՛ս* ՔԱՆԷՍԸ:

ՔԱՆԻ-ՔԱՆԻ - *տե՛ս* ՔԱՆԷ-ՔԱՆԷ:

ՔԱՆՑ - *տե՛ս* ԿԱՆՑ:

ՔԱՆՔԱՆ/Ք՛ԱՆՔ՛ԱՆ *(պրս. kanden)* - *գ. տե՛ս* Ք՛ԱՀՐԻՋ: *Էտ քանքանը տարէն մէհէտ թըմիզցընէլիս ըն իլալ* (Ձ):

ՔԱՆՔԱՆՉԻ/Ք՛ԱՆՔ՛ԱՆՉԻ - *գ.* Ստորերկրյա ջրմուղ՝ առու փորող արհեստավոր: *Ք՛անք՛անչէք՛ը շատ ըն չըրչարվում, ամմա կարում չըն ճուրը ըրթէնան* (Ձ):

ՔԱԾ[1] - *գ.* 1. Ագռավազգիների ընտանիքին պատկանող թռչուն, ագռավ: *Քաշը գ՛առ-գ՛առ մուտանում ա դօնէգ՛ին...* (ԱԱռ, 30): 2. *փխբ.* Անճոռնի՝ այլանդակ՝ տգեղ մարդ: *Ասում ա.- Էտ քաշըն ա՞ մընացալ, վէր օգ՛իմ* (Ձ):

- Քաշէրը սը՛էվ ըն կ՛ընական - *ծղր.* Մեծ ցավ՝ դժբախտություն է լինելու: *Ասում ա.- Պա՛խ, պա՛խ, պա՛խ, տու վէր կ՛աս վէչ հըրսանէք՛, քաշէրը սը՛էվ ըն կ՛ընական* (Ձ):

- Քաշը հիշկան լըղանա, յըղօնէգ՛ չի տը՛ռնալ - *տե՛ս* Էշը թըկէլալ ճօրէ չի տը՛ռնալ:

- Քաշը քարէն տինիլ, ըքչէղակը՝ ծառէն - Իբր թե շատ մեծ՝ դժվար աշխատանք կատարել: - *Հինչ պէնէ յը՞ս, - Քաշը քարէն ըմ տընում, ըքչէղակը՝ ծառէն* (ՆԱԲ, III, 36):

- Քաշին խընամէն/շըհադը ըքչէղակը կինի - Նմանը նմանին կգտնի, նմանը նմանի հետ ընկերություն՝ բարեկամություն կանի:

- Քաշին կատարը էրիլ - Սաստիկ տաք՝ տոթ լինել: *Քաշին կատարը էրում ա, կարում չընք, թա կօրծ անինք՛* (Բ):

- Քաշին հը՛տէ ամմէնաղանշանգ՛ը ուրանն ճօտըն ա - Յուրաքանչյուրն իր զավակին՝ յուրայինին գերադասում է մյուսներից:

- Քաշին պընէրան մինչը՛էվ սօյնին յը՛ղը - Ամեն ինչ (ուտելիքների մասին): *Էտ հըրսընքէն վախտը ըստօլէն յըրա հինչու ասիս, իլալ ա՝ քաշին պընէրան մինչը՛էվ սօյնին յը՛ղը* (Ձ):

- Քաշին պօգ՛ին - Ոչ մի տեղ, անհայտ տեղ: *Ասում ա.- Էտ ախպ՛ուրը էն ա քաշին պօգ՛ին, վէշ մինը գ՛ուդում չի ըտըրա տը՛ղը* (Ձ):

- Քաշին քօնածը - *տե՛ս* ՔԱԾ[1] (2):

- Քաշ կըտկօտած/չընգ(ը)ռօտած - 1. Չեչոտ (դեմքի մասին): *Ըտըրա քաշ կըտկօտած իրը՛սը կըտըրվէ* (Ձ): 2. Քաղցր, համով (պտուղների մասին): *Քաշ կըտկօտած տանած ա, լ՛ըհա տըղա յըս՝ կէր* (Բ):

- Քաշ տը՛ռնալ - *արհմ.* Խիստ նիհարել: *Էնքան տուգնը կացալ ա, քաշ ա տը՛ռալ* (Բ):

- Քաշու ըռըխա վէր ընգած - Անհամ, ոչ ախորժելի: *Էս էլ հօ խօրանգ՛ չի՞, քաշու ըռըխա վէր ընգած ա* (Բ):

- Քաշու խաղու - Մեծ-մեծ հատիկներով խաղողի տեսակ: *Մին ճուվարան քաշու խաղու վա քաղում, դարկում խընամունց տօն* (Ձ):

- Քաշու ծէն/սանս - 1. Խռպոտ՝ տհաճ՝ անախորժ ձայն: *Քաշու ծէնավ կարէլ չըս լ՛ավ յը՛ղք ասիս* (Ձ): 2. Չարագուշակ ձայն: *Ըտըրա սանսը քաշու սանս ա, հիբը խօսում ա, մին փիս պէն ա պըտահում* (Բ):

- Քաշու ճօտ - Տգեղ՝ այլանդակ՝ անճոռնի երեխա: *Ըտըրան էլ ինում ա էրկու ախճիգ՛՝ էրկու քաշու ճօտ* (Ձ):

- Քաշու նըման կըռկըռալ/կըռռալ - *տե՛ս* ԿԸՌԿԸՌԱԼ (2):

- Քաշու նըման յըրա տալ տանէլ - Խլել, հափշտակել: *Ըտըրանք քաշու նըման յըրա յըն տամ, պըռավէն վըխճըրնէն տանում* (Ձ):

- Քաշու չանգ՛էր - Անվարժ՝ տգեղ ձեռագիր: *Կըտըրվէ ըտըրա խատտը, հանց ա քաշու չանգ՛էր* (Բ):

- Քաշու չընգ՛էրա վէր ընգած - *տե՛ս* ՔԱԾ (2):

- Քաշու պանէր - *տե՛ս* Հավու պանէր (ՀԱՎ[1]-ի տակ):

- Քաշու պիրանավ կ՛արունք չի կ՛ալ - Չարագուշակությամբ լավ վիճակ չի ստեղծվի:

- Քաշու սաղունձ - Ծառերից հոսող թանձր խեժ: *Գ՛ուլանսուն ճըղնէրան քաշու սաղունձ ա վէր տը՛ռնում* (Բ):

- Քաշու սըխտօր - Սխտորի նման վայրի բույս: *Քաշու սըխտօր ա քանդում, պիրում աղ տինում* (Ձ):

- Քաշու սօղան - Սոխի նման վայրի բույս: *Ըտը՛ղ շատ քաշու սօղան ա փըսնէս* (Բ):

ՔԱԾ[2] - *գ.* 1. Որեւէ մարմնի ծանրությունը, կշիռ: *Էտ վըխճարէն քաշը չօրք՛ փութ կինի* (Բ): 2. Որեւէ բանի մեկ անգամ կշռելը որոշ կշռաչափով՝ որպես ծանրության կամ քանակի միավոր: *Փութանուց քարը տինում ա քըշըռքէն, մին քաշ տանած քըշըռում* (Ձ):

- Քաշավը մին - Առարկայի՝ մարմնի եւն ծանրության՝ կշռի չափով: *Թաքավէրը յիրգ՛իրավը մին ա անում, վար հու ուրանն ըխճըկանը պիրի, քաշավը մին վը՛սկէ յա տըլան* (ԱԱ, 67):

- Քաշումը ինիլ/կ՛ալ - Ծանր լինել, կշիռ ունենալ: *Խօգ՛էրը բօլ-բօլ կաղէն ըն կէրալ, քաշումը կա, հարկավէր ա մուրթուտած* (Ձ):

ՔԱԾ[3]/ՔԱՐԾ *(գրբ. քաշ, քարշ (քաշելով, քաշքշելով)* - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քաշ անէլ/տալ - 1. Քաշել, ձգել: *Քաշ ա անում, էտ ջանդանք՛ը պիրում, ըքցանում շանը առաշկը* (Ձ): 2. Բռնությամբ՝ զոռով տանել: *Ախճիգ՛ը ըտըրան քաշ ա տաս, տընէս ուրանն տօնը* (ՀԺՀ, V, 286): 3. Քստացնել, գետնին քսել: *Մը՛ծ-մը՛ծ*

վընոնմանէրը քաշ ընէլավ մին թանիրանավ տուս ա կամ էտ ցըխան (Զ):

- Քաշ ինիլ/կալ - 1. Գետնի երեսին քսվելով՝ շարժվել, սողալ: *Ըտի՝ վըննէրը կուտըրհատած, քաշ ինիլավ հըսնում ա տօն* (Զ): 2. Թրեւ գալ, թափառել: *Խալխէն տըղէքը էն ըն կօրծ ընէլիս, մէր Վաղօն էլ սաղ օրը էն ա քուչէքումը քաշ կալիս* (Բ): 3. Հետամտել, մեկի հետեւից ընկնել: *Շատ ա էտ ըխճընկանը հըտան քաշ կամ, ամմա պէն չի ամալ կամ* (Զ): 4. Չարչարվել, տքնել: *Սաղ օրը քաշ ա կամ, ամմա կարում չի տօնը պահէ* (Բ):

ՔԱԾ[4] *(գրբ. քաշ (սնակուշտ, մեջքի՝ փորի ներքեւի կողմը) - ած., մ.* 1. Գետնի մակերեւույթից աննշան չափով կամ ոչ հարկ եղած չափով դեպի վեր ձգվող: *Վըստակած կամ ա, էտ քաշ քօլէն տակէն նըստում* (Զ): 2. Ոչ մեծ բարձրության վրա գտնվող: *Ըտըրանք հէյվանը ծըմըռը պէրալ ըն, էս քաշ տըղէրը պահալ* (ԱԱ, 21): 3. Գետնից՝ հատակից ոչ բավականաչափ՝ ոչ շատ բարձր: *Էտ տանը պատալօկը քաշ ա* (Բ): 4. Նման առարկաների համեմատությամբ ավելի ներքեւ գտնվող: *Մէր տօնը ծէր տանան քաշ ա* (Բ): 5. Ոչ ուժգին, թույլ: *Ըտըրա սանը քաշ ա* (Բ): 6. Ըստ աստիճանի՝ դիրքի՝ արժեքի՝ նշանակության եւն՝ ստորին, ոչ բարձր, ոչ շատ հարգի: *Քաշ պաշտօն օնէ, կարում չի կօրծ դանզանցընէ* (Բ): 7. Չափով՝ քանակով եւն քիչ՝ փոքր: *Ըտըրա ըռօճիկը քաշ ա* (Բ): 8. Ցածրաձայն: *Քաշ ըն խօսում, մէր մէշ մինը ըսկանա մէչ* (Զ): 9. *ած.* Ցածրահասակ, կարճ, կարճահասակ: *Հանքին շատ ա ինում բոյավ, Կանփին՝ քաշ* (Զ): 10. *գ.* Առարկայի՝ տեղի՝ տարածության ստորին կողմը՝ մասը: *Էրկուըտրժանէ տօն ըն շինում, տիյըրը մըծ ախպէրըն ա կէնում, քաշումը՝ կուճի ախպէրը* (Զ): 11. *կ.* Ցույց է տալիս դեպի ներքեւ՝ դեպի ստորին մասը ուղղված գործողություն: *Էս ախպանրը էն ա Շօթայալը չըհըսած՝ Ղըլէն պէրթան քաշ* (ԱԱ, 57):

- Քաշ անել - *տե՛ս* Քաշ օնել:

- Քաշ ըղնել - Կախվել, կախ ընկնել: *Ասում ա.- էն ա թօրբան ներքէ ծառան քաշ ընգած, քինի պէր* (Զ):

- Քաշ քըցիլ - Կախ անել, կախ տալ: *Կավը մօրթում ըն, թութուն ճըղնան քաշ քըցում* (Զ):

- Քաշ օնել - Փոքր երեխային հարմար դիրքով կկզեցնել՝ բնական կարիքը հոգալու համար: *Մէհէտ էլ մին կընէգ խօխան էտ ծըռէրէն տակէն քաշ ա կալանալ, կանզըցըրալ, Աստուծ կըզնըվալ ա...* (ԱԱ, 82):

ՔԱՇԱՆ/ՔԸՐՇԱ - *գ.* 1. Ճյուղերից հյուսած հարմարանք, որի վրա որեւէ բան դարսելով՝ քաշում ու տանում են: *Փանդը տանրսում ա քըշանէն յըրա, քաշ տամ* (Զ): 2. Բարակ ծառերի, ճյուղերի կապուկ, որ քաշելով տուն են տանում: *Քաշանը մին թանիրանավ պիրում ա, հըսցընում տօն* (Զ):

ՔԱՇԷԼ - *տե՛ս* ՔԱՇԻԼ:

ՔԱՇԸՎԼ - *տե՛ս* ՔԱՇԻԼ:

ՔԱՇԻ/ՔԱՇԻ - *գ.* Կավե խոր աման: *Քաշին կինավ լըսնում ա, ծասկում* (Զ):

ՔԱՇԻԼ/ՔԱՇԷԼ/ՔԱՇԸՎԼ/ՔԱՇԻԼ *(գրբ. քաշեմ)* - *նբ.* 1. Ուժ գործադրելով՝ դեպի իրեն ձգել: *Հիշկան քաշում ա, կարում չի էտ ճէղնը քըշընընէ* (Զ): 2. Իր ետեւից քաշ տալ, ուժ գործադրելով՝ տանել: *Տանզանը յըզանը կարէլ չի կանթանը քաշի* (Զ): 3. Ձգելով մի բանի ամրացնել: *Տէփին յըրա խօգու կաշի յըն քաշալ* (Բ): 4. Ներքաշել, ներս ձգել, կլանել: *Թունին ճիթը յօր ա օնում, տընում պըրանումը, քաշում, ճէռնը տէն քընցում* (ՆԱԲ, 103): 5. Ծխել: *Սուս ըրած՝ չուբուխը քըշիլավ քինում ա...* (ՀԺՀ, V, 649): 6. Ծծել, հեղուկը՝ խոնավությունը իր մեջ առնել: *Վընոնմանէրըս ճանր ա քաշում* (Զ): 7. Տանել, հեռացնել: *Ասում ա.- Ջօրքըտ իմ յիրգիրաս քա՛շի, թա չէ փիս ա ինանան* (Զ): 8. Սարքել, պատրաստել: *Նըստում ա, ղէյնավը փօկ քաշում* (Զ): 9. Ամփոփել, ետ տանել: *Հիյվընէն էլ հիքվըրնէն անրանց ըն քաշալ, հօփ յէկալ, տըռալ մին կընէգ* (ՀԺՀ, VII, 213): 10. Կշռել: *Էրկու կիլօ մէս ա քաշում, տամ ըտըրան* (Զ): 11. Ձենք բարձրացնել: *Խանչալը քաշում ա, մին էծու հօլ ըսպանում* (ՀԱԲ, 15, 107): 12. Վերցնել, վրայից՝ միջից առնել: *Տընատարը խըրըվածէն ամանը մուտըցընէս ա, ղունըղնէն մարթա մին խըրաված ըն քըշիս* (Զ): 13. Հավաքելով, մի բանի մեջ լցնելով՝ վերցնել: *Կաթնէն իրըսը քաշում ար, տամ խօնցը* (Զ): 14. Օղի՝ ձեթ եւն հանել: *Ղարաբաղա ամմէնալավ թօթէն արաղը սարուշինացէք ըն քաշում* (Բ): 15. Նմանվել, նմանություն ունենալ: *Ախճիգը մօրը կընքաշի, տըղան՝ դայուն* (ԱԲԲ, 13): 16. Նեղության՝ տանջանքի եւն ենթարկվել, կրել: *Պա վէր ապրէլը ըստի կինի, էն հինչ օրէր ը՞ք մուք քաշալ* (ՀԲ, 348): 17. Տեւել: *Իստի քաշըմ ա մին քանի շէբէթ* (ՀԺՀ, VI, 99): 18. Կառուցել, կանգնեցնել (պատ, պատնեշ եւն): *Հընրամանք ա տամ, վէր ուրան յըրգիրին զըհմանավը պատ քաշին* (Զ): 19. Որեւէ բանի ենթարկվել: *Լուս ա տըռալ, վէր Վաղօն մըռալ ա. էս ա էրկու տարէ յա՝ ցավ ար քաշում* (Բ): 20. Նկարել, լուսանկարել: *Բանքի գիդըմ ըք, թա ըշխարքիս տակէն էլ օրիշ ջուռա շիքիլ չօնի կընէգը. թա գիդըմ չըք, յէս նըշանց տամ, տուք քաշիլ տըվէք* (Զ): 21. Շրջափակել, պատել: *Հայաթը սէթկա յա քաշում, վէր հիյվընէն նի չի տըռնան* (Բ): 22. Ծածկել: *Յօրդանը քաշում ա յըրան, վէր մըրսէ վէչ* (Բ): 23. Մի տեղ տանել, դեպի որեւէ կողմ տանել: *Մարթին քաշում ա մին անգուն, թաքուն ասում* (Զ): 24. Քսել, ներկել: *Օնքէրը սուրմա յա քանալ* (Զ): 25. Ձգել, երկարությամբ գցել, տարածել: *Թաքավէրին պալատան մինչըվ ուրան տօնը գանբա յա քաշում* (Զ): 26. Կառուցել, սարքել: *Ուռութանան յըր ըն կէնում, տըսնում՝ կըտէն յըրա մին դաշանգ կարմունջ քաշած* (Զ): 27. Բերել, հասցնել: *Մըսլըհաթ ըն ըրալ, ծըմական ճուր քաշալ շէնը* (ԱԱ, 59): 28. Մի բանի վրա անց կացնել: *Մէսը քաշում ա շըմփուրնէն, տինում պօղէն յըրա* (Բ): 29. Հագնել: *Տըղան թանանկը քաշած կըլխին քաչալ խօխա յա* (ՀԺՀ, VI, 120): 30 Փակել, ծածկել, գոցել: *Տօռնը քաշում ա, վէր ցօրտը կա վէչ* (Զ): 31. Հոգալ: *Հընրսընքէն ծախսը սաղ ղօրփէրըն ա քաշալ* (Բ): 32. Սղոցել: *Կէրանը քաշում ըն, տախտակ շինում* (Բ): 34. Անհաջողության մատնել, ձախողել, դավաճանել: *Ըտի էտ տըղան հընգէրունցը քաշում ա* (Զ): 35. *չբ.* Վերանալ, անցնել: *Պառավը էտ խընձօրը վէր օտում ա, ծըրըվօթունը քաշում ա* (Զ): 36. Կազմում է բազմաթիվ հարադրություններ՝ *ախ քաշիլ, բոյ քաշիլ, խաչ քաշիլ, վըտ քաշիլ* եւն:

- Քաշած արաղ - Տնական թունդ օղի: *Ապան մինակ քաշած արաղ ար խըմէս* (Բ):

ՔԱՇԻԼ - *տե՛ս* ՔԱՇԻԼ:

ՔԱՇԼԻԳ - *ած.* 1. Բավականաչափ ցածր, ցածլիկ: *Թափէղը մին քաշլիգ տան ըռաչի վէնն ա կէնում, ծէն տամ, մին պառավ կընէգ ա տուս կամ* (ՆԱԲ, 43): 2. Կարճահասակ, կարճլիկ: *Քաշլիգ հարթն ա Դօրանց Հէղանէն հարթը* (Զ):

ՔԱՇԿ *(գրբ. քաջք)* - *գ.* 1. Առասպելական ոգի, քաջք: *Ասում ըն՝ Ըռհիմին ծօրանը քաշկէր ըն ապրում* (Զ): 2. *փխբ.* Շատ տգեղ, այլանդակ մարդ: *Էտ հօ հարթը չի՞, քաշկ ա, քաշկ* (Բ):

- Քաշկավ ըղնել - 1. Կատաղել, մոլեգնել: *Քաշկավ ա ըղնում, ըսքըսում կընգանը թակէլը* (Զ): 2. Դիվոտել, դիվահարվել, խենթանալ: *Առաչ կարքէն մարթ ա իլալ Ռուբէնը, միհէնգ ա ըտի քաշկավ ընգալ* (Բ):

- Քաշկավ քըցիլ - 1. Կատաղեցնել: *Կընէգը վէր ջողուբը տամ ա, մարթին լափ քաշկավ ա քըցիում* (Զ): 2. Դիվահար դարձնել, խենթացնել: *Ըտըրանք էնքան էտ մարթին վըխծըցընէս ըն, լափ քաշկավ ըն քըցիս* (Զ):

- Քաշկէրը կ'ալ/յըէր կէնալ - 1. *տե՛ս* Քաշկավ ըղնէլ: 2. Հակառակել, համառել: *Սիմօնէն քաշկէրը վէր կ'ամ ա, էլ կարէլ չըս պինըցընիս* (Բ):

- Քաշկէրը փըռնէլ - 1. *տե՛ս* Քաշկէրը կ'ալ: 2. Համոզել: հանգստացնել: *Մին թանիրանվ ըտըրա քաշկէրը փըռնում ըն, դարկում հանձ* (Զ):

- Քաշկը յըրան նըստէլ - Անհայտ պատճառով գործը ձախողվել՝ չհաջողվել՝ ձգձգվել: *Քաշկը յըրան նըստալ ա, ամ-ըէվ չի անում, թա հանձը պըրծընինք'* (Բ):

- Քաշկ նըհըէտ տըվօղ - Ճարպիկ: *Քաշկ նըհըէտ տըվօղ տըղա յա Ամ-սէմը* (Բ):

- Քաշկու ժըմատօն - Աղմկոտ՝ խառնաշփոթ տեղ՝ հավաքույթ: *Թամադան ասում ա.- Մ ժըղովուրթ, էս հօ քաշկու ժըմատօն չի՞, սո՛ւս ըրէք'* (Զ):

- Քաշկու կըտօր - Շատ մութ տեղ: *Էս քաշկու կըտօր ա, ըստըէղ հունց ը՞ք կօրծ անում* (Բ):

- Քաշկու հըրիշտըրակ - *տե՛ս* ՔԱՇԿ (2):

- Քաշկու հըրսանէք' - *տե՛ս* Քաշկու ժըմատօն:

- Քաշկու ճօտ - *տե՛ս* ՔԱՇԿ (2) (հատկապես երեխաների մասին):

- Քաշկու պէն - Անհասկանալի՝ տարօրինակ երեւույթ: *Քաշկու պէն ա. վէր ըխպիրան մուտանում ըն, ճանրը կըտըրվում ա, վէր հըռանում ըն՝ կ'ամ ա* (Զ):

ՔԱՇԿՈՒՏ - *ածական.* 1. Զայրացկոտ, կատաղի, որի կատաղությունը երբեմն-երբեմն բռնում է: *Քաշկուտ մարթ ա խօրէնը, վախտ ա ինանում՝ կըտաղում ա, վախտ ա ինանում՝ ք'ըէփըտ կ'ամ ա նըէստա* (Բ): 2. Դիվահար, այսահար, ընկնավոր: *Էտ ախճիգ'ըն էլ քաշկուտ ա ինանում, հինչ դոխտուր ծէն ըն տամ, կարում չի ճար անէ* (Զ):

- Քաշկուտ անէլ/քըցիլ - *տե՛ս* Քաշկավ քըցիլ:

- Քաշկուտ ըղնէլ/տըէռնալ - *տե՛ս* Քաշկավ ըղնէլ:

ՔԱՇՎԷԼ - *տե՛ս* ՔԱՇՎԻԼ:

ՔԱՇՎԸԷԼ - *տե՛ս* ՔԱՇՎԻԼ:

ՔԱՇՎԻԼ/ՔԱՇՎԷԼ/ՔԱՇՎԸԷԼ/ՔԱՇՎԻԼ - 1. *կբ. եւ չբ.* ՔԱՇԻԼ-ի: *չբ.* 2. Նահանջել, ընկրկել: *Թօրքէրը էտ վէր տըէսէն, քըշվէցէն մէր վըղէրան* (Զ): 3. Ցրվել, վերանալ: *Թօխպը քաշվանալ ա* (Բ): 4. Առանձնանալ: *Մի անգ'ուն ա քաշվում, ըսքըսում լանց ինիլը* (Զ): 5. Ցնդել, գոլորշիանալ, խոնավությունը ցամաքել: *Փըլավէն ճանրը քաշվանալ ա* (Բ): 6. Կուչ գալ, կարճանալ, փոքրանալ (կտորի մասին): *Վէր լըվանում ա, էտ շօրը քանշվում ա* (Զ): 7. Ամաչել: *Առանց քըշվիլի մուտանում ա, թաքավէրին ըռըչին վըէնը կէնում* (Զ): 8. Գոսանալ (մարմնի անդամների մասին): *Աչի վըէնը քանշվանալ ա* (Զ): 9. Անհաջողության մատնվել, ձախողվել: *Ըստարէ արաշտ ա. հանր արտ օնէ, քըշվիլան ա* (Բ):

ՔԱՇՎԻԼ - *տե՛ս* ՔԱՇՎԻԼ:

ՔԱՇ-ՔԱՇ[1]/ՔԸՇԸՔԱՇ[1] - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քաշ-քաշ անէլ - 1. Այս ու այն կողմ քաշել՝ ձգել, քաշքշել: *Պըռավէն ճանրուն հանք'վան ըն կապում, քաշ-քաշ անում* (ՆԼՂԺԲ, 72): 2. Բռնի կերպով տանել: *Էնքան քաշ-քաշ ըրէն սուդը, լափ զանիլան տարավ* (Զ): 3. Ուշացնել, ձգձգել: *Էտ կօրծը շատ քաշ-քաշ ըրէն* (Բ):

- Քաշ-քաշ ըղնէլ/հնիլ/կ'ալ - 1. Այս ու այն կողմ քաշվել՝ ձգվել, քաշքշվել: *Էնքան քաշ-քաշ ա իլալ էտ կարպէտը, լափ ճըրդոտվալ ա* (Բ): 2. Չարչարվել, տքնել: *Սա թա.- Յէս քառասուն տարէ հուրհուշու տըռնէրէ քաշ-քաշ ինողը, պէռնը կըրօղը չըմ...* (ՀԺՀ, VII, 194):

ՔԱՇ-ՔԱՇ[2]/ՔԸՇԸՔԱՇ[2] - 1. *ած.* Շատ ցածր՝ ցածրահասակ: *Քաշ-քաշ տընէր ա էտ շէնին տընէրը* (Զ): 2. *մ.* Կռանալով, կզանալով: *Վըխճըրատարը յէշում ա տէսնում՝ մինը քըշըքաշ թաքուն վըխճարէն մաչավը ք'ընում ա* (ՆԱԲ, 64):

ՔԱՇՔԱՇԱՆ - *գ.* Տանը կից շինություն ամառային ճաշկերույթի համար: *Թանջիրը տանը կօխկէն մին քաշքաշան էլ ա շինիլ տամ* (Զ):

ՔԱՇ-ՔԸՉԷՂԱԿ - *տե՛ս* ՇՕՆ-Կ'ՈՒԼ: *...Ժողովուրթը բանգի վախտ քըշէրը կ'ումէրըմըն ըն իլալ կըէնըմ, անասուններին քըշտին, վըէր քաշ-քըչէղակ յըրա չըտան, տանին* (ԼՂԲ, 345):

ՔԱՇՕՎԻ[1] - *գ.* Փլավի այն տեսակը, որ պատրաստում են՝ բրնձի վրա ջուր լցնելով եւ այնքան եփելով, մինչեւ որ ջուրը բոլորովին ցամաքի: *Քաշօվի յա իփում, տամ ղունաղէն* (Զ):

ՔԱՇՕՎԻ[2] - *տե՛ս* ՔԸՇՕՎԻ:

ՔԱՉԱԼ *(պրս. kečel)* - *ած.* 1. Մազերը թափված, ճաղատ: *Էտ քաչալ ճօտին յըրան թէփուռ չի փըսնըմ, ըտրրա հէտի էլ քաչալ ըն ասըմ* (ՀԺՀ, V, 458): 2. *փխբ. տե՛ս* ՏԸԿԸԼՕՐ (2, 3):

- Քաչալ Ամիրը տըէռնալ - Անտեղի հարցադրումներով (սովորաբար ողջությունը հարցնելով, մեկի ժամանակը խլել (գործածվում է Մարտակերտի շրջանի Չափար գյուղում): *Հինչ ը՞ս Քաչալ Ամիրը տըէռալ, խէ թօղում չը՞ս՝ էտ մարթը կօրծը անէ* (Բ):

- Քաչալը պէց անէլ - Թերությունները երեւան հանելով՝ խայտառակել: *Ըտի էտ կընէգ'ը շինըմաչումը հուրան մարթին քաչալը պէց ա անում* (Զ):

- Քաչալը վէր ճար անօղ ինի, հուրան կըլխէն/քըչալէն կանէ - Որեւէ պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի (ասում են, երբ մեկից պահանջում՝ խնդրում են այն, ինչի կարիքը հենց նա ունի):

- Քաչալը հուրան փըփաղէն թանրիփ կանէ/հավան կըկէնա - Յուրաքանչյուրն իր ունեցածն է գովում՝ հավանում:

- Քաչալ խան - Առույգ՝ կայտառ՝ նյութապես ապահով մարդ: *Դէ Խըզալանց Ակօփըն էլ քաչալ խան ա, սաղ օրը էն ա ք'ըէփ ընէս* (Զ):

- Քաչալ խաթա - Անտեղի փորձանք: *Ըշտըէղ մին քաչալ խաթա կա, մըզըէտէ յա կ'ամ* (Բ):

- Քաչալ խաշու - *հեգն.* Անյուղ՝ հասարակ կերակուր: *Քաչալ խաշու օտօղը կարէլ չի հանձ անէ* (Զ):

- Քաչալ կըլանխ խօզ'իլ - 1. Անիմաստ գործ կատարել: *Քաչալ կըլանխ խուզ'իլանվ տօն չըս տըէռնալ* (Զ): 2. Ճարպկորեն՝ խորամանկորեն մեկին խաբել: *Քաչալ կըլանխը խօզ'ում ա, ըտրրա կավը էծու կ'ինավ ինք' օնում* (Զ):

- Քաչալ ղուզղուն - *հեգն.* Փորձառու մարդ: *Քաչալ ղուզղուն ա Սէտրրակը, կարէլ չըս խանփիս* (Բ):

- Քըչալէն հըէտէ դանլանք'խանան յա՛ իլանծ, յա՛ չիլանծ - *տե՛ս* Դըլլանք'էն հըէտէ քաչալը յա՛ սաղ, յա՛ մըէռած (ԴԱԼԼԱՔ'-ի տակ):

- Քըչալէն վէր ճար ինի, հուրան կըլանխը/քաչալը կըքօրէ - *տե՛ս* Քաչալը վէր ճար անօղ ինի, հուրան կըլխէն/քըչալէն կանէ:

ՔԱՌ *(պրս. kar)* - 1. *ած., գ.* Լսողությունից լրիվ կամ մասնակիորեն զուրկ (մարդ, կենդանի): *Քառ մարթ ա, հինչու ասում ըն, ըսկանում չի* (Զ): *ած.* 2. Լսելու ունակությունը կորցրած: *Ըտրրա ծէխէ անգուճը քառ ա ինում* (Զ): 3. *փխբ.* Հեռավոր ու հետամնաց: *Մին քառ շէնում մին մարթ, մին կընէգ' ին ապրում* (Զ): 4. *փխբ.* Ջերմություն չարձակող: *Քառ փիչ ա* (Բ): 5. *փխբ.* Ամուր, ընտիր (բոժոժի մասին): *Էրկու փութ քառ բըրամա յա ծախում, մին ծի ինք' օնում* (Զ):

- Քառ գ'ուրզա - *տե՛ս* Գ'ՈՒՐՋԱ:

- Քառ Թանի/ղուլի - 1. Խուլ մարդ:

էտ քառ Թէունին ըսկանում չար, ամմա լաւ ար տըէսնում (Ձ): 2. Շրջապատի հանդեպ անտարբեր՝ ամեն ինչից անտեղյակ մարդ: *Դէ՛, Քանսպանրը էլ քառ Թէունի յա, ըշխարքաս խաբար չօնէ* (Բ):

ՔԱՌԱՍ(Ս)ՈՒՆ - *տե՛ս* ՔԸՌԱՍ(Ս)ՈՒՆ:

ՔԱՎԷԼ *(գրբ. քաւեմ)* - *նբ.* Ջղջումով՝ աշխատանքով՝ լավ գործով եւն թույլ տված սխալը՝ հանցանքը ուղղել: *Ասում ա.- էտ ըրածըտ մըէծ մէխկ ա, բիդի կարիս քավիս* (Ձ):

ՔԱՎԹԱՌ *(պրս. kafār)* - 1. *անրգ. տե՛ս* ՊԱՌԱՎ: *Մահմադը յէշում ա տէսնում՝ մին քավթառ դէվ ծիյէնը թակում ա* (ՀԱԲ, 15, 15): 2. *տե՛ս* ՋԱԴՈՒ: *Էտ քավթառը թիլիսիմ ա անում, էտ տըղան քար ա տըէռնում* (Ձ): 3. *գ. տե՛ս* Քավթառ քօսի:

- Քավթառ աղվէս - Փորձված ու խորամանկ ծերունի: *Քավթառ աղվէս ա Աշօտ դային, վէշ մինը կարէլ չի ընդըրա խանփի* (Բ):

- Քավթառ էշը/ծին/ճօրէն էլ ա կանրի օտում - Տարիքի հետ պահանջները չեն նվազում:

- Քավթառ շանը քուչի-քուչի չընանէլ - Փորձված մարդուն խաբելը անիմաստ՝ անհնար է:

- Քավթառ շօն - 1. *տե՛ս* Քավթառ աղվէս: 2. Վավաշոտ ծերունի: *Էտ քավթառ շօնը շէնումը էլ կընէգ չի թողից, լօխճին սաթաշմիշ իլանվ* (Բ):

- Քավթառ քօսի - 1. Բորենի: *Ասում ըն, առաչ էտ ծըմակումը քավթառ քօսի յէլ ա իլանլ* (Ձ): 2. Շատ ծեր եւ խարդախ մարդ: *Էտ քավթառ քօսին լօխճին տօնը քանդից* (Բ):

ՔԱՎՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԱՎԷԼ-ի:

ՔԱՐ *(գրբ. քար)* - *գ.* 1. Պինդ՝ կարծր լեռնային ապար: *Էտ քարան սըկսում ա ճանւր տանուս կանալ՝ կըթնաճանւր* (ՀԱԲ, 15, 150): 2. Շինարարության՝ քանդակագործության եւն մեջ օգտագործվող այդպիսի լեռնապարի առանձին բեկոր՝ կտոր: *Քար ա պիրում, պատ տինում* (Բ): 3. *տե՛ս* ՀԻՆԳՆԸՍՏԱՔԱՐ: *Քինանմ ա հինգիստնէրումը շօռ կամ, տըրա քարը քըթէնում...* (ՀԺՀ, VII, 196): 4. Ժայռ, ապառաժ: *Քընդիլանվ կամ ա, քարէն տէմ ըղնում* (Ձ): 5. Քարի մեծ կամ փոքր կտոր: *Մին քար ա յըէր օնում, յըրա անում, էտ դուշին ըսպանում* (Ձ): 6. Զարդարանքի ակ, թանկագին քար: *Մուտընէն քարը վէր ա ընգալ* (Բ): 7. Ապրանք կշռելու կշռաքար: *Քարը տինում ա քըշէռքին թաթէն* (Բ): 8. *փխբ.* Մի քանի խաղերի մեջ փայտից կամ այլ նյութից պատրաստած խաղաքար: *Նանդանն քարէրը պակաս ա* (Բ): 9. *փխբ.* Ներքին օրգաններում առաջացած ախտաբանական ծագումով պինդ՝ քարանման գոյացություն: *Ալլէցան յընն անում, պօչկուն քարը տանս օնում* (Ձ): 10. *փխբ.* Ճնշող՝ ծանր ներգործություն ունեցող հանգամանք: *Էտ դանրդը մին քար ա մէր սըրտէն յըրա* (Ձ): *գ., ած.* 11. *փխբ.* Կարծր, պինդ (առարկա): *Էս փանդը քար ա, կարում չընք կըտըրինք* (Բ):12. *փխբ.* Անտարբեր, անգութ, անկարեկից, անզգա (մարդ): *Դէ՛, էն էլ հօ քուր չի՞ Մըրյանէն հըէտէ, քար ա* (Բ):

- Քարա կըտըրած - 1. *տե՛ս* ՔԱՐ (11): 2. Առողջ մարմին ունեցող: *Քարա կըտըրած ա Հայրօ դային* (Բ):

- Քար անէլ - Ներգործել, հակազդել, վնասել, հաղթել: *Հանրը ասըմ ա.- Ըտըրան վէ՛չ թօփ, վէ՛չ թըվանգ, վէ՛չ զօրք քար չի անէլ...* (ՀԺՀ, VI, 97):

- Քարան կակօղը օտէլ - Ամեն ինչ ուտել (հատկապես քաղցած լինելով): *Սօվէն վախտը քարան կակօղը ուտէլիս ըն իլանլ* (Ձ):

- Քարան հաց քամէլ - Դժվարությամբ՝ չարչարանքով ապրուստ վաստակել: *Քարան հաց քըմէլավ ապրում ընք* (Բ):

- Քարան ճանւր կըթըցընէլ - Ուժեղ լինել, ֆիզիկական մեծ ուժ ունենալ: *Ասում ա.- Տու կարէլ չըս ընդըրա յըէխնիս, էն քարան ճանւր ա կըթըցընէս* (Ձ):

- Քարավ մըհակ կըտըրէլ - Դժվար գործ կատարել, մեծ դժվարությամբ որեւէ բան գլուխ բերել: *Էն վախտը ապրէլը հանց ա լանլ քարավ մըհակ կըտըրէլ* (ՀԲ, 347):

- Քարավ մօրթէլ - Տանջամահ անել, տանջել, չարչարել: *Խանը ըտըրանց քարավ մօրթում ա* (Ձ):

- Քարավ տալ - *տե՛ս* Քըրըպըրանուկ անէլ: *Շահ-Մուրադը քըղաքան տանս ա կամ, ըսկըսում մին պըռավու հըվէրու քարավ տալը* (ՀԺՀ, VII, 69):

- Քարավ քարզու անէլ - *տե՛ս* Քարավ մըհակ կըտըրէլ:

- Քարէն ածիս՝ կըչըքչըքօտէ - Ասում են շատ թունդ օղու եւ այլ խմիչքների մասին:

- Քարէն կուճինը չի մըծանում - Կենդանական ամեն ինչ մեծանում՝ աճում է: *Քարէն կուճինը չի մըծանում, խօխա յա, լի՞, մըծընական ա* (Ձ):

- Քարէն մըէծը կըլօխըն ըղնէլ, կուճինը՝ տակը - *տե՛ս* Տըկըտիյըէր ինիլ:

- Քարէն մըէծը կըլօխը քըցիլ, կուճինը՝ տակը - *տե՛ս* Տըկըտիյըէր անէլ:

- Քարէն տակէն տինիս՝ կապըրէ - Ասում են ճարպիկ՝ ձեռներեց մարդկանց մասին:

- Քարէն տէմ անէլ/տէմ ըղնէլ/տէմ ինիլ/նի կանլ - *տե՛ս* Խուփը քարէն նի կանլ:

- Քարէն քացէ տալավ ապըրէլ - Մի կերպ՝ մեծ դժվարությամբ գոյատեւել: *Քանսիբ մարթ ա, քարէն քացէ տալավ ապըրում ա* (Բ):

- Քարէրը կըրօտան - Ամեն ինչ պարզ կդառնա՝ կբացահայտվի՝ ծածուկ չի մնա: *Կընդօթունը թաքուն կէնալ չի, քարէրը կըրօտան* (Ձ):

- Քարը գանւրգանն վէր ածէլ - Ջիջել, տեղի տալ, համաձայնել: Ասում ա.- *Յըէք քարը գանւրգանտ վէր ածէ, իցցուն մընէթավ էտ էշը ծախէ, ինք օնիմ* (Ձ):

- Քարը գօլէն կանլ - Գործը միանգամից ձախողել: *Լընհա վէր օգում ըմ, թա մին պէն անիմ, տընաշինըտ քարը գօլէն ա կամ* (Բ):

- Քարը թանլուլ տօ, հըէտան յէշի - Ո՞վ իմանա, ի՞նչ ընթացք կստանա գործը՝ երեւույթը: *Քարը թանլուլ տօ, հըէտան յէշի, յըէս հինչ գիդանմ, հավան փուխըլան ա՞, թա չէ՞* (Բ):

- Քարը թօղ ըրած - 1. Նոր ժամանակների պահանջներին չհամապատասխանող, հնացած: *Ըլաթէն քարը թօղ ըրած ա, միհէնգ տըրախտըրավ ըն վար անում* (Ձ): 2. Տարօրինակ, հետը հույս չկապելի: *Քարը թօղ ըրած մարթ ա Զամանը* (Բ):

- Քարը կապէն տէմ ըղնէլ - *տե՛ս* Խուփը քարէն նի կանլ:

- Քարը կըլօխը - Ինչ ուզում է անի, ինչպես ուզում է լինի, Աստված իր հետ: *Քարը կըլօխը, յըէս ընդըրա կուրծէրէն էլ խառնըվօղը չըմ* (Բ):

- Քարը կընէել յէրգինքը յըէր ինիլ - *տե՛ս* Զինքը ցըրըէվ տալ (2):

- Քարը կըտօրը քըցիլ - *տե՛ս* Կըտօրը քար քըցիլ:

- Քարը հօփ տալ, ճանւր կըթըցընէլ - *տե՛ս* Քարան ճանւր կըթըցընէլ:

- Քարը հօփ տա՝ ճանւր կընկաթէ - Երիտասարդ եւ ուժեղ է: *Դէ՛, թաքավէրին տըղան էլ ճօկ տըղա յա, քարը հօփ տա՝ ճանւր կընկաթէ* (Ձ):

- Քարը ճըքըցընէլ - Խայթող՝ կծու լինել (լեզուն, խոսքը): *Ընդըրա լանւզանն քարը կընճըքըցընէ* (Ձ):

- Քարը մաշկէն կանլ - *տե՛ս* Քարը գօլէն կանլ:

- Քարը տըրաքէ - Հազիվ, հազիվ թե, մի կերպ: *Քարը տըրաքէ՝ էս արտը մին տօնանա ցօրէն տա* (Ձ):

- Քարը փէշկան վէր ածէլ - *տե՛ս* Քարը գանւրգանն վէր ածէլ:

- Քարը փօրէն - *տե՛ս* Քարը կըլօխը:

- Քարը քարավը տըված - *տե՛ս* ՔԸՐՔԱՐՈՒՏ:

- Քարը քարէն յըրա չըթօղնէլ - Հիմնահատակ ավերել՝ քանդել: *Նի յըն տը՛ռնում էտ շէնը, քարը քարէն յըրա չըն թօղնում* (Ձ):

- Քարը քարէն յըրա չըմընալ - Հիմնահատակ ավերվել՝ քանդվել: *Դա՛ւշմանին զօրքը կ'ալանը յը՛տը էտ քըղաքումը քարը քարէն յըրա չի մընամ* (Ձ):

- Քարը քարէն չըտիսիլ - Ոչինչ՝ ոչ մի գործ չանել: *Լօդուր մարթ ա Սաղին, քարը քարէն չի տինում* (Բ):

- Քարը քարէն օտէլ - 1. Սով լինել՝ տարածվել: *Էտ տարէն էլ փիս արաշտ ա ինա՛ւմ, քարը քարէն օտում ա* (Ձ): 2. Խիստ քաղցած լինել: *Ասում ա.- Քարը քարէն օտում ա, մը՛ռնում ըմ. մին պէն տըվէ՛ք, քըցիմ պէրանը՛ս* (Ձ): 3. Ջրաղացի աղալու հատիկը վերջանալ: *Ճըղասպանը ասում ա.- Քարը քարէն կէրավ, ճէլ ըրէք' ցօրէն պէ՛րէք'* (Ձ):

- Քար կըտըրէլ - 1. Քարային գոյացության վերածվել: *Աղը քար ա կըտըրալ* (Բ): 2. Քարի նման պնդանալ՝ կարծրանալ: *Թուփ ըն տը՛ռալ, ա՛ւրա՛ւր կըլիխէ կ'ա՛ւտվա՛ալ, քար կըտըրալ, սար ա կույացալ* (ԱԱ, 32): 3. Անշարժանալ, անշարժ կանգնել: *Վախան քար ա կըտըրալ* (Ձ): 4. Քարի փոխարկվել (կախարդությամբ, հմայքով եւն): *Էտ ջադուն ա՛ւրա՛ն մըհակավը վէր թըխում ա, տըղան քար ա կըտըրում* (Ձ): 5. Անգութ՝ անխիղճ դառնալ: *Էտ խօրթ մարը հանց անըմ ա, խօնցը հա՛ւրըն էլ ա քար կըտըրըմ, ա՛ւրա՛ն խօնցը թակում* (Ձ): 6. Ապշել, շշմել: *Ամմա վէր թաքավէրը տը՛սավ՝ պուճուր տըղան կա վէջ, շատ զըրմացավ, քար կըտրից...* (ՀԺՀ, V, 94):

- Քար հիլըցընէլ - 1. Չափազանց աղիողորմ լացել՝ աղաչել եւն: *Շատ ա քար հիլըցընում, ամմա թաքավէրը հըրամանը փօխում չի* (Ձ): 2. Առողջ լինել, առողջ ստամոքս ունենալ: *Իզէն քար ա հիլըցընըմ, հու վա՞ ասալ, թա հիվանդ ա* (Բ):

- Քար տը՛ռնալ - *տե՛ս* Քար կըտըրէլ:

- Քարու կէս/պատառ - Խիստ ժլատ: *Իզէն քարու կէս ա, ընդըրանա կարէլ չըս մին պէն յը՛ր օնիս* (Բ):

- Քար քաշիլ/քանդիլ - 1. *տե՛ս* Մաշկավը լի՛ւծ քաշիլ: 2. *տե՛ս* Քար քըցիլ:

- Քար քընդիլա՛վ ապըրէլ - Դժվարությամբ՝ չարարչար աշխատելով գոյատեւել: *Քար քընդիլա՛վ ապըրում ընք* (Բ):

- Քար քըցիլ - Գերեզմանի վրա շիրմաքար դնել: *Վէր լօխ պարզ'վում ա, պիրում ըն կ'ա՛ւլը թաղում, յըրան քար քըցա՛ւմ* (ԱԱ, 54):

- Քար օտէլ (քացախ օտէլ) - Չարքաշ կյանք վարել: *Տըղէրքը քըղաքումը ք'ը՛ր'փ ըն անում, Մարյանըն ա Սիմօնըն էլ քար ըն օտում* (Բ):

- Քար օտիմ (քացախ օտիմ) - Թող ես զրկված մնամ, վնաս չունի (սովորաբար ասվում է որպես դժգոհության արտահայտություն): *Այան ասմա.- Յը՛ս քար օտիմ, քացախ օտիմ, թա՛ք'ի տուք լ'ավ ապըրիք'* (Ձ):

ՔԱՐԱՎ-ԿԱՐԿՈՒՏԱՎ - *մ.* Մեծ դժվարությամբ: *Քարավ-կարկուտավ էտ տօնը շինից, պըրծավ* (Ձ):

ՔԱՐԷ *(գրբ. քարեայ)* - *ած.* 1. Քարից պատրաստած՝ կառուցած՝ շինած: *Մին լ'ավ քարէ տօն ա ինք' օնում, տամ տըղէն* (Ձ): 2. *փխբ.* Պինդ, ամուր: *Իզէն քարէ յա, հիշկան կօրծ ա անում, վէջը չի* (Ձ): 3. *փխբ.* Անզգա, անգութ: *Քարէ յը՞ս, էտ խուխէն խէ ծէծ չը՞ս տամ* (Բ):

- Քարէ կարկուտ - *տե՛ս* ՔԸՐԸԿԱՐԿՈՒՏ:

- Քարէ սա՛նդ - Անդրդվելի՝ անսասան մարդ: *Աղա ապան քարէ սա՛նդ ա, վէր ասալ ա, էլ կարէլ չըս փօխիս* (Բ):

ՔԱՐԷԼ - *նբ.* 1. Գետինը քարերով պատել, սալահատակել: *Հըղէն քարալ ըն* (Բ): 2. Վրան քար դնել, քարով ծածկել: *Ճա՛ւրը տարալ ըն ա՛ւրա՛ն դօլը, պը՛ց տէղէրը՛ն էլ քարալ, վը՛ր թըշնամին տը՛ղը գ'իդա՛ն վը՛չ* (ԼՂԲ, 345): 3. Քարե պատ շարել մի բանի վրա: *Էտ ըխճըկանը տինում ըն պըլատէն բընծվրա՛ւմը, քարում* (Ձ): 4. Կամի տակ ամուր ու սուր քարեր ամրացնել: *Կամը քարում ըն, ըսքըսում խօրթնէրը կամնէլը* (Ձ):

ՔԱՐԹԷՂ - *տե՛ս* ՔԱՐԹԸ՛Ղ:

ՔԱՐԹԸ՛Ղ/ՔԱՐԹԷՂ - *գ.* Գործիքները սրելու հարմարանք, բարակ խազերով խարտոց: *Քարթը՛ղը յը՛ր ա օնում, տինըկնէն սըրում* (Ձ):

- Քըրթը՛ղէն ըռը՛խը ըղնէլ - Վնասվել: *Ծառէրը քըրթը՛ղու ըռը՛խ ըն ընգալ, պէրք չըն տըլան* (Ձ):

ՔԱՐԹՈՒ *(պրս. kard (հին կերակուր, կերակրի մնացորդ)* - *ած., գ.* Հնացած, չորացած (հաց): *Մին քարթու հաց ա տինում թուրբումը, հըղէ տինում* (Ձ):

ՔԱՐԿԱՊ - *գ.* Հանգույց, իրար ագուցված քարերի հանգույցը: *Հիշկան չըրչարվում ա, կարում չի էտ քարկապը քանդի* (Ձ):

- Քարկապ անէլ/քըցիլ - Քարերը իրար ամրացնել՝ ագուցել: *Քարկապ ա անում, մին լ'ավ կարմունջ շինում* (Ձ):

- Քարկապ ըղնէլ - Քարերն իրար ամրացվել՝ ագուցվել: *Քարէրը քարկապ ըն ընգալ* (Բ):

ՔԱՐԿԷԾ - *գ.* Ոտաբոբիկ քայլելու հետեւանքով ոտքերը քերծվելը: *Էս ա քառասսուն տարի յա՝ էտ դուշին վը՛ննը քարկէծ ա տը՛ռալ* (ՀԺՀ, V, 32):

ՔԱՐԿՕԾ *(գրբ. քարկոծ)* - *տե՛ս* ՔԸՐԸՊԸՐԱՆՈՒԿ: *Մըհէգ էս պէնէրը վէր յէս ասալ չը՞մ՝ իմ ազիզ ղըլըցէք ինձ օգըմ ըն քարկօծ անին* (ՋՏ, Ա, 46):

ՔԱՐՃԻԳ'/ՔԱՐՉԻԳ' *(գրբ. քարճիկ)* - *գ.* Թռչունի հաստ պատերով ստամոքսը, կտնառք: *Հընդա՛ւշկան մօրթում ա, թէփռում, քարճիգ'ըն ա թօքը իփում, տամ սիրըկանէն* (Ձ):

- Քարճիգ' ինիլ - 1. Գաղտնապահ լինել (հիմնականում գործածվում է ժխտական կամ հարցական ձեւով): *Ընդրրա քարճիգ' չօնէ, հինչու ասում ըս, ըշխարքավըս մին ա անում* (Բ): 2. Առնականություն ունենալ: *Տըղըմարթին բիդի քարճիգ' ինի, մէր Միշան քածի յա* (Բ):

ՔԱՐԾ - *տե՛ս* ՔԱԾ[3]:

ՔԱՐՉԻԳ' - *տե՛ս* ՔԱՐՃԻԳ':

ՔԱՐՎԱՋ - *գ.* Գետի մեջ ձգված քարեր, որոնց վրա ոտները դնելով՝ անցնում են: *Սարումըն էտ մարթին մաչան ճըղում ա, քըցում կ'ը՛տը, քարվազ շինում, ընցնում* (ՀԺՀ, V, 193):

ՔԱՐՎԱՍԿ - 1. *տե՛ս* ՔԸՐԸ՛ՂԱՆ: 2. *տե՛ս* ՔԱՐՎԱՋ:

ՔԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԱՐԷԼ-ի:

ՔԱՐՏԱՇ *(գրբ. քարտաշ)* - *գ., ած.* Քար տաշող՝ հղկող (արհեստավոր): *Ըստէփանակ'ը՛ռտ լօխ ճընա՛նչի՛ւմ ին քարտաշ Սիմօնէն* (Բ):

ՔԱՐՏԷՋ *(գրբ. քարտէզ (մագաղաթի թերթ, գիրք)* - *գ.* 1. Երկրի մակերեւույթի գծագրություն, քարտեզ: *Տըղան քարտէզին յըրան նը՛շանց ա տամ տը՛ղը* (ՀԺՀ, V, 100): 2. *փխբ.* Վրան շատ սպիներ ունեցող գլուխ: *Էտ խուխէն կըլ'ի՛խը քարտէզ ա, սա՛ւբա՛ւբը էն ա, վէր շատ ա իլա՛ալ նադինջ, օրանը մէհէտ կըլ'ի՛խը ճըղէս ա իլա՛ալ* (Ձ):

ՔԱՐՈՒՋ/ՔԱՐՕՋ *(գրբ. քարոզ)* - *գ.* Խրատ, պատվեր, խրատաբանություն, քարոզ: *Կամ ըն ախմախ թաքավէրէն կօշտը, հըսկըցընըմ, վէր տա՛ւս կ'ա՛ ա՛ւրա՛ն քարօզը ասէ* (ՀԺՀ, VI, 186):

- Քարուզ ասէլ/կարթիլ/տալ - 1. Երկար ու անհամ խոսել, շաղակրատել: *Էնքան քարուզ ասից, լափ զա՛ւնիլա՛ս տարավ* (Բ): 2. Խրատաբանել, երկար ու ձանձրալի խրատներ կարդալ: *Հա՛ւրը հիշկան քարուզ ար կարթա՛ւմ, տըղան էնքան չըրանում ար* (Ձ):

ՔԱՐ ՈՒ ԿԱՊ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քար ու կապէն տէմ ըղնէլ/տէմ ինիլ/նի կ'ալ - *տե՛ս* Խուփը քարէն նի կ'ալ:

ՔԱՐ ՈՒ ՔԱՑԱԽ - 1. *գ.* Անպետք կերակուր: *Ասում ա.- Էս հինչ ը՞ս իփա՛ալ, էս*

քար ու քացախը յը՛ս հունց օ՞տիմ (Ջ): 2. *վ.* Կանչի անարգական պատասխան: *Քար ու քա՛ցախ, հինչ ա՞, հինչ ը՞ս գա՛ելա տանում* (Ջ):

- Քար ու քացախ օտէլ - *տե՛ս* Քար օտէլ:

- Քար ու քացախ օտիմ - *տե՛ս* Քար օտիմ:

ՔԱՐ ՈՒ ՔՕԼ - *տե՛ս* ՔԱՐ-ՔՕԼ:

ՔԱՐՔԱՄ/ՔԸՐԱՔԱՄ - *գ.* Որեւէ բան ծանր քարի տակ դնելով՝ հյութը՝ միջի խոնավությունը քամելը՝մզելը: *Իփա՛ծ թութը ածում ըն մէշուկը, մին մը՛ծ քար տինում կըլխէն, քարքամը ըսքըսում ա* (Ջ):

- Քարքամ անէլ/տինիլ - Ծանր քարի տակ դնելով՝ հյութը՝ միջի խոնավությունը քամել՝ մզել: *Քարքամ ըն անում, շիրան ածում պուժկէնէն* (Ջ):

- Քարքամ ինիլ/տը՛ռնալ - Ծանր քարի տակ դրվելով՝ հյութը՝ միջի խոնավությունը քամվել՝ մզվել: *Էրկու օր ըտի պահում ըն, մինչը՛վ քարքամ ինի* (Ջ):

ՔԱՐ-ՔՕԼ/ՔԱՐ ՈՒ ՔՕԼ - *գ.* Քարեր ու թփեր, քարերը եւ թփերը որպես միասնական ամբողջություն: *Քար-քօլ լօխ մընացալ ա ծո՛ւնին տակէն* (Բ):

- Քարավ-քօլավ ըղնէլ - *տե՛ս* Սարավ-քօլավ ըղնէլ (ՍԱՐ-ՔՕԼ-ի տակ):

- Քարավ-քօլավ քըցիլ - *տե՛ս* Սարավ-քօլավ քըցիլ (ՍԱՐ-ՔՕԼ-ի տակ):

ՔԱՐՕՁ - *տե՛ս* ՔԱՐՈՒՁ:

ՔԱՑԱԽ *(գրբ. քացախ)* - *գ.* Թթվեցրած գինի, որ իբրեւ համեմունք, գործածվում է կերակուրների մեջ, ինչպես նաեւ բժշկության եւ այլ նպատակներով: *Առանց քացախ իփա՛ծ փիրփէտը հէչ պէն ա* (Բ): 2. *տե՛ս* ՔԱՐ ՈՒ ՔԱՑԱԽ (2):

- Քացախ խըմէլ - Ախորժակ պահել՝ որեւէ բան ակնկալելով: *Քացախ ը՞ս խըմալ, խըրէգ խըրըվածու անըմ տօ, լի՞* (Բ):

- Քացախ օտէլ - *տե՛ս* Քար օտէլ:

- Քացախ օտիմ - *տե՛ս* Քար օտիմ:

ՔԱՑԷ/ՔԱՑԻ *(գրբ. աքացի)* - *գ.* Ոտքի հարված, աքացի: *Էշին քացէն մարթ կըսպանէ* (Բ):

- Քացէ տալ - Ոտքով հարվածել, աքացել: *Թաքավէրը կ՚ամ ա վը՛ննավը քացի տամ, սա տո՛ւրո՛ւր չի կ՚ամ* (ՀԺՀ, V, 628):

ՔԱՑԷԼ *(գրբ. աքացեմ)* - *նբ. եւ չբ. տե՛ս* Քացէ տալ:

ՔԱՑԻ - *տե՛ս* ՔԱՑԷ:

ՔԱՑ(Ց)ՈՒՆ/ՔԱԾ(Ծ)ՈՒՆ/ՔԱԹՍՈՒՆ - *թ.* **Քառասուն**-ի **(քըռաս(ս)ուն)** եւ **վաթսուն**-ի **(վաց(ց)ուն)** համաբանությամբ կազմված թվական, որ ցույց է տալիս մեծ քանակ: *Քացցուն տարէ յա՝ էտ յը՛խծէն ըտը՛ղ վը՛ննը* (Ջ):

ՔԱՓ *(պրս. kaf (փրփուր)* - *գ.* Ջրալի կերակուր, միս, մուրաբա եւն եփելու ժամանակ երեսին առաջացող փրփուրը: *Ըտէղ էլ վըրըվո՛ւրդ անիմ, տէսնամ՝ էրկու խանըմնէ բուգբաշին քափը քաշըմ ըն...* (ՋՏ, Ա, 104):

- Քափ անէլ - Սաստիկ չարչարել՝ տանջել: *Խօխէնք՚ը այուն քափ ըն անում* (Ջ):

ՔԱՓ-ՔԸՐԹՆՕՆՔ - *գ.* Փրփրակալած քրտինք, փրփուր դարձած քրտինք: *Քափ-քըրթնօնքը նը՛ստա ծըլծըլամ ա* (Ջ):

- Քափ-քըրթնօնք(ը) ըղնէլ/(վէր) կօխէլ/(նի) մընէլ - Խիստ քրտնել, քրտինքի մեջ կորչել: *Կիսըհըղէնի էշը քափ-քըրթնօնքը կօխում ա...* (ԱԱռ, 24): 2. Շատ չարչարվել, մեծ ջանքեր գործադրել, ջանասիրաբար աշխատել: ... *Հիջրթէն հըվաքում ա, կ՚ամ քափ-քըրթնօնք կօխած կօրծը ըսքըսում* (ԱԱ, 60):

ՔԱՔ *(գրբ. քաք)* - *գ.* 1. Արտաթորանք, կղկղանք: *Խօզ՚ը քաքում ա, քաքէն յըրա նըստում* (Բ): 2. Քթի կամ ականջի մեջ չորացած կեղտ: *Քըթէն քաքը կախ իլած տո՛ւս ա կ՚ամ շինամաչ* (Ջ): 3. *փխբ.* Անպետք՝ անարժեք բան՝ մարդ: *Էտ հինչ քաք ա՞, վէր հը՛տը՛ն ըս ընգալ* (Բ): 4. *ածական.* Վատ, ձախորդ, փչացած, ձախողված: *Քաք ա կօրծէրը* (Բ):

- Քաքան փուլ շինիլ - Խիստ գործարար լինել: *Սըհակէն նըմանը ըխշարքումըս կա վէջ, քաքան էլ ա փուլ շինում* (Բ):

- Քաքէն յըրա մօխէր ածել - 1. Անհաջողությունից՝ դժվար վիճակից դուրս գալ: *Քաքէն յըրա մօխէր ա ածալ, էլ պարթկ չօնէ* (Բ): 2. Մի վատ բան քոդարկել: *Մարթը շատ ար կ՚ըղօթուն անում, ամմա կընէգ՚ը քաքէն յըրա մօխէր ար ածում* (Ջ):

- Քաքէն փօփ ասէլ - Անհասկացող՝ տխմար լինել: *Իզէն հինչ մարթ ա՞, քաքէն փօփ ա ասում* (Բ):

- Քաքը կատէգ՚ը հըսնէլ - *տե՛ս* Լըղաճա(ն)ք ինիլ:

- Քաքը կ՚ո՛ւզին (նըհը՛տ) խառնըվէլ - Խառնաշփոթ վիճակ ստեղծվել: *Լ՚ըհա օգ՚ում ըն, թա կալ՚ը թակին, թօռը նի յա օնում, քաքը կ՚ո՛ւզին նըհը՛տ խառնըվում ա* (Ջ):

- Քաքը մըղակավը տո՛ւս տը՛ռնալ - Շատ կեղտոտ լինել: *Ըտըրա տօնը վէր նի մընինիս, գա՛ելա՛տ կըտանէ. քաքը մըղակավը տո՛ւս ա տը՛ռնում* (Բ):

- Քաքը նը՛ստա շըռշըռալ - 1. Վտանգավոր լինել: *Օղռաշ մարթ ա Յէրվանդը, էն ա քաքը նը՛ստա շըռշըռալիս* (Բ): 2. Շատ կեղտոտ՝ փնթի լինել: *Էն հինչ կընէգ՚ ա՞, էն ա քաքը նը՛ստա շըռշըռալիս, տանավը վէր նի յըս մընում, սը՛ռտըտ խառնում ա* (Բ):

- Քաքը շաղէլ/սառչիլ - *տե՛ս* Լըղաճա(ն)ք ինիլ:

- Քաքը վը՛ռան շիլ ըղնէլ - *տե՛ս* Տըռը վը՛ռան շիլ ըղնէլ:

- Քաքը քաշիլ - *տե՛ս* Խաթան քաշիլ:

- Քաք կէրած շօն - Իր վատ արարքը գիտակցող եւ իրեն դրան համապատասխան պահող մարդ: *Յէղին հանց ա քաք կէրած շօն, վախում էլ ա, թա շինամաչը տո՛ւս կ՚ա* (Բ):

- Քաք չուրըցընօղ - Խիստ ժլատ, կծծի: *Իզէն քաք չուրըցընօղ ա, գանքումը հա՛ելա՛ մէհէտ կօշտ փօրավ հաց կէրած չի* (Ջ):

- Քաքու մաչ ըղնէլ - *տե՛ս* Կըրակը ըղնէլ:

- Քաքու մաչի (ինիլ) - *տե՛ս* Կըրակու մաչի (ինիլ):

- Քաքու մաչ քըցիլ - *տե՛ս* Կըրակը քըցիլ:

- Քաքում տըռըզա՛ծ տա՛նձ - Ամբարտավան՝ մեծամիտ (մարդ): *Քաքում տըռըզած տա՛նձ ա Ղօնդին, ըտըրա հը՛տէ էլ վէշ մինը նըհը՛տը հընգըրօթուն չի անում* (Բ):

- Քաք օտէլ - *տե՛ս* Ղալա՛թ անէլ:

ՔԱՔԷԼ *(գրբ. քաքեմ)* - *նբ.* 1. Արտաթորել: *Լ՚ավ հընգէրընն էն ա, վէր կօխկէն ճընկըռում ըս, քաքում, ասում չի՝ պատառ տէն կաց* (ԱԲԲ, 35): 2. *փխբ.* Կեղտոտել, ապականել: *Յը՛խտուտ մարթ ա, ըշտը՛ղ ք՚ինամ ա, քաքում ա* (Բ):

- Քըշկօռը յըՀտ անէլ/քանդիլ - 1. Հանգույցը բացել՝ քանդել: *Ք՚ինդիրին քըշկօռը մին թանիրանվ յըՀտ ա անում* (Զ): 2. Դժվարին՝ կնճռոտ խնդիրը լուծել, գաղտնիքը բացահայտել: *Սուդյան շատ ա չըրչարվում, վէրչը կարում ա էտ քըշկօռը յըՀտ անէ, կ՚օդէն փըռնէ* (Զ):

- Քըշկօռը յըՀտ ինիլ/քանդվիլ - 1. Հանգույցը բացվել՝ քանդվել: *Քըշկօռը յըՀտ չի ինում, ճարը կըտրրած ք՚անդիրը կըտրրում ըն* (Զ): 2. Դժվարին՝ կնճռոտ խնդիրը լուծվել, գաղտնիքը բացահայտվել: *Վէր քըշկօռը յըՀտ ա ինում, էլ վէշ մինը ըտրրա նըհըՀտ հընգրրութուն չի անում* (Զ):

- Քըշկօռ քըցիլ - 1. Հանգուցել, հանգույց առաջացնել: *Չաթուն քըշկօռ ա քըցալ* (Բ): 2. Վիճակը բարդացնել՝ խճճել՝ կնճռոտ դարձնել: *Էս թօռը հօնձ ընուղնէրէն կօրծը քըշկօռ քըցավ* (Բ):

ՔԸՇԿՕՏ(Վ)ԷԼ - *չբ. տե՛ս* Քաշկավ ըղնէլ:

ՔԸՇՆՕՆՔ - *տե՛ս* ՔԸՐԹՆՕՆՔ:

ՔԸՇՌԱՀԱԽԿ - *տե՛ս* ՔԸՇԸՌԱՀԱԽԷ:

ՔԸՇՌԱՔԱՐ - *տե՛ս* ՔԸՇԸՌԱՔԱՐ:

ՔԸՇՌԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՌԷԼ:

ՔԸՇՌԷԼԻ - *տե՛ս* ՔԸՇԸՌԷԼԻ:

ՔԸՇՌՎԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՌՎԷԼ:

ՔԸՇՌՕԹՈՒՆ - *տե՛ս* ՔԸՇԸՌՕԹՈՒՆ:

ՔԸՇՌՕՎԻ - *տե՛ս* ՔԸՇԸՌՕՎԻ:

ՔԸՇՌՕՏԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՌՕՏԷԼ:

ՔԸՇՌՕՏՎԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՌՕՏՎԷԼ:

ՔԸՇՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՇԻԼ-ի:

ՔԸՇՏԷՆ/ՔԸՇՏԻՆ - 1. *կ.* Մոտը, կողքին: *Խօխէքը էլ հըռանում չընը, մընամ ըն հօրը քըշտէն* (ՆԱԲ, 66): *ած.* 2. Համեմատությամբ: *Գիշին Ճըրտարա քըշտէն շատ ա կուճի շէն* (Բ): 3. Ներկայությամբ: *Առաջ հարթնէրը պըտրօնէն քըշտէն խուսէլիս չընը իլալ* (Զ):

- Քըշտէն մարթ ըսպանիս՝ ասէլ չի - Ասում են խիստ գաղտնապահ մարդկանց մասին:

ՔԸՇՏԻՆ - *տե՛ս* ՔԸՇՏԷՆ:

ՔԸՇՔԸՇՕՏԷԼ - *չբ.* Կնճռապատվել (դեմքը): *Իցցուն տիրը՚կան կա վէչ, ամմա իրը՚սը սաղ քըշքըշօտալ ա* (Բ):

ՔԸՇՔԸՇՕՐԷԼ - *նբ. տե՛ս* Քաշ-քաշ անել:

ՔԸՇՔԸՇՕՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՇՔԸՇՕՐԷԼ-ի:

ՔԸՇՕԹՈՒՆ - *գ.* Ցածր լինելը, ցածրություն: *Թաքավէրը ըտրրա պըլատէն պիցըրթունէն ա յէշում, մին էլ ուրան պըլատէն քըշըթունէն, մընամ քար կըտրրած* (Զ):

ՔԸՇՕՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըշօշ կ'ալ - Մի տեղ հավաքվել, խմբվել: *Վրխճըրնէն ծառէն տակէն քըշօշ ըն յըկալ* (Բ):

ՔԸՇՕՎԻ/ՔԱՇՕՎԻ[2] - *ած.* 1. Քաշվող, քաշելով տարվող՝ հանվող՝ վերցվող՝ անջատվող: *Քըշօվի ապըրանք ա, քաշ տըվէք' տա'րէք'* (Զ): 2. *տե՛ս* ՔԸՇՕՈՎԻ: 3. Նկարած, նկարեն: *Էտ վարթէրըտ էնքան դա՛շանգ' ար, ասիս լ'ըհա քըշօվի ինի* (Զ):

ՔԸՇԱԼԱԿ - *գ.* Չորաթանի մածուցիկ հումքը, որ պատրաստում են քամած թանից՝ հետը քիչ ալյուր եւ աղ խառնելով: *Հունց ա պըտահում՝ կատուն նի յա մընում, քըչալակը օտում* (Զ):

ՔԸՇԱՄԱՆ - *գ.* Թռչունների ստամոքսը: *Հավէն քըչամանը տա՛ւս ըն օնում, տը՛սնում՝ էտ մուտընէն աշկը մաչին* (Զ):

ՔԸՇԷՂԱԿ/ՔԻՇԷՂԱԿ *(գրբ. կաչաղակ)* - 1. *գ.* Ագռավազգիների ընտանիքին պատկանող երկար պոչով թռչուն, կաչաղակ: *Պըլըպուդին ք'իս ա մին քըչէղակ վը՛ր քըցիս, պիրիս տաս աղէն* (ԼՂԲ, 394): 2. *գ., ած. փխբ.* Թեթեւսոլիկ ու շատախոս (մարդ): *Էտ քըչէղակը էնքան խօսից, լափ գա՛ելա՛ս տարավ* (Բ):

- Քըչէղակը հա՛քին ցը՛ց ա քաք օտում - Մեծամիտ մարդիկ իրականում զուրկ են արժանապատվությունից եւ ցանկացած ստորության կարող են դիմել:

- Քըչէղակ տը՛ռնալ - Շատախոսել, թեթեւսոլիկություն անել: *Ծանդըր-ծըդըրմէ մարթ ա իլա՛լ, մըհէնգ' ա ըտի քըչէղակ տը՛ռալ* (Բ):

- Քըչըղակէն պա՛ւնը քանդիլ - Գաղտնիքը բացահայտել: *Պառավը ըտըրանց խուսըցընէս ա, քըչըղակէն պա՛ւնը քընդիս, կ'աս թա՛ջիրին ըսէս* (Զ):

- Քըչըղակէն ք'արվանբաշի տինիս՝ լօխճին կընկըտօրէ - Անարժան մարդուն չպետք է ղեկավար կարգել:

ՔԸՇԷՊ - *տե՛ս* ՔԸՇԷՎ:

ՔԸՇԷՎ/ՔԸՇԻՎ/ՔԸՇԷՊ/ՔԸՇԷՓ/ԿԸՃԷՊ - 1. *տե՛ս* ՂԱԲՕՂ (1): 2. *տե՛ս* ՔԸԼԷՎ (1):

ՔԸՇԷՓ - *տե՛ս* ՔԸՇԷՎ:

ՔԸՇԸԼԱՆԱԼ - *չբ.* 1. Քաչալ դառնալ, ճաղատանալ: *Ափկարը հա՛լա՛ քըռասուն տիրը՛կան կա վէչ, ամմա քըչըլացալ ա* (Զ): 2. Մազերը տակից խուզել: *Ք'ինամ ա դա՛ալլա՛ք'խանան, քըչըլանում, ք'ինամ թաքավէրին կօշտը* (Զ): 3. *տե՛ս* ՏԸԿԸԼՈՒՐԱՆԱԼ (2, 3):

ՔԸՇԸԼՑ(Ը)ՆԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՇԸԼԱՆԱԼ-ի:

ՔԸՇԸԼՕԹՈՒՆ - *գ.* Քաչալ լինելը: *Ըտըրա քըչըլթունավը շէնըմը լօխ տընագ ին անում* (Զ):

ՔԸՇԸՂԱԿԷՐ - *գ. հոգն.* 1. Կաչաղակներ: *Քըչըղակէրը կ'ամ ըն, ըտը՛ղ հըվաքվում* (Զ): 2. *փխբ.* Ձյան խոշոր փաթիլներ: *Յէրգ'ինք'ը քըչըղակէր ա վէր ածում* (ՆԱԲ, III, 398):

ՔԸՇԸՂ(Ը)ԿՕԹՈՒՆ - *գ.* Թեթեւսոլիկություն, թեթեւսոլիկ եւ շատախոս լինելը: *Ըշտը՛ղ ք'ինամ ա, քըչըղըկօթուն ա անում* (Բ):

ՔԸՇԸՊԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՎԷԼ:

ՔԸՇԸՊԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՎԷԼ:

ՔԸՇԸՊՀԱՆ - *տե՛ս* ՔԸՇԸՎՀԱՆ:

ՔԸՇԸՊՎԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՎՎԷԼ:

ՔԸՇԸՎԷԼ/ՔԸՇԸՊՊԷԼ/ՔԸՇԸՓԷԼ/ԿԸՃԸՊԷԼ - *նբ.* Կեղեւը՝ կճեպը հանել, կճպել, կլպել: *Ծո՛ւն քըչըվում ա, տինում ըտըրա ըռաշկէն* (Զ):

- Քըչըված ծառը յը՛ր (հ)անէլ - *տե՛ս* Չօ՛ր ծառը յը՛ր (հ)անէլ:

- Քըչըված ծո՛ւ - Շատ ողորկ, հարթ, սահուն: *Կը՛ննէրը քըչըված ծո՛ւ ախճիգ' ա Նանէն* (Բ):

ՔԸՇԸՎՎԷԼ/ՔԸՇԸՊՎԷԼ/ՔԸՇԸՓՎԷԼ/ԿԸՃԸՊՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՇԸՎԷԼ-ի:

ՔԸՇԸՎՀԱՆ/ՔԸՇԸՊՀԱՆ/ՔԸՇԸՓՀԱՆ/ԿԸՃԸՊՀԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քըչըվհան անել - *տե՛ս* ՔԸՇԸՎԷԼ:

- Քըչըվհան ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* ՔԸՇԸՎՎԷԼ:

ՔԸՇԸՓԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՎԷԼ:

ՔԸՇԸՓՀԱՆ - *տե՛ս* ՔԸՇԸՎՀԱՆ:

ՔԸՇԸՓՎԷԼ - *տե՛ս* ՔԸՇԸՎՎԷԼ:

ՔԸՇԸՔՕՇԻ - *տե՛ս* ՔՈՒՇԻ-ՔՈՒՇԻ:

ՔԸՇԻՎ - *տե՛ս* ՔԸՇԷՎ:

ՔԸՇՓԸՇԱԼ - *տե՛ս* ՓԸՍՓԸՍԱԼ:

ՔԸՇՓԸՇՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՓԸՍՓԸՍՑ(Ը)ՆԷԼ:

ՔԸՇՓԸՇՕՆ - *տե՛ս* ՓԸՍՓԸՍՕՆ:

ՔԸՇՓԸՇՕՑ - *տե՛ս* ՓԸՍՓԸՍՕՆ:

ՔԸՇՔԸՇԱԼ/ԿԸՇԿԸՇԱԼ/ԿԸՐՇԿԸՐՇԱԼ *(գրբ. կարկաչեմ)* - *չբ.* 1. Խոխոջել, կարկաչել: *Ախպա՛ւրը քըչքըշամ ա* (Բ): 2. Հավի՝ կաչաղակի ձայն հանել, կչկչալ, ճռվողել: *Հավէրը կը՛չկը՛շամ ըն* (Բ): 3. Բարձրաձայն ծիծաղել: *Ըսկէսուրը վէր ըտի յա ասում, հարթնէրը քըչքըշամ ըն* (Զ):

ՔԸՇՔԸՇԱԼԻ/ԿԸՇԿԸՇԱԼԻ/ԿԸՐՇԿԸՐՇԱԼԻ - *մ.* Քչքչալով: *Էտ ըխպիրին ճո՛ւրը քըչքըշալալի ք'ինամ ա, նի տը՛ռնում ծո՛ր* (Զ):

ՔԸՇՔԸՇԱՆ/ԿԸՇԿԸՇԱՆ/ԿԸՐՇԿԸՐՇԱՆ - *ած.* Քչքչացող: *Քըչքըշան ըխպա՛ւրնէ Մարտակէրտա ծըմըկնումը շատ կա* (Բ):

ՔԸՇՔԸՇՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. կարկաչեցուցանեմ)* - *նբ.* ՔԸՇՔԸՇԱԼ-ի:

ՔԸՇՔԸՇՕՆ/ԿԸՇԿԸՇՕՆ/ԿԸՐՇԿԸՐՇՕՆ - *գ.* Քչքչալը եւ քչքչալու ձայնը: *Հըվէրէն քըչքըշօնէն յըրա տանան տա՛ւս ա կ'ամ* (Զ):

ՔԸՇՔԸՇՕՑ/ԿԸՇԿԸՇՕՑ/ԿԸՐՇԿԸՐՇՕՑ - *տե՛ս* ՔԸՇՔԸՇՕՆ:

ՔԸՌԱԿԷՆ - *գ.* Քեռու կինը, քեռակին: *Քըռակէնը թօղում ա, կ'ամ սըկսում պադրաստօթուն տէսնալը* (ՀԱԲ, 15, 93):

ՔԸՌԱՀ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըռահ ինիլ/տը՛ռնալ - Շատ ուտելով ու կշտանալով՝ այլեւս ուտելիքին ուշադրություն չդարձնել: *Ղունըղնէն քըռահ ըն իլա՛լ* (Բ):

ՔԸՌԱՆԱԼ - *չբ.* 1. Խլանալ, լսողությունից՝ լսելու ունակությունից զրկվել, լսողությունը թուլանալ: *Հէղան աքէրը քըռացալ ա, ըսկանում չի* (Բ): 2. *փխբ.* Չլսելու տալ, անարձագանք թողնել, անտարբեր մնալ մի բանի նկատմամբ: *Խոխան շատ ա լա՛ց ինի՛ւմ, ամմա խօրթ մարը քըռացալ ա, մուտանում չի* (Զ):

ՔԸՌԱՆԳՈՒՃ - *ած.* Ականջը խուլ՝ խլացած, խլականջ: *Քըռանգուճ մարթ ա Պէտին, հիշկան ճըղղամ ըս, ըսկանում չի* (Բ):

- Քըռանգուճը տինիլ/տալ - *տե՛ս* ՔԸՌԱՆԱԼ (2):

ՔԸՌԱՍՆԷ - *գ.* Գյուղ Ասկերանի շրջանում:

- Քըռասնըվա բադարա՛քա՛ն էլ ըղնէլ, Շուշվա հըրսընքան էլ - Բոլոր ակնկալիքներից՝ սպասելիքներից զրկվել: *...Հու վէր մին դա՛ւնումանց օգա՛մ ա էրկու կօրծ անէ, վէշ մինը ա՛մա՛լ չի կ'ամ, ասում ըն՝Քըռասնըվա բադարա՛քա՛ն էլ ընգավ, Շուշվա հըռրսընքան էլ* (ԱԱ, 85):

ՔԸՌԱՍ(Ս)ՈՒՆ/ՔԱՌԱՍ(Ս)ՈՒՆ *(գրբ. քառասուն)* - *թ.* Չորս տասնյակ, քառասուն: *Հա՛ղրընն էլ գ'ա՛ւդա՛մ ա, վը՛ր մօտէ ծըմակումը հըվաքված ըն քըռասուն դաչաղ, տըղէն էլ ա տանում ըտահանց տամ* (ՆԼՂԺԲ, 51):

- Քըռասուն լիտըրանուց բիտօն շինիլ - Երկու ոտքը ծնկից վերեւ կտրել: *Ա՛ալէցգա՛ յընն անում, խը՛ղճէն քըռասուն լիտըրանուց բիտօն շինում* (Բ):

ՔԸՌԱՍՈՒՆՔ - *գ.* 1. Ննջեցյալի մահվան քառասուներորդ օրը նրա շիրմին այցի գնալը եւ նրա հիշատակին հացկերույթ կազմակերպելը, որից հետո հարազատները սգից հանվում են: *Հօրը քըռըսունքավը Կամօն հէնգ' վը՛խճար ա մօրթալ, ժուղուվուրթէն լ'ավ հաց տու-*

վալ (Բ): 2. Նորածնի քառասուն օրը լրանալը: *Խուխէն քըռասունքը վէր տ՚ուս ա կ՚ամ, հիրըվանէրը, պարիկամնէն լօխ ք՚ինամ ըն՝ տը՛սնան* (Ձ):

ՔԸՌԱՎԸ՛Տ - *տե՛ս* ՇԸՄՓՇԸՄՓԱՎԸ՛Տ:

ՔԸՌԷ/ՔԸՌԻ *(հ.ե. *(s)krei- (ոլորել, ծռել)* - *տե՛ս* ԿՈՒՓԷ: *Ասլան-Բալասին ըրբէն վէր քըռէ յա տըվալ, ըրբան ք՚էցալ ա* (ՀԺՀ, VI, 24):

ՔԸՌԷՃ - *տե՛ս* ԽԸՌԷՃ:

ՔԸՌԷ-ՔԸՌԷ/ՔԸՌԻ-ՔԸՌԻ - *տե՛ս* ԿՈՒՓԷ-ԿՈՒՓԷ:

ՔԸՌԸՂՕՂՕՇ - *գ.* Խուլ՝ բթամիտ՝ չլսող՝ անհասկացող մարդ: *Էտ քըռըղօղօշը կընգանը ըսկանում չի, հըղէ յա ինում, ք՚ինամ* (Ձ):

ՔԸՌԸԹԱՆԹ(ԸՌ)ՈՒՇ - *տե՛ս* ՔԸՐԸԹԱՆԹ(ԸՐ)ՈՒՇ:

ՔԸՌԸԿԸՆԷԳ՚ - *տե՛ս* ՔԸՌԱԿԷՆ: *Փըռնում ըն քըռըկընգանը ճօրուն հաք՚վան կապում, քաշ-քաշ անում, ըսպանում* (ՀԱԲ, 15, 95):

ՔԸՌԸՆԳԷՑ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըռընգէց անէլ - Խանգարել, խոչընդոտել, ձախողել: *Շէնումը հու օգում ար մին կօրծ փըռնէ, էտ մարդիմազարը քըռընգէց ար անում* (Ձ):

ՔԸՌԸՆԳՕՏԷԼ - 1. *նբ.* Էշի քուռակին մոտ կանչել: *Պատառ հաց ա տէմ անում, քըռընգօտում, էշին քօռակը մուտանում ա* (Ձ): 2. *չբ. փխբ. տե՛ս* Ըղանչա(ն)ք անել:

ՔԸՌԸՇՏԷԼ - *նբ. տե՛ս* Կուփէ տալ:

ՔԸՌԸՍՈՒՆՔԱԿՕԽ - *ած., գ.* 1. Նորածնի հիվանդություն, որ իբր առաջանում է, երբ քառասունքը չլրացած՝ երեխային տնից դուրս են բերում կամ մինչեւ քառասունքը լրանալը երեխայի սենյակը ուրիշ մարդ է մտնում: *Քըռըսունքակօխ խօխա յա* (Բ): 2. Նորահարսի ամլություն, որ իբր առաջանում է, երբ հարսանիքի ժամանակ մեկն անցնում է փեսայի եւ խաչեղբոր արանքով: *Հարթնը վէր քըռըսունքակօխ ար տը՛ռնում, փը՛սան կուռնան փըռնում ար դրռդօռանչէն չօրք՚ ղօլավը իրը՛ք հէտ շօռ տամ, վէր անց կէնա* (Ձ):

ՔԸՌԸՍՈՒՆՔԱՎԷՐ - *տե՛ս* ՔԸՌԸՍՈՒՆՔՕՏ:

ՔԸՌԸՍՈՒՆՔԸՀԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քըռընսունքըհան անէլ - 1. Ծննդկանին ու նորածնին լողացնելով քառասունքից հանել: *Տատմարը կ՚ամ ա ծըմըթկանէն ա խուխէն քըռընսունքըհան անում* (Ձ): 2. Ննջեցյալի քառասունքը լրանալուց հետո նրա հարազատներին սգից հանել: *Աշօտը, հիրրըվանէն կընգանը քըռասունքը վէր պըրծընում ա, հիրըվանէն ծէն ա տամ ուրանց տօնը, քըռընսունքըհան անում* (Բ):

- Քըռընսունքըհան ինիլ/տը՛ռնալ - 1. Ծննդկանը եւ նորածինը քառասունքից դուրս գալ: *Խօխան քըռընսունքըհան բիդի ինի, վէր կարիս չօլը տանիս* (Ձ): 2. Ննջեցյալի քառասունքը լրանալուց հետո սգից դուրս գալ (հարազատների մասին): *Մացակը կընգանը քըռասունքը տամ ա, քըռընսունքըհան ինում, փըսակվում* (Ձ):

ՔԸՌԸՍՈՒՆՔՕՏ - *ած.* Քառասուն օրը չլրացած, քառասունքի մեջ գտնվող: *Քըռընսունքօտ խօխան տանան տուս չընն անէլ* (Ձ):

ՔԸՌԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՔԸՌԱՆԱԼ-ի:

ՔԸՌԸՔՕՌԷ - *տե՛ս* ՔՈՒՌՈՒՔՕՌԷ:

ՔԸՌԹԱՆՔ - *տե՛ս* ԿԸՌԹԱՆՔ:

ՔԸՌԹԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹԷԼ:

ՔԸՌԹԷՉ - *տե՛ս* ԿԸՌԹԷՉ:

ՔԸՌԹՎԱՍԿ - *տե՛ս* ԿԸՌԹՎԱՍԿ:

ՔԸՌԹՕՏԷԼ - *տե՛ս* ԿԸՌԹՕՏԷԼ:

ՔԸՌԻ - *տե՛ս* ՔԸՌԷ:

ՔԸՌԻ-ՔԸՌԻ - *տե՛ս* ՔԸՌԷ-ՔԸՌԷ:

ՔԸՌՆԸՆՔԱԽԱՇ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԱԽԱՇ:

ՔԸՌՆԸՆՔԱԿՕԽ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԱԿՕԽ:

ՔԸՌՆԸՆՔԱՎԸ՛Տ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԱՎԸ՛Տ:

ՔԸՌՆԸՆՔԷԼ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԷԼ:

ՔԸՌՆԸՆՔԹԱԹԱԽ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԹԱԹԱԽ:

ՔԸՌՆԸՆՔԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԿՈՒԼՈՒԼ:

ՔԸՌՆԸՆՔՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔՑ(Ը)ՆԷԼ:

ՔԸՌՆԸՆՔՕՏ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔՕՏ:

ՔԸՌՆՕՆՔ - *տե՛ս* ՔԸՐԹՆՕՆՔ:

ՔԸՌՆԷԼ - *տե՛ս* ՎԸՐԱՐԷԼ:

ՔԸՌՈՒԾ/ՔԸՌՕԾ - *տես* ԸՐՈՒՐՈՒ(Ն)Ց: *Քացէ տամ քըռօշէն, քօնը տանէ մըքըռօշէն* (ԱՀ, 87):

- Քըռուշ տալ - *տե՛ս* Կուփէ տալ:

ՔԸՌՔԸՌԱԼ - *տե՛ս* ՀԸՌՀԸՌԱԼ: *...Լանզանթ ա քանշում, համ էլ քըռքըռալավ հարայ տամ...* (ԱԱ, 26):

ՔԸՌՔԸՌՕՆ - *տե՛ս* ՀԸՌՀԸՌՕՆ:

ՔԸՌՔԸՌՕՑ - *տե՛ս* ՀԸՌՀԸՌՕՆ:

ՔԸՌՕԹՈՒՆ - *գ.* Խուլ լինելը, խլություն: *Քըռօթունը քուռութունան լ՚ավ ա* (Ձ):

ՔԸՌՕԾ - *տե՛ս* ՔԸՌՈՒԾ:

ՔԸՍ/ՀԸՍ - *ձ.* Շանը մեկի՝ մի բանի դեմ գրգռելու բացականչություն: *Շօնը խուզ՚էրէն յըրա պէց ա թօղում, թա՝ ք՚ը՛ս, ք՚ը՛ս* (Ձ):

- Քըս անէլ/տալ - 1. Շանը գրգռել մեկի՝ մի բանի դեմ: *Էտ մարթը վէր շընէրը քըս ա տամ ըղվէսին հէտան, շընէրը հըսնըմ ըն, ըղվէսին փըռնըմ* (ՀԺՀ, VI, 254): 2. Գժտվելու հրահրել, կռվեցնել: *... Մը՛զ քըս ա տամ, ուրուր անավ անըմ, կըռվըցընըմ, ինք՚ը ղըրաղէն վը՛ենը կէնըմ* (ՀԲ, 356):

ՔԸՍԱԿ *(գրբ. քսակ)* - *գ.* 1. Փոքրիկ տոպրակ՝ փող, ծխախոտ եւն պահելու համար: *Քըսական մին վը՛սկէ յա տուս օնում, տամ ըտրրան* (Ձ): 2. *տե՛ս* ԹՕՐԲԱ: *Էտ մարթ նան տըղան յէր ըն կէնում, հացավ քըսակնէն լըցնում, ք՚ընանամ* (ՀԺՀ, V, 406):

ՔԸՍԱՆ *(գրբ. քսան)* - *թ.* Երկու տասնյակ, քսան: *Էտ թաքավէրը քըսան տարէ յար, հինչ փըսակվալ ար, ամմա խօխա չօնէր* (ՀԺՀ, V, 352):

ՔԸՍԷԼ/ՔԸՍԻԼ *(գրբ. քսեմ)* - *նբ.* 1. Շփել, շոշափել: *Էս քօռ մարթը ծէրքը քըսում ա ըտրրա իրը՛սէն, ճինանչում* (Ձ): 2. 2. Մի բան մի ուրիշ բանի շփել: *Հինչ հիվանդ իլալ ա, յը՛կալ ա ըստը՛ղ, էտ ճիրան խըմալ, պատառ էլ քըսալ ջանը, սըղացալ* (ԱԱ, 57): 3. Յուղի՝ ներկի եւն բարակ շերտով պատել: *Յը՛ղը քըսում ա հացէն, տամ խուխէն* (Ձ): 4. Հագուստի փեշը՝ ծայրը եւն որեւէ բանի կպցնել՝ շփել, հատակին՝ գետնին եւն դիպցնելով՝ քաշել: *Փէշկէրը տափը քըսէլավ ք՚ինամ ա* (Ձ):

ՔԸՍԷ-ՔԸՍԷ - *տե՛ս* ՔԸՍԸՔԸՍԷ:

ՔԸՍԸՆԱՆՈՒՑ - *ած.* Քսան միավոր պարունակող (դրամ, քաշ, տարողություն եւն): *Մին քըսընանուց քըշըռաքար ա տինում, էտ մէսը քըշըռում* (Ձ):

ՔԸՍԸ-ՓԸՍԻ/ՔԸՍԻ-ՓԻՍԻ/ՔԻՍԻ-ՓԻՍԻ/ՔԸՍԸՔՕՍԷ/ՔԸՍԸՔՕՍԻ/ՔՈՒՍԻ-ՔՕՍԻ - *գ.* 1. Ցածր ձայնով գաղտնի խոսակցություն: *Հիշկան անում ա, կարում չի ըտրրանց քըսըփըսին ըսկանա* (Ձ): 2. Բամբասանք, չարախոսություն: *Քըսըփըսին շատ մարթու տօն ա քանդալ* (Բ):

- Քըսը-փըսի անէլ - 1. Ցածր ձայնով գաղտնի զրույց վարել: ... *Ասլանը ըռընչէրան տուս ա կ՚ամ, թա.- Էտ հինչ ը՞ք քըսի-փըսի անըմ...* (ԱԱռ, 37): 2. Բամբասել, չարախոսել: *Էտ կընէգ՚ը սաղ օրը ըստրրանա-ընդրրանա քըսըփըսի յա անում* (Բ):

- Քըսը-փըսին ըղնէլ - Որեւէ գաղտնիք թաքուն տարածվել, որեւէ չբացահայտված՝ չհաստատված բանի մասին

այստեղ-այնտեղ խոսվել: *Քըսը-փըսին ըղնում ա շէնը, թա Ուջաղանց Նըխշունէն տըղան պիճ ա* (Բ):

ՔԸՍԸ-ՓԻՍԻ - *տե՛ս* ՔԸՍԸ-ՓԸՍԻ:

ՔԸՍԸՔԸՍԷ/ՔԸՍԷ-ՔԸՍԷ/ՔԸՍԻ-ՔԸՍԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըսըքըսէ անէլ - Շարունակ ու անփույթ կերպով քսել՝ շփել՝ տրորել, այստեղ-այնտեղ քսել, քսմսել: *Ըռանգը յօր ա ունէս, քըսըքըսէ ընէս, պատէրը լըպրտէս* (Ձ):

ՔԸՍԸՔՕՍԷ - *տե՛ս* ՔԸՍԸ-ՓԸՍԻ:

ՔԸՍԸՔՕՍԻ - *տե՛ս* ՔԸՍԸ-ՓԸՍԻ:

ՔԸՍԻ-ՔԸՍԻ - *տե՛ս* ՔԸՍԸՔԸՍԷ:

ՔԸՍԿԱՐԱՆՔ՝ - *տե՛ս* ՔԸՍԿԱՐԷՆՔ՝:

ՔԸՍԿԱՐԱՆՔ՝ - *տե՛ս* ՔԸՍԿԱՐԷՆՔ՝:

ՔԸՍԿԱՐԷՆՔ՝/ՔԸՍԿԱՐԱՆՔ՝/ՔԸՍԿԱՐԱՆՔ՝/ԿԸՍԿԱՐԷՆՔ՝ *(գրբ. կասկարայ)* - *գ.* Կաթսայի տակ դրվող եռոտանի, կասկարա: *Կարկօտ կ՚ալիս քըսկարէնքը վընէրավ կըլխըյէր ըն տընում, վէր կարկօտը կըտըրէ* (ՆԱԲ, 161):

- Քըսկարէնք՝ տը՛ռնալ - Միաբանվել, համերաշխվել: *Ըտըրանք հօրը մըռնէլանը յը՛տը քըսկարէնք՝ ըն տը՛ռնում, մին տը՛ղ ապրում* (Ձ):

- Քըսըկըրէնք՝ին մին վը՛ննը կօտըրվէլ - Երեք եղբայրներից՝ ընկերներից եւն մեկը մահանալ: *Ըտըրանք իրը՛ք ախպէր ին, լ՚ավ փոլ ին ըշխադում, ամմա հըրամից. քըսկըրէնք՝ին մին վէննը կօտըրվից* (Ձ):

- Քըսկըրէնք՝ու վը՛ննը - Որեւէ կերպ իրար հետ կապված երեք անձից՝ իրից յուրաքանչյուրը: *Իրը՛ք հընգէր ըն ինում, ամմէն մինը մին քըսկըրէնք՝ու վը՛ննը* (Ձ):

ՔԸՍԿԸՐԷՆՔ՝Ի - *գ.* Պատանեկան խաղ, երբ մի թիմի անդամները թեւ թեւի եւ գլուխ գլխի տված շրջանաձեւ կանգնում եւ պտտվում են, իսկ մյուս թիմի անդամները ցատկում են նրանց մեջքին: Եթե կագնածներից մեկին կամ նրանց մեկուսի կանգնած ղեկավարին (մար) հաջողվում է ցատկողներից որեւէ մեկին ոտքով խփել գետնի վրա, տեղերը փոխում են: *Քըսկըրէնք՝ին լ՚ազ՚ա թ խաղ ա* (Բ):

ՔԸՍՎԷԼ/ՔԸՍՎԻԼ - 1. *կբ. եւ չբ.* ՔԸՍԷԼ-ի: *չբ.* 2. Մի բանի դիպչել՝ կպչել: *Շըլվարէն փօխկը քըսվում ա ցը՛խէն, յըխտօտում* (Ձ): 3. Սնգուրվել, շպարվել: *Հըմանչ՚ում էլ չի, քըսվալ ա, յը՛կալ հօրը հանգ՚իստը* (Բ): 4. *փխբ.* Շողոքորթությամբ մոտենալ, քծնել, քծնելով մտերմության ձգտել: *Էտ մարթը շատ ա քըսվում, ամմա էտ ըրփըվէրին մըհալ չի քըցում* (Ձ): 5. *անրգ.* Չքվել, հեռանալ: *Էտ մարթը կըզնըվում ա, թա.- Քըսվէ ըստըղաս, թա չէ փիս ա ինական* (Ձ):

ՔԸՍՏԱԼ - *չբ.* Սողալ, գետնին քսվելով՝ դանդաղ շարժվել: *Թանգին քըստալավ ըլըբաստըրակ չի փըռնէլ* (ԱԲԲ, 31):

ՔԸՍՏԱԽՕՏ - *գ.* Մի տեսակ խոտաբույս, որի ծայրը նման է ցորենի հասկին: *Քըստախօտը հիյվընէն լ՚ավ չընօտում* (Բ):

ՔԸՍՏԱԿԷՐ - *ած.* Քիստերից ճանկռտված: *Կըվէրէն պիրընէն քըստակէր ա տը՛ռալ* (Բ):

ՔԸՍՏԱՎԷՐ - *ած.* Քիստ ունեցող: *Քըստավէր խօտ ա* (Բ):

ՔԸՍՏ-ՔԸՍՏ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըստ-քըստ անէլ - 1. *տե՛ս* ՔԸՍՏ-ՔԸՍՏՑ(Ը)ՆԷԼ: 2. *տե՛ս* Քի՛շ-քի՛շ անէլ (2):

ՔԸՍՏՔԸՍՏՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* Քայլելիս ոտնամանները՝ ոտքերը գետնին քսելով՝ քստքստոց հանել: *Վը՛ննէրը քըստքըստցընէլավ քի՛նամ ա* (Ձ):

ՔԸՍՏՔԸՍՏՕՆ - *գ.* Քայլելիս ոտնամանները՝ ոտքերը գետնին քսելը եւ դրա հանած ձայնը, քստքստոց: *Նօ՚քա՚ռը ըտըրա քըստքըստօնէն յըրա գ՚ուրթնանում ա* (Ձ):

ՔԸՍՏՔԸՍՏՕՑ - *տե՛ս* ՔԸՍՏՔԸՍՏՕՆ:

ՔԸՍՈՒՐԱԹՕՂ - *տե՛ս* Քի՛ԸՍՈՒՐԱԹՕՂ:

ՔԸՍՈՒՐԱՀԱՑ - *տե՛ս* Քի՛ԸՍՈՒՐԱՀԱՑ:

ՔԸՍՈՒՐԱՅԸ՚Տ - *տե՛ս* Քի՛ԸՍՈՒՐԱՅԸ՚Տ:

ՔԸՍՓԸՍԱԼ - *չբ. տե՛ս* Քըսը-փըսի անէլ:

ՔԸՍՓԸՍՕՆ - *տե՛ս* ՔԸՍԸ-ՓԸՍԻ:

ՔԸՍՓԸՍՕՑ - *տե՛ս* ՔԸՍԸ-ՓԸՍԻ:

ՔԸՍ-ՔԸՍ - *տե՛ս* ՔԸՍ:

ՔԸՍՕՐ - *տե՛ս* Քի՛ԸՍՕՐ:

ՔԸՍՕՐԱՎԱԽՏ - *տե՛ս* Քի՛ԸՍՕՐԱՎԱԽՏ:

ՔԸՎԹԱՌԷԼ/ՔԸՎԹԸՌԱՆԱԼ - *անրգ. տե՛ս* ՊԸՌԱՎԷԼ:

ՔԸՎԹԸՌԱՆԱԼ - *տե՛ս* ՔԸՎԹԱՌԷԼ:

ՔԸՎԹԸՌՑ(Ը)ՆԷԼ - *անրգ. տե՛ս* ՊԸՌԸՎՑ(Ը)ՆԷԼ:

ՔԸՎԹԸՌՔՕՍԻ - *գ. տե՛ս* Քավթառ քսի:

ՔԸՎԹԸՌՕԹՈՒՆ - *անրգ. տե՛ս* ՊԸՌԸՎՕԹՈՒՆ:

ՔԸՎԹԸՌՕՏԷԼ - *անրգ. տե՛ս* ՊԸՌԸՎՕՏԷԼ:

ՔԸՐԱԷԾ/ՔԸՐԷԾ - *գ.* Լեռնային վայրի այծ, քարայծ: *Քըրաէծ վէր քըցիլը շատ ա տիժէր* (Բ):

ՔԸՐԱԽԷԽՏ/ՔԸՐԱԽԸ՚ԽՏ - *ած.* Քարերով պատված՝ լցված, քարերի մեջ խեղդված: *Քըրախէխտ ծառ ա, վէր էտքան էլ պէրք ա տամ, բիդի շընուրհակալ ինիս* (Բ):

- Քըրախէխտ անէլ - Քարերով պատելով՝ քարկոծելով սպանել՝ ոչնչացնել: *Քըրըպըրանուկ ըն անում, ըտըրան ըտը՛ղ քըրախէխտ անում* (Ձ):

ՔԸՐԱԿՆԸ - *գ.* Աղբյուրի քարե գուռ: *Կըռանում ա, քըրակնան ճ՚ուր խըմում* (Ձ):

ՔԸՐԱՀԱՆՔ - *գ.* Քարի հանք: *Ըրըվքարա քըրըհանքէրը Շ՚ունդուցըն ա ըլա՚լ* (ՆԱԲ, 85):

ՔԸՐԱՃԷԽԿ - *գ.* Քարի՝ ապառաժի մեջ բացված ճեղք: *Ըսկանալըն ու քըրըճէխկավը տ՚ուս կ՚ալ ծըլկէլը մին ա տէռնում* (ՆԱԲ, 52):

ՔԸՐԱՆԱԼ *(գրբ. քարանամ)* - *չբ. տե՛ս* Քար կըտըրէլ:

ՔԸՐԱՆՈՒՑ - *գ.* 1. *տե՛ս* ՔԸՐԱՀԱՆՔ: 2. Քարքարոտ տեղ: *Էտ քըրընուցումը բօստան չի տը՛ռնալ, նըհախ չըրչարվէլ մէ՚լ* (Ձ):

ՔԸՐԱՊԱՏ - 1. *գ.* Քարաշեն պատ: *Օշափը վէր թըխում ա, էտ քըրապատը ցըրը՛վ ա կ՚ամ* (Ձ): 2. *ած.* Քարով՝ սալաքարերով պատած՝ ծածկած: *Մէր շէնին հըդէն քըրապատ ա* (Բ):

ՔԸՐԱՊԷՆ - *գ.* Քարի հետ կապված գործ: *Ուստան ասում ա.- Իմը քըրապէնը ա, յը՛ս փըդ՚ըպէնին նըհը՛տ կօրծ չօնիմ* (Ձ):

ՔԸՐԱՏԱԿ[1] - *տե՛ս* ՔԸՐԸԱՏԱԿ:

ՔԸՐԱՏԱԿ[2] - *գ.* Քարի՝ ապառաժի տակը՝ ստորոտը: *Մին էլ քի՛ս ըն մին քըրըտակու յիշիս, տըսնաս՝ ըտէղ մին պէն ա պըծ՚ըպածի՛ ընէս* (ՀԺՀ, V, 414):

ՔԸՐԱՔԱՄ - *տե՛ս* ՔԱՐՔԱՄ:

ՔԸՐԴԸԳԱ՚Ր - *գ.* Ցորենի, գարու եւն այլուրների խառնուրդ եւ դրանից թխված հաց: *Ըտըրա իլ՚ածընն էլ պատառ քըրդը՚գ՚ար ա ինում* (Ձ):

ՔԸՐԷԾ - *տե՛ս* ՔԸՐԱԷԾ:

ՔԸՐԷՀ *(արաբ. kira)* - *գ.* 1. Մեկի կատարած աշխատանքի համար տրվող դրամական կամ բնամթերային հատուցում: *Ուստան ի՚ուրանն կօրծը պըրծընում ա, քըրէհը յօր օնում, քի՛նամ* (Ձ): 2. Գումար, որ տալիս են մեկին՝ նրա ունեցած որեւէ իր՝ բնակարան՝ հող եւն օգտագործելու՝ վարձակալելու դիմաց: *Կընէգ՚ը մարթին դուլուղ ա անում, վար թ՚ա թաքավէրը ամէսը չօրս վը՛սկէ քըրէհավ տա, դաբուկ կըկէնա, թ՚ա չէ, չէ* (ՀԺՀ, V, 360):

- Քըրէհ անէլ - Վարձով աշխատել՝ ծառայություն մատուցել: *Վար քօչը կ՚ամ ա պըցընում սար, էն մարթըն ըսկըսում ա օրտավը քըրէհ անէլ* (Ձ):

- Քըրէհավ յը՛ր օնէլ - *տե՛ս* ՔԸՐԷՀԷԼ: *Էտ կընէգ՛ը մին ըրբա յա քըրէհավ յօր օնըմ, ք՛ինըմ* (ԼՂԲ, 366):

- Քըրէհավ տալ - Վարձակալությամբ տալ՝ տրամադրել: *Տանը ութըղնէրան մինումը ինք՛ը ա ապըրում, մինը էլ քըրէհավ տամ* (Բ):

ՔԸՐԷՀԱՎ - *ած.* 1. Վարձով աշխատող: *Էտ շէնումը քըրէհավ փանիլէք՛ շատ կան* (Ձ): 2. Վարձով տրվող՝ տրված՝ վերցվող՝ վերցրած: *Սաղ քաղաքը շօռ ա կ՛ամ, քըրէհավ տօն չի քըթէնում* (Ձ):

ՔԸՐԷՀԷԼ - *նբ.* Վարձակալությամբ օգտագործման վերցնել, վարձակալել: *Հըղէննի մին ծի յա քըրէհում, չամադաննէն քըցանում ծիյին յիրանը, հըղէ ինում բիդի տօն* (ՀԺՀ, VII, 167):

ՔԸՐԷՀՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՐԷՀԷԼ-ի:

ՔԸՐԷՀՏԱՐ - *գ.* Վարձով որեւէ բան տվող մարդ: *Քըրէհտարը ասում ա.- Ծիս քըրէհավ տամ ըմ, ամմա քըրէհը նաղդ բիդի տաս* (Ձ):

ՔԸՐԷՍՏՎԱԾ/ՔԸՐԷՍՏՈՒԾ - *գ.* Հիսուսի անվանումը, որ համարվում է ամենակարող: *Ընդըրա Քըրէստվածընն էլ չի կարէլ ճար անէ* (Ձ):

- Քըրէստվածը մընանա քըցիլ - Անգութ դառնալ, խիղճը կորցնել: *Իգէն քըրէստվածը մընանա քըցալ ա, էլ խօնցը ուրուն չի անում* (Բ):

ՔԸՐԸԱՏԱԿ/ՔԸՐԱՏԱԿ[1] - *տե՛ս* ՔԸՆԴՔԱՐ(ԱԿ):

ՔԸՐԸԷՂԱՆ - 1. *հվք., գ.* Թանկագին քարեր, ակնեղեն, գոհարեղեն: *Յանշիգ՛ը պէնում ա, տը՛սնում՝ վըսկըղանավ, քըրղանավ լիգ՛ը* (Ձ): 2. *տե՛ս* ՔԱՐԷ: 3. *տե՛ս* ՔԸՐԱՆՈՒՑ:

ՔԸՐԸԷՆԷ - *գ.* Ժայռերի ծերպերին կամ քարքարոտ տեղերում աճող ծառ: *Կացէնը յօր ա օնում, էտ քըրը՛նէն կըտրում* (Ձ):

ՔԸՐԸԹԱՆԹ(ԸՐ)ՈՒԾ/ՔԸՌԸԹԱՆԹ(ԸՌ)ՈՒԾ/ՔԸԼԸԹԱՆԹ(ԸՌ)ՈՒԾ *(գրբ. քարաթթոշ)* - *գ.* 1. Մողեսի տեսակ, որ ապրում է քարքարոտ տեղերում, քարաթթոշ: *Քըրըթանթըրուշը փախչում ա, նի մընում քարէն տակը* (Ձ): 2. *փխբ.* Տգեղ՝ այլանդակ մարդ: *Ընդրան էլ ինում ա մին կ՛էշ ախճիգ՛՝ մին քըրըթանթուշ, վէր լ՛ըհա յէշիս, զանիլանտ կըտանէ* (Ձ):

ՔԸՐԸԹՈՒՋԻ - *գ.* Թզենի, որ աճում է ժայռերի ծերպերին կամ քարքարոտ տեղերում: *Էտ քը՛րծէն յըրա մին քըրըթուզի յա ինում փըսած* (Ձ)

ՔԸՐԸԿԱԾԱՆ - *գ.* Ժայռերի արանքով՝ քարքարոտ տեղանքով անցնող կածան: *Էտ քըրըկածանը հըսնում ա մինչը՛վ ըխպիրին կօշտը* (Ձ):

ՔԸՐԸԿԱՊԱՆ - *տե՛ս* ՔԱՐԿԱՊ:

ՔԸՐԸԿԱՐԿՈՒՏ - *գ.* 1. Կարկուտի խոշոր տեսակը: *Քըրըկարկուտ ա յը՛կալ, բուստընէն լօխ փուչըցըրալ* (Բ): 2. Կարկուտի նման տեղացող քարեր, քարերի տարափ: *Ընդրանք ըսքըսում ըն քարավ տալը, խանէն մարթիք՛ը մին թանիրանավ էտ քըրըկարկուտան պըրծընում ըն, փախչանում* (Ձ):

ՔԸՐԸԿԸՀՕԼ - *գ.* Քարե հյուղակ: *Ընդ՛ը մին քըրըկըհօլ ըն շինում, մաչին կէնում* (Ձ):

ՔԸՐԸԿԸՃԷՊ - *տե՛ս* ԿԸՌՃԻ:

ՔԸՐԸԿԸՌԸ՛Վ - *գ.* Միմյանց քարկոծելը, քարերով կռիվ: *Քըրըկըռը՛վը պըրծընում ըն, ք՛ինամ* (Ձ):

ՔԸՐԸԿԸՐԷ - *ած.* Քարերով եւ կրի շաղախով կառուցած: *... Ընդէրան ք՛էցինք մըտինք մատուռը, վէր մին քըրըկըրէ պիծի շէնք՛ ար...* (ՋՏ, Ա, 110):

ՔԸՐԸԿՈՒՏՈՒՐ - 1. *տե՛ս* ՔԱՐ (5, 12): 2. *տե՛ս* ԿԸՌՃԻ:

ՔԸՐԸՀԱՐԹ - *գ.* Քարհանքի շահագործումից հետո առաջացած հարթություն: *Կամ ըն, տը՛սնում վըխճըրնէն քըրըհարթումը նըստօտած* (Ձ):

ՔԸՐԸՀԱՑ(Ց)Է - *գ.* Հացենու տեսակ՝ կարմրավուն կեղեւով, տերեւներով եւ ծաղիկներով: *Ընդ՛ը մին քըրըհացցէ յա ինանում փըսած* (Ձ):

ՔԸՐԸՃԻՃԸ՛Խ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քըրըճիճը՛խ անէլ - Քարով՝ քարկոծելով ջախջախել՝ ճմռել: *Քարավը թակում ա, ըտըրա կըլօխը քըրըճիճը՛խ անում* (Ձ):

- Քըրըճիճը՛խ ինիլ/տը՛ռնալ - Քարով՝ քարկոծելով ջախջախվել՝ ճմռվել: *Վը՛ննը մընամ ա քարէն տակէն, քըրըճիճը՛խ տը՛ռնում* (Ձ):

ՔԸՐԸՄԱՄՈՒՌ(ՆԸ) - *գ.* Քարերի վրա աճող մամուռ: *Կը՛խտընէն կ՛ամ ըն ընդ՛ը, քըրըմամուռ օտում* (Ձ):

ՔԸՐԸՊԱՐԱՆ - *տե՛ս* ՔԸՐԸՊԸՐԱՆՈՒԿ:

ՔԸՐԸՊԸԼԻԹ - *գ.* Տափակ ու կլոր քար, որով փակում են կարասի՝ կճուճի եւն բերանը: *Կարասը կ՛ինամ լըցնում ըն, քըրըպըլիթը տինում ըռըխէն, ցը՛խում* (Ձ):

ՔԸՐԸՊԸՐԱՆՈՒԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըրըպըրանուկ անէլ - 1. Քարերով խփել՝ հարվածել, քարկոծել: *Քըրըպըրանուկ ըն անում, ըսպանում* (Ձ): 2. *փխբ.* Խիստ պարսավել, վատաբանել: *Ժողովէն վախտը կալխօզնիկնէն նախագէն մին լ՛ավ քըրըպըրանուկ ըն անում* (Ձ):

ՔԸՐԸՎԸ՛Ղ - *գ.* Քարքարոտ հող, քարաճաճկ հող: *Շատ ա չըրչարվում, մինչը՛վ վէր կարում ա էտ քըրըվը՛ղը վարէ* (Ձ):

ՔԸՐԸՏԱՆՁԻ - *գ.* Քարքարոտ տեղերում աճող տանձենի: *Էտ քըրըտանձանն տակէն նըստում ա, քունավ ընցընում* (Ձ):

ՔԸՐԸՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. քարացուցանեմ)* - *նբ.* ՔԸՐԱՆԱԼ-ի:

ՔԸՐԸՓԸ՛ՆԷ - *տե՛ս* ՔԸՐԸ՛ՆԷ:

ՔԸՐԸՔԱՆԴ - *տե՛ս* ՔԸՆԴԸՔԱՐ(ԱԿ):

ՔԸՐԸՔԱԾ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըրըքաշ կ՛անալ - Չարչարվել, տանջվել, շատ աշխատել: *Շատ ա քըրըքաշ կ՛ամ, մինչը՛վ էտ տօնը շինում ա, պըրծընում* (Ձ):

ՔԸՐԸՔԱԾԱՆ - *գ.* Երկաչք հարմարանք, որ գցելով գրաստի մեջքին, քարերով լցնում եւ տեղափոխում են: *Քըրըքաշանը քըցանում ա էշին մաշկավը, ք՛ինամ* (Ձ):

- Քըրըքաշան անէլ - Ոտքերը քարշ տալով՝ դժվարությամբ քայլել կամ որեւէ բան անել: *Քըրըքաշան ընէլավ կ՛ամ ա հըսնում տօն* (Ձ):

- Քըրըքաշան ինիլ/տը՛ռնալ - Ծանր աշխատանք կատարել, ծանր աշխատանքից խիստ հոգնել: *Էնքան կօրծ ըրէ, լափ քըրըքաշան տը՛ռէ* (Բ):

ՔԸՐԸՔԱՐ - *մ.* Քարից քար, այս քարից այն քարը: *Քըրըթանթըրուշը քըրըքար լօք-լօք ընէլավ փախչանում ա, նի մընում քը՛րծէն տակը* (Ձ):

- Քըրըքար ըղնէլ/ինիլ/կ՛անալ - *տե՛ս* Դանդարգ՛անն ըղնէլ:

- Քըրըքար քըցիլ - *տե՛ս* Դանդարգ՛անն անէլ:

ՔԸՐԸՔԱՐԷ - *տե՛ս* ՄԸՆՆԸՔԱՐԷ:

ՔԸՐԸՔԸՇԿՕՌ - *տե՛ս* ՔԱՐԿԱՊ:

ՔԸՐԹԷՂԷԼ - *տե՛ս* ՔԸՐԹԸ՛ՂԷԼ:

ՔԸՐԹԷՂՎԷԼ - *տե՛ս* ՔԸՐԹԸ՛ՂՎԷԼ:

ՔԸՐԹԸ՛ՂԷԼ/ՔԸՐԹԷՂԷԼ - *նբ.* Սրելու գործիքով սրել՝ խարտոցել: *Տէնակը քըրթը՛ղում ա, վէր կ՛առնը մօրթէ* (Ձ):

ՔԸՐԹԸ՛ՂՎԷԼ/ՔԸՐԹԷՂՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՐԹԸ՛ՂԷԼ-ի:

ՔԸՐԹՆԷՆՔ՛ - *տե՛ս* ՔԸՐԹՆՕՆՔ:

ՔԸՐԹՆԸՆՔԱԽԱԾ/ՔԸՌՆԸՆՔԱԽԱԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քըրթնընքախաշ ինիլ/տը՛ռնալ - Քրտինքից խաշվել, շատ քրտնելուց մարմնի վրա բշտիկներ առաջանալ: *Շատ ա տաք, լափ քըրթնընքախաշ իլինք՛* (Բ):

ՔԸՐԹՆԸՆՔԱԿՕԽ/ՔԸՌՆԸՆՔԱԿՕԽ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԹԱԹԱԽ:

- Քըրթնընքակօխ ինիլ/տը՛ռնալ - *տե՛ս* Քըրթնօնքը կօխէլ:

ՔԸՐԹՆԸՆՔԱՎԸ՛Տ/ՔԸՌՆԸՆՔԱՎԸ՛Տ - *գ.* Քրտինքի հոտ: *Մարթ կա՝հիշկան լըղանում ա, էլիա նը՛ստա քըրթնընքավը՛տ ա կ՛ամ* (Բ):

ՔԸՐԹՆԸՆՔԷԼ/ՔԸՌՆԸՆՔԷԼ *(գրբ. քրտնեմ)* - *չբ.* 1. Մարմնի վրա քրտինք դուրս գալ, քրտնել: *Փիս տաք ա, քըրթնընքալ ըմ* (Բ): 2. *փխբ.* Ապակու կամ այլ առարկաների վրա գոլորշու սառչող կաթիլներ առաջանալ: *Ակուշկէն հիլին քըրթնընքալ ա* (Բ): 3. *փխբ.* Իրեն նեղ վիճակում զգալ, տագնապել: *Խը՛ղճը գ՛ուդա՛ում չի՝ հինչ ջօղաբ տա, քըրթնընքում ա* (Ձ): 4. *փխբ.* Լարված աշխատել, չարչարվել: *Շատ ա քըրթնընքում, ամմա կարում չի էտ քարը տը՛ղան պուք տա* (Ձ):

ՔԸՐԹՆԸՆՔԹԱԹԱԽ/ՔԸՌՆԸՆՔԹԱԹԱԽ - *ած.* Շատ քրտնած, քրտինքի մեջ կորած: *Քըրթնընքթաթախ ծիյին լըղոցընէլ չըն* (Ձ):

ՔԸՐԹՆԸՆՔԿՈՒԼՈՒԼ/ՔԸՌՆԸՆՔԿՈՒԼՈՒԼ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԹԱԹԱԽ:

ՔԸՐԹՆԸՆՔՑ(Ը)ՆԷԼ/ՔԸՌՆԸՆՔՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. քրտնացուցանեմ)* - *նբ.* ՔԸՐԹՆԸՆՔԷԼ-ի:

ՔԸՐԹՆԸՆՔՕՏ/ՔԸՌՆԸՆՔՕՏ - *ած.* Քրտնած, քրտնոտ: *Քըրթնընքած ծըրքէրավ տո՛ւս ա տամ, լօխ օտում* (Ձ):

ՔԸՐԹՆՈՒՆՔ - *տե՛ս* ՔԸՐԹՆՕՆՔ:

ՔԸՐԹՆՕՆՔ/ՔԸՐԹՆՈՒՆՔ/ՔԸՐԹՆԷՆՔ/ՔԸՌՆՕՆՔ/ՔԸՇՆՕՆՔ *(գրբ. քիրտն, քրտուանք)* - *գ.* 1. Մաշկի ծակոտիներից մանր կաթիլների ձեւով դուրս եկող ջրանման հեղուկ, քրտինք: *Յալը՛խը տո՛ւս ա օնում, ճըկատէն քըթնօնքը սիրփո՛ւմ* (Ձ): 2. *փխբ.* Ապակու կամ այլ առարկաների վրա առաջացած գոլորշու բարակ շերտ: *Հիլվին իրը՛սը սաղ քըրթնօնք ա* (Բ): 3. *փխբ.* Ծանր՝ տքնաջան աշխատանք եւ դրա արգասիքը՝ վաստակը: *Ո՛ւրա՛ն քըրթնընքավըն ա էտ խօնցը պահալ մըծըցըրալ* (Ձ):

- Քըրթնընքավ ըշխադած կապէկը օղտու հա՛քի յա, ըրկընանալ չի - Արդար աշխատանքով հնարավոր չէ մեծ հարստություն կուտակել:

- Քըրթնընքէն մաչին լըղանալ/կօրչիլ - *տե՛ս* Քըրթնօնքը կօխէլ:

- Քըրթնընքօղը ըշխընդօղէն ղադիրը/մըդղարը կըգ՛իդա՛ - Շատ աշխատողը աշխատավորին կիարգի:

- Քըրթնօնքը ծըծէլ (մինին) - *տե՛ս* Ա՛րո՛ւնը ծըծէլ (2):

- Քըրթնօնքը կ՛ա՛լ/տո՛ւս կ՛ա՛լ - *տե՛ս* ՔԸՐԹՆԸՆՔԷԼ:

- Քըրթնօնքը կօխէլ/ծըլլալ/պատէլ/օնէլ - Սաստիկ քրտնել, քրտինքով պատվել: *Արչին վէր տը՛սնում ա, լըղաճանք ա տը՛ռնում, քըրթնօնքը կօխում* (Ձ):

- Քըրթնօնքը վը՛ղէն խառնէլ - *տե՛ս* Քըրթնօնք թափէլ:

- Քըրթնօնք թափէլ - Քրտնաջան՝ չարչար աշխատել: *Քինա՛մ ա քըրթնօնք թափում, փօղ ըստանում, կ՛ամ հօրը կօշտը* (ՆԼՂԺԲ, 58):

ՔԸՐԻՍՏՕՆՅԱ *(գրբ. քրիստոնեայ)* - *գ., ած.* 1. Քրիստոնեական կրոնը դավանող (մարդ): *Ասում ըն՝ կըռապաշտնէն մին դարիբ քըրիստօնյա յըն փըռնալ, ըսպանալ* (ԱԱ, 52): 2. *փխբ.* Բարեպաշտ (մարդ): *Ակուփը քըրիստօնյա մարթ ա, խա՛փիլ չի* (Բ):

ՔԸՐԻՍՏՕՍ/ՔԸ՛ՐԻՍՏՕՍ *(գրբ. Քրիստոս)* - *գ.* Աստծո որդին՝ Հիսուս Քրիստոսը: *Քը՛ուրը՛ուստօսը մէհէտ մի տօն ղօնաղ ա ընգընէս* (ԱԱ, 72):

- Քըրիստօսա մէխին թըխէլ - Թշնամություն անել: *Ասում ա.- Մ հիրը՛վան, Քըրիստօսա մէխին թըխէլ մէ՛լ, յը՛ս քու դ՛ուշմանըտ չըմ* (Ձ):

- Քրիստօսէն խա՛թրո՛ւ - Խնդրելու՝ աղերսելու բանաձեւ՝ ի սեր Քրիստոսի: *Քրիստօսէն խա՛թրո՛ւ մին պատառ ցօրէն տօ* (Բ):

- Քրիստօսը վըկա - Երդման բանաձեւ: *Քըրիստօսը վըկա, տը՛սալ չըմ* (Բ):

ՔԸՐԾԱՏԱԿ - *գ.* Ժայռի տակը՝ ստորոտը: *Կըխտարը փախչո՛ւմ ա, կ՛ամ էտ քըրծըտակէն կ՛օղը կէնում* (Ձ):

ՔԸՐԿՕԾԷԼ *(գրբ. քարկոծեմ)* - *նբ. տե՛ս* Քըրըպըրանուկ անէլ:

ՔԸՐԿՕԾՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՐԿՕԾԷԼ-ի:

ՔԸՐՇԱ - *տե՛ս* ՔԱՇԱՆ:

ՔԸՐՉ *(գրբ. քուրջ (մազից հյուսած կտոր)* - *գ.* 1. Քրքրված՝ գզգզված հագուստ: *Քըրչէրը կ՛ը՛ցալ ա, յը՛կալ հըրսանէք՛* (Բ): 2. Հին շորի կտոր, լաթ: *Մին քըրչ ա քըցո՛ւմ ծիյին յըրա, նըստում, հըղէ ինո՛ւմ* (Ձ):

ՔԸՐՉԸՓԱԼԱՋ - *տե՛ս* ՔԸՐՉ:

ՔԸՐՏԸՇՕԹՈՒՆ - *գ.* Քարտաշ լինելը, քարտաշի զբաղմունքը: *Քըրտըշօթունը փիս փէշակ չի, վէր կարիս լ՛ավ սըվը՛ռիս* (Ձ):

ՔԸՐՔԱՐՈՒՏ/ՔԸՐՔԱՐՕՏ - *ած.* Քարերով լի, քարոտ: *Ըսէս ըն՝ տականան ըստը՛ղ քըրքարօտ տը՛ղ ա լա՛լ* (ԱԱ, 37):

ՔԸՐՔԱՐՕՏ - *տե՛ս* ՔԸՐՔԱՐՈՒՏ:

ՔԸՐՔԷՇՆԸ - *տե՛ս* ԹԷՓ:

ՔԸՐՔԸՋԱԼ *(գրբ. քրքջամ (քահքահ ծիծաղել)* - *չբ.* Չարախնդալ, քրքջալ, ծաղրաբար ծիծաղել: *Մաչնակը քըրքըզամ ա, ծըլօլը վէր ածում, վազ տամ բըդի ախճիգ՛ը* (ՆԱԲ, 54):

ՔԸՐՔԸՋԻ - *գ.* Քրքիջ, ծաղրական ծիծաղ: *Ըստըրա քըրքըզին խանէն կը՛տըղցընէս ա* (Ձ):

- Քըրքըզի տալ - *տե՛ս* ՔԸՐՔԸՋԱԼ:

ՔԸՐՔԸՋՕՆ - *գ.* Քրքջալը եւ նրա ձայնը: *Ըստըրա քըրքըզօնան զա՛ղլա՛ս տանում ա* (Բ):

ՔԸՐՔԸՋՕՑ - *տե՛ս* ՔԸՐՔԸՋՕՆ:

ՔԸՐՔԸՔԸՇՆԸԹԱԹԱԽ - *տե՛ս* ԹԸՓԸԹԱԹԱԽ:

ՔԸՐՔԸՔԸՇՆԸԽԱՌ(Ն)Ը - *տե՛ս* ԹԸՓԸԽԱՌ(Ն)Ը:

ՔԸՐՔԸՔԸՇՆԸԿԱ՛ԼԻԼ - *տե՛ս* ԹԸՓԸԿԱ՛ԼԻԼ:

ՔԸՐՔԸՔԸՇՆԸՀԱՆ - *տե՛ս* ԹԸՓԸՀԱՆ:

ՔԸՐՔԸՔԸՇՆԻԼ - *չբ.* 1. *տե՛ս* ԽԸՐԽԸՄՆԷԼ: 2. Խմորը կամ մածունը թթվելով բարձրանալ՝ ուռչել: *Խըմօրը լ՛ավ քըրքըշնալ ա, պա՛ւլիլի վախտըն ա* (Բ):

ՔԸՐՔԸՔԸՇՆՕՏ(Վ)ԷԼ - *տե՛ս* ԹԸՓԸԿԱ՛ԼԻԼ:

ՔԸՐՕԹՈՒՆ/ՔՈՒՐՕԹՈՒՆ - *գ.* 1. Քույր լինելը: *Քըրօթունը լ՛ավ պէն ա* (Ձ): 2. Քրոջ վերաբերմունք՝ հոգատարություն՝ վարվելակերպ՝ մտերմություն: *Էտ չուբանէն ախճիգ՛ը թաքավէրին ըխճըկանը քըրօթունը մըննան քըցո՛ւմ չի* (Ձ):

ՔԸՐՕՏԷԼ - *տե՛ս* ՔԱՐԷԼ (շատ բան):

ՔԸՐՕՏՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՐՕՏԷԼ-ի:

ՔԸՑԱԽԷԼ *(գրբ. քացախեմ (քացախեցնել)* - *չբ.* 1. Թթվելով քացախ դառնալ: *Այան ամմէն տարէ մին կօլա կ՛ինի յար ղըրաղ տինում, վէր քըցախէ* (Ձ): 2. Թթվել: *... Թօթը տանըմ ըն ածըմ պուժկէնէն, քըցըխէլանը յէտը արաղ ըն քաշըմ...* (ՀԺՀ, V, 239): 3. Կերածը լավ չմարսվել՝ ստամոքսում թթվել: *Հինչը օտում ա, քըցախում ա* (Բ): 4. *փխբ.* Թարմությունը՝ երիտասարդությունը կորցնել, ժամանակը անց կենալ: *Օգօղ չի ըլալ, մինչէվ մըհէնգ էլ էն ա տանը քըցըխէյիս* (ՆԱԲ, II, 47): 5. *փխբ.* Տրամադրությունն ընկնել, մռայլվել: *Յաղուգ ըտի քըցախալ ը՞ս, հինչ ա՞ պըտահալ* (Բ):

ՔԸՑԱԽՈՒՏ - ած. Վրան քացախ քսված, քացախով կեղտոտված: *Քըցախուտ աման ա* (Բ):

ՔԸՑԸԽԱՀԱՄ - 1. *գ.* Քացախի համ: *Կ՛ինին քըցըխահամ օնէ* (Բ): 2. *ած.* Քացախի համ տվող՝ ունեցող: *Քըցըխահամ կ՛ինի յա* (Բ):

ՔԸՑԸԽԱՃԸ՛ՌՐ - *գ.* Հետը քացախ խառնած ջուր: *Քըցըխաճո՛ւր ա ածում յըրան, օտում* (Ձ):

ՔԸՑԸԽԱՄԱՆ - *գ.* Քացախ պահելու աման: *Քըցըխամանը վէր ա ըղնում, կօտրում* (Զ):

ՔԸՑԸԽԱՎԸՏ - *գ.* Քացախի՝ քացախած՝ թթված բանի հոտ: *Տանան քըցըխավըտ ա կամ* (Զ):

ՔԸՑԸԽՀԱՄԷԼ - *չբ.* Քացախի համ ստանալ: *Կինին տաք տըղ վէր պահիս, կըքըցըխհամէ* (Զ):

ՔԸՑԸԽՑ(Ը)ՆԷԼ *(գրբ. քացախեցուցանեմ)* - *նբ. եւ պբ.* ՔԸՑԱԽԷԼ-ի:

ՔԸՑԸԽՕԹՈՒՆ *(գրբ. քացախութիւն)* - *գ.* Քացախած՝ թթված լինելը, քացախելու՝ թթվելու աստիճանը: *Պատառ փօրցում ա, թա.- Հալա քըցըխօթունը խըրէգ ա, մին էրկու օր էլ պահէ* (Զ):

ՔԸՑԸՀԱՐԷԼ - *նբ. տե՛ս* Քըցըքացէ անել:

ՔԸՑԸՀԱՐՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՑԸՀԱՐԷԼ-ի:

ՔԸՑԸՔԱՑԷ/ՔԸՑԸՔԱՑԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քըցըքացէ անել - Ոտքերով՝ քացով շատ՝ անընդհատ խփել, քացահարել: *Էս թուխսըկանը կօրէկըն օտում ա, սըկսում քըցըքացէ անէլը* (ՀԱԲ, 15, 24):

- Քըցըքացէ ընէլավ ապըրէլ - Դժվարությամբ գոյատեւել: *Քանիբ մարթ ա, քըցըքացէ ընէլավ ապըրում ա* (Զ):

ՔԸՑԸՔԱՑԻ - *տե՛ս* ՔԸՑԸՔԱՑԷ:

ՔԸՑԻԼ/ՔԻՑԻԼ - *նբ.* 1. Նետել, շպրտել: *Ասում ա.- Քանա՞ շօր ա, քըցի՛* (Զ): 2. Նետելով հասցնել, որոշ տարածությամբ մի բան նետել, մի տեղ նետել՝ ձգել: *Էս մինը վէր բուդէրը յօր ա ունէս, թա օտէ, թաքուն կըլխավը թող ա ընէս, քըցիս դալդան* (ՀԺՀ, V, 591): 3. Մի բանի մեջ մտցնել՝ դնել: *Աչառը քըցից, պէցավ, մաչան տա՞ւս յէկավ մին ջանիլ, դաշանգ ախճիգ...* (ՆԼԴԺԲ, 70): 4. Ձեռքից ցած թողնել, վերեւից ներքեւ բաց թողնել: *Թըխում ա, կըտըրան քըցում տափը* (Զ): 5. Տարածել, ծավալել: *Ըտի թաքավէրին կուճուր տըղան թախտէն նըստէս ա, յէրգիրը խըղըդօթուն քըցիս* (Զ): 6. Պատճառել, հարուցել: *Դուշմընօթունը քըցալ ա շինացուց մաչը* (Բ): 7. Արձակել, աճեցնել: *Ծառը շօշէր ա քըցալ* (Բ): 8. Բացել, փռել: *Էս պառավը լալավ յօրդան-դօշակ ա քըցալ, մաչին քօն իլալ* (ՀԺՀ, VI, 148): 9. Վրան քաշել՝ փռել՝ դնել՝ ձգել: *Մին շօր էլ պէրանվ, քըցից դութուն յըրան, սըկսից լաց ինիլը* (ԼՂԲ, 291): 10. Տնկել: ... *Հըրամման ա տամ, վըր սաղ Ղարաբաղի վըղին կըսը թըթի բաղէր քըցին* (ՀԺՀ, V, 239): 11. Ձգձգել, հետաձգել: *Ըսօրվա պէնը էգիսվան չըն քըցիլ* (ԱԲԲ, 30): 12. Մի բանից ետ պահել, խանգարել մի բան անելու: *Փիս հանօրը աշկը տա՞ւս կա, վըր ինձ հընգըրմաչա քըցալ ա* (ԼՂԲ, 24): 13. Հագցնել, մի բանի վրա անցկացնել՝ օդակաձեւ կապել: *Քանդիրը քըցում ա վէգը, քաշ տամ* (Զ): 14. Դուրս եկած՝ խախտված մասը իր տեղը բերել՝ հագցնել: *Խուխէն ծըրքը տա՞ւս ա ըղնում, տանում ըն սընըխչուն կօշտը, վէր քըցի* (Զ): 15. Մեկնել, հասցնելով բռնել՝ շոշափել եւն: *Ախճիգը ծէրքը քըցիս ա, թա մին ճիթ խաղու յօր օնէ, օխծը ծէրքան կըծէս ա...* (ԲՀԲ, 163): 16. Ուղղել, հառել: *Աշկէրը քըցիս ա դարադամէն հուրթը, տըսնաս՝ հուրանն շօնը հուրթին չօրս դօլավը պըտհուտ ա տաս* (ԼՂԲ, 314): 17. Շինել, կառուցել, կառուցելով երկարությամբ ձգել: *Էտ կըտէն էն յըրա մին լավ կարմունջ ըն քըցալ* (Զ): 18. Հիմնադրել: ... *Քիս ա հուրանն ազկըծուպը վըհըքէս, կաս ըստըղ շէն քըցիս* (ԱԱ, 18): 19. Բերել, հասցնել: *Շէնը գազ ըն քըցալ* (Բ): 20. Եփել, պատրաստել: *Նախշուն աքէրը լավ փըլավ ա քըցում* (Բ): 21. Լցնել: *Էտ տըղան մին տալէրք քըցում ա, ընդըրան ըռաշկէն տինում* (ՀԺՀ, V, 270): 22. Վնաս պատճառել, ծախսի տակ գցել: *Թանջիրը ըտըրանց խափում ա, քըցում, փուլէրը լօխ յօր օնում* (Զ): 23. Պաշտոնանկ անել: *Ըտի թաքավէրին քիցում ըն, էտ մարթին տինում թաքավէր* (Զ): 24. Խմել, կոնծել: *Մարթը հէնգ կըտվաթ քըցում ըն, հանփում* (Զ): 25. Մեկի վրա բարդել: *Շէնումը հինչ փիս պէն ար ինում, Շըվարշէն յըրա յին քըցում* (Զ): 26. Ճեղքերից՝ անցքերից եւն հեղուկ բաց թողնել: *Կարասը ճաքալ ա, տական կինի յա քըցում* (Բ): 27. *չբ.* Վախենալ: *Հօրը անա քըցում ա* (Բ): 28. Կազմում է բազմաթիվ հարադիր բայեր՝ *անըմը քըցիլ, հարայ քըցիլ, չօթկ քըցիլ, քըրըքար քըցիլ, տօն քըցիլ* եւն:

ՔԸՑԻԼ-ՓԸՌՆԷԼ - *չբ.* Երկար խորհել, կշռադատել: *Աստուծ ըսկանում ա, քըցում-փըռնում, ցավէն կէսը տամ խօխօնցը հօրը* (ԱԱ, 87):

ՔԸՑՎԻԼ/ՔԻՑՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՔԸՑԻԼ-ի:

ՔԸՑՕՎԻ/ՔԻՑՕՎԻ - *ած.* 1. Մեջը շաքար գցած, քաղցր: *Քըցօվի չայը խօխէնքը շատ ըն սիրում* (Զ): 2. Ձեռքով գցած՝ տնկած: *Քըցօվի բաղ ա* (Բ):

ՔԸՔԱՀԱՄ - *գ.* Քաքի համ, գարշելի համ: *Էտ խօրանգը քըքահամ օնէ* (Բ):

ՔԸՔԱՆՕՑ - *տե՛ս* ԸԽՊԸՀԱՐ:

ՔԸՔԱՊԷԿ - *տե՛ս* ԸԽՊԸՀԱՐ:

ՔԸՔԱՎԸՏ - *գ.* Քաքի հոտ, գարշելի հոտ: *Ըտրրա տանան քըքավըտ ա կամ* (Բ):

ՔԸՔԸԹԱՄԱՀ - *ած.* Խիստ ագահ եւ կծծի: *Քըքըթամահ մարթիգ շատ կան ըշխարքումը* (Բ):

ՔԸՔԸԼԸՄԱՆՍԸԼԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըքըլըմանստըլի անել - Որեւէ բան արագ ու անփութորեն՝ անորակ կատարել: *Ուստան կօրծը մին օրումը քըքըլըմանստըլի ըրավ, քըրցավ* (Զ):

ՔԸՔԸԼԸՎԱ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըքըլըվա անել - Իմիջիայլոց՝ ոչ մաքուր լվանալ: *Շօրէրը քըքըլըվա յա անում, կախ տամ* (Զ):

ՔԸՔԸԿԸԼՕԼԷ - *տե՛ս* ԹԸՐՔԸԿԸԼՕԼԷ:

ՔԸՔԸՇԷԼԱԿ - *գ.* Այն աղջիկ երեխան, որից հետո ծնվածը դարձյալ աղջիկ է լինում: *Ըտրրա ըռչի խօխան քըքըշէլակ ա իլալ* (Բ):

ՔԸՔԸՌԸԽ - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑԱՏՈՒ: *Էտ դէրը շատ քըքըռըխ ա լալ* (ԲՀԲ, 192):

ՔԸՔԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ. եւ պբ.* ՔԱՔԷԼ-ի:

ՔԸՔՈՒՌԱՎԸՏ - *տե՛ս* ՓԻՅՆԱՎԸՏ:

ՔԻԼԱՎԱՆԴ - *տե՛ս* ՔԸԼԱՎԱՆԴ:

ՔԻՇԷՐ - *տե՛ս* ՔԸՇԷՐ:

ՔԻՇԷՐԱՎ - *տե՛ս* ՔԸՇԷՐԱՎ:

ՔԻՇԷՐԷ - *տե՛ս* ՔԸՇԷՐԷ:

ՔԻՇԻԼ - *տե՛ս* ՔԸՇԻԼ:

ՔԻՇՄԻՇ - *տե՛ս* ՔՂԻՇՄԻՇ:

ՔԻՉԷՂԱԿ - *տե՛ս* ՔԸՉԷՂԱԿ:

ՔԻՊ(ԼԻԳ) - *տե՛ս* ՔՂԻՓ(ԼԻԳ):

ՔԻՍԱ - *տե՛ս* ՔՂԻՍԱ:

ՔԻՍԱՉԻ - *տե՛ս* ՔՂԻՍԱՉԻ:

ՔԻՍԻ-ՓԻՍԻ - *տե՛ս* ՔԸՍԻ-ՓԸՍԻ:

ՔԻՍ(Ս) - *ձ.* Ոչխարները քշելու բացականչություն: *Վըխճըրնէն քըշում ա՝ քի՛սս, քի՛սս* (Զ):

ՔԻՍՏ/ԿԻՍՏ *(ռուս. киста, հուն. kystis)* - *գ.* Ներկը՝ սոսինձը եւն որեւէ բանի երեսին քսելու հարմարանք, վրձին: *Քիստը յօր ա օնում, մըղըկնէն կըրասկա քըսում* (Զ):

ՔԻՐ - *տե՛ս* ՔՈՒՐ:

ՔԻՑԻԼ - *տե՛ս* ՔԸՑԻԼ:

ՔԻՑՎԻԼ - *տե՛ս* ՔԸՑՎԻԼ:

ՔԻՑՕՎԻ - *տե՛ս* ՔԸՑՕՎԻ:

ՔԻՓ(ԼԻԳ) - *տե՛ս* ՔՂԻՓ(ԼԻԳ):

ՔՂԱԲԱԲ *(արաբ., պրս. kabāb)* - 1. *տե՛ս* ԽԸՐԱՎԱԾ: 2. *տե՛ս* ԼՈՒԼԱՔՂԱԲԱԲ:

ՔՂԱԲԱԲԱՑՈՒ - *տե՛ս* ՔՂԸԲԸԲԱՑՈՒ:

ՔՂԱԲԱԲԽԱՆԱ - *տե՛ս* ՔՂԸԲԸԲԽԱՆԱ:

ՔՂԱԲԻՆ *(թրք. kəlin (ամուսնություն)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Քաբինը կըտ(ը)րէլ - Ամուսնանալու կամ այլ բան անելու խոչընդոտ-

ները՝ կապանքները վերացնել՝ վերանալ, թույլտվություն տալ՝ ստանալ: *Շահին ախճիգը նան փըսացուն կալու յըն մէջիդ, մօլլին քըշտին փըսակվին, քաբինը կըտրին* (ՀԺՀ, V, 183):

ՔԱԴԽՈՒԴԱ/ՔԱԹԽՈՒԴԱ *(պրս. kedxudā (տանուտեր)* - *գ.* Գյուղում դիրք ունեցող անձ, գյուղի իշխանավոր՝ մեծավոր: *Մին օր էլ Մէլիք-Շահնազարը քանդխուդօցը ծէն ա տամ դօնաղ* (Ձ):

ՔԱԹԱ *(թրք. kete)* - *գ.* 1. Յուղով, կաթով, ձվով, խորիզով կլոր թխվածք, գաթա: *Մարը քաթա յա թըխում, տինում ըտըրա խուրջինումը* (Ձ): 2. *փխբ.* Գաթայի ձեւով կլոր նախշազարդ գորգի կենտրոնում: *Թաքուհին գիբին քաթան վէր տըսնում ա, մընամ ա հըյիլ-մայիլ կըտըրած* (Ձ):

- Քաթա յը՞ն/չը՞ն պիժը՞նում - *տե՛ս* Չամէնչ ը՞ն պիժը՞նում:

ՔԱԹԽՈՒԴԱ - *տե՛ս* ՔԱԴԽՈՒԴԱ:

ՔԱԼ/ՔԱԼ *(պրս. kal)* - 1. *տե՛ս* ԽԱԿ: 2. *տե՛ս* ԼՕԴՈՒՐ: 3. *տե՛ս* ԱԽՄԱԽ:

ՔԱԼ - *տե՛ս* ՔԻՆԻԼ:

ՔԱԼԱ[1] - *տե՛ս* ՔԱԼԼԱ[1]:

ՔԱԼԱ[2] - *տե՛ս* ՔԱԼԼԱ[2]:

ՔԱԼԱ[3] - *տե՛ս* ՓԱՓԱՇ (2):

ՔԱԼԱԲԱՋ - *տե՛ս* ՔԱԼԼԱԳԲԱՋ:

ՔԱԼԱԲԱՇԻ - *տե՛ս* ՔԱԼԼԱԲԱՇԻ:

ՔԱԼԱԳ - *տե՛ս* ՔԱԼԼԱԳ:

ՔԱԼԱԳԲԱՋ - *տե՛ս* ՔԱԼԼԱԳԲԱՋ:

ՔԱԼԱԳԸՋՕԹՈՒՆ - *տե՛ս* ՔԱԼԼԱԳԸՋՕԹՈՒՆ:

ՔԱԼԱԳՉԻ - *տե՛ս* ՔԱԼԼԱԳՉԻ:

ՔԱԼԱԳՕՋ - *տե՛ս* ՔԱԼԼԱԳՕՋ:

ՔԱԼԱՂԱՅԻՆ - *տե՛ս* ՉԻՔԻԼԱ(ՏՈՒԼ):

ՔԱԼԱՂԻ/ՔԱԼԱՂԱ *(պրս. kalāx)* - *տե՛ս* ՉԻՔԻԼԱ(ՏՈՒԼ):

ՔԱԼԱՄ *(պրս. kālām)* - *գ.* Կաղամբ: *Ղարաբաղ քալամը լավ չի տըռնաս* (Բ):

ՔԱԼԱ-ՄՈՒԼԱ - *տե՛ս* ՔԱԼԼԱ-ՄՈՒԼԼԱ:

ՔԱԼԱՍ(ԹԱՐ) - *տե՛ս* ՀԱՄՓԱ:

ՔԱԼԱՎ - *տե՛ս* ՔԻՆԻԼԱՎ:

ՔԱԼԼԱ[1]/ՔԱԼԱ[1] *(պրս. kelle)* - *անրգ. տե՛ս* ԿԸԼՕԽ:

- Քալլա տալ - *տե՛ս* Ղօչի տալ:

ՔԱԼԼԱ[2]/ՔԱԼԱ[2] *(թրք. kələ (ցուլ)* - *գ.* 1. Չկռտած եզ, ցուլ: *Էտ սաղ նըխէրումը մինակ մին քալլա յա ինում* (Ձ): 2. *փխբ.* Ուժեղ՝ առույգ՝ գեր մարդ: *Դէ, Հըյկանց Սիրօժըն էլ քալլա յա, լի՞, վէր տըրըքցընում ա, էտ թօրք փանիլիվանը ըղնում ա ծօրը* (Ձ): 3. *փխբ., անրգ.* Վավաշոտ՝ ցանկասեր տղամարդ: *Կանփունց Սուրէնը քալլա յա, օխտը կընէգ ա պահում* (Բ):

- Քալլան խաղ անէլ - Կովերի բեղմնավորվելու շրջանն սկսվել: *Կարունքը յը՞կալ ա, քալլան խաղ ա անում* (Բ):

- Քըլլավ կալ - Բեղմնավորվել, զուգավորվել (կովերի մասին): *Սաղ շէնումը մին քալլա չի կա, թա կըվէրը քըլլավ կան* (Բ):

ՔԱԼԼԱԲԱՋ - *տե՛ս* ՔԱԼԼԱԳԲԱՋ:

ՔԱԼԼԱԲԱՇԻ/ՔԱԼԱԲԱՇԻ - *տե՛ս* ՋԸՌԸԿԸԼՕԽ:

ՔԱԼԼԱԳ/ՔԱԼԱԳ *(պրս. kelek)* - *գ.* Մեկին վնասելու՝ խաբելու՝ ծիծաղելու վիճակում դնելու համար կատարված՝ ձեռնարկած խորամանկ արարք, մեկի գլխին բերած փորձանք: *Շատ վախտ ա անց կէնում, ամմա մարթը կընգանը քալլագը մընանա քըցում չի* (Ձ):

- Քալլագ կալ/պիրիլ - Խորամանկորեն մեկին վնասել՝ խաբել՝ ծիծաղելի վիճակի մեջ դնել: *Իտի Պըլըպուդին քալլագ ա կանս Մէլիք-Շահնազարէն* (ԼՂԲ, 379):

- Քըլլագու մաչ ընկել - Մեկի խորամանկ արարքից վնասվել՝ ծիծաղելի վիճակի մեջ ընկնել՝ փորձանքի ենթարկվել: *Մէլիքը էս դօնումը էլ ա քըլլագու մաչ ընկէս* (Ձ):

- Քըլլագու մաչ քըցիլ - *տե՛ս* Քալլագ կալ:

ՔԱԼԼԱԳԲԱՋ/ՔԱԼԱԳԲԱՋ/ՔԱԼԼԱԲԱՋ/ՔԱԼԱԲԱՋ *(թրք. kələkbaz)* - *ած., գ.* Ուրիշներին խորամանկորեն վնասող՝ խաբող՝ ծիծաղելի վիճակում դնող (մարդ): *Իրան-Թուրան լօխ ըսկընաս ըն, վըր Պըլըպուդի ընըմավ մին խէլանք, քալլագբազ մարթ կա* (ԼՂԲ, 391):

ՔԱԼԼԱԳԸՋՕԹՈՒՆ/ՔԱԼԱԳԸՋՕԹՈՒՆ - *գ.* Ծայրահեղ՝ իրեն չարդարացնող հանդգնություն, հանդուգն արարք, անտեղի խիզախություն: *Քալլագըզօթունը շատ մարթու տօն ա քանդալ* (Ձ):

ՔԱԼԼԱԳՉԻ/ՔԱԼԱԳՉԻ *(թրք. kələkči)* - *տե՛ս* ՔԱԼԼԱԳԲԱՋ: *Առըստամը շատ քալլագչի յա ընում. քալլագը Ղըրդանց տըված ա* (ՆԱԲ, 99):

ՔԱԼԼԱԳՕՋ/ՔԱԼԱԳՕՋ - *ած., գ.* Չափազանց հանդուգն, վնասակարության չափ խիզախ (մարդ, արարք): *Քալլագօզ մարթ ա իլալ Տումըցէ Թէվանը* (Բ):

ՔԱԼԼԱ-ՄԸՂԱԼԱԽ - *մ.* Գլխի վրա, գլուխը դեպի ներքեւ դարձրած դրությամբ, գլխիվայր: *... Էս այամին ղօչչաղ տըղան էն ա, վէր սօտ ասի, փօղ կօլ տա, խազայինի ըռաչին կըլըպընդրէգի տա, քալլա-մըղալախ կաղնի յա կատու տէռնա* (ՋՏ, Բ, 120):

ՔԱԼԼԱ-ՄՈՒԼԼԱ/ՔԱԼԱ-ՄՈՒԼԱ/ՔԸԼԸՄԱԼԱ *(թրք. kəlamullah (դուրան)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Քալլա-մուլլա անէլ - *տե՛ս* Կըլօխը թափ տալ:

- Քալլա-մուլլա կարթիլ - *տե՛ս* Թըքըթօհմաթ տալ:

ՔԱԼՄԱ *(արաբ. kālime, պրս. kaleme)* - *տե՛ս* ՀԸՏԷ[1]:

ՔԱԼՉԱ - *տե՛ս* ԳԱՂԱԿ:

ՔԱԼՎԱ(Ն)ՍԱՐԱ - *տե՛ս* ՔԱՐՎԱՆՍԱՐԱ:

ՔԱԼՈՒՔՈՒԼ/ՔԱԼՈՒՔՈՒԼ - *գ. հվք.* Խակ մրգեղեն: *Քալուքուլ ա քաղում, քինամ* (Ձ):

ՔԱԼՓԱԹՈՒՆ - *տե՛ս* ՔԱՐՓԱԹՈՒՆ:

ՔԱԼՕՇ/ՔԱԼՈՒՇ - *տե՛ս* ՉԱՅԻՐ (2):

ՔԱՀԱՐԲԱՐ/ՔԱՀԸՐԲԱՐ *(պրս. kāhroba, թրք. kehribar)* - *գ.* 1. Մանր կտորներով հողի տակ գտնվող դեղնավուն (նաեւ սեւ) քարացած խեժ, ինչպես նաեւ դրանից պատրաստված իր՝ առարկա, սաթ: *Ըտըրա ճիտընուցէն յըրա մին դաշանգ քահարբար ա ինում, վէր ա ըղնում, կօրչում* (Ձ): 2. *փխբ.* Վճիտ, փայլուն, պաղպաջուն (հեղուկ, աղբյուր եւն): *... Արաղ, հինչ ա՞րաղ, մին քահըրբար...* (ՀԺՀ, V, 236):

ՔԱՀԸՐԲԱՐ - *տե՛ս* ՔԱՀԱՐԲԱՐ:

ՔԱՀՐԻՋ - *տե՛ս* ՔԱՀՐԻՋ:

ՔԱՀՐԻՋ/ՔԱՀՐԻՋ *(պրս. kahriz)* - *գ.* Գետնի տակով փորած ջրուղի, արտեզյան ջրհոր: *Սըրէրէն քամակը ընցընէլավ՝ տէսնում ա մին ցօրտ-ցօրտ քանիրիզ՝ չօրս անգունը ծըղրգնէ փըսած* (ՀԺՀ, V, 361):

ՔԱՄ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քամ յը՞ր օնէլ - *տե՛ս* Լանգաթ քաշիլ:

ՔԱՄԱՆՉԱ/ՔԱՄԱՆՉԱ *(պրս., թրք. kemenče)* - *գ.* Արեւելյան լարավոր երաժշտական գործիք՝ քամանչա: *Ըտըրան էլ մին լավ քամանչա յա ինում* (Ձ):

ՔԱՄԱՆՉԱ - *տե՛ս* ՔԱՄԱՆՉԱ:

ՔԱՄԱՆՉԻՍՏ - *գ., ած.* Քամանչա նվագող՝ քամանչահար: *Ղըվալանց Սիրօժը լավ քամանչիստ ա իլալ* (Բ):

ՔԱՄԱՐ/ՔԱՄԱՐ *(գրբ. կամար)* - *գ.* Ոսկե՝ արծաթե եւն զարդերով գոտի: *Այուն մին վը՞սկէ քամար ա իլալ* (Բ):

ՔԱՄԱՐ - *տե՛ս* ՔԱՄԱՐ:

ՔԱՄԲԱԽՏ/ՔԱՄԲԱԽՏ *(թրք. kəmbəxt)* - *ած.* Անբախտ, դժբախտ, ոչ բախտավոր: *Թաքավէրը դանդ ա անում, թա խէ ինքը էտքան քամբախտ ա* (ՀԺՀ, V, 629):

ՔԱՄԲԱԽՏ - *տե՛ս* ՔԱՄԲԱԽՏ:

ՔԱՄԽՕՐԱԳ - *ած.* Ուտելիքի՝ կերակուրների հանդեպ քմահաճ: *Քամխօրագ մարթ ա Տօնին* (Բ):

ՔԻՄԻԼ - *ած.* Չափահաս դառնալով՝ խելքի եկած, խելահաս: *Ասում ա.- Տու քիմիլ տըղա յըս, քինի կըլծխըտ պա՛հէ* (Զ):

ՔԻՆԴ *(թրք. kend)* - *տե՛ս* ՇԷՆ (1):

ՔԻՆԴԻՐ/ՔԻԷՆԴԻՐ/ՔԷՆԴԻՐ *(պրս., թրք. kendir)* - *գ.* 1. Մի քանի տակ ոլորած կամ հյուսած ամուր թել՝ կապելու եւ տնտեսական այլ կարիքների համար, պարան: *Մըէծ ախպօրը մըէշկան քինդիր ըն կապըմ, կախ տամ* (ՀԺՀ, V, 18): 2. Երկարության անորոշ չափ: *Ըրիքնակը էրկու քինդիր ա մընացալ՝ մար մընէ* (Զ):

- Քինդիրը թօրը քինի, վէրչումը կ'ըլական ա կ'ըէփավը անց կէնա - Ասում են՝ նկատի ունենալով այս կամ այն գործի մեջ տվյալ մարդու՝ ղեկավարի կարեւորությունը. վերջնական արդյունքը նրանից է կախված:

- Քինդիրը ծըմակավը օնէլ - Դժվարին՝ ուժերից՝ կարողություններից վեր գործ ձեռնարկել: *Շատ մարթ ա քինդիրը ծըմակավը օնում ուրան խըէլքան* (Զ):

- Քինդիրը ծըմակավը օնէլ, մին ճըպատ կըտըրէլ - Մեծ՝ դժվարին գործ ձեռնարկել, սակայն չնչին արդյունք ստանալ: *Ախմաղ մարթ ա. քինդիրը ծըմակավըն ա կալալ, մին ճըպատ կըտըրալ* (Բ):

- Քինդիրը կ'ըէփավը անց կէնալ - Գործը այն իրագործելու համար կարեւոր մարդու՝ ղեկավարի միջոցով գլուխ գալ: *Մինչըէվ վէր ապան կա՛ վէչ, քինդիրը կ'ըէփավը անց չի կընան* (Զ):

Քինդիրը պօկը/վէզը քըցիլ - 1. Խեղդել, կախել: *Ըտի թաքավէրը հըրաման ա տամ, վէր էտ կ'օղէն տանին, քինդիրը պօկը քըցին* (Զ): 2. Ստիպել, պարտադրել: *Քինդիրը պօկըն ա քըցում, թա.- Ախճիգ'ըտ ինձ բիդի տաս* (Զ): 3. Իրեն ենթարկեցնել, իր կամակատարը դարձնել: *Անց ա կէնում մին տարէ, էտ հարթնը քինդիրը տընըցուց պօկըն ա քըցում* (Զ):

- Քինդիրը վըզին տինիլ - *տե՛ս* Քինդիրը պօկը քըցիլ:

- Քինդիր ծիք տալ - Խաղատեսակ, երբ խաղացողները բաժանվում են երկու խմբի եւ պարանի հակառակ կողմերից բռնելով՝ ձգում՝ ջանալով այն խլել հակառակ թիմից: *Քինդիր ծիք տալը մէր խօխա վըխտըվա սիրիլի խաղըն ա իլալ* (Բ):

Քինդիր կապած - *տե՛ս* Չաթու կապած:

- Քինդիր չըմ տալ, վէր կախ ինի/խէխտըվի - Ոչ մի բանի արժանի չէ, նույնիսկ խեղդվելու պարանի էլ արժանի չէ:

- Քընդիրա փախած - *տե՛ս* Թօկա փախած:

- Քընդիրին էրկանըն ա լ'ավ, խուսկէն կարճը - Ամեն ինչի չափը պետք է պայմանավորված լինի նրա բնույթով:

ՔԻՆԴԻՐԲԱՋ/ՔԻԷՆԴԻՐԲԱՋ/ՔԷՆԴԻՐԲԱՋ *(պրս. kandirbār)* - *տե՛ս* ՓԱՀԼԸՎԱՆ(1): *... Հունց ա՞նց կէնամ, խէ յէս քինդիրբազ ը՞մ, պա իտի պէրակ մագին կըլխավը անց կըկէնվա՞...* (ՋՏ, Բ, 6):

ՔԻՆԴԻՐԻԼ/ՔԻԷՆԴԻՐԻԼ/ՔԷՆԴԻՐԻԼ - *նբ.* Կաշկանդել, խոչընդոտել, ազատ գործելու հնարավորությունից զրկել: *Ծունը մըէզ քինդիրալ ա, կարում չընք՝ բըդէրումը կօրծ անինք* (Զ):

ՔԻՆԴԻՐՎԻԼ/ՔԻԷՆԴԻՐՎԻԼ/ՔԷՆԴԻՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՔԻՆԴԻՐԻԼ-ի:

ՔԻՆՔԱՆ - *տե՛ս* ՔԱՆՔԱՆ:

ՔԻՆՔԻՆՉԻ - *տե՛ս* ՔԱՆՔԱՆՉԻ:

ՔԻԱՇԻ - *տե՛ս* ՔԱՇԻ:

ՔԻՇԿԻՆԻՓ - *գ.* Փայտը նախշելու գործիք: *Քիշկինափը թըխծընում ա, փանդը նախշում* (Զ):

ՔԻԱՌԱՂՈՒՋ - *տե՛ս* ՔԻԱՐԱՎՈՒՋ:

ՔԻԱՌԱՎՈՒՋ - *տե՛ս* ՔԻԱՐԱՎՈՒՋ:

ՔԻԱՌՈՒ - *ած.* Պարարտ, փարթամ, ընտիր: *Քառու տըմակ օնէ էս ղօչը* (Բ):

ՔԻԱՍ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քիաս կ'ալ - Խաղը սկսելուց առաջ վիճակ գցել. խաղամայրերից մեկը, որեւէ բան թաքցնելով ձեռքերի ափերից մեկում, երկու ձեռքը բռունցքված պարզում է մյուս խաղամորը. վերջինս պետք է գուշակի, թե որ բռունցքի մեջ է այն, որպեսզի խաղը սկսի իր թիմը: *Քիաս ըն կ'ամ, ըսքըսում բաբադուշի խաղ անէլը* (Զ):

ՔԻԱՍԱԴ *(արաբ. kesad)* - *տե՛ս* ՊԱԿԱՍ:

ՔԻԱՍԱՐ *(թրք. keser (կարճ, համառոտ)* - 1. *տե՛ս* ՔԻԱՍՄԱ: 2. *մ. տե՛ս* Կարճ ասած:

ՔԻԱՍԻԲ - *տե՛ս* ՔԻԱՍԻԲ:

ՔԻԱՍԻԲ/ՔԻԱՍԻԲ *(արաբ. kyasib)* - *ած.* 1. Ապրուստի անհրաժեշտ միջոցներից զուրկ, աղքատ, չքավոր, չունեւոր: *Մըէծ ըխճըկանը տամ ա մին հըրուստու, կուճուրէն՝ մին քիասիբ տըղու* (ՆԼՂԺԲ, 33): 2. Որեւէ բան բավարար չափով չունեցող, խղճուկ: *Քիասիբ շէն ա. համ վըէղէրըն ա խըրէգ, համ ծըմըկնէն* (Զ): 3. Անշուք, ճոխությունից զուրկ: *Քիասիբ հըրսանէք ա* (Բ): 4. *գ.* Աղքատ՝ չքավոր՝ չունեւոր մարդ: *Քիասիբը հիշկան ըշխադէ, կարէլ չի հըրուստանա* (Զ): 5. *մ.* Աղքատաբար, աղքատի պես: *Քիասիբ ըն ապըրում* (Բ):

- Քիասիբը վէր հավ օտէ, յա՛ հավըն ա հիվանդ, յա՛ ինքը - Աղքատը հաճույքների դիմում է միայն ծայրահեղ դեպքերում:

- Քիասիբը օխծը կէրավ, ըսը'ցէն՝ տիւզն ա, հարուստը կէրավ, ըսը'ցէն՝ ճար ա - *տե՛ս* Հարուստը օխծը կէրավ, ըսը'ցէն՝ ճար ա, քիասիբը կէրավ, ըսը'ցէն՝ տիւզն ա:

- Քիասիբին արտը կըչուրանա, խոխան կըթիւլանա - Աղքատներն են փորձանքի ենթարկվում:

- Քիասիբին հալը քիասիբը կըգիդա - Նույն կարգավիճակում գտնվող մարդիկ են իրար հասկանում:

- Քիասիբու դանա/հօլ - Նիհար, վտիտ (մարդկանց եւ կենդանիների մասին): *Էտ էլ հօ խօխա չի՞, քիասիբու դանա յա* (Բ):

- Քիասիբու խօրագ - 1. Ոչ յուղալի՝ ոչ սննդարար կերակուր: *Թանավը քիասիբու խօրագ ա* (Բ): 2. Հեշտ՝ դյուրին գործ: *Պատ տինիլը լ'ավ ուստէն հըէտ քիասիբու խօրագ ա* (Բ):

ՔԻԱՍԻԲ-ՔԻՈՒՍՈՒԲ - *տե՛ս* ՔԻԱՍԻԲ-ՔԻՈՒՍԻԲ:

ՔԻԱՍԻԲ-ՔԻՈՒՍԻԲ/ՔԻԱՍԻԲ-ՔԻՈՒՍՈՒԲ - *գ. հվք.* Աղքատներ, աղքատ մարդկանց բազմություն: *Էտ մարթը ուրան հըրըստութունը լօխ քիասիբ-քիուսուբու պիժըէնում ա, ինքը քօչում* (Զ):

ՔԻԱՍՄԱ *(թրք. kesme)* - *ած., մ.* 1. Առանց շեղվելու՝ թեքվելու, ուղիղ: *... Վօրօշալ ըն, վար շէնը քինդին, ըտէղավ քիասմա տիւս կ'ան խաչէնա յիրա, վար վաղ հըսնէն* (ԱԱ, 28): 2. Առանց վերապահումներ անելու, շիտակ, շիտակորեն, ուղիղ: *Ղարաբացէն ըստըղավ-ընդըղավ չի ըղնում, խօսկը քիասմա յա ասում* (ԱԲԲ, 61):

ՔԻԱՍՄԱՅՕԼԻ - *գ., ած.* Կարճ, չթեքվող, ուղիղ (ճանապարհ): *Քիասմայօլի հըղէ յա* (Բ):

ՔԻԱՍՊԱՐՊՈՒՔ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քիասպարպուք անէլ - Արագ հեռանալ, փախչել: *Մին տէղ տէսնըմ ա խազայինին դախըլըն ըն կըտըրըմ քիասպարպուք անըմ, մին տէղ օրը ցիրէկավ արկաթ-ըրկութ կ'ուղանում...* (ՋՏ, Բ, 119):

ՔԻԱՍՏԱԼԱՆ - *գ.* Փոքր աղջիկներին դիմելու կոչական բառ: *Քիաստալան, մին ըստաքան ճիւր պէր, խըմիմ* (Զ):

ՔԻԱՍՏԸՐԱԿ - *տե՛ս* ԿԱՐՃ (1): *Ըլըբաստըրակ, վըէնէրը քիաստըրակ, լօխճաց շատ վագ տա, պէն չօտէ* (ԱՀ, 33):

ՔԻՎԳԻՐ/ՔԻՓԳԻՐ *(պրս. kafgir, թրք. kevgir)* - գ. Կերակրի՝ մուրաբայի եւ քափը քաշելու մետաղյա ծակոտկեն շերեփաձեւ հարմարանք: *Քիփգիրը յօր ա օնում, խաշլամէն քափը քաշում* (Զ):

ՔԻՎԾԻՆ/ՔԻՕՎԾԻՆ *(թրք. kövšən)* - գ. Արոտատեղի, արոտավայր: *Կըվէրը քըվշինումը ըրածում ըն* (Բ):

- Քիվշինը քօռ իշէրէն մընալ - Ասպարեզը՝ բնագավառը անարժաններին մնալ՝ անարժանների տնօրինության տակ ընկնել: *Էտ յըրգիրումը էլ լավ ուստա չի կա, քիվշինը մընացալ ա քօռ իշէրէն* (Զ):

ՔԻՐ/ՔԻՐ *(պրս. kyar)* - գ. Օգուտ, շահ, եկամուտ: *Ասում ա.- Էտ վէր լօխ տու վրս յէր ունէս, պա իմ քարրս վէրրն ա՞* (Զ):

- Քիար անէլ - 1. Օգուտ՝ շահույթ՝ եկամուտ ստանալ: *Միհէնգ հու վըէխճար ա պահում, լավ քիար ա անում* (Զ): 2. Արդյունք տալ, նպաստել: *Վէրջը, տըղէրքը տէսնըմ ըն, վըէր ուրանց ըջըդվէլը, կըգնըվէլը, թըկըմըհակը քիար չանըմ...* (ԼՂԲ, 305):

ՔԻՐ - *տե՛ս* ՔԻԱՐ:

ՔԻԱՐԱՄԻԹ/ՔԻՐԻՄԻԹ - *տե՛ս* ՔԻԱՐ:

ՔԻՐԻՄԻԹ - *տե՛ս* ՔԻԱՐԱՄԱԹ:

ՔԻԱՐԱՎՈՒՋ/ՔԻԱՌԱՎՈՒՋ/ՔԻԱՌԱՂՈՒՋ *(թրք. kereviz)* - գ. Մաղադանոսի նման բանջարաբույս, որ բանջարեղենների հետ թթու են դնում՝ հաճելի համ տալու համար: *Աղտիրանծէն մաչը քարավուզ բիդի քըցիս, վէր համը լավ ինի* (Բ):

ՔԻՐԳԻՀ *(պրս. kārgāh (գործատեղ)* - գ. Փայտե շրջանակ, որի մեջ ձգված ամրացնում են կտորը՝ վրան ասեղնագործելու համար: *Այան թօռնանը մին քիրգիհ ա տամ* (Բ):

ՔԻՐԹ - *տե՛ս* ԽԸՐԴ:

ՔԻՐԹՄԱ - *տե՛ս* ՔԻՐԹՄԻ:

ՔԻՐԹՄԻ/ՔԻՐԹՄԱ *(թրք. küräk)* - գ. Հողը փխրեցնելու գործիք, որ բաղկացած է երկար ձողից, որի ծայրին ամրացված է 10-20 սմ լայնությամբ մետաղե կեռ շեղբը: *Քիրթմին յօր ա ունէս, նի մընէս բաղը* (Զ):

- Քիրթմի տալ - Հողը փխրեցնել: *Վըէրը հիշկան քիրթմի տաս, էնքան պէրքը շատ կինի* (Զ):

ՔԻԱՐԽԱՆԱ/ՔԻՐԽԱՆԱ *(պրս. karxane (գործատուն)* - գ. Օղի թորելու հարմարանք՝ սարք, ինչպես նաեւ այն շինությունը, որտեղ տեղադրված է այդ հարմարանքը: *... Թիզգիդին թըթի բաղէր ըն քըցըմ, մըէծ-մըէծ բաղէրըմը արաղ քաշէլի քարխանա յըն տինըմ* (ՀԺՀ, V, 239):

ՔԻԱՐՎԱՆ *(պրս. kārvan, թրք. kervan)* - գ. Բեռներով բարձած ուղտերի եւ այլ գրաստների խումբ, քարավան: *Քըրվանէն տարը վար ըսկանում ա հուրան էշին սանը, շատ ուրխանում ա...* (ՆԼՂԺԲ, 83):

- Քիարվան կապէլ - Քարավանի նման երկար շարք կազմել: *Շատ ըն քինամ, թա խըրէգ, տէսնում ըն մըրչըմնէն, քարվան կապած, կըրմունջավրն անց ըն կէնում* (ՀԺՀ, VII, 75):

- Քիարվան կըտրել - Քարավանի հարստությունը թալանել՝ կողոպտել: *Ըտրանք վօրօշում ըն, վէր քինին քարվան կըտրրին* (Զ):

- Քիարվան կըտրէլի քըշէր - Պարզ՝ լուսնկա գիշեր: *Մին քարվան կըտրէլի քըշէր ըտրանք քինամ ըն ծրմակը* (Զ):

- Քիրվանէն ճօնդը ըրվալ/պէնվալ - Քարավանը շարժվել՝ ճանապարհ ընկնել: *Լրհա վէր քըրվանէն ճօնդը ըրվամ ա, թօռը նի յա օնում* (Զ):

ՔԻԱՐՎԱՆԲԱՇԻ/ՔԻՐՎԸՆԲԱՇԻ - գ. Քարավանի պետ՝ ավագ՝ գլխավոր: *Վրթէսին քարվանբաշի տիրին, լօխճին կըտօրից* (ԱԲԲ, 90):

ՔԻԱՐՎԱՆՍԱՐԱ/ՔԻՐՎԸՆՍԱՐԱ/ՔԻԱԼՎԱ(Ն)ՍԱՐԱ *(պրս. kārvānsaray)* - գ. 1. Իջեւան ճանապարհների վրա կամ քաղաքում, որտեղ քարավանները եւ ուղեւորները հանգստանում կամ գիշերում էին, իջեւանատուն: *Ըտրէդ մին քարվանսարա յա ինում, քըշէրը ըտրէդ կէնում ըն, ըռութանան էլիա հըդէ ինում* (Զ): 2. *փխբ.* Կեղտոտ՝ աղտոտ տեղ: *Ըտրրա տօնրն էլ հօ տօն չի՞, քարվանսարա յա, վէր նի յրս մընում, գանիլանտ տանում ա* (Բ): 3. *փխբ.* Անկարգ՝ խառնաշփոթ միջավայր՝ տեղ: *Էս էլ հօ կանտօր չի՞, քարվանսարա յա* (Բ):

ՔԻՐՓԱԹԻՆ/ՔԻՐԻՐՓԻԹԻՆ/ՔԻԸՐՓԸԹԻՆ/ՔԻՐԻՓԻԹԻՆ/ՔԻԼԲԱԹԻՆ *(պրս. kālbātan, թրք. kelpetin)* - գ. Երկաթե գործիք մի բան պինդ բռնելու՝ դուրս քաշելու համար, աքցան: *Քիրփաթինավը հիշկան ծիք ա տամ, մէխը տինս չի կամ* (Զ):

- Քիրփաթինավ պիրանան խօսկ տինս օնէլ - Դժվարությամբ խոսեցնել: *Տրնաշինըտ մին պէն չի ասում, թա ըսկանանք, քիրփաթինավ ընք պիրանան խօսկ տինս օնում* (Բ):

ՔԻՐՓԻԾ/ՔԻՐՓԻՉ *(ռուս. кирпич, պրս. karpič)* - գ. Հողախառն կամ հարդախառն կավից պատրաստած թրծած կամ անթուրծ ուղղանկյուն շինանյութ, աղյուս: *Էտ պալատը քիրփիճա յա ինում շինած* (Զ):

ՔԻՐՓԻՉ - *տե՛ս* ՔԻՐՓԻԾ:

ՔԻՓԻՆԻԳ/ՔԸՓԻՆԻԳ - գ. Երիզաձեւ ճիճու, երիզորդ: *Ասում ա.- Փօրումը քիրփինիգ կա, ըտրրա հըէտէ չի քուքանում* (Զ):

ՔԻՓԳԻՐ - *տե՛ս* ՔԻՎԳԻՐ:

ՔԻՓԻԳ - *ած., գ.* Խորամանկ, անզգամ (հատկապես՝ երեխա): *Էտ քիփիգը մօրը վըէսկէ մուտանան կուղացալ ա* (Բ):

ՔԻԱՓՈՒՌ - *տե՛ս* ՔԻԱՓՈՒՐ:

ՔԻԱՓՈՒՐ/ՔԻԱՓՈՒՌ *(արաբ., թրք. kāfir, պրս. kafār)* - *ած., գ.* Անխիղճ, անգութ (մարդ): *Քիափուր մարթ ար. մօրը լըծալ ար...* (ՀԱԲ, 15, 83):

- Քիափուր մընաս - Հանդիմանական արտահայտություն՝ ուղղված անխիղճ արարք թույլ տվողին (հաճախ գործածվում է մտերմաբար): *Քիափուր մընաս, հացը խէ լօխ կէ՞րալ ըս, պա յըէս հինչ օ՞տիմ* (Բ):

ՔԻՔԻԼԻԳ *(թրք. khekhlik)* - *տե՛ս* ՔԸՔԻՌԼԻՎԷՐ:

ՔԻՔԻԼԻԳ-ՊՕՉԻԳ - *ած.* Ծամեր եւ խոպոպներ ունեցող: *Էս քիքիլիգ-պօչիգ ախճիգը օշրս, մըէթկրս տարալ ա* (ԼՂԲ, 20):

ՔԻՔԻՌԼ *(արաբ. kyakül, թրք. kakul)* - գ. Գլխի վրա պտուտակաձեւ ոլորած մազերի փունջ, խոպոպ: *Հրռանցէ վէր ըտրրա քիքիուլը տըէսնում ա, ճրնանչում ա* (Զ):

- Քիքիուլիտ/քիքիուլին դուրբան - Ասում են որեւէ կորուստի դեպքում՝ հոգ չէ, փույթ չէ, մի՛ մտահոգվիր, քեզ մի՛ մեղադրիր: *Կավ ա, լի՞, ըստակալ ա, ըստակալ ա, քիքիուլիտ դուրբան* (Զ):

ՔԻԷՋ - *տե՛ս* ՔԻԸՋ:

ՔԻԷԹԻԿ/ՔԻԸԹԻԿ/ՔԻՕԹԻԿ *(թրք. kütük)* - գ. 1. Ծառի բնից սղոցած՝ կտրած կամ կոտրած մաս, կոճ: *Ծառը վէր ըն քըցում, մին էրկու քէթիկ կըտրրում, տինում շինըմաչումը, վէր յրրան նըստօտին* (Զ): 2. Ծառի արմատի հաստ՝ գետնից դուրս ցցված մասը: *Թօխրավ հիշկան քանդում ա, կարում չի էտ քէթիկը պուք տա* (Զ): 3. *փխբ.* Տան, գերդաստանի եւն նահապետ: *Մէր ազկէն քէթիկը Առըստամ ապան ա* (Բ): 4. *փխբ. տե՛ս* ՔԻՕՀՆԱ ՔԻԷԹԻԿ: 5. *փխբ.* Արմատական բան, սրբություն: *Էտ յըէխծէն մէր շէնին քիօթիկրն ա* (Բ):

- Քիրթիկա վէր ընգած վըէրթը - Գեր եւ դանդաղաշարժ մարդ: *Իզէն քիրթիկա վէր ընգած վէրթն ա, էն հինչ հօնդ բիդի ա՞նէ* (Զ):

- Քիրթիկու վըէրթը - *տե՛ս* Քիրթիկա վէր ընգած վըէրթը:

ՔԻԷԼԷԽ - *տե՛ս* ԲԱԴԱՐԻՔ:

ՔԻԷՆ[1] - *տե՛ս* ՔԷՆ[1]:

ՔԻԷՆ[2] - *տե՛ս* ՔԷՆ[2]:

ՔԻԷՆԴԻՐ - *տե՛ս* ՔԻԱՆԴԻՐ:

ՔԻԷՆԴԻՐԲԱՋ - *տե՛ս* ՔԻԱՆԴԻՐԲԱՋ:

ՔԻԷՆԴԻՐԻԼ - *տե՛ս* ՔԻԱՆԴԻՐԻԼ:

ՔԻԷՆԴԻՐՎԻԼ - *տե՛ս* ՔԻԱՆԴԻՐՎԻԼ:

ՔԻԷՉԱ/ՔԷՉԱ *(թրք. keče)* - *գ.* Բրդից կամ մազից պատրաստած խիտ եւ հաստ կտոր, թաղիք: *Քի՛էչա՛ յա ինք՝ օնում, էշին հը՛տի մին լ՛ավ փալան կարում* (Բ): 2. *փխբ.* Ոչ փափուկ՝ ոչ փխրուն հաց կամ այլ բան: *Էս էլ հо հաց չի, քի՛էչա՛ յա* (Բ):

ՔԻԷՉԱՄՋԱՅԻ/ՔԷՉԱՄՋԱՅԻ - *գ.* Սեւ եւ սպիտակ երկարավուն հատիկներով եւ հաստ կեղեւով խաղողի տեսակ: *Քի՛էչամջա՛յին լ՛ավ խաղու վա, ամմա էրկան կէնում չի* (Բ):

ՔԻԷՉԻ/ՔԷՉԻ - *ած.* Թաղիքից պատրաստված, թաղիքե: *Քի՛էչի շօ՛ր ա կ՛ը՛ցալ* (Բ):

ՔԻԷՓ - *տե՛ս* ՔԻԸՓ:

ՔԻԷՓԱՎ - *տե՛ս* ՔԻԸՓԱՎ:

ՔԻԷՓՉԻ- *տե՛ս* ՔԻԸՓՉԻ:

ՔԸԲԸԲԱՑՈՒ/ՔԱԲԱԲԱՑՈՒ - *ած., գ.* Քյաբաբի համար նախատեսած (միս): *Ք՛ըբըբացուն ղըրաղ ա տինում, մընացած մէսը ծախում* (Ձ):

ՔԸԲԸԲԽԱՆԱ/ՔԱԲԱԲԽԱՆԱ *(թրք. kababxane)* - *գ.* Խորովածանոց: *Միհէնգ՝ ք՛ըբըբխանա շատ կա* (Բ):

ՔԸՁԸ՞ՏԷ/ՔԸՁԸ՞ՏԷ - *մ.* Քեզ համար: *Ասում ա.- Վէր պիրիս, ք՛ըզը՞տէ մին տօն ըմ շինա՛կա՛ն* (Ձ):

- Ք՛ըզը՞տէ փալանք՛ասը չըմ - Մի՛ փորձիր ինձ խաբել՝ միամտացնել, ինձ ուրիշի հետ մի՛ համեմատիր:

ՔԸ՞Ձ/ՔԻԷՁ/ՔԷՁ/ՔԸ՞Ձ *(գրբ. քեզ)* - *դ.* Անձնական դերանվան երկրորդ դեմքի եզակի թվի՝ *ՏՈՒ*-ի տրական հոլովաձեւը: *Տըղան տա՛ւս ա կ՛ամ, ասում, վը՞ր յէս ըմ ք՛էզ կ՛ինթընցըրալ* (ՀԺՀ, VI, 126):

- Ք՛ըզանա յը՞րընը ա՞, թա ք՛ըզանա վէ՞րը - Ասում են ագահ մարդկանց:

- Ք՛ը՞զ հըրցընօղ չի կա - *տե՛ս* Ք՛ը՞զ հի՞նչ:

- Ք՛ը՞զ հինչ - Քո գործը չէ, քեզ չի վերաբերում: *Ասում ա.- Տարալ ըմ, լ՛ավ ըմ ըրալ, ք՛ը՞զ հի՞նչ* (Ձ):

- Ք՛ը՞զ մատաղ (հնիմ, անիմ) - 1. Խնդրելու՝ աղերսելու փաղաքշական արտահայտություն: *Ք՛ը՞զ մատաղ, ք՛ը՞մնա՛ զ ըրա՛, պէռնը քըցիմ էշավը* (Բ): 2. Սիրո՝ խանդաղատանքի արտահայտություն: *Ք՛ը՞զ մատաղ, ասօր կը՞կ՛աս մէր տօն՝ խըրաված օտինք՛* (Բ):

- Ք՛ը՞զ պէն ըմ ասում - Ասածս կարեւոր է՝ արժեքավոր է, հավատա՛ ինձ: *Հա՛ռը թա.- Ք՛ը՞զ պէն ըմ ասում, ք՛ինի՛ Ըրշակէն կօշտը, փուշմընան չըս* (Ձ):

- Ք՛ը՞զ տը՞ս - Արհամարհական արտահայտություն՝ քո մասին հոգ տա՛ր: *Ասում ա.- Ինձ նըհը՞տ կօրծ չօնիս, տու ք՛ը՞զ տը՞ս* (Ձ):

- Ք՛ը՞զ տը՞սնամ - Խրախուսական՝ հորդորական արտահայտություն՝ աշխատիր պատվով դուրս գալ: *Ք՛ը՞զ տը՞սնամ, Սի՛մօն դայի, էտ փա՛հլիվանէն յը՞խնէ, վէր էլ մը՞ծ-մը՞ծ խօսէ վէչ* (Ձ):

ՔԻԸԹՈՒԿ - *տե՛ս* ՔԻԷԹՈՒԿ:

ՔԻԸՓ/ՔԻԷՓ *(արաբ., թրք. keyf)* - *գ.* 1. Կերուխում, խնջույք, ուրախություն: *Ք՛ը՞փէն վախտը թօռը նի յա օնում, հարամ անում* (Ձ): 2. Բավականություն, հաճույք: *Ըմըռնըվա թօռը մըզը՞տէ ք՛ը՞փ ա* (Բ): 3. Ցանկություն, կամք: *Լօխ ուրխանում ըն, ամմա էտ պէնը թաքավէրին ք՛ը՞փավը չի հնո՛ւմ* (Ձ): 4. Տրամադրություն: *Ասում ա.- Ըսօր թաքավէրին ք՛ը՞փը լ՛ավ չի, էք՛ո՛ւց կը՞կ՛աս* (Ձ):

- Ք՛ը՞փ անել - 1. Կերուխում՝ ուրախություն անել, զվարճանալ: *Կինուն կարասը պէնում ըն, կ՛առնը խըրավում, նըստում ք՛ը՞փ անում* (Ձ): 2. Իր կամքով՝ իր ուզածի պես ապրել՝ վարվել՝ շարժվել, իրեն ազատ զգալ: *Ըտըրանք խանէն քըշտան փախչում ըն, ք՛ինամ ծըմըկնէն, ո՛ւրա՛նց հը՞տէ ազադ ք՛ը՞փ անում* (Ձ):

- Ք՛ը՞փավը ք՛ինիլ - Մեկի տրամադրությանը կամ կամքին համապատասխան վարվել: *Խը՞ղճ Ա՛րիսա՛կը օխտը հարթնը օնէ, գ՛ո՛ւդո՛ւմ չի, թա վէրին ք՛ը՞փավը ք՛ինի, վէր լ՛ավ ինի* (Բ):

- Ք՛ը՞փէն թօղնել/թօղ անել - Իր կամքին թողնել: *Թաքավէրը ասում ա.- Քու ք՛ը՞փէտ ըմ թօղնում, հունցը օգում ըս, ըրա՛* (Ձ):

- Ք՛ը՞փէն նի կ՛ա՛ն - 1. Թեթեւ վիրավորել, նեղացնել, տհաճություն պատճառել, տրամադրությունը գցել: *Վէր ո՛ւրո՛ւր ք՛էփէ նի չի կ՛ան, կօրծը սուդի յըն տամ* (ՀԺՀ, V, 334): 2. Թեթեւ վիրավորվել, նեղանալ, տհաճություն զգալ, տրամադրությունն ընկնել: *Էտ վը՞ր ըստի յա ասըմ, թաքավէրին տըղին ք՛էփին նի յա կ՛ամ...* (ՀԺՀ, V, 88):

- Ք՛ը՞փէն ք՛ը՞փ չըհըսնել - Շատ ուրախ՝ գոհ՝ երջանիկ լինել: *Մաքաղաթ աքօրը թօռնը բընական յը՞կալ ա, ք՛ը՞փէն ք՛ը՞փ չի հըսնում* (Բ):

- Ք՛ը՞փը արամիշ անէլ/զօղ անել - Բավականություն՝ հաճույք վայելել: *Մին տէղ հազարնէ յըն խարջըմ, ք՛էփը արամիշ անըմ, մին օրիշ տէղ կապէկ չըն ք՛ըթէնըմ՝ դօխտուրի յա ճարի տան...* (Ձ):

- Ք՛ը՞փը թօղնել - *տե՛ս* Ք՛ը՞փը խարաբ ինիլ: *Տը՞սնըմ ա, վէր Բաղդասարէն ք՛էփը թօղալ ա...* (ՀԱԲ, 15, 14):

- Ք՛ը՞փը խարաբ - Անտրամադիր, տրամադրությունն ընկած: *Ք՛ը՞փը խարաբ մարթ ա, հինչ ը՞ս շուլուղ անում* (Բ):

- Ք՛ը՞փը խարաբ անէլ/խըրըբցընէլ - Տրամադրությունը գցել: *Թօռը հօնդ ընուղնէրէն ք՛ը՞փը խարաբ ըրավ* (Բ):

- Ք՛ը՞փը խարաբ ինիլ/խարաբ տը՞ռնալ/խըրըբանալ - Տրամադրությունն ընկնել, անտրամադիր լինել, իրեն վատ զգալ: ... *Տըղէրքը յէր ըն կընաս, տըսնաս՝ մօրը ք՛էփը խարաբ ա* (ՀԺՀ, V, 251):

- Ք՛ը՞փը լ՛ավ - *տե՛ս* Ք՛ը՞փը ք՛օք:

- Ք՛ը՞փը լ՛ըվանալ - *տե՛ս* Ք՛ը՞փը ք՛ուքանալ:

- Ք՛ը՞փը լ՛ըվըցընէլ - *տե՛ս* Ք՛ը՞փը ք՛ուքըցընէլ:

- Ք՛ը՞փը կ՛ա՛ն - Հիանալ: ... *Տընէր ըն շինալ, վէր յէշիս, ք՛ը՞փըտ կը՞կ՛ա...* (ՀԲ, 348):

- Ք՛ը՞փը կօտ(ը)ռէլ - 1. *տե՛ս* Ք՛ը՞փը խարաբ ինիլ: *Էտ տըղան շատ ա տըխըրվըմ, ք՛ը՞փը կօտրըմ ա...* (ՀԺՀ, V, 21):

- Ք՛ը՞փը հազզար/միլլո՛ն - Տրամադրությունը խիստ բարձր (հիմնականում՝ հարբելուց): *Ք՛ը՞փը հազզար մարթին անա հինչը օգ՛իս, կըտա* (Ձ):

- Ք՛ը՞փը հազզար/միլլո՛ն տը՞ռնալ - Տրամադրությունը խիստ բարձրանալ (հիմնականում՝ հարբելուց): *Թամադան մին էրկու կ՛ը՞վաթ վէր խըմում ա, ք՛ը՞փը հազզար ա տը՞ռնում* (Ձ):

- Ք՛ը՞փը հարամ անէլ/հըրըմցընէլ - 1. *տե՛ս* Ք՛ը՞փը խարաբ անել: 2. Ուրախությունը՝ խնջույքը փչանալ՝ խափանվել (անախորժ արարքով՝ վարմունքով եւն): *Ըտըրանք հա՛ռփհում ըն, կը՞ռը՞վ անում, հըրսընքըվուրնէրէն ք՛ը՞փը հարամ անում* (Ձ):

- Ք՛ը՞փը հարամ ինիլ/տը՞ռնալ/հըրամէլ - 1. *տե՛ս* Ք՛ը՞փը խարաբ ինիլ: 2. Ուրախությունը՝ խնջույքը փչանալ՝ խափանվել (անախորժ արարքով՝ վարմունքով եւն): *Էտ ախմախը քացէ յա տամ կ՛ինուն կօլան պարան տամ, ք՛ը՞փ ընօղնէրէն ք՛ը՞փը հըրամում ա* (Ձ):

- Ք՛ը՞փը յը՞խծուն խութ՛ումը - *տե՛ս* Ք՛ը՞փը հազզար: *Ուռթանա-քըշէրավ յէր ա կէնում՝ ք՛էփը յը՞խծուն խութ՛ումը* (ՆԱԲ, 57):

- Ք՛ը՞փը պէնվալ - *տե՛ս* Ք՛ը՞փը ք՛ուքանալ:

- Ք՛ը՞փը սըխտօրէլ - *տե՛ս* Ք՛ը՞փը հարամ անել:

- Ք՛ը՞փը տալ - Ցանկանալ, հաճել,

ուզել: ... *Մին սաղ քըղաքու մըծ ա, վէր սըհաթ քէփը հինչ տա, ինդի յէլ կարող ա անէ* (ՀԲ, 338):

- Քըփը քուքանալ - Տրամադրությունը բարձրանալ: *Նօքայրը վըխվըխէլավ մին կըվաթ խըմալ ա, քըփը քուքացալ ա* (ԱԱ, 62):

- Քըփը քուքըցընել - Տրամադրությունը բարձրացնել: *Ըտըրան խըմըցընում ըն, քըփը քուքըցընում, դարկում տօն* (Ձ):

- Քըփը քօք - 1. Տրամադրությունը բարձր, ուրախ, երջանիկ: *Քընիս ա մին մէծ քաղաք հըսնէս, տըսնաս ժողովուրթը, քըփըրնէն քօք, ամմէնը ուրանց կօրծէն* (ՀԺՀ, V, 297): 2. Հարուստ, ապահով, երջանիկ: *Առաչ Մացակը շատ ա իլալ քանիբ, միհէնգ քըփը քօք ա* (Բ):

- Քըփը քօք անել - *տե՛ս* Քըփը քուքըցընել: *Մուկուչը կինի յա խըմալ, քըփը քօք ըրալ* (ՀԲ, 349):

- Քըփը քօք ինիլ/պահէլ - Ուրախ՝ լավ տրամադրության մեջ լինել: *Մարթին քըփը բիդի քօք ինի, վէր սըրտան տա՝ մին պէն անէ* (Բ):

- Քըփը օգիլ - *տե՛ս* Քըփը տալ:

- Քըփի չինիլ - *տե՛ս* Քըփը խարաբ ինիլ:

- Քըփի քաշիլ - *տե՛ս* Քըփը արամիշ անել: *Տահանք ամէն օր օտում ըն, խըմում, քըփի քաշում* (ՆԼՂԺԲ, 65):

ՔԸՓԱՎ/ՔԷՓԱՎ - *ած., մ.* Ուրախ, բարձր տրամադրությամբ (հիմնականում՝ խմիչքի ազդեցությունից): *Հըրսընքան լօխ քըփավ ըն քինամ տօն* (Ձ):

ՔԸՓ-ՁՕՂ - *տե՛ս* ՔԸՓ(1): *Ամմա տու յէկ, տէս, վէր բօլլուղ ա Բաքվա կըլուբումը կարտի տըվող, քէփ-զօղ անօղ ջահիլ-ջըհուլներիդ* (ՁՏ, Բ, 95):

ՔԸՓ-ՀԱԼ - *գ.* Տրամադրություն, վիճակ: *Ըտըրա քըփը-հալը շատ փիս ա* (Բ):

- Քըփի-հալ հըրցընել - Վիճակով՝ առողջությամբ հետաքրքվել, որպիսությունն իմանալ: ... *Էնքան լայաղ չանում, թա լըհա կա, քէփ-հալ հըրցընէ* (ԱԱռ, 29):

ՔԸՓՁԻ/ՔԷՓՁԻ *(թրք. kefči)* - *ած., գ.* Քեֆասեր, քեֆ՝ կերուխում սիրող, խրախճասեր (մարդ): *Մէր Անդիրին քըփչի յա, սաղ օրը հընգէրուցը հըվաքում ա, քըփի անում* (Բ):

- Քըփչի Հասան - Քեֆասեր՝ խրախճասեր մարդ: *Էտ էլ հօ կօրծ անօղ չի՞, քըփչի Հասան ա* (Ձ):

ՔԸԹԱՎՈՒՐ - *ած., գ.* Կենտրոնում գաթայի ձեւով կլոր նախշազարդ ունեցող (գորգ): *Այուն մին դաշանգ քըթավուր գաբա յա իլալ* (Բ):

ՔԸԹԸՆԱԽՇԻ - *գ.* Գաթայի երեսը նախշելու փայտե՝ ոսկորե եւն հարմարանք: *Քըթընախշին յօր ա օնում, քըթին իրըսը նախշում* (Բ):

ՔԸԹՆԸՎԻԼ - *տե՛ս* ՔԸԹԷՆՎԱԼ:

ՔԸԹՆԻԼ - *տե՛ս* ՔԸԹԷՆԱԼ:

ՔԸԹՆՕՎԻ - *տե՛ս* ՔԸԹԸՆՕՎԻ:

ՔԸԼՈՒՆ - *տե՛ս* ՔԸԼԻՈՒ:

ՔԸԼՈՎԻԼ - *տե՛ս* ՔԸԼԸՈՎԻԼ:

ՔԸԼԸԼԱՍՏԸՐԻ *(թրք. kulbastre (կասկարայի վրա խորոված միս)* - Գործածվում է կապակցության մեջ:

- Քըլըբաստըրի անել - 1. *տե՛ս* ԽԸՆՁՄԸՆՁՕՐԷԼ: 2. *փխբ.* Գործը արագ եւ անփութորեն անել: *Էն էլ հօ հօնձ չի՞ ըրալ, քըլըբաստըրի յա ըրալ, մին օրումը պըրծալ* (Ձ):

ՔԸԼԸՈՎԻԼ/ՔԻԼԻՈՎԻԼ/ՔԸԼՈՎԻԼ - *նբ.* Փականքով՝ կողպեքով՝ բանալիով փակել, կողպել: *Առաչին կընէգը տինում ա էտ տանը, քըլըոնում* (ՆԼՂԺԲ, 67):

ՔԸԼԸՈՎԻԼ/ՔԻԼԻՈՎԻԼ/ՔԸԼՈՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՔԸԼԸՈՎԻԼ-ի:

ՔԸԼԸՆԳՕՇ/ՔԻԼԻՆԳՕՇ/ՔԻՆԻԼՆԻՆԳՕՇ *(պրս. kālġūš (եռացրած)* - *գ.* Կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով եւ վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով: *Աստուծ մին ալլամա քար քըցի բէրզէնէրէն կըլխին, վէր հանց քիլինգօշ չիփէցին՝ համ ուրանք օտին, համ էլ խալխը նէստա մին մաննը լըպըզտէ* (ՁՏ, Բ, 62):

ՔԸԼԸՓԱՉԱ *(թրք. kəlləpača)* - 1. *տե՛ս* ԽԱՇ[1](2): 2. *տե՛ս* ՎԸՆՆԸԿԸԼՕԽ (1):

ՔԸԼԻՈ/ՔԻԼԻՈ *(թրք. kilit)* - *գ.* Որեւէ բան կողպելու սարք, կողպեք: *Թըխում ըն քիլիոը կօտըրում, տօռնը պէնում* (Ձ):

- Քըլիոր անել - *տե՛ս* ՔԸԼԸՈՎԻԼ:

- Քըլիոու տակէ պահէլ/տինիլ - Հսկողության տակ պահել, արգելքի ենթարկել, փակի տակ դնել: *Էտ ըռընընխըմէ թաջիրը ուրանն կընգանը քըլիոու տակէ յար պահում* (Ձ):

ՔԸԼԻՆԳ/ՔԸԼՕՆԳ/ՔԻՆԻԼԻՆԳ/ՔԻՆԻԼՕՆԳ *(թրք. külüng)* - 1. *տե՛ս* Թօխուր: 2. *տե՛ս* ԼԻՆԳ:

ՔԸԼԻՆԻՍԱՌ/ՔԻՆԻԼԻՆԻՍԱՌ - *տե՛ս* ՍԱՐՈՒ[1] (1):

ՔԸԼՕՆԳ - *տե՛ս* ՔԸԼԻՆԳ:

ՔԸՄԱՏ(Տ)ԱՂ/ՔՈՒՄԱՏ(Տ)Ա(Ղ) - *ձ. տե՛ս* Քըզ մատաղ:

ՔԸՄԲԸԽՏԱՆԱԼ - *չբ.* Դժբախտ դառնալ, դժբախտանալ: *Ըտի էտ ախճիգը քըմբըխտանըմ ա* (Ձ):

ՔԸՄԲԸԽՏՑ(Ը)ՆԷԼ - 1. *նբ.* ՔԸՄԲԸԽՏԱՆԱԼ-ի: 2. *նբ. փխբ.* Կոյս աղջկան պատվազրկել: *Թաղիմ ընդըրա, խըղճ ըխճըկանը խանփալ ա, քըմբըխտցըրալ* (Բ):

ՔԸՄԲԸԽՏՕԹՈՒՆ - *գ.* 1. Դժբախտ լինելը, դժբախտի դրությունը, անբախտություն: *Քընիբօթունըն էլ ա քըմբըխտօթուն* (Բ): 2. Դժբախտ դեպք՝ պատահար: *Ըշտըղ մին քըմբըխտօթուն կա՝ մըզ ա պըտահում* (Բ):

ՔԸՄՍԱՄԸՂ/ՔԻՄՍԱՄԸՂ - *ած., գ.* 1. Ամուսինը մեռած (կին): *Քըմսամըղռ կընէգ ա, լի՞, մին թանիրավ ա խօխէնքը պահում* (Ձ): 2. Անզգամ, անպարկեշտ (կին): *Էս քըմսամըղռը մարթին հըղէ յա տինում, ինքը սիրըկանէն նընիրտ քըփի անում* (Ձ):

- Քըմսամըղռ մընա(ս) - Անեծքի արտահայտություն՝ ամուսինը/ամուսինդ մեռնի: *Քըմսամըղռ մընաս, թամարա, ըխճըկանըս չանփին խէ թըխում ը՞ս* (Բ):

ՔԸՆԱԼ - *տե՛ս* ՔԻՆԻԼ:

ՔԸՆԻԼ - *տե՛ս* ՔԻՆԻԼ:

ՔԸՆԻԼԱՎ - *տե՛ս* ՔԻՆԻԼԱՎ:

ՔԸՆԻԼԱՏԸՊ - *տե՛ս* ՔԻՆԻԼԱՏԸՊ:

ՔԸՆՎԱԼ - *տե՛ս* ՔԻՆՎԻԼ:

ՔԸՆՎԻԼ - *տե՛ս* ՔԻՆՎԻԼ:

ՔԸՆՕՂ-ԿԸՎՕՂ - *տե՛ս* ՔԻՆՕՂ-ԿԸՎՕՂ:

ՔԸՆՕՂ-ՅԸԿՕՂ - *տե՛ս* ՔԻՆՕՂ-ՅԸԿՕՂ:

ՔԸՌԱՀ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քըռահ կալ/ըղնէլ - Հագենալ, բավարարվել: *Էնքան օտում ա, վէր լափ քըռահ ա կամ* (Ձ):

- Քըռահ տալ - Հագեցնել, բավարարել: *Պիրում ըն վըսկավ թօրբան լըցնում, քըռահ տամ, հըղէ տինում* (Ձ):

ՔԸՍԱԴԷԼ - *տե՛ս* ՊԸԿԱՍԷԼ:

ՔԸՍԸԲԱՆԱԼ/ՔԻՍԻԲԱՆԱԼ - *չբ.* 1. Աղքատ դառնալ: *Էտ վըխտանց էլ ըտըրանք ըսքըսում ըն քըսըբանալը* (Ձ): 2. Որեւէ բան՝ որեւէ հատկություն պակասել: *Ճանր չի կա, բուստըննէն քըսըբացալ ա* (Բ):

ՔԸՍԸԲԱՑՈՒ/ՔԻՍԸԲԱՑՈՒ - *ած., գ.* Ծույլ՝ աղքատ դառնալու ենթակա (երիտասարդ): *Քըսըբացու ջըհիլնէ յըն մըհէնգվա ջըհիլնէն* (Բ):

ՔԸՍԸԲԱՓԱՅ/ՔԻՍԻԲԱՓԱՅ - *գ.* Ուտելեղենի այն մասը, որ իբրեւ ողորմություն տրվում է աղքատներին: *Այան ամմէն օր հաց ուտէլիս քըսըբափայը ղըրաղ ար տինում* (Բ):

ՔԸՍԸԲՎԱՉԻ/ՔԻՍԻԲՎԱՉԻ - *տե՛ս* ՔԸՍԸԲՎԱՐԻ:

ՔԸՍԸԲՎԱՐԻ/ՔԻՍԻԲՎԱՐԻ - *մ.* Աղքատաբար, աղքատի պես: *Քըսըբվարի յըն ապըրում* (Բ):

ՔԻԸՍԸԲՑ(Ը)ՆԷԼ/ՔԻՍԻԲՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՔԻԸՍԸԲԱՆԱԼ-ի:

ՔԻԸՍԸԲՓԱՆԴԻ/ՔԻՍԻԲՓԱՆԴԻ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲՎԱՐԻ:

ՔԻԸՍԸԲՕԹՈՒՆ/ՔԻՍԻԲՕԹՈՒՆ - *գ.* Աղքատ լինելը, աղքատ վիճակ, աղքատություն: *Քիսըբօթունը շատ մարթու տօն ա քանդալ* (Ձ):

- Քիսըբօթուն անէլ - Մուրացկանություն անել, մուրալ: *Էտ տըղան ամմէն օր քինամ ար քիսըբօթուն անում, պիրում քըվօրցը պահում* (Ձ):

- Քիսըբօթունը նըստա ծըլծըլալ - Շատ աղքատ լինել: *Սահանք էն ըն ընում նէղութիւնու մաչի, քիսըբօթունը նըստըրնէրան ծըլծըլայիս* (ՆԱԲ, 28):

ՔԻԸՍԸՊՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՊԸԿԸՍՑ(Ը)-ՆԷԼ:

ՔԻԸՍԸՊՕԹՈՒՆ - *տե՛ս* ՊԸԿԸՍՕ-ԹՈՒՆ:

ՔԻԸՍԻՒՐԱԹՕՂ/ՔԸՍԻՒՐԱԹՕՂ - *գ.* Կեսօրին հանգստանալը եւ ճաշելը: *Քիսիւրթօղէն վախտը ծըռէրէն տակէն պարանց ըն ըղնում, դինջանում* (Ձ):

- Քիսիւրաթօղ անէլ - Կեսօրին հանգստանալ եւ ճաշել: *Պատառ էլ ըն հընձիւմ, քիսիւրաթօղ անում* (Ձ):

ՔԻԸՍԻՒՐԱՀԱՑ/ՔԸՍԻՒՐԱՀԱՑ - *գ.* 1. Կեսօրին ուտելը, ճաշ: *Քիսիւրահացը վէր ըսքըսում ըն, թօռը նի յա օնում* (Ձ): 2. Ճաշելու համար նախատեսված ուտելեղենը: *Ախպէրքը շատ ըն ըսպասում, ամմա քուրը քիսիւրահացը պիրում չի* (Ձ):

ՔԻԸՍԻՒՐԱՅԸՏ/ՔԸՍԻՒՐԱՅԸՏ - *մ.* 1. Կեսօրից հետո: *Քիսիւրայը՛տ ամը՛վը էլիա տիւս ա կ'ամ...* (Ձ): 2. Ուշացումով: *Քիսիւրայը՛տ հաբին ըսքըսալ ա մը՛զ նըհը՛տ պարիկըմօթուն անէլը* (Բ):

- Քիսիւրայը՛տ հաջաթ կ'ալ - Մեկի՝ մի բանի հարգը՝ արժեքը ուշ հասկանալ: *Ջանվանթը քիսիւրայը՛տ հաջաթ ա յը՛կալ, տըղէրքը ամմէն շէբաթ կ'ամ ըն զիրավ ընցընում* (Ձ):

ՔԻԸՍՕՐ/ՔԸՍՕՐ/ԿԷՍՕՐ - *գ.* 1. Օրվա կեսը, ցերեկվա այն պահը, երբ արեգակը գտնվում է զենիթում: *Էքսը քըշէրավ Կուքին հանդ ա քինամ, Մուքին էլ մինչէվ քիսօր քօն ա ինիւմ, քուշտանում...* (ՆԼՂԺԲ, 93): 2. *տե՛ս* ՔԻԸՍԻՒՐԱԹՕՂ:

- Քիսօրա յը՛տ - *տե՛ս* ՔԻԸՍԻՒՐԱ-ՅԸ՛Տ:

- Քիսօրը ծըռ(վ)էլ - Օրը թեքվել դեպի երեկո: *Քիսօրը վէր ծըռում ա, ըստըրանք հըդէ յըն ինիւմ* (Ձ):

ՔԻԸԽԱՆԱ - *տե՛ս* ՔԱՐԽԱՆԱ:

ՔԻԸՎԸՆԱԲԱՇԻ - *տե՛ս* ՔԱՐՎԱՆ-ԲԱՇԻ:

ՔԻԸՎԸՆՍԱՐԱ - *տե՛ս* ՔԻԱՐՎԱՆ-ՍԱՐԱ:

ՔԻԸՓԸԹԻՒՆ - *տե՛ս* ՔԻՈՓԹԻՒՆ:

ՔԻԸՓԻՒՃԷ/ՔԻԸՓՈՒՉԷ - *ած.* Աղյուսից պատրաստված, աղյուսաշեն: *Քիրփիւճէ տօն ա* (Բ):

ՔԻԸՓԻՒՉԷ - *տե՛ս* ՔԻԸՓԻՒՃԷ:

ՔԻԸՓԱՆԱԳ - *տե՛ս* ՔԻՓԱՆԱԳ:

ՔԻԸՓԱՍԷՐ - *տե՛ս* ՔԻԸՓՉԻ:

ՔԻԸՔԻՒԼԱՎԷՐ/ՔԻՒՔԻՒԼԱՎՈՒՐ - *ած.* Խոպոպներ ունեցող, խոպոպավոր: *Քիրքիւլանվէր վը՛րցակ ա* (Բ):

ՔԻ *(պրս. ki (թե, որ)* - *տե՛ս* ՅԱՆԻ:

ՔԻԼՈՒՆ - *տե՛ս* ՔԻԸԼՈՒՆ:

ՔԻԼԻԴ - *տե՛ս* ՔԻԸԼԻԴ:

ՔԻԼԻԴԻԼ - *տե՛ս* ՔԻԸԼԻԴԻԼ:

ՔԻԼԻԴՎԻԼ - *տե՛ս* ՔԻԸԼԻԴՎԻԼ:

ՔԻԼԻՆԳԾԾ - *տե՛ս* ՔԻԸԼԸՆԳԾԾ:

ՔԻՄԻ - *կ.* 1. Չափ, մեծությամբ, պարունակությամբ, ծավալով եւն: *Էս կընէգ'ըս քինացալ ա մին յալլուխ քիմի առալ, տարալ տափէն շաղ տըվալ* (ՀԺՀ, VI, 159): 2. Մոտ, շուրջ, մոտավորապես: *Էրկու սըհաթ քիմի ըսպասում ա, քինամ* (Ձ):

ՔԻՄՍԱՄԸ՛Ռ - *տե՛ս* ՔԻԸՄՍԱՄԸ՛Ռ:

ՔԻՄՍԱՆԴ - *գ.* Էությունը, ով լինելը: *Մինը կա վէջ, թա ըստրա քիմսանդը հըրցընէ* (Ձ):

ՔԻՄ-ՔԻՄԻ *(թրք. kim (ով)* - *տե՛ս* ՀԱՐՔԻՐՔԻՆԱ:

ՔԻՆԱԼ - *տե՛ս* ՔԻՆԻԼ:

ՔԻՆԻԼ/ՔԸՆԻԼ/ՔԻՆԱԼ/ՔԸՆԱԼ/ՔԻԱԼ *(գրբ. գնամ)* - *չբ.* 1. Մի տեղից մի այլ տեղ փոխադրվել: *Մին օր էլ քինամ ա ախպօրը տօնը, տը՛սնում վէջ ախպէրը կա, վէջ տօնը* (Ձ): 2. Հեռանալ, թողնել-հեռանալ: *Ըտի էլ թաքավէրին տըղէն սըղըցընում ըն, վը՛սկէն յօր օնում, քինում* (ԱԱ, 74): 3. Մեկնել, ուղեւորվել, ճանապարհ ընկնել: *Ըստրանք պըղըրաստըվում ըն, վէր քըշէրը ըստը՛ղ կէնան, ըռութանան քինին* (Ձ): 4. Որեւէ նպատակով դուրս գալ: *Քինամ ա ճիրու, տը՛սնում՝ ախպիւրը ցըմաքած* (Ձ): 5. Հաճախել: *Միհէնգ' լօխ խօխէնքը ըշկալ ըն քինամ* (Բ): 6. Շարժվել, քայլել, ճանապարհ գալ: *Շատ ա քընիւմ, խըրէգ' ա քընիւմ, տէսնում ա մին ճէղաց* (ՀԺՀ, V, 325): 7. Խրվել, թաղվել: *Վէր վը՛ննը ըղնում ա ցը՛խը, մինչը՛վ վէրչ քինում ա* (Ձ): 8. Որեւէ զբաղմունքի ձեռնարկել: *Քինամ ա ծառայութան* (Բ): 9. Ուղղված լինել դեպի..., ուղղություն ունենալ, տանել, ձգվել: *Էս հըղէն քինամ ա մէր շէնը* (Բ): 10. Հոսել: *Քըթան ամրուն ա քինամ* (Բ): 11. Ընթանալ, ընթացք ունենալ: *Կօրծէրըս լ'ավ ա քիւնիւմ* (Բ): 12. Գործածվել, օգտագործվել, ծախսվել: *Էս տանը յըրա ցէմէնդ շատ ա քը՛ցալ* (Բ): 13. Պակասել: *Հինչ քը՛ցալ ա, մըզանա յա քը՛ցալ, ծըզանա հինչ ա՞ քը՛ցալ* (Ձ): 14. Անցնել, ըստ ժամանակի հեռանալ: *Ապուն ջըհիլօթունը էտ սըրէրըմըն ա քը՛ցալ* (Բ): 15. Շարունակվել: ... *Ասալ ա.- Վէշ մին պան, թող ժօղովը քինա, յէս վէրչիւմը կըխօսէմ* (ԱԱ, 80): 16. Հասնել՝ տարածվել մինչեւ...: *Էս մարթըն էլ թա.- Օզըմ ըմ տը՛սնամ՝ վը՛տը մինչը՛վ հանքինը քը՛ցալ ա՞* (ԱԱռ, 75): 17. Աստիճանական կերպով անցնել, առաջադիմել: *Քանէ քինամ ա, էտ խօխան ղըշընգանում ա* (Ձ): 18. Ամուսանալ, մարդու գնալ: ... *Վէրքան հարուստ տըղէրքը՛ ըն կ'ամ, վէր էտ ըխճըկանը օգին, վէչ մինին քինանամ չի* (ՀԺՀ, V, 562): 19. Վերանալ, անհետանալ: *Մը՛զ լ'ավ անդաթնէ շատ ա իլալ, լօխ քը՛ցալ ա* (Բ): 20. Մեռնել: *Հիվանդը վէր քինիլի յա ինիւմ, մատաղը քօմանգ' չանում* (ԱԲԲ, 58): 21. Վաճառվել: *Խօզին մէսը բըզարումը լ'ավ ա քընիւմ* (Բ): 22. *վ.* Թե կարող ես, ապա (գործածվում է հրամայական եղանակով): *Թընխում ա, դարյազը կօտըրում, թա.- Դէ քինի հարէ, տը՛սնամ՝ հունց ըս հարում* (Ձ):

- Քինիլը(տ) ինի, կ'ալը(տ) չինի - Անեծքի արտահայտություն՝ այլեւս չվերադառնա(ս), անհետանա(ս):

- Քինի մը՛ռէ, յը՛ք սիրիմ - Ասում են՝ նկատի ունենալով մեռնելուց հետո մեկի գնահատվելը:

- Քինօղը կըպիրի - Որեւէ բանի ձգտողը արդյունքի կհասնի:

ՔԻՆԻԼԱՎ/ՔԸՆԻԼԱՎ/ՔԻԼԱՎ - *մ.* Հետզհետե, աստիճանաբար: *Քինիլանվ կըռը՛վը թանդիւմ ա* (Բ):

ՔԻՆԻԼԱՏԸ՛Ղ/ՔԸՆԻԼԱՏԸ՛Ղ - *գ.* 1. Այն տեղը, ուր գնում են՝ պետք է գնան: *Ըստրանց քինիլատը՛ղը հանլա մանիլիւմ չի* (Ձ): 2. Բարեկամ, հարազատ, ընկեր եւն, որին այցելում են: *Սաղ շէնումը մին քինիլատը՛ղ չօնէ* (Բ):

ՔԻՆԻԼ-Կ'ԱԼ - *չբ.* 1. Ետ ու առաջ քայլել, ճեմել: *Տիւս ա կ'ամ պըլատէն առաշկը, քիւնիւմ-կ'ամ* (Ձ): 2. Անցուդարձ անել, երթեւեկել: *Ամմա քինիլ-կ'ալը տիժէր ա լալ...* (ԱԱ, 21): 3. Այցելել, հաճախել: *Էտ ախճիգ'ը շատ ա քընանամ-կ'ամ, մին օր էտ տըղէն վար տէսնըմ ա, խըրէգ' ա մընամ՝ խէլքը կուրցընէ* (ՆԼՂԺԲ, 8): 4. Օրորվել, տատանվել, տարուբերվել: *Վէր քամէ յա ինիւմ, էտ սիւթունը քինանամ ա-կ'ամ* (Բ):

- Քինիլ-կ'ալ ինի - Իրար հետ ընկերական՝ բարեկամական հարաբերու-

թյունների մեջ լինել: *Մացակը ա Ալօն ուրուր նըհը՛տ քինիլ-կ՛ալ օնին* (Բ):

ՔԻՆՎԱԼ - *տե՛ս* ՔԻՆՎԻԼ:

ՔԻՆՎԻԼ/ՔԻԸՆՎԻԼ/ՔԻՆՎԱԼ/ՔԻԸՆՎԱԼ - *կբ. եւ չբ.* ՔԻՆԻԼ-ի:

ՔԻՆՕՂ-Կ՛ԸՎՕՂ/ՔԻԸՆՕՂ-Կ՛ԸՎՕՂ - *գ.* 1. Հյուր, այցելու, հաճախորդ: *Ըտըրանց տօնը քինօղ-կ՛ըվօղ շատ կա* (Բ): 2. Ճամփորդ, երթեւեկող: *Քինօղ-կ՛ըվօղ էլ վար հըրցըրալ ըն շէնին անումը, ասալ ըն՝ հայ Ադիյին շէնըն ա* (ԱԱ, 30):

ՔԻՆՕՂ-ՅԸ՛ԿՕՂ/ՔԻԸՆՕՂ-ՅԸ՛ԿՕՂ - *տե՛ս* ՔԻՆՕՂ-Կ՛ԸՎՕՂ:

ՔԻՇ/ՔԻՇՇ/ՔԸՇԱ - *ձ.* Հավերին քշելու բացականչություն: *Քի՛շ, քի՛շ, ա՛ հավէր ըռա՛ղ իլիք՛* (Ձ):

- Քիշ անել - 1. Հավերին քշել: *Քի՛շ ըրա, թա չէ ցօրէնը սաղ ուտըլական ըն* (Բ): 2. *փխբ.* Մեկին վտարել՝ վռնդել: *Հա՛ն-ը տըղէն տանան քիշ ըրավ* (Բ):

ՔԻՇՄԻՇ/ՔԻՇՄԻՇ *(պրս. kešmeš, թրք. kišmiš)* - *գ.* Անկորիզ մանր ու քաղցր խաղողի չամիչ: *Սիվէտ աքան Դուշանբա՛ մըզը՛տէ էզգանան քիշմիշ ա իլալ ղըրկէլիս* (Բ):

ՔԻՇՇ - *տե՛ս* ՔԻՇ:

ՔԻՇ-ՔԻՇ - *տե՛ս* ՔԻՇ:

- Քիշ-քիշ անել - 1. *տե՛ս* Քիշ անել (շատերին կամ շատ անգամ): 2. Որեւէ բանով իմիջիայլոց զբաղվել: *Հինչ կօ՞րծ անէլ, քիշ-քիշ ա անում, կըլօխը պահում* (Բ):

ՔԻՊ(ԼԻԳ՛) - *տե՛ս* ՔԻՓ(ԼԻԳ՛):

ՔԻՍԱ՛/ՔԻՍԱ *(պրս. kisa, թրք. kese)* - *գ.* 1. Փոքրիկ քսակ, որի մեջ հատկապես փող կամ թութուն են պահում: *Դէրվիշը քիսան պէնում ա, մին թուման տուս օնում, տամ տըրան* (Ձ): 2. Կոշտ կտորից ձեռնոց, որ բաղնիքում քսում են մարմնին՝ կեղտը հանելու համար: *Քիսա՛ն էնքան քըսում ա ջանը, վէր ջանը լափ կ՛իրմիրում ա* (Ձ):

ՔԻՍԱ՛ՉԻ/ՔԻՍԱՉԻ *(թրք. kisačə)* - *գ.* Բաղնիքում քիսայով լողացողներին մաքրող մարդ: ... *Ափսոս չը՞ն մէր Բաքվա համամնէրին քիսաչէքը*... (ՋՏ, Բ, 82):

ՔԻՍԻԲԱՆԱԼ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲԱՆԱԼ:

ՔԻՍԻԲԱՑՈՒ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲԱՑՈՒ:

ՔԻՍԻԲԱՓԱՅ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲԱՓԱՅ:

ՔԻՍԻԲՎԱՉԻ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲՎԱՉԻ:

ՔԻՍԻԲՎԱՐԻ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲՎԱՐԻ:

ՔԻՍԻԲՑ(Ը)ՆԷԼ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲ-Ց(Ը)ՆԷԼ:

ՔԻՍԻԲՓԱ՛ՆԴԻ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲ-ՓԱ՛ՆԴԻ:

ՔԻՍԻԲՕԹՈՒՆ - *տե՛ս* ՔԻԸՍԸԲՕ-ԹՈՒՆ:

ՔԻՐԱՆՔ - *գ.* Կերակրի կաթսայի կամ ամանի տակ կպած մնացորդ, որ քերելով հանում են: *Քիրանքը տամ ա խօրթ խուխէն* (Ձ):

ՔԻՐԷՃ *(հ.ե. *(s)ker- (կտրել)* - *գ.* Թոնրահացից թոնրի պատին մնացած եւ չորացած բարակ շերտ: *Խօխէնքը՛ը քիրէճ շատ ըն սիրում* (Բ):

ՔԻՐԻԼ *(գրբ. քերեմ)* - *նբ.* 1. Սուր գործիքով կամ այլ բանով որեւէ բանի մակերեսը տաշել՝ ջնջել եւն: *Տէնակը յօր ա օնում, կացնէն կօթը՝ քիրում* (Ձ): 2. Մի բանի քսվելով՝ քերծել, մաշել, քայքայել: *Կ՛ը՛տը վըրարալ ա, բուստընններէն վը՛ղը սաղ քիրա՛ալ* (Բ):

ՔԻՐԻՉ *(գրբ. քերիչ)* - *գ.* Փայտե կամ երկաթե թիաձեւ գործիք որեւէ բանի վրայից ցեխը՝ կեղտը եւն քերելու համար: *Քիրիչը յօր ա ընէս, լապաթկէն ցը՛խը քիրիս* (Բ):

ՔԻՐԻ-ՔԻՐԻ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քիրի-քիրի անել - *տե՛ս* ՔԻՐԻԼ (շատ անգամ, շարունակ):

ՔԻՐՎԱ/ՔԻՐՎԱ՛ *(թրք. kirvə)* - *գ.* Մահմեդական բարեկամ՝ ծանոթ: *Շատ հայէր ըն իլա՛ալ, վէր քիրվա յըն լա՛ալ պըհէս* (ԲՅԲ, 179):

- Քիրվա տը՛ռնալ - Իրար հետ բարեկամություն՝ ծանոթություն հաստատել: *Ըտի ըտըրանք քիրվա յըն տը՛ռնում* (Ձ):

ՔԻՐՎԱ՛ - *տե՛ս* ՔԻՐՎԱ:

ՔԻՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՔԻՐԻԼ-ի:

ՔԻՐՎՕԹՈՒՆ - *գ.* Բարեկամություն, ծանոթություն (հայի եւ մահմեդականի միջեւ): *Մարդիրօսէն ա Սէյիանին քիրվօթունը դուշմընօթուն տը՛ռավ* (Ձ):

ՔԻՐՓԻԹՈՒՆ - *տե՛ս* ՔԱ՛ՐՈՓԱ՛ԹՈՒՆ:

ՔԻՐՔԻՐԻԼ - *տե՛ս* ՔԻՐԻԼ (շատ անգամ, շարունակ):

ՔԻՐՔԻՐՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՔԻՐՔԻ-ՐԻԼ-ի:

ՔԻՓ(ԼԻԳ՛)/ՔԻՊ(ԼԻԳ՛)/Կ՛ԻՊ(ԼԻԳ՛)/ ՔԻՓ(ԼԻԳ՛)/ՔԻՊ(ԼԻԳ՛)/ԿԻՊ(ԼԻԳ՛) *(թրք. kip(lik)* - *ածական, մ.* 1. *տե՛ս* ՑՈՒՓԼԷԳ՛: 2. Շատ մոտ, սերտ: *Ըտըրանք ուրուր նըհը՛տ շատ քիփ ըն* (Ձ):

ՔԻՈՋ - *գ.* Ոչխարների հանգստանալու տեղ՝ փարախ: *Վըխճըրնէն քըշում ա քուզը, ինքը՛ն էլ նի մընում օբան* (Ձ):

ՔԻՈԹ *(թրք. küt)* - 1. *գ.* Անորակ ալյուրից թխած հաց: *Մին էրկու քիւթ ա թըխում, ածում խուրջինը, հըղէ տինում* (Ձ): 2. *ածական.* Լրիվ, ամբողջական, մասերի չբաժանված: *Քիւթ մէս ա* (Բ): 3. *ածական, գ.* Ոչ հմուտ, անվարժ, որեւէ բան հմտորեն չկատարող, դանդաղաշարժ, հաշմանդամ, ծույլ (մարդ): *Իզէն քիւթ ա, ըմընէքը՛ վէր ա ընծըլական, կուտըրատէ* (Բ):

- Քիւթը տանէ քը՛ղ - Ասում են ոչ հմուտ՝ անվարժ՝ հատկապես ձեռքից ինչ-որ բան գետնին գցող մարդկանց: *Ըսկէսուրը հարթնանը յըրա կըզնըվում ա, թա.- Քիւթ տանէ քը՛ղ, էտ պօլիգ՛ը խէ վէր ը՞ս քըցա՛ալ, կօտըրալ* (Ձ):

ՔԻՈԹԱ՛ՆԱԼ - *չբ.* Անվարժ՝ ծույլ դառնալ, հմտությունը՝ արագաշարժությունը կորցնել, հաշմվել: *Ռուբէնը ազրահիլ մարթ ա իլա՛ալ, մըհէնգ՛ ա ըտի քիւթա՛ցալ* (Բ):

ՔԻՈԹԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՔԻՈԹԱ՛ՆԱԼ-ի:

ՔԻՈԹՎԻԼ - *տե՛ս* ՔԻՈԹԱ՛ՆԱԼ:

ՔԻՈԹ-ՔԻՈԹ - *տե՛ս* ՔԻՈԹ (2):

ՔԻՈԼ[1] *(թրք. kül)* - *տե՛ս* ՄՕԽԷՐ:

- Քիւլը վը՛ռէտ - *տե՛ս* Մօխէրը՝ կըլխէտ:

ՔԻՈԼ[2] - *տե՛ս* ՔԱ՛ՔԻՈԼ:

- Քիւլը քամէ ընգած - *տե՛ս* Խը՛ղքան պակաս:

ՔԻՈԼԱ՛Ծ *(թրք. kuləš)* - *գ.* Ծղոտ: *Ըսէս ըն՝ մին վըխտու ցօռնէն քիւլա՛շ չի լա՛ալ, լիհա՛ տական կըլօխ հասկ ա լա՛ալ* (ԱԱ, 62):

ՔԻՈԼԱ՛ԾԻ - *ածական.* Ծղոտից պատրաստած: *Մին քիւլա՛շի աման ա յօր օնում, թօթը ածում մաչը, տինում դունաղէն ըռաչէն* (Ձ):

ՔԻՈԼԱ՛ԾԻԼ - *նբ.* Ծղոտով պատել՝ ծածկել: *Մին դա՛գա՛ յա շինում, կըլօխը քիւլա՛շում* (Ձ):

ՔԻՈԼԱ՛ԾՎԻԼ - *կբ. եւ չբ.* ՔԻՈԼԱ՛ԾԻԼ-ի:

ՔԻՈԼԲԱ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱ:

ՔԻՈԼԲԱԹԻԼ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱԹԻԼ:

ՔԻՈԼԲԱԾ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱԾ:

ՔԻՈԼԲԱԿԱՊ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱԿԱՊ:

ՔԻՈԼԲԱՃԱՂ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱՃԱՂ:

ՔԻՈԼԲԱՆԱԽԾ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱ-ՆԱԽԾ:

ՔԻՈԼԲԱՎԷՐ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱՎԷՐ:

ՔԻՈԼԲԱՑՈՒ - *տե՛ս* ԳԻՈԼԲԱՑՈՒ:

ՔԻՈԼԻԼ - *տե՛ս* ՄՕԽ(Ը)ՐԷԼ:

- Քիւլիմ կըլօխըտ - Հանդիմանական արտահայտություն (հաճախ՝ մտերմական): *Ասում ա.- Քիւլիմ կըլօխըտ, էտ էշը խէ պէց չը՞ս թօղնըմ, վէր քինի ըրածէ* (Ձ):

ՔԻՈԼԼԱ՛ՄԱ՛ - *տե՛ս* Ա՛ԼԼԱ՛ՄԱ՛: ... *Քիւլլա՛մա՛ պէնէր ա, վէր մինակ անըման նըհէտ մարթու քըրթնօնք ա տուս տամ*... (ՋՏ, Ա, 142):

ՔԻՈԼՎԻԼ - *տե՛ս* ՄՕԽ(Ը)Ր(Ը)ՎԷԼ:

ՔԻՈԼՈՒՋ - *գ.* Կավե կոտրված անոթ՝ աման: *Տանը հիշկան կարաս, կօժ, կօլա յա ինում, լօխ տանում ըն, մինակ մին քիւլուզ ա մընամ* (Ձ):

ՔԻՈԼՈՒՄ - *գ.* Սսի՝ ցեխի եւն մեծ կտոր: *Մըսան մին քիւլում կըտըրում ա, տամ մէշա՛բայուն* (Ձ):

ՔԻՆԻԼԻՆԳ - *տե՛ս* ՔԸԼՆԻՆԳ:

ՔԻՆԻԼԻՆԳՕԾ - *տե՛ս* ՔԸԼՆԻՆԳՕԾ:

ՔԻՆԻԼԻՍԱՌ - *տե՛ս* ՔԸԼՆԻՍԱՌ:

ՔԻՆԻԼՓԱԹ *(արաբ., թրք. kulfat (աշխատանք, հոգնություն)* - *գ. հվք.* Երեխաներ, մանուկներ: *Մին ախքադ մարթ ա ընհա՛մ. կօրծը՝ շատ, տօնը՝ լիգը քՒ՚ուլփանթ...* (ՆԱԲ, 58):

ՔԻՆԻԼՔ/ՔԻՆԻՐՔ *(թրք. kürk)* - *գ.* Մուշտակ, քուրք: *Ըտի էտ մարթը արչին ըսպանում ա, մօրթէն պիրում տօն, մին լ՚ավ քՒ՚ուլքՒ կարում* (Ձ):

ՔԻՆԻԼՔՉԻ/ՔԻՆԻՐՔՉԻ - *գ.* Մուշտակ՝ քուրք կարող արհեստավոր: *Էն վախտը Շուշի մին լ՚ավ քՒ՚ուլքչի յա իլա՛լ՝ անըմը Սէրօփ* (Ձ):

ՔԻՆԻԼՕՆԳ - *տե՛ս* ՔԸԼՆԻՆԳ:

ՔՈՒԽ(Վ)ԱԿԷՆ - *գ.* Տանուտերի՝ քյոխվայի կինը: *ՔՒ՚ուխվակէնը քՒ՚ուխէն անա թաքուն հիրըվընէրէն ցօրէն ար տամ* (Ձ):

ՔՈՒԽ(Վ)ՕԹՈՒՆ - *գ.* Տանուտեր՝ քյոխվա լինելը, տանուտերի՝ քյոխվայի պաշտոնը: *Վիտիսին անա յը՚տը քՒ՚ուխօթունը մընաս ա Արաբուն* (ԱԱ, 20):

ՔԻՒ - *գ.* 1. Սուտ խոսք: *Շէնըմը վէշ մինը Արմօվէն քՒ՚ուհէրէն հըվատում չար* (Բ): 2. Կեղծ գովեստներով առաջացրած ոգեւորություն: *Շինացուց քՒ՚ուհան էտ ախմաղը յը՚էր ա կէնում, ըսքըսում փանիլիվանէն նըհը՚տ կօխըլ կէնալը* (Ձ):

- ՔՒ՚ուհ անէլ - Ստել, սուտ բաներ խոսել: *Էնքան քՒ՚ուհ ա ըրալ, էլ վէշ մինը հըվատում չի ըտըրան* (Բ):

- ՔՒ՚ուհավ անէլ/տալ - Կեղծ գովեստներով ոգեւորել: *Ըրշակէն հընգէրունքը քՒ՚ուհավ ըն անում, քըշէրը դարկում ծըմակը* (Ձ):

- ՔՒ՚ուհավ ըղնէլ - Կեղծ գովեստներից ոգեւորվել: *Ժուղօվուրթըն էլ ըտըրահանց քՒ՚ուհավըն ա ընգում, կ՚ամ ըստը՚ղ շէն շինում...* (ԱԱ, 27):

- ՔՒ՚ուհ յը՚էր օնէլ - *տե՛ս* ՔՒ՚ուհավ ըղնէլ:

- ՔՒ՚ուհ տալ - *տե՛ս* ՔՒ՚ուհավ անէլ:

ՔԻՒՀԻ - *ածական.* Դյուրահավատ, կեղծ գովեստներից ոգեւորվող, միամիտ: *Մին շէնում էրկու քուր ըն ինհա՛մ ըպրէլիս. տրհանցա մը՚ծը շատ քՒ՚ուհի յա ինհա՛մ, կուճուրը՝ ժՒ՚ուլիգ* (ՆԼՂԺԲ, 73):

ՔԻՒՀԼԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- ՔՒ՚ուհլամիշ անէլ - *տե՛ս* ՔՒ՚ուհավ անէլ:

ՔԻՒՀԼԸՆԱՆԱԼ - *չբ.* Արագաշարժ՝ արագոտն դառնալ: *Ծին կ՚ամի բիդի օտէ, վէր քՒ՚ուհլընանա* (Ձ):

ՔԻՒՀԼԸՆՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՔԻՒՀԼԸՆԱՆԱԼ-ի:

ՔԻՒՀԼԸՆՕԹՈՒՆ - *գ.* Արագաշարժ՝ արագոտն լինելը: *Էտ ծիյին քՒ՚ուհլընօթունը խանէն շատ ա տուր կ՚ամ* (Ձ):

ՔԻՒՀՆԱՆԱԼ - *չբ.* 1. Հին դառնալ, երկար ժամանակ գոյություն ունենալ: *Թօթէն արաղը հիշկան քՒ՚ուհնանում ա, էնքան լ՚ըվանում ա* (Ձ): 2. Վրան ժամանակ անցնելով՝ արժեքը կամ նշանակությունը կորցնել: *Ալաթը միհէնգ քՒ՚ուհնացալ ա, տըրախտըրավ ըն վը՚էրը վարում* (Բ): 3. Հնությունից մաշվել՝ փչանալ՝ փտել՝ գործածությունից դուրս գալ: *Էշին փալանը քՒ՚ուհնացալ ա, հարկավէր ա փօխած* (Բ): 4. Թարմությունը կորցնել: *Կընանչին քՒ՚ուհնացալ ա, տէն ածէ* (Բ):

ՔԻՒՀՆԱՎՈՒՆ - *ածական.* Մի քիչ հին, մի քիչ հնացած: *ՔՒ՚ուհնավուն շօ՚ռէր ա կ՚ը՚ցալ* (Բ):

ՔԻՒՀՆԸՎԱՉԻ - *տե՛ս* ՔԻՒՀՆԸՎԱՐԻ:

ՔԻՒՀՆԸՎԱՐԻ - *ածական.* Հին ձեւի, հին ճաշակի, հնաձեւ: *Ապուն մին քՒ՚ուհնըվարի սըհաթ ա իլա՛լ* (Բ):

ՔԻՒՀՆԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՔՒՀՆԱՆԱԼ-ի:

ՔԻՒՀՆՕԹՈՒՆ - *գ.* 1. Հին լինելը: *Էտ զըրհ՚ուցին քՒ՚ուհնօթունը շատ ա (Ձ)*: 2. Հնացած լինելը: *Հացէն քՒ՚ուհնօթունէն յէշում չընն, լօխ օտում ըն* (Ձ):

ՔԻՒՀՉԻ - 1. *ածական., գ.* Սուտ բաներ խոսող, ստախոս: *ՔՒ՚ուհչի մարթ ա խՒ՚ունձՒ՚ուրըստընը՚ցէ Արտաշ դայիս, գ՚անքումը դՒ՚ուգ պէն ասած չի* (Բ): 2. *տե՛ս* ՔԻՒՀԻ:

ՔԻՒՀ-ՔԱԼԼԱԳ - *գ.* Կեղծ գովեստներով մեկին ոգեւորելը՝ խաբելը եւ գլխին փորձանք բերելը: *ՔՒ՚ուհ-քՒ՚ալլանգ՚ը մէր շինացուց անա անպակաս ար* (Բ):

- ՔՒ՚ուհ-քՒ՚ալլանգ՚ անէլ - Կեղծ գովեստներով խաբել՝ գլխին փորձանք բերել: - *Հու վէր կարէ քՒ՚ուհ-քՒ՚ալլանգ՚ անէ, էս վէխճարը մօրթէլ տա, յէս նա տըղամարթ կասիմ,- հօրթուր կարթից Ղէրանց Դավութը* (ՆԱԲ, 99):

ՔԻՒՄԱ/ՔԻՒՄԱ *(հ.ե. *(s)keu- (ծածկել), թրք. küm (փոքրիկ փարախ)* - *տե՛ս* ԴԱԳԱ (2): *...Նուշիկըն էլ ծըմակավը շօռ ա կ՚աս, շօռ, քՒ՚իս մի քՒ՚ումա՛ քըթընաս* (ՀԲ, 352):

ՔԻՒՄԱ - *տե՛ս* ՔԻՒՄԱ:

ՔՈՒՄԱՏ(Տ)ԱՂ - *տե՛ս* ՔԸՄԱՏ(Տ)Ա(Ղ):

ՔՈՒՄԲԱ - *տե՛ս* ՔՕՄԲԱ:

ՔՈՒՄԲԱԹ/ԿԸՄԲԷԹ *(գրբ. գմբեթ)* - *գ.* 1. Կորնթարդ՝ կամարաձեւ տանիք շինության վերեւում, գմբեթ: *Ամմա հըսցընում չընն սաղ յը՚էխծէն քանդին, մինակ քՒ՚ումբաթընը ըն քանդՒ՚ում* (Ձ): 2. Գմբեթավոր եկեղեցի: *Նի յա մընում էտ քՒ՚ումբաթը, ըսքըսում աղութկ անէլը* (Ձ):

ՔՈՒՄԲԸԹԱՎՈՒՐ/ԿԸՄԲԷԹԱՎԷՐ *(գրբ. գմբեթաւոր)* - *ածական.* Գմբեթ ունեցող, գմբեթակիր, գմբեթավոր: *Էտ տըղան կ՚ամ ա Ւ՚ուրանց շէնը, էտ թումբէն յըրա մին լ՚ավ քՒ՚ումբըթավուր յը՚էխծէ շինում* (Ձ):

ՔՈՒՄԲՈՒՋ *(թրք. kunbəz)* - *տե՛ս* ՔՈՒՄԲԱԹ:

ՔՈՒՄԲՈՒՋԱՎՈՒՐ - *տե՛ս* ՔՈՒՄԲԸԹԱՎԷՐ:

ՔՒՄԸԳՎԷ - *մ.* Իրար օգնելով՝ օգնությամբ: *ՔՒ՚ումըգվէ էտ տօնը շինում ըն, պըրծընում* (Ձ):

ՔՒՄՄՒՐԱՀԱՄ - *գ.* Ածուխի համ: *Խուրանգ՚ան քՒ՚ումՒ՚ուրահամ ա կ՚ամ* (Ձ):

ՔՒՄՄՒՐԱՀԱՆՔ - *գ.* Քարածուխի հանք: *Ասում ըն՝ էն վախտը էտ շէնին կօխկէ ծըմակումը քՒ՚ումՒ՚ուրահանք ըն իլա՛լ քըթանծ* (Ձ):

ՔՒՄՄՒՐԱՎԸՏ - *գ.* Այրվող ածուխի հոտ: *ՔՒ՚օմՒ՚ուրը էրՒ՚ում ըն, քՒ՚ումՒ՚ուրավը՚տը ըղնում ա տօնը* (Ձ):

ՔՒՆԱ-ՄՒՆԱ - *տե՛ս* ՔՕՀՆԱ-ՄՕՀՆԱ:

ՔՒՆԱՆ-ՄՒՆԱՆ - *տե՛ս* ՔՕՀՆԱ-ՄՕՀՆԱ:

ՔՒՆՋ *(պրս. kunǵ)* - *տե՛ս* ԲՈՒՐՋ: *Էտ տըղան քՒ՚ընըմ ա մին քՒ՚ունջ նի մընընըմ, ՋՒ՚ումրՒ՚ուտ դուշին թէփուռը ջուբան հանըմ, վառըմ* (ՀԺՀ, V, 34):

- ՔՒ՚ունջՒ՚ումը տիրա՛ծ մընակէն յըրա շօն չի հա՛նչիլ - Անանշան՝ անարժեք իրին ուշադրություն դարձնող չի լինի:

ՔՒՆՋԸԲՕՐՋ - *տե՛ս* ՔՒՆՋՈՒՊՕՃԱԽ:

ՔՒՆՋԸՊՕՃՕԽ - *գ. հվք.* Բոլոր անկյունները, բոլոր տեղերը: *Քընըմ ըն ընգնըմ քՒ՚ունջընպօճախ, լօխ հըվաքըմ, կ՚ամ էտ վը՚ռին մը՚էջը* (ՀԺՀ, V, 20):

- ՔՒ՚ունջընպօճախ անէլ - Տունը ծայրից ծայր մաքրել: *Էտ հարթնը ամմէն օր քՒ՚անջընպօճախ ար անում* (Ձ):

- ՔՒ՚ունջընպօճախ օտօղ - Տան բարիքները անտեղի ծախսող՝ վատնող: *ՔՒ՚ունջընպօճախ օտօղ կընէգ՚ը կարէլ չի տօն պահէ* (Ձ):

ՔՒՆԻՉԱ/ՔՒՆԻՉԱ *(պրս. kuče)* - *գ.* Փողոց: *Թաքավէրին տըղան քՒ՚ինից ակուշկէն էտ կօտրած տը՚ղան յէշից դիբի քՒ՚ուչանն* (ՀԺՀ, V, 200):

- ՔՒ՚ուչէքՒ՚ը ըղնէլ - *տե՛ս* ՉՕ՚ԼԷՐԸ ըղնէլ:

- ՔՒ՚ուչէքՒ՚ը չափէլ - *տե՛ս* ՉՕ՚ԼԷՐԸ չափէլ:

ՔՒ՚ուչէքՒ՚ը քընցիլ - *տե՛ս* ՉՕ՚ԼԷՐԸ քընցիլ:

- ՔՒ՚ուչՒ՚ումը թօղնէլ - *տե՛ս* ՉՕ՚ԼՒ՚ՈՒՄԸ թօղնէլ:

- ՔՒ՚ուչՒ՚ումը մընալ - *տե՛ս* ՉՕ՚ԼՒ՚ՈՒՄԸ մընալ:

ՔՒՆԻՉԱ - *տե՛ս* ՔՒՆԻՉԱ:

ՔՈՒՌ - *գ.* 1. Քուռ գետը: *Քուռը*

Ըրախսան վարար ա (Բ): 2. *փխբ.* Առույգ, աշխույժ, անհանգիստ, չարաճճի: *Քուռ խօխէնք ըն* (Բ):

- Քուռէն ճիրան հինչ կըպըկա՞սէ - *տե՛ս* Ծօվէն ճիրան հինչ կըպըկա՞սէ: *Հինչ կընի՞, կըտամ. Քուռէն ճիրան հինչ կըպըկա՞սէ* (ՆԱԲ, 137):

- Քուռէն մըկըրատը - Շատ սուր՝ հատու (կտրող գործիքի մասին): *Էս ցակատը Քուռէն մըկըրատըն ա, սայաղ կաց, վըէնընտ կըտըրիս վէչ* (Ջ):

- Քուռը ածէլ/քըցիլ - *տե՛ս* Ճուրը քըցիլ:

- Քուռը ըղնէլ/տանէլ/քըշիլ/քըշիլ տանէլ - *տե՛ս* Ճուրը ըղնէլ:

- Քուռը տանէլ, ծարավ յըէտ պիրիլ - *տե՛ս* Ախպարը տանէլ, ծարավ յըէտ պիրիլ:

ՔՈՒՍՕԹՈՒՆ - *գ.* Ծաղրածու լինելը, ծաղրածուի զբաղմունքը, ծաղրածուություն: *Էտ պառավը քուսու շօրէր ա կէնում, քինամ փանիլիվանէն քուսօթուն անում...* (ՀԺՀ, VII, 66):

ՔՈՒՎԹԱ/ՔՈՒՎԹԱ/ՔՈՒՎԹԱ/ՔՈՒՓՏԱ *(պրս. kufte)* - *գ.* Ծեծած մսով պատրաստվող կերակրատեսակ, քուֆթա: *Առաչ Շուշի քուվթան ադաթ ա իլալ* (Ջ):

ՔՈՒՎԹԱ - *տե՛ս* ՔՈՒՎԹԱ:

ՔՈՒՎԹԱ - *տե՛ս* ՔՈՒՎԹԱ:

ՔՈՒՐ - *տե՛ս* ՔՈՒՐ:

ՔՈՒՐԱ/ՔՈՒՐԱ/ՔՕՐԱ *(գրբ. քուրայ, ասոր. kūrā)* - *գ.* 1. Հնոց, կրակարան, վառարան: *Մինչէվ մըհէնգ էլ քըշէրը նահանց քուրան կածէր ա ընգում յէրգինք՝ը* (ՆԱԲ, 93): 2. *տե՛ս* ԴԸՌԴՕՌԱՆՉ (2): ... *Վընէսա ղըլան դաստի տըէսալ ըն, քուրա ըրալ, հանցու Քըթէշ պէրթան կըրակը տըէսնան, կըլխու ըղնին* (ԱԱ, 20):

ՔՈՒՐԴ - 1. *գ.* Քրդական ժողովրդին պատկանող անձ, քուրդ: *Մին քուրդ բանգ ա ինում, ըտըրան էլ ինում ա մին մադար ախճիգ՝անումը Նարէշ* (ԱԱ, 31): 2. *ածական, գ. փխբ.* Անգութ, ժլատ, անմարդամոտ (անձ): *Քուրդ ը՞ս, էտ խուխէն խէ հաց չըս տամ՝օտէ* (Բ):

- Քուրդու գուլանա - Ուշահաս սեւագույն կեռասի տեսակ: *Մէր շէնումը քուրդու գուլանա էլ կա* (Բ):

ՔՈՒՐԴԱՆԱԼ - *չբ.* 1. Քուրդ դառնալ: *Ըտըրանք էնքան էտ քուրդէրէն նըհէտ կէնում ըն, ուրանք էլ ըն քուրդանում* (Ջ): 2. *փխբ.* Խորթանալ, օտարանալ, անգութ՝ ժլատ՝ անմարդամոտ դառնալ: *Լավ մըրաքուր ա իլալ, հինչա փըսակվալ ա, քուրդացալ ա* (Բ):

ՔՈՒՐԴԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՔՈՒՐԴԱՆԱԼ-ի:

ՔՈՒՐԴՕԹՈՒՆ - *գ.* 1. Քուրդ լինելը, քրդի հատկությունը: *Քուրդօթունը թուրքօթունան լավ պէն ա* (Բ): 2. *փխբ.* Խորթություն, անգթություն, ժլատություն, անմարդամոտություն: *Քուրդօթունը մէր Ըրշակէն անա անպակաս ա* (Բ):

ՔՈՒՐՋ *(գրբ. քուրջ)* - *տե՛ս* ԼԱՆԹ (1):

ՔՈՒՐՔԱՄԱՐ/ՔՈՒՐՔԱՄԱՐ - *գ.* Փոքր երեխա ունեցող կին: *Խըէղճը հինչ ա՞նէ, քուրփամար ա, շատ ա չըրչարվում* (Բ):

ՔՈՒՐՔԱՄԱՐ - *տե՛ս* ՔՈՒՐՔԱՄԱՐ:

ՔՈՒՐՔԱՏԱՐ/ՔՈՒՐՔԱՏԱՐ - *գ.* Փոքր երեխայի կամ երեխաների տեր: *Արաշտ ա, քուրփըտարէրը սօք՝ ըն ասում* (Ջ):

ՔՈՒՐՔԱՏԱՐ - *տե՛ս* ՔՈՒՐՔԱՏԱՐ:

ՔՈՒՐՔՈՒԹՈՒՆ - *տե՛ս* ՔԱՐՔԱԹՈՒՆ:

ՔՈՒՐՔ՝ - *տե՛ս* ՔՈՒԼՔ՝:

ՔՈՒՐՔ՝Չի - *տե՛ս* ՔՈՒԼՔ՝Չի:

ՔՈՒՓ/ԽՈՒՓ[3]/ԽՕՓ[3] *(թրք. küp)* - *գ.* Կացնի սայրի հակառակ՝ բութ կողմը: *Բանզվախտ հանց աչըղըս կ՝ամ ա, վէր օզըմ ըմ կացնէն քուփավը տամ, դուդան վէր քըցիմ...* (ՋՏ, Բ, 175):

ՔՈՒՓՏԱ - *տե՛ս* ՔՈՒՎԹԱ:

ՔՈՒՓՈՒՐ *(արաբ., թրք. küfür)* - *տե՛ս* ՈՒՇՈՒՆՑ:

ՔՈՒՓՕՂԼԻ/ՔՕՓՕՂԼԻ *(թրք. köpek oğlə (շանորդի)* - *գ.* 1. Անզգամ, խորամանկ մարդ: ... *Ասըմ ա.- Էտ քօփօղլին հուվ ա՞ լալ, վէր յէկալ ա իմ փըսէն տընէրը քանդալ...* (ԲՀԲ, 47): 2. Հայհոյական, հաճախ մտերմական հանդիմանական կոչական բառ՝ ուղղված տղաներին կամ տղամարդկանց: ... *Ասում ա.- Քուփօղլի, տուվ ը՞ս լավ տըղա...* (ՀԱԲ, 15, 68): 3. *տե՛ս* ԱԼԼԸՂԱԴՕՆԻՄ: *Քօփօղլի Սէտրակ, տըէս հինչ ախճիգ՝ ա յէ՞ ծգալ* (Բ):

ՔՈՒՔԱՆԱԼ - *չբ.* Գիրանալ, չաղանալ: ... *Ըտըէղ մին քանէ վախտ կէնըմ ա, օրը տասնէրկու ամանա խօրանգ՝ օտում, մին լանվ քուքանըմ* (ՀԺՀ, V, 643):

ՔՈՒՔԱՎՈՒՆ - *ածական.* Մի քիչ գեր, գիրավուն: *Մին քուքավուն խօգ՝ ըն մօրթում, քըէփ անում* (Ջ):

ՔՈՒՔԸՀԱՆ - *ածական.* Լարերը թուլացած, լարթափ (լարավոր երաժշտական գործիքների մասին): *Ասում ա.- Էս քուքըհան թանռ ա, հունց ա՞ծիմ* (Ջ):

- Քուքըհան անէլ - 1. Լարերը թուլացնել, լարումից զրկել: *Թանռը քուքըհան ա ըրալ* (Բ): 2. *տե՛ս* Նըզամա քըցիլ:

- Քուքըհան ինիլ/տըէռնալ - Լարերը թուլանալ, լարումից զրկվել: ... *Էնքան էտ խէղճ սազը խօխա-ըրախու ծէրք ա ընգալ, քուքըհան ա իլալ, էլ ածվըմ չի* (ՋՏ, Բ, 23): 2. *տե՛ս* Նըզամա ըղնէլ:

ՔՈՒՔԸՎԱՉԻ - *տե՛ս* ՔՈՒՔԱՎՈՒՆ:

ՔՈՒՔԸՎԱՐԻ - *տե՛ս* ՔՈՒՔԱՎՈՒՆ:

ՔՈՒՔԸՑ(Ը)ՆԷԼ - *նբ.* ՔՈՒՔԱՆԱԼ-ի:

ՔՈՒՔՈՒԼԱՎՈՒՐ - *տե՛ս* ՔՈՔՈՒԼԱՎԷՐ:

ՔՈՒՔՈՒՐԹ *(թրք. kükürd)* - *գ.* Ծծումբ: *Քուքուրթը նի յա տըէռնում աշկէրը, հըռընցընում* (Ջ):

- Քուքուրթ տալ - Վրան ծծումբի փոշի շաղ տալով կամ ծծումբ ծխելով՝ ախտահարել: *Բաղէրը ազար ա ընգալ, հարկավէր ա քուքուրթ տըված* (Բ):

ՔՈՒՔՈՒՐԹԱՀԱՄ - 1. *գ.* Ծծումբի համ: *Էնքան քուքուրթ ա տըվալ, խաղուն քուքուրթահամ օնէ* (Ջ): 2. *ածական.* Ծծումբի համ ունեցող՝ տվող: *Քուքուրթահամ կ՝ինի յա* (Բ):

ՔՈՒՔՈՒՐԹԱՃՈՒՐ - *գ.* Ծծումբի լուծույթ պարունակող հանքային ջուր: *Էտ ըխպիրին ճուրը քուքուրթաճուր ա* (Ջ):

ՔՈՒՔՈՒՐԹԱՎԸՏ - 1. *գ.* Ծծումբի հոտ: *Քուքուրթավըէտը ընգալ ա բաղէրը* (Բ): 2. *ածական.* Ծծումբի հոտ ունեցող՝ արձակող: *Քուքուրթավըէտ ծաղէգ՝ ա* (Բ):

ՔՈՒՔՕԹՈՒՆ - *գ.* Գեր լինելը, գիրություն: *Էտ խօգ՝ին քուքօթունը ըտըրան ըրմընցընում ա* (Ջ):

ՔՕԲԱ - *գ.* Կաթսա, աման: *Միպտակ օբա, տէղէն քօբա* (ԱՀ, 78):

ՔՕԲԱՆ - *տե՛ս* ՔՕԲՈՒՌ:

ՔՕԲՈՒՌ/ՔՕԲԱՆ - *գ.* Բնական հողաքարային պատնեշ: *Մին օր էլ հըվաքվում ըն, քինամ էտ քօբուռը քանդում* (Ջ):

- Քուբուռէն տէմ ըղնէլ - Դժվարության՝ արգելքի հանդիպել: *Տընաշինընտ հինչը օգում ա անէ, դաստի քուբուռէն տէմ ա ըղնում* (Բ):

- Քուբուռու քանլան - Ժիր՝ առույգ մարդ: *Ռուբէն ամին քուբուռու քանլան յա, կօգի ութասսուն տիրըէկան ա* (Բ):

ՔՕՋ *(թրք. küz (բաց սեւագույն)* - *տե՛ս* ՄՕԽԷՐ: ... *Յարիս ասած խօսկէրքը, սըէրտըս էրից, քօզ ըրավ* (ԼՂԲ, 259):

ՔՕԹԱԳ՝ - *տե՛ս* ՔՕԹԱԿ:

ՔՕԹԱԿ/ՔՕԹԱԳ՝/ՔՕԹԱԿ *(թրք. kötek)* - *տե՛ս* ԹԱԿ (4): *Մարթը ծըռքէրին, վընէրին ա անըմ, վըէր մին քօթագ՝ էլ տա, ամմա թօղըմ չընն* (ՀԺՀ, V, 108):

ՔՕԹՄԻԾ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քօթմիշ ինիլ/տըէռնալ - *տե՛ս* ԲԸՔՆԸՎԷԼ:

ՔՕԹՈՒԿ - *տե՛ս* ՔԷԹՈՒԿ:

ՔՕԼՄԱ - *տե՛ս* ԽՕՐՈՒՄ:

ՔՕԽ(Վ)Ա *(պրս., թրք. kāhya)* - *գ.* Գյուղի կառավարիչ, տանուտեր: *Պուղին նամակը յօր ա օնում, քընում Սարու-*

շէնա քուխէն կօշտը, նամակը տամ ուրան (ՆԱԲ, 133):

- Քուխ(վ)էն ըշտահանվը հաց օտէլ - Ագահ՝ ընչաքաղց լինել: *Ասում ա.- Իզէն քուխէն ըշտահանվըն ա հաց օտում, մունք կարէլ չընք ընդրա նըհըտ հըրակաշ տըռանք* (Ձ):

- Քուխ(վ)էն շըհադը կիզիրըն ա - *տե՛ս* Աղվէսը ուրան հանքին շըհադ կըպիրի:

- Քուխ(վ)էն տըս, շէնը նի՛ մըտ - Գյուղի վիճակը տանուտերով է պայմանավորված:

ՔՈՀԼԱՆ *(պրս. küheylan)* - *ած.* Արագաշարժ, արագոտն (հիմնականում ձիու, էշի, ջորու մասին): *Մէհէտ մին հըցէցէ ուրան թանմբալ էշը յօր ա օնում, տանում, թա Աղդամ ծախէ, տէղը մին քօհլան էշ ինք օնէ* (ՀԱԲ, 15, 144):

ՔՈՀԼԱՆ-ՔՈՀԼԱՆ - *մ.* Արագ-արագ, արագորեն: *Քօհլան-քօհլան խօսում ա* (Ձ):

ՔՈՀՆԱ/ՔՈՀՆԱ *(թրք. köhnə)* - *ած.* 1. Վաղեմի, վաղնջական: *Ամմա քօհնա սըվէրութվ ա...* (Ձ): 2. Անցյալից մեզ հասած, հնավանդ: *Քօհնա անդաթ ա, պահում ընք* (Բ): 3. Հեռավոր անցյալում գոյություն ունեցած՝ ապրած՝ գործած: *Քօհնա մարթիքը էտ վէրվանըմըն ըն իլալ ըպրէլիս* (Ձ): 4. Երկար ժամանակից ի վեր գոյություն ունեցող: *Տումէն քօհնան շէն ա* (Բ): 5. Այժմ գոյություն ունեցողին նախորդած, նախկին: *Քօհնա շէնին անըմըն էլ մընաս ա Հէն շէն* (ԱԱ, 19): 6. Արժեքը՝ նշանակությունը կորցրած, օգտագործելու համար ոչ պիտանի: *Հանը փանդ ա անըմ, էշին պէռնում, ուրան քօհնա պէնջակը թողում ծառան կախ տըված, ինքը քընում տօն...* (ՀԺՀ, V, 489): 7. Ժամանակի ընթացքում փչացած՝ խարխլած: *Քօհնա տընէրը քանդում ըն* (Բ): 8. Թարմությունը կորցրած, հնացած: *Մին կուտուր քօհնան հաց ա տինում ծօգումը, քինամ* (Ձ): 9. Երկար տարիների փորձ ունեցող, հմուտ: *Քօհնա ուստա յա Խըզխըզ Աբօն* (Բ): 10. Երկար տարիների: *Քօհնա հընգէրունք ըն Ուբէլըն ա Հայկան* (Բ):

- Քօհնա աղվէս - *տե՛ս* Քավթառ աղվէս:

- Քօհնա դանրդէրը տուրուր տալ - *տե՛ս* Դանրդէրը տուրուր տալ:

- Քօհնա դուրվին/դօվրըմը - Հին ժամանակներում, հնում: *Ամմա քօհնա դօվրըմը ժողովուրթը բանգի վախտ քըշէրը կումէրըմըն ըն իլալ կըէնըմ* (ԼՂԲ, 345):

- Քօհնա կուլ - 1. Խորամանկության՝ խարդախության՝ հարստահարության վարժված մարդ: *Խօնդանց Իսակը քօհնա կուլ ա, սաղ կըլխօզէն ցօրէնը ծըխծըխօրալ ա, տիրալ ջուբումը* (Ձ): 2. Իր գործի մեջ՝ տվյալ բնագավառում հմտացած՝ փորձառու մարդ: *Ռուբէնը քօհնան կուլ ա, ընդրա տիրած պատը պարան չի կալ* (Բ):

- Քօհնա մըռալ տանս օնէլ - *տե՛ս* Քօհնա տէրման քամուն տալ:

- Քօհնա յըրք - Վաղուց հայտնի՝ շատ կրկնված ու հետաքրքրությունը կորցրած բան: *Ասում ա.- Էտ քօհնա յըրք ա, տու հանց քաթ ասէ, վէր ըսկացած չինիմ* (Ձ):

- Քօհնա չըվալէն թանզ(զ)ան տանգ - Անտեղի՝ անիմաստ բան: *Ասում ա.- Էս քավթառ էշ ա, կարում չի, թա շօռ կա, փալան ըս կարէլ տըվալ՝ հինչ ա՞նիս. քօհնա չըվալէն թանզզան տանգ* (Ձ):

- Քօհնա վըխտէն - Ծեր, բայց ամրակազմ՝ առույգ մարդ: *Ապան քօհնա վըխսկըռ ա, քըշէր-ցիրըտկ կօրծ ա անում* (Բ):

- Քօհնա վըխտէն - *տե՛ս* Քօհնա դուրվին: *Քօհնա վըխտէն Դանիրանզ շէնում անդաթ չի իլալ, վէր հըռհնընքէն պէլին սուփրէն ղըրաղէն նըստէ* (ԱԱ, 85):

- Քօհնա տէրման քամուն տալ/քամէլ - Անցածը քրքրել, հնացած անախորժ՝ վատ բաները նորից հիշել՝ հիշեցնել: *Ասում ա.- Սունբաթ, քօհնա տէրման մէլ քամուն տալ, կընգանըտ նըհըտ հանշտըվի, մին տըդ ըպրըրըցէք* (Ձ):

- Քօհնա քէթանկ - *տե՛ս* Քօհնա վըխսկըռ:

ՔՈՀՆԱ - *տե՛ս* ՔՈՀՆԱ:

ՔՈՀՆԱԴԱՆ/ՔՈՀՆԱԴԱՆ/ՔՈՀՆԱԴԱՆ - *մ.* Շատ ժամանակ առաջ, վաղուց: *Օղտը ջօղաբ ա տամ.- Իմ տա՛ր, էտ լօխ, հինչ վըր տու ասում ըս, յէս քօհնանդան ըմ քէզ նէրալ* (ՀԺՀ, V, 212):

ՔՈՀՆԱԴԱՆ - *տե՛ս* ՔՈՀՆԱԴԱՆ:

ՔՈՀՆԱԴԱՆ - *տե՛ս* ՔՈՀՆԱԴԱՆ:

ՔՈՀՆԱԴԻ/ՔՈՀՆԱԴԻ - *տե՛ս* ՔՈՀՆԱ:

ՔՈՀՆԱԴԻ - *տե՛ս* ՔՈՀՆԱԴԻ:

ՔՈՀՆԱ-ՄՈՀՆԱ/ՔՈՀՆԱ-ՄՈՀՆԱ/ՔՈՒՆԱ-ՄՈՒՆԱ/ՔՈՒՆԱ-ՄՈՒՆԱ - *ած.* Հին-հին, հնացած, հինումին (շատ իրերի մասին): *Տանը հիշկան քօհնամօհնա շօրէր ա ինում, լօխ տամ ա ընդրանց* (Ձ):

ՔՈՀՆԱ-ՄՈՀՆԱ - *տե՛ս* ՔՈՀՆԱ-ՄՈՀՆԱ:

ՔՈՀՆԱՄՈԴԻ/ՔՈՀՆԱՄՈԴԻ - 1. *ած.* Հնաձեւ, հին ձեւ ունեցող: *Քօհնամօդի մին սըհաթ ա իլալ այուն* (Բ): 2. *մ.* Հին ձեւով, հին ժամանակներին համապատասխան: *Քօհնամօդի յա ապրում, կօգի հարուստ ա* (Ձ):

ՔՈՀՆԱՄՈԴԻ - *տե՛ս* ՔՈՀՆԱՄՈԴԻ:

ՔՈՄԱԳ *(թրք. kömək)* - *գ.* 1. Օգնելը, օգնություն, օժանդակություն: *Մըտքումըն ասում ա.- Մուտանամ, քուցէ քանմանգու պէն կա* (ՆԱԲ, 34): 2. Օգնություն, օգնող մարդ: *Խըղճը հինչ ա՞նէ, քօմանգ չօնէ, սաղ կօրծէրը մինակ ա անում* (Ձ):

- Քօմանգ անէլ/ինիլ - 1. Օգնություն ցույց տալ, աջակցել, սատարել: *Ռուսաստանա մին յանարալ ա կամ Դարաբաղ, վէր մըզ քօմանգ անէ* (ԱԱ, 46: 2. Նպաստել, օգտակար ազդեցություն ունենալ: *Հօրը ասածը ընդրան շատ ա քօմանգ անում* (Ձ): 3. Փրկել: *Թաքավէրը հիվընդանում ա, վէշ մին պէն քօմանգ չի անում, մըռնում ա* (Ձ):

- Քօմանգ ծէն տալ - Օգնություն խնդրել: *Կանալը, ճարը կըտրած, ուռնաս ա, քօմանգ ծէն տաս...* (ԱԱռ, 9):

ՔՈՄԱԳԼԻ *(թրք. köməkli)* - *տե՛ս* ՔՈՒՄԸԳՎԷ: *...Տահանք, ուրուր դընընդալու ըրած քօմանգլու, ընշխընդէս ըն կօլխօզըմը* (ՀԲ, 362):

ՔՈՄԱԳՉԻ *(թրք. köməkči)* - *տե՛ս* ՔՈՄԱԳ (2): *Մըծ քուրը տամ ա ընդընդէն մըծէն, մաշնակը տամ մըծէն քօմանգչուն, կուծի քուրը էլ ինքը ն ա յօր օնում* (ՆԼՂԺԲ, 53):

ՔՈՄԲԱ/ՔՈՄԲԱ/ՔՈՒՄԲԱ - *գ.* Ջրաղացում թխած անթթխմոր հաց: *Տա կըրակ ա ընէս, քօմբան թընցընէս, ուտէս, ճընդացէն մաչին քօն ինիս* (ՀԺՀ, V, 293):

ՔՈՄԲԱ - *տե՛ս* ՔՈՄԲԱ:

ՔՈՄՈՒՐ *(թրք. kömür)* - *գ.* 1. Փայտից պատրաստած ածուխ, փայտածուխ: *Մին մըծ պէխէ յա կըտրում, պիրում քօմուր շինում* (Ձ): 2. Բուսական մնացորդներից երկրի ընդերքում գոյացած կարծր վառելանյութ, քարածուխ: *Վըղը քանդում ըն, տըսնում՝ տափէն տակը սաղ քօմուր ա* (Ձ): 3. *փխբ., ած.* Շատ սեւ: *Քօմուր հաց ա* (Բ):

ՔՈՄՈՒՐՉԻ *(թրք. kömürcü)* - *գ.* Ածխագործ: *Թընդլընդրըցէք լավ քօմուրչի յըն իլալ* (Բ):

ՔՈՄՓԱԼ - *տե՛ս* ԳՈՄՓԱԼ:

ՔՈՄՓՈՒԾ - *տե՛ս* ԳՈՄՓՈՒԾ:

ՔՈՆԴԱԼԱՆ *(թրք. köndələn (շեղ)* - 1. *տե՛ս* ԴՈԼԱՅԻ: 2. *ած., մ.* Վայրիվերո, տակից-գլխից, անիմաստ: *Քօնդալան խօսում ա* (Բ):

ՔՈՉԱԼ/ՔՈՉԱԼ *(թրք. köčəl)* - *գ.* Կալսելուց հետո հասկի մեջ մնացած ցորեն, չկալսված հասկ: *Կալը թընկէլանը յըէտը շատ քօչալ ար մընում* (Ձ):

ՔՍՕՌՈՒՂ/ՔՍՕՌՈՒՂ/ՔՍՕՌՕՂ/ՔՕՌՈՒՂ - *գ.* Վնասակար ազդեցություն: *ԾՈՒկուն ուտէլանը յըէտը կաթնը չըն խըմէլ, քսօռուղ ա* (Զ):

- Քսօռուղ տալ - Վնասակար ազդեցություն ունենալ, վնասել: *Չըքէլանը վէր մին պէնը լԉվ գիդԉս չի իլԉլ, մարթու քսօռուղ չի տըվալ* (ՀԺՀ, V, 284):

- Քսօռուղ քաշիլ - *տե՛ս* Պըկըսօթուն քաշիլ: *... Ըտըրա հէտը էլ վէշ մինը հացու քսօռուղ չի քաշԉլ...* (ԱԱ, 62):

ՔՕՌՈՒՂ - *տե՛ս* ՔՍՕՌՈՒՂ:

ՔՍՕՌՕՂ - *տե՛ս* ՔՍՕՌՈՒՂ:

ՔՕՍԱ/ՔՕՍԉ *(պրս. kuse, թրք. köse (ցանցառ մորուք ունեցող)* - *գ.* 1. Ծաղրածու, ով, լարախաղացի ժամանակ ծամածռություններ անելով, հանդիսատեսից դրամ է հավաքում: *Էտ փԉհիլիվանէն նըհը՚տ էլ մին քՕսա յա կ՚ամ շէնը* (Զ): 2. *փխբ.* Իր վարքագծով՝ արարքներով անլուրջ եւ ուրիշների ծաղրի առարկա հանդիսացող մարդ: *Ոէ Քԉսպԉրընն էլ հինչ նախագամ, քՕսա յա* (Զ):

ՔՕՍԉ - *տե՛ս* ՔՕՍԱ:

ՔՕՍԱԳԉԼ(ԴԻ)/ՔՕՍԉԳԉԼ(ԴԻ) - *տե՛ս* ՔՕՍԱ:

ՔՕՍԉԳԉԼ(ԴԻ) - *տե՛ս* ՔՕՍԱԳԉԼ(ԴԻ):

ՔՕՎՇԉՆ - *տե՛ս* ՔԉՎՇԉՆ:

ՔՍՕՐԱ - *տե՛ս* ՔՈՒՐԱ:

ՔՍՕՐՈՒՋ *(գրբ. գոռոզ)* - *տե՛ս* ԳԱՌ:

ՔՕՐՓԱ/ՔՍՕՐՓԉ *(թրք. körpa)* - 1. *գ.* Փոքրիկ երեխա, մանուկ: *Վէր քընում ա քՕրփէն քըթէնում, ըրխըյնանում ա* (ՀԱԲ, 15, 111): 2. *ած.* Փոքր, փոքրիկ: *...Վէրչումըն էլ հիշքան քՕրփա խօխա յա իլԉլ, հըվաքալ ա մին տը՚ղ, մուրթստալ* (ԱԱ, 68):

ՔՕՐՓԉ - *տե՛ս* ՔՕՐՓԱ:

ՔՍՕՐՓԻ - *տե՛ս* ՔՕՐՓԻ:

ՔՕՐՓԻ/ՔՍՕՐՓԻ *(թրք. köprü)* - *տե՛ս* ԿԱՐՄՈՒՆՋ:

- ՔՕրփի ըղնէլ - Ծայրը՝ կեռը մի բանի մեջ մտնելով՝ ագուցվել: *... Ոէրը կ՚ըվազանը կ՚ՕտէՆ ա կօխում, վէր փախչի, կ՚ըվազանը տըռնավը քՕրփի յա ընգընըմ* (ԼՂԲ, 349):

ՔՕՓԉԳ՝ *(թրք. köpek (շուն)* - *գ.* Անպատկառ՝ շնացող ծերունի: *Էտ քՕփԉգը շէնումը էլ ջԉհիլ հարթնը չի թողից, լօխճին սաթաշմիշ իլԉվ* (Զ):

ՔՍՕՓՕՂԼԻ - *տե՛ս* ՔՈՒՓՕՂԼԻ:

ՔՍՕՔ[1] *(թրք. kök)* - *ած.* Գեր, չաղ: *Հըղէննի մին քՕսք մարթ ա ջիհԉում* (Զ):

ՔՍՕՔ[2] - Գործածվում է կապակցության մեջ:

- Քսօք անէլ - *տե՛ս* ՔՍՕՔԷԼ:

ՔՍՕՔԷԼ - *նբ.* 1. Լարավոր նվագարանը լարել՝սարքի բերել: *Թԉռը քսՕքում ա, յօր օնում, քՕինամ* (Զ): 2. Գործը կարգի բերել: *Շատ ըն չըրչարվում, մինչը՚վ կարում ըն էտ կօրծը քսՕքին* (Զ): 3. Կտորը՝ հագուստը ձեւելուց հետո նախնական կերպով կարել: *ՇՕրը քսՕքում ա, տամ շԉգէրդին, վէր կարէ* (Զ):

- ՔսՕքած թԉռ/խաչ - Տխուր զգացումներով լի՝ լացելու պատրաստ մարդ: *Կամ ա, տը՚սնում՝ կընէգը լըցըկումած, հինչ կընէ՞գ, մին քսՕքած թԉռ* (Զ):

ՔՍՕՔՎԷԼ - *կբ. եւ չբ.* ՔՍՕՔԷԼ-ի:

ՔՈՒ/ՔԱ *(գրբ. քո)* - *դ.* Անձնական դերանվան եզակի թվի երկրորդ դեմքի՝ *Տու*-ի սեռական հոլովաձեւը: *Ջօռի ըՉըղվում ա, ասում.- Հօր ա՞ քու ծամէրընտ* (ՀԺՀ, V, 243):

- Քա/քու հօր տօնը շինվի/(չը)քանդվի - *տե՛ս* Քու տօնը շինվի:

- Քա/քու հօր փԉհիլԉն ը՞մ - Դու իրավունք չունես ինձ կարգարդելու, ես քո հպատակը չեմ: *Ասում ա.- Խէ բի՞դի անիմ, քա հօր փԉհիլԉն ը՞մ* (Զ):

- Քա/քու մօր բալան տօն կ՚ԉ - Հանդիմանական մտերմական արտահայտություն: *Քա մօր բալան տօն կ՚ԉ, էս ծառը խէ կըտըրալ ը՞ս* (Զ):

- Քա/քու մօր կաթնանը նըման քը՚ՉԷ հալալ (ինի) - Բարեմաղթանքի արտահայտություն՝ բարով վայելես՝ տեր դառնաս, դու արժանի ես դրան:

- Քա/քու մօր կաթնը քը՚ՉԷ հալալ (ինի) - Բարեմաղթանքի արտահայտություն՝ ուղղված լավ արարքի տեր՝ լավ գործ կատարող՝ մեկի հույսերն արդարացնող անձին:

- Քու ասած/ասմունք - *տե՛ս* Քու օգ՚ած:

- Քու ԉրը՚վ - Երդման բանաձեւ՝ երդվում եմ քո արեւով: *Քու ԉրը՚վ, սօտ չըմ ասում* (Բ):

- Քու գ՚իդԉցԉծ ըղօնէգ՚ը յը՚ս օթումը ըմ փըռնում - *տե՛ս* Քու ցիրը՚կվա շօռ յը՚կած տը՚ղէրը յը՚ս քըշէրընն ըմ շօռ կ՚ամ:

- Քու թա՚լըղըտ հինչ - *տե՛ս* Քը՚ը՚զ հինչ:

- Քու կօրծըտ ա - *տե՛ս* Տու վըս գ՚ԉդԉում:

- Քու մար մը՚ռնէ - Մեկին խղճալու՝ գթալու արտահայտություն: *Քու մար մը՚ռնէ, պա հունց ը՞ս ապըրում առանց փօղ* (Զ):

- Քու մար մը՚ռնէ վէչ - *տե՛ս* ԱԼԼԸՂԱԳՕՆՈՒՄ:

- Քու մար քը՚ՉԷ նըման քանէնը ա՞ պէրալ - Ասում են խորամանկություն անողին՝ ինձ խաբել չես կարող:

- Քու մը՚ռալը վայ տամ - *տե՛ս* Մը՚ռալը վայ տամ:

- Քու յը՚ղըտ քը՚ՉԷ ինի, իմ չուրը-թանէս նի մէ՚լ կ՚ԉլ - Որեւէ մեկի կասկածելի օգնությունից հրաժարվելու արտահայտություն՝ քո տվածը չեմ ուզում, միայն թե իմ ունեցածին ձեռ մի՛ տուր:

- Քու շօնըտ ըմ - Հպատակվելու՝ աղերսանքի բանաձեւ՝ քո ենթական եմ: *Ասում ա.- Քու շօնըտ ըմ, ինձ ըսպանէլ մէ՚լ* (Զ):

- Քու տըռըտ տանէլ մէ՚լ կօխէլ ԉուրԉուշին վը՚ռէն ծակը - Քո վատ արարքները ուրիշին մի վերագրիր:

- Քու տօնը շինվի/(չը)քանդվի - *տե՛ս* ՏԸՆԱՇԻՆ:

- Քու ցիրը՚կվա շօռ յը՚կած տը՚ղէրը յը՚ս քըշէրընն ըմ շօռ կ՚ամ - Ես քեզնից ավելի բանիմաց՝խորամանկ՝փորձառու եմ: *Ուստան ասում ա.- Քու ցիրը՚կվա շօռ յը՚կած տը՚ղէրը յը՚ս քըշէրընն ըմ շօռ կ՚ամ, տու ինձ կարէլ չըս խԉփիս* (Զ):

- Քու ուստատ իմ շԉգէրդը ա - *տե՛ս* Քու ցիրը՚կվա շօռ յը՚կած տը՚ղէրը յը՚ս քըշէրընն ըմ շօռ կ՚ամ:

- Քու քըռակէն փըլավ անէ - *տե՛ս* Քա/քու մօր բալան տօն կ՚ԉ:

- Քու օգ՚ած - Հիանալի, լավ, հոյակապ: *... Սըկսում ըն լ՚ավ, առռէ քու օգ՚ած ապրէլ* (ՀԱԲ, 15, 68):

ՔՈՒԹԱՀ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քութահ անէլ - *տե՛ս* Թայդի ըղնէլ: *Ասում ա.- Քութահ մէ՚ր անէլ, հԉլԉ վախտ կա* (Զ):

ՔՈՒԹԻ-ՔՈՒԹԻ - *տե՛ս* ՔՈՒՉԻ-ՔՈՒՉԻ:

ՔՈՒԹԻԼԉԽՈՒՄ - *տե՛ս* ՔԸԹԻԼԉԽՈՒՄ:

ՔՈՒԹԻԼԱՄԱՆ - *տե՛ս* ՔԸԹԻԼԱՄԱՆ:

ՔՈՒԹԻԼԱՆՈՒՑ - *տե՛ս* ՔԸԹԻԼԱՆՈՒՑ:

ՔՈՒԹԻԼԉՊԷՆ - *տե՛ս* ՔԸԹԻԼԉՊԷՆ:

ՔՈՒԹԻԼԉՓՕԽ - *տե՛ս* ՔԸԹԻԼԉՓՕԽ:

ՔՈՒԹԻԼՀԱՐԷԼ - *տե՛ս* ՔԸԹԻԼՀԱՐԷԼ:

ՔՈՒԹՕԹ - *տե՛ս* ՔԸԹՕԹ:

ՔՈՒԹՕԼ - *տե՛ս* ՔԸԹՕԼ:

ՔՈՒԹՕԼ-ՔՈՒԹՕԼ - *տե՛ս* ՔԸԹՕԼ-ՔԸԹՕԼ:

ՔՈՒԼԱ/ՔՕԼԱ - *գ.* 1. Գզած բրդի՝ բամբակի եւն փաթիլ: *Կ՚օղը ըսկանում ա, ասում.- Մինչէվ էս կընէգ՚ը մին վէլա մանէ, մին քօլա թակէ, յէս յէր կէնամ Չալաղըզը սարավընն անց կըցընիմ* (ՆԱԲ, 77): 2. Ծխի՝ ամպի՝ փոշու եւն

գալարուն զանգված: *Յիրգ՛ինք՛ումը մին թօխպու քուլա յա ըրվամ* (Ձ): 3. *փխբ. տե՛ս* Սիպտակ պիմբըկօլա:

ՔՈՒԼԱՂԱԹ - *տե՛ս* ՔՈՒԼԱՄԱՉ:

ՔՈՒԼԱՄԱՉ - *գ.* Թփի արանքը: *Քուլըմաչան մին ըլըբաստըրակ ա տո՛ւս կ՛ամ, փախչո՛ւմ* (Ձ):

- Քուլըմաչան/քուլըմաչավ խօսէլ/ասէլ - Ակնարկել, կողմնակիորեն ասել: *Մարթը վէր ըտի քուլըմաչան խօսում ա, կընէգ՛ը դա՛ստի կըլո՛խ ա ըղնում* (Ձ):

ՔՈՒԼԱՏԱԿ - *գ.* Թփի տակը՝ տակի տարածությունը: *Քուլըտակէն պըրանվում ա, քունավ ընցընում* (Ձ):

- Քուլըտըկէրավը կ՛ա՛լ - 1. *տե՛ս* Քուլըմաչան խօսէլ: 2. Գործը փչացնել՝ ձախողել: *Թօռը նի կալա՛վ, հո՛նձ ընուղնէրէն կօրծը քուլըտըկէրավը յը՛կավ* (Բ):

ՔՈՒԼԱՏԱ՛ՆՁ - *գ.* Վայրի տանձ: *Մէր ծըմըկնէն էն ա քուլըտա՛նձավ լիգ՛ը* (Բ):

ՔՈՒԼԸՁԸԿԸ՛Ռ/ՔՈՒԼՈՒՁԸԿԸ՛Ռ - *գ.* Վայրի զկեռ: *Ճուվարանը քուլըզըկըռավ լըցնում ըն, տինում փըչակումը* (Ձ):

ՔՈՒԼԸՁԸԿԸՌԷ/ՔՈՒԼՈՒՁԸԿԸՌԷ - *գ.* Վայրի զկեռենի: *Մին քուլըզըկըռէ յա պուք տամ, բաղումը տընգում* (Ձ):

ՔՈՒԼԸԽԸՆՁԸ՛Ր - *տե՛ս* ՔԸԼԸԽԸՆՁԸ՛Ր:

ՔՈՒԼԸԽԸՆՁԸ՛ՐԷ - *տե՛ս* ՔԸԼԸԽԸՆՁԸ՛ՐԷ:

ՔՈՒԼԸՇԸԼԸ՛Ր/ՔՈՒԼՈՒՇՈ՛ՒԼԸ՛Ր - *գ.* Վայրի սալոր: *Քուլըշըլո՛րան լ՛ավ թրթօ լավաշ ար շինում այան* (Բ):

ՔՈՒԼԸՇԸԼԸ՛ՐԷ/ՔՈՒԼՈՒՇՈ՛ՒԼԸ՛ՐԷ - *գ.* Վայրի սալորենի: *Ըտը՛ղ մին մը՛ծ քուլըշըլո՛րէ յա ինում փըսած* (Ձ):

